Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ
ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ Հ ԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

ԳՈՐՈՍ ԳՈՐԱՐԱՆՅԱՆ,

# ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2013

ՀՏԴ 72.03(479.25)
ԳՄԴ 85.113(2 Հ)
Թ 806

FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

*Հրատարակչությունը խորին շնորհակալություն է հայտնում*
*Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությանը,*
*դոկտոր Զավեն Եկավյանին՝*
*գրքի տպագրությունը հովանավորելու համար*

***Թորամանյան Թ.***

*Թ 806* *Նյութեր հայկական ճարտարապետության պատմության / Թ. Թորամանյան. - Եր.: ԵՊՀ հրատ., 2013 - 864 էջ (Հայկական մատենաշար Գ. Կիւլպէնկեան հիմնարկութեան)*

*Ժողովածուն կազմեց և հրատարակության պատրաստեց՝*
***Կարո Ղաֆադարյան***

*Ընդհանուր խմբագրությամբ*
*ակադեմիկոս*
***Հովսեփ Օրբելու***

*Կազմը, ֆորզացը, անվանաթերթը,*
*բնագրի գլխագարդերը և վերջնագարդերը՝*
*ժողովրդական նկարիչ*
***Հակոբ Կոջոյանի***

*Առաջաբանի և կենսագրական ակնարկի*
*գլխագարդերն ու վերջնագարդերը*
***Թորոս Թորամանյանի ձեռագրերից***

ՀՏԴ 72.03(479.25)
ԳՄԴ 85.113(2 Հ)

## ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

*Հայ ճարտարապետության հմուտ գիտակ, հայկական ճարտարապետության գիտական ուսումնասիրության հիմնադիր Թորոս Թորամանյանի «Նյութեր հայ ճարտարապետության պատմության» գրքի վերահրատարակությունը իրականացվել է սքանավորման եղանակով, բայց նոր տառատեսակով: Կատարվել է զգալի խմբագրական-սրբագրական աշխատանք:*

*Գրքի լուսանկարները և գծագրերը ուղղակիորեն բովանդակության բաղկացուցիչ մասն են: Քանի որ հատորները լույս էին տեսել անցյալ դարի քառասնական թվականներին, շատ կարևոր էր լուսանկարները փոխարինել ավելի որակյալ օրինակներով: Լուսանկարների մշակման հարցում մեզ շատ օգնեց ՀՀ Պատմության թանգարանի տնօրեն Անելկա Գրիգորյանը, ում հայտնում ենք խորին շնորհակալություն: Շնորհակալություն նաև թանգարանի աշխատակից Վռամ Հակոբյանին, ով մշակել է բոլոր պատկերները:*

*Քանի որ երկու հատորներն էլ լույս են տեսել Թորամանյանի մահից հետո, նյութերը հրատարակության պատրաստելիս հսկայական է վաստակաշատ Կարո Ղաֆադարյանի ներդրումը, ինչպես նաև Գիտությունների ազգային ակադեմիայի Պատմության ինստիտուտի դերը:*

*Գրքի վերահրատարակությունն իրականացել է տքնաջան աշխատանքի շնորհիվ: Հիշատակության արժանի է հրատարակչության խմբագիր Լաուրա Մանուկյանի, համակարգչային տարբերակը նախապատրաստողներ Նաիրա Խչեյանի, Նարինե Խնկիկյանի, հրատարակչության ողջ աշխատակազմի աշխատանքը:*

*Ամեն ինչ արվել է արժանին մատուցելու Թորոս Թորամանյանի հիշատակին:*

*Հրատարակությունը նվիրվում է հայ ազգի հանճարեղ զավակներից մեկի՝ Թորոս Թորամանյանի ծննդյան 150-ամյակին:*

***ՊԵՐՃ ՍՏԵՓԱՆՅԱՆ***
***ԵՊՀ հրատարակչության տնօրեն***

*Անիում առաջին անգամ եղա 1902 թ. ամռանը: Ռափայել Պատկանյանի կառուցած տան անկյունում, սեղանի մոտ, լամպի լուսավորության տակ աշխատում էր մի մարդ: Դա Թորոս Թորամանյանն էր: Ուսումնասիրում էր Անիի ճարտարապետությունը՝ գծագրերի, թղթերի ահագին կույտի մեջ խրված: Ծանոթացանք: Մի փոքր զրուցելուց հետո, դաժան տպավորություններից հոգնած, քնեցինք...*

*Երբ արթնացանք, Թորամանյանը դեռ աշխատում էր:*

*Շրջապատի հուշարձանների նման նա ինքն էլ մի մոնումենտալ կոթող էր, պարզ ու յուրովի գեղեցիկ մի կերտվածք: Շատ տարիներ հետո, երբ ես նկարում էի Թորամանյանի դիմանկարը, վերակենդանացավ մեջս այդ առաջին տպավորությունը՝ հզոր, աննկուն, կատարյալ ու ազնիվ...*

*Իմ առջև նստած էր ասթմայից տանջահար մի մարդ: Աչքերիս առաջ պայքարի մեջ էին մտել մարմնի փլուզումն ու հոգևոր վեհությունը՝ ստեղծագործական հանճարը...*

*Եվ ահա այդ երկու ճշմարտությունների վեճի բովում ծնվեց Թորամանյանի կերպարը:*

*Կյանքի անասելի ծանր պայմանների, հիվանդությունների ու ցավերի հանդեպ ճակատ առ ճակատ պայքարել էր Թորամանյանը և մնացել կանգուն, ստեղծագործել, ինչպես նրան ծնող մեծ ժողովուրդը: Տիտանական ջանքերի, մտքի ու զգացմունքների լարման գնով, համաշխարհային և հայ մշակույթի իմացության հողից ելնելով, նա թափանցել էր ժամանակի խորքերը և բյուրեղյա մաքրությամբ դուրս հանել այն մարգարիտները, որոնք զուտ ազգային են: Ողջ աշխարհին ապացուցեց հայկականը...*

*Դժվար էր շնչում, հոգնած էր: Ցավերից դիմագծերը ջղաձիգ էին, լարված: Բայց ապրելու, աշխատելու ծարավն ու ներքին մեծ ուժը երևում էին նրա դիմագծերում: Խոշոր, լայն բացված աչքերը արտացոլում էին ինտելեկտուալ անհունություն: Ահռելի մի քարաժայռ էր հիշեցնում նա, և թվում էր, թե հազարամյակներից գալիս ու դեռ այդքան էլ ապրելու է: Ուստի ապրելու է իսկապես...*

*Հատուցել էր հայ ժողովրդին իր պարտքը, հատուցել իր հանճարեղ աշխատանքով:*

*Այդպիսին է Թորամանյանը իմ պատկերացման մեջ, և այդպիսին էլ աշխատել եմ դրոշմել նրան կտավի վրա:*

**ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ**



# ԱՌԱՋԱԲԱՆ

Հայկական հին ճարտարապետությունը շատերին է հետաքրքրել: Ակադեմիկոս Ն. Մառի՝ Անիում կատարած բազմամյա աշխատանքները հարուստ նյութ են տալիս մեր ճարտարապետության պատմության: Խոշոր գործ են կատարել նաև Հայաստանի և Միութենական գիտական հիմնարկները վերջին քսան տարվա ընթացքում: Սակայն, մինչև օրս չկա ընդհանրացնող մի աշխատություն, որտեղ լուսաբանված լինեին հայկական ճարտարապետության զարգացման գլխավոր հարցերը:

Ն. Մառի՝ Անիին վերաբերող մեծածավալ աշխատությունը նվիրված է միայն այդ քաղաքի շինարարության հարցերին: Ստրչիգովսկու երկհատոր աշխատության մեջ, որ գրված է մեծ մասամբ Թորամանյանի նյութերի հիման վրա, հեղինակի առաջ քաշած հարցերը վերջնական լուծում չեն ստացել փաստական մատերիալի պակասության պատճառով:

Այդ բացը որոշ չափով վերացնելու նպատակով կազմել ենք ներկա ժողովածուն, որն ընդգրկում է ճարտարապետ Թորոս Թորամանյանի գրեթե բոլոր լավագույն աշխատությունները:

Այս ժողովածուն, որի մեջ տեղ են գտել ինչպես հրատարակված, այնպես էլ մինչև այժմ անտիպ մնացած աշխատությունները, բաժանել ենք չորս մասի:

**Առաջին մասում** զետեղել ենք Թորամանյանի անվերնագիր մի աշխատությունը, որը նվիրված է նախնադարյան շրջանից մեզ հասած ճարտարապետական մնացորդների ուսումնասիրությանը և որը պարունակում է հեղինակի տեսած կուրգանների, մեգալիթյան մնացորդների, բերդ-շենների նկարագրերը: Թորամանյանը 1920–1921 թվականներին Էջմիածնում, Գիտական ինստիտուտի «Բանբեր»-ում հրատարակել է մի համառոտ հոդված՝ «Նախաքրիստոնեական ճարտարապետություն» վերնագրով: Ներկա ուսումնասիրությունը «Բանբեր»-ում հրատարակված այդ հոդվածի ընդարձակ վարիանտն է, որը հեղինակը վերամշակել և լրացրել է 1932–1933 թ.թ. ընթացքում:

Իբրև նախնական ժամանակներն ամփոփող ուսումնասիրություն, այս աշխատությունն ունի մի շարք պակասներ և որոշ չափով հնացած մասեր:

Ուսումնասիրության ձեռագիրը, հատկապես նախնադարյան կենցաղի նկարագրության մեջ, ուներ որոշ չափով հնացած մասեր, որոնք մասամբ ճշտեցինք և մասամբ էլ կրճատեցինք:

Բազմաթիվ մնացորդների մանրամասն և բարեխիղճ նկարագրությունն այս ուսումնասիրության ամենաարժեքավոր կողմն է, որովհետև մեր նախնական ճարտարապետությունը համարյա թե չի ուսումնասիրված:

Ժողովածուի երկրորդ մասում տեղավորել ենք հեղինակի ընդհանուր բնույթ կրող աշխատությունները, որտեղ նա բացատրում է հայկական քրիստոնեական ճարտարապետության ծագումը, կապը հարևան ժողովուրդների շինարվեստի հետ, կրած ազդե-

ցությունները և զարգացման ընթացքն ու ձևերը, գործածված շինանյութերը, ինչպես և տարբեր տիպի կառուցվածքների մանրամասների պատմական ընթացքը:

Երրորդ մասում զետեղել ենք հեղինակի այն մոնոգրաֆիաներն ու մանր հետազոտությունները, որոնք վերաբերում են առանձին ճարտարապետական հուշարձանների: Առաջին ուսումնասիրությունը՝ «Տեկորի տաճարը» – հեղինակն առանձին գրքով լույս է ընծայել դեռևս 1911 թվականին: Ճիշտ է, Թորամանյանն իր ծրագրած «Նյութեր հայ ճարտարապետության պատմության» ընդհանուր ուսումնասիրության համար ձեռնարկել էր Տեկորի տաճարի մասին գրել մի ավելի համառոտ աշխատություն, բայց այդ աշխատությունը մնացել է անավարտ և սևագիր վիճակում, ուստի այստեղ տեղավորեցինք հրատարակված ընդարձակ վարիանտը: Այս մասում տեղավորեցինք հեղինակի «Բագարանի ս. Թեոդորոսը» հոդվածը, արտատպելով «Ախուրյան»-ի 1908 թ. 59 և 60 համարներից: Այդ նույն հոդվածին միացրինք հեղինակի մի ձեռագիր աշխատությունը, որը հատկապես նվիրված է Բագարանի՝ 7-րդ դարում կառուցված ս. Թեոդորոս եկեղեցուն:

Ուսումնասիրությունների այս շարքում կենտրոնական տեղ են գրավում Զվարթնոցին վերաբերող անավարտ ուսումնասիրության մասերը, որոնք հեղինակը գրել է իր կյանքի վերջին տարիներին: Նա մտադիր էր այս ուսումնասիրություններն ամբողջացնելուց հետո հրատարակել իբրև մի առանձին աշխատություն, որի ծրագիրը գտանք նրա ձեռագրերի մեջ: Նա ավարտել է այդ ուսումնասիրությունների մեծագույն մասը, ինչպես՝ Հայաստանը 5–7-րդ դարերի ընթացքում (պատմական տեսություն), ճարտարապետության դրությունն այդ ժամանակամիջոցում՝ կապված Զվարթնոցի կառուցման հետ, Զվարթնոցը կառուցող Ներսես կաթողիկոսի կյանքն ու գործունեությունը, Զվարթնոցի հիմնարկման և ավարտման թվականները: Բաց են մնում մի քանի մասեր, որոնցից ամենակարևորը Զվարթնոցի կազմության նկարագիրն է: Այդ բացը լրացնենք «Զվարթնոցի տաճարը» հոդվածով, որը 1905 թվականին լույս է տեսել «Մուրճ» ամսագրում և որի մեջ նա հիմնավորում է տաճարի իր վերակազմությունը: Բացի այդ, Զվարթնոցին վերաբերող հիմնական հարցերի շուրջը եղած ուսումնասիրություններն ամբողջացնելու նպատակով, Զվարթնոցին նվիրված բաժնի վերջում տեղավորեցինք վարպետների նշաններին վերաբերող սևագիր մի աշխատությունը, որին միացրինք Գիտության և Արվեստի ինստիտուտի «Տեղեկագրում» 1928 թվին լույս տեսած «Զվարթնոցի վարպետների նշանները» հոդվածը: Զվարթնոցին վերաբերող աշխատությունների մեջ տեղ են գտել մի քանի սխալներ, որոնք, սակայն, մենք իրավունք չհամարեցինք ուղղել: Դրանցից մեկը, օրինակ՝ Դրասխանակերտցու «Կացուցանէր ի նմա [Զվարթնոցում] ամբոխութիւնս երդ ու մարդոց ըստ պայմանի քաղաքականաց» դարձվածքի մեկնությունն է: Թորամանյանը մի տեղում այդ դարձվածքը բացատրում է՝ «Պարզապես կնշանակե քաղաքի նման շենցնել», և մի ուրիշ տեղում «այսինքն նոր քաղաքը», որ երկու դեպքում էլ սխալ է:

Այնուհետև, երրորդ մասում ենք զետեղել Անիում Գագիկ Բագրատունու կառուցած եռահարկ բոլորակ տաճարի պեղումներին և վերակազմությանը վերաբերող ուսումնասիրությունը, որի մի մասը, հատկապես Գագկաշեն տաճարի վերակազմությունը, քաղել ենք Թորամանյանի՝ Ն. Մառին ուղղված մի ձեռագիր նամակից, իսկ սկզբի մասն արտատպել ենք 1908 թվականի «Հուշարար»-ից:

Վերոհիշյալ նամակի հետ Թորամանյանը Մառին ներկայացրել է մի քանի չափագրություններ և լուսանկարներ, որոնք հնարավոր չեղավ վերականգնել, մանավանդ որ այդ նկարներն իրենց վրա ունեցել են զանազան մասեր ցույց տվող համարագրություններ:

Երրորդ մասի վերջում դրել ենք խոշոր արժեք ներկայացնող մի քանի ճարտարապետական հուշարձանների նկարագրին վերաբերող մանր հոդվածներ, որոնք քաղել ենք 1930-ական թվականներին հեղինակի գրած «Երևանի Պետական Պատմական թանգարանի ճարտարապետական բաժնի համառոտ հատկանշական ցուցակ» անտիպ



աշխատությունից: Դրանց ավելացրել ենք 1911 թվականին տպագրված «Ո՞րն է իսկական Հոռոմոսի վանքը» և «Ապուղամրենց սբ. Գրիգոր» անտիպ աշխատությունը: «Ցուցակից» դուրս ենք թողել մի քանի հուշարձանների նկարագրեր, որոնք ավելի հիմնավոր ուսումնասիրություններով ենք ներկայացրել ժողովածուի մեջ (Տեկոր, Զվարթնոց, Էջմիածին և այլն):

Չորրորդ մասում դրել ենք աշխարհիկ ճարտարապետական մնացորդների ուսումնասիրությանը նվիրված աշխատությունները, որոնք մասամբ վերաբերում են Անիին: Առաջինը մի կարևոր աշխատություն է, որը նվիրված է մեր հին քաղաքների կազմության հարցին և որով հեղինակը ցույց է տվել, թե Անիի պարիսպներից դուրս գոյություն է ունեցել մեծ բնակչություն: Երկրորդ ուսումնասիրությունը՝ «Հայաստանի արքունական և իշխանական ապարանքները և անոնց ներքին կենցաղը»– առանձնապես մեծ արժեք է ստանում մեր ժողովրդի ոչ միայն քաղաքական պատմության հարցերը, այլև ներքին կյանքը, նիստ ու կացը, սովորությունները պարզելու համար:

«Անվո միջնաբերդի պեղումները» հոդվածն արտատպում ենք «Հուշարար»-ից՝ իբրև այս շարքի նախորդ հոդվածները լրացնող ուսումնասիրություն:

*
* *

Այս ժողովածուի մեջ բերված լուսանկարների և չափագրությունների մեծ մասը ընտրել և բնագրին հարմարեցրել ենք մենք: Արտատպվող աշխատությունների լուսանկարները մեծ մասամբ պահպանել ենք հեղինակի հրատարակածները, բայց երբեմն կրկնություններից խուսափելու համար, որոշ նկարներ կրճատել ենք: Մի քանի արտատպվող հոդվածներում, որոնք չեն ունեցել նկարներ և չափագրություններ, հնարավորին չափով հարկ եղածն ավելացրել ենք, սակայն օգտագործելով հանդերձ մեզ հայտնի եղած լուսանկարների բոլոր ժողովածուները, այնուամենայնիվ չկարողացանք գտնել պահանջվող բոլոր լուսանկարները և չափագրությունները, այդ պատճառով էլ ժողովածուի որոշ մասերում զգացվում է համապատասխան լուսանկարների և չափագրությունների պակաս:

Բոլոր չափագրությունները վերցրել ենք հեղինակի կատարած աշխատանքներից, բացի Աղթամարի և Բանայի հատակագծերից, որ հեղինակն ինքը դրել էր համապատասխան հոդվածի բնագրի մեջ՝ հրատարակության համար:

Թորամանյանի արխիվում կորստից փրկված սևագիր չափագրությունների հարուստ կոլեկցիան հնարավոր չէր լիովին օգտագործել այս հրատարակության համար, այդ պատճառով ժողովածուի վերջում զետեղել ենք նրա կատարած չափագրությունների և ստվերանկարների ցուցակը:

*
* *

Թորամանյանի լեզուն հիմնականում արևմտահայ գրականը լինելով, իր մեջ ունի նաև արևելահայ տարրեր: Հեղինակն իր սկզբնական աշխատությունների մեջ ավելի շատ է գործածել արևմտահայ գրական լեզուն, իսկ նորերը նա աշխատել է գրել արևելյան գրականով: Իր կենդանության ժամանակ հրատարակած մի քանի աշխատությունների լեզուն խմբագիրներն աշխատել են վերածել մաքուր արևելահայերենի: Այդ աշխատությունների լեզուն մենք թողինք նույնությամբ, առանց փոփոխությունների, վախենալով, որ որոշ տեղերում կարող էր բովանդակությունը տուժել, որովհետև, ինչպես ընթերցողը կտեսնի, հեղինակը միշտ մտածել է արևմտյան հայերենով և գործ է ածել բազմաթիվ դարձվածքներ, նախադասություններ, որոնք արևելահայերենի փոխե-

*լու դեպքում հիմնովին պիտի ձևափոխվեին: Միայն որոշ տեղերում փոխել ենք այժմ անգործածելի գրաբարյան դարձվածքներ և առանձին բառեր, որոնք կարող էին մտքի մեջ շփոթություն առաջացնել կամ անհասկանալի լինել. այսպես օրինակ՝ «Հորում [գրաբար՝ յորում] Եվրոպան խարխափում էր մթության մեջ» – դարձրել ենք «Երբ Եվրոպան խարխափում էր մթության մեջ», «հաչս [յաչս] հայության» – «հայության աչքում» և այլն: Արևելահայ լեզվով թողնենք միայն այն աշխատությունները, որոնք հեղինակի կենդանության ժամանակ լույս էին տեսել այդ ձևով:*

*Ավելի դժվար է հարցը տեղանունների նկատմամբ. Թորամանյանը տարբեր ժամանակներում միևնույն տեղանունը տարբեր արտասանությամբ է գրել. օրինակ՝ Դիրակլար – Տիրակլար – Դիրաքլար, Արդիկ – Արթիկ. մենք այդ տեղանունները վերածեցինք միօրինակության, բայց դրանով էլ հարցը չփակվեց, որովհետև այդ անուններից շատերը ներկայումս անգործածական են և հիշված վայրերն այժմ ունեն նոր անուններ: Մենք բնագրի մեջ այդ անունները թողնենք հինը և ժողովածուի վերջում զետեղված հատուկ անունների ցանկում հին անվան կողքին փակագծերի մեջ դրենք վայրի այժմյան պաշտոնական անունը: Մի քանի տեղերում էլ կատարեցինք թվականների ուղղում. օրինակ՝ պատմական հայ ճարտարապետության վերջնական անկման ժամանակամիջոցը հեղինակը համարել է մի տեղում 15–17-րդ, մի ուրիշ տեղում 14–16-րդ և մի այլ տեղում 15–16-րդ դարերը: Մենք բոլոր տեղերում ուղղեցինք 15–17: Ի դեպ պետք է նշել, որ 17-րդ դարը բոլորովին ուսումնասիրության նյութ չի դարձրել Թորամանյանը, չնայած որ այդ ժամանակներից ունենք մի քանի քիչ թե շատ աչքի ընկնող կառուցվածքներ, թեև նվազ հետաքրքրական, քան նախորդ դարերինը:*

*Ճարտարապետական մասերի անունների մեջ ևս Թորամանյանը չի պահպանել միօրինակություն: Ձեռքի տակ չունենալով հայերեն համապատասխան բառեր, նա հաճախ գործ է ածում ֆրանսերեն տերմիններ: Մենք այդ անունները բնագրում թողել ենք առանց փոփոխության, բայց ժողովածուի վերջում զետեղել ենք ճարտարապետական տերմինների մի փոքրիկ բառարան, որտեղ բնագրում գործածված մասնագիտական բառերի կողքին դրված են դրանց բացատրությունները:*

*Ժողովածուի մեջ զետեղված հոդվածների մի մասը վերնագիր չի ունեցել, դրանց վերնագրերը դրել ենք մենք, առնելով նրանք քառակուսի փակագծերի մեջ: Բնագրում քառակուսի փակագծերի մեջ առնված հավելումները ևս կատարել ենք մենք:*

*Ի վերջո, անհրաժեշտ ենք համարում նշել, որ Թորամանյանն ունի մի շարք հնացած և անընդունելի արտահայտություններ ու տերմիններ, որոնք, սակայն, մենք իրավունք չհամարեցինք ուղղել, նպատակ ունենալով հանդուցյալ հեղինակին հասարակությանը ներկայացնել այնպես, ինչպես որ նա եղել է:*

Կ. Ղ.







# ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆ

## *Կենսագրական ակնարկ*

*Հայկական պատմական ճարտարապետության գիտական ուսումնասիրության հարցը սերտորեն կապված է ճարտարապետ Թ. Թորամանյանի անվան հետ: Մինչև Թորամանյանի գիտական ասպարեզ իջնելը հայկական ճարտարապետությամբ հետաքրքրվել էին մեծ մասամբ արևելյան երկրներում ճամբորդություն կատարած եվրոպացիներ և կարճ ժամանակով Հայաստան այցելած գիտնականներ, որոնք միայն հարևանցիորեն նկարագրել և հաճախ սխալներով չափագրել էին մեկ կամ մի քանի հուշարձաններ:*

*Թորամանյանն առաջինն էր, որ իր կյանքի ամբողջ ընթացքում սիստեմատիկորեն ուսումնասիրեց պատմական հայ ճարտարապետությունը և իր կոչումն արդարացրեց նրանով, որ գիտության մեջ առաջ քաշեց մինչ այդ անուշադրության մատնված հայկական ճարտարապետության հարցը և մեծ հետաքրքրություն առաջ բերեց նրա շուրջը ոչ միայն մեզանում, այլև Արևմտյան Եվրոպայում: Եթե Թորամանյանից առաջ հայկական ճարտարապետությունը գիտությանը ծանոթ էր միայն կցկտուր, հարևանցի տեղեկություններով, այժմ գիտությունն ստացված տեղեկություններ ունի նրա հիմնական բոլոր սկզբունքների մասին:*

*Թորամանյանը մինչև իր կյանքի վերջին տարիներն զբաղվեց միշտ նոր և նոր օբեկտներ ուսումնասիրելով և նոր նյութեր հավաքելով, առանց ժամանակ գտնելու արդեն հավաքածը մի ընդհանուր սիստեմի վերածելու և մի կապիտալ աշխատություն հրատարակության պատրաստելու: Այդ գործը նա միշտ հետաձգեց՝ շարունակ հույս դնելով ապագայի վրա և մեծ ճիգ գործադրեց ուսումնասիրելու բոլոր ճարտարապետական մնացորդները: Սակայն, Հայաստանի ճարտարապետական բազմաթիվ և բազմատիպ մնացորդներից թեկուզ ամենակարևորների ուսումնասիրության համար շատ քիչ է մի մարդու նույնիսկ ամբողջ կյանքը: Եվ Թորամանյանը, երեսուն տարի այդ ծանր բեռի տակ ճնշված, դաշտերում, լեռներում ու ձորերում չափագրեց, հետազոտեց բազմաթիվ արժեքավոր ճարտարապետական մնացորդներ և միայն ձմռան ամիսներին, չափագրական նյութերը մաքրագրելուց, վերակազմություններն ավարտելուց հետո, երբեմն առանձին հոդվածներ և ուսումնասիրություններ գրեց այս կամ այն հուշարձանի մասին, երբեմն էլ ընդհանուր կարգի, տեսական բնույթի հետազոտություններ կատարեց, երբ այդ թելադրեց նրան հրապարակ հանված և քննության առարկա դարձած հարցի կարևորությունը:*

*Միայն ծերության հասակում, երբ արդեն ֆիզիկական կարողություն չուներ շրջագայություններ կատարելու, նա սկսեց համախմբել, մի ընդհանուր հայտարարի բերել և հրատարակության պատրաստել իր աշխատությունները: Բայց արդեն ուշ էր, և գործի դեռևս սկզբներին այդ աշխատանքն ընդմիշտ ընդհատվեց նրա մահվան պատճառով:*

*
* *

Թորամանյանը ծնվել է 1864 թ. մարտի 18-ին, Թյուրքիայի Շապին-Գարահիսար քաղաքում, գյուղական տնտեսությամբ պարապողի ընտանիքում: 1878 թվին, երբ 14 տարեկան էր, մեռան նրա ծնողները: Սկզբնական կրթությունն ստացավ իր ծննդավայրում, իսկ 1884-ին, ծանոթների աջակցությամբ, գնաց Կ. Պոլիս՝ ուսումը շարունակելու և ճարտարապետ դառնալու: Սակայն նյութական միջոցներ չունենալու պատճառով չկարողացավ ընդունվել բարձրագույն դպրոց, ուստի ստիպված եղավ մի հյուանի մոտ աշակերտություն անել և պատրաստվել բարձրագույն դպրոցի համար: 1888-ին, որպես նկարչության ձիրք ունեցող, հեշտությամբ ընդունվեց Կ. Պոլսի Գեղարվեստից ճեմարանը և հինգ տարի սովորելուց հետո հաջողությամբ ավարտեց իբրև ճարտարապետ: Սկզբում նա ձգտեց ևրոպական բարձրագույն դպրոցներում կատարելագործվել, բայց ոչ մի տեղ նյութական աջակցություն չգտնելով, մնաց Կ. Պոլսում, որտեղ սկսեց պարապել պրակտիկ աշխատանքով: Այդ շրջանում կառուցեց մի պալատ: 1896-ին գնաց Բուլղարիա, որտեղ իբրև ճարտարապետ աշխատեց մինչև 1900 թվականը և մի քանի շենքեր կառուցեց՝ գլխավորապես Հարուստ հայերի (Մանուկյանների, Սարգիս Ցաղյանի, Դանիել Բուլղարացու և այլոց) համար: Սակայն Թորամանյանի նպատակը ճարտարապետական պրակտիկան չէր, այլ գիտական-տեսական աշխատանքը: Նա, Բուլղարիայում տնտեսած մի փոքրիկ գումարի հույս դնելով, նախ ճամբորդեց մի քանի կլասիկ երկրներ (Հունաստան, Եգիպտոս և այլն), ապա գնաց Փարիզ՝ իր մասնագիտության մեջ կատարելագործվելու համար: Սակայն այնտեղ ևս նա չկարողացավ բարձրագույն դպրոցներից մեկում շարունակաբար սովորել: Իսկապես Փարիզում փակված կյանք անցկացրեց. լավ չտիրապետելով կենդանի ֆրանսերեն լեզվին և դժվարությամբ ապրելով Բուլղարիայում տնտեսած չնչին գումարով, այդ ծայր աստիճան համեստ, ամոթխած և չքավոր երիտասարդը մինչև վերջն էլ չփման մեջ չմտավ ֆրանսիական հասարակության հետ և միայն պատահմամբ ծանոթություն հաստատեց այնտեղ ապրող մի քանի հայերի հետ, ի թիվս որոնց ծանոթացավ նաև այն ժամանակ «Բանասեր» հանդեսի խմբագիր Կարապետ Բասմաճյանին:

Իբրև ազատ ունկնդիր՝ Փարիզում Թորամանյանը լսեց նշանավոր գիտնականների դասախոսություններ, պարապեց արվեստի պատմությամբ, գլխավորապես ճարտարապետության վերաբերող ֆրանսերեն գրքերի ընթերցանությամբ, և թանգարաններում զբաղվեց արևելյան զանազան երկրներից բերված արվեստի հիշատակարանների ուսումնասիրությամբ:

Փարիզում երկար չմնաց: Նյութական միջոցները շուտով սպառվեցին, և նա վերադարձավ Բուլղարիա՝ ճարտարապետական պրակտիկ աշխատանքները շարունակելու:

1903 թվականին Բասմաճյանը մի հնագիտական էքսպեդիցիա կազմակերպեց դեպի Հայաստան՝ Անիի ավերակներն ու արձանագրություններն ուսումնասիրելու նպատակով: Նա ինքը դրամական միջոցներ չուներ, բայց այդ համարձակ քայլն անում էր, հույս ունենալով, որ կովկասահայ հարուստներն իրենց քսակի բերանը լայն բաց կանեն իր առաջ՝ լսելով Անի մայրաքաղաքի անունը:

Այդ էքսպեդիցիային նա հրավիրեց մասնակցելու նաև Թորամանյանին՝ ճարտարապետական մնացորդներն ուսումնասիրելու և չափագրելու համար:

Թորամանյանը 1903 թ. եկավ Անի և հիմք դրեց իր գիտական գործունեությանը:

Թորամանյանը նախապես, ինչպես այդ իմանում ենք «Մշակ»-ում տպված նրա մի հոդվածից[1], Բասմաճյանի հետ պայմանավորվել էր Անիում մնալ ընդամենը չորս ամիս, ստանալով նրանից միայն ճանապարհածախս և սնունդ: Բասմաճյանը բոլորովին զուրկ

[1] «Մշակ», 1909 թ., № 60:



լինելով դրամական միջոցներից, նույնիսկ այդ չորս ամսվա սննդի գումարը չէր կարող վճարել Թորամանյանին:

Թորամանյանը, մինչև Անի հասնելը, կարելի է ասել, չէր պատկերացնում այն աշխատանքի ծանրությունը, որ հանձն էր առել կատարել չորս ամիսների ընթացքում: Ձեռնարկելով գործին, նա համոզվեց, որ այդ աշխատանքը երկար տարիներ է պահանջում: Սակայն դրանից նա բնավ չվհատեց, այլ, ընդհակառակը, մեծ եռանդով կպավ գործին, առանց նկատի առնելու նյութական պայմանները:

Այդ ժամանակները Անի եկավ Թիֆլիսահայ մի վաճառական և խոստացավ Բասմաճյանի վերադարձից հետո Թորամանյանին վճարել ամեն ամիս 30 ռուբլի, որ այդ մեծ աշխատանքի համար չնչին մի գումար էր: Սակայն էնտուզիաստ ճարտարապետը համաձայնեց դրան, չնայած որ նա այդ գումարի կեսից ավելին վճարելու էր իրեն օգնող սևագործ բանվորներին:

Շուտով Բասմաճյանը Թորամանյանին մենակ թողնելով Անիում, մեկնեց նախ Ալեքսանդրոպոլ (Լենինական), ապա Թիֆլիս, խոստանալով դրամական նոր աղբյուրներ ճարել և ձմեռվա համար տաք հագուստ ուղարկել, բայց ոչինչ չգտնելով, մեկնեց Փարիզ և «Ասկեց հետո,— ինչպես գրում է Թորամանյանը,— այլևս սկսավ մեր անընդհատ թղթակցությունները պ. Բասմաճյանի հետ. իմ կողմանե գանգատ, անոր կողմանե խոստում. ցուրտեն դողալով, կարևոր պիտույքներե զրկվելով, ծանոթներու հյուրասիրության ապաստանած՝ ձմեռն անցուցի»[1]:

Սակայն այդ համառ մարդը, առանց որևէ սպասելիքի և հեռանկարի, հաջորդ տարվա մարտ ամսին Ալեքսանդրոպոլից, որտեղ նա ձմեռն անցկացրեց, մեկնեց Անի՝ իր աշխատանքները վերսկսելու: Այդ տարին առավել չարքաշ կյանք անցկացրեց այնտեղ: Թիֆլիսեցի վաճառականը դադարեց նրան ուղարկել 30 ռուբլի ամսականը, և Թորամանյանը մնաց միմիայն Անիի Միքայել վարդապետի խնամքին, որը կիսագրագետ մի պարզ մարդ էր և Թորամանյանի հետ բաժանում էր իր վերջին կտոր հացը, բայց, ինչպես ակադ. Ն. Մառն է գրում, «Ինքը՝ բարեսիրտ վարդապետը՝ հաճախ առանց կտոր հացի էր: Ապրելով ցուրտ, անվառ, անձրևի ժամանակ մինչև կոճիկները ջրով լցված սենյակում (որին վերջերում ես ականատես եմ եղել), Թորոս Թորամանյանը հասավ վերջին ծայր աղքատության, օրերով քաղցած էր մնում, վերջն էլ բոլորովին ցնցոտիների մեջ մնաց: Մինչև այդտեղ նա շարունակում էր աշխատանքը, բայց այլևս չէր կարող տանել և նա ամայի Անիի շուրջը ճարվող սրտացավ մարդկանց օգնությամբ գնաց Էջմիածին[2]: Էջմիածնում նրան վիճակվեց տանել ավելի ծանր փորձություններ: Եթե Անիում կրում էր միայն ֆիզիկական զրկանք, Էջմիածնում դրան ավելացավ նաև բարոյականը: Այնտեղի միաբանները ցնցոտիների մեջ տեսնելով մեկին, որ իրեն ճարտարապետ էր անվանում, սկսեցին ծաղրել նրան վարկաբեկիչ «ուստա» և այլ մականուններով, մինչև անգամ չէին քաշվում այդ մականունները երեսին ասելուց:

Խաչիկ վարդապետ Դաղյանը, որը թեպետ չուներ համապատասխան կրթություն և պատրաստություն, բայց իր խիզախ բնավորությամբ համարձակ կերպով ձեռնարկում էր մեծ պեղումների, Թորամանյանին հրավիրեց կազմելու արդեն համարյա թե ամբողջապես պեղված Զվարթնոցի հատակագիծը: Թորամանյանը ձեռնարկեց այդ գործին, բայց շուտով տեսնելով, որ վերակազմության համար պակասում են անհրաժեշտ ճարտարապետական մասեր, առաջարկեց պեղումները շարունակել և այդ վերջին պեղումները ղեկավարեց ինքը: Այդ տարին հիմնականում վերակազմելով հայկական պատմական ճարտարապետության գլուխ-գործոց Զվարթնոցը, վերջնականապես նա այդ աշխատանքն ավարտեց 1905 թվականի գարնանը:

[1] Ibid.
[2] «Ախուրյան» (Ալեքպոլ), 1908 թ., № 86 և «Հայրենիք» (Թիֆլիս), 1908 թ., № 1:

Չափազանց մեծ աղմուկ բարձրացրեց այդ վերակազմությունը: Ինչպես հայտնի է, Զվարթնոցն իր կլոր հատակագծով և արտաքին տեսքի եռահարկ պատկերով նման չէ սովորական եկեղեցիներին: Թորամանյանին հալածում և ծաղրում էին նրա համար, որ նա այդ ձևով է վերականգնել տաճարը: Իհարկե, նրա վերակազմության ճշտությունը հետագայում ապացուցվեց Անիում Գագիկ Բագրատունու՝ Զվարթնոցի նմանությամբ և չափերով կառուցած տաճարի ավերակների (ակադ. Մառի 1905–1906 թվերին պեղած) գոյությամբ և համարյա թե կանգուն վիճակում գտնվող նույն ձևերն ունեցող Բանայի (Փենեկ) տաճարի գյուտով:

Թորամանյանը, իբրև սկսնակ և դեռևս հեղինակություն չվայելող գիտնական, չէր կարող համոզել իրեն շրջապատող վանականներին, որ Զվարթնոցն ունեցել է իր արտաքին տեսքից երեք հարկաբաժիններ, արտաքին կլոր պատին զուգահեռաբար ներսում ունեցել է ութ աղեղներ, որոնցից յուրաքանչյուրն իր մեկ ծայրով հենված է եղել մասիվ չորս պիլոնների հետևում գտնվող արծվաքանդակ խոյակ ունեցող սյուներից մեկի վրա, իսկ մյուս ծայրով՝ հատակագծի կենտրոնում խաչաձևություն առաջացնող սյունաշարքերի միջին երկու սյուներն իրար միացնող կամարի վրա, որով և հնարավոր է դարձել արտաքին շրջանաձև պատին զուգահեռ տարածությունը ծածկել մի թաղով, որը մի կողմում հենվել է արտաքին պատին և մյուս կողմում՝ սյունաշարքերին ու արծվանիշ խոյակներին հենվող աղեղների վրա:

Շինարարական արվեստը հասկացողներին անհավատալի էր թվում թույլ հենակետեր ունեցող կոր կամարի վրա հսկայական շենք կառուցելու խիզախ քայլը, իսկ չհասկացողներին՝ տարօրինակ էր երևում տաճարի արտաքին պատկերը:

Չափազանց ուշագրավ է վարդապետների հրավերով 1906 թ. աշնանն Էջմիածին եկած ճարտարապետ Ռ. Տեր-Սարգսյանի խոսակցությունը Թորամանյանի հետ, որ տեղի ունեցավ Զվարթնոցի վերակազմության շուրջը: Թորամանյանի բացատրությունը լսելուց հետո, այդ ճարտարապետը գիտությանն անհամապատասխան գտնելով նրա վերակազմությունը, ավելացնում է.

— Ինձ նայեցեք, պարոն, ես Պետերբուրգ եմ ուսել, արտասահման եմ եղել, գիտությունը չի՛ ընդունի այդպես բան, չի կարող լինել:

«Այս խոսքին մեջ,— գրում է Թորամանյանը,— անմիջապես զգացի այն սուր հեգնություններու և արհամարհանքներու արմատը, որ հետզհետե մեծանալով պիտի փոխվեր կարգ մը ստորացուցիչ պատվանուններու: Ուստի ես ալ վիրավորված պատասխանեցի.

— Պարոն, վրաս այլուրոտ տեսնելով զիս ջաղացպան մի՛ կարծեք, թերևս ես ալ ունենամ ձեզ պես պարծենալու առիթներ... Երբ տեղին վրա գոյություն ունին իրական փաստեր և ըսածներս ապացուցանող որոշ բեկորներ, ի՞նչպես կարող եմ ձեր ուզածին պես մտածել»[1]:

Իհարկե, Թորամանյանին հաջողվում է տեղում անհերքելի փաստերով ապացուցել ճարտարապետին իր վերակազմության ճշտությունը, բայց վանականներին համոզելն անհնարին է լինում:

Էջմիածնի վարդապետները, ծաղրի ենթարկելով Թորամանյանին, հաշվի չէին առնում նրան այն աստիճան, որ Զվարթնոցի ճարտարապետության մասին խոսք բացվելու դեպքում նրան իրենց հետ նույնիսկ չէին տանում ավերակների վայրը՝ տեղում ստուգումներ կատարելու համար:

Խաչիկ վարդապետը որ, ինչպես ասացինք, միանգամայն զուրկ էր գիտական պատրաստությունից և գտնվում էր մյուս վարդապետների ազդեցության տակ, Թորամանյանի գծագրերից մկրատով կտրեց և հեռացրեց Զվարթնոցի կտրվածքի գմբեթի մասը,

[1] «Մշակ», 1909 թ., № 60:



ասելով, թե հայի եկեղեցին այդ ձևը չի կարող ունենալ: Այդ գծագիրը մինչև օրս էլ մնացել է կտրված:

Այդ մասին «Բյուզանդիոն» թերթի 1908 թվականի № 3717-ում գրված է. «Բոլորը դեմ էին Ներսես կաթողիկոսի տաճարի եռահարկ լինելու մտքին, հատկապես վիճում էին, թե տաճարը կարող էր հայկական թմբուկ ունենալ՝ գմբեթով և այլն: Լսելով դիպլոմավոր ճարտարապետների այսպիսի խիստ դատաստանը, հ. Խաչիկը շտապեց կտրել վերակազմության թերթի համապատասխան մասը»:

1904 թվականի հունիսի վերջերին Թորամանյանն ավարտելով Զվարթնոցի չափումները, անմիջապես մեկնեց Անի՝ ակադ. Ն. Մառի ղեկավարությամբ կատարվող պեղումներին մասնակցելու և այնուհետև մնաց այնտեղ երկար տարիներ ու, իբրև հնագետ ճարտարապետ, մեծ անուն վաստակեց: Թորամանյանն Անիում հանդիսացավ Մառի ամենակարևոր աշխատակիցը և ճարտարապետական մասի իր ուսումնասիրություններով Բագրատունյաց մայրաքաղաքի պեղումների արժեքը բարձրացրեց գիտության աչքում:

Ն. Մառն էլ իր հերթին չափազանց մեծ դեր խաղաց Թորամանյանի կյանքում իբրև նրան ուղղություն տվող և ղեկավարող: Այդ հանգամանքը բազմիցս շեշտել է ինքը՝ Թորամանյանը: Իր՝ Մառին ծանոթանալու մասին Մ. վ. Տեր-Մովսեսյանի դեմ ուղղված հոդվածում Թորամանյանը գրում է. «Իսկապես շնորհակալ եմ և միանգամայն երախտապարտ, որ ձեր հանձնարարականով ծանոթացուցիք զիս մեծանուն գիտնական պրոֆ. Մառի հետ, որուն հովանավորության տակ խաղաղ ու ապահով կատարեցի ոչ միայն ինձի, այլև համայն գիտական աշխարհի համար շահեկան մի մեծ գործ»[1]:

Իր կատարած գործի արժեքի մեծության գիտակցությունը նրան մղում էր ծայր աստիճան բարեխղճության, որը բազմիցս նշվել է գիտական հեղինակավոր հաստատությունների և նշանավոր գիտնականների կողմից: Անիում Թորամանյանի կատարած չափագրությունները քննության առնելու համար Պետերբուրգի Գիտությունների Կայսերական Ակադեմիայի կողմից 1909 թվականին ակադեմիկոսներ Կ. Գ. Զալեմանի, Ն. Պ. Կոնդակովի, Ս. Ֆ. Օլդենբուրգի, ճարտարապետության ակադեմիկոսներ Ն. Վ. Սուլտանովի, Մ. Օ. Պրեոբրաժենսկու և անձամբ Ն. Յ. Մառի անդամակցությամբ կազմված հանձնաժողովը մեծ գնահատության արժանացրեց նրա գործերը և ներկայացրեց Ակադեմիայի ուշադրության: Այդ հանձնաժողովի կազմած արձանագրության 4-րդ կետում ասված է.

«Հանձնաժողովս միաձայն որոշեց հայտնել ի գիտություն [Ակադեմիայի] պատմալեզվաբանական բաժնին, որ նա ճարտարապետ Թորոս Թորամանյանի նկարներին և չափագրություններին տալիս է գիտական-գեղարվեստական մեծ արժեք և համարում է նրա աշխատանքի շարունակությունն Անիում չափազանց օգտակար գիտության և արվեստի համար»[2]:

Հարկ չէ մոռանալ, որ Թորամանյանին Ակադեմիայի ուշադրության հանձնելու գործը կազմակերպել էր Ն. Մառը, որի ջանքերի շնորհիվ Ակադեմիայից Թորամանյանն ստացավ նաև դրամական պարգև:

«Իսկ Անին,— գրում է բանաստեղծ Ավետիք Իսահակյանը,— Անին նրա համար ապրող, շնչող իրականություն էր: Անիի անցյալը նրա աչքում կենդանի ներկա էր. նա տեսնում էր անցած իրերը, դեպքերը, պատկերները: Լսում էր անցյալի ձայնը, զգում էր անցյալը: Անիում նրա համար մեռած կամ կիսամեռ կամ փլատակ իր չկար: Բոլորը նրա առաջ լրիվ կանգուն էին, անթերի և կատարյալ, որովհետև բոլորը նա վերակառուցել էր արվեստագետի իր հրաշագործ և ճշգրիտ երևակայության մեջ: Կարծես, նա աչքով տեսել էր այս հոյակապ շենքերի կառուցող վարպետներին, խոսել էր նրանց հետ,

[1] «Մշակ», 1908 թ., № 60:
[2] «Բյուզանդիոն», 1908 թ., № 3717 և «Ախուրյան», 1908 թ., № 85:

աշակերտել էր, միասին աշխատել, և այսպիսով որսացել էր նրանց վարպետության գաղտնիքները: Ականատե՛սը միայն այսքան կարող էր գիտենալ»[1]:

Անին սիրելու և այնտեղ երկար ժամանակ մնալու առաջին դրդապատճառը եղել է հետևյալ հանգամանքը: Մինչև Հայաստան գալը Թորամանյանը ծանոթ էր Տեքսիեի և մի քանի այլ հեղինակների կողմից հայկական ճարտարապետական մնացորդների հրատարակված չափագրություններին: Երբ տեղում այդ չափագրությունները համեմատության դրեց իրական մնացորդների հետ և տեսավ, որ միանգամայն անհարազատ ու թույլ են, որոշեց երկար ժամանակ մնալ այնտեղ և ճիշտ ձևերով ու չափերով վերարտադրել այդ խոշորագույն հուշարձանները:

1907 թվականի նոյեմբերի 25-ին Պետերբուրգի Կայսերական Ակադեմիային ուղղած իր նամակում Թորամանյանը գրում է.

«1903 թվականին հուլիս ամսո մեջ դիպվածով մը եկա Էջմիածին, և անոր շրջակա հիշատակարանները աչքի անցնելով՝ հետո մտա հայոց հին մայրաքաղաք Անին, հետաքրքրված գիտական ճանապարհորդներու անոր մասին տված շահեկան տեղեկություններեն:

«Անակնկալ նորություն էր ինձի համար տեսնել այնքան գեղարվեստական թանկագին գոհարներով լեցուն անկյուն մը, ուր իբր օվասիս, Արևելքի հնադարյան խավարին մեջ ծլած ու ծաղկած էր, հակառակ զինքը շրջապատող քանդելու, ավերելու միայն ընդունակ, բազմաթիվ ցեղերու շահատակությանց:

«Զիս հետաքրքրեցին անոր ոչ միայն մինչև այն ինձ գրեթե անծանոթ գեղարվեստի գեղեցիկ ու ներդաշնակ հորինվածներու անհուն հարստությունը, այլև մեր ներկա գիտության համար ալ նորություն համարելու չափ շինարարական արվեստի հետաքրքրական մասերը:

«Իբր գեղարվեստի նվիրված խոնարհ մշակ՝ զոհաբերելով սեփական գործերս, և գուցե շատ բան, որոշեցի մնալ ժամանակ մը և իմ լումաս ալ ձգել արևելյան գեղարվեստի այն գանձարանին մեջ, ուր արդեն թափված էին ինձմե առաջ շատ մը արժանավոր մասնագետներու քաղցրիկ պտուղները:

«Թղթատեցի նախ և համեմատեցի այն բոլոր հետազոտությունները, որոնք գրված էին այս քաղաքի ու շրջակայից ճարտարապետության և գեղարվեստի մասին:

«Բայց դժբախտաբար, ցավոք սրտի, ստիպված եմ ըսելու, որ համեմատաբար ավելի շատ էին անոնց մեջ թերի և իրականին անհամապատասխան մասերը:

«Ասոնց մեկ մասը կբաղկանար լոկ ողբերգական ներբողներե, առանց գիտական բացատրությանց, իսկ մեկ մասն ալ քմածին և անհավատարիմ ընդօրինակություններե. նյութի խիստ համեստ քանակությամբ ալ անբավական էին ուսումնասիրությունն համարելու մեծ արվեստի մը, որն որ ապրած էր ավելի քան տասն և հինգ դար, ունենալով իր անկումները, վերածնությունները և վայելչափոխությունները անընդհատ:

«Ոչ ոք դեռ լրջորեն չէ հետազոտած ծագումն ու զարգացումը, փոխանցման և ազդեցության շավիղները, ինքնուրույն ստեղծագործությանց և օտար խմորներու զանազանությունները այն արվեստին, որն որ բղխելով տակավին մեզ անծանոթ աղբյուրներե և ոռոգելով Այրարատյան աշխարհն ու Կովկասը, տարածվեր է հյուսիս և հարավ անհուն փարսախներ հեռուն:

«Բնական էր, որ նախկին հետազոտությանց արդյունքը անբավարար մնային, քանի որ օրերու և շաբաթներու միայն պայմանական ժամանակամիջոցի մը մեջ գիտական ուղևորներ ստիպված էին, գիտության պահանջներու համաձայն՝ տեսնել, չափել և նկարել այն ամենը, որոնք երկար տարիներու գործ էին: Եվ ահա այս պարզ պատճառով ալ հայ-վրացական գեղարվեստը ոչ միայն չունի յուր որոշ պատմությունն և ուսումնասիրությունը, այլև չունի գիտական ուղղությամբ պատրաստված այն լիակատար հա-

[1] Ա վ. Ի ս ա հ ա կ յ ա ն – «Թ. Թորամանյան» (հուշեր), 1934 թ.:



վաքածոն, որոնց ի մի հավաքումեն ժամանակակից մեծ արվեստագետներ կարենային այս բազմադարյան կուլտուրային վրա գաղափար կազմել և զայն բնորոշող վճիռն արձակել: Եվ միևնույն ատեն ջամբել ժամանակակից գեղարվեստասեր սերունդին խնամքով ջոկելով այն մասերը, որոնք անվրեպ կենդանարար սնունդ կարող էին մատակարարել մեր դարու արվեստներուն:

«Հակառակ իմ համեստ և սահմանափակ միջոցներուս, հանդգնեցա, հնարավոր չափով, այս զգալի պակասներեն մեկը, գեթ Անին, որուն մեջ կգտնվի գրեթե հայոց ճարտարապետության ամեն դարու զարգացման նմուշներեն, չափագրել, գծագրել և նկարագրել, նշանաբան ունենալով ինձ միմիայն ընդօրինակությանց մեջ հավատարմություն, չափերու ճշտություն և նկարագրությանց մեջ մանրամասնություն: Այս կերպով, հավատացած էի, որ եթե իմ կարողությենես վեր էր՝ իբր ճշգրիտ ուսումնասիրություն ձոնել գիտական աշխարհին, գոնե գիտնոց սեղանին վրա կդնեի բարեխիղճ և խնամոտ աշխատությամբ պատրաստված հավաքածո մը, որով կվերանար մեծ արվեստագետներու համար ուղևորությանց պատճառած դժվարությունները, և իսկականին անհամապատասխան նկարներու և նկարագրություններու պատճառած մոլորությունները:

«Երբեք չեմ հավակներ իմ գործս ըստ ամենայնի անթերի համարել, քավ լիցի, սակայն բաղդատելով իմ աշխատություններս թե՛ մինչև հիմա երևցած օրինակներուն հետ և թե՛ տեղին վրա իսկականներուն հետ, գոնե պիտի տեսնվի այն մեծ ճիգը, որ ես անխոնջ թափած եմ եղածներեն տարբեր արդյունք արտադրելու համար»[1]:

1904 թվականին Ն. Մառը հիմք դրեց Անիի սիստեմատիկ պեղումներին: Թեև դրանից առաջ, 1892 և 1893 թվականներին էլ էր պեղումներ կատարել, բայց նրանք էպիզոդիկ բնույթ են կրել, իսկ 1904-ին սկսեց կանոնավորապես, տարեց տարի կատարվող պեղումներ, որոնք տևեցին մինչև 1917 թվականը:

Անին մի տեսակ դպրոց դարձավ Կովկասի հնագետների համար: Երիտասարդ կադրերը, գերազանցապես Մառի աշակերտները, այդտեղ էին փորձ ձեռք բերում իրենց մասնագիտության մեջ, ծանոթանում էին պատմական հուշարձաններին և նրանց ուսումնասիրելու մեթոդներին: Այդ պեղումները Կովկասի իրականության մեջ բացառիկ երևույթ էին, և եթե այսօր մենք Բագրատունյաց թագավորության և Անիի պատմությունը գիտենք առարկայական տվյալների հիման վրա և պատմագիրների տված տեղեկությունները կարողանում ենք իսկական նյութական տվյալներով հարստացնել, ճոխացնել և շատ դեպքերում էլ ուղղել, ապա այդ բանում պարտական ենք ակադ. Ն. Մառին, որը միաժամանակ տեղում պատրաստեց մեր կուլտուրան ուսումնասիրող հայ, վրացի և ռուս հնագետների մի ամբողջ խումբ: Դրանցից մեկն էր Թորամանյանը, որը 10 տարուց ավելի մնաց այնտեղ և նախ ուսումնասիրեց ու չափագրեց Անին, ապա անցավ շրջապատի ուսումնասիրությանը: Գլխավորապես ուսումնասիրեց 5–7-րդ դարերին պատկանող ճարտարապետական մնացորդներ Շիրակի գավառում և մասամբ Արարատյան հարթավայրում: Ղեկավարեց մի քանի հուշարձաններ փլատակումից ազատ պահելու նկատառումով կատարվող ռեստավրացիոն աշխատանքները:

Անիում աշխատած տարիներին Թորամանյանը մշակեց հայկական ճարտարապետության զարգացման իր տեսությունը: Բազմաթիվ օրինակներով ցույց տվեց, որ այդ ճարտարապետությունն ինքնուրույն տեսք է ստանում դեռևս մեզ հայտնի հնագույն մնացորդների մեջ, այսինքն 4–5-րդ դարերում, հեթանոսական ճարտարապետության հիմքերի վրա, և զարգացման բարձր կետին է հասնում երկրորդ վերածննդի ժամանակ՝ 7-րդ դարում, երբ մշակվում են ձևերի և շինելակերպի բոլոր հիմնական եղանակները:

[1] Քաղվածքը բերում ենք ձեռագրից:

Այնուհետև հայկական ճարտարապետությունն ունեցել է վերելքներ Բագրատունյաց տիրապետության ժամանակ՝ 10–11-րդ դ.դ. և մասամբ 13-րդ դարում:

Թորամանյանի առաջադրած զարգացումների և անկումների տեսությունը սերտորեն կապված է քաղաքական իրադարձությունների հետ և պատճառաբանված է պատմական տվյալներով:

Հայկական ճարտարապետության զարգացման Թորամանյանի սքեման հիմնված է գերազանցապես կրոնական շենքերի՝ եկեղեցիների ուսումնասիրության վրա, և քաղաքացիական կառուցվածքները մեծ մասամբ նկատի չեն առնված: Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ անցյալի կրոնական շենքերը մեզ հասել են ավելի լավ վիճակում, քան քաղաքացիականները: Թեև մենք ունեցել ենք քաղաքացիական շատ խոշոր և աչքի ընկնող շինություններ՝ թագավորական և իշխանական պալատներ, մեծ ու փոքր քաղաքներ, բազմաթիվ ու բազմատիպ բերդեր (քաղաքները շրջապատող ամրոցներ, միջնաբերդեր, նախարարական ամրացված բնակավայրեր, սահմանային զորակայանների ամրոցներ, ապաստարան-ամրոցներ և այլն), կամուրջներ, որոնք մեր շինարվեստի պատմության համար ունեն խոշոր նշանակություն, սակայն դրանք շատ ավելի վատ են պահպանված, քան քրիստոնեական եկեղեցիները: Կամուրջներից մնացել են մեծ մասամբ նրանց կամարների կրունկները, բերդերից մնացել են միայն շրջապատող միատիպ պարիսպներ, քաղաքներից մնացել են միայն պարիսպների և եկեղեցիների մնացորդներ: Դրան հակառակ, ունենք տարբեր ժամանակների և տարբեր ձևերի պատկանող ամբողջական և ավերակ եկեղեցիներ, որոնց համեմատական ուսումնասիրությունը տալիս է չափազանց ուշագրավ նյութ մեր շինարվեստի պատմության համար:

Ուշագրավ է այն հարցը, թե ինչո՞ւ կրոնական շենքերը լավ են պահպանվել և նորոգվել են շարունակ, իսկ քաղաքացիականներն այդպես անխնա ոչնչացվել են:

Դրա պատճառը հետևյալն է: Հայերն իրենց քաղաքական անկախությունը կորցնելուց հետո այլևս հոգ չեն տարել պետական նշանակություն ունեցող իրենց շենքերի նորոգության մասին, իսկ հաճախակի պատերազմներն ու ավերումները պատճառ են դարձել եղածների ոչնչացման: Դրան հակառակ, կրոնական շինությունները միշտ նորոգվել ու պահպանվել են: Եկեղեցին, իբրև պաշտամունքի վայր, որի հետ կապված են բազմաթիվ ավանդություններ, ուժեղ կերպով պահպանվել է: Նույնիսկ, երբ հնարավոր չի եղել սովորական նորոգությամբ կրոնական շենքը փլատակվելուց փրկել, այդպիսի դեպքերում շենքը պատենավորել են կրկնակի պատերով (Փարբիի, Աշտարակի և այլ եկեղեցիներ): Փլատակված եկեղեցիների քարերն անգամ շատ դեպքերում պահպանվել են, և այդ վայրերը երկար դարեր ծառայել են իբրև ուխտատեղիներ: Նույնիսկ այլադավան թշնամիները շատ դեպքերում սնոտիապաշտական ակնածանքով են մոտեցել քրիստոնեական եկեղեցիներին, վախից ձեռք չեն տվել շենքին և ավերակներից չեն հափշտակել քարերը՝ իրենց նոր կառուցումների համար օգտագործելու: Այնինչ, դրան միանգամայն հակառակ, քաղաքացիական շենքերը, որոնք միայն իրենց բուն նշանակությանն են ծառայել և կապված չեն եղել ավանդությունների հետ, անխնա կերպով քանդվել և ոչնչացվել են: Դվինի և Անիի պեղումները ցույց տվին, որ նախկին պալատների տեղերում, նրանց փլատակների վրա հետագայում կառուցվել են մանր, ողորմելի շենքեր: Իսկ պալատների փլատակները գտնվում են միանգամայն գետնի տակ (Արուճ, Զվարթնոց, Ավան, Դվին, Անի և այլն) և միայն մեծածախս պեղումների շնորհիվ կարելի է լույս աշխարհ հանել: Այդ իսկ պատճառով ճարտարապետության զարգացման ընթացքը հնարավոր է ցույց տալ կրոնական շենքերի հիման վրա:

Անիական տարիներին (1904–1912) է պատկանում Թորամանյանի նախաուսուցիոն ժամանակաշրջանում կատարած աշխատանքների մեծագույն մասը:

Թորոս Թորամանյանը Անիի Առաքելոց եկեղեցու գավթում, 1905թ.

Նկար՝ Արամ Վրույրի

ա) 1905 թվականին «Մուրճ» ամսագրում Թորամանյանը տպագրեց մի փոքրիկ հոդված, որտեղ նա ապացուցեց Զվարթնոցը վերակազմելու իր տեսակետի ճշտությունը: Այդ հոդվածն այժմ տպագրում ենք այս ժողովածուի մեջ, նկատի առնելով, որ հետագայում այլևս նա այդ վերակազմության ճշտությունն ավելի մանրամասն չկարողացավ ուսումնասիրել:

Զարմանալին այն է, որ Անիում 1905–1906 թվականներին բացված Գագկաշեն տաճարի վերակազմության մասին ևս Թորամանյանը չունի հիմնավոր ուսումնասիրություն:

բ) 1907 թվականին Թորամանյանը մշակեց հայկական ճարտարապետության զարգացման իր հիմնական դրույթները, որոնք հիմնավորված կերպով հրապարակ հանեց հետագա տարիներին:

գ) 1909 թվականին հայերեն և ռուսերեն լեզուներով հրատարակեց Էջմիածնի տաճարի հնագույն ձևերի և հետագայում կրած փոփոխությունների մասին իր տեսությունը «Էջմիածնի տաճարը» խորագրով: Ռուսերենը լույս տեսավ „Записки Восточного отделения Императорского Русского Археологического общества" հանդիսի XIX պրակում՝ „О древнейших формах Эчмиадзинского храма (Архитектурно-археологический этюд)" խորագրով:

դ) 1911 թվականին հրատարակեց իր կապիտալ մոնոգրաֆիկ ուսումնասիրությունը «Տեկորի տաճարը»: Նույն թվականին տպագրեց նաև հայկական ճարտարապետության զարգացման իր տեսությունը հիմնավորող մի քանի աշխատություններ և մի շարք այլ արժեքավոր հոդվածներ («Գավիթ և ժամատուն հայոց հնագույն եկեղեցիներու մեջ» և այլն):

ե) 1912 թվականին հրատարակեց «Անի քաղա՞ք, թե՞ ամրոց» ուսումնասիրությունը, որով հերքեց այն ենթադրությունը, թե Անին սահմանափակված է եղել պարիսպների ներսում, և անհերքելի փաստերով ապացուցեց, որ հասարակ ժողովուրդը մեծ մասամբ ապրել է պարիսպներից դուրս:

Անիում եղած տարիներին նա ուսումնասիրեց և չափագրեց բազմաթիվ ճարտարապետական մնացորդներ՝ ոչ միայն Անիում, այլև Արթիկի, Դուզքանդի, Թալինի, Աղինի շրջաններում և այլ տեղերում, գլխավորապես այն ամենը, ինչը նա հետագայում ուսումնասիրությունների նյութ դարձրեց, բայց ցավոք սրտի պետք է նշել, որ այդ չափագրությունների մեծագույն մասն անտիպ մնալով՝ 1919 թվականին անհետ կորավ:

Նախասովետական շրջանում մասնավոր հրատարակությամբ լույս տեսնող հայերեն պարբերականներն ի վիճակի չէին նեղ մասնագիտական հոդվածներ տպագրելու, մանավանդ ճարտարապետական բազմաթիվ գծագրերով ու լուսանկարներով ուսումնասիրություններ: Այդ դրությունն իր կնիքն է դրել Թորամանյանի աշխատությունների վրա, որոնք, չնչին բացառություններով, շատ քիչ գծագրեր ու նկարներ են պարունակում և շատ բանով տարբերվում են Академия Архитектуры-ի այժմյան հրատարակություններից: Այնուամենայնիվ, հայ իրականության մեջ չափազանց մխիթարական երևույթներ էին Գ. Լևոնյանի հրատարակած «Գեղարվեստ» և Ե. Լալայանի՝ «Ազգագրական հանդես» պարբերականները, որոնց մեջ Թորամանյանն այս կամ այն ձևով հրատարակել է իր ուսումնասիրություններից մի քանիսը: Սակայն նա երբեմն էլ ստիպված է եղել օրագրերում և այլ բնույթի պարբերականներում տպագրել իր հոդվածները: Օրինակ՝ մի շարք մանր հոդվածներ է տպագրել թատերական «Հուշարար» պարբերականում, որի խմբագիր Ա. Վրույրը Թորամանյանի աշխատանքի ընկերներից էր Անիում: Նա իր թատերական հանդեսում զետեղել է Թորամանյանի մի քանի հոդվածները, իհարկե, որոշ զիջողություններ պահանջելով նրանից (կլիշեներ քիչ դնել, մասնագիտական տերմիններ շատ չգործածել, ծավալը փոքր անել, բոլորին հետաքրքրող նյութի մասին գրել և այլն):



Այսպիսով՝ տեսնում ենք, որ նախահեղափոխիկոն շրջանում Թորամանյանի համար չափազանց դժվար է եղել ուսումնասիրություններ կատարել և այդ ուսումնասիրությունները համապատասխան եղանակով հրատարակել: Եթե կյանքի զրկանքների գնով հնարավոր էր ուսումնասիրություններ կատարել, ապա նրանք մասնագիտական եղանակով հրատարակելը միանգամայն անհնարին էր, ակադ. Մառն առաջարկում էր Թորամանյանին առանձին հոդվածներով և ուսումնասիրություններով հանդես գալ Գիտությունների Ակադեմիայի և Ռուսական Հնագիտական ընկերության հրատարակություններում, իսկ Թորամանյանն ուզում էր իր ունեցածը միանգամից հրատարակել, այդ պատճառով էլ, պատերազմից անմիջապես առաջ, երբ Վիեննայի պրոֆեսոր Ստրչիգովսկին ցանկություն հայտնեց Թ. Թորամանյանի հետ միասին կազմելու մի մեծ աշխատություն հայկական ճարտարապետության մասին, որի նպատակն էր ճշտված չափագրություններով գիտության ներկայացնել հայկական ճարտարապետության հիմնական կոթողները, ցույց տալով հայկական արվեստի զարգացման կարևոր օղակները և Եվրոպայի կրած ազդեցությունը, Թորամանյանն ընդունեց նրա առաջարկը:

Այդ աշխատության համար Թորամանյանն իր հետ Վիեննա տարավ բազմաթիվ չափագրություններ և լուսանկարներ, որոնք անձամբ ինքն էր կատարել, բայց որոշ պակասներ լրացնելու համար վերադարձավ Հայաստան և, պատերազմն սկսվելով, այլևս չկարողացավ հետ գնալ: Պատերազմի տարիներին Ստրչիգովսկին Թորամանյանի ուսումնասիրությունների հիման վրա գրեց մի աշխատություն և իր անունով հրատարակեց 1918 թվին[1]:

Թորամանյանն իր ընտանիքի հետ միասին չափազանց ծանր օրեր ապրեց համաշխարհային պատերազմի վերջին տարիներին և մանավանդ դաշնակների տիրապետության օրերին: Երբ թուրքերը մտան Ալեքսանդրոպոլ, Թորամանյանը նախ գաղթեց Ղարաքիլիսա (Կիրովական) և այնուհետև Լոռու սարերի վրայով փախավ Թիֆլիս:

«Մշակ»-ում (1919 թ., № 199), Ստրչիգովսկու աշխատության հրատարակության մասին ծանուցելուց հետո, ավելացված է. «Ճարտարապետ Թորոս Թորամանյանը, որի երկար տարիների աշխատանքը հնարավոր է դարձրել այժմ պրոֆ. Ստրչիգովսկու մեծ ուսումնասիրությունը, գտնվում է ներկայումս Թիֆլիսում, իբրև գաղթական: Թողնելով Ալեքսանդրոպոլը, իսկ հետո Ղարաքիլիսան, նա ամիսներ շարունակ ստիպված էր թափառել Լոռվա գյուղերում իր կնոջ և երեք փոքրիկ երեխաների հետ և այժմ, զրկված ամեն բանից, հասել է Թիֆլիս»:

Այդ փախուստի ժամանակ նա կորցրեց իր գիտական արխիվը, բոլոր ձեռագրերը, իր մոտ գտնվող չափագրությունները և լուսանկարների հարուստ ժողովածուի մի արժեքավոր մասը:

Այդ, կարելի է ասել, ամենամեծ հարվածն էր նրա համար, որ հետագայում երբեք չէր մոռանում: Այնուհետև, երկար տարիների ընթացքում նա աշխատում էր վերհիշել և նորից գրել կորցրած աշխատությունները, որ ամեն դեպքում չէր հաջողվում նրան՝ ձեռքի տակ համապատասխան նյութեր չունենալու պատճառով: Իր ասելով՝ աշխատությունների մեծ մասն անդառնալիորեն կորավ:

Թորամանյանն աշխատանքի խաղաղ պայմաններ ստացավ Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո միայն և իր կյանքի վերջին տարիներին գործունեության բեղմնավոր ժամանակաշրջան ապրեց: 1920 թվից սկսած ստացավ կենսաթոշակ և, այդպիսով, տնտեսապես ապահովվեց: 1920 թվին ընտրվեց Էջմիածնի Գիտական ինստիտուտի իսկական անդամ, 1923 թ. մինչև 1930 թ. աշխատեց Հնությունների Պահպանության Կոմիտեում իբրև անդամ և աշխատակից: Այդ տարիներին նա մասնակցեց և ղեկավարեց մի քանի վայրերի պեղումները: Երկու տարի աշխատեց Պատ-

[1] *Josef Strzygowski* – Die Baukunst der Armenier und Europa. Wien, 1918.

*մական թանգարանում իբրև ճարտարապետական բաժնի վարիչ և գրեց «Երևանի Պետական Պատմական թանգարանի ճարտարապետական բաժնի համառոտ հատկանշական ցուցակ»-ը, որից և ներկա հրատարակության համար քաղել ենք մի քանի հուշարձանների համառոտ նկարագրեր: Թորամանյանն իսկական անդամ ընտրվեց մի քանի ինստիտուտների՝ Կուլտուրայի Պատմության Ինստիտուտի, Պատմության և Գրականության Ինստիտուտի և այլն: Այդ թվականներին տպագրվեց «Շինանյութերը և նրանց գործածության կերպը հին Հայաստանում» ուսումնասիրությունը:*

*1934 թվականին տոնվեց Թորամանյանի գիտական գործունեության 30-ամյակը և այդ առթիվ Հայաստանի կառավարությունը նրան տվեց գիտության վաստակավոր գործչի կոչում:*

*Կյանքի վերջին տարիներում նա սկսեց ամփոփել իր ուսումնասիրությունները, կազմելով մի ընդարձակ աշխատություն՝ «Նյութեր հայ ճարտարապետության պատմության» խորագրով, որն ընդգրկելու էր իր ուսումնասիրությունների բոլոր հիմնական հարցերը: Սակայն այդ խոշոր գործը չկարողացավ ավարտել:*

*1934 թվի մարտի 1-ին Թորամանյանը վախճանվեց յոթանասուն տարեկան հասակում:*

ԿԱՐՈ ՂԱՖԱԴԱՐՅԱՆ





ՄԱՄԱ
ԱՌԱՔԵԼԻՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԸ



# [ԵՐԿՈՒ ԽՈՍՔ][1]

Հայաստանի սահմանի մեջ ոչ միայն քրիստոնեական շրջանի մեծ ու փոքր հուշարձաններ անթիվ են, այլև նախաքրիստոնեական շատ հին դարերի կիկլոպյան շինությունների մնացորդներ բազմաթիվ են, որոնց համեմատական ուսումնասիրությունով պիտի տեսնվի, թե նախապատմական դարերի բոլորովին նախնական արհեստները ինչպես աստիճանաբար կատարելության հասան:

Առաջիկա շինարարական արվեստի քննություններից և բաղդատություններից պիտի տեսնվի, որ Հայաստանի մեջ ապրող ժողովուրդը ևս, թերևս քիչ ավելի ուշ, այնուամենայնիվ կատարյալ մրցակից եղավ հարևան մեծ ժողովուրդների շինարարական աշխատություններին և, որ ավելի կարևոր է, նախնադարյան շրջանի մեջ հազիվ ծագում առնող ճարտարապետական արվեստը այնչափ մեծ և բազմակողմանի զարգացման ենթարկվեց, որ միջին դարուն իսկ հրաշալիքներ համարվող կոթողներ կանգնեցրեց:

## Ա

## ԴՈԼՄԵՆՆԵՐ

Հայաստանի մեջ դոլմեններ շատ կան, սակայն ուրիշ երկրներում գտնված դոլմեններից բավականին կտարբերվին: Բավական երկար տևել է դոլմեններ շինելու սովորությունը մեռելոց հիշատակին. այդ պատճառով ալ երկրի զանազան կետերի վրա առաջ եկան շինարարական տարբերություններ: Օտարերկրյա դոլմենները, ինչպես՝ Ֆրանսայի, Իռլանդայի, Հնդկաստանի, թեև շատ հին ժամանակ միմյանց նման էին, բայց հետզհետե շինության տեսակետով միմյանցից տարբերվեցան: Թեև աստիճանական փոփոխման մեջ որոշ դեր կատարեցին նաև հավատալիքները, որ հետզհետե տիրապետում էին մարդկային մտքին, բնականաբար զանազան ցեղերի մեջ տարբեր հասկացողությամբ, և ուղղություն էին տալիս մեռելոց պաշտամունքի ձևերին: Եվրոպայում և Հնդկաստանում վերջին ժամանակներս գտնված դոլմենները, թեև որոշ չափով շինարարական ձևերով միմյանցից կտարբերվին, այնուամենայնիվ բոլորն էլ նորաքարային շրջանին են վերաբերում:

Այդ դոլմենները գետնի մեջ ցից ամրացած քարերի վրա սեղանաձև տափակ դրված մեծամեծ քարերով են ձևացած, և բոլոր քարերն անտաշ, կոպիտ և բնական վիճակի մեջ են օգտագործված, առանց որևէ գործիքի հետք տեսնվելու անոնց վրա. պարզ նկատելի է, որ մարդկային բիրտ ուժն է օգտագործված կառուցման աշխատանքի մեջ:

Ընդհանրապես զանազան ենթադրություններ եղել են դոլմենների մասին, քննողներեն ոմանք զոհի սեղան են կարծել, ոմանք կրոնական որոշ նշանակներ և ոմանք պարզապես համոզվեցին, որ նախամարդու գերեզմաններ էին, բայց ոչ հասարակ մարդու, այլ տոհմապետի և կամ տոհմի մեջ որոշ իշխանություն և դիրք ունեցող մարդու, որովհետև դոլմեններին զուգահեռաբար կան նաև ուրիշ տիպի գերեզմաններ, որոնց մասին պիտի գրեմ իրենց կարգին:

Թափառաշրջիկ կենցաղի շրջանում մարդիկ իրենց մեռելները կլքեին, իսկ նստակեցության ժամանակ սովորություն կար մեռելները զետեղել

[1] Այս ուսումնասիրությունը տպագրվում է առաջին անգամ, հեղինակի ձեռագիր օրինակից: Ձեռագիրը վերնագիր չունի: Վերնագիրը գրել ենք մենք, ելնելով աշխատության բովանդակությունից:

Կազմող

բնական քարայրերի մեջ, եթե իհարկե, իրենց բնակած շրջանում կային բնական քարայրեր: Բայց պատահեցին բնակավայրեր, ուր բնական քարայրեր չկային, ուստի ըստ սովորության, բնականի փոխարեն արհեստական քարայրեր շինեցին և իրենց մեռելները այդ արհեստական քարայր-դոլմենների մեջ զետեղեցին: Շատերի համոզումն է, որ այժմյան բացօթյա դոլմենները երբեմն հողով ծածկված էին, ժամանակի ընթացքում բնական պատահարներով հողը վրաներից գնացել և մնացել են բացօթյա:

Ամենայն հավանականությամբ, նորաքարային շրջաններին պատկանող դոլմեններ շատ կան Հայաստանում, ինչպես՝ Օշական, Փերսի և այլ տեղեր, որոնք կամ կիսովին հողով ծածկված են, կամ մեծ հավանականություն են ցույց տալիս հողով ծածկված լինելու, հետևաբար անոնց հին գերեզմաններ լինելուն կասկած չի մնում, թեև անոնց մեջ, մեծ մասամբ, մարդկային կմախքներ չեն գտնվում:

Օշականում, մի փոքր շրջանի մեջ մի քանի դոլմեններ կան, որոնց օշականցիք Օղուզի տներ են ասում, որ թերևս կապ ունի այս անվանումը ընդհանուր դոլմենների համար ստեղծված ժողովրդական առասպելին հետ: Օշականի դոլմեններն թեև մեծ մասը քարուքանդ եղած են, սակայն անոնցմե պահված են երկու կամ երեք հատ, որոնց վրա կարելի է տեսնել անոնց նախնական վիճակը և գաղափար կազմել Հայաստանի դոլմենների վրա: Այս դոլմենները, ինչպես ասում է հին ավանդությունը, շինված են իբր արհեստական քարայր՝ քարի վիթխարի զանգվածներով և գրեթե ծածկված են եղած հողի ներքև: Բաց են միայն մուտքի կողմերը, որոնք թերևս նախապես հողով ծածկված էին և շատ հետո բացվել են մարդոց ձեռքով, որուն պատճառը ներկայիս մեզ հայտնի չէ: Ճիշտ է, որ անոնց երևույթը կատարելապես քարայրի նման է, մեծազանգված վիթխարի քարերով շինված և վրաները նույնպես կիկլոպյան հսկա անտաշ քարերով ծածկված: Եվ այս բոլորը, իհարկե, շինված են առանց որևիցե շաղախի:

Շինվածքի նախնականության և անկանոնության պատճառով ուղիղ չափել հնար չէր, այնուամենայնիվ, որչափ որ հնար էր չափել, չափել եմ և չափերը մոտավորապես հետևյալներն են.

### Առաջին դոլմեն

Արտաքուստ երկարությունն է 9,70 մ.
» լայնությունն է 6,40 մ.
Ներքուստ երկարությունն է – (քանդված)
» լայնությունն է 2,60 մ.

Շրջապատ պատերը կազմելու համար հսկայական քարեր առանց շաղախի միմյանց վրա դրված են. բայց որովհետև քարերը վրայե վրա հետզհետե առաջակարկառ դրված են, հետևաբար վերևի մասը բավական նեղցած է: Բարձրության միջին մասը 2,60 մ. լայնություն ունի, իսկ դեպի վերև հետզհետե նեղցած է:

Դոլմենի վրա դրված են, բացի կողմնակի մանր քարերից, մեծ քարեր, որոնց չափերը հետևյալներն են.

ա. քար – երկարությունն է 2,10 մ.
» լայնությունն է 1,37 մ.
բ. քար – երկարությունն է 2,11 մ.
» լայնությունն է 1,35 մ.

Այս առաջին դոլմենը շրջապատված է եղել որձաքար անշաղախ պատերով. դոլմենից դեպի արևելք պատի հեռավորությունն է 12,80 մ., իսկ դեպի հյուսիս՝ 11 մ., մյուս կողմի պատերն արդեն քանդած և քարերը տարած են, որովհետև տեղը հետզհետե մաքրելով, մշակելի են դարձնում և այդի տնկում:

### Երկրորդ դոլմեն

Արտաքուստ երկարությունն է 8,00 մ. (գուցե ավելի, որովհետև ծայրից քարերը տարված են)
Արտաքուստ լայնությունն է 4,20 մ.
Ներքուստ երկարությունն է 7,50 մ.,
» լայնությունն է 3,10 մ.

Վրան, իբրև ծածկ, դրված քարերը 172X100 սմ. մեծություն ունին և զանազան ուղղություններ տալով, փակել են գլուխը:

### Երրորդ դոլմեն

(Ճշտիվ չափել կարելի չեղավ, որովհետև քարերը մեծ մասամբ տարված են)

Արտաքուստ լայնությունն է 4,70մ.
Ներքուստ լայնությունն է 1,10 մ.

Առհասարակ, դոլմենները թե՛ արտաքուստ և թե՛ ներքուստ երկարավուն ձև ունին. ներքուստ լայնության կողմի ճակատները, շարքերի նախնականության պատճառով, բոլորշիի նմանություն են տալիս, որն առաջ է գալիս մեծամեծ քարի զանգվածների անհեթեթ ձևերից, որոնցով հնարավոր է ուղղանկյուն կազմել պատի մեջ: Այստեղ ևս, մյուս դոլմենների օրինակով, պատի քարերը առաջամասերում շարելով վերևը նեղցուցած են՝ վրաները հեշտությամբ ծածկելու հարմարության համար:

Այս երեք դոլմեններն իրենց հատկություններով ժամանակակից են, միայն այս վերջինը մի քիչ փոքր է:

Նկ. 1. Օշականի դոլմեններից մեկի մուտքը

Հայաստանի դոլմենների արտաքին ձևերը առհասարակ խախտված են, իսկ ներսի երկարավուն ձևերը պահված են, եթե անոնք ևս (չգիտեմ ի՞նչ դիպվածով) մինչև բերանը քարով և հողով լեցված չլինեն: Շինության ժամանակ, ավելորդ է կրկնել, որ վրայե վրա քարերը միշտ առաջակարկառ զետեղված են, որ վերևը խոշոր քարերով ծածկվելեն հետո, պարզապես կամարածածկի տպավորություն են թողնում, և շատ հավանական է, որ այս ձևով շարված քարերը կամարակապի նախագաղափարներն են եղած:

Նկ. 2. Օշականի դոլմեններից մեկի ներքին պատի անշաղախ շարվածքը

Օշականում, բացի երկարավուն դոլմեններից, եղել են նաև բոլորշի ձև ունեցողներ, որոնց մեծ մասը կամ հողին հավասար են կամ քարուքանդ արված և քարերը դարսված են, միայն թե ծածկույթների բոլորշի քարերը կմնան տեղին վրա: Օշականում, գյուղի կողմի փոքր ինչ զառիվայր տեղի վրա, դոլմենների խմբի սահմանին մեջ, ի միջի այլոց կա մի բոլորշի, վիթխարի դոլմենի ծածկույթի քար, ընկած հորիզոնական ձևով, որուն տրամագիծն է 2,40 մ.: Այս քարի շուրջը և ներքևը պետք է փորել, գուցե ներքևը դոլմենը անաղարտ մնացած է, եթե ծածկույթի այս մեծ քարը ինքնին սահած ընկած չէ, որովհետև այնպիսի անհեթեթ մեծություն ունի, որ մարդկային ուժը բավարար չէր ուրիշ տեղից այդ մեծ քարը տեղափոխելու և այժմյան տեղը բերելու: Իր կարգին կհիշեմ Կափրլի բարձունքների վրա գտնված բոլորշի մեծ դոլմենը, որուն ծածկույթն անհայտացած է, իսկ մեջը քրիստոնեական մատուռի են վերածած հին ժամանակ:

Փերսիում, տակավին գյուղ չմտած, մի քանի բոլորովին ավերված դոլմեններ կան, սակայն անոնցմե երկու հատը, որ չափով ու ձևով որոշ են, միայն մեկ հատը չափագրեցի, որուն մոտավոր չափերը հետևյալներն են.

Արտաքուստ լայնությունն է 2,20 մ.
Ներքուստ լայնությունն է 1,40 մ.
Արտաքուստ երկարությունն է 6,26 մ.
Ներքուստ երկարությունն է (հողով լեցված չափելն անկարելի է):

Վրան ծածկված է չորս քարով, Ա քարը՝ 161X117 սմ., Բ քարը՝ 161X137 սմ.:

Հյուսիսային Կովկասի մեջ մի ավանդություն ընդհանրացած է այն կողմերը գտնված դոլմենների մասին, որը Dubois արձանագրել է իր աշխատության մեջ: Ինչպես երևում է, միևնույն ավանդությունը եղել է նաև Հայաստանում և հետզհետե մոռացվելով ավանդության մանրամասնությունը, Հայաստանում մնացել է միայն «Օղուզի տներ» առասպելական անունը[1]:

Թեև ոմանք պեղումներ են կատարած դոլմենների մեջ և երկաթյա բեկորներ են գտել այնտեղ, սակայն Chantre ժամանակակից չի համարում այս բեկորները դոլմենի հետ, կարևոր է համարում լուրջ պեղումներ անել անոնց ժամանակը որոշելու համար: Ես կարծում եմ, որ Ֆիլիմանովը շատ մեծ սխալ չի անում կովկասյան դոլմեններն երկաթի դարուն վերագրելու, քանի որ մենք գիտենք փաստացի, թե դոլմեններ շինելը շատ երկար դարեր է տևել և, նայելով կովկասյան դոլմենների շինարարական փոքր ինչ ավելի առաջդիմության, կարելի

[1] Օշականցիք իրենց գյուղի շրջակայքում գտնված այս հուշարձաններին «Օղուզի (Հսկայի) տներ» անունն են տալիս, որ մեծ նմանություն է բերում Հյուսիսային Կովկասի մեջ տարածված ավանդության, որ հետևյալն է.
Այս հուշարձանները, իբրև թե, նույն երկրում բնակվող թզուկ ժողովրդի բնակարաններն են, որոնք հարևան հսկա (օ ղ ու զ) ժողովուրդը, գթալով անոնց փոքրության և տկարության վրա, կառուցել է այդ հաստատուն բնակարանները թզուկ ժողովրդի համար: Սալաքարերի մեկին վրա բացված ծակը բնակարանի մուտքն էր (թեև այս մասին ևս զանազան կարծիքներ կան): Ըստ ավանդության՝ այս հսկաներն այնպիսի մեծ ուժով օժտված էին, որ այս հուշարձանների կառուցման յուրաքանչյուր քարը կարող էին իրենց ուսերի վրա փոխադրել: Տարակույս չկա, որ այս ավանդությունը մի ժամանակ տարածված էր Հայաստանի մեջ ևս, որուն հետևանքով մնացել է դոլմեններին «Օղուզի (Հսկայի) տներ» անունը:

է կարծել, որ անոնք երկաթի դարուն պատկանեն: Անհուն տարբերություն կա Հյուսիսային Կովկասի և Հայաստանի դոլմենների շինարարական արհեստին մեջ. հետևաբար, Հայաստանի մի քանի դոլմենների շինություններն այնքան նախնական են, որ չէ կարելի քարի դարից այս կողմ բերել:

Զանազան կարծիքներ հրատարակված են այս ինքնուրույն գերեզմանական ճարտարապետության սկզբնական ծագման մասին: Ենթադրում են, որ մեռելոց բնակարան կանգնելու գաղափարը, մահվանից հետո կյանքի շարունակության հավատացող ժողովրդի մեջ կարող էր ծագում առնել:

## Բ

## ՀՈՂԱԴԱՄԲԱՆՆԵՐ ԵՎ ՔԱՐԱԴԱՄԲԱՆՆԵՐ

Դոլմենների դարավոր տևողության զուգընթաց պետք է համարել մեծամեծ հողադամբանները և քարադամբանները: Գերեզմանական ճարտարապետության սկզբին կազմակերպվում էին մեծամեծ հողադամբանները և քարադամբանները, քան հասարակ դոլմեններն ու կրոմլեխները:

Իմ տեսած հողադամբաններից ամենից մեծը և ուշադրության արժանին, գեթ Հայաստանի համար, պետք է համարվի Օշականի Գյուլլե-կոնդ անվանված մեծ հողադամբանը, որը կգտնվի Օշական գյուղի հարավ-արևելյան կողմը, Դիտի-կոնդ անվանված բնական մեծ բլուրին հարավակողմը: Այս Դիտի-կոնդ անվանվածը մի փոքր լեռ համարվելու չափ մեծ բլուր է և նախաքրիստոնեական շրջանում ևս գագաթին եղել է ամրոց և շենքեր՝ պարիսպով փակված: Քրիստոնեական սկզբնական շրջանին ևս նույնպես շեն եղած է թե՛ գագաթը և թե՛ լանջերը. լանջերուն վրա շինվել են զանազան դարերի շենքեր, որոնց մասին պիտի գրեմ իրենց կարգին:



Նկ. 3. Օշականի Գյուլլե-կոնդը

Գյուլլե-կոնդը բավական մեծ հողադամբան է: Տեղի վրա, կոնդի երևույթը ցույց է տալիս, որ արհեստական մի մեծ բլուր է և ստորին կողմեն երկու կարգ որձաքար անշաղախ պատերով շրջապատված է եղել, բայց ի՞նչ բարձրությամբ են եղած շրջապատ պատերը, այժմ հայտնի չէ, որովհետև հիմերը միայն մնացել են:

Դիտի-կոնդի լանջի վրա պարզ հայտնի է այն մասը, որտեղից փորել են հողը, կրել են հանդիպակաց հարմար վայրը և կազմել են Գյուլլե-կոնդ անվանված մեծ հողադամբան բլուրը: Եթե քննենք այս հողադամբանի հողը կամ հողի բաղադրությունը հանդիպակաց մեծ Դիտի-կոնդի լանջի վրա փորված տեղի հողի հետ և բաղդատենք, երկուքն ալ միևնույն հողն են, կարմրագույն չեչաքարի բեկորներով խառն, որով կասկած չի մնում, որ մեծ կոնդից փորված է հողը, տարված հանդիպակաց Գյուլլե-կոնդի տեղը և կազմված է հողադամբանը: Բացի 2 երկրաբանական նշաններից և հողի բաղադրությունից, անվիճելի կերպով հայտնի է փոսացած և խորացած այն տեղը Դիտի-կոնդի լանջի ստորոտում, որտեղից փորել և տարել են հանդիպակաց հողադամբանի համար:

Եր. Լալայանին հայտնի եղած է այս բլուրի արհեստական լինելը և որոշած էր հարմար առթիվ պեղման ենթարկել: Սակայն, ինչպես երևում է, տնտեսական սուղ պայմանների մեջ էր ձեռնարկած պեղումը և այդ պատճառով արդյունքը մեծ չէ եղած: Անշուշտ, տնտեսական սուղ միջոցներն են պատճառ, որ փոխանակ պեղման օրենքով լանջի ներքևից, որոշ տարածության վրա հեռվից փորելով առաջ գնալու, ուղղակի գագաթից էր սկսել պեղումը և հորի նման իջել էր ցած, որպեսզի շուտ իմանա բլուրի ներքին բովանդակությունը Մասամբ նպատակին հասել էր Եր. Լալայան. ինչպես պատմում են ականատեսներ, երբ գագաթից հորի նման փորելով իջել էր ցած, դուրս էր եկել մի մեծ դամբարան, որը շրջապատված էր նաև զանազան իրեղեններով: Բայց թաղված գերեզմանի շուրջը գտնված իրեղենները նախապես դուրս հանելէ հետո է, որ իսկական գերեզմանը բաց անել հնարավոր պիտի լիներ: Ուստի տեղի խորության պատճառով, գտնված իրեղենները, հակառակ ամեն տեսակ զգուշության, չեն կարողացել անվնաս դուրս հանել և մեծ մասամբ ջարդ ու փշուր եղած են: Եվ որովհետև այդ ժամանակ նյութական միջոցները ևս սպառվել էին, ուստի վերջ էր տրված պեղման, առանց իսկական գերեզմանը բաց անելու: Ի՞նչ արդյունք է ունեցել այս պեղումը և ո՞ւր են փոխադրված այս բլուրից հանված առարկաները, ինձ հայտնի չէ:



Օշականի Գյուլլե-կոնդի նման մեծ բլուրները, ըստ իս, պետք է համարել տոհմապետի դամբարաններ. ուստի մի շարք տեսակետներ նկատի ունենալով, պետք է վերստին հետազոտության ենթարկել այս մեծ արհեստական բլուրը, և այս անգամ, իհարկե, պեղման պահանջած կանոններով նախաձեռնել գործին:

Նույնպես տոհմատիրական ժամանակների արհեստական մեծ հողային բլուր է Կափրլի գյուղի մոտ Շահ-թափա անվանված նեղ ու երկար բլուրը, որի երկարությունը ավելի քան 120 մետր է, լայնությունը 30 մետր, իսկ բարձրությունը 4 մետրից ավելի է: (Գյուղացու ձեռքով մշտնջենական վարելահողի վերածված լինելուն պատճառով, իր նախկին իսկական չափերը չեն մնացել. իմ նշանակած թվերը մոտավոր չափեր են): Բնականաբար, բլուրի ներքև նիստն ավելի ընդարձակ տեղ է բռնած, որովհետև ամեն կողմից լանջերը դեպի ներս թեքված են և վերևից անշաղախ որձաքար պարիսպով շրջապատված է եղել: Այս արհեստական բարձրության մոտ գտնվում են նույն ժամանակներին պատկանող երկու մեծ ամրոցներ և այդ երկու ամրոցների մեջ՝ քաղաքատեղ և ջրի երկար ճանապարհներ:

Այս բլուրի ավանդական Շահ-թափա անունը պետք է հետաքրքրե հնագետ-գիտնականներին, գոնե մասնակիորեն պեղելու այդ վայրը, որով հայտնի կլինի թե ինչե՞ր են թաղված այս հողաթումբին տակ: Շահ-թափայի մի ծայրն ամրացված է տեղում բնական ժայռերի վրա, իսկ մյուս ծայրը պարզ հողային ամբարտակ է կազմված: Այս ծայրին մոտ է, որ բացված են ծակեր և այս ծակերեն ներս, դեպի ցած, ավելի քան մեկ և կես մետր երկարությամբ զավազաններ մտնում են դեպի վար կամ շեղակի և ցույց են տալիս, որ ներքևը պարապ չէ և շինարարական մի գործողություն կատարված է, և ի՞նչ կարող է լինել, քան մի ստորերկրյա դամբարան: Հայտնի չէ, թե հին ժամանակ ինչպե՞ս էր այդ բլուրի վերևի պարսպամասը. այժմ թե՛ շրջապատ հիմեր հազիվ են երևում և թե՛ վրան բոլորովին մաքրված ու վարելով արտի է վերածված:



Նկ. 4. Կափրլի գյուղի Շահ-թափա հողաբլուրը

Մի արհեստական մեծ բլուր ևս կա Շիրակավան (Բաշ-Շորագյալ) գյուղի արևելյան ծայրին, որուն գագաթի վրա այժմ կտեսնվի 7-րդ դարու մի եկեղեցիի ավերակ: Այս արհեստական բլուրը, թեև Օշականի Գյուլլե-կոնդի ծավալը չունի, այնուամենայնիվ մի մեծ հողադամբան է. և գուցե 7-րդ դարում իսկ, անծանոթ այս հատկության, գագաթին շինել են չափավոր մեծությամբ մի եկեղեցի, որուն ավերակները կերևան այժմ: Արդյոք տեղի արհեստականությունը և հողի անհաստատությունը չէ՞ր պատճառ տված գագաթի շենքի անհաստատության և անժամանակ փլուզման:



Նկ. 5. Ալիաթի դամբարանը Փոքր Ասիայում

Բաղդատության համար դնում եմ այստեղ Լյուդացվոց Ալիաթ թագավորի մեծ հողադամբանը (նկ. 5), որուն տակն ամփոփված էր թագավորի մարմինը: Այս ձևի հողադամբաններ կան Փոքր Ասիայում գրեթե 7-րդ դարուց (մ. թ. ա.) սկսած. ամենայն հավանականությամբ, բարձրաստիճան տոհմականին մեծ հողաթմբի տակ թաղելու այս սովորությունը Փոքր Ասիայից է եկել Հայաստան:

Թեև ոչ այնքան մեծ, ինչպես նախորդ նկարագրածներս, այնուամենայնիվ միջակ և փոքր մեծությամբ հողադամբաններ շատ են գտնվում Արարատի և Արագածի շրջաններում: Դյուզքենդի շրջանում, մի քանի գյուղերի մեջ, ինչպես՝ Հոռոմ, Դիրակլար և և այլն և այլն, Բ. Խալաթյան բավական քանակությամբ հողադամբաններ պեղել է. թե ինչե՞ր է հանել այդ հողադամբաններեն և ո՞ւր է տարել հանած իրեղենները, հայտնի չէ:

Այժմ հետաքրքրվողը կարող է տեսնել այսօրինակ հողադամբաններ ոչ միայն նախապես հիշված տեղերում, այլև Հաջիղարա, Հարամլու, Աղամնատուն, Ղզնավուզ, Աղջակալա և այլ գյուղերի սահմաններում, բացի հողադամբաններից, նաև քարադամբաններ: Մասնավորապես դեպի Կոչ և Շամիրան գնալու ճանապարհների երկու կողմի վրա շատ կան հողադամբաններ և քարադամբաններ:

Այս քարադամբանները, ինչպես երևում է, Հայաստանին հատուկ են և երբեմն անոնցմե վիթխարի մեծություն ունեցողներ կան: Այս քարադամբանները, ամենայն հավանականությամբ, շինել են մեծամեծ հողադամբանների փոխարեն, և փոխանակ հողով մեծ ու փոքր բլուրներ ձևացնելու, միջակ և փոքր քարեղեն քարակույտերով ձևացուցել են վիթխարի դամբաններ թե՛ երկար և թե՛ բարձր:

Սարդարապատի մոտից դեպի Թալին երկարող ճանապարհին, Թալին գյուղի մոտ գտնված բարձունքների ստորոտում, գնալիս ճանապարհի աջ կողմին, ամայի դաշտի մեջ, կգտնվին քառասունե ավելի հսկայական քարակույտ դամբաններ. ճանապարհի ձախ կողմին ևս կան, սակայն քանակով քիչ և աջ կողմինին նման մի կարգի վրա շարված չեն: Այս դամբարանները ոչ միայն ուսումնասիրված չեն, այլև այսօրինակ քարակույտ դամբաններ եզակի են գրեթե համաշխարհային դամբարանների մեջ: Այս դամբարանները եթե պեղվին, հետախուզվին և ուսումնասիրվին, պատմական շատ մեծ նորություններ պիտի մատակարարեն: Թեև գտնվել են գյուղացիներ, որոնք այդ դամբարան քարակույտերի ներքև ոսկի երազելով, ամիսներ աշխատել են մի քանի մարդոց ընկերակցությամբ, մի երկու դամբարանների քարակույտերը տեղափոխել են, սակայն, հակառակ իրենց ակնկալության, խիստ հուսախաբվել են. քարաբլուրի ներքև փոխանակ ոսկի գտնելու, գտել են գետնափոր դռներ, գետնուղիներ, ստորերկրյա երկար գնացքներ, բայց չեն համարձակվել երկար հետազոտելու, մեկ խոսքով՝ վախեցել են. այսպես են պատմում Մեծ Թալինի ծերերը:

Քարակույտ դամբարաններ կան նաև Խըզնավուզից դեպի Շամիրան գնալու ճանապարհի երկու կողմի վրա. սոսնք թեև մի քիչ փոքր են, քան Թալինի քարադամբանները, սակայն միևնույն հատկանիշներն ունին արտաքուստ և միևնույն ստորերկրյա պարունակությունը:

## Գ

## ԿՐՈՄԼԵԽՆԵՐ

Գերեզմանական ճարտարապետության մեջ, հողադամբաններից, քարադամբաններից և դոլմեններից հետո, իբր մահվան մշտնջենական հիշատակարան, կրոմլեխները եղան ժողովրդի համար՝ հավանականաբար նախապես նկարագրված մեծ դամբարաններին զուգահեռաբար. որովհետև եթե նախընթացները տոհմապետներին հատուկ էին, կրոմլեխները ևս հասարակ ժողովրդյան մշտնջենական հուշարձանները եղան մահվանից հետո:

Կրոմլեխները ևս երկար դարեր շարունակեցին իրենց գոյությունը, ունեցան պարբերական զարգացում և անկում արհեստագործական տեսակետով:

Կրոմլեխների բոլորակ շրջագիծը Հայաստանի մեջ ընդհանրապես սև քարերով է կազմված. այդ գույնն անպատճառ ունեցած է իր կրոնական նշանակությունը, և յուրաքանչյուր գերեզմանի համար պարտավորիչ էր այդ բոլորակ շրջագիծը, որ անշուշտ ուներ նաև կրոնական նշանակություն, ինչ ձև ու մեծություն ալ որ ունենար գերեզմանը: Հայաստանի մեջ մեծ հողադամբանները (ինչպես՝ Օշական) ստորին կողմից կրկնակի շրջագծված են մեծազանգված անտաշ և անշաղախ քարե պատերով:

Հայաստանում ամեն շրջանի մեջ միօրինակ չեն կրոմլեխները, ոմանք բոլորովին նախնական արհեստագործությամբ են շինված, ինչպես Հաջիղարայի մոտի մեծ գերեզմանատունը, իսկ ոմանք փոքր ի շատե որակավորված արհեստավորի կազմած են, ինչպես՝ Շամիրան գյուղին կից գերեզմանատունը և Աղամնատուն ու Հարամլու գյուղերի սահմանի վրա գտնված կրոմլեխը:



Նկ. 6-ը Աղամնատան և Հարամլվի սահմանի վրա գտնված մեկ հատիկ կրոմլեխն է, որ բացառությամբ 3–4 քար պակասի, շատ լավ շինված է և լավ ևս պահված: Այսչափ կատարելությամբ շինված կրոմլեխ ուրիշ տեղ ինձ չէ հաջողված տեսնել: Աղամնատնից քիչ ավելի ստորին աստիճանի վրա են Շամիրանի գերեզմանատան կրոմլեխները, որոնց մասին իհարկե շուտով կարտահայտվիմ:

Արագած լեռան շուրջը բազմաթիվ կրոմլեխներ կան զանազան տեղերու վրա և տրամագծային տարբեր չափերով: Տեղեր կան, ուր ընդարձակ գերեզմանատներ եղած են, սակայն գյուղացիք մշակության նպատակով տեղահան են արել և մաքրել են գերեզմանների շուրջը եղած սև քարերով շրջագծերը. և ահա, ընդարձակ գերեզմանատան մեջ հազիվ մի քանի կրոմլեխներ մնացած են: Անշուշտ, ժամանակի ընթացքում հնացածներն ալ պիտի կորչեն:



Ա.

Բ.

**Նկ. 6. Կրոմլեխ և գերեզման՝ Աղամնատան և Հարամլվի սահմանի վրա**

Հաջի-Խալիլ գյուղի շրջակայքում և այդ շրջանի բոլոր քրդական գյուղերում ոչ միայն դոլմեններ կան, այլև բազմաթիվ կրոմլեխներ, որոնց մանրակրկիտ ուսումնասիրությունն անհրաժեշտ է գիտության համար:

Մի ընդարձակ տարածություն է բռնում Հաջիղարայի մոտի հին, նախաքրիստոնեական գերեզմանատունը, որ սկսվում է Օշականից և ընդհատումներով անցնում է Քասաղ գետը, հասնում է մինչև Հաջիղարայի գետեզերքը, այնուհետև գետի հանդիպակաց կողմը, դարձյալ ընդհատումներով, կհասնի մինչև Շամիրան գյուղը՝ Ղզնավուզի կողմից, իսկ Աղամնատնից Կոչ գնալու ճանապարհի վրա տարածված է ավելի քան երկու կիլոմետր:

Ինչպես կերևի, այս շրջանում, անհիշատակ ժամանակի մեջ իսկ եղել է մարդկանց հոծ բազմություն և վերոգրյալ տարածությունը շատ երկար ժամանակ ծառայել է իբրև հասարակաց գերեզմանատուն, որովհետև այս ընդարձակ գերեզմանատան մեջ է, որ կգտնվին ոչ միայն արհեստագործական տեսակետով տարբեր զարգացում ունեցող կրոմլեխներ, այլև տարբեր գերեզմանական ձևեր:

Հաջիղարայում երեք տեսակ կրոմլեխներ կան: Մի տեսակը, որ կտարածվի դեպի արևմուտք և կհասնի գետեզերք, գերեզմանները միայն մի կլոր շրջագծով են՝ սև քարից կազմված. շրջագծի քարերն անտաշ են և միմյանցից բավական հեռու շարված՝ ինչպես դրուիդներից մնացած կրոմլեխները: Այս մասն անջատված է առանձին պարիսպով: Պարիսպի արևելյան կողմը, որ բավական ընդարձակ հողամաս է, իր մեջ կպարունակե զանազան ձևի հետաքրքրական հուշարձաններ:

Կրոմլեխները, փոխանակ մեկ արտաքին շրջագծի, ունին երկու շրջանակ մեջեմեջ. արտաքին շրջագծի քարերը բավականին խիտ շարված են և շրջագծի քարերը տնկված են բարձրության վրա. սակայն, առաջին շրջանակին մեջ ամփոփված երկրորդ փոքր շրջանակին քարերը թե՛ փոքր են և թե՛ տափակ դրված են. միջին բոլորակի տրամագիծը հազիվ արտաքին բոլորակ շրջագծի կեսի չափ է: Բավական խիտ են այս մասի մեջ կրոմլեխները. այստեղ կան նաև փոքրիկ քարաբլուրներ, կրոմլեխներից բոլորովին տարբեր: Այստեղ կան նաև երկու մեծ բոլորակ աշտարակների մնացորդներ, որոնց մասին կարգ կու գա խոսելու:

Գերեզմանատան այս մասը, ինչպես արևմուտքից, նույնպես և արևելքից փակված է պարիսպով. պարիսպները շինված են անշաղախ մեծամեծ որձաքարերով: Այս երկու պարիսպներեն դուրս երևում է մի երրորդ գերեզմանատուն, որը մեկ կողմեն ձգվում է դեպի Օշական, մյուս կողմեն դեպի հարավ, Էջմիածնի կողմը: Այս մասի մեջ գտնված կրոմլեխներն ունին նախորդներից բոլորովին տարբեր տիպ, և պետք է ըսել, որ խիստ աղճատված: Շրջապատ բոլորակների քարերը մեծ մասամբ տարել են, միայն հողաթումբերն են մնացել մի քիչ բարձր մակերևույթով, որոնցով պարզվում է այս վայրերի գերեզմանատուն լինելը: Մոտավորապես կես կիլոմետր դեպի արևելք բացել էին մի ընդարձակ քարահանք. այս քարահանքի մեջ ևս գտնվեցին հեթանոսական շրջանի գերեզմաններ և տարբեր չափերի զանազան խեցեղեն ամաններ, առանց մետաղյա որևէ իրեղենի: Գերեզմանատների այս մասի մեջ երևում են քարակույտ դամբարանների մնացորդներ, սրանցից մեկը չափազանց որոշ է, որ նման է այն մեծ քարակույտ դամբարաններին, որոնց տեղը և նկարագիրը պիտի

տամ ներկա աշխատության մեջ, միայն թե այստեղ հիշած քարակույտ գերեզմանները փոքր են և հավանական է, որ սովորական մարդկային ընկերականությունից մի քիչ բարձր խավի ննջեցյալներ են այս քարակույտերի ներքև թաղվողները: Հակառակ գերեզմանատան այս մասի ընդարձակ տարածության, շատ ցանցառ են երևում կրոմլեխների մնացորդներ, այնուամենայնիվ պարզ է, որ մշակության նպատակով, քարերը մաքրել և հողը արտի համար վարել են:

Աղավնատան հյուսիսային կողմը գտնված հին գերեզմանատունը, որ մասն է Հաջիղարայի ընդարձակ նախաքրիստոնեական շրջանի գերեզմանատան՝ բաժանված միայն Քասաղ գետով, հետաքրքրական է իր զանազան բովանդակությամբ:

Երկու տեսակ կրոմլեխներ կան այս ընդարձակ գերեզմանատան մեջ: Մի տեսակը շատ նման է Հաջիղարայի գերեզմանատան արևմտյան մասին, նույնպես անտաշ սև քարերով շրջագծված է, բայց բոլորակի մեջտեղ, հողի ներքև, հատկապես տաշված քարով, հանգուցյալի դիրը արկղաձև շինված է, իսկ վրան ծածկված է մի մեծ սալաքարով: Երբեմն կան փոքր ի շատե կանոնավոր տաշված մաքուր քարերով արկղաձև զույգ դիր ունեցողներ՝ ծածկված մեծ զույգ սալաքարերով: Այս տեսակի գերեզմաններ ևս ունին անպայման բոլորակ շրջագիծ (թեև մեծ մասամբ տարված են, բայց հանված տեղերը որոշ են): Շրջագծեր կազմող սև քարերն ուրիշ տեղերից ավելի բարձր են և մոտավորապես նման են Աղավնատան ու Հարամլվի սահմանի վրա գտնվածներին, բայց Աղավնատան հողի վրա գտնված կրոմլեխներին ավելի նման: Շրջագծի քարերն ավելի մոտ են միմյանց, միայն թե քարերի գլուխները, փոխանակ միաչափ ուղիղ հորիզոնական կտրված լինելու, անհավասար բարձրությամբ և երբեմն մեկ կողմի վրա շեղ կտրված և դեպի ցած հակված են: Չեմ գիտեր, թե սկզբի՞ց ևս այդպես եղած են շրջագծի քարերը, թե՞ հետագային զանազան դիպվածներով փոփոխություններ կրելով, այսօրվան ձևն ստացել են:

Աղավնատան և Հարամլվի սահմանի վրա եղող կրոմլեխի (Նկ. 6) սև քարե շրջագիծը, բացառությամբ 3–4 քարերի, գրեթե անաղարտ մնացած է: Փոքր ի շատե անաղարտ և մաքուր տաշված բարձր շրջագծով շինված լինելն ինձ պարտավորացուց, որ նաև չափեմ այս բոլորակ շրջագծի տրամագիծը, որովհետև անաղարտ մնացած լինելը նաև գրավական էր ճիշտ չափվելուն: Պարզ աչքով թեև բոլորակ կերևա շրջագիծը, բայց չափերը ցույց են տալիս, որ փոքր ինչ ձվաձև է, որովհետև մեկ կողմեն չափելով կգտնենք 8, 10, իսկ մյուս կողմից չափելով կգտնենք 9, 10 մ.: Հայտնի բան է, որ բոլորակը կազմել են աչքի չափով, որով փոխանակ բոլորակի, ձվաձև է դուրս եկել: Այս շրջագծի մեջ երկու մեծ տապանաքարեր են ձգված, երկուքն ալ անտաշ սալաքարեր, և իրենց լայնության կրկինը երկայնություն ունին:

Աղավնատան սահմանում կրոմլեխները բազմաթիվ են, սակայն գյուղացիք, արտի և այգիի վերածելու համար, քարերը հետզհետե մաքրում և վարում են հողը. նույնիսկ վարելու ժամանակ գտնվում են զանազան չափի խեցեղեն ամաններ՝ հազիվ երևացող շրջանակի մեջ, բայց տակավին մետաղյա իրեր չեն երևցած: Այս գերեզմանատան մեջ ընդհանրապես կրոմլեխների չափերը գրեթե միօրինակ են, միջին հաշվով 4–5 մետր տրամագիծ ունին: Մոտականներում կան ընդհանրապես շրջագծեր, որոնք 8–10 մետրի կհասնեն, ինչպես Հոռոմ գյուղում: Իսկ Աղավնատան շատ մոտ, Աղջակալա գյուղում թեև 8–12 մետր տրամագծով բոլորակ շրջագծեր կան, սակայն գտնվում են նույն գյուղում նաև անկանոն բոլորակներ, որոնք 45-ից մինչև 65 մետր տրամագիծ ունին, այս ընդարձակ գերեզմանատներն են, որ գյուղացիք փորում և հողը տանում են իրենց արտերը պարարտացնելու համար. նաև այս փորումների ժամանակ հաճախ գտնում են մեծ ու փոքր խեցեղեն ամաններ, նույնիսկ կարասներ:

Տարբեր շրջանի արհեստագործություն են երևում Շամիրան գյուղի կողքի հնագույն գերեզմանատան կրոմլեխները: Այս գերեզմանատան մեջ, թեև նախնական ձևով, կրոմլեխներ շատ կան, բայց գոյություն ունեն նաև մաքուր տաշված քարե բոլորակ գերեզմանաշրջանակներ. բոլորակ շրջագծի քարերը թեև ցած ու երկար են, սակայն շատ ավելի կանոնավոր կերպով միմյանց միացված են և բոլորակը կազմած:

Նկ. 7. Մենաքար (մենհիր) Շամիրան գյուղում

Նկ. 8. Մենաքարի նմուշ (Հայաստան)

Կրոմլեխների մեծ մասին կընկերանա (անշուշտ հնագույններին) մի մենհիր (մենաքար), որոնցմե ոմանք շրջագծի շարքին զետեղված են, իսկ ոմանք շրջագծի կենտրոնին վրա: Այս գերեզմանատան կրոմլեխների ոմանց շրջագծերից երևում է, որ քարի արհեստագործությունը մի քիչ ավելի առաջ գնացած է, թերևս գործիքներնին ևս ունեցել են կատարելագործումներ, որովհետև ոչ միայն քարերը (շրջագծերի) որոշ չափով կանոնավոր տաշված և միացած են, այլև շրջագծերու բոլորակները ևս ավելի կանոնավոր են. իմ կարծիքով՝ Շամիրան գյուղի գերեզմանատունը ևս երկար դարեր ծառայել է իբրև գերեզմանոց, որովհետև սկսած ամենանախնականից մինչև փոքր ինչ արհեստագործական կանոնավոր ձևակերպումներ կերևան այնտեղ. այս գերեզմանատան մեջ պեղումները մեծ պարգևներ և նորություններ կուտան գիտության: Ժամանակի տեսակետով այս վերջին կանոնավորված շրջագիծների երևույթը միանգամայն համոզիչ է, որ երկար դարեր այստեղը գերեզմանատուն եղած է, ուրեմն, մեկ խոսքով, այստեղ կգտնվին թե՛ նախնադարյան շրջանեն մնացած և թե՛ քրիստոնեության մոտիկ փոքր ի շատե կատարելագործված գործիքներով աշխատված քարագործություններ: Հին կրոմլեխներուն մոտ հաճախ չեն երևում մենաքարեր, բայց գերեզմանական ընդարձակ տարածության մեջ կան մենաքարի բազմաթիվ կոտրտուքներ, որ, անշուշտ, հետագա ժողովրդի քմահաճույքների հետևանքն է:

Եվրոպայի զանազան կողմերում, մասնավորապես ֆրանսիական Բրետան գավառի մեջ բազմաթիվ են մենաքարեր:

## Դ

## ԲՈԼՈՐԱԿ ԱՀՏԱՐԱԿՆԵՐ

Որոշ չափով, զարգացման շրջանի գործեր են երևում այն աշտարակի մնացորդները, որոնք գտնվում են Հաջիղարայի, Օշականի, Աղավնատան և Աղջակալայի շրջաններում: Աղավնատան շրջանում, Կոչի ճանապարհի վրա գտնված աշտարակի մնացորդը, որ համեմատաբար ավելի լավ պահված է, և տեղացիք Օյտղ անունն են տալիս, կառուցված է բոլորովին բոլորակ և տրամագիծ ունի 8,40 մ.: Ո՛րչափ եղած է բարձրությունը, հայտնի չէ. միայն թե աշտարակի վերևի շարքի վրայից մինչև շրջապատի փլատակների վրա 4,80 մ. է, իսկ փլատակի քարերը, անշուշտ, գետնից վերև բարձրություն ունին առնվազն 3 մետր. ուրեմն, այս աշտարակն այժմ կանգուն պետք է համարենք ավելի քան 8 մետր: Մի կողմի վրա ունի մի քառակուսի դուռ, որուն լայնությունը և բարձրությունը հավասար մեկ մետր են: Աշտարակի դռնից ներս մտնել հնար չէ, որովհետև բարձրությունից քարեր, ինչպես դուրսը, բոլորտիքը թափել են, այնպես ալ թափել են մեջը՝ շրջապատի բարձրության հավասար: Բոլորակ աշտարակի շուրջը հյուսված քարերի երկարությունը, միջին հաշվով, 70 սանտիմից պակաս չէ, թեև ավելի երկարները և ավելի կարճերը ևս կգտնվին: Բոլոր քարերն անշաղախ դրված են միմյանց վրա և փոքր ի շատե որմնադիրներու մշակած գործ է երևում, քան Օշականի դղյմենները և տոհմատիրական ամրոցներից ոմանք, որոնք պիտի նկարագրվին իբրև ճարտարապետական նախափորձեր: Համենայն դեպս, այս աշտարակի շինությունը և քարերի տաշվածքը բրոնզի շրջանի հատկություններ են ցույց տալիս:

Նկ. 9. Աղավնատան մոտ՝ Օյուղ կոչվող բոլորակ աշտարակի մնացորդը

Հաջիղարա գյուղի մոտ, նախաքրիստոնեական մեծ գերեզմանատան հարավային մասի մեջ կան երկու միմյանց մոտ բոլորակ աշտարակների մնացորդներ, գրեթե նույն տրամագծով, ինչպես Աղավնատան սահմանի մեջ Օյուղ անվանված աշտարակը, սակայն այս մնացորդներն ավելի նախնական և արվեստագործությամբ ավելի ստորին աստիճանի վրա են: Բարձրությունից շատ փլած են. հազիվ մեկ և կես կամ երկու մետր բարձրությամբ պատեր մնացած են, իսկ փլած քարերն ամբողջովին տարված են, ինչպես ուրիշ շատ քարեր տարել են այս գերեզմանատնից: Շրջապատ պատերի համար գործածված քարերն ավելի մեծազանգված ու անկանոն են և գրեթե գործիքների հետքեր հազիվ երևում են վրաները, շարվածքը նույնիսկ կոպիտ և անշաղախ, և պարզ երևում է, որ ավելի հնագույն է, քան Աղավնատան սահմանի աշտարակը: Օյուղի աշտարակի բոլորակ հատակագիծը բավական կանոնավոր է, բայց Հաջիղարայի գերեզմանատան զույգ աշտարակների կազմության մեջ պարզ հայտնի է այն ճիգը, որ որմնադիրներ ի գործ դրել են կանոնավոր բոլորակ հատակագիծ ստանալու համար և լիովին չեն հաջողել:

Այս գերեզմանատնից դեպի հյուսիս-արևելք 3–4 կիլոմետր հեռավորության վրա կա մի բոլորակ աշտարակի մնացորդ, որ շատ նման է Աղավնատան սահմանի Օյուղ անվանված աշտարակին թե՛ արհեստագործությամբ և թե՛ մնացորդ հանգամանքներով: Դուռ ունի արևմտյան կողմից՝ մեկ մետր քառակուսի, նույնպես ներքին կողմի մուտքը խափանված է վերևից թափված փլատակ քարերով: Այս աշտարակի շուրջը ընդհանրապես քարքարուտներ են ընդարձակ տարածության վրա և տեղ տեղ երևում են կրոմլեխներ: Շրջակա գյուղացիք, իհարկե, անծանոթ այս աշտարակի ծագման և անոր կոչման մասին, մի ավանդություն ստեղծել են և այդ ավանդության հիման վրա արդար Դավթի անվանում են այս աշտարակը կամ՝ արդար Դավթի աշտարակ[1]:

Այս բոլորակ աշտարակներից մի մնացորդ ևս կա Անիի և Բագնայրի մոտերքը (եզդիաբնակ Ղոզլիճա գյուղ), Ալաջա լեռան արևելյան կողմը, վերջին բլուրի գագաթի վրա, որը նույն տրամագիծն ունի նախորդ նկարագրությունների հետ: Արհեստագործությամբ շատ նախնական է և գրեթե նման Հաջիղարայի գերեզմանատան մեջ գտնված զույգ աշտարակներին: Շուրջը մաքրված է քարքարուտներից, միայն հեռվից կիկլոպյան անշաղախ երկու շարք պարիսպներով փակված է: Այս մասին ավելի մանրամասն գրել եմ իր ժամանակին «Ազգագրական հանդեսի» մեջ:

Իմ տեսածներից վերջիններն են այս ձևի աշտարակների մնացորդները, որոնք այժմ գոյություն ունին Էջմիածնի մոտ Աղջակալա գյուղի եզերքին: Բացի այն մեծ գերեզմանատնից, որ մինչև այժմ փորում և հողը տանում են արտեր պարարտացնելու համար, այս վայրին մոտ մի աշտարակի մնացորդ կա գրեթե հողին հավասարված, 10 մետր տրամագծով: Նույն ուղղությամբ դեպի հարավարևելք կա մի ուրիշ բոլորակ աշտարակի հիմք, որ 21 մետր տրամագիծ ունի: Այս մեծ ու փոքր բոլորակ աշտարակների մնացորդներից դեպի արևելք կա մի ուրիշ, սրբատաշ քարերով և կրաշաղախով

[1] Պերճ Պռոշյան այս վերջին ավանդությունն ընդհանրացնում է, իր «Կովածաղիկ» վեպի ԻԹ. գլխի նյութ չինելով: Պերճ Պռոշյան այս ավանդությունը պատմում է մոտավորապես հետևյալ կերպով.
Զափազանց մեծ հարգանքի արժանացած մի սուրբ ճգնավոր իր մենավոր բնակությունը հաստատել էր այս աշտարակի մեջ, և որպես թե ճգնական չափազանց ժուժկալ կյանք էր անցընում: Ամեն օր գալիս էր Էջմիածնի տաճարը գետնատարած աղոթելու համար: Այդ միջոցներին Էջմիածնի ուսումնարանից շաբաթը մի աշակերտ անհետ կորչում էր. միաբանների կողմից այս կորած աշակերտները գտնելու համար գործադրված ամեն հնարք և խուզարկություն անօգուտ էր անցնում: Մեծ մտահոգության և վշտի մեջ էին այդ ժամանակվա ոչ միայն միաբանները, այլ և այն ժամանակվա կաթուղիկոսը: Ուստի կաթուղիկոսը մի օր իր մոտ կանչելով «Արդար Դավթին», դիմում է անոր օգնությանը և ասում է. «Ի՞նչ անենք, Դավիթ հայր, դու սուրբ մարդ ես, մի ճար արա այս անբաղդությունին».– պատասխանը լինում է խուսափողական և կատարելապես իր անմեղությունն ապացուցանող. ասում է. «Հսկում, պատարագ արեք, արժանավորաց աղոթքը բարեխոս լինի և այլն և այլն»: Բայց հետաքրքիր է, թե ինչ հետևանք է ունենում այս չափազանց մտահոգիչ պարագան: Մի օր Էջմիածնի վանքի մեջ կանգնած տեղը, արդար Դավթի մեջքին կպցրած մի թուղթ են տեսնում, թղթի վրա գրված է լինում, թե՝ «ի սեր աստուծո, ինձ ազատեցեք այս տեղից. արդար Դավիթն ինձ խաբելով բերեց իր տունը. էգուց պտի ինձ մորթի ուտի, իմ բոլոր ընկերներին սա է կերել»: Էս գրողն եղել է վանքի կորած մոնթերից մինը: Իհարկե առ ժամայն ձերբակալել են, և իր աշտարակի մեջ ձեռը, ոտը կապած ձգել են վառած կրակի մեջ ու այրել են ի պատիժ իր մարդակերության:



շինված մի բոլորակի մնացորդ, որը 4,50 մետր տրամագիծ ունի և 80 սանտ. պատերի հաստություն: Նախկին բոլորակները, ըստ Աղջակալա գյուղացիների, գերեզմաններ են, որոնց մեջեն շարունակ գտնում են զանազան մեծությամբ խեցեղեն ամաններ, և հողերը տանում են արտեր պարարտացնելու, բայց այս վերջին բոլորակ շինությունը վերջերս ևս նկատված է իբրև ուխտատեղի. գուցե այս մի ավանդության շարունակությունն է, որ գալիս է նախաքրիստոնեական ժամանակներից. վերջերս ևս, նույն ավանդության հիման վրա, նորագույն ձևով, սրբատաշ քարերով և կրաշաղախով նորոգել են և ժողովրդական ուխտատեղի դարձրել են:

## Ե

## ԱՄՐՈՑՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առանձին խմբերի բաժանված տոհմեր, երբ նստակյաց դարձան և հաստատվեցին երկրի զանազան մասերի վրա, գլխավորաբար տոհմերի հարձակումներից պաշտպանվելու համար, որ հաճախ պատահում էր, իրենց կազմած համայնքի համար մի առաջնորդողի կարիք ունեին, որուն գլխավոր արժանիքը պետք է որ լիներ կռիվների մեջ քաջություն և պատերազմասիրություն: Իսկ երբ ընտրությունը վերջանում էր, այն ժամանակ և միշտ չափազանց խոնարհությամբ և հնազանդությամբ ամբողջ համայնքը հպատակվում էր առաջնորդին և անձնվիրաբար կատարում անոր բոլոր հրամանները:

Դարերի ընթացքում այս համայնքներե ոմանք մեծացան, բազմացան և որոշ չափով կրթվելով անկախ պետություններ կազմեցին:

Ճարտարապետության մի պատմաբան կենդանի և ընորոշ պատկեր է տալիս նախնադարյան ժողովրդի քաղաքական կենցաղի համար և ասում է. «Ամեն լեռ մի իշխանություն էր, ամեն ժայռ մի ամրություն և ամեն մի քարայր՝ մարդկային բնակարան. հարկը պահանջած ժամանակ շրջակա համայնքների ղեկավարներ մի միություն կկազմեին արտաքին թշնամուն վանելու համար, իսկ [երբ] արտաքին թշնամուց ապահով լինեին, անդադար միմյանց դեմ կկռվեին»:

Հայաստանի սահմաններում մինչև այժմ գոյություն ունեցող բազմաթիվ կիկլոպյան շենքերի մնացորդները, որոնց մեծ մասը բերդեր, տոհմատիրական ամրոցներ և բնակարաններ են, անվիճելի կերպով ապացուցում են բազմաթիվ անկախ տոհմերի գոյությունը և միմյանց դեմ անդադար կռիվը: Այդ տոհմերն այլևս գոյություն չունին. հին պատմության մեջ հազիվ անոնց մեկ քանիի մասին պատմական հիշատակություններ կան: Այդ տոհմերի քաղաքական կյանքի չարքաշ գործունեության և ինքնապաշտպանության համար գործ դրած միջոցներն են փոքր ի շատե մնացել և հասել մեզ, որոնք բերդեր, ամրոցներ են առանց նույնիսկ ներկայիս գիտցվելու, թե ո՛ւմ և ո՛ր տոհմին են պատկանում. նույնիսկ ներկա Հայաստանի մեջ այնքան խիտ տարածված, մեծազանգված քարերով կառուցված կիկլոպյան ամրոցները և բերդաքաղաքները հայտնի չէ, թե ո՛ր համայնքին են պատկանել:

Նախքան իմ անձամբ տեսած և հետազոտած ամրոցների ու բերդաքաղաքների նկարագրությունը, շահեկան եմ համարում գեթ ուրվագծել այն մտածելակերպը և ձեռնարկները, որ ունեցել են նախամարդիկ, ամրոցների և բերդաքաղաքների տեսակետով, հարմար տեղերի ընտրության համար:

Ամրոց կամ բերդ չինելու համար, երևում է, որ մի ընդհանուր կանոն ունեցել են նախնիք տեղի ընտրության, և այս ընդհանուր կանոնեն հազվադեպ բացառությամբ չեղվել են:

Ամրոցը պետք է չինվեր մի բարձր սարի վրա, որը միևնույն ժամանակ լիներ նաև մի հրաբխային խիտ քարքարուտ: Այս սարը գագաթից շրջապատվելուց հետո, գագաթի վրա կչինվեր տոհմապետի բնակարանը և անոր համար պետք եղած առանձին հարկաբաժինները: Սարը, իր դիրքին և հարմարության համեմատ, գագաթից մինչև ստորոտը պետք է որ շրջապատված լիներ երեքից մինչև յոթը կարգ պարիսպներով: Տոհմատիրական ամրոցի բարձր սարը հեռվից պետք է շրջապատված լիներ բարձր բլուրներով, որոնց գագաթների վրա ևս չինված էին ամրոցի պարիսպներ, բայց ոչ այնչափ զրահավորված պարիսպների խտությամբ, ինչպիսին էր տոհմապետի ամրոցը: Իսկ այս մեծ ու փոքր բլուրների ընդգրկած միջավայրը քաղաքատեղին էր, որը նույնպես բարձր էր դաշտերից, անտարակույս, անմատչելիությունն ի նկատի ունենալով:

Ամրոցների և բերդաքաղաքների համար ընտրված քարքարուտ սարերն աննպատակ չեն եղած: Այն ժամանակվա պատերազմական տեսակետով, քարքարուտ սարերը մի անառիկ դիրք կստեղծեին ամրոցներին և բերդաքաղաքներին: Բացի պատերազմական անառիկ դիրքի ստեղծումը, շինարարական տեսակետով ևս անփոխարինելի

օգուտներ էին տալիս, երբ ի նկատի առնենք, որ այն ժամանակ, երբ պատերի և պարիսպների մեջ հսկայական մեծազանգված քարեր էին գործածում, ոչ միայն այս մեծազանգված, այլև փոքր քարերն անգամ փոխադրելու միջոցներ չկային, և այն ժամանակվա մարդիկ օգտվում էին քարքարուտ սարերից, նույնիսկ տեղի վրա գտնված քարերը նույնությամբ օգտագործում էին թե՛ ամրոցների, թե՛ տոհմապետի բնակարանների և քաղաքների անհատական շինությունների համար:

Մեծ սարի գագաթի վրա գտնված մեծազանգված քարերը հազիվ բավականացնում էին տոհմապետի բնակարանի և հարակից կարևոր հարկաբաժինների համար և գագաթի շրջապատ թանձր պարիսպի համար: Իսկ բլուրի լանջերի վրայի մինչև ստորոտը զանգված քարերն օգտագործում էին սարը շրջապատող մի քանի կարգ պարիսպների համար: Քաղաքը շինելու համար, նմանապես տեղի վրա գոյություն ունեցող քարերը բավական էին այն ժամանակվա տները կառուցելու համար: Հին ժամանակվա տները շատ պարզ էին. առհասարակ միահարկ էին գրեթե առանց բացառության. ներքին մեկ բաժանում միայն ունեին, շատ հազվադեպ էին երկու բաժանում ունեցող բնակարաններ: Վրանները փայտով ծածկված երդիկներ էին: Պատուհանների մասին ոչինչ չգիտենք, որովհետև ամբողջ բարձրությամբ պահված տներ չկան, ավերակների մեջ տների պատեր հազիվ մեկ կամ մեկ ու կես մետր բարձրությամբ մնացել են, որոնց վրա պատուհանների հետքեր չկան. ամենայն հավանականությամբ լուսամուտներ կտուրից էին բացված:

Բացի շինարարական կարգերի մեջ քարքարուտ սարերի և բլուրների օգուտը, մի ուրիշ անփոխարինելի առավելություն ևս ունեին, ինչպես վերև ակնարկեցի, բերդ ու քաղաքներ անառիկ կդառնային: Եթե թշնամին հարձակում գործեր քաղաքի կամ ամրոցի վրա, այն ժամանակվա պատերազմական գործիքներով գրեթե անհնար էր մոտենալ, որովհետև ամրոցը շրջապատող քարքարուտներն շատ դժվար էր անցնել և առաջանալ պաշարող բազմության կողմից, և որովհետև, ըստ ընտրության տեղի, առհասարակ զառիվայրի վրա էին քաղաքները, ուստի ամրացած քաղաքացիներն ինքնապաշտպանության համար, ինչպես վկայում է մի հին պատմագիր, վերևից ցած քարեր գլորելով մնասում էին հարձակվող թշնամուն. և թշնամին սիրտ չէր անում առաջ գնալ, գիտնալով, որ անսպառ քարեր կան վերևը և շարունակ ենթակա են իրենք քարահալած լինելու:

Իմ այցելած նախապատմական բերդեր և բերդաքաղաքներ միևնույն դարաշրջանի գործեր չեն. գեթ այդպես են ցույց տալիս որմնաշինական բազմատեսակ նախնական արհեստագործությունները: Այդ պատճառով, նախաքրիստոնեական շրջանի նախնական որմնաշինությունը երեք զանազան զարգացման և բարեփոխության ենթարկված եմ համարում մինչև քրիստոնեական թվականը: Բոլորովին հին, նախնադարյան ժամանակի այնպիսի մեծազանգված քարերով ամրոցի պատեր կան, որոնք, կարող եմ ասել, թե որմնաշինական գործիքներ բնավ գործածված չեն շինության ժամանակ, պատի հսկայական քարերի վրա ոչ միայն որմնաշինական գործիքների հետքեր չկան, այլև կազմված պատի քարերը շարք չունին, միմյանց վրա ահավոր քարերի կուտակումներ են, լարաձիգ ուղղության հետք չկա, աչքի չափով, տեղին վրա հարմարցնելով շինված պատեր են: Կրաշաղախը բնականաբար անծանոթ էր, իսկ մեծազանգված չոր քարերի կուտակումով կազմված պատերն ավելի ճիշտ կլիներ, փոխանակ պատի կամ պարսպի, արգելափակ անվանել: Ահա որմնաշինության այս ձևն է, որ ես վերագրում եմ առաջին շրջանին:

Կան նաև պատեր և պարիսպներ, որոնք թեև մեծազանգված քարերով անշաղախ շինված են, սակայն փոքր ի շատե հառաջադիմություն են ցույց տալիս որմնաշինության մեջ: Հիրավի, դարձյալ քարերի կարգ չկա, այնուամենայնիվ նախընթաց շրջանի նման կուտակումներ չեն, անկանոն ձևով քարերի իրարու վրա զետեղումն առաջ եկած դատարկությունները, ըստ հնարավորության, փոքր քարերով լեցված են: Մեծամեծ քարերի պատահական անկանոն բարակ պոչերը կտրելով, անշարժ զետեղման հարմարեցրած են տեղի վրա: Սա արդեն երկրորդ շրջանն է:

Գալիս է մի ուրիշ շրջան, որի ժամանակ ոչ միայն պատի քարերը համեմատաբար փոքրանում են, այլև հատ-հատ քարերի վրա երևում են քառակուսելու և լարաձիգ ուղղությամբ պատի մեջ շարելու ճիգերը: Նույնիսկ նկատվում են քարեր, որոնք ամբողջովին տաշված են: Այս տաշված քարերը գործածված են անկյունների և դռների բարավորների համար: Ավելի կանոնավոր տաշված են ուրարտական շրջանի բևեռագիր քանդակված քարերի երեսները: Եղվարդի մոտ, Դովրի գյուղի մեջ, նախաքրիստոնեական հին ամրոցի քարերի մեջ համեմատաբար ավելի շատ են սրբատաշ որձաքարեր:

Իմ կարծիքով, քարերի այսքան մաքուր տաշվածք կարելի էր միայն երկաթի գործիքներով



ստանալ: Ուստի, բնականորեն կարելի է հետևցնել, որ տաշված որձաքար երեսներով կառուցված շենքերը երկաթի դարու և երկաթե գործիքների արտադրած գործեր են: Իմ երկար հետախուզական ճանապարհորդության ընթացքում երկու տեղ միայն տեսած եմ մաքուր տաշված բազալտ քարեր: Այդօրինակ քարեր նախ երևում են Արմավիրի շրջանում, որ, ըստ ամենայնի մաքուր տաշելուց հետո, շատերի վրա բևեռագիր արձանագրություններ փորագրված են: Երկրորդ՝ Դովրիում. այս գյուղում բևեռագիր արձանագրություններ չեն երևում (գուցե եղել են և ժամանակի ընթացքում անհետացել են), բայց կառուցված փոքր միջնաբերդի կամ դղյակի պատերի մեծ մասը տաշված բազալտ քարից են: Այս երևույթն ինձ ենթադրել է տալիս, որ Դովրիի ամրոցը շատ ուշ ժամանակ շինված է (անշուշտ ուրարտացիների օրով): Այնպես որ, այն ժամանակ, երբ որ երկաթի գործիքները բավականին կանոնավորված էին և գործածությունն ընդհանուր եղած էր:

Ինչպես վերև ակնարկեցի, արդի Հայաստանի մի փոքր սահմանի մեջ այնքան խիտ կերպով տարածված կիկլոպյան ամրոցներ և ամրոցների հովանավորության տակ քաղաքատեղիներ ցույց են տալիս, թե այդ փոքր մասի մեջ քանի՞ համայնքներ կային և ի՞նչ քաղաքական ու տնտեսական հարաբերության մեջ էին միմյանց հետ:

Նախնական բերդեր և բերդաքաղաքներ գտնված շրջաններում, հետագային, մինչև մեր օրերը կյանքը շարունակող բնակիչներ հետզհետե մաշեցուցել են այդ բերդերն ու ամրոցները, և հազիվ մնացել են հաճախ շրջապարիսպների հիմքերը. պատերը հետզհետե քանդել են և քարերն իրենց անձնական պետքերի համար են գործածել: Նույն վարմունքն ունեցել են նաև քաղաքատեղիների հետ, մեծ մասամբ բնակարանների քարերը մաքրելով, վարելահող են դարձրել: Իսկ կան այնպիսի վայրեր, որոնք ոչ միայն որոշ չափով պահել են ամրոցներն իրենց պարիսպներով և պարսպապարփակ շենքերի ավերակներով, այլև մի քանի շարք պարիսպներով շրջապատված բարձր բլուրների ստորոտում՝ քաղաքատեղիներ բարձր ամրոցի հովանու ներքև: Այս մնացորդ քաղաքատեղիների մեջ պարզ կերպով կարելի է որոշել բնակարանները, քաղաքի փողոցները և ուրիշ կուլտուրական մնացորդներ: Ահա այս բազմադարյան ավերակներն են, որ կարելի է որոշ չափով նկարագրել և ճարտարապետական ու շինարարական տեսակետով կարծիքներ հայտնել, որոնք պիտի պարպեն նաև շինության ժամանակը կամ դարաշրջանները:

Նախնադարյան շրջանի սկզբից մինչև քրիստոնեական թվականի նախօրյակը Հայաստանում գոյություն ունեցող ամրոցների և քաղաքատեղերի անունները հետևյալներն են, որոնց ես անձնապես այցելել և ուսումնասիրել եմ.

1. Արմավիր
2. Հաջի-Խալիլ
3. Հոռոմ
4. Աղյաման
5. Կափըլի
6. Ամբերդ
7. Զեյվա
8. Կուլիջան
9. Կանլիջա
10. Շիրվանջուղ
11. Օշական
12. Մահմուդջուղ
13. Թալին
14. Արմտլու
15. Կոխդայիրման
16. Գյավուր-դալա
17. Աղջակալա
18. Ղըզնավուզ
19. Աղավնատուն
20. Աղթամուր
21. Դովրի
22. Հաջիղարա
23. Հարամլու
24. Ցրանգանոց
25. Ղոթուր (յայլա)
26. Շամիրան
27. Կարսի շրջան

Այս ցուցակի մեջ սահմանափակ թվով գրված են կրոմլեխներ և մենհիրներ պարունակող տեղերի անունները:

Վերոգրյալ ցանկը միմիայն պատմական Այրարատյան նահանգի մեջ գտնվածների ցուցակն է, այն էլ ոչ լրիվ: Բավական թիվ կկազմեն նախնադարյան այն ավերակները, որոնք ես չեմ տեսած և չեմ կարող անոնց մասին որևէ կարծիք հայտնել: Իսկ եթե ամբողջ Հայաստանը խուզարկենք, գուցե իմ տված ցուցակի տասնապատիկն ավելի ավերակներ գտնենք, քան ինչ որ ես տեսել եմ:

Իմ վերոգրյալ ցուցակի մեջ գրված տեղերում գտնված ավերակների մասին պիտի զբաղվիմ այն ամրոցների և բերդերի նկարագրությամբ, որոնք տեղի վրա թողել են չափազանց բնորոշ հետքեր, նշանակելի չափով գոյություն ունին շրջապարիսպների երկար մասեր, բնակարանների հատակագծեր, ընդարձակ քաղաքատեղիների և բնակարանների մնացորդներ, որոնցով մոտավորապես հայտնի կլինին անոնց շինության դարաշրջանները: Իսկ այն վայրերը, ուր ամրոցների հազիվ հետքերը կան, սակայն ունին ուրիշ ուշագրավ հնություններ, ինչպես՝ դոլմեններ, կրոմլեխներ և այլն և այլն, մասնակի պիտի հիշատակեմ անոնց մասին:

**Արմավիր.**— Արմավիրը մեծ քաղաքի ավերակ է. ունի իր մեջ թե՛ բերդաքաղաքի և թե՛ քաղաքատեղիի որոշ և հետաքրքրական մնացորդներ, հավաքվել են բևեռագիր արձանագրություններ այդ ավերակներից և տեղում կան նաև մի քանի ժայռագիր հունարեն արձանագրություններ: Մեծ

գիտնականների ձեռքով մասնակի պեղումներ եղել են այդ մեծ ավերակին մեջ. բայց, իհարկե, այդ մեծ ավերակի մեջ փոքր պեղումներ բավարար չեն: Նայելով թե՛ մասնավոր պեղումների արդյունքին և թե՛ անհատների ձեռքով գտնված պատմական անգնահատելի արժեք ունեցող իրերին, չհաշվելով բազմաթիվ բևեռագիր արձանագրությունները, որոնք այժմ գտնվում են Երևանի Պատմական թանգարանում, Արմավիրի պեղումները չափազանց կարևոր են մեր անցյալի պատմության համար:

**Հաջի-Խալիլ.**— Նախնադարյան ամրոցների մեջ, իմ կարծիքով, ամենից հնագույններից մեկն է Հաջի-Խալիլ գյուղի մոտի բազմադարյան բերդը և քաղաքատեղին: Այս ամրոցին Հաջի-Խալիլ գյուղացիք Ղալա լիչի (միջնաբերդ) կանվանեն, առանց նշանակությունն իմանալու իրենց տված անունի և տեղի պատմական անցյալը: Շատ քայքայված է այս ամրոցը, սակայն չափազանց ուշագրավ է իրեն ժամանակակից հնագույն ամրոցների հետ համեմատելով: Նախապատմական առաջին շրջանների սովորության համաձայն, ամրոցի համար ընտրված է այժմյան գյուղի մոտիկ չափազանց քարքարուտ սարերի ամենաբարձրը, որի գագաթի վրա շինված է իր ժամանակի իշխանի կամ տոհմապետի բնակարանը, ուրիշ հարակից փոքր շինություններով:

Հնագույն շրջանում, երբ որմնաշինական մշակված գործիքներից և քարերի տեղափոխության անհրաժեշտ միջոցներից զուրկ էին, առհասարակ ընտրում էին քարքարուտ սարերն իբրև բերդատեղի և անոնց ստորոտն իբրև քաղաքատեղի՝ տեղի վրա գտնված քարերն օգտագործելու համար: Այդ քարքարուտի քարերն ևս, առանց փոխադրելու, տեղի վրա օգտագործելու համար, մենք կտեսնենք, որ արհեստ և ճարտարություն միանգամայն բացակայում է, մարդկային բիրտ ուժն է շահագործված այն ժամանակվա որմնաշինության մեջ:

Ինչպես կտեսնվի պատկերների մեջ, ամբողջ լեռը շրջապատված է զանազան հորիզոնական, միմյանցից մի քանի քայլ հեռավորության վրա, կիկլոպյան պարիսպներով: Բացի հորիզոնական շրջապատումից, տեղ-տեղ, վերևից դեպի ցած շառավիղաձև պատեր են շինված, հորիզոնական պատերի արանքում, իբր արգելափակ՝ ամրոցի լանջի մեկ մասից մյուսն անցնելու, որովհետև, գուցե պատերազմական նպատակներով, սարալանջը զանազան մասերի էին բաժանած վերևից ցած իջնող պարիսպներով:

Չափազանց հետաքրքրական են այս սարի շուրջ պարսպելու համար գործադրված ջանքերը. տեղի վրա երկար քննելով այս նախնական պարիսպների կազմության եղանակները, քննությանս արդյունքն այստեղ համառոտ կերպով արձանագրել հարմար կդատեմ:



Նկ. 10. Հաջի-Խալիլ գյուղի տոհմատիրական շրջանի ամրոցը հարավ-արևելքից



Ինչպես կերևի այստեղ դրված լուսանկարներից, սարը գրեթե կոնաձև է, ուստի շրջապատ պարիսպները որոշ չափով բարձրացնելուց և անկանոն թափված քարերից մաքրելուց հետո, աստիճանավոր մի մեծ բուրգի երևույթը կստանար: Հայտնի չէ, թե վերևի՞ց են սկսած որմնաշինությունը, թե՞ ներքևից, արդյունքը նույնն է: Այժմ ենթադրենք, թե սարի ստորոտից են սկսած որմնաշինությունը, բայց որովհետև տակավին անգիտակ էին նույնիսկ կառուցելի պատին որոշ ուղղություն տալ և ուղղության համեմատ փոքր ի շատե հիմք պատրաստել մեծազանգված քարերը շուռ տալով այս այն կողմ հազիվ հազ հարդարած են հատակը: Քննությունը ցույց տվեց, որ հիմք չունին պատերը, գրեթե հողի երեսի վրա դրված են մեծ դժվարությամբ, այդ պատճառով հնար չէ եղած լարաձիգ ուղղություն տալ պատին, այլ, ըստ հարմարության, երևույթով միայն հորիզոնական, հատակը պատրաստված է առաջին շարքով միմյանց անհամապատասխան մեծ ու փոքր քարեր միմյանց քով գետեղելով: Երկրորդ շարքի համար վերևից նորից գլորել են քարեր և իրենց հսկայական ծավալով մի կերպ տեղավորել են հատակի առաջին շարքի վրա. բայց այս անգամ մի անհեթեթություն է դուրս եկած, որովհետև եթե մարդկային ուժով մի հնար գտել են քարը քարի վրա բարձրացնելու համար, բայց ուղիղ մի շարքի վրա բերելու հնար չէ եղած, ուստի ընկած դիրքի մեջ աշխատել են քարերի զանգվածները հաստատել, որպեսզի քարերն անշարժ լինին և հնարավոր լինի քարերի երրորդ շարքը գետեղելու: Այս նորագույն ձեռագործ շարքերով որովհետև բարձրացել էր պատը և շատ դժվար պիտի լիներ գլորված նորանոր քարեր պատի վրա հանելու, ուստի նախապես հող լեցուցել են սարի կողմի երեսի վրա շարքերի վերին մակերևույթին հավասար և այնուհետև գլորել են վերևից նոր քարեր, որոնց մի կերպ տեղավորել են նախորդ շարքերի վրա: Այս երեք շարքերը, որ այժմ կան պահված, պատը բարձրացուցել են մոտավորապես երեք մետր, սակայն վերևի մասերը քանդված լինելու պատճառով, հայտնի չէ այժմ, թե ի՞նչ բարձրության հասցուցած էին պատերը: Միայն թե նախորդ շարքերը շարելու եղանակով հաջորդաբար իրար վրա շարել են մեծազանգված քարեր մինչև որ հասել են նախապես ծրագրված բարձրության:



Նկ. 11. Հաջի-Խալիլ գյուղի մոտ տոհմատիրական շրջանի ամրոցի քարերի կուտակումով կազմված պարիսպի նմուշ

Այս քարակուտակումներով կազմված պարիսպները մոտից նկարված են բերդասարի հարավային կողմից: Այստեղ նկարագրված ձևով կտորկտոր շինելով և միմյանց կցելով, բոլոր բերդասարը գագաթից մինչև ստորոտ մի քանի անգամ շրջապատել են: Իսկ վերևից դեպի ցած շառավիղաձև պատերը գրեթե նույն ձևով շինված են, որպես արգելափակ: Այս տեսակ որմնաշինությունը մի սոսկալի տանջանք է կառուցողների համար, որ անվիճելի ապացույց է քարերը ձևավորելու և տանելի դարձնելու համար գործիքներ չգտնվելուն և մեծամեծ քարերը տեղափոխելու համար փոխադրական միջոցներ չլինելուն: Այս տեսակ որմնաշինությունը եթե բաղդատենք մեր ժամանակի որմնաշինության հետ, պիտի տեսնենք, թե հիները պատեր չէին, որ շինում էին, այլ քարակույտեր դեպի սարի գագաթ բարձրացող վերելքը խափանելու համար: Նախքան ամրոցի ստորոտի պարիսպի դռնից ներս մտնելը, պետք է անցնել ամրոցը շրջապատող քաղաքատեղիով՝ ուր տեղ-տեղ հայտնի են թե՛ փողոցներ և թե՛ բնակարանների անաղարտ մնացած հատակաձևեր: Ստորին պարիսպի արևելյան կողմի վրա է ամրոցի առաջին դռան տեղը: Այս առաջին դռնից ներս մտնելով, մի լայն ճանապարհ կառաջանա դեպի հյուսիս, մոտավորապես երեսուն կամ քառասուն քայլաչափ. այստեղ ճանապարհը երկուքի կբաժանվի, մեկ ճյուղը կառաջանա դեպի հյուսիս-արևմուտք և հայտնի չէ, թե ուր կտանի, որովհետև սաստիկ քայքայումով խառնված են քարակույտեր, իսկ մյուս ճյուղը հյուսիսային ուղղությամբ շեղակի կբարձրանա մինչև գագաթ՝ ամրոցի վերին շրջափակի դուռը, որ կգտնվի ուղիղ հյուսիսային կողմի վրա: Դռան բարավորները քանդված են, սակայն ելումուտից մաշված ստորին շեմը տակավին կմնա: Գագաթի դռնից ներս, ամրոցի ներքինը մի երկար քառակուսի ձև ունի, մի քայլ ներսից, արևելյան կողմի վրա սկսվում է մի մեծ բնակարանի շինության հատակաձևը զանազան բաժանումներով, որ, անտարակույս, տոհմապետի հատուկ է այս մասը: Այս բնակարանի արևմտյան կողմը, միջնաբերդի ամբողջ երկարությամբ մի անցք թողելով, շինած են հարակից շինություններ՝ հյուսիսից դեպի հարավ երկարած, որոնք դեռ բոլորովին մաքրված և վերջացած չեն և մի շարք սենյակներ բնավ ներքին հաղորդակցություն չեն ունեցել. ինչպես երևում է, յուրաքանչյուրն իրեն համար արտաքին դուռ ունեցել է և ծառայել է իբրև մառան կամ շտեմարան տոհմատիրական բնակարանին: Հարավային կողմը, բնակարաններից դեպի հարավ, դեռ չեն պայթեցրած կամ փշրած բնական ժայռերը, որոնց երկուքն ավելի քան մարդաչափ բարձրություն դեռ կմնան տեղի վրա, թե ինչո՞ւ համար կիսատ թողել է այս գագաթի մաքրումը, մեզ անհայտ է:



Նկ. 12. Հաջի-Խալիլ գյուղի մոտ տոհմատիրական շրջանի ամրոցի քարերի կուտակումով կազմված պարիսպի մի այլ նմուշ



Ամրոցի հարավային կողմի վրա ևս երևում է մի փոքր դռան տեղ, բայց, ըստ իս, այս դռնից դուրս կարելի էր ազատ ման գալ միմիայն ամրոցի շուրջը, որովհետև ոչ մի կողմից անդնդային զառիվայրերի պատճառով ցած իջնելու տեղ կամ ճանապարհ չի երևում:

Ամրոցակիր սարի ստորոտը, արևմտյան կողմի վրա, հյուսիսից դեպի հարավ երկարող ձորանման մի տեղ կա, որի ծայրին կգտնվեր ի հնումն ամրոցի և քաղաքի արտաքին դուռը: Այս փոքրիկ ձորանման վայրի հարավ-արևմտյան կողմը կգտնվի մի պարսպապատ բլուր, որը, ինչպես երևում է, իբրև պահնորդարան կծառայեր և կպաշտպաներ արտաքին հարձակումներից թե՛ քաղաքը և թե՛ ամրոցները, որովհետև քաղաք մտնելու միակ ճանապարհն այս կողմն էր և դռնից մտնողը, դեռ քաղաք չհասած, այս պարսպապատ բլուրի կողքով պիտի անցներ:

Մեծ ամրոցի գագաթից պարզ երևում է, թե ինչպես շրջապատված է եղել թե՛ տոհմապետի մեծ ամրոցը և թե՛ քաղաքը փոքր ամրոցներով, արևելքից և հարավից, բայց այս շրջապատող փոքր ամրոցներից յուրաքանչյուրը միայն մի կիկլոպյան պարիսպ ունի:

Փոքր ամրոցներին մոտիկ, բարձր տեղի վրա կգտնվի ամրոցներին ժամանակակից արհեստական լիճը, որը շինված էր թերևս անասնոց ջուր խմելու համար: Այժմ, թեև որոշ չափով մնասված, տեղ-տեղ քայքայված, սակայն հովիվներն օգտագործում են իրենց խնամքին հանձնված անասուններն այս արհեստական լճից ջրելով: Լճի ջուրը գոյանում է մասամբ անձրևներից, սակայն գլխավորաբար այն առվից, որ կապ ունի Արագած լեռան գագաթի ջրվեժի հետ (թեև այժմ անկանոն կերպով գալիս է ջուրն առվից):

Վերջին անգամ Հաջի-Խալիլ այցելության միջոցին, ավելի համոզվեցի, որ այս բերդը և բերդաքաղաքը լքել են մոտակա Կոխդայիրման գյուղի մեծ ամրոցը շինվելուց հետո, և ամբողջ բնակչությունը փոխադրվել է այնտեղ իբրև ապահով վայր թե՛ քաղաքի և թե՛ ամրոցի տեսակետից: Բայց Կոխդայիրմանի մասին գրելիս պիտի տամ մանրամասնություններ բերդի և քաղաքատեղիի մասին:

Հոռոմ.– Հոռոմ գյուղին կից, բարձր բլուրների վրա կան մեծ նախնադարյան ամրոցների և քաղաքի ավերակներ, որ ունին բազմակողմանի հետաքրքրական և ուսումնասիրելի մասեր իրենց մեջ:

Գյուղի արևելյան կողմի մի մեծ հրաբխային քարքարուտ բարձունքի վրա կգտնվի այս հոյակապ ավերակը: Այս ավերակները գյուղացիք անվանում են Ղալա իչի (այսինքն՝ միջնաբերդ), ինչպես Հաջի-Խալիլում և նմանօրինակ վայրերում:

Քաղաքը և բերդաքաղաքը մոտավորապես չորս քառակուսի կիլոմետր տարածություն կբռնեն: Բացի հին ու նոր ամրոցներից և, որոշ նպատակով, քաղաքի մեջ ամուր պարիսպով շրջափակված տեղերից, մասնավորների բնակության հատկացված քաղաքը շատ ընդարձակ տարածություն ունի: Հոռոմ գյուղի անմիջապես եզերքից սկսվում է մի լեռնալանջ. այս լեռնալանջից մինչև կատարին հասնելը և կատարից դեպի արևելք և հարավ տարածված միջավայրը, նախնադարյան քաղաքատեղին է, որի մեջ շատ որոշ կերպով կտեսնվին փողոցներ և փլատակ բազմաթիվ տների հիմեր: Փողոցները մի քանի տեղեր մինչև վեց մետր լայնություն ունին, իսկ առհասարակ շատ կան փողոցներ, որ հազիվ մեկ մետր լայնության կհասնին: Տները մեծ մասամբ մի բաժանում ունին, հազվադեպ կարելի է երկու բաժանումով բնակարան գտնել այդ ավերակի մեջ: Տների դռները, թեև առանց բարավորի, բավական լայն են, պատերը մինչև հատակ գրեթե քանդվել են, ուստի չի գիտցվիր, թե պատերի վրա լուսամուտներ կա՞ն, թե՞ ոչ: Բայց ըստ մի տեսակ հին սովորության, ապահովաբար լույսը վերից էին առնում, և տանիքները հորիզոնական ծածկված էին փայտե գերաններով:

Ըստ ժամանակի պահանջի կամ ըստ ավանդական սովորության, այստեղ ևս քաղաքի և ամրոցների շինության համար ընտրված է մի սարսափելի քարքարուտ վայր, անշուշտ, ապահովության և պաշտպանության նկատառումներով, քաղաքատեղին ու մեջի մեծ ամրոցները և հասարակական վայրերը օղակված են փոքր բլուրներով, որոնք ևս հրաբխային քարքարուտ, անհավասար բարձրությամբ բլուրներ են:

Բոլոր նախնադարյան բերդաքաղաքների մեջ Հոռոմի բերդաքաղաքը միակն է թե՛ իր մեծությամբ և թե՛ բովանդակությամբ: Քաղաքը տարածված է զանազան բարձրությունների վրա և միջնապարիսպներով բաժանված է այլ և այլ մասերի կամ քաղաքամասերի. ամեն մի պարսպապատ քաղաքամաս իր մեջ ունի մի շենքի կամ հաստատության ավերակ:

Հարավ-արևմտյան կողմը, ամենաբարձր տեղի վրա, կա մեծ ամրոց կամ միջնաբերդ, որի շրջապատ պարիսպները կատարելապես հիշեցնում են Հաջի-Խալիլի ամրոցի բոլորովին նախնական որմնաշինությունը: Անշուշտ, այս մասն ամենահին ժամանակ առաջին անգամն է շինված իբր ամրոց և հետո, հետզհետե տարածվել և ընդարձակվել են քաղաքը և ներքին ու արտաքին պարիսպները:



Նկ. 13. Հոռոմի հարավ-արևմտյան բարձրության վրա շինված միջնաբերդի պարիսպներից մեկի նմուշ

Քաղաքատեղիի և բերդամասերի բաղդատական հետազոտությունից երևում է, որ ոչ միայն նախնաղարում գոյություն ունեցել են այս քաղաքը և բերդը, այլև շատ դարեր իրենց գոյությունը պահել են նախնական վիճակի մեջ: Ապացույցներ չեն երևում, որ որմնաշինական արհեստները մինչև քրիստոնեական թվականին մոտենալը զգալի զարգացումի ենթարկվել են, կամ շատ քիչ հառաջադիմություն եղել է, սակայն այս բերդաքաղաքի տակավին չեն և մարդաբնակ ժամանակ ծանոթացել են կրի գյուտին:

Մի շատ հետաքրքրական մնացորդ է և բավական հետնագույն Հոռոմի հյուսիս-արևելյան բարձունքի վրա գտնված մնացորդը: Այս շինության քարերը աննշան չափով իրենց վրա ցույց են տալիս թե՛ մուրճի հարվածները և թե՛ ծանոթություն կրի գործածության. անշուշտ, մեզ անհայտ պատճառներով, այս մեծ քաղաքին մեջ կրով շինություն այս միակն է և չէ ընդհանրացել: Շենքն ունի միջակ մեծություն և հատակագիծը վարդաձևի նման է, որ Հայաստանի նախաքրիստոնեական շինությունների մեջ միանգամայն անծանոթ է: Առաջին և վերջին օրինակն է, որ տեսնում եմ այսօրինակ շինության նախաքրիստոնեական ավերակների մեջ: Միայն արևելյան և հյուսիս-արևելյան մասերն են, որ երևում են հողից դուրս, որոշ բարձրության վրա, մնացած մասերը պեղումներով միայն կարելի է ճշտել, միայն թե պարզ է, որ անհավասար մեծությամբ կիսաքոլորակ աբսիդներով շրջապատված էր այս շենքը՝ ներսից և դրսից միանգամայն որոշ: Սև բազալտի անձև քարերով կազմված է այս շենքը և շատ աննշան չափով, մուրճի հարվածների տակ պոչերը հազիվ կանոնավորված են: Ըստ նախավանդ սովորության, քարերը միմյանց վրա [փոխանակ] չոր շարվելու, կրաշաղախով մածուցված են: Թե ի՞նչ շենք է այս, աշտարա՞կ, մեհյա՞ն, թե՞ մի ուրիշ հասարակական շինություն, բնավ հայտնի չէ: Համենայն դեպս մասնավոր չէ այս կրաշաղախ մեծ շինությունը, ընդարձակ քաղաքի մեջ միակն է թե՛ ձևով և թե՛ արհեստագործությամբ: Շուրջն ունեցել է առանձին պարիսպ, բայց այժմ փլած ու անհայտացած է:

Վերև հիշված վարդաձև խորհրդավոր շենքի ուղիղ արևելյան կողմը, քաղաքամասի պարիսպից մի քիչ դեպի հարավ-արևելք, երևում է մի մեծ հրապարակ, որի հատակը որձաքարի մեծամեծ սալերով սալահատակված է: Այս սալահատակված հրապարակի հյուսիսային կողմին մոտ կա մի մեծ բնական ժայռ, որուն վրա մոտավորապես 50–60 սանտ. երկարությամբ փորագրված է հետևյալ ձևը՝ Ո≡, որ շատ նման են մեր գլխագիր Ո կամ Ս տառին: Միայն այս բնական ժայռը չէ, որ փորագրված է այս նշանը, կան նաև ուրիշներ՝ միևնույն ձևի փորագրություններ այս քաղաքամասի մեջ հարավ-արևելյան կողմի վրա: Սալահատակված մասի հարավային ծայրին կան անհեթեթ մեծությամբ, հազիվ իմն ձևակերպված որձաքարի ահավոր զանգվածներ, որոնք որպես թե խոյակներ կամ խարիսխներ պիտի լինին. ուզել են բոլորակ ձև տալ այս վիթխարի զանգվածներին, բայց ոչ քարն էր նպաստավոր և ոչ քարկոփների ձեռքի գործիքները, ուստի բոլորովին անձև և անկերպարան բոլորակներ կազմվել են, որոնց մոտավոր տրամագիծն է մեկ և կես մետր: Վերևի տափարակի վրա շինել են մի փոս, հավանաբար վերևի սյունը վրան կանգնեցնելու համար: Բայց ի՞նչ շինության բեկորներ են այս հետաքրքրական զանգվածները, հայտնի չէ. թերևս մի մեհյանի կամ ուրիշ մի հասարակական շինության բեկորներ են:

Միջնապարիսպները շինության տեսակետով գրեթե տարբերություն չունին արտաքին պարիսպներեն: Միևնույն վայրենի ույժը և անօրինակ տանջանալից միջոցները ի գործ դրած են ներքին պարիսպները կառուցելիս: Հետևյալ պատկերը ցույց է տալիս, թե քաղաքամասերը պարսպելու համար ինչպես հսկայական քարեր միմյանց մոտ բերելով, տեղի վրա ուղղել են, և, անշուշտ, այդ ահավոր խոշորությամբ քարերի վրա հարդարել են նաև հաջորդաբար ուրիշ շարքեր:

Սալահատակված մասից ուղիղ դեպի հարավ եղել է մի ընդարձակ գերեզմանատուն դեպի արևելահարավ երկարած, որի մեջ պրոֆ. Բազրատ Խալաթյան պեղումներ կատարելով՝ բացել է երեսուն հատի չափ գերեզմաններ. ըստ վկայության ականատեսների, բավական թվով առարկաներ հանել է այս գերեզմաններից, բայց ինձ հայտնի չէ, թե ո՞ր թանգարանն են դարված այս առարկաները:

Շինության ժամանակի տեսակետով, թե՛ արտաքին պարիսպը և թե՛ քաղաքը զանազան մասի բաժանող պարիսպները բոլորովին նախնական հատկանիշ ունին, հսկայական քարի զանգվածներ անշաղախ միմյանց վրա դրված են պատ ձևացնելու համար. բայց հազիվ կարելի է կարգ և ուղղություն փնտռել թե՛ քարերի և թե՛ պատերի մեջ. որմնաշինական գործիքների հետքերը գրեթե չեն երևում քարերի վրա, և անկարելի է առանց ապշության դիտել, թե ինչպիսի մարդկային արտակարգ ուժ և միջոցներ ի գործ դրել են պարսպաքարերը միմյանց վրա հանելու համար: Այստեղ, Հաջի-Խալիլի նման, տեղի դիրքը կա՛ չէր նպաստել հեշտությամբ քարերը միմյանց վրա հանելու համար. միակ միջոցը մարդկային բիրտ ուժն ու երկարատև աշխատանքն էր այս տեսակ գործերը գլուխ հանելու համար:

Նույնաձև են ուրիշ քաղաքամասերի պարիսպներ, որոնց մեջ ոչ մի որմնաշինական արհեստ կամ ճարտարություն գոյություն չունի, այլ, ինչպես գրել եմ ուրիշ առթիվ, պատեր կան, ավելի լավ է ասել, արգելափակեր են քաղաքի մեկ մասից մյուս մասն անցնելու համար: Անշուշտ, այս պարիսպները հնումն ավելի բարձր էին և դռներ ունեին, որոնք ի հարկի կփակվեին:

Նկ. 14. Հոռոմի հյուսիս-արևելյան քաղաքամասի միջնապարիսպ



Նկ. 15. Խորհրդավոր փորագրություններ ժայռի վրա



Նկ. 16. Քաղաքի ներքին պարիսպների մի մասը



Քաղաքի զանազան մասերի բաժանող պարըսպամասերի մեկի անկյունը (նկ. 17) կներկայացնե այստեղ պատկերը, որպես թե անկյունին վրա ուզել են մի բուրգ շինել, բայց միևնույն քառսն է տիրում նաև բրգաշինության մեջ, բուրգի գաղափարը միայն երևում է, բայց շինվածքը տարօրինակ կերպով անկանոն մի քարակույտ է գրեթե, փոխանակ բուրգի:

Քաղաքի ավերակների արևելյան կողմը ձորանման մի տեղ կա, որն իջնում է ցած և խառնվում է Հյուսիսակողմյան ընդարձակ դաշտի հետ: Այստեղ էր քաղաքի գլխավոր դուռը: Այս դռնից ներս մտնելով, մարդիկ կառաջանային քաղաք, և առաջին առթիվ կհանդիպեին աջ կողմից վերև նկարագրված անհեթեթ շինությունը և սալած հրապարակը, իսկ ճակատից՝ պարիսպամեջի գերեզմանատան պատը: Քաղաքի մուտքի դռան ուղղությամբ արևելքից դեպի արևմուտք երկարած էր արտաքին պարիսպը, իսկ քաղաքի արևելա-հարավը մի քիչ հեռվից շրջապատում էին քարքարուտ բլուրները:

Նկ. 17. Քաղաքի միջին բաժանումների պարիսպի մի անկյունը

Քաղաքի ամենահնագույն միջնաբերդի ստորոտից փոքր ինչ ավելի դեպի հարավ, քաղաքն ունեցել է մի ամրակուռ պարիսպ, որի այժմ հիմերը միայն մնացել են այս պարիսպից դուրս, ընդարձակ մի զառիվայրե մինչև Հոռոմ այժմյան գյուղի բանջարանոցները և այն ճանապարհը, որ կտանի Սոնգուրլի գյուղը: Անկախ ներսի գերեզմանատնից, քաղաքի հարավային պարիսպից դուրս գտնվող զառիվայրը ևս ի հնումն եղել է մի ընդարձակ գերեզմանատուն, որի մեջ այժմ իսկ կտեսնվին բազմաթիվ կրոմլեխներ, որոնց տիպը մի քիչ տարբեր է ուրիշ տեղ գտնվածներից: Ըստ սովորականի, գերեզմանը քարերով բոլորաձև շրջապատելուց հետո, մեջտեղը մի քիչ հող լցնելով, ուռուցիկ երևույթով բարձրացրել են և այդ բարձրացրած հողի վրա մանր քարերով ծածկել են մայթանման. կրոմլեխի ձևակերպման այս եղանակը մեծապես տարբերվում է ուրիշ զանազան վայրերի կրոմլեխներից:

Գյուղի դիմաց, դեպի ամրոցներ և քաղաքատեղի բարձրանալու ճանապարհի վրա մի քանի քարայրեր կան, որոնց խորությունները և ներքին ձևերն ինձ հայտնի չեն, որովհետև բերանները փլատակներով խցված են. համենայն դեպս այս քարայրերը պեղմամբ հետազոտել հարկավոր է. թերևս պեղումներից պատմական մեծարժեք իրեր հայտաբերվին:

Վերջապես, այս բերդաքաղաքը թեև մեծ մասամբ քարե դարի մնացորդներով լեցուն է, և կասկած չի մնում, որ հին շրջանում երկար դարեր չեն մնացել է, սակայն նախաքրիստոնեական վերջին շրջանի մնացորդ նմուշներից ևս երևում է, որ քարե դարից հետո իսկ, երկար դարեր մարդկային հոծ բազմություն գոյություն ունեցել է այս քաղաքում:

Նկ. 18. Քաղաքի արտաքին պարիսպը ներսի կողմից

**Աղյաման.**– Ժամանակագրական տեսակետով, Արագածի արևմտյան լանջի վրա, Աղյաման գյուղի մոտ կառուցված նախնադարյան բերդն ու անոր ստորոտի բերդաքաղաքն ամենահին շրջանի ծագում ունին, բայց որովհետև երկար դարեր չեն են եղած այս բերդը և բերդաքաղաքը, հետագային մի բերդ ևս շինել են ավելի մեծ ու ընդարձակ, և բերդաքաղաքը գտնվում է երկու բերդերի մեջտեղը: Այս վերջին շինված բերդը, համեմատելով նախորդ շինվածի հետ, փոքր ինչ զարդացում է ցույց տալիս որմնաշինական արհեստագործության մեջ:

Ինչպես երևում է, քրիստոնեական նախնական դարերում այս շրջանը շեն և բազմամարդ է եղած, որ այս բերդաքաղաքից ցածը 7-րդ դարում կառուցված է մի մեծ և հոյակապ քրիստոնեական եկեղեցի: Լուրջ հետազոտություններ ապացուցում են, որ քրիստոնեական շրջանում բնակչություն բնավ չի լքեր Աղյամանը և շրջակայքը, որովհետև երկու շրջանի հատուկ հնություններ հավասարապես գտնվում են:

Աղյամանի բերդերի և բերդաքաղաքի տեղի ընտրությունը ևս եղած է իր ժամանակի պատերազմական պահանջների համաձայն: Այժմյան գյուղի արևելյան կողմը, բարձր դիրքի վրա կա մի քարքարուտ լեռնաշղթա, որ մոտավորապես երեք կիլոմետր երկարություն ունի, երկու ծայրերը թեքված են դեպի արևմուտք, իսկ առջևն ունի մի ընդարձակ հարթավայր. ահա այս նկարագրված դիրքով տեղն ընտրած են բերդի և բերդաքաղաքի համար: Քարքարուտ լեռնաշղթայի հարավ-արևմտյան կողմը կբարձրանա, համեմատաբար քան մյուսները, ավելի մեծ և ընդարձակ բլուր, որի վրա շինված է նախնադարյան հին ամրոցը, իսկ մեծ բերդակիր բլուրին դեպի հյուսիս, մակերևույթը փոքր ինչ դեպի արևմուտք թեքված հարթավայրի վրա շինված էր բերդաքաղաքը, որի այժմ հետքերը միայն որոշ կերևին: Իսկ դեպի արևմուտք քաղաքատեղիի եզերքից դեպի ցած մի դժվարամատչելի զառիվայր է մինչև այժմյան գյուղի ներքև, ուր կգտնվին գյուղի վարելահողերը: Հարավային ծայրի բերդակիր բլուրի շուրջը բնական կերպով պաշտպանված է թեք անդնդային խորություններով, որոնց տակը երևում են գյուղեր և գյուղական վարելահողեր:

Հարավ-արևմտյան բարձր բլուրի վրա շինված սկզբնական հին ամրոցը հյուսիս-արևմուտքից շրջապատված է չորս կարգ անշաղախ կիկլոպյան պարիսպներով, իսկ հարավ-արևելյան կողմի վրա, բացի բլուրի գագաթից, ուրիշ պարիսպ շինելու կարիք չէ զգացվել, այդ կողմերի անդնդային խորության պատճառով: Գագաթի միջնաբերդի մեջ, որ 60 X 100 մետր մոտավորապես տարածություն ունի, չափազանց շատ փլատակների պատճառով չի նկատվում, թե ներքին ի՞նչ բաժանումներ գոյություն ունեցել են, եթե կուտակված փլատակներ չլինեին, գոնե կտեսնվեին միջնաբերդի ներքին շինությունների հիմերը: Միջնաբերդի արևելյան ծայրին, իբրև հավելված կցված են երեք սենյակներ՝ հավասար մեծությամբ, որոնց երեքի լայնությունը հավասար է միջնաբերդի լայնության: Թե ի՞նչ ծառայություն մատուցել են այս սենյակները բերդին կամ բերդաքաղաքին, հայտնի չէ, միայն թե բոլորովին պարզ է, որ ամրոցի հետ միաժամանակ նույն քարերով և նույն կիկլոպյան ոճով շինված են:

Այս քաղաքատեղիի և հարավային ծայրի մեծ ամրոցի շրջապատ պարիսպներու շինության համար գործ դրված միջոցներն այնքան նախնական են, որ եթե որոշ չափով նկարագրության ձեռնարկեմ, գրեթե նույնը պիտի կրկնեմ, ինչ որ գրել եմ Հաջի-Խալիլի և Հոռոմի նախնադարյան ամրոցների շինության կերպի մասին: Հարավ-արևմտյան թե՛ միջնաբերդի և թե՛ լանջերի վրա եղած շրջապարիսպները, կարելի է ասել, վերելքը խափանելու համար քարակուտակ արգելափակներ էին. իսկ քաղաքատեղիի տների համար ոչ մի բնորոշում չի կարելի անել, որովհետև այնքան քայքայված են բնակարաններ, որ հազիվ հիմերի հետքերը երևում են:

Քաղաքատեղիի արևելյան կողմի վրա կսկսի մի ձոր և այնչափ կխորանա դեպի հյուսիս, որով բերդաքաղաքի հյուսիսային մասը ևս անառիկ դիրք կստանա, այս դիրքով քաղաքատեղիի հյուսիսային կողմը ևս հավասար խորությունով ու դարևանդ ճակատով պաշտպանված է, ինչպես հարավ-արևմտյան կողմը:

Դեռ նախաքրիստոնեական շրջանում, հարավ-արևմտյան բլուրի վրայի հին անառիկ ամրոցը շինելուց դարեր հետո, գրեթե միևնույն բարձրության վրա, բերդաքաղաքի հյուսիսային ծայրին, շինել են մի ուրիշ ավելի ընդարձակ ամրոց, որի ներքին տարածությունը 80 X 150 մետրի կհասնի, և մեջը բոլորովին քարերից մաքրված, վարված ու արտի է վերածված:

Այս ամրոցի որմնաշինական արվեստը բավական տարբեր է հին ամրոցի որմնաշինական արհեստագործությունից: Այս պարիսպների քարերը թե՛ համեմատաբար հին ամրոցի քարերից փոքր են, թե՛ ուղիղ գծով չարված են և թե՛ քարերի ծայրերի վրա երևում են մուրճի հարվածներ, անոնց քառակուսի ձև տալու համար, թեև բոլորովին չեն հաջողած, այնուամենայնիվ որոշ երևում է փոքր ինչ զարգացումը և նախորդներից տարբերությունը:

Ամրոցի պատերը ներկայիս տակավին մեկ մետրից մինչև մեկ ու կես մետր բարձրություն ունին չուրջանակի: Մտից դուռն արևմտյան կողմն է, դռան լայնությունը մոտավորապես չորս մետր եղած է: Դռան երկու քովի պատերի բարձրությունները երեք մետրի կհասնին, իսկ երկարություններն անորոշ են, սակայն ամբողջ ամրոցի լայնության հավասար չեն: Հարավակողման և արևմտակողման պարիսպները զույգ են, ներքին և արտաքին: Արտաքին պարիսպի դրսի երեսի վրա խիտ կերպով շարված են քառակուսի բուրգեր, իսկ հյուսիսային և արևելյան կողմից այդ հետնաշեն ամրոցը պաշտպանված էր չափազանց թեք զառիվայրով և զառիվայրի վրա մի քանի կարգ պարիսպներով, մինչև խորը երևացող վտակի եզերքը:

Նկ. 19. Աղյաման գյուղի արևելյան բարձունքների վրա նախնադարյան կրկնապարիսպ ամրոցը

Նախնադարյան և նախաքրիստոնեական շրջաններում կանգնված բերդաքաղաքներից շատ քչերն են, որ մինչև քրիստոնեական թվականը հասել և այս կողմը մի քանի դար միևնույն տեղում չեն մնացել են: Ուրիշ նախաքրիստոնեական ամրոցներում և բերդաքաղաքներում տեսել ենք, որ դեռ քրիստոնեական թվականի նախօրյակին շատերը լքել են բերդ, ամրոց և քաղաք ու գաղթել են ուրիշ տեղեր կամ նոր քաղաք են հիմնել: Բայց, ինչպես երևում է, Աղյամանի մեջ նույն բանը չէ տեղի ունեցել, քաղաքի բնակիչները մոտիկ տեղափոխությամբ մնացել են այնտեղ, չեն պահել են քաղաքը և շրջանները, և քաղաքի մեջ (այժմ Աղյաման գյուղ) 7-րդ դարում մի հոյակապ եկեղեցի են շինել, որ կարելի է համեմատել Թալինի մեծ կաթուղիկեի, Մրենի և այլ նման մեծագործությունների հետ: Իսկ նախաքրիստոնեական վերջին շրջանին նույնիսկ ճարտարապետության մեջ մեծ հառաջադիմություն կատարած լինելու համար, թեև հետագային առիթ պիտի ունենամ խոսելու, այժմ կմատնանշեմ քանդակագործության մի նմուշ, որը գուցե անսպասելի էր հեթանոսական շրջանի համար, այն է՝ Աղյամանի շրջանում գտնված չորս ճակատից բարձրաքանդակ քառակուսի կոթողը, որի չորս ճակատեն առանձին նկարված պատկերները դրված են այստեղ: Այս նկարները (20, 21, 22, 23) ոչ միայն ցույց են տալիս այն ժամանակվա մարդկանց քանդակագործական արվեստի մեջ ունեցած հառաջադիմությունը, այլև ազդեցության այն հոսանքները, որոնք առավել կամ նվազ ներգործել են Հայաստանի ճարտարապետության և գեղարվեստի վրա: Կոթողի ստորին մասն իր արջմազիլի տերևներով հունա-հռոմեական ազդեցությունն է ցույց տալիս, իսկ մնացած զարդաքանդակները, ըստ ամենայնի արևելյան հատկանիշ ունին թե՛ ճարտարապետական տեսակետով և [թե՛] վրան քանդակված խորհրդավոր պատկերներով ու նշաններով: Իհարկե, այժմ ես պիտի հրաժարվիմ կոթողի ճակատների վրա քանդակված նկարների մասին բացատրություն տալ, որովհետև անոնց ամբողջությունը խաթարված ու եղծված է, միայն ճակատի վրա քանդակված նիզակաձև քանդակը (նկ. 23) ցույց է տալիս, թե ո՞ր տեղից է գալիս և ի՞նչ ազդեցություն է [ունեցել] Հայաստանի հնագույն կոթողների վրա: Պերրո և Շիպիեի հին արվեստների պատմության 5-րդ հատորի 533-րդ էջի վրա կտեսնենք թե՛ այս նշանի պատկերը և թե՛ հին Պարսկաստանում գտնված տեղերը:

Նկ. 20. Աղյաման գյուղի մոտի նախաքրիստոնեական գերեզմանոցում գտնվող քառակուսի կոթողաձև

Ինչպես երևում է, սասանական շրջանին սանդուխի ափեր, շենքի կատարներ և այլ մասեր զարդարելու համար, Ասորա-Քաղդեայից ժառանգություն մնացած փոքրիկ աստիճանավոր ատամները գործածում էին կիտվածանկար և մեծ մասամբ վրան դրոշմված նիզակագլխի պատկերը: Անշուշտ մի նշանակություն ուներ այս դրոշմը, սակայն այժմ մեզ Հայտնի չէ:

**Կափրլի.**– Նախաքրիստոնեական շրջանի բերդերի և բերդաքաղաքների գոյությունը տակավին ինձ միանգամայն անծանոթ էր, երբ մի ամրոցի հետազոտության համար գնացի Կափրլի գյուղը: Հիրավի, գյուղին կից, քրիստոնեական շրջանի չափավոր մեծությամբ մի ամրոց կար, որ բավականին հետաքրքրական ուսումնասիրելի մասեր ուներ 13–14-րդ դարերում կանգնված: Իհարկե, շատ էր քայքայված, այդ քայքայումը մասամբ դժվարացնում էր իմ ուսումնասիրությունը, այնուամենայնիվ նույն օրը ըստ արժանվույն հետազոտելի հետո, բավականացա մի քանի դիրքով լուսանկարելով:

Նկ. 21. Նույն կոթողի (նկ. 20) երկրորդ երեսը

Բերդի հետազոտությունով այս գյուղում գործս վերջացած պետք է համարեի, եթե անակնկալ կերպով չտեսնեի այս քրիստոնեական շրջանի բերդի հիմը, որ կիկլոպյան քարերով, անշաղախ շինված էր: Այս հնօրյա կիկլոպյան հիմի վրա կանգնված էր 13–14-րդ դարերեն շինված ամրոցը: Քրիստոնեական բերդի արևմտյան ճակատը, որ ամբողջովին փլած էր և մանր սրբատաշ քարերը ամբողջովին դարսված էին, մնում էին տեղի վրա նախնադարյան ամրոցի փլատակ մեծազանգված քարերը:

Տեսնելով և մանրակրկիտ հետազոտելով քրիստոնեական բերդի հնագույն մնացորդները, բնականորեն հետաքրքրվեցի նաև ուրիշ հնագույն մնացորդներով, որոնք կարող էին գոյություն ունենալ այս գյուղում: Իսկապես հնագույն մնացորդներով շատ հարուստ էր այս գյուղը և ապացուցում էր, որ այս գյուղում, նախնադարյան շրջաններից սկսած, մարդկային հոծ բազմություն եղել է մինչև քրիստոնեական վերջին ժամանակները: Շինել են երկու բերդեր՝ միմյանցից մոտավորապես երկու կիլոմետր հեռավորության վրա, կարիք է զգացվել նաև մի բերդաքաղաքի շինության՝ երկու մեծ բերդերի մեջտեղ մնացած հարթավայրում: Շրջելով այս գյուղը, տեսնում էի զանազան հին տիպի նախաքրիստոնեական գերեզմաններ, հողաղամբաններ, կրոմլեխներ, մանավանդ Շահ-թափա կոչված մեծ հողաբլուրը: Պակաս չեն նաև այս գյուղում ուրիշ հին կուլտուրայի մնացորդներ, ինչպես՝ ջրի ճանապարհներ, աղբյուրներ, բազմատեսակ գերեզմաններ և այլն և այլն:

Նկ. 22. Նույն կոթողի (նկ. 20) երրորդ երեսը

Կափրլի գյուղում, նախնադարյան մնացորդները ամբողջությամբ դիտելով, պարզ կտեսնենք, որ բերդ և բերդաքաղաք շինելու համար տեղի ընտրության տեսակետով հետևել են ավանդական սովորության: Երկու մեծ բերդերի հովանավորության ներքո շինված է քաղաքը, որ շրջապատված է բարձր ու ցած բլուրներով, որոնց երկու ծայրերի վրա բլուրներն ավելի բարձր են, քան մյուս միջինները: Ամենահին ամրոցը շինվել է այժմյան գյուղի մեջ՝ հին քաղաքին կից: Թե ո՞րչափ երկար տևել է այս ամրոցի և բերդաքաղաքի գոյությունը, հայտնի չէ, բայց պարզ է, որ բերդաքաղաքը կիսաբոլո-

*րակ շրջապատող բլուրների և սարերի հարավ-արևմտյան ծայրի վրա շինված է մի ուրիշ ավելի մեծ ամրոց, շինվածքով և դիրքավորությամբ ավելի ամրագույն: Այս երկրորդ մեծ ամրոցը շինվելուց հետո, առաջին ամրոցը լքված կերևի, որովհետև հետագա դարերի զարգացած պատերազմական արհեստին չէր կարող բավարարել հին ամրոցը: Արդ, հետագային ավելի բարձր տեղ, անմատչելի դիրքով, բերդաքաղաքի վրա անմիջապես իշխող մի սարի կատարին շինել են ավելի ընդարձակ մի ամրոց՝ միմյանց վրա անշաղախ դրված մեծազանգված քարերով կառուցված շրջապարիսպով, որի երեք կողմերը սաստիկ թեք զառիվայր էին, իսկ մի կողմը, արևելահարավը, որ որոշ չափով մատչելի է, պարիսպը շինել են քառակուսի խիտ բուրգերով ամրացած: Արտաքին գլխավոր դուռը այս հարավ-արևելյան կողմի վրա է, թեև այժմ փլատակներով խափանված է մուտքը: Արևելյան կողմի վրա ևս ունեցել է դուռ, սակայն հայտնի չէ, թե այս դռնից դուրս ի՞նչ ճանապարհներ կային թեք զառիվայրը ցած իջնելու, որովհետև ներկայիս այս թեք դարևանդի վրա վայրէջքի ոչ մի հետք գոյություն չունի:*

*Նկ. 23. Նույն կոթողի (նկ. 20) չորրորդ երեսը*



*Նկ. 24. Նիզակաձևի քանդակ՝ Գերրո և Շիպիեի գրքի 533-րդ էջի վրա*

*Ամրոցի ներքին կողմը թեև շատ ընդարձակ է, սակայն տարօրինակ կերպով խտացած են անշաղախ շինությանց փլատակներ, կրոմլեխներ, մենհիրների (մենաքար) բեկորներ, այնպես որ առանց կուտակվածքը մաքրելու և մի քանի տեղ փորձնական պեղումներ կատարելու, կարելի չեղավ հասկանալ, թե ո՞ր մասի վրա եղած էր տոհմապետի բնակարանը և որտե՞ղ՝ տոհմապետը մոտիկից շրջապատող բարձրագույն պաշտոնեից բնակարանները: Ամրոցը բարձրանալու ճանապարհը թեև խիստ զառիվեր է, այժմ քարքարուտ՝ փլուզումների պատճառով, սակայն, նախապես ևս այնքան հեշտ ճանապարհ չէր. թեև կառքով մինչև ամրոցի դուռը կարելի էր բարձրանալ, բայց պետք է գիտնալ, որ վերելքի մատչելի միակ ճանապարհն էր, որով հնարավոր էր թե՛ ամրոց բարձրանալ և թե՛ մոտակա մի շարք կցված բնական բարձրություններ:*

*Ամրոցի դուռը բարձրանալով՝ չէր վերջանում նախկին քաղաքատեղիի սարերով և բարձր բլուրներով շրջապատումը. սարերը երկարում են դեպի արևմուտք և թեքվում են դեպի հյուսիս, և այս մասի վրա պակաս չեն հին, նախնադարյան ժամանակների խորհրդանշաններ, ինչպես մեծամեծ հաստատուն ժայռերի վրա՝ խորհրդավոր բոլորակ փոսիկներ, 7 սանտիմետրից մինչև 25 սանտիմետր տրամագիծ ունեցող զանազան մեծությամբ կրոմլեխներ և ուշադրության արժանի ուրիշ մնացորդներ: Կա նաև մի հին դոլմեն, Օշականի դոլմենների նման, որի վրայի ծածկույթը թեև այժմ գոյություն չունի, բայց, ինչպես երևում է, քրիստոնեական շրջանում այս դոլմենը մի կրոնական նվիրական հիմնարկություն նկատելով, մատուռի են վերածել: Զափազանց մեծ դժվարություններով բերել են*



*այնտեղ խաչքարեր և ուրիշ եկեղեցական շինությանց բեկորներ՝ կատարյալ մատուռի կերպարանք տալու համար. թեև այժմ ևս լքված է և մնում է անծածկույթ:*

*Հյուսիսային լանջերեն կոր գծով շրջապատող բլուրների և փոքր սարերի ստորոտներից սկսած, հին բերդաքաղաքը տարածված է դեպի հարավ և մասամբ դեպի հյուսիս-արևմուտք: Բերդաքաղաքը մեծ մասամբ ավերված է և շենքերի քարերը տարված են ու հետզհետե տանում են գյուղացիներ թե՛ իրենց պետքերուն գործածելու համար և թե՛ գետինը թափթփված փլատակներից և բեկորներից ազատվելու համար, որպեսզի մաքրված գետիններ վարելահողի վերածեն:*

*Այս պատկերի մեջ երևցած պատերը թեև փոքր ի շատե լարաձիգ ուղղություն ունին, սակայն շարվածքի մեջ դարձյալ երևում է նախնականություն. համենայն դեպս պատկերում երևցող պատերը, ըստ իս, ավելի վաղ շինված են, քան երկաթի դարը: Իսկ քաղաքատեղիի մասին մի վերջնական կարծիք հայտնել շատ դժվար է, միայն թե հաստատ կարելի է ըսել, թե ոչ միայն նախաքրիստոնեական շրջանում, այլև քրիստոնեական թվականների մինչև 15–16-րդ դարերը բնակչություն միշտ եղել է այստեղ, եթե ոչ քաղաք, գոնե իբրև գյուղ: Հին քաղաքատեղիի սահմանի մեջ, նախնադարյան հնագույն բերդի հիմերի վրա շինված է 13–14-րդ դարում մի բերդ՝ կանոնավորապես քառակուսված սրբատաշ տուֆ քարերով: Նմանապես կա մի փոքր եկեղեցիի ավերակ՝ հին քաղաքի մեջ, որի աստանդ թափթփված քանդակազարդված քարերի ոճը ցույց է տալիս, որ այդտեղ, երկու նախնադարյան բերդերի մեջտեղ, կյանքը շարունակվել է մինչև հետին դարերը: Ոչ միայն տեղը նկատվել է իբրև ռազմական կարևոր կետ և կանգնվել է մի ամրոց կամ բերդ 13–14-րդ դարերու մեջ, այլև մի եկեղեցի միևնույն դարերում, միայն խուզարկության կարոտ է, թե այս եկեղեցին իբրև քաղաքի կամ գյուղի եկեղեցի՞ շինված է, թե՞ իբրև վանք:*

*Քրիստոնեական վերջին շրջանի մեջ, այս գյուղի մոտավոր անցյալը ստույգ չենք կարող գիտնալ. բայց քրիստոնեական հին դարերում, մանավանդ նախաքրիստոնեական շրջանում, հետաքրքիր խուզարկուն եռ ու զեռ կյանքի ապացույցներ շատ կգտնե: Բազմաթիվ և միևնույն ժամանակ բազմատեսակ նախաքրիստոնեական գերեզմաններ գոյություն ունեն այս գյուղի շրջանում, որ ապացույց է տարբեր դավանությամբ ժողովրդի հոծ բազմության: Այս գյուղում գտնված գերեզմանների մեջ առաջին տեղ կբռնեն կրոմլեխները և հետո մեծ քանակությամբ քարափոր դագաղներ՝ վրաները միակտուր կափարիչով ծածկված: Այս քարափոր դագաղներեն այնքան շատ են գտնված, որ ոչ միայն շատերի տների առջև դրված են իբրև գուռ անասունների ջուր խմելու համար, այլև պատմում են, որ հիսուն հատից ավելի, ջոկելով լավերը, խրկել են յայլա, նույնպես անասուններին իբր խմելու ջուրի գուռ գործածելու համար:*

*Նկ. 25. Մինչնադարյան բերդի հյուսիսային պատը և տակի անշաղախ կիկլոպյան հիմերը*

*Նկ. 26. Կիկլոպյան բերդաքաղաքի մնացորդներ Կափբլի գյուղի մոտ*

*Գուցե նախաքրիստոնեական շրջանին են պատկանում կարասի նմանությամբ դագաղներ: Այս կարասների մեջ առհասարակ մի դիակ մտցրած ու բերանը փակած են: Բայց Կափբլիում գտնված է նաև մի գերեզման, որ երկու կարասի մեջ ամփոփած էին մի մարդկային դիակ՝ երկու կարասների բերանները միմյանց հպեցնելով: Այս ձևով մեռյալի դիակի կեսը ուրիշ մի կարասի մեջ մտցնելով՝ թաղել էին:*

*Քանակով պակաս չեն նախաքրիստոնեական այն գերեզմանները, որոնք հետո քրիստոնեական շրջանում ևս մի առժամանակ սովորություն է եղած, այն է՝ հանգուցյալի հասակի երկարությամբ, սալերից կազմված արկղաձև գերեզմաններ, նույնպես վրաները սալերով ծածկված: Այս ձևը, եթե կրոնական օտար հարանվանությանց չի պատկանիր, անցել է քրիստոնեական սկզբնական շրջանին, որովհետև կարասի և քարափոր դագաղների մեջ թաղվածների հետ զուգընթաց գտնվում են սալերով արկղաձև շինված գերեզմաններ: Անպատճառ հաջորդականություն կա այս ձևերի մեջ:*

*Շատ հաճախ, տների մեջ կարելի է գտնել սև կամ դեղնագույն խեցեղեն ամաններ, գերեզմաններից դուրս եկած, [որոնք] գյուղական ընտանիքների մեջ գործածական են, եթե անվնաս են: Բացի խեցեղեն ամաններից, գյուղի հարսների և աղջիկների թևերն ու պարանոցները երբեմն պճնված են ազաթյա այլազան քարերից շինված ուլունքներով: Մի գյուղացի ինձ ցույց տվեց մոտավորապես երկու սանտիմ մեծությամբ, վրան խորհրդանշաններ քանդակված ագաթյա կնիք:*

*Այժմ մնում է մի փոքր տեղեկություն տալ հին քաղաքատեղիի աղբյուրների և ջրի ճանապարհների մասին, որոնք թեև այսօր մեծ մասամբ ավերված են, այնուամենայնիվ դեռ ջուրը վազում է ընդհանրապես հնօրյա խողովակների միջով: Հին ջրի ճանապարհներ երկու հատ կան, որոնք նախնադարյան քաղաքի ստորին մասում երևան են եկած, միմյանցից մի քանի մետր հեռավորության վրա: Ուղղությունը ցույց է տալիս, որ բերդաքաղաքը կիսաբոլոր շրջապատող սարերի զանազան կետերից սկիզբ են առնում ջրերի աղբյուրներ և բերդաքաղաքի ստորին մասում մոտենում են միմյանց: Հայտնի չէ, թե այն տեղը, ուր երևան են գալիս ջրերը և նույնիսկ թաղված են այնտեղ մի քանի հատ քարափոր հին դագաղներ, իբրև քարե գուռ անասուններին ջուր խմելու համար, նախապես աղբյուր եղա՞ծ է, թե՞ ջրի ճանապարհները խանգարվելով, այդ տեղի վրա ջուր երևան եկած է: Համենայն դեպս, գիտնալ կարևոր է, որ քաղաքի վերևից սկիզբ առնող երկու ջրի ճանապարհներ շատ էին այդ աղբյուրանման տեղի համար, անպատճառ այդ տեղից բաժանվում էին այդ երկու ջրատար գծերը: Մեկը թերևս այդտեղ վերջանում էր, սակայն մի ուրիշ գիծ երևում է խիստ խնամքով ծածկված, որ շատ հեռու է գնում, քան այն աղբյուրանման տեղը: Փորձնական պեղումներով միայն կարող են իսկական իրողությունը որոշել:*

*Նկ. 27. Քարափոր դագաղ Կափբլի գյուղում*

*Երկու ջրատար ճանապարհներ թե՛ տարբեր ոճով շինված են և թե՛ տարբեր ժամանակի գործեր են: Ասոնցմե մեկը, որ, իմ կարծիքով, ավելի հին է թերևս, նախնադարյան շրջանի գործ է, այն է՝ որ առանց խողովակի պարզ քարեղեն ճանապարհ է շինված առանց որևէ միացուցիչ շաղախի, այսինքն բնական անտաշ քարեղեն սալերով կազմված է ճանապարհը. բայց թե քարեղեն սալերն ինչպես են զետեղված միմյանց մոտ և ինչպես են ամրացած, իհարկե, քննության կարոտ է: Իսկ ջրի երկրորդ ճանապարհը հողի տակ թե՛ ավելի բարձր է շինված քան սալաշենը և թե՛ կավեղեն թրծված խողովակներով տարված է ջուրը: Ես կարծում եմ, որ այս կավեղեն խողովակներով ջրատար գիծն է, որ անցնելով աղբյուրանման տեղից, շատ հեռուներ*



*է գնում: Այժմյան Կափբլի գյուղը շատ քիչ էր շահագրգռված այդ ջրի հին ճանապարհներով, որովհետև գյուղում բավարար աղբյուրներ կան, սակայն նախիր գնացող անասունների ճանապարհի վրա էր այդ աղբյուրանման տեղը և շատ հարմար անասունների ջուր խմելու համար, այդ պատճառով այնտեղ իբրև գուռ թաղել են քարափոր դագաղներ, անոնց մեջը ջրերը լճացնելու համար: Իսկ այդ ջրերից մարդկանց օգտվելու համար ոչ մի հարմարություն չեն տվել: Այս հանգամանքից երևում է, որ այդ պատահական ջրից օգտվելու համար միայն գյուղի անասունների մասին է մտածել գյուղական ժողովուրդը:*

***Ամբերդ կամ Անբերդ.*** *— Իր ամուր դիրքի պատճառով չափազանց հին ծագում ունի Ամբերդ կամ Անբերդ անվանված մեծ բերդաքաղաքը, Արագածոտն գավառի մեջ: Երկու գետակների՝ Արխաշան և Ամբերդ գետակների խառնուրդից գոյացած եռանկյունաձև բարձունքի վրա շինված է այս բերդաքաղաքը: Բերդաքաղաքի երկու կողմի գետակները ահագին խորություն ունին չափազանց թեք լանջերով,— այս իսկ պատճառով է, որ բերդաքաղաքը միանգամայն անմատչելի էր համարված:*

*Երկու տարբեր ուղղությամբ հոսող և միմյանց խառնվող գետակների պատճառով, վերևի ամբողջ բերդաքաղաքը եռանկյունի ձև ստացած է: Այս եռանկյունաձև բերդաքաղաքի հարավ-արևելյան կողմը կգտնվին նախնադարյան ամրոցի մնացորդները, որոնց հսկայական քարերի անկարգ դասավորություններն ապացուցում են, որ նախնադարյան շրջանի, անհիշատակ ժամանակի մեջ շինված են Ամբերդ ամրոցը և բերդաքաղաքը: Ինչպես քանիցս կրկնել եմ ուրիշ նախնադարյան հին ամրոցների մասին, նույնպես այստեղ, որմնաշինական ոչ մի օրենք գոյություն չունի. հսկայական քարերի անկարգ կուտակումով կազմված արգելափակներ են, քան թե պարիսպ: Բերդաքաղաքը շրջապատող այս հին քաղաքի պարիսպները տեղ-տեղ ընդհատված են և միմիայն պարիսպի հատակի շարքերը հազիվ երևում են: Դեպի արևելք և դեպի հարավ շարունակված ընդհատ պարիսպների մնացորդները բոլորովին նախնական ձևով չեն շինված, ինչպես որ նախնական են գետակների միացման մոտ եղած բարձունքների վրա: Անշուշտ, հաճախակի նորոգության ենթարկված է այս բերդաքաղաքը ոչ միայն ուրարտական շրջանում, այլև մեր թվականի մինչև 14–15-րդ դարերը: Հյուսիս-արևմտյան և հյուսիս-արևելյան մասերը ամբողջությամբ, քրիստոնեական շրջանում (հավանաբար 8–10-րդ դ.) բոլորովին նոր ձևով շինված են. մասնավորապես այս կողմերի նորոգ պարիսպների և հոյակապ դղյակի մասին պիտի գրենք հետագայում իրեն կարգին:*

***Շիրվանջուղ.*** *— Նախաքրիստոնեական հին ամրոցների նկարագրության համար, մինչև այստեղ ես ընտրեցի այնպիսիները, որոնք անվրեպ նախնադարյան ամենահին նմուշներ էին: Թեպետ բացի Հաջի-Խալիլ կիկլոպյան ամրոցից, նկարագրված մյուս վայրերում, ամենահին նմուշներին կից, հաջորդ շրջաններում ևս կառուցվածքներ կան իբրև ամրոց, ինչպես Արմավիրի, Հոռոմի, Ադյամանի, Կափբլիի մեջ, որոնց մասին միաժամանակ նաև խոսել եմ, որովհետև երկրորդ անգամ դժվար կլիներ անդրադառնալ միևնույն վայրերի վրա:*

*Իմ հետազոտած վայրերի մեջ, նախնադարյան և հետագա շրջանում երկու տեսակ կառուցվածքների վերջինն են Շիրվանջուղի մոտ գտնված մեծ հնությանց մնացորդները: Ինչպես վերև ակնարկել եմ, տարակույս չկա, որ նախնական ամրոցների և բերդաքաղաքների մեջ կյանքը երկար դարեր շարունակված լինելով, հետագային թե՛ շինարարական արվեստն է զարգացել և թե՛ մարդիկ քաղաքակրթության մեջ մասամբ հառաջադիմել են, որով պետք են զգացել, հնագույն ամրոցների մոտիկ, ավելի պատշաճ և ավելի արվեստականորեն ամրոցներ կառուցանելու, թեև դարձյալ երկաթի դարեն առաջ: Այս շարքի մեջ Շիրվանջուղ գյուղն ունի փոքր ի շատե զարգացած նախաքրիստոնեական արվեստի նմուշներ և թե նախնադարյան ամենահին որմնաշինության և բերդաշինության մնացորդներ: Այստեղ գլխավորաբար պիտի զբաղվիմ մի տարօրինակ, ամրոցանման մեծ և բարձր ձեռագործ մնացորդով, որը ոչ միայն տարբեր հատկություն է ցույց տալիս մինչև այժմ հետազոտածս բերդերից, այլև թերևս նաև ունի տարբեր կոչում:*

*Շիրվանջուղ գյուղը, Մահմուդջուղ գյուղից դեպի հարավ-արևելք, քարքարուտ և ապառաժուտ սարերի վրա մի հայաբնակ գյուղ է և Մահմուդջուղն հազիվ երեք կիլոմետր հեռավորության վրա է: Թեև գյուղի անմիջական շրջակայքը հնագիտական մնացորդներից մաքրված են գյուղական բնակչության ձեռքով, սակայն անվրեպ կերպով երևում է, որ այնտեղ կյանքը շարունակվել է նաև քրիստոնեական շրջանում և կանգնվել է 5-րդ դարում մի քրիստոնեական եկեղեցի: Պահել են միայն եկեղեցին և շուրջը մաքրելով՝ շինել են գյուղ:*

*Շիրվանջուղ գյուղի արևմտյան կողմը, մոտավորապես երկու կիլոմետր հեռավորության վրա, երկու նախնադարյան մեծ մնացորդներ կան, որոնց*

տեղացիք Վերի բերդ և Վարի բերդ անունը կուտան: Վերի և Վարի բերդերը դեմ դիմաց կգտնվին, միմյանցից մոտավորապես մեկ և կես կիլոմետր հեռավորության վրա: Վարի բերդը գյուղի ուղիղ արևմտյան կողմն է, իսկ Վերի բերդը Վարի բերդից դեպի հարավ, գյուղից ևս մի քիչ հարավ-արևմուտք կգտնվի:

Գյուղի հարավ-արևմտյան կողմի Վերի բերդ անվանվածը բավական բարձր տեղի վրա է և տարածությունը ընդարձակ, բայց իբրև բերդ, անունը միայն մնացել է: Բերդի կամ ամրոցի գլխավոր դուռը արևելյան կողմի վրա է եղած, որից դեպի հարավ, մի քանի մետր երկարությամբ մեծազանգված որձաքարե անշաղախ հին պատը և տեղի բարձրությունն են մնացել ապացույց այդ բերդի մասին ժողովրդական ավանդության: Հակառակ բերդամիջի ընդարձակության, շրջապատի պարիսպը միանգամայն անհետացած է. գյուղացիներ, բերդամեջը շրջապատ պարիսպներով միասին բոլորովին մաքրելով, ընդարձակ հարթ տարածությունն արտի են վերածած: Եվ որպեսզի ցանքի ժամանակ ճարակ որոնող թափառական անասուններից բերդամիջի ցանքն ապահովեն, մանր քարերով չոր պատով շրջապատել են ամբողջ գագաթը: Ահա այսքանն է ամբողջ Վերի բերդի նկարագրությունը, ուրիշ ամեն մի հատկանշական բերդի ապացույցներ անհետացած են:

Այժմ խոսենք Վարի բերդ անվանվածի մասին, որ, ըստ ամենայնի, տարօրինակ է իմ տեսակետով և ես դժվարանում եմ բերդ անվանելու: Համոզված եմ, որ այս բարձունքն իր շրջապատ մի քանի կարգ պարիսպներով ուրիշ նպատակի համար շինված է, քան բերդի, որովհետև բովանդակությունը և անմիջական շրջապատի երևույթները չեն համապատասխանում բերդի:

Վարի բերդը, որ գրեթե մեկ և կես կիլոմետր հեռի է դեպի հյուսիս Վերի բերդից, արևմտյան կողմից հենված է հարավից դեպի հյուսիս երկարող մի ցած լեռնաշղթայի, իսկ ինքը՝ բերդ անվանվածը, իբրև հրվանդան երկարած է դեպի արևելք, սկսած արևմտյան կողմի դեպի հյուսիս երկարող լեռնաշղթայից, որին հավասար բարձրություն ունի, միայն թե համեմատելով լայնության, երկարությունն ավելի է քան երեք անգամը: Լեռնաբարձունքի հյուսիսային կողմը, գագաթից մինչև հատակ, այնքան թեք դարևանդ է, որ այդ կողմը գագաթի շուրջ մի կարգ պարիսպը բավական եղած է, առանց ուրիշ հաջորդական օժանդակ պարիսպ շինելու: Արևմտյան կողմից, ինչպես քիչ առաջ ակնարկեցի, հենված է գրեթե հավասար բարձրությամբ հարավից դեպի հյուսիս երկարող լեռնաշղթային: Մնում են հարավային և արևելյան կողմերը, որոնք իսկապես արժանի են ուշադրության և մանրամասն հետազոտության:

Որովհետև մի նեղ գծի վրա հսկայական քարերի անշաղախ անկարգ կուտակումը համարում ենք նախապատմական ժամանակի պարիսպ, այստեղ ևս իբրև պարիսպ կատարված են այդ կուտակումները թե՛ գագաթի շուրջ և թե՛ արևելյան ու հարավային լանջերի վրա: Լեռնաբարձունքի գագաթից մինչև ստորոտ հինգ կարգ միմյանց հաջորդող կուտակումներով կազմված պարիսպները բոլորովին նախնական ձև ունին, որմնաշինության օրենքների տեսակետով, քարերի կանոնավոր շարք ամենևին գոյություն չունի, և այս հանգամանքն անվրեպ ապացույց է, որ այս պարիսպները շինված են նախնադարյան ժամանակ: Հարավային կողմը շինված պարսպամեջերը, որ 8–10 մետր լայնություն ունին, գյուղացիների ձեռքով այնքան մաքրված ու հարթված են, որ իբրև վարելահող գործածվում են, թեև այդ մասերի հողերը շատ խորություն չունին ներքևը ժայռ լինելու պատճառով: Բացի հասարակաց վերելքի ճանապարհները, պարսպամեջերից ևս վերելքի ճանապարհ է ունեցել, փոքր դռներով մեկից մյուս պարսպամեջն անցնելով մինչև գագաթը. և երբ կհասնի գագաթի պարիսպին, նույնպես մի փոքր դռնով ներս կմտնվի լեռնագագաթի հարթության մեջ: Բայց քննությունը ցույց տվեց, որ պարսպամեջերի հողերի հարթությունը մի քիչ շեղ է դեպի վերև, այնպես որ ներքևի փոքր դռնից ներս մտնելով՝ մինչև մյուս դուռը հասնելը, անզգալի կերպով բարձրանում է ճանապարհը և հասնում է երկրորդ դռան, և այսպես հաջորդաբար մինչև գագաթ: Բերդի այս պարսպամեջերի ճանապարհը, անշուշտ, իր նպատակն ուներ, անկախ հասարակաց ճանապարհից, որը գոյություն ուներ արևելյան լեռնաշղթայի լանջերի վրա:

Հասարակաց ճանապարհներ մինչև այսօր գոյություն ունին հարավից դեպի հյուսիս երկարող լեռնաշղթայի լանջերին, որին հենված է արևմուտքից դեպի արևելք երկարող հրվանդանաձև նեղ ու երկար բարձունքը: Լեռնաշղթայի հյուսիսային կողմի լանջի վրա, հասարակաց ճանապարհի հետքը հաղիվ մնացել է. իսկ հարավային կողմի ճանապարհը ոչ միայն ի հնումն ծառայել է նախնիքներին, այսօր ևս օգտվում են ներկա ժողովուրդները: Այս ճանապարհը ստորոտից շեղակի բարձրանալով դեպի վեր, մի փոքր ուղիղ ճանապարհով հասնում է մեծ դռան առջև, ուրկե ներս մտնելով՝



կպարզվի նեղ ու երկայն գագաթի հարթ տարածությունը: Այս բարձունքի ամենաուշադրավ մասը գագաթն է, որի ընդարձակ տարածությունը տոհմատիրական ամրոցի բնավ նմանություն չունի: Գագաթի ընդարձակ տարածությունը, որ քարերից մաքրված և խորտուբորտ ժայռերից հարթված է, ամրոցային բնակության բնավ հետքեր չկան, ինչպես գոյություն ունին ուրիշ հին ամրոցների և բերդերի մեջ: Եթե տոհմատիրական ամրոց լիներ այս բարձունքը, պետք էր գտնե ամրոցային բնակության հատուկ հատակագծեր երևային գետնի վրա: Ընդհակառակը, գագաթն ամբողջովին հարթ հավասար մաքրված է. միայն գագաթի արևելյան կողմին մոտիկ, սենյականման մի փոքրածավալ հատակագիծ է երևում, որը եթե կանգուն երևակայենք, հազիվհազ 7–8 մարդ կտեղավորվեր անոր մեջ, առանց կահկարասիքի: Ահա մի պարագա, որ ակամա մտածել կուտա հետաքրքրվող այցելվին, թե ինչու համար էր այս բարձունքի հարթությունը և անոր մեջ այս փոքրիկ սենյակը գագաթի ընդարձակ հարթության մեջ: Փակագծի մեջ ասեմ, որ եթե գագաթի հարթ հատակն ամբողջովին ժայռ չլիներ, թերևս գյուղացիք օգտագործեին իբրև ցանքատեղի և այն փոքր սենյակը ևս լիներ իբրև պահնորդարան, բայց իրողությունն այն է, որ այս գագաթի տարածությունն ամբողջովին ժայռ է և միշտ անընդունակ ցանքի:

Տարօրինակ բարձունքները մանրամասն հետազոտելուց հետո, երբ ցած իջա և հեռվից սկսեցի դիտել այս բարձունքն իր շրջապատով, այս հեռանկարը ոչ միայն զարմանք պատճառեց ինձ իր ընդհանուր երևույթով, այլև ավելի պարզվեց իր կոչումը: Այժմ ինձ համար ավելի հասկանալի եղավ, որ այս բարձունքը ոչ թե իբրև բերդ, այլ տարբեր նպատակի համար շինված էր: Ջնայելով իր կիսափուլ վիճակին, եթե այսօր իսկ մեկը հեռվից դիտե այս բարձունքը, մի աստիճանավոր բուրգի կատարյալ նմանությունը կտեսնե: Ուստի, դրսի աստիճանավոր բուրգի և գագաթի դատարկությունը մի փոքր սենյակով, ուրիշ ինչ նպատակով կարող է շինված լինել, բացի պաշտաման հատուկ մի բարձրությունից:

Նկատի ունենալով արևելյան ժողովուրդների բնապաշտությունը, բնական էր, որ ենթադրեի նաև անոնց բնապաշտության և պաշտամունքի ձևերի ազդեցությունը Հայաստանի վրա: Թեև գիտնականներ շատ կան, որ Արևելքի կրոնական ազդեցությունը դրական կերպով կհաստատեն Հայաստանի վրա, սակայն ես, իմ անձնական հետազոտությունների վրա հիմնված, համոզված եմ, որ նախաքրիստոնեական շրջանից մինչև մեր թվականի 15-րդ դարը հայոց ճարտարապետության վրա բազմաթիվ արևելյան ազդեցություններ կան: Բնականաբար իր գեղարվեստով և ճարտարապետությամբ միանգամայն Արևելքին հարող ժողովուրդ կրոնապես ևս պիտի ենթարկվեր անոնց ազդեցության:

Հայաստանի արևելքում, ասորա-քաղդեական հին կրոնի մեջ գլխավոր տեղ կբռնե քաղդեական տաճարը, որուն Ziggourât են անվանում եվրոպական պատմիչներ: Գիտնականներե ոմանք Զիկկուռատ նմանցնում են եգիպտական աստիճանավոր բուրգի, թեև տարբեր կոչումով: Աստիճանավոր բուրգը կամ Զիկկուռատ, քաղդեացիների բացօթյա տաճարն էր և չափազանց բարձր էր: Յոթը հարկ ուներ, ներքևի խարիսխ համարվող հարկն ավելի բարձր էր, քան քաղաքի տների կտուրները: Իսկ մյուս հարկերը, թեև բարձրությամբ միմյանց հավասար, բայց հատակի տարածություններն աստիճանաբար փոքրանալով՝ միմյանց վրա բարձրացած էին. այսպիսով, ստորոտում լայնանիստ և կատարով յոթերորդ հարկում որոշ չափով փոքրացած, աստիճանավոր մի բուրգի տպավորություն էր թողնում: Խարիսխ համարվող ստորին հարկեն վեր, յուրաքանչյուր հարկի բարձրությունը գրեթե 2–3 մետր էր: Յոթերորդ հարկին վրա, բնականաբար շատ փոքրացած, քան ստորին հարկի տարածությունը, այնուամենայնիվ ուներ բավականին մի ընդարձակ հարթ տանիք: Այս տանիքի վրա կանգնված էր մի փոքր սենյակ, որի մեջ կար մի չքեղ զարդարված անկողին և կողքին մի ոսկիե սեղան: Այս փոքր սենյակը Մասպերոն անվանում է «Աստվածային բնակարան»:

Մի ուրիշ պատմաբան, նախորդ պատմաբանի նման ինքն ևս Հերոդոտից առնելով՝ գրում է. «աստիճանավոր բուրգի վերին սենյակում կար մի չքեղ անկողին և կողքին մի ոսկիե սեղան» և ավելացնում է, թե այս տաճարին մեջ բնավ արձան չկար, քաղդեացի քահանաներ Հերոդոտին պատմեցին, որ այս մատուռին մեջ մի տեղացի կին գիշերները կանցներ ճիշտ այնպես, ինչպես որ կգործադրվեր Թեբեի Ամմոնի և Լիսիի պատար (patar) տաճարների մեջ: Այս աստիճանավոր հսկա պիրամիդի ստորոտին մի մատուռ կար, ուր տեսնվում էր Բելը ներկայացնող մի ոսկեղեն արձան, մոտը նույնպես ոսկեղեն մի սեղան: Կային նաև զոհի ոսկեձույլ սեղաններ: Տոնական արարողություններ և պաշտամունքներ կկատարեին այստեղ, բայց ժողովրդի հանդիսավոր վերելքը մինչև գագաթ ազատ էր»:

Ինչպես երևում է, գագաթի վրա ևս կկատարվեին տոնական արարողություններ:

Ուրեմն, Շիրվանջուղի Վարի բերդ անվանածը, իր լերկ գագաթով փոքր սենյականման շինվածքով, արտակարգ լայն արևմտյան դռնով, դեպի գագաթ բարձրանալու համար հասարակաց լայն ճանապարհով, նաև ներքևը հեռվից մի աստիճանավոր բուրգի նմանությամբ և շուրջը ընդարձակ դատարկությամբ Ziggourât-ի բոլոր բնական և արվեստական հատկություններ ունի իր վրա: Ուստի, նկատելով, որ Հայաստանի ժողովուրդը, իր արևելյան մեծ հարևաններին ենթարկված լինելով, կրոնապես ևս անոնց ազդեցության տակ լինելին շատ գիտնական պատմաբաններ հաստատել են. իսկ ես Շիրվանջուղի սարը քաղդեական Ziggourât-ների նման պաշտաման մի տեղ նկատելուս համար, կարծում եմ, որ մեծ սխալ գործած չեմ լինի:

## Զ

## ԱՎԵԼԻ ՈՒՇ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՄՐՈՑՆԵՐ ԵՎ ԲԵՐԴԱՔԱՂԱՔՆԵՐ

Մինչև այստեղ գրեցի նախաքրիստոնեական այն մնացորդների մասին, որոնց նախնադարյան շրջանին պատկանելին անկասկած է: Տարակույս չկա, որ այդ ամրոցները ոչ միայն միևնույն դարերում չեն շինված, այլ երկար դարերի ընթացքում հետզհետե կանգնվեր են անոնք, փոքր ի շատե իրենց զարգացման դրոշմը դնելով շինված պատերի ու պարիսպների վրա:

Ներկայիս տակավին գոյություն ունեցող ամրոցների խոր հնությունը շատ դժվար է որոշել, թե մեր թվականությունից քանի՞ դար առաջ շինված էր, որովհետև մնացել են մի միայն պատեր, և ավելի ճիշտ կլինի ըսել, թե ըստ քարերի ծավալի, երբեմն լայն, երբեմն նեղ, որոշ գծի վրա պատի նմանող քարակույտեր. և այդ քարակույտերն ևս այնքան անարվեստ կերպով կուտակված են, որ անոնց վրա որմնաշինական գործիքների հետքն անգամ չի երևում. իսկ կրաշաղախը միանգամայն անծանոթ էր այս շրջանում և պատերը շինվում էին բոլորովին առանց կրաշաղախի: Բնականաբար, այդ ամրոցները և պատերը շինող ժողովուրդը, քաղաքակրթությունե զուրկ, գրեթե կիսավայրենի վիճակի մեջ էր:

Իսկ այսուհետև նկարագրելի ամրոցներն ու բերդաքաղաքները, թեև նախաքրիստոնեական են, այնուամենայնիվ հին շրջանի բերդերի որմնաշինական հատկությունների հետ բաղդատելով, քարերի դասավորություններն ավելի մշակված են. հետզհետե երևում են նախ լարաձիգ ուղղություն և հետո բրոնզյա կամ երկաթյա մուրճերի միջոցով քարերը քառակուսելու և յուրաքանչյուր քարի կանոնավոր նիստ պատրաստելու ճիգերը: Թեև, իհարկե, բոլորովին չեն հաջողած, քարերի ճակատները մեծ մասամբ անմշակ են, ամբողջ պատի երկարությամբ նիստերն ուղիղ գծի վրա չեն, կրաշաղախ այս շրջանում ևս գոյություն չունի. նախաքրիստոնեական շրջանի վերջերին հազիվ մի քանի շենքեր կգտնվին, որոնց մեջ թեև կրաշաղախ գործածված է, սակայն մեզ անծանոթ պատճառներով կրաշաղախի գործածությունը չի ընդհանրացել մինչև քրիստոնեական թվականի սկիզբները: Թեև քրիստոնեության արշալույսին տեղ-տեղ գտնվում են երկաթի գործիքներով երեսը մաքուր տաշված քարեր, բնականաբար անոնց ծավալներն ավելի չափավորված և կանոնավորված են:

Այդ հետագա շրջանների ամրոցները, որ այժմ պիտի նկարագրեմ, դարձյալ մի զգալի զարգացում չեն ցույց տալիս, եթե ոչ ճարտարապետական, գեթ որմնաշինական արհեստի մեջ: Կարծում եմ, որ երկրորդ շրջանի ամրոցներն ամբողջովին ուրարտական շրջանին վերագրելը բոլորովին ճիշտ չի լինի, որովհետև, նախ՝ կրաշաղախ գրեթե գոյություն չունի այս ամրոցների մեջ, որ արդեն ծանոթ էր ուրարտական շրջանում. երկրորդ՝ հազիվ են երևում երկաթի մուրճերի հետքերը քարերի վրա. մինչդեռ ուրարտացիներին ծանոթ էին երկաթի գործիքներ, քանի որ մենք գտնում ենք շենքի գեթ զանազան մասերի վրա բոլորովին սրբատաշ քարեր՝ երկաթի գործիքներով տաշված: Արդ, մինչև մեր թվականը եթե հին ամրոցների մեջ պատահում են կրաշաղախով պատեր, այդ մասին ունիմ առանձին տեսություն, որ պիտի պարզեմ իր կարգին:

Գյավուր-ղալա.– Արագածի լանջերի վրա նշանավոր ամրոցներից մեկն է Գյավուր-ղալա անվանված ամրոցը և անոր կից բերդաքաղաքը: Թեև նախապատմական խոր հնության մեջ կառուցված չէ այս ամրոցը, բայց հետագա երկրորդ շրջանի թերևս սկիզբները կանգնված է, որը նաև բերդաշինության ոճի իբրև օրինակ ծառայած է Կափրլիի, Աղյամանի, Կոխդայիրմանի, նման այն ամրոցներին, որոնք շինված են նախապատմական խոր հնություն ունեցող ամրոցներից հետո, որոնց մեջ նկատվում է փոքր ինչ հառաջադիմություն որմնաշինության արհեստին:

Փարպի գյուղից վերև, Արագածի հարավարևելյան լանջի վրա, բավական անառիկ դիրք ունեցող մի վայրում, կանգնված են թե՛ բերդը և թե՛ բերդաքաղաքը, որոնք ներկայիս, իրենց հեռավոր շրջաններով իսկ, բոլորովին ամայացած են: Փարպիից անընդհատ բարձրանում էինք դեպի վերև, ուր բանված ճանապարհի ոչ մի հետք չկար, բացի հազիվ նշմարվող արահետներից, որոնք գոյացել էին սարում արածող արջառների և ոչխարների կճղակների տակ:

Սկզբում, երբ բերդը և կից բերդաքաղաքը լեցուն էին կենդանի բազմությունով, ունեին 4–5 մետր լայնությամբ մի ձեռագործ ճանապարհ դեպի ստորին դաշտն իջնող, որը ներկայիս չափազանց պարզ հայտնի է՝ թեև մանր խիճերով ու խոտով ծածկված: Այս ձեռագործ ճանապարհը Փարպիից վերև, դեպի հյուսիս-արևելք, շեղվում է դեպի արևելք և ո՞ւր է գնում, ինձ հայտնի չէ: Իսկ դեպի վերև հառաջանում է ուղիղ մեծ ամրոցի հյուսիս-արևելյան դռան առջև և այնտեղից ճյուղավորվում է դեպի բերդաքաղաքը, որ տարածվում է բերդից հյուսիս-արևմուտք:

Բերդի գլխավոր դուռն ամրացած է երկու հսկայական քառակուսի բուրգերով և նաև մի շարք փոքր բուրգերով ամրացած են հյուսիսային և արևմտյան ճակատները: Արևելյան ճակատը մասամբ միայն պարիսպով ու բուրգերով ամրացած է, իսկ մնացած մասը ամբողջ հարավային ճակատով միասին պաշտպանված են անդնդային խոր ձորերով: Բոլոր պարիսպները և բուրգերը շինված են առանց կրաշաղախի, անտաշ վիթխարի քարերով: Հյուսիսային խիտ բուրգերի չորրորդին կից կա մի փոքրիկ դուռ (անշուշտ գաղտնի դուռ), որը մինչև այսօր անվթար պահված է իր միակտուր անտաշ քարե բարավորներով և քարե վերնայամով: Ամրոցի արևմտյան կողմը, ուր կա մի ավերված երկրորդական դուռ, որի երկու կողմերում կան բավական մեծկակ քառակուսի բուրգեր: Այս բուրգերի արանքները, ամբողջ ճակատի վրա, որ ավելի լայն են, քան բուրգերի ճակատները, ծածկված են միակտուր վիթխարի քարերով, քարերի բարձրություններն իմ հասակիցս ավելի էին, նմանապես լայնություններն առանց օժանդակ կտորի, անշուշտ, ավելի բարձր էին պատերը, քան ինչ որ այժմ գոյություն ունին: Բայց ի՞նչ ուժով և հնարով կանգնել են այդ ծանր քարի զանգվածները, առայժմ մեզ համար անծանոթ է:

Ամրոցի պարսպամեջը ևս բավական ընդարձակ եղած է, ինչպես Աղթամուրի ամրոցը, ներսում եղել է բավականին հոծ բնակչություն և այս բնակչությունը գոյություն է ունեցել մինչև քրիստոնեության սկիզբը, ինչպես ցույց են տալիս նշանները, այս նախաքրիստոնեական վերջին ժամանակ միայն լքել են թե՛ ամրոցը և թե՛ բերդաքաղաքը:

Պարիսպից դուրս եղած բերդաքաղաքը կես կիլոմետրից ավելի երկարություն ունի, քիչ ավելի ևս լայնություն: Տների պատերը համեմատաբար ավելի բարձր մնացած են, քան ուրիշ բերդաքաղաքներ: Տների արտաքին պատերի վրա երևում են ամբողջական դռներ՝ անտաշ քարեղեն բարավորներով, ամբողջ շենքերը շինված են անտաշ որձաքարով, առանց շաղախի, պատուհանների նշաններ չկան, շինությանց քարերը չափավոր մեծություն ունին, հակառակ բերդի շինության հատկացված վիթխարի քարերի: Ինչպես ամբողջ բերդի պարիսպների և բերդամիջի շինությունների մեջ, այստեղ բերդաքաղաքի մեջ ևս ոչ մի տեղ չի երևում կրաշաղախով պատերի հետքեր:

Ամրոցից դուրս, բերդաքաղաքից փոքր ինչ դեպի հարավ, ձորերի մեջ, շատ քարայրեր կան, որոնց ուսումնասիրությունը չափազանց շահեկան է հնագիտության համար:

**Կոխդայիրման.**– Այժմյան Կոխդայիրման գյուղի հարավային կողմը, մոտավորապես երկու կիլոմետր հեռավորությամբ, մի բարձր սարի վրա կգտնվի նախաքրիստոնեական մի մեծ ամրոց, շրջապատված երեք կամ չորս հաջորդական շրջապարիսպներով, որոնք շինված են ամրոցի պաշտպանության համար: Ամրոցի հյուսիսային և արևելյան կողմերի անմիջապես ստորոտին տարածված է եղել բերդաքաղաքը, որի պարզ հետքերը մեծ մասամբ մնացել են այժմ տեղի վրա:

Այս բերդը մարդկային արտակարգ ուժի և չարատանջ աշխատության մի պերճախոս ապացույց է: Բերդի շուրջը գտնվող քաղաքատեղիի մեջ հավաքված ժողովուրդը, իր տոհմապետի ապահովության համար, բերդը ոչ միայն գագաթից շրջապատել է ընդարձակ տարածության վրա ամուր պարիսպներով, այլև բերդակիր սարի լանջերի վրա, միմյանցից որոշ հեռավորությամբ կառուցել է չորս կարգ պարիսպներ ամեն կողմի վրա: Հյուսիս-արևելյան կողմը, սարի ստորոտին, նույնիսկ մի հինգերորդ պարիսպի հետքեր են երևում: Այս բերդը, որ անհամեմատ ուշ է շինված, քան նախորդ նկարագրվածները, այնուամենայնիվ տակավին կրաշաղախով չէ, թեև հին որմնաշինությունների հետ բաղդատելով, որոշ հառաջադիմություն եղած է շինարարական արհեստի մեջ: Արևմտյան կողմից, խոր ձորի մեջ, կգտնվի գյուղի կողքից անցնող վտակը. այս ձորն այնքան խոր է և այնքան թեք է լանջը, որ ականատեսը չի կարող չզարմանալ, թե այդ թեք լանջի վրա ինչպե՞ս կարողա-

ցան շինել արտակարգ խոշորությամբ չորս կարգ պարիսպներ: Այս լանջի վրայի պարիսպներն են, որ բոլորովին նախնական ձևով շինված են՝ բացի վերևի բերդը անմիջապես շրջապատող պարիսպից, որը շարվածքով և իր լարաձիգ ուղղությամբ զանազանվում է նախկին դարաշրջանների շինվածներից: Այստեղ արդեն քարերի դասավորությունը ոչ միայն համապատասխանում է որմնաշինական արհեստին, այլև պարզ երևում են նաև բրոնզյա մուրճի թեթև հարվածները՝ պատերի վրա շարված քարերի անկյունների վրա: Իհարկե, չեն կարողացել լիովին կոկել քարը և մեկ հորիզոնական գծի վրա շարել հաջորդական քարերը, բայց անկյունների վրա որոշ հարվածներ տվել են քարերը քառակուսելու համար, և յուրաքանչյուր քարի նիստերն աշխատել են կոկել՝ պատերի վրա լավ տեղավորելու համար: Միևնույն երևույթն ունին մյուս կողմերի վրա շինված պարիսպները, որ անվիճելի ապացույց է նախկին հին ոճի որմնաշինության մեջ մի զգալի հեղաշրջում առաջ գալուն:

Թե՛ գագաթը շրջապատող պարիսպները և թե՛ լանջերի վրա եղող հաջորդական պարիսպները քննելով, երևում է, որ այս բերդը շատ հին ծագում ունեցել է, բայց պարբերաբար նորոգվել է ըստ ժամանակակից արվեստի զարգացման, ինչպես գագաթը շրշապատող պարսպամասեր և ուրիշ երկրորդական պարսպամասեր: Ամեն կողմից կրկնակի պաշապանված այս բերդը, իր բարձր և թեք դիրքի պատճառով, բնականաբար, նույն ժամանակվա ռազմական արվեստի համաձայն, անմատչելի դարձած էր: Հարավ-արևելյան կողմը, որ միակ մատչելի կողմն էր, կրկնակի պարիսպներով զրահավորված էր, մյուսների համեմատությամբ ավելի բարձր պատերով: Արտաքին պարիսպների դռները քանդված էին, որով ճիշտ տեղը որոշելն անհնար էր, սակայն ներքին բուն ամրոցի մուտքը տակավին կանգուն էր և չորս ու կես մետր լայնություն ուներ: Դռան երկու կողմի պարիսպների թանձրությունը 2,80 մետր էր: Ներքին պարիսպից ներս մտնելով, մեր առջև կպարզվի գրեթե ամբողջ բերդամիջի տարածությունը, որը շատ հին բերդերից ավելի ընդարձակ է: Բերդամիջի տարածությունը գրեթե 400 մետր երկարություն ունի և մի քիչ պակաս լայնություն: Ներքին ընդարձակ տարածությունը ծածկված է վաղեմի բնակարանների մնացորդներով, որոնք բոլորը շինված են առանց կրաշաղախի, սևագույն որձաքարերով: Ներքին տարածության կեսի վրա, մի քիչ դեպի արևելք, կա մի մեծ շենքի ավերակ՝ բազմաթիվ բաժանումներով: Անկասկած, այս էր իշխանի կամ տոհմապետի հատուկ բնակարանը, որը համեմատաբար ավելի խնամքով շինված էր, քան բերդում գտնված ուրիշ մնացորդներ: Այս շենքի մնացորդից դեպի արևմուտք, մի քանի քայլի վրա, կա մի ստորերկրյա շենք կամ քարայր, որի մուտքն այժմ խափանված է փլուզումով: Գյուղացիների նկարագրումից երևում է, որ, դեռ չփլված, մտել են այս ստորերկրյա շենքի մեջ և, բացի երկու կամ երեք սենյակից, ավելի բան չեն տեսել: Նախապես ամենևին փլված չի եղել, գրբացներ գանձ են երևակայել և բացել են այդ ստորերկրյա շենքի մուտքը, սակայն մի ժամանակ հետո փլվել է: Ինչպես երևում է, այս ստորերկրյա շենքը պատկանում էր տոհմապետի ընդարձակ բնակարանին և թերևս ծառայել է իբրև պահեստատուն և մառան, սակայն հետզհետե ավերման է ենթարկվել, մանավանդ այն ժամանակից հետո, որ գանձակրկիտներ խուզարկել են և հուսախաբ դուրս են եկել: Իսկ փոխանակ գանձի թեև իրենց համար անարժեք, սակայն գիտության համար արժեքավոր առարկաներ հանել են և հանողներ իրենց մեջ բաժանել են առողջ մնացած իրեղենները: Քննությունը ցույց է տալիս, որ երկար ժամանակ այս ամրոցի մեջ բնակություն եղել է և նորոգություններ կատարվել են ոչ միայն բերդի, այլև բերդի ստորոտում տարածվող քաղաքի մեջ:

Բավական ընդարձակ եղած է բերդաքաղաքը, արևելյան կողմից հետզհետե քարերը մաքրելով և արտի վերածելով՝ հազիվ կեսը թողել են, բայց մնացած կեսը դարձյալ կես քառակուսի կիլոմետրից ավելի է:

Բերդի հարավ-արևելյան կողմը, բարձունքի վրա կգտնվի վաղեմի արհեստական ջրամբարներից մեկը, որ շուրջանակի շինված է անշաղախ, մեծամեծ քարերով, և մինչև այսօր կմնա: Թեև այժմ հոսող ջուր չկա, սակայն երբեմն հորդ անձրևների ժամանակ ջրերը լեցվում են այս արհեստական լճի մեջ, և երկար ժամանակ օգտվում են սարերում արածող անասուններ: Ավելի ցածը, գրեթե գյուղի ուղիղ արևելյան կողմը, կգտնվի մյուս արհեստական լիճը, որի ջուրը գալիս է մի մասնավոր առվով և ամբողջ տարին մեջը ջուր կա գյուղի անասունների օգտվելու համար: Պետք է ասել, որ գյուղացիք ևս հոգածու են այս արհեստական լճի պահպանման, որովհետև միշտ նորոգում ու կարկատում են հարկ եղած մասերը:

Այս երկու արհեստական լճերի ջուրը գալիս էր Արագածի բարձունքներից և գրեթե մի մասն էր գյուղի արևմտյան կողմից հոսող վտակի: Սակայն այժմ ոչ միայն խանգարվել են արհեստական լճի



ճանապարհները, այլև բոլորովին դադարել է բերդի ստորոտում, հին քաղաքատեղիի մեջեն անցնող մեծ առվի վազելը, որի համար ավանդությունը կըսե, թե այս ջուրը քառասուն ջրաղաց կդարձներ, ուրկեց ստացեր է Կոխդայիրման (քառասուն ջրաղաց) անունը: Գյուղացիների համար պարզ են բոլոր ջաղացատեղերը և ցույց են տալիս մի շատ ջաղացատեղեր և քարեղեն նավեր:

Բերդից ցած, այժմյան գյուղի սահմաններում ևս քրիստոնեական խիտ բնակություն եղել է. մեկ խոսքով՝ այս շրջանում, նախաքրիստոնեական ամենահին ժամանակներից մինչև այսօր կյանքը չի դադարել. շատ դարաշրջանների ապացույցներ կան թափված այս գյուղի շրջակայքում: Գյուղի ծայրը մի նոր եկեղեցի են շինել, որի արևմտյան դռան մի բարավորը 5–7-րդ դարու քանդակազարդ կոթողից է շինված, բնականաբար իբրև արժեքից զուրկ այս հնամենի մեծարժեք քարը, դռան կողքին իբրև բարավոր զետեղել են: Եկեղեցիի արևմտյան կողմը մի գերեզմանատուն կա, որի մեջ 5-րդ և 7-րդ դարերի կամարաքարեր, խոյակներ, խարիսխներ և ուրիշ հնադարյան ճարտարապետական բեկորներ կգտնվին իբրև տապանաքար գործածված: Բացի գյուղական եկեղեցին, գյուղի հարավային մոտակա բարձունքի վրա շինել են մատռանման մի շենք, որի մեջ դրված են, իբր պաշտաման առարկա, չորս ճակատի վրա քանդակված 7-րդ դարու քառակուսի մի կոթող և մի՝ 10-րդ և 11-րդ դարերին պատկանող, վերին աստիճանի գեղարվեստորեն նկարված և քանդակված խաչքար:

**Աղթամուր.**– Օշականի հյուսիս-արևմտյան կողմը կգտնվի Կզլթամուր գյուղը, որը մեծ ուշադրության արժանի է թե՛ գյուղի և թե՛ այգիների մեջ, 5–10-րդ դարերի ճարտարապետական մնացորդներով: Սակայն այժմ չեմ խոսելու անոնց մասին, մինչև որ կարգը կու գա: Այժմ պիտի խոսեմ այգիների վերջավորության կից Աղթամուր ըսված տեղի վրա գտնված մի նախաքրիստոնեական հին բերդի մասին, որ նշանավոր տեղ է բռնում նախնադարյան և նախաքրիստոնեական բերդերի շարքի մեջ:

Աղթամուրի բերդը շինված է Քասաղ գետի աջ ափին, եղած ափի վրա գտնվող Հաջիղարա գյուղի մոտ ձախ հնագույն գերեզմանատների դեմ դիմաց, որուն մեջ, բացի պաշտաման աշտարակներից, կան նաև զանազան տեսակ կրոմլեխներ, որոնց մասին գրել եմ աշխատությանս սկիզբը:

Այս շրջանը, ներառյալ Հարամլու, Աղավնատուն, Խզնավուզ մինչև Շամիրան գյուղը մեկ կողմից, մյուս կողմից Կոչ գնացող ճանապարհի գրեթե կեսին, ուր կգտնվի Օյուղ ըսված նախապատմական աշտարակի մնացորդը, գրեթե գտնվում են Աղթամուրի հետ մի ընդարձակ շրջանի մեջ, ուր ոչ միայն նախաքրիստոնեական հին մնացորդներ կան, այլև ընդարձակ տարածության վրա կրոմլեխներ և ուրիշ տեսակ հին գերեզմաններ. տարակույս չկա, որ Աղթամուրի և Խզնավուզի ու Աղջակալայի արանքում շինված մի փոքրիկ ամրոցի, կամ լավ է ըսել դղյակի շինության ժամանակ բնակչության հոծ բազմություն կար այդ ընդարձակ շրջանում: Աղթամուրի բերդը գետի կողմից պաշտպանված է ուղղաբերձ ժայռերի բնական ամրությամբ, իսկ անշաղախ որձաքարի հսկա զանգվածներով կանգնված պարիսպներով պաշտպանված են բերդի մյուս մասերը: Բավական բարձրությամբ պահված են արտաքին շրջապատ պարիսպները, մանավորապես մուտքի կողմը, երկու անկյուններուն վրա ամրացած են լայնանիստ բուրգերով:

Բերդը անկանոն քառակուսի է, մոտավորապես 155 մետր երկարությամբ և 135 մետր լայնությամբ: Պարսպամիջին, ամբողջ տարածության վրա, հին շինությանց փլատակներ ու ավերակներ են: Ամենահին նախաքրիստոնեական շրջանից մնացած բնակության մնացորդներ կգտնվին այստեղ. բայց մնացորդներ ևս կան, որոնք 16-րդ և 17-րդ դարերուն կպատկանին:

**Խզնավուզի ամրոց կամ դղյակ.**– Ալիշանի «Այրարատի» 202 էջի վրա կա մի նախաքրիստոնեական ամրոցի պատկեր, որը գծագրել է Պուլեյ Լըկուզ անունով մի Ֆրանսացի գիտնական ուղևոր, որ գիշերն անցրել է Աղջակալա գյուղում և բերդը նկարել է Աղջակալայի շրջանում տեսնելուն պատճառով: Պուլեյ Լըկուզ այս գյուղում գիշերել էր 1647 թվականին:

Աղջակալա գյուղում և շրջակայքում ոչ Ֆրանսացի ճանապարհորդի տեսած բերդը կար և ոչ նոր բացված գերեզմաններ: Բայց որովհետև գյուղացիք հայտարարեցին, որ իրենց գյուղի շրջակայքում իսկապես կային հնագիտական վայրեր, ուզեցի այդ հնությունները տեսնել գյուղի սահմանում և հետո հեռանալ դեպի մոտակա շրջանները՝ հետազոտելու համար: Գյուղի շրջակայքում, իսկապես, կային հնագիտական վայրեր, ինչպես՝ անշաղախ պատի մնացորդներ, ընդարձակ գերեզմանատներ, որտեղից հանում են խեցեղեն ամաններ, պարարտացման հող փորելիս, կրոմլեխներ և, որ ավելի հետաքրքրական է, երեք հատ բոլորակ աշտարակի մնացորդներ, ինչպես նաև Օյուղը, Արդար Դավիթը, Հաջիղարա գյուղի մոտ հին գերեզմանատան մեջ գոյություն ունեցող կիսավեր աշտարակ-

ները, Անիի մոտ Բագնայր գյուղի սահմանում մի բլուրի գագաթին շինված աշտարակի մնացորդը: Աղջակալայում, երեք աշտարակներից երկուքը գրեթե անհետանալու վրա են, հազիվ բոլորակ հիմերն են մնացել, իսկ երրորդը, ինչպես երևում է, քրիստոնեության շրջանում ևս իբրև սրբատեղի պաշտամունքը շարունակելով, նորոգության են ենթարկել սրբատաշ տուֆ քարերով: Այս բոլորակ աշտարակի սրբատաշ շինվածքի պատերը հազիվ 70 սանտիմետր բարձրության հասնին, իսկ բոլորակի տրամագիծն է 4,5 մ., պատի հաստությունը 80 սանտ.: Թե ինչպես էր առաջ ամբողջությունը, բնավ հայտնի չէ:

Գյուղին կից, դաշտի ճանապարհի աջ կողմը ընկած է մի մեծ բոլորակ որձաքար՝ 1,90 մետր տրամագծով: Բոլորակի եզերքից 20 սանտիմետր լայնությամբ ներս և 2 սանտիմետր խորությամբ կանոնավոր կերպով շուրջանակի փորված է: Ենթադրում եմ, որ այս քարն առանց խորհրդավոր նպատակի չէ շինված, շատ կարելի է, որ մի հին պաշտամունքի հետ կապ ունի, քանի որ շուրջը լիքն են նախաքրիստոնեական պաշտաման մնացորդներ, այսինքն գերեզմաններ, մեծազանգված քարերից անշաղախ շինված պատեր և այլն:

Խզնավուզ գյուղի մոտ աչքե անցուցի հին գերեզմանատունը և հետաքրքրվեցի դուրս եկած առարկաներով: Սակայն բացված գերեզմաններից անհամեմատ ավելի հետաքրքրական էր նույն գերեզմաններին կից մի հնագույն բերդի մնացորդ, որ անպայման շինված էր ուրարտական տիրապետության ժամանակ և միանգամայն պարզվեց, որ այս ամրոցի մնացորդի մասին էր Պուլեյ Լրկուզի գրածը, որ չփոթած էր Աղջակալայի հետ, փոխանակ Խզնավուզ գրելու: Բացի այդ պարագան, 1647 թվականից մինչև այժմ անցել է ավելի քան 285 տարի՝ թերևս Պուլեյ Լրկուզի քննած ժամանակ կամ Խզնավուզ գյուղը գոյություն չուներ և կամ այն ժամանակ այս շենքը գտնվում էր Աղջակալայի սահմանի մեջ և հետո փոխված էր սահմանը: Ինչևիցե, քննենք այժմ մանրամասնորեն և համեմատենք «Այրարատի» 202 թիվ էջի վրա նկարված պատկերի հետ:

Շատ հետաքրքրական է գիտնալ, թե Պուլեյ Լրկուզ այս շենքը տեսած ժամանակ ամբո՞ղջ էր մինչև կտուրը և ամբողջությունը նկարեց իր տեսածի նմա՞ն, ինչպես կա Ալիշանի «Այրարատի» մեջ, թե՞ մասամբ քայքայված էր և վերակազմեց: Իհարկե, այդ մասին այժմ ստուգում կատարել անհնար է, սակայն մի բան պարզ է, որ Ֆրանսացիի տեսած ժամանակ եթե բոլորովին անաղարտ չէր, այնուամենայնիվ հիմակվան նման կիսավեր չէր կարող լինել: Այժմ հազիվ ստորին հարկը մնացել է՝ արտաքուստ 3 մետր բարձրությամբ, և ներքին բաժանումների հատակագիծը՝ նույն բարձրության վրա: Բայց որովհետև շենքը գետնահարկ չունի, բնական երեք մետր բարձրությամբ ապառաժի վրա է շինված և միմիայն արտաքին պատերն են, որ ցածից շինել են և հարթ ճակատ ստեղծել: Հետևաբար, ներքին բաժանումների ստորին շարքերը մնացել են թեև տեղ-տեղ նույնիսկ ապառաժ, այնուամենայնիվ այժմ պարզ տեսնում ենք, թե ի՞նչ բաժանում ունեցել է շենքը: Այս հարկի ներքին բաժանումները հնար եղածին չափ չափագրված և հատակագծված է: Նկարված պատկերը ցույց է տալիս, որ շենքը երկու հարկանի էր, բայց այժմ մենք չենք կարող գիտնալ, թե ի՞նչ ներքին բաժանումներ ուներ վերևի հարկը: Հարավային պատը, որ շենքի երկար կողմն է, ինչպես հյուսիսային հանդիպակաց պատը, հենորմերով է շինված, որոնց լայնությունը 3,80 մետր է և յուրաքանչյուր հենորմ պատից դուրս է ցցված 50 սանտիմետր: Այս հենորմերը, անշուշտ, շենքի հաստատության և ամրության համար շինված են: Շենքի չորս անկյուններուն վրա չորս մեծ քառակուսի բուրգեր են շինված մայր պատից դուրս և երևում է, որ այս բրգանման ցցված անկյունները շարունակված են դեպի վեր մինչև տանիքը (ինչպես երևում է № 28 պատկերի մեջ):

Նկ. 28. Պուլեյ Լրկուզի նկարած նախաքրիստոնեական ամրոցի պատկերը (տես Ղ. Ալիշան, «Այրարատ», էջ 202)





Նկ. 29. Խզնավուզի ամրոցի հատակագիծը

Հին ժամանակ, անշուշտ, այս շենքը եղել է իշխանական կամ տոհմապետական ամրոց. բացի շենքի ամուր կառուցվածքից, արտաքուստ հեռվից ևս շրջապատված է եղել կիկլոպյան պարիսպներով: Շենքի հյուսիսային և հարավային կողմի պարիսպները մինչև այսօր մեծ մասամբ կան, իսկ արևելյան և արևմտյան կողմի պարիսպները միանգամայն մաքրել են գյուղացիներ և տեղերն այդի և մրգաստան են տնկել: Շենքը հեռվից շրջապատող պարիսպների հյուսիսային կողմինը հինգ մետր հեռավորության վրա է, իսկ հարավային կողմի պատը քսան և մեկ մետր հեռավորություն ունի:

Նայելով շենքի ներքին բաժանումների շատության և ընտանեկան բնակության հարմարություններին, այս շենքը ոչ միայն ամրոց էր, այլև իշխանական կամ տոհմապետական դղյակ: Թեև ներքին բաժանումների ճաշակը մեր այսօրվա ընտանեկան պահանջների և հասկացողության անհամապատասխան է, այնուամենայնիվ մեզ համար հետաքրքրական է այն ժամանակի մարդկանց ճաշակը, որուն պարզ արտահայտությունն է այս շենքի հատակագծային բաժանումները:

Գոնե մեզ և մեր գրականության համար անգնահատելի է Պուլեյ Լրկուզի նկարած պատկերը և Ղ. Ալիշանի ընդօրինակելը, որովհետև առաջին և վերջին օրինակն է թերևս, որ ունինք նախաքրիստոնեական շրջանից մնացած մի շենքի ներքին և արտաքին շինության ձևը կամ պատկերը: Այլևս կասկած չի մնում, որ Պուլեյ Լրկուզի նկարած և Հ. Ալիշանի արտանկարած պատկերն այս շենքինն է: Պատկերի մեջ չորս անկյունի բրգանման դուրս ցցվածքները մինչև այժմ գոյություն ունին տեղին վրա՝ մոտ երեք մետր բարձրությունով. իսկ ինչ կվերաբերի պատկերի մեջ երևցող կամարակապ դռան, ամենայն հավանականությամբ նկարված է արևմտյան կողմից, որ այժմ գրեթե ամբողջովին փլատակ է: Ինչպես երևում է, այս կամարակապ դռան մասերը արևմտակողման փլատակների ներքև է և առանց պեղումների կարելի չէ տեսնել: Բայց որովհետև շենքի առաջին հարկի հատակն ամբողջությամբ ժայռ է, հետևաբար շենքի արևմտյան կողմը մի մասի տակ գետնահարկ ուներ, և այդ կամարակապ դուռը կպատկաներ փոքրիկ գետնահարկին և չի երևում որևէ կապ վերևի հարկի հետ:

Դրսից վերի հարկը բարձրանալու համար առանձին ճանապարհ և մուտք շինված է հարավային ճակատի արևելյան կողմին կից: Շենքի առաջին հարկի հատակը մոտավորապես երեք մետր բարձր էր, ուստի արտաքուստ, չորս մետր հեռվից, աստիճանաբար դեպի դուռը բարձրացող մի լայն ճանապարհ կա: Շեղակի դեպի դուռը բարձրացող ճանապարհի լայնությունն եղել է չորս մետր, այս չորս մետր լայնությունից անկախ, դեպի վերև շեղակի բարձրացող ճանապարհի ամրության և հաստատության համար շինել են 2,10 մետր հաստությամբ պատեր՝ երկու կողմից, նույնպես շեղակի աստիճանաբար մինչև շենքը բարձրացող: Այս ճանապարհն ևս համայն շենքի նման անշաղախ մեծամեծ քարերով է շինված: Այս թեք ճանապարհով իշխանը կամ տոհմապետը, եթե ոչ կառքով, գեթ ձիով կարող էր բարձրանալ դղյակի արտաքին դռան առջև:

Շենքի հարավ-արևմտյան կողմը, հավանորեն արտաքին պարիսպներեն ներս, պատահաբար բացված գերեզմաններից անկախ, երևում են կրոմլեխներ, որոնց երկու խոշորագույններն իշխանական դղյակին կից են: Պետք է ըսել, որ շատ քիչ է հետազոտվել այս դղյակի շուրջը, որ ամենայն հավանականությամբ նախաքրիստոնեական շատ հնություններ պիտի գտնվին, ուստի առայժմ կվերապահենք ուրիշ առթիվ մանրամասն հետազոտության:

Ֆրանսացի գիտնականն եթե իր այցելության ժամանակ դղյակը կանգուն է տեսել և գծագրել է եղածին պես, այն ժամանակ մեզ համար չափազանց հետաքրքրական կլինի, որովհետև Հայաստանի սահմանում այս միակ շենքն է, որ նախաքրիստոնեական շրջանից մեզ հասել է, և մենք անով պիտի գաղափար կազմենք նախաքրիստոնեական շրջանի բարձրագույն դասակարգի ճաշակի վրա: Որովհետև եթե Ֆրանսացիի նկարած պատկերին վրա դատենք ճարտարապետական տե-

սակետով, կտեսնենք, որ բավական ճաշակ և համաչափություն կա արտաքին ճակատների վրա: Իսկ եթե վերակազմել է, անշուշտ այն ժամանակ ավելի շատ մնացորդներ կային և մնացորդ ճարտարապետական բեկորների հիման վրա ամբողջացրել է շենքը:

Թեև Աղավնատան շրջանի մեջ հուշարձանների շատ մնացորդներ կան գրեթե մինչև 13-րդ և 14-րդ դարերից մնացած, սակայն ասոնք թողելով իրենց կարգին, այս աշխատության մեջ տեղ կուտամ նախաքրիստոնեական մի մնացորդի, որ ըստինքյան հետաքրքրական է նախ՝ նախաքրիստոնեական լինելու, երկրորդ՝ որոշ նմանություններ Խզնավուզի դղյակի հետ ունենալու պատճառով:

Աղավնատան կից գոյություն ունեցող նախաքրիստոնեական ամրոցը մեկ մետրից ավելի բարձր շրջապատ ունի: Այս շրջապատի ներքինը քրիստոնեական շրջանին մաքրել են և 10-րդ–11-րդ դարուն միջակ մեծությամբ մի եկեղեցի են շինել, որն իր կարգին կհիշատակեմ և կնկարագրեմ: Այժմ այստեղ հիշատակելս հնագույն ամրոցին՝ Խզնավուզի դղյակի հետ փոքր ի շատե նմանության մասին պիտի լինի: Գյուղացիներ, որ հաճախ փորում են այս նախաքրիստոնեական ժամանակի հողերը և տանում են իրենց արտերը պարարտացնելու համար, հաճախ գտնում են հին առարկաներ, ինչպես նաև տների հիմեր փորելու ժամանակ: Այս պարագան ցույց է տալիս, որ նախաքրիստոնեական շրջանին այստեղ կար խիտ բնակչություն ամրոցի շրջակայքում, իսկ ամրոցի պարիսպների մեջ գոյություն ուներ մի շենք կամ մի դղյակ, որն այժմ գոյություն չունի, շատ խնամքով մաքրել են պարսպամեջը 10–11-րդ դարուն և կրոնական նպատակների են ծառայեցրել, մի ծայրին միջակ մեծությամբ քրիստոնեական եկեղեցի շինելով:

Բայց այս պարիսպի մեջ ամենից ուշադրության արժանի մասը ստորերկրյա քարայրն է: Պարսպապատ մասի հարավային կողմը մինչև այսօր գոյություն ունի մի գետնահարկ քարայր, որու մտից դուռը հարավային պարիսպից դուրս ամրոցի գետնի մակարդակից ցած է գտնվում: Քարայրի մեջը բավական ընդարձակ է, այնպես որ վերջին թուրքական արշավանքի ժամանակ հարյուրավոր գյուղացիներ ապաստանել են և անվնաս ազատվել հարձակման արհավիրքներից: Այժմ պետք է որ համեմատեմ այս քարայրը Խզնավուզի դղյակի արևմտյան մասի գետնահարկի հետ, որն արտաքին կամարակապ մտից դուռ ունեցել է: Այս պարագան ցույց է տալիս, որ տոհմապետական մի դղյակի կամ ամրոցի համար անհրաժեշտ էր մի ստորերկրյա բաժանում կամ քարայր. սա երկրորդ օրինակն է, որ գոյություն ունի Աղավնատան նախաքրիստոնեական ամրոցի ներքև: Կա նաև երրորդ օրինակը, որի մասին ուրիշ առթիվ գրել եմ, երբ նկարագրում էի Մարմաշենի մոտ Վահրամ Պահլավունիի բերդը, որ շինված է նախաքրիստոնեական մի ամրոցի վրա: Այդ բերդի հյուսիսային կողմի վրա ևս կա բերդի մեջի բնակարանների ցածը ստորերկրյա մի քարայր, որը հետզհետե խցվելու վրա է հեղեղատների պատճառով:



**Նկ. 30. Աղավնատան նախաքրիստոնեական ամրոցի հատակագիծը**

Վերջապես, եզրակացնելով խոսքս, պիտի ըսեմ, որ թե՛ Խզնավուզի և թե՛ Աղավնատան բերդերի շուրջն անպայման պեղում պետք է կատարել, որպեսզի լրիվ կերպով բաղդատել հնար լինի երկու մոտակա ամրոցների ստորին քարայրերը և թե ըստ կարելվույն կստուգվի Պուլեյ Լրկուզի նկարած վերակազմությունը, որով մենք կունենանք նաև մի նմուշ նախաքրիստոնեական տոհմապետական շենքի թե՛ արտաքին ճակատին և թե՛ ներքին բաժանումներին:

**Կարսի շրջան. Թահմազ-թափիա.**– Երկրորդ շրջանի բերդաշինության ժամանակին է պատկանում Կարսի Թահմազ-թափիա ըսված սարի Սուֆրա-դաղ անվանված բլուրի կատարին շինված նախաքրիստոնեական բերդը: Այս բերդը ևս շինվել էր այն ժամանակաշրջանին, երբ շինվել են Կրվխդայիրմանի, Աղթամուրի և անոնց նման ամրոցները, որոնց մեջ կան որմնաշինության կանոններ և քարերի անկյունների և մասամբ եզերքների վրա պարզ երևում են բրոնզյա մուրճի հետքեր: Այս բերդի պարիսպների շինության ժամանակ, թեև տակավին կրաշաղախ գոյություն չունի, այնուամենայնիվ պարիսպի մեծածավալ քարերը որոշ չափով քառակուսելու և քարերի նիստերին հորիզոնական ձև տալու ճիգը շատ պարզ տեսնվում է: Պատերի մեջ քարերի փոքր ի շատե հաջող շարվածքի պատճառավ է, որ մինչև այսօր մեզ հասել են բերդապարիսպների երկար մասեր և անկյուններ, առանց քանդվելու: Այս երկրորդական շրջանի բերդերի պարիսպները եթե կիսաքանդ կամ լիովին քանդված են, պարզապես մարդոց ձեռքով քանդված են քարերն օգտագործելու համար:

**Նկ. 31. Թահմազ-թափիայի գագաթին նախաքրիստոնեական ամրոց (Կարսի շրջակայքում)**

Բերդի գագաթը բավական ընդարձակ է Աղթամուրի բերդի նման, բայց առհասարակ դիտավորյալ կերպով ընդհանուր ավերման ենթարկված կկարծվի, այն ևս վերջին ժամանակներ: Միայն հարավ-արևմտյան անկյունն է, որ որոշ բարձրության վրա մնացել են մեծազանգված քարերով անշաղախ կառուցված պատերը: Բերդի հատակը և լանջերը թեև ավերածության բեկորներով ծածկված են, այնուամենայնիվ ամբողջ ամրոցն իր շրջապատ արտաքին պարիսպներով միասին վերակազմելու համար, հողի երեսը տակավին երևում են ներքին բաժանումների հիմեր: Ոչ միայն սարը շրջապատող պարիսպների հիմերը, այլև գագաթից մինչև հատակ իջնող պատերի հիմերը ևս գոյություն ունին տեղի վրա: Զափազանց հետաքրքրական է ընդհանուր հատակագիծն ունենալ այս բերդի: Եթե բարձրից թռչնահայաց դիտենք, պիտի տեսնենք, որ կատարելապես աստղաձև կազմված է այս բերդի հատակագիծը: Գագաթն ունի անկանոն մի բոլորաձև տոհմապետական բնակարան և մի քանի շրջապատող հորիզոնական պարիսպներ: Իսկ գագաթի շրջապատումից սկսած են ուրիշ պարիսպներ, որոնք դեպի ցած մինչև ստորոտի պարիսպներն են իջնում, խաչաձևելով միջին պարիսպները: Այս ձևը Հայաստանում շինված հին բերդերի մեջ նորություն չէ, ամենեն հնագույն Հաջի-Խալիլի բերդը, քիչ զանազանությամբ, նույնպես աստղաձև շինված է հորիզոնական և ուղղահայաց պատերով: Նույն ձևն ունի նաև Աղյամանի Վերին բերդի հատակագիծը: Սակայն Թահմազ-թափիայի հին բերդի հատակագիծն ավելի մանրամասն պահված է տեղի վրա:

**Դովրի.**– Եղվարդից դեպի հյուսիս 5–6 կիլոմետր հեռավորության վրա է Դովրի գյուղը, ուր գյուղին կից կա մի բարձրություն՝ նախաքրիստոնեական ավերակով, որ ամենայն հավանականությամբ մի տոհմապետական կամ իշխանական դղյակ է եղած:

Այս հուշարձանի մեջ ամենից ուշագրավն է որմնաշինական արվեստը, որ ավելի մշակված կերևի քարերի սրբատաշությամբ, շարվածքի կարգով և հորիզոնական մաքուր տաշված ոչ միայն ճակատներով, այլև նիստերով: Թեև նախորդների նման առանց կրաշաղախի է, սակայն որմնաշինության զարգացման տեսակետով մի երրորդ տեղ կբռնե համեմատելով նախկին երկու շրջանների նախնական շինվածքների հետ:

Տեղի դիրքին և շրջակայքին նայելով, այս ավերակը ոչ թե բերդի, այլ տոհմապետական դղյակի տպավորություն է թողնում՝ ուշ ժամանակի շինված, այսինքն կամ ուրարտական շրջանին կամ քրիստոնեական թվականի նախօրյակին: Ինչպես երևում է, վերջին ժամանակներս գյուղացիք լիովին քանդել են դղյակը և մեծ մասամբ տաշված քարերը գործածել են իրենց պետքերի համար: Գյուղի գանազան վայրերում գործածվված այս դղյակի քարերը շատ հեշտությամբ ճանաչվում են իրենց թե՛ տաշվածքով և թե՛ սև ու գորշ գույներով:

Դղյակի արտաքին շրջապարիսպը, որ հեռվից շենքը շրջապատելու համար շինված է, հազիվ թե տեղի վրա աստանդական մասեր են մնացել: Իսկ հատկապես դղյակի արտաքին պատերի ստորին մասերը գոյություն ունին, ներքին բաժանումները գրեթե ծածկված են հողով և փլատակներով: Չենք կարող գիտնալ, թե քանի՞ հարկանի էր այս դղյակը, սակայն, մասնակի պեղումներով հավանական է, որ պարզվի գեթ ստորին հարկի հատակագիծը, Խզնավուզի նախաքրիստոնեական դղյակի հատակագծի նման, որ չափազանց ցանկալի է:

Միայն քարերի մեծության, գույների և սրբատաշ լինելու վրա հիմնված չէ, որ այս շենքը են-

թաղրում եմ ուրարտական շրջանի կամ քիչ հետո շինված լինելը, այլ նաև այն առարկաների վրա, որոնք մեծ մասամբ դուրս եկած են դղյակի ավերակներից: Գյուղացիներ բերին ինձ ցույց տալու ավերակներից դուրս եկած և անվնաս մնացած իրեղեններ, որոնք զարգացած արվեստագործությանց արդյունքներ էին: Մի գյուղացի մինչև այսօր իր տան մեջ գործածության մեջ եղող մի խեցեղեն ման էր բերած ինձ ցույց տալու համար, որի վրայի ծաղկազարդումը և ապակու նման ջնարակումն ինձ հիացում պատճառեց: Տարակույս չկա, որ այս գյուղում գտնված թե՛ ծանծաղ և թե՛ խոր ամանները, որոնք հիանալի կերպով ծաղկազարդված էին, մեր թվականության նախօրյակին կպատկանին:

**Թալին.–** *Կյուլեկ-Թափա կամ Քյուլեկ-Թեփե.–* Վերին Թալին գյուղի մեծ կաթուղիկեի հյուսիսային կողմը, մեկ կամ մեկ ու կես կիլոմետր հեռավորու թյան վրա, կա մի մեծ երկայնաձև լեռնանման բլուր, որուն գյուղացիներ անվանում են Կյուլեկ-Թափա կամ Քյուլեկ-Թեփե: Այս լեռնանման բլուրի արևմտյան կողմը, որ ավելի բարձր է, կգտնվեր մի տոհմապետական ամրոց, շրջապատված կիկլոպյան անշաղախ պարիսպներով: Բայց այս բարձրությունը միայն ընդհանուր բերդի և բերդաքաղաքի միջնաբերդն է կազմում, իսկ արևելյան մասը, որ ավելի երկար և լայնանիստ էր, շինված էր այնտեղ բերդը և բերդաքաղաքը:

Նկ. 32. Մեծ Թալինի Քյուլեկ-Թեփե սարը և սարի վրա նախաքրիստոնեական բերդի և բերդաքաղաքի ընդհանուր տեսքը

Հայտնի չէ, թե նախաքրիստոնեական ո՞ր շրջանից ի վեր գոյություն ունեցել է այս բերդը և բերդաքաղաքը: Պատմականորեն հայտնի է, որ 4-րդ դարուն Կամսարականների սեփականությունն էր այս շրջանները, նաև շատ կան այս կողմերում 5-րդ և 7-րդ դարու, չորս կողմից քանդակված պատվանդանավոր գերեզմանաքարեր, որոնք այժմ հավաքված և տեղական Թանգարանի մեջ են ամփոփված: Կասկած չկա, որ քրիստոնեական սկզբնական շրջանում Կամսարականների իշխանության ներքև էին այս տեղերը և բնակչության հոծ բազմություն կար, որոնք թողել են 5-րդ և 7-րդ դարու քանդակազարդ քառակուսի կոթողները: Բայց թե ե՞րբ տիրացան Կամսարականներ այս վայրերուն և ովքե՞ր էին այս ամրոցը և բերդաքաղաքը հիմնողներ, այդ հայտնի չէ, սակայն, ինչպես երևում է, Կամսարականները իրենց ժամանակին չեն օգտվել ոչ բերդից և ոչ բերդաքաղաքից, ինչպես օգտվել են Տեկորի նախաքրիստոնեական բերդից, որը գտնվում էր Կամսարականների կառուցած մեծ եկեղեցիի հարավային կողմի բարձր բլուրի գագաթի վրա: Տեկորի բերդի մեջ պարզ երևում է, որ Կամսարականներ վերաշինել են նախնական բերդն իրենց բնակության համար, բայց Թալինի բերդում ապացույցներ միանգամայն կպակսին քրիստոնեական շրջանում բնակություններ լինելուն:

Բերդաքաղաքի բնակչության տների հիմերը տակավին գոյություն ունին տեղի վրա. բլուրի հարավային լանջի վրա շինել են քաղաքի տները, իսկ հյուսիսային լանջը գերեզմանատան էր հատկացված: Սարի հյուսիսային լանջի ստորոտների մոտ բազմաթիվ կրոմլեխներ կան, սակայն այս կրոմլեխները փոխանակ բոլորակ լինելու, ձվաձև են, անշուշտ ունին ժամանակագրական նշանակություն, որ պետք է անպայմանորեն ուսումնասիրել:

Բացի բարձրավանդակն անմիջապես շրջապատող պարիսպներից, մինչև հատակ շրջապատված էր նաև երկու կարգ կիկլոպյան անշաղախ պարիսպներով: Թե՛ տոհմատիրական ամրոցից և թե՛ բերդաքաղաքից, անհամաչափ հեռավորության վրա, պատերը խաչաձև են գագաթից մինչև ստորոտ և այս պատերի հիմերը միայն մնացել են տեղում:

Փոքր Թալինից դեպի Սարդարապատ գնացող ճանապարհի վրա, Փոքր Թալինի բարձունքների ստորոտին, կարգով շարված են քառասունե ավելի մեծամեծ նախնադարյան դամբարաններ, որոնց մասին արդեն խոսել եմ հողադամբանների բաժնի մեջ:

**Զեյվա.–** Էջմիածնից դեպի հյուսիս-արևմուտք կգտնվին Հայի և Թուրքի Զեյվա անունով երկու գյուղեր: Ես պիտի գրեմ Թուրքի Զեյվա ըսված գյուղի մասին, որ այցելել եմ իբրև հնագիտական նշանավոր վայր. այս վայրը հարուստ է նախնադարյան մնացորդներով:

Արմավիրի նման, մի բարձր բլուրի վրա է Զեյվայի հնագիտական վայրը: Նախնադարում այս բլուրը, թերևս ամբողջովին, պաշտաման հատուկ մի տեղ էր, որու վրա շենքի հիմեր աստանդական թեև երևում են, սակայն համեմատելով վայրի ընդարձակության հետ, քիչ են հասարակաց բնակության հավանականություն ունեցող հետքեր: Ուստի, ամենայն հավանականությամբ, մարդկային բնակության հատկացված տեղեր, բլուրի շուրջ, բաց դաշտի վրա էին: Բլուրի թե լանջերի և թե գագաթի ամեն կետերու վրա խոր հնության նշաններ և մնացորդներ աստանդական ցրված են: Ուրիշ նախաքրիստոնեական վայրերի նման, ապառաժների վրա փորագրված են խորհրդավոր բոլորակ փոսիկներ: Այստեղ, ուրիշ տեղերից ավելի, մինչև 50–60 սանտ. տրամագծով մեծ փոսիկներ ևս կան, որոնք 25–30 սանտ. խորություն ունին: Սևագույն ժայռերի վրա, պակաս չեն մեհենադրոշմների նշանագրեր և պաշտամունքի ուրիշ խորհրդավոր նշաններ:

Մեծ բլուրի մի ծայրին կգտնվի մի փոքրիկ ժայռաբլուր, որ ժամանակով մեծ բլուրի մասը կկազմեր և ժամանակի տևողության մեջ անջատվել է մեծից: Այս փոքրիկ ժայռաբլուրի վրա չափազանց հին ժամանակի քարափոր սանդուխների կանոնավոր հետքեր կան, սակայն միայն վերելքի նախնականությունը որոշելու չափ պահված են: Այս սանդուխից մինչև ժայռի գագաթ բարձրանալուց հետո, այնտեղ մի փոքրիկ հարթության գոյությունը մասամբ անհասկանալի է. թերևս մի ուխտատեղի էր և մի փոքր շենքի կամ վրանի նման մի բան գոյություն ուներ, որ այժմ անհայտացած է: Ժայռերի կողքերի վրա անվերծանելի տառեր են փորագրված, որոնք, իհարկե, խորհրդավոր նշանակություն ունին: Մեծ բլուրի վրա ցրված են ժայռեր թե՛ հողից բարձր և թե՛ հողին հավասար, որոնց վրա առհասարակ փորագրված են խորհրդանշաններ և բոլորակ փոսիկներ:

Ամենից ուշագրավն այն է, որ բարձր ու երկայնաձև բլուրի ներքևից դուրս է գալիս վճիտ և ընտիր ջրի մեծ առու, որ Սև-ջուր ըսված գետակի գրեթե կեսն է կազմում. մյուս կեսն Այղրը գյոլ ըսված լճի մոտից է դուրս գալիս: Այս լճի մոտերքն են Կրզլներ ըսված բարձր սարերը, որոնց վրա ևս կան հետաքրքրական հին նախապատմական մնացորդներ, սակայն միանգամայն կարոտ գիտական այցելության և մանրակրկիտ ուսումնասիրության: Այղրը լճին կից մեծ առուն և Թուրքի Զեյվայի սարի ներքևից դուրս եկող նույնպես մեծ առուն միմյանց հետ միանալով՝ կազմում են Սև-ջուր ըսված վտակը:

Վաղ ժամանակ, թերևս քրիստոնեական սկզբնական դարերում, դարձյալ հատուկ խնամք եղել է Զեյվայի այս մեծ առվին. թերևս իբրև ամբարտակ շինել են առվի աջ կողմին սրբատաշ քարերով մի պարիսպ, որն այժմ ջրի մակերևույթից խորը, մոտավորապես 1 մետրից ավելի ցած երևում է ջրի պարզության պատճառով: Շատ լուրջ քննություն է հարկավոր, թե ինչո՞ւ այժմ ջրի մեջ է երևում այս պարիսպը. արդյոք ջո՞ւրն է հետզհետե շատացել, թե՞ պարիսպի վերի մասը քանդվել է:

**Օշական.–** Ավելորդ չէր լինի տեղեկացնել Օշական գյուղի սահմաններում գտնված այն ընդարձակ հին գերեզմանատան մասին, որ դղյմենների քիչ հեռու, դեպի արևելք, սարի մյուս լանջի վրա գոյություն ունի: Նույնպես Օշական գյուղին կից, Քասաղ գետի ձախ ափին աստանդական մնացորդ կրոմլեխների մասին, որ շարունակությունն է երևում Հաջիղարա գյուղի մոտ գտնված նախաքրիստոնեական հին գերեզմանատան:

Այստեղ մասնավորապես պետք է հիշատակել Օշականի Դիտի-կոնդ ըսված մեծ բլուրը, որի գագաթին և շրջապատում կան նախաքրիստոնեական հին դարերից մնացած հիմեր: Ինչպես գագաթի շենքերի մնացորդներից երևում է, բլուրի գագաթի վրա երբեմն իշխում էր տոհմապետական ապա-

բանքն իր բազմաթիվ բաժանումներով, շրջապատ պարիսպներով և քարայրերով: Դիտի-կոնդի գլխին այժմ գյուղացիք չինել են մի մատուռ, որը բլուրի գագաթի տոհմապետական ապարանքը շրջապատող պարիսպից ներս կգտնվի, իսկ ցածի լանջերուն վրա հին քարայրերը գյուղացիք օգտագործում էին իբրև դարմանոց և երկրագործական գործիքների պահեստներ:

Ուշադրության արժանի է մեծ բլուրի, գյուղի կողմի լանջի վրա այն ուռուցիկ գիծը, որ սկսած բլուրի գագաթից, լանջի վրայով իջնում է դեպի ցած մինչև գյուղի եզերքը: Դժվար է հասկանալ այս երևույթի պատճառն առանց փորձնական պեղումների: Ըստ գյուղացի ծերերի տված տեղեկության, երևցող ուռուցիկ գիծը հին ժամանակ կոնդի գագաթը բարձրացող ջրի ճանապարհն էր, որ ցածից կբարձրանար դեպի գագաթ, երբ գագաթում բնակչություն կար: Սակայն առանց մանրակրկիտ քննության, այս տեղեկությունները չի կարելի ընդունել իբրև ճշմարտություն: Եթե ստուգվի, որ իսկապես ջրի ճանապարհ է, հարկ է նաև ստուգել այդ ջրի աղբյուրը ո՞ր կողմ լինելը և ի՞նչ միջոցով առաջ էր գալիս այն ճնշումը, որով մինչև բլուրի գագաթը բարձրանում էր ջուրը:



Նկ. 33. Ուրարտական բրոնզյա գոտուց արտանկար թղթի վրա

**Կուլիջան.**– Արագածի հյուսիս-արևմտյան լանջի վրա, հայաբնակ մի գյուղ է Կուլիջանը: Այժմ գյուղում գտնված մնացորդներից և պատահական կերպով երևան եկած զանազան իրեղեններից երևում է, որ ի հնումն այստեղ եղել է մի ուրարտական քաղաք և, ըստ ներկայիս գոյություն ունեցող բևեռագիր արձանագրության՝ Կուլիաինի անունով, ուր ապրում էր խիտ բնակչություն: Հին պատերից և հին դամբարաններից զատ, գոյություն ունի նաև մի բևեռագիր արձանագրություն՝ մոտակա ձորի մեջ հոսող վտակի աջ կողմի ժայռերի վրա:

Հետազոտական պտույտի ժամանակ մի գյուղացի ինձ բերեց բրոնզյա մի լայն գոտի, որուն վրա չափազանց ճարպիկորեն, կետաշար գծերով ձևակերպված էին հրեշներ կամ առասպելական կենդանիներ՝ երկրաչափական պարզ ձևերի մեջ կենդանիների մարմիններ, հնդկական երկայնատուտն կոկորդիլոսի գլխով:

Գոտիի հետ կային նաև մի բրոնզյա ձուլված նիզակ, մի երկաթյա սուր և մի քանի խեցեղեն մեծ ու փոքր ամաններ: Այս ամենը միասին դուրս էին եկել արտից, հողը վարելու ժամանակ:

Այժմ այդ իրերը գտնվում են Երևանի Պատմական թանգարանում:

**Մարմաշեն (Կանլիջա).**– Լենինականի հյուսիս-արևմտյան կողմը, 6–7 կիլոմետր հեռավորության վրա, կգտնվին Վերին և Ներքին Կանլիջա անունով երկու գյուղեր, որոնց հին անունն եղել է Մարմաշեն:

Երկու Կանլիջաները, միմյանցից 2–3 կիլոմետր հեռավորության վրա, Արփա-չայի ձորի մեջ են: Գրեթե երկու գյուղերի մեջտեղ, արևելյան բարձունքների վրա և թե ավելի առաջ, դեպի հարթավայրերը կգտնվին բազմաթիվ նախաքրիստոնեական պատերի և հիմերի մնացորդներ: Այս բարձունքների վրա, ձորեզրեն մի քիչ խոր, բնական ժայռի վրա փորագրված կա մի բևեռագիր արձանագրություն, որուն մեջ բևեռագրագետներ կարդում են շրջանի և թե այն տեղերը գոյություն ունեցող քաղաքի անունները:

Բևեռագիր արձանագրված բնական ժայռի հանդեպ կա նույնպես բնական մի մեծ ժայռ և այս երկու մեծ ժայռի արանքն է բևեռաձև արձանագրության տեղի մուտքը: Այս փոքրիկ տեղի հարավային կողմն էր, որ բաց կմնար. ուստի բևեռագիր արձանագրությունն ամեն կողմից շրջապատված լինելու համար հարավային կողմն ևս փակել են կիկլոպյան անշաղախ քարե պատով, թեև այդ պատից այժմ հիմերն են մնացել: Բևեռաձև արձանագրությունից մի քանի քայլ դեպի հարավ, նույնպես ժայռի ճակատին, փորագրված են մեծ ու փոքր խորհրդավոր բոլորակ փոսիկներ, որոնք մի նվիրական ձև էին նախաքրիստոնեական մարդկանց համար ըստ իրենց պաշտամունքի:





Նկ. 34. Մարմաշենի ուրարտական սեպագիր արձանագրությունը

Բևեռագիր արձանագրութենեն դեպի հյուսիս կա մի մեծ լեռնանման բարձրություն, որուն գագաթի շուրջը և լանջերուն վրա չափազանց որոշ երևում են թե՛ հնագույն և թե՛ հետնագույն շինված բերդերի ավերակներ: Այս ավերակներին առհասարակ շրջակա բնակիչներ Վահրամի բերդ անվանում են ավանդաբար: Անշուշտ Վահրամ Պահլավունիի անունն է կապվում 10–11-րդ դարերում շինված այս բերդի հետ: Բայց պարզ երևում է, որ Վահրամ Պահլավունի այս բերդը շինել է նախաքրիստոնեական հնագույն բերդի ավերակների վրա: Բերդի մեջ երևացող ապարանքի մեկ մասի և շրջապատ պարիսպի հիմերը հնագույն են: Նաև բարձր բլուրի լանջերուն վրա երևում են ժայռաշեն, առանց շաղախի կիկլոպյան պատերի հիմեր: Հավանական, ուրարտական շրջանից, ոչ միայն բերդի գագաթին եղել է տոհմապետական ամրոց, այլև բերդակիր սարի ներքև փորված էր մի խոր քարայր, որուն դուռը գտնվում է բերդի ուղիղ հյուսիսային կողմը, ստորոտում հեղեղից գոյացած մի ձորակի մեջ: Առաջին այցելությանս ժամանակ կարելի էր այս քարայրի դռնից ներս մտնել և տեսնել ժայռից կոկված պատերը: Բայց վերջին այցելությունների ժամանակ տեսա, որ մի հեղեղ լեցուցել է քարայրի նրբանցքը և դուռը միայն մնացել է հայտնի. առայժմ առանց մասնավոր պեղումի կարելի չէ քարայրին ներսը քննել և ուսումնասիրել: Կանլիջա գյուղի ծեր մարդիկ վկայում էին, որ ճիշտ այդ ստորերկրյա քարայրի դռան մոտերքը գոյություն ուներ ավելի մեծ բևեռագիր արձանագրություն, որը, ինչպես երևում է, հեղեղների բերած քար ու հողի տակ ծածկվելի զատ, նաև հետզհետե լցրել է ստորերկրյա քարայրի մուտքը:

**Աղջակալա.**– **Խզնավուզ.**– **Աղավնատուն և Շամիրան.**– Էջմիածնից հյուսիս-արևմուտք, դեպի հյուսիս, մեկ կարգի վրա հաջորդաբար հիմնված են Աղջակալա, Խզնավուզ, Աղավնատուն և Հարամլու գյուղերը, որոնց մասին մասամբ գրել եմ աշխատությանս ընթացքում: Այս գյուղից դեպի հյուսիս-արևմուտք երկու ճանապարհներ կան, որոնց մին՝ արևելյանը կգնա ուղիղ դեպի Կոչ, իսկ արևմտյան կողմի ճանապարհը, որոշ չափով շեղվելով դեպի արևմուտք, կգնա Շամիրան գյուղը և հետո դեպի Թալիշ (հին՝ Արուճ): Այս երկու ճանապարհներն ընդգրկում են մի ընդարձակ միջավայր, որ ծածկված է նախապատմական գերեզմաններով և նույն իսկ գետի մյուս ափին, Հաջիղարա գյուղի մոտ եղող հին նախապատմական գերեզմանատան մի մասը կկազմե: Կոչ գնացող ճանապարհի վրա է գրեթե «Օյուղ» ըսված բոլորշի աշտարականման նախապատմական մնացորդը: Իսկ Կոչի ճանապարհի արևմտյան կողմը, մի ընդարձակ միջավայրի վրա, տարածված է նախաքրիստոնեական հին գերեզմանատունը մինչև Շամիրան և Թալիշ գնացող ճանապարհը: Այս ճանապարհից դեպի արևմուտք և գերեզմանատնից դեպի հյուսիս գոյություն ունին տարբեր մեծության քարաղամբաններ, որոնցից ավելի նվազ մեծություն ունին Սարդարապատից դեպի Թալին գնացող ճանապարհի վրա, Փոքր Թալինի ստորոտը գտնված 40–50 քարաղամբանները: Սակայն միևնույն տիպն ունին:

Շամիրանը և Թալիշը մեկ մեկուց բաժանող ձորը դեռ չհասած, ճանապարհը ճյուղավորվելով, մեկ գիծը կծռվի դեպի արևմուտք և կհասնի Շամիրան գյուղը: Այս գյուղին կից կա մի ընդարձակ նախաքրիստոնեական գերեզմանատուն: Այս գերեզմանատան մեջ մեծ մասամբ գերեզմանները բա-

վականին լավ տաշված և լավ ձևակերպված բոլորակ կրոմլեխներ են, որոնց յուրաքանչյուրի անմիջապես մոտը կամ մեջ տեղը կանգնված են մենաքարեր, անտաշ վիճակի մեջ:

Բովանդակ իմ պտտած շրջաններում հազիվ են պատահում այսչափ խնամքով տաշված և կանոնավոր բոլորակ ձևակերպված կրոմլեխներ, ինչպիսիք գոյություն ունին մեծ մասամբ Շամիրանի գերեզմանատան մեջ: Հայտնի բան է, որ այս գերեզմանատունը ևս երկար գոյություն է ունեցել, ուր թե բոլորովին հին և [թե] հետևագույն որոշ չափով մշակված քարերով կրոմլեխներ կգտնվին: Շամիրանի գերեզմանատան մեջ ինձ համար ուշագրավ եթե մի հանգամանք կա, այն ևս մենաքարերի շատությունն է, թեև զանազան տեղերի վրա հատհատ կգտնվին տնկված կամ ընկած մենաքարեր, իսկ Շամիրանի գերեզմանատան նման մենաքարերով առատ ոչ մի տեղ չեմ տեսել:

Գերեզմանատան մեկ կողմի վրա, որուն ներքևը մի ընդարձակ ձորահովիտ է, քաշված է բավական երկար մի պատ, հսկայական քարերով, առանց շաղախի շարված: Այս պատն ամրոցի կամ բերդի պատի երբեք նման չէ, ինչպես երևում է, գերեզմանատան շուրջն իբրև արգելափակ քաշված է, ապականություններե և սրբապղծություններե ազատ պահելու համար:

Շատ թոռուցիկ եղած է այս գյուղի հնագիտական արշավանքը. պետք է անպայման ընդարձակ հետազոտություն և ուսումնասիրություն կատարել այս գյուղում:

**Աղց (Հախս).**– Պատմական տեղ է Աղց գյուղը և հնագիտական մնացորդներ կան ոչ միայն ամբողջ քրիստոնեական շրջանի, այլև նախաքրիստոնեական հին դարերի: Քրիստոնեական շրջանի 5-րդ դարու հուշարձաններից զատ, կա նաև քանդակազարդ ծածկույթավոր դամբարան, որը նախաքրիստոնեական լինելու ամեն հավանականություն ունի, բացի արևելյան կողմի փոքրիկ կիսաբոլորակ խորանը, որն ավելի ուշ ժամանակ քրիստոնեականի վերածելու նշաններ ունի: Սակայն, բացի ուրիշ շատ մնացորդներից, գյուղի սահմանի մեջ կա մի հուշարձան, որի նախաքրիստոնեական հին դարերի պաշտաման հատուկ վայր լինելն անկասկած է: Այս հուշարձանն այժմ մի ժայռ է, որուն երեք կողմը բաց է, թերևս անցյալում շրջափակ ուներ, սակայն ներկայիս անհետացած է: Ժայռը, որ բավականին բարձր է և լայն, ճակատը զանազան մեծությամբ բոլորակ փոսիկներով ծածկված է: Ուրիշ վայրերի վրա ստուգված է, որ այս բոլորակ փոսիկները նախաքրիստոնեական դարերում ժողովուրդի պաշտաման հատուկ, նվիրական նշաններն էին: Հավանական է, որ սա ևս մի ուխտատեղի էր հին Աղցի մեջ:

**Դարբանդ.**– Լենինականի հյուսիս-արևելյան կողմը, գրեթե տասը կիլոմետր հեռավորության վրա, կգտնվի Դարբանդ գյուղը: Այցելությանս միջոցին տեսա գյուղի մոտ նախաքրիստոնեական բերդի ավերակները և լուսանկարեցի չորս կողմից քանդակված քառակուսի կոթողաձև գերեզմանաքարեր, որոնք գյուղացիք բերել են իրենց ննջեցյալների վրա իբրև տապանաքար դնելու: Այս ձևի գերեզմանաքարեր հատուկ էին նախահայկական շրջանում Փոքր Ասիային տիրապետող հեթիթներին, որոնց ուղղակի ներգործությունն է Հայաստանի վրա, դեռ հայեր քրիստոնյա չեղած: Քրիստոնեությունից հետո ևս այդ ոճը գերեզմանաքարերի համար տևել է մինչև 7-րդ դարու վերջը: Այս կոթողներից մի քանիսն այժմ գտնվում են Երևանի Պատմական թանգարանում:

**Հարամլու.**– Աղամնատուն գյուղին սահմանակից է Հարամլու գյուղը: Այս գյուղում ի միջի այլոց կան հին քրիստոնեական մնացորդներ, սակայն, որովհետև աշխատությանս այս բաժնի մեջ, միմիայն նախաքրիստոնեական մնացորդներն եմ արձանագրում, հետևաբար հետագա բաժիններում տեղ պիտի տամ քրիստոնեական հուշարձաններին:

Ավերակ գյուղից դուրս կա մի երկար բարձրություն: Այս բարձրության վրա գոյություն ունի մի ավերակ, որի հատակագիծը միանգամայն հեռու է քրիստոնեական լինելուց: Բայց ինձ թվում է, որ նախաքրիստոնեական վերջին ժամանակի գործ է, որովհետև քարերը միջակ մեծությամբ են և քառակուսելու համար եղած ջանքն ակներև է, նիստերը տաշված ու կոկված են, ինչպես Խզնավուզի՝ Պուլեյ Լրկուզի նկարած բերդը կամ դղյակը: Այս ավերակը ո՛չ բերդի և ո՛չ ամրոցի նմանություն չունի: Համոզված եմ, որ այստեղ ևս կար տոհմապետական մի դղյակ, Խզնավուզի դղյակի նման: Այս դղյակն այնքան է քանդված, որ հազիվ հիմերն են մնացել:

## Է

## [ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ ՀԻՆՎԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ]

Նախաքրիստոնեական արվեստի գաղափարը իր ուրվագծի մեջ գոնե լրիվ հինելու համար, ըստ իս, անհրաժեշտ է ավելացնել. 1) այն հուշարձանական մնացորդները, որոնք, հակառակ նախորդ նկարագրությունների, կրաշաղախով կամ անկրաշաղախ հինված են մեր թվականության սկիզբները և 2) այն հին մատենագրական ակնարկները կամ նկարագրությունները, որոնք ցույց են տալիս, թե նախաքրիստոնեական շրջանի ճարտարապետական ոճը շարունակվել է մի ժամանակ նաև քրիստոնեական թվականի սկիզբներում:

Աշխատությանս շարունակության մեջ պիտի տեսնվի, թե նույն իսկ նախաքրիստոնեական շրջանում տեղի է ունեցել Հայաստանի ճարտարապետական արվեստի առաջին վերածնությունը և տևել է մինչև քրիստոնեական թվականի 5-րդ դարի վերջը:

Այժմ արձանագրենք և վերջացնենք ներկա Հայաստանի սահմանների մեջ ճարտարապետական թե՛ այն մնացորդները, որոնք հինված են ընդհանրապես կրաշաղախով և հասել են քրիստոնեական ժամանակաշրջանին և օգտագործվել են իբրև եկեղեցի, ծայրերին կիսաբոլորակ խորաններ ավելացնելով, և թե՛ այն հուշարձանները, որոնց մասին հին պատմագիրների վկայություններ կամ ակնարկներ կան քրիստոնեության շրջանում հինված լինելուն, թեև նախաքրիստոնեական ոճով:

Վերև մի անգամ հիշել եմ, որ նախաքրիստոնեական շրջանի մնացորդների մեջ կրաշաղախով կառուցված հինություն ես շատ քիչ եմ տեսել: Այս երևույթից հետևցնում եմ, որ նախաքրիստոնեական ժամանակ, գեթ Հայաստանի սահմաններում, վերին աստիճան սահմանափակ էր կրաշաղախի գործածությունը: Թե ի՞նչ էր պատճառը, առայժմ ինձ հայտնի չէ և երկար հետազոտության կարոտ է: Ճարտարապետության մի պատմագիր ակնարկում է այս մասին, թե ի հնումն չափազանց թանգ էր կիրի շինությունն Արևելքում, փայտի նվազության պատճառով, և նույնպես անհամեմատ թանգ էր լինում կրաշաղախով պատեր շինելը: Սակայն, ինչ որ էլ լինի իրողությունը, ես բավականանում եմ փաստն արձանագրելով և կթվեմ նախաքրիստոնեական շրջանից մեզ հասած հուշարձանները, որոնք մեր թվականին օգտագործվել են եկեղեցիների կամ մատուռների փոխարկելով:

Կրաշաղախով շինված կիկլոպյան շինություններեն մեկը նկարագրեցի Հոռոմ գյուղի մոտ հին նախաքրիստոնեական մեծ ամրոցները և քաղաքատեղը նկարագրելիս:

**Կարանլուխ գյուղի մոտ կիկլոպյան կրաշաղախ շենք.**– Բաշ Ապարանի գրեթե արևելյան կողմը, մի քանի կիլոմետր հեռավորության վրա, լեռնային բարձունքում կգտնվի Կարանլուխ գյուղը, որը, բացի հարավային կողմից, անտառներով շրջապատված է:

Արևմտյան կողմը, ավելի բարձր տեղ, անտառին մոտիկ գոյություն ունի 5-րդ դարի եկեղեցիի մի շինության մնացորդ, իսկ մի քիչ ավելի ցած, դեպի արևելք դարձյալ լեռնալանջի վրա, գյուղի հյուսիսային բարձունքների վրա, կգտնվի մի մեծ շինության ավերակի մնացորդ, որը շինված է հսկայական բազալտ քարերով և կրաշաղախով: Շենքը երկարավուն է եղած՝ արևելքեն արևմուտք, դարձյալ բազալտ քարերով, շենքը երկուքի է բաժանված: Ի՞նչ նպատակով էր շինված այս շենքը նախաքրիստոնեական ժամանակ, հայտնի չէ: Մուտքը գտնվում է արևմտյան կողմը, խիստ ցած և համեմատաբար նեղ շինված: Երկար ժամանակ հետո, քրիստոնեության օրերուն, այս կիկլոպյան շինությունը եկեղեցիների են վերածած, բաժանումների արևելյան ծայրին, սրբատաշ տուֆ քարով, կիսաբոլորակ խորաններ ավելացնելով: Այս զույգ եկեղեցիները, ինչպես կերևի, շատ չեն մնացել կանգուն, շուտով փուլ են եկել և մնացել են նախկին կրաշաղախ բազալտյա հիմնական պատերը և արևելյան կիսաբոլորակ խորանների կես մասը:

**Վահան Ամատունիին վերագրված բնակարանն Օշականում.**– Քասաղ գետի կամուրջից անցնելով, երբ կբարձրանանք Օշական գյուղի զառիվերը, աջ կողմի վրա, գյուղի եզերքին կտեսնվի կիկլոպյան շենքի մնացորդ մի մասը: Այս շենքի ներքինը բաժանված է զանազան մասերի, ուր այժմ բնակվում են գյուղական ընտանիքներ: Մի պարզ հայացք բավական է համոզվելու համար, որ այս շենքը նախաքրիստոնեական ոճով շինված է և վերագրվում է Վահան Ամատունիին, որուն սեփական կալվածքն էր Օշական գյուղը 5-րդ դարում: Ի հարգանս Մեսրոպ-Մաշտոցի հիշատակին, որ ստեղծեց հայոց գիրը և համահայաստանյան երախտագիտության արժանացավ, հանդուցելույն մարմինը տարավ յուր սեփական կալված Օշական գյուղը և ամփոփեց մի ստորերկրյա դամբարանի մեջ, վրան մի մեծ եկեղեցի շինելով: Ներկայիս Վահան Ամատունիի շինած եկեղեցին քանդված է, հին հիմերի վրա վերաշինել է Գևորգ Դ. կաթուղիկոսը՝ պահելով իր տեղում Մեսրոպ-Մաշտոցի ստորերկրյա դամբարանը եկեղեցիի տակ: Բայց թե Վահան Ամատունիին վերագրված շենքը իսկապես անոր բնակարանն է, ես միայն ավանդության վրա հիմնված ընդունում եմ, գիտնալով նաև, որ Օշական գյուղն իր շրջականերով Վահան Ամատունիի սեփականությունն էր: Բնակարանի հին ոճով շինված լինելեն չի հետևեր, որ սեփականատիրոջ բնակարանն էր: Օշականն իր շրջականերով ամբողջովին նախաքրիստոնեական տեղ է և շրջականերում

խտացած են հին այրեր, գերեզմաններ, պատեր և այլն, և այլն: Սպասելի էր, որ գյուղում ևս գտնվեին հին շրջանի մնացորդներ: Այդ միակ մնացորդն է, որ ավանդությունը վերագրում է Վահան Ամատունիին:

**Մատուռներ.**– Կրաշաղախով կամ առանց կիրի, ընդարձակ կիկլոպյան շինությունների իբրև նմույշ, բավական համարելով այստեղ նկարագրված օրինակները, այսուհետև մի քանի օրինակ ևս պիտի ներկայացնեմ նախաքրիստոնեական շրջանում կառուցված մատուռանման փոքր շինությունների, որոնք շինված են թե՛ անշաղախ և թե՛ շաղախով, սակայն ունեցել են անվրեպ կրոնական բնույթ: Հասարակաց ուխտատեղիներ եղած են այս փոքր շինությունները և անցնելով քրիստոնեության շրջանին, միևնույն կոչումներով շարունակել են պահել անոնց գոյությունը և առհասարակ անվանել են թուխ մանուկ: Թուխ մանուկները յուրաքանչյուր գյուղի մեջ հաճախ ունեն իրենց ուխտի օրերը, հավաքվում են բազմաթիվ ուխտավորներ, առատ նվերներ տալիս են այդ մատուռը կառավարող կղերին. իրենք ևս զվարճանում են կերուխումով, նվագարաններով և պարերով:

Ի տես այս շինվածների և անոնց շուրջ կատարված իրադարձությունների, միանգամայն համոզվում եմ որ քրիստոնեական շրջանի հայկական այս սովորությունն անպայման կապ ունի վաղեմի հունական մի սովորության հետ, որ, անշուշտ, մտած է Հայաստան նախաքրիստոնեական Արշակունիների ժամանակ, երբ հունական բարձր քաղաքակրթությունը Հայաստանի մեջ տարածելու ջանք էին ի գործ դնում, օժանդակությամբ հունական դիցապաշտության, որովհետև կրոնական սովորություններ և ծեսեր Հայաստանի մեջ ընդհանրացնելն անվրեպ միջոց էին համարում նաև բարձրագույն քաղաքակրթության զարգացման և տարածման: Մովսես Խորենացին պատմում է, որ առհասարակ հունասեր Արշակունի թագավորներ հունական կուռքեր ևս բերին Հայաստան և անոնց մեհյաններ շինեցին զանազան տեղերում, աշխատում էին հունական ազդեցությունով փոխարինել արևելյան, մասնավորապես պարսկական խոր ազդեցությունը Հայաստանի վրա: Նույնիսկ քրիստոնեության ժամանակ, ըստ Ագաթանգեղոսի Պատմության, Տրդատ թագավոր խիստ հրամաններ է արձակում, որպեսզի հունական սովորության համեմատ վարվի ժողովուրդը մեհյաններու և կուռքերու հետ և հունաց նման հարգեն ու պաշտեն կուռքերը:

Բայց որպեսզի պարզ հասկանալի լինի Հայաստանի վաղեմի մատռանման շինությունների մասին իմ տեսությունը, անհրաժեշտ եմ համարում նշել հունական դիցապաշտության այն սովորությունները, որոնք կվերաբերին հերոսապաշտության, որը նույնությամբ անցել է Հայաստան և գրեթե տևում է մինչև մեր օրերը, հնագույն մատուռներից անցնելով նաև զանազան վանքերի և եկեղեցիների: Ժամանակակից Հունաստանի պատմության հեղինակ Սենեռոբոս հետևյալ կերպով կնկարագրե հին հունաց հերոսապաշտությունը.

«Հույները միմիայն աստվածները չէին պաշտում, պաշտում էին նաև հերոսներ, որոնք աստվածների և մարդկանց միջին տեղը կբռնեին, և շատ անգամ այս հերոսներին կիսաստված անունը կուտային: Այնպես կարծիք ունեին, որ հերոսներն ապրել են իբրև մարդ, որոնք կամ թագավոր էին կամ մի հռչակավորի ծնունդ. այս մարդիկն իրենց կենդանության մի գերագույն քաջագործություն անելով, իրենց մահվանից հետո աստվածացել են:

Հունաստանի մեջ չկար քաղաք, որ առնվազն մի սրբարան չունենար (այսինքն մի տեսակ մատուռ) հերոսների հիշատակին կանգնված: Շատ տեղեր երևակայում էին, որ այդ հերոսների գերեզմանն իրենց մոտ է, և աճյունները թաղված են այդ մատուռների մեջ: Երկրի բնակիչները տարվա որոշ օրերուն մեջ կհավաքվեին սրբարաններու առջև կրոնական մի պաշտամունք կատարելու համար, այնտեղ ընծաներ կբերեին, հոգևոր երգեր կերգեին, զանազան պարեր կպարեին, ըմբշամարտություն և վազքեր կկազմակերպեին:

Արքայական ընտանիքների մեծ մասը մի հերոս նախնիք ունեցած լինելու հավակնությունն ունեին»:

**Եղվարդի հին գերեզմանատան մատուռը.**– Եղվարդ գյուղին կից, ավերակ մեծ կաթուղիկեի արևմտյան կողմը, մոտավորապես մեկ կիլոմետր հեռավորության վրա, կա մի հին քրիստոնեական ընդարձակ գերեզմանատուն, ուր կգտնվին 10-րդից մինչև 15-րդ դարերու քանդակազարդ շիրիմներ, պատվանդանավոր առանձին խաչքարեր և պարզ տապանաքարերով գերեզմաններ:

Այս գերեզմանատան հարավային կողմը կա մի մատռանման շինություն՝ կիկլոպյան անտաշ քարերով և կրաշաղախով շինված: Անշուշտ, թե՛ գերեզմանատունն ի հնումը նախաքրիստոնեական էր, որուն վրա հետո քրիստոնյա հայերը շարունակեցին մեռել թաղելը, և թե՛ այս հարավային ծայրի մատուռը մի հերոսական հիշատակի կանգնված շիրիմ էր, բնականաբար, նաև մի ուխտատեղի: Արդ, քրիստոնեության ժամանակ, երբ գերեզմանատունն օգտագործում էին քրիստոնյա ննջեցյալների համար, տարակույս չկա, որ նույն հերոսական դամբարան ուխտատեղին ևս շինեցին մի քրիստոնեական ուխտի մատուռ՝ արևելյան կողմի վրա, սրբատաշ տուֆ քարերով և կրաշաղախով կառուցված կիսաբոլորակ խորան ավելացնելով: Այժմ վրան և պատերը կիսովին փլած են, մնացել են կիկլոպյան նախաշեն պատերի հետ, ետնաշեն հավելված կիսաբոլորակ խորանի կեսից վար եղած մասերը:

**Կափրլի գյուղի բարձունքների մատռանման շենքի մնացորդը.**– Կափրլի գյուղից մոտ մեկ և կես կիլոմետր հեռավորության վրա, նախաքրիստոնեական մեծ ամրոցից դեպի հյուսիս-արևմուտք, կա մի փոքր մատուռի ընդարձակությամբ, անկանոն անկյուններով շինված մի շենքի մնացորդ: Այս շենքի պատերը շինված են մեծամեծ անտաշ քարերով, առանց կրաշաղախի: Անտարակույս, սա ևս շինված է նախաքրիստոնեական ժամանակ որևէ հերոսի հիշատակին, որովհետև բնավ դոլմենի նմանություն չունի, բնականաբար նախկին պաշտամանց հատուկ մի ժողովրդական ուխտատեղի էր: Քրիստոնեական շրջանում կրկին ուխտատեղիի է վերածված այս մնացորդը, ուր կհավաքվեին բազմաթիվ ուխտավորներ, գլխավորաբար կանայք, և կերուխում ու խրախճանություն կկատարեին: Հակառակ տեղի անհարմարության և փոխադրությունների դժվարության, բերել են խաչքարեր, գեղաքանդակ եկեղեցական շենքերի բեկորներ և զարդարելով այս մնացորդը, կատարյալ քրիստոնեական մատուռի են վերածել՝ առանց սակայն արևելյան կիսաբոլորակ խորան շինելու:

**Մատռանման մնացորդ Արմտլու գյուղի մոտ.**– Արմտլու գյուղի մոտ մի բարձր բլուր կա, որուն վրա հին ժամանակ եղել է նախաքրիստոնեական մի ամրոց: Այժմ բլուրի գագաթին մի կտոր միայն մնացել է շրջապատող կիկլոպյան պատերից՝ իբրև վկա բլուրի նախկին դրության: Սակայն, այս բլուրի ստորոտում կա հնագույն մատռանման մի մնացորդ՝ անշաղախ միմյանց վրա դրված հսկայական քարերով: Կասկած չկա, որ բլուրի գագաթի ամրոցին ժամանակակից է այս փոքրիկ մատռանման շինությունը և, ամենայն հավանականությամբ, մի հերոսական գերեզման:

Հետագա քրիստոնյա հասարակությունը, օգտվելով այս պատրաստ կիկլոպյան շինությունից, վերածել է քրիստոնեական ուխտատեղիի՝ Թուխ մանուկ անուն տալով այդ մատուռին, ինչպես սովորություն էր այդօրինակ փոխանցումներին: Եվ որպեսզի քրիստոնեական երևույթ ստանա այս նախաքրիստոնեական շենքը, ուրիշ տեղերից բերել են խաչքարեր, եկեղեցիի որմնասյուներ, անջատ սյուների բեկորներ, պատուհանի շրջանակներ և շինելով ուխտատեղի, տարվան մեջ մի օր հատկացրել են ժողովրդական հավաքույթի համար՝ իբրև ուխտատեղի:

**Մատռանման ավերակ՝ Աղավնատան Օյուղի մոտ.**– Աղավնատան նախաքրիստոնեական ընդարձակ գերեզմանատունը Կոչ գյուղի ճանապարհով անցնելուց հետո, երբ կմոտենանք հնագույն բոլորակ աշտարակի մնացորդին, այնտեղ (քիչ հեռու աշտարակից) գոյություն ունեցել է մի մատռանման շենք, որուն ավերակներն այժմ գոյություն ունին տեղին վրա: Այստեղ բոլոր շրջապատը, ընդարձակ տարածության վրա, միմիայն նախաքրիստոնեական հնագույն մնացորդներով ծածկված է: Հետևաբար, այն մատռանման ավերակի մեջ միանգամայն օտար են խաչքարերի բեկորներ և այս քրիստոնեական սրբարանների քարեր: Այս ընդարձակ միջավայրի վրա նայելով, ուր նախաքրիստոնեական պաշտաման հատուկ մնացորդներով ծածկված է, կասկած չի կարող լինել, որ սա ևս մի հերոսական հիշատակարան կամ գերեզման է, փոխված քրիստոնեական մատուռի և ուխտատեղիի, խաչքարեր և եկեղեցիների ավերակներե հանված բեկորներ դնելով անոր մեջ:

Նախաքրիստոնեական մատռանման շենքերի Հայաստանում գոյության և նպատակի մասին մենք ունինք հին պատմագրական վկայություն, որ բացատրում է ոչ միայն ի հնումն հունաց մեջ գոյությունը, այլև Հայաստան անցնելով այդ սովորությունը, տարբեր անվան կամ վերագրումների տակ շարունակում էր միևնույն հունական սովորության նման տոնակատարության հանդեսը:

Ահավասիկ այդ մասին Փավստոս Բյուզանդի նկարագրությունը.

«Քանզի այնպէս իսկ սովոր էին եպիսկոպոսապետքն Հայոց, հանդերձ թագաւորօքն և մեծամեծօքն, նախարարօքն և աշխարհախումբ բազմութեամբք պատուել զնոյն տեղիս, որ յառաջ էին տեղիք պատկերաց կռոցն, և ապա յանուն աստուածութեանն սրբեցան, և եղեն տուն աղօթից և տեղի ուխտից ամենայն ումեք: Մանաւանդ յայն ի գլխաւոր տեղին յեկեղեցին ժողովել ի յիշատակ սրբոցն՝ որ էին անդ, կատարել անդ ամի ամի եւթն անգամ, որք զնոյն ունէին սովորութիւն, առաւել ևս ի մեծի մարգարէարան մատրանն Յովհաննու: Այնպէս և յառաքելարանս տեառն աշակերտացն և ի վկայարանս մարտիրոսացն, ամի ամի ժողովեալք զոր տո-

նին յիշատակի նոցա վարուց, գործոց կենաց քաջութեան խմբեալ ցնծային»: (Փաստոս Բիւզանդ. Ս. Պետերբուրգ, 1883, գլ. Գ., էջ 7):

Նախաքրիստոնեական ոճով շինություններ շարունակել են քրիստոնեական մինչև 4-րդ դարը, գեթ վկայարանների գծով, որոնց մասին նույնպես ունինք պատմագրական վկայություններ: Այժմ մեջ կբերեմ այն վկայությունները, որոնք ապացույց են նախաքրիստոնեական կիկլոպյան ոճի շարունակության քրիստոնեական շրջանի մինչև 4-րդ դարը:

Ըստ վկայության Ագաթանգեղոսի՝ Հռիփսիմեի և Գայանեի վկայարանները շինվեցան Վաղարշապատի մեջ հին կիկլոպյան ոճով: Երբ այս մասին մանրամասն կարդանք Ագաթանգեղոսի նկարագրությունը, մեր առջև կպատկերանա կետ առ կետ նախաքրիստոնեական որմնաշինության կերպերը, որոնց մասին գրել եմ ներկա աշխատությանս ընթացքում:

Հռիփսիմեի և Գայանեի վկայարանների շինության համար իրողությունը հետևյալ կերպով կնկարագրե Ագաթանգեղոս.

«Եւ եկն թագաւորն, խնդրեաց հրաժեշտ ի որբոյն Գրիգորէ, եօթնօրեայ ճանապարհ կալեալ ի վեր, ի բարձր լեառն ի Մասիս: Եւ անդ ի գլխոյ լեռնէն առեալ վէմս արաստոյս, անտաշս, անկոփս, յաղթս, ծանունս, երկայնս, ստուարս և մեծամեծս, որ զմի մի ոչ ումեք լինէր հնար, թեև դիպելոյ բազմութեան ի մարդկանէ զայն շարժել. արդ առեալ սկայազօրն հայկաբար զութ արձանսն ի վերայ թիկանցն զայն դնէր և ստանձնեալ բերէր ի վկայարանս տաճարացն: Մէն չորս արձանս սեամս կանգնէր, իբրև փոխարէն անմիտ մարտին, զոր ընդ սրբոյն պատերազմեալ յիւրում սենեակին, ուր ամենապահ շնորհացն յաղթեալ՝ զայնչափ զարմանալիսն գործեաց: Եւ սա պսակ յաղթութեան զիւրոյ ձեռացն զօրութեան զվաստակն ամենեցուն ցուցանէր»: (Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեանի և Ստ. Կանայեանցի. Տփխիս. 1909, էջ 398):

Նախաքրիստոնեական հին ոճով գրիգորաշեն Հռիփսիմեի և Գայանեի վկայարանները նախկին վիճակով մնացել են մինչև 7-րդ դար: Հռիփսիմեի նախնական վկայարանը քանդել և տեղը հոյակապ եկեղեցի է շինել Կոմիտաս կաթողիկոսը, իսկ Գայանեի վկայարանը նույն դարուն քանդել և տեղին վրա վերաշինել է մի փառավոր եկեղեցի Եզր կաթողիկոսը: Սույն վկայարանների վերաշինությունների վկայությունները նաև վկայություններ են նախկին շինությունների բոլորովին նախնական վիճակին:

Հռիփսիմեի նախկին վկայարանի վերաշինության մասին 7-րդ դարի պատմագիր Սեբեոսը պատմում է հետևյալը.

«Եւ եղև յամի ԻԸ-երորդի թագաւորութեանն Ապրուէզ Խոսրովու քակեաց կաթուղիկոսն Կոմիտաս զմատուռ սրբոյն Հռիփսիմեայ ի Վաղարշապատ քաղաքի, զի կարի ցած և մթին էր շինուածն, որ շինեալ էր սրբոյն Սահակայ հայրապետի Հայոց Կաթուղիկոսի, որդւոյ սրբոյն Ներսիսին»: (Պատմ. Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն. Ղուվասեան մատենադարան, Թիֆլիս, 1913, էջ 141):

Այն մասին, անշուշտ առնելով Սեբեոսից կամ այլ պատմագրից, Հովհաննես կաթողիկոս գրում է միևնույն տեղեկությունը հետևյալ կերպով. «Զայսու ժամանակաւ, մեծ հայրապետն Կոմիտաս, զվկայարան սուրբ Հռիփսիմեանց, նախ խրթին և փոքրատեսակ իմն էր շինեալ՝ ևս հրաշապէս և վայելուչ և նազելի և պայծառ շինուածով յարդարէր... (Ղուվասեան մատենադարան, Յովհաննէս կաթողիկոս. Թիֆլիս, 1912, էջ 74):

Նույն պատմագիր Հովհաննես կաթողիկոսը գրում է Գայանեի վկայարանի մասին. «Իսկ ապա հայրապետն Եզր, զվկայարան սրբոյն Գայիյանեայ, զոր երբեմն խրթին և մթին էր զնա շինեալ՝ քակեալ զայն ևս ընդարձակագոյն և պայծառագոյն զնա շինեաց՝ կոփածոյ քարամբք և կրով ձուլելով, և արտաքուստ յարդարէր կայանս բնակութեան քահանայական դասուց ի պաշտօն աստուածային խորանին»: (Նույն, Յովհ. կաթող., էջ 80):

# ՄԱՍ Ա՛Ն ԵՐԿՐՈՐԴ

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ V-XIII ԴԱՐԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ



# [ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ][1]

Ա

*արդկային պատմության հետ, գրեթե համահավասար, սկըսվում է ճարտարապետության պատմությունը, և որչափ որ մարդկությունը քաղաքակրթական զարգացման և անկման շրջաններե անցել է, ճարտարապետական արվեստն ևս զուգահեռաբար ստեղծագործող ժողովուրդի ճշգրիտ պատկերն է արտացոլացրել իր ետևը թողած հուշարձանների վրա: Ահա այս իսկ պատճառով, ավանդությունների և մագաղաթների տված պատմությունը թերի է համարվում, եթե զուգահեռաբար չեն ուսումնասիրված հին ժողովուրդների ճարտարապետական կամ գեղարվեստական մնացորդները, որոնք ավելի ճշմարտապատում և հարազատ պատկեր են տալիս նույն ժողովուրդի նկարագրին:*

*Տարակույս չկա, որ երկրագնդի վրա մարդկությունը հավասարապես չէ զարգացել. բաժանված զանազան ազգերի և ցեղերի, ապրել են տարբեր երկիրների մեջ և իրենց ապրած միջավայրի բնության ու կլիմայական պայմանների համաձայն, ոմանք հասել են որոշ քաղաքակրթական բարձրության, իսկ ոմանք մնացել են գրեթե նախնական կիսավայրենի վիճակի մեջ:*

*Բոլոր ճարտարապետական պատմաբաններն ընդունում են, որ որևէ մասնավոր երկրի մեջ ճարտարապետությունը բոլորովին ինքնուրույն կերպով չէ զարգացած. սահմանակից քաղաքակիրթ պետություններ մեծ ազդեցություն են ունեցել տնտեսական կամ քաղաքական հարաբերությունների միջոցով. բայց և այնպես տեղական համայնքներ ևս, օգտակարը և պիտանին փոխառնելով հանդերձ, հետզհետե ստեղծել են իրենց սեփական արվեստը, փոխառյալները պատվաստելով իրենց սեփական ճաշակի համաձայն: Ահա այս պատճառով է, որ յուրաքանչյուր ժողովուրդ ունեցել է իր ինքնուրույն ճարտարապետությունը, ոճերը, գեղարվեստական ձևերը և չինելակերպերը, տեղական պայմանների պահանջների և տեղում արտադրված շինանյութերի համաձայն:*

*Շինանյութերի տեսակետով, մի տեղ քարը, մի ուրիշ տեղ փայտը ծառայել են իբրև շինանյութ. իսկ այս շինանյութերը չգտնված երկիրներում ստեղծել են քարին ու փայտին փոխարինող ուրիշ միջոցներ, հողն օգտագործել են իբրև շինանյութ, պատրաստելով նրանից թրծված կամ անթուրծ աղյուսներ և նրանցով կանգնել են հսկայական շինություններ:*

*Կիսավայրենի մարդկության իբրև բնակարան օգտագործած քարայրերից և խուղերից սկսած մինչև մեր օրերի ճարտարապետական հրաշալիքների հասնելը, բազմաթիվ դարեր տևեցին, փոփոխակի անկումներով, վերածնություններով և փոխանցումներով և այդ ժամանակի երկար տևողության մեջ անթիվ սերունդներ մաշվեցին՝ միշտ նորը, նպատակահարմարը և ժամանակի պահանջների համաձայն ձևեր ստեղծագործելու ճիգեր թափելով:*

*Եղել են ստեղծագործող ժողովուրդներ, որոնք անակնկալ կերպով անհետացել են կամ ձուլվել քաղաքականապես ավելի զորեղ ժողովուրդների մեջ: Սակայն երկրի նոր տերերը, որդեգրելով հանդերձ իրենց նախորդների ստեղծագործած ճարտա-*

---

[1] *Այս աշխատությունը, որ անվերնագիր վիճակում գտնվեց հեղինակի ձեռագրերի մեջ, գրված է երեք տետրակում: Ըստ երևույթին հեղինակը գրել է վերջին տարիներում, իբրև «Նյութեր հայ ճարտարապետության պատմության» աշխատության ներածություն:*

*Կազմող*

*բապետական ավանդական ձևերը և նպատակահարմար ու հանճարեղ շինելակերպերը, հինը անճանաչելի դառնալու չափ այլափոխել և նոր վայելչություններ տվել են՝ իրենց նորագույն ըմբռնումների համաձայն:*

*Ճարտարապետության մեջ միևնույն հեղաշրջումները հաճախ պատահել են նաև այնպիսի ժողովուրդների մեջ, որոնք թեև շարունակել են կյանքը, սակայն հանակնկալս փոխվել են նրանց պահանջները և քաղաքական պայմանները: Այս վերջինիս պատճառ եղել են պատերազմները, գաղթականությունները և քաղաքական նվաճումները: Այս հեղաշրջումները երբեմն ավելի բարձրության հասցրին ճարտարապետական արվեստը, իսկ երբեմն, փառասիրական ձգտումներով, ծանրաբեռնեցին շենքերը չափազանց ճոխ և աննպատակահարմար զարդարանքներով և հավելվածական մասերով, որով միանգամայն կորավ նախկին վսեմ պարզությունը և դատապարտվեց վերջին անկման:*

*Ահա այս բազմատեսակ ճարտարապետական արվեստների պարբերական զարգացման և անկման ենթարկված երկիրներով շրջապատված էր Հայաստանը, ուր շատ վաղ ժամանակ, շրջապատող քաղաքակիրթ մեծ ազգերի ազդեցության տակ, քանդվեցավ ճարտարապետական արվեստի խանձարուրը:*

*Սկսած նախաքրիստոնեական դարերից մինչև 14–15-րդ դարերը, առնվազն չորս անգամ անկումներ և վերածնություններ տեղի ունեցան ճարտարապետական արվեստի մեջ՝ Հայաստանում:*

*Թե ինչ ազդեցությունների և քաղաքական փոփոխությունների հետևանքով տեղի ունեցան այդ անկումներն ու վերածնությունները, առայժմ իմ նպատակս դուրս է այդ մասին խոսել, միայն պետք է ասեմ, որ որոշ դարաշրջանների մեջ, Հայաստանի անմիջական հարևան ազգերի բարձրագույն աստիճանի հասած ճարտարապետական արվեստի արտադրությունների հետ, հայ ճարտարապետությունը, եթե ոչ ծավալով կամ քանակով, այնուամենայնիվ ավելի բարձր կանգնեց իր որակով որոշ կետերի մեջ՝ հակառակ իր փոքրության և տնտեսական համեստ վիճակին:*

*Երբեմնի Բյուզանդական ահեղ կայսրությունը, որ վաթսուն և չորս նահանգներ ուներ իր տիրապետության սահմանի մեջ, ճարտարապետական ասպարեզում կանգնեց մի Այա Սոֆիա, որը հավիտենական կոթող եղավ երկու փոքրասիացի ճարտարապետների Անթեմիուսի և Իսիդորի անվան և տաղանդին: Հայաստանը, որ Բյուզանդիայի վաթսուն և չորս նահանգներեն մեկն էր միայն, բացառությամբ Այա–Սոֆիայի, կանգնեց իր փոքրիկ երկրի մեջ մի շարք այնպիսի ճարտարապետական կոթողներ, որոնք հավերժական ներբողներ են հայ ճարտարապետների և հայ արվեստագետների խորին հմտության և գեղարվեստական ճաշակին:*

*Հայաստանը գրեթե բնավ չհետևեց արևմտյան և բյուզանդական պաճուճանքներով ծանրաբեռնված և մի ժամանակ գրեթե համաշխարհային տիրապետություն ստացող ճարտարապետական ոճերին, վերոգրյալ ոճերի հաշիվ մի քանի աղոտ շողքերը դարերի ընթացքում երևացին հայոց ճարտարապետության մեջ:*

*Հայաստանն ընդգրկեց արևելյան ճարտարապետությունը, և իր արվեստի սկզբնաղբյուրը եղավ հին ասորա-քաղդեական և հին պարսկական ճարտարապետությունը, որի թեև հլու ընդօրինակողը չեղավ, սակայն համակրեց նրա պարզությունը, հաստատությունը և արտաքին անսեթևեթ վեհությունը: Ոչ արևմտյան շռայլ ճոխությունը սիրեց և ոչ Արևելքի ցուրտ և ահեղատեսիլ ոճը. արտադրեց միշտ իր բոլոր վերածնությունների մեջ՝ պարզ, անպաճույճ, սակայն անհամեմատ հաստատուն և բազմադարյան կյանք ունեցող շենքեր:*

*Հայ ճարտարապետության ամենամեծ գեղարվեստականությունը կկայանա անհամաչափ դասավորությամբ ուղիղ և կոր գծերի ներդաշնակ կերպով միմյանց մեջ ձուլվելու ակնապարար երևույթի մեջ: Եթե տեղ-տեղ քանդակներ կամ զարդի երևույթ ունեցող կարկառումներ կերևին, նրանք զարդ լինելե ավելի, կամ խորհրդավոր նշանակություն ունին, կամ որոշ դեր՝ կառուցվածքի հաստատության մեջ:*

*Պարբերական վերածնության մեջ 7-րդ դարը եղավ հայ ճարտարապետության ոսկե դարը: Նախընթաց և հետագա վերածնություններից ոչ մեկը չհավասարեցավ 7-րդ դարու արվեստի բարձրության, զուտ տեղական ճաշակով և բազմակողմանի շինելակերպերով: Սակայն հետագա վերածնությունների մեջ ևս կան խիստ գեղարվեստական կոթողներ, որոնք իրենց մեջ ունին նույնիսկ մեր ժամանակի համար ուսանելի շինելակերպեր: Եվ, որ ավելին է, մինչև հայ ճարտարապետության վերջին անկումը, 7-րդ դարու ավանդական գծեր ընդմիշտ պահեցին իրենց մեջ առավել կամ նվազ չափերով:*

*Հայ ճարտարապետության ոսկե դարից մեզ հասած բազմաթիվ հսկա հուշարձաններ ունինք տակավին կանգուն և մասամբ վնասված, որոնք բնության ահեղ պատահարների և մասնավորապես ահեղացունց երկրաշարժների կուրծք տալով, կանգուն մնացել են մինչև մեր օրերը. եթե հարկ եղած խնամքը տարվի, դեռ կապրին երկար դարեր և կզարմացնեն ներկա գիտնական արվեստագետներին: Եթե ի նկատի ունենանք այդ հուշարձանների կանգնված թվականները, երբ այսօրվան քաղաքակիրթ Եվրոպան խավարի մեջ խարխափում էր, այն ժամանակ ավելի ևս կպարտավորինք պահել այդ հուշարձաններն իբրև կենդանի վկաներ Հայաստանի ավելի հին քաղաքակրթությանը՝ քան Եվրոպան:*

*
* *

*Բովանդակ հին Հայաստանի հողի վրա ցրված բազմաթիվ կանգուն, կիսականգուն և ավերակ հուշարձանների ցուցակագրումը, ըստ հնարավորության անոնց համեմատական ուսումնասիրությունը կատարել, իմ առաջադրած նպատակս էր: Սակայն մտածել և առաջադրելը կատարել չէ. կատարելը մեծամեծ դժվարությունների հետ է կապված, որոնց պետք է հաղթահարե այդ նպատակով ասպարեզ եկողը: Այդ դժվարություններեն ամենամեծը նյութական միջոցներն են, որ պետք է ունենա և հետո պետք է որ շրջապատից խրախուսվի աշխատողը, որպեսզի կանոնավոր կերպով կարողանա առաջադրած գործը հառաջ վարել: Մեկ խոսքով, առանց ժամանակի երկար տևողությունն ի նկատի ունենալու, բացի կանգուն և կիսականգուն հուշարձաններից, ոչ մի փլատակ, բեկոր անկարևոր չհամարելով [պետք է] չափագրե, նկարե և ցուցակագրե, որոնց վրա գիտնական արվեստագետները կարողանան լրիվ ուսումնասիրություններ կատարել:*

*Հայոց ճարտարապետության և գեղարվեստի մասին, հայ և օտար լեզուներով, շատ տարիներե ի վեր գոյություն ունի մի ընդարձակ գրականություն, սակայն այդ գրականությունը, աննշան բացառությամբ, լուրջ ուսումնասիրություններ չեն: Ճիշտ է, որ Հայաստանի պատմական ճարտարապետության մի քանի հատկությունների մասին թեև օտար ճարտարապետներե ոմանք ցույց տվել են, թե որտեղից են ծագում այդ բացառիկ երևույթները, Հայաստանի ստեղծագործություններ են, թե օտար փոխառություններ. սակայն այդ մի քանի հարցերի լուծումով չի կարող վերջանալ Հայաստանի ճարտարապետական մեծ արվեստի քննադատական ուսումնասիրությունը: Իսկ հայ հիշատակարաններեն մեկ քանիսին գիտնականների և բանասերների կատարած այցելությունը առիթ տվել է ոմանց ներբողել և ոմանց քննադատել պատմական Հայաստանի ճարտարապետության պատկանող այդ հիշատակարանները: Բայց այդ ամենն ամենևին գիտական քննադատություններ չեն, և եղած բոլոր գովեստներն ու մակերևութային քննադատությունները գրեթե ճշմարտությունից հեռու են: Միմիայն լուրջ արվեստագետը, ընդարձակորեն հավաքված նյութերի վրա, կարող է համեմատական քննություններ կատարել և որոշ եզրակացության գալ ստեղծագործությունների, փոխառությունների, ներքին և արտաքին ազդեցությունների մասին: Ուստի, ներկա աշխատությունով, ինչքան որ հնար է, [ուզեցել եմ] ի մի հավաքել բնականեն չափագրված և ընդօրինակված ուսումնասիրելի նյութերը բոլոր արվեստագետների համար, որոնք, քննության և քննադատության ենթարկելով հավաքված հուշարձանները, գոնե մի հավանական եզրակացության կուգան անոնց ոճի, շինելակերպի և թե ստեղծագործությունների ու փոխանցումների մասին:*

*Հայաստանի մեջ առանձնապես ինքնուրույն զարգացած ճարտարապետական արվեստը բնավ քննադատության բովեն անցած չէ, որովհետև թե՛ շատ սակավաթիվ նյութեր կան հրապարակում հրատարակված և թե՛ եղածներն ալ իրականին անհամապատասխան են՝ մեծավ մասամբ սխալ չափագրություններով և վատորակ լուսագրումներով: Լուսանկարներ չափազանց քիչ օգտակար կարող են լինել ճարտարապետական ոճերի քննության համար, անոնք պետք է տեղին համեմատ իբրև ապացույց ներկայացնել չափական գծագրությունների համար: Շինարարական արվեստի քննության համար լուսանկարներ բնավ օգուտ չունին: Ճարտարապետական և շինարարական գաղտնիքներ, մանավանդ արվեստագիտական նշանակություն ունեցող շենքերի որոշ հատկություններ, միմիայն ճիշտ չափագրությամբ և գծագրությամբ երևան կուգան. հետևաբար այս մասին է, որ զգիսավորապես աշխատել եմ օգտակար լինել:*

*Հիրավի, օտար պատմական ճարտարապետության համար ընդարձակ ուսումնասիրություններ շատ կան, և այդ ուսումնասիրությունների մեջ հետզհետե նորություններ և ճշմարտություններ են ավելանում: Սակայն հայոց ճարտարապետությունը, համեմատելով օտարներու զարգացած ուսումնասիրության հետ, չափազանց ետ մնացել է, կամ լավ է ասել՝ բնավ չէ ուսումնասիրվել: Թե ինչու Հայաստանի պատմական ճարտարապետությունը և գեղարվեստի ուսումնասիրությունը այսքան ետ են մնացել, իմ կարծիքով, հետևյալ պատճառներ ունի:*

Նախ՝ Հայաստանի տիրապետողների համար աննշան տեղ կրներ հին արվեստների ուսումնասիրությունը, երկրորդ՝ մեր մեջ դրեթե հասած չէին հին գեղարվեստներին նվիրված գեղարվեստագետ ճարտարապետներ, որ զգային անհրաժեշտությունը և հետևեին ևրոպական գիտնականներին և տեսնեին, թե ինչ դժվարություններով և դարերի աշխատանքներով հասան նույն բարձրության:

Նախապես ևրոպական գիտնականներ հենված էին հին պատմագիրների տված հատ ու կտոր տեղեկությունների վրա և իրենց եզրակացությունները ձևակերպում էին այդ մագաղաթների աղքատիկ տեղեկություններով: Սակայն, երբ նկատեցին, որ հին պատմագիրներ քննելով և նրանց վրա հիմնվելով, հաճախ անճշտություններ և հակասություններ են երևան գալիս, այն ժամանակ, թողելով հին ուղղությունը, բնականաբար մտածեցին ավելի լուրջ և նպատակահարմար ճանապարհ: Բավականություն չէին տալիս անաչառ և ճշմարտասեր գիտնականներին այդ հակասությունները և քմածին առասպելները, անհրաժեշտ էր ճշտել և ավելորդները իսպառ արտաքսել և անոնց տեղ ավելցնել կամավոր թե ակամա զանցառության մատնված իրական շահագրգիռ անցքեր, ուստի, այս ուղղությամբ ուսումնասիրության համար, վճռականապես որոշվեցավ պատմության զուգընթաց հին ազգերի թողած հուշարձաններն ևս հետազոտել և ուսումնասիրել:

Բայց որչա՞փ դժվարին էր առաջադրված նպատակի իրագործումը և որչա՞փ մարդկային կյանք ու զոհաբերություններ հարկավոր էին այդ անհունապես մեծ գործը հառաջ տանելու համար: Ո՞ւր փնտռել, ո՞ւր դիմել այդ ճշմարտությունների անվիճելի աղբյուրները գտնելու համար, որոնք հնադարյան մարդկային տգիտության, բարբարոսության և երբեմն ալ բնության սոսկալի արհավիրքներու պատճառավ հավիտենապես թաղված էին թանձր մառախուղի տակ:

Մարդկային ծայրահեղ հետաքրքրությունն այդ դժվարության առջև ալ չտկարացավ: Ծայրահեղ համբերությունը, գերմարդկային տոկունությունը, միացած չնաչխարհիկ տաղանդի հետ, մեկ կողմ դրավ հին պատմություն ըսված կիրքերու և քմահաճույքներու պղտոր աղբյուրները և դիմեց չեն ու անչեն դարավոր փլատակներու, հիշատակարաններու ճշմարիտ ու պերճախոս վկայության, — սրանք ավելի լուսավոր ճառագայթներ արձակեցին պատմության մութ ու անտուրգ խավերուն մեջ, քան թուղթերն ու գրքերը: Գիտական աշխարհը բահով ու բրչով զինված և միլիոնների պատկառելի գումարներով, պատռեցին երկրի խորհրդավոր գաղտնիքների ծոցը, մտան հազարավոր տարիներ առաջ քարացած լավաներու անթափանցելի խավերուն մեջ և բացին մեր առջև այնպիսի կախարդական աշխարհ, որուն առջև ապշած ու հիացած մնաց ներկա գիտությունն ու պատմությունը:

Հազարավոր տարիներ առաջ ապրող մարդկության բավականին վճիտ նկարագիրը երևցավ այնտեղ, երևան եկան այնպիսի ցեղեր, ժողովուրդներ և ինքնուրույն ազգեր, որոնց գոյությունն իսկ անծանոթ էր: Հիրավի, երկրագնդի զանազան մասերի վրա անցյալի խոր մթության մեջ լույս ու ճշմարտություն փնտռող գիտնականներ թեև երբեմն իրենց ենթադրություններով և եզրակացություններով մեկը մյուսին կհակասեին, այնուամենայնիվ միշտ ճմարտության կմոտենային:

Պարզված էին ուղիղ ճանապարհը և գիտական աշխարհի ցանկալի նպատակին հասնելու համար անվրեպ միջոցները, գտնված էր մի քանի հին ազգերի անհասկանալի լեզուների և գրության բանալին, միայն օգնություն և օժանդակություն էր հարկավոր այդ կրակոտ եռանդով սկսված գործը հառաջ տանելու համար, որպեսզի օտար կլիմաների տակ, անսովոր կյանքի և սնունդի բռնադատված եզակի ուղեղներ, գիտության և պատմական ճշմարտությունների հետախույզ չնաչխարհիկ հանճարներ իզուր չփչանան:

Մեկ մարդու, մեկ ազգի ուժը բավական չէր հեռավոր անցյալի վրա թանձրացող խավարը փարատելու համար. համաշխարհային գիտնականների գործակցության և պետական ու ազգային դանձերու սպառում էր հարկավոր:

Լուսավորյալ դարու մունետիկ և քաղաքակրթության գլխավոր ղեկավար մամուլը աղաղակ բարձրացուց, կոչ արավ վերջին դարերում ապրող բոլոր քաղաքակիրթ ազգերին մասնակցել այս համաշխարհային պատմությանց առեղծվածները լուծելու մեծ և տաժանելի գործին:

Այս ընդհանուր կոչը բոլորովին անլսելի չմնաց, հետզհետե միացան բարոյական հազվագյուտ կարողություններով օժտված գիտնական մեծ ուժեր, որոնք եռանդուն օժանդակներ հանդիսացան: Անցյալի պատվույն նախանձախնդիր և ներկայիս մարդկային դասակարգի մեջ բարձր դիրք գրավելու սիրով բորբոքված ազնիվ ու խելացի ժողովուրդներ չինայեցին գիտություն, արվեստ, հարստություն և կյանք, լիառատ թափեցին ամեն ինչ որ հնար էր, զիրենք դեպի մարդկություն, դեպի պատիվ և փրկություն առաջնորդող ճանապարհի վրա, գերագույն ուժով պատռեցին անհիշատակ ժամանակներե ի վեր պատմության հորիզոնը ծածկող վարագույրը, որուն ետև բավական որոշ տեսնվեցան մեզ ծանոթ ու անծանոթ յուրաքանչյուր ազգի ծագումն ու զարգացումը, անոնց իսկական հայրենիքն ու սեփականությունները, համամարդկային ճակատագրի բարվոքման համար գիտությանց և արվեստից միջոցավ անոնց մատուցած ծառայությունները:

Եգիպտոսն իր հնադարյան բուրգերով ու մեհյաններով կպարծենա, Ասորեստանը՝ աշխարհասասան թագավորների ապարանքներով, Հունաստանը՝ ակրոպոլներով կհպարտանա, Հռոմը՝ իր պանթեոնով, Բյուզանդիոնը՝ իր հրաշակերտ ս. Սոփիայով: Բայց մի՞թե Հայաստանը չունի յուր անցյալը փառավորող սիգապանծ աննման վկաներ:

Հայաստանի փոքրիկ ժողովուրդը Արևելքի միջնադարյան խավարի մեջ իբր քաղաքակրթություն լուսավոր ջահ կբորբոքեր այն ատեն, երբ Արևմուտքն իր քաղաքակրթության օրհասականին մեջ ընկած էր:

Բարբարոսների սուրին տակ անընդհատ ջարդուփշուր եղող Հայաստանն արյան ճապաղիքներու մեջ լողալու ժամանակն անգամ, ոչ միայն գեղարվեստական սքանչելիքներու անմահ կոթողներ կկանգներ, այլև տգիտության խավարի դեմ դուցազնորեն կկռվեր, արվեստ, գիտություն, վաճառականություն կտարածեր իր շուրջը:

Ի՜նչ թվական համեմատություն, ի՜նչ ուժի բաղդատություն կարող է փոքրածավալ Հայաստանի պատիվը նսեմացնել զինքը շրջապատող մեծազոր ազգերու առջև, որոնց իշխող ու տիրապետող գոյությունը բազմաթիվ դարերի ընթացքի մեջ արմատացած ու ուռճացած էր:

Քաղաքական ահեղադղորդ հրաբուխներու մշտնջենական խառնարան երկրի մեջ հաճախ ոտնատակ կոխկռտվելու դատապարտված այդ դժբախտ ժողովուրդը շատ մեծագործություններ արտադրած է:

Առանց հիմնվելու Մովսես Խորենացիի հետևյալ խոսքի վրա, թե՝ «Զի թէպէտ և եմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, և զօրութեամբ տկար, և ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ՝ սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոյ յիշատակի...» (Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց: Տփխիս, 1913, էջ 10): Բավական է մի քննական պտույտ կատարել Հայաստան երկրի մեջ, այն ժամանակ պարզ պիտի տեսնվի, թե ո՞րչափ մեծ ճշմարտություն կա Մովսես Խորենացիի վերոհիշյալ հատվածի մեջ: Հիրավի, համեմատելով Հայաստանի բնակչության փոքրության հետ, անհամեմատ մեծագործություն է իր անցած բազմադարյան ճանապարհի վրա, ետևը թողած է ճարտարապետական անթիվ հիշատակարաններ:

Թո՛ղ միայն մեր պատմահայրը չմեղադրվի Հայաստանի պատմության սկզբնական անծանոթ շրջանը դյուցազներգությամբ շարահյուսելուն համար: Երկրագունդին վրա ապրող և մեռնող ազգերու նախնական մութ շրջանի պատմությունները միշտ դյուցազներգությամբ և առասպելաբանությամբ խճողված են: Համեմատելով Մ. Խորենացիի դյուցազնական շրջանի պատմությունն ուրիշ հին ազգերի սկզբնական պատմության հետ, պիտի խոստովանինք, որ Մ. Խորենացին անհունապես բարեխիղճ և համեստ է եղած մեր առասպելական անստույգ շրջանի նկատմամբ, և այս ծայրահեղ համեստության հետևանքն է կարծեմ, որ շինարարական և գեղարվեստական անստույգ ու երևակայական անհեթեթ մեծաբանություններե ազատ է յուր Պատմությունը:

Խորենացիի բովանդակ Պատմության մեջ, բացի մի Շամիրամի Վանա մեջ կատարած մեծագործություններեն և Տրդատի Գառնիի մեջ կանգնած չքնաղ հովանոցեն, դրեթե ուրիշ շինարարական աշխատությունների հիշատակություն չենք գտներ: Իհարկե, այս հիշատակությունները ևս առասպելներ չեն, պատմված շինարարությունների իրականությունը մեծ մասամբ այսօր հասած է պատմական թեթև փոփոխություններով: Ոչ միայն Հայաստանի նախաքրիստոնեական շրջանի, այլև քրիստոնեական շրջանի մասին ևս զարմանալի կերպով լուռ է, նույնիսկ կրոնական շինությունների մասին: Ուրիշ հայ պատմագիրներ, միանգամայն հակառակ Մ. Խորենացիի, առիթ են ստեղծած իրենց ժամանակին հիմնարկված կրոնական և հազվադեպ դեպքում ևս ռազմական շինարարություններ բարձրագոչ ներբողելու: Եթե մենք ավերակների խուզարկությունով Մ. Խորենացիի ժամանակակից և անկեց առաջ կանգնված շինություններ չճանաչեինք, որոնք բազմաթիվ են մեր օրերուն հասած, իր գրած պատմության մեջ, Հայաստանի մեջ կատարված շինարարական աշխատություններին հազիվ հազ հիշատակություն կգտնենք: Թե ինչո՞ւ համար Մ. Խորենացիի նման մի ներհուն պատմագիր մոռացած կամ զանցառության տված է այն եռուն աշխատանքի մասին խոսելը, որ կատարված է թե՛ իրմե առաջ և թե՛ իր

*օրով, այս պարագան, անշուշտ, հետաքրքրության և ուսումնասիրության կարոտ է:*

*Թեև մեր հետագա պատմիչներն ալ չափազանց հակիրճ տեղեկություններ կուտան իրենց օրերուն Հայաստանի մեջ կատարված շինարարական մեծ գործունեության մասին, որովհետև այս օրվան մեր տեսած և հետազոտած անթիվ հուշարձաններ վկայում են պատմագրաց դատապարտելի անտարբերությունը կամ անհասկացողությունը: Այնուամենայնիվ, միայն հայ պատմագրին հատուկ չէր այս մեծ պակասությունը. Հայաստանը շրջապատող օտար մեծ ազգերն ալ շատերը ևս ժլատ են եղած իրենց ցեղի մտավոր և գործնական ջանքերը գեղարվեստի և ճարտարապետության մասին՝ ավանդելու հետագա սերունդներին: Այս իսկ պատճառով է, որ բազմաթիվ գիտնականներ աշխարհ աշխարհ կշրջին, կհետազոտեն, կուսումնասիրեն անխտիր բոլոր տեսակի հուշարձանների մնացորդները և կվերականգնեն կորուսված կամ աղավաղված ազգերի պատմություններ:*

*Այս անտարբերության մեղադրանքեն որոշ չափով ազատ են Հունական, Հռովմեական և Բյուզանդական ժողովուրդներ, որոնք զգալի չափով ընդարձակությամբ ապագային թողել են շինարարական և ճարտարապետական տեղեկություններ, թեև արձանագրված տեղեկություններ դարձյալ քիչ են մեր օրերուն հասած իրական փաստերի համեմատությամբ: Որովհետև մեր դարու մեջ կազմված հոյակապ աշխատություններ են այն բազմաթիվ հատորները, որոնք ներկայիս արվեստագետ գիտնականներն են կազմել՝ այցելելով զանազան երկիրներ, պրպտելով և ուսումնասիրելով ամենաանշան բեկորներն իսկ, որոնց մասին հին պատմագիրներ ոչ մի տեղեկություն չեն տված:*

*Պատմական ուսումնասիրության համար այժմ անպատրաստ չէ մեր երկիրը և չափազանց ուրախալի է տեսնել, որ կան զուտ պատմական ուսումնասիրության նվիրված հայ գիտնականներ, բայց, իհարկե, այս գիտնականներ պատմական զանազան խնդիրների շուրջ զբաղված են ըստ իրենց մասնագիտության, բնականաբար անոնցմե չէ կարելի պահանջել, որ ուսումնասիրեն նաև պատմական շրջանի Հայաստանի հին ճարտարապետությունը, որովհետև անոնց մասնագիտությունը չէ. այս ճյուղի ուսումնասիրությունը պետք է պահանջել իր մասնագետներից՝ ճարտարապետներից:*

*Մեր ներկա իրականության մեջ ունինք բազմաթիվ մասնագետ ճարտարապետներ, որոնք ըստ ամենայնի ընդունակ են ոչ միայն Հայաստանի հին ճարտարապետությունն ուսումնասիրելու, այլև մի նոր վերածնություն ստեղծելու, սակայն այնքան բազմաթիվ ճարտարապետներ միանգամայն անտարբեր են դեպի հնադարյան գեղարվեստները: Բացի օտար մի քանի ականավոր ճարտարապետներից, ոչ ոք չի զբաղված հին Հայաստանի ճարտարապետության ուսումնասիրությամբ: Թեև հատուկտոր ուսումնասիրություններ եղած են զանազան բանասեր կամ տարբեր մասնագիտության տեր ճանապարհորդների կողմից, սակայն անոնք ալ մեծ մասամբ արժեքից զուրկ են իբրև ուսումնասիրություն, որովհետև ոչ մասնագետների կողմից այս գրվածները կամ արտակարգ գովասանքներ են միայն, կամ քմածին ենթադրություններ են ոճերու նկատմամբ և միանգամայն իրականին անհամապատասխան:*

*Ահա վերոգրյալ այս իսկ պատճառներով է, որ պատմական հայ ճարտարապետության և գեղարվեստի ուսումնասիրության անհունապես կարևորությունը չեշտելով, ոչ միայն հրավիրում եմ բազմաթիվ հայ արվեստագետներին, որ իրենց լուման ձգեն պատմական հայ գեղարվեստի ուսումնասիրության դանձարանի մեջ, այլև ես ինքս ինձ նշանաբան եմ ընտրած նույն ուղղությամբ աշխատել, վստահ լինելով, որ ապագային, որչափ որ քննադատելի կողմեր ունենա աշխատանքս, այնուամենայնիվ բոլորովին անօգտակար չպիտի լինի:*

*Անվիճելի ճշմարտություն է, որ առանց պատմական գրականության ուսումնասիրության, պատմական ճարտարապետություն և գեղարվեստ ուսումնասիրել, եթե չըսեմ անկարելի, գեթ շատ դժվար է: Մեր հին պատմագիրներ ուղղակի կերպով չեն զբաղված գեղարվեստի և շինարարության վերաբերյալ նկարագրություններով, եղածներն ալ հաճախ ներբողներ են, շինութենե ավելի, շինողների հասցեին ուղղված:*

*Պատմագրության մեջ համառոտակի հիշատակված մեծ արվեստագետները, որոնք հազիվ մատի վրա կհամրվին, ապրել են մեզմե դարեր առաջ և կանգնել են բազմաթիվ հասարակական հոյակապ մեծ շինություններ. սակայն հազիվ մի քանի տող նվիրված է անոնց մասին: Այնուամենայնիվ, մեր ժամանակակի արվեստագետներ, եթե ուսումնասիրությունով են պարապում, հատվածներ պիտի գտնեն պատմագրությանց մեջ և կամ համառոտ ակնարկներ, որոնք պատահաբար ընկած են մատենագրի գրչին տակ՝ բոլորովին տարբեր մի պատկեր ամբողջացնելու համար, սակայն անհուն նշանակություն ունին հինօրյա ճարտարապետության և գեղարվեստի ուսումնասիրության համար: Խորաթափանց մասնագետ ուսումնասիրողն անմիջապես կտեսնե, որ պատմագրի հայեցակետն ուղղված էր ոչ բոլորովին մասնագիտական առարկայի վրա, սակայն իր նկարագրած դեպքին ամբողջություն տալու համար, հարկ եղած է ուրվագծել անոր շուրջը լրացուցիչ տարբեր մասեր, ինչպես լուսանկարչական զգայուն ապակի, որով ոչ միայն նպատակին ուղղված առարկան ընդունում է իր վրա, այլև ուրվագծում է ամբողջ շրջապատը գտնված առարկաները, որոնց մեջ միշտ կգտնե քննող արվեստագետն իր մասնագիտության հատուկ հետաքրքրական մասեր, որոնք եթե թերի կամ աղոտ են, հեշտությամբ կպարզե և կամբողջացնե ուսումնասիրող մասնագետը:*

*Իբրև բացառություն պետք է ճանաչել մեր պատմագիրների ընդհանուր ուղղությենեն Թովմա Արծրունին, որ մանրամասնորեն նկարագրած է թե՛ իրենից շատ ու շատ առաջ Արտաշեսի ձեռքով Արտամետի շինության և թե՛ իր օրով Գագիկ Արծրունիի շինած ծովային նավահանգստի, Աղթամարի թագավորական պալատի և շքեղ եկեղեցիի մասին: Հայ պատմագրից անսպասելի էր այսքան պատկերավոր և հասկանալի նկարագրություն, որ Թովման ունի այս մի քանի շինությունների մանրամասնության մասին: Այս մանրամասն նկարագրության կծանոթացնեմ հետո, երբ կարգը կուգա Աղթամարի մասին խոսելու:*

*Պետք է գիտնալ, որ ներկա աշխատությունս բնականաբար պիտի ունենա թերություններ՝ զանազան անհերքելի պատճառներով, որոնց ամենամեծն է նախաձեռնությունս շրջանում իմ բոլորովին մենակ և անօգնական լինելս՝ համեմատելով բովանդակ Հայաստանի մեջ լցված ուսումնասիրելի նյութերի չափազանց շատության: Բացի այդ, ինձ անհրաժեշտ էին գրական աղբյուրներ շրջակա ուրիշ ազգերի ճարտարապետության և գեղարվեստի ուսումնասիրության համար, որպեսզի հնարավոր լինի դարուց ի դարս Հայաստանի մեջ զարգացող ճարտարապետական արվեստը բաղդատել օտար արտադրությունների հետ, որով պիտի պարզվեին Հայաստանի ճարտարապետության ոչ միայն ինքնուրույն զարգացումները, այլև այն աղբյուրները, որոնք ներգործել են Հայաստանի արվեստի վրա և ազդել են նաև երկրից դուրս ուրիշ դրացի ազգերի արվեստների վրա:*

*Հին արվեստների ուսումնասիրության համար գրական աղբյուրներ ձեռք բերել ինձ համար անհնար եղավ հին կարգերի ժամանակ. ուստի միջոցներու նեղ սահմանի մեջ կատարած իմ ուսումնասիրությունները չեն կարող ըստ ամենայնի պահանջված կատարելություն ունենալ, այնուամենայնիվ ամեն ոք կարող է վստահ լինել, որ ինչպես նախաքրիստոնեական շրջանի ուսումնասիրության [Ա մասի] մեջ հայտնել եմ, նույնը կրկնում եմ այստեղ, որ վերին աստիճանի զգույշ և վերապահ կերպով վերաբերված եմ ձեռքս ընկած նյութերու հետ՝ խուսափելով հաստատուն վճիռներե և քմահաճ ընդհանրացումներե:*



*
* *

*Բազմաթիվ եվրոպացի գիտնական ճանապարհորդներ զանազան գիտական նպատակներով շրջել են Հայաստանի զանազան կողմերը և ըստ իրենց մասնագիտության ուսումնասիրել են Հայաստանի անցյալն ու ներկան և գիտության նվիրել են մի ահագին գրականություն:*

*Հայաստան եկած եվրոպացի ճանապարհորդների մի մասը գիտնական ճարտարապետներ են եղած, որոնք, թեև ոչ լիովին, սակայն մասնակի ուսումնասիրել են Հայաստանի հին ճարտարապետությունը: Թեև ճարտարապետ չեղող գիտնականներ ևս իրենց շրջագայության միջոցին ուշադրության են առել բազմաթիվ հին հուշարձաններ, որոնց գեղարվեստական տեսքեն հրապուրված՝ ներբողներ են հյուսած պատմական հայ ճարտարապետության շուրջը, և ոմանք իրենց կարծիքներն ևս հայտնել են Հայաստանում տիրող ճարտարապետական ոճի շուրջը, սակայն միշտ հակասական և իրականին անհամապատասխան կարծիք են հայտնել այդ հիշատակարանների մասին՝ թուցիկ տպավորության ներքո: Ոմանք բյուզանդական են կարծել, ոմանք արաբական, ոմանք սելջուկյան և մինչև իսկ հնդկական տարրեր նշմարողներ եղել են կանգուն կամ կիսականգուն հուշարձանների ոճերի մեջ:*

*Ճիշտ է, որ նկատված գծերը որոշ չափով գոյություն ունեցել են Հայաստանի ճարտարապետության կառուցվածքներու մեջ, սակայն, իհարկե, զանազան դարաշրջանների կամ զանազան վերածնությունների մեջ, առանց սակայն որոշելու այդ գծերու ժամանակաշրջանը կամ դարաշրջանը: Այդ զանազանությունը բնականաբար չէին կարող անել ոչ մասնագետ ճանապարհորդներ և այդ թուցիկ այցելության մեջ ավելին չէր էլ կարող սպասվել:*

*Իսկ անոնք, որ եղել են իսկական ճարտարապետներ և բավականին ուսումնասիրել են հայոց հին ճարտարապետությունը, չափագրել և նկարել են բավական թվով հուշարձաններ և իրենց կարծիքն են հայտնել անոնց ոճին ինքնուրույնության*

և կրած արտաքին ազդեցությունների մասին իրենց հոյակապ աշխատությունների մեջ, որոնք մեր մատենադարանների անգնահատելի զարդերն են, այնուամենայնիվ օտար լեզվով են գրված, մեր հասարակության մեծագույն մասին անհասկանալի. ցավալի է, որ մինչև այսօր այն հոյակապ հատորների թարգմանությունները չունենք՝ մեր հասարակության մատչելի դարձնելու համար:

Տարակույս չկա, որ ավելի քան երկու հազար տարի կյանք ունեցել է Հայաստանի ճարտարապետական արվեստը, հետզհետե սրբագրվել և ճոխացել է զանազան վերածնություններով, հետևաբար բնական էր, որ այժմյան Եվրոպացի մասնագետ ճանապարհորդների ուշադրությունը և համակրանքը պիտի գրավեր Հայաստանում ինքնուրույն զարգացող շինարարական և ճարտարապետական արվեստը և իրենց համար ևս մի նորություն պիտի լիներ, որովհետև առաջին անգամն էր, որ համաշխարհային ճարտարապետության մեջ տեսնում էին Հայաստանում ինքնուրույն ոճով զարգացող ճարտարապետությունը:

Իրենց թռուցիկ ճանապարհորդության մեջ որչափ որ հնար էր թե՛ նյութեր հավաքել և թե՛ ուսումնասիրել, մեծ հաճույքով կատարել են: Թեև այդ թռուցիկ ուսումնասիրությունները և ուսումնասիրելի նյութերի հավաքումը քննադատությունից ազատ չեն, այնուամենայնիվ ազդեցությանց և ներգործությանց մասին մի քանի այնպիսի ճշմարտություններ են հայտնաբերած (հակառակ ընդհանրապես տիրող հոռի կարծիքին), որոնք միշտ էլ պիտի մնան մեզ համար թանգագին և երախտագիտության արժանի:

Հին Հայաստանը չափազանց ընդարձակ էր, հետևաբար, մի քանի անհատներ բավական չէին հին Հայաստանի այս կամ այն արվեստներն ուսումնասիրելու, ուստի մասնակի ուսումնասիրությունները, բնականաբար, լիակատար և անսխալ չէին լինելու:

Գրեթե նույն առարկությունը ես ինձ համար ևս պիտի անեմ, որ ես բավական չէի նույնիսկ ներկա Հայաստանի հողի վրա ցրված ամբողջ հին հուշարձանները հետազոտելու, և անոնց ճարտարապետությունն ուսումնասիրելու: Թեև իմ նախորդներես ավելի եմ աշխատել և ուսումնասիրելի նյութեր հավաքել, սակայն, ի նկատի ունենալով գործի լրջությունը, նախ զգուշացել եմ իմ անձամբ չտեսած ու չչափագրածների մասին կարծիք հայտնելե, երկրորդ, ներկա Հայաստանի սահմանի մեջ գտնված հուշարձանները հետախուզության ենթարկելով, տարիներ թափառել եմ և հազիվ կարողացել եմ, որոշ եզրակացության գալով, մի ընդհանուր կարծիք հայտնել Հայաստանի մեջ ծնող ու զարգացող ճարտարապետական արվեստի վրա, սկսած նախաքրիստոնեական շրջանից մինչև մեր թվականության 15-րդ դարը:

Որովհետև նկատել եմ, որ Հայաստանի պատմական ճարտարապետության այս երկար դարեր տևողության մեջ, արվեստի ճաշակը միօրինակ չմնալով, քանիցս վերածնության ենթարկվել է, ուստի որոշել եմ ըստ հնարավորության [ներկայացնել] թե՛ արվեստի զարգացման աստիճանները և թե՛ վերածնություններով կրած փոփոխությունները, այսինքն՝ զարգացումները և անկումները մինչև 15-րդ դար, որը [պատմական արվեստը] անկման դատապարտվել է 15-րդ դարից:

[Առաջին մասի] մեջ բավական մանրամասն գրել եմ Հայաստանի նախապատմական և նախաքրիստոնեական արվեստների մասին, որոնք դարեր շարունակվելով՝ կիկլոպյան նախնական արվեստագործությամբ մտել են մինչև քրիստոնեական երկրորդ կամ երրորդ դարերուն մեջ, մինչև որ վերջ գտել են. իսկ մյուս կողմից, քրիստոնեական շրջանում նորոգ վերածնված արվեստի սկիզբը գտած եմ նախաքրիստոնեական վերջին երկու-երեք դարերուն մեջ, որով հին և նոր վերածնված ճարտարապետական արվեստը խաչաձևվել է մեր թվականության սկիզբներին:

Գտնվեցին այնպիսի հայ և Եվրոպացի ճանապարհորդներ, որոնք կարծիք հայտնեցին, թե Հայաստանում ինքնուրույն ճարտարապետություն չէ եղած: Սակայն, իհարկե, վերջին ժամանակներս գիտնական ճարտարապետների նորանոր ուսումնասիրություններ հերքեցին այդ անհեթեթ կարծիքը և հաստատեցին այն կարծիքը, թե Հայաստանում եղել է մի ինքնուրույն ճարտարապետություն, որը ընդունելով և ձուլելով իր մեջ օտար փոխառություններ, նաև տարածել է իր երկրից դուրս մոտավոր և հեռավոր օտար պետությանց մեջ: Հայաստանի այս ինքնուրույն ոճը օժանդակ հանդիսացած է արևմտյան նոր ոճերի կազմակերպման:

Հայաստանի ինքնուրույն ճարտարապետական արվեստը մինչև մեր թվականության 15-րդ դարի վերջին անկումը չորս զանազան վերածություններ ունեցավ և այդ չորս վերածություններով այնքան փոփոխվեցավ, որ 5-րդ դարու առաջին վերածնության քով 15-րդ դարու վերջին չորրորդ վերածությունը բոլորովին անճանաչելի դարձավ, եթե չլինեին ավանդական հայոց ճարտարապետության մեջ քաղաքացիություն ստացած կամ անբաժանելի մասեր, որոնք դարուց ի դարս բնականաբար հետզհետե սրբագրվեցան և գեղեցկացան:

Քրիստոնեության շրջանում, առաջին վերածությունը թեև վերջացած եմ համարում 5-րդ դարու վերջին, սակայն, ինչպես մասնավոր կերպով հայտնեցի, սկիզբն անհայտության մեջ է: Թեև առաջինից մինչև 5-րդ դար միջոցը շատ երկար է, թերևս այդ երկար ժամանակամիջոցի մեջ Հայաստանի ճարտարապետությունը վերածություններ ունեցել է, սակայն մենք այսօր ոչ միայն քիչ նյութեր ունինք այդ շրջանից, որպեսզի տեսնենք և բաղդատելով վերածություններ որոշենք, այլև եղած նյութերը, որոնք մեր թվականության 4-րդ և 5-րդ դարերուն կվերաբերին, համեմատական ուսումնասիրությամբ մեծ տարբերություններ չեն երևում այդ երկար ժամանակամիջոցում կանգնված շենքերի մեջ: Ուստի, մեկ կողմանե նախքան 6-րդ դարը կառուցած հուշարձանների բացարձակ սակավությունը, մյուս կողմանե համեմատական ուսումնասիրության մեջ մեծ տարբերություններ գրեթե չտեսնվիլը, ինձ պարտավորեցնում է 3-րդ դարից մինչև 5-րդ դարը ներառյալ ընդունել առաջին վերածնությունն:

Երկրորդ վերածությունը տեղի է ունեցել 7-րդ դարուն, գրեթե մեկ դար խարխափումներ և պատվաստման փորձեր անելուց հետո: 6-րդ դարուն մեջ շինված շենքեր ունինք, որոնք իրենց վրա ունին թե՛ 5-րդ դարու շինվածամասեր և թե՛ բոլորովին նոր պատվաստված օտար ճարտարապետության հատուկ շինվածամասեր: 7-րդ դարուն կամ ձուլվելով և կամ վտարվելով օտար տարրեր, վերջնական կերպարանք է ունեցել երկրորդ վերածությունը:

Օտար տարրեր պատվաստելու տատանման և խարխափման ապացույցներ տալիս են մեզ 6-րդ դարուն կանգնված Ավանի, Դվինի, Եղվարդի մեծ կաթուղիկեները: Իսկ 7-րդ դարու վերածությունը թեև կարճ, մի դար է տևած, այնուամենայնիվ նույն երկրորդ վերածության ապացույց ամբողջական և կիսավեր շենքեր շատ են հասել մեզ:

Այսօր մենք ունինք 7-րդ դարուն պատկանող այնպիսի կատարելագործված շինություններ, որ հետագային Հայաստանը չէ ունեցել գրեթե այդօրինակ մեծագործ հուշարձաններ: Բայց ինչ որ հետաքրքրական և բնորոշ է Հայաստանի համար, այն է, որ այս երկրորդ ճարտարապետական վերածությունն իր գեղարվեստական բարձրությանն է հասնում Հայաստանի անիշխանության ժամանակ: Աներևակայելի մի գործունեություն ունեցել են Հայաստանի բնակիչները 7-րդ դարուն, մեծաքանակ հուշարձաններ են կանգնել 7-րդ դարուն, որոնց վերջինն է, իմ կարծիքով, Թալիշի (Արուճ) Գր. Մամիկոնյանի շինած կաթուղիկեն: Բայց 7-րդ դարու վերածության կնիքը կրում է Զվարթնոց եկեղեցիի շինարարական և գեղարվեստական ոճը չափազանց տաղանդավոր մի ճարտարապետի ղեկավարությամբ և հսկողությամբ:

Վերջապես, 7-րդ դարու Հայաստանի ճարտարապետությունը չափազանց բարձրության պիտի հասներ և շրջակա մեծ ազգերին պիտի գերազանցեր, եթե վրա չհասնեին քաղաքական մեծ փոթորիկներ արաբների արշավանքով, որ Հայաստանը անգործության դատապարտեց 7-րդ դարու վերջը երկար ժամանակ: Արաբների այս արշավանքով էր, որ հուզման մեջ էին նաև Պարսկաստանն ու Բյուզանդիան. հետևաբար այդ երկու մեծ պետության արանքում սեղմված Հայաստանը բնականորեն անգործության պիտի դատապարտվեր, քանի որ հարվածը չեչտակի կերպով ինքը ևս իր վրա ընդունել էր:

Քաղաքական այս դրությունը երկար տևեց Հայաստանում, և այնքան կատարելության հասած ճարտարապետությունը 7-րդ դարից հետո միանգամայն անկման դատապարտվեց գրեթե երկու հարյուր տարի, մինչև որ արաբական պետությունը ներքին խռովություններով փոքր ի շատե տկարացավ, և այս առիթեն օգուտ քաղելով՝ հայկական մի քանի տոհմեր զորանալով, Հայաստանի մեջ անկախ իշխանություններ կամ թագավորություններ հիմնեցին:

Ճարտարապետական արվեստի 3-րդ վերածությունը ևս առանց տատանումների և փորձերի չկատարվեց: Թեև 10-րդ դարուն Հայաստանում գոյություն ունեին 3-րդ վերածության հատուկ բազմաթիվ հուշարձաններ, սակայն Օղուշլուի, Շիրակավանի և այլ շինություններ, նույնիսկ Անիի Իգաձորի եզերքի եկեղեցին երրորդ վերածության նախօրյակին փորձնական շինությունները կներկայացնեն, որոնք թեև շինարարական ամեն կատարելություն ունին, սակայն ոճերի մեջ միացնում են արևելյան և արևմտյան ձևերը: Իսկ 10-րդ դարուն արդեն կատարելության հասած է 3-րդ վերածությունը: Բայց, ինչպես երևում է, Հայաստանի ճարտարապետության օջախը եղավ Անին: Այս անգամ Անին էր, որ ստեղծում էր արվեստի նորություններ և տարածում էր շրջակա իշխանությունների և մանրիկ թագավորությունների երկրները: Հակառակ իշխանության փոքրության և առհասարակ բռնակալներու ճնշման ներքև լինելու, ի բնե այս շինարար ժողովուրդները բազմաթիվ շինու-

թյուններ կանգնեցին Հայաստանի հողի վրա: Այս շրջանին աչքի են ընկնում, բացի եկեղեցիներից, մասնավորապես պալատների, բերդերի, կամուրջների, բաղնիքների, պարիսպների և այլն շինարարություններ, նաև ստորերկրյա կամարակապներ և փակված շուկաներ: Թեև մի դարից պակաս տևողություն ունեցել է Բագրատունյաց թագավորությունը Անիում, սակայն անոնց մայրաքաղաքի ճոխությունը և ճարտարապետական արվեստի զարգացումը հազիվ կանգ առել է մեկ ու կես դար հետո:

Մոտավորապես մի դար, կամ քիչ ավելի, շինարարությունը դադար առավ Հայաստանում, մոռացվեց նախկին 3-րդ վերածնության ոճը, և ահա երևան եկավ չորրորդ վերածնությունը:

Չորրորդ վերածնության մեջ ևս Հայաստանի ժողովուրդը նույն շինարար հատկությունն անկորուստ պահած է: Թեև այս անգամ կատարյալ աղքատության դուռը հասած էր, և նախորդ վերածնությունների նման մեծամեծ գործեր գրեթե չարտադրեց, բայց չափազանց գեղարվեստական մանր շինություններով ծածկեց երկիրը, մեծ չափով պահելով հին վերածնությունների հատուկ ձևերը: Այս վերածնության ժամանակ ուշադրության արժանի հառաջադիմություն արած են պարսպաշինության մեջ, նաև մեծ հառաջադիմություն ցույց տված են ընդարձակ տարածությամբ ձուլածո հարթ առաստաղներ շինելու մեջ, որոնց մի քանի հատը նույնիսկ մանր քարերով մոզայիկ շինված:

Վերջին՝ 4-րդ վերածնությունը թեև երկար է ապրում, քան 3-րդ վերածնությունը, սակայն այս անգամ համրաբար անկման է դատապարտվում և այլևս չի վերականգնվում: Սակայն 4-րդ վերածնությունից մեզ ժառանգություն մնում են ոչ միայն շինարարական կատարելություններ, այլև ոճերու այնպիսի նշանակալից ու հանդուգն ձևակերպումներ, որոնց համար մենք միշտ հպարտ պիտի լինենք:

*
* *

Թեև մի երկու դար առաջ սկսած էր պատմական Հայաստանի նկատմամբ մութ առեղծվածներ և հանգույցներ լուծելու համար բազմահատոր գրականություն մը գոյություն ստանալ, բայց այդ բոլորը եղել են հայոց համեմատական պատմության և անոր լեզվի շուրջը: Սակայն հայոց ճարտարապետության և գեղարվեստի շուրջը եղած հետազոտություններ և ուսումնասիրություններ հայ և եվրոպացի գիտնականներու կողմանե չափազանց քիչ են մինչև այսօր, և այն ալ եթե փոքր ինչ հառաջ գնաց վերջերս, բախտի բերմամբ, հայու անցյալ գեղարվեստով վերին աստիճանի շահագրգռվող սակավաթիվ գիտնականներու շնորհիվ էր միայն:

Հայաստանն այցելող և ուսումնասիրության ենթարկող բազմաթիվ գիտնականներու և խուզարկու ճանապարհորդներու մեջ առաջին անգամ ուշադրության արժանի տեղ բռնեց և ընդհանուր հետաքրքրություն զարթեցուց, գեթ որոշ չափով, Dubois de Montpereaux ֆրանսացի գիտնականը, որ Հայաստանը ի միջի այլոց ուսումնասիրեց ճարտարապետական տեսակետով 1839 թվականին, հրատարակելով մի հոյակապ հատոր՝ Voyage autour du Caucase, vol. 6, Paris, 1839:

Այս հեղինակը, որչափ որ թույլ կուտա իր տեսած ու հավաքած խիստ համեստ նյութերու սահմանափակ քանակությունը, որոշ վճռական հայտարարություններ ըրավ ինքնուրույն հայ ճարտարապետության մը գոյության, ենթարկված արևմտյան երկրներու ազդեցության. գծագրեց Գառնիի Տրդատա թախտի վերակազմությունը, թեև ոչ մանրամասն ճշտությամբ. նկատեց այսօրվան բազմակողմանի նորոգության և փոփոխության ենթարկված էջմիածնի տաճարի նախնական պատկերը, որու վրա տեսնել կարծեց հռոմեական արվեստի ազդեցություն:

1839 թվականին Texier քայլ մը ավելի առաջ գնաց Հայաստանի ճարտարապետական հուշարձաններու ուսումնասիրության մեջ. ֆրանսական կառավարության ծախքով ճանապարհորդեց Հայաստանը և հրատարակեց երկու մեծահատոր նկարագրություն Հայաստանի ճարտարապետական կոթողներու, թեև ներկա ժամանակիս մեծ մասամբ իր արժեքը կորուցած է Texier-ի աշխատությունը թե՛ նկարագրական, թե՛ գծագրական իրականին անհամապատասխան մասերով ու ժամանակագրական սխալ տեղեկություններով, սակայն այս վիճակի մեջ ալ իր ժամանակին անհամեմատ խոշոր ծառայություն մատուցեց հայոց ճարտարապետության պատմության, նախ իր գեղեցիկ աշխատությունով ու մաքուր տպագրությունով համաևրոպական հետաքրքրություն զարթեցուց, և հետո մի քանի նոր ճշմարտություններ հայտնագործեց, որոնք միանգամայն հեղաշրջեցին մինչև այն ժամանակ տիրող և նույնիսկ անվիճելի համարվող կարծիքներ:

Որչափ ալ որ շատ լինեին Texier-ի սխալները, այնուամենայնիվ վերին աստիճանի արդարանալի կողմեր ունին անոր սխալները. որովհետև Texier հազիվ ժամանակ ունեցել է չորս ամիս Հայաստանը շրջելու (չորս ամիս ալ Անիի մեջ աշխատելու), որ վերին աստիճանի քիչ ժամանակ էր բովանդակ Հայաստանը տեսնելու և մանրակրկիտ ուսումնասիրության ենթարկելու համար, երկրորդ՝ թերևս Texier տրամադիր լիներ բովանդակ Հայաստանը մանրակրկիտ խուզարկության և ուսումնասիրության ենթարկելու, եթե նույնիսկ տարիներ հարկավոր լիներին, սակայն շատ պարզ է, որ նա երբեք չէ ունեցեր մի հմուտ առաջնորդ, որուն ծանոթ լիներ Հայաստանի հոյակապ հուշարձաններու մեծամասնությունը գեթ և տար անոր ժամանակագրական և պատմական ստույգ տեղեկություններ:

Իրաց այս վիճակի մեջ, նա ոչ միայն չպիտի կրնար տեսնել բովանդակ Հայաստանի մեջ գտնված ճարտարապետական անթիվ ու անհամար գոհարները, այլև բնականորեն պիտի ծագեին այն թյուր եզրակացությունները ժամանակագրական, տեղեկագրական և պատմագրական սխալ տեղեկություններեն:

Սակայն, հակառակ Texier-ի, գիտնականի մը համար շատ մը աննպաստ պայմաններու մեջ կատարած ճանապարհորդության, որուն հետևանքով հառաջ եկան գծագրական և չափագրական սխալներ, նա առաջինը եղավ, որ հայտարարեց պայտաձև աղեղներու (fer á cheval) հայ ճարտարապետության սեփականություն լինելը, և նա եղավ բնորոշ կերպով հայտնող, որ Հայաստանի մեջ կա ճարտարապետական ինքնուրույն գծերով զարգացած մի արվեստ, որ կարելի է անկախ համարել շրջապատող ազգերու արվեստներեն, իր շատ մը ինքնուրույն զարգացած ոճերով ու մասերով:

Վերին աստիճան հիացմամբ կխոսի երբեմն հայկական մանվածներու և ներդաշնակ աղեղնավորումներու ու կամարավորումներու մասին, չմոռնալով նաև մի մեղադրանք ուղղել ներկա հայ սերունդին, որ զուրկ կթողի իրեն նախնիքներու արժանավորութիններեն և շատ սրտազդեցիկ են անոր Անիի մասին արտահայտած մի քանի սրտառուչ տողերը...:

Texier-են հետո երկար ժամանակ մասնագիտորեն ուսումնասիրող չէ եղեր Հայաստանի ճարտարապետական կոթողներու կառուցման արվեստը և անոնց ոճերը: Թեև մինչև այդ ժամանակ բազմաթիվ հայ և օտար գիտնականներ, բանասերներ և ճանապարհորդներ բավական հում նյութ տվել էին գրականության միջոցով գիտնականներու ուսումնասիրության, որոնց մեջ ամենամեծ տեղերը կբռնեն Հ. Ն. Սարգսյան, Ղ. Ալիշան և ուրիշներ: Թերևս այս հավաքված նյութերու վրա էր, որ բազմահմուտ ճարտարապետական պատմաբան A. Choisy-ի հրատարակած ճարտարապետության պատմության հոյակապ հատորի մեջ պատկառելի տեղ տված է հայ ճարտարապետության ինքնուրույն զարգացման և անոր նվաճումներու մասին դեպի հեռավոր աշխարհներ, ինչպես Դոնի և Վոլգայի ափերով մեկ կողմե մինչև Սկանդինավիա, իսկ ուրիշ գծով՝ Փոքր Ասիայով՝ Սև ծովի ափերով, Դանուբի եզերքներով մինչև Ֆրանսա, հայ արվեստի այդ կողմի ճյուղի հետ մեծապես օժանդակ պիտի լիներ 11-րդ դարուն վերածնվող ռոմանական ոճը:

Այս գիտնականն իր ծայրահեղ սուր հոտառությամբ ոչ միայն հայ ճարտարապետության նվաճումներու ուղեգիծը գծագրեց, այլև տեսնել կարծեց նույնիսկ արվեստի ծագման օրրանը:

Choisy հայ ճարտարապետության բարձրագույն զարգացման շրջանը կհամարի 11-րդ դարը և 12-րդ դարը Բաղդադի խալիֆներու Հայաստանի վրա հովանավորության շրջաններուն, և այս արվեստն իր ազդեցությունը տարածած ցույց կուտա դեպի հյուսիս՝ Վրաստան, Ռուսաստան և Սկանդինավիա ու Իռլանդիա, ուրկեց իջած մինչև Ֆրանսա, Նորմանդիա, ուրիշ գծով՝ Փոքր Ասիան ամբողջ, գլխավորապես թաթարներու շրջանեն մինչև Նիկոմիդիա գնացած կգտնե հայ շինարարական արվեստը, միայն քարի տեղ աղյուս գործածման նյութեղենի տարբերությամբ. իսկ դեպի արևմուտք մի ուրիշ գծով հայ արվեստը գնացած է դեպի արևմուտք՝ Սև ծովի ափերով և հասնելով Դանուբի ստորին եզերքները, տիրապետել է Ռումանիա, Սերբիա, Բուլղարիա, այդ շրջանները հայկական գաղութներու նմանեցնող այլափոխությամբ, և վերջապես հասել է մինչև Նորմանդիա և այնտեղ միանալով Սկանդինավիայի և Իռլանդիայի ճանապարհով հասնող իր քույր արվեստի հետ, օժանդակ եղել է ռոմանական արվեստի վերածնության:

Սակայն միանգամայն ցավալի է, որ այս տեսակ սրատես, հոտառու և հմուտ պատմաբանի մը ձեռք եղած ժամանակագրական սխալ տեղեկությունները և իրականին անհամապատասխան գծագրությունները ստիպել են զինքը երբեմն շատ զսպված կարծիքներ հայտնելու և երբեմն ալ խիստ վերապահությամբ խոսելու, սակայն ինչ որ համարձակ արտահայտված է հաստատուն փաստերու վրա, արդեն մեծ դարագլուխ է բացած հայ ճարտարապետության պատմության համար:

Հայ ճարտարապետության միակ օջախը Choisy Բաղդադը համարելուն գլխավոր պատճառը, ըստ իս, գիտնականին 10–11-րդ դարերեն առաջ հայ ճարտարապետության անհամար կոթողներու նկարներեն ձեռքի տակ չունենալն է. եթե մեր հայ ճարտարապետության ոսկեդարու՝ 7-րդ դարու հոյակապ հիշատակարաններեն բավարար քանակությամբ ձեռքի տակ ունենար, ոչ միայն հայ ճարտարապետության գերագույն զարգացումը մինչև 5-րդ դար տանելու չպիտի վարաներ, այլև հայ արվեստի օջախը փոխանակ Բաղդադի մեջ փնտռելու, պիտի փնտռեր մի ուրիշ երկիր, որտեղեն շառավիղեցին այս երկու երկրին արվեստներն ալ, որոնց մեկը ծաղկեցավ, խամրեցավ ու անհետացավ, ինչպես կըսե ինքը՝ Choisy, և այսօր հետքը անգամ չմնաց տեղին վրա, իսկ Հայաստանի մեջ ոչ միայն մինչև 14–15-րդ դարերը զարգացավ, վերածնվեցավ քանիցս, և այսօր տակավին կմնան ի սփյուռս Հայաստան երկրի բազմաթիվ բեկորներ նույն մեծությենեն և վսեմությենեն: Շատ զարմանալի է, որ Բաղդադը՝ առանց ենթարկվելու Հայաստանի գլխեն անցած մշտական արհավիրքներուն և փոթորիկներուն, իր մեջ չէ պահեր որևէ նմույշ Հայաստանի մեջ 10–11-րդ դարերուն ծաղկող և ուռճացող ճարտարապետական արվեստի նախատիպերեն, իսկ Հայաստանը, որ միշտ քաղաքական հրաբուխներու խառնարան է եղել, պահվել են խիստ շատ ապացույցներ յուր վաղեմի քաղաքակրթության. այս բանը շատ տարօրինակ է թվում: Ոչ միայն Choisy չէ գտնում Բաղդադի մեջ որևէ ուշագրավ հնություն, այլև Dieulafoy, որուն ճանապարհորդությունը վճռական նշանակություն ունեցավ Պարսկաստանի արվեստներու ուսումնասիրության տեսակետով, և թերևս Choisy հենված է Dieulafoy-ի վրա – նա ևս չէ գտած Բաղդադի մեջ որևէ մնացորդ, բացի մի մզկիթե, որը թաթարական հետնագույն շրջաններուն կպատկանի:

Հայ ճարտարապետության ուսումնասիրությունն ու պատմությունը խիստ մեծ կորուստ ունեցել է Choisy-ի նման տաղանդավոր, հմուտ և բազմաբեղուն մի ճարտարապետի ձեռքին տակ առատ, ստույգ և վավերական տեղեկություններ և նմուշներ տրված չլինելուն համար, թերևս այս աղետալի կորուստը անդարմանելի չլիներ. սակայն մինչև այսօր տակավին ընդհանուր ճարտարապետության պատմական ուսումնասիրության համար զինքը փոխարինող չէ եղած, հետևաբար մեզ համար բացը զգալի է ցայսօր:

Choisy-ի թողած զգալի և ցավալի բացը, հուսալի է, որ պիտի ծածկվեն երկու անվանի գիտնականներու մեղվաջան աշխատություններով՝ հանձինս հանրածանոթ հայագետ լեզվաբան պրոֆ. Ն. Մառի և Վիեննայի համալսարանի գեղարվեստա-պատմական ճյուղի փիլիսոփա Հովսեփ Ստրչիգովսկիի:

Պրոֆ. Ն Մառ դեռ 1892–93 թվականներեն սկսել էր իր հոգնաջան գործունեությունը Հայաստանի հողի վրա անձամբ պեղումներ և պրպտումներ անելով, սակայն 1904 թվականեն սկսյալ վերին աստիճանի լուրջ և գիտական բնույթ ստացավ անոր գործունեությունը Հայաստանի և մասնավորապես Անիի մեջ մեծաքանակ պեղումներով և լայն ուսումնասիրական նյութերու հավաքումով: Ն. Մառ այնչափ եռանդով փարած էր այս ցանկալի նպատակին, որ ոչ միայն ինքն էր չարատանջ աշխատողը, այլև իր շուրջը հավաքել էր բազմաթիվ արվեստագետներ, որոնք անդադար կաշխատեին հայագիտական գանձարանը լցնելու. և ես լիովին համոզված եմ, որ այժմ Ն. Մառի ձեռքի տակ ավելի քան ցանկալի քանակությամբ նյութեր են հավաքված՝ մասնավորապես հայ ճարտարապետության և գեղարվեստին հատուկ[1]:

Գրեթե նույնչափ հին է Հ. Ստրչիգովսկիի աշխատանքի ձեռնարկելը հայ ճարտարապետության և գեղարվեստի շուրջը, և ունի մի շարք հրատարակություններ, սակայն այդ անվանի գիտնականին ևս չէր հաջողված մինչև 1913 թվականը վճռական կամ վերջնական մի եզրակացության հանդելու, թե՛ նյութերու սակավության և թե՛ հայ պատմական ու գեղարվեստական կյանքին լիովի ծանոթ չլինելու համար, որով հաճախ անոր տեսությունները հակասական և զիրար չեզոքացնող բնույթ ունեին:

Սակայն երբ 1913 թվականին աշնանը ինքը անձամբ եկավ Հայաստան, հատկապես քրիստոնեության առաջին դարերեն գոյություն ունեցող կոթողները տեսնելու և այս կոթողներու en détail նկարներ ու չափագրությունները ձեռք բերավ, արդյունքը եղավ այն երկու հոյակապ հատորներ 1917 թվին տպված, որոնք թեև մեծ բաց մը ծածկեցին հայ ճարտարապետության ուսումնասիրության նկատմամբ, սակայն հեղինակը դարձյալ գոհ չէ, իր ըսելով, որ եթե ժամանակի անպատեհությունները իր ձեռքերը չկաշկանդեին, նա կոչված էր շատ խոշոր գործ արտադրելու:

[1] Այդ նյութերի մի մասը լույս տեսավ 1934 թվին՝ մեծահատոր "Ани" աշխատության մեջ:

Կազմող



Ստրչիգովսկիից տրտնջալու պատճառներեն ամենը չեմ ուզեր մեջ բերել այստեղ, սակայն մեկը գտնե ինձ հայտնի է, որ նա երբեք ծանոթ չէ հայերեն լեզվին, և հայ արվեստի ուսումնասիրությունն ալ պահանջում է անպայման հայագիտություն. այս մասին օտար կամ ոչ մասնագետներու օժանդակությունը երբեք իր նպատակին չի հասած գիտնականի մոտ. գիտնականն ինքը պետք է որ կարդար մեր պատմական մատենագրությունը և իր սուր հոտառությամբ զտեր ու տարրալուծեր ամեն մի ակնարկ, որը հեռու կամ մոտ առնչություն ունեցել է հայ գեղարվեստի պատմության հետ. օտարներու ընթերցումը երբեք չի կարող տալ այն, ինչ որ կգտնե ինքը՝ գիտնականը, հաճախ պատահում է, որ մի բանասեր-թարգմանի արհամարհանքով անցած տողերը հանկարծ մեծ գնահատության արժանացել են գիտնականին կողմեն և շատ բան լուսաբանել նույն տեսակետով:

## [Բ][1]

Շատ ուրախալի երևույթ է, որ վերջապես հայ ճարտարապետության և գեղարվեստի ուսումնասիրությունը եվրոպական գիտնականներու վիճաբանության նյութ է դարձեր. ասկե ետքը դժվար թե կովողներ զենքերնին վար դնեն, եթե մենք կարողանանք անընդհատ ռազմամթերք հասցնել հայ գեղարվեստի անհատնում շտեմարանեն, որուն հետևանքով քիչ ատենեն հայ ճարտարապետության պատմությունն ալ իր պատվավոր տեղը պիտի բռնե ուրիշ ազգաց արվեստներու պատմության մեջ:

Ամբողջ 19-րդ դարուն մեջ, հայ ճարտարապետության մասին եղած գիտական մասնավոր հետազոտություններ միայն մեկ շոշափելի օգուտ տված էին՝ որ գտնե նյութեր և կարծիքներ կհավաքվեին ապագա ուսումնասիրության համար: Նախկին հետազոտություններով գոյացած ընդհանուր եզրակացությունը կարելի է երկու խոսքով ամփոփել, թե՝ «Հայ ճարտարապետությունը կույր հետևողություն է Հայաստանը շրջապատող մեծ ազգերու ճարտարապետական արվեստներուն»:

Բայց այժմ սկսեր է անցնիլ այդ շրջանը. նորագույն հետազոտողներ ավելի մոտեն քննելով, կամաց կամաց կհամոզվին, թե հայ ճարտարապետությունը կույր հետևողության մեծ փաստեր չտալեն զատ, նաև տեղ-տեղ մրցող և քան իր մեծ դրացիները գերակշռող դառնալ կպատանա:

[1] Այս գլուխը նախապես լույս է տեսել «Անահիտ»-ի 1911 թվականի № 9–12-ում իբրև առանձին հոդված:

Կազմող

Ինչո՞ւ և ինչպե՞ս սկսեցին հին կարծիքներու փոփոխությունը, այդ շատ պարզ է, որովհետև վերջին տարիներու մեջ ուսումնասիրող գիտնականներ ավելի առատ և նպատակահարմար նյութեր ունեցան իրենց սեղանին վրա:

Բայց առատ և նպատակահարմար ըսելով, չի կարծվի, որ Հայաստանի մեջ ուսումնասիրելի ինչ նյութեր որ կային, անոնց մեծ մասը գրքերու մեջ մտան. երբե՛ք: Միայն վերջին տարիներու մեջ կատարված մասնավոր պեղումներ, իսկական հիշատակարաններե առնված լուսանկարներու որոշ քանակություն մը և խնամքով կատարված քանի մը նորագույն չափագրություններ եկան հին, աղավաղված պատկերներու տեղը բռնելու: Մեկ քանի բարեխիղճ գիտնականներ ալ վերջին քանի մը տարիներու մեջ կարճ և սահմանափակ ճանապարհորդություններ կատարեր են պեղումները և հիշատակարանները անձամբ տեսնելու համար:

Ահա այսքանը բավական եղավ հայ ճարտարապետության համար նոր դարագլուխ մը բանալու:

Հայ ճարտարապետության ուսումնասիրության այս նորագույն շրջանը սպառնական է նաև հանդեպ շատ մը հայ և եվրոպացի քննադատներու, որոնք մեծամեծ հատորներ գրեցին հայ պատմագրաց շուրջը՝ զանոնք մեծ մասամբ անվավեր և չափազանցված տեղեկատուներ համարելով:

Ճիշտ է, որ հայոց պատմությունը իր մեջ ունի դյուցազներգական, առասպելական և կրոնական տարրերու տիրապետող բաժին մը, որ եթե պետք եղածին պես զտենք, շատ քիչ բան կմնա անցյալի մեջ հայուն քաղաքական և տնտեսական վիճակը բացատրող: Ուստի շատ բնական էր, որ հառաջ պիտի գար այն ողորմելի գիտակցությունը, ինչ որ քննադատներ կազմեցին լոկ պատմագրաց վրա հիմնվելով՝ առանց զուգընթացաբար ուսումնասիրելու Հայաստանի բազմադարյան անթիվ հուշարձանները:

Այս երևույթի մեջ ինչո՞ւ միայն հայը մեղադրել. ուրիշ ազգերու ալ հին պատմությունները ոչ նվազ առասպելներու և կամայական խեղաթյուրումներու հյուսվածքներ էին գրեթե դար մը առաջ: Սակայն անոնք գիտնականներու ձեռքով մաղվեցան, զտվեցան պեղումներով և անդադար խուզարկություններով: Այսօր ալ հիներուն տեղը բոլորովին նոր պատմություններ գրվեցան ավելի ճիշտ, ավելի ընդարձակ և ավելի պատվաբեր այն երբեմնի մեծ քաղաքակրթությունը ստեղծող մեռած կամ կենդանի ազգերուն:

Մեր հին պատմագիրներ կարծվածին չափ ալ անպետք չեն, անոնք շատ օգտակար կըլլան մեզի,

եթե դարավոր հիշատակարաններուն հետ զուգընթացաբար մասնագիտորեն ուսումնասիրվին: Ահա այն ժամանակ շատ մը առեղծվածներ կլուծվին և շատ մը առասպել ու չափազանցություն կարծված հատվածներ ճշմարտության կփոխվին:

Ասկեց քանի մը տարի առաջ ո՞վ կարող էր երևակայել, որ ամենեն շատ քննադատված Մովսես Խորենացիի Վիշապազուններու և Վիշապներու պալատի առասպելը իրականության փոխվեր: Բայց Խորենացիի առաջին հաղթանակը չէ ասիկա, ուրիշ շատ հաղթանակներ ալ տարավ. վերջերս Գառնիի լեռանց անմատչելի բարձունքներուն վրա մինչև 7 կանգուն բարձրությամբ բազմաթիվ կոփածո վիշապներու դյուտը ավելի ևս խոնարհեցնելու կոչված է պատմահոր քննադատները: Պր. Ն. Մառ այս տարվան հուլիսի վերջերուն կատարած արշավանքի ժամանակ այդ հսկա վիշապներեն շատերը լուսանկարեց, և հուսալի է, որ շուտով անոնք լույս կտեսնեն:

Համաշխարհային հռչակ ստացած Անիի մասին մեր 10–14-րդ դարերու պատմագիրներ հակիրճ տեղեկություններ միայն տված էին. սակայն այդ տեղեկությունները կատարյալ առասպելի գույն ստացեր էին քննադատներու դրչի տակ մինչև այսօրվան բազմակողմանի լուրջ հետազոտություններ կատարվիլը, ուրկե երևաց, որ սակավախոս հայ պատմագիրներու գրածները ոչ միայն առասպել չէին, այլև, համեմատելով իրականին հետ, գրեթե ոչինչ չէին գրած անոր մասին:

Մեր օրերուն հայ և օտար ճանապարհորդներու կողմանե ամբողջական հայոց պատմութենեն ավելի ընդարձակ գրականություն մը ստեղծվեցավ միայն Անիի անունով. այնուամենայնիվ այդ ամենը դեռ սկիզբն է 10–14-րդ դարերուն Շիրակի մեջ զարգացող բարձրագույն քաղաքակրթության պատկերը ցույց տալու համար: Ասիկա մեզի աքանչելի դաս մըն է սորվելու համար, թե՝ առանց մնացորդ հիշատակարաններու ուսումնասիրության, ոչ միայն անկարելի է հայ ազգի դարավոր անցյալը ճանչնալ, այլև անկարելի է նույնիսկ մեր ձեռքը եղած աղքատիկ պատմագրություններն ալ լիովին հասկնալ:

*
* *

Հայոց պատմությունը աշխարհական և քաղաքականե ավելի եկեղեցական ըլլալուն բնական պատճառներ շատ կան: Ուրիշ տեսակ ալ չէր կրնար ըլլար քանի որ քրիստոնեությունը Հայաստանի մեջ ընդհանրական կրոն հռչակված օրեն ավելի միահեծան տիրապետողներ եղան կրոնական գլուխները, քան աշխարհական վարչապետները:

Եթե Տրդատ պահ մը ինքնակամ հաճությամբ, Գրիգոր Լուսավորիչը բացարձակ տեր դարձուց արքունի գանձին և զինվորական զորության, անկեց հետո եկող հայրապետներուն համար անդիմադրելի պահանջ դարձավ վարչական և տնտեսական գործերու մեջ ալ գերիշխան դիրք ձեռք բերելը: Հոգևոր և մարմնավոր պետերու գերակշռության մրցումը տևեց մինչև Հայուն կատարյալ քաղաքական անկումը, որ եթե չըսեմ ավելի, գեթ հավասար չափով նպաստեց երկրի կազմալուծման՝ ինչպես ներքին տոհմային կռիվները և արտաքին թշնամիներու հարձակումները:

Տարաբախտաբար, այս պայքարին մեջ հոգևորականությունը ավելի հաղթական դուրս կուգար միշտ՝ ի վնաս աշխարհային կազմակերպության. անիկա հոգվո փրկության և հավիտենական կյանքի երանության դրոշակին տակ ավելի շատ զինվորված ժողովուրդ գտավ, քան զահակալն ու իշխանը երկրավոր վաղանցիկ կյանքի վայելման անունով: Բնականաբար, աշխարհական վարչապետներ՝ անթև անթիկունք մնացած՝ պիտի զրկվեին թագեն ալ, գահեն ալ:

Քանի մը հեռատես գահակալներ, հոգևոր և մարմնավոր իշխանությունները արքայական թագի տակ ի մի ձուլելուն մեջ գտան իրենց երկրին ապահովությունը, սակայն այդ բանը չհաջողեցավ հայերուն համար, և կատարված փորձերն ալ եղերական վախճան ունեցան շատ անգամ:

Կղերին ի՞նչ հոգն էր, թե երկիրը անկախ էր կամ ստրուկ. անոր նշանաբանն էր տիրել ժողովուրդին հոգվույն, սրտին և ստացվածքին, և փոխարեն ինքն ալ հավիտենական անմահության դռները պիտի բանար անոր առջև: Կղերին հայացքով, ազգը այն ատեն երջանիկ էր, երբ եկեղեցին հարուստ էր, անոր հոգևոր պաշտոնությունը լիառատ վարձատրված էր: Գիտություն և գեղարվեստ միմիայն եկեղեցվո փառաց համար պետք էր որ զարգանային: Եկեղեցին պետք էր որ ներսով ու դրսով պճնվեր շարժական և անշարժ թանգագին զարդարանքներով և այդ ամենուն մեջ քահանայապետին թագակիր գլուխը միայն արժանի էր փայլելու՝ ժողովուրդեն, ազնվականեն, իշխանեն և թագավորեն ալ բարձր:

Եկեղեցվո և եկեղեցականության բարձրագույն հեղինակությունը ապահովելու միակ միջոցն էր քարոզել աշխարհականին, որ անիկա հրաժարվի բոլոր աշխարհային վայելքներե. ճշմարիտ քրիստոնյային վայել չէր առատ ու փարթամ կյանք վարել. հոգի առուել էր քան զմարմին և մարմին քան զհանդերձ:

Այս քարոզները երբեմն այնքան խոր ազդեցություն ունեցան միամիտ ժողովուրդին վրա, որ մինչև անգամ թագավորներ ու իշխաններ եղան, որոնք բավական չհամարելով իրենց չինած վանքերն ու եկեղեցիները և անոնց անունով նվիրած ահագին եկամուտները, իրենք ալ կրոնավորվելով վանքերը քաշվեցան հպատակ ժողովուրդը բախտին ու ճակատագրին հանձնելով: Այս ամենը եթե օգուտ մը ունեցավ, որ անուրանալի է, այն ալ եկեղեցական ճարտարապետության վերին աստիճան զարգանալն է՝ թեև քաղաքական անկախության զոհաբերությամբ գնված:

Կարելի չէ գտնել բնական զարհուրելի աղետ մը կամ քաղաքական կորստաբեր հոսանք մը, որ ժողովուրդին ծովացած մեղքերուն չվերագրեն մեր կղերական պատմագիրներ: Երկրաշարժ, հրաբուխ, լուսնի և արեգական խավարումներ, փոթորիկներ, երաշտ, մուկ, մարախ և ասոնց հետևանոք սով ու համաճարակ, աստվածառաք պատուհասներ էին, որ աշխարհ կուգային մեղավոր ժողովուրդը արդարությամբ պատժելու համար: Սուր, թալան և գերություն նույնպես անքավելի մեղաց պատիժներ էին, որոնց դեմ կռվելու և ապահովելու միջոցը խունկ, աղոթք ու պատարագն էր: Ալփասլանի՝ Անին պաշարած ժամանակ հազար և մեկ եկեղեցիներ պատարագներով զինվեցան թշնամվույն դեմ...:

Ի՞նչ էին հայ ժողովուրդի այդքան ծանր պատուհասներու արժանի մեղքերը, այդ կգտնենք անոնց մեղադրական դատավճիռներուն մեջ: Մեծամեծ չքեղ ապարանքներու մեջ բնակիլ, փափկաճաշակ կերակուրներով և ըմպելիքներով սնանիլ, մետաքսեղեն և ոսկեթել կերպասներով պճնազարդվիլ, անուշահոտ յուղերով օծվիլ, ծաղկանկար պատշգամներու և մահճակալներու մեջ պառկիլ, ահա մեղքեր, որոնք աստվածային բարկությունը կշարժեին հավատացյալին դեմ:

Այս կծու մեղադրանքներու տարափը ամեն ոք դյուրավ կտեսնա մեն մի պատմագրաց մեջ, յուրաքանչյուր անգամ աղետ մը կամ փորձանք մը պատմելու ժամանակ. և այս բնական ու անբնական պատուհասներեն ազատելու համար կհորդորեին հնազանդություն աստվածային օրինաց – սիրել թշնամին, հնազանդություն հոգևոր իշխանության, սիրել հավիտենական կյանքը:

Անին, երբեմն շռայլության, փարթամության և զեղխ վայելչասիրության այնքան մեծ համբավ հանեց, որ անոր ի տես զարհուրած մեր հոգևորականությունը, այս նոր Նինվեին նոր Հովնան մը խրկեց հանձին Պլուզ Հովհաննես վարդապետի, դարձ և ապաշխարություն քարոզելու համար:

Որքան պերճախոս էին այս մեղադրական վկայությունները և ի՞նչ խտացած գույներով կպատկերացնեն պատմական հայուն բարձրագույն քաղաքակրթությունը, որ գրեթե ոչնչով չի տարբերիր մեր այսօրվա կյանքեն: Տարբերությունն այն է միայն, որ հիներուն մեջ մեղք էր, իսկ այժմ անհրաժեշտ պահանջ:

Իրաց այս վիճակի մեջ մեր հոգևոր փրկության առաջնորդ պատմագիրներ այդ շռայլ ու փարթամ կյանքը բնավ չէին կարող քաղաքակրթություն համարել և պատմության նյութ չինել: Չէին կարող նաև մտածել, թե փառասիրությունը, վայելչասիրությունը այնպիսի շարժիչ ուժեր են, որոնցմով արհեստավորները կմղվին դեպի կատարելություն, և արհեստներու կատարելագործությունը հառաջ կբերե տնտեսական կյանքի բարվոքում:

Այնուամենայնիվ մխիթարական փաստեր շատ կան, որ եթե հայ շինականը և ամբոխային դասակարգը հլու ստրուկ էր կղերին, սակայն ազնվականն ու իշխանը շատ դժվար ենթարկվեր են դեպի խավար և անկում առաջնորդող քարոզներու: Բոլորովին ոտքի տակ չեն տված կղերին արժանապատվությունը, և կամ չեն կարողացած արհամարհել անոր ետևը կեցող ամբոխային ուժը, ուստի առատ նվիրատվություններով, անդադար վանքեր ու եկեղեցիներ շինելով՝ չափավորեր են անոր սուր պահանջները, և իրենք շարունակեր են ապրիլ իրենց սրտին ուզածին պես, որուն անվիճելի արդյունքը կտեսնենք մեզ հասած բերդերու, ապարանքներու, ոսկեղեն, արծաթեղեն զարդերու, և ընտանեկան գեղակերտ սպասներու ջարդ ու փշուր բեկորներու վրա:

Թե շատ անգամ մեր պատմագիրներ կամավորապես ծածկեր են աշխարհաշեն թագավորներու և իշխաններու քաղաքակրթական կյանքի մեջ ունեցած մեծամեծ առավելությունները, այդ մասին գեղեցիկ փաստ մը, արժանահավատ պատմագրական իրողություն մը մեջ կբերեմ, որով կարելի է ըմբռնել, թե մեր պատմագիրներ ինչպե՞ս կդատեին երևույթները և ի՞նչ կհասկնային պատմություն ըսելով:

Մեր նախնիք շատ քիչ թագավորներու պարտական են այնպիսի խաղաղ ու երջանիկ օրեր, որպիսին ունեցան Գագիկ Ա. Բագրատունի թագավորին օրով: Ստեփաննոս Ասողիկ ժամանակակից պատմագիրը, այս թագավորին բոլոր աշխար-

հաշինությունները, բարոյական ու ֆիզիկական բոլոր առավելությունները երկու բառով ակամա խոստովանելեն հետո, հայտնապես կհրաժարի անոր գործունեության մանրամասնությունը նկարագրելե, որովհետև անիկա մեծ մեղք մը գործած էր:

Զի էր (Գագիկ Ա.) և վարժ ի պատերազմի, և առատաձեռն ի բաշխելն, և զրաժ հարկաց յոլովից տեղեաց ազատեաց, և զկիւրակէիցն ցայգապաշտօն սաղմոսերգութեամբ կատարէր: Ասաղ վասն միոյ չարին որ արգել զքան զովեստի պատմութեան իմոյ:

(Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, երես 356):

Ինչ էր Գագիկի մեղքը, այդ չի բացատրեր. բայց կասկած չկա, որ Գագիկ երբեք ազգին դեմ չէր մեղանչած: Անպայման եկեղեցվո կամ հոգևորականության դեմ գործած էր այդ մեղք, որուն պատճառավ Ասողիկ խորապես վշտացած վրեժխնդիր եղեր է անոր առավելությունները ապագա սերունդեն ծածկելով: Բայց այդ քանի մը տող վշտի արտահայտություններն ալ բավական մեծ գովեստներ են Գագիկ Ա-ի հասցեին: Թեև այսօր առանց անոր ալ բահն ու բրիչը ավելի շատ բան պատմեցին Գագիկի համար, քան ինչ որ պիտի կրնար գրել Ստեփաննոս Ասողիկ:

Միևնույն դառնությունով լեցված է Ասողիկ Գագիկի եղբոր՝ Սմբատ Թագավորի դեմ, հարևանցի կերպով ակնարկելով, թե Սմբատի ժամանակ ոչ մեկ թշնամի չէր համարձակած երկրին խաղաղությունը վրդովելու, մանրամասն կնկարագրե անոր գործած մեղքերը, որոնց մեջ ամենեն մեծը և ամենեն ծանրը իր քրոջ աղջկան հետ պսակվիլն է:

Բովանդակ հայոց պատմության մեջ 5-րդ դարը միակ շրջանն է, որուն մեջ հոգևորականությունը մեծ մասամբ ազատ է ուրիշ դարերու դատապարտելի ուղղութենեն: Գիր, գրականություն, լեզու, ազգային ինքնուրույն կյանք, նույն դարուն մեջ ծագող քանի մը գիսավոր աստղերու կպարտինք, զինված՝ խավարի ու տգիտության դեմ, մեկ սիրտ մեկ հոգի եղած ժողովուրդին հետ, արյան գնով գոյության կռիվը մղեցին ներքին և արտաքին վտանգներու դեմ: Այն դարուն քանի մը հազվագյուտ եկեղեցականներու կանգնած ամրակուռ շենքն է, որ դարերե ի վեր կուրծք կուտա ամեն տեսակ հարվածներու և կործանարար փոթորիկներու: Անցավ այն Ոսկեդարը, ու այլևս չվերադարձավ:

*
* *

Մինչև այստեղ նպատակս էր ընդհանուր գծերով ցույց տալ, թե ի՞նչ պատճառով հայոց հին մատենագրության մեջ տեղ չեն բռներ հայ ճարտարապետության և գեղարվեստի մասին ընդարձակ տեղեկություններ: Այժմ կուզեմ ցույց տալ քանի մը փաստեր, որոնց պատճառով ներկայիս ալ հայ գեղարվեստի ուսումնասիրությունը ենթակա է գիտակցաբար կամ անգիտակցաբար խեղաթյուրվելու:

Այս տողերուս առիթ կուտա նորագույն հրատարակություն մը, որուն մեջ, տարիներ առաջ քանի մը հեղինակներու կողմե արձանագրված պատմական և նկարագրական սխալներ կրկնվելե զատ, կտեսնվի նաև, թե հեղինակը խիստ սակավաթիվ նյութերու վրա ստիպվեր է դատողություններ ընելու և եզրակացություններու հանգելու համար միտքը չարչարել:

Նոր հրատարակության անունն է Manuel d'art byzantin. Հեղինակն է Charles Diehl, տպված է Փարիզի մեջ 1910 թվականին:

Մասնավորապես երկու հոդված նվիրած է հեղինակը հայ-վրացական արվեստներու ուսումնասիրության, որոնց մեջ առավելագույն տեղը բռնած է հայոց արվեստը:

Իհարկե շատ քիչ են այդ երկու գլուխները, տասնյակ դարաշրջաններ ապրող, նորանոր վերածնություններով զարգացող և իր ետևը անհամար կոթողներ ձգող արվեստի մը համար: Սակայն դարձյալ շատ գոհ պետք է ըլլանք, որ այդքան սակավաթիվ և մեծ մասամբ աննպատակահարմար աղբյուրներով ալ, հեղինակը կարողացած է մինչև հիմա հայ արվեստի շուրջը հայտնված կարծիքներեն տարբեր նոր եզրակացություններու հասնիլ, որուն մեջ շատ քիչ ունի իր նախորդները. նույնիսկ իր հինգ տարի առաջ հայտնած կարծիքներեն ալ մեծապես կզանազանին իր այժմյան կարծիքները:

Ուրիշ կարևոր աշխատություն մը հրատարակած է 1905-ին, որուն մեջ խոսելով բյուզանդական արվեստի արտաքին ազդեցություններուն վրա, կըսե թե՝ L'Armenie et la Géorgie sont remplies d'édifices de style byzantin, de monuments incomparables de l'orfévrerie et de l'émaillerie byzantines (Charles Diehl. Etudes byzantins, Paris, *1905*, էջ *172*):

Այս խոսքեն կերևա, որ հեղինակը այն ժամանակ Հայաստանի գեղարվեստը պարզապես բյուզանդյան համարած էր:



Սակայն դեռ 1907 թվին սկսեր էին անոր հայացքները փոխվիլ նորանոր փաստերու առջև: Այս թվականին Փարիզի Սորբոնի Turgot անվանված դասարանին մեջ բյուզանդական ճարտարապետության մասին կատարած դասախոսության մը ժամանակ պարզեր էր իր նոր հայացքները, որոնք ժամանակին հրատարակվեցան Բասմաջյանի խմբագրությամբ լույս տեսնող «Բանասեր» հանդեսին մեջ: Նախապես այդ կարծիքներեն քաղված մ՝ ընել ավելորդ չեմ համարիր.

«Ի ընե ուշիմ, խելացի և շինող ժողովուրդ մը եղած է հայ ազգը. չնայելով իր քաղաքական աննպաստ դիրքին, որ ամեն ատեն ամեն ազգերե հարձակումներ կրած է դրացի թշնամի և ոչ քրիստոնյա ազգերեն՝ որոնք ավերած, քանդած ու փլուցած են իր կառուցածները: Չնայելով իր այս անխաղաղ վիճակին, այս ազգը միշտ պահած է իր ինքնուրույնությունը, մինչև որ բաժանված է երեք պետություններու միջև:

«Իր ավերակներուն մեջ նշմարված կիսափուլ շենքերը, կամ իր հին ճարտարապետական և վերջերը նորոգված նմույշները, իրենց բյուզանդական ոճի նմանությամբ, արժանի կընեն մեր բյուզանդական ճարտարապետության դասերուն մեջ ուսումնասիրելու, ինչպես նույն ազգը, այնպես և իրեն գեղարվեստային ճարտարապետական ոճը:՝

«Այս շենքերը՝ տարածված Հայաստանի այս այն կողմերը, որքան որ բյուզանդական ճարտարապետության ոճին կնմանին, սակայն իրենց առանձնահատուկ սեփական նիշերով բոլորովին կտարբերին անոնցիներեն, և այսպես ճարտարապետական ոճերու շարքին վրա կավելցնեն նաև խիստ հետաքրքրական ոճ մը «հայկական արվեստ» (l'art arménien) անունով»:

Իրեն ծանոթ քանի մը հայկական եկեղեցիներու նկարագրությունը ընելե և անոնց բնորոշ հատկությունները բացատրելե հետո կշարունակե.

«Ուրեմն հայկական եկեղեցիներու սույն ճարտարապետական ձևերն իրենց բնածին, հատկանշական և առանձնահատուկ նկարագիրներով իսկ շատ կնմանին բյուզանդական ճարտարապետության, քան ուրիշ ազգերու ճարտարապետական ոճերուն: Թե արդյոք սույն նմանությունը պատմակա՞ն է, թե՞ փոխանցում, այս հարց մ՚է, որ լուծելու համար գիտնականներ բավական զբաղած են:

«Ոմանք կարծած են, թե հայկականը նախատիպ եղած է գոթական ոճին. այս հավանական է, զի հայ ազգի այն ճարտարապետական նմույշները հաստատապես կհամոզեն մեզ, թե հայ ժողովուրդը ավելի շինող, ստեղծող եղած է, իր քանդակները, իր գմբեթներու այնքան բնականորեն մույթերու վրա հաստատվիլը և ուրիշ իր սեփական հատկանիշները օրինակ և փաստեր են իր ուշիմության և ինքնաստեղծության»:

Վերջին հրատարակության մեջ (Manuel d'art byzantin) քանի մը քայլ ավելի հառաջ կերթա հայ արվեստին ինքնուրույն զարգացումը և անոր օտարներու վրա ունեցած ազդեցությունը ճանչնալուն մեջ. հիացմամբ կդրվատե հայ ճարտարապետներու գերազույն հմտությունը և քաղաքակրթությունն ու գեղարվեստ տարածելու մեջ հին դարերուն անոնց կատարած մեծ դերը:

Սակայն, դժբախտաբար, ուրիշ աղբյուրներե քաղած թերի և հակասական տեղեկությունները վատ ազդեցություն ունեցեր են իր եզրակացություններուն վրա: Անոր մեծ մասամբ ծանոթ չեն հայոց 7-րդ դարեն առաջ կանգնված հիշատակարանները: Ասկե զատ, իրեն օգտված աղբյուրներու մեջ այնպիսի հիշատակարաններու անուններ և պատկերներ կան, որոնք անպայման 7-րդ դարեն առաջ են, սակայն նույն աղբյուրներու հեղինակները զանազան թյուրիմացություններով և կամ նվազ հետաքրքրության պատճառավ ժամանակագրական սխալ տեղեկություններ արձանագրած են անոնց մասին: Ահա այդ սխալ տեղեկություններեն հառաջ եկեր է Ch. Diehl-ի ալ մեկ թյուր կարծիքը, թե Էջմիածնի կաթուղիկեին՝ հատակաձևը միայն կպատկանի 5-րդ դարուն, իսկ վրայի շենքը կանգնված է 7-րդ դարուն:

Ինչպես իր նախորդներուն, նույնպես ալ Ch. Diehl-ի ուսումնասիրության մեջ հայոց 10-րդեն մինչև 14-րդ դարու ճարտարապետությունը մեկ ոճ է. մինչդեռ 10–11-րդ դարերու ոճեն անկախ նոր վերածնություն է 12–14-րդ դարերու ոճը, հին ոճեն ավանդական գծեր միայն պահելով իր մեջ. ասիկա արդեն ուսումնասիրելի նյութերու քիչության հետևանք է: Այսու հանդերձ պետք է խոստովանիլ, որ նախընթաց հեղինակներուն մեջ շատ հազվագյուտ են, որոնք կրցած են այսքան խորաթափանց կերպով զննել և ավելի բնորոշ դույն տալ հայ ճարտարապետական արվեստին:

Ահա թե ի՞նչպես նյութերու պակասություններ վատ ներգործություն կունենան լուրջ ուսումնասիրություններու վրա և ի՞նչպես կհավերժանան

այդ սխալները ականավոր գիտնականներու գրչին տակ, ճշմարտության գույն ստանալով:

Ch. Diehl-ի աղբյուրներեն մեկը եղած է Ստրչիգովսկին: Այս անվանի գիտնականը շատ սիրով փարած է Արևելքի պատմական արվեստներու ուսումնասիրության: Ունի մեծ գրական աշխատություններ, որոնց մեջ պատկառելի տեղ գտած են հին հայոց ճարտարապետությունն ու գեղարվեստը: Բացի զանազան հոդվածներե, ամբողջապես հայերենի թարգմանվեցավ անոր մեկ աշխատությունը – «Էջմիածնի ավետարանը» – Վիեննայի Մխիթարյանց միաբան հ. Բառնաբաս Պիլեզիկճյանի ձեռքով 1892-ին:

Այս աշխատության մեջ Էջմիածնի վերաշինության մասին խոշոր սխալներ մտեր են, որոնք սկսեր են հաստատուն ճշմարտություններ դառնալ: Այս և ասոր նման սխալներ, եթե ոչ մշտնջենապես, գոնե երկար ժամանակ, հայ արվեստի պատմության լուսաբանության համար չարագուշակ հետևանք ունենալին անխուսափելի է:

«Էջմիածնի ավետարան»-ին թարգմանիչը անպայման պետք էր որ լավ գիտնար և հասկնար Ստրչիգովսկիի ակամա սխալները Էջմիածնի վերաշինություններու և նորոգություններու մասին: Բայց գոնե թարգմանության մեջ առանձին ծանոթությունով մը այդ սխալները ուղղելու բարեհաճությունը չէ ունեցեր:

Այստեղ կդնեմ Էջմիածնի մասին Ստրչիգովսկիի տեսությունը հ. Պիլեզիկճյանի հայերեն թարգմանությենեն առնելով, ուր պիտի տեսնվին թե՛ հեղինակին կարծիքները և թե՛ այլայլված տեղեկությունները, ճշգրիտ տեղեկություններուն հետ համեմատելով.

«Էջմիածնի հիմնարկու կհամարվի նույն ինքն ս. Գրիգոր Լուսավորիչ, ըստ ավանդության՝ Տրդատա դարձեն ետքը. ուրեմն 302-ին եկեղեցվո հիմնաքարը դրավ այն տեղն, ուր արքունի պալատան քով Արտեմյա գլխավոր մեհյանը կանգնած էր, և ուր Միածինն երևեցավ իրեն: Այս արդի շինվածին վրա, որ հայտնապես նոր շինություն է ըստ էական մասանց, այս հնագույն հիմնարկության մնացորդները գտնել ջանացած են ոմանք, որոնց մեջ ամենեն հառաջադեմ եղավ Դյուբուա: Այս գիտնականը չէ թե միայն մյուս ճարտարապետաց պես հանձն առած է հիմնական որմունքն այն հնագույնները կարծելու, այլև հնագույն եկեղեցին վերակազմելու ջանացած է, որ բոլորովին կամայական է, ինչպես նաև այն հետևությունը, թե որովհետև ի բովանդակ Հայս միայն ասոր վրա հունական ազդեցություն կկարծե տեսնել, այս շենքը Տրդատա ժամանակի շինությունը ըլլա, որ Հռոմ սնած ըլլալով, հռոմեական շինության ձևեր մուծանելու ջանացած է կըսե...:

Եվ այսպես, բովանդակ հատակագիծը, ի բաց առյալ հյուսիսակողման, հարավակողման և արևմտյան կողակաց ընիկ հայկական ձևը, բոլորովին համեմատ է բյուզանդական գմբեթավոր եկեղեցյաց առաջին կաղապարին, որ Հուստիանու ժամանակ սկսավ գործածվիլ:

Բայց այս հատակագծին, որ հավանականագույնս հնագույն շինվածքե մնացած է, չի վերաբերիր արևմտյան կողմի կարմիր պորփյուրանման քարե շինված զանգակատունը, որ 1654–ին շինված ավելցված է: Նաև եկեղեցվույն հիմեն վեր եղած շինվածքը նոր է բոլորովին, վասնզի Շահաբաս 1604-ին եկեղեցին ու վանքը կործանեց և փլատակները Սպահանու մերձակա Ջուղա գյուղը տարավ, որ նոր եկեղեցի մը շինվի: Մովսես վարդապետ, որ ետքեն կաթողիկոս եղավ, նորոգեց 1627-ին ավերակները: Իր հաջորդը Փիլիպպոս շարունակեց գործը, զոր 1682-ին լրացուց Եղիազար կաթողիկոս: Այս ժամանակեն ետքը դույզն փոփոխություն եղած են միայն»:

(Հով. Ստրչիգովսկի. Էջմիածնի ավետարանը:- Ուսումնասիրություն հայկական, ռավեննական և ասորա-եգիպտական գեղարվեստի: Թարգմ. հ. Բառնաբաս վարդ. Պիլեզիկճյան: Վիեննա, 1892, երես 3–4):

Էջմիածնի վերջին անցքերու տեղեկության աղբյուրներն են Առաքել վարդապետ Դավրիժեցվո Պատմությունը և Հովհ. եպ. Շահխաթունյանի «Ստորագրություն կաթողիկէ Էջմիածնի» անուն գիրքը, բայց ասոնց մեջ այնպես չեն պատմված իրողությունները, ինչպես որ լսեր է Ստրչիգովսկին:

Ստրչիգովսկիի համար ներելի են այդ խեղաթյուրումները՝ քանի որ ինքը հայերեն չգիտեր վերոհիշյալ երկու աղբյուրները անձամբ ուսումնասիրելու համար. այս պարագան դատապարտությունը կմնա տեղեկատուին, որ տգիտաբար մոլորության մեջ է ձգեր գիտնականը: Թեև Ստրչիգովսկի ինքն ալ բոլորովին մեղադրանքե ազատ չէ կարող ըլլալ, որ, հիմնվելով իր տեղեկատուին տված մանրամասնություններուն վրա, չէ հետաքրքրվել Էջմիածնի տաճարը արվեստագիտորեն քննելու և բոլորովին իզուր մեղադրել է Դյուբուայի նման բարեխիղճ գիտնականին, կամայական համարելով անոր կատարած հին ձևի վերակազմությունը: Եթե լուրջ ուշադրությամբ քննած ըլլար, անպայման պիտի տեսներ և համոզվեր, որ ոչ միայն Շահաբաս հիմնահատակ չէ ըրած, այլ մինչև 5-րդ դարու շինությենեն ալ մասեր մնացած են պատերուն մեջ:

(Այս մասին ավելի ընդարձակ բացատրություն տեսնել իմ «Էջմիածնի տաճարը» աշխատությանս մեջ: Տպագր. Թիֆլիս, 1910, երես 3–5) [Ներկա ժողովածուի 3-րդ մաս]:

Թեև Շահաբաս մտածեր է պահ մը Էջմիածինը ամբողջովին քանդել և անոր քարերով նոր Էջմիածին շինել Պարսկաստանի Ջուղա քաղաքին մեջ, որպեսզի հայոց սերը Հայաստանեն կտրելով՝ Պարսկաստանի հետ կապե, սակայն որևէ պատճառներով այդ նպատակը անիրագործելի մնացած է: Ես այդ պատճառներուն վրա առանց կանգնելու կքաղեմ Առաքել պատմագրի տաճարին քանդվելուն և վերաշինություններուն վերաբերյալ հատվածները.

«Իսկ Թահմազ Ղուլի խանն՝ յետ Լուսաւորչի աջոյն առաքելոյ, բազում ջանիւ հոգայր զքարինսն առաքել, վասն որոյ ինքն յոլովուք զօրականօք գնաց ի սուրբ Էջմիածին և զնշանաւոր քարինսն Էջմիածնի քակեալ հանին ի տեղւոյն, որք են այսոքիք. սուրբ սեղանն յորոյ վերայ պատարագն սուրբ մատչէր, և այս սեղանոյս սիւնն. Քրիստոսի իջման տեղեաց քարն, աւազանն. մէկ քար ի կողման հարաւային աստիճանի բեմին, մէկ քար ի կողման հիւսիսայնոյ աստիճանէ բեմին, վասն զի աւագ բեմի աստիճանքն յերկուց կողմանց են՝ ի հիւսիսոյ և ի հարաւոյ. չորս քար ի չորից անկեանց եկեղեցւոյն, ի դրուց կողմանէ. երկու քարէ մոմդան [աշտանակ] որ մեծ իւղաբերից մոմ դնեն ի մէջն և վառեն, երեք այլ ուրիշ քարինք ի սալայատակ քարանց բեմին, ընդ ամեն տասն և հինգ քար»:

(Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ: Վաղարշապատ, 1896, գլ. ԺԵ. երես 212):

Ինչպես կտեսնվի Առաքել պատմագրի այս հատվածեն, Շահաբաս բավականացեր է տասն և հինգ քար միայն քանդել տալով: Իսկ ինչ կվերաբերի Մովսես վարդապետի նորոգության, դարձյալ կարելի է տեսնել նույն Պատմության ԻԴ գլուխին մեջ, որ Շահաբասի արշավանքեն հետո ալ կանգուն էին եկեղեցվո պատերը, անվնաս էին պատուհանները՝ միայն առանց վանդակի, դրսի կողմեն քանդված էր տանիքի սալահատակը, պատերեն քարեր էին թափած, գմբեթին գլուխը վնասված էր:

«Եւ մեծամեծ լուսամուտքն զոր ունի, ամենն ի բաց կայր առանց վանդակի... իսկ յարտաքուստ կուսէ գլուխ կաթողիկէին և տանիքն ամենայն և երեսք որմոցն քանդքանդեալք և քարինքն թափեալք և որմոց յատակաց վէմքն փշրեալ և ծակոտեալ»:

Հետո առանձնապես ցույց կուտա եկեղեցվո նորոգված մասերը:

«Յետ այսորիկ եկեղեցւոյ գմբէթի տանիքն նորոգեցին, քանզի սալերն քանդեալ և ի տեղւոյն ի բաց ոստեալք էին»:

Եկեղեցվո այս կանգուն դրությունը Շահաբասի արշավանքեն հետո, տեսավ նաև Տեկտանդեր գերմանացի ուղևորը 1604 թվականին, որուն մասին հ. Ղ. վ. Ալիշան կգրե իր «Այրարատ» երկասիրության մեջ.

«Եւ խնդրեալ [Տիկտանդեր] հրաման ի շահէն՝ եկն ի քննին Էջմիածնի, զոր և ասէ ի Թուրքաց կոչիլ [Իւչ քիլիսէ] երեք եկեղեցիս հինս, երկուքն աւերեալք, մեծագոյնն չէն և երբեմն մեծ ուխտատեղի»:

(Հ. Ղ. վ. Ալիշան, «Այրարատ», երես 232):

Ասոնցմե հետո եղած շինություններ բացառապես կվերաբերին զանգակատան, որն որ Փիլիպպոս կաթողիկոս հիմնարկեց 1654 թվին. սակայն հազիվ թե գետնահարկի չորս մույթերը միացնող աղեղները նույն տարին կապված էին, ձմեռը վրա հասավ, և գարնան ալ Փիլիպպոս կաթողիկոսը վախճանեցավ:

Որովհետև Փիլիպպոս կաթողիկոս զանգակատան հիմնարկությունը կատարած էր առանց Երևանի խանին հաճության, իր [Փիլիպպոսի] մեռնելեն հետո խանը արգելք եղավ շինության շարունակությանը՝ մինչև իրեն պաշտոնանկ ըլլալը: Հաջորդ խանի օրով Հակոբ կաթողիկոս հրաման ստացավ և շինության շարունակությունը սկսան 1657 թվականին հուլիս ամսուն: Շինության վերջավորության մասին ալ հետևյալն է Առաքել վարդապետի գրածը.

«Եւ եղե կատարումն զանգակատանն ՌՃԷ (1658) թուին և ի տօնի խաչվերացին օրհնեցին զխաչն որ ի գլուխ զանգակատանն և քակեցին զիսկալէն: Արդ ստոյգ պատմութիւն զանգակատանն այս է, թէպէտ ի վերայ նորին գրեալ թուականքն այլապէս են»:

(Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ. գլ. ԻԵ երես 341):

Գալով Եղիազար կաթողիկոսին 1682 թվականին կատարած շինություններուն, անիկա ավելցուցեր է արտաքուստ երեք abside-ներու վրա եղած երեք փոքրիկ զանգակատունները և ներսեն հարավային abside-ին մեջի պատարագի սեղանը:

(Յովհ. եպ. Շահխաթունեան, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի, հատ. Ա, 1842, երես 29):

Միայն պետք է գիտնալ, որ Մովսես կաթողիկոսի օրով թեև ցույց տրված է, թե գմբեթի արտաքին երեսեն քարեր թափած էին և կաթուղիկեին գլուխը միայն քանդված էր, սակայն գմբեթի շինության ոճը ցույց կուտա, որ եթե ոչ ամբողջ գմբեթը, գոնե թմբուկի արտաքին երեսը շուրջանակի նոր ճաշակով նորոգված է, որով ստացեր է այսօրվան պատկերը. բայց թե իսկապես Մովսեսի գո՞րծն է, թե՞ հետագա կաթողիկոսներեն մեկուն, այդ մասին առայժմ ոչինչ չեմ կարող վճռել:

Այժմ համեմատելով այս ստույգ տեղեկությունները Ստրչիգովսկիի տված տեղեկություններու հետ, կտեսնվի, թե անոր տեղեկատուն ի՞նչ անհեթեթ սխալներու մեջ ձգեր է զինքը, որոնց վրա հիմնված՝ ինքն ալ սխալ եզրակացություններու հասած է:

Ափսո՜ս, որ Ստրչիգովսկի իր տեղեկատուին անունը հիշատակելու բարեհաճությունը չէ ունեցեր, որպեսզի այդ կարգի տեղեկատուներ հրապարակավ ստանային իրենց արժանավոր վարձատրությունը:

Ստույգ է, որ էջմիածնի տաճարին պատերը շատ նորոգություններու ենթարկվեր են, սակայն նախնական 5-րդ և 7-րդ դարերու շինություններեն այնպիսի մասեր մնացած են, որոնք հստակ կերպով կարդարացնեն իրենց վրա նույն դարերու ոճերը, և այդ մասերու քննությամբ շատ բան կպարզվեր Ստրչիգովսկիի նման հմուտ գիտնականին:

*
* *

Հուսալով, որ մեծ բավականություն կպատճառեմ պատմական հայ արվեստներով զբաղողներուն, այստեղ քաղվածորեն կդնեմ մեծանուն բյուզանդագետ Ch. Diehl-ի նորագույն տեսությունները, որոնք մինչև այսօր գոյություն ունեցող շատ մը կարծիքներ հեղաշրջելու բնությունը ունին: Իհարկե, նաև պիտի ավելցնեմ ուղղումներ հեղինակին ստացած սխալ տեղեկություններու մասին՝ իմ որոշ տեսություններով հանդերձ: Ասով թերևս առիթ ըլլա վերստին անդրադառնալու նույն նյութերու և ավելի լուսաբանվին անստույգ մնացած կետեր:

Ch. Diehl հայ ճարտարապետության շատ ինքնուրույն և անոր 7-րդ դարեն մինչև 10-րդ դար Հայաստանի միայն հատուկ բնորոշ գծեր տեսնելով հանդերձ, վարանման մեջ կմնա արտաքին ազդեցություններու մասին: Ուստի, պատմականորեն բացատրելով բյուզանդականի առավելագույն ներգործությամբ կազմված ըլլալը հավանական կհամարի, իբրև փաստ ներկայացնելով հայոց՝ Բյուզանդիայի հետ ունեցած սերտ հարաբերությունը և քանի մը կաթողիկոսներու ալ նույն դարերուն բյուզանդական կրթություն ստացած ըլլալը: Ա. հոդվածը կսկսի այսպես.

«Բայց եթե Բյուզանդիայի արվեստը 7-րդ դարու կեսեն հետո իր ծագում առած երկրին մեջ չվերանորոգվեցավ, սակայն իր ստեղծած մեթոդներու գերազանցությամբ դուրսը պահվեցավ անոր զորեղ ազդեցությունը՝ որ 6-րդ դարու սկիզբեն սկսած էր գործադրվիլ բոլոր քրիստոնյա երկիրներու մեջ: Հռոմը Արևմուտքի համար շուտով պիտի կազմեր անոր փայլուն օրինակները: Այս գործունեության մեկ ուրիշ ո՛չ նվազ ապացույցը կտեսնվի Արևելքի մեջ, Հայաստան: Հայաստան իր աշխարհագրական դիրքով շատ կանուխ մասնավոր ուշադրության արժանի վիճակի մը մեջ գտնվեցավ: Սյուրիայի, Միջագետքի և արևելյան Պարսկաստանի հետ հաճախ հարաբերություն պահպանելով, բնականաբար պետք էր որ անոնցմե օգտակար դասեր կառներ: Մյուս կողմանե Բյուզանդիայի հետ քաղաքական սերտ հարաբերությունը զինքը հունական ազդեցության կենթարկեր: Քանի մը կաթողիկոսներ, որոնք 5-րդ և 7-րդ դարերու միջոցին հայոց եկեղեցին կառավարեցին, Բյուզանդիոնի մեջ կրթություն ստացած էին: Հուստինիանոսի ճարտարապետներն ալ բազմաթիվ շենքեր կանգնեցին Հայաստանի մեջ, որոնք կարող էին իբրև օրինակ ծառայել: Այս երկու երկիրներուն, Հունաց և Արևելքի իրարու հետ ունեցած շփումներեն պետք էր որ ծներ ինքնուրույն և հետաքրքրական արվեստ մը:

«Ապահովաբար այս արվեստը դեռ լավ ճանչցված չէ, և շատ քիչ հետազոտված, անոր շուրջը ծագած շատ մը խնդիրներ տակավին վճռվելե հեռու են: Այլ սակայն արժե, որ քննվի և աշխատվի որոշել անոր հատկությունն ու ծագումը: Ստուգիվ հայ շինողներ անհամեմատ կարող արվեստագետներ եղած են: Քարաշատ երկրի մը մեջ ապրելով, անօրինակ ճարպիկությամբ զարգացուցեր են քարահատության արհեստը: Իբրև անխոնջ ճանապարհորդներ և անդադար տեղափոխվողներ, շատ հեռու տարեր են իրենց մեթոդները: 9-րդ և 10-րդ դարերուն բյուզանդական արվեստի վերածնության վրա ոչ նվազ նշանավոր տեղ բռնելու կոչված էր Հայաստանի արվեստը»:

Այս ընդհանուր տեսությունեն հետո, հեղինակը սկսած է կարծիքներ հայտնել իրեն ծանոթ 7-րդ դարու քանի մը հայկական հիշատակարաններու վրա:

«Արդ, 7-րդ դարեն սկսյալ հայերը մեծ գործունեությամբ աշխատած կերևին, այս թվականներեն շատ մը հիշատակարաններ պահված են՝ հետնագույն նորոգություններով բավական այլայլված. սակայն անոնց մեջ հին հատակագծերը բավականին որոշ են և հնարավորություն կուտան ճարտարապետական ոճերու քննադատության»:

Էջմիածնի մասին խոսելով, շատ հետաքրքրական կգտնե անոր հատակաձևը. ճիշտ տեղեկություններ ունի 5-րդ դարուն կանգնված և 7-րդ դարուն նորոգված ըլլալուն վրա. սակայն, ինչպես կերևի, համոզված է, որ 7-րդ դարուն հիմն ի վեր նորոգված է 5-րդ դարու հատակագծին վրա: Ստրչիգովսկիի համակարծիք ըլլալ կթվի հատակագծին լուսավորչավանդ ձև ըլլալուն:

Հռիփսիմեի վանքին համար կրսե, թե՝ սա կներկայացնե կաթուղիկեին բոլորովին նման հատակագիծ մը. ինձ անհասկնալի եղավ, թե ինչո՞վ այդքան նմանություն գտած է հեղինակը էջմիածնի և Հռիփսիմեի եկեղեցիներուն մեջ: Հռիփսիմեի տասնվեց երեսանի գմբեթի վրա կտեսնե Գրիգոր Նյուսացու նկարագրած հռչակավոր ութանկյունի եկեղեցվո ոճը, սակայն կոնաձև ծածքին համար կարծիք կհայտնե, թե շատ հին ժամանակներե հետե ասիական ճարտարապետության հատուկ ոճ է:

Գայանեի վանքին ալ հատակագիծը նախնականը համարելով՝ մնացած մասերը 17-րդ դարու վերաշինություն կնկատե: Հակառակ ուրիշ շենքերու մասին ունեցած ժամանակագրական ստույգ տեղեկություններու՝ թյուրիմացության մեջ ընկեր է Գայանեի վանքի մասին:

Գայանեի վանքն ալ նորոգեր է Փիլիպպոս կաթողիկոս 1652 թվականին՝ ըստ արձանագրության. սակայն Առաքել Դավրիժեցին այս եկեղեցվո վիճակն ալ կնկարագրե նախքան Փիլիպպոս կաթողիկոսի նկարագրությունը և ի՞նչ մասեր նորոգված ըլլալը: Զորս պատերը և մեջի այուները կանգուն են եղած. փլած է եղեր տանիքը և գմբեթը, արտաքին պատերուն վրա մասնակի նորոգություններ միայն եղած են, որոնց շնորհիվ այսօր տակավին մեծ մասամբ կմնան 7-րդ դարու պատերն իրենց բնորոշ արհեստագործությամբ և ժամանակին հատուկ զարդաքանդակներով, պատուհաններով և պակներով: Ահավասիկ Առաքել վարդապետի վկայությունը Գայանեի վանքի 17-րդ դարու վիճակին և նորոգություններու մասին.

«Եւ յետ ամենայն շինուածոցն էջմիածնի, զոր սուրբ Հայրապետն Փիլիպպոս արար, այնուհետև ձեռն ի գործ էարկ զի և զտաճարս սրբուհի կուսանացն Գայիանեայ և Հռիփսիմեայ նորոգեսցէ...: Բայց սրբոյն Գայիանեայ կուսի տաճարն առաւել աւերեալ էր, զի տանիքն բովանդակ իջեալ էր, միայն շուրջանակի որմունք և չորեքին սիւնք կային կանգուն. գլուխն ի բաց և յատակք որմոցն ատ և անդ ծակոտեալ և խրամատեալ, որոց արար նորոգման սկիզբն կաթուղիկոսն տէր Փիլիպպոս, մեծարիզ կարօտիւ և ջանիւ և բազում գանձս ծախելով նորոգեաց գեղեցկաչէն ի հիմանց մինչև ցգագաթն գմբէթին»: (Առաքել վարդ., էջ 326):

Այժմյան շենքը դիտելով ալ շատ պարզ կտեսնվի, որ Գայանեի վանքին վրա նորագույն է միայն գմբեթը և արևմտյան կողմին կից չինված այունազարդ գավիթը: Այս գավիթն ալ 1688 թվականին չիներ է Եղիազար կաթողիկոսը:

Համեմատաբար ավելի հետաքրքրված է հեղինակը Զվարթնոց եկեղեցիով, գրքին մեջ դրած է թերի հատակագիծ մը, հավանականաբար Ստրչիգովսկիի մեկ աշխատութենեն արտատպված: Նկարագրական տեղեկություններ բավարար են, բայց տրամագծին երկայնությունը սխալմամբ 39 մետր գրված է. ուղիղ չափը պետք է ըլլա 35,75 մետր: Արևելյան կողմին կպած քառակուսի բաժանումը մատուռ է համարած, որ մատուռ չէ, այլ պարզապես սրբազան անոթներու և այլ եկեղեցական իրերու հատուկ պահարան. չգիտեմ, թե ի՞նք եզրակացուցեր է, թե՞ մեկ ուրիշին կարծիքով ղեկավարվեր է: Գալով իր մասնավոր տեսության, հետևյալ կարծիքը կհայտնե.

«Հիմնարկության թվականը կարելի է ճշդիվ որոշել: Այս եկեղեցին կանգնվեցավ Ներսես Գ կաթողիկոսի ձեռքով, որ գահակալեց 640-են 666, որուն փակագիր արձանագրությունները կան եկեղեցվո խոյակներուն վրա: Որովհետև, ըստ Սեբեոսի, այս Ներսեսը ի մանկութենե սնած էր հունական երկիրներու մեջ, սորված էր նաև բյուզանդացվոց լեզուն ու գրականությունը: Իրաց այս վիճակին մեջ, ամենայն հավանականությամբ, հույն վարպետներ գործածեց այս հիշատակարանին շինության ժամանակ: Սյուները կկրեն իրենց վրա կողովաձև խոյակներ հոնիական խոյողներով զուտ բյուզանդական: Բայց մյուս կողմանե հատակագիծը մաքուր արևելյան է և կկապվի ասիական և սյուրիական բազմաթիվ եկեղեցիներու հետ: Այս հատկությամբ և իր մեջ երևցող ազդեցություններու խառնուրդով, շենքը շատ հետաքրքրական է: Ստրչիգովսկիի կարծիքով, հայոց Լուսավորչի վկայաբանությունը արտաքո կարգի կարևորություն ունի արևելյան քրիստոնեից պատմության համար, հետևաբար նաև Արևմուտքի համար:

Անոր ներկայացուցած օրինակը հաճախ կրկնված կերևի, օրինակի համար Saint Laurent de Milan շատ մոտ նմանություն ցույց կուտա»:

Ստուգիվ Ներսեսի ստացած հունական կրթությունը և դեպի քաղկեդոնականություն ունեցած հակումը չէին կարող չազդել անոր ճաշակին վրա: Զվարթնոցի մեջ հայ ճարտարապետության զարգացման ընդհանուր ուղղութենեն չեղող օտար ոճերու խառնուրդներ շատ կան, այնուամենայնիվ անոր հատակագծի ընդհանուր ձևը և élévation-ի մեջ գործ դրված անօրինակ ծրագիրը տակավին եզական ըլլալ կթվի՝ միմիայն Հայաստանի համար, քանի որ նույն ծրագրով շինված նախորդ մը չէ երևցած ոչ մեկ երկրի մեջ: Ճիշտ է, որ Saint Laurent-ի հետ բաղդատելով, առաջին տպավորությամբ իրարու նման կերևին, սակայն երբ քիչ մը ավելի հառաջ տանինք բաղդատական քննությունը, տպավորությունը անհունապես կփոխվի: Saint Laurent եթե Զվարթնոցի նման կիսաբոլորակ վերջացած թևերով խաչաձև ներքին սյունազարդ բաժանում մը ունի, արտաքուստ ևս ներքին խաչաձևին զուգահեռաբար կրկնված է միևնույն խաչաձևը, որով շինարարական գործողությունը անհունապես կդյուրանա առանց ճարտարապետին որևէ մտահոգություն պատճառելու վտանգներու կամ արկածներու մասին: Մինչդեռ Զվարթնոցի մեջ արտաքին բոլորակը ներքին խաչաձևին հետ ձուլվելու և կրկնահարկի գմբեթով շենքը պսակելու համար ճարտարապետին գործ դրած հանճարեղ և նրբամիտ միջոցներուն քով շատ կփոքրանա Saint Laurent-ի ճարտարապետը: Պետք է մոտեն քննել և տեսնել, թե երկու տարբեր հատակագծեր իրարու մեջ պատշաճեցնելու համար ո՞րչափ ծանրության ճնշում սպառնացող կետեր հառաջ եկեր են Զվարթնոցի մեջ և ի՞նչ հեռատես միջոցներով ճնշումներե հառաջ գալիք վտանգը չեզոքացուցեր է անոր ճարտարապետը: Այնքան ապահով և հաստատուն շինված էր, որ առնվազն երեք հարյուր տարի կանգուն մնացեր է այդ շենքը, և վերջն ալ պեղումներու ժամանակ որոշ տեսնվեցավ, թե երկրաշարժով մը կործաներ է հանկարծ ճեղքվելով և չորս կողմին վրա համանման բեկորներ թափվելով: Թեև նշաններ ալ երևցան, որ նախքան երկրաշարժը, բարբարոս ձեռքեր պատերու ստորին մասերեն քարեր քանդեր էին, աստիճաններեն շատերը հաներ էին և շուրջը քանդակված մարդոց պատկերներու երեսները տաշեր էին: Այս պարագան ալ ոչ նվազ նպաստեր է հանկարծական փլուզման երկրաշարժի մը ժամանակ:

Հեթանոսական դարերեն սկսած մինչև մեր օրերը բազմաթիվ շենքեր կան կանգնված բոլորակ կամ խաչաձև՝ Արևելքի և Արևմուտքի մեջ: Սակայն այս երկու տարբեր ձևերու, այսինքն բոլորակի և խաչաձևի այնքան վայելչորեն և նրբամտորեն ի մի ձուլումը առայժմ կմնա իբրև հայկական ստեղծագործություն և միշտ պատիվ պիտի բերե շինողին ալ, շինել տվողին ալ և այդ տեսակ աքանչելիքներ կերտել գիտցող հազվագյուտ հանճարներ իր ծոցին մեջ զարգացնող ցեղին ալ:

Իսկ երբ հետզհետե գիտնականներ Էջմիածնի և Զվարթնոցի ներքինին նման խաչաձև հատակագծերու ծննդավայրը Հայաստանը ըլլալուն համոզիչ փաստեր կգտնեն, այն ատեն անգամ մը ևս Զվարթնոցի հատակագիծը զուտ հայկական ոճ և ստեղծագործություն ըլլալը հաստատվելեն զատ, հայ ճարտարապետության պատմության մեջ փառավոր էջ մ՚ալ կբացվի ընդհանուր արվեստից պատմության մեջ, և մինչև ցարդ թյուրիմացությամբ հունական խաչաձև անվանված ոճը հայկական խաչաձև անունով կճանչցվի ապագա գիտական աշխարհին մեջ: Ավելցնենք ասոր վրա Զվարթնոցի կրկնահարկ գմբեթավորումը՝ որուն ուրիշ օրինակը ո՛չ մեկ տեղ չգտնվելեն զատ, Հայաստանի մեջ երեք միանման օրինակներ միանգամայն գտնվեցան – Զվարթնոց, Անիի գազվաշեն ս. Գրիգոր և Բանայի եկեղեցին: Չորրորդ մանրանկար մը ևս կա այս երեք մեծերուն, որ բաբերախտաբար տակավին կանգուն՝ բայց դժբախտաբար ոչ ոքի ուշադրության չարժանացած, այս մանրանկարը Անիի պարիսպներեն դուրս հայ ճարտարապետության գոհարներեն մեկը, Հովիվի եկեղեցի ըսվածն է:

Ձեմ գիտեր՝ ո՞րչափ հավանական է Ch. Diehl-ի կարծիքը Զվարթնոցի մեջ Ներսես Շինողին հույն վարպետներ գործածած ըլլալու մասին: Հայաստանի մեջ, թե՛ շինարարական և թե՛ գեղարվեստական տեսակետով 7-րդ դարը այնպիսի բեղմնավոր շրջան է, որ երբեք պետք պիտի չզգացվեր օտարազգի ճարտարապետներու. մանավանդ Զվարթնոցի օտարներու բոլորովին անծանոթ և անսովոր կազմությունը շատ կհեռացնե զինք օտար ճարտարապետներու գործ համարվելե:

Զվարթնոցի մեջ եթե մասեր կան, որոնք հույն վարպետներու գործ կարելի է համարել, անոնք ալ գրեթե կապ չունին եկեղեցվո ընդհանուր ճարտարապետության հետ: Այդ մասերը պետք է համարել անոր մեջ եղած նկարները և մոզայիկ զարդարանքները: Ահա այստեղ է Ներսեսի հունական ճաշակի և քաղկեդոնականության ուղիղ ազդեցությունը:

Հայտնի է, որ մինչև 10-րդ դար հայերը պատկերամարտներ էին. Վահան կաթողիկոսը Անիեն հալածեցին եկեղեցվո սեղանին վրա պատկեր դրած ըլլալուն համար: Մեզ հասած մինչև 10-11-րդ դարու եկեղեցիներն ալ այդ կապացուցանեն իրենց վերին աստիճանի պարզությամբ. նույնիսկ 13-14-րդ դարու եկեղեցիներեն շատերն ալ նկարազարդված չեն: Հետևաբար պատկերահալած երկրի մը մեջ չէր կարող պատկերահանության արվեստն ալ զարգանալ: Հազիվ քանի մը հատուկտոր տեղեկություններ ունինք պատմությենեն, որ 10-րդ դարու վերջերուն մեկ երկու եկեղեցիներ նկարազարդված են: Ուստի չէ կարելի հավատալ, որ 7-րդ դարուն բացի Զվարթնոց եկեղեցիեն և կամ նույն դարուն քաղկեդոնիկ կաթողիկոսներու շինած եկեղեցիներեն զատ, ուրիշ եկեղեցիներու մեջ պատկերներ գտնվեին ներկով կամ մոզայիկ նկարված: Մանավանդ մոզայիկ պատկերներ շինելու արվեստը բնավ չէր կրնար գոյություն ունենալ Հայաստանի մեջ, և Ներսես Գ.-ի եկեղեցին, իմ կարծիքով, միակ բացառությունն է՝ իր մոզայիկներով[1]: Ահա այստեղ էր, որ Շինողը անկասկած պետք պիտի ունենար բյուզանդացի կամ հույն վարպետներու:

Նմանօրինակ դեպք մը կպատմե Ստեփաննոս Օրբելյան, որ պարզ կցուցանե, թե 10-րդ դարուն Հայաստանի մեջ կարող նկարիչներ գտնել դժվար էր և թե պետք եղած ժամանակ ուրիշ երկիրներե բերել կուտային:

Սյունյաց Հակոբ եպիսկոպոսը Տաթևի վանքը ամբողջովին շինելե ետքը՝ կրսե Ս. Օրբելյան, «ետ ածել նկարիչս և զաւառխս որ է պատկերագործ ի հեռաւոր աշխարհէ ֆռանգ ազգաւ»... (Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1911, երես 256):

Թեև կգրե նաև, թե նույն ժամանակին Տաթևի վանքին մեջ սկսեր էին նկարչության դասեր ավանդել, սակայն կկարծեմ, որ այդ դասերը մանրանկարչության ճյուղին կվերաբերեին ձեռագիրներ զարդարելու համար:

Հայոց կրոնական հիշատակարաններուն վրա օտար ազդեցությունները անչփոթ որոշելու համար, պետք է plan-ներ և élévation-ներ առանձին-առանձին քննել, որովհետև ասոնք շատ անգամ իրարմե անկախ տարբեր ազդեցություններու ենթարկված են: Հայ եկեղեցիներու ոճը ուսումնասիրողներ հաճախ չփոթ եզրակացություններ ունեցած են մեկուն կամ մյուսին վրա դատելով: Եկեղեցիներու հատակագծերը բնավ պետք չէ որ կապվին շինարարական կամ գեղարվեստական ոճերու հետ, կրոնական վարդապետությունները և ծեսերը ավելի դեր կկատարեն հատակագծերու համաչափությանց և դասավորությանց մեջ, քան արվեստն ու ճաշակը: Ուստի հայոց հնագույն եկեղեցիներու հատակագծային ոճերուն մեջ, որոնք 7-րդեն մինչև 14-րդ դար միշտ ձևափոխության ենթարկվեր են, ճարտարապետականե կամ գեղարվեստականե ավելի պետք է հույն կամ լատին կրոնական ազդեցությանց հետքերը փնտռել, վասն զի հույն կամ լատին կրոնական վարդապետությանց պարբերաբար հայոց եկեղեցվույն մեջ մուտ գտնելը որոշ ազդեցություններ ունեցեր է հատակաձևերու վրա:

Զվարթնոցի մեջ խորանը արևելյան պատեն հեռու ըլլալը և անոր ետևը հասարակ ժողովրդին համար տեղ գտնվիլը օտար ազդեցության մը հետքը ենթադրել կուտա, որուն արմատը պետք է փնտռել մինչև 7-րդ դար կեդրոնական սրբարան ունենալու համար եղած մրցումներուն մեջ: Հույն և լատին շատ մը եկեղեցիներ ավելի պատշաճ համարած էին կեդրոնական սրբարանը, նախնական առաքելական ժողովասրահներու հատկությանց վրա հիմնված: Հռոմի ս. Ստեփաննոսի բոլորակ եկեղեցին, Գրիգոր Նազիանզացիի, Գր. Նյուսացիի եկեղեցիները բոլորակ կամ բազմանկյունի էին և

[1] 1938 թվականին, Զվարթնոցի մոզայիկին շատ նմանը բացվեց Դվինի կաթողիկեի մեջ:

Կազմող

կեդրոնական սրբարան ունեին: Զվարթնոցը այս կեդրոնական սրբարանով եկեղեցիներու մոտավոր այլազանությունը կթվի: Նույնպես 10–11-րդ դարերեն սկսյալ Հայոց եկեղեցիներու մեջ խորանավոր ավանդատուններու բազմանալը և քանի մը եկեղեցիներու արևմտյան կողմին կից սյունազարդ ծածկույթներ (portique) շինվիլը, պարզապես արևմտյան ազդեցություններ են կրոնական վարդապետությանց միջոցավ ներմուծված: Սակայն պետք չէ շփոթել 10–11-րդ դարերուն նույնպես Հայոց եկեղեցիներուն կից շինված գավիթ կամ ժամատուն անվամբ սյունազարդ ընդարձակ սրահները portique-ներու և արևմտյան եկեղեցիներու porche կամ nartex ըսված բաժանումներու հետ: Հայոց եկեղեցիներուն կցված ժամատուններ և գավիթներ թեև ծագում առին Կիլիկիո և Փոքր-Ասիո սահմաններուն մեջ, սակայն բացառապես Հայերն էին շինողները և ունեին իրենց հարկեցուցիչ պատճառները: Այս մասին պիտի հրատարակեմ ուրիշ ուսումնասիրություն մը, որուն մեջ մանրամասն պիտի տեսնվի անոր պատճառները, ժամանակը և նպատակները:

Մինչև այժմ ուսումնասիրության համար հավաքված նյութերն ալ շատ անկարգ և անկանոն կերպով հավաքված են: Որևէ հիշատակարանի մը հատակագիծը առնված է առանց անոր ճարտարապետական մանրամասնություններուն, երբեմն ալ առանց հատակագծի հաջող կամ անհաջող լուսանկարներ միայն առնված են, այն ալ առանց ընտրություն կատարելու կարևոր կողմերուն վրա. բայց ինչ որ ալ ըլլա, շատ դժվար է որևէ խնդրի լուծում տալ միմիայն ընդհանուր տեսքի լուսանկարներով՝ առանց մանրամասնություններու:

Ինչպես կերևի՝ թե՛ Հայերուս պարտականություն եղող և թե՛ անհունապես, կարևոր այս գործն ալ Եվրոպացի գիտնականները կկատարեն անընդհատ նորանոր և մանրամասն նյութեր հավաքելով: Պարզապես անոնք հետաքրքրված են Հայ ճարտարապետությունը մոտեն ճանչնալու և ազգաց արվեստներուն մեջ անոր դիրքը և տեսակը որոշելու համար: Երբեմն Հայ ճարտարապետությունը ոչ այսքան հետաքրքրական եղած էր և ոչ ալ գիտնականներու համար վեճի նյութ, որ հետզհետե ավելի լուսաբանվելու և ճոխանալու ապագա կիսոստանա: Զգիտեմ մեզ համար ո՞րչափ պատվաբեր է այս պարագան, այնուամենայնիվ ճշմարտություն է, որ այս ցանկալի հառաջադիմությունը դարձյալ պարտական ենք միմիայն Եվրոպացի գիտնականներու ջանքերուն՝ առանց մեր կողմանե մաղաչափ աջակցելու անոնց:

Ինչպես իր նախորդներեն շատերը, նույնպես ալ Cl. Diehl, զուտ օտար աղբյուրներու վրա հիմնված, սակայն ավելի սրատես և մանրազնին քննությամբ, նոր դույն և նոր կերպարանք կուտա Հայ արվեստին, նախորդներեն մեծ մասամբ տարբեր, և որ ավելին է՝ ազդեցությանց խնդիրը ճշտիվ որոշելու մեջ ինքը նախաձեռնող և լրջորեն առաջին քայլերը առնողն է, երբեմն միանալով Ստրչիգովսկիին հետ և երբեմն անկեց անկախ ճանապարհներ փորձելով: Այս մասին շատ հաճելի է լսել զինքը.

«Բայց Հայկական հիշատակարաններու նկատմամբ էական խնդիր մը մեջտեղ կուգա, թե անոնք երբևիցե բան մը պարտակա՞ն են բյուզանդական արվեստին, թե՞, ընդհակառակը, Հայաստանն էր, որ ուսումներ բերավ Բյուզանդիոն: Այս շատ վիճելի խնդիրը տակավին չէ գտած իր վերջնական լուծումը: Ստրչիգովսկի առաջ լիովին կընդուներ, որ Հայոց 5-րդեն մինչև 7-րդ դարու արվեստը, իր ամբողջական քաղաքակրթության նման կախում ուներ բյուզանդականեն և այս տեսությանց հիման վրա ապացույցներ ներկայացնելով, ինքը մինակ կվճռեր, թե անհերքելի կթվին: Անկեց հետո անիկա փոխած է այս բոլորը և կհայտարարե այսօր, թե բյուզանդական արվեստն է, որ, ընդհակառակը, մեծապես պարտական է Հայաստանին, որն Արևելքի ազդեցության տակ շատ կանուխ ստեղծեց իր նահանգներուն մեջ ինքնուրույն արվեստ մը և ճարտարապետական հատուկ ձևեր, որոնք անկե փոխադրվեցան 7-րդեն 10-րդ դարաշրջաններու մեջտեղ, մեկ կողմեն շրջան ընելով բյուզանդական տիրապետության երկիրները՝ Վրաստանի, Ռուսաստանի և հարավային սլավներու մեջ, մյուս կողմանե Բյուզանդիոն հաստատվող իշխանական տոհմի մը շնորհիվ մինչև կայսերական մայրաքաղաքը՝ Բյուզանդիոն: Հայաստանեն էր, որ պիտի զար հունական խաչաձև հատակագծի ոճը և նմանապես Վասիլ Ա-ի կանգնած նոր եկեղեցվո ձևը: Այս ամենուն մեջ կմնա խոստովանիլ, որ դեռ շատ բան անստույգ է և ենթադրություն: Բայց ինչ որ ալ ըլլա, վերին աստիճան հետաքրքրական է տեսնել, թե Հայաստանի մեջ ի՞նչպես ձևակերպվեցան արևելյան քրիստոնյաներեն ծրագրված կարգ մը շինության ոճեր»:

Այստեղ կեզրափակվի Ch. Diehl-ի Հայոց 7-րդ դարեն մինչև 10-րդ դարու Հայ ճարտարապետության մասին տեսությունը, որ և գրքին մեջ բռնած է 315-են մինչև 319 երեսները, որոնցմե քաղեցի ես մասնավոր հապավումներով:



Բ. Հոդվածին մեջ (երես 441–447) ի սկզբան համեմատություններ կկատարե Հայոց եկեղեցիներու և վրաց ու բյուզանդական եկեղեցիներու միջև: Հետո անդրադառնալով մասնավորապես Հայ հիշատակարաններու վրա՝ կհիշե Աղթամարի եկեղեցին, Անիի շենքերեն՝ Կաթուղիկեն, ս. Գրիգոր (Ապուղամրենց), Փրկիչ և Լուսավորիչ (Նախշի) եկեղեցիները: Ծանոթ է անոր նաև Հոռոմոսի վանքը, որ սխալմամբ Khoska vank (Գոշավանքի տեղ) կանվանե: Այս իրեն Հայտնի 10-են մինչև 13-րդ դարերու հիշատակարաններուն վրա 5-են 7-րդ դարերու Հայ ճարտարապետությենեն ավանդական գծեր կգտնե և կեզրակացնե, թե անոնք ավելի Roman ոճը կհիշեցնեն, քան թե բյուզանդական:

Բազմահմուտ A.Choisy արդեն քանի մը տարի առաջ Հայ արվեստին Roman արվեստին հետ կապակցություն ունենալու կարծիքին հիմը դրավ, ցույց տալով նաև անոր ճամբաները՝ ուրկե անցնելով Հայկական ազդեցությունը հասավ Եվրոպա և Roman ոճի կազմակերպության մեջ իր օժանդակող դերը ունեցավ: (Այս մասին տեսնել A. Choisy. Hist. de l'Arch., t. II, page 84–86, և կամ՝ Անահիտ, 1911, թիվ 1-2, էջ 18):

Ch. Diehl ավելի պատմական հիմերու վրա կխարսխե իր կարծիքները և ազդեցությանց խնդիրը քաղաքական հարաբերություններով բացատրել կջանա, ուստի հետևյալ շատ բնորոշ կարծիքը կհայտնե Հայ ճարտարապետության 10-են 13-րդ դարերու ոճերուն զարգացման մասին.

«Բայց ընդհանուր առմամբ այս գավառներու (Հայաստանի) ճարտարապետության մեջ զանազան տարերքներու խառնուրդ մը կգտնվի, որ շատ լավ կբացատրե երկրին թե՛ աշխարհագրական և թե՛ քաղաքական պայմանները: Պարսկական արաբներու դրացիությունը այնտեղ մտցուցեր է չափական զարդաքանդակները. Բյուզանդիոնի քաղաքական ազդեցությունն ալ մտցուցեր է իր արվեստին նոր ձևերը: Այս ներմուծումները շատ խնամքով բաղադրված են հնդկական հին ավանդություններու հետ: Այսպեսով ծնած է ինքնուրույն արվեստ մը, որ 10-րդեն 13-րդ դարերուն երևան եկած է բազմաթիվ շինություններով»:

Այս կարծիքը ամենեն ուղիղն է Հայ ճարտարապետության կրած արտաքին ազդեցություններու մասին՝ եթե միայն քաղաքական հարաբերություններով բացատրել ուզենք: Սակայն իրականությունը, ըստ իս, բոլորովին տարբեր երևույթներ հառաջ կբերե: Տարաբախտաբար հեղինակը մասնավորապես չէ մատնանշած, թե 10–13-րդ դարերու Հայ ճարտարապետության ո՞ր մասերն են պարսկա-արաբական կամ հնդկական:

Կցավիմ, որ հաճախ կրկնելու ստիպվեր եմ հրապարակի վրա եղած ուսումնասիրելի նյութերու չափազանց նվազությունը: Եթե ոչ, հեղինակին Հայտնի պիտի ըլլար, թե Հայ ճարտարապետության 10–12-րդ դարերու ոճը բոլորովին կզանազանի վերջին 13–14-րդ դարերու վերածնութենեն, դարձյալ պահելով նախորդ ոճեն՝ հաճելի եղած շատ մը ավանդական գծեր:

Գալով բյուզանդական ազդեցության, եթե կա, ինչպես վերև բացատրեցի, պետք է փնտռել եկեղեցական ճարտարապետության մեջ հատակագծային ոճերու վրա, որոնք կազմված են ավելի կրոնական վարդապետություններու ազդեցության տակ, քան արվեստներու:

Իմ ձեռքի տակ ունեցած բազմաթիվ նյութերու համեմատությամբ՝ իմ կարծիքս այն է եղած, թե Հայ ճարտարապետությունն ու գեղարվեստը մինչև 6-րդ դար ազդված են մեծ մասամբ Հունա-Հռոմեական արվեստեն. իսկ անկե ասդին, ինչպես նաև հնագույն ժամանակներ, ավելի մեծ կապակցություններ ունին ասորա-քաղդեական և սասանական արվեստներու հետ: Ինչ կվերաբերի հնդկական ավանդություններուն, ըստ բավականի ճիշտ նկատողություն է Հայ արվեստը բաղադրող տարերքներու նկատմամբ: Բայց Հնդկաստանեն Հայաստանի վրա ուղիղ ազդեցություն այնքան ալ հավանական չերևիր ինծի:

Հնդկական արվեստի օրրանը նույն Ասորա-Քաղդեան է, ինչպես Հայկականին: Միևնույն կետեն բաժնվող երկու ազդեցությանց մեկը հասեր է մինչև Հնդկաստան, իսկ մյուսը՝ Հայաստան: Ուստի զարմանալի չէ, որ Հայոց և Հնդկաց արվեստներուն մեջ մոտավոր ազգակցություն կնշմարվի:

Թեև Հայոց՝ Հնդկաստանի հետ առևտրական հարաբերության մեջ ըլլալը պատմական և իրական ապացույցներով ալ Հայտնի եղած է, սակայն շատ հին ժամանակներե սկսյալ Հայոց արվեստին մեջ կնշմարվին Հնդկականը հիշեցնող գծեր, որոնց արմատը Ասորա-Քաղդեայի մեջ էր. այս ազդեցությունը ավելի ուղիղ ճամբով կարող էր Ասորեստանեն և Պարսկաստանեն փոխադրվիլ Հայաստան Արշակունիներու և Պարթևներու միջոցավ ընիկ երկրեն, քան թե հեռավոր Հնդկաստանեն: Արդեն Արշակունիներու և Պարթևներու օրով Հայաստանի մեջ կատարելության հասած արվեստ մը կա անկախ Հունա-Հռոմեականեն, որուն հարազատ շառավիղներեն են 4-րդ, 5-րդ դարերու Հայկական հիշատակարանները, որոնց վրա դեռ նոր ուշադ-

*ությունն պիտի դարձնեն գիտնական արվեստագետները:*

*Հին հունա-հռոմեական արվեստի հանկարծական և վաղանցիկ նշույլներ երևցեր են հայոց 10-11-րդ դարերու ճարտարապետության մեջ: Թե ինչու հունա-հռոմեական և ոչ բյուզանդական, այդ մասին ես կխոսիմ առանձին հոդվածով մը, ներկայացնելով իմ հավաքած հավանական փաստերը: Իսկ պարսկա-արաբական հատկանիշ ունեցող չափական զարդաքանդակներու մասին ես ուրիշ անգամ ալ ուրիթ եմ ունեցեր ըսելու, թե 5-րդ և 7-րդ դարերու հայ հիշատակարաններու վրա կան այդ ճյուղի զարգացման նախնական սաղմերը: Այս տեսակետով պետք է մանրամասն քննել Տեկորի, Բաղարանի, Մրենի, Ալամանի, Զվարթնոցի և 5 ու 7-րդ դարերուն կանգնված ուրիշ հիշատակարանները:*

*Ուղիղ արաբական ազդեցություն կարծված չափական զարդաքանդակներ Հայաստանի մեջ երևան եկած են 12-րդ դարու կեսեն հետո, 13 և 14-րդ դարերուն մեջ կանգնված հիշատակարաններուն վրա: 10-11-րդ դարերուն կանգնված հիշատակարաններ միանգամայն ազատ են արաբական համարվող գծերեն: Մինչդեռ եթե քաղաքական հարաբերությունով բացատրել պետք ըլլար, պարսկա-արաբական կարծված զարդաքանդակներ, ինչ որ կերևան 13-14-րդ դարերուն մեջ, պետք էր որ երևային ուժեղ թափով դեռ 10-11-րդ դարուն, որ միակ շրջանն է Հայաստանի վրա Բաղդադի քաղաքական զորեղ ազդեցության: Ինչպես կըլլա, որ արվեստի ներգործությունը հանկարծական փայլով կծաղկի այն ժամանակ, երբ արդեն արաբական ազդեցությունը ընկած և տեղի տված է հունական ու վրացական գերիշխանության առջև 11-րդ դարու կեսին մոտ:*

*Թաթարներու՝ Հայաստան արշավելեն առաջ Զաքարյաններու շրջանին ծաղկող ճարտարապետության նոր վերածնություն մը կա, որ ամենավերջինը եղած է հայ ճարտարապետության մեջ: Այս շրջանի վերածնության մեջ ոմանք թաթարներու ազդեցություն կնշմարեն: Այս կարծիքով բավական չէ որ ժամանակագրական մեծ չփոթության մեջ կիյնան, առանց նկատի ունենալու, որ նույն ոճով բազմաթիվ շենքեր արդեն կանգնված էին թաթարներու արշավանքեն առաջ, այլև շատ զարմանալի կերպով այնպիսի հատկություններ և նրբացած ճաշակ կվերագրեն ցեղի մը, որ ընդունակ ալ չէր ճշմարիտ քաղաքակրթության:*

*Ինչպես արաբը, նույնպես ալ թաթար խաները արյունե ու թալանե զատ, ոչ մեկ բանի մեջ հաճույք չէին զգար, քանդել, ավերել և փչացնելու մեջ էր անոնց ամենամեծ բավականությունը. այս ճշմարտության անհերքելի վկաներն են այսօրվան ևրոպական բոլոր հնությանց թանգարաններու մեջ տեղ բռնող հնությանց առավելագույն բաժինները և ի սփյուռս աշխարհի տարածված անհամար կիսականգուն ու փլատակ գեղարվեստական հրաշալիքները, ինչպես կըսե առած մը, «անոնց ոտքի կոխած տեղերը կանաչ խոտը կչորնար»: Ինչ ունեին արաբն ու թաթարը իրենց բնիկ երկրին մեջ, որ ինչ բերեին արդեն քաղաքակրթված երկիրներու մեջ. անոնց բնիկ երկիրները տակավին մինչև այսօր ալ քաղաքակրթական անապատներ են: Մեծ հեղինակներեն մեկը շատ արդարացի կերպով «քաղաքակրթության պատուհաս» անվանած է մահմեդական արշավանքները:*

*Արևելքի այս երկու ցեղերը, արաբն ու թաթարը՝ իրենց վայրագ սրածությամբ տիրապետած երկիրներուն մեջ կամաց-կամաց ընտելացան վայելչասիրության և քաղաքակիրթ կյանքի պայմաններու շնորհիվ իրենց հպատակներու հեռատես և ճկուն բնավորության:*

*Բռնակալ սուրի ու անխնա հարվածներու տակ ճնշված հպատակ ազգեր, իրենց անկոչ տերերուն վայրենի հակումները չափավորելու և կատաղությունները սանձահարելու միջոցը գտան անոնց համար վայելքներ ստեղծելով, իրենց բոլոր բարոյական և ֆիզիկական արժանավորությունները անխնա դրին տիրողներու տրամադրության տակ ու մեծամեծ կենսական զոհողություններով, դարերու տևողության մեջ հազիվ կարողացան զանոնք հակամարդկային կերպարանքե հանելով փոքր ի շատե քաղաքակիրթ վիճակի մեջ դնել: Բայց անոնց քաղաքակրթությունը միայն մեղկորեն վայելելու մեջ կկայանար. այդ իշխողները մինչև վերջն ալ ստեղծագործողներ ըլլալու շոշափելի փաստեր չկարողացան տալ: Դեռ ավելի ուշ ալ, իրենց տիրապետած երկիրներուն մեջ հպատակ տարրերն են, որ կոչված են ամեն տեսակ գիտություն և արվեստ զարգացնելու՝ տիրող տարրին հանգստության և վայելքներուն համար: Տասներկու երկար դարեր չկարողացան մահմեդականի հոգվույն պատկերը բարեփոխել. իրենց նկարագրով և հակումներով մնացին նույնը, ինչ որ էին սկզբեն:*

*Արաբաց տիրապետության ամբողջ շրջանին Հայաստանի մեջ քար քարի վրա դրված շենք գտներ, մինչև Բագրատունի և Արծրունի թագավորությանց վերականգնումը: Այս երկու թագավորությանց երկիրները կարճ ժամանակի մեջ բազմաթիվ գեղարվեստական շինություններու ցանցով մը ծածկվեցավ, մինչդեռ արաբական տիրապետության տակ մնացած Հայաստանի ուրիշ մասերը մինչև վերջն ալ ավերակ ու անապատ մնացեր են:*

*Թաթար խաներեն ոմանք՝ իրենց նյութական շահերուն համար հայ ժողովուրդը իր կրոնի և քաղաքակրթության զարգացման մեջ ազատ թողուցին, բավական սեպելով միայն ծանր տուրքեր առնելը. ահա այդ իսկ պատճառով համեմատաբար ավելի շատ գեղարվեստական հիշատակարաններ կանգնվեցան թաթարաց տիրապետության ժամանակ մինչև 14-րդ դարու վերջերը: Բայց այս պարբերաբար եղած հանգստությունը ավելի կորստաբեր կըլլար, քան մշտնջենականը. գիտակից և երկրի շահերուն նախանձախնդիր խանին հանկարծ կհաջորդեին կրոնի և ավանդությանց թշնամի, նախանձով ու ատելությամբ լեցված խաներ ամեն բան տեղն ու տեղը կոչնչացնեին, ինչ որ աճեր ու ծաղկեր էր իրենց նախորդին օրով: Հուսահատ ու անընդհատ դժբախտության ենթարկված հայը անգամ մը ևս գաղթականությունը ձեռք առավ և մեծամեծ խումբերով գաղթեց աշխարհի ամեն կողմը: Էպուսայիտ Բահատուր խանը նախագուշակելով հայոց գաղթականությամբ երկրին ավերումը և այդ ավերումով իրենց ցեղին և տիրապետության սպառնացող վտանգը, 1237 թվին հրովարտակ մը արձանագրեց Անիի մզկիթին վրա, որով ամեն դյուրություն, հանգստություն և հարկերու բաշխում կխոստանար, որպեսզի չգաղթեն: Սակայն բազմաթիվ դառնաղետ փորձերով խրատված դժբախտ ժողովուրդը՝ այլևս հավատ չընծայեց սնամեջ խոստումներու և կանոնավոր կերպով գրեթե մինչև հետին մարդը գաղթեց թաթարաց սահմաններեն ամբողջ մեկ դարու տևողության մեջ:*

*Մեկ կողմանե գաղթը, մյուս կողմանե գերեվարությունը՝ ինչպես ամեն կողմ, նույնպես ալ դեպի Փոքր Ասիա՝ փոխադրեցին Հայաստանի 13-14-րդ դարերու արվեստը, անկեց ալ մինչև Ոսփորի ու Մարմարայի ափերը, որուն հետքերը նշմարեց առաջին անգամ* A. Choisy (A. Choisy, Hist. de l'Arch. T. II, p. 22):

*Կիրակոս Գանձակեցին կպատմե, թե Զարմաղանը երբ Անին առավ «Սուր ի վերայ եդեալ կոտորեցին սակաւ կանայս ու մանկունս թողեալ և արս արհեստաւորս զորս վարեցին ի գերութիւն» (Կիր. Գանձակեցի, Մոսկվա, 1858, երես 152):*

*Թաթարներու և սելջուկներու գերեվարությամբ հայ արվեստին կատարած արշավանքը անոր վերջին արշավանքն է: Անկեց առաջ կատարած արշավանքները տակավին ուսումնասիրելի են և անոր վրա ծածկված քողին ծայրը առաջին անգամ Ստրչիգովսկին է, որ վեր կբարձրացնե իր սրամիտ դատողությամբ՝ առանց բոլորովին հիմնվելու պատմական անցքերու վրա:*

*Որչափ որ քիչ մը առաջ* Ch. Diehl *ալ կջանար Բյուզանդիոնի՝ հայոց վրա ունեցած ներգործությունը պատմությամբ հաստատել, սակայն, ինչպես կերևի, այնքան ալ գոհ չմնաց իր դատողություններեն հանդեպ հակասական երևույթներու և վերջապես քիչ մ'ալ ինքզինքին հակասելով կշարունակե իր տեսությունը:*

**Բյուզանդիոն և Հայաստան:** *Այստեղ կդրվի էական հարցը: Ինչպես որ մեզ կթվի, իսկապես հայ արվեստը պարտակա՞ն է բյուզանդականին, թե՞, ընդհակառակը, որևէ բան տված է անոր:*

*«Քանի մը տարիներ առաջ ոչ ոք չէր կասկածեր Բյուզանդիոնի՝ Հայաստանի վրա ունեցած ներգործությունը: Այս ամենը Ստրչիգովսկի հեղաշրջեց: Անոր կարծիքով՝ հայ իշխանական տոհմի մը՝ հանձին Վասիլ Ա կայսեր, Կոստանդնուպոլսո գահը բարձրանալը իր մասնավոր հետևանքը պետք էր որ ունենար արվեստի պատմության վրա, և նոր թագավորության մեծ հիշատակարանը* Nea[1] *պիտի ըլլար հայկական արվեստեն: Հետևաբար նաև այն ստեղծագործությունը, որ նոր ճանապարհ բացավ Կոստանդնուպոլսո հողին վրա, և հունական խաչաձև եկեղեցվո հատակագիծը անունով պիտի դառնար Հայաստանեն ծագում առած:*

*«Այս տեսությունը, հիրավի, մասամբ հանճարեղ և համոզիչ է, անվիճելի է, որ Հայաստանի բախտախնդիրներ բազմությամբ կերթային մայրաքաղաքին մեջ բախտ փնտրելու: Անոնցմե շատերը վարչական, զինվորական և արքունական բարձր պաշտոններու կհասնեին: Հայեր տիրապետեցին նույնիսկ կայսերական գահուն, ինչպես Ռոման, Նիկիփոռ, Զմշկիկ: Հայաստանի և մայրաքաղաքին մեջ զորապետներու և քաղաքագետներու երթևեկությունն անպակաս էր: Հայաստանի փոքրիկ գերիշխանները շարունակ կայցելեին սրբազան պալատը դաշնակիցներ, տիտղոսներ և թոշակներ ձեռք բերելու համար: Ցեղապես գործունյա, հանճարեղ, շահասեր և դժբախտ հայը աշխարհի ամեն կողմը տարածված էր. 11 և 12-րդ դարերուն հայ նկարիչներ կգտնենք Երուսաղեմի և Եգիպտոսի մեջ: Կոստանդնուպոլսո մեջ կհանդիպինք իրավագետներու և, որ ավելի կարևորն է, ճարտարապետներու: 10-րդ դարուն վերջը, երբ երկրաշարժը 989 թվականին ս. Սոփիայի գմբեթը կործանեց, հայ ճարտարապետներ*

[1] *Ս. Զորավար եկեղեցի կանվանե այս եկեղեցին Ստ. Ասողիկ:*

աշխատեցան վերանորոգության մեջ, անոնց մեջ կար Տրդատ մը, որ Անիի կաթուղիկեի ճարտարապետն էր:

«Մյուս կողմանե անվիճելի է, որ բյուզանդական եկեղեցիներե ոմանք հայկական քանի մը շենքեր հիշեցնող հատակագծեր ունին. մասնավորաբար կհիշատակվին երեքխորանյան սրբարանները, որոնք կգտնվին 10-րդ դարու վերջերը Աթոսի ամենամեծ եկեղեցիներու մեջ, որոնցմե մեկը ճշտիվ ցույց կտրվի, թե իբերիացիներու շինածն է. և, վերջապես, կնկատվի, որ 10–11-րդ դարերուն մեջ այնքան ինքնուրույն և բեղմնավոր հայկական արվեստը չէր կարող իր ինքնուրույնությունը պահել, եթե անիկա բյուզանդականի ազդեցության տակ ըլլար:

«Ցույց տրված իրողությունները ճիշտ են. բայց բացարձակապես համոզի՞չ են. չեմ կարծեր: Այս ալ իրողություն մ'է, որ ամեն երկու քաղաքակրթությանց մեջ կպատահի, այն է՝ թե ավելի զարգացողը կազդե մյուսին վրա: Արդեն ոչ ոք ալ չէ կարող ուրանալ, որ 10-րդ դարու Կոստանդնուպոլիսը առանձնապես գերիշխան չեղավ Հայաստանի վրա: Մյուս կողմանե այս պատճառաբանությանց մեջ կմտնեն շատ մը ենթադրություններ, վերջապես, մենք բավական վատ տեղեկություն ունինք, – Ստրչիգովսկի ինքն ալ ստիպված է խոստովանելու – էական շենքին վրա, որուն շուրջը կդառնա վեճը, այսինքն նոր եկեղեցվո ճարտարապետական հատկություններուն վրա, այնպես որ դժվար է գիտնալ, թե անիկա որևէ առնչություն ունե՞ր հայ արվեստի հետ: Եռախորան հատակագիծը մյուս կողմանե ավելի լավ կարող էր գալ Աթոս, ուղիղ Կոստանդնուպոլսեն, ուր գործածության մեջ էր 7-րդեն մինչև 9-րդ դար: Եվ վերջապես քանի մը հայկական շենքեր, հեռու բյուզանդական ճարտարապետներու ներշնչումեն, կթվին որպես հետաքրքրական այլազանություններ, հանճարեղ շինողներու ձեռքով նմանցված Կոստանդնուպոլսեն բերված ոճերուն, ըլլա անկյունափող, ըլլա հունական խաչաձև եկեղեցի:

«Դրված խնդիրը կմնա ուրեմն մութ. ինչ որ կարելի է և համաձայնելի, այն է, որ Հայաստանի մեջ պահված ասիական արվեստի հին ավանդությունները, մյուսլիման երկրի դրացնությենեն հառաջ եկած ազդեցությունները այս երկրին մեջ հակակշռված են բյուզանդական ազդեցության հետ. և ստեղծագործելու մեջ հմուտ ու ճարպիկ ճարտարապետներու ձեռքին մեջ հառաջ եկեր է արվեստ մը, որ բյուզանդականի շատ բան պարտելով հանդերձ, երբեք անոր ստրկական ընդօրինակությունը չէ: Այլ սակայն, մյուս կողմանե ինչ որ հարկ է ըսել, այն է, որ եթե այս արվեստը էական ոչինչ չէ տված բյուզանդականին, սակայն իր առանձնահատկության պարտական է ուրիշ կողմերու վրա հետաքրքրական տարածումը: Հայաստանին հետևած է Վրաստանը, և այստեղեն բյուզանդական տիրապետության երկիրները շրջան ընելով, ազդեցության ընթացքը հասած է Ռուսաստան և հարավային սլավներու մեջ: Մոքվի[1] և Կիևի ս. Սոփիա եկեղեցիներու հատակագծերուն մեջ նշանակելի նմանություն մը կա, և մարդ կարող է ինքնին հարց տալ, թե ռուսական հին եկեղեցին բյուզանդականե ավելի հայ ճարտարապետի մը գործը չէ՞ արդյոք: Բյուզանդիոնի ենթակա Հայաստանը զուգահեռաբար օգներ է քրիստոնեական արվեստը Արևելքի մեջ տարածելու»:

Ch. Diehl-ի աշխատության մեջ այս հոդվածով գրեթե փակված է հայ արվեստի ուսումնասիրությունը. և, ինչպես կտեսնենք, թեև անվճռական, բայց ավելի հակված դեպի հայ ստեղծագործություն, դեպի հայ արվեստի ինքնուրույնություն և որոշ չափով ալ իր դրացիներու վրա ազդեցությունունենալը:

Այս անվճռականություններ և տատանումներ դեռ շատ երկար կտևեն, եթե գիտնականներ իրենց ուշադրությունը չդարձնեն քանի մը հանրածանոթ շենքերե զատ, ուրիշ անծանոթ մնացած անհամար շենքերու վրա, և կամ, ավելի ճիշտը, մենք անոնց ուշադրությունը չհրավիրենք:

Աշխարհի ամեն կողմեն եկողը կերթա Էջմիածին. Մայր-Տաճարեն հետո կտեսնե անոր անմիջապես քովիկը Հռիփսիմեի, Գայանեի վանքերը և նորագյուտ Զվարթնոցը, և ասով գրեթե կվերջանա Արարատյան նահանգի արշավանքը: Անդին կմնան ավելի քան Էջմիածինը հնության մեծ հավաստիք ներկայացնող հիշատակարաններ, որոնք իրենց տարբեր ոճով, տարօրինակ զարդաքանդակներով, իսկական բանալիները պիտի ըլլային հայ ճարտարապետության, մինչև իսկ հեթանոսական շրջանները լուսաբանելու:

Էջմիածնեն հետո արշավանքի ասպարեզ է աշխարհահռչակ Անին, ուր շնչասպառ կվազեն անոր կախարդական անունեն հափշտակված. սակայն այնտեղ գնացողներն ալ, ամենեն շատ մեկ կամ երկու օր միայն ժամանակ ունին տեսնելու: Զորս կիլոմետր տարածության վրա ցրված ամեն կողմ կանգուն ու կիսականգուն շենքեր և բազմաթիվ դեղաքանդակ բեկորներ դիտելու, քննելու և ուսումնասիրելու համար բավական չեն մեկ երկու օրերը. այսքան կարճ միջոցի մեջ հազիվհազ կարող է տպավորություններ արձանագրել խուզարկուն և մեկնիչ:

Անիի շուրջը բազմաթիվ հիշատակարաններ կան, որոնք երբեմն ավելի գերազանց են, քան Անիի հիշատակարանները. ոչ ոքի մտքեն անգամ չանցնիր անոնք ալ տեսնել, որոնց մեջ 10–14-րդ դարերու ճարտարապետական այնպիսի սքանչելի նմույշներ կան, որպիսիք Անիում երբևիցե գոյություն իսկ չեն ունեցեր:

Թեքսիեն, ֆրանսիական կառավարությենեն լիազորված, 1839 թվին եկեր է Հայաստանի հնությունները ուսումնասիրելու. եթե չեմ սխալիր, իր ամբողջ արշավանքը կատարեր է միայն չորս ամսվան մեջ, Անիի ուսումնասիրության համար ալ հազիվ ժամանակ ունեցեր է չորս օր: Ահա այս տեսակ շտապ գործունեության հետևանքն է, որ այսօր քառս ստեղծվեր է հայ արվեստի ուսումնասիրության գործին մեջ: Նույնպես են վարվեր նաև ուրիշ բոլոր ծանոթ հնախույզներ:

Թեքսիեի նկարագրած Անիի կաթուղիկեն, բացի ուրիշ իրականին անհամապատասխան մասերե հարավային դուռ մը ունի, որուն ձևը և վրայի զարդաքանդակները երբևիցե գոյություն իսկ չեն ունեցեր այնտեղ: Գմբեթին տրամագծին մոտավորապես երեք մետր նեղ նկարագրվելեն, հայ ճարտարապետության մեկ առանձնահատկությունը թաքուն մնացեր է մինչև այսօր, որն որ վերին աստիճան հետաքրքրական ըլլալեն զատ, միմիայն Հայաստանի հատուկ գմբեթաշինության ոճ է եղած: Հատկապես այս մասին արժե առանձին հոդվածով մը խոսիլ:

Նմանապես Թեքսիեի աշխատությունն է Տեկորի տաճարին plan-ը, facade-ներ ևն, որոնք բոլոր ուսումնասիրողներու քննության միակ աղբյուրն են և տասնյակ անգամներ տպագրված զանազան հեղինակներու կողմանե:

Բացի այն, որ plan և facade լիովին չեն համապատասխաներ, նաև plan-ի մանրամասնությանց մեջ իրականին անհամապատասխան ավելի կամ պակաս մասեր են մտեր: Ներքին մեծ մույթերու անհարազատ ընդօրինակությունը եթե չըլլար, թերևս ավելի վաղուց ուշադրության կառնվեր անոր խիստ հետաքրքրական և առեղծվածներ պարունակող ձևը:

Հակառակ Թեքսիեի բարեխիղճ և ուղիղ դատողություններուն, ի՞նչպես հառաջ եկեր են չափագրական և գծագրական սխալները, այդ մասին արդեն մասամբ խոսեցանք:

Կեստների նկարած sphérique գմբեթավոր Մաստարայի եկեղեցին տեսնողը ըստ ամենայնի իրավունք ունի կարծելու, թե 7-րդ դարուն Հայաստանի մեջ բյուզանդական գմբեթներու ազդեցությունը անվրեպ էր. մինչդեռ Մաստարայի եկեղեցվո գմբեթը ամենևին sphérique չէ եղած, և ամենահին շինվածքն է, որ անփոփոխ հասեր է մեզի. Մաստարայի եկեղեցին, թերևս նորոգված ըլլա շատ մասնավոր կերպով 10-րդ դարեն ոչ ուշ, բայց առանց ձևի փոփոխության: Ոչ միայն Մաստարայի մեջ, այլև բովանդակ Հայաստանի մեջ հայերուն մտքեն անգամ չէ անցած արտաքուստ sphérique երևույթով գմբեթներ շինել: Այս տեսակ օրինակներ անհատնում են, մանրամասն թվել ավելորդ է. ցանկալի է, որ այսուհետև գոնե չպատահին, և հին պատկերներ ուսումնասիրության առարկա չըլլան:

Պահ մը ենթադրենք, որ որևէ հնախույզ Անին և Շիրակը շատ լավ տեսավ, բայց այսքան փոքր մաս մը տեսնելը բավական չէ հայ ճարտարապետության իսկական առանձին հատկությունները որոշելու: Անին և Շիրակը իրենց մեջ շատ աննշան թվով ունին 10-րդ դարեն անդին անցնող հիշատակարաններ: Ավելի հիները՝ հեթանոսութենե ի քրիստոնեություն փոխանցման շրջանի մնացորդները բոլորովին ուրիշ տեղերու վրա են, որոնց անունն ու տեղը եվրոպացի հնախույզ գիտնականը երբեք լսած չէ կարող ըլլալ, մեր պարտքն է անոնց սեղանին վրա դնել գոնե լավ լուսատիպ պատկերներով և մանրամասն նկարագրություններով:

*
* *

Ստրչիգովսկին լիովին համոզված է, որ հունական խաչաձև հատակագծի ոճը Հայաստանի մեջ ծագում առած է, որուն ամենահին օրինակն է Էջմիածնի եկեղեցին: Միևնույն ժամանակ նաև կկարծե, թե այդ հատակագիծը նույնիսկ Լուսավորչի ժամանակեն ավանդաբար հասած ըլլա:

Բացի ուրիշ շատ մը փաստացի պատճառներե, նաև հատակագծերու զարգացման տեսակետով ալ Էջմիածնի հատակագիծը ամենևին քրիստոնեական նախնական եկեղեցվո հատկություն չունի, ընդհակառակը, կրոնական և ծիսական օրենքներու ըստ բավականի զարգացումներով մշակված հատակագիծ մ'է: Հայոց եկեղեցիներու հատակագծերը ուրիշ քրիստոնյա ազգերու եկեղեցիներեն տարբեր

[1] Մոքվին գտնվում է Աբխազիայում:

Կազմող

կերպով զարգանալու ոչ մեկ պատճառ չկար Հայաստանի մեջ: Ուրիշ բոլոր քրիստոնյա ազգերու նախնական եկեղեցիները մեհյաններու և բազիլիկներու ընդօրինակություններ եղան ի սկզբանե: Հետո, ժամանակի ու դարերու ընթացքին մեջ հետզհետե հեթանոսական ձևերեն հեռանալով, քրիստոնեական կրոնի խորհրդանշանները ու դրոշմը կրեցին: Ճիշտ այդպես ալ եղած է հայոց եկեղեցիներու նկատմամբ և այդպես ըլլալուն ալ ապացույցներ չեն պակսիր: Այս մասին ավելի ընդարձակորեն հայտնած եմ իմ տեսություններս «Տեկորի տաճարը» աշխատության մեջ [տես՝ 3-րդ մասը]:

Էջմիածնի լուսավորչաշեն եկեղեցին չէր կրող խաչաձև հատակագիծ ունենալ, այսօրվան ձևը կպատկանի Ներսես Շինող կաթողիկոսին, իսկ անկեց առաջ Վահան Մամիկոնյանի 5-րդ դարու վերջին շինածը թեև խաչաձև էր կրկին, սակայն խաչաձևի չորս կիսաբոլորակ թևերը արտաքուստ ամփոփված էին ուղիղ չորս պատերու մեջ: Չորս անկյուններուն վրա ալ բացված էին չորս սենյակներ՝ զանազան ծիսական պահանջներու համար: Հոդվածիս սահմանը չներեր Էջմիածնի մասին ավելի ընդարձակ խոսելու, ցանկացողը թող բարեհաճի կարդալ մեկ փոքրիկ հրատարակությունս «Էջմիածնի տաճարը» անունով [տես՝ 3-րդ մասը]:

Վահան Մամիկոնյանի շինած եկեղեցվույն խաչաձև հատակագիծը Հայաստանի մեջ ծագում առած ոճ ըլլալը հերքել շատ դժվար է: Իսկ այժմյան խաչաձևն ալ, ինչպես կտեսնվի Ստրչիգովսկիի և Շ. Տիլի կարծիքներեն, քիչ-քիչ Հայաստանի սեփականություն դառնալու երևույթը ունի: Միայն եռախորան եկեղեցիներուն Հայաստանի մեջ ծագում առած ըլլալուն մասին առայժմ ես կդժվարանամ Ստրչիգովսկիին հետ համակարծիք ըլլալու: Մանավանդ երբ Շ. Տիլ կհավատա, թե այդ ձևը 7-րդեն մինչև 10-րդ դար գոյություն ուներ Կոստանդնուպոլսո մեջ, այդ ատեն ինծի կմնա հավատալ, որ Հայաստանի մեջ այդ ձևը օտար ազդեցության տակ կազմված է: Վասն զի իմ բոլոր խուզարկություններուս ժամանակ դեռ չեմ տեսած եռախորան եկեղեցի մը, որուն շինության թվականը 10-րդ դարեն առաջ ըլլա:

Ստուգիվ 7-րդ դարու եկեղեցիներ կան, որոնք թեև երեք խորան ունին, սակայն անհերքելի ապացույցներ ալ կան, որ անոնք 10-րդ դարու փոփոխության արդյունք են: Թեև Ստեփաննոս Օրբելյան կպատմե, թե (Թիֆլիս, 1911, երես 71) Գյուտ կաթողիկոսի նախաձեռնությամբ մեծ կաթուղիկե մը շինվեցավ (472 թվին), որ երեք խորան և երկու գմբեթ ուներ. բայց անոր երեք խորան ըսածը ես ավելի կհասկնամ Էջմիածնի ներքին կիսաբոլորակ թևերով խաչաձև հատակագծին նմանը, որուն արևմտյան թևը քառակուսի էր՝ ինչպես Ալամանի ս. Անանիայի եկեղեցին, և մյուս երեք թևերուն մեջ պատարագի սեղաններ կային՝ ինչպես այսօր Էջմիածնի եկեղեցիին մեջ. Էջմիածնի շինությունն ալ արդեն ժամանակակից է և, ամենայն հավանականությամբ, միևնույն ձևը ունեցավ իբրև ժամանակակից նոր ոճ: Իսկ երկու գմբեթ միանգամայն միևնույն եկեղեցվո վրա ինծի բոլորովին անհասկանալի կմնա, եթե չերևակայենք Զվարթնոցի նման կրկնակ գմբեթ իրարու վրա: Որովհետև ուրիշ ձևով պատշաճ տեղ չենք կարող գտնել հայկական ոճի մեջ երկրորդ գմբեթի մը համար:

*
* *

Վասիլ կայսեր Կոստանդնուպոլսո մեջ շինել տված նոր եկեղեցին, Ստրչիգովսկիի կարծիքով, հայկական ոճով է և ուղղակի ազդված Էջմիածնի հատակաձևեն: Թեև Վասիլ կայսեր շինել տված եկեղեցվո հատակագիծը բոլորովին նման չէ Էջմիածնի հատակագծին, այնուամենայնիվ Ստրչիգովսկիի համար ներելի էր այդ համեմատությունը, հիմնվելով գոնե անոր մոտավոր նմանության վրա:

Ի՞նչ ձև ուներ Վասիլ կայսեր շինած եկեղեցվո հատակագիծը և ի՞նչ տարբերություն ուներ Էջմիածնի հատակագծեն, ատիկա տեսնենք մենք նույն իսկ Շ. Տիլի նկարագրության մեջ՝ իր կարծիքներով միասին:

«Հատակագիծը կներկայացներ հավասար թևերով խաչաձև մը քառակուսիի մը մեջ ամփոփված և հինգ գմբեթներով պսակված: Բայց գմբեթները այնպես չէին, ինչպես Առաքելոց եկեղեցիինը և անոր ընդօրինակությունը եղող ս. Մարկոսինը, որոնց խաչաձևի չորս թևերուն վրա զետեղված էին չորս գմբեթները: Վասն զի եկեղեցվույն մեջ կեդրոնական գմբեթին շուրջը չորս երկրորդական գմբեթներ կլարձրանային bas-coté-ներուն վրա՝ խաչաձևի չորս թևերու հետ արտաքին քառակուսիի միացումով ձևացած անկյուններուն մեջ: Այսպեսով, արտաքին ճակատին վրա խաչաձևը անտեսանելի եղած էր, մինչդեռ Առաքելոց եկեղեցվույն վրա խաչաձևը արտաքուստ տեսանելի էր: Միայն կտուրին վրա հայտնի էին չորս թևերու ծածկույթի կամարաձևին մեջ հառաջ եկող օրորոցաձև տանիքներու չորս թևերը [Վասիլի եկեղեցվո վրա]: (Manuel d'art byzantin. Par Ch. Diehl. Paris, 1910, p. 406).

Որչա՜փ լավ պիտի ըլլար, եթե վերոհիշյալ երկու գիտնականներն իրենց սեղանին վրա ունենային Հայաստանի մեջ տակավին պահված քանի մը եկեղեցիներու հատակագծերն ու պատկերները, որոնք կետ առ կետ Վասիլի եկեղեցվույն նման ըլլալե զատ, անոնցմե ոմանք ավելի հին են քան Վասիլի եկեղեցին:

Էջմիածնի մոտ 7-րդ դարուն կանգնված Հռիփսիմեի վանքի եկեղեցին և Խծկոնքի ս. Աստվածածին, որ կանգնված է 10-րդ դարեն ոչ ուշ, իրենց հատակագծով բնավ չեն տարբերիր Վասիլի եկեղեցվո հատակագծեն, միևնույն ձևով ներքուստ խաչաձև, և արտաքուստ ամփոփված են քառակուսիի մեջ, միակ տարբերությունը կկայանա հայոց եկեղեցիներուն միայն մեկ գմբեթ ունենալուն մեջ: Բայց իսկական՝ Վասիլ կայսեր շինած հինգ գմբեթով եկեղեցիին նման երկու օրինակ ինծի հայտնի են առայժմ, որոնցմե մեկը Անիի Առաքելոց եկեղեցին է:

Անիի Առաքելոց եկեղեցվո շինության թվականը կորած է. սակայն իր 10-րդ դարու մաքուր հայկական ոճեն զատ, 1034 թվականին Վահրամ Պահլավունիի որդվույն Ապուղամրի մեկ նվիրատվության արձանագրությենեն կերևի, որ այս եկեղեցին կանգնված է 10-րդ դարեն ոչ ուշ: Արտաքին որմասյանց խոյակներու և քանի մը ուրիշ զարդաքանդակներու վերին աստիճան նմանություններեն ալ կհետևցնեն, որ Անիի գագկաշեն բոլորակ ս. Գրիգոր եկեղեցվո շինության ժամանակակից վարպետներ աշխատեր են անոր մեջ:

Գրեթե միևնույն դարուն Անիի և Բյուզանդիոնի մեջ իրարու այնքան նման եկեղեցիներ իրարմե անկախ կերպով ի՞նչպես երևան գալերնին գուցե անբացատրելի մնար, և կամ առաջնության մրցանակը Բյուզանդիոնը չահեր, եթե բարեբախտաբար 6-րդ դարու վերջին Հոհան կաթողիկոսի՝ Երևանի մոտ Ավան գյուղի մեջ կանգնած ներքուստ խաչաձև և հինգ գմբեթանի եկեղեցին կիսականգուն վիճակի մեջ այսօր մեզ հասած չըլլար: Այս եկեղեցվո հատակագիծը բոլորովին անաղարտ է և պատերը կանգուն: Փլած են գմբեթները, սակայն ինչ որ այստեղ մեզի կարևոր է և ըստ ամենայնի հետաքրքրական, երկրորդական չորս գմբեթներու գոյության ապացույցն է, որոնց մեկուն երկու կարգ քարի բոլորակ շարքերը տակավին կմնան հարավ-արևմտյան անկյունին վրա:

Մասնավոր շնորհակալության արժանի է Գարեգին վարդապետ Հովսեփյանի մեկ հոդածությունը՝ այս անգնահատելի հիշատակարանի մասին, որ մանրամասն լուսանկարելով կորուստե ազատեց: Մասնավորապես լուսանկարած է նաև հարավ-արևմտյան անկյունի փոքր գմբեթին մնացորդ քարերու բոլորակ շարքերն ալ:

Այստեղ հարկ չեմ տեսներ վերստին պաշտպանել իմ մեկ թեորիս՝ որ տեսական և գործնական փաստերով ապացուցելու աշխատած եմ, թե Անիի ներքուստ խաչաձև, արտաքուստ քառակուսի, հինգ գմբեթանի Առաքելոց եկեղեցվո նախատիպը եղած է 5-րդ դարու վերջը Վահան Մամիկոնյանի կանգնած Էջմիածնի տաճարը:

Այս տեսությունս գրած էի 1909 թվականին, որ նույն տարին ռուսերեն լեզվով տպագրվեցավ Ս. Պետերբուրգ՝ պր. Ն. Մառի թարգմանությամբ, հետո ալ տպագրվեցավ հայերեն բնագիրը «Ազգագրական հանդես»-ի մեջ, առանձին արտատպությունով 1910 թվականին, «Էջմիածնի տաճարը» խորագրով: Այս ամենը վերջանալեն հետո էր, որ բախտ ունեցա Ավան գյուղի եկեղեցին տեսնելու, եթե ոչ՝ անպայման նախորդ աշխատություններուս մեջ իբրև փաստ ներկայացված պիտի ըլլար այս եկեղեցին ալ:

Բայց քանի որ Էջմիածնի նկատմամբ իմ թեորիս տակավին քննության չէ առնված ուրիշ մասնագետներու կողմանե, բնականաբար իբրև փաստ չեմ կարող ներկայացնել, միայն կբավականամ՝ ըստ իմ տեսության, անոր հատակագիծը և չենքի պատկերը ներկայացնելով: Սակայն Ավանի եկեղեցին անհրաժեշտ է, որ մատնանշեմ իբրև կանգուն և խոսուն օրինակ ու 6-րդ դարու հարազատ շինություն, որուն գոյությունը, կհուսամ, թե Ստրչիգովսկիի համար հաճելի անակնկալ մը կըլլա, անգամ մը ևս փաստացի հաստատվելով տարիներ առաջ իր կատարած տեսությունը, առանց գիտնալու Ավանի եկեղեցվո գոյությունը: Իսկ Շ. Տիլի համար ալ անշուշտ հետաքրքրական նորություն մ'է, որով փոխանակ Վասիլի եկեղեցվույն հայ ճարտարապետության հետ առնչություն ունենալ կամ չունենալուն մասին վարանման մեջ մնալու, և նույն ձևը 10-րդ դարու բյուզանդական ոճի հատկանիշը համարելու, առայժմ գոնե, եթե ոչ 5-րդ դարու, գեթ 6-րդ դարու հայ ճարտարապետության հատկանիշը պիտի համարի: (-Ainsi l'édifice était conforme au type nouveau et caracteristique de la construction byzantine, tel qu'il apparaît presque exclusivement à partir du X siècle: l'église à croix greque inscrite dans un carré) [Ch. Diehl. Manuel d'art byzantin. Paris, 1910, p. 406].

*
* *

Ch. Diehl երկու զլխավոր հենակետ ունի համոզվելու համար, թե անպայման հայ ճարտարապետությունը պետք էր, որ կազմակերպվեր որոշ չափով բյուզանդականի ազդեցության տակ. հենակետերեն մեկը Հուստինիանոսի ճարտարապետնե-

*րուն Հայաստանի մեջ բազմաթիվ եկեղեցիներ շինելն է, իսկ մյուսը՝ իրողություն մէ, որ ավելի զարգացածը կազդե մյուսին վրա։*

*Հուստինիանոսի ճարտարապետներուն Հայաստանի մեջ բազմաթիվ եկեղեցիներ շինած ըլլալու կարծիքը հառաջ եկած է պատմական տեղեկութենե մը, թե՝ Հուստինիանոս հանձնարարած է իր պատմաբան Procope-ին գրել իր կյանքի բոլոր գործունեությունը։ Միայն շինարարական գործունեությանը համար Procope գրեր էր վեց հատոր, որուն երրորդ հատորը կայսեր հրամանով Հայաստանի մեջ շինված շենքերու պատմությունը կը-վանդակեր։ Բայց մինչև այսօր Հայաստանի մասին այդ տեսակ պատմություն մը գտնված չէ։ Եթե նույնիսկ գտնվեր ալ, չէր կարելի երևակայել, որ անոր մեջ բովանդակ Հայաստանի եկեղեցիներուն շինության պատմությունը գրված ըլլար։ Առառավելն Հայաստանի հունական բաժինը պիտի ըլլար, ուր հավանական է, որ գտնվեին թե՛ կայսեր հրամանով շինված եկեղեցիներ և թե՛ բյուզանդական ազդեցության ենթարկված ձևեր։*

*Այս առթիվ պիտի ըսեմ, որ իմ բոլոր տեսությունները հիմնված են Արևելյան Հայաստանի հին ճարտարապետության վրա, որովհետև բնավ առթիթ չեմ ունեցած Հայաստանի հունական բաժինը ուսումնասիրելու։*

*Արևելյան Հայաստանը, մասնավորապես Քաղկեդոնի ժողովեն հետո, շատ հեռու կմնար Բյուզանդիայի կրոնական և քաղաքական ազդեցություններեն, և այդ զգուշավորությունն ու ինքնուրույնության ձգտումը հայերուն համար անթիվ աղետներու պատճառ դարձեր է միշտ։*

*Եթե պարբերաբար Բյուզանդական կայսրությունը հաջողեցավ ալ Արևելյան Հայաստանի վրա կրոնական կամ քաղաքական ազդեցություն ձեռք բերել, այն ալ այնքան թույլ և կարճատև եղած է, որ բնականաբար պիտի անհետանար առանց ազդեցություն թողելու։ Քսան տարի Անիի միջնաբերդի ապարանքին մեջ բնակեր են Բյուզանդական կայսրության կառավարիչներ, սակայն պեղումներ ցույց տվին, որ անոնք իրենց քսան տարվան գոյության ամենևին հետքը չեն թողեր։ Ճիշտ է, որ Արևելքի մեջ պակաս չեն եղած կայսրության կուսակից ցեղապետներ կամ տոհմեր, բայց անոնց ալ բնավ չէ հաջողած Արևմուտքի ազդեցությունը որևէ կերպով ընդհանրացնել Հայաստանի վրա, և իրենք ստիպվեր են գաղթել բուն բյուզանդական երկիրները։*

*Թե՛ սասանյանց և թե՛ արաբական տիրապետությանց ժամանակակից պատմագիրներե պարզ վկայություններ կան, որոնք ցույց կուտան, թե Արևելքին տիրապետող հզոր և բարբարոս պետություններուն որչափ անհաճո էր Բյուզանդիոնի հետ նույնիսկ առևտրական հարաբերության մեջ գտնվիլը։ Բյուզանդիոնի նենգամիտ և միտումավոր քաղաքականությունը միշտ ստիպեր էր հայերը ավելի պարսիկներուն ու արաբներուն ապավինել, քան թե Բյուզանդիոնի։ Այսպես մտածողներու շնորհիվ էր, որ գրեթե պահվեցան հայկական քանի մը գավառներու անկախ ինքնավարությունները, մինչև Խամսայի մելիքությանց օրերուն։*

*Գալով այն մտքին, թե ավելի զարգացածը կազդե, այդ արդեն ճշմարտություն է և մեծ նշանակություն ունի գիտությանց և արվեստից պատմության համար։ Բայց, ըստ իս, բան մը կա, ո՛ր դեռ անստույգ է և լուրջ հետազոտության կարոտ։*

*Պետք է գիտնալ, թե ինչ ազգերե և ցեղերե բաղկացած էր Բյուզանդական կայսրության բնակչությունը Արևելքի մեջ։ Ի՞նչ թվական համեմատություն կկազմեին այդ ազգերը, և ո՞ր ազգը ո՛ր ճյուղին մեջ զարգացած էր։*

*Ուրիշ բան է տիրապետող ըլլալ, ուրիշ բան է զարգացած ըլլալ։ Տակավին այսօր ալ մենք շատ կենդանի օրինակներ ունինք տիրապետողներու, որոնք ամեն ճյուղի մեջ զարգացած չեն, այլ իրենց հպատակներու մեջ որոշ ցեղեր որոշ ճյուղերու զարգացման ղեկավարներ են երկրին և պետության անունով։*

*Թե ի՞նչ վիճակագրություններ ունին պատմաբաններ Արևելյան կայսրության բազմացեղ բնակչության համար, այդ ինծի հայտնի չէ, բայց բավական է, որ այսօրվան գիտական ուսումնասիրություններ գրեթե միահամուռ կհաստատեն, որ բյուզանդական ըսված ճարտարապետությունը զուտ արևելյան արվեստներու խառնուրդ է, պատահաբար միայն տեղ տրված անոր մեջ ավանդական հունականին և հռոմեականին։ Այս պարագան արդեն բավական է մեզ համոզելու, որ արևելքցիք նույն ժամանակ ավելի գերազանց զարգացման հասած էին, քան Հունաստանն ու Հռոմը և անոցմե անկախ փայլուն արվեստ մը ստեղծեցին նոր թագավորներու Հռոմին համար։*

*Այժմ արդեն Եվրոպական գիտնականներու կողմեն մեջտեղ դրված է այն հարցը, թե արևելյան ո՞ր ազգեր ավելի մեծ դեր ունեցան բյուզանդական ըսված արվեստի կազմակերպության մեջ։ Իհարկե, ուշ կամ կանուխ, այդ դժվարին խնդիրը պիտի ստանա իր ցանկալի լուծումը։ Ես այստեղ, հայ արվեստին ալ որոշ չափով բյուզանդական արվեստի կազմակերպության մեջ բաժին ունեցած ըլլալուն*



*հավանականության մասին պիտի հայտնեմ իմ մասնավոր կարծիքները։*

*Հայաստանը երկու մասի բաժնվելեն հետո, Արևելյան կայսրությունը հայուն համար Հայաստանի մը կերպարանքը ստացավ։ Եթե խաղաղ ապրելու և քրիստոնյա պետության մը հովանավորությունը վայելելու տենչով՝ հայերը մեծ բազմությամբ կտեղափոխվեին Բյուզանդական կայսրության սահմանները, կայսրության ղեկավարներուն թաքուն նպատակներն ալ հնարքներ կստեղծեին հունական բաժինը գաղթողները Հայաստանի սահմաններեն հեռացնելով՝ ավելի ներսերը մղելու։ Ոչ միայն մայրաքաղաքի մեջ պատիվ ու աստիճաններ տալով կհյուրընկալեին, այլև հեռավոր տեղեր ղրկելու համար առանձնաշնորհումներ և վարչական իրավունքներ կուտային։ 5-րդ դարեն սկսյալ բավական չէ, որ քաղաքագետներ, զինվորական և պալատական աստիճանավորներ կվխտան Բյուզանդիոնի մեջ. տասնյակ հայ կայսրեր ալ անոր հզոր գահուն վրա բազմած՝ համայն երկրին ճակատագիրը կղեկավարեին։ Այս իրողությունները տրամաբանորեն մեզ կհամոզեն, որ հայերն առանց թվական բազմամարդության և առանց գերակշռող արժանավորություններու չէին կարող այս բարձրության հասնիլ։ Սեփական կրթությամբ և ցեղական ինքնուրույն հատկություններով մեծապես օժտված ազգ մը՝ տիրող տարրին հետ զուգընթացաբար վարելով ամբողջ երկրին ներքին ու արտաքին քաղաքական կազմակերպությունը, անկարելի էր, որ իր ինքնուրույն դրոշմը չդներ նույն երկրի քաղաքակրթության վրա։ Մանավանդ, երբ հայերը բացի զինվորականութենե և քաղաքագիտութենե՝ նաև շինարար ժողովուրդի մը համբավը ունեին, անպայման երկրին վարչությունը զիրենք այդ ճյուղին մեջ ալ ավելի հառաջ պիտի քշեր հօգուտ կայսրության։*

*Բուլղարասպան Վասիլ Բ կայսրը (976–1028) իր անընդհատ պատերազմներով քանդած երկիրները շինելու համար, իրեն հպատակ շատ մը հայեր Մակեդոնիա գաղթեցուց, կըսե Ասողիկ.*

> *«Այլ յորժամ էր ի Բաղդադ թագաւորն Վարդ և խաղաղանայր թագաւորութիւն Վասիլին, կամեցաւ յազգէն Հայոց, որ ընդ իւրով թագաւորութեամբն, անցուցանել ի Մակեդոնիա ընդդէմ Բուլղարացն, զի շինեսցեն զերկիրն։ Որ և տարեալ բնակեցոյց զյոլովս յաշխարհն յայն»։ (Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, երես 201)։*

*Ի՞նչ հարկ պիտի ստիպեր Վասիլը միայն հայերը զատել և գաղթեցնել, եթե գաղթողները իրենց աշխարհաշեն հատկություններով չգերազանցեին բնիկ տարրը։ Աշխարհաշեն համարվելու համար ալ ժողովուրդ մը, բացի նյութական և ֆիզիկական առավելություններե, պետք է որ ունենա նաև գիտություն և արվեստներ։*

*Անտարակույս, այս գաղթականության բոլոր բարեմասնությանց արդյունքը արձանագրվեցավ Բյուզանդական կայսրության անունով։ Ոչ միայն Մակեդոնիո և կամ բյուզանդական հողի վրա, այլև բյուզանդական բաժին եղող Հայաստանի մեջ ալ զուտ հայերու ձեռքով զարգացած քաղաքակրթության անունն ու պատիվը դարձյալ իրեն պիտի սեփականեր տիրող տարրը։ Այսպես է եղեր միշտ ազգերու պատմության մեջ. ստեղծագործող ցեղի իրավունքը չփոթված կամ նվիրված է տիրապետող ցեղին։*

*Այսօրինակ պարագաներու մեջ հայ արվեստագետներ պարտական ալ չէին մտածելու, թե ապագան ի՞նչ անուն պիտի տար իրենց արվեստին, բավական էր, որ ներկան զիրենք նյութապես և բարոյապես լիառատ կվարձատրեր։ Անշուշտ ուրախ կըլլային նաև, որ մեծ կայսրության ընդարձակ երկիրներուն մեջ ոսկիով ողողված պարարտ հող կար, իրենց հանճարն ու բեղմնավոր երևակայությունը կյանքի մեջ իրագործելու համար։*

*
* *

*Բյուզանդական կայսրներու մեջ ամենեն փառասերն ու ամենեն շռայլը Հուստինիանոս, քան զՍողոմոն գերազանցելու տենչով, 6-րդ դարու սկիզբը ձեռնարկեց Կոստանդնուպոլսո հրաշակերտ ս. Սոփիա եկեղեցվո շինության։*

*Մրցումը հաջողությամբ պսակվեցավ. քանի մը տարի հետո արդեն պատրաստ էր այդ հսկա մեծագործությունը՝ որն որ Հուստինիանոս միմիայն իր անվան հետ կապել կուզեր։ Օծման նավակատիքի ժամանակ, երբ բյուրավոր ոսկի ու արծաթ ջահերով ու կանթեղներով լուսազարդված տաճարը մտավ, հպարտ շեշտով մը գոչեց. «Հաղթեցի քեզ, Սողոմոն»։*

*Բայց ապագա գիտական անաչառ դատաստանը անարդար գտավ Հուստինիանոսի հպարտությունը, և երկրորդական տեղ տվավ անոր այդ հսկա հիշատակարանի շինության մեջ, և այն օրեն սկսյալ ս. Սոփիան փոքր-ասիացի երկու համեստ ճարտարապետներու Թրալացի Անթեմիուսի և մելիտացի Իզիտորի հավիտենական անմահության կոթող արձանագրվեցավ արվեստից պատմության մեջ։ Որովհետև, կրնար ըլլալ, որ մեկե ավելի*

արքայական գանձեր բացվեին հիշատակարան մը կանգնելու համար, բայց երբ այդ արքայական գանձերուն չմիանար Անթեմիուսներու և Իզիտորներու չնաչխարհիկ հանճարը, արդյունքը ոսկիե աղյուսներու կույտի մը արժեքը միայն կունենար:

Բայց մյուս կողմանե, եթե բախտի բերմամբ չգտնվեր միլիոնավոր հպատակներու քրտանց կաթիլները իր փառասիրության զոհելու մեջ չխղճահարվող Հուստինիանոս մը, մենք ո՞րտեղ պիտի կարդայինք Անթեմիուսի և Իզիտորի փառավոր անունները: Արքայական գանձին հետ միացած թագակրին փառասիրությունը հանճարի հրաբուխը պայթեցնող միակ ուժն է, առանց այդ ուժին շատ հանճարներ անհիշատակ կորսվեր են ու պիտի կորսվին, ինչպես պիտի կորսվեին Անթեմիուսն ու Իզիտորը՝ առանց Հուստինիանոսի: Մոլությունները կան, որ երբեմն առաքինություն կծնին, տարաբախտ մարդկությունը ստիպվեր է երբեմն խրախուսել մոլությունները՝ հանճարները փրկելու համար:

Ինչո՞ւ ս. Սոփիան մինակ մնաց Բյուզանդիայի փառքի պատմության մեջ ու այլևս չկանգնվեցավ անոր նման հրաշալիք մը՝ Հուստինիանոսեն հետո, զրեթե ինը դար տևող կայսրության մեջ: Որովհետև, եթե պահ մը գտնվեցան ալ Հուստինիանոսը գերազանցելու ձգտող ինքնակալներ, այլևս չգտնվեցավ ո՛չ արքայական գանձի այն առատությունը և ո՛չ ալ ինքնակալի մը արժանիքը հսկա տաճարներ կանգնելուն մեջ փնտռող պարզամիտ ժողովուրդը:

Արաբական արշավանքները արդեն սկսեր էին կամաց-կամաց կազմալուծել Բյուզանդիայի աշխարհասասան ուժը, հետևաբար նաև ցամքեցնել հարստության աղբյուրները:

Հուստինիանոս ալ շատ դյուրությամբ չկարողացավ ոսկի ու արծաթ հասցնել ս. Սոփիայի շինության համար, քանի մը անգամ ստիպվեցավ զանազան միջոցներով ճնշել արտասովոր տուրքերու պատճառով նյութապես հարստահարվող ժողովրդի ընդվզելու պատրաստ խլրտումները: Ֆիզիկական ուժե ավելի աստվածային հրամաններով և հրեշտակներու պատգամներով սանձահարեց մոլեռանդ հավատացյալ ամբոխը: Մեկ կողմանե Բյուզանդական կայսրության փառքն էր ս. Սոփիան, մյուս կողմանե աղետ՝ ժողովրդի տնտեսական կացության: Միմիայն ներքին շարժական զարդարանքներուն համար հազիվ բավական եղավ ամբողջ Եգիպտոսի մեկ տարվան տուրքը:

Հուստինիանոսեն հետո, մեծատարած ծովերու և ցամաքներու հրամայող շատ քիչ թագավորներ գտնվեցան, անոր հաջորդները հազիվ հազ հաջողեր էին Հուստինիանոսի տնտեսապես քայքայած ժողովուրդը կազդուրելու, ահա հարավի պատուհասը հասավ Արևելքն ու Արևմուտքը քանդելու:

Հայաստանը, հակառակ իր փոքրության և քաղաքական ու տնտեսական անմխիթար դրության, ապացույցներ շատ տվեր է, որ եթե ոչ Բյուզանդական կայսրությունը գերազանցող, գոնե անոր հետ մրցելու չափ կարող արվեստագետներ զարգացուցեր է իր հարազատ ծոցին մեջ:

Ս. Սոփիայի կանգնումեն դար մը հետո, Հայաստանի սրտին վրա կանգնվեր է Զվարթնոց եկեղեցի մը, որուն հանճարեղ կազմությունը դարձյալ կոչված է ընդմիշտ զարմացնելու արվեստագիտական աշխարհը:

Այս չնաչխարհիկ հիշատակարանին Հայաստանի մեջ գոյությունն ալ պարտական ենք Ներսես Շինողին, որուն փառասիրությունը և թաքուն ձգտումները թռիչք տվին բնիկ հայ հողի վրա, հայրենիքի ծոցին մեջ ծնող ու զարգացող արվեստագետի մը հանճարին: Ինչպես առանց Հուստինիանոսի Անթեմիուս և Իզիտոր գոյություն չէին ունենար, հետևաբար բյուզանդական արվեստն ալ այսօրվան անունն ու հռչակը չէր վայելեր, այնպես ալ Հայաստանը առանց Ներսեսի պիտի զրկվեր ճարտարապետական աքանչելիքե մը, որն որ շատ իրավամբ ս. Սոփիայի բարձակից պիտի ըլլա արվեստից պատմության մեջ:

Ոչ նվազ հանդգնություն, համարձակություն և արվեստագիտական նուրբ հաշիվներ կբովանդակե Զվարթնոցի շենքը, որպիսին էր ս. Սոփիան: Քսան և հինգ մետրե ավելի տրամագիծ ունեցող միջին հարկ մը ունեցեր է, որն որ կատարյալ վստահությամբ ճարտարապետը հանձներ է ութը սյուներու և կամ զանոնք միացնող աղեղներու տարողության, որոնց տրամագիծ ու թանձրությունը 60–80 սանտիմետրեն ավելի չեն:

Մովսես Կաղանկատվացիի պատմելով՝ Կոստանդիանոս կայսեր ծախքով շինվեցավ այս եկեղեցին և ինքն ալ հրավիրվեցավ օծման հանդեսին ներկա գտնվելու: Կայսրը այնքան հափշտակվեցավ այս շենքով, որ անմիջապես հրամայեց շինողներուն հետևիլ իրեն մինչև Կոստանդնուպոլիս՝ այնտեղ ալ նմանը կանգնելու համար:

Բյուզանդացի հպարտ կայսրը Հուստինիանոսին ս. Սոփիայով ստեղծած փառքը նսեմացնելու միջոցը գտած էր հանակնկալս. պետք էր ինքն ալ հաղթեր իր նախորդին, ինչպես նախորդը Սողոմոնին: Այդ հաղթության կոթողը պետք էր ըլլար Զվարթնոցի օրինակը՝ բնականաբար ավելի մեծ և ավելի շքեղ, քան իր նախատիպը:



Անտարակույս, կայսեր ծանոթ չէր իր բովանդակ երկրին մեջ այդքան գեղարվեստական ներդաշնակությամբ և անօրինակ հանճարով գլուխ հանված շենք մը, գուցե նախ վստահ ալ չէր իր օրով Բյուզանդիոնի մեջ նույն ծրագիրը իրագործելու կարող ճարտարապետի մը գոյության, այդ պատճառով ալ ստիպվեցավ իր բաղձանքի իրագործումը հուսալ Զվարթնոցի ճարտարապետեն:

Բայց դժբախտաբար մահվան մանգաղը չորացուց ոչ միայն կայսեր սրտին բաղձանքը, այլև ապագա հայությունը կորսնցուց Բյուզանդիոնի մեջ հյուսվելիք նախանձելի փառաց պսակ մը:

«Սա (Ներսես Գ) էր Հայրագիր նորին Կոստանդնի և գանձիւք նորա շինեաց զբազմապայծառ փարախն բանաւոր հօտից ի քաղաքաղաշտի ի սուրբն Գրիգոր և ի նաւակատիս կոչեաց զթագաւորն Հոռոմոց որ յաւերժ հիացեալ ընդ շինուածն ետ հրաման շինողացն զնալ զկնի իւր զի զնոյնաձևն յարմարեսցէ ի պալատանն: Եւ ոչ ժամանեալ զնալ ի տուն իւր ի ճանապարհին վախճանէր: (Մովսիսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից, Մոսկվա, 1860, երես 255):

Ի՞նչ փաստ կարող ենք գտնել, որ Զվարթնոցի ճարտարապետը միևնույն ծրագիրը չէր կարող երկու անգամեն ալ ավելի մեծ շինել, եթե բավարար քանակությամբ ոսկի ու արծաթ գտնվեր Ներսեսի գանձարանին մեջ: Բայց այս եղածն ալ բավական փաստ է հավատալու, որ Զվարթնոցի ճարտարապետը Հայաստանի մեջ պակաս մրցակից չէր բյուզանդական ճարտարապետ Անթեմիուսի և Իզիտորի:

Երրորդ անգամ ըլլալով ս. Սոփիայի գմբեթը կործանեցավ 989 թվականին մեծ երկրաշարժի մը ժամանակ: Բյուզանդիոնի մեջ ոչ մեկ ճարտարապետ չհամարձակեցավ այդ վիթխարի գործին մոտենալ, և ահա Շիրակի փոքրիկ թագավորության մեջ ծնած ու զարգացած համեստ ճարտարապետ մը, համարձակ կմոտենա այդ մեծ ու պատասխանատու գործին և այնպիսի կատարելությամբ կվերականգնե այն ահավոր գմբեթը, որ մինչև այսօր նմանօրինակ տասնյակ երկրաշարժներու անսասան կուրծք տվեր է:

«Եւ զկնի սակաւ աւուրց շարժեցաւ աշխարհն Յունաց ահաւոր դղրդմամբ, մինչև կործանել զբազում քաղաքաց և գիւղից և գաւառաց ևս առաւել ի Թրակացւոց և Բիւզանդացւոց աշխարհին հանդերձ ծովովն, որ ի մէջ նոցա ծածանեալ ծփէր սասանմամբ մինչև ի նոյն ինքն ի թագաւորական քաղաքին Կոստանդնուպոլսի մեծաշուք և բազմապայծառ զարդ հրաշատեսիկ սեանց և պատկերաց եկեղեցեաց մեծամեծաց կործանեալ փլուզանիւր. և նոյն ինքն Սոփիայն, որ կաթողիկէն է՝ հերձանայր պատառմամբ վերուստ ի վար: Վասն որոյ բազում ջան եղև արհեստաւոր ճարտարացն Յունաց առ ի վերստին նորոգել: Այլ անդ դիպեալ ճարտարապետին Հայոց Տրդատայ քարագործի տայ զօրինակ չինուածոյն, իմաստուն հանճարով պատրաստեալ զկաղապարս կազմածոյն և սկզբնաւորեալ զշինելն, որ և գեղեցկապէս շինեցաւ պայծառ քան զառաջինն»: (Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս.Պետերբուրգ, 1885, երես 250–251),

Արդ՝ միթե Տրդատ չգերազանցե՞ց Անթեմիուսն ու Իզիտորը ս. Սոփիայի գմբեթին տալով մշտնջենական անսասանություն և պայծառություն քան զառաջինն: Որ միևնույն ժամանակ հայ ճարտարապետն իր հայրենի երկրի արվեստի դրոշմը դրավ անոր վրա, անուղղակի կերպով կխոստովանին մեզ ժամանակակից քննող մեծ արվեստագետներե ոմանք: Կհավատանե, թե գմբեթի կիսագունդի տակ իբրև խարիսխ դրված ցածրիկ թմբուկը վերջին նորոգության ժամանակ ավելցած մաս է. նախկին գմբեթները չունեին այդ թմբուկը, և արդեն զրեթե մինչև 8-րդ դարու վերջն ալ անծանոթ էր այդ ոճը Բյուզանդիոնին, անոր ալ արմատը պետք է Հայաստանի մեջ փնտռել:

Ս. Սոփիայի շինության մեջ, ինչ որ այսօր արվեստագիտական աշխարհը կզարմացնե, գմբեթի ահավոր զանգվածն է՝ 31 մետր[1] տրամագծով, որ ահեղատեսիլ հանգչած է չորս աղեղներու վրա: Այս արտասովոր մեծությամբ գմբեթը pendentif-ներու օժանդակությամբ չորս աղեղներե կազմված քառակուսի խարիսխի մը վրա հանգչեցնելը ոչ միայն կատարյալ գիտակցության, այլև մեծ հանդգնություն կպահանջեր: Մնացյալ մասերը ամենն ալ մատչելի և իրագործելի են՝ ամեն դասակարգի բանիմաց ճարտարապետներու կողմանե և չեն պահանջեր արտակարգ հանճար: Աղեղներու և կամարներու ծանրությունները շատ դյուրատար էին անհամեմատ թանձրությամբ շինված պատերուն և հսկա մույթերուն համար, իսկ պատերու և մույթերու ապահովության պատասխանատու էր անոնց ներքև հաստատուն երկիրը:

Ս. Սոփիայի ահավոր գմբեթին վերաշինությունը, Տրդատ նախորդ ճարտարապետներեն ավելի գերազանց կատարելությամբ գլուխ բերելեն

[1] Զանազան հեղինակներու տված չափերը համանման չեն ս. Սոփիայի գմբեթի տրամագծի նկատմամբ. 31-են մինչև 35 մետր տրամագիծ ցույց տվողներ կան, չգիտեմ, թե ո՞րն է ճիշտը:

հետո, այլևս ի՞նչ կասկած կմնա, որ անիկա Հայաստանի մեջ ալ կարող էր նույնօրինակ հսկա ծրագիրներ ի կատար ածել, եթե Սմբատներու և Գագիկներու գանձարաններուն մեջ բյուզանդական հարստություն գտնվեր: Շիրակի փոքրիկ թագավորներու և թագուհիներու համար ի՞նչ օգուտ ուներ գիտնալ, թե Տրդատ մեծագործություններ արտադրելու համար ստեղծված հազվագյուտ հանճար էր, երբ միջոցներ կպակսեին այդ հանճարին իրականություն տալու. բնականաբար Տրդատի անունն ալ անհետ ու անհիշատակ պիտի կորսվեր, եթե դիպվածով չկործանվեր ս. Սոփիայի գմբեթը և անոր վերաշինությամբ չանմահանար Հայ արվեստագործությունը՝ հանձին Տրդատ ճարտարապետի:

Իսկ եթե այս ցանկալի տեղեկությունը մեզի հասցնող միակ պատմագիր Ստեփաննոս Ասողիկ ալ մոռնար այս փաստը արձանագրելու, անտարակույս, բոլոր աշխարհ միահամուռ Բյուզանդական կայսրության թագին վրա գոհար մը ևս պիտի ավելցնեին անհայտ Տրդատի հայտնի մեծագործությունով:

Հայաստանի ժողովուրդը միշտ ճնշված, հալածված և հազար տեսակ քաղաքական արկածներով դժբախտացած, սակայն այդ դրության մեջ երբեք չէ կորած անոր հոգեկան արիությունը, վսեմին ու գեղեցկին ծայրահեղ սերը, չէ թուլացած անոր ստեղծագործող ու անընդհատ չինող հատկությունը: Այսօրվան գիտական աշխարհի ուշադրությունը գրավող Զվարթնոցի երեք հսկա օրինակներ միանգամայն կանգներ են երեք դարաշրջաններու մեջ, արդյոք ի՞նչեր ալ կային, որ կորսվեցան առանց մեզի հայտնի ըլլալու:

Վասպուրականի մեջ տակավին կանգուն է Արծրունի Գագիկ թագավորի չինած եկեղեցին, որ բյուզանդական ոճեն շատ հեռու, հարազատ քույրն է 10-11-րդ դարերուն Շիրակի և շրջակայից մեջ ծաղկող հա յ արվեստին:

Թովմա Արծրունի միակն է հայ պատմագրության շարքին մեջ, որ ոչ միայն Աղթամարի եկեղեցվո շինության մանրամասնությունը կուտա, այլև Գագիկ Արծրունիի շատ մը շինարարական նշանավոր գործերուն, որոնց մեջ թագավորը ինքն ալ գործնական մասնակցություն ունեցած էր, լարը ձեռքին չափելով ու դասավորելով:

Գագիկ Արծրունիի գործերեն ամենեն ուշագրավը, որու մասին Թովմա Արծրունիի մտքեն անգամ չէր կրնար անցնիլ, թե ապագա սերունդին համար անհունապես մեծ նշանակություն պիտի ունենար, քան եկեղեցիներն ու պալատները, Վանա ծովին մեջ Աղթամար կղզիի առջև շինած նավահանգիստն (port) էր:

Փոթորկի ժամանակ նավերը պաշտպանվելու համար հինգ ձիարշավ երկայնությամբ ծովը լեցնել և պարսպապատ լիճ մը կազմել, մեր հոռետես քննադատներու հայացքով հին հայերու ի՞նչ խելքի գործն էր, այն ալ փոքրիկ նահանգի մը թագավոր Գագիկ Արծրունիի համար: Բայց իրողությունն այն է, որ բացի Թովմա Արծրունիի նկարագրությենեն, այսօր շատ մը հետաքրքիր ճանապարհորդներով ալ հայտնի եղած են նավահանգստի հսկա պարիսպներու մնացորդները, որոնք մնացել են 3-4 մետր խորությամբ ջրի մեջ, Վանա ծովի մակերևույթին հետզհետե բարձրանալովը:

Ցանկալի է, որ ընթերցողը ինքը կարդա Թովմա Արծրունիի նկարագրությունը և համեմատե, թե ի՞նչ տարբերություն կա 10-րդ դարու և մեր 20-րդ դարու գաղափարներու, նպատակներու և շինելակերպերու մեջ.

«...որ քաջակորով գիտութեամբ նայեցեալ [Գագկայ] ի տեղւոյն [Աղթամար կղզւոյն] զբօսանս և ծանուցեալ զնա ապաստան լինել աշխարհի ի հինից թշնամեաց՝ ձեռնարկէ հիմն արկանել զնա ահեղ իմն և զարմանալի հիացմամբ. հրաման տուեալ բազում արուեստաւորաց և անթիւ մարդկան զհատեալ վէմս ծանունս և դժուարակիրս հոսել ընկենուլ յատակս ծովուն անհնարին խորութեանն. և ժամանակաւ ինչ այսպէս ջան յանձին կալեալ մեծի արքային՝ և յանկարծակի եկն եկաց կանգնեցաւ քարայատակն ամբարտակ կանգունս հինգ ի վերայ բարձրացեալ մկանաց ծովուն, որ մտացն աչօք իբրև ի ցամաքի շարայարեալ տեղադրէ զհաստակառոյցն վիմաց կարգս. յորոյ վերայ լար եդեալ ձգէ զպարիսպն շուրջանակի իբր ձիարշաւանօք հինգ. և պարիսպն է հրաշակերտ, ահեղակերպ, բարձրաբերձ լայնանիստ բրգամբք և բարձրացեալ աշտարակօք զարդարեալ, անկիւնաւոր խօրանանման տախտակաձև յինքեան ունելով զահոյք զբօսանաց, յորում հանդերձ որդւովք և ազատակոյտ զօրօք միշտ ուրախանայր արքայ: Իսկ և զգլուխս պարսպին ածեալ ի կիրճս դժուարամածս քարանձաւին՝ ի համբոյրս միմեանց մերձեցուցանէ. ի շրթունս խորայատակ հիմանց ծովուն դնէ դրունս ահաւորատեսս, հաստահեղոյսս, բևեռապինդս. որով և զմասն ինչ ծովուն ի կղզին կոյս հատանելով՝ հրաշալիս իմն ներգործեաց, բազում նաւաց յօրինեալ խաղաղ և անքոյթ նաւահանգիստ, բարձրագոյն հրաշակերտեաց քան զԱղեքսանդրին ի Մակեդոնն քաղաքի, և որպէս ինձ թուի՝ զանցոյց զարմանալեօք զՇամիրամեան փորուածոյ սենեկօքն և զամբարտակաւ գետոյն որ առ ստորոտով լերինն Վարագայ. զի նորայն գտնեա ի վերայ ցամաքի, իսկ սա ի մէջ խորոց ծովուս արուեստակեալ՝ հարստահարէ զամենայն միտս և զգործս իմաստնոցն առ ի քան զինքն եղելոց»: (Պատմութիւն Տանն Արծրունեաց ի Թովմա վարդապետէ Արծրունւոյ. Ս. Պետերբուրգ, 1887, երես 293-94):

Բարեբախտաբար պատմագիրը չէ մոռացեր նաև հիշատակելու, թե՝

«Ճարտարապետ արուեստին էր Մանուէլն, զոր ի վեր անդր ցուցաք. այր լի իմաստութեամբ և զօրաւոր ի գործս իւր»: (Նույն, երես 334):

Վանա ծովի շրջակայքը և ավելի ճիշտը, ամբողջ Վասպուրականի մեջ հոյակապ հայ հիշատակներու մնացորդներ, ճշմարտապատում վկաներ են, որ յուրաքանչյուր դարաշրջանում Մանուելի պես շատ արվեստագետներ ծներ, ապրեր ու գործեր են այնտեղ, անջնջելի հետքեր թողելով իրենց ետևը:

Անսպասելի կերպով 11-րդ դարուն Վասպուրականի ճակատագիրը մոայլվեցավ. մեկ կողմե դրացի փոքրիկ հայ թագավորներուն ներքին կռիվները, մյուս կողմանե Սելջուկներու կործանարար արշավանքները ստիպեցին Սենեքերիմ Արծրունիին Վասիլ կայսեր հավանությամբ թողուլ Վասպուրականը և իր երկրի բնակչության մեծամասնությամբ տեղափոխվիլ Սեբաստիո նահանգը (1021 թվին)՝ քրիստոնյա մեծ պետության մը տակ խաղաղություն գտնելու համար:

Այս ժամանակ Վասպուրականի գաղթականությունը չէր, որ Բյուզանդական կայսրության երկիրները կողողեր. ահագին հոսանքներ սկսեր էին Շիրակեն, Արարատեն, Վանանդեն ու Սյունիքեն, թողելով հայրենիքի մեջ կայք և ստացվածք, հետերնին առեր էին միայն իրենց մտավոր և ֆիզիկական կարողությունները նոր հայրենիքի փառաց համար ի գործ դնելու:

Անտարակույս, այս միլիոնավոր բազմությունը տարավ իրեն հետ ինքնուրույն բարքեր, սովորություններ և արվեստներ: Այլևս ինչո՞ւ զարմանալ, որ Ստրչիգովսկի բյուզանդական արվեստի 10-11-րդ դարերու վերածնության մեջ հայկական ազդեցություն կտեսնե և ինչու Շ. Տիլ անհայտ հոսանքներ փնտռե նույն դարերուն Բյուզանդիոնի մեջ կանգնված քանի մը եկեղեցիներուն հայկականի նմանությունը ստանալուն վրա, քանի որ գաղթողներու կատարյալ քաղաքակրթված ըլլալը ամենևին կասկածի տակ չէ:

1888-ին ռումանահայ հռչակավոր հայագետ և պատմագետ Գր. Պրլեզայան հոդված մը հրատարակեր է Բազմավեպի 46-րդ հատորին մեջ, որ հիմնվելով ի միջի այլոց ռումեն պատմագիր B. P. Hasdeu-ի տված տեղեկությանց վրա, կջանար ապացուցանել, թե Ռումանիո մեջ Արճեշ գյուղը Հայաստանի Արճեշեն գաղթող հայերն են հիմնած և այնտեղի աշխարհահռչակ եկեղեցին նույն գաղթականության նախաձեռնությամբ հիմնված է նախապես:

Բազմավեպի խմբագրությունը այս հոդվածը տպելով հանդերձ, առանց որևէ պատճառաբանության հավանական չէ համարած հոդվածագրի տեսությունը:

Երկար տարիներ հետո, ճարտարապետության բազմահմուտ պատմաբան A. Choisy իր ուսումնասիրությանց մեջ ամբողջ Դանուբի եզերքները հայ ճարտարապետությամբ ողողված տեսնելեն հետո, մասնավորապես Արճեշի եկեղեցին ալ կմատնանշեր իր հայկական ոճի մեծ խառնուրդով:

Ռումանիայի Արճեշը Հայաստանի արճեշցիներու հիմնա՞ծն է, թե ոչ և կամ հայկական ոճը ի՞նչ աստիճան ազդեցություն ունեցեր է Դանուբի հովիտներուն մեջ ծաղկող ճարտարապետության վրա, այդ մասին արդեն սկսեր են խոսիլ մասնագետ գիտնականներ և դեռ պիտի խոսին հառաջիկային՝ երբ հետզհետե ծանոթանան նորանոր նյութերու և փաստերու հետ: Ես այստեղ պիտի ներկայացնեմ Ռումանիայի Արճեշին հետ կապված ավանդություն մը, որ զարմանալի նմանություն ունի մինչև այսօր Հայաստանի մեջ գոյություն ունեցող հետաքրքրական ավանդության մը հետ:

Գեղարվեստական ոճերու պատմագիր Barberot, Ռումանիայի Արճեշի եկեղեցվո մասին խոսած ժամանակ, ավանդություն մը կպատմե այն եկեղեցվույն հետ կապված:

Որպես թե այդ եկեղեցին չինող ճարտարապետը հույն մ'էր, Մանոլ անունով:

Մանոլ իր ծրագրած մեծագործ եկեղեցին հիմնարկելու, նախագիծերը երազ մը կտեսնե, և արթննալով՝ իր ընկերներուն կպատմե, թե երկինքեն եկած ձայն մը իրեն կըսեր. – Ձեր բոլոր չինածները պիտի քանդվին, եթե առավոտուն կանուխ ձեզմե մեկուն առաջին անգամ կերակուր բերող կինը չհյուսեք եկեղեցվո հիմին մեջ:

Ամենը երդվեցան աստվածային պատգամին հնազանդիլ, իրենց ձեռնարկելիք մեծ գործին հաջողության համար:

*Առավոտուն կանուխ, հանկարծ Մանոլի նորապսակ ամուսինը՝ Ֆլորան երևաց հեռվեն, որ իր սիրելի լծակցին կերակուր կբերեր: Հակառակ Մանոլի արտասվալի աղոթքներուն և աղոթքներուն շնորհիվ հառաջացող հորդ անձրևներուն ու հեղեղներուն, հավատարիմ ու անձնվեր կինը առանց ճամբայեն ետ կենալու կհառաջանար դեպի Մանոլը:*

*Մանոլ ճարահատած, աստվածային պատգամին հնազանդելու համար իր կինը հյուսեց պատին մեջ:*

*Եկեղեցին շինել տվող իշխանը, շենքը բոլորովին ավարտելեն հետո, նախանձով լեցված, որպեսզի ուրիշ տեղ իր եկեղեցույն նմանը չգտնվի, ուզեց ճարտարապետը և իր ընկերները սպանել: Ուստի քանի դեռ տանիքեն վար իջած չէին անոնք, հրամայեց քանդել բոլոր սանդուխներն ու լաստերը, որպեսզի շենքի կտուրին վրա անսվաղ մեռնին: Սակայն ամենակարող ճարտարապետները սկսեցին փոքրիկ փայտի կտորներով թևեր շինել ու թռչիլ, բայց շուտով վար ընկան և քար կտրեցան: Նույնպես Մանոլ, երբ սկսեց թռչիլ, հանկարծ լսեց իր սիրելի Ֆլորայի ողբագին հեծեծանքը, արյունը սառեցավ, աչքերը խավարեցան և ընկավ գետին: Մանոլի ընկած տեղը հրաշքով փորվեցավ և աղբյուր մը բղխեցավ, ուրկեց կհոսի հստակ, բայց դառն ու աղի ջուր մը՝ արցունքով խառնված:* (E.Barberot. Histoire des styles d'Architecture. Paris, 1891, T. II, p. 258–269):

*Արճեշի հռչակավոր եկեղեցույն մոտիկ այսօր ալ կա աղբյուր մը, որուն ջուրը աղի է և ռումանացիք* fontana misterului Manola *անունը կուտան:*

*Հայաստանի մեջ այս ավանդության մեկ ուրիշ այլազանությունը կա հսկայական պարիսպի մը շինության նկատմամբ, որուն հաստատությունը և հաջողությամբ ամբողջացումը մարդկային զոհ՝ աղջկան մը մարմինը՝ կպահանջեր, հիմին մեջ հյուսելու համար:*

*Կգտնվի քարսիրտ պառավ մը, որ շլացած իրեն խոստացված առատ ոսկիներու փայլեն, իր խնամքին հանձնված քրոջը որբացած աղջիկը կտանի իբրև զոհ:*

*Պատին մեջ հյուսվող դժբախտ աղջիկը իզուր կաղաչէ մորաքրոջը գինքը ազատել, մինչև որ քարերը կծածկեն ամբողջ մարմինը: Վերջապես հուսահատ աղջկան անեծքով չար պառավը սև ագռավի մը կփոխվի և մինչև այսօր կողողա այն պատին մոտ, ուր աղջիկը հյուսված է:*

*Այս ավանդությունը մեր ժողովրդական բանաստեղծները ոտանավորի մը փոխած են, որ ավելորդ չեմ համարիր այստեղ դնել.*

*– Շարեցին, մորքուր, շարեցին,*
*Մինչև ծնկներս քարեցին.*
*Ազատիր, մորքուր, ազատիր,*
*Մատաղ կյանքիս խընայիր:*

*– Թող շարեն, բալա ջան, թող շարեն,*
*Մինչև սրունքներդ թող քարեն.*
*Համբերիր, չարդ տանիմ, համբերիր,*
*Կազատվիս, հոգիս, սիրտդ պինդ պահիր:*

*– Շարեցին, մորքուր, շարեցին,*
*Մինչև սրունքներս քարեցին.*
*Մորքուր, ճար ունի՞ս, ճարդ տես.*
*Փրկե ինձ, թե աստված կըսիրես:*

*– Թող շարեն, բալա ջան, թող շարեն,*
*Մինչև կուրծքդ թող քարեն.*
*Ցավդ տանիմ, քիչ սպասիր,*
*Գնամ իշխանից բերեմ գիր:*

*– Շարեցին, մորքուր, շարեցին,*
*Մինչև կուրծքս ալ քարեցին.*
*Բաշխի՛ր մորս գերեզմանին,*
*Մի՛ կորցներ կյանքս անգին:*

*– Թող շարեն, բալա ջան, թող շարեն,*
*Մինչև շլինքդ թող քարեն.*
*Իշխանը ձեռք քաշեց թղթին,*
*Նա անխիղճ չէ, կուզե որբին:*

*– Շարեցին, մորքուր, շարեցին,*
*Մինչև գլուխս ալ քարեցին.*
*Սիրտդ քար է, անխիղճ մորքուր*
*Հոգիդ ընկնի գեհենի հուր:*

*Անաստվա՛ծ, դու ինձ ծախեցիր,*
*Ջանս քարով թոխմախեցիր.*
*Մորքո՛ւր, մխիթար չունենաս՝*
*Քեզ տեսնեմ՝ սև ագռավ դառնաս,*

*Բովանդակ երկիրը ման գաս,*
*Տեղ չի գտած՝ պարիսպիս վրա՝*
*Նստիս ղողդաս...*

*Արդյոք դիպվածակա՞ն է այս նույն ավանդության գտնվիլը իրարմե անհունապես հեռու երկու երկիրներու մեջ: Անշուշտ ոչ: Հարաբերությունը կամ հաղորդակցությունը փոխադրեր է մեկտեղեն մյուսը: Ամենայն հավանականությամբ Հայաստանի անընդհատ գաղթականություններու միջոցավ այս ավանդությունը հասեր է մինչև Ռումանիա: Երբևիցե հետադարձ գաղթականության հոսանք չէ եղած, որ պահ մը մտածենք, թե Ռումանիայեն դեպի Հայաստան եկավ:*



Barberot *արդեն ժամանակագրական չփոթություն մը կգտնի եկեղեցվո շինության և ավանդության մեջ մատնանշված իշխանին նկատմամբ:*

*Եկեղեցին շինվեր է 1513–1521 թվին,* Negru-Voda *անուն իշխանի մը ձեռքով: Այս իշխանն ապրած է 1250-ին, այսինքն եկեղեցվո շինութենեն 268 տարի առաջ: Ուրեմն նախքան եկեղեցվո շինությունը, ավանդությունը շատ կանուխեն գոյություն ունեցեր է Ռումանիայի մեջ, որ գլխավոր գիծ մըն է հայոց գաղթականության: Վասպուրականի Սենեքերիմ թագավորի ժամանակակից Վասիլ Բ կայսրն է, որ հայերու մեծ գաղթականություն մը տարավ Մակեդոնիա, որուն մասին վերև տեսանք Ստեփաննոս Ասողիկի վկայությունը: Կարելի է, որ նույնիսկ այդ Վասպուրականի գաղթականության մեկ հատվածն էր, որ Վասիլ Բ գաղթեցուց, որոնց մեջ, անշուշտ, կգտնվեին Հայաստանցի արճեշցիներեն ալ:*

*Արդյոք կապ չունի՞ այս ավանդությունը Հայաստանի Արճեշին հետ և Արճեշով ալ անոր շատ մոտիկ Աղթամար կղզվույն մեջ շինված ծովային պարիսպներուն հետ, որ, ըստ Թովմա Արծրունվո, գերմարդկային հրաշքներ էին ճարտարապետ Մանվելի ձեռքով իրագործված: Արդյոք Հայաստանի, մասնավորապես Վասպուրականի մեջ համբավ ու հռչակ ունեցող Մանվելը չէ՞ Ռումանիայի Արճեշի ավանդության պատմած Մանոլը: Ժամանակագրական դեպքերը և ավանդության պատմվածքի նմանությունները այնչափ համոզիչ են, որ ես կուզեմ հավատալ, թե վասպուրականցի հրաշագործ Մանվելն է քանի մը դար հետո Ռումանիայի ժողովուրդի բերնին մեջ Մանոլի փոխված: Այս մասին քննությունը հառաջ տանիլ և ավելի լուսաբանել կթողում մասնագետներուն:*

*Ալեքսանդրապոլ, 1911, հուլիս.*

## Բ

## [ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃԵՐԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՐՊԵՐԻ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԷՏԱՊՆԵՐԸ][1]

*Մեր հին պատմագրական ակնարկներից հնարավոր է լինում ենթադրել, որ Հայաստանի մեջ հին ժամանակներից գոյություն ուներ հայ ժողովուրդը. ըստ նորագույն գիտական հետազոտությանց հետագա դարերի ընթացքում Արևելքից և Արևմուտքից եկել խառնվել են ուրիշ ազգեր և ցեղեր տեղական բնիկ ժողովուրդի հետ, կազմելով մի նոր համայնք: Այդ պատմագրական անորոշ ակնարկներ և քննական ուսումնասիրություններ հաստատություն են գտնում որոշ փաստերով, որ դեռ նախաքրիստոնեական շրջանում Հայաստանում գոյություն ունեցել են կուլտուրական հաստատություններ և ճարտարապետական մեծամեծ կառուցվածքներ: Քրիստոնեության սկզբից, նույնիսկ նախաքրիստոնեական ծագում ունեցող մի քանի շինությունների ոճը և նրանց շինարարական կատարելություններն անվիճելիորեն ապացուցում են, որ ճարտարապետական արվեստը մի քանի դար մշակելուց հետո, հասել է քրիստոնեական շրջանի 3–4-րդ դարերն այնքան մաքուր կատարելությամբ, որչափ որ սպասելի էր նույն դարաշրջաններին, համեմատելով շրջակա մեծ պետությանց մեջ կառուցվող շենքերի կատարելության հետ: Մանավանդ ըստ տեղական պայմանների, որոշ շինարարական կերպեր են երևում այդ հնագույն շենքերի վրա, որ զուտ տեղական ստեղծագործության բնույթն են ներկայացնում: Արդ, որովհետև ներկա աշխատությանս գլխավոր նպատակն է հայոց ճարտարապետության մի քանի ուշադրության արժանի մասերի վրա խոսել, ցույց տալ նրա սկզբնավորության հավանական ժամանակը, դարերի ընթացքում զանազան վերածնություններն ու կրած փոփոխությունները, հուսկ հետո՝ նրա անկումն ու անկման պատճառները, ուստի, առաջադրած խնդիրներս ավելի հասկանալի դառնալու համար, հարկ եմ համարում նախապես ընդհանուր գծերով ցույց տալ Հայաստանի շուրջը ծաղկող ճարտարապետական արվեստի զանազան երկիրների մեջ ծագումն ու զարգացումը, որոնց ազդեցության տակ հավանորեն փոխանցմամբ ծնեց ու զարգացավ Հայաստանի ճարտարապետությունն յուր սեփական ոճով և ինքնուրույն շինելակերպերու կատարելությամբ: Ընդհանուր ճարտարապետության ծագման մասին թեև օտար լեզուներով*

[1] *Այս ավարտված աշխատությունը գրված է եղել հատկապես «Նյութեր պատմական հայ ճարտարապետության» համար: Վերնագիրը դրել ենք մենք:*

*Կազմող*

գրվածներ շատ կան, որոնք գուցե այնքան էլ մատչելի չեն մեզ՝ հայերիս մեծամասնության համար, սակայն ընդհանուր ճարտարապետության Հայաստանի հետ ունեցած կապերի մասին շատ քիչ է խոսված օտար գրականության մեջ. այդ տեսակետով, կարծում եմ, որ անօգուտ չպիտի լինի այս առաջադրածս ծրագրով աշխատությունս:

Պատմական շրջանի հորիզոնին վրա, որը դեռ բոլորովին զտված չէ առասպելներից, գրեթե միաժամանակ երևցան Եգիպտոսն ու Քաղդեան, ցեղային և քաղաքական հզոր կազմակերպությունով և իրենց կանգնած մեծամեծ կառուցվածքներով, որոնց մնացորդները ներկա գիտական արվեստագետներից գնահատվելով՝ ճանաչվեցին իբրև ճարտարապետական ներդաշնակությամբ և իրեն ժամանակին համար նպատակահարմար որոշ ծրագրով կանգնված կոթողներ: Այս երկու երկիրների մեջ բնության արտադրած շինանյութերի համեմատ, կանգնվեցին հսկայական ամրոցներ, բերդեր, տաճարներ, շիրիմներ և անհատական մեծ ու փոքր բնակարաններ՝ իրենց տնտեսական, քաղաքական պետքերի և ստացած կրթական զարգացման աստիճանի համեմատ ոճավորելով: Եգիպտոսի մեջ քարը և փայտը հավասարապես գործածվեցան ամեն չափի և որակի կառուցվածքների համար, օգտվելով անսպառ քարահանքերից և համատարած արմավենիի ծառերի անտառանման խտությունից: Իսկ Քաղդեայում և հետո ասորա-բաբելական երկրում, քարի և փայտեղենի նվազության պատճառով, անթուրծ և թրծված աղյուսներ կատարեցին շինության մեջ այն դերը, ինչ որ Եգիպտոսի մեջ կատարում էին քարն ու փայտը: Աղյուսաշինության արհեստն այնչափ կատարելության հասավ Ասորա-Քաղդեայի մեջ, որ ոչ միայն պատերի շինության ծառայեց, այլև կիտվածանկար աղյուսներով շենքերի ճակատները զարդարվեցին: Այս երկրում, փայտի հազվագյուտ լինելու պատճառով, արվեստագետներ հնարեցին աղյուսաշեն կամարների և գմբեթների եղանակները, որոնք առանձին վեհություն էին տալիս շենքերին: Ասորա-քաղդեական կամարաշինության և գմբեթաշինության եղանակը հետզհետե այնքան կատարելության հասավ, որ մինչև մեր օրերը գործածության մեջ է շինարարական ասպարեզում: Շենքը գմբեթավորելու ոճը դեռ նախաքրիստոնեական շրջանում հռոմեական երկիրներում ընդհանրանալուց հետո բյուզանդական արվեստին մեջ ընդմիշտ որդեգրվեց թրծված աղյուսներով պատեր և կամարներ շինելու արվեստը:

Մեր թվականությունից մոտավորապես քառասուն դար առաջ Եգիպտոսի և Ասորա-Քաղդեայի մեջ սկսվող ճարտարապետությունը թեև հետզհետե մեծամեծ բարեփոխությունների ենթարկվեց, այնուամենայնիվ միշտ նկատելի մնաց նրա շինարարության մեջ նախնական ավանդական կիկլոպյան երևույթը: Եգիպտական և ասորա-քաղդեական ճարտարապետության կիկլոպյան հատկանիշը ոմանք վերագրում են անկատարելագործ գործիքների, ուրիշներ՝ նրանց կրոնական հասկացողությունների, բայց, ինչ որ ավելի ճիշտն է, եթե նախնական շինարարական գործիքների անկատարություն իրենց դերն ունեցան ոճերի լրջության և սառնության մեջ, այնուամենայնիվ, Արևելքի մեծ ազգերի մեջ խիստ համրաբար զարգացավ գեղարվեստական նրբությունների ճաշակը: Նախաքրիստոնեական 7-6-րդ դարերուն երևնալ սկսող հունական ճարտարապետության էր վերապահված կատարյալ ներդաշնակությամբ և գծերի անօրինակ շնորհալի նրբությամբ այնպիսի չնաշխարհիկ ոճ ստեղծել, որը ոչ միայն Հունաստանի ապագա ժառանգորդ հռոմայեցիների ճարտարապետության անփոփոխ խարիսխը եղավ, այլև տասնյակ դարեր, գրեթե մինչև մեր օրերը, բովանդակ Եվրոպային տիրապետեց: Դեռ մեր օրերուն իսկ, այնքան ընտելացած ենք այդ ոճին, որ նման մի շենք գրեթե չենք կարող գտնել, որուն մեջ չգտնվին հունա-հռոմեական ճարտարապետության հատուկ գծեր:

Հունաստանի վրա հռոմեական տիրապետությունը չկարողացավ իր ինքնուրույն ոճը ստեղծել, այլ գրեթե նույնությամբ ընդունեց հունական ճարտարապետությունը, ինչպես նաև ընդունեց հունական աստվածությունները մի քանի թեթև հավելումներով և անունների փոփոխություններով: Հին Արևելքը բնության ուժերն էր աստվածացնում, իսկ հին Հունաստանը գիտությունն ու արվեստներն էր աստվածացնում: Չկա գրեթե մի հունական աստվածություն, որ որևէ գիտության կամ արվեստի ստեղծագործողը չհամարվի, չկա մի գեղարվեստ, որ իր մարմնացումը չունենա որևէ աստվածության մեջ: Հռոմեացոց համար վերին աստիճան հարգանաց և ընդունելության խրախույս եղավ հույն ժողովրդի արվեստների կամ արվեստագետների աստվածացման սկզբունքը, ուստի հունական բոլոր նախապես զարգացող ճարտարապետության և գեղարվեստի սկզբունքները նույնությամբ ընդունելե հետո, նվիրվեցին աշխարհաշինական և քաղաքակրթական խիստ մեծ աշխատանքների: Անդադար զբաղվեցին հասարակական և ժողովրդական նշանակություն ունեցող կուլտուրայի զարգացմամբ և այդ ուղղությամբ կատարեցին անթիվ շինարարական մեծագործություններ, որոնք հին Հունաստանում կամ գոյություն չունեին կամ խիստ հազվագյուտ էին: Հռոմայեցիների տիրապետության օրով շինվեցին քան Հունաստանը գերազանցող կատարելագործված թատրոններ, կրկեսներ, մեծամեծ ջրանցքներ, ջրմուղներ, ձեռագործ լայն ճանապարհներ և ուրիշ շինություններ:

Եկավ մի ժամանակ, որ հռոմայեցի ճարտարապետներ իրենց ինքնուրույն մեծագործություններով և ստեղծագործություններով չափազանց հպարտացան, սկսեցին նախկին ավանդական հունական ճարտարապետության մեջ սրբագրություններ մտցնել ավելի գեղեցիկ և հանկուցիչ ձևեր ու ոճեր ստեղծած լինելու հավակնությամբ, ուրիշ խոսքով՝ ուզեցին ջնջել ճարտարապետական ոճի հունականությունը և հռոմեականացնել, սակայն հետևանքն եղավ անկում, որովհետև հունական ոճի գերագույն ներդաշնակությամբ պարզությունը ծանրաբեռներով անճահ և աններդաշնակ քանդակագործական զարդաքանդակներով, փոփոխացուցին հունական վսեմ ճարտարապետության անկումը:

Քսերքսեսի և Ալեքսանդր Մեծի արշավանքների ժամանակ թեև հունա-հռոմեական ոճեր անցան մինչև Առաջավոր Ասիա, սակայն փոխադարձաբար աքեմենյան և սասանյան ճարտարապետության բացառիկ հառաջադիմություն արած ոճեր անցան դեպի Արևմուտք: Որովհետև եթե Հունաստան և հռոմեական երկիրներ ճարտարապետական արվեստի մեջ գերագույն կատարելության հասեր էին, այնուամենայնիվ Արևելք ևս նախնական վիճակի մեջ բևեռված չմնաց: Մասնավորապես պարսկական տիրապետության ժամանակ, բացի մի շարք շինարարական գործնական հառաջադիմություններե, նաև այնքան կատարելագործվեց կամարաշինության և գմբեթաշինության գործնական կատարելությունը, որ նույնությամբ փոխադրեցին այս ոճը դեպի Հռոմ նախաքրիստոնեական առաջին դարուն: Հռոմի Պանթեոնը առաջին գմբեթավոր շինությունն է Արևմուտքի մեջ, որուն ձևը և գաղափարը գնացել է Պարսկաստանից:

Արևելքի և Արևմուտքի մեջ միմյանցից անկախ կերպով տարբեր ուղղությամբ զարգացող ճարտարապետություններն իրենց մեջ ստեղծեցին հարամասունքների այնքան մանրամասնություններ թե՛ ներքին բաժանումների, թե՛ արտաքին խորհրդավոր կամ գեղարվեստական զարդարանքների և թե՛ շինելակերպի տեսակետով և այս ոճերը միշտ իրենց բնիկ երկրեն դուրս գալով՝ հառաջանում էին դեպի Արևելք ու Արևմուտք և մոտենում էին միմյանց, որուն արդյունքն եղավ բյուզանդական ոճի ծնունդը՝ քաղաքական և կրոնական մի մեծ հեղաշրջման հետևանքով: Բյուզանդական ոճը, որ մի ժամանակ համայնական տիրապետություն էր սպառնում ամբողջ Եվրոպային և Ասիային, կազմված էր արևմտյան և, խոշոր չափով, արևելյան ճարտարապետական ոճերի պատվաստումով:

Նախքան ճարտարապետական ոճերի հատկությանց և նրանց փոխանցումների մասին խոսելը, ըստ իս, կարևոր է պարզել մի հանգամանք, որուն մասին չփոթ կամ սխալ հասկացողությունը հառաջ է բերում մեծամեծ հակասություններ:

Ճարտարապետական շինություններ երկու գլխավոր հատկություններ ունին. 1) ոճը (style), 2) շինելակերպը (precedé de construction): Շատ անգամ այս երկու հատկանիշներն են, որ չփոթված են միմյանց հետ և մեկը մյուսին տեղ առնված: Երբ մեկն ուզիղ է խոսել ոճի մասին, քննության տակ է առել շինելակերպը կամ շինելակերպին վրա խոսել ուզելով, խոսել է ոճ անվան տակ, որով գրվածքներ առհասարակ անհասկանալի դառնալով, կորցրել են իրենց արժեքը:

Ճարտարապետական ոճ ըսելով, մենք պետք է հասկանանք միևնույն կոչումով որևիցե շենքի զանազան երկիրների մեջ ստացած տարբեր ձևերը և տարբեր տարազը: Տարբեր երկիրների մեջ միևնույն նպատակով շինված շենքերի տարբեր ձևերը և զարդավորումը համարվում է տվյալ երկրի հատուկ ոճը: Այս միակ պատճառով է, որ պատմության հեռավոր շրջաններից մինչև մեր օրերը ծնող, զարգացող և մեռնող ճարտարապետական հուշարձանների ավերակների և բեկորների վրա, գիտնական արվեստագետներ դրոշմված են տեսնում կերտող ազգերի ինքնուրույն մտավոր զարգացման աստիճանը և բարոյական ու ֆիզիկական արժանավորությանց ճշգրիտ պատկերը՝ լինի դրական կամ բացասական: Ոճերը ոչ միայն զանազանվում են երկրե երկիր տարբեր ազգությունների մեջ, այլև հաճախ նկատվել է, որ միևնույն երկրի մեջ, զանազան կետերու վրա, տարբերվում են ոճերը՝ պահելով միայն ավանդական, երկրին հատուկ գծերը: Ուստի այդ ոճերի զանազանությունները ցույց են տալիս նույն երկրում ապրող տարբեր ժողովուրդների կրթական աստիճանը և նկարագիրը: Այսպիսով ամբողջանում և սրբագրվում է նույն երկրին պատմական ուսումնասիրությունը:

Ամեն երկրի մեջ ճարտարապետական ոճերը որոշ դարաշրջանների կամ որոշ հանգամանքների հետևանքով միշտ փոփոխության – զարգացման կամ անկման – ենթարկվելե զատ, հաճախ դուրս են գալիս իրենց բնիկ երկրեն և ազդում են ուրիշ

մոտ կամ հեռու երկիրների վրա, հեռավոր երկիրների ոճեր դուրս բերվելով իրենց բնիկ երկրից, բերվել և պատվաստվել են բնիկ ոճի վրա, փոփոխվելով և տեղական ճաշակին հարմարեցվելով: Այս ազդեցությունների և ներգործությունների հետևանքով է, որ ստեղծվեր են ընդհանուր ճարտարապետության մեջ ոճերի մի բազմակողմանի և ճոխ այլազանություն: Ահա այս պարագան է, որ ուսումնասիրության գործում բավական դժվարություն է պատճառում գիտնական արվեստագետներին: Որովհետև հարկ է լինում որոշելու նախ բնիկ ոճը կամ տեղական ստեղծագործությունը, հետո զանազանել եկամուտ ոճերը, նրանց կրած փոփոխությունները և, որ ավելին է, որ երկրից եկած լինելը: Այս մանրամասնությանց ճշտիվ ուսումնասիրությունն ապացուցում են նույն երկիրների քաղաքական և տնտեսական հարաբերությունները, որոնց մասին հաճախ լուռ են եղած մագաղաթյա պատմությունները:

Գիտնական արվեստագետների և պատմաբանների այս դժվարին գործը դյուրացնելու համար, հարկ եղավ նախ անջատ կերպով ի մի հավաքել յուրաքանչյուր ժողովրդի հիշատակարանները՝ գրքերի և հնագիտական թանգարանների մեջ. բավարար չափով նյութեր հավաքվելուց հետո է, որ կարողացան բաղդատական ուսումնասիրության ենթարկել և զանազանել բնիկ ոճն եկվորից և միևնույն ժամանակ որոշել եկվոր ոճերի իսկական գաղթավայրը: Այս եղանակով կատարված ուսումնասիրությամբ ոչ միայն անսխալ որոշեցին փոխադրյալ ճարտարապետական ոճերի հայրենիքը, այլև հաստատեցին քաղաքական, կուլտուրական և տնտեսական հարաբերություններն եկվոր ոճերի հայրենիք եղող երկիրների հետ: Եվ որպեսզի այս բոլոր ուսումնասիրություններն ընդհանուրին մատչելի դառնան, գրվեցին մեծամեծ հատորներ, կազմվեցին հոյակապ թանգարաններ և շարունակվում է դեռ միևնույն եռանդով այս օգտակար աշխատանքը:

Ճարտարապետական արվեստը, ինչպես քիչ առաջ նկատեցի, ամեն տեղ բաղկանում էր երկու գլխավոր մասերե. 1) ճարտարապետական գեղարվեստական ոճե, 2) շինարարական կերպերե. ճարտարապետական ոճի զարգացումը կախված էր տեղական ժողովրդի ճաշակեն և մտավոր զարգացումեն, իսկ շինարարականը՝ երկրի բնական հարստություններե, այսինքն շինարարության պատշաճ երկրին արտադրած շինանյութերեն: Այս երկու պայմանների բավարար գոյությունը գլխավոր մղումը տվին ճարտարապետության զարգացման բարձրագույն աստիճանին, նաև փոխանցումների օճախը լինելով, կրթիչ դեր կատարեցին շրջապատող ազգերի կրթական մակարդակի բարձրացման գործում:

*
* *

Նախաքրիստոնեական մոտավորապես 4-րդ դարուն ասորա-քաղդեական ճարտարապետության ավանդություններով վերածնված և ակնածելի բարձրության հասած պարսկական ոճի ազդեցությունը դեպի Փոքր Ասիա արդեն տարածված և բնիկ ոճի բնույթ ստացած էր, երբ բյուզանդական ոճի վերածնության պահանջն զգացվեց քրիստոնեական 4-րդ դարուն: Տեղական ճարտարապետներ մեծ աշխատանք չգործադրեցին բյուզանդական ոճի նոր վերածնության համար, որովհետև բնիկ երկրի ավանդական ոճի վրա արդեն վաղուց ի վեր սկսել էին արևելյան ճարտարապետության տարրերը պատվաստվիլ: Ճարտարապետների գլխավոր արժանիքն այն եղավ, որ նոր քաղաքական կյանքի համար նորոգ ստեղծագործված ճարտարապետության հետ ներդաշնակ կերպով պատշաճեցուցին և պատվաստեցին թե՛ հին հունա-հռոմեական և թե՛ եգիպտական ու պարսկական արվեստների ընձեռած տարրերը, և առավելապես արևելյան ճարտարապետության ազդեցության տակ գերադույն կատարելության հասավ բյուզանդական ճարտարապետությունը, որուն գլուխգործոցն եղավ և պիտի մնա միշտ միջնադարյան ճարտարապետական հրաշալիքներեն մին՝ Այա-Սոֆիա եկեղեցին և այժմ տաճկական մզկիթ:

Այա-Սոֆիան ոչ միայն մինչև այն ժամանակ զանազան երկիրներուն գոյություն ունեցող ճարտարապետական ոճերեն մի նոր վերածնության գլուխգործոցն է, այլև նրա ոճին մեջ մեծ տեղ են բռնում զուտ արևելյան ճարտարապետական ոճերն ու շինելակերպը. նրա մեջ հազիվ նկատելի են հունա-հռոմեական ոճի ավանդական ստվերագծերը:

Բյուզանդական ոճը, նախորդ ճարտարապետությանց ընդհանուր ուղղությունից իր կերպով և կառուցվածքի եղանակներով չեղվելուց զատ, միանգամայն հեռացավ նաև քրիստոնեից համար նախօրոք ընդունելի եղած basilique-ի հատակագծային ձևից: Basilique եկեղեցիի հատակագծային հատկանիշը հազիվ նկատելի է Այա-Սոֆիայի մեջ. ինչպես իր ճարտարապետական ոճով, նույնպես հատակագծի ձևով դարձավ արևելյան մի շինություն, որի նախատիպերն ավելի հեշտ կարելի է գտնել Արևելքի հասարակական և անհատական շենքերի մեջ:

Տաճարների համար հատակագծային ձևեր գտնելու համար, թե՛ քրիստոնեության սկիզբին և թե՛ նախաքրիստոնեական շրջանին, հունաց մեջ գործ դրված ջանքերի և լուրջ մտահոգությանց մասին խիստ հետաքրքրական տեղեկություններ են տալիս ներկա ժամանակի ուսումնասիրությունները:

Ի հնումն, երբ հույները միապետական կառավարություն ունեին, համոզված էին նաև, որ աստվածները բնակվում են բարձր լեռների կատարներին վրա, թագավորներն էին այն ժամանակ աստվածների օրինակատարներ երկրի վրա, ուստի այս հանգամանքին են վերագրում թագավորության ժամանակ հունական երկիրներում մեհյանների խիստ հազվագյուտ լինելը. կրոնական հանդեսներ և տոնակատարություններ կատարում էին սրբազան կամ նվիրական տեղերի վրա, բացօթյա: Հունաց միապետական կառավարության ժամանակ թագավորներ հատուկ ունկնդրության սրահներ ունեին, ուր դիմում էր ժողովուրդը՝ թագավորին անձամբ ներկայացնելու համար իր խնդիրը կամ գանգատը: Այս ունկնդրության սրահներն ընդհանրապես կլաղկանային մի բացօթյա սյունասրահե և սյունասրահին հաջորդող երկար քառակուսի մի սրահե: Երբեմն սրահի հետևում գտնվում էին մի կամ երկու փոքր սենյակներ՝ ունկնդրության սրահի պետքերին հատուկ. թագավորի գահը դրված էր միշտ սրահի խորը:

Հունաստանի կառավարությունը, երբ աստվածապետական-ռամկավարականի փոխվեց, այն ժամանակ հույները մտածեցին, փոխանակ թագավորական ունկնդրության սրահների, ունենալ մեհյաններ, ուր թագավորական գահի տեղը բռնեն աստվածային կերպավորյալ անդրիներ: Երկար որոնումներից հետո, չկարողացան ավելի հարմար ձև գտնել մեհյանի համար, քան թագավորական ունկնդրության սրահները, ուստի այս աշխարհիկ շենքը նույնությամբ ընդունվեց իբրև աստվածների մեհյան, այնուհետև հույները շարունակ իրենց մեհյանները կանգնեցին նույն ավանդական ձևով միայն ավելի ընդարձակված և պատշաճավոր տեղերի վրա և խորհրդավոր բարձրաքանդակներով զարդարված: Այս մեհենական ձևը դարերի ընթացքում ընդարձակվելով և բարեփոխվելով այնպիսի մի ձև ստացավ, որ հետագա հռոմեական շրջանին կանգնվելիք պետական-հասարակական շինություն basilique-ների նախատիպը լինելու կոչված էր, բացի մի ծայրի կիսաբոլորակ abside-ից:

Հույներից հետո հռոմայեցիք նույնությամբ ընդունեցին հունական մեհյանների ձևը՝ խիստ քիչ բացառությամբ մեհենական բոլորակ հատակագծեր կամ ավելցնելով: Սակայն հռոմայեցիներ խիստ կարիք զգացին մի ուրիշ հասարակական մեծ շենքի, ուր երբեմն թագավորի նախագահությամբ և հաճախ դատավորների և իրավաբանների նախագահությամբ մեծամեծ հասարակական ժողովներ պիտի գումարեին քաղաքական, առևտրական և կուլտուրական ամենակարևոր հարցեր վճռելու համար:

Այս անհետաձգելի պահանջը գոհացնելու համար կանգնեցին basilique ըսված շենքերը, որոնք գրեթե նման էին վերջին հունա-հռոմեական մեհյանների, իրենց ներքին, միջին՝ լայն և կողմնակի՝ նեղ, երեք թևերի բաժանումներով: Միայն մի ծայրին վրա ավելցված էր հատակից մեկ կամ երկու աստիճան բարձր կիսաբոլորակ բաժինը (abside), որը հատուկ էր դատավորներին և մեծ իրավաբաններին (պատահում էր նաև, որ թագավորը կնախագահեր այս ժողովին, բայց հազվադեպ), շենքի մնացյալ մասին մեջ հավաքվում էր ժողովուրդը:

Քրիստոնեության 4-րդ դարուն, երբ նորադարձ քրիստոնյա ժողովուրդը նոր կրոնի համար եկեղեցիներ կանգնել էր պահանջում, պահանջն այնքան մեծ էր, որ ոչ պետական գանձարանը կարող էր բավականություն տալ և ոչ ժողովուրդը կարող էր իր միջոցներով լրացնել այդ պակասը: Ուստի, Կոստանդիանոս կայսրը, այդ ժողովրդական պահանջին գոհացում տալու համար, առանց վարանելու, պետական basilique-ների հսկա շինությունները դրավ քրիստոնյաների տրամադրության տակ, որովհետև, թեև ինքը քրիստոնյա չէր, սակայն քրիստոնյաներ խիստ բազմացել էին կայսրության մեջ և քաղաքականության նժարը թեքվում էր քրիստոնեից կողմը: Քրիստոնյաներ, առանց ի նկատի ունենալու basilique-ների հեթանոսական ծագումը, լիովին ընդունեցին և հարմարեցրին իրենց քրիստոնեական ծիսակատարության պահանջներին, որովհետև շենքը չէր, որ պիտի արտահայտեր կրոնը կամ կրոնական վարդապետությունը, այլ այնտեղ քարոզված հոգևոր օրենքները, ծիսակատարությունները և այս ծիսակատարությանց համար հարմար կահավորումը:

Այնուամենայնիվ զուտ կղերի դասը շատ դոհ չմնաց կայսերական այս պարգևեն, ուզեցին մի նոր ձև մշակել քրիստոնեական եկեղեցիների համար, սակայն մինչև 7-րդ դար անպտուղ անցավ նրանց ջանքը և ազատ թողին քրիստոնյա համայնքներին իրենց ուզածին պես դասավորել կրոնական տաճարների ներքին բաժանումները: Այս իսկ պատճառով է, որ թե՛ Արևմուտքում և թե՛ Արևելքում առաջ եկան մեծամեծ այլազանություններ, հակառակ basilique-ի ուղղության: Հայաստանը գրեթե

չհամակերպվեց արևմտյան ձևերին և դեռ 5-րդ դարուց ստեղծեց իր համար ձևեր, որոնք աշխարհիկ լինելով հանդերձ, մեծամեծ նվաճումներ արին օտար հեռու և մոտ երկիրների մեջ:

Օտարերկրյա ճարտարապետությանց, նրանց ոճերի, շինելակերպերի և փոխանցումների մասին խոսքս վերջացնելե առաջ, կարևոր եմ համարում մի քանի խոսք ավելցնել զուտ կրոնական պաշտամունքի հատուկ՝ արևելյան ազգերի տաճարների և նրանց շինությանց ձևերի մասին, որոնք պետք պիտի դան առաջիկային համեմատական ուսումնասիրության համար, երբ կսկսենք խոսել Հայոց ճարտարապետության մասին առանձնապես:

Ճարտարապետական արվեստի սկզբնական շրջանին, Եգիպտոսը տվեց աշխարհին, թեև նախապատմական շրջանի կիկլոպյան երևույթով, այնուամենայնիվ սրբատաշ քարերով և կրաշաղախով մածյալ պատերի կառուցման օրենքը, հնարավոր դեպքում միակտուր, իսկ առհասարակ մեկե ավելի կտորներե բաղկացած գեղեցկազարդ խոյակավոր սյուների կանգնման հնարավորությունները: Եգիպտոսը սովորեցրեց մեզ շենքը պակելու, օդի և լույսի համար պատուհաններու և նրանց գործածության ձևերը, որչափ որ կներեր նրանց ճարտարապետական հասունությունը. բացի քարի և կրի գործածության եղանակից, սովորեցրեց փայտի գործածության կերպն ու տեղերը՝ թե՛ շենքերի վրա և թե՛ ուրիշ զանազանակերպ պահանջների համար:

Ասորա-Քաղդեային պարտական ենք որմնաշինության համար թրծուն և անթուրծ աղյուսների գյուտը, որովհետև նրանք չունեին Եգիպտոսի նման համատարած քարահանքեր: Իսկ փայտի պակասության պատճառով ստեղծեցին աղյուսներով կամարներ կապելու ոճը: Կամարով ծածկեցին շենքի վրա, մինչդեռ եգիպտացիք փայտով էին ծածկում: Ոչ միայն լայնարձակ տեղերի վրա հաստատուն կերպով կամարածածկ շինեցին, այլև տվին գմբեթաշինության նախնական օրինակներն իրենց շիրիմների վրա՝ թեև փոքր չափերով:

Ասորա-Քաղդեայի հետագա ժառանգ Պարսկաստանը, ճարտարապետական ասպարիզում անհավատալի կատարելության հասցուց աղյուսաշինության արհեստը, որուն միջոցավ ծածկեցին ընդարձակ միջավայրի վրա մեծ տրամագծով կամարներ, միանգամայն վստահ և ապահով հաստության և տարողության ուժին: Գմբեթաշինության գեղեցիկ արվեստն այնքան զարգացավ Պարսկաստանի մեջ, որ ճարտարապետական արվեստին մեջ գերազանց կատարելություն ստեղծող Հունա-Հռոմեական արվեստը ևս նրա ներգործության կարիքն զգաց արևմտյան ճարտարապետության մի խոշոր բացը ծածկելու համար. նախաքրիստոնեական առաջին դարուն պարսկական ճարտարապետության ուղիղ ազդեցության ներքո կանգնվեց Հռոմի Պանթեոնը իր լայնածավալ գմբեթով:

Հունաստանին էր վերապահված ճարտարապետության մեջ ստեղծել ծայրահեղ գեղարվեստականություն, պարզություն, գծերի մաքրություն, անհրաժեշտ հարմարանքների շնորհալի դասավորություն, սյուների, խարիսխների, խոյակների ակնապարար համաչափություն և խորհրդավոր, ու պիտանի քանդակազարդությանց պետքն ու հարմար վայրը շենքի վրա առանց ծանրաբեռնելու:

Հռոմայեցիք, Հունաստանի վրա իրենց տիրապետության շրջանին, հարգանքով խոնարհվելով հունական գեղարվեստական ստեղծագործությանց առջև և միանգամայն անփոփոխ ընդունելով տեղական ճարտարապետության ոճը, շարունակեցին նվազ չափով զարգացած կուլտուրական, հասարակական և քաղաքական շինություններ, վերջապես ինչ որ կպակսեր Հունաստանի մեջ քաղաքական և տնտեսական հարաբերությունները հեշտացնելու համար: Նախկին ասորա-բաբելական, պարսկական և ուրարտական մեծագործ ու մեծածախս ջրանցքներին հակադիր, շինեցին ավելի վայելուչ և նպատակահարմար ձևերով երկար ջրանցքներ, ջրմուղներ, կամուրջներ, գետնուղիներ, և այլ քաղաքական ու կուլտուրական շինությունների հետ միասին՝ անհատական մեծ ու փոքր շինությունների մի բազմազանություն: Ահա այս իսկ պատճառով, մեզ ժամանակակից մի պատմաբան ճարտարապետ հետևյալ բնորոշ որակումն է տալիս հույն և հռոմայեցի շինարար արվեստագետներին. «Հույները ճարտարապետներ էին, հռոմայեցիք՝ ճարտարագետներ»: Հռոմայեցիք հետագայում թեև ավելորդ զարդաքանդակներով հունական ոճի պարզությունը ծանրաբեռնեցին և անկման մոտեցրին, այնուամենայնիվ, տվին աշխարհին այն ամենը, ինչ որ անհրաժեշտ էր քաղաքական կազմակերպության և համամարդկային հասարակության:

Ճարտարապետության և ճարտարագիտության նախնի ստեղծագործությունները մշակելը, նորանոր գյուտերով աշխատանքը թեթևացնելը և ժամանակին ու միջավայրին հարմարցնելը մնում էր հետագա սերունդներին:



*
* *

Վերև ակնարկեցի, որ միմյանցից անկախ և տարբեր ոճերով, Արևելքում, Արևմուտքում և Հարավում ստեղծագործված ճարտարապետական ոճերն իրենց ընիկ երկիրներում սահմանափակված չմնացին, զանազան քաղաքական, կրոնական, պատերազմական և առևտրական հարաբերությունների միջոցով տարածվեցին ընիկ երկրից դուրս՝ հարևան երկիրների մեջ, իսկ հարևան երկիրներ, ներմուծված ոճերն առավել կամ նվազ չափերով, ըստ տեղական պայմանների և ճաշակի, որոշ փոփոխությունների ենթարկելով, պատվաստեցին իրենց ճարտարապետական ոճին վրա:

Ճարտարապետության նախնական հայրենիք եղող մեծ պետություններով գրեթե շրջապատված էր Փոքր Ասիան: Այս երկրամասին մեջ կային անկախ կամ կիսանկախ փոքր ժողովուրդներ, որոնցից մեկն էր Հայաստանը, և անմիջականորեն ենթակա էր շրջապատում ծաղկող քաղաքակրթության ազդեցության:

Ապացուցված ճշմարտություն է, որ նախաքրիստոնեական դարերում իսկ, Հայաստանի ժողովուրդը միշտ կենդանի և գործուն հարաբերության մեջ էր սահմանակից մեծ պետությունների հետ և բնավ անտարբեր չէ եղած շրջակա երկիրների մեջ կատարված կուլտուրական նվաճումներեն օգտվելու: Նախաքրիստոնեական շրջանից թեև փաստացի մեզ հասած ճարտարապետական կատարելագործված հուշարձաններ չկան Հայաստանում, սակայն կան մի քանի շենքեր, որոնք վերագրվում են հին թվականին, հենվելով իրենց ձևերին և ստորաբաժանումներին վրա, որոնք քրիստոնեական լինելու ոչ մի հավանականություն չեն ընծայում, բայց քրիստոնեական շրջանի մեջ, օգտվելով այդ ճարտարապետական կատարելագործված շենքերի գոյությենեն, վերածել են եկեղեցիների՝ անկասկած, 4-րդ և 5-րդ դարերուն: Հիմնվելով ճարտարապետական արվեստի զարգացման անվրեպ օրենքների վրա, հաստատվում է, որ մի քանի դար շարունակ մշակված և ըստ ամենայնի կատարելության հասած արվեստագործության արդյունք են: Այնուամենայնիվ, քրիստոնեական առաջին շրջանից սկսած ապացույցներ բազմաթիվ են, որ ճարտարապետական արվեստը տասնյակ դարեր մեծամեծ նվաճումներ է արել Հայաստանում, ստեղծել է իր սեփական ինքնուրույն ճարտարապետությունը և ճարտարապետական ոճը, փոխառյալ մասեր անճանաչելի դարձնելու չափ հմտությամբ ձուլեր է իր սեփական ոճին մեջ, և իր ստեղծագործություններով ազդել է նույնիսկ ճարտարապետական արվեստի տեսակետով զարգացած երկիրներու վրա, որի մասին այսօր հիացմամբ են խոսում ճարտարապետության պատմաբանները:

Ներկա ժամանակի ճարտարապետական պատմաբաններ, արևմտյան ճարտարապետության ուսումնասիրությունների համար իրենց նյութը վերցնում են գրեթե միմիայն կրոնական շենքերից, որովհետև կրոնական շատ հուշարձաններ են մեզ հասած, մեծ մասամբ անվնաս, և արվեստի բոլոր կատարելություններով օժտված՝ ժամանակի պահանջի համեմատ: Իսկ աշխարհիկ շենքերի մասին միմիայն Հունաստանն է, որ քիչ նյութ է տալիս ուսումնասիրության համար, սակայն Հռոմեական տիրապետության շրջանը լրացնում է այդ պակասը հասարակական և անհատական շենքերի տեսակետով, որուն մասին առիթ պիտի ունենամ խոսելու:

Եգիպտոսը, նախաքրիստոնեական շրջանում, իբրև քիչ հեղաշրջումներ կրած երկիր, զգալի փոփոխություն չկատարեց ճարտարապետական ասպարիզում. հիրավի, թեև արվեստն իր նախնականութենեն հետզհետե դուրս գալով՝ որոշ նրբությունների և կատարելություններ հասավ, սակայն իր կիկլոպյան երևույթը մնաց մինչև պտղոմյան տիրապետության շրջանը. այդ շրջանին արդեն սկսեց լիովին փոխվիլ և ենթարկվիլ տիրող տարրի ճարտարապետական ոճերին: Պտղոմյանց շրջանին թեև եգիպտական ճարտարապետության պատկերը փոխվեց, սակայն նախկին ոճերեն բավականաչափ նյութեր տվեց իրենից հետո վերածնող ճարտարապետություններին ուրիշ երկիրների մեջ: Այստեղ արդեն ուսումնասիրության նյութը միայն կրոնական չէ. համեմատաբար ավելի շատ են քաղաքային և հասարակական շինությանց և գեղարվեստական արտադրությանց մնացորդներ, որ անսպառ նյութ են մատակարարում գիտնականներին և արվեստագետներին:

Հունաստանի մեջ պատկերը բոլորովին տարբեր էր: Հունա-Հռոմեական ճարտարապետական ոճն այնքան կատարելագործված և գեղեցիկ էր, որ ոչ միայն ընդհանրապես մեհյաններ շինվեցին հունական գեղեցիկ ոճով, այլև աշխարհիկ բոլոր շենքերը ենթարկվեցին այդ չնաշխարհիկ ոճին: Զափազանց կրոնասիրությունը չէր, որ Հունա-Հռոմեական ժողովուրդներին մղում էր իրենց հասարակական և անհատական շենքերի համար ընդդրկել այդ միևնույն մեհենական ոճը, այլև ոճի գեղեցկության և ներդաշնակության համար, ամեն ոք ձգտում էր իր անհատական շենքերը ևս նույն ակնապարար ոճով պճնազարդելու նախանձախնդրությամբ: Ահա այս նկատումներով էր, որ Հունա-

հռոմեական երկիրներում, անխտիր ամեն տեսակ հանրային և անհատական շենքեր միևնույն մեհենական տարազով պճնազարդվեցին:

Պոմպեի ավերակների պեղումներով մոխիրների և ավազների ներքևից դուրս եկան ամբողջական շենքեր, որոնց վրա եթե հաճախ մեծատառ արձանագրություններ և մասնավոր շենք լինելու գործնական փաստեր չգտնվեին, անպայման մեհյաններ պիտի կարծվեին: Նույնիսկ Հայաստանում ունենք մի այսպիսի օրինակ. Գառնիի Տրդատի Հովանոցը, որ կանգնված է եղել հռոմեական գեղեցիկ ճարտարապետությամբ, մի քանի գիտնականների կարծիքով, այդ շենքը կռապաշտական մեհյան էր, ոչ թե Հովանոց: Սակայն մանրամասն քննությամբ բոլորովին պարզված է այժմ այդ ենթադրության միանգամայն սխալ լինելը, նույնիսկ այժմ ավերակների մեջ գոյություն ունեցող անվիճելի փաստերով. ի՞նչ արժեք կունենան թռուցիկ տպավորությունները և առանց գիտական մանրամասն քննության հայտնված կարծիքներն ու ենթադրությունները, շատ-շատ մի ժամանակ կմոլորվին կարծիք հայտնողներ և կմոլորեցնեն ուրիշներին, հուսկ հետո ճշմարտությունը մեջտեղ կուգա և իրենք կթաղվին իրենց կարծիքների փլատակներին տակ: Գառնիի շենքին արևելագիր լինելը միանգամայն հակառակ է ընդհանրապես հռոմեական երկիրներում ընդունված մեհենաշինության, հետո մեհյաններ, առանց բացառության, երբեք պատուհաններ չեն ունեցել, իսկ Գառնիի շենքի ավերակներում տակավին պահված են, բացի ճոխ քանդակազարդ դռան շրջանակից, մի քանի հատ արտակարգ գեղեցկությամբ քանդակազարդված խոշոր պատուհանների շրջանակներ: Հետևաբար, Գառնիի մեջ կանգնված այդ գողտրիկ շենքի շինողը՝ Տրդատ Ա (ըստ քննադատական ուսումնասիրության), թե Տրդատ Գ լինի (ըստ Մ. Խորենացվո), շինած է անվրեպ կերպով իբր անհատական Հովանոց՝ շրջակա տեսարանների բնական գեղեցկությունը վայելելու համար, ոչ թե իբրև մեհյան: Թեև պարզ ճշմարտություն է, որ Հայաստանի ճարտարապետներ իրենց միայն հայտնի պատճառներով չսիրեցին այդ ոճը և չընդհանրացրին Հայաստանի մեջ և, հավատարիմ մնալով նախնի ավանդական ոճերին, շարունակեցին իրենց գործը հետագա դարերում, խիստ աննշան մի քանի մոտիվներ ժամանակավորապես որդեգրելով:

Արևելքում, թե՛ Ասորա-Քաղդեայում և թե՛ Պարսկաստանում, մեհյաններ կամ կրոնական պաշտաման տաճարներ բնավ գոյություն չունեցան: Այդ բնապաշտ ժողովուրդներն իրենց պաշտամունքի տեսակետով տաճարների բնավ կարիք չզգացին. նրանց պաշտամունքը և հանդիսավոր մեծամբոխ տոնակատարությունները տեղի էին ունենում բոլորովին բացօթյա՝ բարձր սարերի, բլուրների կատարին կամ անտառային պուրակների մեջ: Ասորա-քաղդեական տաճարները, որոնց ավերակները մինչև մեզ են հասել, միմիայն Ziggourah անվանված լեռնանման աստիճանավոր աշտարակներն են, որոնք չինվում էին զույգ նպատակներով: Զիկկուռահի գագաթին շինված էր միայն մի փոքր սենյակ, որը եթե պաշտամունքի հատուկ մի կոչումն ուներ, սակայն առավելապես ծառայում էր աստեղագիտական նպատակի. այնտեղ մինչև առավոտ գիշերող քուրմը պաշտոն ուներ աստղերի շարժումները դիտելու և արձանագրելու:

Ասորա-քաղդեական երկիրների հետագա ժառանգ պարսիկները նույնպես կանգնեցին Զիկկուռահը հիշեցնող աստղագիտարան աշտարակներ, որոնց գագաթին կվառվեր սրբազան կրակը տոնակատարության օրերին և ստորոտին, բացօթյա հրապարակում, կլինեին կրոնական հանդեսները: Բացի այս աշտարակներից, ուրիշ սրբավայրեր ևս ունեցան բոլորովին բացօթյա, որոնց վրա կանգնված էին առ առավելն մարդաչափ բարձրությամբ պատվանդաններ – ասոնց վրա կբորբոքվեր սրբազան կրակը բացօթյա հանդեսների ժամանակ և զոհի սեղաններ՝ չափավոր մեծությամբ: Մազդեականների սրբարանն էր մշտավառ կրակի ատրուշանը, որը նույնպես փոքրիկ մի շինություն էր և որուն մեջ հազիվ կարող էին տեղավորվել մեկ-երկու մոգպետ կամ կրակի պաշտոնյաներ: Ըստ օտար պատմագիրների՝ մազդեականության մեջ շատ ուշ ժամանակ ընդունվեցին կերպավորյալ աստվածությունները շրջակա ազգերի ազդեցությամբ, և ունեցան արձաններ, որոնք դուրս կբերվեին բացօթյա հանդեսների ժամանակ: Միայն թե առանձին ակնածանքի առարկա էր արքայական պալատը, այն համոզումով, որ թագավորներ երկրի վրա աստվածությանց փոխանորդներն էին, հետևաբար նրանց պալատների վրա և դամբարանների վրա բարձրաքանդակ և ցածաքանդակ կփորագրվեին խորհրդավոր այլաբանական պատկերներ:

*
* *

Հայաստանը շրջապատված էր արևելքից, արևմուտքից և հարավից մեծ պետություններով, որոնց մեջ, ըստ իրենց ժամանակի կուլտուրական և քաղաքական զարգացման, ճարտարապետական արվեստը հասած էր բարձրագույն աստիճանի: Հայ ժողովուրդը բնավ անտարբեր չմնաց իր շուրջը կատարվող հառաջդիմական շարժումներին: Պատմության մի շարք տվյալներով հաստատվում է, որ Հայաստանը ոչ միայն քաղաքական և տնտեսական հարաբերության մեջ էր շրջապատող մեծ պետությունների հետ, այլև երբեմն, ինքնուրույն գոյությունը պահպանելու համար, պատերազմներով չափելու փորձեր է արել՝ երբեմն նույնիսկ հաղթական դուրս գալով: Հայաստանի ինքնուրույնությունը պահելու համար, քաղաքականապես ինչ դիրք որ ունեցեր են, այնուամենայնիվ ճանաչելով շրջապատի կուլտուրական մեծությունը և արժանավորությունները, անդադար օգտվել ջանացել են նրանց զարգացումից և մասնավորապես ճարտարապետության արվեստի տեսակետով, անդադար փոխադրել են Հայաստան նրանց ոճերը ե շինելակերպերը:

Թե ճարտարապետական ճյուղից զատ՝ ուրիշ ի՞նչ կուլտուրական մշակույթներից օգտվել է Հայաստան իր շուրջը մեծ պետությունների մեջ զարգացող քաղաքակրթությունից, այդ մասին կգրեն առանձին մասնագետներ. ես պիտի փորձեմ պարզել (թե) ճարտարապետական ճյուղին մեջ հայեր ի՞նչ չափերով օգտվեցին շրջակայից և ի՞նչ փոխառություններ արին զանազան երկիրներից, մասնավորապես ո՞ր դարաշրջանների մեջ:

Առաջին դարից մինչև տասնևհինգերորդ դարի վերջերը, մինչև Հայ ճարտարապետության վերջին անկումը, Հայաստանի մեջ կանգնված բոլոր շենքերի մեջ անխտիր երևում են շրջակա մեծ երկիրների մեջ զարգացող ոճերի և շինելակերպերի ազդեցություններ հայկական արվեստի վրա. սակայն այս ազդեցությանց մեջ առավելագույն և գրեթե մշտնջենական տեղը գրավել է արևելյան ճարտարապետությունը՝ սկսած ասորա-քաղդեականից մինչև սասանյան վերջին անկման շրջանը: Երկրորդական և պատահական բնույթ են կրում հունական, հռոմեական, բյուզանդական և այլն արվեստների ներգործությունը հայ արվեստի վրա, որոնք թեև մի կարճ ժամանակով երևացել են հայ ոճի մեջ, սակայն շուտով անհայտացել են, տեղական ճաշակի համեմատ անհունապես ձևափոխվելով:

Հայաստանի մեջ կան չորրորդ դարից մեզ հասած շենքեր, որոնք թե՛ ոճով և թե՛ շինարարական արվեստով այնքան կատարելության հասած են, որ, շինարարական արվեստի զարգացման անվիճելի օրենքներով դատելով, պետք է որ մի քանի դար անդադար մշակման ենթարկված լինելով այդ աստիճանին հասնեին: Մասնավորապես մի քանի շինությունների ծագումը զանազան փաստերով նախաքրիստոնեական ծագում ունենալին ենթադրվում է, ուստի սրանցով ապացուցվում է, որ մեր թվականեն շատ առաջ ինքնուրույն մի հայ ճարտարապետություն գոյություն ուներ, որուն արդյունք եղող այդքան կատարելագործված շենքեր հասել են մեզ քրիստոնեական շրջանում: Եթե նախաքրիստոնեական շենքեր խիստ հազվադեպ են Հայաստանում, սակայն պատմական տվյալներ կան, որոնք անվիճելի են դարձնում Հայաստանի մեջ քաղաքակրթության բարձր զարգացման գոյությունը և նրանց կրթիչ դերը թե՛ արվեստի և թե՛ ընդհանուր կուլտուրայի մշտական խոշոր ազդեցություններն ապագա սերունդների վրա: Ուստի, հայ ճարտարապետության սկիզբը կամ ծագումը ենթադրաբար ընդունելով նախաքրիստոնեական շրջանի առնվազն երրորդ դարը, քննենք այդ արվեստի զարգացման աստիճանները, նրա կատարելությունները և անկումները, անկումներից հետո յուրաքանչյուր վերածնությունը և վերջին անկումը, որ տեղի է ունեցել 15–17-րդ դարերի ընթացքում: Այս քննական հայացքի մեջ մենք կտեսնենք, թե ո՞ր երկրից ի՞նչ ազդեցություններ եղել են հայ ճարտարապետության վրա:

Մեր թվականի առաջին դարերից մինչև 5-րդ դարու վերջերը մեզ հասած ճարտարապետական հուշարձաններ, ինչպես նախապես մատնանշել եմ, չինարարական այնպիսի կատարելության հասած են, որ արվեստի զարգացման ընդհանուր օրենքների վրա հիմնված, անպայման, նախաքրիստոնեական շրջանին գոնե երկու կամ երեք դար պետք էր որ մշակված լինեին, որպեսզի նույնպիսի կատարելությամբ հասնեին մեր թվականի սկզբնական դարերին:

Այս սկզբնական դարերի մեջ զարգացող ոճը ես համարում եմ հայ ճարտարապետության առաջին վերածնություն, որովհետև մեզ հայտնի չէ փաստացի, թե ի հնումն գոյություն ունեցող և ընկնող մի արվեստի վերածնությո՞ւն է, թե՞ Հայաստանում նորոգ կազմակերպված ճարտարապետական մի ինքնուրույն արվեստ է, հետևաբար, առայժմ ընդունելով իբր առաջին վերածնություն, ընդհանուր գծերով պարզենք այդ արվեստին մի քանի հատկանիշները և արտաքին աշխարհի հետ ունեցած կապերը:

Նախապես պետք է գիտնալ, որ հայ ճարտարապետությունն առաջին դարից մինչև իր վերջին անկումը՝ 15–17-րդ դարերը՝ անվրեպ կերպով ենթակա է եղել արևելյան արվեստների: Արևելյան ճարտարապետական արվեստի հատուկ կառուցման օրենքներ և գեղարվեստական ոճերի կապերն

անխզելի կերպով պահված են հայոց մեջ սկսած ասորա-քաղդեականից ու պարսկականից և հետզհետե խմորվելով, մասամբ բարեփոխվելով, հասեր են մինչև հայ արվեստի վերջին անկումը: Կան նույնիսկ եգիպտական ոճի ներգործություններ՝ պարբերաբար, բայց առավելապես զգալի է դառնում հունա-հռոմեական ոճի ազդեցությունն երբեմն ուղիղ գծով, իսկ հաճախ Սիրիայի ճանապարհով Հայաստան մտած, իր հետ բերելով նաև սիրիական ոճի բավականին հետաքրքրական և ակնահաճո մոտիվներ: Չեմ խոսում բյուզանդական արվեստի մասին, որովհետև այսօր միահամուռ ընդունված մի ճշմարտություն է, որ բյուզանդական արվեստն Արևելքի և Արևմուտքի ճարտարապետական ոճերի խառնուրդով է կազմված, և գալիս է այնպիսի մի դարաշրջան, որ հայ ճարտարապետությունն իսկ ունենում է իր ազդեցությունը բյուզանդական արվեստի վրա: Այս մասին կգրեմ իր կարգին:

Այս առաջին վերածնությունը, պահելով միանգամայն իր զուտ արևելյան տիպը, ցույց է տալիս մի քանի շենքերի վրա հունա-հռոմեական որոշ գծերի ներգործությունը՝ ավելի զարդարանքների տեսակետով, քան թե շինելակերպի:

Դեռ չէ ապացուցված, որ հայ ճարտարապետությունը արտաքին արևելյան կերպարանք ստանալով հանդերձ, որմնաշինության համար աղյուս գործածած լինի, շատ հազվադեպ միայն դիմել են թրծուն աղյուսի, այն է՝ ջրամբարների, ջրմուղների և սոցա նման մի քանի շինությունների համար:

Հայաստանի ճարտարապետությունն իր բազմադարյան տևողության ընթացքում շինանյութ ունեցեր է միայն քարը, սկզբում բազալտ և զանազան տեսակի որձաքար, իսկ հետո, ամբողջ ժամանակ, հրաբխային տուֆ: Կրաշաղախը ի գործ դրել են ամեն ժամանակ առանց բացառության:

Քարի գործածության սովորությունը, ինչպես երևում է, ժառանգություն մնացել է մասամբ պարսիկներեն, բայց առավելապես ուրարտացիներեն: Այս վերջիններիս շինության մնացորդները, որ դեռ գոյություն ունին մեր օրերուն, շինված են տաշված և կոկված բազալտ քարերով (բացառությամբ ամրոցների պատերի): Այս օրվան մեր թանգարաններում պահվող բոլոր բևեռաձև արձանագրություններ՝ հղկված բազալտի վրա փորագրված լինելե զատ՝ կան նաև շինության կարևոր մնացորդներ, որոնք ցույց են տալիս, թե մասնավոր շենքեր ևս շինվում էին բազալտի մեծածավալ հղկված քարերով: Այս մնացորդները կարելի է տեսնել Արմավիրում, Արտաշատի տեղում, Դվինում, նույնիսկ Անիում, ուր նախաքրիստոնեական ժամանակի շինված բերդերը տաշված որձաքարով են շինված: Անշուշտ, այս երևույթը պետք է համարել Հայաստանի մեջ նախապես գոյություն ունեցող բազմաթիվ կիկլոպյան շինությանց շարունակությունը և նրանց զարգացումը: Դիրքլարի եկեղեցին, որը, անկասկած, մի հեթանոսական դիցապաշտության տաճար է եղած սկզբում, աստիճաններով և պատերի ստորին մասերով, շինված է տաշված կարծր որձաքարերով: Շիրվանջուղի և Տեկորի տաճարներն ևս ունին տակավին իրենց վրա այս տեսակ շինություններ, թեև մասամբ ծածկված են հետագա նորոգություններով:

Հունա-հռոմեական արվեստի՝ Հայաստանի վրա ունեցած ներգործությունը երևում է այս առաջին վերածնության մեջ, սակայն մասնավոր բնույթ ունի: Հայ ճարտարապետությունը տեղի տալով հռոմեականի մի քանի մոտիվներին, երբեք չէ փոխած իր շինարարության ավանդական կերպերը և գլխավորապես պահած է նախկին արևելյան տարազը:

Հունա-հռոմեական ոճի մոտիվներ երևում են էջմիածնի տաճարի պսակների մեջ պատշաճեցուցված պճղակներով (modillon). բացի էջմիածնից, գրեթե մեծ մասամբ 5-րդ դարուն կանգնված շենքերի պսակների մեջ գոյություն ունին պճղակներ, և այս պսակի ձևն այնքան հաճելի և օգտակար է երևացել հայ ճարտարապետներին, որ պճղակների ձևն ու հռոմեական պսակի խիստ առաջակարկառումը մասամբ բարեփոխելով՝ շարունակեր են մինչև 7-րդ դարու վերջը, հակառակ 7-րդ դարուն մի նոր վերածնություն ստեղծվելուն և պսակների զանազանատեսակ ձևեր արդեն իրագործվել սկսելուն: Բացի պճղակավոր պսակներից, հռոմեականի ազդեցությամբ միայն 5-րդ դարու շենքերի ճակատին գոյություն ունին tympan-ներով, fronton-ներ, ինչպես Տեկորում, Շիրվանջուղում: Հետագա դարերում կանգնված շենքերի արտաքին ճակատների ֆրոնտոնների տակ այլևս գոյություն չունի tympan-ը կազմող և առանձնացնող հորիզոնական պսակը: Այս առաջին վերածնության հատուկ է հռոմեական որմնասյուների (colonne engagé) և բացօթյա սյունասրահների [portique] փոխառությունը: Ինչպես երևում է, 6-րդ դարուն մի փոխանցման շրջան է սկսվում, մի նոր վերածնության նախօրյակն է լինում. այս շրջանում միայն portique-ն է պահված և ուրիշ մի քանի մանրամասնություններ:

Վերջապես, հայ ճարտարապետության առաջին վերածնության ընդհանրապես հատկանիշներն են՝ արտաքին ճակատների արտակարգ պարզություն, պատուհանների լայնություն և լայնության կրկինից ավելի բարձրության կամարակապ լայն դռներ, պայտաձև աղեղներ և կամարներ, պատերի հաստություն 95 սանտիմետրից մինչև 105 սանտիմետր, երեսի քարերը բարակ, իսկ միջի բետոնն ավելի հաստ, քան երեսի քարերը: Հայկական ստեղծագործություն են համարվում ընդհանրապես պայտաձև աղեղներն ու կամարները, թեև մի ժամանակ համարվեց արաբական ստեղծագործություն, մինչև 1839 թվականին Ֆրանսացի ճարտարապետ Ch. Tenier-ի Հայաստան գալը: Tenier երբ տեսավ Տեկորի պայտաձև աղեղները և ծանոթացավ շենքի շինության թվականին, իր երկհատոր Description de l'Arménie անուն մեծ աշխատության մեջ առաջին անգամ հայտարարեց, որ այս ոճը հայկական է, և նմանը ոչ Արևելքում և ոչ Արևմուտքում գտնվում են նույն թվականներում: 11-12-րդ դարերումն է, որ Սպանիայում շինվեցին արաբական ոճով ապարանքներ՝ պայտաձև աղեղներով:

Նախաքրիստոնեական դարերեն թեև մեզ հասած շենքեր չունենք, սակայն պատմական տվյալներ չեն պակսեր, որ նույն դարերում Հայաստանում գոյություն ունեին կուլտուրական հաստատություններ և բազմաթիվ հասարակական շինություններ: Ի միջի այլոց թատրոնը, որուն գոյությունն անհայտ է քրիստոնեական շրջանում, քաջալերվում էր նախաքրիստոնեական թվականներին, նույնիսկ թագավորներ մասնակցում էին թատրոնական գրականության, Հունաստանից բերվում էին որակյալ դերասաններ՝ թատրոնի զարգացման նպաստելու համար:

Ամենայն հավանականությամբ՝ այդ շրջանի թագավորների հելլենասիրությունն էր մղում տվողը գեղարվեստի զարգացման, որ այն ժամանակ Հունաստանում բազմակողմանի կերպով ծաղկում էր: Հունական դիցապաշտությունը, որ գիտության և արվեստից աստվածացումն էր, այս ժամանակ մուտ գտավ Հայաստանում. բերվեցին հունական աստվածների արձաններ, կանգնեցին նրանց համար մեհյաններ և տեղական պաշտամունքների համեմատ հատկացրին նրանց վերագրումներ ըստ հայկական ավանդությունների: Թերևս հունական աստվածների Հայաստան բերվելուն հետ նաև՝ հունական տաճարաշինությունը և որոշ մեհենական ոճեր, ինչպես վերև թվեցի մասամբ, մտան Հայաստան և տևեցին մի քանի դար, մինչև նոր վերածնություն՝ 7-րդ դար: Դժվար է հավատալ, որ ավելի հին ժամանակ Հայաստանում, բացի արևելյան ընդհանուր տիպից, ճարտարապետական ուրիշ ոճերի խառնուրդ գոյություն ունեցեր. Քսենոֆոնի ճանապարհորդության մեջ առհասարակ շեշտվում է հայոց պարսկասիրությունը և, մեկ խոսքով, Պարսկաստանի քաղաքակրթության ընդհանուր ազդեցությունը:

Այս առաջին վերածնության շրջանում, հավանորեն քրիստոնեական առաջին դարուն պետք է վերագրել հունա-հռոմեական ոճով շինված Գառնիի մեջ Տրդատա թախտ կամ (ըստ Մ. Խորենացիի) Խոսրովիդխտո հովանոց անվանվածը: Սակայն, ինչպես կտեսնենք, այդ գեղեցիկ ոճը խիստ բացառիկ երևույթ ունեցավ Հայաստանում: Նրանից հետո շինված շենքեր երբեք նույն ոճի ազդեցության տակ չընկան: Մեկ խոսքով, հայերը չհամակրեցին այդ ոճին և շարունակեցին զարգացնել իրենց ավանդական արևելյան ոճը:

Նախքան Արշակունիների հունական կուռքեր Հայաստան բերելը և նրանց համար հունա-հռոմեական ձևով մեհյաններ շինելը (որոնց ձևը փոխանցվեց քրիստոնեական տաճարների մինչև 6-րդ դարու կեսը) հաստատուն փաստեր չկան, թե երբվիցե գոյություն ունեցե՞լ են Հայաստանում կրոնական պաշտամանց հատուկ տաճարներ: Ամենայն հավանականությամբ իբրև բնապաշտ ժողովուրդ, ինչ սովորություններ որ ընդունել էր արևելյան հին ազգերի պաշտամանց ձևերից, նույն սովորությունները շարունակում էր, այսինքն իր բոլոր պաշտամանց արարողությունները կատարում էր բացօթյա՝ սրբազան համարված վայրերի վրա, որպիսիք են լեռնային բարձունքներ, խիտ անտառներ, գետեր, աղբյուրներ և այլն, և այլն: Այս մասին ակնարկներ պակաս չեն հայոց դյուցազնական շրջանի պատմության և ավանդությունների մեջ: Հիրավի, ոչ հունական դիցապաշտությունը և ոչ նոր քրիստոնեական կրոնը չկարողացան մոռացնել տալ հայ ժողովրդին հնագույն սովորությունները և պաշտամունքը այն վայրերին, որոնք անհիշատակ ժամանակներից նվիրականացած էին. դեռ մեր օրերին իսկ պակաս չեն սնապաշտ ուխտագնացություններ դեպի երևակայական ոգիների բնակավայր սարի գագաթներ, գետեր, լուսաղբյուրներ, կաթնաղբյուրներ և այլն: Ուրեմն, եթե Հայաստանի մի քանի միապետներ իսկապես ցանկանում էին հունա-հռոմեական քաղաքակրթություն զարգացնել Հայաստանի մեջ հունական կրոնի և ճարտարապետական կառուցվածքների միջոցավ, այնուամենայնիվ գրեթե չհաջողեցան: Ոչ միայն հունական ճարտարապետական ոճը մերժվեց, այլև հու-

նական աստվածներին ևս տեղական բնույթ ունեցող հատկանիշներ վերագրվեցին:

Առաջին վերածնության շրջանին մեջ է, որ Հայաստանում երևում են գմբեթաշինության նախնական փորձերը 5-րդ դարու վերջերին: Տեկորի եկեղեցիի գմբեթի կառուցվածքն ապացույց է, որ 5-րդ դարում Հայաստանի մեջ տակավին կատարելապես զարգացած չէր գմբեթաշինության արվեստը: Տեկորի եկեղեցիի գմբեթի վրա վերին աստիճանի պարզ երևում է կառուցվածքի նախնականությունը, իսկ Էջմիածնի տաճարի 5-րդ դարու գմբեթի մասին միայն պատմական ավանդությունների գիտենք, որ փայտով էր շինված. թե ի՞նչ ձև և շինելակերպ ուներ, մեզ հայտնի չէ, սակայն կասկածից դուրս է, որ պետք էր խիստ նախնական և անհաջող ձև ունենար, որ 7-րդ դարուն Կոմիտաս կաթողիկոսը քանդելով՝ վերաշինեց քարով, երևի որոշ նմանությամբ յուրաչեն Հռիփսիմեի տաճարի գմբեթին: Ինչպես պիտի տեսնենք հետո, 7-րդ դարուն գմբեթաշինության արվեստը Հայաստանի մեջ բավական մշակված և կատարելության հասած էր:

Առհասարակ նկատված է, որ քաղաքական հեղաշրջումները մեծ ազդեցություն են ունենում ճարտարապետության վրա: Դեռ 5-րդ դարու վերջերին, որ Հայաստանի համար քաղաքական հեղաշրջումների մի շրջան է, նկատվում են որոնումներ և փորձեր՝ ճարտարապետության մի նոր վերածնության համար: 6-րդ դարուն արդեն կատարելապես պարզվում են ընդհանուր համահայկական մի նոր ճարտարապետական ոճ ստեղծելու ճիգերը, որովհետև այս դարուն կանգնված մի քանի շենքեր, որոնք հասել են մինչև մեր օրերը, պահելով տեղական շինարարության հատուկ օրենքները և ավելի զարգացնելով այդ ճյուղը, գեղարվեստական ոճի տեսակետով բավական տարբերվում են միմյանցից: Այս շենքերից յուրաքանչյուրի վրա նկատվում են օտարերկրյա զանազան ոճերի պատվաստման փորձերը: Երերույքում շինվում են նախաքրիստոնեական ծագում ունեցող և 5-րդ դարու հայոց ճարտարապետության մեջ ընդունված portique-ները (այունասրահ), դռների վրա fronton-ներ հունական ոճով, սակայն թե՛ այունասրահի և թե՛ դռների երկու կողմի այուների խոյակներն ու խարիսխները միանգամայն արևելյան են. դռների որմնասյանց խոյակները գուցե այուրիական ազդեցության են ենթարկված, սակայն այունասրահի (portique) այանց խոյակները հյուսկեն քանդակներով զարդարված գնդաձև են, հաստ և լայն abaque-ներով, որոնց ծագումը կգտնենք հեռավոր Ասորեստանի Խորսապատի ավերակների պեղումներով հայտնաբերված, իսկ խարիսխները՝ Պարսկաստանում, Ֆիրուզապատի մեջ: Շենքի շուրջանակի պսակը, որ ոմանց հունական երևցավ, մեջը քանդակված denticule-ների պատճառով, այնուամենայնիվ ոչ թե հունական է, այլ պարզապես պարսկական և պերսիպոլական ճիշտ համաչափություններով, թեև հունականի ազդեցությունն է, որ այս զարդաքանդակները մտեր են Պարսկաստան, սակայն պարզ է, որ հետադարձ մի ազդեցություն է Հայաստանի վրա՝ Պարսկաստանում ընդունված համաչափություններով: Փոքր տրամագծով կամարներ եղել են, սակայն լայն տրամագծով կամարի գոյությունը կասկածելի է. բոլոր պատուհաններ խոշոր են և fer á cheval աղեղներով պսակված: Կամարների և աղեղների գյուտը, ինչպես հիշել եմ՝ հին քաղդեական և ժամանակի ընթացքում հասած մինչև Հայաստան, այնուամենայնիվ, ինչպես տեսանք առաջին վերածնության մեջ, Հայաստանում քաղդեական և պարսկական այս շինվածակերպը տեղականանալով՝ փոխվել է պայտաձևի:

Շինանյութն այս դարաշրջանում ևս, կրաշաղախով զանգված հրաբխային տուֆ քարն է, ինչպես պիտի տեսնենք այս մասին, որ Հայաստանի մեջ այս հարմարագույն շինանյութի, այսինքն տուֆ քարի առատության պատճառով մինչև հայ արվեստի վերջնական անկումը և մինչև իսկ մեր օրերուն շենքերը շինվել են քարով: Սակայն Երերույքում հետաքրքրական է պատերի շինվածակերպը. հակառակ ներքուստ և արտաքուստ քարերի մակարդակի մեծ ծավալին, հաստությունները քիչ են, որով ներքին և արտաքին շարվածքների միջոցը մնում է մի բետոնի թանձր շերտ կրաշաղախով զանգված: Ավելորդ է խոսել տաշվածքի մաքրության՝ վերին աստիճանի ճարտարությամբ հղկելու մասին, որն այսօր իսկ մեզ համար մեծարժեք է և կարևոր մի արժանիք որմնահյուս վարպետի համար: Որմնահյուսության այս եղանակը շատ երկար դարեր տևեր է Հայաստանում, ինչպես հետո պիտի տեսնենք, մինչև 11-12-րդ դարեր շարունակվեր է այսօրինակ որմնահյուսությունը, որուն առավելություններն անվիճելի են այն միակ պատճառով, որ մինչև մեր օրերն անվնաս մնացել են, կուրծք տալով բազմատեսակ բնական պատահարների:

Եղվարդի մեջ շինված 5-րդ դարու մեծ կաթուղիկեն, որուն վերևի մասերը փլած են, մնացել են որոշ բարձրությամբ պատերը. շինվածակերպով խիստ նման է Երերույքին, սակայն գեղարվեստական ոճն արտահայտող երեք կիսաքանդ դռների վրա եղած քանդակներից երևում է, որ անխառն տեղական ոճով են քանդակված և ոչ մի կապ չունեն գրեթե օտարերկրյա ոճերի հետ: Նույն բանը կարելի է ասել Դվինի կաթուղիկեի մասին, ինչ որ ասացինք Եղվարդի մասին construction-ի տեսակետով. երկուքին հատակագիծը միանգամայն basilique-ի հետևողություն է, սակայն Դվինում ջանքեր եղել են basilique ձևից հեռացնելով՝ 5-րդ դարու վերջին Վահան Մամիկոնյանի շինած կաթուղիկեի ձևին մոտեցնելու՝ ավելցնելով հյուսիսային և հարավային կողմերի վրա abside-ներ: Ավան գյուղի մեջ շինված 6-րդ դարու եկեղեցին, որ հինգ գմբեթանի է եղած, 5-րդ դարու Էջմիածնի հետևողությամբ, ունի մի շատ գեղեցիկ դուռ՝ քանդակազարդված զուտ արևելյան ոճով, նույնիսկ, կարելի է ասել, նույն ժամանակվան հայկական ոճով, որովհետև որչափ որ արևմտյան ոճերից հեռու է, այնուամենայնիվ չի կապվում արևելյան ոճերի հետ և մնում է ինքնուրույն հայկական, միայն հյուսիսային կողմի պատուհանի շրջանակն է, որ, Երերույքի նմանությամբ պարսկական denticule-ների մի շարք ունի շրջանակին մեջ:

Արթիկ գյուղի մեջ կիսավեր փոքր եկեղեցին ևս 6-րդ դարուն կանգնված շենք է. թեև տարածությամբ փոքր, այնուամենայնիվ այդ շենքի մեջ ավելի ակնբախ են նոր մի վերածնության նախօրյակի ճիգերը և այս փոքրիկ շենքի մեջ կատարելապես երևում են 5-րդ և 6-րդ դարերի թե՛ շինելակերպերը և թե՛ գեղարվեստական ոճերը խտացած՝ խիստ պատշաճ և վայելուչ ձևերով:

Վերջապես, այս 6-րդ դարը իր բոլոր որոնումներով և զանազանակերպ պատվաստման փորձերով նախօրյակն է մի չքեղ վերածնության, - որ տեղի է ունեցել 7-րդ դարուն և իսկապես կոչված էր հայ ճարտարապետության ոսկեդարը լինելու, որուն մասին կսկսեմ խոսել այժմ:

Հայ ճարտարապետությունը 6-րդ դարուն մեջ երկար տատանումներից հետո, 7-րդ դարուն, կարելի է ասել, որ իր կատարելության հասած է թե՛ իր գեղեցիկ ու հանճարեղ ոճով և թե՛ կատարելագործված բազմակողմանի շինելակերպերով: 5-րդ դարու հիշողությունները հազիվ երևում են մի քանի շենքերի վրա. modillon-ներով պսակներ ցանցառ թվով երևում են 7-րդ դարու սկզբին կանգնված շենքերի վրա, իսկ մինչև այս դարու կեսն ստեղծված է պսակների մի բազմազանություն, գեղեցիկ moulure-ներով և հաճոյատեսիլ քանդակազարդությունների. այս դարաշրջանի կեսից հետո է, որ մի նոր պսակի ձև ընդունվում է հայ ճարտարապետության մեջ, որը տևում է երկար դարեր, որուն մասին կխոսեմ իր կարգին: Portique-ներ միանգամայն անհետացած են. նրանց փոխարինել են տեղական ինքնուրույն համաչափություններով որմնասյուներ (colonne engage), գեղեցիկ խոյակ և խարիսխներով, միանգամայն տարբեր՝ Տեկորի տաճարին վրա 5-րդ դարուն իրագործված որմնասյուների համաչափությունից: Basilique ձևը տաճարների համար այլևս անվանական է, ստեղծված են լայնարձակ և չորս կողմից abside-ավոր հատակագծեր, ավելի կատարելագործված, քան 5-րդ դարու Էջմիածնի տաճարը և 6-րդ դարու Ավանի եկեղեցին: Նույնիսկ 6-րդ դարու վերջերին և 7-րդի սկիզբներին շինված basilique ձևով եկեղեցիներին այս դարուն մեջ ավելացրել են կողմնակի abside-ներ, որոնք հեռացնում են նախնի ավանդական ձևերեն: Պատուհաններ ավելի խոշոր և քանակով ավելի շատ են, քան 5-րդ դարը և, որ ավելին է, լույսի առատ թափանցման համար շինվել են abatjour ըսված ձևով, այսինքն դրսի բացվածքին համեմատությամբ ներսը շատ ավելի լայնացած: Բոլոր շենքերի կտուրները, առանց բացառության, ծածկված են կղմինդրներով: Կղմինդրները ոչ միայն ընտիր կավից շինված են՝ լավ խմորված ու թրծված, այլև իրենց չափով ու ձևով այնպիսի կատարելություններ ունին շենքը խոնավությունից պահպանելու տեսակետով, որ մեր դարու քաղաքակրթված երկիրների մեջ արտադրված կղմինդրների հետ հաջողությամբ կարող են մրցել: Ավելի քան հազար տարի առաջ պատրաստված այս կղմինդրներն անվիճելի կերպով ապացուցում են, թե 7-րդ դարուն Հայաստանում ի՞նչ մեծ նվաճումներ և առաջդիմություն արել են շինարարական ասպարիզում:

Որ ամենից զարմանալին է, քաղաքական փոթորկալից մի շրջան է 7-րդ դարն ամբողջ. Հայաստանը միշտ ավերածների, կոտորածների և ուրիշ վշտաբեր տեսարանների թատերաբեմ եղած է. ահա այս անհանգիստ և հուզումնալից դարաշրջանում ստեղծում է գերազանց կատարելությամբ օժտված ճարտարապետական արվեստ: Իր վսեմ ոճով ոչ միայն նախորդ վերածնությունը գերազանցում է, այլև եռապատիկ քանակով և հսկա ծավալներով հուշարձաններով ծածկում է Հայաստանն այս երկրորդ վերածնությունը: Որմնաշինությունն ավելի կատարելագործված է, թեև շինանյութը նույն հրաբխային տուֆ քարն է՝ կիր ու ավազով միայն զանգված, սակայն մեծամեծ շենքերի արտաքին և ներքին երեսները շարված քարերը ծավալով ավելի խոշոր են, իսկ հաստությամբ ավելի բարակ, որով պատերի հաստությունները ոչ մի արտակարգ չափերի չեն հասնում և մնում են միշտ

նրբին, վայելուչ, սակայն հաստատուն և ամրակառույց: Պատերի երկու երեսների քարերի արանքի լիցքը գրեթե ավելի հաստ է, քան երկու երեսի քարերի թանձրությունը, որով գոյանում է ներքուստ բետոնի մի պատ. իբրև ծեփ՝ քարերը շարված են երեսին. ես կարծում եմ, որ այս պետք է լինի այդ շենքերի ամրության և տևականության գաղտնիքը, թեև չպետք է արհամարհել նաև որմնաշինության մեջ մեր հին արհեստավորների ունեցած գերազույն առավելությունները շինելակերպի տեսակետով: Բյուզանդական կայսրության մի նահանգին հազիվ հավասարվող Հայաստանը որմնաշինության արվեստին մեջ ավելի բարձր կանգնեց իր քարագործությամբ: Հայաստանի քարեղեն որմնաշինությունն ավելի մեծ հմտություն և գիտակցություն կպահանջեր, քան Բյուզանդիայի աղյուսյա որմնաշինությունը: Հայեր եթե այն ժամանակ ուզեին Պարսկաստանի և Բյուզանդիայի աղյուսյա որմնաշինության ձևերը մտցնել իրենց երկիրը, անշուշտ, քիչ ժամանակի մեջ կատարելության կհասցնեին: Սակայն պարզ է, որ հայ ճարտարապետությունը խուսափել է աղյուսաշինութենեն և գերադասել է քարի շինությունը, որը երկրի լավագույն և ամենաառատ արտադրությունն էր:

Նախապես գրեցի, որ առաջին վերածնության շրջանում, 5-րդ դարուն, փորձեցին գմբեթներ շինել. մատնանշեցի նաև Տեկորի գմբեթի նախնականությունը: 6-րդ դարու շինությունների մեջ գմբեթների գոյությունը չի ապացուցվում, բացի Ավանի եկեղեցիի վրա շինված գմբեթից: Սակայն Ավանի եկեղեցին, որ հինգ գմբեթանի եղած է, կենտրոնական գմբեթն ամբողջովին կործանած է, իսկ չորս անկյունների վրա եղած չորս գմբեթներից միայն մեկ հատին ստորին շարքը երևում է: Ուստի այս վիճակին մեջ չի կարելի լիովին դատել, թե ի՞նչ աստիճան կատարելագործված էր գմբեթաշինության արվեստը 6-րդ դարուն: Բայց 7-րդ դարուն, ըստ ամենայնի կատարելության հասած է Հայաստանում գմբեթաշինության արվեստը, տեղական այնպիսի ինքնուրույն ոճով, որուն արվեստագիտական հայ և օտար բոլոր գրականության մեջ միաձայն հայկական գմբեթ են անվանում:

Հայաստանում գմբեթաշինությունը զարգացել է մեկը մյուսից անկախ երկու գծով. մեկը թմբուկավոր կոնաձև ծածկով, առհասարակ անկյունավոր կամ բոլորշի գմբեթն է: Արտաքուստ ութ ճակատից մինչև տասնվեց ճակատներ ունին. ութանկյունները չորս գլխավոր կողմերի վրա ունեն չորս պատուհաններ, իսկ բազմանկյուն թմբուկավոր գմբեթները երկու ճակատից մեկին վրա ունեն հարդաբար պատուհաններ: Թմբուկի խարիսխը միշտ բարձր է կանգնած կտուրից առնվազն մեկ մետր. շրջապատում որմնասյուներ չկան. ինչպես ամբողջ շենքը, նույնպես գմբեթը բոլորովին պարզ է, սրբատաշ քարերով շինված: Ի ներքուստ, կենտրոնական չորս մույթերի աղեղնակապումից առաջ եկած քառակուսի բացվածքի վրա, ութանկյուն կամ բոլորշի ձևով գմբեթի մի խարիսխ կազմելու համար դիմել են հետևյալ ճարպիկ միջոցներին: Նախապես քառակուսի բացվածքի անկյունների վրա շինել են կամարակապ խորշեր, և այդ խորշերը պսակող կամարներին այն չափով մի տրամագիծ է դրված, որ ինքնին կազմում է ութանկյուն մի խարիսխ՝ գմբեթի համար. եթե ուզել են բազմանկյուն շինել գմբեթը, կրկնել են այս գործողությունը նախկին ութանկյունից գոյացած անկյունների վրա, որով ավելի բթացրել են անկյունները և բացվածքը մոտեցրել գրեթե բոլորակի: Այս գործողությունը կատարելուց հետո, բարձրացրել են թմբուկի պատերն ուղղահայաց կերպով, պահանջված չափով, հետո վրան ծածկել են կիսագնդաձև մի գտակով: Իսկ արտաքուստ, ինչպես բյուզանդական և այլ երկիրներում, վերջավորում էին կիսագնդաձև, որուն շինությունն ավելի հեշտ էր. Հայաստանում բնավ չիրագործեցին այդ ոճը, այլ իրենք ունեցել էին իրենց սեփական ձևը՝ որևէ մի ավանդությամբ նվիրագործված, այն է՝ ներքևի կիսագնդին վրա արտաքուստ բարձրացրել են մի կոնաձև՝ այնչափ ճակատներով, որքան ճակատների որ բաժանված էր ներքևի թմբուկը:

Ընդհանրապես կարծիք կա, որ Հայաստանի գմբեթաշինության այդ ոճին մեջ հայոց նախաքրիստոնեական հին պաշտամունքների մի ավանդական սովորությունը կա թաքնված, որը եթե ի սկզբան պաշտամունքի հետ էր կապված, սակայն հետո, քրիստոնեական շրջանում, փոխվեց մի խորհրդանշանի: Հայոց նախաքրիստոնեական բնապաշտության շրջանում, պաշտաման առարկա էին, բացի երկնային մարմիններից, նաև մի քանի բարձր սարեր և բլուրներ, ի շարս որոց Արարատ լեռը, որը նույն էր հայոց համար, ինչպես աստվածաբնակ Ոլիմպոսը Հունաստանի համար: Դեռ Արշակունի շրջանում իսկ, Արարատ լեռան համար պատմված առասպելներ կգտնենք հայոց հին մատենագրության մեջ: Բնապաշտության և հետո հունական դիցապաշտության հաջորդող քրիստոնեությունը թեև ջնջեց մասամբ այդ առասպելական ավելորդապաշտությունները, սակայն Արարատ լեռն այնքան էր նվիրականացած հայության աչքում, որ կրոնական պաշտամունքը ջնջվելուց հետո իսկ, Արարատ լեռը երկար ժամանակ մնաց իբրև պետական և ազգային խորհրդանշան: Հին պետական դրոշակների վրա դրոշմվեց Արարատը՝ գլխին Նոյան տապանով (այս վերջինս, անշուշտ, քրիստոնեական կրոնի ազդեցությամբ): Արդարև, Հայաստանի կենտրոնի վրա վեհափառորեն բազմող Արարատից ավելի հարմարագույն խորհրդանշան չէր կարող լինել: Ուստի հավանականությունից ընավ հեռու չէ, որ հայկական գմբեթների ձևը վաղեմի պաշտաման առարկա եղող Արարատին նմանցնեին՝ դեպի վեր սլացող գագաթով: Քրիստոնեական շրջանում թեև Արարատը պաշտաման առարկա չէր, սակայն պետական խորհրդանշան էր:

Որպեսզի բարձր կոնաձև ծածկով չծանրաբեռնվին գմբեթակիր կամարներ և մույթեր, կոնին մեջ սովորաբար դրած են մեծ ու փոքր դատարկ կարասներ, որոնք թե՛ թեթևացնում են ծանրությունը և թե՛ խիստ սուր արձագանք են տալիս շենքի մեջին:

Գմբեթների ստորին խարիսխը կազմելու համար շինված կամարապակ խորշերը, որ ներկա արվեստի մեջ փող (trompe) անունն ունին, շարունակվեր են մինչև 10–11-րդ դարերը, թեև նույն 7-րդ դարու կեսից հետո երևան էր եկել մի ուրիշ, ավելի պարզ ձև, այն է pendentif-ները, որոնք միանգամայն հնարավորություն էին տալիս գմբեթի թմբուկը բոլորովին բոլորակ շինվելու, սակայն կառուցման դժվարության պատճառով անշուշտ, երկար ժամանակ չընդհանրացան, հետևաբար մինչև 11-րդ դարու երրորդ վերածնությունը երկու տեսակն էլ շինում էին: Թեև տակավին ինձ չի պատահել բոլորովին բոլորակ թմբուկով կառուցված գմբեթ 7-րդ դարուն, սակայն բնական է, որ նախկին զարգացած օրինակների հետևողությամբ էր, որ 10–11-րդ դարերուն հաճախ կգտնենք pendentif-ների վրա կանգնված բոլորակ թմբուկով գմբեթներ: Ինչպես բովանդակ շենքի կտուրների վրա, նույնպես գմբեթների կոնաձևերի ծածկերի վրա շարված են թրծուն կղմինդրներ՝ առհասարակ ծածկի ձևին հարմարությամբ, մեկ կողմը լայն, իսկ մյուս կողմը նեղ, և այսպես հաջորդաբար նեղնալով մինչև գագաթին հասնելը:

Երկրորդ գծով զարգացող գմբեթաշինությունը, որուն ամենահին օրինակը համարում եմ Տեկորի տաճարի գմբեթը, շարունակված է մինչև 15-րդ դար, հայոց եկեղեցիների գավիթների, տոհմային դամբարանների և ուրիշ հասարակական շինությունների վրա՝ հետզհետե կանոնավորվելով, ճոխազարդվելով և ըստ ամենայնի կատարելության հասնելով: Այս ձևի գմբեթները, փոխանակ ուղղահայաց թմբուկներով կազմվելու, մույթերը միացնող աղեղներից կազմված քառակուսի բացվածքի յուրաքանչյուր կողմի լայնությամբ պատեր բարձրացնում էին աստիճանաբար վայրահակ. չորս կողմից վայրահակ պատերի շինվածքի պատճառով անկյուններում գոյանում էին բաց մասեր, սկզբում աննշան, բայց հետզհետե լայնացող այս բացվածքները ևս շինվում էին նույնպես վայրահակ: Երբ ամեն կողմից հավասար մակարդակի վրա բարձրանում էին պատեր, հասնում էին մի կետի, որ ինքնին կազմվում էր հավասարակողմ ութանկյուն: Ութանկյուն գագաթին վրա շինում էին սովորաբար բոլորշի մի լուսիջույց:

Տեկորի նախնական օրինակից հետո գեթ ինձ չէ պատահել այս ձևով շինված գմբեթ մինչև 10-րդ դար: Անշուշտ, շարունակվում էր այս ձևը Հայաստանում, որ հանկարծ 10-րդ դարում երևան է գալիս ավելի շքեղ և կատարելագործված ձևով: Ես հավատացած եմ, որ գմբեթաշինության այս ձևը շարունակվում էր ոչ միայն քարաշեն շենքերի մեջ, այլև փայտաշեն աշխարհիկ շենքերի մեջ ևս, սակայն նրանք մեզ չեն հասել: Այս ձևով կազմված փայտակերտ գմբեթներ մինչև այսօր շարունակում են շինվել մեր գավառական քաղաքների և մասնավորապես գյուղերի մեջ: Այս ձևով գմբեթը, անշուշտ, ի հնումն ունեցել է իր որոշ անունը, սակայն մոռացվել է գրականության մեջ ժամանակի ընթացքում զանազան ազդեցությունների տակ: Իսկ ժողովրդական բարբառների մեջ պահված են երկու բառ. մեկը սողոմաքաղ, որ անպատճառ հայերեն է, իսկ մյուս բառը՝ դառնավուռ, որ հավանորեն թուրքերեն կամ պարսկերեն է[1]: Ես տեսել եմ Կումայրիում (այժմ Լենինական) սողոմաքաղ փայտակերտ գմբեթներ մի քանի հատ. իսկ հայ գյուղական տներում հաճախ կարելի է տեսնել, որոնք ավանդաբար շինում են շարունակ իրենց նախնիներից մնացած այս ձևի գմբեթներ, ընդարձակ տարածությամբ հացատների վրա: Գյուղական տների մեջ թեև պարզ ձևեր շատ կան, բայց ոմանք այնքան գեղեցիկ, բարձր և ճոխ շինվածք ունին, որ հիացում կպատճառեն դիտողին, երբեմն արտակարգ սիրով նույնիսկ քանդակագործված են փայտերը:

Սողոմաքաղ գմբեթներն արտաքուստ ոչ մի գեղարվեստական տեսք չունին, այլ մի հողածածկ թումբ են ներկայացնում երդիկի վրա՝ իրենց բարձրության չափով. արտաքին զարդը միմիայն գագաթի վրա շինված լուսիջույցն է, որ երբեմն մի առանձին

[1] Մի քանի գավառաբարբառներում կոչվում է հազարաշեն և գլխատուն հայերեն բառերով:

Կազմող

շրջանակով շրջապատված է: Տան մեջ մեծամեծ սենյակներ, հյուրասրահներ սողոմաքաղ գմբեթավորելու սովորությունը տարածված էր Տաճկահայաստանում, և այնտեղ ղուպպե կամ գուպպե անունն են տալիս թուրքերեն բառով: Այս երկրորդ գծով զարգացող քարաշեն գմբեթները, հետզհետե մասնավոր ձևափոխություններով, ավելի ճոխացած շարունակվում էին հետևյալ վերածնությունների ժամանակ, որի մասին կգրեմ իր կարգին:

Նկ. 35. Իջևանի շրջանի Առաքելոց եկեղեցու գավթի գմբեթը՝ շինված քարաշար սողոմաքաղ (13-րդ դար)

Շենքի պսակները ևս մինչև 7-րդ դարու կեսը պահելով միանգամայն իրենց արևելյան ոճի տիպը, moulure-ների դասավորությամբ և քանդակազարդական ոճով մի բազմազանություն կներկայացնեն, այնպես որ մինչև 7-րդ դարու կեսը շինված յուրաքանչյուր շենքի վրա առանձին տեսակ պսակներ կտեսնենք: 7-րդ դարու կեսից հետո պսակներն սկսում են միօրինակ ձև ստանալ. գրեթե համանման moulure-ներով, սակայն մեջտեղը մի լայն բաց մաս է թողված, որուն մեջ առանց բացառության քանդակված են հյուսկեն քանդակներ: Ամենայն հավանականությամբ Զվարթնոց եկեղեցիի պսակն է եղած այս ձևի պսակների նախատիպը Հայաստանում. միայն թե Զվարթնոցի մեջ խիստ շատ առաջակարկառ է, որով թե՛ հաստատության տեսակետով կասկածելի էր և թե՛ շինությունն ավելի դժվար. հետագայում պսակի այս ձևը ընդունվելով, ենթարկված է զգալի բարեփոխության: Նախ առաջակարկառը նվազած է, և թե՛ փոխանակ հորիզոնական կերպով պատից դուրս ցցվելու, ավելի դեպի վեր թեքված է, որով թե՛ շինությունն է դյուրացած և թե՛ ավելի հաստատությունը երաշխավորված է:



Նկ. 36. Սողոմաքաղ ծածկաձևի նկար

Պատերի արտաքին երեսին վրա քարերը շարելու մի կերպ ունի 7-րդ դարը, որ ուրիշ վերածնությունների մեջ չկա քարերի տաշվածքի և շարվածքի այս ձևը: Մեծածավալ քարերը սրբատաշ մաքրվելե հետո, ներքևի և վրայի (հորիզոնական) եզերքները կես սանտիմ. կամ քիչ ավելի լայնությամբ հակուղիղ ձևով տաշված են դեպի ներս, այնպես որ երկու քար միմյանց վրա դրվելիս, գոյանում է մի եռանկյուն փոս գիծ: Այս կերպ տաշվածքն ու շարվածքը թերևս այն օգուտն ուներ, որ քարերը միմյանց վրա դրվելիս, ծանրության տակ նուրբ շինված եզերքները չէին փշրվում: Եվ իրոք որ, 7-րդ դարուց մեզ հասած մեծամեծ քարերով հյուսված պատերին վրա քարերի եզերքները միշտ մաքուր են մնացած:

Առաջին վերածնության մեջ ընդունված portique-ներն այլևս գոյություն չունին եկեղեցիների շուրջ 7-րդ դարուն, այժմ կան գեղեցիկ քանդակազարդ խոյակներով որմնասյուներ՝ շենքի զանազան մասերի վրա: Portique-ները թերևս շարունակվեցին աշխարհիկ շենքերի վրա, որոնց նկարագրությունները, թեև թռուցիկ կերպով ակնարկված, պատահում ենք հին մատենագրության մեջ: Զվարթնոցի մոտը շինված աշխարհիկ շինությունների մեջ շինված են երկու տեսակ portique-ներ, որոնք թերևս պահանջ էին միշտ, և հիմք են տալիս ենթադրելու, որ շատ հին ժամանակներից է հասել մինչև մեր օրերը բնակարաններին կից portique շինելը. իրական փաստեր պակաս չեն Հայաստանի զանազան կողմերի մեջ բնակարաններին կից portique-ներ շինելու սովորության, որոնք, ինչպես 5-րդ դարուն, նույնպես այժմ անվանվում են սրահ:

Երկրորդ վերածնության հատուկ է շենքի զանազան կողմերի վրա բարձր և կամարակապ խորշեր (niche) շինելու ոճը: Այս ոճի ծագման պատճառների մասին բացատրություններ տվել եմ «Տեկորի տաճարը» անունով ուսումնասիրության մեջ. սակայն հարկ է ուղղել այստեղ, որ այդ աշխատության մեջ համարել էի 10-րդ դարու ոճ, բայց հետագային կատարած ուսումնասիրություններս ապացուցեցին, որ 7-րդ դարու ոճ է և ոչ 10-րդ դարու:

Վերջապես, հայ ճարտարապետությունը 7-րդ դարուն այնպիսի գլուխգործոցներ ունի, որոնք գրչով նկարագրել գրեթե անկարելի է, և ներկա աշխատանքիս անձուկ սահմանը չի ներեր պատկերներ և համապատասխան գծագրություններ ավելցնել փոքր ի շատե հասկանալի դարձնելու համար, պետք է որ արվեստագետ մասնագետներ իրենց սեփական աչքերով տեսնեն և քննեն այն հոյակապ շենքերը, որոնք միահամուռ մեծ մասնագետ գիտնականների հիացումն են գրավել և հավիտյան հայ ճարտարապետության պարծանքը պիտի լինին գիտական աշխարհի մեջ: Ամեն տեսակ քննադատություններից բարձր պիտի կանգնեն Մրենի, Թալինի, Թալիշի և Զվարթնոցի հոյակապ տաճարները իրենց հսկայական մեծությամբ, արտաքուստ և ներքուստ՝ աքանչելի պարզությամբ և շինանյութերի ու շինելակերպերի վերին աստիճան խնամքով և կատարելությամբ, կամարների աղեղների շլացուցիչ պլաքներով և, վերջապես, զարդաքանդակների մասին թեև ժլատ, այնուամենայնիվ եղած դույզն քանակը ևս իր հարմարագույն տեղերու վրա ներդաշնակ դասավորությամբ: Վերջապես, այս երկրորդ վերածնությունն է, որ իր հուշարձանները կանգնել է զուտ արևելյան, ավելի ճիշտը՝ զուտ հայկական ոճով, առանց օտար խառնուրդի:

Օտար խառնուրդի տեսակետով Զվարթնոցն է, որ մի քիչ շեղվում է իր ժամանակակից ոճերից, մի քանի գեղարվեստական մասերի փոխառություններով: Համարձակ կարելի է ասել, որ Զվարթնոցն իր ոճով և շինելակերպերով միակն է ճարտարապետության ընդհանուր պատմության մեջ, քանի դեռ չէ գտնված իր նախորդը որևէ երկրամասի վրա: Գիտնական ճարտարապետներ գրեթե մաղել են Արևելքն ու Արևմուտքը և իրենց տեղեկություններն ու մանրամասն ուսումնասիրությունները վաղուց մամուլի սեփականություն դարձրել, սակայն գեթ Զվարթնոցի հեռավոր նմանություն ունեցող շենքերից ոչ մեկը չունի Զվարթնոցի ճարտարապետի խիզախ հղացումը և հանդուգն, բայց հեռատես ու նրբին հաշիվները կառուցման գործի մեջ: Զվարթնոցը մենակ չէ Հայաստանի մեջ. մինչև 11-րդ դարու վերջը մի քանի հատ են կանգնվել Զվարթնոցի օրինակով, ինչպես Թավուշքյարում, Բանայում, Անիում և այլն, և այլն: Բագրատունի Գագիկ Ա, հատկապես Զվարթնոցի և նրա կանգնողների հիշատակը հավերժացնելու համար (որովհետև նույն ժամանակ գրեթե կիսավեր էր Զվարթնոցը), Անիում կանգնել է մի հոյակապ եկեղեցի՝ նույն չափով և նույն ձևով: Սկսած Զվարթնոցի կանգնման թվականից մինչև 13–14-րդ դարերը ոչ մի պատմագիր չէ մոռացած հիշատակել այս անման կոթողը և ներբողներ հյուսել նրա հոյակապ կառուցման շուրջը:

Զվարթնոցի մոտակա մասնավոր շենքերը մեծ լույս են սփռում նույն դարաշրջանի աշխարհիկ կյանքի և բնակարանների մասին: Թեև խիստ շատ քանդված են և ըստ ամենայնի հեռու ամբողջության մասին գաղափար տալե, այնուամենայնիվ բավական նյութ կպարունակեն իրենց ժամանակի կենցաղը մասամբ պարզելու համար:

Մեր հին պատմագիրներից հաճախ հիշված տաճարները, որոնք թագավորների և իշխանների պաշտոնական խնջույքների հատուկ սրահներ էին, գոնե հատակագծով կա պահված տեղին վրա՝ Զվարթնոցում: Եկեղեցիի արևմտյան և հարավային կողմի շենքերը, որոնք հատուկ էին կաթողիկոսի և միաբանաց բնակության, բացի զանազան մեծությամբ սենյակներից, ունին նաև այս խնջույքի տաճարը[1] արևմտյան կողմին, ամբողջ շենքի լայնությամբ: Երկու երկարության կողմերին վրա տաճարն ունեցեր է զույգ որմնասյուներ՝ վերևից կամարակապ, և այդ որմնասյուների արանքներում բազմոցների տեղերն են բարձրաստիճան հյուրերին բազմելու համար: Տարակույս չկա, որ առաստաղը եղել է կամարակապ՝ ամբողջ երկայնության վրա, թե ի՞նչ բարձրությամբ, հայտնի չէ: Արևելյան և արևմտյան կողմերում միայն կարող էր լուսամուտներ ունենալ, սակայն այդ բոլորը քանդված են և այժմ անհասկանալի է, թե քանի՞ պատուհան ունեցած է տաճարը, ի՞նչ մեծությամբ և ի՞նչ բարձրության վրա: Սույն տաճարը քննելու ժամանակ հիշեցի Թովմա Արծրունիի նկարագրած Գագիկ Արծրունիի Աղթամարի մեջ շինած տաճարը և համեմատեցի այն նույն նկարագրության հետ: Ի բաց առյալ Թովմայի նկարագրած զարդարանքները, շենքի կազմության և ձևի տեսակետով գրեթե նույնն է Ներսեսի տաճարին հետ: Հայտնի բան է, որ տաճարների շինության հատակագծային և կառուցման ձևերը դարուց ի դարս շարունակվեր են միևնույն կանոններով կամ փոքրիկ շեղումներով: Անիի Մինվանքերդի մեջ Բագրատունիների տաճարը գրեթե նույն ձևն ու չափն ունի, միայն Անիում

[1] Տաճարը՝ դահլիճ է:

այն առավելությունը կա, որ հյուսիսային կողմի վրա երևում են պատուհանների մնացորդներ՝ եթե չեմ սխալվում՝ 1,80 մետր լայնությամբ, թեև Թովմա Արծրունի Աղթամարի տաճարի նկարագրության մեջ մոռացել է հիշատակել պատուհանների մասին, կամ գուցե կարևորություն չէ տվել: Այս տեսակետով որչա՜փ հետաքրքրական կլիներ Թալիշում Գր. Մամիկոնյանի ապարանքը պեղել և տեսնել ներքին բաժանումները, որոնց մեջ կգտնվեր անպայման նաև մի հյուրամեծարության տաճար: Գր. Մամիկոնյանի ապարանքի արևելյան պատը, որ երևում է, ավելի խնամքով շինված է, քան Զվարթնոցի կողմնակի մասնավոր շենքերը, մեծամեծ սրբատաշ քարեր են շարված արևելյան կողմին վրա, որը գրեթե երկու մետր բարձրություն ունի այժմ, իսկ մնացած մասերը միանգամայն հողով և դերբուկներով ծածկված են:

Քիչ առաջ կարծիք հայտնեցի, որ portique-ները, եթե եկեղեցիների կից չեն շինված, այնուամենայնիվ պետք է որ նույն դարուն ևս շարունակված լինին մասնավոր շենքերի վրա: Այս կարծիքս հաստատվում է Զվարթնոցի մասնավոր շենքերով, որոնց կից շինված են երկու տարբեր ձևերով սյունասրահներ:

Հյուրասրահ տաճարի հարավային կողմը կա մի ընդարձակ սյունասրահ՝ երեք կողմից բացօթյա, արևելյան կողմից տակավին պահված են սրահի սյուների ստորին մասերը, որոնք վերևից կամարակապ են եղած. իսկ ներսը, որ ընդարձակ էր, հյուսիսից հարավ երկու շարք չորսական սյուների վրա դրված էր տանիքը: Մի ուրիշ սյունասրահ եղել է միաբանների բաժին շենքի հյուսիսային կողմը՝ ամբողջ երկարությամբ: Անշուշտ, բացօթյա մեծ սյունասրահը շինված էր ամառնային շոգերի ժամանակ կաթողիկոսին և հյուրերին համար իբրև հովանոց, նույն նպատակով ևս կլիներ միաբանաց շենքի հյուսիսային կողմի նեղ ու երկար սյունասրահը:

Առայժմ բավական համարելով հայ ճարտարապետության 7-րդ դարու երկրորդ վերածնության համար համառոտ ծանոթություններս, կանցնեմ մի երրորդ վերածնության, որը վերածնվել է 10-րդ դարուն, երկրորդ վերածնության ավելի քան երկու դար անկման դատապարտվելուց հետո:

Ամենայն հավանականությամբ քաղաքական անցքերն են պատճառ, որ 7-րդ դարու վերջից հետո մինչև 10-րդ դար Հայաստանում շինարարական աշխատանքը միանգամայն դադարում է: 7-րդ դարուն արաբական արշավանքը, ինչպես ընորոշել են մի քանի նշանավոր հեղինակներ, եղել է քաղաքակրթության պատուհաս և այրող ու խանձող մի փոթորիկ, որ իր անցած երկիրներին վրա քաղաքակրթական զարգացման մահաբեր հարված է տվել: Նույնիսկ 6-րդ դարուն Այա-Սոֆիայով գերազանց կատարելության հասնող բյուզանդական ճարտարապետությունը ժամանակավոր անկման է դատապարտվում: Ուժեղ թափով անցել է արաբական այդ քաղաքակրթության պատուհաս և խանձող քամին Հայաստանի վրայից և 7-րդ դարուն նախանձելի բարձրության հասնող հայ ճարտարապետությունը միանգամայն իր օրհասական վիճակին է հասցնում: Այս քաղաքական զարհուրելի փոթորիկի միակ պատճառով է, որ Հայաստանում 8-րդ դարուց մինչև 10-րդ դար ոչ միայն շենք գտնում քար քարի վրա դրված, այլ նույն դարաշրջանների պատմագրությունները լի են զարհուրելի աղետի նկարագրություններով և երկրի բնակչության թշվառության մասին սրտաճմլիկ ողբերգություններով: Վերջապես, 10-րդ դարու մոտ ժամանակներում ներքին երկպառակություններով թուլանալով արաբական իշխանության ահեղ թափը, Հայաստանում վերականգնում են փոքրիկ անկախ իշխանություններ, և ի ընե գեղարվեստասեր հայ ժողովուրդը վերստին նվիրվում է կուլտուրական աշխատանքների և ստեղծում է ճարտարապետական մի նոր վերածնություն, նախկին ավանդությունների վրա պատվաստելով իր նոր ստեղծագործությունները շինարարական ասպարիզում:

Թեև 9-րդ դարու կեսին ավանդաբար վերադրված մի քանի շենքեր գտնվում են Հայաստանում, սակայն նախքան այդ բոլոր շենքերի կառուցման ժամանակը 9-րդ դարին լինելը բոլորովին փաստացի կերպով չի ապացուցվում, նաև նրանց վրա հայտնի տեսնվում են նոր արվեստի կազմակերպության համար եղած խարխափումներ ու բռնի ջանքերը:

Համենայն դեպս 10-րդ դարուն այլևս փաստ է Հայաստանում մի նոր ճարտարապետության վերածնությունն Այրարատյան աշխարհում և մասնավորապես Շիրակի նահանգում: Ահա այս նոր վերածնությունն է, որ ես անվանում եմ հայ ճարտարապետության երրորդ վերածնություն, գրեթե բովանդակ Հայաստանի համար, որովհետև նույն վերածնության արդյունքներն օտար ճանապարհորդների ուսումնասիրության մեջ տեսնվում են ոչ միայն Այրարատում և Շիրակում, այլև Սյունիքում, Վասպուրականում և գրեթե ամբողջ Վանա ծովի շուրջը, մինչև Տարոնի արևմտյան սահմանները: Թե՛ պատմագրական տվյալներով և թե՛ Եվրոպայի գիտնական ճանապարհորդների նկարագրություններով պարզ երևում է, որ ինչպես Շիրակում,



Այրարատում, նույնպես Վասպուրականում բուռն թափով վերակենդանանում է շինարարական կյանքը և սկսվում է այնպիսի եռուն աշխատանք, որ ոչ մի կասկած չի թողնում կատարված գործնական աշխատանքների ստուգության և նորածին արվեստի հառաջադիմության: Թեև ես Այրարատի և Շիրակի հուշարձաններից զատ՝ հնարավորություն չեմ ունեցել քննելու, սակայն օտար ճանապարհորդների տված նկարագրություններ և մատենագրական տեղեկություններ շատ բան են պարզում ինձ համահայաստանյան այս աշխատանքների մասին: Թեև անջատ իշխանությունների և ուրույն երկիրների բաժանված, բայց վերածին նոր արվեստի զարգացումը և գործունեությունը հավասար կերպով ներգործում են նախկին ընդարձակ Հայաստանի սահմաններուն մեջ: Մատենագրությունները եթե քրքրենք, շատ բան կգտնենք նշանավոր շինությունների մասին, սակայն այդ շինություններեն մեկուն մասին ես պիտի գրեմ այս աշխատությանս մեջ քիչ հետո, քաղելով ժամանակակից մի պատմագրից: Դժբախտաբար ես անձամբ չեմ տեսած այդ մեծ գործի մնացորդները տեղին վրա, այնուամենայնիվ նկատողներ եղել են, սակայն 9-րդ դարու մի պատմագրի՝ Թովմա Արծրունիի՝ նկարագրությունն այնքան ճշգրիտ և մանրամասն է և, որ ավելին, այնքան արվեստագիտական է, որ ոչ մի կասկած չի թողնում նրա ճշմարտության. այս աշխատանքը կատարվել է Վասպուրականում Աղթամար կղզու մեջ, և շինվել է բավական ընդարձակ նավահանգիստ, բաց ծովին մեջ հիմնադրվելով մի ընդարձակ պարիսպ: Բայց այս մասին իր կարգին:

Ինչպես տեսանք, երկրորդ վերածնության նախօրյակ 6-րդ դարում մի նոր արվեստի վերածնության համար նախնական փորձեր և ջանքեր գործ դրվելը, շրջապատող երկիրներում զարգացող ճարտարապետական տարերքների պատվաստումով, նույն խարխափումը և ճիգն ավելի պարզ երևում է 10-րդ դարի երրորդ վերածնության մեջ, մասնավորապես այն շենքերի վրա, որոնց կառուցման ժամանակը չի ապացուցվում արձանագրություններով, և հավանական է թվում նախքան 10-րդ դար կանգնված լինելնին: Այս շենքերի վրա, թեև արևմտյան ճարտարապետությունից փոխառյալ ոչ մի նմույշ չի երևում, նույնպես նաև արևելյան հնագույն motive-ներ, կարևոր փոփոխությունների ենթարկված ու տեղականացած են, սակայն առհասարակ ընդհանուր պատկերը շատ լուրջ և ոճն ավելի ցուրտ է, ի բաց առյալ իրագործված մի քանի մասերի վրա չափազանց գեղեցիկ և ճարտարքանդակագործությունները: Շինվածակերպերի տեսակետով, ըստ հայաստանյան նախնական ավանդությանց, հաստատության և գործնականության մասին հետևողականությունն ակներև է, սակայն 10-րդ դարու կեսից հետո կանգնված շենքերի նրբությունները և գեղարվեստական փափկաճաշակ երևույթը չունին: Ուստի այս նախնական շրջանի մի քանի շենքերը բացառություն կամ երրորդ՝ նոր վերածնության նախնական փորձերը համարելով, այսուհետև կարծիքներս պիտի ընդհանրացնեմ 10-րդ դարու կեսից հետո մինչև այս վերածնության անկումը կանգնված շենքերի վրա:

Այս նոր՝ երրորդ վերածնության ոճին ամենից ավելի բնորոշ հատկանիշն այն է, որ արտաքին պատերը զարդարված են նուրբ ու գեղեցիկ քանդակազարդ աղեղներով պսակված որմնասյուներով:

Այս որմնասյուները միանգամայն հեռու են նախկին վերածնությունների մեջ երևացող որմնասյուների համեմատական համաչափություններից, այս անգամ նեղ տրամագծով անհամեմատ երկար են սյուները, որոնք վերջանում են գնդագլուխ խարիսխ ու խոյակներով և taillore-ներով:

Պատուհաններն սկսած են փոքր ինչ նեղնալ, բայց ավելի բարձր, քան նախորդ վերածնության մեջ ընդունված չափերն ու համեմատությունները. միշտ շրջանակված են հաճախ քանդակազարդ անհամեմատ լայն շրջանակներով, իսկ քանդակազարդ չլինելու դեպքում կամ գեղեցիկ moulure-ներով են շրջանակված և կամ երկու կողմին վրա նրբին որմնասյուներով վերևից կիսաբոլոր քանդակազարդ պսակով (chambranle) ավարտված: Նույնիսկ կան այնպիսի պատուհաններ, որոնց վերևները միայն պսակված են մի relief պսակով, իսկ եզերքների վրա առանց ուղղագիծ moulure ունենալու, ցածաքանդակ փորագրված և շրջապատված են զանազան զարդաքանդակների նեղ շերտերով. այս վերածնության հատկանիշն են բոլորակ միջակ մեծությամբ պատուհանները՝ քանդակազարդ կամ լայն moulure-ներով շրջանակված: Եռանկյուն խորշերը, որոնք ի հնումն իրենց առանձին պատճառը և կոչումն ունեցած էին շինարարական տեսակետով և միայն արևելյան և երբեմն ալ արևմտյան կողմին շինված էին, այս վերածնության մեջ պահանջից անկախ նաև եղել են իբրև զարդ և, ինչպես 7-րդ դարու մի քանի շենքերի վրա, այժմ ընդհանուր կերպով շինված են չորս ճակատների վրա հաճախ նրբին և ակնապարար մանրանկար քանդակներով պսակված. հաճախ քանդակված է նաև խորշի կամարիկի ներքևը մինչև կիսաբոլորակի հանգիստը պատի վրա:

Դեռ 5-րդ դարու առաջին վերածնության մեջ երևում է մանվածոների ճաշակը հայոց մեջ՝ անշուշտ ազդված Արևելքից: 7-րդ դարուն, արդեն որոշ աստիճանի զարգացած է գեղարվեստական այս ոճը հայոց ճարտարապետության մեջ. քանդակված են մանվածոներով սյուների խոյակներ և խոյակների մեծ գնդագլուխ կողովներ. իսկ այս երրորդ վերածնության մեջ ոչ միայն գերազանց կատարելությամբ, այլև ընդհանուր պահանջ դարձած շենքի զանազան մասերի ըստ պատշաճի մանվածո քանդակներով մանվածոյի հյուսվածները երբեմն հիացում պատճառելու չափ նրբության և բարդությունների հասած են: Ճարտարապետական մանվածոների այս ոճը Եվրոպական գիտության մեջ, առանց վերապահումների, արձանագրված է իբրև բացարձակ հայկական ոճ, որովհետև համաշխարհային ճարտարապետության մեջ ոչ մի տեղ այնքան կատարելության հասած և գործնական եղած չէ, որչափ Հայաստանի մեջ:

Շենքերի գլխավոր պատերի շինելակերպերը գրեթե հետևողություն են առաջին և երկրորդ վերածնությունների որմնաշինության կերպերին, այսինքն՝ երկու երեսը ծածկող սրբատաշ քարերի արանքում կրաշաղախ մանր ու խոշոր քարերով խառն հաստատուն բետոն է կազմված՝ երեսների սրբատաշ քարերի հետ սերտիվ միացած, և պետք է ասել, որ երեսների սրբատաշ քարերը, պատերը լավ չորանալուց հետո պարզ ծեփի արժեքն ունեցել են գրեթե: Անշուշտ, այս պատճառով է, որ կառուցումից երկար ժամանակ հետո, երբ կարիք է զգացվել արտաքին երեսները նորոգելու, ամենայն խնամքով, ամբողջովին քանդել են երեսների քարերը և տեղը նորը չարել, առանց պատերի հաստատությունն վնաս հասցնելու: (Այս գործողությունը կատարված է 7-րդ դարուն կանգնած Մրենի տաճարի արևմտյան ճակատում, հավանորեն 11-12-րդ դարերում, իսկ 10-րդ դարի վերջում կամ 11-րդ դարի սկզբում կանգնված Անիի կաթուղիկեի արևմտյան ճակատը հաջողապես նույն գործողության ենթարկված է կեսից վերև մինչև կտուրը): Այս վերածնության ժամանակ բոլոր մեծամեծ շենքերի համար ընդունված պատերի հաստության չափն է 70-80 սանտիմետր: Պատի երես շարված քարերը, որոնց վերին և ստորին հորիզոնական եզերքների վրա մի փոքր տաշված էին դեպի ներս, 7-րդ դարուն, որով շարվելուց հետո հորիզոնական եռանկյուն խոր գծեր էին երևում, այժմ այդ տաշվածքները չկան, այլ քարը քարին վրա ուղիղ նստած է այնքան մաքուր, որ երկու քարերի հպման տեղը հազիվ թե մի բարակ գիծ նշմարելի է. շատ անգամ քարերի տարբեր գույներով են որոշում, որ տարբեր քարեր միմյանց վրա կամ կողքը դրված են, եթե ոչ գրեթե առանց ուշադիր նայվածքի ընավ չեն երևում քարերի միացման գծերը:

Շենքի ընդհանուր պսակը, թեթև այլազանությամբ նույնն է, ինչ որ 7-րդ դարու կեսից հետո սովորական եղած է, այն է՝ պսակի վերևից և ներքևից հորիզոնական moulure-ներ, moulure-ների արանքը մի լայն շերտ, որուն վրա քանդակված են մանվածո քանդակներ. այս մանվածոյի ձևը երբեք փոփոխված չէ և միևնույն օրինակով քանդակված են մինչև վերածնության անկումը կանգնված շենքերի պսակին մեջ: Այս վերածնության մեջ շատ է սիրված զանազան գույներով խառն, անհամաչափ դասավորված քարերով պատեր շինել: Մեկ և կես մետր լայն բացվածքով դռների վրա իբրև վերնասյամ դրված են միակտուր լայն քարեր, որոնց վրա երբեմն կան թեթև քանդակներ կամ արձանագրություններ. իսկ ավելի լայնություն ունեցողների վերևները կամարակապ ծածկված են, սակայն առհասարակ կամարակապի կիսաբոլորակ մասը փոխանակ բաց մնալու, դռան լայնության տրամագծով կիսաբոլորակ միակտուր քարեր դրված են և ճակատին արձանագրություններ կամ խորհրդավոր քանդակներ են քանդակված: Սովորաբար լայն դռների երկու կողմը դռան բացվածքի և բարձրության համաչափությամբ որմնասյուներ են շինված և վերևը մուլյուրազարդ աղեղներով պսակված, իսկ սյուներ չլինելու դեպքում, լայն և գեղեցիկ քանդակազարդ բարավորներով և վերնասյամով շրջանակված են:

Տանիքները ծածկելու համար այլևս կղմինդրներ գոյություն չունին, կղմինդրներին փոխարինած են 8-10 սանտ. հաստությամբ քարե լայն տախտակներ և հաճախ այդ տախտակները խիստ ճարպիկորեն սղոցելով պատրաստված: Տանիքի քարերը միմյանց սերտորեն հագցնելու համար, այսօր իսկ մեզ անծանոթ մի ճարպիկ ձև ունին, որուն շնորհիվ մինչև այսօր իսկ մի կաթիլ ջուր չէ անցած ծածկի տախտակների ներքև. նույն իսկ այդ ձևի հեռուցմամբ առանց քարը կոտրելու անհնար է պոկել մի քար: Քարերի սղոցման ապացույցներ կան նաև պատերի մեջ. բարակ քարեր պետք դալու դեպքում մինչ 3-4 սանտ. հաստությամբ սղոցված քարեր են մտցրած շարքի մեջ:

Ներքին և արտաքին մեծ կամարներն ու աղեղները, աննշան բացառությամբ, երկկեդրոն աղեղներով են կազմված, որով աղեղի կամ կամարի դագաթին աննշան մի բեկում առաջ եկած է: Աղեղների այս ոճը, թեև 7-րդ դարու կեսից հետո մի քանի շենքերի մեջ իրագործված է (ինչպես Բագարան և այլն), սակայն այս երրորդ վերածնության մեջ ընդհանուր օրենք է դարձած: Միակեդրոն կիսաբոլորակ աղեղներ որևէ նկատումով չեն սիրված:



Նկ. 37. Անիի Առաքելոց եկեղեցու ճակատը

Մի ժամանակ աղեղների և կամարների այս ոճը համարվում էր գոթական ոճ. բայց այս կարծիքն ընդդիմախոսներ ունեցավ, որովհետև նկատել էին, որ նախքան գոթական ոճի երևնալը, Պարսկաստանի մեջ կառուցել էին նույն ձևով կամարներ: Գոթական ոճը երևան է գալիս Արևմուտքում 13-րդ դարու կեսից հետո, իսկ Հայաստանում՝ դեռ 7-րդ դարու կեսից հետո, թերևս որևէ արտաքին ազդեցությամբ. 10-11-րդ դարերին արդեն ընդհանրացած է Հայաստանի մեջ, Եվրոպայի մեջ գոյություն ստանալուց մոտավորապես երկու դար առաջ: Աղեղների այս ոճը պարսկական լինի թե գոթական, սակայն կա մի երևույթ, որով փոքր ի շատե ապացուցվում է, որ գոթական ոճի նախատիպը համարված ձևերը միշտ երևցեր են Հայաստանում, թեև նվազ զարգացած, այնուամենայնիվ գոթականի վերածնությունեն շատ առաջ: Այդ իսկ պատճառով, մի քանի Եվրոպացի արվեստագետ ճանապարհորդներ, որոնք տեղեկություններ չեն ունեցեր իրենց տեսած շենքերի կառուցման թվականների մասին, հայկական շենքերը համարեր են գոթական ոճով կառուցված: Texier-ին հավատացրեր էին, որ Տեկորի տաճարը 8-րդ դարու շենք է, մինչդեռ պատկանում է 5-րդ դարուն՝ առաջին վերածնության: Սակայն Texier-ի ստացած այդ ժամանակագրական սխալ տեղեկությունը չէր ազդած նրա՝ Տեկորի տաճարի մեջ երևցող պայտաձև աղեղների կամ կամարների հայկական ոճին պատկանելու մասին առաջին անգամ արած հայտարարության, որովհետև արաբական համարված պայտաձև աղեղներն ու կամարները շատ ավելի ուշ, 10-րդ դարուն են երևում Կորդովայի (Սպանիա) մեջ. ուստի, ըստ Texier-ի սխալ տեղեկության իսկ, պայտաձևի ոճը մնում է Հայաստանի սեփականություն, համարելով երկու դար առաջ, քան արաբական պայտաձևերի երևումը: Թե ինչպես Հայաստանից մինչև Սպանիա հասել է այդ ոճը, այդ մասին առանձին, իր ժամանակին:

Իհարկե, երկկեդրոն աղեղներով դժվար էր հաստատել, թե հայկական երրորդ վերածնության

ոճը իր մեջ զարգացնում էր գոթականի նախնական սաղմերը, եթե չլինեին ուրիշ անվիճելի փաստեր 10-11-րդ դարերուն հայկական ոճի մեջ գոթական նախատիպ մասեր գտնվելուն: Գոթական ոճը երևան է գալիս գրեթե 12-րդ դարի վերջին կամ 13-րդ դարի սկիզբներին. իսկ գոթականի հետագայում ավելի զարգացող մեկ ճյուղը, որուն ogive



**Նկ. 38. Անիի Առաքելոց եկեղեցու գավիթը. վերակազմություն Թ. Թորամանյանի**

են անվանում, երևում է 13-րդ դարու կեսից ոչ առաջ: Այս ոճի գլխավոր հատկանիշներն են՝ գմբեթակիր մույթերի շուրջ նրբին ձևերով զարդարված սյունախուրձերը, խաչաձևված կամարաղեղները և առհասարակ ջրաղեղները (arc à nervure) կամարների ներքև: Անիի կաթուղիկեն, որ սկսված էր 980 թվին և 1010 թվին վերջացած և օծված էր նույնիսկ, իր մեջ ունի թե՛ երկկեղրոն աղեղներ և թե՛ կամարաջիլեր. գմբեթակիր չորս մեծ մույթերն աքանչելի օրինակներ են նրբին ու բարձր սյունախուրձերի, որոնք փոքր զանազանություններով գործածվել են այս վերածնության ժամանակ կառուցվող մեծ շենքերի մեջ. արտաքին որմնասյուներն իրենց համաչափությամբ և նրբությամբ շինված են հետագայում ogive ոճին մեջ: Անիի պարիսպից դուրս կանգնված Հովիվի եկեղեցին, որը մի ճարտարապետական գոհար է այս երրորդ վերածնության շրջանում, շինված է 11-րդ դարուն: Սա իր մեջ հրաշալի կերպով մարմնացնում է թե՛ խաչաձևող կամարներ, թե՛ կամարաջիլեր և թե՛ սյունախուրձեր: Անիի Առաքելոց եկեղեցու գավիթը, որ կառուցված է 12-րդ դարու վերջերեն մոտ, ոչ միայն իր ոճով, այլև կառուցվածքով հիանալի մի օրինակ է ogive ոճին: 13-րդ դարուն Հայաստանում այլևս ընդհանրացած են ogive ոճով կանգնված շենքեր, որոնց մեջ ինձ ծանոթ եղողներն են՝ Հախպատի մեծ գավիթը, Հոռոմոսի երեք առանձին մասնավոր շենքեր և Առաքելոց եկեղեցու գավիթը: Համենայնդեպս այս շենքերն ավելի վաղ են կանգնված, քան Արևմուտքում ogive ոճի երևումը:

Առաջին անգամ, այս վերածնության սկզբնական շրջանում իսկ, երևում են, առհասարակ գավիթների մեջ, քարաշեն հորիզոնական կրաշաղախ ձուլածո առաստաղներ, փոքր ի շատե ընդարձակ բաժանումների վրա: Հոռոմոսի վանքի ս. Հովհաննես եկեղեցու գավթում վեց ընդարձակ կամարամիջոցներ, փոխանակ գմբեթարթ կամ voute d'arrêt շինվելու, ինչպես հետագայում է եղել, շինվել են բոլորովին հորիզոնական, յուրաքանչյուր առաստաղը կազմված է չորս մեծածավալ քարերով, որոնք երկու կողմից հանգչած են պատերի և աղեղների վրա, իսկ մյուս կողմերով կրաշաղախ միացած են հանդիպակաց կողմին վրա դրված միևնույն մեծածավալ քարերին և այս մեծամեծ քարերի արանքում զետեղված են, նույնպես հորիզոնական, սևագույն քարերից շինված լայն շերտեր: Յուրաքանչյուր մեծ քարի վրա փորագրել են գեղեցիկ վարդաձևեր, բավական խոշոր տրամագծով, և այս մեծ քարերի արանքում զետեղված սև քարերի լայն շերտն ամբողջովին քանդակված է այս շրջանին հատուկ եղող մանվածոներ: Հոռոմոսի գավթում այս ձևով քարեղեն հորիզոնական առաստաղ կազմված լինելուն կարելի է մի կերպ հաշտվել թե՛ առաստաղը կազմող քարերի մեծ ծավալի և թե՛ նրանց երկու եզերքներին հաստատուն պատերի վրա դրված լինելուն պատճառով, որ ինքնըստինքյան մեծ երաշխիք էր հաստատության և ապահովության: Բայց ինչպե՞ս չզարմանալ միևնույն շրջանում շինված ընդարձակ միջավայր ծածկող հորիզոնական առաստաղների շինելակերպի ճարտարության վրա, որոնք անհամեմատ կրաշաղախի մանր քարերով զանգված և ներքևը գունագեղ քարերով մոզայիկ է շինված, միաժամանակ հորիզոնական առաստաղի բետոնին միացած: Մոզայիկ շինված քարերի հպավորումներն այնքան գեղեցիկ պատշաճությամբ և մաքուր միացած են միմյանց հետ, որ այսօր պարզ գետնի վրա մոզայիկ հատակներ (տոմետ) շինող վարպետների նախանձը կարող են շարժել և նույնիսկ ամաչեցնել: Որչա՜փ խոր գիտակցություն պետք էր որ ունենային այն ժամանակվան ճարտարապետներ և որմնահյուսներ, իրենց գործածած շինանյութերի հատկության և նրանց տարողության ուժին, որ փոխանակ գմբեթարթի, կրաշաղախով մեծ վստահությամբ ձուլել են հորիզոնական հարթ առաստաղներ, որոնց անմիջապես վրան նույնպես հորիզոնական բացօթյա երդիկներ են: Հարյուրավոր տարիներ այս բացօթյա երդիկների վրա բնության տարերքներ՝ արեգակը, անձրևը և ձյունը անընդհատ ներգործել են, սակայն շինվածքին մազաչափ իսկ վնաս չեն կարողացել հասցնել: Եվ, որ ավելն է, հաճախ կրկնվող երկրաշարժներ մի կտոր իսկ չեն կարողացել պոկել այս հանդուգն, բայց հանճարեղ շինություններեն: Այս շինարարական ոճը Հայաստանում այնքա՜ն էր սիրված, որ հետագա՝ չորրորդ վերածնության մեջ ևս շարունակվեց ավելի կատարելագործված ձևով՝ մինչև վերջին անկումը:

Այս երրորդ վերածնության մեջ շինարարական առավելություններեն մեկը պետք է համարել գմբեթաշինության կատարելության հասցնելը: Գմբեթաշինության երկու կերպերը ևս զուգընթացաբար մշակված են և ըստ ամենայնի շքեղության հասած իրենց պարզությամբ և ներդաշնակ կազմվածքով: Թմբուկավոր գմբեթների խարիսխների շինվածակերպին մեջ տեղ-տեղ շարունակվում են trompe-ները ըստ հին ոճի, հավանորեն վերածնության սկիզբներին կանգնված շենքերի վրա. սակայն երկար չի տևում այս շինելակերպի կիրառումը. շուտով սկսվում են pendentif կազմված խարիսխները, որոնց վրա թե՛ ամբողջովին բոլորակ թմբուկներ են շինվում և թե՛ բազմանկյուն: Բաղդատելով նախընթաց վերածնությունների գմբեթների համեմատական բարձրության, այժմ թե՛ ավելի լայնացած են տրամագծերը և թե՛ ավելացած են բարձրությունները: Պատահում են այնպիսի գմբեթներ, որոնց թմբուկներն արտաքուստ որմնասյուներ, նույնիսկ սյունախուրձեր ունին անկյունների վրա և որմնասյուները պսակված են գեղեցիկ կամարաղեղներով: Ինչպես ընդհանուր շենքը, նույնպես գմբեթները մի քանի շենքերի վրա, պսակի անմիջապես ներքև շրջապատված են քանդակազարդ լայն գոտիներով, որ առավել գեղեցկություն են տալիս շենքի ընդհանուր տեսքին: Թմբուկից վերևի կոնաձև մասի շինության կերպը գրեթե նույնն է, միայն թե մի քիչ ավելի բարձրացած, համեմատելով թմբուկների տրամագծին հետ, նաև շարունակվում է կոնաձև մասին մեջ դատարկ կարասներ զետեղելը թե՛ թեթևության և թե՛ ուժեղ արձագանքի համար: Արտաքուստ անթմբուկ գմբեթների երկրորդ կերպը, գմբեթներ, որոնց նախատիպը համարեցի Տեկորի տաճարին գմբեթը, որն ամենայն հավանականությամբ փայտաշեն սողոմաքաղ գմբեթների՝ քարաշենի փոխարկված ձևն է, ընդհանրացած են սույն շրջանի բոլոր եկեղեցիների կից գավիթների մեջ: (Պետք է գիտնալ, որ Տեկորի տաճարի գմբեթին արտաքին խորանարդ ձևը հետնագույն շինություն է, հավանորեն 10-րդ դարուն): Այս վերածնության մեջ է, որ առաջին անգամ երևում են ընդարձակ գավիթներ եկեղեցիների արևմտյան և քիչ անգամ ևս՝ հյուսիս և հարավ կողմերին վրա: Գավիթների ծագումը թեև Ն. Լամբրոնացի վերագրում է եկեղեցական այլ և այլ կարևոր պետքերի, սակայն իմ տեսածներս գրեթե ամբողջովին ծառայած են տոհմային դամբարանների և կամ, եթե կարելի է այսպես ասել, արժանավոր եկեղեցականների և աշխարհական մեծամեծ իշխանների pantheon-ն են եղած: Չկա գրեթե փոքր ի շատե մեծ և միջակ մեծությամբ մի եկեղեցի, որ արևմտյան կողմին վրա կցված չունենա մի սյունազարդ կամարակապ գավիթ՝ ներքուստ ավելի շքեղ, քան եկեղեցին: Այս կարգի գավիթների մեջ ամենից գեղեցիկ գմբեթ ունեցողը Հոռոմոսի ս. Հովհաննես եկեղեցիի գավթի գմբեթն է: Մինչև չորս սյուների աղեղնակապումեն առաջ եկած քառակուսի միջավայրի բացվածքը վերածված է ութանկյուն, անկյունների վրա trompe-ներ շինելով. սույն ութանկյուն խարիսխի յուրաքանչյուր կողմի վրա զետեղված են վերևի կողմից վայրահակ հսկայական մեծությամբ ութ քարեղեն տախտակներ, չափազանց ճոխ կերպով քանդակազարդված, որոնց վերևները հպելով միմյանց, դարձյալ մնում է մի բաց տեղ իբրև լուսանցույց: Այս գմբեթին ուղիղ վրան շինված է բավական շքեղ մի զանգակատուն, որ սկիզբն է թվում հայոց եկեղեցիների մեջ զանգակատուն շինելուն:

Երրորդ վերածնության շրջանը բավական հարուստ է հասարակական և կուլտուրական բազմաթիվ շինություններով, ինչ որ նախորդ վերածնությունների շրջանում չեն երևում: Անշուշտ, նախկին վերածնությունների ժամանակ ևս պետք էր որ գոյություն ունենային նույնօրինակ շինություններ, սակայն, իմ կարծիքով, նախ՝ այդ ուղղությամբ լուրջ որոնումներ չեն կատարված երևան հանելու համար և երկրորդ՝ դարերի ընթացքում կամ անհիշատակ կորել են և կամ քանդվելով տեղը նորերը շինվել, որովհետև նախորդ վերածնությունների ժամանակ Հայաստանի սահմանները շատ ընդարձակ էին և թե ժողովուրդը տնտեսապես ավելի հարուստ էր. այդ դրության անվիճելի ապա-

ցույց են նախկին վերածնություններից մեզ հասած մեծամեծ շինությունները և թե ճարտարապետական տեսակետով նրանց գեղագույն աստիճանի գեղարվեստական կատարելության հասած լինելը: Մասնավորապես երկրորդ վերածնությունը (7-րդ դար) անմրցելի է թե՛ իր նախորդ և թե՛ իրմե հետո եկող վերածնությունների հետ: Այդ իսկ պատճառով երկրորդ վերածնությունը համարձակ անվանեցի Հայաստանի ճարտարապետության Ոսկեդարը: Մեծամեծ հասարակական շինությունների համար հին մատենագրության մեջ վկայություններ շատ կան, հետևաբար չենք կարող ասել, թե նրանք աննպատակ հիշատակություններ են, նրանց ստուգություններն ապագա խուզարկություններն ու պեղումները պիտի հաստատեն:

Հայաստանը թեև այս երրորդ վերածնության ժամանակ բաժան բաժան եղած էր և այդ բաժանված մասերի վրա առանձին հայկական փոքրիկ թագավորություններ էին հիմնված, այնուամենայնիվ երևում է, որ այդ թագավորությունները, կամ բաժանված երկրամասերի բոլոր ժողովուրդը, շինարարության մեծ ձգտում են ունեցել:

Դժբախտաբար ինձ հաջողվել է Հայաստանի մի փոքր մասին միայն, այն է՝ Բագրատունիների տիրապետած երկրամասի ուսումնասիրությունը, որուն մեջ անձամբ տեսածս կուլտուրական աշխատանքների մեջ նշանավոր և հիշատակության արժանի եղածներեն մի քանիսը պիտի թվեմ այստեղ: Բայց նախքան Շիրակի թագավորության սահմանին մեջ անձամբ հետազոտածներիս մասին խոսելը, պատմությամբ միայն ինձ ծանոթ Վասպուրականի մեջ կատարված մի շատ հետաքրքրական և նշանավոր շինարարության մասին գրել ավելորդ չեմ համարեր: Թովմա Արծրունի պատմագիրը, իր ցեղակից Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունիի մի նշանավոր շինարարությունն է նկարագրում Աղթամարի մեջ: Շինարարությունը վերաբերում է մի ծովային նավահանգստի և բարձրաստիճան պաշտոնյաների համար կանգնած մի խնջույքի տաճարի (հյուրասրահ): Նկարագրությունը, մասնավորապես ծովային նավահանգստի վերաբերյալ, այնքա՞ն պարզ է և այնքա՞ն ճշգրիտ, որ ընթերցողը մեր ներկա դարու շինարարության կերպերեն ոչ մի տարբերություն չպիտի տեսնե, բացի մեքենական աշխատանքներից, որ այն ժամանակ առնական բիրտ ուժն էր կատարում: Այժմ համառոտակի լսենք պատմագրի ծայրահեղ ոգևորությամբ տված նկարագրությունը.

«Թեպետ կըսվի, թե առաջուց Աղթամարում շինություններ շինվեր են Դավիթ Սախուանիի, Ռաշամ Ռշտունիի և Բարզափրանի ձեռքով, որ Պաղեստինացվոց աշխարհը Հյուրկանոս քահանայի հետ միասին գերելով, բերեց մեր աշխարհում բնակեցուց: Սակայն նրանք ամենը գրեթե բնակվում էին խրճիթների և խուղերի մեջ, Աղթամար կոչված երևելի կղզիի մեջ մինչև հայոց մեծ թագավոր Գագիկի օրերը, որն որ իր քաջակորով գիտությամբ, տեսնելով զվարճալիությունը և վերահասու լինելով, որ թշնամիների արշավանքի ժամանակ կարող է բնակիչներին ապաստանատեղի լինել, իր ահեղ և հիացման արժանի հիմնարկության կձեռնարկե. բազմաթիվ արվեստավորների և անթիվ մարդկանց կհրամայե կտրված ծանր և դժվարակիր քարերը գլորելով բերել և թափել ծովին չափազանց խոր հատակը: Եվ այսպես, մեծ թագավորը շարունակելով աշխատանքը մի ժամանակ, ահա քարահատակ ամբարտակը եկավ և կանգնեցավ ծովի երեսից մինչև հինգ կանգուն բարձր. ցամաքի վրա շինվելու նման հաստահեղույս քարերն ուղղագիծ կարգով կշարե, որուն վրա լար քաշելով, իբր հինգ ձիարշավ շուրջանակի կշինե պարիսպը: Եվ պարիսպը հրաշակերտ է, ահեղատեսիլ, բարձրաբերձ և լայնանիստ բուրգերով ու բարձր աշտարակներով զարդարված: Խորանանման անկյունավոր հարթ դահուքներ ունի զբոսանաց, որոնց մեջ արքան իր որդիներով և ազատակույտ զորականներով միշտ կզվարճանար: Իսկ պարիսպի գլուխները, քարանձավի դժվարաման կիրճերով անցկացնելով՝ կմոտեցնե միմյանց և կմիացնե. ծովի խորահատակ հիմունքների վրա ահեղակերպ, հաստահեղույս և բևեռապինդ դռներ կդնե, որով ծովին մի մասը կղզիին կողմն առնելով, հրաշալի կերպով կարքե և շատ նավերի խաղաղ և անվտանգ նավահանգիստ կշինե: Ավելի բարձր և ավելի հրաշալի կերտեց, քան Աղեքսանդրը Մակեդոն քաղաքում. և ինչպես կթվի ինձ, Վարագա լեռան ստորոտում Շամիրամյան փորածո զարմանալի սենյակներեն և գետի ամբարտակներեն ալ գերազանցեց: Որովհետև նրանք գոնե ցամաքի վրա էին շինած, իսկ սա ծովի խորության մեջ արվեստագործելով, իրմե առաջ եղող իմաստնոց գործը և խելքը գերազանցեց»:

Այժմ մատնանշեմ Շիրակի սահմաններում և Այրարատի մի մասում կատարված կուլտուրական և հանրօգուտ շինությունների մի քանի գլխավորները, որոնք ի կատար ածված են այս երրորդ վերածնության շրջանում:

Ախուրյան գետի վրա, մինչև Արաքսի խառնուրդը, շինված են հինգ հատ հսկայական միակամար քարաշեն կամուրջներ, որոնց կամարների տրամագծերը երեսուն մետրից ավելի են: Անիի առջևի կամուրջին տրամագիծը 31 մետր 25 սանտիմետր է, իսկ Զըրփըլուի կամուրջինը՝ 34 մետր: Անիի կամուրջի երկու ծայրերը շինված են եռահարկ դիտանոցներով. այս կամուրջի համար ոմանք կարծիք են հայտնած, թե 13-րդ դարուն է շինված. սակայն չարաչար սխալվում են այս կարծիքն ունեցողները. նախ՝ Անին այնքան ընկած էր տնտեսապես և տուրքերի տակ ծանրաբեռնված, որ հնար չէր այսպիսի մի հսկայական կամուրջ շինել հասարակական կամ անհատական ծախքով, երկրորդ, ինչ որ անվիճելի փաստ է, կամուրջի կամարը շինված է երկկեդրոն աղեղների միացումով: Այս երկկեդրոն աղեղների ոճը 11-րդ դարից հետո ամենևին գոյություն չունի Հայաստանում: 13-րդ դարը, որ պատկանում է հայ ճարտարապետության չորրորդ վերածնության շրջանին, մեծ և փոքր աղեղներ և կամուրջներ առանց բացառության շինված են միակեդրոն կիսաբոլորակներով: Զըրփըլուի կամուրջը ոչ միայն նշանավոր է իր արտակարգ միակամար մեծությամբ և բարձրությամբ, այլև իր արտասովոր շինելակերպով, որովհետև ոչ միայն ծառայել է գետի վրայից անցուդարձի, այլև բարձրերի ոռոգման համար, parapet-ները ծառայել են իբրև ջրմուղ: Ես չեմ հիշում այն կամուրջները, որոնք քարեղեն խարիսխների վրա հաստատված գերաններով են եղել շինված: Սույն ձևի կամուրջների խարիսխներ մինչև այժմ մնացած կան երկու հատ՝ Անիում, մեկ հատ՝ Ղոչվանքում (այս կամուրջի փայտերը երկաթով միմյանց կապված են եղել և երկաթով ամրացած երկու կողմերի վրա իբրև խարիսխ ծառայող մեծամեծ ժայռերին), մեկ հատ՝ Բայանդուրի մոտ, մեկ հատ՝ Բագարանում: Սանահնի կամուրջն ևս սույն շրջանին է շինված և, ըստ ժամանակակից ոճի, երկկեդրոն աղեղներով է կազմված կամարը. այս կամուրջը մինչև այսօր գոյություն ունի, խիստ քիչ վնասված, և ծառայում է հասարակաց օգտին:

Ամբերդի գետի ջրերից օգտվելով, շրջակա գյուղերի հողերը ոռոգելու համար, գետի երկու կողմերի բարձրաբերձ լանջերի վրա շինված են, սրբատաշ քարե պատերով, նաև առհասարակ քարով հատակված, ոռոգման հատուկ առուներ, որոնց միջոցով ջուրը հոսում է լեռնանման լանջերի վերևի ընդարձակ հողամասերը ոռոգելու համար: Տասնվեց առուներից տասներկուքը շինված են գետակի աջ կողմի լանջի վրա, որոնց ջրերը ոռոգում են բազմաթիվ գյուղեր: Իսկ ձախ ափին շինված չորս առուները հատուկ են Ամբերդի ամրոցին և շրջակա բնակչության: Ամբերդի ավերումով և ամայացումով մասամբ ավերված և անպետքացած են ձախ կողմի առուները, իսկ աջ կողմի առուներից շատերը տակավին գործածության մեջ են և օգտվող գյուղացիք հնարավոր չափով պահպանում են՝ գարնանից սկսած հերթով հսկելով:

*Նկ. 39. Հաղիճավանքի մուտքի ճակատը (13-րդ դար)*

Պատմական ակնարկներից և մեզ հասած արձանագրություններից գիտենք, որ բազմաթիվ հաստատություններ կային օտարանոց, ասպնջականոց, հյուրանոց, իջևան և այլն անուններով, որոնք մեծ մասամբ ծառայում էին հասարակության, կարավանների, օտարական ճանապարհորդների, աղքատ անցորդների. այս վերջիններին բնակություն, հանգիստ և սնունդ էին տալիս բոլորովին առանց փոխարինության:

Մեզ շատ հեռու կտաներ, եթե նկարագրել ուզեի նաև այն բազմաթիվ բերդերն ու ամրոցները, որոնք վտանգի ժամանակ ապաստարանն էին բոլոր ժողովրդյան: Այն ժամանակներում մի անհետաձգելի պահանջ էր իշխողների համար ընդարձակ ապահով տեղեր պատրաստել պատերազմի և օտար հարձակումների դեմ ժողովուրդին պաշտպանելու նպատակով, ուստի այս մասին իշխողներ միայն իրենց անձը չէր, որ մտածում էին [պաշտպանել], այլ ժողովրդյան հոծ բազմությունը, այդ պատճառով էլ, գլխավորաբար մեծ մայրաքաղաքներում խիստ ընդարձակ են շինված ամրոցները, և հաճախ կրկնակի ու եռակի պարիսպների մեջ առնված: Պարիսպների ամրության համար, հաճախ անհատական ծախքով, պարիսպներին կից շինվում էին մեծամեծ բուրգեր, որոնք ավելացնում էին թե՛ պարիսպների դիմադրական ուժը և թե՛ հնարավորություն էին տալիս ամրականներին ավելի մոտիկից հաջող կերպով թշնամու դեմ կռվելու:



Նկ. 40. Սաղմոսավանքի արևմտյան մուտքը (13-րդ դար)

Հայ ճարտարապետության երրորդ վերածնության շրջանում Վասպուրականը և Շիրակն Այրարատի մյուս գավառների հետ միասին թեև միմյանցից անկախ առանձին թագավորություններ էին, սակայն քաղաքական անկախ սկզբնավորության հետ միասին, երկու թագավորությանց սահմաններում միաժամանակ ծաղկում էին ճարտարապետական և գեղարվեստական արվեստները: Վասպուրականում և Շիրակում ծաղկող ճարտարապետական արվեստները թեև այնքան էլ սերտիվ չեն կապվում միմյանց հետ, որովհետև նրանք որոշ չափով միմյանցից տարբեր ուղղությամբ զարգանում էին, սակայն այս երկու երկիրների ճարտարապետությունը, նախկին՝ երկրորդ վերածնության (6-7-րդ դարերու) ավանդություններին հավասարապես ենթակա էին, այնպես որ հաստատապես կարելի է ասել, թե այս միմյանցից հեռու երկիրների մեջ միաժամանակ ծնող և զարգացող ճարտարապետությունը միևնույն աղբյուրն ուներ, այն է՝ հայ արվեստի ոսկեդարը, 7-րդ դարու երկրորդ վերածնության ճարտարապետությունը: Վասպուրականի շրջանի այս երրորդ վերածնության մեջ ավելի շատ մասեր կան 7-րդ դարու համահայաստանյան ճարտարապետության ոճը հիշեցնող, քան Շիրակի թագավորության սահմաններում կանգնված շենքերի մեջ: Շիրակի թագավորության սահմաններում 9-րդ դարից մինչև 10-րդ դարի կեսը զարգացող ճարտարապետությունը, կարելի է ասել, Վասպուրականի ճարտարապետական արվեստին հետ մի մորից ծնված երկու հարազատ քույրեր էին, 10-րդ դարու կեսից հետո Շիրակի սահմաններում գեղարվեստական ոճի տեսակետով հայոց ճարտարապետությունը մի նոր պատկեր է ստանում, որը չի երևում Վասպուրականի մեջ կանգնված ժամանակակից շենքերի վրա: Սակայն այս երրորդ վերածնության շրջանում ճարտարապետական արվեստի արագ թափով զարգացման ընթացքը ցույց էր տալիս, որ շուտով կհավասարվի

Նկ. 41. Տեղերի եկեղեցու գավթի արևմտյան մուտքը (13-րդ դ.)

7-րդ դարու հայ արվեստին և իր կատարելությամբ մրցելու կարող կլինի երկրորդ վերածնության հետ: Այնուամենայնիվ Հայաստանի մեջ անսպասելի կերպով քաղաքական մեծ և տխրահիթ հեղաշրջումներ վրա հասնելով, միանգամայն վերջ դրին այս զարգացումին ոչ միայն Շիրակում և Այրարատում, այլև Վասպուրականում: Այնուհետև Վասպուրականին վիճակվեց վերջնական անկում և այլասերում: Իսկ Շիրակի և անմիջական շրջակա երկիրների մեջ, մոտավորապես հարյուր հիսուն տարի անկումից հետո, վերստին սկսվում է մի նոր ոճի բողբոջումը, որը թեև մրցել չի կարող նախորդ վերածնությունների բարձրության հետ, սակայն իր ստացած ուղղությամբ և առանձնահատուկ զարգացմամբ մեծ տեղ է բռնած հայոց ճարտարապետության պատմության մեջ: Մասնավորապես նշանավոր եղավ, քան նախորդ վերածնությունները, մի նոր ոճի ստեղծումով և կամ պատվաստումով, որի մասին պիտի խոսեմ իր կարգին:

Ես նկատել եմ, որ հայ ճարտարապետության յուրաքանչյուր վերածնության շրջանում որոշ տոհմեր եղել են, որոնք վերին աստիճան սիրել են շինարարությունը և խրախուսել են ճարտարապետությունն ու գեղարվեստները: Նախորդ՝ երկրորդ և երրորդ վերածնությունների մեջ պարզ է միանգամայն, որ այդ խրախուսողները եղել են Կամսարականները և Պահլավունիները, և Հայաստանում այսօրվա մեզ հասած շինությունների մեծ մասը պատկանում է այդ տոհմերին:

Նկ. 42. Հախպատավանքի գավթի մուտքը

Չորրորդ վերածնության ծաղկումն ու զարգացումը կապվում է Զաքարյան տոհմի հետ. շինությունները մեծ մասամբ կապված են Զաքարեի և նրա սերունդի անվան հետ, կամ այդ տոհմի ուժեղ սերունդների կամ ժառանգների ձեռքով են կանգնված չորրորդ վերածնության շենքերը, կամ նրանց անվանն են նվիրված. այս երկու դեպքերից անկախ, եթե մասնավորներ ևս շինել են մեծ ու փոքր հասարակական շենքեր, նրանց արձանագրությունների մեջ հաճախ հիշվում են Զաքարյանների օժանդակությունն ու նվիրաբերությունը: Գրեթե Զաքարե սպասալարի իշխանության գլուխ անցնելու թվականեն է սկսվում Հայաստանում չորրորդ վերածնության շինարարությունը. թեև նրանց տոհմային տիրապետությունը երկար չի տևում, այնուամենայնիվ գրեթե հարյուր հիսուն տարվան մի շրջանում Հայաստանը ծածկվում է թեպետ ծավալով փոքր, բայց բազմաթիվ գողտրիկ ու ճոխազարդ շինություններով: Այս վերջին վերածնության ոճի ազդեցությունը թեև մինչև Վասպուրական չի հասնում, սակայն տարածվում է, բացի Շիրակից, որ Զաքարյանների տիրապետության սահմանն է, Այրարատի, Սյունիքի, Գուգարքի սահմաններում մինչև Տաշիր գավառը: Նախկին՝ երրորդ վերածնության գլխավոր հատկանիշները պահվում են չորրորդ վերածնության մեջ,

արտաքին որմերի որմնասյուների կամարակապումով զարդացումը, շենքի չորս կողմերի վրա խորշեր չինելու սովորությունները միշտ պահվում են այս շրջանում, գավիթներ, գմբեթներ ավելի ևս ճոխազարդվում են, միայն զարդաքանդակների բնույթն է, որ մեծ մասամբ փոխվում է: Երրորդ վերածնության մասին խոսելիս, հայտնեցի, որ 10-րդ դարու կեսից հետո շենքերի արտաքինը՝ գմբեթով միասին՝ քանդակազարդ աղեղներով պսակված որմնասյուներով զարդարվեց. որմնասյուներն երբեմն կենտ, երբեմն երկու կամ երեք սյուների խուրձեր եղան: Չորրորդ վերածնության մեջ գեղարվեստական այս ոճն ընդմիշտ պահպանվեցավ և ընդհանրացավ: Նախկին ոճի մեջ պսակից ցած շենքը շրջապատող քանդակազարդ գոտին փոխարինեց որմնասյուները պսակող աղեղներից սկսած մինչև պսակը, մանվածո խիտ քանդակում, որուն մեջ հաճախ պատշաճեցուցված են ընտանի և վայրի կենդանիների ու թռչունների բարձրաքանդակներ:



Նկ. 43. Իշխանական պալատի մուտքը Անիում (13-րդ դար)

Մանվածոները փոխանակ նախորդ ոճի նման նեղ կամ լայն ժապավեններով հյուսվելու, այս անգամ ոճավորված տերևներով խառն ոստերով են հյուսված: Իսկ առանց ոստահյուսի մանվածոներն ստացած են վեցանկյուն, ութանկյուն բազմանկյուններ, կամ աստղաձև հյուսվածքներով կազմված և երկրաչափական այս ձևերով շատ անգամ վերևից մինչև ներքև դռների ամբողջ ճակատը զարդարված գեղեցիկ moulure-ներով շրջանակված: Պսակները հազիվ թե պահած լինեն նախկին ավանդական ձևերի moulure-ների համաչափությունը, իսկ մեջը քանդակված ուղղագիծ մանվածոներն այլևս վերջ են գտած, և նրանց տեղ քանդակված են ոճավորված տերևներ և այլ երկրաչափական ձևեր, երբեմն ծաղիկներով խառն: Շենքերի չորս ճակատների վրա, քանդակազարդ կամարներով պսակված



եռանկյուն խորշերը շարունակվում են անընդհատ: Զարդաքանդակների նոր ոճը, այսինքն ոճավորված տերևների խառնուրդով ոստահյուս մանվածոները չափազանց շատ են սիրվում չորրորդ վերածնության մեջ և շենքերի ճակատներին զանազան տեղերի վրա խիստ ճոխությամբ քանդակվում են. բացի խոյակների abaque-ներից՝ քանդակվում են նաև [խոյակների] գնդաձև գլուխները, խարիսխների գնդաձև մասերը, fronton-ների միացման և վերջավորության անկյունները. առանց քանդակազարդության պատուհանի շրջանակ չի մնում այս վերածնության մեջ, իսկ մտից դռները, մասնավորապես գավիթների մուտքերը զարդարվում են լայն շրջանակի մեջ ստալակտիտներով խառն ոստահյուս քանդակների շերտերով կամ ժապավեններով, և այս երևույթը ցույց է տալիս շենքի վրա մի արտասովոր ծանրաբեռնում, որպես անկման նախօրյակ և չեղում զուտ հայկական ոճի ընդհանուր համաչափական և գեղարվեստական օրենքների [նկ.նկ. 40–45]: Իրենց բարդ մանվածո քանդակազարդությամբ արտակարգ չքեղության են հասնում խաչքարերը:



Նկ. 45. Գոշավանքի (Նոր Գետիկ) արևմտյան ճակատը



Նկ. 44. Գոշավանքի (Նոր Գետիկ) մուտքը (13-րդ դար)



Նկ. 46. Սարգսի խաչքարը Սանահնում (13-րդ դար)



Նկ. 47. Խաչքար Հախպատում (13-րդ դար)



Նկ. 48. Խմբական խաչքարեր Մրենում (13-րդ դար)

Հին շրջանում խաչքարերի վրա քանդակված խաչերի ներքև առանց բացառության քանդակված են ինչ որ խորհրդավոր թևեր, դեպի վերև դարձած խաչի երկու կողմը. այս շրջանում, կարծեք կորցրած իր նախկին խորհրդավոր նշանակությունը, փոխված է բարդ քանդակազարդության՝ հազիվ իր նախկին ձևը հիշեցնող մի շրջագծով [նկ.նկ. 46-48]:



Նկ. 49. Հառիճավանքի գավթի առաստաղը (13-րդ դար)



Նկ. 50. Եղվարդի եռահարկ տաճարի արևմտյան ճակատը

Այս շրջանին հատուկ են բազմատեսակ և ակնահաճո ստալակտիտ զարդարանքները, որոնք թեև օտար են հայ ճարտարապետության ինքնուրույն զարգացման ոճին, այնուամենայնիվ շատ շենքերի վրա խիստ շքեղ և տպավորիչ տեսք են ստանում:





Նկ. 51. Ամաղուի ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան պատը

Ստալակտիտների զարդաքանդակները խիստ՝ ուշադրավ են այն տեսակետով, որ միմիայն գավիթներ և մասնավոր շինություններ են զարդարված այդ ոճով. կարծեք՝ հատկապես զգուշացել են բուն եկեղեցիները ներսից կամ դրսից ստալակտիտներով զարդարելե. անշուշտ, առանց պատճառի չէ այս երևույթը, սակայն առայժմ դժվար է այդ առեղծվածը լուծել. պետք է երկար ու մանրակրկիտ ուսումնասիրություն այս հարցի շուրջը: Իսկ եկեղեցիներից դուրս ստալակտիտներով զարդարված են բոլոր գավիթների և մասնավոր շենքերի սողոմաքաղ ձևով գմբեթներ, արտաքին դռներ, շրջանակներ, հաստահեղույս սյուների խոյակներ: Գավիթների սյունազարդումը և կամարակապոցը մի պահանջ էր նույնիսկ շինարարական տեսակետով. որովհետև այդ կամարապատի անմիջապես վրան կամ հորիզոնական երդիկներ պետք է լինեին և կամ ցածլիկ երկկողմնաթեք կտուրներ: Գավիթները եթե փոքր էին լինում, լոկ որմնասյուներ էին շինվում և կամարակապվում, իսկ եթե ընդարձակ, այն ժամանակ երկու կարգ միջին հաստահեղույս սյուներ էին շարվում, որոնց կեդրոնի չորս սյուների վրա կառուցվում էին ստալակտիտով ճոխազարդված սողոմաքաղ ձևի գմբեթները: Իսկ մյուս սյուների կամարակապումից առաջ եկող վերևի քառակուսի բացվածքները ծածկում էին կամ vöut d'arret և կամ կցաշաղախ ձուլածո հորիզոնական առաստաղներով: Այս առաստաղները միշտ զարդարված են գունզգույն հրաբխային ավազաքարի մանր ու միջակ մեծությամբ կտորներով-մոզայիկներով: Այս ձևի կառուցված առաստաղը հայկական ճարտարապետության շինվածակերպի ամենաճարպիկ և ամենագեղեցիկ մասերից մեկն է, որ այժմ գրեթե վերջ գտած է չորրորդ վերածնության անկումից հետո: Միայն 30-40 տարի առաջ Ալեքսանդրապոլում մի վարպետ խիստ հաջող կերպով շինել է և մինչև այժմ անվթար մնում է, հակառակ հաճախ պատահող թեթև և ուժեղ երկրաշարժների: Այս մասին արժեր երկար խոսել և մանրամասն բացատրություն տալ շինելակերպի և նրա նպատակահարմարության, սակայն այժմ կթողամ ուրիշ առթի, որովհետև այս աշխատությանս սահմանը խիստ նեղ է:

Չորրորդ վերածնության մեջ ամենից ուշադրավն է ogive ոճի զարգացումը և կատարելագործումը: Ogive ոճը գոթական ճարտարապետության մի ճյուղն է 13-14-րդ դարերում Եվրոպական հողի վրա երևցող: Գոթական ոճի նախատիպերի դեռ 7-րդ դարուն Հայաստանում գոյություն ստանալը և 10-12-րդ դարերուն հայ ճարտարապետության երրորդ վերածնության շրջանում բավական կատարելագործված և մի քանի շենքեր այդ ոճի խառնուրդով շինված լինելուն մասին արդեն խոսեցա այս աշխատությանս մեջ, երբ մասնավորապես բացատրում էի, նախքան Եվրոպայի մեջ երևալը, Հայաստանում ծրագրված և իրականացման մտած լինելը: Սակայն չորրորդ վերածնության մեջ արդեն անվիճելի փաստ է հայ ճարտարապետության մեջ հաջողապես ogive աղեղների կառուցումը, այլև անվիճելի ապացույց նաև նախկին վերածնություններ մեջ երևցող գոթական արվեստի նախատիպերը Հայաստանում սովորական դառնալը: Այս ոճի ամենաբնորոշ հատկանիշն է ընդարձակ շենքերի մեջ կամ մի մեծ սրահի վրա, միմյանց հանդիպակաց կողմերից ձգված աղեղների խաչաձևումը բավական խոշոր սրբատաշ քարերով, և աղեղների խաչաձևումը առաստաղների վրա, բաց մնացած մասերի զանազան կերպերով ծածկումը, որոնց վրա անմիջապես երդիկն էր: Կան՝ որ այս մասերը գմբեթաթարթ ծածկված են, սակայն ավելի հաճախ կամարների հենարան պատերը բավական ուղղահայաց բարձրացումից հետո հարթ հորիզո-

նական առաստաղով ծածկված են և ներքևից գույնզգույն քարերից (տուֆ) մոզայիկ են շինված [նկ. 49]: Հոռոմոսի վանքում մի կիսափուլ շենք կա, որը ogive աղեղներով առաստաղակալված է, սակայն փոխանակ աղեղները մեկ պատեն դեպի մյուս պատը ուղղահայաց կերպով ձգվելու, շեղակի ձգվելով խաչաձևված են, և շենքի յուրաքանչյուր երկար կողմից երեք աղեղներ ձգված են և աղեղների ծայրերը հանգչած են պատերի մեջ ամրացած moulure-ազարդ condol-ների վրա, որ ավելի բարդ ձև էր, քան մեկ կամ երկու աղեղներով խաչաձևումը: Դժբախտաբար, շենքի երդիկն ամբողջովին փլած է և հայտնի չէ, թե ինչ ձևով ծածկված էր վրան: Եթե այս շրջանին Հայաստանի տնտեսական անկյալ վիճակը չլիներ և վերածնության վերջին անկումը վրա չհասներ, ո՞վ գիտե, թե այս ոճով ինչ հոյակապ և զարմացուցիչ շենքեր պիտի կառուցվեին:

Նկ. 52. Սպիտակավոր եկեղեցու մուտքի ճակատը (Միկոյանի շրջան. 14-րդ դար)



Նկ. 53. Կյուրիկյան թագավորության ամրոցը Բերդ գյուղում (10–12-րդ դ.)

Նկ. 54. Տիգնիս բերդի ընդհանուր տեսքը

Այս չորրորդ վերածնության մեջ չափազանց զարգացած է բերդապարիսպներ շինելու արհեստը: Թե՛ անհամեմատ բարձր են և թե՛ վերին աստիճան մաքուր տաշված ու շարված, կարծեք՝ ձուլված լինին ամբողջությամբ, ոչ թե քարաշեն: Տարակույս չկա, որ այս ճյուղի անհամեմատ զարգացումը և անօրինակ բարձրությամբ ամրոցների մեծածախ պարիսպների կառուցումը երկրի քաղաքական անհաստատ դրության նշանակ է և իրոք, այս շրջանի ճարտարապետական անկումը տեղի է ունեցել քաղաքականապես անկման հետ այլևս չվերականգնելու պայմանով [նկ. նկ. 53–54]:

Ինչպես հայ ճարտարապետության բովանդակ տևողության մեջ, նույնպես այս վերջին վերածնության շրջանի արվեստից, ներկայիս մեզ օգտակար և անհրաժեշտ շատ ուսանելի շինելակերպեր կան, որոնց մանրամասնության մեջ այժմ չեմ կարող մտնել դժբախտաբար. դա մի այլ աշխատության մեջ պիտի լինի, որը, եթե հնար կամ միջոցներ ունենամ, պիտի գրեմ այդ բոլոր ճյուղերի վրա իմ կատարած ուսումնասիրությունների մասին:

## ԴԱՐԱՇՐՋԱՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ[1]

### 4-րդ դար

Հաճախ անույշն. սյուներ եղած ժամանակ՝ կողմնակի թևերը՝ կամարակապ, միջինը՝ փայտածածկ. աղեղներ և կամարներ՝ պայտաձև. որմնասյուները՝ քառակուսի դրսեն և ներսեն, պատուհաններ հաճախ չկան կամ եթե կան, շատ քիչ թվով, բայց խոշոր: Դրսի կողմեն՝ portique, corniche-ներ՝ պճղակավոր. երբեմն ատամնաշարով corniche: Պատի քարերը՝ խոշոր, պատերը՝ հաստ մինչև 125 սնտմ. զարդարանքներ չեմ տեսած. moulure-ներ՝ տափակ գծավոր միայն. ընդհանրապես պատուհաններն առանց պսակի և շրջանակի, արևելյան կողմեն սենյակներ չունին, եթե ունին, մեկ կողմի վրա վերջեն ավելցված: Յոթեն մինչև ինը աստիճաններ. հատակը՝ վերին աստիճանի հավասար: Aside-ներ չունին կամ հետո են շինված, գմբեթներ բնավ չկան:

[1] Մինչև այժմ անտիպ մնացած այս աշխատությունը տպագրում ենք իբրև նախորդի ամփոփում:

Կազմող

### 5-րդ դար

Նեղ ու երկայն հատակագիծ, բայց քիչ ավելի լայն, քան 4-րդ դարը: Պատուհաններ՝ քիչ, աղեղներ և կամարներ՝ պայտաձև, երեք կամ չորս սյուներով թևերու բաժանված, երբեմն միջին թևն ալ քարե կամարով ծածկված կան, բայց հաճախ փայտածածկ. ներքին սյուներ՝ քառակուսի կամ խաչաձև հատակագծով. սյուներու գլուխներ՝ պարզ պսակով վերջացած, խարիսխներ՝ քանդակազարդված երբեմն, moulure-ներ՝ հարթ մակարդակի վրա շինված, կան, որ abside-ներ չեն ունեցեր, եթե ունեցեր են, ուշ ժամանակ ավելցած են. պատուհաններ՝ լայն և խոշոր, երբեմն շրջանակավոր moulure-ներով. դռներ ճոխ քանդակազարդ շրջանակներով և որմնասյուներով (կլոր). corniche-ներ՝ պճղակավոր և ատամնաշարերով, արտաքուստ portique. portique անջատ սյուներ և որմնասյուներ՝ քառակուսի և խաչաձև հատակագծով. գմբեթներ չունին. եղածներն ալ շատ նախնական ձևով շինված: Արևելյան կողմեն երբեմն ունին դուրս ընկած թևեր, երկարությամբ դեպի հյուսիս և հարավ ցցված, այս թևերուն վրա երբեմն abside-ներ: Portique-ի տակ կան կլոր որմնասյուներ, ճոխ քանդակազարդ խոյակ ու խարիսխներով. կան քառակուսի abside-ի օրինակներ. պատուհաններու պսակները բոլորված մինչև պատուհանի հատակը և հետո հորիզոնական շեղված: Արձանագրություններ կամ չկան և կամ հունարեն կամ ասորերեն գրված են: Քանդակագործություններ ավելի կատարելագործված են, քան հետագային trompe, բավականին հաջող են մարդոց պատկերներ. trompe-ի նախնական սաղմերը գմբեթներու տակ և գմբեթները վերին աստիճանի նախնական: Կան չորս անկյունի վրա չորս սենյակներով օրինակներ:

Այս դարու վերջին սկսեր են երևալ կիսաբոլոր թևերով խաչաձև հատակագծով եկեղեցիներ՝ արտաքուստ ուղղանկյուն պատերու մեջ ամփոփված, չորս անկյուններու վրա չորս հավասարաչափ քառակուսի սենյակներ, դռներ և պատուհաններ՝ խոշոր, պատերու թանձրությունը մինչև 120 սանտիմ. աղեղներ և կամարներ՝ պայտաձև, սյուներու և որմնասյուներու գլուխներ՝ acanthe-ի տերևներով քանդակազարդ, երկու ձևերուն մեջ ալ դռներու վրա fronton և սյունազարդ շրջանակ, corniche-ներ, պճղակավոր և ատամնաշար. պատերու քարերը խիստ խոշոր և երկարությամբ դրված, խաչաձև եկեղեցիներ կան հինգ գմբեթով, կենտրոնական և անկյուններուն վրա: Սկզբնավորություն խաչաձև տանիքի: Խարիսխներու moulure-ներուն մեջ cable moulure-ներ, փորձեր՝ պարզ մանվածոներու, հաջող և ճոխ օրինակներ ալ տեսնված են գերեզմանաքարերու վրա:

### 6-րդ դար

Քիչ տարբերություն հիներեն, միայն հատակագծերը ավելի լայնացած են համեմատելով երկայնության. կան և հսկա մեծությամբ հատակագծեր, corniche-ներ մոտավորապես նման են նախորդ դարերու, նույնպես սյուներ և խոյակներ, abside-ներ դուրս հանված արևելյան կողմեն, corniche-ներ բավական չքեղ պճղակավոր և ատամնաշար. պատուհաններ՝ խոշոր քան նախկին դարերը, և բարձր դրված, ինչպես նախկին դարերը, խաչաձևերու մեջ կան հինգ գմբեթի ծածկեր: Այս դարուն կերևի ընդհանրապես փորձեր խաչաձև տանիքի. առաջ են գալիս spiral խոյակներ, սյուներու բունները torse քանդակված:

### 7-րդ դար

Երկար հատակագիծ, հաճախ արևելյան կողմեն դուրս ցցված abside-ներ, abside-ներու երկու կողմին վրա քառակուսի հավասարաչափ սենյակներ, լայն և խոշոր պատուհաններ, կատարելագործված գմբեթներ, ճոխ trompe-ներով, ներքին անջատ սյուներ, խաչաձև հատակագիծ, գմբեթներու մեջ շառավիղաձև nervure relief զարդեր, հաճախ խաչաձև տանիք, ճոխ զարդաքանդակներ corniche-ներու և պատուհաններու շուրջը, նույնպես դռները սյունազարդ, աղեղապպ. pas relief-ներով զարդարված աղեղներ, թեթև fer à cheval, բայց կատարներով թեթև brisè. ընդհանրացած է corniche-ներուն մեջ մանվածո քանդակ, նուռ և խաղող բոլոր արտաքին որմնասյանց աղեղներու մեջ, նաև պատուհաններու շուրջը. պատուհաններ զգալի չափով լայն և բարձր, գմբեթներ՝ անկյունավոր, 8–10 մինչև 16 կողմերով:

Այս դարու մեջ կան 6–8 abside, ներքուստ և դրսեն անկյունավոր եկեղեցիներ, niche-եր սկսեր են երևալ, բոլորակ պատուհաններ սկսեր են ընդհանրանալ, կան խաչաձև պատուհաններ, հասարակության մտնելու համար ցած, փոքր դռներ [հատակագծի] խաչաձևը կշարունակվի, corniche-ներու տեսակները բազմացած, նաև պատուհաններու շրջանակները բազմատեսակ և ճոխ: Ներքին անջատ կամ որմնասյուներու խոյակներ՝ քանդակազարդ, ներսի սյուներու մեջ՝ երբեմն կլոր խոյակավոր սյուներ, պատերու հաստությունը՝ 110–115 սանտիմ., քարերը՝ խոշոր և ընդհանրապես երկայնությանը դրված, և քարերու եզերքները հորիզոնական ձևով տաշած. արևելյան կողմեն ալ մտից դռներու օրինակներ, բայց անկյուններու սենյակներու համար: Abside-ներ դուրս են չեն-քեն, փոխանակ ուղղանկյուն պատի մեջ ամփոփված լինելու:



## Գ

# ՄԱՆԱՎՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ՆԱԽԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՐՈՆԻ ԵՎ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ[1]

Թեև Հայաստանի քաղաքական անկախությունը քրիստոնեական շրջանեն քանի մը դար առաջ գոյություն ուներ և ավելի ազդեցիկ, քան հետագա ժամանակները, տիրապետելով ընդարձակ երկիրներ ու իր քաղաքական ազդեցության կշիռը ունեցեր էր հանդեպ դրացի մեծ պետություններու, երբեմն պատերազմներով չափվեր է անոնց հետ և երբեմն ալ խաղաղ հարաբերության համար դաշնակցեր է, և, որ ավելի կարևորն է, օգտվելով իր դրացի մեծ ազգերու քաղաքակրթական բարձրագույն զարգացումեն, ստեղծեր է նաև իր սեփական քաղաքակրթությունը, սակայն այս ամենը պատմագրական հակընդդեմ տեղեկություններով միայն հայտնի է մեզ: Դժբախտաբար Հայաստանի այդ հզոր միահեծան և քաղաքակիրթ համարված շրջանեն ոչ մի ճարտարապետական հիշատակարան չունինք, որուն հետ համեմատելով պատմագրական առասպելանման տեղեկությունները, ընդունենք իբրև ճշմարտություն կամ հերքենք: Վասնզի ճարտարապետական կամ գեղարվեստական հիշատակարանները ավելի արժանահավատ պատմիչներ են, քան մագաղաթները, որոնք հաճախ, արդարացի կերպով կասկածներու տեղի տված են իրենց անկողմնակալության մասին: Շատ տարօրինակ և անբնական կերպով Հայաստանի մեջ գոյություն ունեցող կիկլոպյան կոպիտ ճարտարապետությունեն հետո, որուն մասին առանձին մի գլուխ նվիրել եմ, քրիստոնեության սկզբնական դարերուն Հայաստանի մեջ կգտնենք ճարտարապետական այնպիսի կերտվածներ, որոնք ըստ ամենայնի կատարելության հասածի երևույթը ունին: Այս իսկ պատճառով մեզ համար գրեթե անհնարին կդառնա կիկլոպյան շրջանի և քրիստոնեական ճարտարապետության մեջտեղը բռնող քանի մը դարաշրջաններուն հայոց ճարտարապետության վիճակը և անոր աստիճանական զարգացումը տեսնել, ուր, ըստ պատմական տվյալներու, պետք էր որ ավելի մեծ արդյունք գտնեինք, քան հետագա՝ անկախութենե զուրկ և տնտեսապես ընկած շրջաններուն:

«Կիկլոպյան ճարտարապետությունը»[2] հոդվածիս մեջ ինչ որ տեսանք, անպայման անոնցմե ոմանք այնքան հին են, որոնք կպատկանին նախահայկական ամենահին ժամանակներուն, իսկ ինչ որ փոքր ինչ հայկական շրջանին պատկանելու հավանականություն ցույց կուտան, անոնք ալ բավական չեն կիկլոպյան ճարտարապետությունեն հետո մինչև քրիստոնեական 3-րդ կամ 4-րդ դարերը, նախաքրիստոնեական աստիճանական խազերը բնորոշելու:

Անկարելի էր, որ հայերը նախաքրիստոնեական շրջանին մեջ չունենային բավականաչափ զարգացած ճարտարապետություն և գեղարվեստ, որովհետև քննադատորեն զտված ուսումնասիրություններ Հայաստանի նկատմամբ եթե կընդունեն միահեծան և անկախ շրջան մը, սակայն այս շրջանը ավելի կարճ էր, քան այն, որ հաճախ հռոմեական և պարսկական նահանգներ եղած էր Հայաստանը: Բայց ինչ որ ալ լիներ քաղաքական կացությունը, անկարելի էր, որ պատմության ծանոթ բովանդակ ժամանակաշրջանում զինք շրջապատող մեծ ազգերու մեջ ծաղկող քաղաքակրթութենեն լիովին օգտվել գիտնալու անվիճելի ապացույցներ տվող հայ ժողովուրդը կօգտվեր նաև պատմության անորոշ շրջանին մեջ ալ:

Ա՛յս կապացուցանե նաև քրիստոնեության առաջին շրջանեն մեզ հասած ճարտարապետական կոթողներու ստվար թիվը, որոնք երկար դարերու ընթացքին մեջ մշակվելով, զարգանալով և հառաջադիմելով միայն կարող էին նույն կատարելության տիպարն ստանալ:

Եթե ստույգ է, որ նախաքրիստոնեական շրջանում հայերն ունեցել են միահեծան մի ուժեղ պետություն և հաճախ դաշնակից՝ Հայաստանը շրջապատող մեծ պետությունների հետ, նաև ունեցեր են աշխարհակալ միապետներ և բազմաթիվ հարուստ նախարարական տոհմեր, անոնք անշուշտ ունեին ճոխ ու փարթամ մեծամեծ պալատներ, զորանոցներ, հասարակական այլ և այլ շինություններ, նաև իրենց հեթանոսական տաճարներն ու սրբավայրերը: Ինչ եղան ուրեմն այն ամենը, որոնք նախաքրիստոնեական հայոց ճարտարապե-

[1] Այս ուսումնասիրությունը Թորամանյանը գրել է «Նյութեր պատմական հայ ճարտարապետության» համար և տպագրվում է առաջին անգամ:
Կազմող

[2] Խոսքը վերաբերում է ներկա ժողովածուի առաջին մասին:
Կազմող

*տության արդյունքները պիտի լինեին, տարօրինակ հրաշքով մը հանկարծ անհետացա՞ն երկրի երեսեն, թե՞ քրիստոնեական վարագույրով մը ծածկվեցան: Ահավասիկ դժվարին առեղծված մը, բայց թերևս ոչ բոլորովին անլուծելի, ժամանակը պիտի պարզե, եթե, իհարկե, լրջորեն կուսումնասիրվին այսուհետև բովանդակ Հայաստանի մեջ անթիվ հիշատակարաններ ու հետազոտություններ բոլորովին կույս մնացած բեկորներ:*

*Ուստի գեթ առայժմ, քանի որ կանխահաս է հայոց ճարտարապետության մասին դատել և վճռել, հայ ճարտարապետության պատմության նյութը պիտի կազմվի բացառապես քրիստոնեական ճարտարապետության հիշատակարաններով:*

*Թերևս քրիստոնեական ճարտարապետության սկզբնական շրջանի հիշատակարաններու լուրջ հետազոտությունը դուռ մը բանա հեթանոս հայոց ճարտարապետական աշխարհը գեթ մասամբ տեսնելու համար:*

*Որչափ որ անկարելի կթվի նախաքրիստոնեական հայ ճարտարապետության ուսումնասիրությունը նյութերու բացարձակ չգոյության կամ չափազանց նվազության պատճառով, նույնքան դժվարին է հայոց քրիստոնեական շրջանի ճարտարապետության [ուսումնասիրությունը նյութերի շատության] և բազմազանության պատճառով: Այս անմշակ և ընդհանրապես գիտնականներու բոլորովին անծանոթ մնացած նյութերը Հայաստանի մեջ այնքան բազմաթիվ են, որ տասնյակ տարիներով, տասնյակ մասնագետներու անխոնջ գործունեություն է հարկավոր միայն հում նյութերը ի մի հավաքելու համար: Ահա միակ միջոցը թե՛ հայ ճարտարապետությունը լիովին ուսումնասիրելու և թե՛ հեթանոս հայության ճարտարապետական և գեղարվեստական գործունեության վրա ծածկված թանձր քողը վերցնելու համար: Հայոց քրիստոնեական ճարտարապետության ուսումնասիրությունը նյութերու չափազանց առատության մեջ մի դժվարություն ունի, որ եթե ոչ անհաղթելի, գոնե երկարատև հետազոտության և համառ աշխատանքի կարոտ, այն է, որ մեզ հասած հոյակապ հիշատակարաններու ստվար մի մասին կառուցման ժամանակը և կամ թվականը հայտնի չէ: Բազմաթիվ կրոնական և քաղաքական շենքերու պատկառելի մնացորդներ ունենք այսօր մեզ հասած, սակայն զարմանալի կերպով լուռ են հայոց հին մատենագիրներ անոնց մասին, իրենց վրա ալ գոնե արձանագրություններ չկան, որոնցմով հնար լիներ այն բազմաթիվ այլազանությամբ կանգնված հիշատակարաններուն ժամանակագրական ստույգ կարգ մը գտնել, որով ըստ ամենայնի կրցուրանար ուսումնասիրության գործը:*

*Բարեբախտաբար, սկսած 4-րդ դարեն մինչև 14-րդ և 15-րդ դարերը կանգնված կրոնական և աշխարհիկ սակավաթիվ հուշարձաններ կգտնվին մեզ հասած, որոնց կանգնման ժամանակը հայտնի է կամ վրանները գտնված կառուցման հատուկ արձանագրություններով կամ պատմագրական տեղեկություններով: Ահա այս սակավաթիվ հուշարձանները, համեմատելով կառուցման ժամանակը անհայտ մեծ ու փոքր հուշարձանների հետ, գրեթե անվրեպ կերպով հնարավոր կլինի որոշել Հայաստանում գոյություն ունեցող անթվական հուշարձանների կառուցման դարերը:*

*Հայաստանում ճնշող մեծամասնություն են կազմում կրոնական մեծամեծ հուշարձանները, որոնց վրա եթե շինության ճիշտ թվականներ չկան, սակայն, շինության ժամանակակից այնպիսի պատմական անձանց անուններ կան, որոնցմով անվիճելի կերպով որոշվում է հուշարձանի կառուցման ժամանակը, իսկ այն հուշարձանները, որոնց վրա արձանագրություններ չկան կամ ավերումների պատճառով կորած են, այն ժամանակ ուսումնասիրողին մեծապես օժանդակում են կրոնական պաշտամանց հատուկ ժողովոց կանոնները և տաճարաշինության հատուկ ավանդությունները, որոնց հիման վրա ձևակերպվում էին կրոնական որևէ հուշարձանի հատակագիծը և ուրիշ որոշ հարամասունքներ:*

*Ինչպես բոլոր քրիստոնեական աշխարհի մեջ, նույնպես և Հայաստանում, քրիստոնեության սկզբնական շրջանում քրիստոնյաները մեկ անգամից չկարողացան տաճարների համար վերջնական մի ձև ունենալ. երկար ժամանակ խարխափման և տատանման մեջ էին և գրեթե մինչև երեք դար անընդհատ մեկ ձևից մյուսին էին անցնում:*

*Թեև քրիստոնեության 4-րդ դարուց հետո մինչև 7-րդ դարը ևս կարևոր փոփոխություններ եղան տաճարների գլխավորաբար հատակագծային ձևերի մեջ, սակայն անոնք եղան գրեթե հիմնական այլազանություններ և երկար դարեր շարունակվեցին հիմնականին մեջ անփոփոխ, սակայն ընդհանուր առմամբ զգալի փոփոխություններ կրելով:*

*Բայց քրիստոնեության սկզբին, ուրիշ երկրների նման, ունեցան վարանման և տատանման շրջաններ, այդ տատանման շրջանում այնքան խոտելի չեղան հին կրոնի տաճարները և նվիրվեցին նոր աստծո պաշտաման, մինչև նորանոր եկեղեցիներ կանգնելը: Իսկ նոր եկեղեցիներ կանգնելիս՝ միանգամից չկարողացան նախկին պաշտամունքի ձևերից հեռանալ և գրեթե հեթանոսական տաճարների ձևերին մոտիկ կանգնեցին քրիստոնեական տաճարներ:*

*Նախկին հեթանոսական տաճարների ձևերը ոչ միայն ազդեցին քրիստոնեության սկզբում քրիստոնեական տաճարներու վրա, այլև շատ անգամ, համաշխարհային գեղարվեստի ուսումնասիրության ժամանակ, որոշ կտեսնվի նախկին կրոնական տաճարների ճարտարապետական ոճը չեչտակի կերպով անդրադարձած նաև աշխարհիկ շենքերու վրա:*

*Անուրանալի ճշմարտություն է, որ բոլոր հին ազգերու մեջ կրոնքը ամենամեծ դերը կատարեր է ճարտարապետության և գեղարվեստի զարգացման համար, այդ պատճառով ալ համաշխարհային ճարտարապետության ուսումնասիրության համար անսպառ նյութ մատակարարել են կրոնական հիշատակարանները, բացառությամբ հազվադեպ աշխարհիկ շենքերու:*

*Ուստի բնավ զարմանալի չէ, որ Հայաստանի մեջ ալ հայ ճարտարապետության ուսումնասիրության համար համեմատաբար կրոնական հիշատակարաններն են, որ առատ նյութ կմատակարարեն ցանցառ թվով աշխարհիկ շինության մնացորդների հետ:*

*Եվ հիրավի, գեղարվեստական և ճարտարապետական տեսակետով մանրազնին կերպով ուսումնասիրելով Հայաստանի հին ճարտարապետության բազմաթիվ կանգուն և կիսականգուն մնացորդները, գրեթե վճռական եզրակացության պիտի գանք ճշտիվ բնորոշելու համար հայ ճարտարապետության և գեղարվեստի բազմադարյան զարգացման աստիճանները, անոր վերածնություններն ու անկումները և նույն շրջաններում ապրող հայ ժողովուրդի մտավոր ու ֆիզիկական նկարագիրը:*

*Բայց որչափ որ հայտնի թվականներ ունեցող կրոնական հուշարձանները՝ կառուցման ժամանակը անհայտ հուշարձանների հետ համեմատելով և դարուց ի դարս կրոնական տաճարներ կանգնելու համար եկեղեցական ժողովներու տված կանոնների օժանդակությամբ քննելով մեզ կհաջողվի գրեթե անվրեպ կերպով որոշել որևէ մի հուշարձանի հատակագծի դարաշրջանը, սակայն ասով չի վերջանար հայ ճարտարապետության բազմադարյան անընդհատ փոփոխության և վերածնությունների ենթարկված արվեստին լիակատար ուսումնասիրությունը, ուստի ուսումնասիրությունը կատարյալ լինելու համար, սկսած ամենահին ժամանակներից մեզ հասած հուշարձանների գեղարվեստական ոճերու և շինարարական օրենքներու ևս համեմատական ուսումնասիրություն կատարել, որոշել հնագույն շրջանեն սկսած մինչև վերջնական անկումը ունեցած վերածնությունները և յուրաքանչյուր վերածնության մեջ երևցած ստեղծագործական և կրած ներգործությունները իր անմիջական կամ հեռավոր շրջապատից:*

*Այդ հատակագծային, ձևերի ժամանակագրության հետ զուգահեռաբար պետք է որ քննվեն և որոշվեն՝ 1. գեղարվեստական ոճերը և անոնց վերածնությամբ ստացած նորագույն ձևերը, 2. շինարարական ոճերը, գործածված շինանյութերը և անոնց շինելակերպը: Եթե այս ամենը լրջորեն ի նկատի առնվի և ոչ մի երևույթ անկարևոր չհամարվելով մանրամասն ուսումնասիրվի, այն ժամանակ, ես կարծում եմ, որ գործը, եթե իր կատարելության չհասնի, գոնե ըստ ամենայնի կրցուրանա առաջիկայի լիակատար և վճռական ուսումնասիրությունը ավելի կարող և մասնագետ գեղարվեստագետ գիտնական ճարտարապետներու համար: Որովհետև ներկա ուսումնասիրության մեջ ըստ կարելվույն փաստացի կերպով ոչ միայն պիտի նշանակվին հուշարձանների հիմնարկության դարաշրջանները, այլև անոնց առավել կամ նվազ չափերով կրած փոփոխությունները հետագա դարերում, որոնք [հետագայում փոփոխության ենթարկված հուշարձանները] մեծ թիվ կկազմեն հայոց հին հուշարձանների մեջ:*

*Հայտնի հուշարձաններ կան, որոնց վրա տարբեր դարաշրջանների և տարբեր վերածնության գեղարվեստական դրոշմներ կան, որոնք շատ անգամ թուրքիկ ուսումնասիրողների համար թյուրիմացության պատճառ եղել են՝ դատելով նույն գեղարվեստական դրոշմներեն մեկուն կամ մյուսին վրա:*

*Արդ, քանի որ ընդհանուր ճարտարապետության և գեղարվեստի վրա կրոնի ազդեցությունն անվիճելի կերպով ընդունված է գիտության մեջ, բնականաբար Հայաստան բացառություն չէր կարող լինել այս ընդհանուր օրենքեն և այս կապացուցանին Հայաստանի մեջ գոյություն ունեցող բազմաթիվ կրոնական հուշարձանները ճարտարապետության ուսումնասիրության համար, բացառությամբ փոքրաթիվ մասնավոր անհատական շենքերի և զինվորական ամրոցների:*

*Բայց մի կարևոր հարց է ծագում հայկական հուշարձանների ժամանակագրական կարգն ստուգելու աշխատության մեջ: Քրիստոնեության Հայաստան մուտք գտնելեն գրեթե առնվազն երկու դար հետո է, որ սկսեր են եկեղեցական ժողովներ մշակել հայ քրիստոնեական եկեղեցաշինության վերաբերյալ կանոններ, և այդ կանոններով է, որ հայոց եկեղեցիների հատակագծային ձևերն սկսում են որոշ չափով տևա-*

կան ձև ստանալ: Այդ հաստատված օրենքներից առաջ ի՞նչ հատակագծային ձև ունեցեր են հայոց եկեղեցիները: Ինչպես քրիստոնեությունն ընդունող ուրիշ ազգաց մեջ, նույնը պետք էր որ տեղի ունեցած լիներ հայոց մեջ, այն է՝ նախկին հեթանոսական տաճարները սրբագործել նոր պաշտաման համար: Ոչ միայն պատմական որոշ հատ ու կտոր տվյալներ, այլև հատակագծային ձևերու ուրիշ ազգաց հեթանոսական տաճարներու հետ կատարված համեմատություններ ցույց են տալիս այս ճշմարտությունը, թե հայոց նախնական քրիստոնեական տաճարներու ձևերը բացարձակապես ենթարկվեցան դրացի մեծ ազգաց և իրենց հեթանոսական վերջալույսին ունեցած կրոնական տաճարների ուղղակի ազդեցության: Հետևաբար, այս ուղղությամբ քննություն կատարելե առաջ, ըստ իմ կարծյաց, հարկ անհրաժեշտ է մասամբ ծանոթանալ Հայաստանի դրացի մեծ ազգերու կրոնին և կրոնական տաճարներու հատակագծային ձևերին, որոնց կրոնական և քաղաքական ազդեցության տակ էին հայեր երկար դարեր, մինչև քրիստոնեությունն ընդունելը պաշտոնապես:

Ըստ ոմանց՝ հայոց հեթանոսական կրոնը թեև առավելագույն չափով իրանական կրոնի խառնուրդ է, և աստվածներու անուններն ու հատկանիշները զուտ իրանական լինելը կհաստատեն, ինչպես Արամազդ, Անահիտ և այլն և այլն, սակայն ոչ նվազ ազդեցություն ունեցեր է հունա-հռոմեական կրոնը հայոց կրոնական պաշտամունքների վրա, մանավանդ քրիստոնեության փոխանցման ժամանակ մեկ երկու դար հունա-հռոմեական կրոնի խմորն զգալի չափերի էր հասած:

Իրանի աքեմենյան և սասանական շրջանի կրոնական վարդապետությունները, պաշտաման և ծիսական արարողություններու ձևերը ընդարձակ չափերով պարզվեցին գիտական նորագույն հետազոտություններով, սակայն իրանական կամ սասանական տաճարներու ձևերը շատ երկար տարիներ անորոշ էին և գիտնականներու զանազան հակընդդեմ ենթադրությանց և վիճաբանության նյութ եղած էին: Առհասարակ ընդհանուր կարծիք կար, թե պարսիկները, սկսած Զրադաշտի օրերեն մինչև Սասանյանների անկումը, պետք էր որ ունենային ձևակերպված մեծամեծ տաճարներ, որոնց հետքերը կորած էին քաղաքական և կրոնական հեղաշրջումների ժամանակ: Ուստի, քանի որ ընիկ երկրին մեջ չկարողացան գտնել զրադաշտական կրոնի հատուկ տաճարների որևէ հետքեր, որոշեցին փնտրել անոր ձևը և ծիսակատարության մանրամասնությունները Պարսկաստանից Հնդկաստան գաղթող և ներկայիս հին կրոնի ավանդություններ-ը շարունակող կրակապաշտ համայնքների մեջ: Այս իսկ նպատակով [1755] թվականին հայտնի գիտնական Անքքթել [Anquetil-Duperron (1731–1805)] ճանապարհորդելով Հնդկաստան, երկար ժամանակ ուսումնասիրեց Հնդկաստանի կրակապաշտներու լեզուն, կրոնը և կրոնական ծիսակատարությունները: Սակայն Անքքթելի ջանքերը հաջողությամբ չպսակվեցան, որովհետև այնտեղ չգտավ ոչ հին լեզուն գիտցող գիտնական կրակապաշտներ և ոչ ալ հնության տիպն ունեցող մեհենական ձևեր: Ծիսակատարության ձևեր, ինչ որ գտավ, բոլորն ալ նոր էին և աղավաղված, իսկ տաճարների ձևերը՝ հնության դրոշմը միանգամայն կորուսած:

Երկար ժամանակ զրադաշտական լեզվի, կրոնի, վարդապետությանց և տաճարներու ձևերի մասին գիտնականներու անպտուղ վիճաբանություններուն վերջ դրավ գիտնական ճարտարապետ Dieulafoy-ի կատարած ճանապարհորդությունը դեպի Պարսկաստան, ուր բազմակողմանի ուսումնասիրություն կատարեց պարսկական ճարտարապետության վրա, ի միջի այլոց հմտորեն ուսումնասիրեց պարսկական հին պատմությունը, կրոնական տաճարների ձևերը և անոնց շուրջ կատարված ծիսական արարողությանց ձևերը:

Կրոններու պատմությունն ուսումնասիրող գիտնականներ ապացուցեր են, որ ամեն մեկ նորածին կրոն մեծ մասամբ խառնուրդ է իրմե առաջ ապրող կրոններու մեկին կամ մեկ քանիին էական տարրերուն: Եբրայական կրոնը ձևակերպվեր է եգիպտականի և ասորա-քաղդեականի անմիջական ազդեցության տակ: Քրիստոնեականը խարիսխ ունենալով եբրայական կրոնը, նաև ազատ չէ մնացեր իր տարածված երկիրներու մեջ նախապես գոյություն ունեցող կրոններու ուժեղ ազդեցութենեն: Հասեր է երբեմն այնպիսի ժամանակ, որ նախկին հեթանոսական բոլոր սովորությունները և ծիսակատարությունները, հակառակ քրիստոնեական կրոնի նախկին պարզության, վերականգնվեր են քրիստոնեական վարդապետությամբ սրբագործված տարազի մը ներքև ծածկված:

Այս մասին նույնպես բացառություն չէ կազմած Հայաստան: Միևնույն ձևով փոխանցվեր են հայոց քրիստոնեական կրոնին մեր նախկին հեթանոսության ժամանակ խորապես արմատացած սովորություններ, որոնք արմատախիլ անելու համար դարավոր բարոյական և ֆիզիկական աշխատանք պահանջվեց: Այս մասին պատմական վկայություններ ալ չեն պակսիր, որ հալածանքն ու սուրը նույնիսկ անզոր գտնվեցան ժողովրդի սրտին ու մտքին մեջ արմատացած հին հավատալիքներն ու սովորությունները ջնջելու համար, որուն պատճառով քրիստոնեության մեծ քարոզիչներ ստիպված եղան թույլ տալ շարունակելու այդ սովորությունները, քրիստոնեական պաշտաման ձև ու կերպարանք տալով:

Ընդհանուր գիտական վճռի համեմատ, որ հայոց հեթանոսական կրոնը եղած է իրականի և հունականի զորեղ ազդեցության տակ, հետևաբար, նախաքրիստոնեական շրջանում պետք էր որ գոյություն ունենային Հայաստանում նույն դրացի մեծ ազգերի պաշտաման տաճարներու հատակագծի մոտավոր նմանությամբ հայ հեթանոսական տաճարներ, ուստի սկսենք համեմատության դնել այդ ազգերի վերջին շրջանի տաճարների ձևերը հայոց քրիստոնեական առաջին շրջանի, այսինքն հեթանոսությունից քրիստոնեության դառնալու ժամանակին առաջին քրիստոնեական տաճարների հատակագծային ձևերի հետ: Բնական է, որ առաջին ձևերն ստույգ կերպով գտնելուց հետո հաջորդ ձևափոխությունները և զարգացումները որոշել միանգամայն կդյուրանա: Dieulafoy-ի հետազոտությունները վերջնականապես վճռեցին գիտականորեն, որ պարսիկները մեծամեծ մեհյաններ երբեք չեն ունեցեր, այլ միայն ատրուշաններ, որոնց մեջ կվառվեր մշտավառ սրբազան կրակը: Այս ատրուշաններու շուրջն էր, որ բոլորովին բացօթյա, կհավաքվեր ժողովուրդը հանդիսավոր արարողություններու և տոնախմբություններու ժամանակ:

Ատրուշաններու ձևը Պարսկաստանի նախաբնիկ ասորա-քաղդեացիներու կրոնական սրբարանի զգալի ազդեցության տակ կազմված էր: Որովհետև ասորա-բաբելացիներու աստղապաշտությունը թելադրեր էր, որ իրենց կրոնական սրբարանները լինեին նաև աստղագիտական դիտարաններ, այդ պատճառով ալ այդ սրբարանները եղան ընդարձակ պարիսպի մեջ ամփոփված հսկայածավալ աստիճանավոր աշտարակներ կամ բուրգեր՝ Ziggourah անունով: Այս բուրգի գագաթին վրա էր աստվածային բնակարան-սենյակը կամ իսկական սրբություն սրբոցը:

Պարսիկները կրակապաշտության նոր կրոնին հետ շարունակեցին նաև ասորա-քաղդեական աստղապաշտությունը, հետևաբար, պարսկական սրբարանը բնականորեն պիտի ունենար հին աստղապաշտության սրբարաններու համանմանություն:

Սրբազան կրակն արտաքին սրբապղծություններե ազատ պահելու համար, պարսիկներն իրենց սրբություն սրբոցը, այսինքն՝ մշտավառ սրբազան կրակի ատրուշանը բլուրներու գագաթին վրա պարիսպով շրջապատեցին. ինչպես Nakské-Roustem-ի աթաշկիահը կամ ասորա-քաղդեացվոց Ziggourah-ի նման աստիճանավոր բարձրաբերձ աշտարակներու վրա հաստատեցին, որուն ներկայացուցիչն է Djour-ի աթաշկիահ աշտարակը: Ուստի վերջնականապես պարզվեց, որ պարսիկներ, ինչպես կրսե հռչակավոր գիտնական Maspero, ոչ տաճարներ ունեին և ոչ խորաններ, բոլորովին բացօթյա, բաց երկնքի տակ կկատարեին իրենց կրոնի սրբազան արարողությունները: Սակայն ժամանակի ընթացքում, երկար դարեր հետո, թեև բացօթյա աղոթելու և պաշտամունք կատարելու սովորությունն անփոփոխ մնաց, բայց փոխվեցան ատրուշանների ձևերը օտար, թերևս հնդկական կրակապաշտության ազդեցության տակ:

Բագվի մոտ, Սուրախանիի մեջ տակավին կանգուն կա կրակապաշտական տաճար մը, թերևս հետնագույն ժամանակի շենք, այնուամենայնիվ գոնե աղոտ կերպով իր վրա կանդրադարձնե նախնի սովորության հեռավոր գաղափարը:

Այս տաճարը կբաղկանա ընդարձակ քառակուսի շրջափակե մը, որուն կից չուրջանակի շինված են զանազան չափի ու ձևի սենյակներ, որոնք հատուկ էին քրմերու և ուրիշ զանազան կրոնական պաշտոնեությանց բնակության: Քառակուսի շրջափակով գոյացած միջավայրի կենտրոնին վրա շինված է ատրուշանը, որը գմբեթավոր փոքրիկ մատուռի մը ձևը ունի, այս մատուռի նման շենքն էր սրբություն սրբոցը, այսինքն՝ մշտավառ սրբազան կրակի վառարանը: Այս փոքրիկ աթաշկիահին կամ սրբություն սրբոցին մեջ հազիվ հազ կարող էին տեղավորվել մոգերն ու մոգպետը, հետևաբար ժողովուրդը կաղոթեր բացօթյա՝ բակին մեջ, այս պարագան անվիճելի է. Բագվի կրակապաշտական տաճարին մեջ որոշ չէ միայն զոհարանի կամ բագինի տեղը, որը ներկա ուսումնասիրությանս համար այնքան էլ էական կարևորություն չունի: Ըստ Անքքթելի, թեև Հնդկաստանի կրակապաշտներու տաճարներու մեջ հայտնի է զոհարանին կամ բագինին տեղը, սակայն աթաշկիահին տեղը, դիրքն ու ձևը գրեթե նման են Բագվի մոտի Սուրախանիի կրակապաշտական ատրուշանին:

Հայաստանի սահմաններուն անմիջապես կից և քաղաքականապես միշտ կապված հեռավոր ժամանակի ասորա-քաղդեացիներեն սկսած մինչև պարսկական կրակապաշտության ամենավերջին նմույշ կրոնական սրբարաններուն հետ պարզ բաղդատություն մը բավական է տեսնելու համար, որ հայոց քրիստոնեական կրոնի ճարտարապետական

հիշատակարանները կամ կրոնական պաշտաման տաճարները հեռավոր նմանություն իսկ չունին պարսկականի հետ, հակառակ այն ընդունված ճշմարտության, որ պարսկական պաշտամունքի որոշ ավանդություններ մնացին հայոց մեջ, քրիստոնեությունը ընդունելեն հետո ալ:

Ընդհակառակը, հունական մեհյանները ոչ միայն իրենց հատակագծային ձևով, այլև ծիսական պաշտաման քանի մը ավանդություններով ալ ուղղակի հայոց քրիստոնեական տաճարներու վրա ազդած լինելը, ըստ իս, անվիճելի կթվի: Հետևաբար, եթե հայոց քրիստոնեական տաճարները հունա-հռոմեական մեհյաններու դրոշմը կկրեն որոշ չափով, անպայման անոնց հայ հեթանոսական տաճարներու վրա ներգործած ուժեղ ազդեցության փոխանցումը պիտի լինի քրիստոնեության վրա այդ համանմանությունը:

Բովանդակ հայոց հին մատենագրությանց մեջ գրեթե մինչև 5-րդ դար, ընդհանուր հայոց կրակապաշտության մասին ոչ մի ակնարկ չենք գտներ: Թեև հայերը կրակապաշտ դարձնելու ջանքեր եղեր են հաճախ սասանական արքայից-արքաներու կողմից, սակայն այդ ջանքերը միշտ ալ ապարդյուն անցել են: (Եւ զմեհենիցն պաշտամունս առավել ևս յորդորէ. (Արտաշիր. 261-287) այլ և զհուրն որմզդական որ ի վերայ բագնին որ ի Բագաւան, անշէջ հրամայէ լուցանել: (Մ. Խոր., գիրք Բ., գլ. ՀԷ):

Վարդանանց և Վահանանց պատերազմները դարձյալ նույն պատճառներից հառաջ եկան ե դարուն, այդ ժամանակվան բախտախնդիր կամ ուրացող քանի մը նախարարներու դավանափոխությունը, եթե առիթ տվավ պարսիկների հայերը կրակապաշտ դարձնելու ձգտումին, այնուամենայնիվ այդ դեպքերը վերջինը եղան, որ միանգամայն վերջ դրին պարսիկների՝ հայերը կրակապաշտ դարձնելու ձգտումին:

Ընդհակառակը, Արշակունյաց շրջանին բոլոր պատմագրական ակնարկներ ավելի ի նպաստ հունական դիցապաշտության կխոսին: Ագաթանգեղոս, Զենոբ Գլակ, Մովսես Խորենացի ևն ևն, պարզ ու մեկին տեղեկություններ կուտան, որոնց մեծ մասը իբրև ճշմարտություն ընդունված է քննադատներու կողմանե: Ուստի, ամենայն հավանականությամբ, հայերու պարսիկներե փոխառած աստվածությունները պարզապես պաշտվեր են հայոց մեջ Հունաստանեն փոխառնված տաճարներում, մեկ խոսքով՝ Արամազդը (Ահուրամազդան) պաշտվեր է Զևսի տաճարին մեջ: Ուրեմն, այժմ այս ուղղությամբ հառաջ տանենք մեր քննությունը, հունա-հռոմեական քաղաքակրթության Հայաստանի վրա ունեցած մեծ ազդեցությունը քննադատական ուսումնասիրության [կողմից] ընդունված ճշմարտություն է, իսկ այդ նվաճումները ավելի զորեղ էին Արշակունյանց հարստության հիմնադիրներեն սկսած մինչև քրիստոնեության սկիզբը: Կըսվի, թե հայոց արքունիքի լեզուն էր հունարենը, թատրոնները կխաղացվեին հունարեն լեզվով, և հայ թագավորներեն մեկը հունարեն լեզվով բանաստեղծություններ և ներկայացման թատերագրություններ կգրեր: Ուստի, ամենայն հավանականությամբ, հայոց մեհենական ձևը դեռ այն ժամանակներեն պետք էր որ հունականացած լիներ, քանի որ այդ թագավորներեն մեկն էր (Արտաշես Ա), որ Հայաստան բերավ հունական աստվածներու անդրիներ:

Ըստ Ագաթանգեղոսի, դիցապաշտ վերջին թագավոր Տրդատ ևս ժողովուրդից առանձին հրովարտակով պահանջում էր մեհենական այն ձևերն ու պաշտամունքները, որոնք կատարվում էին հունաց աշխարհին մեջ, իր այն տեղերը գտնված ժամանակ: Արդ, եթե հայոց այն ժամանակվան աստվածները արևելյան ծագում իսկ ունենային, այնուամենայնիվ, պաշտաման ձևերը և տաճարները հունական ոճով շինված լինելն ավելի հաստատ է թվում (Ագաթանգեղոս, գլ. ԺԲ),

Համեմատության դյուրության համար պարզենք այստեղ հունական և հռոմեական մեհյաններու ձևերն ու հատկանիշները և ներկայացնենք քանի մը ինքնուրույն հատակագծեր՝ ընիկ երկրի հիշատակարաններե վերցված:

Ինչպես կտեսնվի հատակագծերու վրա, հունական մեհյանը, գրեթե քիչ բացառությամբ, ընդհանրապես galerie-ի մը չափ նեղ ու երկար քառանկյուն շենք էր՝ առանց պատուհանի, արտաքուստ շրջապատված էր բացօթյա սյունազարդ սրահով մը (portique), որուն վրան միայն ծածկված էր:

Բուն սրբարանը (cella) ավելի նեղ էր, քան զինքը շրջապատող սյունազարդ սրահի լայնությունը: Սրբարանին (cella) մեջ կգտնվեր աստվածային անդրին, և այնտեղ մտնելու թույլատրված էր միմիայն քուրմերուն, ինչպես եբրայական սրբություն սրբոցը, ուր միայն քահանաներն իրավունք ունեին մտնելու, իսկ ժողովուրդը դուրսը գավթին մեջ էր:

Ժողովրդյան բազմության տեղն էր դուրսը՝ ընդարձակ շրջափակին մեջ, ուր դրված էր զոհի սեղանը (բագինը): Սրբարանի շենքը, սյունազարդ սրահովը միասին, դրված էր հողեն բարձր արհեստական հարթավայրի մը վրա, որն որ շուրջանակի շրջապատված էր մի քանի աստիճան սանդուխներով: Այս ձևը պատմաբանները կհասցնեն մինչև 5-րդ դար մեր թվ. ա.:



Երկար դարաշրջաններու ընթացքին մեջ այս ձևը եթե զգալի մի փոփոխություն կրած է, այն ալ աստիճանաբար սրբարաններուն լայնանալովը հետզհետե շրջապատող սյունասրահներուն նեղնալն է, առանց զգալի փոփոխության ենթարկվելու շենքին ընդհանուր տարածության ավանդական համեմատական չափը լայնության և երկայնության կողմանե:

Իբրև հազվադեպ բացառություն, պահ մը երևան եկան բոլորակ կամ բազմանկյուն սրբարաններ, որոնք նույնպես շրջապատված էին արտաքին շրջապատ բացօթյա սյունասրահով, սակայն այս ձևը մի քիչ ավելի ժողովրդականություն գտավ հռոմեական շրջանին:

Հունական աստվածապաշտության հատուկ մեծամեծ տաճարներուն զուգահեռաբար զարգացեր է մեհենական մի ուրիշ ուղղություն: Այս ուղղության կպատկանին փոքրիկ կամ միջակ մեծությամբ շենքեր՝ բոլորակ կամ քառակուսի ձևերով, որոնք հաճախ զուրկ էին նաև արտաքին շրջապատ սյունասրահներեն, ոմանք միայն մտից դռան առջևն էր, որ ունեին փոքրիկ սյունազարդ ծածկույթ մը շենքի նեղ ճակատին լայնության հավասար:

Այս շենքերը հատուկ էին երկրորդական աստվածություններու, կամ, ավելի ճիշտը, իրենց մահվանից հետո աստվածացող մահկանացուներու պաշտաման, որտեղ կպահվեին աստվածացող հերոսի սիրելի և թանգագին իրեղենները, պատերազմական գործիքները: Երբեմն այս սրբարանին մոտ, առանձին բաժանումի մը մեջ, կգտնվեր հերոսին գերեզմանը:

Այս մեհենիկներու մեջ, որոնք բնորոշված են tesar անունով, ճիշտ միևնույն ձևով չէր կատարվեր կրոնական պաշտամունք, ինչպես բուն աստվածներուն նվիրված տաճարներուն մեջ: Այստեղ պաշտամունքը պարբերական էր: Յուրաքանչյուր տարի, որոշ օրվան մը մեջ, մեծ բազմություն կհավաքվեր այս մեհենիկին շուրջը, զոհաբերություններ և նվիրաբերություններ կկատարվեին, նվագարաններով, պարերով, կեր ու խումով և ուրիշ բազմապիսի խրախճանություններով կտոնեին մեհենիկի նվիրական հերոսի հիշատակը:

Գուցե արդարացի կերպով առարկողներ լինեն, որ ընդհանրապես քրիստոնեական եկեղեցիներու ձևերը, որոնց հետևողությամբ նաև հայոցը, հետևողություն լինին եբրայական տաճարներու, որոնք ոչ միայն խոտելի չէին քրիստոնեից համար, այլև իբրև խարիսխ ծառայել են նորածին քրիստոնեական եկեղեցվույն:

Այս առարկությունը որոշ չափով հող կգտնե վարդապետությանց և ծիսակատարությանց օրենքներու տեսակետով, որոնց մասին առիթ կունենանք իր կարգին խոսելու, իսկ ինչ կվերաբերի եբրայական տաճարին ձևին ու կոչումին և հատկանիշներուն ընդհանրապես, եգիպտական և հունական տաճարներու դիպավոր ձևերն ու կոչումները մարմնացուցած էր իր վրա:

## ՀԱՅՈՑ ՀՆԱԳՈՒՅՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԶԵՎԵՐ

Մինչև 7-րդ դարու վերջը եղած հայոց հնագույն եկեղեցիներու հատակագծային այլազանությունները մեկ ակնարկով տեսնելու և դյուրությամբ համեմատության դնելու համար այստեղ կդնեմ ընդհանուր քարտես մը, որուն մեջ կան գրեթե բոլոր առանձնահատուկ ձևերը՝ զանազան ժամանակներ իրագործված[1]:




**Նկ. 55. Եղվարդի 5-րդ դարի եկեղեցու հատակագիծը**

[1] Այդ քարտեսը չգտանք հեղինակի գործերում, կամ կորել է և կամ նրա կազմումը հետաձգված է եղել ապագային, այդ պատճառով այս բաժնում դրել ենք քննության ենթակա գրեթե բոլոր եկեղեցիների հատակագծերը:

Կազմող



Նկ. 56. Եղվարդի 5-րդ դարի եկեղեցու մնացորդները



Նկ. 57. Շիրվանջուղ գյուղի եկեղեցու հատակագիծը

Քարտեսի մեջ եղած հատակաձևերուն մեջեն Էջմիածնի տաճարին հատակաձևն է, որ, ըստ պատմական և ժողովրդական ավանդության, ամենահինը համարված է, նույնիսկ Գրիգոր Լուսավորչին կվերագրե ավանդությունն այդ հատակաձևի հորինումը: Պատմական տեղեկություններ կան, որ մինչև 7-րդ դարու կեսը Էջմիածնի տաճարը մեկ երկու անգամ վերանորոգվեր է, բայց որպես թե առանց հատակաձևը փոխելու, նախկին հիմերու վրա վերաշինված է:

Պատմական տեղեկություններու մեջ հատակաձևի հատկանիշներու մասին բառ մը անգամ չկա, նույնպես վերանորոգողներու մեջ, 5-րդ դարու վերջին քառորդին Վահան Մամիկոնյանն է, որ հիմեն ի վեր նորոգ շիներ է «Իբր զհնացեալ գործ նախնեաց» (Ղազար Փ. 157). դարձյալ ձևի մասին ոչ մի ակնարկ ժամանակակից պատմագրի կողմից, Վահանի վերաշինութենեն հետո եղած վերանորոգություններն են, որ կատարվեր են առանց հատակաձևի փոփոխության:

Ես առիթ ունեցեր եմ այս մասին ընդարձակորեն կարծիքս հայտնելու «Էջմիածնի տաճարը» գրքույկիս մեջ, և ապացուցելու, որ այդ ձևը կպատկանի առանձնապես 5-րդ դարու վերջերին և թերևս առաջին անգամ իրագործված Հայաստանի մեջ: Ուստի, փոխանակ այդքան զարգացած և կանոնավորված հատակագծի, պետք է ուրիշ հատակագծային ձև մը փնտռել, որ թե՛ ձևով ինքը որոշ չափով նախնական լինի և թե՛ տրամաբանորեն համապատասխանե նորաղարձ քրիստոնեության նախնական վիճակին:





Նկ. 58. Դիրաքլարի եկեղեցու հատակագիծը

Հետնագույն ժամանակի պատմիչ Զաքարիա Սարկավագի վկայությամբ (1699-1700), որ Հովհաննավանքի պատմությունն է գրեր անոր շինության սկզբնավորությունեն մինչև իր օրերը, Հովհաննավանքի փոքր եկեղեցին հիմնարկված է 4-րդ դարուն և վերանորոգվեր է 6-րդ դարուն (573-574) Աշոտի ձեռքով:

Ով որ կմտնե Հովհաննավանքի հնագույն եկեղեցվույն մեջ, ուր այժմ ալ ժամերգություն կկատարվի, առաջին տպավորությունը կլինի նկատել անոր բոլորովին նախնականությունը իր բոլոր մասերուն մեջ:

Հատակագծի ձևը նեղ ու երկար քառանկյուն է, անհեթեթ հաստությամբ պատերով, ներքին կողը ունի լայն և պատեն անսովոր հաստությամբ դուրս ցցված քառակուսի որմնասյուներ, որոնք միմյանց կապված են պայտաձև աղեղներով. այս աղեղներուն վրա հանգչած է հատակագծի ամբողջ երկայնությունը ծածկող կամարը, որուն շինության ժամանակի մասին դժվար է վճռական կարծիք հայտնել, որովհետև արվեստագործության տեսակետով շատ կտարբերի կամարի շինելակերպը պատերեն, նույնպես արտաքին corniche-ներեն մաս մը կա, ինչպես նաև կտուրի քարե ծածկը, որ մասամբ միայն կերևա հետնագույն շինվածներու փլատակ մասերու ներքևեն, 9-10-րդ դարերու արվեստագործության նմույշ լինել կթվի: Անկասկած է, որ դեռ հին դարերու մեջ շատ տեսակ փոփոխություններե անցեր է այս շենքին տարազը, սակայն կամարը սկզբնական շենքին հետ միաժամանակ ծածկված կամ հետնագույն ժամանակի շինված լինելը մասնավոր խնամքով քննության կկարոտի: Բայց ի՞նչ ալ որ լինեն նորոգություններու և փոփոխություններու հետևանքները, անվիճելի է, որ հատակագծի ձևը ներսի կողմեն նույնությամբ պահված է. այս մասին դեռ առիթ կունենանք խոսելու իր տեղին:



Նկ. 59. Քասաղի եկեղեցու հատակագիծը

Դժբախտաբար, հնարավորություն չունեցա ներկա քարտեսիս մեջ մտցնել Հովհաննավանքի հատակագիծը, սակայն քարտեսին մեջ կան անոր մոտավոր նմանությունն ունեցող հատակագծեր, որոնց քննական համեմատություններով եթե հնար լինի ճշտել շինության ժամանակը, անշուշտ, կհաստատվի նաև Զաքարիայի տված պատմական տեղեկությունն անոր մասին:

Շատ բնական է, որ ամեն մի նոր սկսվող շինարարական ոճ միշտ պարզ ու նախնական վիճակ մը

կունենա ու հետզհետե կզարգանա և կճոխանա ըստ ճաշակի և անհրաժեշտ պահանջներու:

Առանց այլևայլության, քարտեսի հատակագծերու շարքին վրա պարզ կտեսնինք, թե ո՛րն է ամենեն նախնականը և ինչպես աստիճանաբար բարդանալով՝ ենթարկվեր են նորանոր ճոխ և գեղարվեստական ձևերու:

Այստեղ ամենեն պարզ և նախնական հատակագծերը կներկայանան Շիրվանջուղ գյուղի եկեղեցին [նկ. 57] և Եղվարդի ավերակ մեծ կաթուղիկեի հյուսիս-արևելյան կողմի ավերակ եկեղեցին [նկ.նկ. 55-56]: Այս եկեղեցիները ունին իրենց լայնության համեմատությամբ անսովոր երկարություն և բաղկացած են միմիայն չորս պատերե, առանց որևէ հարակից մասեր կամ բաժանումներ ունենալու: Եղվարդի եկեղեցին հիմնահատակ եղած է, և հազիվ մեկ մետր բարձրությամբ պատերն են մնացած, որոնց վրա որոշ են միայն դռները, իսկ պատուհաններու մասին ոչինչ չէ կարելի ըսել. Շիրվանջուղի եկեղեցին հյուսիսային կողմեն բնավ պատուհան չունի, արևելյան և արևմտյան կողմերը՝ մեկ մեկ նեղ ու երկար պատուհան, իսկ հարավային՝ նույնպես նեղ ու երկար պատուհաններ, որոնց հիմնական շինության ժամանակակից լինելու կամ չլինելու մասին կտեսնենք ոճերու համեմատության ժամանակ:



Նկ. 60. Քասաղի եկեղեցու կտրվածքը արևելքից արևմուտք

Ասոնցմե հետո կուգան Դիրաքլարի և Քասաղի եկեղեցիները, որոնք նույնպես ունին նեղ ու երկար հատակագիծ, նախորդներեն միայն մեկ տարբերությամբ, որ Դիրաքլարի եկեղեցվո հարավային պատին կից, արևելյան ճակատի հավասարությամբ, իբրև հավելվածական մաս, ունի մի փոքրիկ սենյակ՝ ներսեն եկեղեցվո հետ հաղորդակցող, իսկ Քասաղի եկեղեցին միևնույն սենյակը ունի հյուսիսային պատին կից, արևելյան ճակատին հավասարությամբ, որը դռնով մը կհաղորդակցեր եկեղեցվո հետ և ուրիշ դռնով մը դրսի հետ [նկ. նկ. 58, 59 և 60]:

Դիրաքլարի եկեղեցին բնավ պատուհան չունի, այժմյան երկու պատուհանները հարավային կողմի վրա գյուղացիք իրենք բացեր են: Իսկ Քասաղի եկեղեցին հյուսիսային կողմին վրա նմանապես բնավ պատուհան չունի, ինչպես Շիրվանջուղի եկեղեցին, պատուհաններ կան արևմտյան և հարավային կողմերու վրա. նաև փոքր պատուհան մ'ալ արևելյան կողմը՝ abside-ին վրա բացված:



Նկ 61. Երերույքի հատակագիծը





Նկ. 62. Եղվարդի կաթուղիկեի հատակագիծը

Այս ձևերուն կհաջորդե Երերույքի եկեղեցին, որտեղ [նկ. 61] բացի ներքին նեղ ու երկար քառակուսի ավանդական ձևեն, հավելվածական մասեր կան տաճարի արևելյան խորանին երկու քովերեն, որոնք երկու երկհարկանի սենյակներ են արևելյան պատին ուղղության հավասարությամբ հյուսիսային և հարավային պատերեն դուրս ցցված, իսկ սենյակներու երկայնությունները ուղղված են դեպի հյուսիս և հարավ: Բացի այս սենյակներեն, արևմտյան կողմին վրա ևս ունի հյուսիսային և հարավային պատերուն մասամբ կից և մասամբ ալ դեպի արևմուտք հառաջացած հավասարակողմ քառակուսի սենյակներ, որոնք կհաղորդակցին միայն տաճարի ներսի կողմին հետ: Այս եկեղեցին ալ հյուսիսային կողմեն բնավ պատուհան չունի, արևմտյան և հարավային կողմերուն վրա ունի բավական խոշոր պատուհաններ, իսկ արևելյան կողմեն մեկ չափավոր մեծությամբ պատուհան խորանին վրա և չորս փոքր պատուհաններ՝ փոքր սենյակներուն վրա բացվող:

Երերույքի եկեղեցվույն կետ առ կետ համանմանությամբ շինված է Տեկորի եկեղեցին, որուն վրա կպակսին միայն արևմտյան կողմի հավասարակողմ սենյակները. քառանկյուն այս եկեղեցին ամեն կողմի վրա ունի խոշոր ըսվելու չափ պատուհաններ:

Երերույքի և Տեկորի եկեղեցիներեն հետո մի ուրիշ այլազանություն է Եղվարդի ավերակ մեծ կաթուղիկեն, որուն երկայնությունը համեմատաբար բարեփոխված է և չունի նախորդներու անհամեմատ երկայնությունը, սակայն այս եկեղեցին ալ բոլորովին զուրկ է հարամասունքներե, այսինքն՝ հարակից սենյակներե [նկ. նկ. 62-63]: Փոխանակ արևելյան մեկ կիսաբոլորակ խորանի, ունի երեք կիսաբոլորակ խորան՝ միջին մեծ և կողմնակի երկու փոքր խորաններ: Միևնույն ձևը և գրեթե համաչափությունն ունի Դվինի կաթուղիկեն, առանց սենյակներու, երեք կիսաբոլորակ խորաններով, սակայն այս վերջինս հյուսիսային և հարավային կողմերուն վրա շենքին բունեն դուրս ելած կիսաբոլորակ abside-ներ ունի: Ասոնց պատուհաններու մասին ոչինչ հայտնի չէ, բոլորովին հիմնահատակ լինելուն պատճառով:



Նկ. 63. Եղվարդի կաթուղիկեի հարավային պատի մի մասը և գլխավոր մուտքը



Նկ. 64. Արուճի եկեղեցին հյուսիս-արևմուտքից



Նկ. 65. Արուճի եկեղեցու հատակագիծը



Նկ. 66. Ավանի եկեղեցու հատակագիծը



*Ուրիշ այլազանություն մ'ալ Արուճի և Մրենի կաթուղիկեներն են, որոնք արևելյան կողմին վրա, խորանին երկու կողմը, պատերեն ներս ամփոփված ունին երկու քառակուսի սենյակներ: Պատուհաններ ունին ամեն կողմի վրա [նկ. նկ. 64, 65, 70]:*

*Այստեղ կվերջանան որոշ չափով այն բոլոր այլազանությունները, որոնք կպատկանին* basilique *ըսված ոճին: Ասոնցմե բոլորովին տարբեր ուղղությամբ զարգացած ուրիշ հատակագծային ոճ մը կա, որն որ առհասարակ խաչաձև հատակագիծ անունով ընտրոշված է: Այս ոճին, ըստ ավանդության, առաջին ներկայացուցիչն է Էջմիածնի տաճարը:*

*Ինչպես կտեսնվի հատակագծեն, Էջմիածնի տաճարն ունի գրեթե հավասարակողմ քառակուսի հատակագիծ, ներքին կողմեն չորս անջատ մույթերու վրա գմբեթավորված, չորս պատերեն դուրս շեշտված են չորս* abside-ներ, *որով ներքինը կստանա կիսաբոլորակ վերջավորությամբ հավասար թևերով խաչաձև հատակագիծ:*

*Էջմիածնի խաչաձև հատակագծի մի ուրիշ այլազանությունն է Ավանի խաչաձև կաթուղիկեն, որն որ կտարբերի Էջմիածնեն իր չորս* abside-ներու *փոխանակ արտաքին պատերեն դուրս շեշտված լինելու, պատերեն ներս ամփոփված լինելով և անսյուն գմբեթավորումով: Իսկ առավելությունը Էջմիածնի բաղդատմամբ՝ չորս անկյուններուն վրա չորս սենյակներ ունենալն է, ինչ որ Էջմիածնի մեջ կբացակայի [նկ. 66]:*

Նկ. 67. Գրիգոր Մամիկոնյանի շինած Զորավոր եկեղեցու ավերակները (Եղվարդում)

*Կան կարգ մը խաչաձև հատակագծով եկեղեցիներ ալ, որոնք թե՛ արտաքուստ և թե՛ ներքուստ խաչաձև են և անսյուն գմբեթավորված: Այս ձևի ներկայացուցիչներն են Թալինի Ներսեհ Կամսարականի փոքր եկեղեցին, Ալամանի ս. Անանիա եկեղեցին և Լմպատավանքը: Այս եկեղեցիները ներքուստ կիսաբոլորակ վերջավորությամբ հավասարաչափ թևեր ունին, իսկ արտաքուստ դուրս շեշտված են քառակուսի ձևով:*

*Հավասարակողմ քառակուսի խաչաձևի և բազիլիկի մեջտեղը ձևակերպված ներքին խաչաձևի մի այլազանություն են Հռիփսիմեի վանքը և Աղիաման գյուղի եկեղեցին, որոնց մեջ խաչաձևի արևելյան և արևմտյան թևերն ավելի երկար են, քան հյուսիսային և հարավային թևերը, և ամփոփված են արտաքին չորս պատերուն մեջ: Միայն հավասարակողմ խաչաձևներու նման ունեն չորս անկյուններու վրա չորս սենյակներ, ինչպես Ավանի եկեղեցին:*

*Նույնպես ներքին խաչաձևի և բազիլիկի համապատասխանությամբ ձևակերպված են Թալինի մեծ կաթուղիկեն և Արթիկի մեծ եկեղեցին. սրանք*

Հռիփսիմեի ձևով երկու կողմեն երկար թևերով են, սակայն չունին չորս կողմին վրա սենյակներ, այլ միայն արևելյան կողմը, սեղանին երկու քովը, երկու սենյակներ պատերեն ներս ամփոփված և ներքին խաչաձևի թեևերը քառակուսի պատերեն դուրս չեչտված, ինչպես Էջմիածինը, Բագարանը և այլ նմանները:



Նկ. 68. Գրիգոր Մամիկոնյանի շինած Զորավոր եկեղեցու հատակագիծը

Քառակուսի բազիլիկ և խաչաձև եկեղեցական հատակագծերեն բոլորովին տարբեր ոճ մ'ալ երևան եկեր է 7-րդ դարուն, այն է՝ արտաքուստ ութանկյուն բազմակուսի, իսկ ներքուստ՝ դրսի ճակատներու քանակությամբ կիսաբոլորակ abside-ներով: Այս ոճի առաջին օրինակն է, թերևս, Եղվարդի մեջ Գր. Մամիկոնյանի շինած ս. Զորավոր անունով եկեղեցին: Այս ոճը հետագային, մինչև 14-15-րդ դարեր շատ ընդհանրացած և շատ գեղեցիկ այլազանություններով ճոխացած է, սակայն առայժմ կթողում այս մասին խոսելը, հառաջիկային իր տեղին խոսելու համար [նկ. նկ. 67-69]:

Արդյոք Գր. Մամիկոնյանի այս եկեղեցին սկի՞զբն էր բոլորակաձև եկեղեցիներու, թե՞ իրմե առաջ ուրիշ օրինակներ կային, որոնք ալ մասամբ իբրև նախագաղափար ծառայեցին Զվարթնոցի արտաքուստ բազմակուսի, իսկ ներքուստ խաչաձև և մինչև այստեղ տեսնված բոլոր ոճերեն զգալի չափով չեղվող նոր վերածնության, այդ հարցին առայժմ պատասխանել դժվար է, սակայն մի բան պետք է ըսեմ, որ Զվարթնոցը այնպիսի նոր ոճի ստեղծագործություն մ'է, որ այս ընդհանուր ուղղություններեն մեծ չափով չեղվելով հանդերձ՝ իր մեջ ամփոփում է բոլոր իրմե առաջ և հետո վերածնող ու զարգացող հատակագծային ոճերուն գլխավոր հատկանիշները, որուն [Զվարթնոցի] մասին ընդարձակորեն պիտի խոսեմ, երբ կարգը կուգա բուն Զվարթնոցով զբաղվելու:

Այժմ սկսինք համեմատություններ կատարել այս բոլոր հատակագծերու վրա, ժամանակագրական կարգ մը գտնելու համար՝ սկսելով երկար քառակուսի ձևերեն:



Նկ. 69. Գրիգոր Մամիկոնյանի շինած Զորավոր եկեղեցու մնացորդները հարավից



# ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ՀՆԱԳՈՒՅՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՏԱԿԱՁԵՎԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Ներկայացուցած քարտեսիս մեջ շինության ժամանակը հայտնի եկեղեցիներն են՝ 1. Էջմիածնի կաթուղիկեն՝ Վահան Մամիկոնյանի ձեռքով շինված 5-րդ դարուն. 2. Եղվարդի մեծ կաթուղիկեն՝ Մովսես կաթողիկոսի շինած՝ 6-րդ դարու կիսեն հետո. 3. Մրենի եկեղեցին՝ 7-րդ դարուն շինած. 4. Արուճի կաթուղիկեն՝ Գր. Մամիկոնյանի շինած [7-րդ դարի երկրորդ կեսին]. 5. Հռիփսիմեի վանքը, Կոմիտաս կաթողիկոսի շինած՝ 7-րդ դարուն. 6. Գայանեի եկեղեցին՝ Եզր կաթողիկոսի շինած՝ 7-րդ



Նկ. 70. Մրենի եկեղեցու հատակագիծը

դարուն. 7. Եղվարդի բազմակուսի եկեղեցին, Գր. Մամիկոնյանի շինած՝ 7-րդ դարու վերջին: Մյուս բոլոր եկեղեցիներուն ոչ շինության ժամանակն է հայտնի և ոչ ալ շինողներու անունը: Ուստի, այս տեսակետով ուրեմն, 5-րդ դարու վերջին քառորդին մեջ Վահան Մամիկոնյանի ձեռքով շինված Էջմիածնի կաթուղիկեեն ավելի հինը չկա, որուն շինության թվականը որոշ լինի, և որովհետև, ըստ պատմական ավանդության, Վահան Մամիկոնյան վերաշիներ է ամբողջովին և, ըստ ժողովրդական ավանդության, լուսավորչավանդ հիմերուն վրա առանց հատակաձևը փոփոխելու, ուրեմն պետք է ընդունենք, որ հայոց քրիստոնեական եկեղեցիներու հատակաձևերու առաջին ձևն է Էջմիածնի հատակագիծը: Սակայն փոքր ինչ քննադատության



Նկ. 71. Գայանեի տաճարի հատակագիծը

ենթարկելով, կտեսնենք, որ առողջ տրամաբանության միանգամայն հակառակ է. բոլորովին նոր վերածնվող, բազմատեսակ օրենքներե և պահանջներե միանգամայն ազատ, տակավին բոլորովին իր նախնական պարզության մեջ եղող քրիստոնեության համար, ընդունել այնպիսի հատակագծային ձև մը, որ ոչ միայն ծիսական բազմակողմանի պահանջներու հատուկ հարմարություններով զարգացած է, այլ ճարտարապետական տեսակետով ալ նախնականութենե շատ հետու քրիստոնեական ճարտարապետության հատուկ մշակումով կատարելագործված ձև մը ունի: Ստույգ է, որ քրիստոնեության ամենամեծ խորհրդանշանը խաչն էր, սակայն երբեք չէր կարող 4-րդ դարուն առաջին քրիստոնեական եկեղեցվո հատակագիծը խաչի

ձևով դրվիլ, ոչ մեկ ճարտարապետ կամ եկեղեցական չէր կարող մտածել այդ մասին քրիստոնեության սկզբին անմիջապես: Այդ ձևն իր մեջ ոչ միայն զարգացում, այլև ճոխություն իսկ կպարունակե, որ աստիճանաբար զարգացումով միայն կարելի է հասնել այդ վիճակին: Ոչ միայն Հայաստանի մեջ, այլև բոլոր ուրիշ քրիստոնյա ազգերու մեջ իսկ, դեռ մինչև 5-րդ դարու կեսերը եկեղեցական հատակագծային ոչ միայն բարդ ձևեր չկային, այլև որոշ ձև ալ չկար: Քրիստոնեությունը պետական կրոն հայտարարվելեն հետո Կոստանդիանոսի շինած եկեղեցին 4-րդ դարուն՝ basilique ձև ուներ, այսինքն՝ նեղ ու երկար քառակուսի մը, ներքուստ երեք թևերու բաժանված երկու կարգ սյունաշարերով: Ահավասիկ քրիստոնեական եկեղեցվո հատակագծային անդրանիկ ձևը, որ միահամուռ կերպով ընդունած են բոլոր քննադատ գիտնականները:

Ուրեմն պետք է Էջմիածնի զարգացած հատակագծեն ավելի պարզ և նախնական ձև մը գտնել, որ նաև համապատասխան լինի հայոց նորածին քրիստոնեության կրոնական պահանջներու և ծիսակատարությանց նախնականության:

Մասնագիտական մանրակրկիտ հետազոտություններն անհերքելի կերպով ապացուցեր են, որ մինչև 4-րդ դարու սկիզբը, այսինքն՝ քրիստոնեության պետական կրոն լինելը, ոչ մեկ երկրի մեջ հիմնավորապես կառուցված եկեղեցի դրեթե չէ շինվեր, բացի այս, պատմական բազմաթիվ վկայություններ ալ կան, որ մինչև այդ ժամանակները քրիստոնեից եկեղեցիները հաճախ տուներու մեծ սենյակներն են եղեր, թեև պատմագրաց մեջ ընդհանրապես կպատահենք եկեղեցվո հիշատակության այս կամ այն քաղաքի ու երկրի անունով մինչև 4-րդ դարու առաջին քառորդը, այն ալ շատ անգամ քրիստոնյա համայնքի փոխաբերական իմաստով պետք է հասկնալ: Մինչև այս ժամանակ ալ ծիսակատարություններ այնքան պարզ էին, որ իսկապես տան մը մեջ մեծ սրահ մ'ալ բավականություն կարող էր տալ նախնական քրիստոնեական ծիսակատարության պահանջներուն: Երկու խոսքով կարելի է բացատրել նախնական ծիսակատարության սահմանը:

Քրիստոնյաները կհավաքվեին իրենց աղոթատան մեջ, ուր կկարդացվեին ս. Գրքեն հատվածներ, կլսեին քարոզ իրենց եպիսկոպոսին կամ քահանային կողմանե. պատարագի արարողությունը միանգամայն պարզ էր, այնպես որ ավելի ընտանեկան բնույթ կկրեր, քան ծիսական ակնածելի պաշտամունքի: Բացի այս, ամեն տեղ և ամեն երկիր իր առանձին ձևն ու կանոնն էր ստեղծեր: Ըստ երևույթին, առաջին անգամ Բարսեղ Կեսարացին (329-379) է, որ ընդհանուր կանոն և միօրինակություն մտցուցեր է եկեղեցական պաշտամունքի մեջ իր կանոններով: Ամենաշատը մինչև այն ժամանակ անհրաժեշտ պահանջ պիտի լիներ ապաշխարողաց կայանի մը՝ «արտաքոյ եկեղեցւոյ», որուն համար, նախ՝ բավական էր համայնքի հավաքված որևէ սրահին դռնեն դուրս կանգնելը ապաշխարողներու համար, երկրորդ՝ այստեղ ևս «արտաքոյ եկեղեցւոյ» խոսքը կարող ենք իմանալ փոխաբերական մտքով, այսինքն՝ պատարագի կամ հաց կտրելու ներկա գտնվելու իրավունք ունեցողներեն անջատվել, դուրս գալ, դուցե բոլորովին հեռանալ աղոթատեղիեն: Ուրեմն, այս տեսությամբ, բավական էր քրիստոնեից համար որևէ մի սրահ առանց բարդ հարամասունքներու, ուր հավաքվեին պաշտման ժամանակ, հետո ալ փակելով դուռը՝ հեռանային:

Մեր հին պատմիչներու ավանդած տեղեկություններու համաձայն ալ գրեթե ընդարձակ չափերով եկեղեցիներ շինված չկան, միայն [Փավստոս Բյուզանդ] է, որ Աշտիշատի եկեղեցվո և մեկ երկու վկայարաններու շինության պատմությունը կանե մեզի, նույնը Զենոբ Գլակ, իսկ Ագաթանգեղոս եռանդով կպատմե կռատուններու քանդվելը և անոնց տեղ քրիստոնեական եկեղեցիներ շինվելը: Այնուամենայնիվ, Էջմիածնի տաճարեն և երեք վկայարաններեն զատ, հայտնապես մատնացույց ըրած չէ ուրիշ եկեղեցվո մը շինության մասին: 5-րդ դարու պատմագիրներ Եղիշե և Ղազար Փարպեցի, նույնպես Մովսես Խորենացի, եկեղեցվո շինության համար բառ մը անգամ գրած չեն, բացառությամբ Դվնա մեջ Վարդան Մամիկոնյանի շինած ս. Սարգիս եկեղեցիեն և կաթուղիկե եկեղեցիեն: Բնորոշ է Զենոբ Գլակի տեղեկությունը, որ կմատնանշե հեթանոսական տաճարի վրա շինված եկեղեցվո մը մասին նույն հիմերու վրա՝ առանց ձևը փոխելու, միայն դռան տեղը փոխելով արևմուտք:

Ուրեմն, եկեղեցաշինության մասին մինչև 5-րդ դարուն վերջերը եղած պատմագրական բոլորովին հատ ու կտոր տեղեկություններեն կարող ենք հետևցնել, որ գրեթե աչքի ընկնող տաճարներ չէին շինված, շինվածներն ալ ոչ մի ուշադրության արժանի բաներ չէին ունչին բացառությամբ:

Ուրեմն ի՞նչ կասկած կարող է լինել, որ հայոց քրիստոնեական ամենանախնական շրջանին համար միանգամայն բավական էին Շիրվանշահի և Եղվարդի եկեղեցիները, ուր ոչ մի հարամասունք կցված չկա և կարիք ալ չկա, որովհետև եկեղեցվո մեջ, ըստ հետագային ավանդված եկեղեցական կանոններու, ոչ եկեղեցվո մեջ սրբազան անոթներ



պահելու սովորություն կար և ոչ ալ ավագերեց քահանային եկեղեցվո մեջ պառկելու պարտականությունը:

Դվինի 555 թվականի Բ ժողովի կանոնադրությունեն կերևի, որ եկեղեցվո մեջ սպասներ չպահվելու սովորությունը հին է, որ հետո քահանաներ, անտեսելով այդ վաղեմի սովորությունը՝ նույն ժողովի մեջ խնդրո առարկա են դարձրել և կրկին կպատվիրեն, թե «պաշտօն պատարագիք և սպասք սրբոյ եկեղեցւոյն ի գլխաւոր քահանային տան եղիցի, որպէս յառաջագոյն կարգեալ է»: Նույնպես ավագերեց քահանային եկեղեցվո մեջ մնալու պարտականության մասին շեշտված է այս ժողովին մեջ: Անշուշտ այս օրենսդրությունը նոր չէր, երևի նույնպես յառաջագոյն կարգեալ էր, այս անգամ նորեն կվերահաստատեն:

Թե ո՛րչափ հին կարող է լինել քահանաներու եկեղեցվո մեջ պառկելու օրենքը, չեմ կարող վճռականապես ըսել, սակայն հաստատ կարող եմ ըսել, որ քրիստոնեության առաջին շրջանին, այսինքն 4-րդ դարու մեջ դժվար թե գոյություն ունենար, որովհետև այդ մասին բոլոր եկեղեցական կանոններուն մեջ ոչինչ ակնարկ չկա: Միայն ուրիշ մի հանգամանք կա ապացուցանող, որ գտնե 5-րդ դարու սկզբին մտավ այդ սովորությունը, որովհետև 5-րդ դարու վերջին շինված եկեղեցիներու մեջ արդեն կատարյալ շինարարական կարգով ի հիմանե ձևակերպված են եկեղեցիներուն կից մեկ կամ մեկե ավելի սենյակներ, որոնց հատկության մասին կխոսենք իր տեղին, սակայն այս հարամասունքներու շենքի հատակագծին մեջ ձևակերպված ու կանգնված եկեղեցիներեն շատ կան ուրիշ եկեղեցիներ, որոնք թեև սկզբնական շինության ժամանակ չեն ունեցեր սենյակներ, սակայն հետո, երբ օրենքը պարտադիր եղեր է սենյակ ունենալու՝ այն ժամանակ հապճեպ և անճաշակ կերպով ավելցուցեր են եկեղեցիին կից սենյակներ, որոնց ամենահին օրինակներն են Քասաղի եկեղեցին, որուն հյուսիս-արևելյան կողմը և Դիրաքլարի եկեղեցին, որուն հարավ-արևելյան կողմեն ավելցուցեր են եկեղեցիին կից սենյակ:

Այս սենյակներու գոյության պատճառ ոչինչով չէ կարելի բացատրել, բացի ավագերեց քահանային եկեղեցվո մեջ պառկելու կանոնեն, իհարկե, ուղղակի սրբարանին մեջ պառկել սրբապղծություն կլիներ, հետևաբար տաճարին կից և անոր հետ դռնով հաղորդակցող ավանդատուն սենյակ մը, առանց սրբարան լինելու (Ներս. Լամբ., 237), համարժեք է տաճարի մեջ պառկած լինելու:

Ուրեմն, քանի որ 5-րդ դարու վերջերին եկեղեցվո կից քահանայից բնակարանի համար սենյակ շինելու սովորությունը ընդունված էր և փաստացի կերպով 5-րդ դարուն կանգնվող եկեղեցիներու մեջ հիմնական կերպով ընդհանուր շենքին հետ միաժամանակ շինված են այդ սենյակները, ուրեմն Երերույքի և Քասաղի եկեղեցիներուն կից հապճեպով և ճակատագրապես երկուքին մեջ ալ ծուռ ու մուռ պատերով ավելցուցած սենյակները մեզ կտանեն, եթե ոչ կանուխ քան 5-րդ դարը, գոնե առնվազն 5-րդ դարու սկիզբները: Ուստի, բնականաբար, բուն շենքերը ավելի կանուխ պետք էր որ գոյություն ունենային, քան 5-րդ դարը:

Գառնիի ավերակ basilique-ը նույնպես ունի հարավային պատին կից, արևելյան պատին ուղղությամբ մի սենյակ, որ հետո մատուռի է փոխվեր. ուրիշ շատ մը բնորոշ նշաններով այս եկեղեցին ալ անկարելի է 5-րդ դարեն այս կողմը բերել:

Այս կանոնը այնքան պարտավորիչ և կարևոր համարված օրենքներեն մեկն էր, որ փոխանակ ուրիշ շատ մ'օրենքներու նման մոռացության տրվելու կամ փոփոխվելու՝ պատճառ եղեր է եկեղեցվո բակին մեջ առանձնապես քահանայի բնակության համար տուն-ժամատուն շինելու 7-րդ դարուն, որուն առանձին շինողը, ըստ Հովհաննես կաթ. պատմաբանի՝ Եզր կաթողիկոսը եղավ Գայանեի վկայարանին բակին մեջ:

Պարզ ակնարկ մը իսկ բավական է տեսնելու համար, որ այս անճաշակ կերպով եկեղեցիներու սենյակները հետնագույն քան շինությունը կպցնելուն զարգացումն են այն եկեղեցիները, որոնց մեջ, հիմնավորապես ընդունված նոր կանոնի մը համաձայն, ոչ թե մեկ, այլև երկու սենյակները շինվեր են կամ խնամքով ավելցվեր են նախնական շենքին արևելյան ճակատին հավասարությամբ, հյուսիսային և հարավային պատերուն կից:

Ահա այս նոր սովորության ներկայացուցիչներն են Աշտարակի, Տեկորի, Երերույքի եկեղեցիները, որոնք արևելյան պատի հավասարությամբ, հյուսիսային և հարավային պատերուն կից ավագ խորանին երկու կողմը սենյակներ ունին և, միանման կերպով, երկայնությունները դեպի հյուսիս և հարավ ձգված:

Անտարակույս, այս սենյակներեն մեկը ավագերեց քահանային մշտական բնակության հատուկ էր, իսկ մյուս կողմին վրա դեմ առ դեմ շինվածը արդյոք ի՞նչ կոչում ուներ, չեմ կարող հաստատ վճռել, միայն ենթադրաբար պիտի ըսեմ, որ այս սենյակները այնքան փոքր են, որ հազիվ մեկ մարդու բնակության կարող էին բավականություն տալ, և որովհետև Դվնա ժողովին կանոնը պարտադիր ըրած էր, որ ավագերեցին «այլ ընկերքն զամառն փոխանակաւ կացցին ընդ նմա անպղերգաբար», հավանական

կկարծեմ, որ մյուս սենյակն ալ հատկացված կլիներ մշտապես եկեղեցվո մեջ բնակող ավագերեցի օգնական հերթապահ քահանաներուն:

Երերույքը խորանին երկու կողմին վրա՝ Տեկորի և Աշտարակի եկեղեցիներու նման՝ նեղ ու երկար սենյակներ ունենալեն զատ, արևմտյան կողմի երկու անկյուններուն կից ունի նաև երկու հավասարակողմ քառակուսի սենյակներ, որոնք կիսով հյուսիսային և հարավային պատերուն կցված են և մասամբ ալ հառաջացած են դեպի արևմուտք, ներսեն միայն հաղորդակցություն ունին տաճարին հետ:

Այս սենյակներու պահանջը և շինությունը անպայման ավելի կանուխ էր, քան Էջմիածնի տաճարի շինությունը (տեսնել «Էջմիածնի տաճարը»), որովհետև, ինչպես կտեսնվի, սենյակները հետնագույն հավելված են վաղեմի շինության վրա, կերպով մը բռնի պատշաճեցուցված, սակայն 5-րդ դարու վերջին և 6-րդ դարուն, նույնիսկ 7-րդ դարուն շինված շատ մը եկեղեցիներու մեջ կանոնավոր համաչափությամբ, նախքան հիմնարկությունը ձևակերպված են հատակագծին վրա: Նաև Երերույքեն հետո շինված բոլոր եկեղեցիներու մեջ, ուր չորս անկյուններու վրա չորս սենյակներ շինելու պահանջը ստիպողական եղած էր, այդ չորս սենյակները, արտաքին պատերեն ներս ամփոփվելով հանդերձ, խորանին երկու կողմին երկու սենյակներու նեղ ու երկարած դեպի հյուսիս և հարավ ձևերը անդառնալի կերպով փոխված են հավասարակողմ քառակուսիի:

Թե ինչ պատճառով Երերույքի արևմտյան կողմի հավասարակողմ քառակուսի սենյակները կարող են շինված լինել, որ հետո՝ 5-րդ, 6-րդ և 7-րդ դարերու եկեղեցիներուն մեջ պարտավորիչ կերպով մտան նախապես հատակագծին մեջ կանոնավորապես ձևակերպվելով իբր պահանջ, այդ մասին ընդարձակ բացատրության համար ընթերցողին կհանձնարարեմ կարդալ իմ «Տեկորի տաճարը» աշխատությունս, այստեղ միայն այսքան պիտի ըսեմ, որ արևելյան կողմի սենյակները մնալով հանդերձ իբրև քահանայից բնակարան, արևմտյան կողմինները, հավանաբար, եղած են իբրև ապաշխարողաց գավիթ: Որովհետև այդ շրջաններու ամեն օրենքներե ավելի խիստ էին ապաշխարության օրենքները, թեև Հայաստանի մեջ այնքան խստությամբ հետևած լինել չերևիր, որովհետև ամեն եկեղեցիի մեջ նույն բաժինը շինել պարտավորիչ չէ եղած, ամենայն հավանականությամբ ցուրտը և ձմեռը սաստիկ եղած երկիրներու մեջ դժվար էր «մի ոք յերախայից»-ի ժամանակ հանել տաճարեն դուրս և ցուրտ սրահներուն մեջ սպասեցնել, ուստի կմտնեին այն սենյակներու մեջ, իսկ այն եկեղեցիներու մեջ, ուր արևմտյան սենյակներ չկային, արևմտյան կողմը, դռան մոտ, որոշ սահմանի վրա, հավանաբար դռան մոտի վերջին սյուներու և որմնասյուներու ուղղությամբ, պետք էր որ առանձնացած լինեին ապաշխարողներ: Այս ենթադրությունը կհիմնավորեմ մինչև այսօր շարունակված ավանդության մը վրա, որ գոյություն ուներ Շ. Գարահիսարի եկեղեցվո մեջ: Եկեղեցվո դռնեն ներս, երկու կողմը մինչև գմբեթակիր սյուներու սահմանը վանդակապատով բաժնված էր և այդ տեղերուն պեյնամազ սեքյուսի ավանդական անունը կտրվեր, առանց ըմբռնելու նշանակությունը և առանց գոյություն ունենալու ապաշխարողաց կայանի սովորությունը:

Երերույքի այս սենյակներու շինության դարաշրջանին, որ 5-րդ դարեն եթե ոչ առաջ, գեթ սկիզբներին է, չենք կարող ըսել, թե գոնե մեկը մկրտատուն եղած լինի, ինչպես ոմանք ուզեցին հետևցնել, քանի որ 5-րդ դարու ս. Սահակի կանոններուն մեջ հայտնապես շեշտված է և որոշ է մկրտարաններուն տեղն ու դիրքը. ըստ այդ կանոնների՝ մկրտարանը պետք է եկեղեցվո բակին մեջ շինել, ոչ թե եկեղեցվո կից: Իսկ եթե հիմնվենք մի ուրիշ կանոնի վրա (Մակար Երուսաղեմի եպիսկոպոսի, «Գիրք թղթոց»), պետք էր որ լիներ խորանի աջ կողմին և ոչ թե եկեղեցվո արևմտյան կողմը, խորանեն շատ հեռու:

5-րդ դարու Էջմիածնի հատակագիծը և 6-րդ դարու Ավանի եկեղեցվո հատակագիծը պարզ ապացույցներ են, որ անոնցմե առաջ հիշատակված բոլոր եկեղեցիները ավելի նախնական են և հետզհետե զարգանալով ու կանոնավորվելով ըստ ծիսական և վարդապետական կանոններու, հասեր են այն կատարելագործված ձևերին, ինչ որ են Էջմիածինը 5-րդ դարուն և Ավանը 6-րդ դարուն, այն է՝ ներքին խաչաձև հատակագիծը չորս ուղիղ պատերու մեջ ամփոփված և չորս անկյունները չորս սենյակներ՝ համաչափորեն հավասարակողմ քառակուսի ձևով: Թեև ներքին խաչաձևը շատ նպաստավոր էր այս չորս սենյակներու առանց դժվարության կազմվելուն, սակայն, նախ որ, եթե պահանջ չլիներ այդ չորս սենյակներու գոյությունը, խաչաձևն ուրիշ տեսակ կկազմեին, ինչպես 7-րդ դարուն, թեև, ըստ երևույթին, արևմտյան կողմի սենյակներու պահանջը այնքան ալ ստիպողական չէր, որ 7-րդ դարեն հետո արդեն բոլորովին անհետացեր են մինչև 13-14-րդ դարերը տարբեր կոչումով իրագործված, բացառությամբ Անիի Առաքելոց և Խծկոնքի ս. Սարգիս եկեղեցիների, որոնք անպայման հետևություն են Էջմիածնի նախնական ձևին, բայց սենյակներուն կոչումը փոխած են առանձին մատուռներու վերածումով:

Սակայն արևելյան կողմի սենյակներն ավելի հիմնավորապես պահանջ են դարձեր՝ այս անգամ ոչ թե իբրև քահանայից բնակարան, որովհետև Եզր կաթողիկոսի՝ եկեղեցվո բակին մեջ առանձին քահանայից բնակարան չինելե հետո, այլևս կարիք չէր մնար, այլ, անշուշտ, մատնանշում է ուրիշ սովորություն, որ շատ վաղուց ընդունված էր արևմտյան և արևելյան ուրիշ եկեղեցիներու մեջ այն իբրև պահարան և սարկավագատուն: Անկասկած, այս երկու սենյակներեն մեկը սրբազան անոթներու պահարան եղավ. փոխանակ անոնց հին օրենքներու համաձայն քահանային տունը մնալու, այս սենյակին մեջ պահվեցավ, իսկ մյուսը՝ ավանդատուն կամ սարկավագատուն, որտեղ պիտի պահվեին հանդերձեղեններ և ուրիշ ավանդներ, եթե, իհարկե, այդ սովորությունը կար Հայաստանի մեջ:



Նկ. 72. Բագարանի եկեղեցու հատակագիծը

Այս իսկ պատճառով, երբ արևմտյան կողմի սենյակները բոլորովին պահանջ լինելե դադարեցան, եթե կարելի էր այսպես ըսել, տաճարի չորս անկյուններու վրա չորս սենյակներ շինվեցին, որոնք հետո Էջմիածնի նախնական ձևի ճակատագրին ենթարկվեցին, այսինքն՝ քանդվեցին և վերաշինվեցին այսօրվան ձևով: Թերևս դեռ Եզր կաթողիկոս հին կանոնը չփոխած, արդեն Բուդ Առավեղյան հիմնարկած էր իր եկեղեցին Բագարանի մեջ: Այս տեսությամբ ալ, անպայման բոլոր այն եկեղեցիները, որոնք չորս կողմին վրա չորս սենյակներ ունին, անոնց շինությունը պետք է համարել Եզրի կաթողիկոսության թվականեն առաջ, երբ թե՛ քահանայից եկեղեցվո մեջ բնակվելու օրենքը փոխվեցավ և թե՛ ապաշխարողաց գավիթի սովորությունը թուլանալով, փոխանակ առանձին սենյակի, առանձին բաժին հատկացվեցավ եկեղեցվո արտաքին դռան մոտ:

Ինչպես մի անգամ հայտնեցի, սկսած դեռ 5-րդ դարեն Էջմիածնի ներքին խաչաձև հատակագծի վերածնությունով չեն վերջացեր basilique ձևերը, այլ զուգահեռաբար զարգացեր են այդ ուղղությամբ եկեղեցիներ ալ, ինչպես Եղվարդի մեջ Մովսես կաթողիկոսի շինած մեծ կաթուղիկեն: Այս եկեղեցին թեև բոլորովին սենյակներ չունի, և արևելյան կողմի սենյակների փոխարեն ալ միայն փոքրիկ aside-ներ են, սակայն առանց պատճառի չէ. կան ուրիշ նմաններ ալ այդ շրջանները, որոնց մասին կխոսեմ իր կարգին:

Հայոց եկեղեցական ճարտարապետության զարգացման տեսակետով անօրինակ կերպով հարուստ է 7-րդ դարը իր շատ մը հոյակապ եկեղեցիներով: Այս դարուն մեջ ոչ միայն անցած դարերու վերածնվող բոլոր ոճերը ավելի զարգացած, ճոխացած և նորանոր այլազանություններով վերստեղծված են, այլև չեղվելով ընդհանուր ուղղություններն, բոլորովին նոր ոճեր երևան եկած են մին քան զմյուսը գերազանցող ճոխ և մեծագործ: Մանավանդ եթե առավելություն մը կա, որ անհունապես նպաստավոր է ընդհանուր հայոց ճարտարապետության ուսումնասիրությունը դյուրացնելուն, այն է, որ բոլոր այլազանություններու և նորաստեղծ ոճերու թվականը կամ ժամանակը հայտնի լինելեն բացի՝ հայտնի են անոնց շինողներու անունները:

7-րդ դարուն կանգնված ոճերու այլազանությունները հետևյալներն են.

1. Basilique ոճի խիստ չքեղ օրինակներն են Արուճի մեջ Գրիգոր Մամիկոնյանի, Մրենի մեջ Կամսարականի շինած կաթուղիկեները և Էջմիածնի մոտ Գայանեի վանքը՝ Եզր կաթողիկոսի շինած. այս եկեղեցիներու մեջ բնորոշ նորություն մը եթե կա, այն է, որ արևմտյան կողմը սենյակներ չունեն, իսկ արևելյան կողմի սենյակները փոխանակ հավասարակողմ քառակուսիի՝ ավելի երկարած են դեպի արևելքեն արևմուտք՝ հակառակ նախորդ դարու հավասարակողմ քառակուսիին [նկ. նկ. 64, 65, 70, 71]:

2. Ներքուստ և արտաքուստ խաչաձև եկեղեցիներ, ինչպես Բագարանի, Մաստարայի, Արթիկի են են եկեղեցիները, որոնց հավասարակողմ քա-

ռակուսի արտաքին պատերեն դուրս շեշտված են ներքին խաչաձևի կիսաբոլորակ թևերը՝ արտաքուստ անկյունավորված: Կեսութանկյուն այս եկեղեցիներու մեջ, հակառակ իրենց խաչաձև լինելուն, արևմտյան կողմի վրա սենյակներ չունին, այլ միայն երկու կողմին, այսինքն՝ խորանին կից արևելյան կողմին վրա ունին սենյակներ, բացառությամբ Բագարանի, որուն մեջ եղած փոփոխության մասին կխոսեմ Էջմիածնի եկեղեցվույն կրած փոփոխություններու վրա խոսելու ժամանակ, որովհետև միևնույն փոփոխություններն է կրեր, ինչ որ Էջմիածնի եկեղեցին [նկ. նկ. 72–77]:



Նկ. 73. Բագարանի եկեղեցու ընդհանուր տեսքն արևմուտքից



Նկ. 74. Բագարանի եկեղեցու կտրվածքը արևելքից արևմուտք



Նկ. 75. Մաստարայի եկեղեցու հատակագիծը

Նկ. 76. Մաստարայի եկեղեցին հյուսիս-արևելքից



Նկ. 77. Արթիկի խաչաձև եկեղեցու հատակագիծը





Նկ. 78. Ալամանի եկեղեցու հատակագիծը և հյուսիսից հարավ կտրվածքը

Նկ. 79. Ներսեհ Կամսարականի տաճարը Թալինում

Ինչպես կերևի, այս սենյակներն այլևս դադարած են քահանայից բնակարան լինելե, քանի որ այս դարուն արդեն Եզր կաթողիկոսի նախաձեռնությամբ սկիզբ դրվեր էր արտաքին ժամատան՝ քահանայից համար: Ուստի այս սենյակներուն կոչումը պիտի լիներ ծառայել պահարանի կամ ավանդատան:



Նկ. 80. Ներսեհ Կամսարականի տաճարի հարավից հյուսիս կտրվածքը և հատակագիծը

Նկ. 81. Լմպատավանքը հարավ-արևելքից

3. Ներքուստ և արտաքուստ խաչաձև եկեղեցիներ, որոնց ներքին խաչաձևի թևերը կիսաբոլորակ վերջացած են, սակայն դրսեն խաչաձևի թևերը ուղղանկյուն են, ինչպես Ալամանի եկեղեցին, Թալինի փոքր եկեղեցին – Թալինի Զորավանք ըսված, Արթիկի Լմպատավանքը են են: Այս եկեղեցիներու մեջ ալ սենյակներ բնավ գոյություն չունին, թերևս իրենց փոքրության պատճառով [նկ. նկ. 78–82]:



Նկ. 82. Լմպատավանքի հատակագիծը

4. Թե՛ basilique-ի և թե՛ խաչաձևի հատկանիշը ունեցող եկեղեցիները երկու այլազանության կարժանվին: Ա. այլազանությանը կպատկանին Հռիփսիմեի և Աղիամանի եկեղեցիները, որոնք ներքուստ խաչաձև են և ունին չորս անկյուններու վրա չորս սենյակներ, իսկ արտաքուստ երկար քառակուսի հատկանիշը ունին առանց դուրս ցցված abside-ներու: Բ. այլազանության կվերաբերին Թալինի և Դվինի կաթուղիկեները, որոնք թե՛ ներքուստ խաչաձև են կիսաբոլորակ վերջավորած թևերով, թե՛ ներքին անջատ սյուներ ունին, իսկ դրսանց չեչտված են ներքին խաչաձևի թևերը նաև հյուսիս և հարավ կողմերուն վրա, սոնց մեջ ևս արևելյան սենյակներ ունի Թալինի եկեղեցին, իսկ Դվինը երեք խորան արևելյան կողմեն, որուն փոփոխությունը հետագային ակներև է ինչպես Եղվարդի կաթուղիկեինը [նկ. նկ. 83–88]:



Նկ. 83. Հռիփսիմեի տաճարի հատակագիծը

5. Գրիգոր Մամիկոնյանի՝ Եղվարդի մեջ չինած արտաքուստ ութանկյուն, իսկ ներքուստ ութ կիսաբոլորակներով, ճաճանչաձև հատակագծով եկեղեցին է, առանց սենյակներու [նկ. նկ. 67–69]:

6. Զվարթնոց եկեղեցին՝ արտաքուստ բազմանկյուն, ներքուստ բոլորակ և կեդրոնին վրա խաչաձև այունազարդով՝ չորս մեծ մույթերու վրա գմբեթավորված [տես՝ Ժողովածուիս 3-րդ մասը]:



Նկ. 84. Թալինի կաթուղիկեի հատակագիծը

Այս վեց այլազանութիւնները, որոնց թէ՛ շինութեան թվականներն են հայտնի և թէ՛ շինողներու անունները, հնարավորութիւն պիտի տան մեզ ուրիշ՝ շինութեան ժամանակը անհայտ եկեղեցիներու ժամանակը որոշելու ոչ միայն իրենց հատակագծային ձևերով, այլև ուրիշ շատ մը ճարտարապետական և գեղարվեստական նմուշներով:

Հատակագծային ոճի տեսակետով առայժմ գոնե պարզված կհամարիմ ես նախքան 7-րդ դարու կառուցված շինքերու ժամանակագրական դասավորությունը, ինչպես ըրեր եմ քարտեսիս մեջ, ավելի ևս ապացուցելու համար դիմենք այժմ նախքան ճարտարապետական և գեղարվեստական նմուշներով ապացուցելը, քանի մը ուրիշ ընորոշ հարամասունքներու, որոնք ալ նվազ փաստ չեն քարտեսիս մեջ դասավորած ժամանագրական կարգիս:

1. Մինչև քրիստոնեության վերջնականապես հալածանքն ազատելը, քրիստոնեական եկեղեցիները հատակագծային որոշ ձև դրեթե բնավ չեն ունեցեր: Պարբերաբար տեղի ունեցող խիստ հալածանքներու պատճառով քրիստոնյաներն ստիպված էին ստորերկրյա catacombe-ներու մեջ այրեր փորելով պաշտամունք կատարել, իսկ եթե երբեմն ներողամիտ կայսրներ կնստեին Հռոմեական կայսրության գահուն վրա, այն ժամանակ ալ հազիվ հազ թույլատրելի էր անշուք շինություններ շինել իբրև քրիստոնեական եկեղեցի, որոնք չդիմանալով ժամանակի ծախիչ ազդեցության՝ շուտով անհետացեր են:

Բայց առհասարակ այս թույլատու շրջաններուն ալ տուներու մեջ սրահներ էին քրիստոնեական համայնքի ժողովատեղիները:

Նկ. 85. Թալինի կաթուղիկեն հյուսիսից

Նկ 86. Թալինի կաթուղիկեն հարավ-արևմուտքից

Նկ. 87. Թալինի կաթուղիկեի գմբեթակիր սյուները

Ծիսական կարգեր ալ այնքան պարզ էին, որ կարիք չկար հատակագծային բարդ բաժանումներու, թէ՛ արտաքուստ և թէ՛ ներքուստ:

Առաքելոց ժամանակները քրիստոնեական եկեղեցին ավելի ընտանեկան հավաքույթի մը պատկերը ուներ. սրահին խորքում դրված էր քարոզչին աթոռը՝ շրջապատված իր երգիչ կամ գրակարդաց պաշտոնյաներով, որոնք կքարոզեին, կկարդային ս. Գրքեն հատվածներ և կերգեին սաղմոսեն հատվածներ: Ի վերջո կկատարվեր հաց կտրելու արարողությունը նույնիսկ եկեղեցվո մեջ դրված սեղանի մը շուրջը: Այս միջոցին այնքան ընտանեկան բնույթ կուտային այն արարողության՝ արտակարգ կերպով ուտել-խմելով, որ մի օր Պողոս Առաքյալ հանդիմանեց զիրենք, ըսելով՝ եթե որ զվարճանալ կուզեք կերուխումով, կարող եք ձեր սեփական տան մեջ զվարճանալ և ոչ աստծո տան մեջ:

Ինչպես կերևի, քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելու շատ մոտիկ ժամանակներու մեջ է, որ սկսեր էին փոքր առ փոքր բարդանալ ծիսակատարության օրենքները, բայց մեկ կողմանե ընդհանուր կրոնի մը հետ հաղորդակցելու դժվարությունները, մյուս կողմանե հալածանքը, պատճառ եղեր են զանազան երկիրներու քրիստոնյա համայնքներու մեջ ծիսակատարության շատ այլազան

օրենքներու: Ցուրաքանչյուր երկրի կամ նահանգի եպիսկոպոս ու քարոզիչ, հիմնվելով քրիստոնեական խարիսխ եղող եբրայական կրոնի վարդապետության և ծիսակատարության օրենքներու վրա, ըստ հաճույս կանոններ կսահմաներ իրեն հովված համայնքի համար:

Երբ քրիստոնեություն պետական կրոն հռչակվեցավ մեծն Կոստանդիանոսի հրովարտակով, եկեղեցվո գլխավոր ղեկավարներու առաջին հոգը եղավ ոչ միայն դավանաբանական և ծիսակատարության, այլև եկեղեցական հատակագծային ընդհանուր միօրինակություն մը ստեղծել, այս պատճառով ալ օգտվելով լայն ազատություններե և թե պետական բարձրագույն հովանավորությունե, սկսեցին մասնավոր և տիեզերական ժողովներ գումարել ընդհանուր կարգ ու կանոն սահմանելու համար:

Կոստանդիանոս տակավին առանց ինքը քրիստոնյա լինելու, ըստ ոմանց, վաղուց քրիստոնեություն ընդունող իր մոր՝ Հեղինեի և կնոջ՝ Ֆոստայի թախանձանաց զիջելով, բայց ավելի հավանականը, քրիստոնյաներու ճնշող մեծամասնության ազդեցության ներքո՝ 312 թվականին Միլանի հրովարտակով քրիստոնեությունը ազատ կրոն հռչակեց՝ համահավասար իրավունքներով հին կրոնը դավանողներուն: Իսկ այս հրովարտակեն հետո է, որ փոքր առ փոքր սկսեց Կոստանդիանոս հայտնի պաշտպանություն ցույց տալ քրիստոնյաներուն և առանձին հոգածություն ցույց տալ եկեղեցվո կարիքներուն:

Կոստանդիանոսի կողմանե քրիստոնեության վրա բացարձակ հովանավորություն երևան եկավ 325 թվականին առաջին տիեզերական ժողովին նախագահելովը: Ահա այդ ժամանակներն էր, որ չափազանց բազմացած քրիստոնյաներուն եկեղեցվո կարիքներուն բավարարություն տալու համար քրիստոնեից տրամադրության տակ դրավ կայսրության սահմաններում եղած հեթանոսական բոլոր շինությունները, որոնց մեջ ամենեն շատ ընդունված եկեղեցվո համար պատշաճ համարվածը basilique ըսված շինություններն էին:

Basilique ըսված շինությունները երկար քառակուսի շենքեր էին, ներսի կողմեն երկու կամ չորս կարգ դեպի երկայնությունը շարված սյուներու միջոցավ երեք կամ հինգ թևերու բաժնված: Միջին թևը, որ միշտ լայն էր, կվերջանար կիսաբոլորակ abside-ով մը:

Basilique-ը հատուկ էր հասարակական մեծ ժողովներու և դատական գործերու՝ կայսերաց հովանավորության ներքո, որուն պատճառավ ստացեր էր basilique անունը: Ամբողջ սրահը հատկացված էր ժողովականներուն, բացի կիսաբոլորակ abside-են, որն որ տրամադրված էր միմիայն դատաստանական մարմնին և թագավորին կամ անոր փոխարինող նախագահին:

Քրիստոնյա կղերին պատշաճ թվեցավ նախապես նախագահին և դատական կողմին հատկացված կիսաբոլորակ abside-ին մեջ զետեղել քրիստոնեական սրբություն սրբոց – սեղանը և տեղ բռնել այնտեղ կղերականներուն ժողովրդեն անջատվելու համար, անտարակույս, այս ձևը նախկին պարզ արարողություններեն հետո մարմնացումն էր Հովհաննու Հայտնության Դ և Ե գլուխների մեջ նկարագրվածին, որուն մեջի աթոռին վրա նստող նախագահի տեղը կբռներ եպիսկոպոսի գահը և շուրջը եղող 24 երեցներու տեղ՝ կղերականաց դասը, որոնք կարգավ կշարվեին կիսաբոլորակ abside-ին մեջ: Գառը կներկայացնե սեղանը, որ որդույն խորհրդանշանն է: Ոչ միայն բյուզանդական եկեղեցիներու կիսաբոլորակ abside-ին, այլև վերջին շրջաններուն մեջ (12-15դ.դ.): Հայաստանի մեջ ալ սովորություն կար abside-ին գմբեթարդին վրա, որուն անմիջապես ներքևն էր սեղանը՝ նկարել Քրիստոսի պատկեր մը, ձեռքը բաց գիրք մը բռնած, և կիսաբոլորակ պատին վրա նկարել առաքելոց և մարգարեից պատկերներ՝ թվով 24 հատ: Թեև այսօր սովորությունը տարբեր է հայոց մեջ, սակայն պատմական ակնարկներ կան ապացուցանող, որ դեռ 7-րդ դարուն ալ հայոց եկեղեցվո կղերներու տեղը abside-ին մեջ էր:

Թե ինչպես ընդունվեցավ աշխարհի բոլոր քրիստոնյաներու կողմանե basilique-ի ձևը իբրև եկեղեցվո պատշաճ ձև, այդ բոլորովին պարզ չէ, հավաստիացողներ կան, որ մինչև 7-րդ դար դեռ վարանումներ կային Արևմուտքի մեջ ընդհանրանալ սկսող ձևին ընդունելության մասին, մասնավորապես հիշատակություններ կան քառակուսի կողակի մասին: Այնուամենայնիվ, այժմ պարզ է, որ ի վերջո միահամուռ ընդունեցին բոլոր քրիստոնյա եկեղեցիները՝ բացառաբար կիսաբոլորակ abside-ը իբրև սրբարան և սրբություն սրբոցի պատշաճ հարամասունք՝ զգալի չափով տարբերելով ուրիշ զանազան մասերու մեջ:

Ինչպես ըսի նախապես, քրիստոնեական նախնական եկեղեցին թե՛ Հռոմի և թե՛ Բյուզանդիայի սահմաններուն մեջ առավելագույն ազդեցությունը կրեց հին օրինաց կանոններու և Սողոմոնի տաճարի ձևերին: Սողոմոնի տաճարին հեթանոսաց գավիթը եղավ քրիստոնեական եկեղեցվո atriume-ը, պղնձե ձուլածո ծովը փոխվեցավ մաքրողական ավազանին, որը, ըստ մի հին պատմագրի, փոխանցված էր եբրայականին հեթանոսական պաշտամունքեն: Սեղանը բռնեց տապանակ ուխտի տեղը, որ անբեւույթ ներկայությունն էր և է մինչև այժմ պաշտեցյալին, և անոր անջատ կերպով բեմին մեջտեղ դրվելը պարզ արտահայտությունն է սաղմոսի «լուացից զձեռս իմ սրբութեամբ և շուրջ եղէց զսեղանով քով» հատվածին: Բոլոր այն մանրամասնությունները, որոնք արևմտյան եկեղեցիներու մեջ հին օրինաց ազդեցության ներքո կազմակերպվեցան, մուտ չգտան հայկական քրիստոնեական եկեղեցիի մեջ, բացի կիսաբոլորակ abside-են, և եթե պահ մը ընդունվեցան իսկ, երկար չտևեց անոնց գոյությունը, և շուտով անոնք տեղի տվին տեղական տարբեր ըմբռնումներու և վարդապետություններու, որ իր կարգին կտեսնենք:

Նկ. 88. Թալինի կաթուղիկեի հյուսիսային պատի որմնակամարը

Ամենայն հավանականությամբ՝ առառավելն 325 թվականի մոտերն էր, որ Կոստանդիանոս basilique-ները քրիստոնեից տրամադրության տակ դրավ, հետևաբար Բյուզանդական կայսրության սահմաններուն մեջ ալ լիովին ընդունելու համար երկար ժամանակի պետք կար: Իսկ Հայաստան հասնելու համար՝ նույնիսկ կային որոշ դժվարություններ:

Եթե ընդունենք, որ դեռ 25 տարի առաջ քրիստոնեությունը պետական կրոն հռչակված էր Հայաստանի մեջ, և բյուզանդական եկեղեցիներեն բոլորովին անկախ կերպով կազմված էին հայկական եկեղեցական ծիսական կարգերն ու արարողությունները, և քանի որ Հայաստանի մեջ բնավ գոյություն իսկ չունեին basilique ըսված շենքեր, հետևաբար հայոց եկեղեցիները պետք էր, որ ձևակերպված լինեին բոլորովին անկախ կերպով և առանց կիսաբոլորակ abside-ի: Շատ իրավամբ իսկ կարող ենք ենթադրել, որ Հայաստանի մեջ հայոց մեհենական շենքերն օգտագործված են իբրև քրիստոնեական եկեղեցիներ, որովհետև բազմաթիվ վկայություններ կան նույնիսկ ակիզբեն՝ Լուսավորչի և Տրդատի ձեռքով մեհենական փոխարկումներու Հայաստանի ամեն կողմը, նույնիսկ կան վկայություններ, որ աննշան փոփոխությամբ միայն հեթանոսական տաճարներ փոխարկվեցան քրիստոնեական եկեղեցվո (Զեն. Գլ.):

Abside-ի նորաձևությունը եթե մեկ կողմանե տեղի հեռավորության պատճառով երկար ժամանակի կկարոտեր մինչև Հայաստան հասնելու համար, մյուս կողմանե ալ այնքան դյուրին չէր արդեն ընդունված ու սրբագործված ձև մը փոփոխության ենթարկել՝ առանց երկար վարանումներու և տատանումներու: Շատ բնական է, որ ինչպես Արևմուտքի մեջ, նույնպես ալ Հայաստանի մեջ abside-ավոր եկեղեցվո առաջին օրինակին բազմացումը և ընդհանրացումը երկար տարիներու տևողության մեջ կատարվեցավ:

Ուրեմն, երբեք անհավանական չէ, որ հայոց եկեղեցիները ի սկզբանե ձևակերպվեցան հայ-հեթանոսական տաճարներու հատակագծերուն վրա առանց abside-ի, և abside-ը Հայաստան մտնելեն հետո, երբ պահանջը ընդհանուր եղավ, պարտավորված պիտի լինեին նախապես շինված եկեղեցիներու վրա ավելացնել առանձնապես abside-ներ՝ արևելյան կողմին շենքեն ներս կամ դուրս. ուստի այժմ, նախքան հեթանոսական տաճարներու բաղդատությունը հայոց քրիստոնեական տաճարներու հետ, տեսնենք, թե Հայաստանի մեջ երբևիցե գոյություն ունեցե՞ր են, արդյոք, առանց կիսաբոլորակ abside-ի եկեղեցիներ, կամ, փոխանակ կիսաբոլորակ abside-ի, քառակուսի բեմով եկեղեցիներ, որոնք գլխավոր կռվան պիտի լինին ներկայացուցածս հատակագծային քարտեսի ժամանակագրական կարգին:

Այժմ այս տեսակետով ամենեն առաջ քննենք Դիրաքլարի եկեղեցվո հատակագիծը:

Այս եկեղեցին արևելյան կողմի վրա կիսաբոլորակ խորան ամենևին չէ ունեցեր մինչև այժմյան գյուղացվոց այնտեղ բնակություն հաստատելը, որոնք Պասկևիչի բերած գաղթականության մեկ հատվածն են: Մինչև այսօր գյուղացվոց մեջ ընդհանուր համոզում է տիրած, որ իրենց եկեղեցին նախապես ուռմի եկեղեցի է եղած, կարծելով, որ

հունաց եկեղեցիները abside չեն ունենար: Երբ գյուղը վերաշիներ են նախկին Դիրաքլարի ավերակներուն վրա, նորոգեր են նաև եկեղեցին. նորոգ շիներ են կիսաբոլորակ խորանը արևելյան կողմին վրա և բացեր են երկու անճաշակ փոքր պատուհաններ՝ հարավային կողմը և հատ մ'ալ խորանին վրա՝ արևելյան կողմեն:

Եթե դռներուն և պատերուն վրա քրիստոնեական հնադարյան խորհրդանշաններ չգտնվեին հնագույն շրջաններու պատկանող, պիտի կարծվեր, որ նույնիսկ ի հնումն եկեղեցի չի եղած այս շենքը:

Ինչպես նկատեցի վերև, հարավային պատին կից, արևելյան կողմին վրա ավելացված անճաշակ և կոպիտ ձևով սենյակին կից, որուն հերթապահ քահանայի հատուկ լինելը հայտնեցի, ավելի ուշ ժամանակ շինվեր է մի կիսաբոլորակ խորան, բացօթյա, ինչպես ունին Տեկորի, Երերույքի մեծ և Արթիկի փոքր եկեղեցիները:

Թե ինչ նպատակով այս արտաքին բացօթյա խորանները կշինեին եկեղեցվո սրահներուն վրա, առայժմ դժվար է պարզել, միայն թե այս հատկանիշը միմիայն 5-րդ դարուն է հատուկ, 6-րդ դարուն հազիվ թե կրկնված լինի, որովհետև 6-րդ դարու հավանականություն և փաստ ներկայացնող եկեղեցիները բնավ չունին ոչ միայն այս խորանները, այլև չունին թևեր արևելյան ճակատի հավասարությամբ դուրս ցցված հյուսիսային և հարավային պատերուն կից՝ ինչպես Տեկորի, Երերույքի և Արթիկի եկեղեցիները: Իսկ 7-րդ դարուն արդեն եկեղեցական հատակագծի նոր վերածնություններով հին ձևերը միանգամայն չքացած են:

Արդ, եթե այս արտաքին բացօթյա խորանը ավելցված է 5-րդ դարուն՝ նախապես բուն շենքին վրա ավելցված սենյակին, ուրեմն սենյակը պետք է ավելցված լինի կամ 5-րդ դարու սկիզբներին և կամ 4-րդ դարու վերջերին: Ասկեց ալ անվրեպ կերպով կհետևի, որ բուն շենքը արդեն գոյություն ուներ 4-րդ դարուն, եթե ոչ անկեց առաջ:

Նույնպես Քասաղի եկեղեցին թեև արտաքին բացօթյա խորան չունի, սակայն ներքին խորանը արևելյան կողմին վրա միանգամայն հավելված է, որուն թե՛ շինանյութերը, քարերն ու դասավորությունները և թե՛ պատուհաններու շրջանակներն ու պսակները 6-րդ դարու հատկանիշներն ունին, որոնց մասին պիտի տեսնենք ճարտարապետական զարդաքանդակներով զբաղվելու ժամանակ:

Շիրվանշուղի եկեղեցվո խորանին հավելված լինելուն մասին չեմ կարող հաստատ ոչինչ ըսել, որովհետև հնարավորություն չեմ ունեցեր երկար ժամանակով մանրամասն քննելու, սակայն նկատի ունենալով անոր բոլորովին նախնական տիպը և ամենաուշը 5-րդ դարուն պատկանող քանի մը ճարտարապետական մասերը, կասկածելի կգտնեմ անոր շենքին հետ միաժամանակ շինված լինելուն, ամենայն հավանականությամբ շատ հին ժամանակ պիտի որ շինված լինի խորանը, նույնիսկ այն ժամանակ, երբ Տեկորի եկեղեցվույն վրա ավելցվեր է: Այս եկեղեցվո արտաքին զարդերը Տեկորի նախնական վերանորոգության ժամանակակից լինելուն փաստերը կմնան դեռ անաղարտ, որուն մասին նաև կտեսնենք ճարտարապետական մասերու ուսումնասիրության ժամանակ:

Տեկորի եկեղեցվույն հեթանոսական շենք մը լինելուն և անոր մի ժամանակ քրիստոնեական եկեղեցվո փոխարկելու ապացույցներու մասին մանրամասնություններ արդեն տվեր եմ իմ «Տեկորի տաճարը» անունով աշխատությանս մեջ. այստեղ անհրաժեշտ է մատնացույց անել հատկապես խորանի մասը: Սկզբան բնավ խորան չէ ունեցեր, այլ առառավելն քառակուսի մաս մը՝ հետնագույն ժամանակի հավելված խորանի տեղ: Սակայն ավելի ուշ ժամանակ, երբ կիսաբոլորակ գմբեթարթ ծածկված խորանի ոճը հասեր է Հայաստան, այն ժամանակ վերստին քանդեր են արևելյան կողմի այդ հավելված քառակուսի մասը և ավելցուցեր են անոր պատերուն շարունակությամբ կիսաբոլորակ խորանը:

Ուրեմն, Տեկորի եկեղեցին մեզ ապացույց կներկայացնե, որ 5-րդ դարու սկիզբներին գոնե, երբ կիսաբոլորակ խորան Հայաստան չէր եկած, հայեր մի առժամանակ շիներ են քառակուսի բաժին մը արևելյան կողմին վրա որպես խորան կամ սրբություն սրբոց:

Անպայման Տեկորի քառակուսի սրբարանի հետևողության միակ օրինակն է Մոլա-Կասումի եկեղեցին, որ հավանորեն, ըստ արձանագրության, Գնթունի իշխաններեն մեկուն գործն է, և այս Գնթունի իշխանն ալ անպայման այն Գնթունիներեն է, որ կամ ժամանակակից Տրդատի կամ մոտավոր շառավիղն է անոնց, որոնց մասին Տրդատի հունարեն նոր գտնված արձանագրութենեն հայտնի է, որ այդ կողմերը իբրև թագավորական շնորհ տրված էր Գնթունիներուն:

Ինչպես ըսի, գոնե իմ տեսած հիշատակարաններու մեջ միակ օրինակն է արտաքուստ քառակուսի ձևով դուրս շեշտված խորանի նման Տեկորի եկեղեցվո մասնավոր հետազոտությամբ պարզված ձևին. սակայն ներսեն կիսաբոլորակ շինված է, բայց այս ևս կասկածելի կթվի ինձ հարազատ լինելուն: Դժբախտաբար, այս գյուղին մեջ ալ շատ քիչ մնալով և մանրազնին հետազոտությունը հարմարագույն ժամանակի վերապահելով, չեմ կարողացեր լուրջ քննություն կատարել, թերևս ապագային իմ կամ մեկ ուրիշի կողմանե պարզվի այս անորոշությունը: Բայց ինչ որ ալ լինի, խորանի քառակուսի ձևով դուրս շեշտվելը զինքը 5-րդ դարեն այս կողմ չի կարող բերել, որովհետև 6-րդ դարուն Եղվարդի կաթուղիկեն արդեն կիսաութանկյուն ձևով դուրս շեշտված է: Այս եկեղեցվո abside-ն ալ, ինչպես նաև Մրենի եկեղեցունը, անօրինակ տարբերություն մը ունին իրենց կրկնաբաժանումով և արտակարգ խորությունով. այս հատկությունը զինքը կասկածելի կդարձնե abside-ի հարազատության տեսակետով: Մանավանդ abside-ի դրսի կողմը ընկած արձանագրության քար մը կա խիստ եղծված, այնուամենայնիվ վրան խորանի շինության մասին մեկ քանի բառեր կկարդացվին: Ինչպես նաև Քասաղի եկեղեցին, որուն հավելվածական շինությունը 5-6-րդ դարերու գործ միայն կարելի է համարել՝ հետևցնելով իր ճարտարապետական մասերեն:

Որովհետև Դիրաքլարի, Քասաղի և Տեկորի եկեղեցիները վերոգրյալ հարամասունքներու տված փաստերով անվիճելի կերպով կհասնին մինչև 4-րդ դար, նույնպես Շիրվանշուղի եկեղեցին ամենաուշը 5-րդ դարու գործ պետք է որ լինի, հետևաբար հատակագծի նույն համաչափություններով, այսինքն՝ անհամեմատ նեղ ու երկայն իրենց լայնության քառապատիկը երկարություն ունեցող բոլոր եկեղեցիները պետք է անպայման միևնույն ժամանակի գործ համարել իբրև ժամանակի ոճ կամ պահանջ: Այս հատակագծերու համաչափության կպատկանեն Եղվարդի փոքր ավերակ եկեղեցին, Հովհաննավանքի հին եկեղեցին և ուրիշ նմաններ, ուր որ ալ գտնվին, այսինքն՝ կառուցված ամենաուշը 5-րդ դարու սկիզբները, իսկ անկեց որչափ առաջ կանգնված լինելը թերևս հետզհետե պարզվի՝ շարունակելով ուրիշ մասերու ուսումնասիրությունը:

2. Սյունազարդ սրահ (portique).

Ժամանակագրական տեսակետով շատ կարևոր նշանակություն ունին արտաքուստ սյունազարդ սրահով (portique) շրջապատված եկեղեցիները, ինչպես՝ Տեկորի, Երերույքի, Օձունի և ուրիշ նման եկեղեցիները:

Որոշ չափով հիմնվելով Տեկորի արևմտյան դռան վրա փորագրված արձանագրության մը վրա, կտեղեկանանք, որ այդ եկեղեցին շիներ է Սահակ Կամսարական անունով մեկը՝ 5-րդ դարուն: Սակայն իմ կատարած մանրակրկիտ խուզարկություններս ու քննություններս ապացուցեցին, որ այդ եկեղեցվո շինքը վաղ քան 5-րդ դար գոյություն ուներ և 5-րդ դարուն մեծ փոփոխություններով վերաշինվեր է, և այդ վերաշինության ժամանակ շրջապատվեր է արտաքին սյունազարդ սրահով մը (portique):

Եթե նույնիսկ գոյություն չունենար շենքը մինչև 5-րդ դար տանող որոշ կամ անորոշ արձանագրություն մը, այս եկեղեցին ունի մի ուրիշ բնորոշ հատկություն, որ անվիճելի կերպով կհեռանա մինչև 5-րդ դար, եթե ոչ անկեց ալ ավելին: Այս փաստն է՝ հյուսիսային և հարավային պատերուն կից, արևելյան պատին հավասար ուղղությամբ, դուրս ցցված սենյակներ պարունակող թևերը:

Ժամանակով և թվականով մեզ հայտնի 7-րդ դարեն սկված շինվող եկեղեցիներեն ոչ մեկին վրա այս հատկանիշը գոյություն չունենալեն զատ, նույնիսկ 6-րդ դարուն Եղվարդի մեջ Մովսես կաթողիկոսի և Ավանի մեջ հակաթոռ Հովհան կաթողիկոսի շինած եկեղեցիներու վրա իսկ չկան, բացի այս՝ չենք ալ կարող ըսել, որ եղեր են մի ժամանակ և անհետացեր են, որովհետև սկսած 6-րդ, 7-րդ դարերեն շինված եկեղեցիներու ոճերը այնքան ինքնուրույն են և այլազան, որ հնար չէ երևակայությամբ իսկ պատշաճեցնել անոնց վրա այդ դուրս ցցված թևերը: Ուստի, այս իսկ անհերքելի պատճառով, այդ թևերը կմնան ընդմիշտ 5-րդ դարու սեփականություն, որ պարզ բարեփոխություն կամ զարգացումն են ավելի վաղ ժամանակ Դիրաքլարի և Քասաղի եկեղեցիներու վրա հավճեպով կպցված սենյակներուն՝ ծիսական նոր պահանջի մը պատճառով: Ինչպես վերև ասիթ ունեցանք հայտնելու, այդ թևերը, որ իրենց մեջ ամփոփում են երկհարկանի սենյակներ (Դիրաքլարեն և Քասաղեն հետո շինվածներուն մեջ), ըստ ս. Սահակի կանոնի, գլխավոր քահանայի մշտական բնակության հատուկ էր: Այս կանոնը նույն դարուն վերստին ամրապնդվեցավ Դվնա ժողովի կանոնով, և, անշուշտ, այդ ժամանակեն այլևս անհետաձգելի պահանջ դառնալով՝ խնամքով շինվեցան նորերուն մեջ կամ ավելցվեցան հին եկեղեցիներու վրա:

Նմանապես՝ սյունազարդ արտաքին շրջապատ սրահներու գոյությունը 7-րդ դարեն սկսած շինվող բազմաթիվ եկեղեցիներու ոչ մեկուն վրա չենք կարող ապացուցանել: Ընդհակառակը՝ ավելի կանուխ շինվող եկեղեցիներու վրա գոյություն ունենալուն մասին ճարտարապետական զարգացման տեսակետով ձեռք բերված փաստերեն զատ՝ նաև ունենք պատմական անգնահատելի ակնարկ մը, որ անվիճելի կդարձնե 5-րդ դարու եկեղեցիներու շուրջը սյունազարդ սրահների գոյությունը:

«Տեկորի տաճարը» աշխատությանս մեջ, հիմնվելով նույն եկեղեցվո բարձրությենեն մոտավորապես կեսեն շրջապատվող corniche-ին վրա, որը մի ժամանակ քանդվելով անհետացող portique-ի կամարին՝ պատին վրայի հանգիստը ծածկելու համար քաշված էր, ենթադրեր էի, որ թերևս Էջմիածնի այժմյան տաճարին կեսեն շրջապատվող corniche-ն ալ հայկական ոճին բոլորովին անսովոր կերպով նույն պատճառով հառաջ եկած լինի:

Եթե Էջմիածնի կաթուղիկեի մասին հայտնած կարծիքս անորոշ նշաններու վրա հիմնված էր, այնուամենայնիվ Ղազար Փարպեցու Դվնա եկեղեցվո մասին տված նկարագրական մեկ ակնարկը անվիճելի կերպով կապացուցանե իրեն ժամանակակից եկեղեցիներուն այնմազարդ սրահով շրջապատված լինելը:

Վահան Մամիկոնյանի մարզպանությյան հրովարտակը Հայաստան հասնելու առթիվ, Ղազար Փարպեցին նկարագրելով Դվնա մեջ տեղի ունեցած ժողովրդական ցնծալից մեծ շարժումը և եկեղեցական հանդեսը, ուր Հովհան Մանդակունի կաթողիկոսը խոսեցավ իր հռչակավոր ճառը, կըսե, թե այնքան մեծ բազմություն հավաքված էր նույն օրը, որ եկեղեցին բավական չեղավ այդ բազմությունը ամփոփելու՝ ժողովուրդը դուրսը եկեղեցվո սրահներուն և հրապարակներուն մեջ խառնվեցան: [«Եւ ոչ բաւեալ ընդունել զամենեսեան տանն Աստուծոյ՝ լնուին արտաքոյ սրահք եկեղեցւոյն և փողոցք և ամենայն տեղիք հրապարակացն շուրջանակի»: Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան – աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեան, Տփղիս, 1904 թ., էջ 178]:

Սրահ բառին նշանակությունը մեր նոր գրականության մեջ է, որ փոխված կերևի, հին գրականության մեջ շատ տեղ որոշ կերպով կտեսնվի անոր առումը portique-ի փոխարեն, նույնիսկ ներկայիս ալ դեռ տեղ-տեղ պահված է գավառաբարբառի մեջ. սրահ կանվանին տներու առջև այնմազարդ ծածկույթով շինված բացօթյա մասը:

Երերույքի եկեղեցույն 5-րդ դարուն գոյություն ունենալը, բացի իր այնմազարդ սրահեն, նաև պիտի ապացուցեն իր ճարտարապետական զարդաքանդակներու ոճերը, որոնք իբրև նախատիպ ծառայել են 6-րդ և 7-րդ դարերուն կանգնված քանի մը շենքերու: Քիչ մը վիճելի կմնա Օձունի եկեղեցին՝ բուն տաճարի ներքին կազմության տեսակետով, սակայն այն ալ լուրջ քննության կկարոտի, որուն համար ես առիթ չեմ ունեցեր: Բայց միանգամայն սխալ է անոր շինությունը Հովհան Օձնեցուն վերագրել, որուն համար պատմական տեղեկություններ չկենալեն զատ՝ վրան եղած ճարտարապետական զարդաքանդակներն ու երբեմն շենքը շրջապատող մեծատառ արձանագրությունեն մնացորդ հատ ու կտոր տառերը հօգուտ 6-րդ և 7-րդ դարերու կվկայեն: Իսկ եթե ի նկատի առնենք հյուսիսային կողմը կանգնված հիշատակարանի կոթողներու ոճը, համարձակ կարող ենք հասնել մինչև 5-րդ դար, որովհետև այդ հիշատակարան կոթողներու ոճը շատ վաղ հեթանոսական ծագում ունի, որ հետո փոխանցվեր է քրիստոնեության, առանց ընդհանուր ձևը փոխվելու և հետզհետե քրիստոնեական խորհրդանշաններով քանդակազարդվեր են փոխանակ հին հեթանոսականի:

Այնմազարդ սրահի տեսակետով թվածս այս երեք եկեղեցիները չեն միայն, որ գոյություն ունին Հայաստանի մեջ, դեռ կան ուրիշներ ալ, որոնք թեև ունեցեր են մի ժամանակ, սակայն հաճախակի նորոգություններով հազիվ փաստական հետքերն են մնացեր նորոգված պատերուն վրա, իսկ ոմանք ալ կան, թեև ամբողջովին քանդվեր են, սակայն մնացորդ պատերուն վրա որոշ կերպով կնշմարվեն այնմազարդ սրահի գոյության ապացույցները:

Այս կարգի եկեղեցիներն են՝ Քասաղի, Գառնիի (ավերակ), Եղվարդի (փոքր ավերակ), Արթիկի (փոքր եռախորան) և Մոլա-Կասումի եկեղեցիները:

Արթիկի փոքր եկեղեցվո շրջապատին վրա այժմ մնացեր է սրահ մը ծածկող կամարին հանգիստը. այստեղ կամարը դրված է եղեր որոշ չափով ներքևեն հաստ շինված պատին մեկ մասին վրա՝ առանց contre pilastre-ի:

Եղվարդի փոքր ավերակ եկեղեցվույն հյուսիսային պատին վրա մնացեր են երկու contre pilastre-ներ և մեկ կլոր այուն՝ հարավ-արևմտյան անկյունին վրա՝ contre pilastre-ի տեղ՝ նման Տեկորի եկեղեցվո հյուսիսային կողմի կլոր որմնասյուներուն:

Քասաղի եկեղեցվո հյուսիսային պատին վրա ամբողջ շենքին բարձրությամբ անեղծ պահվեր են երեք հատ contre pilastre-ներ, մնացորդները, անշուշտ, անհետացեր են քահանայի սենյակը և անոր կից մինչև կտուր բարձրանալու համար տարօրինակ ձևով սանդուխը շինելու ժամանակ: Սակայն այստեղ, բացի որմնասյուներեն, նաև հանդիպակաց անջատ այուններուն խարիսխներու համար պատրաստված հիմերն ալ կմնան տեղին վրա՝ գրեթե շենքին ամբողջ երկայնության վրա:

Քասաղի եկեղեցվո պատերը թեև կանգուն են ամեն կողմեն, սակայն, ինչպես ըսի նախապես, արևելյան խորանի հավելման ժամանակ հին մասերը մասամբ անհետացեր են, իսկ հարավային պատի վրա որմնասյուներու հետքեր բնավ չեն երևիր: Սակայն այս հետք չգտնվելը, ըստ իս, ապացույց չէ, որ բնավ չէ ունեցեր այս եկեղեցին հարավային կողմին վրա այնմազարդ սրահ: Կան ուրիշ պատճառներ, որոնք հօգուտ այնմասրահի կվկայեն:

Հարավային կողմը հողին տակ և վրան բազմաթիվ բեկորներ կան թաղված կամ ցրված: Այս բեկորներուն մեջ կան 5-րդ դարու ոճով քանդակված քառակուսի խոյակներ և պատվանդաններ, որոնք անպայման անհետացած սրահին կպատկանին: Բացի այս, մեկ նայվածքով՝ ոչ մասնագետի աչքն ալ կարող է տեսնել, թե ինչքա՜ն շատ նորոգություններու է ենթարկվեր այդ ճակատը և ի՜նչ բազմատեսակ չափերով և գույներով քարերու խայտաբղետ շարքեր են կազմվեր, այնուամենայնիվ, դարձյալ այսօր զառամ վիճակի մը հասած է:

Թող զարմանալի չթվի, եթե ըսեմ, որ Հայաստանի մեջ, հին հիշատակարաններու մեծագույն մասին միշտ հարավային ճակատներն են, որ մնասվեր են և հաճախակի մեծամեծ նորոգություններու և կարկատաններու են ենթարկվեր, այդ պատճառով ալ միշտ, ամեն մի հիշատակարանի հնագույն ձևերու բնորոշ մասերը կգտնվին հյուսիսային պատերուն վրա: Այս զարմանալի երևույթին պատճառը բացատրել թողելով բնագետներուն, ես, իբրև ապացույց այս ըսածիս, այստեղ կթվեմ կարգ մը հիշատակարաններ, որոնց հյուսիսային պատերը մնացել են միանգամայն անմնաս, իսկ հարավային պատերը մեծապես մնասվելով՝ կամ վերանորոգվեր են քանիցս և կամ ամբողջովին քանդվեր գնացեր են:

Տեկորի եկեղեցին հարավային կողմեն բոլորովին հալված վիճակի մեջ էր, այդ պատճառով ալ վերևի գմբեթը ծռված էր դեպի այն կողմին վրա: Վերջապես քանի մը տարի առաջ այդ պատը ամբողջովին փլավ:

Գառնիի ավերակ մեծ եկեղեցին հյուսիսային և արևելյան պատերը գրեթե կանգուն են, իսկ հարավային և արևմտյան պատերը միանգամայն հողին հավասարած են:

Մրենի կաթուղիկեին հարավային պատին կեսեն ավելին հիմեն վեր վերստին նորոգված է, որուն մասին գրեցի «Ախուրյան» թերթին մեջ, ճանապարհորդությանս ժամանակ: Այժմ ալ նույն պատը վտանգված է:

Աշտարակի եկեղեցին հարավային պատն այնքան հաճախակի նորոգություններու են ենթարկեր, որ գրեթե դրսի կողմեն հին պատեն քար չէ մնացած:

Էջմիածնի կաթուղիկեին հարավային պատն է, որ զառամած վիճակի հասեր է և միշտ վտանգ կսպառնա այդ կողմեն, մինչդեռ հյուսիսային պատը կարող է երկար դիմանալ այդ վիճակին մեջ:

Անիի մեջ, մեծ կաթուղիկեն և Միշնաբերդի հարավային լանջի վրայի փոքր եկեղեցվույն հարավային պատերն են, որ միշտ փլուզման վտանգ կսպառնան, մինչդեռ հյուսիսային պատերը կարող են դարեր ապրել:

Նմանապես Անիի մեջ, Կզկալայի եկեղեցվո և քաղաքի միջի «վրաց» եկեղեցվո հարավային պատերն են, որ գրեթե ամբողջովին ընկած են: Մզկիթի (այժմ թանգարան) հարավ-արևմտյան պատն էր, որ քանդված էր, որը վերջերս կարկատվեցավ թանգարանի համար:

Շիրակավանի եկեղեցվո հարավային պատն ամբողջովին խարխլած է դրսից և քարերը թափվելու վիճակին հասած, մինչդեռ հյուսիսային պատը բոլորովին անեղծ պահված է: Այս գյուղի արևելյան կողմը, բլուրի մը գլխին շինված 7-րդ դարու ավերակի մը հյուսիսային պատն է կանգուն:

Մարմաշենի Վահրամաշեն եկեղեցվո հյուսիսային կողմը, բլուրի մը վրա շինված 7-րդ դարու եկեղեցիի մը հյուսիսային պատն է միայն կանգուն:

Բագարան գյուղին միջի ավերակ եկեղեցիեն հյուսիսային պատ մը միայն կա:

Տամջրլուի գերեզմանատան մեջ 5–7-րդ դարերու եկեղեցվո մը հյուսիսային պատը միայն կանգուն է:

Արգինայի կաթողիկոսարանի եկեղեցվո հյուսիսային և արևմտյան պատերն են միայն կանգուն, մյուս մասերն ամբողջովին կործանված են:

Կարող եմ անվերջ թվել այս օրինակները, ուստի զարմանալի չէ, որ Քասաղի եկեղեցվո հարավային պատի վրա այնմազարդ սրահի հետքեր չեն մնացեր, որովհետև մշտապես չեն պահված եկեղեցիներ միշտ ենթակա են փոփոխություններու: Այդ եկեղեցին, որ մինչև այսօր չեն մնացեր է, բնականաբար, հաճախակի նորոգություններու շնորհիվ պահեր է գոյությունը: Եվ ես կկարծեմ, որ սրահին ամբողջական քանդումն ալ շատ հին ժամանակի գործ չպետք է լինի, որ այնտեղ մինչև այսօր կմնան սրահի այուններու խոյակներեն և խարիսխներեն նմուշներ:

Անշուշտ, միևնույն ճակատագրին են ենթարկվեր մյուս բոլոր չեն ու անչեն եկեղեցիները, որոնց հյուսիսային պատի վրա մնացեր են այնմազարդ սրահի հետքեր, ինչպես Գառնի, Եղվարդ, Մոլա-Կասում և ուրիշներ, իսկ հարավային պատերուն վրա անհետացեր են փլուզմամբ կամ կարևոր նորոգություններով:

Ինչպես կտեսնվի տրված ապացույցներեն, եկեղեցիներուն շրջապատ այնմազարդ սրահ ունենալու նորաձևությունը տևեր է մինչև 5-րդ դարու

վերջը, հետևաբար այն բոլոր եկեղեցիները, որոնք ունին անհամեմատ համաչափությամբ երկար քառակուսի հատակագիծ, որուն կընկերանան հաճախ սյունազարդ սրահներ և արևելյան կողմեն նեղ ու երկար, երկայնության կողմեն դեպի հյուսիս և հարավ երկարած սենյակներ պարունակող դուրս ցցված թևեր, և թևերուն վրա երբեմն պատշաճեցուցված բացօթյա խորաններ, անոնցմե ոչ մեկը չէ կարող 5-րդ դարեն այս կողմ անցնել:

Ամենայն հավանականությամբ, Դիրաքլարի եկեղեցին ևս ունեցեր է որևէ կողմի վրա սյունազարդ սրահ, որովհետև, թեև չենքին վրա որոշ փաստեր չկան, նամանավանդ արևմտյան կողմին վրա, սակայն, նախ՝ որ մյուս բոլոր նման եկեղեցիներուն մեջ արտաքին բացօթյա խորաններն ամփոփված են սյունազարդ սրահի մը ներքև, և քանի որ այս եկեղեցվո հարավային կողմին վրա ալ չիներ են այդ խորանը, դժվար թե առանց ծածկի եղած լիներ: Երկրորդ՝ գյուղի Դիրաքլար անունը ենթադրել կուտա, որ անպայման այդ եկեղեցվո սյունասրահեն ստացեր է անունը, և անոր թուրքերեն լեզվով Դիրաքլար (այուներ) բնորոշումը ցույց կուտա, թե շատ վաղ ժամանակ չէ, որ անհետացեր են սյունները և սրահը: Անշուշտ՝ այժմյան գյուղացիներեն առաջ այնտեղ գյուղ հիմնող մահմեդականներ դրին այդ անունը: Այժմյան, գյուղացիներուն ամենեն ծերերն անգամ այս մասին ոչինչ չգիտեն, իրենք գտեր են կիսավեր վիճակի մեջ և հաստատեր են նախկին անունով իրենց բնակությունը, և չենքի մասին համոզված են, որ ուսմի ժամ է եղած՝ արևելյան կողմեն կիսաբոլորակ խորան և պատուհաններ բնավ չունենալուն պատճառով:

Դ

## ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ [1]

Շինարարական արվեստը Հայաստանում ավելի քան երկու հազար տարի գոյություն է ունեցել անընդհատ: Հազար ինը հարյուր տարի առաջ կանգնեցրած և անվթար մինչև մեր օրերը հասած չենքերի շինարարական օրենքների բավական կատարելությունը և հետզհետե զարգացումը ապացուցում են, որ մեր թվականությունից շատ առաջ քակված է այդ մեծ արվեստի խանձարուրը:

Հայաստանում, իբրև քարաշատ մի երկրում, բնականաբար քարի արվեստագործությունն ավելի պիտի զարգանար, և քարը պիտի ծառայեր իբրև գլխավոր շինանյութ: Քարի արվեստագործությունը հնուց այնքան էր գնահատված, որ հատկապես այդ ճյուղում մասնագիտացած անձանց մեր հին մատենագիրներից ոմանք «ճարտարապետս քարի» են անվանել:

Սկզբից Հայաստանում շատ տեսակ քարեր են օգտագործվել իբրև շինանյութ, սակայն մեր թվականության նախօրյակին արդեն սովորական են դառնում կրաշաղախի գործածությունը և տաշված ու կոկված քարերով մեծամեծ քարուկիր չենքեր կառուցելը, փոխանակ մեծազանգված քարերով անշաղախ պատեր շինելու:

Բնական է, որ կրի գյուտը մեծ ծառայություն մատուցեց շինարարական արվեստին, զգալիորեն թեթևացրեց ծանր աշխատանքները, չենքերին տվեց ավելի վայելչություն և երկարատև կյանք:

Քարի ու կրի հետ զուգընթացաբար, իբրև շինանյութ, պարբերաբար գործադրել են նաև ուրիշ նյութեր, ինչպես օրինակ, աղյուս, փայտ, երկաթ, կապար և այլն, որոնց մասին ծանոթություն տալը թերևս անօգուտ չլինի: Որովհետև գլխավոր շինանյութը Հայաստանում քարն ու կիրն էին, իսկ ուրիշ նյութեր գործածել են ըստ տեղական պայմանների ու առանձին պահանջների, ուստի նախ սկսենք քարի ու կրի գործածության կերպերից, որոնցով նախնիք զեկավարվել են երկար դարեր:

Կրաշաղախը, որ Հայաստանի շինարարության մեջ մոտավորապես երկու հազար տարի գերակշիռ տեղ է գրավել, անշուշտ սովորել են անմիջական հարևան երկրներից և մեծ ազգերի արվեստագետներից: Բայց թե ե՞րբ է եղել կրի գյուտը և ինչպես է անցել Հայաստան, այդ հարցերն ուսումնասիրելը չէ՛ իմ այժմյան նպատակը: Կրաշաղախի գյուտի մասին գիտնական արվեստագետները տակավին հաստատուն եզրակացության չեն եկել, թե ե՞րբ և ո՞ր երկրում տեղի ունեցավ կրաշաղախի գյուտն ու սկսվեց գործածությունը, կամ ո՞ր ազգի սեփականությունն է այս անգնահատելի գյուտի պատիվը: Մեր թվականությունից շատ առաջ հետախուզություններ կատարող գիտնականները Բաբելոնում գտել են կրաշաղախի հետքը, որ գործածված էր թե՛ պատերի և թե՛ ծեփի համար, Ասորա-Քաղդեայում կրաշաղախի գործածության չափազանց հազվագյուտ լինելը վերագրում են փայտի պակասության և նույնիսկ համարում են ավելի հեռավոր Արևելքի ազգերի գյուտ: Հետագայում, այս երկրի իշխանությունը ժառանգող պարսիկների ժամանակ, բավական ընդհանրացած էր կրի գործածությունը:

Իսկ մի ուրիշ գիտնական հաստատում է, որ էտրուրացիք ունեցել են կրի վառարաններ և իբրև կրաքար գործածել են նույնիսկ մարմարը. այդ պատճառով հիմնիվեր քանդել են մարմարից շինված հուշարձանները և դրանցից կիր պատրաստել: Մի ֆրանսիացի գիտնական, 1820 թ. Իտալիայում հնախուզական ճանապարհորդություններ կատարելու ժամանակ, տեսել է այս էտրուրական կրի վառարանները և պատմում է, որ նրանց մեջ լցված են եղել քարերը, բայց դեռ չվառված: Վառարաններում լցված քարերի մեջ եղել են ոչ միայն հին հուշարձաններից քանդված մարմարե գեղաքանդակ բեկորներ, այլև ճարտար արվեստագետների գործ հանդիսացող մարմարե ընտիր արձանների կտորներ, և, ինչպես երևում է, շատ երկար ժամանակ է տևել մարմարե չենքերը քանդելով՝ քարերից կիր այրելու սովորությունը, որի դեմ Հռոմի պապերից մեկը թեև արգելք է դրել, այնուամենայնիվ այդ արգելքն ապարդյուն է անցել այն ժամանակ:

Vitreuve, Հռոմայեցի հռչակավոր ճարտարապետը, որն ապրում էր դեռ մեր թվականության առաջին դարի սկիզբներին, իր մի աշխատության մեջ մանրամասն բացատրում և պարզաբանում է կրի գործածության թե՛ հին և թե՛ իր ժամանակի ճարտարապետական օրենքներն ու շինելակերպը, մասնավորապես խոսելով կրաշաղախը պատրաստելու ձևի մասին: Նույնիսկ այժմ Իտալիայում շարունակում են Vitreuve-ի ցույց տված ձևով պատրաստել կրաշաղախ, որը նույնքան ամուր ու տևական է լինում, ինչպես հնում իրագործվածները:

Որովհետև այստեղ ես չեմ զբաղվելու կրաշաղախի պատմական ուսումնասիրությամբ, ուստի կարևոր եմ համարում այսքանն ասել, որ կրաշաղախի գործածությունն ընդհանրացավ այն երկրներում, որտեղ չենքերը բացառապես քարով ու թրծված աղյուսով էին կառուցվում: Ուստի շատ պարզ է, որ Հայաստանը, իբրև քարաշատ երկիր, պիտի ընդգրկեր քարաշեն կառուցվածքը և, դրա հետ միասին, նաև կրաշաղախի գործածությունը: Իսկ թե կրաշաղախի գործածությունը ո՞րտեղից է եկել՝ Արևելքի՞ց, թե՞ Արևմուտքից, այդ հարցը դեռևս պարզ չէ (հավանորեն Արևելքի ազդեցությունը պիտի լինի, նկատի ունենալով ուրիշ բազմատեսակ արևելյան ազդեցությունները Հայաստանի ճարտարապետության վրա), և մենք, անշուշտ, առիթ կունենանք ի մոտո խոսելու այդ նյութի մասին: Այստեղ մեր քննության առարկան պետք է լինի, թե Հայաստանում արվեստագետները ինչ աստիճան հաջողություն են ունեցել կիրն ու կրաշաղախը պատրաստելու մեջ և ինչ ձևով են պատրաստել, քարի ո՞ր տեսակն են ընտրել կրաշաղախով հաստատուն զանգված կազմելու համար:

Երկար դարերի ընթացքում ավանդաբար մեզ հասել են կրաշաղախի զանգված պատրաստելու օրենքները, սակայն թող ներվի մեզ ասել, որ երկրագնդի զանազան կետերում միօրինակ չեն այդ օրենքները, նախնիքների այդ գյուտը վերջին դարում ոչ միայն արժանացավ մեծ արվեստագետների բարձր գնահատությանը, այլև հետազոտության առարկա դարձան նրա թե՛ պատմական կողմը և թե՛ բնագիտական հատկությունները, նրա հետ նաև կրաշաղախի բաղադրիչ նյութերի համեմատական չափերը:

Վերջին ժամանակի գիտական քննությունները հաստատապես ապացուցեցին, որ պատմական ժամանակների ընթացքում շինությունների համար գործածված կրաշաղախի շուրջը հյուսված զանազան առասպելները ոչ մի արժեք չունեն, այլ մեծ նշանակություն են ունեցել կրաքարի տեսակները և կրաշաղախը կազմելու համար միմիայն ավազի համեմատական չափերը: Ուսումնասիրությունների և գործնական փորձերի հիման վրա, ներկայիս ակադեմիական հրատարակությունները տալիս են մեզ կրաքարի տեսակները որոշելու, քարն այրելով կրի փոխելու, կրացած քարը մարելու, փոշիացնելու կանոնները, ինչպես նաև շաղախի մեջ խառնվելիք ավազի որակը ու բաղադրության չափերը, նայած գործածության նպատակին:

Մասնավորապես Հայաստանում ի՜նչ հաջողությամբ են գործածել կրաշաղախը, որքա՜ն հաստատուն և տևական են եղել կազմված զանգվածները, սրան անվիճելի ապացույց են 15–20 դար առաջ կանգնեցրած և մեզ հասած հնագույն հուշարձանները, որոնք ամեն տեսակ քննադատությունից բարձր են: Ուստի կասկած չի կարող լինել, որ նախնիք շատ լավ ըմբռնած են եղել կրաշաղախի հատկությունը և նպատակահարմար ձևով պատրաստելու կանոնները. այժմ մեզ մնում է ամենահավանական եզրակացությունները հանել հնում գործածված կրաշաղախի և ընդհանրապես քարուկիր շինությունների մասին, որոնց բազմադարյան կյանքն ու միանգամայն հաս-

[1] Այս աշխատությունը նախապես տպագրվել է 1932 թվին առանձին գրքով, որից և արտատպում ենք թեթև ուղղումներով:

Կազմող

տատուն մինչև մեր օրերը հասնելը լիովի գրավական են հին արվեստագետների ունեցած հմտության և փորձառության:

*

* *

Բոլորին հայտնի է, որ կիրն ստացվում է կրաքարը հատկապես շինված փռան (հնոցի) մեջ մինչև հրաշեկ դառնալն այրելով: Կրաքարի տեսակներից է կախված ուժեղ կամ թույլ կրի ստացումը: Շինարարական արվեստի մեջ ընդունված է գլխավոր երկու տեսակի կիր՝ պարարտ կամ ուժեղ և թույլ:

Պարարտ կիրն ստացվում է կրաքարի ընտիր տեսակից, որն այրվելուց և կրի փոխարկվելուց հետո շինարարության մեջ գործադրելու համար ենթարկվում է մարման: Մարման չորս զանազան եղանակներ կան, նայած գործածության նպատակին:

**1. Մեծ տաշտի մեջ առատ ջրով խառնելուց հետո քամելը:** – Ջրով լի տաշտում թանի նման հարելուց հետո, տաշտից քամում են գետնի մեջ փորված քառակուսի կամ բոլորակ հորի մեջ: Այս եղանակով բացված և հորի մեջ քամված կիրը, որ շուտով թանձրանում է, օդային հաղորդակցությունից չեզոքացվելով, երկար ժամանակ պահվում է առանց ուժը կորցնելու: Սակայն այս եղանակով բացված և երկար պահված կիրը գործածվում է բացառապես ծեփերի և երբեմն էլ պատերի համար:

**2. Ինքնամարում կամ նվաղում:** – Այս ինքնամարումը հաճախ տեղի է ունենում ճարտարապետի կամքից անկախ, երբ կիրն անժամանակ կանուխ ստացվում է շինության վայրում և երկար մնում է օդի ազդեցության տակ, առանց գործածվելու, կամ երբ շենքի կառուցումից հետո ավելացած մասը կարիք է լինում պահել մի տեղ. այս դեպքում կիրն ինքն իրեն մարում է և, փոշիանալով, կորցնում իր ուժի զգալի տոկոսը:

**3. Ջրով լի տաշտի մեջ ընկղմելով մարում և նույն տաշտի մեջ անմիջապես ավազը խառնելով շաղախի պատրաստում:** – Որմնահյուսության մեջ այս տեսակն առհասարակ գործ են ածում Բալկանյան երկրներում. ջրով լի տաշտի մեջ որոշ քանակությամբ կիր բաց անելուց հետո, առաջացած ջերմությունը դեռ չանցած, անմիջապես խառնում են ավազը և բոլորովին տաք վիճակում լցնում պատի մեջ. տեղական ճարտարապետները և որմնադիրները համոզված են, որ այս եղանակով գործածված կիրը պատի մեջ թե՛ ավելի շուտ կչորանա, ածխաթթուն օդից արագ կծծի, և թե՛ ավելի պինդ կձուլվի որմնամիջի խճերի և արտաքին երեսների քարերի հետ:

**4. Ջրասրսկմամբ մարում:** – Ջրասրսկմամբ մարելն ընդհանրապես ընդունված է թե՛ Եվրոպայում և թե՛ ասիական շատ երկրներում և առհասարակ կատարվում է հետևյալ եղանակով, բանվորները չմարած կիրը փռում են մի հարթ գետնի վրա ու վրան դույլերով ջուր սրսկում: Սրսկված ջուրը հետզհետե ծծվում է կրի մեջ, և կրի կոշտերն սկսում են լայնանալ, ճաքճքվել ու փշրվել. լավ կրի ծավալն ավելանում է երեք անգամ, դույլը՝ մաքուր սպիտակ, իսկ գոյացած կրափոշին՝ չափազանց նուրբ. մատներով շոշափելիս՝ ճարպոտ մարմնի տպավորություն է թողնում: Առաջին փովածքի մարումը վերջանալուց հետո, բանվորները մարած կիրը հավաքելով՝ մի կույտ են կազմում մարման հարթավայրի կողքին: Կրկին փռում են նույն տեղում չմարած կիր և շարունակում միևնույն գործողությունները, ինչ որ առաջին անգամ. այսպես հաջորդաբար շարունակելով, շենքի համար բերված ամբողջ կիրը մարում են, փոշիացնում և հետզհետե ավելացնելով նախկին կույտի վրա, մի մեծ դեզ են կազմում: Այս գործողությունը վերջացնելուց անմիջապես հետո, առանց երկար ժամանակ դեզը բացօթյա թողնելու, բանվորներն շտապում են համեմատական չափով կիրն ու ավազը խառնել իրար՝ շաղախ պատրաստելու համար: Կիրը և ավազը շաղախի համար նախապատրաստում են նույնպես որոշ կանոններով: Շենքի մոտ, մի հարթ տեղում, որին կրի կալ են անվանում, նախ ավազը փռում են 2 – 3 սանտ. հաստությամբ, սակայն, մի որոշ ծավալաչափ ամանով հաշված, ավազը շատ լավ տարածելուց հետո, որպեսզի ամբողջ տարածության վրա միևնույն թանձրությունն ունենա, միևնույն ծավալաչափ ամանով փոշիացած կիրը խնամքով փռում են ավազի վրա՝ հավասար թանձրությամբ տարածելով. հետո կրի վրա դարձյալ ավազ. այսպես հաջորդաբար կիր ու ավազ միմյանց վրա փռելով՝ կազմում են մի մեծ կույտ, որը ոչ միայն պատրաստ է շաղախի վերածելու համար, այլև երկար ժամանակ օդի ազդեցությունից ազատ պահվում է ավազի շերտերի տակ: Մնում է այժմ կալի մի կողմից հետզհետե թիակներով վերցնել կրի ու ավազի այդ խառնուրդը և շաղախը պատրաստել:

Կրաշաղախ կազմելու համար չի կարելի անխտիր ամեն տեսակ ավազ գործածել, որովհետև հաստատության կամ ամրության տեսակետից միևնույն արդյունքը չեն տալիս: Կրաշաղախի համար լավը գետի ավազն է, քան աղբյուրների, քարահանքերի կամ ուրիշ ցամաք գետնի մեջ գտնված հանքերի ավազը: Գետի ավազը միշտ ազատ է կենդանական, բուսական կամ հողային գոյացության խառնուրդներից, ցամաք գետի հունի մեջ գտնված ավազը, եթե հարկը պահանջե գործածել, անհրաժեշտ է մի մեծ փայտե տաշտի մեջ խնամքով երկար լվանալ, մինչև որ կատարելապես մաքրվի հողային ու բուսական խառնուրդներից. լվանալու գործողության ընթացքում, երբ ջուրը պարզվում է, այն ժամանակ կարելի է ավազը խառնել կրի հետ և անընդհատ շաղվել հատուկ թիակով, մինչև որ զանգվածի մեջ տեսնվի կրի և ավազի հավասար խառնվածք:

Կրի հետ խառնելու համար ավազի համեմատական չափը, նայելով գործածության նպատակին, լինում է տարբեր: Որովհետև ընդհանուր օրենք է համեմատական չափերը միայն ծավալով որոշել, ուստի, կրաշաղախի համար, 1 խ. մետր կրին $1^1/_2$-ից մինչև 3–4 խ. մետր ավազ է խառնվում, նայած գործածության նպատակին: Քարեղեն որմնաշինության համար, առհասարակ մեկ չափ կրի մեջ $2^1/_2$ -ից մինչև 3 չափ ավազ են խառնում, իսկ ջուր վերցնում են ավազի ծավալի 30%-ի չափով կամ քիչ ավելի:

Կրի և շաղախի մասին համառոտակի գրածիս նպատակն է հնարավորություններ տալ բաղդատություններ կատարեու հնում գործածության եղանակների հետ. այս մասին պետք է գրեմ ինչ որ հնարավոր է, քննելով և ուսումնասիրելով եղածը: Քանի որ դարեր են անցել, և հին սովորություններն ու կերպերը ծածկվել են երկար ժամանակի թանձր վարագույրով և մանավանդ որ մեր հին մատենագիրներն այս մասին չունին ոչ մի հիշատակություն կամ նկարագրություն, ուստի մենք պիտի կարողանանք միայն ամենահավանական ենթադրություններն անել, հիմնվելով մեր կատարած փորձերի վրա: Այս հարցում ուշադիր ենք եղել գլխավորապես այն պատճառով, որ թեև հնագույն շինություններ մեջ շատ կան մեր ժամանակի կառուցողական օրենքների համանման երևույթներ, սակայն կան նաև այնպիսի երևույթներ, որոնք միանգամայն տարբեր են մեր այսօրվա որմնաշինության սովորություններից ու շինելակերպերից:

Ինչպես տեսնում ենք քննություններից, թեև Արևելքում և Արևմուտքում չափազանց հին է կրի գործածությունը, սակայն Հայաստանում ընդհանրացած երևում է նախքան երկրորդ կամ երրորդ դարը, երբ արդեն ընդունված էր տուֆ քարի գործածությունը շենքերի համար: Թեև տուֆ քարի գործածությունից առաջ, երբ Հայաստանում ընդհանրացած էր բազալտով կամ ուրիշ բազմատեսակ մեծազանգված որձաքարերով բերդեր, ամրոցներ, նույնիսկ տոհմապետական պալատներ շինելը առանց շաղախի, սակայն ավելի հին ժամանակի մնացորդների մեջ երևում են վիթխարի որձաքարերով, կրաշաղախով շինված մի քանի պատեր, բայց ընդհանրացած չէր, անշուշտ, այժմ մեզ անծանոթ դժվարությունների պատճառով: Հոռոմ գյուղի մոտ, նախապատմական մի քաղաքի մնացորդների մեջ, ուր ամբողջ տարածության վրա երևում են միմիայն կիկլոպյան ժայռերով, ժամանակով միմյանցից բավական հեռու, բերդեր, պարիսպներ և բնակության հատուկ շենքերի հիմքեր, որոնք բոլորը կառուցված են առանց շաղախի. բայց իբրև միակ բացառություն, այս ավերակների մեջ կա խոշոր որձաքարերով և կրաշաղախով շինված մի շենքի մնացորդ, որի պատերից դեռ տեղ-տեղ մնացել են մինչև մեկ մետր բարձրությամբ: Թե ինչ շենքի մնացորդ է սա, հայտնի չէ, պեղումները միայն կարող են պարզել: Մոտավորապես չորս քառակուսի կիլոմետր տարածություն ունի այս քաղաքատեղին, ուր գտնվում են թե՛ նախապատմական և թե՛ ուրարտական սկզբնական շրջանի շինվածքների մնացորդներ: Մեզ հայտնի են նաև ուրարտական քաղաքատեղերի այլ մնացորդներ, որոնց մեջ մեծամեծ քարերի տաշված, կոկված և պատերի մեջ շարված լինելն ապացույց է նույնիսկ երկաթե գործիքների գոյության. սրանով նաև որոշվում է այս շենքերը կանգնեցնելու ամենահավանական ժամանակը, որ հազիվ մեր թվականությունից 8–10 դար առաջ լինեն, ինչպես Արմավիրում, Դովրիում և այլն, և այլն: Սակայն Հոռոմում կրաշաղախով շինված շենքը, որի քարերը բնավ գործիք չեն տեսած, չեն տաշված կամ կոկված, բնականաբար պիտի ենթադրել, որ ուրարտական շրջանի նախօրյակին կամ առառավելն ուրարտականի սկզբնական շրջանում է կառուցված: Շենքի հատակագիծն անկանոն վարդաձև է և նման մի հասարակական շենքի, հավանորեն աշտարակ կամ մեհենատեղի՝ բնականաբար այն ժամանակվա համար մեծածախս, որ հետևողներ չեն եղել, այսինքն կրաշաղախով շինություններ չեն կառուցվել երկար ժամանակ: Ուրեմն այս շենքի գոյությունն ապացույց է, որ Հայաստանում, մեր թվականությունից առնվազն 8–10 դար առաջ, կրի գործածությունը ծանոթ էր:

Թեև սահմանափակ, այնուամենայնիվ, կամաց-կամաց ընդհանրացել է Հայաստանում կրաշաղախի գործածությունը հետագա դարերում, այսինքն՝ մեր թվականության նախօրյակին կամ սկզբին, ինչպես ապացուցում են Բաշ-Ապարանի մոտ գտնվող Կարանլուխ գյուղի վերևի մի մեծ շենքի մնացորդը, Դիլաքլար գյուղի եկեղեցու ստորին մասերը, Եղվարդի հին գերեզմանատան կից մի

*փոքր շինությունը, որը հետագայում մատուռի է վերածված: Գառնիի Տրդատա ամրոցի թե՛ ամբողջ շրջապատ պարիսպը և թե՛ պարսպից ներս հովանոցի գեղեցկաշեն կառուցվածքը, որ հավանորեն շինված են առաջին դարում՝ մեծազանգված, մաքուր տաշված քարերով, ընտիր կրաշաղախով շինված լինելուց զատ, սրբատաշ քարերը կապված են միմյանց հետ երկաթե կապերով:*

*Ինչպես երևում է, կրաշաղախի ծանոթությունից քիչ ժամանակ անց սկսվել է տուֆ քարի գործածությունը իբրև ամենահարմար շինանյութը կրի խառնուրդով հաստատուն զանգված կազմելու համար: Իմ կարծիքով, եթե կրաշաղախի հետ միասին հնում չգործածվեր բացառաբար տուֆ քարը, գուցե մենք Հայաստանում չգտնեինք այնքան դարավոր կանգուն կամ կիսականգուն հին շինություններ: Առանց կրի մեծազանգված քարերով կանգնեցված խոշոր շենքերի և հսկայական պարիսպների չափազանց շատ մնացորդներ կան Հայաստանում, սակայն բոլորը գրեթե փլատակների են վերածված և հազիվ ստորին մասերն են մնացած, մինչդեռ կրաշաղախով շինված հազվադյուտ օրինակները, որոնք որձաքարից են, համեմատաբար ավելի լավ են պահված, սակայն ոչ այնչափ միակտուր զանգվածի փոխված, ինչպես տուֆ քարով շինվածները: Մեր թվականության ամբողջ շրջանում տուֆով կրաշաղախ որմնաշինությունը միշտ ընդունված է եղել, որովհետև, ինչպես նախնիք նկատել են, տուֆը միակ քարն է, որ սերտորեն միանում և միակտուր զանգված է կազմում կրաշաղախի հետ: Բացի այդ, նկատել են նաև, որ տուֆով ու կրաշաղախով կազմված բետոնն ավելի հաստատուն և տևական հատկություն ունի, ուստի, պատերը շինելիս, երկու երեսը շարված քարերը, ըստ հնարավորության բարակ կտրված և իբրև պահպանակ շարված են ներսի բետոնի համար, որին մինչև այսօր հին անունով պատի ծուծ են ասում գավառաբարբառով: Իսկ շաղախը բաղադրելու և իբրև ծուծ պատի մեջ լցնելու համար ունեցել են մեզնից տարբեր կանոններ, որոնց շնորհիվ թերևս որմնաշինությունն ավելի հաստատուն և ավելի նպատակահարմար է եղել: Ուստի այժմ խոսենք այն շինելակերպի մասին, որ պարզվում է հին ժամանակ Հայաստանում կառուցված հուշարձանների քննությամբ:*

*Առհասարակ, գրեթե ընդհանուր կարծիք է, թե նախնյաց կառուցած շենքերը, որ խիստ ամուր են և տասնյակ դարերի կյանք ունին, իբր թե պատճառն այն է, որ կրաշաղախի հետ խառնում էին զանազան ամրացուցիչ նյութեր, ինչպես՝ մաստակ, ձվի սպիտակուց այլն և այլն, որոնք գերազանցորեն նպաստում էին շենքերի ամրությանը: Այս համոզման հետևանքով է, որ հնագույն ժամանակների շաղախի բաղադրության շուրջն ստեղծվել են զանազան առասպելներ, որոնք, սակայն, բնավ հիմք չունին և չեն ապացուցվում կատարված քննություններով[1], հետևաբար մեզ մնում է մատնանշել շինելակերպի որոշ տարբերություններ, որոնք ավելի հավանական են պատերի դիմացկուն և երկարատև լինելու համար:*

*Բացի եվրոպական գիտնականների քննություններից, մեր մատենագիրներն ևս, որ հաճախ սիրում են նոր կառուցված շինությունների մասին գովեստներ շռայլել, երբեք չեն հիշատակում որևէ խառնուրդ կրի զանգվածի մեջ: Թեև շենքի քարերը մանրամասն որակում են սրբատաշ, տաշածո, կոփածո, քերածո, խարտյալ և այլ բառերով, սակայն այդ որակված քարերով պատեր կանգնեցնելու համար, երբ հիշատակում են կիրը՝ գրեթե միահամուռ բնորոշում են կրաշաղախ ձուլյալ, կրով մածուցյալ և այլն, բառերով: Տարակույս չկա, որ եթե ամրացուցիչ որևէ խառնուրդ լիներ կրաշաղախի մեջ, ապա, իբրև գերագույն գովեստի առարկա, պետք է որ հիշատակվեր մատենագիրներից մեկն ու մեկի կողմից:*

*
* *

*Մեր թվականության սկզբից մինչև 7-րդ դարի վերջը մեծ շինությունների պատերն առհասարակ 0,90 մետրից մինչև 1,05 մետր հաստություն ունեն: Այս հաստության վրա քարերը երկու կողմից այնպես չեն շարված, ինչպես այսօր մենք շարում ենք: Ըստ ներկա շինարարական կանոնի՝ պատերի երկու երեսի քարերը դեմ-դիմաց այնքան հաստություն պիտի ունենան, որ երբեմն միմյանց հասնելով՝ մեկի ծայրը հանդչի հանդիպակաց կողմի ներքևի քարի ծայրին ու կապվի նրա հետ. այս տեսակ կապվածքը քարերի ամեն մի շարքին հատուկ չէ, այլ պարբերաբար յուրաքանչյուր կարգի մեջ պատահում են մի քանի հատ միայն, իսկ մյուս քարերն էլ երկու երեսից այնքան մոտենում են իրար, որ մեջտեղը, իբրև պատի ծուծ, շատ աննշան տեղ է մնում: Սակայն հին շենքերի մեջ երբեք չպատահեցի պատի քարերի այդպիսի դասավորության: Պատի երկու երեսին իրար վրա շարված քարերը երբեմն ճակատի մակերեսով շատ մեծ են, բայց շատ քիչ հաստություն ունին, որից պարզ երևում է, որ այդ քարերը զետեղված են որմնամիջի կրաշաղախ հաստ լիցքը, ինչպես ասում*

[1] *Կրի հետ մաստակ խառնելու սովորության մի ակնարկ երևում է մեր հին մատենագրության մեջ, բայց բոլորովին տարբեր նպատակի համար, որ որմնաշինության չի վերաբերում. բայց այս մասին կխոսենք համապատասխան տեղում:*



*են՝ պատի ծուծը պահելու համար, որ գրեթե պատի հաստության կեսը և հաճախ կեսից ավելին է կազմում: Եթե պատի 0,90 մետր հաստությունից դուրս գանք միջին հաշվով 0,40 մետր՝ երկու երեսի վրա շարված քարերի հաստությունը (յուրաքանչյուր երեսի վրա շարված քարերի միջին հաստությունը հաշվելով 0,20 մետր), կմնա 0,5 մետր՝ զուտ շաղախը, որ կկազմի պատի իսկական ծուծը, կամ այժմյան անունով՝ բետոնը, որ, ըստ հին հասկացության՝ դիմացկուն մասն է: Այսպես է գրեթե ամեն տեղ, և մենք այս իրողությունը պարզ տեսնում ենք այն կիսավեր շենքերի մեջ, որոնց մնացորդ պատերը թույլ են տալիս մեզ հետազոտելու մեջտեղի թույլ շաղախը: Շատ տեղեր մենք զարմանքով տեսնում ենք, որ պատի երկու երեսի քարերը պոկված ու տարված են, իսկ միջի շաղախի ձուլվածքը մնում է կանգուն՝ որոշ բարձրության վրա: Բայց եթե պատերը 0,9 մետրից ավելի հաստ են, և ունեն մինչև 1,05 մետր հաստություն, ապա երեսին շարված քարերի թանձրությունը գրեթե անփոփոխ 20-25 սանտիմ. է (եթե երբեմն գտնվում են մինչև 30-35 սանտ. հաստության քարեր, նմանապես և նույն պատի մեջ կարելի է տեսնել մինչև 0,15 մետր հաստության քարեր): Ուրեմն, հին հասկացողությամբ, իսկական պատը կրաշաղախ շինված ծուծն էր, և երեսները շարված սրբատաշ քարերը ներսի ծուծը պահպանելու համար էին, մոտավորապես իբրև ծեփի հաստ շերտ[1]:*

*Հայաստանում դարերի ընթացքում հայոց ճարտարապետությունը վերածնվել է մի քանի անգամ և յուրաքանչյուր վերածնության ժամանակ շինարարական փոփոխություններ են եղել: Պատերի շինության նկատմամբ ևս եղած փոփոխությունները խիստ ակնբախ են: Գլխավորապես փոփոխության է ենթարկվում քարերի ծավալը, երբեմն խիստ մեծ քարերը դրվում էին պատերի արտաքին երեսներին, իսկ ներսի երեսին, եթե երկարությունները փոքր ի շատե կարճ էին, այնուամենայնիվ բարձրությունները հավասար էին թե՛ արտաքին և թե՛ ներսի երեսների վրա: Գալիս է ժամանակ, երբ քարերի ծավալը որոշ չափով փոքրանում է, բայց միշտ անփոփոխ է պահվում որմնաշինության այն կերպը, որի մասին քիչ առաջ դրեցի, այսինքն՝ պատի ծուծը կազմել կրաշաղախ բետոնով, իսկ արտաքին երեսների վրա շարված քարերը ծառայել են իբրև բետոնի պահպանակ. այս օրենքից հազվադեպ բացառություն է եղել, երբ պատի քարերն արտակարգ մեծություն են ունեցել. բայց այս դեպքում քարերը միմյանց հետ կապել են երկաթե կապերով. այս մասին խոսելու եմ իր հերթին: Նույնիսկ կամարաշինության մեջ ընդհանուր օրենքից բացառություն չեն արել. Անիում դեռ գոյություն ունեն կամարաշինության շատ օրինակներ, որոնց մեջ ևս գործադրել են նույն կանոնը. տուֆ-քարերը սղոցով կտրված են 12-15 սանտ. հաստությամբ և նախապես շարված կամարի ստորին մասի վրա իբրև կաղապար, հետո դրա վրա մեծ թանձրությամբ լցված է բետոնը, որը դեռ մինչև այսօր էլ մնում է և պարզ նկատվում է կիսափուլ բուրգերի վրա. նախապես շարված բարակ քարերը մշտապես իբրև պահպանակ կամ իբրև հաստատուն ծեփ են ծառայել կրաշաղախ բետոնով կազմված կամարների համար: Այս երևույթը որչափ որ իրագործված է կիսավեր շենքերի վրա, այնուամենայնիվ ունենք նաև մատենագրական մի թանկագին տեղեկություն, որից տեսնում ենք, թե ի՞նչպիսի մեծ վստահություն ունեն հին ճարտարապետները կրաշաղախ բետոնի պնդության և ամրության նկատմամբ: Ստեփաննոս Օրբելյանը երբ պատմում է Տաթևի վանքի մեծ կաթուղիկեի շինության մասին (895 թ.), մեջ է բերում նաև մինչև այսօր էլ մեզ զարմանք պատճառող «Տաթևի գավազան» կոչված շարժական սյան կամ կոթողի շինության պատմությունը հետևյալ կերպով. «Կանգնէ և մերձ եկեղեցւոյն, հանդէպ դրանն հարաւոյ սիւն մի զարմանալի յանուն սրբոյ Երրորդութեան. ի մանր քարանց պատուաձեալ ի չափ երեսուն կանգնոյ»: Ուրեմն, նկարագիրը պարզ ցույց է տալիս, որ սյան ծուծը կազմված է բետոնով, և շաղախի*

*Նկ. 89. Տաթևի շարժվող գավազանը*

[1] *Այժմ ամբողջ Եվրոպայում ընդհանրացած է նմանօրինակ մի սովորություն աղյուսով կառուցված շենքերի համար: Նախ շենքը կառուցում են աղյուսով, իսկ հետո Մալտայի փափուկ տուֆի 10 - 12 սանտ. հաստությամբ սղոցով կտրված տախտակներով ծածկում են ամբողջ շենքի արտաքին երեսները: Մալտայի տուֆի տախտակներն ամրացնում են շենքի վրա երկաթե բարակ կապերով: Եվ որովհետև տուֆը շատ ընդունակ է խոնավությունն իր մեջ ծծելու, ուստի, դեռ անձրև չեկած, շտապում են ամբողջ շենքի ճակատն օծել ձեթով, որով շենքը միանգամայն ապահովվում է խոնավությունից: Ձեթով օծելու այս սովորությունը Հայաստանում միշտ ընդունված է եղել, որի մասին կխոսեմ իր տեղում:*

հաստության նկատմամբ ճարտարապետի խորը համոզումն անկասկած է մնում, գիտենալով, որ այդ «գավազան» սյունը ոչ միայն կանգուն պիտի մնա, այլև պետք է շարժվի ամեն կողմի վրա ու չպետք է քանդվի:

Տաթևի սյունը կարոտ է բազմակողմանի ուսումնասիրության ոչ միայն այս տեսակետից, այլև ճարտարապետական արվեստի մեջ որոշ գաղտնիքներ լուսաբանելու տեսակետից:

Խոսք չի կարող լինել, որ շնորհիվ տուֆ քարի փափկության և մաքրության, երեսները խնամքով տաշելուց և կոկելուց զատ, առանձին ուշադրություն են դարձրել նաև միացման տեղերի վրա: Շարված քարերն այնքան սերտ են միացած իրար, որ եթե տուֆ քարի զանազան դույները չլինեին, անհնար կլիներ որոշել, թե տարբեր քարեր են իրար մոտ դրված ու կցված: Շենքեր կան, որոնց վրա, 10–15 դար անցնելուց հետո իսկ, այսօր դրեթե չեն նկատվում քարերի միացման գծերը, մանավանդ եթե չլինեին դույների տարբերությունները: Հայտնի բան է, որ ոչ միայն քարերի ուղղահայաց եզրերը տաշվելուց հետո սղոց քաշելով՝ երկու քարերի եզրերը գերազանցորեն ուղղված և միացված են, այլև քար քարի վրա դրվելու հորիզոնական մասերը նույն ձևով ուղղված են: Կասկած չկա, որ քար սղոցելու միջոցը ծանոթ էր հներին, թեև, անշուշտ, նախնական ձևով, այնուամենայնիվ $1^1/_2$–2 սնտ. հաստությամբ քարի չերտեր են սղոցված և ընդհանուր շարքերի մեջ պատահաբար բաց մնացած արանքներում տեղավորված. իսկ եզրերից ներս, թե՛ ուղղահայաց և թե՛ հորիզոնական մասերի միացման տեղում, 1 կամ $1^1/_2$ սնտ. հորիզոնական ուղղությամբ տաշելուց հետո, մնացած մասերը դեպի խորություն, արդեն կոնաձև, կոպիտ կերպով զարնված ու թափված են, ծավալն անհամեմատ նվազեցնելով և քարերի ներսի մասերը միմյանցից զգալիորեն հեռացնելով՝ անշուշտ այն դիտավորությամբ, որ շաղախն առատորեն լցվի երկու քարի արանքը և մեջտեղի ծուծի հետ միակտուր զանգված կազմի:

Երեսները ծածկող սրբատաշ քարերն իրար վրա դնելուց հետո, միացման գծերը ներսի կողմից նախապես ծածկել են մաքուր և նուրբ կրաշաղախի խավով, որպեսզի պատի մեջտեղը լցված կրաշաղախի զանգվածից որևէ կերպ կրաջուր կամ լույծ շաղախ չքամվի դեպի դուրս և չկեղտոտի արտաքին երեսները: Այժմ, երբ շաղախը լցնում են պատի շարքի մեջ, վրայից ջուր են ածում, որպեսզի շաղախն ավելի լուծվի և փակի նախապես լցված մանր քարերի խորշերը. սակայն այս ձևից երկու տեսակ անտեղություն է առաջ գալիս. նախ կրաշաղախը հավասար խառնվածքով չի տարածվում ամեն տեղ, որովհետև ավազը լվացվում է, կրաջուրը հոսելով՝ մտնում է առանձին խորշերը, իսկ ավազակույտերը տեղ-տեղ մնում են. երրորդ՝ երեսների վրա շարված քարերի արանքից կրաջուրը քամվում, դուրս է հոսում երեսնիվար ու կեղտոտում ամբողջ պատը, և այս դեպքում նախապես ձեռք չեն առնվում այն նախազգուշական միջոցները, ինչպես այդ արել են հին որմնադիրները: Ուստի, այժմյան պատերի կեղտոտությունը մաքրելու համար, որմնադիր վարպետները քարով կամ այլ միջոցով քերում են պատի երեսը, որով թեև որոշ չափով մաքրվում է պատը, բայց պատի սրբատաշ քարերի երեսից, մասնավորապես միացման տեղերից, մի խավ մաշվելով, բացվում և լայնանում են քարերի միացման գծերը և տգեղ տեսք ստանում: Իսկ որպեսզի այս տգեղությունը ծածկվի, որմնադիրները նույն քարերի փոշիով, կրի կամ ցեմենտի հետ շաղախած, ծեփում են միացման գծերը, որով թեև ժամանակավորապես խիստ մաքուր է երևում և անհայտանում են քարերի միացման անշնորհք գծերը, բայց կարճ ժամանակի ընթացքում այդ ծեփերը թափվում են, քարերի արանքները նորից բացվում են, և պատը ընդունակ է դառնում խոնավություն ծծելու, եթե շենքի մակերեսը չծածկվի որոշ հաստության ծեփի շերտով: Հին որմնադիրները, հակառակ մեր այժմյան սովորության, պատի երեսի քարերը շարելուց հետո, անմիջապես լցնում էին որոշ թանձրության շաղախ, հետո մաքուր լվացված անհավասար մեծությամբ քարի բեկորներ էին մտցնում շաղախի մեջ ու քարեր մխում տափակ կողմի վրա, և ոչ թե հիմիկվա նման տնկելով սուր կողմի վրա: Այսպիսով՝ ծուծը կազմող քարերը համաչափ կերպով օծվում էին միևնույն հավասարության խառնուրդի մեջ և խտանալով՝ միմյանց կապում: Երբ լցված քարերը գալիս-հասնում էին շաղախի մակերևույթին, կրկին լցնում էին կրաշաղախը, տարածում հավասարապես և նորից մտցնում մանր ու խոշոր քարեր՝ միշտ տափակ դիրքով, որպեսզի միմյանց կապ լինեն. այս ձևով շարելու դեպքում այլևս հարկ չէր լինում ջուր լցնելու, որպեսզի պատի մեջ շաղախը լուծվի և լցնի ամեն ծակ ու ծուկ:

Ամբողջ 7-րդ դարի ընթացքում մեծ շինությունների պատի քարերը տաշելու համար մի ընդհանուր սովորություն կար, որը սակայն հետագա դարերում չպահվեց: Քար տաշելու այս եղանակը բավական գործնական ու նպատակահարմար էր արտաքին եզրերը կամ միացման գծերն անաղարտ պահելու տեսակետից. այդ սովորությունը հետևյալն էր, քարի արտաքին երեսներն ամբողջովին տաշելուց և կոկելուց հետո, 1 կամ $1^1/_2$ սանտ. լայնությամբ նիստի կողմից եզրերը տաշում էին դեպի ներս, այնպես որ, երբ քարերը շարում էին միմյանց վրա, յուրաքանչյուր քարաշարքի միացման տեղում հաճելի տեսքով մի եռանկյուն հորիզոնական գիծ էր գոյանում շենքի ամբողջ երկարությամբ, այսպիսով՝ քարերի եզրերն ազատվում էին ուղիղ միմյանց վրա դրվելու հետևանքով առաջացող ճնշումից տրաքվելու վտանգից, որովհետև քարը քարին նստում էր ոչ թե ուղիղ եզրով, այլ 1 կամ $1^1/_2$ սնտ. ավելի խորից. թե ինչու այս գեղեցիկ սովորությունը հետագայում վերացել է, ինձ հայտնի չէ:

Հին ժամանակի որմնաշինության համար քարերի տաշվածքի և շարվածքի մասին փոքր ի շատե ծանոթություն տալուց հետո, մի քանի խոսք ևս որմնածուծի մասին, որի շինելակերպն այժմյան մեր սովորականից տարբեր լինելուց զատ, հատկապես կոչումը տարբեր լինելու առթիվ վերը մասամբ ակնարկեցի: Ըստ հին հասկացողության՝ իսկական պատը կազմում էր ծուծը կամ բետոնը և արտաքին ճակատների վրա շարված քարերն իբրև պարզ օժանդակ կամ պահպանակ էին ներքին բետոնի հաստատության համար: Այժմ, երբ քննում ենք հնադարյան պատերը և հետազոտում նրանց ծուծը, տեսնում ենք, որ նա կազմված է անհավասար մեծությամբ քարաբեկորներից (խիբար), որոնք իրար հետ միացած են կրաշաղախով, ուստի ծուծն ավելի ամուր է, քան երեսները շարված քարերը: Արտաքին երեսի քարերը հեշտությամբ կոտրվում և փշրվում են, իսկ ներքին լիցքը, որ մոտավորապես պատի հաստության կեսից ավելի է, երբեմն այնքան ամուր է լինում, որ առանց արտաքին օժանդակ ուժի անհնար է քանդել կամ փշրել: Քարի անհավասար բեկորները միշտ դրված են տափակ կողմի վրա, նախապես շաղախը լցնելուց հետո, այսպիսով՝ բեկորները միշտ մեկ մեկու կապում են, մինչդեռ այժմ այդ քարաբեկորները (խիբար) որմնահյուս վարպետները շարում են ցից կամ խիտ կերպով, տնկում սուր կողմի վրա և հետո վրան թանձր շաղախ լցնում, և որպեսզի շաղախն անցնի ներքև ու հավասար տարածվի, վրան ջուր են լցնում, ծեփակով նորից խառնում, ջրիկացանում և տարածում այս ու այն կողմ. բայց այս վերջին ավելացրած ջուրն անհավասար է տարածում շաղախը, շատ անգամ կիրը ջրի հետ առանձին անցնում է զանազան խորշեր և պատի արտաքին երեսի քարերի արանքից դուրս թափվում, իսկ ավազակույտերը մնում են երեսին կամ քիչ ավելի խորը. ինչ վերաբերում է քարաբեկորների շարվածքին, դրանք բնավ իրար հետ չեն կապվում. պարզապես շինվում են երկու քարի պատեր և արանքը լցվում, առանց արտաքին երեսների հետ կապելու կամ ձուլելու:

Ժամանակի ընթացքում, 14-րդ և 15-րդ դարերում, գուցե շինանյութերի խնայողությունը նկատի առնելով, պատերի ներքին ծուծն ավելի նիհարացրել և պատերի հաստությունն ավելի նվազացրել են. այս դարերում մինչև 0,55 մետր հաստության պատեր ենք գտնում: Երեսին շարված քարերը թեև մակերեսով փոքր են, բայց հաստ են, կոնաձև թափված, որոնք որոշ չափով ընդունակ են լինում ծուծը կազմող շաղախի հետ խառնվելու: Այնուամենայնիվ այնքան դիմացկուն և տևական չեն եղել այս շենքերը. մեկ կամ մյուս կողմից թափված են երեսի քարերը և հակառակ կողմից շարված քարերի ծայրերը երևում են՝ որոշ հաստությամբ ծուծ չլինելու պատճառով, բարեբախտաբար այս եղանակով շինված շենքերը թե՛ քիչ են և թե՛ առհասարակ շատ փոքր, համեմատելով 7-րդ և 10-րդ դարերում շինված շենքերի հետ, բայց ինչ վերաբերում է քարերի տաշվածքի և շարվածքի խնամքին ու մաքրությանը, բնավ հետ չեն մնում 7-րդ և 10-րդ դարերի շինությունների կատարելությունից:

Ինչպես վերևում հայտնեցի, տևական փորձերով հաստատված է, որ որմնահյուսության մեջ գործածվող շաղախը կազմելու համար ամենահարմարը գետի մաքուր ավազն է, որովհետև կրաշաղախը կազմելու համար պահանջվում է, որ ավազը միանգամայն ազատ լինի բուսական և հողային դոյացություններից, իսկ գետի ավազն է միայն, որ մշտապես ջրի հոսանքի հետ քշվելով և լվացվելով, ունի այս հատկությունը, հայտնի է, որ ավազը գոյանում է քարի փշրանքներից, գետերն իրենց հոսանքի ճանապարհին քերելով սարերի ստորոտներն ու ժայռերը, գոյացնում են ավազը և տանում, շտեմարանում են զանազան հարթավայրերում, ուր ջրի հոսանքը համեմատաբար մեղմ է. գետերի մեջ ավազի տեղափոխումը և շտեմարանումը հաճախ կատարվում է մեծամեծ ողողումների ժամանակ: Գետի ավազն ընդհանրապես գոյանում է բազալտի, գրանիտի և այլ կարծր որձաքարերի փշրանքներից, անփայլ սև գույն ունի և անհարթ մակերես, այնպես որ, եթե մեկը մի բուռ ավազ սեղմի ափի մեջ, զգալի կլինի հատիկների անհարթությունից և մաքրությունից առաջացող մի խշշյուն. տուֆ քարից դրեթե ավազ չի գոյանում, նրա փշրանքները երկար մնալով ջրի մեջ, դրեթե ցեխի են փոխարկվում, – ահա այս հատկություններն են, որ ցույց են տալիս, թե որքան պիտանի է այս կամ այն ավազը շինարարության մեջ գործածելու համար:

Հայտնի է, որ նախնիք սովորաբար գործ են ածել գետի ավազ և հնար եղածին չափ զգուշացել են ցամաքային ավազներից: Հին շաղախների

քննությունը պարզ ցույց է տալիս, որ սև ավազ է խառնված շաղախին և ավազի հատիկները պինդ օծված են կրով. եթե ավազը մաքուր չլիներ, նրա հատիկները հեշտությամբ դուրս կգային կարծրացած շաղախի միջից իրենց իսկական քարի գույնով, առանց կրի պինդ օծվածքի: Եթե հարկն ստիպել է ցամաքային ավազ գործածել, անպայման նախապես խիստ մաքուր լվացել են և հետո միայն խառնել կրին: Ավազ լվանալու այս հին սովորությունը դեռ մնում է արևելյան շատ երկրներում: Մի մեծածավալ, 60 – 70 սնտ. խորությամբ տաշտի մեջ կիսով չափ ավազ են ածում և վրան ջուր, մինչև որ տաշտը լցվի. այնուհետև սկսում են բահերով անդադար խառնել և շարունակ ջուր ավելացնել, որով պղտորված և ցեխոտ ջուրը տաշտի եզրերից միշտ դուրս է թափվում, իր հետ տանելով բոլոր հողային և այլ բաղադրությունների մասերը. այս գործողությունն այնքան են շարունակում, մինչև որ տաշտի ջուրը պարզվում է. այնուհետև ավազը հանում են տաշտից, կիտում մի առանձին տեղ, և նորը լցնում նույն գործողությունը շարունակելու համար: Զարմանալի կերպով նկատված է, որ հին հուշարձանները շինված են առհասարակ այնպիսի տեղերում, որոնց մոտ գտնվում են գետեր կամ վտակներ. հետևաբար դժվար չէր գետի ավազ ունենալ, քանի որ մաքուր ավազի հանքերն այնքան մոտ էին գտնվում: Ավազի մեջ երբեմն պատահում են սպիտակ, փայլուն կայծքարի և օբսիդիանի հատիկներ, թեև այսօրինակ ավազը խոտելի չէ, այնուամենայնիվ սա ընդհանուր երևույթ չէ: Բացառապես Երերույքի մեծ հուշարձանի կառուցման ժամանակ շաղախի մեջ խառնված է միմիայն պեմզայի ավազ: Այս մեծ հուշարձանը գրեթե անաղարտ հասել է մինչև մեր օրերը (բացի մարդկային բարբարոս ձեռքով հատկապես քանդված մի քանի մասերից), սակայն, դժբախտաբար, ափթ չի եղել շաղախը մանրամասն քննելու և տարրալուծելու: Պեմզայի ավազով պատրաստված այս շաղախը գրեթե առաջինն ու վերջինն է մեր ուսումնասիրած հուշարձանների մեջ:

Մի բացառիկ երևույթ կա շաղախի տեսակետից. Արազածի լանջին գտնվող Ավան գյուղում կա 5-րդ դարի մի շենք, որի շաղախը, փոխանակ սպիտակ գույն ունենալու, մոխրագույն կամ գորշագույն է, ճիշտ այն գույնը, ինչ ունի այժմյան ցեմենտը: Զափազանց կասկածելի է, որ այդ շենքի շաղախը սովորական կրով զանգված լինի, անպայման կամ կրի հետ մի ուրիշ նյութ է խառնված, կամ առանց կրի, բացառապես կրի տեղը բռնող մի այլ նյութով է զանգված: Ամրության և տոկունության մասին խոսք լինել չի կարող, որովհետև վրայից անցել է 15 դար և մեզ հասել է մեծ մասամբ անվնաս. իսկ արևմտյան կողմի վրա, ուր մարդիկ քանդել ու տարել են ստորին մասի քարերը, վերևը գրեթե 2 – 3 մետր տեղ հորիզոնական կերպով կախ է մնացել օդի մեջ, առանց մի տեղից ճեղքվածք կամ պատռվածք ունենալու:

Հնում շենքի պատերի համար գործածված կրի հետ ավազի խառնուրդը կրի ծավալի $2^1/_2$-ից ավելի չէ, միայն Զվարթնոցի մույթերից մեկի մեջ երևում է մի շերտ, ուր թերևս ավելի քան երեք չափ ավազ է խառնված: Սակայն մի ուշագրավ երևույթ կա հայկական շաղախի մեջ, որ արժե ուսումնասիրել: Քարուկիր մեծ շենքերի մեջ, մաքուր ավազից պատրաստված շաղախի հետ երբեմն խառնված են երևում սիսեռի, կաղինի, ընկույզի մեծությամբ մանր խիճեր. անշուշտ նկատել էին, որ այս ձևի խառնուրդով պատի ծուծն ավելի ամուր է ձուլվում քարի անհավասար մեծությամբ բեկորների հետ, սակայն հայտնի չէ՝ այս քարի մանր փշրանքները կրաշաղախի հե՞տ են խառնած, թե՞ հետո քարաբեկորների հետ միասին տեղավորած ծուծի մեջ:

Այժմ մնում է իմանալ, թե ինչպես են այրել կրաքարը և ինչ ձևով են պատրաստել կիրը: Կրաքարն այրելու կերպի մասին կարծիք հայտնել, ըստ իս, ավելորդ է, որովհետև նախ՝ մեզ անծանոթ է նրանց կիր այրելու կանոնը, երկրորդ՝ բնական է, որ Հայաստանը բացառություն չպիտի կազմեր հարևան քաղաքակիրթ ազգերի մեջ, որոնց կրաքար այրելու վառարանների մասին տեղեկություններ կան նույնիսկ նախաքրիստոնեական շրջաններում, ինչպես Ֆրանսիացի գիտնականի 1822 թվին տեսած էտրուրական կրի վառարանը, որի նկարագրությանը նայելով, ոչնչով չի տարբերվում մեր այժմյան վառարաններից: Սակայն կարելի է որոշ կարծիք հայտնել վառարանից դուրս եկած կիրը մարելու և շաղախը պատրաստելու նախապատրաստական աշխատանքների մասին, հիմնվելով թե՛ վաղեմի ավանդական սովորությունների շարունակության և թե՛ բարեբախտ դիպվածով գտնված ապացույցների վրա, որոնք թեև մի քիչ ուշ ժամանակի (11-րդ, 12-րդ դ.դ.), այնուամենայնիվ անպայման նախորդների սովորության շարունակությունն էին: Վերևում մասամբ ցույց տվի Եվրոպական և ասիական երկրներում կրաշաղախը պատրաստելու և պատի մեջ լցնելու ձևերը: Անկասկած է, որ Հայաստանում կրաշաղախ պատրաստելու վերոհիշյալ երկու ձևն է գործադրված. 1) կիրը բաց էին անում տաշտի մեջ և քամում հորում, 2) ջրասրսկմամբ մարում էին և փոշիացնում: Տաշտի մեջ բաց արած ու քամված կիրը նախնիք գործ են ածել միայն ծեփի համար: Երկար քննել եմ 13-րդ դարուց սկսած մնացորդ ծեփերը, որոնց բաղադրությունը ոչ միայն նուրբ ավազով և համեմատաբար առատ կրով է, այլև դրանց մեջ ոչ մի պայթում կամ ուռչում տեղի չի ունեցել, որ ապացույց է կրի քամված և երկար ժամանակ հորի մեջ պահված լինելուն: Կրաքարը տաշտի մեջ բաց անելը և հատկապես պատրաստված հորի մեջ հավաքելն իր կարևոր օգուտներն ունի: Կրաքարի մեջ գտնվում են երբեմն տարբեր տեսակի քարի ավազներ, որոնք թեև այրվում և կրի են փոխվում, սակայն ջրի տակ շատ ուշ են բացվում և փոշիանում, ուստի երբ հորի մեջ լցվում է գոյացած կրախյուսը, հորի խոնավության մեջ, մի քանի օրվա ընթացքում, բացվում և փոշիանում են այդ ավազահատիկները և կրախյուսն դառնալով՝ խառնվում են հորի մեջ եղած քամվածքի հետ: Պատահել է, որ գործի շտապողական լինելու պատճառով, ծեփի հատուկ կիրը բացել են սրսկելով կամ այլ եղանակով, առանց տաշտի մեջ բացելու և հորի մեջ ծածկված պահելու, անմիջապես ծեփել են պատը, սակայն քիչ ժամանակից հետո ծեփի վրա երևացել են այտուցներ կամ փոքրիկ պայթումներ, տեղի տալով նոր բացված հատիկների ծավալի ընդարձակման ուժին:

Ոչ միայն ծեփի, այլև պատերի մեջ անգամ, հաճախ նկատելի է, որ որմնաշինության համար շտապով մարեցրած կրի մեջ եղած քարերը (անշուշտ հասարակ քար կարծելով) խառնված է ծուծին և լցված պատի մեջ, սակայն, որոշ ժամանակից հետո այդ կարծեցյալ քարերը բացվելով և կրի փոխվելով, այնպես են ընդարձակվել, որ վրան դրված ծանր քարերը շարժել են տեղից և դուրս քշել պատից: Այս անտեղությունները չեն նկատվում հնագույն պատերի մեջ:

Կիրը սրսկելով մարելու սովորությունն ընդհանրացած էր թերևս դյուրության և ժամանակի խնայողության համար: Երբ ջրասրսկմամբ կիրը մարում և փոշին կիտում են մի տեղ, նրա մեջ պահված խոնավության պատճառով շարունակում են բացվել տարբեր խմորներից եղող ավազահատիկները, իսկ երբ կազմում են կրաշաղախի կալը, այստեղ, ավազի շերտի խոնավության պատճառով 2–3 օրվա ընթացքում բացվում են մնացորդ բոլոր ավազահատիկները, որոնք նախնական գործողությունների ժամանակ դեռևս չէին բացվել: Կալ բառը թերևս անսովոր է մեր ժամանակի մարդկանց համար, բայց շատ սովորական է վաղեմի Հայաստանից գաղթած և Փոքր Ասիայում ու Սև ծովի ափերի մոտ բնակություն հաստատած հայերի մեջ: Այս բառը սերնդից սերունդ եկել հասել է մեր օրերը և այն կողմերի բնակիչներից ում որ ասեք քիրաճի կամ կրի կալ, անմիջապես կհասկանա համեմատական չափով իրար խառնած կրի ու ավազի մեծ կույտը: Կալ կազմելու այս գործողությունից երկու տեսակ օգուտ է ստացվում, նախ՝ ավազի խոնավ շերտերի տակ բացվում են բոլոր մնացորդ կրացած և տակավին չբացված ավազահատիկները, երկրորդ՝ յուրաքանչյուր կրաշերտ, ծածկվելով ավազի թանձր խավի տակ, միանգամայն ազատ է մնում օդի ազդեցությունից և երկար ժամանակ պահում է իր կատարյալ ուժը:

Կրի կալը մի ուրիշ օգտակարություն ևս ունի աշխատանքի տեսակետից. բանվորը կույտի մի կողմից մաս առ մաս վերցնում է խառնուրդը և, ջրով զանգելով, տալիս որմնադիր վարպետին, մյուս կողմից նորն է բերում զանգելու:

Անհում, մինչև Գազիկի կանգնեցրած բոլորակ եկեղեցու պեղումները, անհայտ էր, թե անեցիք ինչպես են պատրաստել կրաշաղախի զանգվածը: Բարեբախտաբար, պեղումների ժամանակ դուրս եկավ մի մեծ քարեղեն տաշտ, որի մեջ պատրաստել էին կրաշաղախը, շենքը վտանգվելուց հետո, երբ կառուցել էին մի շրջակամար (1013 թ.)՝ կործանվելուց ազատելու համար: Արկղի ստորին անկյուններից մեկում մնացել էր մի կտոր չզանգված ավազով խառն կրի փոշի, սա արդեն ցույց էր տալիս, որ կիրը ջրասրսկմամբ մարել են և ավազը խառնելուց հետո լցրել տաշտը՝ զանգելու համար:

Կրաշաղախի ծեփը, որը ծածկում է պատի արտաքին երեսի վրա ամեն մի տգեղություն և արհեստի պակասություն, Հայաստանի մեծ հիշատակարանների մեջ բնավ չեն գործածել, գործածական էր միայն մասնավոր տների մեջ, այն էլ 12-րդ և 13-րդ դարերից սկսած. այս դարերի եկեղեցիներից մի քանիսի մեջ ևս երևում են պատի ընտիր ծեփեր, որոնց վրա պետք է որ նկարեին զանազան կրոնական պատկերներ, իսկ երբ կանխորոշած չի եղել նկարազարդել, երբեք չեն ծեփվել: Կաթուղիկեի հյուսիս-արևմտյան կողմում անակնկալ կերպով բացվեց մի սենյակ, որի պատերն առանց ծեփի այնպես մաքուր և գեղեցիկ քարերով էին շինված, որ ոչ մի ծեփով չէր կարելի փոխարինել այդ մաքրությունն ու վայելչությունը: Կաթուղիկեի, Ապուղամրենցի, Փրկչի մեջ ծեփեր կան, որոնց վրա նկարազարդված են, սակայն փաստեր շատ կան, որ այդ ծեփերը 13-րդ դարից առաջ չեն: Զվարթնոցի գմբեթակիր սյուների վրա երևացին

ծեփեր՝ ավելի նախնական, քան Անիի մեջ երևցածները, հավանորեն 9–10-րդ դարերի, բայց և այնպես քննությունից երևում է, որ ընդհանրապես պատերը ծեփված չեն և ծեփի փոխարեն որոշ տեղեր պատերը ներկված են, ինչպես արծվախոյակները. թե ի՞նչ բաղադրություններ ունին այդ ներկերը, որ 7-րդ դարից մինչև այսօր հետքերը չեն կորել, կարիք կա հատուկ մասնագիտական քննության:

*
* *

Աղյուսի գործածությունը Հայաստանում շատ հազվադեպ է հին դարերում. պատմագիրները հատու կտոր հիշատակություններ ունին 5–7-րդ դարերում աղյուսով կառուցված շենքերի մասին. բայց ինչպես երևում է, այդ դարերի աղյուսաշեն շենքերը կամ բոլորովին կործանվելով կամ վերանորոգությամբ փոխվելով, այսօր մեզ չեն հասել, ինչպես Դվինում Վարդան բդեշխի կառուցած աղյուսաշեն եկեղեցին, որ հետո վերաշինվեց քարուկրով: Այժմ կանգուն կան Սրվեղի և Կիրանց վանքերը, որոնց շինելու թվականներն անհայտ են, սակայն, դատելով այդ շենքերի ճարտարապետական ոճերից, 11-րդ դարից այն կողմը չեն անցնում: Միայն Անիի միջնաբերդի մեջ շինված պալատի ջրամբարն է, որ կարելի է մինչև 7-րդ դարը տանել, եթե ոչ ավելի կանուխ: Նկատի ունենալով արվեստի աստիճանական զարգացման օրենքները, անվրեպ կերպով պիտի հետևցնենք, որ թեև տուֆ քարի գործածությունն ընդհանրացած էր դեռ առաջին դարից, սակայն զուգընթացաբար աղյուսն էլ գործածության մեջ էր՝ տուֆի բազմակողմանի մշակմանը դեռ լիովին ծանոթ չլինելու պատճառով: Որ հնում աղյուսը կատարելապես ձուլել և թրծել գիտեին, վկայում են մինչև այժմ դեռ կանգուն հնագույն շենքերի, ինչպես՝ Մրենի, Աշտարակի, Բագարանի, Տեկորի, Զվարթնոցի և ուրիշների վրա եղած կղմինդրները, որոնք ոչ միայն չափազանց լավ եփված են, այլև ձևով այնքան լավ մշակված, որ մի կաթիլ ջուր չեն անցկացնում ներքև:

Անիի ջրամբարների աղյուսները որոշ չափով ցույց են տալիս, որ հայերը աղյուսաշինության արհեստը փոխ են առել Արևելքից, որովհետև հավասարակողմ քառակուսի աղյուսները, ինչպես Անիի ջրամբարի վրա գործածվածներն են, շատ վաղ ծագում ունեցան Արևելքում, իսկ Սասանյան շրջանում ընդհանրացած երևույթ էր Պարսկաստանում[1]: Մինչև 7-րդ դարի վերջերը կառուցված և մեզ հասած շենքերի տանիքները, առանց բացառության, կղմինդրով են ծածկված: Եթե նույնիսկ այդ դարերում կառուցված շենքերի տանիքները այժմ քարով ծածկված տեսնենք, անպայման պետք է 10-րդ դարից հետո եղած հիմնական նորոգության արդյունք համարենք, որովհետև ինքս անձամբ քննել եմ Տեկորի, Բագարանի և այլ եկեղեցիների կտուրները, որոնց այժմյան քարե ծածկի տակ դեռ մնում են կրաշաղախի մեջ խրված ամբողջական կամ բեկոր կղմինդրներ: 10-րդ դարի ճարտարապետական մի նոր վերածնության շրջանում է, որ հայ ճարտարապետները, օգտվելով տուֆ քարի հատկություններից, կղմինդրը փոխարինել են տուֆ քարի բարակ տախտակներով, որոնց մեծ մասը սղոցով կտրված են պահանջված չափով: Կղմինդրի փոխարեն պատրաստված քարե տախտակները միմյանց մոտ շարելու համար շատ ճարպիկ ձևով տաշելուց և պատշաճ տեսք տալուց բացի, բավական նմանեցրել են կղմինդրի շարվածքին, որպեսզի ջուր չանցնի ներքև: Բայց հայտնի է, որ հնաոարյան ճարտարապետը չի գոհացել կղմինդրը քարով փոխարինելու գյուտով և որպեսզի ջուր չքամվի արանքներից, տաշվածքի հատուկ ձև մշակելով, նկատի է ունեցել առհասարակ տուֆ քարի ջուր ծծելու ընդունակությունը և մտածել է նաև այդ հատկությունը չեզոքացնելու մասին, ուստի տանիքի բոլոր քարերը շարելուց հետո, առատ ձեթով օծել է ամբողջ տանիքը, որով ծածկված քարերը միանգամայն անընդունակ են դարձել ջուր կամ խոնավություն ծծելու: Ձեթով օծելու սովորությունը միայն տանիքների համար չի եղել, հասարակական մեծածախս քարուկիր շենքերի ամբողջ արտաքին երեսներն օծված են ձեթով. Բագրատունյաց պալատի մեջ հետնազույն շինված մի մաս կա, որի վրա տակավին երևում են ձեթով օծված լինելու թարմ հետքերը:

Երևի, ինչպես Հայաստանի, նույնպես էլ Արոպական Մալտայի տուֆը ձեթով օծելու սովորությունը ազդեցության միևնույն նախնական աղբյուրն ունին: Եվրոպական ճարտարապետները, որ ընդհանրապես աղյուսաշեն մեծ շենքեր են կառուցում, պատերը շինելուց հետո, ամբողջ շենքի արտաքին երեսը, փոխանակ ծեփի, ծածկում են Մալտայի տուֆի 10–12 սանտ. հաստությամբ սղոցված տախտակներով և անմիջապես հետո, որպեսզի խոնավություն չծծի, եփած ձեթով լավ օծում են ամբողջ շենքի ճակատները, նույնիսկ երբեմն, ձեթը քսելուց հետո, յուղաներկով ներկում, որով երկար ժամանակ անվնաս պահվում են շենքի ճակատները ծածկող քարերը:

*
* *

Երկու տարբեր աղբյուրներից մեզ ծանոթ է, որ 5-րդ և 6-րդ դարերում հասարակական մեծ շենքերի տանիքները ծածկված էին փայտով, նախ՝ շատ կան մատենագրական հիշատակություններ և երկրորդ՝ 5–6-րդ դարերի հատկանիշ ունեցող շենքերը, որոնք հասել են մինչև մեր օրերը, կամարածածկի ոչ մի հետք չունեն, ուրեմն անկասկած է, որ նրանք փայտով են ծածկված եղել: Եթե նույնիսկ գտնվեն հիշյալ դարաշրջաններում կառուցված շենքեր, որոնք այժմ կամարածածկ են, ապա դա հետագա վերանորոգության արդյունք պիտի համարել:

Պատմագիրները շատ ունին մեծամեծ եկեղեցիներ հրդեհելու և փայտաշեն տանիքներ այրելու մասին տեղեկություններ, նաև փայտածածկը վերացնելով քարաշեն տանիք շինելու օրինակներ: Սակայն բազմաթիվ փաստերով գիտենք, որ 7-րդ դարում, ինչպես դմբեթաշինության, այնպես էլ կամարաշինության արվեստը գերագույն կատարելության էին հասցրել Հայաստանի ճարտարապետները և այս դարաշրջանից սկսած մեզ հասած հսկայական շենքերի տանիքները ծածկված էին քարե կամարներով: Սակայն անհատական մեծ ու փոքր շինությունների և պետական զանազան պաշտոնատների համար օրենքը նույնը չէր մինչև հայ արվեստի վերջին անկումը 14–15-րդ դարերում: Պեղումները և բազմատեսակ հետազոտություններն ապացույցներ են տալիս առավելապես հօդուտ հողով կամ քարով ծածկված հորիզոնական երդիկների: Ոչ միայն անհատական փոքր ու միջակ տների, այլև իշխանական ապարանքների, պետական, զինվորական զանազան հաստատությունների մնացորդների վրա կամարածածկի կամ երկկողմնաթեք տանիքի ոչ մի հետք երևան չի բերվել ավերակների մեջ. կասկած չկա, որ այդ շենքերը մեծ մասամբ ծածկված էին փայտով և հողածածկ հորիզոնական երդիկներով: Սկսած 11-րդ դարից՝ ապացույցներ շատ ունինք, որ այն ժամանակվա ճարտարապետները շատ լավ գիտեին պարզ կրաշաղախ բետոնով վերնահարկի հորիզոնական երդիկներ շինելը, որոնցից մի քանիսը հասել են մեզ, ինչպես՝ եկեղեցական ընդարձակ դավիթներ, տապանատներ ու դամբարաններ, բայց հասարակաց ապարանքների, ժողովրդական մեծ ու փոքր տների վերնահարկը քարածածկ բետոն լինելու մասին տակավին ապացույցներ չունենք, ուստի համոզված ենք, որ բոլորը վերջացած են հողածածկ երդիկներով: Բազմահարկ շենքերի մասին հաստատապես գիտենք, որ յուրաքանչյուր հարկաբաժին զատված էր հորիզոնական ձգված գերաններով, որոնք, բնականաբար, ծածկված էին տախտակամածով:



Նկ. 90. Ամբերդի միջնաբերդի պալատի պատը, որտեղ երևում են հարկաբաժինների հետքեր

Այստեղ, փակագծերի մեջ, գուցե ավելորդ չի լինի մատնանշել հարկաբաժինների կառուցման մի հին սովորություն, որին ականատես եմ եղել թե՛ իմ հայրենի երկրում[1], թե՛ Բուլղարիայում: Թե՛ իմ հայրենակիցների և թե՛ բուլղարահայոց նախնիքը լինելով Հայաստանի հնագույն գաղթականները, թերևս իրենց հետ միասին բերել են վաղեմի շինարարական մի սովորություն և շարունակում են մինչև մեր օրերը, հին ձևով շինված տների մեջ:

Հարկաբաժնի հաստ գերանները բավական խիտ շարելուց հետո, վրան փռում էին բարակ ճյուղերի և փշալից խառնուրդի (այս խառնուրդին կամ խոզվին «ազետ» անունն են տալիս) մի շերտ՝ 15–20 սանտ. հաստությամբ. այս շերտի հաստության կեսից ավելին իջնում էր հորիզոնական ձգված գերանների կեսից ավելի ցած, իսկ գերաններից վերև

[1] Հայաստանում նման քառակուսի անթուրծ աղյուսներով են եղել շինված ուրարտական շրջանին պատկանող Կարմիր-բլուրի պարիսպները և շենքերը, որոնց ձևերը և տեխնիկան վերցված են նույն ժամանակներին պատկանող ասորեստանյան շինություններից: Այնպես որ, աղյուսաշինության արհեստը Հին Արևելքից կարող էր հայերին անցնել անուղղակի կերպով՝ ուրարտացիների միջոցով:

Կազմող

[1] [Շապին-Գարահիսարը]:

փոում էին այնքան խիտ, որ գրեթե տակի գերանները հազիվ էին երևում: Այս գործողությունը վերջացնելուց հետո, վրան այնքան առատ ցեխ էին լցնում, որ ոչ միայն օծվում էր ամբողջ խոիվի կամ «ազետի» շերտը, այլև վերևից բարձրանում էր մինչև 7–10 սանտ. հաստությամբ. այս խոիվային շերտը բավական չորանալուց հետո, թե՛ ներքևից և թե՛ վերևից կրկին ծեփում էին դարմանով կամ քակորով խառնված ցեխի 4,5 սանտ. հաստությամբ մի նոր շերտով և կոկում: Այսպիսով կազմվում էր բավական հաստատուն մի գետին և գործածվում առանց տախտակամածի: Եթե ժամանակի ընթացքում ամենավերևի ծեփի շերտը բարակում, մաշվում էր ավելուց կամ փոշվելուց, նորից ծեփը նորոգում էին քակորախառն ծեփով. գույնը հաճելի դարձնելու համար, ծեփի շաղախին որոշ քանակությամբ սուրբ (մի տեսակ կարմիր հող) էին խառնում: Պատահել եմ նաև սենյակների, որոնց հատակի ծեփի վերին շերտը փոխանակ ցեխի, կրաշաղախով էր ծեփված:

Շենքերի մնացորդներ կան, որոնց հարկաբաժինների համար հորիզոնական ձգված գերանների հաստության չափերը որոշ են տեղում մնացած նշաններով, կանգուն պատերի վրա գերանների ծայրերն անցկացրած քառակուսի ծակերը կարգով մնում են մինչև այժմ: Այս մասին շատ օրինակներ կան, սակայն այդ օրինակներից մեկը կարելի է հիշել, որ շատերն անձամբ տեսել են: Անիում, Ծաղկոցաձորի բարձունքի վրա կա մի բազմահարկ մեծ շինություն, որի միայն ստորին մասն է կամարածածկ, իսկ վերին հարկերը բոլորն էլ փայտահարկ են շինված, բացի արտաքին պատերից: Արտաքին պատերի վրա դեռ մնում են հարկաբաժնի հատակի համար գերաններ մտցնելու ծակերը՝ կարգով, որոնց գոյությամբ ոչ միայն կարելի է ճշտիվ չափել յուրաքանչյուր հարկի բարձրությունը, այլև կարելի է որոշել յուրաքանչյուր սենյակի քառակուսի չափերը: Գերանների ծակերը մոտավորապես 18–22 սանտ. տրամագիծ ունեն, իսկ թե այս գերաններ ի վրա ինչ հաստությամբ տախտակամած էր շինված, կամ թե ներքևից առաստաղ ուներ, թե՞ ոչ, հայտնի չէ: Սակայն չենք սխալվի, եթե ենթադրենք, որ գերանները շարված էին մաքուր սրբատաշ, ներքևից առանց առաստաղի. գերանները երևում էին կամ բոլորովին մաքուր և կամ ժամանակի ոճերով զանազան ծաղկանկարներ փորագրված: Այսպես ենթադրելու հիմք է ծառայում թե՛ նմանօրինակ սովորությունը, որ հասել է մինչև մեր օրերը, և թե՛ Անիի ժամանակակից գտնված առաստաղի գերանները, որոնք առանց տախտակով ծածկած լինելու, «քանդակազարդել են գեղեցիկ մանվածոներով»: Այս քանդակազարդ գերանները պրոֆ. Մառի պեղումների ժամանակ գտնվեցին Անիում, Մինջնաբերդի պալատի ստորին մասերում, հասարակաց հատուկ բնակարանների ավերակների մեջ: Գերանների վրայի քանդակազարդությամբ ոճը ցույց է տալիս, որ անվրեպ պատկանում են Բագրատունի թագավորաց շրջանին. ամենայն հավանականությամբ մի հիմնական նորոգության ժամանակ, որ տեղի է ունեցել թե՛ հունական և թե՛ թաթարական տիրապետության շրջանում, այս գերանները հանել և պալատի ստորոտի մասի շինությունների մեջ իբրև պահանգ են գործածել, անշուշտ, տեղը նորը զարդաքանդակելով կամ նոր ոճով առաստաղներ շինելով: Այս զարդաքանդակ գերանները մինչև Անին Թյուրքիային անցնելը պահված էին Անիի թանգարանում, իսկ թե այնուհետև ի՞նչ եղան, ինձ հայտնի չէ:

Նկ. 91. Սևանի փայտե խոյակներից մեկը (874 թ.), (Պատմ. թանգ.)

Անիում, Բագրատունիների պալատի պեղումների ժամանակ, հայտնվեցին, առաստաղների տեսակետից, ճարտարապետական նորություններ: 12–13-րդ դարերում արդեն անվիճելի եղան տախտակամած առաստաղները, ինչպես նաև այդ առաստաղների երեսին ձուլածո գաճով ու գունավոր ծաղկանկարներով զարդարելը: Պալատի հյուսիս-արևելյան անկյան մեծ դահլիճի մեջ գտնվեցին գաճից ձուլված և վրաները զարդաքանդակված նեղ երիզներ, որոնցով հյուսված էին մանվածոները, հյուսվածքից դուրս գալ էին բազմանկյուն խոր բացվածքներ, որոնց մեջ զետեղված էին նույնպես գաճից ձուլված վարդաձևեր: Այս գաճի զարդարանքներն ամրացած էին բարակ տախտակով ծածկված առաստաղի վրա[1]: Այստեղ անջատված մի սյունազարդ սրահ կար, որի սյուները, իրենց խոյակներով, քարից էին՝ հունական ոճով, իսկ սյուներից վերև եղող կամարները մինչև առաստաղ փայտից էին, որոնց վրա հիանալի կերպով փորագրված էին տերևներ, ծաղիկներ ու թռչուններ. չգիտեմ ի՞նչ դիպվածով այս քանդակազարդ փայտյա կամարներից մեկի վրա այրվածի նշաններ կային, սակայն, ընդհանուր առմամբ անվնաս էին մնացած բոլոր երեք կամարները: Պալատը երկու մասի էր բաժանված հյուսիսից հարավ ձգվող մի երկար միջանցքով. անշուշտ, այս միջանցքի հարավ-արևմտյան կողմը զուտ ընտանեկան բաժինն էր, զանազան մեծ ու փոքր սենյակների բաժանումներով: Այս սենյակների հարավային կողմը շինված էր մեծ ջրամբարը, որի մասին առիթ ունեցա մի փոքր ծանոթություն տալու: Այս ջրամբարի վրա եղել է մի մեծ սենյակ, որի առաստաղը ոչ միայն բարակ սրբատաշ տախտակներով էր ծածկված, այլև ամբողջովին գունագեղ նկարազարդված. այս նկարազարդ առաստաղի բեկորները դժբախտաբար մեծ մասամբ փտել են փլատակների տակ, միայն մի քանի փոքրիկ կտորներ գտնվեցին՝ ներկված և վրաները գեղեցիկ տերևներ ու ծաղիկներ նկարված, այս կտորներն էլ պահված էին Անիի թանգարանում, իսկ այժմ չգիտեմ, թե ի՞նչ եղան: Ինչպես երևում է, այս սենյակը հատուկ էր ընտանեկան կամ, ավելի ճիշտ, հարսանեկան խրախճանքի և մի կողմի վրա զատված էր հարսանեկան առագաստի սենյակը. այս հարակից սենյակի ճակատը ծածկվում էր միայն վարագույրով, որի համար հաճախ վարագույրները բերում էին եկեղեցիներից և ծածկում. այս մասին այն ժամանակվա եկեղեցական ժողողներում նույնիսկ օրենքներ կան գրված, որ արգելվի եկեղեցիների վարագույրները հարսանիքներին վարձու տալու սովորությունը: Հայ մատենագրերի մեջ շատ է հիշվում հարսանեկան առագաստի մասին, սակայն ոչ մի տեղ մանրամասն նկարագիրը չի տրված: Անիի ընտանեկան բաժնի ամենամեծ սրահին կից այս սենյակը մեզ հնարավորություն է տալիս բացատրելու նրա ձևն ու նկարագիրը: Այս սենյակը երեք կողմից ունի կանոնավոր ու հաստատուն պատեր, իսկ սրահի կողմը՝ ամբողջովին առանց պատի, բոլորովին բաց է, որ հատուկ է վարագույրով ծածկելու սովորության. սենյակի երկարությունն այնքան է, որ հազիվ մի միջակ մեծության սեղանի վարագույր ծածկե ճակատը: Այս սենյակն էր հատկացրած հարսին և հարսանեկան առագաստին:



Նկ. 92. Սևանի փայտե դռներից մեկը (1176 թ.), (Պատմ. թանգ.)

Հնում փայտի գործածությունը սահմանափակված չէր կտուրների ծածկ, հարկաբաժինների հեծաններ և տախտակամած կամ առաստաղ շինելով, այլ փայտից շինում էին նաև հաստ ու բարակ սյուներ, կամարներ, միափեղկ կամ երկբացիկ և լուսախաղաց դռներ, պատուհանների լուսանցույց վանդակապատեր, որոնք երբեմն պարզ, երբեմն էլ չափազանց ճոխ քանդակազարդված էին: Քանդակազարդ սյուների, կամարների, դռների ամենագեղեցիկ քանդակազարդված օրինակները հասել են մեզ, ինչպես Սևանի խոյակները, Սևանի դուռը և Անիում գտնված

[1] Գաճից ձուլած և ձեռքով քանդակազարդած նման երիզներ գտնվեցին Դվինում 7-րդ դարին պատկանող կաթողիկոսարանի և Մինջնաբերդի (կենտրոնական բլուրի) հյուսիսային լանջի թաղամասի պեղումների ժամանակ՝ 1938-1939 թ.թ.:
Կազմող

գերաններն ու կամարները, որոնց մասին համառոտակի գրեցինք: Փայտի վրա կատարված ճարտար փորագրությունների հիանալի օրինակներ կարելի է այժմ տեսնել Հայաստանի պատմական թանգարանում պահվող թե՛ դռների և թե՛ գրակալների վրա: Փայտի քանդակազարդության ուրիշ ընտանեկան առարկաներ շատ են գտնված և մասամբ գտնվում են մասնավորների մոտ, ինչպես՝ մահճակալ, աթոռ, ափսե, գուշ և այլն:

Հարկաբաժինների ծածկերի համար ընդհանրապես գործ էին ածում մայրու, եղևնու և կաղնու գերաններ, իսկ քանդակազարդ դռների, կամարների, սյուների համար ավելի հարմար փայտ էին համարվում կաղնին, թմբին, հացին, ընկուզենին և նման փայտեր, որոնց օրինակներն ունենք այժմ:

Պատմագրական տեղեկություններից երևում է, որ Հայաստանում փայտը բավական առատ էր, որովհետև բացի Բասենի անտառներից, հիշատակվում են այնպիսի ընդարձակ անտառներ, որոնց տեղում այսօր ոչինչ չկա. անկասկած, է, որ ժամանակի ընթացքում այդ անտառները ոչնչացել են:

*
* *

Հայաստանում երկաթի բազմակողմանի գործածության մասին տեղեկություններ շատ կան գրական աղբյուրներում: Հնագիտական հետազոտությունները ևս պարզել են, որ երկաթը շատ է գործածված եղել հին Հայաստանում. այդ տեղեկություններից մի քանի կարևորագույնների մասին կհիշատակեմ այստեղ: Ըստ Մ. Խորենացու, առաջին դարում, Երվանդաշատի բերդի կառուցման ժամանակ, Երվանդը շինել տվեց երկաթե սանդուխներ, որոնց շինության կերպերը թեև այժմ մեզ հայտնի չեն, բայց պետք է որ այն ժամանակի երկաթագործությունը զարգացման որոշ աստիճանի հասած լիներ: Խորենացին գովեստով է խոսում այդ սանդուխների ճարտարորեն շինված լինելու մասին: Սակայն ես ինքս տեսել եմ Երվանդաշատի բերդի մեջ պարիսպներից թափված քարերի վրա երկաթե կապի նշանները: Երվանդաշատի բերդը շինված էր հնագույն պարիսպների նման, մեծազանգված որձաքարի անտաշ քարերով, որոնք միմյանց մոտ լավ ամրացնելու համար, կպցված էին երկաթե կապերով, թեև այժմ երկաթները հանված են, սակայն կապի տեղերը փորված մնում են քարերի վրա: Հաջի-Բայրամ գյուղում չա՛տ կարելի է տեսնել այս քարերից, որոնք ցած են գլորվել բերդից, և գյուղացիք, օգտվելով մեծ զանգվածներից, գլորել, բերել են ու իրենց մրգաստանների և այգիների շուրջը պարիսպ շինել: Նույն երկաթե կապի հետքեր այժմ կարելի է տեսնել Գառնիի Տրդատա բերդի ավերակների մեջ: Այս բերդն ու նրա մեջ հռոմեական ոճով կառուցված գեղեցիկ հովանոցը շինված են մեծազանգված սրբատաշ որձաքարով ու կրաշաղախով, այնուամենայնիվ բոլոր քարերը միացած են երկաթե կապերով: Ոչ միայն պատերից



Նկ. 93. Մշո Առաքելոց եկեղեցու դուռը (Պատմ. թանգ.)

քանդված քարերի, այլ և կանգուն մնացած պարիսպների վրա, քարերի միացման տեղում, նկատվում են երկաթե կապերի գոյության ապացույցները: Հետագայում գտնվել են մարդիկ, որոնք, երկաթներն օգտագործելու համար, կոտրել են կապերի տեղերը և հանել երկաթները, որոնց ծայրերն ամրացված են եղել քարերի վրա բացված փոսիկների մեջ հալած կապար լցնելով. թեև աշխատել են կապարները ևս հանել, սակայն մեծ մասամբ դեռ մնում են փոսիկների մեջ: Կապարով ամրացված էին նաև հովանոցի պսակի մեջ ճարտարորեն քանդակված առյուծների աչքերը. ինչպես երևում է, առյուծների աչքերը շինված են եղել արժեքավոր քարերից, տեղավորված աչքի խոռոչների մեջ և հալված կապարով ամրացված, այդ աչքերն այժմ առանց բացառության հանված են, սակայն տեղերում մնացել են հալված կապարները: Բացի պատի և պարսպի քարերից, Տրդատա հովանոցի սյուներն էլ ամրացված են երկաթե ձողիկների կապարով: Անիում տակավին գոյություն ունեն հին պալատներից կամ պարիսպներից քանդված սրբատաշ որձաքարեր, որոնք բերվել են մի նոր պարսպի շինության համար. սա այն պարիսպն է, որ պալատն անջատում էր բերդից կամ պարսպապատ քաղաքից: Այս պարսպի վրա նույնպես պարզորոշ նկատվում են քարերի վրայի երկաթե կապերի նշանները և ցույց են տալիս, որ նախկին պարիսպը հավանորեն 6-րդ կամ 7-րդ դարերում շինված էր երկաթակապ որձաքարերով: Թովմա Արծրունին պատմում է, որ Գագիկ Արծրունու պալատի շինության ժամանակ, իբր թե երկու հարյուր հազար լիտր երկաթ սպառվեց: Ես չգիտեմ, թե այս մեծ թիվն ի՞նչ արժեք ունի այժմ, կամ այն ժամանակվա լիտրը ի՞նչ համեմատական արժեք ունի ներկայիս կշռաչափերի հետ, այնուամենայնիվ կարող ենք եզրակացնել, որ այս մեծ քանակությամբ երկաթը գործ է ածվել գլխավորապես պատերի քարերը կապելու համար:

Հին պատմագիրները բերդերի և ամրոցների դռները նկարագրելիս հաճախ նրանց անվանում են երկաթապատ, բևեռապինդ: Հայաստանի սահմաններում իմ կատարած հետախուզությունների ժամանակ չեմ տեսել պատմագիրների նկարագրած դռներ, սակայն, բախտի բերմամբ, պատանեկան հասակումս տեսել եմ նախկին Նիկոպոլսի (այժմ Շապին Գարահիսար) հին բերդի գլխավոր մուտքի երկբացիկ դուռը՝ իր ծխնիների վրա տակավին կանգուն, որ չափազանց նման էր պատմագիրների նկարագրության[1]:

Երբ Սենեքերիմ Արծրունին Վասպուրականի փոխարեն ստացավ Սեբաստիայի նահանգը և իր ժողովրդով փոխադրվեց այնտեղ, հավանական է, որ այս շրջանն ևս [Շապին Գարահիսարի] մտնում էր Սենեքերիմի ստացած հողերի մեջ, նաև քաղաքն ու բերդը: Այս քաղաքի շրջանում երկու վանք կա՝ Առաքելոց և ս. Նշան անունով, որոնց շինությունը վերագրվում է Սենեքերիմի երկու որդիներին: Այս երկու վանքերի շրջանում, որ Նիկոպոլսի մոտերքն են, ուր Գայլ գետն անցնում է մի ընդարձակ դաշտի միջով, ունի «Աչխարհուղաշտ» հայերեն անունը. այդ ընդարձակ դաշտում եղած բոլոր գյուղերի անունները մինչև այսօր հայերեն են, ինչպես՝ Բյուրգ, Անդրիաս, Ալամոնիկ, Ածպտեր կամ Աբարակ, Մշակնոց, Կթանոց, Գոմեշտան, Սևքար և այլն. այս դաշտի եզերքին է նաև Ուխտանեսի հիշատակած Զուտարիմա գյուղը, ուր եղած մի հունական վանքում կրոնական կրթություն ստացավ հայոց եկեղեցուց բաժանվող և Վրաստանի համար քաղկեդոնիկ կաթողիկոս օծվող Կյուրոնը:

Անտարակույս, այս շրջանի մեջ ընկած քաղաքը (Նիկոպոլիս կամ Կողոնիա) և բերդը նույնպես դրված էին Սենեքերիմի տրամադրության տակ, որովհետև, ինչպես երևում է, բերդը նորոգության է ենթարկվել և այդ նորոգության ժամանակ գլխավոր դուռը Անիի ավագ դռան կատարյալ նմանությամբ է շինված, որի լուսանկարը մտադիր եմ հրատարակել՝ Անիի ավագ դռան հետ բաղդատելու համար: Երկբացիկ դուռը կամ իսկական փեղկերը կազմված էին հետևյալ կերպ. փոխանակ տախտակի, քառակուսի հաստ գերանները միացված էին միմյանց և երեսի կողմից ամուր կապված երկաթե հաստ գոտով, իսկ երեսից 10–12 սնտ. լայնությամբ և մոտավորապես $^1/_2$ սնտ. հաստությամբ, դռան լայնության չափով կտրված հաստ տախտակներ, ներքևից սկսած մինչև վերև բևեռներով ամրացրած և ամբողջ դուռը ծածկած էր երկաթի հաստ շերտով: Երկաթյա հաստ շերտերը, որոնք ամրացված էին կռնակի գերանների վրա, ունեին մոտավորապես 2–3 սնտ. հաստություն, խորանարդ գլխով մեխերով խիտ գամել էին դուռը ծածկող երկաթե շերտերը, որով կազմվել էր մի անխորտակելի զրահ: Ներսի կողմից, բացի փակող երկաթյա սողնակից, շինված էին հորիզոնական խորը ծակեր՝ դռան մոտի երկու պատերի մեջ հաստ գերաններ ազատ տեղավորելու չափ լայնությամբ, որոնց մեջ գերաններ են դրած եղել. երբ դուռը փակվում էր, նույն գերանները դուրս էին քաշում դռան ամբողջ լայնությամբ և ծայրը մտցնում հանդիպակաց պատի վրա նույն նպատակով բացված ծակի մեջ: Այս ձևով շինված երեք գերանները կռնակից փակում և ամրացնում էին դուռը:

Անիից և Զվարթնոցից դուրս են եկել գլխավորապես քարի մեծ սյուներն իրենց խոյակներին և խարիսխներին միացնելու և հաստատելու երկաթե կապեր: Անիում գտնված է, ջրամբարի եզերքին, խեցեղեն բարակ խողովակների հետ նաև երկաթե խողովակ, մոտավորապես 2 սնտ. տրամագիծ ունեցող ծակով, այդ խողովակները ծառայում էին պալատի զանազան աղբյուրներին ու բաղնիքներին ջուր մատակարարելու համար[2]:

---

[1] Հին Բայազետի բերդի երկաթապատ երկփեղկ դուռը, բերված և դրված էր Երևանի Գողոս-Պետրոս եկեղեցու հյուսիսային մուտքին. այդ դուռն այժմ գտնվում է Երևանի Բաղաքային Թանգարանում:

Կազմող

[2] Երկաթե նման խողովակներ գտնվեցին 1933 թվին Ամբերդի բաղանիքի պեղումների ժամանակ: Այդ խողովակներն օգտագործված են եղել բաղանիքի մեջ՝ տաքացրած ջրի համար:

Կազմող

Ե

# ԳԱՎԻԹ ԵՎ ԺԱՄԱՏՈՒՆ ՀԱՅՈՑ ՀՆԱԳՈՒՅՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԵՋ[1]

*Հայոց ճարտարապետության մեջ, ինչպես գեղարվեստական և շինարարական ճյուղերը դարե ի դար նորանոր վերածնություններով անընդհատ կերպարանափոխվեցան, նույնպես ալ հայոց եկեղեցիներու հատակագծային ձևերը միշտ փոփոխություններու ենթարկվեցան:*

*Գեղարվեստական և շինարարական ճյուղերը փոփոխության ենթարկողը ժամանակի ոգին և պահանջներն էին, որոնք երբեմն երևան կուգային ավելի գեղեցիկ և շքեղ նոր վերածնություններով և երբեմն ալ քաղաքական և տնտեսական ճնշող ու քայքայող ազդեցություններու տակ կատարյալ անկումով:*

*Սակայն եկեղեցական հատակագծային ոճերու պարբերական փոփոխությունները գրեթե կապ չունեցան արվեստի զարգացման հետ, այնտեղ ճաշակ և վայելչություն ըստ ամենայնի հպատակած էր կրոնի, պաշտաման և ծիսական արարողության պահանջներուն: Ճարտարապետը պարտավոր էր եկեղեցվո հատակագիծը բաժանել և դասավորել այնպես, ինչպես որ կպահանջեր կրոնը կամ կրոնի պաշտոնյան, կղերը:*

*Քրիստոնեության հնագույն դարերեն սկսած մինչև մեր օրերը շատ տարօրինակ և ուշագրավ փոփոխություններու ենթարկվեցան հայկական եկեղեցիներու հատակագծերը կամ անոնց ներքին բաժանումները: Երբեմն ավելցեր են հարակից մանր ու խոշոր բաժանումներ տաճարի ընդհանուր աղոթասրահին կից, երբեմն ալ պակսեր են: Ինչո՞ւ համար եղեր են այդ փոփոխությունները, կամ ի՞նչ էին այդ ավելցած ու պակսած մասերուն պաշտոնները, այդ մասին ինչ որ գիտենք, մեծ մասամբ ավանդական ծանոթություններ են, որոնք քննության և ուսումնասիրության ենթարկելով՝ հաճախ կտեսնենք, որ այնքան ալ համապատասխան չեն իրականության. ժամանակի երկար ընթացքին մեջ շատ բան խառնվեր և չփոթվեր է:*

*Ավելի պարզաբանելու համար, համառոտ կերպով նկարագրենք հնագույն դարերեն մինչև վերջին ժամանակներ հայկական եկեղեցիներու հատակագծային բաժանմանց իրարմե ունեցած առավել կամ նվազ տարբերությունները:*

*1. Եկեղեցիներ կան, որոնք երկար քառակուսի պարզ սրահներ են, առանց որևէ հարակից բաժանումներ ունենալու, բացի պատարագի խորանեն:*

*Եթե շենքը լայն է, տանիքը ծածկելու գործողությունը դյուրացնելու և ապահովելու համար, սրահին մեջ կամարակիր սյուներ շարված են, որոնք կվերաբերին բացարձակապես շինարարական ճյուղին և երբեք չեն կարող կապվիլ ծիսական կամ դավանաբանական օրենքներու հետ:*

*Թեև եկեր է ժամանակ, երբ չորս սյուներու վրա զմբեթավոր եկեղեցիները սովորական դարձեր են, այն ատեն ուզեր են խորհրդավորություն տալ այդ ձևին, և Մաշտոցի կանոնով սահմաներ են, որ չորս սյուներու ներքև, հիմնարկության ժամանակ, թաղվին չորս ավետարանիչներու անունով օծված չորս քարեր, ցույց տալու համար, թե չորս ավետարանիչներն եղած են քրիստոնեական եկեղեցվո հաստատության սյուները: Այնուամենայնիվ դարձյալ ներքին չորս սյուները պարտավորիչ չեն եղած մինչև վերջը, եթե եկեղեցվո տարածությունը ընդարձակ չէ և տանիքը ծածկելու համար պետք չէ զգացված սյուներու օժանդակության:*

*2. Կարգ մը եկեղեցիներ ալ կան, որոնք դարձյալ երկար քառակուսի սրահներ են նախընթաց ձևի նման, սակայն արևելյան կողմեն, խորանին երկու կողմը, երբեմն նեղ ու երկար՝ հյուսիսեն հարավ ձգված, երբեմն ալ հավասարակողմ քառակուսի սենյակներ ունին, և այս սենյակները դռներով կհաղորդակցին եկեղեցվո մեծ աղոթասրահին հետ:*

*3. Մի քանի եկեղեցիներ ալ, արևելյան կողմի սենյակներեն զատ, արտաքուստ ալ երեք կողմեն – հյուսիս, հարավ, արևմուտք – շրջապատված են սյունազարդ ծածկույթով (portique):*

*4. Կան եկեղեցիներ ալ, որոնք արևելյան կողմի սենյակներեն և շուրջանակի սյունազարդ ծածկույթներեն զատ, արևմտյան անկյուններուն որմնակից ունին նաև քառակուսի սենյակներ, որոնք դռներով կհաղորդակցին ներքին մեծ աղոթասրահին հետ:*

*5. Շատ մը եկեղեցիներ ալ թեև առանց արտաքին շուրջանակի սյունազարդ ծածկույթի են, սակայն պահված են անոնց մեջ չորս անկյուններուն որմնակից չորս հավասարակողմ քառակուսի սենյակներ: Առհասարակ այս սենյակները թե՛ նախապես հիշված ձևերու և թե՛ հետնագույններուն մեջ կրկնահարկ են: Չորս անկյուններու վրա չորս սենյակ ունեցող եկեղեցիներու աղոթասրահներուն համաչափություններն ալ այլազան են: Ոմանք երկար քառակուսի են, ոմանք հավասարակողմ քառակուսի՝ չորս պատերեն դուրս հանված կիսաբոլորակ* abside-*ներով խաչաձևի վերածված, ոմանք ներքուստ ալ խաչաձև են՝ արտաքին ուղիղ չորս պատի մեջ ամփոփված թե՛ ներքին խաչաձևը և թե՛ անկյուններու սենյակները: Անկյուններու սենյակները երբեմն եկեղեցիներու մեջ պարզ են, երբեմն ալ դեպի արևելք ուղղված կիսաբոլորակ* abside-*ներ ունին պատարագի համար:*

*6. Կան շատ մը եկեղեցիներ ալ, որոնք ընդհանրապես արևմտյան պատին որմնակից, երբեմն ալ հյուսիսի կամ հարավի կողմերուն վրա կրկնված եկեղեցվո լայնության կամ երկայնության չափով սյունազարդ ընդարձակ սրահներ ունին, որոնց մեջ կբացվին բուն եկեղեցվո մտից դռները:*

*Թե ի՞նչ պաշտոն ունեին այս պարբերաբար հավելյալ մասերը, և թե ի՞նչ պատճառով ամեն եկեղեցիներ միօրինակ կերպով ենթարկված չեն նույն ձևափոխություններուն, ահա այս խնդիրը պիտի փորձեմ հետազոտել, հուսալով, որ եթե բոլորովին չպարզվի, գոնե որոշ չափով ճշմարտության կմոտենանք:*

*Այս ուսումնասիրության մեջ միմիայն եկեղեցիներու և անոնց հարակից բաժանումներու վրա ենթադրական դատողություններ ընել անօգուտ կլինի, եթե միաժամանակ չուսումնասիրվին և չհամեմատվին պատմական և ավանդական տեղեկությունները:*

*Եկեղեցական պատմության և կանոնագրքերու մեջ որոշ բաժանումներու ակնարկներ կան, որոնց ճիշտ տեղերը հայտնի չեն մեզի ծանոթ հիշատակարաններու մեջ: Ասոր հակառակ, հիշատակարաններու մեջ բաժանումներ կան, որոնց մասին պատմական գրականության մեջ կամ ակնարկներ չկան և կամ եղածները շփոթ ու անհամապատասխան են իրականության:*

*Այս բաժանումներեն ավագ խորանին երկու կողմի սենյակները առհասարակ բոլոր քրիստոնյա եկեղեցիներու մեջ ավանդատուն կամ պահարան անունը ունին ցարդ: Անշուշտ, այս անունները սխալ չեն այս երկու սենյակներուն նկատմամբ: Սակայն որովհետև ավանդատուն և պահարան բառերու նշանակությունը տարբեր է, նաև ուրիշ քրիստոնյա ազգերու մեջ անոնց պաշտոնները որոշ են, հետևաբար գիտնալ պետք է, թե հայոց մեջ ալ ճիշտ միևնույն նպատակով ընդունվա՞ծ էին, և թե միշտ միևնույն կոչումո՞վ մնացին:*

*Արևմտյան եկեղեցիներու մեջ ի հնումն խորանին երկու կողմի սենյակներեն աջակողմյանը ընծայարան, մատուցարան* (paratorium, oblationarium) *անունը ուներ, ուր կընդունեին և առժամաբար կգետեղեին ընծաները, նվիրաբերությունները, նախքան ավանդատուն* (sacristie) *տարվելը: Ձախակողմյանը կկոչվեր սարկավագատուն* (diaconium), *որտեղ կսրբեին ու կմաքրեին սրբազան անոթները պատարագի խորհուրդեն հետո և կտանեին ավանդատուն* (sacristie)*:*

*Ըստ երևույթին, հայոց մեջ, գոնե 11–12-րդ դարերեն սկսած, արևելակողմյան սենյակներու պաշտոնը տարբեր է արևմտյան քրիստոնյաներու եկեղեցիներու մեջ եղող նույն սենյակներու պաշտոնեն. ըստ Ներսես Լամբրոնացվո, սենյակներեն մեկը հատուկ էր քահանայից զգեստավորման ավանդատուն անունով, ուր կգտնվեին նաև պատարագի զգեստները, որուն մասին բացատրություններ կուտա իր «Մեկնութիւն խորհրդոյ պատարագին» գրքին մեջ հետևյալ կերպով. «Յորժամ կամեսցի քահանայն պատարագ մատուցանել, պարտ է այսպէս խորհրդաբար զգեստաւորել: Հանդերձ սարկաւագօքն մտանէ յաւանդատուն ուր զգեստն է պատարագին» (սրբոյն Ներսէսի Լամբրոնացւոյ Տարսոնի եպիսկոպոսի խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ և մեկնութիւն խորհրդոյ պատարագի. Վենետիկ, 1847, երես 193): Մյուս սենյակը պահարան էր եկեղեցական հանդերձներու և սպասներու, պարզ սենյակ անունով՝ ինչպես կկարդանք նույն գրքի մեջ դարձյալ, երբ սարկավագներու պաշտոնը կբացատրե՝ «և զմաղզմայն և զսկիհն և զքշոցսն բերեն ի սենեկէն» (նույն, երես 84): Ուրիշ տեղ մը այս սենյակին սարկավագատուն անունն ալ կուտա, որ համապատասխան է արևմտյան եկեղեցիներու* diakonium-*ին. «Եւ սարկաւագունքն գնան ի սարկաւագատունն, բերեն զսուրբ նուէրսն՝ մոմեղինօք և խնկովք» (նույն, եր. 211):*

*Դվնա բ. ժողովի (555 թ.) կանոններեն կերևա, որ ավելի հին ժամանակ եկեղեցական սրբազան անոթներու համար եկեղեցվո մեջ հաստատուն պահարան կամ ավանդատուն չէ եղեր, այլ ժամանակավորապես կբերվին եղեր անոնք եկեղեցի՝ պատարագի արարողության համար, իսկ հետո կտարվեին եկեղեցվո գլխավոր քահանային տունը կպահվեին (Դվնա բ. ժողովի (555 թ.) 14-րդ կանոնը): «Պաշտաւն և պատարագիք և սպասք սրբոյ եկեղեցւոյն ի գլխաւոր քահանային տան եղիցի, որպէս յառաջագոյն կարգեալ է»: Ուրեմն այս կանոնեն կհետևի, որ հին դարերու մեջ սեղանին երկու քովի սենյակները ավանդատան կամ պահարանի պաշտոն չունեին. անոնք ավելի ուրիշ նպատակով շինված էին:*

---

[1] *Արտատպվում է «Ազգագրական հանդես»-ի XXI գրքից:*
*Կազմող*

Այս մասին մասամբ բացատրություն կգտնենք դարձյալ թե՛ Դվնա բ. ժողովի նույն 14-րդ կանոնի շարունակության մեջ և թե՛ ս. Սահակի 15-րդ կանոնի մեջ: Այս կանոններեն կտեսնվի, որ այդ սենյակները, որ 5-րդ և 6-րդ դարերուն մեջ սեղանին երկու կողմը և կամ մեկ կողմը քառակուսի սենյակներ են երկհարկանի երբեմն, պարզապես պաշտոնակատար քահանայից ամառնային բնակարան եղած են: 5-6-րդ դարերու եկեղեցիներն են այժմ Ապարանի եկեղեցին, որուն հյուսիս-արևելյան ծայրին կա մեկ սենյակ, Դիրաքլար գյուղի եկեղեցին, որուն հարավ-արևելյան ծայրին կա մեկ սենյակ, Երերույքի և Տեկորի եկեղեցիները ունին արևելյան կողմեն երկու սենյակ՝ կրկնահարկ: – Ահա Դվնա բ. ժողովի կանոնին շարունակությունը. «Եւ ինքն գլխաւոր քահանայն զեկեղեցին մի՛ իշխեսցէ թողուլ և գործոց տան պարապել, այլ մշտնջենաւոր ի սուրբ եկեղեցւոջն կացցէ, զի պաշտօն և աղօթք տուրնջեան և գիշերոյ ժամուցն և զտեսչութիւն ժողովրդոյն մի՛ խափանեսցէ, իսկ այլ ընկերքն զամառն փոխանակաւ կացցեն ընդ նմա անպղերգաբար»:

Ս. Սահակի 15-րդ կանոնը. «Զամառն գլխաւոր քահանայն հանապազորդեալ եկեղեցւոջն կացցէ, և այլ ընկերքն շաբաթուք առ նմա փոխանորդաւ կացցեն»:

Ուսումնասիրողներից մեկի կարծիքով՝ քահանայից այդ ժամանակվան ամառնային բնակարանը եկեղեցվո բակին մեջ էր, ոչ թե նույն սենյակներուն մեջ («Հայոց եկեղեցական իրավունքը», Շուշի, 1903, երես 370), բայց, ըստ իս, հավանական չէ մինչև 7-րդ դար, որուն մասին կարծիքս հետո. այժմեն կրսեմ միայն, որ նույնիսկ օրենքի տարօրինակութենեն ալ կերևի, թե քահանայից ամառնային բնակարան էր և ոչ ձմեռնային, վասնզի իրավունք չունեին ձմեռը եկեղեցվո հարկի տակ կրակ կամ վառարան վառելու զանազան տեսակ ապականություններու տեղիք չտալու համար: Եթե ոչ՝ ի՞նչ հարկ կար միմիայն ամառները պարտավորիչ ընել գլխավոր քահանային կամ կարգապահ քահանաներու փոխընդփոխ մնալ եկեղեցվո սենյակին մեջ և ո՛չ ամբողջ տարին, որ միշտ պաշտոն և պատարագներ կային:

Շատ հավանական է, որ խորանին երկու քովի սենյակները մշտնջենապես սրբազան անոթներու պահարան կամ ավանդատուն եղան 7-րդ դարեն սկսյալ, երբ առաջին անգամ Եզր կաթողիկոսի օրով իբրև քահանայից բնակարան չինվեցավ եկեղեցվո բակին մեջը առանձին շենք ս. Գայանեի վանքին մեջ, ուրկեց ընդհանրացավ ուրիշ եկեղեցիներու մեջ ալ. «Իսկ ապա հայրապետն Եզր զվկայարան սրբոյն Գայիանեայ, զոր երբեմն խրթին և մթին էր զնա չինեալ, քանզի քակեալ զայն՝ ևս ընդարձակագոյն և պայծառագոյն զնա շինեաց, կոփածոյ քարամբք և կրով ձուլելով, և արտաքուստ յարդարէր կայանս ընակութեան քահանայական դասուց, ի պաշտօն աստուածային խորանին: Այս եղև սկիզբն ժամատուն չինելոյ մինչև ցայս վայր ոչ երևիւր ի հայս» (Պատմագրութիւն Յովհաննու կաթողիկոսի: Երուսաղէմ, 1843, երես 56): Արդեն 7-րդ դարեն սկսած խորանին երկու կողմին սենյակներն իրենց հատկությունն սկսած են փոխել, այլևս առաջվան պես նեղ ու երկայն և փոքր չեն, կանոնավոր մեծությամբ հավասարակողմ քառակուսի են խորանին խորության չափով: Այս բարեփոխումը արդեն մեկ անգամեն ալ չէ եղած 7-րդ դարուն. եթե չհաշվենք իմ մեկ ենթադրությունը Վահան Մամիկոնյանի՝ Վաղարշապատի կաթուղիկեի մասին, 6-րդ դարու վերջին շինված Ավանի եկեղեցին առաջին օրինակը կուտա:

Ոմանք կկարծեն, որ Զվարթնոց եկեղեցվո արևելյան կողմի քառակուսի երկհարկանի հավելվածը ավանդատուն կամ սրբազան անոթներու պահարան էր, կամ, ըստ այժմյան բարբառի՝ մասանց խորան էր: Այս կարծիքը հավանական է. Զվարթնոցն ալ ունի յուր մոտ բազմաթիվ շենքեր, որոնց մեջ կային, անշուշտ, Եզրի չինել տվածին պես քահանայից բնակության համար սենյակներ, բացի այս, ս. Սահակի և Դվնա բ. ժողովի կանոններեն հետո այլևս ոչ մի ակնարկ չենք գտներ հետագա կանոնադրություններու մեջ քահանաներու եկեղեցու մեջ մնալու սովորության և սրբազան անոթներու գլխավոր քահանային տունը պահվելու մասին պարտավորիչ կանոններ: Ամենայն հավանականությամբ, 7-րդ դարեն սկսած, երբ պաշտոնակատար քահանաներու համար եկեղեցիեն դուրս առանձին բնակարան կամ ժամատուն չինվեցավ, այն ատեն խորանի երկու կողմի սենյակներու նախնական պաշտոնը փոխվեցավ: Զվարթնոցի բացառիկ ձևեն դուրս, մյուս սովորական ձևերով եկեղեցիներու մեջ խորանին երկու կողմի սենյակները իսկապես կոչվեցա՞ն, թե ոչ՝ ավանդատան և սարկավագատան պաշտոն կատարելու, այդ պիտի երևի հետագա քննություններեն: Մի քանի եկեղեցիներ ունին առանձնապես խորանին ներքև ալ դատարկություններ գետնափոր, ինչպես Մրենի եկեղեցին, Անիի Առաքելոց եկեղեցին և Անիի կաթուղիկեն (այս վերջինս կասկածելի հետքեր միայն ունի), ուր անշուշտ պահվել են եկեղեցու հարստությունները. միայն սրբազան անոթներու մեջեն, ինչպես կերևի, բացառապես սկիհի համար խորանին մեջ առանձին պահարաններ չինել տրված են, որոնց ներկայիս խորհրդանոց անունը կուտան, ինծի հայտնի չէ, թե ի հնումն ի՞նչ էր անոնց անունը:

Որովհետև ավանդատան կամ պահարանի մասերուն վրա դարձյալ հաճախ ափիթ պիտի ունենամ անդրադառնալու, և այդ ժամանակ պիտի տեսնվի, թե բացի պահարանե և ավանդատունե ուրիշ ի՞նչ կոչումներ ունենալին հավանական էր, ուստի ես կդառնամ մյուս ուսումնասիրություններուս: Բայց ի միջի այլոց կուզեմ այստեղ սխալ ընդհանրացած կարծիք մը ուղղել ավանդատուններու նկատմամբ:

Կովկասահայեր առհասարակ ավանդատան սենյակներուն խորան անունը կուտան, որ բոլորովին անտեղի է: Եկեղեցիներու մեջ խորանի ծագումը եթե փնտռենք՝ նախ կտեսնենք, որ abside-են զատ՝ ուրիշ տեղ չէր կարող լինել, հետո ալ բազմաթիվ գրական և արձանագրական վկայություններ ունենք խորանն այնտեղ լինելուն, ուր դրված է պատարագին սեղանը:

Եկեղեցական գրականութենեն կտեղեկանանք, թե հայոց եկեղեցիները, բացի աղոթարանեն, պետք էր որ ունենային ուրիշ երեք բաժանումներ ևս՝ մկրտատուն, ապաշխարողաց կայան և ժամատուն:

Մեր օրերուն մկրտության ավազանը առհասարակ զետեղված է հյուսիսային պատին վրա, տաճարին մեջ կամ նույն կողմի ավանդատան պատին վրա: Իսկ հնագույն եկեղեցիներու մեջ մինչև 13-14-րդ դարերը մկրտության ավազանի և մկրտարանի հետքերը ամենևին չկան, որով ակամա հարց կծագի, թե ո՞ւր և ի՞նչպես կմկրտեին նախնիք իրենց երեխաները: Գալով ապաշխարողաց գավթի մասին՝ գաղափար ալ չունինք, թե երբևիցե ի՞նչպես են վարվեր նախնիք այդ օրենքի գործադրության համար:

Նախ ձեռնարկենք ապաշխարության գավիթներու մասին եղած օրենքներու քննության և համեմատության, որուն հետ միաժամանակ հառաջ կերթա նաև մկրտարաններու քննությունը:

Իհարկե, իմ նպատակս չէ պարզել, թե հին ժամանակ ի՞նչպես մարդիկ կապաշխարեին կամ մկրտության համար ի՞նչ արարողություններ կկատարեին, որ զուտ կրոնական են և ոչ մի կապ չունին հին հիշատակարաններու հետազոտության հետ, այլ քննելով, բաղդատելով օրենքները յուրաքանչյուր դարաշրջանի մեջ երևցող եկեղեցիներու հատակաձևերուն հետ, որոշել անոնց հատկությունները և պարզել հատակաձևերու մեջ եղած ստորաբաժանումներու պաշտոնները, որով կպարզվեն նաև յուրաքանչյուր դարաշրջանի եկեղեցիներու իսկական հատկությունները, այս կերպով մենք շուտով կճանչնանք որևէ հին հիշատակարանի մը ո՛ր դարուն պատկանելը, դատելով իր ստորաբաժանումներեն:

Նախնական քրիստոնեական եկեղեցին հին օրինաց անմիջական ազդեցության տակ յուրացուց եբրայական տաճարի հեթանոսաց գավիթը՝ ապաշխարության գավիթ անունով, և զայն հատկացուց տակավին չմկրտվածներուն և կամ զանազան մեղքերով եկեղեցական պաշտամունքե ու խորհուրդե զրկվածներուն, որոնք նույն բաժնին մեջ որոշ ժամանակ ապաշխարելե և խորհուրդներու հաղորդակից լինելու արժանավորություն ձեռք բերելե հետո իրավունք կստանային հավատացելոց սրահը մտնելու. բոլոր քրիստոնյա եկեղեցիներու մեջ այդ բաժինը եկեղեցվո արևմտյան պատին որմնակից էր՝ porche կամ nartex անունով:

Նախնական եկեղեցին ապաշխարողները չորս դասակարգի բաժնեց և յուրաքանչյուրին պատշաճ կայան որոշեց եկեղեցվո բուն շենքեն ներս կամ դուրս: Այս կայանները հետևյալ կարգավ արձանագրված են ընդհանուր քրիստոնեից կանոնադրության մեջ:

1. **Ողբացողներ**, որոնք իրավունք չունեին եկեղեցվո արտաքին դռնեն ներս մտնելու: Բոլորովին դուրսը մնալով, քուրձ հագած, գլուխնին մոխիր ցանած՝ անդադար պիտի ողբային ու եկեղեցի մտնող հավատացյալներեն իրենց համար աղոթք պիտի խնդրեին:

2. **Ունկնդիրներ**. ասոնք ալ երկու կարգի կբաժնվեին՝ արտաքին և ներքին ունկնդիրներ, որոնք արտաքին դռան ներսի և դրսի կողմերուն անմիջապես մոտ կանգնելով, առանց աղոթելու, միայն ժամերգություն լսելու իրավունք ունեին:

3. **Աղոթականներ**. ասոնց համար տեղ սահմանված էր երախաներու (չմկրտածներու) մոտ, ուր երեսի վրա ընկած անդադար աղոթելու պարտավոր էին: Սակայն «Մի՛ ոք յերախայից»-ը երգված ժամանակ երախաներու հետ միասին պետք էր որ գավիթ երթային:

4. **Թեթև հանցանքներու համար ապաշխարողներ**. ասոնք թեև իրավունք ունեին հավատացելոց հետ խառն կանգնելու, սակայն դարձյալ զրկված էին հաղորդության խորհուրդին մասնակցելե և «Մի՛ ոք յերախայից»-ի ժամանակ պարտավոր էին դուրս՝ գավիթը ելլել:

Այս կանոնները քրիստոնեական նախնական դարերու մեջ բոլոր եկեղեցիները նույնությամբ ըն-

դունեցի՞ն, թե՞ ոչ, որոշակի հայտնի չէ. ընդդիմություններ, վեճեր հիշատակված կան պատմության մեջ, սակայն Նիկիո առաջին տիեզերական ժողովով ընդհանուր քրիստոնյա եկեղեցիներու համար պարտադիր օրենք հռչակվեցան): («Կանոնք Ս. Տիեզերական ժողովոյ». հոդված Թ. Ժա. Ժբ. Ժգ.»):

Հայերն ալ պաշտոնապես մասնակցեր էին ա. տիեզերական ժողովին, և Արիստակես Հայրապետը Հայաստան բերեր էր ժողովի մշակած կանոնական քսան հոդվածները, որ, ըստ Խորենացվո, ս. Գր. Լուսավորիչ նույնությամբ ընդունելեն հետո «սուղ ինչ գլուխս յինքենէ ի կանոնս ժողովոյն յաւելու վասն առաւել զգուշութեան իւրոյ վիճակին» (Մ. Խորեն., Բ, գլ. Ղ.):

Արդյոք իսկապես Լուսավորչի կատարածը հավելո՞ւմ էր, թե՞ սրբագրություն, այդ մասին կարծիք հայտնել կթողում իր մասնագետներուն: Միայն ապացույցներ չեն պակսիր, որ Լուսավորիչ հաճախ շեղված է ընդհանուր քրիստոնյաներու համար սահմանված պարտադիր կանոններեն և անկախ ուղղություն տված է իր եկեղեցական վարչության:



Նկ. 94. Օձունի եկեղեցին հյուսիս-արևելքից

Այս կարծիքը հաստատություն կգտնե նաև ապաշխարության գավիթներու տեսակետով, որովհետև երբ քննենք հայոց ամենահին եկեղեցիները և համեմատենք՝ ուրիշ քրիստոնյա ազգերու հնագույն եկեղեցիներու հետ, կտեսնենք, որ ապաշխարության համար սահմանված գավիթներ բնավ չունին, որպիսին էր հունական կամ լատինական եկեղեցիներու մեջ porche-ը կամ nartex-ը: Ուստի համարձակ կարելի է ըսել, որ լուսավորչական եկեղեցին եթե ընդունեց ապաշխարության օրենքը, բայց բոլորովին տարբեր կանոններով գործադրության կերպին մեջ: Լուսավորիչ, Նիկիո առաջին տիեզերական ժողովեն քսան տարի առաջ, արդեն կազմակերպեր էր հայոց եկեղեցին. անշուշտ, եթե իր աշակերտած եկեղեցիներու մեջ ընդունված էր այդ սովորությունը, ինքն ալ անոնցմե առնելով՝ կերպով մը պատշաճեցուցած էր իր եկեղեցին մեջ. մանավանդ որ արդեն Լուսավորչի կանոնները տիեզերական ժողովի կանոններուն հետ բաղդատությունը ցույց կուտա, թե Լուսավորչի կանոնները ավելի մեղմ էին և բոլորովին չկա ողբացողներ ըսված դասը:

Հայոց կանոններուն մեջ կերևին, բացի երախաներեն, բոլորովին եկեղեցիեն մերժվածներ և արտաքին ու ներքին ունկնդիրներ: Շատ պարզ է, որ եկեղեցիեն մերժվողներ եկեղեցի բնավ չէին



զար, խնդիրը կմնա գիտնալ, թե երեխաներ և արտաքին ու ներքին ունկնդիրներ ո՞րտեղ կկանգնեին «Մի՛ ոք յերախայից»-ի ժամանակ, քանի որ առանց բացառության հայոց հին եկեղեցիներուն արևմտյան կողմին վրա առանձին բաժին – գավիթ բացարձակապես գոյություն չունի:

Այս հարցին ամենահավանական պատասխանը կգտնենք ուշադիր քննելով հայոց ամենահին եկեղեցիները, որոնք մեզ հասած են քրիստոնեության սկիզբեն մինչև 5-րդ դարուն մեջ կանգնված:

Հայոց եկեղեցիներու ամենահին ձևերն են Տեկորի, Երերույքի, Բաշ-Ապարանի, Օձունի, Աշտարակի և այլ նման եկեղեցիները, որոնք, խորանին կից երկու սենյակներեն զատ, արտաքուստ ալ շրջապատված են սյունազարդ ծածկույթներով (portique): Աշտարակի եկեղեցին թեև այժմ չունի արտաքին սյունազարդ շուրջանակի ծածկույթ, սակայն քննության կարոտ է:



Նկ. 95. Օձունի եկեղեցու սյունասրահը

Անշուշտ, առանց պատճառի չէին ընդունված արտաքին շուրջանակի այդ սյունազարդ ծածկույթները հայոց նախնական եկեղեցիներուն մեջ, այլապես անբացատրելի կմնա անոնց համար զոհված արտաքո կարգի շինության ծախքը:

Արդ, քանի որ եկեղեցական հնագույն օրենքները կհաստատեն, թե ապաշխարության օրենքն ընդունված էր հայոց մեջ, նաև կտեսնենք ալ, որ ապաշխարության գավթի նմանող որևէ բաժանում ալ չերևիր հնագույն եկեղեցիներուն մեջ, բացի portique-ներեն, հետևաբար կմնա կարծել, որ ամենայն հավանականությամբ portique-ները ապաշխարողաց կայանի կոչումը ունեին: Մանավանդ դռներու շատությունն ալ ենթադրել կուտա, որ հատկապես եկեղեցվո պաշտաման ունկնդրությունը արտաքին ունկնդիրներուն դյուրավ լսելի ընել տալու համար էր: Որովհետև այս դարաշրջաններու եկեղեցիները առհասարակ, արևմտյան դռնեն զատ, հյուսիս կամ հարավային կողմերուն վրա զույգ դռներ ունին, հակառակ անոնցմե ոմանց ալ շատ փոքրության: Դիրաքլար գյուղի հնագույն եկեղեցին հարավային կողմին վրա 22,5 մետր երկարության մեջ երկու դուռ ունի արևմտյան դռնեն զատ:

Վերոհիշյալ առաջին շրջանի հայկական եկեղեցիներու հատակագծային ձևեն հետո, 5-րդ դարու վերջին, նոր ձև մը երևան եկած է Հայաստանի մեջ՝ Վաղարշապատի մեջ Վահան Մամիկոնյանի

*շինած կաթուղիկեով (այս ձևի մասին մանրամասն տեսնել «Էջմիածնի տաճարը» ուսումնասիրության մեջ): Ասոր ընդօրինակությունն է Ավանի մեջ 6-րդ դարու վերջին կանգնված եկեղեցին, որուն չորս անկյուններուն վրա չորս քառակուսի չափավոր մեծությամբ սենյակներ կան եկեղեցիեն անջատ և դռներով միայն հաղորդակցող թե՛ ներսի և թե՛ դրսի հետ: Ավանի եկեղեցին արտաքին* portique *չէ ունեցեր, սակայն Էջմիածնի կաթուղիկեի մասին տարակուսելի է,* portique*-ի գոյության հավանական նշաններ կան վրան:*

*5-րդ դարու վերջին ծագում առնող հատակագծային այս նոր ձևը շարունակված է մինչև 7-րդ դարու վերջը. թեև մինչև վերջն ալ շարունակված է, սակայն 10-րդ դարեն սկսյալ սենյակներուն մեջ որոշ փոփոխություններ եղած են թե՛ համաչափությամբ և թե՛ հարամասունքներով: Մինչդեռ մինչև 7-րդ դարեն վերջը եղած չորս անկյունի սենյակները բոլորովին պարզ հավասարակողմ քառակուսի ձև ունին: Բայց, ինչպես կերևի, 7-րդ դարուն արևմտյան կողմի սենյակները սկսեր էին իրենց կարևորությունը կորսնցնել, որովհետև նույն դարուն սկսեր են շինվիլ ուրիշ եկեղեցիներ ալ, թեև ընդհանուր ձևով նման հիներուն, սակայն առանց արևմտյան սենյակներու: Հռիփսիմեի վանքի եկեղեցին, որ 7-րդ դարու գործ է, չորս անկյունը չորս սենյակներ ունի, նույնպես Բագարանի կաթուղիկեն երբեմն ունեցեր է, թեև այժմ ձևափոխված: Իսկ Գայանեի և այլ ուրիշ ժամանակակից եկեղեցիներ արևմտյան սենյակներ չունին: 7-րդ դարեն առաջ պահանջը անհրաժեշտ լինելուն ապացույց է, որ (հավանաբար 6-րդ դարուն) Երերույքի տաճարին հնագույն ձևին վրա արևմտյան կողմեն ավելցուցեր են երկու սենյակներ:*

*Հետագա դարերուն մեջ այս չորս սենյակները պարզապես մատուռներ են՝ խորաններով և սեղաններով զարդարված, իսկ հիները, որոնք ոչ խորան ունին և ոչ սեղան, բոլորովին անհասկանալի է անոնց պաշտոնը, գրական աղբյուրներե ոչինչ ակնարկ չունինք, կմնա դարձյալ եկեղեցական կանոններու հետ համեմատելով որոշ եզրակացության հասնիլ:*

*Քրիստոնեության նախնական դարերուն մեջ երբեմն սովորություն եղավ մկրտության ավազանը զետեղել նույնիսկ ապաշխարողաց կայան նախագավթին մեջ (*porche *կամ* nartex*): Պահ մը ենթադրենք, որ այդ սովորության իրև հետևողություն մկրտարանի պաշտոն կատարեին այդ արևմտյան կողմի սենյակները: Սակայն քանի մը պատճառներով այս ալ հավանական չեմ գտներ: Նախ՝ երկու սենյակներն ալ միաժամանակ մկրտարան չէին կարող լինել. գոնե մեկը պետք էր, որ ուրիշ պաշտոն ունենար: Երկրորդ՝ այս ձևի եկեղեցիներուն ընդհանրացած շրջանին մեջ (մինչև 7-րդ դարու կեսը) հայոց եկեղեցվո պետերու և ժողովներու կողմանե մշակված կանոններ կան, որոնք բավականին կորոշեն հայոց մկրտարաններու տեղը և դիրքը:*

*Լուսավորչեն մինչև ս. Սահակ մկրտարանի տեղին և դիրքին մասին որոշ տեղեկություն չկա: Ս. Սահակի կանոնով կերևա, որ եկեղեցիեն դուրս առանձին շենքի մեջ էր: Քորեպիսկոպոսներուն ուղղված կանոններուն բ. հոդվածին մեջ հետևյալ կերպով կավանդե ս. Սահակ. «Եւ զտաճարս աղօթիցն՝ յորս սուրբ և աստուածընկալ սեղանն է հաստատեալ, յորոյ վերայ կատարի մեղսաքաւիչ և կենդանարար խորհուրդ մարմնոյ և արեան ապրեցուցչին մերոյ տեառն՝ ըստ արժանի բաւականութեանն զարդարուն պահեսցեն անխափան լուցմամբք և խնկարկութեամբ, և պարսպեալ քաղաքորմովք, և մերձ ի նա մկրտատունս շինեսցեն. և անդ, որպէս և սովորութիւն իսկ է և յայլսն՝ ի նմին կանգնեսցի աւազան մկրտութեան...» («Սոփերք հայկականք». հատ. Բ., երես 81):*

*Պետք է ի նկատի ունենալ նաև, որ ս. Սահակի օրով հայոց եկեղեցիները բոլորովին նախնական ձևի մեջ էին, ոչ կիսաբոլորակ խորան կարող էր գտնվիլ անոնց մեջ և ոչ ալ անկյուններուն վրա մկրտատան հարմար սենյակներ, մանավանդ արևմտյան կողմի սենյակներ բոլորովին գոյություն չունեին, ինչպես մենք կտեսնենք այսօր ալ Բաշ–Ապարանի, Աշտարակի, Տեկորի եկեղեցիներու վրա. հետևաբար չէ կարելի մտածել իսկ, որ մինչև 6-րդ դարու սկիզբը բացի առանձին մկրտատունե, ուրիշ տեղ երեխաներ մկրտած լինին:*

*Դվնա բ. ժողովը (555) և ե. ժողովը (719) ունեն առանձին հոդվածներ, որոնց բովանդակությունեն կտեսնվի, որ եթե հետզհետե եկեղեցիներու մեջ մկրտություն կատարելը թույլատրելի կդառնար, այնուամենայնիվ եկեղեցիեն դուրս առանձին մկրտատան գոյությունն ալ պարտավորիչ էր:*

*Ահավասիկ Դվնա ժողովներու կանոնները:*

*Դվնա բ. ժողովի (555) 15-րդ կանոնը. «Մկրտութիւնս ոք ծուլութեամբ մի՛ իշխեսցէ առնել, որպէս լսեմք, այլ երկիւղիւ և զգուշութեամբ, բուրուառաք և ճրագովք և առագաստեաւ վարագուրաւք, որպէս վայել է լուսաւորութեամբ սրբոյ աւազանին և աւազանն կանգնեսցի յեկեղեցւոջն կամ ի տան պաշտամանն. թէ քարեղէն իցէ թէ զինչ և իցէ, երկիւղածութեամբ արժանի և բաւականութեամբ գործոյն լուսաւորութեան, լայնութեամբ և խորութեամբ, զի բաւականաբար ծածկեսցէ ջուրն զհասակ մանկանցն որք մկրտեցին»... («Հայոց եկեղեցական իրավունքը», գիրք Ա., երես 379):*

*Դվնա ե. ժողովի (719) 13-րդ կանոնը. «Ոչ է պարտ զաւազանն յայլ իմեքէ նիւթոյ պատրաստել. և կամ ուրանաւր և կամեսցի, այլ աւազան քարեղէն հաստատել ի նմին, իսկ յեկեղեցւոջն, և կամ յանդէն մերձ յեկեղեցին ի մկրտատունսն» (նույն, երես 414):*

*Ինծի կթվի, թե Դվնա ժողովներով եկեղեցվո մեջ մկրտության ավազան դնելու մասնավոր արտոնությունները ակամա տրված են օրենքին անսաստող դավանական հատվածի մը հարուցած դժվարությանց պատճառավ, այս հատվածը կլինեին, անշուշտ, քաղկեդոնականության հակված կաթողիկոսներ և կամ անոնց հետևողներ, որոնք պակաս չէին 6-րդ դարեն սկսած: Սակայն եթե այս շեղվող հատվածը պարբերաբար ուժեղացած է, այնուամենայնիվ բոլորովին չէ կարողացած հին կարգերը խախտել. առանձին մկրտատուն ունենալու սովորություն տված է մինչև 13–14-րդ դարերը: Զվարթնոց եկեղեցիեն զատ, տակավին չէ տեսնված մի հնագույն եկեղեցի, որուն մեջ մկրտության ավազանին գոյությունը հաստատվի այսօր, իսկ եթե Զվարթնոցի բացառիկ ձևը և Շինողի օտարոտի հակումները ի նկատի առնենք, այն ատեն դյուրավ կհամոզվինք, որ այնտեղ գոյություն ունեցող մկրտության ավազանը հայկական եկեղեցիներու հատուկ սովորություն չէր. և Զվարթնոցի միակ օրինակը, եկեղեցիներու մեջ մկրտության ավազան չինելու մասին, ընդհանուր սովորության արդյունք չենք կարող համարիլ:*

*Ամեն անգամ, հին եկեղեցիներ քննած ժամանակս, բնավ չեմ մոռացած եկեղեցվո մեջ մկրտության ավազաններու հետքեր փնտռել, սակայն մինչև այսօր ամենաուշ 14-րդ դարուն կանգնված եկեղեցիներուն մեջ անգամ չեմ հաջողած գտնել, եթե կենային, անպատճառ գոնե մեկ քանի հատ կպահվեին, ինչպես պահվեր է Զվարթնոցի ավազանը: Որովհետև կանոնադիր ժողովներ, եթե կամ թե ակամա թույլատրեր են եկեղեցվո մեջ ավազան կանգնել, միևնույն ժամանակ պարտադիր են ըրած անպատճառ քարեղեն չինել և հաստատուն չինել, այն ալ ոչ այնչափ փոքր, որպեսզի բավականություն տա մեծահասակ մկրտվողին մարմնույն մեծ մասը ջրով ծածկելու: Գուցե Վասպուրականի, Տարոնի և Փոքր Ասիո հայկական հին եկեղեցիները ունենան նմուշներ, սակայն Այրարատ, Շիրակ, Վանանդ, Սյունիք և այլն շրջաններ երբեք չեն տված դեռ որևէ օրինակ եկեղեցվո մեջ մկրտության ավազան ունենալու:*

*Շատ հետաքրքրական կլիներ Անիի մեջ բազմաթիվ բոլորակ կամ բազմակուսի մատուռներու մեկ քանիին ավերակներ պեղել և քննել, թե արդյոք անոնցմե ոմանք մկրտարաններ չե՞ն:*

*Հ. Օրբելին յուր 1910 թ. հրատարակած* "Путеводитель по городищу Ани" *գրքույկին մեջ, Անիի կաթուղիկեին հարավ-արևելյան կողմը փլած ութանկյուն մատուռը հաստատապես մկրտարան անվաներ է. արդյոք ի՞նչ հիման վրա ենթադրեր է հեղինակը, լավ կլիներ, որ բացատրեր: Ճիշտ է, որ, եթե առանձին մկրտատան սովորությունը պահված էր 10–11-րդ դարերուն, պետք էր որ Անիի կաթուղիկեն ալ ունենար իր մկրտատունը, սակայն հաստատուն փաստ է հարկավոր այդ փլատակը մկրտատուն համարելու: Վարդան Բարձրաբերդցին Անիի կաթուղիկեին մոտ կհիշատակե ս. Հռիփսիմեի մը վկայարանին շինությունը Սարգիս կաթողիկոսի օրով 10-րդ դարու վերջին: Կարող է պատահիլ, որ այդ վկայարանը եղած լինի Հ. Օրբելիի մկրտարան կարծածը: «Իսկ սուրբ զաթոռն հաջորդէ տէր Խաչիկ...՝ ամս ինն և տասն, և զնա փոխէ տէր Սարգիս ամս քսան և չորս. – սա շինեաց վկայարան սրբոց Հռիփսիմեանց առընթեր կաթողիկէին Անւոյ և փոխեաց անդ զնշխարս նոցա՝ բերեալ մեծաւ հանդիսիւ, և կարգեաց զօրն տօն մեծ» (Մեծին Վարդանայ Բարձրաբերդցւոյ Պատմութիւն տիեզերական». Մոսկվա, 1861, երես 123):*

*Անիի կաթուղիկեին չուրջը այդ փլատակը միակը չէ. բացի արևելյան կողմեն, ուր մեկէ ավելի մատուռներ կան հոգեհանգստյան պատարագի համար շինված առընթերակից դամբարաններու համար, հարավային կողմի վրա կերևին դարձյալ ուրիշ հին շինության մնացորդներ ալ: Համենայն դեպս, ըստ իս, կանխակալ կարծիք է Հ. Օրբելիի հայտնածը նույն փլատակին մկրտատուն լինելուն մասին:*

*Ս. Մուբայաջյանց և Պ. Հայկազունի կհավատեն, թե Կարսի Առաքելոց եկեղեցվո նորոգության ժամանակ ռուսները քանդեցին մատուռի մը մնացորդ, որուն հատակին վրա շինված էր սրբատաշ քարերով՝ խաչաձև ավազանի նմանող խորություն մը գետնին մեջ. եթե սա ստույգ է, այն ատեն կասկած չի մնար, որ 10-րդ դարուն առանձին մկրտատան սովորությունը կշարունակվեր, և այդ քանդվածը 10-րդ դարեն մեզ հասած հայոց մկրտատան մեկ նմուշն էր, որ անհետ կորավ առանց ներկա ուսումնասիրության օգուտ մը տալու:*

Առանձին ուշադրության արժանի է, որ մինչև այսօր ալ եկեղեցվո բուն սրահին մեջ մկրտություն կատարել օրենք չէ, եթե բացառաբար եկեղեցին բավարար մեծությամբ ավանդատուն ունի, ուր հնարավոր է մկրտության ավազան զետեղել: Այժմ ալ միշտ հյուսիս-արևելյան ավանդատան մեջ կմկրտին երեխաները: Իհարկե սա ևս առանց պատճառի չէ:

Նկ. 96. Կարսի Առաքելոց եկեղեցին

Կկարծեմ, որ Դվնա ժողովներուն՝ եկեղեցվո մեջ մկրտություն կատարելու թույլտվությունը դարձյալ չի վերաբերիր եկեղեցվո բուն սրահին, այլ ավանդատուններեն մեկու, որն որ թեև եկեղեցվո անմիջական մասն է, այնուամենայնիվ կարող է անջատ համարվել և հավանորեն այդ սովորությունն է, որ կշարունակե մինչև այսօր: Այս ենթադրությունն ավելի համոզիչ կդառնա, երբ աչքի առջև ունենանք 6-րդ և 7-րդ դարերու շատ մը եկեղեցիներ, որոնց արևելյան կողմի սենյակները կամ ավանդատունները թե՛ ընդարձակ են և թե՛ դրսեն հաղորդակցող դուռ ունին, բացի տաճարին հետ հաղորդակցող դռնեն: Հայոց մեջ օտար աղբյուրե ծագած եկեղեցական հնագույն կանոն մը կա, որ շատ համապատասխան կուգա այս հատկությամբ ավանդատուններու: Այս կանոնը Երուսաղեմի Մակար արքեպիսկոպոսի կանոնն է, որ Վրթանես հայրապետի ձեռքով Հայաստան բերվեցավ: Այս կանոնին բ. հոդվածը կտրամադրե, որ՝

«Զի եթէ ոչ էր մերձ եկեղեցի չինեալ ի փառս Աստուծոյ և ի մուտս ժողովրդոց, առանց մեղադրելո արդեւք էր, և եթէ եկեղեցիս ունիմք, պարտ է և մկրտատունս առնել և աւազան, յորում մկրտէ որ դայցեն յուղիղ հաւատս բարեպաշտութեան»:

Ը. հոդվածին մեջ ավելի մանրամասնած է բացատրությունը մկրտարանի տեղի և դիրքի մասին. «Սեղանն քաւութեան ընդ վարագուրաւն, յորում հոգին սուրբ իջանէ և աւազանն յետոյ առ նմին տամբ և պատուով, հաստատեալ յաջմէ, և ժառանգաւորքն իւրաքանչիւր աստիճանաւ պաշտեսցեն»... (Գիրք թղթոց Մակարայ Երուսաղէմի հայրապետի կանոնական թուղթ ի հայս, Թիֆլիս, 1901, երես 407-411):

Այս հոդվածներով ոչ միայն կշեշտվի մկրտատան անջատ լինելու անհրաժեշտությունը, այլ տեղն ալ կորոշվի, որ սեղանին աջ կողմը պետք է լինի առանձին բաժանումով:

Եվ որովհետև նորածին երեխան ալ իբրև հեթանոս ու անմաքուր կհամարվեր դեռ չմկրտված, ուստի և նախքան տաճարը մտցնելը՝ ավանդատան կողմնակի դռնեն ներս կմտցնեին, և երբ մկրտությունը ավարտվեր, այն ատեն քահանան իրավունք ուներ ավանդատան տաճարին հետ հաղորդակցող դռնեն մտցնել և հաղորդության խորհուրդ մատակարարել նորածինին սեղանի առջև:

Իմ ծննդավայրիս՝ Շ.-Գարահիսարի եկեղեցին արևելյան կողմեն ունի երկու մատուռներ՝ հյուսիսային և հարավային պատերուն կից. մկրտության ավազանը կգտնվի հյուսիսային կողմի մատուռին մեջ. դրսեն առանձին դուռ ունի, ուրկե կմտցնեն մկրտվելիք նորածինը: Ասոր պատճառը հարցուցի ես պատանեկությանս օրերուն քաղաքին կրոնադետ համարված Գրիգոր քահանային, պատասխանեց, որ նորածինը անբերևույթապես վզին փաթաթված ունի աղամական մեղաց դատավճիռը, որով արժանի չէ ս. տաճար մտնելու, ուստի նախ պետք է սրբել երեխան աղամական մեղքի դատակնիքեն և հետո տաճար մտցնել:

Թեև Մակար եպիսկոպոսի կամ Արիստակես հայրապետի օրով հայոց եկեղեցու մեջ արևելյան սենյակներ չկան մկրտարան լինելու հարմարություններով, սակայն կարող է հետագա դարերուն մեջ Մակար եպիսկոպոսի օրենքը ուժ ստացած լինի և կերպով մը օգտվիլ փորձեին փոխանակ առանձին անջատ մկրտատան, սեղանի կամ խորանի աջակողմյան ավանդատունեն: Արևելյան կողմի սենյակներու վրա արտաքին դուռ ունեցող եկեղեցիներե այժմ ինձի հայտնի են Էջմիածնի տաճարը (այժմ փակված), Հռիփսիմեի վանքի եկեղեցին



(այժմ փակված, բայց տեղը հայտնի), Բագարանի ս. Թեոդորոս եկեղեցին, Ավանի եկեղեցին (հետազոտելի, որովհետև արևմտյան սենյակներն ունին արտաքին դռներ):

Ուրեմն, քանի որ այս օրինակներով կհաստատվի մկրտարաններու որոշ տեղը, հետևաբար 5-րդ դարեն մինչև 7-րդ դարու կեսը կանգնված եկեղեցիներուն արևմտյան կողմի քառակուսի սենյակներեն ոչ մեկը մկրտատուն չէր կարող լինել, պետք է ուրիշ պաշտոն կամ կոչում փնտռել անոնց: Ըստ իս, ոչ մեկ պաշտոն չենք կարող հատկացնել անոնց, բացի ապաշխարողաց կայանե:

Բայց քանի որ նախնական եկեղեցիներու մեջ հավանական համարեցինք, թե ապաշխարողաց կայանը արտաքին այունազարդ ծածկույթի տակն էր, ուրեմն ի՞նչ հարկ պիտի ստիպեր այդ ձևը թողուլ և սենյակներ շինել: Ասոր ալ պատճառը կարելի է քանի մը կերպով բացատրել. նախ՝ ամենայն հավանականությամբ, portique ունեցող հնագույն եկեղեցիները կամ մեհյաններ էին և կամ մեհենական ազդեցության տակ կանգնված եկեղեցիներ, որոնց գոյությունեն օգտվեր են ի սկզբնականե ապաշխարողաց կայանի նկատմամբ: – Այս մասին երկար բացատրություն տեսնել իմ «Տեկորի տաճարը» ուսումնասիրությանս մեջ: Երկրորդ՝ ցուրտ, ձմեռը սաստիկ երկրի մը մեջ անկարելի էր բացօթյա կանգնել ապաշխարողներու համար ձմռան օրերուն, ուստի հարկ էր այդ օրերուն համար հարմար տեղ ունենալ: Այս ենթադրությանս ուղղակի հետևանք կհամարիմ Երերույքի եկեղեցին portique-ներու հետ միասին արևմտյան սենյակներ ալ ունենալը: Ուստի փորձով երբ տեսնվեցավ, թե արևմտյան երկու սենյակներն ըստ ամենայնի բավականություն կուտային ապաշխարողներու քանակության, հետզհետե ավելորդ համարվեցավ արտաքին ծածկույթը և 7-րդ դարուն միանգամայն վերջ դրին portique շինելու սովորության, բավականանալով միայն արևմտյան սենյակներով:

Որպեսզի իրավունքներե զրկված ապաշխարողը կարենա առանց տաճարի դռնեն ներս մտնելու ուղղակի ապաշխարողաց կայանը մտնել, այդ պատճառով ալ, անշուշտ, դուռ ունին արևմտյան սենյակները ներսի հետ հաղորդակցող, թեև մեծ մասամբ այժմ փակված, ինչպես Էջմիածին, Հռիփսիմե և այլն և այլն:

Բացառաբար Երերույքի եկեղեցին արևմտյան սենյակներն արտաքին դուռ չունին: Սակայն այդ ալ դեռ լուրջ քննության կարոտ է, գուցե կար ի հնումն: Դժբախտաբար դեռ չեն վերջացած Երերույքի վրա իմ կատարած հետազոտություններս:

Անշուշտ, միևնույն ավանդության շարունակությունն է, որ մինչև այսօր կգտնենք բազմաթիվ նորագույն եկեղեցիներ, որոնց մեջ թեև արևմտյան սենյակներ չկան, սակայն այդ սենյակներու տեղը առանձին plate-forme-ով զատված է և վանդակորմով ծածկված. հաճախ Փոքր Ասիո մեջ պեյնամազ սեքիսի անունը կուտան անոր, որ շատ մոտ է ապաշխարողաց կայանի նշանակության:

Վերև հայտնեցի, որ 7-րդ դարուն արևմտյան կողմի սենյակներու սովորությունն ալ իր կարևորությունն սկսած էր կորսնցնել, որովհետև նույն դարուն կան շինված շարք մը եկեղեցիներ, որոնք արևմտյան սենյակներ չունին այլևս: Այս պարագան կբացատրվի նրանով, որ 7-րդ դարուն մեջ ապաշխարության համար պարտադիր օրենքներն ալ թուլացած էին և տեղի կամ կայանի խտրություն չկար ժողովրդի համար: Այս մասին գեղեցիկ փաստ կուտա մեզի Ներսես Լամբրոնացին իր «Պատարագի մեկնություն» գրքի մեջ և կբացատրե, թե ինչո՛ւ «Մի՛ ոք յերախայից»-ի ժամանակ սովորությունը խոսքով կպահենք և սուրբ տաճարին անարժանները դուրս չենք հաներ, և թե ո՛ր ժամանակեն սկսած էր այս սովորությունը թուլանալ:

Դեռ Բարսեղ Կեսարացվո և Գրիգոր Աստվածաբանի օրով իսկ կըսե թուլցած էր այդ սովորությունը, որովհետև ապաշխարության կոչվածները ճնշելով, եկեղեցիեն բանի դուրս հանելով վիրավորանք կպատճառեն անոնց, որուն հետևանքով ժողովուրդը, պաշտամունքե ու եկեղեցիե սառած, այլևս եկեղեցի չէին գար, ուստի շատ հին ժամանակ ուրիշ քրիստոնյա ազգեր ալ, ժողովուրդը եկեղեցիեն չսառեցնելու համար, սկսեր էին թույլ վարվիլ օրենքի գործադրության մեջ: (Ներսիսի Լամբր., երես 328):

Հայոց ազգային եկեղեցական կանոններն արդեն ապաշխարության մասին այնքան խիստ չեն, ինչպես ուրիշ ազգերունը, բնականաբար ավելի շուտ կորսնցուցեր են իրենց նշանակությունը Հայաստանի մեջ: Ինչպես կերևի, նույնիսկ 7-րդ դարուն բոլորովին վերջ գտեր է հայոց եկեղեցվույն մեջ առանձնացած ապաշխարել տալու սովորությունը, որով նաև վերջացեր է արևմտյան սենյակներ շինելու սովորությունը:

Այժմ կմնա գիտենալ, թե քանի որ ապաշխարության օրենքի գործադրություն չկար, որպեսզի հարկ լիներ ապաշխարողաց կայան կամ գավիթ շինելու, ուրեմն, ինչո՞ւ համար շինված են այն բազմաթիվ նախասրահները եկեղեցիներու առհասարակ արևմտյան կողմին որմնակից և երբեմն ալ կրկնված հյուսիսի կամ հարավի կողմերուն վրա:

Այդ նախասրահները մեզ հայտնի են ժամատուն և գավիթ անուններով, սակայն ոչինչ չգի-

տենք հաստատապես անոնց իսկական կոչման մասին: Նաև որոշ չէ, թե ի հնումն ալ այս երկու տարբեր անունները միևնույն նշանակությա՞մբ կգործածվեին:

Առաջուց տեսանք, որ ամենահին եկեղեցիներու շուրջը սյունազարդ ծածկույթներ և արևմտյան կողմերուն վրա սենյակներ կան, որոնց ենթադրաբար ապաշխարողաց կայանի կոչումը վերագրեցի՝ ամենահավանականը համարելով:

Ժամատուն բառին մասին ալ տեսանք, որ 7-րդ դարուն պաշտոնակատար քահանաներու բնակարան կնշանակեր, եկեղեցիեն դուրս անջատ շինված: Անտարակույս, 7-րդ դարու ժամատուններ ունեին իրենց մէջ կանոնավոր սենյակներ, քահանայի, ժամկոչի և այլ եկեղեցական գիշերապահ պաշտոնեից համար, ինչպես մինչև այժմ ալ կան արևմտյան եկեղեցիներու մէջ (presbytere): Փոքր ասիական Հայաբնակ գավառներու մէջ տակավին կշարունակվի այս շինության սովորությունը, և ժամատուն, խուց, մանատուն, մատաղատուն և այլն անուններ կտրվին անոր:

Այն ժամատունները, որոնցմով պիտի զբաղիմ այստեղ, որոնք երբեմն ալ գավիթ անունը ունեցեր են՝ բոլորովին տարբեր են 7-րդ դարուն մէջ Եղր կաթողիկոսի շինած ժամատան ձևեն և նպատակեն: Վերջին տեսակները ընդարձակ սյունազարդ ծածկույթավոր և երբեմն ալ գմբեթավորյալ նախասրահներ են՝ եկեղեցվո մեկ կամ մյուս կողմին կպած, եթե այս ձևի շինության սովորությունը 11-րդ դարեն անդին չանցնիր:

Նախ փորձեմ ապացուցանել ժամատուն անվանված ընդարձակ նախասրահներու սովորության 11-րդ դարեն առաջ գոյություն չունենալը և հետո անոնց անվան կամ կոչման մասին հայտնեմ կարծիքս:



Նկ. 97. Անիի Առաքելոց եկեղեցու մնացորդները

Ամենահին ժամանակներե սկսած մինչև 10-11-րդ դարերուն շինված եկեղեցիներեն ոչ մեկը չունի հարակից նախասրահներ: Եթե երբեմն կպատահին, անոնք ալ, թե՛ ճարտարապետական ոճի և թե՛ արձանագրությանց տված թվականներու անվրեպ ապացույցներով կհաստատվի, որ հետնագույն հավելվածներ են հին շենքերու վրա՝ 10-11-րդ դարերեն ոչ առաջ:

Նախասրահներուն մինչև 10-11-րդ դարու շինություններուն վրա հետնագույն հավելվածներ լինելը շինարարական տեսակետով քննելով, վերին աստիճան պարզ կտեսնվի, թե ինչպես նոր շենքի կցումեն հառաջ եկեր են շատ մը անախորժ երևույթներ: Բացի այն, որ շենքին ընդհանուր ներդաշնակությունը խաթարված է, այլև կցված մասերու տակ մնացեր են քանդակազարդ սյուներ, կամարներ և արձանագրություններ: Հավելյալ մասերու տակ մնացած արձանագրություններեն կարելի է գտնել Անիի Առաքելոց եկեղեցվո հարավային պատին վրա Հոռոմոսի վանքի ս. Հովհաննեսի տաճարի հյուսիսային անկյունի մոտ և ուրիշ շատ տեղեր: Եկեր է ժամանակ, որ Անիի կաթուղիկեին արևմտյան կողմեն ալ կցեր են մի ընդարձակ նախասրահ, որուն բարձրությունը հասած է եղեր մինչև պատուհաններու ստորին եզերքներուն: Նույնպես առանց նախասրահի շինված է Անիի Առաքելոց եկեղեցին, որ 10-րդ դարու վերջերու շինություն է ամենայն հավանականությամբ: Գավիթը կցված է հարավային կողմին վրա 13-րդ դարու սկզբին՝ ծածկելով միանգամայն որմնասյուներ, աղեղներ, խորշեր և պատուհաններ: Վերջին պեղումները ցույց տվին, որ Առաքելոց եկեղեցվո մյուս կողմերն ալ ենթարկվեր են նույն հավելումներուն՝ դարձյալ 12-13-րդ դարերուն:

Ուրիշ բազմաթիվ օրինակներ կարելի է ցույց տալ, սակայն ես պիտի բավականանամ մի շատ բնորոշ օրինակ ևս ցույց տալով:

Հոռոմոսի ս. Հովհաննեսի տաճարի նախասրահը, որ, ըստ արձանագրության, տաճարի շենքին հետ միաժամանակ պետք էր որ շինված լիներ, դարձյալ պարզ քննությամբ մը կտեսնենք, թե եկեղեցին ամբողջապես ավարտելեն տարիներ հետո ավելցված է արևմտյան կողմին վրա: Անշուշտ, Հովհաննես թագավորը, ի սկզբան մինչև եկեղեցվույն ի կատար ածվիլը, երբեք ի նկատի չէ ունեցեր նախագավիթ շինել, հետո որևէ պատճառով հարկ տեսեր է հարակցել:

Նախասրահներու կամ նախագավիթներու ամենեն շատ ընդհանրացած շրջանին՝ 12-14-րդ դարերուն մէջ կանգնված եկեղեցիներու կից անգամ չէ կարելի գտնել նախասրահ մը, որուն շինությունը տաճարի շենքին հետ միաժամանակ կատարված լինի: Այս վերջին շրջաններուն ալ միևնույն անախորժ երևույթները հառաջ եկած են, ինչպես մինչև 10-11-րդ դարերուն կանգնված եկեղեցիներու կից նախասրահներու հավելումով :

Այս իրողությունը հաստատող անվիճելի փաստերեն մեկն է և Անիի ս. Գրիգոր Լուսավորչի (Նախշլի) եկեղեցին, որը, ինչպես իր վրայի արձանագրությունեն գիտենք, 1215 թվականին կանգներ է Զաքարե սպասալարի զորավար Տիգրան Հոնենց:



Նկ. 98. Անիի Լուսավորիչ եկեղեցին հարավ-արևմուտքից

Նկ. 99. Կենդանաքանդակ դռտի Անիի Լուսավորիչ եկեղեցու վրա



Նկ. 100. Կենդանաքանդակ դռտի Անիի Լուսավորիչ եկեղեցու վրա

Նկ. 101. Կենդանաքանդակ դռտի Անիի Լուսավորիչ եկեղեցու վրա

Այս եկեղեցին, որ իր ժամանակի ճաշակով չորս կողմեն քանդակազարդված է, արևմտյան կողմին վրա նախասրահի հետնագույն հավելումով ծածկվեր է անոր քանդակներուն մեծ մասը:

Եկեղեցիներու կից նախասրահներ ավելցնելու ամենահին օրինակներեն մեկը պետք է համարել Հոռոմոսի վանքին ս. Հովհաննեսի տաճարին սյունազարդ գմբեթավոր նախասրահը, որ կանգնված է, ըստ արձանագրության, 1038 թվականին:

Հոռոմոսի նախասրահը ամենահին օրինակներեն մեկը համարելուս պատճառը այն է նախ, որ ավելի հնագույն օրինակը դեռ չէ պատահած ինծի, երկրորդ՝ մի ուրիշ պատմական վկայություն ալ կուգա ապացուցանելու, որ Բագրատունի թագավորաց ժամանակ այդ սովորությունը տակավին գոյություն չուներ: Այս վկայությունը կգտնենք Ներսես Լամբրոնացիի «Պատարագի մեկնություն» գրքին մեջ՝ հետևյալ կերպով.

«Ցարձանացեալ խորանացն որք կան մինչև ցայսօր հաստատուն, և ոչ ունին առընթեր ժամատուն. և Սահակ ս. հայրն մերձ առ սեղանն տէրունական նստելով՝ ետես զհրաշազանն տեսիլ, ըստ որում ասէ պատմութիւնն. նա և թագաւորքն Բագրատունեաց, և որ առ նոքօք հայրապետք ընդ նոյն գնացին շափ՝ եկեղեցիս միայն շինեալ տունս աղօթից...» (երես 26):

Գուցե տեղի հեռավորության պատճառով Լամբրոնացիին ծանոթ չէր Հովհաննես թագավորի շինած ժամատունը. բայց այս ալ ապացույց է, որ 11-րդ դարեն առաջ Հայոց եկեղեցիներուն համար բոլորովին անսովոր էր, որուն պատճառավ Ներսես Լամբրոնացին համոզված է, թե նույնիսկ Բագրատունիք իրենց եկեղեցիները առանց ժամատան շինած են:

Նախասրահներու հետնագույն հավելված լինելուն անվիճելի փաստերեն հետևցնելով՝ կարելի է որ կարծվի, թե Հովհաննես թագավորի արձանագրության մեջ ակնարկված ժամատունը նախասրահ չէր, այլ առանձին շենք մը եկեղեցիեն հեռու, նման Եզր կաթողիկոսի՝ Գայանեի վկայարանին մոտ շինածին: Այս մասին ալ դարձյալ Ներսես Լամբրոնացիի մեկ ուրիշ վկայությունը ոչ միայն կհաստատե, թե Հովհաննես Սմբատի շինած ժամատունը նույն իսկ այժմյան մեր տեսած սյունազարդ նախասրահն է, այլև շատ հետաքրքրական կարծիք կհայտնե ժամատուններու ծագման ժամանակին և պատճառներուն վրա.

«Ինձ թուի թէ յորժամ ըստ մեղաց մեր ի ծառայութիւն մատնեցաք այլազգեաց, և տիրեաց հասարակաց ի վերայ աշխարհին Հայոց սուրն Իսմայէլացւոց, փախստական եղեն բնակիչք աշխարհին՝ տարաբերեալք երկիրս յորում եմք, որ էր Հոռոմոց. և ոչ ունելով ընդ նոսա հաղորդութիւն՝ զորոյ պատճառն քննեալ է յայլում վայրի, ոչ թուլացուցին նոցա Հոռոմք յիւրեանց սեպհական յեկեղեցիս որք են յայսմ աշխարհի՝ աղօթել. իսկ նոցա թափառական գոլով և բարեյոյս ի վերստին դառնալն յաշխարհն հայրենի, շինեցին միայն ըստ ժամանակին

պիտոյից մատրունս փոքրկունս, որպէս և տեսանեմք. և զի ոչ դտին վերստին դարձ, և աստ սկսան բազմանալ, տկարանայր եկեղեցին ամփոփել զնոսա, և ի հարկէ չինեցին առ ընթեր զտունսն. իսկ այն չինութիւն տանց որ ի հարկէ, փոփոխմամբ ժամանակի առ յետինս արմատ չարի եղև և հեշտութեան. քանզի յաղթելն յեկեղեցին՝ զդոյզ լինէին որպէս ի տուն աստուծոյ, և յարտաքոյն թուանային որպէս ի տուն մի հասարակաց»: (Սրբոյն Ներսիսի Լամբրոնացւոյ Տարսոնի Եպիսկոպոսի խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ և մեկնութիւն խորհրդոյ պատարագին: (Վենետիկ, 1847, երես 29-30):

Այս հատվածեն այլևս պարզ կերևա, որ նախ՝ այս ձևը զուտ հայկական ստեղծագործություն է, բոլորովին տարբեր արևմտյան եկեղեցիներու porche կամ nartex ըսված բաժանումեն, երկրորդ՝ ծագում առեր է Կիլիկիո կամ Փոքր Ասիո հայերուն մեջ և կամաց [կամաց] հասեր է բուն Հայաստան, հավանորեն 11-րդ դարեն առաջ:

Այժմ կմնա քննել խնդիր մը, թե մասնավորապես Հովհաննես Սմբատ թագավոր ինչո՞ւ չինեց Հոռոմոսի վանքի նախասրահը և ինչո՞ւ ժամատուն անվանեց: Ասով արդեն պիտի հասկնանք բոլոր ուրիշ նախասրահներու ալ նպատակը:

Նախապես մեջ բերված ապացույցներեն կհետևի, որ իբրև ապաշխարության գավիթ չէր կարող չինված լինիլ, քանի որ ապաշխարության կանոնը անգործադրելի էր, իսկ իբրև ժամատուն պաշտոնակատար քահանայից համար (presbytere), այդ ալ չէր կարող լինել, որովհետև անոնց մեծ մասը բնակության համար սենյակներ չունին: Եթե բացառիկ օրինակներ կան այդ կարգի նախասրահներու կամ ժամատուններու մեջ՝ վրան կամ կողքերը սենյակներ ունեցող, այդ սենյակներուն մեջ ալ պատարագի խորաններ շինված են, բնականաբար անոնց մեջ բնակություն ունենալ սրբապղծություն պիտի համարվեր: Հոռոմոսի և Բագնայրի վանքերու ժամատունները, ծածկի տակ, իբրև երկրորդ հարկ, ունին մանր սենյակներ, որոնցմե ոմանք խորաններ ունին. կան, որ խորան չունին, բայց անոնք ալ կանոնավոր վերելքի ճամբա կամ սանդուխ չունին. հետևաբար դժվար է ենթադրել, թե այդ սենյակներն իբրև բնակարան շինված էին. առհասարակ պատերուն մեջեն նեղ անցքերով մը միմիայն կհասնվի այդ սենյակներուն, որոնց մեջեն մեկ սարդ դժվարավ կրնա սողոսկիլ:

Ինծի կթվի, թե 11-րդ դարեն սկսած երևցող նախասրահներուն ժամատուն անունը տրվելը պարզապես նախկին ժամատուններուն ավանդական ազդեցությունն է, որոնք գոյություն ստացեր էին հայոց ձեռքով Հայաստանեն դուրս: Իսկ վերջիններուն նպատակին մասին պիտի հայտնեմ կարծիքս՝ հիմնված մասնավոր հետազոտություններու վրա:

Ինչպես ուրիշ քրիստոնյա ազգերու մեջ, նույնպես ալ հայոց մեջ, ի հնումն մեծ ձգտում եղեր է եկեղեցվո մեջ մեռել թաղելու, սակայն հայոց եկեղեցական կանոնները խստիվ արգելեր են այդ սովորությունը՝ սրբապղծություն համարելով. այս խիստ արգելքի հետևանքով իշխաններ, ազնվականներ և ուրիշ բարձրաստիճան մարդիկ սկսեր են եկեղեցիներու շուրջը տեղ գրավել առանձին շիրիմներ և դամբարաններ կանգնելու համար:

Հոռոմոսի վանքի ս. Գևորգ եկեղեցվո արևմտյան ճակատի վրա Հովհաննես թագավորի արձանագրութենեն կերևա, որ այդ տեղը արքայական դամբարան էր. այս եկեղեցվո հարավ-արևելյան անկյունին մոտ կա շիրիմ մը՝ վրան «Աշոտ թագաւոր» փորագրված, թեև հայտնի չէ, թե «Ողորմածն» է կամ անոր թոռը՝ Հովհաննեսի եղբայր Աշոտը: Նույնը կհաստատե նաև արևելյան ճակատի՝ Գագիկ Ա-ի անունով գրված արձանագրությունը: Այս արձանագրության վրա հիմնված՝ կարելի է կարծել, որ Գագիկ Ա ալ թաղված է Հոռոմոսի վանքի մեջ: Զգիտեմ ի՞նչ հիման վրա հայր Ալիշան իր «Շիրակ» երկասիրության մեջ ս. Գևորգ եկեղեցվո հյուսիս-արևելյան կողմը գտնվող բոլորակ մատուռը հանգուցարան Գագկա կանվանե: Նույնպես ս. Հովհաննեսի արևելյան կողմը բարձունքի վրայի մատուռը Սմբատ Տիեզերակալի դամբարանը կհամարի: Այս ամենուն մեջ մի բան շատ պարզ է, որ բոլոր իշխանական ցեղեր իրենց յուրաքանչյուր անհատի անունով առանձին դամբարաններ ունեցեր են շատ անգամ: Ասոր ոչ նվազ ապացույց է Ապուղամրենց ս. Գրիգորի կից Ապղարիպ մարզպանի շինած փոքրիկ տապանատունը երկու մատուռներով, ուր երեք մեծ և մի փոքր երեխայի գերեզմաններ կային: Ս. Գրիգորի վրայի Ապղարիպ մարզպանի արձանագրութենեն կերևա, որ յուր մյուս եղբայրները ոչ այդտեղ թաղված էին և ոչ ալ անոնց համար հոգեհանգիստ սահմանված էր, նույն դամբարանը հատուկ էր միայն իր հորը՝ Գրիգոր իշխանին, մորը՝ Շուշիկին, քրոջը Սեդային և փոքրիկ եղբորը՝ Համզեին:

Ապղարպի եղբայրը՝ Վահրամ Պահլավունին շիներ է Մարմաշենը որպես հանգուցարան իր սերունդին համար, ուր թաղված են ինքը, իր կինը և անոր թոռ Ղարիպը. թերևս ամբողջ սերունդը այնտեղ են, սակայն մեզ հայտնի չէ: Ապղարպի դերեզմանը հայտնի չէ, սակայն, ամենայն հավանականությամբ, պետք է լինի Անիի Փրկիչ եկեղեցվո մոտերը, որն որ ինքը շինել տված է առանձնապես: Եթե սովորություն լիներ անպատճառ ամբողջ տոհմը մի դամբարանի մեջ ամփոփել, այն ատեն այս բաժանումները տեղի չէին ունենար: Թե՛ Բագրատունի թագավորներու և թե՛ Պահլավունի իշխանական տան յուրաքանչյուր անդամի առանձին դամբարաններ ունենալեն կարելի է հետևցնել, որ Հովհաննես Սմբատ թագավորն ալ ունեցավ յուր անկախ դամբարանը և, ամենայն հավանականությամբ, այդ դամբարանը կլիներ իր կանգնած եկեղեցվո մոտը: Ուստի մեծ սխալ գործած չեմ լինիր, եթե ըսեմ, որ Հովհաննես Սմբատ թագավորն ալ թաղված է իր շինած եկեկեցվո մոտ, կամ ժամատուն ըսված նախագավթին մեջ և կամ անոր հարավային կողմին որմնակից տապանատան մեջ:

Ս. Հովհաննեսի հարավային պատին որմնակից տապանատունը թեև 13-րդ դարու սկիզբին կանգնված է վրան երեք փոքր մատուռներով, և չինողն է Խուիլու խաթուն՝ դուստր Ռուզուքան, որն որ իր արձանագրության մեջ կրսե թե՝ «չինեցի զիմ նախնեաց տապանատունս եւ զերեսին եկեղեցիս ի վերայ սորա», բայց արձանագրութենեն կերևա, որ ի հնումն ալ այնտեղ տապանատուն կամ դամբարան եղած էր. և Խուիլու խաթուն վերաշիներ է իրեն և իր սերունդին համար: Այսօրվան մեզ հասած տապանատունը Խուիլու խաթունին շինածն է, բացի արևելյան պատեն, որուն վրա կան չորս գեղաքանդակ խաչքարեր՝ 10-11-րդ դարու ոճով քանդակված: Այս չորս խաչքարերեն մեկը թե՛ շինությունով և թե՛ ձևով բոլորովին նման է ս. Հովհաննեսի ժամատան գմբեթի մեջ գետեղված ութ քարերեն մեկուն, որն որ ինծի կարծել կուտա, թե միևնույն ժամանակ շինված են ժամատան հետ և միևնույն քանդակագործի ձեռքով: Շատ հավանական է, որ Հովհաննեսի դամբարանը այստեղ եղած է, և Խուիլու խաթուն որևէ ազգակցական կապ ուներ Բագրատունիներու հետ, որով իրավունք կստանար «զիմ նախնեաց տապանատուն» անվանելու:

Ինչ կվերաբերի ս. Հովհաննեսի տաճարին կից ժամատան, անոր ալ իբրև տապանատուն կամ դամբարան շինված լինելուն ոչ մի կասկած չեն թողուր. թե՛ պատմական որոշ վկայություններ և թե՛ ուրիշ նույնօրինակ բազմաթիվ շինություններ մեզ հասած, որոնց վրա եղող արձանագրություններ և մեջը գտնված բազմաթիվ տապանաքարեր պարզ կընորոշեն անոնց կոչումը և նպատակը:

Քիչ մը վերը ըսի, թե ժամատուններու ամենեն շատ ընդհանրացած շրջանին (12-14-րդ դարեր) կանգնված եկեղեցիներուն կից ոչ մի ժամատուն միաժամանակ շինված չլինելեն զատ, անոնցմե ոմանք տասնյակ տարիներ հետո են հարակցված: Այս իրողությունը բացատրելու համար պետք է ընդունել միանգամայն, թե եկեղեցիներ շինողներ բնավ պարտավորված չէին անպատճառ միասին ժամատուն շինել, անոնք կամ իրենց վերջին օրերուն իբրև հանգուցարան ավելցուցեր են և կամ անոնց ժառանգները շիներ են հանգուցելույն իբրև շիրիմ, ուր իրենք ալ իրավունք պիտի ունենային ամփոփվելու: Նույնիսկ կան վերջին՝ 13-14-րդ դարերու մեջ կանգնված եկեղեցիներ ալ, որոնք ամենևին չեն ունեցեր նախագավիթներ:

Նկ. 102. Անիի Լուսավորիչ եկեղեցու որմնանկարները

Անիի Լուսավորիչ (Նախշի) եկեղեցվո նախագավիթը, դատելով իր զարդաքանդակներու ոճեն, պետք է որ մոտավորապես 40-50 տարի հետո շինված լինի, որովհետև, առաջին համեմատությամբ իսկ կարելի է տեսնել նախ՝ եկեղեցվո և նախագավթի զարդաքանդակներու անհունապես տարբերությունը, հետո ալ՝ գավթի զարդաքանդակներուն ավելի մշակված և հետնագույն ճաշակի պատկանե-

լը: Անիի մեջ թեև շատ կան Լուսավորչի գավթին զարդաքանդակներուն ոճը հիշեցնող քանդակներ զանազան հատուկտոր բեկորներու վրա և մասնավորապես նոր բացված վաճառատան դռանց մասերուն վրա, սակայն, քանի որ անոնց մասին ժամանակագրական ճիշտ տեղեկություն չունինք, բնականաբար Լուսավորչի քանդակներուն հետ չենք կարող համեմատության դնել ժամանակագրական կարգ որոշելու համար: Բայց Անիեն դուրս կան հիշատակարաններ, որոնց թե՛ շինության թվականները հայտնի են և թե՛ անոնց վրա կտեսնենք քանդակներու նմուշներ, որ շատ բնորոշ մասերով նման են Լուսավորչի նախագավթի զարդաքանդակներուն: Հոռոմոսի վանքին նշխարատան միջին սենյակի և անոր կից մեծ դամբարանի արևելակողմյան սեղանի վրա, որոնք շատ ուշ շինված են, քան Լուսավորիչ եկեղեցին, քանդակազարդեր կան, որոնք ըստ ամենայնի կհիշեցնեն Լուսավորչի գավթի զարդաքանդակներուն ոճը: Նմանապես Խուիլու խաթունի տապանատան վերնահարկ փոքր մատուռներեն մեկուն վրա կան նույն ոճով զարդաքանդակ խաչքարեր:

Անիի Լուսավորիչ եկեղեցվո նախագավթին շատ ուշ ժամանակ շինված լինելուն իբրև ապացույց, վերև դրված բացատրություններեն զատ, նաև կծառայի ներսի ու դրսի նկարված պատկերներուն ոճի և աշխատության տեսակներուն տարբերությունը: Ներսը և դուրսը նկարված պատկերներու տարբերությունը թեև ես վաղուց նկատած էի, սակայն չուզելով իբրև ոչ մասնագետ այդ ճշուղին հիմնվիլ միայն իմ կարծիքիս վրա, 1910 թվին խնդրեցի նկարիչ Եղիշե Թադևոսյանին քննել և իմ տարակույսներս փարատել: Խորին շնորհակալությամբ պիտի արձանագրեմ այստեղ, որ հարգելի Թադևոսյանը սիրով հանձն առավ առաջարկս և լուրջ քննութենե հետո եկավ այն եզրակացության, թե ոչ միայն ներսի և դրսի նկարներ տարբեր նկարիչներու գործեր են, այլև դրսի նկարներու մեջ գունավորման անհամեմատ տարբեր բաղադրություններե զատ՝ նկարները ևս շատ նոր են, քան ներսինները. մասնավորապես շեշտեց, թե հակառակ երկար տարիներ դրսի նկարները արեգակի և անձրևներու խոնավության ավերիչ ազդեցության ենթարկվելուն, դարձյալ գույներն ավելի թարմ պահված են, քան ներսի նկարներու գույները:

Մի քանի պարագաներ ևս ինծի ենթադրել կուտան, որ նախագավթը եկեղեցին շինող Հոնենց Տիգրանի գործը չէ և կամ անոր օրով ալ շինված չէ: Ուստի այս մասին ավելորդ չեմ համարիր իմ կարծիքներս հայտնել:

Ինչպես տեսանք հոդվածիս ընթացքին մեջ, հայոց եկեղեցական կանոններով խստիվ արգելված էր եկեղեցիներու մեջ մեռել թաղելը: Հակառակ այս արգելքին, Լուսավորիչ եկեղեցվո մեջ մեռելներ թաղված են նույնիսկ բեմի առջև, որոնց մեկուն տապանաքարին վրա վրացերեն արձանագրություն կա: Նաև, ինչ որ ավելի բնորոշ է, հավելյալ նախագավիթը զուտ հայկական ոճի ժամատուններեն բոլորովին տարբեր ձևով շինված է: Հայկական նախագավիթները կամ ժամատունները առանց բացառության շինված են փակ շրջորմով և կանոնավոր ծածկույթով հաճախ զմբեթավորված: Մինչդեռ Անիի Լուսավորչի նախագավիթը կանգնված է բացօթյա, առանց շրջափակի, միմիայն կամարակիր սյուներու վրա (portique): Այս ձևը, որ բնավ հայկական չէ, միացած եկեղեցվո մեջ մեռել թաղելու հանգամանքին հետ, կապացուցանե, որ անպատճառ Տիգրան Հոնենցեն հետո եկեղեցին անցեր է ուրիշ այլադավան ժողովուրդի ձեռք, որն ամեն փոփոխություն մտցուցեր է իր դավանության և ծեսերու թույլատրած ձևերով:

Դեռ 4-րդ դարեն սկսած հունական եկեղեցվո համար ներելի էր մեռել թաղել տաճարին մեջ, և մինչև վերջն ալ անոնց մեջ արգելք չէ եղած: Հետևաբար, արդյոք կարելի՞ է պահ մը ենթադրել, որ Տիգրան Հոնենց ալ հունադավան էր, և իր եկեղեցվույն մեջ թաղված մեռելներն ալ անոր տոհմին կպատկանին[1]: Իմ կարծիքով՝ Հոնենց Տիգրանի վրա մեր ունեցած տեղեկություններով դժվար է հաստատել անոր հունադավանությունը. փաստերը ավելի ի նպաստ հայկական եկեղեցվո կխոսին:

Հոնենց Տիգրանի անունով երկու արձանագրություններ կան երկու ուրիշ եկեղեցիներու վրա, որոնք հունադավան եկեղեցիներ լինելու կասկածանքեն շատ հեռու են: Այս եկեղեցիներեն մեկը Անիի կաթուղիկե մայր եկեղեցին է, իսկ մյուսը՝ Խծկոնքի ս. Աստվածածինը: Այս երկու եկեղեցիներուն ալ Տիգրան զանազան նվիրաբերություններ ընելով՝ հոգևոր պաշտոնեությունը պարտավորցուցեր է անընդհատ պատարագել իրեն հոգվո փրկության համար: Մինչդեռ Լուսավորիչ եկեղեցվո արձանագրության մեջ, հակառակ ահագին նվիրաբերության, իր անձին համար բնավ այդ պահանջը չէ դրած, այդ եկեղեցվո խորհրդատարությունը նվիրեր է բացառապես իր տերերուն – Զաքարյան տոհմին:

[1] Հ. Օրբելի լիովին համոզված է Տիգրան Հոնենցի քաղկեդոնիկ լինելուն, հայտնի չէ, թե ինչ հաստատուն ապացույցի վրա հիմնված: Ցանկալի էր, որ պարզաբանված լիներ այս հետաքրքրական հարցը իր գրքույկին մեջ (տես՝ Անիի ավերակները, թարգմ. Հուսիկ արքեպիսկ., Վաղարշապատ, 1911, երես 52):





Նկ. 103. Անիի Փրկիչ եկեղեցին հարավից

Զաքարե սպասալարի շրջանը դավանաբանական կռիվներու և երկու հարանվանությանց մեջ գոյություն ունեցող ատելության այնպիսի շրջան մ'է, որ նույնիսկ Զաքարե սպասալարի բոլոր ջանքերը իզուր անցան փոքր ինչ մերձեցում առաջ բերելու համար երկու տարբեր քրիստոնյա եկեղեցիներու մեջ, չնայելով, որ Զաքարե քանիցս բռնի ուժի ալ դիմեց, սակայն Գոշ Մխիթարի հանդիմանությամբ ստիպվեցավ համակերպիլ հայ ժողովուրդի ավանդապահության զգացումներուն: Այսպիսի շրջանի մը մեջ կապրեր Հոնենց Տիգրան ևս, պատարագներ կատանար զուտ հայկական եկեղեցիներու մեջ: Եթե Հոնենց Տիգրան հունադավան լիներ, ես կկարծեմ, որ ոչ ինք կզիջաներ իրեն ատելի դավանության մը պատկանող եկեղեցիներուն նվիրաբերություններ ընելով բազմաթիվ պատարագներ պահանջել և ոչ ալ հայերը հանձն կառնեին իրենց կրոնի հակառակորդի մը համար պատարագ մատուցանել հայկական եկեղեցիներու մեջ: Հետևաբար, Տիգրան Հոնենցի հունադավան լինելու կարծիքը միանգամայն անտեղի է: Բայց ի՞նչպես պարզել այն առեղծվածը, որ Լուսավորիչ եկեղեցին ունի հունադավան եկեղեցվո շատ մը հատկություններ, և ի՞նչպես անցած կարող է լինել հունադավաններու ձեռքը: Այս մասին այստեղ կգրեմ իմ կարծիքս՝ բանասերներու լուրջ քննության հանձնելու համար:

Լուսավորիչ եկեղեցվո վրա Տիգրան Հոնենցին արձանագրությենեն պարզ կերևա, որ այդ եկեղեցին չիներ է հանուն Զաքարյան տոհմի, որոնց զորավարն էր ինքը, հետևաբար եկեղեցին բացարձակ սեփականություն կդառնար Զաքարեի սերունդին: Քաղաքական նկատումներով Զաքարե սպասալարը եթե ձգտում ունեցավ պահ մը հունադավան եկեղեցվո սովորություններ մտցնել հայոց եկեղեցվո մեջ, այնուամենայնիվ չհաջողեցնե զատ, պաշտոնապես ալ չօտարացավ հայոց եկեղեցիեն և հայադավան ալ մեռավ ու Սանահնի վանքի մեջ ալ թաղվեցավ:

Լուսավորիչ եկեղեցվո շինության վերջացած թվականեն (1215) արդեն մոտավորապես երկու տարի առաջ Զաքարեն մեռած էր և անոր իշխանությունը անցած էր յուր փոքրահասակ որդուն՝ Շահնշահին, և այդ պատճառով ալ արձանագրության մեջ քահանայից վրա պարտականություն կդնե պատարագել միայն Շահնշահի և անոր որդիներու համար, Զաքարեի անունը չկա: Ուստի, եկեղեցվո արձանագրությունը գրված օրեն եկեղեցին դարձավ Շահնշահի սեփականությունը, որուն ապացույցը պիտի տեսնենք քիչ հետո:

Ըստ Վարդան Բարձրաբերդցիի վկայության՝ Զաքարեի մահվան ժամանակ որդին Շահնշահ հինգ տարեկան էր, հետևաբար եկեղեցին ժառանգած օրը պետք էր յոթ տարեկան մանուկ լիներ, ուստի նույն ժամանակ Շահնշահ ևս չէր կարող հունադավան լինել, նախ որ շատ փոքր էր, հետո ալ դեռ կենդանի էր իր հոր խոստովանահայր Գոշ Մխիթարի նման ազդեցիկ վարդապետը: Եթե Շահնշահ հունադավան լիներ, Տիգրան ալ այնքան մեծ նվիրաբերություններ չէր ըներ այդ եկեղեցվույն, պարզևելով անոր մի ամբողջ իշխանական հարստություն:

Բայց Շահնշահին մեծանալեն հետո արդեն հանգամանքները փոխված են. Շահնշահ յուր հայրենի դավանությունը փոխելով՝ հունադավանությունը ընդուներ է Իվանեի կնոջ՝ Խոշաքի ջանքերով: (Վարդան Բարձրաբերդցի, Մոսկվա, 1861, երես 183–184): Ահա այս ժամանակեն սկսյալ պետք է փնտռել Անիի Լուսավորիչ եկեղեցվո հունական տարազի զգեցման սկզբնավորությունը:

Որ գրեթե ամբողջ մեկ դար Շահնշահի սերունդն այս եկեղեցվո բացարձակ տերն էր, այդ կապացուցանե եկեղեցվո արևելյան կողմի արձանագրությունը: 1310 թվականին Շահնշահի թոռը՝ Շահնշահ Բ. եկեղեցին նվեր տվեր է ոմն Մաթեսի և իր կնոջ ու եղբորը՝ Մարկոսին (հ. Ղ. Ալիշան, «Շիրակ», երես 79):

Ապացույցի կարոտ է վճռելու համար, թե Շահնշահի սերունդը մնա՞ց միշտ հունադավան կամ քաղկեդոնիկ հայ, և Մաթես, Թենի ու Մարկոս, եկեղեցվո վերջին ժառանգներն ալ քաղկեդոնիկնե՞ր էին: Այս վերջիններու արձանագրությունը հայերեն լեզվով գրված լինելը մեծ գրավական է անոնց քաղկեդոնիկ չլինելուն, եթե ոչ, ի՞նչ հարկ պիտի ստիպեր զիրենք, որ անպատճառ հայերեն գրեին, քանի որ եկեղեցվո նախորդ տերերը ամեն բան փոխեր էին, ներսի պատկերներու մեջ նորոգություն կատարելով՝ վրաները գրեր էին վրացերեն[1], խորանի առջև թաղված մեռելի տապանաքարին վրա վրացերեն արձանագրեր էին. հայոց եկեղեցական ոճին հակառակ՝ դավիթը փոխանակ շրջափակով շինելու, բացօթյա շիներ էին: Վերջապես, օտարացնելու ամեն ջանք ակներև է նախորդներու կողմանե:

Շահնշահ Ա-ենն հետո Լուսավորիչ եկեղեցին միշտ քաղկեդոնիկ մնացած լինելուն ապացույց կլինի, եթե հաստատվեր, որ Շահնշահ Ա-ի սերունդը շարունակեց հունադավանությունը, եթե ոչ, ժամանակավորապես միայն Շահնշահ Ա-ի օրով, գուցե քիչ մը ավելի մնացեր է քաղկեդոնականներու ձեռք: Հետո ալ արդեն, ինչպես արձանագրությենեն կերևի, անտերության մատնվեր է Զաքարյաններու Անիեն հեռանալնուն պատճառավ. Մաթես օգտվելով եկեղեցվո անտեր դրությենեն, խնդրեր է Շահնշահեն նվիրել իրեն:

[1] Ե. Թադևոսյան և Ա. Ցեթվաճյան ներսի և դրսի պատկերներու վրա գրված դարերու ոճին մեջ տարբերություն չգտան, հավանական համարեցին միաժամանակ գրված լինելը:






Նկ. 104. Անիի Փրկիչ եկեղեցու հատակագիծը

Շատ հավանական է, որ բացառապես Անիի Լուսավորիչ եկեղեցվո գավիթը շինված է, իբրև ապաշխարողաց գավիթ, հունադավան հայերու ձեռքը եղած ժամանակ, որոնց մեջ թերևս գործադրության մեջ էր ապաշխարության կանոնը, և, իհարկե, անունն ալ ժամատուն չէր կարող լինել, ինչպես բոլոր մյուս հայ եկեղեցիներու նախասրահները: Իբրև հանգստարան՝ տապանաքարեր ալ չեմ տեսած այնտեղ, եթե չեն տարված:

Այժմ կմնա գիտնալ, թե ինչո՞ւ համար հայոց եկեղեցիներու կից սրահներուն ժամատուն և գավիթ իրարմե տարբեր անուններ անխտիր գործածեր են, և ե՞րբ է սկսեր այդ անխտիր գործածությունը:

Հայոց մեջ եկեղեցվո նախասրահներ ծագում առած ժամանակ, 10–11-րդ դարերեն մինչև 12-րդ դարու վերջերը նույն նախասրահներուն միմիայն ժամատուն անունը տված են թե՛ արձանագրությանց մեջ և թե՛ պատմագրական տեղեկություններու մեջ: 12-րդ դարու վերջերեն է, որ սկսած է ոչ միայն գավիթ, այլև զանազան տեսակ անուններ տրվել անոնց, որոնց նշանակությունը և պատճառները փնտռել, ըստ իս, կարևոր է:

Հայոց եկեղեցիներուն հետ կապված գավիթ բառը թեև շատ հին է, սակայն 10-րդ դարեն առաջ գավիթ բառն այն նշանակությունը չուներ, ինչ-որ 10-րդ դարեն հետո: Ի հնումն գավիթ կնշանակեր եկեղեցվո շուրջ պատող ընդարձակ շրջափակ մը գոյացած բացօթյա մաս: Այս նշանակությամբ ալ ցույց տրված են հին պատմագրաց մեջ:

## Զ

## ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐ[1]

Այն բոլոր շենքերեն հետո, որոնք բնավ պատուհաններ չեն ունեցեր և ուշ ժամանակ բացվեր են, միայն մեկ կողմին վրա, ինչպես Շիրվանշահաց, Երերույք, կարգը կուգա հետազոտելու պատուհաններ ունեցող շենքերուն առանձնապես պատուհաններու ձևերը, որոնք ժամանակագրական տեսակետով ունին իրենց առանձին նշանակությունը:

Համեմատական որոշ քննություններով տեսանք, որ Տեկորի, Երերույքի և Քասաղի եկեղեցի-

[1] Այս գիտողությունը վերցված է Հեղինակի ձեռագրից և տպագրվում է առաջին անգամ:

Կազմող

ները կպատկանեն ամենաուշը 5-րդ դարուն: Այս եկեղեցիներուն վրա գտնված պատուհանները անհամեմատ կերպով խոշոր են, քան հետագա որևէ շրջանի պատուհանները, բացառությամբ 7-րդ դարեն: Այս խոշոր պատուհաններուն 7-րդ դարու պատուհաններեն ունեցած բացարձակ զանազանությունն այն է, որ ներսեն և դրսեն հավասար բացվածք ⊐⊏ ունեն, իսկ արտաքուստ կամ բոլորովին շրջանակ չունին և կամ եթե ունին՝ առանց քանդակազարդության, պարզ moulure-ներ են, որոնք, վերևի կիսաբոլորակ կամարը պսակելեն հետո, կիջնեն մինչև պատուհանի ստորին հատակը և այդտեղեն կդառնան հորիզոնական կերպով, փոխանակ սովորական հունական ոճերու կիսաբոլորակի centre-ի ուղղությամբ դառնալու:

Իսկ 6-րդ և 7-րդ դարերուն պատուհաններու մեծության համաչափությունները թեև չեն փոխված, թերևս քիչ մ'ալ ավելի մեծ են, քան 5-րդ դարու պատուհանները, սակայն, շատ քիչ բացառությամբ, ամենն ալ ներսի կողմեն լայն և դրսեն նեղ abat-jour ⊐⊏ բացված են. օրինակ՝ Բագարանի եկեղեցվո բոլոր պատուհանները abat-jour են, սակայն վերևի չորս կողմի fronton-ներու ներքև իջնող պատուհանները 5-րդ դարու ձևի շարունակությունն են:

Բացի այս հատկությունը, արտաքուստ պատուհանի կատարի կիսաբոլորակները զուգահեռական պսակված են հարթ մակարդակի վրա քանդակված կամ moulure-ազարդ և կամ ուրիշ զանազան ծաղկանկար քանդակներով. այս պսակները 5-րդ դարու ոճերու նման փոխանակ պատուհանին մինչև հատակը իջնելու, կատարի կիսաբոլորակ centre-ի ուղղությամբ՝ կդառնան աջ ու ձախ հորիզոնական ձևով և կկտրվին առանց երկար շարունակվելու:

## Է

## ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՀԻՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԵՋ[1]

Հայտնի նշաններ շատ կան, որ հայոց եկեղեցիներու մեջ պատկերներ նկարելու սովորությունը չէր մտած մինչև 12-13-րդ դարերը (7-րդ և 10-րդ դարերուն կան նկարազարդ եկեղեցիներ, բայց թվով շատ քիչ, այդ մասին առանձին տեսությամբ կխոսվի), որովհետև իմ հետազոտած բոլոր եկեղեցիները, որոնց հիմնարկությունն ավելի հին է, քան 12-13-րդ դարերը, անոնց մեջ միանգամայն պատկերներ չկան, բացի այն դարերեն առաջ շինվածներեն, նաև հետո շինվածներուն մեջ ալ շատեր կան, որ պատկերներ չունին:

Ինչպես կերևի, կրոնական մի որևէ վարդապետություն այդ դարերեն սկսյալ ներդործել է հայոց վրա, սակայն ոչ բոլորովին միահամուռ: Որովհետև եթե ընդհանուր ներգործություն ունենար այս արտաքուստ եկած սովորությունը, պետք էր որ 12-13-րդ դարերուն կամ անկեց հետո շինված բոլոր եկեղեցիներուն մեջ պատկերներ գտնվեին:

Անիի մեջ հինգ եկեղեցիներ կան, որոնց մեջ գոյություն ունին պատկերներ՝ առավել կամ նվազ չափերով: Այս եկեղեցիներեն առաջինը կհանդիսանա ս. Գրիգոր Լուսավորիչ (Նախշլի) եկեղեցին, որն որ հիմնարկած է մի ոմն իշխան Տիգրան Հոնենց՝ զորավար Զաքարե սպասալարի (ՈԿԴ) 1215 թվականին:

Հոնենց Տիգրան, հարավային պատին վրա եկեղեցի շինության մասին գրած երկար արձանագրության մեջ կհիշատակե, որ շենքը լրանալեն անմիջապես հետո զարդարել տվել է եկեղեցին պատկերներով (շինեցի զեկեղեցիս յանուն սրբոյն Լուսաւորչին Գրիգորի և զարդարեցի բազում զարդիւք, փրկական նշանաւք սուրբ խաչիւ ոսկիք և արծաթիք և պատկերագործ խատերով): Պատկերներն ընդհանրապես առնված են ավետարանեն և այսմավուրքեն. ի միջի այլոց նշանավոր տեղ կբռնեն Տրդատ Թագավորի երկու պատկերները, որոնց մին կներկայացնե Գրիգոր Լուսավորչի դատաստանը, իսկ մյուսը՝ քրիստոնեությունն ընդունելեն հետո երեք Թագավորներով միասին ձիավոր խումբով մը էջմիածին մուտքը[2]:

Կասկածելի կներկայանա քանի մը պատճառներով, որ այսօրվան գտնված պատկերները նույն իսկ Հոնենց Տիգրանի նկարել տվածները լինին: Որովհետև Հոնենց Տիգրան, եկեղեցիի շինության արձանագրությունը հարավային պատին վրա հայերեն գրել տալեն հետո, դժվար թե ինքզինքը պարտավորված զգար պատկերներուն վրա վրացերեն և հունարեն տառերով արձանագրել տալ: Եթե Հոնենց Տիգրան քաղկեդոնիկ էր (ինչպես կվանա

[1] Այս հոդվածը անավարտ մնացած աշխատություն է, որը տպագրում ենք ձեռագրի սեպագիր օրինակից:

Կազմող

[2] Այս մասին տեսնել պրոֆ. Ն. Մառի տեղեկությունը՝ քաղած վրաց պատմագիրներեն:



հաստատել պրոֆ. Ն. Մառը) և վրացերենը հասկանալի լեզու էր տեղացի քաղկեդոնիկ հայերու համար, բնականաբար, կրոնի նախանձախնդրությենե մղված, արձանագրությունն ալ պիտի գրեր վրացերեն: Իսկ եթե տեղացիներու համար անհասկանալի էր վրաց լեզուն, բնականաբար անօգուտ պիտի լիներ պատկերներու վրա ևս վրացերեն գրվելը:

Ենթադրություններե ավելի պարզ պատճառներ կան հաստատող, որ եկեղեցին երկրորդ անգամ նկարված է:

Ոչ միայն տաճարին մեջը, այլև դուրսի գավիթի պատերն ալ զարդարված են նկարներով միևնույն ոճով, այսինքն ընդհանրապես՝ բյուզանդական ոճով: Սակայն պետք է գիտնալ, [որ] գավիթը միաժամանակ չէ շինված եկեղեցիի հետ, այլ եկեղեցիեն շատ ուշ, կարելի է տասնյակ տարիներ հետո: Որովհետև գավթի շինությունով ծածկվեր են եկեղեցիի ճակատը զարդարող շատ մը զարդաքանդակներ, որոնք միևնույն խնամքով ու մեծ ճարտարությամբ քանդակված են՝ թե՛ շինողին և թե՛ տեսնող ժողովրդյան հաճելի տպավորություն ընծայելու համար:

Երբ գավիթը շինվեր է, այս գեղեցիկ զարդարանքները ծածկվեր են թե՛ որմնասյուներու և թե՛ առաստաղներու թանձրությանց ներքև:

Գավիթը շինվելեն առաջ, միմիայն ներսը եղեր են նկարներ, դուրսը բոլորովին ներկ կամ նկար չէ եղած: Գավթի մեջ պատկերները նկարելեն զատ, զարդաքանդակները, որոնց մեջ կան նաև թռչնոց պատկերներ, ամենն ալ գույնզգույն ներկեր են: Իսկ պարզ սրբատաշ քարերուն վրա տեղ-տեղ միագույն և տեղ-տեղ ալ ներկով զարդանկար են շինված: Այս կապացուցանե գավթի այժմյան փլվածքը, վասն զի փլուզումեն բացված մասերու վրա ամենևին ներկի կամ գույնի հետք չկա:

Այս երևույթներեն կհետևի, որ Լուսավորիչ եկեղեցին շինվելեն տարիներ հետո դարձեր է վրացական եկեղեցի, որոնք [վրացիները] ըստ յուրյանց ճաշակի նորոգելով, թերևս ավելացնելով գավիթն ալ, վերստին նկարազարդեր են ներսեն և դրսեն:

Ինչ որ ալ լիներ հայոց մեջ գավիթներու նախնական նշանակությունը, ի վերջո 13-14-րդ դարերուն մեջ, շատ պարզ է, որ անոնք ծառայեր են իբրև տոհմային դամբարան: Բնականաբար այդ գավթին մեջ առաջին անգամ թաղվելու իրավունք ուներ եկեղեցին շինողը և կամ իրմե առաջ մեռնող հայրը, զավակը և կամ իր շատ մոտ մի ցեղակից: Երկար ժամանակ անցնելե հետո, երբ այդ ցեղը մի կերպ կանհետանար կամ կնվազեր, այն ժամանակ, իհարկե, տեղ կբացվեր գավթի մեջ թաղվելու արժանի համարված ուրիշների:

Օրինակներ շատ կան այս մասին: Ապուղամրենց ս. Գրիգորի կողքին (հյուս. կողմը) թաղված են նույն տոհմային եկեղեցին շինող Գրիգոր իշխանը և յուր երկու որդիները՝ Համզեն և Սեղան[1] (ինչպես կերևի, ի սկզբան առանձին մատուռ շինելու սովորություն եղեր է հոգեհանգստի համար, սակայն հետո պարզապես գավթի մեջ թաղելով, տոհմային եկեղեցիի ավագ խորանին կամ կողմնակի փոքր մատուռներու մեջ կատարեր են հոգվո փրկության աղոթքը):

Նույնը ցույց կուտա նաև Մարմաշենի եկեղեցիի արձանագրությունը, որ այդ եկեղեցին շինված է իբրև տոհմային դամբարան՝ Վահրամ Պահլավու-

[1] Ըստ արձանագրության՝ 1040 (ՆՁԹ) թվականին շինված է այս տոհմային դամբարանը՝ Գրիգոր իշխանի շինած տոհմային եկեղեցիի հյուսիսային կողմը, որն որ 1907 թվականին բացվեցավ իմ կատարած մասնավոր պեղումներով: Շինողը, Գրիգորի տղան Ապղարիպ, Հայոց մարզպանն է, որն որ շիներ է, մղված որդիական երախտագիտությենե. այդ դամբարանը շինված ժամանակ ոչ միայն հայրը՝ Գրիգոր մեռած էր, այլև մայրը՝ Շուշան, Սեղա անունով քույրը և փոքր եղբայր, «մանուկն Համզե» (տես արձանագրությունն Մարմաշենի), ուստի սույն չորս հանգուցյալներուն համար շիներ է սույն դամբարանը, որուն մասին կգրե արձանագրության մեջ, «Ի ՆՁԹ թուականիս ես Ապղարիպ մարզպան հա[յ]ոց որդի Գրիգորո[յ] և Թոռն Ապուղամրի, հայոց իշխանաց, թէպէտ և անտես էի ի հաւրէ իմ[մ]է յաղագս կր[տ]սերութեան. այլ հարկեցա ի ծնողական սիրոյն և շինեցի զայս հանգստարան հաւր իմոյ, Գրիգորո[յ] և եղբաւր իմոյ, Համզէի, քեռ իմոյ, Սէդայի. և շինեցի սենեակ բ. զուրբ Սաեփաննոս և զուրբ... Պայման քահանայիցդ այս է, որ զամէն ուրբաթ ի ս(ուրբ Ստեփ)... ժամն իմ մաւրն Շուշանա, արասցեն և զշաբաթն իմ հաւրն Գրիգորո[յ] և ի սուրբ Քրիստափոր՝ զամէն ուրբաթ իմ քեռն, Սէդա[յ]ի և զշաբաթն իմ եղբաւրն արեւ Համզէի և առաջաւորաց ուրբաթին և աղցաց ուրբաթանոյն փոխան արձակ աւուրքն արասցին Ը. աւր.» և այլն և այլն:

Իմ պեղման մեջ բացվեցավ այս դամբարանը և շատ պարզ երևացին արձանագրության ցույց տված ս. Ստեփաննոս և ս. Քրիստափոր մատուռները՝ առաջին փոքրիկ շրջանակով մը: Ս. Ստեփաննոս շինված է արևելյան կողմը, եկեղեցիեն հեռու և հարավային կողքին կպած է մի մեծ գերեզման՝ առանձին ծածկով և դռնով, որ հավանաբար Գրիգոր իշխանի գերեզմանն է. այս գերեզմանի դռան առվեն գտնվեցան խաչքարի փշրանքներ և հին արձանագրության բեկորներ, սակայն անհնար եղավ կարդալ: Անշուշտ Գրիգորի արձանագրությունն էր:

Ս. Քրիստափորը կցված է անմիջապես եկեղեցիին, ավելի փոքր, քան ս. Ստեփաննոսը: Այս մատուռին հատակը ավելի ցած է, քան ս. Ստեփաննոսը և Գրիգոր իշխանի գերեզմանը:

Ս. Քրիստափորի դռան առվև, որ դեպի հյուսիս կբացվի (ս. Ստեփաննոսինը դեպի արևմուտք), անմիջապես առվևը կային երկու մեծ տապանաքարեր, որոնց մեկը տարեր են չարահոգի վանդալներ, իսկ մյուսը կմնա: Հավանաբար ասոնցմե մեկն էր Սեդայի գերեզմանը և մյուսը՝ Շուշանա, եթե այս վերջինս չէ թաղված իր շինած սեփական եկեղեցիի քով, Մաղկոցաձորի եգերքը, Մինչաբերդի մոտ, որուն դռան վրա արձանագրությունը գտավ Կ. Բասմաճյան 1903 թվականին, և հետո նույն արձանագրությանը պրոֆ. Մառ փոխադրեց Թանգարան: Թեև այս ժամանակ մեռած էր նաև Գրիգորի մյուս որդին՝ «Վասակ իշխանաց իշխան, և նահատակեցաւ ի Թուրքաց պատերազմին» (տե՛ս Մարմաշենի արձանագրությունը), բայց քանի որ արձանագրության մեջ չի հիշատակվեր, ըսել է թե նա ուրիշ տեղ թաղված էր (հավանաբար Մարմաշենի մեջ):

Ս. Ստեփաննոսի դռան առջևն էր մանուկն Համզեի գերեզմանը, մի փոքրիկ օրորոցաձև քար, թեև տեղն ալ խախտված էր մի քիչ. ինչպես կերևի, այստեղ մի ժամանակ, երբ վրայի ծածկույթը չէր փլված, թափառական ցեղեր բնակեր են, որովհետև պեղման ժամանակ գտնվեցան նաև մի խոփ և երկաթի ուրիշ կտորներ:

նիի ձեռքով (ՆԼԵ-ՆՀԸ): «Բայց զտեղի հանգստեանս մերոյ առաւել պատուով պայծառացուցաք...»: Ավելի քան 200 տարի այս եկեղեցիի շուրջը իբրև տոհմային դամբարան ծառայել է Պահլավունիներու և մասնավորապես Վահրամի ցեղին (որովհետև ուրիշ Պահլավունիներ ալ թաղված են Առաքելոցի գավիթներուն մեջ): Հյուսիսային պատի վրա (ՈՀԴ) 1225 թվին գրված արձանագրութենեն կտեղեկանանք, որ դարձյալ Վահրամի թոռները ազատելով այդ տեղը «յանաւրինաց», վերստին նորոգեր են և այնտեղ թաղեր են իրենց ցեղեն «մարտիրոսացող խորիփը»... առ դրան ս. Կաթողիկէիս մերձ առ նշխարս Հաւրն մերոյ Վահրամայ իշխանի»: Մարմաշենի արևմտյան կողմի ընդարձակ գավթին պատերը և կամարակալ ծածկույթը կրող որմնասյուներ տակավին կմնան:

Ղոշավանքի ս. Գևորգ եկեղեցին արձանագրած է իբրև Բագրատունի թագավորաց հանգստարան. այստեղ թեև եկեղեցիին կից գավիթ չկա, սակայն արևելյան կողմը, ուր կա այժմ Աշոտի գերեզմանը, շինված են առանձին ծածկույթներ և մատուռներ, որոնց հետքերը դեռ չեն կորած, ինչպես մայր եկեղեցիի արևելյան կողմը:

Պահլավունի կղերների սեփական աթոռ Անիի Առաքելոց եկեղեցիին գավթին մեջ պրոֆ. Մառի պեղումներով բացվեցավ Սարգիս արքեպիսկոպոսի մահարձանը. եկեղեցիի արևմտյան պատին կցված և այդ տեղի շրջափակը, իմ կարծիքով, ծառայած է իբրև դամբարան միմիայն Պահլավունի ցեղի կղերականներու համար:

Այսպիսի օրինակներ շատ կգտնվին, որոնց միառմի թվելը շատ երկար կլինի:

Այս տեսությամբ անհրաժեշտ է, որ ս. Գրիգոր Լուսավորչի գավթին մեջ թաղված լիներ Հոնենց Տիգրանի տոհմը, սակայն Ծաղկոցաձորի քարայրին մեջ գտնված արձանագրությունը կապացուցեր, որ Հոնենցի դամբարանը այնտեղ Ծաղկոցաձորի մեջ՝ հատկապ նկարազարդ ժայռակոփ մատուռի մը մեջ էր: Եվ սա արդեն շատ բնական էր, որովհետև Հոնենց Տիգրան, ըստ արձանագրության, ս. Գրիգորը շինած էր իբրև վանք և ոչ իբրև տոհմային եկեղեցի, ուր պատարագ պետք էր մատուցվեր միմիայն իր տերանց արևշատության և իր մեղաց թողության համար, հակառակ այն ժամանակվան սովորության, որ անհրաժեշտ էր ի կենդանություն՝ ցեղի անցյալին և հետո ալ իրեն հոգվույն համար պատարագ կտակել, մանավանդ որ մի ահագին հարստություն էր նվիրած և իրավունք ուներ պահանջելու: Ակեց կերևի, որ Հոնենց Տիգրան մի ուրիշ եկեղեցի ուներ իր տոհմին համար մշտնջենական պատարագ մատուցանելու համար:

Իմ կարծիքով՝ Տիգրանի մեռնելեն շատ հետո, վրացացած մի իշխան, որպիսիք էին Զաքարեի տղան՝ Շահնշահը, Իվանեի սերունդը, և կամ նույնիսկ Տիգրանի սերունդեն մեկը դավանափոխությենեն հետո, իբրև հայրենի ժառանգություն, ձեռք դնելով այս վանքին վրա, սեփականեցին իբրև եկեղեցի, ուր նաև թաղվեցան տաճարին մեջ հակառակ առանց բացառության հայոց մեջ մերժված սովորության: Բացի Լուսավորչեն, ուրիշ ոչ մի եկեղեցի չենք գտներ, որուն մեջ մեռել թաղված լինի այդ դարերուն մեջ: Պատահեր է կրկնահարկ շինել և գետնահարկին մեջ (cryple) թաղել, իսկ բուն տաճարին մեջ, սեղանին առջև՝ ո՛չ երբեք:

Արդեն գավթի ձևն ալ հայոց շինած գավիթներեն բոլորովին տարբեր ձև ունի. սա ոչ թե ընդունված սովորության համեմատ շրջափակ է, առանձին մուտքով, այլ պարզապես մի այունազարդ ծածկույթ է, որն որ մինչև այսօր ընդունված է հունական եկեղեցիներու մեջ և կամ հունական ազդեցության ենթարկված հայոց եկեղեցիներու մեջ:

Ահա այս վերջին տիրապետողի գործը կարելի է համարել, երկրորդ անգամ տաճարին և գավթին նկարազարդումեն զատ, նաև գավթին ալ շինությունը, որուն ոճը արդեն ցույց կուտա, որ մինչև այն մշակված 13-րդ դարու վերածնված արվեստեն շատ ավելի տարբեր և մշակված ոճ է:

Եթե ճշմարիտ է, որ Տակայշվիլին գտած է ապացույցներ, որ 14–15-րդ դարերուն Անիի մեջ եղեր են վրացի իշխաններ (Շահնշահ անունով), այն ատեն այդ շրջանին պետք է վերագրել Լուսավորչին բոլորովին վրաց սեփականություն դառնալը: Եվ սա արդեն ամենեն հարմար եկեղեցին էր, որովհետև ուրիշ եկեղեցիներ ամենն ալ իրենց սեփական տերերն ունեին նույն ժամանակներ և տակավին բավականին ազդեցիկ վիճակի մեջ:

Երկրորդ նկարազարդ եկեղեցին է Անիի մեջ Փրկիչ եկեղեցին, որ շինած է Ապլղարիպ մարզպանը 1036 թվականին:

Ինչպես ուրիշ հին եկեղեցիներ, նույնպես ալ այս եկեղեցին ի հնումն չէր կարող նկարներ ունենալ, մանավանդ որ, վրան գտնված արձանագրության մը համաձայն, 1178 թվականին գրեթե մեծ մասամբ նորոգվեր է: Մասնավորապես գմբեթը, որ բոլորովին 12–13-րդ դարերու ոճով շինված է. հայտնի բան է, որ գմբեթը բոլորովին նոր շիներ են 1173 թվականին:



Այս վերջին նորոգության ժամանակ ևս չէ նկարազարդված Փրկչի եկեղեցին, այլ շատ ավելի ուշ ժամանակ, որովհետև եթե նորոգության ժամանակ լիներ անոր նկարազարդումը, անպայման պետք էր, որ ծեփված և նկարված լիներ գմբեթն ալ դեռ, լաստակերտերը չքանդված, ինչպես եղեր է ս. Գրիգոր (Նախշի) եկեղեցին: Հիմա գմբեթը բոլորովին առանց ծեփի և նկարի կմնա և որևէ հետք ալ չկա. հայտնի բան է, որ շատ թեթև ծախքով մը ստորին մասը ծեփեր և վրան նկարեր են նորոգութենեն շատ հետո: Նկարիչն այստեղ ինքզինքը նկարած է հյուսիսային աբսիդներեն մեկուն մեջ ծնկաչոք և ձեռքերը երկնցուցած դեպի ավետարանիչը և ներքևը գրած է. «ս. Աւետարանիչ բարեխօսեա՛ վասն Սարգսի Փառչկեանս»: Նույն Սարգիս Փառչկյանը կհիշատակվի Խծկոնքի արձանագրության մը մեջ 1215 թվականին. պատկերին մեջ տակավին սև մորուքով նկարված, հազիվ 50 տարեկան երևույթ ունի: Սարգիս Փառչկյանի անունը հիշատակող այս երկու թվականները համեմատելով, կտեսնենք, որ Փրկիչ եկեղեցին նկարելեն 43 տարի հետո է, որ. Խծկոնքի մեջ կհիշատակվի...:

Փրկչի նկարներուն մեջ ալ հունական ազդեցությունը ակներև է. խորանին մեջ նկարված է գրեթե նույն պատկերը, ինչ որ Լուսավորչի գմբեթին մեջ (անպայման Լուսավորչի խորանին գմբեթարթն ալ կունենար նկարներ, սակայն այժմ չկան). Քրիստոս նստած աթոռի մը վրա, մեկ ձեռքով գիրք մը բռնած, մյուսով խաղաղություն կուտա: Շուրջը հրեշտակներ: Մի ուրիշ պատկերի վրա, հյուսիսային abside-ներեն մեկուն մեջ, նկարված խաչը ունի թեքված ավելորդ թև մը ևս:

Երրորդ եկեղեցին Ապուղամրենց ս. Գրիգորն է, որուն հազիվ հետքերը կերևան խորանին գմբեթարթին մեջ, սակայն որչափ գծերեն կնշմարվի, դարձյալ նույն բյուզանդական Քրիստոսն է այնտեղ բազմողը՝ շուրջը հրեշտակներով: Մյուս abside-ներու մեջ եղածները ամենն ալ ավրված են, միայն հարավային կողման աբսիդներեն մեկուն մեջ քանի մը գունավոր գծեր մնացեր են պատկերի գոյությունը ապացուցանող:

Այս եկեղեցիին մեջ ալ նույն բանը պատահեր է, ինչպես որ Փրկիչ եկեղեցիին մեջ. ի սկզբան բոլորովին պարզ սրբատաշ քարերով շինված է, առանց նույնիսկ ծեփի, հետո, երբ հարկ եղած է նկարել, միայն abside-ները ծեփեր են գաճ ու կրով և վրան նկարեր են:

Անիի այս նկարազարդ երեք եկեղեցիներուն պատկերները եթե արվեստագիտական աչքով քննվի, պիտի տեսնվի, որ ամենն ալ ժամանակակից նկարներ են: Մի քիչ Փրկիչը կտարբերի նկարվելիք նյութերու ընտրությամբ: Փրկչի մեջ բազմաթիվ սուրբեր խտացած չեն պատերու վրա, այլ շատ ընտրանոք ամենակարևոր դեմքեր են ընտրված, ինչպես ավետարանիչներ, առաքյալներ և քանի մը հատ ալ ավետարանի պատմութենեն առնված տեսարաններ, ինչպես ընթրիքի սեղանը և այլն:

Չորրորդ նկարազարդ եկեղեցին է եղեր 1892–93 թվականներուն պրոֆ. Մառի պեղած ս. Գրիգոր անվամբ մի եկեղեցին հյուսիսային պարիսպներուն մոտ, դեպի Իգաձոր տանող ճանապարհին վրա, վրացոց եկեղեցիին արևմտյան կողմը: Այս եկեղեցիի նկարներու բեկորները մասամբ հավաքված են Թանգարանին մեջ, որոնց մեջ կգտնվին Գրիգոր Լուսավորիչ, Գրիգոր Նյուսացի և այլն և այլն: Այստեղ հավանական էր, որ եկեղեցիի շինության հետ միաժամանակ նկարված էր, որովհետև ինքը արդեն 13-րդ դարու եկեղեցի է և այն ժամանակ եկեղեցիներու պատկերազարդությունը բավականին տարածված է եղեր հայոց մեջ:

Մայր եկեղեցին ալ ունեցեր է մի ժամանակ պատկերներ, միայն խորանին մեջ, այն ալ եկեր է ժամանակ, որ դարձյալ բարակ ծեփով ծածկեր են: Ըստինքյան շատ հետաքրքրական կներկայանա կաթուղիկեի մեջ խորանին նկարազարդվելն ու վերստին ծածկվելը ժամանակագրական տեսակետով և գուցե այս հետաքրքրական հարցին լուծմամբ պարզվի նաև ս. Փրկչի և Ապուղամրենց ս. Գրիգորի նկարազարդության ալ ժամանակը:

Բոլորովին պարզ է, որ կաթուղիկեին խորանին մեջ ի սկզբան պատկեր գոյություն չուներ, և չէր կարող ունենալ, որովհետև եկեղեցին շինված ժամանակ խորանին գմբեթարթի քարերն ալ քանդակազարդեր են, որոնք այժմ, շնորհիվ թափված ծեփերու, տեղ-տեղ սկսեր են երևնալ: Հետո, առանց խնայելու անոր քանդակազարդության, ծեփեր և վրան նկարեր են (Անիի դատարկումեն հետո, պետք է որ վերստին մահմեդականաց ձեռքը անցած ըլլա կաթուղիկեն և իբրև մզկիթ գործածված, հավանաբար այն ժամանակ ծեփեր են պատկերները):

Սեղանի խորշերը պսակող corniche-ին տակ շուրջանակի մի կարգ գրեր կան, որ շատ հետնագույն ոճ ունեն:

# Ը

# ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ[1]

## I

*Ըստ ամենայնի գեղարվեստական կատարելությամբ կանգնված բազմաթիվ հիշատակարաններ և վերջին տարիներու մեջ կատարված բարեխիղճ հետազոտությանց տված նպաստավոր եզրակացություններ լիովին կապացուցեն, թե հին հայեր ինքնուրույն ճարտարապետական արվեստի մը զարգացման մեջ ետ չեն մնացած ժամանակակից ազգերե:*

*Բայց թե ո՞րչափ հին է հայ ճարտարապետության ծագումը, այդ հայտնի չէ. ես պիտի ըսեմ, որ այնչափ հին է, որչափ ինքը՝ հայ ազգը: Որովհետև անկարելի է, որ տասնյակ դարեր առաջ ինքնուրույն կազմակերպություն, անկախ դիրք և միջազգային քաղաքականությանց մեջ կարևոր դեր ունեցող ազգ մը նաև չունենար իր սեփական ճաշակը, ապրելու պայմանները ու իր ցեղին և միջավայրին հատուկ վայելչասիրական և փառասիրական ձգտումները:*

*Գոնե նախաքրիստոնեական շրջանի վերջին դարերու մասին հայ և օտար պատմագիրներու վկայություններ չեն պակսիր հայերու փառասիրության և աշխարհաշինության մասին, որոնցմե ոմանք թեև իբրև մեղադրանք արձանագրված են զանազան նկատառումներով, այնուամենայնիվ ճշմարտություններ ըլլալուն կասկած չկա: Հայուն թշնամիներեն մեկը եթե իր աշխարհագրական աննպաստ դիրքն էր, որուն պատճառով իրարու վրա արշավող մեծ ազգերու ոտքին տակ կոխկրտվեր է, մյուս թշնամին ալ եղած է հարուստ, փառասեր ու փարթամ կյանքը, որ հաճախ դրացի բարբարոս ազգերու նախանձն ու ավարի ախորժակն է գրգռած և այս պատճառավ ալ Հայաստանը անընդհատ արյան ծովի մեջ է լողացած: Ուստի բնական էր, որ այսքան քաղաքական փոթորիկներու ենթակա երկիրի մը մեջ չպիտի պահվեին խոր հնության դրոշմը կրող հիշատակարաններ:*

*Հավատալու շատ պատճառներ կան, որ քրիստոնեությունն ալ ոչ նվազ աղետաբեր եղած է նախկին հեթանոսական հիշատակարաններուն, որովհետև քրիստոնեական սկզբնական շրջանին մեջ հեթանոսական հիշատակարաններ եթե բոլորովին չեն քանդվեր, այնուամենայնիվ անճանաչելի դառնալու չափ այլափոխվեր են նորագույն պահանջներու պատշաճեցվելու համար:*

*Արարատյան նահանգին մեջ բազմաթիվ են հեթանոսական հնություններու մնացորդներ, բայց դեռ չեն ուսումնասիրված, թե ի՞նչ ժամանակի կպատկանին անոնք. շենքերու և բերդերու մնացորդներե զատ, հեթանոսական խորհրդավոր քանդակներ և բևեռագրեր միշտ կարելի է տեսնել:*

*Ժամանակագրապես ապացուցված հեթանոսական հնություն է Գառնիի Տրդատա թախտ անվանվածը, որն որ ըստ երևույթին ավելի մեհյանի մը կնմանի, քան թախտի կամ հովանոցի: Եթե ճիշտ այդ չենքն է, որ Մովսես Խորենացին կվերագրե Տրդատի, պետք է որ շինված ըլլա 3-րդ դարուն մեջ, երբ դեռ Տրդատ չէր ընդունած քրիստոնեությունը:*

*Քրիստոնեական շինություններու մեջ առայժմ ամենահինը ընդունված են Էջմիածնի կաթուղիկեն, Տեկորի և ուրիշ չեն ու կիսավեր տաճարներ, որոնք կանգնված են 5-րդ դարուն:*

*Ինչ որ հասեր են մեզի 3-րդ դարեն մինչև 5-րդ դարու հիշատակարաններեն, ճարտարապետական և շինարարական տեսակետով այնպիսի կատարելագործված վիճակ մը ունին, որ արվեստի երկար դարերի անընդհատ մշակումովը միայն կարող էին այդ աստիճանին հասնիլ:*

*Ինչպես ամեն ազգ, նույնպես ալ հայեր իրենց գեղարվեստական տենչերուն գոհացում տալու համար երբեք չեն վարաներ օտարներե գեղեցիկ նմուշներ փոխ առնել և պատվաստել իրենց սեփական ոճին վրա, նաև երբեմն չբավականանալով մոտակա գեղարվեստական երկիրներու ոճերով, նորություն և գեղեցկություն փնտռելու համար հասեր են մինչև հնդկական և աֆրիկյան թերակղզիները:*

*Թե ի՞նչ օտար ազդեցություններ կան հայ ճարտարապետության մեջ և ի՞նչ չափերով, այդ մասին խոսելե առաջ, հարկ է փոքրիկ ծանոթություն մը ընդհանուր ճարտարապետական արվեստի քանի մը գլխավոր ստորաբաժանումներուն վրա:*

*Ճարտարապետական արվեստը իր ծագում առած օրեն ենթարկվեր է չորս գլխավոր ստորաբաժանումներու.*

*1. Շինարարական ոճ, որուն մեջ գլխավոր դեր ունեցած են միջավայրի կլիման և շինանյութերու հատուկ՝ երկրի բնական արտադրությունները:*

*2. Գեղարվեստական կամ զարդարանքներու ոճ, որը ամեն տեղ տարբեր ձևով զարգացավ, բնիկ ժողովրդի մտավոր զարգացման, միջավայրի ներշնչող հատկության և քանի մը շինանյութերու նպաստավոր ընդունակության համեմատ:*

*3. Կրոնական ոճ, որ հատուկ է ամեն տեսակ կրոններու անունով կանգնված տաճարներու ներքին և արտաքին բաժանումներուն: Այս ոճին գլխավոր ղեկավարները եղած են ծեսերը և կղերականներու քմահաճույքը. ճարտարապետին բաժինը եղած է պահանջված մասերու վրա կրոնի պաշտոնեին ցույց տված պարտավորիչ հարամասունքներուն պատշաճ ներդաշնակությամբ դասավորումը:*

*4. Քաղաքային և տնտեսական ոճ, որոնք կվերաբերին հանրային շինություններու, ընտանեկան բնակարաններու և ուրիշ զանազան տեսակի տնտեսական պետքերու հատուկ ներքին բաժանումներուն. ասոնք ամեն երկրի մեջ տարբեր ձև և դասավորություններ ստացան տեղական առանձնահատուկ պահանջներու և սովորություններու համաձայն:*

*Ասոնցմե դուրս թերևս առանձին ճյուղ մը համարվի զինվորական ոճը, որ հատուկ է բերդեր և մարտկոցներ կանգնելու: Հայոց մեջ շատ հետաքրքրական կողմեր ունի այս ոճը, բայց ոչ մեկ մասնագետ մինչև այսօր չէ շահագրգռված անոնց ուսումնասիրությունով:*

*Ահա այս ստորաբաժանումներն են, որ երբեմն հավաքաբար, երբեմն ալ անոնցմե մեկը կամ երկուսը փոխանցվեր են մոտ կամ հեռու ճարտարապետական արվեստներուն:*

*Այժմ համառոտակի քննենք, թե ի՞նչ աստիճան ինքնուրույնությամբ մշակեր են հայերը ճարտարապետական արվեստը և ի՞նչ չափերով օգտվեր են այս կամ այն ազգի ստորաբաժանումներեն:*

*Առանձին ուշադրության արժանի են նաև հայ ճարտարապետության ուրիշ ազգերու վրա ունեցած ներգործությունները, որոնք որոշ դարերու մեջ ավելի մեծ տեղ կբռնեն, քան փոխառությունները:*

*Շինարարական ճյուղին վրա իբրև զուտ գիտական նյութ ավելորդ կսեպեմ այստեղ խոսիլ:*

*Քաղաքային և տնտեսական ճյուղերու մասին ալ մեր նյութերը առատ չեն, քանի դեռ ընդարձակ չափերով պեղումներ չեն եղած, հետևաբար պիտի ջանամ եղածը միայն պատկերացնել:*

*Իսկ կրոնական և գեղարվեստական ճյուղերու վրա կարելի է բավականին ճոխ նյութեր տալ, քաղելով կանգուն ու կիսականգուն հիշատակարաններե և վերջին տարիներու մասնավոր պեղումներե, որոնք կհուսամ թե հաճելի ըլլան պատմական հայ գեղարվեստով հետաքրքրվողներու համար:*

## II

## ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

*Որովհետև հեթանոս հայերու մեհենական ոճերուն վրա տակավին դրական ոչինչ չգիտենք, այդ պատճառով ալ մեր տեսության նյութը պիտի կազմե այս մասին մեջ հայ եկեղեցական ոճը:*

*Մինչև 4-րդ դար ոչ մեկ քրիստոնյա հասարակության մեջ եկեղեցիներու համար մշակված որոշ ձև չկար. ընդհանուր կարծիքը այն է, թե առհասարակ տուներու մեջ գտնված մեծ սրահներ բավականություն կուտային քրիստոնեից այն ժամանակվան պարզ ու համառոտ ծիսակատարություններու, ուր բոլորովին կամայական կերպով կզետեղվեր ընթիրիքի սեղանը և հավատացյալներ սրահի պատշաճության համաձայն դիրք կբռնեին:*

*Չորրորդ դարեն առաջ այս անորոշության գլխավոր պատճառներեն մեկն էր քրիստոնեության դեմ եղած գրեթե մշտնջենական հալածանքը, մյուս կողմանե նույնիսկ քրիստոնեական վարդապետությունը, որ մեղք կհամարեր երկնային անյութ աստվածության մը անունով՝ որ խոնարհաբար հանձն առած էր մսուրին մեջ ծնիլ, նյութական փուչ փառքերով զարդարված տաճարներ շինելը: Մարդոց հոգին պետք էր որ ըլլար աստուծո տաճար: Մինչև իսկ ճշմարիտ քրիստոնյա անհատին ալ ներելի չէր աշխարհային անցավոր փառքերու մեջ ապրիլ: Այս վարդապետությունը, որ անընդհատ երեք դար իր քարոզիչը և հետևողները ունեցավ, սոսկալի անկում պատճառեց ճարտարապետության և գեղարվեստի, քրիստոնեության բազմացած երկիրներու մեջ: Նախքան 4-րդ դար հազիվ կհիշատակվին քանի մը մասնավորապես կանգնված եկեղեցիներու անուններ, որոնք այնչափ ողորմելի և անշուք կազմվածք ունեին, որ մինչև 5-րդ դար հետքերնին անգամ մնացած չէ:*

*Կոստանդիանոս կայսրը քրիստոնեությունը պետական կրոն հայտարարելեն քիչ հետո, փորձեց մինչև այն ատեն պառակտված և բաժանված քրիստոնյա հասարակությունները մեկ դրոշակի տակ հավաքել, դավանանքի և ծիսակատարությանց միօրինակություն հառաջ բերել, որուն հետևանքը պիտի ըլլար նաև եկեղեցիներու ձևերու մեջ ալ միօրինակություն:*

---

[1] *Այս ուսումնասիրությունն արտատպում ենք «Անահիտ» հանդեսի 1911 թ. № 1-2-ից, իբրև ընդհանրացնող մի աշխատություն, որն ամփոփում է սույն ժողովածուի 2-րդ մասում զետեղված ուսումնասիրությունները: «Անահիտ»-ում այս աշխատության մեջ զետեղված նկարները դուրս հանեցինք, որովհետև նրանք այս ժողովածուի մեջ հրատարակվում են այլ տեղերում: Հոդվածի սկիզբը մասամբ կրճատել ենք՝ կրկնություններից խուսափելու համար:*
*Կազմող*

Ի՞նչ եղավ Կոստանդիանոսի ջանքերուն հետևանքը, այդ իմ գործս չէ քննել, միայն հայտնի է, որ բոլոր քրիստոնյաները օգտվելով նորագույն ազատութենեն, սկսան անթիվ եկեղեցիներ կանգնել կայսրության ամեն կողմը. պետությունն ալ մեծապես կաջակցեր ժողովրդին այս աշխատության. կպատմվի՝ թե ավելի քան ութ հարյուր ճարտարապետներ զբաղված էին կայսրության ամեն կողմը եկեղեցիներ կանգնելու... և 337 թվականեն մինչև 527 թվականը տասնևութ հազար եկեղեցիներ կանգնված էին:

Կոստանդիանոս տեսնելով բազմամիլիոն քրիստոնեից եկեղեցիներու համար ունեցած անմիջական կարիքը, և բավարար չափով կարճ ժամանակի մեջ նորերը կառուցանելու դժվարությունները, հրամայեց հեթանոսական մեհյանները և basilique ըսված շինությունները քրիստոնեից տրամադրության տակ դնել նոր կրոնի անունով սրբագործվելու համար:

Հունական մեհյանները առհասարակ քառանկյուն սրահներ էին, երբեմն արտաքուստ շրջապատված այունազարդ ծածկույթով, ներսը երկայնության մեկ ծայրին վրա (սովորաբար արևմտյան կողմը) կգտնվեր հեթանոս աստծույն գահը: Կային նաև բոլորովին բոլորակ ձևերով մեհյաններ, որոնք ևս ուշ կամ կանուխ նվիրվեցան քրիստոնեական պաշտաման:

Basilique-ները նմանապես քառանկյուն շինություններ էին, ներսի կողմը հաճախ երկու կամ ավելի այունաշարքերով թևերու (nef) բաժնված դեպի երկայնությունը: Այս շենքերը կծառայեին հասարակաց ժողովներու. երկայնության մեկ ծայրին վրա ունեին շենքեն դուրս ցցված կիսաբոլորակ abside-ներ, որոնք հատուկ էին կամ թագավորին և կամ անոր փոխանորդող ժողովի նախագահին:

Այս քանի մը տեսակ շինությունները մեկ անգամեն չընդունվեցան՝ ծիսակատարությանց ձևերու մասին եղած նախնական տարբեր առաջարկներու պատճառով. մրցումը երկար տևեց, սակայն հետզհետե ամեն տեսակ ձևերն ալ ընդունվեցան. միայն basilique-ի կիսաբոլորակ abside-ը վերջնական հաղթանակ տարավ ամեն ձևի եկեղեցիներու արևելյան կողմին վրա, հավանաբար 5-րդ դարու սկիզբին:

Եկեղեցիի մեջ պատարագի սեղանի պատշաճ տեղի մասին տարբեր ուղղություններու վեճերը մինչև 7-րդ դարը տևեցին: Անոնք, որ շենքին արևելյան կողմին վրա սեղանը հարմար կտեսնեին՝ մեկ անգամեն ընդունեցան բազիլիկներու ձևը գրեթե առանց կարևոր փոփոխություններու. իսկ որոնք որ կեդրոնական սեղանի ուղղության կուսակիցներ էին, անոնց համար ավելի պատշաճ էին մեհյանները, մանավանդ բոլորակ ձևով եղածները: Կեդրոնական և արևելյան կողմի սեղաններու մրցումին ժամանակ ավելցավ նաև խաչաձև հատակագիծը, որուն մեջ կպատշաճեր սեղանի երկու ուղղությունն ալ:

Բուն բազիլիկ ձևը իր բոլոր համաչափություններով մշակվեցավ արևմտյան քրիստոնեից մեջ և նույն ձևով ալ կշարունակվի մինչև այսօր:

Արևելքի մեջ աբսիդը միայն ընդունվելով, մնացած մասերուն մեջ տարբեր համաչափություններ երևան եկան, որոնք շատ հեռու են բազիլիկներու հատկութենեն. անշուշտ ենթարկվեցան ուրիշ տեսակ մը հանրային շինությանց ձևերուն, որոնք տարածված էին արևելյան պետության երկիրներուն մեջ: Վեցերորդ դարու սկիզբին Կ.Պոլսո մեջ կազմված ս. Սոփիա եկեղեցին գրեթե հավասարակողմ քառակուսի ձևով դժվար է համեմատել բազիլիկներու հետ՝ բացի կիսաբոլորակ աբսիդեն:

Այժմ դառնանք հայոց եկեղեցիներուն, որ մեր գլխավոր նպատակն է, ուր պիտի տեսնենք այս տեսությունները ավելի լուսաբանող իրողություններ:

*
* *

Բովանդակ Հայաստանի մեջ նախքան 5-րդ դար կանգնված ըլլալը փաստացի հաստատված եկեղեցի չունինք. ամենահին համարվածը Էջմիածնի կաթուղիկեն է, Վահան Մամիկոնյանի ձեռքով վերաշինված 5-րդ դարու կեսեն հետո (480-ին):

Ընդհանրապես ընդունված կարծիք է, թե Վահան Մամիկոնյան որչափ որ ի հիմանց քանդեց և վերաշինեց Էջմիածնի կաթուղիկեն, սակայն Տրդատի և Լուսավորչի օրով շինված տաճարին չափն ու ձևը անփոփոխ պահեց:

Քանի մը պատճառներով այս կարծիքը հաստատություն չի գտներ, որովհետև ապացույցներ չեն պակսիր, որ Վահան Մամիկոնյան նախնական ձևը փոխելու մեջ խղճահարելու պատճառ մը չունենալեն զատ, նույնիսկ իր շինած ձևն ալ պահված չէ հետագա ժամանակներու մեջ: Իբրև Մայր-Աթոռ շատ ուշ ժամանակ ստացավ այն նշանակությունը, ինչ որ մենք կվերագրենք անոր, Վահան Մամիկոնյանի ժամանակ կաթողիկոսական աթոռը արդեն վաղուց Դվին փոխադրված էր. և նա ոչ թե իբրև Մայր-Աթոռ, այլ իբրև «զհնացեալ գործ նախնեաց իւրոց»[1] հոգ տարավ վերաշինելու:

Ավելի արվեստագիտական ապացույցներու վրա պիտի հիմնեմ իմ կարծիքս, քան պատմական,

[1] Մամիկոնյաններ ինքզինքին Գահլավունի ցեղ կհամարեին իբրև Լուսավորչի սերունդ:



թողնելով այս վերջինը իբրև երկրորդական նշանակություն ունեցող փաստ:

Վահան Մամիկոնյանի շինած Էջմիածինը կիսաբոլորակ վերջավորված թևերով խաչաձև հատակագիծ ունենալը անվիճելի է: Բայց ի ներքուստ միայն նկատելի է խաչաձևը, արտաքուստ պարզ քառակուսի էր առանց դուրս չեչտված աբսիդներու (այս մասին տեսնել իմ «Էջմիածնի հնագույն ձևերը» անունով աշխատությունը): Այսօրվան ձևով խաչաձևը 7-րդ դարուն մեջ ստացած է Էջմիածնի հատակագիծը:

Լուսավորչի շինած եկեղեցիին խաչաձև հատակագիծ ունենալուն վրա պատմական փաստ չունենալնես զատ՝ եթե եկեղեցական ճարտարապետության ուղիղ ճանապարհով քննենք, ավելի շատ հերքող փաստեր կգտնենք:

Ոմանք Էջմիածնի այսօրվան ձևը Լուսավորչի վերագրված տեսիլքեն հանված կհամարին[1], բայց այդ տեսիլքի նկարագրությունը թերևս համեմատի այսօրվան ներքին կողմեն չորս մեծ այուներով գմբեթավորյալ ձևին, սակայն ընդհանուր հատակագիծը խաչաձև ենթադրել տալու ոչ մեկ հիմ չունի: Այսօրվան ձևը, հիմնվելով գիտական հետազոտություններու վրա, ոչ մեկ քրիստոնյա երկիրներու մեջ չէր կարող գոյություն ունենալ 5-րդ դարեն առաջ:

Իհարկե ցանկալի էր, որ հաստատվեր, թե Լուսավորիչն է եղած խաչաձև եկեղեցիներու առաջին հեղինակը և հայկական խաչաձև ոճը իբրև աղբյուր ծառայեր է բոլոր քրիստոնյա ազգաց խաչաձև եկեղեցիներուն: Բայց սա արդեն անհիմն ենթադրություն մ'է:

Միայն պետք է նկատի ունենալ պարագա մը ապագա ուսումնասիրության համար, որ, ըստ իս, վերջնական լուծման կարոտ է, և թերևս լուծվի ի նպաստ հայ ճարտարապետության:

Ամենևին կասկած չկա, որ Վահան Մամիկոնյանի շինած խաչաձևը բոլորովին նորություն էր Հայաստանի մեջ և թերևս առաջին օրինակը, սակայն այդ նորությունը հեղինակությո՞ն էր, թե՞ ընդօրինակություն ուրիշ ազգաց ճարտարապետութենեն: Սա արդեն վիճելի է:

Ճիշտ է, որ 4-րդ դարուն Կոստանդիանոսի ձեռքով շինված խաչաձև եկեղեցի մը կհիշատակվի Կ. Պոլսո մեջ, թեև այդ եկեղեցին Հուստինիանոսի օրով մեծ փոփոխությանց ենթարկված է ու անկից հետո գոյությունն ալ երկար պահած չէ. սակայն այսօրվան Վենետիկի ս. Մարկոսը նույն խաչաձևի ճիշտ ընդօրինակությունը կհամարվի: Եթե իրոք ս. Մարկոսի եկեղեցիին ձևը ուներ Կոստանդիանոսի շինած և հետո Հուստինիանոսի նորոգած Կ. Պոլսո Առաքելոց եկեղեցին, այն ատեն պետք է գիտնալ, որ Վահան Մամիկոնյանի շինած խաչաձևը ճաշակով և գաղափարով անհունապես կզանազանի Կ. Պոլսո Առաքելոց եկեղեցիեն: Վահան Մամիկոնյանի ձևը մինչև 5-րդ դար ոչ մեկ երկրի մեջ գոյությունը հաստատված չըլլալեն զատ՝ անոր 7-րդ դարուն մեջ փոփոխությամբ ստացած ձևն ալ շատ հազվադեպ է արևմտյան և հարավային քրիստոնյա երկիրներու մեջ: Գալով Լուսավորչի ժամանակ հիմնված տաճարին, այնտեղ ոչ բազիլիկ կարող էր շինվիլ, ոչ abside-ներ և ոչ ալ խորան ու գմբեթ: Ահա թե ինչու:

Պատմական իրողություններու հետևելով՝ կտեսնենք, որ արդեն քրիստոնեությունը ընդարձակ ծավալ ստացած էր Հայաստանի մեջ, և հալածանքի թեթևության պատճառով ավելի ամուր հիմ բռնելով՝ կազմված էին եկեղեցիներ և եկեղեցական վարչություններ:

Բայց ինչ որ ալ ըլլար քրիստոնյա հայոց եկեղեցիներուն ձևը Տրդատի քրիստոնեություն ընդունելեն առաջ, հայտնի բան է, թե 300–303 թվականներուն, զինու զորությամբ ճնշվեցան հեթանոս հայերը և անոնց ձեռքեն մեհյանները առնելով եկեղեցիներու վերածվեցան[2] դեռ Էջմիածինը հիմնարկվելեն շատ առաջ: Ուրեմն Էջմիածնի հիմնարկութենեն գոնե մեկ երկու տարի առաջ մեհենական ձևը սրբագործվեցավ հայոց քրիստոնեական եկեղեցիներու համար: Հետևաբար, մեհյանները սրբագործող Լուսավորիչը պատճառ չուներ իր հիմնարկած տաճարին համար տարբեր ձև ստեղծելու: Եվ ի՞նչ ձև կարող էր ստեղծել. չենք կարող ըսել բազիլիկ, որովհետև այդ տեսակ շենք Հայաստանի մեջ գոյություն չուներ, և հայերը գաղափար իսկ չէին կարող ունենալ անոր ձևին վրա:

Առնվազն 15–20 տարի անցեր էր Հայաստանի մեջ քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելեն հետո, երբ Կոստանդիանոս ևս հետևեցավ Տրդատի օրինակին, և հետզհետե քրիստոնեից տրամադրության տակ դրավ հեթանոսական մեհյանները և բազիլիկ ըսված շինությունները՝ եկեղե-

[1] Ագաթանգեղոս, Տփխիս, 1909, երես 381–387:

[2] Փաւստոս Բիւզանդացւոյ Պատմ. Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883 գիրք Դ, երես 7: «Քանզի այնպէս իսկ սովոր էին եպիսկոպոսապետքն Հայոց, հանդերձ թագաւորօքն և մեծամեծօքն, նախարարօքն և աշխարհախումբ բազմութեամբք պատուել զնոյն տեղիս, որ յառաջ էին տեղիք պատկերաց կռոցն, և ապա յանուն աստուածութեան սրբեցան և եղեն տուն աղօթից և տեղի ուխտից ամենայն ազգաց»:

Ագաթանգեղոս, Տփխիս, 1909, երես 403: «Առնոյր այնուհետև խորհուրդ հաւանութեան ընդ թագաւորին և ընդ իշխանսն, նախարարօքն և զօրօքն հանդերձ՝ վասն խաղաղութեան հասարակաց, քակել, կործանել, բառնալ զգայթակղութիւնսն ի միջոյ, ի բաց կորուսանել...»:

ցիներու փոխարկելու համար: Մինչև այդ ժամանակ ոչ մեկ կասկած չէ կարող ըլլալ, որ հայերը արդեն ունեին օրինավորապես կազմակերպված եկեղեցիի համար ալ որոշ ձև:

Նաև եթե ի նկատի ունենանք, որ Արևմուտքի մեջ ալ շատ դյուրությամբ չընդհանրացավ բազիլիկ ձևը, այն ատեն բնականորեն պիտի հետևցնենք, որ անոր ներգործությունը մինչև Հայաստան հասնելու համար շատ տարիներ հարկավոր էին:

Արևելյան կողմին վրա սեղանը դրվելու ուղղության հետևողներուն համար էր, որ բազիլիկի կիսաբոլորակը շատ հարմար էր, բայց այս ուղղության վերջնական հաղթանակը Փոքր Ասիո սահմաններուն մեջ տարած չըլլալուն մեծ ապացույց է Գր. Նազիանզացիի իր հայրենի երկրին մեջ 4-րդ դարու կեսեն հետո շինել տված եկեղեցին, որուն մեջ պատարագի սեղանը շենքին կեդրոնին վրա էր:

Արևմտյան եկեղեցիներու մեջ մինչև բ. տիեզերական ժողով՝ ծիսակատարությանց վերաբերյալ խնդիրներ գրեթե չէին հարուցված, մինչև այն ատեն զբաղած էին դավանաբանական վեճերով: Այս վեճերուն փոքր ի շատե խաղաղելեն հետո պետք է փնտռել յուրաքանչյուր եկեղեցու ներքին բարեկարգությանց և ծիսակատարություններու մասին մշակված օրենքները. սեղանի կամ պատարագելու ձևի խնդիրը, որ ավելի ծիսակատարության կվերաբերի, քան դավանության, հետևաբար այս հաշվով մինչև անոր փոքր ի շատե որոշ և միօրինակ ձև ստանալը արդեն 5-րդ դարուն կմոտեցնե մեզ:

Ուրեմն ապահովապես կարող ենք ըսել, որ մինչև սեղանի տեղի և կամ արևելյան կիսաբոլորակ խորանի վեճեր ծագիլը, և երկար տարիներ ծեծվելով որևէ որոշ լուծում ստանալը, արդեն Հայաստան ուներ այդ ծիսակատարությանց համար ալ անկախ մշակված ու հաստատված օրենքներ: Եթե արևելյան կիսաբոլորակ աբսիդին Հայաստան հասնելը 5-րդ դարու սկիզբին ալ համարինք, հազիվ թե մեկ անգամեն հայերը թողեին իրենց լուսավորչավանդ եկեղեցական ձևը և հանձն առնեին օտար նորություն մը մտցնել իրենց եկեղեցիին մեջ: Անշուշտ երկար ժամանակ հարկավոր էր ընդհանրանալու համար:

Իհարկե Վահան Մամիկոնյանի չորս աբսիդներով խաչաձև եկեղեցին չէր կարող մեկ անգամեն երևան եկած ըլլալ նախքան իր պարզ նախատիպերն ունենալը, հավանաբար անկեց առաջ մտած էր արևելյան աբսիդը հայոց մեջ (բայց ոչ 5-րդ դարեն առաջ), որուն հետևեցավ չորս աբսիդով խաչաձևը՝ բացի գեղեցկութենե և վայելչութենե, նաև քրիստոնեական խորհրդանշանի մը նմանցվելու բացարձակ պատճառավ:

Այժմ հետաքրքրական է գիտնալ, թե ի՞նչ ձև ունեին հայոց մեհյանները, որոնք Լուսավորչի ժամանակ փոխարկվեցան եկեղեցիներու և լուսավորչաշեն էջմիածինն ալ նույն ձևով կանգնված ըլլալը հավանական կհամարինք: Այս մասին հաստատ տեղեկություններ չկան, սակայն պատմական հատուկտոր տեղեկություններ և քանի մը հին հիշատակարաններու ուսումնասիրություններ մեզ կհասցնեն բավական որոշ եզրակացության:

Նախքան քրիստոնեություն հազիվ թե հայեր կրակապաշտ եղած ըլլային, բոլոր տեղեկություններ կհաստատեն, որ հունական դիցապաշտության մեկ տեսակն էր զարգացած Հայաստանի մեջ. մանավանդ հեթանոս կրոնի վերջին թագավոր Տրդատը ոչ միայն հունական դիցապաշտության ջերմ հետևող էր[1], այլև կցանկար, որ ամեն կարգ կանոն, ծես ու պաշտամունք այնպես կատարվեր իր երկրին մեջ, որպիսին ինք տեսած էր Հունաց աշխարհին մեջ[2]:

Անտարակույս, հունական կրոն ունեցող ազգին մեհյաններն ալ հունական մեհյաններու որոշ նմանությունը պիտի ունենային և կամ ինչպես սովորաբար կապատահի երկու ուժեղ տարբեր հոսանքներու ենթարկված ազդերու, թերևս խառն սասանական ազդեցությունով:

Այս ենթադրությունը մեծապես կարդարանա 5-րդ և 6-րդ դարերեն մեզ հասած հիշատակարաններու մանրազնին քննությամբ, որոնք կգտնվին Արարատյան նահանգին մեջ բավականի պահած իրենց նախնական վիճակը:

Այս հնագույն հիշատակարաններեն մեկն է Տեկորի եկեղեցին, որուն հատակագիծը կընեմ այստեղ իբրև նմուշ՝ բաղդատության համար [տե՛ս Ժողովածուի 3-րդ մասում]:

Արևմտյան դռան վրա եղած կցկտուր արձանագրությենե մը կերևա, որ այս եկեղեցին շինած է Սահակ Կամսարական անունով իշխան մը 5-րդ դարու վերջին: Սակայն արվեստագիտական քննություններ շատ պարզ ապացույցներ կուտան, որ Սահակ Կամսարական այդ եկեղեցին ոչ թե ի հիմանց նոր շիներ է, այլ 5-րդ դարեն առաջ գոյություն ունեցող ուրիշ եկեղեցիի մը վրա կարևոր նորություններ և փոփոխություններ կատարած է:

Հատակագծի ամբողջության մեջ երևցած սև գույնով շրջագիծը, նախքան Սահակ Կամսարականի նորոգելը եղած ձևն է, որ հավանաբար դարձյալ եկեղեցի էր 5-րդ դարու սկիզբին, գուցե անկից ալ առաջ, բայց, ինչպես կտեսնվի, առանց կիսաբոլորակ խորանի: Կիսաբոլորակ խորանին տեղը կընե ուղղանկյուն նեղ խորշ մը, որ կարծեցնել կուտա, թե հայոց մեջ նախքան 5-րդ դարու կեսը ընդունված էր արևելյան սեղան և այդ խորշը սեղանի հատուկ էր: Այս ձևը անգամ մը ևս կուգա ապացուցանելու, որ նախքան 5-րդ դար, էջմիածնի մեջ ալ չէր կարող կիսաբոլորակ աբսիդ գոյություն ունենալ, որովհետև բոլոր հայոց եկեղեցիներու քննությամբ պարզ կերևա, որ ամեն դարու ամեն ոճի եկեղեցիներ միշտ մեծ մասամբ հետևողություն եղած են էջմիածնի: 7-րդ դարուն շինված էջմիածնի հատակագծի ձևը ունին, թերևս, այս վերջինս ալ ուներ իր նախատիպը հայոց մեջ, եթե Ներսես Շինողն էր, որ այսօրվան հատակագծին վերածեց:

Տեկորի եկեղեցիին հատակագծին մեջ երևցած սև գույնով շրջագիծն ալ այդ շենքին ամենանախնական ձևը չէ. անոր ամբողջությունն ունենալու համար պետք է երևակայենք նույն լայնության նական ձևը չէ. անոր ամբողջությունն ունենալու համար պետք է երևակայենք նույն լայնության վրա ավելի երկար շենք մը ուղիղ քառակուսի, և փոխանակ չորս ներքին սյուներու՝ վեց սյուներով կամարակապված սրահ մը, առանց գմբեթի:

Ոչ ոք թող առանց ապացույցի չհամարի ըսածս, դեռ կան ճիշտ նախնական ձևով նմանօրինակ շենքեր, որոնց հատակագծերը այստեղ տալու հնարավորություն չունիմ. բայց թվեմ անոնց մեկ քանին: Արարատյան նահանգին մեջ Քասաղի եկեղեցին, Շիրակի մեջ Երերույքի եկեղեցին և Օձունի[1] եկեղեցին և այլն և այլն. ասոնք ամենն ալ պահած են վեց սյուներու վրա կամարակապ հատկություններին առանց գմբեթ ունենալու:

Տեկորի եկեղեցին շատ բան լուսաբանեց, այն ծառայեց իբրև դուռ մը, ուրկեց կանցնվեր դեպի հեթանոսական աշխարհ: Անվրեպ փաստեր երևցան Տեկորի ուսումնասիրությամբ, որ նույնօրինակ շենքերու գոյությունը կհասցնեին մինչև 3-րդ դար, երբ թեև քրիստոնեությունը մեծ ծավալ ստացած էր, այնուամենայնիվ քանի որ դեռ բոլորովին ազատ կրոն ալ չէր, հետևաբար այս մեծ և հոյակապ շենքեր չէին կարող քրիստոնեական տաճարները ըլլալ[2]: Ամենայն հավանականությամբ այդ խոշոր շենքերն իրենց կատարյալ միօրինակությամբ հայոց հեթանոսական մեհյաններ էին:

*
* *

Հայոց եկեղեցիներու ձևերը առաջին անգամ օտար ազդեցության ենթարկված կերևին 5-րդ դարու սկիզբներուն: Մեհրուժանի էջմիածինը քանդելեն հետո վերաշինվածը շատ հավանական է Տեկորի սև գծերով ներկայացված հատակագծին ձևն ուներ, որուն անմիջապես հետևեր է աբսիդի հավելումը, որ հռոմեական բազիլիկի միակ հատկանիշն է:

Ինչպես կերևի, աբսիդը ուղղակի Հռոմեն եկեր է Հայաստան՝ ճանապարհին իր հետքերը թողելով Կիլիկիո մեջ, և հետը բերել է միաժամանակ ուրիշ ազդեցություններ ալ, որոնք միմիայն հռոմեական նախնական եկեղեցիներու ձևերուն հատուկ են, ինչպես արևելյան կողմեն դեպի հյուսիս և հարավ դուրս ցցված թևեր, որոնց մեջ կբովանդակվին ավանդատուններ և արտաքին ճակատը շրջապատող սյունազարդ ծածկույթներ, ինչպես կտեսնվի Տեկորի եկեղեցիի հատակագծին թուխ գույնով Սահակ Կամսարականի հավելվածները ցույց տվող մասերուն վրա: Հռոմի մեջ 3-րդ դարուն շինվեցավ ճիշտ նույն ձևով ս. Պրաքսետ ըսված եկեղեցին և 4-րդ դարուն նախկին ս. Պետրոսը:

Ասոնց շուրջը թեև կպակսի սյունազարդ ծածկույթը, սակայն մեծ հավանականություն կա անոնց գոյության՝ իբրև անմիջական ազդեցություն հունական մեհյաններու: Այս ձևի ուղիղ ազդեցության տակ կազմված են Երերույքի նախկին շինության վրա եկեղեցիի փոխարկման համար կատարված հավելումները:

Արտաքուստ սյունազարդ շուրջանակի ծածկույթներ, որոնք ամենայն հավանականությամբ սկզբնական եկեղեցիներու մեջ հեթանոսաց գավիթներ էին, լուսավորչաշեն եկեղեցիի մեջ գոյությունը կամ բացակայությունը կարելի չէ հաստատել, բայց Վահան Մամիկոնյանի շինածին շուրջը գոյություն ունենալուն համոզիչ ապացույցներ երևցան վերջերս, ասոնք քանդվեր են 7-րդ դարուն աբսիդները դուրս հանված ժամանակ:

---

[1] Ագաթանգեղոս. Տփխիս, 1909, երես 31: «Եթե ոչ առնուցուս յանձն դիցս պաշտօն մատուցանել, մանաւանդ այսմ մեծի Անահտայ տիկնոջս, որ է փառք ազգիս մերոյ և կեցուցիչ, զոր և Թագաւորք ամենայն պատուեն, մանաւանդ Թագաւորն Ծունաց...»:

[2] Ագաթանգեղոս. Տփխիս, 1909, երես 74: «Ամենայն ոք գիտասցէ ի մերոց հրամանացս առ ձեզ, զի վասն ձեր շինութեան եմք հոգացեալք. զի յորժամ էաք մեք ի Ծունաց աշխարհին՝ անդ տեսանէաք զհոգաբարձութիւն Թագաւորացն, ի հոգալ ընդ շինութիւն իւրեանց աշխարհին, ի պատուել զբագինս դիցն աստուածոց շինուածովք և սպանդիւք զոհիցն՝ և երևելի պատարագացն ընծայիւք, և գունակ գունակ նուիրօքն և ի պտղոցն՝ յամենայնէ զամենայն նոցա մատուցանելով, և ջերմեռանդն եռալ զեռալ պաշտամանն, չքեղացուցանելով և զարդուքն զարդարելով և զերևելի զհոյակապ զանեղծ դիսն մեծարելով...»:



[1] Օձունի եկեղեցին ես դեռ անձամբ չեմ տեսած, բայց արժանահավատ մարդիկ կվկայեն անոր այս հատկությունը:

[2] Այս մասին մանրամասն փաստացի ապացույցներ տալու համար հոդվածիս սահմանը շատ նեղ է, բայց շուտով լույս կտեսնե առանձին աշխատությունս Տեկորի մասին, ուր մանրամասն ներկայացուցած եմ բոլոր փաստերը:

Օտարամուտ աբիդը Հայոց մեջ թեև մշտնջենապես ընդունվեր է, սակայն անոր հետ միաժամանակ եկող արևելյան կողմեն դուրս ցցված թևերու և արտաքին այնուազարդ ծածկույթներու ոճը շուտով վերջ գտեր են: 7-րդ դարուն առանց բացառության այլևս չեն երևիր այդ ոճերը: Նույնիսկ հեթանոսաց գավթի նշանակությունն ալ կորսված է Հայոց մեջ 7-րդ դարեն մինչև 12-րդ դար. այս երկար շրջանին մեջ ոչ մեկ եկեղեցի չենք գտներ Հայոց մեջ, որ հատկապես չինված հեթանոսաց գավթի ունենա: Ինչպես կերևի հետևյալ պատմական վկայութենե մը, Արևմուտքեն [արևմուտքցիներեն - բյուզանդացիներեն] ավելի ազատամիտ հայերը չեն ուզեր հնազանդիլ «Մի՛ ոք յերախայից»-ի ժամանակ եկեղեցիեն դուրս ելլելու համար սահմանված օրենքին, այդ պատճառավ ալ գավիթներ չինելու պետք չէ զգացվեր: Երբ 11 և 12-րդ դարերուն այդ օտարամուտ սովորությունը վերստին երևցեր է Հայոց մեջ, այս անգամ ալ միևնույն ընդվզող դիրքն են բռնած հայերը, և որպեսզի «Մի՛ ոք յերախայից»-ի ժամանակ դուրս ելլելու չպարտավորին, ամենևին եկեղեցիի մեջը չեն մտեր, առհասարակ հավաքվեր են գավթի մեջ, ուր իբրև ոչ եկեղեցիին անմիջական մաս, ունեցած են անպատշաճ վարմունքներ ալ, որով գայթակղության տեղիք տված են: Այս երևույթին վրա դառնացած, Ներսես Լամբրոնացին ստիպվեր է երկար ճառ մը գրել[1] եկեղեցիի գավթի և խորհուրդի նշանակությունը բացատրելով և հանդեպ այդ նվիրական օրենքներու ժողովրդին պարտականությունները ընդգծելով:

Խաչաձև հատակագծի Հայաստանի մեջ երևան գալով հանդերձ՝ նախավանդ քառանկյուն ձևերն ալ միաժամանակ պահված և անընդհատ շարունակված են մինչև վերջը, առանց արտաքին համաչափություններու մեջ փոփոխության ենթարկվելու, այսինքն՝ իրենց լայնության և երկայնության համար ավանդաբար ընդունված ներդաշնակության մեջ: Եթե փոփոխություն մը կա, այն ալ փոխանակ վեց այուներով ներքին կամարակապ ձևին՝ չորս այուներով զմբեթավոր եղած են 5-րդ դարուն վերջերը, որոնք կհիշեցնեն այս շրջանին մեջ Լուսավորչի տեսիլքով նկարագրված ձևը ըստ ամենայնի որոշ մանրամասնությամբ:

Բոլորովին բոլորակ եկեղեցի Հայոց մեջ առաջին անգամ կերևա Զվարթնոց եկեղեցին 7-րդ դարուն: Անկեց առաջ բոլորակներու կամ բազմանկյուններու գոյության մասին հաստատ ոչ մեկ տեղեկություն չկա:

Եթե հիմնվինք պատմական վկայության մը վրա, պետք է որ հավատանք թե՝ եթե բոլորակ կամ բազմանկյուն եկեղեցիներ չկային, սակայն պետք էր որ գտնվեին մկրտարաններ, ըստ արևմտյան սովորության, ուր ընդունված միակ ձևն էր մկրտարաններու համար բազմանկյունը կամ բոլորակը: Այս ալ ամենայն հավանականությամբ դարձյալ 5-րդ դարեն սկսած, որ միակ թվականն է թե՛ կրոնական և թե՛ արվեստական ոճերու ներդործություններուն Հայոց վրա[2]:

Բազմանկյուն և բոլորակ ձևերն ալ օտար են Հայաստանի մեջ. թեև սկզբնական ծագումին համար գիտնականներ համաձայն չեն, որ հունական կամ հռոմեական ըլլա, կարծողներ ալ կան, որ նախքան Հունաստանը Ասիո մեջ ծագում առած ըլլա. բայց առայժմ, գտնե մեզի ծանոթ բոլորակ կամ բազմանկյուն հիշատակարաններ ու ամենահիները Հունաստանի և Հռոմի մեջ կգտնվին. իբրև քրիստոնեական եկեղեցի ալ կարելի է նախատիպ համարել Հռոմի ս. Ստեփաննոսը, Պանթեոնը և ուրիշ կարգ մը նմաններ:

Ներսես Գ Շինող Արևմուտքեն բերավ Զվարթնոցի բոլորակը. այս կաթողիկոսը ինչ[պես] իր գաղափարներով, այնպես ալ իր ճաշակով առանձին տեղ բռներ էր հայ կաթողիկոսներու շարքին մեջ: Դեպի քաղկեդոնականություն ունեցած ձգտումով, լուսավորչականություն և քաղկեդոնականություն իրարու մեջ ձուլելու ջանքերուն հետ միաժամանակ ուզեր է նաև այդ երկու դավանության եկեղեցիներն ալ միմյանց մեջ ձուլել. հիրավի, եթե առաջինին մեջ բոլորովին չէ հաջողեր, երկրորդին մեջ արդյունքը հրաշալի է. անոր ճարտարապետը հայկական նվիրագործված խաչաձևը հունական բոլորակին հետ ներդաշնակորեն պատշաճեցնելու համար արտակարգ հանդգնության հետ եզական հանճար ի գործ դրեր է ի մեծ զարմացումն այսօրվան մեր գիտական աշխարհին:

Զվարթնոցի մեջ պատարագի սեղանին դրված տեղն ալ հայ եկեղեցական ոճին բոլորովին անսովոր է, մանավանդ հետաքրքրական է այն տեսակետով, որ կեդրոնական սրբարանով եկեղեցիներու հետևողություն ցույց կուտա. թեև սեղանը ճիշտ կեդրոնին վրա չէ, սակայն արևելյան պատեն ալ շատ հեռու կմնա՝ իր ետևը թողելով ժողովրդյան բաժին: Ավելորդ է ըսել, թե հայ եկեղեցական ճարտարապետության մեջ ընդհանուր ուղղութենեն

[1] Սրբոյն Ներսիսի Լամբրոնացւոյ Տարսոնի եպիսկոպոսի խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ և մեկնութիւն խորհրդոյ պատարագին. Վենետիկ, 1847, երես 21-40:

[2] Տեսնել հաջորդ ծանոթություն:



այքան մեծ չեղում և օտար ներգործություն Զվարթնոցի վրա՝ Ներսես Գ կաթողիկոսի քաղկեդոնիկությամբ միայն կարելի է բացատրել:

Առանձին հետաքրքրության արժանի է Զվարթնոցի կեդրոնին վրա եղած մկրտության գետնափոր ավազանը: Ինձի կթվի, որ այս ոճը Արևմուտքին ալ անսովոր էր, որովհետև Արևմուտքի մեջ չմկրտված մարդ եկեղեցիին մեջ մտնելու իրավունք չունենալու համար նախապես մկրտարանները չինեցին նախագավթին մեջ, ուր հեթանոսը մկրտվելեն հետո կարող էր մտնել բուն եկեղեցին. իսկ վերջը չինեցին առանձին մկրտարաններ՝ եկեղեցիեն բոլորովին դուրս և որոշ չափով ալ հեռու: Ինձի տակավին անծանոթ է արևելյան թե արևմտյան հին եկեղեցիներուն մեջ կեդրոնին վրա մկրտարանով եկեղեցի:

Մասնավորապես Հայոց մեջ անլուծելի գաղտնիք է մկրտարաններուն կամ մկրտության ավազաններուն ձևն ու տեղը: Ես կկարծեմ, որ Հայոց մեջ առանձին մկրտարաններու սովորությունը ընդունված[1] և պահված է երկար ժամանակ, հավանորեն մինչև 13-14-րդ դարեր: Այս մասին շատ օգտակար կըլլա պեղել Անիի մեջ գտնվող բազմաթիվ մանր բոլորակ և բազմանկյուն եկեղեցիներեն մեկ քանին, որոնցմե շատերը կգտնվին մեծ եկեղեցիներու մոտիկ: Մայր եկեղեցիի հարավ-արևելյան անկյունի մոտ կար ութանկյուն փոքր մատուռ մը, որ կարելի է թե մայր եկեղեցիի մկրտարանն էր: 1892-93 թվականներուն է բոլորովին փլած այս մատուռը:

Հավաստողներ կան, որ Կարսի Առաքելոց եկեղեցիին մոտ կար փոքր ութանկյուն մատուռ մը, որուն հատակին վրա գետնափոր շինված էր խաչաձև ավազանի նմանող փոս մը՝ սրբատաշ քարերով շինված:

Հավանաբար 10-րդ դարու Հռիփսիմեի եկեղեցին առաջին օրինակը եղավ չորսե ավելի աբիդներով եկեղեցիներու. 10-րդ դարեն սկսած արդեն սովորական դարձած երևույթ է վեց, ութը և ավելի աբիդներով եկեղեցիներու ոճը, որոնցմե ոմանք արտաքուստ ութանկյուն կամ բազմանկյուն ձևի տակ ծածկված են, ոմանք ալ բոլորշի ձևով որոշված են դրսեն:

[1] Սոփերք Հայկականք, հատ. Բ. Պատմ. վասն Սրբոյն Սահակայ հայրապետին և Մեսրոպայ վարդապետին: Վենետիկ, 1853, երես 81: «Եւ զտաճարս աղօթից՝ յորս սուրբ և աստուածընկալ սեղանն է հաստատեալ, յորոյ վերայ կատարի մեսաքաւիչ և կենդանարար խորհուրդ մարմնոյ և արեան ապրեցուցչին մերոյ տեառն՝ ըստ արժանի բավականութեանն զարդարուն պահեցեն անխափան լուցմամբք և խնկարկութեամբ. և պարապեալ քաղաքորմովք, և մերժ ի նա մկրտատունս չինեսցեն, և. անդ, որպէս և սովորութիւն իսկ է և յայլսն՝ ի նմին կանգնեսցի աւազան մկրտութեան»:

## III

Հայոց նախաքրիստոնեական ճարտարապետության ըստ ամենայնի զարգացած վիճակ մը ունենալուն վկա են հողեն դուրս հեթանոսական շրջաններեն մնացած հատուկտոր բեկորներ: Ավելի պարզ և մանրամասն պատկեր մը ունենալու համար պետք է պատռել բազմադարյան հողակույտեր, ուր թաղված են գեղարվեստական հիշատակարաններու փլատակներ:

Վասպուրականը, Տարոնը և մասամբ Մինջևանը պատմական հայ գեղարվեստի այնպիսի աշխարհներ են, որոնցմե քաղվելիք արդյունքը մեր պատմության առաջին գլուխները պիտի կազմեն. առանց այս գավառներու խուզարկության, միշտ թերի կմնան ուրիշ տեղերու վրա կատարված բոլոր հնագիտական ուսումնասիրություններ:

Արարատյան նահանգին մեջ, ուր ավելի քիչ բան կսպասվի հեթանոսական շրջանեն, քան Վասպուրական, առանց պեղումի իսկ բազմաթիվ նյութ կա՝ գիտական այցելութենե զուրկ մնացած: Ամեն քայլափոխի կտեսնվին պատմության համար անգնահատելի գոհարներ պարունակող հողակույտեր՝ բահի ու բրչի կարոտ. Բայց բահն ու բրիչն ալ դաստիարակված ու ինքնագիտակ սերունդի են կարոտ:

Հեթանոսական շրջանի քանի մը բերդերու մնացորդներ կան, որոնք բավական են մեզի հասկցնելու, թե ինչ երկաթի կամք, մարմնական բիրտ ուժ և եգիպտական արտակարգ չարքաշություն ունեցեր է այդ բերդերը կանգնող ժողովուրդը:

Հրաբխային ավազաքարի գործածությունը դեռ չէ սկսած բերդերու շինության համար, երկաթի նման կարծր և աներևակայելի ծանրությամբ որձաքարն է ի գործ դրված ծավալի վիթխարի չափերով. մինչև չորս խորանարդ մետր քարեր իրարու վրա դրված են լոկ մարդկային ուժով, առանց նույնիսկ կրաշաղախի. շաղախի պաշտոնը կատարեր են երկաթի ամուր կապերը և արտասովոր մեծությամբ քարերու բնական ծանրությունները: Ոչ մեկ ուժ բավական չէր անոնց ճարտարորեն հյուսված շարքերը քանդելու՝ եթե բնության ուժեղ սասանումներու անդիմադրելի զորությենեն չկործանեին:

Այս բերդերու համար գործածված քարերու խոշորության վրա գաղափար մը կազմելու համար բավական թող ըլլան մեկ երկու օրինակներ:

Երասխի և Ախուրյանի իրար խառնված տեղը, նախկին Երվանդաշատի մեջ, ուր այժմ կա Հաջի-Բայրամ գյուղը, պարտեզներու և այգիներու շրջափակ են շինած բերդեն թափած քարերով. ամեն

կողմեն մեկ շարք քար բավական եղած է անանցանելի դառնալու համար, ամեն քարի բարձրություն մեկ ու կես մետրեն պակաս չէ, և առանց բացառության անոնց վրա կտեսնվի երկաթի կապերուն փորվածքները:

Բագարանի մեջ նույն շրջանեն մնացած փոքր սրահ մը կա, որուն յուրաքանչյուր կողմի պատերուն համար բավական եղած է իրարու վրա դնել հինգ կամ վեց քար: Քրիստոնեական շրջանի մեջ այս մնացորդը վերածեր են տոհմային դամբարանի և ստորին կարգի շարքերուն վրա փորագրեր են արձանագրություններ ու խաչեր՝ անոնց հավիտենական անշարժության վրա միանգամայն վստահ:

Բագարանի հին բերդի պարիսպները ինքնին սարսափելի մեծագործություններ են, որոնց հազիվ հետքը մնացեր է այսօր հողի երեսին. մասեր կան, որ մինչև երկուք ու կես մետր թանձրություն ունին, իսկ քարերու խոշորությենեն մարդ կզարհուրի. թե ի՞նչ միջոցով այդ մեծամեծ գանգվածներ իրարու վրա հաներ են, հասկնալ անկարելի է:

Նույն ոճը, նույն շարքաշ դիվային աշխատանքը կներկայացնե Տեկորի բերդը. սա թեև համեմատաբար փոքր տարածություն ունի, սակայն ավելի որոշ է ընդհանուր հատակագիծը, որուն մեջ, բացի պատերեն, հայտնի են նաև ձեռագործ ճանապարհները, ոչ մեկ դժվարության առջև կանգ չեն առեր շինողները. դարևանդները հարթեր են ցած կողմին վրա որձաքարե հաստատուն պատեր շինելով, իսկ հանդիպած ապառաժները մինչև չորս մետր լայնությամբ ճեղքեր անցեր են:

Բերդեն իջնող այս ճանապարհը լեռան հյուսիսային լանջին վրա մինչև ութը մետր կլայննա և կհասնի ուղիղ Կամսարականի եկեղեցիին արևմտյան դռան առջև, ուր կճյուղավորվի գանազան ուղղությամբ: Եկեղեցիին հարավային կողմը գտնված հին գերեզմանատան մեջ տապանաքարերու վրա եղած արձանագրություններե կտեսնվի, որ 10-րդ դարուն թե՛ բերդը և թե՛ ճանապարհը անգործածելի եղած են, որովհետև գերեզմանատունը շինված է ճանապարհին վրա:

Վերին աստիճան ուշագրավ են որձաքարի մեջ փորված հին քարայրներ: Առանց սոսկումի մարդ չէ կարող նայել Բագարանի մեջ գտնվող քարայրի վրա: Վերեն վար ոլղղահայաց կերպով կտրված բարձր լեռան մը կուրծքին, առնվազն 80 մետր բարձրությամբ քարայրեն վեր ալ կա նաև մոտ 50 մետր բարձրություն: Ամեն կողմե անմատչելի է այս քարայրը, բացի միակ ձեռագործ նեղ ճանապարհե մը, որն որ հատկապես փորված է լեռան կուրծքին: Քիչ մարդու գործ է առանց գլխի պտույտի անցնիլ այդ սոսկատեսիլ անդունդի վրայեն, որուն ահավորությունը կբազմապատկվի Ախուրյանի ֆշֆշոցներու արձագանքներովը:

Այս տեսակ անմատչելի քարայրներու շինությունը սովորական կերևի Հայաստանի մեջ, թերևս իբրև ապաստարան քաղաքական փոթորիկներու ժամանակ: Խորենացին կնկարագրե Մանանաղի դավառին մեջ ուրիշ քարայր մը, որուն մեջ ապաստաներ էին Արշակի դանձերը փախցնողներ[1]: Հետապնդողներն ստիպվեր են երկաթե կապերով շինված ամուր սնտուկներու մեջ մարդիկ նստեցնել և չվանով վերեն վար կախել, բայց կրկին չեն հաջողեր քարայրին մոտենալ:

*
* *

Իր բոլոր կատարելություններով հայ զեղարվեստի թագուհին է Գառնիի մեջ Տրդատա թախտ ըսված շենքը:

Ինչ որ ըլլա այս շենքը, թախտ, հովանոց կամ մեհյան, լիովին կարդարացնե անոր Տրդատի վերագրվելու ժողովրդային ավանդությունը: Հռոմի մեջ դաստիարակություն ստացող Տրդատը միայն կարող էր այս ճաշակը ունենալ և անոր ոճը ընդհանրացնելու ձգտիլ Հայաստանի մեջ:

Հռոմեական արվեստի զորեղ ներգործության տակ կազմված է իր ընդհանուր գծերուն մեջ, սակայն երբ մանրամասնությանց կմտնենք, կտեսնենք, որ տեղական ճաշակն ալ ոչ նվազ դեր կատարեր է:

Շատ պարզ է, որ Հռոմայեցի ճարտարապետ չկար անոր վրա հսկող, եթե ոչ չէին պատահեր այնպիսի սխալներ, որոնք Հռոմեական արվեստին մեջ հաստատուն ընդհանուր օրենքի տակ գրված էին, այդ կանոններու մանրամասնությանց անծանոթ հայ ճարտարապետը միայն կարող էր moulure-ներու դասավորությանց մեջ չեղվիլ ընդհանուր օրենքեն: Ես կկարծեմ, որ Տրդատի հիշողություններն են, որ ղեկավարեր են շենքին ընդհանուր ճարտարապետությունը, ան ներշնչեր է հայ ճարտարապետին այնքան բան, որչափ որ իբրև ոչ մասնագետ միտքը պահած էր Հռոմի մեջ. մնացածը թողեր է տեղական ճարտարապետի ճաշակին:

Երբ քանդակներու մասերը առանձին քննենք, մեծ մասամբ Հռոմեական արվեստին օտար կգտնենք. և ինչ մասեր որ Հռոմի արվեստին կպատկանին, անոնք ալ թե՛ համաչափություններով և թե՛ քանդակագործական ոճով դարձյալ տեղական ոճին ենթարկված բռնի նմանություններ են:

Ընդհանուր առմամբ պետք է ըսենք, որ Տրդատա թախտը իր Հռոմեական ճարտարապետության մեծ խառնուրդով բացառություն է հայկական ոճի դարավոր ուղղություններու մեջ: Որչափ որ Տրդատ ցանկացեր է հայ ճարտարապետության մեջ հեղաշրջում մը հառաջ բերել, սակայն բոլորովին չէ հաջողեր: Հայեր չեն համակրեր բոլորովին այդ ոճին, զտեր և ընդուներ են այն մասերը, որոնք իրենց հաճելի երևցեր են. 5-րդ և 6-րդ դարերու հիշատակարաններու վրա Տրդատա թախտը հիշեցնող հազիվ քանի մը ձևեր կտեսնենք:

Իմ կատարած հետազոտություններես եզրակացուցեր եմ, որ Հայոց քրիստոնեական շրջանի ճարտարապետությունը, սկսած 4-րդ և 5-րդ դարերեն մինչև վերջին անկումը՝ 15-րդ դար, չորս տեսակ վերածնություններե անցեր է, որոնց առաջինին կպատկանին Էջմիածնի կաթուղիկեն և Տեկորի եկեղեցին Նախքան Սահակ Կամսարականի վերանորոգություն կատարելը:

Վերածնության առաջին շրջանը, որ տևած է 4-րդ դարեն մինչև 7-րդ դար, հայտնի նշաններ ցույց կուտա, որ ենթարկված է Հռոմեական ճարտարապետության զարդաքանդակներու և moulure-ներու քանի մը ձևերու մեջ:

Էջմիածնի կաթուղիկեն տակավին պահած է modillon-ներով զարդարված corniche մը, բայց մյուս մասերուն մեջ, անընդհատ նորոգություններու պատճառով հինեն գրեթե բան չէ մնացեր, որպեսզի կարելի ըլլար ճշտիվ հասկնալ, թե ի՞նչ չափով և ի՞նչ ներդաշնակությամբ պատվաստված էր Հռոմեականը հայ ոճին հետ:

Տեկորի եկեղեցին ալ թեև հաճախ ենթարկվեր է փոփոխություններու, բայց շատ բնորոշ կերպով պահած է հայ և Հռոմեական ճարտարապետության ներդաշնակ խառնուրդը:

Հռոմեական արվեստի ներգործությունը մատնանշող գլխավոր մասերը Տեկորի եկեղեցիին վրա՝ արևելյան և արևմտյան մեծ fronton-ներն ու շենքը շրջապատող որմնասյուներու լայնությանց և բարձրությանց համաչափություններն են: Որմնասյուները օտար համաչափությունը պահելով հանդերձ, խոյակներ և խարիսխներ բոլորովին տարբեր կերպարանք ստացած են իրենց անօրինակ քանդակներով: Քանի մը խոյակներ կան թեև հունական հետևողության ջանքեր ցույց տվող, բայց մնացյալ մեծ մասը ոչ մեկ կերպով չեն կապվիր շրջակա ազգերու ոճերուն հետ: Ասոնց մեջ քանդակամասեր կան, որոնք նորածիլ բողբոջներ են 9-րդ և 10-րդ դարերու մեջ ծաղկող և հետո ալ գոթական ճարտարապետության մեծ հարստություններեն մեկը կազմող հայկական ամենաճոխ մանվածոներու: Չէ կարելի չհիանալ բոլորակ որմնասյուներու խարիսխները ծրագրող ճարտարապետի պայծառ երևակայության վրա. քառակուսի տախտակի մը չորս անկյուններուն վրա շեղակի քանդակեր է աստիճանաբար իրարմե բարձր սրածայր տերևներու շարքեր, ամենեն բարձր տերևներուն ծայրերուն վրա զետեղեր է կոնաձև սկավառակ մը՝ սուր ծայրը անցուցած չորս անկյուններու տերևներուն հեռավորությենեն մնացած դատարկության մեջ. կոնաձևին ամբողջ շուրջը քանդակված են մանրիկ ձողիկներ, որոնք շատ կհիշեցնեն արևմտահայ կղերին գլխուն խույրը և անոր կոնաձև մասին վրայի ծալքերու շարքը: Սկավառակին վերի շրթունքները պսակված են երկգծանի բոլորշի մանյակով մը, որուն մեջտեղեն վար կախված է մինչև ներքև լայն ժապավենի մը վրա քանդակված պայտաձև օղակներով շղթա մը. մանյակեն վեր կսկսի արդեն սյան բունը: Այսքան վայելչություն, շքեղություն այս խարիսխներուն վրա, ոչ մեկ տեղ իրենց նախորդը չունին:

Խոյակներեն մեկուն վրա քանդակված են երկու եղջյուրներ, որոնք իջնելով վերեն վար և փաթաթվելով՝ խոյակին արտակարգ գեղեցկություն կուտան: Քառակուսի որմնասյուներու խոյակներուն մեջ քանդակված են զանազան վայրենի կենդանիներ՝ ճարտար և համարձակ գծերով, որպիսիները դժվար է տեսնել հայ ճարտարապետության մեջ մինչև 12-րդ դար:

Այս բոլոր կատարելություններու հետ կան մասեր ալ, որոնք սկզբնական փորձեր միայն կներկայացնեն Տեկորի եկեղեցիին մեջ: Պարզ կերևի, որ նախքան 5-րդ դար գմբեթի կառուցումը անծանոթ էր Հայաստանի մեջ և թերևս առաջին փորձն է Տեկորի եկեղեցիին գմբեթը: Չորս կողմեն ներս հակված պատերով միայն կարողացեր են գմբեթի ձև տալ անոր ի ներքուստ, իսկ արտաքուստ միայն խորանարդ մը. բայց իր նախնականությամբ հանդերձ՝ բավական հանճարեղ միջոցի են դիմած առանց կաղապարի շինելու համար: Գմբեթի այս նախնական ձևին վրա է, որ հետզհետե զարգացեր և կատարելագործվեր են հետագա դարերու մեջ նախանձելի շքեղության հասած հայկական կոնաձև գմբեթները:

Հավանաբար 6-րդ դարու վերջերը սկսեր է հայ ճարտարապետության երկրորդ վերածնությունը, որովհետև 7-րդ դարուն արդեն նախորդ ոճեն բոլորովին տարբեր, նոր ուղղության վրա կանգնած է: Հռոմեական ոճի ներգործությունը միանգամայն անհետացած է, անոր տեղը բռնած են ասորական և սասանական փոխանցումներ:

[1] Մով. Խորենացի. Տփխիս, 1881, երես 362:

Corniche-ներ, բացի սասանականեն, կարծեք ամենահին եգիպտական և քաղդեական ոճերու վերհուշումներ են, նույնպես գնդագուփ խոյակներ՝ երբեմն մանվածո քանդակներով ծածկված, abaque-ներու ներքև երկու ծայրերու վրա հարմարցված են հունական խոյողներ (spirale), սակայն ոչ իսկական հունական, ավելի նման արևելյան ձևերուն, որոնք երևցան Նինվեի և Պերսեպոլսի պեղումներով: Պատուհանները առհասարակ շրջանակված են բազմատեսակ moulure-ներով և պակված ծաղիկներու և տերևներու խառնուրդով քանդակված լայն ժապավեններով: Այս երկրորդ վերածնության մեջ ինքնուրույն զարդաքանդակներ ստեղծելու համար, շատ քիչ անգամ դիմեր են բնության, երևակայությունն է ներշնչել արվեստագետներուն ուղիղ ու կոր գծերով գաղափարական տերևներու ու ցողուններու հյուսվածքներով ստեղծել զգլխիչ ներդաշնակություն մը, որուն décadance անունը կուտա ներկա ճարտարապետությունը և դարուս մեջ միայն ստեղծված կհամարի: Արդյոք ո՞րչափ մեծ անակնկալ պիտի ըլլա մեր ժամանակակից արվեստագետներու համար, երբ օր մը տեսնեն իրենց սեփականությունը կարծած զարդարանքներու անհամար օրինակները առնվազն տասներեք դար առաջ իրագործված Հայաստանի մեջ:

Մարդոց և կենդանիներու քանդակներուն համար հաջող շրջանն է երկրորդ վերածնությունը, այդ ճյուղը զգալի կերպով ընկած է հակառակ մյուս ճյուղերու կատարելագործության: Բացառաբար Մրենի եկեղեցիին դռներուն վրա կան բարձրաքանդակ պատկերներ, որոնք ավելի պատմական նշանակություն ունին, քան գեղարվեստական: Այս քանդակներուն մեջ մենք կտեսնենք 7-րդ դարու հայ իշխանին ու ազնվականին տարազը իր բոլոր մանրամասնություններով, որուն անփոփոխ շարունակությունը պահված է քուրդ պեյերու մեջ: Այս շրջանին գերեզմանաքարերու վրա ալ կտեսնվին մարդոց պատկերներ, որոնք միևնույն տարազը ունին:

Զվարթնոց եկեղեցին 7-րդ դարու հայոց ճարտարապետության գլուխ գործոցն է և անհամեմատ մեծ արվեստագիտությամբ փորագրված են բոլոր քանդակները, սակայն այնտեղ ալ բոլորովին անհաջող են մարդոց պատկերներու քանդակներ:

Ինչպես եկեղեցական, նույնպես ալ գեղարվեստական ճարտարապետության մեջ եզական օրինակ մ'է Զվարթնոց եկեղեցին: Թեև շատ է խոսված այս հրաշակերտ հիշատակարանին վրա, բայց որչափ որ խոսվի, դարձյալ քիչ է: Ճշմարիտ է, որ ան չունի Պանթեոնի և ս. Սոփիայի գմբեթներու վիթխարի տրամագիծը և ոչ ալ անոնց մեջ վաղած ոսկիի հեղեղները կան այստեղ, բայց կա ճարտարապետական այնպիսի մեծություն մը և արվեստագիտական այնպիսի հմտություն, որ համաշխարհային ճարտարապետության մեջ հազվագյուտ օրինակ և պակ է հայու ստեղծագործական տաղանդին[1]:

Մովսես Կաղանկատվացվո վկայության նայելով, Կոստանդին կայսրը զմայլած մնաց այս եկեղեցիի գեղարվեստական մեծագործության առջև, և իր հետ տարավ ճարտարապետը Պոլսո մեջ ալ նմանը շինել տալու համար, սակայն ճարտարապետը ճանապարհին մեռավ:

Եթե Զվարթնոցի բոլոր զարդարանքները ձուլածո ոսկիով ու արծաթով շինվեին, այնքան աքանչացում չպիտի պատճառեին, որչափ որ կպատճառեն ներքուստ ուժը սյուներու վրա կախված կրկնակ հսկա գմբեթները և գմբեթներու խարիսխը կազմող ութ աղեղները, որոնք արտաքին պատին զուգահեռական կորությամբ ձգված են մեկ սյունեն դեպի մյուսը:

Զվարթնոցի ավերակները պարզապես կծաղրեն մեր այսօրվան գիտական օրենքներու վրա հիմնված տարողությանց նրբին հաշիվները. եթե նախքան Զվարթնոցի գտնվիլը, նույն ծրագիրը հրապարակի վրա դրվեր, ներկա արվեստագետներ, սոսկումով լեցված, խելագար պիտի համարեին ներկայացնողը. բայց իրականությունը լռեցուցած է ամեն հավակնոտ բերաններ:

Այս անօրինակ հանդգնությամբ կանգնված շենքը երեք հարյուր տարի շարունակ կանգնած մնացած էր. սա արդեն ապացույց է կանգնող ճարտարապետին լիակատար գիտակցության և մասնագիտական գերագույն աստիճանի հմտության:

Գագիկ Ա. 10-րդ դարու վերջը (1000 թվին) կանգներ է Անիի ս. Գրիգոր եկեղեցին Զվարթնոցի պատճենով, բայց ի՞նչ անհամեմատ տարբերություն կա այս երկու միանման շենքերու ճարտարապետներուն հեռատեսությանը մեջ. Զվարթնոցի ճարտարապետը ճնշում սպառնացող մասերուն վրա թեթև ավազաքար կամ չեչաքար գործածեր է, մինչդեռ Անիի մեջ հրաբխային սովորական քարով են ծանրաբեռնված նույն մասերը. և ահա այդ անհեռատեսությունը շուտով ունեցեր է իր աղետալի հետևանքը, հազիվ 10–12 տարի անցած արդեն շենքը ամեն կողմե սկսեր է ճեղքվիլ ու գրեթե անգործածելի եղած է:

Ինչպես Գառնիի Տրդատա թախտը, այնպես ալ Զվարթնոց եկեղեցին հունա-հռոմեական արվեստի մեծ խառնուրդ ունի, սակայն այդ խառնուրդներեն գլխավոր մասը կկազմեն արտաքին բոլորակը և զարդաքանդակներու մասեր. մնացյալ մասերուն մեջ գերակշիռ դիրք ունին տեղական ոճերը, մանավանդ անոր արտասովոր կազմությունը, այսինքն՝ խաչաձևը ձուլված բոլորակին մեջ. իզուր է փնտռել ուրիշ երկիրներու մեջ այդ ոճը. ստույգ կերպով հայկական սեփականություն է:

Արտաքուստ, բոլորակ պատուհաններու ամեն տեսակ քանդակազարդ շրջանակներ կապ չունին արտաքին արվեստներու հետ, շատ աննշան բացառությամբ. նույնպես ներքին աղեղներու շրթանց վրա քանդակվածները. այս վերջիններս Տեկորի եկեղեցիի դռանց վրա գտնվածներուն մեկ ուրիշ այլաբանությունն են:

Արծիվներ քանդակված չորս մեծ խոյակները, որոնց վրա հանգչած էին ներքին ութը մեծ պատասխանատու աղեղներու ծայրերը, հատկապես Զվարթնոցի համար ծրագրված են իրենց պաշտոնին համապատասխան ձևով. անոնց վրա քանդակված արծիվներն ալ շատ կարելի է հայկական ավանդության մը հետ կապված են: Մյուս փոքր խոյակները, որոնց գնդաձև կողովները մանվածո քանդակներ ունին և վերևեն spirale-ներ, իրենց մանրամասնություններուն մեջ առանձին-առանձին երկիրներու մեջ զարգացող արվեստներու փոխառություն են, իսկ այդ առանձին տարերքներով ամբողջական խոյակի մը ներդաշնակ կազմությունը պետք է տեղական ճաշակի վերագրել: Հավանաբար խոյակներու այդ ձևը 6-րդ դարուն մեջ սկսած է գործածվիլ հայոց մեջ, որուն մեկ օրինակը կա Երերույքի տաճարին մեջ: Ծագումով ասորաքաղդեական են թե՛ գունդերը և թե՛ spirale-ները, բայց առանձին գործածված իրենց նախնի ընագավառին մեջ. իմ կարծիքով, այդ ոճը երեք ճանապարհով մեկներ է զանազան կողմեր: Մեկ գծով անցեր է Հնդկաստան, մեկ գծով ալ դեպի սիրիական եզերքներ, իսկ ուրիշ գծով ալ Հայաստան. այս երեք երկիրներու մեջ ալ տարբեր երևույթ ստացեր են գնդաձև խոյակներու համաչափությունները: Միայն Սիրիայի և Հայաստանի մեջ միօրինակություն կներկայացնեն կողովի հյուսված քանդակագործությունով, որ թերևս կապ ունի սրբագործված ավանդության մը հետ, և այդ ավանդությունն ալ Սողոմոնի տաճարին դռան երկու քովի սյուներու խոյակներն ըլլալ կկարծեմ, որոնց գունդերը ցանցակերպ հյուսվածքով ծածկեր է Սողոմոնի տաճարին ճարտարապետ Փյունիկեցի Քիրամը[1]:

Ով գիտե ի՞նչ աղետալի հանգամանքներու պատճառով 7-րդ դարեն հետո հայ ճարտարապետությունը գրեթե բոլորովին ընկած է: 8-րդ դարեն մինչև 9-րդ դարու կեսը կարևոր շինություններու ոչ պատմական հիշատակություն կգտնենք և ոչ ալ մնացորդներ:

Այս ողբալի անկումին պատճառը անշուշտ արաբներու Հայաստան արշավելն էր: Այս շրջանին պատմությունը սրտաճմլիկ ողբերգություն մըն է:

Արծրունի և Բագրատունի թագավորություններու վերականգնումով սահմանափակվեր են ծայրահեղ խժդժությունները և քաղաքական կյանքի վերականգնումով հառաջ եկեր է հայ ճարտարապետության երրորդ վերածնությունը:

Ոչ միայն գեղարվեստասեր, այլև ավանդապահ հայ ժողովուրդը այս նոր վերածնության մեջ շատ քիչ բան մերժեր է հին արվեստեն, գրեթե նախկինին վրա ավելացուցեր է հետզհետե փոխառություններ և նոր ստեղծագործություններ:

Այս շրջանին մեջ վերստին երևցեր են պահ մը հունական դետալներ, որոնք ներդաշնակորեն խառնված են ավանդական հայկական զարդաքանդակներուն մեջ: Հոռոմոսի վանքի գավթին առաստաղը, որ աղեղներու խաչաձևումներով ինը զանազան մասերու բաժնված է, յուրաքանչյուր բաժանում առանձին տեսակ քանդակագործությունով զարդարված է, որոնցմե մեկն է այստեղ ցույց տրված պատկերը: Չորս հատ միակտուր քարերով ծածկված է յուրաքանչյուր առաստաղ, և չորս քարի մեջտեղեն սև քարի լայն շերտով մը խաչաձևված է հատկապես զարդարուն խաչ մը քանդակվելու համար, չորս քարերու վրայի քանդակներն ալ միանման չեն, այսպես կպահանջեր հայ արվեստագետին ճաշակը [նկ. 105]:

Գավթի կեդրոնական մասը, որ փոխանակ առաստաղի՝ գմբեթի վերածված է, դեպի ներս հակված ութը խոշոր քարերով միայն կազմված է ամբողջը, և ամեն քարի վրա աննկարագրելի գեղեցկությամբ առանձին տեսակ զարդարանքներ փորագրված են:

Երբեք չեմ մոռնար այն բոպեն, երբ իտալացի արվեստագետի մը հետ կդիտեինք այս գմբեթը 1903 թվականին: Սքանչացած ու հափշտակված իտալացին՝ երանի կարդաց ինծի, ըսելով՝ «Բախտավոր ժողովուրդ եք, որ այսպիսի հարստություններ ունիք մնացած այնպիսի դարերե՝ երբ տակավին Եվրոպայի մեծ մասը կիսավայրենի վիճակի մեջ էր...»:

[1] Խաչիկ վարդապետ Դատյան որչափ որ պատվո և հարգանաց արժանի է Զվարթնոցի նման ճարտարապետական մեծագործություն մը ի լույս բերելուն համար, նույնչափ ևս դատապարտելի է այդ մեծագործության նշխարները մինչև այսօր գիտությենեն թագուն իր մոտ բանտարկած պահելուն համար. եթե այսուհետև ալ չփութացնե պեղումներու տված արդյունքին լիակատար հրատարակությունը, պարզապես կմեղանչե նյութապես և բարոյապես իրեն աջակցողներու նպատակին և ակնկալություններուն դեմ:

[1] Հին կտակարան, Գ. Թագ., գլ. Ե, հմր. 41–42:



Նկ. 105. Հոռոմոսի քանդակազարդ առաստաղը (Թորամանյանի գծագրությունից)



Երրորդ վերածնության գլուխգործոցներն են Անիի կաթուղիկեն և գագկաշեն ս. Գրիգոր եկեղեցին, որ բացվեցավ 1905-1906 թվականներուն՝ պրոֆ. Ն. Մառի պեղումներով:

Գագկաշեն ս. Գրիգորի գոյությունը պատմությունից ծանոթ էր, բայց տեղը անհայտ էր, անոր տեղը ճշտելու պատիվը կվերաբերի Ա. Վրույրի, որ առաջին անգամ հայտարարած է 1901 թվականին:

Շատ ճիշտ էր գրած պատմագիրը անոր մասին: Չափով, ձևով ոչ մեկ տարբերություն չունի Զվարթնոցեն, միայն զարդաքանդակներն են, որ Զվարթնոցին օտար են. 9-րդ դարու զուտ հայկական քանդակներով զարդարված է հունականի թեթև խառնուրդով: Այս եկեղեցին պարզևեց մեզի Գագիկ Ա-ի երկու մետր բարձրությամբ հսկա արձանը, որն որ եթե իր գեղարվեստականությամբ չէ կարող մրցիլ հայկական ուրիշ զարգացած ճյուղերու հետ, սակայն կսորվեցնե մեզի Բագրատունի թագավորներու հատուկ արևելյան ճոխ տարազը բոլոր մանրամասնությամբ:

11-րդ դարու հայ հանճարի մեկ զարմանալի պտուղն է օրհասական վիճակի հասած և ընդմիշտ այցելութենե զրկված փոքրիկ Հովիվի եկեղեցին Անիի պարիսպներեն դուրս: Արտաքուստ մանրանկարն է Զվարթնոցի և գագկաշեն ս. Գրիգորի, իսկ ներքին կողմեն, ամբողջ կիսակլոր աղեղներու ծայրերը հավաքվելով կեդրոնին վրա, առանց սյունի կախված մնալուն նկարագիրը ոսկի տառերով պետք է արձանագրել ճարտարապետության ընդհանուր պատմության մեջ. Հովիվի եկեղեցին անգնահատելի գոհար է հայ հիշատակարաններու շարքին մեջ:

Երրորդ վերածնությունը մանվածներու անհունության շրջան մըն է, որուն մեջ հայ արվեստագետներ անընդհատ մրցեր են մեկզմեկ գերազանցելու համար: Ոչ միայն արվեստագետներու արժանապատվությունը պահանջեր է իրարմե տարբեր նորություններ և գեղեցկություններ ստեղծել, այլ միևնույն վարպետին կարծեք ներելի չէր անգամ մը չինածը վերստին կրկնել ուրիշ տեղ: Երբեք չեն համակերպած համաչափություն ըսված օրենքի մը. իրենց ճաշակի և պաշարի անհունության մեջ գտեր են գեղեցկություն և վայելչություն, և ահա այդ պատճառով է, որ կտեսնենք հայ հիշատակարանի մը մեջ սյուներու թվով խոյակներու տեսակներ և պատուհաններու թվով շրջանակներու բազմություն: Բավական չէր, որ շրջանակ կամ պսակ առանձին տեսակ քանդակած են, անոնց յուրաքանչյուրին մեջ ալ քանդակներու տասնյակ այլազանություններ խտացուցած են:

Պսակներու, շրջանակներու աղեղներու սահմանը շատ նեղ էր հայ արվեստագետին իր բեղմնավոր տաղանդի պատկերը արտացոլացնելու համար, ան ավելի լայնարձակ տեղ գտեր է խաչքարերու վրա, ուր դրոշմեր է անպարագրելի վսեմություն ու գեղեցկություն: Մինչև ո՞ւր պիտի սլանար հայու գեղարվեստի հանճարը, եթե իր տրամադրության տակ ունենար Հունաստանի ընտիր մարմարիոնը, փոխանակ հրաբխային կոշտ ավազաքարերու:

Ահա այս շրջանի մեջ ծաղկած հայ ճարտարապետության համար է, որ ճարտարապետության պատմաբան մեծ գիտնական A. Choisy ոչ միայն կաքանչանա անոր ինքնուրույնության վրա, այլև քայլ առ քայլ կհետևի երկրագունդի վրա անոր կատարած արշավանքներուն:

Ընթերցողին ավելի մեծ վստահություն և հաճույք պատճառելու համար այստեղ կընեմ մեծարգո հեղինակին սեփական քանի մը տողերը.

«Կ. Պոլսո և Հայաստանի ոճերուն մեջտեղ, բայց ավելի մոտիկ հայկական ոճին, կազմված կերևին հարավային Ռուսաստանի կրոնական հիշատակարանները...»[1]:

«...Դանուբի հովտին մեջ, Սերբիա, Ռումանիա, Մոլդավիա, հայկական զարդաքանդակներու հատկանիշն է, որ դրոշմված է մինչև այսօր: Ռավանիքայի, Քրուշևաքի, Շթուտանիկայի եկեղեցիներու վրա բյուզանդական հատվածներու մեջ պատշաճեցուցված են հայկական մանվածներ: Քուրթեա տ՝Արճելի, Թեկովիցի, Տրակոմիրայի եկեղեցիներուն վրա չկա զարդաքանդակ մը, որ Հայաստանի չպատկանի: Զարդաքանդակներու ճարտարապետության տեսակետով Դանուբի ստորին հովիտը հայկական գաղթավայրի մը կնմանի: Միակ ոճը, որ չէ ընդունված այնտեղ, ձվաձև աղեղն (ogive) է...»[2]:

«...Միևնույն ժամանակ, երբ բեղմնավորապես մշակված արվեստի մը ազդեցությունը կհառաջանար դեպի Կ. Պոլիս, միևնույնը Պարսկաստանեն երկար արշավանք մը կկատարե Եփրատի վրայով, կտիրե Տրապիզոնի նահանգին և կհասնի Եվրոպա՝ Սև ծովի և անոր մեջ թափվող գետերու միջոցով...»[3]:

«Պարսկական արվեստի տարերքը, որուն օջախը փոխադրված էր Բաղդադ, Հայաստանի մեջ ծնունդ տվեր է այն ինքնուրույն արվեստին, որուն վրա խոսեցանք (երես 21, 30 և 58): Այս հայկական արվեստը անցնելով Սև ծովը, կտարածվի հա-

[1] A. Choisy. Hist. de l' Arch., tome II, page 61.

[2] Նույն տեղ:

[3] Նույն տեղ, էջ 84-86:

բավային Ռուսաստան և Դանուբի նահանգներուն մեջ Պոկրովի, Կիևի ռուսաց, նաև ռումանացվոց, մանավանդ Սերբիայի եկեղեցիներու ոճերը ավելի հայկական են, քան բյուզանդական»:

«Այսպեսով՝ Սև ծովի բոլոր եզերքը, Տրապիզոնեն մինչև Դանուբի ավազանը կապված են հայու սեփական արվեստին հետ և հայկականով՝ ավանդական սասանականին...»:

«Ասիական գաղափարները, հասնելով այս տեղերը, փոխանցման բաց ճանապարհներ ունեին իրենց առջև, որոնք Սև ծովի օժանդակ գետերն էին՝ Դոն, Դնեստր, Վոլգա: Այսօր իսկ ասիական վաճառականության մեծ գիծն է Վոլգան, որուն մթերանոցն է Նովգորոդը: Դնեստրը կհաղորդակցի Վիսթյուլի հետ և կառաջնորդե Սկանդինավիայի սահմաններուն: Եվ հիրավի, Նորվեգիայի, նույնպես Շվեդիայի մեջ ասիական արվեստներու ներկայությունը ավելի զգալի է, քան Ռուսիայի»:

«Ազդեցությունը կանգ չէ առած Սկանդինավիայի մեջ. այս գեղաքանդակներու ոճը Նորթհմանի լաստերու միջոցով վերստին իջեր է ամբողջ օվկիանոսի երկարությամբ վերածնություն տալու համար Անգլիայի, Իռլանդայի և Նորմանդիայի ռոմանական զարդաքանդակներուն»:

«Վերջապես, Իռլանդիայի մեջ գործածական զարդաքանդակներ նմանություններ են հայկականի, որոնք թեև վաղուց նկատված էին, սակայն հեռավոր Ասիայի ներգործությանն էին վերագրված»[1]:

Երկու դար հազիվ կյանք ունեցեր է հայ ճարտարապետության այս փայլուն շրջանը: Ալփասլանի արշավանքը (1064) ամեն բան հիմնահատակ կործաներ է բովանդակ Հայաստանի մեջ. մոտավորապես 120 տարի հայերը չեն կարողացեր գեղարվեստի կամ ճարտարապետության վրա մտածել. մարդ իզուր կփնտռե այս 120 տարվան մեջ նոր շինություն մը կամ արձանագրություն մը: Անիի կաթուղիկեն այս ժամանակ 60 տարի իբրև մզկիթ ծառայեցնելեն զատ, քանի մը արձանագրութեններ ալ կիմանանք, որ շատ մը եկեղեցիներ բոլորովին քանդեր են:

Բռնակալության ուժը 12-րդ դարու կեսեն հետո, սկսեր է կամաց-կամաց թուլանալ, որով ժողովուրդի սրտին մեջ սկսեր է տակավ զարթնել գեղարվեստի սերը. 1198 թվականին, երբ երկրի վարչությունը Վրաստանի հովանավորության տակ Զաքարե սպասալարի ձեռքն էր անցեր, անմիջապես անհավատալի արագությամբ ամբողջ երկիրը ծածկվեր է նոր ոճի նոր գեղեցկություններով զարդարված անթիվ հիշատակարաններով: Այս շրջանին մեջ ոչ միայն շինվեր են տաճարներ, այլև բերդեր, կամուրջներ, ձեռագործ ճանապարհներ և այլ բազմաթիվ հասարակական շինություններ: Անիի պարիսպներու այսօրվան կանգուն բարձրաբերձ աշտարակներեն շատերը 13-րդ դարու կեսեն առաջ շինված են:

Զաքարեի գահակալության հետ միաժամանակ հանկարծական փայլով երևան եկող այս նոր արվեստն է հայ ճարտարապետության չորրորդ վերածնությունը, որուն մեջ դարձյալ կտեսնենք, որ ավանդական հին ոճը իր պատվավոր տեղը ունի, բայց այլևս ծանրաբեռնված է արտաքո կարգի նորաստեղծ քանդակագործություններով: Այս շրջանին կպատկանին գույնզգույն մանր ու խոշոր քարերով նախշուն առաստաղները: Երկրաչափական գծերով զարդաքանդակներու մեջ խառնած են ձեռքի ճարտարությամբ գծված տերևներ, ծաղիկներ, ցողուններ, հյուսված զանազան վայրի և ընտանի անասուններու ու բազմատեսակ թռչուններու շուրջը: Փոխվեր են մեծ մասամբ խոշոր պյուներու ձևերը և անոնց քանդակագործությանց ոճերը. մեծապես զարգացեր են քանդակազարդ մոզայիկներ (գույնզգույն հրաբխային քարերով շինված), ստալակտիտներ, կամարներու կամ աղեղներու բազմատեսակ խաչաձևումներ: Ահա այս ոճերն են, որ ոմանք արաբական կամ սելջուկյան կհամարին, առանց համոզիչ փաստերու վրա հիմնելու իրենց ենթադրությունները: Բայց որովհետև այդ կարծիքի մեծ մասամբ հերքումը ուսումնասիրության ընդարձակ նյութ է և առանձին հոդվածներ են հարկավոր այդ մասին իմ առանձին տեսությունս պարզելու համար, հետևաբար, ուրիշ հարմար առիթի թողելով՝ այստեղ պիտի բավականանամ քանի մը կարևոր բացատրություններով:

Անուրանալի է, որ հայ ճարտարապետության այս վերջին վերածնությունը զուտ արևելյան է, անոր մեջ ոչ հունական կա, ոչ հռոմեական. միևնույն ատեն ունի իր մեջ բավական խառնուրդ, բայց այդ խառնուրդը ոչ արաբական է և ոչ սելջուկյան, այլ պարսկականի այն ճյուղը, որ ծաղկեցավ արաբական տիրապետության ժամանակ, որուն զարգացման ուսումնասիրության եթե մտնենք, պիտի տեսնենք, որ այդ շրջանի պարսկական արվեստն ալ նախընթաց դարերու Հայաստանի ճարտարապետության զգալի չափով հետադարձ ազդեցության տակ զարգացած է, բայց այս մասին ուրիշ անգամ:

Այս շրջանի հայ ճարտարապետության մեջ է, որ A. Choisy-ի կարծիքը կարդարանա արմատը Բաղդադի մեջ տեսնելու մասին, եթե ոչ 9-են մինչև 12-րդ դարու հայ ճարտարապետության մեջ քաղդեական, ասորականի և հին սասանականի հեռավոր ազդեցություններ կան թեև, սակայն անոնք ալ արդեն վաղուց օտարացած և անզգալի դարձած են 4-րդ դարեն սկսած անընդհատ մշակվելով:

Մինչև դարերու մեջ ծաղկող ասիական արվեստները իրենց բազմակողմանի զարգացման պատճառով գիտական ուսումնասիրությանց մեջ հաճախ չփոթված են ոճերու հատկության տեսակետով. ասոր ալ պատճառը, ես կկարծեմ, որ համեմատաբար շատ քիչ քննված ըլլալն է: Եվ որովհետև ընդհանրապես արաբական տիրապետության սահմաններուն տակ կգտնվեին հաճախ այդ արվեստներու օջախները, կարճ խոսքով՝ արաբներու նվիրեր են այդ ամեն զարգացման ուժն ու տաղանդը, որոնք բոլորովին զուրկ էին այդ առավելութենեն: Այսպես էր նաև ժամանակ մը բյուզանդյան ոճը, քիչ էր մնացել, որ ինքնուրույն համաշխարհային արվեստի հռչակ ստանար՝ եթե վերջին տարիներու գիտական լուրջ քննությունները անոր թևարկություններուն սահման չդնեին և բաղադրության տարերքը չզտեին:

Այս հոդվածիս ընթացքին մեջ մասնավոր կերպով տեսնվեցավ, թե ինչպես հայ ճարտարապետությունը ընկած է ճիշտ այն թվականներուն, երբ արաբը, սելջուկը կամ թաթարը ողողելով երկիրը, քանդեր ու ավերեր են:

Այս թվականներուն շատ զարմանալի երևույթի մը կհանդիպինք Հայաստանեն դուրս, մահմեդական երկիրներու արվեստները ուսումնասիրելով: Պարզապես հայ ճարտարապետությունը Հայաստանեն դուրս սկսած է ծաղկիլ, խառնվելով նույն տեղերու արվեստներու հետ, այն ժամանակ, երբ Հայաստանի մեջ արդեն դադրած է:

Վերը տեսանք, որ 5-րդ դարուն Հայաստանի մեջ սովորական էին պայտաձև աղեղները և կամարները, 7-րդ դարուն ծագում առեր էին նաև ogive ըսված ձևերն ալ[1], բայց չէին վերջացած պայտաձևները, գրեթե մինչև հայ ճարտարապետության վերջին անկումը գործածվեց կտեսնենք այդ ոճը, թեև շատ ցանցառ: 8-րդ դարուն արդեն արաբներ Հայաստանը բոլորովին քանդեր էին, այլևս ճարտարապետություն գոյություն չուներ մինչև 9-րդ դարուն վերջերուն մոտ: Եվ ահա այս ավերման շրջանին, 8-9-րդ դարերուն մեջտեղ Սիրիայի մեջ կգտնենք պայտաձև աղեղներու ոճը հայկական ուրիշ դետալներով միասին: 10-րդ դարու վերջերն ալ Սպանիայի մեջ երևան կուգա Կորդովայի մզկիթին վրա: Այստեղ ոչ միայն կտեսնենք, որ 5-րդ դարեն առաջ սովորական եղող հայ ոճը մինչև Կորդովա հասեր է, այլև կպարզվի, թե ի՞նչ շավղով անցեր է մինչև Սպանիա հասնիլը:

Ոմանք կկարծեն, թե (անշուշտ 5-րդ դարու հայ ճարտարապետության ծանոթ չեղողներ) Հնդկաստանեն գացած ըլլա մինչև Սպանիա. այս կարծիքին որչափ անհավանական ըլլալը ստուգելու համար, ես կառաջարկեմ միայն մեկ բան՝ 5-րդ դարեն մինչև 10-րդ դարու պատմությունը բաղդատել աշխարհագրական քարտեսի հետ:

Միայն 5 և 6-րդ դարերու հայ ճարտարապետությունը չէ, որ դեպի հարավ և հարավ-արևմուտք տարածվեր է, այլ ամեն դարու մեջ ծաղկող հայ ճարտարապետություններ միշտ իրենց ներգործությունը ունեցեր են Հայաստանեն դուրս մահմեդական տիրապետության ներքև գտնված երկիրներու մեջ, այն ալ Հայաստանի մեջ ընկած պահուն. բնականաբար այս երևույթը պետք է բացատրել գերեվարությամբ:

Երբ Հայաստանի մեջ 11-րդ դարու վերջին քառորդին ճարտարապետությունը վերջին շունչը տալու վրա էր, հանկարծ Գոնիայի մեջ կերևա Ալայեդդինի հռչակավոր մզկիթը, որուն վրայի զարդաքանդակները մեծ մասամբ հայկական ըլլալեն զատ՝ թե՛ մզկիթը և թե՛ ներսի ամբիոնը հայկական ութանկյուն կաթուղիկե գմբեթներով պսակված կտեսնենք: Ամբիոնի վրա եղած արձանագրություն մը ցույց կուտա, որ ամբիոնը, հավանաբար նաև մզկիթը, շինած է ախլաթցի դավանափոխ հայ մը (1158 թվին) Մեկկեեն վերադարձին[2]: Պետք չէ մոռնալ, որ Վան, Ախլաթ, Արճեշ և Վանա ծովի շուրջը ուրիշ քանի մը քաղաքներ հայ ճարտարապետության մեծ օջախներ եղած են միշտ. ամեն տեսակ ոճեր ամենեն առաջ այս տեղերը ծագում առեր և տարածվեր են ամեն կողմ:

Դժվար է առայժմ ամեն շրջանի համար բազմաթիվ օրինակներ բերել արտաքին ներգործություններու մասին, որոնք շատ առատ են, օրինակ մ'ալ վերջին վերածնության փոխանցումներեն բերելով կբավականանամ:

Հայ ճարտարապետության չորրորդ վերածնությունը, որ մասնավորապես զարդաքանդակ-

---

[1] A. Choisy, Hist, de l'Arch., t. II, p. 84–86.

[1] Ogive աղեղներու մասին դարձյալ սխալ կարծիք կազմեր է A. Choisy (Hist. de L'Arch., t. II, page 21), անշուշտ, 7-րդ դարու հայ հիշատակարաններու մասին ժամանակագրական կամ նկարագրական ճիշտ տեղեկություն չունենալուն պատճառով, որովհետև ոչ թե առաջին անգամ Անիի կաթուղիկեին մեջ երևցած է ogive աղեղը 1010 թվին, այլ դեռ 7-րդ դարուն Ալամանի ս. Անանիան, Բագարանի ս. Թեոդորոս և ուրիշ կարգ մը ժամանակակից եկեղեցիներու մեջ առանց բացառության ogive են, միայն Մրենի եկեղեցիին աղեղներն են, որ թեև դարձյալ բեկում ունին կատարին վրա, սակայն այնքան քիչ, որ անզգալի է և առաջին նայվածքով ուղիղ կիսաբոլորակի տպավորությունը կթողու:

[2] G. Migeon, Manuel d'art musulman, tome II, page 120.

ներու տեսակետով ամենեն հարուստն էր, տնտեսության տեսակետով ամենեն դժբախտը եղավ, 13-րդ դարու կեսեն հետո արդեն սկսած է կամաց կամաց իր փայլը կորսնցնել: Այս անգամ թաթարներու արշավանքը այնպես քանդեց երկիրը, որ այլևս չվերականգնվեցավ ընդմիշտ. ժողովուրդը գաղթականության մեջ փնտռեց իր խաղաղությունը, միանգամայն երկիրը թողելով թշնամիին ձեռքը:

Ահա այս վերջին արշավանքներեն հետո Հայաստանեն դուրս ուրիշ երկիրներու մեջ կգտնենք դարձյալ մաքուր հայկական ոճերով կանգնված մահմեդական հիշատակարաններ:

Գոնիայի մեջ Ինճե մինարելի մետրեսե ըսված շենքը կանգնված է 1251 թվականին, որուն վրա դարձյալ արձանագրված է ճարտարապետին անունը, դավանափոխ հայ մը Գալուստ անունով[1]: Շատ զարմանալի երևույթ է այս դարուն մեջ մանավանդ դավանափոխ հայերուն անունին արձանագրելը իրենց կանգնած շենքերուն վրա, մինչդեռ Հայաստանի մեջ հայ ճարտարապետներուն այդ սովորությունը ամենևին չտեսնվիր: Կարմիր վանքը (Ղոշավանք) բացառություն է, որուն արձանագրության մեջ հիշատակված է շենքը կանգնող Սամեհան ճարտարապետին անունը:

Իմ հետազոտած սահմաններուս մեջ կերևի, որ մինչև 14-րդ դարու կեսը հազիվ թե կարողացեր են հայերը իրենց տնտեսական և քաղաքական գոյությունը պահել: Մինչև այս ժամանակ հատ-հատ կպատահինք փոքրիկ մատուռներու, դամբարաններու շինությանց, իսկ 14-րդ դարու կեսեն հետո ամեն բան անհայտության մեջ թաղված է, ճարտարապետական կամ գեղարվեստական ոչ մեկ բան կարելի չէ գտնել. ապա անդին երկրեն դուրս գաղթականության չված ճանապարհներու վրա պետք է փտրել հայ գեղարվեստի շարունակությունը կամ վերջին մնացորդները:

## IV

Հին հայերու ներքին կյանքին և անոնց ապրելու պայմաններուն ծանոթանալու համար առայժմ մեր պատմագրությանց դիմելե զատ, ուրիշ միջոց չունինք: Բայց որովհետև նորագույն քննադատական ուղղությունը, առանց իրական փաստերու պատմագրական տեղեկությունները իբրև ճշմարտություն ընդունելու համար շատ դժվարահաճ է, այդ պատճառով ալ մենք հազվադեպ պարագաներու մեջ պատմության վրա հույս դնելով՝ պիտի դիմենք մասնավոր ուսումնասիրություններու և պեղումներու միջոցավ ձեռք բերված արդյունքներուն: Դժբախտաբար, սակայն, ոչ ընդարձակ չափով պեղումներ եղած են մինչև հիմա և ոչ ալ այդ կարգի հետազոտություններ. այդ պատճառով ալ շատ քիչ նյութ պիտի ունենանք այս ճյուղին վրա խոսելու:

Իհարկե կան որոշ չափով տրամաբանական դատողություններ, որոնք մեզ կպարտավորեն հավատալ, թե երբ ազգ մը իր ետևը թողեր է գեղարվեստական անթիվ կոթողներ, հոգ չէ, թե անոնք ըլլան միայն կրոնական, պետք էր որ անպայման ան իր ներքին կյանքին մեջ ալ ունենար նույն վայելչասիրության ճաշակը:

Կովկասի հայությունը վերջին 5-6 տարիներու մեջ նախանձելի մեծ քայլ մը առավ, որով անհամեմատ բարձր կանգնեցավ, քան թյուրքահայը: Արժանավորապես գիտցավ օգտվիլ մեծանուն հայագետ գիտնական պ. Ն. Մառի նպաստավոր տրամադրություններեն, որուն սրտին շատ մոտ էր արևելյան ազգաց պատմությունն ու գիտությունը, և ամեն տարի դրավ անոր տրամադրության տակ պատկառելի գումարներ՝ Անիի և շրջակայից մեջ պեղումներ կատարելու համար:

Հարգելի գիտնականը կովկասահայու սպասածեն շատ ավելի օգտակար եղավ իր բազմաչարչար և միանգամայն բարեխիղճ աշխատություններով. ոչ միայն հաճախ անտանելի պայմաններու մեջ անվհատ շարունակեց իր պեղումները, այլև կատարյալ խնամքով հավաքեց պեղումներե հանված բոլոր առարկաները ու զետեղեց նորակառույց թանգարաններու մեջ: Անոր միակ ձեռնհաս գործունեության կպարտինք այսօրվան Անիի մեջ երկու թանգարաններու գոյությունը, որոնց մեկը զուտ ճարտարապետական բաժինը կկազմե:

Այժմեն իսկ ուսումնասիրության մեծ պաշար հավաքված է այդ երկու թանգարաններուն մեջ, որոնք մեծ լուսաբանություններ պիտի տան հեռու և մոտ անցյալներու, բայց մասնավորապես ներքին կյանքի և ընտանեկան պայմաններու մասին ո՞րչափ հեռավոր պատկերներ կարող են տալ այդ նյութերը, այդ մասին հաստատ բան ըսել դժվար է:

Անին թեև 9-րդ դարուն արդեն բազմամարդ էր, սակայն քանի որ անոր բազմամարդ վիճակը կենդանի էր մինչև 14-րդ դարու կեսը՝ այդ պատճառով ալ համեմատաբար նոր քաղաք կհամարվի:

Միշտ փորձով տեսնված է, որ դարերու արկածալից հոսանքներուն ամենեն շատ դիմադրողները եղած են կրոնական հիշատակարանները: Քաղաքային շինություններ ամեն ազգի մեջ ալ շատ քիչ պահված են. այս վերջիններս համեմատաբար ավելի թույլ շինվելեն զատ, գազանային քմահաճույքներու ենթարկվելու համար ալ խղճահարության առիթ չէին տար: Շեն քաղաքներու մեջ ալ քաղաքային շինություններու ճակատագիրը տարբեր է կրոնականեն: Անոնք միշտ ենթակա են փոփոխվելու և վերաշինվելու՝ քանի դեռ քաղաքը կենդանի է. այդ պարզ պատճառով ալ այսօր չեն քաղաքներու մեջ անփոփոխ պահված 150 տարվան հնություն ունեցող շենք դժվար է գտնել:

Արդ՝ քանի որ պեղումներ միայն Անիի մեջ կատարված են և անկե պիտի կրնանք սպասել հին հայոց բնակարաններուն և քաղաքային շինություններուն մասին ստույգ տեղեկություններ, և քանի որ քաղաքը կենդանի էր մինչև 14-րդ դարու կեսը, դժվար թե գտնվի այնտեղ ընտանեկան կյանքի, քաղաքային շինություններու, կահավորումներու, ապրուստի և վայելքի վերաբերյալ այնպիսի նյութեր, որոնց հնությունը 13-րդ դարեն անդին անցնի: Մանավանդ երբ ի նկատի ունենանք, որ քաղաքի բնակչությունը կանոնավոր կերպով գաղթեր և իր ամեն ունեցածը հետն է տարեր, այն ատեն բոլորովին հուսահատական եզրակացության կհասնինք: Ավանդություն կա, թե բազմաթիվ գեղաքանդակ խաչքարեր ալ հետերնին տանելե զատ, եկեղեցիներու դռներն ալ հաներ տարեր են:

Գաղթականութենեն հետո, դատարկ մնացած տներն ալ նախկին վիճակին մեջ չեն մնացեր. ժամանակավորապես հայերուն տեղը բռնող պարսիկներ, թաթարներ և այլ և այլ թափառական ցեղեր քար քարի վրա չեն թողած. այսպեսով՝ ամեն բան ապականված, այլանդակված ու ողորմելի վիճակի հասած է այսօր: Ուրեմն, Անիի մեջ ալ, ամենախոր հնություն դարձյալ ճարտարապետական մասն է, այն ալ միայն եկեղեցիներ ու բերդեր: Եթե հուսալի պարագա մը կա՝ այն ալ վերջին 1319 թվականին պատահած երկրաշարժն է, որուն պատճառած փլատակները եթե անձեռնմխելի մնացած են, այն տեղերեն միայն կարող ենք օգտվիլ, ուր հավանականորեն կգտնվին որոշ չափով հատակագիծը ամբողջ պահված տներ, ապարանքներ, նաև թերևս կահկարասիներ, թեև այս ալ այնքան հույս չի ներշնչեր ինծի, որովհետև ոչ միայն շենքերը վերջին ժամանակներ քանդեր և սրբատաշ քարերը մինչև Կարս տարեր են ծախելու, այլև գերեզմաններն անգամ խուզարկությենե ազատ չեն մնացած:

Բագրատունյաց արքունիքի պեղումները շատ մեծ լուսաբանություններ տվին այս մասին. այնտեղ պարզ տեսնվեցավ երկու տարբեր ցեղերու հոգեկան վճիտ նկարագիրը, մեկը դեպի զարգացում և քաղաքակրթություն ձգտող, մյուսը խավարի, տգիտության և պարզապես գազանության մեջ հաճույքը զգացող:

Առանձին պարիսպով շրջապատված արքունիքը մոտավորապես 40,000 քառ. մետր տարածություն ունի: Այս տարածության մեջ 3500 քառ. մետր տեղ գրված է միմիայն ապարանքը: Կան յոթը հատ եկեղեցի, մատուռ և ուրիշ շատ մը արքունի պետքերու հատուկ առանձին շինություններ, որոնց հետքը հազիվ կերևա այսօր, բացի եկեղեցիներեն:

Ապարանքը առանձնապես ունեցեր է մեկ միջակ և մեկ փոքր չափով մատուռներ, և բացի բազմաթիվ սենյակներե, կան նաև բաղանիք, ջրամբար և աղբյուրներ, որոնց ջրաբաշխական երկաթե և կավե խողովակները գտնվեցան ջրամբարի մոտ:

Այս ահագին ապարանքին մեջ նախնական ձևով ոչինչ չգտնվեցավ, բացի քանի մը պատերե, որոնք, չնորհիվ իրենց հաստատուն շինվածքին, կանգուն մնացեր էին:

Ավելի քան 20 մետր երկայնությամբ դահլիճ մը, որուն շինության ոճեն հայտնի էր, որ Բագրատունի թագավորներու ժամանակակից շինություն է, ճոխ որմնասյուներով և կամարակապ առաստաղներով վրան ծածկված, վայրենի ձեռքեր մեկ մասը քանդեր, մյուս մնացածն ալ ցեխաշաղախ, կոշտ ու կոպիտ պատերով մանր սենյակներու բաժներ են, սենյակներուն մեկուն մեջ ալ թոնիր թողեր են հաց և կերակուր եփելու համար: Ուրիշ ավելի ճոխ և ընդարձակ դահլիճ մը, որուն մեկ մասը անջատ սյուներով թևերու բաժնված, գաճե ձուլված ընտիր քանդակներով առաստաղները զարդարված, բոլոր քանդակազարդություններ մաքուր ոսկեզօծված, միևնույն ողբալի վիճակին հասցուցած, դահլիճին մեջ ալ ամենեն պատվավոր տեղը թոնիր թաղված էր:

Այս կսկծալի ավերումները հավանաբար սկսեր են 17-րդ դարուն մեջ: Անկեց առաջ ապարանքին տիրապետող խաներուն համար անշուշտ հաճելի էր այդ դահլիճներուն փառքը վայելել, բայց, ինչպես երևցավ, անոնք ալ ամբողջ ապարանքը չեն կարողացած պահպանել, այդ երկու դահլիճները որոշ ժամանակ պահելով՝ մնացած մասերը քանդեր փոխեր, գրեթե ախոռներու և մարագներու վերածեր են:

Ջրամբարը շատ կանուխ անգործածելի եղած է, թերևս Բագրատունիներու անկումեն անմիջապես հետո: Պեղման ժամանակ երևցավ, որ ջրամբարին գտնված տեղը առաջուց ալ եղած է մեծ դահլիճ՝ չորս անջատ ճոխ սյուներով կամարակապ առաստաղով, խաներու օրով, երբ ջրամբարը անգործածելի եղած է, մեջը հողով լեցուցեր են և հա-

[1] H. Saladin, Manuel d'art musulman, tome I, page 456.

տակն ալ բարձրացուցեր. այնպես որ հին դահլիճին չորս այունախարիսխները առանց տեղեն շարժվելու, ծածկվեր են հողին տակ, վրայեն ուրիշ հասարակ այուներով դարձյալ շիներ են դահլիճ մը, բայց փայտե ծածկով, առաստաղն ալ նկարազարդված: Այս դահլիճին հետ միաժամանակ նկարազարդված է գաճե ձուլված քանդակագործ առաստաղով, մեծ դահլիճի պատերն ալ՝ ուր գտնվեցան նաև գեղանկար արաբերեն գրված հատվածներ:

Ապարանքը ի սկզբանե անտի երկու մասի բաժնված է. բացօթյա՝ մոտավորապես վեց մետր անցքով մը, որուն երկու ծայրերուն վրա են արտաքին մտից դռները. այս անցքին կամ նախագավթին վրա կբացվին երկու կողմի բաժանմունքները մտնելու դռները: Ապարանքին հատուկ երկու մատուռները դրսեն մուտք չեն ունեցեր, ասկեց Հայտնի է, որ միմիայն ապարանքի բնակչության հատուկ էին այդ երկու մատուռները:

Գաճով զարդարանքները չեն կարող հին ըլլալ, քան 13-րդ դարը, իսկ նկարազարդումները ավելի ուշ ժամանակի գործեր են: Նմանապես բաղնիքը, ոչ կանուխ, քան 13-րդ դար. ավելի կանուխ շինություններեն մնացած են դահլիճներու պատերու մնացորդները և արևմտյան կողմի մտից դուռը, որոնք կարելի է տանիլ մինչև 10-րդ դար: Մատուռները շատ ավելի հին են, թերևս մինչև 8-րդ դարու շենք. այս պարագան ենթադրել կուտա, որ նախքան Անին մայրաքաղաքի փոխարկվիլը, այդ մատուռները գոյություն ունեին:

Որչափ որ ապարանքի տարածությունը ընդարձակ, բաժանումները շատ, սակայն դարձյալ դժվար է դաղափար կազմել նախնական ճիշտ ձևի մասին, այսօրվան վիճակը դռեհիկ ժողովրդի մը այնտեղ բնակիլը ենթադրել կուտա, ուստի մեկ խոսքով պիտի եզրակացնեմ, որ ապարանքի պեղումներն ալ գտնե 14-րդ դարեն առաջ քաղաքային ճարտարապետության և ընտանեկան հարկերու կազմակերպության մասին որոշ արդյունք չտվին: Զմոռնամ ըսելու, որ Ծաղկոցաձորի վրա թյուրիմացությամբ մինչև այժմ պալատ անվանված շինությունը ցույց կուտա, որ երեք-չորս հարկանի շինություններ անսովոր չէին. այս շենքը թեև պալատ չէ, սակայն ամենայն հավանականությամբ հասարակական մեծ շինություն է՝ 13-րդ դարուն կանգնված, մեկ մասը երեք հարկանի, իսկ մյուս մասն ալ չորս հարկանի է. բայց այս միակ երևույթով ալ ընդհանուրի մասին դատել այնքան ալ գուցե ուղիղ չհամարվի, պետք է սպասել նոր պեղումներու, այն տեղերու վրա, ուր արդեն մեծ բաներ սպասելի են:

Անիի մեջ գտնված առարկաներ, բացի ճարտարապետական բաժինեն, իմ կարծիքով, չեն անցնիր 13-րդ դարեն անդին, սակայն մասամբ ենթադրելով իբրև շարունակություն ավելի հին կյանքի և սովորություններու, գուցե քիչ մալ հեռու տանի անոնց ուսումնասիրությունը. բայց իբրև վերջին շրջանի նյութեր ալ՝ ունին իրենց շատ հետաքրքրական կողմերը, որոնց մասին կանդրադառնամ ուրիշ անգամ առանձին հոդվածով մը:





# ՄԱՍ Մ, ԵՐԲՈՐԴ

# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ, ՀԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ,

# Ա

## ՏԵԿՈՐԻ ՏԱՃԱՐԸ[1]

*Առանց խոսքս մասնավորելու հայոց ճարտարապետության վրա, պիտի համարձակիմ ըսելու, որ ընդհանուր ճարտարապետության և գեղարվեստի պատմությունը անողոք կերպով դատապարտված է վերջնականապես կորսնցնելու իր հազար վեց հարյուր տարվան պատկառելի ներկայացուցիչներեն մին՝ առանց զայն հարցաքննելու, քանի դեռ լիովին կազմալուծված չէ և կարող է ընդարձակ չափով լուսաբանություններ ընծայել յուր ժամանակակից պատմության, արվեստներու, գեղարվեստական ոճերու և անոնց փոխանցման վրա:*

*Այս անփոխարինելի կորուստը հնագույն ճարտարապետության պատմության համար ծանրակշիռ համարելով, իբրև կոչ հրապարակի վրա պիտի դնեմ քանի մը տողերս, հուսալով, որ մոխրակույտի մը փոխվելեն առաջ, գիտնական մասնագետներ կշտապեն այս մեծ հիշատակարանին շուրջը հավաքվիլ և լուրջ ու մանրազնին ուսումնասիրությամբ կքաղեն անկե գեղարվեստի պատմության համար ամենակարևոր տեղեկություններ, որով միանգամայն կազատեն ապագա գիտնականն ու բանասերը անհիմն կարծիքներու, թյուր ենթադրություններու և ըստ հաճույս արձակված վճիռներու պատճառելիք մոլորություններեն:*

*Ով որ քննական աչքով դիտած է երբեմնի հոյակապ, իսկ այժմ տարաբախտաբար ողբալի վիճակի մատնված Տեկորի տաճարը, համոզված եմ, որ անկեղծ ցավակցությամբ ձայն պիտի բարձրացնե ինծի հետ գեղարվեստի պատմության մեջ անոր արժանավայել տեղը տալու և հիշատակը հավերժացնելու համար:*

*Արվեստագետներու այցելությենեն բոլորովին զուրկ չէ մնացած Տեկորի տաճարը, սակայն կարող եմ ըսել, որ մանրախույզ հետազոտության փորձ ալ ամենևին չէ եղած: Անցյալ դարու սկզբին ֆրանսացի ճարտարապետ* Texier *յուր ի Հայս կատարած ուղևորության հիշատակարանին մեջ անոր պայտաձև* (fer á cheval) *աղեղներու և կամարներու ոճը անարդար կերպով արաբական ոճին վերագրվելուն դեմ բողոքելեն հետո, այլևս անոր մասին ոչ իրեն և ոչ ալ ուրիշներու կողմանե եղած ուսումնասիրություններ չկան. կամ եթե կան ալ, դժբախտաբար ինծի հայտնի չեն:*

*Արևմտյան դռան վրա գրված արձանագրությենե մը կերևա, որ այս տաճարը կանգնած է Սահակ Կամսարական անունով մեկը, Հովհաննես կաթողիկոսի մը և Հովհաննես Արշարունյաց եպիսկոպոսի մը կենդանությանց ժամանակ[2]: Հայր Ալի-*

---

[1] *Արտատպվում է 1911 թվին լույս տեսած «Տեկորի տաճարը» առանձին գրքույկից:*

**Կազմող**

[2] *Հ. Ղ. վ. Ալիշան. «Շիրակ», Վենետիկ, 1881, երես 132: «Ուրանայ և Հոռո... (ե)պիսկոպոսի և Տ...յրոնի Տեկորոյ վանաց երիցու և Մանանայ հազարապետի հիմնարկեցաւ տեղիս ի ձեռն յոհանու հայոց կաթողիկոսի և Յոհանու Արշարունեաց յիւր բարեխաւսութիւն և բոլոր ազգիս և ամուսնի և որդեկաց և սիրելեաց և սրբոյ Սարգսի. Սահակ Կամսարական շինեաց զայս վկայարան»:*

*Ալիշանի տեղեկատուն սխալ է կարդացեր այս արձանագրությունը: Սրբոյն Սարգսի բառերը ամենեն վերջին բառերն են, որովհետև վերջին տողին համար չէ բավականացեր բարավորին երկայնությունը, այդ պատճառով քանդակագործը երկու տողին մեջտեղ է փորագրեր «սրբոյ Սարգսի» բառերը. ընթերցողը կարծեր է, թե վերջընթեր տողի շարունակությունն են «սրբոյ Սարգսի» բառերը:*

չան այս անունները կհասցնե մինչև 5-րդ դար: Ասով մասամբ կհայտնվի, թե Տեկորի տաճարը հայոց 5-րդ դարու ճարտարապետութենեն մեզ հասած մի նմուշ է:



Նկ. 106. Տեկորի տաճարը հարավ-արևմուտքից

Բայց որովհետև արվեստի լեզուն հաճախ ավելի ճշմարտախոս և մանրապատում եղած է, քան պատմագրողն ու արձանագրողը, ուստի, իմ կարծիքով, առանց լիովին արձանագրության վրա հիմնվելու, պետք է արվեստագիտական ուղղությամբ քննել և վճռել անոր շինության ժամանակը, կրած փոփոխությունները, ինքնուրույն և փոխանցյալ ոճերը, և, վերջապես, այն բոլոր մասերը, որոնք անհրաժեշտ են ժամանակակից գիտության համար:

Գուցե հանդգնություն համարվի իմ կողմանե, եթե ըսեմ, որ մանրախույզ հետազոտության փորձը առաջին անգամ ես կատարեցի 1909 թ. ամբողջ մայիս ամսվան մեջ: Սակայն նախապես պետք է խոստովանիմ, որ ներկա աշխատությունս անպայման կունենա յուր շատ թերի կողմերը, որովհետև մեկ կողմանե զրկված եմ պատմական գեղարվեստի գրականության մեջ խորասուզվելու հնարավորութենեն, մյուս կողմանե զրկված օժանդակ ուժերու աջակցութենեն, որ անհրաժեշտ է այսօրինակ աշխատություններ նպատակահարմար կերպով գլուխ հանելու համար: Արդ՝ ի նկատի ունենալով սույն պարագաները, անշուշտ կներվին այն բոլոր թերությունները, որոնք կարող են սպրդած լինել ներկա աշխատությանս ընթացքին մեջ:

Շատ պարզ է, որ ես մինակս բավական չէի Տեկորի տաճարի նման հնադարյան մեծ առեղծված մը ըստ ամենայնի ճշտությամբ լուծելու, ուստի այս առթիվ կհայտարարեմ, որ ինծի մեծ հաճույք պիտի պատճառեն ազնիվ ու անաչառ քննադատները լուսաբանությունները հօգուտ այս մեծ հիշատակարանի ճշգրտագույն ուսումնասիրության:

Ներկա ուսումնասիրությանս մեջ, բացի անհրաժեշտ պահանջված տեղերեն, առհասարակ պիտի հրաժարիմ զուտ ճարտարապետական և գեղարվեստական մասերուն վրա դատելե և ընդհանուր ճարտարապետության մեջ անոնց դիրքը, ազդեցությունները և փոխանցումները քննելե: Այդ ճյուղը վերապահած եմ առայժմ մի ուրիշ աշխատությանս, որ պիտի բովանդակե ամբողջ հայ ճարտարապետության ուսումնասիրությունը յուր բոլոր ճյուղերով: Այստեղ պիտի ամփոփեմ միայն Տեկորի տաճարին մինչև մեզ հասնելը կրած փոփոխությունները և պիտի համեմատեմ հայ ճարտարապետության առանձնահատուկ ոճերու և շենքերու հետ:

Որպեսզի քննական պարզաբանություններս ավելի դրական օրինակներու վրա հաստատեմ, նախքան Տեկորի տաճարի մասին խոսելս, հարկ կհամարիմ մի համառոտ ընդհանուր տեսություն կատարել հայ ճարտարապետության ամբողջ տևողության շրջանին մեջ կանգնված հայոց (basilique) բազիլիկ եկեղեցիներու հատակագծային զանազան ոճերուն վրա, որոնք ընդհանրացած են տարբեր ժամանակներու մեջ:

Բայց որովհետև նախքան 7-րդ դար կառուցված եկեղեցիներեն շատ քիչեր հասեր են մեզ, և անոնք ալ տակավին ժամանակագրական տեսակետով լիովին գիտական ուսումնասիրության բովեն չեն անցած, ուստի սույն համառոտ տեսությունս պիտի ընդհանրացնե 7-րդ դարեն սկսյալ գոյություն ունեցող բազիլիկներու վրա և անոնց հետ պիտի համեմատեմ ավելի հնագույն լինելու հավանականություն ներկայացնող եկեղեցիները, որոնց գլխավորն է ներկա աշխատությանս նպատակակետ Տեկորի տաճարը:

Իմ կատարած բոլոր հետազոտություններով նկատեր եմ, որ հայոց եկեղեցիներու հատակագծային ոճերու մեջ 7-րդ դարեն սկսյալ մինչև 14-րդ դար երեք գլխավոր զանազանություն կա:

Առաջին զանազանությունը կվերաբերի այն բոլոր բազիլիկ (basilique) եկեղեցիներուն, որոնք ունին ներքուստ գմբեթակիր անջատ չորս մույթեր (pilier) և նույն մույթերու դասավորության եղանակեն առաջ եկած միջին լայն և կողմնակի նեղ (նկ. 71) թևեր (nef)՝ արևելքեն արևմուտք ձգված: Կիսաբոլորակ խորանի երկու կողմը առհասարակ երկու հավասարակողմ քառակուսի սենյակներ կան (նկ. 71) խորանին հավասար խորությունով: Արևելյան կողմի գմբեթակիր անջատ մույթերեն (pilier) մինչև խորան եղած միջոցները[1] (transepte) (նկ. 71) հավասար լայնություն ունին արևմտյան անջատ մույթերեն մինչև արևմտյան պատը եղած միջոցին հետ (նկ. 71):

Քառակուսի սենյակներու տեսակետով հայոց եկեղեցիները ունին ուրիշ այլազանություններ ալ, որոնք 7-րդ դարեն շատ առաջ սկված կերևին, և տևած են մինչև 13-14-րդ դարերը, ձևի նպատակի առավել կամ նվազ փոփոխություններով: Հաճախ կպատահի, որ խորանին երկու կողմի սենյակները կրկնահարկ են. կան եկեղեցիներ ալ, որոնց չորս անկյուններուն վրա կան չորս սենյակներ, ասոնցմե ալ ոմանք կրկնահարկ, այսինքն՝ չորս անկյուններու վրա ունին ութ սենյակներ: Չորս անկյուններու վրա չորս սենյակ ունեցող եկեղեցիներու ներսը ստացեր են իսկական խաչի ձև ու խաչաձևի թևերը սովորաբար կիսաբոլորակ վերջավորությամբ:

Երկրորդ զանազանությունը կսկսի ընդհանրանալ 9-րդ դարու վերջերեն կամ 10-րդ դարու սկիզբեն, որուն մեկ օրինակն է Անիի կաթուղիկե մայր եկեղեցին, Շիրակավանի եկեղեցին և ուրիշ նմաններ: Այս զանազանության մեջ եկեղեցիներու ներքին բաժանումները զգալի չափով փոփոխության ենթարկված են: Սեղանի և արևելյան գմբեթակիր մույթերու միջոցները (transepte) զգալի չափով նեղցած են (նկ. 107, A A): Կողմնակի սենյակները իրենց հավասարակողմ քառակուսի հատկութենեն դուրս գալով՝ երկարած և արևելքեն արևմուտք ձգված են խորանի խորության չափով (նկ. 107, B B), խորանները ևս ավելի լայնացած ու խորացած են կողմնակի սենյակների խորության հավասար չափով:



Նկ. 107. Անիի կաթուղիկե մայր եկեղեցու հատակագիծը

Երրորդ զանազանության կվերաբերին սովորաբար այն բոլոր միջակ մեծությամբ և փոքր եկեղեցիները, ինչպես Անիի ս. Գրիգոր Լուսավորիչ (Նախշլի) եկեղեցին (նկ. 108) և յուր նմանները, որոնց մեջ գմբեթները առանց բացառության հանդչած են որմնամույթերու վրա (նկ. 108 A A):

[1] Հայոց մեջ այս մասին դաս անունը կուտան. այս անունը ստացած է, անշուշտ, արարողության միջոցին քահանայից և դպրաց դասին այնտեղ կանգնելու համար ընդունված սովորության պատճառով:

Արևելյան կողմեն որմնամույթերը կցված են խորանին, առանց միջոց (transepte) ունենալու: Ինչպես կերևի, այս ձևով եկեղեցիներու մեջ քահանայից և դպրաց դասի տեղը կամ խորանին մեջ էր և կամ, իբրև տոհմային եկեղեցիներ, դրսի ժողովուրդ շատ չհաճախելով, քահանայից և դպրաց դասը կգրավեր գմբեթին ներքևի մասը (նկ. 108 C), ետևը մնացած մասն ալ (նկ. 108 D) արդեն բավական էր մի տոհմի անդամներուն:




**Նկ. 108. Անիի ս. Գրիգոր Լուսավորիչ (Նախշլի) եկեղեցու հատակագիծը**

Այս ձևի ծագման մասին դժվար է կարծիք հայտնել. գուցե շատ հին ժամանակներե հասած է մինչև 13-14-րդ դարերը. այնուամենայնիվ ինծի դեռ չէ պատահած այս ձևով մի եկեղեցի, որուն շինության թվականը առառավելն 9-րդ դարեն անդին անցնի:

Պատմագրական տեղեկություններ շատ կան հայոց քրիստոնեության սկիզբեն մինչև վերջը վանքերու, վկայարաններու և մատուռներու գոյության մասին, սակայն հին դարերու մեջ անոնց ձևի վրա ոչ մի նկարագրություն չունինք. բոլորա՞կ էին անոնք, բազմանկյո՞ւն, թե՞ քառակուսի: Այս մասին իմ կարծիքս այն է, որ թերևս բոլորակ կամ բազմանկյուն ձևով գոյություն ունեին միայն մկրտարաններ, արևմտյան քրիստոնեից սովորության համաձայն. իսկ մատուռներ և վկայարաններ եղած են երկար քառակուսի՝ արևելքեն արևմուտք ձգված, վրան մի կամարով ծածկված ամբողջ երկայնության վրա, առանց գմբեթի, ինչպես Անիի Մինջնաբերդի պալատական եկեղեցին, Հոռոմոսի ս. Հովհաննես տաճարին հարավային կողմի փոքր մատուռը. այս ձևի փոքր եկեղեցիները գմբեթավորելու սովորությունը հայոց մեջ 10-րդ դարեն սկսած կերևի: Ալիշան յուր «Այրարատ»-ի մեջ (երես 273, նկ. 182) կներկայացնե որպես հնագույն շինություն, մի փոքր վանքի կամ եկեղեցիի հատակագիծ՝ մոտավոր նմանությամբ սովորական փոքր եկեղեցիներու, սակայն այդ հատակագծի ստացած այժմյան ձևը չեմ կարծեր, որ 9-րդ դարեն անդին անցնի[1]:



**Նկ. 109. Տեկորի տաճարի այժմյան հատակագիծը**

Տեկորի տաճարին հատակագիծը համեմատելով 7-րդ դարեն սկսյալ կանգնված բոլոր եկեղեցիներու հատակագծերու հետ, կտեսնենք, որ նա մի զգալի բացառություն կներկայացնե: Հիրավի, ներքին գմբեթակիր մույթերու դասավորությամբ և թևերու (nef) ու խորանի համեմատությամբ որոշ նմանություններ կգտնենք 7-րդ դարու եկեղեցիներու հատակագծային համաչափությանց հետ, սակայն խորանի երկու կողմի նեղ ու երկայն և հյուսիսեն հարավ երկնցած սենյակներով (նկ. 109, A A) խորանին՝ արևելյան պատեն մասնավոր կերպով դուրս ցցվածքով (նկ. 109, B), արևելյան կողմեն դեպի հյուսիս և հարավ դուրս ցցված թևերով (նկ. 109, D D), շենքը շրջապատող plate-forme-ով (նկ. 109, C C C) 7-րդ դարեն սկսած մինչև 14-րդ դար շինված եկեղեցիներեն բոլորովին կտարբերի:

[1] Այս մասին բացատրություն պիտի տեսնվի աշխատության ընթացքին մեջ:



Հետագա դարերու համար անսովոր այս մասերն են, որ լուրջ քննության կկարոտին, և ասոնց ուսումնասիրությամբը եթե Տեկորի տաճարին կառուցման ճիշտ թվականն ալ չգտնվի, հուսալի է, որ գոնե կպարզվի անոր և նմաններուն շինության ամենահավանական դարը:

Որովհետև խորանի երկու կողմի սենյակներու նեղ ու երկայն և հյուսիսեն հարավ ուղղվելու ձևը (նկ. 109, A A) նաև արտաքին ճակատեն դուրս չեչտվելու սովորությունը (նկ. 109, D D) 7-րդ դարեն սկսած միանգամայն վերջ գտած է, կպարտավորինք այդ ձևի գործածությունը 7-րդ դարեն առաջ կանգնված տաճարներու մեջ փնտռելու և կտեսնենք, որ այդ ձևը պահած է Էջմիածնի կաթուղիկեն և Երերույքի կիսավեր տաճարը:

Էջմիածնի կաթուղիկեին մեջ նույն սենյակներու շինությունը թերևս վերջին օրինակն է հայոց եկեղեցիներու մեջ, եթե Կոմիտաս կաթողիկոսի նորոգության ժամանակ ավելցավ հնագույն շինության վրա, բայց ինծի հավանական կերևնա, որ նախքան Կոմիտաս կաթողիկոսի նորոգությունը, արդեն սենյակները ավելցած էին սեղանին երկու կողմը: Իսկ Երերույքի տաճարը, ոչ մի կասկած չի կարող լինել, որ նախքան 7-րդ դարը կանգուն էր և ուներ նույն ձևի սենյակներ արևելյան կողմեն խորանին աջ ու ձախ կողմերուն վրա: Այստեղ հաճախ ուրիշ պիտի ունենամ Երերույքի մասին խոսելու և ապացուցանելու անոր վաղ քան 7-րդ դարը շինված լինելը:

Տեկորի տաճարին այսօրվան ձևը, առանց կարևոր փոփոխությանց, եթե իր զուտ նախնական ձևը լիներ, իհարկե, ավելի քիչ նյութ պիտի տար իր վրա խոսելու, սակայն ակներև փաստեր ցույց կուտան, որ դարե ի դար շատ տեսակ փոփոխություններու ենթարկվեր է, որոնց հետազոտությունը վերին աստիճանի հետաքրքրական է թե՛ պատմության և թե՛ արվեստի տեսակետով:

Մանրամասն չափագրելով և հետազոտելով՝ այն եզրակացության հասած եմ, որ Սահակ Կամսարական մը ոչ թե ի հիմանց նոր շիներ է այդ եկեղեցին, այլ կանխավ գոյություն ունեցող շինության մը վրա կատարեր է շատ կարևոր փոփոխություններ:

Մի ուրիշ հատակագծի վրա (նկ. 110, Տեկորի տաճարի հատակագծին նախկին ձևը), որուն մեջ սև գույնով ներկված ցույց կուտա եկեղեցիի հնագույն ձևը, իսկ թուխ գույնով ներկվածները հետզհետե հավելված մասերն են, որոնցմով ստացած է այսօրվան ձևը:

Թվեմ այժմ ամեն ապացույցները, որոնց հիման վրա կազմեր եմ (նկ. 110) հատակագիծը և շենքի պատկերները (élévation) նախկին ձևի մասին:

Եթե ուշադրության առնենք տաճարին արևելյան կողմեն դուրս ցցված թևերու լայնությամբ շենքը երեք կողմեն (հյուսիս, հարավ, արևմուտք) շրջապատող plate-forme-ը (նկ. 109, C C C), պիտի համոզվինք, որ հակառակ հայոց եկեղեցիներու հատակագծային ընդհանրացած ոճերուն, աննպատակ չէր կարող գոյություն ունենալ Տեկորի տաճարին շուրջը: Անտարակույս, Երերույքի տաճարը շրջապատող այունազարդ կամարակապ ծածկույթի մը (portique) հատակն (plate-forme) էր, որուն վրայեն թեև մի օր ծածկույթը վերցվեր է, սակայն շատ հասկնալի պատճառներով plate-forme-ը պահված է: Որովհետև տեղին զառիվայր դիրքին պատճառով հյուսիսային կողմեն շենքի հատակը բարձրացած էր, եթե plate-forme-ը անհետացնել ուզեին, փոխարեն վերստին սանդուխքներ պետք էր շինեին հյուսիսային դռներուն հասնելու համար:



**Նկ. 110. Տեկորի տաճարի նախկին հատակագիծը**

Նմանապես չենք կարող աննպատակ համարել այն գեղեցիկ որմնասյուները (colonne-engagé), իրենց սիրուն ու ճոխ խոյակներով ու խարիսխներով, ոմանք կլոր, 50-53 սնտ. տրամագծով, ոմանք քառակուսի, 0,70-0,80 մետր լայնությամբ և պատեն դուրս ցցված 0,40-0,42 մետր և ենթադրել, որ լոկ ցույցի համար շարված էին անոնք շենքի արտաքին երեսներուն վրա, առանց գիտցվելու անոնց պաշտոնն ու նպատակը:



Նկ. 111. Տեկորի տաճարի հատակագիծը



*Հնագույն դարերու հայոց ճարտարապետության մեջ շատ կարևոր տեղ կբռնե Տեկորի տաճարը՝ գլխավորաբար այն միակ պատճառով, որ անոր զանազան մասերուն վրա գեղարվեստական և շինարարական որոշ ճյուղեր ավելի կատարելագործության հասած են, քան հետագա դարերու մեջ: Հայտնի է, որ անոր ճարտարապետը լինելով միանգամայն հմուտ տեղական արվեստին, նաև հմուտ էր արևմտյան չքնաղ ոճերու, որոնց հետ պատվաստելով արևելյան ճոխ զարդաքանդակներ, կազմեր է մի ներդաշնակ խառնուրդ սյուներու, խոյակներու, խարիսխներու, որոնք, անպայման ըստ իրենց բնական կոչման՝ կկրեին աղեղներ և կամարներ:*

*Որմնասյուներու* (colonne-engagé) *գլխին հանգչող աղեղներու գոյությունը ապացուցանելու համար, ի մեծ բախտավորություն այժմյան հետազոտության, հյուսիսային ճակատի միջին երկու որմնասյուներու խոյակներուն վրա (նկ. 109,* E E*), (նկ. 111,* A A*) պահված են երկու կամարաքարեր, որոնք* plate-forme*-ը ծածկող կամարին հանգստյան* (retombé) *վերջին քարերն էին:*

*Այս երկու կամարաքարերու դիպվածական գոյությունը գիտական հետազոտության համար բախտ համարեցի այն պատճառով, որ նորոգություններու ժամանակ որմնահյուս վարպետներ եթե ուզեին, շատ հեշտությամբ կարող էին տաշել և անհետացնել շուրջանակի սյունազարդ ծածկույթի* (portique) *այդ դրական ապացույցները:*



*Նկ. 112. Տեկորի տաճարի կտրվածքը հյուսիսեն հարավ*

*Այսքանը միայն բավական չէ շուրջանակի սյունազարդ ծածկույթի* (portique) *գոյության իբրև ապացույց: Արևելյան կողմեն դեպի հյուսիս և հարավ դուրս ցցված թևերու անկյուններուն վրա (նկ. 109,* F F*), (նկ. 111,* L, *նկ. 113,* K L*) կան տակավին որմնասյուներ, որոնք ցույց կուտան, թե* plate-forme*-ի արտաքին եզերքին վրա շուրջանակի շարված էին անջատ սյուներ՝ միմյանց հետ աղեղներով կապված և իրենք այդ սյունաշարերը իրարու կապող աղեղներու վերջիններուն ծայրերը կկրեին իրենց խոյակին վրա: Իսկ հատակին վրա դեռ չէ կորած սյանց խարիսխներու* (base) *հավասարաչափ լայնությամբ շուրջանակի ձգված կրաշաղախ հիմնագիծը* (socle), *որուն վրա շարված էին սյուները կարգավ և այս հիմնագծին անմիջապես կհաջորդեն շրջապատի աստիճանները (նկ. 110,* AAA*):*

*Մի ուրիշ ապացույց ևս որմնասյուներու* (colonne-engagé) *խոյակներուն անմիջապես վրայեն շենքը շրջապատող պսակն է* (corniche) *(նկ. 106,* A A A*): Հայկական ոճին մեջ շենքը մեջտեղեն պսակելու սովորություն ամենևին չէ եղած, սա բացառություն էր ընդհանրապես ընդունված օրենքի դեմ, որուն պատճառը չէր կարելի չփնտռել:*

*Քննությունը ցույց տվավ, որ* plate-forme*-ը ծածկող կամարին շենքի կողմի ոտքը* (retombé) *դրված էր պատեն դուրս ավելորդ թանձրության մը վրա (նկ. 112* A A*) և այդ պատճառով էլ նույն սահմանեն վեր շարունակված պատը բարակ է (նկ. 112,* B B*): Սյունազարդ ծածկույթը* (portique) *քանդվելեն հետո, երբ կամարին հանգիստ տվող թանձրությունը բաց կմնար և զանազան անախորժություններու պատճառ պիտի տար, այդ պատճառով ծածկեր են բաց մնացած մասը շուրջանակի պսակով* (corniche). *և որովհետև պատուհանները ավելի բարձր դրված էին, քան պսակի բարձրությունը, պսակի շարունակության մեջ պատուհան հանդիպած տեղերը փոխանակ ընդհատելու, նույն պսակով պսակեր են նաև պատուհաններու վերին կիսաբոլորակները (նկ. 106,* B B B*), (նկ. 111,* B B B*), (նկ. 113,* A A*):*

*Տեսնելով Տեկորի տաճարին կեսեն քաշված այս պսակը* (corniche), *կկասկածիմ, թե մի գուցե Էջմիածնի մայր տաճարն ալ մի ժամանակ* portique*-ով շրջապատված և օր մը* portique*-ը քանդվելով՝ ստացած լինի Տեկորի տաճարին նման պսակ, բարձրության կեսին վրա, մինչդեռ նախքան Տեկորի տաճարը հետազոտելս ուրիշ պատճառներու վերագրած էի*[1]*:*

*Համոզվելու շատ պատճառներ կան, որ Տեկորի տաճարը արևելյան կողմեն ալ ունեցեր է սյունազարդ ծածկույթ* (portique), *որուն ենթադրության առիթ կուտան արևելյան երկու անկյուններու վրա զետեղված երկու որմնասյուներու խարիսխները (նկ. 109,* G G*), (նկ. 111,* C*):*

[1] *Т. Тораманян*, «О древнейших формах Эчмиадзинского храма», СПБ., 1909. *կամ Թ. Թորամանյան -«Էջմիածնի տաճարը», 1910, Թիֆլիզ:*



Նկ. 113. Տեսարան վերևից Ամենայն Հայոց կաթողիկոսի տաճարի



*Կարելի է առարկություն ընել այս խարիսխներու մասին՝ զանոնք պատահական կամ իբրև զարդ շինված համարելով, սակայն եթե ի նկատի առնենք տաճարին շուրջը սյունազարդող ճարտարապետին յուրաքանչյուր ճարտարապետական հարմասունքներու իրենց պատշաճ տեղը համաչափորեն և վայելչորեն դասավորելու կատարյալ գիտակցությունը, այն ատեն կմնա համոզվիլ, որ նույն ճարտարապետը առանց որոշ նպատակի նույն խարիսխները չէր զետեղեր անկյուններուն վրա՝ առանց բունի* (fût) *և խոյակի* (chapiteau)*:*

Texier *կարծեր է, որ նույն անկյուններուն վրա այժմ վերեն մինչև վար գոյություն ունեցող սյունանման քանդակվածքին (նկ. 111,* D *և նկ. 114, ձև 1) իբրև խարիսխ դրված են. այդ ձևով ալ մտցուցեր է իր հատակագծի և շենքի պատկերներու* (élévation) *մեջ, քիչ ալ ավելի կանոնավորելով և վայելչություն տալով, քան իսկականը:*

*Ես պիտի առարկեմ, որ, բացի ուրիշ պատճառներե, մի շատ պարզ և բնական պատճառով անընդունելի է այս կարծիքը: Սյունանման անկյուններու ձևը հազիվ թե գոյություն ունենար 7-րդ դարուն մեջ, իսկ հայոց ճարտարապետության մեջ առանձին մշակված և կատարյալ վայելչության հասած է անկյուններու այս ոճը, սկսյալ 10-րդ դարեն մինչև 13-14-րդ դարերը, և մինչև հայ ճարտարապետության վերջնական անկումը գրեթե անխտիր, շնորհալի կերպով վայելչազարդված է 12-14-րդ դարերու բոլոր եկեղեցիներու անկյունները, սակայն առանց խոյակի և խարիսխի են անոնք. ներքևի կողմեն ուղղակի նստած են շենքի ամենեն վերևի աստիճանի վրա, իսկ վերեն խառնված են պատին մեջ պակին անմիջապես ներքևը (նկ. 114, ձև 1, 2, 3). խարիսխի և խոյակի տեղ անոնց միակ զարդը կիսաբոլորակ վերջավորությամբ հարթ տաշվածքներ են միայն (նկ. 114, ձև 3,* A A*):*




**Նկ. 114. Հայոց հին տաճարներու սյունանման անկյունաձևեր**

*Մրենի տաճարին անկյուններեն զատ, 7-րդ դարուն մեջ կանգնված ուրիշ ոչ մի շինության վրա չենք գտներ այդ ձևով անկյուններ (նկ. 114, ձև 2, Մրենի տաճարին անկյունն է ): 9-րդ և 10-րդ դարերուն կանգնված շինությանց շատերուն վրա ալ կբացակայի այդ ձևը: Կարելի է կարծել, որ 7-րդ և 10-րդ դարերու մեջտեղ (ավելի մոտիկ 10-րդ դարին) ծագում առած է այս ոճը Հայոց ճարտարապետության մեջ, որ հետո՝ 12-14-րդ դարերուն, ըստ ամենայնի պարտավորիչ և շատ ճոխ զարդարանքի տեղ բռնեց Հայոց եկեղեցիներու անկյուններու վրա:*

*Փաստեր կպակսին մեզի Մրենի տաճարին անկյուններու սյունանման քանդակվածքը 7-րդ դարուն տաճարի շինության հետ ժամանակակից համարելու, որովհետև, ինչպես ուրիշ շատ մը հնագույն շենքերու, նույնպես Մրենի տաճարին վրա կատարված կարևոր նորոգություններ և փոփոխություններ անվիճելի են:*

*Եթե պահ մը Մրենի տաճարին անկյուններու սյունանման քանդակումը շինության ժամանակակից համարինք, պետք էր որ անոր չորս անկյուններն ալ միևնույն ձևով քանդակված լինեին, որպես ժամանակակից սովորական ոճ, մինչդեռ այս ձևի քանդակումը կատարված է միմիայն արևմտյան անկյուններու վրա. արևելյան անկյունները միանգամայն պարզ են: Այս պարագան արդեն ցույց կուտա, որ Մրենի տաճարին արևելյան կամ արևմտյան ճակատները իրարմե տարբեր ժամանակներու մեջ փոփոխության են ենթարկված: Այժմ փորձենք գտնել, թե ո՛ր ճակատը կամ անկյունները ի՞նչ ժամանակ նորոգված կամ փոփոխված լինելը հավանական է:*

*Մրենի տաճարը այցելելես անմիջապես հետո գրեցի Ալեքսանդրապոլում հրատարակվող «Ախուրյան» լրագրին մեջ՝ հարավ-արևելյան կողմին վրա տեսածս տարօրինակ նորոգություններու և կարկատաններու մասին[1]: Այս կարկատաններուն մեջ*

[1] *Հարավային ճակատի արևմտյան անկյունին մոտ, պակեն մինչև դռան կամարը (նմանապես արևմտյան կողմն ալ) չորսեն մինչև հինգ մետր լայնությամբ՝ սկսած բարձրեն՝ արևմտյան անկյունեն վերեն վար հակուտիղ ձևով դեպի արևմուտք, ամբողջությամբ պատռեր են պատը և վերստին տեղը նոր քարեր շարեր են: Այս քանդումը կամ փոփոխությունը, հնացած կամ որևէ արկածով վնասված մասի մը նորոգության երևույթը չունի ամենևին. կարծեք թե հատկապես այդ մասին վրայեն մի հիշատակություն կամ մի ուրիշ անհաճո բան անհետացնելու դիտումով քանդած և վերաշինած են: Այս ըսածիս հավանական ճշմարտության կհամոզվին ամեն անոնք, որոնք մասնագիտորեն քննելով կտեսնեն, թե ինչպես պատին վրա դեռ մինչև այսօր ալ առողջ մնացած մեծ ծավալով քարեր հակուտիղ ձևով տաշված և անոնց վրա նոր քարեր պատշաճեցուցված են: Հավանարար այս փոփոխությունը կատարվեր է 13-րդ դարուն, որովհետև այդ մասին վրա գրված արձանագրություններ կան,*

է, որ տասնյակ զանազան մեծությամբ խաչքարեր հյուսված են պատին մեջ թե՛ ներսեն և թե՛ դրսեն: Խաչքարերու քանդակագործությանց ոճերն ալ ցույց կուտան, որ ամենահինը 10-րդ դարը չանցնիր: Ասկեց զատ, ինծի շատ հավանական կթվի, թե ի հիշատակ մեռելոց եկեղեցիներու պատերուն վրա խաչքարեր քանդակելու սովորությունն ալ 10-րդ դարեն առաջ չէ եղած: Այդ սովորությունը հազիվ զգալի է 10-րդ դարուն, իսկ չափազանցված՝ 13-14-րդ դարերուն մեջ: Հիրավի, 10-րդ և 11-րդ դարերեն առաջ կանգնված եկեղեցիներու պատերուն վրա հաճախ կգտնենք քանդակված խաչքարեր, սակայն անոնք մեծ մասամբ 13-14-րդ դարերու քանդակագործություններ են: Ինչպես կերևի, այս վերջին դարերուն մեջ հայ կղերին մի մենավաճառը դարձած էր ի հիշատակ հանգուցելոց պատարագ ծախելու նման, նաև խաչքար քանդակելու համար եկեղեցիներու պատերուն վրա տեղ ծախելը: Հոռոմոսի վանքին մեջ տոհմային դամբարաններ կան, որոնց պատերուն (մանավանդ ս. Հովհաննեսի տաճարին հյուսիս-արևելյան կողմին կից) գրեթե յուրաքանչյուր քարին վրա խաչքարեր քանդակված են զանազան ժամանակներու և զանազան վարպետներու գործ: Անշուշտ, այս խաչքարերը կպատկանեին դամբարանին մեջ թաղվածներու հիշատակին: Ս. Հովհաննեսի հարավային պատին կից դամբարանին պատին վրա կա մի խաչքանդակ, որուն ներքև շատ բնորոշ կերպով գրված է – «Խոնթ Խաթունին է»:

Կարելի է, որ նախքան 10-րդ դար գերեզմաններու վրա կանգնված խաչքարեր կային, բայց երբեք հավանական չէ եկեղեցիներու պատերուն վրա գտնվիլը միևնույն նպատակով, ինչպես որ էր 10-րդ դարեն սկսած: Հին եկեղեցիներուն վրա տեղտեղ, պատշաճության համար, իբրև զարդաքանդակ միայն շինված են, ինչպես կա Տեկորի տաճարին հյուսիսային դռան և արևմտյան արտաքին որմնասյուներու խոյակներեն մեկուն վրա: Վերջին ժամանակներու մեջ եկեղեցիներու պատերուն վրա քանդակված խաչերը մի բնորոշ հատկություն ունին, որ դեռ 10-րդ դարուն ալ այնքան շեշտված չէր, այսինքն անպայման եկեղեցիի պատերուն վրա պիտի ընտրեին այնպիսի մի տեղ, որ քանդակված խաչին ճակատը դեպի արևմուտք նայեր: Մրենի մեջ թեև մեծ մասամբ արևմտյան պատին վրա շարված են, սակայն կան նաև հարավային պատին վրա ալ ազուցվածներ:

Գալով գերեզմաններու վրա կանգնված խաչքարերու ձևին, անոնք առհասարակ տապանաքարերուն արևելյան կողմը խորանարդ կամ աստիճանավոր պատվանդանի վրա կանգնված երկար քառակուսի հաստ քարե տախտակներ են, որոնց արևմուտք նայող ճակատին վրա քանդակված են խաչի պատկերը, շրջապատված զանազան քանդակագործությամբ, դարու ճաշակին համաձայն:

Այս ձևի խաչքարերու մեջ իմ տեսածներուս ամենեն հինը հազիվ 10-րդ դարու սկզբին հասնի: Իսկ անկեց առաջ, հավանական է, որ եղած լինեին խորանարդ պատվանդանի վրա կանգնված քառակուսի սյունանման կոթողներ՝ զանազան բարձրությամբ: Այս ենթադրության առիթ կուտան ինծի պ. Ն. Մառի Երերույքի պեղումներեն և պ. Հակոբ Կարանյանցի Ագարակեն բերած կոթողանման քարերը, որոնք այժմ կգտնվին Անիի հնագիտական թանգարանին մեջ: Թեև ոմանց կարծիքով այս քարերը վեմ քարեր ալ եղած լինին, սակայն ես բոլորովին չեմ կարողացած համաձայնիլ, որովհետև կան այնպիսի բարձրությամբ քարեր, որոնք եթե իբրև վեմ քար ծառայեին, հազիվ թե պատարագիչ քահանային հասակը բավականանար նույն բարձրության հասնելու: Իսկ ոմանք ալ խորանարդ պատվանդաններ ունին, վրան քառակուսի փորվածքով կոթողը ազուցանելու համար: Կոթողներն ալ ունին վերի ծայրերուն վրա քառակուսի փորվածքներ, որոնք անշուշտ մետաղյա, քարե խաչեր անցնելու հատուկ էին. թե՛ պատվանդանին և թե՛ կոթողին շուրջը պատկերաքանդակներով զարդարված են: Եթե հաստատություն կգտնե իմ այս կարծիքը, այն ատեն կարող ենք ըսել, որ 7-րդ դարեն մինչև 10-րդ դար հայոց տապանաքարերուն ձևն էր այս: Իսկ 10-րդ դարուն կսկսին վերև նկարագրված քարե տախտակներու ձևով խաչքարերը, որ տևած է մինչև 17-րդ դար: Ուրեմն Մրենի տաճարին արևելյան և հարավային պատերու մեջ ազուցված խաչքարերը 10-րդ դարու գերեզմաններու վրայե քանդելով՝ բերած շարած են այնտեղ: Հավանորեն տաճարը նորոգողի տոհմին հիշատակարաններն էին անոնք. հետևաբար Մրենի տաճարը պետք է որ նորոգված լինի 10-րդ դարու կեսեն հետո, եթե ոչ ավելի շատ ուշ, որով անկյուններու սյունանման քանդակվածքն ալ կլինի 10-րդ դարու կեսեն հետո շինված գործ:

Այս տեսությամբ ալ Տեկորի տաճարին արևելյան անկյուններու սյունանման քանդակվածքը (նկ. 111, D) դատելով իր ավելի նախնականությենեն (archaïque), եթե համարենք ավելի կանուխ, քան 10-րդ դար, սակայն շատ դժվար է հասցնել մինչև 7-րդ դարը: Վերջապես, երբ ալ որ լինի անոր ճիշտ ժամանակը, քիչ հետո պիտի տեսնենք, որ տաճարի շրջապատի սյունազարդ ծածկույթները (portique) քանդվելեն ալ հետո անոնց քանդակված լինելուն մեծ հավանականություն կա:

Այժմ սկսիմ պարզել այն հիմունքը, որոնց վրա պիտի ապացուցանեմ կարծվածեն ավելի հին ժամանակ՝ ուրիշ շենքի մը գոյությունը, որուն վրա կազմված է մեր այսօրվան տեսած Տեկորի տաճարը, դարուց ի դարս ալ կարևոր փոփոխություններու ենթարկվելով: Պիտի աշխատիմ ցույց տալ ոչ միայն այդ կրած փոփոխությունները, այլև շենքին ամենասկզբնական ձևը:

Չափագրելու ժամանակ ամենեն առաջ ուշադրությունս գրավեց տաճարի պատերուն արտակարգ թանձրությունը, որոնք 1,35-են մինչև 1,45 մետրի կհասնին՝ առանց որմնասյուներու ավելորդ դուրս ցցվածքին: Եվ որովհետև հայոց հնագույն հիշատակարաններու մի կարևոր մասին մեջ պատերու թանձրության համար գործածված ամենաբարձր չափերը ինծի հայտնի էին, և սա բաղդատմամբ անոնց՝ մեծ տարբերություն ուներ, բնականաբար չէի կարող դիպվածի վերագրել: Նույնիսկ իրեն ժամանակակից հիշատակարաններու պատերու թանձրությունները, ինչպես՝ Էջմիածին, Երերույք, 1,29 մետրից չեն անցնի. Երերույքի տաճարի պատերու ամենաթանձր մասը 1,17 մետր է: Նմանապես 7-րդ դարու հիշատակարաններու մեջ ամենեն թանձր պատ ունեցողը Բագարանի ավանդաբար ս. Թեոդորոս անվանված եկեղեցվո պատերն են, որուն արևելյան պատը միայն 1,25 մետր է, որ անշուշտ առանց պատճառի չէ. իսկ մյուս պատերը 1,17 մետր թանձրություն ունին:

Իհարկե, պատերու թանձրությունը բոլորովին հաստատուն փաստ չէր կարող նկատվիլ Տեկորի տաճարին մեծամեծ փոփոխություններու ենթարկված լինելուն, եթե նաև ուրիշ շարք մը համոզիչ ապացույցներ շղթայված չլինեին պատերու արտակարգ թանձրության հետ:

Երերույքի մեջ սյունազարդ ծածկույթի կամարը հանգչեցնելու համար, Տեկորի տաճարին նման պատեն դուրս առանձին թանձրություն չկա ստորին մասին վրա (նկ. 112, A), այլ կամարը ծնունդ առած է ուղղակի պատի 1,17 մետր թանձրության մեջեն[1], թեև այս կերպով Երերույքի տաճարի սյունազարդ ծածկույթը (portique) բուն շենքին հետ միաժամանակ շինված լինելու հավաստիքը կներկայացնե, այնուամենայնիվ դարձյալ բոլորովին կասկածանքե ալ ազատ չէ, որուն մասին պիտի տեսնվի քիչ հետո:

Շինարարական արվեստի (construction) մեջ անհրաժեշտ պայման է, որ սրբատաշ քարերով շինված պատի մը քարերը ներսի և դրսի կողմեն հավասար բարձրություն ունենան յուրաքանչյուր շարքի մեջ, և եթե յուրաքանչյուր քար իր լայնության, բարձրության, նաև պատին թանձրության համեմատական խորություն ունենա, որպեսզի թե՛ լավ հանգչի պատին վրա և թե՛ երբեմն ալ մոտենալով հանդիպակաց քարին, վրայեն դրված քարով կապվին ներքևի երկու կողմի քարերը:

Ի հիմանե նորոգ կառուցված շինություն մը, երբ այս օրենքին հակառակ կշինվի, ապօրինի լինելեն զատ, վտանգավոր իսկ կհամարվի, որովհետև նախքան կրաշաղախին բոլորովին չորանալը, որ երբեմն տեղին և կլիմային համեմատ տարիներ կտևե, մեկ կամ մյուս կողմեն պատն ուռելով՝ փլուզման վտանգ կսպառնա: Իսկ երբ շինարարական օրենքի պահանջներ ճշտիվ գործադրված են, որոշ տարիներ անցնելե հետո, պատը չորանալով՝ միակտուր զանգվածի մը կփոխվի: Ահա այն ատեն բոլորովին անվտանգ է անոր մեկ կամ մյուս երեսի քարերը մաս առ մաս քանդել և անոնց տեղ նոր քարեր շարելը: Նույնպես նաև կարևորությենե զուրկ կմնա, եթե նորոգ շարված քարերը չափով թե՛ միմյանց և թե՛ հանդիպակաց քարերու չափերուն չհամապատասխանեն:

Տեկորի տաճարին նախնական շինությունը, որ անշուշտ դարուց ի դարս կանգուն մնալու ձգտումով շինված էր, չէր կարող այս ընդհանուր օրենքին հակառակ շինված լինել, մինչդեռ այսօր, ընդհակառակը, պատերու ներքին և արտաքին երեսներու վրա քարերու լայնությանց և բարձրությանց անհավասար չափերու լիակատար խառնուրդ մը կներկայացնե, որով ամենափոքր կասկած իսկ չի մնար, թե ամեն դարու մեջ անընդհատ փոփոխություններ ու նորոգություններ պակաս չեն եղած Տեկորի տաճարին ամեն կողմին վրա:

Այս բոլոր խառնակությանց մեջ մի բան շատ պարզ է, որ արտաքին երեսներու վրա քարերու հետևագույն շարվածքը հմուտ ճարտարապետի մը հսկողության տակ կարող որմնահյուսի մը ձեռակերտն է:

Փլված մասերուն վրայեն կտեսնվի, որ արտաքին երեսներուն վրա շարված քարերը առառավելն 0,25 մետր խորություն ունին, այն ալ ոչ ամենը, ինչ որ շատ քիչ է: Իսկ երբ խնդիրը հետևագույն նորոգության կամ նախապես գոյություն ունեցող պատի մը այժմյան չափով թանձրացման վրա կկայանա, այն ատեն քարերու և շաղախի կանոնավոր խտացման համար նույն չափեն ավելի խորություն ալ չէր կարող տրվիլ:

---

որոնց ամենահինը 2 թվականը չանցներ: («Ախուրյան», 1909 թ., օգոստոս 9):

[1] Հյուսիսային և հարավային կողմերը միայն, արևմտյան կողմը դարձյալ Տեկորի տաճարին նման հետևագույն շինված է, որուն մասին պիտի տեսնենք իր տեղը:

Հյուսիսային բաց մնացած[1] դռան միջին ալ կտեսնվի, որ հետնագույն հավելվածի համար դրսի երեսին վրա առանձին բարավոր և վերնասյամ է շինված՝ առանց հիները քանդելու կամ տեղեն շարժելու:

Նոր ավելցված մասերուն հաստատուն և ապահով լինելուն կասկած չէր կարող լինել, որովհետև նախ՝ վարեն մինչև վեր հավելումը 5 մետր միայն բարձրություն ուներ: Երկրորդ՝ դռների աղեղնազարդ զույգ սյուներու և որմնասյուներու (colone-engagé) (նկ. 132, 133 և 135) բավականին խիտ շարքը՝ միացած շուրջանակի ծածկված կամարին և անջատ սյուներու շարքին, իբրև ապահով հենարան պիտի ծառայեին ոչ միայն պատի նոր հավելվածին, այլև ամբողջ հին շինության: Թեև առանց այս ապահովություններուն ալ հին հայոց արհեստավորներուն համար դժվար չէր շենքերու մաշված ճակատները բարակ քարերով վերանորոգության ենթարկել, ինչպես կտեսնվի Անիի կաթուղիկեին քանի մը մասերուն վրա վերին աստիճան հաջողությամբ իրագործված:

Մի ուրիշ անվիճելի փաստ ևս կուգա վերջ դնելու բոլոր կասկածանքներուն և հաստատելու, թե արտաքին որմնասյուներ (colone-engagé) շուրջանակի սյունազարդ ծածկույթով հանդերձ հետնագույն հավելվածներ են կանխավ գոյություն ունեցող շինության մը վրա:

Շատ պարզ է, որ այսօրվան մեր տեսած բոլոր դռներն ու պատուհանները (բայց հյուսիսային և հարավային fronton-ներու անմիջապես ներքև գտնվող զույգ պատուհաններեն) նախնական շենքին վրա գոյություն ունեին, և կտեսնվի, որ հակառակ հետագա դարերու հայ ճարտարապետաց համաչափության օրենքներու դեմ ընդվզող հատկության, որչա՜փ դժվարություններու հանդիպեր է Տեկորի տաճարին հավելումները կատարող համաչափության ծայրահեղ սիրահար ճարտարապետը, որչափ որ բոլորովին չէ հաջողեր, սակայն անոր ջանքերուն անջնջելի հետքերը մնացեր են շենքին վրա:

Նախ՝ քննենք հյուսիսային ճակատը, կտեսնենք, որ սյունազարդվելիք 18,48 մետր +0,70[2]= 19,18 երկարությունը գրեթե ուղիղ մեջտեղեն կիսելով, միջին կետը առեր է ճարտարապետը և երկու կողմին վրա համաչափ բաժանումով դասավորեր է որմնասյուները: Բայց այդ միջին կետին (նկ. 109, J) երկու կողմին անմիջապես հաջորդող (նկ. 109, E E) սյուներեն արևմտյան կողմինը ավելի մոտ է միջին կետին (նկ. 109, J): Ասոր ալ պատճառը շատ պարզ է, որովհետև արևմտյան դռան լայնությունը (հյուս. ճակատի վրա) իր երկու կողմի զույգ սյուներով 3,50 մետր է, մինչդեռ արևելյան կողմինը՝ 3,25 մետր, ուստի այդ միջին կետին վրա եթե սյուներու հեռավորության հավասարությունը պահել ուզեր, դրեթե անհնար պիտի դառնար: Եթե միջին կետի (նկ. 109, J) արևմտյան կողմի որմնասյունը մի քիչ ավելի հեռացնելով դեպի արևմուտք շարժեր, դռան մեծությունը կարգելեր, եթե մյուս կողմի սյունը մոտեցներ միջին կետին, արևելյան կողմի դռնեն կհեռանար և անհաճո անհամաչափություն մը հառաջ կգար: Պահ մը ենթադրենք, որ արևելյան կողմեն (նկ. 109, E կամ նկ. 111, A) շարժեր դեպի արևմուտք, բնականաբար A և E (նկ. 111) որմնասյուներուն միջոցը պիտի լայնանար 25 սնտ., եթե նույն համաչափությունը փոխադրեր արևմտյան կողմի A և F (նկ. 111) սյուներու հեռավորության վրա, մեկ կողմեն դռնեն պիտի հեռանար F սյունը, մյուս կողմեն պատուհանը պիտի ծածկեր, որն որ այժմ ալ հազիվ ազատված է որմնասյան ետևը մնալեն: Վերջապես, ամեն կերպ քննություն ցույց կուտա, որ մանրամասն հաշիվներով մտածված և դասավորված են որմնասյուները (colonne-engagé), միշտ ի նկատի ունենալով հին շենքին վրա կանխավ գոյություն ունեցող դռներն ու պատուհանները:

Արևմտյան ճակատի վրա թեև որմնասյուներու համաչափ դասավորություն համար մեծ արգելքներ չկային, սակայն իսկզբան այս ճակատին վրա ալ դռան ճիշտ մեջտեղը չգտնվիլը և պատուհաններուն ալ փոքր ի շատե անհամաչափ դիրք ունենալը դարձյալ հառաջ բերեր է որոշ անհարմարություններ, թեև քիչ զգալի, ինչպես կտեսնվի նկ. 106, C կամ նկ. 113, B պատուհանը մի քիչ մտեր է որմնասյունի խոյակի ետևը:

Հարավային ճակատը ավելի մեծ արգելքներ տվեր է որմնասյուներու համաչափ դասավորության: Այս կողմին վրա ամենեն անհարմար դիրքը գրաված է մտից դուռը. պատուհաններեն մեկը (նկ. 106, D) դարձյալ հազիվ ազատված է որմասյան ետևը մնալեն:

Պահ մը եթե փորձի ենթարկենք այս կողմի որմնասյուներուն մի ուրիշ կերպ դասավորություն տալ, պիտի տեսնենք, որ անկարելի է: Ճարտարապետը մյուս ճակատներու նման այստեղ ալ մտից դռան նախապատվություն տալով, եթե անոր երկու քովերը հավասար հեռավորությամբ որմնասյուներ դներ, այն ատեն դեպի արևելք մինչև դուրս ցցված սենյակին պատը գտնված միջոցը պիտի լայնանար. հետևաբար, նույն լայնության մեջ, որ այժմ մեկ որմնասյուն կա, պետք էր երկուքի վերածեր, որով այնչափ կնեղնային որմնասյուներու միջոցները, որ նույն չափով դասավորություն դռան դեպի արևմուտք եղած մասին վրա անկարելի էր առանց պատուհաններ փակելու, և կամ որմնասյուներու թվական համեմատություն հառաջ բերելու: Եթե բնավ որմնասյուն չդներ դռան քովի որմնասյան և դուրս ցցված սենյակի (նկ. 109, K) թևին մեջ, այն ատեն հանդիպակաց ծածկույթի անջատ սյուներն ալ նույն համաչափությունը պիտի պահանջեին, որով դուրս ցցված թևի անկյունի որմնասյունեն դեպի մյուս անջատ սյունը ձգվելիք աղեղին տրամագիծը չափազանց պիտի լայնանար և բարձրությունն ալ պիտի անցներ քան մյուս կողմերը. հետևաբար նաև ծածկույթի կամարն ալ պիտի բարձրանար քան կտուրի սահմանը: Իսկ եթե դռան անմիջապես քովը մի որմնասյուն դնելով մինչև սենյակի պատը եղած լայնության մեջ ալ մեկ որմնասյուն միայն դնել ուզեր ճիշտ մեջտեղը (նկ. 109, M), պատուհանը պիտի փակվեր:

Միևնույն անտեղությունները և դժվարությունները հառաջ կուգան սույն ճակատի մտից դռնեն դեպի արևմուտք մնացած մասին վրա, այնպես որ ո՛չ մի որմնասյուն չէ կարելի տեղեն շարժել, ավելցնել կամ պակսեցնել գոնե այսօրվան փոքր ի շատե ներդաշնակ դասավորությունը առանց զգալի խանգարման ենթարկելու:



**Նկ. 115. Տեկորի տաճարի նախկին շենքի հյուսիսեն հարավ կտրվածքը**

Սյունազարդ ծածկույթի կամարին բարձրությունը անպայման նույնն է, ինչպես որ գծված է (նկ. 115, A A), չէի կարող ավելի բարձր ենթադրել, քանի որ գոյություն ունին վերոհիշյալ երկու կամարաքարերը (նկ. 109, E E, նկ. 111, A A), հյուսիսային ճակատի երկու որմնասյանց խոյակներուն վրա, և անոնց կորությունը արդեն ապացույց է, որ որմնասյանց խոյակեն սկսած էր բոլորվիլ կամարը: Հետևաբար, երբ շենքի ճակատի որմնասյուներն ալ հյուսիսային կողմեն դուրս ցցված թևի վրա եղող կիսաբոլորակ խորանի abside-ի երկու կողմի որմնասյուներու հետ հավասար բարձրության վրա են, բնականաբար նույն բարձրության վրա պիտի բոլորվեր շուրջանակի ծածկույթի կամարը: Կամարաքարերեն մեկը, որ ավելի խոր, պատին հավասար դրված է, նա ևս ցույց կուտա, որ ծածկույթի իսկական կամարը կբոլորվեր abside-ի կատարը պսակող corniche-ին անմիջապես վրայեն (նկ. 113, C, նկ. 115, C): Մյուս կամարաքարը, որ պատեն դուրս որմնասյան խոյակի վրա դրված է, ցույց կուտա, որ կամարին ներքևեն դուրս չեչտված աղեղներ կամ գոտիներ կային փոքր abside-ը պսակող corniche-ին հավասար բարձրությամբ, որոնց ծայրերը բնական ուղղությամբ պետք էր որ հանդչեին անջատ սյուներու դեպի ներս չեչտվող խոյակներու վրա (նկ. 110, B B):

Սյունազարդ ծածկույթի (portique) կտուրին թեքության աստիճանը, որ այսօրվան երևցած ուղղությամբ գծեր եմ, ինծի անհարմար կերևի, որովհետև այդ ձևով շատ կծանրաբեռնվին ծածկույթը շրջապատող անջատ սյուները կամարի և տանիքի արտակարգ թանձրությունով: Ինծի հավանական երևցավ այն ուղղությունը, որ կետաշար ցույց տվեր եմ նկար 115-ի վրա (նկ. 115, E E). այս ուղղությամբ, ինչպես կտեսնվի, ներսի կողմեն ալ ոչ մի արգելքի չի հանդիպիր:

Արտաքուստ ծածկույթը կրող անջատ սյուներու իսկական ձևի մասին հաստատ ոչինչ չեմ կարող ըսել, բայց քանի որ յուրաքանչյուր սյունի խոյակ երեք զանազան կողմերե ձգվող աղեղներու ծայրին հանգիստ պիտի տար, բնականաբար պիտի ունենային այն ձևը, որ կտեսնվին նկ. 110, հատակագծին մեջ[1]: Կարելի է կարծել, որ փոխանակ նկ. 110-ի մեջ երևցածին նման յուրաքանչյուր դուրս ընկած մասերը քառակուսի լինելու, գուցե կիսաբոլորակ կվերջանային, ինչպես նկ. 116, A B C: Թեև

---

[1] Հյուսիսային կողմը ունի երկու դուռ, որոնց մեկը այժմ փակված է:

[2] Սույն 70 սնտ. հավելվածը արևմտյան կողմի (նկ. 109, H) որմնասյունին արևելյան կողմեն համապատասխանող որմնասյունն է, որ մեկ կողմեն թաղված է (նկ. 109, L) կիսաբոլորակին (abside) պատին մեջ (նկ. 109, I):

[1] Երերույթի մեջ այս սյուները բոլորովին կլոր են, սակայն նախ այնտեղ կարիք չկար ուրիշ ձևի, քանի որ կամարը, ուղղակի սյուները կապող աղեղներու վրայեն ծնունդ առած է և չունի կամարին ներքևեն դուրս չեչտվող աղեղներ, միմիայն երկու աղեղներու միացյալ ոտքերը պիտի նստեին յուրաքանչյուր խոյակի վրա:

սյուներու այս ձևի ծագումը ընդհանուր ճարտարապետության մեջ մինչև եգիպտական հնության կհասնի, բայց հայոց մեջ մտնելու սկիզբը, երբ լինելը տակավին ինծի հայտնի չէ, 11-րդ դարեն սկսած մինչև 14-րդ դար հաճախ կգտնենք հայ հիշատակարաններու մեջ:



**Նկ. 116. Տեկորի տաճարին արևելյան կողմին վրա կրած երեք տեսակ փոփոխությունները**

Մի ուրիշ հարց ինձ համար անլուծելի մնացած է, այն է՝ սյունազարդ ծածկույթի անջատ սյուները միացնող աղեղներեն մեկուն ձևը կամ բարձրության չափը (նկ. 110, A, արևմտյան կողմ):

Արևմտյան դռան դիմաց գտնվելով այդ աղեղը կրող անջատ սյուները plate-forme-ի արտաքին եզերքին վրա, բնականաբար հանդիպակաց որմնասյուներու համաչափորեն պիտի զետեղվեին:

Այս ձևով ալ անհամեմատ լայն կմնա նույն սյունամեջը, քան մյուս բոլոր մնացած սյունամեջերը, ուստի այդ լայնության վրա երկու սյուները միացնելու համար, եթե ուղիղ կիսաբոլորակ (pleine de cintre) աղեղ մը գծենք, չափեն ավելի բարձրանալով կմտնե ծածկույթի կամարին մեջ: Շատ ենթադրություններ կարելի էր ընել այս մեկ աղեղի ձևի մասին, բայց ոչ մեկը վճռական չի կարող համարվիլ. միակ պատշաճ ձևը arc surbaissé կամ anse de panier-ն է, բայց որովհետև այս երկու ձևը հայոց ճարտարապետության զարգացման բոլոր դարաշրջաններուն մեջ չեն երևցած և ոչ մի հիշատակարանի վրա, հետևաբար այս հարցը պիտի մնա առայժմ անստույգ:

Հյուսիսային կողմի դուրս ցցված թևին վրայի փոքր abside-ին սյունազարդ ծածկույթի (portique) հետ միաժամանակ չինված լինելը հերքող փաստեր գտնելը եթե դժվար է, այնուամենայնիվ, կասկածանքներե ալ ազատ չէ (նկ. 109, L) (նկ. 110, C): Նախ որ՝ հակառակ կողմին վրա չկա նույն abside-ը, ինչպես ունի Երերույքի տաճարը, երկրորդ՝ եթե պահ մը չեղած համարինք այդ abside-ը, այն ատեն ավելի համանմանություն և ներդաշնակություն պիտի ստանանք հարավային կողմի թևին և սյուներու դասավորության հետ, առանց վնասելու հյուսիսային թևի սենյակին ամբողջության:

Հատակագծի մեջ կտեսնենք, որ հյուսիս-արևմտյան մասը ունի երկու սյունամեջ (entre-colonnement) (նկ. 110, D D) մինչև միջին լայն սյունամեջերուն հասնելը: Մինչդեռ մյուս կողմեն մեկ հատ միայն կա (նկ. 110, E), եթե անոր քով abside-ի պատին գրված տեղին վրա մեկ հատ ևս ավելցնենք, կամ նկ. 114, I. նկ. 113, K, որմնասյունը անջատ սյուն համարենք, վերջին սյունամեջին ծայրը կհասնի հարավային կողմի դուրս ցցված թևին պատին հավասարության, որով կունենանք երկու կողմին վրա ալ պատշաճ համաչափություն սյուներու դասավորության: Ես հակված եմ միանգամայն հավատալու, որ abside-ը սյունազարդ ծածկույթի հավելումեն հետո է կցված հյուսիսային թևին՝ բացի վերոգրյալ պատճառներեն, նաև արվեստի զարգացման ժամանակագրության տեսակետով նույն ժամանակներու հայոց եկեղեցիներու մեջ abside-ը մուտ գտած լինելը կասկածելի լինելու պատճառով, որուն մասին պիտի հայտնեմ իմ կարծիքս քիչ հետո:

Պարբերաբար կատարված նորոգություններեն և հավելումներեն շենքը զտելով՝ կտեսնենք, որ ներսի կիսաբոլորակ խորանը (abside) ևս սյունազարդ ծածկույթեն ալ հետո է ավելցած, ամենանախնական ձևը եղած է նախքան սյունազարդ ծածկույթի ալ շինվելը, նկ. 110-ի մեջ երևցած սև հատակագիծը, որուն արևելյան կողմին վրա ներսեն ուղղանկյուն խորշ մը, իսկ դրսեն ուղղանկյուն ցցվածք մը կներկայացնե (նկ. 110, F, H):

Այս սև հատակագծին վրա ավելցեր է մի ժամանակ շուրջանակի սյունազարդ ծածկույթը, ամենայն հավանականությամբ դարձյալ առանց արևելյան կիսաբոլորակ խորանի (abside), այս ժամանակ միայն երկու կողմի սենյակները ավելնալով և արևելյան կողմեն ավելի դուրս ցցվելով՝ դրսեն ալ ձևացուցեր են ուղղանկյուն մի խորշ (նկ. 116, E), ինչպես ներսի կողմեն (նկ. 110, F): Այս ենթադրությունը կհաստատե, բացի այժմ տեսնված նշաններեն, նաև արևելյան կողմեն ևս սյունազարդ ծածկույթ գտնվելուն ապացույցները, որուն վրա խոսեցանք: Եթե սյունազարդ ծածկույթը արևելյան կողմին վրա գոյություն ունեցած ժամանակ խորանն ալ դուրս հանվեր, ոչ միայն աններելի տգեղություններ հառաջ կուգային, ծածկելով միանգամայն ազատ plate-forme-ը, այլև կառուցումն ալ անկարելի ըսվելու չափ կդժվարացներ:

Տակավին առիթ պիտի ունենամ abside-ի մասին խոսելու, որ առավել կամ նվազ չափով պիտի հաստատվի սույն կարծիքս, սակայն առայժմ ընդհատելով այստեղ, ձեռնարկենք նկ. 110 սև ներկված հատակագծի արևելյան կողմեն ստացած ձևի քննության:

Հայոց հին եկեղեցիներու կազմության օրենքներուն մեջ կտեսնվի, որ առանց բացառության երկու զանազանություն կա արևելյան կիսաբոլորակ խորաններու գրված դիրքին մեջ, կամ արևելյան պատեն բոլորովին ներս են անոնք և կամ բոլորովին դուրս են ամբողջ կիսաբոլորակով: Մինչին բարձր տանիքի fronton-ի մակերևույթն ալ հավասար է ամբողջ շենքի մակերևույթին հետ, եթե նույնիսկ խորանն ամբողջովին դուրս ալ հանված լինի արևելյան պատեն, այսինքն fronton-ը և կողմնակի սենյակներու արևելյան պատերը մի մակերևույթի վրա են: Մինչդեռ Տեկորի տաճարին վրա այս մասը միանգամայն բացառություն է, կողմնակի սենյակներու արևելյան պատերը (նկ. 109, N N) (նկ. 110) 1,70 մետր ավելի դուրս են, քան միջին բարձր fronton-ի մակերևույթը (նկ. 116, F), այնպես որ եթե fronton-ի պատին projektion-ը վար առնենք (նկ. 117, A A A), հատակագծին մեջ կստանանք կետաշար նշանակված տեղը (նկ. 109, O O), այժմյան խորանին մեջ, որն որ միացնելով շրջապատի սև շրջանակին հետ, կստանանք նկ. 110-ի հատակագծին մեջ H դիրքը: Փակագծի մեջ ըսենք, որ ահա այս դիրքին վրա է, որ սենյակներու արևելյան կողմեն դուրս ցցված պատերը ավելնալեն հետո, կձևանա արտաքին խորշը (նկ. 116, E), և այժմյան խորանի abside-ը ոչ մի կերպով հարազատ կապ չունի այս ձևերու հետ: Բացի այս, այնպիսի անբնական կերպով պատը պատռված (նկ. 110, H) և խորանի abside-ը դուրս հանված է, որուն նմանը հետնագույն նորոգություններու և փոփոխություններու մեջ միայն ներելի է տեսնել շինարարական արվեստի տեսակետով:



**Նկ. 117. Տեկորի տաճարի այժմյան ձևի արևելքեն արևմուտք կտրվածքը**

Շինարարական օրինաց բնական կարգով՝ պետք էր խորանի կամարին վրա մի պատ բարձրացնել, որպիսին է Տեկորի տաճարին արևելյան միջին fronton-ի պատը, այն ալ անպայման խորանին երկու կողմեն զուգահեռաբար ձգվող պատերը (նկ. 109, PP) միացնող կամարին վրա դրվեր, և այդ պատեն դուրս սկսեր կազմվել խորանի կիսագմբեթը: Մինչդեռ այժմ կտեսնենք, որ հակառակ կերպով fronton-ին պատը դրված է խորանի գմբեթարքին վրա (նկ. 117, B) և ապահովության համար ալ արտաքո կարգի թանձրություն գրված է գմբեթարքի այս մասի վրա: Թեև այս ապօրինի շինության պատճառով ընդմիշտ նորոգությունն ալ պակաս չէ եղած խորանին մեջ թե՛ ներսեն և թե՛ դրսեն: Հաճախակի նորոգություններ ալ ոչ թե հառաջ եկած են վրայի fronton-ի պատին ճնշումեն, այլ նախապես գտնված պատի մը պատռվածքի ներքևեն կամար դարձնելու ապօրինի և դժվար գործողությունեն, որովհետև անհնար էր քարերը պատռված պատին ներքևեն այնպես նպատակահարմար կերպով խտացնել և ձուլել վրայի պատին հետ, ինչպես որ պիտի լիներ արձակ միջոցի մեջ, եթե ոչ հաստատուն և կանոնավոր շինված պատի մը նույն չափով պատռվելեն ոչ մի ճնշում հառաջ չէր կարող գալ:

Ձեռնարկենք այժմ ներքին մասերու և տանիքներու քննության, որոնք ալ իրենց կարգին շատ հետաքրքրական փոփոխություններ կրեր են և այդ փոփոխություններն ալ զանազան դարաշրջաններու ավանդությանց և արվեստի դրոշմը կկրեն:

Բնականաբար ամեն տեսնող պահ մը պիտի մտածե, թե ի՞նչ պատճառավ հառաջ եկեր են Տեկորի տաճարին ներքին գմբեթակիրը մույթերու (pilier) այսօրվան անկանոն, անհամաչափ, անհա-

վասար և անճաշակ ձևերը՝ հակառակ ուրիշ մասերու վրա երևցած ընդհանուր կանոնավորության:

Զափագրությունը ցույց կուտա, որ ներքին որմնասյունները 5,70–5,75 մետր համաչափ հեռավորությամբ դասավորված են հյուսիսային և հարավային պատերու վրա: Որմնասյունները միջին հաշվով ունին 0,70 մետր լայնություն[1]: Արևելյան ու արևմտյան որմնասյուններն ունին 112 սնտ. լայնություն (նկ. 109, QQQQ և նկ. 110, $H_1$ $H_1$ $H_1$ $H_1$): Այս բոլոր որմնասյուներն օրինական կարգով դեմ դիմաց զետեղված են ուղիղ գծի վրա, այսինքն հյուսիսայինները հարավայիններուն դիմաց, և արևելյանները արևմտյաններուն դիմաց, ինչպես կտեսնվի նկ. 110-ի մեջ, մեջտեղը եղած չորս անջատ զմբեթակիր մույթերն են, որ այս կողմ այն կողմ շեղված և ծռված են անճաշակ կերպով, որն որ առանց պատճառի չէր կարող լինել: Հակառակ այդ հառաջացած անկանոնության, անպայման պետք էր, որ օրինավոր կապակցություն գտնեինք կանոնավորապես շարված որմնասյուներու և անկանոն ձև ստացած մույթերու (pilier) մեջ, որպեսզի հնարավոր լիներ հետնագույն ձևը ստանալեն առաջ նախնական ձևը գտնել: Մի շատ պարզ և բնական միջոց կար այդ գաղտնիքը գտնելու համար, այն է՝ աղեղներով ամեն կողմեն միմյանց հետ կապել բոլոր մույթերը և որմնասյուները, այսինքն պետք էր որ յուրաքանչյուր որմնասյուն իրեն դիմացը գտնվող մույթի հետ աղեղով մը և յուրաքանչյուր մույթ ալ դարձյալ իրեն դիմացը եղող մույթի հետ աղեղներով կապվեին՝ իրենց վրա ծածկույթ կամ տանիք մը կրելու համար: Այս կապերը գտնելու համար բավական էր այսօրվան հատակագծին վրա արտաքին պատերու վրայի որմնասյուները իրենց լայնության չափով ուղիղ գծերով իրարու միացնել: Ահա այս գծերու (նկ. 110, II) խաչաձևումով հատակագծի մեջտեղ կստացվին չորս քառակուսի մույթերու տեղերը՝ այսօրվանեն թեև տարբեր, սակայն բոլորովին օրինական ձևով: Որովհետև այս ստացված քառակուսիներին ամեն կողմին վրա հարկավոր է ավելցնել յուրաքանչյուր հանդիպակաց որմնասյուներն մեկնող աղեղի հանգստյան համար շեշտված մասերը, այդ մասերն ալ ավելցնելով՝ կստանանք նկ. 110-ի մեջ սև գույնով երևցած խաչաձև անջատ մույթերը: Այս արդյունքին առնև ամենափոքր կասկած իսկ չմնար, որ Տեկորի տաճարին ներքին չորս մույթերու սկզբնական ձևը և անոնց դասավորությունը այդ էր: Կանոնավոր խաչաձև մույթերեն դուրս այսօրվան երևցածները, որոնք թուխ գույնով ներկված են՝ անպայման հետնագույն հավելվածներ են:

Հին ձևը նորեն զանազանելեն հետո, երբ հին ձևին համար հյուսիսեն հարավ և արևելքեն արևմուտք կտրվածք (coupe) և élévation չինենք, կստանանք նկ.115 և 118 ձևերը, որոնց վրա թե՛ նոր հատակագծի և թե՛ նոր élévation-ի coupe-երու համեմատությամբ կտեսնենք՝ թե ինչ տեսակ փոփոխություններ է կրեր հին շենքը այսօրվան ձևը ստանալու համար: Նկ. նկ. 115 և 118-ի մեջ երևցած բոլոր կետաշար գծերը ցույց կուտան հետնագույն հավելվածները:



**Նկ. 118. Տեկորի տաճարի նախնական շենքի արևելքեն արևմուտք կտրվածքը**

Հյուսիսեն հարավ կտրվածքով կտեսնվի, որ հինին մեջ ի սկզբան գոյություն ունեցող անջատ մույթերու միջին բարձր աղեղները մեծ փոփոխություն չեն կրած, միայն մի քիչ ցածցած են: Նկ. 112-ի մեջ CC այժմյան կամարագծերը հինին մեջ համապատասխան են նկ. 115, G կետաշար կամարագծին, որն որ ի հնումն գոյություն չուներ. իսկ արևելքեն արևմուտք կտրվածքին վրա (նկ. 118) մեծ փոփոխություն կա՝ համեմատելով նոր շինության արևելքեն արևմուտք կտրվածքին հետ (նկ. 117): Հին շենքը թեև նորին նման ունեցեր է միջին լայն ու կողմնակի նեղ երկու թևեր (nef) և այս թևերուն վրա որմնասյուներե և անջատ մույթերու վրայե ձգված աղեղներու օժանդակությամբ արևելքեն դեպի արևմուտք երկարած կամարներով ծածկված էր, բայց ոչ վրան գմբեթ ուներ և ոչ ալ արտաքուստ հյուսիսային և հարավային կողմերեն fronton-ներ: Ներքուստ մույթերը համաչափ հեռավորության վրա զետեղված էին որմնասյուներու համաչափությամբ, արևմտյան և արևելյան պատի որմնասյուները ավելի լայն էին (1,12 մետր), քան մյուս պատերու որմնասյուները, այն բնական պատճառավ, որ երկու զանազան կողմերե եկող կամարներու ծանրություններն իրենցմե դեպի մույթերը ձգվող աղեղներուն վրա պիտի հանգչեին, հետևաբար երկու տարբեր կամարներու ոտքերուն հանգիստ տալու չափ լայնություն և անոնց ծանրությունը կրելու չափ թանձրություն պետք էր որ ունենային:

Ներքուստ հին շենքին թևերը (nef) ծածկող կամարներու դիրքին համաձայն արտաքուստ անոնց վրայի ծածկն ալ եղած է երկու կողմեն միջին տանիքեն ցած թեք տանիքներով (նկ. 119, A A): Միջին մասը բարձր երկու կողմին վրա թեքված տանիքով (նկ. 119, B B) և ցած ու բարձր տանիքներուն մեջ ուղղահայաց բարձրացող երկու կողմի պատերուն վրա (նկ. 119, C C C) մանր պատուհաններ կարգավ շարված (նկ. 119, D D D), որոնք մինչև այսօր պահված են շենքին վրա թե՛ ներսեն և թե՛ դրսեն (նկ. 118, A A A և նկ. 115, F F) թեև վաղուց խցված են:



**Նկ. 119. Տեկորի տաճարի նախնական տեսքն արտաքուստ**

Թե ինչո՛ւ եղեր են այս փոփոխությունները, սա ինքնըստինքյան մի հարց է, որուն մասին իմ ամենահավանական տեսությունս է, թե մի օր ցանկություն ունեցեր են հնօրյա շենքին վրա տեսնել չորս մույթերով վերամբարձ գմբեթ մը՝ քրիստոնեության նվիրական խորհրդանշան խաչաձև տանիքով մը միասին, անշուշտ, հայրապետական աթոռ Էջմիածնի Մայր տաճարին խաչաձև տանիքին նմանցնելու ձգտումով, վասնզի այս ձևի ամենահինը Էջմիածնի Մայր տաճարին վրան շինված կերևի դեռ 5-րդ դարու վերջերին և իբրև նախատիպ ծառայած է հետագա դարերու բոլոր մեծ ու փոքր եկեղեցիներու տանիքներուն:

Սակայն այդ ցանկությունը պետք էր իրագործել մեծ խնայողությամբ, առանց ամբողջովին քանդելու հին շենքի տանիքը:

Քանդելը պայմանական է եղած, այնչափ միայն, որչափ որ անհրաժեշտ էր գմբեթ մը կազմելու և տանիքը խաչաձևելու համար, ուստի սույն ծրագիրը իրագործելու համար դիմեր են հետևյալ պարզ միջոցին:

Շենքի կեդրոնին վրա իբրև գմբեթի խարիսխ պահանջված հավասարակողմ քառակուսին ստանալու համար, պետք էր ներքուստ շենքին երկայնության և լայնության վրա մույթերու անհավասար հեռավորությունը հավասարցնել, որպեսզի անոնցմե ձգված հավասար տրամագծով աղեղները իրարու միացնեին մույթերը և կազմեին քառակուսի խարիսխ կառուցանելի գմբեթին: Ուստի նախապես հիմ բռնելով լայնության վրա եղող մույթերու տրվելիք 5,98 մետր հեռավորությունը, դեպի երկայնությունը եղող մույթերու միջոցները, որ ավելի նեղ էին, լայնացուցեր են իրարու նայող դուրս ցցված մասերը տաշելով: Նկ. 110-ի մեջ սև ներկված մույթերու վրա սպիտակ կետաշար նշանակված է մույթերու տաշվածքին չափը[1]: Իսկ մույթերու՝ շենքի լայնության կողմի վրա ունեցած հեռավորության չափը, որ 6,80 մետր էր և պիտի կազմե գմբեթի տրամագծի իսկական չափը կամ բացվածքը, հավասարեցուցեր են նոր հավելումով (նկ. 110, L L L L): Այս հավելումը տվեր է մեկ կողմեն գմբեթի քառակուսի բացվածքի չափը, մյուս կողմե՝ գմբեթը վերցնելու սահմանված չորս աղեղներու տրամագիծը:

Եվ որովհետև մույթերու ներսի կողմերը տաշվելով անոնք բավականին կտկարանային, մյուս կողմեն նոր կազմվելիք գմբեթակիր աղեղներ որոշ լայնությամբ իրենց ծայրերուն հանգիստը (retombé) կպահանջեին, հետևաբար այս երկու բնական պահանջները իրագործելու համար, անհրաժեշտ էր ավելցնել այն մասերը, որոնք կտեսնվին նկ. 110 հատակագծի վրա թուխ գույնով ներկված, որով մույթերը ստացած են այսօրվան բոլորովին հակաօրինական և անհամաչափ ձևերը. մույթերու խարիսխնե-

[1] Զանազան ժամանակներու մեջ համբակ ձեռքերու կատարած նորոգություններով թե՛ որմնասյուներ և թե՛ որմնասյուներու միջոցներ 1–5 սանտիմ. ավելցեր և պակսեր են, այդ պատճառով ալ միջին չափը ընտրեր եմ հատակագծի պատրաստության ժամանակ:

[1] Թեև բոլորովին չեն հաջողած հավասարեցնել, ինչպես կերևի նշանակված չափերեն, մեկ կողմը 5,98 մետր է, մյուս հանդիպակաց կողմը՝ 5,80 մետր, տարբերություն կա 18 սնտ. կամ վախեցեր են այն ատեն ավելի տաշելու, կամ հետո, նորոգություններու ժամանակ, վերտին թանձրացուցեր են մույթերը:

*րուն վրա ալ նույնպես տարբեր տեսակներով* moulure-*ներ և քանդակագործություններ կան, որոնք կորոշեն յուրաքանչյուրին քանդակման ժամանակի ոճը և նորոգության դարաշրջանը: Այս մասին ավելորդ կսեպեմ ավելի մանրամասն բացատրություն տալ, որովհետև հին և նոր հատակագծերու (նկ. 109 և նկ. 110) վրա մասնագիտորեն կատարված քննությունը պարզ կցուցնե մնացած ամեն ինչ:*

*Մույթերու վրա եղած հավելվածները երբ նախկինին հետ ձուլվելով բարձրացած են անոր հավասարությամբ, կմնար զանոնք աղեղներով կապել և վրան գմբեթի խարիսխը կազմել: Ուստի պատռեր են միայն հյուսիսեն հարավ երկնցող միջին թևի տանիքը, առանց ձեռք տալու մյուս մասերու տանիքին ու կամարներուն, և աղեղներով նորոգ կապեր են նոր կազմված մույթերը միմյանց հետ: Այս նոր փոփոխության արդյունքը եղեր է արևելքեն արևմուտք շարված մույթամեջերուն միջինին (նկ. 118,* B B B*) լայնալը և բարձրանալը (նկ. 118,* C*), որով ստացվեր է նկ. 117 հատվածականի ձևը, իսկ մյուս կողմին (հյուսիսեն հարավ) վրա մույթերուն իրարու մի քիչ մոտենալուն պատճառով (նկ. 115,* H H*), նախապես գոյություն ունեցող մեծ աղեղներու տրամագծերը մի քիչ փոքրացեր են (նկ. 115,* G*), երկու ծայրերուն վրա եղած մույթամեջերը (նկ. 118,* D D*), որոնք մույթերու հավելումով (նկ. 118,* E E*) նեղցեր էին, քան նախկին չափը, նոր աղեղներով կապվեր են նմանապես ավելի ցած, քան նախկինը (նկ, 118,* E E *և նույն տեղ կետաշար աղեղներ): Մույթերու այս հավելումեն հառաջ եկեր է հյուսիսային ճակատի դեպի արևմուտք բացված դռան մեծ մույթին ետևը բոլորովին խափան դիրք ստանալը (նկ. 118,* F*, նկ. 109), որուն նմանը կտեսնվի Անիի գագվաշեն ս. Գրիգորի մեջ՝ հետնագույն մույթերու հավելման պատճառով:*

*Ուշադրության արժանի է այս փոփոխություններով հառաջ եկած համաչափական մի երևույթ, որն որ հետո, 7-րդ դարու եկեղեցիներուն մեջ իբրև նախատիպ ծառայած է հատակագծային բաժանումներու: Ինչպես կտեսնենք, երկու ծայրերու սյունամեջերը (նկ. 118,* D D*), որ նախապես հավասար էին, հետո ալ հավասարաչափ հավելումով դարձյալ համաչափ մնացին, հետևաբար յուրաքանչյուր թևի* (nef) *երկարության վրա ձևացած միջին մեծ և երկու կողմերը հավասար լայնությամբ երկու սյունամեջեր: Նույն համաչափությունը օրինականացած կտեսնենք 7-րդ դարուն կանգնված Էջմիածնի մոտ ս. Գայանեի վանքին հատակագծին մեջ (նկ. 71), որն որ առանց որևէ փոփոխության նախնական հատակագծով մեզ հասած կթվի:*



*Նկ. 120. Մրենի տաճարի այժմյան հատակագիծը*

*Տանիքի վրայեն եղած փոփոխության ձևը և սահմանը կերևի նկ. 119-ի վրա կետաշար գծերով նշանակված, որ ցույց կուտա, թե ամեն գործողություն միջին թևի (հյուսիսեն հարավ) սահմանեն դուրս չէ եղած. միայն ստորին տանիքներու ծածկերը (նկ. 119,* A A*) մի քիչ բարձրացած են, որով ծածկվեր են վերին և ստորին տանիքներու մեջտեղ գտնված պատուհաններու (նկ. 119,* D D D*) ստորին մասերը:*

*Ավելի հետնագույն ժամանակ ևս ստորին տանիքի թեքության աստիճանը ավելցնելու համար միջին տանիքի կողմը եղած ծայրերը ավելի բարձրացուցեր են, այնպես որ վերին և ստորին տանիքներու մեջ գտնվող հին ուղղահայաց պատեն, որուն վրա շարված են փոքր պատուհաններ (նկ. 119,* D D D*), հազիվ մնացեր է 0,25 մետր բարձրություն կամ միջոց երկու տանիքներու միջև (նկ. 106,* E E *և նկ. 113,* D D*):*

*Վերին և ստորին տանիքներու մեջտեղ, ստորին տանիքի թեքության ավելնալովը մասամբ ծածկված այս պատուհաններն են, որ ցույց կուտան, թե ներքին կողմի կողմնակի թևերեն որմնասյուներուն միացող աղեղները ի հնումն 0,40-0,50 մետր ցած էին, որովհետև տանիքներու միջև եղած պատուհաններու բարձրությունը անփոփոխելի է, քանի որ այժմ ալ կան անոնք (թեև խցված)՝ կատարով հասած վերին տանիքի պսակին* (corniche), *իսկ մինչև ներքևը բարձրությունն է 1,29 մետր, հետևաբար նույն պատուհաններու ստորին եզերքեն էր, որ (նկ. 115,* J J*) պիտի սկսեին թեքվիլ կողմնակի ստորին կտուրները դեպի ցած, այդ ուղղությամբ ալ ներքին կողմնակի թևերը կապող աղեղները սահման չէին գտներ նույն բարձրությամբ տանիքի տակ բոլորվելու:*

*Ծածկին վրա կատարված կտուրներու խաչաձևումով հառաջ եկած է ակամա մի անհամաչափություն, որ ի հիմանե նորոգ չինված եկեղեցիներու մեջ նույն ձևով խաչաձև կտուր չինելու համար ծրագրված տանիքներուն մեջ չի պատահիր:*

*Բոլոր եկեղեցիներու մեջ հյուսիսեն հարավ և արևելքեն արևմուտք ձգված խաչաձև տանիքներու լայնությունները հավասար են, որուն բնական հետևանքը խաչաձևումի միջին կետին վրա կստացվի հավասարակողմ քառակուսի հատված մը գմբեթի խարիսխին հատուկ և չորս ճակատներուն վրա չորս հավասար չափով* fronton-*ներ՝ տանիքի թեքության համաչափ: Տեկորի տաճարին* fronton-*ները այս ընդհանուր օրենքին դեմ մեղանչած են. արևելյան և արևմտյան* fronton-*ներուն լայնությունն է 9,38 մետր (նկ. 106,* F *և նկ. 113,* F*), իսկ հյուսիսային և հարավային* fronton-*ները 7,08 մետր լայնություն ունին (նկ. 106,* $G_1$ *և նկ. 111,* H...*), որոնք անհամեմատ նեղ են, քան մյուսները:*

*Արևելյան և արևմտյան* fronton-*ներու չափերը նույնը մնացած են անփոփոխ, ինչ որ էին ի հնումն, և կներկայացնեն արևելքեն արևմուտք երկնցող միջին տանիքը, որն որ հանդչած էր ի սկզբանե անտի մեծ մույթերը իրարու և զանոնք հանդիպակաց արևելյան և արևմտյան պատերուն միացնող աղեղներու վրա (նկ. 115,* K K*): Բայց հյուսիսային և հարավային կողմերուն վրա նույն լայնությամբ թե՛ տանիք և թե՛* fronton *կազմելու համար առանձին հաստատուն խարիսխ էր հարկավոր նույնքան լայնությամբ, որ կբացակայեր: Նոր չինվելիք* fronton-*ներուն իբրև խարիսխ պիտի ծառայեին հյուսիսային և հարավային պատերու որմնասյուներեն դեպի միջին չորս մույթերը ձգվող աղեղները (նկ. 109,* RRRR *և նկ. 110,* IIII*): Բայց որովհետև նույն աղեղները կրող որմնասյուները իրենց տեղը հաստատուն էին և չափով ալ նեղ, 5,70-5 մետր հեռավորությամբ, ուստի այս կողմերու* fronton-*ներն ալ մյուս կողմերու* fronton-*ներու հավասարեցնելու համար հարկ պիտի լիներ որմնասյուները իրարմե հեռացնել, որով հարկ կլիներ նաև հին տանիքներուն կամարներու մեկ մասն ալ քանդել: Հին որմնասյուները քանդել և փոխարեն նորերը չինել պահանջված հեռավորության վրա, արդեն գործը կծանրացներ և, որ ավելի անպատշաճն էր, որմնասյուներու տեղափոխության պատճառով հյուսիսային կողմեն այժմ բաց մնացած (դեպի արևմտյան կողմի) դուռն ալ պիտի փակվեր, որոնց գոյությունը պահելու համար, ինչպես տեսանք վերև տրված բացատրություններեն, շատ զոհողություններ եղած էին: Հետևաբար, մեկ կողմանե հին չինությունը ընդհանրապես պահպանելու, մյուս կողմանե Էջմիածնի Մայր տաճարով նվիրագործված գմբեթավորյալ խաչաձև տանիք մը ունենալու բաղձանքին զոհեր են համաչափության և վայելչության որոշ պահանջներ, և աչք գոցեր են ավելի կամ նվազ զգալի եղող անկանոնություններուն: Այս պատճառով ալ նեղ են այսօր հյուսիսային և հարավային* fronton-*ները, քան մյուս կողմինները:*

*Այսքանը բավական չէ Տեկորի տաճարին նախնական ճիշտ ձևը գտնված համարելու համար: Անորոշություն մը կմնա դեռ արևելյան կողմին վրա, որն որ դժվար է լուծել առանց յուր նմաններու ուսումնասիրության դիմելու, ինչպես՝ Մրենի, Երերույքի, Քասաղի և Օձունի տաճարները:*



*Նկ. 121. Մրենի տաճարի կրած փոփոխությունները պարզող հատակագիծ*

Մրենի տաճարը ներքին կողմեն քննելով՝ կտեսնվի, որ հյուսիսային և հարավային պատերու վրա որմնասյուներու համաչափ դասավորությունը պահվելով հանդերձ, գմբեթակիր մույթերը միևնույն անկանոնության մատնված են, ինչպես Տեկորի տաճարին մույթերը (նկ. 120). այլևս կասկած չէր մնար, որ այստեղ ալ հետնագույն փոփոխություններ կատարված պետք էր որ լինեին: Հատակագծի վրա միևնույն փորձնական գործողությունները կատարելով, ինչպես Տեկորի տաճարին հատակագծի վրա անմիջապես կպարզվի, թե Մրենի տաճարը ևս եղեր է մի ժամանակ Տեկորի տաճարի նախնական շինության նման, արևելքեն արևմուտք ձգված միջին լայն և կողմնակի նեղ թևերով (nef) խաչաձև անջատ մույթերով կամարակապ մի շենք, առանց գմբեթի (նկ. 121), որուն նախնական կառուցումեն շատ հետո, տվեր են այսօրվան ձևը (նկ. 120):

Տեկորի տաճարին չափագրության մեջ տեսանք, որ ներքին կողմի որմնասյուներու միջոցները 5,70–5 մետր էր, սակայն արևելյան կողմեն մինչև կողմնակի սենյակներու դուռը եղած միջոցները (նկ. 109, S S և 110, M M) անսպասելի կերպով լայնացած են ավելի քան 0,50 մետր, որով միջոցը կհասնի 6,20 մետրի:

Հիրավի, հայոց հին շինություններու մեջ համաչափական անկանոնություններու, ծուռություններու հանդիպել անսպասելի չէ, և նույնիսկ Տեկորի տաճարին մեջ այսօր ոչ մի ուղիղ և կանոնավոր չափ չէ կարելի գտնել մասնավորապես պարբերաբար եղած նորոգություններու պատճառով, սակայն այս միջոցին մեջ 0,50 մետր տարբերությունը շատ մեծ էր և պատահական պատճառներու կամ վարպետներու անզգուշության չէր կարելի վերագրել[1]:

Ավելի հաստատվեցա համոզմանս վրա, երբ Մրենի տաճարին մեջ ալ նույն մասի վրա գտա չափերու զգալի տարբերություն (նկ. 120, A A և նկ. 121 A A):

Մրենի տաճարին մեջ, ուր ավելի կանոնավոր պահված են հին չափերը և ավելի խնամքով կատարված են հետնագույն հավելումները, կպարտավորեի գտնել այս հատուկ պատճառե մը ծագում առած տարբերության գաղտնիքը: Սակայն ինչ լուծում ալ որ տայի թե՛ Տեկորի և թե՛ Մրենի մեջ եղած այս տարբերություններում, ամեն ինչ ենթադրություններու և կարծիքներու վրա պիտի հիմնվեին, ուստի, ավելի համոզիչ եզրակացության գալու համար, հարկ էր ավելի դրական օրինակներու դիմել, որոնք բարեբախտաբար պահված կան տակավին: Այդ օրինակներն են, ի միջի այլոց, Երերույքի և Քասաղի տաճարները:

Երերույքի տաճարը Տեկորի տաճարեն կտարբերի արևմտյան անկյուններու վրա երկու սենյակներով (նկ. 61): Բացի այս, Երերույքի մեջ փոխանակ չորս անջատ մույթերու, կգտնվին վեց անջատ մույթեր, առանց սակայն գմբեթի և խաչաձևված տանիքի:

Տեկորի մեջ արևմտյան անկյուններու վրա սենյակներու բացակայությունը, իմ կարծիքով, կբացատրվի անոր շինության ժամանակակից հայոց դավանաբանական կամ ծիսական վարդապետություններով: Բնականաբար, Տեկորի շինության ժամանակ այդ արևմտյան սենյակներու պահանջը չէ եղած, ինչպես որ կար Երերույքի շինության ժամանակ:

Երերույքի տաճարը, եթե Տեկորի տաճարին ձևին վերածել ուզենք, բավական է, որ միմիայն արևմտյան անջատ մույթերը (նկ. 61) և անոնց հանդիպակաց հյուսիսային ու հարավային որմնասյուները միացնող աղեղներուն projéction-ը արևմտյան պատ համարինք (նկ. 61), չեղած համարելով մյուս մնացած արևմտյան մասերը, կստանանք Տեկորի տաճարին ճիշտ ձևը. և զարմանալի մի զուգադիպությամբ ալ ամբողջ խորությունը ենթադրյալ արևմտյան պատեն մինչև խորանին կից սենյակներու պատը, կունենանք 19 մետրեն քիչ ավելի խորություն, որ քանի մը սանտիմով միայն ավելի է Տեկորի տաճարին խորությենեն:

Այս արդյունքը Երերույքի տաճարին վրա ստանալե հետո, կամա ակամա կմնա համոզվել, որ Տեկորի տաճարը ունեցեր է երբեմն ալ նկ. 110 հատակագիծը, անոր սև և մութ ներկված մասերը միասին առնելով և ճիշտ նման Երերույքի տաճարին, երկու կարգի վրա վեց անջատ մույթերով՝ կամարակապ, բացի արևմտյան անկյուններու սենյակներեն, որոնց գոյությանը ապացույց ամենեին չերևիր Տեկորի տաճարի վրա:

Քասաղի եկեղեցին, որ ավելի պարզ նմանություն է Երերույքի տաճարին, անոր մեջ հավելված է միայն արևելյան կողմեն խորանը, մնացյալ բոլոր մասերը նույնությամբ կմնան գրեթե առանց կրևոր փոփոխության, բացի շրջապատող սյունազարդ ծածկույթին քանդվելեն: Սյունազարդ ծածկույթին որմնասյուները հյուսիսային ճակատին վրա դեռ պահված են մինչև այսօր: Այստեղ կողմնակի սենյակներ ալ չկան խորանին երկու կողմը այն ձևով, ինչպես ունին Տեկորն ու Երերույքը: Թեև հյուսիսային կողմեն մի ժամանակ մի սենյակ ավելցուցեր են շենքեն բոլորովին դուրս՝ դռնով միայն հաղորդակցող տաճարի հետ, սակայն այդ սենյակը տաճարին շինության հետ բնավ կապված չէ, որ կնշանակե, թե Քասաղի եկեղեցին ավելի նախնական վիճակի մեջ մնացած է, քան Տեկորի ու Երերույքի տաճարները:

Այս եկեղեցիներուն մի ուրիշ օրինակն է Օձունի եկեղեցին, որուն մեջ ներքին ձևը Երերույքի, Քասաղի տաճարներուն նման պահված լինելեն զատ, հյուսիսի կողմեն սյունազարդ ծածկույթն ալ դեռ կմնա[1]: Այստեղ ալ արևելյան և արևմտյան կողմերու վրա մյուսներեն տարբերող շեղումներ կնկատվին, սակայն այդ մասին չեմ կարող առայժմ կարծիք հայտնել, մինչև որ ինձի հաջողվի մանրախույզ քննություն կատարել տեղին վրա: Դեռ կան այս տիպի տաճարներ շատ տեղեր, սակայն անոնց ոչ մեկը տակավին չէ ուսումնասիրված, ուստի առայժմ պիտի բավականանամ հիշածս չորս տաճարներու, այսինքն՝ Երերույքի, Մրենի, Քասաղի և Օձունի տաճարներու հետ համեմատել Տեկորի տաճարը:

Այս տաճարներու վրայեն (այսինքն՝ Տեկորի, Երերույքի, Քասաղի և Մրենի) եթե պահ մը վերցնենք քրիստոնեական ծիսական խորհրդանշան կազմող մասերը, այսինքն՝ խորան, ավանդատուն, սենյակներ, որոնց հետագույն պարբերական հավելվածներ լինելուն փաստերը պիտի տեսնենք, այն ատեն ամենն ալ կմնան կետ առ կետ իրարու նման շինություններ՝ հետևյալ ձևով, երկայն քառակուսի սրահներ երկու կարգ՝ երեքական մույթերով միջին, լայն և կողմնակի՝ երկու նեղ երեք թևերու բաժանված, մույթերը աղեղներով իրարու միացած, թևերու վրա կամարակապ ծածկված՝ արևելքեն արևմուտք երկարությանը վրա. արտաքուստ ստորին ու վերին երկու կողմեն թեքված տանիքներով: Շատ պարզ է, որ մի ժամանակ ընդհանուր պահանջ է եղեր Հայաստանի մեջ այս ձևով շինություններուն և բավական թվով կանգնվեր են: Հետո ալ կամաց-կամաց մարդիկ անոնց գոյությենե օգտվելով՝ փոխարկեր են իրարմե որոշ չափով տարբերվող ձևերու, փոխարկման ժամանակի ավանդություններուն և ծիսական պահանջներուն համաձայն:

Թե ինչ շինություններ կարող էին լինել ասոնք հին ժամանակ, այդ մասին դատելե առաջ պիտի փորձեմ արվեստի զարգացման և փոքր ի շատե ալ քրիստոնեական ավանդություններու տեսակետով մի ժամանակագրական կարճ տեսություն կատարել, հուսալով, որ մոտավորապես կարելի կլինի գտնել այս շենքերու փոփոխությանց հավանական ժամանակը:

Վերև կատարված քննություններեն տեսանք, որ 7-րդ դարեն սկսյալ շինված տաճարներեն միանգամայն զանազանող հատկություններ ունին Տեկորի և իր նման տաճարները, որոնց գլխավորներն են արևելյան կողմեն դեպի հյուսիս և հարավ դուրս ցցված թևերը, այդ թևերուն մեջ եղող նեղ ու երկայն, հյուսիսեն հարավ ձգված սենյակները, արտաքուստ շենքը շրջապատող սյունազարդ ծածկույթները (portique) և առանց խաչաձև տանիքի ու գմբեթի ծածկույթները:

Թեև երբեմն պատահեր է, որ զանազան երկիրներու մեջ իրարմե բոլորովին անկախ, միանման երևույթներ հառաջ եկեր են, սակայն քանի որ գիտությունը մասնավորապես արվեստներու համար փոխանցման օրենքն ընդուներ է, բնականաբար ես ալ կպարտավորիմ փոխանցման օրենքին վրա հիմնված գտնել Տեկորի տաճարին և իր նմաններուն հատակագծային ոճի կամ ձևի ծագման օրրանը:

Հայ արվեստը, եթե ուշի ուշով քննենք օտար արվեստներու իր վրա ունեցած ներգործության

---

[1] Ես կկարծեմ, որ հակառակ գաղափարի մեծության և արվեստագործության կատարելության, հայոց հին շինություններու մեջ անկանոնություններ հառաջ եկեր են անոնց գործածած չափերուն մանր ստորաբաժանումներ չունենալեն, ինչպես ֆրանսիական սանտիմետրը կամ սաժենի coteրը: Նաև լայն միջոցներ չափելու համար հավաքական չափեր չեն ունեցեր, որպիսին է այսօրվան roulette-ը, այլ չափեր են պարզ լարերով կամ չվաններով, ինչպես դեռ կգտնվի Հայաստանի խորերը այդ ձևով ղեկավարվող տեղեր մինչև այսօր ալ: Ճշմարիտ է, որ հայերը համաչափություն չեն սիրած, սակայն մասեր կան շինությանց մեջ, որոնք անհրաժեշտ չափերու միօրինակություն կպահանջեն. այդպիսի տեղերու վրա ալ հաճախ անկանոնություններ տեսնվիլը ինձի առիթ կուտա մտածելու, որ արվեստագործության մեջ այնքան մաքրություն և կանոնավորություն սիրող վարպետներ չէին սխալվիր չափերու մեջ, եթե իրենց ձեռքը գտնված չափերը ցիրենք խարող հատկություններ չունենային: Իսկապես, արհեստավորը շատ անգամ խարողը իր ձեռքը գտնված առանց մանր ստորաբաժանումի չափն է: Անձնական փորձերով տեսեր եմ ալեքսանդրապոլցի վարպետներու մեջ, որ երբ որմնահյուսը քարտաշին պիտի հանձնարարե որևէ չափով քար տաշել, չափը կուտա հետևյալ ձևով. այսքան վերշոկ, չեթ մը, ասմիշկա մը, նայիսսա մը: Այս նայիսսա ըսածը երբեմն 3 միլիմետրեն ավելի է, ի բաց առյալ այն տարբերությունը, որն որ ավելի կթողուն տեղի վրա հյուսելու ժամանակ հղկելու համար, այսպիսի անորոշ տարբերությամբ, երբ քանի մը քարեր միևնույն տեղի համար տաշվին, արդեն շարվելեն հետո վերջին քարին վրա դուրս կուգա տեղին անպատշաճ չափ: Տեղական այսօրվան գործածական արշինները, եթե մետրի ստորաբաժանումները չունեն, սակայն դարձյալ բավական մանր բաժանված են, երբ ի նկատի առնենք հին արշիններ և էնտազներ, որոնք բոլորովին զուրկ էին այդ մանրիկ ստորաբաժանումներեն: Հետևաբար, շատ բնական էր, որ միևնույն չափով հանձնարարված քարերը տարբեր չափ պիտի ստանային հին վարպետներուն ձեռքին մեջ և պիտի հառաջ գային այն մանր ու խոշոր անկանոնությունները, որոնք կտեսնվին հին հիշատակարաններու վրա:

[1] Մյուս կողմերու սյունազարդ ծածկույթներն ալ պահված են եղեր մինչև վերջին տարիները: Քանի մը տարի առաջ քանդեր են նորոգության մը առթիվ:

տեսակետով, անոր մեջ մինչև իսկ ամենահին ասորաքաղդեական արվեստներու զորեղ գծեր կգտնենք. ասկե զատ, ոչ նվազ զգալի են սասանական և սիրիական արվեստներու հետքերը: Սակայն գտնվեր են դարաշրջաններ, որոնց մեջ հունա-հռոմեական արվեստներն ալ իրենց ներգործության դրոշմը թողեր են հայ ճարտարապետական արվեստի վրա: Ինչպես հին ասորա-քաղդեական, սասանական, նույնպես հունա-հռոմեական արվեստներու ներգործությունները երկարատև չեն եղած, շուտով ձուլված են հայ արվեստի որոշ ինքնուրույն ոճին մեջ և լիովին կերպարանափոխված են:

Հունա-հռոմեական արվեստի հայ ճարտարապետության վրա թողած ներգործության դրոշմը ես կտեսնեմ 5-րդ դարեն սկսած դեպի հետ հին դարերը, հետո ալ 10 և 11-րդ դարաշրջաններու մեջտեղ: 7-րդ դարու Զվարթնոցը, բացի հատակագծի ոճեն, բոլորովին բացառություն է հունա-հռոմեական արվեստի վերջին աղոտ շառավիղները իր վրա ցոլացնող:

Այս տեսությունը գլխավորաբար գեղարվեստական և շինարարական ճյուղին կվերաբերի. եկեղեցական հատակագծերու զարգացման մեջ ազդեցության բոլորովին տարբեր ընթացք կա, որուն մասին պիտի հայտնեմ կարծիքս իրեն տեղին:

Կրոնական տեսակետով դատելով, երբ ընդհանուր քրիստոնեության նախնական օրրանը Սիրիան և Փոքր Ասիան էր, որոնք նաև եղան հայոց ալ քրիստոնեության աղբյուրը, բնականաբար հայոց հնագույն եկեղեցիներու ձևի ծագումն ալ այն կողմերու մեջ փնտրել կպարտավորեի, և հիրավի այն տեղերն ալ որոշ թվով Տեկորի և նմաններուն հետ ուղիղ համեմատվող եկեղեցիներ կան, որոնց կառուցման ճիշտ թվականները ինծի հայտնի չեն, սակայն ծանոթ մի քանի հեղինակներու ոմանց կարծիքով՝ պետք է որ անոնք կանգնված լինին 5-րդ դարեն ոչ ուշ:

Իսկ գեղարվեստական ոճի տեսակետով քննելով կարգ մը հարկեցուցիչ հանգամանքներ՝ զիս դարձյալ կառաջնորդեն դեպի արևմուտք՝ առջև եղած առեղծվածներուն հավանական լուծման համար:

Գառնիի Տրդատա թախտեն սկսած մինչև Զվարթնոց եկեղեցին հայկական շինություններու շարք մը կա, որոնց վրա ավելի կամ նվազ չափով շատ պարզ է հունա-հռոմեական արվեստի ներգործությունը հայոց վրա: Այս շրջանին մեջ կգտնվի Վաղարշապատի կաթուղիկեն՝ Էջմիածինը, որուն մասին խոսել եմ արդեն առանձին աշխատությունով[1], իսկ Զվարթնոցի մասին առանձին՝ 1905 թ. «Մուրճ»-ի մայիս ամսվան համարին մեջ. թեև կունենամ դարձյալ հրատարակելի լրացուցիչ տեսություններ Զվարթնոցի մասին:

Տեկորի տաճարին գեղարվեստական մասերն ալ իրենց մեջ բավական նմուշներ ունին հունա-հռոմեական արվեստի ուղիղ ազդեցությանց: Ազդեցություններու այս շարքը, իբրև գրավական նույն դարաշրջաններու մեջ հայ և հռոմեական արվեստներու մոտիկ հարաբերության, թողելով նաև Սիրիան և Փոքր Ասիան, առաջնորդեց զիս դեպի Հռոմի հնագույն եկեղեցիները, Հռոմի մեջ փնտռելու համար Տեկորի տաճարին նախատիպերը:

Դեռ 3-րդ դարուն Հռոմի մեջ շինվիլ սկսած էր Sainte Praxede անունով մի եկեղեցի, որն որ վերջացեր է 9-րդ դարուն: Այս եկեղեցին, ի բաց առյալ տարածության մեծությունը, ընդհանուր ձևով նման է Տեկորի տաճարին, ունի արևելյան կողմի վրա դեպի հյուսիս և հարավ երկնցած թևեր[2]: Եթե ստույգ է այս տաճարի ձևին 3-րդ դարուն պատկանելը, այն ատեն կարելի է առաջին օրինակը համարել այդ ձևին:

Ասկեց անմիջապես հետո կուգա Կոստանդիանոսի շինած նախկին ս. Պետրոսը Հռոմի մեջ 4-րդ դարուն, որ նույնպես Տեկորի տաճարի համանման տիպ ունի յուր դուրս ցցված թևերով[3]: Ասոր ալ կհաջորդե 5-րդ դարուն ս. Պողոսը[4], Հռոմի պարիսպներեն դուրս, որն որ թեև դուրս ցցված թևեր ունի, սակայն հազիվ զգալի չափով դուրս շեշտված: Սույն երեք եկեղեցիներու բաղդատությենեն կտեսնվի, որ Հռոմի մեջ այդ թևերը դուրս հանելու սովորությունը 5-րդ դարուն վերջ գտնելու վրա էր: Արդեն անկեց հետո ալ ոչ արևմտյան և ոչ ալ արևելյան եկեղեցիներու վրա չեն երևիր մինչև 11-12-րդ դարերու Roman-ական ոճի կազմակերպվելը, որն որ գոթականին (gothique) հետ միացած՝ վերստին ծնունդ տվին նույն ոճին և անօրինակ չքեղության հասավ այդ ձևը:




Նկ. 122. Հռոմի նախկին ս. Պետրոսի հատակագիծը

[1] Էջմիածնի տաճարը, հնագիտական հետազոտություն, 1910, Թիֆլիս, կամ "О древнейших формах Эчмиадзинского храма", С. Петербург, 1909 г.

[2] *Daniel Ramée.* Histoire générale de l'architecture, t. 2 page 730. fig. 260.

[3] *August Chosiy.* Histoire de l'archilecture, t. 2 Paris, page 36. 37. fig. 1. B. fig. 2.

[4] *Daniel Ramée.* Histoire générale de l'architecture, t. 2, page 726, fig. 257.



Դատելով 5-րդ դարուն մեջ հունա-հռոմեական արվեստին հայ ճարտարապետության և մասնավորապես Տեկորի տաճարի շինքին վրա ունեցած ազդեցությենեն, նաև Տեկորի տաճարի հատակագծային ձևին ավելի հնագույն օրինակները Հռոմի մեջ գոյություն ունենալեն, կուզեմ հավատալ, որ Տեկորի տաճարին հատակագծի ձևն ալ Հռոմեն եկավ Հայաստան գեղարվեստի եկած ճանապարհով և այդ ճանապարհը հավանաբար եղավ Սիրիան և Փոքր Ասիան, ուր կտեսնվին համանման հատակագծով եկեղեցիներ՝ վերագրված 5-րդ դարուն:

Մի բան ուշադրության արժանի է, թե ինչու St. Praxede և St. Pierre, հանդեպ կողմնակի դուրս ցցված թևերու, շենքը շրջապատող սյունազարդ ծածկույթներ չունին:

Այդ տաճարներու շուրջը եթե սյունազարդ ծածկույթներու (portique) գոյության ապացույց չունինք, այնուամենայնիվ մի հեռավոր ժամանակի մեջ անոնց գոյությունը հերքելու ապացույց ալ չունինք, որովհետև անոնց մասին ոչ մի պատմական նկարագրություն չէ հասած մեզ, թե ինչ փոփոխություններե անցնելով հասան գիտության ծանոթ շրջանը[1]: Միայն ես պիտի ըսեմ, որ Տեկորի տաճարը ուրիշ մասերով անոնց նմանելեն հետո, երբեք ընդունելի չէ սյունազարդ ծածկույթի (portique) հայկական ստեղծագործություն լինելը:

Բազմաթիվ փաստերով գիտենք, որ տաճարներու շուրջը գտնված սյունազարդ ծածկույթը հունական և հռոմեական մեհենական ոճի սեփականություն է նախաքրիստոնեական դարերուն մեջ, և իրագործված գրեթե բոլոր հեթանոսական մեհյաններու վրա: Թե ինչ կերպով այս ոճը հայոց եկեղեցիներու վրա փոխանցվեր է, այդ մասին կարծիք հայտնելե առաջ թվեմ նախ Տեկորի տաճարին վրա գտնված հռոմեական արվեստի ներգործությունները, որոնք, հակառակ շատ մը նորոգություններու, դեռ կմնան մինչև այժմ:

Հյուսիսային կողմի արտաքին կլոր որմնասյուները (colonne engagé), բացի իրենց խարիսխներեն և խոյակներու ոմանց զարդաքանդակներեն, կետ առ կետ հռոմեական արվեստի համաչափության կպատկանին իրենց համեմատական թանձրություններով և բարձրություններով: Խոյակներու ոմանց եթե քանդակները արևելյան են, սակայն անոնց կողովները (panier) հռոմեական խոյակներու ձևն ու համաչափությունը ունին, իսկ ոմանք ալ անհաջող հետևողություն են հունական արջմազիլներով (acanthe) զարդարված կորնթական խոյակներու: Արևելքի մեջ հայ վարպետի մը հրաբխային ավազաքարի վրա աշխատությենեն ատկեց ավելի հաջող արդյունք չէր սպասվեր արդեն:

Արևելյան ճակատի վրա մինչև այսօր պահված fronton-ի tympan-ը (նկ. 106, G) (նկ.113, F) հունական և հռոմեական արվեստի հատուկ է և անպայման ամենանախնական շինությենեն՝ մնացած է, թեև մասնակի նորոգություններով, բացի Գառնիի մեջ Տրդատա թախտ անվանվածեն, ոչ մի հայ հիշատակարանի մեջ այլևս չենք գտներ հունա-հռոմեական ոճի tympan-ը: Հռոմեական արվեստի ազդեցության ենթարկված Էջմիածնի կաթուղիկեն ալ դուրս ձգված կերևի, քանի որ առայժմ ոչ մի ապացույց չկա անոր երբեմնի գոյության:

Ուրեմն, երբ որ Տեկորի տաճարին վրա եղող երեք զանազան ուղղությամբ ձգված corniche-ներու միջոցով կազմված fronton-ի tympan-ը միակն է ամբողջ հայ հիշատակարաններու մեջ, հետևաբար Տեկորի տաճարին սկզբնական շինությունը (նկ. 119) ավելի վաղ պետք է լինի, քան Էջմիածնի կաթուղիկեն, այսինքն նախքան 5-րդ դար:

Հետնագույն նորոգություններու ժամանակ, երբ ավելցուցեր են հյուսիսային և հարավային fronton-ները, անոնց ճակատին ալ, իբր հետևողություն արևելյան և արևմտյան կողմերու, որպես թե tympan-ի ձև տվեր են, սակայն որչափ հեռու է իսկական tympan լինելե (նկ. 111, HHH): Արևմտյան ճակատի բարձր դրված զույգ պատուհանները (նկ. 106, HH և նկ. 113, QQ) իրենց անհամեմատ խոշորությունով հանդերձ՝ դարձյալ tympan-ը ներքևեն փակող corniche-են ցած դրված են, մինչդեռ հյուսիսային և հարավային fronton-ներուն վրա զույգ պատուհանները անցեր են tympan-ի հորիզոնական corniche-են շատ վեր, որով հարկ եղած է tympan-ի հորիզոնական corniche-ը փոխանակ մեկ ուղիղ գծով ծայրե ի ծայր տանելու, բոլորել նաև պատուհաններու կիսաբոլորակ կատարներու վրա ալ (նկ. 111, HHH): Fornton-ներու տակ, այդ համեմատական բարձրության վրա պատուհաններ դնելը արդեն մաքուր հայկական ճաշակ է, և ամեն եկեղեցիներու վրա գրեթե անխտիր կգտնենք:

Զեն պակսիր նաև ուրիշ հատկություններ Տեկորի տաճարին վրա, որոնք զինքը շատ հեռու կտանին, քան 7-րդ դար: Պատուհաններու թե՛ ներսեն և թե՛ դրսեն հավասար լայնությամբ բացվածքը միայն Տեկորի, Երերույքի և Քասաղի տաճարներուն հատուկ են իրենց խոշորությունով հանդերձ: 7-րդ դարու տաճարներուն մեջ թեև մա-

[1] *Daniel Ramée.* Histoire générale de l'architecture, page 726. Parmi les anciennes Basiliques celle de St. Pierre de Vatican était surtout remarquable, s'il est vrai, que la disposition qu'elle conserva jusqu'a la fin du moyen age était celle que lui donna Constantin.

սամբ պատուհաններու խոշորությունը պահված է, սակայն ներսեն լայն են բացվածքները և դրսեն նեղ, ինչպես Բագարանի, Ալամանի և ուրիշ ժամանակակից եկեղեցիներ:

Պատուհաններու դրսեն նեղցնելու սովորությունը 7-րդ դարեն սկսյալ անընդհատ շարունակված է մինչև 14-րդ դարը, և հետզհետե այնքան չափազանցված է, որ 10–11-րդ դարերուն անոնց արտաքին բացվածքները հաճախ երեք անգամ ավելի նեղ են, քան ներքին բացվածքները, իսկ 13 և 14-րդ դարերուն արտաքուստ մինչև տասն անգամ նեղցածներ կգտնենք: Ուրեմն, Տեկորի, Երերույքի և Քասաղի տաճարներու պատուհաններու այդ հատկությունը պետք է 7-րդ դարեն առաջ գոյություն ունեցող հայ արվեստի ոճին վերագրել: Իբրև բացառություն տեսեր եմ միայն Բագարանի կաթուղիկեին չորս frontonներուն ներքև դրված պատուհանները, որոնք հին ոճի հատկությունը պահած են:

Կարկինի մեկ հարվածով գծված պայտաձև (fer á cheval) աղեղները դարձյալ 7-րդ դարեն հառաջ հայոց մեջ գոյություն ունեցող մի ոճ է, 7-րդ դարեն սկսյալ այլևս չենք կարող գտնել ոչ մի տեղ: Իբրև հնագույն դարերու հիշատակ այդ ոճը հետին ժամանակներ գործածված է նեղ պատուհաններու և զանոնք պսակող corniche-ներու վրա: 7–11-րդ դարերու մեջ թեև կտեսնվին մույթեր միացնող մեծ աղեղներուն ծայրերը պայտաձևի հատկությամբ դեպի ներս կորացած՝ խոյակներու վրա, սակայն կատարները բեկված են տարակեղրոն երկու աղեղներու միացումով: Միակեղրոն աղեղներու շատ հազվադեպ օրինակներ կան 13–14-րդ դարերուն մեջ:

Աշխատությանս սկիզբեն ինչ հատկություններ որ տեսանք հայկական հիշատակարաններու վրա, հայ ճարտարապետության նախքան 7-րդ դարուն հատուկ, և անոնց մի կարևոր մասին հունա-հռոմեական արվեստի հետ մոտիկ առնչությունը, զիս կպարտավորեն համոզել, որ Տեկորի տաճարը կանգնված է հունա-հռոմեական քաղաքական և կրոնական արվեստներու հայ արվեստին վրա ներգործած շրջանին մեջ, որ շատ վաղ է, քան 7-րդ դար հազիվ թե անցնի 5-րդ դարեն ալ այս կողմ: Ամենանախնական շինության հավանական ժամանակը գտնելու համար փորձենք հավելումներու ժամանակը գտնել և հետզհետե հառաջ գնալ դեպի ամենահինը:

Հայոց եկեղեցիներու վրա գմբեթներու գոյությունը կապացուցվի 5-րդ դարուն Էջմիածնի կաթուղիկեով[1] և պատմության ավանդության նայելով, Էջմիածնի կաթուղիկեին գմբեթը փայտով շինված էր. այժմ Տեկորի տաճարին գմբեթը կուգա մեզի բացատրելու, թե ինչո՞ւ համար փայտով էր շինված և ոչ քարով:

Պատասխանը շատ պարզ է այլևս, որովհետև 5-րդ դարուն հայերը թեև ունեցեր են եկեղեցիները գմբեթավորելու ճաշակը, սակայն քարե գմբեթ շինելուն կերպը չգիտնալով՝ կշինեն եղեր փայտե գմբեթներ:

Իսկ 7-րդ դարուն արդեն փաստացի ապացույցներ շատ կան, որ թմբուկավոր, կոնաձև ծածկով քարե գմբեթ կազմելու արվեստը բավական մեծ հառաջադիմություն ըրած էր հայոց մեջ: Ուրեմն, Տեկորի տաճարին գմբեթի շինության ժամանակը պետք է փնտռել 5-րդ և 7-րդ դարաշրջաններու մեջտեղ:

Տեկորի տաճարի գմբեթի շինության կերպը իր շինարարական ոճով ամենանախնական արվեստագործություն կներկայացնե, և բաղդատելով զինքը հետագա դարերու գմբեթներուն հետ, կտրվինք, թե հայոց մեջ ի՞նչպես է ծագեր քարե գմբեթ շինելու գաղափարը և դարե ի դար ի՞նչպես քայլ առ քայլ հառաջ գնացեր և հասեր է մինչև 13–14-րդ դարերու կատարելագործյալ գմբեթներուն ամենաշքեղ ձևերուն:

Հայ ճարտարապետության մեջ, գմբեթներն իրենց ծագումեն մինչև կատարելագործվիլը երեք տեսակ վերածնություն ունեցեր են: Որովհետև 5-րդ դարուն փայտե գմբեթներուն ձևերը մեզի անծանոթ են, ուստի առաջին ձևը պիտի համարենք Տեկորի տաճարին գմբեթը: Այս գմբեթի շինության ամենանախնական կերպն է, որ խոր հնություն կապացուցանե և ըստ ինքյան շատ հետաքրքրական է հայ արվեստի շինարարական ճյուղին մեջ, որուն մասին արժե մի քանի մանրամասնություններ տալ:

Տաճարի ներքին չորս մույթերը իրարու միացնող աղեղները կապվելեն հետո, երբ անոնց կառուցումեն հառաջ եկած եռանկյուն բացվածքներն ալ ուղղահայաց պատով լեցուցեր են աղեղներու բարձրության հավասարությամբ, բնականորեն գոյացեր է քառակուսի բացվածք մը, որուն վրա պիտի բարձրանար գմբեթը:

Եվ որովհետև արտաքուստ թմբուկ կազմելու գաղափարն ալ չէ եղեր տակավին, այլ միմիայն ցանկացեր են գնդաձև (spherique) ծածկույթ մը ունենալ նույն քառակուսի բացվածքին վրա, ուստի ծածկույթը կազմելու համար դիմեր են հետևյալ պարզ և միանգամայն բավական ճարպիկ միջոցին. պիտի ավելցնեմ նաև, որ նույնիսկ նախապես առանց գիտնալու, թե ո՞րչափ պիտի բարձրանար և ի՞նչ որոշ ձև պիտի ստանար:

[1] Ցովհ. Կաթ., Մոսկվա, 1853, երես 43: «Ցետ որոյ ապա քակեալ սորա (Կոմիտաս կաթ.) զփայտայարկ գմբէթ սրբոյ կաթողիկէին որ ի Վաղարշապատ քաղաքի, շինէ զնա...»:



Քառակուսի բացվածքի չորս անկյուններու վրա շեղակի դրեր են չորս փոքր քարեր (նկ. 123, AAAA), որով քառակուսին ստացեր է անհավասար կողմերով ութանկյուն ձև: Հետո սկսեր են աստիճանաբար դեպի կեդրոն հակված պատեր բարձրացնել (նկ. 123, BBBB, CCCC, $B_1B_1B_1$, $C_1C_1$). բայց միևնույն ատեն նեղ ճակատներուն պատերը (նկ. 123, $C_1C_1$) հետզհետե լայնացնելով և լայն ճակատներուն պատերը հետզհետե նեղցնելով (նկ. 123, BBBB, $B_1B_1B_1B_1$):




Նկ. 123. Տեկորի տաճարի գմբեթի կտրվածքը և հատակագիծը՝ նախնական ձևի ծածկույթով

Որպեսզի աստիճանաբար դեպի հառաջ կարկառվող քարերը միմյանց վրա անհավասարակշիռ ծանրություն ավելցնելով՝ դեպի վար թափելու վտանգը չեզոքացնեն, հետզհետե նաև շարեր են արտաքին երեսը ուղղահայաց պատ, հյուսված ներքին հակուղիղին հետ (նկ. 123, DD) հառաջակարկառ քարերուն ծանրությունները հակակշռելու համար, որուն բնական հետևանքն է այսօրվան արտաքուստ խորանարդաձև գմբեթը: Այս գործողությունը շարունակելով՝ որոշ բարձրության մը վրա ութ անհավասար կողմերը ինքնին հավասարվելով, կեդրոնին վրա կազմվեր է մի հավասարակողմ ութանկյուն (նկ. 123, F, F...): Այս բոլորը նկատելի է այսօր կետ առ կետ Տեկորի տաճարի գմբեթին վրա:

Կկարծեմ, որ ութանկյուն բացվածքը պատրաստելեն հետո, բոլորովին ծածկելու գործողությունն ալ նույն ոճով շարունակված էր (նկ. 123, GG): Որովհետև քանի որ բոլորակի մը խարիսխ և գմբեթարթի կաղապարներ պատրաստելու արվեստը դեռ անծանոթ էր հայոց մեջ: Հետևաբար չէ կարելի ենթադրել, որ այսօրվան տեսնված ամենայն կանոնավորությամբ կաղապարված գդակը (calotte) այն ժամանակվան շինվածը լիներ: Այս գործողության բնական ընթացքին հետևելով, արտաքուստ կազմված խորանարդին վրա (նկ. 123, HH) դժվար է երևակայել մի ուրիշ ձև, քան (նկ. 123, K) բրգաձև ծածկույթը. միայն թերևս ավելի մի քիչ սուր և բարձր էր:

Այսօրվան տեսնված թե՛ ներքուստ գդակը (calotte-ը) և թե՛ արտաքուստ բազմակուսի կոնաձևը ամենայն հավանականությամբ 10-րդ դարուն շինված գործեր են:

Թեև 7-րդ դարուն գմբեթներու շինության կերպը բավականին զարգացած էր հայոց մեջ, սակայն անոնց մեջեն դեռ չեն անհետացած Տեկորի տաճարին գմբեթի նախնականությունը հիշեցնող գծերը:

Տեկորի տաճարին մեջ բարձրեն կազմված ութանկյուն բացվածքը 7-րդ դարուն իջած է ցած և պատրաստված է ուղղակի չորս մույթերը միացնող աղեղներու բարձրության վրա (նկ. 124, AA): Անկյուններու վրա շեղակի դրված քարերը այլևս այնքան խոշոր են, նաև գմբեթարթի ձևով ներքևն ալ փորված ու քանդակազարդված (նկ. 124, BBB), որոնց զետեղումով միանգամեն կազմվեր է հավասարակողմ ութանկյուն բացվածքը: Բայց որովհետև կազմված անկյունները տակավին որոշ չափով սուր էին, և վրայեն դարձված բոլորակ պսակը (corniche) ավելի պիտի կախվեր անկյուններու դատարկության վրա, ուստի անկյուններու սրությունը բթացնելու և բոլորակ շրջանակի մոտեցնելու համար, կազմված աղեղիկներու թևերուն վրա, անոնց հավասար բարձրությամբ, զետեղեր են ուրիշ ութը փոքրիկ աղեղներ ևս (նկ. 124, CC), որով անկյունները բազմապատկվելով՝ բացվածքը մոտեցեր է բոլորակ շրջանակի մը, որուն վրա այլևս հեշտ էր պսակը բոլորել և թմբուկը բարձրացնել:




Նկ. 124. 7-րդ դարեն մինչև 10-րդ դարու գմբեթները ներսի կողմեն

Թմբուկը բարձրացնելեն հետո, 7-րդ դարուն վրան ծածկվելիք calotte-ը ըստ օրինի կաղապարի

վրա ձուլելու կերպը ծանոթ լինելեն զատ, գիտեին նաև անոր մեջը բարձրաքանդակ զարդարել, ինչպես Հռիփսիմեի վանքին և Մրենի տաճարին գմբեթները: 7-րդ դարեն հետո շինված գմբեթներուն մեջ այս զարդաքանդակները չեն երևիր, հավանաբար կարելի է, որ պատկերներ նկարելու սովորությունը մտնելով՝ վերջ տվավ քանդակազարդության:



**Նկ. 125. 10-րդ դարեն սկսյալ գմբեթները ներսի կողմեն**

Գմբեթներ կազմելու այս ոճը տևած է մինչև 10-րդ դարու վերջերը. Մարմաշենի եկեղեցին տակավին այս ձևով գմբեթ ունի, նմանապես Կարսի Առաքելոց եկեղեցին. կան և ուրիշներ, սակայն 10-րդ դարուն սոնոց մեջ սկսած են երևնալ voute pendentif-ներ (նկ.125, A) և հետզհետե վերջ դրած նախկին չարատանջ և աննպատակահարմար աշխատություններուն: Վերջին ոճը հնարավորություն տված է նաև արտաքին կողմով ալ գեղեցիկ և վայելուչ ճոխությամբ գմբեթներ կազմելու:



**Նկ. 126. Տեկորի տաճարի գմբեթը**

Շատ հետաքրքրական է այս տեսակետով քննել Հոռոմոսի ավանդաբար ս. Մինաս անվանված եկեղեցին, որուն գմբեթն ունի թե՛ հին ձևով անկյուններու վրա դրված շեղակի փոքրիկ կամարաձև քարեր և թե՛ անոնց վրա շարունակված մինչև բոլորակ corniche-ը voûte pendentif-ներ: Այս եկեղեցիին գմբեթին մեջ պարզ կերևան հին ոճին վրա նոր ոճի սկզբնական ներդործության ընորոշ գծերը և որովհետև կարծեցյալ ս. Մինասը կազմված է 10-րդ դարուն, հետևաբար նաև 10-րդ դարն էր voûte pendentif-ներու կիրառության սկիզբը հայ ճարտարապետության մեջ:

Ինչպես ներքուստ, այնպես ալ արտաքուստ իրենց կառուցման դարաշրջաններու հատուկ ձևեր ունեցեր են հայկական եկեղեցիներու գմբեթները: Տեկորի տաճարին վրա կտեսնենք, որ ցածրիկ ութանկյուն թմբուկի մը ներքև քառակուսի կամ խորանարդ պատվանդան մը կա տանիքի կատարեն 2,80 մետր բարձր (նկ. 126, AA) և թմբուկի բարձրությունը հազիվ հասնի 0,50 մետրի: Բագարանի մեջ 7-րդ դարուն սկիզբին կանգնվող՝ ժողովրդական ավանդությամբ ս. Թեոդորոս անվանված եկեղեցիի վրա պատվանդանը ցած իջած է և տանիքի կատարեն մինչև թմբուկը 13,0 մետր է (նկ. 127, AA) Հռիփսիմեի վանքի գմբեթին պատվանդանը ավելի մոտեցած է տանիքի կատարին, թեև այսօր մի քիչ աղավաղված, սակայն որոշ չափով հայտնի է, որ 0,50 մետրեն ոչ պակաս բարձր էր պատվանդանը տանիքի կատարեն:



**Նկ. 127. Բագարանի ս. Թեոդորոս կաթուղիկեի գմբեթը 7-րդ դարու սկզբին**

Մրենի տաճարին վրա, եթե երբեք փոփոխության չէ ենթարկված, տանիքի կատարին հավասար է գմբեթին պատվանդանը (նկ. 128, AA):

Սկսյալ 10-րդ դարեն գմբեթի խորանարդ պատվանդանները ցած իջած են գրեթե վերին տանիքի բարձրության կեսին չափ (129 A), ուր, շնորհիվ voûte pendentif-ի շատ մեծ դյուրությամբ բոլորակ խորսխ կազմելեն հետո, փոխանակ քառակուսիի, պատվանդանին մեկ մասն ալ բոլորակ ձևով շարունակված է մինչև տանիքի կատարին հավասար՝ իբրև խարիսխ գմբեթի, և նույն նեղ առանձին moulure-ով մը շրջապատվելեն հետո, սկսած են վրայի գմբեթի թմբուկը բարձրացնել բոլորովին բոլորակ կամ բազմանկյուն ձևով. մինչդեռ նախկին դարերու գմբեթներ իրենց ներքին կազմության պատճառով առհասարակ ութանկյուն եղած են: Եթե Հռիփսիմեի վանքին գմբեթը տասնվեց անկյունանի շինվելը հնարավոր եղած է, այն ալ շնորհիվ յուր հատակագծային ձևին է, որն որոշ հարմարություններ ինքնին կուտար այդ բազմանկյունին:



**Նկ. 128. Մրենի տաճարին գմբեթը 7-րդ դարուն**

Ուրեմն, հայկական եկեղեցիներու գմբեթներու համեմատությունով ալ Տեկորի տաճարին վրա եղած հավելումներու՝ ընդմին նաև գմբեթի կառուցման ժամանակը 7-րդ դարեն առաջ դեպի 5-րդ դարու ժամանակամիջոցին մեջ պետք է փնտռել:



**Նկ. 129. Անիի Կաթուղիկե մայր եկեղեցիի գմբեթը 11-րդ դարու սկզբին**

Սյունազարդ ծածկույթներու (portique) տեսակետով ալ բոլորովին նույն բանը կարելի է ըսել: Մրենի տաճարը, ինչպես տեսանք վերև, որ ուրիշ Կամսարականի մը ձեռքով փոխարկված է այսօրվան ձևին 7-րդ դարուն մեջ, և սյունազարդ ծածկույթի հետքը ամենևին չերևեր անոր շուրջը, կնշանակե թե նույն դարուն արդեն վերջ գտած էր այդ սովորությունը: Նմանապես եթե որևէ կերպով հաստատվի, որ եթե Տեկորի տաճարին կեսեն քաշված corniche-ին նման էջմիածնի տաճարին բարձրության կեսեն շրջապատված corniche-ն ալ քանդված շուրջանակի սյունազարդ ծածկույթի մը (portique) հետևանքն է, դարձյալ ավելորդ ապացույց կլինի սյունազարդ ծածկույթներու 6-րդ դարուն մեջ գոյության և 7-րդ դարուն սովորական լինելե դադրելուն, որովհետև էջմիածնի տաճարին բարձրության կեսեն շրջապատված corniche-ը 7-րդ դարուն շինված է:

Քասաղի եկեղեցիին արևմտյան և հարավային կողմերուն վրա կատարված բազմաթիվ նորոգությունների պատճառով շուրջանակի սյունազարդ ծածկույթի (portique) հետքը միանգամայն կորած է. միայն հյուսիսային կողմին վրա դեռ կմնան որմնասյուներ՝ իբր ապացույց վաղեմի գոյության: Թե ե՞րբ քանդվեր և վերցվեր է այնտեղ սյունազարդ ծածկույթը, առայժմ դժվար է ըսել առանց երկար ուսումնասիրելու և շուրջը հարկավոր եղած պեղումները կատարելու: Երերույքի տաճարին նման, բացառաբար պահված է մինչև այսօր Օձունի եկեղեցիի շրջապատի սյունազարդ ծածկույթը. ինչպես կերևի, այդ եկեղեցին կամ երկար ժամանակ նորոգության պետք չէ ունեցեր, և կամ Երերույքի տաճարին նման վաղուց անուշադրության է մատնված, մեծամեծ փոփոխություններ կատարող մարդ չէ գտնվեր իր միջավայրի մեջ:

Այժմ փորձենք հետազոտել, թե ինչպես կարող էին սովորություն դառնալ շուրջանակի սյունազարդ ծածկույթները հայոց եկեղեցիներու մեջ և ինչ նպատակով:

Այս հետազոտության մեջ բավականին հավանական եզրակացության հասնելու համար պետք է հայոց հեթանոսութենե դարձի ժամանակին ունեցած ծեսերն ու ավանդությունները փոքր ի շատե գիտնալ, որոնց հետ սերտ կապված են եկեղեցիներու ալ հատակագծային ձևերը:

Ընդհանուր քրիստոնեության մեջ, առաջին դարուն ծիսական բարդ արարողություններ չգտնվելուն պատճառով, տաճարներն ալ որոշ ձև չէին պահանջեր, աղոթատեղիին ձևը նշանակություն չուներ, հավատացյալներն իրենք էին տաճար աստուծո: Աղոթատեղիի համար բավական էր մի սրահ, որուն մեջ հավաքված կատարեին հաց կտրելու զլխավոր արա-

*ղողությունը և շատ համեստ չափով ալ աղոթք կամ սաղմոսերգություն: Այս հավաքումը ավելի ընտանեկան կամ եղբայրական խմբակցության երևույթն ուներ:*

*Մինչև 4-րդ դար անսպասելի կերպով բազմացող քրիստոնյա հասարակություններ թեև ունեցան վարչական ուրույն կազմակերպություններ, ծիսակատարության օրենքներ, որոնք առաջին դարու պարզությենեն դուրս եկած էին, սակայն պարբերաբար խստացող հալածանքներու պատճառով ոչ հաստատուն եկեղեցիներ հիմնված էին և ոչ ալ եկեղեցիներու ձևի համար մշակված որոշ համանմանություն: Այդ ձևը կամ համանմանությունը պիտի տար արևմտյան կայսրության մեջ քրիստոնեության պետական կրոն հռչակվիլը:*

*Կոստանդիանոս կայսեր ինքզինքը քրիստոնեության պաշտպան հայտարարելը ասպարեզ բացավ ոչ միայն հազարավոր եկեղեցիներու միաժամանակ հիմնարկվելուն, այլև եկեղեցիներու ձևի մեջ ալ փոքր ի շատե համանմանություն տեսնվելուն:*

*Քրիստոնեական ճարտարապետությունը ուսումնասիրող գիտնականներ կհավատեն, թե մինչև 4-րդ դարու վերջն ալ ընդհանուր քրիստոնեից եկեղեցիներու հատակագծային ձևի մեջ համանմանություն չլինելեն զատ, մինչև 7-րդ դար ալ տակավին իրարմե մեծապես զանազանող եկեղեցիներու ձևեր կային: Դավանաբանական վարդապետություններ և ըստ հաճույս ս. Գրքի տրված մեկնություններ արդեք եղած էին միշտ եկեղեցիներու միօրինակ ձև և միօրինակ ծիսակատարություն ստեղծվելուն:*

*Այս անօրինակ խառնակությունը, սակայն, արդեք չէր քրիստոնեության ազատության օրերուն մեջ անթիվ անհամար եկեղեցիներու հիմնարկության: Պահանջը շատ մեծ էր և պետքը՝ անմիջական, բավական չէին նախկին փոքր ու անշուք սրահ-աղոթատեղիները, բավական չեղան նաև հետզհետե նոր կանգնվիլ սկսող մեծ ու փոքր եկեղեցիները. այս անդիմադրելի ընդհանուր պահանջին գոհացում տալու համար Կոստանդիանոս կայսրը քրիստոնեից տրամադրության տակ դրավ բոլոր նախկին հեթանոսական մեհյանները և* basilique *ըսված շինությունները*[1]*:*

*Հեթանոսական շինությունները անխտիր ընդունվեցան և սրբագործվեցան նոր կրոնի անունով: Միայն* basilique *ըսված շենքերու մի բնորոշ մասը, այսինքն կիսաբոլորակ* abside*-ը հետզհետե ընդունելի և պատշաճ համարվեցավ ավելացնել ամեն ձևի եկեղեցիներու մեջ:* Basilique*-ի կիսաբոլորակ* abside*-ը, որ ի սկզբան հանրային մեծ խնդիրներ վճռելու հատուկ ժողովականներու նախագահին-թագավորին ու խորհրդականաց հատուկ էր, տաճարի մեջ՝ երկնավոր թագավորաց, թագավորի երկրավոր գահուն հատկացվեցավ*[2]*:*

*Ընդհանուր քրիստոնեական եկեղեցիներու հատակագծային ոճին զարգացման այս ուղղությունը հայոց նախնական եկեղեցիի մեջ բավական տարբեր է:*

*Միջագետքի և Սիրիայի ճանապարհով քրիստոնեությունը ավելի շուտ մտավ Հայաստան, քան Հռոմեական կայսրության ուրիշ երկիրները. և համեմատաբար ավելի կարճ ժամանակի մեջ այնպիսի ուժեղ դիրք և ազդեցություն ձեռք բերած էր, որուն առջև հայոց միահեծան թագավոր Տրդատը 15-20 տարի առաջ ստիպվեցավ խոնարհիլ և քրիստոնեության դրոշակին տակ փնտռել Հայաստան աշխարհի բախտն ու խաղաղությունը:*

*Հայոց Լուսավորիչ Գրիգոր պետական և նախարարական գանձին վրա ըստ հաճույս իշխելեն զատ, զինվորական բանակներն ալ իր բացարձակ հրամանին տակ դրվեցան*[3]*: Մեկ կողմանե զինու զորությամբ անխնա քանդեց ու ավերեց նոր կրոնին անսաստող հեթանոս հայության բույները, հափշտակեց անոնց ձեռքեն բոլոր մեհյանները և փոխարկեց քրիստոնեական տաճարներու*[4]*, մյուս կողմանե ալ սկսեց նոր եկեղեցիներ, մատուռներ ու վկայարաններ կանգնել երկրին ամեն կողմը:*

*Ագաթանգեղոսի տված տեղեկություններեն հայտնի կերևի, որ Տրդատի հեթանոսության օրերուն քրիստոնյա հայությունը այնքան խիստ հալածանքների չէր ենթարկված, որչափ հեթանոս հայությունը՝ Տրդատի քրիստոնեությունը ընդունելեն անմիջապես հետո: Տրդատ և Գրիգոր ոչ մի միջոցի առջև կանգ չառին կարճ ժամանակի մեջ «բառնալ զգայթակղութիւն ի միջոյ, ի բաց կորուսանել...»: Ապագա պատմությունն ալ ցույց կուտա, որ բավական մեծ հաջողություն ունեցան իրենց նպատակին հասնելու. երկու-երեք տարվան մեջ ճնշեցին ամեն ընդդիմություն և կամա թե ակամա հնազանդեցնելով բոլոր հակառակորդներ, խաղաղեցուցին երկիրը: Հետևաբար մինչև Արևմտյան կայսրության մեջ քրիստոնեության հալածանքն ազատվելով պետական կրոն հայտարարվելը, որ առնվազն տասնևհինգեն քսան տարի անցեր էր, Հայաստան բոլոր ներքին չփոթություններեն ու խառնակություններեն հանդարտած, խաղաղ կերպով զարգացնելու վրա էր իր անկախ եկեղեցական կազմակերպությունը. վաղուց սրբագործված էին մեհյաններ, կանգնված էին նորակառույց եկեղեցիներ և մշակված ինքնուրույն հատակագծային ձև հայկական եկեղեցիներու:*

*Արդ՝ այժմ ինքնին հարց կծագի, թե երբ՝ բացի Հայաստանեն՝ ոչ մի տեղ քրիստոնեությունը պարբերական հալածանքե ազատ չէր, և չունեին հաստատուն հիմնված եկեղեցիներ, երբ հունական մեհյաններ ու* basilique*-ներ սրբագործված չէին, նաև Հայաստանի մեջ* basilique *ըսված շենքեր բացարձակապես գոյություն չունեին, այն ժամանակ ի՞նչ ձև կարող էին ունենալ Հայաստանի մեջ անկախ կերպով զարգացող հայկական եկեղեցիները:*

*Անշուշտ պիտի կարծվի, որ նախքան ս. Գրիգորի միջոցավ ընդհանուր դարձը, երբ հայոց քրիստոնեության օրրանը Ասորիքն ու Միջագետքն էր, հետևաբար պետք է, որ հայոց եկեղեցիները այդ երկիրներու եկեղեցիներուն նմանեին. բայց մենք մինչև այսօր ոչ մի օրինակ չունինք նախքան 4-րդ դար Ասորիքի և Միջագետքի եկեղեցիներու, որ կարելի լիներ համեմատել մեր հնագույն եկեղեցիներու հետ: Բացի այդ, ինչպես վերև տեսանք, Ասորիքի ու Միջագետքի մեջ ալ չէր կարող լինել, քանի որ դեռ կշարունակվեր Հռոմեական կայսրության հալածանքը և թույլատրված չէր մեծամեծ եկեղեցիներ կանգնել այնտեղ: Ուստի հայոց եկեղեցիներու սկզբնական ձևի ծրագրումը դարձյալ պիտի փնտռենք Հայաստանի մեջ գտնված կանգուն և կիսականգուն հիշատակարաններուն մեջ, որոնք փոքր ի շատե համեմատվելով պատմության հետ, բավականին հավանական եզրակացության կառաջնորդեն մեզ:*

*Ինչ եռանդով որ Լուսավորիչ գործի ձեռնարկած էր գայթակղությունը մեջտեղեն վերցնելու և հեթանոսությունը միանգամայն ջնջելու համար, այդ արդեն բավական ապացույց կարող է լինել մեզ, որ նույնքան եռանդով ալ պետք էր շուտով եկեղեցիներ պատրաստեր նորահավատ հայերու համար: Բնականաբար հեշտ չէր Հայաստանի ամեն կողմը քանի մը տարվան մեջ մեծամեծ տաճարներ կանգնել ժողովրդի անհրաժեշտ հոգևոր պահանջին գոհացում տալու համար, ամենեն կարճ ճանապարհը հայոց մեհյանները քրիստոնեական տաճարներու փոխարկելն էր: Այդպես ալ եղավ. բազմաթիվ մեհյաններ բռնի ուժով եկեղեցիներու փոխարկվեցան, մինչև որ նորերն ալ հասան. հետևաբար հայոց նախնական եկեղեցիներու վրա ամենեն ավելի հայ-հեթանոսական մեհյաններու դրոշմը պետք է փնտռել և քննել, թե անոնք կարո՞ղ էին բավականություն տալ նոր քրիստոնեական ծեսերուն: Սակայն այս մեհյանական դրոշմը ճանչնալու համար պետք է նախ գիտնալ, թե ինչ ձև ունեին հայոց մեհյանները, որ բոլորովին մեզ համար անստույգ չեն կարող համարվել՝ հենվելով հավանական ենթադրություններու և պատմական վկայություններու վրա:*

*Հայերը որչափ բարեպաշտ եղան քրիստոնեական կրոնին մեջ, նույնչափ բարեպաշտ էին հեթանոս կրոնին մեջ, նամանավանդ երբ հեթանոսությունը երկար դարերե ի վեր սրբագործված իրենց նախնյաց կրոնն էր, և այդ կրոնի պաշտպանն էին շարք մը միահեծան թագավորներ մինչև անոնց վերջինը՝ մեծն Տրդատ, անկարելի էր, որ Հայաստանի ամեն կողմը, քաղաք ու ավան, բազմաթիվ մեհյաններով ծածկված չլինեին: Ո՞ւր մնացին այդ բազմաթիվ մեհյանները, որոնք 4-րդ դարեն մինչև 5-րդ դար չհասան: Արդյոք կարելի՞ է հավատալ, որ մոգական գավազանի մեկ հարվածով վայրկենապես ոչնչացան ամենն ալ: Իհարկե անկարելի էր. անշուշտ, անոնք երկար ատեն իրենց գոյությունը պահեցին և անոնցմե ոմանք ալ մինչև մեր օրերը հասան քրիստոնեությունով սրբագործված նոր տարազով մը:*

*Հայոց հեթանոսական կրոնը թեև արևելյան դիցապաշտությամբ խառնված էր, սակայն Արշա-*

---

[1] Basilique*-ներու քրիստոնեից տրամադրության տակ դրվելու ճիշտ թվականը հայտնի չէ. համենայն դեպս 312-են առաջ չէ. իսկ երբ ի նկատի առնենք, որ Կոստանդիանոս կայսրը 312-ին Միլանի հրովարտակով լիակատար հավասար իրավունքներ կուտար ինչպես քրիստոնյաներու, նույնպես հեթանոս կրոնը դավանողներուն, հետևաբար ամենևին հավանական չէր, որ այս թվականին հեթանոս պաշտաման հատուկ շենքեր կարելի լիներ համարձակ հանձնել քրիստոնյաներուն ձեռքը: Այդ պետք էր որ լիներ 324 թվականին, երբ Կոստանդիանոս, հաղթահարած բոլոր թշնամիները, ոչ միայն բացարձակապես քրիստոնեից կողմն անցնելով պետական կրոն հռչակեց քրիստոնեությունը, այլև խուլ հալածանք հանեց հեթանոսության դեմ: Հետևաբար Արևմուտքի մեջ մեհյաններ և* basilique*-ներ սրբագործելու սկզբնավորությունը մոտավորապես 25 տարի հետո պետք է համարել, քան հայոց մեհյաններու փոխարկումը Տրդատի և ս. Գրիգորի ձեռքով:*

[2] *Դատելով ի հնումն հույն և լատին կղերականներու եկեղեցվո խորանին մեջ բռնած դիրքեն,* abside*-ի պատշաճությունը ընդունված կկարծեմ իբրև հետևողություն Հովհ. Հայտ. Դ. և Ե. գլուխներու նկարագրության:*

[3] *Ագաթանգեղոս, Տփխիս, 1909, երես 403: «Առնոյր այնուհետև խորհուրդ հաւանութեան ընդ թագաւորին և ընդ իշխանսն, նախարարօքն և զօրօքն հանդերձ՝ վասն խաղաղութեան հասարակաց, քակել, կործանել, բառնալ զգայթակղութիւնսն ի միջոյ, ի բաց կորուսանել...»:*

[4] *Ագաթանգեղոս, Տփխիս, 1909, երես 439: «Սոյնպէս և ի տեղիս մեհենացն զոր կործանեաց յառաջագոյն. սոյնպէս և յԱրտաշատ քաղաքի և յամենայն տեղիս, յաշխարհս և ի գաւառս առ հասարակ, սոյն օրինակ գործեաց (այսինքն եկեղեցիներ շինեց) և բազմացոյց զեկեղեցիս»:*

*Փաւ. Բիւզ., Ս. Պետերբուրգ, 1883, երես 7: «Քանզի այնպէս իսկ սովոր էին եպիսկոպոսապետքն Հայոց, հանդերձ թագաւորօքն և մեծամեծօքն, նախարարօքն և աշխարհախումբ բազմութեամբք պատուել զնոյն տեղիս, որ յառաջ էին տեղիք պատկերաց կռոցն, և ապա յանուն աստուածութեան սրբեցան, և եղեն տուն աղօթից և տեղի ուխտից ամենայն ումեք»:*

կունի թագավորներու օրով ընդհանրապես անոր վրա մեծ ազդեցություն ուներ հունա-հռոմեական դիցապաշտությունը: Մանավանդ հայոց վերջին հեթանոս թագավոր Տրդատը, ծայրահեղ նախանձախնդիր հունական ծեսերու, առանձին հրովարտակով խիստ պատվեր կուտար ժողովրդին կետ առ կետ հնազանդիլ այն բոլոր օրենքներուն, որոնք կգործադրվեին հունաց աշխարհին մեջ[1]:

Հունա-հռոմեական կրոնին այս աստիճան ենթարկվող մի ժողովրդի մեհյաններն ալ, անկասկած, պետք էր որ հունական մեհյաններու նմանություն ունենային:

Հունա-հռոմեական մեհյաններու ձևը հասկնալ շատ դժվար չէ. երևակայենք մի երկար քառակուսի սրահ, որուն մեկ ծայրին վրա երբեմն փոքրիկ բաժանումներ՝ կոոց արձաններուն համուկ, եթե շատ լայն էր շենքը, անտարակույս, տանիքը ծածկելու դյուրության համար ներքին մասը՝ դեպի երկայնությունը շարված երկու կարգ սյուներով երեք թևերու (nef) բաժանված, նաև արտաքուստ ալ հաճախ շենքը շրջապատված էր սյունազարդ ծածկույթով մը (portique):

Բաղդատենք այս նկարագրությունը մեր նկ. 110 Տեկորի տաճարի, նկ. 121 Մրենի տաճարի և նկ. 61 Երերույքի տաճարի հատակագծերու հետ, հետնագույն հավելված համարելով անոնց կցված սենյակները, որոնց մասին ապացույցներ դարձյալ պիտի տեսնենք ի ստորև[2]:

Վերև բացատրված շարք մը փաստերով տեսանք, որ այդ հավելված համարված մասերեն ոմանք՝ ինչպես portique-ները, 7-րդ դարեն հառաջ միայն գործածական եղած են. այժմ փորձենք մի ժամանակագրական կարգ գտնել մյուս մասերու հավելմանց կամ փոխարկմանց մասին, որոնցմով պիտի ապացուցվին Տեկորի, Մրենի, Երերույքի, Քասաղի, Աշտարակի, Օձունի և այլ նման եկեղեցիներու ավելի վաղ ժամանակի մեջ բոլորովին իրարու նման շենքեր լինելը, որոնք անշուշտ կանգնված էին ամեն կողմ հասարակական որևէ անհրաժեշտ պահանջ մը գոհացնելու համար:

Ի՞նչ էին 3-րդ կամ 4-րդ դարերուն մեջ գոյություն ունեցող այդ միօրինակ հսկա շինություններ, որոնց վրա ոչ շինության կանոնավոր արձանագրություն կա և ոչ ալ պատմագրական հիշատակություն: Հայոց պատմագիրներ այս շենքերեն շատ նվազ կարևորություն ունեցող եկեղեցիները. հիշատակեր են և երկնանման փառքերով պսակեր են, այլև զանոնք կանգնողներու սրբությունն ու բարեպաշտությունը փառաբանելու համար բանաստեղծական ներբողներ են հյուսեր: 7-րդ դարուն Դավիթ Սահառունիի մը Մրենի մեջ շինած եկեղեցին, որուն հետքը այսօր չկա, չէ մոռացված հիշատակելու, իսկ անոր քովիկը Կամսարականի մը ձեռքով կանգնված (ավելի ճիշտը՝ փոխարկված) հսկա եկեղեցին ի՞նչ պատճառ կար չհիշելու: Արդյոք այդ շենքերու ծագումը մոռցնե՞լ տալ կուզեին մեր պատմագիրներ, թե՞ իսկապես իրենց օրով կանգնված շինություններ չէին անոնք: Այս վերջինը ավելի հավանական է: Սույն մի շարք հսկա տաճարներու մասին ոչ միայն 7-րդ դարու պատմագիրներ լուռ են, այլև 5-րդ և 6-րդ դարերու պատմագիրներ, հիշելով հանդերձ իրենց օրով կանգնված եկեղեցիներու անուններն ու տեղերը, երբեք չեն արձանագրած գոնե մյուսներուն մեկ կամ երկուքին անունը: Շատ պարզ է, որ մեզ ծանոթ 5-րդ և 6-րդ դարերու պատմագիրներու ապրած թվականներեն առաջ կանգուն էին անոնք, այլև ի՞նչ հարկ պիտի ստիպեր զիրենք գրելու:

Զե՞նք կարող արդյոք այս ձևի հնագույն տաճարներու վրա հայոց հեթանոսական մեհյաններու պարզ դրոշմը տեսնել, քանի որ անոնք հեթանոս հայոց կրոնակից հունա-հռոմեական մեհյաններուն շատ մոտիկ նմանություն ցույց կուտան: Ըստ իս՝ Տեկորի, Քասաղի տաճարները պարզապես հեթանոսական մեհյաններ են, իսկ մնացածները, եթե ոչ մեհյաններ, գոնե մեհենական ձևերու, ազդեցության տակ կանգնված հայոց քրիստոնեության նախնական տաճարներ, թեև ավելի հավանականը, ըստ իս, այն է, որ մյուս նմաններն ալ հեթանոսական շենքեր էին, միայն մի քիչ ավելի ուշ փոխարկված, քան Տեկորի ու Քասաղի տաճարները: Որչափ որ հայ պատմագիրներ կլռեն մեզ համոզել,

[1] Ագաթանգեղոս. Տփխիս, 1909, երես 74: «Ամենայն ոք գիտասցէ ի մերոց հրամանացս որ առ ձեզ, զի վասն ձեր շինութեան եմք հոգացեալք. զի յորժամ էաք մեք ի Ցունաց աշխարհին՝ անդ տեսանէաք զհոգաբարձութիւն թագաւորացն, ի հոգալ ընդ շինութիւն իւրեանց աշխարհին, ի պատուել զբագինս դիցն աստուածոց շինուածովք և սպանդիւք զոհիցն, և երևելի պատարագացն ընծայիւք, և գունակ գունակ նուիրաքն և ի պտղոցն՝ յամենայնէ զամենայն նոցա մատուցանելով, և ջերմեռանդն եռալ զեռալ պաշտամանն, չքեղացուցանելով և զարդուքն զարդարելով և զերևելի զհոյակապ զանեղ դիսն մեծարելով: Եւ զայն ևս տեսանէաք ի նոցանէ՝ ի նոցունց դից անտի՝ զխաղաղասէր շինութիւն մարդաշատութեան, հոմ բազմամբոխ լիութեամբ պարարտութեամբ՝ նոցա զայն փոխադարձ փոխարինացն շինութիւն շնորհեալ, ամենայրիւք բարութեամբ մեծացեալք, խաղաղացեալք ի բարիսն վայելէին»:

[2] Իրենց նախնական ձևին մեջ ավելի անաղարտ պահված են այսօր Քասաղի և Աշտարակի հնագույն եկեղեցիները: Ասոնց վրա հավելված են միայն արևելյան կողմերեն կիսաբոլորակ խորանները (abside), իսկ ներքին կողմեն պարզ սրահներ են երկու կարգի վրա երեքական մույթերով երկու նեղ և մեկ լայն թևերու (nef) բաժանված: Իսկ Օձունի եկեղեցին տակավին պահած է մեկ կողմին վրա արտաքին portique-ը: Թեև այս եկեղեցի մասին չեմ կարող հաստատ կարծիքներ հայտնել, մինչև որ անձամբ չքննեմ:



որ Լուսավորչի օրով այլևս հեթանոս հայեր չմնացին, սակայն գիտնականներու խորաթափանց քննաղատական հետազոտությունները կհաստատեն, թե դեռ 5-րդ դարու վերջերն ալ կային հեթանոս հայեր և հեթանոսական տաճարներ, որոնց դեմ կռվելու համար բավական չեղան բարոյական միջոցները, առանց պետական ուժի միջամտության: Ուստի տարօրինակ չի լինիր ենթադրել, որ եթե Երերույք ու Մրեն և այլ նմաններ մեհենական պարզ դրոշմը կկրեն, կարող էին ավելի ուշ ժամանակ փոխարկված լինել, քան իրենց նախորդները, փոխարկման ժամանակի քրիստոնեության ծիսական պահանջներուն համեմատ հավելվածներու ենթարկվելով:

Մինչև այստեղ կատարված քննությունները բավական կհամարիմ ապացուցանելու, որ Տեկորի տաճարը երբեմն ունեցեր է (նկ. 110) սև ներկված ձևով հատակագիծ, առանց կիսաբոլորակ խորանի (abside), միայն արևելյան կողմեն դուրս ցցված ներքին ուղղանկյուն խորշով մը (նկ. 110) և այս եղեր է անշուշտ մինչև 5-րդ դարու սկիզբները, երբ դեռ կիսաբոլորակ խորանի (abside) ոճը Հայաստան չէր հասած: Շենքին արտաքին և ներքին պարզությենեն ալ կերևի, որ տակավին այն ժամանակ ծիսական բարդ արարողություններ չեն եղած, որովհետև անոր մեջ չեն տեսնվիր ինչպես կիսաբոլորակ խորան, նույնպես ավանդատուններ, հաստատ կարելի է վճռել, որ նույնիսկ Լուսավորչի օրով ընդունված ձևն է սա անպայման, որուն վրա հետո պարբերաբար ավելցեր են նոր ծիսական պահանջներու համապատասխանող մասեր, այսինքն՝ ավանդատուններ և ապաշխարության գավիթ[1]:

Տեկորի տաճարին վրա շուրջանակի սյունազարդ ծածկույթներով (portique) ավելի ուշ ժամանակ ավելցված լինելը ինձի ենթադրել կուտա, թե ինչպես Հունաստանի մեջ, այնպես ալ Հայաստանի մեջ մեհյաններու ձևը երկու ուղղությամբ զարգացած էր, այսինքն կային շուրջանակի սյունազարդ ծածկույթներ ունեցող և չունեցող մեհյաններ: Ուստի երբ քրիստոնեական եկեղեցիներու մեջ ալ հեթանոսական սյունազարդ շուրջանակի ծածկույթը ծիսական որոշ պահանջներու ծառայեցնել անհրաժեշտ սեպվեցավ, այն ժամանակ Տեկորի տաճարին շուրջն ալ ավելցուցեր են սյունազարդ ծածկույթ, ավելցնելով միաժամանակ արևելյան կողմեն դեպի հյուսիս և հարավ ցցված թևերը (նկ. 109, DD և նկ. 110, UU), որոնց մեջ կան դեպի հյուսիս և հարավ ուղղված երկար քառակուսի սենյակներ (նկ. 109, AA), բայց առանց դարձյալ կիսաբոլորակ խորանի (abside): Թևերու հավելումով արևելյան կողմեն ուղղանկյուն խորշ մը միայն գոյացեր է (նկ. 116 E), նման ներսի կողմեն եղած խորշին (նկ. 110, F): Հետևաբար այս հավելումն ալ պետք է որ համարենք դարձյալ 4-րդ դարու վերջին քառորդին, կամ առառավելն 5-րդ դարու սկիզբը, քանի որ դեռ կիսաբոլորակ խորան գոյություն չունի, նույնիսկ չէր շինված ոչ գմբեթ, ոչ ալ խաչաձև տանիք:

Քասաղի տաճարը, կերևի որ, հիմնարկված օրեն ունեցեր է շուրջանակի սյունազարդ ծածկույթ (portique) և փոխարկման ժամանակ առանց վնասելու անոր ամբողջական ձևին, միայն ավելցուցեր են կիսաբոլորակ խորան (abside): Համոզված եմ, որ այս տաճարը ավելի երկար մնացեր է նախնական վիճակին մեջ, ծառայելով իբրև մեհյան կամ եկեղեցի, վասնզի միմիայն կիսաբոլորակ խորանն է, որ հավելված է, և այդ կիսաբոլորակին Հայաստան հասնելն ալ 5-րդ դարեն առաջ հավանական չէ: Նայելով իր բոլորովին պարզ, այսինքն՝ առանց կողմնակի սենյակներու, կամ ավանդատուններու միմիայն կիսաբոլորակ խորան մը հավելվածին, կարելի է կարծել, որ սկզբնական օրինակներեն եղած լինի abside-ի և նախատիպ 5-րդ դարու վերջին կանգնվող Էջմիածնի կաթուղիկեին չորս abside-ներուն:

Ճիշտ է, որ թեև հյուսիսային կողմը կա մի սենյակ՝ տաճարին հետ հաղորդակցող, սակայն այդ սենյակը իր անկանոն ձևով և անճաշակ արհեստագործությամբ հետնագույն հավելված կներկայանա, թեև դարձյալ ոչ այնչափ նոր, ինչպես Երերույքի սենյակները:

Հետևելով այս օրինակներուն, Երերույքի տաճարը փոխարկված կարելի է համարել ավելի ուշ, քան Տեկորի տաճարի երկրորդ հավելումը, որովհետև Երերույքի մեջ ավելի կատարելագործված ձևով եղած են հավելումները և ավելի ճոխ ծիսական պետքերով: Միաժամանակ ավելցված են կիսաբոլորակ արևելյան խորանը և անոր երկու կողմի երկար քառակուսի սենյակները, նույնպես նաև արևմտյան անկյուններու քառակուսի սենյակները՝ արտաքին փոքր abside-ներով միասին:

Այս փոփոխությունն ալ հավանական կհամարիմ 5-րդ դարու վերջերին, երբ արդեն մտած էր հայոց եկեղեցիներու մեջ թե՛ կիսաբոլորակ խորան

[1] Երևացած այս ակներև փաստերուն առջև այլևս հնացած պետք է համարել այն ընդհանուր կարծիքը, թե էջմիածնի կաթուղիկեի ձևը պահված է անփոփոխ՝ Լուսավորչի հիմնարկած ձևով: Լուսավորչի հիմնարկածը ոչ կարող էր abside ունենալ, ոչ ալ գմբեթ՝ խաչաձևած տանիքով: Լուսավորչաշեն կաթուղիկեին համար չէ կարելի ենթադրել ուրիշ մի ձև, քան Քասաղի, Տեկորի, Աշտարակի և այլ նմաններու հատակագծային ձևը:

և թե՛ արևմտյան կողմը սենյակներ ունենալու սովորությունը Վաղարշապատի կաթուղիկե էջմիածնի օրինակով: Թերևս միևնույն ատեն Երերույքի վրա ալ շինեին գմբեթավոր խաչաձև տանիք, եթե շենքը հարմարություններ տար այդ փոփոխության. որովհետև, նախ՝ շենքը համեմատաբար շատ նեղ էր, երկրորդ՝ գմբեթին որոշ չափով կեդրոնական համաչափություն տրվելու համար անոր երկայնությունը և մույթերու դասավորությունը աննպաստ էր: Տեկորի մեջ գմբեթը համաչափություն ստացեր է արևելյան կողմի երկու մույթերու ոչնչացումով. փոքր ի շատե վայելչության համար հարկ էր, որ Երերույքի տաճարի շենքը կարճացնեին արևելյան կամ արևմտյան կողմեն, ինչպես Տեկորի տաճարին մեջ, և հետո համաչափ կեդրոն կազմող մույթամեջերուն վրա կանգնեին գմբեթը, այն ալ անշուշտ փայտե, պետք էր որ շինեին էջմիածնի գմբեթին նման, ինչ որ ցանկալի չէր այնքան խնամքով և կատարյալ արվեստագիտությամբ շինված հսկա շենքի մը վրա փայտաշեն գմբեթ դնել, վասն զի դեռ քարե գմբեթ շինելու արվեստը Հայաստան մտած չերևիր նույն ժամանակ:

Կկարծեմ, որ արևմտյան կողմի սենյակներուն ալ դրսեն շինվելուն պատճառը դարձյալ շենքի նեղ լինելն է. ներսը այնչափ տեղ չկար նույն մեծությամբ սենյակներ երկու կողմին վրա շինելու համար, ինչպես նախնական էջմիածինը, Հռիփսիմեի վանքը և ուրիշ նմաններ՝ առանց արևմտյան մուտքը խափանելու. ակամա ստիպված մի բացառություն կազմեր են Երերույքի մեջ:

Երերույքի արևելյան մասին վրա կատարված փոփոխություններու դրական փաստեր այստեղ առայժմ ներկայացնելու հնարավորություն չունիմ, ձեռքի տակ հարկ եղած լուսանկարներ և մանրամասն չափագրություններ չունենալուս համար[1], այնուամենայնիվ հետաքրքիր մասնագետներու աչքեն չեն վրիպիր բուն հիշատակարանին վրա ներսեն և դրսեն շարված քարերու ոչ համանմանությունը, տարբեր արվեստագործությունները, շինվածանյութերու և գեղարվեստական ոճերու անհամեմատ զանազանությունները՝ բաղդատմամբ նախնական շինության: Իսկ արևմտյան կողմեն այնքան պարզ են տարբեր ժամանակաշրջաններու մեջ կատարված փոփոխություններ և հավելումներ, որ առանց արվեստագետ լինելու ալ հետաքրքրվողը կարող է տեսնել իր բոլոր մանրամասնություններով:

Հյուսիսային և հարավային ճակատներու սյունազարդ ծածկույթները (portique) շատ դժվար է հետևագույն հավելված համարել, սակայն սյուներու կամ որմնասյուներու դասավորության մեջ բռնազբոսիկ համաչափություններ և ճարտարապետական ոճերու զարգացման տեսակետով ժամանակագրական ստույգ փաստեր մեծ մասամբ կասկածելի կդարձնեն, որպիսին նկարագրեցի Տեկորի տաճարի արտաքին որմնասյուներու դասավորության վրա: Բայց որ հարավային դռները զարդարող սյուներ, աղեղներ և fronton-ներ փոփոխություն կրած են շատ հին ժամանակ, անվիճելի է:

Նույնպես նաև արևմտյան կողմը, մտից դուրը և ամբողջ սյունազարդ ծածկույթը ժամանակակից են հարավային դռներու փոփոխության: Այստեղ Տեկորի սյունազարդ ծածկույթի ապացույցներեն ավելի բնորոշ փաստեր կան, որ նախնական շենքի բուն պատին հետ կապ չունի սյունազարդ ծածկույթը և առանձին շինվելով՝ կպցված է շենքի ճակատին:




**Նկ. 130. Զարդաքանդակ պսակներ Տեկորի տաճարեն և Զվարթնոցեն**

Երերույքի տաճարի ամբողջական հետազոտություն գրել այստեղ անկարելի է, նախ՝ անոր համար, որ անհամեմատ շատ նյութ կբովանդակե իր մեջ, քան Տեկորի տաճարը, երկրորդ՝ առաջադրված նպատակեն ալ մեզ կհեռացնե, ուստի առայժմ պիտի բավականանամ մի քանի փաստեր ևս առանձնագրելով, որոնք պիտի ապացուցանեն, թե Երերույքի փոխարկումը ավելի ուշ է կատարված, քան Տեկորի երկրորդ հավելումը:

Բոլոր moulure-ներ և ուրիշ զարդաքանդակներ Երերույքի տաճարին վրա, հին ոճեն դեպի նոր վերածնություն փոխանցման շրջան մը կներկայացնեն հայ ճարտարապետության զարգացման մեջ, կան այնպիսի détail-ներ, որոնք հայ ճարտարապետության մեջ 5-րդ դարուն բնավ գոյություն չունին, իսկ սկսած Երերույքեն շարունակված կգտնենք մինչև հայ ճարտարապետության անկումը 15–17-րդ դար:

Արևելյան կողմեն կիսաբոլորակ խորանին (abside) պատեն ներս ամփոփվիր 5-րդ դարու վերջին էջմիածնի նախնական օրինակով կհաստատվի, բայց չէ կարելի հաստատել, որ Տեկորի մեջ սյունազարդ ծածկույթը և արևելյան թևերը ավելցված ժամանակ շինվեցավ նաև հյուսիսային կողմի արտաքին abside-ը սյունազարդ ծածկույթի տակ:

Զարդաքանդակները և ուրիշ ճարտարապետական moulure-ներ այլևս օտար են հռոմեական արվեստի ոճին, որուն մեծ ներգործությունը անուրանալի է հայ ճարտարապետության մեջ մինչև 5-րդ դարու վերջերը: Այստեղ սկսած է ասորական և սասանական ներգործություն, որ տևած է մինչև հայ արվեստի վերջնական անկումը: Երերույքի տաճարին վրա բոլոր պսակներ (corniche), պատուհաններու շրջանակներ պարզ սասանական են, թեև ունին իրենց մեջ ատամնաշարեր (denticule), որոնք կարող են հունական կամ հռոմեական համարվիլ, բայց եթե քննենք անոնց համաչափությունները և դասավորության եղանակը՝ կտեսնենք, որ սասանական ոճին կպատկանին, որոնք երևեցան Պերսեպոլսի բեկորներուն մեջ:

Երերույքի մեջ գտնված մի խոյակ, որ սյունազարդ ծածկույթի արտաքին անջատ սյուներուն կվերաբերի, պարզ ցույց կուտա իր ասորա-քաղդեական հնագույն ոճը, որ սասանական արվեստի միջոցով փոխանցված է թե՛ Հայաստանի և թե՛ Միջագետքի ու Սիրիայի ճանապարհով մինչև Երուսաղեմ, մի ուրիշ ճանապարհով ալ մինչև Հնդկաստան: Գնդագլուխ սյուներու այս ձևը առանց համաչափական մեծ փոփոխություններ կրելու պահված է հայոց մեջ մինչև 13–14-րդ դարերը: Երերույքեն հետո նույն այդ ձևը Զվարթնոցի մեջ կա 7-րդ դարուն, Բանայի մեջ՝ 10-րդ դարուն, 11-րդ դարու Անիի գագկաշեն ս. Գրիգորի և ուրիշ շատ մը փլատակներու մեջ, 10–11-րդ դարերեն սկսած բոլոր հայ հիշատակարաններուն արտաքին որմնասյունները միևնույն ձևով խոյակներ և խարիսխներ ունին: Իսկ վերջին շրջանի վերածնության մեջ մի քիչ ավելի բարեփոխված էին անոնց abaque-ները և երբեմն անկյունավորված գունդերը:

Երերույքի, Զվարթնոցի և Բանայի գնդագլուխ խոյակներու վրա փորված զարդաքանդակները ինծի պահ մը ենթադրել կուտան, որ եթե խոյակներու լերկ ձևը ուղղակի ասորա-քաղդեական ներգործություն է հայ արվեստին մեջ, այնուամենայնիվ այս երեք եկեղեցիներու մեջ գտնված քանդակազարդված ձևը սիրիական արվեստի ազդեցություն լինի հայոց գեղարվեստին վրա: Նախաքրիստոնեական շրջանի մեջ նույն ձևի սյուներու գործածությունը Սիրիո մեջ հաստատված է, բայց ավելի հնագույն օրինակ կներկայանան Սողոմոնի տաճարին համար փյունիկեցի Քիրամին շինած խոյակները, որոնց նկարագրությունը ճշտիվ կպատկերացնե Երերույքի, Զվարթնոցի և Բանայի խոյակները ցանցակերպ հյուսված քանդակազարդությամբ[1]:

Ահա Երերույքի և էջմիածնի կատարելագործված օրինակներն են, որ Տեկորի տաճարին վերջնական ձև տվեր են. Երերույքը իր արևելյան ներքին և արտաքին մեծ ու փոքր կիսաբոլորակ խորաններով, էջմիածինն իր գմբեթով և խաչաձև տանիքով: Հետևաբար Երերույքի այսօրվան տեսքին փոխարկվելու ժամանակը պետք է լինի ամենաուշը 6-րդ դար:



**Նկ. 131. Տեկորի տաճարին ներքին մեծ աղեղներու նորոգության ժամանակ քարերին ատամնավոր տաշվածքը**

Թե ինչո՞ւ ընդունվեցան շուրջանակի սյունազարդ ծածկույթները (portique) հայոց եկեղեցիներու մեջ, այդ մասին իմ հավանական կարծիքս է, թե քանի որ քրիստոնեությունը չէր մերժած Հին կտակարանը, և հին օրինաց շատ մը ծեսեր ընդունվեցան քրիստոնեական եկեղեցվո մեջ, անկասկած, եբրայական տաճարի հեթանոսաց զավիթն ալ ընդունվեցավ նույնությամբ հայոց եկեղեցիներու մեջ: Բայց ե՞րբ սկսվեց անոր կանոնավոր գործածությունը՝ ինծի հայտնի չէ, միայն թե 325-ի Նիկիո ժողովին կանոններուն մեջ որոշ հոդվածներ կան այդ մասին: Հետևաբար թե՛ ընդհանուր քրիստոնեից և թե՛ հայոց եկեղեցիներու մեջ շուրջանակի սյունազարդ ծածկույթները հին դարերու մեջ անպայման ծառայեցին իբրև հեթանոսաց կամ ապաշխարողաց զավիթ: Հույն և լատին եկեղեցիներու մեջ 3-րդ դարուն իսկ գործադրության դրված կերևի ապաշխարության զավիթի օրենքը,

[1] Խորին ցավով պիտի արձանագրեմ, որ, հակառակ բուռն ցանկություններուս, հնար չունեցա Երերույքի նման մի ամենակարևոր հիշատակարանի շուրջը մանրակրկիտ հետազոտություն կատարել այնպես, որպիսին կպահանջեր իմ ծրագիրս, նույնիսկ հնար չեղավ ձեռքի տակ ունենալ քանի մը լուսանկարներ, որոնց վրա գոնե նշանակելով իմ տեսությունները և ապացույցի կետերս, որով ավելի դյուրըմբռնելի դառնային բացատրություններս: Կմնա ինձ՝ հետաքրքիր ընթերցողին հանձնարարել, որ անձամբ տեսնե ու ստուգե իսկական հիշատակարանին վրա:

[1] Գ. Թագ., է. գլ. 17, 18, 41, 42 հմր:

Գր. Սքանչելագործի կանոնական թղթով. սակայն հայոց մեջ նախքան ս. Գրիգոր պարտավորի՞չ էր, թե՞ ոչ՝ հայտնի չէ ինծի, կկարծեմ, որ հայոց մեջ սկսված լինի այդ օրենքին խստիվ գործադրությունը Նիկիո ժողովին կանոնները Հայաստան բերվելն հետո: Բայց որովհետև ցուրտը և ձմեռը սաստիկ ու երկարատև երկրի մը մեջ դժվար էր ապաշխարողաց համար բացօթյա սպասել, հավանական է, որ հետո մտածեցին բացօթյա portique-ներու փոխարեն ավելցնել արևմտյան սենյակները իբր ցրտեն ու բուքեն պատսպարված ապաշխարողաց կայան ձմեռնային օրերու համար[1]:



Նկ. 132. Տեկորի տաճարի արտաքին որմնասյուներու խոյակ և խարիսխ

Բայց շատ զարմանալի մի երևույթ է, որ 7-րդ դարեն սկսած ոչ միայն սյունազարդ ծածկույթի չինելու սովորությունը վերացած է հայոց մեջեն, այլև հեթանոսական գավիթ համարվող բաժանումներ ևս չկան հայոց եկեղեցիներու մեջ մինչև 11-րդ դար: Կարծեմ թե՝ այս սովորության ընդհատումեն հետո առաջին երեսույթներեն մեկը պետք է համարել Հոռոմոսի վանքի մեջ Հովհաննես Սմբատ թագավորի շինած գավիթը: Թեև այս դարերեն սկսյալ շինված գավիթներն ալ, եթե ի սկզբան իբրև ապաշխարողաց կայան շինված էին, այնուամենայնիվ անոնք շուտով փոխեր են իրենց կոչումը և ծառայեր են իբրև տոհմային դամբարաններ: Շինության կերպով ալ շատ կտարբերին իրենց հաստատուն և փակ շրջապատով և կանոնավոր ծածկերով. փոխանակ նախնական բացօթյաներու, գեղեցիկ կամարակապ սյունազարդ սրահներ են անոնք: Միակ բացառություն այս գավիթներու հայոց մեջ ընդունված ոճին, Անիի ս. Գր. Լուսավորիչ (Նախշլի) եկեղեցին է, որ բացօթյա սյունազարդ ծածկույթ (portique) ունի արևմտյան կողմեն (նկ. 108, B), որն որ լիովին կհիշեցնե փոքր-ասիական, հունական և հունականի ազդեցության ենթարկված հայոց եկեղեցիները:

Տարօրինակ չէ Անիի Լուսավորիչ եկեղեցիի այս օտար հատկությունը. այնտեղ մենք կտեսնենք ուրիշ ապացույցներ ևս, որ մի ժամանակ այդ եկեղեցին սեփականություն դարձեր է այլադավան քրիստոնյա մի հասարակության: Հայոց եկեղեցիներու մեջ բացարձակապես անընդունելի սովորության մը հակառակ, մեռելներ թաղված են[2] խորանին առջև, որոնց մեկուն տապանաքարին վրա մինչև այսօր կմնա վրացերեն տառերով արձանագրություն: Նաև ներսը և դուրսը նկարված պատկերներու վրա արձանագրություններ վրացերեն գրված են: Այս բոլոր ստացական օտար հատկություններ շատ կհեռացնեն Անիի Լուսավորիչ եկեղեցին մշտնջենապես հայ լուսավորչականաց սեփականություն համարվելե:

Մրենի տաճարին տանիքի խաչաձևումը և գմբեթավորումը, անշուշտ, 7-րդ դարեն առաջ չէր կարող լինել այն պարզ պատճառով, որ եթե առաջ

[1] Թեև շատ ուշ ժամանակի վկայություն, սակայն թերևս իբրև հաստատություն ծառայե սույն կարծիքիս: Աղթամարի Հակոբոս Զաքարիա կաթողիկոս 15-րդ դարուն ս. Խաչ եկեղեցի կից շիներ է ամառնային և ձմեռնային գավիթներ, որոնց մասին Թովմա Արծրունիի պատմության հավելվածին մեջ կկարդանք. «Դարձեալ յաթոռ հայրապետութեան իւրոյ ի կղզիս Աղթամար, ի դուռն Սուրբ Խաչիս շինեաց գեղեցիկ և մեծանիստ տեղեօք ի թիկունս Սուրբ Խաչին զժամատունն մեծ յաւուրս ձմերայնոյ, իսկ ի կողմեն արևմտից զժամարակն ամարայնոյ մեծանիստ կամարակապ ձևօք կրակապ և սրբազործ»: (Պատմ. Տանն Արծրունեաց ի Թովմայ վարդապետէ Արծրունւոյ, Կոստանդնուպոլիս. 1852, երես 363-364):

[2] Հայերը շատ խստիվ պահած են այս հնավանդ օրենքը եկեղեցիի հայրերու կողմանե հաստատված: Հատկապես ուշադրությամբ փնտռած եմ բոլոր հին եկեղեցիներու մեջ՝ և չեմ գտած մեռել թաղված անոնց մեջ. եթե կան ալ, անոնք հազիվ թե 17-րդ դարեն անդին անցնին: Այս խիստ օրենքը ըստ ժողովոց պատմության՝ նախ ավանդված է ս. Սահակի կանոններով, հետո ալ Դվինի Բ. ժողովով 551 թվին: Կանոնք սրբոյն Սահակայ. Յօդ. Ի Գ. «Եւ որպէս եղև անառակ սովորութիւն քահանայից և նոցին կանանցն որ զգերեզմանս առ եկեղեցիս առնել, ի տեղիսն սրբութեան ի սուրբ սեղանւոյն. առաջ մի իշխեսցին առնել, այլ ի ժողովրդանոցն հանգստարանս եղիցին և քահանայից հանգստարանք, զի սրբութեան տեղին պարկեշտութեամբ պատուեսցի»:

Կանոն Դուինի Բ. ժողովի, Յօդ. 20. «Գերեզմանս յեկեղեցիս մի իշխեսցեն առնել, ապա թէ գտցի ոք արարեալ, յեկեղեցւոջն պատարագ մի ոք իշխեսցէ մատուցանել մինչև մաքրեսցին զտեղին»:



լիներ, պետք էր որ շուրջանակի սյունազարդ ծածկույթ ալ ունենար ժամանակի պահանջին համաձայն: Բայց ինչպես տեսանք, 7-րդ դարուն բոլորովին վերջացած էր այդ սովորությունը հայոց մեջ: Բացի այդ՝ գմբեթին և պսակներուն (corniche) ոճը միայն 7-րդ դարու հայոց արվեստին կպատկանին, որոնք այդ շրջանեն ոչ առաջ և ոչ ալ հետո այլևս գոյություն չունին հայ ճարտարապետության մեջ: Բայց արդյոք ի սկզբանե, նախքան հավելումները գմբեթի և խաչաձև տանիքի կատարվիլը, սյունազարդ ունե՞ր, թե՞ ոչ, այդ հարցին չէ կարելի դրականորեն պատասխանել. կարող էր նախնականն ալ առանց արտաքին սյունազարդ ծածկույթի լինիլ ըստ մեհենական ոճի այլազան զարգացման:

Նկ. 133. Տեկորի տաճարի արտաքին որմնասյուներու խոյակ

Իբրև բացառիկ երևույթ նկատելի է Մրենի տաճարին վրա, արևելյան կողմեն կիսաբոլորակ խորանին դուրս շեշտվիլը: Ինչպես կերևի, 7-րդ դարուն բոլոր խաչաձև եկեղեցիներու վրա, կիսաբոլորակներու (abside) դուրս շեշտվիլը ընդհանրացած նորաձևություն էր, թերևս այդ նորաձևությունն է, որ ազդեր է Մրենի տաճարին վրա[1], բայց որչա՞փ տևեր է այդ նորաձևությունը՝ հայտնի չէ, տևողությունը հասկնալ կարելի կլիներ, եթե մենք ունենայինք մինչև 10-րդ դար հաջորդաբար կանգնվող եկեղեցիներ. դժբախտաբար, 8-րդ և 9-րդ դարերուն հայոց մեջ միանգամայն դադար առած է գեղարվեստի մինչև 7-րդ դարու կեսին երևցող զորեղ հառաջադիմական շարժումը. անշուշտ, արաբական արշավանքի պատճառած տնտեսական քայքայումը և գերեվարությունները եղան պատճառ այս մեռելային անշարժության: 10-րդ դարուն մոտիկ է, որ հանկարծական զարթնում կտեսնվի հայոց գեղարվեստական կյանքին մեջ. հայ ճարտարապետությունը կսկսի նոր վերածնությամբ մը երևալ. ոչ միայն զուտ ճարտարապետական և գեղարվեստական ոճեր, այլև եկեղեցիներու հատակագծային ձևերն ալ մասնավորապես արևելյան կողմերեն զգալի չափով կերպարանափոխված են:

Անշուշտ, դավանաբանական նորամուտ վարդապետության մը հետևանքը, հայոց եկեղեցիներու խորաններուն երկու կողմը եղող սենյակները, որոնք 7-րդ դարուն հավասարակողմ քառակուսի ձև ունեին, 10-րդ դարուն մեջ երկնցած և ուղղված են արևելքեն արևմուտք և անոնց արևելյան ծայրին վրա ավելցած են կիսաբոլորակ խորաններ (abside)՝ պատարագի հատուկ, այս պատճառով ալ նեղցած է խորանի և գմբեթակիր մույթերու միջոցը:

Երեք խորաններու ալ արևելյան պատեն դուրս ցցվիլը շինության տեսակետով շատ դժվարություններ և անհարմարություններ ուներ. նախ՝ արհեստի որոշ հմտություն և նյութական շատ զոհողություն էր հարկավոր, երկրորդ՝ կիսաբոլորակներու շարքին վրա բնականորեն հառաջ եկած բեկումներ և անկյուններ մնասաբեր արդյունքներու պատճառ պիտի դառնային երկրին խիստ ձյունոտ և անձրևոտ կլիմային ազդեցության տակ: Ինչպես կերևի, հանճարեղ ճարտարապետին մեկը թե՛ նյութական խնայողությունը, թե՛ աշխատության հեշտությունը և թե՛ բնության պատճառելիք վնասներու դեմ ապահովությունը ի նկատի ունենալով հանդերձ, միևնույն ժամանակ, երեք խորաններու նվիրագործված դուրս ցցվելու ձևն ալ անփոփոխ պահելու համար հետևյալ շատ պարզ և նպատակահարմար միջոցին է դիմեր:



Նկ. 134. Տեկորի տաճարի մուտքի քանդակազարդ բարավորը

[1] Թալինի, Դվինի կաթուղիկներն ալ ազատ չեն կարող համարվիլ փոխարկման կասկածանքեն, որոնց վրա հետևագույն հավելված են հյուսիս և հարավ կողմերու կիսաբոլորակ խորանները, մանավանդ, որ Թալինի հիմնարկության թվականն ալ հայտնի չէ արդեն: Ինչ կվերաբերի հատակագծի ձևին, պարզ բաղդատություն մը բավական է հասկնալու ընդհանրացած հայ եկեղեցիներու ձևեն արևելյան կողմի օտարությունը: Դվինի կաթուղիկեն թեև կվերագրվի Մեծն Վարդանի, սակայն ակնարկ կա պատմագրաց կողմանե, որ նա շինված է մեհյանի մը տեղին վրա՝ նույնիսկ մեհյանին քարերով: (Տե՛ս Թովմա Արծրունի):

Խորաններու բոլորումեն ձևացած խորշեր վերևեն աղեղներով միացուցեր և անոնց վրա շարունակեր է ուղիղ պատ հյուսել մինչև տանիքի սահմանը: Այս գործողության ամենամեծ օգուտը եղեր է այն, որ փոխանակ յուրաքանչյուր կիսաբոլորակի վրա առանձին-առանձին ծածկեր շինելու, որոնք թե՛ դժվարություն են և թե՛ վատ կլիմայի տակ անտեղության բույն, ընդհանուր շենքի տանիքի տակ ծածկեր է ամեն կերպ ապահովությամբ երաշխավորված: Ահա այս շինության կերպը հառաջ բերեր է հայոց եկեղեցիներու հատուկ արտաքին պատերու վրա աղեղնակապ զարդարուն խորշերու (niche) ոճը, որ նախ սկսելով արևելյան կողմեն, իբրև ակնահաճո զարդարանք հետզհետե անցեր է մյուս ճակատներուն վրա ալ, որուն ձևացման համար շատ կնպաստեր ներքին մեծ որմնամույթերու գոյությունը:

Քանի որ արտաքին խորշերու ձևացումը ներքին կողմի սենյակներուն վրա կիսաբոլորակ խորան ավելնալուն հետ անմիջական կապ ունի, հետևաբար խորշերու (niche) ոճերուն սկզբնավորության ժամանակն ալ չենք կարող ավելի հեռու տանել, քան 10-րդ դար, և այս բանը հաստատող փաստեր ալ չեն պակսիր մեզի: Նախ՝ 7-րդ դարու եկեղեցիներեն ոչ մեկը չունի կիսաբոլորակ խորանով սենյակներ կամ ավանդատուն: Երկրորդ՝ ավանդատուններուն մեջ կիսաբոլորակ խորան ունենալու սովորությունը մոտիկ կապ ունեցած կերևա 10-րդ դարուն հայոց եկեղեցին մտած դավանաբանական օտար վարդապետության մը հետ, այն է՝ հոգվո փրկության համար եկեղեցիներու մեջ բազմաթիվ պատարագներ մատուցանելու սովորությունը:

Մինչև 10-րդ դար եղած արձանագրություններու մեջ բացարձակապես չեն տեսնվիր հոգվո փրկության համար պատարագի պահանջ՝ եկեղեցիներ շինողներու և կամ նվիրատուներու կողմանե. հավանորեն 10-րդ դարու մեջ, Գրիգոր Պահլավունի իշխանն իր՝ Անիի մեջ շինած Ապուղամրենց ս. Գրիգոր եկեղեցիին վրա բավականացեր է միայն արձանագրելով հետևյալ կարճ մաղթանքը. «Քրիստոս Աստուած, յորժամ գաս փառաւք հաւր ի նորոգել զերկիր, ողորմեա՛ Գրիգորո ծառայի քո»: Գրիգոր իշխանի մահվանեն շատ հետո իր մեկ որդին Ապլղարիպ իշխանն է, որ 1040 թվին իր հոր հոգվույն համար պատարագ սահմաններ է, շինելով անոր անվան նվիրված ս. Ստեփաննոս և ս. Քրիստափոր անունով երկու մատուռ՝ եկեղեցիին կից:

Հայ կղերին հոգվո փրկության համար պատարագներ ծախելու սովորությունը այնքան չափազանցվեր է 11-12-րդ դարերուն, որ հանձն առնված պատարագներու թիվը լիակատար իրագործելու համար բավական չէին տարվույն օրերը, ուստի ստիպված ամեն եկեղեցիներու մեջ ավելցուցեր են խորաններ՝ ավանդատուններու վրա. կրկնահարկ շիներ են ավանդատուններ հատկապես այդ նպատակով: Կարծեք այդ ալ բավական չէ եղած, եկեղեցիի արևմտյան անկյուններուն վրա ալ շիներ են հաճախ 2-4 սենյակներ՝ պատարագի խորաններով և վերանորոգեր են հնադարյան արևմտյան սենյակներու սովորությունը, այս անգամ հիներեն բոլորովին տարբեր նպատակով մը:

Այս չափազանցված անախորժ շահավաճառության դեմ 12-րդ դարուն, Ներսես Լամբրոնացին ստիպվեր է հրապարակավ բողոքելու, և այդ կրոնական առևտուրը պախարակելու, միանգամայն հակառակ համարելով նախնյաց սրբազան ավանդություններուն[1]:

Ահա այս տեսությամբ կասկածելի կգտնեմ 7-րդ դարու հայոց եկեղեցիներու վրա գտնված խորշերը՝ համարելով զանոնք 10-րդ դարուն մոտ հավելվածներ, ինչպես Էջմիածնի մոտ ս. Հռիփսիմեի վանքին խորշերը: Հռիփսիմեի վանքին հետ միևնույն դարուն մեջ կանգնված և իրարու այնքան մոտիկ Էջմիածնի կաթուղիկեն և ս. Գայանեի վանքը խորշեր չունին. եթե նույն ժամանակ խորշը ընդունված ոճ լիներ, անպայման պետք է որ գտնե Գայանեի վանքին վրա գտնվեր Հռիփսիմեեն քանի մը տարի հետո՝ իբրև նորոգ հիմնարկված եկեղեցի:

Ակոռիի ս. Անդրեաս եկեղեցին (ըստ հ. Ալիշանի՝ «Այրարատ», 473, նկ. 182), իբրև հնագույն եկեղեցի, խորշեր ունի արևելյան կողմը, սակայն, իմ կարծիքով, հ. Ալիշանի ներկայացուցած հատակագիծը պետք է որ նույնիսկ Անաստաս կաթողիկոսի շինած եկեղեցին լինի և ձևով ալ նման Էջմիածնի մոտ գտնվող Գայանեի վանքին, այսինքն չորս անկյատ մույթերու վրա զմբեթավորված:

Նկ. 135. Տեկորի տաճարի արտաքին որմնասյուների խոյակ

Ամենևին կասկած չկա, որ այդ եկեղեցին բնության որևէ մի արկածով մնասվեր է արևելյան կողմեն և, հավանաբար, նորոգեր են 10-րդ կամ 11-րդ դարաշրջաններուն, որ թեև արևելյան կողմեն կազմեր են ժամանակի ճաշակին պահանջված խորշերը, սակայն եկեղեցիի երկայնությունը պակասեցուցեր են, որով զմբեթակիր անկյատ մույթերուն երկուքը խառնվեր են խորանին և անսովոր կերպով մնացեր են երկու զմբեթակիր անկյատ մույթեր միայն:

Անդրադառնալով Մրենի տաճարին դուրս հանված կիսաբոլորակ խորանին, պիտի ըսեմ, որ երկար քառակուսի հատակագծով եկեղեցիներու մեջ խորանը արևելյան պատեն դուրս հանելու հազվագյուտ օրինակներեն մեկն է 7-րդ դարուն մեջ: Ավելի հավանական է 9-րդ կամ 10-րդ դարուն դուրս հանված լինի, որուն անմիջապես հաջորդած է երեք դուրս ցցված խորաններու (abside) սովորությունը: Համոզվելու համար, բավական է քննական հայացք մը նետել խորանին արտաքո կարգի խորության վրա, որ մեկ ու կես անգամեն ալ ավելի է սովորական խորաններու խորություններեն: Մի օր պետք տեսնելով կամ ավելի մեծ խորության և կամ հատկապես խորանը դրսեն տեսանելի ընելու դիտմամբ, քանդեր են արևելյան պատը և դուրս հաներ են:

Խորանին երկու կողմի սենյակներուն ծածկը ավելի նորագույն արվեստագործության դրոշմն ունի, voûte d'arête ըսված ոճի կամարով ծածկված է և հազիվ 12-րդ դարու հնություն ունի հայոց արվեստին մեջ (նկ. 120, BB): Սույն ձևով ծածկեր կգտնվին 7-րդ դարուն կանգնած Բագարանի և Ալամանի եկեղեցիներու մեջ. Բագարանի եկեղեցիին չորս անկյուններուն վրա, իսկ Ալամանի եկեղեցիին արևմտյան մասը ծածկված է այս ոճով, հետևաբար այդ եկեղեցիները 12-րդ դարուն մեջ, անկասկած, նորոգություն կրեր են:

Տեկորի տաճարին վրա եղած ուրիշ նորոգություններ և փոփոխություններ կան 7-րդ դարեն հետո, որոնց մասին ալ հարկ է ավելցնել քանի մը խոսք:

Շուրջանակի սյունազարդ ծածկույթներու վերացման ժամանակը ինձի կթվի 7-րդ դարեն հետո, բայց ոչ շատ մոտիկ 10-րդ դարուն, վասնզի սյունազարդ ծածկույթը վերացվելեն հետո անոր թողած հետքերը ծածկելու համար եղած նորոգության ոճը մեծապես կզանազանի 10-րդ դարու հայոց ոճերեն: Այս նորոգության ժամանակ պետք է որ շինված լինի արևելյան անկյուններու վրա սյունանման քանդակվածքը (նկ. 109, GG, նկ. 111, D) և խորանի երկու կողմի սենյակներուն կրկնահարկվիլը:

Հյուսիսային կողմի արտաքին սյունազարդ ծածկույթի տակ գտնված կիսաբոլորակ խորանին բարձրությունը մնացած է անփոփոխ, հակառակ անոր ետևի և հանդիպակաց հարավային կողմի սենյակներուն կրկնահարկվելով բարձրանալուն: Ասոնցմե դուրս եղած նորոգություններ և փոփոխություններ անվրեպ ապացույցներով 10-րդ դարուն Բագրատունի հարստության շրջանին մեջ ծաղկող հայկական ոճի կպատկանին:

Թեև հայտնի չէ, թե 10-րդ կամ 11-րդ դարուն ո՞վ է այդ նորոգությունները կատարող, սակայն բավական մեծ և հիշատակության արժանի նորոգություն է կատարված: Ամեն կողմեն շենքին կեսեն վեր, որ դեղնագույն քարերով շինված է, բոլորովին նոր շարված են. ամբողջությամբ վար առնելով արտաքին ճակատներու հին շարքերը, տեղը շարեր են մեր այսօրվան տեսած դեղնագույն քարերը: Նմանապես քառակուսի գմբեթի թե՛ արտաքին երեսները, թե՛ կոնաձև ծածկը նորոգվեցին առանց ներքին կողմը շարված քարերուն ձեռք տալու: Ամբողջ տանիքի քարե սալահատակումն ալ նույն ժամանակի գործ է: Ծածկը փոխանակ քանդելու, թանձրացուցեր են նորոգությունով, որուն ներքև տակավին կերևնա հին ժամանակի կղմինդրյա ծածկը: Նաև կտուրին թեքությունն ալ ավելցուցեր են ծածկը քարի փոխելու ժամանակ (նկ. 106, EE, նկ. 113, DD): Տաճարին չորս պատին վրա ցածեն գտնված բոլոր պատուհանները փակեր են բոլորովին, իսկ բարձր պատուհաններն ալ նեղցուցեր և կարճացուցեր են:

Պատուհանները նեղցնելու սովորությունը չենք կարող 10-րդ դարեն անդին տանիլ, ինչպես

[1] Երրորդ զի այսր աղագաւ ի տուրևառութիւն անկաւ շնորհս և ի թուականութիւնս քառասներորդաց. որով գտաւ ի մէջ մեր անբերելի անկարգութիւն, զի մի՛ ասացից՝ անօրէնութիւն. քանզի ծանուցեալ եկեղեցւոյ վերակացուք թէ ըստ բազմութեան թուոցն է և վարձն և ի պէտս արծաթսիրութեան, բազմացուցին ի մի տեղ տասն՝ աւելի կամ պակաս ծակոտեալ մատրունս խորանօք և սեղանովք. ըստ նմին և քահանայք թուոցն լցուցիչք... Ի պէտս այսորիկ եմուտ ամոնացին և մովաբացին յեկեղեցին. և կրճատեալն յիմաստութենէ և մալեալն ի շնորհաց եղև քահանայ. բարձաւ այլ դասակարգութիւն պաշտօնէից եկեղեցւոյ, սարկաւագաց և կիսասարկաւագաց՝ իբր զանկարգք և զանկատարք՝ յաղագս ոչ զթիւն գլխաւորելոյ: Ի՛ ծանր աղէտս մատնեցաք և յողբոց արժանաւոր մեղս և ոչ գոյ որ իմանայ, և ոչ այն որ խնդրէ զճշմարտութիւնն աստուծոյ. աստուածավաճառք եղաք, ի մարմնական շահավաճառութեան պէտս քահանայացաք, և քահանայացուցաք: Ո՛վ աղտիցս, ո՛վ յիմարութեանս. յիսրայէլի միանգամ ի տարւոջն մի քահանայ մտանէր արեամբ օտարաւ ի սրբութիւնսն և զամենայն ժողովուրդն քաւէր. իսկ մեք Քրիստոսի ամենայն աւուր վասն մեր պատարագելոյն յամենայն տեղիս՝ տկարացաք հաւատալ թէ քաւէ. այլ զնոյնն ի զանազան տեղիս և ի մի վայրն անպատուեցաք. և մատուցաք յանձուկ և անպատիւ ծակոտեալ խորանսն առանց սպասաւորութեան սարկաւագի, առանց հպատակութեան դպրի, առանց անուշահոտութեան խնկի, առանց լուցման ջահի, որ ի հարցն մեր ամենայն սահմանեցաւ ի պէտս նորին և ի կատարումն: Զայսքան բարեկարգութեամբս զանց արարաք և միայն համարոցն ծառայք եղեալ՝ զպատարագելն և զհաղորդութիւն քահանայիցն ի միմեանց պառակտեցաք առանձին-առանձին լինել և զթիւսն աճեցուցանել:

(Սրբոյն Ներսիսի Լամբրոնացւոյ Տարսոնի եպիսկոպոսի. «Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ եւ մեկնութիւն խորհրդոյ պատարագին»: Վենետիկ, 1847, երես 178-179):

բացատրեցի առաջուց, մանավանդ Տեկորի տաճարին պատուհանները նեղցնելու համար՝ մեջեն ագուցված քարերուն վրա եղած քանդակագործությունները զուտ Բագրատունի շրջանի վերածնության ոճին կպատկանին (նկ. 130, ձև 4)։ Հիրավի, թեև այդ զարդաքանդակներու մեջ մինչև 5-րդ դարու հնության հասնող ձևեր կան (նկ. 130, AB), սակայն նույն ձևերու խառնուրդով ակնահաճո (nuance) հյուսքեր կազմել՝ առանց բացառության առառավելն 9-րդ դարու հայ արվեստի ստեղծագործություն է։ Հին շրջանի մեջ շատ դժվար է գտնել նույն ոճով հյուսված զարդաքանդակներ։



Նկ. 136. Զարդաքանդակ գերեզմանախաչ [ըստ երևույթին Թորամանյանի կոմպոզիցիա]

Տանիքները քարով ծածկելու սովորությունն ալ բացարձակապես Բագրատունի հարստության շրջանի արվեստագործություն է։ Բագրատունի կանվանեմ անոր համար, որ հայ ճարտարապետության 10-րդ դարու վերածնությունը պարզապես սկսած է այդ ցեղի վերականգնման շրջանեն և ծաղկած ու զարգացած է գրեթե անոնց տիրապետության սահմաններուն մեջ։ 10-րդ դարու ճարտարապետներ օգտվելով Շիրակի քարահանքերու նպաստավոր հատկություններեն՝ կղմինդրի պաշտոնը քարին կատարել տվեր են՝ սղոցով ձևելով իրենց պետք եղած հաստությամբ. երբեմն տեղեր մինչև 3 սանտիմ. բարակությամբ քարեր ձևված են։ Մինչդեռ 7-րդ դարեն անփոփոխ մեզ հասած տանիքներու վրա առանց բացառության կղմինդր ծածկված է։ Մրենի գմբեթին վրա մինչև այսօր անվնաս պահված է կղմինդրի շարքը. Բագարանի ս. Թեոդորոսի վրա նույնպես կղմինդր է եղած, թեև այժմ թափված ու կոտրտված[1]. Զվարթնոցի պեղումները ցույց տվին, որ անոր վրան ալ կղմինդրով ծածկված էր. Տեկորի մասին արդեն գիտենք։ 10-րդ դարեն առաջ կանգնող հիշատակարաններու վրա եթե այսօր քարե ծածկեր կտեսնենք, պետք է անպայման հավատալ, որ շենքի հիմնարկության ժամանակակից չեն, հետնագույն նորոգություններով քարի փոխված են։

Տեկորի տաճարի գմբեթին խորանարդ պատվանդանեն վեր եղած ութանկյուն ցածլիկ թմբուկը իր կոնաձև ծածկով չէ կարելի ավելի հին համարել, քան 10-րդ դար։ Այդ ծածկի ձևը ամենեն առաջ՝ իրագործված կերևի Խծկոնքի վանքի ս. Աստվածածին ըսված եկեղեցիի և Մարմաշենի վահրամաշեն եկեղեցիի վրա, ասոնցմե հետո արդեն շարունակված է մինչև հայ ճարտարապետության վերջին անկման շրջանները։ Կոնը շրջապատող պսակը (corniche) դարձյալ նախքան 10-րդ դար ամենևին չէ երևցած. Զվարթնոց եկեղեցին 7-րդ դարուն ունի թեև համանման քանդակով պսակ, սակայն, ինչպես կտեսնվի պատկերին վրա (նկ. 130, ձև 3), մեծ տարբերություն կա թե՛ համաչափության և թե՛ moulure-ներու դասավորության մեջ։ Արևելյան տարազով հետևողություն է հին հունական առաջակարկառ պսակներու և ունի վերին մասին վրայի շերտին տակ larmier[2] ըսված փորվածքը (նկ. 130, ձև 3 A), որն որ երբեք գոյություն չունի ուրիշ բոլոր հայ հիշատակարաններու մեջ, բացի Գառնիի Տրդատա թախտի պսակներեն։

[1] Շատ հետաքրքրական է տեսնել այս կղմինդրները, գաղափար կազմելու համար, թե ո՞րչափ հառաջ գնացած էր այս արհեստը հայոց մեջ. քիչ կմնա հավասարի մեր այսօրուն եվրոպական կղմինդրներու հետ թե՛ շինության կատարելությամբ և թե՛ ձևով ունին իրարու մեջ ագուցվող մասեր, նաև գմբեթներու կոնաձևի համար մեկ կողմեն լայն, մյուս կողմեն նեղ ձուլվածներ։

[2] Larmier ըսված պսակին ամենեն վերի մասին դուրս ընկած տեղին վրա ներքևեն ամբողջ խողովակաձև փորվածք մ'է, որն որ պաշտոն ունի տանիքին վրայեն վազող անձրևին ջրերուն դեպի պատը վազելն արգիլել. ուստի, երբ կհասնի ջուրը այդ խողովակաձև փորվածքին՝ այլևս չէ կարող անցնել այդ փորվածքեն դեպի պատը և կկաթի վար՝ պսակին դեպի դուրս կարկառած չափով հեռու շենքին հիմեն։



սա արդեն պարզապես հունական ոճի ուղիղ ազդեցությունն է Զվարթնոցի վրա։ Տեկորի տաճարին մեջ գմբեթի կոնաձևի հետ միաժամանակ շինված է ներսի կողմեն կանոնավոր կաղապարի վրա ձուլված կիսագնդաձև ծածկը (calotte)։ Նույնպես ներքին կողմեն մույթերը և որմնասյուները միացնող մեծ աղեղներու նորոգությունները, որովհետև միևնույն քարերով են շինված այդ աղեղները, ինչ քարով որ շինված են 10-րդ կամ 11-րդ դարու համարված բոլոր նորոգությունները։

Տարակույս չկա, որ որևէ շենքի մը մեջ այնպիսի պատասխանատու մասեր, որպիսիք են գմբեթակիր աղեղներ, առանց բնության պատահարներու ալ հանդիպելու, դժվար թե կարողանային դիմանալ այսքան երկար դարեր. բայց, ինչպես կերևի, Տեկորի տաճարին մեջ մի անսովոր պատճառ ավելի փութացուցեր է ներքին գմբեթակիր աղեղներու շատ վտանգավոր և դժվարին նորոգությունը, որն որ կատարվել է բավականին հանդուգն և գործին մեջ համարձակ ճարտարապետի մը կողմանե։ Հին աղեղներու բոլոր քարերը քանդվեր են առանց ձեռք տալու վրայի մասերուն և ներքևեն վերստին նոր քարեր շարվելով՝ աղեղներ (arc) կազմվեր են։ Եվ որովհետև շատ դժվար էր նոր աղեղները ըստ ամենայնի խտացնել և հին շինության հետ ձուլել, այդ պատճառով ալ, իբր ապահովության միջոց՝ աղեղը կազմող քարերը ամենն ալ ատամնավոր տաշելով (նկ. 131, AAAAAAA) իրարու մեջ ագուցեր են, որուն շնորհիվ, պետք է ըսել, որ մինչև այսօր ալ մնացեր են, հիրավի, թեև հին շենքին հետ չեն ձուլվեր և ժամանակ անցնելեն հետո թուլանալով՝ վար կախվեր են քարերը, սակայն ատամներու միմյանց կառչումով մի նոր խտություն ստացեր են։ Քարերու վար կախվելեն հառաջ եկած դատարկության վրա ալ գմբեթի ծանրությունը ճնշելով՝ խորանարդ պատվանդանի պատերը հեղքվեր և միմիայն մեջտեղի մասերը վար իջեր են, իսկ անկյունները, որոնք գրեթե չորս մեծ մույթերու վրա հանգչած էին, թեև վերին աստիճան հնացած ու մաշված, սակայն դարձյալ իրենց ուղղահայաց դիրքն անգամ կորսնցուցած չեն։

Բագրատունյանց հարստության անկումեն հետո Տեկորի տաճարը կորսնցուցեր է իր կարևորությունը, այնուհետև ոչ մի կարևոր նորոգության հետքեր չեն երևիր, որոնք փոքր ի շատե հիշեցնեն 12-13-րդ դարերու հայ ճարտարապետության վերջին վերածնության ոճը, թեև բոլորովին առանց նորոգության չէ մնացեր, սակայն այդ եղածները կարկատան ըսվելու արժեքը միայն ունին։

Ուսումնասիրությունս վերջացնելե առաջ հարկ կհամարիմ քանի մը խոսք ևս ավելցնել արևմտյան դռան վրա Սահակ Կամսարականի անունով գրված արձանագրության մասին, որն որ բավականին լուրջ կերպով կկապվի կատարածս ամբողջ ուսումնասիրության հետ և կլուսաբանե որոշ տեսություններ։

Պր. Ա. Բաբախանյան ինձ հայտներ էր, որ մեծ գիտնական պր. Ն. Մառ կասկածելի կամ անհարազատ համարած է Տեկորի դռան վրայի Սահակ Կամսարականի անունով գրված արձանագրությունը, թե ի՞նչ հիման վրա, այդ դեռ ինծի հայտնի չէ. դժբախտաբար ես առիթ չեմ ունեցած հարգելի գիտնականին կարծիքը անձամբ լսելու, սակայն նույն արձանագրության մասին ես ալ ունեցա իմ անկախ կարծիքը։

Ամենեն առաջ նկատելի է, որ Տեկորի տաճարին նման մեծ շենք մը կանգնողի անվան հիշատակության վայել տեղը չէ այնտեղը, ուր փորագրված է Սահակ Կամսարականի հիշատակարանը։ Ընդհակառակը, պատշաճ տեղը գրված է Բագրատունի Գագիկ Ա-ի զուգակից Կատրանիդե թագուհիի մի նվիրատվության արձանագրությունը։

Կատրանիդե թագուհիի արձանագրությունը գրված է տաճարի արևմտյան դռան կատարը պսակող քանդակազարդ աղեղի ներքև՝ մինչև դռան վերնասյամը իջնող կիսաբոլորակ ճակատի վրա։ Քանդակազարդ վերնասյամի մոտ Կատրանիդե թագուհիի արձանագրությունը վերջանալե հետո, սկված է Սահակ Կամսարականի արձանագրությունը, ուր հազիվ մեկ տողատեղ մնացած էր գրելու համար. որովհետև այդ մեկ տողը բավական չէր ամբողջ արձանագրությունը բովանդակելու, մնացյալ մասերը փորագրեր են դռան վերնասյամին նեղ և լայն անքանդակ մնացած շերտերու վրա՝ իրարու անհամապատասխան մեծ ու փոքր և խիստ անճաշակ ու անկանոն տառերով։ Տառերու մեջ ալ ոչ մի ժամանակագրական ոճ չէ կարելի որոշ նշմարել, ամենահինեն մինչև ամենանոր տառերու ձևեր խառնված են։

Պահ մը ենթադրենք, որ նորոգության ատեն ժամանակակից թագուհիի անվան նախապատվություն տալու համար բուն շենքը կանգնողի անվան պատշաճ տեղը տվեր են անոր և ներքևը արտագրեր են նախապես գոյություն ունեցող Սահակ Կամսարականի արձանագրությունը, բայց ասով դարձյալ հակասությունը չի վերջանար։ Հայր Ալիշան ևս նկատեր է այդ հակասությունը («Շիրակ», երես 133), որ իմ ալ խորհրդածության գլխավոր առարկան եղավ։

Բագրատունյաց շրջանին (10-11-րդ դար) Տեկորի տաճարը ծանոթ է ս. Երրորդություն անու-

նով, մինչդեռ Սահակ Կամսարականի արձանագրությունը կանվանե զայն «Վկայարան Սրբոյ Սարգսի»:

Ի՞նչպես պետք է բացատրել այս երկու տարբեր անունները միևնույն եկեղեցվո անունով, միևնույն տեղի վրա, մանավանդ որ Կատրանիդե թագուհիի արձանագրության շարունակության մեջ, որ վեց տարի հետո ավելցված է, դարձյալ ս. Սարգիս անունով հիշատակված է:

Նախքան այս մասին իմ կարծիքը հայտնելս՝ նույնությամբ մեջ կբերեմ այստեղ երկու արձանագրություններն ալ՝ ընթերցողի քննադատության դյուրություն տալու համար, հուսալով, որ կգտնվին ավելի ճշտագույն լուսաբանողներ:

### Սահակ Կամսարականի արձանագրությունը

*Ուրանայ եւ Հոռո... (ե)պիսկոպոսի եւ Տ.... յրոնի Տեկորոյ վանաց երիցու եւ Մանանայ հազարապետի հիմնարկեցաւ տեղիս ի ձեռն Յոհաննու հայոց կաթողիկոսի եւ Յոհաննու Արշարունեաց. յիւր բարեխաւսութիւն եւ բոլոր ազգիս եւ ամուսնի եւ որդեկաց եւ սիրելեաց. Սահակ Կամսարական շինեաց զայս վկայարան սրբոյ Սարգսի*[1]*:*

### Կատրանիդե թագուհիի արձանագրությունը

*Ի ՆՇԷ թուականութեանն հայոց + Յանուն Աստուծոյ կամ եղեւ ինձ Կատրանիդէ Հայոց թագուհի դուստր Վասակայ եւ ամուսին Գագկայ թողեալ եմ զՏեկորոյ շարիատն վասն Գագկայ շահնշահի արեւշատութեան եւ իմ որդեացն. եւ վերակացուք սորա պարտական են զերանի որում թողութիւն ասեն հանապազ: Արդ թէ (մի) ոք իշխեսցէ լուծանել ի սուրբ Երրորդութենէն*[2]*: Եւ ես Աշոտ թագավոր հաստատեցի եւ թողեալ եմ զհարկն ընովիմբ յաւիտենից եւ զթաստակն վասն իմ արեւշատութեան եւ իմ ծնողաց եւ եղբարց զաւակաց իմոց որ աւր: թՒկ: Հայոց Ն: Կ: Գ: էր. արդ եթէ ոք հակառակ գա կամ հարկիս կամ շարիատիս թողլուս ՅԺԸ-իցն նզոված է երերեալ լիցի որպէս Կաեան անիծեալ որպէս Քանան բաժին նորա ընդ Ուղտի եւ ընդ խաչահանուացն եղիցի. վասն Սուրբ Սարգսի շինութեան եւ վասն մեր հոգեւոց ազատեցաք զազգ եւ հայր եւ մայր եւ որդիքս արդ մեր մեղացս եւ մեր ազգի մեղացս տէր է որ ընդդիմանա...*

*Սահակ Կամսարականի արձանագրության մեջ «Տեկորոյ վանաց երիցու և Մանանայ հազարապետի հիմնարկեցաւ տեղիս» խոսքեն կերևի, որ նախքան ս. Սարգսի վկայարանի հիմնարկվելը, այնտեղ գոյություն ուներ Տեկորի վանք և վաներեց. իսկ Կատրանիդեի և Աշոտի արձանագրություններեն ալ կերևա, որ այնտեղ եղեր են երկու եկեղեցիներ, մեկը ս. Երրորդություն անունով և մյուս՝ ս. Սարգիս:*

*Աշոտ թագավորի արձանագրությունը, որ Կատրանիդե թագուհիի պարգևատրությունը հաստատելու համար է, պարտադիր դարձուցեր է ս. Սարգսի ալ շինությունը թագուհիի նվիրատվության փոխարեն, որն որ նախապես թագուհին բնավ ի նկատի չէ ունեցեր. անշուշտ, ս. Սարգիսը հնացած կամ քանդված մի եկեղեցի էր այդ ժամանակ ս. Երրորդության մոտերը, և այս եկեղեցիները հավաքաբար «Տեկորոյ վանք» անունը ունեցեր են*[3]*, ինչպես Հոռոմոսի վանքը, ուր քանի մը եկեղեցիներ առանձին առանձին անուններ ունին, սակայն հավաքաբար Հոռոմոսի վանք կանվանվին ամենեն կանուխ հիմնարկվածի անունով: Օրինակ՝ Հովհաննես Սմբատ թագավորը կգրե իր եկեղեցիին վրա... «յիմ եկեղեցիս ի սուրբ Յոհաննես զոր շինեցի ի վանսս Հոռոմոսի»: Նմանապես ս. Գեորգ եկեղեցիին վրա կգրե դարձյալ նույն թագավորը... «ետու զիմ գեղս զՍահատունիս ի մեր հանգստարանս թագաւորաց ի տիեզերահռչակ վանսս Հոռոմոսի... եւ գրեցի ի Սուրբ Գորգ (Գէորգ)»...: Հետևաբար, հիմնվելով այս իրողության վրա, հավանական կգտնեմ, որ Տեկորի մեջ կար մի վանախումբ՝ Հոռոմոսի վանքին նման, որուն ամենահինին անունը մեզ հայտնի չէ և կամ անոնցմե մեկը կանվանվեր Տեկորո վանք, որուն մոտ կանգնեց Սահակ Կամսարական ս. Սարգսի վկայարանը, թերևս վկայարանի արձանագրությունն ալ գրեց ս. Երրորդության վրա, այնտեղ, ուր այժմ կա Բագրատունի թագուհիին արձանագրությունը, որն որ 11-րդ դարուն նորոգության ժամանակ երբ դռան կիսաբոլորակ ճակատը նորոգեցին (առանց քանդելու զայն պսակող քանդակազարդ աղեղը), այնտեղ գրեցին Կատրանիդեի արձանագրությունը և ներքևը ընդօրինակեցին Սահակ Կամսարականի հիշատակագիրը:*

[1] *Հ. Ղ. վ. Ալիշան, Շիրակ. Վենետիկ, 1881, երես 132: Այս արձանագրության բառերու շարքը չփոթած է հայր Ալիշանի տեղեկատուն: Շիրակի մեջ, բուն տեղին վրա չեն «սրբոյ Սարգսի» բառերը. այս մասին բացատրություն տեսնել երես 4:*

[2] *Այստեղեն կսկսի Աշոտ թագավորի արձանագրությունը՝ վեց տարի հետո գրված:*

[3] *Տեկորի այժմյան եկեղեցիեն մեկ կիլոմետր դեպի արևելք կա մի եկեղեցի ավերակ. թերևս այս եկեղեցին ալ Տեկորի վանքին կպատկաներ:*



*Փոքր մատուռներու և դամբարաններու արձանագրությունները իրենց մոտ կամ կից մեծ եկեղեցիներու վրա դրվելու երեք օրինակ ինծի հայտնի են: Առաջին՝ Խծկոնքի մեջ ս. Սարգիս եկեղեցիեն դեպի հարավ՝ երրորդ եկեղեցիին արևելյան ճակատի հարավային կողմը գրված է արձանագրությունմը, որուն կից շինված և այժմ բոլորովին քանդված մատուռի մը հատուկ է: Երկրորդ՝ Անիի Առաքելոց եկեղեցիին հյուսիսային դռան մոտ եղեր է մի մատուռ, որուն փլատակները բացվեցան պր. Ն. Մառի պեղումներով. ասոր արձանագրությունն ալ գրված է Առաքելոց եկեղեցիի խորշին մեջ: Երրորդ՝ Անիի Ապուղամրենց ս. Գրիգոր եկեղեցիի վրա կա մի արձանագրություն, որ բնավ չի վերաբերեր ս. Գրիգոր եկեղեցիին: Գրիգոր իշխանի որդին Ապղարիպ հայոց մարզպանը շիներ է եկեղեցիի մոտ երկու մատուռ՝ ս. Ստեփաննոս և ս. Քրիստափոր անուններով, որոնք բոլորովին փլած ու անհայտացած էին, չորս տարի առաջ մասնավոր պեղումներով երևան եկան երկու մատուռներու ավերակները, որով միանգամայն հաստատվեցավ արձանագրության ո՛րու վերաբերիլը, մինչդեռ առաջ կասկածողներ իսկ կային արձանագրության հարազատության կամ թվականին վրա: Ասոնցմե զատ, Տիգրան Հոնենց, Անիի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին շինած ժամանակ անոր արձանագրության մեջ մտցուցած է իր նորոգած մոտակա Բեխենց վանքի նորոգության հիշատակությունը:*

*Ամենայն հավանականությամբ, հիշածս եկեղեցիներուն նման, Տեկորի եկեղեցիին ալ շատ մոտիկ շինված էր ս. Սարգսի վկայարանը և թերևս կանգուն նույնիսկ Բագրատունիներու ժամանակ, որուն շինության համար կակնարկե Աշոտ թագավոր արձանագրության մեջ «վասն Սուրբ Սարգսի շինութեան» ըսելով և կուզեին չեն պահել բացի ս. Երրորդութենեն նաև ս. Սարգսի վկայարանը իբրև նախնյաց հիշատակ:*

*Վերոգրյալ պատճառներեն զատ, ուրիշ ավելի մեծ պատճառներ ալ կտիպեն համոզվիլ, որ Տեկորի այժմյան կանգուն մեծ տաճարը 5-րդ և 6-րդ դարերուն մեջ չէր կարող ս. Սարգսի վկայարան լինել: Նախ, ինչպես առաջուց բացատրեցի, արվեստի թողած հետքերու և Կամսարականի արձանագրության վրա հիմնված, ս. Սարգսի վկայարանի հիմնարկության ժամանակ կար Տեկորի տաճարը և 5-րդ դարուն ավելցված էին ավելի հին շենքին վրա շուրջանակի սյունազարդ ծածկույթները* (portique), *հետևաբար նաև դռների քանդակազարդ շրջանակներն ալ. երկրորդ՝ որ ավելի կարևորն է, իմ հետազոտություններուս մեջ մասնավորապես ուշադրություն դարձուցեր եմ յուրաքանչյուր դարաշրջանին մեջ կանգնված եկեղեցիներու անուններուն վրա, և ոչ միայն չեմ գտած 7-րդ դարեն առաջ կանգնվող մի եկեղեցի, որ, բացի կաթուղիկեն, ուրիշ անուն ունենա, այլև 7-րդ դարուն մեջ կանգնված մեծ եկեղեցիներն ալ կաթուղիկե անվամբ հորջորջված են: Իսկ պատմական տեղեկություններով ալ գիտենք, որ ի սկզբանե սրբոց անվան նվիրված շենքեր պարզ վկայարան անունը կստանային և փոքր ու անշուք շինություններ էին*[1]*, և անոնց կոչումը տուն կամ հանգստարան վկայից էր և ոչ տուն աստուծոյ*[2]*: Հետևաբար, Տեկորի այժմյան կանգուն տաճարին նման հսկա շինություն մը 5-րդ և 6-րդ դարերուն չէր կարող վկայարան լինել: Առաջին մեծ վկայարանը շինեց Կոմիտաս կաթողիկոս Հռիփսիմեի վկայարանին վրա՝ 7-րդ դարուն, որ իբրև նշանավոր իրողություն արձանագրեր են ժամանակակից պատմագիրներ:*

*Բայց ի նկատի ունենալով, որ մի գուցե գտնվեին նախքան 7-րդ դար սրբոց և մարտիրոսաց անվան նվիրված եկեղեցիներ, որոնք ինծի հայտնի չէին, ուստի, տարակույս փարատելու համար, դիմեցի մեծանուն պատմագետ պ. Կ. Կոստանյանցին և աջակցությունը խնդրեցի այս հարցի լուծման համար:*

*Խորին շնորհակալությամբ պիտի արձանագրեմ այստեղ, որ պ. Կ. Կոստանյանց ոչ միայն չզլացավ ինձ երկարորեն բացատրել, թե եկեղեցիները սրբոց անվան նվիրելու սովորությունը 7-րդ դարեն առաջ չէր կարող լինել, այլև բարեհաճեցավ մի հոդված գրել սույն աշխատությանս կցելու համար*[3]*:*

*Հետևաբար, սույն տեսությամբս կեզրակացնեմ, որ Տեկորի տաճարին վրայի Սահակ Կամսարականի անունով գրված արձանագրությունը կվերաբերի փոքր վկայարանի մը, հիմնված Տեկորի վանաց խումբին մեջ, հավանաբար այսօրվան կանգուն ս. Երրորդության տաճարին շատ մոտիկ:*

[1] *Պատմ. Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն: Ս.Պետերբուրգ, 1879 թ., եր. 88:«Եւ եղև յամի ԻԸ երրորդի թագաւորութեանն Ապրուէզ Խոսրովու՝ քակեաց կաթողիկոսն Կոմիտաս զմատուռն սրբոյն Հռիփսիմեայ ի Վաղարշապատ քաղաքի, զի կարի ցած և մթին էր շինուածն, որ շինեալ էր սրբոյն Սահակայ հայրապետի Հայոց կաթուղիկոսի՝ որդւոյ սրբոյն Ներսիսի»: - Կոմիտասի հաջորդը՝ Եզր կաթողիկոս հետևեցավ իր նախորդի օրինակին և քակելով Գայանեի վկայարանը, մեծցուց և ընդարձակեց (Յոհ. կաթ.):*

[2] *Նորայր Բիւզանդացի. Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք: Տփխիս, 1900, երես 254-256:*

[3] *Այդ հոդվածը ավելորդ համարեցինք զետեղել ժողովածուիս մեջ իբրև Թորամանյանի գրչին չպատկանող գործ:*

*Կազմող*

Բ

# ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՃԱՐԸ[1]

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

*Էջմիածնի տաճարը, իբրև դարավոր հայրապետական աթոռ, բնականաբար գիտնականներու և բանասերներու ուշադրության առարկա պիտի դառնար՝ մասնավորապես տաճարի շենքը, որ ավանդաբար հայոց քրիստոնեության առաջին շրջանին կվերագրվի՝ Տրդատի և ս. Գրիգորի ձեռքով 303 թվականին շինված. այդ պատճառով ալ, բացի պատմական ուսումնասիրութենե, ճարտարապետական տեսակետով ալ հետաքրքրական պիտի լիներ:*

*Շենքի մասին պատմական շատ քիչ տեղեկություններ կան մինչև 7-րդ դարու կեսը. իսկ անկե ասդին, մինչև 17-րդ դար, գրեթե բոլորովին մթության մեջ թաղված է:*

*Առաքել վարդապետ Դավրիժեցին 17-րդ դարուն, իր նախորդներեն համեմատաբար քիչ ավելի մանրամասնությամբ կնկարագրե թե՛ իրեն օրով տաճարին ունեցած ավերակ վիճակը և թե՛ Մովսես կաթողիկոսի ու անոր հաջորդներու մեկ քանիին ձեռքով կրած նորոգությունները:*

*Իբրև հնագույն եկեղեցի և հայրապետական աթոռ, սկսած 17-րդ դարեն, գիտնական ճանապարհորդներու ուշադրությունը գրված է միշտ, որոնք ավելի կամ նվազ չափերով արձանագրած են իրենց տեսությունները և տպավորությունները:*

*Առհասարակ, քննողներեն ամենն ալ թեր ու դեմ ենթադրություններե հետո, գրեթե բացարձակապես համաձայն են մի կետի վրա, թե էջմիածնի տաճարին հատակագծի ձևն է միայն, որ անփոփոխ պահված է 4-րդ դարեն մինչև այսօր:*

*Ես ալ իմ կարգին ցանկացա հետազոտել և մինչև այժմ եղած կարծիքները համեմատել շենքին հետ, հուսալով, որ թերևս հաջողվի ինձի ալ քայլ մը ավելի հառաջ երթալ դեպի ստուգությունն:*

*1908 թվականին մարտ ամսոյ մեջ, երբ էջմիածին կգտնվեի, սկսեցի հատկապես քննել շենքի յուրաքանչյուր մասի վրա եղած նորոգություններն ու փոփոխությունները: Այս միջոցին ամենեն առաջ ուշադրությունս գրավեցին հյուսիսային ճակատի դուրս ցցված* abside*-ի երկու կողմի պատերու կատարին մոտ երկու* fronton*-ներու հետքերը, որոնք պարբերաբար եղած կարկատաններու մեջ գրեթե անհայտանալու վրա էին: Այդ ներդաշնակությունը ինձի անմիջապես հիշեցուց Անիի Առաքելոց եկեղեցիի արևելյան ճակատը, որ նմանապես կազմված է միջին, մեծ և կողմնակի երկու փոքր* fronton*-ներով[2]:*



*Նկ. 137. Էջմիածնի տաճարը հյուսիսային կողմից*

*Հարգելի գիտնական մեծ. պր. Ն. Մառի աջակցությամբ 1906 թվականին վերակազմեր էի Անիի Առաքելոց եկեղեցին, որովհետև փլատակները պեղելու և կորսված մասերը ամբողջացնելու համար պ. Ն. Մառը հաճությամբ իմ տրամադրության տակ դրավ մշակներ, որով ես հնարավորություն ունեցա ըստ ամենայնի ամբողջացնել Առաքելոց եկեղեցիի պակաս բեկորները:*

*Տեսնելով Էջմիածնի տաճարին հյուսիսային ճակատի շատ մոտ նմանությունը Անիի Առաքելոց եկեղեցիի արևելյան ճակատի հետ և այս երկու եկեղեցիներու հատակագծի համանման հատկությունները, իսկույն զգալի եղավ Էջմիածնի տաճարին չորս պատերեն դուրս ցցված* abside*-ներու անպատշաճությունը և անհարազատությունը: Այս համոզումս ավելի մեծ հաստատություն գտավ, երբ նկատեցի* abside*-ներու քարերուն՝ թե՛ չափերով և թե՛ որակով կողմնակի պատերու քարերեն ունեցած մեծ տարբերությունները: Համոզվեցա նաև, որ նախնական ձևին վրա գաղափար կազմելու համար ստուգագույն և դրական ապացույցներ գտնելու ժամանակը դեռ չէր անցած, մանրամասն և լուրջ քննությունները կարող էին նոր լուսաբանություններ ընծայել մինչև այժմ մութ մնացած կետերուն:*



*Նկ. 138. Էջմիածնի տաճարը հարավային կողմից*

*Թեև ինքզինքս առաջինը կկարծեի այս հետաքրքրական երևույթը նշմարող, սակայն հետո տեսա, որ ինձմե շատ առաջ, Ստրչիգովսկիի ըսելով, Դյուբուա նկատեր և գծագրեր է մի պատկեր, իբրև հին ձև Էջմիածնի տաճարին արտաքին ճակատին, որն որ բավական տարբեր է այսօրվան ձևեն[1]: Հայր Ալիշանի «Այրարատ»-ի երես 214, «Հին ձև կաթողիկէին Էջմիածնի» խորագրով 84-րդ պատկերը ընդօրինակված է Դյուբուայի գծած պատկերեն[2]:*

*Որչափ որ Ստրչիգովսկի[3] Դյուբուայի այդ պատկերը կամայական կգտնե և անոր կարծիքը քննադատե, այնուամենայնիվ հանդեպ Դյուբուայի խելացի և իրական տեսության՝ Ստրչիգովսկիի քննադատությունը միանգամայն անտեղի կմնա, որովհետև, գուցե ինքը չէ տեսեր այն բոլոր մնացորդները, որոնք խոր հնություն կապացուցանեն և թե զուտ հռոմեական ոճի նկարագիրն ունեն, որոնց վրա հիմնվելով՝ Դյուբուան կազմեր է իր կարծիքներն ու շենքին հին պատկերը[4]:*

*Հայտնի է, որ Դյուբուա հատակագծի ուսումնասիրությունով չէ զբաղված, զինքը հետաքրքրեր են միայն* façade*-ի մանրամասնությունները, այդ պատճառով ալ նա միայն հին* façade*-ը վերակազմեր է, ընդունելով միևնույն ատեն, որ չորս կողմեն դուրս ընկած* abside*-ները ևս այնչափ հին են, որչափ տաճարի սկզբնական շինությունը[5]:*

*Պետք է խոստովանեմ, որ եթե ես նախապես Առաքելոց եկեղեցիի հետազոտությամբ զբաղված*

---

[1] *Արտատպվում է «Ազգագրական հանդես»-ի XIX գրքից:*
*Կազմող*

[2] *Անիի Առաքելոց եկեղեցիի փոքր* fronton*-ները, Էջմիածնին նման, ամբողջ կողմնակի մասերը գրված չեն. երկու քովերեն փոքրիկ դատարկություններ թողված կան, որոնց վրա* fronton*-ներեն ցած թեք տանիքներով ծածկված են. սակայն այս տարբերությունը մեծ նշանակություն չի կարող ունենալ:*

[1] Chardin*-ը նույնպես Էջմիածնի յուր նկարի վրա ցույց է տվել փոքրիկ* fronton*-ներից մինը, որ մնացել է հետագա չինվածքի տակ, այն է՝ տաճարի հարավային կողմի արևմտյան ծայրում (*Voyages du chevalier Chardin en Perse, *հրատ.* Lanlès, Atlas, pl. X*), սակայն այստեղ սրանց նշանակությունը չի բացատրվում:*

[2] Dubois de Montpéreux. Voyage autour du Caucase, Paris. 1839. Atlas. sér. Ill pl. Vll. fig. 1.

[3] Strzygowski, Das Etschmiadzin–Evangeliar, Wien. 1891, *եր. 3.*

[4] Dubois de Montpéreux. *հ.* III, *երես 371:*

[5] *Հ. գ.* Atlas, scr, III–VII, fig. I.

չլինեի, հազիվ թե ես ալ, բացի façade-են, հատակաձևին վրա ևս այնքան լուրջ ուշադրություն դարձնեի, ինչպես այժմ:

Ի սկզբան Էջմիածնի տաճարը արտաքուստ ունեցեր է պարզ ուղղանկյուն քառակուսի ձև՝ առանց դուրս ցցված abside-ներու. ասոր ապացույցներեն մեկը, ինչպես վերև նկատեցի, քարերու շարվածքին և որակին մյուս պատերուն հետ որևէ կապ չունենալն է. մեկ նայվածքով կարելի է տեսնել այդ տարբերությունը նույնիսկ լուսանկարին վրա (նկ. նկ. 137 և 138): Բացի այս տարբերություններեն, կա մի ուրիշ բնորոշ երևույթ ևս. հարավային ճակատի abside-ին անմիջապես հաջորդող պատուհաններուն archivolte-ները մնացեր են մասամբ abside-ի հետնագույն շինվածքի ետևը (նկ. 138, 1, 2): Նույն բանը պատահեր է նաև հյուսիսային ճակատի վրա մտից դուռն արևելակողման պատուհանին (նկ. 138, 3):

Կթողում այժմ ուրիշ մանր-մունր ապացույցներ և պիտի քննեմ ճարտարապետական ու շինարարական տեսակետով այն մասերը, որոնք անվրեպ ընդունված օրենքներ էին հայոց մեջ և թե անոնցմե մեծ մասը տակավին օրենք է ներկա ճարտարապետական արվեստի մեջ:

Տաճարի ներքին կողմեն, առանց abside-ներու խորության, արևելքեն արևմուտք ամբողջ երկայնությունն է 22,55 մետր, իսկ լայնությունը հյուսիսեն հարավ, նույնպես առանց abside-ի խորության՝ 20,72 մետր: Արևելքեն արևմուտք ձգվող երկայնության վրա ավելցնելով արևելյան և արևմտյան ճակատներու պատի թանձրությունները, արևելքեն 0,80 մետր[1], արևմուտքեն 1,15 մետր, հյուսիսային ճակատի արտաքին երկայնություն կունենանք 22,55+0,80+1,15=24,50: Նույնպես լայնության վրա ավելցնելով պատերու թանձրություններ՝ 20,72+1,15+1,15=23,02, կունենանք արևելյան և արևմտյան ճակատներու արտաքին երկարություն:

[1] Տաճարը արևելակողմի քառակուսի ավանդատունեն բաժնող պատի թանձրությունը ոչ թե 0,80 մետր է, այլ 1,32, բայց, ինչպես պիտի տեսնվի քիչ հետո, քանի որ երկու շինությունները իրարմե բաժնող գծին ուղղությունը կանցնի 0,80 մետր թանձրություն թողելով տաճարին կողմը, այդ պատճառով ալ 0,80 մետր հաշվեցի, հայտնի բան է, որ այժմյան 1,32 մետր թանձրությունը հետնագույն նորոգությունների արդյունք է:

Այս առթիվ պետք է ըսեմ նաև, որ տգետ արհեստավորներու ձեռքով անընդհատ եղած նորոգություններու պատճառով, այնպիսի ծուռություններ և անկանոնություններ հառաջ եկեր են շենքին ամեն կողմին վրա, որ գրեթե անհնար է ուղիղ չափել և գծել առանց միջին ճանապարհը ընտրելու. նկ. 145-ի վրա գրված իսկական չափերեն կարելի է եզրակացնել, թե ոչ մի համեմատական ուղիղ չափ չէ մնացած. նույնիսկ տաճարին երկայնությունը հարավային կողմեն 0,40 մետր երկայն է:

Նախապես պետք է գիտնալ, որ հաճախակի նորոգություններու և անկանոն կարկատաններու մեջ, տաճարին արևելքեն արևմուտք երկայնությունը ճշտիվ որոշող մի նշան մնացած է, այն է՝ շենքին երկայնությունը վերջանալեն անմիջապես հետո մի ուրիշ շինության կցվածքի գիծը նկատելի է բարձրեն: Երկրորդ շինությունը ավելի ցած է տաճարեն, որուն բովանդակ ճակատը պսակող fronton-ին սկիզբը միայն մնացած է տաճարի արևելյան կողմի անկյունին կից (նկ. 137, 4): Միևնույն անջատման գիծը կերևա նաև հարավային ճակատին վրա (նկ. 138, 6): Այս մնացորդները կապացուցանեն, որ տաճարին արևելյան կողմին կից, անոր բովանդակ լայնության հավասար՝ գոյություն ունեցել է մի ուրիշ շինություն, որը մի ժամանակ քանդվելով՝ տաճարին կից մի մասը մնացեր է. նորոգության ժամանակ օգտվեր են նույն պատի մնացորդներեն և կազմեր են այժմյան խորանի երկու կողմի քառակուսի սենյակները, որոնք կծառայեն իբրև ավանդատուն (նկ.139, 1, 1): Ավանդատուններու մեջ գտնված պատուհանները, անտարակույս, ի հնումն կվերաբերեին հարակից շինության: Սույն հարակից շինությունը, դատելով իր fronton-ի թեքության աստիճանեն և գրված դիրքեն, պետք էր որ բավական լայնություն ալ ունենար: Ինչ բանի էր ծառայած այդ շենքը, իհարկե, չէ կարելի հաստատ գիտնալ, միայն թե երկու եզրակացություն պիտի հանեմ, որոնցմե մեկը դարձյալ իբրև ապացույց պիտի ծառայե այժմյան abside-ներուն հետնագույն ժամանակի մեջ արտաքին պատերեն դուրս հանված լինելուն:



Նկ. 139. Այժմյան Էջմիածնի հատակագիծը

Որչա՛փ խորություն և ինչ ձև ալ որ ունենար տաճարի ամբողջ լայնության հավասար այս հարակից շենքը, անոր մեջ մեծ անտեղություն և անհարմարություն պիտի ներկայացներ տաճարին արևելյան abside-ին դուրս ցցվելը, ուստի պարզ է, որ հարակից շինությունը քանդվելեն հետո է, որ դուրս հանված են abside-ները առանց որևէ անտեղության պատճառ տալու:

Մյուս եզրակացությունս, շատ վերապահությամբ սակայն, պիտի կապեմ Էջմիածնի Ուչքիլիսե անվանելու ավանդության հետ. ենթադրելով, որ թերևս արևելյան կողմեն կային երկու ուրիշ մատուռներ ևս, որոնց մեկուն ճակատի մնացորդն են այսօրվան երևցած fronton-ի կտորը և տաճարին կից պատի մնացորդները:

Չգիտեմ որչափ հավանական վկայություն կարելի է համարել Տեկտանդերի գրածը այս մասին, որն որ այնտեղ կուզե տեսնել երեք եկեղեցիներ, որոնցմե մեկը միայն կանգուն էր իր այցելության ժամանակ: Արդյոք տեսա՞վ այդ մատուռներու մնացորդներեն այն ժամանակ, որ, ըստ Առաքել վարդապետ Դավրիժեցիի վկայության, յոթը կանգուն բարձրությամբ փլատակներ կային տաճարին շուրջը: Թեև Տեկտանդերի այցելության ժամանակ այդ շինության գոյությունը հավանական չեմ կարող համարել, քանի որ abside-ները ավելի հին ժամանակ դուրս հանված լինելու փաստեր շատ կան:

Ոմանք կկարծեն, որ Ուչքիլիսե անունը ստացած է Հռիփսիմեի և Գայանեի տաճարներու Էջմիածնի անմիջապես մոտ գտնվելուն պատճառով, սակայն այս կարծիքը ամենևին հավանական չէ, որովհետև, եթե Հռիփսիմեի և Գայանեի տաճարները Էջմիածնի տաճարին հետ կապել հարկ լիներ, պետք էր որ միևնույն ավանդությունով սրբազործված ժամանակակից Շողակաթն ալ միացվեր անոնց, ահա այն ատեն ալ փոխանակ երեքի՝ չորս պիտի լինեին: Ըստ իս՝ անպայման պետք է ընդունել, որ Մայր տաճարին արևելյան կողմի կցված շինությունը երկու ուրիշ մատուռներ էին և անոնցմով ծագում առած է ավանդական Ուչքիլիսե անունը:

Այս միջանկյալ նկատողություններեն հետո անցնենք դարձյալ բուն տաճարի հետազոտության:

Ըստ շինարարական օրենքի, եթե տաճարի հյուսիսային պատի բովանդակ երկայնությունեն զեղչենք փոքր fronton-ներու գրված լայնության չափերը՝ 7,03+7,03 =14,06 (նկ. 137, 7,8), (նկ. 140, 1,1...), մնացորդ 11,14 լայնությունը ամեն կողմի միջին մեծ fronton-ներուն լայնության չափը ներկայացնելեն զատ, նաև կորոշե գմբեթի խարիսխի տրամագծին[1] իսկական սահմանը. որովհետև այս լայնությունն է, որ տանիքի միջոցով հյուսիսեն հարավ, արևելքեն արևմուտք երկննալով խաչաձևվելեն հետո (նկ. 140, 2, 2...) մեջտեղը կազմված քառակուսիին վրա միայն կհանգչի գմբեթը (նկ. 140, 3, 3...): Այս լայնության մեջ կգտնվին նաև fronton-ները կազմող պատերուն թանձրությունները (նկ. 140, 4, 4): Հետևաբար տաճարի մեջ գմբեթակիր մեծ այուներու դասավորության սահմանն ալ պիտի լինի այս 11,14 լայնության մեջ (նկ. 140, 5, 5...):



Նկ. 140. Էջմիածնի տաճարի սկզբնական մակարդակը և տաճարը հյուսիսից

[1] Հյուսիսային ճակատի արևելյան փոքր fronton-ը միայն չափելու հնարավորություն ունենալուս համար, բոլոր տեսությունները հիմնած եմ անոր չափերուն վրա. պետք է ըսել, որ abside-ի կողմի վերջավորությունը անորոշ է. հանդիպակաց կողմի փոքր fronton-ը աչքով այնպես կերևա, թե քիչ ավելի լայն է. եթե այդպես լինի, ենթադրություններես ոչինչ չփոխվելեն զատ, հետևանքն այն կլինի, որ ներքին գմբեթակիր այուներ իրարու ավելի մոտենալով, գմբեթի տրամագիծն ալ քիչ կփոքրանա և ճիշտ Անիի Առաքելոց եկեղեցիի չափերուն կհավասարի:

Նկար 140-ի 1, 1... Թվանշանները կետաշար գծերու վրա fronton-ներու տանիքներուն զիրար խաչաձևող ընթացքը ցույց կուտան. ուրեմն, այս հաշվով, գմբեթի խարիսխն ալ պետք է որ 11,14 լայնություն կամ տրամագիծ ունենա, որով կստացվի մոտավոր համեմատական չափ հայկական ոճի լայնանիստ գմբեթներու, հակառակ այժմյան զգալի կերպով նեղցած տրամագծին: Այս անվիճելի կանոնին հետ համեմատելով այսօրվան խառնաշփոթված մասերը, պարզ կտեսնվի, որ ոչ միայն տաճարին դուրսը, այլև ներսն ալ մեծամեծ փոփոխություններու ենթարկվեր է:

Եթե մենք ձեռի տակ չունենայինք արվեստագիտական այս անվրեպ ապացույցը, դարձյալ մեզ նկատելի պետք է լիներ մի ուրիշ բնորոշ հանգամանք, այն է՝ ներքին գմբեթակիր մեծ սյուներու դասավորության կապը, որոնք կղեկավարվին միշտ գմբեթի տրամագծով և միջին մեծ fronton-ներու տանիքներու խաչաձևումով: Արդ՝ այժմ կտեսնենք, որ այդ գմբեթակիր չորս մեծ սյուներու դասավորությունը (նկ. 139) ոչ միայն հայկական ոճի չի պատկաներ մինչև 17-18-րդ դարերը, այլև ուրիշ քրիստոնյա ազգաց եկեղեցիներու մեջ ալ հազիվ թե պատահած լինի նույնօրինակ դասավորություն, այսինքն՝ երեք nef-երը հավասար լայնությամբ:

Այս մասին ևս շատ սխալ է Ստրչիգովսկիի կարծիքը, երբ զայն «Հուստինիանու ժամանակ գործածվել սկսող բյուզանդական գմբեթավոր եկեղեցյաց առաջին կաղապարին նման» կհամարի. մինչդեռ Այա-Սոֆիան, որ մայրն է բյուզանդական գմբեթավոր եկեղեցիներու, այս համեմատական դասավորութենեն շատ հեռու է և կողմնակի զգալի կերպով նեղցած nef-եր ունի:

Հայոց եկեղեցիներու մեջ ավելի շատ շեշտված է միջին ոնքերու լայնությունը, քան բյուզանդական եկեղեցիները, ինչպես՝ Տեկոր, Մրեն, Անիի մայր եկեղեցին, որոնք անհամեմատ նեղ կողմնակի թևեր ունին, և այդ իսկ պատճառով ալ միշտ լայնանիստ եղած են Հայոց եկեղեցիներու գմբեթները: Անիի մայր եկեղեցին, որուն լայնությունը ավելի է, քան Էջմիածնի տաճարը, ներքին գմբեթակիր մեծ սյուները այնքան մոտ դրված են հյուսիսային և հարավային պատերուն, որ մի օր, նորոգության մը ժամանակ ստիպվեր են որմնասյուներու խարիսխի հառաջակարկառ moulure-ներեն մեկ մասը տաշել անցքը լայնցնելու համար[1]:

Հետևելով նույնիսկ նախապես գտնված 11,14 միջին լայնության չափերուն, որոնց խաչաձևումեն հառաջ եկող քառակուսիին projektion-ը գետնի վրա կուտա թե՛ սյուներու մեկզմեկե և թե՛ իրենցմե դեպի պատը եղող հեռավորության չափը, դարձյալ միջին թիվը՝ հայկական եկեղեցիներու համաչափության հակառակ՝ խիստ նեղ է:

Այս արտասովոր երևույթը լուսաբանելու համար, նախ ի նկատի ունեցա հին պատերու քառակուսի շրջանակին մեջ, այսօրվան սյուներու դասավորությամբ գմբեթավոր մի եկեղեցի՝ առանց abside-ներու և արևելյան abside-ը պատեն ներս ամփոփված, բայց այս նկատումը շատ անհեթեթ արդյունք տվավ. abside-ի բերանը կհասներ և գրեթե կմիանար արևելյան կողմի գմբեթակիր սյուներուն և երկու քովերը կթողեր խորություններ իբրև խորշ, որոնք բոլորովին օտար էին քրիստոնեական եկեղեցիներու. իսկ մնացած մասն ալ հյուսիսեն հարավ ավելի լայն, քան արևելքեն արևմուտք, երկայն սրահի մը ձևը կստանար: Այս անհարմարության առջև կմնար միայն ենթադրել, թե գուցե արևելյան կողմեն միայն խորանի abside-ը դուրս հանված էր, սակայն այս ալ անկարելի էր, նախ՝ վերը հիշված պատճառներով, հետո ալ բոլորովին հակառակ էր հայոց եկեղեցիներու հատակագծային ոճերուն, որոնց մեջ ընդհանրապես abside-ները ծածկված են արևելյան պատեն ներս: Թեև կան իբրև բացառություն դուրս ընկած արևելյան abside-ով եկեղեցիներ, ինչպես՝ Տեկորի, Մրենի, Քասաղի եկեղեցիները, սակայն ասոնց ամենն ալ, ըստ իս՝ քննության կարոտ են, և շատ պատճառներ կան համոզվելու, որ անոնք հետնագույն հավելվածներ են: Թաչինի ս. Աստվածածին[2] եկեղեցին վրա պարզապես հայտնի է, որ կողմնակի բոլոր abside-ները հետո են ավելցված, հավանաբար 10-րդ դարուն կամ ավելի հետո: Ուստի պետք էր որ ընդունեինք արևելյան abside-ը անպայման արևելյան պատեն ներս և աշխատեինք մյուս մասերուն վրա հառաջ եկած անհարմարություններուն պատճառները փնտռել: Արդ, վերստին հարկ կլիներ դիմել Անիի Առաքելոց եկեղեցիին և անոր հատակագծին հետ համեմատելով՝ լուծել հանգույցը (նկ. 140), որուն համաչափական ուղղությունները և հարամասունքները իրագործելով Էջմիածնի տաճարի պատերու սահմանին մեջ, կստանանք նկ. 140 հատակագիծը, որը ոչ միայն ընդհանուր տպավորությամբ կհամապատասխանե Առաքելոց եկեղեցիին հատակագծին, այլև վերին աստիճանի պատշաճություն և համանմանություն կստանա նաև չափերով (նկ. 140):

[1] Հիշյալ գիրք, եր. 5:

[2] Տեր-Մովսիսյան - Էջմիածին և Հայոց հնագույն եկեղեցիներ (Ազգ. հանդ., գ. XVI, տախտ. XXI):



Էջմիածնի տաճարին արտաքուստ երկայնության չափն էր 24,50 և լայնությունը՝ 23,02, որով կտեսնենք, թե ուղիղ հավասարակողմ քառակուսի չէ չենքը, արևելքեն արևմուտք 1,48 մետր ավելի երկայն է:



**Նկ. 141. Անիի Առաքելոց եկեղեցու հատակագիծը**

Առաքելոց եկեղեցիի երկայնությունը արևելքեն արևմուտք 21,64, լայնությունը՝ 19,68 մետր, ասոնց տարբերությունն է 1,96 մետր: Ուրեմն, Էջմիածնի տաճարի համաչափությունը՝ աննշան տարբերությամբ՝ պահված կտեսնենք Առաքելոց եկեղեցիի մեջ[1]: Ուստի վերև կատարված թե՛ շինարարական և թե՛ եկեղեցական ճարտարապետության քննություններե հետո, երբ չափերու մեջ ալ շատ մոտ նմանություն կգտնվի Էջմիածնի տաճարի և Առաքելոց եկեղեցիի մեջ, այն ատեն մի քիչ ավելի համարձակորեն կարելի կլինի ըսել, թե Էջմիածնի տաճարը, ի սկզբանե Վահան Մամիկոնյանի օրով կառուցվածը, եղած է Անիի Առաքելոց եկեղեցիի նման, ի ներքուստ խաչաձև կիսաբոլորակ վերջավորված թևերով, և արևելքեն արևմուտք փոքր չափով երկայն, քան հյուսիսեն հարավ, ինչպես նկ. 141 և նկ. 143:

[1] Անիի գագկաշեն ս. Գրիգորը, որ ուղիղ ընդօրինակություն է Զվարթնոց եկեղեցիի, բացի զանազան ակամա տարբերություններե՝ տրամագիծն ալ 0,60 մետր տարբերություն ունի:

Որպեսզի ավելի ապահով համարվի սույն եզրակացության ստուգությունը, ես պիտի ներկայացնեմ նաև հետևյալ փաստերը, որոնք ոչ նվազ դրական են համոզումներս հաստատելու համար:

Առհասարակ հայոց եկեղեցիներու մեջ կիսաբոլորակ abside-ները իրենց շառավիղի երկայնութենեն ավելի խոր են, այս համեմատությամբ ալ երբ 11,14 մետր լայնության մեջ պատերու թանձրությունը թողնենք հետո կիսաբոլորակը կգծենք, կստանանք ուղիղ համաչափություն խաչաձև եկեղեցիի abside-ներու ալ պատշաճ խորությամբ. միայն մի քիչ կնեղնա գմբեթին տրամագիծը այս գործողությամբ և այս ալ բնական երևույթ է բոլոր խաչաձև եկեղեցիներու մեջ. եթե խաչաձևի պահանջը չլիներ, անպայման պետք էր որ ներքին գմբեթակիր սյուները իրարմե ավելի հեռու և արտաքին պատերուն ավելի մոտիկ դրվեին ըստ հայկական ոճի անհրաժեշտ պահանջի, որով թե՛ գմբեթին տրամագիծը պիտի մեծանար սովորական ուղղանկյուն եկեղեցիներու գմբեթներուն նման և թե՛ միջին fronton-ը պիտի լայնար ավելի, քան 11,14 մետր:

Դարձյալ մի ուրիշ ապացույց են չորս անկյուններու վրա չորս սենյակները, որոնց գոյությունը անվիճելի է հետևյալ պատճառներով:

Այժմյան մտից դռներն ամենևին իրենց օրինական տեղին վրա չեն, նույն տեղերուն վրա մտից դռներ առանց բացառության մենք չենք կրնար գտնել բոլոր հայոց եկեղեցիներու մեջ, մանավանդ անոնց չափերու փոքրությունն ալ ապացույց է, որ գլխավոր դռները չէին, այլ չորս անկյունի չորս սենյակներու դռները: Հարավային ճակատին այսօրվան գործածական եղող դռան կատարյալ համաչափությամբ զետեղված է հանդիպակաց անկյունի մոտ փակված դուռը (նկ. 138, 7), որն որ կբացվի ուղղակի հարավ-արևելյան սենյակի վրա. կասկած չկա, որ հյուսիսային կողմեն ալ դեմ առ դեմ գտնված սենյակին մեջ կար այս դուռը, բայց փոփոխությանց ժամանակ գոցված է բոլորովին: Օրինական կերպով՝ անկասկած, գլխավոր դռները բացված էին չենքի երեք ճակատներուն վրա ճիշտ մեջտեղեն, ինչպես մյուս բոլոր հայկական եկեղեցիները. և սա այնպիսի անհրաժեշտ պահանջ էր, որ նույնիսկ 7-րդ դարեն սկսյալ մեզ հասած արտաքուստ շեշտված abside-ներով խաչաձև բոլոր եկեղեցիներուն վրա մտից գլխավոր դռները բացված են դարձյալ մեջտեղեն, այսինքն abside-ներու կեդրոնեն (նկ. 140, հատակագիծ): Ուստի շատ պարզ է, որ abside-ներուն դուրս հանվելու ժամանակը երբ քանդվեցան ներսի հին abside-ները, քանդվեցան նաև դռները և օգտվելով սենյակներու

դռներեն՝ ավելորդ համարվեցավ նորոգ հավելված abside-ներուն վրա դռներ բացվելը, նույնպես ավելորդ էր հարավային ճակատի վրա դեպի արևելյան անկյունի մոտի դուռը, որ շատ անպատշաճ կերպով սեղանին մոտ կբացվեր՝ սենյակները կա abside-ներուն հետ քանդվելե հետո (նկ. 138, 7):

Էջմիածնի տաճարին մեջ չորս անկյունի սենյակները թեև իրենց պարզությամբ կտարբերին Անիի Առաքելոց եկեղեցիի խորանազարդ ձևերեն, սակայն այս հատկությունը ամենևին չի վնասեր ենթադրությանս հավանականության, որովհետև նախքան 10-րդ դար հայոց եկեղեցիներու մեջ ամենևին չկան abside ունեցող կողմնակի սենյակներ, եթե գտնվին ալ, պետք է համարել որպես հավելված 10-րդ դարու: Անիի Առաքելոց եկեղեցվո հետ կարելի է միաժամանակ շինված ընդունել նաև կողմնակի սենյակներու abside-ները, որովհետև անոր շինության ալ ամենահավանական ժամանակն է 10-րդ դարը:

Էջմիածնի տաճարին մեջ ի՞նչ բանի կծառայեին արևմտյան կողմի սենյակները, այդ բանը թող բացատրեն Երերույքի, Հռիփսիմեի և այլ նմանը ունեցող տաճարներ, իմ կարծիքս այն է, որ այդ սենյակները հայոց նախնական եկեղեցիներու մեջ թերևս ծառայած են իբրև հեթանոսական գավիթներ, քանի որ արևմտյան եկեղեցիներու նման, հայերը այդ խորհուրդին համար որոշ բաժին չունին իրենց եկեղեցիներու մեջ: Այս կարծիքը կհայտնեմ իմ ծննդավայրիս՝ Շապին-Գարահիսարի և շրջակայից մեջ տարածված ավանդության մը վրա հիմնված: Ինչպես Փոքր Ասիո շատ կողմերը, նույնպես և Շապին-Գարահիսարի մեջ կա մի եկեղեցի՝ ս. Աստվածածին անունով, որուն արևմտակողման այդ բաժինները, փոխանակ գոց պատի, վանդակորմով անջատված են տաճարեն, և հատակով ալ բարձր են երկու աստիճան, քան տաճարին հատակը, այդ բաժիններուն ժողովուրդը ավանդաբար պեյնամազ (պինամազ) սեքյուսի անունը կուտա, այսինքն անաղոթքներու կամ աղոթքե զրկվածներու գավիթ[1]:

Գուցե առարկվի, թե արտաքուստ դուրս հանված abside-ներով խաչաձև եկեղեցիներ սովորական եղած են հայոց մեջ և բավական թվով օրինակներ ալ մեզի հասած են, ինչպես՝ Մաստարա, Թալին, Բագարան, Ալաման և այլն, ուստի կարող էր Էջմիածինն ալ նույն ձևը ունենալ ի սկզբան, և մյուսները հետևողություններ լինեին:

Այս առարկությունը կարող էր համոզիչ լինել, եթե վերջիններուն մեջ Էջմիածնի բոլոր համաչափություններ պահված գտնեինք: Մինչդեռ Էջմիածինեն զատ, մյուս բոլոր խաչաձև եկեղեցիները կանոնավոր ոճի և համաչափության մը հպատակած են, և Էջմիածինը անոնց բանի նմանելու ճիգերը ցույց կուտա:

Առանց նույնիսկ չափելու, պարզ հայացքով մը կարելի է տեսնել, թե 7-րդ դարեն սկսյալ գոյություն ստացող արտաքուստ հայտնի խաչաձև եկեղեցիները բոլորովին ձևված են քառակուսի եկեղեցիներու համաչափության վրա, այսինքն դուրս ելած abside-ները այնչափ լայն են, որչափ որ պիտի լինեին նույն տարածությամբ քառակուսի եկեղեցիներու միջին fronton-ները և նույն համեմատությամբ ալ լայնանիստ գմբեթները: Էջմիածնի տաճարին abside-ներուն լայնությունը գրեթե հավասար է անոր երկու կողմը մնացած ուղիղ պատերու լայնության, ասոր հակառակ, մյուս բոլոր խաչաձև եկեղեցիներու մեջ մնացորդ ուղիղ պատերը շատ անգամ abside-ներու կեսին հավասարելու չափ նեղ են և առանց բացառության abside-ներու կեդրոնին վրա են գլխավոր մտից դռները:

Այժմ կարելի եղածին չափ քննել փորձենք, թե ե՞րբ և ի՞նչ ժամանակի մեջ այս ներքին և արտաքին փոփոխությունները կատարված լինելը հավանական է:

Որովհետև արևելյան և արևմտյան պատերը զանազան շինություններով ծածկված են, կմնա դատել հյուսիսային և հարավային պատերու վրա զանազան դարերե մնացած ճարտարապետական նմուշներեն:

Հյուսիսային պատի փոքր fronton-ները, իմ կարծիքով, պետք է համարել նույնիսկ Վահան Մամիկոնյանի շինածը, որովհետև այդ fronton-ները, ինչպես քննողներեն Դյուբուա ալ նկատեր է, զուտ հռոմեական ոճի հատուկ են, թեև այսօր բոլորովին մաշված, սակայն իր հատկությունը պարզող մասեր դեռ պահված են: Այդ fronton-ի corniche-ին վերին եզերքին վրա իր ոճին հատուկ moulure-ները քանդակվելեն հետո անոնց հաջորդած է հառաջակարկառ ճակատը (face de larmier), որուն տակ շարված են կանոնավոր համաչափությամբ modillon-ներ. սույն modillon-ներուն երկու հատին վերին մասերը բոլորովին անաղարտ են, միայն մաշված են ներքևինները, որով անհայտ է, թե ունեի՞ն արդյոք տակեն ալ նույն ոճի հատուկ տերևաքանդակները. թեև առանց այդ ալ ոչ մի կասկածի տեղիք չկա, դատելով վերի անվնաս մնացած մասերեն: Այս գծերով corniche բոլոր հայոց հիշատակարաններուն մեջ միակ երևույթ է Էջմիածնի տաճարին վրա. արևմտյան ոճերով ճոխացած Զվարթնոցի մեջ անգամ այս չափ մաքուր հռոմեական գծեր չեն տեսնված: Հետևաբար, այս երևույթը երբեք պատահական չէր կարող լինել: Պատմականորեն բացատրելով՝ պիտի ըսեմ, թե այդ միակ շրջանն էր, որ հայեր ըստ ամենայնի Արևմուտքի ազդեցության ենթարկված էին. Բյուզանդիոնի և Արևմուտքի զանազան մասերուն մեջ կրթություն ստացող Մեսրոպյան խումբերեն շատերը դեռ կենդանի էին, որոնց մեկն էր Վահան Մամիկոնյանի սիրելի Ղազար Փարպեցին և երբեմն խնամակալ նույն տաճարին. բնականաբար, տարօրինակ բան չէր լիներ կարծել, որ նույն ժամանակ արևմտյան ճաշակով զարգացած գիտնականներու գոյությունը կարող էր ուղղակի ազդեցություն ունենալ վերաշինված տաճարին ներքին ու արտաքին ոճերուն և զարդաքանդակներուն վրա:

Հյուսիսային ճակատի արևելակողման փոքր fronton-ին անմիջապես ներքևը եղած պատուհանին պսակը դժբախտաբար չկարողացա քննել, բայց, ըստ երևույթին, սա ևս անփոփոխ մնացած կկարծեմ: Այս երկու նշաններեն զատ, հյուսիսային ճակատին վրա ուրիշ բան չէ մնացած, որ եկեղեցիի սկզբնական շինության պատկանի, իհարկե, բացի սրբոց քանդակներեն և արձանագրութենեն, որոնց քննությունը ձեռնահասներու կթողում[1]:

Հարավային ճակատի վրա գոցված դուռը որոշ չափով պահեր է իր հնության դրոշմը: Երերույքի տաճարի դռներու նման յուր կամարին վրա երբեմն կրեր է եռանկյուն fronton, որուն հետքը դեռ չէ կորած և պարզ նկատելի է լուսանկարի վրա ևս (նկ. 138, 7):

Ինծի կթվի, թե 7-րդ դարու սկիզբը Կոմիտաս կաթողիկոսն իր կատարած նորոգության ժամանակ ներքին ձևերուն մեջ ոչ միայն փոփոխություն չմտցուց և բավականացավ միայն տանիքն ու գմբեթը քարաշեն կառուցանելով, այլև Էջմիածնի տաճարին նվիրագործված հատակագիծը հավերժացնելու համար իր նորոգ կառուցած Հռիփսիմեի տաճարն ալ անոր նմանցուց:

Հռիփսիմեի տաճարին հատակագիծը (նկ. 83), որուն նախնական ձևն անպայման պահված է, համեմատելով Էջմիածնի հատակագծին հետ, կգտնենք շատ մոտ նմանություն իր խաչաձևով և կողմնակի չորս սենյակներով. նաև նմանություն Անիի Առաքելոց եկեղեցիի հետ, բացի մեկ, երկու փոքրիկ շեղումներե:

Հռիփսիմեի տաճարին մեջ առաջին շեղումն այն է, որ արևելքեն արևմուտք երկարությունն ավելի շեշտված է. երկրորդը՝ կիսաբոլորակ abside-ներու մեջտեղերը փոքր abside-ներ ևս ավելցած են. սակայն այս տարբերությունները, ընդհանուր հատկության չվնասելեն զատ, ավելի կմոտեցնեն վերև բացատրված հայկական եկեղեցիներու առանձնահատուկ ոճին:

Կոմիտաս կաթողիկոսեն 20 տարի հետո, Ներսես Շինողն է Էջմիածնի տաճարին վրա նորոգություններ կամ շինություններ կատարող, բայց թե ի՞նչ էին Ներսեսի շինածները կամ կատարած նորոգությունները, որոշ տեղեկություններ չկան:

Որովհետև Սեբեոսի և Հովհաննես կաթողիկոսի միջոցով գիտենք, թե Կոմիտաս կաթողիկոսը մեծ նորոգություններ կատարեց, մանավանդ կտուրը և գմբեթը բոլորովին նոր շինեց, հետևաբար, 20 տարվան մեջ տաճարը չէր կարող այնքան մաշված և վնասված լինել, որ գրելու կողմանե վերին աստիճան սակավապետ հայ պատմագիրներու համար հիշատակության արժանի նորոգություններ կատարեր Ներսես Շինող: Բնականաբար, նորանոր հավելումները պետք էր լինեին Ներսես Շինողի գործերը: Ժողովոց պատմության մեջ[2] արձանագրված «Երկասիրաբար յարդարեալ շինէ սբ. Շողակաթն ի Նոր քաղաք» բնորոշ բառերը ցույց կուտան, թե Ներսեսի երկասիրություն համարվելու չափ նոր շինություններ և հավելումներ կատարվեցան անոր ձեռքով: Արդ՝ քանի որ ուրիշ մասեր բոլորովին նոր էին՝ կմնա ենթադրել, որ այդ հիշատակությունը կպատկանի ներքուստ սենյակները և abside-ները քանդվելուն և արտաքուստ նոր abside-ներ ավելցվելուն: Այս գործողությունն ալ արդեն բավականին հիշատակության արժանի աշխատություն կարող է համարվել Ներսես Շինողի համար:

Պետք է խոստովանիմ սակայն, որ դատելով Ներսեսի՝ Զվարթնոցի մասին ունեցած ճաշակեն, Էջմիածնի վրա չեմ գտներ այնպիսի մի մնացորդ, որ Զվարթնոցը և կամ Ներսեսի ճաշակը հիշեցնե, թերևս գտնվին Ներսեսի ուրիշ երկասիրություններու վրա այս կապածը փարատող նմուշներ, որոնք տակավին ինծի չէ հաջողված տեսնել:

Ներսես Շինողեն հետո Էջմիածնի տաճարին ճակատագիրը մթության մեջ է մինչև 17-րդ դար, ուստի մնացած մասերուն վրա եզրակացություններ հանելու համար դարձյալ պիտի դիմենք սակավաթիվ մնացորդ ճարտարապետական հատուկտորներու:

Abside-ներու հավելման ժամանակեն մնացած կա corniche մը (նկ. նկ. 137, 138, 9,9, նկ. 145), որով

[1] Սեքի բառը թուրքերեն է. համապատասխան բառ հայերեն չեմ կարողացած գտնել, գավիթ չի նշանակիր: Ավելի մոտ իմաստը կուտա plate-forme բառը:

[1] Տե՛ս J. Slrzygowski, հիշյալ գիրք, եր. 5:

[2] Շախաթունյան – Ստորագրություն կաթողիկե Էջմիածնի, 1, երես 23:

նորակառույց abside-ները պակվելեն հետո, պատշաճության համար շրջապատեր են ամբողջ շենքը, և շարունակությունը արդեն կանգուն պատերու մեջ ազուցանելու համար, ինչպես կտեսնվի, նկ. 137, 10,10, abside-ներու corniche-ներուն[1] հավասար բարձրությամբ քանդեր են մեկ կարգ քար, և այդ քանդվածքին մեջ corniche-ները տեղավորելեն հետո, վրայի դատարկությունները լեցուցեր են մանր քարերով: Ահա այս moulure-ները ունեցող corniche-ներ գործածական են հայ ճարտարապետության մեջ մինչև 10-րդ դարը: Իբրև վերջին նմուշ կարելի է համարել Առաքելոց եկեղեցիի corniche-ները բավական մոտ նմանությամբ Էջմիածնի corniche-ներուն:

Հին եկեղեցիներու վրայի մոտավոր ձևերը կան Թալինի ս. Աստվածածնի և Տեկորի տաճարներու վրա, բայց ասոնց շինությանց հետ ժամանակակից լինելը կասկածելի է, որովհետև 7-րդ դարեն մեզ հասած corniche-ներու սովորական ընդհանրացած ձևերը պարզ ատամնաշարեր են՝ վերևից լարերով կամ ժապավեններով պակված, որպիսիքն են Երերույքի, Մաստարայի, Բագարանի, Թալինի և Մրենի եկեղեցիներու corniche-ները: Վերջապես, Էջմիածնի տաճարին մեջտեղին շրջապատված corniche-ները 7-րդեն 10-րդ դարաշրջաններու գործ են, և թերևս ավելի մոտիկ 10-րդ դարին:

Գաղափարական perspective գծված 142 նկարը, որ, ըստ իմ ենթադրության, Էջմիածնի հին ձևն է, միջին corniche-ը չեմ դրած, որովհետև հայ ճարտարապետության ամբողջ տևողության շրջանին մեջ երբեք չէ ընդունված շենքին կես բարձրությենեն corniche-ով շրջապատելու ոճը, ինչպես տեսանք, Էջմիածնի մեջ ալ abside-ներու հավելման ժամանակ պատշաճության համար ակամա դրված են անոնք:

Հյուսիսային abside-ի պատուհանի պակը, որ միաժամանակ abside-ի հետ շինված կերևի, դարձյալ հատուկ է 10-րդ դարեն առաջ եղած ձևերու, որովհետև, երբ 10-րդ դարեն սկսյալ հարթ երեսի վրա մանվածո քանդակազարդ շրջանակներու և պակներու գործածությունները սկսվեցան, այլևս շատ ցանցառ կերպով կերևնան moulure-ներով պատուհաններու շրջանակներ և պակներ:

Դռներու և պատուհաններու մասին առանձին տեսություն չեմ կարող ընել, առայժմ անոնց վրա մանրամասն քննություններ կատարելու հնարավորություն չունենալուս համար, միայն թե մտից դռները շատ քիչ չափով իրենց տեղեն խախտած կերևին:

Հատակագծի և շրջապատի մասին տեսություններս սահմանափակելով՝ հարկ կտեսնեմ քիչ մ'ալ զբաղիլ ծածկի կամ տանիքի կրած փոփոխություններով:

Ինչպես կերևի, Էջմիածնի տաճարը երեք տեսակ ձևափոխություններե անցեր է մինչև մեզի հասնելը. առաջին ձևը տևեր է 5-րդեն մինչև 7-րդ դար. երկրորդը՝ մինչև 17-րդ դար, իսկ երրորդը՝ մեր օրերուն տեսնվածը:

Առաջին ձևին համար, ինչ որ հավանական էր, կներկայացնե նկ. 142 գծագրությունը, որուն վրա կտեսնվի յուրաքանչյուր ճակատի կողմնակի կտուրները պակված փոքր fronton-ներով, ասոնց մեջտեղ ավելի բարձր մեծ fronton-ներ, որոնց վրայի ծածկը հյուսիսեն հարավ, արևելքեն արևմուտք ձգվելով և զիրար խաչաձևելով՝ միջին մասին վրա տվեր են կեդրոնական գմբեթի խարիսխը:



**Նկ. 142. Էջմիածնի տաճարի սկզբնական տեսքը հյուսիս-արևմուտքից**

Կողմնակի փոքր fronton-ները և անոնց գրված մասին ծածկերու ձևերը մանրանկար են ընդհանուր շենքի մեծ ծածկին: Հյուսիսային և հարավային կողմեն արդեն այժմ ալ գոյություն ունին fronton-ներ և, բնականաբար, նույն թեքությամբ ալ ծածկված էին կտուրները. իսկ արևելյան և արևմտյան կողմերուն վրա թե՛ fronton-ներու և թե՛ խաչաձևված տանիքի գոյությունը ընդունելուս ապացույցներ չեն պակսեր. բացի թեորիի վրա հիմնված պատճառներե, կա մի դրական պատճառ ևս: Արևմտյան ճակատի վրա նույն փոքր fronton-ներու համապատասխան մասերու մեջ դեռ կան հին քարերու շարվածքներ, որոնք միջին կետին վրա կհասնեն հյուսիսային ճակատի փոքր fronton-ներու բարձրության, ուր եղեր են նաև ի հնումն փոքր պատուհաններ (նկ. 142, 1, 143, 144, 1).

[1] Արժեր մանրամասն չափագրել և գծագրել այս corniche-ը, սակայն անհնար էր ինձի համար: Երանի թե նորոգության ժամանակ շենքին վրայեն խնամքով հանվեր և պահվեր:

[2] Միևնույն գործողությունը կատարված է Թալինի ս. Աստվածածին եկեղեցիի վրա (Մեսրոպ վարդապետ - Էջմիածին և հայոց հնագույն եկեղեցիներ, պատկ. XXI, «Ազգ. Հանդես», գ. XVI), բայց այնտեղ բավականացած են միայն abside-ը պակելով, առանց շարունակելու կողմնակի պատերուն վրա:

**Նկ. 143. Էջմիածնի տաճարը հարավ-արևմուտքից**

Զորս փոքր գմբեթները ցույց եմ տված առանց որևէ դրական ապացույցի, հետևեր եմ միմիայն Անիի Առաքելոց եկեղեցիին, որուն վրա այժմ ալ դեռ կմնան նույն մասերու վրա փոքր գմբեթներու մնացորդները: Այս գմբեթները հին Էջմիածնի վրա ցույց տալ թույլ տվի ինձի այն պարզ պատճառով, որ երբ ուրիշ մասերու մեջ ըստ ամենայնի նման են այս երկու տաճարները, չէր կարող այդ փոքրիկ տարբերությունն ալ ունենալ: Հին ավանդության մը շարունակությունը չէ՞ արդյոք այսօրվան Էջմիածնի վրա հինգ գմբեթներու գոյությունը, թեև տեղափոխված:

Երկրորդ ձևի համար գծված է նկ. 145, որուն վրա ցույց տված եմ այժմյան հատակագծեն մաս մը բաղդատության համար, façade-ին վրա կետաշար կտեսնվին նախկին փոքր fronton-ները, որոնց վրա վերջին ժամանակները, երբ ծածկի տեսակը փոխեր են, այն ժամանակ ազատ տեղի պատճառով նույն պատուհաններու շրջանակները մեծցուցեր են, թեև հետո ալ բոլորովին փակեր են:

Մինչև fronton-ները ավելի նեղցած են ներքին փոփոխությենեն գմբեթակիր սյուներու ստացած նոր դասավորության համաչափությամբ. abside-ներ դուրս ընկած և վրաները ծածկված են կոնաձև տանիքներով: Նկ. 142-ի վրա երևցածներեն դուրս ինչ որ կերևին այսօրվա տաճարին վրա, ամենն ալ կվերաբերին երրորդ ձևափոխության, որ կսկսի 17-րդ դարեն հետո, որուն մասին խոսել իմ նպատակս դուրս է:

հետո պատի հյուսվածքը շարունակվելով՝ վերածվեր են թեք տանիքներու. այս փոփոխությունն անշուշտ բնական հետևանք էր նախկին բարդ ձևով շինված տանիքներու պատճառած անտեղության, որոնց վրա գտնված թեքումներ, անկյուններ և խորշեր անձրևի ջուրերուն ուղիղ ընթացքը կարգելեին և մնասակար հետևանքներու պատճառ կդառնային:

Մինչև fronton-ները ավելի նեղցած են ներքին փոփոխությենեն գմբեթակիր սյուներու ստացած նոր դասավորության համաչափությամբ. abside-ներ դուրս ընկած և վրաները ծածկված են կոնաձև տանիքներով: Նկ. 142-ի վրա երևցածներեն դուրս ինչ որ կերևին այսօրվա տաճարին վրա, ամենն ալ կվերաբերին երրորդ ձևափոխության, որ կսկսի 17-րդ դարեն հետո, որուն մասին խոսել իմ նպատակս դուրս է:

Էջմիածնի տաճարին նախնական ձևերուն վրա համառոտ տեսություններս վերջացած համարելով, հարկ կհամարիմ ավելցնել նաև մի կենդանի վկայություն, որն որ իմ կարծիքներես մեկ մասը հաստատելու բնույթը ունի. թեև չեմ պահանջեր, որ անպատճառ վավերական փաստ համարվի սույն վկայությունը, այնուամենայնիվ գեթ մղում կուտա մանրակրկիտ հետախուզության, երբ վերանորոգության համար կսկսին քանդել տաճարի պատերը:



Նկ. 144. Էջմիածնի տաճարի արևմտյան պատի հյուսիսային մասը

Այս անգամ Էջմիածին գտնված միջոցիս հյուր եղա Գարեգին վարդ. Հովսեփյանին, մեկնելես երկու օր առաջ հ. Գարեգինը հայտնեց ինձ, որ Սուքիաս սրբազանը տեսնելով աշխատանքս իր սենյակի պատուհանեն, հետաքրքրված հարցուցեր է նպատակիս մասին: Երբ հ. Գարեգին կպարզե տեսությունս, այն ատեն Սուքիաս սրբազան կպատասխանե, թե այդ կարծիքը միանգամայն իրականություն է, որովհետև ինքը լսած է այդ մասին Մակար կաթողիկոսեն և վերջինիս ալ պատմած է եղեր փաստին ականատես Ներսես Աշտարակեցի կաթողիկոսը:

Այս անակնկալ հայտնութենեն հետո ես անձամբ դիմեցի Սուքիաս սրբազանին՝ հ. Գարեգնի ընկերակցությամբ, ուզելով անձամբ իր բերնեն լսել: Նա պատմեց ինձ հետևյալ կերպով[1].



Նկ. 145. Էջմիածնի տաճարի հին տեսքը հյուսիս-արևելքից և նրա աբսիդի մասի մակարդակը

«Ես անձամբ չեմ տեսած, ինծի պատմեր է Մակար կաթողիկոսը, որն որ ժամանակակից էր Ներսես կաթողիկոսին: Ահավասիկ Ներսես կաթողիկոսի հայտնությունը. «Ռուս-պարսկական պատերազմին եկեղեցին երկար ժամանակ իբրև բերդ ծառայեր է, այդ պատճառով ալ ռուս զինվորներ գիշեր-ցերեկ մնալով տանիքներու վրա, միշտ կրակ վառեր են այնտեղ, որ քարերուն այրվելուն և փչանալուն պատճառ եղեր է: Քարերու փչացումին բնական հետևանքով սկսեր է տեղացող անձրևներու ժամանակ ջուրը ներս՝ տաճարին մեջ վազել, ուստի, – կըսե Ներսես կաթողիկոս, – բոլոր տանիքները քանդեցի և վերստին նորոգեցի. սույն նորոգության միջոցին մեծ զարմանքով տեսա, որ մինչև այսօր մեր ի սկզբանե անտի խաչաձև կարծած տաճարը քառակուսի է եղած առաջուց, դուրս ելած խորանները հետո ավելցված լինելուն խիստ պարզ նշաններ երևցան, խորաններուն հին պատին կպցված մասերուն մեջ դատարկություններ կային, որոնց մեկուն մեջեն ալ գտնվեցան մի փղոսկրյա դավազան և ուրիշ մի քանի եկեղեցական առարկաներ»:

[1] Բնականաբար չեմ կարող սրբազանին իր բառերով գրել, սակայն իմաստը բոլորովին անփոփոխ կպահեմ:



# Գ

# ԲԱԳԱՐԱՆԻ Ս. ԹԵՈԴՈՐՈՍԸ

## ԲԱԳԱՐԱՆ[1]

Մրենը տեսնելե հետո, հազիվ 4-5 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Բագարանը տեսնելն անհրաժեշտություն է հնախույզին համար, մանավանդ երբ ի նկատի ունենա անոր անվան պատմական ծագումը:

Ի՞նչ է մնացեր այն նշանավոր բերդաքաղաքեն, որուն մասին պատմագիրը երկար գովեստներ նվիրած է, – կատարյալ քաոս մը:

Քանի մը կիլոմետր երկայնությամբ դաշտավայր մ'անհամբեր կտրել անցնելե հետո, մարդ ինքզինքը կգտնե անդունդի մը եզերքը, որուն ահավոր խորության մեջ, մեկ նայվածքով՝ լեռնանման քարակույտերե, խորախոր փոսերե, նեղ ու ոլորուն կիրճերե զատ, ուրիշ ոչինչ չերևիր:

Անդունդին խորը, հազիվ կտեսնվի, արծաթափայլ վիշապի մը նման փրփրալով, ֆշֆշալով, Ախուրյանի սողոսկումը քարակույտերու մեջեն, որ մերթ կերևի և մերթ կանհետանա:

Այս է կըսեն Բագարանը, այն պատմական Բագարանը, ուր երկար դարեր թագավորներ իրենց գահերեն, քրմապետներ սրբազան տաճարներեն պատգամներ որոտացեր են, միլիոնավոր ժողովուրդի բախտի ու ճակատագրի վճիռներ արձագանք տվեր են:

Զարմանալի է շատ, փոսի մը մեջ թագավորական գահ, իշխանական բնակարաններ, աստվածային անթիվ տաճարներ և մարդկանց անհամար բազմություն: Զարմանալի է մասնավորապես հայոց վերաբերմամբ, որոնք Հայաստանի ամեն կողմը ծիծեռնակի նման բարձրաբերձ ժայռերու կատարներուն վրա միայն թառել կսիրեին, անմերձենալի լեռներու և բլուրներու գլուխը կընտրեին իբրև պալատ, իբրև բնակարան, իբրև բերդ ու ապաստարան. այստեղ ի՞նչ բան ստիպել է զիրենք, ընդհանուր սովորության հակառակ, այս անդունդը ընտրելու իբրև ամրոց և իբրև քաղաքատեղի:

Տարակույս և ապշություն շուտով կփարատի, և ամեն բան կպարզվի, երբ մարդ հետզհետե կիջնե դեպի խորը և ուշադրությամբ կքննե մեծ անցյալի թողած բոլոր հետքերը: Ահա կտեսնե, որ այս անդունդը առավել անառիկ և անմերձենալի է թշնամուն համար, քան բարձրաբերձ լեռներու կատարը, և ապահով ապաստարան ու թաքստոց, ուր մարդ կարող էր երկար ժամանակ կռվել ամենակատաղի թշնամիին դեմ, իսկ այս հնարավորությունն չի տալ քայլ մը ավելի իրեն մոտենալու:

Մի անգնահատելի առավելությամբ ևս օժտված է այս փոսը, որ ուրիշ բոլոր լեռնական բերդեր միանգամայն զրկված էին. յուրաքանչյուր քարի տակե բղխող անթիվ, անհամար անարատ աղբյուրներն են այդ առավելությունը և գերագույն ուժ պաշարման ժամանակի. թշնամին անզոր էր այդտեղ ջուրը կտրելու, ժողովուրդը նեղացնելու և անձնատվության ստիպելու:

Բայց մի՞թե բավական էր ջուրը ժողովուրդ մը ապրեցնելու և հաց հարկավոր չէ՞ր ասոնց. ի՞նչպես գտան անոնք այդ սև ապառաժուտ փոսին մեջ ուտելիք և ապրեցան ու դիմադրեցին դարավոր արկածներու և արհավիրքներու:

Ահա այս հարցերին լուծման առջև է, որ մարդ կզգա այդտեղ ապրող ժողովուրդին գոյության պահպանության համար մղած կռվին ահավորությունը և քարեն հաց հանելու համար անոնց քաշած նեղություններուն անսահմանությունը:

Քաղցրահամ ջուրերու հորդառատ բղխումներեն քաջալերված՝ քանդեր ու փշրեր են ապառաժներ, սարեր ու բլուրներ տեղափոխեր են ասդին անդին, հող պատրաստեր են, ընդարձակ այգիներ ու պարտեզներ տնկեր և կյանք ու կենդանություն տվեր են չոր, ապառաժուտ փոսին: Մրենի ընդարձակածավալ դաշտին հետ անընդհատ մրցեր են Շիրակ, Վանանդ և այլ շրջականեր՝ առատ խաղող, գինի և այլ քաղցրաճաշակ մրգեղեններ մատակարարելով:

Բնականաբար ժամանակը չէր թողեր, որ այդ փոսը բոլորովին մաքրեին, դեռ շատ տեղեր կմնան ժայռերու ահագին բեկորներու կույտեր, բնական ապառաժյա գետիններ, սակայն որչափ որ աշխատեր են անմշակը մշակելի դարձնելու, անապատը դրախտի մը փոխարկելու, այնքան իսկ բավական է մեզ անոնց հիշատակին առջև խոնարհվելու և զիրենք դյուցազանց կարգը դասելու համար:

Մեծամեծ այգիներու և պարտեզներու շրջափակներ դեռ կիսափուլ կմնան և զանոնք ոռոգող ջրի առուներու հետքերը չեն կորած:

Ո՞րտեղեն թափած կամ գլորած են այն մեծամեծ քարերն այգիներու և պարտեզներու մեջ, որոնց մոտերը ոչ մի հարմարություն չկա եկամուտ

[1] Բագարան գյուղը՝ միջնաբերդի և ս. Գևորգ եկեղեցու հետ միասին տես՝ նկ. 264, եկեղեցու հատակագիծը՝ նկ. 72, ընդհանուր տեսարանը՝ նկ. նկ. 75 և 74:

Կազմող

քարեր գլորվելու: Մի փոքր քննութենեն հետո չուտով կտեսնվի, թե այդ քարերը, բացի պարտեզի շրջափակեն, նաև այնտեղ շինված հսկա շինության մը փլատակներեն գոյացած է, որուն հիմերը հողեն բավականաչափ բարձր դեռ կերևան:

Ինչ կոշտ ու կոպիտ զանգվածներ և ինչ անհավատալի մեծություն քարերու, սակայն որչա՜փ կանոնավոր շարված և վրայե վրա դրված են անոնք առանց կրաշաղախի, քանի մը մուրճի հարվածներ բավական են զայն կոկված համարելու և վերին աստիճան պատշաճությամբ վրայե վրա դասավորելու, որոնց տոկունության համար վկայի կարիք չկա, իրենց 15–20 դարերե ի վեր գոյությունը բավական է իրենց համար պատմելու: Արտակարգ ուժն է քանդեր այս տիտանյան մեծագործությունները, եթե ոչ այսօրվան մարդիկ չեն կարող ոչ քար մը վար առնել մնացորդ պատին վրայեն, և ոչ ալ բարձրացնել անոր վրա:

Փլատակներուն մեջ բնակարանի մը ամբողջովին երևցող հատակագիծը կա, որուն մեկ սենյակին լայնությունը լցնելու համար երկու քար բավական եղած է, իսկ բարձրությունը չորս քարով տեղը հասած է: Ինչ էր ասոր առաստաղը, մեծ սխալ չեմ գործեր, եթե ըսեմ, թե առաստաղն ալ մեկ կամ երկու քարով ծածկված էր:

Ո՛վ գիտե՝ ինչ ահավոր արկածներ տակն ու վրա դարձուցեր են այս կիկլոպյան շինությունները և մեզմե ո՞րչափ հեռու ժամանակի մեջ, որ այդ փլատակ շինություններուն յուրաքանչյուր ներքին բաժանումները իբրև տոհմային թաղ կազմեր են և պատերեն թափված ահռելի մեծությամբ քարերը իբրև անշարժ մահարձաններ, որոնց վրա խաչեր և թվականներ փորագրված են ի հիշատակ հանգուցյալներու: Այդ թվականներուն մեջ մինչև 12-րդ դար հասնող թվականներ կան:

Բագարանի ձորը, մոտավորապես կես կիլոմետր լայն և մեկ կիլոմետրե ավելի երկայն, ձգված է հյուսիսեն հարավ. այս լայն բացվածքին երկու ծայրերը անմիջապես կնեղնան և երկու կողմեն սարերը կբարձրանան, այնպես որ հազիվ մեջտեղեն անցնող գետին անցք մը կուտան: Ձորին հյուսիսային ծայրին վրա է մեծ բերդը, կամ, ավելի ուղիղ, հին քաղաքի պարիսպը, նույնպես հսկա որձաքարերով հյուսված մինչև երկուք ու կես մետր լայնությամբ: Այս պարիսպը հարավային կողմեն կսկսի լեռնադաշտին ծայրեն և կիջնե մինչև գետեզրը. անկեց դառնալով դեպի հյուսիս, բոլորելով մեջտեղը գտնված երեք անհավասար բարձրությամբ միջնաբերդերու, կդառնա վերստին դեպի լեռնադաշտ՝ Բագարանի ձորեն անջատող բարձր ժայռերու կուրծքին մնալու համար:

Պարիսպի ընդարձակ տարածության մեջ ապրեր է բավական խիտ բնակչություն, որոնց բնակարաններու հիմերը մնացել են տակավին որոշ բարձրությամբ: Ինչ ժամանակի բնակչության բնակարաններու հիմեր են այս մնացորդները, զանազանել շատ դժվար է, որովհետև այլ և այլ դարաշրջաններու արվեստին հատուկ ոճերով շինված հիմեր կերևնան անոնց մեջ: Ես չպիտի վարանիմ պահ մը կարծելու, որ մինչև հեթանոսական շրջանի հիմեր կան անոնց մեջ, որոնց վրա շատ հետո, հավանաբար Բագրատունյաց շրջանին մեջ, հին հիմերու վրա նոր շինություններ են հարմարեցված: Բագրատունիներու օրով քաղաքի շրջապարիսպը բոլորովին անպետքացած կերևի, որովհետև ամենեն ուշ 10-րդ ոճով շինված եկեղեցիի մը հյուսիսային պատը կա կանգուն մնացած, այդ պատին մեկ մասը շեղակի կերպով քաղաքի հին մեծ պարիսպին վրա դրված է իբրև գետին:

Որչափ որ Բագարան խոր փոսի մեջ է, և բնակչությունը քարակույտերու մեջ կորած, այնուամենայնիվ թագավորներ և իշխաններ իրենց արժանավայել դիրքը ստացած են, ավանդական սովորության համաձայն՝ այդ փոսին մեջ ալ գտեր են բացեր, բլուրներ և անոնց վրա հաստատեր են իրենց բնակարանները, շուրջանակի հսկելով իրենց ոտերուն տակ փռված հպատակ ժողովրդին վրա:

Պարիսպի պարփակած տարածության գրեթե կեդրոնին վրա, հյուսիսեն հարավ երկնցած և արևելքեն արևմուտք շարված երեք մեծ քարաբլուրներ կան իրարու մոտիկ. սրանց ամենեն մեծը, արևմտյան կողմինը, պետք է որ առնվազն հարյուր հիսուն մետր բարձրություն ունենա: Մյուսները հաջորդաբար թե՛ կցածնան և թե՛ ծավալով ավելի կփոքրանան: Ասոնց ամենն ալ առանձին պարսպապատ են և մեջերը ամբողջովին շինություն է իրենց տարածության չափով: Ունեն նաև իրենց համար հատկապես շինված առանձին ճանապարհներ:

Մեծագույն բերդը առանձնապես խնամքով շինված է, պարիսպը կիսաբոլորակ բուրգերով շրջապատված է, դուրը դեպի հարավ կբացվի երկու բուրգերու մեջտեղ, թեև այժմ գրեթե փլատակ եղած է: Բերդի լայնությունը խիստ նեղ է, տեղտեղ հազիվ հասնի 15 մետրի, իսկ լայն տեղերը 30 մետրը չանցներ. այս բերդին հյուսիսային ծայրին վրա Գևորգ Մարզպետունիի հիշատակին առանձին շրջափակով շինված է եղեր ս. Գևորգ եկեղեցին: Սույն եկեղեցիի շրջափակին մեջ հյուսիսային կողմը կգտնվի գետնափոր ճանապարհ մը՝ գաղտնի դուրս գալու համար:



Ամբողջ պարիսպին մեջը գրավված է զանազան ժամանակի շինություններով. ինչպես կհավատեն մեզ, ամենամոտիկ ժամանակի շինության մնացորդներ ևս կգտնվին: Շինության մանրամասնությունները որոշել շատ դժվար է առանց պեղումներու, կարելի է հետաքրքրական բաներ գտնվին այնտեղ, եթե պեղումներ կատարվին: Ս. Գևորգ եկեղեցիի վերաշինության ժամանակ որպես թե պատմական շատ բաներ գտնվեր են, սակայն ոչ մի բան չկա մեջտեղը և թերևս չափազանցություններ են:

Ոլորապտույտ ճանապարհը արևելյան լանջի վրա բավական մեծ աշխատությամբ իրագործված է, ամբողջ ճանապարհը գրեթե ժայռեր ջարդելփշրելով հարթված է: Սույն ճանապարհը երկու դռան կառաջնորդեր ի հնումն – մեկը հարավային անկյունին վրա, իսկ մյուսը՝ արևելյան ճակատին վրա, որն որ այժմ փլված է բոլորովին:

Այս բերդի հարավ-արևմտյան կողմի մեկ բուրգն է, որուն համար կըսեն, թե ամբողջ բարձրության վրա բոլոր քարերը առանձին տեսակ քանդակված են: Ինծի չհաջողեցավ այս ըսածին ճշմարտությունը լիովին ստուգել, որովհետև դիրքի անհարմարության պատճառով մոտեն տեսնել անհնար է, իսկ հեռվեն ալ իմ ձեռքս եղած դիտակով գտնե ինձ համար անհնար եղավ տեսնել և զանազանել քանդակները: Ճշմարիտ է, որ մի քանի քարերու վրա կան քանդակներ՝ մանվածո, վարդաձև և այլն, սակայն մյուս բոլոր քարերուն վրա թեև կերևին բաներ, միայն թե շատ անորոշ, պարզապես ես չկարողացա զանազանել անոնց մեջ մի որևէ որոշ ձև՝ անասունի, ծաղկի և կամ մի ուրիշ բանի:

Բերդի հիմակվան շինությունը շատ հին չէ, հազիվ թե հասնի մինչև 10–11-րդ դարերը, իսկ անկեց առաջ, անպայման հավատալի է, որ ցածի մեծ պարսպին ժամանակակից պարիսպներ ալ եղած են այստեղ, բայց ամբողջովին քանդած և վերջին արվեստներու ճաշակով նորը շինած են:

Բագարանի ամրություններն այս բերդերով և զանոնք շրջապատող պարիսպներով չէին վերջանար. ամբողջ ձորամեջը, մինչև հարավային ծայրի վրա գտնված ս. Թեոդորոս եկեղեցին հասնելը, կտեսնվին մեծ ու փոքր ամրոցներու հետքերը. ս. Թեոդորոս եկեղեցին ևս ունեցեր է իր շուրջը բավական ամուր պարիսպներ, բայց այժմ հազիվ անոր հետքերը կերևան տեղ-տեղ:

Ս. Թեոդորոսի հյուսիս-արևելյան կողմը բարձր տեղի մը վրա այժմ կերևի մի բերդի թանձր պատ՝ քառակուսի բուրգերով, որուն այժմյան մնացածին երկայնությունը վաթսուն մետրեն ավելի է: Մնացյալ մասերը կորած են, հայտնի չէ, թե ո՛րչափ տարածությամբ տեղ կշրջապատեր, միայն թե մեջը բնակարաններու խիտ ավերակներ շատ են, ամենն ալ հսկա քարերով շինված: Ահա այս բերդի ավերակներուն մեջ են հնագույն գերեզմանները, որոնց վրա մինչև 12-րդ դարու արձանագրություններ կան:

Եկեղեցիի հարավ-արևելյան կողմերն ալ կան ոչ նվազ հետաքրքրական մնացորդներ՝ թե՛ բոլորովին հին դարերու և թե՛ վերջին 10–12-րդ դարաշրջաններու. ի միջի այլոց կա մի չափավոր մեծությամբ եկեղեցի, որ դեռ քանի մը տարի առաջ բոլորովին կանգուն է եղած, սակայն վերջերս բագարանցի մի հարուստ վաչխառու հրապուրվելով անոր քարերուն գեղեցկությենեն, սկսեր է քանդել յուր գոմերն ու մարագները՝ ցորենի շտեմարանները շինելու համար:

Հնախույզներու համար Բագարանը յուր շրջանով մեծ աշխարհ մ'է ուսումնասիրության կարոտ – ոչ գրելով կվերջանա և ոչ նկարագրելով նպատակի կհասնի, մասնավոր գիտական արշավախումբեր են հարկավոր պատմական այս մեծ շտեմարանը մաղելու համար: Ամեն կողմ ստորերկրյա անցքեր, գետնափոր դամբարաններ, հսկայական քարայրեր. այս վերջիններս մանավանդ ահավոր բարձրությամբ վերեն վար ուղղահայաց կերպով կտրված լեռներու ճակտին վրա, Մրեն տանող ձորին մեջ, սոսկատեսիլ ու ահարկու ճանապարհներ նույն լեռներու ճակտին վրա, որոնք կառաջնորդեն դեպի այդ անմերձենալի քարայրերը. և այս ամենը թողված է առանց հետաքրքրության և առանց ուսումնասիրության:

Գյուղացիք կպատմեն, թե այժմյան Միջինգյուղ անվանված տեղին վրա, որ բավական բարձրակեկ բլորշի բլուր մ'է, մեկը նոր շինելիք տան հիմերը փորելու ժամանակ կգտնե բազմաթիվ հետաքրքրական ձևերով ուլունքներ, ոսկի և արծաթ դրամներ, ի միջի այլոց՝ փոքրիկ կոց արձաններ: Այս արձանները իբրև խաղալիք՝ մանր տղայոց ձեռքը տվեր են, որոնք ժամանակ մը անոնց հետ խաղալեն հետո փշրեր ու ոչնչացուցեր են: Ուլունքներեն դեռ պահված ունին իրենց մոտ, սակայն առասպելական գիներ երազելնուն պատճառով ես չկարողացա քանի մը հատ ծախու առնել անոնցմե Անիի հնագարանի համար:

Բագարանեն Մրեն տանող ճանապարհին վրա, այժմ գրեթե անմերձենալի դարձած քարայրերե և բերդերե զատ, կա մի հնագույն սառնատուն, որ տարվույն ամեն եղանակին մեջ սառույց կմատակարարե բագարանցիներուն: Նեղ բերանով մի մեծ քարայրի նմանող փորվածք է սա՝ գետեզրին մոտ բարձր լեռան ստորոտը. բերանը բացված է դեպի հյուսիս՝ ձմռան ձյունը քամիեն տարվելով, կլցվի

մեջը, գարնան սկիզբն ալ, երբ պահ մը բարձրի ձյուներ կհալին, ջուրերն ալ կթափվին այս առվակին մեջ և կառուին: Այժմ ամեն մի բաղարանցի, ամառվան մեջ, ուրադներով ու կացիններով զինված, կերթա կկոտրտե սառույցը և դույլերու մեջ լեցուցած կբերե՝ սառը ջուր վայելելու համար:

Բաղարանի այժմյան գյուղին դիմաց, բացի լեռնալանջի ամբողջ տարածության վրա գտնված անթիվ հին մնացորդներե, բլուրի մը վրա տակավին կանգուն կա մի ութանկյուն սիրուն եկեղեցի՝ բրգաշար պարիսպով շրջապատված, հավանաբար 11-րդ դարու գործ: Ժողովրդյան մեջ ավանդություն կա այս եկեղեցիի շինության առթիվ: Որպես թե թագավորին աղջիկը կբնակեր ջուրին անդիի ափին վրա, և ամեն օր այս կողմը եկեղեցի կուգար: Մի օր ալ կամուրջը ջուրը տարեր է, և թագավորին աղջիկը մնացեր է առանց ժամ ու պատարագի. ասոր վրա հրամայեր է իր պալատին մոտիկ շինել այս փոքրիկ եկեղեցին, որպեսզի անգամ մը ալ հեղեղի և կամ կամուրջի պատճառավ չզրկվի սրբազան արարողություններե[1]:

*
* *

Բաղարանի մեջ, քրիստոնեության շրջանի ամենահին շինությունը 7-րդ դարու առաջին քառորդին մեջ, Բուդ Առավեղյան իշխանի շինած ս. Թեոդորոս անվամբ եկեղեցին է: Այս եկեղեցին կգտնվի Բաղարանի ձորին հարավային ծայրը, բարձունքին վրա, որ ի հնումն եղեր է առանձին պարսպապատ, որուն մասերը տակավին կերևան տեղ-տեղ: Ի հնումն այս տեղերը ընդունված ձևով այս շրջափակն ալ շինված է սև որձաքարե՝ առանց կրաշաղախի, միայն թե քարերը չափավոր մեծությունով են:

Եկեղեցիի շուրջը երևցած այժմյան դրությունը հին ձևը չի ներկայացներ. տեղական բնակչությունը քանդելով պարիսպները, անցեր է սահմանը և այդիներ տնկեր մինչև եկեղեցիի պատերուն դրեթե կից, այնպես որ շատ մը գերեզմանատուններ, որոնք նախապես եկեղեցիի շրջափակին մեջ կգտնվեին, այժմ մնացեր են այդիներու և պարտեզներու մեջտեղը:

Տեկորի եկեղեցիեն հետո, իբրև անմիջական հաջորդող հետագա դարերու Հայ ճարտարապետության ոճի և եկեղեցական հատակագծային ձևի, ս. Թեոդորոսը ամենեն հետաքրքրական տեղը կբռնե:

Եկեղեցիի հատակագիծը ի ներքուստ չորս կիսաբոլորակ թևերով խաչաձև կներկայացնե, իսկ արտաքուստ դուրս չեչտված թևերը անկյունավոր են: Պատերեն քիչ հեռու չորս անջատ մույթեր իրարու միացնող կամարներու վրա հանգչած է գմբեթը:

Այս ձևը, ե՛րբ մուտ գտած է Հայոց մեջ, ինձ համար դժվար է ըսել, գուցե ավելի հին օրինակներ կային և անհետացած են, միայն Հայոց մեջ այս ձևերը գտնե 7-րդ դարեն անդին չեն անցեր: Սակայն 7-րդ դարուն Հայոց մեջ գոյություն ունեցող նույն ձևի եկեղեցիներեն զգալապես կզարտուղի ս. Թեոդորոսը յուր անջատ սյուներու վրա դրված գմբեթովը, մինչդեռ ուրիշ խաչաձև կիսաբոլորակ թևերով եկեղեցիներու գմբեթներ հանգչած են նույնիսկ կիսաբոլոր abside-ներու վերջավորության վրա, որոնց առհասարակ տված են մի կերպ որմնասյունի ձև և չորս կողմեն զանոնք կամարներով իրարու միացնելով պատրաստած են գմբեթին բոլորակ կամ ութանկյուն խարիսխը:

Ինչո՞ւ է զարտուղված ս. Թեոդորոսը ընդհանուր օրենքե և ե՞րբ, այս հարցին փոքր ի շատե համոզիչ պատասխան մը գտնելու համար անհրաժեշտ է մի հետադարձ ակնարկ նետել Հայոց եկեղեցիներու հատակագծերու ծագումին և անոնց կրոնապես նվիրագործված ներքին բաժանումներու վրա:

Թե՛ պատմագրական տեղեկություններե և թե՛ հետնագույն գիտական խուզարկությունները տեղեկություն ունինք, որ բոլոր քրիստոնեական եկեղեցիներու ձևերուն առհասարակ հիմ ծառայեցին 4-րդ դարուն հեթանոսական տաճարները և բազիլիկները, և այդ երկու տեսակի շինություններուն մեջ ամենագլխավոր հարմարություն ընծայող մասը քրիստոնեական եկեղեցիներու մեջ խորանի կամ սրբարանի մասն էր:

Քրիստոնեական սրբարանի համար անհրաժեշտ էր ունենալ մի խորան, որուն մեջ դրվեր սեղանը և կողմնակի սենյակներ՝ եկեղեցական սրբազան անոթներ և ավանդներ պահելու համար, որոնցմե մեկը քիչ վերջը ծառայեց քահանայից զգեստավորման համար իբրև առանձնարան:

Հեթանոսական տաճարները իրենց trésor-ներով և բազիլիկները իրենց chalcidique-ներով լիովին տվին այս հարմարությունները քրիստոնեական տաճարներու համար, և այնպես ալ շարունակվեցավ մինչև այսօր:

Հայոց եկեղեցիներուն մեջ, գլխավորաբար մեծ եկեղեցիներուն մեջ, բացառություն չէ կազմած այս պահանջը. ամենահին եկեղեցիներեն սկսած առհասարակ ամենն ալ ունին այս կողմնակի սենյակները, ի բաց առյալ քանի մը փոքր բոլորակ կամ ութանկյուն եկեղեցիներ, որոնց ևս, իմ կարծիքով, Հայոց մեջ ունեցած կոչումին դեռ չեն ճշտված, այսինքն՝ առանձնապես իբրև մատուռ կամ մկրտարանն՞ը էին շինված, թե՞ իբրև եկեղեցի: Այս վերջինի մասին ես կկասկածեմ այն պատճառով, որ մինչև 14-15-րդ դարեր Հայոց եկեղեցիներու մեջ ոչ մկրտության հաստատուն ավազաններ երևցած են, ոչ ալ շարժական:

Եվ որովհետև ս. Թեոդորոսը մատուռ կամ մկրտարան ըսվելու չափ փոքր եկեղեցի չէ, ընդհակառակը, բավական ալ խոշոր եկեղեցի է, հետևաբար անպայման հարկ էր, որ ունենար խորանի երկու կողմին վրա անհրաժեշտություն կազմող նույն սենյակները, այն ալ 7-րդ դարուն, երբ եղած հրամայական պահանջը անուրանալի է (խաչաձևերու համար այս հարցը վիճելի կերևնա, պետք է լավ քննել):

Սույն տարակույսը փարատելու համար երկու գործնական պատասխան նույնիսկ իր մեջ կգտնենք, երբ նախ՝ չափենք խորանին լայնությունն ու համեմատական խորությունը և բաղդատենք ընդհանրացած համաչափություններու հետ, երկրորդ՝ քննենք մույթերու կազմությունը, շինության կերպը և իսկական շինության հետ ունեցած հարազատությունը, երրորդ՝ արևելյան կողմեն ընդհանուր եկեղեցական հատակագծային օրենքներու դեմ բացարձակապես ընդվզող դռները:

Հայոց եկեղեցիներու մեջ abside-ի խորության առհասարակ ընդունված չափը կիսաբոլորակի շառավիղին մեկուկեսին կհասնի, գրեթե շատ քիչ բացառությամբ, տեղ-տեղ ավելի խոր են, տեղ-տեղ ավելի պակաս, բայց միշտ շառավիղեն երկայն: Ս. Թեոդորոսի մեջ եթե այս չափը, համեմատության դնենք կտեսնենք, որ պահանջված խորությունը կիսաբոլորակի միջին կետեն կհասնի մինչև մույթերու դեպի կեդրոն եղող ճակատին հավասարության, որ է՝ սեղանին իսկական մեծությունը: Եվ արդեն այդպես ալ եղած է. թեև փլատակներով ծածկված էր սեղանի ճակատը, սակայն ես, հետաքրքրված, անձամբ փորել տվի այդ մասը և տեսա, որ սեղանի ճակատը հավասար է մույթերուն տաճարին կեդրոնի կողմի ճակատին: Մույթերը ամբողջությամբ կմնան սեղանի սահմանին մեջ, նաև, բացի երկու կողմեն՝ մույթերու ետևեն ունեցած սանդուխներեն, ճակատեն ալ ունի սեղան բարձրանալու սանդուխ, ինչպես Զվարթնոց եկեղեցին:

Մույթերը ոչ քարերու տեսակով և ոչ ալ շինարարական օրենքով երբեք չեն համեմատեր չենքի մյուս մասերուն հետ, որոնք ի սկզբանե անտի գրեթե նորոգություն և փոփոխություն չեն տեսած հատակեն մինչև կամարներու հանգիստը, և այնքան անկանոն ու աննպատակահարմար շինված են, որ թե՛ ի հնումն զանազան ժամանակ նորոգության ենթարկվեր են և թե՛ այժմ ալ փլչելու ամենամոտիկ վտանգ սպառնացող մասերն են:

Արդ՝ այժմ կարելի է նկատել, որ այս եկեղեցիին ներսի կողմն ալ, ուրիշ նմանօրինակ խաչաձևերու պես, չորս կիսաբոլորակներու ծայրերը միացած էին իրարու և արտաքին կողմեն abside-ներու կողմնակի պատերու և ներքին կիսաբոլորակներու կողմնակի պատերու մեջտեղ մնացող դատարկությունները անջատ փոքր սենյակներ էին՝ արևելյան կողմինները անպայման խորանին հետ հաղորդակցող և թերևս տաճարին հետ ևս թևերու մեջեն, իսկ արևմտյան կողմինները՝ միմիայն տաճարին հետ:

Երբ ընդունինք որևէ ժամանակի մեջ գոյություն ունեցող այս ձևը և հետո ճեղքվելով այդ սենյակներուն տաճարին հետ խառնվիլը, այն ատեն մեզի համար կպարզվի արևելյան կողմեն կողմնակի մասերու վրա բացված փոքր դռներու պաշտոնն ալ: Հավանաբար այդ դռները միմիայն սենյակներու համար արտաքին դռներ էին՝ անհրաժեշտ պատշաճության մը համար բացված, մանավանդ հարավ-արևելյան անկյունի սենյակը ունեցեր է երկու դուռ, որոնց մեկը կբացվի դեպի արևելք, իսկ մյուսը՝ դեպի հարավ:

Այս դռները 7-րդ դարուն ոչ մի անհեթեթություն չեն ներկայացներ, երբ դեռ այդ սենյակները զանազան սրբոց անվամբ նվիրագործված մատուռներու չէին փոխարկված, այլ կգործածվեին Հայոց մեջ իբրև պարզ պահարան, հետևաբար անպատշաճություն մը չի նկատվեր արևելյան կողմեն դրսի հետ հաղորդակցելուն մեջ:

Թեև պահ մը մտածեցի, որ անհրաժեշտ պահանջի մը տեղի տալու նպատակով, ինչպես հետո պիտի տեսնենք, շատ հետո բացված լինեին այդ փոքր դռները, սակայն լիովին համոզիչ փաստեր չեմ գտած. հիրավի կան քարերու շարքի փոքր անպատշաճություններ կից եղող պատերու հետ, սակայն շինարարական կարգերու մեջ ներելի է այդքան մը անհամաչափություններ և շեղումներ այն մասերուն վրա, ուր դռներ և լուսամուտներ պիտի շինվին: Մանավանդ այս դռներուն վրա իբրև վերնասյամ դրված մեծածավալ միակտուր քարերը, որոնք իրենց վրա միաժամանակ փորված ունեն դռների լայնության պահանջած շառավիղով կամարներ ներքուստ և արտաքուստ, այն ատեն մի քիչ դժվար է հավատալ այս քարերուն վերջեն դրված լինելուն, որոնք բավական ճարպիկությամբ և կանոնավորությամբ դրված են դրանց վրա: Մանավանդ քարերու հին շենքին հետ ունեցած նմանությունը ավելի կհաստատե այս դռներուն շենքին հետ միաժամանակ շինված լինելու կարծիքս:

[1] Մինչ այստեղ վերցված է «Ախուրյան»-ի 1909 թվի №№ 59 և 60-ից: Շարունակությունն ըստ երևույթին անավարտ աշխատություն է, որ վերաբերում է Բաղարանի ս. Թեոդորոս եկեղեցուն: Մեր ձեռքն ընկած ձեռագիրը վերջում թերի է, որի շարունակությունը չգտանք հեղինակի դիվանում:
Կազմող

Իհարկե, ըստինքյան կարևոր և շահեկան էր ստուգապես գիտնալ սույն դռներու շինության ճիշտ ժամանակը, սակայն այդ քննությունը ավելի գիտակ և ձեռնհաս քննողի մը թողելով, ես իմ կողմանե պիտի ավելցնեմ, որ այդ դռների բացվելու ժամանակը այնքան ալ կապ չէր կարող ունենալ ներքին փոփոխությանց հետ, և կամ մի հակասություն տեսություններուս: Արևմտյան կողմի սենյակները դրսեն ամենևին դուռ չեն ունեցած, հավանաբար տաճարին հետ են հաղորդակցեր որևէ մի կողմեն: Բայց արևելյան կողմի դռները շատ հետո, հավանորեն 10-րդ դարուն, իբրև մտից դուռ ծառայեր են արևելյան կողմեն հավելյալ, երկու գեղեցիկ մատուռներու, որոնց հիմերը միայն կմնան այժմ:

Կողմնակի մատուռներուն շինությունը 10-րդ դարուն վերագրելուս պատճառն այն է, որ այդ դարեն առաջ ուրիշ օրինակներ չկան, նույն դարուն մեջ է, որ դավանական որևէ պահանջի մը համաձայն, խորանին երկու կողմը եղած սենյակներ սկսեր են abside ունենալ և իբր մատուռ ծառայել: Անշուշտ ներքին փոփոխությանց հետ շատ մոտիկ կապ ունի այս երկու մատուռներու շինությունը: Այս եկեղեցիեն զատ՝ ուրիշ շատ տեղեր կտեսնենք, որ ի սկզբան շինված են առանց կողմնակի մատուռներու, սակայն հետո պատշաճ կամ անպատշաճ կերպով ավելցուցեր են կողմնակի խորաններ: Շատ հավանական է, որ այս սովորությունը 10-րդ դարուն մեջ ընդհանրացած՝ ս. Թեոդորոսի հոգևոր պաշտոնեությունն ալ զգալով այս անհրաժեշտ պահանջը, որոշած են խորաններ շինել սենյակներուն մեջ, բայց որովհետև խիստ փոքր էին անոնք և abside-ներ ավելցնելու, բոլորովին անհարմար, ուստի, ներքին մեծ abside-ները իրարու միացնող անկյունները սյուներու վերածելով՝ պատռել են պատերուն հետ ունեցած միջոցը, խառնել տաճարին հետ, և տաճարեն դուրս շինել երկու միջակ մեծությամբ մատուռներ, օգտվելով նախապես գոյություն ունեցող դռներեն (եթե կային այն ժամանակ) իբրև մատուռներու մտից դուռ:

Հարավ-արևելյան մատուռը դրսի հետ հաղորդակցող դուռ ամենևին չունի, միմիայն տաճարին հետ կհաղորդակցի վաղեմի փոքր սենյակի դռնով, իսկ հյուսիս-արևելյան մատուռը, բացի տաճարի հաղորդակցության մյուս կողմինին համապատասխան դռնեն, նաև հարավային կողմեն, տաճարի abslde-ին կողքեն ևս դուռ ունի դուրս ելլելու համար: Այս երևույթեն կհետևցնեմ, որ մասանց խորանը հարավ-արևելյան կողմի մատուռը եղած լինի նաև պահարան մեծարժեք սրբազան անոթներու, իբրև ավելի ապահով և դժվարամատչելի՝ դրսի հետ բնավ հաղորդակցություն չունենալուն պատճառով:

Սույն փոփոխության 10-րդ դարին կատարվելուն կասկած չի մնար, երբ կտեսնենք հյուսիս-արևելյան մույթին վրա 11-րդ դարուն Պետրոս կաթողիկոսի օրով եղած արձանագրություն մը:

Պետք է գիտնալ, որ թեև կողմնակի փոքր դռներուն քննությամբ չենք կարող որոշ ուղղակի ապացույց տեսնել հետնագույն բացվածքի, սակայն մույթերու հանդիպակաց որմնասյուներու վրա կան ապացույցներ, որ մի ժամանակ տարբեր շարք ունեցեր են և հետո փոփոխվեր են: Բնականաբար, այն ժամանակ, երբ պատերը ճեղքեցին և սենյակները հաղորդակցության դրին տաճարին հետ, բարձրեն կամարներ կապեցին մույթերեն դեպի հանդիպակաց պատերը: Այստեղ միայն մի կասկած կարող է զարթնել քննողի մտքին մեջ, որ սենյակները տաճարների հետ հաղորդակցության դրվելեն հետո, կրկին նորոգության ենթարկված են սյուները, որովհետև սյան խոյակներեն վեր կամարները ևս անոնց վրա հորիզոնական շարված քարերու ուղղությունները համապատասխան չեն տաճարի պատերու ընդհանուր շինվածքին հետ, սակայն միևնույն տեսակ քարով շինված են, ինչպես որ եղած են տաճարին հին քարերը, իսկ սյան գլուխներու քանդակներու ոճը բնավ տարակույս չի վերցներ, որ 7-րդ դարեն շատ հետո գոյություն ունեցող քանդակներ են: Բայց որովհետև տաճարի այժմյան մույթերը ընդհանրապես կարմիր քարով շինված են (տաճարը ամբողջությամբ թուխ քարով շինված է), նմանապես հավելյալ արտաքին մատուռները, այստեղ ալ մի կասկած կարող է լինել, որ նախապես ուրիշ փոքր մատուռներ ավելցուցած են սյուներու փոփոխությանց հետ միաժամանակ, և հետո սյուներու երկրորդ նորոգության հետ շինված լինեն այժմյան կարմիր քարերով կառուցված մատուռները: Այսօրինակ բունի հարմարցված սյուներու համար ալ շատ բնական է հաճախ նորոգության կարոտիլ, որովհետև անհնար է նույնքան հաստատուն և կանոնավորությամբ շինել, ինչպես որ պիտի շինվեր տաճարին շինության հետ միաժամանակ հիմն ի վեր: Այս վիճակին ենթարկված է նաև նույն կերպով փոփոխված Էջմիածնի տաճարը, ամենեն շատ ներքին չորս սյուներն են, որ նորոգված են և այժմ ալ պետք ունին նորոգվելու:

Բագարանի ս. Թեոդորոսը համեմատելով 5-րդ դարու Տեկորի եկեղեցիին հետ ըստ ճարտարապետական օրինաց, կտեսնենք, որ նրանք զարգացման միևնույն շառավիղին վրա են, երբեմն մասերու մեջ ս. Թեոդորոսը ավելի կատարելագործված: Եվ այս կատարելագործված մասերը չեն վերաբերեր բնավ շինարարական օրենքներուն և կամ ճաշակի զարգացման, այլ պարզապես գմբեթի կազմակերպության, որն որ 5-րդ դարուն Տեկորի մեջ դեռ շատ նախնական դրության մեջ է, հակառակ մյուս մասերու գերազույն կատարելության: Ավելորդ է ըսել, որ հայոց մեջ շինարարական արվեստի զարգացումը, դատելով մնացորդ հնագույն հիշատակարաններե, շատ հին է. թերևս շատ դարեր քրիստոնեութենե առաջ, նույնպես գեղարվեստական ոճերու փոփոխության տեսակետով ալ առաջինը չի կարելի համարել Տեկորի տաճարը: Իմ կարծիքով՝ գմբեթներն են, որ Տեկորի տաճարեն կկսին, և անընդհատ մշակվելով՝ հասեր են զմայլելի նրբության ու կատարելագործության 13-րդ և 14-րդ դարերուն:

Ինչպես 7-րդ դարու բոլոր գմբեթներ, նույնպես ալ ս. Թեոդորոսի գմբեթը, թեև Տեկորի գմբեթի շինության կերպին հետքերը բնորոշ կերպով ունի իր վրա, սակայն համեմատաբար ավելի հառաջ գնացած է ճարտարապետը զայն գեղարվեստականորեն կազմելու մեջ, միևնույն ատեն որչափ որ Տեկորեն քանի մը քայլ հառաջ անցած է, բայց դեռ նշույլը չերևիր 10–11-րդ դարերու վերջնական կատարելության:

Տեկորի գմբեթը արտաքուստ քառակուսի է, և չէր կարող ուրիշ կերպ ալ արտահայտվել դրսեն, քանի որ ոչ միայն դեռ voûte pendentif-ը անծանոթ էր, այլև 7-րդ դարուն մեջ չորս մեծ կամարներու միացում են գոյացած քառակուսի բացվածքը անկյուններեն շեղակի նետված փոքրիկ կամարիկներով 8 կամ 16 անկյուններու վերածելու օրենքն ալ անծանոթ էր: Տեկորի գմբեթին ներքին կողմը պարզապես քառակուսի է գրեթե, միայն թե ամեն կողմեն դեպի ներս հակված մինչև սահման մը և այնուհետև այդ հակումները կորացվելով՝ իրարու միացած: Այժմյան երևցած calotte-ը, գմբեթին ստորին մասեն սկսյալ, շինվածքի շարունակությունը չէ. վերջին ժամանակի նորոգության հետևանքն է, որն որ կանոնավոր գնդաձև կաղապարի վրա շարված է, մինչդեռ եթե հինը լիներ, մինչև վերջին փականքը պետք է որ նույն ոճով շարունակվեր[1]:

Բագարանի ս. Թեոդորոսի մեջ զարգացումը կկայանա գմբեթի խարիսխեն սկսած կանոնավոր ութանկյուն կազմության մեջ, որ համեմատաբար ավելի ախորժելի տեսք ունի և արդյունք՝ կարող մասնագետներու ձեռքով երկար ժամանակի փորձառությամբ մշակված ծրագրի մը:

5-րդ դարուն ներքին կողմեն գմբեթի թմբուկը շեշտված չէ, երբ 7-րդ դարուն անհրաժեշտություն կներկայացներ դրսեն թե ներսեն թմբուկի կազմությունը, այն ատեն ճարտարապետներ մտածելով, ճարը գտեր են՝ եթե ոչ բոլորովին բոլորակ, գոնե բոլորակի մոտեցող 8-անկյան կամ 16-անկյան վերածելու: Ուստի մեծ մույթերու կամարներու միացումեն գոյացած քառակուսի բացվածքին անկյունները շեղակի կտրեր են փոքրիկ կամարներ ձգելով, և այդ կամարիկները հաճախ միակտուր քարե են՝ մեջը փորված: Բայց որովհետև այդ փոքրիկ կամարներով բոլորովին անկյունները չէին բթանար և հավասարակողմ ութանկյուն չէր կազմվեր, ուստի ուրիշ ութ կամարիկներ ևս ավելցուցեր են նախկիններուն կատարեն սկսած մինչև մեծ քառակուսիի միջին կետերուն վրա, ասով արդեն, դեռ խարիսխին վրա կատարելապես կկազմվեր կանոնավոր բութանկյուններով ութանկյուն թմբուկի մը պատվանդանը, և շատ հեշտ էր այլևս այս բթացած անկյուններուն վրայեն բոլորովին բոլորակ գոտի մը դարձնել և կազմել կոնաձև թմբուկ:

Բագարանի ս. Թեոդորոսի ճարտարապետը կետառ կետ սույն կերպը իրագործած է: Մեծ մույթերը իրարու միացնող կամարները կապելեն հետո, անկյուններու դատարկությունները լեցուցեր է դարձյալ քառակուսի կազմված պատի ձևով և կամարներու կատարին հավասար հասնելեն հետո կատարեր է վերոգրյալ գործողությունը, ուղղակի ուղղանկյուն քառանկյան ձևով կազմված պատվանդանի մը վրա, որն որ արտաքուստ կգոյանար կամարներուն վրա շարունակված պատերուն պատճառով:

Այս քառակուսի պատվանդանն է, որ Տեկորի վրա կերևնա իբրև գմբեթ, իսկ ս. Թեոդորոսի վրա նվազ բարձրացված և վրան գմբեթը շարունակված է. բայց համեմատելով վերջին շրջաններու պատվանդաններուն հետ, դարձյալ բավական բարձր է, թեև ոչ Տեկորի չափ, բայց ամենաբարձր կտուրեն ավելի բարձր է քան մեկ մետր. մինչդեռ վերջին ոճերու համաձայն՝ կտուրի կատարին հավասարությամբ պետք էր, որ վերջանար, և գմբեթի թմբուկը սկսվեր:

Թեև գմբեթը ամբողջովին կործանված է, սակայն սխալ չէ եզրակացնել, որ թմբուկը ութանկյուն էր և վրան ծածկված կոնաձև, ինչպես մեր ժամանակը հասած եկեղեցիների կանգուն գմբեթները (Մրեն, Ալաման, Գայանե և այլն):

Թմբուկի ութանկյուն լինելուն փաստը ոչ միայն հիշված եկեղեցիներն են, այլև բացատրված խարիսխի կազմությունը ութանկյան հնարավորություն կուտար հեշտությամբ իրագործելու համար, իսկ կոնաձև ծածկին իբրև վկա կներկայանան այնտեղ թափված կղմինդրներու կտորները, որոնց մեջ գմբեթի ծածկի հատուկ եղածներուն մեկ ծայրը խիստ նեղ է և, համեմատաբար, ստորին ծայրը՝ լայն:

Մրեն և Բագարան երկուքն ալ կղմինդրով ծածկված են, ձևով իրարու բոլորովին նման, սակայն ծավալով տարբեր. ասկեց կհետևի, որ հատկապես պատվերով կշինվեին կղմինդրները՝ տրված

[1] Գմբեթի նախնական ձևը տես՝ նկ. 127:

չափերու համաձայն: Բայց չեմ կարող վճռել, թե 7-րդ դարուն ամե՞ն տեղ կղմինդր կգործածեին, թե՞ կղմինդրի գործածությունը Երասխաձորի և Այրարատի մեջ միայն ընդհանրացած էր, ուր հաճախ կտեսնվի անոր գործածությունը:

Զորս abside-ներուն կամարները ավելի ցած են, քան միջին մույթերը կապող կամարները, և այդ ցած կամարներեն վեր մինչև առաստաղ-կամարները պատուհաններ կան:

Կամարները թերևս շեշտված fer á chevale են, բայց Տեկորեն տարբեր մի հատկություն ևս ունի, որ կատարները ուղիղ բոլորակ չեն, այլ բեկյալ, այսինքն՝ երկու զանազան կեդրոններե ձգված աղեղներու միացումը, որ ուղիղ կիսաբոլորակի տալիք սահմանեն բարձր է:

Կամարներու այս հատկությունը, մասնավորապես կատարի բեկումը, շարունակված է հայոց մեջ մինչև հայ ճարտարապետության անկումը: Ինձի հազիվ պատահեր է տեսնել plein de cintre կամարներ մինչև 13-րդ դարու շինությանց մեջ, անոնք միշտ arc-sur-baissé եղած են, միայն 13-րդ դարուն արաբական ոճով պատվաստված, շրջանին մեջ, տեղ-տեղ եկեղեցիի գավիթներու կամարներ կան բոլորովին plein de cintre, միայն մի տարբերությամբ, որ եթե կատարի բեկումով չեն բարձրացած կիսաբոլորակի տված սահմանեն վեր, retombé-ները որոշ չափով ուղղահայաց կերպով բարձր դրված են, որով աչքի երևույթի տեսակետով գրեթե նույն համեմատությունը կստացվի: Եկեղեցիներու մեջ երբեմն կան փոքր կամարներ, օրինակ՝ մեծ մույթերը կողմնակի որմնասյուներու կամ արտաքին պատերու միացնող կամարներ, որոնք arc-brise չեն, սակայն շեշտված fer á chevale են, ինչպես Անիի մայր եկեղեցիի մեջ, Տեկորի մեջ, նաև ս. Թեոդորոսի մեջ arc-surbaissé կամ brisé ևս ինչպես plein de cintre-ի տված սահմանեն աղեղը վեր բարձրացնելու հատկությունը ունի, այնպես ալ որոշ չափով fer á chevale նույն հատկությունը ունի. ասկեց կհետևի, որ հայոց մեջ ամենևին ընդունված չէր ուղիղ կիսաբոլորակի մը տված կամարներու բարձրության համաչափությունը, այլ միշտ բարձր:

Abside-ներու գմբեթարթներու քարերուն շարվածքը Բագարանի մեջ մի տարբեր օրենքի հետևած է: Առհասարակ abside-ի սկիզբեն զուգահեռաբար դեպի խորը գնացող մասին վրա ուղիղ կամար կապելեն հետո, երբ կհասնի կիսաբոլորակի սահմանը, ուր պիտի սկսի գմբեթարթը, միջին կետին վրա կհաստատվի կիսաբոլորակ քար մը և անոր շուրջը շառավիղաձև interstice-ներով կտաշվին քարերը և կշարվին մինչև ետևի կիսաբոլորակ պատը: Այստեղ նույն քարը փոխանակ կիսաբոլորակ դրվելու, դրված է գրեթե ամբողջ բոլորակ մեկ ծայրեն երկար ուղղանկյուն պոչով մը, և այդ պոչը տարված է դեպի դուրս և մտած է ուղիղ կամարներուն մեջ իբրև փականք. այս կերպով կամարներու և գմբեթարթի մեջ մի կապ կհաստատվի, նաև խախտումե կապահովի գմբեթարթի իբրև փականք ծառայող նույն քարին բոլորակ մասն ալ:

Դռներու և պատուհաններու ձևն ու շինելակերպն ալ իր դարուն հատուկ ոճն ունի, ոչ բոլորովին 5-րդ դարու օրինակներուն կնմանի և ոչ ալ հետնագույն ոճերուն:

Առհասարակ լայն և բարձր են հարավային և արևմտյան abside-ներու մեջտեղին վրա բացված գլխավոր մտից դռները, որոնք կամարակապին վրան moulure-ներով պսակված, դրսեն և ներսեն բացվածքի լայնությունները հավասար են: Ըստ երևույթին դռները պսակող կիսաբոլոր corniche-ները իբրև հանգիստ ունեցեր են դռան երկու կողմին վրա շինված որմնասյուներ (colonn engagé), սակայն այժմ ոչինչ չէ մնացած անոնց տեղը, բոլորովին քանդված ու տարված են:

Պատուհանները ևս թե՛ լայն և թե՛ բարձր են, միայն թե մի մասով կտարբերվեն 5-րդ դարու Տեկորի պատուհաններու ոճեն: Տեկորի մեջ պատուհաններու բացվածքները ներսեն և դրսեն հավասար են, մինչդեռ 7-րդ դարուն շինված բոլոր եկեղեցիներու պատուհանները, որոնք ես տեսեր եմ, ամենն ալ դրսեն ավելի նեղ են, քան ներսեն, սակայն նեղությունը այնքան ծայրահեղության չէ տրված, որչափ Բագրատունիներու շրջանին մեջ ընդունված էր:

Պատուհաններու արտաքին եզերքները ամբողջովին շրջանակված չեն moulure-ներով, սակայն առանց բացառության ունեն գլուխներու վրա երկու ծայրերը հորիզոնական կերպով թեքված կիսաբոլորակ պսակներ, որոնցմե ոմանք լոկ moulure-ներ են և ոմանք ալ հարթ մակերևույթով լայն ժապավենի վրա փորագրված զանազան ծաղկանկարներ՝ իր դարաշրջանին հատուկ:

Եկեղեցիներու կտուրներու ձևն է միայն, որ ամենահին թվականներե մինչև վերջը անփոփոխ պահված է, այն է՝ չորս ճակատներեն չորս fronton-ներու լայնության և բարձրության չափով խաչաձևված ամբողջ շենքին վրա և թեք ծածկված, խաչաձևումեն հառաջ եկած չորս անկյուններուն վրա մնացած ավելի ցած մասերը որևէ մեկ կողմին վրա թեք ծածկված: Ս. Թեոդորոսի մեջ ալ այս ձևը պահպանված է, միայն ավելորդ լինելով ունի... [Ձեռագիրն այստեղ ընդհատվում է]:



# Դ

# ԶՎԱՐԹՆՈՑ[1]

Բյուզանդիան ունի աշխարհահռչակ մի ս. Սոֆիա, իսկ Հայաստանը նորա դեմ կանգներ է մի Զվարթնոց, որը բարձր գլուխ կգարձի իբրև ճարտարապետական գոհար բոլոր Բյուզանդական շինություններու մեջ: Սակայն, երբ ի նկատի առնենք 62 նահանգներու տիրապետող Բյուզանդական կայսրության ուժն ու հարստությունը, որուն մեկ նահանգն էր Հայաստանը, միակ մեկ ս. Սոֆիան քիչ էր Բյուզանդիայի համար, իսկ Զվարթնոցը շատ էր Հայաստանի համար, և այն ալ այնպիսի ժամանակի մեջ, երբ ոչ միայն արվեստ և գիտություն արմատախիլ լինելու վտանգի տակ էին, այլև ամբողջ հայության գոյությանը վտանգ կսպառնար ջնջվելու աշխարհի երեսեն: Վերցուցեք պահ մը ս. Սոֆիան մեջտեղեն, և ահա պիտի տեսնեք, որ բովանդակ Բյուզանդական կայսրության մեջ գոյություն ունեցող հիշատակարաններու հետ մրցող թեև քանակով քիչ, բայց որակով գերազանցողներ իսկ կան Հայաստանի մեջ. իսկ եթե թվական համեմատության դրվին երկու երկրներու մեջ եղած հիշատակարանները՝ բաղդատմամբ երկրի բազմամարդության, հարստության և տարածության հետ, այն ժամանակ անգամ մը ևս կհամոզվինք, որ Հայաստանը որոշ չափով գերազանցեր է, քան իր դրացի մեծ Բյուզանդիան:

Որոշ ճյուղեր Հայաստանի մեջ չեն զարգացեր շատ բնական պատճառներով – պատկերամարտությունը միանգամայն արգելք եղավ Հայաստանի մեջ մոզայիկի և նկարչության արվեստներու զարգանալուն. եթե այդ տխուր երևույթը չլիներ, անպայման Հայաստանն ալ ետ չպիտի մնար Բյուզանդիայում կատարելագործության հասած գեղեցիկ արվեստին մեջ:

## ԳԼՈՒԽ Ա.

## ՇԻՆԱՐԱՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ 5-ՐԴ, 6-ՐԴ ԵՎ 7-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ[2]

Հայ ժողովուրդը իր քաղաքական անկախությունը կորսնցնելեն հետո, փոխանակ հեզհետե մաշվելու, սպառվելու և անհետանալու, ընդհակառակը, գերագույն ճիգ է թափել կրած բոլոր աղետները դարմանելու, իր հայրենի հողին կպած՝ ամեն նպաստավոր առիթներե օգտվելով, որոշ չափով զարգացեր, բարգավաճեր և ամեն մի դարաշրջանի ուրույն դրոշմը կրող առանձնահատուկ քաղաքակրթություն է ծաղկեցուցեր:

Որպեսզի ավելի պարզ և գնահատելի լինի ի հնում հայ ժողովրդի մեջ պարբերաբար ծնող գեղարվեստագետներու հանճարի և ազնիվ հատկություններու իսկական արժանիքը, հարևանցի կերպով մատնանշեմ, թե 5–7-րդ դարերու դառն պայմաններու մեջ Հայաստանը ինչ հսկայական արդյունք է տվեր գեղարվեստական աշխարհի պատմության, մասնավորապես ճարտարապետական ճյուղին մեջ, որուն ոսկեղեն կնիքն է եղած 7-րդ դարուն Ներսես Գ. Շինող կաթողիկոսի կանգնած փառավոր Զվարթնոց եկեղեցին: Այդ երեք դարերու քաղաքական կացությունը միանգամայն անտանելի եղած է ընդհանրապես Հայաստանի համար, և աշխարհի երեսեն ընդմիշտ ջնջվելու վտանգը դամոկլյան սուրի պես գլխին վերև կախված, այնուամենայնիվ հետաքրքրական է զանազանել և որոշել այն փոքր ինչ տանելի ժամանակները, որուն մեջ հայ ժողովուրդը, մոռացած ամեն ինչ, նվիրվեր է զարգացման և սեփական ստեղծագործությանց, որուն արդյունքը լուրջ քննողի համար միանգամայն ապշեցուցիչ է:

Առանց հաշվելու 5-րդ դարու սկիզբեն Հայաստանի պետական գահուն խարխուլ վիճակի մը ենթարկվելը և նույն դարուն երկու հզոր թշնամի ախոյաններու՝ պարսից և հունաց ճնշումներու ներքև անկախության գայիսոնի փշրվելը, որ իսկապես նախանձելի վիճակ մը ենթադրելե հեռու է, այնուամենայնիվ աշխարհավեր արհավիրքներու և աղետներու սկիզբը պիտի հաշվեմ Վարդանանց պատերազմի սկզբնավորությունեն (450–451):

---

[1] Այս փոքրիկ հատվածը տպագրում ենք հեղինակի սեագիր ձեռագրից: Գրության ժամանակն անհայտ է:

Կազմող

[2] Այս հոդվածը տպագրում ենք հեղինակի ձեռագրից: Սա գրված է «Զվարթնոցի տաճարը» անավարտ մոնոգրաֆիկ ուսումնասիրության համար: Գրության ժամանակն անհայտ է:

Կազմող



Նկ. 146. Զվարթնոցի ընդհանուր հատակագիծը






Նկ. 147. Զվարթնոցի տիպին պատկանող տաճարի հատակագիծը Բանա գյուղում

Նայելով բոլոր պատմագրական աղեկտուր նկարագրություններու, Վարդանանց պատերազմի զարհուրելի հետևանքով, Հայաստանի վերականգնման հույսը միանգամայն կորած էր: Բարձրաստիճան եկեղեցականներ, հայ նախարարներ, իշխաններ և ազնվական տոհմերու մեծամեծ ներկայացուցիչներ, որոնք գլխավոր ազդակներն ու մղիչ ուժերն էին գրականության և քաղաքակրթության զարգացման՝ Հայաստանի մեջ, մեծ մասամբ զոհ գնացին Վարդանանց պատերազմին: Ոմանք մեռան պատերազմի դաշտին վրա, ոմանք բանտերու և աքսորավայրերու մեջ հյուծվեցան երկար տարիներ և շատ քիչերը անոնցմե կարողացան իրենց վերջին օրերուն հայրենիքի երեսը տեսնել, իսկ ոմանք ալ տեսնելով Հայաստանի անօրինակ ավերումները, ինքնակամ հեռացան՝ օտար հողի վրա հանգիստ և խաղաղություն գտնելու համար: Այնուամենայնիվ դեռ Վարդանանց պատերազմին նահատակներու գետի պես վազող արյունը չցամաքած, չգիտեմ ի՞նչ տեսակ հրաշքով հայ ժողովուրդը այնպիսի կենդանության արտասովոր շքեղաշուք կյանքի շարժում ցույց տալ սկսեր էր, որ պատերազմին ականատես և աղետին անմխիթար ողբերգու Եղիշեն ապշության ճիչով մը կարձանագրե յուր միանձանց ճառին մեջ, թե՝ «Շինուածք ապարանից մերոց յայտ առնեն, եթե ոչ ունիմք տաճար առանց ձեռագործի յերկինս, որ մտանելոց են ամենայն դասք սոսկացելոյն յերկրաւոր ախտից»: Հազիվ հազ սկսեր էին այս վերակենդանության շարժումները, վրա հասան Վահանանց երկարատև պատերազմները, որ անգամ մը ևս տակնուվրա արին Հայաստանը և խամրեցուցին Սահակ-Մեսրոպին քրտնաջան աշխատությամբ ոռոգված քաղաքակրթության Վարդանանց պատերազմով կարկտահար եղող տերևաթափ բունին վրա վերստին աճել սկսող ծիլերը: Վահան Մամիկոնյանի պատերազմները մի փոթորիկ էին Հայաստանի համար, որ թեև մարդկային մեծ զոհեր չէր տաներ, այնուամենայնիվ ժողովուրդը, մատնված ահ ու սարսափի, ամեն տեսակ շինարար աշխատանք մոռացած՝ կենաց և մահու անդունդին մեջ տարուբերվելով, փրկության ելքին վրա միայն հազիվ կարող էր մտածելու ուժ ունենալ: Բախտի հաջողությամբ Վահան Մամիկոնյանի սպարապետ և հետո մարզպան նշանակվելը մի նոր հուսո լուսավոր շառավիղ եղավ Հայաստանի խաղաղության համար այնչափ ժամանակ, որչափ կյանք ունեցավ այնուհետև Վահան Մամիկոնյան, կամ քիչ մ'ալ ավելի: Ուրեմն Վարդանանց պատերազմեն՝ 451 թվականեն մինչև Վահան Մամիկոնյանի մարզպանության սկիզբը, գրեթե 35 տարի, Հայաստանի համար անդադար կոտորածի ու ավերակի մի շրջան էր: Այս ավերածի շրջանին պատճառած բարոյական և ֆիզիկական վնասները դարմանելու համար միայն գոնե կես դար խաղաղություն էր հարկավոր: Վահան Մամիկոնյան որչափ որ կրցավ խելացի քաղաքագիտությամբ մը պարսից արքունիքի և Հայաստանի շահերը զուգակշիռ պահելով պարգևել Հայաստանին [խաղաղություն] յուր մարզպանության կոչվելու օրեն, այնուամենայնիվ իր ապրած քսան տարիները բավական չեղան քանդված հայ աշխարհը լիովին վերաշինելու: Վահան մեռավ 505 թվականին, տեղն անցավ յուր Վարդ եղբայր, սակայն, արդյոք կարողացա՞վ Վահանի նման քաղաքագետ և խոհական վարչություն մը ունենալ - այդ հայտնի չէ. պատմությունը, եթե գովեստ չունի, գոնե դանդատ ալ չունի: Սակայն Վարդ ալ մեռավ 512 թվականին, որով Հայաստանը 5-րդ դարուն մեջ ընդամենը ունեցավ 27 տարվան կարճ խաղաղություն մը Վահանի մարզպանութենեն սկսյալ: Վարդի մեռնելեն հետո վերստին մոայլվեց Հայաստանի ճակատագիրը, եկան պարսիկ մարզպաններ, որոնք, ինչպես կերևի, սկսեցին նեղել Հայաստանը, բայց հայերը ճարահատած համբերեցին, և քանի որ պատերազմելու կամ ապստամբելու ուժ և հնարավորություն չունեին, որովհետև «Զկնի նորա (Վարդայ) եկին մարզապան պարսիկք. ապա



Նկ. 148. Զվարթնոցի վերակազմության ճակատը արևմուտքից



*ո՛չ կարացին պատերազմել Հայք, ի հնազանդութեան կացին մինչև ցՍուրէնն մարզպան և ցՎարդանն Մամիկոնէից տէրն»: (Սեբ., էջ 40): Ստուգիվ, գուցե Վարդանյան և Վահանյան փոթորիկները վերսկսվեին Հայաստանի համար պարսիկ մարզպաններու վարած քաղաքականությամբ, եթե բարեդեպ դիպվածով մը Հայազգի Մժեժ Գնունին Հայաստանի մարզպան չնշանակվեր: Մժեժ Գնունիի մարզպանությամբ (518-547) մոտավորապես 30 տարի մի զսպված խաղաղություն անցուց Հայաստան: Սակայն Մժեժեն հետո եկող Դենշապուհեն սկսած՝ արդեն անլուր չարիքներու մի շարք սկսեց մինչև 590 թվականը, որուն փոքր ինչ մեղմացում պատճառեց Որմիզդի մահով՝ մանկահասակ Խոսրով Փարվեզի գահակալությունը: Խոսրով սկզբում տրամադիր կերևեր Հայաստանը միանգամայն խաղաղ և հաշտ պահելու, սակայն այն ժամանակ բյուզանդական գահուն վրա բազմող Մորիկ կայսեր հայատյաց քաղաքականությունը և Խոսրովի վրա անոր, իբրև պաշտպանի և հովանավորի, ունեցած ազդեցությունը թույլ չտվավ Խոսրովին, որ բոլորովին խաղաղ թողու Հայաստանը, որով մշտապես պարբերական ալեկոծության մեջ մնաց մինչև 602 թվականին Մորիկ կայսեր մահը: Արդ, հաշվելով 547 թվականեն մինչև 602 թվական, գրեթե անընդհատ 55 տարի արյան մեջ լողալով բոլորեց Հայաստանը 6-րդ դարաշրջանին մեջ:*

*Մորիկի մահվանեն (602) մինչ պարսից Կավատի թագավորելը (628) Մորիկի եղեռնական մահվան վրեժխնդրության անունով պարսից և հունաց մեջ բացված երկարատև պատերազմներով դարձյալ Հայաստան արյունվա, ոտնակոխ եղավ պարսից և հունաց բանակներեն՝ 26 տարի:*

*Արաբներու Պարսկաստան արշավելու ժամանակ (636) արդեն սկսված էին Հայաստանի հարավային և արևելյան մասերուն վրա որոշ չափով ավերումներ: Դվինի առումեն առաջ ալ մեկ երկու անգամ արաբներ մտեր և սպատակեր էին Հայաստանի քանի մը գավառները, հետո Դվինի առումով (641) Հայաստանի դժբախտության չափն անցավ, մինչև Թեոդորոս Ռշտունիի Հայաստանի վրա կառավարիչ նշանակվելը 653 թվականին: Ուրեմն այս տագնապի շրջանն ալ տևեց 15 տարի:*



Նկ. 149. Զվարթնոցի վերակազմության կտրվածքը արևելքեն արևմուտք

Թեոդորոս Ռշտունիի մահվամբ (658) Հայաստանը վերստին սպառնական վիճակի ենթարկվեցավ, և աղետալի հետևանքը չեզոքացավ՝ վարչական ղեկը Գրիգոր Մամիկոնյանի ձեռքը անցնելովը 660 կամ 661 թվականին:

Գրիգոր Մամիկոնյանի վարչագիտության հետ միասին արտաքին քաղաքականության նպաստավոր դասավորության շնորհիվ մինչև 682 թվական՝ Գրիգոր Մամիկոնյանի մահը, բռնազբոսիկ մի խաղաղութենե հետո, Հայաստանը արաբ-բյուզանդական ընդհարումներով միևնույն պատկերը ստացավ մինչև 698 թվականը, ինչ որ էր պարսիկ-բյուզանդական պատերազմներու ժամանակ Հայաստանի հողին վրա: Այս հաշվին վրա ավելցնենք Հայաստան ղրկված Մեհմետ ոստիկանի խժդժությունները մինչև 700 թվական, դարձյալ կունենանք 18 տարվան արյունոտ շրջան մը:

Այժմ տեսնենք, թե 5-րդ դարու սկիզբեն մինչև 8-րդ դարու սկիզբը՝ 300 տարվան մեջ քանի՛ տարի տևեց Հայաստանի մարտիրոսական շրջանը:

**5-րդ դար.** Վարդանանց սլատերազմեն մինչև Վահանի մարզպանությունը 451-են մինչև 485 թ. – 35 տարի:

**6-րդ դար.** Մժեժ Գնունիի մահվանեն (547) հետո մինչև 590 թվական՝ Որմիզդի մահը – 43 տարի:

Մորիկի դրդումով իր և Խոսրովի հալածանքները մինչև Մորիկի մահը (602), շարունակություն 6-րդ դարու – 12 տարի:

**7-րդ դար.** արաբներու Հայաստան արշավելեն (638), Մորիկի մահվան վրեժխնդրության անունով, Հայաստանի հողին վրա – 26 տարի:

Հույն-պարսկական պատերազմներեն (602-628) մինչև Թեոդորոս Ռշտունիի վարչությունը – 15 տարի:

Գրիգոր Մամիկոնյանի մահվանեն (682) մինչև Մեհմետ ոստիկանի մեկնելը 700-ին – 18 տարի:

Արյունլվա շրջան հարյուր քառասուն և ինը տարի՝ երեք հարյուր տարվան մեջ:

Ահավասիկ մի պարզ վիճակագրություն բուռ մը ժողովուրդի, որ 300 տարվան մեջ գրեթե 150 տարին անդադար մորթվեր, թալանվեր և հարյուր հազարներով գերի տարվեր է: Զափազանցություն չի լինիր, եթե ըսեմ, որ իր թվական քանակեն պակսեր է ավելի քան մեկ երրորդը:

Բայց միշտ փրկության հույսով կառչած էր հայրենի երկրին, ամեն մեկ առիթե օգտվելով, մոռացության տված բոլոր ցավերը, աշխատել է միշտ վերականգնել, իբրև մարդ, իբրև քաղաքակիրթ ժողովուրդ ապրելու ուղղության մեջ հառաջ գնալու ճգնել: Եթե լրջորեն քննենք, պետք է հրաշքներու կարգը դասենք այս ժողովրդի դյուցազնական տոկունությունը, որ քանիցս գերեզման դրվելե հետո վերակենդանացեր և, արհամարհելով ամեն տեսակ չարիք ու տառապանք, սառն արյամբ անդադար մեկզմեկու ետևե արտադրեր է գեղարվեստական անթիվ կոթողներ, որոնք տասն և հինգ դարերե ավելի բնության ամեն մեկ արհավիրքներուն կուրծք տալով՝ մեծ մասամբ հասեր են մինչև մեր օրերը, զարմանք և պատկառանք ազդելու համար թե՛ իրենց ճարտարապետական բոլոր նրբություններու և կատարելություններու և թե՛ անոնց ստեղծագործող և խրախուսող մեծ հանճարներու հանդեպ:

Թեև առիթ կունենամ ներկա աշխատությանս մեջ Եվրոպական մեծ գիտնական արվեստագետներու ներբողականներն արձանագրելու հայ ճարտարապետության և գեղարվեստի շուրջը, այնուամենայնիվ իմ կողմանե ալ լոկ գովեստներ չհամարվելու համար պիտի թվեմ այն բոլոր գեղակերտ և պատկառելի հուշարձանները, որոնք իմ ճանապարհորդություններու ժամանակ առիթ եմ ունեցեր չափագրելու, լուսանկարելու և մանրամասն հետազոտելու:

Այն հիշատակարանները, որոնց ցանկը պիտի դնեմ այստեղ, ոչ միայն կանգնված են փաստացի կերպով 5-րդ, 6-րդ և 7-րդ դարերուն մեջ միայն, կամ, ավելի ճիշտը, թերևս այդ երեք դարերուն խաղաղ շրջանին 150 տարվան մեջ, այլև Այրարատյան նահանգի մի նեղ շրջանին մեջ միայն ամփոփված են:

Որովհետև ես առիթ չեմ ունեցեր իմ աշխատությանս սահմանը ընդարձակելու և թափառեր եմ միայն Շիրակի և Այրարատի միայն մեկ մասին մեջ և անոնց մի քանի հարակից եզերքներուն վրա միայն: Քանի մը հիշատակարաններ կան, որոնք անվրեպ հեթանոսական ծագում ունին և կամ առառավելն նախքան 5-րդ դար կանգնված են, սակայն հետագային քրիստոնեական նախնական դարերուն եկեղեցիներու փոխարկված են, ուստի հարկ կսեպեմ առանձնապես որոշել այդ արտասովոր ձևով շենքերը:

Նկ.150. Զվարթնոց տաճարի ավերակների ընդհանուր տեսքն արևմուտքից

## Ա

## [5-րդ դարեն առաջ շինված շենքեր]

1. Արագած լեռան արևմտյան լանջին վրա, Հայաբնակ **Շիրվանջուղ գյուղի եկեղեցին**, որն ամենայն հավանականությամբ փոխարկված է 5-րդ դարուն [հատակագիծը տե՛ս նկ. 57]:

2. **Դիրաքլար գյուղի եկեղեցին** մինչև այսօր պահած է հեթանոսական cella-ի տիպը. ոչ պատուհան ունեցեր է և ոչ ալ կիսաբոլորակ խորան արևելյան կողմը. այժմյան գյուղացիք, որ Պասկևիչի ժամանակի գաղթականներ են, իրենք չիներ են abside-ը և բացեր են մեկ երկու անճաշակ ծակեր, որպես պատուհան: Վերջին նորոգության ոճը 10-11-րդ դարերու արվեստի նմանություն կբերե [հատակագիծը տե՛ս նկ. 58]:

3. **Երերույքի եկեղեցին**, որ կգտնվի Ալեքսանդրապոլ – Երևան երկաթուղագծի վրա, Անի կայարանեն մեկ և կես վերստ դեպի հարավ-արևմուտք, Ղըզլ-Ղալա քրդաբնակ գյուղին կից: Այս եկեղեցվո հեթանոսական ծագման մասին տեսությունս կարդալ իմ «Տեկորի տաճարը» աշխատության մեջ [տե՛ս նկ. նկ. 61, 189-191]:

4. **Բաշ-Ապարան գյուղեն** դեպի հյուսիս-արևելք, Կարանլուխ հայաբնակ գյուղի մոտ կա մի մեծ ավերակ, անշաղախ որձաքարերով շինված, նման ուրարտական շրջանի կիկլոպյան շենքերու. այս շենքի արևելյան ծայրին, թերևս 5-րդ դարուն, շիներ են գաճ ու կիրով և սրբատաշ քարերով երկու կիսաբոլորակ խորան (abside) միմյանց կից. շենքն ալ արևելքեն արևմուտք պատով մը բաժանված է երկու մասի, սակայն հայտնի չէ, թե այս բաժանումը ե՛րբ է տեղի ունեցեր՝ եկեղեցիի վերածվելե առաջ, թե՞ հետո, այս բանը կպարզվի մասնավոր պեղումներով:

5. **Բաշ-Ապարան գյուղի** մեջ գտնված հնագույն եկեղեցին, որուն հեթանոսական ծագման մասին տեսնել իմ «Տեկորի տաճարը» աշխատության մեջ, մասամբ ալ առիթ պիտի ունենամ այս աշխատությանս մեջ խոսելու այդ մասին [տե՛ս նկ. նկ. 59, 60]:

6. **Եղվարդ գյուղի** արևմտյան կողմը, հին գերեզմանատան հարավակողմին կից կա անշաղախ որձաքարով շինված մի փոքր շինություն, նման ուրարտական շրջանի շենքերու. ասոր ալ հեթանոսական ծագումն անկասկած է, հետնագույն ժամանակ ավելցուցեր են արևելյան կողմին մի խորան (cella) և վերածեր են մատուռի, որն որ մի ժամանակ ուխտատեղի էր շրջակա գյուղացիներու:

Նկ. 151. Գանձասարի վանքի Հարավային դռան վերևի մասում գտնվող Զվարթնոցի տաճարի մնացորդներ

Նկ. 152. Քանդակազարդ բեկորներ Զվարթնոցի տաճարի ավերակների հյուսիսային կողմում

## Բ.

## 5-րդ դարու հիշատակարաններ

*1.* **Էջմիածնի մայր տաճարը**, նախկին լուսավորչաշեն եկեղեցվո տեղին վրա, ամբողջովին վերաշինված է Վահան Մամիկոնյան մարզպանի ձեռքով (585-590): Փայտաշեն գմբեթը քարով վերաշիներ է Կոմիտաս կաթողիկոսը, իսկ Ներսես Գ. Շինող կաթողիկոսն ալ ուրիշ կարևոր շինություններ և նորոգություններ կատարեր է, որուն մասին տեսնել իմ «Էջմիածնի տաճարը» [էջ 220] աշխատության մեջ:

*2.* **Օշականի եկեղեցին**, Վահան Ամատունի իշխանի ձեռքով կանգնված 440 թվականին՝ ս. Մեսրոպի գերեզմանին վրա. այսօրվան շենքը, գրեթե ամբողջովին, բացի արևելյան կողմի մի մասնավոր մնացորդե, վերաշիներ է Գևորգ Դ. կաթողիկոսը: Այս եկեղեցին ալ, 5-րդ դարու ուրիշ եկեղեցիներու նման, ունեցեր է արևելյան կողմեն դեպի հյուսիս և հարավ դուրս ցցված թևեր, որոնց հիմերը մինչև այժմ կերևին հողին երեսին: Գևորգ կաթողիկոս ավելորդ համարելով այդ մասերը վերաշինել, իսպառ քանդեր է. այս տիպի եկեղեցիներ են՝ Տեկոր, Երերույք, Օձուն, Արթիկ:



Նկ. 153. Զվարթնոցի ներքին կիսաշրջան սյունաշարքերի խոյակ և խարիսխ

*3.* **Աշտարակ գյուղի եկեղեցին**, թեև արտաքուստ խիստ եղծված՝ բազմադարյան հնության պատճառով անդադար նորոգվելով, սակայն ներսը ամբողջովին պահված են 5-րդ դարու բոլոր հատկանիշները, ինչպես՝ պայտաձև աղեղներ, դեպի հյուսիս և հարավ ձգված նեղ ու երկար քառակուսի կրկնահարկ ավանդատուններ (ինչպես Տեկորի մեջ), նաև 5-րդ դարու միայն հատուկ moulure-ներ [տե՛ս նկ. նկ. 194, 195]:

4. **Տեկորի եկեղեցին** ևս կպատկանի հեթանոսական շրջանին իր սկզբնավորությունով, սակայն 5-րդ դարեն սկսած այնքան մեծ փոփոխություններու ենթարկված է, որ այժմյան շենքի ոճի տեսակներով կդնեմ 5-րդ դարու շենքերու կարգը: Այս հիշատակարանի հեթանոսական ծագման մասին տեսնել իմ առանձին ուսումնասիրությունը՝ «Տեկորի տաճարը» [էջ 185] անունով:

5. **Գառնիի** մեջ մի հնագույն մեծ ավերակ եկեղեցի, որուն հյուսիսային և արևելյան պատերը միայն մնացած են, սակայն 5-րդ դարու շինության հատկանիշները կմնան վրան տակավին, ինչպես՝ պայտաձև աղեղներ, արտաքին այունազարդ ծածկույթ (portique) և նեղ ու երկայն համաչափությամբ հատակագիծ:

6. **Հովհաննավանքի** այժմյան ժամերգության պաշտոն կատարող շենքը 5-րդ դարու ամենահին շինությանց հատկանիշն ունի, այն է՝ խիստ շեշտված պայտաձև աղեղներ՝ ներքին որմնասյուներուն վրա, և որմնասյուները ավելի մույթեր են, քան սյուներ՝ պատեն խիստ շատ դուրս եկած:



Նկ. 154. Զվարթնոցի ներքին կիսաշրջան սյունաշարքերի սյան վերակազմությունը

7. **Աստվածընկալ** գյուղի մեջ մեծ եկեղեցվո հարավային պատին կից մի միջակ, անգմբեթ եկեղեցի՝ 5-րդ դարու պայտաձև ներքին որմնաղեղներով և սյունախարիսխներով, դարաշրջանին հատուկ moulure-ներով:

8. **Արթիկ** գյուղի հնագույն մեծ եկեղեցվո հյուսիս-արևելյան կողմը, միջակ մեծությամբ եռախորան եկեղեցին՝ 5-րդ դարու բոլոր հատկանիշներով, այսինքն՝ պայտաձև աղեղներ, կողմնակի թևեր և անգմբեթ կամարածածկ:

9. **Մոլլա-Ղասըմ** գյուղի մեջ կան երկու եկեղեցիներ, որոնց մեկը այժմ գյուղական եկեղեցի է՝ վերանորոգված, ներսը գտնված մի արձանագրությենեն կերևի՝ Գնթունյաց իշխաններեն մեկուն անունով: Վերջերս Բաշ-Ապարանի շրջաններեն գտնված մի հունարեն արձանագրության մեջ կարդացվեցավ, որ այդ շրջանները մեծն Տրդատ նվիրեր է Գնթունյաց իշխանին, անտարակույս, այժմյան Մոլլա-Ղասըմ գյուղն ալ այդ նվիրված հողաշերտին մի մասը կկազմեր և այդ եկեղեցին ալ՝ Գնթունի իշխանի մը սեփականությունը: Մյուս եկեղեցին գյուղի արևելյան կողմն է, բոլորովին ավերակ վիճակում, մեջը և քովերը թափված են սյունախոյակներ և խարիսխներ, որոնց զարդաքանդակներն ու moulure-ները անվրեպ 5-րդ դարուն կպատկանին: Մի ուրիշ ավելի բնորոշ հատկանիշ, որ զինքը ավելի հեռու կտանի, այն է՝ abside-ին արտաքուստ քառակուսի ձևը: (Այս մասին տե՛ս իմ «Տեկորի տաճարը» աշխատությունը):



Նկ. 155. Զվարթնոցի ներքին կիսաշրջան սյունաշարքերի խոյակ և խարիսխ



10. **Եղվարդ** գյուղի հյուսիս-արևմտյան ծայրին ավերակ մեծ կաթողիկեին հյուսիս-արևելյան կողմը, մոտավորապես հարյուր քայլ հեռավորության վրա կա մի միջակ մեծությամբ ավերակ եկեղեցի, որուն բեկորներեն և ուրիշ մնացորդ մասերեն պարզ կտեսնվի 5-րդ դարուն հատուկ ոճը [տե՛ս նկ. նկ. 55, 56]:

11. **Օձունի (Ուղունլար)** եկեղեցին անպայման 5-րդ դարու եկեղեցի է, արտաքին portique-ով պայտաձև աղեղներով, բոլորովին նախնական մեբրոպյան տաճերով տեղ-տեղ արձանագրությանց մնացորդներով: Այս եկեղեցվո շինությունը 8-րդ դարուն ապրող Հովհան Իմաստասեր Օձնեցուն վերագրելը միանգամայն անտեղի է, ոչ մի պատմական վկայություն իսկ չունենք Հովհանի եկեղեցի շինած լինելուն [տե՛ս նկ. նկ. 94, 95]:

12. **Մաղարճուք** գյուղի մեջ կա երկու եկեղեցի, մեկը այժմ վերանորոգված գյուղական եկեղեցի է: Այս եկեղեցվո արևելյան պատի վրա գտնվող մաշված ասորերեն մի արձանագրությունը բավական է ապացուցանելու անոր 5-րդ դարու սկիզբին պատկանելը, բացի նույն դարին հատուկ ուրիշ մնացորդները:

## Գ.

## 6-րդ դարու հիշատակարաններ

1. **Եղվարդի մեծ կաթուղիկեն**, այժմ ավերակ, իր մեծությամբ եզական է մինչև այսօր մեր գիտցած հին հիշատակարաններու մեջ, բացի Դվնա ս. Գրիգորեն. շուրջը ունի մեծ տաճերով դարուն հատուկ ոճով արձանագրություն, շինողն է Եղվարդեցի Մովսես կաթողիկոսը, որ աթոռի վրա էր 574-603-ին [տե՛ս նկ.նկ. 62, 63]:

2. **Ավան** գյուղում էջմիածնի նմանությամբ շինված, ներքին կողմեն կիսաբոլորակ վերջավորությամբ խաչաձև թևերով, հինգ գմբեթ ունի՝ միջին, մեծ և չորս անկյուններուն վրա չորս փոքր գմբեթներով: Շինողն է Հովհան Բագարանցի հակաթոռ կաթողիկոսը (590-611): Այս եկեղեցին շիներ է իբրև կաթողիկոսական եկեղեցի, գահակալության սկիզբին՝ 6-րդ դարու վերջին: Ինքն ալ թաղված է այս եկեղեցվո մոտ [նկ. նկ. 66, 192 և 193]:

3. **Դվինի ս. Գրիգոր**, որուն հսկայական մնացորդը կա այսօր շատ մը գեղաքանդակ բեկորներով, իր մեծությունով հազվագյուտ է՝ ինչպես Եղվարդի Մովսեսաշեն կաթուղիկեն: Այս եկեղեցին շիներ է նախ Վարդան Մամիկոնյան Բդեշխը 572-են առաջ: (Յովհ. կաթ., 59): Առաջին անգամ Գյուտ կաթողիկոսը նստել է այստեղ, իսկ հետո Հույն-պարսկական պատերազմի ժամանակ այրվելով, Սմբատ Վրկանա մարզպանը վերաշինել սկսեր է 627 թվականեն առաջ, որ իր մահվան թվականն է: Գործը այնչափ մեծ էր, որ իր կենդանությունը չէ կարողացեր ավարտել – ինչպես կերևի՝ երկար ժամանակ տևեր է անոր շինությունը – պատմական մեկ վկայության համաձայն՝ Կոմիտաս կաթողիկոսի օրով միայն վերջացեր է:

Նկ. 156. Զվարթնոցի գմբեթակիր մեծ մույթերի հետև գտնվող սյուների արծվաքանդակ խոյակ

## Դ.

## 7-րդ դարու հիշատակարաններ

1. **Հռիփսիմե վանքը** Էջմիածնի մոտ, շիներ է Կոմիտաս կաթողիկոսը 618 թվականին, լուսավորչաշեն փոքր վկայարանին տեղին վրա [նկ. նկ. 83, 199, 202]:

2. **Գայանեի վանքը** Էջմիածնի մոտ, շիներ է Եզր կաթողիկոսը 630 թվականին, լուսավորչաշեն փոքր վկայարանին տեղին վրա [նկ. նկ. 71, 203, 204]:

3. **Եղվարդ գյուղի** հյուսիս-արևելյան կողմին վրա, գյուղեն մոտ երեք վերստ հեռավորությամբ, Գրիգոր Մամիկոնյանը շիներ է մի ուխտանկյուն՝ արտաքուստ և ներքուստ ութ abside-ներով գեղեցիկ եկեղեցի՝ ս. Զորավոր անունով: Գրիգոր Մամիկոնյան Հայաստանի կառավարիչն էր 661-682-ին: Ամենայն հավանականությամբ այս եկեղեցին ալ շինված է այդ միջոցներուն [տե՛ս նկ. 67 և 69]:

4. **Գրիգոր Մամիկոնյան Արուճի** (այժմ Թալիշ) մեջ շինել տվեր է մի հոյակապ կաթուղիկե (ըստ Սամ. Անեցու Ժամանակագրության՝ 672 թվականին), իր պաշտոնավարության միջոցին. մոտը շինված էր ապարանքը, որուն հսկայական ավերակը կմնա մինչև այսօր գիտական խուզարկության կարոտ [նկ. նկ. 64, 65]:

5. **Թարգմանչաց վանք**, շինողը անհայտ, կգտնվի Էջմիածնեն Օշական գնալու ճանապարհին ձախ կողմը, Էջմիածնեն քիչ հեռու. Հռիփսիմեի ձևն ու ոճը ունի, անկասկած է 7-րդ դարուն պատկանելը:

6. **Ակոռի եկեղեցին**, այժմ ավեր, ըստ Հովհաննես կաթողիկոսի՝ պայծառապաճույճ շիներ է Անաստաս կաթողիկոս, սենեկապետ Ներսես Գ. Շինող կաթողիկոսի, իր կաթողիկոսության ժամանակ, 661-667 թվերին:

7. **Նախճավանի ս. Ստեփաննոս** եկեղեցին, Կամսարականներու սեփականություն, կանգնված 7-րդ դարուն:

8. **Բագարանի ս. Թեոդորոս** անվանված եկեղեցին, շինողն է Բուդ Առավեղյան իշխանը՝ 624 թվականին, իր մահով կիսատ մնացեր է, և ամբողջացուցեր է կինը՝ Աննա Բուդ [նկ. նկ. 72-74]:

9. **Մրենի** հոյակապ **եկեղեցին**, Կամսարականներու սեփականություն, կանգնված է 7-րդ դարու կեսեն հետո, Հերակլի որդի Կոստանդի օրով (ըստ Սամ. Անեցվո՝ ՈԺԵ): Պատմական հիշատակությանց համաձայն, Մրենի մեջ կանգներ է նաև Դավիթ Սահառունին մի հոյակապ եկեղեցի, որուն տեղը հայտնի չէ այժմ [նկ. նկ. 70, 120, 121, 128 և 207]:

10. **Թալինի մեծ կաթուղիկեն**, դարձյալ Կամսարականներու սեփականություն: Շինության թվականն անհայտ, սակայն թերևս ավելի կանուխ, քան Ներսեհ Կամսարականի ասոր մոտ շինած փոքր եկեղեցին: Ավելի կանուխ շինելու ապացույց է իր շինության և զարդաքանդակներու ոճը, որը կհիշեցնե Զվարթնոցի և այլ փաստացի հայտնի ժամանակակից շինություններու ոճը [նկ. նկ. 84-88]:

11. **Թալինի փոքր եկեղեցին**, շինողն է, ըստ արձանագրության, Ներսեհ Պատրիկ իշխանը, որ հետո է, քան Գրիգոր Մամիկոնյան, այսինքն՝ 689 թվականին (ըստ Սամ. Անեցվո), պաշտոնավարել է երեք տարի [նկ. նկ. 79 և 80]:

12. **Ղարավանք**, Ներքին Թալինեն 3-4 վերստ հեռավորության վրա կա մի կիսավեր եկեղեցի, որ իր անունն ստացել է, անշուշտ, ամբողջովին սև քարերով շինված լինելուն պատճառով: Մեծությամբ միջակ, բայց ճոխ, բոլոր հատկանիշներով 7-րդ դարու, վրան ունի 10-րդ դարու նվիրատվության արձանագրություններ:

13. **Մաստարա գյուղի եկեղեցին**, շինության բոլոր հատկանիշներով անվրեպ կպատկանի 7-րդ դարուն: Բացի այս, վրան եղող արձանագրություններեն մեկուն մեջ հիշված անունները կպատկանեն 7-րդ դարուն (Ալիշան) [նկ. նկ. 75, 76]:

14. **Աղյաման գյուղի մեծ եկեղեցին՝** Հռիփսիմեի վանքի նմանությամբ շինված, անպայման 7-րդ դարուն և ժամանակակից՝ Թալինի մեջ Ներսեհ Պատրիկի շինել տված եկեղեցիին, որովհետև պատերու քարերուն վրա փորագրված քարտաշ վարպետներու միևնույն նշանները կգտնվին նաև մյուսին վրա, անկասկած, միևնույն վարպետները աշխատեր են երկու շենքերու վրա ալ:

15. **Մահմուտջուղ գյուղի** մեջ կիսավեր կանգուն եկեղիցին, ներքուստ խաչաձև, բոլոր հատկանիշներով 7-րդ դարուն հատուկ և ավելի հետաքրքրական մասերով բացառություն է ժամանակակից եկեղեցիներու մեջ:

16. **Արթիկ** գյուղի մեջ մի մեծ հոյակապ կաթուղիկե՝ համանման Թալինի, Թալիշի և այլ եկեղեցիներու, շինողն անհայտ, անվրեպ 7-րդ դարու գործ [նկ. 206]:

17. **Արթիկ** գյուղի մոտ **Լմպատավանքը**, նմանապես իր անվիճելի ոճով 7-րդ դարու գործ [նկ. նկ. 81, 82]:

18. **Հառիճավանքի** մեջ, Զաքարյաններու շինած այժմյան կանգուն եկեղեցվո հարավարևմտյան կողմի գավիթի պատին կից միջակ եկեղեցի՝ 7-րդ դարու շենք:



19. **Օրթաքիլիսա** գյուղի մեջ [Դուզքենդի շրջան], այժմ գյուղական եկեղեցի է, 10-րդ դարուն ավելցված է խորանին մոտ մի մատուռ՝ ըստ ժամանակակից նորաձևության:

20. **Մարմաշենի մոտ** (այժմ Կանլիջա գյուղ), վահրամաշեն կաթուղիկեի հյուսիսային կողմի բարձունքին վրա, կիսավեր կանգուն, կա 7-րդ դարու խաչաձև եկեղեցվո մնացորդ:

21. **Շիրակավանի** (Բաշ-Շյորագյալ) սմբատաշեն մեծ կաթուղիկեեն դեպի արևելք, գյուղեն դուրս, բլուրի մը վրա շինված եկեղեցին, որից այժմ մնացած է միայն հյուսիսային պատը:

22. **Մաջիտլու** գյուղի եկեղեցին, բոլոր հատկանիշներով անվրեպ 7-րդ դարու գործ է, վրան կան մինչև 10-րդ դարու նվիրատվության արձանագրություններ:

23. **Ալամանի** (Անիի շրջակայք, այժմ Ալեմ գյուղ) Գրիգոր Եղյուստր անունով մեկուն շինած եկեղեցին, ըստ արձանագրության՝ 637 թվականին [նկ. նկ. 78, 205]:

24. **Ագարակ գյուղի եկեղեցին** Տեկորի մոտ, անշուշտ, այս ևս եղեր է Կամսարականաց սեփականություն, և հավանականություններ կան նույնիսկ 7-րդ դարեն ավելի կանուխ շինված լինելուն:

25. **Զարնջա գյուղի** այժմյան գյուղական եկեղեցին:

26. **Կարանլուխ գյուղի** (Բաշ-Ապարանի մոտ) հյուսիսային կողմը, բարձունքին վրա, անտառի մոտ, միջակ մեծությամբ մի եկեղեցի, որ հավանականություններ ցույց կուտա նույնիսկ 7-րդ դարու սկիզբներին շինված լինելուն.

27. **Ուչ-Քիլիսե** (Կարսի շրջան) - սուրբ Հովհաննես, 640 թվին:

28. **Տամբլու գյուղի** հին գերեզմանատան մեջ չափավոր մեծությամբ մի եկեղեցվո մնացորդ, հյուսիսային պատը 7-րդ դարու հատուկ corniche-ով:

29. **Զվարթնոց**:

## ԳԼՈՒԽ Բ.

## ԶՎԱՐԹՆՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ[1]

*Իմ նպատակս դուրս է այս եկեղեցիին փառքն ու շուքը նկարագրելե: Ես պիտի ջանամ իր խոշոր գծերուն մեջ ցույց տալ այն ուսումնասիրությունները, որ ես կատարեցի այս եկեղեցիի կազմության, ոճի և արվեստագիտական զմայլելի նրբության, տարողության* (resistance) *հաշիվներու և ներկայիս անհավատալի կերպով հանդուգն վստահությամբ կառուցված մասերուն վրա, որոնց քննության նվիրվեցա մոտ երեք ամիս շարունակ:*

*Առաջ մտադիր էի միայն բեկորները չափագրելով բավականանալ, սակայն, երբ սկսեցի լրջորեն քննել և բեկորները չափելով տեղին վրա համեմատել, այն ատեն համոզվեցա, որ գտնված բեկորները բավական պիտի ըլլային ամբողջ շենքը վերակազմելու* (restituer), *եթե սակայն մասամբ ևս շարունակվեին պեղումները:*

*Տեղին վերահսկիչ Խաչիկ վ. Դատյան մեծ փութաջանությամբ վերսկսեց ընդհատված պեղումները, փափագելով պսակված տեսնել իր նախընթաց չորս տարիներու տաժանակիր ջանքերն ու աշխատությունները:*

*Անձամբ հսկեցի պեղումներուն և մի առ մի չափագրեցի, բաղդատեցի, համեմատեցի յուրաքանչյուր քարի, բեկորի ընկած տեղն ու դիրքը: Ապարդյուն չանցավ այս վերջին աշխատությունս. նպատակիս հասած էի գրեթե:*

*Այս վիթխարի ավերակին մեջ ինձ հանդիպած արվեստագիտական հսկա մեծագործությունները և գեղարվեստական նրբությունները ավելի պարզ ցույց տալու համար, հարկ համարեցի ընդհանուր հատակագծի մը հետ տալ նաև անոր կազմական կարևոր մասերու քանի մը ուրվագծերը:*

*Շինության ոճին վրա գրելե առաջ, պարզեմ անոր ընդհանուր կազմությունը, հաստատուն փաստերու վրա հիմնված, որոնք մինչև այժմ գոյություն ունին այնտեղ, և զորս ամեն ձեռնհաս անձ կարող է ստուգել: Իսկ ինչ որ իմ կողմեն ենթադրություններ են, անոնք ալ կհանձնեմ արվեստագետներու լուրջ ուշադրության:*

*Տեղին վրա մասամբ անաղարտ մնացած է միմիայն հատակագիծը, որուն դրսի կողմեն, տեղ-տեղ, կնշմարվին աստիճաններու մնացորդները, իսկ ներսի կողմեն գրեթե անվնաս է: Ինչպես կե-*

[1] *Արտատպում ենք «Մուրճ» ամսագրի 1906 թվի № 5-ի էջ 189-197-ից, որոշ կրճատումներով:*

**Կազմող**

րևի հատակագծեն (նկ. 157), շենքին ամբողջությունը մեծ բոլորակ մըն է, որուն տրամագիծը՝ 35,75 մետր: Արտաքին պատը դրսեն անկյունավոր է, իսկ ներսեն բոլորովին կլոր. այդ կլորության վրա շարված են 64 կիսասյուներ՝ 24 սանտ. տրամագծով: Մեկզմեկե ունեցած հեռավորությունները երկու հավասար չափերու բաժնված են. դռներ և պատուհաններ գտնված սյունամիջոցներուն (entre colonnement) լայնությունն է 1,68 մետր, իսկ անմիջապես անոնց կից եղողներունը՝ 1,18: Այսպես՝ մեկ լայն, մեկ նեղ սյունամիջոցներ հաջորդաբար շարունակված են ամբողջ բոլորակին վրա:

Եկեղեցիի կեդրոնեն հավասար հեռավորության վրա զետեղված են չորս մեծ, լայնանիստ և հաստահեղույս մայր սյուները (նկ. 158, 1 և 159) և այդ սյուներուն միացած են չորս կիսաբոլորակներ (նկ. 158 2, 3, 4, 5), որոնց մեկը գոց պատ մըն է և կկազմե սեղանը, իսկ մյուս երեքը սյունազարդեր են. այսպիսով՝ եկեղեցիին ներքին մասը ստացած է կիսաբոլորակներե կազմված խաչաձև մը՝ կեդրոնը ունենալով մկրտության նախկին ավազանը (նկ. 158, Դ, 1), որը մեկ կողմանե հայոց սկիզբեն ի վեր ավանդաբար ընդունած խաչաձև, խորհրդավոր հատակագիծը կձևացներ, մյուս կողմեն ալ, տաճարը՝ աղոթող ժողովրդի մասեն կբաժներ (նկ. 157, 2):




Նկ. 157. Զվարթնոցի տաճարի հատակագիծը

Ահա այս տեղեն կսկսի երևնալ ճարտարապետին բազմակողմանի հմտությունը: Գեղարվեստական ճաշակի մասին կվկայեն նուրբ ու գեղեցիկ քանդակները և անոնց վայելուչ պատշաճությունով դասավորությունը. ասոնցմե զատ, զարմանալու ավելի մեծ պատճառներ ունենք, այդ՝ շենքի կմախքին կազմությունն է, որուն խիզախ հղացումները անսպասելի էին 7-րդ դարու Արևելքի ճարտարապետությունեն:

Առաջին առթիվ մարդ պահ մը կշվարի հատակագծին վրա շատ մը անօրինակ ձևերու առջև. տեղ-տեղ կտեսնվին կարծես աննպատակ դրված սյուներ, խորշեր, տարօրինակ ձևերով խոյակներ. սակայն երկար հետազոտությենե հետո ատոնք այնպիսի վայելուչ կերպով մը իրենց տեղերը կբռնեն, որ այլևս ճարտարապետի հանճարին և հնարամտության վրա զարմանալե զատ, մեզի ոչինչ չի մնար ընել:

Ինծի պես շատեր երկար մտածեցին, թե ինչ պատճառով զետեղված էին գմբեթակիր մայր սյուներու ետևը չորս մեծ, անջատ, կլոր սյուները (նկ. 158, Բ. 6, 7, 8, 9), որոնք, բացի այն, որ սյունազարդի սյուներեն ավելի հաստ էին, նաև ունեին բոլորովին արտասովոր ձևով և անհավասար կողմերով տարանկյուն խոյակներ, որոնց ճակտին վրա քանդակված էին գեղակերտ, թևատարած մեծ արծիվներ (նկ. 156):

Ինծի հետզհետե պարզվեցան այդ բոլորին պատճառները: Այդ արտասովոր խոյակներով սյուները այդ տեղերը դրված էին ոչ թե զարդի և վայելչության համար, այլ իրենց հատուկ խիստ կարևոր պաշտոններով, որոնց մեկն ալ, կարծես, ի միջի այլոց, մեզ հրավիրել էր 14 դար հետո ժամանակի մեծ վարպետի հանճարին առաջ հարգանքով ու ակնածանքով խոնարհիլ:

Ներսի խաչաձև մասը ծածկված է եղեր գմբեթով, իսկ դրսում աղոթող ժողովուրդին բաժինը՝ շուրջանակի կամարով: Բայց ի՞նչպես կարելի էր դրսի բոլորակ պատեն կամար մը դարձնել դեպի ներս, ամբողջ բոլորակի շրջանակին վրա, քանի որ բնական օրենքով պետք էր որ գտնվեր ներսը, դրսի պատին զուգահեռական հենակետ մը կամ պատվանդան մը, որպեսզի դրսեն մեկնող կամարը կանոնավոր կերպով դար և հանդչեր ներսի պատվանդանին վրա:

Ներսի կիսաբոլորակներե կազմված խաչաձև մասը ոչ միայն զուգահեռական չէր դրսի պատին, այլև զանազան անկանոն ուղղություններով ներս մտած, դուրս ելած էր: Ուստի, ճարտարապետը, նույն դարու նորահավատ քրիստոնյաներու նվիրական խաչաձևը պահելու համար՝ դիմեր է այդ չորս մեծ արծվախոյակ կրող սյուներու օգնության, որպեսզի անոնց միջոցով կազմե դրսի պատին զուգահեռական բոլորակ խարիսխ մը, ծածկելու համար աղոթող ժողովրդի բաժինը: Արդ, ճարտարապետը այնպիսի տեղ մը զետեղեր է այդ չորս մեծ սյուները, որ լիովին տվեր են պահանջված դրսի պատին զուգահեռական գիծը: Կեդրոնեն հավասար հեռավորության վրա կգտնվին թե՛ արծվախոյակ կրող սյուները և թե՛ խաչաձևի կիսաբոլորակներու մեջտեղի սյուները. այնպես որ, եթե կիսաբոլորակներու մեջտեղի սյուներուն կեդրոնեն (նկ. 158, Բ. 10) սկսած դրսի պատեն զուգահեռական բոլորակ մը (նկ. 158, Բ. 12) գծենք, գիծը կանցնի ուղիղ արծվախոյակ կրող սյուներուն ալ ճիշտ կեդրոնեն (նկ. 158, Բ. 11 ):



Նկ. 158. Զվարթնոցի հատակագծի վրա ցույց տրված աղեղները

Գծին ուղղությունը գտնելը բավական չէր. պետք էր այդ ուղղությունով հաստատուն պատվանդան մը չինել այստեղ. հղացեր է հանճարեղ ճարտարապետը հանդուգն գաղափար մը ունենալ բոլորակ պատվանդան մը, կախված մեծ մասամբ օդին մեջ: Նախապես չորս արծվախոյակավոր սյուները գմբեթարդ կամարներով միացուցեր է ետևի մայր սյուներուն, հետո այդ չորս սյուներու խոյակներուն վրայեն սկսելով՝ դրսի պատին զուգահեռական կորությամբ դեպի աջ ու ձախ կողմերը աղեղներ ձգեր է, որոնք գնացեր հանդչեր են սյունազարդերու մեջտեղի սյուները իրարու միացնող կամարներուն վրա (նկ. 158, Բ. 10): Այսպես հաջորդաբար ձգված ութ զորեղ աղեղները (նկ. 158, Բ. կ, կ, կ, կ, կ, կ, կ, կ) իրենց մեկ ծայրին հենակետ ունենալով արծվախոյակները, մյուս ծայրին՝ սյունազարդի միջին սյուները կապող կամարները, տվեր են բոլորովին հաստատուն բոլորակ պատվանդան մը դրսի պատեն մեկնող կամարին և միանգամայն զուգահեռական՝ դրսի պատին:

Կիսաբոլորակներու մեծ սյուներու հետ միացած տեղերը, որ վրայի բոլորակ պատվանդանը կազմելե հետո եռանկյան ձևով բաց կմնային (նկ. 158, Բ. 13), լեցված և ապահովված են քանդակազարդ, գմբեթարդ կամարներով, որոնք սկսելով սյունազարդի աղեղներու անմիջապես վերևեն՝ կհասնեին մինչև ութ մեծ աղեղներու ստորին շրթունքներուն:

Կմնար մեզ մտածել, թե արդյոք կարելի՞ էր առնվազն տասը մետր երկայնությունով, այդպես մեկ կետեն դեպի մյուսը կոր գծով ձգվող աղեղներու հաստատության և ապահովության վստահիլ, քանի որ այդ աղեղները սահմանված էին իրենց վրա կրելու կարգ մը պատերու, կամարներու, տանիքներու և այլն ահեղ ծանրությունները: Անշուշտ, ճարտարապետը հաստատ համոզված էր, որ դրսի պատեն մեկնող կամարին ներսի կողմի կողերը բավական զորավոր հենարանի պաշտոն պիտի կատարեին:

Արտաքին պատին միայն երեք աստիճաններն են բոլորակ, աստիճաններեն վեր բոլորակը բաժանված է 32 անկյուններու կամ կողմերու, հաշվելով նաև ետևի քառակուսի մասին բոլորակին վրա գրված տեղը: Յուրաքանչյուր կողմ միացնող անկյուններուն կպած են զույգ որմնասյուներ՝ քանդակազարդ խոյակներով. այս սյուներն ալ իրարու միացած են խաղող, նուռ և ուրիշ գեղեցիկ moulureներ քանդակված կամարներով:

Այս ամեն կամարներու տակ, բացի հինգ դռներեն (նկ. 157. 14...), վերևը կիսաբոլորակներով վերջացող երկայն պատուհանները շինված են 1,20 մետր լայնությունով: Այդ զույգ որմնասյու-

ներու յուրաքանչյուր խոյակեն վեր, աղեղներու միացած մասին վրա քանդակված են եկեղեցիի շինության ժամանակակից աշխատավոր եկեղեցական և աշխարհական անձերու բարձրաքանդակ պատկերները՝ մուրճ, բահ, բրիչ կամ այլ գործիքներ բռնած ձեռքերնին: Մասնավորապես ուշագրավ է պատկեր մը, որուն գլխի վեղարը ցույց կուտա, թե եկեղեցական մըն է, որը մեկ ձեռքով բահ և մյուս ձեռքով բրիչ բռնած է, և որու գլխուն շուրջը գրված է «Յոհան» անունը (նկ. 160):

Շուրջանակի այս կամարները ձգվելեն հետո նռան և խաղողի քանդակներով զարդարված գոտի մը կշրջապատեր շենքը: Այդ գոտին կամարներեն բարձր էր 0,30 մետր, հորիզոնական գծով. իսկ վարի կողմերը՝ եռանկյուն ձևով ամփոփվելով իրարու մոտեցող կամարներու մեջ, իջած էին մինչև բարձրաքանդակ պատկերներու գլխին վերև (նկ. 161):

Այս քանդակազարդ գոտիեն վեր, մեկ մետր տեղ սրբատաշ քարերով պարապ ձգվելեն հետո, զետեղված են զանազան տեսակ շրջանակներով քանդակազարդված բոլորակ պատուհաններ, որոնք իրենց շրջանակներով միասին 2 մետր տրամագիծ ունին: Այս պատուհաններն ալ վարի մեծ պատուհաններուն ճիշտ վերևը մեկ ուղղահայաց գծի վրա կգտնվեին: Այս երկրորդ շարքի պատուհաններեն վեր ալ դարձյալ մեկ մետր սրբատաշ քարերով պարզ պատ հյուսվելեն հետո, դրված է պսակը և պսակեն հետո՝ արտաքին մասը ծածկող տանիքը:

Խաղող և նուռ քանդակված գոտիեն վեր մինչև պսակը, շենքին շրջանակը փոխանակ 32-ի՝ բաժանված է 64 անկյուններու: Այս հնարամիտ դրծողությունով այնքան բթացեր են անկյունները, որ շրջանակը անկյունավորե ավելի բոլորակի երևույթը ստացեր է և, այսպիսով՝ հնարավոր եղեր է խուսափիլ վրան դրված բոլորովին կլոր պսակին տակը գոյանալիք սուր անկյուններու անախորժ երևույթեն, և մյուս կողմե՝ դյուրացուցեր է նաև կլոր ծածկույթ մը շինելու գործողությունը:

Նախքան գմբեթին կազմվիլը, ինչպես ցույց կուտան բեկորները, դրսեն եկող կամարը, ութ աղեղներե ձևացած բոլորակ պատվանդանին վրա հանգչելե հետո, ուրիշ պատ մը շարունակած է բարձրանալ նույն բոլորակ պատվանդանին վրա:

Այս վերջին պատին զուգահեռական կլորությամբ հավասարապես բարձրացած էր երկրորդ պատ մը, որն իբր պատվանդան ունեցեր է մեծ մայր սյուները իրարու միացնող աղեղներու միջոցով կազմված օղակը (նկ. 158, Բ. 15) և, հավանաբար, այս պատը ոչ թե գոց, այլ սյունազարդ մը եղած ըլլալու է: Այս սյունազարդի և իր դիմացը գտնվող իրեն զուգահեռական պատի մեջտեղ մնացած պարապությունը գոյացուցած էր առնվազն չորս մետր լայնությունով galerie մը՝ առաջին ծածկին տակ, որը շատ հավանաբար ծառայեր է իբր վերնատուն, որուն վրա կբացվեին մայր սյուներու վերին մասերուն մեջ շինված պահարաններու մուտքի դռները: Բեկորներու մեջ այս պահարանները խիստ որոշ կերպով կերևին (նկ. 158, Գ.), որոնք երկու բաժանում ունեին և իրարու հետ կհաղորդակցեին կամարակապ դռնով մը (նկ. 158, Գ. 3): Իսկ թե այդ պահարաններու մուտքի դռները ո՞ր կողմի վրա բացված էին, հայտնի չէ:

Փակագծի մեջ ըսենք, որ պեղման ժամանակ, հարավ-արևելյան սյունին վրայի պահարանի փլատակներեն իմ ներկայության դուրս եկան, ծալ-ծալ իրարու վրա շարված՝ գույնզգույն զգեստեղեններ՝ բոլորովին մոխրացած, բազմաթիվ կանթեղներու կտորներ և կանթեղներ, ջահեր կախելու հատուկ պղնձե կեռեր և այլն:

Այս երկրորդ պատերու մասերն ալ որոշ չափով բարձրանալե հետո, ծածկված է գմբեթը (գմբեթին բարձրության ճիշտ չափը հայտնի չէ), հավանաբար գնդաձև, որովհետև ավերակներուն մեջեն գտնված են կղմինդրներ, որոնք դեպի երկայնքը թեթև կորություն մը ունին. ատկե կարելի է հետևցնել, թե գմբեթը գնդաձև եղած ըլլալու է, թեպետ և նույն ժամանակին շինված հայ եկեղեցիներու գմբեթները միշտ կոնաձև են:

Ինծի հայտնի չէ արևմտյան կողմի քառակուսի մասին ինչ ըլլալը (նկ. 157, 4). միայն այսչափ կրցա հասկանալ, որ անիկա երկհարկանի էր. տակի հարկը, մեջտեղի քառակուսի մեծ սյունին օգնությամբ երկու կամարներով ծածկված էր եկեղեցիի հատակեն առառավելն մեկ և կես մետր բարձր, և հետո կրկին քառակուսիին վրա շարունակված էր դրսի պատը, որը ապահովաբար այնչափ բարձր չէր, որչափ եկեղեցիի առաջին հարկը:

Ես կենթադրեմ, որ այս մասին մեջ կգտնվեր վերնահարկ գալլոռիին մուտքը, ապա թե ոչ՝ ներսեն ոչ մեկ տեղ սանդուխի հետք չկա՝ դեպի գալլոռի կամ վերնահարկ պահարանները բարձրանալու համար:

Անպատշաճ է կարծել, որ շարժական փայտե սանդուխներու միջոցով գործածության մեջ դրված ըլլան այդ վերնահարկ պահարանները:

Նախ՝ այդ բարձրության չափով ամենաթեթև փայտե շինված սանդուխն անգամ, նույնիսկ երեք մարդու համար դյուրատար բան չէր ըլլար, և երկրորդ՝ չմոռնանք մանավանդ նկատել, թե այդ տեսակ հսկա շենքի մը ճարտարապետը, որ հանճարի թռիչքներ ունեցեր է, որ գիտցեր է ամեն բան անելման վայելչությամբ, հիանալի պատշաճությամբ և հազվագյուտ նրբամտությամբ հղանալ, դասավորել և զարդարել, մի՞թե կարող էր շարժական սանդուխով մը բարձրանալու հասարակ ու դռեհիկ միջոցին դիմել: Այս ենթադրությունը պարզապես նախատական կգտնեմ այդ մեծ արվեստագետի հանճարին համար:

Զվարթնոց եկեղեցին ընդհանրապես հռոմեական, բյուզանդական, հունական և հայկական ոճերու խառնուրդ մը կներկայացնե: Իր ընդհանուր ձևով մինչև հիմա գոյություն ունեցող թե՛ հին և թե՛ նոր ոչ մեկ եկեղեցիի նման չէ. գոնե ես առաջին անգամ է, որ կհանդիպիմ եկեղեցիի մը, որուն մեջտեղը դրված ըլլան սեղանը և տաճարը, և անոնց շուրջը՝ ամբողջ սեղանին ետևի մասն ալ միասին առնելով, հատկացված ըլլա աղոթող ժողովրդին:



**Նկ. 159. Զվարթնոցի գմբեթակիր հարավ-արևմտյան մույթը**

Այս ձևը ինծի կհիշեցնե Սողոմոնի տաճարը, որուն կեդրոնը դրված էին սրբություն-սրբոցը և տապանակ ուխտին, որոնց առջև կաղոթեին քահանայապետները. տապանակ ուխտիին և քահանայապետներու հատկացված մասը բաժնված էր քառակուսի սյունազարդով, որուն ետևը շուրջանակի կկենար ապաշխարող ժողովուրդը: Թերևս քրիստոնեության նորադարձ հայերը՝ Եհովայի մեծ մարգարեին, Իսրայելի իմաստուն թագավորին հռչակավոր տաճարեն ազդված ըլլան իրենց եկեղեցին շինելու ժամանակ. և, իբրև քրիստոնյա՝ փոխանակ սրբություն-սրբոցի և քահանայապետներու բաժնին նման քառակուսի ձև տալու, քրիստոնեության խորհրդանշանին ձևը տված են – խաչաձև շինած են:

Մեծ սյուներու խարիսխները բյուզանդական են, իսկ խոյակները՝ բոլորովին ինքնատիպ, բացի վրաները հարմարեցված հունական խոյողներեն (volute): Կողմերու մանվածո քանդակները զուտ հայկական են: Բոլորովին ինքնատիպ է նաև արձվաքանդակ կրող խոյակներու ձևը, որը միմիայն Զվարթնոց եկեղեցիին մեջ գործածված է. պետքն է, որ ստեղծեր է այդ ձևը և արտասովոր մեծությունը և ոչ թե ճաշակը. այդ խոյակներուն վրա է, որ նստեր է աջ ու ձախ կողմերեն՝ ութ մեծ աղեղներու յուրաքանչյուր ծայրը, ետևի կողմեն զիրենք մայր սյուներուն միացնող գմբեթներու ոտքը, և առջևեն՝ դրսի պատեն մեկնող կամարին մասը: Այդ ձևով և այդ մեծությամբ խոյակ մը միայն կրնար հանդիստ տալ չորս զանազան կողմերե անհավասար չափերով և անկանոն ուղղությամբ եկող կամարներու ծայրերուն:

Ներսի բոլորակ պատին կպած փոքր որմնասյուներու խոյակները զուտ հռոմեական են՝ լերկ կմախքը կորնթական զարդախոյակներու. այս ձևը շատ հաճախ գործածված է հռոմեական հին շենքերու մեջ: Նույնպես արտաքին երեսի զույգ սյուները միացնող կամարներու խաղող քանդակված մասերը հռոմեական են. միակ տարբերությունն այն է, որ Զվարթնոցի կամարներուն վրա քանդակված խաղողին տեղ՝ հռոմայեցիներ քանդակած են իրենց ոճին հատուկ ծաղիկներ և տերևներ՝ նույնպես ոլորուն ցողունի մը վրա: Իսկ moulure-ներուն մեջ բյուզանդականին խառն հայկական գծեր կնշմարվին, թեև իրենց ամբողջությամբ հպատակած են հայկական ճարտարապետության ընդհանուր օրենքին, այսինքն՝ հունական կամ բյուզանդական ոճերու նման, moulure-ներ փոխանակ հետզհետե դեպի խորը գնալու, քանդակված են հավասար բարձրության վրա, բան մը, որ հատուկ է միմիայն հայ ոճին:

Շենքին պսակը զուտ հայկական է թե՛ ձևով և թե՛ քանդակով:

Ամփոփելով մեր խոսքը, ըսենք, որ զետեղել հասարակ հրաբխային քարե չորս սյուներու և չորս փոքր կամարներու վրա, դրսի պատին զուգահեռական կորությամբ ութ աղեղներ և այդ աղեղներու կողերը լեցնելով գագաթին հավասարեցնել, կազմելու համար հորիզոնական պատվանդան մը, 85 մետր երկայնությամբ աղեղներ, որոնք իրենց վրա կկրեն առնվազն 6–7 մետր բարձրությամբ շուրջանակի հսկա պատի մը ծանրությունը և դրսի պատեն մեկնող կամարի զանգվածին կեսեն ավելի ծանրությունն ու նույնպես տանիքին ծանրությունը – հանճարի այնպիսի հանդուգն ու հոյակապ սլացք մըն է, որ պատիվ կբերե հայ ժողովրդին:

Այստեղ ոչ վայրենի ուժն է մեզ զարմացնողը, ինչպես Եգիպտոսի բուրգերու և այլ շենքերու մեջ, ուր կտեսնենք 20 խորանարդ մետր ծանր և միա-

պաղաղ քարը մինչև 30-40 մետր բարձրության հանված, և ոչ ալ ճարտարապետական քանդակներու և զարդանկարներու կատարելության հասած նրբությունը, ինչպես հունական և հռոմեական հիշատակարաններու մեջ, այլ ասոնցմե տարբեր և գուցե ասոնցմե շատ վեր ճարտարապետական այն խիզախ հղացումը, որով հայ մարդը՝ 0,80 մետր տրամագիծ ունեցող քարե չորս սյուներու, և 0,60 մետր տրամագծով երկու սյուներ իրար միացնող չորս աղեղներու վրա կախեր է հազարներով տոննա ծանրություն, տարողությանց նրբին հաշիվներու մասին իր ունեցած կատարյալ հմտությանը վրա վստահ:

## ԳԼՈՒԽ Գ.

## ԶՎԱՐԹՆՈՑԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՎԱՐՏՄԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ[1]

Զվարթնոց եկեղեցվո ճարտարապետական հռչակը այնքան մեծ էր, որ դարուց ի դարս, պատմագիրներ մեծ մասամբ առանց հիշատակության չեն թողած կառուցանողի անվան հետ անբաժան: Նույնիսկ իր կործանումեն հետո ալ պատմագրաց անհիշատակ չթողելեն զատ, թագավորներ և իշխաններ աշխատեր են նույնությամբ վերականգնել ճարտարապետական այդ չնաշխարհիկ կոթողը՝ Հայաստանի ուրիշ մասերուն վրա:

Անիի մեջ՝ Գագիկ Ա. Բագրատունի թագավորը, Բանայի մեջ՝ Ատրներսեհ թագավորը գրեթե նույնությամբ վերականգներ են ներսեսաչեն հոյակապ Զվարթնոցի գեղարվեստական հիշատակը հավերժացնելու միակ նպատակով: Անիի պարիսպներեն դուրս Հովիվի եկեղեցին, կամ, ըստ ռամկական հորջորջման, «Նախրչուն ժամը» անունով փոքրիկ մատուռը Զվարթնոցի մի չքնաղ մանրանկարն է: Կհավաստեն, թե ուրիշ տեղեր ալ կան Զվարթնոց եկեղեցվո ընդօրինակություններ, սակայն ինձ հայտնի չեն: Այս տեսակետով քննելի է Օլթիի շրջանին մեջ Թավուզքիարի եկեղեցին, որուն համար կրսվի, թե ոչ միայն Զվարթնոցի նմանն է և կանգուն է մինչև ցարդ, այլև Ներսես Գ.-ի շինած լինելուն հավաստիքներ կան:

Պատմագիրներու մեջ առաջին հիշատակողն է Ներսեսի ժամանակակից և Զվարթնոցի շինության անպայման ականատես Սեբեոս եպիսկոպոսը, որը թեև հակիրճ, բայց վերին աստիճան սքանչացումով կնկարագրե անոր մեծությունն ու չքեղությունը հետևյալ կերպով. «Յայնմ ժամանակի արկ ի միտս իւր կաթուղիկոսն Հայոց Ներսէս շինել իւր բնակութիւն մերձ առ սուրբ եկեղեցեացն որ ի Վաղարշապատ քաղաքին, ի վերայ ճանապարհին՝ յորում, ասեն, ընդ առաջ եղև Թագաւորն Տրդատ սրբոյն Գրիգորի: Շինեաց անդ եւ եկեղեցի մի յանուն երկնաւոր Զուարթնոցն, որոց երևեալ ի տեսլեան սրբոյն Գրիգորի բազմութիւն երկնաւոր զաւրացն: Եւ շինեաց զեկեղեցին բարձր շինուածովք եւ չքնաղ զարմանալեաւք, արժանի աստուածային պատւոյն, որում նուիրեացն: Ած ջուր եւ երեր զգետոյն եւ արկ ի գործ զամենայն վայրսն առապար, տնկեաց այգիս եւ ծառատունկս, եւ շուրջանակի պատուարեաց զբնակութեամբն գեղեցկաղիր յաւրինուածով բարձր պարսպաւ ի փառս Աստուծոյ» (Սեբ., գլ. ԼԳ., էջ 192-193): Այս պատմագրական հակիրճ տեղեկություններն կերևի, որ եկեղեցին վերջացած էր և նույնիսկ պարսպապատված:

Սեբեոսի Պատմության ընթացքեն կերևի, որ քաղաքական ալեկոծություններու պատճառով, Ներսես չէ կարողացեր շուտով վերջացնել ամեն գործ իր ձեռքով, որովհետև ստիպվեր է մի առժամանակ հեռանալ և շինության գործին ղեկավարությունը հանձնել իր սենեկապետ Անաստաս Ակոռեցիին (հետո իր հաջորդ կաթողիկոս): Վեց տարի բացակայելեն հետո վերադարձեր է, այն ժամանակ անձամբ վերջացուցեր է կիսատ մնացած մասերը: Այս մասին հետևյալ կերպով կպատմե նույն պատմիչը. «Իսկ կաթուղիկոսն Հայոց Ներսէս գնաց ընդ Թագաւորին, որպէս վերագոյն ասացի, եւ չուեաց ընդ նմա ի Կոստանդնուպալիս: Եւ ընկալաւ զնա անդ պատուով. եւ ետուն նմա ինչս եւ արձակեցին անդրէն ի տեղի իւր, եւ եկն դադարեաց ի Տայս՝ մինչև մեռաւ Ռշտունեաց տէրն, դադարեաց ասպատակ Տաճկին. եւ ապա յետ վեցերորդի ամ ի հալածանացն դարձաւ անդրէն ի տեղիս իւր եւ հաստատեցաւ յաթոռ կաթուղիկոսութեան. փութայր կատարել զշինուած եկեղեցւոյն զոր շինեաց ի վերայ պողոտային Վաղարշապատ քաղաքի» (Սեբ., գլ. ԼԸ., էջ 244):

[1] Տպագրում ենք հեղինակի ձեռագրից: Այս հոդվածը գրված է հեղինակի ծրագրած «Զվարթնոցի տաճարը» մոնոգրաֆիայի համար:

Կազմող.



Սեբեոսեն հետո գրող պատմագիրներ, անոր գրածը հաստատելեն հետո, զանազան հետաքրքրական լրացուցիչ տեղեկություններ կուտան թե՛ Զվարթնոցի և թե՛ անոր շինող Ներսեսի մասին:

Մովսես Կաղանկատվացին, որ Ներսեսի ապրած դարաշրջանի պատմագիր կհամարվի, կպատմե թե՝ «Սա [Ներսէս] էր հայրագիր նորին Կոստանդնի եւ զանձիւք նորա շինեաց զբազմապայծառ փարախն բանաւոր հօտից ի Քաղաքուղաշտի ի սուրբն Գրիգոր եւ ի նաւակատիս կոչեաց զթագաւորն Հոռոմոց, որ յաւէժ հիացեալ ընդ շինուածն՝ ետ հրաման շինողացն գնալ զկնի իւր, զի զնոյնաձևն յարմարեսցէ ի պալատանն: Եւ ոչ ժամանեալ գնալ ի տուն իւր ի ճանապարհին վախճանէր» (Մովսէս Կաղանկատուացի. Մոսկվա, 1860, էջ 255):

Այս հատվածն ալ ցույց կուտա, որ եկեղեցվո շենքը վերջացած էր:

Նկ. 160. Զվարթնոցի արտաքին պատի առաջին հարկաբաժնի զարդաքանդակ բեկորներ: Կենտրոնում «Յովհան»-ի բարձրաքանդակը. Հովհանը, ըստ երևույթին, տաճարի կառուցման գլխավոր վարպետն է:

Մովսես Կաղանկատվացու այս տված տեղեկության մեջ Ներսես Գ-ի Կոստանդին կայսեր հայրագիր լինելուն և կայսեր ծախքով շինվելուն պատմական ինչ արժեք ունենալը հաստատել կամ հերքել պատմական քննադատներու գործն է, սակայն, ես պիտի հայտնեմ իմ առանձին կարծիքս այս մասին իր կարգին, առայժմ կշարունակեմ թվել այն պատմագիրներու վկայությունները, որոնք թեև ոչ ժամանակակից, այնուամենայնիվ դարուց ի դարս ծանոթ են Զվարթնոց եկեղեցվո ճարտարապետական և գեղարվեստական մեծ հռչակին և որոշ չափով հավելվածական լրացուցիչ տեղեկություններ կուտան, բացի Զվարթնոցեն, նաև Ներսեսի անձնական նկարագրին և անոր ուրիշ կատարած կարևոր գործերու մասին: Ղևոնդ, թեև պատահական կերպով կհիշատակե, սակայն չի մոռանար Ներսեսի անվան կից անոր պարծանքը եղող եկեղեցին ալ միասին հիշատակելու, ըսելով՝ «շինող սրբոյն Գրիգորի» (Ղևոնդ, գլ. Դ, էջ 14):

Գրեթե երեք դար հետո, պատմագիր Հոհաննես կաթողիկոս, որ ամենայն հավանականությամբ կանգուն տեսած էր Զվարթնոց հոյակապ տաճարը, Սեբեոսի նման պատմելով և հիացմամբ դրվատելով անոր ճարտարապետական բարձր արժանավորությունները, քանի մը լրացուցիչ մանրամասնություններ ևս կուտա, թերևս ուրիշ ժամանակակից աղբյուրներե ալ օգտվելով, և կըսե՝ «Դարձեալ յուսացեալ ի տէր (Ներսէս) եւ ոչ ածեալ զմտաւ զկրթական արշաւանս հինիցն թշնամեաց՝ գեղեցիկ իմն մոլութեամբ դնէ ապա հիմն մեծ եւ հրաշալի բազմապայծառ յարկի տանն աստուծոյ ըստ անուանակրութեան սրբոյն Գրիգորի՝ յանձն առնելով զկատարումն իմաստութեան շինողին Քրիստոսի: Իսկ ի հիմնարկել զաստուածակերտ փարախն բանաւոր հօտին Քրիստոսի ի ներքոյ չորից սեանցն հաստահեղուսից բաժանեալ դնէ զնշխարս ոսկերաց սրբոյն Գրիգորի առ ի անշուշտ մնացականութեամբ պահիլ զանձոյն երկնաւորի ի գերչաց ապականչաց եւ ի պարծանս հաւատոյ քրիստոնէական կարգաց: Իսկ զքրիստոսադրոշմ եւ զպատուական գլուխն ոչ ի խորոչ, այլ արտաքոյ ի դզրոցի եդեալ՝ դնէ ի զանձարանս աստուածութեանն ի յոյս բարեաց փափաքողաց նմա եւ ի բժշկութիւն ախտակրելոց»: (Յովհաննէս կաթողիկոս Դրասխանակերտցի, Պատմ. Հայոց. Թիֆլիս, 1912 թ., էջ 83-84):

Ներսեսին վերադարձեն վեց տարի հետո կատարած գործերու մասին կպատմե այսպես. «Իսկ հայրապետն Հայոց Ներսէս յետ վեց ամի հալածանաց իւրոց իբրե լուաւ զվախճան Թէոդորոսի և զդադարումն Իսմայէլեան ասպատակին, դարձաւ անդրէն ի տեղի իւր: Եւ միախորհ ապա լեալ ընդ նախարարացն՝ իշխան ի վերայ Հայաստանեայցս կացուցանեն զՀամազասպ Մամիկոնեան, որ էր այր ընթերցասէր եւ ուսումնասէր եւ վարժ ի բոլոր հրահանգս, եւ զնախնական քաջութեանցն պայման միշտ ջանայր լրութեամբ կատարել մրցարանաց կրթութեամբ: Բայց հայրապետն Ներսէս պարապ անձին գտեալ՝ զարտաքոյս հրաշակերտ եկեղեցւոյն, զոր իւր իսկ էր շինեալ՝ շուրջանակի պատուար պարսպով փակեալ ամրացուցանէր, յօրինեալ ի նմա յարկս բնակութեան ինքեան հաստահե-

*ղոյս կոփածոյ քարամբք: Այլ եւ կարգեալ կացուցանէր ի նմա ամբոխութիւնս երդում արդաց ըստ պայմանի քաղաքականաց, եւ ածեալ ջուր ի Քասաղ գետոյ՝ զամենայն աւազախիր առապար դաշտավայրն ի գործ արկանէր, տնկէր այգիս և բուրաստանս ծաղկոցաց» (Յովհ. կաթ. Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 88):*

*Ստեփանոս Ասողիկ, նախորդ պատմագիրներե առնելով՝ կգրե, թե (Ներսես) «շինեաց զվկայարան սրբոյն Գրիգորի ի վերայ Վիրապին յԱրտաշատ, եւ զմիւս ևս հրաշապայծառ եկեղեցին զսուրբ Գրիգոր ի Վաղարշապատու առապարին, զանազան յօրինուածով» (Ստեփաննոսի Տարօնացւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, ի Ս. Պետերբուրգ, 1885, էջ 88-89): Ստեփանոս Ասողիկ թերևս Զվարթնոցի ավերակներն ալ չէր տեսած, այլ ի լրո գիտեր անոր «փլեալ եւ կործանեալ» լինելը, սակայն անոր մասին իր ունեցած պատմագրական տեղեկութիւններեն զատ, Անիի մեջ Գագկաշեն ս. Գրիգորը, որ ընդօրինակութիւնն էր Զվարթնոցի, փառաբանելով կփառաբաներ նաև նույնն ինքն Զվարթնոց եկեղեցին:*

*Թովմա Արծրունի Զվարթնոցի անունը կհիշատակե Դվնա մեծ երկրաշարժի պատճառով, կաթողիկոսական աթոռի տեղափոխության առթիվ: Երբ հարկ եղեր է հիշել Ներսեսի անունը և բնակարանը, ստիպվեր է Ներսեսի անվան պսակ եղող Զվարթնոցն ալ հիշատակել միասին, այսպես՝ «Բայց երանելի հայրապետն տէր Գէորգ սաստկագոյն քան տիեզերական կործանմանն առ նոյիւ բերելով զտրտմութեանն թախիծս, հանդերձ եպիսկոպոսիւն Գրիգորիւ՝ զԱբրահամեանն վաղնջուց աղաչանսն ի կործանմանն Սոդովմայ, յառաջաբերեալ մարդասիրին աստուծոյ եւ թողեալ զընակելն ի Դուինն, ելեալ բնակեցաւ ի Նոր քաղաքին ի մեծ եկեղեցւոջն, որ յանուն սրբոյն Գրիգորի շինեալ էր երանելւոյ Տեառն Ներսիսի երրորդի Հայոց կաթողիկոսի»: (Պատմութիւն Տանն Արծրունեաց ի Թովմայ վարդապետէ Արծրունւոյ. ի Կոստանդնուպօլիս. Օրթագիւղ, 1852, էջ 260) (Պետրգ., 1887, էջ 231):*

*Այս հատվածեն կերևի, որ Գևորգ կաթողիկոսի օրով դեռ Զվարթնոց կործանված չէր և նույնիսկ Դվնա երկրաշարժիցն էլ մնասված չէր: Սամուել Անեցի ժամանակագիրը, Ներսեսի մյուս շինություններն ալ հիշատակելով, առանձնապես կգովե Զվարթնոց եկեղեցին, բնորոշելով «զզարմացուցիչն տեսողաց» բառերով և կհավելու՝ «բայց յառաջ շինէ զվկայարան սրբոյն Սարգսի ի Դուին և զոր ի վերայ Վիրապի սրբոյն Գրիգորի»: (Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքումնք ի գրոց պատմագրաց. Վաղարշապատ, 1893, էջ 83): Կիրակոս Գանձակեցին գրեթե նույնությամբ կրկնելով Սամուել Անեցու գրածը, կավելցնե միայն՝ որ «յետոյ աւերեցաւ ի Տաճկաց»: (Պատմութիւն Հայոց, արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ. Թիֆլիս, 1909, էջ 58):*

*Մխիթար Այրիվանեցու տեղեկությունը, թե՝ 641թ. «Շինող Ներսէս շինէ զառապարի ս. Գրիգորն՝ զզարմացուցիչն տիեզերաց որ քակեցաւ ի Տաճկաց» (Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 50), գրեթե կրկնությունն է նախորդներուն:*

*Վարդան Բարձրաբերդցին, հավանորեն Հովհաննես կաթողիկոսեն առնելով, կգրե Զվարթնոցի շինության և Ներսեսի կաթուղիկոսանալու հանգամանքներուն վրա այսպես. «Յորում աւուր մեռաւ Եզր եւ յաջորդեաց զաթոռն Ներսէս եպիսկոպոս Տայոց զկնի տասն ամին Եզրի, բայց յափշտակութիւն եղեալ յանհնարին կոտորելոցն՝ խորհեցաւ փախչել, իբր ոչ բաւական մեծի աստիճանին: Եւ աղաչեցեալ ի բազմաց՝ դադարէ. եւ հաւաքեալ զբազմութիւն դիականցն՝ թաղէր, եւ ի նմին տեղւոջ շինէր զհրդեհեալ վկայարան սրբոյն Սարգսի: Շինէ տաճար սրբութեան ի վերայ Վիրապին եւ արկանէ հիմն տաճարին մեծի յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչի յառապարի և դնէ ի ներքոյ չորից սեանցն զհասարակ նշխարս սրբոյն Գրիգորի, եւ զգլուխն ի գզրոցի եղեալ պահէ ի պէտս բժշկութեան ախտաժետաց: Անդ դնեն եւ զնշխարս ձիզտբուղտայ եւ զԴաւթի վկային»: (Մեծին Վարդանայ Բարձրաբերդցւոյ Պատմութիւն Տիեզերական, Վենետիկ, 1861, էջ 93): Իսկ Ներսեսի հեռանալեն վեց տարի հետո վերադարձի մասին կգրե. «եւ ի գնալ թագաւորին երկուցեալ Ներսէս յՌիշտունեաց տեառնէն գնաց ի Տայս. եւ զկնի վեց ամիս դարձաւ՝ լուեալ զմահ Թէոդորոսի: Եւ շինէ իւր կայս առընթեր մեծ եկեղեցւոյն, եւ կացուցանէ ամբոխութիւն յերդումարդոց ըստ օրինի քաղաքականութեան. եւ ածէ ջուր ի Քասաղ գետոյ եւ տնկէ անտառս եւ այգիս»: (Ի Հաւաքումն Պատմութեանց Վարդանայ վարդապետի. Վենետիկ, 1861, էջ 96):*

*Հայաստանի մեջ բազմաքանակ մեծ ու փոքր եկեղեցիներ են շինված, սակայն անոնցմե ոչ մեկը գրեթե Զվարթնոցի նման բոլոր պատմագիրներե առանձնապես հիշատակված չլինելեն զատ, անոր տրված արդարացի գովեստները շատ քիչերուն են շռայլած գեղարվեստական մեծագործության տեսակետով: Սակայն շատ ափսո՛ս, որ զլացեր են փոքր ի շատե մանրամասն նկարագրություն անոր ներքին և արտաքին ձևերու, զարդարանքներու և ուրիշ հատկանշական մասունքներու մասին:*

*Նկ. 161. Զվարթնոցի արտաքին երեսույթի առաջին հարկաբաժնի քանդակազարդ գոտու հատվածներից մեկը*

*Ճարտարապետական շինվածներու նկարագրության մասին Թովմա Արծրունին միակ բացառությունն է մեր պատմագիրներու մեջ, որ շատ մը ուրիշ բերդերու, տաճարներու, ջրմուղներու, ճանապարհներու ու շինությանց և շինելակերպերուն մանրամասն նկարագրություններե զատ, իրեն տոհմակից Գագիկ Արծրունիի Աղթամար կղզին մեջ շինել տված եկեղեցվո, ապարանքի և ծովային պարիսպներու շինության և գործավարության մասին այնպիսի մանրամասնություններ կուտա, որ ընթերցողը կրնա որոշ չափով գաղափար կազմել չափերու, ձևերու և առանձնահատկություններու մասին, առանց իրական շենքը տեսած լինելու:*

*Բարեբախտաբար Զվարթնոցի ավերակներու պեղումները, անոր չափը, ձևը և բոլոր մանրամասնությանց հատկանիշները պարզող այնքան նյութ տվին, որ այսօր, կարելի է ըսել, լիովին գիտենք անոր ամբողջությունը, բոլոր մանրամասնություններով, ինչպես որ էր նորոգ կանգնված ժամանակը: Թեական կամ ենթադրական դույզն մասերուն ալ ամբողջացման լիուլի նպաստեցին Անիի Գագկաշեն ս. Գրիգորի պեղումները և Փենեկի (Բանա) նույնանման շինված կիսականգուն հոյակապ եկեղեցվո հետազոտությունները:*

*Ինչ որ ցանկալի էր ճշտությամբ գիտնալ, այդ՝ Զվարթնոցի շինության սկզբնավորության, տևողության և վերջավորության թվականներու խնդիրն է. այդ մասին դժբախտաբար որոշ ոչինչ չունինք, հին տեղեկություններն ալ մի քիչ հակասական կթվին, սակայն պատմագրական զանազան տեղեկությունները և արվեստագիտական օրենքները լրջորեն հետազոտելով, դժվար պիտի լինի հասնել ամենահավանական եզրակացության: Հետագա պատմիչներ, թեև հաստատուն թվականներ ունին նշանակած, սակայն անոնք Զվարթնոցի շինության ժամանակեն դարերով հեռու են և նշանակած թվականին ալ մեկզմեկե անհամեմատ տարբեր լինելով, դժվար է բոլորովին հիմնվել անոնց վրա: Զվարթնոցի շինության ժամանակագրության տեսակետով, ամենեն ավելի ստույգ և վավերական աղբյուրներեն մեկը պետք է համարել Շինողի ժամակակից և շինության ականատես Սեբեոսի տեղեկությունը, ուստի նախապես քննենք անոր տեղեկատու հատվածը:*

*«Յայնմ ժամանակի արկ ի միտս իւր կաթուղիկոսն Հայոց Ներսէս շինել իւր բնակութիւն մերձ առ սուրբ եկեղեցեացն որ ի Վաղարշապատ քաղաքին... Շինեաց եւ եկեղեցի մի յանուն երկնաւոր Զուարթնոցն» (Սեբ., գլ. ԼԳ., էջ 192), Սեբեոսի Պատմության ԼԳ գլխուն այս հատվածին մեջ «Յայնմ ժամանակի» խոսքը կվերաբերի Թեոդորոս Ռշտունիի Արծափի բերդին վրա տարած հաղթու-*

թյունեն մինչև Հույներու Պոտկոպ զորավարի միջոցավ արաբաց հետ հաշտություն կապելու ժամանակին: Այս դեպքերը տեղի են ունեցեր, ըստ Սեբեոսի՝ «Յամին երկրորդի Կոստանդնի», որ է՝ 642 թվականը (Կոստանդ դահակալեց 641 թվին), ուրեմն այս 642-ե հետո 643-ի և 644-ի մեջտեղը պետք է որ հիմնարկված լինի Զվարթնոցը՝ ըստ Սեբեոսի: Բայց առաջ եկեղեցի՞ն հիմնարկեց, թե՞ «իւր բնակութիւն» – այդ հարցը քննության կարոտ է:

Սեբեոսի վերոգրյալ «արկ ի միտս իւր կաթուղիկոսն Հայոց Ներսէս չինել իւր բնակութիւն մերձ առ սուրբ եկեղեցեացն» հատվածին վրա հենվելով, Զվարթնոցը ուսումնասիրողներեն ոմանք կհետևցնեն, թե Ներսես եկեղեցիեն առաջ չինեց շրջակա չինությունները և հուսկ հետո ձեռնարկեց եկեղեցվո հիմնարկության: Սակայն, իմ կարծիքով, այս հատվածին իմաստը սխալ է ըմբռնված. «արկ ի միտս իւր» խոսքի պարզ իմաստն է, թե՝ Ներսես որոշեց կամ միտքը դրավ յուր բնակությունը կամ կաթողիկոսարանը Դվինեն փոխադրելով, Վաղարշապատի եկեղեցիներու մոտը հաստատել: Թե՛ հետագա մատենագրական ավելի մանրամասն հիշատակություններե և [թե՛] ճարտարապետական ու շինարարական օրենքներու քննությամբ պիտի տեսնենք, որ նախքան եկեղեցվո հիմնարկությունը թեև կային այնտեղ վաղեմի շինություններ, սակայն մեր այսօրվան ավերակներուն մեջ տեսած շինությունները, քիչ բացառությամբ, հիմնարկված են եկեղեցվո շինությունեն հետո, կամ առառավելն եկեղեցվո շինության վերջանալուն մոտիկ: Սեբեոսի տեղեկությունեն ավելի որոշ, թերևս մեզ անհայտ մի ուրիշ աղբյուրե քաղելով, Հովհաննես կաթողիկոս բնակարաններու շինությունը Ներսեսի վերադարձեն հետո կդնե, և հատվածը այնքան պարզ է այդ շինվածամասերու համար, որ բնավ կասկած չի կարող լինել ուրիշ շենքերու մասին, «Յօրինեալ ի նմա յարկս բնակութեան ինքեան հաստահեղոյս կոփածոյ քարամբք» խոսքը միմիայն կաթողիկոսարանի շինության համար կարող է լինել: Առանց Սեբեոսի գրելուն, Հովհաննես կաթողիկոս չէր կարող իրմե մոտավորապես երեք հարյուր տարի առաջ շինված շենքի մը համար ժամանակագրական այդքան մանրամասնություն տալ, առանց իր աչքին առջև շինության ժամանակակից ուրիշ դրական աղբյուր մը ունենալու, և ի՞նչ օգուտ կունենար Հովհաննես կաթողիկոս մտացածին հավելումներ անելու, քանի որ խնդիրը ոչ մի կրոնական, քաղաքական կամ անձնական նկատումներու հետ կապ չունեցող պարզ շինության մը վերաբերյալ ժամանակագրական տեղեկություն է: Բայց առայժմ թողունք այս հարցը, քիչ հետո կրկին ձեռք առնելու պայմանով, որովհետև, բացի այս պարագան՝ Հովհաննես կաթողիկոսի տված ամփոփ տեղեկությունները իրենց խիստ շահեկան և հետաքրքրական կողմերը ունին, որոնց վրա մի քիչ ծանրանալ անհրաժեշտ է:



Նկ. 162. Զվարթնոցի տաճարի հարավային մուտքի գլխի արևի ժամացույցը

Թեև ես առաջիկային առիթ շատ պիտի ունենամ զուտ ճարտարապետական և շինարարական տվյալներով ապացուցանելու, որ եկեղեցին շատ ավելի կանուխ շինված է, քան մոտակա շինությունները, բայց և այնպես այստեղ միայն կմատնանշեմ մի երևույթ, որ միանգամայն անվիճելի կդարձնե կաթողիկոսարանի շինության ավելի ուշ լինելը: Զվարթնոցը տեսնող և քննողներեն շատերուն հայտնի է, որ եկեղեցվո արտաքին բոլորակ պատը զարդարված էր որմնահեց աղեղնակապ զույգ սյուներով: Հատկապես այդ արտաքին պատի համար տաշված միացյալ զույգ սյուներեն մի բեկոր կտեսնվի հարավային կողմի շինությանց միջին շենքի, արևելակողմյան սենյակներեն մեկուն հիմին մեջ հյուսված իբրև հիմնաքար: Չափով, ձևով և նույնիսկ քարի տեսակով եկեղեցվո իբրև որմնասյուն տաշված լինելուն ոչ մի կասկած չկա, սակայն ի՞նչ պատճառով հյուսվեր է մոտակա շինության հիմին մեջ, այդ ալ շատ պարզ կլինի մասնավորապես մասնագետներու կամ շինարարությամբ զբաղվող մարդկանց համար:

Ա. Որոշված քանակությենեն ավելի տաշված կլինի.

Բ. Տաշվածքին մեջ սխալմունք կլինի. այս երկու պարագայի մեջ ալ գրեթե նույն քարը այլևս ուրիշ բանի չի ծառայեր, բացի հիմնաքար կամ որմնաքար լինելե: Զվարթնոցի մեջ այս Բ. պարագան է, որ ամենայն հավանականությամբ նույն քարը անպետքանալով, այն ժամանակ իբրև հիմնաքար ծառայեր է, իսկ բարեդեպ դիպվածով մ՚ալ այսօր մեզ կծառայե իբրև ժամանակագրական ապացույց:

Այժմ դառնանք այն հարցին, թե ե՞րբ կարող է հիմնարկված լինել եկեղեցին կամ ո՞ր թվականին:

Շատ բնական է, որ Ներսես իր դահակալության տարին ավելի շտապողական և անհետաձգելի զբաղումներ ուներ, քան եկեղեցվո կամ կաթողիկոսարանի շինությունները:

Արաբներու աշխարահավեր արշավանքով (641, ըստ ոմանց՝ 642) երկիրը նյութապես և ֆիզիկապես քայքայված, տասնյակ հազարավոր դիակներ Դվինի և շրջակայից մեջ բացօթյա թափված, կենդանի մնացող ժողովուրդը լիակատար սուգի և շիվանի մատնված, միևնույն ժամանակ նորանոր վտանգներու և ավերումներու սպառնալիքները դեռ չչեզոքացած, Ներսեսի համար առաջին պարտականություն էր արկածյալներու համար նյութական և բարոյական օգնություն հասցնել, ցիրուցան թափված բազմահազար դիակները հավաքել և թաղել, արկածյալներու զուտ հոգեկան սփոփանք պատճառելու համար, նահատակելոց անվան դամբանական հիշատակարաններ պիտի կանգներ և, որ ավելի է, արտաքուստ հայրենիքին սպառնացող աղետներու առջև առնելու համար, հայ իշխաններու և նախարարներու խորհրդակցությամբ քաղաքական հարաբերություններու մեջ պիտի մտներ դրացի մեծ պետություններու հետ, և այս ամենը անմիջական ծանր աշխատանք կպահանջեր:

Ինչպես վերև նկատեցի, Ներսես Զվարթնոցի հիմնարկությունը պետք է սկսած լինի Թեոդորոս Ռշտունիի՝ Արծափի բերդին վրա տարած հաղթությունեն անմիջապես հետո, ըստ Սեբեոսի տեղեկության՝ 642-43 թ.: Բայց որովհետև, ըստ Սամուել Անեցվո՝ «Յառաջ չինէ զվկայարան սրբոյն Սարգսի եւ զոր ի վերայ Վիրապին սրբոյն Գրիգորի», ուստի այս վկայարանը, ամենայն հավանականությամբ, նույնիսկ արաբները քաշվելեն անմիջապես հետո սկսեց շինել, որովհետև պահանջը անհետաձգելի էր և գործը բավական մեծ, որը հավանորեն ծանր աշխատանք և երկար ժամանակ ևս կպահանջեր: Այս տեսակետով՝ Վարդան Բարձրաբերդցու տված տեղեկությունը ավելի պարզ է և կընորոշե պարագային կացությունը, թե՝ «Հաւաքեալ զբազմութիւն դիականցն թաղէր եւ ի նմին տեղւոջ չինէր զվկայարան սրբոյն Սարգսի»: Արաբները Դվին գրավելու ժամանակ միայն սուրբ Սարգիս եկեղեցվո մեջ կոտորեր էին 1200 հոգի (Մխիթար Այրիվանեցի. Մոսկվա, 1860, էջ 50), այնպես որ նահատակներու արյունը մինչև իսկ սեղանը ծածկեր էր, զուցե նաև այրեր էին, ուստի Ներսես շտապեց անմիջապես ս. Սարգիսը վերաշինելու և «զոսկերս սպանելոցն ամփոփեաց ի նոյն վկայարան» (Կիրակոս Գանձակեցի. Թիֆլիս, 1909, էջ 58): Դվնա ս. Սարգիսը մեզ չէ հասած, սակայն Վիրապի եկեղեցին, այսօրվան մասնակի մնացորդներեն դատելով, այնքան ալ մեծ բան չէ: Իմ տեսությամբ՝ Վիրապի եկեղեցին ևս պետք է որ իբրև վկայարան շինված լինի, որովհետև արաբներու սուրը ինչպես Դվնա մեջ, այնպես ալ Դվնեն դուրս ոչ ոքի չէր խնայած, ուստի մեծ քանակությամբ դիակներ ալ թաղեց Վիրապի մեջ. եթե այդպիսի նպատակ չլիներ, հարկ չկար, որ Ներսես շտապեր անմիջապես շինելու ձեռնարկել Վիրապի եկեղեցին: Հռիփսիմեի և Գայանեի վկայարաններն իրենց մեծության և ընդարձակության կողմանե առաջին և թերևս վերջին բացառություններն են հայոց եկեղեցական ճարտարապետության մեջ, առաջինը Կոմիտաս կաթողիկոսի, երկրորդը Եղր կաթողիկոսի ձեռքով շինված:

Ուստի այս տեսակետով ալ այդ երկու փոքր եկեղեցիներու շինությանց համար եթե երկու տարին շատ երկար ժամանակ չէ, այնուամենայնիվ կարող է անպայման վերջացած լինի նույնիսկ 642 թվականի վերջերին՝ հաշվելով Ներսեսի կաթողիկոսանալու 641 թվականեն: Այս հաշիվը ուղիղ կհամեմատի Սեբեոսի տված թվականին հետ, այսինքն՝ Թեոդորոս Ռշտունիի՝ Արծափի բերդին վրա տարած հաղթության թվականը, որուն ժամանակն է 642: Ուրեմն անվրեպ կարող ենք ընդունել, որ Զվարթնոցի շինության հիմնարկելը տեղի ունեցավ 643 թվականի գարնանը: Այս թվականին քաղաքական կացությունն ալ հուսալի էր, նախընթաց տարիներու սարսափելի աղետի տպավորությունը արդեն մեղմացած էր, Ներսես ևս, հիմնված Բյուզանդիո կայսեր հետ իր ունեցած թե՛ անձնական մոտիկ հարաբերության և թե՛ անոր՝ Հայաստանի համար խոստացած պաշտպանության վրա, համոզված էր, որ Հայաստանը ազատ պիտի մնար արաբական նոր արշավանքներու վտանգեն, ուստի ինքն ալ ազատ կարող էր նվիրվել մեծ ծրագրի իրագործման, որը, ըստ իս, որչափ կրոնական, նույնչափ ալ քաղաքակրթական նշանակություն

ուներ և ապագային իր անվան համար անջնջելի հսկայական կոթող մը պիտի լիներ, եթե երբեք կարողանար մինչև վերջը հասնել իր նպատակին:

Արդ, Զվարթնոցի շինության սկզբնավորության թվականը 643 գարնան լինելը ըստ իմ տեսության պարզված համարելին հետո, երկու խոսք ալ կուզեմ ավելցնել պատմագրաց կողմանե տրված թվականներու մասին, որոնք անհամեմատ տարբեր են մեկզմեկե:

Մխիթար Այրիվանեցի շինության հաստատուն թվական կնշանակե 641 թիվը, իսկ Սամուել Անեցին՝ 654 թիվը: Մխիթար Այրիվանեցու տված 641 թվականը առառավելն կարող է ապացուցանել նույն թվականին Ներսեսի կաթողիկոսական գահ բազմելը, հակառակ ոմանց 642 թվին վերագրելուն, իսկ մյուս կողմանե՝ Զվարթնոցի այդ թվականին հիմնարկված լինելը անկարելի լինելուն մասին արդեն գրեր եմ պատմական և արվեստագիտական տվյալներու վրա հիմնված և դեռ առիթ կլինի գրելու: Իսկ Սամուել Անեցու տված 654 թվականը՝ պատմական անցքերու համեմատությամբ՝ միանգամայն սխալ է: Այդ թվականը որոշ չափով կարող էր համապատասխանել եկեղեցվո շինության վերջավորության, բայց որովհետև, նախ՝ առարկություն շատ կվերցնե բուն եկեղեցվո շինության ավարտումը մինչև այդ թվականը ուշացած լինելը, Ներսեսի այդ թվականին վերադարձած չլինելուն պատճառով, երկրորդ՝ եթե ենթադրենք, հարակից շինություններու մասին, որոնց շարունակությունը հանձնված էր Անաստաս Ակոռեցուն, այդ մասին ալ որոշ կերպով գիտենք, որ Ներսեսի վերադարձին ժամանակ (658 թ.) դեռ չէր վերջացած, և Ներսես ինքը անձամբ շարունակեց գործը մինչև իր մահը՝ 661 թ.: Արդյոք [նա] վերջացուց ամեն գործը ըստ իր նախնական ծրագրի, այդ արդեն տարակուսելի հարց է, որուն մասին, ըստ իս, արժե փոքր ինչ խորանալ: Այժմ այստեղ միջանկյալ մի ուրիշ հարց կծագի, թե ո՞րչափ տևեց բուն եկեղեցվո շինությունը մինչև վերջնականապես ավարտելը, որո՞ւ ձեռքով կատարվեցավ բոլոր աշխատանքը, կամ ի՞նչ գործեր հանձնվեցան Անաստաս Ակոռեցու ղեկավարության: Հովհաննես կաթողիկոսի տված մեկ տեղեկության հիման վրա, Անաստաս Ակոռեցին «Սենեկապան լեալ Մեծին Ներսէսի եւ վերակացու շինուածոյ հրաշակերտ եկեղեցւոյն գտանէր հրամանաւ Ներսէսի. մինչ էր նա ի հալածանս ի գաւառին Տայոց» (էջ 90): Այս հատվածի հիման վրա առաջ եկած է, անշուշտ, այն կարծիքը, թե Ներսեսի հեռացած ժամանակ եկեղեցին տակավին վերջացած չէր, հետևաբար Անաստաս Ակոռեցին շարունակեց եկեղեցվո շինությունը, մինչև Ներսեսի վերադարձը: Այս թյուրիմացության ոչ նվազ նպաստեր է Սեբեոսի «Արկ ի միտս իւր շինել իւր բնակութիւն» խոսքին սխալ ըմբռնվելը, ինչպես բացատրեցի վերևը, որպես թե նախ կաթողիկոսարանը շինվեր է և հետո եկեղեցին հիմնարկվեր է:

Նկ. 163. Քանդակազարդ բեկոր՝ Զվարթնոցի տաճարից

Բուն եկեղեցվո համար տաշված որմնասյան մոտակա կաթողիկոսական բնակության հատուկ շինության հիմին մեջ հյուսված լինելու փաստը առանց ի նկատի առնելու, եթե Սեբեոսի «արկ ի միտս իւր» խոսքը կաթողիկոսական տան նախապես շինված լինելուն իբրև ապացույց ընդունենք, այն ատեն պիտի տեսնենք, որ Հովհաննես կաթողիկոս պարզապես ինքզինքը պիտի հակասած լինի, որովհետև նույն հեղինակը, Ներսեսի բացակայությանը շինությանց շարունակությանը Անաստասին ղեկավար նշանակելու տեղեկութենեն առաջ, արդեն գրած էր՝ «Հայրապետն Ներսէս (վերադարձեն հետո) պարապ անձին գտեալ, զարտաքոյս հրաշակերտ եկեղեցւոյն, զոր իւր իսկ էր շինեալ, շուրջանակի պատուար պարսպով փակեալ ամրացուցանէր, յօրինեալ ի նմա յարկս բնակութեան ինքեան հաստահեղոյս կոփածոյ քարամբք»: Այստեղ՝ «զոր իւր իսկ էր շինեալ» հատկապես շեշտված խոսքը կասկած չի թողուր, որ Ներսես, նախքան յուր մեկնելը, արդեն եկեղեցին ավարտած էր, իսկ վերադարձեն հետո ալ շինած գործերու մասին դարձյալ խիստ պարզ և հստակ է պատմագրի տեղեկությունը, թե եկեղեցին պատվար պարսպով փակեր է, շինելով «ի նմա յարկս բնակութեան ինքեան»: Ուրեմն այստեղ պարզ է, որ Ներսես իր վերադարձեն հետո շինեց յուր բնակարանները և շուրջանակի պարսպով պատեց: Ճիշտ է, որ Հովհաննես կաթողիկոս ժամանակակից չէր եկեղեցվո շինության, սակայն պետք է հավատալ, որ անպայման ժամանակակից ուրիշ մի հավատի պատմագրի մանրամասն տեղեկություններեն քաղեր է, անկախ Սեբեոսի Պատմությունեն:

Այս տեսությունովս չեմ ուզեր հերքել Անաստաս Ակոռեցու շինության ղեկավարության պաշտոն ունենալը, և կընդունեմ, որ Ներսեսի բացակայության ժամանակ Անաստաս այնտեղ շինարարական գործ կկատարեր և բանվորներ կաշխատեցներ, սակայն ի՞նչ էր անոր աշխատանքը, կամ թե ամբողջ շինության ո՞ր մասը կղեկավարեր, այս հարցին որոշ պատասխան տալու համար, վերոգրյալ հարցը պետք է քննել ժամանակագրական և թե շինարարական օրենքներու հիման վրա, որն որ դարձյալ մեզ պիտի բերե այլ եզրակացության, թե նախքան Ներսեսի մեկնելը եկեղեցին ամբողջ ավարտված էր, իսկ մնացած շինություններուն որոշ մասերը Անաստասի ղեկավարությամբ առաջ տարվեցան, սակայն ամբողջ շրջակա շինություններու ավարտումը կատարվեցավ Ներսեսի ձեռքով՝ իր վերադարձեն հետո:

Ըստ ոմանց կարծյաց, եթե պահ մը ենթադրենք, որ Ներսես շինությանց գործը 645-648 թվականներեն հետո է սկսած, նաև ընդունենք, թե նախքան եկեղեցին շինելը կաթողիկոսարանը շինեց և հետո հիմնարկեց եկեղեցին, այն ժամանակ այս 645-648 առաձգական թվականներու վրա պետք է որ գտնե երեք տարի ևս ավելցնենք և գնանք 648-651 թվականները, եկեղեցվո հիմնարկության սկզբին հասնելու համար, որովհետև կաթողիկոսական տան այն ընդարձակ շինությունները, ինչպես կտեսնենք տեղի ավերակներու վրա, հազիվ ամբողջանան երեք տարի ժամանակամիջոցի մը մեջ: Ուստի այդ առաձգական թվականներեն առաջին 648-ը վերցնելով, մինչև Ներսեսի մահը կմնա 13 տարի, իսկ երկրորդ 651 թիվը վերցնելով, կմնա 10 տարի: Արդ, այս թվականներեն եթե զեղչենք Ներսեսի վեց տարվան բացակայությունը, առաջինեն կմնա 7 տարի, իսկ երկրորդեն՝ 4 տարի: Այս թվերեն ալ եթե զեղչենք կաթողիկոսարանի շենքերու համար անհրաժեշտ երեք տարի ժամանակամիջոցը, առաջինեն կմնա 4 տարի, երկրորդեն՝ 1 տարի: Այս պարզ հաշվով, ուրեմն, մարդ որչա՜փ միամիտ պետք է լինի, որ հավատա, թե Զվարթնոցի նման հսկա, տարողությանց նրբին հաշիվներով պատասխանատու և գեղարվեստական բազմակողմանի աշխատանքներ պահանջող մի շենք կարելի կլինի ամբողջացնել, նույնիսկ 648 թվականեն հաշվելով շինությանց ձեռնարկության սկիզբը: Անիի մեջ գտնվաշեն բոլորակ ս. Գրիգոր եկեղեցին, որ գեղարվեստական արժանիքով անհամեմատ ստորին ընդօրինակությունն է Զվարթնոցի, առանց որևէ հարակից շինություններու, դարձյալ հինգ տարի տևեր է, ըստ վկայության Սամուել Անեցու: Եվ այդ հապճեպ շինության հետևանք կարող է լինել, որ Ն. Կ. Բ. [1013] թվականին վաղահաս կործանման վտանգին դիմադրելու համար, ներքին կամարներուն ներքև կրկնակի շրջակամար ավելցուցեր են և այսուներու շուրջը մեծ մույթեր հյուսեր են:

Պահ մը ենթադրենք, որ Ներսես 645 թվականին ձեռնարկեց կաթողիկոսական տան շինության և վերջացուց 648 թվականին, որ անկարելի էր ավելի կարճ ժամանակի մեջ վերջացնել, ուրեմն 649 թվականին պետք է որ հիմնարկված լինի բուն եկեղեցին:

Այս թվականեն մինչև Ներսեսի հեռանալու 652 թվականը կմնա երկու տարի, որովհետև Ներսես 652 թվականի գարնանը հեռացավ, հետևաբար ամրան մեջ գործի ժամանակ բացակա էր: Ենթադրենք նաև, որ կաթողիկոսական տան շինությունը երկու տարվան մեջ ամբողջացավ, և եկեղեցին հիմնարկվեցավ 648 թվականի գարնանը և ոչ 649-ին. հետևաբար մինչև Ներսեսի հեռանալը, 652 թվականը, կմնա երեք տարի: Արդ, շինարարական օրենքներով դատելով լրջորեն, անկարելի էր, որ Զվարթնոց եկեղեցվո մեկ հարկեն ավելին շինել հնար լիներ, որովհետև առնվազն մեկ տարի հարկավոր էր անոր ահագին բանձրությամբ հիմերը այնքան խնամքով լեցնել, ինչպես կտեսնենք տեղին վրա, իսկ մնացած երկու տարվան մեջ հազիվ կարող էին առաջին հարկի մինչև պսակները բարձրանալ, ինչքան ալ որ գործավոր և հում շինանյութ պատրաստ լիներ շենքի մոտը: Ուրեմն, առաջին հարկեն վեր, երկրորդ հարկը և գմբեթը մինչև կատար, Անաստաս Ակոռեցու ղեկավարությամբ պետք է շինված լինին: Բայց արդյո՞ք Անաստաս Ակոռեցին կարող էր մենակ ղեկավարել այդ պատասխանատու և վերին աստիճան արվեստագիտական հմտություն ու գեղարվեստական ըստ ամենայնի զարգացման ճաշակ պահանջող գործը, մինչև իսկ առանց ճարտարապետի հսկողության, քանի որ կայսրը 652 թվականի գարնանը եկեղեցին շինող ճարտարապետին ալ միասին տարավ՝ ըստ Մովսես Կաղանկատվացու վկայության: Այժմ քննենք այս խնդիրը:

Ըստ իս՝ ոչ Ներսես կարող էր վստահել Անաստաս Ակոռեցուն այնքան խոր հմտություն և զարգացած ճաշակ պահանջող գործին ղեկավարությունը և ոչ ալ Անաստաս հանձն կառներ իր հմտություններն ու գիտութենեն բարձր գործի մը

պատասխանատվությունը. Ներսեսի հանձնարարությունը կարող էր ճիշտ լինել, բայց ոչ երբեք բուն եկեղեցվո նկատմամբ:

Նկ. 164. Զվարթնոցի արտաքին պատի առաջին հարկաբաժնի զույգ որմնասյուներից մեկի մասերը

Բուն եկեղեցվո շինության ղեկավարությունը Անաստաս Ակոռեցուն հանձնված չլինելուն մեկ ավելի ապացույցներ կարելի է գտնել, իսկ կողմնակի շինություններու մասին կարելի է հավատալ, որովհետև որոշ մասերու մեջ Ներսեսի ճաշակի և գիտակցության բացակայությունն ակներև է: Ով որ արվեստագիտական աչքով կդիտե այսօրվան մեր ձեռքը հասած Զվարթնոցի ավերակները ու անոր ճարտարապետական բեկորները, կտեսնե, որ ամեն մի քարի վրա առանձնապես դրոշմված է գեղագիտական հմտությամբ օժտված ղեկավարի մը շնորհքը և Ներսեսի հատուկ ճաշակը: Այդ շնորհքը կամ գիտությունը Զվարթնոցի ինքնուրույն ոճին նկատմամբ Անաստաս Ակոռեցին երբեք չէր կարող ունենալ. բացի այն, որ պատմական տեղեկությունները Անաստասի շատ սահմանափակ զարգացումը կապացուցանեն, այլև մոտակա շինությանց մեկ մասին մեջ, որուն կառուցումը Անաստասի ղեկավարությամբ կատարված լինելը հավանական է, կան այնպիսի բնորոշ մասեր, որոնք Ներսեսի ներկայության կամ անոր ղեկավարության ներքո երբեք չէին կարող շինվել այնպես, ինչպես որ կան այժմ:

Զվարթնոցի տաճարի պատուհաններու լայնության և բարձրության անհամեմատ խոշոր համաչափությունները լույսի և օդի մասին Ներսեսի ունեցած բացառիկ գիտակցության միայն կարելի է վերագրել. հայ եկեղեցական ճարտարապետության մեջ խոշոր ու լայն բացվածքներու պատուհաններու շրջանը հանդիսացող 5-7-րդ դարերուն մեջ կանգնված ոչ մի հիշատակարանի վրա չենք գտներ ոչ միայն Զվարթնոցի պատուհաններու լայնության և բարձրության հավասարող պատուհաններ, այլև բազմաթիվ պատուհաններու միջոցավ լույսով ողողված մի տաճարի ներսը: Բացի պատուհաններու խոշորությունը և այլազան ձևերով անոնց բազմաթիվ լինելը, աստիճաններեն քիչ վերև հավասար բարձրությամբ և հավասար մակարդակի վրա շարված լինելը միայն Զվարթնոցի հատուկ ինքնուրույն բացառություն է, իսկ ասոր հակառակ, 5-14-րդ դարերուն մեջ կանգնված բոլոր հիշատակարաններու վրա պատուհաններ, գրեթե առանց բացառության, ոչ միայն թվով սահմանափակ են, այլև դասավորված թե՛ անհավասար բարձրության վրա և թե՛ անհավասար չափերով՝ նույնիսկ միևնույն ճակատի վրա, միևնույն ժամանակ անհամեմատ բարձր դրված հողի մակերևույթեն կամ աստիճաններեն վերև՝ ըստ քմաց ճարտարապետի կամ ըստ ժամանակի ոգու պահանջման: Համաչափության օրենքներու դեմ ընդվզող ոճը ոչ միայն Հայաստանի մեջ մի ընդհանուր պահանջ է եղած հայոց հին ճարտարապետության մեջ, այլև եկեղեցիներու պատուհաններու տեսակետով, կարծեք, մի խորհրդավոր թիվ կար և հատուկ տեղ անոնց համար եկեղեցվո պատերուն վրա, որով գրեթե սկիզբեն մինչև վերջը տարօրինակ միօրինակություն մը կգտնենք անոնց տեղին և դիրքին նկատմամբ, հազվադեպ բացառությամբ: Եկեղեցվո կառուցման ոճի և ճաշակի բոլոր կանոնավորություններու հակառակ, մերձակա կաթողիկոսական տան շինության մեջ Ներսեսի բացակայությունը միանգամայն զգալի է: Այսօր մեզ հասած բավական բարձրությամբ պատերու վրա, պատուհաններու բնավ հետք չգտնվելին զատ, ներսի կողմեն գետնաղամբանի մը նման աղեղներով ու կամարներով խճողված են, բացառությամբ կաթողիկոսական մեծ դահլիճի և անոր հարավակողման մի քանի բաժանումներու, ամենայն հավանականությամբ պատուհաններ կամ շատ բարձրեն դրված էին և կամ տանիքեն լույս ստացած էին: Մանրատեսիլ, համաչափության օրենքներու դեմ ընդվզող ոճը, գլխավորաբար մասնավոր շենքերու՝ բնակարաններու, դամբարաններու և եկեղեցիներու հարակից շինություններու համար շատ սովորական երևույթ էր Հայաստանի մեջ, սակայն Ներսեսի անձամբ ծրագրած բուն եկեղեցվո շենքին համաչափություններն ու հարամասունքներու պատշաճ դասավորությունները գրեթե սովորական են Ներսեսի շրջած ու գործած արևմտյան և հարավային երկրներու ճարտարապետական ոճերուն, ինչպես հռոմեականը, բյուզանդականը և սիրիականը: Եվ այս վերջինիս Զվարթնոցի վրա ներգործությունն ավելի զգալի է, քան ուրիշ արևմտյան ոճերը, հակառակ Ներսեսի վերագրված հունասիրության կամ բյուզանդական դաստիարակության:

Մովսես Կաղանկատվացու տված մի տեղեկությունը շատ բան կպարզե Զվարթնոցի շինության ղեկավարության և շենքի ավարտման ժամանակի մասին:

Կաղանկատվացին կպատմե, թե Ներսես «էր հայրագիր նորին Կոստանդնի եւ գանձիւք նորա շինեաց զբազմապայծառ փարախն բանաւոր հօտից ի քաղաքուդաշտի ի սուրբն Գրիգոր եւ ի նաւակատիս կոչեաց զթագաւորն Հոռոմոց, որ յաւէժ հիացեալ ընդ շինուածն՝ ետ հրաման շինողացն գնալ զկնի իւր զի զնոյնաձևն յարմարեսցէ ի պալատանն: Եւ ոչ ժամանեալ գնալ ի տուն իւր՝ ի ճանապարհին վախճանէր» (Մ. Կաղ., էջ 255): Ներսես Կոստանդին կայսեր հայրագիր լինելուն և կամ անոր ծախքով եկեղեցին շինած լինելու մասին ինչ հայացք ալ որ ունենան քննադատներ, այնուամենայնիվ, Կոստանդնի Հայաստան գալու թվականի որոշությունը և անոր հետ կապված Կաղանկատվացու՝ Զվարթնոցին վերաբերող հատվածը ոչ միայն հեռու է առասպել լինելե, այլև եկեղեցվո ավարտման ժամանակն ալ կճշտե:

Կայսեր՝ Դվինի կաթողիկոսարանի մեջ Ներսեսի հետ լինելու թվականը արդեն 652 լինելը ընդունված է: Զվարթնոցի հիմնարկության թվականը՝ ընդունելով 643-են մինչև 652, ինը տարվան ժամանակամիջոց մը կա, որ լիովին բավական էր եկեղեցվո շինությունը ի կատար ածելու, և կասկած չի կարող լինել, որ Ներսես օգտվելով առիթեն, փութացուց օծման հանդեսը և եկեղեցվո շինության մեկենաս կայսրն ալ հրավիրեց հանդեսին: Ուրեմն, այստեղ առասպել համարելու ոչինչ չկա, Մովսես Կաղանկատվացին չէ գրած, որ կայսրը Պոլսեն հրավիրվեցավ Հայաստան հատկապես եկեղեցվո օծման հանդեսին համար, այլ պարզ հրավերի մը վրա է խոսքը. ի՞նչ կասկած կարող է լինել, որ այդ հրավերը եղավ Դվինեն դեպի Վաղարշապատի առապարի նորակառույց եկեղեցին: Եթե Կոստանդ կայսեր ծախքով շինվելը պիտի համարվի առասպել, այս ևս անտեղի է. առասպել համարելու համար նախ պետք է հերքել Ներսեսի՝ Կոստանդ կայսեր հայրագիր լինելու փաստը. երբ այս մասին բացասական ոչ մի ապացույց չունենք, այն ժամանակ շատ բնական է, որ Կոստանդ չէր խնայեր իր հարուստ գանձարանեն նվիրաբերել իր հայրագրին բաղձանքին գոհացում տալու համար, այնպիսի մի ժամանակի մեջ, երբ արաբներու արշավանքով Հայաստան արյան ու կրակի մատնված, թալան ու կողոպուտներով նյութապես քայքայված, երբեք հնարավորություն չէր կարող տալ Ներսեսին իր հղացած հսկա ծրագիրը իրագործելու: Եթե նախքան եկեղեցվո հիմնարկությունը կաթողիկոսական տան շինության ձեռնարկված լիներ, նույնիսկ եթե ընդունենք 645-48 առաձգական թվականը, մինչև կայսեր Հայաստան գալու 652 թվականը, անշուշտ ավարտված կլիներ կաթողիկոսական տան շինությունը, կաթողիկոսն ալ փոխադրված կլիներ այնտեղ ըստ յուր կանխակալ մտադրության, և կայսրն ալ կհյուրասիրվեր նորաշեն կաթողիկոսարանի մեջ: Այս պարագան ալ ցույց կուտա, որ եկեղեցին ավարտված էր և պատրաստ օծման հանդեսին, սակայն բնակարաններ թերի մնացած, որ դարձյալ Ներսեսին պիտի վիճակվեր ավարտել կամավոր աքսորեն վերադարձեն հետո: Իսկ եկեղեցին այնպիսի մանրամասն կատարելությամբ ավարտված պիտի լիներ, որ իրավամբ կայսեր հիացումը գրավեց և նա ստիպված եղավ ճարտարապետին միասին տանելու իր պալատական եկեղեցին ալ նույն ձևով շինելու համար բյուզանդական մայրաքաղաքին մեջ, եթե ոչ՝ ոչ կայսրը ադիթ կունենար հիանալու, ճարտարապետին հրավիրելով միասին գնալու համար, և ոչ ալ կայսրը թույլ կուտար իրեն ծախքով սկսված այդ հոյակապ գործին վրայեն, դեռ անկատար վիճակի մեջ ճարտարապետին հեռացնել, եթե նույնիսկ Ներսես չընդդիմանար կայսեր այդ դժվարին առաջարկին:

Նկ, 165. Զվարթնոցի արտաքին պատի ներքին երեսի մնացորդները տաճարի հարավային կողմում

Մովսես Կաղանկատվացու տված տեղեկությունը իսկապես առասպել կլիներ, եթե եկեղեցվո

ավարտումը Ներսեսի վերադարձեն հետո համարվելով, կայսեր 652 թվականին Հայաստան գալեն անկախ, խոսքը մի երկրորդ այցելության կամ Ներսեսի վերադարձեն հետո եղած հրավերի մը մասին լիներ, որովհետև Ներսես 659 թվականին էր, որ վերադարձավ Տայքեն և երկու տարի միայն հազիվ կյանք ունեցավ անկե հետո: Ենթադրենք, թե Ներսես այդ երկու տարուն մեջ ամբողջացուց թե՛ եկեղեցին, թե՛ շրջակա շինություններ և կայսեր ալ հրավիրեց Հայաստան 659 և 661 թվականներու միջոցին: Այդ ժամանակվան պատմական խոշոր անցքերը եթե ինկատի ունենանք, պիտի տեսնենք, որ այդ թվականներուն ոչ Ներսես կհամարձակեր կայսրը հրավիրելու և ոչ ալ կայսրը կուգար Ներսեսի նորաշեն եկեղեցին շնորհավորելու:

Ներսես Տայքեն վերադառնալեն հետո էր, որ Բյուզանդական կայսրության Հայաստանի վրա ունենալիք պաշտպանությունեն հուսահատ, իշխաններու խորհրդով Հայաստանը դրավ արաբաց իշխանության տակ, որով Ներսեսի և կայսեր բարեկամական հարաբերությունը միանգամայն խզվեցավ:

Այդ թվականներուն կայսրը եթե կրկին անգամ Հայաստան գար, պատմական այդ խոշոր իրողությունը մեր պատմագրաց կողմանե անհիշատակ չմնալեն զատ, այդ գալուստը կլիներ, ավելի շուտ, իբրև ապստամբ երկիր Հայաստանը ջնջելու և Ներսեսին ալ պատժելու համար: Գուցե տեղի ունենար կայսեր կողմանե այդպիսի մի տխրառիթ այցելություն առանց հրավերի սպասելու, ինչպես նախորդ անգամին, սակայն նույն ժամանակներուն թե՛ բյուզանդական արքունիքի մեջ տեղի ունեցող ներքին պառակտումները և թե՛ արտաքուստ երկրին սպառնացող վտանգները միանգամայն մոռացուցին կայսեր՝ հայն ու Հայաստանը:

Ուրեմն, մինչև այստեղ իմ կատարած հետազոտության հիման վրա եզրակացությունս այն է, որ Զվարթնոց եկեղեցին հիմնարկվեցավ 643 թվականեն ոչ ուշ, հավանորեն եկեղեցվո շենքը բավական առաջ գնալեն հետո, թերևս ավարտման մոտ՝ հիմնարկվեցան կաթողիկոսարանի հատուկ շինությունները. Անաստաս Ակոռեցին շարունակեց կաթողիկոսարանի շինությանց մեկ մասը, բացառությամբ մեծ դահլիճի և անոր հարակից բաժանումներու, 659 թվականին, Ներսես իր վերադարձեն հետո ամբողջացուց կաթողիկոսական բնակության հատուկ շենքերը և պարսպով պատեց եկեղեցին:

Արդյոք, Ներսեսի՝ Վաղարշապատի առապարին մեջ սկսած շինարարական գործը սահմանափակված էր եկեղեցիով ու կաթողիկոսարանո՞վ, թե՞ ուրիշ շինարարական ավելի մեծ ընդարձակ ձեռնարկություններ ունեցավ, եթե ունեցավ, ի՞նչ աստիճան կարողացավ հառաջ տանել իր ծրագիրը: Այս հարցերու կապակցությամբ հաստատական որևէ կարծիք հայտնելու համար պետք է ծանոթանալ Ներսեսի անձնական նկարագրին և բովանդակ կենսագրության վրա հիմնված պատմագրական մի քանի աղոտ, բայց բնորոշ ակնարկներու: Այս մասին իմ անհատական կարծիքն է՝ թե նա հղացած էր մի մեծ և փառավոր ծրագիր, որ կոչված էր իր անվան մեծ փառքը և այսօր ալ մեր ժողովրդին պարծանքը լինելու, սակայն, դժբախտաբար, վաղաժամ մահը իր խանձարուրին մեջ խեղդեր է Ներսեսի բոլոր քաղաքակրթական և գեղարվեստական ծրագիրներու լիակատար իրագործման ջերմ ակնկալությունները: Եթե այսպես չլիներ, նա չէր կարող Շինող պատվանունը ստանալ ժողովրդի կողմանե: Զվարթնոցը և ուրիշ քանի մը մանր ու միջակ շինություններ բավական չէին զինքը այդ պատվանվամբ օժտելու, եթե ոչ միայն եկեղեցաշեն, այլև աշխարհաշեն հատկություններով օժտված չլիներ:

## ԳԼՈՒԽ Դ.

# ՆԵՐՍԵՍ Գ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՎ ԻՐ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Զվարթնոցի նման աշխարհահռչակ կոթողը բավական չէ մանրամասնորեն ուսումնասիրել՝ առանց մոտեն ճանչնալու այդ կոթողը կանգնողի անձնական արժանիքն ու բարոյական առավելությունները: Հայաստանում հազարավոր շենքեր կան կանգնված՝ սկսած 4-5-րդ դարերեն մինչև 14-15-րդ դարերը, սակայն Զվարթնոցը այդ բոլոր շինություններու մեջ գլուխ-գործոց է և հայ ճարտարապետության ոսկեդարու կնիքն է 7-րդ դարուն մեջ: Զվարթնոցի այսօրվան քարուքանդ և մամռապատ բեկորների վերածված ավերակները, այդ կոթողի կանգնման օրից 13 դար անցնելուց հետո, այսօր ոչ միայն հիացում կպատճառեն տեսնողներուն, այլև հարգանքի ու ակնածանքի զգացումով կլեցնեն գեղարվեստական աշխարհը հանդեպ այդ սքանչելի կոթողը կանգնողի հիշատակին:



Այս մեծ մարդը ճանչնալու միակ աղբյուր պետք է լինեն մեր հայ պատմագիրներ, սակայն, դժբախտաբար, պատմագիրներ, որչափ որ դարուց ի դարս խոսում են անոր մեծագործության մասին և լիաբերան ներբողում են բանաստեղծական նկարագրություններով, այնուամենայնիվ վերին աստիճան ժլատ և սակավախոս են կանգնողի անձի և արժանիքների մասին: Անշուշտ, առանց պատճառի չէ այս երևույթը, և պատճառը մասամբ պարզվում է կղերական մատենագիրների ակնարկներից: Հավիտենական դատապարտության տակ է դրվում այդ մեծ մարդը, որ մի հանցանք է գործել հանդեպ եկեղեցական օրինաց, այն է՝ բյուզանդական կայսեր ներկայությամբ հունածես պատարագ մատուցանել թույլ տվել է Դվնա եկեղեցու մեջ և ինքն ալ հունածես հաղորդություն է առել իր եկեղեցականներով: Աններելի և անքավելի է համարված այս մեծ մեղքը հայ կղերի աչքում և անեծքով կնքել են անոր հիշատակը, անոր գերեզմանին հետ անգամ չեն ուզում հաշտվել նույնիսկ մեր օրերի կղերականներ: Դեռ այսօր իսկ մեր բարձրագույն կրթություն ստացած, աստվածաբանական և փիլիսոփայական վկայականներով զարդարված եկեղեցականներից ոչ ոք հետաքրքրված չէ այս մարդու կյանքով և քննած չէ այն զորեղ պատճառները, որոնց առջև խոնարհվեց այդ մարդը՝ կայսեր ներկայության հունածես հաղորդվելու:



**Նկ. 166. Զվարթնոցի արտաքին պատի առաջին հարկաբաժնի զույգ որմնասյուներից մեկի խոյակները**

Մեր օրերի փիլիսոփա վարդապետների համար ևս արժեք չունի այն փաստը, որ մի հունածես հաղորդություն առնելով՝ այդ միջոցին փրկեց բովանդակ հայ ժողովրդին ֆիզիկական գոյությունը և ազատեց սրակոտոր լինելե՝ արտակարգ կատաղությամբ և վրեժխնդրությունով լեցված, մեծ բանակով Հայաստան եկող կայսեր ձեռքեն, միևնույն է մեր կղերին համար՝ թո՛ղ կոտորվի ժողովուրդը, սակայն անեղծ և անսասան մնան իրենց օրենքները, միշտ հլու հպատակ պետք է լինի ժողովուրդը իրեն հոգվույն և խղճին վրա ծանրացող հայ կղերին և եկեղեցիին: Ո՞վ էր այս մեծ մարդը, Զվարթնոցի նման աննման մեծագործությունը կանգնողը, հայկական հորիզոնին վրա հազվադեպ երևցող և ընդմիշտ գիսավոր աստղի նման շողշողացող Ներսես Գ. Տայեցին. նա ոչ միայն փայլեց իր ժամանակին, փայլում է այժմ, պիտի փայլե հավիտյան՝ իր մեծ տաղանդով և շինարարություններով, որոնց չքնաղ նմուշն է գեղարվեստի պատմության մեջ անմահացած Զվարթնոց եկեղեցին: Կղերական պատմագրության մեջ միակ օրինակը չէ Ներսեսը, որուն՝ կրոնի հանդեպ գործած մի աննշան մեղքի համար, օրինակ՝ ապերախտությամբ հավիտենական դատապարտության տակ դրված է: Բագրատունի Գագիկ Ա. թագավորը երեսուն տարի անընդհատ թագավորել է, և ոչ միայն երկար խաղաղության մեջ պահել, հայրական խնամքով պահպանել է ժողովուրդին լիության և առատության մեջ, այլև իր մեծ դիվանագիտությամբ ազատ պահել է Հայաստանը օտար թշնամիների արշավանքներեն: Բայց որովհետև Գագիկ մի մեղք գործած է եղել հանդեպ եկեղեցական օրինաց, Ստեփաննոս Ասողիկ վարդապետ պատմագիրը այս մեծ և արժանահիշատակ թագավորի պատմությունը գրելիս՝ թռուցիկ կերպով, ակամա, մի քանի բառ գրելուց հետո, և խոստովանելով հանդերձ, թե՝ «ոչ ոք էր որ զարհուրեցուցանէր զՀայաստանեայս մինչև ցօր գրելոյ իմոյ զքան յիշատակիս այսորիկ», գրիչը չի կարողանում հառաջ շարժել և խորը հառաչելով գրում է, թե՝ «աւա՜ղ միում չարին որ արգել զրան գովեստի պատմութեան իմոյ» (Ս. Ասողիկ, էջ 256): Սակայն ժամանակը հրաշքներ է գործում՝ երբեմն աստվածացած բռնակալ կուռքերի վիթխարի արձաններ՝ գիտակցության հասած ժողովուրդի վրեժխնդրական հարվածների տակ փշրվում թափվում են և նրանց բեկորների վրա կանգնում են համամարդկային ճակատագիրն իրենց գերագույն զոհաբերությամբ բարվոքողների բարձրության պատվանդանը:

Ես հավատում եմ, որ 13 դար կղերեն անարգվելով և անկե իր իսկական արժանիքը քողարկված ու համբավը նսեմացած Ներսեսը պետք է բարձրանա մարդկության բարերարների բարձր պատվանդանին վրա: Ուստի, սկսենք այժմ այս մեծ մարդու կենսագրությունը և իմ անձնական տեսություններս, որչափ որ հնարավորություն կուտան հայ մատենագրական ողորմելի և հատուկտոր տեղեկությունները:

Ներսեսը բնիկ Հայաստանի Տայք գավառի Իշխան գյուղացի էր, պատմագրության մեջ տոհմական ծագումը անհայտ է, սակայն պարզ է, որ ազնվական ընտանիքի ծագում ուներ, թերևս իրեն

ազնվական ծագման պատճառով էր, որ ի մանկութենե ապրեց Բյուզանդիոնում, ստացավ զինվորական բարձր աստիճան և այնքան մեծ համակրանք գտավ կայսերական տան մեջ, որ հայրագիր եղավ Կոստանդին կայսեր, և Հայաստան վերադառնալով՝ կուսակրոն դարձավ: Անտարակույս, եկեղեցականության մեջ ևս այնքան մեծ վարչական և քաղաքագիտական արժանիք ցույց տվավ, որ Եզր կաթողիկոսի մահվանեն հետո, հայ իշխանների ձեռքով կաթողիկոս հռչակվեց 641 թվականին:

Արաբների արշավանքի պատճառով Հայաստանը, մանավանդ Դվինը, քար ու քանդ եղած, 35000 մարդ գերի տարված և Հայաստանի դաշտերը դիակներով ծածկված էր, երբ Ներսես Գ. կաթողիկոս եղավ:

Նախապես նա զբաղվեց դիակներ հավաքելով և թաղելով, նահատակների թաղման տեղերի վրա վկայարաններ կանգնելուց հետո արդեն կարգը եկած էր ընդհանուր շինարարության: Տարակույս չկա, որ արաբական արշավանքի պատճառով Դվինը չափազանց ավերվելուց հետո, նույնիսկ ավերված էր կաթողիկոսական բնակարանը: Կաթողիկոսի անձնական բնակարան չունենալը և Դվինի միանգամայն ավերված ու քայքայված լինելը թերևս Ներսեսին առիթ եղավ իր շինարարությունը Վաղարշապատի մեջ սկսել, կաթողիկոսարանը ևս այնտեղ տեղափոխելով: Այս մասին կտեսնենք իր տեղում, բայց որ կաթողիկոսարանը միանգամայն ավերված էր, այդ մասին ևս պատմական վկայություններ չեն պակսեր, թեև մեծ ու հոյակապ մի կաթողիկոսարանի գոյության մասին ևս մեր պատմագիրներ լուռ են:

Դվինի կաթողիկոսական մեծ եկեղեցվո մասին տեղեկություն ունինք, որ 6-րդ դարու վերջին քառորդին հիմնարկված է և 7-րդի սկզբին ավարտված Կոմիտաս կաթողիկոսի օրով (Սեբ., էջ 124): Այդ եկեղեցվո այսօրվան մեզ հասած ավերակը պարզ ցույց կուտա, թե Ներսեսի օրով իր նորաշեն վիճակով արժանի էր կաթողիկոսական եկեղեցի լինելու: Սակայն կաթողիկոսարանի մասին ալ մի ակնարկություն չունինք անոր շենքին ինչ վիճակի մեջ լինելուն՝ մինչև Ներսեսի օրերը: Համենայն դեպս 5-րդ դարու վերջին պիտի փնտռենք Դվինի մեջ առաջին անգամ կաթողիկոսարանի մը հիմնարկության ժամանակը, երբ առաջին անգամ Գյուտ կաթողիկոսի բնակությունը եղավ: 5-րդ դարեն մինչև Ներսեսի ժամանակը պատմության մեջ ոչ մի ակնարկ չեմ գտած կաթողիկոսարանի մը նոր շինության և կամ հնույն նորոգության, հետևաբար, 5-րդ դարու վերջերին շինված կաթողիկոսարան մը, որ, ըստ իս, անպայման գոնե ծածկով փայտաշեն պետք է եղած լիներ, չէր կարող մինչև 7-րդ դարու կեսը մնալ այնպիսի վիճակի մը մեջ, որ Ներսեսի բարձրագույն զարգացմամբ մշակված ճաշակին գոհացում տար:

Ներսեսի գործելակերպեն իսկ հայտնի է, որ եթե Դվնա մեջ ս. Գրիգորի եկեղեցվույն զուգընթաց մի կաթողիկոսարան ալ նորոգ շինված լիներ, դարձյալ նա պիտի ձգտեր իր անձին համար իր ճաշակով շինել տալ: Այս մասին կհամոզվենք լիովին, երբ Ներսեսի անձի մասին Սեբեոսի տված նկարագիրը կարդանք, թե ինչպես «սնեալ ի մանկութենէ յաշխարհին Յունաց և ուսեալ զլեզուս և զդպրութիւնս Հոռոմին, և շրջեալ ընդ աշխարհս զաւրու կարգաւք զինուորութեան» մի մարդ էր (Սեբ., էջ 288): Ամենայն հավանականությամբ, շատ տարիներ անցած ալ չէին Հունաստանեն գալուն վրա, անոր մտքին մեջ թարմ էր բյուզանդական մայրաքաղաքին և պետության ուրիշ երկիրներուն մեջ գտնված ճարտարապետական շքեղությունների հիշատակը:

Զվարթնոցի ճարտարապետական ոճը անվիճելի կերպով կապացուցանե, որ Ներսես ոչ միայն տեսած էր Կ. Պոլիսը և Հռոմը, այլև երկար ուսումնասիրած էր սիրիական երկիրներու մեջ եղած շքեղ քրիստոնեական շինությունները, որոնց հատուկ դրոշմը կկրե Զվարթնոցի քանդակներեն և ձևերեն մեծ մասը: Հայաստանի մեջ որչափ ալ որ շքեղ լիներին կառուցվածքները, այնուամենայնիվ չպիտի կրնար հաշտվել Արևելքի ցուրտ ոճերուն հետ և պիտի ջանար իրեն հաճելի ոճով կանգնել եկեղեցին ու կաթողիկոսարանը, ինչպես ժամանակ առաջ նույն բանը արավ Տրդատ՝ Գառնիի մեջ, Հայաստանի ոճեն բոլորովին տարբեր, զուտ հունա-հռոմեական ճոխ ոճով կանգնելով իրեն համար մի գողտրիկ հովանոց:

Բայց, ինչ որ ինձ ավելի հավանական կթվի, այն է՝ թե կաթողիկոսարանը արդեն հնացած էր և կամ արաբաց արշավանքի ժամանակ քանդված կամ այրված, որն որ նպաստավոր պատրվակ եղավ Ներսեսի համար վաղ ընդ փույթ գործի ձեռնարկելու: Ստիպողական կարիքը կհակադրեր ժամանակի աննպաստ պայմաններուն: Արաբներու՝ Դվինը գրավելու պատմությունեն գիտենք, որ «արկին մուխ շուրջանակի, մերժեցին ծխովն ու նետաձգութեամբն զպահապանս պարիսպին» (Սեբ., էջ 176):

Կարող էր պատահել, որ այս ժամանակ նույնիսկ հրդեհի ճարակ եղավ արդեն հնացած ու խարխլած կաթողիկոսարանը, որ անպայման կաթողիկոսական եկեղեցվո մոտ պիտի լիներ «կարի մերձ առ բերդն» (Սեբ., էջ 102):

Այս հանգամանքները՝ միացած Ներսեսի զինվորական և քաղաքական բարձրագույն կրթության և արևմտյան գերագույն կատարելության հասած գեղարվեստի հետ երկար տարիների չփմամբ նրբացած ճաշակին, անկարելի էր, որ անդիմադրելի պահանջ զգար իր աստիճանին և ճաշակին համապատասխան շքեղ կոթող մը կանգնելու ու թե՛ ի փառս իրեն և թե՛ հօգուտ ճարտարապետության և գեղարվեստի մի նոր վերածնության Հայաստանի մեջ, փոխարինելով մինչև այն ժամանակ տիրող և ընդհանրացող ծանր և լուրջ ոճերուն:



**Նկ. 167. Զվարթնոցի հարկաբաժինների պակի դետալ**

Եվ ահա կաթողիկոսությունն ալ միակ միջոցն էր, որ հնարավորություն պիտի տար իրեն՝ տիրաբար տնօրինելու և անսահման կերպով ծախսելու ինչ որ իր մեծագործության ձգտումներուն և վայելչասիրության անզուսպ ճաշակը կթելադրեին իրեն: Այստեղ տեղը չէ՞ կարծել, որ Ներսես արաբներու ավերող արշավանքեն հետո, ուր բացի 35000 գերիներե, բազմահազար հայեր կոտորեցին, ամբողջ երկիրը ավարի մատնեցին, իշխանների մեծ մասը անպայման գերի տարան և անոնց ամբողջ կայքն ու կարողությունը հափշտակեցին, ամբողջ ժողովուրդը հետին աղքատության մեջ ձգեցին, իրաց այս վիճակի մեջ տեղը չէ՞ հավատալ Կաղանկատվացու տեղեկության, որ հայ ժողովուրդը երբեք չէր կարող Ներսեսի այդ շինությանց հսկայական գումարը ծախսել, այլ միմիայն կայսեր ծախքով, թե՞, արդյոք, ինչպես կըսե մեծանուն պր. Մառ, մի՞թե փող չուներ կայսրը Հայաստանի մեջ եկեղեցի մը շինելու համար (պր. Մառ Ագաթանգեղոսի թարգմանության մեջ հայտնած է այս կարծիքը): Բայց թե ինչո՛ւ համար Ներսես փոխանակ Դվնա մեջ շինելու, կուգա Վաղարշապատի կողքին մի անջուր և անապատ տեղ կընտրե:

Այս հարցին պատասխանել այնքան դժվար չէ, թեև զանազան մեկնություններ տվողներ եղեր են այս իրողության, սակայն իմ կարծիքը բոլորովին տարբեր է, որովհետև ես տարբեր տեսակետե նայեր եմ Ներսեսի անձնական նկարագրին և գործելակերպին վրա: Հավանական քանի մը պատճառներ կան Ներսեսի Դվինեն հեռանալով, Վաղարշապատի առապարը իբրև կաթողիկոսանիստ ընտրելուն մեջ: Բացի այն, որ արաբներու ձեռքով Դվինը ամբողջապես քարուքանդ եղած էր և ամեն կողմ մարդկային թշվառություն ու աղիողորմ տեսարաններ միայն կներկայացնեին, ավելի կարևոր պատճառը, իմ կարծիքով, մի հսկայական ծրագրի իրագործման համար Ներսեսի ունեցած անհագ փառասիրությունն էր:

Թող ներվի ինձ ըսել, որ մարդկային փառասիրությունը եթե իր դատապարտելի կողմերը ունի, այնուամենայնիվ միշտ եղեր է նաև մի զորավոր մղիչ ուժ արվեստի և գիտության անդադար հառաջադիմության և զարգացման համար:

Նույնիսկ մեր պատմությունը մեզի կուտա, որ հայ գրականության և գեղարվեստի զարգացման մեջ ամենախոշոր դեր կատարեր է հայ իշխանական և ազնվական տոհմերու փառասիրությունը: Այսօր եթե քննենք մեր հնադարյան բազմահազար ձեռագիրները, կտեսնենք, որ գրեթե առանց բացառության, մի թագավորի, իշխանի կամ որևէ բարձրաստիճան կղերի ու մի ազնվականի անվան հետ կապված են: Երբեմն հավատքը, բայց հաճախ փառասիրական մրցումները մեծամեծ գումարներ ծախսել տվեր են անոնց՝ որևէ գրքի մը սկիզբը կամ վերջը քանի մը տող մաղթանք կամ գովաբանական հիշատակարան շահելու համար:

Երևույթը նույնն է նաև ճարտարապետական ճյուղին մեջ: Մեր ձեռքը հասած բոլոր հնադարյան հայ հիշատակարանները որևէ հայ իշխանի կամ ազնվականի պարգևներն են. ներկայիս հայ հնագիտության և հայ գեղարվեստի պատմության համար առանց այդ փառասիրական մրցումներուն մենք չենք կարող տեսնել այսօր Հայաստանի մեջ ամեն քայլափոխի վրա մեկզմեկ գերազանցող հարյուրավոր հոյակապ կոթողներ:

Ոչ միայն մեծամեծ ապարանքներ կկանգնվեին անոնց վայելչության համար, այլև մինչև մեր օրերը հասած հոյակապ տաճարներ կապված են անոնց մեկ ու մեկի անվան հետ: Պատմության մեջ դեռ չէ պատահեր ինձ հասարակական ծախսով մի եկեղեցի շինված լինելու պատմական հիշատակություն, միշտ թագավորին, իշխանին և ազնվականին մենաշնորհն էր, կարծեք, կանգնել շքեղակերտ հիշատակարաններ և նվիրել ժողովրդին, փոխարեն, իբրև վարձատրություն, անոնց երախտագիտական մաղթանքներն ու աղոթքը խնդրելով:

Որևէ մի երկրի մեջ երբ բազմաթիվ ճարտարապետական՝ մեծամեծ կոթողներ կկանգնվին, այլևս կասկած չի կարող լինել, որ զուգընթացաբար զարգացած պետք է լինեին ուրիշ բազմաթիվ արվեստներ և արհեստներ, որոնցմով միայն կկազմվի մի շենք. բավական չէ գործը ղեկավարող և վառվուն երևակայության թռիչքին իրականացման ձգտող ճարտարապետին տաղանդը, եթե ճարտար արհեստավորներու համագործակցությունը չաջակցի՝ մարմնացում տալու ճարտարապետի ուղեղին մեջ ծրագրված հրաշակերտին:

Քննական մի պարզ հայացք բավական է տեսնելու, թե սկսյալ շենքի հիմը փորելու գործողութենեն մինչև անոր արտաքին դռան փականքին գետեղվելը որչափ զանազանակերպ արհեստավորներ իրենց բաժինը ունեցեր են կոթողի ամբողջացման մեջ, բացի քարաշեն որմնադիրներեն և հյուսներեն:

Եթե ինկատի առնենք կոթողը կանգնելեն հետո անոր շարժական ու անշարժ պճնանքներու համար պետք եղած բազմակողմանի զարդարանքները, որոնց մասին միշտ հիացմամբ արձանագրած են մեր սակավախոս պատմագիրներ, այն ժամանակ պարզ կլինի մեզ համար, թե ինչ բազմակողմանի արհեստներ զարգացած էին այս կամ այն մեծ հիշատակարանին շինության դարուն, որուն հոյակապ ավերակներուն առջև մենք կհիանանք այսօր: Ինչ եռուն աշխատանք և մրցում կար բազմաթիվ արհեստավորներու մեջ՝ մեկզմեկ գերազանցելու համար:

Այս անուրանալի ճշմարտությունը տեսնել ուզողները թո՛ղ քննական աչքով դիտեն որևէ դարաշրջանի մեջ կանգնված հիշատակարաններու զարդաքանդակները և կերտվածներու մեկզմեկ գերազանցող նրբությունները, որոնք իրենց ճարտարագործ ձևերով մեկզմեկու չնմանելեն զատ, զանազան շենքերու վրա, երբեմն միևնույն շենքին ընդհանրապես համաչափություն պահանջող մասերու վրա իսկ բազմատեսակ քանդակներով զարդարված են: Իսկապես զարմանալի է հայ արվեստագետներու բեղմնավոր երևակայությունը և հորդառատ արտացոլումը անշունչ քարերու և փայտերու վրա. երբ առիթն է ներկայացեր երևակայություն պատկերացնելու՝ ազահորեն նա թափեր է դուրս իր հանճարի ցոլքերը՝ կարծեք, վախենալով, որ առաջինը և վերջինը պիտի լինի իր գործերուն, աշխատել է որչափ հնար է, այնչափ ավելին արտադրել: Ա՛լ ավելի զարմանալի կդտնենք և կհիանանք անոնց ստեղծագործական տաղանդին վրա, երբ երևակայենք պահ մը, որ անոնք մեզ նման հայկական մատենադարաններ չունեին գեղարվեստական հոյակապ հատորներով զարդարված, որոնցմե կարողանային օգտվել հարկ եղած ժամանակ: Անոնց գիրքն ու մատենադարանը իրենց ուղեղն էր, և ամեն րոպե պատրաստ հորդելու, երբ բարեդեպ առիթը կներկայանար իրենց բեղմնավոր երևակայության և մտավոր անսպառ պաշարի շահագործման՝ ի պատիվ ճարտարապետության և գեղարվեստի: Եվ այս բոլոր արվեստներու զարգացման անպայման խրախույս պետք է լիներ նյութական լիուլի վարձատրությունը, որ անշուշտ չեն խնայեր շռայլելու իշխանական և ազնվական տոհմերը, երբ հարկ եղեր է մի հիշատակարան-կոթող կանգնել ի փառս իրենց անվան և իրենց տոհմի:

Ինձ կթվի, թե հայ ազնվական տոհմերն ալ հավասարապես չեն ունեցեր գեղարվեստական կոթողներ կանգնած լինելու ցանկալի փառասիրությունը: Մեր բազմաթիվ նախարարական տոհմերու մեջեն՝ գեղարվեստասիրության և շինարարական մեծագործության առաջին մրցանակը պետք է տալ հին Պահլավունի շառավիղով եկող Կամսարականներու ցեղին:

Թեև 8-րդ դարուն մեջ Կամսարականներու սերունդը անհայտացած կերևի Հայաստանեն, այնուամենայնիվ, շատ հավանական է, որ 10-րդ դարուն հանկարծ, առանց դրականապես մեզ հայտնի փաստերու, ինքզինքը Պահլավունի համարող մի ցեղ, հիրավի կպատկաներ նախկին Պահլավունիներու հետ անբաժան կապված Կամսարականներու ցեղին: Որովհետև գեղարվեստական ճաշակով և շինարարական մեծագործությամբ միևնույն արդյունքն է տվեր ճարտարարապետության պատմության համար 10-րդ դարեն հետո, ինչ որ մինչև 7-րդ դարու վերջը գոյություն ունեցող Կամսարականներու ցեղը:

Մինչև 7-րդ դարու վերջերը կանգնված հիշատակարաններուն ամենեն հոյակապները և ամենեն շքեղները Կամսարականներուն կպատկանեն, ինչպես՝ Տեկոր, Մրեն, Թալինի երեք եկեղեցիները, Մաստարա, Նախիջևան: Իսկ 10-րդ դարեն սկսյալ Անիի և շրջակայքի մեջ պատկառելի թիվ մը կկազմեն նույն Կամսարականներու նախնիք հին Պահլավունիներու շառավիղ նոր Պահլավունիներու կանգնած հիշատակարանները, ինչպես՝ Անիի մեջ Ապուղամրենց ս. Գրիգոր, Փրկիչ, Առաքելոց եկեղեցի, Ծաղկոցաձորի մոտ Գրիգոր իշխանի կին տիկնանց տիկին Շուշիկի եկեղեցին (այժմ բոլորովին ավերակ), Անիեն դուրս՝ Բագնայր, Մարմաշեն: Այս տոհմը գրականության մեջ ոչ նվազ իր պատվավոր ներկայացուցիչներն ունի, որոնց մեջ գլխավոր աստղի պես կփայլեն Ներսես Շնորհալի, Գրիգոր Մագիստրոս, Գրիգոր Վկայասեր:

Պահլավունիներեն անմիջապես հետո կուգան Մամիկոնյանները, իբրև բազմարդյուն գեղարվեստասերներ: Սակայն այս տոհմը, ինչպես կտեսնվի պատմության ընթացքեն, ավելի զերազանց հատկություններով օժտված էր զինվորական ասպարեզին մեջ, եթե նվազ արդյունք ունեցեր է գեղարվեստական ասպարեզին մեջ, այնուամենայնիվ դարեր շարունակ իրեն սրով պահպանել է հայ ազգի գոյությունը:

Այս երկու տոհմերու՝ Կամսարականներու և Մամիկոնյաններու՝ նկարագրի որոշ համանմանության պատճառ կարելի է համարել 5-րդ դարեն (գուցե ավելի հառաջ ալ) միմյանց հետ շատ հաճախ խնամությամբ կապված լինելնին:

Ուրիշ տոհմերե ալ շատ կան մեզ հասած գեղարվեստական հիշատակարաններ, սակայն, նախ՝ չեն կարող մրցել այս երկու տոհմի տված հիշատակարաններու գեղարվեստականության և մեծագործությանց հետ, երկրորդ՝ հազիվ թե յուրաքանչյուր ցեղ յուր մի հատիկ գեղարվեստական ներկայացուցիչը թողեր է իր ետևը երկար դարերի տևողության մեջ:

Ներսեսի տոհմական ծագման մասին պատմագիրներ լուռ են, սակայն ի մանկութենե բյուզանդական արքունիքի մեջ սնվելը, կրթվելն ու զարգանալը, մինչև իսկ զինվորական աստիճաններու հասնելը, անոր ազատական ծագումը ենթադրել կուտան: Հասարակ ծագում ունեցող մեկը հազիվ թե կարենար այդքան մեծ ասպարեզ գտնել բյուզանդական արքունիքի մեջ և մինչև իսկ կայսեր հայրագիր լինելուն չափ բարձ և պատիվ գտներ: Իր բնիկ տայեցի լինելը մեծ հավանականություն կընծայե Մամիկոնյան տոհմին պատկանելուն:

Բայց, ինչ որ ալ լինի անոր տոհմական ծագումը, պետք է խոստովանել, որ Ներսես Հայաստանի մեջ բացառիկ մի խոշոր դեմք եղած է թե՛ քաղաքական և թե՛ եկեղեցական տեսակետով, նման այն հազվագյուտ դեմքերուն, որոնց մի քանի տարվան գործունեության բարերար ազդեցությունը դարեր վայելած է ժողովուրդը: Եթե Հայաստանը Ներսեսի նման մի խոշոր մարդեն մեծ օգուտներ չէ տեսած քաղաքական կամ գեղարվեստական տեսակետով, պատճառը միմիայն գահակալած օրեն մինչև մահը քաղաքական ամենադժբախտ կացությունն է: Դարձյալ իր նկարագրի մեծության և հանդուգն ձեռներեցության արդյունքն է Զվարթնոցի նման հրաշակերտ կոթողը, որ այնքան վտանգավոր և քաղաքական սոսկալի պայմաններու մեջ երևան բերավ, ինչպես կըսե Հովհան. կաթողիկոս՝ «ոչ ածեալ զմտաւ զկրթական արշաւանս հինիցն թշնամեաց՝ գեղեցիկ իմն մոլութեամբ դնէ ապա հիմն մեծ և հրաշալի բազմապայծառ յարկի տանն աստուծոյ»: (Յովհ. կաթ., էջ 83-84): Որչափ որ մեծ էր Ներսես Ա. իր բարեգործական մեծ հիմնարկություններով և բարեպաշտական հաստատություններով, նույնքան իրավունք ունի Ներսես Գ. Շինող և մեծ կոչվելու իր գեղարվեստական և շինարարական հսկա գործունեությունով: Եթե իր նախորդ անվանակիցը կկերակրեր, թշվառները կմխիթարեր, ամեն կողմ նյութական բարեգործություններով աղքատին ու կարոտին ֆիզիկապես կփրկեր, [Ներսես Գ-ի] գործունեությունը կոչված էր ժողովուրդին քաղաքակրթապես բարձր աստիճանի մը վրա դնելու և ազգերու շարքին մեջ պատվավոր տեղ մը տալու, թեև դժբախտ հանգամանքներ միշտ արգելք եղան անոր բոլոր բարձրագույն գաղափարներու իրագործման:



Նկ. 168. Զվարթնոցի արտաքին տեսքի առաջին հարկաբաժնի բոլորակ լուսամուտների քանդակազարդ պսակների նմուշներ

Ինձ համար բոլորովին պարզ է, որ Ներսես նախապես կազմած էր մի խոշոր ծրագիր Հայաստանի մեջ մշակութական մեկ հեղաշրջում հառաջ բերելու և գեղարվեստական նոր վերածնություն ստեղծելու համար: Կսպասեր հարմար առիթին, այդ առիթը կաթողիկոսական գահն էր. գահը ժառանգելեն հետո կմնար ձեռնարկելու անմիջապես, և ձեռնարկեց, առանց ինկատի ունենալու ժամանակի և չարագուշակ հեռանկարի սպառնալիքները: Ներսեսի նպատակը և ձգտումը չէր սահմանափակված միայն եկեղեցի և կաթողիկոսարան շինելու մեջ, այլ իր ծրագրած հոյակապ տաճարի և կա-

թողիկոսական տան շուրջը հիմնել մի նոր քաղաք, ըստ ամենայնի համապատասխան բյուզանդական կամ հռոմեական մեծ կեդրոններու մեջ երբեմն իր տեսած ու հիացած շուքով ու վայելչությամբ: Ահա միակ գաղտնիքը, որ Ներսեսին հանելով Դվինեն՝ դուրս բերավ Վաղարշապատի առապարը, ուր ազատ և ընդարձակ հող կար իր ուզածին պես ձևակերպելու իր նոր քաղաքին հատակագիծը: Մանավանդ որ այնտեղ կար արդեն հին «Նոր քաղաքը» և, ըստ օտար պատմագրաց՝ հին Կայնոպոլիսը, որն որ երկու դարու անբարեհաջող դեպքերու պատճառով անչքացել էր, պետք էր որ վերականգներ իր սեփական անունով: Թերևս այս նոր քաղաքի հիմնարկության և որոշ չափով հառաջ գնացած լինելուն հիշատակը պահված էր Թովմա Արծրունիի ժամանակ, որ նա Նոր քաղաք էր անվանում Զվարթնոցի շինված տեղը: Հովհաննես կաթողիկոսի տված տեղեկությունը շատ պարզ է այս մասին, որն որ շատեր սխալ են հասկացել «այլ եւ կարգեալ կացուցանէր ի նմա ամբոխութիւնս երդ ու մարդաց ըստ պայմանի քաղաքականաց» խոսքը (Յովհ. կաթ., էջ 88): Պարզապես կնշանակե քաղաքի նման շենցնել առապարը նոր բնակչություններով: Այս պատճառով ալ ամենեն առաջ մտածեր էր Քասաղ գետեն հատկապես ջուր բերել առանձնապես իր նոր արվարձանին բավականություն տալու համար: Եթե ոչ, ի՞նչ միտք ուներ Վաղարշապատեն երեք վերստ հեռավորության վրա ավազախիտ անապատին մեջ կանգնել այնպիսի հոյակապ կոթողներ, որ բովանդակ Հայաստանի մեջ հազվագյուտ էին, և մնալ կղզիացած՝ վանքի վանականներու նման, առանց շուրջը բնակություն ունենալու, այդ կդառնար մի վանք և ոչ թե կաթողիկոսական եկեղեցի կամ կաթողիկոսարան, մինչդեռ Ներսես բոլորովին հեռու էր այդ տեսակ մտադրությենե:

Տարակույս չկա, որ Ներսես եթե հնարավորություն ունենար Դվին մնալու և Դվինը բարեզարդելու, իր գործունեության կեդրոն կընտրեր այնտեղ, սակայն փոքր ի շատե մասնագիտական հասկացողություն ունեցողներու համար շատ դյուրըմբռնելի է, թե ո՞րչափ դժվար է դարերով առաջ հիմնված և զանազան անկանոնություններով աղճատված, մանավանդ վերջին ավերումներու պատճառավ բոլորովին ողորմելի ու անկարգ կերպարանք ստացած քաղաք մը կարգ ու կանոնի բերել, առանց առասպելական զոհողություններու և ժողովրդական տեղի և անտեղի տրտունջներու, եթե մինչև անգամ ինկատի չառնենք, որ նույնիսկ նորաշեն ս. Գրիգոր եկեղեցին ալ, որչափ որ շքեղ և գեղեցիկ շինված լիներ իր զուտ արևելյան և Հայաստանի համար սովորական դարձած ոճով, դարձյալ Ներսեսին հոգեկան բավականություն չպիտի պատճառեին, ուստի ամեն բան նոր ոճով, նոր ճաշակով կուզեր տեսնել, հետևաբար ազատ հողի վրա ինքը նոր պիտի ծրագրեր ձևակերպել իր հոյակապ տաճարը, կաթողիկոսարանը և անոր շուրջը «ամբոխութիւնս երդ ու մարդաց ըստ պայմանի քաղաքականաց» (Յովհ. կաթ., էջ 88), այսինքն՝ Նոր քաղաքը: Այն ժամանակ Ներսեսի համար շատ դժվար չէր լինելու Դվինեն, Վաղարշապատեն և ուրիշ զանազան տեղերե իր շուրջը հավաքել բնակչության ընտիր դաս մը:

Թե ո՞րչափ առաջ տարավ գործը այս տեսակետով, այդ չեմ կարող ըսել, միայն հիմնվելով Հովհ. կաթողիկոսի տեղեկության վրա, կհամոզվիմ, որ արդեն կատարված իրողություն էր, և Հովհ. կաթողիկոս իբրև կատարված իրողություն կներկայացնե, ըսելով թե՝ «այլ և կարգեալ կացուցանէր ի նմա ամբոխութիւնս երդ ու մարդաց ըստ պայմանի քաղաքականաց»: Այս տեսությունը թերևս շատերին անհավանական թվի, սակայն կհուսամ, որ ապագա պեղումները հաստատեն անոր ճշմարտությունը[1]:

Տաճարի շուրջը գտնված շինություններուն հյուրատուն կարծելու շփոթությունը անշուշտ առաջ եկեր է «երդ ու մարդաց» բառի մասին քննողներու անուշադրությենեն՝ դ տառը թ տառի տեղ ընդուներ են մտքի շփոթությունով:

Բացի այս անվիճելի հանգամանքը, ինկատի պետք է ունենալ, որ հյուրատուն անվանված մասին մեջ գոյություն ունեցող 7-8 սենյակները հազիվ բավականություն կարող էին տալ Ներսեսի կամ կաթողիկոսարանի սեփական պետքերուն: Որչափ որ ալ փարթամ կյանքե հեռու լիներ Ներսես, ինչպես եղեր է մի ժամանակ Պետրոս կաթողիկոսը իր 300 պաշտոնյաներով, այնուամենայնիվ, իր առօրյա գործառնության և պաշտոնության հազիվ բավականացնեին այդ շինությունները: Ի դեպ է նաև այստեղ հիշատակել եկեղեցվո մոտ ժամատուն և քահանայից բնակարան շինելու սկզբնավորությունը, ուստի նաև անհրաժեշտ էր այդ շենքի կաթողիկոսական դահլիճի հարկերը: «Երդ ու մարդ» բառը ավելի պարզ և անջատ գրված է Դվինի դ. ժողովի 9-րդ կանոնի մեջ՝ զերդ և մարդ բառերով («Հայոց եկեղ. իրավունքը», էջ 402):

Նույն ժամանակ Վաղարշապատն ալ ավելի ստորին աստիճանի վրա կգտնվեր, քան Դվինը: Կաթողիկեն՝ հինցած, նորոգություններով ու կարկատաններով աղճատված, գեղարվեստական ճաշակե միանգամայն զուրկ: Վերջին անգամ ինքն է եղեր, որ նորանոր փոփոխություններով ընդարձակեր և փոքր ինչ հաճելի երևույթ է տվեր: Քանդել և վերաշինել դժվար էր, եթե հնար իսկ լիներ միայն կաթուղիկեին համար, արդյոք շուրջը պիտի գտնե՞ր այնքան ընդարձակ հող, ուր Ներսեսի երևակայության թռիչքները ազատ ասպարեզ գտնեին սավառնելու:

Թեև Ներսեսի ժամանակ Վաղարշապատը ժողովրդի համար այնքան ալ նվիրականացած չէր իբրև էջմիածին կամ կաթողիկոսական նախաթոռ, որովհետև, եթե այդպես լիներ, մեր կաթողիկոսներ առանց խղճահարվելու դարերով չէին թափառեր էջմիածնեն Դվին, Դվինեն Աղթամար, Աղթամարեն Արգինա, Անի, Ծամնդավ, Հռոմկլա, Սիս, հուսկ հետո միայն Վաղարշապատ. նաև Ղազար Փարպեցիեն գիտենք, որ Վահան ինքը հիմանց նորոգեց կաթուղիկեն «իբրև զհնացեալ գործ նախնեաց», սակայն կաթողիկոսական աթոռը հաստատել տվավ Դվինի մեջ, այնուամենայնիվ Ներսես իր աթոռը փոխադրելով Վաղարշապատի առապարը, նա բոլորովին հասարակ տեղ չէր ընտրած. նույնպես ժողովրդական ավանդությամբ՝ ոչ միայն սրբագործված մի տեղ էր Տրդատի և Գրիգորի հանդիպմամբ, այլև այնտեղ, թերևս նույնիսկ այդ հիշատակին համար կանգնված էր մի եկեղեցի, մկրտարան և ուրիշ հարակից շինություններ, որոնք այսօր հայտնագործվեցան պեղումներով:

Եթե այն ժամանակվան ժողովրդի ավանդական սրբություններու հանդեպ մեղանչած լիներ Ներսես, անտարակույս պետք էր խստությամբ դատապարտեին զինքը և, ընդհանուր հալածանքի ենթարկելով՝ նույնիսկ կաթողիկոսական գահեն զրկեին: Սակայն այդ բանը ոչ միայն տեղի չի ունեցեր, այլև ընդհանուր գովասանքի է արժանացած իր մեծագործ հրաշապայծառ եկեղեցին: Ուրեմն, Ներսեսի շինած եկեղեցին և կաթողիկոսարանը ըստ ամենայնի ընդունելի պիտի լինեին ժողովրդի աչքին, եթե նա չմեղադրվեր դեպի քաղկեդոնականություն ունեցած հայտնի հակումով, որուն պատճառը թերևս ավելի հայրենասիրական էր, քան կրոնական համոզումը: Ներսեսի նման կատարյալ աշխարհաքաղաքացիի և զինվորական անձնավորության համար կրոնամոլության արատ վերագրել միանգամայն աններելի է, ամենայն հավանականությամբ Ներսես հունաց հետ կրոնական մերձեցման մեջ կտեսներ ազգին ֆիզիկական փրկությունը և այդ համոզման համար երկար տարիներ հալածվելով Թեոդորոս Ռշտունիի նման հզոր ախոյանե մը, ինքզինքը կամավոր աքսորի դատապարտեց վեց տարի՝ մինչև իր ախոյանի մահը: Զախող բախտը, կարծեք, հատկապես կհալածեր Ներսեսին, և անհնարին դառնալու չափ արգելքներ կելլեին իր ծրագրի լիակատար հաջողության դեմ: Թե ո՞ր աստիճան գործը առաջ գնացած էր՝ այդ հետո կտեսնենք, այնուամենայնիվ դեռ լիովին չվերջացած, 651 թվականին Թեոդորոս Ռշտունիի հունաց կայսեր դեմ ապստամբելը Հայաստանը այնքան փոթորկեց, որ մինչև իսկ Կոստանդ կայսրը 652 թվականին մեծ զորքով Հայաստան եկավ՝ հայությունը ջնջելու համար: Ներսես, ամեն ինչ մոռցած, փութաց ընդառաջել կայսեր, անոր ահեղասաստ բարկությունը մեղմելու և Հայաստանին սպառնացող սոսկալի աղետը կանխելու համար:

Ահա այս առթիվ մինչև իսկ զինվով չարաբաստիկ հունածես հաղորդության, որը եղավ իր անձին միակ արատն ու մեղադրելի պարագան:

Թեև հաջողեցավ Հայաստանը կոտորածե ազատել, սակայն, հակահունական ուժեղ կուսակցության ձեռքեն ազատվելու համար, կայսեր հետ հեռացավ Պոլիս, այնուհետև ալ վերադարձավ Տայք, իր հայրենի երկիրը 653 թվականին՝ կայսեր Հայաստան գալու հետևյալ տարին: Ներսեսի հեռանալովը գործը կանգ չառավ: Շինության շարունակությունը Ներսես հանձնեց իր սենեկապետ Անաստաս Ակոռեցիին (հետո իրեն հաջորդ կաթողիկոս), որը շարունակեց մինչև Ներսեսի վերադարձը՝ առանց սակայն վերջացնել կարենալու:

Ներսեսի այս հանձնարարությունը կարող էր ճիշտ լինել, սակայն երբեք հավատալի չէր առանձնապես տաճարի շինության նկատմամբ, որովհետև ոչ Ներսես կարող էր հավատալ Անաստասին այնքան փափկաճաշակ և խոր հմտություն պահանջող գործը և ոչ ալ Անաստաս կարող էր հանձն առնել իր գիտակցությենեն և կարողությենեն վեր մի գործի պատասխանատու ղեկավարությունը, նամանավանդ, եթե հավատանք Մովսես Կաղանկատվացու այն տեղեկությանը, թե կայսրը ճարտարապետին իր հետ միասին տարավ Կ. Պոլիս, այն ժամանակ

[1] *1931 թվին հին Վաղարշապատի սիստեմատիկ պեղումները կատարող հանձնաժողովը, որին մասնակցում էր նաև ճարտ. Թ. Թորամանյանը, պարզեց, որ Զվարթնոցի շրջապատում քաղաք գոյություն չի ունեցել: Բացի խաչիկ վարդապետի պեղած տաճարից և հարակից շինություններից, վանքը շրջապատող մեծ պարսպի ներսում, տաճարից մոտ 100 քայլ դեպի հարավ, երևան եկան միայն բնակելի փոքրիկ տներ: Այդ պարսպից դուրս, Զվարթնոցի և այժմյան Վաղարշապատ քաղաքի արանքում, բացվեցին միայն առաջին դարերին պատկանող գերեզմանոցներ: Սկզբում ճարտարապետ Թորամանյանը պնդում էր, որ ինքը նախօրոք տեսել է հետքեր Անասանթաղ բլրի վրա, բայց հենց իր ղեկավարությամբ կատարվող պեղումները հերքեցին նրա կարծիքը:*

**Կաղմող**

բոլորովին պարզ կլինի, որ Անաստաս չէր կարող այդ տեսակ մեկ գործ մը գլուխ հանել առանց ճարտարապետի:

Զվարթնոց տաճարը և շրջակա շինություններու մեծ մասը ոճի և ճաշակի տեսակետով անհունապես կտարբերին մեկզմեկե: Ով որ արվեստագիտական աչքով կդիտե՝ կտեսնե, որ տաճարի ամեն մի քարի վրա առանձնապես դրոշմված է Ներսեսի հատուկ ճաշակը և ճարտարապետական ու գեղարվեստական հմտությամբ օժտված ղեկավարի մը շնորհքը: Այդ շնորհքը կամ գիտությունը Զվարթնոցի ինքնուրույն ոճին վերաբերմամբ Անաստաս երբեք չէր կարող ունենալ, որովհետև Անաստասի մասին պատմագրական մեր տեղեկությունը անոր շատ սահմանափակ զարգացումը կապացուցանե, բացի այս, հավանական պատճառներ ալ կան, որ մինչև Ներսեսի հեռանալու ժամանակն արդեն եկեղեցին գրեթե ավարտված էր: Գուցե պակաս մնացած էին հատակումներ, գունավորումներ, արտաքին plate-forme-ի աստիճաններ և մոտակա շինություններու մասեր, որոնք կարելի էր հավատալ մի երկրորդ անձնավորության, որն որ փոքր ինչ փորձված էր շինարարական աշխատության մեջ: Ուրիշ հանգամանք մը ևս ինկատի ունենալ անհրաժեշտ է այս մասին: Ներսեսի բացակայության ժամանակ մի՞թե Անաստաս Ակոռեցին կարող էր Զվարթնոցի նման ահագին գումարներ պահանջող շենքին նյութական միջոցներ հայցնել, երբ ինկատի ունենանք, որ հայոց կաթողիկոսներու նյութական աղբյուրները ժողովուրդն էր:

Քաղաքական անցքերեն հայտնի էր, որ ժողովուրդը հյուծված էր, իսկ Ներսես Հեովեն բնավ չէր կարող ազդել ժողովրդին վրա, քանի որ նույնիսկ կաթողիկոսական հեղինակությունն ալ կորսված էր մասամբ: Իրաց այս վիճակին մեջ պետք է հավատալ, որ, բացի Ներսեսին այս տեսակ պատասխանատու գործի մը ղեկավարությունը Անաստասին չվստահելեն, նաև նյութական առատ աղբյուր ալ չէր կարող ունենալ:

Արդ, եկեղեցվո հիմնարկության թվական ընդունելով 643-644-են մինչև Ներսեսի հեռանալու 652 թվականի վերջը, մոտավորապես ինը տարի ժամանակամիջոց մը կմնա, որ հազիվ թե բավական կլիներ այդքան փափկաճաշակ և ճոխ զարդարանքներով բեռնավորված, նամանավանդ սովորական շինություններե բոլորովին տարբեր, տարողության նրբին հաշիվներով ձևակերպված պատասխանատու շենքի մը համար, ինկատի ունենալով նաև այն ժամանակվան շինարարական գործավարության արվեստական միջոցներու նախնականությունն ու դժվարությունները:

Սամուել Անեցու վկայութենեն որոշ կերպով կտեսնենք, որ Զվարթնոցի նմանությամբ Գագիկ Ա. Անիի մեջ շինել տված եկեղեցին, թեև նույն չափ, այնուամենայնիվ շատ հեռու անոր ճոխութենեն և արտակարգ վայելչություններեն, դարձյալ տևեր է հինգ տարի (ԶՂԵ). «Սուրբ Գրիգորն գերահռչակ՝ զոր նախ սկիզբն առնու ի շինել թագաւորն Գագիկ ի յԱնի, ի վերայ Ծաղկոցաձորոյն վայրօք՝ գաղափար առեալ զլուսազարդ զհրաշալի սուրբ Գրիգորն զշինեալն ի Ներսիսէ հայրապետէ. և կատարեաց զաստուածակերտ փարախն բանատոր Հօտին Քրիստոսի ի Ռ. ամի մարմնանալոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»[1]: Նույնիսկ չուներ հարակից շենքեր և ուրիշ բազմատեսակ հարամասունքներ, ինչպես՝ պարիսպներ, ջրի ճանապարհներ, հնձաններ, այգիներ ևն ևն: Ամենայն հավանականությամբ, բացի արվեստագիտական որոշ թերություններե, նաև այն հապճեպ շինության պատճառով էր, որ եկեղեցին հազիվ 10-11 տարի դիմանալեն հետո, վտանգվելով՝ անմիջապես ներքին մեծ մույթեր և շրջակամարներ շիներ են ՆԿԲ թվականին՝ ըստ սեղանի հարավային կողմին մույթին վրա գրված թերատ մի արձանագրության: Եթե, ըստ ոմանց, ենթադրենք, որ Զվարթնոց տաճարի շենքը ավելի ուշ ժամանակ սկված է, քան 647-48 թվականները, շատ մեծ հակասության մեջ կձգենք ինքզինքնիս:

Բացի վերև հիշված պատճառներեն, այսինքն Ներսեսի բացակայության շենքին կանոնավոր և նպատակահարմար ղեկավարության անկարելիությունը, մինչև Ներսեսի մահը եղած ժամանակամիջոցը բնավ բավական չէր այդքան ընդարձակ և հոյակապ գործը վերջացնելու, որովհետև 648-են մինչև Ներսեսի մահվան 660 թվականը կա 12 տարի ժամանակամիջոց. այդ ժամանակամիջոցեն զեղչելով Ներսեսի բացակայության 6 տարին, կմնա մաքուր միայն 6 տարի, որ անկարելի է Զվարթնոցի նման շենք մը իր բոլոր հարակից մասերով ամբողջացնելու: Այստեղ ստիպված եմ կրկնել, որ Ներսեսի բացակայության ժամանակ Անաստաս Ակոռեցիի՝ տաճարի գործին ղեկավարություն միանգամայն անընդունելի է: Ուստի պետք է իսկապես հիմնվենք Սեբեոսի և Հովհաննես կաթողիկոսի տեղեկություններուն վրա և ընդունենք, որ եկեղեցին հիմնարկված էր 644 թվականեն ոչ ուշ և վերջացած էր 652 թվականի վերջերին՝ 8 տարի ժամանակամիջոցի մը մեջ:

Ժամանակագրական այս տեսությամբ որոշ չափով ճշմարտության կփոխվի Մովսես Կաղանկատվացու մի առասպելական տեղեկությունը, թե Ներսես Կոստանդին կայսեր հրավիրեց նվիրման կամ օծման հանդեսին, որն որ վերին աստիճան հավանելով շենքին, շինողներուն հրամայեց իրենց հետ Պոլիս գնալ, որպեսզի իր պալատին մեջ ալ շինեն մի նույնանման եկեղեցի: (Մով. Կաղ., էջ 255):

Ճիշտ է, որ առաջին հայացքով մեծ հակասություն է Ներսեսի հրավիրանոք Կոստանդին կայսեր Հայաստան գալը՝ եկեղեցու օծման հանդեսին ներկա գտնվելու համար, եթե պահ մը ընդունենք, որ Ներսես Տայքեն վերադառնալեն հետո ավարտեց եկեղեցվո շինությունը 659 թվականեն հետո:

Ուրեմն, պետք էր, որ կայսրը 652 թվականին այցելութենեն զատ, երկրորդ անգամ այցելած լիներ Հայաստան, որ բնավ տեղի չի ունեցեր: Որովհետև, եթե պատահած լիներ այդպիսի պատմական մի խոշոր դեպք, անպայման մեր պատմագիրներեն մեկն ու մեկը հիշատակած պիտի լիներ, բացի այդ, նույն թվականներուն բյուզանդական արքունիքը վերին աստիճան տագնապալի դրության մեջ էր թե՛ ներքին խառնակություններու և թե՛ արտաքին սպառնացող մեծ վտանգի պատճառով: Բայց պահ մը ենթադրենք, որ Կոստանդին առանց քաղաքական խոշոր պատճառի Հայաստան եկավ, այն ժամանակ այդ գալուստը կլիներ ոչ թե Ներսեսի շինած եկեղեցին շնորհավորելու համար, այլ, ընդհակառակը, Ներսեսին և իր ժողովուրդին խստիվ պատժելու համար:

Որովհետև Ներսես Տայքեն վերադառնալեն հետո էր, որ նախարարներու հետ համաձայնելով՝ Հայաստանը Բյուզանդական կայսրության հպատակութենե հանելով՝ արաբացոց իշխանության տակ դրավ:

Տաճարի հիմնարկության և վերջավորության մասին եղած սխալ ժամանակագրության հետևանքով է, որ Մովսեսի այս տեղեկությունը փոքր ինչ առասպելական երեույթ ունի: Եթե Սեբեոսի տեղեկության վրա հիմնվելով՝ Զվարթնոցի սկզբնավորության ժամանակը ճանչնանք 644 թվականը, ինչպես վերև հիշատակեցինք, մինչև կայսեր Հայաստան գալու 652 թվականը եկեղեցին ավարտված կլիներ ութ տարվան շրջանին մեջ: Այս մասին Հովհաննես կաթողիկոսի խոսքը շատ պարզ է՝ «Ներսէս, – վերադարձեն հետո, – պարապ անձին գտեալ, զարտաքոյս հրաշակերտ եկեղեցւոյն զոր իւր իսկ էր շինեալ պատուար պարապով փակեալ ամրացուցանէր»: Պատմագրի հատկապես այս շեշտված խոսքը ցույց կուտա, որ եկեղեցին ավարտված էր նախքան Ներսեսի մեկնելը: Ուստի, իրաց այս վիճակին մեջ բնավ հակասական բան չկա Ներսեսին կայսրը եկեղեցվո օծման հրավիրած լինելու տեղեկության մեջ:

Մովսես Կաղանկատվացին հատկապես չէ գրած, որ կայսրը Պոլսեն հրավիրվեցավ, այլ խոսքը պարզ հրավերի մը վրա է, որ անշուշտ տեղի ունեցավ Դվինեն դեպի Վաղարշապատի առապարը: Եթե ճիշտ էր, որ «Ներսէս հայրապէտ էր նորին Կոստանդնի և գանձիւք նորա շինեաց զբազմապայծառ փարախն բանատոր Հօտին» (էջ 254), այն ժամանակ թե՛ կայսրը ինքնին պիտի հետաքրքրվեր այնչափ մեծ հռչակ հանած եկեղեցին տեսնելու և թե՛ Ներսեսին ալ պարտքն էր հրավիրել: Նույնիսկ Կոնստանդինի ծախքով շինված լինելն ալ առասպել չի կարելի նկատել, երբ ինկատի ունենանք Ներսեսի կաթողիկոսության գահ նստած օրեն հայ ժողովրդի տնտեսական տխուր վիճակը: Ներսես քաղաքական և տնտեսական այդ դաժան պայմաններուն մեջ դժվար թե կարողանար սեփական ժողովրդի միջոցներով այդքան մեծ եկեղեցի մը շինել, եթե թագավորական աջակցությունը որոշ չափով չվայելեր: Եվ եթե ընդունենք, որ իսկապես Ներսես հայրապետը էր կայսեր, այնուհետև երբեք զարմանալի չի լինիր, որ կայսրը տար նաև եկեղեցվո բոլոր շինության ծախքը՝ Հայաստանի միանգամայն նյութապես և տնտեսապես քայքայված ժամանակ: Այս եկեղեցիի համար եղած ամբողջ ծախքը, կարծեմ, աննշան չափով իսկ չէր կարող ծանրություն լինել Բյուզանդական կայսրության գանձարանին վրա:

Համենայն դեպս Մովսես Կաղանկատվացու տեղեկությունը, որ անշուշտ հիմնված է մեզ անծանոթ ժամանակակից մի ուրիշ աղբյուրի վրա, կարող է միանգամայն ճիշտ լինել, և մենք կարող ենք հավատալ, որ կայսրը եկեղեցին տեսավ ամբողջացած 652 թվականին իր Հայաստան այցելության ժամանակ. նա հիացավ ու վարպետներուն ալ տարավ միասին, ինչպես և Ներսեսին:

Ուրեմն, այս տեսությամբ կարող ենք վճռական կերպով ըսել, որ Զվարթնոց եկեղեցին հիմնարկված էր 644 թվականին և վերջացած 652 թվականին: Թերի կմնային շրջակա շինություններու մասեր, որոնք շարունակվեցան թե՛ Ներսեսի բացակայության ժամանակ և թե՛ Ներսեսի վերադարձեն հետո, մինչև մահը:

Թե ի՞նչ մասեր էին Ներսեսի բացակայության կամ վերադարձեն հետո շինվածները, այդ ալ պարզ է թե՛ Հովհ. կաթողիկոսի տեղեկութենեն և թե՛ հետզհետե պիտի պարզենք իր կարգին, երբ կխոսենք շինարարական ճյուղին վրա՝ պարզելով յուրաքանչյուր շինված մասի առանձին ժամանակը, արվեստի տված ապացույցներու վրա հիմնված:

[1] Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց. Վաղարշապատ, 1893 թ., էջ 104:

## ԳԼՈՒԽ Ե.

# ԶՎԱՐԹՆՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՔԱՐԵՐԻ ՆՇԱՆՆԵՐԸ[1]

*Վաղուց է, որ Զվարթնոցի քարերի վրա նկատված են մի քանի նշաններ, որոնք ոչ մասնագետ շրջաններում երկար ժամանակ զանազան թյուր մեկնաբանությունների տեղիք են տվել:*

*Հարկ ենք համարում մի քանի բացատրություն տալ վերոհիշյալ նշանների մասին:*

*Այս հոդվածովս ես չեմ խոսելու այն բոլոր պատմական և գեղարվեստական խեղաթյուրումների մասին, որոնք լայն ծավալ են ստացել և շատերն էլ համոզվել են իբրև ճշմարտություն, այդ ամենը պետք է որ ուղղվեն և ճշտվեն, քանի որ այդ ըստ քմաց մեկնված՝ քարերի վրա խազված նշաններն ունին իրենց հետաքրքրական պատմությունը և գիտականորեն պարզված նշանակությունները:*

*Այդ նշանների իմաստի և գոյության պատճառների վրա շատ վաղ ժամանակ ուշադրություն են դարձրել Եվրոպական հայտնի գիտնականներ՝ Հայաստանից դուրս ուրիշ արևելյան երկրների մեջ՝ ինչպես Պարսկաստան, Միջագետք և մասնավորապես բոլոր բյուզանդական երկրների մեջ:*

*Հայաստանի մեջ ևս միայն Զվարթնոցը չէ, որի քարերի վրա այդ նշանները կան, այլ 7-15-րդ դարերում կանգնված շենքերի մեջ հաճախ տեսնում ենք այդ նշանները զանազան ձևերով և դարաշրջաններին հատուկ փոփոխություններով:*

*Հին շենքերի վրա այս նշաններին ուշադրություն դարձնողներից ինձ հայտնի են Վոգյուե և Մ. Դիեուլաֆուա. առաջինը՝ ամբողջ Սիրիան ճանապարհորդելով՝ իր գրած երկհատոր մեծ աշխատությամբ, իսկ երկրորդը՝ շրջելով ամբողջ Պարսկաստանը՝ իր գրած հինգ հատոր հոյակապ աշխատությամբ: Ըստ այս գիտնականների, իրենք առաջինը չեն այս նշանների վրա ուշադրություն դարձնողը, իրենց տված նմուշներից զատ, կան ուրիշ բազմաթիվ նշաններ, արևելյան երկիրների կանգուն կամ կիսականգուն հին հուշարձանների քարերի վրա և տալիս են հետևյալ բացատրությունը:*

*Ի հնումն, շենքի ճարտարապետները քարտաշների վերաբերյալ գործերը զանազան մասերի բաժանելով, յուրաքանչյուր մասը հանձնում էին առանձին կարող վարպետների, որոնց պարտականությունն էր թե՛ նույն մասի պատը շինել և թե՛ քարերը տաշելով՝ տեղը շարել. այս միջոցին յուրաքանչյուր վարպետ իր շինած պատի վրա տաշած քարերի նշանները փորագրելուց հետո շարում էր պատի մեջ: Գործն ամբողջանալուց հետո, չափում էին յուրաքանչյուր հանձնառու վարպետի շինած պատերը, հաշվում էին նրանց նշաններով տաշված քարերը և ըստ այնմ տալիս ընդհանուր աշխատավարձը:*

*Վոգյուե, իր աշխատության մեջ ցույց տալով սիրիական երկրներում քարտաշ և որմնադիր վարպետների սովորական եղող նշանները՝ գրում է, թե՝ «Բազմաթիվ քարերի վրա փորագրված են տառեր, որոնք անպայման բանվորների նշաններն են, ինչպես կտեսնվեն այդ օրինակները միջին դարու հուշարձանների մեծ մասի վրա: Այդ նշանները փոխառնված են երեք զանազան այբուբեններից՝ հունարենից, նաբադերենից և սաբեականից» (Le C^te de Vogüé. Syrie Centrale. Tome premier, page 65):*

*Պարսկաստանում կատարած ճանապարհորդության ժամանակ Դիեուլաֆուայի հավաքած նշանների մասին նա գրում է (Թախտը Մադեր Սյուլեյման անունով շենքի մասին խոսելիս). «Թախտի անկատար մնացած պատերի մեծ մասի երեսին նշանագրեր են գտնվում, որոնք ոչ մի այբուբենի չեն պատկանում: Այդ կոպիտ ձևով խորափորված նշանները անշուշտ թողել են քարտաշ բանվորները՝ իրենց հաշիվների կարգադրության իբրև հիմք ծառայեցնելու համար: Էկբատանից եկող աղյուսների և Բիսուտունի ժայռերի վրա ևս տեսնվում են թախտի նշաններին բոլորովին նմանները, որոնք ապացուցանում են, որ թախտի մեջ աշխատող բանվորները պարսիկ կամ մեդացիներ էին» (L'Art antique de la Perse. Par Marcel Dieulafoy. Première partie, page 11):*

*Հեղինակը, այդ նշանագրերի մասին խոսելիս, իր մի ծանոթության մեջ գրում է հետևյալը.* A. Choisy (L'art de batir chez les Byzantins, էջ 171) *հայտնում է բազմաթիվ բանվորական նշաններ՝ հունական, հոնիական և բյուզանդական հուշարձանների վրա: Քարերի վրա նշաններ դնելու սովորությունը, որոնց հետքը ես գտնում եմ Պարսկաստանի մեջ, կարծում եմ, որ հունական ծագում ունի, այդ սովորությունը տարածվեց Միջերկրականի կողմերը. բայց երբեք գործածական չեղավ Արևմուտքի մեջ: Այս նշանները մեզ ցույց են տալիս մասնավոր հաշվապահության մի կերպը՝ հելլենական ցեղերի հակումներին և սովորություններին ներդաշնակ. հիրավի, թվում է, թե հույն բանվորը վճարվում էր ընդհանուր սակագնով* (á la tache) *և ոչ թե օրավարձով, ինչպես ընդհակառակն էին Գալլո-բոմեն բանվորները»:*

*Զվարթնոցի քարերի վրա միայն հինգթևյան աստղերը չեն, որ գոյություն ունեն. կան նաև ուրիշ բազմաթիվ նշանագրեր, որոնք հավաքել եմ հնարավոր եղածին չափ: Հավանական է, որ Զվարթնոցի նման մի մեծ շենքի վրա գտնվեին ավելի նշանագրեր, քան ես հավաքել եմ, սակայն, քանի որ հարյուրավոր տարիներ այդ ավերակը իբրև քարահանք է ծառայել շրջակա գյուղերին, նույնիսկ էջմիածնին, բնականաբար, անհայտացած քարերի հետ պիտի անհետանային նաև այդ նշանագրերը:*

*Պատերի մեջ տակավին հաստատուն մնացած քարերի վրա գտնված նշանագրերն անվրեպ կերպով պարզում են, թե ո՞րչափ որմնադիր և քարտաշ վարպետներ են աշխատել այնտեղ, շինարարական քանի՞ մասերի էր բաժանված ամբողջ շենքը, և ո՞ր նշաններն ունեցող վարպետները ի՞նչ բացառիկ հմտություններ ունեին քարտաշության և որմնահյուսության արհեստի մեջ: Հինգ թևով աստղ (№ 2) նշան ունեցող վարպետը ճարտար և հմուտ է եղած կոր և գոգավոր քարեր տաշելու և շարելու մեջ, որին հանձնվել է բացառապես չորս գմբեթակիր մեծ մույթերի հետևի կիսաբոլորակ խորշերի և տաճարի արտաքին պատերի ներքին երեսների բոլոր կոր և գոգավոր քարերը տաշել և իրենց տեղը շարել: Նմանապես № 6 նշան ունեցող վարպետը տաշել և շարել է տաճարի ներսի երեսի վրա եղող որմնասյուները իրենց խարիսխ և խոյակներով, որոնց վրա հաճախ փորված են այս նշանները: Վերջապես, դեռ չքանդված մասերի վրա եղած նշանները պարզ ցույց են տալիս աշխատանքի բաժանումները. իսկ պատերից անջատված և կուտակված քարերի վրա եղած նշանները մասնագիտորեն քննելով, ամենևին դժվար չէ որոշել, թե շենքի ո՞ր մասերին էին պատկանում նույն քարերը: Զվարթնոցի ավերակները այցելողները, եթե հետաքնին աչքով նայեն, ամեն քայլափոխում կտեսնեն քարերի վրա խազված նշանները, բայց միայն մասնագետին հասկանալի է, թե որ մասին են պատկանում սույն քարերը:*

*Վերև ափիթ ունեցա հայտնելու, որ Հայաստանի միջնադարյան շենքերի քարերի վրա բանվորական նշաններ փորելը սովորական էր դարձած ամեն կողմ: Զվարթնոցի քարերի վրա եղած նշանների ճիշտ նման բանվորական նշանները գրեթե գոյություն ունին 7-րդ դարում կառուցված բոլոր շենքերի վրա: Թալինի՝ Ներսեհ Կամսարականի շինած փոքր եկեղեցու (մեծ եկեղեցին դեռ քննված չէ այս տեսակետով) շենքի (այժմ հնագիտական թանգարան) քարերը կրում են Զվարթնոցի նշաններից № 5, 6, 7, 12, 19, 26, 27, 28: Երբեմն նշանների փորագրության կերպը և չափերն այնքան նման են Զվարթնոցի նշաններին, որ մարդ իրավամբ հակվում է հավատալ, թե ոչ միայն ժամանակակից են այդ շենքերը, այլև նույն շենքերի մեջ աշխատել են միևնույն վարպետները, միայն քարտաշության տարբեր ճյուղի աշխատանքներով: Զվարթնոցում № 12 նշանն ունեցող վարպետը փոխարինել է Թալինի մեջ Զվարթնոցի № 2 նշան ունեցող վարպետին: Այս վարպետը գրեթե ամբողջովին շինել է շենքի հյուսիսային կողմին կից արտաքին աբիդի թե՛ աղեղները և թե՛ գոգավոր քարերը, իսկ Աղյամանում միևնույն № 12 նշան ունեցողն է, որ շինել է տաճարի բոլոր աստիճանները և արևմտյան ճակատի ստորին երկու շարք քարերը:*

*Զվարթնոցի № 6 նշան ունեցող վարպետն է, որ անպայման աշխատել է Հաջիղարայի հնագույն եկեղեցու շինության մեջ, որովհետև նույն նշանը փորված է կիսավեր շենքի այժմ կանգուն արևելյան պատի մի քանի քարերի, նաև հյուսիսային կողմի աստիճանների վերև՝ ստորին շարքի վրա:*

*Թալինի թանգարան-եկեղեցու շինության ժամանակը հայտնի է իր վրայի արձանագրությունից (7-րդ դար), սակայն Աղյամանի և Հաջիղարայի եկեղեցիների շինության ժամանակը հայտնի չէ. միայն ճարտարապետական ոճն ուսումնասիրելով՝ գտնում ենք, որ նրանք ևս պատկանում են 7-րդ դարուն: Այս երկու տաճարների մեջ աշխատող վարպետները (№ 6 և № 12), անտարակույս, ավելի ուշ ժամանակ են գործել Զվարթնոցում, որովհետև 7-րդ դարի ճարտարապետական ոճը նույն դարի կեսից հետո ենթարկվել է մի նոր վերածնության, որուն առաջին օրինակն եմ համարում Զվարթնոցը: Իսկ Հաջիղարան, Աղյամանը և Թալինի փոքր եկեղեցին միանգամայն պատկանում են նախքան վերածնության հին ոճին:*

*Բյուրականի մոտ, մի ձորում (եթե չեմ սխալվում՝ ձորի անունն է Ճլվստիկ), մի փոքր եկեղեցու ավերակի մեջ տեսել եմ միայն № 12 և № 20 նշանները թե՛ պատի և թե՛ քանդված քարերի վրա: Այստեղ անպայման գտնվում են ուրիշ նշաններ ևս, սակայն շենքը այնպես է քարուքանդ եղած և քարերը միմյանց վրա թափված, որ անհնար է գտնել ուրիշ նշաններ՝ առանց հատկապես խուզարկություն և պեղումներ կատարելու:*

---

[1] *Արտատպում ենք Գիտության և Արվեստի Ինստիտուտի № 2 Տեղեկագրից (էջ 3-7), առանց պարսկական և ասորական շենքերի նշանները զետեղելու:*

*Կազմող*

Հայաստանի մեջ, 7-րդ դարից հետո, գրեթե անհնար է գտնել շենքեր, որոնք պատկանեն 8-րդ և 9-րդ դարերին. այս երկու դարերի մեջ շինարարական աշխատանք կատարված ամենևին չի երևում. եթե մեկ-երկու հատ էլ գտնվեն բովանդակ Հայաստանի մեջ, պետք է որ խիստ հազվադեպ բացառություն համարվի: 10-րդ դարի կեսից հետո է, որ շինարարական այդ երկու դար անկումից հետո, սկսում են նորանոր շենքեր կառուցվել Հայաստանի մեջ՝ բոլորովին նոր վերածնության և այս շինարարական թափը տևում է մինչև 14-րդ և 15-րդ դարերը:

Ահա այս նոր վերածնության շրջանին մեջ կառուցված շենքերի մեջ ևս տեսնվում են պատերի վրա քարտաշ վարպետների նշաններ՝ գրեթե բոլորովին տարբեր ձևի նշաններով: Հազիվ կան 2–3 նշաններ, որոնք 7-րդ դարու նշանները հիշեցնեն: Ուստի, հայտնի երևում է, որ վարպետների կողմից քարերի վրա նշաններ դրվելու սովորությունը պահվել է մինչև 15-րդ դար: Այս վերջին վերածնության հատուկ նշանները բազմաթիվ են Անիի և Շիրակի հնությունների մեջ, նաև ժամանակակից այլ շինությունների վրա, որոնք կառուցված են Արագածի լանջերին և Երասխաձորի մեջ: Բայց այս մասին հանգամանորեն կանդրադառնամ ուրիշ անգամ:

*
* *

Սույն[1] նշաններու մասին գուցե անտեղի էր մանրամասն քննությունը և նկարագրությունը, սակայն Խ. Ծ. Վ. Հինգթեյան (2-րդ նշան) աստղերու եբրայական խորհրդանշան կարծելու թյուրիմացությունը և այդ մասին որոշ մարդկանց մեջ գոյացած համոզման թյուր լինելն ավելի գործնական կերպով հերքած լինելու համար, հարկ սեպեցի մանրամասն արձանագրելու:

2. ա) Զորս արծվախոյակ սյուներու հանդիպակաց մեծ մույթերու կիսաբոլորակ խորշերուն վրա:

բ) Հարավ-արևմտյան կողմը արևմտյան դռնեն դեպի հարավ-արևմուտք ձգվող պատի ներսի 4-րդ և 5-րդ որմնասյուներու մեջտեղ՝ ստորին շարքի քարի վրա:

ԾԱՆ. – Ինչպես մույթերու վրայի կիսաբոլորակ խորշի քարերը, նույնպես և տաճարի արտաքին պատի ներսի երեսի քարերն ալ զոգավոր տաշված են: Անշուշտ՝ այս նշանը դնող վարպետը հատկապես մասնագետ էր քարը զոգավոր տաշելու մեջ, ինչպես կվկայեն այժմ մնացորդները, որոնք վերին աստիճանի խնամքով և ճշտությամբ տաշված ու շարված են:

գ) Արևելյան կողմն արտաքին պատի ներսի երեսին վրա 7-րդ, 8-րդ որմնասյուներու մեջտեղ՝ ստորին շարքի քարերուն վրա:

դ) Տաճարի արևմտյան դռան հանդեպ՝ նեղ անցքի մեջ (որը կառաջնորդե դեպի արևմտյան դուռը) դրված զոգավոր տաշված մի քանի քարերու վրա:

3. Տաճարի արևմտյան կողմը դրսեն դեպի արևմտյան դուռն առաջնորդող նեղ անցքի պատերին, դրված քարերեն մեկուն վրա:

4. ա) Ավագ խորանի կիսաբոլորակի գետնափորի մասի կիսաբոլորակ պատի վերևի շարքի չորս զանազան քարերու վրա:

բ) Հարավ-արևմտյան գմբեթակիր մեծ մույթի արևմտյան ճակատը corniche-ով խարիսխի վրա:

5. Հարավ-արևելյան գմբեթակիր մեծ մույթի հյուսիսային կողմի ճակատի խարիսխի corniche-են ցած երկու մեծ քարերու վրա:



**Նկ. 169. Զվարթնոցի վարպետների նշանները քարերի վրա**

6. ա) Արտաքին մեծ բոլորակի արևելյան պատի ներսի երեսը քառակուսի մասը մտնելու դեպի հյուսիսային կողմը բացված դռան բարավորի ներքին քարի վրա:

բ) Հյուսիս-արևելյան գմբեթակիր մեծ մույթի վրա արծվախոյակ սյունի հանդիպակաց կիսաբոլորակ խորշի մեջ:

գ) Հին եկեղեցվո abside-ի դրսի կողմը հյուսիսային ճակատին մի քարի վրա՝ երկրորդ շարքի մեջ:

7. Ավագ խորանի հյուսիս-արևելյան մույթի մոտեն դեպի գետնափոր իջնելու սանդուխին մոտ, մույթի անկյունաքարի վրա:

8. Ավագ խորանի գետնափոր մասի կիսաբոլորակ պատի վրա, ստորին շարքերու մեջ՝ չորս զանազան քարերու վրա:

[1] Այս ցուցակը տպագրում ենք հեղինակի սեպագիր օրինակից, որի մեջ ցույց չեն տրված № № 1, 20, 24–28 նշանների գտնված տեղերը:

Կազմող



9. Ավագ խորանի գետնահարկի կիսաբոլորակ պատի շարքերու մեջ՝ վեց զանազան քարերու վրա:

ԾԱՆ. – Երբեմն այս նշանին ընկերացած են միևնույն քարի վրա 14–15 նշանները:

10. Ավագ խորանի գետնահարկի կիսաբոլորակ պատի ներքևի շարքին մեջ՝ մեկ օրինակ:

11. Ավագ խորանի գետնափոր մասի կիսաբոլորակ պատի շարքերուն մեջ՝ երեք զանազան քարերու վրա:

12. Ավագ խորանի գետնափոր մասի կիսաբոլորակ պատի շարքերուն մեջ՝ երկու զանազան քարերու վրա:

13. ա) Ավագ խորանի գետնափոր մասի կիսաբոլորակ պատի շարքերուն մեջ՝ քսաներկու քարերու վրա:

բ) Հյուսիսային կողմի արտաքին աստիճաններու ստորին շարքին վրա:

գ) Տաճարի արտաքին մեծ բոլորակ պատի արևելյան կողմը քառակուսի մասը մտնելու, դեպի հյուսիսային կողմը բացված դրան ճակատի քարին վրա:

14. Ավագ խորանի գետնափոր մասի բոլորակ պատի շարքերուն մեջ՝ երկու օրինակ:

15. ա) Ավագ խորանի կիսաբոլորակի գետնից բարձր կիսաբոլորակ շարված քարերու շարքին մեջ՝ մեկ օրինակ:

բ) Հարավ-արևելյան գմբեթակիր մեծ մույթին հարավային ճակատին վրա՝ աստիճանին կից մեծ քարի վրա:

գ) Տաճարի արտաքին բոլորակի ներսի երեսին՝ հարավ-արևմտյան դռնեն դեպի աջ որմնասյան վրա:

16. Ավագ խորանի գետնափոր կիսաբոլորակի պատին՝ մեկ օրինակ:

17, Ավագ խորանի գետնափոր մասի կիսաբոլորակ պատի շարքերուն մեջ՝ երեք զանազան քարերու վրա:

18. ա) Ավագ խորանին կից հարավ-արևելյան գմբեթակիր մեծ մույթի արևմտյան ճակատին խարիսխի corniche-են վեր, առաջին շարքեն մնացորդ միակ քարին վրա:

բ) Հարավ-արևելյան գմբեթակիր մեծ մույթի դեպի հարավ նայող աստիճանին ձախ կողմը, երկրորդ քարի վրա:

գ) Հարավ-արևմտյան գմբեթակիր մեծ մույթի արևմուտք նայող ճակատին corniche-են վերև կոտրված քարին վրա:

19. Տաճարի արտաքին մեծ բոլորակ պատի ներսի երեսին՝ արտաքին հյուսիս-արևմտյան դռնեն դեպի հարավ ձգվող պատի երրորդ որմնասյան վրա:

21. ա) Տաճարի արտաքին բոլորակի ներսի երեսին՝ արևելյան քառակուսի մասը մտնելու դեպի հարավ բացված դռան մոտ, առաջին որմնասյան վրա:

բ) Տաճարի արտաքին մեծ բոլորակ պատի ներսի երեսին, հյուսիսային դռնեն դեպի արևելք ձգվող 6-րդ և 7-րդ աստիճաններու մեջտեղ, երկրորդ շարքի վրա:

գ) Տաճարի արտաքին մեծ բոլորակ ներսի երեսին՝ քառակուսի մասը մտնելու դեպի հյուսիսի կողմը բացված դռան առաջին և երկրորդ որմնասյուներու մեջտեղ, երկրորդ շարքի վրա:

դ) Տաճարի արտաքին բոլորակ պատի հարավային կողմը, հարավ-արևմտյան դռնեն դեպի արևելք երկարող պատի երկրորդ և երրորդ որմնասյուներու մեջտեղ:

ե) Տաճարի արտաքին մեծ բոլորակի արևելյան կողմը, ներսի երեսին քառակուսի մասը մտնելու դեպի հարավ բացված դռան մոտեն դեպի հարավ ձգվող պատի 7-րդ, 8-րդ որմնասյանց կից միակ մաքուր մնացած երկրորդ շարքի քարին վրա:

զ) Տաճարի արևմտյան դռան հանդեպ դեպի տաճար առաջնորդող նեղ անցքի վրա շարված պատի քարերեն մեկուն վրա:

22. Տաճարի արևմտյան դռան հանդեպ դեպի տաճար տանող նեղ անցքի պատին վրա շարված մի կամարաքարի վրա:

23. ա) Հյուսիսային կողմի արտաքին երկրորդ աստիճանի վրա:

բ) Տաճարի հարավ-արևմտյան դռնեն ներս արտաքին բոլորակ պատի ներսի դռնեն դեպի արևմուտք ձգվող պատի երկրորդ որմնասյան խարիսխի վրա:

## Ե

## [ԳԱԳԿԱՇԵՆ Ս. ԳՐԻԳՈՐ]

Եթե քննենք միայն Գագկաշեն ս. Գրիգորի պեղումները, կտեսնենք, թե ինչ հետաքրքրական նոր աշխարհ մը կպարզվի մեր աչքին: Պահ մը կներկայանա մեր առջև հարուստ ու շեն Անին՝ իր մրցունի նման վխտացող ժողովուրդի հոծ բազմությամբ, և անոնց մեջեն զատված բազմաթիվ արհեստավորներ, հավաքված այդ արքայաշեն մեծագործության շուրջը, յուրաքանչյուր [ոք] կշանա ցույց տալ իր ճարտարությունն ու հնարամտությունը. ասոնց ամենուն գործերեն ալ նմուշներ պահեր է սպառող ժամանակը անոր վիթխարի փլատակին ներքև:

Արձանագործը չիներ է Գագիկ Ա-ի արձանը ըստ ընկալյալ սովորության, եկեղեցիի պատին վրա գետեղելու համար ձեռքը բռնած չինության քարաշեն մանրանկարը:

Նկ. 170. Բագրատունի Գագիկ Ա.-ի արձանը՝ գտնված Անիում

Այս արձանը, թեև ոչ մեծ արվեստագետի գործ, բայց իր տեսակի մեջ միակը կարելի է համարել ամբողջ Հայաստանի և Կովկասի քրիստոնեական շրջանի մեջ, թե՛ իր մեծությամբ և թե՛ մինչև այժմ տեսնված ողորմելի գծերով մանր-մունր արձաններու հետ բաղդատելով:

Արվեստագետը Գագիկի արձանին վրա ամեն ջանք ի գործ դրած է թե՛ դեմքին և թե՛ հագուստներուն ամենափոքր գծերն իսկ բնականին մոտեցնելու, ահա այդ երևցող ճիգն է, որ տեսնողի վրա մեծ տպավորություն կթողու. մանր դետալներե բոլորովին զուրկ է, բայց ընդհանուր կազմության մեջ ոչ մի անպատշաճ համաչափություն չերևիր վրան. և, հակառակ տեղական քարին արձանագործության համար ունեցած անհարմարության, բավական մաքուր տաշված և հղկված է:

Մեզ համար բոլորովին անծանոթ է հին հայոց տարազը, թերևս նոր պեղումները տան այդ ցանկալի նորությունը - այս արձանով գոնե ճշտիվ հասկցանք Բագրատունի թագավորներու ոմանց տարազը. հավանական է, որ մյուսներն ալ շատ տարբեր չէին Գագիկի տարազեն, բացի գլխարկի ձևեն:

Արձանին բարձրությունը կհասնի գրեթե 1,20 մետրի, գլուխը դրած է Բաղդադի խալիֆայական պատվանշան՝ արքայական սպիտակ չալման. երկար սև մազերը կհասնին գրեթե մինչև ուսերը՝ խուրձ-խուրձ իջած և դեպի վեր ոլորված՝ հին սասանյան ձևով. դեմքը լայն, աչքերը խոշոր, թավ հոնքերով, սև բեխերը ոլորված դեպի վեր, մասամբ խառնված են թավամազ մորուքի հետ, որն որ կծածկե կուրծքին կեսեն ավելին: Կոնակը հագած է արքայական կարմիր գույնով վերարկու մը, որուն լայն օձիքը ծալված է ուսերուն վրա, վերարկուին ետևի քղանցքը ճեղքված մինչև մեջքին մոտ. համաչափորեն եռանկյունաձև դարձած է դուրս՝ պարեգոտին ստորին քղանցքը երևան հանելով: Կուրծքեն վար ալ միայն մեկ տեղ կոճկված ունի, մյուս տեղերը թողված են ազատ, որպեսզի երևա վիզեն կախված խաչը և նմանապես կարմիր գույնով մինչև ոտքերը հասնող պարեգոտը: Առանց կուրծքը կախված խաչին անկարելի պիտի ըլլար այս քրիստոնյա թագավորը զանազանել մահմեդական վեհապետե մը:

Քանդակագործը, իր ճարտարությամբ ճարտարապետին հսկա գաղափարը պճնազարդելու համար, անխնա թափեր է այնտեղ գեղեցկատեսիլ քանդակներու մի ճոխ այլազանություն:

Նկ. 171. Գագիկի տաճարի արտաքին զույգ որմնասյուներից մեկը

Եկեղեցիին արտաքին պատը դրսի կողմեն շրջապատող երեսուն և վեց կամարները զարդարեր է ոլորուն ցողուններով, որոնց վրա քնքույշ կոթերով միացած են արևելյան ոճով վարդաձև ծաղիկներ, և համաչափորեն շարված ցողունի ճկումներեն հաջորդաբար գոյացող արձակ տեղերուն վրա:

Սույն կամարները կրող խոյակները քանդակեր է հոնիական ըսված խոյակներու նման, որոնց վրա, կարծես, ցույց տալ ուզեր է խոյողի ծագման նախնական վիճակեն սկսյալ մինչև կատարյալ վայելչության հասնելուն բոլոր աստիճանական զարգացումները:

Մերթ քանդակեր է խոյակին ճակատը կարդավ, երբեքեն մինչև չորս հատ պարզ բոլորակներ մինչև կեդրոնն աստիճանաբար փոքրացող մեջ-մեջի շրջանակներով, մերթ այդ բոլորակները իրարու միացուցեր է արտաքին շրջագծի շարունակությունը մեկեն մյուսին անցնելով: Մի տեղ այդ բոլորակները, փոխանակ կլոր շրջանակի՝ աստիճանաբար դեպի կեդրոն հավաքող ոլորակներու, փոխեր է, որոնք կապված են իրարու արտաքին շրջագծով, ուրիշ տեղ մը կամաց-կամաց սկսեր է իսկական խոյողի (volute) ձև տալ խոյական երկու եզերքին վրա դնելով երկու ոլորակներ, որոնց արտաքին շրջագծերը վերի կողմեն ուղիղ գծով կմիանան իրարու, երկու ոլորակներու մեջտեղն ալ քանդակեր է կամ ձվիկներ և կամ փոքր գնդիկներու շարք մը: Վերջապես հասեր է տեղ մը, որ թե՛ խոյողը և թե՛ հոնիական խոյողավոր խոյակի ընդհանուր ձևը վայելչության վերին աստիճանը գտած են: Այլևս պարզ ոլորակները փոխվեր են ոլորուն և կեդրոնական մասը դեպի դուրս քաշված մագաղաթի մը, և գլանակի ձևով խոյակի երկու կողերուն վրա հաստատված առջևի կողմեն միայն ցույց տալով ոլորուն ճակատները: Ինչ որ ավելի գրավիչ է և անծանոթ հունական արվեստին, գլանիկներուն մեջքին վրա վայելչորեն փաթաթվող արջմագիլի նրբաքանդակ տերևներն են, որոնք, կարծեք, կուսական քնքույշ ձեռքեր ըլլային գլանիկները տեղին վրա պինդ բռնելու համար:

Կամարներեն վեր գտնվող, նույնպես թվով երեսունվեց հատ բոլորակ պատուհաններու լայն շրջանակները քանդակելուն մեջ ցույց տվեր է արվեստագետն իր զարդագիտության ճյուղին մեջ ունեցած մեծ հմտությունը: Յուրաքանչյուր շրջանակ քանդակված է առանձին տեսակ, իսկ երբեմն շրջանակներ՝ մեկե ավելի տեսակներով: Ոմանց շուրջ հյուսեր է ժապավինյա մանվածներու պարզ և կամ ճոխ պսակներ, ոմանց վրա մանվածներու մեջ պատչաճեցուցեր է այս այն կողմ ներդաշնակորեն գալարվող տերևներ: Կան տեսակներ, որոնց մեջեն ի բաց վանելով մանվածները, մերթ զիրար գրկող և մերթ իրարմե համաչափորեն հեռացող ցողուններու և տերևներու սիրուն խառնուրդ մը ձևացուցեր է: Քանի մը օրինակներու վրա ալ քանդակեր է զանազան վայրի տերևներու հետ խառնված երկրաչափական ձևեր, պատշաճ համաչափությամբ դասավորված:



Նկ. 172. Գագկաշեն տաճարի մնացորդներն Անիում



**Նկ. 173. Գագիկի տաճարի առաջին հարկաբաժնի բոլորակ լուսամուտների քանդակազարդ շրջանակների նմուշներ**

Իբր գլուխ-գործոց, այս շենքին մեջ քանդակագործը անհամեմատ ճարտարություն ցույց տվեր է եկեղեցիի երեք դռներու բարավորներուն և անոնց վրա կարկառվող քիվերու փորագրության մեջ:

Արևմտյան դուռը, որ ամենեն ճոխագույնն է, բեկորներն ամբողջովին գտնված են, սակայն, դժբախտաբար, հազիվ մեկ երկու կտորները կարելի եղած է փոխադրել Թանգարան, տեղի և ծախքի չգոյության պատճառավ. մնացածները կմնան պեղման տեղին վրա, մեկ կողմեն բնության, մյուս կողմեն Անին այցելող կարգ մը մարդոց վայրենի քմահաճույքին հանձնված, որոնց համար ոչ մի սրբություն չկա և միշտ հաճույք կզգան քանդելով, փշրելով և ապականելով:

Այս գեղեցիկ դուռը ունի շրջանակի բարավոր մը, վրան լայն տերևազարդ ճակատ մը և անկե վեր՝ հառաջակարկառ քիվ մը:

Քիվը կներկայացնե ճարտարապետական ուղիղ գծերու հետ խառնված երեք քանդակազարդ լայն ու նեղ ճակատներ: Այդ ճակատներեն մեկուն մեջ, որ ամենեն լայնն է, քանդակված են կարգավ քառակուսի խոր փոսիկներ, որոնց անկյուններեն կառաջանան նուրբ դարձվածքով տերևներ և կմոտենան իրարու մեջտեղեն խաչաձև գիծ մը ձևացնելով:

Երկրորդ ճակատին վրա, որ ավելի նեղ է, քանդակված են կարգավ փոքրիկ բոլորակի շրջանակներ և յուրաքանչյուր շրջանակի մեջ՝ փոքրիկ վարդեր ու ծաղիկներ: Այստեղ պետք է տեսնել քանդակագործին զարգացած ճաշակին հետ անոր համառ համբերությունը և արտակարգ սերը դեպի յուր գործը: Շրջանակներու տրամագիծը հազիվ կհասնի չորս սանտիմետրի. այդ փոքրության մեջ նա աշխատեր է ցույց տալ ծաղիկներու թերթիկներուն ամենեն բարակ երակներն իսկ. տեղ-տեղ փորվածները այնքան նուրբ և ճաշակավոր են, որ հազիվ թե ճարտար գծող մը այնքան կարենար շինել թուղթի վրա, ինչ որ այստեղ շիներ է քանդակագործը ավազոտ հրաբխային քարի վրա: Բարավորին վրա շուրջանակի քանդակված են ուռուցիկ ձվաձևներ, որոնց ծայրերուն նեղնալեն առաջ եկած դատարկությունները կլեցնեն տերևազարդ մանրիկ քանդակներ: Բախտի բերմամբ, բոլորովին անաղարտ մնացած է այս մասը հողին տակ՝ օր մը մեր ալ հիացման արժանանալու համար: Մարմարիոնի վրա միայն կարելի է տեսնել այսչափ մաքրություն, երբ վարժ արհեստավորի ձեռքե ելած է:

Մյուս երկու դռներն ալ, որոնք համեմատաբար ավելի պարզ են, միևնույն արվեստագետի չքնաղ տաղանդին դրոշմը կկրեն:

Դժվար կըլլա առայժմ այստեղ ներկայացնել այն բոլորը, որոնք պերճախոս վկաներ են մեր անկեղծ հարգանաց արժանի մեծ արվեստագետներու գոյության և պատկերներ ժամանակի ոգուն: Այդ մանրամասնությունները թողնելով ուրիշ անգամի, հիմա անհրաժեշտ կհամարեմ քանի մը եկեղեցական սպասներու քննությունը, որոնք գտնվելով Գագիկի եկեղեցիին մեջ, լիովին կհակասեին թե՛ Գագիկի փառասեր ոգուն և թե՛ անոր կանգնած շենքի մեծափառ շքեղության:

Պեղումներու ժամանակ հաջորդաբար գտնվեր են մեկ մոմակալ, մեկ բուրվառ, մեկ կանթեղ և մեկ պղնձյա ջահ:

Մոմակալը շատ հասարակ շինված, պղինձ է և արծաթի ջրով օծված է. տակի կողմը ունի խողովակ մը՝ ձող անցնելու հատուկ. վրան չափավոր մեծությամբ գունդ մը և անոր վրա շինված է մոմ դնելու տեղը: Գունդին վրա փորագրված են բարակ գծերով զարդարանքներ, որոնց ոճը հատուկ է Զաքարյան շրջանի անեցիներու ճաշակին:



Կանթեղը կամ, ավելի ճիշտ, կանթեղակալը շինված է բրոնզե, որուն մեջը կդրվեր ապակյա կամ բյուրեղյա կանթեղը. շրթունքներուն վրա ունի երեք ծակված փոքրիկ կոթեր՝ շղթաներ անցնելու հատուկ, ուռուցիկ փորին վրա շուրջանակի քանդակված են կրոնական բարձրաքանդակ պատկերներ՝ ավետարանի պատմությունեն առնված: Քանդակները շատ անճաշակ և բոլորովին նախնական վիճակ ունին:

Բուրվառն ալ գրեթե նույն ձևն ունի, միայն թե ավելի փոքր. այս ալ նույնպես շրջապատված է կրոնական բարձրաքանդակ պատկերներով. կանթեղակալի բաղդատությամբ սա ավելի հմուտ ձեռքի գործ է, բայց կրկին այն չէ, ինչ որ իրավամբ կսպասվեր անեցիներու այն ժամանակի արվեստներու զարգացյալ վիճակեն: Պահ մը ենթադրենք, որ Անիի և շրջակայից մեջ նույն դարուն նկարչության և արձանագործության արվեստներու պահանջ լինելուն պատճառավ, բնականաբար հաջող արդյունք չպիտի կրնային տալ տեղական արհեստավորներ մարդոց պատկերներ քանդակելու մեջ, և Գագիկ ստիպված պիտի բավականանար տեղական արվեստագործությամբ: Սակայն պղնձյա ջահը իր բոլորովին գեհենիկ ձևով կուգա այս ենթադրությունն ալ բոլորովին հեղաշրջելու (նկ. 176):

Ջահը շինված է հասարակ պղնձագործ վարպետի մը ձեռքով, պղնձի բարակ թերթերե կտրված աղավնիներ և ուրիշ կենդանիներ շարեր է, նույնպես պղնձե թերթերե կտրված իրարմե տարբեր տրամագծերով շրջանակներու շուրջը, որոնք իրարմե կախված են պղնձյա թելերու միջոցավ: Աղավնիներու և մյուս անճանաչելի կենդանիներու իրանին վրա կանթեղներ դրվելու հատուկ ծակեր ծակված ըլլալեն զատ՝ անոնց վիզերեն ալ թելերով կանթեղներ կախեր են:

**Նկ. 174. Բրոնզե բուրվառ՝ գտնված գագկաշեն տաճարի պեղումներից**

Ի տես այս ողորմելի կազմածին, չի կարելի ոչ մի կերպ հաշտվել, որ Գագիկ Ա. Զվարթնոցի նման մի հսկա մեծագործություն Անիի մեջ վերաշինելու փառասիրական ձգտումը իրագործելեն հետո, զիջաներ իր «սքանչատես տեսլեամբ գմբեթատրեալ գունակ գերամբարձ երկնանման գնտին» մեջեն կախել այդքան հասարակ պղնձի կտորներե կազմված գծուծ ջահ մը, մինչդեռ քանի մը քայլ անդին, իր կնոջ, Կատրանիդե թագուհիի շինած կաթուղիկեին գագաթը կշողշողա մարդաչափ բարձրությամբ արծաթյա խաչը և ներսի կողմեն լուսաշողշող ճառագայթներու մեջ հավատացելոց բազմությունը կողողեր Հնդկաստանեն բերված ութը բյուր արժողությամբ բյուրեղյա ջահը:

Նմանապես չէ կարելի ընդունել, որ այդ գտնված մոմակալը, կանթեղը, բուրվառը Գագիկի ժամանակ գոյություն ունեցող և անոր ճաշակով ընտրված անոթներն ըլլան, մինչ յուր թագուհին, յուր սեփական եկեղեցին «զարդարեաց ի զարդ ծիրանեծաղիկ ոսկեթել նկարագործ անկուածոց, արծաթեղեն և ոսկեղեն անօթոց վայելչութեամբ որովք ջահանայր ըստ երկնային կամարին կաթողիկեն սուրբ»:

Անտարակույս, Ալփասլանի հարձակման ժամանակ, ս. Գրիգորը թեև վտանգված, բայց կանգուն էր, հետևաբար, ինչպես կաթուղիկեն, նույնպես ս. Գրիգորը իբր արքունի եկեղեցի, թալանողներու վայրագ ախորժակը պիտի գրգռեր և պիտի կողոպտեին մինչև հետին սպասը: Գուցե, իբր ավելի գերազանց շինություն փոխանակ կաթուղիկեին՝ մահմեդական մահիկը ս. Գրիգորի սիգապանծ գագաթին վրա փայլեր, եթե վտանգված և կարկատաններով տգեղացած չըլլար:

**Նկ. 175. Բրոնզե բուրվառ՝ գտնված գագկաշեն տաճարի պեղումներից**

Ալփասլանի զարհուրելի ավերածեն հետո, շատ երկար տարիներ պետք էր, որ Անիի ժողովուրդը վերստին կազդուրվելով՝ մտածեր այդ արքայական մեծ հիշատակարանն իր նախկին պայծառության մեջ դնել, սակայն մինչև այն ատեն կործանման վտանգն այնքան անխուսափելի դարձած էր, որ Գագիկի հիշատակին նախանձախնդիր սերունդը անոր սիրած տաճարին մեջ խունկի ու աղոթի քաղցր բույրը մշտավառ պահելու բարեպաշտ

զգացումով, շատ համեստ սպասներով զարդարած իբրև մատուռ շարունակեր են պաշտամունքը մինչև վերջին փլուզման օրը: Ահա այդ անուշք ժամանակի անոթներն էին, որ վերջին կործանումը թաղեր էր բեկորներու տակ և մեր ձեռքը հասան: Մինչև կործանումը պաշտամունքը շարունակված ըլլալուն միակ ապացույց կարելի է համարել մոմակալը, որուն վրա տակավին կմնար վառված մեղրամոմն իր պատրույգի ածխացած ծայրով:

Ե՞րբ և ինչպե՞ս կործանվեր է իր բարձրաբերձ կրկնակ գմբեթով, կանգնողի անվան արժանի հպարտությամբ, Անիի բոլոր եկեղեցիներու վրա իշխող այս անզուգական տաճարը: Այդ մասին պատմությունը ոչինչ չէ ավանդած. միայն պեղումները բավականին լույս սփռեցին անոր փլչելու պատճառներուն և մասամբ ալ ժամանակին վրա:

Դեռ պեղումներ չկատարված, Ասողիկի միջոցավ գիտեինք Էջմիածնի մոտ Զվարթնոց եկեղեցիեն «նույնաձև չափով» ընդօրինակված գագկաշեն ս. Գրիգոր եկեղեցիի մը գոյությունը «ի կուսե Ծաղկոցաձոր ձորոյն» – և Զվարթնոցի ուսումնասիրությամբ ծանոթացած էինք անոր հսկա և հանդուգն կազմվածքին, որն որ մշտատև անլուծելի վեճերու առիթ տվավ:



**Նկ. 176. Բրոնզե ջահ՝ գտնված Գագիկի տաճարում**

Զվարթնոցի գեղարվեստական չքնաղատեսիլ բեկորներով խառնված քառասային վիճակը, միացած Շինողի պատմական մեծ անվան հետ, ենթադրություններով ու վճիռներով ծանրաբեռնված գիտնականներու ու մասնագետներու հեղեղ մը ստեղծեր էր իր շուրջը, առանց սակայն իրական եզրակացության մը հանգելու:

1905 թվականի հունիսի սկզբին, պրոֆ. Մառը ձեռնարկեց այդ կռվածաղիկ եկեղեցիին ընդօրինակության պեղման, վերջ դնելու համար անհամության հասնող բանակռիվներուն և ըստ քմաց վարդապետություններուն, հուսալով, անշուշտ, որ Անիի մեջ կգտնե ավելի կանգուն և բնորոշ մասեր, հետևցնելով զայն ծածկող բլուրին լեռնանման զանգվածեն:

Հարգելի գիտնականը չէր սխալած. քանի մը տեսակ հաջողությամբ պսակվեցավ յուր չարատանջ աշխատությունը, որ տևեց ամբողջ երկու ամառ: Նախ՝ հաստատեց Ասողիկի վավերականությունը, կետ առ կետ ճշտությամբ գտնելով անոր նկարագրության համապատասխան: Հավաքեց սպասվածեն շատ ավելի պատմական և գեղարվեստական նրբություններ և գտավ համեմատաբար ավելի կանգուն՝ քան Զվարթնոցը, կազմությունը ճշտող բազմաթիվ բեկորներով հանդերձ:

Պրոֆ. Մառը լիովին հասավ յուր նպատակին. այս տարվան օգոստոսի սկիզբը Օլթիի կողմեր թրքաբնակ Փենեկ կամ Բանա գյուղի մեջ գտնվող, նախքան Անիի ս. Գրիգորը, Զվարթնոցի նմանությամբ շինված հնագույն եկեղեցին հետազոտելով, ուր գրեթե բոլորովին կանգուն են այն ամեն մասերը, որոնք առիթ տվեր էին երկար վիճաբանություններու:

Ես ուրիշ անգամ առիթ ունեցեր եմ խոսելու Զվարթնոցի կազմության մասին, թե անոր մեջ ի՞նչպես կախված էր կրկնակ գմբեթը, արտաքին բոլորակ պատին զուգահեռական կորությամբ ութ աղեղներե կազմված բոլորակ խարիսխի միջոցավ, որն որ հաստատված էր ութ տկար կետերու վրա, որոնց չորսը 0,80 մետր տրամագծով սյուներ էին և մնացյալ չորսը 0,60 մետր տրամագծով երկու սյուներ իրար միացնող փոքրիկ կամարներ:

Այս ծրագիրն արդեն՝ եթե ոչ անիրագործելի, գոնե շատ հանդուգն էր: Զվարթնոցին ավելի քան երկու դար կանգուն մնալուն միակ պատճառը ճարտարապետին հանճարեղ նրբամտությամբ, ծանրության սպառնացող կետերու վրա զորեղ ճնշումը մեղմացնելու համար, նույն կետերու վրա շինվածանյութի տեսակը փոխելն է: Շինության սկիզբեն նա, կատարյալ գիտակ իր անօրինակ հանդգնությամբ հղացած ծրագրին, նախապես հեռատեսելով վտանգավոր ապագան, բոլորակ խարիսխեն վեր գտնված շատ մը մասեր, ինչպես՝ թաղեր, գմբեթ, փոխանակ սովորական ծանր քարերու, շիներ է շատ թեթև պեմզա քարերով, որ չորս անգամ ավելի թեթև է, քան հասարակ քարը:

Անիի ս. Գրիգորը շինող ճարտարապետը, ինչ որ ըլլա պատճառը, միշտ մեղադրելի պիտի մնա իր ունեցած անհեռատեսության մեջ, որ ոչ միայն հրաբխային ավազուտ քարերով, այլև ապառաժի կտորներով խառնված զանգվածով մը ծանրաբեռներ է գմբեթակիր սյուներու կամարները:





**Նկ. 177. Անիի կաթողիկեի արտաքին որմնասյուների խոյակների և խարիսխի նմուշներ**

Այս պարագան ինծի իրավամբ առիթ կուտա մտածելու, որ Անիի ս. Գրիգորի ճարտարապետը ոչ միայն մեզ ծանոթ (ըստ Ասողիկի) Կ. Պոլսո ս. Սոֆիա եկեղեցիի հսկայական գմբեթը նորոգող և Անիի Կաթուղիկեն հիմնարկող Տրդատը չէր, այլև միևնույն ժամանակ Կաթուղիկեն կառուցող ճարտարապետին[1] հսկողությունեն ալ հեռու էր ս. Գրիգորը: Մայր եկեղեցիի գմբեթը կազմված էր մեր ժամանակի արվեստագիտական տեսակետով շատ հետաքրքրական և նորօրինակ ձևով մը: Որպեսզի գմբեթի հսկա զանգվածի ծանրությունը միմիայն չորս մեծ սյուները իրարու միացնող կամարներու վրա ծանրանա, ճարտարապետը, լայնցնելով անոր շրջանակի տրամագիծը, հանգչեցուցեր է ուղղակի չորս մեծ մայր սյուներու կեղրոնին վրա, մինչդեռ, մեր սովորական ձևով, չորս մեծ սյուները օժանդակողի դերը պիտի ունենային: Մայր եկեղեցիի մեջ օժանդակողի դերը մնացեր է թևերը (nef) ծածկող կամարներուն, որոնք ալ նույնպես համեմատաբար ավելի զորեղ են, քան սյուներեն ձգվող կամարները:

Այս հեռատեսության շնորհիվ է, որ այսօր մեծ սյուները կապող կամարներեն քար մը իսկ փրթած չէ գմբեթին ահեղ շառաչմամբ կործանած ժամանակ, որովհետև ոչ մի կապ չէ ունեցեր այդ կամարներուն հետ: Երբ երկրաշարժը ցնցեր է, գմբեթը ամբողջությամբ գլորվեր է հյուսիս-արևմտյան անկյունին վրա և փշրեր է անկյունը ու անոր կից թևին վրա ծածկված կամարը: Եթե սովորական ձևով շինված ըլլար, միևնույն ժամանակ պիտի փշրվեին կամարներեն ոմանք ալ և բեկորները մեջը թափելով՝ գուցե պիտի ջախջախեին մեծ սյուներեն գոնե մեկ երկու հատը:

Արդ, Մայր եկեղեցիի նման նվազ զգուշություն պահանջող շինության մը մեջ այսչափ նրբամիտ հեռատեսությամբ գործող ճարտարապետը չէր կարող անտարբեր մնալ ս. Գրիգորի վիթխարի շինության անհրաժեշտ զգուշություն պահանջող մասերուն վրա:

Սեղանին հարավային կողմի մեծ սյունին վրա փորագրված «ՆԿԲ թվականին շրջակամար կա[ռուցաւ]» արձանագրությունեն կհասկցվի, որ հազիվ տաս կամ տասներկու տարի անցած, սկսեր է ճեղքվել եկեղեցին, ծանրությունը կրող սյուներեն մեկ քանին ջարդվեր են և շենքը արևմտյան կողմեն հակվեր է դեպի դուրս: Ուստի, վերահաս վտանգին առջևը փակելու համար, անմիջապես ծանրության ճնշած ութը կետերուն հինգին տակ սրբատաշ քարերով հյուսված ութը հաստահեղույս սյուներ կանգներ են, որոնց տրամագիծը չորս մետրեն ավելի է. և նախապես գոյություն ունեցող շրջակամարի մեկ մասը կրկներ են արևմտյան կողմին վրա, որուն մասին կակնարկե արձանագրությունը:

Այս նորոգությունը թեև եկեղեցիի փառավոր տեսքը նսեմացուցեր էր, որովհետև նոր շինված հաստ սյուները մտից դռներու դիմաց գալով, անոնց մուտքը մասամբ խափաներ էին, այս պատճառով ալ արևմտյան և հյուսիսային դռներն իսպառ փակեր են. բայց, հավանաբար, երկար ժամանակ ալ վտանգին դիմադրել էր, առանց սակայն ընդմիշտ ապահովելու:

Կատարված քննություններեն պարզ կերևա, որ մի անգամեն չէր փլված ամբողջ եկեղեցին: Նախապես ընկեր են արևմտյան կողմի ստորին մասերը առանց կործանելու ամենեն վրայի փոքր գմբեթը, որն որ, բնականաբար, հանգչած ըլլալով չորս մեծ սյուներու կամարներու վրա, ավելի ապահով դիրք ուներ. ասկեց հետո ի՞նչ մասնակի փլչումներ եղեր են, հայտնի չէ, միայն թե պարզ է, որ մինչև վերջին կործանումը վերի փոքր գմբեթը միշտ կանգուն էր:

Արևմտյան մասի կործանման վտանգը շատցած ժամանակ և կամ կործանելեն հետո հյուսիս-

[1] Համոզվելու շատ պատճառներ կան, որ մայր եկեղեցին շինված չէ Տրդատի ձեռքով, Արգինայի եկեղեցին և ուրիշ մնացորդները բավական մեծ ապացույցներ կուտան մեզի այս մասին: Մայր եկեղեցին Տրդատի հատուկ ոճեն դուրս վերածնության նոր շրջան մը բացած է Անիի և շրջակայքից մեջ, որմե ետքը շինվող բոլոր շինությունները պարզ հետևողություններ են Մայր եկեղեցիի ոճին: Այս մասին վրա ուրիշ անգամ կանդրադառնամ առանձին:

արևմտյան սյունեն սկսյալ մինչև սեղանին հարավային անկյունը ձգված պատով մը տաճարը երկու մասի բաժներ են և արևելյան գոնե ժամանակավորապես ապահով մասին մեջ ժամերգությունը շարունակեր են, մինչև որ վերջնականապես երկրաշարժով մը բոլորովին գետնին հավասարեր է տաճարը:

Երկրաշարժով կործանված ըլլալը հավանական կսեպեմ անոր համար, որ արարողությունը չէր դադարած. եթե բնական ընթացքով հետզհետե կործանվելու մոտենար, այն ատեն բնականաբար մեջը պիտի չգտնվեին պեղումներե գտնված անոթները, անոնք ալ վաղուց վերցված պիտի ըլլային: Նույնպես անսպասելի վտանգին զոհերն էին այն մարդիկը, որոնց ոսկորները ջարդուփշուր եղած գտնվեցան նախկին փլատակներու և նոր բեկորներու մեջտեղը:

Գագիկի եկեղեցիին կործանումը պատճառ եղեր է ուրիշ ոչ նվազ թվով կարևոր շինություններու հիմնահատակ ըլլալուն, որոնցմով շրջապատված էր: Մասնավորապես ուշադրության արժանի է հյուսիս-արևմտյան կողմը գտնվող մեծ շինության մը մնացորդը, որուն հասարակական կամ ազգային մեծ շինություն մը ըլլալուն ոչ մի տարակույս չկա:

Եկեղեցիեն ընկած ահագին բեկոր մը ջախջախեր է մտից դռան մոտ գտնվող սենյակը, մտից դուռն ալ միասին կործանելով: Այս այն մտից դուռն է, որ իր քանդակազարդ աստղաձև մոզայիկներով ոչ միայն Անիի ճարտարապետական գոհարն էր, այլև հիմա ալ մեր Թանգարանի գլխավոր հարստություններեն մեկն է իր բազմատեսակ մնացորդներով: Մոտավորապես չորս հարյուր աստղ կզարդարեր դռան ճակատը, անոնց ամենն ալ առանձին տեսակ քանդակված: Աստղերեն մեկուն վեց ծայրերուն վրա գրված էր վեց բարձրաքանդակ տառերով Սարգիս անունը, որ կամ սեփականատերն էր և կամ անոր բնակության հատկացած: Ո՞ր Սարգիսը կարող էր ըլլալ արքայաշեն եկեղեցիին կից այսպիսի չքեղ ապարանքի մը մեջ բնակվող – Գագիկի ժամանակակից և անոր սիրելին Սարգիս կաթողիկո՞սը, թե՞ վերջը Անիի առաջնորդ Սարգիս եպիսկոպոսը, և կամ մի ուրիշ Սարգիս – ապագան թող լուծե այդ հարցը:

Առանց պեղման, այժմեն իսկ հայտնի է այդ շինության ներքին բաժանումներում արտակարգ հարստությունը՝ սյուներով, քանդակներով և զարդարուն դռներով: Արտաքին նախագավիթին վրա բացվող դռնեն դուրս կգա ընդարձակ սրահ մը, որուն վրա կբացվի երկու քանդակազարդ բարավորներով շրջանակված դռներ՝ մեկը արևելյան կողմի վրա, մյուսը հյուսիսային. արևելյան կողմի դուռը կտանի չափավոր մեծությամբ սենյակ մը, իսկ հյուսիսային կողմի դռնեն կմտնվի մեծ դահլիճի մը մեջ, ուր տակավին հողեն դուրս կերևա ոլորուն ձևով քանդակված զույգ որմնասյուներու շարք մը, ուրկից կհետևի, թե այս դահլիճը եղած է սյունազարդ, կամարակապ և, թերևս, գմբեթավոր: Այս դահլիճին կից կա մի ուրիշ մեծ սրահ, հյուսիսային կողմեն, որուն պատերը դեռ կիսով չափ կանգուն են: Ուրիշ բազմաթիվ բաժանումներ ու պատեր թեև հայտնի կերևին հողին վրայեն, բայց անոնց մասին առայժմ ոչինչ չէ կարելի ըսել, միայն թե այս մեծ շինությունը երկու կողմեն շրջապատված է եղեր հասարակաց ճանապարհով, հյուսիսեն և արևմուտքեն Գագիկի եկեղեցին կբռներ արևելահարավը, իսկ ուղղակի հարավը հայտնի չէ. արևմտյան կողմը կա ընդարձակ շրջափակ մը, որ, հավանական է, պարտեզ կամ ծաղկանոց է եղեր:

Պրոֆ. Մառը շատ է հետաքրքրված այս ավերակով և կփափագեր ամբողջությամբ փորել, բայց միջոցները այնքան համեստ էին, որ նա չհամարձակեցավ արտաքին դռնեն ներս բրիչի հարված մը իսկ տալու: Գուցե դեռ չէ հանած իր ապագայի ծրագրի մեջեն այս ավերակի պեղումը, ինչպես Առաքելոց եկեղեցիի արևելյան կողմի ապարանքներուն մնացորդները, եթե հաջողվի իրեն ունենալ այնքան միջոց, որ այս տարվան սկսած Բագրատունյաց արքունիքի պեղումները ամբողջացնելե հետո, կարենա այս կարևոր տեղերու պեղման ալ բաժին հատկացնել[1]:

[1] Թորամանյանը թեև չի ընդունում, որ գագկաշեն տաճարի ճարտարապետը եղել է Տրդատը, բայց անգամ ուղղակի հիշատակություն ունենք այդ մասին: Ասողիկի Պատմության մի ձեռագրում (Կենտրոնական Ձեռագրատուն – Մատենադարանի հին ժողովածուի № 2865, թերթ՝ 236բ–237ա, գրված 1567 թվին) Գագիկի տաճարի կառուցման վերաբերող հատվածի վերնագիրն այսպես է. «Ցաղագս շինելոյ արքային Գագկայ ի քաղաքն Անւոյ զեկեղեցին անուամբ սրբոյն Գրիգորի. Տրդատ վարդպետ եկեղեցոյն»: Տպագրի և այլ ձեռագրերի մեջ վերջին երեք բառերը չկան: Կարծում ենք, որ Տրդատի անունը ձեռագիրն արտագրողը չի ավելացրել, որովհետև դա մի կեղծիք կլիներ, որի նմանները նա արած պիտի լիներ նաև ձեռագրի այլ մասերում, որ չկա: Ընդհակառակը՝ հավանական է, որ այդ անունը Ասողիկի Պատմության հին օրինակներն ունեցել են, բայց հետագայում ավելորդ համարվելով հանվել է, որովհետև Հայաստանում սովորություն է եղել հիշատակելու ոչ թե կառուցող ճարտարապետին այլ կառուցել տվող իշխանին և թագավորին:

Ասողիկի Պատմությունից գիտենք, որ Գագիկի օրով Զվարթնոցը, որի օրինակով և չափերով կառուցելու էր իր տաճարը հիմապես «փլեալ և կործանեալ» էր, հետևապես ընդօրինակող ճարտարապետը պետք է, ուսումնասիրող գիտնականի նման, նախ վերակազմեր Զվարթնոցի կազմության մանրամասնությունները և այնուհետև նրա օրինակով կառուցեր նոր եկեղեցին: Ո՞վ կարող էր 10-րդ դարում կատարել այդ միանգամայն դժվարին աշխատանքը, եթե ոչ ժամանակի հռչակավոր ճարտարապետ Տրդատը: Նա 10-րդ դարի վերջերին Զվարթնոցի նկատմամբ կատարած է եղել այն աշխատանքը, ինչ 20-րդ դարում կատարեց Թորամանյանը:

**Կազմող**



## [ԳԱԳԻԿԻ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ[1]]

Ընդհանուր կազմությունը՝ Զվարթնոցին բոլորովին գրեթե նման ըլլալուն, հարկ չտեսա կրկին նկարագրել այն ամեն բաները, ինչ որ նկարագրած եմ նախորդ տարիներ անոր մասին, ուստի ես այստեղ կջանամ բացատրել այն ամենը, ինչ որ անոր մեջ չեն գրված կամ ս. Գրիգորի մեջ տարբեր կազմություն և դիրք ունեցած են:



Նկ. 178. Անիի կաթողիկեի արտաքին որմնասյուների խոյակների և խարիսխի նմուշներ

Հատակագիծը տեղվույն վրա արդեն անաղարտ մնացած է, և ես կետ առ կետ ընդօրինակած եմ, ջանալով պահել կատարյալ ճշտություն:

Բարձրություններու մասին գալով, առաջին մասը մինչև չուրջանակի nef-ին կամարին գագաթը անվիճելի է, որչափ որ գոյություն ունի մինչև այժմ տաճարին արևելյան կողմի վերջը շինված մեծ սյունը. փլվածքին ձևն ալ ցույց կուտա, որ հասած է մինչև կամարին տակ և կպած արևմտյան կողմին, ընդունելով անոր կոր ձևը: Ինչ կվերաբերի խաչաձև սյունազարդի սյուներու բարձրության, հարավ-արևմտյան մեծ մայր սյունին վրա տակավին կմնա մոտակա կլոր սյունը, իր վրա միացնող կամարին մասը՝ տակի corniche-ով միասին: Արդ՝ քանի որ ճշտված էր սյունաշարի բարձրությունը և



Նկ. 179. Գագկաշեն տաճարի հատակագիծը

առաջին հարկի կամարին բարձրությունը, կմնար դասավորել այդ բարձրության մեջ արտաքին պատի ներքին երեսի վրա գտնվող սյուներու և պատուհաններու բարձրությունը: Բնական էր, որ իրենց աղեղաձև corniche-ներով ավելի ցած պիտի ըլլային, քան նեֆին կամարին centre-ը, ինչպես Բանայի տաճարում, ուր որմնասյուներու կիսաբոլոր corniche-ները կսկսեն nef-ին կամարին արտաքին վերջավորության անմիջապես կից: Ես ալ հետևեցա այս օրինակին, մի քիչ ավելի ցած թողելով, հաշվելով դրսեն և ներսեն համաչափ բարձրություն, դրսի պատուհաններուն կիսաբոլորակ գագաթները՝զուգահեռական ներքին և արտաքին սյունազարդերը միացնող կամարներուն՝ ինչ որ անվրեպ օրենք է, և այդպես ալ գտած եմ Զվարթնոցի մեջ: Այժմ կմնար գիտնալ, թե ո՞րչափ կրնար ըլլալ պատուհաններուն[2] բարձրությունը վերեն

[1] Այս հոդվածը մի նամակ է, ուղղված պրոֆ Ն. Մառին: Նամակի հետ հեղինակը Մառին ներկայացրել է նաև 6 գծագիր, որոնք, նամակի սկզբի մասին համաձայն՝ եղել են հետևյալները. 1. տաճարի վերակազմության ճակատը (նկ. 181), 2. տաճարի հյուսիսից հարավ կտրվածքը, 3. արտաքին պատի արևմտյան կողմի մանրամասնությունները, 4. տաճարի սկզբնական հատակագիծը, 5. տաճարի հատակագիծը՝ փոփոխություններ կրելուց հետո, 6. դետալներ: Մենք, այդ նկարները վերականգնելու հնարավորությունը չունենալու պատճառով, նրանց փոխարեն նորերը չդրինք՝ սխալներից ազատ մնալու նկատառումով: Նամակը տպագրում ենք հեղինակի մոտ մնացած սեպագիր օրինակից:

**Կազմող**

[2] Առայժմ դեռ կանգուն մնացած արտաքին բոլորակ պատին ամենեն բարձր մասին վրա իսկ պատուհանի հետք չկա, հետևաբար, պետք է որ այս բարձրությունեն վերև գտնվեին պատուհանները, միևնույն ատեն ավելի ցած, քան արտաքին պատի և ներքին խաչաձևի մեջտեղ եղող բոլորակի վրան ծածկող չուրջանակի կամարի հանգիստը:

վար: Ատոր համար ալ գործնական ոչ մի ապացույց չունենալով՝ հետևեցա անեցիներու ճաշակին և Անիի ժամանակակից պատուհաններու ամենեն երկայն չափին, որ կերևա այժմ արտաքին երեսին վրա: Կմնար կազմել nef-ին կամարին ներսի կողմեն հանգիստ, որ միևնույն ժամանակ խարիսխն է (socle) երկրորդ հարկին ներքին պատին, որուն շարունակությունն է միջին գմբեթն արտաքուստ: Այս կազմության համար ալ անվրեպ ապացույցներ չէին պակասեր, ինչպես Զվարթնոցի մեջ, նույնպես ալ այստեղ: Բեկորներու լուսանկարներու պարզ բաղդատություն մը բավական կբացատրե իմ վերակազմության ճշտությունը: Զվարթնոցեն հայտնի է, որ մեծ սյուներուն ետևները գտնվող բոլորակ սյուներեն մինչև խաչաձև սյունազարդերու մեջտեղի երկու սյուները միացնող փոքր կամարներու վրա նետված էին հաջորդաբար մեծ կամարներ՝ արտաքին պատեն զուգահեռական կորությամբ, որոնց միջոցավ կազմված էր վերնահարկին խարիսխի և բոլորակ nef-ին կամարին հանգիստը: Կամարների մեկ ծայրը հանգչած է մեծ սյուներու ետևը գտնվող բոլորակ սյունին եռանկյունաձև մեծ խոյակին վրա, իսկ մյուս ծայրը կերթա խաչաձևի կիսաբոլորակի մեջտեղ երկու սյուները միացնող կամարին վրա, անկեց հետո կսկսի nef-ը ծածկող կամարը և կամարեն անմիջապես հետո ներքին բոլորակին խարիսխը, որ շարունակված է մինչև միջին գմբեթին վերջը: Կոր կամարին ամենաբարձր կետը, որուն տակեն դրված էին շեղակի հակված եռանկյունաձև առագաստները, սուր ծայրերը հասած էին մեծ և փոքր սյուներեն կազմված անկյուններուն վրա՝ փոքր կամարներեն քիչ բարձր: Այս առագաստները կազմված էին երկու մասերե՝ ինչպես կտեսնենք վերակազմության մեջ: Վերի մասը, որ կցված էր կոր կամարին շրթունքին, պարզ սրբատաշ քարերով, որոնցից մեկ հատը գրեթե մասամբ անաղարտ կմնա տեղին վրա, սեղանին հարավային կողմի մեծ սյունին ետև nef-ին անկյունին մեջ: Միևնույն տեղեն գտնվեցան ստորին մասի բեկորներն ալ, ինչպես ուրիշ շատ տեղեր, որոնք վերի մասի պես պարզ չէին, այլ քանդակված երկար խողովակաձև փոսերով հողմահարի նման:

Նկ. 180. Մույթի և սյուների մնացորդներ գագկաշեն տաճարում





Նկ. 181. Գագկաշեն տաճարի վերակազմության ճակատը արևմուտքից

Մեծ սյուներու մեջ եղած պարապությունները կամ բաժանումը այստեղ ալ նման է Զվարթնոցին, շատ թեթև տարբերությամբ, ասոր մեջ չերևիր այն միջին բաժանումը, ինչ որ կա Զվարթնոցի մեջ: Իր անկյուններն ալ փոխանակ Զվարթնոցի նման սուր վերջանալու՝ անկյունավորված են: Այս մասն ալ կարելի է բաղդատել Անիի մի բեկորի հետ, որուն վրա բավական ճշտիվ արտահայտված է անկյունը, արտաքին մեծ բոլորակին կտորը, որուն շարունակությունն է միջնադմբեթը: Այս մասը Բանայի մեջ շատ կտարբերի Զվարթնոցեն և ս. Գրիգորեն. և այս տարբերությունը առաջ եկած է գլխավորապես հատակագծի մեջ եղած տարբերութենեն, թեև միջավայրն ու ճաշակն ալ կարող էին ազդեցություն ունենալ: Անիի մեջ անխնա արտաքսած են, բացի ընդհանուր հատակագծեն, այն ամեն մանրամասնությունները, որոնք անեցիներուն ճաշակին հակառակ էին: Բաղդատության համար՝ գծեցի մի հատակագիծ Բանայի եկեղեցիին. թեև չափերը ճիշտ չեն կարող ըլլալ, բայց ձևը ճշտիվ արտահայտված է ըստ լուսանկարի[1] (տե՛ս նկ. 147): Լուսանկարի վրա պարզ կերևի, որ խաչաձևի թևերը ավելի երկայն են, քան ս. Գրիգորը և Զվարթնոցը, որով ընդարձակված է սյունին ներքևի մասը և, ըստ երևույթին, կազմված է քառակուսի մի սենյակ՝ մեկ անկյունը սյունանման դուրս ցցված քնե-

[1] Դժբախտաբար այս լուսանկարը վառված ըլլալուն պատճառով չպիտի կրնամ ներկայացնել:








Նկ. 182. Գագկաշեն տաճարի վերակազմության կտրվածքը հարավից հյուսիս

Բանայի սյուները ունեցեր են պատուհաններ՝ նայող դեպի տաճարը, զույգ պատուհան ամեն կողմ, մեջտեղ բաժանված սյունով մը. ս. Գրիգորը տարբեր է այս մասին մեջ: Ես պահ մը փորձեցի այս պատուհանին ս. Գրիգորեն գտնված բեկորը հարմարեցնել նույն ձևով, սակայն անհնար էր, որովհետև գտնված բեկորներեն ամենեն ավելի անաղարտ մեծ չափով մնացած կտորը հազիվ կսեղմեր մեկ պատուհանի չափով, սյունամեջի փոքրության պատճառով, հակառակ Բանայի: Անիի մեջ կգտնվի, շատ մը զանազան բեկորներե զատ, մի քանդված կես շրջանակ՝ սույն սյունամեջի պատու-



Նկ. 180. Մույթի և սյուների մնացորդներ գագկաշեն տաճարում

հանի տաճարին կողմեն, որովհետև քարը գոգավոր է. այն համեմատությամբ, որչափ որ կոր է խաչաձև թևի բոլորակը, որուն շուրջանակի տրամագիծը կհասնի 3,89 մետրի, որ հազիվ կտեղավորվեր գտնված տեղին վրա:

Միջնահարկեն սկսյալ դեպի վեր բարձրության չափերը այլևս ենթադրական են, հետևելով միշտ անեցիներու և կամ ժամանակակից արվեստի համաչափության օրենքներուն:

Պետք է այժմ ըսել, որ մի սխալ սպրդած է վերակազմության մեջ, 2 ու կես կամ 3 մետր պետք էր բարձրանալ երկրորդ հարկեն վեր, այնպես որ մեծ սյուներու գագաթը պակող corniche-ը անարգել կարելի ըլլար շարունակել մեջտեղի երեք պատուհաններու վրայեն. մինչդեռ իմ վերակազմության մեջ նույն corniche-ը, որ միևնույն ժամանակ խոյակի պաշտոն ալ կկատարե, ընդհատված է պատուհաններու բարձրության պատճառով, թեև այս ձևը օտար չէ անեցիներուն, կան ուրիշ օրինակներ՝ Անի և Ղոշավանք, սակայն այս շենքին մեջ լավ կըլլար, որ ամեն օրինականություն պահված ըլլար: Տաճարին միջին բարձրությունը մինչև չորս մեծ մայր սյուները միացնող կամարին գագաթը համեմատական է Ղոշավանքի ս. Մինասի և Ապուղամրենց ս. Գրիգորի, միայն տրամագիծը, իմ կարծիքով, պետք էր քիչ ավելի լայն լիներ, որովհետև Անիի մի բեկորի վրա գտնվող զարդակամարներուն աղեղներեն գտնված տրամագծերու հաշվով, 16 կամարներով պետք էր շրջապատված ըլլար վերնագմբեթը, ըստ բոլորակի կազմված մեծ սյուներու կամարներու մեջ գոյացող բոլորակ օղակին արտաքին երեսին վրա: Մի այլ բեկորի աղեղներեն գտնված կիսաբոլոր կամարները դժվարավ սեղմեցան այս շրջանակին վրա. ես, ներկայիս օրինականություն պահած ըլլալու համար, հետևեցա ընդհանուր օրենքին, այնքան միայն մեծցուցի վերնագմբեթին տրամագիծը, որչափ որ թույլ կուտային չորս մեծ սյուներու աղեղները՝ գմբեթին ամբողջ շրջանակը իրենց վրա միայն կրելու համար: Այստեղ ի դեպ է ըսել, թե անեցիք շատ բացառություններ ունին այս ընդհանուր օրենքեն, ինչպես Մայր եկեղեցին, Լուսավորիչը անօրինակ լայն գմբեթներ ունին, որոնց շրջանակը այնքան լայնցած է, որ աղեղներու վրա փոխանակ հանգչելու, անցնելով այն սահմանը, հանգչած են կողմնակի nef-երու կամարներուն վրա, իսկ անկյունները, փոխանակ առագաստի վրա գալու, կանցնին ուղղակի մեծ սյուներու վրայեն. եթե ես ալ այս հաշվով դրած ըլլայի վերնագմբեթը, այն ատեն լիովին բավարար պիտի լիներ 16 որոշ կամարներու համար:



**Նկ. 183. Գագկաշեն տաճարի ներքին սյունաշարքերի խոյակները**

Արտաքին ճակատին վրա, սյուներուն և զանոնք կապող կամարներուն բարձրություններն ալ անվրեպ էին. հետևաբար, բնական էր, որ ներսի որմնասյուներու կամարին զուգահեռական դարձյալ պատուհանի վերին աղեղին կեդրոնը նույնպես պետք էր միևնույն բարձրության վրա կեդրոն ըլլար՝ նույն պատուհաններու արտաքին կողմին աղեղին և անոր զուգահեռական վրայի զարդարուն կամարները, որոնք լիովին գոյություն ունին իրենց ճիշտ չափերով:

Զվարթնոցի մեջ ներքին որմնասյուներ թվով 64 հատ են, իսկ արտաքիններ՝ 32 զույգ սյուներ:

Այստեղ, ս. Գրիգորի մեջ այդ թիվն ալ կտարբերի. ներքին կողմեն ունի 72 որմնասյուն՝ հաջորդաբար նեղ և լայն սյունամեջերով, արտաքուստ՝ հավասար հեռավորությամբ 36 զույգ սյուներ: Ներքին որմնասյուներ, ինչպես Զվարթնոցի և Բանայի մեջ, ամենը կապված չէին իրարու հետ կամարներով, այլ ընդհատ-ընդհատ, բոլոր լայն սյունամեջերու վրա կային կամարներ և յուրաքանչյուր սյուն կկրեր մի կամարի վերջավորություն: Անեցիներու ընդհանուր սովորության համեմատ, այստեղ ալ կամարին moulure-ները պատին երեսեն դեպի խորը փորված լինելով, վերի կողմեն հազիվ 3 սանտ. դուրս ցցված էին պատեն, իսկ տակի կողմեն ավելի քան 10 սանտ., այս համեմատությամբ ալ կամարներեն վեր՝ պատը ավելի հաստ էր, քան կամարներեն վար: Հետևաբար, կամար չունեցող նեղ սյունամեջերու մեջ առաջ պիտի գային՝ այս անհավասար թանձրության պատճառավ խորշեր (վերևը կիսաբոլորակ վերջավորությամբ, առանց corniche-ի): Եթե վերևի թանձրության համեմատությամբ նեղ սյունամեջերու թանձրությունը մինչև տակը շարունակվեր, թե՛ երևույթը պիտի տգեղանար և թե՛ որմնասյուներու կողերը պիտի թաղվեին այդ թանձրության մեջ. ուստի, այդ անտեղության առջևն առնելու համար, թեթև կերպով խորշաձև գոգավորեր են այն մասը, վերեն սկսյալ, մինչև որ եկեր ու ներքևի մասին հավասարվեր է:





**Նկ. 184. Գագկաշեն տաճարի ներքին սյունաշարքերի բեկորներ**

Դռների կամարները կանոնավորապես միացած են հաջորդաբար ամբողջ շրջապատին վրա և անմիջապես վրան կգտնվի շուրջանակի լայն զարդաքանդակ գոտին, այս գոտիին corniche-ին ճիշտ մեջտեղ կգտնվեին բոլորակ պատուհանները, որոնց ամենն ալ բացված էին galerie-ին վրա. այս հարկին ծածկեն վեր կսկսի միջնագմբեթը, որուն իսկական բարձրության վրա այնչափ որոշ բան չգիտեմ, բայց, հետևելով Զվարթնոցի, բաժանեցի սյունամեջերու վարինին թվով. սյուներուն ձևերը անծանոթ են, շինածս ենթադրական է, սակայն վրայի կամարներեն գտեր եմ, որոնք այժմ կգտնվին ս. Սարգսի դռան գավթի մոտի բարձրության վրա, ճիշտ միևնույն moulure-ներով, միայն վերնամասը առանց քանդակի և նեղ, քան վարի կամարներուն այդ մասը. միանման դրի այս հարկին ալ corniche-ը, որովհետև թեև չափը տարբեր corniche չեմ գտեր, բայց քանդակներով տարբերողներ կան:

Վերնագմբեթի մասին արդեն գրեցի վերևը, որու առթիվ կավելցնեմ, թե անոր վրա գտնված պատուհաններն ալ երկայն և վերը կիսաբոլորակ եղած է և նմուշը կմնա բեկորին վրա խնամքով ծածկված, որովհետև արդեն փրթելու վրա է:

Կմնա բացատրել վտանգվելեն հետո եղած հավելումները և շրջակամարը:

Ինչպես կերևի, շինության հանդուգն եղանակեն և տարողության հաշիվներու թերությենեն՝ շինությունը վտանգվեր է և ճեղքվածքներ առաջ եկեր են:

Զվարթնոցի ճարտարապետը, որպես գիտակ յուր արտաքո կարգի հանդուգն ծրագրին, վերնագմբեթը և անոր պատին ներքին մասերը պեմզա քարով շիներ էր: Անեցիք այդ կանխամտածությունը չունենալով, չարաչար վտանգեր են տաճարը և փութացեր են շուտով վտանգին առջևն առնել, հինգ զանազան տեղեր, գլխավորապես ներքին խաչաձևի կիսաբոլորակներու մեջտեղերը, որ ամենեն տկար մասերն էին, կանգներ են հաստահեղույս մույթեր, որոնց ծայրերը հասած էին մինչև միջնագմբեթին խարիսխին տակ՝ ծառայելու համար որպես ամուր հենարան: Այդ մույթերեն երեքը կանգներ են հարավ-արևմտյան կողմին վրա, ուր ամենեն շատ սպառնալից էր վտանգը և, վերջապես, այդ կողմին վրա ալ փլած էր շենքը, մեծ մայր սյուներուն ետևը գտնվող կոր կամարակիր փոքր սյունն ալ հյուսեր են հաստահեղույս մույթին մեջ և երկու կողմին վրա՝ կրկնակի կամարներով ամրացուցեր են դարձյալ նախկին կամարներու տակեն:

Բեկորները ցույց տվին, որ այս երկրորդ հավելյալ կամարներն ալ թվով երկու հատ են միայն, երկու մասերե բաղկացած էին եռանկյունի ձևով, բայց ոչ քանդակված՝ խողովակաձև ստորին մասին վրա, ինչպես որ եղեր է ի հնումն, այլ պարզ սրբատաշ: Այս իսկ պատճառավ էր, որ այստեղեն, այսինքն հարավ-արևմտյան կողմեն գտնված հողմահարի ձևով քանդակված առագաստի քարերը շաղախապատ էին, որովհետև հինը առանց քանդելու, վրայեն շիներ էին մյուս նոր կամարները: Ուրիշ կողմի վրա գտնված առագաստի քարերը մաքուր են, առանց շաղախի հետքերը կրելու: Այս կամարներեն մեկը, ինձ հայտնի չէ թե ո՞ր կողմինը, կրկնաշուրթն եղած է, այսինքն երկու աղեղ վրա-վրայի դարձված, մեկը մյուսեն հազիվ 15 սանտիմետր խոր, կիսով չափ կմնա այս բեկորն ալ ընկած արևմտյան կողմը, ներքին մեծ շրջանակի կտորին տակեն, որուն արդեն կպած էր. այս կամարին բեկորի վրա կա իսկական ապացույց, որ մույթերը շարունակված էին մինչև nef-ի (հավելյալ) կամարին տակ. հավելյալ մույթերուն մեկուն ծայ-

ը կգտնվի այս բեկորին վրա՝ երկայն, 3 մետրեն ավելի, ծայրը կպած է մեծ մույթի բեկորին վրա, կիսաբոլորակ ձևով ընկած. բայց հայտնի կերևա կիսաբոլորակ մույթին կոտրված մասը, ավելի քան 2 մետր բարձր կամարի բարձրութենեն, որով հայտնի կըլլա, թե նա պետք էր շարունակված ըլլար մինչև վեր, արդեն առանց ատոր ալ, առանց կամարի՝ մույթերը բավական էին մեզ համոզելու, որ եթե անոնք մինչև խարիսխին տակ հասած չըլլային, իրենց նպատակին չպիտի ծառայեին:

Այժմ վճռելի կմնա երկու կարևոր հարց. մեկը աստիճաններեն վեր եկեղեցի մտնելու հարցը, առանց սանդուխի գոյության, իսկ մյուսը, որ ավելի կարևոր է, վերնահարկ բարձրանալու սանդուխին ո՞ր կողմեն ըլլալը: Ինչպես Զվարթնոցում, այնպես ալ այստեղ, անլուծելի հանելուկ մնաց ինծի: Եկեղեցին մտնելու հարցը կվճռվի, եթե 1892 թվականին պեղված ս. Գրիգոր եկեղեցին մտնելու հարցը վճռվի, որովհետև անոր մուտքն ալ մեկ մետրեն ավելի բարձր է գրեթե, իսկ վերնահարկ բարձրանալու անօրինակ կնճիռը կա նաև այժմ՝ կանգուն Հովվի եկեղեցիին մեջ, որուն շուրջը ոչ մի հետք չկա սանդուխի, սակայն վերը, հարավային կողմին վրա, շինված է մտից դուրը: Ես կկարծեմ, որ Բանայի մեջ ճամբա ըլլա սյունամեջերեն, որովհետև այնտեղ սյուներու մեջ եղող բաժանմունքները երկու հարկ են, վրայե վրա, և վարի հարկը շատ ցածեն սկսած է, այնպես որ, նույն համեմատական բարձրութենեն շատ վեր կանգուն են ս. Գրիգորի մեծ մայր սյուները և դարձյալ վրան ամենևին նշույլ չկա սանդուխի կամ դռան:

Պահ մը ենթադրենք, որ սեղանի սյունազարդերու մեջեն կարելի է շինված ըլլա ճամբա մը, ինչպես Մայր եկեղեցվո սեղանը, որուն մեջ գտնվող շուրջանակի խորշերը մասամբ կհիշեցնեն ս. Գրիգորի սյունազարդ սեղանը. Մայր եկեղեցվո այս խորշերեն երկուքին մեջ են վերնահարկ մատուռները բարձրացող սանդուխներուն դռները, բայց ս. Գրիգորի մեջ ամենևին ոչ մի նշմարելի հետք չկա, մինչև իսկ վերջին ժամանակները, երբ շինված էր այստեղ գտնվող անկանոն ձևով մույթը: Ես չհասկցա նաև, թե ինչե՞ն առաջ եկեր է արևելյան սեղանի ետևի մույթին այս անկանոն անկյունավոր ձևը, թեև մեկ կողմանե նկատելի է, որ ետևի փոքր մատուռին մուտքը չխափանելու համար ծռեր են քիչ մը, սակայն առանց ատոր ալ, կարելի էր անխափան թողուլ, ինչպես մյուս կողմեր երևի պատռվածքին ձևը կպահանջեր այդ:

*Ալեքսանդրապոլ, 27 դեկտ. 1906.*

# Զ

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՀԱՄԱՌՈՏ ՀԱՏԿԱՆՇԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ[1]

## ԱՌԱՋԱԲԱՆ

Ներկա աշխատությունս մի ամբողջական ուսումնասիրություն չէ Հայաստանում իրագործվող ճարտարապետական արվեստի մասին, այլ թանգարանային մի հատկանշական ցուցակ, որն իր մեջ պիտի բովանդակե նշանավոր հուշարձաններից յուրաքանչյուրի անունը, գտնված տեղը, շինողի անունը և շինության ժամանակը: Կարող է պատահել, որ շինողի անունը և շինության ժամանակն անհայտ լինեն. շինարարական արվեստի համեմատությամբ անվրեպ որոշված կլինի շինության դարաշրջանը: Բայց ամենից ավելին, որ ցուցակիս հատկանշական նպատակն է, մատնանշված պիտի լինեն ճարտարապետական և գեղարվեստական մասերը: Հնարավոր դեպքում հուշարձանների հատակագծերի հետ միասին պիտի գրվեն չափական գծագրությամբ գեղարվեստական կտորներ իրենց պատկանած վերածնությունների և դարաշրջանների ծանոթությամբ: Այս կերպով պատրաստված մի ցուցակ, երբ արվեստագետն իր ձեռքին կունենա, հուսալի է, որ հնարավորություն կունենա որոշելու թե՛ օտարամուտ ձևերը, թե՛ տեղական ճաշակի ենթարկված փոփոխությունները և թե՛ զուտ տեղական ստեղծագործությունները ճարտարապետական ու շինարարական արվեստի մեջ:

[1] *Այս աշխատությունը Թորամանյանը գրել է Պատմական թանգարանի ճարտարապետական բաժնի վարիչ եղած ժամանակ, հավանաբար 1930–1932 թվերին, որ անտիպ է մնացել մինչև այժմ: Ցուցակին ավելացրել ենք «Երվանդաշատ և Երվանդակերտ» (արտատպում ենք «Ախուրյան» թերթի 1909 թ. № 65-ից), «Հայ ճարտարապետությունը Անիի և Երվանդակերտի մեջ» (արտատպում ենք «Ախուրյան»-ի 1909 թվի № 67-ից), «Ո՞րն է իսկական Հռոմոսի վանքը» (արտատպ. 1911 թվին լույս տեսած գրքույկից) և «Ապուդամրենց սբ. Գրիգոր» հոդվածները: Ցուցակից դուրս ենք թողել Տեկորին, Էջմիածնին և ուրիշ. վերաբերող հոդվածները, որովհետև այդ հուշարձանները սույն ժողովածուի մեջ ներկայացրել ենք ավելի հիմնավոր աշխատություններով:*

*Կազմող*



## 1. Գառնի

Նշանավոր պատմական հին ամրոց է Գառնին, մեր պատմագիրներեն շատերը անմատույց ամուր կամ հզոր անունն են տալիս այս անմատույց վայրին: Դեռ նախաքրիստոնեական շրջանին ևս անառիկ ամրոց լինելուն տեղեկություններ կան, սակայն վերջին անգամ, հայոց թագավոր Տրդատը, ըստ Մ. Խորենացիի, նոր բերդ շինեց, միջի իր արքունիքով միասին, նաև մեկ հովանոց «ի համար քեռ իւրոյ Խոսրովիդխտոյ» կամ սարասոյթ հովանոց Տրդատայ անունով շքեղ մի սյունազարդ անդաստակով և քարյա ինն աստիճան սանդուխով բարձրացող միայն մի բաժանմունքից բաղկացած առանձին սենյակ: Բերդը բավական ընդարձակ է, և մեծ մասամբ պարիսպները գոյություն ունեն տեղին վրա, որը շատ ճիշտ նկարագրած է Մ. Խորենացին, թե՝ «Կատարէ Տրդատ զշինուած ամրոցին Գառնոյ զոր որձաքար և կոփածոյ վիմօք, երկաթագամ և կապարով մածուցեալ» և այլն: Այժմ այդ պարիսպներեն մեծագույն մասը գոյություն ունի տեղին վրա տաշված պինդ որձաքարի հսկա հատորներով կազմված, իսկ քարերի երկաթի կապերը, հայտնի չէ թե ո՞ր ժամանակ, չարաշահ մարդիկ բոլորը հաներ են իրենց ծայրերի ամուր ձուլածո կապարով միասին:

Նույնպես երկաթե կապերով միացած էին հովանոցի պատի քարերը, որոնք երևում են պատերի մնացորդների վրա: Քննողներեն ոմանք կարծեցին, որ այսչափ շքեղ սենյակը հավանական է, որ հեթանոսական տաճար լինի, բայց հաստատ տվյալներ կան, որ բնավ կռապաշտական տաճար չէ, այլ արքայական ընդունելության դահլիճ և կամ, ինչպես Խորենացին է ասում, հովանոց էր: Այժմ եթե չփոթության մի պարագա կա, այն է՝ թե ո՞ր Տրդատն է շինողը: Ըստ Մ. Խորենացու՝ Տրդատ Գ-ն է, սակայն պատմական քննադատությամբ ապացուցանողներ ալ կան, որ Տրդատ Ա-ն է շինած թե՛ ամրոցը և թե՛ հովանոցը 1-ին դարուն, Հռոմից բերած ճարտարապետներով. և սա, ըստ թվականին, հավանական է երևում, որովհետև հռոմեական կամ հին հունական ոճով այսչափ ճշտությամբ շենք չէր կարող շինվել Հայաստանի սրտին վրա, առանց Հունաստանից մասնագետ վարպետ բերելու:



*Նկ. 185. Գառնիի՝ Տրդատի հովանոցի վերակազմության մակետը (գործ Տարագրոսի)*

Մեհյան կարծողները երևի հետևցնում են սրահի մի բաժանում ունենալեն, սակայն սա հին հունական ձև է, որ բոլոր թագավորներ ունեցեր են այս ձևի ընդունելության սրահներ, ուր կնստեին լսելու համար ժողովրդի դիմումները: Շատ քչերը այս շենքերից ունեցեր են մի փոքր նախագավիթ և այդ՝ թագավորական ընդունելության դահլիճն էր, որ անվանվում էր տաճար:

Որչա՛փ շքեղ և գեղարվեստական էր շինված այս շենքը, գրչով բացատրել դժվար է. թեև ես կներկայացնեմ այստեղ լուսանկարներ, սակայն ամբողջական տպավորություն ստանալու համար անձամբ պետք է գնալ Գառնի և տեսնել այդ շենքի սքանչելի բեկորները: Շատ քիչ բան է մնացել տեղին վրա շենքի բեկորներից. իբրև սրբատաշ քարի քարհանք, ամեն տեղ տանում էին քարերը շենքեր շինելու համար. նույնիսկ Էջմիածին, Երևան բերվել են ընտիր քանդակազարդ հունական խոյակներից: Ես ինքս անձամբ տեսա՝ Զոհրաբլու գյուղում՝ գյուղական եկեղեցիի փայտյա շենքի սյունի տակ Գառնիի սքանչելի խոյակներից մեկը դրված էր իբրև խարիսխ: Հետագայում Հայաստանի քարի արհեստավորներ առաջ են գնացել տուֆ քարերը քանդակելու մեջ, բայց Գառնիում բազալտ քարի վրա այդքան մեծության քանդակել ոչ միայն մեզ համար զարմանալի է, այլև օտար մեծ արվեստագետներ իրենց այցելության ժամանակ զարմանքի հետ հայտնել են նաև իրենց հիացմունքը:

Նկ. 186. Գառնիի սյունաշարքերի առաստաղի քանդակազարդ բեկորներ և սյուների մասեր

Քրիստոնեական շրջանին ևս անընդհատ Գառնին կենդանի զավառ եղած է. դեռ 5-րդ դարում հսկայական մի եկեղեցի է շինված գյուղի հյուսիս-արևմտյան կողմը, որուն հյուսիսային և արևելյան պատերն են մնացել: Գյուղի արևելյան կողմը կան երկու ավերակներ, որոնց ժամանակը պարզ չէ, թերևս 11-12-րդ դարերու գործ են. սակայն այդիների մեջ կա այժմ մի փոքր, բայց վերին աստիճանի գեղարվեստորեն շինված մատուռ, որն արդեն կիսավեր վիճակի մեջ է:

Զարմանալի երևույթ է Հայաստանի համար, որ Տրդատա սարավույթի նման հռոմեական ոճով վերին աստիճանի գեղարվեստական շինությունը ոչ մի ազդեցություն չի ունեցել Հայաստանի ճարտարապետության վրա և ինքը մենակ է մնացել բովանդակ Հայաստանի մեջ, իբրև հռոմեական ոճի շենք. իսկ այդ շենքից անմիջապես հետո թե՛ նույն շրջանում և թե՛ Հայաստանի հեռավոր սահմաններում երբեք նույն ոճով շենքեր չգտնվելե զատ, հազիվ նշմարելի է, որ մեկ կամ երկու շենքերի մեջ Գառնիի շենքի մասնավոր գծերից օգտվել և խառնել են Հայաստանի զուտ արևելյան ոճի մեջ:

## 2. Երվանդաշատ և Երվանդակերտ

Այս տարվան ուղևորությանս վերջին սահմանը եղավ Երվանդաշատ և Երվանդակերտ ըսված երկու հին քաղաքներու ավերակները, որոնք, ըստ Խորենացիի, կգտնվին Ախուրյան գետի աջ ու ձախ ափերուն վրա, Արաքս գետի խառնարանին մոտ:

Ճանապարհս Բագարանեն էր, ուստի առաջին անգամ հասա Ախուրյանի աջ ափը, ուր պետք է գտնվեր Երվանդաշատը:

Առաջնորդներս մի քանի ցիրուցան ավերակներ ցույց տվին գետեզրին մոտիկ: Քար ու քանդ եղած մի փոքր մատուռ կար, որուն քարերը հավաքած էին մի տեղ՝ նոր շինություն շինելու համար, նույնիսկ մի ուրիշ շինության մնացորդ՝ մանրիկ սրբատաշ քարերով. ասոնք, սակայն, շատ հին դարերու շինություններ չէին, առավելն 13-րդ կամ 14-րդ դարերու հազիվ հանին:

Ասոնցմե քիչ հեռու, դեպի հյուսիս-արևմուտք կնշմարվի մի ուրիշ շինություն, որ իսկապես բազմադարյան հնության դրոշմը ունի իր վրա. որձաքարի մեծամեծ զանգվածներով շինված են պատերը, որ ըստինքյան հայ շինություններու ամենահին



շրջանին կվերաբերին: Շինությունը թեև երկհարկանի է եղած, սակայն շատ փոքր է և միայնակ մնացած է բլրի մը գլխին: Հեռու կամ շատ մոտ հատ-հատ կերևին մանր-մունր շինությանց մնացորդներ. սակայն այս ամենը բավական չեն բնավ Խորենացիի այնքան ներբողած Երվանդաշատի մնացորդները համարվելու համար:

Գետի այս կողմը, ընդարձակ տարածության վրա, եթե համեմատենք Խորենացիի նկարագրության հետ, իբրև բերդ և կամ իբրև քաղաքատեղի, արդյունքը շատ հակասական դուրս կուգա: Ոչ միայն բերդի և քաղաքի հետքեր չկան, այլև ի բնե իսկ բնական հարմարություններ ամենևին չեն եղած այս տեղին վրա քաղաք կամ բերդ շինելու: Քարքարոտներու և բնական ապառաժներու խառնուրդ. կատարյալ քաոս մը կներկայացնե բնության այս վայրենի անկյունը, որուն վրա ոչ խիտ շինություններ կարելի էր շինել և ոչ ալ կանոնավորապես հող մշակել:

Չի կարելի նաև ենթադրել, որ բնության որևէ պատահար հետին ժամանակներու մեջ կերպարանափոխած է այդ տեղերը. առաջին ակնարկ մը բավական է համոզվելու համար, որ անհուն ժամանակներե ի վեր նույնը մնացած է մինչև այսօր:

Նկ. 187. Տրդատի հովանոցի մնացորդները տեղում

Գետափին ամբողջ երկայնությամբ մինչև Արաքսի ափը, թերևս նեղ շերտի մը վրա գտնվեր փոքրաթիվ բնակչություն և հանդիպակաց ափին վրա գտնված քաղաքին մի քաղաքամասը կազմեր, բայց ընդունել իբրև մի առանձին քաղաք Երվանդաշատ անունով, առայժմ, իմ կարծիքով, շատ դժվար է առանց մանրակրկիտ և ուշադիր քննության:

Երբ անցա Ախուրյանի ձախ ափը, արդեն ամեն բան կերպարանափոխ եղավ, ամեն քայլափոխին կնկատվեին մեծամեծ շինությանց հետքեր՝ ցրված մինչև Հաջի-Բայրամ գյուղի ստորին սահմանները: Գետեզրի հետ միասին մինչև Հաջի-Բայրամ ձգվող բարձր սարը այսօր ալ ինքնին մի մեծ բերդ կարելի է համարել, և ամեն հարմարություններ կներկայացնե ի հնումն բոլորովին անառիկ դարձնելու: Արդեն կատարին վրա ամբողջ երկայնությամբ կերևին որձաքարերով հյուսված ահավոր պարիսպներու մնացորդները, որոնք տեղ-տեղ 4-5 մետր բարձրությամբ կերևին:

Բացի սարը վերևեն շրջապատող պարիսպներեն, նաև կերևին առանձին մեծ բերդամասերու բաժանումներ՝ լանջի զառիվայրին դեպի ցած ձգված, որոնց մի տեսակ նմանություններն են Անիի միջնաբերդի ստորոտի բաժանումները Ղզղ-Ղալայի հանդեպ:



*Նկ. 188. Տրդատի հովանոցի կարնիզների բեկորների շարքեր*

*Հին կամրջատեղիին վերև է շինված այսօրվան կամուրջը և գրեթե վերջին սահմանին վրա հին քաղաքին, որովհետև ձախ ափի վրա ալ ասկեց վերև այլևս հարմարություններ չկան ոչ բնակության և ոչ ալ մշակության:*

*Կամուրջի մոտ բարձր դիրքի մը վրա կան շատ մը շինության մնացորդներ, որոնցմե մեկուն տեղական բնակիչներ ավանդաբար պալատ անունը կուտան: Թեև բավականին հին շինություն է և զարմանալի կերպով մեծամեծ որձաքարերով հյուսված, սակայն պալատ համարվելու ամեն առանձնահատկութենե զուրկ է. թերևս եղած է մի մասնավորի մեծ բնակարան՝ երկհարկանի և քանի մը բաժանումներով:*

*Այս շինութենեն քիչ վերև կա մի մատուռի ավերակ, որուն հյուսիսային պատը ամբողջովին ընկած է գետնի վրա առանց քայքայվելու, և ներքևը կտեսնվի մի մեծ արձանագրություն՝ ամբողջ պատը ծածկած: Անհնար եղավ կարդալ, պետք էր մի առ մի քարերը քանդել և վերստին շարել հարթ գետնի վրա, որուն համար ես հնարավորություն չունեի: Արդեն Հաջի-Բայրամի գյուղացիները մի մասը քանդեր և տարեր էին, մաս մ'ալ այնտեղ պեղած էին տանելու համար, այս դիզված քարերուն ալ մեծ մասը արձանագրված էին:*

*Այս արձանագրություններու տառերու ոճեն և մատուռի շինության ոճեն հայտնի էր, որ 13-րդ դարեն առաջ չէին:*

*Այլևս կասկած չկար, որ այս կողմը ապրել է մարդկային մի հոծ բազմություն, և մարդիկ դարեր շարունակ ժայռեր ու ապառաժներ փշրեր, ասդին անդին տեղափոխեր են կյանքի հարմարություններ ստեղծելու համար, իսկ գետեզերքի մի երկար շերտը մշակեր և պարարտացուցեր են հողը, ուր այսօր ալ անթիվ պարտեզներ և մրգաստաններ առատորեն կպտղաբերեն:*

*Հաջի-Բայրամ գյուղին մեջ հնագույն շինության հետքեր չերևցան, բացի մի բրգաշար բերդի մնացորդե, այն ալ շատ նոր ժամանակ պարսիկներու ձեռով շինված, ուրիշ ամեն բան քարուքանդ եղած է բնիկներու ձեռքով: Գյուղը, կարելի է ըսել, ամբողջովին շրջապատված է պարտեզներով և բանջարանոցներով, ասոնց բոլորտիքը իբրև շրջանակ շարված են հին շինություններե քանդված մեծազանգված քարեր, որոնց վրա պահված են տակավին երկաթի կապերու տեղերը գրեթե նույն ձևով, ինչպես որ Անիի մեջ գոյություն ունի միջնաբերդի՝ Ծաղկոցաձորի կողմի դռան քառակուսի բուրգերու վրա: Այս վերջիններն ալ հավանաբար Բագրատունյաց օրով ուրիշ տեղե քանդված ու բերված են՝ այդ դռան երկու կողերին քառակուսի բուրգեր շինելու համար:*

*Օրվան սաստիկ շոգը և ժամանակին կարճությունը զիս կստիպեին հեռանալ այս հետաքրքրական վայրերեն, ուր մեզ համար պատմական շատ թանգագին նյութեր կան հետազոտելիք: Բերդի գլուխը բարձրանալ ուրիշ հարմարագույն ադիթի թողնելով, հնարավոր չափով արձանագրեցի ստորին մասերու ընդարձակ տարածության վրա գտնված նյութերը, որոնք անհրաժեշտ էին: Բացի զանազան դարերու նմուշ շինությանց մնացորդներե, շատ կան նաև թե՛ քրիստոնեական և թե՛ հեթանոսական շրջանի գերեզմաններ: Մասնավորապես ուղղակի Արաքսի հանդեպ գտնված ընդարձակ զառիվայր լանջը ուսումնասիրության խիստ շատ բան կպարունակե:*

*Վերադարձիս, երբ անցա կամուրջը, այս անգամ տարբեր ճանապարհով բարձրացա դեպի Բագարան տանող սարալանջը, գտնե անգամ մը կա աչքի անցնելու համար, թե մի գուցե սխալված եմ քաղաքի մը գոյության հետքեր չտեսնելու մեջ: Սակայն այս անգամ ալ արդյունքը նույնն էր, միևնույն անվար, անմշակ և ապառաժոտ պատկերը կներկայանար: Ուստի այն օրեն ի վեր ակամա հարց ծագեցավ մտքիս մեջ, թե ո՛ւր էր Երվանդաշատը: Եթե այդտեղ գտնվեր մի մեծ մայրաքաղաք, անհնար էր, որ այդպես բոլորովին հետքը կորսվեր:*

*Այս տարակույսը տևեց այնչափ ժամանակ, մինչև որ բարեպատեհ առթիվ մը Անիի մեջ հանդիպեցավ ինձ հարգելի պատմաբան պ. Կ. Կոստանյանց, որուն դիմեցի տարակույսս որևէ կերպով փարատելու և պատմական տեսակետով բացատրելու այս երևույթը:*

*Հարգելի գիտնականը շատ բնական գտավ այս երևույթը և բացատրեց, որ արդեն սխալ է Երվանդաշատը Ախուրյանի աջ ափին վրա փնտռելը: Արշակունի թագավորաց հողային սահմանը կհասներ այդ կողմեն մինչև Ախուրյանի ձախ ափը, իսկ աջը կպատկաներ ուրիշ նախարարական և իշխանական ցեղերու, հետևաբար մի Արշակունի թագավորի համար դժվար էր մի ուրիշի սեփականության վրա մայրաքաղաք շինել: Պարզապես մեր այսօրվան Երվանդակերտ կարծածն է հին Երվանդաշատը, իսկ Երվանդակերտը պետք է փնտրել Արաքսի մյուս ափին վրա: Խորենացիի մեջ եղած շփոթությունը գուցե միայն երկու գետերուն անուններուն մեջ եղած է և փոխանակ Արաքսի երկու եզերքին վրա սույն երկու քաղաքները ցույց տալու, Ախուրյանի երկու կողմին վրա ցույց տված է:*

*Ցանկալի էր, որ պ. Կոստանյանց ավելի մանրամասն տեղեկություն շնորհեր այս ըստինքյան ծանրակշիռ հարցի մասին՝ պատմական որոշ ապացույցներով. ավելի քան անհրաժեշտ է նաև մասնագիտական մի արշավախումբ կազմել մոտիկ ապագայի մեջ, որպեսզի տեղին վրա քննվի մինչև այսօր ընդունված պատմությունն ու ավանդությունը հեղաշրջելու սպառնացող փափուկ և միանգամայն կարևոր խնդիրը:*

## 3. Երերույք

*Թիֆլիս-Երևան երկաթուղագծի վրա, Անի կայարանից 5 կիլոմետրի չափ դեպի արևմուտք, երբեմն կար քրդաբնակ մի գյուղ՝ Կզըլ-Կուլե անունով, իսկ այժմ անբնակ և ավեր: Այդ գյուղին կից կա մի հնադարյան կիսավեր շենք, որը, բացի իր պատկառելի հնության, ունի նաև շինարարական խոշոր առավելություններ. ի տես այս հոյակապ շենքին, որ 24 մետր 37 սմ. չափ ունի, մնացել են միայն չորս պատերը և չորս ծայրին չորս փոքր սենյակներ՝ ոչ բոլորովին անվնաս: Սակայն, եթե մանրակրկիտ կերպով ուշադիր քննենք, թե՛ շենքի վրա եղած կոփածո հսկա քարերի որմնադրական դասավորությունը և թե՛ շուրջը թափված բեկորները, հիրավի կտեսնենք, որ վաղեմի մի մեծագործության առջև կգտնվինք, որուն բազմադարյան մնացորդներն իսկ այսօր արվեստագետների կատարյալ հիացումն են գրավում:*

*Վրան գտնված արձանագրություններից ևս տեղեկանում ենք, որ այս եկեղեցիի մոտ գտնված բնակատեղին, քաղաքավան կամ գյուղ, Երերույք անվանված է:*

*Շինության կամ հիմնարկության թվական չունի. հարավային պատի վրա եղած ամենահին հայերեն արձանագրությունը 1038 թվականն ունի, որը գրել է տվել Բագրատունի Սմբատ թագավորի կինը: Այս արձանագրությունով հայտնում է, որ Երերույքի բնակչության վրա նշանակված թաստակ անունով տուրքը թագուհին բաշխում է որդց որդի:*

*Շինության կամ հիմնարկության ժամանակը շատ պարզ որոշվում է ճարտարապետական տվյալների համեմատությամբ: Նախ, շենքի ներքին ձևը հունական սելլայի կամ բազիլիկի տիպն ունի, որ եթե ոչ նախաքրիստոնեական, գեթ Հայաստանի քրիստոնեության սկզբին հիմնված է, այսինքն մի պարզ սրահ՝ կրոնական արարողությանց հատուկ: Ինչպես կերևի, քիչ ժամանակ հետո, կրոնական նորամուտ պահանջի համաձայն, անհրաժեշտ է համարված արևելյան և արևմտյան անկյունների վրա ավելացնել փոքր սենյակներ: Ահա այս հավելված սենյակները և բուն շենքի վրա եղած պատուհանները բացարձակապես 5-րդ դարուն ավելացած մասեր են, մանավանդ արևմտյան մասերի հավելվածը, որ բուն շենքից անկախ կերպով կառուցվել և միացվել է մայր շենքին, անվիճելի կերպով 5-րդ դարու ոճով, մինչդեռ բուն շենքի վերևի մասը սիրիական ճարտարապետության ազդեցության տակ լինել կթվի:*



Նկ. 189. Երերույքի տաճարը հարավ-արևմուտքից

Հինգերորդ դարու ոճը առաջին վերածնությունն է՝ կիկլոպյան անտաշ քարերից շինված շենքերից հետո, կամ թե գեթ այդպես ենք համարում, որովհետև տակավին մեզ հայտնի չէ, թե 5-րդ դարուց ո՛րչափ առաջ շինությունները այն կատարելության հասան, ինչպիսիք են մինչև 5-րդ դարու քրիստոնեական շրջանի շենքերը: Պարզ է, որ 5-րդ դարուց դեռ մի քիչ առաջ ճարտարապետական շրջանում ձգտում եղած է նոր ոճ ստեղծելու. ահա այդ ձգտումի հետևանքով է, որ մինչև 7-րդ դարու կեսը կանգնված շինությունները մի տեսակ խարխափման մեջ են 5-րդ դարու ոճի մեջ օտար ոճերի պատվաստման փորձերով, ինչպես՝ հունական, սիրիական, պարսկական և այլն և այլն: Սակայն արևելյան ոճերը միշտ մեծ տեղ են բռնել հայ ոճին մեջ:

Որչափ որ մասնակի նորոգություններ եղել են Երերույքի շենքի վրա, այնուամենայնիվ իր արևելյան հատկանիշը չի կորցրել: Ներքին կողմը կողմնակի նեղ թևերի վրա կամարակապ ծածկված էր, իսկ միջին լայն թևը անպայման փայտածածկ էր, առանց գմբեթի: Արտաքին հյուսիսային և հարավային ծածկույթը անորոշ է, իսկ արևմտյանը, որ կարճ է և ցած, հայտնի է, որ կամարածածկ է եղած: 5-րդ դարու ձևով են արևելյան կողմի նեղ ու երկար սենյակները, որոնք գրեթե մի դար հետո ուրիշ եկեղեցիներու մեջ միանգամայն փոխված են: 7-րդ դարում լայնության և երկարության ավելի համաչափ համեմատություն են ստացած և արևելքից դեպի արևմուտք ավելի երկար են, քան 5-րդ դարու հյուսիսից հարավ երկնցած նեղ սենյակները (Հատակագիծը տե՛ս նկ. 61):



Նկ. 190. Երերույքի արևմտյան մուտքի որմնասյունը

Այս շենքի վրա մեծ ուշադրություն դարձրեց ակադեմիկոս Ալ. Թամանյանը, և լուսժողկոմ Մռավյանի միջոցով, պետական օժանդակությամբ, մասամբ նորոգեց փլուզման վտանգ սպառնացող տեղերը: Այս նորոգության ժամանակ շատ պարզ երևաց, որ եթե բարբարոս ձեռքերի կամավոր կերպով ավերումները չլլային, անհնարին էր, որ այս շենքը ինքնին քանդվեր կամ վտանգվեր. մինչև երկու մետր կամ ավելի երկարությամբ տաշված քարեր ձեռք բերելու ագահ բաղձանքը առիթ է տվել այդ հուշարձանը քանդելու:

Նկ. 191. Երերույքի հարավային մուտքերից մեկը

Շենքի արևելյան կողմը ուշագրավ է մի արհեստական լճի տեղը, որը մասամբ մնացել է մինչև այսօր: Ինչպես երևում է, Երերույքը ջրի պակասություն էր զգում, թեև գետը մոտ էր, բայց ձորը խորն էր և ճանապարհը՝ դժվարին: Հավանորեն անասուններին ջուր մատակարարելու համար օգտվել են շենքի արևելյան կողմի մի ձորից, որը գարնան ժամանակ հեղեղում էր, իսկ ամռանը միանգամայն չոր էր, ուստի շենքի արևելյան կողմում մի հարմար տեղի վրա հեղեղի առջևը փակել են և մոտավորապես երկու մետր խորություն ունեցող արհեստական լիճ են պատրաստել ամռանը անասնոց ջուր մատակարարելու համար:

## 4. Ավան

Երևանի հյուսիս-արևելյան կողմը, Կոտայքի շրջանում, Կրխբուլախ գետակի եզերքին կգտնվի Ավան գյուղը, որ 6-րդ դարում մի քաղաքավան էր և Հայաստանը Հունաց ու պարսից մեջ բաժանվելուց հետո՝ Հունաց բաժնին մեջ ընկավ Ավան քաղաքավանը, ուր հակաթոռ կաթողիկոս նստավ Հովհան Սյունական:

Այս Հովհան կաթողիկոսը Ավանում շինեց 6-րդ դարու մեջ մի եկեղեցի, որ նմանություն էր բերում Էջմիածնին. այս նմանությունն այն ժամանակ պատշաճ էր համարվում, որովհետև Հովհանը նստում էր հակաթոռ կաթողիկոս, հակառակ Էջմիածնի, ուստի իր շինած կաթողիկոսական եկեղեցին ևս պիտի ունենար Էջմիածնի ավանդական ձևը, իբր կաթողիկոսական լուսավորչական ձև (Հատակագիծը տե՛ս նկ. 66):

Նկ. 192. Ավանի տաճարը հարավ-արևմուտքից

Ավանը հինգ գմբեթանի եկեղեցի է և հատակագծով շատ նման է Էջմիածնի հին Կաթուղիկեին, որ հետո, 7-րդ դարում ևս մի քանի եկեղեցիներ նույն ձևով շինվեցին իբրև լուսավորչավանդ ձև: Բացի կենտրոնական գմբեթից՝ շենքը ուներ նաև չորս փոքր գմբեթներ՝ չորս անկյունների վրա, ինչպես էր վաղեմի Էջմիածինը, ինչպես նաև Անիի մեջ միևնույն ձևով շինվեցավ Պահլավունիների Առաքելոց եկեղեցին, որովհետև Պահլավունիները ինքզինքնին համարում էին Լուսավորչի սերունդ և Լուսավորչի ավանդած ձևը պահում էին իրենց կանգնած եկեղեցիների համար:

Նկ. 193. Ավանի տաճարի արևմտյան մուտքը

Բացի ներքին խաչաձևությունից և չորս անկյունների վրա գմբեթավորված չորս սենյակներից, ճարտարապետական տեսակետով խիստ հաճելի և ինքնուրույն են շենքի ընդհանուր պսակը և արևմտյան քանդակազարդ դուռը: Բազմաթիվ արձանագրություններ ունի շենքը և երկար դարեր իբրև եկեղեցի է ծառայել տեղական բնակչությանը:

Ավանի ժողովրդյան շատության և քաղաքի ընդարձակության ապացույց կարող են լինել ուրիշ եկեղեցիներ և վանքեր, որոնք անմիջապես մոտերքը շինված են. այս վերջին շենքերեն, որ 10-13-րդ դարերու արվեստներին հատուկ են, դեռ կիսականգուն կգտնվին Ավանի շրջանին մեջ:

## 5. Աշտարակ

Արդյունավետ և պտղառատ գյուղ եղած է միշտ Աշտարակը և պատմական անցքերով հարուստ: Թեև շրջակայքում էլ պակաս չեն նախաքրիստոնեական հնությանց մնացորդներ, որոնք չեն հետազոտված, այնուամենայնիվ քրիստոնեական շրջանի 5-րդ դարե սկսած՝ հսկայական շինություններ մնացորդներ կան մինչև վերջին դարերը, որ ապացուցանում են, թե այդ տեղը եթե ոչ քաղաք, գոնե մեծ գյուղաքաղաք եղած է ի հնումն, որ իր մեջ պարունակում է հոյակապ տաճարների կանգուն ու կիսավեր շենքեր և բազմաթիվ քրիստոնեական դամբարաններ, խաչքարեր և այլն և այլն:



Նկ. 194. Աշտարակի Ծիրանավոր եկեղեցու հատակագիծը



Քրիստոնեական շրջանին այստեղ գոյություն ունեցող Ծիրանավոր անվանված եկեղեցին, որը կանգնված է 5-րդ դարում, չափազանց հստակ կերպով բովանդակում է իր մեջ այն ժամանակվա կրոնական պահանջների հատկանիշները թե՛ հատակագծի և թե՛ ընդհանուր շինության մեջ: Բնականորեն նույն դարուն շինության հայերեն արձանագրություն չէր կարող լինել շենքին վրա, պիտի լիներ կամ ասորերեն կամ հունարեն. այնուամենայնիվ, ինչպես երևում է, մի ժամանակ բերդի են վերածել այս եկեղեցին և արտաքուստ կրկնակի պատերով զրահավորել են, որով վրան եթե արձանագրություն ևս կար, հին պատին վրա, մնացել է նոր շինված պատի տակ: Այս եկեղեցուց մի քանի տասնյակ քայլ հեռու կա մի բերդի մնացորդ, որ հազիվ թե 10-11-րդ դարերու գործ լինի, սակայն անկասկած է, որ ի հնումն եղել է նախորդը և վերաշինվել է հետին դարերում (նկ. նկ. 194, 195):

Նկ. 195. Աշտարակի Ծիրանավոր եկեղեցու ներքին տեսարանը

Ծիրանավորից հետո ժամանակագրական կարգով Կարմրավոր կոչված փոքր մատուռն է, որ կանգնված է 7-րդ դարում, անչափ գեղարվեստական է շենքը և շենքի ընդհանուր պսակը. վրայի 7-րդ դարու կղմինդրե ծածկը մինչև այսօր մնում է: Պարզ քննությունը ցույց է տալիս, թե ո՛ր աստիճան նպատակահարմար և գեղարվեստական ձևով շինված են այս կղմինդրները և ինչքան լավ թրծված, որ մինչև այսօր բնավ չեն ազդված բնության զանազան հոսանքներից: Շինության արձանագրությունը պահված է շենքի շուրջը փոքր ինչ փչացումներով, որոնց մեջ պահված է շինողների անունը, ինչ որ Գրիգոր քահանա ու Մանաս և այլն: Դժբախտաբար թվական չկա, բայց անկարելի է 7-րդ դարուց այս կողմ բերել շինության կերպի և շինանյութերի տեսակետից (նկ. 196):

Նկ. 196. Աշտարակի Կարմրավոր եկեղեցին արևելյան կողմից

Ժամանակագրապես երրորդ տեղն է բռնում Մարիանեի եկեղեցին, որը ունի իր վրա 14-րդ դարու արձանագրություններ. շինությունը նույն դարուն կլինի անշուշտ, սակայն շինողի անվան հետ առասպելներ կապված լինելով՝ ավելորդ ենք համարում այստեղ կրկնել (նկ. նկ. 197-198):



Նկ. 197. Աշտարակի Մարիանե եկեղեցին հարավ-արևելքից



Նկ. 198. Մարինե եկեղեցու արևմտյան պատը, որտեղ երևում են քանդված ժամատան որմնանկարները

Նշանավոր է Քասաղ գետի կամուրջը Աշտարակ գյուղին մոտիկ. այս կամուրջին նախնականը և նրա շինողը հայտնի չէ. ըստ հին նկարագրության՝ միակամար և հսկա գործ էր, սակայն արդեն կիսով չափ փլված էր և խիստ անհրաժեշտ էր վերաշինությունը: Ըստ Առաքել պատմագրի՝ այս կամուրջը շինել է տվել Մոծակենց Գրիգոր կամ Խոջա Գրիգոր անունով մի անձնավորություն, որին աշտարակցիք ավանդաբար անվանում են Քանաքեռցի Խոջա Փլավ: Այս կամուրջը ինքնին խոշոր նշանակություն ունի ճարտարապետական տեսակետով և մի օր, ինչպես Օշականի, նույնպես այս կամուրջի չափագրությունները և լուսանկարները պետք է հանել ապագա ուսումնասիրությունների համար:

Վերջապես, ուսումնասիրելի կարևոր հուշարձանների շարքում պետք է որ առաջնակարգ տեղ ունենա այս արդյունաշատ գյուղի այգեստաններն ու պարտեզները ոռոգող առուների ջրաբաշխական ուսումնասիրությունը, որ խիստ հետաքրքրական է և օգտակար Աշտարակի շինության պատմության համար: Այգեգործության և պտղաբուծության վայր լինելով ի վաղուց հետե, ջրաբաշխական աշխատանքն անպակաս է եղած այս գյուղից: Դեռ 13-րդ դարու մի արձանագրություն կա, որ մի Հակոբ Երեց նորոգել է Աշտարակի մեծ առուն: Այսպես, եթե մանրամասն ուսումնասիրվեն առուները և նրանց շինության ժամանակներն ու շինելակերպերը, ըստ ամենայնի մի գիտական ուսումնասիրություն կլինի Հայաստանի մեջ ընդհանրացող ջրային ոռոգման գործնական օրենքների համար:

## 6. Հռիփսիմե և Գայանե

Ճարտարապետական տեսակետով Էջմիածնի տաճարը տեսնելու գնացողը անպայման կգնա տեսնելու նաև Հռիփսիմեի և Գայանեի շենքերը, որոնք ոչ միայն մոտ են միմյանց, այլև գրեթե միևնույն 5-7-րդ դարաշրջաններին կանգնված շինություններ են: Այս շենքերը հնադարյան լինելուց բացի, ունին նաև ճարտարապետական խոշոր արժանավորություններ, որ ամեն մի արվեստագետի համար անհրաժեշտ է ուսումնասիրել:

Նկ. 199. Հռիփսիմեի տաճարը հարավ-արևելքից



Նկ. 200. Հռիփսիմեի տաճարի կտրվածքը՝ արևմուտքից արևելք

Հռիփսիմեի և Գայանեի համար պատմագրական ակնարկներ կան, որ սկզբում շինվածները փոքր մատուռներ էին «կարի ցած և մթին», ըստ Սեբեոսի, «խրթին և փոքրատեսակ իմն», ըստ Հովհաննես կաթողիկոսի, իսկ ներկա մեծ շինություններից՝ Հռիփսիմեն կառուցել է Կոմիտաս կաթողիկոսը 7-րդ դարում, Գայանեն կառուցել է նույն դարուն Եզր կաթողիկոսը: Այս երկու կաթողիկոսներն ևս քանդել են նախաշեն հին մատուռները և կանգնել են այժմյան հոյակապ շենքերը:

Խոսենք Հռիփսիմեի մասին:

Հռիփսիմեի ներկա շենքը կառուցված է 618 թվականին: Այս հոյակապ շենքի կառուցումից հետո նրա ճակատագիրը գրեթե անստույգ է երկար դարեր: Հայտնի երևում է, որ Վաղարշապատի մայր տաճարի նման խնամքից և պաշտպանությունից զուրկ մնալով, նա հետզհետե ավերվել ու քանդվել է մինչև Փիլիպպոս կաթողիկոսը (1633-1655), որը ձեռնարկեց նորոգության (նկ. նկ. 83, 199-202):

Փիլիպպոսի նորոգությունից առաջ Առաքել Դավրիժեցու նկարագրությունը ոչ միայն ցույց է տալիս այդ շենքի երկար դարեր անխնամ մնալը և ավերմունքի ենթարկված լինելը, այլև տալիս է նորոգման մանրամասնությունները հետևյալ կերպով. «Իբրև կատարեալ աւարտեցան ամենայն շինուածք տաճարին Գայիանեայ կուսին, ապա գնացին ի տաճար սրբուհի կուսին Հռիփսիմեայ, եւ ձեռն ի գործ արկեալ սկսան եւ զայն ևս նորոգել: Վասն զի յարտաքուստ կուսէ եկեղեցւոյն գլուխ կաթուղիկէին, եւ տանիքն բովանդակ եւ երեսք որմոցն եւ յատակք նորին. իսկ ի ներսի կողմանէ բեմն, եւ սալարկ յատակն, եւ չորից խորանաց

մէջն, այս ամենայն զոր յիշեցի, աւերեալ եւ քայքայեալ էին. վասն որոյ բազում ջանիւ և յոքնակի աշխատութեամբ, գուն գործեալ մինչև զամենայն նորոգեալ կատարեցին, եւ ի վերայ գագաթան եկեղեցոյն կառուցին...» (Առաքել Դաւրիժեցի, գլուխ Իե, էջ 328):

Նկ. 201. Հռիփսիմեի տաճարի ներքին տեսարանը

Առաքել, մի ուրիշ առթիվ, ոչ միայն Հռիփսիմեի, այլև Վաղարշապատի երեք եկեղեցիների համար հետևյալ տխուր նկարագրությունը կուտա. «Եւ երեքին տաճարքս այսոքիկ, եթէ Էջմիածնի, եթէ Գայանեայ եւ եթէ Հռիփսիմեայ, էին աւերեալ, խախտեալ և խարխալեալ եւ անչքացեալ... յէջմիածին կային միաբանք սակաւք. եւ այնք ևս յոյժ տգէտք եւ գռեհիկք: Իսկ Գայիանեայ եւ Հռիփսմեայ ամենևին անքնակ եւ անպարիսպ, նա եւ դրունք ևս ոչ գոյին եկեղեցեացն եւ խորանացն, եւ յարտաքուստ կողմանէ տանիսն բովանդակ եւ երեսք որմոցն քանդեալ, եւ հիմունքն խարխալեալ եւ խրամատեալ. եւ ի ներսի կողմանէ բեմն եւ յատակ եկեղեցւոյն քանդքանդեալ եւ բովանդակ եկեղեցին և խորանքն աղբովք անասնոց լցեալ, վասն զի յաւուրս ամարայնոյ եւ ձմերայնոյ անասունք, որպէս եղինք եւ ոչխարք մակաղէին ի մէջ եկեղեցեացն» (Առաքել Դաւրիժեցի, էջ 180, Վաղարշապատ, 1896 թ.):

Շինության և նորոգումների թվականների համեմատությունները ցույց են տալիս, որ Էջմիածնի տաճարին նման մի ճակատագիր ունեցել է նաև ս. Հռիփսիմեն: Մոտավորապես 12 դար անտերության մատնվել և լիակատար քայքայման դրության է հասել մինչև Փիլիպոսի ձեռնարկած վերանորոգությունը, որուն մեջ թաղված է նաև ինքը:

Վերին աստիճան հետաքրքրական և ուշագրավ է շենքը թե՛ ներքին և թե՛ արտաքին երևույթների տեսակետով: Թեև բոլորովին անզարդ, սակայն ուղղահայաց, հորիզոնական և կոր գծերի այնքան ներդաշնակություն կա, որ մարդ երկար մնում է իբրև դիտող այս շենքի հանդեպ. իսկ ներքին կողմը ամենից հիանալին է արձագանքը. ամենացած ձայնով խոսակցությունն անգամ մեծ արձագանք է տալիս, հետևաբար, այնտեղի երգեցողությունը, բնականաբար, ավելի մեծ ներդաշնակությամբ պիտի հնչեր հանդիսականի ականջին: Ճարտարապետական արժանիքի մասին ես չեմ խոսում այստեղ, յուրաքանչյուր մարդ կարող է անձամբ գնալ և տեսնել, միայն պարտք եմ համարում մի թյուրիմացություն պարզել Կոմիտասի գերեզմանի նկատմամբ, որ ցույց են տալիս եկեղեցիին մեջ՝ սեղանի առջև, համարելով այնտեղ դրած մեծ քարը Կոմիտասի գերեզման, բայց հետևյալն է իրողությունը:

Նկ. 202. Հռիփսիմեի հարավ-արևելյան անկյան վերին մասն արտաքուստ



Հյուսիսային կողմի ավանդատան մեջ մի նեղ անցք կա, որ կտանի դեպի խորանի ներքև: Որովհետև ոչ մի տեղից լույս չունի, հետևապես երբ լույս վառվի, կտեսնվի, որ այդ նեղ անցքը կտանի մի մութ սենյակ, ուր զետեղված է կարծեցյալ Հռիփսիմեի մարմարյա դագաղակերպ շինված տապանաքարը: Այս սենյակին արևմտյան կողմը եթե լավ քննենք, կտեսնենք, որ սրբատաշ քարով շատ խնամքով փակված մի դուռ կա, որը թեև այժմ փակ է, սակայն, իհարկե, մի ժամանակ բաց է եղել, բայց դեպի ո՞ւր կտանե այդ դուռը: Վերջապես, մանրակրկիտ քննությունները և չափերը ցույց տվին, որ շատ հին ժամանակ գերեզմանը շինված է եղել ուղղակի բեմին ներքև, և գերեզմանի մուտքը եկեղեցվո մեջ բեմի առջևից էր, անշուշտ սանդուխով ցած կիջներ և դռնից անցնելով՝ կմտներ Հռիփսիմեի գերեզմանը: Բայց մի ժամանակ, հայտնի չէ թե ե՛րբ, տաճարին մեջեն եղած ճանապարհը լցնելով՝ հավասարեցրել են շենքի սալահատակին և վրան դրել են այժմ երևցող մեծ քարը, որ արտաքուստ տապանաքարի տպավորություն է թողնում. նույնիսկ ոմանց մոլորեցնում են, թե Կոմիտասի գերեզմանն է, մինչդեռ Կոմիտասի ժամանակ եկեղեցական օրենքով տաճարի մեջ մեռել թաղելը մեծ սրբապղծություն էր: Գայանեի վանքի նախկին վիճակի մասին Հռիփսիմեից տարբեր մի բան չկա ասելու, նույն ճակատագիրն է ունեցել, ինչ որ Էջմիածնի տաճարը և Հռիփսիմեի վանքը, թերևս - մի քիչ վատ վիճակի մեջ, ինչպես Առաքել Դավրիժեցին ասում է՝ «Գայիանեայ տաճարին տանիքն բովանդակ իջեալ էր, եւ որմունքն միայն կային կանգնեալ եւ ոչ այլ ինչ»:

Այս եկեղեցին շինողն է Եզր կաթողիկոս [631-642 թ.]: Բայց տարօրինակ կերպով իր ճաշակը կտարբերի նախորդ Կոմիտասի ճաշակեն եկեղեցվո ձևին նկատմամբ: Կոմիտաս՝ հետևելով Էջմիածնի տաճարի նոր ձևին և ավելի վայելչացնելով, կանգնել է Հռիփսիմեն. իսկ Եզր, ավելի հավատարիմ հին բազիլիկ ձևին, նույն ճաշակով կանգնել է յուր շինած եկեղեցին: Սակայն մի նկատելի պարագա եթե կա, այն է, որ այս շենքի վրա ամեն կողմից մնացել են 7-րդ դարու շարված քարերը և քարերի վրա քարտաշ վարպետների դրած նշանները (նկ. 71, 203 և 204):



Նկ. 203. Գայանեի տաճարը հարավից

Նկ. 204. Գայանեի տաճարի հարավ-արևմտյան մասը ներսից

Վրայի արձանագրությունից երևում է, որ չենքը շինել են Գրիգոր Եղյուատր և կինը՝ Մարիամ, 636-37 թվականին, Հերակլ կայսեր և Արշարունյաց տեր Ներսեհ Կամսարականի օրով:



Նկ. 205. Ալամանի ս. Անանիայի եկեղեցին

Ինչպես կերևի, երկար դարեր անտերության մատնվելուց հետո՝ 1652 թվականին Փիլիպպոս կաթողիկոս վերանորոգեց այս շենքը, իսկ 1688 թվականին արևմտյան ճակատին կից Եղիազար կաթողիկոս շինեց երկար նախագավիթը, ուր այժմ շարքով գերեզմաններ կան: Այս եկեղեցվո վերջին նորոգությունը, ըստ ոմանց, պատկանում է Խրիմյան Մկրտիչ կաթողիկոսին:

## 7. Ալաման

Անիից դեպի Տեկոր, մոտավորապես ճանապարհի կեսին կգտնվի քրդական Ալամ գյուղը: Գյուղի մեջ կա 7-րդ դարու մի խաթարված եկեղեցու շենք, որուն վրայի շինության և այլ արձանագրություններից երևում է, որ տեղի հին անունը Ալաման էր, նաև մի կարևոր բնակավայր, ուր կգտնվեին իշխանական տոհմեր, ինչպես այս եկեղեցին շինողը:

Եկեղեցիի շենքը չափավոր մեծություն ունի և 7-րդ դարու եկեղեցական ոճի համաձայն, արտաքուստ շեշտված խաչաձև է, ավելի նախնական ձևով, այսինքն՝ փոխանակ անկյունավորի, ուղղակի քառակուսի դուրս շեշտված աբսիդներ (նկ. 205):

Շենքի ձևը կամ մեծության չափը ըստինքյան մի ճարտարապետական կոթող չէ, սակայն շինությունը ըստ ամենայնի կատարյալ է շինարարական տեսակետով: Բավականին խոշոր քարերը, միանգամայն սրբատաշ, շարված են շենքի ներքին և արտաքին երեսների վրա, իսկ շենքի ընդհանուր պսակ և պատուհանների քանդակազարդ շրջանակներ 5-րդ և 6-րդ դարերի ավանդական ձևով շինված են, ինչպես 7-րդ դարու շատ ուրիշ շենքերի վրա, որոնց մասին կհայտնվի իր տեղում: 7-րդ դարուց հետո այլևս այս ձևերը գոյություն չունեն: Այս նախնական ձևերի մեջ գրեթե պարզ երևում է ապագա արաբական ստալակտիտի ուրվագիծը, կամ կմախքը, որ շատ կարևոր է հետագա ստալակտիտների ուսումնասիրության համար:

## 8. Արթիկ

Արթիկը մեծ հայ գյուղ է Շիրակ գավառի մեջ, Արագած լեռան արևմտյան լանջերին ստորոտը: Այս գյուղին մեջ կան երկու նշանավոր շենքեր, մեկը 6-րդ դարու առաջին քառորդին շինված, իսկ մյուսը, որ մեծ է, 7-րդ դարու հոյակապ շենքերից մեկն է. ունի իր վրա Թալինի մեծ կաթուղիկեի հատկանիշները. գմբեթը ընկած է անհայտ ժամանակ, ներկա գյուղացիք չեն հիշում այդ դեպքը, բայց մի ժամանակ շենքի մի մասը բերդի են վերածած: Սա ևս վրան արձանագրություն չունի, մեկ արձանագրություն միայն կա հարավ-արևմտյան կողմը, բայց այնքան բարձր է և մի քիչ էլ եղծված, որ ներքևին կարդալ անկարելի է: Զորս կողմից պատերը միանգամայն անվնաս են:



Նկ. 206. Արթիկի մեծ եկեղեցին

## 9. Լմպատա սուրբ Ստեփաննոս

Արթիկ գյուղի մոտ, մեկ ու կես կիլոմետր հարավ-արևմուտք, կգտնվի 7-րդ դարու մի ուրիշ շենք՝ Լմպատա ս. Ստեփաննոս անունով, որը բոլորովին անվնաս մնացած է մինչև այսօր: Այս շենքը շինողի անունը ևս հայտնի չէ, սակայն ունի իր վրա բազմաթիվ արձանագրություններ՝ նվիրատվության և օրենսդրության վերաբերյալ: Արևելյան կողմը միաբանաց գերեզմանատուն է, իսկ մի քիչ հեռավոր շրջակայքում հաճախ գտնվում են նախաքրիստոնեական հնություններ, պատերի մնացորդներ, գերեզմաններ (նկ. նկ. 81, 82):

## 10. Մրեն

Հայաստանի հին ճարտարապետությանը մեծ պատիվ բերող շենքերեն մեկն է 7-րդ դարում կանգնված Մրենի կաթուղիկեն, որը գրեթե մինչև մեր օրերը կանգուն է աննշան վնասվածքներով: Եթե հնագիտական լուրջ հոգատարություն լինի, հեշտությամբ դարմանելի վնասվածքներ են, և այն ժամանակ այս շենքը դեռ մի քանի դար ևս կապրի:

Ըստ պատմական տեղեկությունների, Մրենը շատ հին ժամանակ չեն և բավականին մեծ քաղաք էր: Ափսո՛ս, որ նախաքրիստոնեական շրջանին նրա գոյության տեսակետով չենք քննած, այնուամենայնիվ վերջերս լեզվաբան Ղափանցյանն ասում էր, որ Մրեն՝ ուրարտական բարբառով բերդ կամ ամրոց է նշանակում: Այս հավանական է, ի նկատի ունենալով Մրենի դիրքը և խոր ձորերով ու ժայռոտ դարևանդներով շրջապատված լինելը: Ինչ էլ որ լինի Մրենի նախաքրիստոնեական վիճակը, 451 թվականին, Ավարայրի մեծ պատերազմի ժամանակ, հիշվում է Մրենի, իբրև կարևոր քաղաքի, գոյությունը:

Մրենը մի անգամ տեսնել շատ քիչ է. երկար օրեր և շաբաթներ են հարկավոր լիակատար ուսումնասիրության համար, բայց դժբախտաբար ես չունեցա այդ հնարավորությունը: Միայն մի օր հազիվ հնարավոր եղավ Մրենն անցնելու և կանգուն տաճարն ուսումնասիրելու: Իսկ ընդհանուր քաղաքատեղին կամ Մրենի հատուկ շուրջանակի վայրերն իսկապես ավերակների խիտ տարածություն է ամեն կողմ, բացի այգեստաններից, որոնց սահմաններն են միայն երևում, միանգամայն խոպանացած են մշակութենե և պտղաբերութենե:



Նկ. 207. Մրենի եկեղեցին

Մրենը խիստ մոտ է Բագարանին և համարյա Ախուրյան գետի եզերքին է, միայն թե մինչև քաղաքատեղը բարձրանալու համար գետեզերքից պետք է զառիվեր բարձրանալ և մտնել քաղաքատեղին, որ ընդարձակ մեծ տարածություն է բռնում: Լանջը բարձրանալով, քաղաքատեղը մտնելուց անմիջապես, այդ ընդհանուր ամայության և ավերակների մեջ երևում է կանգուն վիթխարի միակ շենքը, այսինքն՝ Մրենի հոյակապ տաճարը, որ գրեթե մեր բոլոր պատմագիրներեն գովված է. միայն մի չփոթություն տեղի ունի պատմագիրների տված տեղեկության և ներկա ուսումնասիրված Մրենի միակ կանգուն շենքի մեջ:

Առհասարակ մատենագիրները տեղեկություն են տալիս, որ Դավիթ Սահառունին Մրենի մեջ կանգնեց մի չքեղ եկեղեցի: Ներկայիս, պատմագիրների այդ տեղեկությունները վերագրվում են այժմ Մրենի մեջ կանգուն երևցող մեծ տաճարին՝ առանց որևէ վարանումի: Սակայն վերջերս այդ համոզումը կասկածելի դարձավ շենքի վրա շինության արձանագրության մասնակի վերծանումով, որ տեղի բարձրության և մասամբ քարերի մաշվածության պատճառով չէր կարդացվում: Վերջերս, շնորհիվ լավ լուսանկարի, լուսանկարին վրա հնարավոր եղավ կարդալ մի քանի անուններ, որով հավանականագույն դարձավ, թե այս եկեղեցին ոչ թե Դավիթ Սահառունիին շինածն է, այլ Կամսարական շինարար տոհմի շառավիղներից մեկն է շինած: Արձանագրության մեջ հիշված Հերակլ կայսեր և Շիրակա ու Արշարունյաց տեր Ներսեհի անունների գոյութենեն ժամանակը միանգամայն փոխվում է և չի համապատասխանում Դավիթ Սահառունիի ժամանակին: Բայց մի բան շատ տարօրինակ է, որ այս եկեղեցիի մասին, իբրև Կամսարականների շինություն, ոչինչ չեն հիշում հայ պատմագիրները. իսկ Դավիթ Սահառունիի կանգնած շենքի մասին, որ այնչափ գովեստով են խոսում, ոչինչ գոյություն չունի տեղին վրա. տարակույս չկա, որ լիակատար ավերակի է փոխված Դավիթ Սահառունիի կանգնած շենքը[1]:

Ընդհանուր շենքը թե՛ ներքուստ և թե՛ արտաքուստ իր կատարյալ պարզությամբ հիանալի ներդաշնակություն և վսեմ երևույթ ունի: Շինարարության տեսակետով այնքան ընտիր և մաքուր աշխատանք է թափված այս շենքի վրա, որ, կարծես, միակտուր երկաթի ձուլվածք է ներկայացնում: Յոթերորդ դարուց մինչև այսօր անսասան կանգնած է, կուրծք տալով բոլոր բնական պատահարներին: Զգիտեմ՝ ինչ պատճառով, արևմտյան ճակատի արտաքին քարերի մի նորոգություն է հարկ եղած 13-րդ դարում: Հատկապես զանազան չափերով մի խումբ խաչքարեր պատին ամրացնելու դիտավորությամբ շենքի ճակատի քարերը քանդել են և վերին աստիճանի ճարտարությամբ նրանց տեղը շարել են 10-րդ և 11-րդ դարերու խաչքարերը, որոնք մինչև այսօր պատին հետ լիակատար ձուլված՝ մնացել են անվնաս:

Գմբեթավորված է շենքը և գմբեթի ներքին մակերեսին վրա կան շառավիղավոր զարդեր և տեսանելի երակներ՝ իբրև զարդ: Պատերը ներսեն և դրսեն շինված են մեծ քարերով՝ սրբատաշ, մաքուր: Կտուրները ծածկված են հիանալի թրծված և ձևավորված կղմինդրներով: Գմբեթի կտուրներուն վրա դեռ այսօր իսկ անվնաս շարված են կղմինդրները, որոնք 7-րդ դարու միակ հատակնիշն են: Ընդհանուր պսակը արտաքուստ 5-րդ - դարու ավանդական ձևով է շինված, իսկ արևելյան կողմից պատուհանների վրա կան խորհրդավոր քանդակներ, որ նույն ձևով ոչ մի տեղ չի երևում:

Հյուսիսային և արևմտյան դռան վրա բարձրաքանդակներ կան, որոնք բավականին մեծ են և խառն են կրոնական ու աշխարհիկ մարդկանց պատկերներով. այս պատկերները չափազանց շահեկան են ազգագրական տեսակետով. որովհետև կրոնական բարձրաքանդակները եթե բյուզանդական պատկերների ոճը կամ տիպը ունին, այնուամենայնիվ աշխարհիկ մարդկանց պատկերները զուտ տեղական տարազով հագնված մարդիկ են: Այս պատկերների մեջ շատ պարզ երևում են ժամանակակից կամ ավելի հին՝ 5-րդ և 7-րդ դարերի իշխանական տարազները, որոնք ոչ մի տեղ չեն արտահայտված, իսկ այստեղ, ինչպես նաև Թալինում և ուրիշ տեղերում հավաքված կոթողների վրա բարձրաքանդակ փորագրված են ամենայն մանրամասնությամբ: Հետևաբար, շնորհիվ այս բարձրաքանդակների այսօր մենք կարող ենք գիտնալ, թե 5-7-րդ դարերում Հայաստանի մեջ ինչ տարազ ունեին մեծամեծ իշխաններ կամ ազնվականներ (նկ. նկ. 70, 120, 121,128):

## 11. Հայ ճարտարապետությունը Անիի և Երվանդակերտի մեջ

Տեկորի հետազոտությանս ժամանակ մեծ զարմանքով կնկատեի, որ 12-րդ և 13-րդ դարերու մեջ վերածնվող հայ ճարտարապետության հետքեր չեն երևիր, վերածնություն մը, որ իր գեղապաճույճ զարդաքանդակներու անհուն հարստությամբ ոչ միայն կգերազանցե նախորդ շրջանները, այլև մասնավորապես պարծանք է Շիրակի բնակչության ստեղծագործող տաղանդին:

13-րդ դարու հայկական ոճին Տեկորի մեջ բացակայությունը պատահական բացառություն մը համարեցի այն ատեն, բայց երբ մինչև Երվանդաշատ և Երվանդակերտ երկու կողմի վրա հետազոտեցի ճարտարապետական ամեն մնացորդներ, այն ատեն պարզ տեսնվեցավ, որ 13-րդ դարուն Շիրակի մեջ նախանձելի չքեղությամբ կատարելագործվող հայկական վերածնված գեղարվեստը ոչ թե Տեկոր, այլ մինչև Ալաման իսկ չէր հասեր: Ալամանեն սկսած մինչև Երվանդակերտ մի ամբողջ շրջան է, որուն մեջ ամենևին չեն երևիր 13-րդ դարու արվեստի արտադրություններ, ինչ չափով որ տարածված են Շիրակեն դեպի հյուսիս և դեպի հյուսիս-արևելք:

Ասոր հակառակ, Շիրակեն դեպի հարավ մինչև Արաքսի ափերը (անկեց անդին չեմ անցած), մասնավորապես Բագարան, Երվանդակերտ իրենց մեջ անհամեմատ մեծ քանակությամբ պահած են մինչև հեթանոսական շրջանի նմուշներ, որոնցմով շատ աղքատ է Շիրակը:

Ուստի, այս երևույթեն կարելի է եզրակացնել, որ մինչև 10-րդ դարը հայ ճարտարապետության զարգացումը ընդհանուր է եղած ամբողջ Հայաստանի մեջ. սակայն 11-րդ դարու անկումեն հետո միայն Շիրակն է, որ սահմանակից հյուսիս և հյուսիս-արևելյան քանի մը գավառներով վերածներ է 13-րդ դարուն մի նոր ճարտարապետական ոճ և հասցուցեր է զայն գերագույն կատարելության:

Անին սահմանը եղած կերևի հին և նոր ճարտարապետական վերածնյալ արվեստներու: Մինչև 7-րդ դարը Արարատյան աշխարհին մեջ ծաղկող գեղարվեստեն թեև բոլորովին զուրկ չէ մնացած Շիրակը, սակայն մեծ չափերով ալ չէ ազդված: 5-7-րդ դարերում կանգնված հիշատակարանները Անիեն դեպի հարավ են, որ կերևին և կբազմանան, մինչդեռ դեպի հյուսիս եղած քրիստոնեական շրջանի հիշատակարաններու ամենահինը 10-րդ դարեն անդին չանցներ: Հոռոմոսի մեջ ս. Մինաս եկեղեցին և Անիի մեջ միջնաբերդի գագաթին վրա պալատական եկեղեցիի պատերը միայն կերևին 10-րդ դարեն առաջ շինված, սակայն անոնք ալ, չեմ կարծեր, որ անցնեն 9-րդ դարը և հասնեն մինչև 7-րդ դարը:

Ինչպես հին արվեստները պատահական ներգործություն ունեցեր են Շիրակի և իր սահմանակից գավառներու վրա, նույնպես ալ Շիրակի ստեղծագործությունը՝ 13-րդ դարու արվեստն ալ՝ պատահական ներգործություն ունեցեր է Արարատյան նահանգին վրա: Հիրավի, մինչև Երվանդակերտ հատ-հատ երևացին վերջին վերածնության նմուշներ, սակայն շատ թույլ ու տկար, կամ հասարակ տապանաքարեր են անոնք, կամ անզարդ ու անպաճույճ մատուռներ և մանր-մունր նորոգություններ, մինչդեռ Անիեն մինչև Լոռի, Արագածոտն և Սյունաց սահմաններ ողողված են 13-րդ դարու հրաշակերտ հիշատակարաններով:

Գուցե պահ մը ենթադրվի, թե քաղաքական կամ տնտեսական այլ և այլ աննպաստ պատահարներ անհետացուցած են վերջին զարգացման ապացույցներ Արշարունիքի և Երասխաձորի մեջեն: Այս ենթադրությունը հավանական էր այն ատեն, երբ հին և նոր հիշատակարաններ հավասարապես ենթարկվեին նույն պատահարներուն, և բնավ չտեսնվեին 11-րդ դարեն սկսած մինչև հեթանոսական շրջանի կանգուն կամ կիսականգուն հիշատակարաններ, բնականաբար ավերիչ արկածներ չէին կարող զանազանություն դնել դարաշրջաններու, հավասարապես պիտի քանդեին և կամ պիտի պահեին:

Շիրակեն մինչև Երասխաձոր, իբրև բացառություն, 13-րդ դարու հայ ճարտարապետության կատարելագործված արվեստի մի նմուշ պահած է Մրենը:

Մրենի մեջ, բացի քանի մը խաչարձաններե, Սահմադինի պալատին դուռն է, որ կանգուն կա վերջին վերածնության ոճով և բավականին ճարտարորեն և ճաշակավոր շինված: Բայց, իմ կարծիքով, Սահմադինն ալ իբրև Շիրակի տեր կամ իշխող՝ միակն է, որ բացառաբար անցնելով սահմանը, Մրենի մեջ բնակություն հաստատեր է:

Հայտնի է, որ Մրենը, սկսած Բագրատունի թագավորներու շրջանեն, նույնպես նաև Սահմադինի օրով, Շիրակի այգեստանն ու մրգաստանը եղած էր, բայց ոչ երբեք քաղաք կամ քաղաքավան, որովհետև այն ընդարձակածավալ դաշտի վրա այգիներու և պարտեզներու սահմաններն են, որ պարզ կորոշվին, քաղաքի հատուկ խիտ բնակությանց հետքեր ամենևին չկան:

Թեև այցելուն հաճախ կհանդիպի մեծամեծ շինությանց հետքերու և որոշ կտեսնե անոնց ներքին բոլոր բաժանմունքները, սակայն անոնց ամենն ալ իրարմե բավական հեռու, այգիի մը, պարտեզի մը շրջափակին մեջտեղը կամ մեկ կողմի շինված են, հավանորեն սեփականատերերը տարվան որոշ եղանակներուն կբնակեին անոնց մեջ, այսինքն այգեկութի և հունձքի ժամանակ:

Մրենը, բացի գեղարվեստական հիշատակարաններե, պահած է իր մեջ մի ուրիշ հետաքրքրական հաստատություն, որն որ բացարձակապես կպակսի ուրիշ ավերակներու մեջ: Այգեմշակության արվեստն է այն, որուն զարգացման և արդյունավորման համար ի գործ դրված բոլոր միջոցներուն հետքերը մեծ չափերով պահված են տակավին: Մեր պատմությունը վերին աստիճանի կարոտ է այդ ճյուղի մանրազնին ուսումնասիրության, և Մրենը միակն է, որ բավարար չափով մեզ պիտի գոհացնե, եթե մասնագետներ շտապեն այդ շահեկան նյութերը ուսումնասիրելու, քանի դեռ վերջնականապես կորած չեն:

---

[1] Այս հարցում հեղինակը 1909 թվին «Ախուրյան»-ում տպագրած «Հայ ճարտարապետությունը Անիի և Երվանդակերտի մեջ» հոդվածում Մրենի շինությունը նույնպես վերագրում է Դավիթ Սահառունուն:

Կազմող

Առանց պեղումներու իսկ կերևան մեծ ու փոքր ջրամբարներու, լիճերու հետքերը և ջրի այդ շտեմարաններեն ճյուղավորվող ջրաբաշխական առուները, որոնք ոռոգել են ամբողջ տարածությունը:

Ուշագրավ են հնձաններու ձևերը, որոնց վրա պարզ կտեսնվի, թե ինչպես գլանաձև ողորկ տաշված քարեր խաղողին վրա գլորելով՝ կճմլեին, քամված ջուրը ինչպես կանցներ երկու կամ երեք պարզուտներ ունեցող քարե խողովակներե և կթափվեր հատկապես շինված հորերու մեջ, ուր վերջնականապես պարզվելեն հետո կհանեին կարասներու մեջ:

Մրենի մեջ, չնայելով դարավոր անտերության, հրաշքով, գրեթե անարատ պահված է 7-րդ դարում Դավիթ Սահառունիի շինել տված հոյակապ կաթուղիկեն, որուն մեծությունը, ոճը, գեղարվեստական ճաշակը և շինարարական արվեստի բոլոր կատարելությունները հիացման արժանի են: Սակայն, տարաբախտաբար, ինչպես մեր ուրիշ շատ մը հնագույն տաճարներ, նույնպես և սա իբրև ոչխարաց գոմ կծառայե Ծպնի և Մավրեկ գյուղացիներու համար:

Հատակագծային ձևին և զարդաքանդակներու ոճին մեջ հայ ճարտարապետության ընդհանուր ուղղութենեն շեղվող բացառություններ ունի այս տաճարը, սակայն այդ բացառությունները երբեք չեն նսեմացներ 7-րդ դարու հայ ճարտարապետին թե՛ ինքնուրույն ճաշակի նրբությունները և թե՛ շինարարական արվեստի մեջ ունեցած լիուլի հմտությունը:

Ընդհանուր ուղղութենեն խոտորող գլխավոր մասը կկազմե խորանի կիսաբոլորակի արևելյան պատեն դուրս ցցվիլը: Տեկորի տաճարեն հետո սա երկրորդ օրինակն է դուրս ցցված խորանի: Տեկորի տաճարին վրա համոզվելու շատ պատճառներ կան, որ հետո է դուրս հանված խորանը, բայց Մրենի մեջ առայժմ դժվար է մի բան վճռել նախքան պատշաճ խուզարկության ենթարկելը, որն որ, դժբախտաբար, այս տարի չհաջողվեցավ ինձի:

Ինչ որ ավելի տարօրինակ է և գրեթե հակառակ հայոց եկեղեցիներու ավանդական օրենքին, Մրենի տաճարի կիսաբոլոր խորանին երեք մեծ պատուհաններ ունենալն է. թերևս առաջին և վերջին օրինակն է այս ձևով խորան հայոց մեջ և ուղղակի ազդված Կոստանդնուպոլսո ս. Սոֆիա եկեղեցիի խորանեն:

Մինչև ս. Սոֆիայի շինվելը հունաց մեջ ալ անսովոր էր երեք պատուհանով խորանը, ուստի, երբ Հուստինիանոս ցանկություն հայտնեց խորանը երեք պատուհանով լուսավորելու, կարծիքներու հակասություններ և բուռն վիճաբանություններ առաջ եկան հոգևորական դասին մեջ, մինչև որ Հուստինիանոսի մեկ տեսիլքին մեջ հրեշտակը վերջ դրավ այդ վիճաբանություններուն:

Հրեշտակը հայտնեց, որ երեք պատուհաններն անհրաժեշտ էին երրորդության խորհրդանշանը ներկայացնելու համար, և այդ երեք պատուհաններեն ներս թափանցող լույսի անբաժանելիությամբ պիտի բացատրվեր երրորդության, այսինք՝ հոր, որդո և հոգույն սրբո անբաժանելիությունը:

Տարակույս չկա, որ Բյուզանդիոնի հրեշտակին բացատրությունը ներգործություն ունեցեր է Մրենի տաճարին վրա, սակայն, ինչպես իրմե առաջ, նույնպես ալ իրմե ետև՝ հետևողներ ընավ չէ ունեցած, բնականաբար, հայոց մեջ դավանաբանական ուրիշ ավելի համոզիչ վարդապետություն մը հայ եկեղեցիներեն վտարեր է այս օտար նորությունը:

Հոռոմոսի ս. Հովհաննես տաճարի խորանը թեև երկու պատուհան ուներ, սակայն անոր այնպիսի ձև մը տրված է, որ մեկ պատուհանի նշանակություն ստացած է. ուրիշ տեղեր գոնե ինծի դեռ չեն պատահած ոչ երկու և ոչ ալ երեք պատուհանով խորաններ հայոց մեջ:

Ներքին կողմեն զարդարանքներ չունի, յուր շինվածքի մաքրությունը և համաչափական վեհությունն է յուր բոլոր զարդարանքը, անհամեմատ լայն և բարձր պատուհաններ կլուսավորեն տաճարը, ինչ որ օտար է 10-րդ դարեն հետո ընդունված պատուհաններու ձևերուն: Խորանը երկու կողմեն ունի երկու ավանդատուն, որոնք պարզ սենյակներ կամ պահարաններ են, ոչ թե մատուռներ՝ նույնպես 10-րդ դարեն հետո եղած սովորության համաձայն: Գմբեթի կազմությունը շինության ժամանակակից ոճով կանգնված է թե՛ դրսեն և թե՛ ներսեն:

Արտաքուստ քանդակազարդ են շենքի բոլոր պսակները, պատուհաններու շրջանակները և դռներու կամարակապ ճակատները: Արևելյան կողմեն դուրս ցցված կիսաբոլորակ խորանի պատուհաններու պսակներեն զատ, մնացած զարդաքանդակներ զուտ արևելյան ոճով են շինված, միայն խորանի վրա եղած զարդաքանդակներու մեջ է, որ հին հունական գծեր շեշտված են. այս քանի մը գծերեն զատ, այս տաճարի վրա ամեն բան 5-րդ և 7-րդ դարերու հայ արվեստին կպատկանեն:

Հյուսիսային դռան լայն վերնասյամի վրա քանդակված է մի մարդ՝ ետևը թամքած ձիով, մարդու երեսը դեպի արևմուտք. այս մարդու առջև հաջորդաբար կես մը ծունկ չոքելու դիրքով կանգնած են մի երեխա և մի ուրիշ մարդ, երեխան ձեռքին մեջ ունի ձողաբարձ խաչ մը, իսկ մարդը ձեռքին ունի բուրվառ, պատկերի ընդհանուր տեսքը ազնվական մը կամ իշխան մը դիմավորելու տպավորությունը կթողու:

Արևմտյան դռան կիսաբոլորակ կամարի ճակատի վրա քանդակված են երկու թևավոր հրեշտակներ, քով քովի կանգնած: Հրեշտակներեն վար՝ դռան լայն վերնասյամի վրա կարգով քանդակված են վեց մարդու պատկերներ, որոնց մեջտեղի երեքը, որոնք լուսապսակ գլուխներ ունեն, սրբոց պատկերներ են, հավանաբար, ըստ բյուզանդական օրինակներու, մեջտեղինը Քրիստոս և երկու կողմինները՝ Մարիամ և Հովհաննես: Մնացած երեք մարդիկ, որոնց երկուքը սրբո ձախ կողմը և մեկը աջ կողմը կանգնած են, առանց լուսապսակ գլուխներու, հասարակ մահկանացուներ են:

Հետաքրքրական է դիտել սույն մահկանացուներու հագած տարազը, թերևս իսկական ձև 7-րդ դարու հայ ազնվականի (նկ. նկ. 274, 275):

Այս տարազի շատ մոտ նմանությունը մինչև հիմա տակավին պահված կա քուրդ բեկերու մեջ: Մի երկայն վերարկու է մինչև ծնկներեն վար, մեջքի վրա համեմատաբար նեղցած, իսկ մեջքեն վար թե՛ լայնցած է և թե՛ ծալ-ծալ կախված, լայն օձիքը մինչև ուսերը ծածկած. թևերը մինչև ծնկները հասնելու չափ երկայն և վերեն վար ճեղքված, ծայրերու վրա կգտնվեն կոճակներ՝ ի հարկին՝ դաստակին վրա կոճկելու համար: Առհասարակ այս երկար թևերը կամ կախ կմնան հագնողի երկու կողմերեն ու կճոճվին և կամ կնետվեն դեպի ետև կոնաձև վար կախվելու համար: Այս քանդակի մեջ թերևս երկու ձևն ալ գոյություն ունի, թե՛ երկու կողմեն կախվածը և թե՛ կռնակի վրա ձգվածը:

Վերջին օրերս բնիկ ալեքսանդրոպոլցի պր. Հակոբ Կարանյանց Ագրակ գյուղի մեջ գտած էր քանդակազարդ խաչի պատվանդան մը, որը փոխադրեց Անիի թանգարանը: Սույն պատվանդանի երկու ճակատներու վրա քանդակված են պատկերներ, որոնց մեկը ունի նույն տարազը՝ երկար թևը կողքեն վար կախված: Թեև այստեղ պատկերներ շատ փոքր են և թե ավելի անճաշակ քանդակված, սակայն հայտնի է տարազի նույնությունը Մրենի քանդակի հետ, միայն թե վերարկուներու թևերը կռնակի վրա ձգված են:

Պր. Կարանյանի գյուտ այս երկրորդ օրինակը հիմք կուտա համոզվելու, որ այդ ձևով տարազը նույն ժամանակներ ընդհանրացած էր հայ ազնվականության մեջ:

Հաճախակի նորոգությանց և փոփոխությանց ենթարկված չերևիր Մրենի տաճարը, նախնական ամբակուռ շինությունը պահեր է դիրքը մինչև հիմա, միայն մի տարօրինակ նորոգություն կատարվեր է հարավային ճակատի վրա:

Այդ ճակատի արևմտյան անկյունի մոտ, պատկեն մինչև դռան կամարը, չորսեն մինչև հինգ մետր լայնությամբ վերեն վար հակուղիղ ձևով ամբողջությամբ պատռեր են պատը և վերստին տեղը նոր քարեր են շարեր: Այս քանդումը կամ փոփոխությունը հնացած կամ որևէ արկածով մը վնասված մասի մը նորոգության երևույթ չունի ամենևին: Կարծեք թե հատկապես այդ մասի վրայեն մի հիշատակություն և կամ մի ուրիշ անհաճո բան անհետացնելու դիտումով քանդած և վերաշինած են: Այս ըսածիս հավանական ճշմարտության կհամոզվին ամեն անոնք, որոնք մասնագիտորեն քննելով կտեսնեն, թե ինչպես պատի վրա դեռ մինչև այսօր ալ առողջ մնացած մեծ ծավալով քարեր հակուղիղ ձևով տաշված և անոնց վրա նոր քարեր պատշաճեցուցած են: Հավանաբար այս փոփոխությունը կատարվեր է 13-րդ դարում, որովհետև այդ մասի վրա դրված կան արձանագրություններ, որոնց ամենահինը Չ թվականը չանցներ:

«Ախուրյան» № 57, 9 օգոստոսի 1909 թ.:

## 12. Ո՞րն է իսկական Հոռոմոսի վանքը

Անիի պատմական հիշատակներով հետաքրքրվողներու համար ոչ նվազ կարևոր է ծանոթանալ անոր մոտիկ, պատկառելի հնություններով հարուստ Հոռոմոսի վանքին, որ չորս կիլոմետր դեպի արևելք կգտնվի և հինգ զանազան դարերու հատուկ հայ ճարտարապետական ոճով ու ճաշակով գեղարվեստական ընտիր շենքեր կանգուն ու կիսականգուն տակավին պահված են այնտեղ:

Իմ նպատակը չէ առայժմ նկարագրել կամ ուսումնասիրել անոր ամբողջական անցյալն ու ներկան, անոր նշանակությունն ու կատարած դերը՝ մասնավորապես Բագրատունյաց հարստության ժամանակեն սկսյալ մինչև Անիի ավերումը, իր տաճարներով, դպրոցներով, մատենադարաններով և ասպնջականոցներով: Այստեղ պիտի աշխատեմ պարզելու մի անստուգություն, որ, ըստ իմ կարծյաց, խիստ կարևոր է պատմական և բանասիրական տեսակետով, այսինքն թե զանազան ժամանակ այնտեղ կանգնված քանի մը եկեղեցիներու մեջ որն է իսկական Հոռոմոսի վանքը:



Նկ. 208. Հոռոմոսի (Ղոշավանք) վանքի ընդհանուր տեսարանը
հարավ-արևմուտքից

Հոռոմոսի վանքին պատկանող սահմանի մեջ, որ կհասնի մինչև հաղթական կամար համարված դուռը[1] (Ղոշք), թեև մանր մատուռներ 5-6 հատ կան, սակայն իբրև վանական մեծ եկեղեցիներ՝ երեք հատ են, որոնցից մեկը բարձրավանդակի վրա, ս. Հովհաննես անունով, իսկ երկուսը հյուսիսակողման ձորի մեջ, մեկը ս. Գևորգ և մյուսը «կարծի ս. Մինաս»[2]:

Այս երեք մեծ եկեղեցիներեն զատ՝ ուրիշ մեծ եկեղեցիի հետք ամենևին չկա, ուստի այս երեք եկեղեցիներու մեջ պիտի փնտրենք, ըստ պատմագրական ավանդության, Հունաստանեն հալածական եկած կրոնավորներեն մեկուն՝ Հոհաննես վարդապետի հիմնարկած Հոռոմոսի վանքը[3] 10-րդ դարու կեսին մոտ (930-953):

Թերակղզիի բարձրավանդակին վրա եղող եկեղեցին՝ ս. Հովհաննեսը, որ շրջապատված է մատուռներով և այունազարդ տոհմային դամբարաններով, արևմտյան դռան վրայի արձանագրության համաձայն, հիմնարկված է 1038 թվականին, Բագրատունի Հովհաննես Սմբատ թագավորի ձեռքով: Իսկ ձորի եկեղեցիներեն ս. Գևորգը կանգներ է Բագրատունի թագավոր Գագիկ Ա. իր գահակալության շրջանում (990-1021):

Արդ՝ քանի որ, ըստ Ասողիկի վկայության, Աբաս թագավորի օրով կանգնվեցավ Հոռոմոսի վանքը և Աբաս մեռած է 953 թվականին[4], հետևաբար 953 թվականեն առաջ կանգնված էր Հոռոմոսի վանքը, որ առնվազն 35-40 տարի առաջ է, քան ս. Գևորգ, և 80-85 տարի առաջ, քան ս. Հովհաննես: Ուրեմն այս վերջինները բնավ չեն կարող իսկական Հոռոմոսի վանք համարվել:

[1] Մասնավոր հետազոտությամբ գտած եմ, որ Հոռոմոսի վանքի՝ Ախուրյանի ընթացքով ձևացած թերակղզին նեղ պարանոցով մը սկսած է Ղոշքի գտնված տեղի վրա և այդ պարանոցը մի ժամանակ, թերևս վանքի հիմնարկութենեն ալ առաջ, փակված է եղել որձաքարե շինված ամուր պարիսպով. Ղոշքը պարիսպեն հազիվ 4-5 մետր ներսը շինված է, հավանաբար պարիսպը քանդվելեն հետո են շինած Ղոշքը:

[2] Հ. Ղ. վ. Ալիշան - «Շիրակ», Վենետիկ, 1881, երես 29:

[3] Ստեփանոսի Տարօնացւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական. Ս. Պետերբուրգ, 1885, երես 174:

Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ. Մոսկվա, 1858, երես 47:

[4] Ստեփանոսի Տարօնացւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական. Ս. Պետերբուրգ, 1885 թ., երես 171-173:

Նկ. 209. Հոռոմոսի (Ղոշավանք) վանքի ընդհանուր տեսարանը
հյուսիս-արևելքից

Կմնա կարծեցյալ ս. Մինաս եկեղեցին, որուն շինության ճիշտ թվականը թեև հայտնի չէ որևէ արձանագրությունով, սակայն, նախ՝ ճարտարապետական ոճի տեսակետով անկարելի է անոր շինությունը 10-րդ դարեն այս կողմը բերել, որովհետև 10-րդ դարու հայ ճարտարապետության վերածնության առաջին շրջանը ներկայացնող նմուշներ ունի տակավին՝ խառն 7-րդ դարու հայ ոճի պատկանող զարդարանքներով և ուրիշ շինարարական մասերով: Այս մասին թեև մասամբ խոսել եմ, դարձյալ պիտի խոսեմ առանձին հոդվածով: Երկրորդ՝ իր վրա եղած 986 թվականի նվիրատվության մը արձանագրութենեն[1] կերևնա, որ նախքան այդ թվականը կանգուն էր այդ կարծեցյալ ս. Մինաս եկեղեցին:

Ուստի կմնա միակ եկեղեցին Հոռոմոսի վանաց մեջ այս ս. Մինաս անվանվածը համարել իբրև նախնական Հոռոմոսի վանք, 10-րդ դարու կեսին Հովհաննես վարդապետի ձեռքով կանգնված:

Բայց այս մասին իմ ձեռք բերած ապացույցները թվելե առաջ քննենք անգամ մը, որչափ հավանական է ոմանց՝ ինչպես նաև հ. Ալիշանի կարծիքը, թե այժմյան ս. Հովհաննեսը կանգնված լինի նախկին Հոռոմոսի վանքին տեղին վրա[2]:

Այս ենթադրության առիթ տված է անուշտ պատմական մի անցք, այն է՝ 982-ին Ապլհաճ ամիրայի ձեռքով Հոռոմոսի վանքին այրվիլը[3]:

Նախ և առաջ, իմ կարծիքով, Ասողկի «վանք» բառով պետք չէ միանգամայն եկեղեցին հասկանալ, մեր հին լեզվով «վանք» հաճախ նշանակել է տուն, բնակարան, օթևան և այլն[4]: Բացի այս, ամբողջական քարաշեն մի շենք կրակով չէր կարող այրվիլ. ըստ իս՝ պարզ է, որ Ապլհաճ ամիրան շրջակա բնակության հատուկ փայտաշեն շենքերը ամբողջովին այրեց, և եկեղեցին մնաց անվնաս:

[1] Հ.Ղ. վ. Ալիշան - «Շիրակ», Վենետիկ, 1881, երես 32:

[2] Հ. Ղ. վ. Ալիշան - «Շիրակ», Վենետիկ, 1881, երես 19: «Այլ զի չիք առաջնոյ շինողին հօր Յոհաննու՝ դարու ևս առաջ, թուի զդաստակերտս նորա եկեղեցին փոխանակեալ այժմուս, որ Յոհաննու արքային շինած է և անուանատուին իւրում ս. Յոհաննու նուիրեալ: Ի դէպ է կարծել եթէ նախչէնն այն եկեղեցի խանգարեալ իցէ յամի 982 յԱպլհաճայ Դելմաստիկ պարսիկ ամիրայէ»:

[3] Ստեփանոսի Տարօնացւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական. Ս. Պետերբուրգ, 1885, երես 188: «Եւ. առաքեաց կոչեաց զԱպլհաճայ Դելմաստանի, թոռն Սալարին, ամիրայ պարսիկ, որ թեև ընդ նոսա ոչ ժամանեաց, այլ յետոյ եկեալ զՀոռոմոսի վանքն այրեաց...»:

[4] Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց. Ս. Պետերբուրգ, 1883, երես 86: «Իբրև պատահեաց այնմ, էջ սոփեստէս և իւր վանս ունէր ի ներքս ի վկայանոցի անդ, իսկ մագիստրանոսքն ունէին վանս իւրեանց ի քաղաքին»:



**Նկ. 210. Հոռոմոսի ս. Հովհաննես եկեղեցու և ժամատան հատակագիծը**

Եկեղեցին կանգուն ու անվնաս մնալուն ոչ նվազ ապացույց է 986 թվականի նվիրատվության արձանագրությունը, որ Ապլհաճ ամիրայի այրելեն չորս տարի հետո է, նույնիսկ Ասողիկի «Մինչև ցայսօր երևի նոյն նշան ողորմածութեան ի տան յայնմ[1]» խոսքեն ալ կերևի, որ շուտով վերաշինված էին բնակարանները և գործունյա կյանքը կշարունակվեր վանքին մեջ: Եվ որովհետև Ասողիկ իր Պատմության ընթացքը վերջացուցած է 1004 թվականով, հետևաբար, այդ ժամանակ ս. Հովհաննես եկեղեցին արդեն գոյություն չուներ, իսկ ս. Գևորգի մասին ալ քիչ հետո պիտի տեսնենք, որ 1013 թվականեն առաջ կանգնված լինելը երբեք հավանական չէ:

Ուրեմն դարձյալ կմնա միայն կարծեցյալ ս. Մինասը, որուն շուրջը պետք է կատարել ամեն հետազոտություն:

Հոռոմոսի վանքին մեջ եղած բոլոր արձանագրություններեն մի բան շատ պարզ կհասկացվի, որ այնտեղ կանգնված եկեղեցիներն ամենն ալ առանձին անուններ ունեցեր են, իսկ հավաքաբար, ի հիշատակ սկզբնական հիմնարկության՝ Հոռոմոսի վանքեր անվանվել են: Ինչպես կերևի, բացի ընդհանուր սեփականութենե, ունեցեր են նաև առանձին սեփականություններ, որովհետև նվիրատուներ, միաբանողներ եթե ընդհանուր վանքերու անունով չեն ըրած իրենց բարեգործական զոհաբերությունը, այն ատեն մասնավորապես չեշտած են այն եկեղեցիի անունը, որուն նվիրած են կամ միաբանած:

Այս տեսակետով նախ քննենք ս. Հովհաննեսի վրա եղած արձանագրությունները, որոնց մեջ կտեսնենք, թե այն նվերները, որոնք միայն ս. Հովհաննեսի կվերաբերեին, պարզապես ս. Հովհաննեսի անունը միայն գրած են, իսկ բացառաբար ինն արձանագրություն, որոնց մեջ հիշած են Հոռոմոսի անունը, եթե նվերը միայն ս. Հովհաննեսին կպատկաներ, դարձյալ որոշած են, եթե ոչ՝ կվերաբերեր ամբողջ հիմնարկության:

Այստեղ պիտի ներկայացնեմ ս. Հովհաննեսի ինն արձանագրության մասերը միայն, որոնց մեջ հիշված է Հոռոմոսի անունը[2]:

1. «Ի ՆԶԵ թուականիս հայոց ետու ես Յովաննէս Շահանշահ որդի Գագկա Շահանշահի զիմ այգին որ ի Կողբ յիմ եկեղեցիս ի սուրբ Յովաննէս զոր շինեցի ի վանսս Հոռոմոսի...»:

Այստեղ արձանագրողը կպարզե, որ թեև եկեղեցին շինած է Հոռոմոսի վանքերուն մեջ, սակայն նվերը կպատկանի միայն ս. Հովհաննեսին:

2. «Ի ՈԻԴ. թուիս հայոց... տուաք զմեր հայրենի այգին որ ի Փարպի որ կոչի Խանիկշտէ ի սուրբ եկեղեցիքս Հոռոմոսի Վանացս...»:

Այս արձանագրության մեջ պարտավորիչ էր Հոռոմոսի անունը, որովհետև նվերը կպատկանի բոլոր եկեղեցիներուն:

3. «Ի ՈՆԷ թուիս ես հայր Մխիթար սատարութեամբ Սարգսի կրաւնաւորի... ածաք զՇուրս ի Հոռոմոսի վանքս...»:

[1] Ստեփանոս Տարօնացւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական. Ս. Պետերբուրգ, 1885, երես 174:

[2] Արձանագրություններու մասին իմ միակ աղբյուրը Հ. Ղ. վ. Ալիշանի «Շիրակ» երկասիրությունն է. ավելի մանրամասնություն ցանկացողներ թող բարեհաճին դիմել նույն երկասիրության:



Շատ պարզ է, որ Ջուրը ամբողջ հիմնարկության օգտին էր բերված, հետևապես պարտավորիչ հավաքական Հոռոմոս անվան հիշատակությունը:

4. «Ի ՈԾԵ. թիս Զաքարիայ Շահանշահ որդի Սարգսի զաւրապետ հայոց եւ վրաց քակեցի զՋաղացն որ Ականս հակառակ Ջրիս շինած էր եւ վերստին հաստատեցի զՇուրս ի վանքս Հոռոմոսի...»:

Այս արձանագրությունն ալ գրեթե նախընթացին բովանդակությունը ունի և կվերաբերի ամբողջ հաստատության:

5. «Ի ՈԾ. թիս, Շնորհիւն Աստուծոյ ես Գրիգոր որդի Հասանայ որդւոյ իշխանին ետու զիմ Գանձագին գեւղն...ի տիեզերահռչակ վանքս... պարտական են սպասաւորք Հոռոմոսի վանացս մինչ ի գալուստն Քրիստոսի յամենայն ամի Ա. Խ. պատարագ առնել...»:

Մասնավոր եկեղեցիի անուն գտնվելեն կհասկացվի, որ նվիրատվությունը եղած է ամբողջ հաստատության անունով:

6. «Ի թ. ՈՀԷ. Կամաւ ամենակալին Աստուծոյ այս մեր գիր յիշատակի է Հէճուպ Գրիգորոյ որդւոյ Հասանա եւ եղբայրորդեաց իմոց... տերանց սուրբ ուխտիս վանացս Հոռոմոսի որ հաստատեցաք արձանագրով. պատրոն ով լինի այս տեղոյս ի յարանց կամ ի կանանց ով կաշառաւք հայր դնէ այնպիսին նզովս առցէ...»:

Արձանագրությունը կվերաբերի ընդհանուր հաստատության ներքին վարչության և մատակարարության, ուստի բնական էր, որ հավաքական Հոռոմոս անունով հիշատակվեր:

7. «Թ. ՈԶԳ. Շնորհիւն Քրիստոսի ես Զմրուխտ խաթունս աղախին Քրիստոսի... ետու ի սուրբ ուխտս ի վանքս Հոռոմոսի ի սուրբ Յովաննէս ակն մին ջաղաց»:



**Նկ. 211. Հոռոմոսի ս. Հովհաննես եկեղեցու և ժամատան կտրվածքը**

Այս արձանագրության մեջ, թյուրիմացության տեղիք չտալու համար, մասնավորապես կշեշտե ս. Հովհաննեսի անունը Հոռոմոսի վանքերու մեջ, և միմիայն ս. Հովհաննեսի սպասավորներուն պարտք կդնե պատարագել:

8. «Ի թ. ՈՂԹ. Կամաւն Աստուծոյ ես Աւէտիս վարդապետ... միաբանեցայ սուրբ ուխտիս Հոռոմոսի վանաց ս. Յովանիսի...»:

Այս ալ նախընթացին պես կորոշե, որ Հոռոմոսի վանքերեն միայն ս. Հովհաննեսին միաբանած է:

9. «ՈՀԸ. Շնորհիւն Քրիստոսի ես Վաչէ որդի Սարգսի և ամուսին իմ Մամախաթուն դուստր Ապուսերհին շինեցաք զնշխարատունս ի վանքս Հոռոմոսի վանաց ս. Յովանիսի...»:

Այս ալ նախընթացին պես կորոշե, որ Հոռոմոսի վանքերեն միայն ս. Հովհաննեսին միաբանած է:

ռոմոսի... եւ փոխարէն հատուցին մեզ միաբանքս յամէն ամի յամենայն եկեղեցիքս ի նոր կիւրակէին պատարագել զՔրիստոս...»:

Այս զոհաբերությունն ալ եղած է ընդհանուր վանական հաստատության անունով, որուն համար բոլոր եկեղեցիները հանձն են առել ամեն տարի պատարագել նվիրատվի հիշատակին:

Վերջապես, դեռ կան ուրիշ արձանագրություններ ալ, որոնց մեջ ոչ Հոռոմոսն է հիշված և ոչ ալ ս. Հովհաննեսը, սակայն բովանդակությունեն հայտնի է, որ նվերը տրված է ընդհանուր ուխտին անունով:




Նկ. 212. Հոռոմոսի վանքի ս. Մինաս եկեղեցու հատակագիծը

Մինչև ամենավերջին արձանագրությունը, որ կհասնի 1336 թվականը, բոլոր արձանագրություններուն մեջ որոշ է եկեղեցիներուն հավաքաբար Հոռոմոսի վանքեր անվանվիլը ամենանախնական հիմնարկության հիշատակով, և յուրաքանչյուր հետնագույն շինության առանձին անվան անշփոթ գործածվիլը: Այս 1336 թվականեն հետո 349 տարի վանքին վիճակը անստույգ է, եթե բոլորովին ամայացած չէր, գոնե անտերունչ վիճակի մատնված էր մինչև 1685 թվականը, երբ Դանիել վարդապետ նորոգեր և վերստին շենցուցեր է: Ահա այս 349 տարի անտերության մեջ մոռացվեր և շփոթվեր է ս. Հովհաննեսի սեփական անունը Հոռոմոսի անվան հետ. այդ պատճառով ալ Դանիել վարդապետ նորոգելով միմիայն ս. Հովհաննեսի տաճարը և շրջակա բնակարանները, պարզապես անվաներ է զայն Մեծասքանչ Հոռոմոսի վանք, և այդ շփոթությունը շարունակված է մինչև այսօր:

Ս. Գևորգ եկեղեցիի վրա կա ընդամենը չորս արձանագրություն, որոնց առաջինը կվերաբերի շինողին՝ Գագիկ Ա-ին, եկեղեցին պարզապես անվանված է ս. Գևորգ:

Երկրորդ արձանագրությունը Հովհաննես Սմբատ Թագավորինն է, որը, ս. Հովհաննես եկեղեցին շինելեն երկու տարի առաջ, մի գյուղ նվիրեր է Հոռոմոսի վանքերուն, և այդ ժամանակ որովհետև երկու եկեղեցի միայն կար՝ ս. Գևորգն ու կարծեցյալ ս. Մինասը, ուստի, շփոթության տեղիք չտալու համար՝ հատկապես կշեշտե արձանագրության մեջ, թե արձանագրած է ս. Գևորգի վրա, ոչ թե Հոռոմոսի: Ահավասիկ արձանագրության կարևոր մասերը:

«ՆՁԵ Թու. Հ. Ես Սմպատ Շահանշահ որդի Գագկա ետու զիմ գեղս զՍահառունիս ի մեր հանգստարանս Թագաւորաց ի տիեզերահռչակ վանս Հոռոմոսի... եւ գրեցի ի սուրբ Գորգ...»[1]:

Երրորդը, որ արձանագրած է Անանիա Արշարունյանց եպիսկոպոս, ունի բավական նշանակալից բովանդակություն:

«Աստուած է ի սմա. Շնորհիւն Աստուծոյ ես Տէր Անանիա շնորհիւն Աստուծոյ Արշարունեաց եւ Ճակատոց գաւառի եպիսկոպոս զմտաւ ածեալ հանապազ զվանս սրբոյն Յոհաննու թէ մեծ շահ է յԱստուածային խորհուրդսն յիշել զգնացեալսն. կարգեցի ամ ըստ ամէ անխափան զզատկի մեռելոց յաւուրս (ժ)ամն յամենայն եկեղեցիս յանուն առաջնորդաց հարցն սրբոց եկեղեցւոյս կատարել եւ զայլ աւուրսն մինչև ցնոր կիւրակէն ամենայն հանգուցելոց որ են ի սուրբ ուխտիս...»:

Այս արձանագրության մեջ սրբոյն Յոհաննու խոսքը կվերաբերի վանքի հիմնադիր Հովհաննես վարդապետին. Անանիա եպիսկոպոս պարտականություն է զգացեր թե՛ հիմնադիր սուրբ Հովհաննեսի և թե՛ անոր գործը շարունակող հարցն սրբոց հիշատակին համար ամեն տարի վանքի բոլոր եկեղեցիներու մեջ պատարագ[1]:

Չորրորդ արձանագրությունը մի նվիրատուի կվերաբերի Մարտիրոս անունով, որ «կուղպակը տվեր է «ի տիեզերահռչակ վանս Հոռոմոսի» և արձանագրեր է «ի սուրբ Գէորգ»:

Ս. Մինաս կարծվածը ունի միայն երկու արձանագրություն, որոնցմե մեկը գրված է (ՆԼԵ) 986 թվականին, ինչպես վերև տեսանք, երբ դեռ այսօրվան գտնված եկեղեցիներեն և մատուռներեն ոչ մեկը գոյություն չուներ: Ահա այդ ժամանակվան արձանագրության մեջ առանց այլևայլության բնորոշ կերպով Հոռոմոսի վանք անվանված է եկեղեցին: Ահավասիկ արձանագրության սկիզբը.

«Յանուն Աստուծոյ ի ՆԼԵ թուականիս հայոց ետու ես Զուտաս զիմ հայրենի այգին զՀոռոմդեանն որ ի Մրեան ի Հոռոմոսի վանս ի հայր Սողոմն վանս իմ ծնողաց հոգեաց...»:

Այս արձանագրությունը մեզ շատ ավելի կմոտեցնե ճշմարտության, քանի որ Հոռոմոսի վանքի ամբողջ սահմանում վանական եկեղեցի համարվելու չափ մեծություն և դիրք ունեցող ոչ մի փլատակ կամ ավերակ բոլորովին չկա, որու մասին կասկած տանեինք. այսօրվան մեր կանգուն կամ կիսականգուն տեսածներս ալ տասնյակ տարիներ հետո են կանգնված և, որ ավելին է, երբ ինքը միայնակ եղած ժամանակ ալ պարզ Հոռոմոսի վանք անունը միայն ունի; հետևաբար, անկասկած, ա՛յս պետք է լինի 14-րդ դարու կեսին Հովհաննես վարդապետի հիմնարկած առաջին վանքը:

Երկրորդ արձանագրությունը գրողն ալ դարձյալ Անանիա եպիսկոպոսն է (Ի ՆԿԲ) 1013 թվականին: Այս արձանագրության մեջ թեև եկեղեցիի անուն բնավ չէ հիշված, սակայն բովանդակությունեն կերևի, որ այդ թվականին ալ այդտեղ ուրիշ եկեղեցի չկար, Գագիկ Թագավորն ալ դեռ ողջ էր, հետևաբար, ըստ հ. Ալիշանի՝ հանգստարան Գագկա Ա. ալ գոյություն չէր կարող ունենալ: Ահավասիկ արձանագրությունը.

«Յանուն Աստուծոյ. Ի ՆԿԲ թուականիս ես տէր Անանիա յետին վերակացուս եկեղեցո առաջնորդ գոլով սուրբ ուխտիս..., ազատեցի մեծաւ ջանիւ զհարկ և զթասդակ և առի զՔեղարագոմն իւր ամենայն գոյիւ ի սուրբ ուխտս վասն ապաւէնի տեղի լինելոյ ի փախստեան ժամանակի... Եւ տուող այդմ պարգևի Գագիկ էր աւրհնեալ յաստուծոյ և որդեակք իւր Սմպատ և Աբաս և Աշոտ...»:

Եթե այս նվիրատվության ժամանակ ուրիշ եկեղեցի կենար, անպայման պետք էր որ Անանիա եպիսկոպոս ինքզինքը անվաներ վերակացուս վանացս կամ յեկեղեցեացս, ոչ թե եզակի բառով՝ «վերակացուս եկեղեցո»: Նաև չէ գրված յամենայն եկեղեցիս խոսքը, հակառակ թագավորական սերունդի մը համար որոշված պատարագներուն. մինչդեռ Անանիա եպիսկոպոսի մյուս արձանագրության մեջ շեշտված է յամենայն եկեղեցիս խոսքը:

Անանիա եպիսկոպոսի երկու արձանագրություններու բաղդատությունով կտեսնենք, որ ս. Գևորգ թեև դարձյալ Անանիա եպիսկոպոսի վանահայրության օրով է շինված, սակայն 1013 թվականեն շատ հետո:

Մինչև այստեղ մեջ բերված փաստերեն զատ, մի անվիճելի ապացույց ևս կա, որ ոչ մի կասկած չի թողնում հավատալու, թե Հոռոմոսի վանքը ոչ թե ս. Հովհաննեսի տեղին վրա էր, այլ ցածր, ձորի մեջ, ուր կգտնվեին այժմ կարծեցյալ ս. Մինասն ու ս. Գևորգը:

Այս ապացույցը կգտնենք դարձյալ հայր Ալիշանի «Շիրակ» երկասիրության մեջ, այն է՝ 11-12-րդ դարերեն մեզ հասած մի տեղագրական նկարագրություն Հոռոմոսի վանքին: Այս տեղագրության աղբյուրն է Գետարգել ս. Նշանի պատմությունը, որու մեկ հատվածը քաղած է բազմավաստակ հեղինակը, որ հետևյալն է (էջ 28).

«Ի միջոց ժամանակին ԺԱ. դարու ցչորրորդ քառորդ ԺԲ-ին, յորում ոչ առաջնորդք յիշին վանացն եւ ոչ մի արձան յիշատակի գրեալ, հանդիպեալ են հրաշալի այլայլութիւնք սահմանաց դրից վանացն ու պատոցին զնովաւ Ախուրեան գետոյ, կարևոր տեղագրութեամբ, ըստ պատմութեան Գետարդել խաչին զոր պահէր Հայրն Ատոմ ի Խաւարաձոր Արշարունեաց: Ուստի անցեալ Շիրակ, յԱ-

[1] Արձանագրությունը փորագրողին կողմանե եղած տառասխալ է Գորգ գրվիլը. է տառը մոռացված է. շարունակության մեջ մի ուրիշ տեղ ամբողջությամբ գրված է Գևորգ:

[1] Հ. Ալիշանի «Շիրակ» երկասիրության մեջ - պատկ. 7 ս. Գևորգ - հանգստարան Գագկա Ա. պատկերը, Անիի մեջ Ախուրյանի ձորին վրա կուսանաց վանք (?) անվանված մատուռին պատկերն է: Սակայն Հոռոմոսի ս. Գևորգ եկեղեցիին հյուսիս-արևելյան կողմը, քանի մի մետր հեռավորության վրա, կա ճիշտ նույնանման հատակագծով, քիչ մ'ալ ավելի մեծկակ մատուռի մը մնացորդ: Գյուղացիներու պատմելով՝ 30-35 տարի առաջ՝ մի քուրդ ընտանիք կընակեր անոր մեջ. այդ ընտանիքի մեկնելեն մեկ օր հետո հիմնիվեր կործանվել է հանկարծակի: Երևի հայր Ալիշան Անիի կուսանաց վանքի հատակագծի ու պատկերի հետ միաժամանակ ձեռքի տակ ունեցեր է նաև Հոռոմոսի վանքի այդ մատուռի ալ հատակագիծը, անշուշտ նաև տեղեկություն անոր Գագիկ Ա-ի համար իբրև շիրիմ կանգնված լինելու մասին. այս երկու մատուռներու հատակագծերու մոտավոր նմանությունեն շփոթվելով՝ հայր Ալիշան մեկը մյուսին տեղ դրել է:

Անանիա եպիսկոպոսի վանահայրության ժամանակ, որ Գագիկ Ա արդեն մեռած էր և ս. Գևորգ արձանագրության համեմատ ալ պետք էր որ այնտեղ թաղված լիներ, հետևաբար պետք է որ կանգուն լիներ այս մատուռը, ուստի Անանիա եպիսկոպոսի արձանագրության մեջ «յամենայն եկեղեցիս» ըսելով կակնարկե և այս մատուռը և թերևս մի ուրիշն ալ, որ հյուսիս-արևելյան լանջի վրա է եղած և այժմ բեկորները միայն մնացած են:

նի, ապա եկն այսր «ի Հոռոմոց վանքն. Եւ էր վանքն այն (ասէ պատմիչն) «ի խորուՀոր ի վերայ բլրի միում, զորով շուրջ բակ առեալ պատէր մեծ գետն Ախուրեան եւ գետն այն բազում ցաւս եւ վտանգս հասուցանէր վանացն, զի յորժամ արեգակն յամառային տեղին հասանէր՝ շոգեալ շողանայր վանքն ի տապոյ արևուն. իջանէր ի քարանձաւն, եւ օդք խորշակայինք եւ զազրահոտք եւ ցաւաբերք ի գետոյ անտի փչէր ի չորից կողմանց»:

Ով որ Հոռոմոսի վանքը և մասնավորապես ձորի միջի եկեղեցիներու դիրքը անձամբ տեսած ու քննած է, անոր համար ավելորդ իսկ է կրկին բացատրել, թե ի՞նչ աստիճան ճիշտ է ս. Մինասի և ս. Գևորգի տեղի ու դիրքի նկարագրությունը, Գետարգել ս. Նշանի տեղագրությունը: Սակայն դարձյալ ավելորդ չեմ համարում քանի մը խոսքով նկարագրել և համեմատել հնադարյան նկարագրությունը այժմյան դիրքի հետ:

Հովհաննես Սմբատ թագավորի շինած ս. Հովհաննես եկեղեցին ամենևին ի խորուՀոր տեղի վրա չէ, ընդհակառակը, այնպիսի բարձրավանդակի վրա է, որ պարզ օդի ժամանակ մինչև իսկ Անիի պարիսպներու մեջեն կարելի է տեսնել ամբողջությամբ: Ախուրյան գետը հյուսիսային կողմը միայն քերելով կանցնի 30-40 մետր խորությամբ և մոտավորապես կես կիլոմետր դեպի արևմուտք հեռանալեն հետո կծռվի հյուսիս. գրեթե մեկ կիլոմետր ալ դեպի հյուսիս ուղիղ հոսելին հետո, կրկին կծռվի դեպի արևմուտք կամ դեպի Անի: Ի հնումն, անշուշտ, Գետարգել ս. Նշանի պատմագրին ակնարկած ժամանակեն առաջ, գետը երկու ճյուղի բաժանված է եղեր դեպի Անի ծռված տեղեն ավելի քան 200 մետր վերեն: Բաժանված մեկ ճյուղը դարձեր է կրկին դեպի արևելք և քերելով ս. Հովհաննեսի բարձրավանդակի խորուՀոր փեշերը, հասեր է մինչև Ղոշեքի բարձրության ստորոտները, այնտեղ ալ կիսաբոլորակ աղեղ մը կազմելով, ուղղվեր է դարձյալ դեպի արևմուտք և հասնելով մինչև հանքային ջրի ավազանին մոտ՝ խառնվեր է դարձյալ մայր ճյուղին: Ահա այս մեկ ճյուղի պտույտով ձևացած է ձվաձև բլրանման կղզի մը, որու ամենեն բարձր տեղում կանգնված են կարծեցյալ ս. Մինաս ու ս. Գևորգ եկեղեցիները: Այս կղզին բարձրությունը եթե համեմատենք անմիջապես շրջակային հետ, կտեսնենք, որ տեղ-տեղ մինչև 40-50 մետր խորությամբ փոսի մեջ է կղզին: Այս փոսի համար էր, որ մի իտալացի հանքային ճարտարագետ 1903 թվականին կարծիք հայտնեց, թե մի ժամանակ հրաբուխի բերան եղած է այդ փոսը:

ԽորուՀորի արևելյան և հարավային լանջերու վրա մինչև այսօր մնացած կան պատմիչին ակնարկած քարանձավներեն մեկ քանին. իսկ ջրին նախկին հունը ոչ միայն մինչև այժմ մնացած է, այլև Ախուրյանի ջուրը հորդած ժամանակ, պատմական ճյուղը դարձյալ բաժանվելով գետեն, հին ուղղությամբ կհոսի և կղզիի մը կվերածե ձորի բարձրավանդակ բլուրը: Իսկ ամառ ժամանակ գրեթե միշտ ճախճախուտ և խոնավ է, որու պատճառով գյուղի բնակչության մշտական հիվանդություն դարձած են ջերմը և ուրիշ զանազան տենդեր:

Բացի քարանձավներեն, կան նաև բնակության շատ մնացորդներ, արևելյան կողմը կա ընդարձակ գերեզմանատուն, որու մեջ կգտնվին մամառապատ տապանաքարեր, ոմանց վրա արձանագրված: Շատ որոշ է մի փողոց, որով վանքերը և գերեզմանատունը իրարմե կանջատին, յուրաքանչյուրն իր համար շինված պարիսպներով:

Ջորը կամ դեպի վանքերը իջնելու նախնական ճանապարհը եղեր է Ղոշեքի մոտեն, հազիվ 30-40 քայլ անցնելով Ղոշեքեն, հայտնի կտեսնվի ճանապարհի մը դեպի աջ ծռվելը. թեև այժմ փլած և անգործածելի, սակայն հին ձեռագործ հարդարման գործողությանց հետքերը շատ որոշ են հյուսիսային լանջի վրա: Կես ճանապարհին, դեռ մինչև խորը չիջած, բլրաձև ժայռի մը վրա շինված մատուռի մը[1] մոտեն ճանապարհը երկուքի բաժանված է, որուն մեկ ճյուղը դեպի վանքերը, իսկ մյուս ճյուղը հորիզոնաբար հառաջանալով, հյուսիսակողման լանջին վրայեն կհասնի մինչև հանքային ջրի ավազանը՝ գետափի մոտ:

Տեսնելով այս բոլոր պատմական և իրական ապացույցներ և ներկայացնելով ընթերցողներու ազատ քննադատության, ես ինքս միանգամայն համոզված եմ, որ մեր մինչև այսօր ավանդաբար ս. Մինաս կարծած եկեղեցին է իսկական Հոռոմոսի վանքը, 10-րդ դարու կեսին Հովհաննես վարդապետի ձեռքով հիմնարկված:

Թե ինչո՞ւ համար Հոռոմոսի վանքը խորուՀորի միջի բլուրի վրա են շիներ և ոչ բարձրավանդակի վրա, պատճառը պարզ կերևա մեջ բերած 3-րդ արձանագրության ամբողջական բովանդակությեն: Ջրի կարիքն ստիպեր է հիմնադրին՝ տեղ ընտրել գետի եզերքին. որովհետև այն ժամանակ վերը, բարձրավանդակի վրա, ջուր չի եղեր, հետևաբար շատ դժվար էր տարվա ամեն եղանակի ձորեն ջուր մատակարարել:

Բագրատունի թագավորներ, հավանաբար վանքը արքայական դամբարանի վերածելու մտադրված օրերեն, շատ են աշխատեր բարձրավանդակին վրա ջուր բերել և այնտեղ շենցնել, սակայն չեն հաջողեր:

[1] Այս մատուռի փլատակներն ու քանի մը խաչքարերու կտորները մնացեր են բլուրի ներքև թափված:



Ըստ երևույթին Հովհաննես թագավորը ավելի է հույս ունեցեր հաջողելու, այդ պատճառով ալ իր եկեղեցին հիմնադրեր է բարձրավանդակի վրա, թեև անոր ալ ջանքերը դարձյալ ապարդյուն են անցեր:

Առաջին անգամ ջուրը բերվեր է հայր Մխիթարի ջանքերով 1198 թվականին, որն իր արձանագրության մեջ կրսե, թե՝ «Զայանց ջուրն զոր մեր հին թագաւորացն յոյժ ջանացեալ եւ ոչ ժամանացին բերել, մեծ ծախիւք եւ աշխատութեամբ ածաք զջուրս ի Հոռոմոսի վանքս...»[1]:

Իսկապես ալ մեծ ծախք և զոհողություն կպահանջեր այնքան հեռավորությենեն ջուր բերելը: Ջրանցքի մնացորդներու ուղղությունը կարծել կուտա, որ Քեռեկլերի վտակը բերեր են վանքը: Ջրի ճանապարհը առնվազն 25-30 կիլոմետր շինելեն հետո, Ղոշեքի մոտ խոր փոսի մը վրայեն ջուրը անցնելու համար մի երկար կամուրջ ալ շիներ են, որուն մնացորդները կերևան հիմա ալ: Օգտվելով ջրի առատությենեն, թերակղզիի ամբողջ բարձունքը այգիներու և մրգաստաններու են վերածեր, որոնց բաժանմունքները և սահմանները դեռ չեն կորած:

## 13. Արգինա

Լենինականից (նախկին Ալեքսանդրապոլ) դեպի Անի գնացող ճանապարհի վրա, Ախուրյան գետի ձախ ափին կգտնվի Արգինա գյուղը, որ թե՛ իր և թե՛ իր շրջանի մեջ ունի բավական խոր հնություն մնացորդներ:

Նկ. 213. Արգինայի տաճարի արևելյան մնացորդ պատը

Ըստ հին մատենագրաց՝ հնում բավական մեծ գյուղաքաղաք կամ ավան էր Արգինան, որու հետ կապում են 7-րդ դարում և ավելի առաջ տեղի ունեցած ուշագրավ պատմական անցքեր: Նախքան 7-րդ դարը Կամսարականների սեփականությունն էր Արգինան և ուներ իր մեջ մի մեծ բերդ, որը մանրազնին քննության ենթարկելով՝ տեսնված է, որ Կամսարականների սեփականություն դառնալեն շատ առաջ նույնպես բերդ է եղել նախաքրիստոնեական ժամանակ: Երբ հունաց և պարսից մեջ 603 թ. պատերազմ է ծագած, շրջակա հայ գյուղերը ապավինել են Արգինայի բերդի մեջ: Իսկ 10-րդ դարում, երբ Շիրակավանը Բագրատունյաց մայրաքաղաքն էր, առանձին կարևորություն ստացավ Արգինան: Որովհետև Բագրատունի թագավորները կնստեին Շիրակավանում (այժմյան Բաշ-Շորագյալ) և իրենց արքունի դղյակն էր Տիգնիսի հնօրյա ամրոցը, մոտակա Արգինան ևս եղավ կաթողիկոսական աթոռ: 965-991 թ.թ.՝ երեք կաթողիկոսներ նստան այստեղ, մինչև Անին մայրաքաղաք եղավ և կաթողիկոսական աթոռը փոխադրեցին Անի:

Կաթողիկոսները 10-րդ դարում բավական շինություններ կատարեցին Արգինայում, գետեզերքին Տրդատ ճարտարապետի ձեռքով շինեցին մի կաթողիկոսարան, որու հազիվ հետքերը մնացած են գետեզերքին: Իսկ Խաչիկ կաթողիկոսի նախաձեռնությամբ, նույնպես Տրդատի ճարտարապետությամբ, շինված հոյակապ եկեղեցիեն դեռ կմնան հյուսիսային և արևմտյան պատերը, ինչպես նաև արևելյան պատի մի մասի մնացորդը: Տրդատի կառուցած այս շենքը թեև միջակ մեծություն ունի և արտաքուստ բավական պարզ է, սակայն ներսի կողմը ճարտարապետական տեսակետով բավական շքեղ է, ինչպես այս մասին գովեստով կխոսեին ժամանակակից պատմագիրները: Այժմ թեև մեծ բան չէ մնացել հին շենքից, սակայն մնացորդ հյուսիսային պատի վրա, ներքին կողմի գմբեթակիր որմնասյունները վերին աստիճան շքեղ են և իրենց համաչափությամբ ու քանդակազարդմամբ՝ գեղարվեստական: Այս շենքի հիմնարկության թվականը պարզ հայտնի չէ, սակայն շենքը շինել տվող Խաչիկ կաթողիկոսը գահակալած է 972-991 թ.թ.:

## 14. Աղթամար

Վանա ծովի մեջ է Աղթամար կղզին. շատ հին դարերե ի վեր այս կղզին համարված էր իբր պատերազմական անառիկ վայր և իբր տոհմապետական-իշխանական բնակարան: Ըստ Թովմա Արծրունիի՝ թեև Դավիթ Սահառունի, Ռաշամ Ռշտունի, Բարզափրան այստեղ բնակեցան և մարդկային

[1] Հ. Ղ. վ. Ալիշան - «Շիրակ», Վենետիկ, 1881, երես 21:

Նկ. 214. Աղթամարի տաճարը հարավ-արևելքից



բազմություն բնակեցրին, այնուամենայնիվ նրանց կառուցած շինություններն այնքան նսեմ և անշնչեն էին, որ հազիվ հետքերն են մնացել: Գագիկ Արծրունին էր միայն, որ ուշադրություն դարձրեց այս կղզու վրա (10-րդ դար), շատ տեսակետներով զգաց կարևորությունը և իր շինություններով գեղազանցեց կղզի նախընթաց տերերին:

Թովմա Արծրունի պատմագիրը գրեթե միակն է, որ իր տոհմակից Գագիկ Արծրունու շինարարություններու մասին մանրամասնորեն գրում է իր Պատմության մեջ: «Բացի Վասպուրականի զանազան կողմերում, – ասում է պատմագիրը, – ամրոցներ, ապաստարաններ և բլուրներ պարսպելը, մասնավորապես Ոստան ավանի մեջ, Արտոս լեռան վրա, մանավանդ ծովի կողմը մեծամեծ շինություններ կատարեց: Այգիներով, պարտեզներով զարդարելուց հետո, հմուտ արհեստավորների ձեռքով կառուցել տվեց ոսկեզարդ տաճարներ, սենյակներ, փողոցներ: Շենքերի դռները առհասարակ կազմված էին կամարաձև և լուսանցույց զարդերով, որ արևածագի և վերջալույսի ժամանակ շողեր կարձակեին տաճարի մեջ և հիացում կպատճառեին դիտողին»:




Նկ. 215. Աղթամարի վանքի հատակագիծը

«Իսկ գալով Աղթամար կղզին, նկատելով, որ ոչ միայն հարմար էր իրեն բնակության համար, այլև անվտանգ ապաստարան թշնամիների հարձակման ժամանակ, այդ կղզին պարսպեց այնպիսի ձևով, որ ծովի մի մասը կղզին կողմը թողեց և պարիսպը ծովին միջով անցուց, որով փոթորիկների և ալեկոծությունների ժամանակ ևս պարիսպեն ներս անվտանգ նավահանգիստ դարձավ»:

Կղզի նավահանգստի և պարիսպի շինությունը պատմագիրը պատմում է հետևյալ կերպով: Բազմաթիվ արհեստավորների և բանվորների հրամայում է Գագիկ, որ մեծամեծ և դժվարակիր քարեր թափեն ծովի մեջ այնպիսի ուղղությամբ, որ ծովի մի մասը մնա կղզի մի կողմը, և հաջորդաբար միմյանց վրա այնքան քար լեցուցին ծովի մեջ, որ քարերը բարձրացան ծովի մակերևույթից վեր: Այս ընդծովյա արհեստական հիմքի վրա բուրգերով և աշտարակներով զարդարված մի պարիսպ կշինե, հինգ ձիարշավ երկարությամբ: Պարիսպին երկու ծայրերը կփակե ծովեզերքի վրա, անմատչելի ժայռերի մեջ: Իսկ պարիսպի և բուրգերի վրա կշինե խորաններ, զբոսատեղիներ, ուր թագավորն իր որդիներով և ազատականներով կզվարճանար:

Կղզին ևս կզարդարե զանազան վայելչաձև պարիսպներով, շենքերով, ճանապարհներով, մասնավորապես կղզու գագաթը իբրև զբոսավայր կվայելչացնե այգիներով, պարտեզներով, ծաղկանոցներով և զանազան դահատեղիներով. կղզի լանջի և ստորոտների վրա կշինե զանազան ծառաստաններ և հողադարեր զվարճության համար:

Նկ. 216. Աղթամարի տաճարի քանդակազարդ պատի մասը

Հասարակաց ապահովության մասին մտածելե և կղզի ժողովրդյան համար իբր ապաստարան քաղաք շինելե հետո, օգտվելով իր ձեռքի տակ գտնվող բանվորներե և արհեստավորներե, մտա-

դրվեց մի արքայական տաճար չինել: Ուստի հրամայեց իր հանճարեղ ճարտարապետին, որ տաճարը ունենա 40 կանգուն երկարություն, 40 կանգուն լայնություն, նույնչափ ևս բարձրություն: Տաճարը ահեղ և զարմանալի տեսք ուներ, երեք քայլաչափ էին պատերի հաստությունը, քար ու կրաշաղախով այնպես ձուլված էր, որ նման էր պղնձի և կապարի ձուլվածքի: Առանց սյունի կանգնված էր տաճարը և այնչափ բարձր, որ մարդիկ ստիպված էին գլխարկնին ցած առնել գմբեթի միջի և ուրիշ տեղերի նկարազարդությունը դիտելու համար: Տաճարը շուրջանակի կամարակից նկարազարդ խորաններ ուներ, նկարների մեջ կային ոսկեզարդ գահեր, որոնց վրա նազելի ճոխությամբ նստած էր արքան՝ շրջապատված սպասավորող լուսատեսակ պատանիներով. նրանց հետ միասին՝ գուսանների խմբեր և պարող աղջիկների զարմանալի խաղեր, սուսերամերկների խմբեր, ըմբշամարտների կռիվներ, առյուծներ, ուրիշ գազաններ և բազմատեսակ թռչուններ: Դռները չափազանց չքեղ էին, մանր հորինվածներ ունեին և երկաթյա էին, իսկ գոցվելու ժամանակ ամբողջ դուռը երևում էր իբրև մի պատկեր: Քաղաքի գործավորներեն մի ոստիկան պատմել էր, որ երկու հարյուր հազար լիտր երկաթ սպառվեց տաճարի շինության ժամանակ: Տաճարի արտաքին երևույթը ամեն կողմից երևում էր մի մեծ բլուրի նման:

Գագիկ իր բոլոր շինարարության ընթացքում չինեց նաև մի հոյակապ եկեղեցի, որի քարերը



Նկ. 217. Աղթամարի տաճարի քանդակազարդ պատի մասը

Աղձնյաց սահմանի մեջ գտնված Կոգում գյուղից բերել տվեց ծովի վրայով: Այդ քարերը Զուարիկ կոչվող ազգի պատկանող մի ամրոցից էին, որ Գագիկ գրավելով և քանդել տալով՝ քարերը փոխադրեց Աղթամար՝ եկեղեցիի շինության համար:

Որովհետև արքունի ճարտարապետ Մանուելը չափազանց հմուտ էր արվեստի մեջ, ոչ միայն շենքը հիմնադրեց և կանգնեց, այլև զարդարեց բազմաթիվ ակնապարար քանդակներով, որ բոլոր տեսնողների զարմանքն էր հարուցում: Քանդակների մեջ աչքի էր ընկնում եկեղեցիի պատի վրա Գագիկ թագավորի բարձրաքանդակ պատկերը՝ եկեղեցիի մանրանկարը ձեռքին բռնած:

Նկ. 218. Աղթամարի տաճարի արևելյան ճակատի քանդակների դետին



## 15. Բագնայր

Անիի ավերակներից մոտավորապես 7–8 կիլոմետր դեպի արևմուտք, Ալաշա լեռան ստորոտում կա մի գյուղ՝ Ղոզլիջա անունով: Այս տեղի հին անունն է Բագնայր, ուր եղել են բազմիններ՝ մասնավորապես այժմ գոյություն ունեցող քարայրերի մոտ: Ես թեև չեմ տեսած բուն գյուղի մեջ նախաքրիստոնեական պաշտամունքի հայտնի նշաններ, սակայն գյուղից դուրս մի մեծ բլուրի գագաթին կա մի հնագույն պաշտամունքի հատուկ մնացորդ, որի մասին պիտի խոսեմ իր կարգին:

Գյուղի մեջ կան զանազան մեծ ու փոքր հուշարձաններ, տարբեր ժամանակներում կանգնված: Բայց այս հուշարձաններից ամենից հինը Վահրամ Պահլավունիի որդի Սմբատ Մագիստրոսի շինած եկեղեցին է՝ յուր ընդարձակ գավթով. այս շենքը կանգնված է, ըստ Սամուել Անեցիի, 1009 կամ 1010 թվին և ըստ Ասողիկի՝ 10 տարի ավելի առաջ:

Հայաստանի հնագույն ճարտարապետության մեջ եկեղեցիների ընդհանրապես արևմտյան կողմին կից ընդարձակ գավիթներ շինելու սովորությունը թեև 13-րդ դարուն կվերագրվի, սակայն թե՛ պատմական տեղեկություններ և թե՛ փաստացի իրողություններ կան, որ ավելի կանուխ՝ 11-րդ դարու սկզբին արդեն սկսված էին այս ձևի շինությունները: Ըստ Ներսես Լամբրոնացու՝ Բագրատունիները սկիզբ դրին այս ձևին: Իսկ 1036 թվականին Հովհաննես Սմբատ Հոռոմոսում իր շինած եկեղեցիին արևմտյան կողմը շինել տվեր է մի ընդարձակ գավիթ, որ, բացի ժամանակագրականից, նաև մեծ արժեք ունի ճարտարապետական տեսակետից: Այս գավթի, որ շատ ավելի ճոխ է, քան եկեղեցին, ճարտարապետական արժեքն այն է, որ սյուների վրա շինված են հորիզոնական առաստաղներ և այդ առաստաղները վերին աստիճան գեղարվեստորեն քանդակազարդված են: Երևում է, որ Բագնայրի գավթի շինությունը մեծ մասամբ հետևողություն է Հոռոմոսի ս. Հովհաննեսի գավթին. հորիզոնական առաստաղները թեև չունին այնքան մանրակրկիտ քանդակազարդություն, այնուամենայնիվ մի ավելի արվեստագիտական աշխատանք է կատարված, որ մեծ պատիվ կբերի կանգնող ճարտարապետին: Սյունամեջերի առաստաղները բացի հորիզոնական լինելը, որ ըստինքյան ճարտար արվեստագործություն է, նմանապես ներքևից հորիզոնական ձևով մոզայիկ է շինված միջակ մեծությամբ գունավոր քարերից, որոնց մի այլազանությունը կտեսնվի նաև Անիի Առաքելոց եկեղեցիի գավթի առաստաղներին վրա:

Բագնայրի գավթի սյուները և որմնասյուները, որ գրեթե համանման են մյուս բոլոր գավիթների սյուների և որմնասյուների ոճին, հետզհետե զարգանում և ճոխազարդվում են 11-րդ դարից սկսած մինչև 14 և 15-րդ դարերը՝ միանգամայն անկախ թե՛ եկեղեցիների ներքին ու արտաքին որմնասյուներից և թե՛ գմբեթակիր մեծ մույթերից, որոնց մասին առանձին պիտի խոսեմ իրենց համաչափություններով և ճոխազարդումներով ծագման սկզբից մինչև վերջին անկումը:

Բացի Սմբատ Մագիստրոսի շինած տաճարից և գավիթներից, կան նաև ուրիշ երկու փոքր եկեղեցիներ կամ մատուռներ, որոնք, ինչպես կերևի, շինված են որպես հոգեհանգստի եկեղեցիներ, որովհետև այդ մատուռների առջև, արևմտյան կողմը նեղ գավթանման վայրում, խիտ տոհմային գերեզմանատներ են: Գյուղի հյուսիս-արևմտյան կողմը կա մի ութանկյունի փոքրիկ, շատ սիրուն մատուռ, որու շինողը հայտնի չէ, բայց շինության ոճից և մանրամասնություններից երևում է, որ 13-րդ դարու գործ է: Ճարտարապետական տեսակետով չափազանց գրավիչ հատկություն ունի, ինչպես Անիի պարիսպներից դուրս Հովվի եկեղեցին: Դժբախտաբար այս փոքր, չքնաղ հուշարձանը ևս սաստիկ մնասված է:

Ինչպես վերը ակնարկեցի, Բագնայրը նախաքրիստոնեական պաշտամունքի մի շրջան լինելուն անվիճելի ապացույց կարող է ծառայել մի շատ հին մնացորդ, որու մասին տարիներ առաջ «Ազգագրական հանդես»-ում գրել եմ՝ շինության նպատակի մասին անորոշ կարծիք հայտնելով: Բագնայրից դեպի հարավ-արևելք, մոտավորապես մեկ կիլոմետր հեռավորության վրա, Ալաշա լեռան ամենից ստորին, բարձր բլուրի գագաթին գտնվում է որձաքարյա կիկլոպյան անշաղախ մի շինության մնացորդ: Բլուրը ամբողջ շրջապատով փակված է եղել որձաքարյա անշաղախ պարիսպներով, իսկ մեջտեղը կա նաև մի փոքր, առառավելն 6 մետր տրամագծով աշտարակաձև շենքի մնացորդ, նույնպես անշաղախ որձաքարերով շինված, որու նպատակը և բնույթը երկար ժամանակ ինձ անհասկանալի մնաց, մինչև որ պատեհություն ունեցա ուսումնասիրելու Աղավնատան մոտ Օյուղ անվանված բոլորակ աշտարակի մնացորդը, Հաջիղարա գյուղի հյուսիսային կողմը նախապատմական գերեզմանատան մեջ նմանօրինակ երկու աշտարակների փլատակները և Էջմիածնից Աշտարակ գնալու հին ճանապարհի ձախակողմյան բլուրի վրա շինված բոլորակ աշտարակի մնացորդը, որը Արդար Դավիթ անունն ունի:



Նկ. 219. Բագնայրի եկեղեցիների խումբն արևմուտքից

Այս աշտարակաձև մնացորդների մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Բագնայրի հին մնացորդն ևս նույնն է, ինչ որ ուրիշ տեղերում տեսածս բոլորակ աշտարակաձև շինությունների մնացորդները: Վերջապես պարզվեց, որ այս բոլորը նախաքրիստոնեական շրջանի ժողովուրդների պաշտամունքի հետ կապ ունեցող շինություններ են մեզ հասած: Ուրեմն, բացի ավանդաբար Բագինների այր ըսված քարայրներից, այս գյուղի շրջանում գտնված նաև ցույց տվածս աշտարակաձև շինությունները պատճառ են դարձեր այս գյուղի Բագնայր կոչվելուն:



Նկ. 220. Բագնայրի եկեղեցիների խումբը հարավ-արևմուտքից



## 16. Խծկոնք կամ Խցկունք

Տեկորի հնադարյան եկեղեցիի արևմտյան կողմը, երկու կամ երեք կիլոմետր հեռավորության վրա, Տեկոր գետի ձորի բարձունքներում հիմնարկված է Խծկոնք կամ Խցկունք վանքը, որ ներկայիս ծանոթ է Բեշքիլիսե անունով:

Խծկոնքի մեջ կան հինգ զանազան եկեղեցիներ գրեթե զանազան դարերի: Ժամանակագրական կարգով, ամենահին շենքն է այս խմբի մեջ ս. Ստեփանոս անունով եկեղեցին, որու արևմտյան դռան վրա գրված է. «Այս դուռն տեառն է և արդարք մտանեն ընդ սա», և շինության ոճը նախքան 10-րդ դարու ոճ է. ես կարծում եմ, որ այս եկեղեցու վրա գրված է Անանիա Արշարունյաց եպիսկոպոսի անունը: Ոմանք այս եկեղեցիի համար անկրոնավոր բոլորշի են գրում, որ շատ սխալ է, միայն թե այդ թյուրիմացությունը առաջ է գալիս նախքան 10-րդ դարը շինված եկեղեցու մեջ 11-րդ դարուց հետո մի դավանաբանական սովորություն եղած հավելում անելուց, այն է՝ բացի պատարագի մեծ խորանից, նաև 4 փոքր պատարագի սեղաններ եկեղեցուց առանձնացրած ձևով շինելու համար, մի քանի տեղ քանդել են և բանի հարմարեցրել խորանները, որով արտաքին պատերը ևս խաթարվել և լարաձիգ ուղղությունից ընկել են: Գմբեթի կազմությունը և վրան եղած զարդաքանդակները ոչ նվազ ապացույց են, որ այս եկեղեցին 10-րդ դարուց առաջ, հին ճարտարապետական ավանդություններով է շինված, որոնց մի քանի օրինակը տեսնվում է Շիրակավանի եկեղեցիի վրա, որը նաև շինված է 10-րդ դարուց առաջ, հին ավանդական ձևերով:

Այս եկեղեցուց հետո շինված է արտաքուստ բոլորակ ու ներքուստ խաչաձև եկեղեցին, որու շինողն է Վեստ Սարգիս, ըստ Սամուել Անեցու՝ 1027 թ.: Ճարտարապետական տեսակետով այս շենքի թե՛ արտաքինը և թե՛ ներքինը գեղեցիկ և վերածնության այն նորագույն ոճով, որը երևան է գալիս 11-րդ դարում, գրեթե ավելի քան մի դար նույն ոճով զարդարած են ճարտարապետներ շենքերի արտաքին ճակատները: Մյուս երեք եկեղեցիների համար, բացի շինարարական կատարելութենե, գեղարվեստական ոճի տեսակետով մեծ բան չունինք ասելու՝ բացի երեք եկեղեցիների արևելյան կողմը ժայռի վրա շինված եկեղեցու մտից դռան պսակի քանդակները, որ բավական ճաշակավոր է և վարպետ քանդակագործի ձեռքից դուրս եկած: Ոչ նվազ գեղեցիկ և ճարտարորեն քանդակազարդված են թե՛ ս. Սարգսի մոտի և թե՛ հինգերորդ եկեղեցու մոտի խաչքարերը:

Նկ. 221. Խծկոնքի չորս եկեղեցիներ

## 17. Մաղաս կամ Մաղխաս բերդ

Անիի ավերակներից մոտավորապես չորս կիլոմետր դեպի հարավ կգտնվի Մաղաս բերդ ըսված հնագույն ամրոցը: Այս ամրոցը շատ հին անցյալ ունի՝ նայելով իր դիրքի և տեղի ամրության: Անշուշտ 6-րդ դարի վերջերը կանգնված այս ամրոցը մի հին ամրոցի տեղում էր, և այս անհավանական չէ, նկատելով տեղի ամրությունը և նախաքրիստոնեական շրջանում ևս մի ամրոց լինելու հայտնի նշանները:

Նկ. 222. Մաղասբերդ

Իսկ այժմյան գոյություն ունեցող ամրոցը, որ չափազանց գեղեցիկ ու ակնահաճո երևույթ ունի և մեր ժամանակի բարձրագույն ռազմական գիտություն ունեցող զինվորականների կարծիքով, իր ժամանակին ամենից անառիկ բերդն էր և ավելի ամուր, քան Անին, բավական որոշ պատմություն ունի իր սկզբնավորության մասին: Ըստ Զաքարիա պատմիչի՝ բյուզանդական Մորիկ կայսրը (582–602), որ բնիկ օշականցի էր, ուզեց յուր հայրենի գյուղի շրջանում մի քաղաք կամ ամրոց չինել իր անունով: Այդ գործը գլուխ հանելու համար Մորիկ կայսրն ուղարկեց Մաղաս կամ Մաղխաս անունով մի մարդ, որը գալով՝ Շիրակ գավառի մեջ ընտրեց այժմյան Մաղաս բերդի տեղը, չինեց ամրոցը և իր անունով Մաղաս բերդ անվանեց: Իսկ բերդի հանդեպ մի բարձր տեղում այժմ էլ տակավին կերևա մի պարսպապատ ընդարձակ հարթավայր, որտեղ երևում են բազմաթիվ շենքերի ավերակներ, այնպես որ, Զաքարիայի ասելով, Մաղասը ղրկված էր ոչ միայն բերդ, այլև քաղաք չինելու. անշուշտ այս պարսպապատ հարթավայրն է նախկին քաղաքատեղին, որ բերդից բաժանված է միայն մի ձորով: Բուն բերդը յուր կրկնակի պարիսպով շատ նման է մի դղյակի, որի մեջ ոչ միայն բնակության համար ապարանքների մնացորդներ կան, այլև մի բաղնիքի ավերակ, մի ջրամբար և այլ զանազան շինությանց մնացորդներ, որոնք հատուկ են բերդի կամ, ավելի ճիշտ է ամրոցի բնակիչների, այսինքն տիրող իշխանին և բերդաբնակ պաշտոնեությանը[1]:

[1] Թերևս արդարանա Զաքարեի մի տեղեկությունը, թե Մորիկ (Մավրիկ) Մաղխազին ղրկեց իր հայրենիքը՝ Շիրակի մեջ մի հարմար տեղում ամրոց և քաղաք չինելու: Շատ հետաքրքրական է և ուսումնասիրելի Մավրակ գյուղերը, որոնցից մեկը գտնվում է Անիի մոտերքը, Ախուրյանի եզերքին, իսկ մյուսը՝ Տեկորի և Նախճավանի արանքում: Այս վերջինը չեմ տեսած, սակայն Անիի մոտ եղած Մավրակում կան բերդի և ուրիշ շենքերի մնացորդներ: Անշուշտ, այն ժամանակ Մաղխազ չինեց այս բնակավայրը իրեն ուղարկող տիրոջ Մավրիկի անունով, որու անունը մինչև այսօր անփոփոխ մնացել է:



Մինչև հայկական իշխանությանց անկումը Մաղաս բերդը միշտ եղել է հայկական իշխանության ներքո, իսկ հետո մի անհաստատ ճակատագիր է ունեցել. հետզհետե անցել է պարսից, թուրքաց և այլ զանազան անկախ իշխող ցեղապետների իշխանության: Վերջին ժամանակները թուրքական մի ցեղ իշխում էր շրջանին, ինչպես ցույց է տալիս Հոռոմոսի վանքում եղած 1685 թ. մի արձանագրություն: Այս թվականին տիրողն էր իշխանաց իշխան Մուստաֆա աղան, որ թույլատրել է Դանիել անունով մի վարդապետի մաքրել Հոռոմոսի վանքի ապականությունները և վերստին իր նախկին շեն վիճակին հասցնել: Այս Խաթուն-օղլիների վերջին շառավիղ Յուսուֆ բեկը դեռ ապրում էր մեր օրերում, թեև ոչ մի իշխանություն չուներ այլևս. ռուսաց տիրապետությունեն հետո, ամեն իրավունք անցած էր ռուսական կառավարության, իսկ Խաթուն-օղլի Յուսուֆ բեկը հաստատված էր Անիի արևմտյան կողմը 6–7 կիլոմետր հեռավորության վրա Սոգյութլու անվանված գյուղում, ուր, Ալաջա լեռան ստորոտից բղխում են ականակիթ քաղցրահամ աղբյուրներ, որոնք նաև ջուր կմատակարարեին Անիի բնակչության և որոնց կավե խողովակները ճանապարհին դեռ կերևան մինչև այսօր:

## 18. Շիրակավան

Շիրակավանը հին անունն է մի գյուղի, որի նախաքրիստոնեական անունը Երազգավորս էր, իսկ ներկա անունը՝ Բաշ-Նորագյալ, թերևս թուրքերենի ազդեցության ներքո:

Շիրակավան գյուղը, նախքան Անին, զարգացած, մեծացած էր և Բագրատունի թագավորներին ծառայում էր իբրև մայրաքաղաք՝ Բագարանից հետո: Բագրատունի թագավորների համար պատմագրաց մեջ հիշատակված է Սմբատ Ա-ի ապարանքը, որու հետքը չկա առայժմ. սակայն, հակառակ այս մասին եղած զանազան կարծիքների, ես ունեմ իմ ինքնուրույն կարծիքը: Եթե մի տեղ, որ գրեթե մի դար թագավորանիստ մայրաքաղաք է եղած, անշուշտ, մի արքունիք ևս պիտի գոյություն ունենար. սակայն այժմյան գյուղի մեջ գրեթե բնավ հետք չի մնացել: Եթե կա մի տեղ, որ դիրքով և պատշաճությամբ հավանականություն է ներկայացնում արքունիքի, գյուղի հյուսիսային կողմը, բնական բարձրավանդակի վրա է, ուր կան նաև մատուռի և ուրիշ շինության մնացորդներ: Ամենայն հավանականությամբ այս բարձունքն օգտագործել են Բագրատունի իշխողները և այնտեղ չինել իրենց ապարանքը, բարձրից հսկելով ժողովրդական բազմության վրա, ինչպես Անիի թագավորներն իրենց ապարանքի համար հարմար են սեպեր այն բարձունքը, որտեղից ամբողջ շրջապատը երբեմն տասնյակ կիլոմետրներով երևում է: Շիրակավանի հյուսիսային կողմի այս բարձունքից կերևար նաև Տիգնիսի հին ամրոցը, որի հեռավորությունը հազիվ կհասնի $2^1/_2$ կիլոմետրի: Ամենայն հավանականությամբ Բագրատունի թագավորները, Շիրակավանը մայրաքաղաք եղած ժամանակ, բացի Շիրակավանի մեջ իրենց ունեցած մասնավոր ապարանքեն, Տիգնիսի բերդը օգտագործել են իբրև Բագրատունի թագավորների դղյակ: Իսկապես, Տիգնիսի բերդը այցելողը պարզ կտեսնի, որ այդ տեղը ոչ միայն ամրոց էր արտաքին թշնամիներեն պաշտպանվելու համար, կրկնակի պարիսպով և ամուր բուրգերով շրջապատված, այլև երկհարկանի էր և զանազան սենյակների բաժանված, որուն գլխավոր լուսավորությունը հատկապես դղյակի մեջտեղը թողված հրապարակից էր: Տիրապետողները ոչ միայն հետագայում էլ այս ամրոցը օգտագործել են որպես ամրոց և զանազան նորոգություններ կատարեր, այլև շատ հին ժամանակ ևս, նախքան Բագրատունիները, նախաքրիստոնեական ժամանակներում այնտեղ եղեր է մի ամրոց և բնակություն, ուր պեղումները ցույց տվին անվիճելի փաստեր նախաքրիստոնեական իրեղեններով: Այս ամրոցի մասին կարելի է շատ բան գրել, բայց յուր տեղը:

Ուրիշ մի պատշաճություն ևս կա այստեղ Բագրատունի դղյակ լինելուն: Ինչ հեռավորության վրա էր Շիրակավանը Տիգնիսից դեպի արևելք, նույնչափ հեռավորության վրա էր Արգինան դեպի արևմուտք, որտեղ կաթողիկոսներն էին նստում, այնտեղ էր և կաթողիկոսարանը:

Շատ պարզ է, որ հնում, որտեղ քաղաքական իշխանությունն էր նստում, նույն տեղը պիտի լիներ նաև կրոնական իշխանությունը՝ ամեն բանի մեջ խորհրդով և համերաշխ գործելու համար. սա մեծ հեռավորություն չէ, որովհետև Շիրակավանից մինչև Արգինա հազիվ 5 կիլոմետր լինի: Մեկ խոսքով՝ եթե թագավորները նստում էին Տիգնիսում, այն ժամանակ ավելի հեշտանում էր հարաբերությունը թե՛ Շիրակավանի հասարակության և թե՛ կաթողիկոսական տան հետ:



Նկ. 223. Շիրակավանի եկեղեցու դիտակետը Գյումրու-Խարտաշ





Նկ. 224. Շիրակավանի եկեղեցու հատակագիծը

Իբրև թագավորական մի դարու կայան, մեծ հետքեր չեն մնացել Շիրակավան գյուղի մեջ. գյուղի հարավ-արևմտյան կողմը կա մի հին գերեզմանատուն, որի մեջ մեծ հնություններ չեն երևում, և երևցածն էլ 13–14-րդ դարը չի անցնի: Իսկ եկեղեցիներ երկու հատ կան, որոնցից մեկը գտնվում է գյուղի արևելյան կողմը, արհեստական մի բլրի գագաթին և այնքան ավերված է, որ եկեղեցի լինելը հազիվ հայտնի է իր արևելյան խորանի պահված լինելու պատճառով:

Գյուղի մեջ մի բավական մեծ եկեղեցի կա, որու շինությունը Սմբատ Ա-ին է վերագրվում, սակայն այդ ապացուցանող արձանագրություն չկա վրան:

Ճարտարապետական տեսակետով այդ եկեղեցին ուշագրավ մի կազմություն ունի, որ ցույց է տալիս երրորդ վերածնության (10-րդ դար) նախօրյակի խարխափումը և որը ոչ 7-րդ դարու վերջին վերածնությունն է հիշեցնում և ոչ էլ նոր կազմվելիք 10-րդ դարի երրորդ վերածնությանն է նման, այլ մի նոր խառնուրդ հին ու նոր ոճերով և փոխառություններով: Այստեղ էլ պարզ է, որ Հայաստանի արվեստագետները միշտ Արևելքի մեջ են փնտրել իրենց արվեստի զարգացման տարրերը, անկախ տեղական ստեղծագործություններից: Այս եկեղեցին ունեցել է վերնատուն, որու դուռը արևմտյան կողմն է. վեր բարձրանալու սանդուխքը մինչև այժմ մնում է:



Նկ. 225. Շիրակավանի եկեղեցու խորշերի քանդակազարդ պսակ

Գեղարվեստական մեծ արժեք ունին հյուսիսային կողմի պատուհանների քանդակազարդ շրջանակները, արևելյան ճակատի նիշերի գլխին եղած գեղեցիկ քանդակագործությունները, իսկ հարավային ճակատի վրա կան քանդակազարդ շրջանակներով պատուհաններ, քանդակազարդ նիշեր և ուրիշ գեղեցիկ քանդակագործություններ:

Նկ. 226. Շիրակավանի եկեղեցու խորշերի քանդակազարդ պսակ

Այս եկեղեցիի գմբեթն ընկած է, իսկ մյուս մասերը հաստատուն են: Այս եկեղեցին ավերակ դառնալու համար պատմում են, որ ռուսաց պատերազմի ժամանակ լեզգի զորքերը ապաստանած էին այս եկեղեցիի մեջ և չեն ուզեցել դուրս գալ, ուստի ռուսները ռմբակոծել են, և այն ժամանակ ընկել է գմբեթը:

## 19. Մարմաշեն

Լենինականի (նախկին Ալեքսանդրապոլ) հյուսիս-արևմտյան կողմը, 7-8 կիլոմետր հեռավորության վրա, Արփաչայի ձորի մեջ կգտնվի Ղանլիջա գյուղը, որու պատմական անունն էր Մարմաշեն: Թերևս այս գյուղն իր անունը ստացել էր շուրջը շինված կրոնական հաստատություններից: Վերջապես, տակավին պարզված չէ, թե ի՞նչ է նշանակում «մարմաշեն» բառը և ո՛ւմ պետք է վերագրել՝ գյուղի՞ն, թե՞ վանքին: Նախքան ձորը՝ քրիստոնեական հիշատակարանների մոտ իջնելը, ճանապարհի ձախ կողմը կգտնվին հին ուրարտական շրջանի պատերի, բերդերի և այլ շենքերի մնացորդներ: Ուշագրավ է այստեղ, ձորեզրին, հինգ տող բևեռագիր արձանագրությունը, որ փորագրված է մի մեծ ժայռի վրա. արձանագրության վայրը շրջապատված է ուրիշ ժայռերով՝ թերևս արձանագրությունը ապահովելու համար, որով ձևացած է մի սենյականման բաժանում, ուր մտնելու համար միայն փոքր դռնանման մի անցք է ունեցել: Ներկայումս շրջապատող մեծ ժայռերը չկան, միայն արձանագրությունն է մնում, որովհետև բնական հաստատուն ժայռի վրա է: Դեպի արևմուտք, մի քանի քայլ հեռավորության վրա, դարձյալ ժայռի երեսին, փորագրված են հեթանոսական խորհրդանշան փոսիկներ: Բևեռագրի տեղից ճանապարհը շարունակելով՝ կհանդիպինք մի ավերակ բերդի, որուն ավանդաբար Վահրամաշեն են ասում. իսկական շենքի կրաշաղախով կազմությունը և շինության համար գործածված հրաբխային տուֆ քարերը ապացույց են, որ քրիստոնեական շրջանի շինություն է և, հավանորեն, Բագրատունի շրջանի Վահրամ Պահլավունիի սեփական ամրոցը, քանի որ ձորի փառավոր եկեղեցին ևս ինքը շինած է և հարավային կողմի մեծ արձանագրության մեջ նույն տեղը տոհմային գերեզման է անվանվում: Բայց կասկած չկա, որ Վահրամ Պահլավունին ոչ թե ինքն է շինել այդ բերդը, այլ նորը շինել է նախապես գոյություն ունեցող նախաքրիստոնեական բերդի տեղում:

Այստեղ նախնական մի բերդ գոյություն ունենալու ապացույց է ոչ միայն մոտակա բևեռագիր արձանագրությունը, այլև պատահական, ընդհատ, անշաղախ որձաքար պատերի մնացորդները բլրի շուրջ և, որ ավելին է, բլրի հյուսիսային կողմը, ստորոտում, ուր երբեմն անցնող հեղեղատը խորացրել է հորդ անձրևների ժամանակ, կա մի մեծ մուտք, որ նույնպես կոպիտ քարերով շինված է դրան առջևից, փլուզման պատճառով հազիվ երևում են ներքին երկու պատերը, որոնք նույնպես շինված են անշաղախ մեծամեծ անտաշ որձաքարերով: Դժբախտաբար, վերջին անգամ գնալուս, հեղեղատի պատճառով մուտքը դրեթե փակված էր և եթե այսպես շարունակվի, մի օր բոլորովին կփակվի, եթե օր առաջ պեղումով չապահովվի: Գյուղացի ծեր մարդիկ ևս հավաստում են, որ այդ հեղեղատի մոտիկ կա մի ուրիշ բևեռագիր արձանագրություն՝ կոթողանման առանձին քարի վրա, սակայն այս քարը անտերությունից կորել է կամ հեղեղատը փշրել և ոչնչացրել է կամ հողի տակ ծածկել:




**Նկ. 227. Մարմաշենի մեծ եկեղեցու հատակագիծը**

Բլրի վրա կան զանազան դարերի կանգուն և կիսավեր հուշարձաններ: Գյուղի հյուսիսային կողմը, մի բարձր տեղում, կա մի հուշարձանի մնացորդ, որ 7-րդ դարու շինություն է և մնացել է միայն հյուսիսային պատի մի մասը: Արձանագրության հետք չի երևում, գուցե գտնվի, եթե շուրջը պեղումներ կատարվեն:





**Նկ. 228. Մարմաշենի եկեղեցիի կամարի դիրքը**

*Նկ. 229. Մարմաշենի վահրամաշեն տաճարի արևմտյան մուտքը*

*Երեք եկեղեցիների խումբը, որ ցածն է և գետին մոտիկ, մեծ շրջպարիսպով փակված է եղել մինչև գետի եզերքը: Այս երեք կիսավեր և ամբողջ եկեղեցիները, որ ճարտարապետական և գեղարվեստական տեսակետով առանձին կարևորություն ունին, մանավանդ վահրամաշեն մեծ կաթուղիկեն, անկասկած պատկանում են երրորդ վերածնության սկզբին: Վահրամաշեն կաթուղիկեի ներսը գմբեթակիր գեղեցիկ որմնասյուներ ունի, որոնք առանձին վեհություն են տալիս ներքինին. իսկ արտաքուստ, ամեն կողմից գեղեցիկ և նուրբ որմնասյուներով շրջապատված լինելուց զատ, դարաշրջանին հատուկ գեղեցիկ պսակով զարդարված է ամբողջ շրջապատը: Չափազանց [ուշագրավ է] հարավարևելյան որմնասյան խոյակն իր ձևով և քանդակագործություններով: Շենքի վրա գմբեթի արտաքին երևույթը առանձին կարևորություն ունի ճարտարապետական տեսակետով: Շրջապատը վայելուչ սյունախուրձեր միացած են գմբեթի պատին իբրև որմնասյուն, իսկ վրաները պսակված են եռանկյունի ֆրոնտոններով այս ձևը, որ 13-րդ դարու 4-րդ վերածնության մեջ հաճախ երևում է, այս երրորդ վերածնության մեջ գրեթե առաջին օրինակներից մեկն է. նույն ձևով է շինված Ամբերդի մյուս վահրամաշեն եկեղեցու գմբեթը: Արևելյան կողմից քանդակազարդ է միայն խորանի պատուհանի շրջանակը, իսկ արևմտյան կողմից չափազանց հաճելի ձևով քանդակված են արտաքին դուռը և վերևի միջին պատուհանը:*

*Արևմտյան կողմը ունեցել է ընդարձակ գավիթ, իսկ այժմ անհետացել է, հազիվ երևում են գավթի հիմերը:*

*Եկեղեցիի արևմտյան կողմը, գավթից դուրս, երևում են ավելի հին շինության մնացորդներ. ի միջի այլոց երևում է նաև մի բոլորակ մեծ շինության հիմը, որու ինչ լինելը պարզելու համար անհրաժեշտ է պեղել: Ցածը գտնված այս երեք եկեղեցիներից միայն մեկն է, որի շինողը հայտնի է: Շինության հարավային պատի վրա եղած ընդարձակ արձանագրությունից երևում է, որ եկեղեցին շինողն է 10-11-րդ դարերում Վահրամ Պահլավունի իշխանը, ըստ արձանագրության՝ սկսել է 986 թ., վերջացրել է 1029 թ., որով 43 տարի տևած կլինի այս շենքի շինությունը մինչև ավարտը: Ինչպես երևում է, շենքի հիմնարկությունից մինչև վերջնական ավարտը երկար ընդհատումներ եղեր են, որով ժամանակամիջոցը չափազանց երկարել է: Թեև պետք է խոստովանել, որ շենքը ունի ներքուստ և արտաքուստ ճարտարապետական և գեղարվեստական պատասխանատու մասեր, այնուամենայնիվ այդ բոլորը կարող էին վերջանալ 10-12 տարում, եթե երկար ընդհատումներ չլինեին:*

*Շենքի շուրջը, բացի Վահրամի ընդարձակ արձանագրությունից, կան նաև նվիրատվության շատ արձանագրություններ: Եկեղեցիի կից շրջափակին մեջ կգտնվին Վահրամի և իր կնոջ տապանաքարերը՝ վրաներն արձանագրված[1]:*

*Վահրամաշենի հյուսիսային կողմը անմիջապես մոտիկ կա մի եկեղեցիի շենք, որը թերևս ավելի կանուխ է, քան վահրամաշենը, այնուամենայնիվ դարձյալ նույն դարուն և նույն երրորդ վերածնության կպատկանի: Հարավային կողմը մի քանի քայլի վրա կա մի ուրիշ փոքր եկեղեցի, որը թեև թվական չունի, սակայն իր ոճը անվրեպ ցույց կուտա, որ թեև վահրամաշենից ավելի ուշ, սակայն միևնույն դարու, այսինքն 11-րդ դարու վերջերին շինված է: Այս երեք եկեղեցիները շրջապատված են եղեր առանձին շրջափակ պարիսպով:*

*Եկեղեցիներից դեպի հարավ, այժմյան գյուղերից դուրս, գետի վրա եղեր է ի հնումն կամուրջ, որ բավական հետաքրքրական է այն տեսակետով, որ ամբողջ գետի լայնության վրա միակամար շինված է եղեր. կամուրջի ձախ ոտքը ամբողջովին փլած է, սակայն աջ ոտքը տակավին բավական բարձրության կա և ցույց է տալիս, որ մեջը ունեցել է պահնորդական սենյակներ, ինչպես Անիի կամուրջները: Կամուրջից քիչ ավելի հեռանալով՝ կտեսնենք մի մեծ ավերակ, որուն մեջ կերևին, բացի բնակությունից, ձիթահաններ, ջրաղաց, եկեղեցի և այլն, որոնք ցույց են տալիս, որ բավական ընդարձակ մի արվարձան էր: Ունի նաև ընդարձակ գերեզմանատուն, ուր հաճախ բնական ժայռաբեկորների վրա գրված են տապանագրերը:*

[1] *Վահրամի տապանաքարը չպետք է շփոթել եկեղեցիի արևմտյան դռան մոտ այժմյան գոյություն ունեցող, ալիքսանդրապոլցիների շինած տապանաքարի հետ. իր իսկական տապանաքարը ինքս գտել և լուսանկարել եմ, թեև մեջտեղից երկու կտոր եղած:*



## 20. Ապուղամրենց ս. Գրիգոր

*Անիի ավերակներու մեջ հնօրյա գեղեցկություններից մի մնացորդ է, ի միջի այլոց, նաև Ապուղամրենց ս. Գրիգոր անվամբ բոլորաձև եկեղեցին՝ Մաղկոցաձորի եզերքին: Շենքը շատ փոքր է, համեմատելով մյուս շենքերի հետ, սակայն այնքան ուշագրավ և հաճելի երևույթ ունի, որ չի կարելի առանձին տեղ չտալ մեր գեղարվեստական հուշարձանների շարքում:*

*Նկ. 230. Անիի Ապուղամրենց ս. Գրիգոր եկեղեցու ընդհանուր տեսքը հյուսիս-արևելքից*

*Շենքը ներքուստ բոլորշի ձև ունի՝ վեց կիսաբոլորակ* abside-*ներով շրջապատված, և* abside-*ների դեպի տաճարի ներքինը միացման տեղում ունի գեղեցիկ և յուրահատուկ ոճով որմնասյուներ, որոնց խոյակները միանգամայն տեղական ստեղծագործության և ճաշակի արդյունք են: Շենքի ներքին տեսքին վեհություն տվողը, հակառակ իր փոքրության, տրված բարձրությունն է, որու վրա ավելանալով գեղեցիկ մի գմբեթ, ընդհանուր ներդաշնակություն է տալիս ներքին տեսքին: Խորանի ձախակողմյան* abside-*ին մեջ մի նկարչական մնացորդից երևում է, որ մի ժամանակ նկարազարդված է եղել այս սիրուն տաճարը, սակայն այս նկարազարդությունը անպայման շատ ուշ ժամանակ եղած է, որովհետև նկարների վերաբերյալ մեր կատարած հետազոտությունները մեզ այն եզրակացության են բերել, որ եկեղեցիներ նկարազարդելու սովորությունը 13-րդ դարում է միայն սկիզբ առել, թեև գրական տեղեկություններ կան, որ 7-րդ դարում հայոց եկեղեցիներում պատկերներ եղել են բոլորովին այլ նպատակներով, այնուամենայնիվ պատկերամարտության բովանդակ շրջանում հայերը գրեթե պատկերամարտ են եղել, և այս հաստատվում է Վահան կաթողիկոսի փախուստով: 13-րդ դարում է, որ սկսում են պատկերներ երևալ հայոց եկեղեցիների մեջ, անշուշտ արևմտյան այլ քրիստոնյաների ազդեցության ներքո:*

*Ընդհանուր ոճը ցույց է տալիս, որ տակավին հաստատված չէ երրորդ վերածնությունը, այլ երկ-*



*Նկ. 231. Անիի Ապուղամրենց ս. Գրիգոր եկեղեցու հատակագիծը*

*բորդ և երրորդ վերածնության միջոցին է կանգնված այս շենքը և ավելի մոտիկ է երրորդին, ինչպես կան այս նույն թվականներին չինված այսպիսի մի քանի այլ շենքեր: Երրորդ վերածնությունը, ինչպես երևում է, պետք է սկսել 10-րդ դարու կեսից, որու նմուշներն են Մարմաշենը, Անիի Առաքելոցը, Կաթուղիկեն և այլն:*

*Այս գողտրիկ շենքը չինողն է Գրիգոր Պահլավունին, որ հայրն էր պատմության մեջ անվանի Վահրամ Պահլավունի իշխանի, որը չինել է տվել Մարմաշենի և Ամբերդի տաճարները:*

*Այս շենքի հյուսիսային կողմը բացվեց մի ավերակ՝ երկու փոքր մատուռներով, որոնց անուններն են ս. Ստեփաննոս և ս. Քրիստափոր: Ս. Ստեփաննոսի և ս. Քրիստափորի արանքում տեղավորված էր Գրիգոր Պահլավունիի գերեզմանը, իսկ այս երկու փոքր մատուռների առջև կար մի փոքրիկ նախագավիթ, ուր կային երկու մեծ և մի փոքր տապանաքար: Հավանական էր, որ մեծ տապանաքարերից մեկը, արձանագրված, Սեղայինն էր, իսկ մյուս փոքր տապանաքարը՝ մանուկ Համզեինը: Ինձ անհասկանալի մնաց, թե մյուս մեծ տապանաքարը ո՛ւմն էր՝ արդյոք Գրիգոր իշխանի կին տիկնանց տիկին Շուշիկի՞նը:*

*Տաճարը ամեն կերպ անաղարտ է, միայն գմբեթի ծայրի խաչը պոկված է, և պոկելու համար մի քիչ խորը քանդված: Թեք կտուրների վրա քարե ծածկերը տեղ-տեղ մնասված են:*

## 21. [Հովիվի եկեղեցին] [(Ժողովրդական ավանդություն)][1]

*Հովիվի եկեղեցիի մասին ժողովրդական ավանդությունը մասամբ արդարացի է, թեև սա եկեղեցի չէ և ոչ ալ Հովիվի մը չինած, այլ մի փոքրիկ շիրիմ, միջին հարկի վրա պատարագի սեղանով մը. սակայն, համենայն դեպս, նա կանգնված է 10-11-րդ դարերեն ոչ ուշ. այդ դարերուն պարիսպներեն ներս բնակություն ունենալ իշխաններու և ազնվականներու միայն մենաշնորհն էր, հասարակ ժողովուրդը պարիսպեն դուրս քարայրերու և բաց դաշտերու մեջ էր, որուն ապացույց են պարիսպներեն դուրս գտնված մեծատարած երկու հասարակաց գերեզմանատները, մեկը Ծաղկոցաձորի վրա, մյուսը՝ Հոռոմոսի ճանապարհի վրա, ձորին մոտիկ: Իմ կարծիքով, Ալփասլանի կոտորածեն հետո, երբ գաղթականության բուռն հոսանքի ժամանակ պարիսպեն ներս բնակող մեծամեծները գաղթեցին, այն ատեն ներսը տեղ բացվեցավ հասարակ ժողովրդին, որը բնակություն հաստատեց պարիսպեն ներս՝ ապահովության համար, դուրսը թողնելով միայն այգիներ ու պարտեզներ: Հետևաբար, այդ շիրիմը (Հովիվի եկեղեցին) կանգնողն անպայման հասարակ ժողովրդին պատկանող միջակ դասեն մեկն էր. ինքնին մեծածախս շինություն մը չէ արդեն, սակայն գաղափարի եզական հղացումով կարելի է ըսել, կգերազանցե Անիի բոլոր մեծ ու փոքր հիշատակարանները:*

*
* *

*Անիի մեջ ամենահասարակ տներու դռների և օջախների վրա փորագրված զմայլելի քանդակագործությունները ցույց կուտան, որ այնտեղ իշխաններու և ազնվականներու միայն հատուկ չէր տենչը դեպի գեղարվեստը. ամեն դասի ժողովուրդ վարակված էր անոր սիրով:*

*Գագկաշեն ս. Գրիգորի եռահարկ տաճարի ամպածրար կաթուղիկեն երբ հսկա պարիսպներեն եռապատիկ ավելի բարձրացավ, դուրսը, դաշտին մեջ իր ոչխարները արածող Հովիվին սիրտը ուրախությամբ լեցվեցավ. ռամիկ հոգվույն՝ բոլոր պարզությամբ դարձավ յուր կնոջ և հրամայեց աղոթելու գնալ նորակառույց արքայական տաճարի մեջ, կյանք և ողորմություն խնդրելու երկնավորեն առաքինի և մեծագործ թագավորին համար, որ պարծանք մը ևս ավելցուց հայ գեղարվեստի պատմության: Սակայն երկար չտևեց այդ ուրախությունը, օր մը, երբ իր բարեպաշտ կինն այդ արքայական փառաշուք տաճարին մեջ աղոթելու անարժան համարվելով դուրս շպրտվեց, Հովիվը վրեժխնդրությամբ լեցված, աչքերը դարձուց դեպի արքայական պալատները և առյուծի մռնչյունով գոռաց. «Արքա՛ հզոր, ես, խեղճ Հովիվս, պիտի խորտակեմ քու ամբարտավանությունդ: Դու հարստությունով, մեծությունով ու զորությունով կհպարտանաս, ես չնաշխարհիկ ճաշակովս պիտի կանգնեմ մի տաճար քու դիմաց, թեև փոքրիկ, բայց բոլոր փառքովդ պիտի նախանձիս անոր վրա. մարդիկ քու կանգնած վիթխարի զանգվածին առջև պիտի ապշին ու սոսկան, իսկ իմ տաճարիս առջև հոգեկան քաղցր զմայլումով պիտի համակվին. քուկինիդ խրոխտ գլուխը շուտով պիտի խոնարհի և սիրտդ ու հոգիդ պիտի թաղե իր փլատակներու տակ, սակայն իմ չնաշխարհիկ հանճարիս համեստ կոթողը մշտավառ աստղի մը պես դարուց ի դարս պիտի փայլի գեղարվեստական աշխարհի հորիզոնին վրա»:*

*Հովիվը հասած էր յուր նպատակին: Շուտով կանգնեց ս. Գրիգորի նման եռահարկ մի մատուռ՝ արտաքուստ շուրջանակի զարդարված որմնասյուներով, գմբեթարթ կամարներով ու խորշերով, իսկ ներքուստ օժտեց մի այնպիսի անման առավելությամբ, որն որ իր նախորդը չունենալեն զատ, իր հետնորդը հազիվ ունեցավ 15-րդ և 16-րդ դարերու գոթական արվեստին մեջ, այն ալ փայտի և երկաթի աջակցության շնորհիվ:*

*
* *

*Հատակագիծը սիրուն աստղ կներկայացնե: Առաջին հարկը ծածկված է որմնասյուններեն դեպի կեդրոն ձգվող վեց ամբողջ կիսաբոլորակ կամարներու միացումով՝ որոնք մեկզմեկ խտացուցած են կեդրոնին վրա, և միացման միջին կետին վրա սահմանված էր ջահ կամ կանթեղ մը կախելու՝ թերևս արքայական տաճարեն անարգանոք դուրս վռնդվող Հովիվի և Հովվուհիի գերեզմանին վրա մշտնջենական լույս սփռելու համար:*

*Արդյոք ո՞րչափ մարդիկ զարմանքով դիտեցին այս կամարները՝ երբ տակավին շեն էր, և չէին վար թափեր անոր քարերը. հանճարեղ ճարտարապետը քարերուն տաշվածքի ձևին գաղտնիքը ծածկեր էր կամարներուն մեջ և արտաքուստ ցույց տվեր էր սովորականի կեղծ ձևը:*

*Այսօր մենք ալ պիտի զարմանայինք, եթե փլվածքով անոր գաղտնիքը երևան չգար. այնպիսի ձևով տաշվածքներ ունին քարերը, որ չորս անգամ ավելի մեծ նույնանման շինության մը համար կատարյալ ապահովություն կընծայեն: Ես կհուսամ, որ ի մոտո բախտ կունենամ հրապարակ հանելու այս զարմանալի կազմության մանրամասն դետալները (տես՝ նկ. նկ. 244, 245, 246 և 247):*



[1] *Այս հատվածը քաղել ենք «Դեղունի»-ի մեջ հեղինակի հրատարակած «Կաթիլ մը հայ գեղարվեստի ծովեն» վերնագիրը կրող հոդվածից:*

*Կազմող*

ՄԱՄԵՆ
ՉՈՐԲՈՐԴ

# ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



## Ա

# ԱՆԻ[1]

Անի քաղա՞ք, թե՞ ամրոց: Անին, հակառակ պատմագրական վկայությանց, թե բիւրք-բիւրուց ժողովուրդ ուներ, հարյուր հազարավոր զորք և հազար ու մեկ եկեղեցի, այսօր առեղծվածային երևույթ է ստացեր: Պարիսպներեն ներս, հազիվ չորս կիլոմետր տարածության վրա, անկարելի էր, որ այդքան ժողովուրդ տեղավորվեր: Արդ, իրավամբ հարց կծագի, որ եթե Անի քաղաքի ամբողջական տարածությունը մեր տեսած պարիսպներեն ներս եղած մասն էր միայն, ուրեմն ի՞նչպես այդքան փոքր տարածություն բավականություն կուտար այն բազմաթիվ բնակչության, մի տարածություն, որը թեև բերդ համարվելու չափ փոքր չէ, բայց քաղաք ըսելու չափ ալ մեծ չէ:

Զհիմնվելով լոկ պատմագրական վկայությանց վրա, այս առեղծվածը բավական կպարզվի, Շիրակի թագավորության պատմությունը համեմատելով Անիի և իր շրջակա հիշատակարաններու մնացորդներուն հետ:

Շիրակի թագավորության սահմանը արևելքեն Արագածոտն էր, արևմուտքեն՝ Վանանդ (Կարս), հյուսիսեն՝ Սանահին, հարավեն՝ Երասխ գետը: Այս տարածությունը հազիվ կարելի է համեմատել այսօրվան Երևանի նահանգի հետ, որու մեջ երկու միլիոնեն ավելի ժողովուրդ դժվար թե կարենար իր տնտեսական կարիքներուն բավականություն գտնել:

Բովանդակ Շիրակի թագավորության մեջ ալ միայն մեկ հատիկ քաղաք կար, այն է՝ արքայանիստ մայրաքաղաք Անին: Բագրատունյաց հարստության օրով այլևս ուրիշ քաղաքի անուն չենք գտնում Շիրակի թագավորության սահմանի մեջ: Բագարանը հազիվ թե երբևիցե մեծ քաղաք եղած լինի. նախկին Բագրատունի իշխանները ավելի իբրև ամրոց նստան այնտեղ, քան իբրև քաղաք: Արքայական աթոռը Շիրակավան փոխադրվելեն հետո, բնականաբար, Բագարանն ալ իր կարևորությունը պիտի կորցներ: Անիի արձանագրություններեն երբեմն պարզ կտեսնվի, որ Մրենն անեցիներու մրգաստանն ու այգեստանն էր, ինչպես նաև Բագարանը: Շիրակավանը, նույնիսկ թագավորանիստ եղած օրերուն ավան կամ գյուղաքաղաք անունը ունի պատմության մեջ. նմանապես Արգինան, հակառակ կաթողիկոսական աթոռը լինելուն:

Անին առաջին անգամ մեծ քաղաքի հռչակ ստացավ, երբ Աշոտ Ողորմածը աթոռը վերջնականապես փոխադրեց այնտեղ (961 թվին), իր նախորդներու անհաստատ աստանդական թափառումներեն հետո:

Անշուշտ, Աշոտ Անիի դիրքին և ամրության հետ ինկատի ունեցավ նաև քաղաքին բազմամարդությունը, որ վաղուց աճել ու բազմացել էր նախորդ Բագրատունի իշխաններու ջանքերով. թերևս կլիմայի և ուրիշ տնտեսական հարմարություններու պատճառով Անին թագավորանիստ քաղաք շինելու ծրագիրն ավելի հին էր, սակայն Աշոտ Ողորմածին միայն հաջողվեցավ առաջին անգամ իրագործել այդ ծրագիրը:

Թե ե՞րբ է սկսվել ժողովրդի հոսանքը դեպի Անի, այդ ճշտիվ չգիտցվիր, բայց հիշատակարաններու մնացորդներ կան, որոնք իրենց ոճով և արվեստագործությամբ ցույց են տալիս, թե նախքան

[1] Արտատպվում է «Ազգագրական Հանդես»-ի XXII և XXIII գրքերից՝ փոքրիկ կրճատումներով: Կրճատված են Դիրաքարի և Գառնիի տաճարների նկարագրությունները:
Կազմող

Աշոտի աթոռն այնտեղ փոխադրելը, արդեն քաղաքը ընդարձակված էր այսօրվա պարիսպներեն ոչ նվազ տարածությամբ: Աշոտն իր պարիսպը շինեց [հետագայում կառուցված] մզկիթի մոտեն մինչև Ծաղկոցաձոր, հին քաղաքին մեկ մասը միայն ներս առնելով: Վահրամ Պահլավունի իշխանի հայրը՝ Գրիգոր Պահլավունի իշխանը, իր տոհմային եկեղեցին, Ապուղամրենց ս. Գրիգոր, շիներ է Աշոտի պարիսպներեն դուրս՝ եթե երբեք նախքան Աշոտի պարիսպի շինությունը արդեն կանգնված չէր Ապուղամրենց եկեղեցին:

Զորս տարի առաջ սմբատաշեն պարիսպեն ոչ շատ հեռու, պր. Ն. Մառի պեղումներով երևան եկած առեղծվածային չորս հաստ պիլոնները 10-րդ դարեն շատ առաջ շինված լինելու ամեն հավաստիք կներկայացնեն: Իգաձորի եզերքին, սմբատաշեն պարիսպին գրեթե կից, մի փոքր եկեղեցիի մնացորդ կա, որու հյուսիսային պատը միայն կանգուն է երկու աղեղներով և մեկ միջին որմնասյունով: Այս որմնասյան քանդակագործ խոյակի ոճը շատ բնորոշ կերպով 6–7-րդ դարերու հայ ճարտարապետության դրոշմը կկրե իր վրա: Անիի մեջ, սկսյալ 10-րդ դ. մինչև անկում, խոյակներու նույն ոճի հետևողության օրինակներ տակավին չէ պատահած ինծի, նույնիսկ քանդակելու կերպը շատ կզանազանի Անիի քանդակագործներու արհեստագործությենեն:

Սմբատաշեն պարիսպին կից, Իգաձորի եզերքին վրա այս հնագույն եկեղեցիի գոյությունը նախքան 10-րդ դար քաղաքին մինչև այն տեղերը տարածված լինելը կապացուցանե:

Ամենայն հավանականությամբ Սմբատ ևս իր շինած ընդարձակ պարիսպով ամբողջ քաղաքը չշրջապատեց, այլ անոր մեկ մասը միայն միացուց Աշոտի ամրոցի հետ՝ որչափ որ անհրաժեշտ էր թե՛ ամրության և թե՛ պարիսպը ընդարձակելու դրդապատճառ եղող կարիքներին բավականություն տալու համար: Ինչպես ուրիշ թագավորներ, նույնպես ալ Սմբատ բնականաբար պիտի մտածեր ամենեն առաջ ապահովել երկրի և թագավորության ջիղն ու անոր զորավիգ եղող դասակարգը – ազատանին:

Հայտնի է, որ հնում հայ ժողովուրդը օրենքով երկու դասակարգի կբաժանվեր՝ ազատ և շինական: Ազատներու դասակարգին կպատկանեին իշխանական և նախարարական տոհմերը, զինվորականները, բարձրաստիճան կղերականները և ազնվական ծագում ունեցող կալվածատերերը, որոնք ընդհանրապես մասնակից էին երկրի վարչական գործերուն և տուրքերե միանգամայն ազատ էին: Իսկ շինական կհամարվեր հարկատու հասարակ ժողովուրդը, որ կբաղկանար առևտրականներե, արհեստավորներե, երկրագործներե և այլն:

Նկ. 232. Անիի ավերակների ընդհանուր տեսարանը միջնաբերդից



Անիի ամրությո՞ւնն էր պատճառ, թե՞ այնտեղ նստող թագավորներու արժանավորությունը, վերջապես պարզ է, որ Բագրատունյաց ամենաբարգավաճ, հարուստ և միջազգային պատկառելի դիրք ստացած ժամանակամիջոցը Անիի թագավորության շրջանն է, Շիրակը ոչ մի ժամանակ այնքան քաղաքական ապահովություն չվայելեց, որչափ Անիի թագավորներու օրով մինչև վերջընթեր թուլամորթ Հովհաննես թագավորը:

Այն ժամանակվան ռազմագիտական տեսակետով ո՞րչափ անառիկ և անմատչելի էր Անին, այդ առանձին ուսումնասիրության նյութ է և ունի իր շատ հետաքրքրաշարժ կողմերը. ցավալի է, որ մինչև այսօր Անին այցելող բազմաթիվ զինվորականներ չեն փորձած մասնավոր ուսումնասիրությամբ մը Անիի հնագիտական գրականությունը հարստացնել:

Հանգուցյալ կոմս Լոռիս–Մելիքովը շատ մոտեն քննած է եղել Անին և շրջակա քանի մը բերդեր, և թե՛ տեղի ընտրության, թե՛ ռազմագիտորեն շինության տեսակետով ամենեն ավելի գնահատել է Մաղաս բերդը, Անիեն 10–12 կիլոմետր դեպի հարավ-արևմուտք: Այս բանը ինծի պատմել է Խրիմյան կաթողիկոսը, բայց չեմ հիշեր, թե անձա՞մբ խոսած էր, թե՞ ուրիշե մը լսած էր Լոռիսի կարծիքը. համենայն դեպս Լոռիսի խոսակիցը, հակառակ նյութի վերին աստիճանի շահեկանության, կամ մանրամասնորեն չէ հետաքրքրվեր, և կամ եթե հետաքրքրվեր ալ է, գոնե մամուլի սեփականություն դարձնելու բարեմտությունը չէ ունեցեր և, այսպիսով, կորուսեր է այդ մեծ ռազմագետ զինվորականի նշանակալից կարծիքները հայկական հնագույն բերդերու մասին: Այժմ դարձյալ կարելի է և վերին աստիճանի անհետաձգելիորեն կարևոր, եթե գտնվին նախաձեռնողներ՝ պատմական բերդերու ուսումնասիրության մեջ հմուտ և ներկայումս փորձառու զինվորականներե բաղկացած գիտական արշավախումբ մը կազմելու: Այդ արշավախմբի հետազոտությունները ավելի շատ բան կպարզեն մեզ համար, քան ուրիշ նյութերու միջոցով մեր ստացած տեղեկությունները, մասնավորապես հին հայոց պատերազմական արվեստի մասին:

Անիի թագավորները, թերևս մասնավոր հեռատեսությամբ, բավական չհամարելով մայրաքաղաքի բնական ամրությունը, ամբողջ ազատանին ալ հավաքեր են գահի շուրջը, հավանորեն անոնց վրա շատ մոտեն հսկելու համար, որովհետև անջատ բերդերու մեջ բնակող իշխաններ և նախարարներ, անցյալում շատ տխուր ապացույցներ տված են իրենց հպատակության և տիրասիրության նկատմամբ: Իմ կարծիքով՝ Անիի վերջին տարաբախտ թագավոր, նորապսակ պատանի Գագիկ Բ-ի համար շատ դժվար կլիներ ապստամբ Վեստ Սարգսին իր ամրութենեն դուրս հանել մեն մենակ, եթե Վեստ Սարգսի ապաստարան բերդը Անիեն դուրս ուրիշ հեռավոր կետի մը վրա գտնվեր: Այն ատեն Գագիկ ստիպված էր զորքով կռվելու անոր դեմ, մինչդեռ Վեստ Սարգսի համար անխոհեմություն իսկ էր գահի պաշտպան բազմաթիվ ազատաններով և անթիվ ժողովրդով անմիջապես շրջապատված նեղ սահմանի մը մեջ ինքզինքը ապստամբ հայտարարելը:

Երկրի վարչական գործերու տեսակետով ևս նպաստավոր էր իշխաններու, զինվորականներու և բարձրաստիճան հոգևորականության անմիջապես գահի շուրջը գտնվելենին. հարկը պահանջած ժամանակ խորհրդակցություններ և քաղաքական ձեռնարկումներ անմիջական կերպով կատարել հնարավոր կլիներ: Ուստի այս ամենը կպահանջեին, որ թագավորության բոլոր ազատանին շրջապատեր արքայական գահը, և անոնց բնակության համար ալ տեղ էր հարկավոր մասնավորապես Անիի ամրոցում:

Թե որչա՞փ թիվ կկազմեր ազատանի դասակարգը Անիի թագավորական շրջանում, և որչա՞փ ընդարձակ տեղ պետք էր անոնց բնակության համար՝ շատ դյուրին է ըմբռնել: Բագրատունի թագավորազուններու բնակության համար բավական չէր միմիայն Միջնաբերդի փոքր տարածությունը. այնտեղ հազիվ բավականություն կուտար արքայական ընտանիքին, անշուշտ, արքունի ընտանիքի հետ անմիջական կապ չունեցող թագավորազուններ և իշխանազուններ արքունիքի (Միջնաբերդի) պարիսպեն դուրսը բնակություն հաստատեր էին: Գեթ ես այսպես կբացատրեմ Գագիկ Բ-ի թագավոր պսակված ժամանակ անոր արքունիքեն դուրս գտնվելով Վեստ Սարգսի՝ արքունիքին տիրանալու դեպքը, որն որ, անշուշտ, ներս ճողոպրիլ հաջողած էր Հովհաննես Սմբատի կյանքի վերջին օրերուն:

Իշխանազուն ընտանիքներեն զատ, մի Պահլավունի ցեղ կա, որը ոչ նվազ ազդեցիկ դիրք ուներ Շիրակի և մասնավորապես Անիի մեջ, թե՛ իրապես իր անօրինակ քաջություններով և թե՛ Լուսավորչի սերունդ համարվելու չափ ցեղային առավելություններով: Այսօր իսկ կտեսնվի, որ այդ Պահլավունի ցեղը շատ ընդարձակ տեղ է գրավեր Աշոտի և Սմբատի շինած պարիսպներեն ներս գտնված տարածության վրա: Աշոտի պարիսպներեն ներս, Ծաղկոցաձորի եզերքին կգտնվի Գր. Պահլավունի իշխանի կնոջ՝ տիկնանց տիկին Շուշիկի սեփական եկեղեցին: Աշոտի պարիսպեն դուրս, գրեթե երկու

Հարյուր քայլ պարիսպեն հեռու, դեպի հյուսիս, նույնպես Ծաղկոցաձորի եզերքին է նույն Գրիգոր Պահլավունի իշխանի սեփական եկեղեցին (Ապուղամրենց ս. Գրիգոր), որու հյուսիսային կողմը փոքր դամբարանի մեջ ալ թաղված է ինքը իր Սեղա դստեր և մանուկն Համզե որդվույն հետ: Գրիգոր իշխանի եկեղեցիեն (Ապուղամրենց ս. Գրիգոր) դեպի արևելք, Գլիձորին մոտիկ, կանգներ է անոր տղան՝ Ապլղարիպ մարզպանը՝ ս. Փրկիչ եկեղեցին: Դարձյալ Ապուղամրենց եկեղեցիեն դեպի հյուսիս կեդրոնական դիրք բռնած է Առաքելոց եկեղեցին, որ բացառապես Պահլավունի եպիսկոպոսներու աթոռ և անոնց սեփականություն էր: Թերևս դեռ կային ուրիշներ ալ, որոնք այժմ կորած են, բայց այժմ եղածներն ալ բավական են ցույց տալու, թե Պահլավունիներ ի՞նչ ազդեցություն և դիրք ունեին Անիի մեջ և ի՞նչ ընդարձակ տեղեր գրաված էին պարիսպեն ներս: Անշուշտ, այս եկեղեցիներու համար տրամադրելի ավելի գետին հարկավոր էր զանազան հարակից կարևոր շինություններ շինելու համար: Արդ, եթե հաշվենք ավանդաբար մեզ հասած Պահլավունյաց պալատի մը գրաված տեղն ալ, պիտի տեսնենք, որ մինակ Բագրատունի և Պահլավունի ցեղերուն հազիվ բավականություն պիտի տար Սմբատի և Աշոտի պարիսպներեն ներս գտնված տարածության մեկ երրորդը: Մնացածն ալ հազիվ պիտի բավականանար բարձրաստիճան զինվորականներուն և զինվորներուն, նախարարներուն, արքունի դիվանական պաշտոնյաներուն, ազնվական կալվածատերերուն ու բարձրաստիճան եկեղեցականներուն: Բացառապես մի ընդարձակ հողաբաժին կկազմեն պարիսպեն ներսի հարյուրավոր տոհմային եկեղեցիներու անմիջապես կից ընտանեկան գերեզմանատները, բաղնիքները, որոնց չորսը հայտնի են ինծի, շուկաները և անշուշտ պատերազմական կամ զինվորական պետքերու համար անհրաժեշտ, մոտավորապես 8–10 մետր լայնությամբ պարիսպի ներսի կողմեն շուրջանակի հատկապես դատարկ թողնված մասերը:

Ուրեմն, ազատանիներու այս խիտ բազմության և անոնց քաղաքական կամ զինվորական պետքերուն հատուկ հողաբաժիններ հատկացնելու համար, բնականաբար, հետզհետե պարիսպեն դուրս պիտի քշվեր հասարակ ժողովուրդը, եթե կար Սմբատի պարիսպի հիմնարկությենեն առաջ:

Պարիսպեն դուրս անթիվ բազմություն ո՞ւր և ի՞նչպես բնակություն հաստատեր էին, քննենք այժմ այդ հարցը:

Նախ պետք է նկատի առնել այն հազարավոր քարայրերը, որոնք խտացած են Ծաղկոցաձորի, Ալաջա ձորի, Գլիձորի և Ախուրյանի ձորերու մեջ: Այս քարայրերը ուսումնասիրելով՝ մենք կտեսնենք, թե բոլորովին աղքատ մարդիկ չէին անոնց բնակիչները, որովհետև որևէ մեծությամբ քարայր մը փորելու համար, գրեթե նույն չափ ծախք և աշխատություն էր հարկավոր նույնչափով հասարակ բնակարան մը հողեն դուրս շինելու համար: Մանավանդ որ քարայրերը ոչ նվազ ընտանեկան հարմարություններով բաժանված են սրահներու, սենյակներու և ուրիշ կարևոր ստորաբաժանումներու. կան նույնիսկ երկհարկանի և եռահարկ քարայրեր: Մեծամեծ քարայրեր կան, որոնց մեջ այսօր երկու հազարեն ավելի ոչխար կտեղավորեն քուրդ հովիվներ, մեջը ունին, բացի ընդարձակ սրահներե, սենյակներե և նրբանցքներե, նաև եկեղեցի և տոհմային դամբարան: Ես կկարծեմ, որ Միջնաբերդի մոտ, Ծաղկոցաձորի կողմի գիդան գյալմազ[1] ըսվածը, դարձյալ մասնավորի սեփականություն, մի ընդարձակ քարայր է, որու մուտքը խափանվեր է փլուզումով, ոչ թե հատկապես նեղ բացված, ինչպես կկարծեն ոմանք:

Այս տեսակ հսկա քարայրեր փորել տալը երբեք հասարակ կամ աղքատ ժողովրդի գործը չէ, անոնց համար հարստություն էր հարկավոր: Քարափոր եկեղեցիներ կան, որոնք ստորաբաժանումներով դրսի եկեղեցիներեն բնավ չզանազանվելեն զատ, նաև զարմանալի կերպով գեղարվեստական տեսք տալու ջանքեր եղած են անոնց ներքինին (նկ. նկ. 233 և 234):

Ծաղկոցաձորի մեջ նկարազարդ մատուռի մը մնացորդով քարայր-դամբարան մը կա, որու համար կըսվի, թե Զաքարե սպասալարի զորավար Տիգրան Հոնենցի տոհմային դամբարանն է: Հոնենց Տիգրանի անբավ հարստությունը կարելի է չափել եկեղեցիներուն անոր տված նվիրատվությանց արձանագրություններեն. բացի ոսկեղեն և արծաթեղեն զարդերե և անշարժ կայքերե, քանի՜-քանի՜ գյուղեր է բաշխեր այս կամ այն եկեղեցուն:

Ի՞նչ բան կստիպեր Տիգրան Հոնենցին, փոխանակ իր տոհմային դամբարանը հողեն դուրս ավելի գեղարվեստականորեն շինելու, մտնել քարայրերու մեջ: Անկասկած, քարայրերը ավելի հաստատուն և տևական նկատված էին, քան դուրսը շինված դամբարաններն ու բնակարանները, և ավելի ապահով՝ բնության ավերիչ արկածներու դեմ: Նաև զարմանալի չի թվի, եթե ըսեմ ավելի առողջապահիկ, քան հողեն դուրս շինված բնակարանները՝ բացառապես Անիի շուրջը գտնված քարերու

[1] Գնացողը չի վերադառնա (Թրք.):

Նկ. 233. Անի քաղաքի բնակելի այրեր

որակի և հատկության շնորհիվ, որոնց մեջ փորված են այս քարայրերը: Քար ըսելե ավելի՝ եփած հողի նման է՝ հրաբխային լավայի ջերմության մեջ ավազով ու խիճով ձուլված և թրծված: Ոչ ամառնային արեգական կիզիչ ջերմությունը կարող էր թափանցել այդ քարափոր բնակարաններու մեջ և ոչ ալ ձմեռվան ցուրտն ու խոնավությունը: Կ. Հ. Բասմաջյանի Փարիզ տարած 4–5 տարեկան փոքրիկ աղջկան մը մարմինը Հոնենց Տիգրանին վերագրված քարափոր դամբարանի մեջ էր, որ բնական մումիայի փոխված էր, անշուշտ մումիայն չորության պատճառով: Երեկվան մեռածի նման անարատ պահված էր այդ փոքրիկ անեցուհիին մարմինը, նույնիսկ ձեռքերու մեջի ու ոտներու ներքևի մորթի բնական ծալքերն ու գծերը չէին կորած, միայն գույնը փոխված էր բացպղնձագույնի: Դժբախտաբար անգլուխ էր մարմինը, ականատեսներ կպատմեն, թե պարսկաստանցի ոմն բժիշկ Թաշճյան, նախքան Կ. Հ. Բասմաջյանի Անի գալը, տեսնելով այդ փոքրիկ դիակը՝ հետաքրքրության համար անոր գլուխը կտրելով հետը տանելու բարբարոսությունը ունեցեր է, իր բնակարանի մեջ սեղանի զարդ շինելու համար, որովհետև, ինչպես մարմինը, նույնպես ալ դեմքը անարատ պահված է եղեր ճակատեն հյուսված մազերով և հյուսքերը դեպի ետև տարված ու ժապավենով մը իրարու կապված: Ուրիշ դիակներ ալ գտնված են, որոնց՝ եթե ոչ ամբողջովին, բայց մարմնույն զանազան մասերը անփուտ պահված:

Այս ամենեն ավելի, երբ ի նկատի ունենանք, որ թշնամիներու հարձակման ժամանակ, քարայրերը ամենեն ապահով ապաստարաններն էին, այն ատեն պիտի համոզվինք, որ աղքատներեն զատ, հարուստներն ալ իրենց կյանքն ու գույքը պաշտպանելու համար քարափոր բնակարաններ ունենալու ձգտումը պիտի ունենային:

Անիի պարիսպի հյուսիսային կողմը տարածված ընդարձակ դաշտավայրում քննական պտույտ մը շատ բան կբացատրե պարիսպեն դուրս ապրող ժողովրդի կյանքի և դիրքի վերաբերյալ: Ավագ դռնեն մոտավորապես կես կիլոմետր հեռու դեպի հյուսիս մեծ բաղնիքի մը կիսականգուն մնացորդը, մեկ կիլոմետր ավելի անդին Հովիվի եկեղեցին, անկեց ավելի հեռուն դեպի հյուսիս դարձյալ մի ուրիշ մատուռի ու անոր կից գեղեցիկ մահարձանի մը մնացորդները պատահական կերպով աննպատակ չէին շինված: Եթե մոտավորապես մեկ ու կես կիլոմետր դեպի հյուսիս կարելի է այսպես բնակության, մատուռներու ու դամբարաններու մնացորդներ տեսնել, նույն բաները կարելի է տեսնել նաև դեպի արևելք, շատ քիչ ընդհատումներով մինչև Հոռոմոսի վանքը, և դեպի արևմուտք մինչև Անի գյուղի արևմտյան սահմանները:



Նկ. 234. Բնակելի այրեր Անիում

Հակառակ հարյուրավոր տարիներ այդ բաց դաշտում վարուցանքով հողը, քարը մաքրվելուն, դարձյալ այսօր անթիվ բնակարաններու, կրաշաղախ թանձրամած հիմերու և մեծամեծ պարիսպներու հետքեր որոշ կերպով կարելի է տեսնել: Հյուսիսային արտաքին ցած պարիսպին կից ջրալից խրամին զուգահեռաբար հասարակաց լայն ճանապարհ մը կա՝ ձգված դեպի արևելք կամ արևմուտք: Այս լայն ճանապարհները եղերված են եղել մյուս կողմեն թանձրամած բերդանման որձաքարե պատերով, ընդհատվելով և ուղղանկյունի չեղելով դեպի հյուսիս միայն պարիսպի դռներու առջև, նույն ուղղությամբ ճանապարհներ բանալու համար: Այս պարսպանման պատերեն ներս ընդարձակ դաշտավայրում հետաքրքրական է տեսնել բնակության դասավորությունը: Ամբողջ դաշտավայրը, չնորհիվ խրամները լցնելու համար այնտեղեն անցնող վտակի պարզված առատ ջրերու, ծածկված է եղեր ծառաստաններով ու մրգաստաններով, որոնց մեջ կղզիացած են եղեր առանձին թաղամասեր կամ արվարձաններ՝ իրարմե մեկ-երկու հարյուր քայլ հեռավորության վրա: Նույնիսկ կարելի է այստեղ զանազանել առանձին անհատական սեփականություններ՝ իրենց բնակարաններով, պարտեզներով, եկեղեցիով և գերեզմանատնով: Դրսի մեծ բաղնիքը այս խտացած արվարձանները հաղորդակցության դնող լայն ճանապարհի մը եզերքին է:

Ալաշա լեռան ստորոտեն խմելու համար բերված ջուրը բնականաբար բավական չէր այս ընդարձակածավալ դաշտավայրը ոռոգելու, իմ կարծիքով՝ Քեռիկլերի վտակի մեծ մասը դեպի Անի կհոսեր և անոր մեկ ճյուղն էր Հոռոմոսի վանքի սեփականությունը, որուն Հոռոմոսի գետ անունը տրվեր է մի ժամանակ: Եվ որչա՜փ առատ է եղեր այս ջուրը, որ բացի խրամներեն և դաշտային ոռոգումներեն, բավական էր նաև Գլիձորի մեջ քանի մը ջաղացներ դարձնելու: Արդյոք տեղը չէ՞ կարծել, որ Հոռոմոսի վանքի՝ ջրի պատմության հետ կապված արձանագրության մեջ Ականց գյուղ անվանված նույնիսկ այժմյան Քեռիկլեր գյուղն է, որու մեջ կգտնվին այս առատ ջրի ակունքները:

Ծաղկոցաձորի սահմանի վրա, Անի գյուղի մոտ, կա մի մեծ հասարակաց գերեզմանատուն, որու տարածությունը մեկ քառակուսի կիլոմետրեն ավելի է: Այս գերեզմանատան ընդարձակությունը անվիճելի փաստ է պարիսպեն դուրս գտնվող բնակչության խիստ բազմամարդ լինելուն: Պարիսպեն ներս բնակող ժողովուրդը բնավ չէ զիջեր հասարակաց գերեզմանի մեջ թաղվելու, ինչպես տեսանք, յուրաքանչյուր քայլափոխում տոհմային եկեղեցիներ և անոնց կից գերեզմանատներ լեցուն են ներսը:

Այս գերեզմանատան մեջ, բացի աղքատիկ և հասարակ տապանաքարերե, կարելի է տեսնել նաև հոյակապ շիրիմներու մնացորդներ ալ, որոնցմե մեկն է այսօր գրեթե կանգուն Կիրակոս վարդապետի մը դամբարանը, գունագեղ քարերով շինված:

Կիրակոս վարդապետի դամբարանեն դեպի հարավ կգտնվի մի ուրիշ փլատակ դամբարան, ավելի շքեղ և ավելի մեծ: Ուշադրության արժանի է այս դամբարանի մնացորդը իր ճարտարապետական ավելի հին ոճով, քան Կիրակոս վարդապետի դամբարանը: Երկարությունը, հյուսիսեն հարավ, բաժանված է եղեր երկու մասի, արևելյան պատի վրա պահված են տակավին աղեղնակապ խորշեր, որոնց մեջ խաչեր էին ագուցված, նույնպես երկհարկանի էր այս դամբարանն ինչպես Կիրակոս վարդապետինը, և ասոր վրա մեկե ավելի էր մատուռներու թիվը, որ կհիշեցներ Հոռոմոսի վանքին ս. Հովհաննեսի տաճարին կից տապանատունները: Մեծ ու փոքր այսպիսի դամբարաններու թիվը ամբողջ գերեզմանատան մեջ կարելի է տասնի մոտենա, առանց հաշվելու Իգաձորի վրայի քարափոր երկու դամբարանները, որոնք նույնպես այս գերեզմանատան մասն են կազմում: Այլևս ինչ կասկած կարող է լինել, որ պարիսպի հյուսիսային կողմի դաշտավայրն ալ միայն անեցի հասարակ ժողովրդի բնակության հատկացված չէր, համեմատաբար մեծ թիվ կկազմեր այնտեղ ալ ազնվական դասակարգը, որու գոյության ապացույցն են այս գեղակերտ մանր հիշատակարաններու մնացորդները, որոնց մեջ գլուխգործոց կկազմե Հովիվի փոքրիկ եկեղեցին:

Անպայման Հոռոմոսի վանքը, Բագնայր (Ղոզլիջա), Արջո Առիճո (Ալաշա գյուղ) և ասոնց նման 4-են մինչև 10 կիլոմետր հեռավորության վրա այժմ ավերակ գյուղեր Անիի արվարձաններն էին և անմիջական կապ ունեին քաղաքի ներքին վարչական և տնտեսական գործերու հետ:

Անի քաղաքի սահմանը հարավային կողմեն Ախուրյան գետով չէր վերջացած, հանդիպակաց ափը նույնքան երկարությամբ բնակելի էր, որչափ որ Անիի կողմը մինչև Կզկալա: Եթե մի օր Անիի կամուրջը վերանորոգվի, այցելուները առիթ կունենան այն կողմն ալ ման գալու և տեսնելու եկեղեցիներու, բնակարաններու բազմաթիվ ավերակ մնացորդներ և հասարակաց գերեզմանատներ: Գետի հանդիպակաց կողմի բնակչությունը քաղաքի և բերդի հետ անմիջական հաղորդակցության մեջ էր երեք կամուրջներով, որոնց մեկը, քարաշեն կամարակապ, իսկ մյուսները փայտաշեն, որոնց մասին առիթ կունենանք ավելին խոսելու:

Պատմագրական վկայության մը նայելով, պարիսպեն դուրս ապրող ամբողջ բնակչությունը թշնամու հարձակման ժամանակ իրավունք ուներ ամբողջովին պարիսպեն ներս ապաստանելու: Պատահեցավ մի անգամ, որ թշնամին հարձակվեցավ անակնկալ, երեկոյան ուշ ժամանակ, և ժողովրդի մեծ մասը դուրսը մնաց դռները փակված լինելու պատճառով, և թշնամին անխնա կոտորեց դուրսը մնացողներին:

Այս համառոտակի բացատրություններեն կարծեմ թե բավականին պարզված կլինի, որ այժմյան մեր տեսած պարիսպներեն դուրս էր բուն Անի քաղաքը, և պարիսպը քաղաքի ամրոցն էր:

**2. Անիի մեջ արվեստներու զարգացման և անկման դարաշրջանները:** Թե պատմական ինչ անցքեր են տեղի ունեցեր Շիրակի և մասնավորապես մայրաքաղաք Անիի մեջ, քաղաքական ինչ հարաբերություններ կային դրացի երկրներու հետ, թո՛ղ գրեն այդ ճյուղի մասնագետները: Այս հոդվածով ես պիտի ջանամ համառոտակի ցույց տալ յուրաքանչյուր վարչական փոփոխության շրջանում այնտեղ զարգացող կամ անկման ենթարկվող ճարտարապետության և գեղարվեստներու նկարագիրը, որով պիտի տեսնենք, թե ինչ տեսակ գեղարվեստասեր, ստեղծագործող, հանճարեղ և աշխատասեր ժողովուրդ մը ապրեր է Անիի կամ բովանդակ Շիրակի մեջ, որու թողած գեղակերտ հիշատակարաններու մնացորդները թեև մեզ, ներկա հայերիս, դեռ պետք եղածին չափ չէ հետաքրքրած, սակայն կոչված են պատմության անաչառ դատաստանի վճռով հին քաղաքակիրթ ազգերու շարքում պատվավոր տեղը տալ զանոնք կերտողներուն և կերտել տվողներուն: Շատ երկար կլինի մի առ մի մեջ բերել ևրոպացի նշանավոր գիտնական և արվեստագետ այցելուներու հիացման ու զարմանքի զգացումներով ներբողած գովեստներն այս ավերակներու մասին, դեռ վերջերս մեծանուն գիտնական պ. Ն. Մառ Անին Կովկասի հնագիտական խոշոր մարգարիտը անվաներ էր:

Թե ինչպես կարողացել է հազիվ երկու միլիոնի հասնող փոքրիկ Շիրակի ժողովուրդը այսօրվա քաղաքակիրթ աշխարհի զարմանքն ու հիացումը գրավելու աստիճան փառավոր և անջնջելի հետքեր թողուլ, ահա այդ է ամենեն մեծ ուսումնասիրելի հարցը պատմական հայու կյանքում և կարոտ է բազմաթիվ մասնագետներու բազմակողմանի ուսումնասիրության: Ես կարող եմ միայն ներկայացնել արդյունքներ, փաստեր անհամեմատ բարձր արժանավորություններու և կորովի նկարագրի մը, քան մեր ներկա սերունդը, թող ամեն ոք դատե ու վճռե իր ուզած կերպով:

Կարծեմ անցավ այն հոռետեսության ժամանակը, երբ ոչ ոք չէր ուզում հավատալ, թե դեռ նախաքրիստոնեական դարերուն մեջ իսկ, հայ ազգը ստեղծել է իրեն հատուկ ինքնուրույն արվեստներ և մասնավորապես ճարտարապետական մի ոճ, որ անհունապես կզանազանի զինքը շրջապատող մեծ ու փոքր ազգերու արվեստից ոճերեն:

Անին, Հայաստանի բազմադարյան քաղաքակրթության բունին վրա աճած և ուռճացած մի պտղալից ոստ, չէր կարող ետ մնալ ընդհանուր մայր երկրին մեջ զարգացող արվեստներու հոսանքեն, նույնիսկ Կամսարականներու օրով, որոնց գեղարվեստասիրության և փափկաճաշակ մեծագործությանց անանց կոթողներն են Տեկորի և Մրենի հոյակապ տաճարները, 5-7-րդ դարերեն մեզ հասած:

Կամսարականներե հետո Շիրակի վրա իշխող տոհմերը՝ Բագրատունիք, Պահլավունիք[1] և Զաքարյանք, ոչ նվազ ապացույցներ տվին իրենց նախորդներուն ջերմ հետևողներ լինելուն մեջ, և մեծագործ ու գեղարվեստական շինություններով ծածկեցին երկիրը: Այսպիսի կենսունակ և բարձր հատկություններով օժտված ժողովուրդը չէր կարող քանդվիլ և իր բնիկ երկրեն տարագրվիլ, եթե արտաքին թշնամիներու միջոցավ երկրին կառավարիչներուն մեջ ատելության և մշտնջենական կռիվներու սերմեր չցանվեին անընդհատ: Խաղաղություն տեսնելե հուսահատ՝ երբ գաղթականության դիմեցին շիրակեցիք և անեցիք, գրկաբաց և լայն առանձնաշնորհումներով հյուրընկալվեցան իրենց գաղթավայրերուն մեջ իբրև քաղաքակրթության ազնիվ խմոր:

Անին ամբողջ երկու դար դյուցազնական կռիվ մղեց խավարի և տգիտության դեմ, բայց վերջապես չկարողացավ փոքր չափով իսկ փոխել տիրող բռնակալներու գազանային հակումները և ազնվացնել անոնց նկարագիրը...:

Բագրատունի հարստության անկումեն հետո շատ քիչ քաղաքներ այնչափ թալաններու ու կոտորածներու թատերաբեմ եղան, որչափ Անին: Այնտեղեն բղխող ոսկիի անսպառ աղբյուրները միշտ հույնին, պարսիկին, արաբին ու թաթարին կողոպուտի վայրենի ախորժակը գրգռեցին և քանի՜ քանի անգամ մինչև չապիկնին թալանվեցան անեցիք, սակայն իրենց բնական կենսունակությամբ, մեղվաջան ժրաջանությամբ շուտով կմոռնային անցուցած զուլումին և նոր կյանքով ու նոր գործունեությամբ հրապարակ կուգային[2]: Բայց վերջապես դանակը ոսկորին հասավ այն ժամանակ, երբ բռնակալները նյութապես անոնց մինչև կաշին քերթելեն հետո, ձեռնամուխ եղան խղճին, համոզման, եկեղեցվույն և հայրենի դարավոր նվիրական ավանդություններուն: Այս դրության միակ ելքը գաղթականությունն էր: Շիրակեցին, անեցին իր լեզուն, հավատը և ազգային սրբազան ավանդությունները պահելու համար, քանդեց տուն-տեղ, հայրենիք և միանգամ ընդմիշտ հեռացավ իր ծննդավայրեն, բայց այս քանդումով քանդվեցավ նաև թշնամին, ավերակներու վրա սոված նստելեն հուսահատ՝ ինքն ալ անհետ կորավ և երբեմնի փառաշուք պերճությամբ աշխարհ հրապուրող մեծ Անին փոխվեցավ այսօրվան նահատակ քաղաքակրթության մը վսեմ դամբարանի:

Շիրակի ու անոր մայրաքաղաք Անիի բնակչության նյութական և բարոյական բոլոր առավելությունները վեր հանելու համար հատորներ պետք են, նույնպես հետզհետե այլասերվող, ստրկացող և ժրաջան ու բարեպաշտ ժողովրդին արյունը տզրուկի նման ծծող իշխաններու և վարչապետներու շահատակությունները, եթե այս վերջիններս լինեին հեռատես, խոհեմ ու քաղաքագետ վարիչներ, Անին օր մը Արևելքի Աթենքը կամ Հռոմը պիտի լիներ Հայաստանի սրտին վրա:

Աշոտի թագավորությենեն մինչև Զարմաղանի աղեխարշ կոտորածը, բացի Շետտատյաններու շրջանեն, երբ շատ անբնական էր կացությունը, այնուամենայնիվ վերականգնման հուսով կշարունակեր կենդանի ու գործունյա կյանքը Շիրակի մեջ: Զարմաղանի հարվածը ավելի խոր ազդեցություն գործեց Անիի վրա ոչ միայն կոտորածով և ավարով, այլև Զաքարե զորավարի հաջորդները այլևս չունեին անոր քաջությունը և աշխարհաշեն վարչագիտական հազվագյուտ տաղանդը, որով, թեև մեկ դար ևս կյանքը շարունակվեց, սակայն, հետզհետե երկիրը քայքայման ճանապարհին վրա էր: Անեցիք, պատուհաս Շետտատյաններու վտարվելեն հետո մեծն Զաքարե սպասալարի և մասամբ անոր Շահնշահ որդվույն օրերուն, Բագրատունի շրջանեն ոչ նվազ զարգացած էին ամեն տեսակ արվեստներու մեջ և նույնչափ ապահով կզգային ինքզինքնին: Ահա այս վստահության հետևանքն էր, որ անեցիք մասսայական ցույցերով սպանեցին Զարմաղանի դեսպանները. սակայն սխալված էին. նույնիսկ իրենց հույս դրած քաղաքի իշխաններն էին, որ ձեռնտու պիտի գտնվեին Զարմաղանի հաղթությունն ապահովելու: Բայց և այնպես՝ թաթարաց արշավանքեն հետո, անոնց տիրապետության տակ եթե հայերը ճնշված էին նյութապես, սակայն համեմատաբար Շետտատյան շրջանեն ավելի ազատ էին իրենց կրոնական սրբությունները և խղճի ազատությունը: Այս պատճառով ալ մինչև շիրակեցու և անեցու համայնական գաղթը՝ անընդհատ կգտնենք գեղարվեստական հիշատակարաններ՝ կանգնված բովանդակ Շիրակի մեջ:

Քանի դեռ Անին և շրջակայքը ամբողջապես ուսումնասիրված չեն, և ամբողջական ուսումնասիրության համար ալ երկար տարիներ են հարկավոր և, որ ավելին է, առանց շրջակա գավառներու ուսումնասիրության, առանձնապես Շիրակի և Անիի ուսումնասիրությունը գոհացուցիչ արդյունք չի կարող տալ, հետևաբար այժմեն շատ դժվար է այնտեղ զարգացող արվեստներուն իսկական նկարագիրը տալ ինքնուրույնության և զուտ անեցիներու վերագրելի ստեղծագործությանց տեսակետով: Սակայն հնարավոր է գեթ խոշոր գծերով ուրվագծել նշանակելի արդյունք մը, որն որ այդ երկրին հատուկ ժողովրդի բացառիկ աշխատությամբ հավերժացած է:

Անիի կենդանի շրջանը կարելի է չորս մասի բաժանել. 1. Կամսարականներու շրջան, 2. Բագրատունի շրջան, 3. Շետտատյան շրջան, 4. Զաքարյան շրջան: Այս յուրաքանչյուր շրջանը որոշ դրոշմ դրեց Անիի ու շրջակայից մեջ ծաղկող գեղարվեստին վրա և յուրաքանչյուր շրջանեն ալ առավել կամ նվազ չափով մեզ հասած են հիշատակարաններ, որոնք պատմագրական տեղեկություններե ավելի ճշմարտապատում կներկայացնեն ժամանակի ոգին և քաղաքական ու տնտեսական կացությունը:

**3. Կամսարականներու շրջան:** Անին 4-րդ դարուն Կամսարականներու սեփականություն եղավ, սակայն նույն դարուն այնտեղ բնակչություն գտնվելուն վրա շատ քիչ բան հայտնի է մեզի, բայց որ հետագա դարերուն մեջ Անին և մոտակա շրջակայքը շարունակ բնակելի էին, այդ մասին բավական տեղեկություններ ունինք:

Դժվար է փորձել Անիի նախակամսարական շրջանի մասին վճռական կերպով ստույգ տեղեկություններ գտնել. այնուամենայնիվ, նախքան Կամսարականաց շրջանի մասին գրելս, ավելորդ չեմ համարիր ավելի հին շրջանի մասին ևս քանի մի խոսք ըսել՝ հիմնվելով աստանդական ցրված մասնավոր մնացորդներու վրա, որոնք հեթանոսական դարերեն մնացած լինելու կասկածը կուտան:

Անի թրքաբնակ գյուղի մեջ նախընթաց տարիներ հայտնվեցան հին հեթանոսական գերեզմաններ, որոնց պեղումներով մեծանուն գիտնական պ. Ն. Մառ, փոքրիկ, բայց խիստ բնորոշ բաժին մը կազմեց Անիի հնագիտական թանգարանին մեջ: Անշուշտ այդ գերեզմանները անմիջապես իրենց մոտերը բնակող հասարակության մը կպատկանեին: Այն ժամանակներում, երբ ռազմագիտական անհրաժեշտ պահանջ էր սեպաձև ժայռերու վրա պաշտպանողական բերդեր կառուցանելը, անտարակույս, չէր կարող աչքե վրիպած լինել այժմյան Կզկալա կոչված անմատչելի ժայռը՝ բերդի համար իր բոլոր հարմարություններով: Պատմական հատուկտոր տեղեկություններ ալ կան, որ 4-5-րդ դարերուն այնտեղ բերդ մը գոյություն ուներ Անի ամրոց անունով, բայց սկիզբը ե՞րբ շինված էր և ո՞վ շինած էր, անհայտ է (նկ. 235):

Զաքարե սպասալար 13-րդ դարու սկզբին Կզկալայի բարձունքին վրա յուր մոր՝ Սահակադուխտի անունով մի եկեղեցի շիներ է և եկեղեցվո հարավային պատի ընդարձակ արձանագրության մեջ հայտներ է, որ ինքն այդ եկեղեցին շիներ է վաղեմի լուսավորչաշեն եկեղեցիի մը մոտը: Հետևաբար, նախքան Զաքարեի շինելը այնտեղ մի եկեղեցի գտնվելն անկասկած է, և այնքան հին էր, որ ոչ ոքի հայտնի չէր անոր շինողը և ավանդաբար Լուսավորչին կվերագրեին: Ուրեմն, այդքան հին ժամանակ Կզկալայի բարձունքին վրա եկեղեցվո մը գոյությունը ապացույց պետք է լինի մոտակա բնակչության մը գոյության: Անիի ձորերուն մեջ և անմիջապես շրջակայքը շատ կան մանր-մունր մնացորդներ, որոնք հեթանոսական շրջանի պատկանելու կասկածը կուտան. սակայն անոնց մասին ենթադրություն կամ վճիռ կանխահաս համարելով, առայժմ ավելորդ չեմ համարեր հիշատակել անոնցմե մեկ հատը միայն, որ ավելի քան մյուսները հավանականություն կներկայացնե նախաքրիստոնեական շրջանի պատկանելուն:

Անիի արևմտյան կողմը, 5-6 կիլոմետր հեռավորության վրա, Ղազիճա գյուղեն (ի հնումն Բագնայր) դեպի հարավ-արևելք, Ալաջա լեռան ստորին գագաթներեն մեկուն վրա, մեծածավալ որձաքարով շինված հետաքրքրական շենքի մը մնացորդը կա: Մոտակա քուրդ գյուղացիներուն այս տեղը ծանոթ է Ղալա (բերդ) անունով: Երեք բոլորակ

[1] Պահլավունիներ թեև բացարձակ իշխանություն չեն ունեցեր Շիրակի վրա, սակայն թե՛ թագավորներու օրով և թե՛ անիշխանության շրջաններու մեջ իբրև վարչական մարդիկ մեծ դեր ունեցեր են: Մասնավորապես կղերական դասը ունեցեր է առանձին աթոռ Անիի մեջ և երկրին վարչության հետ զուգահեռաբար գործել է երկար ժամանակ:

[2] Վասպուրականի մեջ, Արծրունի թագավորության ժամանակ, ոչ նվազ ծաղկեր էին ճարտարապետություն և գեղարվեստ. և կարելի է ըսել, որ շատ մը մասերու մեջ գերազանց էր քան Անին և հայրենիք եղած էր Հայաստանի մեջ 10-րդ դարեն սկսյալ ծաղկող զանազան ոճերու: Շիրակի մեջ ճարտարապետական որոշ ոճերու նախատիպերը Վասպուրականի մեջ են և անկեց փոխադրված կերևին Արարատյան աշխարհը: Այս մասին կանդրադառնամ ուրիշ հոդվածով մը:

պատեր են շինված մեջ մեջի, յուրաքանչյուր պատերու միջոցը դատարկություն կա մոտավորապես 7–8 մետր[1]: Կրաշաղախ բնավ գործածված չէ, միջին բոլորակը, որուն տրամագիծը հազիվ 5–6 մետրի հասնի, համեմատաբար ավելի փոքր քարերով շինված է եղեր: Բլուրը այժմ ալ անմերձենալի է գրեթե, բացի արևմտյան կողմեն, ուր շինված է եղեր մտից դուռը՝ հանդիպակաց մեծ բլուրը իրեն միացնող թեին վրա:

Ի՞նչ շենք էր այս և, մասնավորապես, ի՞նչ բանի կծառայեր միջին փոքր բոլորակը, իհարկե, վճռական բան չէ կարելի ըսել. ընդհանրապես մեզի ծանոթ բերդերու հետ բնավ չի համեմատվիր իր օտարոտի ձևով: Համենայնդեպս իր շինարարական ոճով ալ քրիստոնեական շրջանի շենքերեն շատ կտարբերի:

Հսկա որձաքարերով բերդեր, պարիսպներ և ուրիշ զանազան շենքեր շինելու սովորությունը շատ հին է հայոց մեջ, գոնե առնվազն 5-րդ դարեն անդին պետք է փնտրել առանց կրաշաղախի որձաքարով շենքեր կառուցելու սովորությունը: 5-րդ դարեն մեզի հասած հրաբխային սրբատաշ քարերով կրաշաղախ շինվածքներու օրինակներ քիչ չեն: Նույնիսկ 3-րդ և 4-րդ դարերուն ալ գտնվելուն մեծ հավանականություն կա, այս պատճառով ալ ինծի հավանական կթվի, որ Տեկորի, Բագարանի և Երվանդակերտի առանց շաղախի հսկա որձաքարերով շինված բերդերը նախաքրիստոնեական դարերուն կպատկանին:

Ալեքսանդրապոլեն [Լենինական] դեպի հարավ-արևելք, 10–12 կիլոմետր հեռու, Կափըլի գյուղին մեջ անշաղախ հսկա որձաքարերով շինված երկու բերդերե զատ, կա նաև մի ընդարձակ քաղաքի մնացորդ, որուն մեջ գտնված բնակարանները առանց բացառության միևնույն ձևով ու ոճով շինված են: Հիմնված մի շատ բնորոշ ապացույցի վրա, կհամոզվիմ, որ Կափըլիի բերդերը և քաղաքի մնացորդները նախաքրիստոնեական մնացորդներ են, թեև ի միջի այլոց պիտի ըսեմ, որ գյուղացիք միշտ կգտնեն այնտեղ հեթանոսական գերեզմաններ և ուրիշ իրեղեններ. նույնիսկ քարե դագաղներ գտնված են, որոնցմե մեկը անասնոց ջուր խմեցնելու համար իբրև քարե դուռ կգործածեն հիմա:

Պր. Մ. Նիկոլսկի իր հնագիտական արշավանքներու ժամանակ որոշ կերպով նկատեր է, որ ուրարտյան բևեռագիր արձանագրությունները առհասարակ փորագրված են անցորդներու աչքերեն վրիպող խուլ տեղերու վրա: Ղանլիջայի բևեռագիր արձանագրության փորագրված տեղը «պարփակված չորս կողմից փոքր ժայռերով իբրև մի բնական գավիթ» խոսքով կբնորոշե[2]:

Արդարև, ժայռի մեջ հատկապես խորացած սենյակի մը կնմանի այդ տեղը, արևմտյան կողմեն նեղ անցքով մը հաղորդակցելով դրսի հետ: Բայց, ինչպես կերևի, պ. Մ. Նիկոլսկիի աչքեն վրիպեր է այդ գավիթին հարավային պատին արհեստական շարվածք լինելը: Իսկապես ալ, իրարու վրա դրված քարերը այնչափ խոշոր են և խառնված մասամբ հողի հետ, որ առաջին հայացքով դժվար է տեսնել անոր արհեստական շարվածքը, եթե հատկապես չքննվի:

Ղանլիջայի արձանագրությունը, որ մեր թվականեն ութ դար առաջ Արգիշտի Ա-ի փորագրել տվածն է, անկասկած, այդ արձանագրության անեղծ պահպանության համար նույն Արգիշտին շարել տվեր է հարավային պատը: Ահա այս պատի շինության ոճը երբեք չի զանազանիր Տեկորի, Բագարանի, Երվանդակերտի և Կափըլի գյուղի բերդերու անհայտ ժամանակ շինված պատերու շարվածքեն: Երվանդակերտի մեջ եթե մի տարբերություն կա, այն ալ քարերուն երկաթի կապերով (crampon) իրարու կապված լինելն է, շատ մը քարերու վրա անեղծ մնացած են կապերու տեղերը: Այս ոճը ես պիտի անվանեմ հայ արվեստի կիկլոպյան շրջանի արվեստ:

Պր. Մ. Նիկոլսկի կհավաստե նախաքրիստոնեական շրջանի պատկանող սրբատաշ որձաքարերով պատերու գոյությունը, որոնք ինծի հայտնի չեն, սակայն, անշուշտ, հսկայական անտաշ որձաքարերով կիկլոպյան պատերու զարգացումն են սրբատաշ որձաքարերով պատերը: Բայց սրբատաշ որձաքարի գործածությունը ո՞ր դարուն սկսած է, այդ մասին կարելի է մոտավոր ենթադրություն միայն ընել:

Ինծի ծանոթ սրբատաշ որձաքարի գործածության ամենահին օրինակը համարեր եմ Ալեքսանդրապոլեն [Լենինական] 7–8 կիլոմետր դեպի արևելք Դիրաքլար գյուղի եկեղեցվո աստիճանները և շենքի ստորին մասերը: Ամենայն հավանականությամբ այս եկեղեցին հեթանոսական ծագում ունի և առաջին անգամ եկեղեցիի փոխարկված է 5-րդ կամ 6-րդ դարուն մեջ, եթե ոչ ավելի կանուխ:

[1] Բոլորովին հողին հավասարված են հիմերը և թափված մեծամեծ քարերը արգելք են ճշտիվ չափելու ոչ միայն պատերու մեջ եղող դատարկությունները, այլև պատերուն թանձրությունները:

[2] Պրոֆ. Խաչատուր Հովհաննիսյանց – Բևեռագիր արձանագրություններ Ռուսահայաստանում: Վենետիկ, 1897, երես 43:



«Տեկորի տաճարը» աշխատությանս մեջ փաստացի կերպով ապացուցանելու ջանացեր եմ, որ հայոց հնագույն եկեղեցիներու արևելյան կողմին վրա, դեպի հյուսիս և հարավ ցցված թևեր և նույն թևերուն վրա արտաքուստ aside-ներ շինելու սովորությունը 6-րդ դարեն այս կողմ չանցնիր:

Անիի մեջ, թեև համեմատաբար ծավալով փոքր, բայց առանց կրաշաղախի, երկաթե կապերով ամրացված կապույտ որձաքարե պատեր գոյություն ունեցեր են մի ժամանակ: Ծաղկոցաձորի եզերքին, միջնաբերդ մտնելու դռան երկու կողմին վրա, այժմ կան երկու քառակուսի բուրգեր, որոնք շինված են միջակ ծավալով սրբատաշ կապույտ որձաքարե: Բայց քարերու անխնամ ու անկարգ շարվածքը և արտաքին ճակատներուն վրա երևացող երկաթի կապերու վաղեմի գոյության հայտնի հետքերը ցույց կուտան, որ անոնք հանված են ուրիշ տեղե և բերված այդ բուրգերուն վրա հյուսված, և կամ նույն տեղին վրա գոյություն ունեցող հնագույն բուրգերու քարերն են՝ նորոգությամբ քանդված և վերստին գործածված:

Քանի որ մեզի հայտնի են 5–7-րդ դարերու Կամսարական տոհմի հիշատակարաններ, որոնք շինված են կրաշաղախ, հրաբխային սրբատաշ ավազաքարերով, նաև այդ դարերեն սկսած բնավ չեն գտնվիր որձաքարե հին ոճով շինված պատեր ամբողջ Հայաստանի մեջ, բնականաբար պետք է հետևցնել, որ Անիի մեջ այսօրվան մեր տեսած երկաթյա կապերու նշաններով սրբատաշ որձաքարերը եթե ոչ նախակամսարական, գոնե 4-րդ դարու Կամսարականաց այնտեղ շինած շենքերուն կվերաբերին:

Նախնական որձաքարե պատերու քանդումը և քարերու տեղափոխումը առաջին անգամ կատարվեր է, հավանաբար, Բագրատունիներու օրով, եթե չեմ սխալիր՝ Աշոտ Ողորմածի ժամանակ, որովհետև այժմ գոյություն ունի մի շատ հաստ պատ, որ սկսած է Ծաղկոցաձորի դռան փոքր քառակուսի բուրգերեն և ձգված է դեպի հարավ-արևելք: Այս պատը անջատեր է արքունիքը քաղաքեն և միևնույն ատեն անոր մեկ մասը պալատի հյուսիսային ճակատը կազմեր է:

Անկասկած, Բագրատունիներ վերանորոգության ենթարկեցին այս պատը, շինելով նաև արքունի պալատը՝ Կամսարականաց բնակարաններու տեղին վրա, հիմնովին քանդելով հիները: Այդ պատճառով ալ Միջնաբերդ մտնելու դռան երկու կողմի քառակուսի բուրգերեն զատ, մենք կտեսնենք վաղեմի պատերե քանդված սրբատաշ քարեր, խառնված հետնագույն ժամանակ կրաշաղախով շինված այս հաստ պատին՝ նաև պալատի հիմերու զանազան մասերուն մեջ, ինչպես պալատի հարավային դռան երկու կողմի փոքր բուրգերու խարիսխներուն վրա: Հաստ պատի շինությունը կամ վերանորոգությունը Աշոտին վերագրելուս պատճառն այն է, որ հետագա թագավորներ չեն բավականացեր նույն պատի սահմանով և պալատը ընդարձակեր են դեպի հյուսիս, հավելված մասեր միացնելով, որով այդ հաստ պատը մնացեր է այժմ պեղումներով հայտնված հյուսիս-արևմտյան դահլիճին տակ՝ հատակեն զայն երկուքի բաժնելով: Այս հավելյալ դահլիճին որմնասյուներու և խոյակներու քանդակազարդությունը ոճը ամենայն հավանականությամբ Գագիկ Ա-ի ժամանակակից արվեստագործություն է, որովհետև նույն ոճը Սմբատին և Աշոտին վերագրված շենքերու մեջ բոլորովին անծանոթ է. այս մասին ապացույցներ թվել շատ երկար կլինի, այդ մասին ավելի ընդարձակորեն պիտի տեսնվի այն ատեն, երբ պալատի առանձին ուսումնասիրությունս լույս տեսնե:

Անկասկած, Շետտատյաններու օրով միջնաբերդի դռան ձևին և դիրքին վրա զգալի փոփոխություններ կատարվեր են. այն ժամանակ դռան երկու կողմի քառակուսի բուրգերը վերստին քանդեր են և անոնց որձաքարերով դռան առջև ցած աստիճաններով մայթանման սանդուխներ շիներ են: Այս սանդուխները երևցան Ն. Մառի պեղումներու ժամանակ: Թեև Միջնաբերդ գնացող ջրմուղին հետքը գտնելու համար դռան առջևը խոր փորվելով սանդուխի աստիճաններեն մեկ մասը քանդվեցավ, սակայն, կարծեմ տակավին երկու կարգ մնացած պետք է լինի շենքին կից: Դռան առջև փորումով երևցան նախկին դռան հետքերը, բայց շատ աղավաղված:

Առանձնապես Կամսարականներու կվերագրեմ Կզկալա կոչված բերդի հարավային կողմը շրջապատող քառակուսի բուրգերով հնագույն պարիսպի մնացորդը, որ գետին կողմեն խուլ և անմատչելի տեղի վրա գտնվելով՝ տակավին բոլորովին ուշադրության առնված չէ:

Քառակուսի բուրգերու ոճը հայոց մեջ ավելի հին է, քան կիսաբոլորակը: Վերջին ժամանակ, 10–14-րդ դարերուն, քառակուսի բուրգեր շիներ են բացառապես անկյուն կազմող տեղերու վրա. ուրիշ ուղղաձիգ մասերու վրա, առանց բացառության, բուրգերը կիսաբոլորակ են: Տեկորի և Երվանդակերտի մեջ որձաքարե բերդերու հայտնի մնացորդ բուրգերը ամենն ալ քառակուսի են, նմանապես Տրդատա թախտը շրջապատող բերդի պարիսպին բուրգերը, առանց բացառության, քառակուսի են: Ասոր դռան երկու քովի բուրգերուն կիսաբոլորակ

*շինվելուն պատճառը հետնագույն ժամանակի շինություն լինելու մասին արդեն գրեցինք: Հայտնի թվականով՝ 7-րդ դարու կեսին Զվարթնոց եկեղեցին շրջապատող պարիսպը քառակուսի բուրգերով ամրացած է և կապացուցանե, թե դեռ նույն դարուն ալ կիսաբոլորակ բուրգերը ընդհանրացած չէին:*

*Արդ, Կզկալայի հին բերդին կրաշաղախ քառակուսի բուրգերով շինված լինելը ոչ մի կասկած չի թողուր, որ 5–7-րդ դարերում Կամսարականներեն մնացած է նույն պարսպամասը: Կզկալայի հյուսիսային և արևմտյան կողմերուն վրա կան ուրիշ պարսպամասեր, կիսաբոլորակ բուրգ, ինչպես նաև բերդի մտից դուռը, բայց անոնք անհունապես կտարբերին թե՛ շինվածանյութերու տեսակով և թե՛ արվեստագործությամբ, կասկած չկա, որ այդ մասերը վերանորոգության ենթարկեր է Զաքարե սպասալարը իր մոր՝ Սահակադուխտի անունով այնտեղ եկեղեցին շինած ժամանակ:*



*Նկ. 235. Անիի Աղջկաբերդը (Կզկալա)*

*Հնագույն շինության մը երևույթն ունի Միջնաբերդի բարձունքին վրա պալատի արևելյան կողմին կից Սագաշեն փոքր եկեղեցին, որուն վրայի արձանագրության թվականը, ըստ պ. Ն. Մառի ընթերցանության, 7-րդ դարուն կպատկանի (622), թեև հետնագույն նորոգություններով ավելի ուշ ժամանակի ոճեր մտեր են անոր մեջ: Մասնավորապես հարավարևելյան անկյունի կիսաբոլորակ խորշին ճակատը պսակող քանդակագործությունը 10-րդ դարու արվեստի հատկանիշն ունի:*

*Ուշադրության արժանի այս փոքր եկեղեցվո հյուսիսային պատին կից երկհարկանի դամբարանմատուռին որմնասյուները, որոնք կետ առ կետ իրենց ոճով նման են Զվարթնոց եկեղեցվո դռներու* fronton-*ները կրող որմնասյուներուն, չգիտեմ՝ այս միակ նմանությո՞ւնը պետք է Զվարթնոցի դարու հարազատ մնացորդ համարել, թե՞ պատահական նմանություն է. այդ մասին կդժվարանամ վճռական կարծիք հայտնելու, բայց եթե հաստատվի, որ իսկապես 7-րդ դարուն կպատկանին թե՛ եկեղեցին և թե՛ այս հարակից դամբարանը, այն ատեն հաստատապես կգիտնանք նաև, որ հայոց մեջ երկհարկանի դամբարանները շինելու սովորությունը մինչև 7-րդ դար կհասնի՝ հակառակ 10–11-րդ դարերեն սկսած լինելու կարծիքին:*

*Նկ. 236. Անիի պարիսպների մի մասը*

*Այս թվածներես դուրս՝ առայժմ չենք կարող գտնել որևէ մնացորդ Անիի մեջ, որ կարելի լինի Կամսարականներու ժամանակին վերագրել, և այս ամենը, բացի պալատին կից եկեղեցիեն, այնպես ողորմելի, քարուքանդ վիճակի մեջ մեզ հասած են, որ անոնց վրա Կամսարականաց շրջանի Անիի մեջ շատ դժվար է արվեստից զարգացման աստիճանի մասին վճռական կարծիք հայտնել: Բայց միևնույն ատեն դատելով 5-րդ և 7-րդ դարերեն մեզ հասած հայ հիշատակարաններու գեղարվեստական և շինարարական գերագույն կատարելությենեն, բնականաբար, Անին, իբրև Հայաստանի մաս, միևնույն ատեն իրենց գեղարվեստասիրությամբ հռչակավոր տոհմի մը սեփականություն՝ չէր կարող ետ մնացած լինել Հայաստանի ուրիշ մասերեն, այդ պիտի ապացուցանե նաև պալատին կից եկեղեցվո շինությունն ու ոճը՝ եթե հաստատ է անոր 7-րդ դարուն պատկանելը:*

**4. Բագրատունիների շրջան:** *Ինչպես ընդհանուր Հայաստանի մեջ 4-րդեն մինչև 7-րդ դարու վերջը, այնպես ալ Շիրակի մեջ Բագրատունյաց ժամանակը շինարարական արվեստի մեծագործության շրջան է: Թեև Շիրակի հետագա շրջաններն ալ գեղարվեստի զարգացման տեսակետով ետ չմնացին, նույնիսկ մի քանի ճյուղերու մեջ ավելի գերազանցեցին, սակայն Բագրատունիներու նման մեծամեծ հիշատակարաններ չթողուցին: Հետիններուն մեջ ավելի զարգացավ նկարչությունը և մասնավորապես մանրանկարչական արվեստը:*

*Բագրատունիք, բաղդատմամբ իրենց անձուվ երկրին և փոքրաթիվ ժողովրդյան, մեծագործություն ըսվելու արժանի հիշատակներ շատ թողեր են, որոնց մեկ քանին այստեղ հիշատակելով պիտի բավականանամ:*

*Աշոտ Ողորմածին վերագրելի մնացորդներ Անիի մեջ գտնել շատ դժվար է, բացի մզկիթի մոտեն դեպի Ծաղկոցաձոր ձգվող պարիսպը և քանի մը հատուկտոր մասեր արքունիքի մեջ (Միջնաբերդ), որոնցմե մեկը, ինչպես վերև խոսեցա, արքունիքը քաղաքեն բաժնող հաստ պատն է, որ մասամբ պալատի հյուսիսային ճակատն էր: Աշոտին կարելի է վերագրել պալատի արևմտյան դուռն իր հնաոարյան ոճի քանդակագործությամբ և ջրամբարը: Եթե իսկապես ջրամբարը Աշոտի գործ լինելը կհաստատվի, այն ատեն ջրամբարեն ավելի հիշատակության արժանի գործ է ջրմուղը, որուն միջոցավ Ալաջա լեռան ստորոտներեն ջուրը կհասներ*

մինչև Անի և կբարձրանար պալատի բարձունքներուն վրա: Ուշադրության արժանի էր ջրմուղի որոշ մասերուն շինվածքի կերպը, որն որ նախընթաց տարիներ պ. Ն. Մառի պեղումներով բացվեցավ. կային տեղեր, որ թրծած հողե խողովակները ջրի ուժեղ ճնշումներեն անվնաս պահելու համար կրկնակի քարե խողովակի մեջ ամփոփված և մաքուր կրաշաղախով պնդացված էին:

Ամբողջական պալատի մասին պիտի հրաժարիմ առայժմ գրելե, որովհետև այնպիսի այլանդակված վիճակի մեջ մեզ հասած է, որ դժվար է զանազանել անոր մեջ բնակողներից յուրաքանչյուրի առանձին շինածները կամ կատարած փոփոխությունները: Ինչ որ Աշոտի կամ Գագիկ Ա-ի վերագրել հավանական էր, արդեն գրեցի, կմնա հյուսիս-արևելյան կողմի մեկ մեծ դահլիճը, որ նույնպես, հավանորեն, վերագրելի է Գագիկ Ա-ի, որուն մեջ փոփոխություններ եղեր են հունաց տիրապետության օրով. իսկ մահմեդականներու և Զաքարյաններու վերագրելի մասերուն համար կգրեմ իր կարգին:

Սմբատի ընդարձակ պարիսպը հյուսիսային կողմի ձեռագործ խրամներով միասին ըստինքյան մի մեծագործություն է նահանգապետի մը չափ սահման և բնակչություն ունեցող թագավորի մը համար:

Զեմ սխալիր, եթե ըսեմ, որ մոտավորապես 2500 մետրեն ավելի երկարությամբ պարիսպ է շինված Սմբատի ձեռքով քաղաքի շուրջը, առնվազն 8-10 մետր բարձրությամբ և մեկ մետր թանձրությամբ, ամբողջովին կրաշաղախ մածուցիկ հրաբխային ավազաքարերով, երկու կողմեն սրբատաշ: Հյուսիսային կողմեն ձեռագործ խրամը մի մեծ աշխատությամբ և զոհողությամբ գլուխ հանված գործ է: Խրամի մեջ լեցուցելիք ջրի մակերևույթին համար որոշված բարձրությենեն ավելի արտաքին փոքր պարիսպին հիմերը որձաքարով շինելեն հետո հանդիպակաց կողմը մեծածավալ որձաքարերով պատ շարեր են խրամի ամբողջ երկայնությամբ, ավելի քան 500 մետր: Այս երկայնության մեջ ջրի հոսանքը արգիլելու և լճացած պահելու համար դեպի լայնության յուրաքանչյուր 10-12 մետր հեռավորության վրա վերստին նույն խոշոր որձաքարերով պատեր շիներ են, որոնց մեջ ջուրը ավազանանման լճանալով՝ վերևեն ավելորդը կթափվեր իրեն հաջորդ ավելի ցածր գտնվողին մեջ և, այսպիսով, մեկ կողմեն կհասներ մինչև Գլիձորի վերի ծայրը և մյուս կողմեն՝ մինչև Իգաձոր: Բայց ջրի առավելագույն մասը կվազեր դեպի Գլիձոր, ուր արդեն պարտեզներ պիտի ոռոգվեին և ջաղացներ դարձվեին այդ ջրով:



Նկ. 237. Անիի քառակուսի բուրգերից մեկը և պարիսպների մնացորդները





Նկ. 238. Շախմատային մուտքն Անիում (Դիմնո դուռ)



Նկ. 239. Անիի մեծ բուրգերը դրսից

Սմբատի համար այս պարիսպը մեծագործություն կհամարիմ այն պատճառով, որ, նախ՝ Սմբատի աշխարհաշինության գործը մեն միայնակ այս պարիսպը չէր կարող լինել. երկրորդ՝ այդ ընդարձակ պարիսպը առառավելն 5–10 տարվան մեջ վերջացած է՝ բացառապես արքունի գանձարանի ծախքով: Ճիշտ է, որ հետագա շրջաններուն, մասնավորապես Զաքարյաններու ժամանակ ավելի հսկա բուրգեր շինվեր են, պարիսպներու թանձրությունները կրկնապատկվեր և եռապատկվեր են, սակայն հետագա շինություններ և հավելումներ կատարվեր են առնվազն 100–120 տարվան երկար շրջանի մը մեջ, այն ալ ոչ թե պետական հաշվով, այլ մեծ մասամբ անհատական ծախքերով: Չենք կարող ըսել, որ Սմբատի գանձարանը չէր բավեր ավելի հսկա և մեծածախ պարիսպներ շինելու, այն ժամանակվան Շիրակի կամ Անիի քաղաքական կյանքի ապահովությունը չէր ստիպեր զինքը անկեց ավելի ամրանալու: Ասպետական քաջության համբավ ուներ Սմբատ դրացի ազգերու մեջ և ոչ ոք չէր համարձակեր Շիրակի սահմաններուն մոտենալ. երբեմն մոտենալ փորձողներն ալ չարաչար պատժվեր էին իրենց անխոհեմ ձեռնարկին համար:

Նկ. 240. Անիի մեծ բուրգերը ներսի կողմից

Հետագա դարերու մեջ Անիի այդ աստիճան ամրակուռ զրահավորումը նույն ժամանակվան անհաստատ և անապահով դրության հետևանքն է. ամեն րոպե Անիին սպառնացող վտանգեն զգուշանալու համար չգիտեին ինչ միջոցներ ձեռք առնեին, որովհետև ոչ Բագրատունի թագավորների ուժն ու ազդեցությունը մնացեր էր և ոչ ալ անոնց հարուստ գանձարանը: Հետագա մեղկ, թուլամորթ և երկրին շահերը պաշտպանելու անհոգ վարչապետներե (բացի Զաքարե սպասալարեն) հուսահատ ժողովուրդը ինքն է հանձն առեր պաշտպանելու հողը՝ ինչ որ երկրին վարչության ուղղակի պարտքն էր: Եկեղեցի շինելու նման, Զաքարյան շրջանին, մեծ բարեգործություն է համարվեր պարսպամասեր և բուրգեր շինելը, և մասնավոր անհատներ ձգտեր են, մեկ կողմանե՝ իրենց կյանքի ու կայքի պաշտպանության համար, մյուս կողմանե՝ իբրև հիշատակության հավերժական կոթող, բուրգեր շինել: Իբրև երկրին տեր և վարչապետ, Զաքարե սպասալարը ունի քանի մը բուրգեր շինած: Իսկ մնացած բուրգերու մեծ մասին վրա կգտնենք մասնավոր անհատներու անուններ, որոնք իբրև բարեգործություն՝ կանգներ են իրենց արձանագրած բուրգերը, ինչպես տիկին Շանուշ, ասոր դուստրը Մամ խաթուն, Մխիթարիչ Գանձակեցի, Սարգիս որդի Սամուելի, մի ուրիշ Սարգիս, Լուսոտ և այլն, և այլն: Կան շատ մը բուրգեր ալ, որոնց վրա գետեղված են արձանագրության հատուկ քարերը, բայց որևէ պատճառով չեն կարողացեր գրել տալ կանգնողներու անունները: Այս երևույթը փաստ է թե՛ երկրին անապահով վիճակին և թե՛ վարչական անտուկներուն դատարկության, կամ, ավելի ճիշտը, հասարակության տուրքերու հետ իշխաններու և կառավարիչներու անբարեխիղճ կերպով վարմունքին:

Բագրատունիներու կպարտինք Անիի կաթուղիկեն իր վսեմ պարզությամբ և նրբակերտ մանվածո քանդակագործություններով: Բոլորակ գագկաշեն ս. Գրիգորը Բագրատունի հարստության պարծանքը և առանձնապես Գագիկ Ա-ի մեծագործությունն է: Ճիշտ է, որ Ներսես Շինող 7-րդ դարուն առաջին անգամ կանգներ է անոր հոյակապ նախատիպը, սակայն Ներսեսի համար ոչ միայն բաց էր համայն հայության քսակը, այլև Բյուզանդական կայսրության գանձարանը: Իսկ Գագիկի համար եկամուտի միակ աղբյուրը Շիրակի յուր փոքրաթիվ բնակչությունն էր:

Առանձնապես աքանչացման արժանի են գտնե իմ գիտցածս հսկայական հինգ կամուրջներ, Ախուրյան գետի վրա, որոնց 30 մետրե ավելի տրամագծով միակամար աղեղնակապումը այսօրվան մեծ արվեստագետներու ալ զարմանք կպատճառե: Այս կամուրջներու մնացորդները առավել կամ նվազ չափով կգտնվին Մարմաշեն (Ղանլիջա), Ղեղաճի, Զըրփըլուի, Անիի և Երվանդակերտի (Հաջի Բայրամ պարսկարքնակ գյուղ) մեջ՝ Ախուրյանի Երասխ խառնված բերնի մոտ: Ավելորդ կսեպեմ հիշատակել այն փոքր կամուրջները, որոնք մեծ թիվ կկազմեն, բայց երկրորդական տեղ կբռնեն փայտով կապված լինելուն պատճառով: Ինձ համար ապացույցի կարոտ չէ, որ այս մեծ կամուրջները ամենն ալ կառուցված են Բագրատունիներու օրով: Ես անոնց մասին պիտի գրեմ առանձին ուսումնասիրություն, երբ կվերջանան այդ մասին իմ հետազոտությունները:

Թե Բագրատունի ո՞ր թագավորներու օրով շինված են այդ հսկայական կամուրջները, դեռ որոշ չէ, բացի իրենց արվեստագործական ոճով Բագրատունի շրջանին պատկանելու անվիճելի հավաստիքներեն: Սակայն Անիի հարավային ձորին մեջ գտնվող կամուրջը Սմբատի օրով հիմնարկված կկարծեմ:

Նկ. 241. Զըրփըլուի կամուրջի մնացորդները Ախուրյան գետի վրա



Նկ. 242. Անիի կամուրջի մնացորդները (11-րդ դար)



Նկ. 243. Անիի կամուրջի վերակազմության նախագիծը

Անիի հարավակողման ձորին մեջ կան ուրիշ երկու կամուրջներու մնացորդներ ալ, որոնք դեպի երկու եզերքներու վրա խոշոր որձաքարե հիմերու միջոցավ կապվեր են մեծամեծ գերաններով: Ասոնցմե մեկը, որ մեծ կամուրջին ավելի վեր է դեպի Կուսանաց վանք անվանված մատուռի հանդեպ, Աշոտի պարիսպներեն դուրս մնացած քաղաքամասին հետ կհաղորդակցեր, երբ դեռ Սմբատի պարիսպը շինված չէր: Իսկ մյուսը կգտնվի ավելի վարը, Կզկալայի մոտերը: Այս կամուրջին Անիի կողմը անցնողին առջև կբացվեր երկու ճանապարհ, որոնցմե մեկը ձորի լանջին վրա կճյուղավորվեր մեկ գծով դեպի Կզկալա, իսկ մյուս գծով կուղղվեր դեպի միջնաբերդի հարավ-արևմտյան կողմի պարսպափակ ցածի բերդամասը:

Կամուրջին անմիջապես քովեն բաժանվող մյուս ճանապարհը որոշ չափով դեպի հետ զուգահեռաբար դեպի վեր գնալեն հետո, պատշաճավոր տեղի մը վրա ոլորապտույտ ձեռագործ ճանապարհով մը կբարձրանա մզկիթեն ցած, ուղղակի Աշոտի պարիսպին հետ հաղորդակցող դուռը, որն որ այսօր կիսափուլ վիճակի մեջ է, ինչպես այն գծին վրա դեպի արևելք, Կուսանաց վանքի մոտ, մեծ կամուրջեն քաղաք մտնելու դուռը, որուն վրա կգտնվի բաժարար[1] Սարգիս Ծերենցի մեկ արձանագրությունը: Դռնեն մտնելեն հետո ոլորապտույտ ճանապարհ մը կբարձրանար դեպի Աշոտի պարիսպին այն դուռը, որուն հետքը մնացած է

[1] Մաքս վերցնող. Կ.:



մզկիթին և Միջնաբերդի արևելյան կողմի ձորեզրին վրա գտնվող անհատ բուրգին մեջտեղը: Այս երկու կամուրջները, իմ կարծիքով, գոյություն ունեցեր են թերևս Աշոտեն ալ առաջ, և հետո նոր կամուրջին շինվելեն վերջը, իրենց կարևորությունը կորանցնելով՝ ավերվեր են, մասնավորապես ավելի շուտ ավերվեր է վերի կամուրջը: Վարի կամուրջին հետ հաղորդակցող բերդի դուռը անպայման Աշոտի օրով շինված է և հաղորդակցությունը միմիայն Աշոտի պարիսպին հետ է: Այս պատճառներով ալ ինծի հավանական կթվի, թե Սմբատ քաղաքի ընդարձակ պարիսպը շինելեն հետո անհրաժեշտ տեսավ նաև կանոնավոր կամուրջով մը բերդը հաղորդակցության դնել դրսի հետ՝ եթե երբեք Սմբատեն հետո Գագիկի գործը չէ:

Այս մեծ կամուրջը, որ մյուս երկու կամուրջներուն միջին կետին վրա հիմնարկված է մոտավորապես, քաղաքի ամեն կողմին հետ հաղորդակցությունը կդյուրացներ:

Հանճարեղ երևակայության մի թռիչք է պարիսպեն դուրս Հովիվի եկեղեցին, որուն մասին հաճախ առիթ ունեցեր եմ խոսելու և մտադիր եմ առանձին հատորիկով մը ի լույս ընծայել այդ ճարտարապետական չնաչխարհիկ մարգարիտը: Իր եռահարկ ձևով Հովիվի եկեղեցին Զվարթնոցի և Անիի ս. Գրիգորի մանրանկարն է. ներքին կողմեն, որսնասյուներեն մեկնող վեց աղեղներու ծայրերը առանց հենարանի կախ մնացած կախարդական երևույթը, գաղափարով և շինարարական ճարպիկությունով մի մեծագործություն արժե: Հատակագծի ձևը և արտաքին ակնահաճո տեսքը մեկ հատիկ օրինակը կթվի ինծի ամբողջ պատմական ճարտարապետության մեջ (նկ. նկ. 244-247):

Բագրատունյաց շրջանին կպարտինք հինգ գմբեթով Առաքելոց եկեղեցին, որ ոչ միայն նշանավոր է իր առանձնահատուկ քանդակագործություններով, այլև իր ձևով: Քանդակազարդելու տեսակետով՝ Շիրակի մեջ 9-րդ դարեն մինչև 11-րդ դար վերածնող ճարտարապետական ոճի երկու այլազանության խառնուրդը կներկայացնե, իսկ հատակագծի և կազմության ձևով կատարելագործված հնագույն ձևի մը շարունակությունն է հայ եկեղեցական ոճի մեջ, որ կոչված է արտաքին ազդեցության տեսակետով Բյուզանդիոնի վրա հաղթանակ տանելու (նկ. նկ. 37, 97, 141):

Գեղարվեստական ոճի տեսակետով Բագրատունյաց շրջանին վերածնող հայ ճարտարապետությունը երկու տեսակ այլազանություններե անցած է, իրարմե թեև ոչ օտար, այնուամենայնիվ որոշ չափով տարբեր, ինչպես մեկ ծնողի երկու հարազատ զավակները: 9-րդ դարեն մինչև 10-րդ դարու կեսի վերածնությունը կազմված է 5-րդեն 7-րդ դարու հայ ճարտարապետության ավանդական գծերով, իսկ 10-րդի կեսեն մինչև 11-րդի վերջերը երևցող այլազանությունը իր անմիջապես նախորդին վրա զգեցած է մի տարազ, որն որ իր մանրամասնության մեջ ավելի հեռավոր ասորա-քաղդեական ավանդություններու հետ կարելի է կապել, քան մոտակա ժամանակի ոճերու հետ:



Նկ. 244. Հովվի եկեղեցին Անիի պարիսպներից դուրս

Ահա այս շրջանի հայ ճարտարապետությունն է, որ եվրոպական գիտուններե ոմանք, ժամանակագրական անստույգ տեղեկություններու վրա հիմնված, չփոթեր են հետագա Զաքարյան շրջանի վերածնության հետ և միշտ թեր ու դեմ կարծիքներով արաբական կամ սելջուկյան ճարտարապետության ազդեցություններ փնտրեր են անոր մեջ: Սակայն վերջերս, շնորհիվ մեկ երկու ականավոր գիտնականներու կատարած ավելի մոտեն լուրջ հետազոտության, պարզված է, որ 9-րդեն մինչև 11-րդ դարու վերջը ծաղկող հայ ճարտարապետությունը ոչ միայն այդ կարծեցյալ ազդեցություններեն հեռու է, այլև, ընդհակառակը, ինքն է, որ իր ազդեցությունը տարածեր է մինչև հեռավոր Եվրոպայի վրա, օժանդակելով մասնավորապես գոթական ճարտարապետության վերածնության:

Բագրատունի շրջանի ամբողջ գործունեության արդյունքն այստեղ հավաքել հոդվածիս նեղ

սահմանը չի ներեր. մոտավոր գաղափար մը կազմելու համար կարծեմ այսքանն ալ բավական է: Գրելը և նկարագրելը երբեք չեն կարող պատկերացնել նույնությամբ այն, ինչ որ իրականությունն է: Համոզվելու, հիանալու և Բագրատունի շրջանին մեջ հայ ժողովրդի ստեղծագործական տաղանդը գնահատելու համար պետք է անձամբ տեսնել անոնց թողած հիշատակարանները, թերևս այն ատեն կծնի մեր սրտին մեջ անոնց արժանավոր ժառանգներ լինելու վսեմ զգացումը:

5. Շետտատյան շրջան: Շետտատյաններու շրջանին մեջ ճարտարապետության և գեղարվեստներու զարգացման տեսակետով առանձնապես աչքի ընկնող ոչինչ չեմ գտներ, ընդհակառակը, ողբերգակ բանաստեղծ լինել հարկ է՝ հունաց տիրապետութենեն և Արփասլանի կոտորածեն սկսած՝ մինչև մեծն Զաքարեի տիրապետության փրկարար շրջանը բովանդակ Շիրակի սուգն ու շիվանը ողբալու համար: Ես այստեղ Շետտատյաններու անունով առառավելն արձանագրել կարող եմ քանի մը արվեստագիտական այլանդակություններ և պատմական վշտաբեր անցքեր, որոնք պարզ կերպով ցույց կուտան Շետտատյան ըսած ցեղի վարչական արժանավորությունը և հոգեկան նկարագիրը:

Հարկ չեմ տեսներ այստեղ մի առ մի մեջ բերել Ա. Լաստիվերտցու, Վ. Բարձրաբերդցու, Կ. Գանձակեցու և այլոց ողբերգական, սրտաճմլիկ հյուսվածքները ավելի քան մեկ դար Շետտատյաններու օրով Շիրակի գլխեն անցած անլուր աղետներու մասին:

Հիմնվելով Վ. Բարձրաբերդցու մեկ վկայության վրա, բանասերներե ոմանք կեզրակացնեն, թե Արփասլանի հաղթութենեն հետո Անիի առաջին տեր Մանուչեի մոր կողմանե կիսահայ լինելը և հայ կնոջ հետ ամուսնացած լինելը Անիի և շրջակայից բնակչության համար մեծ բարիքներ բերավ, որպես թե Մանուչե, ազգային սովորություններե առաջնորդված, իր շուրջը հավաքեց իշխաններն ու ավագները և անվանական կերպով անոնց հանձնեց երկրի ներքին վարչությունը՝ Արփասլանի թողած քարուքանդ ավերումներեն քաղաքը վերականգնելու համար:

Ճիշտ է, որ պատմական հիշատակություն կա Մանուչեի այդ վարմունքի նկատմամբ և, Վարդան Բարձրաբերդցու ըսելով՝ «շինեցաւ քաղաքն Անի ոչինչ պակաս քան զառաջինն»: Բայց ես Մանուչեի վարմունքին մեջ ոչ մի անկեղծություն և ժողովրդասիրություն՝ զգացում չեմ գտներ, երբ կհամեմատեմ այդ տոհմի ամբողջ տիրապետության պատմությունը Անի քաղաքի ավերակներու հետ, որոնք միաձայնությամբ կհաստատեն իմ կարծիքս:



Նկ. 245. Հովվի եկեղեցու վերակազմության ճակատը

Մեծ քաղաքագիտություն ունենալու հարկ չկար Մանուչեի համար, իր անձնական անմիջական շահերը կպահանջեին, որ Արփասլանի թողած ավերակները վերականգնվեին, ցրված ու օտարացած ժողովուրդը վերադառնար, վերստին աշխատեին, չարչարվեին և իր անհատակ գանձարանը լցնեին. ավերակներ ողբացող բուի պաշտոն կատարելու համար չէր, որ գնեցին Անին, այլ շահելու, հարստանալու և անսպառ եկամուտի տեր դառնալու համար ժրաջան, տաղանդավոր և բազմարվեստ հայ ժողովրդի արյուն-քրտինքը ծծելու: Մանուչե ստիպված էր անմիջապես հայ իշխաններ ու ավագներ իրեն շուրջը հավաքելու, քանի դեռ երկիրը բոլորովին դատարկված չէր, և անոնց միջոցավ ազդելու բնակչության վրա: Առանց այդ խորամանկ միջոցին Մանուչե չէր կարող մոռցնել տալ անեցիներու նման անկախության վարժ և դեռ չայլասերված ժողովրդի մը իր մոտիկ անցյալը, մեկ կողմանե՝ իր անկախ օրերու բախտավորություններով, մյուս կողմանե՝ Արփասլանի գազանային կոտորածի բացած խորունկ վերքերով: Դեռ թարմ էր ծնողներու, եղբայրներու, քույրերու և զավակներու սրախողխող սպանման ու անարգ բռնաբարմանց հիշատակը՝ որոնց արյան ու արցունքի հեղեղներով ողողվեցան Անիի բազմամարդ փողոցները: Դեռ կծխային այրված ու քանդված շքեղ եկեղեցիներու և պալատներու անթիվ մոխրակույտերը: Այս ցավագին ու վշտամորմոք հիշատակները կամաց-կամաց կամ համայնական գաղթի պիտի մղեր ժողովուրդը և կամ վճռական վրեժխնդրության, և ասոնցմով ուղղակի պիտի ջախջախվեր Մանուչեի հուսածիծաղ ճակատագիրը:



Նկ. 246. Հովվի եկեղեցու վերակազմության կտրվածքը արևելքից արևմուտք

Այս ուղղությամբ պիտի պահեր Մանուչեն երկրին վարչությունը մինչև մոտիկ անցյալի զարհուրելի օրերուն ականատես ծերերը կմեռնեին, երիտասարդները կծերանային և մանուկներու ու պատանիներու մտքին ոգիի նման կցնդեր անցած սև օրերու դժոխային պատկերը: Որ ավելին է, մինչև այն ժամանակ Անիի մեջ կբազմանար մահմեդական բնակչության թիվը և կհավասարակշռեր ներքին ուժը:

Ըստ երևույթին Մանուչե հաջողեցավ պատիվներով ու աստիճաններով ավագանին կաշառելով ու անոնց միջոցավ բնակչությունը հնազանդության հորդորել, սակայն իր շատ մը անհեռատես վարմունքով ալ չկրցավ արմատախիլ ընել ատելության ու վրեժխնդրության ոգին:



Նկ. 247. Հովվի եկեղեցու հատակագիծը

Ամեն աղետի ու տառապանքի դիմացան անեցիք և առժամանակ մոռնալ կեղծեցին մոտավոր անցյալի սև ցավերը, թալանված, ծայրահեղ աղքատության դատապարտված վիճակի մեջ անտրտունջ համբերեցին իրենց վրա դրված ծանր հարկերուն, սակայն չկարողացան հանդուրժել ամեն օր իրենց նախնիքներե պաշտելի հիշատակ և միխիթարության միակ ապաստարան սրբավայրերն ալ մահմեդական դենի մահիկներով պղծված տեսնելով:

Անիի մեկ հատիկ զարդ և աշխարահռչակ կաթուղիկեին վրա չէր միայն, որ մահմեդականի ոսկի մահիկեն արձակված շողերը թունավոր նետի պես ամեն օր անեցիներու սիրտը կխոցոտեին, այլև շատ ուրիշ սրբավայրեր ենթարկված էին նույն սգալի անարգ վիճակին: Ժամանակակից Ա. Լաստիվերտցին սրտառուչ կերպով կպատմե, թե ինչպես շատ մը եկեղեցիներ քանդվեցան և անոնց մաքուր սրբատաշ քարերով մահմեդական կառավարիչներու ապարանքներ հիմնվեցան՝ հայ ծագում և հայասիրության համբավը վայելող Մանուչեի և զինքը շրջապատող հայ ավագանիին աչքին առջև: Քրիստոնեության անունը նախատինք եղած էր, կչարունակե ողբերգակ Ա. Լաստիվերտցին, իսկ կողոպտել, թալանել ու սպանելը առաքինություն էր բռնակալներու համար, չէին կամենար մինչև իսկ, որ անեցին իր մարմնի մերկությունը ծածկեր, տիրող բռնակալին հաճույք կպատճառեր տեսնել իր հպատակները անոթի, ծարավ, մերկ և ահ ու սարսափի տակ չորացած:



Նկ. 248. Անիի կաթուղիկե մայր եկեղեցու վերնակամարակոտորն դիմեցեկող





Նկ. 249. Անիի կաթուղիկե մայր եկեղեցու կտրվածքը արևելքից արևմուտք

Նկ. 250. Անիի կաթուղիկե մայր եկեղեցու հարավային պատի լուսամուտները

Կասկած կարո՞ղ է լինել, որ հայ ժողովուրդը իր ավագանիներու միջոցավ չդիմեց նույնիսկ հայասեր կարծված Մանուչեին և չխնդրեց, որ վերջ տրվին այդ անիրավ հարստահարությանց, իրենց ամենամաքուր զգացումները վիրավորող նախատանաց և ետ դարձվին ժողովրդին դարավոր աղոթքներով նվիրագործված սրբավայրերը, ի թիվս որոց նաև քաղաքին ամենասիրելի թագուհիներեն մեկուն պանծալի հիշատակ կաթուղիկեն: Բայց ամենուն արդյունքը եղեր է Մանուչեի կողմանե անտարբերություն ու անզգայություն և լուռ հանդիսատես ավանդապահ ու բարեպաշտ ժողովրդի մը խղճին ու հավատքին դեմ եղած անարգական բռնաբարումներուն:

Մանուչեի հաջորդը՝ Ապուլվար, երբ չբավականանալով Արփասլանի օրեն կաթուղիկեի վրա տնկված մահիկով, խլաթեն բերել տվավ ավելի խոշոր ու ծանրագին մահիկ մը նախորդին փոխարինելու և զայն գերազանցելու համար, այն ատեն անեցիներու համբերության բաժակը լեցվեցավ: Մնտեսապես քայքայված դրության մեջ եթե ինքնագլուխ չկարողացան ապստամբիլ և բռնակալի լուծը թոթափել, գաղտնի դիմեցին վրաց Դավիթ թագավորին և խոստացան քաղաքն իրեն հանձնել՝ անկասկած, առաջին անգամ կաթուղիկեին գլուխը ցցված անարդ մահիկը ոտքի տակ չախչախելու մտադրությամբ, ինչպես որ Արփասլան վարվեր էր Սմբատի անգին ջահին և Կատրանիդե թագուհու մարդաչափ բարձրությամբ արծաթյա խաչին հետ:

Դավիթ թագավոր սիրով ընդունեց անեցիներու առաջարկը, անմիջապես եկավ և անեցիներու աջակցությամբ դուրս քշեց Շետտատյաններու տոհմը, և առաջին գործը եղավ հավաքել եպիսկոպոսներ, վարդապետներ ու վերստին օծմամբ կաթուղիկեն նորից վերածել քրիստոնեական եկեղեցու:

Նկ. 251. Անիի կաթուղիկե մայր եկեղեցու արևելյան մասի ներքին երևույթը

Նկ. 252. Անիի կաթուղիկե մայր եկեղեցու հարավային պատի խորշերից մեկի քանդակազարդ պսակը

Շատ չանցավ՝ Դավիթ մեռավ և անոր տեղը անցավ իր Դիմետր որդին: Ասոր օրով Շետտատյաններ վերստին ձգտեցան Անիին տիրանալու, բայց Դիմետր, իր քաղաքական աննպաստ կացության պատճառով, ակամա հանձն առավ Անին հանձնել Շետտատյաններու, սակայն անեցիք անձնատուր եղան այն պայմանով, որ անոնք հարգեն խղճի ազատությունը և անգամ մ'ալ չփորձեն կաթուղիկեին ձեռք տալ:

Ի բնե վատությամբ խմորված ցեղի մը հարազատը, Անիի նոր տեր ուխտադրուժ Փատլուն, հակառակ իր երդմամբ տված խոստումին, արհամարհելով անեցիներու խիղճն ու զգացումը, հրապուրված կաթուղիկեի ոսկեղեն, արծաթեղեն մեծ հարստութենեն, փորձեց ձեռք մեկնել և տիրանալ անոր: Սակայն շուտով զգաց իր վտանգավոր ձեռնարկի աղետաբեր հետևանքը և անմիջապես ետ կեցավ իր մտադրութենեն ու առասպելական երազով մը քողարկեց իր անարգ պարտությունը: Վրացոց կարճատև հովանավորութենեն շունչ առած անեցիք այնպիսի սպառնական դիրք բռնեցին, ուրկեց սարսափեցավ Փատլուն: Անտարակույս, այս անգամ անեցիք պատրաստ էին կամ մինչև վերջին մարդը կոտորվել կաթուղիկեի դռան առջև և Փատլունը մոխրի վրա նստեցնել և կամ հավիտենապես քշել զինքը, մի ուրիշին անձնատուր լինելով:

Այս բնորոշ դեպքեն հետո մնացած 60–70 տարիներ, մինչև Զաքարե սպասալարի տիրապետությունը, Անին տասը տարի հաջորդաբար խաղաղության երես չտեսավ թե՛ ներքին բռնակալներե և թե՛ արտաքին թշնամիներե: Ստիպված էին դարձյալ պարբերաբար դիմել վրաց թագավորներուն և անոնց պաշտպանությամբ փոքր ինչ չեզոքացնել ներքին ու արտաքին չարիքները: Այս շրջանին պատկանող հիշատակարաններու, արձանագրություններու և պատմագրական էջերը լեցուն են դառն ժամանակ, չար ժամանակ տխուր բացականչություններով: Սպանություններ, թալաններ, բռնի մահմեդականացումներ պակաս չէին երկրին ամեն կողմը, և տուրքերու ծանրության տակ ճնշված կշեծեր ժողովուրդը: Կարող դասը մեծ մասամբ գաղթականության մեջ փնտրեց իր խաղաղությունը, իսկ մնացորդներուն համար օրըստօրե կենաց և մահու խնդիր դարձավ այնտեղ մնալը: Հույներու դավաճանութենեն զզված, մահմեդականի բռնակալութենեն սարսափած՝ դժբախտ անեցիք վերջին փորձ մը ևս կատարեցին հաճախ իրենց բարյացակամությունը ցույց տվող վրաց արքունի-

քին դիմելով՝ ընդմիշտ ազատվելու համար գազանաբարո Շետտատյաններու ճիրաններեն:

Նախանձելի բախտավորություն պարգևեց անեցիներուն վրացոց կողմանե այս անգամ մեծն Զաքարեի Անիի և շրջակայից վրա զորավար նշանակվիլը: Այս դյուցազնական քաջությամբ օժտված մարդը ոչ միայն զորավար էր, այլև տեր ու թագավոր Անիի և անոր դրոշակին տակ գտնվող սահմաններուն: Կարճ ժամանակի մեջ երկիրը միանգամայն մաքրեց տնտեսապես ու բարոյապես քայքայող և ապականող տարրերեն: Շիրակեն շատ հեռու տարավ իր տիրապետության սահմանները, բազմաթիվ հայ ընտանիքներ ազատեց մշտաչարչար գերությենե: Իր բնատուր քաղաքագիտությամբ այնպիսի բարեկարգ վիճակի մը մեջ դրավ երկիրը, որ հանկարծական թափով սկսեցին ամեն կողմ ծաղկել ճարտարապետություն ու գեղարվեստներ և ծածկվել ամեն կողմ գեղակերտ հուշարձաններով:

Մինչև այստեղ պատմական փաստ էր, որ ներկայացուցի Շետտատյաններու աշխարհավերության նկատմամբ, այժմ ներկայացնեմ քանի մը փաստեր Անիի լուռ, բայց պերճախոս ճշմարտությամբ աղաղակող փլատակներու վկայություններեն քաղված:

Իմ բոլոր խուզարկություններս ապարդյուն անցան գտնելու համար մեծ կամ փոքր չենք մը, որուն կառուցումը Շետտատյաններու շրջանին պատկաներ, գեթ բաղդատելու համար, թե անոնց ճաշակը ի՞նչ դրոշմ դրավ Բագրատունի շրջանին ծաղկող ճարտարապետական արվեստին վրա: Կկարծեմ, թե այսուհետև փնտրելն ալ անօգուտ է, որովհետև, ինչպես կերևի, Շետտատյաններու օրով գրեթե ոչ միայն քար քարի վրա չէ կրցած դնել հայ ժողովուրդը, այլև հինեն մնացածներուն մեծ մասն ալ հիմնահատակ քանդվեր են:

Արփասլանին Անին պաշարած ժամանակ, կպատմվի թե այնտեղ 1001 եկեղեցիներ պատարագի կանգներ էին: Ո՞ւր մնացին այդ առասպելական թվով եկեղեցիները, որոնցմե այսօր հազիվ վեց կամ յոթ հատ կարելի է գտնել: Ասոնք ոչ միայն մեզի չեն հասեր, այլև Զաքարյան ազատության շրջանին ալ չեն հասած: Կիրակոս Գանձակեցին կպատմե, թե Զաքարեի տիրապետության օրեն սկսած «շինեցան բազում վանորայք որ ի վաղուց ժամանակէ անտի ավերեալ էին ի հինիցն Իսմայէլի, վերստին նորոգեցան եկեղեցիք եւ պայծառացան դասք պաշտօնէից, շինեցան եւ նոր վանորայք եւ եկեղեցիք...»:

Թեև ծավալով փոքր, սակայն թվով Բագրատունի շրջանեն ոչ նվազ եկեղեցիներ և ուրիշ հասարակական ու անհատական շինություններ շինվեր են Զաքարյան շրջանի նույնքան ժամանակամիջոցի մեջ, որչափ որ տևեց Շետտատյանց տիրապետության դատարկ շրջանը: Անիի մեջ այսօրվան տեսնված հին Բագրատունի շրջանին պատկանող 5-6 եկեղեցիներեն զատ՝ մնացած բոլոր եկեղեցիներ, վանքեր ու մատուռներ, առանց բացառության, Զաքարյան շրջանին կպատկանին: Անիի ժողովուրդի ընդունակ և տոկուն նկարագրեն կարող ենք հետևցնել, որ թերևս հնարավորություն ունեցան երբեմն որոշ չափով շենքեր շինելու Շետտատյաններու օրով ալ, սակայն, ինչպես կերևի, Շետտատյաններ հնարավորություն իսկ չեն տվեր ոչ միայն նորերը շինելու, այլև եղածներն ալ պահպանելու, ինչպես քիչ առաջ մեջ բերածս՝ Ա. Լաստիվերտցու վկայությունն ալ նույնը կապացուցաներ: Նույնիսկ զարմանալի կերպով կնկատվի, որ նույն շրջանին պատկանող խաչքարեր անգամ չկան:

Մինչնաբերդի գագաթին մի ահագին պալատ կա, որուն մեջ, սկսած Կամսարականներեն մինչև 14-15-րդ դարերու հետին ոստիկանը, իրենց գոյության որոշ չափով ապացույց թողեր են, իսկ Շետտատյաններեն՝ ոչ մի քար: Թվեմ այն ամենը, որ հիշատակարաններու ստույգ լեզվով վկայություն է Շետտատյաններու Անիի մեջ լոկ գոյության:

Ծաղկոցաձորի կողմեն միջնաբերդ մտնելու դռան առջև կատարված պեղումներու ժամանակ գտնվեցան Շետտատյաններե մնացած արձանագրություն մը (մեծ մասամբ անընթեռնելի և հետին ժամանակներու պատկանող) և կոպիտ ու անճաշակ քանդակագործությամբ պարսկական առյուծ մը: Ահա այս առյուծն է Շետտատյաններու շինարարական և գեղարվեստական ճաշակի միակ վկան: Անտարակույս, հայ վարպետի մը գործ է, սակայն ի՞նչ հառաջադիմություն կարելի էր սպասել արվեստագործ դասակարգե մը, որ 60-70 տարի անպտուղ անգործության դատապարտված էր, բնականաբար արդյունքը պիտի լիներ այդ առյուծի անճաշակ քանդակագործությունը:

Միայն քսան տարի Անիին տիրապետող հույնը գեթ քանի մը ճաշակավոր քանդակագործությամբ սյուներու ու խարիսխներու մնացորդներ թողեր է պալատի հյուսիս-արևելյան մեծ սրահին մեջ նախկինին վրա կատարված նորոգության մը կամ փոփոխության մը առթիվ: Բայց Շետտատյաններու գործը եղեր է վայելել հիները որչափ ժամանակ որ հնարավոր էր, այնուհետև ալ առանց դրսեն նոր քար մը տաշելու, պալատին մեկ մասը քանդելով՝ մյուս մասը գռեհիկ կերպով կարկատել:

Փաստացի կերպով Շետտատյաններու մեկ ուրիշ գործն է Անիի ավագ դռան մոտ մեկ հատիկ բուրգի մը թանձրացումը, գուցե և մի քանի հատի՝ դատելով ոմանց արվեստագործության ժամանակակից համարվելու նմանությենեն: Այս զոհաբերությունը կատարեր է բացառաբար Անիի առաջին մահմեդական տեր Մանուչեն, անշուշտ իր անձնական շահերու և կաշին պահպանության համար՝ քան ժողովրդի ապահովության: Տարակույս չկա, որ այսքանն ալ կատարված է դարձյալ մինչև շապիկը մերկացած անեցիներու ձրի աշխատությունով: Թեև վերջին Շետտատյան տերերու օրով, սակայն փաստ է, որ այդ բուրգերուն մեջ կան լոկ քաղաքի բնակչության անհատական ծախքերով ալ շինված, ինչպես Աբրահամ ոմն 1160 թվին իր սեփական ծախքով թանձրացուցեր է բուրգերեն մեկը: Արդյոք քանի՛ ուրիշներ պիտի գտնվին այսպես, եթե հնար լիներ ամբողջական պարիսպներու պեղումներե զատ՝ վար առնել նաև Զաքարյան շրջանին նոր թանձրացումով ծածկված հին բուրգերուն թանձր վարագույրները:

Ահա ասոնք են Շետտատյաններե մնացած ամբողջ ճարտարապետական հարստությունը, ասկե զատ՝ բան մը գտնել անկարելի է:



*Նկ. 253. Աշխարհիկ շենք Անիում, որ Շետտատյանների օրով վերածվել է մզկիթի (Մանուչեի մզկիթ)*

Մոտավորապես յոթը դար Անիի կենդանության երկար շրջանին մեջ գեղարվեստական և շինարարական գործունեության պերճախոս դատարկությամբ կփայլի Շետտատյան ցեղը իր հոգեկան ու ֆիզիկական արյունարբու նկարագրով:

Անոնց օրով ժողովուրդը Շիրակի սահմաններուն մեջ, իբր գութանավոր եզ, իբր բեռնամարձ դրաստ և իբր կաթնատու կով կամ ոչխար, ապրեցուցեր են ու կերակրեր այնչափ, որչափ որ պետք էր առույգ ու կորովի պահելու համար, որպեսզի անոնց քրտնաջան աշխատությամբ իրենց անհատակ գանձարանները լեցնեն: Ես շատ կզարմանամ, որ գտնվել են բանասերներ, որոնք այս քաղաքակրթության պատուհաս ցեղին մեջ գտեր են աշխարհաշինության վարչական ձեռք և այս ողբալի շրջանին վրա նայեր են որպես Բագրատունի թագավորության վերածնության:

**6. Զաքարյան շրջան:** Զաքարե սպասալարի անունը հայոց պատմության մեջ նշանավոր տեղ բռնած է ոչ միայն քաղաքական և տնտեսական կյանքի բարվոքմամբ, այլև ճարտարապետության ու գեղարվեստի մի նոր վերածնությամբ: Այս դյուցազն իշխանի տիրապետության հետ անմիջապես սկսեց ծաղկել գեղարվեստ մը, որ իր ուրույն ոճով ոչ նվազ պատվավոր տեղ ունեցավ հայ ճարտարապետության նախընթաց վերածնություններու շարքին մեջ: Շատ արդարացի պատճառներով թեև մեծագործություններ չարտադրվեցան Զաքարյան շրջանի մեջ, սակայն գեղարվեստականությամբ և հարամասունքներու ներդաշնակ դասավորությամբ նախորդներուն հետ մրցող գերազանց նորություններ ստեղծվեցան:

Զարդաքանդակներու տեսակետով, Բագրատունյաց շրջանի վերածնությունը ստեղծեց հին ավանդություններու վրա զարգացած երկրաչափական գծերով մանվածո քանդակագործություններու գերագույն կատարելություն մը. չէ մնացած երկրաչափական ուղիղ ու կոր գծերով կազմված զարդաքանդակի ձև մը, որ Բագրատունի շրջանի գեղարվեստի վերածնությունը իրեն սեփականություն չդարձներ. բարդ հյուսվածքներու անհունություն մը և մին քան զմյուսը գերազանցելու բուռն մրցում ակներև է արվեստագետներու կողմե:

Շատ քիչ ձևերու մեջ ավանդապահ եղած են հայ ճարտարապետներ նախնիքներու ստեղծած վերածնություններու նկատմամբ, բայց ինչ որ պահված են 5-րդ դարեն սկսած մինչև հայ արվեստին վերջին անկումը, կարծեք խորհրդավոր նվիրագործությունով մը կապված էին այդ ձևերուն հետ և գործածեր են միշտ միևնույն տեղերուն վրա և միևնույն համաչափություններով: Ուղղագիծ քառակուսի և բոլորակի շրջանակներով մանվածոներ մինչև 5-րդ դարու հնություն ունին հայ ճարտարապետության մեջ և պահված են մինչև վերջը, սակայն այն ոճը վերին աստիճան ակնախտիղ ճոխության հասավ Բագրատունյաց վերածնության մեջ. անհամապատասխան չափե-

*րով բոլորակի շրջանակներու օղակավորությամբ երիզներ, պսակներ, մեծ ու փոքր պատուհաններու շրջանակներ Բագրատունի շրջանին զարգացան: Այս շրջանն էր նաև գեղաքանդակ խաչքարերու ծնունդ տվողը՝ ժամանակին հատուկ ոճերու խառնուրդով քանդակազարդված:*

*Նկ. 254. Գեղարդավանքի (Այրիվանքի) ժամատան ներսը (13-րդ դար)*

*Զաքարյան շրջանի ճարտարապետական ոճը մեծ մասամբ հավատարիմ մնալով բացառապես Բագրատունի շրջանին վերածնված ոճերուն, զգալի կերպով հեղաշրջման ենթարկեց քանդակագործության ճյուղը: Այս շրջանին մանվածոները թեև իրենց հրապույրը չկորսնցուցին, սակայն անոնց մեջ քանոնի և կարկինի դերը կատարեց արվեստագետներու ձեռքի ճարտարությունը. նախկին ուղիղ կամ կոր գծերով կազմված չոր մանվածոները փոխարկվեցան տերևալից ու ծաղկալից գողտրիկ հյուսվածքներու: Հին շրջանին մեջ անջատ-անջատ քանդակված վարդեր ու ծաղիկներ ավելի մոտեցան բնականի, առանձին ցողուններով միացան մայր ոստերու հետ: Միայն տերևալից ու ծաղկալից ոստերու ակնահաճո պատկերացումներով չբավականացավ այս շրջանի գեղարվեստներու ճաշակը, բնության բոլոր կենդանությունը անդրադարձնելու ձգտեցան իրենց կանգնած շենքերու պատշաճ մասերուն վրա և խառնեցին իրենց ճոխ հյուսկենները ամեն տեսակ վայրի ու ընտանի թռչուններով և կենդանիներով:*

*Թռչուններ և կենդանիներ քանդակելու մեջ հայերը ուշագրավ հառաջադիմություն ըրեր էին 5-րդ և 7-րդ դարերուն մեջ, սակայն Բագրատունի շրջանի վերածնությունը միանգամայն մոռացության տված էր նախնյաց մշակած այդ ճյուղը: Այս շրջանին ամենեն կատարելագործյալ նմուշն է Անիի բոլորակ ս. Գրիգորի մեջեն գտնված Գագիկ Ա-ի արձանը, որն որ իր մեջ բավական մարդակազմական համաչափություններ ունենալով հանդերձ՝ կոփման մեջ շատ նախնական է:*

*Զաքարյան շրջանը վերստին կյանք ու կենդանություն տվավ Բագրատունիներու օրով օրհասական վիճակի հասած կենդանիներ և թռչուններ քանդակելու արվեստին՝ բոլորովին նոր ոճով և նոր ուղղությունով: Բայց, ինչպես կերևի, մարդոց պատկերներ քանդակելու ճյուղը դարձյալ չմշակվեցավ: Այդ ճյուղին վերաբերող ոչ մի լավ նմուշ չի հասած մեզ:*

*Նկարչությունը ոչ նվազ զարգացման ճամբու մեջ էր Զաքարյան շրջանին, բայց մանրանկարչության արվեստը իր ժամանակակից շատ մը ազգերու արվեստներու հետ մրցելու աստիճան նախանձելի բարձրության հասավ:*

*Մեր ժամանակի ճաշակով քանդակագործության մեջ եթե մի զգալի թերություն կա, այն ալ երբեմն անոնց արտակարգ կերպով խճողված լինելն է, որոնք թեև շատ մոտեն դիտողներու համար հրապուրիչ և գրավիչ են, սակայն հեռվեն տեսնողներու համար կորսնցնելով իրենց գնահատելի մանրամասնությունները, կկորսնցնեն նաև իրենց հրապույրը: Այնուամենայնիվ ինքզինքս անիրավացի կգտնեմ այս քննադատության մեջ, պահանջելով, որ այն ժամանակվան արվեստագետներ անպայման ի նկատի ունենային մեր այսօրվան ճաշակը:*

*Առանձնապես Զաքարյան շրջանի վերածնության սեփականություններն են գույնզգույն քարերով մոզայիկ պատեր, հորիզոնական մոզայիկ առաստաղներ, դռների ստալակտիտ շրջանակներ և պսակներ* (corniche), *նույնպես նաև ստալակտիտ քանդակներով սյուների խոյակներ: Ստալակտիտի և մոզայիկի ոճերը շատ բազմակողմանի կերպով մշակված են Զաքարյան շրջանին և գրեթե առանց բացառության տեղ գրված են բոլոր ժամատուներու, անհատական և հասարակական շինություններու մեջ:*

*Նկ. 255. Հովհաննավանքի եկեղեցու արևմտյան մուտքի քանդակները (արդար և մեղավոր կույսեր) (13-րդ դար)*

*Ամենեն նշանավոր տեղը կբռնեն այս շրջանին մեջ անզուգական մտքի թռիչքով գեղազարդված խաչքարերը, ոչ միայն գաղափարը, բազմատեսակ զարդերու ներդաշնակ պատշաճությամբ դասավորումը, այլև հրաբխային անընդունակ ավազաքարի վրա անհավատալի նրբությամբ մաքուր քանդակագործումը աքանչացում կպատճառե ամեն կարգի արվեստագետներու:*

*Զաքարյան շրջանի ճարտարապետական ոճը թեև ընդհանուր Հայաստանի մեջ չտարածվեցավ, սակայն միմիայն Շիրակի սահմաններուն մեջ ալ կղզիացած չմնաց. Սյունյաց աշխարհը ամբողջովին պճնազարդվեցավ այս ոճի գողտրիկ հիշատակարաններով: Թեև թվով ցանցառ, ազդեցությունը զգալի եղած է Բարձր Հայքի, Վանանդի և Արարատյան գավառներու մեջ: Արարատյան նահանգի մեջ մինչև այսօր կանգուն մեզ հասած Հովհաննավանքի ժամատունը Զաքարյան շրջանի վերածնության պարծանքն է: Այս ժամատան մեջ ոչ միայն կտեսնենք ճարտարորեն գաղափարված ու քանդակված զարդաքանդակներու բազմազանությունը, այլև շինարարական ոճի* (construction) *մեջ այնպիսի հետաքրքրական մասեր, որոնցմե մենք այսօր իսկ կարող ենք օգտվել քարահատության, տարողության և խնայողության տեսակետով:*

*Չենք կարող մոռանալ այս շրջանին պատկանող Այրիվանքի [Գեղարդ] քարափոր եկեղեցիներն ու ժամատունները, որոնք մեծագործություն համարվելու չափ զմայլելի կերտվածքներ են: Անիի մեջ շատ կան քարափոր եկեղեցիներ, մատուռներ և ժամատուններ, սակայն անոնցմե ոչ մեկը չի կարող հավասարիլ Այրիվանքի քարափորներուն. այս վերջինս ամենեն ավելի փորձված արվեստագետներուն անգամ անհավատալի պատրանք թվելու չափ նրբությամբ, համաչափությամբ և վայելչությամբ կերտված է ընդհանրապես. պետք է շատ ուշադրությամբ քննել տեսնելու և համոզվելու համար, թե գեղեցիկ սյուներ, խոյակներ, խարիսխներ և ասոնք իրարու միացնող աղեղներ ու կամարներ միակտուր զանգվածներ են՝ կոշտ ապառաժին մեջ նրբին հաշիվներով կերտված:*

Նկ. 256. Գեղարդավանքի (Այրիվանքի) վիմափոր տաճարներից մեկից հատված (13-րդ դար)

Նկ. 258 Վիմափոր տաճար Գեղարդավանքում (Այրիվանքում)

Նկ. 257. Գեղարդավանքի (Այրիվանքի) վիմափոր տաճարներից մեկից հատված (13-րդ դար)

Գալով մասնավորապես Անիին, Զաքարյան շրջանի ճարտարապետական նմուշներ բազմաթիվ են: Ճարտարապետական գլուխ-գործոց է Անիի Առաքելոց եկեղեցվո գավիթը՝ ամենայն հավանականությամբ 13-րդ դարու կեսին մոտ շինված՝ Պահլավունի տոհմին պատկանող կղերականներու նախաձեռնությամբ, որն որ, իրենց սեփական աթոռը լինելե զատ, նաև այդ տոհմի հոգևորականներու դամբարանն էր: Այս գավիթին մեջ ցանկացողը կարող է այսօր իսկ տեսնել՝ թե անեցի վարպետներ ո՛ր աստիճան ճարտարությամբ կարող էին գույնզգույն մեծ ու փոքր քարերով մոզայիկ առաստաղներ շինել, շրջապատված գեղեցիկ շրջանակներով: Զիրար խաչաձևող կամարներու և աղեղներու ու անոնց խաչաձևումեն գոյացող միջոցներ ստալակտիտ դմբեթավորելու կամ մոզայիկ առաստաղով ծածկելու ոճը գաղափարող ճարտարապետին տաղանդը իսպառ անպտուղ պիտի անցներ, եթե Անիի մեջ չգտնվեին կիրթ ու մշակված ճարտարապետներու գաղափարները իրականացնելու կարող արհեստավորներ: Շինարար արհեստավորներ Անիի շրջանին մեջ անմրցելի առավելություններ ունեցեր են, անոնց ճարտարապետության և կարողության ապացույցներ են քանի մը դարեր անցնելեն հետո մեզ հասած շինվածքներուն փլատակ վիճակի մեջ անգամ զմայլեցուցիչ նրբությամբ փայլելը (նկ. 38):

Նկ. 259. Իշխանական ապարանքի քանդակազարդ մուտքն Անիում

Մանվածո զարդաքանդակներու նոր վերածնության, ինչպես նաև կենդանյաց ու թռչնոց քանդակագործությանց 13-րդ դարու ոճին ներկայացուցիչներն են Անիի մեջ ս. Գրիգոր Լուսավորիչ (Նախշլի) եկեղեցին, Կզկալայի եկեղեցին, 1892 թվականին պ. Ն. Մառի պեղած ս. Գրիգորը, Ծաղկոցաձորի գլխին պալատ կարծված շենքին դուռը և նոր պեղված վաճառատանց դռները, Կուսանաց վանքը և ուրիշ բազմաթիվ հատուկտոր մնացորդներ, որոնք ձևերու անսահման այլազանություն մը կներկայացնեն: 13-րդ և 14-րդ դարերուն շատ ընդհանրացած և հաճելի դարձած մի ոճ էր արտաքին դռների ամբողջ ճակատներ և առաստաղներ աստղաձև մոզայիկներով զարդարել և այդ մոզայիկներու յուրաքանչյուր քարը առանձին տեսակ քանդակել: Դռների ճակատներ կան, որոնք հարյուրավոր աստղաձևերով, տարանկյունի, բազմանկյունի, կամ քառակուսի հարյուրավոր քարերով են կազմված, և այդ քարերուն յուրաքանչյուրը առանձին տեսակ նուրբ ու մանրիկ քանդակներով զարդարված է: Այս ոճի դռներեն են Բագրատունյաց պալատ կարծված շենքին դուռը, գագկաշեն բոլորակ ս. Գրիգորի մոտ պեղումներով բացված մի դուռ, և մասնավորապես ուշադրության արժանի են վերջին տարիներս պեղումներով բացված զույգ մը վաճառատանց արտաքին դռներ: Այս վերջինս ոչ միայն իր արտաքին մոզայիկներով նորություններ բերեց, այլև մեզ բավական գաղափար տվավ վերջին շրջանի անեցիներուն շուկաներուն և վաճառատներուն վրա:

Զույգ վաճառատները շատ հետաքրքրական են իրենց ներքին ընդարձակ բացօթյա բակով և երկհարկանի շուրջանակի փոքր սենյակներով, որոնք առանձին խանութներ էին հավանաբար, ինչպես որ այժմ ալ շատ կան նույն ձևերով խաներ Տաճկաստանի ու Պարսկաստանի քաղաքներուն մեջ: Ներսի կողմեն ոչ նվազ վայելուչ էր վաճառատունը իր գեղեցիկ moulure-ներով շրջապատված դռներով, գույնզգույն քարերով իրարու մեջ հագցված դռների ճակատներով: Ինծի կթվի, թե այդ զույգ վաճառատանց փողոցին վրա տակավին որոշ չափով պահված կան նմանօրինակ շենքեր, որոնց պեղումը խիստ շահեկան նորություններ պիտի տա անեցվոց առևտրական կամ վաճառականական կյանքին վրա (նկ. 260):

Արդյո՞ք ամբողջ քաղաքը պճնազարդված էր այսպիսի գեղարվեստական շքեղ շենքերով, որ, երբ Զարմաղանը քաղաքը առավ, առաջին անգամ

հափշտակված անոր ընդհանուր վայելչութենեն, անմիջապես հրամայեց, որ քաղաքը կոտորեն ու թալանեն, սակայն միանգամայն անվնաս պահեն բոլոր արհեստավորները: Ուստի կանանց և աղջիկներու հետ միաժամանակ զատեցին բոլոր արհեստավորները և բանակին հետ գերի վարեցին: Անտարակույս, Զարմաղանի նպատակն էր նույն արհեստավոր գերիներու ձեռքով շենցնել այն վայրերի ու խոպան երկիրները, ուր իր կյանքը անցուցեր էր:

Միջնաբերդի պեղումները մեզի ցույց տվին անեցի արհեստավորներու փայտի վրա փորագրելու մեջ ունեցած բարձրագույն կարողությունը: Հյուսիս-արևելյան մեծ սրահին մեջեն գտնվեցան զարդաքանդակ փայտյա աղեղներ, որոնք հունաց ժամանակ կանգնված քարե սյուները կմիացնեին իրարու. այս աղեղները, թեև այրած ու ածխացած, սակայն բնավ չեն կորած անոնց վրա աննման ճարտարությամբ փորագրված ծաղկազարդությունններն ու թռչնոց բարձրաքանդակ պատկերները: Փայտի քանդակագործության Բագրատունի շրջանեն մնացած նմուշներ ալ գտնվեցան այն ժամանակի ոճով, սակայն երբեք չէ կարելի համեմատել Զաքարյան շրջանի քանդակագործության դանակի ճարտար հարվածներուն հետ, որոնց ներքև կոշտ փայտը արտակարգ կենդանություն ստացեր է: Միջնաբերդի պեղումներու ժամանակ, պալատի հարավային մասին մեջ, ուր կա ջրամբարը, գտնվեցան գույնզգույն նկարազարդված առաստաղի տախտակներ, որոնց գեղարվեստական ոճը շատ համեմատություններ կներկայացներ ածխացած փայտի քանդակագործության հետ: Անտարակույս, այս երկու սենյակները միաժանակ գեղազարդված էին նույն ժամանակին պալատին տիրացող իշխանապետի մը ճաշակին համաձայն. բայց ե՞րբ, ո՞ր իշխանի օրով, այդ չէ կարելի ճշտիվ որոշել, սակայն անոր հավանական ժամանակը կարելի է դատել արվեստագործության ոճեն, որուն համանման նմուշները շատ կան դուրսը՝ քաղաքին մեջ, քարերու վրա փորագրված և ունենք ժամանակագրական ստույգ տեղեկություններ անոնց մասին: Շատ պարզ է, որ նախքան Զաքարյան շրջանը այս ոճը ամենևին գոյություն չուներ Անիի ու շրջակայից մեջ. իսկ մեծ Զաքարեի օրով, այսինքն 13-րդ դարու սկզբին ալ նույնքան կատարելության հասած չէր, որպիսին է փայտի փորագրությունը: Լուսավորիչ և Կզկալայի եկեղեցիներն ունեն այս ոճի նմուշները, բայց անոնց մեջ ոստերու ավելի բնական ճկումներ, տերևներու ավելի շնորհալի համաչափություններ չկան, ինչպես փայտի քանդակի վրա, բնականաբար ավելի ուշ ժամանակի զարգացած արվեստի արդյունք է փայտի քանդակագործությունը: Բայց որ 14-րդ դարու չի հասներ՝ դարձյալ ապացույցը կգտնենք անոր տերևներու ոճին մեջ, որովհետև 14-րդ դարում նույն մանվածոներու մեջ տերևներու մի առանձին ոճ կա, որ 13-րդ դարուն մեջ անկարելի է գտնել, և հատուկ է միմիայն 14-րդ դարուն: Հետևաբար, պալատի քանդակազարդ փայտյա աղեղներուն ամենահավանական ժամանակն է 13-րդ դարու առաջին և վերջին կեսերուն մեջտեղ:

Զաքարեի կյանքի կարճ տևողությունը միանգամայն աղետաբեր եղավ ոչ միայն Շիրակի ու անմիջական շրջակայքի, այլև ամբողջ հայաբնակ գավառներու համար: Անոր կյանքով վերջացավ այն ահ ու սարսափը, որ տարածված էր շրջապատող ցեղերու վրա, և կամաց-կամաց սկսեցին անոնք իրենց չահատակությունները հեռվեն:

Զաքարեի մահվամբ երկրին հասած քաղաքական ու տնտեսական անփոխարինելի վնասը անմիջապես զգալի չեղավ բնակչության, ժողովուրդը կկարծեր, թե Զաքարեի հեռատես քաղաքագիտությամբ, հեռատես և լուսամիտ վարչականությամբ ստեղծված ապահով կազմակերպությունը պիտի կարողանան պահել անոր հաջորդները և նույնքան անձնվիրությամբ ու բարեխղճությամբ պիտի պաշտպանեն հանրության շահերը: Ահա այդ համոզման և ծայրահեղ վստահության հետևանքն էր, որ իրենց ուժի և կազմակերպության վրա վստահ անեցիներն առանց վայրկյան մը իսկ վարանելու, անարգանոք սպանեցին Զարմաղանի դեսպանները, սակայն շատ շուտով քաղեցին իրենց անխոհեմ վարմունքի և անմիտ վստահության դառն պտուղը: Իրենց արժանավոր կարծած իշխանները, լքված, փախստական եղան՝ իրենց կյանքն ու գույքը ճակատագրին հանձնելով, առանց վայրկյան մը իսկ օգտվել գիտենալու ժողովրդի ըստ ամենայնի թարմացած և ապահով հաղթանակի համար մինչև վերջին շունչը դյուցազնաբար կռվելու պատրաստ տրամադրություններեն:

Թաթարաց արշավանքը նույնքան համատարած եղավ, որչափ Արփասլանի արշավանքը, սակայն նույնքան դեպի արագ կործանում չտարավ հայ ժողովուրդը, որչափ Արփասլանի արշավանքը: Թաթարները նյութական հարստությենե զատ՝ գրեթե ուրիշ ակնկալություններ չունեցան, թեև շատ ծանր հարկեր դրին հայ ժողովրդի վրա, սակայն վարչական ներքին կազմակերպության ձեռք չտվին. նախկին վարչապետներ և կառավարիչներ իրենց պաշտոններու մեջ վերահաստատվեցան լայն






Նկ. 260. Իշխանատուն կամ վաճառատուն (քարվանսարա) Անիում

իրավունքներով: Ինչ որ ավելի նշանակալի իրողություն է, ամենևին չունեցան մահմեդականներու կրոնական մոլեռանդությունը և չհալածեցին քրիստոնեությունը: Իսկ պարբերաբար քանի մը թաթար կառավարիչներու քրիստոնեություն ընդունելն ավելի նպաստեց հայերուն ավելի խաղաղ և բարգավաճ կյանք ունենալու, որով նաև ծաղկեցան ճարտարապետությունը և գեղարվեստը: Որչափ որ տուրքերու ծանրության տակ ճնշված էին թաթարաց տիրապետության տակ գտնվող հայաբնակ գավառները, սակայն այս տնտեսական տագնապը, ապագայի մեծ հույսերով, սիրով տանելու տրամադիր էին խղճի ու եկեղեցվո անսահման ազատությամբ միսիթարված և ժամանակավոր աստվածային պատուհասներ համարված էին իրենց կրած անձնական վշտերը: Հավատացած էին, որ պիտի անցնեին դառն օրերը, դարձյալ պիտի վերականգներ երկիրը, և իրենք մշանջենապես պիտի ապրեին իրենց ընկիկ հայրենիքին մեջ, այդ պատճառավ ալ անընդհատ չիներ են մեծ ու փոքր գեղարվեստական չենքեր մինչև այն դժբախտ օրերը, երբ անեցիք և շրջակա հայաբնակ գավառները իրենց փրկությունը փնտրեցին գաղթականության մեջ:

Վերջին անգամ հայոց գաղթականության մեծ հոսանքին շարժառիթը Շետտատյան շրջանի վերանորոգման իրական երկյուղն էր: Մահմեդականներ սկսեր էին մուտ գտնել թաթարաց արքունիքը և անոնցմե հարկահան ոստիկաններ նշանակվեր էին հայաբնակ գավառներու վրա. անոնք, հակառակ թաթար խաներու բարյացակամ տրամադրության, անլուր հարստահարություններ սկսեր էին գործադնել և կամաց-կամաց, մոլեռանդությամբ բորբոքված, եկեղեցիներ ու վանքեր կողոպտել ու ավերել: Շատ չանցած՝ թաթարներու մեջ ալ մահմեդականության մեծ ծավալ ստանալը վերջին հարվածը տվավ հայաբնակ գավառներու բնակչության տաքած հույսերուն: Բազմաթիվ օրինակներ տեսնվեցան անլուր խժդժություններու, սպանություններու և հանուն քրիստոնեության անվերջ նահատակություններու՝ մահմեդականացած թաթար խաներու ձեռքով:

Նյութապես քայքայված[1], խղճի ու զգացումներու ազատությունը բռնադատված հայ ժողո-

[1] Առաքելոց եկեղեցվո վրա Աղբուղայի արձանագրութենեն շատ պարզ կերևա, որ 1300 թվականին Անին արդեն վերին աստիճան աղքատ ու խեղճ դրության հասած էր:

վուրդն այս անգամ վերջնականապես սկսեց բուն թափով համայնական այնպիսի գաղթականութիւն մը, որով երկրի ամբողջական կործանումը հայտնի եղավ նույնիսկ հարստահարող խաներուն: Ապուսայիտ Պեհատուր խան Անիի մզկիթին վրա փորագրել տված իր հրովարտակով իզուր աշխատեցավ ժողովուրդը գաղթականութենե ետ կեցնել, խոստանալով անոնց մեծամեծ ազատութիւններ և հարկերու բաշխումներ: Վերանորոգված արյունարբու մահմեդական տիրապետության մղձավանջը սոսկում էր պատճառած, չէին կարող հավատալ Ապուսայիտի մը ժամանակավոր խոստումներուն, անտարակույս, հետագա մահմեդական կառավարիչներ ավելի խիստ տանջանքներու պիտի ենթարկեին զիրենք, պիտի քանդվեր ու պղծվեր ամեն սրբություն, ուստի ավելի նախապատիվ սեպեցին [զրկվել] երկրեն, հայրենի հողեն ու ջուրեն, միայն պահել խղճի ու կրոնի ազատությունը, կյանքն ու պատիվը:

Ահա այս մեծ գաղթականությամբ, ավելի քան 300 տարի անընդհատ ծաղկող քաղաքներու թագուհի Անին իր ընդարձակ շրջականներով ամայի անապատի փոխվեցավ: Եվ անոր մեջ, տզրուկի նման, ժողովուրդի արյունը քամող բռնակալներ, ժամանակ մը ևս ավերակներ ողբացող բուերու նման սպասելեն հետո, իրենք ալ կորան, անհայտացան: Այդ ժամանակեն ի վեր այլևս Անին տխուր գերեզմանական լռության սև քողով մը ծածկված մնաց:

Գաղթականության հոսանքեն կամա թե ակամա ետ մնացող հայեր, հիասթափված ու մեղմացած խաներու ձեռքին տակ մի կերպ իրենց գոյությունը պահպանեցին ու նոր կյանք ստեղծելու աշխատեցան: Բնիկ հողին վրա շարունակեցին կանգնել եկեղեցիներ, ժամատուններ, մատուռներ ու գեղաքանդակ խաչքարեր՝ հայրենավանդ գեղեցիկ ոճերով: Այս կենսունակ ժողովուրդին ինքնուրույնության, նկարագրին, գեղարվեստին և, վերջապես, արյան գնով ձեռք բերած փոքր ի շատե խաղաղության վերջին հարվածը տվավ Շահաբաս, ամբողջովին քշելով երկրի արհեստավոր ժողովուրդը՝ Պարսկաստանի մեջ պարսկական արվեստի նոր վերածնություն մը ստեղծել տալու համար: Այս սգալի անցքեն ալ մեզի հիշատակ մնաց Ջուղան իր ավերակներով և գերեզմանատունը՝ կանգուն ու կիսականգուն գեղաքանդակ բազմահազար խաչքարերով:



## Բ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՊԱՐԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՆՈՆՑ ՆԵՐՔԻՆ ԿԵՆՑԱՂԸ[2]

Պատմական Հայաստանի բնակչության ներքին կենցաղի շուրջը ընդհանրապես մեծ հետաքրքրություն կա. և իրոք, հետաքրքրական է գիտնալ, թե ինչ ձև կամ շուք ունեին անոնց բնակարանները, ինչ տեսակ կահկարասիներ կգործածվեին և ինչ տեսակ տարազ ունեին երկու սեռի համար:

Այս տեսակ մի լուրջ հարցի լիովին գոհացում տալ խիստ դժվար է, որովհետև մեզ բավարարություն տվող աղբյուրներ չափազանց սակավաթիվ են: Այն աղբյուրները, որոնց դիմելով կհուսանք հնադարյան հայության ներքին կենցաղի պատկերը կազմել՝ հետևյալներն են. 1. Պատմագրությունը, 2. Գիտական հետազոտությունները և հնագիտական պեղումները, 3. Հայ ժողովրդի մեջ մինչև այսօր եղած ավանդական սովորությունները: Այս երեք տեսակ աղբյուրներու համեմատական ուսումնասիրությունով՝ եթե ոչ ճշգրիտ, գոնե իրականության մոտիկ մի ուրվագիծ կկարողանանք ստանալ առաջադրված հարցի նկատմամբ:

*
* *

Թեև իմ նպատակն է իբրև ճարտարապետական ճյուղ հետազոտել և որոշ չափով պատկերացնել հայոց արքունիքներու, ապարանքներու ձևերն ու ոճը և անոնց գեղարվեստական արժեքը՝ հիմնվելով նկարագրական և իրական ապացույցներու վրա, սակայն, կարծեմ, այստեղ ավելորդ չի լիներ նախապես այդ արքունիքներու մեջ բնակվող երկու սեռին միանգամայն տարազները, պերճապաճույճ ընտանեկան զարդերն ու սպասքները և փափկաճաշակ կերակուրները համառոտակի նկարագրել:

Գլուխներին կդնեին զմրուխտով, մարգարիտով և ուրիշ թանգագին գոհարներով զարդարված թագ կամ խույր, որուն միացած էր առանձնապես գոհարազարդ բանված վարսակալ՝ աշխարհավանդ հանգույցով. ականջներին ունեին թանգագին օղեր, իսկ կուրծքերնին զարդարված էր ապիղակ, գումարտակ և լանջապանակ անուններով զանազան տեսակի ոսկեհուռ գոհարազարդ կուրծկալներով: Մարմինը վերեն վար կծածկեր հաճախ ոսկեթել բանված պատմուճան, անոր վրայեն թանգագին կերպասե մի վերարկու, որուն լայն օձիքը և երբեմն ամբողջությունը պատվական սամույրով պատած էր: Այս վերարկուն կամ սամույրը, ըստ պատշաճի մի ծառա կամ մի ստորադրյալ իր թևին վրա կկրեր, հետևելով տիրոջը՝ ի հարկին անոր ուսերուն վրա ձգելու համար: Ոտքերնին կհագնեին գույնզգույն կոշիկներ, իրենց պատվո աստիճանի պատշաճ գույներով, սրունքներնին պատած էր ոսկեթել ասեղնագործված զանկապաններով: Մատներնին ունեին ակնահեռ մեծարժեք մատանիներ, որոնք ընդհանրապես իբրև կնիք ալ կգործածվեին: Մեջքերնին կկապեին ակնակուռ ոսկեպատ կամ արծաթապատ կամարներ, որոնց միացած էին նմանապես ոսկեպատ ու արծաթապատ սուրերնին:

Կանայք ա՛լ ավելի քնքույշ վայելչությամբ պճնազարդված էին: Մետաքսեղեն ոսկեթել անկվածո դիպակներե շինված էին անոնց պատմուճանները: Մարգարիտներով և թանգագին գոհարներով խառն էին անոնց մազերու զարդարանքները: Ոսկեճույլ կամար ունեին մեջքերին, ակնակուռ օղեր՝ ականջներին, նույնպես ապարանջաններ՝ թևերին: Եթե հավատանք մի ավանդության, մինչև իսկ արծաթյա զամերով զամված էին անոնց ոտքի կոշիկները:

Մազերնին խնամքով սանրված և քաղցրաբույլ յուղերով օծված էին. անուշահոտ օճառներով կլվացվեին: Յուրաքանչյուր տիկին իր առանձին սպասուհին կամ աղախինը ուներ, որն որ իր տիրուհիին ձեռքին ջուր կլցներ լվացվելու ժամանակ և անձեռոցիկ կմատուցաներ սրբվելու: Ոսկեզօծ շքեղ պատգարակներու մեջ բազմած դուրս կելլեին զբոսական պտույտներու ժամանակ:

Բեհեզյա, փետրալից փափուկ անկողիններու մեջ կհանգստանային և հաճախ մեկե ավելի անկողիններ մեկզմեկու վրա կփռվեին: Անկողինները տարածված էին ոսկեզարդ և նկարազարդ մահճակալներու վրա և մահճակալներն ալ ծածկված էին ամպհովանիներով և ոսկեթել բանված վարագույրներով: Թագուհու մը անկողինեն ոչ նվազ զարդարուն էր հարանեկան առագաստի սենյակը: Ոչ միայն անկողինը զարդարված էր թանգագին ամպհովանիով և վարագույրներով, այլև առագաստի սենյակին ամբողջ ճակատը ծածկված էր շքեղազարդ վարագույրով:

Մնունդը ընդհանրապես նույնն էր երկու սեռի համար: Բարակ նաշիհով պատրաստված էր հացի խմորը. ընտիր որսական երեներե զատ, մատաղ հորթուկներու ուղեղով կպատրաստվեին փափկաճաշակ խորտիկներ անոնց ընտանեկան սեղանի համար, ոսկեղեն պատառաքաղով և դգալով ճաշ ալ շատերուն համար արքունի շնորհ էր: Նույնպես ոսկեղեն և արծաթեղեն բաժակներով ու բաժակալներով կմատուցվակեին գինին սեղանի վրա և արծաթեղեն սպասներով՝ կերակուրը: Ունեին իրենց ընտանեկան ճաշարանը, անկախ այն տաճարներեն, որոնք հատուկ էին տոնական օրերու կամ պաշտոնական պատվո խնջույքներու իրախճանությանց:

Սկսած 4-րդ և 5-րդ դարերու պատմիչներեն մինչև 14-րդ և 15-րդ դարերու պատմիչներ, առավել կամ նվազ չափով, այս ճոխ ու փարթամ կենցաղի նկարագրական հատվածներ ունին, որոնք գրեթե համանման են իրարու: Առնվազն տասն և հինգ դար գրեթե նույնությամբ շարունակվեր է հայոց մեջ՝ շատ քիչ փոփոխություններով:

*
* *

Այսպես պերճորեն պճնազարդվիլ և բնության առատ պարգևներեն օգտվելով կյանքը վայելել գիտցող իշխող դասը անպայման պետք էր որ ունենար թե՛ ներքինով և թե՛ արտաքինով շքեղաշուք ապարանքներ՝ համապատասխան իր տարազին և ապրելակերպին:

Այս մասին պատմական տվյալներու մեջ հազիվ թե չափազանցություններ նկատելի լինին, բավական է մասնագիտորեն ըմբռնել գրվածները և ներդաշնակորեն դասավորել ակնարկված յուրաքանչյուր հարամասունքը:

Ամփոփելով ապարանքներու մասին հատուկտոր պարբերությունները, կունենանք հետևյալ մոտավոր նկարագիրը Հայաստանի իշխանական և նախարարական ապարանքներուն:

Ընդհանրապես մեծ բլուրներու գագաթներ կամ լանջեր կընտրվեին ապարանքներու շինության համար: Ապարանքի շուրջը բավական ընդարձակ հողամաս կհատկացվեր՝ բազմատեսակ մեծ ու փոքր շինություններ, ընդարձակ այգիներ, պարտեզներ, պուրակներ և ուրիշ զբոսավայրեր շինելու համար: Որովհետև ի հնումն ապարանքները շատ անգամ իբրև ամրոց ալ կծառայեին, այդ պատճառով թե՛ ապարանքը և թե՛ անոր հատկաց-

[2] Արտատպվում է «Գեղարվեստ»-ի № 6-ից (1917 թ.):
Կազմող

ված ընդարձակ հողամասը առանձին-առանձին ամուր պարիսպներով կշրջապատվեին:

Բուն ապարանքին հատկացված պարիսպի մեջ կհարդարեին քաղցրաբույր ծաղկանոցներ, մրգաստաններ և զանազան տեսակ պուրակներ, որոնց մեջ ճյուղավորված էին փողոցներ կամ ճանապարհներ:

Գրեթե նույն բաները կային նաև արտաքին ընդարձակ պարիսպին մեջ, և երբեմն այս պարիսպը այնքան մեծ հողամաս կշրջապատեր, և ներսի ծառաստանը անտառանման ընդարձակություն կունենար, որ այդ արվեստական անտառին մեջ վայրի անասուններ և գազաններ կլեցնեին՝ որսորդական զբոսանքներ և պատերազմական վարժություններ կատարելու համար:

Եթե պատահաբար ապարանք կառուցանելու համար ընտրված բլուրն իր մեջ ջուր չունենար պահանջված չափով, այն ժամանակ ոչ մի դժվարության առջև կանգ չառնելով, հեռավոր լեռներու և ձորերու ջրերը քարե և թրծուն կավե խողովակներով կբարձրացնեին նորակառույց ապարանքն մինչև գագաթը և ասկե կբաժնեին ամեն կողմի վրա: Բացի այդ վազուն ջրերեն, առանձնապես կշինվեին ջրի շտեմարաններ և ձյունահորեր:

Արդյոք որչա՜փ զմայլելի և հրապուրիչ տեսիլ կստանար ծաղկանոցներով ու ծառաստաններով դրախտանման զարդարված այս կանաչագեղ բլուրը իր բարձրաշեն ապարանքով և շուրջը ծառաստաններու մեջ ցրված մեծ ու փոքր գեղեցիկ շենքերով:

Ահավասիկ այս դղյականման ապարանքներու մեջ հավաքաբար կամ անջատ շինված ստորաբաժանումներու և հարամասունքներու անունները.

Տաճար, դահլիճ, սրահ, հրապարակ, տուն, սենյակ, խորան, հովանոց, տուն դիվանի, տուն գանձուց, տուն գինուց, տուն ասպազինաց, տուն պատմուճանաց, տուն պատրուճակաց, տուն պահնորդաց, համբարանոց, փող, փողոց և այլն և այլն:

Մի ապարանքի մեջ առավել կամ նվազ չափով այս հարամասունքներու գոյությունն անվիճելի է: Բայց ի՞նչ առանձնահատուկ կերպով կդասավորեին այս հարամասունքները, ո՞ր մասին վրա էր ընտանեկան հարկաբաժինը, ի՞նչ հեռավորության, ի՞նչ դիրքերու վրա կշինվեին պիտոյից հատուկ տները: Ապարանքը և այս հարամասունքները միահա՞րկ էին, թե՞ բազմահարկ, այս հարցերում պատասխան հետզհետե պիտի տեսնենք հետագա քննություններուս մեջ, հնարավոր եղած չափով:

Բոլոր հարամասունքներու մեջ ամենեն կարևոր և ամենեն ավելի շքեղ բաժանումը տաճարն էր:

Տաճար բառի աշխարհիկ մտքով նշանակության մասին հատկապես հետաքրքրվողներ եղեր են հայ պատմագրության մեջ, սակայն, ըստ իս, որոշ կերպով չեն կարողացած վճռել անոր նշանակությունը: Մինչև այժմ եղած կարծիքների վրա ավելցնելով նաև իմ կարծիքս, կհուսամ ավելի մոտեցած լինել ճշմարտության:

Ամեն մի արքունիքի կամ ապարանքի մեջ անհրաժեշտ էր տաճարի գոյությունը: Երբեմն գտնվեր են կից երկու տաճարներ միմյանց հետ հաղորդակցող: Կան նաև հիշատակություններ մեկ շատ ավելի տաճարներու գոյության, արքունիքի կամ ապարանքի արտաքին շրջապարիսպեն ներս՝ պատշաճավոր տեղերու վրա շինված: Նայելով անոր կոչումին կամ գործածության նպատակին, կարելի էր տաճարներ շինել արքունական կամ իշխանական կայանին անմիջապես կից, կամ անկե հեռու, բոլորովին անջատ:

Տաճարներու շինության կամ գործածության իսկական նպատակը բացատրող վկայություններն այնքան պարզ են հաճախ, որ բնավ տարակուսել կարելի չէ, թե անոնք հատկացված էին միմիայն տոնական կամ հանդիսավոր օրերու խրախճանությանց համար: Իր այս բնորոշ հատկություններով կարելի է բացատրել ապարանքի արտաքին մեծ շրջապարիսպեն ներս մի քանի կետերու վրա մեկե շատ ավելի տաճարներ շինվելուն պատճառները: Բացի դիրքի բնական գեղեցկությենե և տեսարանի զվարճությենե, տարվույն եղանակներն ալ իրենց ազդեցությունը ունեցեր են տաճարներու շինության տեղի ընտրության նկատմամբ: Ի միջի այլոց, ամառնային և ձմեռնային տաճարներ կարելի է ըսել ընդարձակ բլուրին շուրջը գտնվող տարբեր կետերու վրա շինված տաճարներուն:

Թեև պատմական տեղեկությունները միահամուռ կհաստատեն, որ տաճարները հատուկ էին պաշտոնական կամ անպաշտոն հանդիսավոր խնջույքներու, այնուամենայնիվ, կերևի, թե արքունական տաճարներու մեջ եղած ընդունելության կարգ ու կանոնները տարբեր էին նախարարական տաճարներու մեջ ընդունված կանոններեն, բնականաբար, այս վերջիններն ալ այն շուքը և ճոխությունը չէին կարող ունենալ, ինչպես արքայական տաճարները:

Եթե տաճարը արքունական էր, այնտեղ մտնելու և թագավորին հետ սեղանակցելու իրավունք ունեին հատկապես հրավիրված մենաշնորհյալ աստիճանավորներ, որոնց նստելու տեղն ու կարգը կախված էր թագավորին շնորհած պատվո աստիճանեն: Թագավորին առանձին իրավունքն էր որոշել հրավիրյալին նստելու տեղը:



Տաճարները երբեմն այնքան ընդարձակ էին, որոնցմե մեկը, ըստ պատմական մի վկայության, ինը հարյուր հրավիրյալի համար աթոռ կամ բազմոց դնելու բավական տեղ ուներ, բացի նստելու իրավունք չունենալով՝ սպասավորելու համար ոտքի վրա կեցողներու հատկացված տեղեն:

Տաճարի ձևը երկար կամ հավասարակողմ քառակուսի էր՝ մեկ կամ մեկե ավելի դռներով: Ամենահարմար տեղին վրա դրված էր տաճարի նախագահի՝ թագավորի կամ իշխանի գահը՝ մյուս հանդիսականներու, բազմոցեն ավելի բարձր դիրքով: Գահին անմիջապես երկու քովերեն կսկսեին ամենեն պատվավոր տեղերը և հետզհետե քանի հեռանար գահեն, աստիճանաբար կիջներ տեղին պատվո արժեքը: Յուրաքանչյուր կոչնական իր առանձին բազմոցն ու բարձն ուներ թիկնած նստելու համար: Կոչնականներու պատվո աստիճանը հաճախ կորոշվեր բարձի թվահամարով և իրարու կից նստող հրավիրյալները բարձակից կկոչվեին:

Գահի և կոչնականներու հատուկ բազմոցներու շքեղության մասին արտակարգ գովեստներ կան շռայլված: Մասնավորապես գահը ոսկով և արծաթով պատված էր ծաղկանկար զարդարանքներով: Ոսկեթել բեհեզներով պատած էին բազմոցները և այդ բեհեզները ասեղնագործված էին ընդհանրապես կանանց ձեռքով: Նույնպես թանգագին կերպասներով ծածկված էին կոչնականներու հատուկ բազմոցները: Մուտքի դռները, բացի իրենց գեղարվեստական շինվածքեն, կրկնակի զարդարված էին շուրջանակի շքեղ դիպակներով և կերպասեղեններով:

Տաճարի շենքն ալ կարելի եղածին չափ գեղարվեստական վայելչությամբ օժտված էր ներքուստ և արտաքուստ: Պատերն ու առաստաղները ոսկեզօծ քանդակազարդ ու նկարազարդ էին, դռները առանձին շքեղությամբ կքանդակվեին և գունագեղ կոսկեզօծվեին, կային դռներ, որոնք լուսանցիկ քանդակված էին կամարաձև կատարներով:

Պատերու վրա բացված պատուհաններու մասին հիշատակություն չեմ գտած, եղած վկայությունները առհասարակ ցույց կուտան, որ տաճարներու լույսը սովորաբար վերևեն կստացվեր: Թեև կա մի հիշատակություն լայնարձակ պատուհաններու՝ ընդհանուր առմամբ ապարանքի մասին, չգիտեմ, թե կարելի կլինի՞ այս ակնարկեն հետևցնել նաև տաճարներու մասին: Բայց դռները ընդհանրապես լայն էին և երբեմն նույնիսկ երկփեղկանի:

Ի նկատի առնելով և համեմատելով հին պատմագրաց պարզ և մեկին բացատրությունները, կտեսնենք, որ մեր այսօրվան կենդանի բարբառի մեջ, տաճար բառին աշխարհիկ մտքով փոխարինող բառ չունենք, ստիպված ենք բարդ բառով բնորոշել անոր իսկական նշանակությունը, ինչպես՝ տոնասրահ կամ հանդիսասրահ (salle de fête): Հետևաբար, ինչպես ոմանք կարծեցին, տաճար բառը ոչ պալատ կնշանակե և ոչ ալ ճաշարան: Ավելորդ է խոսել նաև Եվրոպացի հայագետներու ոմանց սխալ ըմբռնումին մասին, որոնք կրոնական մտքով հասկանալով՝ chapelle թարգմաներ են:

Արքունական տաճարներե զատ, կային նաև նախարարական և կաթուղիկոսական տաճարներ, որոնց, բացի անվանական հիշատակություենե՝ ուրիշ մանրամասնություններ չունինք պաշտոնական ձևակերպություններու մասին: Տարակույս չկա, որ այս ոչ արքունական տաճարներն ալ գեղարվեստական վայելչությենե և շքեղ կահավորումե զուրկ չէին առավել կամ նվազ չափով, բայց հազիվ թե ունենային այն կարգերը և բարձակցական դասավորությունները, ինչպես, արքունական տաճարները: Անկասկած է, որ նմանվելով արքունական տաճարներու, նախարարական և ազնվական տոհմերու տաճարներն ալ ունեին իրենց գահերն ու բազմոցները, և գահերն ավելի բարձր դիրքերով, քան կոչնականներու բազմոցները: Նույնիսկ եղեր են կանանց հատուկ տաճարներ, որոնց մեջ տիրուհվույն գահն ավելի բարձր էր, քան ուրիշ բազմականներին: Բայց նստելու կարգը, ամենայն հավանականությամբ, հանդիսավոր խնջույքի օրը միայն՝ տաճարատիրոջ քմահաճույքեն կախված էր: Եթե այս տաճարներուն մեջ երբեմն պաշտոնապես, տոնական կամ հանդիսական խրախճանություններ կկատարվեին որոշ կարգ ու կանոնով, այնուամենայնիվ կան վկայություններ ալ, որ երբեմն մարդիկ կհավաքվեին այնտեղ զվարճանալու համար, ձևականություններե բոլորովին ազատ: Ներսես Մեծի համար կպատմվի, թե օտարականներ և աղքատներ կհյուրասիրեր իր տաճարին մեջ: Ասոր նման նաև ուրիշ վկայություններ պակաս չեն, որ ոչ-արքունական տաճարները, հաճախ առանց որևէ կարգ ու կանոնի, գործածվեր են շատ հասարակ և սովորական խնջույքներու համար:

Փայտաշեն տաճարներ ալ կշինվեին, թե ո՛չ – որոշ հայտնի չէ, բայց տեղեկություններ շատ կան տաճարներու քարաշեն և շքեղ շինելու մասին: Մասնավորապես ուշադրության արժանի է Թովմա Արծրունիի նկարագրությունն իր տոհմակից Գագիկ թագավորի Աղթամար կղզիին մեջ շինել տված փառավոր տաճարի մասին:

Թովմա Արծրունին մեր պատմագրաց շարքին մեջ գրեթե միակն է, որ համեմատաբար ավելի շատ

ու մանրամասն նկարագրություններ ունի աշխարհիկ շինություններու և, առհասարակ, բարձրագույն դասի աշխարհային վայելչությունները դատապարտողներեն չէ, ինչպես ուրիշ պատմագիրներ: Առանձին հպարտությամբ և հափշտակությամբ կնկարագրե թե՛ իրմե առաջ և թե՛ իրեն ժամանակակից բերդերու, ապարանքներու, աշխարհիկ տաճարներու գեղարվեստական մեծածախս շինությունները: Թովմայի նկարագրութենեն կքաղեմ Գագիկի տաճարի շինության հետևյալ հետաքրքրական նկարագրությունը:

«Եվ որովհետև, – կըսե Թովմա, – ամեն երկրե շատ արհեստավորներ հավաքված էին, որոնք ըստ ամենայնի կարող էին Թագավորին ամեն մտածած իրագործել, անոնց մեջեն Մանուել անունով իմաստուն և հանճարեղ ճարտարապետին կհրամայե (Թագավորը) մի տաճար շինել քառասուն կանգուն լայնությունով, քառասուն կանգուն երկարությունով և նույնքան ալ բարձրությունով: Պատերու թանձրությունը երեք քայլաչափ էր, կապարի ու պղնձի միաձույլ զանգվածի նման կարծր էին այդ՝ անարատ կիրով ու քարով շինված պատերը: Շատ զարմանալի է տաճարին հիմեն վեր մինչև կատարը առանց սյունի բարձրանալը: Կամարակից խորաններն անկյուններ և գեղապաճույճ շրջապատներ ունին, որոնց ոչ հաշիվ կարելի է գտնել և ոչ ալ նայելով՝ վերջը բերել: Լուսաճաճանչ ոսկեզարդ երկնահարթ մի գմբեթ ունի, որուն նայելու համար, Թագավորի պատիվ տալու նման, նախ պետք է գլխարկը վար առնել և հետո պարանոցը տանջելով հազիվ հազ կարենալ տեսնել զանազան գունազարդ նկարները»:

«Այնքան խելքե, մտքե վեր ահեղ ու զարմանալի է այս շենքի դասավորությունը, որուն մեկ կարգ խորանները եթե մի իմաստուն մարդ ժամերով դիտե, դուրս գալեն հետո բոլոր տեսածները նկարագրել անկարող կլինի: Որովհետև այնտեղ կան ոսկեզարդ գահեր, որոնց վրա նազելի ճոխությամբ բազմած կերևա Թագավորը, իր ուրախության սպասավորող մարդկանցով շրջապատված, անոնց հետ նաև նվագածուներու խումբեր և աղջիկներու հիանալի պարեր: Այնտեղ կտեսնվին սուսերամերկներու բազմություն և ըմբշամարտներու կռիվներ: Այնտեղ կան առյուծներու և ուրիշ գազաններու խումբեր և գույնզգույն պաճուճանքներով զարդարված թռչնոց երամներ: Բոլոր այնտեղ եղածները, եթե մեկը թվել ուզեր, շատ աշխատանք է պետք ըսողին ալ, լսողին ալ»:

«Մանր հատվածներով հրաշալի գեղեղմամբ հորինված դռներ ունի, որոնք բացվելու ժամանակ երկբացիկ են՝ օդաբեր ու զովացուցիչ, իսկ իրարու միանալով՝ իբր մեկ դռան պատկեր կերևին»:

«Գործավորներու մի հավատարիմ վերակացու մեզ պատմեց, որ տաճարի շինության մեջ, նվազագույն չափով, երկու հարյուր հազար լիտր երկաթ գործածվեցավ: Իսկ տաճարի փառավոր տեսքը զավառի ամեն կողմեն մեծ բլուրի մը նման կերևա քաղաքի մեջ»:

Թովմայի այս արտակարգ հափշտակությամբ նկարագրած տաճարի շինության մեջ եթե կա մի չափազանցություն, այն ալ, համեմատելով իր ծավալի հետ, երկու հարյուր հազար լիտր երկաթի գործածությունն է: Քառասունական կանգուն կողմեր և նույնքան բարձրություն ունեցող շենքի մը համար չափազանց շատ է երկու հարյուր հազար լիտր երկաթը՝ եթե գործածվեցավ պատերու, գմբեթի ու առաստաղի հաստատության համար, սակայն, մյուս կողմանե՝ շատ հետաքրքրական տեղեկություն է քարուկիր շենքի մեջ երկաթի գործածության տեսակետով: Արարատյան զավառներու մեջ, բացի Գառնիեն և Երվանդաշատեն, ուրիշ ոչ մի տեղ հին հիշատակարաններու մեջ չեմ տեսած երկաթի գործածություն: Ասոնք ալ հազիվ հասնեն մինչև 4-րդ դար: Անիի մեջ ալ կան թեև երկաթի գործածության հետքեր, անոնք ալ կպատկանին շատ հին դարերու՝ հավանաբար Կամսարականներու տիրապետության շրջանեն ավելի առաջ: Կերևի թե, հակառակ Արարատյան զավառներու մեջ շատ դարեր առաջ շենքերու հաստատության համար երկաթի գործածությունը դադար առնելուն, Վասպուրականի մեջ շարունակվեր է հին սովորությունը: Սա, իհարկե, բոլորովին առանց պատճառի չէ, թերևս շինանյութերու որակը կպահանջեր երկաթի օժանդակությունը:

Բովանդակ քրիստոնեական շրջանին հոյակապ գեղարվեստականությամբ Հայաստանի մեջ կանգնված անհամար կոթողներուն ծանոթ եղողներու համար բնավ չափազանցություն չկա Թովմայի՝ Գագիկ Արծրունիի տաճարի շինության մասին տված նկարագրության մեջ:

Չեմ կարող պնդել, որ տաճարի մեջը և դուրսը գտնված քանդակագործություններ և նկարազարդումներ, գեղարվեստի տեսակետով՝ անթերի արտադրություններ էին, բայց այդ տաճարը մի հրաշակերտ դարձնելու համար ոսկվո, արծաթի և աշխատության անխնա թափված լինելուն բնավ կասկած չկա: Գագիկ Արծրունիի Աղթամարի ծովին մեջ շինած պարիսպները և կղզույն վրա շինած կաթուղիկեն շատ բան կպատմեն անոր մեծագործության և գեղարվեստական ճաշակի նկատմամբ:



Աղթամարի եկեղեցվո պատերին վրա տակավին այսօր ալ կերևի, թե ո՛րչափ ծախք ու աշխատանք շռայլված են շուրջանակի քանդակազարդելու համար: Բայց թե ինչ աստիճան, իբրև գեղարվեստական արտադրություն, գնահատության արժանի են նույն քանդակագործությունները, այդ մասին խոսել առայժմ իմ նյութես դուրս է: Ոչ միայն Աղթամարի քանդակագործությունները, այլև բովանդակ Հայաստանի մեջ գտնված քանդակագործության արվեստը, ուսումնասիրության մի անսպառ նյութ է թե՛ հայ գեղարվեստի և թե՛ համաշխարհային գեղարվեստի պատմության տեսակետով:

Տաճարներու մասին բավական համարելով այսքանը, համառոտակի քննենք այժմ ապարանքներու մյուս հարամասունքները:

Ապարանքներու մեջ անհրաժեշտ հարամասունքներեն մեկն է դահլիճը՝ տաճարեն բոլորովին տարբեր առանձնահատկությամբ: Թեև ապարանքին կից, այնուամենայնիվ ընտանեկան կայանին մուտքեն բոլորովին անկախ դռներով և, ինչպես կերևի, սովորաբար գետնահարկ, որովհետև Շապուհ Թագավորը մի անգամ հրամայեց զարդարուն մի փիղ մտցնել դահլիճին մեջ: Եղիշե մի տեղ դահլիճը կնույնացնե հրապարակի հետ, սակայն այդ նույնացումը պատահական կերևի. մանրակրկիտ համեմատական հետազոտություններե կտեսնվի, որ դահլիճ և հրապարակ բոլորովին տարբեր են մեկզմեկե թե՛ ձևով, և թե՛ կոչումով:

Դահլիճը մի ընդարձակ սրահ էր, ուր կնստեր Թագավորը իր ավագանիներով և կխորհրդակցեր սովորաբար հասարակական խնդիրներու վրա: Բայց ինչ որ ավելի պարզ է, դահլիճին մեջ կընդունեին բոլոր պաշտոնական և անպաշտոն մարդիկ Թագավորին ներկայացնելու համար: Ուրեմն, այս հատկությամբ դահլիճը, այժմյան իմաստով, պետք է հասկանալ ընդունելության կամ ունկնդրության սրահ (Salle de réception ou salle d'audience):

Հրապարակ բառը հին մատենագրության մեջ միշտ մի քանի առում ունեցեր է: Բացի այսօրվան մեր ըմբռնած place նշանակությենեն՝ նաև երկու ուրիշ գլխավոր կոչում ունեցած կերևի:

Առաջին նշանակությամբ՝ հրապարակը մի մեծ դատաստանատեղի էր, ամենայն հավանականությամբ, վրան ալ ծածկույթով: Այնտեղ կկատարեին պետական և ազգային բնույթ ունեցող ծանրակշիռ դատերը՝ հաճախ ընտրյալ հասարակության ներկայությամբ:

Ուրեմն, այս իմաստով, հրապարակ բառը պետք է հասկանք արքունի կամ բարձրագույն ատյան (cour supreme ou Haute cour):

Երկրորդ նշանակությամբ հրապարակը պետք է հասկանք մի ընդարձակ տեղ, արքունի ապարանքի շենքերով շրջապատված և բացօթյա: Այս հրապարակին վրա կբացվեին զանազան դահլիճներու, սրահներու և սենյակներու դռներ: Նաև շուրջանակի կամ որոշ կողմերու վրա կունենար կամարակապ, սյունազարդ ճեմելիքներ (cloitre):

Կպատահեր, որ այս հրապարակին մեջ Թագավորն ալ երբեմն կնստեր իր ավագանիով, ժողովրդին երևալու համար, սակայն, բոլորովին տարբեր էր արքունի ատյան եղող հրապարակեն: Այստեղ մուտքը ազատ էր հանուր ժողովրդյան համար, ուր կհավաքվեին կամ համայնական բաղձանքներ հայտնելու համար և կամ արքունիքի մեջ կատարվող խրախճանությանց իրենց ցույցերով մասնակցելու: Շրջապատող ճեմելիքներու մեջ էր սովորաբար արքունի սպասավորներու կայանը՝ ամեն մի հրամանի ծառայելու պատրաստ:

Այս տեսակի հրապարակին, ներկա բարբառով, եթե ոչ բոլորովին պարզ գավիթ (cour), գեթ կարելի է պատվո գավիթ (cour d'honneur) անունը տալ:

Սրահ բառի հին առումն ալ որոշ հետազոտության կարոտ է, միշտ միևնույն իմաստով գործածված չէ. Եղիշեի վկայությանց վրա հիմնվելով, երբեմն տաճար մտնելե առաջ կանցնվեր նույն անունով մի բաժանմունքե, երբեմն ալ արքունի հրապարակին (cour d'honneur) անմիջապես կից բաժանումներ էին, որտեղ պաշտոնական գործերով ապարանք եկողներ առժամապես կնստեին:

Այս հատկանիշեն կերևի, որ այժմյան հայերենի մեջ սրահ բառին բուն առումը չփոթված է և անխտիր կտրվի շենքերու մեջ գտնված բոլոր ընդարձակ բաժանումներուն՝ ինչ որ ալ լինի անոր կոչումը, մինչդեռ մեր հին մատենագրության բոլոր տվյալներեն կեզրակացվի, որ սրահ կնշանակեր՝ 1. salle d'attente, եթե ապարանքը արքունական կամ իշխանական էր և բաժանումը լայնարձակ. 2. sofa, հասարակ ապարանքի կամ մեծ տան մը մեջ եղած բաժանում էր՝ համեմատաբար փոքր տարածությամբ: Այս ձևի սրահները միշտ չորս կողմեն փակ էին և առանձին դռնով կմտնեին, բայց միևնույն ատեն զանազան դռներով կհաղորդակցեին ուրիշ շատ սենյակներ այս սրահի հետ: Կա սրահի մի ուրիշ ձևը, որ երեք կողմեն փակ՝ մեկ կողմեն բացօթյա և կամարակապ սյուներու վրա հարկածածուկ էր: Այս ձևի սրահները սովորաբար արքունի հրապարակի (cour d'honneur) որևէ մի կողմին վրա կգտնվեին, ուրկից անցնելով կմտնվեր ապարանքի այս կամ այն բաժանմունքը, այսինքն՝

զանազան բաժանումներու դռները այս սրահին վրա կբացվեին, ինչպես մյուս ձևի սրահները: Այս վերջին ձևը կհամեմատվի ևրոպական լեզվի parvis բառին հետ, որու համար նոր հայերենի մեջ հատուկ բառ չունենք:

Խորան բառը քիչ բացառությամբ վրանի նշանակությամբ գործածված է, թեև, ըստ լեզվաբանից, միևնույն նշանակությունն ունի: Առհասարակ արքունիքներու մոտ կամ ապարանքներու շուրջ խորանները փոքր շինություններ էին, բավական գեղեցիկ վայելչությամբ կանգնված, և հատուկ էին մասնավորապես ընտանեկան կամ ընկերական զվարճություններու: Ընդհանրապես փայտաշեն պետք էր որ շինված լինեին, թեև որոշ չէ. կան նաև քարաշեն խորաններու մասին ալ ծանոթություններ: Գագիկ Արծրունին Աղթամար կղզին շրջապատող ծովային պարիսպներու բուրգերուն վրա փայտաշեն խորաններ շինել տվեր է իբրև զբոսատեղի: Աչխարհիկ մտքով գործածված այս խորան բառը կարելի է համեմատել pavilion բառին հետ, որուն համապատասխան բառ մեր կենդանի բարբառին մեջ գրեթե չունենք:

Հովանոց բառը, մեր կարծիքով, հոմանիշ պետք է լինի խորանին՝ գործածության նպատակի տեսակետով, միայն ձևով տարբեր էր: Ամենայն հավանականությամբ, խորանները բոլորակ կամ բազմանկյունի էին, իսկ հովանոցները՝ քառակուսի: Գագիկ Արծրունիի շինել տված խորանները, ըստ Թովմայի, անկյունավոր էին, իսկ Խորենացու՝ Տրդատին վերագրած հովանոցը Գառնիի մեջ՝ քառակուսի է: Հովանոցները՝ ըստ երևույթին միշտ քարաշեն եղած են: Փայտաշենի մասին վկայություն չեմ տեսած ոչ մի տեղ, բայց կարող էր նաև փայտաշեն ալ շինվել, նայելով իր հատկության: Ինձ կթվի, թե հովանոցներ եթե ընդհանրապես ապարանքի մոտը կամ հեռուն անջատ կշինվեին, այնուամենայնիվ, երբեմն անորոշ ակնարկներ կան, որ կարծել կուտան, թե ապարանքի շենքերու որևէ մասերու վրա ալ հովանոցներ շինված են:

Ուշադրության արժանի են փող և փողոց բառերը, որոնց հին առումով գործածությունը միանգամայն դադարած է ներկա բարբառին մեջ: Փողը, որ corridor բառին հոմանիշ է, այժմ փոխարինված է նրբանցք բառով: Իսկ ի հնումն գործածված փողոց բառին փոխարինող որևէ բառ ինձ հայտնի չէ ներկա հայերենի մեջ:

Փողոց անունը տրվեր է երբեմն այն երկար անցքերուն, որոնք կգտնվեին ապարանքի զանազան հարկաբաժիններուն մեջտեղ, և այս անցքերը թե՛ երկու կողմեն դռներով փակված էին և թե՛ վրաները կամարակապ ծածկված: Կային նաև կամարակապ այնուազարդ փողոցներ, որոնք դարձյալ ապարանքի մը երկու տարբեր հարկաբաժիններու մեջտեղ կգտնվեին, սակայն երկու կողմեն՝ անցքի ամբողջ երկայնության վրա կային աղեղնակապ այուներու շարքեր, որոնց վրա ձգված կամարը կմիացներ երկու հանդիպակաց անջատ հարկաբաժինները:

Ուրիշ հարամասունքներու համար առայժմ կթողնում գրելը, որովհետև, ըստինքյան իրենց անունները որոշ չափով կբացատրեն նպատակը և գործածության եղանակը:

*
* *

Հայ պատմագրաց մեջ հիշատակված հոյակապ ապարանքներեն ի՞նչ է մնացեր մեզի այսօր – գրեթե ոչինչ, մի քանի ավերակներ: Բարեբախտաբար այդ ավերակներեն մի քանիսը մասամբ պահեր էին իրենց մեջ հին շքեղության և հարամասունքներու դասավորության եղանակներ, որոնք գեթ առավել կամ նվազ չափով կարդարացնեն պատմագրաց տեղեկությունները և կլուսաբանեն շինարարական կարգ մը անստույգ բառերու իմաստները:

Մեզ հասած հնագույն ապարանքներեն մեկն է Արուճի մեջ Հովհ. Դրասխանակերտցու հիշատակած Գրիգոր Մամիկոնյանի ապարանքը, որուն պատմագիրը արքունիք անունն ալ կուտա՝ անշուշտ հիմնվելով կամ կանգնողին արքայավայել դիրքին ու աստիճանին վրա և կամ իր օրով տակավին կանգուն էր շենքը իր բոլոր արքայավայել շքեղությունով:

Դեռ այսօր ականատեսին պատկառանք կազդեն Գրիգոր Մամիկոնյանի ապարանքի մնացորդներն իրենց հսկայական տարածությունով և մեծազանգված սրբատաշ քարերե շինված հաստահեղույս պատերով: Արևելյան և հարավային պատերը կերևին դեռ մեկ և կեսեն մինչև երկու մետր բարձրությամբ, մեջտեղը փլատակներու բեկորներով բլուրացած է՝ ո՞վ գիտե քանի դարերե ի վեր: Անպայման այդ բլուրի տակ պահված կլինին շատ լուսաբանություններ հօգուտ հայ պատմության և գեղարվեստի, սակայն, դժբախտաբար, զուրկ է մնացած մինչև այսօր գիտնականի բահ ու բրչի փրկարար ազդեցությենեն: Պատերու շինության համար գործածված քարերու մեծությունը և որմնադրական արհեստի ծայրահեղորեն խնամոտ արտադրությունը գրավական է ինքնին շենքի ամբողջության, ճարտարապետական և գեղարվեստական մի մեծ կոթող լինելուն 7-րդ դարուն մեջ:

Նկ. 261. Խոյակ՝ զտնված Գրիգոր Մամիկոնյանի պալատի ավերակներում – Արուճ գյուղում (7-րդ դար)

Խաչիկ վրդ. Դատյանի ջանքերով պեղված Զվարթնոց եկեղեցվո կից, Ներսես Գ. Շինող կաթողիկոսի կաթողիկոսական տունը ինքնին մի ապարանք եղած է ժամանակին՝ իր մեծությունով, ընդարձակությունով և բազմաթիվ հարամասունքներով:

Ինչպես հայ ճարտարապետության փառաց պսակը եղող Զվարթնոց եկեղեցվո, այնպես ալ կաթողիկոսական տան շինության համար ոչ մի ջանք և նյութական զոհողություն չէ խնայված: Այնտեղ արվեստագործությունը այնքան նուրբ և շինարարական արհեստի պայմաններուն այնքան ճշտորեն ենթարկված է թե՛ ճաշակով և թե՛ դասավորությամբ, որ իսկապես կարելի է արքայական կամ արքայավայել ապարանք համարել:

Իզուր չէ, որ Մատթեոս Ուռհայեցին հպարտությամբ կգրե Պետրոս կաթողիկոսի տան համար, թե՝ «չէր նուաստ աթոռ հայրապետութեան, քան զթագաւորութեանն հայոց»: Եթե Պետրոս կաթողիկոսի աթոռը իր շուքով թագավորականի հավասար էր, Ներսեսի համար շատ պատճառներ կան համոզվելու, որ ավելի գերագույն ճոխության մեջ պետք էր որ ապրած լիներ:

Զվարթնոց եկեղեցվո հարավային և արևմտյան կողմը դրված է ապարանքը. ամբողջությունը բաժանված է երկու գլխավոր մասերու՝ մի նեղ ու երկար անցքով կամ, ըստ նախնյաց՝ մի փողոցով: Շենքը երկարած է արևելքեն արևմուտք և հետո ծռված է դեպի հյուսիս: Արևելյան մասի վրա եղած բաժանումները հատուկ են կաթողիկոսական տան զանազան ներքին պիտույքներու, ինչպես՝ պաշտոնեից և միաբանաց հատուկ սենյակներ, հյուրատուն, շտեմարաններ, մառաններ, հնձաններ, ի միջի այլոց, մի հնագույն եկեղեցվո խորանի մասը, ամենայն հավանականությամբ, Ներսեսի օրով իբրև մատուռ գործածված:

Նկ. 262. Ներսես Տայեցու պալատի և միաբանից բնակարանների ավերակները Զվարթնոցում

Արևմտյան մասը, անկասկած, կպատկաներ կաթողիկոսին իբրև պաշտոնական հարկաբաժին: Այս մասին մեջ է կաթողիկոսական տաճարը, որուն երկու կողմին վրա բաժանված են ուրիշ մեծ ու փոքր սրահներ և սենյակներ:

Արևելյան և արևմտյան այս երկու անջատ հարկաբաժինները (appartement) միացած էին հյուսիսեն հարավ ձգված կամարով՝ անջատ երկու հարկաբաժինները անջատող փողոցին վրա: Կամարը մեկ կողմեն հանդչած էր արևելյան մասի սենյակներու պատին վրա, մյուս կողմեն արևմտյան մասի մի բացօթյա սրահի ճակատը զարդարող աղեղնակապ սյուներու վրա:

Անկասկած, այս կամարակապ անցքն է, որուն ի հնումն Կամարակապ փողոց անունը տվեր են: Արևելյան բաժնի հյուսիսային ճակատին վրա, եկեղեցվո հետ դեմ առ դեմ, եղեր է նույնպես աղեղնակապ սյունաշարի վրա կամարակապ մի ծածկույթ, որուն մեկ ծայրը միացած է Կամարակապ փողոցի հյուսիսային ծայրին: Անպայման՝ հին մատենագրաց ճեմելիք անվանածն է այս նեղ ու երկար սյունազարդ մասը, որուն հարևանցի մի նկարագիրը կուտա Թովմա Արծրունին իր ժամանակի պալատներու նկարագրության մեջ:



Նկ. 263. Ներսես Տայեցու պալատի և միաբանից բնակարանների հատակագիծը

Կամարակապ փողոցի արևմտյան կողմի կամարակիր սյունաշարը ընդարձակ մի սրահի ճակատը կազարդարե, որու մեջ գտնված սյունախարիսխներու համաչափ դասավորությենեն կերևի, որ կամարակապ ծածկված էր սրահի վրան: Նշաններ կան ապացուցանող, որ այս բաժանումը ունեցեր է մի սյունաշար նաև հարավային ճակատի վրա: Այս բաժանումը ճշտիվ կներկայացնե նախնի մատենագրաց սրահ անվանած ստորաբաժանման մի պատկերը, որուն համապատասխան վերև նշանակեցի parvis բառը: Այս սրահի արևմտյան կողմից կան երկու փոքր սենյակներ և մի լվացարան:

Սրահի հյուսիսային կողմին կից է մի մեծ բաժանում, արևելքեն արևմուտք երկարած: Հյուսիսային և հարավային պատերուն վրա դեմ դիմաց կան վեց որմնասյուներ, որոնք կամարներով և աղեղներով միացած էին իրարու, վրան ալ ծածկված էր կամարով՝ ամբողջ երկայնության վրա: Հյուսիսեն և հարավեն պատերու վրա լուսամուտներ չէր կարող ունենալ, որովհետև այդ երկու կողին վրա կրկին բաժանումներ կամ սենյակներ կան: Եթե արևելյան կամ արևմտյան կողմերեն լուսամուտներ կային, անոնց ալ ապացույցները կորած են, բայց ամենեն ավելի հավանականը որևէ լուսիջույց ունենալն էր ըստ ընդհանուր սովորության, ինչպես ցույց կուտան պատմական նկարագրությունները և, ինչպես պիտի տեսնենք, ուրիշ իրական ապացույցները:

Կաթողիկոսական ապարանքի բոլոր բաժանումներուն մեջ ամենեն մեծ և ամենեն շքեղն էր այս բաժանումը, և ավելորդ է ըսել, որ այս էր Ներսեսի տաճարը: Թե ինչ շուք ու փառավորություն ուներ այս տաճարը դրսեն ու ներսեն, դժբախտաբար հայտնի չէ, շքեղության ամեն մի հետք կորած է, բացի վեց հոյակապ որմնասյուներեն. սրանք վերակազմվելով, տաճարը կտանա մի ճարտարապետական պարզ վեհություն: Զվարթնոցի նման անօրինակ ճոխությամբ զարդարված մի եկեղեցվո շինողը, անշուշտ, իր տաճարն ալ գեղազարդած կլիներ իր անվան և պատվույն արժանի ճոխությամբ, սակայն պեղումները մեծ ապացույցներ չեն տված այս մասին: Հայտնի է, որ եկեղեցիեն շատ կանուխ ավերված էր նաև կաթողիկոսական ապարանքը, և քարերը տարված էին:

Տաճարի երկայնության հյուսիսային կողմը շարունակված են մեծ ու փոքր սենյակներ, անտարակույս միմիայն կաթողիկոսական պաշտոնական հարկաբաժնին հատուկ գործածության համար: Այս սենյակներեն մեկուն մեջ թեև մի թոնիր կա թաղված, բայց հավանական չէ Ներսեսի ժամանակի լինելը, գուցե եկեղեցին անչքանալե հետո ժամանակավոր թափառաշրջիկներ ապրեր են այնտեղ, ինչպես ուրիշ շատ մը հայկական հին շենքերու մեջ:

Նկ. 264. Բագարան գյուղը միջնաբերդի և ս. Գևորգ եկեղեցու հետ միասին

Մի ուրիշ ապարանքի տեղ է Բագարանի ամրոցը: Թեև այս ամրոցի մասին պատմական քիչ տեղեկություններ ունինք, այնուամենայնիվ վերին աստիճանի հետաքրքրական և ուսումնասիրության արժանի մնացորդներ ունի իր մեջ և շուրջը, սկսյալ հեթանոսական դարերեն մինչև քրիստոնեական 12-13-րդ դարերը: Բուտ Առավեղյան իշխանի մը Բագարանի մեջ կանգնած հոյակապ կաթողիկեն ապացույց է, որ 7-րդ դարուն շեն և բազմամարդ էր քաղաքը: Անտարակույս, ավելի շենցավ և կարևորություն ստացավ Բագրատունիներու սեփականություն և իշխանության աթոռ դառնալե հետո: Անկասկած, այժմյան ամրոցի մնացորդները 8-9-րդ դարերուն մեջ Բագրատունիներու նորոգ շինած բերդի և ապարանքի մնացորդներ են:

Ախուրյանի ափին երեք բարձր քարաժայռ բլուրներ զուգահեռաբար շարված են գրեթե հավասար մակերևույթ ունեցող գետնի վրա: Երեք բլուրները հաջորդաբար փոքրացած են թե՛ բարձրությամբ և թե՛ երկարությամբ: Ամենաբարձրին վրա, հյուսիսային ծայրին կգտնվի հնագույն մի եկեղեցի (այժմ նորոգված), ավանդաբար ս. Գևորգ անունով: Ոմանք այս ս. Գևորգ անունը Գևորգ Մարզպետունիի անվան հետ կկապեն, որպես թե ինքը թաղված է այդ եկեղեցվո մոտ, կամ նույնիսկ իր շինածն է եկեղեցին: Սակայն, ինչ որ հավանականն է, իբրև Բագրատունի ամրոց և ապարանք, եկեղեցին ալ Բագրատունի իշխաններու ձեռակերտն է իբրև պալատական եկեղեցի՝ ամրոցի պարիսպին մեջ: Ամբողջ բլուրը շրջապատված է բրգաշար ամուր պարիսպով, հարավային ծայրին վրա է ամրոցի մուտքը՝ երկու հաստահեղույս բուրգերու մեջտեղ, գրեթե դռնեն անմիջապես ներս կսկսին հին ապարանքի հիմերը մինչև եկեղեցին, որ բլուրի հանդիպակաց ծայրին վրա է. մեկ խոսքով՝ ամբողջ պարսպամիջոցը բռնած է եղեր ապարանքը, դժբախտաբար այնքան քայքայված և գետնին հավասարված, որ հազիվ կարելի է մի ընդհանուր հատակագիծ պատրաստել խնամքով պեղումներ կատարելով (նկ. 264):

Ամրոց-ապարանքը բարձրանալու ճանապարհը գրեթե նույնն է, ինչ որ էր ի հնումն: Մի հետաքնին հայացք բավական է տեսնելու համար, թե ինչ հսկայական աշխատություն թափված է այդ քարաժայռ բլուրի լանջերուն վրա՝ ոլորապտույտ լայնարձակ ճանապարհ մը շինելու համար՝ տեղ-տեղ ժայռերը ճեղքելով և տեղ-տեղ ալ դարեվանդներու վրա որձաքարե պատեր շինելով:

Մինչև բլուրը նույնպես պարսպապատ է եղած ի հնումն, և պարսպամիջին համեմատաբար ավելի պահվեր են շինության մասեր՝ հավանորեն ավելի

դժվարամատչելի լինելուն պատճառով, որովհետև շատ վաղ ժամանակ փչացեր է բարձրանալու ճանապարհը: Մնացորդ շենքերու մեջ այժմ ալ կերևի մի կամարակապ մաս, որուն վրա եղեր է մի հարկ ևս:

Երրորդ բլուրին վրա գրեթե ոչինչ չէ մնացեր, բացի կրախառն ավազափոշիե և կրազանգված քանի մը բեկորներե իբրև ապացույց վաղեմի շենքերու գոյության:

Այս երեք բլուրները, բացի իրենց առանձին գագաթի պարիսպներեն, հատակեն շրջապատված են եղեր առանձին թանձր պարիսպով, որով կանջատվեին ամրոցները անմիջապես ստորոտին վրա շինված քաղաքամասեն, որուն բնակությանց որոշ հետքեր մեծ մասամբ մնացած են այսօր, պինդ որձաքարով շինված:

Մինչև այստեղ նկարագրված ապարանքներու մնացորդները բոլորովին չարդարացուցին պատմագրաց տված հակիրճ, բայց բնորոշ նկարագրությունները: Մի՞թե գոյություն չունեին այն բարձրաբերձ ոսկեձեղուն և այլն և այլն ապարանքները: Քավ լիցի, անոնք գոյություն ունեին ավելի փառաշուք կերպով, քան արված նկարագրությունները: Քրիստոնեության սկզբեն մինչև 10-11-րդ դարերու մեջ հասնող ճարտարապետական և գեղարվեստական հոյակապ կոթողներ անհերքելի վկաներ են կերտող ժողովրդի հոգեկան մեծության, հանճարի, գեղարվեստասիրության և կյանքի վայելչության համար ունեցած նուրբ ճաշակին: Բայց ժամանակը, և ժամանակեն ավելի, ամեն մեծություն ու գեղեցկություն իր խանձարուրին մեջ խեղդելու ի բնե հակված քանդող ու ոչնչացնող բարբարոսներու ոտքին տակ ամեն ինչ փոշիացեր է:

Հույս կար, որ Անիի մեջ Բագրատունյաց արքունիքի պեղումները արդարացնեին մեր ակնկալությունները ժամանակակից պատմիչներեն մեկ քանիին տված տեղեկությանց համաձայն: Այդ հույսով և հետաքրքրությամբ մեծ խնամքով պեղման ձեռնարկեց պր. Ն. Մառ 1907 թվին, և երկու տարվան ամառնային շրջանին մեջ բացավ Բագրատունյաց ապարանքին մեծ մասը (նկ. նկ. 266, 267):



Նկ. 265. Անիի իշխանական ապարանքի ներքին և վերին հարկերի հատակագիծը

Շատ զարմանալի կլիներ, որ ավելի քան երեք հարյուր տարի Շիրակի թագավորությունը, քաղաքակրթության ճշմարիտ պատուհաս բարբարոս խուժաններու բռնակալ լուծի տակ հյուծվելե և գրեթե նույնքան ժամանակ ալ վայրենի թափառաշրջիկ ցեղերու պարբերական կայան լինելե հետո, գտնվեին այնտեղ Բագրատունի փառապանծ թագավորության և անոր հովանավորության ներքև բախտավոր ապրած ժողովրդի փառաշուք կենցաղի անաղարտ մնացորդներ:

Մեկ կողմանե եթե հիացում կազդեր միայն ապարանքին չորս հազար քառակուսի մետր տեղ բռնող ահագին տարածությունը, մյուս կողմանե մարդս ակամա կենթարկվեր տխուր և ճնշող հիասթափության՝ ամբողջ երկու տարվան պեղման ընթացքին մեջ:

Ապարանքին ճարտարապետական և գեղարվեստական խոր հմտությամբ կառուցված լինելուն անժխտելի ապացույցներ բազմաթիվ էին այդ հսկա ավերակին մեջ, սակայն այլանդակված ու



հոչոտված բեկորներ միայն, որոնց արժանավոր գնահատությունը լուրջ մասնագիտական հետազոտության կկարոտեր: Գոնե հույս կար, որ պեղման

Նկ. 266. Անիի միջնաբերդի պալատի մնացորդների հատակագիծը

շարունակությամբ կգտնվեր Բագրատունի թագավորության ժամանակի ճաշակով դասավորված պալատական դահլիճներու, սրահներու և սենյակներու անաղարտ հատակագիծ: Դժբախտաբար այդ հույսն ալ իզուր անցավ: Ամեն ինչ աղճատված, փոփոխված կոչտ ու կոպիտ կարկատաններ՝ գեղեցիկ սրբատաշ պատերու կպցված, մեծ դահլիճներ ու սրահներ խղճուկ սենյակներու վերածված և մինչև իսկ մեջը թոնիրներ թաղված. տեղի-անտեղի դռներ փակված և անոնց տեղ նորեր բացված, զիրար հակասող պատերը խաչաձևված ամեն կողմի վրա՝ առանց որևէ ներդաշնակության, ահա Բագրատունյաց Անիի ապարանքի պեղմամբ կազմված պատկերը: Ամեն շուք ու վայելչություն անհետացած և տեղը մնացած էր արքայական փառքի մի վշտալի դամբարան:

Եթե այս բոլոր ավերումներու և աղճատումներու մեջ կար մի մխիթարական երևույթ, այն էր, որ Բագրատունիներու օրով կատարված շինության արվեստագործությունը և շինանյութերու ընտրությունը հստակ կերպով կորոշվեին հետագա անկման շրջանի կոչտ ու կոպիտ շինվածքներեն: Այս հանգամանքը հնարավորություն պիտի տար ապարանքի քանի մը մասերուն վրա գեթ ճշտել Բագրատունիներու օրով շինված ստորաբաժանումներու պարզ չափն ու ձևը: Այս չափ ու ձևերն ալ որոշ չափով լուսաբանություններ պիտի տային շինարարության նկատմամբ պատմագրական էջերու մեջ լույս տեսած անորոշ հատվածներու:

Նկ. 267. Անիի միջնաբերդի ընդհանուր տեսարանը

Ամրոց կամ ապարանք շինելու համար, ավանդական հին սովորության համեմատ, Անիի մեջ Բագրատունիներն ալ իրենց արքունիքի շինության համար բլուր մը պարապեր են՝ մոտավորապես 40,000 քառակուսի մետր գետին շրջապատելով: Բլուրին ամենեն բարձր կետին վրա շիներ են բուն

ապարանքը՝ առանձին պարսպով շրջապատված և պարիսպն ալ փոքր քառակուսի բուրգերով տեղ-տեղ ամրացված:

Արքունիքի ընդարձակ շրջապարիսպին մեջ, բացի բուն ապարանքեն, շինված են շատ մը փոքր ու չափավոր մեծությամբ անջատ կամ հարակից շինություններ՝ արքունի պիտույից հատուկ. ասոնցմե զատ, շինված են յոթ հատ մեծ ու փոքր եկեղեցիներ, որոնց շինության ժամանակը 11-րդ դարեն այս կողմ չենք կարող բերել: Այս եկեղեցիներեն երկուքը կից են թե՛ միմյանց և թե՛ բուն ապարանքին, որոնց մեկը փոքր երկհարկանի դամբարան է՝ քովի մեծագույնեն ավելի ուշ ժամանակ կանգնված, իսկ մեծագույնը, անտարակույս, կանգնված է 7-րդ դարուն, Կամսարականներու Անիի սեփականատիրության ժամանակ:

Անշուշտ, ապարանքի պարիսպեն դուրս արքունիքի շրջապարիսպին մեջ զանազան կետերու վրա շինված շինությունները այն տուները կամ հարկաբաժիններն էին, որոնց հին պատմագիրները տուն գինուց, տուն գանձուց, տուն ասպազինաց, տուն պատրուճակաց, համբարանոց և այլն և այլն անուններ տված են որպես անհրաժեշտ մասունք արքունի ապարանքի: Սակայն այս ամենեն հազիվ նկատելի հիմեր և պատերու կտորներ կային միայն մնացած, որոնցմե ոչինչ չէ կարելի հետևցնել և կամ մի առանձին անուն տալ:

Ինչպես քաղաքին, նույնպես ալ արքունիքին մատչելի կողմը հյուսիսն էր. այդ պատճառավ ալ ավելի հաստատուն և ամուր պարիսպներով ու շինություններով փակված էր հյուսիսային ճակատը: Իսկ մյուս կողմերը ապահով էին Ախուրյանի և Ծաղկոցաձորի խորուձոր, ժայռակտուր դարեվանդներով և անդնդային փոսերով: Երկու մուտք ունեցեր է հյուսիսային ճակատի վրա, մեկը Ծաղկոցաձորին կից, իսկ մյուսը՝ Ախուրյանի ձորին մոտիկ: Ծաղկոցաձորին կից եղած դուռն է գլխավոր մուտքը, որուն ներսը մի գավթանման փոքրիկ բաժանումն անցնելով կմտներ արքունիք: Դռան ներսի կողմեն սկսած մինչև ապարանքի գլխավոր դուռը հյուսիսային կողմի վրա շարված էին մեծ ու փոքր շինություններ, իսկ հարավային կողմին վրա, ապարանքին մոտ, կա մի քարուկիր կամարակապ շինության մնացորդ, որուն ինչու համար ծառայելը վերապահությամբ միայն պիտի ըսեմ: Հավանական կհամարեմ, որ ուշ ժամանակ շինված այս շենքը Անիի վերջին տերերու պաշտոնական ընդունելության սրահն էր:

Ապարանքը մի նեղ ու երկար անցքով բաժանված է հյուսիսային և հարավային երկու մասերու: Հյուսիսային մասին արևելյան և արևմտյան անկյուններու վրա կան երկու մեծ դահլիճներ, արևելյան դահլիճին կից մի բաղնիք, մնացած մասերը բաղկացած են մեծ ու փոքր սենյակներե, ոմանց դռները բացված են կից սենյակներու և ոմանցը՝ ապարանքը երկուքի բաժնող երկար անցքի վրա: Իսկ հարավային մասի վրա ուշադրության արժանի է մի ընդարձակ սրահ, որուն հատակին վրա փորված ու շինված էր ամրոցին ջրամբարը:

Անկասկած, Անիի արքունիքն ալ պիտի ունենար մեկ կամ ավելի պաշտոնական հանդեսներու և խրախճանությանց հատուկ տաճարներ: Բայց բովանդակ արքունիքի ավերակներու մեջ տաճար լինելու հավանականությունը կներկայացնե հյուսիս-արևմտյան անկյունի դահլիճը՝ իր մյուս մասերեն ավելի ճոխ և հաստատուն շինվածքով: Այս դահլիճն է, որ առանց չորս պատերու փոփոխության՝ Բագրատունիներու ժամանակեն մինչև մեր օրերը հասեր է. մյուս մասերուն մեջ չկա բաժանում, որ հետնագույն փոփոխություններու ենթարկված չլինի: Այս դահլիճի երկարությունն է 21 մետր, լայնությունը՝ 10 մետր: Այս չափը թեև Բագրատունի թագավորներու վայելած համբավին համապատասխան մեծություն չունի, սակայն տաճար լինելուն կասկած չլինելեն զատ, իր կոչման արժանի վայելչությունեն ալ զուրկ չէ: Թեև ապարանքին կից շինված է, սակայն անոր հետ բնավ հաղորդակցություն չունի. այս հատկությունն ալ ոչ նվազ ապացույց է տաճար լինելուն: Պատմական տեղեկություններու մեջ հաճախ որոշ է, որ տաճարները, ապարանքի մուտքեն անկախ, նույնիսկ ընտանեկան կայաններե հեռու կշինվեին: Այսպես ալ այս տաճարները, թեև ապարանքին կից, այնուամենայնիվ իրենց բոլորովին անկախ մուտքը ունեցեր են հյուսիսային կողմեն: Դրսի հետ իբրև հաղորդակցության միջոց, հյուսիսային պատի վրա միայն կան չորս մեծ բացվածքներ, որոնց արտաքո կարգի լայնությունները կասկածելի կդարձնեն անոնց դուռ կամ պատուհան լինելնին: Դուռ լինել չէին կարող, որովհետև մեկ պատի վրա չորս դուռ շինել միանգամայն աննպատակ էր. բացի այս, սենյակներու համար 2,5 մետր մեծությամբ դուռ բնավ չէ տեսնված որևէ հին հիշատակարաններու մեջ: Պատուհաններ չլինելուն ապացույցներն ալ շատ պարզ են: Ինչպես դռներու համար, նույնպես պատուհաններու՝ 2,5 մետր լայնություն անկարելի էր. նաև, եթե պատուհաններ լինեին, պետք էր որ բացվածքները պատին որոշ չափով բարձրանալեն հետո սկսեին, մինչդեռ անոնք ուղղակի հատակեն սկսած են: Ուրեմն, ի՞նչ մտքով կարող էին շինված լինել այս չորս մեծ բացվածքները:



Պատմագրական տվյալներու հետազոտության մեջ տեսանք, որ ի հնումն գտնվեր են տաճարներ, որոնք ունեցեր են անմիջապես կից մի ուրիշը կամ մի նախասրահ: Այստեղ մի երկրորդ տաճար լինելուն ամենևին հավանականություն չկա, սակայն ունեցեր է մի նախասրահ, որուն հետ ուղղակի հաղորդակցության միջոց եղեր են այդ չորս մեծ բացվածքները:

Նախասրահի գոյության անժխտելի ապացույց էր, հյուսիսային պատին կից, չորս մեծ բացվածքներու առջև գտնված քարուկիր մի շինվածամասի մեծ զանգված մը, որ վերջերս թեև փլավ, սակայն տեղը և տաճարի պատին կպած լինելուն նշանները տակավին պահված են: Որովհետև տաճարի տեսքը բնական դիրքով բարձր էր և առջևը խոր, ուստի մի քանի մետր ցածեն դրված էր ենթադրյալ նախասրահի հիմը, և ներքևը կամարակապ բաժանումներ թողնելով բարձրացված ու երկրորդ հարկով հավասարեցված էր տաճարի բարձրության: Պեղումներու ժամանակ թեև վերևի հարկը փլած էր, սակայն առաջին հարկին կտուրը կամ առաստաղի տանիքը հավասար էր գրեթե տաճարի հատակին: Տաճարի ամբողջ երկայնության վրա շինված այս երկրորդ շինության երկու կողմերը, փլած էին, միայն մի հին մասը մնացեր էր, որուն լայնությունը տաճարի լայնության կեսեն քիչ ավելի էր. այս իսկ պատճառով է, որ կից մի երկրորդ տաճար լինելե ավելի անոր նախասրահ լինելը անվիճելի է: Միայն պետք է գիտնալ, որ նախքան այս նախասրահը շինվելը այնտեղ եղեր է մի ուրիշ նախասրահ, որուն հաջորդեր է այս նորը՝ Բագրատունի վերջին թագավորներեն մեկուն ձեռքով: Նյութես շատ չշեղվելու համար այս մասին մանրամասն գրելը կթողում առայժմ հատկապես Բագրատունյաց ապարանքի մանրամասն ուսումնասիրության աշխատությանս վերապահելով:

Մի ուրիշ բնորոշ հանգամանք ևս կա չորս բացվածքներու և նախասրահի գոյությունը ապացուցանող: Ապարանքի անտերության ժամանակ, երբ գռեհիկ ժողովուրդներ բնակեր են Անիի մեջ, բնակություն հաստատեր են նաև արքունի ապարանքին մեջ: Ապարանքին մեջ բնակողներեն մեկը իրեն բնակարան ընտրել է հատկապես տաճարը և, բաժանելով սենյակներու, ապրեր է այնտեղ, սենյակներեն մեկու մեջ ալ թոնիր դրեր է: Հատակագծեն պարզ կտեսնվի, որ տաճարի վերջին բնակիչներու տան մուտքի դուռն ալ այդ միևնույն բացվածքներեն մեկն ու մեկն է և հավանորեն, արևելյան անկյունեն հաշվելով, երկրորդ բացվածքը: Տաճարի հյուսիս-արևմտյան անկյունին մոտ պեղումներու ժամանակ հանկարծակի փլավ շեղակի շինված մի պատ, որ աստիճանաբար կբարձրանար դեպի նախասրահը. այս պատին վրա շինված էին սանդուխի աստիճանաքարերը, որոնք վաղուց տարված էին, սակայն տաճարի վերջին բնակիչները ամենայն հավանականությամբ օգտվեր են այս նախապես գոյություն ունեցող սանդուխեն:

Այժմ կմնա երկու խոսքով պարզել տաճարի լուսավորության խնդիրը, որուն հետքերը չգտնվելով՝ առեղծվածային բնույթ է ստացեր:

Տաճարի ներսը շինված չորս որմնասյուներու ըստ ամենայնի պատշաճ դասավորությենեն հայտնի է, որ տաճարը գմբեթավորված էր չորս աղեղներու վրա: Այս դրությամբ ամենեն հավանականն էր, ըստ վաղեմի սովորության, տաճարին գմբեթեն լուսավորված լինելը: Բայց ի՞նչ ձևով գմբեթ և ի՞նչ ձևով լուսամուտներ ուներ լույսը դեպի վար թափանցող, այդ մասին ոչինչ չէ կարելի վճռել: Իսկ պատերուն վրա եթե պատուհաններ կային, անոնք ալ պետք էր շատ բարձրեն դրված լինեին, բնականաբար, փոքր ծավալով, որովհետև որմնաղեղներու կիսաբոլորակներուն դարձվածքի տված սահմանին մեջ միայն հնարավոր էր պատուհան շինել, անոնց մեջ ալ, նախ՝ շատ ընդարձակ տեղ չէր կարող լինել, երկրորդ՝ քանի որ հյուսիսային կողմը նախասրահով փակված էր և պիտի բացվեին մյուս կողմերուն վրա, որոնք ընտանեկան հարկերուն վրա կնայեին, անպատշաճ պիտի նկատվեր, ըստ ավանդական սովորության, ցածր պատուհաններ շինելը: Բարձրեն պատուհան ունենալը հավանական համարելուս պատճառներեն մեկն ալ այն է, որ տաճարը առանձնապես շինված լինելով հարակից բաժանումներու կտուրներուն հավասար բարձրությամբ բնական մի ժայռի վրա, և շուրջը գտնված ստորաբաժանումները միահարկ էին, հետևաբար պատերը դրսեն ազատ էին պատուհաններ բանալու համար: Հարակից բաժանումներուն ալ միահարկ լինելուն անվրեպ ապացույցներ չեն պակսեր: Լուսավոր անցքի կամ բացօթյա տեղի կից սենյակ գրեթե քիչ կա ամբողջ ապարանքի բաժանումներուն մեջ, եղածներն ալ ունենալու հավանականություն չեն ցույց տար, որովհետև երկու մետրեն ավելի բարձրությամբ պատեր կան, որոնց վրա պատուհաններու հետքեր չկան. իսկ ապարանքի շրջագծեն ներսը խտացած սենյակներն ալ եթե երկու հարկանի լինեին, ներքևի հարկերը բոլորովին մութի մեջ կմնային: Կմնար ենթադրել, որ թերևս ապարանքը երկուքի բաժնող նեղ ու երկար անցքի վրա ընկած սենյակները նույն անցքի վրա պատուհաններ ունեցային: Սակայն այստեղ ալ հնացած պատերուն

վրա լուսամուտի հետքեր չկենալեն զատ, քանի որ անցքի վրան ալ ծածկված էր և երկու կողմեն դռներով փակված, հետևաբար այդ անցքին վրա բացված պատուհաններեն չէր կարող բավարար չափով լույս թափանցել սենյակներու մեջ, երբ անցքը ինքը չուներ առատ լույս: Ուստի պարզ է, որ բոլոր բաժանումները միահարկ էին և վերեն կստանային լույս: Պեղման ժամանակ բացված սրահներեն մեկուն մեջեն գտնվեցան ստալակտիտի կտորներ, որոնք 13-14-րդ դարերու ոճով գմբեթներու բեկորներ էին և ապացույց, որ նույն սենյակը վերևեն՝ այդ գմբեթի վրա բացված լուսամուտեն կստանար լույսը: Հյուսիսային ճակատի արևելյան կողմի սենյակները բացառաբար երկհարկանի են տեղի բնական դարևանդ դիրքի պատճառով, սակայն այստեղ ալ լուսամուտի նշաններ չկան:

Հյուսիսային ճակատի արևելյան անկյունի վրա գտնվող մեծ դահլիճներն ալ կից երկու սենյակներով նույնպես մի տաճար է և, մյուս անկյունի տաճարին նման, անկախ՝ ապարանքի ընդհանուր շենքեն: Սակայն այս հետաքրքրական ձևով տաճարի մասին ալ մանրամասնորեն կթողում հարմար ժամանակին, ինչպես նաև ընդհանուր ապարանքին շատ մը մասերուն վրա, բացառությամբ երկու բաժանումներու:

Հատակագծի բաժանումներեն մեկը, ինչպես վերև ակնարկեցի, մի ընդարձակ դահլիճ է, որուն հատակին վրա փորված ու աղյուսով կրաշաղախ շինված է արքունիքի ջրամբարը, պաշարման ժամանակ կամ որևէ դիպվածով վազուն ջրի կտրվելու պարագային իբրև ջրի պահեստ: Արքունիքի ջուրը առանձնապես 10-12 վերստ հեռավորության վրա գտնվող Սոգյութլու գյուղի մոտեն բերված է կավե խողովակներով: Ջրի խողովակները երևցան վերջին տարիներու պեղումներով: Բագրատունիներու ժամանակ խողովակներով մինչև ապարանք բարձրացող ջրի մեկ մասը միայն ջրամբարին հատակացված էր, իսկ մյուս մասը բաժանված է եղեր արքունիքի զանազան կողմերուն վրա կավե և երկաթե բարակ խողովակներով, որոնց նմուշները պահված են Անիի հնագարանի մեջ:

Պեղումներու ժամանակ այս ջրամբարը գտնված սրահին մեջ գտնվեցան ոսկեզօծ նկարազարդված առաստաղի տախտակներու բեկորներ, որով հայտնի եղավ, թե այս սրահին վրա փայտածածկ էր և որովհետև ամբողջ շուրջը ուրիշ սենյակներով շրջապատված էր, բնականաբար, լույսն ալ վերևեն կստանար: Այս սրահի փայտյա առաստաղը, ամենայն հավանականությամբ Բագրատունիներեն շատ հետո, 13-րդ դարուն, վերաշինվեր է նախկին չորս քարե սյուներու վրա՝ աղեղնակապ գմբեթավոր ծածկի փոխարեն: Ջրամբարը մաքրվելու ժամանակ, երբ սրահի առերևույթ հատակեն վար շարունակվեցավ պեղումը, բավական խորեն երևան եկան չորս հատ համաչափ հեռավորության վրա հիմնավորված հաստատուն քարե սյունախարիսխներ՝ 10-11-րդ դարերու ճաշակով քանդակված, որոնց ավելի խոշորագույն օրինակներն են այժմ Կաթուղիկեի արևմտյան դռան կից շինված նախագավթի մնացորդ սյունախարիսխները: Ուրեմն, այլևս ապացույցի կարոտ չէ, որ այս սրահը, ջրամբարով հանդերձ, Բագրատունիներու ժամանակ շինված էր: Անիի վերջին տիրապետողներու ժամանակ, հայտնի կերևի, որ ջրամբարն ալ անպետքացած էր և ջուրն ալ մինչև ամրոց չէր բարձրանար, որուն հետևանքը եղեր է ջրամբարին հողով լեցվելով և հին հատակին վրա ալ ավելի քան կես մետր հող լեցվելով նոր հատակ կազմվելը: Ճիշտ այդ ժամանակ է, որ խախտված կամ փլած գմբեթակապ ծածկույթի փոխարեն շինվեր է փայտյա նկարազարդ առաստաղը: Առաստաղի ոսկեզօծ նկարազարդումը ցույց կուտա, որ այդ ժամանակ Անին դեռ բոլորովին անտերացած չէր և ապարանքին մեջ նստողը պարսիկ կամ թաթար խաներեն մեկն էր: Եթե չեմ սխալվիր, այս սրահի վերաշինության ժամանակ նորոգություններ կատարվեր են հյուսիս-արևմտյան անկյունի դահլիճին կից մեծ սենյակի մը մեջ ալ, որովհետև զարդանկարներու միևնույն ոճը հիշեցնող նկարազարդերու բեկորներ գտնվեցան նաև նույն մասի պեղումներեն: Պետք է շեշտեմ այստեղ մասնավորապես, որ այս դահլիճին մեջ մի քանի տեսակ փոփոխություններ կան կատարված, որոնց յուրաքանչյուրին ոճը և ճաշակը պարզ արտահայտություններ կներկայացներ որոշ դարաշրջաններու և վայելողներու քմայք:

Ջրամբարը փակվելեն և նոր սրահ վերաշինվելեն հետո, ինչպես կերևի՝ հեռվեն ջուր բերելու դժվարությունները մասամբ մեղմացնելու համար, ջրամբարի հատակեն սկսած մի արհեստական հոր շիներ են անձրևի ջրերը հավաքելու համար. այս հորը մինչև այսօր կմնա ջրամբարին հատակեն վեր ցցված, հորն ալ մեծ մասամբ շինված է ջրամբարեն քանդված աղյուսներով:

Այս մեծ սրահը անպայման կանանց հատուկ էր թե՛ Բագրատունիներու և թե՛ հետագա տիրապետողներու ժամանակ՝ ապարանքին խորը շքեղորեն շինված, դրսեն միանգամայն անտեսանելի: Իսկ սրահին այժմյան տարածությունը ավելի փոքր է, քան նախկին Բագրատունիներու ժամանակինը:



Հյուսիսային և արևելյան կողմեն նոր պատեր շինված են հետնագույն նորոգությամբ փայտյա առաստաղ շինելու ժամանակ: Բայց երեք պատով և սրահին կողմեն առանց պատի բաժանումը իր նախնական ժամանակի շինության ձևը անփոփոխ պահած կթվի ինձ, բացի հյուսիսային պատեն, որ գուցե սրահի նույն կողմի պատին հետ միաժամանակ փոփոխության ենթարկված է: Անշուշտ, անկապատակ կամ պատահական չէր կարող լինել սենյակի այս ձևը՝ անդուռն և առանց պատի, սրահին կողմեն: Պետք էր որ որոշ պաշտոն կատարեր և իր կոչման համեմատ այդ ձևով շինվելը անհրաժեշտ լիներ:

Եթե իսկապես կանանց բաժնին կպատկաներ այս սրահը, և պետք էր որ այդպես ալ լիներ, այս պարագային ես բոլորովին հակված եմ հավատալու, որ այդ բաժանումը պետք է լիներ մեր բովանդակ մատենագրության մեջ հաճախ հիշված հարսանեկան առագաստի սենյակը:

Հարսանեկան ծիսակատարության մեջ մինչև այսօր պահված է նորահարսը վարագույրի մը ետևը պահելու սովորությունը: Բայց նորերուն մեջ մոռացված է առանձին սենյակ պատրաստելու սովորությունը, վարագույրը կկախեն տան մեկ անկյունը: Գուցե ի հնումն ալ աղքատ կամ միջակ դասի ընտանիքներու մեջ չի գտնվեր առանձին սենյակ, սակայն բարձրագույն դասի ապարանքներու մեջ անպայման առագաստի առանձին սենյակներ գտնվելը միանգամայն պարզ է: Եվ որովհետև առագաստի ճակատը առանձին վարագույրով ծածկելու օրենքը անվիճելի է, հետևաբար, երեք կողմեն պատ և մեկ կողմեն բաց այս սենյակն է, որ հարմարություն կուտա դարուց ի դարս հայոց մեջ սրբագործված այս օրենքին: Կարելի է որ առարկողներ գտնվին, թե գուցե չորս պատով սենյակներ էին առագաստի սենյակները և դուռը միայն կծածկվեր վարագույրով: Եթե այդպես լիներ, այն ժամանակ կարիք չպիտի զգացվեր քանիցս մեր եկեղեցական ժողովներու մեջ, եկեղեցվո սեղանի վարագույրները հարսանեկան առագաստ տներու համար փոխ տրվելուն դեմ խիստ օրենքներով արգելք դնելու: Ուրեմն, քանի որ եկեղեցվո սեղանի վարագույրները կտարվեին առագաստը ծածկելու համար, կնշանակե թե ծածկվելու տեղը դուռ մը չէր, այլ լայնարձակ մի ճակատ, ինչպես եկեղեցվո սեղանի ճակատը: Ըստ իս, պարզ է, որ Բագրատունյաց ապարանքի մեջ այս բաց ճակատով փոքր սրահը հարսանեկան առագաստի սենյակն էր և, ի հարկին, ճակատը կծածկվեր վարագույրով: Նույնպես անհավանական կլինի, եթե կարծվի, որ վարագույրը անմիջապես անկողինը ծածկող ամպհովանին էր կամ անկողնի շուրջը կկախվեր: Այս մասին որոշ տեղեկություն ունենք, որ բոլորովին տարբեր էր այդ վարագույրը կամ ամպհովանին, որուն պարզ սրահակ անունը մեզ կուտան պատմագիրները:

Կարդալով Փավստոսի մեջ Պապի պալատի մասնակի նկարագրությունը, կտեսնենք, որ դարերով անփոփոխ պահվեր է հայ թագավորական ապարանքներու ձևը: Փավստոսը կպատմե, թե դավաճան Դղակը պալատ տարած ժամանակ մի նեղ փողի մեջ մտցուցին և վերևեն բացված լուսիջույցները ծածկելով, մթության մեջ տարին մինչև արքունի տաճարին դուռը: Այս նկարագրությունը պարզ ցույց կուտա, որ Պապի ապարանքն ալ մի նեղ ու երկար անցքով – փողով երկուքի բաժնված էր, վերևեն լուսավորված, ինչպես Բագրատունիներու ապարանքն է Անիի մեջ: Անկասկած, Բագրատունիներու ապարանքին մեջ ալ շենքի ամբողջ երկայնությամբ ձգված նեղ ու երկար անցքը փող տանցն կանվանվեր, ինչպես Պապի պալատին մեջ: Թե ինչո՛ւ համար փող տանցն կանվանվեր, ատոր պատճառը պարզ է: Մեր պատմագրաց մեջ տուն բառը, տեղին համեմատ, այլազան նշանակությամբ գործածվված է, ինչպես՝ մի առանձին ընտանիքի բնակարան, երբեմն նաև ընտանիք նշանակությամբ. տուն էին նաև այն բոլոր բաժանումները, որոնք առանց մարդկային բնակության հատուկ էին զենքերու, դանձերու, հագուստեղեններու և այլն և այլն: Իսկ երբ մասնավորապես ապարանքի ընտանեկան բնակության մասին կվերաբերի, այն ատեն պետք է հասկանանք առանձին հարկաբաժիններ (appartement)՝ մեկե ավելի սենյակներով, թեև միացած ընդհանուրին, սակայն միշտ հնարավոր չեզոքացնել այդ մասը ապարանքի ամբողջութենեն: Զգիտենք, թե Պապի ապարանքը քանի՞ հարկաբաժին ուներ բացի պատրուճակաց տնեն, այնուամենայնիվ Բագրատունիներու ապարանքը հողի վրա ուներ երեք հարկաբաժին (appartement)՝ երկուքը հարավային և մեկը հյուսիսային կողմի վրա, չհաշվելով բարձրադիր երկու մեծ տաճարները, որոնց մասին արդեն խոսեր ենք: Թեև այստեղ դրված հատակագծի վրա հարավային կողմը մեկ հարկաբաժնի երևույթն ունի, սակայն ապագա պնդումները պիտի արդարացնեն կարծիքս: Առանց պեղման ալ, իմ հետազոտություններս պարզեր են այս հանգամանքը, բայց տեղը չէ այժմ մանրամասն բացատրության:

Ապարանքի պարսպեն դուրս, արքունիքի ընդհանուր շրջապարսպին միջոցը, որ այժմ բոլորովին լերկ անապատի կնմանի, ներելի չէ ենթադրել, որ ի

հնումն ալ այդպես դատարկ էր՝ առանց շինություններու: Արդեն Ծաղկոցաձորի կից արքունիքի գլխավոր դռնեն ներս, ձախ կողմի վրա, ապարանք բարձրանալու ճանապարհի ուղղությամբ, կան շինության մնացորդներու մի շարք, որն որ կհասնի մինչև ապարանքը՝ անոր մի թևը կազմելով: Մյուս մասերուն վրա, բացի ապարանքի հատուկ և անոր կից մեծ ու փոքր երկու եկեղեցիներե, մյուս հինգ եկեղեցիներու ալ գոյությունը ապացույց է նաև ուրիշ անջատ շինություններու գոյության: Բացի պիտույից հատուկ անբնակ տուներեն, պետք էր որ բնակարան ունենային այնտեղ արքունի ներքին պաշտոնյաներ, բերդապահ զորական և զինվորներ, նաև արքունիքի յոթ եկեղեցիներու համար եկեղեցական պաշտոնյաներ: Եթե ապարարանքի կից եկեղեցիները արքունի ընտանիքին համար հոգևոր մխիթարություն տալու բավական լինեին, արքունիքի մյուս բնակչությանց համար խիստ նեղ և թերևս անմատչելի էին անոնք: Բնականաբար, անհրաժեշտ պետքը գոյություն տվավ մյուս հինգ եկեղեցիներուն՝ ապարանքեն դուրս ապրող բնակչության համար:

Քանի որ ջուրը առատությամբ կբարձրանար մինչև ապարանքը, անկասկած, օգտվելով ջրի առատութենեն, Բագրատունիք այստեղ մշակեցին ծառաստաններ, ծաղկանոցներ և ամբողջ արքունիքի բլուրը զարդարեցին նաև իբրև զբոսավայր:

Արքունիքի շինությունը և բազմամարդությունը միայն Բագրատունյաց շրջանին հատուկ լինել կթվի, որովհետև, ինչպես նկատեցի վերև, Բագրատունիներեն հետո ջուրը կտրված լինելու մեծ հավանականություն կա: Հետևաբար, առանց ջրի ոչ պարտեզ և ոչ ծառաստան չէին կարող գոյություն ունենալ:

Արքունիքի բազմամարդությունը կամ շինությունը գուցե տևեց մի կարճ ժամանակ՝ Շետտատյանների օրով, և անոնք պատրաստ վայելեցին Բագրատունիներու ծախքերով ու ջանքերով կանգնված ապարանքը, սակայն որ հետզհետե նվազեցավ ամեն տեսակ փառք ու գեղեցկություն, փաստեր շատ կան: Եկեղեցիները կամ քանդվեր են կամ փոխարկվեր են ուրիշ բաներու, ինչպես ապարանքի կից եկեղեցիները, որոնք հատկապես ծեփվեր են քրիստոնեական խորհրդանշանները ծածկելու համար: Մեծ եկեղեցվո ներքին որմնայուններու գլուխը շինված չորս ավետարանիչներու խորհրդանշանները հատկապես տաշված են: Եթե մզկիթի չեն վերածված, գեթ իբրև սենյակ գործածված են անպայման:

Ոչ միայն արքունիքի մեջ, այլև Աշոտի բովանդակ պարիսպեն ներս եղած տարածության վրա քրիստոնեական շինության հատուկ մի քար դրված չէ: Նույն մասին վրա գտնված եկեղեցիներու մնացորդները պարզ ցույց կուտան, որ 11-րդ դարեն բնավ այս կողմ չեն անցներ: Տարակույս չկա, որ Շետտատյաններու և թե թաթարներու օրով, երբ արքունիքը այլևս հայաբնակ չէր, Աշոտի պարիսպեն ներս ալ, եթե ոչ ամբողջությամբ, գեթ մեծ մասամբ պարսիկի ու թաթարի բնակավայր եղած էր թե՛ իբրև ամենալավ մասը Անիի և թե՛ Աշոտի պարսպով կրկնակի ամրացած: Նույնիսկ տիրապետողներու քաղաքական և անհատական շահը կպահանջեր ցեղակիցներով անմիջապես շրջապատել ապարանքը:

Անիի ներկա պատկերը այնքան տխուր և բնական ու գեղարվեստական հրապույրե այնքան զուրկ է, որ մեղադրելի չեն անոր անցյալի մասին ալ փոքր ինչ աննպաստ կարծիք ունեցողները: Բայց միևնույն ատեն երբեք ներելի չէ այն դասին, որ երկար տարիներու հետազոտութենե հետո, գիտակցաբար կամ անգիտակցաբար, չեն կրցած տեսնել մի ահավոր ճշմարտություն, թե անջնջելի մնացած են այնտեղ եղած եռ ու զեռ կյանքի, մեղվաջան աշխատության, գերազանց վայելչասիրության և անբավ հարստության հետքերը:

Հոյակապ Անիի ավերակները, երբ հարյուրավոր տարիներ իբրև քարահանք ծառայեր են շրջակա գյուղերու և քաղաքներու, մեծամեծ շենքեր ավելի բարբարոս ձևերով քանդվեր են, քան ժամանակի կամ բնության ազդեցության տակ. հետևաբար, երբեք զարմանալի չէ, որ այսօր այնտեղ չենք գտներ, ինչ որ մեծություն, գեղեցկություն և հարստություն կապացուցանե: Ո՞վ կարող էր երևակայել, որ Գագիկ Ա.-ի բոլորակ ս. Գրիգոր եկեղեցվո ներքին այուներու գնդագլուխ խոյակները մինչև Կարս տարված լինեին: Ես անձամբ գնացի տեսա՝ Խորեն. քհ. Ստամբոլցյանի առաջնորդությամբ՝ այդ խոյակը Կարսի մեջ և լուսանկարել տվի: Անի գյուղի թուրք բնակչության ծերունիները այսօր ալ կպատմեն հետաքրքրվողին, թե ինչպե՛ս հարյուրավոր սայլեր կլծվեին պատվեր տրված սրբատաշ քարեր Անիեն Կարս տանելու համար: Նաև կնկարագրեն, թե ի՞նչ ձևով կփլցնեին ահագին պարիսպներ և շենքերու պատեր ու հետո վրայեն քարերը անվնաս կհանեին: Երբ բոլորակ ս. Գրիգորի այան խոյակը մինչև Կարս հասեր է, կնշանակե, թե նմանապես հատուկ պատվերով շատ են տարեր հայկական ապարանքներու և սրբավայրերու գեղարվեստական քարեր ամեն կողմ:

Ապարանքի պեղումներու ժամանակ հյուսիսային մասին մեջ դահլիճի մոտ գտնվեցավ մի պապակի (corniche) կտոր՝ գերազանցորեն գեղեցիկ և ճաշակավոր քանդակված, որուն նմանը ունեցեր է նաև Կաթուղիկեի հարավ-արևելյան կողմը գտնված մի անհայտ շինություն: Այս շենքին այժմ հազիվ հիմերը և մի քանի գեղեցիկ խոյակներ ու խարիսխները մնացեր են, այնուամենայնիվ հայանի է, որ 10-11-րդ դարերուն գոյություն ունեցող մի կարևոր շենք էր:

Դահլիճի փլատակներուն մեջ գտնված գեղաքանդակ պսակի կտորը ինքնին պերճախոս ապացույց է, որ երբեմն դահլիճի կատարը շուրջանակի պսակված էր նույն գեղեցիկ պսակով: Եթե բնական մի արկածով դահլիճը կործանված լիներ, անտարակույս, այդ գեղաքանդակ պսակի ուրիշ բեկորներ ալ շատ պիտի գտնվեին այնտեղ, բայց որովհետև խնամքով քանդեր ու տարեր են, ինչպես ուրիշ քարեր, պատահական մոռացության պետք է վերագրել այդ մի հատ պսակի բեկորի այնտեղ գտնվելը:

Հատկապես Բագրատունի շրջանին մեջ, ապարանքի ներքին և արտաքին ճարտարապետական շքեղության ապացույց հատուկտոր բեկորներ թեև քիչ գտնված են, այնուամենայնիվ եղածները գեղարվեստասեր բնակչության և տաղանդավոր արվեստագետներու գոյությունը կապացուցանեն: Անիի թանգարանին մեջ մանվածո զարդաքանդակներ փորագրված երկու հատ փայտյա առաստաղի գերաններ կան, որոնք վերջին բարբարոս տիրապետողներու ժամանակ ապարանքի մոտակա շինություններեն մեկուն քարե պատին մեջ հյուսեր էին իբրև որմակապ գերան (խաթիլ):

Շատ երկար կլինի այստեղ մի առ մի թվել այն ամեն մանրամասնությունները, որոնք պիտի ապացուցանեն երբեմնի արքայական փառաց արժանի ապարանքի մը գոյությունը Անիի միջնաբերդի բարձունքներուն վրա: Բավական է, որ մեկը մասնագիտորեն ուսումնասիրե այսօրվան ջախջախված ու այլանդակված մեծության ու գեղեցկության մնացորդները և համեմատե պատմության հակիրճ, բայց բնորոշ տվյալներու հետ, պարզ պիտի տեսնե, թե Անիի արքունի ապարանքն իր բարձր դիրքով, մեծությամբ և շքեղ գեղարվեստականությամբ ինչ պատկառելի վեհությամբ երբեմն կիշխեր թե՛ քաղաքի և թե՛ շրջակա արվարձաններուն վրա:

Բացի հյուսիսային ճակատի զառիվայր դիրքի պատճառավ միմյանց վրա շինված կրկնահարկ և եռահարկ մասերե, ընդհանրապես ամբողջ ապարանքը շինված էր միահարկ. այնուամենայնիվ այս հատկությունը չի կարող ստվեր ձգել Բագրատունիներու ապարանքի գեղարվեստական արժանավորության վրա: Պարզապես ժամանակի ճաշակի արդյունք է, և այս միահարկ շինություններու ոճը շատ հին ժամանակներե ի վեր շարունակված է մինչև 10-12-րդ դարերը՝ Հայաստանի դրացի ասորա-քաղդեական, սասանական և նույնիսկ բյուզանդական ապարանքներու մեջ ալ հազվադեպ էին բազմահարկ մասեր: Թեև ի սկզբանե անտի հայ պատմագիրներ արքունական և իշխանական ապարանքները կոչվատեն բարձրաշեն, բարձրաբերդ, բարձրաձեղուն, գեղեցկահարմար և այլ ածականներով, սակայն ոչ մի տեղ չեն հիշած բազմահարկ շինություն՝ լինի տուն կամ ապարանք: Բայց վկայությանց բացակայությենեն չենք կարող հետևցնել, թե ի հնումն հայոց մեջ բոլորովին անծանոթ էր մեկ ավելի հարկերով շենքեր շինելու ոճը: Անիի հյուսիս-արևմտյան քարաժայռին ծայրը դեռ մեծ մասամբ կանգնած է ավանդաբար Բագրատունյաց պալատ անվանված մեծ շենքը, որը թեև Բագրատունիներեն շատ հետո, 13-րդ դարու շենք է, սակայն ընդհանրապես երկհարկանի լինելեն զատ, մի քանի մասեր ալ ունի եռահարկ: Քաղաքի կեդրոնին վրա բացված միմյանց կից երկու մեծ վաճառատունները, նույնպես 13-րդ դարու գործ, կրկնահարկ են: Ուստի, անկասկած, կարելի է հետևցնել, որ ավելի հին ժամանակի մեջ գործածված ոճի շարունակություն են այս բազմահարկ շինությունները (նկ. նկ. 259, 265):

*
* *

Մինչև այստեղ կատարած հետազոտութենես երևաց արդեն, որ մեր պատմագիրներ կամավորապես անտեսեր են հայ ճարտարապետության և գեղարվեստի մասին գրելը: Պեղումները և ուրիշ գիտական, գործնական խուզարկություններ բազմապատիկ ավելին տվին այդ մասին, ինչ որ պատմագիրներ ավելորդ համարեր էին: Այսօր ամեն կասկածե հեռու մի մեծ ճշմարտություն է, որ ի հնումն Հայաստանի մեջ գերազանցորեն զարգացած էր շինարարական արվեստը և իշխանն ու ազնվականը ունեին կիրթ ու նրբացած ճաշակ գեղարվեստորեն պճնելու իրենց փառաց արժանի սեփական ապարանքները:

Սակայն, հայ ազնվական դասի ներքին կենցաղի մասին պատմագրական հատուկտոր շողշողուն նկարագրությունները դեռ լիովին չեն ապացուցված գործնականապես: Թեև ես չեմ կասկածեր տրված տեղեկություններու ճշմարտության վրա, սակայն այսօրվան քննադատական ուղղությունը իրական փաստեր կպահանջե պատմության տված ամեն մի տեղեկության համար:

Անիի պեղումներով հույս կար, որ գեթ Բագրատունի թագավորներու և ազնվական տոհմերու 10-11-րդ դարերուն ներքին կենցաղի ճոխության և փարթամության մասին լուսաբանություններ ընծայող ապացույցներ գտնվեին: Բայց պեղումները մեզի բոլորովին տարբեր մի պատկեր պարզեցին: Եթե չապացուցվեցան այնտեղ ներքին կենցաղի համար սպասված մանրամասնությունները, այնուամենայնիվ ընդհանուր գծերով ապացուցվեցավ, թե իսկապես հեռավոր մեծ անցյալ մը ունեցեր էր այդ քաղաքը:

Առողջ դատողությամբ ալ՝ պետք չէր, որ մենք մեծ արդյունք սպասեինք այդ քաղաքեն հայ իշխանական կամ ազնվական ներքին փառավոր կենցաղի մասին, որովհետև Պոմպեի նման հրաբխային մեկ շնչով մոխիրի տակ ծածկված չէր Անին: Բացի այս, Բագրատունիներեն հետո քանի մը դար մշտապես դադարած էր հայ քաղաք լինելե, և ավերող ու ապականող վայրենի հորդաներ բուն դրեր էին, անդադար մաշելով վաղեմի հարստության ու փարթամության բոլոր մնացորդները:

Արփասլանի Անին գրավելեն հետո (1064) իշխանական և ազնվական տոհմերը բնական ու անբնական մահվամբ կամ գաղթականությամբ հետզհետե սկսան նվազել, և դեռ այն ժամանակեն սկսան օտար ցեղեր խտանալ այնտեղ:

Իսկ Զարմաղանի արշավանքեն հետո (1236) մեկ կողմանե համաճարակ դարձած գաղթականությունը բուռն թափով կշարունակվեր, մյուս կողմեն թուրք ու թաթար ցեղեր ա՛լ ավելի կխտանային դժբախտ Անիի մեջ: Թեև միաժամանակ թաթարներ քրիստոնեից խղճի ու դավանանքի լայն ազատություն տված էին, սակայն հարկերով այնքան ծանրաբեռնած էին, որ մնացող բնակչությունն ալ նյութապես միշտ սպառվելու վրա էր:



Նկ. 268. Անիի միջնաբերդի պալատական եկեղեցու քանդակազարդ մասեր

Նախքան թաթարներու արշավանքը, Վրաստանի հովանավորության տակ, Զաքարյաններու տիրապետության սկզբնական շրջանին, ստեղծվեցավ նախկին ավանդություններով խառն հայ ճարտարապետության մի գեղեցիկ վերածնություն, որն որ տևեց գրեթե երկու հարյուր տարի: Սակայն այդ գեղեցիկ վերածնությամբ թեև բազմաթիվ գողտրիկ ու ակնհաճո կրոնական կամ աշխարհիկ շինություններ կանգնվեցան, բայց երբեք այն հսկայական մեծագործությունները, որոնք անթիվ ու անհամար են՝ սկսյալ քրիստոնեության նախնական շրջանեն մինչև 11-րդ դարու վերջերը: Անիի մեջ Բագրատունի հարստության մոտավորապես մեկ դարու կարճ տևողության շրջանին, Շիրակի մեջ տակավին անկործան մնացած են Արգինայի, Շիրակավանի, Օղուզլուի, Մարմաշենի, Հոռոմոսի, Տայլարի, Բագնայրի և ուրիշ շատ մը հոյակապ կաթուղիկեներ. սոնց վրա պետք է ավելցնենք նաև Անիի մեջ շինված կաթուղիկեն, գագկաշեն բոլորակ ս. Գրիգորը, Առաքելոց եկեղեցին, բոլորակ ս. Փրկիչը և այլն և այլն: Ո՞վ գիտե, թե դեռ ո՛րչափ ալ բարբարոսներու ձեռքով հիմնահատակ կորան: Ես զանց կառնեմ քրիստոնեության սկիզբեն մինչև 7-րդ դարու վերջերը բովանդակ Արարատ աշխարհի մեջ անթիվ հոյակապ մեծագործությունները, որոնք այսօր ալ դեռ կանգուն են իբրև լուռ վկաներ իրենց ժամանակի հայության մեծության, հարստության, հանճարին ու գեղարվեստական շնչաշարհիկ ճաշակին: Համարձակ կարող եմ ըսել, որ հայ ճարտարապետությունը և գեղարվեստը երբեք չէ հասեր այն բարձրության հետագա դարերու մեջ, ինչ որ էր մինչև 7-րդ դարու վերջին քառորդը:

Մեծության, հարստության և գեղարվեստական ոճերու ինքնուրույնության տեսակետով 12-14-րդ դարերու ճարտարապետական արտադրությունները համեմատել չէ կարելի նախընթաց շրջաններու հետ:

Քանի դեռ կրոնական հալածանքը չկար, հայրենի հողին կպած մնացած հայերը, թեև ի բնե ընդունակ աշխատելու, շահելու, վաճառականության և արվեստներու մեջ զարգանալու, սակայն տիրապետողներու ագահ ախորժակը չէր հագենար արդեն վաղուց աղքատության շեմին վրա ոտք դնող ժողովրդին արյուն-քրտինքով շահածը ծծելով: Այս վիճակին մեջ ինչո՞վ կարող էին մեծամեծ հոյակապ շինություններ կանգնել, քանի որ իրենց ֆիզիկական գոյությունը հազիվ կարող էին պահել հարկերե և տուրքերե ավելցած դույզն շահերով: Վերջին շրջանին մեջ կանգնված փոքրիկ շինություններու գեղարվեստականությենեն, արհեստագործական ամեն տեսակ նրբություններեն հստակ կերպով կտեսնվի, որ նույն փափկաճաշակ, տաղանդավոր և



մեղվաջան աշխատող ժողովուրդն է այս բնական լուծին տակ տառապող հայությունը, ինչ որ էր հին դարերուն մեջ, և բնի ճնշման տակ արգելված էր մեծագործություններով իր հանճարի բոլոր թափով երևան գալը: Արագածի փեշերուն վրա պատկառելիորեն բազմող հոյակապ Հովհաննավանքը և Գեղարդավանքի քարափոր տաճարները, որոնք իսկապես մեծագործություններ են և պարծանք մեր փոքրաթիվ մշտաչարչար հայության, սակայն շատ քիչ են ավելի քան երկու հարյուր տարիներ տևող ժամանակամիջոցին համար:



Նկ. 269. Անիի միջնաբերդի պալատական եկեղեցու որմնասյան մասեր

Շատ կսխալին անոնք, որոնք հայ ժողովուրդը քաղաքակրթության և զարգացման գագաթնակետին կբարձրացնեն 12-13-րդ դարերուն:

Ավանդություններ և ապացույցներ շատ կան, որ վերջին համայնական գաղթի ժամանակ անցեալը ոչ միայն իրենց շարժական կայքն ու հարստությունը տարան միասին, այլև եկեղեցիներու կաթուղիկեներուն կատարը կանգնված թանգագին խաչերն ու եկեղեցիներու գեղաքանդակ դռներն անգամ հանեցին: Անիի Կաթուղիկեին դռները այժմ պահված են Թեոդոսիայի թանգարանին մեջ[1]:

Վերջին գաղթականության ժամանակ, բնիկ երկրին մեջ դուցե մնացին բոլորովին աղքատ և ստորին արհեստավոր հայեր, բայց այսպիսի մի ողորմելի հատվածե ինչ քաղաքակրթության մնացորդներ կարող էին սպասել Անիի մեջ: Եթե ճիշտ է, որ այս մնացորդ վերջին հատվածն ալ Լանկթիմուրի գազանային արշավանքին զոհ եղավ, այլևս կասկած չի մնար, որ Անին և իր շրջակայքը միանգամայն կողոպտվեցան իրենց ամենահետին կայքեն ու կարասիքեն:

Այժմ գլխավոր հարցն այն է, թե Լանկթիմուրի արշավանքեն հետո որչա՞փ ատեն շարունակվեց եկվոր թաթարի, պարսիկի ու քրդի գոյությունը՝ դեռ 1064 թվականեն հյուծվիլ սկսող մայրաքաղաք Անիի մեջ: Հաստատող փաստեր կան, որ մինչև 18-րդ դար առանց հայերի բնակչություն կար

[1] Անիից տարված մի քանի գրակալներ, եկեղեցական զարդաքանդակ բեկորներ այժմ պահվում են Երևանի Պատմական թանգարանում, որոնք վերջին տարիներս ստացվել են Հյուսիսային Կովկասից: Հիշատակված դուռն այժմ գտնվում է Պետ. Էրմիտաժում:

Կազմող

Նկ. 270. Անի գյուղի մեկնակետ վիճակում



այնտեղ, մի բնակչություն, որի նկարագիրը բացատրության կարոտ չէ, ոչ մի շնորհք չուներ և այս անշնորհքության հետևանքն է այսօրվան քարուքանդ Անին: Պեղումներն ալ այս միակ ճշմարտությունը ապացուցեցին: Բոլոր մեծամեծ տներ քանդված և անոնց քարերով ցեխաշաղախ նոր բնակարաններ շիներ էին, կամ մեծ տան մը կեսը քանդած և անոր քարերով մյուս կեսը նորոգելով՝ բնակեր էին: Գագկաշեն ս. Գրիգորի մեջն ու դուրսը իրմե քանդված քարերով բնակարաններ կամ, ավելի ճիշտը, որջեր շիներ ու ապրեր էին անոնց մեջ: Ինչպես վերև հայտնեցի, նույնիսկ ապարանքի դահլիճները մաս-մաս բաժանելով՝ խեղճ ու կրակ ցեխաշաղախ պատերով սենյակներու վերածեր, թոնիր թաղեր ու ապրեր էին անոնց մեջ ո՞վ գիտե որչափ ժամանակ: Քաղաքի կեդրոնին վրա բացված երկու մեծ վաճառատուններեն մեկուն սքանչելի քանդակազարդությամբ զարդարված դուռը փակելով՝ ճիշտ մեջտեղեն մի պատ բարձրացուցած էին այնտեղ բնակարան կամ խանութ շինելու համար: Այս վաճառատան փողոցին վրա էր, որ բացվեցան շարք մը խանութներ, որոնց մեկուն մեջեն գտնվեցան պղնձագործ արհեստավորի մը ձեռքեն ելած մանր-մունր առարկաներ՝ արվեստի նրբություններե բոլորովին զուրկ:

Այսօրինակ ընտանեկան և տնտեսական կենցաղի վերաբերյալ նյութեր շատ են հավաքված Անիի թանգարանին մեջ, որոնք վերին աստիճան թանգագին են մեզ՝ Բագրատունիներու անկումեն հետո այնտեղ ապրող ու տիրող ժողովրդին արժեքը համեմատության դնելու համար: Պեղումներու ժամանակ շատ որոշ կերպով կտեսնվեին զանազան շերտեր՝ զանազան ժամանակներու հատուկ: Որչափ խորեն և անձեռնմխելի մնացած շերտերեն հանվեին առարկաներ, այնքան ավելի հետաքրքրական և հայ կենցաղին մոտիկ կկապվեին: Ծաղկոցաձորի քարայրերուն անձեռնմխելի մնացած զերեզմաններեն մեկուն մեջեն գտնված փոքրիկ դիակի մը հագած մետաքսյա ասեղնագործ շապիկը և վրայի ոսկեթել ցանցակերպ հյուսված ծածկույթը ավելի շատ բան պարզեցին հայ իշխանական տոհմերու ներքին կենցաղի մասին, քան ուրիշ բազմաթիվ ուլունքներ ու խեցեղեն անոթներու փշրանքներ: Պակաս չեն հավաքված իրեղեններու մեջ վերջին շրջաններուն պատկանող արժեքավոր հազվադեպ առարկաներ, բայց որ հայ կենցաղի հետ կապ չունին, բնականաբար օգտակար չեն կարող լինել իմ ներկա տեսությանս մեջ:

Երկու-երեք հարյուր տարի շարունակ ավազակաբարո ցեղերու մեջ դառնալե հետո, եթե ավելցնենք Անիի մեջ մեռելակրկիտներու մշտական խուզարկությունները, գանձ փնտրելու համար անվերջանալի պեղումներե զատ, մինչև իսկ եկեղեցիներու պատերու քանդվելը, մինչև մեր օրերը անդադար իբրև քարահանք գործածվելը, միանգամայն կհամոզվենք, որ Անին, զուտ հայկական քաղաքակրթության շրջանի ներքին կենցաղի տեսակետով, մեծ բան չէր կարող տալ. ինչ որ տվավ, մեծ մասամբ վերջին բնակությունն ունեցող այլազան ցեղերու թափթփուկներն էին, հազվադեպ բացառությամբ:

Ի տես այս անվիճելի տխուր իրականության, շատ մեծ սխալ կլինի հիմնվելով մինչև այժմ հավաքված տնտեսական, կենցաղային և նույնիսկ եկեղեցական առարկաներու վրա, դատել ու վճռել ավելի քան վեց-յոթ դար առաջ ինքնուրույն զարգացումով այնտեղ ապրող հայ բնակչության քաղաքակրթության աստիճանը: Որչափ ժամանակ հայ տարր կար Անիի մեջ ապրող, բնական էր, որ պիտի ունենային մի քանի շեն կամ կիսաշեն եկեղեցիներ իրենց անոթներով և սպասներով: Մինչև այսօր գտնված եկեղեցական սպասներու մեջ դեռ չերևցան թագավորական կամ իշխանական եկեղեցիներու վայել առարկաներ, բացի մի բրոնզյա կանթեղե, այն ալ ո՛վ գիտե, ո՞ր ժամանակե մնացած: Գագկաշեն բոլորակ եկեղեցվո մեջեն գտնված պղնձի թերթիկներով կազմված հասարակ և անարվեստ մի ջահ վերագրել այդ հսկայական եկեղեցին կանգնողին, մի լուրջ ծաղր է Գագիկի նման հարուստ, փառասեր և գեղարվեստասեր թագավորի մը հասցեին: Գագիկի կինը՝ Կատրանիդե թագուհին միաժամանակ իր շինած կաթուղիկեի գլխին մարդաչափ բարձրությամբ արծաթյա խաչ կկանգնե, ներսը, գմբեթին մեջ, Հնդկաստանեն Սմբատի բերել տված ուլթը բյուր արժողությամբ ջահ կկախե, իսկ Գագիկ պե՞տք էր այդքան ստոր ճաշակ ունենար, որ կնոջ շինած կաթուղիկեեն երեք անգամ ավելի մեծածախս և գեղարվեստական տաճարին մեջ պղնձի թերթիկներե մկրատով կտրված և թելերով իրարու հետ կապված մի ջահ կախեր իր շինած տաճարի երկնանման գմբեթին մեջ, ինչպես կըսե Ասողիկ ժամանակակից պատմագիրը: Պատմությունեն բոլորովին պարզ է, որ Արփասլանի՝ Անին գրաված ժամանակ գագկաշեն ս. Գրիգորը վաղուց անչքացած էր արևմտյան կողմի փլուզումով և մնացած մասի վտանգվելով, եթե ոչ՝ ավելի շուտ մահմեդականի մահիկը Գագկաշենի գմբեթին գլուխը կդրվեր, քան կաթուղիկեին: Եթե նույնիսկ չեն եղած լիներ, անկասկած, մինչև հետին սպասը թալանված պիտի լիներ, ինչպես մյուս կաթուղիկեն: Բայց որովհետև պատմագիրներու

մեջ բացի Կատրանիդե թագուհու կանգնած կթուղիկեն ուրիշ եկեղեցվո մասին գրված ոչինչ չենք գտներ, բնականաբար, եթե ոչ բոլորովին կործանված, գեթ անպետքացած և յուր զարդերեն միանգամայն մերկացած էր: Պեղումներու ժամանակ արդեն պարզ երևաց, որ հյուսիսեն հարավ մի պատ քաշված էր քանդված մասը մնացածեն զատելու համար, և այսպես մի առժամանակ, իբրև մեծագործ նախնյաց հիշատակարան, պարբերաբար պաշտամունք կատարեր են: Ահա այդ ժամանակ կախվեր է այդ պղնձի կտորներեն կազմված ողորմելի ջահը, որն որ վերջին փլուզման ժամանակ գմբեթին անկումով թաղվեր է փլատակներու տակ: Պետք է միանգամայն համոզվել, որ գազկաշեն բոլորակ ս. Գրիգորի մեջ, բացի քարերեն, ուրիշ ոչ մի բան մեզի չէ հասած, որ Գագիկի կամ Բագրատունիներու ժամանակակից լինի, և միանգամայն աններելի է հսկայական գեղարվեստական մի մեծագործության հետ կապել՝ անճաշակ ու անարվեստ հետնագույն աղքատության շրջանի արտադրություններ:

*
* *

Անիի պեղումները անհունապես մեծ ծառայություն մատուցին՝ հայոց ճարտարապետության անգնահատելի գանձերը ի լույս հանելով: Այնտեղ երևան եկան 7-րդ դարեն մինչև 14-րդ դարու ճարտարապետական վերածնություններու չքնաղ նմուշներ, որոնց համար բանաստեղծական գովքեր հյուսվեցան Եվրոպայի գիտնական արվեստագետներու կողմե: Համաշխարհային գեղարվեստի պատմության համար մութ առեղծվածներու բանալին եղավ շատ անգամ և դեռ կոչված է մեծամեծ ծառայություններ մատուցանելու թե՛ համաշխարհային հին գեղարվեստի պատմության լուսաբանության և թե՛ ստեղծագործողներու ցեղական արժանավորություններու համար, եթե հետազոտությունները շարունակվին անաչառ և անշահախնդիր ուսումնասիրությամբ:

Անիի ճարտարապետական գոհարները այնպիսի հետաքրքրություն զարթեցուցին և այնպիսի հրապույր ստեղծեցին իրենց շուրջը, որ գիտնականներ ակամա խոնարհեցան անոր իրական արժանավորություններու առջև և մեկը աշխարհահռչակ գիտնականներեն վերջապես խոստովանեցավ անոր ինքնուրույն զարգացումը սեփական դրոշմի ներքև:

Եթե ավերակները և պեղումները մեզ բավարար գոհացում չպատճառեցին հայ պատմական կենցաղի մասին, կա նաև մի ուրիշ աղբյուր, որ հուսալի է շատ լուսաբանություններ քաղել անկե, անցյալի մթության մեջ կորած անորոշություններու վերաբերյալ: Այդ աղբյուրն է հայրենի հողին վրա կյանքը շարունակող և կամ համայնական գաղթերով միատեղ ապրողներու մեջ եղած ժողովրդական ավանդություններն ու սովորությունները: Այս մասին մեծ ծառայություն պիտի մատուցանեն ազգագրական ժողովածուները:

Ես չեմ հավակնիր ինքզինքս ազգագրական ճյուղի ուսումնասիրության կարող համարելու և նյութերու մեջ համեմատություններ կատարելու, սակայն իմ մասնագիտությամբ պարապելու ժամանակ, թե՛ պատահեր են որոշ նյութեր և թե՛ հայրենի սովորություններեն մտքիս մեջ զարթեր են հիշողություններ, որոնք, կարծեմ, անօգուտ չի լիներ այստեղ հիշատակելը՝ բարձրագույն դասի կենցաղագիտության տեսակետով:

Հայաստանի խուլ անկյուններու մեջ, ուր տակավին չէ հասեր ժամանակակից մոդաներու ազդեցությունը, և մարդիկ մնացեր են նահապետական վիճակի մեջ, հավանական է, որ այն տեղերը դեռ կշարունակվի ուրիշ չափով նախնական տարազի ձևը: Բայց միևնույն ժամանակ զանազան գավառներու մեջ տարազներու այնքան այլազանություններ կան, որ մարդ կդժվարանա վճռելու, թե անոնցմե ո՞րը ավելի հիներու շարունակությունն է, կամ որը ի՞նչ ազդեցության ենթարկված է: Ինձ պատահեր են 12–13-րդ դարերու նկարազարդ ձեռագրաց մեջ հայ կանանց տարազներ, որոնք գլխանոցներով փոքր ինչ նման են ժամանակակից նահապետական հայ կանանց գլխանոցներուն, սակայն հնացած մասերով շատ կտարբերեին: Մանավանդ արևմտահայերի տարազը շատ մեծ փոփոխություններու ենթարկված պետք է լինի, համեմատելով Արարատյան աշխարհի հայ կանանց տարազին: Բայց թողնելով կանանց տարազի մասին խոսելը հայ ազգագրագետներու, այստեղ մեջ բերեմ տղամարդկանց մի քանի հագուստներու ձևեր:

Հաղբատի արևելյան պատի վրա քանդակված են Զաքարե և Իվանե եղբայրներու բարձրաքանդակ պատկերները: Այս պատկերներու ներկայացուցած տարազը պետք է որ 12–13-րդ դարերու հայ իշխանաց տարազի ձևը լինի: Թեև հմուտ քանդակագործի ձեռակերտ չէ և կարելի է իրականին անհամապատասխան գծերու շարժումներով տձևություն ստացած լինի, այնուամենայնիվ, գեթ մոտավոր արտահայտություն կարելի է համարել այդ մեծ իշխաններու սեփական տարազին: Անոնց տարօրինակ ձևով վերարկուին և գլխանոցին վերաբերյալ ինքս ոչ մի կարծիք չեմ կարող հայտնել (նկ. 271.):





Նկ. 271. Զաքարե և Իվանե ամիրսպասալարների բարձրաքանդակները Հաղբատավանքում

Անիի պեղումները մեզ տվին Բագրատունի Գագիկ Ա. թագավորի արձանը (տե՛ս նկ. 170)՝ քանդակված 10-րդ դարու վերջին կամ 11-րդի սկզբին: Այդ արձանը, որ այժմ պահված է Անիի հնագիտական թանգարանին մեջ, բացի վիզը կախված քրիստոնեական խորհրդանշան խաչեն, բոլորովին նման է արաբական խալիֆներու տարազին՝ իր մինչև կրունկները իջնող երկար վերարկուով և գլխու խոշոր փաթաթանով: Անկասկած, այս տարազը Բաղդադի խալիֆներեն ընծայված խալաթ էր, ոչ թե Գագիկի զուտ ազգային տարազը. ամենայն հավանականությամբ, ժողովուրդը, բոլորովին անկախ Գագիկի պաշտոնական տարազեն, իր սեփական ազգային հագուստներու ձևը ուներ, որ դեռ անծանոթ է մեզ:

Գրեթե միաժամանակ քանդակված պետք է լինի Վասպուրականի թագավոր Գագիկ Ա. Արծրունիի բարձրաքանդակ պատկերը Աղթամարի եկեղեցվո պատին վրա: Դժբախտաբար այս պատկերն ալ շատ հեռու է մեզ որոշ գաղափար տալե, որովհետև այդ պատկերին մեջ Գագիկ, փոխանակ աշխարհական հագուստի, կրոնական հագուստով կներկայանա, այսինքն փիլոնով ծածկված վերեն վար և գլխին շուրջն ալ՝ բյուզանդական սուրբերու նման՝ լուսապսակով: Թերևս ի նշան բարեպաշտության և երկյուղածության՝ Գագիկին հագվեցուցեր են այնպես: Ինձ կթվի, թե ի հնումն, սովորություն կար բարեպաշտ մարդոց կամ աղոթողներու պատկերները կրոնական աքեմով նկարել: Անիի ս. Փրկիչ եկեղեցվո մեջ ալ կա նմանօրինակ մի պատկեր: Ս. Փրկիչ եկեղեցին նկարազարդող նկարիչ Սարգիս Փառչկյանը ավետարանիչի առջև ծունկ չոքած աղոթելու ձևով ինքզինք փիլոնով նկարած է, մինչդեռ Խծկոնքի մեկ արձանագրություն զիտենք, որ նկարիչ Սարգիս Փառչկյանը աշխարհական էր: Ուրեմն, այս Գագիկ Արծրունիի պատկերն ալ անօգուտ է մեզ ազգային տարազի տեսակետով (նկ. 272):

Նկ. 272. Գագիկ Ա. Արծրունու բարձրաքանդակն Աղթամարում

Մրենի տաճարին արևմտյան դռան վրա քանդակված է կրոնական և աշխարհական բարձրաքանդակներու մի խումբ. այս քանդակներու մեջ աշխարհական տարազը շատ բնորոշ է իբրև ազգային տարազ: Հունական և պարսկական տարազներե բոլորովին անկախ ձև ունի, և հավատացած եմ, որ այդ պատկերին մեջ ներկայացող աշխարհականները նույն իսկ եկեղեցին կանգնող Կամսարական իշխաններն են՝ իրենց սեփական ազգային տարազով: Դժբախտաբար չունիմ այդ բարձրաքանդակի լուսանկարը այստեղ ներկայացնելու համար, սակայն անոր փոխարեն կուտամ մի ուրիշ պատկեր, որ մոտավորապես նման է Մրենի բարձրաքանդակներուն և շատ հետաքրքրական՝ տարազի տեսակետով (նկ. նկ. 275, 276):

Թալինի գերեզմանատան մեջ գտնվեցավ կոթողաձև գերեզմանաքարերու մի թանգագին հարստություն: Այս կոթողները, որ անկարելի է 7-րդ դարեն այս կողմ բերել, իրենց չորս կողմին վրա ունին բազմատեսակ հետաքրքրական քանդակներ,

Նկ. 273. Սմբատ և Կյուրիկե Բագրատունիների բարձրաքանդակները Հախպատում

որոնցմե մեկն ունի հետևյալ պատկերը: Կոթողին վերին կողմը քանդակված է Քրիստոսի պատկերը, իսկ ներքևը՝ խոզի գլխով մի մարդ՝ ձեռքը վառած կերոն բռնած: Անշուշտ, ապաշխարող մի մեղավորի պատկերն է՝ Տրդատի ավանդության ազդեցության տակ խոզի գլխով նկարված: Այստեղ մեկ կողմ թողնելով անոր այլաբանական նշանակությունը, պահ մը եթե հետաքրքրվինք անոր տարազով, պիտի տեսնենք, որ հակառակ անոր ծայրահեղ հնության, մեր ժամանակին ալ բոլորովին անծանոթ ձև չէ: Կռնակն ունի մի վերարկու՝ վիզեն կոճկած, առանց թևերը հագնելու, մեջքին վրա կիսագոտի և օձիքը ետ դարձած՝ հավանաբար՝ սամույր: Այս ձևը Կովկասին բոլորովին անծանոթ չլինելեն և մինչև այսօր տակավին գոյություն դադրած չլինելեն զատ, Հայաստանի արևմտյան գավառներուն մեջ մինչև այսօր նույնությամբ կհագվին քուրդ բեկերը: Այս օրինակները շատ են 6-7-րդ դարերու հատուկ գերեզմանական կոթողներու վրա թե՛ խոզի և թե՛ մարդու գլխով քանդակված: Կարծեմ՝ տարակույսի տեղ չի մնար, որ այս տարազը մինչև 7-րդ դար հայոց ազգային տարազն էր և ավանդաբար շարունակված է մինչև այսօր. թե անկից առաջ ո՞րչափ հին է, այդ արդեն քննության կարոտ է, թեև գերեզմանաքարի այս ոճը այնքան հին է, որ մինչև հեթիտական ժամանակներուն կհասնի:

Նկ. 274. Կյուրիկե և Սմբատ Բագրատունիների բարձրաքանդակները Սանահնում

Ալեքսանդրապոլի [Լենինական] մոտ, Դարբանդ գյուղեն գտնվեցավ մի ուրիշ կոթողաձև գերեզմանաքար, որ քրիստոնեական շրջանեն շատ առաջ՝ հեթանոսական դարերուն կվերաբերի: Այս կոթողին երեք կողմին վրա քանդակված են զազանազլուխ մարդակերպ հրեշներ, իսկ մեկ կողմին վրա ալ՝ մի կնոջ պատկեր: Հակառակ անարվեստ քանդակագործության և քարին չափազանց մաշված լինելուն, դարձյալ որոշ է գլխի զարդաքանդակի ձևը: Մազերը սանրված և երկու կողմեն կախ ընկած, ճակատին վրա եղեր է կապված մի ժապավեն՝ հորիզոնական, և կամ, ավելի հավանական, գլխին դրած է մի գլխանոց՝ շատ նման Թիֆլիսի հին կանանց գլխանոցին, վրան ալ ունի մի առանձին ծածկոց՝ ուսերեն վար իջած: Գլխի այս զարդարանքը առավել կամ նվազ փոփոխությամբ կարելի է մինչև այսօր տեսնել բովանդակ Հայաստանի նահապետական կանանց մեջ:

Նկ. 275. Բարձրաքանդակներ Մրենի տաճարի վրա

Մի ուրիշ հետաքրքրական սովորություն իմ օրով գոյություն ուներ ծննդավայրիս՝ Շապին Գարահիսարի մեջ, հյուրասրահի կամ տոնասրահի տեսակետով: Պետք է գիտենալ, որ Շապին Գարահիսարի և իր շրջակայից հայ բնակչությունը Վասպուրականի և Անիի գաղթականություններով խառն է: Մասնավորապես Թամզարա գյուղաքաղաքի բնակչությունը զուտ Անիի գաղթականությունն էր, Շ. գարահիսարցիք շատ արհամարհանքով կվերաբերվեին դեպի Թամզարայի հայությունը, մինչև իսկ շատ հազվադեպ պարագաներու մեջ խնամություններ կկատարեին: Այս արհամարհանքին պատճառն էր մի ընդհանուր համոզում, թե Թամզարացիք անիծած ժողովուրդ են: Տարակույս չկա, որ Պլուզ Հովհաննես վարդապետի Անի քաղաքը անիծած լինելուն ավանդությունն էր, որ կշարունակեր տակավին. բայց պետք է ըսել, որ Թամզարացիները վերին աստիճան ժրաջան և առանց բացառության արհեստավոր ժողովուրդ էին, գլխավոր արհեստնին էր ոստայնանկությունը: Կային շատ վարպետ բրուտներ, որոնք քաղաքի մեջ գտնված հույն բրուտներեն գերազանց առավելությամբ խեցեղեն անոթներ կշինեին: Զափազանց զրոսասեր և վայելչասեր էին: Գյուղաքաղաքը դրախտի նման պայծառացուցած էին պարտեզներով ու ծառաստաններով՝ մոտեն անցնող մի վտակի բավական առատ ջրեն օգտվելով: Երբ Անիի մեջ սնդիկի ամաններ գտնվեցան, իրենց տարօրինակ ձևով դեռ ոչ ոքի հայտնի չեղած, առաջին անգամ ես հայտնեցի այդ ամաններուն շինության նպատակը, որովհետև մինչև իմ օրերը գործածական էին և շինողները Թամզարացի բրուտներն էին:

Նկ. 276. Բարձրաքանդակներ Մրենի տաճարի վրա

Մեծ տուն շինող հարուստները անպատճառ տան մեջ կշինեին մի մեծ սրահ՝ հատկապես հարսանիքներու և տոնական խնջույքներու հատուկ (նկ. 278): Այս սրահը տան մյուս մեծ ու փոքր սենյակներեն բոլորովին տարբեր հատկանիշներ ուներ: Առհասարակ քառակուսի էր, դուռը կբացվեր մեջտեղեն: Դռնեն անմիջապես ներս որոշ լայնությամբ և սրահի երկայնության հավասար նախագավիթի նման մի տեղ կթողվեր (նկ. 278, 1): Այս նախագավիթին անմիջապես կհաջորդեր բուն հանդիսասրահը՝ մի փոքր բարձր հատակով (նկ. 278, 3): Սրահը և նախասրահը բաժնված էին աղեղնակապ երկու կամ ավելի համաչափորեն զետեղված սյուներով (նկ. 278, 6, 6): Նախասրահին մեջ նստելու աթոռ կամ բազմոց չէր դրվիր և միայն հատուկ էր սպասավորներու ու հյուրամեծարներու:

Նախասրահի աջ և ձախ կողմերը, հատակեն մոտավորապես մեկ մետր բարձրությամբ առանձին բազմաբաններ են շինված, որոնց ներքև պահարաններ են, ուր կպահվին հանդիսասրահին հա-

տուկ սպասները, իսկ վրանները կնստեն նվագածուներու և երգեցիկներու խումբերը (նկ. 278, 2, 2): Բուն հանդիսարահը, դռան հետ դեմ առ դեմ

Նկ. 277. Պարոն Խուտլուբուղայի որմնանկարը Հախպատում

ունի ամեռային մի վառարան (նկ. 278, 4): Վառարանին երկու քովեն սկսած հաստատուն շինված են՝ մինչև նվագածուաց խումբերու բարձրավանդակը հասնող փայտաշեն բազմոցները (նկ. 278, 5, 5, 5, 5)՝ մոտավորապես 30-40 սանտ. բարձրությամբ: Բազմոցին ամբողջ երկայնությունով կփռվեին խոտով կամ բուրդով լեցված ներքնոցները՝ բավական զգալի թանձրությամբ, որուն մախաթ անունը կուտային: Ներքնոցներուն վրա կփռվեին թանգագին գորգեր՝ հատկապես բազմոցներու յուրաքանչյուր կողմին լայնության և երկայնության չափով գործված, այնպես որ, բազմոցին հորիզոնական լայնությունը ծածկելե հետո, պետք էր մեկ մասն ալ վար կախվեր մինչև սրահի տախտակամածը՝ բազմոցի տախտակե ճակատը ծածկելու համար: Գորգերը փռվելե հետո, շուրջանակի կշարվեին թանգագին մետաքսեղեն կամ այլ կերպասեղեն երեսներով խոտե կամ բրդե պինդ լեցված բարձեր՝ պատերուն հենված ուղղահայաց ձևով: Վառարանին մեկ կամ մյուս կողմին անմիջապես կից կնստեր տան նահապետը, և հանդիպակաց կողմին կնստեր քաղաքին հոգևոր առաջնորդը կամ տաներեց քահանան: Ասոնցմե հետո, պատվո կամ աստիճանի համեմատ, կշարվեին ծալապատիկ կամ ծնկաչոք հանդիսականները՝ ամբողջ բազմոցներու երկարությամբ: Եթե հանդիսականներու մեջ պատահեին ավելի պատվո արժանի մարդիկ, անոնց համար կրկին կբերվեին առանձին փափուկ բրդե փոքր ներքնակներ և փափուկ բարձեր՝ հենվելու:




Նկ. 278. Թամզարայի տոնական սրահի հատակագիծը

Ճաշեն առաջ երկու սպասավորներ, ձեռքերնին կոնք և ջրամանով, վառարանին երկու քովեն սկսելով՝ հանդիսականներուն ձեռքերուն ջուր կլցնեին լվացվելու համար, որոնց կընկերանային նաև ուրիշ երկու սպասավորներ՝ ուսերնուն վրա ձգված շատ մը անձեռոցներով, անոնք ալ լվացվողին անմիջապես ձեռքին վրա կձգեին մի անձեռոցիկ՝ սրբվելու համար: Լվացվելու արարողությունեն հետո կբերվեր ճաշի մեծ սեղանը՝ ընդհանրապես բոլորակ. սեղանի լայնությունը կամ տրամագիծը քիչ պակաս էր բազմոցներու մեջտեղ մնացած դատարկ միջոցեն: Սեղանը կազմված էր մի շարք մաքուր տախտակներե, որոնք միացած էին իրարու ծխնիներով և ի հարկին կծալվեին: Սեղանը կդրվեր



Նկ. 279. Անիի միջնաբերդի բաղանիքի հատակագիծը

առանձին փայտաշեն պատվանդաններու վրա՝ հատկապես նույն սեղանին համար շինված: Սեղանին հավասար մեծությամբ մաքուր սփռոց փռվելե հետո, դարձյալ սեղանին ամբողջ շրջապատի երկարությամբ միակտուր շինված մի երկար անձեռոցով կշրջապատեին սեղանին շրթունքը, որը բազմականները իրենց ծունկերուն վրա պիտի առնեին՝ ձեռքերը և բերանները սրբելու համար բաժանված անձեռոցիկներեն անկախ: Նախագավթին մեջ կանգնող սպասավորներն այլևս դադար չունեին ժամեր տևող այս ճաշին համար շարունակ լեցուն ամաններ բերելով և դատարկները տանելով: Որչափ բազմատեսակ լինեին կերակուրները, այնքան մեծ կհամարվեր պատիվը:

Ճաշի ամբողջ տևողության միջոցին, ինչպես նաև առաջ և հետո, անդադար կնվագեին նվագածուները իրենց բարձրավանդակին վրա: Ճաշը վերջանալեն հետո, երբ սեղանը կվերցվեր, դարձյալ կկրկնվեր ձեռք լվանալու արարողությունը: Վերջին անգամ կմնար բաժանել անխտիր բոլոր հանդիսականներու քաղցր ըմպելիքներ և սուրճ, որմե հետո ցանկացողներ ազատ էին մեկնելու, եթե տաճարին նախագահող նահապետին ցանկության հակառակ չէր:

Տաճար բառը ընդգծեցի նկարագրածս սրահին հատկացնելով, որովհետև, ի նկատի ունենալով, իբրև ականատես, այս սրահներու մեջ խնջույքներու ժամանակ տիրող կանոնավորությունը, պարտադիր օրենք դարձած արարողությունները, հյուրերուն կողմանե ցույց տրված պատկառելի դիրքը և հարգական վերաբերմունքները դեպի տան նահապետը և սպասավորաց ծայրահեղ աստիճանի ակնածանոք կատարած ծառայությունները, համոզված եմ, որ այս ձևով սրահները իրենց հատուկ կոչումով, զարդարանքներով, շքեղ կահավորությունով ճիշտ մեր նախնիքներու տաճարներուն ավանդական շարունակություններն են: Ես այստեղ ավելորդ համարեցի նկարագրել սպասներու բազմազանությունները և անոնց նյութերու որչափ մեծարժեք լինելը, նաև այդ բազմազան թանգարժեք սպասներուն ինչպես ըստ պատվո և աստիճանի հյուրերուն առջև դրվելու առանձին ձևերն ու կանոնները, որոնք շատ հին դարերու սովորությունները լինելուն կասկած չեն թողուր: Ես վստահ եմ, որ շատերն անձամբ տեսած և հետաքրքրված լինելով այս հնագույն սովորություններով՝ ինձ հետ համաձայն պիտի լինեն, թե այս բոլորը հին տաճարական խրախճանությանց ժամանակ կատարված արարողություններն էին և թե այդ սրահն էր իսկապես մեր պատմիչներու տաճար կոչածը:

Գ

# ԱՆՎՈ ՄԻՋՆԱԲԵՐԴԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ[1]

*Գագկաշեն ս. Գրիգորի բացվելեն հետո անհրաժեշտ էր Բագրատունյաց պալատի պեղումը:*

*Ս. Գրիգորի միջոցով գաղափար կազմեցինք Բագրատունի թագավորաց բարեպաշտության ու երկյուղածության վրա. սակայն, նույնչափ, թերևս ավելի կարևոր էր, հնար եղածին չափ մոտիկ ծանոթանալ նաև անոնց տնտեսական և ընտանեկան ներքին կյանքին:*

*Այս հետաքրքրական տեղեկությունները մեզի պիտի տային միմիայն պալատի պեղումները, որ բարեբախտաբար չուշացան. 1907 թ. հունիսի սկիզբը պրոֆ. Մառը ձեռնարկեց այդ պեղման:*

*Նախընթաց տարիներու բեղմնավոր ու հիացուցիչ արդյունքները տեսնելե հետո, այս տարի ամեն ոք իրավամբ կսպասեր արքայական բնակության վայել գեղարվեստական մեծամեծ հրաշալիքներ, սակայն քանի պեղումները առաջ կերթային, այնքան ճնշող տպավորության տակ կմնային հետաքրքիր դիտողները: Փոխանակ փառքի և մեծության նշմարներու՝ աղքատության, թշվառության, տխուր անցքերու վկաներ միայն դուրս կուգային: Արդյունքը ոչ միայն չէր համապատասխաներ նախապես մեր ունեցած համոզումներուն և ակնկալություններուն, այլև մեկ տարիե ի վեր, գիտնական ճանապարհորդներու փայլուն նկարագրությանց ևս կհակասեր:*

*Բոլորովին սխալ չէին ճանապարհորդներու տված տեղեկությունները, անոնք ճշտիվ նկարագրեր էին առանձին-առանձին Անիի մեջ զանազան կետերու վրա գոյություն ունեցող քանի մը պալատներ և ապարանքներ, սակայն հայտնի չէ, թե ինչ թյուրիմացությամբ այդ առանձին նկարագրությունները ամփոփվեր էին միայն մեր պալատի վրա (հ. Ղ. Ալիշան, «Շիրակ», երես 47-48):*

*Հ. Ալիշանի նկարագրության երկու տողը միայն՝ «Ցերկուս տրոհեալ երեւի Արքունիքդ, ի հիւսիսային և յարևմտեան մասունս» կվերաբերի ճշտիվ Բագրատունյաց պալատին, բայց ո՛չ անոր ցույց տված տեղին վրա, այլ միջնաբերդի գագաթը, ուր այս տարի կատարվեցավ պեղումը: Մնացյալ արտակարգ ճոխության նկարագրությունները կվերաբերին ուրիշ տեղերու, որոնք գրեթե կետ առ կետ գոյություն ունին, որոնցմե մեկը, Անիի կեդրոնին վրա, կվերաբերի Զաքարե սպասալարի և Զուտ 10-րդ և 11-րդ դարերու հայ ճարտարապետական ոճով թանձր ու շքեղ ութ որմնասյուներ, որոնք ներքին կողմեն կզարդարեն անոր հյուսիսային և հարավային պատերը, միմյանց կապված են գեղեցիկ աղեղներով և կամարներով, որոնցմե գոյացած առաստաղի կեդրոնական մասը ծածկված էր անչուշտ նույն դարերու ոճով կառուցված գմբեթով մը:*

*Հյուսիսային պատի վրա, յուրաքանչյուր որմնասյունի մեջտեղ տակավին կմնան $2^1/_2$ մետր լայնությամբ հսկա պատուհաններու հետքերը՝ ուրկեց կպարզվեր Շիրակա դաշտի ամբողջ տարածությունը:*

*Այս դահլիճին մեջ էր, որ Սաքսոնիո իշխանը, քարի մը վրա նստած, շրջապատող գեղեցիկ բնությունը երկար ատեն մտահույզ դիտելեն հետո, հայերեն լեզվով բացականչեց.*

*«Աւաղ փառացս անցաւորի»:*

*Աշոտի շինած կրաշաղախ թանձր արտաքին պատի վրա կիսով չափ հավելված մը կկազմե այս դահլիճը, որ անպատճառ շինված էր Աշոտի ժառանգներեն մեկուն օրով, բայց հայտնի չէ, թե ո՛րուն:*

*Երկրորդ սրահը, ճակատը դեպի հյուսիս, առաջին դահլիճին ճիշտ հանդիպակաց արևմտյան կողմը կգտնվի և համեմատաբար ավելի փոքր է: Ինչպես բեկորները ցույց տվին, այս սրահին ամբողջ առաստաղը ծածկված էր գաճե ձուլված գեղեցիկ զարդարանքներով, որոնց ոճը, Բագրատունյաց շրջանին բոլորովին անծանոթ, Զաքարյան շրջանի զարգացած արվեստագործության հատուկ էր: Հինգ սանտիմ. լայնությամբ զարդաքանդակ ժապավեններ կհյուսվեին արաբական ճաշակի զանազան ձևերով, որոնց հյուսվածքին մեջ գոյացած բազմանկյունի կամ աստղաձև դատարկություններու մեջ դիզված էին վերին աստիճանի նուրբ և բնական գծերով բարձրաքանդակ կենդանիներ և թռչուններ:*

*Այս միակ սրահն է, որ մահմեդական վերջին տիրապետողներեն մեկուն (նույնիսկ կարելի է ըսել Զաքարեեն շատ հետո) վայելչասիրության և կիրթ ճաշակի մի բացառիկ արդյունքն է. եթե նախորդներն ալ ունեցած ըլլային այս ճաշակն ու զարգացումը, մենք Բագրատունյաց պալատը այսօրվան ողբալի վիճակին մեջ չէինք գտներ:*

*Այս սրահը ամբողջական հավելված մը կկազմե պալատին սկզբնական արտաքին պատին կից: Ասոր անմիջապես քովի սենյակին մեջ, որուն իսկական ձևը կորսված է, պատի ծեփերու թափած կտորներու վրա կային շարք մը արաբերեն գրեր՝ կարմիր ներկով գրված:*

*Երրորդ դահլիճը, որ ավելի մեծ ու ընդարձակ է քան առաջինը, կգտնվի հյուսիս-արևելյան կողմը, ճակատը դեպի արևելք, և իսկական հին շինության սահմանին մեջ: Գետին թափած որմնասյուները թե՛ տաշվածքով և թե՛ քարերու տեսակով, նմանություն կբերեն առաջին դահլիճի որմնասյուներուն: Ընդարձակ տարածության պատճառով, այս դահլիճը, բացի որմնասյուներե, ունեցած է նաև համաչափորեն դասավորված չորս կեդրոնական անջատ սյուներ, որոնցմե աղեղներ և կամարներ կձգվեին դեպի հանդիպակաց որմնասյուները:*

*Այս կեդրոնական չորս սյուները, տաշված կարծր որձաքարե, թեև համեմատաբար ավելի փոքր, սակայն իրենց moulure-ներով իսկական տիպը ունեն գագկաշեն ս. Գրիգորի ներքին մեծ սյուներուն, թերևս այս դահլիճն ալ ըլլա գագկաշեն, որովհետև այլևս Անիի մեջ ոչ մի տեղ չի տեսնվիր որձաքար սյուներու գործածությունը:*

*Քիչ ժամանակ հետո, այս ընդարձակ տարածությունը երկու մասի բաժանված է, հավանաբար հունաց ձեռքով, մեկ մասը բազիլիկ ձևով երկու կարգի վրա սյունազարդված է հունական և բյուզանդական ոճերու նմանություն կրող սյուներով:*

*Այս երրորդ դահլիճի և երկրորդ սրահի առջև բազմաթիվ հավելվածներու հետքեր կան դեռ չպեղված, որոնք հունաց և թաթարաց ժամանակի մնացորդներ կթվին: Մեծատառ հունարեն արձանագրությանց կտորներ այս հավելումներու շուրջը գտնվեցան:*

*Բաղնիքը՝ մեկ նրբանցքի վրա՝ ունի երկու դուռ, որոնց յուրաքանչյուրը կտանի դեպի առանձին բաժանում: Առաջին բաժանումը շատ փոքր է, հազիվ երեք մարդ կրնա տեղավորվել անոր մեջ, ունի առանձին վառարան և ծխաններ: Հավանաբար, ըստ արևելյան հարեմական դրության, սա կանանց հատուկ բաժինն էր:*

*Երկրորդ բաժանումը բավական ընդարձակ և ըստ ամենայնի կանոնավոր է, բացի դռներու անհամեմատ փոքրությենեն: Նրբանցքի դռնեն կմտնվի ընդարձակ նախասրահ մը, ուր կան 30 սանտ. բարձրությամբ քարե սալահատակներով բազմոցներ, որոնց վրա կփռվեին գորգեր և օթոցներ, շրջապատված փափուկ բարձերով. այստեղ կհանվեին, կհագնվեին և թե կհանգստանային լվացումեն անմիջապես հետո (նկ. 279):*

*Նախասրահին անմիջապես կհաջորդե բուն բաղնիքը, որ բաժնված է երկու անհավասար մեծությամբ լվացարան-սենյակներու: Փոքր նախագավթին մեջ կա միայն մեկ լվացքի ավազան, երկրորդական հյուրերու կամ ծառաներու հատուկ,*

[1] *Արտատպվում է «Հուշարար»-ի 1908 թվի № 6-7-ից:*
*Կազմող*

իսկ մեծ բաժնին մեջ առայժմ հայտնի են երկու ավազաններու տեղերը՝ դեմ դիմաց. թերևս խորը կար մի երրորդ ավազան ևս, բայց նշանները անհետացած են: Այս բաժանումը հատակով միասին ամբողջ ծեփված էր գաճ ու կրով և ներկված: Հատակի սալերը շարված էին մեկ մետր բարձրությամբ քարե սյունակներու վրա, որոնց տակ մնացած դատարկության մեջեն կանցնեին խորը վառվող վառարանին ծուխն ու բոցը և դուրս կելնեին հանդիպակաց պատին մեջ շինված ծխաններեն:

Վառարանին վրա կմնա եռացող ջրի կաթսային տեղը միայն, ուրկեց սկսած են բաժանվել ավազանները ջուր փոխադրող կավե նեղ խողովակները: Տակավին կմնան ավելորդ ջրերը արտաքսող լայն խողովակներն ալ գետնին տակ, միայն որոշ հետք չկա կաթսան ջուր փոխադրող խողովակներու: Այս մասը մինչև վերջը պահված է իբրև բաղնիք, բայց փոքր բաղնիքը հետո վերածվեր է սենյակի:

Բաղնիքի շինության ժամանակը որոշել դժվար է. ավելի նորագույն ժամանակի արվեստով շինված կերևի. Աշոտի հին պատին հետ ունեցած անպատշաճ դիրքը և քարերու շարվածքն ու տաշվածքը շատ տարբեր են Բագրատունի շրջանի արվեստագործութենեն: Եթե կավե նեղ խողովակներուն ջրամբարի վրա գտնված ջրաբաշխ խողովակներուն հետ ունեցած կատարյալ նմանութենեն հետևցնելով բաղնիքի այս մասը քիչ հին համարենք, այնուամենայնիվ, փոքր բաժնի բոլորովին հետնագույն ժամանակի հավելված մը ըլլալուն կասկած չկա:

Պասաժին մյուս կողմը, հարավային բաժնին մեջ, առայժմ փորված է երկու սենյակ, որոցմե մեկը առանձին ոչինչ չունի, բացի ընդարձակութենե, բայց մյուսն ուշադրության արժանի է յուր գեղանկար փայտյա առաստաղով և յուր ներքև պահած հնագույն մեծ ջրամբարով:

Այս ընդարձակ սենյակը անպայման կապ ունի հյուսիս-արևելյան կողմի արաբական զարդարանքներով սրահի հետ: Գտնված առաստաղի տախտակներու վրայի ծաղկանկար զարդերու ոճը նույնպես արաբական է և խառն է գաճե ժապավեններուն վրայի քանդակներուն ճիշտ նման ձևերով. թերևս այս մեծ սենյակը հյուսիս-արևելյան սրահը շինել տվող խանի հարեմին հատուկ էր պալատի հարավային անջատ բաժնին մեջ:

Այս սենյակին ալ շատ ուշ ժամանակ շինված և գաճե զարդարանքներով սրահին ժամանակակից ըլլալուն ապացույց կարող են համարվել հետևյալ նշանները: Նախ՝ նույն ձևով չորս մեծ անջատ սյուներու օժանդակությամբ ծածկված առաստաղով հին սենյակի մը հետքեր գտնվեցան ասոր հատակին, որուն սյուներու խարիսխները ավելի ճոխ և ճիշտ նման էին մայր եկեղեցու արևմտյան դռան առջև այժմ գոյություն ունեցող խարիսխներուն. երկրորդ՝ վերջին շինության ժամանակ ջրամբարը մասամբ փլած և մինչև բերանը հողով լեցվելով անգործածելի դարձած էր, ամբողջովին վրան սալարկվելով. երրորդ՝ ջրամբարեն ամրոցի աղբյուրները ջուր փոխադրող կավե և երկաթե նեղ խողովակները սենյակի սալահատակին ներքև խանգարված և ընդհատված էին. չորրորդ՝ նկարազարդ առաստաղը ընկած էր ուղղակի վերջին սալահատակին վրա:

Ջրամբարը ունի 7 մետր լայնություն, 7 մետր երկայնություն, 5 մետր խորություն, մեջտեղեն բաժանված է միջնորմով մը և գաճ ու կրով ծեփված հատակով միասին: Միջնորմին վրա բացված են երկու սրակամար, ցած, հաղորդակցության դռներ: Պատերը շինված են քառակուսի լայն աղյուսներով, կամարներու աղյուսներուն շարվածքը զարմանալի նմանություն ունի հին ասորական և պարսկական շարվածքի ձևին, սա ինքնին մեծ ապացույց է ջրամբարի խիստ հնության:

Պասաժն ալ չէ մնացած իր սկզբնական ձևին մեջ, ավելորդ շինություններով և նորոգություններով բոլորովին տգեղացած է: Արևմտյան մտից դռան բարավորները կեսեն վար անաղարտ պահված են իրենց հնագույն հայ ոճի քանդակազարդով, որուն առաջին օրինակը կտեսնվի Տեկորի եկեղեցիին վրա և վերջին օրինակը՝ Մայր եկեղեցվո հարավային պատուհաններեն մեկուն շուրջը: Պալատին կից սագաշեն եկեղեցին, որ ավելի հին է, իր պսակներուն վրա ունի ճիշտ նույն քանդակները:

Պալատը, բացի արքունիքի ընդարձակ պարիսպեն, շրջապատված էր նաև առանձին շրջափակով մը[1] 27-են մինչև 30 մետր հեռավորության վրա, ուրկեց դուրս ձգված էին նախնի արքայազուններու հատուկ հինգ տոհմային փոքր եկեղեցիները, բացի պալատի հնագույն սագաշեն եկեղեցիեն և անոր կից մատուռեն, որն որ անկարելի էր: Մահմեդականներու օրով այս եկեղեցին ևս իբր մզկիթ գործածված կերևի, որովհետև քանդակազարդ որմնասյանց խոյակներու վրա գտնված մարդոց և կենդանիներու գլուխները միայն տաշեր են, առանց մազի չափ մնասելու ուրիշ քանդակներու:

[1] Այս շրջափակը անպայման մահմեդական տիրապետության ժամանակ է շինված:



Անաղարտ մնացած տնային կահկարասիներ ընավ չերևցան. ընդհանրապես հախճապակիներու և խեցեղեններու փշրանքներ էին գտնվածները, բայց չնայելով անոնց փշրված վիճակին, քանի մը դարաշրջանի աննման արվեստագործական նմուշներու մեծ հավաքածո մը կազմվեցավ անոնցմով, մինչև իսկ փյունիկյան ապակիներ գտնվեցան անոնց մեջ:

Մինչև բերանը հողով լեցված հորե մը գեղեցիկ ու ներդաշնակ գույներով ծաղկազարդված և ոսկեզօծված ամենաընտիր տեսակի հախճապակիի կտորներ դուրս եկան:

Պալատի զանազան մասերուն մեջ գտնվածներն ալ, թեև ավելի նորագույն ժամանակի, բայց շահեկանութենե զուրկ չէին: Իր տեսակին մեջ խիստ հազվագյուտ կանաչագույն մի ման բարձրաքանդակ ծաղիկներ և արաբերեն վերտառություններ ուներ վրան՝ խիստ ճարտարորեն նկարված. ուրիշ երկու ամաններու մեջ նկարված էին արևելյան առասպելներեն առնված՝ ուրախության և վշտի ոգիները՝ թագազուրկ և թևավոր աղջկա կերպարանքով. մի ուրիշ կտորի վրա մնացած էր մարդու մը ուսը, որուն վրա կերևեր այսօրվանին զարմանալի նմանությամբ զինվորական ուսնոց մը: Բազմաթիվ գունագեղ ծաղկանկար փշրանքներու մեջ շատ հետաքրքրական է կտոր մը, որուն վրա գույներու կատարյալ ճշտությամբ նկարված է Անիի ձորերուն մեջ առատորեն բուսնող մանուշակագույն ծաղիկը՝ ցողունով և տերևներով միասին: Հողե ամանի կտորներ պատահեցան բարձրաքանդակ հայերեն տառերով:

Ուշադրավ էին երկու մատանիներ, որոնց մեկուն բյուրեղանման սպիտակ ակին վրա հազիվ նկատելի փոքրությամբ երկու տող արաբերեն գրված էր անհավատալի նրբությամբ, իսկ մյուսին պարզ բրոնզյա ակին վրա քանդակված էր մի թռչուն:



# ՀԱՎԵԼՎԱԾ

# ՑՈՒՑԱԿ

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆԻ ԿԱՏԱՐԱԾ ՉԱՓԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ԱՑԺՄ ՊԱՀՎՈՒՄ ԵՆ ՆՐԱ ԺԱՌԱՆԳՆԵՐԻ ՄՈՏ[1]

| Մրարների №№ | Վայրը և ճարտարապետական հուշարձանի անունը | Չափագրության բովանդակությունը | Վիճակը |
|---|---|---|---|
| 1 | Անիի մայր եկեղեցի (կաթուղիկե) | ա. Հատակագիծ | տուշով |
| | | բ. Արևելքից արևմուտք կտրվածք | » |
| | | գ. Հարավային մուտք | » |
| | | դ. Խոյակներ և խարիսխներ | » |
| | | ե. Սյուներից մեկը | » |
| 2 | Զվարթնոց | ա. Հատակագիծ | մատիտով |
| | | բ. Ճակատի վերակազմություն | տուշով |
| | | գ. Կարնիզի ձև | » |
| | | դ. Բոլորակ պատուհանների շրջանակների քանդակազարդության ձևեր | » |
| 3 | Զվարթնոց | ա. Խարիսխ, խոյակ և առանձին մասեր | մատիտով |
| | | բ. Տաճարին կից բնակելի շենքերի մի մասի հատակագիծ | » |
| | | գ. Տաճարի հատակագիծ | » |
| | | դ. » » | » |
| | | ե. Կաթողիկոսարանի և բնակելի շենքերի ընդհանուր հատակագիծ | » |
| | | զ. Տաճարի հատակագիծ | » |
| | | է. Տաճարի հատակագծի մի մասը | » |
| | | ը. Բնակելի շենքերի մի մասի հատակագիծ | » |
| | | թ. Բնակելի շենքերի մի այլ մասի հատակագիծ | » |
| | | ժ. Արտաքին որմնակամարներ տաճարի վրա | » |
| 4 | Անիի Գրիգոր Լուսավորիչ (Նախշլի) եկեղեցի | ա. Հատակագիծ | մատիտով |
| | | բ. Արևելյան ճակատ | » |
| | | գ. Հարավային ճակատ | » |
| | | դ. Արևմտյան ճակատ | » |
| | | ե. Արևելքից արևմուտք կտրվածք | » |
| | | զ. Գմբեթի մանրամասնություններ | » |
| | | է. Քանդակազարդ կամարներ | » |
| | | ը. Նույնի շարունակություն | » |
| | | թ. Նույնի շարունակություն | » |

[1] Առայժմ հնարավորություն չունենալով տպագրության հանձնելու հեղինակի կատարած չափագրությունների լիակատար ժողովածուն, որոնց միայն մաքրագծումը պահանջում է երկար ժամանակ, մենք այստեղ տպագրում ենք հեղինակի մոտ մնացած և առաջին իմպերիալիստական պատերազմի ժամանակ կորստից փրկված չափագրությունների ցուցակը: Այդ չափագրությունների ժողովածուն (իհարկե՝ ընտրությամբ) պետք է կազմի ներկա ժողովածուի երկրորդ հատորը, որի արժեքը չափազանց մեծ կլինի, երբ նկատի ունենանք նրանց կատարման ժամանակը՝ 1904–1917 թ.թ., որից հետո ժամանակի ընթացքում, բնության տարերքի հետևանքով և մարդկանց ձեռքով, գլխավորապես առաջին իմպերիալիստական պատերազմի ընթացքում, քանդվել և ավերվել են այդ հուշարձանները:

Ներկա ցուցակը, ըստ իմ ենթադրության, կազմված է մասամբ Թորամանյանի մահամերձ հիվանդ եղած միջոցին և մասամբ էլ նրա մահվանից հետո՝ ուրիշների ձեռքով: Ցուցակի մեջ նյութերի դասավորությունը լավ չի կատարված և շատ դեպքերում, չափագրությունների անունները մնացել են անորոշ: Ցուցակը տպագրում ենք համարյա թե նույնությամբ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ հեղինակի դիվանում նյութերը դասավորված են ըստ այս ցուցակի:

Կազմող

| Շրջանների №№ | Վայրը և ճարտարապետական հուշարձանի անունը | Ջափագրության բովանդակությունը | Վիճակը |
|---|---|---|---|
| | | ժ. Նույնի շարունակություն | » |
| | | ժա. Գավթի մասեր | » |
| | | ժբ. Այլևայլ մանրամասնություններ | » |
| | | ժգ. Պատուհանի շրջանակներ, պսակներ և այլ զարդեր | » |
| | | ժդ. Արտաքին որմնասյուների քանդակազարդ abaque-ներ | » |
| | | ժե. Գավթի հատակագիծ | » |
| 5 | Անիի ս. Գրիգոր եկեղեցի (դագկաշեն) | ա. Ընդհանուր հատակագիծ | » |
| | | բ. Եկեղեցու հատակագիծ | » |
| | | գ. Եկեղեցու մի մասի հատակագիծ | » |
| | | դ. Բոլորակ պատուհաններ, շրջանակներ | » |
| | | ե. Ներսի այուների խոյակներ | » |
| | | զ. Զարդերի նմուշներ | » |
| | | է. Զարդաքանդակներ | » |
| 6 | Անիի Ապուղամրենց ս. Գրիգոր եկեղեցի | ա. Հատակագիծ | մատիտով |
| | | բ. Արևելյան ճակատ | » |
| | | գ. Հյուսիսից հարավ կտրվածք | » |
| | | դ. Ներքին որմնասյուներ | » |
| | | ե. Երկու խորշեր | » |
| | | զ. Զարդաքանդակներ | » |
| | | է. Մուտք | » |
| | | ը. Պատուհաններ | » |
| | | թ. Զանազան մանրամասներ | » |
| 7 | Իրաձորի անանուն եկեղեցի | ա. Խոյակներ | » |
| 8 | Անիի պալատական եկեղեցի | ա. Հատակագիծ, ճակատներ, կտրվածք | » |
| | | բ. Քանդակազարդ մասեր | » |
| | | գ. Քանդակազարդ մասեր | » |
| 9 | Էջմիածնի տաճար | ա. Հատակագիծ | » |
| | | բ. Հատակագիծ | » |
| | | գ. Հատակագծի մանրամասնություններ | » |
| | | դ. Ճակատի մասեր | » |
| | | ե. Ճակատի մասեր | » |
| 10 | Տեկորի տաճար | ա. Հատակագիծ | » |
| | | բ. Հատակագիծ | » |
| | | գ. Հարավային-արևմտյան և հյուսիսային ճակատներ | » |
| | | դ. Արևելյան ճակատ | » |
| | | ե. Հատակագիծ | » |
| | | զ. Դռան մանրամասնություններ | » |
| | | է. Այլ դռան մանրամասնություններ | » |
| | | ը. Այլ դռան մանրամասնություններ | » |
| | | թ. Այլ դռան մանրամասնություններ | » |
| | | ժ. Լուսամուտների մանրամասնություններ | » |
| | | ժա. Քառակուսի գմբեթի լայնքը | » |



| Շրջանների №№ | Վայրը և ճարտարապետական հուշարձանի անունը | Ջափագրության բովանդակությունը | Վիճակը |
|---|---|---|---|
| | | ժբ. Հյուսիս-արևմտյան ճակատ | » |
| | | ժգ. Գմբեթի մանրամասնություններ | » |
| | | ժդ. Հարավ-արևելյան և հյուսիս-արևելյան անկյուններ | » |
| | | ժե. Ծածկի չափագրություններ | » |
| | | ժզ. Խարիսխներ և պսակներ | » |
| | | ժէ. Սեղանի երկու կողմի որմնասյուներ | » |
| | | ժը. Խարիսխներ և զանազան քանդակներ | » |
| | | ժթ. Խոյակներ | » |
| | | ի. Խոյակներ | » |
| | | իա. Խոյակներ և պատուհանի կամարներ | » |
| | | իբ. Տաճարի հատակագիծ | » |
| 11 | Բագարան | ա. Հատակագիծ | » |
| | | բ. Արևմտյան և հյուսիսային կողմի կտրվածքներ | » |
| | | գ. Արևելյան և հարավային կողմի կտրվածքներ | » |
| | | դ. Արևմտյան կողմի կտրվածք | » |
| | | ե. Արևելյան խորանի պատուհանի պսակ | մատիտով |
| | | զ. Խոյակներ, երիզ (կարնիզ) | » |
| 12 | Խծկոնք | ա. Հատակագիծ | » |
| | | բ. Պարագծի չափում | » |
| | | գ. Հատակագիծ, կտրվածք և առանձին մասեր | » |
| | | դ. Բոլորակ երկհարկ եկեղեցու չափումներ | » |
| | | ե. Դռան և պատուհանի մանրամասնություններ | » |
| | | զ. Խոյակներ և խարիսխներ | » |
| | | է. Մահարձան | » |
| | | ը. Զարդաքանդակներ | » |
| | | թ. Զարդաքանդակներ | » |
| | | ժ. Կամարներ և այլ մանրամասնություններ | » |
| 13 | Հռիփսիմեի տաճար | ա. Հատակագիծ | » |
| | | բ. Հատակագիծ | » |
| | | գ. Ճակատ և ծածկ | » |
| | | դ. Հատակագիծ | » |
| | | ե. Հարավային ճակատ | » |
| | | զ. Գմբեթի կտրվածք | » |
| 14 | Բագնայր | ա. Առաստաղի մի մասը | » |
| | | բ. Խարիսխներ և խոյակներ | » |
| | | գ. Գավթի կտրվածք | » |
| | | դ. Գավթի առաստաղի մասեր | » |
| | | ե. Առաստաղի հաչիմներ | » |
| | | զ. Առաստաղի մանրամասնություններ | » |
| | | է. Գմբեթի ստորին մասը | » |
| | | ը. Խարիսխներ | » |
| | | թ. Առաստաղի մանրամասնություններ | » |
| | | ժ. Առաստաղի մանրամասնություններ | » |

| Շրջանների №№ | Վայրը և ճարտարապետական հուշարձանի անունը | Զափագրության բովանդակությունը | Վիճակը |
|---|---|---|---|
| | | ժա. Խարիսխ, խոյակ և կամար | » |
| | | ժբ. Երիզ (կարնիզ) | » |
| | | ժգ. Հատակագիծ | » |
| | | ժդ. Խոյակներ և այլ մանրամասնություններ | » |
| | | ժե. Հատակագծեր | » |
| | | ժզ. Ընդհանուր հատակագիծ | » |
| | | ժէ. Հատակագիծ | » |
| | | ժը. Հատակագծեր | » |
| | | ժթ. Հատակագծեր | » |
| | | ի. Հատակագծեր | » |
| | | իա. Առաստաղի մասեր, խոյակ և այլն | » |
| 15 | Հոռոմոսի վանք, ս. Գևորգ եկեղեցի | ա. Հատակագիծ | » |
| | | բ. Հարավային ճակատ և արևելքից արևմուտք կտրվածք | » |
| | | գ. Հյուսիսային ճակատ | » |
| | | դ. Արևելյան ճակատ | » |
| | | ե. Մանրամասնություններ | » |
| | | զ. Պակներ | » |
| 16 | Հոռոմոսի վանք, Աշոտ Ողորմածի գերեզման | ա. Աշոտ Ողորմածի գերեզմանի ճակատներ և հատակագիծ | » |
| | | բ. Նույնի կտրվածք | » |
| 17 | Հոռոմոսի վանք, Ռուզուքանի դամբարան | ա. Դամբարանի մոտի հին եկեղեցու հատակագիծ | մատիտով |
| | | բ. Նույն եկեղեցու արևմտյան ճակատ և արևելքից արևմուտք կտրվածք | » |
| | | գ. Արտաքին ճակատի քանդակներ | » |
| | | դ. Արևելյան հին պատ | » |
| | | ե. Արևելյան պատի որմնասյուներ և կամարների մանրամասնություններ | » |
| | | զ. Արևելյան պատի խաչքարեր | » |
| | | է. Դամբարանի ծածկ | » |
| | | ը. Դամբարանի արևելյան պատը ներսից | » |
| | | թ. Դամբարանի առաստաղ | » |
| 18 | Հոռոմոսի վանք, ս. Հովհաննես եկեղեցի | ա. Հատակագիծ, արևելքից արևմուտք կտրվածք և հարավային ճակատ | » |
| | | բ. Խորշեր և պսակներ | » |
| | | գ. Մանրամասնություններ | » |
| 19 | Հոռոմոսի վանք, ս. Հովհաննես եկեղեցու հարավարևմտյան կողմի երեք սրահներ | ա. Սյունազարդ դահլիճի մեջ գտնվող խաչքարեր | » |
| | | բ. Նշխարատան արևելքից արևմուտք կտրվածք | » |
| | | գ. Գմբեթի ներսի ստալակտիտներ | » |
| | | դ. Նշխարատան սյուներ և որմնասյուներ | » |
| | | ե. Մանրամասնություններ | » |
| | | զ. Մանրամասնություններ | » |
| 20 | Հոռոմոսի վանք, ս. Հովհաննես եկեղեցու գավիթ | ա. Գավթի հատակագիծ | » |
| | | բ. Գավթի առաստաղի ընդհանուր պատկեր | » |
| | | գ. Գավթի ներքին սյուներ | » |
| | | դ. Գավթի առանձին սյուների և որմնասյուների մանրամասնություններ | » |



| Շրջանների №№ | Վայրը և ճարտարապետական հուշարձանի անունը | Զափագրության բովանդակությունը | Վիճակը |
|---|---|---|---|
| | | ե. Գավթի սյուների և խոյակների մանրամասնություններ | » |
| | | զ. Զանգակատան շուրջը եղած սյուների տեսակներ | » |
| | | է. Զանգակատան հատակագիծ, ճակատ և կտրվածք | » |
| | | ը. Զանգակատան ներքին և արտաքին տեսք | » |
| | | թ. Զանգակատուն կազմող ութը միակտուր քարերի դիրքը | » |
| | | ժ. Զանգակատան միջի ութը քարերի վրայի քանդակներ | » |
| | | ժա. Նույն | » |
| | | ժբ. Առաստաղի հյուսիս-արևելյան անկյուն | » |
| | | ժգ. Առաստաղի հյուսիս-արևմտյան մասը | » |
| | | ժդ. Առաստաղի հարավային կողմի միջին մասը | » |
| | | ժե. Առաստաղի հարավ-արևմտյան մասը | » |
| | | ժզ. Առաստաղի հարավ-արևմտյան մասը | մատիտով |
| | | ժէ. Գավթի հարավային ճակատ, հյուսիսային ճակատ և հյուսիսից հարավ կտրվածք | » |
| 21 | Հոռոմոսի վանք, Ռուզուքանի դամբարանի վրայի մատուռներ | ա. Հատակագիծ, ճակատ և կտրվածք | » |
| | | բ. Ռուզուքանի մատուռների մասեր | » |
| 22 | Հոռոմոսի վանք, ս. Մինաս եկեղեցի | ա. Հատակագիծ և այլ մասեր | » |
| | | բ. Հյուսիսից հարավ կտրվածք, հարավային ճակատ և մանրամասներ | » |
| | | գ. Արևելյան ճակատը և հյուսիսից հարավ կտրվածք | » |
| | | դ. Խորշերի պսակներ | » |
| 23 | Հոռոմոսի վանք, Սմբատ Տիեզերակալի դամբարան | ա. Մատուռի հատակագիծ, կտրվածք, մանրամասներ | » |
| 24 | Հոռոմոսի վանք, ս. Հովհաննես եկեղեցու հյուսիսային կողմի դամբարան | ա. Հատակագիծ | » |
| | | բ. Երեք մատուռների հատակագիծ | » |
| | | գ. Դամբարանի միջի խաչքարեր | » |
| 25 | Հոռոմոսի վանք, ս. Հովհաննես եկեղեցու հարավարևմտակողմի հյուրատուն և դիվանատուն | ա. Պարսպի մուտքը դրսից | » |
| | | բ. Առաջին սրահի հյուսիսից հարավ կտրվածք, նախագավթի և մատենադարանի հյուսիսային ճակատներ | » |
| | | գ. Նշխարատան կից երկրորդ սրահի կամարների մասեր | » |
| | | դ. Նշխարատան հատակագիծ | » |
| | | ե. Մատենադարանին կից հին հյուրատների շարքը և ս. Հովհաննես եկեղեցու հարավային կողմի նրբանցք | » |
| | | զ. Փլած դիվանատան մասեր | » |
| | | է. Մեջտեղից բաժանված հարավային կողմի երևույթ | » |
| | | ը. Հեճուպի դատեր դամբարանի հատակագիծ | » |
| | | թ. Հեճուպ Վահրամի դատեր դամբարանի միջի երկու խաչքարերն արևելյան պատի վրա | » |
| | | ժ. Նույն դամբարանի կտրվածք | » |
| | | ժա. Զանազան սևագրություններ | » |
| 26 | Անի | ա. Զանազան բեկորներ՝ 12 թերթի վրա | » |
| 27 | Անի-Ախուրյանի կամուրջ | ա. Հատակագիծ | » |
| | | բ. Հեռանկար | » |
| 28 | Անի Կզկալա | ա. Կզկալայի եկեղեցու հատակագիծ | մատիտով |
| | | բ. Եկեղեցու հյուսիսային, արևմտյան և հարավային ճակատներ | » |

| Մշարների №№ | Վայրը և ճարտարապետական հուշարձանի անունը | Ձափագրության բովանդակությունը | Վիճակը |
|---|---|---|---|
| | | գ. Եկեղեցու հյուսիսից հարավ, արևելքից արևմուտք կտրվածքներ և արևելյան ճակատ | » |
| | | դ. Կզկալայի եկեղեցու գմբեթի մանրամասներ | » |
| | | ե. Եկեղեցու որմնանկարներ և այլ մասեր | » |
| | | զ. Եկեղեցու որմնանկարներ | » |
| | | է. Խոյակներ և պակներ | » |
| | | ը. Սևագրություններ | » |
| 29 | Անիի կաթուղիկե | ա. Հատակագիծ սեղանի և պատուհանների մասերի | » |
| | | բ. Հատակագիծ տաճարի միջին մասերի | » |
| | | գ. Հատակագիծ տաճարի արևմտյան մասերի | » |
| | | դ. Հատակագիծ հարավային պատի | » |
| | | ե. Հարավային ճակատ | » |
| | | զ. Արևմտյան ճակատ | » |
| | | է. Հյուսիսից հարավ կտրվածք | » |
| | | ը. Արևմուտքից արևելք կտրվածք | » |
| | | թ. Հյուսիսային և հարավային մուտքեր | » |
| | | ժ. Գմբեթի մանրամասներ | » |
| | | ժա. Միջին մեծ սյուն | » |
| | | ժբ. Մանրամասնություն | » |
| | | ժգ. Հարավային ճակատի մանրամասներ | » |
| | | ժդ. Արևմտյան ճակատի պատուհանների քանդակներ | » |
| | | ժե. Այլ պատուհանների քանդակներ | » |
| | | ժզ. Քանդակազարդ մանրամասնություններ | » |
| | | ժէ. Արևելյան խորշեր | » |
| | | ժը. Մանրամասնություն | » |
| | | ժթ. Տաճարի արևելյան կողմի դամբարանի հատակագիծ | » |
| | | ի. Խոյակներ | » |
| | | իա. Մանրամասներ | » |
| 30 | Անիի միջնաբերդ | ա. Եկեղեցու արևելյան ճակատ և հյուսիսից հարավ կտրվածք | » |
| | | բ. Արևելյան կողմի խորանի զույգ պատուհաններ | » |
| | | գ. Միջնաբերդի գագաթի մոտ գտնվող բազմանկյուն եկեղեցու արևմտյան ճակատ և հյուսիսից հարավ կտրվածք | » |
| | | դ. Միջնաբերդի հարավարևմտյան անկյունի ժայռի գլխին շինած եկեղեցու չափագրություններ | » |
| | | ե. Նույն եկեղեցու մանրամասնություններ | » |
| | | զ. Սևագրություն | մատիտով |
| 31 | Անիի միջնաբերդի հարավային լանջի եկեղեցի | ա. Հատակագիծ | » |
| | | բ. Հյուսիսային, հարավային ճակատներ և հյուսիսից հարավ կտրվածք | » |
| | | գ. Արևելքից արևմուտք կտրվածք և այլ մասեր | » |
| | | դ. Հարավային մուտք | » |
| 32 | Անի, Մառի պեղած ս. Գրիգոր եկեղեցի (գագկաշեն) | ա. Հատակագիծ | » |
| | | բ. Մանրամասներ | » |
| | | գ. Որմնասյուներ և այլ զարդեր | » |
| | | դ. Պակներ | » |



| Մշարների №№ | Վայրը և ճարտարապետական հուշարձանի անունը | Ձափագրության բովանդակությունը | Վիճակը |
|---|---|---|---|
| 33 | Անիի վրաց եկեղեցի | ա. Հատակագիծ, հյուսիսային կողմը ներսից և մանրամասներ | » |
| 34 | Անի, չորս մեծ սյուներ | ա. Հատակագիծ և մանրամասներ | » |
| 35 | Անի, Մանուչեի մզկիթ | ա. Հատակագիծ և որմնասյուներ | » |
| | | բ. Կտրվածք | » |
| | | գ. Դռան բարավորներ | » |
| | | դ. Առաստաղի մոզայիկներ | » |
| | | ե. Զարդաքանդակներ | » |
| 36 | Անի, Հովվի եկեղեցի | ա. Հատակագիծ և ճակատ | » |
| 37 | Անի, ս. Փրկիչ | ա. Հատակագիծ | » |
| | | բ. Հյուսիսային ճակատ և հյուսիսից հարավ կտրվածք | » |
| 38 | Անի, Ախուրյան գետի ձորագլխին քանդված մի եկեղեցի | ա. Հատակագիծ և մասեր | » |
| 39 | Անի, փոքրիկ մատուռ Ախուրյանի ափին | ա. Հատակագիծ, կտրվածք և ճակատ | » |
| 40 | Անի, Առաքելոց եկեղեցու գավիթ | ա. Գավթի հատակագիծ եկեղեցու հետ միասին | » |
| | | բ. Արևելյան ճակատ | » |
| | | գ. Հյուսիսից հարավ կտրվածք | » |
| | | դ. Արևելյան մուտք | » |
| | | ե. Քանդակազարդ որմնամասեր | » |
| | | զ. Որմնասյուների ստալակտիկ քանդակներ | » |
| | | է. Ստալակտիտ քանդակներ | » |
| | | ը. Որմնասյուներ | » |
| | | թ. Առաստաղի մոզայիկներ | » |
| | | ժ. Գավթի փլված մասի արևելյան պատի վրայի խաչքարեր | » |
| | | ժա. Գմբեթի միջի ստալակտիտներ | » |
| | | ժբ. Խաչքարեր՝ գավթում | » |
| | | ժգ. Սևագրություններ՝ երկու թերթ | » |
| 41 | Անիի Առաքելոց եկեղեցի | ա. Հատակագիծ | մատիտով |
| | | բ. Արևելյան ճակատ | » |
| | | գ. Արևելքից արևմուտք կտրվածք | » |
| | | դ. Արևելյան մատուռների կտրվածք | » |
| | | ե. Երկու մուտքեր | » |
| | | զ. Որմնասյուների քանդակազարդ շրջանակներ | » |
| | | է. Խոյակներ և այլ մասեր | » |
| | | ը. Քանդակազարդ մասեր | » |
| | | թ. Սևագրություն | » |
| 42 | Կուսանաց վանք | ա. Բեխենց վանքի հատակագիծ | » |
| | | բ. Ճակատ և կտրվածք | » |
| | | գ. Արտաքին կամարներ և շրջանակներ | » |
| | | դ. Մանրամասներ | » |
| | | ե. Մանրամասներ | » |
| 43 | Անի, զույգ վաճառատուն | ա. Քանդակազարդ մասեր և մանրամասնություններ՝ 12 թերթ | » |

| Մրարների №№ | Վայրը և ճարտարապետական հուշարձանի անունը | Ձափագրության բովանդակությունը | Վիճակը |
|---|---|---|---|
| 44 | Անի, Մաղկոցաձորի գլխի կարծեցյալ պալատ | ա. Հատակագիծ | » |
| | | բ. Մուտք | » |
| 45 | Սևագիր չափագրություններ զանազան հուշարձանների | ա. Մրենի եկեղեցու հատակագիծ | » |
| | | բ. Մարմաշենի հատակագիծ | » |
| | | գ. Օշականի՝ Մորիկի մոր գերեզմանին վերագրվող այան ճակատը | » |
| | | դ. Երերույքի հատակագիծ | » |
| | | ե. Քասաղի եկեղեցու հատակագիծ | » |
| | | զ. Բանայի եկեղեցու հատակագիծ | » |
| | | է. Ագարակի կիսավեր եկեղեցու հատակագիծ | » |
| | | ը. Նույն եկեղեցու կտրվածք | » |
| | | թ. Նույն եկեղեցու մեկ այլ կտրվածք | » |
| | | ժ. Փարբի գյուղի Միրանավոր եկեղեցու հատակագիծ | » |
| | | ժա. Հռիփսիմեի ընդհանուր հատակագիծ | » |
| | | ժբ. Անիի Առաքելոց եկեղեցու գավթի Հեռանկարի սևագրություն | » |
| | | ժգ-ժե. Զանազան սևագիր չափագրություններ՝ 3 թերթի վրա | » |
| 46 | Զանազան հուշարձանների չափագրությունների մաքրագիր օրինակներ | ա. Արթիկի եկեղեցու հատակագիծ | » |
| | | բ. Մաստարայի եկեղեցու հատակագիծ | » |
| | | գ. Աղյամանի եկեղեցու հատակագիծ | » |
| | | դ. Գրիգոր Մամիկոնյանի՝ Եղվարդում շինած եկեղեցու հատակագիծ | » |
| | | ե. Լմպատավանքի հատակագիծ | տուշով |
| | | զ. Տրդատի՝ Գառնիում շինած Հովանոցի հատակագիծ | » |
| | | է. Աստվածընկալի հարավային սրահին կից 5-րդ եկեղեցու հատակագիծ | » |
| | | ը. Արթիկի փոքր եկեղեցու հատակագիծ | » |
| | | թ. Եղվարդի 5-րդ դարու փոքր եկեղեցու հատակագիծ | » |
| | | ժ. Նույնը՝ ավելի փոքր դիրքով | » |
| | | ժա. Շիրվանջուղի եկեղեցու հատակագիծ | » |
| | | ժբ. Նույնը՝ ավելի փոքր դիրքով | » |
| | | ժգ. Քասաղի եկեղեցու հատակագիծ | » |
| | | ժդ. Եղվարդի՝ 6-րդ դարում շինած կաթուղիկեի հատակագիծ | » |
| | | ժե. Քասաղի եկեղեցու հատակագիծ | » |
| | | ժզ. Երերույքի հատակագիծ | » |
| | | ժէ. Նույնը՝ ավելի մանրագիր | » |
| | | ժը-ի. Զանազան չափագրություններ 3 թերթի վրա | » |
| 47 | Տեկորի տաճար | «Տեկորի տաճարը» գրքի մեջ լույս տեսած չափագրությունների բնագրեր՝ 19 թերթի վրա | » |
| 47ա | Զվարթնոց | Ընդհանուր հատակագիծ | » |
| 47բ | Զվարթնոց | Նույնը | » |
| 48 | Բյուրականի եկեղեցի | Հատակագիծ | մատիտով |
| 49 | Անի, վաճառատուն | Հատակագիծ | » |
| 50 | Անի, կամուրջ | Հեռանկար | » |
| 51 | Զվարթնոց | Զանազան չափագրություններ՝ 8 թերթի վրա | » |



| Մրարների №№ | Վայրը և ճարտարապետական հուշարձանի անունը | Ձափագրության բովանդակությունը | Վիճակը |
|---|---|---|---|
| 52 | Էջմիածին | Տաճարի հին շենքի հատակագիծ | տուշով |
| 53 | Զանազան | Հատակագծերի հավաքածու | մատիտով |
| 54 | Զանազան | Սևագիր չափագրություններ՝ 12 թերթի վրա | » |
| 55 | Անի, Բագրատունյաց պալատ | Հատակագիծ | » |
| 56 | Անի, պարիսպներ (քննելի) | Հատակագիծ՝ 3 թերթի վրա | » |
| 57ա | Անիի կաթուղիկե | Հեռանկար | » |
| 57բ | Անիի կաթուղիկե | Արևելյան խորշերից մեկը | » |
| 58 | Անիի պարիսպներ | Հատակագիծ՝ 6 թերթի վրա | մատիտով |
| 59 | Անիի պարիսպներ | Ընդհանուր հատակագիծ | » |
| 60 | Անիի պարիսպներ | Ձափագրության սևագրություններ՝ 15 թերթի վրա | » |
| 61 | Անի, զանազան | Ձանազան սևագիր չափագրություններ Անիի հուշարձանների՝ 38 թերթի վրա | » |
| 62 | Խըզնավուզ | Ուրարտական ամրոցի հատակագիծ | » |
| 63 | Աղավնատուն | Կիկլոպյան ամրոցի հատակագիծ | » |
| 64 | Զվարթնոց և Անիի գազվաշեն ս. Գրիգոր | Սևագիր չափագրություններ | » |
| 65 | Մարմաշեն | Արևմտյան ճակատ | տուշով |
| 66 | Պարիսպներ (Անի) | Ձափագրությունների սևագրություններ՝ 11 թերթի վրա | մատիտով |
| 67 | Ինքնուրույն | Ձանազան ինքնուրույն կոմպոզիցիաներ՝ 14 թերթի վրա | » |
| 68 | Զանազան | Հովվի եկեղեցու և այլ եկեղեցիների հատակագծեր՝ 3 թերթի վրա | տուշով |
| 69 | Անիի Առաքելոց եկեղեցի | Առաստաղը | մատիտով |
| 70 | Անիի Առաքելոց եկեղեցի | Հարավային մուտք | » |

# ԲԱՌԱՐԱՆ

## ԲՆԱԳՐՈՒՄ ԳՈՐԾԱԾՎԱԾ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ[1]

*Աթաշկիահ* – *կրակապաշտների աշտարակաձև տաճար Պարսկաստանում. ռուս.* храм огнепоклонников:

*Ակրոպոլ* – *հունական քաղաքի միջնաբերդ, ակրոպոլիս. ռուս.* акрополь:

*Աղոթասրահ* – *եկեղեցու դահլիճի կենտրոնական և արևմտյան կողմը, ժողովրդին հատկացած մասը:*

*Ամբարտակ* – *բարձր աշտարակ, բուրգ, արհեստական թումբ, ջրի առաջ շինված պատնեշ, ռուս.* плотина:

*Ամրոց* – *բերդ, քաղաքի պարսպապատ մաս, պարսպով ամրացրած փոքրիկ բնակավայր. ռուս.* крепость:

*Աշտարակ*- *բարձր դիտանոց, բարձրադիր փոքրիկ ամրոց, բերդապարսպի բուրգ. ռուս.* башня:

*Ապարանք* – *իշխանական կամ թագավորական պալատ: Հին նշանակությամբ՝ մեծ տուն. ռուս.* дворец:

*Ասպնջականոց* – *հյուրատուն, հյուրանոց, պալատի մեջ հյուրերի գիշերելուն հատկացված մաս:*

*Ավագ բեմ* – *եկեղեցու գլխավոր բեմ: Այսպես է կոչվում եկեղեցու արևելյան կողմի կենտրոնական խորանը, ի տարբերություն հարավային, հյուսիսային և այլ երկրորդական բեմերի. ռուս.* главный алтарь:

*Ավանդատուն* – *եկեղեցու խորաններից (փոքրիկ սենյակներից) մեկը կամ վանքում առանձին շինություն, որը հատկացված է մասունքներ և այլ թանկարժեք իրեր պահելու համար. ռուս.* ризница:

*Ատրուշան* – *կրակապաշտների տաճար, կրակատուն, ռուս.* храм огнепоклонников:

*Արջամագիլ* – *արջամագիլ բույսի նմանող քանդակներ. ռուս.* акант:

*Արքունիք* – *թագավորական պալատ իր բոլոր մասերով. ռուս.* царский дворец:

*Բազիլիկ* – *նեղ և երկար թաղակապ դահլիճ, երբեմն սյունաշարքերով բաժանված թևերի. ռուս.* базилика:

*Բարավոր* – *վերնասյամ, դռան շրջանակի վերին մասը:*

*Բարձրաքանդակ* – *ընդհանուր մակերեսից դուրս ցցված ուռուցիկ քանդակներ. ռուս.* горельеф:

*Բերդ* – *պարսպով ամրացրած վայր. ռուս.* крепость:

*Բերդաքաղաք* – *բերդի մեջ շինված քաղաքամաս, քաղաքի պարսպով պարփակված մասը:*

*Բուրգ* – *պարսպից դուրս շեշտված կիսաբոլոր կամ քառանկյուն մասեր, աշտարակ. ռուս.* башня крепости:

*Գալերի* – *սրահ. ռուս.* галерея:

*Գավիթ* – *նախասրահ, եկեղեցուն կից շինված սրահ. ռուս.* притвор:

*Գետնուղի* – *ստորերկրյա ճանապարհ, որ սովորաբար շինում էին բերդերին կից՝ պաշարման ժամանակ դրսի գաղտնի հաղորդակցություն պահելու համար. ռուս.* подземный ход:

*Գմբեթահարկ* – *գմբեթավոր (շենք). ռուս.* купольное (здание):

*Գմբեթարդ* – *գմբեթի ձև ունեցող (գմբեթարթ): Հեղինակը գործ է ածում եկեղեցու աբսիդների գնդաձև առաստաղի համար. ռուս.* конха:

*Դահլիճ* – *մեծ սենյակ, սրահ: Հնում՝ շենքի կենտրոնական մասը, որ ծածկված չէր լինում և ծառայում էր իբրև հավաքատեղի և զվարճության վայր: Համապատասխանում է հռոմեական ատրիում բառին:*

*Դամբարան* – *գերեզման, գերեզմանի վրա շինած շենք. ռուս.* гробница և надгробный памятник:

*Դերբուկ* – *խորտուբորտ տեղ, քարքարոտ վայր:*

*Դոլմեն* – *մեգալիթյան կուլտուրային պատկանող նախնական արկղաձև քարե շինություն. ռուս.* долмен:

*Եկեղեցի* – *քրիստոնյաների պաշտամունքային տաճար. ռուս.* церковь:

*Զանգակատուն* – *եկեղեցուն կից կամ նրա մոտ շինված բարձրադիր գմբեթավոր աշտարակ, որի վրա կախված են եկեղեցի հրավիրելու կոչնակները կամ զանգերը. ռուս.* колокольня:

*Զիկկուռատ* – *աստիճանավոր մեծ աշտարակ Ասորեստանում, որ ծառայում էր իբրև պաշտամունքային տաճար. ռուս.* зиккурат:

*Զոհարան* – *հեթանոսական տաճար, որտեղ զոհեր էին մատուցում աստվածներին. ռուս.* капище:

*Թև* – *նեֆ. ռուս.* неф, корабль:

*Ժամատուն* – *եկեղեցուն կից շինած մեծ դահլիճ. ռուս.* большой притвор:

*Իջևան* – *նախնական ժամանակներում՝ թափառաշրջիկ ցեղերի ժամանակավոր բնակավայր: Միջնադարում հյուրանոց և գլխավորապես եկվոր վաճառականների հյուրատուն և վաճառանոց. ռուս.* гостиный двор:

*Լաստակերտ* – *1. կամարները և պատերի վերին մասերը շինելու ժամանակ դրված փայտե կաղապար. ռուս.* опалубка. *2. շենքերի վերին մասերը շարելու համար փայտե հարմարանք. ռուս.* строительные леса:

*Լուսանցույց* – *փայտից, գաճից կամ մետաղից պատրաստած լուսամուտի բացվածքին ապակու տեղ հագցվող ծակ-ծակ զարդարուն հարմարանք:*

*Խարիսխ* – *սյան ստորին մասը, սյան բազա. ռուս.* база колонны:

*Խոյակ* – *սյան վերին մասը, սյան գլուխ. ռուս.* капитель:

*Խոյող* – *խոյակի ոլորտ. ռուս.* волюта:

*Խորան* – *1. եկեղեցու բեմ. ռուս.* абсида. *2. եկեղեցու մեջ շինած փոքրիկ սենյակ. ռուս.* придел:

*Կաթուղիկե* – *ընդհանուր նշանակություն ունեցող եկեղեցի: Այսպես էին կոչվում գլխավոր եկեղեցիները՝ գավառական, ծխական և այլ տեսակի տեղական նշանակություն ունեցող եկեղեցիներից տարբերելու համար. ռուս.* кафедральный собор:

*Կամարամիջոց* – *կամարների միջև ընկած առաստաղ:*

*Կիկլոպյան (շինություն)* – *հսկայական անտաշ քարերով առանց շաղախի շինված նախնադարյան կառուցվածք. ռուս.* циклопическое (сооружение):

*Կոթող* – *հիշատակի համար կանգնեցրած արձան կամ քար. ռուս.* стела, памятник:

*Կրոմլեխ* – *մեգալիթյան շինության տեսակներից մեկը- մեծ քարերով շարված շրջան, որ ծառայել է իբրև պատսպարան, սրբատեղի կամ դամբարան. ռուս.* кромлех:

*Համբարանոց* – *մթերքների պահեստ: Հին մատենադրության մեջ երբեմն՝ գանձատուն:*

*Հանդիսասրահ* – *կրոնական և աշխարհիկ տոների և այլ հանդեսների հատկացված դահլիճ կամ բացօթյա սրահ. ռուս.* парадный зал:

*Հատակաձև* – *հատակագիծ:*

*Հյուրասրահ* – *հյուրեր ընդունելու դահլիճ:*

*Հողաբլուր դամբարան* – *կուրգան. ռուս.* курган:

*Հովանոց* – *թագավորի կամ իշխանի ամառնային պալատ. ռուս.* летний дворец:

*Մասանց խորան* – *մասունքներ պահելու խորան:*

*Մատենադարան* – *գրադարան, գրադարանին հատկացված շենք:*

*Մատուռ* – *նահատակի գերեզմանի վրա կառուցած, եկեղեցու նմանվող փոքրիկ շենք. ռուս.* часовня:

*Մեգալիթյան (կուլտուրա)* – *այսպես է կոչվում նախնադարյան շինությունների ոճերից մեկը, որ բնորոշ է կրոմլեխներով, դոլմեններով և մենհիրներով. ռուս.* мегалитический:

*Մեհյան* – *կրակատուն, հեթանոսական տաճար. ռուս.* капище:

*Մենաքար* – *տե՛ս մենհիր:*

*Մենհիր* – *մեգալիթյան կուլտուրային պատկանող տնկված ցից քար, որ երբեմն շրջափակված է լինում կրոմլեխով. ռուս.* менгир:

*Միջնաբերդ* – *բերդաքաղաքի բարձրադիր մասում շինած առանձին ամրություն, որտեղ լինում են իշխողների պալատները և զինապահեստները. ռուս.* цитадель, кремль, вышгород:

*Միջնագմբեթ* – *եռահարկ եկեղեցու միջին հարկաբաժինը:*

*Միջնապարիսպ* – *բերդի մի մասն առանձնացնող ներքին պարիսպ:*

*Մկրտատուն* – *շենք կամ շենքի մաս, որ ծառայում էր մկրտության:*

*Մկրտարան* – *մկրտության ավազան. ռուս.* купель:

*Մոզայիկ* – *չքաքար, գույնզգույն քարի հատիկներից շինված (նկար). ռուս.* мозаика:

*Մուլյուրազարդ* – *բարձրաքանդակներով զարդարած:*

*Մույթ* – *հաստահեղույս սյուն, պիլոն. ռուս.* пилон:

*Նախագավիթ* – *շենքի մուտքի առաջ շինած ծածկույթ:*

*Որձաքար* – *բազալտ, պինդ քար:*

*Որմնահյուսություն* – *պատ շարելու արհեստ, որմնադրություն:*

*Որմնամույթ* – *պատին կպած մույթ. ռուս.* пилястр:

*Որմնասյուն* – *պատին կպած կիսասյուն. ռուս.* полуколонна:

*Պահարան* – *շենքի կամ գետնի մեջ շինված գաղտնի մաս, որտեղ պահում են թանկարժեք իրեր. ռուս.* хранилище:

*Պահնորդարան-պահականոց, պահակատուն. ռուս.* караульное помещение:

*Պանթեոն* – *աստվածներին նվիրված հունական և հռոմեական հեթանոսական մեծ տաճար. ռուս.* пантеон:

*Պսակ* – *1. քիվ, կարնիզ. ռուս.* карниз. *պատուհանների, խորշերի և այլ նման մասերի գլխազարդ. ռուս.* бровь:

---

[1] *Երիտ. հնագետ Հռիփսիկ Ջանփոլադյանը Թորամանյանի գործերից դուրս բերեց ճարտարապետական տերմինների լիակատար բառացանկը, որը, սակայն, ավելորդ համարեցինք ամբողջությամբ այստեղ դնել: Բառացանկից ընտրեցինք միայն այն բառերը, որոնք այժմ մեր ճարտարապետները կամ չեն գործածում և կամ գործ են ածում նոր նշանակությամբ: Ընթերցողին որոշ դյուրություն տալու համար բառերի հայերեն բացատրության կողքին շատ դեպքերում դրինք նաև նրանց ռուսերեն համանիշները: Բառերի բացատրության մեջ դրել ենք միայն բնագրում գործածված նշանակությունները:*

*Թորամանյանն ինքը ձեռնարկած է եղել կազմելու հայերեն ճարտարապետական բառարան և ֆրանսերենից հայերեն նույնպիսի բառարան: Առաջինի համար նա մի քանի մատենագիրներից քաղել է շինարարական բառեր և կազմել բառացանկ. երկրորդի համար կազմել է երկու տետրակների մեջ մի քանի տասնյակ A տառի բառեր: Այդ երկուսն էլ ավելորդ համարեցինք տպագրել իբրև անավարտ գործեր:*

*Կազմող*

*Ջրամբար* – *ջրի պահեստ. ռուս.* водохранилище, цистерна:

*Սագաչեն* – *կամարածածկ, օրոցաձև ծածկ ունեցող շենք, ռուս.* сводчатое перекрытие:

*Սելլա* – *հեթանոսական շենքի կենտրոնական մասը. ռուս.* целла:

*Սյունասրահ* – *շենքին կից ծածկույթ ունեցող սյունաշարք. ռուս.* портик:

*Սողոմաքաղ* – *ժողովրդական տան գմբեթավոր փայտաշեն ծածկ, գլխատուն, հազարաշենք, դառնավուճ:*

*Ստալակտիտ* – *կախված զարդարանքների տեսակ., ռուս.* сталактит:

*Վանդակորմ* – *վանդակով կազմած միջնորմ, մի մասը մյուսից բաժանող վանդակ:*

*Վանք* – *եկեղեցական շենքերի խումբ, որտեղ, բացի եկեղեցիներից՝ լինում են նաև միաբանների բնակարաններ, հյուրատուն, գրատուն, դպրանոց, նշխարատուն, ավանդատուն, գոմ, ամբարանոց և այլն. ռուս.* монастырь:

*Վեմ-քար* – *եկեղեցու բեմի վրա դրված և սեղանի ձևով միմյանց հագցրած երկու քարեր – համարվում է եկեղեցու խորանի հիմքը:*

*Վերնագմբեթ* – *եռահարկ տաճարների երրորդ հարկաբաժինը:*

*Վերնասյամ* – *դռան բացվածքը եզերող շրջանակի վերին մասը:*

*Վերնատուն* – *սրահ կամ սյունասրահ՝ շենքի վերին մասերում:*

*Տաճար* – *դահլիճ, մեծ սրահ. ռուս.* зал:

*Տոնասրահ* – *տոնակատարության դահլիճ. ռուս.* церемониальный зал:

*Տուն ասպազինաց* – *հեծյալների զորանոց և հեծելազորի զինապահեստ:*

*Տուն գանձուց* – *գանձատուն, գանձարան:*

*Տուն գինուց (գինվո)* – *մառան, գինու պահեստ:*

*Տուն դիվանի* – *գրասենյակ, դիվան:*

*Տուն պահնորդաց* – *պահականոց, պահակատուն:*

*Տուն պատմուճանաց* – *հանդերձասրահ, նախասրահ՝ վերնազգեստը պահելու:*

*Տուն պատրուճակաց* – *անասունների բաժանմունքը պալատում, գոմ:*

*Ծածրաքանդակ* – *հարթ մակերեսի վրա փորված քանդակ. ռուս.* барельеф:

*Փող* – *պատի առաջակարկառ մասի ծանրությունը պահող կամար. ռուս.* тромп:

*Փող տանց* – *միջանցք, նաև նեղ ու երկարավուն անցք՝ շենքի մի մասից մյուսն անցնելու համար: Նույնն է նաև փողոց բառը՝ հին իմաստով:*

*Քառակուսի* – *քառանկյուն, չորս կողմ ունեցող (առանց. կողմերի հավասարության). ռուս,* четырехугольный:

*Քարակույտ դամբարան* – *գերեզմանի վրա շինած քարաբլուր՝ նախնական ժամանակներում:*

*Քիվ* – *կարնիզ, պսակ. ռուս.* карниз:

*Օտարանոց* – *հյուրատուն, իջևան: Այսպես էին կոչվում սովորաբար վանքերին կից հյուրանոցները:*

*Ֆրոնտոն* – *ճակտոն, պատի վերին եռանկյունաձև մասը, որն ընկնում է հարկաբաժնի և տանիքի թեքության արանքում. ռուս.* фронтон:



## ՖՐԱՆՍԵՐԵՆՈՎ ԳՈՐԾԱԾՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Abaque – *թակաղաղ, սյան խոյակի վերին հարթ մասը, սյան վերնախարիսխ. ռուս.* абака:

Abat-jour – *պատուհանի բացվածքի ձև – դուրսը նեղ, ներսը լայն. ռուս.* абажур – *լուսամփոփ, լուսամոք և տապամոք:*

Abside – *եկեղեցու խորան, բեմ, սեղան, աբսիդ. ռուս.* абсида:

Acanthe – *արջմազիլ բույս. այդ բույսին նմանող քանդակներ. ռուս.* акант:

Anse de panier – *կողովի կանթ, կողովի կանթի ձև ունեցող զարդաքանդակներ:*

Arc – *աղեղ, կամար, կամարաղեղ. ռուս.* арка:

Arc à nervure – *ջլաղեղ, կամարի տեսակ, որն ունի ջիղերի նմանվող գծեր. ռուս.* свод с нервюрами:

Arc surbaissé – *ցածր աղեղ, ցածր կորագիծ ունեցող կամար:*

Archaïque – *նախնական, հնագույն:*

Archivolte – *կամարաքիվ. ռուս.* архивольт:

Atrium – *հռոմեական տան նախասենյակ, տաճարի գավիթ:*

Bas-côté – *եկեղեցու աբսիդի աջ և ձախ կողմերի ցածրադիր թևերը:*

Bas-relief – *հարթաքանդակ, ցածրաքանդակ. ռուս.* барельеф:

Base – *խարիսխ, բազա, սյան պատվանդան. ռուս.* база:

Basilique – *բազիլիկա. նեղ և երկարավուն հռոմեական պետական շենք, որ հաճախ սյունաշարքերով բաժանվում էր թևերի (նեֆ): Բազիլիկների օրինակով շինված եկեղեցիները հետագայում կոչվեցին բազիլիկներ. ռուս.* базилика:

Brisé – *կոտրված աղեղ, երկկենտրոն աղեղ:*

Câble moulure – *պարանահյուս քանդակ. ռուս.* витая мулюра:

Calotte – *գմբեթի վեղար, գմբեթի գդակ. ռուս.* скуфья:

Chapelle – *մատուռ, փոքր եկեղեցի. ռուս.* часовня:

Catacombe – *կատակոմբ, ստորերկրյա դամբարան:*

Centre – *կենտրոն:*

Chambranle – *դռան և պատուհանի շրջակալ. ռուս.* наличник:

Chapiteau – *խոյակ, սյան գլխի մասը. ռուս.* капитель:

Construction – *կառուցվածք, կոնստրուկցիա:*

Contre pilastre – *որմնասյուն, որ կամարով կամ արխիտրավով միացած է լինում սյան հետ:*

Corniche – *քիվ, կարնիզ, երիզ, շենքի պսակ:*

Coupe – *կտրվածք:*

Crampon – *երկաթե կապ՝ քարերը միմյանց կապելու համար:*

Crypte – *դամբարան:*

Décadance – *անկում, դեկադանս. ռուս.* декаданс:

Denticule – *ատամնաշար քանդակ. ռուս.* сухарики:

Elévation – *շենքի բարձրությունը ցույց տվող չափագրություններ (ճակատ, կտրվածք և այլն):*

En détail – *մանրամասնորեն:*

Entrecolonnement – *սյունամեջ, երկու սյուների միջև ընկած տարածություն:*

Façade – *ճակատ:*

Façe de larmier – *քիվի (կարնիզի) առաջակարկառ ճակատը:*

Fer à cheval – *պայտաձև կամար, որի կենտրոնը գտնվում է կրունկներից բարձր:*

Fronton – *ճակատոն, ֆրոնտոն:*

Fût – *սյան բուն, խոյակից ներքև ու խարիսխից վերև ընկած սյան մասը:*

Galerie – *սրահ. ռուս.* галерея:

Gothique – *գոթական:*

Larmier – *առաջակարկառ քիվ, տանիքից հոսող ջրերից շենքի պատերն ազատ պահելու հարմարեցրած քիվ:*

Modillon – *պճղակաձև զարդաքանդակներ, որոնք սովորաբար դրվում են քիվի (կարնիզի) տակին:*

Motif – *մոտիվ, տեսակ (բուսական, կենդանական, երկրաչափական քանդակներ և այլն):*

Moulure – *բարձրաքանդակ, ռելիեֆ քանդակ. ռուս.* мулюра:

Narthex – *եկեղեցու գավիթ:*

Nef – *թև, սյունաշարքերով շենքի մի մասը, որ մյուսից բաժանված է թևերով. ռուս.* корабль, неф:

Nervure relief – *ջլավոր բարձրաքանդակ:*

Niche – *խորշ, պատի մեջ փոս ընկած մաս. ռուս.* ниша:

Ogive – *սլաքաձև (կամար). ռուս,* стрельчатый:

Panthéon – *հեթանոսական տաճար, դիցարան, պանթեոն. ռուս.* пантеон:

Parapet – *պատնեշ, ճաղեր. ռուս.* парапет:

Parvis – *հրապարակ՝ եկեղեցու գլխավոր մուտքի առաջ:*

Pendentif – *առագաստ. ռուս.* парус:

Pilastre – *որմնասյուն. ռուս.* пилястр:

Pilier – *մույթ, պիլոն, հաստահեղույս սյուն. ռուս.* пилон:

Plan – *հատակագիծ, հատակաձև, մակարդակ (գծագրության տեսակ):*

Plate-forme – *պլատֆորմ, հարթակ, շենքի տակ կառուցված հարթակ:*

Porche – *եկեղեցու գավիթ:*

Portique – *սյունասրահ, կամարասրահ, սյունազարդ նախասրահ. ռուս.* портик:

Projection – *ստվերագիծ նկար, պրոյեկցիա:*

Relief – *բարձրաքանդակ, ռելիեֆ:*

Retombé – *կամարի հանգստարան, կամարի կրունկ, կամարի ոտք. ռուս.* пята свода:

Roman – *ռոմանական:*

Salle de fête – *հանդիսասրահ, տոնասրահ:*

Socle – *ցոկոլ, շենքի հիմքի և առաջին հարկաբաժնի միջև ընկած մասը, որն արվում է հարկաբաժինները հիմքի խոնավությունից ազատ պահելու համար. ռուս.* цоколь:

Sphérique – *գնդաձև, սֆերիկ. ռուս.* сферический:

Spiral – *պարույր, գալար, պարուրաձև, գալարաձև (քանդակ). ռուս.* спираль, спиральный

Style – *ոճ. ռուս.* стиль:

Tailloir – *տե՛ս* Abaque:

Tombe – *գերեզմանաքար:*

Torse – *ոլորտ, ոլորաքանդակ:*

Transept – *արևելյան մույթերի և գլխավոր բեմի միջև ընկած տարածությունը, եկեղեցու դասը. ռուս.* трансепт:

Trompe – *շենքի պատից դուրս ցցված մասի ծանրությունը պահող կամար. ռուս.* конический парус – тромп):

Tympan – *ճակտոնի (ֆրոնտոնի) քիվերի միջև ընկած հարթ (ժապավենաձև կամ եռանկյունաձև) մասը, որի վրա անտիկ աշխարհում և նրա օրինակով հետագայում սովորաբար քանդակներ էին անում :*

Voûte d'arrêt – *կամարի տեսակ, գմբեթարդ:*

Voûte pendentif – *քանդակազարդ կամար, կամարի քանդակներ:*

Ziggourat – *աստիճանավոր մեծ աշտարակ Ասորեստանում, որ ծառայում էր իբրև պաշտամունքի տաճար. ռուս.* зиккурат:



# ՑՈՒՑԱԿ

## ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՄԵՋ ՉԵՏԵՂՎԱԾ ՆԿԱՐՆԵՐԻ


1. *Օշականի դղյմեններից մեկի մուտքը*
2. *Օշականի դղյմեններից մեկի ներքին պատի անշաղախ շարվածքը*
3. *Օշականի Գյուլլե-կոնդը*
4. *Կափրլի գյուղի Շահ-թափա հողաբլուրը*
5. *Ալիաթի դամբարանը Փոքր Ասիայում*
6. *Կրոմլեխ և գերեզման՝ Աղավնատան և Հարամլուի սահմանի վրա*
7. *Մենաքար (մենհիր) Շամիրան գյուղում*
8. *Մենաքարի նմուշ (Հայաստան)*
9. *Աղավնատան մոտ՝ Օյուղ կոչվող բոլորակ աշտարակի մնացորդը*
10. *Հաջի-Խալիլ գյուղի տոհմատիրական շրջանի ամրոցը հարավ-արևելքից*
11. *Հաջի-Խալիլ գյուղի մոտ տոհմատիրական շրջանի ամրոցի քարերի կուտակումով կազմված պարիսպի նմուշ*
12. *Հաջի-Խալիլ գյուղի մոտ տոհմատիրական շրջանի ամրոցի քարերի կուտակումով կազմված պարիսպի մի այլ նմուշ*
13. *Հոռոմի հարավ-արևմտյան բարձրության վրա շինված միջնաբերդի պարիսպներից մեկի նմուշ*
14. *Հոռոմի հյուսիս-արևելյան քաղաքամասի միջնապարիսպ*
15. *Խորհրդավոր փորագրություններ ժայռի վրա*
16. *Քաղաքի ներքին պարիսպների մի մասը*
17. *Քաղաքի միջին բաժանումների պարիսպի մի անկյունը*
18. *Քաղաքի արտաքին պարիսպը ներսի կողմից*
19. *Ադյաման գյուղի արևելյան բարձունքների վրա նախնադարյան կրկնապարիսպ ամրոցը*
20. *Ադյաման գյուղի մոտ նախաքրիստոնեական գերեզմանոցում գտնվող քառակուսի կոթողաձև*
21. *Նույն կոթողի (նկ. 20) երկրորդ երեսը*
22. *Նույն կոթողի (նկ. 20) երրորդ երեսը*
23. *Նույն կոթողի (նկ. 20) չորրորդ երեսը*
24. *Նիզակագլխի քանդակ՝ Պերրո և Շիպիեի գրքի 533-րդ էջի վրա*
25. *Միջնադարյան բերդի հյուսիսային պատը և տակի անշաղախ կիկլոպյան հիմերը*
26. *Կիկլոպյան բերդաքաղաքի մնացորդներ Կափրլի գյուղի մոտ*
27. *Քարափոր դաղաղ Կափրլի գյուղում*
28. *Պուլեյ Լրկուզի նկարած նախաքրիստոնեական ամրոցի պատկերը (տես՝ Ղ. Ալիշան, «Այրարատ», էջ 202)*
29. *Խզնավուզի ամրոցի հատակագիծը*
30. *Աղավնատան նախաքրիստոնեական ամրոցի հատակագիծը*
31. *Թահմազ-թափիայի գագաթին նախաքրիստոնեական ամրոց (Կարսի շրջակայքում)*
32. *Մեծ Թալինի Քյուլեկ-թեփե սարը և սարի վրա նախաքրիստոնեական բերդի և բերդաքաղաքի ընդհանուր տեսքը*
33. *Ուրարտական բրոնզյա գոտուց արտանկար թղթի վրա*
34. *Մարմաշենի ուրարտական սեպագիր արձանագրությունը*
35. *Իջևանի շրջանի Առաքելոց եկեղեցու գավթի գմբեթը՝ շինված քարաշար սողոմաքաղ (13-րդ դար)*
36. *Սողոմաքաղ ծածկաձևի նկար*
37. *Անիի Առաքելոց եկեղեցու ճակատը*
38. *Անիի Առաքելոց եկեղեցու գավիթը, վերակազմությունը Թ. Թորամանյանի*
39. *Հառիճավանքի մուտքի ճակատը (13-րդ դար)*
40. *Սաղմոսավանքի արևմտյան մուտքը (13-րդ դար)*
41. *Տեղերի եկեղեցու գավթի արևմտյան մուտքը (13-րդ դար)*
42. *Հախպատավանքի գավթի մուտքը*
43. *Իշխանական պալատի մուտքը Անիում (13-րդ դար)*
44. *Գոշավանքի (Նոր-Գետիկ) մուտքը (13-րդ դար)*
45. *Գոշավանքի (Նոր-Գետիկ) արևմտյան ճակատը*
46. *Սարգսի խաչքարը Սանահնում (13-րդ դար)*
47. *Խաչքար Հախպատում (13-րդ դար)*
48. *Խմբական խաչքարեր Մրենում (13-րդ դար)*
49. *Հառիճավանքի գավթի առաստաղը (13-րդ դար)*
50. *Եղվարդի եռահարկ տաճարի արևմտյան ճակատը*
51. *Ամաղուի ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան պատը*
52. *Սպիտակավոր եկեղեցու մուտքի ճակատը (Միկոյանի շրջան 14-րդ դար)*
53. *Կյուրիկյան թագավորության ամրոցը Բերդ գյուղում (10–12-րդ դարեր)*
54. *Տիգնիս բերդի ընդհանուր տեսքը*
55. *Եղվարդի 5-րդ դարի եկեղեցու հատակագիծը*
56. *Եղվարդի 5-րդ դարի եկեղեցու մնացորդները*
57. *Շիրվանջուղ գյուղի եկեղեցու հատակագիծը*
58. *Դիրաքլարի եկեղեցու հատակագիծը*
59. *Քասաղի եկեղեցու հատակագիծը*
60. *Քասաղի եկեղեցու կտրվածքը արևելքից արևմուտք*
61. *Երերույքի հատակագիծը*
62. *Եղվարդի կաթուղիկեի հատակագիծը*
63. *Եղվարդի կաթուղիկեի հարավային պատի մի մասը և գլխավոր մուտքը*
64. *Արուճի եկեղեցին հյուսիս-արևմուտքից*
65. *Արուճի եկեղեցու հատակագիծը*
66. *Ավանի եկեղեցու հատակագիծը*
67. *Գրիգոր Մամիկոնյանի շինած Զորավոր եկեղեցու ավերակները (Եղվարդում)*

68. Անիի Ապուղամրենց ս. Գրիգոր եկեղեցու հատակագիծը
69. Գրիգոր Մամիկոնյանի շինած Զորավոր եկեղեցու մնացորդները հարավից
70. Մրենի եկեղեցու հատակագիծը
71. Գայանեի տաճարի հատակագիծը
72. Բագարանի եկեղեցու հատակագիծը
73. Բագարանի եկեղեցու ընդհանուր տեսքն արևմուտքից
74. Բագարանի եկեղեցու կտրվածքը արևելքից արևմուտք
75. Մաստարայի եկեղեցու հատակագիծը
76. Մաստարայի եկեղեցին հյուսիս-արևելքից
77. Արթիկի խաչաձև եկեղեցու հատակագիծը
78. Ալամանի եկեղեցու հատակագիծը և հյուսիսից հարավ կտրվածքը
79. Ներսեհ Կամսարականի տաճարը Թալինում
80. Ներսեհ Կամսարականի տաճարի հարավից հյուսիս կտրվածքը և հատակագիծը
81. Լմպատավանքը հարավ-արևելքից
82. Լմպատավանքի հատակագիծը
83. Հռիփսիմեի տաճարի հատակագիծը
84. Թալինի կաթուղիկեի հատակագիծը
85. Թալինի կաթուղիկեն հյուսիսից
86. Թալինի կաթուղիկեն հարավ-արևմուտքից
87. Թալինի կաթուղիկեի գմբեթակիր սյուները
88. Թալինի կաթուղիկեի հյուսիսային պատի որմնակամարները
89. Տաթևի շարժվող գավազանը
90. Ամբերդի միջնաբերդի պալատի պատը, որտեղ երևում են հարկաբաժինների հետքեր
91. Սևանի փայտե խոյակներից մեկը (874 թ.) (Պատմ. թանգ.)
92. Սևանի փայտե դռներից մեկը (1176 թ.) (Պատմ. թանգ.)
93. Մշո Առաքելոց եկեղեցու դուռը (Պատմ. թանգ.)
94. Օձունի եկեղեցին հյուսիս-արևելքից
95. Օձունի եկեղեցու սյունասրահը
96. Կարսի Առաքելոց եկեղեցին
97. Անիի Առաքելոց եկեղեցու մնացորդները
98. Անիի Լուսավորիչ եկեղեցին հարավ-արևմուտքից
99. Կենդանաքանդակ գոտի Անիի Լուսավորիչ եկեղեցու վրա
100. Կենդանաքանդակ գոտի Անիի Լուսավորիչ եկեղեցու վրա
101. Կենդանաքանդակ գոտի Անիի Լուսավորիչ եկեղեցու վրա
102. Անիի Լուսավորիչ եկեղեցու որմնանկարները
103. Անիի Փրկիչ եկեղեցին հարավից
104. Անիի Փրկիչ եկեղեցու հատակագիծը
105. Հոռոմոսի քանդակազարդ առաստաղը (Թորամանյանի գծագրությունից )
106. Տեկորի տաճարը հարավ-արևմուտքից
107. Անիի կաթուղիկե մայր եկեղեցու հատակագիծը
108. Անիի ս. Գրիգոր Լուսավորիչ (Նախշլի) եկեղեցու հատակագիծը
109. Տեկորի տաճարի այժմյան հատակագիծը
110. Տեկորի տաճարի նախկին հատակագիծը
111. Տեկորի տաճարի հյուսային ճակատը
112. Տեկորի տաճարի կտրվածքը հյուսիսեն հարավ
113. Տեկորի տաճարի արևմտյան ճակատը
114. Հայոց հին տաճարներու սյունանման անկյունաձևը
115. Տեկորի տաճարի նախկին շենքի հյուսիսեն հարավ կտրվածքը
116. Տեկորի տաճարին արևելյան կողմին վրա կրած երեք տեսակ փոփոխությունները
117. Տեկորի տաճարի այժմյան ձևի արևելքեն արևմուտք կտրվածքը
118. Տեկորի տաճարի նախնական շենքի արևելքեն արևմուտք կտրվածքը
119. Տեկորի տաճարի նախնական տեսքն արտաքուստ
120. Մրենի տաճարի այժմյան հատակագիծը
121. Մրենի տաճարի կրած փոփոխությունները պարզող հատակագիծ
122. Հռոմի նախկին ս. Պետրոսի հատակագիծը
123. Տեկորի տաճարի գմբեթի կտրվածքը և հատակագիծը նախնական ձևի ծածկույթով
124. 7-րդ դարեն մինչև 10-րդ դարու գմբեթները ներսի կողմեն
125. 10-րդ դարեն սկսյալ գմբեթները ներսի կողմեն
126. Տեկորի տաճարի գմբեթը
127. Բագարանի ս. Թեոդորոս կաթուղիկեի գմբեթը 7-րդ դարու սկզբին
128. Մրենի տաճարին գմբեթը 7-րդ դարուն
129. Անիի Կաթուղիկե մայր եկեղեցիի գմբեթը 11-րդ դարու սկզբին
130. Զարդաքանդակ պսակներ Տեկորի տաճարեն և Զվարթնոցեն
131. Տեկորի տաճարին ներքին մեծ աղեղներու նորոգության ժամանակ քարերին ատամնավոր տաշվածքը
132. Տեկորի տաճարի արտաքին որմնասյուներու խոյակ և խարիսխ
133. Տեկորի տաճարի արտաքին որմնասյուներու խոյակ
134. Տեկորի տաճարի մուտքի քանդակազարդ բարավորը
135. Տեկորի տաճարի արտաքին որմնասյուների խոյակ
136. Զարդաքանդակ գերեզմանախաչ [ըստ երևույթին Թորամանյանի կոմպոզիցիա]
137. Էջմիածնի տաճարը հյուսիսային կողմից
138. Էջմիածնի տաճարը հարավային կողմից
139. Այժմյան Էջմիածնի հատակագիծը
140. Էջմիածնի տաճարի սկզբնական մակարդակը և տաճարը հյուսիսից
141. Անիի Առաքելոց եկեղեցու հատակագիծը
142. Էջմիածնի տաճարի սկզբնական տեսքը հյուսիս-արևմուտքից
143. Էջմիածնի տաճարը հարավ-արևմուտքից
144. Էջմիածնի տաճարի արևմտյան պատի հյուսիսային մասը



145. Էջմիածնի տաճարի հին տեսքը հյուսիս-արևելքից և նրա աբսիդի մասի մակարդակը
146. Զվարթնոցի ընդհանուր հատակագիծը
147. Զվարթնոցի տիպին պատկանող տաճարի հատակագիծը Բանա գյուղում
148. Զվարթնոցի վերակազմության ճակատը արևմուտքից
149. Զվարթնոցի վերակազմության կտրվածքը արևելքեն արևմուտք
150. Զվարթնոցի տաճարի ավերակների ընդհանուր տեսքն արևմուտքից
151. Քանդակազարդ բեկորներ Զվարթնոցի տաճարի ավերակների հարավային կողմում
152. Քանդակազարդ բեկորներ Զվարթնոցի տաճարի ավերակների հյուսիսային կողմում
153. Զվարթնոցի ներքին կիսաշրջան սյունաշարքերի խոյակ և խարիսխ
154. Զվարթնոցի ներքին կիսաշրջան սյունաշարքերի սյան վերակազմությունը
155. Զվարթնոցի ներքին կիսաշրջան սյունաշարքերի խոյակ և խարիսխ
156. Զվարթնոցի գմբեթակիր մեծ մույթերի հետև գտնվող սյուների արծվաքանդակ խոյակ
157. Զվարթնոցի տաճարի հատակագիծը
158. Զվարթնոցի հատակագծի վրա ցույց տրված աղեղները
159. Զվարթնոցի գմբեթակիր հարավ-արևմտյան մույթը
160. Զվարթնոցի արտաքին պատի առաջին հարկաբաժնի զարդաքանդակ բեկորներ: Կենտրոնում «Ցովհան»-ի բարձրաքանդակը. Հովհանը, ըստ երևույթին, տաճարի կառուցման գլխավոր վարպետն է
161. Զվարթնոցի արտաքին երևույթի առաջին հարկաբաժնի քանդակազարդ դռտու հատվածներից մեկը
162. Զվարթնոցի տաճարի հարավային մուտքի գլխի արևի ժամացույցը
163. Քանդակազարդ բեկոր՝ Զվարթնոցի տաճարից
164. Զվարթնոցի արտաքին պատի առաջին հարկաբաժնի զույգ որմնասյուներից մեկի մասերը
165. Զվարթնոցի արտաքին պատի ներքին երեսի մնացորդները տաճարի հարավային կողմում
166. Զվարթնոցի արտաքին պատի առաջին հարկաբաժնի զույգ որմնասյուներից մեկի խոյակները
167. Զվարթնոցի հարկաբաժինների պսակի դետալ
168. Զվարթնոցի արտաքին տեսքի առաջին հարկաբաժնի բոլորակ լուսամուտների քանդակազարդ պսակների նմուշներ
169. Զվարթնոցի վարպետների նշանները քարերի վրա
170. Բագրատունի Գագիկ Ա-ի արձանը՝ գտնված Անիում
171. Գագիկի տաճարի արտաքին զույգ որմնասյուներից մեկը
172. Գագկաշեն տաճարի մնացորդներն Անիում
173. Գագիկի տաճարի առաջին հարկաբաժնի բոլորակ լուսամուտների քանդակազարդ շրջանակների նմուշներ
174. Բրոնզե բուրվառ՝ գտնված գագկաշեն տաճարի պեղումներից
175. Բրոնզե բուրվառ՝ գտնված գագկաշեն տաճարի պեղումներից
176. Բրոնզե ջահ՝ գտնված Գագիկի տաճարում
177. Անիի կաթուղիկեի արտաքին որմնասյուների խոյակների և խարիսխի նմուշներ
178. Անիի կաթուղիկեի արտաքին որմնասյուների խոյակների և խարիսխի նմուշներ
179. Գագկաշեն տաճարի հատակագիծը
180. Մույթի և սյուների մնացորդներ գագկաշեն տաճարում
181. Գագկաշեն տաճարի վերակազմության ճակատը արևմուտքից
182. Գագկաշեն տաճարի վերակազմության կտրվածքը հարավից հյուսիս
183. Գագկաշեն տաճարի ներքին սյունաշարքերի խոյակները
184. Գագկաշեն տաճարի ներքին սյունաշարքերի բեկորներ
185. Գառնիի՝ Տրդատի հովանոցի վերակազմության մակետը (գործ Տարագրոսի)
186. Գառնիի սյունաշարքերի առաստաղի քանդակազարդ բեկորներ և սյուների մասեր
187. Տրդատի հովանոցի մնացորդները տեղում
188. Տրդատի հովանոցի կարնիզների բեկորների շարքեր
189. Երերույքի տաճարը հարավ-արևմուտքից
190. Երերույքի արևմտյան մուտքի որմնասյունը
191. Երերույքի հարավային մուտքերից մեկը
192. Ավանի տաճարը հարավ-արևմուտքից
193. Ավանի տաճարի արևմտյան մուտքը
194. Աշտարակի Ծիրանավոր եկեղեցու հատակագիծը
195. Աշտարակի Ծիրանավոր եկեղեցու ներքին տեսարանը
196. Աշտարակի Կարմրավոր եկեղեցին արևելյան կողմից
197. Աշտարակի Մարինե եկեղեցին հարավ-արևելքից
198. Մարինե եկեղեցու արևմտյան պատը, որտեղ երևում են քանդված ժամատան որմնանկարները
199. Հռիփսիմեի տաճարի ներքին տեսարանը
200. Հռիփսիմեի տաճարի կտրվածքը արևմուտքից արևելք
201. Հռիփսիմեի հարավ-արևմտյան մասը ներսից
202. Հռիփսիմեի հարավ-արևելյան անկյան վերին մասն արտաքուստ
203. Գայանեի տաճարը հարավից
204. Գայանեի տաճարի հարավ-արևմտյան մասը ներսից
205. Ալամանի ս. Անանիայի եկեղեցին
206. Արթիկի մեծ եկեղեցին
207. Մրենի եկեղեցին
208. Հոռոմոսի (Ղոչավանք) վանքի ընդհանուր տեսարանը հարավ-արևմուտքից
209. Հոռոմոսի (Ղոչավանք) վանքի ընդհանուր տեսարանը հյուսիս-արևելքից

210. Հոռոմոսի ս. Հովհաննես եկեղեցու և ժամատան հատակագիծը
211. Հոռոմոսի ս. Հովհաննես եկեղեցու և ժամատան կտրվածքը
212. Հոռոմոսի վանքի ս. Մինաս եկեղեցու հատակագիծը
213. Արգինայի տաճարի արևելյան մնացորդ պատը
214. Աղթամարի տաճարը հարավ-արևելքից
215. Աղթամարի վանքի հատակագիծը
216. Աղթամարի տաճարի քանդակազարդ պատի մասը
217. Աղթամարի տաճարի քանդակազարդ պատի մասը
218. Աղթամարի տաճարի արևելյան ճակատի քանդակների գոտին
219. Բագնայրի եկեղեցիների խումբն արևմուտքից
220. Բագնայրի եկեղեցիների խումբը հարավ-արևմուտքից
221. Խծկոնքի չորս եկեղեցիներ
222. Մաղասբերդ
223. Շիրակավանի եկեղեցին հարավ-արևելքից
224. Շիրակավանի եկեղեցու հատակագիծը
225. Շիրակավանի եկեղեցու խորշերի քանդակազարդ պսակ
226. Շիրակավանի եկեղեցու խորշերի քանդակազարդ պսակ
227. Մարմաշենի մեծ եկեղեցու հատակագիծը
228. Մարմաշենի եկեղեցիների խումբն արևելքից
229. Մարմաշենի վահրամաշեն տաճարի արևմտյան մուտքը
230. Անիի Ապուղամրենց ս. Գրիգոր եկեղեցու ընդհանուր տեսքը հյուսիս-արևելքից
231. Եղվարդում Գրիգոր Մամիկոնյանի չինած Զորավոր եկեղեցու հատակագիծը
232. Անիի ավերակների ընդհանուր տեսարանը միջնաբերդից
233. Անի քաղաքի բնակելի այրեր
234. Բնակելի այրեր Անիում
235. Անիի Աղջկաբերդը (Կըզկալա)
236. Անիի պարիսպների մի մասը
237. Անիի քառակուսի բուրգերից մեկը և պարիսպների մնացորդները
238. Նախմատային մուտքն Անիում (Դվնո դուռ)
239. Անիի մեծ բուրգերը դրսից
240. Անիի մեծ բուրգերը ներսի կողմից
241. Զըրփլուի կամուրջի մնացորդները Ախուրյան գետի վրա
242. Անիի կամուրջի մնացորդները (11-րդ դար)
243. Անիի կամուրջի վերակազմության նախագիծը
244. Հովվի եկեղեցին Անիի պարիսպներից դուրս
245. Հովվի եկեղեցու վերակազմության ճակատը
246. Հովվի եկեղեցու վերակազմության կտրվածքը արևելքից արևմուտք
247. Հովվի եկեղեցու հատակագիծը
248. Անիի կաթուղիկե մայր եկեղեցին հյուսիս-արևելքից
249. Անիի կաթուղիկե մայր եկեղեցու կտրվածքը արևելքից արևմուտք
250. Անիի կաթուղիկե մայր եկեղեցու հարավային պատի լուսամուտները
251. Անիի կաթուղիկե մայր եկեղեցու արևելյան մասի ներքին երևույթը
252. Անիի կաթուղիկե մայր եկեղեցու հարավային պատի խորշերից մեկի քանդակազարդ պսակը
253. Աչխարհիկ չենք Անիում, որ Շետտատյանների օրով վերածվել է մզկիթի (Մանուչեի մզկիթ)
254. Գեղարդավանքի (Այրիվանքի) ժամատան ներսը (13-րդ դար)
255. Հովհաննավանքի եկեղեցու արևմտյան մուտքի քանդակները (արքար և մեղավոր կույսեր) (13-րդ դար)
256. Գեղարդավանքի (Այրիվանքի) վիմափոր տաճարներից մեկից հատված (13-րդ դար)
257. Գեղարդավանքի (Այրիվանքի) վիմափոր տաճարներից մեկից հատված (13-րդ դար)
258. Վիմափոր տաճար Գեղարդավանքում (Այրիվանքում)
259. Իշխանական ապարանքի քանդակազարդ մուտքն Անիում
260. Իջևանատուն կամ վաճառատուն (քարվանսարա) Անիում
261. Խոյակ՝ գտնված Գրիգոր Մամիկոնյանի պալատի ավերակներում – Արուճ գյուղում (7-րդ դար)
262. Ներսես Տայեցու պալատի և միաբանից բնակարանների ավերակները Զվարթնոցում
263. Ներսես Տայեցու պալատի և միաբանից բնակարանների հատակագիծը
264. Բագարան գյուղը միջնաբերդի և ս. Գևորգ եկեղեցու հետ միասին
265. Անիի իշխանական ապարանքի ներքին և վերին հարկերի հատակագիծը
266. Անիի միջնաբերդի պալատի մնացորդների հատակագիծը
267. Անիի միջնաբերդի ընդհանուր տեսարանը
268. Անիի միջնաբերդի պալատական եկեղեցու քանդակազարդ մասեր
269. Անիի միջնաբերդի պալատական եկեղեցու որմնասյան մասեր
270. Անի քաղաքի պարիսպներ և ավագ դուռ
271. Զաքարե և Իվանե ամիրսպասալարների բարձրաքանդակները Հառիճավանքում
272. Գագիկ Ա. Արծրունու բարձրաքանդակն Աղթամարում
273. Սմբատ և Կյուրիկե Բագրատունիների բարձրաքանդակները Հախպատում
274. Կյուրիկե և Սմբատ Բագրատունիների բարձրաքանդակները Սանահնում
275. Բարձրաքանդակներ Մրենի տաճարի վրա
276. Բարձրաքանդակներ Մրենի տաճարի վրա
277. Պարոն Խուտլուբուղայի որմնանկարը Հախպատում
278. Թամզարայի տոնական սրահի հատակագիծը
279. Անիի միջնաբերդի բաղանիքի հատակագիծը



## ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ


Թ. Թորամանյան
4, 19-23, 25, 32, 37, 54, 56, 63, 67, 69, 99, 103, 150-153,156, 159, 161, 162, 165, 172, 177, 178, 180, 186, 188, 189, 192, 193, 206-209, 213, 219, 220, 223, 228-230, 237. 242, 244, 247, 248, 250-253, 259, 262, 267

Արա Վրույր
7, 8, 12, 50, 79, 85, 87, 88, 170, 196

Արտաշես Վրույր
39-41, 45, 49, 76, 90, 199, 201-204, 258

Արամ Վրույր
233, 234, 236, 239, 270

Ա. Վրույր կամ Վրույր կրտսեր
81, 148, 181

Գ. Հովսեփյան
64, 93, 94, 198, 261

Պ. Գրիգորյան
51, 134, 138, 144

Ե. Ղուկասյան
195, 275, 276

Ա. Շահինյան
35, 273, 274

Ս. Տեր-Ավետիսյան
216, 217

Ա. Շիրոյան
46, 47

Կ. Ղաֆադարյան
160

Հ. Կարանյան
31


## ՓՈԽՎԱԾ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ


37, 39, 40, 46, 51, 64, 71, 81, 86, 87, 88, 91, 93, 94, 98, 107, 159, 160, 161, 163, 164, 165, 174, 175, 185, 189, 192, 201, 203, 205, 206, 213, 221, 250, 256, 257, 258, 259, 261, 270, 273, 274

# ՑՈՒՑԱԿ

## ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆԻ ՄԻՆՉԵՎ ԱՑԺՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

1. Զվարթնոց եկեղեցին, «Մուրճ», 1905, № 5, էջ 186–197:
2. Նամակ Անիից, «Մշակ», 1905 թ. հունիսի 18:
3. Նամակ Անիից, «Մշակ», 1905 թ. հունիսի 30:
4. Նամակ Անիից, «Լուսաբեր», 1905 թ. սեպտեմբերի 9, № 117.
5. Հայկական ճարտարապետություն, «Անահիտ», 1907 թ.:
6. Ակնարկ մը ճարտարապետական ոճերու ծագման և բաժանման վրա, «Հուշարար», 1907 թ., № 1, էջ 9–10:
7. Տեկորի տաճարը, «Հուշարար», 1907 թ., № 2, էջ 20–22:
8. Անհետացած հայ գեղարվեստի հորիզոնից, «Հուշարար», 1907, № 2, էջ 23–23:
9. Կրոնական տաճարներու զանազանությունները սկիզբեն մինչև մեր օրերը, «Հուշարար», 1907 թ., № 3, էջ 39–44 և № 6, էջ 90–93:
10. Անիի պեղումներու առթիվ, «Հուշարար», 1907 թ., № 8, էջ 120–124, № 9, էջ 140–148, № 10, էջ 183–155:
11. Նամակ Անիից, «Ախուրյան», 1907 թ., № 44:
12. Նամակ Անիից, «Ախուրյան», 1907 թ., № 45:
13. Նամակ Անիից, «Ախուրյան», 1907 թ., № 43:
14. Նամակ Անիից, «Ախուրյան», 1907 թ., № 47:
15. Նամակ Անիից, «Ախուրյան», 1907 թ., № 49:
16. Նամակ Անիից, «Ախուրյան», 1907 թ., № 33:
17. Նվեր հոբելյարին (Լեոյի 28-ամյակի առթիվ), «Հուշարար», 1908 թ., № 4:
18. Անվո միջնաբերդի պեղումները, «Հուշարար», 1908 թ., № 6–7:
19. Անվերնագիր հոդված (Գագիկի տաճարի պեղումների մասին), «Հուշարար», 1908 թ., № 3–7:
20. Նախրճուն ժամը, «Ախուրյան», 1908 թ. 26 հոկտ., № 73:
21. T. Тораманян, О древнейших формах Эчмиадзинского храма (Архитектурно-археологический этюд). СПБ, 1909. Отдельный оттиск из записок Восточного отделения Императорского Русского Археологического об-ва, том 19.
22. Կաթիլ մը հայ գեղարվեստի ծովեն, «Գեղունի», 1908 թ., № 9, էջ 32–39:
23. Բաց նամակ արժ. Մեսրոպ վարդապետին, «Մշակ», 1909 թ. №№ 52, 53, 54, 57, 58, 59, 60, 61:
24. Տեկորի տաճարը, «Ախուրյան», 1909 թ. մայիսի 29, № 39:
25. Հայ ճարտարապետությունը Անիի և Երվանդակերտի մեջ, «Ախուրյան», 1909 թ. օգոստ. 9, № 57:
26. Բագրան, «Ախուրյան», 1909 թ., №№ 59, 60:
27. Մեր անցյալ կուլտուրան, «Ախուրյան», 1909 թ., օգոստ. 27 № 61:
28. Երվանդաշատ և Երվանդակերտ, «Ախուրյան», 1909 թ, սեպտ. 10, № 65:
29. Էջմիածնի տաճարը – ճարտարապետական և հնագիտական հետազոտություն (արտատպ. «Ազգագրական հանդես»-ից), Թիֆլիս, 1910թ.:
30. Ո՞րն է իսկական Հոռոմոսի վանքը (հնագիտական ուսումնասիրություն), Ալեքսանդրապոլ, տպարան Հ. Սանոյանի, 1911թ.:
31. Հայ ճարտարապետության շրջանները, «Անահիտ», 1911 թ., №2, էջ 1–24:
32. Գավիթ և ժամատուն հայոց հնագույն եկեղեցիներու մեջ, «Ազգագրական հանդես», գիրք XXI, 1911 թ., էջ 5–33:
33. Պատմական հայ ճարտարապետության ուսումնասիրություն, Ա. Տեկորի տաճարը, Թիֆլիս, 1911 թ., էջ IԲ+106:
34. Նորագույն կարծիքներ հայ ճարտարապետության մասին, «Անահիտ», 1911 թ., № 9–12, էջ 197–220:
35. Անի քաղա՞ք, թե՞ ամրոց, Թիֆլիս, 1912թ. (արտատպ. «Ազգագրական հանդես»-ից, գիրք XXII, էջ 61–70 և գիրք XXIII, էջ 11–26):
36. Հայաստանի արքունական ու իշխանական ապարանքները և անոնց ներքին կենցաղը, «Գեղարվեստ» № 6, 1917, էջ 56–83:
37. Նախաքրիստոնեական հայ ճարտարապետություն, «Բանբեր» Էջմիածնի Գիտական Ինստիտուտի, 1920–21, էջ 207–225:
38. Զվարթնոց եկեղեցու քարերի նշանները, «Տեղեկագիր» ՀԽՍՀ Գիտութ. և Արվեստի Ինստիտուտի, №2, 1927 թ.:
39. Պատմական հուշարձաններն ու նրանց պահպանման գործը Խորհրդային Հայաստանում (լույս է տեսել Մինասյանի ստորագրությամբ), «Հոկտեմբեր-Նոյեմբեր» ժողովածու, 1930 թ, Երևան:
40. Խորհրդային իշխանությունը և մեր պատմական հուշարձանները, «Խորհրդային Հայաստան», 1930 թ., № 279:
41. Շինանյութերն ու նրանց գործածության կերպը հին Հայաստանում, Երևան, 1932 թ., էջ 39:
42. Ակնարկ Հայաստանի հին ճարտարապետության վրա, «Նյութեր հին Հայաստանի պատմության» ժողովածու, 1935 թ., Երևան:
43. Գեղարդաձորի մեջ կատարածս պեղումների տեղեկագիրը: «Նյութեր հին Հայաստանի պատմության» ժողովածու. 1935 թ. Երևան:



# ԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ


Ա

Աբաս [Բագրատունի, Գագիկ Ա-ի որդին) 377
Աբաս [Բագրատունի] թագավոր 372
Աբեղյան Մ[անուկ] 79
Աբխազիա 102
Աբրահամ (ոմն) 425
Ագթանգեղոս 70, 72, 152, 160, 221-222, 266-268, 329
Ագարակ [Անիի մոտ, Ախուրյանի աջ ափին) 248
– գյուղի եկեղեցի 311
Ադյաման [Թալինի շրջան) 37, 46-48, 53, 56, 63
Ադյամանի (Ադիամանի) եկեղեցի 159, 169, 310, 337
Աթենք 406
Աթոս 102
Ալաման [Ալամ (Ալեմ) գյուղ] 311, 366, 369
Ալամանի ս. Անանիա եկեղեցի 100, 104, 159, 167, 169, 233, 262, 275, 286, 297, 366
Ալամոնիկ գյուղ 193
Ալայեղդին 233
Ալաջա լեռ 34, 383, 387, 404, 407, 412
– ձոր 403
Ալեքսանդր [Մակեդոնացի] 115, 116, 136
Ալեքսանդրապոլ (այժմ Լենինական) 13, 21, 143, 247, 305, 379, 390, 408, 456
Ալիթ 29, 30
Ալիշան Ղ[ևոնդ] 59, 60, 61, 85, 93, 208, 212, 239-240, 242, 275, 277, 278, 281, 310, 372, 373, 374, 375, 377, 379, 460
Ալփասլան – տե՛ս Արփասլան
Ալպաթ 233
Ախուրյան գետ 136, 225, 226, 291, 354–355, 357, 367, 372, 377-379, 386, 405, 415, 441
– ձոր 377, 403, 444
Ածպտեր կամ Աբարակ գյուղ 193
Ականց (Ականս) գյուղ 375, 404
Ակորիի ս. Անդրեաս եկեղեցի 275, 310
Աղավնատուն (գյուղ) 30-34, 37, 59, 62, 67, 71, 383
Աղթամար կղզի 81, 110, 113, 129, 131, 136, 319, 333, 379, 381, 435, 438, 455
Աղթամարի եկեղեցի 81, 99, 110, 129, 130, 272, 380-382, 435, 437. 455
– ծով 436
– նավահանգիստ 136
– վանք 381
Աղթամուր (գյուղ) 37, 59
Աղթամուրի ամրոց (բերդ) 57, 59, 62, 63
Աղմնիք 382
Աղջակալա (գյուղ) 30, 32-35, 37, 59, 60, 67
Աղջկաբերդ – տե՛ս Անիի Աղջկաբերդ
Աղց (Հախս գյուղ) 68
Ամաղուի ս. Աստվածածին եկեղեցի 143
Ամբերդ 37, 53
– բերդաքաղաք 53
– գետակ 53, 137
Ամբերդի ամրոց 53, 137
– բաղանիք 193
– եկեղեցի 392, 394
– պալատ 189
Ամմոնի տաճար 55
Այա-Սոֆիա (ս. Սոփիա, ս. Սոֆիա) 76, 79, 101, 102, 107-110, 116, 130, 220, 228, 284, 299, 345, 370
Այղր-լիճ 65
Այրարատ – տե՛ս Արարատ
Այրիվանք – տե՛ս Գեղարդավանք
Անահիտ (աստվածուհի) 150
Անանիա Արշարունյաց եպիսկոպոս 376, 377, 385
(ս.) Անանիայի եկեղեցի – տե՛ս Ալամանի ս. Անանիայի եկեղեցի
Անասնաթաղ բլուր 322
Անաստաս Ակոռեցի (կաթողիկոս) 275, 310, 316, 322-324, 326, 333, 334
Անգլիա 232
(ս.) Անդրեասի եկեղեցի – տե՛ս Ակորիի ս. Անդրեաս եկեղեցի
Անդրիաս գյուղ 193
Անթեմիուս 76, 107-109
Անի գյուղ 403, 404, 448
– կայարան [երկաթուղու] 305, 357
Անի քաղաք 34, 60, 83-86, 88, 89, 97, 101-103, 105, 106, 122, 129, 132, 136, 137, 140, 177, 183, 187, 188, 190-193, 201, 212, 217, 225, 228, 234-236, 248, 311, 316, 330, 333, 338-340, 342-344, 346, 348-350, 356, 357, 366, 368, 369, 372, 378, 379, 383, 386, 387, 39, 394, 399-407, 411-415, 423, 424, 425, 427-432, 436, 442-446, 448, 450, 451, 453-455, 457, 460, 461, 463
Անիի Աղջկաբերդ (Կզկալա) 405, 407, 409, 410, 416
– Աղջկա բերդի եկեղեցի 177, 407, 429, 430
– ամրոց (բերդ) 399, 401, 405, 407, 409, 410
– այրեր 403
– Ապուղամրենց ս. Գրիգոր եկեղեցի 99, 188, 208, 214, 217, 274, 279. 330, 350, 352, 393, 400, 402
– Առաքելոց եկեղեցի 105, 133, 134, 164, 196, 204, 205, 216, 279, 280, 284-289, 330, 346, 360, 383, 394, 402, 417, 428, 450
– Բեխենց վանք 279
– Գագկաշեն ս. Գրիգոր եկեղեցի 96, 105, 187, 216, 228, 231, 256, 271, 318, 319, 323, 334, 339, 340, 341, 343-345, 347-351, 394, 415, 417, 426, 429, 450, 453, 454, 460, 461
– (ս.) Գրիգոր եկեղեցի (Մառի պեղած) 279
– Թանգարան (Հնագիտական թանգարան, Հնադարան) 177, 190, 191, 234, 293, 371, 407, 446, 449, 453, 455
– իշխանական ապարանք (պալատ) 140, 433, 442
– Իշխանատուն 431
– Լուսավորիչ (Տիգրան Հոնենցի) եկեղեցի (Խախշի) 99, 205-207, 209–210, 212-217, 241, 242, 272, 279, 429, 430
– Մաղկոցաձոր – տե՛ս Մաղկոցաձոր
– կաթուղիկե 99, 102, 103. 132, 134, 177, 187, 196, 201, 205, 210, 217, 231, 232, 241, 243, 250, 265, 284, 298, 345, 347, 394, 415, 419-423, 449, 450, 451, 453, 454
Անիի կամուրջ 137, 393, 405, 415, 416
– Կզկալա ժայռ 407
– Կուսանաց վանք (անապատ) 416, 429
– Հովվի (Հովիվի) եկեղեցի 97, 134, 231, 316, 352, 383, 394, 403, 405, 417-419
– Մանուչեի մզկիթ 101, 217, 232, 400, 411, 416, 417, 432, 448
– միջնաբերդ 129, 255, 356, 400-402, 409-411, 416, 417, 424, 430, 443, 449, 460
– միջնաբերդի բաղանիք 459
– միջնաբերդի հարավային լանջի փոքր եկեղեցի 177
– միջնաբերդի պալատ (ապարանք) 106, 188, 190, 424, 443, 447, 449
– միջնաբերդի պալատական եկեղեցի 129, 242, 369, 450, 451
– պարիսպներ 97, 134, 231, 232, 316, 378, 383, 403, 405, 412, 452
– ջրամբար 188
– (ս.) Ստեփաննոս մատուռ 215, 274, 279, 394
– վրաց եկեղեցի 177
– Փրկիչ (Փրկչի) եկեղեցի 99, 188, 209, 211, 213, 216, 217, 330, 402, 450, 455
– (ս.) Քրիստափոր մատուռ 215, 274, 279, 394
Աննա Բուդ 310

Անքրթել 150, 151
Աշխարհուդաշտ 193
Աշոտ (573-574 թ. թ.) 155
Աշոտ (Թագավոր) [Գագիկ Ա-ի որդին] 208. 278, 279, 377
Աշոտ Ողորմած 208. 399-402, 406, 409, 411, 412, 416, 417, 448, 460-462
Աշտարակ 188, 268, 269, 360, 362, 383
Աշտարակի (Միրանավոր) եկեղեցի 163, 177, 199, 268, 307, 360, 361
Աշտիշատի եկեղեցի 162
Ապարանի եկեղեցի 196 (տե՛ս նաև Քասաղ, Բաշ-Ապարան)
Ապլահաճ ամիրա 373, 374
Ապլղարիպ մարզպան 208, 216, 274, 279, 402
Ապուլսվար 421
Ապուղամր 105, 215
Ապուղամրենց ս. Գրիգոր եկեղեցի - տե՛ս Անիի Ապուղամրենց ս. Գրիգոր եկեղեցի
Ապուսայիտ Պեհատուր խան 432
Առաջավոր Ասիա 115
Առաքել վարդապետ Դավրիժեցի 92-95, 280, 283, 362-365
Առաքելոց եկեղեցի - տե՛ս Անիի Առաքելոց եկեղեցի
Առաքելոց եկեղեցի (Իջևանի շրջան) 128
Առաքելոց վանք (Շապին Գարահիսարում) 193
Ասիա 115, 224, 232
Ասողիկ - տե՛ս Ստեփաննոս Տարոնեցի
Ասորա-Քաղդեա 48, 99, 114, 118, 120, 179
Ասորեստան 79, 99, 124
Ասորիք 267
(ս.) Աստվածածին եկեղեցի - տե՛ս Խծկոնք, Ամաղու
Աստվածընկալ գյուղ 308
Ավան (գյուղ) 105, 125, 186, 309, 359
Ավանի եկեղեցի 83, 105, 125, 126, 158, 159, 164, 175, 196, 200, 203, 309, 359. 360
Ավարայր 367
Ավետիս վարդապետ 375
Ատոմ 377
Ատրներսեհ Թագավոր 316
Արագած 30, 31, 41, 46, 56, 58, 66, 186, 305, 338, 366, 451
Արագածոտն 53, 369, 399
Արամազդ 150, 152
Արարատ 30, 111, 126, 127
Արարատյան (Այրարատյան) աշխարհ (նահանգ) 16, 37, 102, 130, 131, 136, 138, 139, 201, 218, 222, 223, 225, 298, 304, 369, 406, 427, 436, 450, 454
Արաքս (գետ) 136, 354, 355, 357, 369
Արգինա գյուղ 333, 379, 387, 369
Արգինայի բերդ 379
- կաթողիկոսարան 177, 379, 387, 399
- կաթուղիկե եկեղեցի 177, 345, 379, 450
Արգիշտի Ա. 408
Արդար Դավիթ (աշտարակ) 34, 59, 383
Արևելք 55, 69, 76, 79, 92, 94, 96, 98, 100, 102, 106, 108, 113-117, 119, 120, 122, 123, 129, 132, 179, 181, 188, 220, 261, 282, 312, 328, 389, 406
Արևմուտք 79, 94, 96, 106, 108, 113, 115, 117, 119, 122, 123, 129, 133, 134, 172, 173, 179, 181, 222, 224, 225, 287, 336
Արթիկ գյուղ 125, 308, 310, 366, 367
Արթիկի մեծ եկեղեցի 159, 165, 167, 174, 176, 307, 308, 310, 367
- շրջան 170
- փոքր եկեղեցի 125, 174, 176
Արիստակես Լաստիվերտցի 418, 419, 424
Արիստակես հայրապետ 198, 202
Արխաշան գետակ 53
Արծափի բերդ 319, 321
Արծրունի թագավորություն 100, 229, 406
Արծրունյաց տուն 284
Արճեղ (գյուղ՝ Ռումինիայում) 111, 112
Արճեղ (քաղաք՝ Հայաստանում) 111, 113, 233
Արմավիր 37, 38, 53, 65, 122, 181
Արմտլու 37, 71
Արշակ Թագավոր 226
Արշակունիներ (Արշակունիք) 70, 99, 123, 126, 152, 267-268, 357
Արուճի՝ Գրիգոր Մամիկոնյանի ապարանք 130, 438, 439
- եկեղեցի 83, 158, 159, 161, 165, 310
Արջո Առիճ (Ավաջա գյուղ) 405
Արտամետ 81
Արտաշատ 122, 266, 318
Արտաշես Ա. 81, 152
Արտաշիր 152
Արտեմյա մեհյան 92
Արտոս լեռ 381
Արփա-չայ 66, 390
Արփասլան 89, 232, 343, 394, 418, 421, 424, 430, 450, 453

Բ

Բաբախանյան Ա[ռաքել] 277
Բաբելոն 179
Բագավան 152
Բագարան գյուղ 100, 131, 137, 160, 165, 166, 177, 188, 291-294, 354, 357, 367, 369, 387, 399, 441
Բագարանի ավերակ եկեղեցի 177
- բերդ (ամրոց, ամրություն) 226, 293, 408, 441
- (ս.) Գևորգ եկեղեցի 292, 293, 441
- (ս.) Թեոդորոս (կաթուղիկե) եկեղեցի 165, 166, 188, 200, 203, 214, 233, 249, 262, 264, 275, 276, 286, 288, 291, 293-297, 310, 441
- կամուրջ 137
- ձոր 292, 294
- Մինջին գյուղ 293
Բագինների քարայր 384
Բագնայր գյուղ (Ղոզլիջա) 34, 60, 208, 330, 383, 384, 405, 407
Բագնայրի եկեղեցի (կաթուղիկե) 208, 330, 383, 384, 450
Բագու 151
Բագրատունի (Բագրատունյաց) հարստություն 275-277, 371, 399, 406,415, 450
- Թագավորաց շրջան 190, 207, 216, 235, 369, 415
- Թագավորներ 209, 216, 229, 231, 235, 340, 369, 378, 378, 387, 401, 414, 425, 442-445, 450, 460
Բագրատունի (Բագրատունյաց) Թագավորություն 84, 100, 229, 400, 401, 425, 442, 443
- Թագուհի 277, 278
- իշխաններ 287, 399, 401, 441
- մայրաքաղաք - տե՛ս Անի քաղաք
- շրջան 277, 292, 298, 390, 406, 407, 411, 415, 417, 418, 424-426, 430, 449, 462
Բագրատունիներ (Բագրատունիք) 129, 136, 190, 207, 209, 235, 279, 383, 387, 406, 409, 411, 415, 426, 441, 443, 444, 446-450, 453, 454, 460
Բագրատունիների պալատ - տե՛ս Անիի մինարեթների պալատ
Բաղդադ 85, 86, 100, 107, 231, 232, 340, 455
Բայանդուր 137
Բանա գյուղ 129, 271, 301, 316
Բանայի եկեղեցի (տաճար) 96, 271, 319, 344, 347, 349, 350, 352
Բաշ-Ապարան գյուղ 69, 182, 305, 308
Բաշ-Ապարանի եկեղեցի 199, 200, 305 - տե՛ս նաև Քասաղի եկեղեցի
Բաշ Շորագյալ 29, 311, 379, 387
Բասեն 192
Բասմաջյան (Բասմաճյան) Կ[արապետ] 90, 215, 403
Բարբերոտ (Barberot) 111-113
Բարգափրան 136, 379
Բարձր Հայք 427
Բարսեղ Կեսարացի 162, 203
Բել 55
Բեխենց վանք - տե՛ս Անիի Բեխենց վանք
Բեչքիլիսե (Խծկոնք) 385
Բերդ գյուղ 144
Բիսութունի ժայռ 336
Բյուզանդիա (Բյուզանդիոն) 76, 79, 83, 94, 98, 99, 101, 102, 105-111, 115, 126, 172, 173, 287, 299, 326, 328, 335, 370, 415, 417
Բյուրական 337
Բյուրգ գյուղ 193
Բրետան 33
Բուդ Առավեղյան 165, 294, 310, 441
Բուլղարիա (Բոլղարիա) 85, 189

Գ

Գագիկ Ա. Թագավոր (Գագիկ Բագրատունի, Գագիկ Շահնշահ) 89, 90, 129, 187, 208, 228, 231, 277, 278, 316, 327, 334, 340, 342-244, 246, 372, 376, 377, 409, 412, 415, 417, 426, 448, 453-455
Գագիկ Արծրունի [Թագավոր] 81, 110, 129, 136, 193, 319, 377, 381, 435, 436, 438, 455
Գագիկ Բ. [Բագրատունի] Թագավոր 401
Գագիկի տաճար [Աղթամարում] - տե՛ս Աղթամարի եկեղեցի
Գագիկի տաճար [Անիում] - տե՛ս Անիի գագկաշեն ս. Գրիգոր եկեղեցի
Գալուստ ճարտարապետ 234
Գայանե (եկեղեցի, վանք, վկայարան, տաճար,) 72, 95, 102, 161, 163, 165, 196, 200, 207, 256, 274, 275, 279, 283, 297, 310, 321, 362-366
Գայլ գետ 193
Գառնի 79, 84, 88, 120, 123, 192, 218, 226, 229, 260, 261, 276, 328, 353, 354, 436, 438
Գառնիի ամրոց 182, 353
- գավառ 354
- եկեղեցի (բազիլիկ) 163, 176, 177, 308, 399
Գեղարդավանք 426-428, 451
Գևորգ Դ. կաթողիկոս 41, 307
(ս.) Գևորգ եկեղեցի - տե՛ս Հոռոմոս
Գևորգ կաթողիկոս (Հայրապետ) [Գառնեցի] 318
Գևորգ Մարզպետունի 292, 441
Գետարգել ս. Նշան 377
Գլիձոր 402, 404, 412
Գյավուր-դալա 37, 56
Գյուլլե-կոնդ 28, 29
Գյուտ կաթողիկոս 104, 309, 328
Գնթունի իշխան 174, 308
Գոմեշտան 193
Գոնիա 233, 234
Գոչավանք (Նոր Գետիկ) 99, 141
Գուգարք 139
Գրիգոր Աստվածաբան 203
(ս.) Գրիգոր եկեղեցի - տե՛ս Անիի Գագկաշեն, Անիի ս. Գրիգոր եկեղեցի (Մառի պեղած), Անիի Ապուղամրենց ս. Գրիգոր, Դվինի կաթուղիկե և Զվարթնոց
Գրիգոր եպիսկոպոս 318
Գրիգոր Եղյուտոր 311
Գրիգոր Լուսավորիչ 88, 92, 154, 198, 214, 217, 266
Գրիգոր Մագիստրոս 331
Գրիգոր Մամիկոնյան 83, 130, 159, 160, 161, 165, 169, 304, 310, 438, 439
Գրիգոր Նազիանզացի 97, 222
Գրիգոր Նյուսացի 95, 97, 217
Գրիգոր (որդի Հասանա ) 375
Գրիգոր Պահլավունի իշխան [Վահրամի և Ապլղարիպի հայրը] 274, 394, 400, 401, 402
Գր[իգոր] Սքանչելագործ 272
Գրիգոր Վկայասեր 331
Գրիգոր քահանա [ Կարմրավորի կառուցողներից մեկը] 361
Գրիգոր քահանա [Շապին-Գարահիսարում) 202

Դ

Դանիել վարդապետ 376, 387
Դանուբի հովիտ 111, 231
- նահանգ 232
Դավիթ Սահառունի [Մրենի կառուցող] 268, 278, 310, 368, 370
Դավիթ Սահառունի (Սախռունի) 136, 379
Դավիթ վկա 318
Դավիթ (վրաց թագավոր) 421
Դատյան Խաչիկ վարդապետ 228, 311, 332, 439
Դարբանդ 68, 456
Դենչապուհ 303
Դիել (Diehl Charles) 90-92, 94, 97-99, 101, 102, 104, 105
Դիելաֆուա Մ. (Dieulafoy) 86, 150, 151, 336
Դիմետր 423
Դիտի-կոնդ 28, 65, 66
Դիրակլար (Դիրաքլար) գյուղ 30, 174, 175, 178
Դիակլարի եկեղեցի 122, 155, 156, 163, 173-175, 178, 196, 199, 305, 399, 408
Դյուբուա (Dubois) 27, 84, 92, 281, 286
Դյուքենդ գյուղ 30
Դնեստր 232
Դոն 85, 232
Դովրի ամրոց (ղղյակ) 37, 64
- գյուղ 36, 37, 63, 181
Դվին քաղաք 83, 122, 125, 176, 188, 220, 303, 318, 321, 325, 328, 329, 332, 333, 335
Դվնի Բ. ժողով 163, 175, 195, 196, 200, 272
- Դ. ժողով 333
- Ե. ժողով 200, 201
- կաթողիկոսարան 218. 220, 320, 325, 328
- կաթուղիկե (սբ. Գրիգոր) եկեղեցի 83, 97, 125, 157, 162, 169, 176, 188, 272, 273, 309, 327, 328, 333
- (ս.) Սարգիս եկեղեցի 162, 321
- Վարդան Բրեչխի եկեղեցի - տե՛ս Դվինի կաթուղիկե

Ե

Եգիպտոս 79, 101, 108, 114, 118, 119, 315
Եզր (կաթողիկոս) 72, 161, 163, 165, 168, 196, 204, 207, 279, 310, 318, 321, 328, 363, 365
Եհովա 315
Եղիազար կաթողիկոս 92, 94, 95, 366
Եղիշե (պատմագիր) 162, 301, 437
Եղվարդ գյուղ 36, 63, 70, 175, 177, 305, 309, 310
Եղվարդի եկեղեցի (5-րդ դարի) 153, 154, 156, 161, 162, 169, 175, 176, 309
- եռահարկ եկեղեցի 142
- Զորավոր եկեղեցի (Գրիգոր Մամիկոնյանի եկեղեցի) 159, 160, 309, 310
- մատուռ (հին գերեզմանատան մեջ) 70, 182, 305
- մեծ կաթուղիկե 83, 124, 125, 156, 157, 161, 165, 169, 175, 309
Եվրոպա 25, 33, 77, 99, 114, 115, 130, 133, 143, 180, 188, 229, 231, 417, 454
Երազգավորս 387
Երասխ գետ 225, 399, 415 - տես նաև՝ Արաքս
Երասխաձոր 298, 338, 369
Երևան քաղաք 105, 305, 353, 357, 359
Երևանի նահանգ 399
- Պատմական թանգարան 38, 66, 68, 352, 451
- Պողոս-Պետրոս եկեղեցի 193
- Քաղաքային թանգարան 193
Երերույքի եկեղեցի 124, 125, 156, 157, 163, 164, 174-176, 186, 196, 199, 200, 203, 213, 223, 229, 243, 248, 249, 251, 252, 257-259, 261, 262, 265, 268-271, 286-288, 305, 307, 357-359
Երվանդ [Երվանդաշատի շինող] 192
Երվանդակերտ 354, 357, 368, 369, 415
Երվանդակերտի բերդ 408, 409
Երվանդաշատ 255, 354, 355, 357, 368, 436
Երվանդաշատի բերդ 192, 225
Երուսաղեմ 101, 164, 196, 202, 271
Եփրատ գետ 231

Զ

Զարնջա գյուղի եկեղեցի 311
Զաքարե (Զաքարիա) Ամիր սպասալար (զորավար, Մեծ, Շահնշահ, սպասալար) 139, 205, 212, 214, 232, 402, 406,

407, 410, 414, 418, 423-425, 430, 454, 455, 460, 461
Զաքարիա կաթողիկոս (հակաթոռ) 272
Զաքարիա Սարկավագ (պատմիչ) 155, 386
Զաքարյան տոհմ 139, 210, 212
Զաքարյաններ 139, 212, 310, 412, 414, 450
Զաքարյան(ների) շրջան 100, 342, 407, 414, 417, 418, 424-428, 430, 450, 461
Զաքարյանք 406
Զեյվա 37, 65
Զենոբ Գլակ 152, 162
Զեա 152
Զմրուխտ խաթուն 375
Զոհրաբլու գյուղ 353
Զորավոր եկեղեցի (Կ. Պոլսում) 101
Զորավոր եկեղեցի - տե՛ս Եղվարդի Զորավոր եկեղեցի
Զվարթնոց (եկեղեցի, տաճար) 83, 95-98, 100, 102, 104, 108, 109, 110, 128, 129, 160, 170, 186, 188, 193, 196, 201, 224, 225, 228, 229, 231, 260, 270, 271, 276, 277, 285, 286, 295, 299-303, 305-313, 315-329, 331, 332, 334-338, 343, 344, 346-352, 410, 417, 439, 440
Զվարթնոցի աշխարհիկ շենքեր 128, 129, 320, 334
Զրադաշտ 150
Զուտարիմա գյուղ 193
Զուրարիք ազգ 382

Է

Էկբատան 336
Էպուսայիտ Բահատուր խան 67 - տե՛ս նաև՝ Ապուսայիտ
Էջմիածին 31, 34, 65, 67, 92, 93, 102, 105, 122, 176, 214, 256, 260, 274, 275, 280, 286, 290, 310, 333, 337, 344, 353, 360, 362, 383
Էջմիածնի ավետարան 92
- կաթողիկե (մայր տաճար, տաճար) 34, 84, 91-96, 102-105, 122, 124, 125, 154, 159, 162, 164-166, 176, 177, 200, 202, 203, 218, 220-223, 227, 243, 245, 249, 255-257, 260-262, 265, 269-271, 274, 280-290, 296, 307, 309, 310, 333, 359, 362, 364, 365
- վանք 34

Թ

Թադևոսյան եղիշե 210, 212
Թալին (գյուղ) (Մեծ Թալին, Վերին Թալին) 30, 37, 64, 67, 368
Թալինի բերդ 64
- գերեզմանատան կոթող 368, 455
- Թանգարան եկեղեցի 337
- կաթուղիկե (մեծ) եկեղեցի (ս. Աստվածածին) 48, 129, 159, 168-171, 173, 284, 286, 288, 310, 367
- փոքր (Ներսեհ Կամսարականի) եկեղեցի 158, 159, 168, 169, 310, 337
- քարադամբան 30
Թալիշ (հին՝ Արուճ) 67, 83, 310
Թախտը Մաղեր Սյուլեյման 336
Թահմազ-Թափիա 62, 63
Թահմազ Ղուլի խան 93
Թամանյան Ալ[եքսանդր] 358
Թամզարա գյուղաքաղաք 457, 458
Թաշչյան (բժիշկ) 403
Թավուզքյարի եկեղեցի 129, 316
Թարզմանչաց վանք 310
Թեբե 55
Թեկովիցի եկեղեցի 231
Թենի 212
Թեոդոսիայի Թանգարան 451
(ս.) Թեոդորոս եկեղեցի (Բագարան) - տե՛ս Բագարանի ս. Թեոդորոս եկեղեցի
Թեոդորոս (Ռշտունի) 303, 304, 316, 318, 319, 321, 333
Թեքսիե - տե՛ս Տեկսիե
Թիֆլիս 72, 93, 97, 104, 202, 317, 318, 321, 357, 456
Թյուրքիա 190
Թովմա Արծրունի 81, 110, 113, 129-131, 136, 193, 272, 318, 319, 322, 379, 381, 435, 438, 440
Թորամանյան Թ[որոս] 134, 147, 230, 276, 279, 332, 346, 352, 467, 477
Թուխ մանուկ մատուռ 71

Ի

Իգաձոր 217, 412
Իգաձորի եկեղեցի 83, 400
- քարափոր դամբարաններ 405
Իզիտոր - տե՛ս Իսիդոր
Ինճե մինարելի մետրեսե 234
Իշխան գյուղ 327
Իլևան 128
Իռանդա (Իռանդիա) 25, 85, 232
Իսիդոր (Իզիտոր) 76, 107-109
Իսմայել 424
Իսրայել 274, 315
Իվանե (Ամիրսպասալար) 212, 216, 454, 455
Իտալիա 179
Իրան 150
Իւչ քիլիսե - տե՛ս Ուչքիլիսե

Լ

Լալայան Ե[ղիանդ] 28
Լանկթիմուր 451
Լենինական 66, 68, 379, 390
Լիսի 55
Լմպատավանք (ս. Ստեփաննոս) 159, 169, 310, 367
Լոռի 369
Լոռիս-Մելիքով 401
Լուսավորիչ 96, 103, 173, 198, 200, 220-222, 224, 267, 269, 360, 401, 407 - տե՛ս նաև՝ Գրիգոր Լուսավորիչ
Լուսավորիչ եկեղեցի - տե՛ս Անիի Լուսավորիչ եկեղեցի
Լուսոտ 415

Խ

Խաթուն-օղլի Յուսուֆ բեկ 387
Խաթուն-օղլիներ 387
Խալաթյան Բագրատ 30, 43
Խամսայի մելիքություն 106
Խանիկչոտ 374
(ս.) Խաչ եկեղեցի 272 - տե՛ս նաև Աղթամարի ս. Խաչ եկեղեցի
Խաչիկ (կաթողիկոս) 201, 379
Խավարաձոր Արշարունյաց 494-495
Խըզնավուզ (Խզնավուզ) 30, 31, 37, 59-63, 67, 68
Խլաթ 241
Խծկոնք (Խցկունք) 217, 385, 455
Խծկոնքի ս. Աստվածածին (եկեղեցի) 105, 210, 276
- (ս.) Սարգիս (եկեղեցի) 164, 217, 279, 385
- (ս.) Ստեփաննոս (եկեղեցի) 385
Խոնթ խաթուն 248
Խոշաք 212
Խոսրով Փարվեզ (Ապրուեզ) 72, 279, 303, 304
Խոսրովիդխտո Հովանոց 123
Խոսրովիդուխտ 353
ԽուՄլու խաթուն 209, 210
Խրիմյան Մկրտիչ կաթողիկոս 366, 401

Ծ

Ծաղկոցաձոր 190, 215, 216, 236, 330, 334, 344, 356, 393, 394, 400-402, 404, 409, 411, 424, 429, 444, 448, 453
Ծամնդավ 333
Ծիրանավոր եկեղեցի - տե՛ս Աշտարակի (Ծիրանավոր) եկեղեցի
Ծպնի գյուղ 370

Կ

Կաեան (Կայեն) 278
Կամսարական - տե՛ս Սահակ Կամսարական
Կամսարական (մը) 265, 268
- իշխաններ 455
- տոհմ 368, 409
Կամսարականներ (Կամսարականք) 64, 139, 310, 311, 330, 331, 368, 379, 406, 407, 409-411, 424, 444
Կամսարականներու շրջան 406, 407, 411, 436
Կայնոպոլիս 332
Կանայան (Կանայանց) Ստ[եփան] 72, 176
Կանլիջա 37, 66, 67, 311 (տե՛ս նաև՝ Ղանլիջա)
Կատրանիդե Թագուհի 277, 278, 343, 421, 453, 454
Կարանլուխ (գյուղ՝ Ապարանում) 69, 182, 305
Կարանլուխի եկեղեցի 311
Կարանյանց Հակոբ 248, 371
Կարմիր-բլուր 188
Կարմիր-վանք (Ղոչավանք) 234
Կարմրավոր եկեղեցի (Աշտարակում) 361
Կարս 62, 63, 235, 399, 448
Կարսի Առաքելոց եկեղեցի 201, 202, 225, 264
- շրջան 37
Կափրլի (գյուղ) 27, 29, 37, 48, 49, 52, 53, 56, 71, 408
Կեր-Բորդր 460
Կզըլ-Կուլե 357 (տե՛ս նաև՝ Ղզըլ-Ղուլա)
Կղզիթամուր ( գյուղ) 59
Կղկալա - տե՛ս Անիի Կղկալա և Անիի Աղջկաբերդ
Կըզլներ 65
Կթանոց (գյուղ) 193
Կիև 102, 232
Կիրակոս Գանձակեցի 101, 318, 321, 372, 418, 424
Կիրակոս վարդապետի դամբարան 405
Կիրանց վանք 188
Կյուլեկ-Թափա կամ Քյուլեկ-Թեփե 64
Կյուրիկե Բագրատունի 456
Կյուրոն (վրաց կաթողիկոս) 193
Կոգում գյուղ 382
Կողբ 374
Կոմիտաս (Կումիտաս) կաթողիկոս 72, 124, 161, 243, 262, 279, 287, 307, 309, 310, 321, 328, 363- 365
Կոչ 30, 31, 33, 59, 67, 71
Կոստանդիանոս կայսր (Մեծ) 108, 117, 162, 172, 173, 219-221, 260, 266
Կոստանդին (Կոստանդ, Կոստանդիանոս) 109, 228, 310, 317, 320, 325, 328, 333, 335
Կոստանդնուպոլիս (Պոլիս) 101, 102, 104, 107-109, 220, 221, 228, 231, 316, 318, 325, 328, 333, 335, 345, 370
Կոստանդնուպոլիս Առաքելոց եկեղեցի 221
Կոստանյանց Կ[արապետ] 279, 357
Կովկաս 28, 234, 340, 405, 456
Կոտայք 359
Կորդովա 133, 233
Կոխդայիրման 37, 41, 56, 57, 59
Կրխբուլախ (գետակ) 359
Կուլիտինի 66
Կուլիջան 37, 66
Կումայրի 127
Կուսանաց վանք - տե՛ս Անիի Կուսանաց վանք

Հ

Հախպատ (Հախպատավանք) 131, 139, 142, 456, 458
Հակոբ Երեց 362
Հակոբ կաթողիկոս 93
Հակոբ Սյունյաց եպիսկոպոս 97
Համազասպ Մամիկոնյան 317
Համզե 208, 215, 394, 402
Հայաստան 25-28, 30, 35, 37, 42, 48, 55, 56, 61, 63, 68-71, 76-88, 90, 91, 93-114, 118-139, 143, 144, 147-152, 154, 162, 164, 165, 172-174, 176-179, 181-183, 186-189, 192, 193, 198, 199, 202, 203, 208, 218, 220-224, 226-229, 231-239, 259, 261, 266, 267, 269, 272, 291, 299, 301, 303, 304, 310, 316-318, 321, 324-333, 335-338, 340, 352, 354, 357, 359, 362, 367-369, 383, 389, 406, 409, 411, 419, 421, 427, 432, 433, 436, 437, 449, 454, 456
Հայկազունի Գ. 201
Հայք 92
Հաջի-Բայրամ գյուղ 192, 225, 355, 356, 415
Հաջի-Խալիլ 31, 37, 41, 43, 47, 53, 63
Հաջի-Ղարա 30-34, 34, 37, 59, 65, 67, 337, 383
Հառիճավանք 137, 142, 310, 454, 455
Հասան 375
Հարամլու 30-32, 37, 59, 67, 68
Հարությունյան Ս. 79
Հեղինե 172
Հեճուլ Գրիգոր 375
Հերակլ 72, 279, 310, 366, 368
Հերոդոտ 55
Հին Արևելք 114, 188
Հին Բայազետ 193
Հին կտակարան 229, 271
Հյուսիսային Կովկաս 27, 451
Հյուրկանոս քահանա 136
Հնդկաստան 25, 99, 150, 151, 229, 233, 271, 343, 453
Հոհան - տե՛ս Հովհան
Հոհաննես - տե՛ս Հովհաննես
Հոռոմ գյուղ 30, 32, 37, 41-43, 45, 47, 53, 69, 181
Հոռոմոսի ս. Գևորգ եկեղեցի 208, 216, 278, 372, 374, 376, 377, 378
- (ս.) Հովհաննես եկեղեցի (տաճար) 134, 135, 204, 205, 207, 242, 370, 374-377, 383, 405
- (ս.) Մինաս եկեղեցի 264, 350, 369, 372, 373, 376, 378
- վանք 99, 134, 144, 208, 210, 229, 230, 248, 272, 278, 350, 371-375, 377-379, 383, 403, 404
Հովհան (Հոհան) [Զվարթնոցը կառուցող] 314, 317
Հովհան (Հոհան) կաթողիկոս [հակաթոռ] 105, 175, 309, 359
Հովհան Մանդակունի 176
Հովհան Օձնեցի (Իմաստասեր) 176, 309
Հովհաննավանք 155, 427, 451
Հովհաննավանքի հին եկեղեցի [5-րդ դարի] 155, 175, 308
Հովհաննես կաթողիկոս (Դրասխանակերտցի) 72, 163, 287, 310, 317, 318, 320,322, 332, 334, 335, 363, 438
Հովհաննես կաթողիկոս (մը) 239, 278
Հովհաննես (Հոհան) Արշարունյաց եպիսկոպոս 239, 278
Հովհաննես (Մկրտիչ) 371
Հովհաննես (Հոհան) Սմբատ, Թագավոր (Շահնշահ, արքա) 205, 207-209, 272, 278, 372, 373, 376-379, 383, 401, 457
Հովհաննես վարդապետ [հիմնադիր Հոռոմոսի] 372, 373, 376-378, 457
Հովհաննիսյանց խաչատուր 408
Հովսեփյան Գարեգին (վարդ., եպիսկ.) 105, 290
Հովվի եկեղեցի - տե՛ս Անիի Հովվի եկեղեցի
Հռիփսիմե (եկեղեցի, վանք, վկայարան, տաճար) 72, 9*5, 102, 105, 124, 159-161, 169, 200-203, 225, 264, 265, 270, 274, 275, 279, 283, 286, 287, 310, 362-365
Հռոմ 79, 92, 94, 106, 115, 172, 179, 223, 224, 226, 260, 261, 328, 353, 406
Հռոմի Պանթեոն 79, 115, 118, 224
- (ս.) Ստեփաննոս 97, 224
Հռոմկլա 333
Հունաստան 70, 79, 106, 114, 115, 117-119, 123, 126, 152, 224, 231, 269, 328, 353, 372
Հուսիկ արքեպիսկոպոս 210
Հուստինիանոս (Հուստինիան) 94, 105-108, 221, 284, 370

Ղ

Ղազար Փարպեցի 162, 176, 287, 333
Ղալա 355, 407
Ղալա իշի 38, 41
Ղանլիջա 390, 408, 415 (տե՛ս նաև՝ Կանլիջա)
Ղարավանք 310
Ղափանցյան 367
Ղեղաճ 415
Ղևոնդ [Երեց] 317
Ղղալա - տե՛ս Անիի Աղջկաբերդ
Ղըզլ-ղալա 241 (տե՛ս նաև՝ Կզլ-Կուլե)
Ղըզնավուզ - տե՛ս Խզնավուզ
Ղոզլիճա (Ղոզլիջա) 34, 383, 405, 407
Ղոթուր 73
Ղոչավանք 137, 234, 350
Ղոչեք 372, 378, 379

Ճ

Ճակատոց գավառ 376

Մ

Մաթեոս 212
Մալտա 183, 188-189
Մակար (Երուսաղեմի եպիսկոպոս, արքեպիսկոպոս) 164, 202
Մակար կաթողիկոս 290
Մակեդոն (Մակեդոնն) քաղաք 111, 136
Մակեդոնիա 107, 113

Մահմեդ ոստիկան 304
Մահմուդջուղ (գյուղ) 37, 53
Մահմուդջուղի եկեղեցի 310
Մաղաս (Մաղխաս) բերդ 386, 387, 401
Մաղաս (Մաղխաս) իշխան 386
Մաղարճուք գյուղ 309
Մամախաթուն (դուստր Ապուսերհի) 375
Մամիկոնյան տոհմ 331
Մամիկոնյաններ 220, 331
Մամ խաթուն 415
Մայր եկեղեցի - տե՛ս Անիի կաթուղիկե եկեղեցի
Մանան հազարապետ 239, 278
Մանանաղի գավառ 226
Մանաս [Կարմրավոր եկեղեցու կառուցողներից մեկը] 361
Մանոլ 111-113
Մանուել (ճարտարապետ) 111, 382, 436
Մանուչէ 418, 419, 421, 425
Մանուչեի մզկիթ 425 (տե՛ս նաև՝ Անիի Մանուչեի մզկիթ)
Մաշտոց [կաթողիկոս] 194
Մաջիտլու գյուղի եկեղեցի 311
Մառ Ն[իկոլայ] 86, 88, 105, 190, 214, 215, 217, 231, 234, 248, 277, 279, 280, 329, 344, 346, 347, 400, 405, 407, 409, 410, 412, 429, 442, 460
Մասիս 72
Մասպերո (Maspero) 55, 151
Մաստարայի եկեղեցի 103, 165, 167, 286, 288, 310, 330
Մավրակ (Մավրեկ) գյուղ 370, 386
Մատթեոս Ուռհայեցի 439
Մարիամ [Աստվածածին] 371
Մարիամ Գրիգոր Էջյուտրի կինը) 366
Մարինե (Մարիանե) եկեղեցի 361, 362
Մարկոս 212
(ս.) Մարկոս եկեղեցի 104
Մարմաշեն 62, 66, 67, 208, 311, 390, 415
Մարմաշենի եկեղեցի (կաթուղիկե, մեծ եկեղեցի, Վահրամաշեն տաճար) 177, 215, 216, 264, 276, 311, 330, 390-392, 394, 450
- կամուրջ 415
Մարմարա ծով 101
Մարտիրոս 377
Մեծ Թալին - տե՛ս Թալին
Մեկկե 233
Մեհմետ 304
Մեհրուժան 223
Մեսրոպ Մաշտոց 69, 225, 301, 307
Մժեժ Գնունի 303, 304
Միլան 172, 266
Մինգաչուր 94, 225, 266, 267, 271, 336
Միջերկրական ծով 336
Մինին գյուղ - տե՛ս Բագարանի Մինին գյուղ
Մխիթար 3374, 379
Մխիթար Այրիվանեցի 318, 321, 322
Մխիթար Գոշ 212
Մխիթարիչ Գանձակեցի 415
Մշակնոց գյուղ 193
Մշո Առաքելոց եկեղեցի 192
Մոլա-Կասումի (Մոլլա-Ղասրմի) եկեղեցի 174, 176, 177, 308
Մոլդավիա 231
Մոծակենց Գրիգոր (կամ Խոջա Գրիգոր) 362
Մոսկվա 101, 109, 201, 212, 262, 317, 318, 321, 372
Մովսես Խորենացի 70, 79, 88, 120, 123, 152, 162, 192, 198, 218, 226, 353, 355, 357, 438
Մովսես կաթողիկոս Եղվարդեցի 94, 161, 165, 175, 280, 309
Մովսես Կաղանկատվացի 108, 109, 228, 317, 323, 325, 329. 333, 335
Մովսես վարդապետ (ապա կաթողիկոս) 92, 93, 280
Մորիկ (Մավրիկ) կայսր 303, 304, 386
Մոքվի 102
Մռավյան [Ասքանազ] 358
Մրեն գյուղ 2293, 369
Մրենի դաշտ 291
- եկեղեցի (կաթուղիկե, տաճար) 48, 100, 129, 132, 142, 159, 161, 165, 175, 177, 188, 196, 228, 247, 248, 256-259, 264, 265, 268, 269, 272, 273, 275, 276, 284, 288, 291, 297, 310, 330, 367-371, 399, 406, 455, 457
Մուբայաջյանց Ս. 201
Մուստաֆա աղա 387

Ց

Ցովհ. կաթ. - տե՛ս Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի
Ցովհաննու մատուռ 71

Ն

Նախճավան (Նախիջևան) 330, 386
Նակշե Ռուստեմի (Naksché-Roustem) աթաշկիհաշ 151
Նեգրու-Վոդա (Negru-Voda) իշխան 113
Ներսեհ Կամսարական (Ներսեհ Գատրիկ իշխան) 159, 168, 310, 337, 366
Ներսես Աշտարակեցի 290
Ներսես Գ. Տայեցի կաթողիկոս (Ներսես Շինող, Ներսես եպիսկոպոս Տայոց) 96, 97, 104, 108, 109, 223-225, 287, 299, 307, 310, 316-318, 320-329, 331-335, 415, 439, 440
Ներսես Լամբրոնացի (Տարսոնի եպիսկոպոս) 135, 163, 195, 203, 207, 208, 224, 274, 383
Ներսես Մեծ (Ներսես Ա. կաթողիկոս, սուրբ Ներսես) 72, 279, 331, 435
Ներսես Շնորհալի 331.
Ներքին Թալին 310
Ներքին Կանլիջա 66
Նիկիո առաջին ժողով 198, 271, 272
Նիկիփոր 101
Նիկոլսկի Մ. 408
Նիկոմեդիա 101
Նիկոպոլիս կամ Կողոնիա 193
Նինվե 85, 228
Նովգորոդ 232
Նոր քաղաք 287, 318, 332 (տե՛ս նաև՝ Վաղարշապատ)
Նորայր Բյուզանդացի 279
Նորթհման 232
Նորմանդիա 85, 232
Նորվեգիա 232

Շ

Շախաթունյան - տե՛ս Շահխաթունյան
Շահաբաս [Առաջին] 92, 93, 432
Շահ-Թափա 29, 49
Շահխաթունյան (Շախաթունյան) Հովհ. եպիսկոպոս 92, 94, 287
Շահնշահ Ա. [Զաքարեի որդին] 212, 216, 375
Շահնշահ Բ. 212
Շահնշահ (վրաց իշխան) 216
Շամիրամ 50
Շամիրան 30-33, 37, 59, 67, 68
Շանուշ (տիկին) 415
Շանտր (Chantre) 27
Շապին Գարահիսար 164, 193, 202, 286, 457
Շապին Գարահիսարի (ս.) Աստվածածին եկեղեցի 286
- (ս.) Նշան վանք 193
Շապուհ Թագավոր 437
Շեստատյաններ 406, 409, 418, 421, 423, 424, 425, 448
Շեստատյան(ներու) շրջան 406, 407, 418, 424, 431
- տոհմ (ցեղ) 418, 421, 425
Շթուտանիկայի եկեղեցի 231
Շիպլե 48, 50
Շիրակ 88, 103, 109-111, 130, 131, 136, 138, 139, 201, 208, 212, 223, 276, 277, 291, 304, 338, 366, 368, 369, 378, 386, 399, 401, 405-407, 411, 414, 415, 417, 418, 427, 430, 450, 460
Շիրակավան (Բաչ-Շորագյալ) 29, 83, 379, 387, 389, 399
Շիրակավանի եկեղեցի 83, 177, 241, 311, 385, 388, 389, 450
Շիրակի դաշտ 461
- թագավորություն 442
- Նահանգ 130
Շիրվանշուղ (գյուղ) 37, 53, 56
Շիրվանշուղի եկեղեցի 122, 154, 156, 162, 174, 175, 213, 305
Շողակաթ [վկայարան] 283, 287
Շվեդիա 232
Շուազի Ա. (Choisy A.) 85, 86, 99, 101, 231, 232, 233, 260, 336
Շուշան (Շուշիկ) [Գրիգոր Ապուղամրենցի կինը] 208, 215, 330, 394, 401
Շուշի 196





Ո

Ոլիմպոս - 128
Ոստան ավան 381
Ոսփոր 101
Որմիզդ 303, 304

Զ

Զարմաղան 101, 406, 407, 429, 430, 450
Զըրփըլուի կամուրջ 137, 415
Զմշկիկ 101
Զուտաս 377

Պ

Պահլավունի տոհմ (ցեղ) 209, 216, 220, 330, 401, 402
Պահլավունիներ 139, 216, 330, 331, 360, 402, 406
Պապի ապարանք (պալատ) 447
Պասկևիչ 173, 305
Պատմական թանգարան - տե՛ս Երևանի Պատմական թանգարան
Պարթևներ 99
Պարիս (Փարիզ), Paris 84, 90, 104, 105, 112, 260, 281
Պարոն Խուտլուբուղա 458
Պարսկաստան 48, 83, 86, 93, 94, 99, 115, 118, 120, 123, 124, 126, 133, 150, 151, 188, 231, 303, 336, 429, 432
Պիլեզիկյան Հ. Բառնաբաս 92
Պետերբուրգ (Սանկտ Պետերբուրգ) 72, 90, 105, 107, 109, 111, 221, 260, 267, 279, 318, 372
(ս.) Պետրոս եկեղեցի (Հռոմում) 223, 260
Պետրոս կաթողիկոս 296, 332, 439
Պերսեպոլիս 228, 271
Պերրո 23, 25
Պյըզդյան Գր. 111
Պլուզ Հովհաննես վարդապետ 89, 457
Պոլիս - տե՛ս Կոստանդնուպոլիս
Պոկրով 232
Պողոս Առաքյալ 171
(ս.) Պողոս եկեղեցի (Հռոմում) 260
Պողոս-Պետրոս եկեղեցի - տե՛ս Երևանի Պողոս-Պետրոս եկեղեցի
Պոմպե 120, 450
Պուլեյ Լըկուզ (լը Կուզ) 59-62, 68
Պոռոպ զորավար 320
Պոռչյան Պերճ 34
Պտղոմեանք 119
Պրաքսետ եկեղեցի 223
[Պրոկոպիոս Կեսարացի) Procope 106

Ջ

Ջուղա (Հին) 432
Ջուղա (Նոր) 92, 93
Ջուրի (Djour) աշտարակ 151

Ռ

Ռաշամ Ռշտունի 136, 497
Ռավանիքայի եկեղեցի 231
Ռշտունյաց տեր - տե՛ս Թեոդորոս Ռշտունի
Ռոման 101
Ռուզուքան 209
Ռումանիա 85, 111-113, 231
Ռուսահայաստան 408
Ռուսաստան (Ռուսիա) 85, 98, 102, 231, 232

Ս

Սալար 373
Սահակ կաթողիկոս (Սահակ Հայրապետ) 72, 164, 175, 196, 200, 207, 225, 272, 279
Սահակ Կամսարական 175, 222, 223, 227, 239, 243, 277-279
Սահակ-Մեսրոպ 301
Սահակադուխտ 407, 410
Սահառունիք 278, 376
Սահմադին 369
Սաղմոսավանք 138
Սամեհա 234
Սամուել 415
Սամուել Անեցի 318, 321-323, 334, 283, 385
Սանահին 137, 141, 212, 399, 456
Սանկտ-Պետերբուրգ - տե՛ս Պետերբուրգ
Սասանյաններ 150
Սարգիս 346
Սարգիս 415
Սարգիս արքեպիսկոպոս 216
(ս.) Սարգիս եկեղեցի 351
(ս.) Սարգիս եկեղեցի - տե՛ս Դվինի ս. Սարգիս եկեղեցի, Խծկոնքի ս. Սարգիս եկեղեցի, Տեկորի տաճար
Սարգիս եպիսկոպոս (Անիում) 346
Սարգիս Մելենց 416
Սարգիս կաթողիկոս 201, 346
Սարգիս կրոնավոր 374
Սարգիս (որդի Սամուելի) 415
Սարգիս (Վաչեի հայրը) 375
Սարգիս Փառչկյան 217, 455
Սարգսի խաչքար 141
Սարգսյան Ն. 85
Սարդարապատ 30, 65, 67
Սաքսոնիա 461
Սեբաստիա 111, 193
Սեբեոս 72, 96, 279, 287, 303, 316, 317, 319-323, 328, 329, 334, 335, 363
Սեդա 208, 215, 394, 402
Saint Laurent 64
Սենեորոս 70
Սենեքերիմ Արծրունի 111, 193
Սև ծով 85, 187, 231, 232
Սև ջուր 65
Սևքար 193
Սևան 190-192
Սերբիա 85, 231, 232
Սիս 333
Սիրիա (Սյուրիա) 94, 122, 229, 233, 260, 261, 266, 271, 336
Սկանդինավիա 85, 232
Սմբատ 377, 421, 453 (տե՛ս նաև՝ Հովհաննես Սմբատ)
Սմբատ Բագրատունի (Սմբատ Ա.) 387, 389
Սմբատ թագավոր Բ. (Տիեզերակալ) 90,, 208, 209, 272, 278, 357, 372, 376, 378
Սմբատ Մագիստրոս 383
Սմբատ Շահնշահ 376 (տե՛ս նաև՝ Հովհաննես Սմբատ)
Սմբատ Վրկանա մարզպան 309
Սյունիք 113, 130, 139, 201, 369
Սյուրիա - տե՛ս Սիրիա
Սոգյությու 387, 446
Սողոմ [Սոդոմ] 318
Սողոմոն (Իմաստուն) 107, 108
Սողոմոնի տաճար 172, 229, 271, 315
Սոնգուրլի գյուղ 45
Սորբոն 91
Սուրխանիի կրակապաշտական տաճար (ատրուշան) 151
Սուքիաս սրբազան 290
Սուֆրա-ղալ 62
(ս.) Սոֆիա եկեղեցի - տե՛ս Այա-Սոֆիա
Սպահան 92
Սպանիա 123, 133, 233
Սպիտակավոր եկեղեցի (Միկոյանի շրջան) 144
Ստամբոլցյան Խորեն քահանա 448
(ս.) Ստեփաննոս - տե՛ս Լմպատավանք, Խծկոնքի ս. Ստեփաննոս, Անիի ս. Ստեփաննոս մատուռ
(ս.) Ստեփաննոս եկեղեցի (Նախճավանում) 310
Ստեփաննոս Տարոնեցի (Ասողիկ) 89, 90, 101, 107, 109, 110, 113, 318, 327, 344-346, 372-374, 383, 453
Ստրչիգովսկի Հովսեփ 86, 87, 92, 94-96, 98, 101-105, 111, 281, 284
Սրվեղի վանք 188

Վ

Վահան Ամատունի 69, 70, 307
Վահան կաթողիկոս 97, 393
Վահան Մամիկոնյան (Մարզպան) 104, 105, 125, 154, 161, 176, 196, 199, 220-223, 285-287, 301, 307
Վահանանց պատերազմ 152, 301
Վահանանք 152
Վահրամ Պահլավունի 62, 67, 105, 208, 215, 216, 383, 390, 392, 394, 400
Վահրամաշեն բերդ (Վահրամի բերդ) 67, 390
Վաղարշապատ 72, 93, 196, 199, 210, 260, 262, 270, 279, 316, 318-320, 326, 328, 329, 332- 334, 362-364, 379
Վաղարշապատի կաթուղիկե - տե՛ս Էջմիածնի տաճար
Վան 79, 233
Վանա ծով 110, 111, 130, 233, 379

Վանանդ 111, 201, 291, 399, 427
Վաչե 375
Վասակ 278
Վասակ իշխանաց իշխան [Ապ-ղարիպի եղբայրը] 215
Վասիլ Ա. 98, 101, 104, 105
Վասիլ Բ. 107, 111, 113
Վասպուրական 110, 111, 113, 130, 131, 136, 138, 139, 193, 201, 225, 381, 436, 455, 457
Վարազա լեռ 111, 136
Վարդ 107
Վարդ [Վահան Մամիկոնյանի եղբայրը] 301
Վարդան Բարձրաբերդցի 201, 212, 318, 321, 418
Վարդան Մամիկոնյան (Բզեշխ, Մեծ) 162, 188, 303, 309
Վարդանաց (Ավարայրի) պատերազմ 152, 299, 301, 304, 367
Վարդանանք 152
Վարի բերդ (Շիրվանջուղում) 54, 56
Վենետիկ 195, 208, 224, 225, 239, 274, 278, 318, 372, 373, 379, 408
Վենետիկի ս. Մարկոս եկեղեցի 221
Վեստ Սարգիս 385, 401
Վերի բերդ (Շիրվանջուղ գյուղում) 54, 63
Վերին Թալին - տե՛ս Թալին
Վերին Կանլիջա 66
Վիեննա 86, 92
Վիսթյուլ 232
Վիտրավի (Vitreuve) 179
Վիրապ 318, 321
Վոգյուե 336
Վոլգա 85, 232
Վոլիմպոս տե՛ս Ոլիմպոս
Վրաստան 85, 98, 102, 193, 232, 450
Վրթանես Հայրապետ 202
Վրույր Ա. 231

Տ

Տաթևի գավազան 183, 184
- վանք 97, 184
Տակայշվիլի 216
Տաճկահայաստան 128
Տաճկաստան 429
Տամքլուի եկեղեցի 177
Տայլարի կաթուղիկե 450
Տայք 316, 318, 322, 327, 333, 335
Տաշիր 139
Տարագրոս 353
Տարոն 130, 201, 225
Տեկոր գետ 385
Տեկոր գյուղ 311, 366, 368, 386, 409
Տեկորի բերդ 64, 226, 408, 409
- տաճար (եկեղեցի) 100, 103, 104, 122-127, 129, 133, 135, 157, 163, 164, 174, 177, 188, 196, 199, 200, 203, 213, 218, 222, 223, 226, 227, 229, 239, 240-246, 248-255, 257-265, 268-273, 275-279, 284-288, 294, 296-298, 305, 307, 308, 311, 330, 366, 368-370, 385, 406, 409, 462
Տեկտանդեր 93, 283
Տեղերի եկեղեցի 138
Տենիե (Tenier Ch.) 123
Տեր-Մկրտչյան Գ[ալուստ] 72, 176
Տեր-Մովսիսյան Մեսրոպ վարդ. 284, 288
Տեքսիե (Texier) 84, 85, 133, 239, 247
Տիգնիս 387
Տիգնիսի բերդ (ամրոց) 145, 379, 387
Տիգրան Հոնենց 205, 210, 212, 214-216, 279, 402, 403
Տիլ Շ. 104, 105, 111
Տրակոմիրայի եկեղեցի 231
Տրապիզոն 231, 232
Տրդատ Թագավոր [Առաջին] 79, 120, 353
Տրդատ Թագավոր [Երրորդ] 88, 92, 120, 174, 214, 220-222, 226, 266-268, 280, 308, 316, 328, 333, 345, 353, 354, 456
Տրդատ (ճարտարապետ) 102, 109, 344, 345, 436
Տրդատա ամրոց (բերդ) 182, 192
Տրդատի հովանոց (Տրդատա թախտ) 84, 120, 123, 218, 226, 227, 229, 260, 261, 276, 353, 355, 356, 409
Տփխիս 72, 79, 176, 221, 222, 226, 266, 268, 279

Ու

Ուղտ [Հուդա] 278
Ուխտանես 193
Ուչքիլիսե (Ուչ-քիլիսե) 93, 283, 311

Փ

Փավստոս Բյուզանդ 71, 72, 162, 221, 267, 373, 447
Փատլուն 423
Փարիզ 90, 91, 403
Փարպի 56, 57, 374
Փենեկի (Բանա) եկեղեցի 319, 344
Փերսի 26, 27
Փիլիպպոս կաթողիկոս 92, 93, 95, 363, 364, 366
Փոքր Ասիա 29, 30, 68, 85, 98, 101, 116, 119, 187, 201, 203, 208, 222, 260, 261, 286
Փոքր Թալին 65, 67
Փրկիչ եկեղեցի - տե՛ս Անիի ս. Փրկիչ եկեղեցի

Ք

Քաղաքային թանգարան - տե՛ս Երևանի Քաղաքային թանգարան
Քաղաքուշաշտ 317, 325
Քաղդեա 99, 114
Քաղկեդոն 106
Քանան 278
Քանաքեռցի Խոջա Փլավ - տե՛ս Մոծակեցց Գրիգոր
Քասաղ գետ 31, 32, 59, 65, 69, 318, 332, 362
Քասաղի եկեղեցի (տաճար) 155, 156, 163, 174-177, 213, 223, 257. 259, 261, 262, 265, 268, 269, 284 (տե՛ս նաև՝ Բաշ-Ապարանի եկեղեցի)
Քսենոֆոն 123
Քսերքսես 115
Քրիստափոր մատուռ - տե՛ս Անիի ս. Քրիստափոր մատուռ
Քրիստոս 93, 172, 217, 274, 317, 334, 371, 375, 376, 456
Քրուշևանքի եկեղեցի 231

Օ

Օլթի 316, 344
Օձունի եկեղեցի (տաճար) 175, 176, 198, 199, 223, 257, 259, 265, 268, 307, 309
Օղուզլուի կաթուղիկե 83, 450
Օյուղ 33, 34, 59, 67, 71, 383
Օշական 26-31, 33, 37, 50, 59 65, 69, 310
Օշականի եկեղեցի 362
- կամուրջ 307
Օրբելի Հ[ովսեփ] 201, 210
Օրթագյուղ 318
Օրթաքիլիսա գյուղի եկեղեցի 311

Ֆ

Ֆեթվաճյան Ա. 212
Ֆիլիմոնով 27
Ֆիրուզապատ 124
Ֆլորա 112
Ֆոստա 172
Ֆրանգանոց 37
Ֆրանսիա (Ֆրանսա) 25, 85



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան ..... 7
Թորոս Թորամանյան (կենսագրական ակնարկ) ..... 11

ՄԱՄ ԱՌԱՋԻՆ

**Հայաստանի նախնական ճարտարապետական մնացորդները ..... 23-72**
[Երկու խոսք] ..... 25
Ա. Դոլմեններ ..... 25
Բ. Հողաբամբաններ և քարաբամբաններ ..... 28
Գ. Կրոմլեխներ ..... 30
Դ. Բոլորակ աշտարակներ ..... 33
Ե Ամրոցների և քաղաքների նախնական շինություններ ..... 35
Զ. [Ավելի ուշ ժամանակների ամրոցներ և բերդաքաղաքներ] ..... 56
Է. [Քրիստոնեական դարաշրջանի սկզբներին շինված հուշարձաններ] ..... 68

ՄԱՄ ԵՐԿՐՈՐԴ

**Ընդհանուր բնույթի հոդվածներ V-XIII դարերի ճարտարապետության մասին ..... 73-236**
Ա. [Ներածություն պատմական հայ ճարտարապետության] ..... 75
Բ. [Ճարտարապետական ոճերի և շինարարական կերպերի փոխազդեցությունները և հայկական ճարտարապետության զարգացման էտապները] ..... 113
Դարաշրջանական հատկանիշներ ..... 145
Գ. Մասնավոր ուսումնասիրություն հայոց նախաքրիստոնեական կրոնի և համեմատություններ եկեղեցիների հատակագծերի ..... 147
Հայոց հնագույն եկեղեցիների հատակագծային ձևեր ..... 153
Ժամանակագրական համեմատություն հայոց հնագույն եկեղեցիներու հատակաձևերու մասին ..... 161
Դ. Շինանյութերը և նրանց գործածության կերպը Հին Հայաստանում ..... 178
Ե. Գավիթ և ժամատուն հայոց հնագույն եկեղեցիներու մեջ ..... 194
Զ. Պատուհաններ ..... 211
Է. Պատկերները հայոց հին եկեղեցիներու մեջ ..... 214
Ը. Հայ ճարտարապետության շրջանները ..... 218

ՄԱՄ ԵՐՐՈՐԴ

**Եկեղեցական ճարտարապետություն ..... 237-295**
Ա. Տեկորի տաճարը ..... 239
Բ. Էջմիածնի տաճարը Ճարտարապետական և հնագիտական հետազոտություն ..... 280
Գ. Բագարանի ս. Թեոդորոսը Բագարան ..... 291
Դ. Զվարթնոց ..... 299
Գլուխ Ա. Շինարար գործունեություն Հայաստանի մեջ 5-րդ, 6-րդ և 7-րդ դարերում ..... 299
Գլուխ Բ. Զվարթնոց եկեղեցին ..... 311
Գլուխ Գ. Զվարթնոցի հիմնարկության և ավարտման թվականների մասին ... 316
Գլուխ Դ. Ներսես կաթողիկոս և իր կյանքն ու գործունեությունը ..... 326
Գլուխ Ե. Զվարթնոց եկեղեցու քարերի նշանները ..... 336
Ե. Գագկաշեն ս. Գրիգոր ..... 339
[Գագիկի տաճարի վերակազմությունը] ..... 347
Զ. Երևանի Պետական Պատմական թանգարանի Ճարտարապետական բաժնի համառոտ հատկանշական ցուցակ ..... 352

ՄԱՄ ՉՈՐՐՈՐԴ

**Քաղաքացիական ճարտարապետություն ... 397-463**
Ա. Անի ..... 399
Բ. Հայաստանի արքունական ու իշխանական ապարանքները և անոնց ներքին կենցաղը .... 432
Գ. Անվո միջնաբերդի պեղումները ..... 460

**Հավելված ..... 465-495**
Ցուցակ ճարտարապետ Թորոս Թորամանյանի կատարած չափագրությունների, որոնք այժմ պահվում են նրա ժառանգների մոտ ..... 467
Բառարան բնագրում գործածված ճարտարապետական տերմինների ..... 476
Ֆրանսերենով գործածված տերմիններ ..... 479
Ցուցակ ժողովածուի մեջ զետեղված նկարների ..... 481
Լուսանկարների հեղինակներ ..... 485
Փոխված լուսանկարներ ..... 485
Ցուցակ Թորոս Թորամանյանի մինչև այժմ հրատարակված աշխատությունների և հոդվածների ..... 486
Անունների ցանկ ..... 487

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆ

# ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
## ԵՐԿՐՈՐԴ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԿԱԶՄԵՑ ԵՎ ԽՄԲԱԳՐԵՑ Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ
ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹՅԱՄԲ Ն. ԹՈՐԱՄԱՆՅԱՆԻ

*Բնագրի գլխագարդերն ու վերջնագարդերը*
*ճարտարապետ Լ. ՍԱՌՈՅԱՆԻ*



# ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

*Նախապես մենք մտադիր էինք Թ. Թորամանյանի բոլոր գիտական աշխատությունները հրատարակել միայն երկու հատորով, որոնցից մեկը պետք է ընդգրկեր նրա գրական-տեսական ուսումնասիրությունները, իսկ երկրորդը՝ ճարտարապետական չափագրությունների ժողովածուն, հատուկ ալբոմի ձևով:*

*Այդ մտադրությամբ էլ կազմեցինք հեղինակի աշխատությունների առաջին ժողովածուն, որը լույս տեսավ 1942 թվին, ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի հրատարակությամբ՝ «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության» վերնագրի տակ: Այդ առաջին ժողովածուն մենք կազմել էինք այն հաշվով, որպեսզի նրա ընթերցողը համեմատաբար լրիվ գաղափար ստանար հայկական պատմական ճարտարապետության շրջանների մասին, և միևնույն ժամանակ նպատակ ունեինք ժողովածուի մեջ ի մի հավաքել Թորամանյանի կարևոր բոլոր գործերը:*

*Սակայն առաջին ժողովածուի բացառիկ ջերմ ընդունելությունը սովետական ընթերցող հասարակության կողմից, ինչպես նաև նրա գիտական արժանիքները թելադրեցին մեզ կազմել մի երկրորդ ժողովածու ևս՝ բոլորովին նոր նյութերի հիման վրա, և դրանով իսկ սպառել բեղմնավոր հեղինակի բոլոր գրավոր գործերը, իսկ չափագրությունների ժողովածուն, որ պահանջում է գրեթե հիմնովին մաքրագծություն, հետագայում հրատարակել իբրև այդ երկու ժողովածուների ալբոմ:*

*Այդ պատճառով էլ ներկա ժողովածուն ոչ թե անմիջական շարունակությունն է առաջինի, այլ մի ինքնուրույն և անկախ հատոր է, որն իր պարունակած բազմաթիվ նոր նյութերով գալիս է հարստացնելու մեր ճարտարապետության պատմությանը վերաբերող գրականությունը: Կարևորն այն է, որ այստեղ հրատարակում ենք այն ամբողջ հում նյութը, որի հիման վրա հեղինակը կառուցել է իր գիտական տեսությունները: Ահա թե ինչու մենք մեծ կարևորություն ենք տալիս ներկա ժողովածուի մեջ հրատարակվող օրագրերին, զեկուցագրերին և ճամփորդական տեղեկագրերին:*

*Ինչպես առաջին հատորի մեջ, այնպես էլ այստեղ, թեև հրատարակվում են միանգամայն առանձին և միմյանց հետ չկապվող աշխատություններ, բայց մենք, այնուամենայնիվ, դրանք խմբավորել և որոշ սիստեմի ենք վերածել իրենց բովանդակության համաձայն, ուստի և ժողովածուն, ամբողջությամբ բաժանել ենք չորս բաժինների:*

*Առաջին բաժնում զետեղել ենք այն ուսումնասիրությունները, որոնք վերաբերում են ճարտարապետության ծագմանը, զարգացմանը և փոխազդեցություններին:*

*Հատկապես փոխազդեցությունների խնդրում հեղինակը միանգամայն գիտական ճիշտ տեսակետի վրա է կանգնած: Նա մի կողմից քննադատության է ենթարկում Արևմուտքի առաջ գլուխ խոնարհողներին, որոնք հայկական ճարտարապետությանը վերա-*

գրում են միայն պասսիվ դեր, և մյուս կողմից էլ քննադատում է նրանց, ովքեր ազգային սնապարծությամբ ամենուրեք հայտարարում են, թե հայկական ճարտարապետությունը ազդել է մեր հարևան ժողովուրդների և այլ երկրների ճարտարապետության վրա և ինքը մնացել է միանգամայն անաղարտ վիճակում:

Թորամանյանն ընդունում է, որ հայկական ոճի զարգացումը սերտորեն կապված է հարատև փոխազդեցությունների հետ, երբ հարևան ժողովուրդների համատեղ գործունեությամբ առաջ է ընթանում ոճերի զարգացումը:

Առաջին բաժնում ենք տեղավորել նաև մինչև այժմ աչքաթող արված գերեզմանական ճարտարապետությանը վերաբերող միանգամայն ուշագրավ մի հոդվածը:

Ժողովածուի երկրորդ բաժինը նվիրված է ճարտարապետական առանձին հուշարձանների մեծ մասամբ համառոտ բնութագրմանը: Այստեղ կան նյութեր, որոնք վերաբերում են Էջմիածնի և Տեկորի տաճարներին, ինչպես նաև Զվարթնոցին, սակայն նրանք իբրև նոր նյութեր այս կամ այն չափով լրացնում են Թորամանյանի աշխատությունների առաջին հատորի մեջ հրատարակված ուսումնասիրությունները: Նույն բաժնի վերջում դրել ենք այբբենական կարգով դասավորված հուշարձանների համառոտ մի ցուցակ, որն աշխատել ենք ըստ հնարավորին պատկերազարդել, որպեսզի մինչև այժմ չուսումնասիրված մի շարք ճարտարապետական կոթողներ այս կամ այն չափով հայտնի դառնան մեր գիտական գրականությանը, թեև ցուցակն ըստինքյան խիստ թերի է և բովանդակության տեսակետից միանգամայն անմշակ:

Երրորդ բաժինն ընդգրկում է հեղինակի հնագիտական ուղևորություններին վերաբերող բոլոր հուշատետրերը, տեղեկագրերը և գիտական նշանակություն ունեցող նամակները, որոնք բոլորն էլ ունեն գիտական նշանակություն այն իմաստով, որ պարունակում են ուսումնասիրական և չափագրական բազմաթիվ մանրամասնություններ. դրանք հիմք են ծառայել հեղինակին հանգելու այս կամ այն եզրակացությանը: Բայց, ցավոք սրտի պետք է նշենք, որ Թորամանյանը սովորություն չի ունեցել կանոնավոր կերպով ծոցատետրեր և կամ օրագրեր պահելու, իսկ նրա ունեցած ծոցատետրերի մի մասն էլ ոչնչացել է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Ահա թե ինչու այստեղ տպագրում ենք միայն երեք ծոցատետր, որոնցից երկուսը վերաբերում են 1909 թվին, իսկ երրորդը՝ 1914 թվին: Այդ թերին կարողացանք մասամբ լրացնել հեղինակի տանը, Հնությունների Պահպանության Կոմիտեի և այլ հիմնարկների արխիվներում պահպանված զեկուցագրերով ու տեղեկագրերով, որոնք բոլորն էլ հրատարակվում են առաջին անգամ և պարունակում են որոշ գիտական նյութ:

Ժողովածուի չորրորդ բաժնում տեղավորել ենք Թորամանյանի կատարած հնագիտական պեղումների տեղեկագրերը և թանգարանային շինարարության վերաբերող նյութեր, իսկ բաժնի սկզբում զետեղել ենք նրա այն թղթակցությունները, որոնք վերաբերում են Անիում Ն. Մառի կատարած պեղումներին:

Այս հատորի վերջում դրել ենք երկու հոդվածներ, որոնցից մեկը վերաբերում է Զվարթնոցի վերակազմության շուրջը եղած վեճերին, իսկ մյուսը՝ Խաչիկ Վարդապետի պեղումներին, որտեղ հեղինակը սպանիչ քննադատության է ենթարկում նրան՝ պեղումների սխալ մեթոդիկա կիրառելու և գիտական պատրաստությունից զուրկ լինելու համար:

*
* *

Ներկա ժողովածուի մեջ Թորամանյանի լեզուն աշխատել ենք պահպանել նույնությամբ, միայն խիստ արխայիկ և այժմ անհասկանալի ոճերը որոշ չափով մեղմել ու փոփոխել ենք: Սակայն ստիպված ենք եղել ծոցատետրերի լեզվի մեջ մի քիչ ավելի փոփոխություններ մտցնել, որովհետև այդ ծոցատետրերը Թորամանյանը գրել է միայն իր համար, խիստ հակիրճ և շատ դեպքերում անկապ նախադասություններով, երբեք



չմտածելով, որ մի օր կարող են դրանք հրատարակվել: Մենք նախադասությունները որոշ չափով հարթել ենք և բոլորովին անհասկանալի տեղերը հանել՝ տեքստն ընթերցողին հասկանալի դարձնելու համար: Բացի այդ՝ հատորի համար նախատեսված նյութերից կրճատել ենք այն հատվածները, որոնք անձնական բնույթ են կրում և գիտության հետ առնչություն չունեն:

Ժողովածուի մեջ եղած բոլոր չափագրությունները (բացի ծոցատետրերի մեջ եղածներից) և լուսանկարները ընտրել ու հարմարեցրել ենք մենք, որի համար օգտագործել ենք մեր թանգարանի սևանկար ապակիների ստվար ժողովածուները, իսկ գծագրերը, բացի 12 և 62 համարների տակ եղածներից, բոլորը մաքրագծվել են հատկապես այս հատորի համար: Ըստ որում № 65-ը (Աղցի դամբարանը) մաքրագծել է ճարտ. Գրիգոր Քոչոյանը, № 132-ը (Դվինի խոյակները)՝ ճարտ. Լիպարիտ Սադոյանը, իսկ մնացած, 40-ից ավելի գծագրերը՝ ճարտարապետ Լիա Գասպարյանը, որի ձեռքով են կատարվել նաև Զվարթնոցի ճակատի վերակազմությունը Թորամանյանի կատարած կտրվածքի համաձայն և քանդակազարդ գոտու մանրամասները:

Հեղինակը տեղանունների մեջ երբեմն միօրինակություն չի պահպանել: Մենք այդ անունները թողինք նույնությամբ, միայն նրանց մոտ դրել ենք վայրերի այժմ ընդունված նոր անունները, որպեսզի նոր սերնդին հասկանալի լինեն նրանք:

Ժողովածուն կազմելու և հրատարակության պատրաստելու գործում ինձ մշտապես աշխատակցել է հեղինակի դուստր և մեր թանգարանի ավագ լաբորանտ Նազելի Թորամանյանը:[1]

Ինչպես առաջին ժողովածուի մեջ, այնպես էլ այստեղ հեղինակի մի քանի հնացած և անընդունելի տեսակետները պատմական մի շարք իրադարձությունների մասին թողել ենք անփոփոխ, որպեսզի ընթերցողը ճիշտ գաղափար կազմի հանգուցյալ հեղինակի մասին:

Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ

[1] 1941 թվին Պատմության Ինստիտուտում կազմվեց մի հանձնաժողով, որը քննեց Թորամանյանի աշխատությունների առաջին ժողովածուն և որոշ փոփոխություններ մտցրեց նրա մեջ: Հանձնաժողովի աշխատանքներն առաջին հատորի առաջաբանում նշված չլինելու պատճառով, այժմ հարմար առիթն օգտագործում եմ իմ շնորհակալությունը հայտնելու նրա կազմին, որի մեջ էին, բացի ինձանից, պրոֆ. Մ. Ներսիսյանը (նախագահ), արվեստի վաստակավոր գործիչ Գ. Լևոնյանը , ՍՍՌՄ Ճարտարապետական Ակադեմիայի թղթակից-անդամ Ս. Սաֆարյանը, ճարտարապետության թեկնածու Վ. Հարությունյանը, ճարտարապետ Կ. Հովհաննիսյանը և ճարտարապետ Գ. Մուշեղյանը:

*Թորոս Թորամանյանը 1914 թվականին*

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

# ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՄԱՆ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋԸ

# Ա

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## ա. ՀԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ[1]

Պատմական բազմաթիվ լուրջ հետազոտություններ ապացուցեցին, որ մարդկային ցեղը ունեցեր է իր նախնական վիճակը, երբ միանգամայն զուրկ է եղեր այսօրվան քաղաքակրթության պարգևած առավելություններեն:

Նախնադարյան մարդկային համայնքն իր ֆիզիկական բացառիկ առավելություններու շնորհիվ սկսավ քայլ առ քայլ առաջ երթալ, անզգալի կերպով առաջ տարավ իր տնտեսական զարգացումը, համրաբար քակվեցան լեզվի կապերը՝ սուր ճիչերը, բացականչությունները հետզհետե բառերու և խոսքերու փոխվեցան, և այսպես դարե ի դար լեզուն զարգանալով, ճոխանալով հասավ մինչև մեր օրերու ամենակատարյալ նրբություններուն:

Մարդկային ցեղի նախնական ներկայացուցիչները ոչ միայն լեզվով ու բառերով աղքատ էին, այլև թվով ալ շատ քիչ: Անսահման ժամանակը գոյություն տվավ այսօրվան բազմամիլիոն մարդկության: Քանի բազմացան մարդիկ, այնքան տարածվեցան երկրագունդի զանազան կողմերը և յուրաքանչյուր աշխարհամասի տեղական պայմաններու համեմատ, անոնք ստացան իրարմե տարբեր նկարագիր, բարք, սովորություն և լեզու:

Մարդկային լեզուները դարուս գիտնականներուն ուսումնասիրության այնպիսի անսպառ նյութ մատակարարեցին, որոնք այսօր խորասուզված գրքերու, արձանագրություններու և այլ հիշատակարաններու անհունության մեջ, անդադար կփնտրեն յուրաքանչյուր բառի ծագման պատճառը, ծննդավայրը և գաղթավայրերը:

Թե որչա՞փ հաջողեցան գտնել այսօրվան բազմազան լեզուներու նախատիպը, այդ մասին իհարկե դեռ վճռական ոչինչ չկա. ճշմարտությենե շատ ավելի են ենթադրությունները, որովհետև շատ դժվար է մեկեն ի մեկ թափանցել մարդկային ցեղի հեռավոր անցյալի աղջամուղջային խավարի մեջ, երբ ո՛չ գիտություն կար, ո՛չ գրականություն, ո՛չ քաղաքակրթություն և ո՛չ ալ ապագա սերունդներին որևէ հիշատակություն թողնելու գաղափարը: Ուստի գիտությունը հասավ մինչև այն որոշ սահմանը, ուր մարդիկ զեթ դիպվածական կերպով թողեր էին իրենց գոյության և կյանքի շոշափելի հետքերը: Այդ սահմանը քաղաքակրթության խանձարուրն էր: Այդ շրջանին ապրող մարդկային ցեղի թողած իր գոյության ապացույցներուն վրա, խելքի, իմացականության, դատողության և գործնական կյանքի հազիվ աղոտ նմուշներ միայն կերևային, ուստի բնականորեն պիտի հետևեր, որ ավելի հնագույն ժամանակներու մեջ մարդկային ցեղը կատարյալ վայրենության շրջան մը անցնելեն հետո կամաց կամաց մտավ քաղաքակրթության սահմանին մեջ և հասավ այսօրվան նախանձելի բարձրության:

Ճիշտ այսպես ալ սկսավ արվեստներու ծագումն ու զարգացումը: Երբ մարդկային ցեղի անասնական բնազդները թուլանալով, խմբովին, ընկերական կյանքով ապրելու տրամադրություն ստեղծվեցավ անոնց մեջ, երբ իրենց նախնական օրրանը, կենսական անհրաժեշտ պիտույքներու համար նեղ զգալով, արգավանդ ու բերրի տեղեր փոխադրվեցան, պետք զգացին նաև ցեղական ար-

[1] Այս հատվածը տպագրում ենք հեղինակի անտիպ աշխատությունից, որին կցել ենք նաև այլ անավարտ աշխատությունների մասեր:

Կազմող

յունուշտ կռիվներե և վայրի գազաններու հարձակումներե ինքզինքնին պաշտպանելու համար ապահով ու անմատչելի բնակարաններու:

Այն ցեղերը, որ իրենց գաղթավայր էին ընտրել մշտադալար լեռնալանջեր և պատսպարվել էին լեռանց խորշերու և բնական քարայրներու մեջ, ստիպվեցան ապրել որսորդությունով և անասնապահությամբ. իսկ այն ցեղերը, որոնք իրենց գաղթավայր էին ընտրել ընդարձակ, ջրառատ դաշտավայրեր, անտառոտ տեղեր, պարապեցան արմտիքներ հավաքելով և հողի կամավորապես պարգևած պտուղներով սնանալու. և փոփոխական կլիմայի ազդեցություններեն ու վայրի գազաններու անակընկալ հարձակումներեն ինքզինքնին պաշտպանելու համար եղեգներե ու ծառի ճյուղերե խուղեր հյուսեցին, խրճիթներ շինեցին և անոնց մեջ բնակություն հաստատեցին:

Շատ անգամ դաշտավայր տեղերու մեջ իբրև ապահով ամրոց, գործածեցին փոքր լիճերը, որոնց մեջ ցիցերու վրա շինեցին իրենց բնակարանները՝ ցամաքի հետ շարժական կամուրջներով կապելով: Գիշերները կվերցնեին այդ շարժական կամուրջները, և բոլորովին կղզիացած կանցընեին մինչև առավոտ:

Անոնք, որ հարմարավոր լճակներ չգտան, մեծամեծ ծառերու վրա շինեցին խրճիթներ, ու կբարձրանային շարժական սանդուղներով, և գիշերները սանդուղներն ալ կքաշեին վերև ապահովությամբ գիշերելու համար:

Կիսավայրենի մարդկային ցեղերը անհամեմատ ավելի շատ և շուտ աճեցան, այս արագ աճման հետ նաև բազմացան բնական պետքերը, այլևս բավական չեղան բնության կամավորապես տված պտուղներն ու արմտիքը, կամաց-կամաց ծնավ մշակությամբ ձեռք բերելու գաղափարը և զարթեցավ մշակությունը բեղմնավորելու հանճարը:

Բնակարաններ կառուցելու, հողը մշակելու և ուրիշ առօրյա բազմազան պետքերը արվեստական միջոցներով ձեռք բերելու համար պետք զգացին գործիքներու, ուստի դիմեցին քարերու և փայտերու օգնության՝ քանի դեռ մետաղները ծանոթ չէին:

Կարծր քարերե շինեցին ամեն տեսակ գործիքներ, ուրագ, կացին, դանակ, բրիչ, նույնիսկ խոփեր՝ հողը հերկելու համար: Մարդկային աշխատանքներու օժանդակության կոչեցին նաև անասունները, նախապես հանելով զանոնք իրենց վայրենի վիճակեն: Կենդանիները ընտելացնելով, ո՛չ միայն օգտվեցան անոնց կաթեն, մսեն ու մորթեն, այլև ուժեն:

Փոփոխական կլիմայի տակ մարդկային ցեղը քաղաքակրթության առաջին քայլեն, սնունդի անհրաժեշտ պետքերուն հետ զուգընթացաբար կարիք զգաց նաև հագնվելու: Սկզբում պարզ մորթով մը ծածկվելու սովորությունը աստիճանաբար փոխվեցավ չափված, ձևված ու կարված հագուստներու, որոնց համար նաև մարդկային հանճարը չուշացավ բուրդն ու բամբակը արհեստական միջոցներով մանելու և հյուսելու հնարները ստեղծել:

Բարեկեցության և հարստության սերը ստիպեցին մարդուն որոնել այնպիսի աշխարհամասեր, ուր հողը և կլիման ընդունակ լիներ առատ արդյունաբերության: Հողագնդին վրա պակաս չէին այսօրինակ արգավանդ տեղեր, թեև հեռու, այնուամենայնիվ մարդիկ դադար չառին, համայնական կամ ցեղային մեծամեծ խումբերով գաղթեցին ու տարածվեցան երկրագնդի ամեն կողմը, և երբ գտան այնպիսի տեղեր, ուր ջրառատ և բարեխառն կլիմայով օժտված, արվեստական մշակութենե կույս հողը լիովին բավականություն կուտար համայնքին, այնտեղ հիմնավորապես մնացին բաժանելով հողը և սահմանելով վարչական ու տնտեսական կարգեր ու օրենքներ:

Մարդկային ցեղի վայրենությենե դեպի քաղաքակրթություն թևակոխած առաջին շրջանին մեջ իսկ քակվեցավ ճարտարապետական արվեստի խանձարուրը:

Երբ գաղթական խումբերն իրենց հարմար բնակավայրեր գտնելով, հիմնական բնակիչներ դարձան և երբ բավականին ապահովեցին իրենց կյանքն ու ապրուստը, բնականաբար այդ ապահովությունը պիտի ծներ նաև բարեկեցության և վայելչության տենչը. ցուրտեն ու տաքեն մարմինը պաշտպանելու համար ստեղծված նախնական կաշիե հագուստները անհաճո երևեցան հետզհետե զարգացող վայելչասիրական ճաշակին, ակնհաճո կերպով պճնազարդվելու տենչը մղեց մարդկությունը դեպի ճարտարապետություն և դեպի արվեստներու ստեղծագործություն, միայն բուրդը չէր, որ մանելով կտավ գործեցին, այլև բնության ուրիշ արտադրություններն ալ շահագործելով պատրաստեցին բազմատեսակ դիպակներ, կերպասներ և այլն և այլն, որոնք մեր օրերուն բնական պետքե ավելի պճնամոլության անդիմադրելի պահանջներ դարձան:

Մարդկային ճաշակի զարգացման այս բուռն հոսանքեն բնականաբար ազատ չպիտի մնար նաև բնակարաններու բարեձևության և վայելչության գաղափարը: Ինչպես հագուստի և սնունդի, նույնպես ալ բնակարաններու համար ջանացին բնության արտադրություններեն օգտվիլ, ընդարձակ, լուսավոր, վայելուչ և ժամանակի պահանջներու համապատասխան գործածության հարմար բնակարաններ ունենալու համար: Տարակույս չկա, որ մեկ կողմեն ալ մարդիկ հետզհետե սկսեցին ճանչնալ բնությունը և անոր մարդկային ցեղի վրա ունեցած ազդեցությունը, թե ինչպե՞ս լույսը, օդը, ջուրը բարերար ազդեցություն կարող են ունենալ մարդուս ֆիզիկական կազմության վրա, եթե անոնք լինեն մաքուր, առատ և ախորժելի:

Իր մարմինը պճնազարդել սովորող մարդուն հետզհետե անախորժ թվեցավ իր բնակարանի պարզությունը, զուգընթացաբար աճեցավ նաև ակնհաճո և փարթամ տեսարաններով շրջապատվելու մարմաջը, ուզեց իր հագուստի և մարմնական զարդարանքներու համապատասխան ներդաշնակությամբ զարդարված տեսնել բնակարաններու ներսը և դուրսը:

Ապրուստի համար և բնության քմահաճույքներուն դեմ որոշ չափով կռվելու գիտությունը ձեռք բերած մարդկային ցեղին համար կմնար այժմ ակնահաճո ներդաշնակությամբ և մեծափարթամ ու հոյակապ բնակարաններ ունենալու մշտնջենական մրցումը: Հասարակական ու անհատական շենքերը, ներքուստ ու արտաքուստ շարժական ու անշարժ զարդաքանդակներով պճնելու մեջ մեկզմեկու գերազանցելու ձգտումը այնքան առաջ գնաց, որ շատ քիչերուն հաջողեցավ վառ երևակայությամբ, ընդհանուրի աչքին ու ճաշակին հաճելի շինարարական գեղեցկություններ ու մեծագործություններ ստեղծելու թռիչքը ունենալ, որոնց արդյունքը եղան աշխարհի վրա այսօրվան ճարտարապետական հրաշալիքներ համարվող չքնաղ հանճարներու կերտած հավիտենական կոթողները: Ուստի նախնական խուղերու և խրճիթներու հետ դեմ դիմաց հոգեզմայլ վսեմ ներդաշնակությամբ շենքեր կանգնեցնելու արվեստը գեղարվեստի կարգը դասվելով ճարտարապետություն անունը և ստեղծագործող հազվագյուտ հանճարի տերը ճարտարապետ տիտղոսը ստացավ:

Բայց շատ մը պատճառներով, մարդկային ցեղը քաղաքակրթության մեջ հավասարապես չզարգացավ երկրագնդի ամեն մասերուն վրա, այդ պատճառով ալ մենք այսօր քաղաքակրթության գագաթնակետին հասած ազգերի հետ քով քովի կտեսնենք նախամարդու իսկական ներկայացուցիչ ցեղեր:

Անշուշտ տարօրինակ է, որ բյուրեղյա պալատներ ստեղծելու կարող ցեղին հետ և անոնց անմիջապես քովիկը կգտնվեն նույն ցեղին պատկանող հասարակություններ, որոնք ոչ նվազ կհիշեցնեն ու կպատկերացնեն նախամարդու հոգեկան ու բարոյական իսկական նկարագիրը: Մենք շատ ունենք այսօր արտաքո կարգի չքեղությամբ փայլող մեծ մայրաքաղաքներու անմիջապես կողքին, ստորերկրյա այրերու և ողորմելի խրճիթներու մեջ ապրող բնակչություն մը:

Այստեղ, տնտեսական պայմաններու անհավասար զարգացումն է պատճառ, որ միևնույն շրջանակի մեջ ծաղկող քաղաքակրթության բարիքները հավասարապես չեն կարող վայելել համորեն բնակչությունը: Թեև մյուս կողմանե, ճշմարտություն է, որ «ազնվացած» համարված դասակարգի մը մեջ ալ պահված են վայրենի հակումներու զորեղ գծեր, որուն պատճառով, առանց իրապես ազնվանալու սեփականությամբ ու առատության մեջ լիովին հղփացած դասակարգը չի քաշվեր զրկելե, հարըստահարելե, և անասնական անտարբերությամբ կդիտե թշվառության զոհերու աղեկտուր գալարումները:

Իսկապես կրթված ու ճշմարտասեր ազնվացած մարդկային որոշ խմբավորումներ, բնականաբար չէին կարող անտարբեր հանդիսատես լինել այս հակամարդկային երևույթներուն և չստեղծել թշվառությունները վերացնելու միջոցներ: Ուստի այդ ճշմարտապես ազնվացած և սրտի ու մտքի կատարյալ դաստիարակությամբ օժտված խմբավորումներու ձեռքով հիմնվեցան քաղաքական, կրթական և բարեգործական հաստատություններ և անխոնջ աշխատանքով մեկ կողմանե կշանան քաղաքակրթենե ետ մնացող դասակարգի կենցաղը բարելավել և դասակարգային նկարագիրը բարձրացնել, մյուս կողմանե նորահաս սերունդին հոգվույն մեջեն չքացնելով տիրող խավի ստրկացնող դաստիարակության արմատները, ազնիվ դաստիարակությամբ օժտված քաղաքացիներ պատրաստել:

Սակայն նախնական մարդկության դեպի քաղաքակրթություն ունեցած աստիճանական զարգացումը չի կարելի այս երևույթով բացատրել և համեմատել ներկա ժամանակի զարգացման ուղղության հետ: Մեր ժամանակակից կիսավայրենի ցեղերը կկրթվին ու կազնվանան գործնական օրինակներու առջև և կամա թե ակամա կմղվին առաջ՝ ընդհանուր հոսանքեն ետ չմնալու համար, և կամ քաղաքակիրթ աշխարհը բռնի կխառնե յուր քաղաքակրթության հոսանքին և կտանի դեպի իրական մարդկային կյանք:

Նախամարդը չուներ իր առջև իրական օրինակներ կամ փորձված առաջնորդներ, օրեօր իրեն

առջև պարզվող կյանքի և զգացումներու անդիմադրելի պահանջներն էին անոր առաջնորդները, որոնց գոհացում տալու համար, ամբողջ դարաշրջաններու մեջ բազմաթիվ սերունդներ մաշվեցան, մինչև որ բավարար չափով ստեղծվեցավ մարդկային թշվառությունները մեղմելու, կյանքի ու ապրելու միջոցները դյուրացնելու չափ գիտություն և արվեստներ: Սակայն այդ մաշվող ու տառապող սերունդը մեզմե տասնյակ դարեր առաջ այնպիսի փայլուն քաղաքակրթություն մը ստեղծեց և հետագա սերունդներուն ժառանգություն թողեց, որ մեր այժմյան սերունդը, առհասարակ ընդօրինակողի և կամ հինը մշակողի դերն ունեցավ: Մեր դարերն ալ ունեն իրենց սեփական ստեղծագործությունները, անոնք ալ նախապես սերունդե սերունդ մշակված ու պատրաստված ուղեղներու շնորհիվ էր, որ առանց քաղաքակրթված նախնիքներու սերունդ լինելու, անհնար էր ստեղծագործել վերջին դարերու գիտության ու արվեստների նորությունները:

Բայց թե գիտությանց և արվեստներու ստեղծագործությունից մինչև բավարար աստիճանի մը հասնելը, մարդիկ ի՞նչ պարբերական ազդեցություններե անցան, ի՞նչ հոգեբանական տրամադրություններ զիրենք մղեցին դեպի ստեղծագործություն, աշխարհագրական ի՞նչ դիրքեր, պատմական ի՞նչ հեղաշրջումներ ներգործեցին մարդկային հանճարի վրա, քանի՞ հազարավոր սերունդներ մաշվեցան, և յուրաքանչյուր դարաշրջանի մեջ քանի՞ քայլ մոտեցան մեզ պատմությամբ և հնադույն հիշատակարաններով ծանոթ բարձրագույն զարգացման հեռավոր շրջանին, որ մեզմե հազարավոր տարիներ առաջ փայլեցավ երկրագունդի քանի մը կետերուն վրա:

Ահա այս հարցերն են, որոնք տակավին իրենց մեջ կբովանդակեն մեծամեծ գաղտնիքներ: Ներկա գիտությունը կձգտի ճշտությամբ գծել այն ուղին, որով մարդկությունը առաջացավ մինչև մեր օրերը: Պետք է հավատալ սակայն, որ օր մը ապագա սերունդին առջև պարզված պիտի լինին այժմ անլուծելի համարված գաղտնիքները՝ գիտության անխոնջ աշխատավորներու ջանքերով:

Հետզհետե կմտնեն անոնք երկրի անթափանցելի խավարին մեջ, կբանան անհիշատակ ժամանակներու մեջ ապրող քաղաքակրթության գերեզմանները և քարացած լավաներու մեջեն դուրս կբերեն նախնադարի մարդուն թողած հիշատակությունները և ձեռարվեստի նմուշները մինչև հետին դարերը:

Հին հիշատակարանները զիրենք կերտող ժողովուրդի արժանավորությանց իսկական պատկերներն են: Անոնց յուրաքանչյուր բեկորին վրա ներկա գիտությունը հաջողությամբ կկարդա նույն ժամանակի հասարակական և անհատական արժանավորություններն ու թերությունները: Հիշատակարաններով կազմվեցան շատ մը ծանոթ ու անծանոթ ազգերու անցյալի ստույգ պատմությունը:

Նույնպես հիշատակարաններով պիտի կազմվի մեր ժողովրդի՝ հայության ալ իսկական պատմությունը:

## Բ. ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Դեռաբույս ճարտարապետության հիշատակարանները մեզ դիտել կուտան, իրենց ավելի պարզ արտահայտությամբ, այն անխուսափելի կապերը, որք շինելակերպը կկապեն մարդկության հաջորդաբար փոփոխվող վիճակին հետ և կկազմեն արվեստի պատմության ամփոփում մը, ինչպես նաև ընկերական պատմություն: Կտեսնենք բնակության հաստատվիլը, կլիմայական փոփոխություններու և կյանքի պահանջներու համեմատ ձևափոխվիլը, տեղական միջոցներով և գործիքներու առաջադիմությամբ շինելակերպերու բարեփոխվիլը, դամբանական և կրոնական ճարտարապետության՝ նախքան պիտույից արվեստին կանխելը, նմանահանության արվեստին ճարտարապետության նախակարապետ լինելը: Նմանապես կճանչնանք սովորության այն եզակի ազդեցությունը, որ ձևերը կապրեցնե մշտապես իրենցմե բխող պատճառներով: Ամեն ժողովրդի մեջ պիտի փոխանցվեր միևնույն հաջորդականությունով, պիտի հնազանդեր միևնույն օրենքին. նախապատմական արվեստին մեջ բովանդակված կերևի ուրիշ բոլոր արվեստներու ծիլը:

**Գլխավոր շրջաններ.**— Նախնադարյան ժամանակը պարզապես երեքի կբաժանվի, որ կհամապատասխանե նախնական մարդկության երեք տեսակ ապրելակերպին, և հետևաբար երեք ուղղությամբ խիստ որոշ դրոշմված ճաշակ, ուրկե պիտի ծագեր շինելու արվեստը, այսինքն, նախասառցային մեծ երևույթին ժամանակը, սառցային երևույթին համընթաց ժամանակը և սառցային երևույթին հաջորդող ժամանակը:

1. Առաջին շրջանի մեջ մեր երկրին կլիման մեղմ և հավասար է. մարդը այդ շրջանին չէ փորձած ինքզինքը պաշտպանել ցրտին դեմ, ո՛չ բնակարանով և ո՛չ հագուստով, ընկերական կյանքը նստակյաց չէր, իբրև գործիք միայն գայլախազ ուներ՝ բախումով և կամ կրակով պայթեցուցած:

2. Եկավ սառցային շրջանը, մարդուն հարկադրեց միանգամայն բնակարան և հագուստ ունենալ, տակավին անծանոթ էր անասնաբուծությունը և հովվական կյանքը, մարդիկ իսկապես որսորդներ և արմտիք հավաքողներ էին, կտեղափոխվեին միշտ ըստ եղանակի, հետևելով իրենց որսին, մանավանդ հյուսիսային եղջերուին, որն իրենց գլխավոր սնունդը կկազմեր: Բնակարանը անհրաժեշտ դարձավ և նախապես շարժական եղավ: Աշխատությունը հնարավոր դարձնող գործիքները նախնական ժամանակի նման գայլախազյա էին, բայց արդեն կոթի վրա առնված և ուշադրավ իրենց ձևերու այլազանությամբ, գործածության նշանակելի առանձնահատկությամբ, ինչպես տապար, գզիր, քերոց և այլն: Սկսեցին շինել պարաններ և առաջ եկավ ոստայնանկությունը:

3. Սառցային շրջանը վերջանալու հետ մեկտեղ, որչափ սառույցի սահմանները հեռացան, այնչափ եղջերուները քաշվեցան դեպի հյուսիս. որսորդ ժողովուրդը եղջերուներուն հետևելով, իր տեղն ազատ թողեց նոր արշավողներուն, որոնք տեղում ծանոթացան անասնաբուծության, նույնպես նաև երկրագործության: Անոնցմով սկսեց անասնապահությունը և երկրագործական կյանքը: Գայլախազի գործածությունը թեև կը շարունակվեր, բայց ոչ առաջվան նման միայն պայթած վիճակին մեջ, այլ հղկված: Անոնք կրակը գործածեցին ոչ միայն կերակուրի, այլև կավը կարծրացնելու և ամանեղեններ թրծելու համար: Անոնց ժամանակը ամենազարմանալի գործունեությամբ ստեղծագործող շրջանն էր: Այս միևնույն մարդիկ բավական զորեղ մեքենականության մը ստեղծագործողները կթվին վիթխարի քարերու զանգվածներ տեղափոխելու համար, որոնք ճարտարապետության առաջին հիշատակարանները պիտի լինեին:

Այսպես են ապրելակերպի և գործիքներու հաջորդական փոփոխությունները, անցնինք աշխատության տեսության, որոնցմով գործիքները պատշաճության մտան:

**Փայտի գործածությունը.**— Փայտի գործածությունը գայլախազյա տապարով և սղոցով իրագործելու հնարավորության համեմատությամբ, շատ սահմանափակ է, իսկական ատաղձագործության ժամանակը կարելի է ենթադրել առնվազն բրոնզյա գործիքներու ժամանակը: Եվ նույնպես անոնցմով դժվար էր միացման գործողության համար տաշումներ կատարել, այս տեսակետով է, որ կտեսնինք, թե շինողներ իրենց նավակներն ավելի ծառերու բուներ փորելով են շինած, քան թե կտորներով հարմարցուցած: Երբ հարկ եղած է խրճիթներ շինել, միացումներու փոխարինած են ընդհանրապես կապումները, ավելի կամ նվազ նման այն կապերուն, ինչպես որ կապված էին գործիքները իրենց կոթերուն վրա: Ամանեղենները, որ գործիքներու օգնության պետք չունեին, պետք է որ ավելի կանուխ լինեին, քան ատաղձագործությունը: Հողին մեջ տնկել գերաններ, և չվաններով այս գերաններուն կապել գոտեկապեր, առաստաղներ կամ տանիքներ, ահա այս չափով կարելի է ամփոփել նախապատմական ատաղձագործությունը:

**Քարագործությունը.**— Քարի գործածությունը տակավին դժվար էր, գայլախազով տաշելու ատեն կը փշրվեր: Բրոնզն իսկ լավ ընդունակ չէր ժայռը տաշելու, որ հաճախ հարվածեն կճաթեր, սակայն հնարավորություն կուտար աշխատանքին: Քարի ճարտարապետությունը մետաղներու գյուտեն հետո միայն գործադրելի էր, այս է պատճառը յուր ուշ երևան գալուն:

Սկզբնական շրջանին հատկանշական երևույթ մը կներկայացնե հսկայագործությունը, մեծամեծ զանգվածներով կշինեին շենքերը ամեն կողմ եղող զանգվածներեն: Եվ ինչպես կտեսնինք այդ երևույթը գործիքներու անկատար վիճակին հետևանքն է: Մեզ համար շատ դյուրին է քարերը կանոնավոր և մանր զանգվածներու վերածել հեշտին միջոցներով. նախնադարյան ժամանակի մեջ ավելի դյուրին էր անտաշ վիճակի մեջ գործածել մեծ զանգվածները: Քարահանքի մեջ կճեղքեին և լծակով կտեղափոխեին քարը: Աշխատության պահանջը հսկայական էր, բայց առանց նյութական օգտակարության այս հիշատակարաններուն շինվելը, իշխանական ահավոր կազմակերպության մը վկայությունն է: Հսկայագործությունը, որտեղ աշխատության մեծությունը կփոխարինե գործիքին, հետևանք է գործիքներու պակասության և բնորոշ հատկանիշ մի նորածին ընկերականության:

Քարն օգտագործելու մի ուրիշ կերպն ալ զայն խորափորելն էր, խորշեր կամ այրեր կփորեին ապառաժներու ժայռերուն մեջ՝ ապառաժները ջարդելու համար գործիքներ ունենալեն սկսյալ. երբ առաստաղի խավաքարերը վար թափելու վտանգ սպառնար, ապահովելու ամենահարմար միջոցն էր վերամբարձ հատվածը (Profil surhaussé): Այս տեղեն է սկիզբն առնում ձվաձև հատվածը, առավել կամ նվազ կանոնավոր, որոնք մեծ թվով կերևին ձեռագործ քարայրերուն մեջ:

**Շաղախով շինություն.**– Քարը, ինչպես ըսինք, ընդվզող էր գայլախազայա գործիքի դեմ, փայտը անոր անհնազանդ, շաղախը զայն շաղվող ձեռքերեն զատ ոչինչ չի պահանջեր, շաղախով կարելի էր ոչ միայն պատեր շինել այլև այնպիսի կամարներ՝ որպիսին փայտով շինել չէր կարելի. շաղախը պիտի լիներ մարդուն բնակության համար գործածված առաջին շինվածանյութը: Ամենահին ժամանակներու մեջ կարելի է գտնել աղյուսը, սակայն անթուրծ գործածված: Թրծված աղյուսի գործածությունը ծագում առած կթվի ասիական այն երկիրներուն մեջ, ուր ծագում առին նաև կրակով եղած ուրիշ արվեստագործություններ, և ամբողջ պատմական շրջանին մեջ տեղականացած է Ասիո մեջ Եփրատի արևելյան կողմը: Տրովադայի առաջին գիտնական արշավախումբերը պարզ շաղախով շինված պատերը չփոթեցին թրծած կավի հետ, որոնք հրդեհով եփած էին: Նմանապես անթուրծ կավով էին շինված Սանթորենի այն տուները, որոնք մեզ հասան, ինչպես Պոմպեի մնացորդները՝ հրաբուխի մը մոխիրներուն պաշտպանողական խավին ներքև ծածկված: Այս տուներեն մանրամասնություն մը հիշատակության արժանի է. անոնց կավեղեն պատերը՝ ավելի կամ նվազ կանոնավորությամբ՝ փուտ քարե շինված խարսխի մը վրա հանգչած էին, որոնց միջոցները (քարերու կարերը) կավե շաղախով լեցված էին. մենք այնտեղ կը գտնինք ծանոթ շինելակերպի մը առաջին օրինակը, որ հետո պիտի դառնար որմնաշինության արվեստի տիրապետող կերպը:

**Զարդաքանդակ.**– Ձևակերպյալ արվեստի (art figure) առաջդիմության և անկման շրջանները ոչ մի կերպ չեն համապատասխաներ շինողական ձեռարվեստի շրջաններուն (industrie constructive):

Սառցային շրջանին մեջ, երբ հաղիվ կարող էին շենքեր շինել, պարապո ժամերուն կզբաղվեին իրենց զենքերուն վրա կենդանիներու պատկերներ ընդօրինակելով, և տարօրինակ վտարումով՝ երբեք օրինակ չէին վերցներ բուսական ձևերեն:

Մետաղներին ծանոթ ցեղերը կարճ կտրեցին այս թռիչքը, անոնցմով նմանողական արվեստը հանկարծի կերպով անհետացավ: Հղկյալ քարի, հսկայագործության և մետաղներու շրջանի մարդիկ, միանգամայն օտարացան նմանողական արվեստեն: Մետաղների երևումեն ի վեր ընչվեցավ վերացական գեղեցիկի գաղափարը: Արվեստը փոխարինեց արհեստին, աշխատանքի կատարելությունը բռնեց զարդարանքի տեղը: Նախկին շրջանին մեջ զենքերու վրա կփորագրեին, այնուհետև կհղկեին երեսները հղկիչ գործիքներով, և ուշադրության արժանի հարատևության զարմանալի երևույթով մը, մենք կտեսնինք առաջին բրոնզյա գործիքները, ավանդական գայլախազայա գործիքներուն ճիշտ ընդօրինակությամբ շինված: Այսպես կգտնինք նաև հունական ճարտարապետությունը, որուն մեջ կը տեսնվի նախնական ավանդական փայտյա շինության ձևերը:

Այն օրեն սկսյալ, երբ մետաղները երևան եկան, և ձեռարվեստը սկսավ, զարդաքանդակը միանգամայն պայմանականի վերածվեցավ՝ հղացման ծայրահեղ աղքատությամբ, ինչպես Գավրինիսի դոլմենի ծածկասալերի վրայի ալիքաձև գծերը:

Ժայռերը կոփելու դժվարությունը երկար ժամանակ արգելք եղավ ճարտարապետության զարգացման. Գավրինիսի մեջ զարդաքարերու վրա շինված խաչանշանները շատ վատ են, գայլախազայա կամ բրոնզյա գործիքներով փորագրել կարող էին, բայց ոչ երբեք հղկել, և երբ զանգվածը խիստ կարծր էր, գործավորը կհրաժարեր զայն զարդարելե, թողնելով զայն անտաշ վիճակի մեջ: Գավրինիսի մնացյալ զարդաքանդակները ոչ այլ ինչ են, եթե ոչ անբավարար միջոցներով եղած ճիգ մը:

Այս պարզ փորձերուն հաջորդեցին հյուսիսային Եվրոպայի մեջ rune-ները (աքանդինավյան հին գրեր), որոնք տակավին նշանագրեր են, արտահայտիչ գծերով փորագրված նավային տեսարաններ, և շրջանակաձև քանդակներ Աքանդինավյան ժայռերու վրա:

Դոլմեններու ծանրատեսիլ ճարտարապետության հետ զուգընթացաբար, մի հեռավոր երկրի մեջ պետք էր որ գոյություն ունենար մի ճարտարապետություն, որուն մեջ կենդանի բնության արտահայտությունները իրենց դերը խաղային, որոնք օր մը թերևս արվեստի ծագման պատմության մեջ իրենց տեղը պիտի ունենային:

**Հիշատակարաններ.**– Շենքերը, մարդկային ցեղի ապրելակերպի և բարոյական վիճակի որպես վկա, յուրաքանչյուրը իր դարաշրջանին համեմատ կդասավորվին:

Ինչպես ըսինք, նախասառցային շրջանը չէր պահանջեր վրանաբնակ կյանք կամ շինված ապաստարան: Նախասառցային երկիրներու մեջ միակ հայտնի հետքերը մնացած են, սովորաբար դարևանդ հողի վրա վերեն վար վառարաններ, որոնց մեջ կուտակված են ածուխ, մոխիր և վայրենի կենդանիներու ոսկորներ, որոնք մեր առաջին նախնիքներու սնունդը կկազմեին:

Սառցային շրջանի մեջ երբ ապաստարանի պետքը անհրաժեշտ դարձավ, տակավին բացառապես որսորդ մարդկությունն իր գաղթավայրերուն մեջ ապաստարան գտավ դուրս ցցված քարաժայռերու ներքև կամ ավելի բնական քարայրերու մուտքերուն մեջ: Բարձրաբերձ ժայռերու կողերուն վրա ձեռագործ քարայրեր գտնելու համար, պետք էր հասնել մինչև այժմյան մետաղներու շրջանը, երբ հնարավոր էր հզորապես փշրել ժայռերը: Շինված շենքեր և հսկայագործություններ նախնադարյան շրջանի վերջին արվեստը պիտի լինեին:

**Բնակարան և պաշտպանություն.**– Մետաղյա առաջին գործիքներու ժամանակի քարայրը մի նեղ նրբանցքի ձև ունի, ընդարձակ քարայրե մը ավելի հաստատուն և պաշտպանվելու ավելի հարմար: Վարսացիցերու վրա շինված խուղերը, լճային բնակարանները, որոնք հաճախ կպատահին Ալպյաններու մեջ, այսօրվան Եվրոպայի մեջ բնակող ժողովրդների համար գրեթե անբնակելի են. պետք է ընդունել, որ այդտեղ բնակեր է ճահճների ազդեցությանը տոկալու ընդունակ մի ցեղ, որպիսիք են այժմյան սեամորթները:

Ցիցերը խիստ սրածայր են և հատուկ գործիքով տաշված: Բնակարաններու ձևի մանրամասնությունը անհայտ է ըստ երևույթին, ինչպես դաշտավայրերու վրա եղող բնակարանները խիստ նման էին այժմյան հարդախուղերուն, կամ ավելի ճիշտը ցցապատ պատերով շինված գմբեթաձև, կամ հակառակ կողմի դարձված զիստի ձևով տանիքավոր խրճիթներու, որպիսին մեզ կնկարագրե Ստրաբոն բելգիացիներու բնակարանները:

Այս ջրերե և հեղեղներե պաշտպանված բնակարաններուն, անշուշտ պետք է ավելացնել նաև կախյալ բնակարանները, որոնց ավանդությունը պահված է, լեհերի լճային բնակարաններուն զուգահեռաբար: Անջրպետի մեջ առանձնացմանը, այստեղ կփոխարինե ջուրը, սա ավելի տեղական պատշաճության հետևանք էր, քան դարաշրջանի: Մարդիկ պարագաներուն հետևել, իրենց դեմ գտնված պահանջին՝ լուծում տվեր են հանդարտ ջրերու մեջ ցցապատնեչներով բնակարաններ, անտառների մեջ կախյալ բնակարաններ, կակուղ քարաժայռերու երկարության վրա քարայրեր շինելով, մինչև վերջապես հասնելը այն կանոնավոր բնակարաններուն, որպիսիք են Սանթորենի և Տրովադայի բնակարանները, որոնց կավաշաղախ պատերով և հողահարդար տանիքներով ձևերը շարունակված են ասիական տուներու մեջ:

**Դամբանական և կրոնական շենքեր, հուշարձաններ.**- Նախասառցային շրջանը գերեզմանական հետք բնավ չէ թողած. մեռյալները կթողնեին նույնիսկ իրենց ապրած բնակարանի մոտ: Մեռելներու պաշտամունքը երկրագործության և մետաղներին ծանոթ ցեղերի մեջ առաջ եկավ և առաջին անգամ այդ ցեղերի օրոք մեռելային պաշտամունքին նվիրվեցան շինողական արվեստի ջանքերը:

Գերեզմանական հիշատակարաններու ամենապարզ ձևը հողադամբարանն է. կոնաձև հողալից արվեստական բլուր մը: Կան գայլախազայա խառնուրդով հողադամբաններ անջրաթափանց շաղախով ծեփված և քարով պատված. երբեմն կրոմլեխ մը կզարդարե հողային ծիրը կազմող կողերը:

Սովորաբար հողադամբան մը կշրջապատե կամ կպատսպարե դամբանական սենյակ մը կամ դոլմեն մը:

Դոլմենը, որ ընդհանուր առմամբ շինծու մի քարայր է, կբաղկանա մեծ սալաքար առաստաղ մը կրող երկու հանդիպակաց կանգուն քարե զանգվածներե, մի տափակ քար դրված կանգնած երկու քարերու վրա: Ահավասիկ մարդոց իրագործած առաջին հուշարձանի շինության առաջին ձևը:

Դոլմեններու շրջանին կպատկանին կոթողի ձևով կանգնված անտաշ քարերը, որոնք կկոչվին մենհիրներ-մենաքարեր: Հաճախ քարի զանգվածը վերի կողմեն փոխանակ բարակելու, կթանձրանա առաջակարկառ մակերևույթի մը երևույթով: Երբեմն այս քարերը կզզիացած են, երբեմն հավաքաբար ծառուղիի մը կամ պսակի ձևով շարված, որոնց թիվը հարյուրներու կը հասնի (Բրիտանական, Գարնաք, Գալլիո երկրները):

Այս քարերու շարքերուն մեջ նկատված են նվիրական շրջանակներ՝ առ ի չգոյե գրության կամ նշաններ որևէ մեծ անցքի մը հիշատակը հավերժացնելու համար: Այս գայլախազի նման ճեղքված քարերը նախնական զենքերու վրա եղող հսկայից օրագրերուն նման են: Տեոթրոնոս մեզ ցույց կուտա բրիտանական հսկայագործություններու նման, անտաշ քարեր կանգնեցնող եբրայեցիներ ի հիշատակ հաղթության: Կմնա գտնել, թե սույն հուշարձանական հատկանիշը պետք էր որ տարածվեր խորհրդավոր հիշատակարաններու ամբողջ ընտանիքին վրա:

Ուրիշ կարծիքներ ունեցողներ կան հողադամբաններու նպատակի մասին. ոմանց արևելադրության եղանակը պահ մը մտածել տվավ, թե աստեղագիտական խորհրդանշաններ լինեն անոնք:

Համենայն դեպս նկատված են հաճախ, որ մեկ հողադամբանեն տեսարանը կը տարածվի ուրիշ շատերու վրա, որով առաջ եկավ այն ենթադրությունը, թե նշանական բլուրներ եղած լինին:

Բացօթյա դոլմենները երբեմն զոհի սեղաններ կարծվեցան, բայց ի՞նչ հաստատություն կա, որ ժամանակով զանոնք ծածկող հողը անհետացած չէ:

Բոլոր այս ենթադրությանց մեջ կարող է ճշմարտության մասեր գտնվին և բոլորովին չի կարելի մերժել հիշատակարանի գաղափարով մը, որուն նպատակն էր հիշատակ մը հավերժացնել:

Բայց ինչ որ դժվար է բացատրել, այն ալ անոնց տեղերու գեղագիտական ընտրությունն է, հողադամբաններու մեծ մասը տեսանելի կերպով կբարձրանան բլուրներու գագաթներու վրա, ուրկից կպարզվի ընդարձակ հորիզոնը:

Այս նախնական հիշատակարաններուն հեղինակները ոչ նվազ ծանոթ էին բնությունը իրենց գործին հետ ընկերակցելու արվեստին:

**Տարածում և վերապրում նախնադարյան արվեստին.**— Կանգնած քարերը, դոլմենները, այս միանգամայն ահեղ և դժնտեսիլ հիշատակարանները խիստ տարբեր ժամանակներու մեջ շինված են: Մի երկիր պատշաճապես զարգացած ճարտարապետություն ունեցած պահուն, մի ուրիշ երկիր տակավին փորձնական վիճակի մեջ էր, նման մարդկային այն խումբերուն, որոնց մեջ միևնույն ժամանակ անհատներ կբարձրանան զարգացման տարբեր աստիճաններուն:

Գալլիո երկրի մենաքարերուն նմանող բրիտանական մենաքարերը կպատկանին այնպիսի թվականի մը, որում Մանչի մեկ եզերքեն մյուսը մշտապես հարաբերության մեջ դնելու չափ նավագնացությունը բավական զարգացած էր: Անոնք իրենց տրամադրության ներքև նավային մեքենականություն ունեցող ծովային ժողովրդի գործեր են և հավանական է, որ քրիստոնեութենեն քիչ դարեր այն կողմը կանցնեն:

Ամենահին դոլմեններն իրենց մեջ պարփակող գայլախազայա զենքերեն և գործիքներեն դատելով, կը պատկանին հղկած քարի առաջին շրջանին. ավելի հետնագույնները ժամանակակից են պատմական քաղաքակրթության: Ամբողջ միջին դարուն, Սքանդինավիայի մեջ դոլմեններ կկանգնվեին: Ժերմեններն իրենց Հռոմեական կայսրության վերջ դնող արշավանքի ժամանակ, տակավին գայլախազայա զենքեր կգործածեին: Ցցապատնեշի ավանդությունը Օվկիանիայի մեջ տակավին կշարունակե մինչև մեր օրերը, ուրեմն, շինվածակերպի նմանութենեն հետևցնելով, որևէ շրջանի հասարակության վերագրելու մասին պետք է զգուշ լինել: Նույնպես պետք է զգուշանալ մարդկային ցեղի պատմության վրա շատ դյուրավ հետևություններ հանելե: Որևէ շինվածակերպ, շինվածանյութի անհամապատասխան երկրի մը մեջ, չի կարող շարունակվել, և շինվածակերպի տարբերությունը հաճախ ենթադրել կուտա տեղական աղբյուրներու զանազանությունը: Սակայն, ինչ որ կարելի է կասկածե դուրս համարել, այն է, թե եղավ մի ժամանակ, երբ աշխարհի մեկ ծայրեն մինչև մյուս ծայրը տիրապետեց միևնույն տեսակ գործիքը, որ կցորդված է շինելակերպի անխուսափելի նմանությանց հետ: Ամերիկայի հղկած գայլախազի տեսքը բավական նմանություն ունի ճապոնականի հետ, որով թերևս անհետացած երկրի մը վրայով մշտնջենական հարաբերության մը միջոցավ՝ փոխանցում մը կատարված կկարծվի, որ որսորդներու թափառաշրջիկ կյանքը կհաստատեր հեռավոր երկիրներու հետ:

**Պատմական ճարտարապետության սկզբնական օրրանները.**— Նախնադարի հողի վրա, կամաց կամաց առաջ եկան երկու մեծ ճարտարապետություն, անոնց մեկը ծնավ Եգիպտոսի մեջ, իսկ մյուսը՝ Քաղդեայի: Եվ այս երկուքին միմյանց հանդիպումով, որ իսկապես պատահական չէր, զարգացավ այն երկիրներու մեջ, ուր շինանյութերու առաջին շինվածանյութը կավի շաղախը եղավ: Եգիպտոսին վերապահված էր հսկայագործության արվեստը մինչև վերջը տանել. բայց միշտ շաղախի գործունեությամբ շինելակերպը պահելով, և հավանականություն կա, որ շինելու այս պարզ կերպը իր առաջին շրջանեն սկսավ: Եգիպտոսը, յուր ուրիշ պետություններե ավելի առաջադիմությունը պարտական է այն դյուրության, որ կգտնվեր նույնիսկ անհեթեթ գործիքներու ստեղծագործութենեն առաջ:

Մյուս կենտրոնը Քաղդեան է, և այնտեղ ալ լինելով հողային երկիր, մարդը կարողացավ շինող դառնալ նախքան գործիքներու գոյությունը:

Առաջին առթիվ մենք պիտի քննենք այս երկու մեծ կենտրոններու արվեստը և անոնցմե բխող շառավիղները:

## գ. ԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՃԱՐՆԵՐՈՒ ԶԱՆԱԶԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԿԶԲԵՆ ՄԻՆՉԵՎ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ[1]

Հայ ճարտարապետության ծագումը և դարերու հոսանքին մեջ անոր կրած փոփոխություններն ու զարգացումը հետազոտելե առաջ, կարելի է ընդհանուր ակնարկ մը նետել բոլոր կրոնական հաստատություններու հատակագծային բաժանումներու վրա, սկսյալ պատմական ամենահին ժամանակներե մինչև մեր օրերը. ատոնք թեև ճարտարապետության հետ զուգընթաց, սակայն անկեց բոլորովին անկախ ենթարկվեցան այլազանություններու և ուրույն զարգացման:

Ամեն տեսակ հասարակական և անհատական մեծ ու փոքր շինանյութերու մեջ ճարտարապետին սեփական ճաշակով դասավորվեցան հատակագծային բաժանումները՝ ձևվելով տեղին, դիրքին և պետքերուն վրա: Կրոնական հաստատությանց հատակագծերու մեջ, ճարտարապետներ միշտ ենթարկված մնացին ծեսերու և ավանդության պահանջներուն. կղերն էր անոր հեղինակը, ճարտարապետը առ առավելն, կարողացավ այդ տրված ծրագրին ներդաշնակ իրագործումը տալ:

Բայց որովհետև ի սկզբանե անտի կրոնական հաստատություններն եղան գեղարվեստի զարգացման և ճոխացման գլխավոր ազդակները, անոր համար ալ անոնք միշտ կապված մնացին գեղարվեստի հետ: Հատակագծերը թեև կրոնական, սակայն նրան ծածկող շինությունը լիովին արվեստին կպատկաներ. այլև ճարտարապետին կմնար աստվածային փառաց արժանի շքեղազարդ կոթողներ կանգնեցնել ժողովուրդի այդ անմահության խարիսխներուն վրա, մինչ պետական և հասարակական զանձարաններ լիովին տրամադրված էին վատնելու իր հանճարի արտացոլմանց համար:

Անհետացող և մնացող բոլոր ազգերը համեմատաբար ավելի մեծ հետքեր թողեր են կրոնական հսկա ու մեծածախս տաճարներու, քան պալատներու և ուրիշ քաղաքային շինությանց: Որովհետև լիովին ենթարկված կրոնի ազդեցության, հրաժարելով աշխարհային վայելչություններե, իրենց ամբողջ կյանքը զոհաբերեր են միմիայն հավիտենական փրկության: Թագավորներ, իշխաններ իրենց ճոխ զանձարաններով, հասարակ ժողովուրդն իր ֆիզիկական տանջանքներու գերագույն համբերատարությամբ գերին եղած էին առասպելական նախապաշարումներու:

Հանդերձյալ կյանքի երանավետ վայելչությանց տենչով հափշտակված ժողովուրդի մը համար աշխարհային կյանքի պետքերե շատ ավելի անխուսափելի էր փառազարդ տաճարներու գոյությունը, տաճարներ՝ որոնք պիտի ըլլային այս ուրնայն աշխարհեն դեպի հանդերձյալի հեշտալի դրախտը տանող կամուրջները:

Որչափ ատեն համոզված էին, թե այս աշխարհը նախագավիթն էր հավիտենականին, երազը անհավակելի վայելչությանց, և որչափ ատեն հավատացած էին, թե այդ անմահության դրախտի դռները պիտի բացվեին իրենց խունկով ու աղոթքով, այնչափ կավելանար հետզհետե չքեղությամբ զիրար գերազանցող տաճարներ ու դամբարաններ ունենալու մարմաջը:

Ազգեր կային, որոնց համար նույնքան կարևոր էին դամբարանները, որչափ տաճարները. տաճարը միակ դուռն էր հավիտենականին, ուրկե կանցնվեր դեպի անմահություն, իսկ դամբարանը հանդերձյալի բնակարանը, պալատն էր, ուր պիտի ապրեին ու անվերջ վայելեին աշխարհային կյանքի մեջ իրենց սիրտն ու հոգին հափշտակող երջանկության հեռանկարի իրականությունը: Ուստի դամբարանները ոչ միայն արտաքինով, այլ և ներքինով ալ կզարդարվեին թանկագին կահկարասիներով և սպասներով:

Հայերն ալ ոչ նվազ հափշտակվեցան երկնային արքայության անդիմադրելի հրապույրեն. քանի-քանի թագավորներ, թագուհիներ, իշխանազուններ, թողած իրենց երբեմնի աշխարհասասան գահն ու վայելչությունները, մենաստաններու խոնարհ ստրուկները դարձան: Տասն և վեց դարու երկար շրջանի մը մեջ հազիվ թողին քանի մը աննշան, պալատներու ու բերդերու հետքեր, մինչդեռ ամբողջ հայ աշխարհը ողողվեցին իրենց գեղարվեստի անվիճելի տաղանդով պճնազարդված տաճարներով:

Հազիվ կարելի ըլլա ըսել, թե վերջին երեք դարու ժողովուրդն է, որ ազատված կրոնի և նախապաշարմանց ճնշող ազդեցութենեն, սկսել է փիլիսոփայորեն մտածել ներկա ու ապագա կյանքի վրա, և այս հայացքի փոփոխության անմիջական ազդեցության տակ ընկան ամբողջ աշխարհի գեղարվեստները և կամաց կամաց մոռացվեցան տաճարներն ու դամբարանները: Հասարակական ու հանրօգուտ շինություններ իրենց հաղթական հպարտ գլուխը բարձրացուցին անոնց առջև և լոկ վայելչության համար պճնազարդվեցան այն սրբազան տարազներով, որոնք մի ժամանակ հասարակ մահկանացուի մը համար ոչ միայն անհպելի էին, այլ և աչքով տեսնելն ալ սրբապղծություն էր:

Պատրանք մը ըլլալու վրա է այլևս անցյալը. ներկան հանրային և անհատական բնակարաններու արտակարգ ճոխության մրցման շրջանն է: Անցյալը մեզի հսկա տաճարներ և չքեղ դամբարաններ տվավ, իսկ ներկան պիտի տա ապագային՝ այս աշխարհի մեջ իրագործված դրախտի մանրանկարը — հասարակական և անհատական բնակարաններ:

[1] Այս հոդվածը արտատպում ենք «Հուշարար» ամսագրի 1907 թվականի 3-րդ և 6-րդ համարներից, էջք՝ 39–42 և 90–93: Կազմող

Եգիպտացիք ինչպես արվեստներու, նույնպես ալ կրոնի և տաճարներու նախահայրերը եղած ըլլալ կը կարծվին:

Եգիպտոսի ժողովուրդին ծագումը և անոր գործունյա կյանքի սկիզբը ժամանակի անհունության մեջ կորած է: Գիտնականներ հազիվ կարողացան անոնց կյանքի հորիզոնի վրա երևնալեն ասդին մինչև օտար տիրապետությունների վերջնականապես ենթարկվիլը՝ տոհմային հարստությունների կամ տիրապետությունների զանազան շրջաններու բաժանել: Այդ շրջաններու սկզբեն մինչև 18-րդ հարստության շրջանը, բնավ որոշ թվական չկա. 18-են սկսյալ, կարողացան ճշտել պատմական դեպքերու ժամանակներն ու թվականները:

Ահա այդ շրջանին մեջ, մեր թվականեն տասն և հինգ դար առաջ, երբ ուրիշ ազգեր քաղաքակրթության հազիվ նախօրյակին մեջ էին, Գարնաքը մեզի կուտա աստվածային պաշտամանց հատկացյալ տաճարի հատակագծային բաժանման այնպիսի ծրագիր մը, որ մինչև մեր օրերու տաճարներուն նախատիպը եղավ, և ժամանակը չկարողացավ այդ ծրագիրը զգալի փոփոխության ենթարկել:

Ինչ է այդ ծրագիրը. շատ պարզ բան, չենքը մը, որ պիտի ծառայեր իբրև երկնավոր բնակարան իրենց աստծուն, ուր ժողովուրդին խունկն ու աղոթքը պիտի մատուցվեր անոնց սրբազան գահին:

Աստվածները նյութական կարիքներ չունեին, անոնց միակ կարիքն էր հավատացելոց երկրպագությունը, ուստի հարկ չէր որ աստվածային բնակարանը ծանրաբեռնվեր զանազան տեսակ բաժանումներով, բավական էր անոր համար միմիայն երեք գլխավոր բաժանում. 1) սրբարանը, ուր պիտի գետեղվեր պաշտելույն գահը կամ անոր արձանը, 2) ժողովուրդի ու աստուծո միջնորդը՝ նվիրյալ քահանայից դասը, 3) աղոթքի սրահը:

Այս երեք բաժանումներեն դուրս եղած բոլոր բաժանումներ, ավելի քան նվազ չափով եթե կային, անոնք ալ կամ առանձին տաճարներ էին, կամ ուրիշ ոչ կրոնական պետքերու հատուկ էին:

Գարնաքեն առաջ, 12-րդ հարստության ժամանակ, բոլորովին պարզ էին մեհյանները. գրեթե չորս պատի մեջ պարփակված էին այս երեք բաժանումներն առանց միջնորմներու և հաղորդակցության դռներու. հարթ գետնի վրա գծված սահմանով մը կորոշվեր յուրաքանչյուր բաժինը: Հետզհետե որչափ բազմացան ծիսական օրենքներ, այնքան ավելի որոշ դիրքեր տրվեցան այս բաժանումներուն առանց անոնց խորհրդավոր սահմանը փոխելու:

Շինության խորը սրբարանին տեղն էր, անոր անմիջապես կհետևեր քահանայից բաժինը, և հետո հավատացելոց բազմության հատկացած սրահը:

18-րդ հարստության ժամանակ երևեցավ աստծո բնակարանը վերածված առանձին մի սենյակի՝ արձանին համեմատական մեծությամբ: Այս աստվածային սենյակին երկու քովերը, մինչև հանդիպակաց աջ ու ձախ պատերը, կամ բաց թողուցին և կամ սրբազան սենյակի ճակատին ուղղությամբ ծածկեցին, ներսը այլ և այլ կրոնական պիտույից գործածության հատկացնելով:

Նույնպես քահանայից բաժինը պատով մը ծածկվեցավ տաճարի ամբողջ լայնությամբ, թողվելով միայն հաղորդակցության դուռ մը հավատացելոց բաժնին վրա, ինչպես արձանին սենյակեն ալ դուռ մը քահանայից բաժնին վրա:

Հավատացելոց բաժինը միշտ ամենեն ընդարձակ բաժինը կգրավեր շինության մեջ, և սյունազարդ, երբեմն աջ ու ձախ կողմերեն երկու կարգ, և երբեմն ամբողջ սրահը սյունազարդված էր: (Տե՛ս նկ. 1-ի, հատակագիծ Ա):

Ահավասիկ հատակագիծ մը, որ մեր թվականեն տասն և հինգ դար առաջ նվիրված էր աստվածային պաշտաման:

ա. Սրբարան, ուր կդրվեր արձանը, և բոլորովին անմատչելի հասարակության:
բ. Քահանայից կամ քրմաց բաժին, նույնպես անմատչելի էր հասարակության:
գ. Հավատացելոց բաժին:
դ. Սրբազան անոթներու և սպասարկությանց հատուկ խցիկներ:

Այսօրվան Եգիպտոսի մեջ երևեցած բազմաթիվ բաժանումներով հին մեհյանական հատակագծերը ոչ այլ ինչ են, եթե ոչ շատ մը մեծ ու փոքր տաճարներու, դամբարաններու, գավիթներու և կրոնի պաշտոնեից բնակարաններու հավաքական խումբեր զանազան ժամանակ իրարու վրա ավելացված, որոնց մեկ օրինակը մենք ունինք այսօր, ի միջի այլոց, Հոռոմոսի վանքի մեջ, ուր մոտավորապես չորս դար շարունակ իրարմե անկախ շինություններ շինված են մի փոքր սահմանի մեջ իրարու կցված:

Մինչև վերջն առանց բացառության չմնաց այս ձևը. պարբերաբար եղան փոփոխություններ առանց բաժանումներու խորհրդավոր ձևն ավերելու. երբեմն սրբարանը մեծցուցին, երբեմն փոքրացուցին, երբեմն քահանայից բաժինը երկու մասի վերածեցին, կամ սյունազարդեցին, բայց ասոնք զգալի փոփոխություններ չէին. եղավ մի գլխավոր փոփոխություն, որ ոչ միայն Եգիպտոսի մեջ տևեց մինչև վերջը, այլև անցավ ուրիշ ազգերու ալ:



Հավատացելոց սրահը, որ որմնափակ էր ամեն կողմեն և ուներ միմիայն մտից դուռ մը, Թեբեի շրջանին վերջին ժամանակները փոխվեցավ պարզ սյունազարդի մը առանց շրջորմի, պատերուն փոխարինեցին սյուներու շարքեր, որոնց վրա կար միմիայն ծածկույթի մը տանիքը: Այս փոփոխության պատճառը Եգիպտոսի կլիման եղավ գուցե: Այդ երկրին արտակարգ ջերմության մեջ անտանելի պիտի ըլլար խուռն բազմությամբ հավաքվիլ հարկի մը տակ, որ դռնեն զատ գրեթե տեղ չուներ օդը փոխվելու: Եգիպտոսի մեջ, քանի որ անձրևի և ցուրտի երկյուղ չկար, այլևս ավելորդ էին արտաքին պատերը. բավական միայն տանիքի հովանին՝ արեգական կիզիչ ազդեցությունեն ժողովուրդը պահպանելու համար: Ըստ ամենայնի հաճելի էր այս ձևը. միակ անտեղությունը, որ կար, այն ալ տաճարին դուրսի հետ այժմ հաղորդակցած ըլլալն էր, որ հաճախ առիթ կուտար սրբապղծությանց. այդ անտեղությունն ալ վերցնելու համար տաճարը շրջապատեցին ամուր և բարձր պատերով՝ թողելով անոր չուրջն ընդարձակ բացօթյա բակ. նաև ժամանակ-ժամանակ այս պատերուն կցեցին զանազան շինություններ և ընդարձակ գավիթներ:

Այստեղ դրված նկ. № 1 Բ հատակագիծը ցույց կուտա արտաքին պատերը սյունազարդի փոխված օրինակը:

ա. Սրբարանը:
բ. Քահանայից սրահ:
գ. Ժողովրդյան սրահ:
դ. Սրբազան սպասներու և անոթներու պահարաններ:

Ահա գրեթե այս ձևն էր, որ անփոփոխ անցավ հրեից, ինչպես նաև հունաց:

Հունաստանն ալ ունեցավ իր նախապատմական շրջանը. այս այն ժամանակ է, երբ պելասգները գաղթելով Փոքր Ասիայեն անցան Եգեյան ծովը և տիրեցին այդ երկրին:

Հունաստանի նախապատմական շրջանը թեև Եգիպտոսինին պես բոլորովին անստույգ չէ, սակայն շատ առասպելախառն է. այդ շրջանին մեջ երկիրը կկառավարվեր դյուցազունների ձեռքով, ինչպես Եգիպտոս իր նախապատմական շրջանին մեջ կկառավարվեր աստվածներու ձեռքով: Ստույգ պատմությունը կսկսի հազիվ 12 դար Ք. ա.:

Թե՛ պատմական աղբյուրներու և թե՛ գիտական խուզարկություններու շնորհիվ ի լույս հանված փաստեր ցույց կուտան, որ Փոքր Ասիայեն համբաբար անցնող այս ժողովուրդը որոշ չափով քաղաքակրթված վիճակի մեջ գրված էր այդ երկիրը: Անցնելով այնտեղ տնկեց ապագա հունական քաղաքակրթության կորիզը և մշակեց. և երբ հունական զանազան ցեղեր լիովին տիրապետեցին, արդեն պատրաստ վիճակի մեջ էր ծաղկելու և բարգավաճելու:

Այս բարգավաճմանը ոչ նվազ նպաստեցին փյունիկեցիք, որպես թափառաշրջիկ վաճառական ժողովուրդ, մշտական հարաբերության մեջ դրին Արևելքն Արևմուտքի հետ, հաստատեցին նավագնացություններ, գաղթականություններ, անընդհատ փոխադրեցին նոր բարք ու սովորություններ, կրոն, գիտություն և արվեստ՝ մասնավորապես Եգիպտոսեն, որ այն ժամանակ միակ երկիրն էր քաղաքակրթության ամենաբարձր աստիճանի վրա կանգնած, այնպես որ Ք. ա. 7-րդ դարուն Հունաստան իր որոշ տեղն ուներ մեծ ազգերուն շարքին մեջ:

Դեռ պելասգների ժամանակի հիշատակարաններու վրա, որոնք դուրս եկան հրաբխային լավաներու տակ կատարված խուզարկությանց շնորհիվ, պարզ կերևեր փյունիկեցիներու միջոցով փոխադրված եգիպտական արվեստագործությանց նմուշներ: Եգիպտական ոճով և ձևերով նույն բաները կգտնվեին Փոքր Ասիայի մասնավորապես Փյունիկեի շրջանին մեջ կատարված պեղումներե:

Պատմությունը կավանդե նաև, որ շատ հին ժամանակ փյունիկեցիներու գաղթականության մեջ խառնված էին հունական ցեղեր Եգիպտոսի դելտային վրա. ծանոթ իբրև նավարկող ժողովուրդ, որոնք հետզհետե բազմանալով ստվար թիվ կկազմեին պտղոմեական շրջանին մեջ:

Հունական ամենահին աստվածը Զևսը Եգիպտացոց Ռան էր: Եգիպտական Ամմոնը երկար ատեն պաշտվեցավ Հունաստանի մեջ իր իսկական անունով: Նմանապես կային ուրիշ շատ աստվածություններ, որոնք թե՛ հատկությամբ և թե՛ գործերով նույնն էին եգիպտականներու հետ: Ուստի անվիճելի կմնա, որ Հունաստանի քաղաքակրթության գլխավոր աղբյուրն էր Եգիպտոս, հետևաբար արվեստով, գիտությունով, նաև կրոնով անկից օգտվող ժողովուրդ մը բնականաբար պիտի ազդվեր նաև կրոնական տաճարներու ձևերեն ալ:

Պելասգների ժամանակի մեհենիկներ կան, որոնք մեծ նմանություն կբերեն եգիպտականներու: Կրետե կղզիին մեջ կար ստորերկրյա մեհյան մը, որ ճշգրիտ ընդօրինակությունն էր եգիպտական տաճարի մը: Հունաստանի ամենահին մեհյանը կհամարվի Տրովադայի մեջ՝ Պոսիդոնի նվիրված տաճար մը, որուն ճակատը քանդակված էին եգիպտական, ասորական սֆինքսներ և հուշկապարիկներ:



հատակագիծ Ա



հատակագիծ Բ.



հատակագիծ Գ.



հատակագիծ Դ.



հատակագիծ Ե.



հատակագիծ Զ.



հատակագիծ Է.



հատակագիծ Ը.

**Նկ. 1. Հնագույն կրոնական տաճարների հատակաձևեր**



*Հին շրջանի հիշատակարաններ պարզ ու ծանր երևույթ ունեին. տաճարներ հիմնված էին ընդհանրապես փոքր տարածության վրա և գրեթե միշտ ստորերկրյա. կքաղկանային քառակուսի սրահե մը և նրբանցքե մը: Ասոնք թեև տաճարներ էին, ունեին իրենց աստվածները, տոներն ու պաշտամունքները, բայց կկրեին* **պահարան** *կամ* **գանձարան** *անունը, որովհետև այնտեղ կպահվեին բացի կրոնական խորհրդանշաններե, անոթներե նաև դյուցազնությամբ անմահացողներու հիշատակով նվիրագործված իրեղեններ, ինչպես զենքեր, զրահներ. ասոնցմե զատ՝ ժողովուրդն ալ այնտեղ կբերեր պահելու իր թանկագին առարկաները տաճարին աստծու հովանավորության տակ:*

*Այս փոքրիկ տաճարներուն մեջ, բացի քառակուսիե, կային բոլորովին բոլորակ ձևով շինված տաճարներ առջևնին քառակուսի նախագավիթով կամ նրբանցքով մը: Ասոնք ընդօրինակությունն ըլլալ կկարծվին ավելի կանուխ Փոքր Ասիայի մեջ ընդհանրացած բոլորակ դամբարաններու, որոնց հետնագույն օրինակներեն մեկը դեռ մասամբ գոյություն ունի իր վիթխարի երևույթով. ատիկա Կրեսոսի հոր՝ Ալյայթի դամբարանն է 400 մետր տրամագծով:*

*Ք. ա. 4-րդ դարուն Հոնիայի մեջ և 6-րդ դարուն Դորիայի մեջ ծաղկող արվեստները վերջ դրին այս նախնական պարզ ու անշուք ստորերկրյա տաճարներուն. հունական ստեղծագործական հանճարը խառնված անոր գեղեցկագիտական ճաշակին հետ՝ այնպիսի շքեղ կատարելության հասցուց տաճարները, որոնց վրա մեզմե հետո ալ դեռ շատ դարեր պիտի հիանան:*

*Զգալի կերպով բազմացած են 6-րդ դարուն հունական տաճարները ոչ միայն բուն Հունաստանի մեջ, այլ և Իտալիայի զանազան մասերուն վրա, ուր մեծամեծ հունական գաղթականություններ հաստատված էին:*

*Նկար № 1-ի հատակագիծ Գ.-ը կներկայացնե 6-րդ դարու սկիզբը շինված տաճարի մը օրինակը Սելինոնթի մեջ, որ նեղ ու երկար քառակուսի որմափակ մը է, շրջապատված այունազարդ սրահով մը, և կքաղկանա երեք գլխավոր բաժանմունքներե:*

*ա. Սրբարանը, որուն խորը զետեղված էր պաշտելիին արձանը:*

*բ. Փոքր գավիթ քահանայից:*

*գ. Բաժանումը հատուկ էր պահարանի, որպես գանձարան կրոնական և ժողովրդային հարստությանց, որ հետզհետե սովորություն դարձավ վերջերը փոխանակ առանձին շինելու՝ զետեղել տաճարին խորը, նույն տեղ պաշտվող աստծուն անմիջական հսկողության տակ:*

*դ. Այունազարդ սրահ հավատացելոց բազմության համար, միշտ առանց շրջորմի, ինչպես տեսանք Եգիպտոսի մեհյաններուն մեջ:*

*Նույն դարուն միևնույն տեղին վրա քիչ հետո երևցավ մի ուրիշ տաճար, որ առանց փոխելու անոր հատակագծային խորհրդավոր սահմանը, ենթարկված է փոփոխության՝ տարածությանց համեմատական չափերուն մեջ:*

*Ա. Սրբարանը, որ առաջ նեղ ու երկար քառակուսի էր, այժմ սկսած է լայննալ. և նույն համեմատությամբ նեղցած է գ. ժողովրդի հատուկ այունազարդ սրահը: Քահանայից փոքր բ. գավիթը, փոխանակ դրսի հետ դռնով մը հաղորդակցելու, փոխված է նաև այունաշարի: Նկ. № 1 Դ բաժանումը եղած է միմիայն շենքին երկու կողմերուն վրա ներդաշնակ համաչափություն պահելու համար:*

*Ինչ որ ավելի ուշագրավ է այս ձևին մեջ, ներսի կողմեն դեպի երկարության երկու կարգ այունեերու շարքն է, որոնք թերևս իբրև նախագաղափար ծառայեցին հռոմեական ապագա բազիլիքներու:*

*Հատակագիծ Ե (տես՝ նկ. № 1, հատակագիծ Ե) կուգա նույնպես Սիցիլիայեն 6-րդ դարու վերջերը կանգնած հանուն Ոլիմպիական Զևս աստծուն: Այստեղ ավելի շեշտված է սրբարանը լայնցնելու ճիգը, քան իր նախորդները, և բացի ներքին կողմի երկու կարգ այունաշարեն խորը բաժնված է երեք փոքրիկ խցիկներու, որոնց մեջտեղի ա. բաժանումը համեմատաբար ավելի լայն է, և անպայման այնտեղ դրված էր Զևսի արձանը: Երկու քովերու գ. գ. փոքրիկ բաժանումները սրբազան անոթներու և այլ կրոնական հարստությանց պահարաններ էին կամ հար և նման ժամանակակից փյունիկյան մեհյաններու, առանձին աստվածներու հատկացված սրբարաններ էին: Այս տաճարին մեջ թեև որոշակի հասկցված չէ այս խցիկներու իսկական պաշտոնը, սակայն ասոնցմե հետո շինված նույնանման տաճարներ կան, որոնց վրա լիովին ստուգված է, թե այդ բաժանումները զատ-զատ սրբարաններ էին: 5-րդ դարուն Ք.ա., արդեն կան բազմաթիվ օրինակներ մեկե ավելի աստվածներու նվիրված տաճարներու, ինչպես Ցիկլիի մեջ Ապողոնի նվիրված տաճար մը, որուն խորը թեև արձանին հատուկ էր, բայց սրբարանին երկարության երկու պատերուն վրա կային ութ զանազան արձաններու հատուկ խցիկներ: Գրեթե նույն ձևով և նույն մեծությամբ մի ուրիշ օրինակ կար Հերաումի մեջ. նույնպես բացի տաճարին գլխավոր աստվածութենեն, այնտեղ տեղ ունեին ութ զանա-*

զան աստվածություններ կողմնակի պատերուն կցված խցիկներու մեջ: Աթենքի Էրենքթեոնը նվիրված էր երկու գլխավոր աստվածությանց՝ Նեփչունի և Միներ վի:

Մեկ ավելի աստվածներու նվիրված տաճարները հետզհետե այնքան սովորական դարձան, որ ամենեն հետո Հռովմեացիք չինեցին բոլոր աստվածներու նվիրված հսկա տաճար մը՝ Հռովմի Պանթեոնը:

Աթենքի Ակրոպոլի մեջ, 5-րդ դարու կեսին, Պարթենոնի սրբարանի հատակագծի վրա համաչափության փոփոխությունը կատարյալ է: (Տե՛ս նկ. № 1, հատակագիծ Զ): ա. Սրբարանի սրահը բոլորովին ընդարձակված է, և կողմնակի արտաքին սյունազարդերը չափազանց նեղցած են. այլևս հնարավորություն չկա այնտեղ հավատացելոց բազմության համար ապաստարան գտնել, ո՛չ կրոնական պաշտամանց ժամանակ և ո՛չ ալ հասարակական գործերու համար ժողովներ կազմելու վաղեմի սովորության համեմատ: Առաջ տաճարը միայն կրոնական շինություն չէր. պաշտամանց ժամանակեն դուրս ուրիշ ատեն սյունազարդ սրահները կծառայեին իբր ժողովատեղի, ուր կվճռեին կրոնական և հանրային մեծամեծ խնդիրներ: Այժմ Պարթենոնը զուտ կրոնական շինություն է և կպատկանի միմիայն աստծո և անոր սրբանվեր պաշտոնեությանց, ժողովուրդը քշված է բոլորովին դուրս՝ հեռուեն մեհյանը շրջապատող պարսպեն գոյացած բացօթյա բակին մեջ: բ. Զուտ քահանայից բաժին և գ. գանձարան:

Պարթենոնեն քանի մը տարի հետո, Ակրիժանթի մեջ երևեցավ հսկա տաճար մը Ոլիմպիական Զևսի նվիրված, որուն վրա, Պարթենոնի մեջ երևեցած սյունասրահի կողմնակի նեղ անցքերն ալ վերցված են և սյուները կիսասյուներու փոխվելով ուղղակի պատին կպած են. սյուներուն խարսխին անմիջապես կհաջորդեն ամեն տաճարներու մեջ միշտ պարտավորիչ աստիճանները շուրջանակի:

Ընդհանրապես սրբարանի համար ընդունված քառակուսի ձևերեն դուրս շեղումներ նկատվեցան 4-րդ դարուն: Տելոսի մեջ շինվեցավ մեհյան մը (տե՛ս նկ. № 1, հատակագիծ Է) գանձարան անվան տակ, որուն խորքը կվերջանար կիսաբոլորակով մը, և մեջտեղեն շարված կարգ մը սյուներ սրբարանը կբաժանեին երկու բ. բ. թևերու երկու աստվածներու հատուկ, ա. պահարան կամ գանձարան:

Էլլադայի մեջ հունական տիրապետությունեն ի վեր կիսաբոլորակ վերջավորությամբ տաճարի առաջին օրինակն է այս նախապատմական տաճարը, սակայն ոչ սկիզբը: Շատ հին ժամանակ կելտերն ունեցան դրույիտներու պաշտամանց հատուկ ընդարձակ և բոլորովին բացօթյա տաճարներ՝ մեջտեղեն ցած պատերով մինչև տասը թևերու բաժանված, որոնք միշտ կիսաբոլորակ կվերջանային, ուր կգտնվեր բուն սրբարանը: Այս տաճարներուն մեկ օրինակը մեծ մասամբ գոյություն ունի մինչև այսօր Գարնաքի* մեջ:

Ոլիմպիայի մեջ քանի մը տաճարներ բոլորովին բոլորակ ձևով շինվեցան, որոնց նախատիպը տեսնվեցավ պելասգյանց մեջ: Այս տաճարներեն մեկը Տելոսի մեջ, որ Ֆիլիբիում անունը կկրեր, կբաղկանար ա. սրբարանե մը և բ. քահանայից սյունազարդ սրահե մը: (Տե՛ս նկ. №1, հատակագիծ Ը): Այս բոլորակ ձևը ամենեն ավելի հաճելի եղավ Հռովմեացոց, որոնք ոչ միայն անօրինակ վայելչությամբ ճոխացուցին տաճարներու վրա և տվին մեզի ճարտարապետական մի հրաշալիք՝ Պանթեոնը, այլ և ընդհանրացուցին և պատշաճեցուցին հասարակաց ու անհատական շինություններու վրա ալ:

Ավելորդ է առանձնապես զբաղվիլ Հռովմեական տաճարներու հատակագծերով, որոնք հունական տաճարներե բնավ տարբերություն չունեցան: Հռովմեացիք ինչպես իրենց աստվածները, նույնպես ալ տաճարներու ձևերը առին Հունաստանեն, և որովհետև Հռովմեացիք հունաց նման զուտ կրոնական ժողովուրդ չեղան, ասոր համար ալ Հռովմեացվոց շրջանը եղավ գիտությունների և գեղարվեստի կատարյալ զարգացման շրջան:

Այս ժողովուրդն ինչպես կրոնը, նույնպես ալ արվեստը հույներեն փոխ առավ, միայն տարբերությունն այս եղավ, որ Հռովմեացիք ավելի շատ հասարակական շինություններ տվին և ունեցան գեղարվեստի անկման ու զարգացման շրջաններ: Այդ զարգացման շրջանի արդյունքն է Պանթեոնը:

Երկու խոսք ալ զոհարաններու մասին:

Ինչպես կերևի, բացի եբրայական տաճարներե, ուրիշ ազգաց մեջ զոհարանները որոշ տեղ չունեցան: Հունական և Հռովմեական շատ մը տաճարներու մեջ զոհարանի հետքեր չերևցան: Զոհարանը տաճարին անհրաժեշտ մասը չէր կազմեր, և անոր պատշաճ տեղը որոշելը կղերին բացարձակ կամքեն կախված էր. երբեմն տաճարին կից էին, երբեմն հեռու: Պոմպեի ավերակներուն մեջ, տաճարի մը պատին վրա երևցավ նկարված զոհի սեղան մը՝ տաճարեն շատ հեռու հրապարակի մը վրա, շուրջը խոնված ամբոխը, իսկ քահանաները

* Պետք չէ շփոթել Եգիպտոսի Գարնաքին հետ. այս Գարնաքը կգտնվեր հին Եվրոպայի մեջ՝ այժմյան Ֆրանսիային սահմաններուն վրա:



կեցած էին տաճարին դռան առջև սյունազարդ սրահի ծածկույթին տակ:

Նույնպես ավելորդ է զբաղիլ ասորական, քաղդեական և փյունիկյան տաճարներու ձևերով, որոնք նույնն են գրեթե եգիպտական և հունական տաճարներու հետ աննշան տարբերություններով: Բացառություն են քաղդեական աստղագիտական դիտարանները, որոնք երկհարկանի և երբեմն ալ բազմահարկ էին և միևնույն ատեն թե՛ դիտարաններ և թե՛ մեհյաններ էին:

Պարսկական կրակապաշտական մեհյաններն ալ քառակուսի ձևով սրահներ էին, որոնց կենտրոնը կդրվեր սրբազան հուրի սեղանը (աթաշկիյա) և շուրջանակի կերկրպագեր ժողովուրդը:

Նախքան քրիստոնեական եկեղեցիները, կարևոր է հետազոտել եբրայական տաճարները, որոնք համեմատաբար ավելի մեծ ներգործություն ունեցան քրիստոնեական եկեղեցիներու հատակաձևին վրա ս. գրոց մեջ ավանդված ծեսերու և պաշտամունքներու միջոցավ:

*
* *

Եբրայական* կրոնի հիմնադիրը, Մովսես, հրեա ընտանիքի զավակ, ծնած է Եգիպտոսի մեջ և ստացած զուտ եգիպտական կրթություն: Պողոս Առաքյալ գովելով անոր բարձր կրթությունը մասամբ կբացատրե անոր՝ նոր կրոնը քարոզելու պատճառները:

Հրեաները, Մովսեսի ծնունդեն շատ առաջ, մեծ գաղթականություն մը կազմած էին Եգիպտոսի մեջ, բայց անոնք, հակառակ Եգիպտոսի բարգավաճ վիճակին, քաղաքական կյանքի մեջ միանգամայն իրավազուրկ և իրենց սեմական ցեղի զարգացման ցածր մակարդակի պատճառով ստորին ծառայություններով միայն կպարապեին: Գլխավոր արհեստնին էր առհասարակ աղյուսաշինությունը: Զնայելով իրենց ստորին դրության, եգիպտական կառավարության առջև ալ, իբրև անհանգիստ ժողովուրդ կասկածելի դարձած էին, նաև զզվելի՝ իրենց մեջ մեծ չափով տարածված բորոտության ախտին պատճառով: Ուստի քշված հանկույս Նեղոսի ենթարկված էին թե՛ հսկողության և թե՛ խիստ ճնշումներու:

Այս հալածանքներն ու ճնշումները կամաց կամաց ապստամբության մոտեցող խլրտումներու ծնունդ տվին: Եգիպտական կրոնին հակառակ, միաստվածության կամ Էհովվայի աստվածության նոր վարդապետություն մը երևան եկավ, որուն քարոզիչն էր Մովսես:

Եբրայեցոց խլրտումներուն ուժ կուտային նույն ժամանակ ստորին Եգիպտոսի մեկ մասին տիրապետող հեքսոսները, որոնք նույնպես սեմական ցեղին կպատկանեին, որոնք երկար ժամանակե ի վեր կազմած մի մեծ գաղթականություն՝ կերազեին օր մը տիրանալ ամբողջ Եգիպտոսին:

Եգիպտական կառավարությունը երկրին խաղաղության լուրջ վտանգ սպառնացող այս շարժումը միանգամայն արմատախիլ ընելու համար, ամենակարճ և կտրուկ միջոցի դիմեց, որոշելով զանոնք բոլորովին երկրին սահմաններեն դուրս արտաքսել: Բայց այս արտաքսումը շատ դյուրավ չհաջողեցավ, երկար տարիներ տևեց անոր իրագործվելը. վերջապես Եգիպտոսի թագավորներեն մեկը, որ ըստ Մովսեսի և Պողոսի չէր ճանչնար Հովսեփը, այդ ծանր գործը գլուխ հանեց, ոչ միայն նորաղանդ հրեաներն իրենց պարագլուխ Մովսեսով միասին վերջնականապես երկրին սահմաններեն դուրս քշեց այլ և հեքսոսներն ալ:

Այս համայնական արտաքսումը հրեաներու ծայրահեղ թշվառության պատճառ դարձավ, որուն անմիջական հետևանքն եղավ լուրջ երկպառակություններ և սպառնալից գանգատներ Մովսեսի դեմ: Բացի գաղթականության պատճառած ֆիզիկական և տնտեսական տագնապներեն, արտաքսվող հրեաների մեծ մասին անհաճո նոր վարդապետության քարոզները ևս կգրգռեին ամբոխին վրեժխնդրությունն իրենց թշվառության պատճառ դարձող Մովսեսի դեմ և անոր կյանքին լուրջ վտանգ կսպառնային:

Մովսեսի համար անկարելի էր վերադարձնել ժողովուրդը, իսկ առաջ տանել՝ շատ դժվար, բայց դարձյալ մի կերպ պետք էր թե՛ առաջ տանել ժողովուրդը և թե՛ գրգռված ամբոխին բարկության կրակը մարել, ուստի գաղթական բանակին անմիջապես հայտարարեց Էհովվայի հայտնությունները և պատգամները հրեա ժողովուրդին համար, որը կխոստանար օգնել ոչ միայն մինչև ավետյաց երկիր հասնելու, ամբողջ ճանապարհորդության միջոցին օգնել և առաջնորդել, այլև տալ անոնց իրենց հայրերուն խոստացված ընդարձակ ու բարեբեր երկիրները, ուր պիտի հարստանային, երկնքի աստղերու չափ պիտի բազմանային և սերունդե սերունդ երջանիկ պիտի ըլլային, եթե միայն հնազանդ ըլլային Էհովվային և անոր պատգամներուն միջնորդ ու թարգման Մովսեսին:

* Այստեղից սկսված մի այլ անտիպ հոդված ենք միացնում իբրև նախորդի շարունակություն:

Կազմող

Այս հայտարարությունը առժամանակ մեղմացուց ժողովուրդին հուզումը, որովհետև իրենց հայրերուն մշտնջենական երջանկություն խոստացող Էհովվան ի բնե իրենց ծանոթ էր Եգիպտոսի մեջ Էոա կամ Էոհ անվամբ, ուստի օգտվելով Մովսես այս առժամանակյա խաղաղութենեն, անմիջապես սկսեց թե՛ խաղաղությունը հարատև պահելու և թե՛ նոր վարդապետության ժողովուրդը ընտելացնելու համար օրենքներ ծրագրել և գործադրել գաղթական բանակին մեջ:

Միայն Էոհ կամ Էհովվայի անունը բավական չեղավ ժողովրդի սրտեն միանգամից արմատախիլ ընելու դարերե ի վեր անոնց սրտին մեջ արմատացած բազմաստվածության նախապաշարումներն ու ավանդությունները. ուստի Մովսես, ստիպված տեղի տվավ անոնց զգացումներուն առջև և շատ բաներու մեջ հետևեցավ կրկին եգիպտական կրոնի ծեսերուն, ավանդություններուն, պահելով միայն միաստվածությունը: Ընդունեց կենդանիների սրբագործությունը, անջատելով միայն արժանավորները, զոհաբերության արժանի սուրբ կենդանի համարվեցան ոչխար, եզ, կով և այլն և այլն: Ամմոնի խորհրդանշան օձը պղնձե շինել տալով կանգնեց բանակին մեջ, որուն նայողը փրկություն կգտներ: Այս օձը, ըստ Հովհաննես Ավետարանչի եղավ կանխագուշակություն Քրիստոսի խաչելության, թեև Եզեկյա որպես հեթանոսական կուռք զայն փշրել և ոչնչացնել տավ:

Քանի կզիջեր Մովսես, հին հավատքի ավանդություններեն երբեմն անվնաս համարված ծեսեր հաստատելու, հետզհետե ավելի խստապահանջ կդառնար ժողովուրդը, և բոլորովին վերահաստատված տեսնել կցանկանար հին կրոնը: Ուստի, օր մը, օգտվելով Մովսեսի բացակայութենեն, ամբոխը հարձակվեցավ Մովսեսի եղբոր Ահարոնի վրա, բռնի ձուլել տալով ոսկեղեն հորթը (եգիպտացվոց Ապիսը) մեծահանդես տոն կատարեց անոր առջև:

Ինչպես կերևի, գաղթականությունը քանի կհեռանար Եգիպտոսի սահմաններեն և վերադարձը անկարելի կդառնար, հետզհետե կավելնար Մովսեսի ինքնավստահությունը և կուսակիցներու թիվը: Սկզբեն որ կբավականանար կռապաշտության դեմ խիստ օրենքներ հայտարարելով և պատիժ սպառնալով, ոսկի հորթին պաշտպան ժամանակ նա աներկյուղ հրամայեց անխնա կոտորել դավանափոխներին, չխնայելով նույնիսկ իրենց ծնողաց, եղբոր կամ քրոջ, որով նույն օրը ավելի քան երեք հազար մարդ սպանվեցան անապատին մեջ (Ելից 32 գլ. 28 հ.):

Զարհուրելի աղետեն սարսափած ժողովուրդը ակամա հնազանդություն ցույց տվավ, եթե ոչ հայտնի, գոնե սկսեցին գաղտնի շարունակել շատեր նախկին կռապաշտությունը. Փյունիկեցվոց և Փղշտացվոց Մողոքը գլխավոր պաշտելի աստվածն էր և գաղտնի զոհ կկատարեին, որուն համար հատկապես Մովսես պարբերաբար խիստ ու սպառնալից օրենքներ կհայտարարեր: (Ղևտական 19 գլ.):

Մովսեսի վարդապետության մեջ տեղ չունեցավ հոգվո անմահությունը. նա չխոստացավ հավիտենական կյանք կամ երկնից արքայություն: Իրեն հետևողներ և Էհովվային կամքը կատարողներ սերունդե սերունդ այս աշխարհին մեջ պիտի ստանային լիառատ վարձատրություն: Այս վարդապետության հետևանոք այնքան զարգացավ ագահությունը և ընչաքաղցությունը հրեից մեջ, որ մինչև քրիստոնեության ժամանակ Պաղեստինը՝ սեփականության կուիվներու պատճառով մեծ արյունահեղությանց ասպարեզ դարձավ: Ոչ արվեստ և ոչ գիտություն չզարգացան այնտեղ, այնպես որ Սողոմոն երբ իր հռչակավոր տաճարին շինության ձեռնարկեց, ստիպվեցավ Փյունիկիայեն բերել տալ թե՛ ճարտարապետ և թե՛ արհեստավորներ:

Ընչաքաղցության, ագահության դեմ կռվելու համար Քրիստոս վերահաստատեց հոգվո անմահության գաղափարը, և երկնից արքայության դուռը փակեց հարուստին առջև, Մալուխին ասելին ծակեն անցնելուն չափ անհնար ցույց տալով անոր երկնից արքայություն մտնիլը:

Տասն պատվիրանաց հայտարարութենեն հետո Մովսեսի առաջին գործն եղավ, շարժական տաճար մը շինել Էհովվայի պաշտաման համար: Դիմելով ժողովրդական նվիրատվությանց շինեց տապանակ ուխտին և զոհի սեղանը:

Ս. գրոց նկարագրութենեն շատ պարզ կհասկացվի այս շարժական տաճար-տաղավարին ձևը. երկայն քառակուսի սրահ մը էր, երկու մասի բաժանված, խորը գտնվող բաժանման մեջ, որ թանձր վարագույրով մը ծածկված էր, դրվեցավ տապանակ ուխտին – Էհովվայի աներևույթ ներկայությունը և անոր հաջորդող մասին մեջ պաշտամանց հատուկ նվիրական սպասներ: Այս երկրորդ բաժանման անմիջապես կհաջորդեր քահանայից բաժինը փոքր տարածության վրա. նախորդ սրահներուն շուրջը և վրան ծածկված էր կտավով. իսկ այս վերջինին վրան միայն կտավե ծածկույթներ հաստատված էին գետինը տնկված փայտյա ցիցերու վրա հատկապես շինված օղակներու միջոցավ: Ասոր շուրջը սահմանվեցավ աղոթող ժողովուրդին,



ուր առանձին գավիթ մը կձևանար նույնպես ցիցերու վրա կտավապատ, որոշ հեռավորության վրա դրված առանձին շրջափակով մը:

Ոչ միայն հատակագծի ձևով նմանեցավ եգիպտական տաճարներու, այլև պաշտամանց խորհրդանշան տապանակ ուխտիով նմանությունը կատարյալ եղավ կռապաշտական մեհյանի, և ծառայեց իբրև նախագաղափար ապագա Սողոմոնի տաճարին:

Մովսեսի տապանակը խորանարդ սնդուկ մը էր վրան ոսկեզօծ շրջանակավոր կափարիչով. կափարիչին վրա հաստատված էին երկու թևատարած ձուլածո քերովբեներ: Սնդուկին երկու կողմին վրա ամրացած են օղակներ, ձողեր անցնելու հատուկ, որպեսզի փոխադրության ժամանակ այդ ձողերու միջոցով վերցվի տապանակը: Նույն ձևը կտեսնվի եգիպտական սրբազան նավակին վրա, միմիայն նավակը քերովբեներու է փոխված Մովսեսի շինած տապանակին վրա:




Նկ. 2. Սողոմոնի տաճարի հատակաձևն ըստ սուրբ գրոց

Մոտ հինգ դար, երբայեցիք Մովսեսի շինած տապանակով և անոր կազմած շարժական տաղավարով բավականացան: Անընդհատ կրոնափոխության և պառակտումներու ենթակա եղած, երբեք փույթ չունեցան հաստատուն տաճար մը ունենալու:

Դավիթ առաջին անգամ հղացավ չքեղ տաճար մը շինելու գաղափարը, սակայն արգելվեցավ Նաթան մարգարեի կողմից, իր բազմաթիվ պատերազմներու և արյունհեղությանց պատճառավ, որպես անարժան մարդ Տիրոջ անվան սրբության տաճար կանգնելու համար, ուստի կտակեց իր որդուն՝ Սողոմոնին, որը հիմնարկության ձեռնարկեց 1012–11 թվականին (Ռ. ա.):

Սողոմոն ճարտարապետ, արհեստավոր և մեծ քանակությամբ գործավորներ Տյուրոսեն բերել տալեն զատ, տաճարի համար պետք եղած բոլոր շինվածանյութերը նույնպես բերել տավ այնտեղեն: Լիբանանի անտառներեն կտրվեցան փայտեր և նույն տեղի քարահանքերուն մեջ տաշվելով քարերը, բերվեցան Երուսաղեմ:

Սողոմոնի տաճարին օրինակը մեզի չէ հասած, որովհետև մինչև քրիստոնեության ժամանակ երեք անգամ ավերվելով վերաշինված է, բայց ամեն անգամ նորոգության մեջ, ըստ ս. գրոց ավանդության, Սողոմոնի տաճարին հատակագծի ձևը նույնությամբ պահված է, միայն թե հետագայները կրկնապատիկ և ավելի ընդարձակ էին քան նախորդները:

Գիտական խուզարկուներ, լի հետաքրքրությամբ, վերակազմեցին այս համբավավոր տաճարը, հիմնվելով ս. գրոց նկարագրությանց վրա, որոնց մեջ կտեսնվի, որ բուն սրբարանի մասերը լիովին նման են միմյանց, սակայն սրբարանեն դուրս գավիթներու և սրահներու բաժանմունքներով բավականաչափ կզանազանին իրարմե, որովհետև այդ մասերուն նկարագրություններ ս. գրոց մեջ շատ թերի են:

Կներկայացնենք ըստ ս. գրոց, Սողոմոնի տաճարին հատակագիծը, որ սրբարանի մասերով ըստ ամենայնի համապատասխան և ուղիղ է ս. գրոց նկարագրության հետ, սակայն գավիթներու մասերը ամենեն հավանական ենթադրվածն է:

Տաճարին հատակագիծը կբաղկանար հետևյալ գլխավոր բաժանումներեն.

Ա. Սրբությունն սրբոց. շինության խորը եղող բաժանումը, ուր պահվեցավ Մովսեսի տապանակ ուխտին:

Բ. Սրբարան. Սրբություն սրբոցի անմիջապես հաջորդող բաժինը, ուր սրբազան անոթնե-

*րու, կրոնական սպասարկությանց հատուկ էր և քահանայից միայն մատչելի էր:*

*Գ. **Քահանայից գավիթ.** Սրբարանին հաջորդող փոքր սրահը, ուր քահանայք կկենային պաշտաման ժամանակ:*

*Դ. **Զոհի սեղան.** Բացօթյա սահմանավորյալ բաժին մը քահանայից սրահին անմիջապես հաջորդող: Ժողովրդյան մատչելի այն ատեն միայն, երբ հարկ էր զոհի վրա ձեռք դնել:*

*Ե. **Ե. Իսրայելի գավիթ.** Բացօթյա ընդարձակ գավիթ, ուր կկենար ժողովուրդը աղոթքի ժամանակ:*

*Զ. **Կանանց գավիթ.** Նույնպես բացօթյա և որմնափակ, անջատ Իսրայելի գավիթեն, հատկապես կանանց իբրև աղոթատեղի սահմանված:*

*Այս տաճարին մեջ, բաղդատմամբ հունական և եգիպտական տաճարներու զարտուղությունն կկազմե ա. զոհի սեղանը, որուն տեղը որոշ է քահանայի գավթին ճիշտ առջևը. մինչդեռ մյուսներուն մեջ որոշ տեղ չուներ զոհարանը, քահանայից կամքեն կախված էր որոշել անոր պատշաճ տեղը: բ. Կանանց գավիթը, որ տաճարին մեջ երկու սեռին անջատման առաջին օրինակը կներկայացնե, ուրիշ հեթանոսական տաճարներու մեջ որոշված չէ կանանց տեղը և դիրքը: գ. Հեթանոսաց գավիթը, ուր կկենային օտարականներ, հեթանոսներ, մեկ խոսքով Էհովվայի տաճարը մտնելու անարժան համարվողներ:*

*Մինչև այստեղ մենք տեսանք և փոքր ի շատե գաղափար կազմեցինք նախաքրիստոնեական տաճարներու հատակագծային խորհրդավոր բաժանմանց վրա, այժմ անցնենք քրիստոնեական տաճարներուն և քննենք, թե ի՞նչ կերպով սկսեցին անոնք և ի՞նչ փոփոխություններու ենթարկվեցան մինչև մեզի հասնելը:*

*
* *

*Քրիստոսի քարոզած նոր կրոնն ալ անշուշտ պետք պիտի ունենար տաճարներու, սակայն ի սկզբան, երբ վարդապետությունը նոր էր, և հետևողներ շատ քիչ էին, բնականաբար չէր կարելի մտածել ո՛չ տաճարներու շինության և ո՛չ ալ անոնց ձևերուն վրա: Առաքելոց ժամանակ Երուսաղեմի մեջ, ուր սկիզբն առավ քրիստոնեությունը, տաճարներ կանգնել անհնար էր, ոչ միայն հավատացյալներու քիչության համար, այլ և ուրիշ քանի մը զորեղ պատճառներով ալ:*

*Նախ սաստիկ հալածանքը, որ անդադար կմղվեր նոր աղանդին դեմ, երկրորդ՝ անոր գլխավոր քարոզիչ-ղեկավարները հավատացելոց թիվը բազմացնելու վրա կմտածեին: Անոնց գործունեության միակ նպատակն էր ամբողջ հրեա ժողովուրդին Հոգվույն տիրապետել. երբ կհաջողեին իրենց այս նպատակին մեջ, այն ատեն փոխանակ նոր տաճար շինելու, արդեն պատրաստ կունենային իրենց տրամադրության տակ Սողոմոնի հռչակավոր տաճարը և ուրիշ եբրայական ժողովարաններ: Նոր վարդապետության ոգուն հակառակ հակասության մեջ պիտի ընկնեին առաքյալներ, եթե տաճարի նոր ձև ստեղծելու հետամտեին և կամ նոր կրոնին հերձվածի մը երևույթը տային, քանի որ նոր վարդապետությունը հնին շարունակությունը և կամ անոր բարեկարգությունն էր: Հին դարերու մեջ մարգարեից բերնով Իսրայելի ժողովուրդին հատկապես խոստացված փրկիչն էր նոր վարդապետը և հրապարակավ կհայտարարեր թե «ոչ եկի լուծանել այլ լնուլ»: Ուստի կմնար միայն ջնջել մոլորությունները, մաքրել տաճարը ապականություններե և դարձնել իսկական տուն աստուծո, որ վերջը եղած էր «այրս աւազակաց»: Այս իսկ սկզբունքով ալ Էհովվայի կողմանե իր սիրելի ժողովուրդին փրկության համար ուղարկված մեծ բարեկարգիչը – իր հոր տունը եբրայական տաճարը ընտրեց քարոզելու և սովորեցնելու համար:*

*Առաքյալներ ալ չչեղվեցան իրենց վարդապետին ուղղությենեն. հակառակ հաճախ տաճարեն նախատինքով դուրս վռնտվելուն, միշտ շարունակեցին տաճարին մեջ քարոզելու երթալը. շատ մը պարագաներու մեջ հարգանք ու ակնածանք ցույց տվին եբրայական հնավանդ ծեսերուն. մասնավորապես Պողոս վերին աստիճան հեռատես նրբամտությամբ տոնի օրերուն ածելված, մաքրված և ըստ ամենայնի հրեից սովորության համեմատ պատրաստված կմտներ տաճար ապացուցանելու համար, թե իրենք ճշմարիտ հավատացողներ և երկրպագուներ էին Էհովվային և անոր առաջին մարգարե Մովսեսի բոլոր ավանդությանց:*

*Այս հեռատես քաղաքագիտությամբ Պողոս ոչ միայն հրեից մեջ բորբոքված մոլեռանդության բոցը կմեղմացներ, այլ և Հունաստանի մեջ իսկ հաջողեցավ իրեն դեմ մոլեգնած ամբոխը հանդարտեցնել և լի ակնածանոք խորին ուշադրություն հրավիրել իր վրա «ձեր անծանոթ աստվածը պիտի սովորեցնեմ» ըսելով: Ուստի այս ուղղությամբ առաքյալներ ոչ միայն հույս պիտի ունենային եբրայական տաճարները քրիստոնեական սրբարաններու վերածելու, այլ և հեթանոսական տաճարներն ալ, որը թեև՝ իսկապես իրականացավ, սակայն առաքյալներ իրենք չվայելեցին այդ սուր հեռատեսության պտուղը:*

*Առաքյալներ եթե իրենց կենդանության ժամանակ, ծանոթ և անծանոթ աստվածներու տաճարներ չկրցան քրիստոնեից տրամադրության տակ ունենալ, սակայն շնորհիվ իրենց ճարտար ղեկավարության ունեցան բազմաթիվ հետևողներ և անընկճելի կազմակերպված ուժ ոչ միայն հրեից դեմ, այլ և տիրապետող Հռոմեական ահեղ կայսրության դեմ, որուն հալածանքներն ու տանջանքները քրիստոնեության ծավալումը արդելել չկարողանալեն զատ, ինքն ալ ամբողջությամբ բռնվեցավ կայսրության ամեն կողմը ճարպկորեն հյուսվող ցանցին մեջ:*

*Քրիստոնեությունը իր վսեմ ծրագրով այնպիսի հարմար ժամանակ հայտնվեր էր, որ բնականաբար ոչ մի ուժ բավական պիտի չըլլար անոր համաճարակ ընթացքը կասեցնելու: Մեկ կողմանե Մովսեսի երկրավոր վարձատրության խոստումներու հետևանոք ընչաքաղցությամբ ապականած, հրեա ազնվականության ձեռք գերի եղած էր ստորին հասարակությունը Պաղեստինի մեջ, մյուս կողմանե հեշտամոլության և գազանային կիրքերու ու հաճույքներու գերի հռոմեական կայսրերու ճնշող, հարստահարող կառավարությունը պատրաստ հող էր ստեղծած նորածին վարդապետության սերմերն արագապես աճեցնելու համորեն կայսրության մեջ:*

*Քրիստոնեությունը ոչ միայն դեռ իր խանձարուրին մեջ, սեր, խաղաղություն, հավասարություն ու եղբայրություն կքարոզեր, այլև երկնային անվախճան երանության դռները կբանար հավատացյալին առջև: Լոկ խոսք չէին անոնց քարոզները, գործնականապես կապացուցանեին: Սեփականությունը գոյություն չուներ անոնց մեջ, ամեն բան հասարակաց էր և ամեն ոք հավասար: Հարուստը աղքատին, զորավորը տկարին, խելացին տգետին պարտական էր միշտ այս նորաբողբոջ հասարակության մեջ, և ով որ այս օրենքին դեմ կմեղանչեր, կպատժվեր... Տիրող կողմանե:*

*Ասկեց ավելի ինչ կարող էր գտնել տառապած և ստրկության ամրակուռ շղթաներու տակ շնչասպառ ահագին ամբոխ մը, որուն գլխուն ոչ միայն անմահության պսակ կհյուսվեր երկնից արքայության մեջ, այլ և այս աշխարհի մեջ ալ կմեղմանային իր թշվառության ցավերը և կլեցվեին կարոտությունները: Ուստի բնական էր, որ զրկվածներու, ճնշվածներու ահագին հեղեղ մը պիտի ստեղծվեր, որոնք պիտի գային անընդհատ ապաստարան և կյանք փնտրելու այս սփոփարար երկնային վարդապետության հովանավորության տակ:*

*Դեռ քրիստոնեության առաջին դարուն, Հռովմեական կայսրության մեջ, քրիստոնյաներ այնքան պատկառելի թիվ կազմեցին, որ տակավ առ տակավ պետության իսկ մտահոգություն պատճառել սկսավ: Բացի հասարակ ամբոխեն, ազնվականներ, գիտուններ ալ սկսեր էին վարակվիլ. Միքայել Ասորիի Պատմության մի հատվածը շատ պարզ ցույց կուտա այս համաճարակի որոշ աստիճանը: «Ցայսմ ժամանակի յաւուրս Դոմետիանոսի (81–96 թ.թ.) աճեաց քրիստոնէութիւնն և եհարց Պատրուբուլոս զվարդապետն իւր Բոսինոս, թէ ի՞նչ նշանակէ այսքան բազմութեան հաւատալ ի խաչեալ այր մի, որ և Թէոդորոս իմաստասէրն Աթենացւոց և Ափրիկանոս Աղեքսանդրացի և Մարտինոս Իբաթու (Հիպատոս) հաւատացին ի նա, թողեալ զվայելչութիւն աշխարհիս: Եւ պատասխանի և ասէ. «մի զարմանար ընդ այդ, զի կարծեմ թէ և աստուածք հնազանդին նմա»: Եւ նա ասէ. «ո՞ր պէս» և ասէ ցնա. «Զի անախտութիւն և անմեղութիւն և անընչութիւն է քարոզութիւն նորա. յայտ է զի ի վեր է քան զամենեցուն քարոզդ այդ»:*[1]

*Հաջողության ճանապարհը ուղիղ էր և հունձքը անսպառելի կերպով առատ: Առաքյալներ ցրված արևելք և արևմուտք, եռանդուն կերպով կգործեին, քաղաքե քաղաք, գյուղե գյուղ կքարոզեին, թղթակցություններ կգրեին հավատացելոց քաջալերության համար:*

*Առհասարակ նորահավատները գոհ էին նոր կրոնին մատակարարած բարիքներեն, միայն տրտունջներ կլսվեին վարչական ձևերու մասին, լավ չէին բաշխվեր նյութական օժանդակությունները, զրկվողներ և մոռացվողներ շատ կային անոնց մեջ, հարկ էր այլևս որոշ կանոններ և հաստատուն կազմակերպություն, որոնց միջոցավ կարելի ըլլար առատությամբ և հավասարությամբ մխիթարել բոլոր կարոտյալները, և վերջ տալ լուրջ հետևանքներ սպառնացող տրտունջներուն: Ուստի ահա այստեղ, առաքյալներ ժողով գումարեցին, պաշտոնյաներ ձեռնադրեցին և անոնց յուրաքանչյուրին գործն ու պաշտոնը որոշեցին, և հիմը դրին այն մեծ կազմակերպության, որուն վրա թեև ի սկզբան անտարբեր հեգնությամբ վերաբերվեցան տիրող պետությունն ու ժողովուրդը, սակայն կոչված էր նա մեկ երկու դար հետո իրական սպառնալիք մը դառնալու երկար դարերե ի վեր նվիրագործված հեթանոսական անսասան հաստատություններուն:*

---

[1] *Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի Ասորւոյ Պատրիարգի, Երուսաղեմ, 1871 թ., էջ 113-114:*

Օր ըստ օրէ բազմացող և հեթանոսութեան մէջ ծեսերու և արարողութիւններու սովոր նորադարձ ժողովուրդին անախորժ երևցավ քրիստոնեական կրոնի բոլորովին պարզութիւնը, բնական հակում զգաց դեպի տաճարները և անոնց մէջ կատարվող բազմամբոխ տոները, բավական չեղավ իրենց կենդանի տաճար աստուծո ըլլալը: Նյութական տաճարի կարիքն անխուսափելի դարձավ նույնիսկ առաքելոց ժամանակն մեկէ ավելի պատճառներով. տաճարը պիտի ըլլար այն շրջանակը, որուն մէջ պիտի հավաքվեր նորահավատ ժողովուրդը. տաճարը պիտի միացներ համորեն քրիստոնեից սիրտն ու հոգին. տաճարին մէջ պիտի լսեին փրկարար վարդապետության քարոզները, մեկնությունները: Մանավանդ, ամենակարևոր ծես մը կար կատարվելիք նոր կրոնի մեծ վարդապետի վերջին կտակով նվիրագործված, որուն համար տեղ և բնակարան հարկավոր էր, պետք էր հաց կտրել և գինի խմել, և հավերժացնել «արարէք զայս առ իմոյ յիշատակի» պատվերը, որուն գործադրությունը պիտի ըլլար թե՛ ապագա բազմատեսակ ծեսերու և թե՛ քրիստոնեական տաճարներու հատակագծային բաժանման ոճին:

Մեկ կողմանե աղքատ հասարակությունը կերակրելու համար մեծաքանակ գումարներու անհրաժեշտ պետքը, մյուս կողմանե քրիստոնեից դեմ հարուցված խիստ հալածանքները, առաջին դարու մեջ մեծ արգելք էին տաճարներու շինության, ուստի առաքյալներ բավական համարեցին ունէ ընդարձակ սրահի մը մեջ և այնտեղ քարոզել, աղոթել, հաց կտրել ըստ փրկչավանդ կտակի և խոսել ու խորհրդակցել հասարակաց բարօրության ու վարչական կանոններու վրա:

Ինչպես կերևի առաքելոց թուղթերեն, քրիստոնեական այս նախնական աղոթատեղիները և անոնց հաց կտրելու արարողությունը ավելի ընտանեկան ժողովի մը երևույթը ուներ, քան թե կրոնական պաշտաման սրբավայրի, որովհետև հաց կտրելու սեղանին շուրջը հավաքվողներու երբեմնի անպատշաճ վարմունքը առաքելոց դժգոհության առիթ տվին և խստիվ հանդիմանվեցան. փոխանակ համեստությամբ պատառ մը հացով և բաժակ մը գինով սիրո և եղբայրակցության ուխտը կատարելու, սկսեր էին զվարճության սեղանի մը նման ուտել, խմել, հարբել ու անվայել արարքներու մեջ գտնվիլ. այս պատճառով ալ հարկ եղավ միջոցներ ձեռք առնել սույն անպատշաճությունները չկրկնվելու համար:

Անշուշտ պաշտաման ժամանակ հավատացյալներու վարքի մասին հետզհետե կանոններ սահմանվեցան, սակայն աղոթասրահներու ձևերուն մասին ոչ մի կանոն կամ օրենք չեն երևիր առաջին դարուն մեջ: Աղոթասրահին տեղը, դիրքը, ձևը ոչինչ նշանակություն չուներ, բավական էր որ հավատացյալներու երկսեռ բազմությունը պարուսնակելու չափ ընդարձակ ըլլար, ուր կարելի ըլլար հանգստությամբ կատարել այն ժամանակվան կարճ ու պարզ ծեսերը: Կանանց անջատ կամ խառն աղոթելուն մասին ոչինչ օրենք չի նշմարվեր, նայելով եբրայական օրենքի տրամադրության, պետք էր որ կանայք առանձին տեղ գրված ըլլային. կանանց համար բացառիկ օրենք միմիայն գլուխնին ծածկված աղոթքի ներկայանալն է: Իսկ երբ ի նկատի ունենանք Պողոս Առաքյալի բողոքը առաքելոց՝ կիներու հետ շրջագայելը բամբասողներու դեմ, կարելի է ենթադրել, որ ի սկզբանե այդ խտրությունն ալ չէ եղած:

Երուսաղեմեն դուրս գալ, Փոքր Ասիո և Հունաստանի զանազան կողմերը հետզհետե բազմացող քրիստոնյաներն ալ ի սկզբան ասկեց տարբեր սովորություններ չէին կրող ունենալ, սակայն բնական էր, որ ըստ միջավայրի և ճաշակի, հետզհետե հասարակ բնակարանե մը տարբեր, պատկառելի սրբավայրի մը երևույթը տալու պիտի ջանային, տակավ առ տակավ կահավորելով, ճոխացնելով և գիշերային ժողովներու ժամանակ սովորականն ավելի լուսավորությամբ պայծառացնելով:

Առաջին դարուն մեջ, առաքյալներ եկեղեցվո ձևի մասին, եթե ոչ մի օրենք չավանդեցին, հայտնի կերևի որ ժողովուրդն ալ չզբաղվեցավ այդ խնդրով. քանի որ բազմապիսի սովորություններ և ծեսեր չկային, որպես զի ըստ ծիսական պահանջմանց որոշ հատակագիծ հարկ ըլլար: Բացի հաց կտրելու արարողությունը, որուն համար սրահ մը և սեղան մը անհրաժեշտ էր, կարելի էր ամեն տեղ աղոթել, քարոզել այնտեղ, ուր բազմություն կար մեկտեղ, ուր որ ջուր կար, իսկ ձեռնադրել այնտեղ, ուր կարելի ըլլար երկու-երեք ձեռք դնելու իրավասուներ գտնել:

Առաքելոց հայացքով քրիստոնեական եկեղեցին զարդ կամ վայելչություն չէր պահանջեր: Քրիստոսի եկեղեցվույն զարդը ժողովրդյան առաքինությունը, սերն ու բարեպաշտությունն էր, սակայն հակառակ առաքելոց անընդհատ սիրո և համերաշխության քարոզներուն, իրենց ձեռքով ձեռնադրված զանազան երկիրներու մեջ քարոզող եպիսկոպոսներ դեռ առաջին դարու մեջ սկսեցին դավանաբանական սուր վեճերու և ծնունդ տվին կուսակցություններու, այնպես որ շատ անգամ հարկ եղավ առաքելոց զորեղ միջամտության:



Ահա այն ժամանակ սկսած կուսակցություններն էին, որ ոչ միայն բազմատեսակ ծեսերու, արարողություններու և քրիստոնեական տաճարներու զանազանություններ պիտի ստեղծեին, այլ և պատճառ պիտի դառնային օր մը եղբայրասպան սոսկալի արյունահեղության:

Երկրորդ դարուն մեջ քրիստոնեից թիվը թեև անհամեմատ ստվարացավ քան առաջին դարը, սակայն պարբերաբար հալածանքներու դադարումը հակառակ ներգործություն կունենար քրիստոնեից բարոյական կազմակերպության վրա. երթալով կավելանային ոչ միայն կուսակցությունները և կուսակցական խոշոր կռիվները, այլև զանազան տեղերու մեջ համայն քրիստոնեից վրա ինքնագլուխ տիրապետելու կամ հովվապետելու տենչը կավելանար առաջնորդներու կամ եպիսկոպոսներու սրտին մեջ: Այս դարուն մեջ սկսեցին եկեղեցական օրենքներ, մեկնություններ, աստվածաբանական խոշոր վիճաբանություններ, ժողովներ և նզովքներ: Այս դարուն մեջ եղավ առաջին ժողով մը Նիկիո մեջ, ուր նզովվեցան Վաղենտինոս և Սաբել Լիբիացին:

Հետզհետե աճող և երկրին խաղաղության սպառնացող այս վեճերը տիրող պետության ալ անհանգստություն և մտահոգություն պատճառել սկսեցին: Տրայանոս կայսրը այս նոր աղանդները կառավարության մեջ կազմված նոր կառավարություն մը համարելով, խիստ օրենքներ հրատարակեց անոնց դեմ, իսկ Տրայանոսեն հետո Ադրիանոս և Մարկոս Ավրելիանոս լուրջ հալածանքներ սկսեցին, նույնիսկ պետական կազմին համար վտանգավոր համարելով: Սակայն արդեն ժամանակն անցած էր, մեկ կողմանե քրիստոնյաներ հայտնի կամ գաղտնի անընկճելի ուժ կազմող քանակության հասած էին, մյուս կողմանե գտնվելով այդ կազմին մեջ, աշխարհական կամ կղերական հեղինակավոր անձինք, որոնք մեծամեծ շահերու միջոց դարձուցած էին կրոնը իրենց ձեռքին մեջ, ոչ մի միջոցի առջև կանգ չէին առներ այլևս իրենց նյութական շահերը պաշտպանելու համար. շատ անգամ անոնք կարողացան պետական շահերու վրա ալ ազդել, որով կայսերք ստիպված հաճախ տեղի կուտային այս կրոնեն մեծ շահույթներ ունեցողներու առջև:

Երրորդ դարու մի պատմագիր Կիպրիանոս, իր դարուն մեջ քրիստոնեության անվան տակ տեղի ունեցող զզվելի շահատակություններու մասին հետևյալ վճիտ նկարագիրը կուտա հալածանքը ազատությունեն ավելի նախապատիվ համարելով:

«Վերջին տարիներու փորձությունները ցույց տվին որ, և կրսեր համաշխարհային բարուց ապականությունները հավասարապես քաշ կուտային քրիստոնյաներն ալ. որովհետև հասարակության և անոր գլխավորներու այլասերումը այնպիսի կետի մը հասած էր, որ ամենախիստ միջոցները կարող էին ամբողջական բարոյական անկումե մը հետ կասեցնել:... Ամեն ոք իր անձնական հարստությունը ավելցնելու վրա կմտածեր: Միահամուռ մոռցած առաքելոց ժամանակի հավատացելոց գործերը, կամ ինչ որ կպարտավորեին ընել միշտ, անհոգ, անտարբեր են: Ընդհակառակը կշանան անհագ ընչաքաղցությամբ իրենց հարստությունը ավելցնել: Ոչ մի կղեր ցույց չէր տար ավանդական խոնարհությունը և ոչ մի պաշտոնյա կատարյալ հավատք, գթությունը այլևս գոյություն չուներ, համեստությունը անհետացած էր, մարդիկ իրենց մորուքներուն հետ կխաղային, կանայք կշպարվեին և կնրբանային իրենց պճնասիրության մեջ, մազերնին և հոնքերնին արվեստով կներկեին: Պարզամիտներուն սիրտը խաբելու համար՝ հնարեցին ամենահաջող խաբեբայություններ, և իրենց եղբայրներուն սիրտը մոլորեցնելու համար նենգավոր խրատներ: Հեթանոսաց հետ ամուսնությամբ կկապվեին և անհավատներուն հետ զոհ կմատուցանեին քրիստոնյա հասարակության անդամներ: Անզգոյշ հայհոյություններով չէին բավականանար, այլև երդմնազանց ալ կըլլային: Առաջնորդաց մեծագույն մասը, որ պարտավոր էր խրախույս և օրինակ այլոց հանդիսանալ, կարհամարհեր իրեն պարտականությունները, հոգվով ապականված աշխարհային գործերու միջնորդ դարձավ նա. թափուր կթողներ իրեն աթոռը, ժողովուրդը լքված կթողներ իրեն ճակատագրին և կթափառեր ուրիշ դավառներ շահաբեր գործեր փնտրելով. երբեք օգնության չէր հասներ իրեն կարոտ եղբարց, միայն կբաղձար ոսկիի դեզեր ունենալ, կուզեր ստացվածքներ շորթել կեղծավորյալ խարդավանքներով և հարստանալ ծայրահեղ հափշտակությամբ»:

Իրաց այս վիճակին մեջ ստույգ է, որ քրիստոնյաներ 3-րդ դարուն շրջանին մեջ, թեև տակավին անհաստատ և պարբերաբար հալածված, ունեցան եկեղեցական ներքին որոշ կազմակերպություններ, ունեցան տաճարներ, թեև ոչ շքեղ և ամրակուռ, բայց որոշ ձևի տակ, ուր կկատարվեին մինչև այն ատեն սահմանվող ծեսեր, աղոթքներ և երգեցողություններ: Քահանան և ժողովուրդը իրենց պատշաճ տեղը գրված էին աղոթատեղիին մեջ, կրոնի նվիրված պաշտոնյայք զգեստավոր էին գիրենք հասարակ ժողովրդեն զանազանող տարազով: Հի-

մա արդեն սրբավայրի մը պատկառելի երևույթը ստացեր էին եկեղեցիները: Բայց տակավին ճշտիվ ծրագրված չէին հատակագծային բաժանումները, թեև նախնական բոլորովին անորոշ և կամայական դրութենեն անցած մի կերպ սահմանի տակ դրված էին, սակայն այնպես չէին ինչպես 6–8-րդ դարերուն մեջ եղած վերջնական տիպարները:

Առաքելոց վերնատունեն և կամ անոնց օրով եղած նման սրահներեն հետո, առաջին և երկրորդ դարերուն մեջ ամենախիստ հալածանքներու ժամանակ, երբ անհնար էր արտոնություն ստանալ եկեղեցիներ կանգնելու, արևմտյան քրիստոնեից առաջին եկեղեցիները կամ աղոթարանները ստորերկրյա քարայրները եղան երկար ժամանակ: Այս քարայրներեն շատերը բախտի բերմամբ իրենց ձեռքը կանցնեին, որովհետև անոնք նախաքրիստոնեական շրջանի մեջ ալ գոյություն ունեին Հռոմի և իր շրջակայից մեջ, կկարծվի թե հանքերու համար փորվածքներ էին, ուրկեց հալածված քրիստոնյաներ օգտվել գիտցան թե՛ ժողովներու և աղոթքներու համար և թե՛ ննջեցելոց թաղման համար՝ որպես դամբարան: Քրիստոնեական եկեղեցիներու հատակաձևի այս նախագծին մեջ եթե մի որոշ հատկություն կա, որ բուն իսկ քրիստոնեից ձեռքով հավելվածներ են, այն ալ այրին խորը բոլորակ ձևով առանձին փորված փոքր սենյակներն են, որոնք հատկացված էին մասնավորապես մարտիրոսներու մարմինները ամփոփելու, ուր քահանան՝ աղոթքի ժողովեն հետո, կմտներ այնտեղ և առանձին հոգեհանգիստի սաղմոսը կկարդար հանգուցելոյն վրա:

Արևելյան քրիստոնեից համար այս մասին կարծիքներ կտարբերեին, առհասարակ սկսյալ Կեսարիայի շրջանեն, Փոքր Ասիայի հարավային կողմերը, Ասորիք, Հայաստան, Պարսկաստան տարածվող քրիստոնեից վրա համեմատաբար հալածանքը քիչ ըլլալուն համար, անոնք ունեցան քիչ թե շատ բաց օդին մեջ կանգնված եկեղեցիներ, սակայն այդ շինություններն այնքան խեղճ ու հասարակ էին, որ ոչ մեկը չհասավ գոնե պատմության ծանոթ շրջանին, մեկ մասը ինքնին փլավ կարճ ժամանակի մեջ և ոչնչացավ, մնացյալներն ալ քրիստոնեության պետական կրոն հռչակվելեն հետո, վար առնվեցան և անոնց տեղին վրա նորեր շինվեցան. այս շրջանին մեջ է, որ կհիշատակվի եկեղեցի մը, որ իբր անհաստատության պատճառով հեղեղեն քշվեցավ: Երրորդ դարուն վերջերը, երբ քրիստոնյայք Բյուզանդական կայսրության թագը խաչին առջև խոնարհեցնելու չափ ուժ ու ազդեցություն ձեռք բերած և թվական գերակշռություն ունեցած էին, այլևս կասկած չէր մնար, որ թե բավականին ազատ շունչ քաշելով քրիստոնյաներ տաճարներ շինած էին և թե անոր ձևերուն վրա որոշ կանոններ և օրենքներ հաստատած էին: Այս դարուն մեջ ըստ ծիսական պահանջման եկեղեցիի մեջ, սեղանը իր տեղը ուներ, քահանայք և դպիրք իրենց տեղը և երկսեռ հավատացյալք իրենց հատուկ բաժինը, միայն այս բաժանումներուն մասին զանազան տեղերուն վրա տարբեր համոզումներ և հակառակ ուղղություններ կային: Առայժմ գլխավորաբար երկու կերպ բաժանում հայտնի է, որ իրարու դեմ մրցեր են մինչև 7-րդ դար: Առաջինը այն է, որ սրահին խորը կգտնվեր պատարագի սեղանը, անոր առջև քահանայից դասը, որուն անմիջապես կհաջորդեր ժողովրդին բաժինը և երևի ավելի ընդհանրացած և ընդունված ձևն այս էր, որ երբ Կոստանդիանոս քրիստոնեությունն ընդունեց, իր շինած բոլոր եկեղեցիներուն հատակագծերն այս ձևին պատշաճեցուց: Երկրորդ ձևն այն էր, որ փոխանակ սեղանը խորը դրվելու կզետեղվեր կեդրոնին վրա, սեղանին շուրջը կկենային քահանայք և դպիրք և մնացյալ տարածությունը կգրավեր ժողովուրդը: Այս տիպի եկեղեցիներ առ հասարակ բոլորակ կամ անկյունավոր բոլորշի ձև ունեցած են:

Անշուշտ այս զանազանությունները առաջ կուգային այլ և այլ տեղերու մեջ դավանաբանական վարդապետություններու և ս. գրոց տարբեր մեկնություններու պատճառավ: Միլիոններու հասնող ժողովրդյան մը վրա միահեծան իշխելու տենչեն բռնված քարոզիչներ, եպիսկոպոսներ այնքան չափազանցության տարին քրիստոնեական վարդապետության պատրվակին տակ իրենց կուսակցական վեճերը, որ քայքայման վտանգ կսպառնար քրիստոնեության ամբողջական կազմին:

Թերևս քաղաքագիտական հեռատեսությամբ Կոստանդիանոս ևս քրիստոնեից հոգվույն վրա տիրապետելու տենչեն բռնված, նախքան իր դավանափոխ ըլլալը մեծամեծ պաշտպանություն և ապահովություն ցույց տվավ քրիստոնեից, իսկ իր քրիստոնեություն ընդունելեն հետո ալ, անմիջապես ձեռնարկեց իր հովանավորության տակ տիեզերական ժողով գումարելու, որպեսզի վերջ տա անախորժ երկպառակությանց և տարբեր տարբեր հատվածներ ի մի ձուլելով, անոնց վրա թե՛ հոգևոր և թե՛ մարմնավոր գերիշխանություն ձեռք բերե:

Քրիստոնեությունը ընդունելով, Կոստանդիանոս, ոչ միայն իր նոր հիմնարկած մայրաքաղաքը կշենցներ ու կհարստացներ, որը հին Հռոմը պիտի գերազանցեր, այլև արևմտյան կայսրության և համայն Եվրոպային սպառնացող բարբարոսաց արշավանքներուն դեմ կապահովեր ամբողջ երկիրը: Երեք դար անընդհատ հավատո պաշտպանության անունով աներևակայելի հաստատամտությամբ և քաջությամբ Հռովմեական ահեղ կայսրության ներքին ուժերը ջլատելու չափ կռվող քրիստոնյա հասարակությունը, երբ տեսավ իրեն գլուխ կանգնած քրիստոնյա թագակիրներ, ոչ միայն ավելի եռանդով և ոգևորությամբ պաշտպանեց երկիրը արտաքին հարձակումներու դեմ և ապահովեց կայսրության գոյությունը մինչև տասը դար ևս, այլև նյութական առասպելական հարստությամբ ողողեց թե՛ եկեղեցին և թե՛ կայսերաց պալատներն ու զանձարանները:

Ինչ որ ալ ըլլա Կոստանդիանոսի դավանափոխության նպատակը, վերջապես վերջնականապես դադար առավ քրիստոնեության դեմ եղած հալածանքը և փոխադարձ բուռն թափով անդրադարձավ հեթանոսներու դեմ:

Այս ժամանակը ոչ այնքան քրիստոնեական բարեկարգության, այլև գեղարվեստի վերածնության դար ալ եղավ: Արվեստ և գիտություն նոր կրոնին հետ ձեռք ձեռքի տված հանկարծական փայլով մը զարգացուցին երկիրը, նոր կյանքի և նոր գործունեության շրջան մը սկսվեցավ. անթիվ եկեղեցիներ հիմնարկվեցան թե՛ մայրաքաղաքի և թե՛ կայսրության բոլոր նահանգներու մեջ. կըսվի, թե Կոստանդիանոսի օրով ավելի քան 800 ճարտարապետներ զբաղված էին երկրին ամեն կողմը եկեղեցիներ, մատուռներ և վանքեր շինելով: Պատմական ավանդություն կա, որ Կոստանդիանոսեն մինչև Հուստինիանոս 190 տարվան մեջ 18000 եկեղեցիներ հիմնարկեցին միայն Արևելյան կայսրության մեջ:

Քրիստոնեության պաշտոնապես ազատության սկզբնական շրջանին մեջ երբ բավարար թվով եկեղեցիներ չկային և անմիջական պահանջ կար մեծ քանակությամբ եկեղեցիներու, և նոր եկեղեցիներ կառուցելը երկար ժամանակի կարոտ էր, այդ անխուսափելի պահանջին շուտով բավարարություն տալու համար, Կոստանդիանոսի հրամանով քրիստոնեից տրամադրության տակ դրվեցան բոլոր հեթանոսական տաճարներն ու քաղաքային շինություններեն մեծ մասը. գլխավորաբար բազիլիք ըսված շինությունները, որոնք անխտիր եկեղեցիներու փոխարկվեցան թեթև փոփոխություններով և նորոգություններով: Արևելադրության սկզբունքը տակավին քրիստոնեից մեջ վերջնականապես մուտ գտած չըլլալը մեծապես օգնեց հեթանոսական շինությունները քրիստոնեական եկեղեցիներու փոխարկվելուն. դեռ 6-րդ դարու Այա-Սոֆիան ուղիղ արևելադրված չէ, իսկ ներքին բաժանման մեջ կռապաշտական տաճարներե ունեցած տարբերությունն այն էր, որ Զևսի գահուն վրա պիտի բազմեր հաղթական Էհովվան, և միածին Միներվի տեղը պիտի գրավեր Էհովվայի միածին Քրիստոսը: Շատ քիչ ժամանակ էր հարկավոր, որ հեթանոսական բազմաթիվ երկրորդական աստվածներու թափուր մնացած աթոռներուն վրա ևս գային բազմելու քրիստոնեից բազմաթիվ սուրբերը միևնույն ավանդական և առասպելական նվիրագործումներով: Իսկ մնացյալ մասերը, որոնք աստվածային պաշտոնեությանց և ջերմեռանդ հասարակության կվերաբերեին, գրեթե անփոփոխ մնացին:

Քրիստոնեության պետական կրոն հայտարարվելեն առաջ, քրիստոնեության դարձող հեթանոսներ եթե կամավ կամ համոզումով հրաժարած էին կռապաշտական առասպելական ավանդություններե, քրիստոնյա պետության մը հալածանքներու տակ բռնի դավանափոխ եղողներ բնականաբար դյուրավ չպիտի հրաժարվեին իրենց սրտին մեջ արմատացած դարավոր հավատալիքներեն և ավանդություններեն, պայքարը նույնքան երկար և ահեղ պիտի ըլլար, ինչպես քրիստոնեության պայքարը հեթանոսության դեմ, եթե 4-րդ դարու եկեղեցվո քրիստոնյա քարոզիչներ հետևելով իրենց նախորդներու, Մովսեսի և Պողոսի խորագետ քաղաքագիտության, չվերանորոգեին հին ավանդությունները և սովորությունները, քրիստոնեական ծեսերու տակ մի կերպ սրբագործելով: Ուստի այդ սկզբունքով ալ ոչ միայն խոտելի չեղան կռոց տաճարներու հատակագծային բաժանումները քրիստոնեից համար, այլև անոնց վերագրված սրբազան անուններն ալ օծումով և պաշտամունքով սրբագործվեցան, գրեթե միևնույն անուններով: Հեթանոսական կույս Միներվի մեհյանը քրիստոնեական ս. Կույսի տաճար եղավ, Արևի մեհյանը ս. Հեղեի և բոլոր աստվածներու տաճար՝ Բանթեոնը – ամենայն սրբոց տաճարներու փոխարկվեցան: Նույն բանը եղավ նաև հայոց մեջ, որուն մասին հետո պիտի տեսնինք:

Այժմ քննենք, թե ինչ խորհրդավոր ձև և բաժանում էր հարկավոր քրիստոնեական տաճարներու, որոնք պահելով իրենց մեջ եբրայական Հին ուխտի տաճարներուն բոլոր բնորոշ գծերը, նաև պատշաճություն տրված ըլլար Նոր ուխտի տաճարներու գլխավոր վարդապետությանց պահանջներուն, միևնույն ատեն հնարավորություն լիներ հեթանոսական տաճարներու և բազիլիքներու քրիստոնեական եկեղեցիներ փոխանակելուն:

Նոր կտակարանի տեսակետով Հին ուխտը նորին ստվերն էր, կամ ավելի պարզ Հին կտակարանի հին մովսեսավանդ ծեսերը, ավանդությունները ապագա քրիստոնեության նախագիծ պատկերներն էին, որոնք ժամանակավորապես ծածկված պիտի մնային խորհրդավոր քողի տակ մինչև Մեսիային հայտնագործությունը. և անկեց հետո՝ հին սովորությունները նորին մեջ պիտի ունենային դարձյալ իրենց հատուկ պատշաճ տեղը, ավելի պարզված, մեկնված և իրականության փոխված այն ամենը, որոնք ի հնումն լոկ մարգարեություններ էին միայն:

Այստեղ համեմատենք եբրայական տաճարի պաշտաման և սպասարկության հատուկ մանրամասնությունները քրիստոնեական տաճարի մանրամասնությանց հետ և տեսնենք, թե ինչո՞վ տարբերվեցավ վերջինը առաջինեն.

| Եբրայական տաճարի մանրամասնությունները | | Քրիստոնեական տաճարի մանրամասնությունները |
|---|---|---|
| 1) Սրբարան | — | Խորան |
| 2) Սրբություն սրբոց | — | Խաչը, սրբատուփը |
| 3) Տապանակ ուխտի | — | Խաչկալ |
| 4) Տապանակին մեջ դրված քարե տախտակ տասն պատվիրանաց, օրինաց թուղթ և մանանա | — | Ավետարան և հաղորդություն |
| 5) Զոհի սեղան | — | Պատարագի սեղան |
| 6) Աշտանակ յոթը թևով | — | Աշտանակ յոթը թևով (հունաց մեջ մինչև այսօր գործածական) |
| 7) Բուրվառ կամ խնկաման | — | Բուրվառ և խնկաման |
| 8) Վարագույր սրբարանի | — | Վարագույր խորանի |
| 9) Քահանայից և դպրաց դաս | — | Քահանայից և դպրաց դաս |
| 10) Հավատացելոց դաս կամ Իսրայելի գավիթ | — | Հավատացելոց և կամ մկրտված քրիստոնյաներու աղոթքի դաս |
| 11) Հեթանոսաց գավիթ | — | Երեխայից կամ ապաշխարողաց գավիթ |

Ինչպես կերևի այս համեմատությունեն, հինին և նորին հատկությունները գրեթե միևնույնն են, շատ մասնավոր փոփոխություններով և կամ հավելումներով, հետևաբար նախկին երեք դարերու քրիստոնեության վարդապետները պիտի մշակեին այս ձևը լիովին ծիսական պետքերու մեջ բավարարություն գտնելու համար և այդպես ալ եղավ արդեն: Թեև բացի եբրայական տաճարի մանրամասնութենեն մտավ նաև քրիստոնեական եկեղեցիներու մեջ հեթանոսական տաճարներեն ալ բաժիններ նույն հատկություններով և նույն անուններով, սակայն այդ մասերը թե՛ քիչ ուշ մտան և թե՛ այնքան ալ պարտավորիչ չեղան երկար ժամանակ. պարբերաբար միայն պահանջ զգացվեցավ անոնց:

Եգիպտացոց, հունաց և այլ հին ազգաց տաճարները քննելով մենք տեսանք, անոնք եբրայական տաճարներե տարբերություն չունենալեն զատ, եբրայական տաճարը կետ առ կետ ձևված էր անոնց վրա, արդ, երբ հեթանոսական տաճարը կպատշաճի եբրայական տաճարին, բնական էր, որ դյուրավ պիտի պատշաճեր նաև քրիստոնեական տաճարին, բացի հետզհետե ավելացած մեկ-երկու հերձվածական պահանջներեն և արևելադրության սկզբունքեն:

[1]Մնա քննել բազիլիք ըսված շինությունները, թե ի՞նչ էին անոնք և ի՞նչ հատկություններով պատշաճություն տվին եկեղեցիներուն և իբրև նախատիպ ծառայեցին ապագա բազմաթիվ եկեղեցիներու, մասնավորապես Արևմուտքի մեջ:

Բազիլիքները, քառակուսի և իրենց լայնության կրկնապատիկը և երբեմն մինչև եռապատիկը երկարությամբ շինություններ էին, արտաքուստ բոլորովին պարզ, իսկ ներքուստ դեպի երկարությունը շարված երբեմն երկու, երբեմն չորս կարգ սյունաշարերով երեք կամ հինգ մասերու կբաժանվեին. միշտ մեջտեղի սյունամիջոցները համեմատաբար լայն՝ քան կողմնակիները. երկարության խորը կվերջանար կիսաբոլորակ աբսիդով մը: Աբսիդին մոտ երկու կողմերուն վրա անոնք հաճախ կունենային երկու փոքր սենյակներ, որոնք Chaicidique կանվանվեին: Այս ձևին հռովմեացիք ծանոթացան Հունաստանի մեջ մակեդոնական պատերազմի ժամանակ նախքան 231 թվականը Քրիստոսե առաջ: Հռովմի մեջ 204 թվին Ք. ա. առաջին օրինակը շինեց Porcius Caton, որը Porcia կոչվեցավ. երկրորդ օրինակը Marcos Fulvius Nobilfus և այսպես հաջորդաբար շարունակվեցին մինչև քրիստոնեության օրերը, որոնց մեջ գտնվեցան երբեմն մեծամեծ ու նշանավոր բազիլիքներ ինչպես Տրայանոսի, Յուլբիայի և այլն և այլն, և անոնցմե շատերն ալ քրիստոնեական եկեղեցիներու փոխարկվելով պահվեցան մինչև 7-8-րդ դար:

Բազիլիքներու ձևերուն և հատկություններուն վրա կատարյալ գաղափար կազմելու համար ընտրանոք կդնեմ այստեղ կատարելագործյալ շրջանի երկու բազիլիքներու հատակագծեր, որոնցմե առաջինը կվերաբերի Տրայանոս կայսեր Basilique Trajan անվամբ և երկրորդը basilique d'Herculanum:



Նկ. 3. Նախաքրիստոնեական բազիլիքներու հատակաձևեր

Այս շինությունները հատուկ էին մեծամեծ ժողովներու, ուր կհավաքվեին երբեմն կայսեր նախագահությամբ երկրին մեծամեծ իշխանները, դատավորները և օրենսգետները, ժողովրդյան ներկայությամբ հասարակական և ազգային մեծամեծ խնդիրներու վրա խորհրդակցելու համար: Կիսաբոլորակ աբսիդը հատուկ էր թագավորին, ուրկեց առած է յուր բազիլիք անունը հունարեն վասիլիոս բառեն առնելով, իսկ ի բացակայության թագավորին փոխանորդող նախագահը պիտի նստեր այնտեղ: Երբ աբսիդը մեծ էր, ամբողջ կիսաբոլորակ շրջանակին հավասար կարգով կնստեին մյուս պաշտոնյաները կամ խորհրդականները. սյունազարդ ընդարձակ սրահը հատուկ էր ունկնդիր ժողովրդյան բազմության. կողմնակի փոքր սենյակները հատուկ էին խորհրդակցության, արխիվի և այլ զանազան երկրորդական պետքերու:

Այս ձևը ոչ միայն իր ընդարձակությամբ և խորը գտնված կիսաբոլորակով վերին աստիճան պատշաճ էր քրիստոնեական հանդիսավոր թափորներու և արարողություններու, այլև ոմանց երկու կողմին վրա եղած փոքր սենյակներուն պատճառով խաչաձևի մոտեցող հատկությունը իբրև նախագաղափար պիտի ծառայեր ապագա քրիստոնեական եկեղեցիներու խաչաձև հատակագծերուն.[1] ուստի խորը գտնված կիսաբոլորակ աբսիդը սրբարանի վերածելով՝ պատարագի սեղանը զետեղեցին անոր կենտրոնական մասին վրա բոլորովին անջատ կերպով, ճշտությամբ իրագործելու համար թե՛ մովսեսական զոհի սեղանի դիրքը և թե՛ Դավթի «լուացից զձեռս իմ սրբութեամբ և շուրջ եղից զսեղանով քով» խոսքը:

Սեղանին դրված տեղը, այսինքն **աբսիդին** հատակը ավելի բարձր շինեցին հասարակության տեղեն զանազանելու համար, ըստ որում սա սրբարանին փոխանցումն էր: Խաչկալը, որ եբրայական Տապանակ ուխտին տեղը բռնեց, պատշաճապես հորինվելեն հետո, վրան զետեղեցին խաչը, որը Քրիստոսի աներևույթ ներկայությունը կհիշեցներ ինչպես Տապանակին մեջ Էհովվայի աներևույթ ներկայությունը կհիշեցներ սրբություն սրբոցը, Տապանակին մեջ դրված տասն պատվիրանաց քա-

[1] Այստեղ պատշաճ կհամարեմ ասել, որ իմ կարծիքով սխալ է այն ըմբռնումը, երբ երկար քառակուսի շինություն մը, որը սյունաշարերու միջոցով թևերու բաժանված է, զայն բ ա զ ի - լ ի ք անվանել կամ բազիլիքի առանձնահատկությունը այս ձևին մեջ տեսնել: Այս ձևով շինություններ բազիլիք անունը ստանալե շատ առաջ գոյություն ունեին Հունաստանի ամեն կողմը, Եգիպտոսի մեջ: Ինչպես Հունաստանի և Եգիպտոսի մեհյանները ամենն ալ երկար քառակուսիներ են, հաճախ սյունաշարերով թևերու բաժանված: Բազիլիքի միակ հատկությունը, որով կզանազանվի ուրիշ բազմատեսակ շինություններե, խորը գտնված կիսաբոլորակ աբսիդն է, այդ աբսիդավոր շինություններն էին միայն, որոնք բ ա զ ի լ ի ք անունը ստացան սկսյալ այն թվականեն, երբ երևցան անոնք (աբսիդը): Բազիլիք անունը, որ հունարեն վասիլիոս բառեն կուգա, պարզապես ցույց կուտա, որ այդ շինությունները եթե ոչ թագավորաշեն, գոնե անպայման իր մեջ թագավորի հատուկ բաժին մը ուներ, և այդ բաժինը ա բ ս ի դ ն է: Երևցան շատ զանազան տեսակ բազիլիքներ աբսիդներու չափով և ձևով գգալի կերպով իրարմե զանազանվող: Ոմանց աբսիդը այնքան փոքր էր, որ թագավորին հատուկ աթոռը միայն կտեղավորվեր, իսկ խորհրդականաց աթոռները կդրվեին նույն տեղի մեջ հատկացված բաժինի մը վրա, որուն հատակը կամ բարձր էր հասարակության հատկացուցած տեղի հատակեն և կամ վանդակապատով կամ սյունաշարերով անջատված էր: Երբեմն պատահեցան մեկե ավելի աբսիդներով միևնույն պատին վրա բնականաբար փոքր չափով, իսկ անոնցմե ոմանք ալ փոխանակ կիսաբոլորակի քառակուսի ձևով շինվեցան, թեև այս վերջինս համեմատաբար շատ հազվագիպ էր: Աբսիդին հաջորդող խորհրդականաց այդ բաժինն է, որ այսօր Արևմտյան եկեղեցիներու մեջ transept անունը ստացավ:

րե տախտակին և օրինաց գրքին փոխարինեց ս. գիրքը, մանանային տեղը հաղորդությունը՝ գոյափոխյալ Մարմին տյառն սրբատուփով կամ սկիհով: Եբրայական տաճարի սրբարանին վարագույրը նույնությամբ ընդունվեցավ քրիստոնեից մեջ նույնպես նաև պաշտաման հատուկ շատ մը սպասներ. ինչպես յոթը ճյուղերով աշտանակ, բուրվառ, խնկաման: Միսակատար կղերականներու հագուստներ ևս անփոփոխ նույնն են քրիստոնեից մեջ, ինչ ձևով որ Մովսես չինել տվավ դեռ անապատին մեջ, շատ թեթև քրիստոնեական խորհրդանշաններու հավելումներով: Գլխավոր տարբերություն մը եթե կար եբրայականին և քրիստոնեականին սկզբնական շրջանին մեջ, այն ալ եպիսկոպոսական աթոռը աբիդի խորը դրվելով՝ մնացյալ հոգևորականներու աբիդին համահավասար ուղղությամբ շարվելն էր. այս կերպ զետեղման պատճառ տվին բազիլիքները, եպիսկոպոսը իբրև եկեղեցվո պետ այնտեղ պատշաճ համարեց, ուր որ բազիլիքի մեջ թագավորը կնստեր իբրև աշխարհական պետ, սակայն այս կերպ կարգադրությունն ալ բոլորովին կամայական կերպով չեղավ, կղերը հիմք գտավ այս ձևին պատշաճության Հովհաննու Հայտնության Ե գլուխին մեջ, ինչպես նաև ուրիշ քանի մը արարողություններու: Ինչպես կերևի, եպիսկոպոսական աթոռին և քահանայից ու դպրաց դասին աբիդին մեջ տեղ բռնելու սովորությունը ընդհանրապես չընդունվեցավ, գլխավորաբար հունաց եկեղեցին էր, որ երկար ատեն պահեց այդ ձևը. մինչդեռ արևելյան եկեղեցիներեն մեկ քանին կամ շատ շուտով փոխեցին այդ ձևը և կամ բնավ չընդունեցին և քահանայից դասուն հատկացուցին խորանին անմիջապես հաջորդող մասին վրա, որ կգտնվեր ժողովրդյան բաժնին և սեղանին մեջ տեղ. ասով թե՛ նմանություն տվին հին ուխտի ծիսական ձևին և թե՛ խորհրդավորություն մը քահանայից պաշտոնին որպես միջնորդ աստծու և ժողովրդյան մեջ:

Բազիլիքներու մեջ եղած այնպաշարերը դյուրացուցին հին օրենքեն քրիստոնեության անփոփոխ կերպով անցնող կանանց դավթի բաժանման խնդիրը, մեկ այնպես մյուսը ձգված երկաթե ձողերու միջոցով կախված վարագույրներով զատեցին սրահին մեկ թևը և հատկացուցին կանանց, իսկ մյուս թևը մինչև առանձին հեթանոսաց գավիթ շինվելը կծառայեին իբր հեթանոսաց գավիթ, կամ երեխայից և ապաշխարողաց բաժին, կեդրոնական մեծ թևին մեջ բռնեցին ճշմարիտ քրիստոնյաները հանդեպ խորանին, ուրկից համարձակ կտեսնեին եկեղեցական բոլոր արարողությունները և կլսեին ընթերցմունք կամ սաղմոսերգություններ:

Ուրեմն այս կարգադրությամբ Քրիստոսի եկեղեցին ալ ունեցավ հետևյալ գլխավոր հատակագծային բաժանումները, գրեթե նման նախընթաց դարերու զանազան դավանությանց պատկանող ազգերու կրոնական տաճարներուն.

1. Աստվածային աներևույթ ներկայության գահը.
2. Քահանայից բաժինը.
3. Ժողովրդյան սրահ.
4. Հեթանոսաց գավիթ:

## Դ. ԱԿՆԱՐԿ ՄԸ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃԵՐՈՒ ԾԱԳՄԱՆ ԵՎ ԲԱԺԱՆՄԱՆ ՎՐԱ[1]

### 1

Պետքը ստեղծեց բնակարանները, իսկ ճաշակը անոնց զանազան զարդարանքները:

Նախնադարյան ժամանակներու մեջ բնակարանները սկսվեցան ստորերկրյա նկուղներե և քարայրներե, ու մարդկության զարգացման համընթաց զարգանալով փոխվեցան մեր օրերու մարմարյա և բյուրեղյա հրաշագեղ պալատներուն:

Այս շինություններու արվեստը եղավ ճարտարապետության և անոնց ձևերը եղան ոճ:

Շենք մը իր ընդհանուր ձևին մեջ ունեցավ ոճերու երեք գլխավոր ստորաբաժանումներ, որոնք են ներքին բաժանում, շինության կերպ և զարդարանքներ, ասոնք ալ եղան ոճեր և գործածվեցան շատ անգամ իրարմե անկախ:

Այս ոճերը, ամեն երկրի մեջ, ըստ միջավայրի տարբական պահանջներու, իրարմե տարբեր ուղղություն ստացան, որով ծագումեն մինչև մեր օրերը անհամար ճյուղերու բաժանվեցան, այնպես որ ոչ միայն երկրե երկիր, այլ նաև քաղաքե քաղաք նորանոր ոճերու ծնունդ տվին:

Ներքին բաժանումները ծնվեցան յուրաքանչյուր երկրի ընտանեկան և տնտեսական պահանջներու համաձայն. շինության կերպը զանազանվեցավ նույն երկրներու արտադրած շինվածանյութերու տեսակին և կլիմային համեմատ, իսկ զարդարանքներու մեջ դեր խաղացին միջավայրի բնական դիրքերը, գիրենք շրջապատող բնությունը և անոնց ազդեցության տակ զարգացող ժողովուրդին ստեղծագործական ոգին ու նրբացած ճաշակը:

Մի քանի երկրներու մեջ կրոնքը ոչ նվազ նշանակություն ունեցավ գեղարվեստի ծաղկման և անհամեմատ արագ զարգացման վրա:

[1] Արտատպվում է «Հուշարարի» 1907 թ. № 1-ից (էջ 9–10):
Կազմող



Ըստ ամենայնի ճոխ ու հսկա շինություն մը շինելու համար, նախաքրիստոնեական դարերու մեջ այնքան յուրահատուկ ձևեր և հարամասունքներ ստեղծվեցան, որ հետագա սերունդներու մեջ, նախապես պատրաստված բազմաթիվ նյութերու տարբեր-տարբեր դասավորությունները եղան ոճեր:

Հետագա սերունդներն ալ անպտուղ չմնացին, անոնք ալ ըստ իրենց միջավայրի և ճաշակի զարգացման աստիճանի, բազմաթիվ ճյուղեր պատվաստեցին այդ բազմադարյան ուռճացած հաստ բունի վրա: Հին ձևերը կոկեցին, նրբացուցին և խառնելով ճաշակի ու հանճարի նորանոր պտուղներուն հետ, ավելի վայելուչ գեղեցկությամբ դասավորեցին:

Ճարտարապետական արվեստի նախնական ավազանը եղավ հին Եգիպտոսը և հին Ասորեստանը, ուրկեց հոսող հորդահոս հեղեղը երբ կողողեր ամբողջ երկրագունդը, այդ հոսանքին առջև ընկավ նաև հայոց աշխարհը իր աշխարհագրական դիրքին պատճառավ:

Հայերուն համար անհնար էր չազդվել այդ խուռն հոսանքեն, և լիովին օգտվեցան իրենց շուրջը ծովացող բազմակողմանի արվեստներեն և գիտություններեն: Ամեն կողմե հավաքեցին գեղարվեստի նյութեր և խառնելով իրենց սեփական ստեղծագործությանց հետ, կազմեցին իրենց ուրույն ճարտարապետությունն ու ոճերը:

Քրիստոնեության շրջանին մեջ – ավելի քան տասը դար – հայերը պաշտեցին իրենց արվեստներու թագուհին, հետզհետե զարդարեցին ու պճնեցին զայն իրենց սիրած ու համակրած և իրենց սեփական հանճարի ծնունդ մանվածո ժապավենազարդ հրապուրիչ տարազներով, որուն անդիմադրելի հրապույրեն ազդված դրացի ժամանակակից ժողովուրդներ, կամաց-կամաց ընդօրինակեցին անոնցմե շատ բան: Զարդարանքի զգալի բաժին ունեցան 12–13-րդ դարուն Արևմուտքի ամենաշքեղ ոճին մեջ:

Հին օրերեն մեզ հասած պատկառելի փլատակներու առջև կանգնող մը, լիովին հափշտակված անոնց դյութիչ երևույթեն, ակամա հարց կտա ինքնիրեն, – արդյոք ի՞նչ ոճ է:

Հարցում մը՝ որուն բավարար պատասխան գտնելու համար հին դարերու բարդիբարդ կուտակումներու մեջ պետք է խորասուզվել, պետք է պատռել երկրին ծոցին մեջ ժամանակի թանձրացուցած խավերը, այնտեղ պիտի գտնենք այսօր այլանդակված, բայց երբեմնի գեղեցիկ մարմնի զանազան անդամները ու անոնց ծագումն ու զարգացման շավիղը, ծնունդն ու մահը, վերջապես անոր կյանքի ամբողջ պատմությունը:

Պարբերաբար եղան գիտական խուզարկություններ մասնագետներու և բանասերներու կողմանե, միայն մի քանի օրերով, բայց այդ հապճեպ և թռուցիկ արշավանքներու արդյունքը այնքան մակերևութային եղան, որոնց հետևանքն է այսօրվան մեր ձեռքը ունեցած ուսումնասիրություններու զիրար հակասող եզրակացությունները:

Հաճախ կտեսնվի անոնց մեջ շփոթված եկեղեցական ոճը ճարտարապետական կամ գեղարվեստական ոճի հետ (քրիստոնեութենեն հետո ավելացավ տաճարներու հատակագծային ոճ մը, որուն ծնունդ տվավ դավանությունն ու ծեսը): Մեկը տեսեր է տաճար մը, որը որոշ չափով հատակագծի նմանություն կբերեր հունականի կամ բյուզանդականի, արձանագրել է զայն նույն ոճերու ենթարկված լիովին, առանց ուշադրության առնելու անոր կազմությունն ու տարազը, որ բոլորովին հակապատկեր մը կներկայացնե հատակագծին: Ուրիշ մը կտեսնե փլատակի մը մեջ արաբիկ կամ պարսիկ ոճի զարդարանքներու բեկորներ, այլևս չի վարանիր զայն հեթանոսական կամ այլադավան տաճար մը անվանելու, առանց քննելու անոր պարբերաբար կրած այլափոխումները:

Ուրեմն առանց բազմակողմանի ուսումնասիրության դեռևս չի կարելի ճանչնալ հայոց ճարտարապետության խմորումներու զանազան աստիճանները և վճիռ կայացնել անոր ոճերուն վրա:

Ե՞րբ կունենանք մենք այս հետաքրքրական և ցանկալի լուծումը, այն ատեն՝ երբ հայ ժողովուրդն ալ օտարներու նման խորապես կզգա անոր անհրաժեշտությունը պատմության և առաջադիմության համար, գիտական ժողովասրահներու մեջ խոսված ոգևորյալ ճառերեն հետո խոսքերը լուրջ գործի կփոխվեն, կկազմվի կարող մասնագետների հավաքական արշավանք մը, միևնույն ժամանակ ուժ կտրվին բահի ու բրչի գիտնական մշակներուն, մանրակրկիտ կուսումնասիրվին ամբողջ Կովկասն ու Արարատյան աշխարհը յուր ընդարձակ շրջանին մեջ ոչ մի բեկոր կամ փլատակ անկարևոր չհամարելով, այն ատեն մեր աչքին առջև պայծառ գույներով կպատկերանա ոչ միայն հայոց ճարտարապետական ոճը, այլ և մեր բնակած ամբողջ միջավայրի գիտությանց և արվեստներու ճշգրիտ պատմությունը՝ սկսյալ անհիշատակ ժամանակներե:

## Բ

# [ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋԸ]

## ա. ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

*Ժամանակե մը ի վեր գիտնականներ աչալուրջ զննություններով կզբաղին բյուզանդական ճարտարապետության ոճով: Ոճ մը սակայն, որ հակառակ իր սեփական անվան՝ ինքնուրույն և բնածին ծագում մը ունեցած չըլլալուն, հարկ եղած է գիտնականներու լույս բերել այն հարակից ճարտարապետական ազդակները՝ որոնցմով բյուզանդականը շինած է իր անունը գեղարվեստի պատմության մեջ:*

*Ինչպես սույն ճարտարապետությունը, նույնպես և իրեն պատմությունը 10 դարերե ավելի հնություն մը կրած ըլլալով, կարծվածին չափ դյուրին չէ եղած պարզել այն գաղտնիքները, որոնց մեջ թաղված են եղել ազգերու ժամանակագրական պատմությունները:*

*Շնորհիվ պեղումներու և հետազոտություններու, այս գաղտնիքները չարունակաբար պարզելու, նվիրած են հայ անունին այնպիսի թանկագին նկարագիր մը, որու էջերը պատվավոր տեղ մը գրաված են այսօր ազգերու գեղարվեստական պատմության մեջ:*

*Բյուզանդիոնի Այա-Սոֆիան հետազոտող գիտնականները՝ պահ մը կանգ առած են նաև Անիի ավերակ եկեղեցիներուն առջև, և այդ փուլ եկած ճարտարապետական կմախքներուն վրա իսկ հիացած ու բյուզանդական և հայկական ոճերու մեջ եղած նմանությանց վրա զարմացած՝ կարծիք հայտնած են թե մին մյուսին փոխանցումն է: Կմնար ուրեմն որոշել թե ո՞րն էր նախատիպը:*

*Գիտնականներ՝ ինչպես Լայարդ իր Ninive and Babylon (1853) գործին մեջ, հայկական ոճին ի նպաստ կխոսի. Տեքսիե ևս իր Description de l'Asie Mineure և Architecture Byzantine-ի վերջին գլուխներուն մեջ կարծիք կհայտնե, թե հայկական ճարտարապետական ոճը փոխանցվում է գոթական ոճին և այս վերջինիս նախատիպն է հանդիսանում:*

*Ուրիշ գիտնականներ՝ ինչպես Շուազի և Ստրչիգովսկի, կհաստատեն այս բոլորը: Փարիզի Սորբոնի համալսարանի մեջ բյուզանդական ճարտարապետության դասախոս պրն. Դիել (Diehl) գիտնականին խոսքերը, մարտ 6, 1907 թվին դարձյալ նույնը կհաստատեն.*

*«Աշխարհի արևելյան կողմը, Փոքր Ասիո այժմյան Թրքաց և ռուսաց և պարսից մեջ բաժանված հայկական երկիրները ժամանակին մի դրոշի, մի դարի և մի կրոնի տակ կկազմեին պետություն մը, որ զարգացած պետություններու պես իր օրենքներն ուներ»:*

*«Ի բնե ուշիմ, խելացի ու շինող ժողովուրդ մը եղած է հայ ազգը, չնայելով իր քաղաքական աննպաստ դիրքին, որ ամեն ատեն և ամեն անգամ հարձակումներ կրած է դրացի թշնամի և ոչ քրիստոնյա ազգերե, որոնք ավերած, քանդած և փլցուցած են իր կառուցվածները: Չնայելով իր այս անխաղաղ վիճակին, այս ազգը միշտ պահած է իր ինքնուրույնությունը, մինչև որ բաժանված է երեք մեծ պետություններու միջև»:*

*«Իր ավերակներու մեջ նշմարված կիսափուլ շենքերը, կամ իր հին ճարտարապետական և վերջերը նորոգված նմուշները, իրենց բյուզանդական ոճի նմանությամբ, արժանի կընեն մեր բյուզանդական ճարտարապետության դասերուն մեջ ուսումնասիրելու ինչպես նույն ազգը, այնպես և իրեն ճարտարապետական արվեստի ոճը»:*

*«Այդ շենքերը, տարածված Հայաստանի այս և այն կողմերը, որքան որ բյուզանդական ճարտարապետության ոճին կնմանին, սակայն իրենց առանձնահատուկ սեփական նիշերով բոլորովին կտարբերին անոնցինեն. և այսպես ճարտարապետական ոճերու շարքին վրա կավելացնեն նաև խիստ հետաքրքրական ոճ մը «Հայկական արվեստ» (L'Art armenien) անունով:*

*«Հայկական ոճի ընդհանուր հատկություններն են.*

*Ա. Եկեղեցիները ամբողջովին քարեղեն են:*

*Բ. Հատակագիծը խաչաձև (տարբեր բյուզանդական խաչեն):*

*Գ. Գմբեթը դրսեն բրգաձև է:*

*Դ. Կամարներու վրա հանգչած գմբեթ մը դրված է շենքին տանիքին վերև:*

*Ե. Պատերու վրա կանոնավոր եռանկյունաձև խորշեր շինված են:*

*Զ. Հայկական դեկորատիվ քանդակները շատ անգամ բնածին են և ինքնուրույն հեղինակություն, ոչ թե ընդօրինակություն»:*

*«Ահա ասոնք են ընդհանուր հատկանիշները Հայկական ճարտարապետության, որ մենք պիտի ուսումնասիրենք այժմ՝ տեղվույն վրա իսկ առնված մեր քննական լուսանկարներով:*

*«Նախ՝ Վանա ծովակին վրա կառուցված Աղթամարի եկեղեցին և Էջմիածնի վանքը, որ քանի մը անգամներ նորոգված ըլլալով հանդերձ, պահած են իրենց նախկին ոճը, սակայն այս եկեղեցիներուն հատակագիծը կամ խաչաձևը՝ ավելի նման է հունական խաչին: Իրենց գմբեթը հաստատված է չորս զորավոր կամարներու վրա, որոնք ավելի հաստատություն և գեղեցկություն կուտան շենքին»:*

*«Երկրորդ – Հռիփսիմյանց վանք կոչված եկեղեցին, Վաղարշապատի մեջ, որ հայկական ճարտարապետության գլուխ գործոցը կընա համարվիլ իր իսկական նշանակետերով, իր հատակագծի խաչը երկար է և նեղ և չորս թևերու ծայրերն ալ կլոր են: Շենքը պարզ և հաստատուն է պատերու դրսի կողմը գտնված մի-մի զույգ նեղ եռանկյունաձև խորշերով:*

*Երրորդ – Գանձասարի եկեղեցիները:*

*Չորրորդ – Հախպատի և Գառնո վանքերը:*

*«Հինգերորդ – Անիի Մայր եկեղեցին, որ այժմ թեև ավերակ, այլ իր կրած արձանագրության համեմատ 900 տարվան հնություն մը կկրե, հատակագիծը ս. Հռիփսիմեի վանքին հետ նույնն է, սակայն շենքը անկե ավելի ճոխ քանդակներով զարդարված և ավելի մեծ է: Դրսի տեսքը վեհ է, իսկ ներքինը՝ փառավոր, նեղ ու երկար սյուներով զարդարված: Շենքը գունավոր քարերով հյուսված է:*

*«Ուրեմն Հայկական եկեղեցիներու սույն ճարտարապետական ձևերն իրենց բնածին, հատկանշական և առանձնահատուկ նկարագիրներովն իսկ, շատ կնմանին բյուզանդական ճարտարապետության քան ուրիշ ազգերու ճարտարապետական ոճերուն: Թե արդյոք սույն նմանությունը պատահակա՞ն է թե փոխանցում. այս հարց մ՚ է, որը լուծելու համար գիտնականներ բավական զբաղված են:*

*«Ոմանք կարծած են թե հայկականը նախատիպ եղած է գոթական ոճին. այս հավանական է, զի հայ ազգի սույն ճարտարապետական նմուշները հաստատապես կհամոզեն մեզ, թե հայ ժողովուրդը ավելի շինող, ստեղծող է եղած և իր քանդակները, իր գմբեթներու այնքան բնականորեն մույթերու վրա հաստատվիլը, և ուրիշ իր սեփական հատկանիշները օրինակ և փաստեր են իր ուշիմության ինքնաստեղծության»:*

*Ինչ որ ըլլա սակայն հայկական ճարտարապետության ոճը, նախատիպ կամ փոխանցում, մեզ համար այն մեծ նշանակություն ունի, որ արժանի ըրած է հայ անունին քով կցել նաև գեղարվեստական գեղեցիկ ճաշակը և հատկությունը:*

*Մեր եկեղեցիները, մեր ավերակները մեզ համար նվիրական են և մեր ամբողջ անցյալին գեղեցիկ կոթողը, որու վրա դժբախտաբար եվրոպացին ավելի շատ բան կկարդա քան մենք հայերս: Ինչպես հայկական ճարտարապետությունը նույնպես և հայկական մյուս գեղարվեստի ճյուղերը եթե երբեք լուրջ ուսումնասիրության առնվին, այն ժամանակ թերևս հայ անունն ավելի փառավորվի իր անցյալով, որ այնքան պատերազմական և արյունահեղ դիրքերու մեջ իսկ ժամանակ է գտած խորհելու ըստ կարելվույն իր ներքին զարգացման համար ալ:*

*Հայկական ճարտարապետական հետաքրքիր ոճը թարգմանն է հայ ազգության, եվրոպացիներու համար: Չկա գեղարվեստի միջազգային հավաքածո մը, որու մեջ գտվված չըլլա հայ ճարտարապետությունը:*

## բ. [ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԱԾ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ][1]

*Նախաքրիստոնեական կիկլոպյան շինություններ, կրաշաղախով կամ առանց կրաշաղախի. շարունակվել են նույնիսկ քրիստոնեական թվականի սկզբնական մի քանի դարեր: Սակայն հավաքված այդ բոլոր նախաքրիստոնեական ճարտարապետական նմուշների մեջ, գոյություն չունեին փոքր ի շատե ակնապարար և գնահատելի ճարտարապետական հանճարի արդյունք շինություններ, բացի Ֆրանսացի գիտնական ուղևոր Պուլեյ լը Կուզի (Ալիշան, Այրարատ, էջ 202) 1647–ին Ղզնավուզ գյուղի սահմաններում տեսած և գծագրած նախաքրիստոնեական իշխանական դղյակից, որը թեև նախնական երևույթ ունի, սակայն նախաքրիստոնեական վերջին դարերու, ուրարտական թագավորներու տիրապետության ժամանակների ճարտարապետության առաջադիմությունը և ուրարտացիների ճաշակը կընորոշե.[2] մնացյալները գե-*

[1] *Այս հատվածը տպագրում ենք առաջին անգամ, փոքրիկ կրճատումներով և փոփոխություններով՝ հիմք ունենալով հեղինակի այս նյութի վրա ավելի ուշ գրած հոդվածները:*
*Կազմող*

[2] *Նկարը գետեղված է առաջին ժողովածուի մեջ (նկար 28):*
*Կազմող*

զարվեստական երևույթե զուրկ, բոլորովին նախնական բնույթ ունին. մանավանդ խոր հնություն ունեցող մնացորդները, որոնք միմիայն ամրոցներու և քաղաքատեղերու պարիսպներ ու պատեր են, որոնց ես անվաներ եմ «հայկական ժայռերով քարակույտ արգելափակեր» փոխանակ պատերի:

Բայց մի կողմից պատմական տեղեկությունները, մյուս կողմից հնագույն հուշարձանների մնացորդները ապացույցներ տալիս են, որ եթե մի գծով նախաքրիստոնեական ճարտարապետության ոճը և շինելակերպը մտել են Հայաստան և երկու կամ երեք դար առաջացել են քրիստոնեական թվականի սկզբին, մյուս կողմանե պատմական հուշարձանների մնացորդների ապացույցներով պարզվում է, որ քրիստոնեական թվականի մեջ մի քանի անգամ վերածնված ճարտարապետական մեծ և զարգացած արվեստի սկիզբը հասնում է նախաքրիստոնեական վերջին դարերուն, այնպես որ քրիստոնեության շրջանի մեջ մի քանի անգամ վերածնվող և բարձր կատարելության հասնող ճարտարապետական արվեստի առաջին վերածնությունը ամենայն հավանականությամբ նախաքրիստոնեական դարերուն տեղի են ունեցել և բավականին զարգացած վիճակում մտել են քրիստոնեական թվականները: Այս կարծիքին ույժ են տալիս անվրեպ նախաքրիստոնեական շրջանի քանդակագործությունները, ինչպես Ադիամանում, Դարբանդում, նույնպես ուրիշ տեղեր, որոնց մասին կխոսեմ հետո: Որովհետև արվեստի զարգացման բնական օրենքով ևս դատելով 4-րդ և 5-րդ դարերուն մեջ ըստ ամենայնի կատարելության հասնող ճարտարապետական և շինարարական արվեստների բավականաչափ մշակված դրությունը ապացուցում է, որ նույն արվեստների սկիզբը մի քանի դար առաջ պետք է լինի, որ աստիճանաբար մշակվելուց և զարգանալուց հետո հասեր է 4-րդ և 5-րդ դարերը այնքան կատարելությամբ, ինչպես որ ապացուցում են այն դարերեն մեր օրերուն հասնող շենքերի մնացորդները:

Այժմ մի քանի խոսքով բնորոշենք նախաքրիստոնեական Հայաստանի քաղաքակրթության դրությունը, որուն մասին տեղեկություններ կան պատմագրությանց մեջ, թե՛ քաղաքակրթության զարգացման և թե՛ ճարտարապետական շինությունների կատարելության մասին: Այնուհետև կներկայացնենք այն շենքերը, ամբողջական կամ կիսավեր, որոնց ծագումը նախաքրիստոնեական լինելու մեծ հավանականություն կա, թեև հետագային, ըստ ժամանակի պահանջմանց զանազան փոփոխությունների և նորոգությունների են ենթարկված:



Նկ. 4. Վանա բերդի ընդհանուր տեսարան

Նկ. 5. Վանա բերդի ուրարտական աստիճանները և վիմափոր շենքի մուտքը

Դեռ Հայաստանի նախաբնակ ուրարտացիների ժամանակ հիմնվում է Վանը, Սարտուր Ա-ի ձեռքով (835–820 Ք. ա.): Քիչ հետո ոչ միայն բարեզարդության, այլև մի շարք կուլտուրական հաստատություններ շինվում են Մենուա Ա-ի ձեռքով (800–780), որոնց կարևորները և զարմանալիները մինչև այսօր գոյություն ունեն: Մովսես Խորենացին, Վանի մեջ շինված սկզբի և հետագա ուրարտական մեծագործությունները վերագրում է ինչ որ առասպելական թագուհի Շամիրամի. իր գրքի Ա. մասի ԺԶ գլխի մեջ մանրամասն պատմում է Վանի բերդի, պարիսպների, քարայրերի, չքեղ քաղաքամասերի և գլխավորապես, հռչակավոր ջրանցքի և այլ և այլ շինությունների մասին, որ այսօր իսկ գիտնական ճանապարհորդներ վկայում են, որ մեծ մասամբ տակավին մնում են ուրարտական այդ մեծ և զարմանքի արժանի շինությունները և հաստատում են, որ ուրարտացիների ժամանակ Հայաստանում գոյություն ունեցել են, թե՛ քաղաքակրթված ժողովուրդ: Մանավանդ քաղաքի շինության նկարագրությունը, որ ուղղակի կապվում է այնտեղ բնակվող ժողովրդի հետ, ապացույց է ըստ ամենայնի երկրի առատության, բնակիչների բարեկեցության ու հանգստության: Գույնզգույն քարերով շինված երկու կամ երեք հարկանի շենքեր, բնակիչների հարստության և ճաշակի զարգացման ապացույց են, իսկ շենքերի ճակատները դեպի արևելք շինելը. հոգուտ առողջապահական գիտակցության կը վկայե:

Նախաքրիստոնեական վերջին դարերում, քննադատության բովեն անցած, Հայաստանի վրա թագավորող մի քանի մեծ աշխարհակալ թագավորների պատմության մեջ արձանագրված ուշադրության արժանի գործերը, որոնց մասին մեզ լրացուցիչ և ստույգ տեղեկություններ են տալիս օտար պատմագիրներ, պարտավորեցնում են հավատալ Հայաստանում գոյություն ունեցող լուրջ քաղաքակրթության, մեր թվականից դեռ երկուերեք հարյուր տարիներ առաջ: Երբ ի նկատի ունենանք այն ժամանակվան հունա-հռոմեական բարձրագույն քաղաքակրթությունը և մեր երկրին տիրապետողների ջանքն ու ձգտումը, այդ բարձրագույն քաղաքակրթությունը Հայաստան տեղափոխելու համար, պիտի տեսնենք, որ որոշ չափով իրենց նպատակին հասել են հունա-հռոմեական քաղաքակրթությունը Հայաստանում տարածելու համար:

Նախաքրիստոնեական վերջին շրջանում Հայաստանի մեջ եղել են երկու մեծ թագավորներ,

որոնք ընդհանրապես տիրապետող պարսկական ազդեցության դեմ կռվելով հունական քաղաքակրթությունը տարածելու նպատակի հաջողության համար, նաև աշխատել են Հայաստանի մեջ մտցնել հունական դիցապաշտությունը, որուն ակամա համակերպվում էր ժողովրդյան մեծագույն մասը: Լիովին հաջողեր են թե ոչ, այդ մասին վճռական բան չի կարելի ըսել, որովհետև պարսկական քաղաքակրթության ազդեցությունների ընտելացած ժողովուրդը դարեր հարկավոր էին փոխելու և հունական քաղաքակրթության ընտելացնելու համար: Սահմանակից երկու մեծ պետությունների մեջ, Հայաստանի վրա ազդեցություն գործելու մրցումը երկար պիտի տևեր, առանց սակայն լիակատար հաջողության: Մանավանդ որ Հայաստանի ժողովուրդը արտաքին ազդեցություններ ընդունելով և յուրացնելով հանդերձ, քաղաքակրթական տեսակետով բոլորովին ինքնուրույն բնույթ ուներ:

*Նկ. 6. Տիգրանակերտի պարիսպների մնացորդներն ըստ Լեման Հաուպտի*

Գալով մասնավորապես ճարտարապետության ազդեցությանց տեսակետով, որ մեր իսկական նպատակն է հետազոտել, բնավ չեն համակրած Հունա-Հռովմեական ոճին և մինչև վերջին անկում միևնույն արևելյան ինքնուրույն ոճով շարունակել են իրենց ճարտարապետությունը և շինարարությունը:

Նախաքրիստոնեական թագավորներեն մեկը, Արտաշես Ա. (Ք. ա. 160 թ. ?) Վանի լճի ափին շինեց Արտամետ քաղաքը, յուր կնոջ Սաթենիկի զվարճության համար (Թովմա Արծրունի) և զարդարեց գեղեցիկ շինություններով, պարտեզներով, ճեմելիքներով, ծաղկաստաններով և այլ գեղեցիկ հարմարություններով: Իսկ մյուս թագավորը, Մեծն Տիգրան, շինեց Տիգրանակերտ քաղաքը: Այս քաղաքին համար ևս օտար պատմագիրների կողմից վկայություններ կան, որ շատ շքեղ էր և շինարարական օրենքներով ըստ ամենայնի կատարյալ: Շրջակա քաղաքակիրթ ազգերից խիտ բնակչություն ուներ իր մեջ, բացի հայ ժողովրդից, որ համեմատաբար պատկառելի թիվ կկազմեր: Այս քաղաքը Տիգրան Մեծի կենդանության ժամանակ պատկառելի համբավ ստացել էր իր գեղեցկության համար:

Բայց այս երկու քաղաքների շինության ոճի մասին ոչ մի խոսք չկա: Կարող է նորաշեն քաղաքները շատ շքեղ և ակնհաճո լինեին, բայց մեզ պետք եղածը ոճերի ազդեցության խնդիրն է, որ անհայտ է: Սակայն այստեղ դարձյալ իմ կարծիքս պիտի կրկնեմ, որ նկատի ունենալով ժողովրդի ճաշակը, պետք էր որ ժողովրդին շինածը լիներ ընդհանրապես արևելյան. այնտեղ պետք է որ գտնվեին ասորա-քաղդեական, պարսկական ոճեր և շինելակերպերը (ինչպես որ տևեր է մինչև 15-րդ դար, շատ քիչ արևմտյան խառնուրդներով): Սակայն Հունա-Հռովմեական ոճը, ամենայն հավանականությամբ, պետական շենքերու հատուկ պետք է որ լիներ, ի նկատի ունենալով տիրապետողների ճաշակը և արևմտյան քաղաքակրթությունը Հայաստանի մեջ ընդհանրացնելու ձգտումը: Վերջապես պետք էր որ արևելյան և արևմտյան ոճերու խառնուրդ լինեին, իհարկե մեծագույն տեղը արևելյան ինքնուրույն ոճին տրված:

Երկարատև հետազոտությունների մեջ նկատել եմ, որ մինչև 15-րդ դար, հազիվ մի քանի շենքերի մեջ, արևմտյան ճարտարապետության գծեր պատվաստված են Հայաստանի հին ճարտարապետության մեջ: Վերջապես Հունա-Հռովմեական և բյուզանդական ճարտարապետությունները շատ թեթև ազդեցություն են ունեցել Հայաստանի ճարտարապետության վրա, իրենց պետական գոյության տևողության մեջ. Հայաստանի ժողովուրդը և մասնավորապես ճարտարապետները սիրել են արևելյան լուրջ և առնական ոճը քան Հունա-Հռովմեական նրբին և շքեղ ոճը:

Գառնիի մեջ Հունա-Հռովմեական ոճով կառուցված Տրդատա թախտի գոյությունը բնավ ընդհանուր ազդեցություն չպիտի համարել Հայաստանի ճարտարապետության վրա, վասնզի այդ շենքը միակն է, որ մեզ հասած է, և տեսնում ենք, որ բովանդակ Հայաստանի մեջ այլևս չկան նույն Հռովմեական ոճով շինված շենքեր, եթե լինեին իսկ, այնքան սակավաթիվ եղած են, որ անմիջապես անհետացել են: Գուցե օրինակներ գտնվին, եթե հին Արտաշատը պեղվի և խուզարկվի:

Շատ զարմանալի կերպով Տրդատա թախտեն հետո, մինչև 5-րդ դար շինված են մի քանի շենքեր, նույնիսկ Գառնիի մեջ գոյություններին պահել են մինչև այսօր, որոնք հազիվ նշմարելի մի քանի Հունա-Հռովմեական գծեր ունին իրենց մեջ, ինչպես Տեկոր, Շիրվանճուք, Դիրակլար, Էջմիածին և այլն և այլն, որոնց մասին իր տեղում կհայտնեմ մանրամասն: Այժմ միայն ընդհանուր հատկություններին ընորոշելու համար պիտի մատնանշեմ, որ այս բոլոր հիշածս շինությունները, որ հասել են մեր օրերուն և հաստատուն տվյալներ ունեն նախքան 5-րդ դար, կամ 5-րդ դարուն կանգնված լինելուն, բնականաբար մտածել կուտան քննող ճարտարապետին կամ հետաքրքրվող ուսումնասերին, թե դեռ 5-րդ դարուն այնքան ճարտարապետական ճաշակ և շինարարական կատարելություն ունեցող շինվածքներ ե՞րբ այսքան մշակվեցին և կատարելության հասան, ո՞ւր և քանի՞ դար առաջ կարող էր տեղի ունենալ անոր ծրագրումը կամ սկիզբը:

Արդ, ի նկատի ունենալով, որ ճարտարապետություն և շինարարություն միշտ համրաբար առաջ են ընթանում, և դարերի ընթացքում աստիճանաբար են կատարելագործվում, հետևաբար անոր սկիզբը կամ վերածնության ծրագրումը տեսնելու համար, պետք է ետ գնալ դեպի նախաքրիստոնեական դարերը: Մանավանդ, երբ պատմական տեղեկություններ մեզ կավանդին ոչ միայն քաղաքների շինության, այլև անոնց գեղարվեստական բարեզարդության 2-րդ և 3-րդ դարերուն, բնականաբար քրիստոնեական շրջանի կատարելագործված արվեստի սկիզբը պետք է տեսնել մեր թվականեն առաջ քան 3-րդ դար:

Գուցե գտնվին մարդիկ, և իսկապես այնպիսիները կան, որոնք Հայաստանում զարգացող ճարտարապետության մասին հոռետես են և արհամարհանքով են վերաբերվում, սակայն պետք է ըսել, որ այդօրինակ մարդոց բնավ ծանոթ չեն, սկսած քրիստոնեական թվականից մինչև 15-րդ դար Հայաստանում անթիվ հուշարձանների գոյությունը, որոնք մինչև մեր օրերուն հասած են: Բացի անոնց անծանոթ լինելուց, եթե այդպիսիներին ներկայացնենք Հայաստանի մեջ իրագործված խոշոր գեղարվեստական մնացորդներ, երբեք չեն ուզում հավատալ Հայաստանի բնիկ ժողովրդին ի հնումն ունեցած տաղանդին և շնորհքներին, անպատճառ օտարի մատն են ուզում տեսնել այդ գեղակերտ աշխատանքի մեջ:

Ես իհարկե, աշխատությանս մեջ այդպիսի հոռետեսների գոյությունը ի նկատի չունեմ՝ ի տես բովանդակ Հայաստանում համատարած գեղակերտ հուշարձանների. բնականաբար պիտի համոզված լինիմ, որ տեղական ժողովրդի ճնշող մեծամասնությունը հայեր էին, նաև հայեր էին շինարար արհեստավորներ (ինչպես մեր ժամանակին ևս), որոնք ոչ միայն իրենց երկրին մեջ իրագործել են այդ գեղարվեստական հիշատակարանները, այլև գաղթականությամբ տարել են հեռու և մոտ օտար երկրներ: Այս մասին ոչ միայն հայ, այլև օտար արվեստագետների վկայություններ են, որոնց մասին պիտի խոսենք առաջիկային ի պահանջել հարկին:

*
* *

Ոմանց կարծիքով[1] հայ-ճարտարապետության ոճը պետք է որ լինի զուտ հունական և կամ բյուզանդական և այս կարծիքին իբրև փաստ կներկայացնեն հայ լեզվի և գրականության հունական և բյուզանդական զորեղ ազդեցության ենթարկված լինելը:

Ինձ հայտնի չէ թե որչափ մեծ ճշմարտություն է այս կարծիքը հայ լեզվի ու գրականության համար, սակայն հայ ճարտարապետության համար միանգամայն անընդունելի տրամաբանություն է, կապելով լեզվի ու գրականության հետ ինքնուրույնութենեն զուրկ համարելը:

Հայ ճարտարապետությունը գրեթե ամենևին չէ ուսումնասիրված, ճշմարիտ է, որ հիսունե ավելի եվրոպացի գիտնական ճանապարհորդներ շրջած են Հայաստանը, որոնցմե շատերն իրենց հիացման տպավորությունները բանաստեղծական ներբողներով են արտահայտած, սակայն շատ քչերն են, որ քանի մը տող քննադատորեն գրած են հայոց ոճերու մասին: Եվրոպացի գիտնականը պարտական ալ չէր զուտ հայ գեղարվեստի նվիրելու իր ժամանակը, քանի որ նա ուներ յուր առանձին գործն ու նպատակը յուր ուղևորության ժամանակ: Այդ մեր գործը պիտի լիներ, իբրև ուսումնասիրության համար պատրաստ նյութ գիտնոց սեղանին վրա դնել այն անհուն ու անսպառ նյութերը, որոնք ցրված են Հայաստանի ամեն կողմը:

Կարծողներ կան, որ շատ բան եղած է արդեն թե օտարներու և թե հայ բանասերների կողմանե, հավաքված են նկարներ, գրված են նկարագրություններ, բայց ցավ ի սիրտ ես պիտի ըսեմ, որ այդ ամենը ոչ մի արժեք չունին, քանի որ հատկապես ծրագրված գիտական ուղղությամբ չեն կատարված և ոչ մի գիտնական անոնցմե չէ կարող նպատակահարմար արդյունք արտագրել գլխավորաբար այն պարզ պատճառով, որ եղած նկարները և նկարագրությունները մեծ մասամբ անհարազատ և սխալ են: Մեծահարգ գիտնական պր. Ն. Մառ

1 Այս հատվածը քաղել ենք «Գեղունիի» 1909 թվական թ. 6-ի մեջ տպագրված «Կաթիլ մը հայ գեղարվեստի ծովեն» հոդվածից:

Անիի պեղումներու ժամանակ հուսահատ չեշտով մը հաճախ կկրկներ թե «Անիի մասին առաջ բավական բան գիտենինք, այժմ ոչինչ չգիտենք», վասն զի օր ըստ օրե կտեսներ, որ գրվածներու նման ոչինչ չկար, նորագույն հետազոտություններ և պեղումներ բոլորովին տարբեր և նոր բաներ երևան կբերեին:

Բնական էր, որ մենք չէինք կարող Հայաստանի մեջ ունենալ եգիպտական բուրգեր, հունական ակրոբոլներ, բյուզանդական ս. սոփիաներ, սակայն ինչ որ կարելի էր սպասել դարուց ի դարս արյան ճապաղիքներու մեջ լողացող և իր աշխարհագրական աննպաստ դիրքի պատճառով ոտնատակ կոխկրտվելու դատապարտվող նահատակ ափ մը ժողովուրդե, անկից բազմապատիկ ավելի ունինք:

Գեղարվեստի բացարձակ թշնամի մրրիկ մը քրիստոնեական նախնական դարերուն, ինչպես Արևմուտքի մեջ, նույնպես Արևելքի մեջ, եթե ամեն բան քարուքանդ չըներ, այսօր Հայաստանը պիտի ունենար ոչ միայն Գ և Դ դարերեն սկսյալ գեղարվեստական հիշատակարաններ, այլ և նախաքրիստոնեական շրջանի ևս հայկական բարձրագույն քաղաքակրթության ապացույցներ:

Բայց ինչ որ ալ լինի այդ ավերման հետևանքը, անվիճելի ճշմարտություն է, որ առաջին դարուն (Ք. ա.) Հռոմի մեջ, հռոմեական արվեստի գերեզմանին վրա, իբրև վերջին կոթող Պանթեոնը կանգնվելեն հետո, երբ անընդհատ Դ - Ե դար գեղարվեստական կյանքը բոլորովին մեռած էր, երբ դեռ Բյուզանդիոնի աշխարհահռչակ Սոփիան իր երկնակամար ոսկեզօծ գմբեթը դեպի երկինք չէր բարձրացուցած Զ դարուն մեջ, Հայաստանի գեղարվեստի կանթեղը մշտավառ կպպպար, և սահմանված էր օր մը Արևմուտքի մարած ջահերուն ալ լույս մատակարարելու:

Գառնիի մեջ Ա դարու սկզբին շինված Տրդատա թախտ անվանված աննման կոթողը, եթե Հռոմի ծաղկյալ դարերուն Հռոմի մեջ կանգնեին՝ անկեց ավելի վայելչություն և չքեղություն չէին կարող տալ: Ե դարուն մեջ կանգնված հայկական եկեղեցիներ՝ որոնց գլխավորներն են Տեկորի և Երերույքի տաճարները, իրենց վրա պայծառ կցոլացնեն հայ ճարտարապետության դարավոր մշակման և զարգացման դրոշմը: Եթե մի Տեքսիե չգտնվեր ԺԹ դարու սկզբին՝ Տեկորի տաճարը հետազոտող, գուցե հավիտյան պիտի սրբագործվեր պայտաձև կամարներու արաբական ստեղծագործություն լինելուն ընդհանուր համոզումը, վասն զի Տեկորի տաճարը արդեն՝ օրհասական վիճակի մեջ է, և ահա վաղը, ոչ միայն Ե դարու պայտաձև կամարներ՝ այլ ևս հայ ինքնուրույն ճաշակի ապացույց հիանալի խոյակներ, խարիսխներ և ուրիշ զարդաքանդակներ ընդմիշտ պիտի թաղե յուր փլատակներուն տակ:

Եթե Արտաշատ, Վաղարշապատ, Արմավիր, Դվին և ուրիշ մեծամեծ մայրաքաղաքներ անհետ կորան, բարեբախտաբար, հայ գեղարվեստը փառաբանող Անին դեռ կենդանի է յուր պատկառելի հիշատակարաններով ու ճոխաքանդակ բեկորներով:

Անին շտեմարան է հին դարերու հայկական գեղարվեստի ոճերուն և բանալին իրմե առաջ կորած գիտությանց և պատմությանց առեղծվածները լուծելու: Անեցիք չեն արհամարհած իրենց պապենական արվեստները, այլ հետզհետե նույնը զարգացուցեր և ճոխացուցեր են առանց նախնականին տիպն ու հատկությունները կորսնցնելու: Եթե երբեմն ժամանակի ոգին կպահանջեր օգտվիլ զիրենք շրջապատող մեծ ազգերեն, չեն վարանած փոխ առնել ոճեր, սակայն այդ ոճերը չեն՝ պատվաստված հայ արվեստի բունին վրա առանց զանոնք նախապես հայացնելու:

Հայ ճարտարապետությունը մեզ ծանոթ նախնական շրջանեն մինչև վերջին անկումը (ԺԴ կամ ԺԵ դար) չորս զանազան վերածնություններ ունեցեր է միշտ մեկզմեկե ավելի տպավորիչ և չքեղ ձևերու տակ: Յուրաքանչյուր վերածնության մեջ խիստ աննշան գծերով կմատնվին օտար ազդեցությանց հետքերը:

Վերջին վերածնության մեջ ԺԲ – ԺԴ դարերուն, նթե ոչ բոլորովին արաբականություն՝ գոնե արաբական զորեղ ազդեցություն տեսնել կուզեն ոմանք: Սակայն իմ կողմանե դժվար է համաձայնել այդ կարծիքին, Ը դարեն ի վեր Հայաստանը ողողող արաբ ժողովուրդը ի՞նչու պիտի սպասեր մինչ ԺԲ – ԺԴ դարերը իր արվեստով Հայաստանի վրա ներգործելու համար:

Նոր գիտությունը մերժեց արաբներու ստեղծական տաղանդը[1]: Արաբներ չէին, որ արվեստ ստեղծեցին իրենց գրված երկիրներուն մեջ, այլ իրենց գրված յուրաքանչյուր երկիրներուն բնիկ ժողովուրդները ստեղծեցին տիրող տարրին համար[2], և այդ պատճառով ալ Սպանիա, Թունիս, Ալժիր, Սյուրիա, Պարսկաստան և Հայաստան, յուրաքանչյուրը ըստ տեղական պայմաններու և սեփական ճաշակի, իրարմե մեծապես զանազանող արաբական ոճեր ստեղծեցին:

[1] A.Choisy.– Histoire de l'architecture. second, p. 90 (Paris).
[2] Daniel Ramée – Histoire générale de l'architecture, tome deuxième, Paris, MDCCC LXII, p. 1143.



Հայաստանի մեջ ԺԲ–ԺԴ դարերու ծաղկող արաբական ոճը եթե բաղդատենք հայոց հնագույն ոճերու հետ, շատ կգտնենք նոր արաբականի կորիզներ՝ որոնք հայ գերիներու հետ թափառելով երկրե երկիր արաբական տիրապետության սահմաններուն մեջ և հետզհետե զարգանալով հետադարձ ներգործություն միայն ունեցեր են:

Գոնիայի մեջ ախլաթցի մի դավանափոխ հայ ԺԱ դարուն կշիներ Ալայեդդինի մզկիթին ամպիոնը, որուն վրա Հայաստանեն տարված գեղեցիկ մանվածներով[1] զարդարելեն հետո՝ վրան ալ կդներ հայկական ուղանկյունի թմբուկավոր կաթողիկե. նույնպիսի կաթողիկեի ձևով շինված է նաև մզկիթին գմբեթը:

Երբ հայ արվեստագետին ճակատագիրը տնօրինողը և անոր հայրենիքը որոշողը՝ բռնակալ տիրապետողին քմահաճույքն էր, այլևս ինչո՞ւ զարմանալ, որ Ե դարու Տեկորի պայտաձև կամարները Ժ դարուն Սպանիայի մեջ կերևնան:

Հայկական պատմական շրջանի յուրաքանչյուր դար գեղարվեստական պատկառելի մեծագործություններ արտադրեր է, որոնցմե շատերը կանգուն կամ կիսականգուն մեզ հասած՝ պերճախոս վկաներ են հայ ժողովուրդի գեղարվեստական բեղմնավոր տաղանդին, որոնց մեկ քանի նմուշը ներկայացնել հաճույք է ինձ համար:

Բագրատունիներու օրով Շիրակի մեջ, հազիվ մեկ ու կես միլիոնի հասնող մի փոքրիկ ժողովուրդ, բավական չէր որ արևելյան արտակարգ ճոխությամբ արքայական պալատներ պիտի կանգներ, թագավորներու թագերը թանկագին գոհարներով ու մագարիտներով պիտի զարդարեր, թագուհիներու համար ոսկեթել բեհեզներ ու ծիրանիներ պիտի պատրաստեր, բազմաթիվ թագավորազուններու և իշխանազուններու վայելքի ու զվարճության համար առատ հարկեր ու նվերներ պիտի վճարեր, այս ամենեն զատ, այդ փոքրիկ ժողովրդի քրտինքի կաթիլներեն գոյացել են այն բազմամիլիոն գումարները, որոնցմով կանգնվել են բացի Անիի ահավոր պարիսպներեն, ուրիշ բազմաթիվ բերդեր, հազարավոր հոյակապ մեծ ու փոքր տաճարներ, կամուրջներ, քարափոր հասարակաց ճանապարհներ, գեղարվեստական վերին աստիճան նուրբ ու չնորհալի տեսքով և, ո՞րչափ ժամանակի մեջ, առասպելական է, եթե ըսեմ՝ հարյուր քսան տարվան փոքր ժամանակամիջոցի մը մեջ: Հիրավի Անիի շինությունը թեև տևեց Ժ դարեն մինչև ԺԴ դարը, բայց երբ դուրս հանենք պարսկական բռնակալության շրջանը, երբ գեղարվեստական զարգացման ոչ մի շարժում չլինելեն զատ նույնիսկ անեցու ամենեն սիրելի թագուհիի կաթողիկեին գագաթը մահմետական մահիկին փայլիլը անմխիթար սուգի էր մատնած ժողովուրդը, այլևս հազիվ մեկ ու կես դար կմնա իբրև շինարարական շրջան:

Ով որ տեսած է Բյուզանդիոնի պարիսպները և բաղդատած Անիի պարիսպներուն հետ, նա կտեսնե թե դժբախտ Անիի գեղապարույր բուրգերը ո՞րչափ թանձր ստվեր կձգեն Բյուզանդիոնի պարիսպներու կոշտ ահավորության վրա:

Գագիկ Ա, երբ է դարուն մեջ կանգնված հռչակավոր Զվարթնոց եկեղեցիի տխուր հիշատակը կվերականգներ Անիի մեջ յուր մեծագործ ս. Գրիգորով, անոր բարեպաշտ թագուհին Սմբատի հիմնարկած կաթողիկեն չքեղապես կամբողջացներ: Եթե կաթողիկեի ներքին ծիրանեծաղիկ և ոսկեթել զարդարանքներու մասին Ասողիկի վկայությունը հաստատող փաստերեն մերկացած է տաճարը, անոր արտաքին պատերուն վրա գտնված քանդակազարդերեն մեկը, արևելյան խորշերու մեկ հատի կամարը թող պատմե թագուհիին ճաշակը:

*
* *

Բազիլիքներն[2] իբրև աշխարհիկ շենք, նախնի հունաց մեջ ևս իրագործված էին, բացի այն որ մեհենական ձևերեն շատերը միանգամայն նման են բազիլիքների՝ բացառությամբ աբսիդի, այլև հնագիտական ուսումնասիրությունները հայտնագործել են, որ ընտանեկան բնակարանների մեջ մեծամեծ սրահներ շինված էին նույն ձևով, երբ փայտով ծածկելու հնարավորություն կար, որովհետև երբ հին հունաց մեջ դեռ անծանոթ էին կամար կապելու գործնական միջոցները, սրահներուն որոշ լայնություն տալու համար, հանդիպակաց պատերեն պահանջված չափով հեռու սյուներ կտնկեին, այնչափ, որչափ որ միջին թևը ծածկելու համար գերաններու երկարությունները կբավականացնեին, միջին լայն թևին գերանների երկարության չափով սյուները շարելե հետո, կողմնակի թևերը ծածկելու գործողությունը արդեն ինքնին հեշտանում էր: Ներկա կյանքի մեջ իսկ, մեծ քաղաքներում պակաս չեն բազիլիք ձևի հասարակական շինություններ, որոնք իբրև հանդիսատեղի, ժողովատեղի, կամ իբրև խաղասրահներ և պարասրահներ ծառայում

[1] Manuel d'art musulman, Qaston-Migeon III, Paris, p. 120, fig. 101.

[2] Այս հատվածը տպագրում ենք հեղինակի սեագիր ձեռագրից, որի սկիզբը և վերջավորությունը հանել ենք՝ կրկնություններից խույս տալու համար:

Կազմող

են և նրանց ծայրին հաճախ գտնվում են հատկապես շինված բեմեր դասախոսությունների կամ ներկայացումների համար, և որ ավելին է, մեր բանասերներից մեկը հայ գյուղացու սյունաշար երկար գոմերը համարում էր բազիլիքների նախատիպ Հայաստանի համար: Թեև բավական միամիտ է այս բաղդատությունը, սակայն ճշմարտություն է, որ չափազանց նման են բազիլիքի հայկական գյուղերի մեծ գոմերը, որոնց կողմնակի թևերին մեջ կապվում են անասունները, իսկ միջին թևերը ազատ են անցուդարձի համար, եթե աբիդի փոխարեն ընդունենք մեկ ծայրին վրա գյուղական ձմերային գոմի օդան, այն ժամանակ նմանությունը կատարյալ կլինի:

Մասնավորապես հայոց եկեղեցիները, որ ի սկզբան հունական մեհյանների կամ բազիլիքների ձևով սկսեցին, այնուամենայնիվ միևնույն ձևերի մեջ չհարատևեցին, կարծեք հետզհետե հաճելի չերևցավ հայերին նույն արևմտյան ձևերը, ուստի դեռ 5-րդ դարուց սկսեցին փոխել, և հանելով բազիլիքների հատակնիշներեն՝ տվին բոլորակ, քառակուսի ու այլ ձևեր և շքեղության համար նաև գմբեթավորեցին հայկական ոճի հատուկ գմբեթներով:

Գմբեթը զուտ արևելյան ոճ է, ծագումը կհասնի մինչև քաղդեական շրջանը, թեև դեռ անկատար վիճակի մեջ, այնուամենայնիվ գոյություն ունեցան հին Քաղդեայում շինված փոքր ծավալով դամբարանների վրա և ասորաբաբելական շրջանում մի քիչ ավելի կատարելագործությամբ՝ Խորսապատի պալատի նախասրահի վրա: Հին պարսկական պետության մեջ գմբեթաշինությունը այնքան կատարելագործության հասած էր, որ հսկայական մեծությամբ և բարձրությամբ գմբեթներ շինվեցան պարսկական պալատների վրա, այդ շրջանում ոչ միայն արքայական պալատների վրա, այլ և անհատական մեծ շենքերի մեջ իսկ սովորական էր դարձած ցածր կամ միջակ գմբեթ շինել փոքր ի շատե ընդարձակ սրահների վրա: Պարսկաստանի հսկայական գմբեթների ուղղակի ազդեցությունն էր, որ անցավ դեպի Արևմուտք և Հռոմի մեջ Ն. Ք. – մ. թ. Ա դարուն շինվեց Պանթեոնը՝ հսկա գմբեթով՝ հանուն բոլոր աստվածների: Այժմ նույն շենքի նմանությամբ շինված գոյություն ունի մի այլ Պանթեոն՝ Փարիզի մեջ, որ ծառայում է իբրև տապանատուն հասարակական մեծամեծ ծառայություններ կատարող հանգուցյալների գերեզմանների համար:



Նկ. 7. Գոմի օդա գյուղական տան մեջ



Պարսկաստանին անմիջապես հարևան Հայաստանը ետ չմնաց ճարտարապետական այդ շքեղ մեծագործությենեն: Հայկական ոճի հատուկ գմբեթի ձևը ինչպես հայտնի է բոլորակ թմբուկի վրա կոնաձև ծածկն է, ըստ ժողովրդական ավանդության, այս ձևը իբր խորհրդանշան վերցրին հայերն Արարատ լեռան կոնաձևից, որ հեթանոսության ժամանակ խորհրդավոր պաշտելի սարն էր Հայաստանի, ինչպես աստվածաբնակ Ոլիմպիոսը Հունաստանի համար, թեև քրիստոնեությունը ջնջեց ըստ երևույթին Արարատի պաշտամունքը, այնուամենայնիվ Հայաստանի կենդրոնին վրա գտնվող և հին ավանդություններով հարուստ այդ սարն իր հմայքը չկորցրեց ժողովրդի աչքին, եղան ժամանակներ որ Հայաստանի թագավորներ իրենց դրոշակների վրա իբր հայկական սիմբոլ Արարատի պատկերը դրին Նոյան տապանով:

Այստեղ հարկ է գիտենալ մի կարևոր հանգամանք. հին հուշարձանների քանակությամբ պարզված է, որ Հայաստանում գմբեթաշինությունը երկու ուղղությամբ զարգացավ, մեկը այն է, որ մինչև մեր օրերը գոյություն ունի եկեղեցիների վրա՝ թմբուկավոր և կոնաձև ծածկով, իսկ մյուսը՝ թեև արտաքուստ միանգամայն անփառունակ, սակայն ի ներքուստ խիստ շքեղ կազմվածք ունին շենքի իրագործման ժամանակի ճաշակին համաձայն քանդակագործություններով: Այս երկրորդ ուղղությունը իրագործված է դարձյալ քարով եկեղեցիների նախագավիթների, տոհմային դամբարանների և այլ հարակից շենքերի վրա, որոնք անկախ են եկեղեցիներից: Սակայն երևում է, որ քարյա այս ոճով շինված գմբեթներն առաջ են եկել առհասարակ փայտաշեն տների մեջ գերաններով իրագործված գմբեթներից, որոնց գրական լեզվով սողոմաքաշ են անվանում, իսկ հասարակ ռամկական բարբառով ղառնավոճ: Գմբեթների այս գեղեցիկ ձևը հայոց մեջ պահված է եղել մեր ժամանակի քաղաքների և գյուղերի մեջ շինված փայտաշեն տների մեջ և կամաց կամաց անհայտանալու վրա է, տեղի տալով նորաձևությունների, այսինքն հարթ հորիզոնական առաստաղների: Այս սողոմաքաշ գմբեթների մեջ երբեմն այնքան գեղեցիկ և խնամքով շինվածներ կան, որոնք անհնար է որ քննող հետաքրքիր ճարտարապետի ուշադրությունը չգրավեն (տնտեսական և դիմացկունության տեսակետով): 1913 թվականին հայտնի գիտնական Ստրչիգովսկի առանձին խնամքով լուսանկարել տվավ այս սողոմաքաշ գմբեթներից մեկը Մարմաշենի մոտ Ղանլիճա գյուղի մեջ: Դեռ 19-րդ դարում, արևմտյան և հարավային Հայաստանում, որ ես առիթ եմ ունեցել շրջելու, այնքան սովորական եղած էր մեծ տներու մեջ գմբեթարդներով մի ընդարձակ սրահ կամ սենյակ շինել, որ գրեթե պահանջ էր դարձել թե՛ տանտիրող կողմից և թե՛ տունը շինող ճարտարապետի կամ վարպետի կողմից, սրանով թե՛ տանտիրոջ ճաշակն էր գնահատվում և թե՛ շինող վարպետին արվեստին մեջ ունեցած հմտությունը գովաբանվում: Մեծ տների մեջ այսօրինակ գմբեթարդ ունեցող սրահներին սովորական լեզվով ղոպպի կամ կոպպա անունն էր տրվում: Արտաքուստ գմբեթավոր մասնավոր շենք, այն մտքով ինչպես որ էր ի հնումն, գրեթե ինձ չէ հաջողվել տեսնել մասնավոր շինությունների վրա, սակայն հաճախ երևում էին գմբեթանման թմբուկավոր մասեր մեծ տների կատարին անկյունավոր կամ քառակուսի, որոնց առհասարակ լապտեր (ֆանար) անունն են տալիս: Բայց սրա հակառակ գրեթե բոլոր Եվրոպայում մասնավոր մեծ շենքերի, թատրոնների և այլ պետական հասարակական շինությունների վրա բազմաթիվ են գմբեթները, որոնք առանձին շուք և վեհություն են տալիս շենքի ընդհանուր տեսքին:

Նկ. 8. Գլխատան ծածկը գյուղական տան մեջ

Մինչև ցարդ համառոտակի բացատրություններից, կարծում եմ, որ բավական է հասկանալու համար, թե Արևելքում կրոնական հարկածածուկ շինություններ չեն եղել, իսկ Արևմուտքում որ հունական գեղեցիկ ճարտարապետությամբ, բացի մեհյաններից, նույնիսկ աշխարհիկ շինությունները ևս մեհենական ձև ունին, այդ իհարկե ժամանակի ոգու պահանջն էր (ճարտարապետության, գեղարվեստականության պահանջն էր և ընդհանուր տիպ շենքերի) այնուամենայնիվ այդ մեհյաններն ալ աշխարհիկ ծագում ունեին, թագավորական ունկնդրության սրահների ձևերն էին, որ մեհյաններու համար ընդունելի եղան, նաև բազիլիքները, որ քրիստոնեական եկեղեցիների անունով սրբագործվեցին, դարձյալ զուտ աշխարհիկ ծագում ունեին և պետական կարիքների համար ստեղծված: 4-րդ դարուն, նորադարձ քրիստոնեության ժամանակ հավատացողների թիվը այնքան մեծ էր և եկեղեցվո պահանջը շատ, որուն պատճառով ճարտարապետներ չէին կարողանում նոր հավատի համար տաճարների շինություն հասցնել, բազիլիքները դրվեցին քրիստոնեից տրամադրության տակ, որ նույնությամբ ընդունվեց և հետագա նորոդ շինությունների ևս անփոփոխ օրինակ դարձավ, խիստ աննշան հավելումներով: Այլ սակայն, մարդկային ճաշակը մի քանի դարեր անցնելուց հետո երևում է որ նույնը չմնաց, մասնավորապես Արևելքում, շատ վաղ ժամանակ սկսեցին բազիլիքներից անկախ տարբեր ձևեր տալ եկեղեցիներին, որոնք եթե խորը ուսումնասիրվին, պիտի տեսնենք որ այդ նորաձևությունների նախատիպերը գոյություն ունեցան Աքեմենյան շրջաններում Պարսկաստանի մեջ, ուր մեհյաններ կանգնելու սովորություն բնավ գոյություն չունեցավ բացի փոքրիկ ատրուշաններից և զոհի սեղաններից: Հայաստան, որ մի փոքր ժամանակ ընդունեց բազիլիք ձևերն ընդհատումներով, պատճառն այն էր, որ քրիստոնեությունը գալիս էր Հայաստան արևմուտքից և Հարավից, ուր միահամուռ ենթարկված էին մարդիկ քրիստոնեական ամբոխային կրոնքին: Հայաստան ընդհանրապես ոչ միայն չհավերժացուց արևմտյան քրիստոնեից ընդունած բազիլիք ձևը, այլև չմտցրեց դավանության պահանջած այն մանրամասնությունները, որոնք կրոնական ֆանատիկոսության հետ էին կապված: Որչափ ժամանակ որ Հայոց քրիստոնեությունը անկախ մնա օտարներից, այնքան ժամանակ մենք չենք գտնում հայոց եկեղեցիների մեջ հեթանոսական գավիթ, ողբացողաց կայան, կանանց բաժին և այլ հարամասունքներ: Նույնիսկ այն ժամանակները, որ կարծվում էր, թե հայերը վերին աստիճան եկեղեցասեր են եղած, պատմագրական ավանդություններ ցույց են տալիս, որ այդ մոլեռանդությունը կղերականների մեջ էր և հոգվո փրկության և հավիտենական կյանքի հեռանկարներ ցույց տալով հպատակեցնում էին ժողովուրդին: Այս մասին եթե ուզենք տեսնել օրինակներ, բազմաթիվ են հայ մատենագրությանց մեջ՝ սկսած 5-րդ դարուց մինչև վերջին ժամանակներս: Մեր միակ դյուցազներգակ և բանաստեղծ Եղիշեն իր միանձանց ճառին մեջ, ողբագին ցավ է հայտնում, որ հայ մեծամեծներ, նայելով իրենց աշխարհիկ կյանքին, տեղ պիտի չունենան երկնքում: Մի հոգեբանական պերճախոս օրինակ է 10–11-րդ դարերու քրիստոնեական ամբոխի նկատմամբ, Պլուզ Հովհաննես վարդապետի ավանդությունը: Այս ավանդությունը գալիս է մեզ ապացուցանելու որ հայ ժողովուրդը միշտ էլ այն մոլեռանդ ավելորդապաշտությունները չէ ունեցեր, ինչպես որ կարծում ենք մենք և կղերն այնպես չէ աստվածացուցեր ինչպես ժամանակակից արևմտյան քրիստոնյաները: Ամենայն հավանականությամբ այս անտարբեր վերաբերմունքից է բխում կղերական մատենագիրների այն ողբերգական ցավերը, որոնք աշխարհային բոլոր դժբախտություններ, բնության արհավիրքներ, պատերազմներ և այլն և այլն վերագրում էին ժողովրդի դեպի կրոնը և հոգևորականությունն ունեցած անտարբեր և թույլ վերաբերմունքին: (Ավելացնել կղերների դարավոր պայքարը թագավորների և իշխանների հետ՝ տիրապետելու ձգտումով): 1031 (?) թվականի ահեղ երկրաշարժի ժամանակ Հովհաննես Կոզերն մեծ վարդապետը գրեթե նույն պատճառներին էր վերագրում բնական այս սոսկալի պատուհասը: Թերևս հարցվի, թե այդքան մակերևույթին հավատ ունեցող ժողովուրդը ինչու համար շինում էր անօրինակ վայելչությամբ մեծամեծ տաճարներ: Դրա պատճառը հավատից ավելի փառասիրությունն էր, երբ ի նկատի ունենանք, որ մինչև 15-րդ դար ոչ մի ժողովրդական եկեղեցի չունինք, բոլոր եկեղեցիների շինությունները կապված են թագավորների, բարձրաստիճան նախարարների և այլ իշխանների հետ, որոնց փառասիրությունը պահանջում էր ոչ միայն ընիկ Հայաստանի ժողովրդին կողմեն հարգանք ու պատկառանք վայելել, այլև միջազգային եկեղեցաշինության մրցումներից ետ չմնալ, որ նույն ժամանակներում բյուզանդական սահմաններով սունկի նման բուսնում էին տաճարներ ժամանակի ոգու պահանջմամբ: Մասնավորապես Հայաստանի համար անհաստատ անկախության մեջ եկեղեցին էր մի ամուր շրջանակ ժողովրդին պահելու համար, և հոգևորական դասն էր ընդհանրապես հայոց ազգի և պետությունների միջև միջնորդի դեր կատարողը: Պետական իշխանությունները երբեմն քայքայվում էին, սակայն ժողովրդի ամբողջությունը պահպանվում էր եկեղեցվո շուրջը հավաքված: Իրաց այս վիճակին մեջ դժվար է հին հայերին մեղադրել կրոնական մոլեռանդության մեջ, սակայն ինչ որ առավելապես գնահատելի է, արվեստասեր և գեղարվեստասեր ժողովրդի համար այն է, որ ընդհանուր գեղարվեստը զարգացնելու մեծ ասպարեզներից մեկն էր կրոնական կոթողը, որ 5-րդ դարեն մինչև 15-րդ դար չափազանց շքեղ և հետզհետե վերածնվող ոճերով կանգնվեցին և այսօր մեծ պատիվ են բերում ստեղծագործող ժողովրդին. համաշխարհային գեղարվեստի պատմության մեջ Եվրոպայում իրագործված միջնադարյան մի քանի չնաշխարհիկ ոճերի ծննդավայրը Հայաստանն է համարվում վճռականապես: Միայն եկեղեցիները չեն, որ հայ ժողովրդի գեղարվեստասիրական ճաշակն էր ապացուցանում, չիրիմներ և դամբարաններ ևս, ինչպես ուրիշ ամեն ազգաց մեջ, նույնպես հայոց մեջ, մեծամեծ շքեղությամբ են կանգնված՝ սկսած ամենահին դարերից մինչև մեզ մոտիկ վերջին դարերը: Դժբախտաբար այս վերջիններն իբր ոչ բոլորովին կրոնական շինություն, ավելի են ավերվել քան եկեղեցիները, առհասարակ փլատակները և շենքերի գեղարվեստական բեկորները միայն մնացած են տեղերի վրա: Աշխարհիկ շինությունների կորուստը կամ ավերումը թույլ չի տա լիովին ապացուցանելու նույն շքեղությունները, այնուամենայնիվ կան փաստեր այդ մասին:

Շատերի համոզումն է եղած այսօր, որ հայերը Հայաստանում միմիայն եկեղեցիներ են շինած, քաղաքակրթական ուրիշ ասպարեզներում բնավ չեն առաջ գնացել բացի ճարտարապետականից: Այս թյուր կարծիքն առաջ է գալիս գլխավորաբար գուցե այն պատճառով, որ այսօր մեծ մասամբ եկեղեցիների ավերակներ են մնացել կանգուն անցյալի իբրև վկաներ: Նախ՝ պետք է լավ իմանալ, որ առանց քաղաքակրթական ընդհանուր զարգացման ճարտարապետությունը երբեք չէր կարող առաջադիմել Հայաստանի մեջ, իսկ ճարտարապետության և գեղարվեստի զարգացման չափն իմանալու համար, խորհուրդ եմ տալիս դիմել եվրոպացի գիտնական ճանապարհորդների գրած այն հարյուրավոր հատորներին, որոնք ամբողջապես կամ մասնակի կերպով հետազոտած, ուսումնասիրած են և առանձին հիացումով են խոսում Հայաստանի ժողովրդի կենսունակության շրջապատում ծաղկող գեղարվեստներից օգտվելու ընդունակության և ստեղծագործական տաղանդի մասին: Այնուամենայնիվ, եթե Հայաստանում բացի եկեղեցիներից, ուրիշ շենքեր չեն տեսնում, այդ չի նշանակում զուտ ճշմարտություն լինելը, բնականաբար չեն տեսած ուրիշ բազմաթիվ աշխարհիկ կուլտուրական մնացորդներ:

Բովանդակ աշխարհի ճարտարապետության պատմությունը եթե թերթատենք, կգտնենք միմիայն եկեղեցիներ, որոնց վրա հիմնված, գիտնականներ իրենց ուսումնասիրություններն ու եզրակացությունները հանում են զանազան երկրների ճարտարապետության զարգացման մասին: Արևմուտքում միայն Հռովմեական և մասամբ Բյուզանդական կայսրությունն է, որ թողել են աշխարհիկ կամ քաղաքային շինություններ, որոնց ավերակները միայն կան գիտնական խուզարկուներու առջև: Կրոնական շինություններ միայն պահված լինելու մասին, ենթադրություններ անել կամ կարծիք հայտնել առայժմ տեղը չէ, յուրաքանչյուր ժամանակակից պատմաբան կարող է գոհացում տալ այդ առեղծվածային կարծված հարցին, սակայն ես առայժմ խոսքս մասնավորեցնելով Հայաստանի վրա, հաստատապես կարող եմ ասել, որ այնքան կուլտուրական և քաղաքային շինություններ են շինված Հայաստանում, որ եթե բոլորին հավաքենք գուցե ավելի մեծ թիվ կազմեն քան եկեղեցիները: Իմ մոտավորապես 20 տարվան հետախուզություններս ինձ տվել են բազմաթիվ նյութեր, որոնք մինչև այսօր հնար չէ եղել հրատարակել, սակայն ավելորդ չեմ համարում այստեղ դնել մի քանի կարևոր նմուշներ, որոնք կարծեմ բավական կլինին ապացուցանելու, թե հայեր դարերով ինքնուրույն պետություն կազմելու մեջ, զուրկ չէին պետականության արժանավորություններից (Գր. Մամիկոնյանի պալատը Արուճում, Սահմատինի պալատը Մրենում, Սահմատինի պալատը Անիում):

*
* *

Նախաքրիստոնեական 2-րդ դարուն, հունահռոմեական երկիրների նման, թատրոնները գոյություն ունեցեր են Հայաստանի մեջ, որուն մասին վկայում են օտարազգի պատմագիրներ: Հայոց արքունիքները (մասնավորապես Մեծն Տիգրանի ժամանակ) ոչ միայն պահանջ էր զգում թատրոններ շինելու, այլև նրա հաջորդ Արտավազդը գրում էր նաև պիեսներ թատրոնների մեջ ներկայացնելու համար: Թե որչափ խրախուսում էին գիտությունն ու արվեստները, թող ամեն մի հետաքրքրվող դիմե

պատմագրությանց, իմ նյութիս սահմանը շատ նեղ է այդ հարցերով զբաղվելու համար: Իսկ քրիստոնեական թվականի սկզբնավորությունից հետո մինչև 15-16-րդ դարեր, մեզ խիստ շատ նմուշներ են մնացեր այդ ժողովրդական և կուլտուրական հիմնարկություններեն կամ հուշարձաններեն բացառապես ենթարկված միմիայն հայկական ոճին, որոնց գլխավորներն են հետևյալ հուշարձանները:

Նկ. 9. Անիի կամուրջի ավերակներն Ախուրյան գետի վրա

Թովմա Արծրունին, 10-րդ դարում, Վասպուրականի սահմաններում այնպիսի բազմակողմանի շինարարական աշխատանքներ է նկարագրում, որոնց շինելակերպերին և ճաշակի մասին այսօրվան գեղարվեստագետներին և շինարարական մասնագետներին իսկ հիացում է պատճառում: Իմ հոդվածիս սահմանը շատ նեղ է այդ բոլորը մի առ մի գրել. սակայն այդ շինարարական աշխատանքներից ամենից ուշագրավը և կարևորը կուզեմ այստեղ հիշատակել: Գագիկ Ա. ուզելով ծովի մեջ մի խաղաղ նավահանգիստ շինել, չորս ձիարշավ երկարությամբ (ավելի քան երկու կմ.) ծովը լեցուցեր է մեծամեծ ժայռերով և վրաները շինել է հաստատուն պարիսպներ նավահանգիստը շրջապատող: Այս պարիսպները այժմ ևս երևում են ջրի մեջ, որովհետև վերևի մասերը փլել են, նաև ջրի մակարդակը բարձրացել է դարերի ընթացքում և պարիսպի ստորին մասերը մնացել են ջրի մեջ: Թովմայի՝ այս նավահանգստի շինության մասին չափազանց ուշագրավ է նկարագրությունը: Այնպես մանրամասնությամբ և ճշգրիտ նկարագրում է քարերի տեղափոխումը, ծովի մեջ հոսեցման եղանակները և այլ մանրամասնություններ, որ այսօրվան միևնույն նպատակով աշխատանքներից ոչ մի տարբերություն չի երևում, միայն եթե կա մի տարբերություն, որ մեզ հայտնի չէ, այն ժամանակվան ջրի մեջ քարեր ամրացնելու համար գործածված կրաշաղախի տեսակը և բնույթն է: Այս մասին ոչ ոք հետամուտ չէ եղեր, կարդացել են նկարագրությունը, նկատել են նավահանգստի պատերը ջրի տակ և այդքանով բավականացել են: Վասպուրականի մասին այսքանը հայտնելուց հետո ես կանցնեմ Շիրակ գավառին, որը ես անձամբ շրջեր և ամեն մի մնացորդ տեղի վրա տեսել ու արձանագրել եմ:

Ախուրյան գետը որ ամբողջությամբ Շիրակի թագավորության է պատկանում, բնակչության հարաբերությանց դյուրության համար այդ գետին վրա, սկսած Մարմաշենից մինչև Արաքսի խառնուրդը շինել են ինը հսկայական միակամար կամուրջներ, որոնց կամարները 23 մետրից մինչև 30 մետր բացվածք ունին, կամուրջների կառուցվածքը եղել է սրբատաշ քարերով և այնպիսի շինարարական մաքրությամբ, որ այսօրվան մեր ամենեն խնամքով կառուցված շենքերն կդերազանցեն: Եվ ոչ ոքի թող տարօրինակ չթվի, որ ասենք թե 31 մետր լայնություն ունեցող միակամար մի կամուրջի կամարագագաթը 105 սանտիմետր միայն թանձրություն ունի:

Զըրփըլու գյուղի առջև շինված կամուրջը ավելի գերազանց հատկություններով օժտված է, որը ոչ միայն այսօրվա ավերակ վիճակի մեջ իսկ հպարտ է յուր ահեղ կառուցվածքով այլև իր վրա ունի անցյալումն բարձր տեղերը ոռոգելու համար ջրուղի եղած լինելու նշաններ: Այս կամուրջը թե՛ ավելի լայն է և թե՛ ավելի բարձր քան Անիի կամուրջը: Այս երկու կամուրջները քանդվել են թուրք-պարսկական կռվի ժամանակ պարսիկների ձեռքով՝ թուրքերի արշավանքը դժվարացնելու համար: Մնացյալ յոթ կամուրջները թեև ավելի քանդված և ավերակ, սակայն ցույց են տալիս միևնույն մեծությունը և արվեստագործական վեհությունը: Այս կամուրջների շինության ոճը եթե քննենք, պիտի տեսնենք, որ իրենց պարզությամբ, ոճի հատկություններով իրենց կամարների ձևով,



տեղ տեղ քաչված moulure-ների պարզությամբ ու գեղեցկությամբ կպատկանին տեղական հայկական ոճին (այստեղ կարելի է հիշատակել Դեբեդի կամուրջը): Շիրակի ամեն կողմի վրա կարելի է տեսնել ձեռագործ ճանապարհների մնացորդները, որոնք մի քանի վերստ երկարություն են ունեցել և այն տեղերը ուր ժայռերի և խութերի են պատահել, ճեղքել են բազալտի ժայռերը պետք եղած լայնությամբ և երկարությամբ և շարունակել են ճանապարհը (Բագարան, Անի, Աղջաղալա, Ղըզղալայի հյուսիսային կողմը և այլն և այլն): Ոռոգման համար ջրանցքների սիստեմով և բազմազանությամբ հետաքրքրվողներին, խորհուրդ կուտայի տեսնել ամենաուշը Բագրատունիների օրով շինված Ամբերդի ջրանցքները, որոնք խորաձոր լանջերի վրա շինված են անջրդի հողերը մշակելու համար: Ամբերդի գետի միայն աջ լանջին վրա սկսած ցածից մինչև վերին ձորեզրը 13 հատ ջրատար առուներ են շինված, որոնց մեկ քանիսը դեռ մինչև այսօր օգտագործում են շրջակա գյուղացիք մինչև Տեղեր կամ Կոչ գյուղերը: Ամբերդի ձախ ձորալանջին նույնպես հինգ հատ ջրատար առուներ են եղել, որոնք բուն Ամբերդի բերդաշրջանը ոռոգելով, անցնում էին շրջակա արևելյան և հյուսիսային գյուղերը, որոնք այժմ անբերրի են առուների խանգարման պատճառով: Նույն դրությունը կարելի է տեսնել նաև Անիի շրջանում, որ մեծ քանակությամբ ջուր բերված էր Ալաջա լեռան և Գետիկների աղբյուրներից, որոնք ոչ միայն ոռոգում էին շրջակա ամբողջ այգիներն ու պարտեզները, այլև լեցնում էին քաղաքի հյուսիսային պարիսպի առջև փորված լայն խրամատները, և անցնելով այս խրամատներից քաղաքի արևելյան և արևմտյան լանջերում եղած այգիներն ու պարտեզները, ոռոգելուց զատ դարձնում էին շատ ջրաղացներ և ձիթհանքի քարեր: Այս ջրատար առուների հայտնի հետքերը այսօր ևս կարելի է տեսնել Եղվարդում. Գր. Մամիկոնյանի շինած բազմանկյունի եկեղեցիի մոտերը Սոգյութլիի ձորալանջերի վրա և այլ տեղեր: Մենակ Անի քաղաքում շինված են հինգ հատ բաղնիքներ, բացի պալատական բաղնիքից, որոնց չորսը պարիսպի մեջ են, իսկ մեկը պարիսպից դուրս: Բաղնիքների ձևերը հիշեցնում են արևելյան ձևերը, յուրաքանչյուր բաժանումները գմբեթավորված և տաք ու պաղ ջրերի խողովակները դեռ մնում են ամեն մի գուտի առջև:

Այդ ուղղությամբ դեռ չեն քննված նախքան Անին գոյության ունեցող հայկական հին քաղաքները, ինչպես Մրեն, Բագարան, Արգինա և Երազգավորս, որոնց մեջ անհնար է որ չգտնվին հասարակաց առողջության օգտակար այս կարևոր հիմնարկությունները: Հայոց վանքերը, բացի իրենց

Նկ. 10. Թալինի իջևանատան ներքին մասերից

կրոնական և կրթական նպատակներից, ծառայել են նաև իբր ասպնջականոց կամ իջևան ճանապարհորդ կարավանների համար, սակայն անկախ վանքերից, Շիրակում շինված են մեծամեծ իջևաններ, որոնց ավերակները հիացում են պատճառում հանդիսատեսին: Թալինի և Թալիշի մոտերը կան այնպիսի հսկայական իջևաններ, որոնց մեջ կարող էին պատսպարվել հարյուրավոր մարդիկ և հարյուրավոր անասուններ, սայլեր և այլն և այլն: Այս իջևանները ևս շինված են այնպիսի խնամքով և սրբատաշ քարերով, ինչպես շինված են արքայական իշխանական պալատներ:

Հայ հասարակության քաղաքակրթության և աշխարհաշինական աշխատանքներից կարելի է հարյուրավոր օրինակներ բերել և եթե նրանց ժամանակի պահանջն է եղել տեղ տեղ կրոնական շենքեր հիմնելը, այնուամենայնիվ այնպիսի մեծ և բազմածախս հասարակական աշխատանքներ և շինարարություններ են կատարել նրանք, որ յուրաքանչյուրը 10-նյակ եկեղեցիների արժեքն ունի: Մենակ Թալինի իջևանի ծախքով կարելի էր չորս հատ եկեղեցի շինել: Եթե Թալինում 7-րդ դարուն կանգներ են հսկայական գեղարվեստական կրոնական 2-3 կոթողներ, նրա հետ միաժամանակ շինել են ճանապարհներ, իջևանատներ, տնկել են անտառներ, փորել են ոռոգման առուներ և այլն և այլն: Այս բուռն թափով շինարարությունը Հայաստանում մինչև 14-րդ դարը առաջ է գնացել, որ ոչ միայն դարե ի դար վերածնություններով և ձևափոխություններով արտահայտվել է երկրի մեջ, այլ նաև հայ-շինարարական արվեստը և ոճերի ազդեցությունները գնացել են մոտավոր և հեռավոր երկիրներ:



Նկ.11. Թալինի իջևանատան մուտքի ճակատակալ քարի մի մասը

Չկա մի երկիր, Հայաստանը շրջապատող երկրների մեջ, ուր պատմական ավանդությունները չհաստատեն հայ մասնագետների – բժիշկների, նկարիչների, ճարտարապետների գոյությունը: Մասնավորապես ճարտարապետներն իրենց երկրի սեփական ոճով շինել են շենքեր Եգիպտոսում, Պաղեստինում, Փոքր Ասիայի զանազան մասերում և իրենց անունները փորագրել են իրենց կանգնած շենքերի վրա: Ճարտարապետության հռչակավոր պատմաբան փիլիսոփա A. Choisy ցույց է տված մի գիտական քարտեսի միջոցավ այն հոսանքները, որ հայոց շինարարական արվեստը տարածվեր է Եվրոպայի զանազան մասերուն վրա: Հոսանքներից մին և ամենեն ընորոշը անցնելով Դոնի և Վոլգայի ափերով, իրենց հետքերը Ռուսաստանում թողնելե հետո, հասել են Սկանդինավիա, հետո Իռլանդիա և այնտեղից դեպի հյուս. արևմտյան Եվրոպա: Մի ուրիշ հոսանք Սև ծովի ափերով անցնելով Եվրոպա և Դանուբի եզերքները, հայ-ճարտարապետական գաղթավայրի մը վերածելով, հասեր է նույնպես հյուսիս արևմտյան Ֆրանսիա և մեծ օժանդակ է հանդիսացեր ռոմանական ոճի կազմակերպման՝ 11-րդ դարու սկզբներին: Պակաս դեր չէ ունեցեր նաև գոթական ճյուղի կազմության մեջ 13-րդ դարում: Նաև Ogive անվանված չնաշխարհիկ ոճին ամենահին օրինակներն եվրոպացի գիտնականներ Հայաստանումն են գտնում: Նույն հեղինակը (Choisy) նույնպես ցույց է տալիս քարագործության արվեստի հետ միասին ուրիշ հայկական արվեստների ուղիղ ազդեցությունների փոխադրությունը թաթարների արշավանքների միջոցով մինչև Նիկոմեդիա (Մարմարա ծովի եզերքը):

## ✠ ԲԱԼԴՐՈՒՇԱՅՏԻՍԻ ԳԻՐՔԸ[1]

Եվրոպական հայագիտական մատենադարանը հարստացավ հայոց ճարտարապետության մասին, ուսումնասիրական մի նոր հատորով: Գիրքը մեծադիր և շքեղ հրատարակություն է գեղատիպ պատկերներով:

Գրքի անունն է «E'tudes sur l'art médiéval en Georgie et en Arménie» «Ուսումնասիրություն միջնադարյան վրացական և հայկական արվեստի»:

Հեղինակն է Սորբոնի համալսարանավարտ Jurgis Baltrusaitis - Ժյուռժիս Բալդրուշայտիս երիտասարդ գիտնականը: Տպված է Փարիզ 1929 թ.:

[1] Այս հոդվածը մի գրախոսական է, որ ցարդ անտիպ է մնացել:

Կազմող



Այս գիրքը միջնադարյան Հայաստանի արվեստագետ աշխատավորության պատիվն ու պարծանքն է, որ ոչ միայն գիտցել են, հին դարերի մեջ, իրենց շրջապատում զարգացող արվեստներից օգտվել, այլ և գիտցեր են այդ ուրիշներից փոխառյալ արվեստները յուրացնել, զարգացնել և կատարելագործել, այսօրվա եվրոպական գիտնականների ուշադրությունը իրենց թողած հուշարձանների վրա բևեռելու չափ:

Հեղինակը, միջնադարյան հայ արվեստի մի ճյուղը, այսինքն հայկական մանվածոները մոտից ուսումնասիրելու համար, երկու անգամ այցելել է Հայաստան, շրջել է հուշարձանների մի մասը՝ ուր կային հեղինակին հետաքրքրող նյութեր:

Հեղինակի համար խիստ դժվարին և երկար ժամանակի կարոտ պիտի լիներ այս լուրջ ուսումնասիրությունը գլուխ բերելը, եթե Հայաստանի կառավարությունը, և մասնավորապես Լուսավորության Ժողովրդական Կոմիսարիատը, ըստ ամենայնի չդյուրացնեին հեղինակի ճանապարհորդությունները, տալով ամեն տեսակի հանձնարարություններ, փոխադրական միջոցներ, և այլն և այլն, որով, հեշտությամբ կարողացավ իր նպատակին հասնել: Ուստի առ այս՝ իր գրքի առաջաբանին մեջ պարտք համարեց հրապարակավ անհուն շնորհակալություններ հայտնել Հայաստանում գտած թե պետական ազակցությունների համար և թե մասնագետների տված խորհուրդների և օգնությունների համար:

Գրքի առաջաբանը գրել է Սորբոնի համալսարանի բազմահմուտ պրոֆեսոր Ֆոսեյոնը (Henri Focillon), որ մի հակիրճ, բայց հմտալից տեսություն է կատարել հայոց հին պատմության մասին, խտացնելով նախաքրիստոնեական շրջանից մինչև մեր թվականի քաղաքական անցքերը, որուն մեջ ցույց է տալիս ընդհանրապես Հայաստանի քաղաքական և շինարարական զարգացման աստիճանները, որում պարբերաբար, ըստ ընդհանուր բարեկարգության և տնտեսական բարեկեցիկ վիճակի ստեղծել են ճարտարապետական և գեղարվեստական ոճեր, թե՛ արտաքին և ներքին փոխադարձ ազդեցություններով և թե՛ ստեղծագործություններով:

Ընդունելով, որ համեմատական ուսումնասիրությամբ կընորոշվի յուրաքանչյուր ոճի կամ ձևի բնագավառը կամ գաղթավայրը, այնուամենայնիվ, նույն կերպով մանրազնին քննության ենթարկելով՝ կորոշվի նաև տեղական ստեղծագործությունները: Հայաստանը թեև խոշոր ազդեցություններ կրած է շրջակա մեծ ազգերի ճարտարապետությունից, սակայն անվիճելի է դառնում այժմ նաև ինքնուրույն ստեղծագործությունները: Քանի խորանում են գիտնական արվեստագետներ պատմական հայ ճարտարապետության ուսումնասիրության մեջ, այնքան մեծ նյութ են գտնում ուսումնասիրելու թե՛ օտարամուտ ոճերը և թե՛ տեղական ստեղծագործությունները:

Վերջին անգամ, որ հայ ճարտարապետության մասին խոր ուսումնասիրություն կատարել է Հ. Ստրժիգովսկին և տվել է առատ նյութ հայ ճարտարապետության հուշարձաններից, անուշտ պրոֆեսոր Ֆոսեյոն համամիտ Ստրժիգովսկիի, կրկնում է անոր՝ Հայաստանի ճարտարապետության մասին կարծիքը: Թե՝ «երկար ժամանակ բյուզանդական գավառական ճարտարարվեստ համարվելուց հետո, հետզհետե հանգեցին այն համոզման, որ Հայաստանը, ճարտարարվեստի էական տարրերի՝ եթե ոչ տարածողը, գոնե յուրատեսակ մի օջախ է, որ օժտված է մեծ զորությամբ տարածելու: Հայկական ճարտարարվեստի կառուցողներին մենք հանդիպում ենք ոչ միայն Պոլսում, ավելի հին ժամանակներում, այլ և հետագա շրջանում Դնեստրի և Սիրեթի երկիրներում» (առաջաբան, էջ 7):

Գիտնականներից ընդունված ճշտություն է, որ գիտություն և արվեստներ երկրե երկիր փոխանցվում են առևտրական հարաբերություններով, գաղթականություններով և պատերազմներով: Հետևաբար բնավ տարօրինակ չէ, որ Հայաստանի մեջ ճարտարապետություն և գեղարվեստ զարմանալի կերպով զարգացել են, քանի որ Հայաստանն իր աշխարհագրական դիրքով, վերոհիշյալ երեք տեսակ երևույթների թատերաբեմը եղած է ընդմիշտ:

Գրքի առաջաբանի հեղինակն ասում է. «Հեղինակ ռոմանական ճարտարարվեստի մի մասնագետ է, որ հարուստ հողի վրա շարունակելու է իր հետազոտումները և գործադրելու իր մեթոդները»: Հետազոտություններ և բաղդատություններ անելու պահուն, հեղինակը կարծում է, որ անոր (հայ ճարտարապետության) ամենափայլուն ծաղկման շրջանը գրեթե զուգադիպում է ռոմանական կուլտուրայի ծաղկման հետ (էջ VII):

Հեղինակը, իր տեսած սահմանափակ հուշարձաններով, բնական էր, որ այս տեսակ մի կարծիք ունենար: Սակայն, եթե նա հնարավորություն ունենար տեսնելու 5-րդ դարեն մինչև 7-րդ դարու վերջը կանգնած մեծ ու հոյակապ հուշարձանները, անպայման պիտի համոզված լիներ, որ հայ ճարտարապետության գլխավոր օրրանը Արևելքն էր.

տեղական ճաշակի և շինանյութերի ինքնուրույն հատկությանց համեմատ, յուր արևելքից առած դասերը անհունապես զարգացուց նույնիսկ հին աղբյուրները անճանաչելի դառնալու չափ: Այս ամենը կատարված էր դեռ այն ժամանակ, երբ ռոմանական ճարտարապետություն գոյություն չուներ և առնվազն ավելի քան երեք հարյուր տարի անցնել էր հարկավ, որ ռոմանական արվեստը ծրագրվեր:

Հիրավի, եղել է ժամանակ, որ Արևմուտքը մեծ ազդեցություն է ունեցել Հայաստանի քաղաքակրթության վրա, նախաքրիստոնեական շրջանում, մասնավորապես Արշակունիների ժամանակ, բայց այդ ազդեցությունը մեզ տալիս են հայ և օտար պատմագիրներ, ոչ թե կանգուն կամ կիսականգուն հուշարձանական վավերական վկայություններ:

Քրիստոնեական առաջին դարուց մինչև երրորդ դար, մենք ոչ մի հուշարձան չունինք, բացի Գառնիի մեջ Տրդատ Առաջինի կանգնած հովանոցեն, որպեսզի մենք հիմնավորենք պատմագրաց տված տեղեկությունները նաև ճարտարապետական տեսակետով: Մաքուր հռոմեական ոճով կանգնված Տրդատա հովանոցը իր շքեղ գեղարվեստական ոճով, բնավ ազդեցություն չէ ունեցեր Հայաստանի շինարարության և ճարտարապետական ոճին վրա և ինքը մենակ մնացել է Հայաստանի սրտին վրա, մինչդեռ անվիճելի կերպով 5-րդ դարուն նույնիսկ Գառնիի մեջ կառուցված մեծ կաթողիկեն, որը այժմ կիսավեր վիճակի մեջ է, բնավ չունի արևմտյան հատկանիշ: Երկու կամ երեք հին հուշարձանների մեջ, թեև երևում են մի քանի արևմտյան գծեր, ինչպես Էջմիածին, Տեկոր, Շիրվանճուք, բայց ընդհանրապես անոնց կառուցումը և ճաշակը միշտ Արևելքն է հիշեցնում: Արևմտյան ճարտարապետության մի քանի մասնավոր ձևեր, որոնք հետագային ևս պարբերաբար երևում են Հայաստանի հուշարձանների վրա, մինչև 11–12-րդ դար, հաստատապես մեզ ենթադրել են տալիս, որ ազդեցությունը եղած է Սիրիայի ճանապարհով, որովհետև 5-րդ դարուն կանգնված Բաշ Ապարանի և ուրիշ ժամանակակից շենքերը զուտ սիրիական զարդաքանդակներով զարդարված են: Իսկ 7-րդ դարուն կանգնված Զվարթնոց հոյակապ տաճարը, հռովմեականից շատ ավելի սիրիական ոճի և ճաշակի հատկանիշներ ունի: Այնուհետև մինչև 12-րդ դար, թե՛ Անիում և թե՛ Հայաստանի ուրիշ մասերում, հունա-հռոմեական աննշան մանրամասնություններ երևում են դռների և այլ զարդաքանդակների մեջ պատշաճեցուցված:

«Երբ 429 թ. Սասանյանները տապալեցին Արշակունիների բոլոր մնացորդները Հայաստանում, անոնք իրենց հետ բերին ոչ միայն քաղաքական սիստեմ, այլ նաև տարբեր կրոնական հաստատություններ և իրենց դինաստիական դոգմատիկական ֆանատիկոսությունը» (էջ IX): Այսպես է բնորոշում առաջաբանի հեղինակը նույն դարերուն Հայաստանի քաղաքական կացությունը: Ես չեմ կարող որևէ առարկություն անել այս կարծիքին դեմ, Սասանյանների ժամանակ Հայաստանի քաղաքական կացության մասին, այդ կարող պատմաբանների լուծելու խնդիրն է, սակայն միայն մի բան ինձ չափազանց հետաքրքրել է, այն է, գտնել Հայաստանում սասանյան կրոնական տիպի հաստատությունների մնացորդներ, բայց այդ տեսակ հետքեր գտնել ոչ միայն ինձ համար անհնար է եղել, այլև մի քանի խուզարկու մարդկանց ենթադրությունները ևս միանգամայն անհիմն են: Պարզապես երևում է, որ սասանական կրոնը Հայաստանի մեջ ընդհանուր տիրապետող չէ եղած, հետևողներ խիստ սահմանափակ եղել են առանց կրոնական նշանակելի հաստատությունների:

Գալով Բալդրուշայտիսի աշխատության, արվեստագիտական չափազանց լուրջ հրատարակություն է: Նա ցույց է տալիս, ոչ միայն ռոմանական արվեստի մեջ իր կատարյալ հմտությունը, այլև հայկական ճարտարապետության մեջ իր ընտրած ճյուղի, մանվածոների ուսումնասիրությունը կատարում է ամենայն բարեխղճությամբ: Քննության է ենթարկում բոլոր ձևերը, անոնց հյուսվածքների եղանակը, բազմազանությունը և միանգամայն բարդ ձևերը, որոնց տարրալուծելով, պարզելով ցույց է տալիս ընթերցողին քանդակող արվեստագետներին չափագրական հմտությունը և քանդակելու մեջ ունեցած ճարտարությունը:

Հեղինակը, ինչպես ասացինք, ուսումնասիրության նյութ ընտրել է հայ-վրացական մանվածո քանդակները և հարթաքանդակ պատկերադրությունները, որոնք առհասարակ գտնվում են հուշարձանների պատերի վրա փորագրված: Ես այստեղ չպիտի զբաղվիմ ամբողջ գրքի բովանդակությունով, այլ պիտի զբաղվիմ Հայաստանի մանվածոների մասին գրվածներով, որոնք հաճախ իր խոսքերով պիտի ներկայացնեմ ընթերցողին և պիտի գրեմ իմ դիտողությունները, եթե կարիք լինի դիտողության:

Շատ քիչ է զբաղվում մանվածոների պատմականով, այնուամենայնիվ հետաքրքրական են տված տեղեկությունները և իր տպավորությունը հնագույն արվեստի մի ճյուղի մասին, որին սահմանն է գծում արևելքում Սև ծովից մինչև Կասպից ծով տարածված երկիրները, այսինքն բովանդակ Անդրկովկասը:

«Մանվածոները ամենահին ձևերի խումբին կպատկանին, որը մարդիկ գործածել են իրեղեններ և հուշարձաններ զարդարելու համար: Ոչ ոք չպետք է համարի որպես բարբարոսական ոգու արդյունք կամ որպես Ասիայի հատուկ մի տարր: Իր տարածված երկիրները ևս կթվի ընդարձակ ինչպես իր հնագույն ծագումը: Մինչև դարու բոլոր նախնական ժամանակներում, հետո ռոմանական շրջանում, և Արևելքի մեջ ևս զարդաքանդակների այս արվեստը, երկար ժամանակ շատ սիրելի թեմա եղած է»:

«Արևմտյան Ասիան, քրիստոնեական հուշարձանների զարդաքանդակների մեջ, արտակարգ կարևորություն տվավ մանվածոներին, մասնավորապես Հայաստանի և Վրաստանի մեջ»:

«Անօգուտ չէ ստորագծել, որ քրիստոնեական թվականներին, մեր տեսած նույն երկիրներին մեջ, շատ հին ժամանակներում այսօրինակ մի զարգացման ոճ գործածել էին քաղդեացի և հիթիթ քանդակագործներ և կարելի է նույնիսկ ավելի հին ժամանակներում ևս: Մեր ծրագրի մեջ չի մտնում պատմական հաջորդության մի կապ փնտռել և հաստատել այս սիստեմների մեջ, որ կրնան տեսականապես վերլուծվել մի միության և կգտնվին նաև իրենց բաղկացության մեջ ավելի հին ձևերը, որոնք այժմ խիստ հեղաշրջված են»:

«Մանվածոների թիվը, բազմազանությունը և երկարատև գործածությունը, ի սկզբան միօրինակության տպավորությունը կթողուն: Այս օձապտույտ հանգույցներով համատարած հյուսվածանկար քարերը, առաջին հայացքով միմյանց նման են և ստեղծագործելու անընդունակ մի ժողովուրդից ստրկաբար դրոշմված, բայց ավելի մոտիկից տարրալուծելով, պիտի տեսնենք, որ կազմական ոճը չափազանց բարդ է և այս այլազան զուգախառնումները, մեծ ճշտությամբ մեկը մյուսից կբխեն, որ ունին իրենց մեջ չափագիտական մի բան: Բառին բուն իմաստով, զարդական ձևերն անկե կանջատվին այնպիսի պայմանների մեջ, որ կպարտավորվինք ճշտել, և թերևս պիտի օգնենք ըմբռնելու ոչ միայն այս արվեստի ոգին, այլ և բաղդատական ճանապարհով խուզարկությունները լույս պիտի սփռեն ուրիշ երկիրների քրիստոնեական արվեստների վրա»:

Այս հոյակապ հրատարակությունը մի լուռ մեղադրանք է Հայաստանում ապրող բազմաթիվ ճարտարապետների հասցեին, որոնք բնավ չեն հետաքրքրված իրենց անմիջապես շուրջը համատարած սփռված արվեստագիտական անգնահատելի գանձերով: Եվ ահա ինչպես ընդմիշտ, այս անգամ դարձյալ գիտական մի մեծ հաստատության կողմից, Եվրոպայից է գալիս մի մասնագետ, Հայաստանի հուշարձանները ուսումնասիրելու համար, նաև կատարելապես լրացնում է հայ արվեստի գեթ մի մասին վրա, նախորդ գիտնական արվեստագետների մակերևութային և թռուցիկ ուսումնասիրությունները:

Հիրավի, զարմանալ միայն կարելի է՝ հեղինակին թե՛ դեպի հուշարձաններն ունեցած արտակարգ սիրույն վրա և թե՛ մանվածոների մաթեմատիկական և չափագիտական ճշգրիտ ձևակերպումները խորապես ուսումնասիրելու, կատարյալ համբերատարությամբ տարրալուծելու մասին:

Մանվածո քանդակները, ինչպես նկատել է գրքի հեղինակը, ուրիշ շատ օրինակների հետ ժառանգել ենք հեռավոր հիթիթներից և Ասորա-Քաղդեայից, սակայն ակներև է, որ այս հին ցեղերի մեզ թողած պարզ և նախնական ժառանգությունը, անօրինակ բազմաբեղուն կատարելության են հասցրել Անդրկովկասի ժողովուրդները և մասնավորապես Հայաստանը, որոնց արտադրությունները համեմատելով նախկին պարզության հետ, կտեսնենք, թե որչափ սիրելի են Հայաստանում այս մանվածոները և մի խորհրդավոր անհրաժեշտություն են համարել այդ ճյուղի զարգացումը: Դեռ 5-րդ դարեն սկսած, հայ հուշարձանների վրա երևում են մանվածոներ, սակայն ավելի պարզ և թեթև հյուսվածներով: Ավելի բարդ և գերագույն կատարելության հասած շրջանը 10-րդ դարեն մինչև 12-րդ դարն է, որ միանգամայն հավատարիմ նախկին ավանդություններին ավելի խիտ են հյուսկենները և շատ անգամ սովորական երկու ժապավենի, մինչև երեք ժապավենով հյուսված են: Սկսած 13-րդ դարեն է, որ երևան են գալիս ոստերով և տերևներով խառն մանվածոները և զանազանակերպ հյուսկեններով բազմանկյունի աստղերը, որոնք թեև չունին նախկին շրջանի հյուսվածքի խտությունը, այնուամենայնիվ, չափազանց ճոխացած և ծանրաբեռնված մի երևույթ ունին և հաճախ աններդաշնակ, թե՛ իր ամբողջության մեջ և թե՛ իր շրջապատին հետ: Անտարակույս այս շրջանի մանվածոների մեջ, հեղինակը համարում է «արաբական հանճարը այս ձևակերպումների մեջ առաջին կարգի մի դեր խաղացած»: Ինչ որ ալ լինի արաբական ազդեցության խնդիրը, պետք է որ այդ ազդեցությունը համարվի 13-րդ դարեն ոչ շուտ, հավանական է համարվում, որ թաթարների

մահմեդականություն ընդունելուց հետո միայն, մանվածոների մեջ այդ էական փոփոխությունը կատարվել է, այդ շրջանը առհասարակ, ոչ միայն մանվածոների, այլ և հայոց ճարտարապետության անկման սկիզբն է համարվում:

Այս գրքին մեջ ցանկալի էր, որ ուսումնասիրված լիներ մանվածոների, գոնե քրիստոնեական շրջանի «հաջորդական կապերը», որով մեզ որոշ չափով հայտնի պիտի լիներ, թե ո՞ր երկիրը նախապես ժառանգել է հիներից մանվածոների ավանդությունը, շարունակ պահել և զարգացրել է, և ո՞ր երկիրները եղած են հետևողներ կամ ազդվողներ: Մանավանդ երբ նկատվում է, որ որոշ դարաշրջանների մեջ, մանվածոների բնույթը զգալի փոփոխությունների է ենթարկվում. թերևս այդ ուսումնասիրությամբ պիտի պարզվեր նաև արաբական կամ իսլամական ազդեցության ժամանակաշրջանը:

Երևի առաջիկային դարձյալ նույն հեղինակից պիտի սպասենք այդ ուղղությամբ մի ուսումնասիրություն:

Թեև սկզբից մինչև վերջը ժամանակագրական համեմատություն չէ կատարած հեղինակը, այնուամենայնիվ, որոշ երկիրների մեջ, մանվածոների արվեստագիտական տարբերությունը նշանակել է, որ մեզ համար խիստ շահեկան է: Արդ, այս մասին հեղինակը գրում է՝ «Գալով թեմային Անդրկովկասին մեջ բաժանվելուն, միշտ հավասար և համեմատական չէ: Վրաստանը նվազ խորացած է վերլուծական ոգիով, նոքա հյուսվածքները հաճախ գործածում են շղթայումներով ձևացած և ընծայում են անոր մի ընդարձակ աղյուսակ: Իրենց բազմանկյունիների ձևակերպումը ավելի սեղմ է. մասերի շղթայումը, մանվածքը և հյուսվածքն ավելի միատարր և ավելի անձկորեն կապված լինելը կհաստատեն»:

«Հայաստանն ընդհակառակը, ամբողջովին տոգորված է վերլուծական ոգով, յուր անթիվ խաչքարերը տարբեր բաղադրյալ հյուսվածքներով կներկայացնեն բոլոր հնարավոր այլազանությունները, այնտեղ շղթայումը խիստ քիչ անգամ կիրարկված է: Ասոր հակառակը, ընդհերեարս խաչաձևումը, որ կընջե ձևի միությունը, կստանա մի մասնավոր զարգացում, բազմանկյունիները կատարյալ երկրաչափական են և հյուսվածքը միանգամայն պարզ է, յուրաքանչյուր տարր դյուրահասկանալի, հաշիվների խորությունը այնտեղ խիստ չորության կհասնեն և մարդ կզգա, որ ոճի մի հրամայական պահանջի հատկանիշ կստանա»:

«Միևնույն ոգին երևան կուգա նաև բարձրաքանդակ հորինածի մեջ, սա միօրինակ կանոնավորություն ունի, ձևակերպությունը խույս կուտա այլազանություններից, հաշված է նաև քանդակով ու կարկինով. գծագրության ստվերագծի շուրջը եղող դատարկությունները խորացնելով է, որ դուրս կբերեն ուրվագիծը. հասարակ եղանակ թերահարթ քանդակագործության: Հատակը կմնա խորության մեջ ծածկված և կտարածվի ստվերավոր մի սփռոցի նման: Պատկերագրական այս նշանագծերը ճշտորոշված են նաև փողաձև փորվածքներով, որք կընթանան հյուսվածքին զուգընթաց, կկրկնեն յուր գծագրությունը և կուրվագծեն մի ստվերի շողով»:

«Վրաստանի մեջ աստիճանաչափը ավելի ընդլայնված է, փորվածքները ավելի շեշտված, հորինվածքը նվազ մանրամասնությունների մեջ կմտնե: Մինչ դեռ Հայաստանի մեջ բաղադրությանց աստիճանաչափը շատ ավելի փոքր է, հատակի փորվածքները նվազ շեշտված, ամբողջության մեջ ավելի խտացած, ուրվագծեր ավելի նուրբ են, քանդակագործական դուրի ճարտարարությունը ոսկերչական աշխատանքն են հիշեցնում»:

«Այս կերպով մենք կարողացանք հետևել Անդրկովկասյան մանվածոների շրջափոխությանց մեջ, մի չափաբերական ձգտումի: Սա փակագրի և չափագրության ճշմարիտ պաշտամունք է, որ անհրաժեշտ է պատշաճապես տալ արևելյան ոճին: Այսօրինակ հղացված արվեստի մի գործ, խաչի արդյունք չէ, արվեստագետի ճաշակը կամ քմահաճույքը չէ, որ առաջ վարել է գրիչը: Հանպատրաստից մի հորինված չէ, որ ինքնաբերաբար գտել է ձևերու այս բազմապիսությունը, նա մի գերագույն գիտության տեր արվեստագետի հաշիվն ունի իր բոլոր եղանակների մեջ: Քանդակագործը մի չափագետ է, և փնտրում է չափագրական կարգով խնդիրների լուծումը և իր հրահանգները դրոշմում է քարի վրա»:

Ես չեմ ավելացնելու իմ կողմից ավելի բացատրություն հայկական մանվածոների մասին և որչափ հմտությամբ և ճարտարապետությամբ քանդակված են անոնք, այս հոդվածին մեջ բավական եմ համարելու հեղինակի տպավորությունները և տեսությունները, միայն ցանկալի կգտնեմ, որ ժամանակակից արվեստագետներ հետաքրքրվեին և սեփական աչքով տեսնեին այն ամենը, որ միջնադարյան հայ աշխատավոր արհեստավորը թողել է մեզ իբր ժառանգություն, որով մենք կարող ենք պարծենալ համաշխարհային արվեստագետների առջև:

Կարդալով այս գրքի առաջաբանը և առաջաբանի հեղինակի պատմական եզրակացությունները, թե ինչպես Արշակունիների ժամանակ արևմտյան քաղաքակրթությունը տիրապետող եղած էր Հայաստանի մեջ, և հետո որ 429 թվին տիրապետեցին Սասանյանները, գրեթե միանգամայն փոխվեց քաղաքակրթական պատկերը Հայաստանի մեջ, ձուլելով Սասանյանների քաղաքական և կրոնական սիստեմները հայոց ներքին կյանքի մեջ: Ըստ իս, այս պարագան ավելի խորն ուսումնասիրության կարոտ է: Գուցե քաղաքակրթական զանազան ճյուղերի մեջ առաջադիմություն կատարեց ըստ պատմագրական վկայությունների և ժամանակակից պատմաբանների ենթադրության, սակայն ճարտարապետական տեսակետով, կարծեմ համաձայնել դժվար պիտի լինի ինձ համար, քանի որ Հայաստանի մեջ որևէ հուշարձան չէ գտնված փաստացի կերպով նախաքրիստոնեական վերջին դարերը հիշեցնող: Այստեղ շատ կան նախապատմական ուրարտական կամ խալդական շենքերի հետաքրքրական կիկլոպյան ամրոցների և պարիսպների մնացորդներ, որոնք ճարտարապետության նախնական պատկերը միայն հիշեցնում են մեզ, բայց ոչ թե հունական կամ հռովմեական բարձր քաղաքակրթություն տիրապետող Հայաստանին: Իսկ մնացորդներեն անմիջապես հետո, թողելով մի քանի դար անորոշ դատարկություն, 4-րդ դարուց սկսվում է քրիստոնեական շրջանի ճարտարապետությունը, որը դարե ի դար թեև զարգանում է և թեև նոր վերածնություններով կերպարանափոխվում է մինչև 15-րդ դար: Սակայն եթե ուշի ուշով քննենք, գրեթե առանց բացառության, բոլոր դարաշրջաններում, հայոց ճարտարապետության մեջ կգտնենք ոչ միայն Աքեմինյան և Սասանյան, այլ և հեռավոր ասորա-քաղդեական ճարտարապետության տարերքներ:

Ինչպես վերև ասել եմ, եղել են դարաշրջաններ 5-րդ դարեն մինչև 12-րդ դար, որ Արևմուտքը մասնակի ազդեցություն ունեցել է հայոց ճարտարապետության վրա, բայց երբեք ընդհանուր տիրապետող չէ եղած: Հիրավի, Էջմիածնի, Տեկորի, Շիրվանձուքի, և այլն շենքերի վրա կան հունա-հռովմեական գծեր, սակայն անոնք շատ աննշան են և հազիվ ճանաչելի տեղ բռնած են, իսկ ամբողջ շինարարական ոճը և ճաշակը միանգամայն արևելյան է: Այստեղ հարկ է որ կրկնեմ, թե Գառնիի մեջ Տրդատի հոյակապ հովանոց անվանված շենքը, իր հունա-հռովմեական ոճի արտակարգ ճոխությամբ հաճելի չէ եղած տեղական ճարտարապետներին և ժողովրդին ու բնավ հետևողներ չէ ունեցած: Նույնիսկ Գառնիի մեջ 5-րդ դարուն կանգնված մի շենք, հռովմեական ճարտարապետությունը հիշեցնող մի գիծ իսկ չունի: Ուստի իմ կարծիքով, կանխահաս եզրակացություն է Հայաստանի նախաքրիստոնեական ճարտարապետության մեջ հունական և հռովմեական ազդեցություն փնտրել: Նախորդ թվածս ազդեցությունները ևս անվիճելի են այն պատճառով, որ Սիրիայի ճանապարհով եկած են, որովհետև փաստացի գիտենք, որ Սելևկյանց տիրապետության ժամանակ շատ շենքեր կառուցվեցին Սիրիայում հռովմեական ոճով, որոնցմե փոխադրվեցան Հայաստան, քրիստոնեության միջոցով, խառն սիրիական ոճի հետ:

Գալով հեղինակ Բալդրուշայտիսի հայկական մանվածոների մեջ «Արաբական կամ իսլամական հանճար» տեսնելուն, կարծում եմ, որ այդ եզրակացությունը առաջ է գալիս ժամանակագրական մանրակրկիտ ուսումնասիրություն կատարած չլինելուն համար: Այս հապճեպ հայտարարությունը, մի քանի գիտնական ճանապարհորդներ ևս արել են, որ իբր թե հայ ճարտարապետության մեջ տիրող դեր է կատարել արաբական ոճը:

Արաբները Հայաստանին մեծ մասամբ տեր դարձած օրից (7-րդ դար) պետք էր, որ իրենց ճաշակը դրոշմած լիներ եթե ոչ 7-րդ դարու, գեթ 10-ից 11-րդ դարու ճարտարապետության վրա: Մինչև 13-րդ դար, այդ կարծեցյալ ճաշակը բնավ գոյություն չունենալեն զատ, անոնց տիրապետության շրջանում չենք գտնում մի շենք կանգնված: Եթե նույնիսկ ուշադրություն չդարձնենք հայ մատենագիրների ողբերգություններին, Հայաստանի տառապանքների մասին, և սա ոչինչ համարենք, Վոգյուեի, Շուազիի և այլ եվրոպական գիտնականների, արաբների արշավանքը քաղաքակրթության պատուհաս համարելուն, գոնե իրենց տիրապետած սահմանին մեջ, չգտնվեցան հուշարձաններ, որոնք այս ընդհանրացած կարծիքների հակառակը ապացուցեն:

Արվեստը հանկարծական թափով երևան է գալիս Հայաստանի մեջ 13-րդ դարուն, թաթարական տիրապետության ժամանակամիջոցին, և երկիրը ծածկվում է թեև փոքր, բայց հաճոյատեսիլ շինանյութերով: Ահա այս շրջանին է, որ հայկական մանվածոները, որոնք արդեն գոյություն ունեին 5-րդ–7-րդ և 10-րդ–11-րդ դարերուն մեջ, ստանում են միանգամայն նոր տեսք և նոր զուգախառնում: Այս շրջանին է, որ տերևալից ոստերի մեջ խառն կենդանիների և թռչունների քանդակներով մանվածոներ երևում են, որոնք գրեթե օտարանում են հին մանվածոների ակնապարար

երևույթին և մեր կարծիքով մոտենում են անկման, ինչպես որ այդ շրջանում է, որ սկսվում է հայ ճարտարապետության անկումը, որովհետև ոչ միայն մանվածոներն այդ դարուն նոր ձև ստացան, այլ և շենքերի ամբողջության մեջ ևս հեղաշրջում առաջ եկավ, հին ավանդությունները պահելով հանդերձ: Թաթարական շրջանի մանվածոների և քանդակազարդերու այլասերված նմուշներն են Ջուղայի բազմաթիվ խաչքարերը, որոնք թեև նախնական հայացքով չափազանց շքեղ և զարդարուն երևույթ ունին, այնուամենայնիվ, նախկին մանվածոների ակնապարար և հաճոյալի երևույթը չունի: Այստեղ արդեն նկատելի է ոչ միայն թաթարական ճաշակը, ինչպես Անիի հետին դարերու շինության մեջ, այլ և նոր պարսկական ճաշակը խառնված հին մանվածոների հետ, որոնք ցույց են տալիս նախորդ մեծ արվեստի անկման ենթարկումը:

## դ. ԿՈՍՏԱՆԴԻԱՆՈՍ ԵՎ ՀՈՒՍՏԻՆԻԱՆՈՍ[1]

*(Ժամանակի դատաստանը)*

Վաղուց անցեր էին եգիպտական մեծագործ Ռամզեսներու, փարավոններու և ասորա-քաղդեական Սենեքերիմներու, Սարգոններու աշխարհաղջողոդ շրջանները:

Փիլիպյան Աղեքսանդրի վաղահաս մահվամբ հռովմայեցի կայսեր տիեզերակալի մեծ փառքը ընդմիշտ աղոտեցավ և աշխարհասասան կայսրությունը՝ բախտախնդիրներու մեջ բաժան բաժան եղած անվերջ կռիվներու ասպարեզ դարձավ, մինչև որ միջին դարուն համաշխարհային մեծ հեղաշրջում մը փոխեց երկրին ճակատագիրը:

Միջին դարուն առաջ եկավ բյուզանդական ահեղ կայսրություն մը, որ մոտավորապես երեք դար միահեծան տիրապետեց Եվրոպայի և Առաջավոր Ասիայի մեծ մասին, ավելի քան, Ալեքսանդր աշխարհակալի տիրապետած սահմանները: Եթե արաբական աշխարհավեր արշավանքը վրա չի հասներ, թերևս Բյուզանդական կայսրության բախտը մինչև համաշխարհային տիրապետության հասներ:

Սկսած Բյուզանդիոնի մայրաքաղաք դառնալեն (326 – 330) մինչև Ֆաթիմ սուլթան Մահմեդի տիրապետությունը (1453) Բյուզանդիոնի փառապանծ գահուն վրա նստող կայսրներուն ամենուն չվիճակվեցավ պատմական, քաղաքական և գիտական մեծագործության հավիտենական անուն թողելու, անոնցմե ոմանց համար այդ փառաշուք դարը թեև փուշ ու տատասկ եղավ և զիրենք ավելի թշվառացուց, քան սովորական մարդկանց ամենեն թշվառականը, սակայն ուրիշներու համար երջանկության և վայելչության այնպիսի հեշտավառ դրախտ դարձավ, որ երբեմն փորձվեցան ինքզինքնին սովորական մահկանացուներե շատ բարձր՝ աստվածներ կարծելու:

Ժամանակը անկայուն է և անոր դատաստանը անողոք և իրեն հետ միասին անէության անդունդը կգլորե ինչպես ցավ ու տառապանք, այնպես ալ փառք ու վայելչություն:

Այսպես անէացավ և ստվերի մը նման եկավ անցավ ավելի քան տասն և հինգ դարեր ապրող, իշխող և հզոր առյուծի նման մռնչող Բյուզանդական երբեմնի աշխարհահռչակ կայսրությունը:

Պատմությունը հազիվ կարողացավ ժամանակի անէացնող հոսանքին առջևեն փրկել քանի մը արժանահիշատակ անցքեր, այս երկար ու մեծաշուն անցյալեն, և կայսրության աստվածային գահը բազմողներու լոկ անունները միայն պահել, խիստ նսեմ և անփառունակ:

Սակայն այս տասն և հինգ դարերու մեջ Բյուզանդիոնի աստվածային գահուն վրա նստողներեն երկուքին իսկապես վիճակվեցավ աստվածանալու չափ համաշխարհային փառքի և հավիտենական երախտագիտության արժանանալու նախանձելի բախտը:

Այս երկուքը՝ Կոստանդիանոս և Հուստինիանոս՝ իրենց անվան այնպիսի մահարձաններ կանգնեցին, որոնց առաջինինը պիտի մնա կանգուն այնքան ժամանակ, որչափ ժամանակ գոյություն ունենա քրիստոնեությունը, իսկ երկրորդինը՝ պիտի մնա, քանի գոյություն ունենա աշխարհի մեջ գիտության և գեղարվեստի պաշտամունքը:

Բայց արդյո՞ք արդարացի կերպով տիրացան այս երկու կայսրներ իրենց վիճակված հավիտենական փառաց պսակին: Ժամանակը պիտի պարզե այդ ճշմարտությունը, անոր դատաստանն արդար է և վճիռն անողոք, գուցե գա օր մը, որ անոնց պատվանդաններուն քով կանգնե ավելի բարձրերը և բազմացնե անոնց վրա այն ճշմարիտ աստվածները, որոնց ավելի արդար իրավունքն էր հավիտենական համաշխարհային երախտագիտությունը:

Կոստանդիանոս, հակառակ իր նախորդներու հալածող քաղաքականության, քրիստոնեությունը ազատ և պետական կրոն հայտարարեց, որի փոխարեն, քրիստոնյա աշխարհը, ի վարձատրություն կայսերական այս բարյացակամության, զինքը պաշտելի սրբոց կարգը դասեց:

Մինչև վերջին օրն առանց մկրտված լինելու քրիստոնյա և հավիտենական պաշտաման արժանի սուրբ հռչակավոր Կոստանդիանոս համոզվա՞ծ էր արդյոք հանուն քրիստոնեության մարտիրոսացող հարյուր հազարավորներու դատին ճշմարտությանը, որոնք կպահանջեին ընդհանուր մարդկության համար ազատություն, հավասարություն և եղբայրություն, թե՞ երեք հարյուր տարիներե ի վեր մարտիրոսներու արյամբ ոռոգված ու բեղմնավորված քրիստոնյա աշխարհի ահավոր ուժին առջև ակամա տեղի տալով արքայական վեհաշուք գահն ու աշխարհային փառքն ու վայելչությունն ապահովեց:

Անշուշտ չէր մոռցած քանի մը տարիներ առաջ Դիոկղետիանոսի սարսափը ամբողջ բանակին զինաթափ տեսնելու վտանգին առջև, երբ կոց զոհելու կբռնադատեր իր քրիստոնյա զինվորներուն:

«Սովաւ յաղթեսցիս»-ի ճշմարտության տեսիլին մեջ արդյոք խա՞չն էր տեսած, թե՞ աչքք բացոք տեսավ իր գահին ու թագին սպառնացող քրիստոնյա բանակին անպարտելի ուժը:

Արժանահավատ պատմությունը կհավաստե, թե խաչանիշ սաղավարդակիր և վահանակիր բանակի միահամուռ զորությունը փրկեց կայսրության ամբողջությունը մոտալուտ կորստյան վտանգեն, կհավաստե նաև, թե բովանդակ բանակի զինվորները հաճույքով դրին իրենց կուրծքի վրա իրենց վսեմ դաղափարի հաղթանակի պաշտելի խորհրդանշանը:

Ուրեմն բախտը գեթ առ ժամանակ ուզեց երեք հարյուր տարվան մարտիրոսներու արյամբ հյուսված՝ «ազատության, հավասարության և եղբայրության» դաղափարի փառաց պսակը ժառանգե Կոստանդիանոս կայսրը:

Հուստինիանոս ուզեց որ, իր օրով քաղաքական խառնակության մը ժամանակ մոխիր դարձող Կոստանդինաշեն եկեղեցին այնպես մը վերաշինե, որուն նմանը աշխարհի մեջ տեսնված չի լինի:

Հասավ իր նպատակին, կանգնեց հանուն ս. Սոփիայի գերահրաշ տաճար մը, որուն վրա տասն և չորս դար հիացավ բովանդակ աշխարհը:

Ի՞նչ զգացմունքներե մղված Հուստինիանոս ձեռնարկեց այդպիսի աշխարհահռչակ մեծագործության:

Ոմանք կվերագրեն անոր ջերմեռանդ հավատքին, ոմանք ալ ծայրահեղ գեղարվեստասիրության: Սակայն հավատացողներ ալ կան, որ այդ միջոցին ամբոխացած ժողովուրդին առջև անհրաժեշտ էր թափել, հեղեղել իր պետության զանձարանին մեջ կուտակված ոսկիները, և այդ ոսկիներու շողշողուն փայլով ստեղծել տատանվել սկսող գահին նեցուկները: Իսկ ոսկիին հետ երբ կմիանար աստվածառաք հրեշտակներու պատգամը տաճարի շինության մասին, այն ժամանակ կայսրը նվիրական կդառնար ռամկին աչքում և անձեռնմխելի կդառնար անոր գահը:

Ինչե՞ր էին հրեշտակներու պատգամները աստվածախոս այս նոր Սողոմոնին:

Հրեշտակները բերին տաճարը շինելու աստվածային անբռնաբարելի կամքը, տաճարին չափը, ձևը և ամբողջ հորինվածի ծրագիրը:

Կայսրն առանձին հպարտությամբ հայտարարեց, որ եթե աստված չհրամայեր տաճարի շինությունը, եթե հրեշտակը չբանար անհայտ քարայրի մը մեջ ծածկված անհամար ոսկիի շտեմարանը, ինքը բնավ չէր կարող հանդգնել այդ մեծագործության ձեռնարկելու: Նաև եթե աստված չի տար այդ զարմանահրաշ տաճարի գեղարվեստական զմայլելի ծրագիրը և իր հրեշտակներու միջոցավ չի ղեկավարեր անոր շինությունը, ինքը անզոր էր քան Սողոմոն գերազանցելու:

Ուրեմն ի՞նչ կասկած կարող է լինել, որ աստված, Սողոմոնեն շատ ավելի սիրեց Հուստինիանոսին:

Եթե Կոստանդիանոս խոստովանեցավ, որ առանց խաչի կամ խաչակիր բանակի ինքը անզոր էր վերահաս վտանգեն կայսրությունը փրկելու, նույն խոստովանությունը վեհանձնաբար կատարեց Հուստինիանոս իր անզորության մասին, առանց աստվածառաք հրեշտակներու օժանդակության:

Կայսրության գանձարանին անսպառ միլիոններ մատակարարող ճարտարամիտ ելևմտագետ պաշտոնյաներ և երկու մեծահանճար ճարտարապետներ եթե դժգոհ էին այս աստվածային պատգամներեն և հրեշտակային օժանդակության հավաստիացումներեն, սակայն լռությունը իմաստություն համարեցին, վստահ լինելով, որ ժամանակը ուշ կամ կանուխ պիտի վերցնե իրենց վրա ծածկված հրեշտակային շողշողուն հանդերձները և պիտի ցույց տա աշխարհին Հուստինիանոսի վայելած փառաց դափնիներուն իսկական ժառանգորդները:

Հուստինիանոս բոլորովին սխալ չէր իր հայտարարության մեջ, մի՞թե սովորական մարդոցմե բարձր հանճարները պաշտվելու արժանի չեն:

Ժամանակը թերևս օր մը Կոստանդիանոսի փառաց պատվանդանին քով ավելի բարձր պիտի

[1] Այս մինչ այժմ անտիպ հատվածն ուներ երկու տարբեր ձեռագրերերի վրա տարբեր վերնագիր, որոնցից մեկը դրինք փակագծի մեջ:

Կազմող

կանգնե համամարդկային իրավանց պաշտպան նահատակներու փառապանծ արձանը, որուն առջև հավիտյան պիտի երկրպագեն իրավազրկութեան կապանքներեն ազատված մարդկությունը, իսկ Հուստինիանոսի պատվանդանին մոտ պիտի կանգնե Անթեմիուսի և Իզիտորի հոյակապ արձանները, որոնց առջև հավիտյան պիտի խոնարհվին գիտության և գեղարվեստի բոլոր երկրպագուները:

Գուցե մնան Կոստանդինոսն ու Հուստինիանոսն ալ իրենց խոնարհ պատվանդաններուն վրա՝ առաջինը իբրև համեստ զիջողության, իսկ երկրորդն իբրև գեղեցիկին ու վսեմին մարմնացում գեղարվեստը գնահատողի օրինակ:

## Ա. ՏՐԴԱՏ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ ՄԱՀԱՐՁԱՆԸ Կ. ՊՈԼՍՈՒՄ

Կոստանդնուպոլսո Ս. Սոփիա եկեղեցին միջին դարու ճարտարապետական ամենամեծ հրաշալիքն է:

Այս հրաշալիքը 6-րդ դարու սկզբին կանգնել տվավ Հուստինիանոս կայսրը, փոքր ասիացի երկու հույն ճարտարապետներու ձեռքով, որոնց մեկն էր Թրալլացի Անթեմիուս և մյուսը՝ Միլետացի Իսիդոր:

Այս եկեղեցին մինչև այսօր աշխարհի բոլոր գիտնականների ուխտատեղին է, որը Կոստանդնուպոլսո առումեն հետո մզկիթի փոխարկեցին թուրքերը:

Անկարելի է առանց զարհուրելու դեպի վեր՝ անոր գմբեթին նայել, որ երկնքի մը պես կախված է դիտողի գլխին վրա, որուն մեջ Բյուզանդական կայսրության օրով ոսկեղեն ու արծաթեղեն անթիվ ջահեր ու կանթեղներ կփողփողային աստեղազարդ երկինքի մը նման:

Գմբեթի տրամագիծը 31 մետրեն ավելի է, տրամագիծ մը, որ քիչ պակաս է Զվարթնոց եկեղեցիի կամ Անիի Գագկաշեն ս. Գրիգոր եկեղեցիի ամբողջ շենքին տրամագծեն:

Շենքը վերջանալեն, Հուստինիանոս քառաձի կառքով գնաց օծման հանդեսին ներկա գտնվելու. երբ ներս մտավ ու տեսավ այս հրաշալի շենքը զարդարված ոսկեղեն և արծաթեղեն զարդերով, բյուրավոր ջահերով ու կանթեղներով, հպարտ շեշտով մը գոչեց.—

«Հաղթեցի քեզ, Սողոմոն»...

Օծման թվականեն քսան տարի հետո, այս մեծագործ գմբեթը փլավ: Հուստինիանոս առանց հուսահատվելու, վերստին նորոգեց ավելի հաստատուն կերպով: Այս նորոգութենեն հետո միշտ անմնաս մնաց մինչև 989 թվականը: Այս թվականին ահեղ երկրաշարժ մը վերստին փլցուց գմբեթը և շենքն ալ մեծ ճեղքվածք ստացավ:

Ժամանակակից հայազգի Վասիլ կայսրը ուզելով անմիջապես վերանորոգել այս չնաշխարհիկ հիշատակարանը, բազմաթիվ տեղացի ճարտարապետներ հավաքեց անոր շուրջը:

Այս դեպքին նույնպես ժամանակակից հայ պատմագիր Ստեփաննոս Ասողիկ կպատմե, թե տեղացի ճարտարապետներեն ոչ ոք չհամարձակվեցավ հանձն առնել անոր վերաշինությունը:

Պատահաբար այնտեղ գտնվեցավ Շիրակի Թագավոր Սմբատ Բագրատունիի անձնական ճարտարապետը՝ Տրդատ, որ հիմնարկել էր Անիի Մայր եկեղեցին, բայց Սմբատի մահվամբ շինությունը ընդհատվել էր, մինչև Գագիկ Շահնշահի զուգակից Կատրանիդե թագուհիի վերսկսելը:

Այս հանճարեղ ճարտարապետը հրավիրվեցավ նորոգելու: Նա համարձակ մոտեցավ այդ մեծ ու հանդուգն գործին և հանձն առավ վերաշինել ավելի հաստատուն, քան իր նախորդները: Անձամբ պատրաստեց բոլոր կաղապարները, անկյուններու չորս առագաստները նորոգեց իր ուզած ձևով, հետո բարձրացուց շուրջանակի ցած թմբուկ մը, որ այն ժամանակ միմիայն Հայաստանի հատուկ ոճ էր, և այս թմբուկին վրա կազմեց 31 մետրեն ավելի տրամագծով կիսագունդը:

Այն օրեն ի վեր անցեր են ինը հարյուրեն ավելի տարիներ, բազմաթիվ երկրաշարժներ և ուրիշ բնական արկածներ Կոստանդնուպոլիսը դղրդեր են, սակայն Տրդատաշեն գմբեթը անսասան կմնա ս. Սոփիայի գլխին:

Ահավասիկ գեղեցիկ փաստ մը պատմական հայ ճարտարապետության հոռետես քննադատներուն համար:

Շիրակի նման փոքրիկ թագավորության մեջ ծներ ու զարգացեր է այնպիսի հայ արվեստագետ մը, որ ոչ միայն մրցակից հանդիսացավ Հուստինիանոսի զույգ ճարտարապետներուն, Անթեմիուսին և Իսիդորին, այլև իր հավիտենական մահարձանը կանգնեց Բյուզանդիոնի ս. Սոփիա եկեղեցվուն վրա,— պատիվ ու պարծանք իր հայրենիքին, իր ցեղին:

Երբ որ գաղթականության բուռն հոսանքներ 5-րդ դարեն սկսյալ Բյուզանդական կայսրության երկիրները կողողեին, արդյոք քանի՞ մեծագործ արվեստագետներ խառնված այդ հոսանքներուն Տրդատի նման սքանչելիքներ կանգնեցին բյուզանդական երկիրներու մեջ, որոնք անհիշատակ կորան և անոնց հանճարի արտադրություններն արձանագրվեցան երկրին և տիրապետող տարրին անունով:

Բայց ի՞նչ հարկ կա ուրիշ փաստեր փնտրելու հնադարյան Հայաստանի բարձրագույն քաղաքակրթության և հայ ժողովրդի ստեղծագործական հանճարի մասին: Այսօրվան ս. Սոփիայի գլխին բազմած ահեղատեսիլ գմբեթը Հայաստանի բազմադարյան քաղաքակրթության պերճախոս պատմությունն է:

## Դ. [ՏՐԴԱՏ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ ՄԱՍԻՆ][1]

Սմբատ Բագրատունու Տիեզերակալ մականվանյալ թագավորը, երբ իր հոր Աշոտ Ողորմածի գահը բարձրացավ 977 թվականին, առաջին գործը եղավ Անի քաղաքն ավելի ընդարձակ պարիսպով մը շրջապատել, այնուհետև գրեթե 8-10 տարի ևս հանգիստ ու դադար չունեցավ իր երկիրն ասպատակող թշնամիներեն մաքրելու համար:

Սմբատի սարսափը հյուսիս և հարավ տարածված՝ ոչ ոք այլևս չհամարձակվեցավ անոր երկրներուն և հարստությանց աչք տնկելու: Դրացի բոլոր թագավորներ ակամա խոնարհած անոր ասպետական քաջության առջև զինքը Շահնշահ և Տիեզերակալ տիտղոսներով պատվեցին:

Երբ ամեն բարիք ու առատություն, խաղաղություն տիրեց Շիրակի մեջ, Սմբատը հիշեց, որ երախտագիտական պարտք մը ևս ունի իրեն սրտին արիություն, բազուկներին ուժ և ձեռնարկներուն հաջողություն տվող աստուծուն, բերդեր, կամուրջներ, ճանապարհներ և շքեղ ապարանքներ մեծ քանակությամբ շիներ էր կարճ ժամանակի մեջ, սակայն անտես ըրեր էր աստվածային փառաց տաճար մը կանգնելու:

Հրամայեց կանչել իրեն մոտ Շիրակի անվանի ճարտարապետներեն մեկուն՝ Տրդատին, և հայտնեց անոր իր մտադրությունը, և ըսավ.

«Զիս ու իմ երկիրս անհուն բարիքներով ողողող Աստծու անվան սրբազան խորան մը կանգնել քեզ վիճակված է, ուստի բոլոր ուժդ հավաքած պետք է այնպիսի տաճար մը կանգնես այս քաղաքին մեջ, որ ոչ միայն իմ նախորդներուս շինածները գերազանցե, այլև մինչև այսօր քու բոլոր շինած շենքերուդ մեջ ամենեն շքեղը լինի: Արքայական գանձարանս բաց է, մինչև այսօր ձեռք բերած համբավիս փառաց պսակը այդ տաճարով բոլորելու համար. ես վստահ եմ քո հանճարիդ և գեղարվեստական ճաշակիդ, դու պիտի կարողանաս ամեն կերպ գոհացում տալ իմ բաղձանքներուս, ես ալ քու շինած հրաշագեղ տաճարիդ թե իմ թագավորական թագիս և թե քու արվեստագիտական հազվագյուտ տաղանդիդ արժանի վայելչությամբ պիտի զարդարեմ ներսով ու դրսով: Արդեն Հընդկաստան մարդ ուղարկեցի մինչև ուրը բյուր արժողությամբ ջահ մը բերելու համար, որպեսզի որպես արեգակ տաճարիս երկնանման գմբեթեն կախված լուսավորե տաճարիս մեջ աղոթող հավատարիմ ու անձնվեր ժողովուրդս և շուրջը հազարավոր ոսկի և արծաթ կանթեղներ մշտավառ աստղերու պես փողփողեն: Պատվիրեցի նույնպես քաղաքիս ամենեն արվեստագետ ոսկերիչներուս պատրաստել համակ արծաթաձույլ մարդաչափ խաչ մը, որուն վրա մարգարտին ու ադամանդին, զմրուխտին ու հակինթին շողշողուն լույսը ոսկեզօծե մեր դիմաց վեհափառորեն բազմող ծերունի Արագածի ճակատը և հեռվեն ամբողջ Հայաստանի վրա արթուն աչքերով հսկող վշտակոծ Մասիսի գագաթը, հանելով զիրենք 500 տարվան մշտամորմոք սուքեն:

Անմիջապես պիտի կանչեմ մնացած բոլոր արվեստագետներ, որոնք ևս սկսեն պատրաստել բոլոր այն ոսկեթել բանվածքներ, վարագույրներ և մետաքսեղեն գորգեր, սկսած աստվածաշնչակ խորանեն մինչև գավիթի դուռը, դատարկ տեղ չմնա զարդարելու համար: Իսկ քու վարձատրությունդ, անշուշտ, գիտես որ արքայական վարձատրություն պիտի լինի»:

Տրդատն այս վերջին խոսքը չլսեց անգամ, նա բոլորեպես սլացած էր երևակայությամբ անպարագրելի հորիզոնները և սկսեր էր մտքին մեջ ամփոփել մինչև այն ժամանակ ծրագրած հազար ու մեկ հրաշալիքները, որոնց իրագործման ժամանակը հասեր էր: Հանճարը հրաբուխի մը նման սրտին ու մտքին մեջ կբորբոքեր, ու իր ամբողջ էությունը կխանձեր: Հասեր էր այդ հրաբուխը պայթելու ժամանակը և անոր բոցով լուսավորելու համար հայ գեղարվեստագետի աշխարհը:

Թեև քիչ մը սրտաբեկ էր իր շինելիք տաճարին մեծությունը, քան Կ. Պոլսո ս. Սոփիան մեծ, և Սմբատի գանձը Հուստինիանոսին չափ առատ չլինելուն, սակայն նա որոշել էր այնպիսի բան շինել, որ թեև ծավալով փոքր, սակայն ընդմիշտ հիանար նորանով ապագան:

Տրդատի ուրախությունը երկար չտևեց: Սմբատի անակնկալ մահվամբ, բոլոր հույսերը ցնդեցան: Իր երևակայությունները մնացին լոկ երևակայություն: Ո՞վ պիտի կանչեր զինքը անկեց ետքը մեծագործություններ առաջարկելու: Թագա-

[1] Թորամանյանը Տրդատ ճարտարապետին ուզեցել է դարձնել գեղարվեստական երկի նյութ, որի սևագրի միայն սկզբի մի երկու թերթերն են պահվել նրա դիվանում: Այստեղ տեղին ենք համարում ներկայացնել մեզ հասած այդ հատվածը:
Կազմող

վորներ սովորություն չունեին իրենց նախորդներուն պաշտոնյաներով և արվեստագետներով ղեկավարվել: Անոնք իրենց համար նոր պաշտոնեություն և նոր արվեստագիտաց խումբ կկազմեին:

Այս հուսահատ տխրությունը Տրդատի վրա հազիվ մեկ երկու ամիս տևեր էր, երբ Բյուզանդական կայսրության մեջ պատահած սոսկալի երկրաշարժի մը լուրը հասավ, որը շատ մեծ ու փոքր շենքեր, բերդեր ու ապարանքներ կործանելեն զատ փլցուցեր էր ս. Սոփիայի գմբեթն ալ և շենքը ճեղքել էր վերեն մինչև վար:

Տրդատի հուսահատ աչքերը վերստին փայլեցան, ուրախության և հույսի արևը լուսավորեց համակ էությունը: Ոչ ոքի հետ բան չխոսեցավ, լռիկ ու մնջիկ ճանապարհ ընկավ դեպի Բյուզանդիոնի մայրաքաղաքը:

Տրդատ չէր սխալած, որ Բյուզանդիոնի մեջ ինքը պիտի փայլեր ու պիտի փայլեցներ հայ արվեստագետներու անունն ու պատիվը: Բազմաթիվ արվեստագետներ ժողոված էին Վասիլ կայսեր հրամանով, որ ամեն հնարք ի գործ դնեն ս. Սոփիայի գմբեթը վերստին շուտով շինելու համար, սակայն ոչ ոք չէր համարձակեր նախաձեռնարկ լինել այդ սարսափելի կերպով պատասխանատու գործին:

Տրդատ առանց կողմնակի մարդոց դիմելու, դիմեց ուղղակի կայսեր, և ցանկություն հայտնեց, որ իրեն հանձնվի այս անգամ ս. Սոփիայի գմբեթի վերաշինությունը, ներկայացնելով ամեն հավաստիք իր կարողության և արժանավորության վրա:

Կայսեր անծանոթ չէր հայն ու Հայաստանը, ինքն ալ հայ մը էր Բյուզանդիոնի գահուն վրա, շատ մոտեն գիտեր Շիրակի թագավորության մեջ կանգնվող գեղարվեստական շինություններու համբավը: Ուրախությամբ հավանություն տվավ Տրդատի առաջարկին, միանգամայն ձանձրացած տեղական ճարտարապետներու երկար խորհրդակցություններեն և ապարդյուն ժողովներեն: Ուստի ըսավ Տրդատին.

- Ես արդեն լսած եմ քո անունն ու համբավը, վստահ եմ, թե ըստ ամենայնի գիս կգոհացնես, ուստի այս րոպեին քեզ բացարձակ լիազոր կկարգեմ այդ գործին: Քու հրամանեդ կախված պետք է լինին տեղական բոլոր ճարտարապետները, արքունի գանձարանս ալ բաց, որչափ որ ծախսես. ով որ քու կամքիդ ու ուղղությանդ հակառակ կգործե, մահվամբ կփոխարինեմ այդպիսիներուն վարմունքը, գնա՛, ուրեմն, հաջողություն քեզ:

Այդ հանճարեղ ճարտարապետը համարձակ մոտեցավ գործին առանց որևէ պատասխանատվութենե վախենալու: Առանց ժամանակ կորցնելու Տրդատ ոգևորված ձեռնարկեց կաղապարներու պատրաստության և սկզբնավորեց շինության գլխուն ժողոված վարժ ու փորձված արհեստավորներու խումբ մը: Ամենայն հաջողությամբ առաջ գնաց, և ահա վերջապես եկավ օր մը, որ գմբեթը ամբողջովին կանգնած էր, ավելի հաստատուն և ավելի սիրուն ձևով մը:

Տրդատի մեծագործության համբավը արդեն հասեր էր Անի, ամեն կողմ կխոսեին անոր վրա:

Բարեպաշտուհի Կատրանիդե թագուհին առ ժամաբար հանձներ էր Սմբատի պակաս թողած կաթողիկեին շինության շարունակությունը մի այլ ճարտարապետի հսկողությանը: Բայց սրտանց կցանկանար, որ Տրդատ ինքը վերջացնե իր սկսած գործը, ուստի շուտով պատգամ հանեց Պոլիս և հրավիրեց Տրդատին վերստին Անի մայրաքաղաքը, իր ձեռքով սկսած գործը իրմով ալ վերջացնելու համար:

Տրդատը հազիվ վերջացուցեր էր ս. Սոփիայի գմբեթի գործը, երբ այս հրավերը ստացավ: Հայրենասեր արվեստագետին սիրտն ու հոգին դղրդաց, առանց վարանելու և սպասելու կայսեր իրեն խոստացած վարձատրություններուն, գնաց ներկայացավ անոր հրաժեշտի ողջույնը տալու:

Կայսրը զարմացած հարցուց.— Տրդատ, մի՞թե քեզի իմ հզոր պետության մեջ փառք, պատիվ ու մեծություն կպակասեր, որ որոշել ես գնալ այնպիսի փոքրիկ երկրի մը մեջ, որ հազիվ իմ հետին նահանգներես մեկուն հավասար է և շատ անբավական քու ստեղծագործական տաղանդը բեղմնավորելու համար, քեզ նման արվեստագետ մը իմ երկրիս պատիվ կբերե: Մնա այստեղ:

- Ոչ, արքա, հայրենիքս ինձի կկանչե... պատասխանեց Տրդատը հպարտությամբ,— Հայաստան պիտի երթամ (Ձեռագիրն այստեղ ընդհատվում է):

## Է. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԵՐԱԶԸ[1]

«Եւ տեսանէի ի մէջ քաղաքիս, մուտ յապարանսն արքունի, խարիսխաձև, ճախարակաձև խարիսխ ոսկի, մեծութեամբ իբրև զմեծ մի բլուր, և ի վերայ նորա սիւն մի հրեղէն, բարձր մինչև յոյժ, և ի վերայ նորա թակաղաղ մի ամպեայ և խաչն լուսաւոր ի վերայ նորա»:

[1] Այս հոդվածը տպագրվում է հեղինակի անավարտ սևագիր ձեռագրից, որն, ինչպես հեղինակն է վերջում նշում, քննելի և քննադատորեն մշակելի նյութ է:

Կազմող



Հիմնվելով սյունի նկարագրության խարիսխաձև, ճախարակաձև բառերուն վրա, կարծողներ կան, որ Զվարթնոց եկեղեցու բոլորակ ձևը լուսավորչավանդ ծրագիր էր, երազի միջոցավ և երազի մեջ մատնանշված տեղը, նույն իսկ Զվարթնոցի շինված տեղն էր: Հետևաբար Ներսես Շինող իր ժամանակին նախնյաց սխալը սրբագրող և երազի միջոցավ լուսավորչավանդ ձևի եկեղեցու ճշտությամբ իրագործողն եղավ:

Երազի մեջ մատնանշված տեղը՝ Վաղարշապատն էր թե՞ Քաղաքաղաշտի առապարը, այդ մասին վճիռ տալ կթողում հմուտ պատմաբաններուն, իսկ ինչ կվերաբերի զուտ ճարտարապետական նկարագրության իմաստին, ավելորդ է միանգամայն այլ ընդ այլո մեկնություններ տալ, այլ պետք է բացատրել Ագաթանգեղոսի ժամանակները ընդհանրացած մի քանի ավանդական սովորություններով, որոնք ճարտարապետության միջոցավ կարտահայտվին:[1]

Հունա-հռովմեական շրջաններուն, քաղաքական մեծամեծ անցքերու և մեծագործ մարդկանց հիշատակի հավերժացման համար սովորություն կար առանձնահատուկ հիշատակարաններ կանգնել: Այս հիշատակարաններուն մեջ ամենեն բնորոշներն էին հաղթական կամարները և սյունաձև կոթողները:

Սյուն կոթողներու մեջ, ամենեն նշանավորը 112 թվականին Հռովմի մեջ Տրայանոս կայսեր 44 մետր բարձրությամբ և 3,57 մետր տրամագծով կանգնած սյունը, որուն բունին վրա մագաղաթյա փաթույթին ձևով քանդակված էին իր օրով տեղի ունեցած նշանավոր քաղաքական անցքերը պատկերներու լեզվով:

Ոչ միայն Տրայանոսի հիշատակին կանգնված սյունը և միևնույն նպատակով կանգնվածները, այլև բոլոր հունա-հռովմեական ճարտարապետական ոճի սյուներն առ հասարակ բոլորակ են և կբաղկանան երեք գլխավոր մասերե, 1. խարիսխ, 2. բուն, 3. խոյակ:

Խարիսխներն առանց բացառության բոլորակ են և ճախարակաձև ինչպես ցույց կուտա երազատեսը, իսկ խոյակները որոնք զանազան դարաշրջաններու մեջ թեև տարբեր ձևեր ստացեր են, սակայն անոր վերևի մասը, որ քառակուսի տախտակի մը ձևն ունի, նույնությամբ անփոփոխ պահված է ամեն ոճի մեջ, գրեթե մինչև մեր օրերը և այդ մասին զուտ հայերեն բառն է թակաղաղ (Abaque կամ tailloir):

1 Ինչպես կերևի, դեռ 7-րդ դարուն Ներսես Շինողի գերեզմանին վրա միևնույն ձևով կանգնված էր կոթող մը, սյուն խարիսխներով և խոյակով:

Ագաթանգեղոս, իրեն ըսելով «Ի քաղաքէ մեծն Հռովմայ և վարժեալ հայրենի արուեստիւ, Հռովմայերէն և յունարէն ուսեալ դպրութիւն» անպայման տեսած էր ոչ միայն Տրայանոսի հիշատակին կանգնված հսկա սյունը Հռովմի մեջ, այլ և ուրիշ նմանները շրջակային մեջ:

Արդ, քանի որ թագավորական հրամանով Հռովմեն կանչված էր (Ագաթ., էջ՝ 9) քրիստոնեության և խաչի հաղթանակի մատենագրական հիշատակարանը կազմելու, անշուշտ հիշելով իր ծնած ու սնած երկրի մեջ սովորություն եղած ճարտարապետական հիշատակարանի վեհագույն ձևը— սյուն կոթողը, թերևս ցանկացավ Վաղարշապատի մեջ ալ կանգնված տեսնել Տրայանոսի կոթողին նման սյուն մը, որուն թակաղաղին վրա, փոխանակ Տրայանոսի, Տրդատի կամ ևս առավել ս. Գրիգորի արձանը կանգնած լիներ:

Սակայն ժամանակի ոգին փոխված էր, նորածին քրիստոնեությունը անողոք կերպով կհալածեր այն ամենը, ինչ որ հեթանոսական ճաշակ ու սովորություն կարտահայտեին. հետևաբար նյութապես անկարելի էր իրագործել զուտ քրիստոնեական մեծ հեղաշրջման հիշատակին հեթանոսական ձևով հաղթանակի կոթող կանգնել: Ուստի երազատեսն իր երևակայած սյան գլխին կկանգնե լուսաշող խաչը, որ հաղթական քրիստոնեության միակ խորհրդանշանն է: Գրիգոր Լուսավորիչ՝ գլխավոր սյունն էր քրիստոնեական հավատի և լուսավորության, որուն բարձրությունն ավելի էր քան ուրիշ սյուներ նույն երազին մեջ տեսնված:

Որովհետև քրիստոնեության հաղթանակի համար, տաժանելի տանջանքներով մարտիրոսանալու մեջ, Գրիգոր մենակ չէր իր ժամանակին, ուստի, երազի հեղինակը երևակայեց ուրիշ երեք սյուներ ևս՝ ի հիշատակ Հռիփսիմեի և իր ընկերներուն, որոնք ոչ նվազ արժանացեր էին, հավերժական հիշատակության՝ իբրև զորավիգ քրիստոնեության հաղթանակի և իբրև հավատո սյուներ, որոնց համար Ագաթանգեղոս Գրիգորի բերանով կըսե. «Ահա սիւնք հաստատուն կանգնեցան ձերում խարխուլ շինուածոյն: Այս այն սիւնք են, ասէ, որ ունին զբեռն ծանրութեան ձերոյ շինուածոյն փրկութեան. ահա երեք սիւնք և չորրորդ սիւնն կենդանութեան՝ որ զձեզ առ Աստուած վերացուցէ... և այլն և այլն» (Ագաթ., էջ 400): Գրիգոր թեև քաղաքագիտորեն ինք զինքը բնավ հավատո սյուն չանվաներ, սակայն Հռիփսիմյանց նահատակներու անունով կանգնված մատուռները երբ սյուն կանվանե, շատ պարզ է, որ չորրորդ սյունը ինքն է երազին մեջ առաջինը և ամենաբարձրը:

Այս երազի այլաբանական նկարագրութենեն եթե ուզենք եկեղեցիի մը շինության ճարտարապետական ծրագիր մը հանել, Զվարթնոցեն ավելի կպատշաճի այժմյան Էջմիածնի կաթողիկեին, որովհետև նկարագրությունը չորս աղեղնակապ սյուներու վրա զմբեթավորյալ եկեղեցիի մը պատկերը կուտա, առանց բոլորակի մասին ակնարկ մը ունենալու, բացի այնց խարիսխներու ճախարակաձևութենեն: Հետևաբար միանգամայն անտեղի է երազը Զվարթնոցի հետ կապելը:

Ինչպես հաճախ առիթ եմ ունեցեր խոսելու այն մասին, թե հայոց եկեղեցական ճարտարապետական սկզբնական ձևերը ուղղակի ազդված են մեհենական ձևերեն, նույնպես այս երազին մեջ տրված ճարտարապետական ծրագրին մեջ, ես կտեսնիմ դիցապաշտության հեռավոր մի ազդեցությունը, խառնված քրիստոնեական սկզբնական դարերուն, երևան եկող չորս սյուներու վրա, զմբեթավորված եկեղեցիներ կանգնելու սովորության հետ:

Դեռ Հռովմեացիներեն առաջ, Հունաստանի մեջ, սովորություն կար, սյունազարդ մեհյաններու յուրաքանչյուր սյունը նվիրել մի առանձին աստվածության, և կառուցված տաճարն այդ բոլոր աստվածություններու անունը կստանար սյուներու թվով: Հետևաբար հեղինակը երևակայությամբ սլացեր էր դեպի հեթանոսական դարեր և այնտեղ գտնված օրինակներեն ուզեր է օգտվել նորադարձ քրիստոնեության հավատո չորս սյուներու անվամբ եկեղեցի մը կանգնել՝ չորս սյուներու վրա զմբեթավորված որպես երկնային աստվածային հովանավորության, և չորս սյուներուն յուրաքանչյուրը նվիրված լինեին հավատո չորս սյուներու անվան:

(Քննելի և քննադատորեն մշակելի նյութ հաղճեպով գրված):

## Բ. ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*(Զեկուցում Պետերբուրգի Գիտությանց Կայսերական հարգելի կաճառին)*[1]

Թե որչա՞փ հին է հայոց ճարտարապետության ծագումը, ժամանակի թանձր մթության մեջ կորած է: Նախաքրիստոնեական շրջանի մեջ, հայոց միահեծան կայսրություններու աշխարհակալության և զարգացման մասին քանի մը պատմագրաց տված պերճաբան վկայություններ միշտ պիտի մնան իբր առասպելներ, քանի որ այդ զարգացման ապացույցներ, եթե կան, երկրի ծոցին մեջ հողի թանձր շերտի տակ ծածկված են:

Արտաշատ, Արմավիր, Դվին նույնպես և Վասպուրականի և այլ հայաբնակ գավառներու հետազոտութենե կույս մնացած հողաբլուրներ թերևս տան մեզի դրական փաստեր այն ատենվան զարգացման մասին, սակայն քանի որ այժմ ոչինչ չունինք ի ձեռին, մեզ կմնա դատել աչքի առջև եղած իրական ապացույցներու վրա:

Թեև հայերը, բարձրագույն կրթության հասած ազգերով շրջապատված՝ իրենց աշխարհագրական դիրքով չէին կարող չազդվիլ անոնց քաղաքակրթութենեն, սակայն գեղարվեստի պատմության համար, տրամաբանական հետևություններ, այնքան ալ զորեղ ապացույցներ չեն կարող համարվիլ, երկրի մը ընդհանուր զարգացման մասին: Միայն կա մի դրական ապացույց, որով կարող ենք հայ գեղարվեստի ծագումը, անոր գոյության գործնականապես ապացուցված թվականներեն քանի մը դար ևս՝ ավելի հեռու, դեպի հեթանոսական շրջանը տանիլ:

Հայկական ոճի ամենահին նմուշ, մեզի հասած 4-րդ և 5-րդ դարու հիշատակարանները՝ դատելով իրենց բարձրագույն կատարելության հասած երևույթեն և զանոնք կառուցողներու կիրթ ու հմտագույն ճաշակեն, բնականորեն պետք է հետևցնել, որ անոնք երկար դարեր առաջ սկված և անընդհատ աստիճանական զարգացման ենթարկված գեղարվեստի մը արդյունք են:

Ինչ որ ալ ըլլա հեռավոր անցյալը, մեզ հասած տարրերու վրա չափելով, կմնա հետաքրքրվիլ թե ո՞ւր էր հայոց գեղարվեստի աղբյուրը, ի՞նչ ճանապարհով մտավ Հայաստան, և ի՞նչ պարբերական ազդեցություններն անցնելով, հասավ յուր վերջին անկման շրջանին:

Այս հարցը դժբախտաբար դեռ անլուծելի կմնա: Մինչև ցա՛րդ գիտական ուղևորներու եզրակացությունները, միշտ զիրար հակասեր են, հայոց ընդհանուր հիշատակարաններու վրա հավաքական ուսումնասիրություն կատարած չըլլալուն համար: Մի փոքր շրջանի մեջ թռուցիկ արշավանքներ բավական չեն ընդհանուր արվեստին վրա գաղափար կազմելու, վասնզի, հայկական զանազան նահանգներու մեջ ճարտարապետական արվեստը՝ իրարմե զգալի չափով տարբեր ազդեցություններու ենթարկված այլազանություն մը կներկայացնե: Հետևաբար յուրաքանչյուր գիտնական հետազոտող, տեսած նմուշներուն վրա պիտի ձևեր յուր կարծիքներն ու ենթադրությունները, ընդհանուրի վերաբերմամբ:

Հետազոտությանցս համառոտ ամփոփումը գրի առնելով, նոր կարծիք մը, կամ նոր ճշմարտություն մը հայտնած ըլլալու հավանականությունը երբեք չունիմ, գուցե ես պարզ արձագանքն եմ քան զիս կանխող բազմահմուտ ուսումնասիրողներու, սակայն իբրև գեղարվեստի խոնարհ մշակ, ես ալ պարտական զգացի ինքզինքս, հաղորդել թղթին, գուցե և ապագային, այն ամենը, որոնք ինձի նորություն և հետազոտութենե զուրը թվեցան:

Հայ ճարտարապետության ոճը և կազմությունը բնորոշող թեև շատ բան գրված չէ, սակայն եղածներն ալ ընդհանրապես, անոր՝ բյուզանդական ազդեցության տակ կազմված ըլլալուն համամիտ են: Ոմանք ալ հակված են այս կամ այն մասերուն մեջ տեսնել արևելյան ոճերու ազդեցությունը, բացի իր ինքնուրույն ստեղծագործական ճոխ մասերեն:

Այս հակասությունը բառնալու համար էր, որ վերջերս գիտական ճարտարապետ մը Փարիզի Սորբոնին մեջ, հատկապես հայոց ճարտարապետության մասին կարդացած դասախոսության մը ժամանակ, ուշադրությունը կհրավիրեր մասնագետներու, նորագույն հետազոտություններու և հայտնություններու համեմատ՝ քննել թե, այսուհետև որչա՞փ հավանական կարելի է համարել հայոց ճարտարապետության ուղղակի բյուզանդականեն ազդված ըլլալու կարծիքը:[1] Միևնույն ատեն հարկ չհամարեր քննել թե ինչ չափով Բյուզանդիա օգտված էր հայ ոճեն:

Ես հակվելով բոլորովին այս վերջիններու կողմը, առավելագույն համոզումս եղած է, թե հայ ոճը բնավ չէ ենթարկված արևմտյան ոճերու, մինչև 11-րդ դարու սկիզբը: Այս դարեն սկսյալ, հազիվ կես դար, արևմտյան ոճերը հայ արվեստին մեջ թեթև հետքեր թողելեն հետո, իսպառ անհայտացած են, միանգամայն տեղի տալով հանկարծական անկման մը՝ որը տևած է ավելի քան մի դար, մինչև նորագույն վերածնություն:

Պատմական տեսակետով ալ դատելով, փոքր ինչ անբնական կթվի ինձ բյուզանդական ճարտարապետության ազդեցությունը հայոց վրա, քանի որ գիտությունը պարզաբանած է բյուզանդականեն կատարելապես Փոքր Ասիո բազմազան ոճերու խառնուրդե մը կազմված ըլլալը, որոնց մեկ երկուքին փոխանցման ուղիղ ճանապարհը Հայաստանն էր յուր անընդհատ և խուտներամ գաղթականություններու միջոցով:

Բյուզանդիայի գահի վրա տասնյակ կայսրներ բարձրացնելու չափ դիրք և ազդեցություն գրավող գաղթականության մը համար, տարօրինակ բան չէ հավատալ, որ անոնք իրենց հետ փոխադրած քաղաքակրթության արժանավորություններու շնորհիվ կարողացած էին շահել իրենց ձայնը քաղաքական գործերու մեջ իսկ:

Բյուզանդական կայսրության անմիջական դրացի երկիրներու մեջ, որոնք հաճախ մնացած են անոր երկարատև թևարկության տակ, գուցե գտնվին անոր ուղիղ ազդեցությունը կրող արվեստագործություններ, այս կողմերը որ Ասորիքի և Պարսկաստանի մշտնջենական բաժինը եղած է գրեթե, անոնց արվեստներուն ալ խոր հետքերը հստակ կերպով նշմարելի են մինչև վերջը:

Արևելյան ոճերու ենթարկման այս ընդհանուր հոսանքին մեջ կա սակայն մի ուշագրավ, բայց անհետևանք բացառություն՝ Գառնիի մեջ, ժողովրդական ավանդությամբ Տրդատա թախտ անունով:

Տրդատա թախտը զուտ հունա-հռովմեական ոճ ունի և միայն արդյունք է այն կառուցողին ի մանկութենե Հռովմի մեջ ստացած դաստիարակության:[2]

---

[1] Գիտությանց ճեմարանի կնիքի թիվը 1417, թվական 17 դեկտ. 1907:

[1] «Բանասեր» հանդես, հրատ. Կ.Ց. Բասմաճեան, Փարիզ, 1906, հատոր 8, № 4:

[2] Թորամանյանի դիվանում գտնվող մի առանձին թղթի վրա այս հարցի մասին գրածը տեղին համարելով դնում ենք այստեղ իբր ծանոթություն: Կազմող

«Ճարտարապետության պատմությունով զբաղվող գիտնականներու մեջ, գրեթե ընդհանուր համոզում է, որ արևելյան արվեստների դեպի արևմուտք փոխանցելու ճանապարհը կամ կամուրջը եղել է Հայաստանը: Ժամանակագրապես փաստացի ապացուցված 4-րդ և 5-րդ դարուն կանգնված հուշարձաններ կան Հայաստանի մեջ, որոնց քննությունը ցույց կուտա թե, հայ ճարտարապետության վրա ներգործության հոսանքների աղբյուրները արևելքում և հարավում կգտնվին, ոչ թե արևմուտքում, ինչպես կարծում էին ոմանք, հայոց ճարտարապետությունը դեռ հիմնովին չուսումնասիրված: Թեև անվիճելի է մինչև 7-րդ դարու վերջը, ինչպես նաև 10–11-րդ դարերուն, հայ-ճարտարապետության վերածնության շրջանին կանգնված շենքերի մեջ հունա-հռովմեական թեթև գծերի գոյությունը (բացառությամբ Գառնիի Տրդատա հովանոցի, որը խիստ զորեղ կերպով հռովմեական ոճի ազդեցության տակ է), այնուամենայնիվ այդ արևմտյան ոճի ազդեցության շողքերը, ուղիղ գծով Հայաստան մտած լինելը չափազանց տարակուսելի է: Միանգամայն պարզ է որ, արևմտյան ոճերը Հայաստան մտել են Սիրիայի ճանապարհով, իրենց հետ բերելով նաև սիրիական ոճի մի շարք մոտիվներ, որոնք ծուլված ու հայացած են տեղական արվեստագետների քմահաճույքին համեմատ, այնպես որ, մինչև 14–15-րդ դարերը Հայաստանի ճարտարապետության մեջ քաղաքացիություն ստացած արևմտյան ոճի գծերը հազիվ նկատելի են հայ ճարտարապետության ընդհանուր ներդաշնակության մեջ: Ի նկատի ունենալով, հայոց ճարտարապետության վրա սկիզբեն մինչև վերջ արևելյան ճարտարապետությունների ազդեցությունը, բնականորեն հարց կծագի թե, եթե արևելյան կրոնները խորապես ազդել են հին հայոց կրոնի վրա, և եթե ազդել են, ինչ հետքեր մնացել են այդ խոր ազդեցությունը ապացուցանող, այս մասին պատմական

Գեղարվեստի հայրենիքին մեջ, անհուն հրաշակերտներու հիացման թարմ տպավորության տակ, Տրդատ յուր վերադարձին շուտով չէր կարող հաշտվիլ արևելյան ցուրտ և ծանր ոճերու հետ: Այս շենքը ինքնին մեծ ապացույց է ժողովրդական ավանդության ստուգության:

Եթե իբր անսխալ ընդունենք անոր վերակազմությունը[1] և դետալներու ընդօրինակությունը, այն ատեն անմիջապես աչքի կզարնե արևելքի ճարտարապետներու՝ իրենց համար բոլորովին օտար այս նոր ոճին իրագործման մեջ ցույց տված ինքնուրույն տարրերի ներմուծման ընորոշ գծերը:

Ծրիզի անհամեմատ նեղությունը թեև զգալի է, սակայն 2-րդ դարուն, հռոմեական գեղարվեստի անկման սկզբնաշրջանին մեջ, անոր նման, և երբեմն առանց ֆրիզի entablement-ներ երևցած ըլլալուն պատճառով, կարելի է մասամբ քննադատութենե ազատ համարիլ: Բայց ուրիշ մասերու մեջ հռովմեական և արևելյան գծերու ներդաշնակ դասավորումը ակնհաճո կերպով չեշտված է:

Ծրիզի միջի քանդակները հռովմեական acanthe-ներու գեղեցիկ ու ճկուն ոլորումները կներկայացնե արևելյան ոճի տերևներով:

Իրաց այս վիճակին մեջ, պետք է խոստովանիլ, որ այս շենքը հայ հիշատակարաններու շարքին մեջ չքեղ գլուխ գործոց մը կներկայացնե:

Բայց և այնպես այս գեղեցիկ ոճը, չգտնելով ոչ մի համակրող և հետևող, միայնակ մի երևույթ մնացեր է ամբողջ հայ գեղարվեստի պատմության մեջ:

Գեթ ինձի չէ հաջողված տեսնել հայոց մեջ ուրիշ շինություն մը, որ ունենար Տրդատի թախտին չափ զուտ արևմտյան տարազ:

Բագրատունի Գագիկ Ա. հրապուրված Զվարթնոցի անօրինակ վայելչազարդության համբավեն 1000 թվականին, Անիի մեջ կանգնել կուտա անոր ընդօրինակությունը, սակայն Անեցի ճարտարապետներ, պահելով անոր՝ հայոց մեջ վաղուց ընդունված բոլորշի և քրիստոնեական խորհրդանշան խաչաձև հատակագիծը, բոլորովին կմերկացնեն յուր զարդերեն և կհագվեցնեն իրենց սեփական տարազով:

Ահա այս 1000 թվականին, կես դար տևողությամբ մտած կերևին հայոց մեջ արևմտյան ոճի հետ ունեցած ընդհանուր մանրամասները: Այս խառնուրդները կնշմարվին Գագկաշեն ս. Գրիգորի իրանը շրջապատող գոտիին վրա և դրանց շրջանակներու մեջ կաթողիկեի հարավային ճակատի արևելակողման նիշի կամարին վրա. Հոռոմոսի ս. Հովհաննեսի տաճարին գավիթի առաստաղին զարդաքանդակներու մեջ և այս շրջանի ոճին ենթարկվող բոլոր եկեղեցիներու դռների շրջանակներու վրա:

Այստեղ ի դեպ է ըսել թե, այս թվականին և կամ ավելի ճիշտ՝ 11-րդ դարուն, ավելի շեշտված կերևին հայոց եկեղեցական հատակագծային ձևերը արևմտյան քրիստոնեից եկեղեցիներու վրա, հավանականաբար դավանաբանական ծեսերու ընդհանրության միջոցով: Այս մասին ունիմ առանձին հետազոտություն, բայց կանխահաս կհամարիմ գրել, դեռ վերջնական եզրակացության հանդած չըլլալուս համար: Միայն ստույգ է, որ այս թվականներեն սկսյալ, հայ եկեղեցյաց խորաններու երկու կողմը գտնված պարզ պահարանի պաշտոնով շինված քառակուսի սենյակները աբիդավոր ավանդատուներու և կամ մատուռներու փոխվեր են և ավելցվեր են ապաշխարողաց գավիթներ: Նույնը կտեսնենք նաև արևմտյան քրիստոնեական տաճարներու մեջ՝ մտից դռներու առջև:

Նախնական կերպին կվերաբերեին Էջմիածնի,[2] Ղըզլ-Ղալայի, Տեկորի, Մրենի, Հռիփսիմեի, Գայանեի, Ղոշավանքի ս. Մինասի և ուրիշ շատ մը եկեղեցիներ, որոնց շինությանց թվականը այս դարեն առաջ է, ասոնք ոչ աբսիդավոր ավանդատուն ունին և ոչ ալ ապաշխարողաց գավիթ: 11-րդ դարեն սկսյալ, այնպիսի ստիպողական պահանջ դարձեր են ավանդատունները և գավիթները, մանավանդ Անիի մեջ, ուր նախապես շինված շատ մը եկեղեցիներու արևելյան կողմը քանդելով, մեծ դժվարությամբ սեղաններու երկու կողմը ավելցուցեր են փոքրիկ ավանդություններ, առանց նույնիսկ նկատի ունենալու նույն եկեղեցիներու արտաքին տեսքի սաստիկ տգեղանալը, ինչպես Ապուղամրենց ս. Գրիգոր և միջնաբերդի երկու ութանկյունի եկեղեցիները, որոնք՝ հետո՝ վերածվել են անկանոն բազմանկյուններու: Իսկ գավիթներ անխտիր ավելացված են ամեն եկեղեցիներու առջև, նույնիսկ չինայելով անոնց նախկին գեղարվեստական ներդաշնակ երևույթին: Մայր եկեղեցվո շինված ժամանակ այդ գավիթի սովորությունը դեռ մտած չերևիր Անիի մեջ, որովհետև Մայր եկեղեցվո գավիթն ալ ուշ ժամանակ ավելցված է: Ըստ երևույթին այս գավիթները շուտով փոխելով իրենց նշանակությունը, գերեզմաններու և դամբարաններու վերածվեր են:

Հայոց և հունական ոճի փոխազդեցությունը ենթադրել տվող գլխավոր մանրամասներեն մեկը խոյողն է (volute). այս ենթադրությունը կարող էր արդարանալ այն ժամանակ երբ խոյողի ծննդավայրը Հոնիան կկարծվեր, ինչպես որ Պերսեպոլիսի ավերակներուն մեջեն գտնված սյունի մը խոյակին վրա վերեն վար ուղղահայաց դիրքով՝ քանդակված խոյողները Քսերքսեսի գերի վարած հույն վարպետներու գործ համարվեցավ: Բայց երբ Եգիպտոսի և Ասորեստանի պեղումները ճշտեցին անոր իսկական հայրենիքը և գծեցին անոր փոխանցման ուղին, այն ատեն այս ենթադրությունը իր ուժը կորսնցուց: Կարելի կըլլար հետադարձ ազդեցություն համարել հայոց վրա, եթե, նախ անոնք հայոց մեջ արևելքի նախնական գծերով մնացած չըլլային, երկրորդ, եթե խոյողեն զատ հունական ոճը շոշափող գեթ աննշան չափով ուրիշ մանրամասներ ալ գտնվեին, երրորդ, եթե, պրոֆ. Մառի Անիի գյուղի մեջ պեղած հեթանոսական գերեզմաններե դուրս եկող կավե ամանի մը կողի վրա բարձրաքանդակ նկարված խոյողը անոր, նույնիսկ հեթանոսական դարերու մեջ գործածված ըլլալը չապացուցաներ:

Ուրեմն ասկեց կհետևի, որ Առաքելոց եկեղեցվո և Գագկաշեն ս. Գրիգորի վրա եղած խոյողները վերջին շառավիղներն էին, որովհետև անոնց թվականներեն հետո շինված հիշատակարաններու վրա այլևս չեն երևեր, մինչդեռ անկեց առաջ հաճախ գործածված են մինչև Զվարթնոց եկեղեցին, թերևս ավելի հիներն ալ ունին, բայց դժբախտաբար ես առիթ չեմ ունեցած հետազոտելու:

Եթե ընդունենք խոյողին արևելքեն ուղիղ փոխանցումը դեպի Հայաստան, այնուհետև ամեն մանրամասնություն հայոց ճարտարապետության մեջ, միմիայն ասորական և պարսկական մանրամասներու զուգընթաց նախատիպեր կմնան, որոնցմե ոմանք գործածված իրենց բնավայրի իսկական ձևով, իսկ ոմանք այլափոխված և ճոխազարդված սեփական հայ ճաշակով:

Այժմ կհամեմատեմ քանի մը գլխավոր մանրամասներ, տեսնելու համար անոնց հարազատությունը ասորական և պարսկական նախատիպերու հետ:

Առհասարակ քիվերը սկզբեն մինչև վերջ չորս տեսակ ձևափոխության ենթարկված կերևին, որոնցմե մեկը ամենեն հին շրջանին մեջ գործածված է, այսինքն 6-րդ դարեն մինչև 7-րդ դար, և կտեսնվի Պտղնիի, Մրենի, Թալինի և Մաստարայի եկեղեցիներու վրա, որոնք կներկայացնեն երբեմն մեկ և երբեմն քանի մը ճարտարապետական գծերով խառնված ատամնաշարեր (denticule) Պերսեպոլսյան համաչափությամբ, ատամները երբեմն կիսաբոլոր և երբեմն քառակուսի և երբեմն ալ առարկաներու պատկերների վերածված (Պտղնի):

Մյուս երկու տեսակները միաժամանակ հավասարապես գործածված են 7-րդ դարեն մինչև 11-րդ դար: Առաջին օրինակը կներկայացնե նեղ ճակատի մը հաջորդող քառորդ բոլորակի խոյողակ մը երբեմն վերջացած պատին կից listele-ով մը: Այս օրինակները զանազան համաչափությամբ կտեսնվին Թալինի ս. Աստվածածնի, Տեկորի, Ալամի, Անիի Առաքելոց եկեղեցիի և Հովվի եկեղեցիի վրա. իսկ երկրորդը՝ առհասարակ ամեն եկեղեցիներու վրա, գլխավորաբար Անիի մեջ: Սա ևս կներկայացնե առաջակարկառ մը՝ բաղկացած նեղ ճակատե մը և պատին մոտիկ գավազանե մը: Ճակատին և գավազանին մեջտեղ մնացած լայն պարապությունը քանդակված է ամեն տեղ միօրինակ մանվածոներով: Ասոնց մեջ կան նաև նեղ ճակատին տակ գավազանը (listel) կրկնված և երբեմն ալ լայն պարապությունը չքանդակված օրինակներ:

Առաջին օրինակին Հայաստան մտնելու ճանապարհը խիստ պարզ է Եգիպտոսեն սկսած մինչև այնտեղ հասնելը:

Երկրորդ օրինակը՝ եթե նախկին խողովակաձևին բարեփոխությունը չէ, կարելի է տեղական ստեղծագործություն համարել, որովհետև ինձի տակավին չէ հաջողված տեսնել այս ձևի նախատիպը:

Վերջին չորրորդ օրինակը պարզ բարեփոխումն է նախկին մանվածո քանդակազարդ առաջակարկառին, երբեմն երկու և երբեմն երեք գավազանով, միայն պարապություններու մեջ փոխանակ միօրինակ մանվածոներու ուրիշ նոր շրջանի բազմաթիվ տեսակ քանդակներով զարդարված են: Այս ձևը անխտիր ամեն շինությանց վրա գործածված է 13-րդ դարեն սկսյալ մինչև վերջնական անկումը:

Նեղ ու երկար բունով և գնդաձև (bulbe) խոյակով ու խարիսխով արտաքին որմնասյուներու հին նախատիպը դուրս եկավ Խորսապատի պեղումներեն. ուրկեց անցեր էր այս ձևը Պարսկաստան և անկեց ալ Հայաստան լիովին անփոփոխ

---

[1] Այս վերակազմությունը տեսեր եմ Ալիշանի «Այրարատի» մեջ երես 364–366, սակայն ընդհանրապես անհարազատություն և տեղագրական սխալներ այնքան շատ են այնտեղ, որ ակամա ստիպված եմ կասկածել:

[2] Էջմիածնի երկու թևերուն մեջի սեղանները հետո են ավելցուցած:

նմանությամբ: Խորսապատի մեջ կբացակայեր անոր խորանարդաձև abaque-ը, իսկ Պերսեպոլսի մեջ՝ երկու մասերը առանձին գործածելի էին: Հայեր այդ երկուքը իրարու միացուցեր են իրենց մեջ, բայց տարօրինակ է, որ այս բարակ բունով արտաքին որմասյուները 9-րդ դարեն առաջ ոչ մի տեղ գործածված չկա. թեև Զվարթնոցի ներքին որմասյուները իրենց երկարությունով կհամապատասխանին, բայց խոյակներով և խարիսխներով շատ տարբեր են: Զվարթնոցի մեջ գնդաձևը գործածված է միայն ներքին սյունաշարի մեծ խոյակներուն վրա իբրև կողով:

Գալով մանվածո քանդակներուն՝ նույնպես մի թեթև օրինակը Խորսապատի մեջ աղյուսի վրա նկարված գտնվեցավ, որուն բացի բազմաթիվ տեսակ խառնուրդները (composition), որ իրենք հորինեցին իրենց ճաշակով, ճիշտ նմանն ալ գործածեցին հայեր մինչև վերջը:

Ամփոփելով տեսությունս, վերջնականապես հասած եմ այն եզրակացության, որ հայոց ճարտարապետության ամբողջ կմախքը՝ ասորական և պարսկական արվեստների մասերով կազմված է. ինչ մաս որ վերցնենք հայոց ճարտարապետության մեջեն, նույնին օրինակները կգտնենք ասորվոց ու պարսից մեջ, ոչ միայն գծագրական ձևերով, այլ և շինարարական օրենքներով:

Բայց և այնպես, հայեր, եթե փոխ առան այս մասեր, անոնց հետ իրենց սեփական ստեղծագործությունները խառնեցին զանոնք անճանաչելի դարձնելու չափ օտարացնելով: Հովվի եկեղեցիին ներքին կողմի վեց գրեթե ամբողջ կիսաբոլոր քարաշեն աղեղներու առանց սյունի դեպի կեդրոն հավաքումը, միշտ պիտի մնա հայ ստեղծագործության պսակը, թեև Կորդովայի հռչակավոր մզկիթին մեհրապը կհիշեցնե այս ձևը, սակայն նախ որ նա կազմված էր փայտով, երկրորդ՝ անոր մեջ աղեղները խաչաձևված են ամենեն բարձր կետը կեդրոնի վերածելով, մինչդեռ Հովիվի եկեղեցիին մեջ կեդրոնը գրեթե մոտ է հավասարվելու աղեղներու, որմասյանց գլխուն վրա հանգչող մասի բարձրության, ինչ որ բոլորովին հակառակ կերպ մը կներկայացնե: Կորդովայի մեհրապի աղեղներուն ուղիղ նմանություններ կտեսնվին Հախպատի և Ղոշավանքի խաչաձևված կամարներու վրա, որոնք շինված են 13-րդ դարուն մեջ:

Առ այժմ փոխանակ մի առ մի թվելու այն ամենը, զորս հայոց սեփական ոճերու արդյունք համարած եմ, ամփոփ կերպով պիտի բնորոշեմ զայն:

Հայոց ճարտարապետության առանձնահատկությունը կկայանա արտաքուստ մասերի ներդաշնակ դասավորության և գեղեցիկ ու վայելուչ բաղադրության (composition) անվերջանալի կերպերուն մեջ: Շենքի կմախքներու մեջ պահելով ընդհանուր ձևը, ըստ ժամանակի պահանջման, զարդարանքներու բաղադրության և դասավորության մեջ հազվադեպ է տեսնել մեկը մյուսին նմանող օրինակ մը: Առանց հպատակելու համաչափության օրենքներու, անվերջ մրցեր են մեկզմեկե տարբեր բաներ արտադրելու և մեկզմեկու գերազանցելու համար, և հիրավի, մասնավորապես, վերջին շրջաններու մեջ, անթիվ քանակությամբ իրագործեր են միշտ սիրուն ու վայելչազարդ հիշատակարաններ:

Կմասնավորեմ խոսքս Անիի վրա, ուր եղեր է իմ աշխատությանս գլխավոր կենտրոնը: Անիի մեջ, Կամսարականներու ժամանակեն հազիվ կմնան մի եկեղեցի, պալատին կից և քանի մը հիմեր, պատերու մնացորդներ անոր շուրջը: Այս մնացորդներն ալ բավական են պարզելու անոնց գեղարվեստական և շինարարական ճաշակը:

Այս առաջին նմուշները բաղդատելով ամենավերջին նմուշներու հետ, Անիի մեջ կտեսնվին երեք զանազան զարգացման և ձևափոխության շրջաններ, որոնց առաջինին կպատկանի պալատի եկեղեցին: Թեև արտաքուստ մասամբ նորոգված, գույնե և վրայի կամարն ալ, սակայն ներքին պատերը, 5-րդեն 7-րդ դարու արվեստագիտական դրոշմը կկրե իր սյուներով, խոյակներով և այլ զանազան զուտ արևելյան քանդակներով: Այս շրջանին կպատկանին, եթե չեմ սխալիր, Ղոշավանքի ձորի մեջ ս. Մինաս անվանված եկեղեցին և բլրին վրա ս. Հովհաննես տաճարի հարավային կողմը անանուն մի փոքր մատուռ: Ապուղամրենց ս. Գրիգորը շատ հեռու չի մնար այս ոճերեն իր միջին տարազով, սա կկրե իր վրա հին արվեստի վերջին շառավիղները և նոր շրջանի արշալույսի ցոլքերը: Արձանագրության մեջ հիշատակված պատմական անվամբ մը կհաստատվի, որ այս եկեղեցին շինված է 10-րդ դարու կեսեն հետո, հետևաբար սկիզբը Անիի ճարտարապետական երկրորդ շրջանին:

Երկրորդ շրջանին մեջ, նախկին լուրջ ու ծանր երևույթները սկսած են անհետանալ շինությանց վրայեն, գողտրիկ վայելչություն մը սկսած է զգալի դառնալ անոնց ընդհանուր երևույթին վրա, սկսած են բարակ որմասյուներ զարդարուն կամարներով միասին պճնել դատարկ պատերը, երկրաչափական գծերով բազմահյուս մանվածոներ իրենց վայելուչ տեղերը գրված են այդ ընդհանուր ներդաշնակության մեջ և տեղ տեղ մանվածոների մեջ հյուրընկալված են արաբական և պարսկական տերևներու փոքրիկ խառնուրդներ: Հազիվ մի դար ապրած է այս շրջանը և դեռ չի տված յուր վերջին կատարելագործության պտուղները, ենթարկվեր է վաղահաս ճակատագրական անկման մը 11-րդ դարու կեսին մոտ:

Ալփասլանի տիրապետությենեն անմիջապես հետո, ավելի քան մի դար, գեղարվեստական կյանքը բոլորովին մեռեր է այս քաղաքին մեջ: Մինչև 13-րդ դարու սկիզբը, ոչ միայն Անիի մեջ, այլ և շրջականերու մեջ իսկ քար քարի վրա դրված չերևիր, ո՛չ պատմական հիշատակություն կա, և ո՛չ ալ շինության մի արձանագրություն, որ այդ շրջանին պատահի, բացի Բագնայրի մեջ մի փոքրիկ մատուռե: Բացի նորեր շինվելը, եղածներն ալ մեծ մասամբ քանդվեր ու ոչնչացվեր են:

Կուլտուրայի բացարձակ թշնամի տարր մը տիրապետելով միջնաբերդի Բագրատունյաց պալատին, ոչ միայն զայն հոչոտված ու այլանդակված դիակ մը դարձուցեր է, այլև հավաքելով պալատի անմիջական մոտիկ միջավայրի վրա համացեղներու մի ոհմակ, սկսյալ պալատեն մինչև Աշոտի պարիսպը, ամեն բան փճացուցեր են անխնա: Պատմական ավանդությամբ ծանոթ բազմաթիվ եկեղեցիներեն հազիվ չորս հատի հետքերը մնացեր են, որոնց մին իր վիթխարի փլատակով և բոլորշի հատակագծով, պատմության ծանոթ երկրաշարժե կործանված Ամենափրկիչը ըլլալ կկարծեմ, հին ոճով քանդակներ թափած են մեջը, մասնավոր ուշադրության արժանի են գմբեթին կոնաձև մասին քանդակազարդ ծածկի բեկորները, որուն միակ օրինակը եղած էր Առաքելոց եկեղեցին: Մնացյալ երեք ավերակներեն մեկը միայն ծանոթ է հիշատակարանով և մյուսները անհայտ են:

Ամբողջ այս ընդարձակ միջավայրին մեջ, հակառակ ամեն տեղե ավելի իր դիրքի գեղեցկության և պալատի մոտավորության, այլևս ոչ մի կարևոր շինության հետքը չկա, ամեն տեղ ցեխով շաղախված խեղճ ու ողորմելի պատերու փլատակներ միայն կտեսնվին: Հայտնի բան է, որ տիրապետող ստորին տարրի այնտեղ բազմանալեն, հարստահարված հայերը հետզհետե քշվեր են ներքին պարիսպեն դուրս, եղեր է ժամանակ մը, որ այդ մասը զուտ մահմեդական քաղաքամասը կազմեր է, մեկ կողմեն իրեն սահման ունենալով խաներու ապարանքը և մյուս կողմեն մզկիթը կամ Աշոտի պարիսպը: Հետզհետե այնքան հաստատուն դիրք գրաված կերևին այնտեղ մահմեդականները, որ 13-րդ դարուն Զաքարեի տիրապետության օրով իսկ, որուն հետ կսկսի նաև Անիի ճարտարապետության վերածնության երրորդ շրջանը, հնար չէ եղած հեռացնել զանոնք այդ տեղեն, և այդ մասն ալ չենցնել ինչպես դրսի ընդարձակ տարածությունը:

Բռնության կապանքներեն ազատված գեղարվեստասեր ժողովուրդը, կարճ ժամանակամիջոցի մը մեջ, անհավատալի արագությամբ, Աշոտի պարիսպեն դուրս ծածկեր է մինչև այն նմանը չտեսնված անթիվ շքեղ տաճարներով, ապարանքներով և անհատական բնակարաններով:

Առաքելոց եկեղեցիի արևմտյան կողմի ձորեզրեն սկսյալ մինչև Լուսավորիչ եկեղեցի և Գլիձորի եզերքները, երրորդ վերածնության շքեղ արվեստագործությամբ կանգնված քանդակազարդ տաճարներու և ապարանքներու համախմբում մը կներկայացնե, հարյուրե շատ ավելի կարելի է համարել այս տարածության վրա եկեղեցիներու և մատուռներու մնացորդներ, որոնց շուրջը թափված գեղաքանդակ բեկորների մեծ մասը գեղարվեստի վերջին երրորդ շրջանի դրոշմը կկրեն, մինչդեռ Աշոտի պարիսպեն ներս, մինչև այսօր ոչ մի քար և քանդակ չէ տեսնված, որ գտնե քանդակված ըլլա, բացի հիշածս եկեղեցիներու բեկորներեն Զաքարյան շրջանի հատուկ ոճով:

Երրորդ շրջանին մեջ բոլորովին այլափոխված է հայ ճարտարապետությունը: Իբր ավանդական սրբություն, պահելով միայն եկեղեցիներու հատակաձևերը և արտաքին երեսներու կամարակապ սյունազարդերը, արտադրեր են նորօրինակ քանդակներու անհուն բազմազանություն: Զափական գծերով մանվածոներ հազիվ կտեսնվին, ոստեր, ցողուններ և տերևներ են, որ այլևս գողտրիկ ճկունությամբ կհյուսվին՝ իրենց ոլորումներու մեջ տեղ տալով նրբաքանդակ թռչուններու և կենդանիներու:

Արաբական արվեստը զորեղ գծերով ներդաշնակորեն պատվաստված տեղականին հետ, հիանալի վերածնության ակնախտիղ պատկեր մը կներկայացնե: Այս շրջանի գործեր են. ս. Գրիգոր Լուսավորիչ (Նախշլի), Ղըզլղալայի ս. Աստվածածին, Բեխենց վանք, Փրկիչի գմբեթը, Առաքելոց եկեղեցիի գավիթը և այն ամեն մնացորդները, որոնց մեջ առանց կարկինի և քանոնի օգնության ձեռքի ճարտարությունն ալ կփայլի:

Անիի ճարտարապետության վերածնության այս մեծ թվականը կարծեք Զաքարեի գոյության հետ միայն կապված էր: Անոր մահվանեն հետո, կրկին զգալի է, շինություններու աստիճանական նվազման հետ, մեծ փայլով սկված գեղարվեստի կա տակավ առ տակավ նսեմացումը, հազիվ կհիշատակվին կարևոր շինություններ, մինչև կես դար, այնուհետև վերստին կսկսի մարել եռուն կյանքը և հալ ու մաշ վիճակի մեջ կհասնի մինչև այն դժբախտ թվականին, երբ այլևս տխուր փլատակներու տակ վերջնականապես կծածկվի այս բազմադարյան կուլտուրան:

*Ալեքսանդրապոլ, 26 նոյ. 1907*

## Գ

# (ՀԱՅՈՑ ԳԵՐԵԶՄԱՆԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ)

Նախամարդու մերկութենեն մինչև այսօրվան մեր ճոխ ու վայելուչ զգեստավորումը, հագուստներու անթիվ, անհամար ձևեր ընդունվեցան և լքվեցան: Ոչ միայն ամեն ազգ, ամեն ցեղ պարբերաբար իր հագուստի ձևն ու ոճն ունեցավ, այլ և յուրաքանչյուր դարաշրջան յուր սեփական դրոշմը դրավ մարդկանց հագվելու ճաշակին վրա: Հին դարերեն սկսած, բազմաթիվ այլազանություններե անցած մարդկանց տարազներու ուսումնասիրության նյութը այնքան շատ և բազմակողմանի է, որ այսօր առանձին մի գիտություն է դարձել, հազվագյուտ տաղանդներ կզբաղվին այս բոլոր անցած ձևերու հավաքման, ամբողջացման և անոնց ըստ դարաշրջաններու դասավորման համար: Շնորհիվ անխոնջ և մշտատև ուսումնասիրության, մեծ առաջադիմություն արավ այս հետաքրքրական գիտությունը, այնպես որ հմուտ մի ազգագրագետի համար այսօր շատ դժվար չէ որոշել կերպասների, հագուստների ձևերի, հագուստների վերաբերյալ բազմազան ասեղնագործությունների ո՞ր դարաշրջաններում, ո՞ր ազգերի մեջ գործածական լինելը:

Մարդիկ միայն հագուստներու ձևը չէր, որ դարե ի դար փոփոխության ենթարկելով հետզհետե ավելի վայելուչ և նպատակահարմար ձևեր կստեղծեին, այլ և անդադար ձևափոխության և կանոնավորման կենթարկեին այն բոլոր իրերն ու առարկաները, որոնք անհրաժեշտ էին կյանքի մեջ մշտական կամ պարբերական գործածության համար, ինչպես տնական կարասիներ, երկրագործական կամ արհեստագործական գործիքներ և այլն:

Ճիշտ այս կերպով սկսավ ճարտարապետական արվեստի զարգացումը. բնական քարայրերե, հասարակ ծառի ճյուղերե և եղեգներե կազմված սկզբնական բնակարանները աստիճանական զարգացումով հասան այսօրվան գեղակերտ և հսկայական շենքերին: Քանի մարդկային ցեղը դեպի քաղաքակրթություն առաջացավ, քանի անոր պետքերը բազմացան, զուգահեռաբար զարգացավ նաև անոր ստեղծագործելու հանճարը՝ բարեկեցության վայելչության և ճոխության համար:

Ինչպես ցրտեն ու տաքեն պաշտպանվելու համար նախապես պարզ հագուստներ միայն ստեղծեցին, բայց հետո բավական չհամարելով անոր պարզությունը, գույնզգույն երիզներով, ասեղնագործ և ոսկեթել բանվածքներով զարդարելու և մեկզմեկ գերազանցելու մեջ մրցեցին մարդիկ: Նմանապես եկավ ժամանակ, որ մարդիկ բավականություն չզգացին հասարակ, պարզ պատերով կանգնված բնակարաններեն, հետզհետե ձգտեցին իրենց բնակարանները ներսեն և դրսեն զարդարել գեղակերտ քանդակագործություններով, ներդաշնակ գունագեղ պատկերներով և ճոխ փարթամ կահ կարասիներով:

Հետզհետե զարգացող և կատարելագործության հասնող արվեստներու շարքին մեջ, մարդիկ շինարարական արվեստը մասնավորապես այնքան բարձրագույն կատարելության և չքեղ գեղարվեստականության հասուցին, այնչափ մեծագործություններ կանգնեցին և կանգնված շենքերին հրաշատեսիլ կերպարանք տվին, որ այդ մեծ արվեստն անվանվեցավ ճարտարապետություն և զանոնք հղացող և իրագործող հազվագյուտ տաղանդները վարձատրվեցան ճարտարապետ պատվանունով:

Եվ հիրավի, շատ ծանր և պատասխանատու էր ճարտարապետի կոչումը. ճարտարապետը ոչ միայն գիտակ պետք է լիներ բազմաթիվ կողմնակի գիտությունների և արհեստների, այլ և պետք է որ շնորհք ունենար բազմաթիվ արհեստավորներու վայելչության և գեղեցկության ճաշակը ներշնչելու, որպեսզի անոնք մղվին դեպի բարձրագույն կատարելություն և ստեղծագործություն իրենց ասպարիզում:

Ոչ մի արվեստի մեջ այնքան բազմատեսակ արհեստավորներու հավաքական գործակցության պետքը զգալի չէ, որչափ ճարտարապետության մեջ. հետևաբար ճարտարապետի տաղանդեն ու գեղագիտական նուրբ ճաշակեն կախված է այդ բազմաթիվ արհեստավորները նպատակահարմար կերպով աշխատցնել և անոնց արտադրությունները գեղեցիկ պատշաճությամբ դասավորել՝ տալով անոնց նաև անսասան հաստատություն:

Մի ուրիշ տեսակետով, ճարտարապետն իր կանգնած շենքի հաստատութենեն և գեղարվեստականութենեն զատ, պարտավոր էր մտածել նաև անոր առողջապահական պայմաններու համապատասխանումը, և կառուցման նպատակի համաձայն գործածության բոլոր հարմարությունները:



Եվ ահա, այս բազմաթիվ պահանջներու պատասխանատու ճարտարապետները, դարուց ի դարս, միշտ հները սրբագրելով, նորերը ավելացնելով կամ ավելորդները պակասեցնելով, ժամանակի ոգույն համեմատ, իրենց ձեռքին ունեցած նյութերը դասավորելով, այսօր մեզ թողեր են իրենց հանճարի չնաչխարհիկ կոթողները:

Ճարտարապետության ծագումեն մինչև այսօր կրած փոփոխությունները և ստացած կատարելությունները ուսումնասիրելու գործը նույնպես մի մեծ գիտություն է, որուն համար ամեն տարի պետական զանձարաններ մեծամեծ գումարներ կտրամադրեն, հազվագյուտ գիտնականների ուղեղներ կչարչարվեն այս կատարելապես ստեղծագործության մեջ, յուրաքանչյուր ազգի ու ցեղի կատարած դերը և պարբերական զարգացման ժամանակաշրջանները և միջավայրերը որոշելու համար: Եվ պետք է ըսել, որ այս գիտությունն ալ շնորհիվ պետական օժանդակություններու զուգահեռ մասնագետ մեծ գիտնականներու հոգնաջան աշխատությանց այնքան առաջ գնաց, որ այժմ բազմաթիվ սխալներ սրբագրված, շատ անստուգություններ պարզված են, և կարելի է ըսել, թե անոր շատ ճյուղերու նկատմամբ, գիտությունը կարողացավ իր վճռական վերջին խոսքն ըսել:

Բայց նյութն այնքան ընդարձակ է, անհետացող դարերու խավարը այնքան թանձր, ավերումներն այնքան բազմաթիվ, ապրող, գործող և անհիշատակ անհետացող ազգեր ու ցեղեր այնքան շատ են, որ դեռ դարերու աշխատանք պետք է հին ազգերու ճարտարապետությունը լիովին ուսումնասիրած լինելու համար: Ազգեր ու ցեղեր կան, որոնք ոչ նվազ դեր ունեցել են երկրագնդի զանազան մասերի վրա այս վսեմ ու չքնաղ արվեստի կազմակերպության մեջ, որոնց ծառայությունները քննելու և ստուգելու համար կամ բնավ ձեռնարկված չեն ճարտարապետության պատմաբանների կողմից և կամ անոնց գոյությունը հազիվ հազ հաստատելու չափ փորձեր եղած են:

Ահա այս ծանոթ մնացածների կարգին մեջ էր նաև հայոց պատմական անցյալի ճարտարապետությունը, որուն գոյությունը մոտավորապես մի դար առաջ, գրեթե առասպելական էր, սակայն շնորհիվ 19-րդ դարու մի քանի եվրոպացի գիտնական ճարտարապետներու քննության և ուսումնասիրության, ոչ միայն անոր գոյությունը ապացուցվեց, այլև հետզհետե կատարված լուրջ հետազոտություններով այսօր, գիտնականների սեղանին վրա իր պատկառելի տեղը բռնեց, անոնք թեև երբեմն հակասական, այնուամենայնիվ որոշ չափով գծեցին ծագման ու զարգացման ուղին և ըստ կարելվույն զանազանեցին օտարն ու սեփական ստեղծագործությունները:

Թեև հայ գեղարվեստի հոյակապ հուշարձաններ համատարած են բովանդակ Հայաստանի մեջ և անոնցմե շատ քիչ բան մատակարարված է գիտնականներին՝ գիտականորեն մշակելու համար, սակայն միևնույն ժամանակ մխիթարական է տեսնել, որ վերջերս այդ գործը լավ ապագա կխոստանա, շնորհիվ մի քանի արվեստագետների և գիտնականների անխոնջ ջանքերին, որոնք տարիներե ի վեր սկսել են հայ գեղարվեստի զանազան ճյուղերի վերաբերյալ մեծ քանակությամբ նյութեր հավաքել՝ լուրջ ուսումնասիրության համար:

Եթե իշխողին կամ տիրապետող նյութապես ապահովված դասի վայելչությունն ու փառասիրությունը կմղեր դեպի հոյակապ ճարտարապետություն, դեպի չքնաղ գեղարվեստ, այս բարձր դասի ձգտումներին վայելչասիրության օժանդակ կլիներ համայնական մի ուրիշ ավելի մեծ զգացում, մի ավելի սրբազան պահանջ և հսկայական քայլերով կմոտեցներ դեպի գերագույն կատարելություն: Այդ զգացումը հավատի զգացումն էր, այդ պահանջը, աստ և հանդերձյալի մեջ մարդուն երջանկության աղբյուր և ճակատագրին տեր ամենազոր աստվածների անվան կառուցվելիք տաճարներն էին, որոնք իբրև աստվածության բնակարան ավելի գերազանց պետք էր լինեին, քան մարդկանց բնակարանները: Այն տաճարների մեջ, մարդ արարածը, թագավորեն սկսած մինչև հետին ստրուվը հարաբերության պիտի մտներ կղերների միջնորդությամբ, զիրենք ստեղծող անբերևույթ էության հետ, ուր առատորեն պիտի բաշխվեր հատուցում և շնորհ, այնտեղ պիտի փառավորվեր թագավորը քաջություն և իմաստություն ստանալով աստվածներեն, որոնց մարմնավոր ներկայացուցիչն էր աշխարհի վրա: Այնտեղ պիտի բողբոջեր ու աճեր կարոտյալներու և տառապյալներու սրտին մեջ ներկա կյանքի հաջողությանց և հանդերձյալ հավիտենական կյանքի հաջողությանց և հանդերձյալ հավիտենական կյանքի անսպառ երջանկության գեղածիծաղ հույսը: Այնտեղ պիտի մխիթարվեր ճակատագրապես դժբախտության մատնված վշտաբեկ հուսահատը: Վերջապես աստվածային տաճարները համայնական երջանկության ամենամեծ օջախներն էին, որոնց չքեղ ու փառավոր կառուցման համար, համայնքը պարտավոր էր զոհաբերել իր բոլոր նյութական, բարոյական և ֆիզիկական կարողությունները առանց խնայելու:

Այս համայնական զոհաբերողների կարգին մեջ արվեստագետին բաժին կմնար հանճարի ավելի մեծ թռիչքներով սլանալ անհունին, հավիտենականին և անծայրածիր երջանկությանց շնորհաբաշխ աստվածությանց անվան արժանի կոթողներ կանգնել: Այսպես կպահանջեին աստվածությանց և մարդկանց մեջ միջնորդ կղերականությունը, այսպես կպահանջեր միամիտ հավատով տարված համայնքը. ուստի աստվածներին հաճելի լինելու բուռն ցանկությունը, հարուստից ոսկի, արվեստագետից հանճար և հասարակությունից աշխատանք ու քրտինք զոհաբերել կտրամադրեր:

Տնտեսական, քաղաքական և կրոնական անդիմադրելի ուժով ծնած ու հետզհետե զարգացած ճարտարապետական արվեստի զանազան ճյուղերը իրենց ծնունդ տվող պատճառների հատուկ զանազան ուղղություններ ստացան: Այս զանազան ուղղությունները ընորոշելու համար սովոր ենք ասել տնտեսական, քաղաքացիական, կրոնական և այլն և այլն ճարտարապետություն:

Այս ուղղություններեն յուրաքանչյուրը ունեցան նաև իրենց այլազանությունները կամ ճյուղերը, որոնց մեկուն, կրոնական ճարտարապետության մի ստորաբաժանումին մասնակի ուսումնասիրությունը պիտի լինի ներկա աշխատության նպատակը:

*
* *

Գրեթե աշխարհի բոլոր կրոնները մարդուն սովորեցրին հոգվո անմահությունը և հավիտենական կյանքի գոյությունը: Աշխարհի կյանքը հավիտենական անմահ կյանքի նախագավիթն էին համարում, ուստի այս աշխարհի վաղանցիկ կյանքից հետո էր, որ պիտի սկսվեր բուն կյանքը, որ հավիտենական էր:

Մեռնելեն հետո ապրելու համոզումը ծնունդ տվավ մեռելոց համար հավիտենական բնակարաններ շինելու գաղափարին նույնիսկ այս աշխարհի վրա: Այս համոզման հետևանքն են երբեմնի այն հոյակապ արքայական դամբարանները, որոնց մեջ հաճախ կգտնվեին բացի սրահներե և մեծամեծ սենյակներե, որոնք արքայավայել կերպով կահավորված էին, նույնիսկ բոլոր պիտույքներով և կահավորություններով դասավորված խոհանոցներ: Եթե հասարակ ժողովուրդը չէր կարող դամբարաններ շինել, այնուամենայնիվ յուր մի փոքրիկ գերեզմանի մեջ անգամ տեղավորված էին ապրելու հատուկ պիտույքներ և իրեղեններ, ինչպես զենքեր, զարդ ու զարդարանք: Գտնվել են նաև գերեզմաններ, որոնց մեջ թաղված էին մեռելի հետ, մեջերը կերակուրներով լիքը զանազանակերպ ամաններ: Հին ազգերի թողած հուշարձանների պեղումները բազմաթիվ օրինակներ տվին մեզ, յուրաքանչյուրին հավիտենական կյանքի մասին ունեցած համոզումները բացատրող և այդ ըմբռնումների համաձայն կառուցված դամբարաններ ու մեծ ու փոքր գերեզմաններ:

Կրոնական ճարտարապետության այս ճյուղը կամ ստորաբաժանումը այնքան կտարբերի պաշտաման հատուկ տաճարներու ձևերեն, որ այս ճյուղին առանձնապես դամբանական կամ գերեզմանական ճարտարապետություն (Architecture funéraire) անունը տվին ճարտարապետության գիտնական պատմաբաններ:

Այս ճյուղն ալ ունեցավ իր բոլորովին նախնական ձևը, բայց հետզհետե դարերի ընթացքում այնքան զարգացավ, որ գեղարվեստական գլուխ գործոցներ կանգնվեցին այս ճյուղին հատուկ: Իհարկե, դարե դար զանազան ազգերի մեջ հանդերձյալ կամ հավիտենական կյանքի մասին համոզումներ փոխվեցան, սակայն մեռելոց համար հիշատակարաններ կանգնելու պահանջը մինչև այսօր մնաց անխուսափելի:

Իմ նպատակս չէ այստեղ խոսել ընդհանուր գերեզմանական ճարտարապետության մասին, թե ի՞նչպես սկսեց և ինչպես զարգացավ մինչև այսօր յուրաքանչյուր ազգի և ցեղի մեջ, և ի՞նչ հաջորդական ձևեր ու ոճեր ստացան իրենց դավանանքների և հավատալիքների պատշաճությամբ: Այդ մասին հետաքրքրվողներ կարող են գտնել եվրոպական լեզվով գրված հոյակապ հատորներ: Ես կուզեմ այստեղ, եթե ոչ լիակատար ուսումնասիրություն, գեթ հնար եղածին չափ նյութ մատակարարել հայոց գերեզմանական ճարտարապետության՝ առաջիկայի ուսումնասիրություններին դյուրություն տալու համար:

Հայկական ճարտարապետության և գեղարվեստի զանազան մասեր փոքր ի շատե ուսումնասիրության և քննության առարկա եղել են հայ և օտար գիտնականների և բանասերների ձեռքում, իսկ մասնավորապես ուսումնասիրել հայոց գերեզմանական ճարտարապետությունը, դեռ ոչ ոքի մտքից անգամ չէ անցել: Եթե երբեք պատահաբար հատուկտոր նյութեր էլ կան հրատարակված, նրանք էլ արվեստի, ոճի և դարաշրջանների տեսակետով ընորոշելու փորձ չէ եղած:

Նախաքրիստոնեական հայության գերեզմանական ճարտարապետության մասին խոսել, իմ կարծիքով գրեթե անկարելի է, որովհետև այսօր ձեռքերնիս ոչ մի շոշափելի կամ փաստացի ապացուցված աշխատություն չունենք հայ ժողովրդի կազմավորման մասին, սակայն ի նկատի ունենալով, որ Հայաստանի հողին վրա խիստ բազմաթիվ են նախաքրիստոնեական շրջանի գերեզմաններ, կարելի է նախապես անոնց այլազանություններեն նկարագրություններ և մի քանի օրինակներ դնել այստեղ, որոնց մեջ գուցե գտնվին նաև նախաքրիստոնեական հայկական գերեզմաններ. գտնե ինձ համար հավանական երևցածները կմատնանշեմ վերապահությամբ, սակայն ընդհանրապես վերջին եզրակացությունը կթողում ավելի հմուտ մասնագետներին:

Բացի հայ և օտար մասնագետների ձեռքով, Սևանա ծովի ափերում, Լոռվի շրջանում հայտնագործված հին դամբարաններից և գերեզմաններից, որոնք ըստ ինքյան չափազանց հետաքրքրական բովանդակություն ունեցած են, ինձ հայտնի են Շիրակում և Այրարատի այլ գավառներում բազմաթիվ նախաքրիստոնեական բազմատեսակ շիրիմներ և գերեզմաններ, բայց նրանց մեջ դժվար է որոշել, թե ո՞րն է հայկականը և ո՞րն է Հայաստանի նախաբնիկներինը մինչև հայ ժողովրդի կազմավորումը: Կան իհարկե դամբարաններ և գերեզմաններ, որոնց ձևը և հատկությունները կասկած չեն թողուր որ շատ հին են և նախահայկական բնիկների գերեզմաններ են, սակայն կան այնպիսիներ ևս, որոնք առանձին ուսումնասիրության կարոտ են, որովհետև չափազանց հավանականություն ցույց կուտան քրիստոնեութենե մի քանի դար առաջ լինելու:

Պատմական իրողություն է, որ Հայաստանում հայ ժողովուրդը գոյություն ուներ քրիստոնեությունից մի քանի դար առաջ և նա կազմավորվել էր առաջին հազարամյակի կեսերին տեղական ցեղերից: Բայց միևնույն ժամանակ հայերի հետ կողք կողքի ապրում էին նաև այլ ցեղեր: Անպայման հայերի և մյուս ցեղերի գերեզմանական ոճերի կամ պարզապես մեռելը թաղելու սովորությունների մեջ տարբերություն պետք էր որ լիներ մինչև նրանց լիակատար միաձուլումը: Իմ կարծիքով այս հարցերը այնքան էլ դժվար լուծելու հանելուկներ չպիտի լինեին, եթե վաղուց հետաքրքրված լինեին և ընդարձակ չափով պեղումներ կատարվեին բուն Հայաստանի հողին վրա և արդյունքները լրջորեն ուսումնասիրվեին: Անվիճելի փաստ է նաև, որ հայոց քրիստոնեությունը ընդունելեն հետո իսկ մի քանի դար դեռ կային թե՛ նախնյաց դավանության հայտնի կամ գաղտնի հետևող հայեր և թե՛ զուտ օտարադավան ուրիշ ցեղեր: Մենք մինչև իսկ այս քրիստոնեական շրջանի, մինչև 5-րդ դարու հայ և օտար գերեզմանների զանազանության մասին ոչինչ չգիտենք: Ձեմ կարծում, որ հայեր քրիստոնեությունը ընդունելու հետ զուգահեռաբար անմիջապես փոխեցին նաև իրենց գերեզմանների ձևը. անշուշտ երկար ժամանակի կարոտ էր անոնց լիակատար փոփոխությունը, սակայն նախքան ամբողջական փոփոխությունը պետք է կապ ունենար իրենց դավանության և հավատալիքների հետ և որոշ աստիճանի կապ ունենար նաև զիրենք շրջապատող մեծ ազգերի սովորությանց հետ, որոնց ազդեցության տակ ընկած էին հաճախ թե՛ քաղաքականապես և թե՛ կրոնապես:

Ուրեմն այստեղ ի նկատի ունենալով նախաքրիստոնեական շրջանի բազմազան դամբարանների որ ազգին և ցեղին պատկանելը որոշելու դժվարությունները և երկար ու բազմակողմանի ուսումնասիրության կարոտ լինելը, բավականանանք ցույց տալով անոնց գլխավոր ձևերը և նկարագրությունները ապագային վերապահելով անոնց գիտականորեն լիակատար լուծումը:

(Այստեղ ցույց տալ նախաքրիստոնեական շրջանի դամբարանների և գերեզմանների օրինակներ, տալով անոնց նկարագրությունը ըստ կարելույն համեմատելով, թե Հայաստանի մեջ գտնվածները միմյանց հետ և թե շրջապատող մեծ ազգերի սովորության հետ):

*
* *

Բավական համարելով հայոց հեթանոսական շրջանի գերեզմանական ճարտարապետության մասին խոսելը, ձեռք առնենք հետազոտել քրիստոնեական շրջանի մահարձանները, դամբարանները և գերեզմանները, որոնց մի շարք այլազանություններին ծանոթացել եմ երկար տարիներ իմ ճարտարապետական ուսումնասիրությունների նպատակով ճանապարհորդություններիս ժամանակ:

Քրիստոնեական առաջին շրջանեն մինչև հետին 14–15-րդ դարերը հայոց գերեզմանական կամ դամբարանական ձևերը խիստ բազմաթիվ են և բազմատեսակ: Ոչ միայն որոշ դարաշրջանների մեջ զգալի փոփոխություններ և տարբերություններ կան, այլ և միևնույն երկրին մեջ գավառե գավառ տարբերությունները ակնբախ են:

Հայոց՝ գլխավորաբար հին գրականության մեջ, բազմաթիվ բառեր ունենք, որոնք ամենն ալ պարզապես գերեզմանի նշանակությունն ունեն, սակայն այդ տարբեր բառերը ի հնումն իզուր տեղն

առանց պատճառի չեն ստեղծվեր, անպայման նրանց յուրաքանչյուրը մի ձևի կամ կերպի, մի ցեղի տված բնորոշող հատկանշական անունն էր:

Այս բառերի մի մասը պարզված են մեզ համար և դեռ կան ուրիշներ, որոնց հատկությունները տակավին չեն պարզված, ըստ ոմանց մի քանիսը հոմանիշ են միմյանց, բայց այս հոմանիշ լինելը որչափ համոզիչ և ճիշտ է, իմ կարծիքով դեռ վերջնականորեն պարզված չէ կարելի համարել, պետք է, որ մեր հայ լեզվաբաններ ուշադրություն դարձնեն այս կետին վրա, քննելով անոնց ծագումը և առումը զանազան դարաշրջանների մեջ: Բացի գերեզմանների տարբեր անուններե, նշանակությունը կորած և առումները զանազան դարերի մեջ չփոթած ուրիշ շատ բառեր ունենք, որոնց վրա դրեթե բնավ ուշադրություն չեն դարձուցել մեր լեզվին զարգացման նախանձախնդիր գիտնականներ և բանասերներ: Այս կետը շատ կարևոր է և շատ կնճիռներ կլուծե արվեստի պատմության մեջ, եթե աշխատվի ճշտել մեր հին գրականության մեջ գտնված բազմաթիվ նշանակությունները կորած և ներկայիս տարբեր առումով գործածվող բառերուն:

Առայժմ ինձ հայտնի են գերեզման նշանակող հետևյալ բառերը՝ դամբարան, դամբան, շիրիմ, վկայարան, հանգստարան, հանգիստ, դիր, տապան, տապանատուն, նշխարատուն, քնարան, գերեզման, գերեզմանոց և այլն և այլն:

Առանց վերջնական համարելու իմ բացատրություններս, և սպասելով ավելի հմտագույնից գիտականորեն ճշտված բացատրության, առայժմ կգրեմ փոքր ի շատե նշանակություններ ինձ համար պարզված համարածներս և համառոտիվ կբացատրեմ, թե ի՞նչ հիման վրա կընորոշեմ անոնց ձևն իրենց ստացած անվան համեմատ:

1. **Վկայարան:** Մատուռի կամ փոքր եկեղեցիի նմանությամբ շինված մի շենք էր վկայարանը, ուր կթաղվեին մարտիրոսների կամ հանուն քրիստոնեության նահատակվողների մարմինները: Արտաքուստ ութանկյունի, բոլորակ կամ քառակուսի ձև ունեին, ըստ Փավստոսի և Ղազար Փարպեցու թեև եկեղեցական զարդերով կպճնվեին, սակայն պատարագ չէր կարելի անել անոնց մեջ: 7-րդ դարուն էր, որ առաջին անգամ փոխվեց անոնց ձևը, վերածվեցին եկեղեցիների, հեռացնելով այնտեղից մարտիրոսների նշխարները և եկեղեցվո մի կողմում ստորերկրյա կամարակապ մի տեղում գետեղելով այդ նշխարները:

2. **Տապան***, որ իմ ըմբռնումով պետք է լինին քարափոր գերեզմանները, որոնք շարժական սնդուկի ձև ունին մարդու հասակին չափով շինված և վրան կափարիչով փակված:

3. **Դիր, քնարան, հանգիստ** նկատեր եմ իբրև հոմանիշ բառեր տապանի: Թեև այս բառերը մեկ մարդու թաղված տեղը կնշանակեն տապանին նման, սակայն տարբեր տեսակ նշանակությամբ բառեր հատկացվելը կվերագրեմ դարձյալ Հայաստանի տարբեր ցեղերից ծագած կրոնական որոշ վարդապետությանց՝ աշխարհի և հավիտենական կենաց նկատմամբ:

4. **Հանգստարան** պետք է ուղղակի հոմանիշ լինի **գերեզմանոց** բառին (ոչ գերեզմանատան), ուր պետք է թաղված լինին մեկե ավելի հանգուցյալներ. կամ ամբողջ քաղաքի կամ գյուղի մը հասարակության հանգուցյալները:

5. **Դամբարան** ըստ իս, պետք է լինին այն հոյակապ շինվածքները, որոնց մեջ թաղված են ամբողջ տոհմեր, և մասնավոր ցեղերու միայն հատուկ են: Մասամբ դամբարանի հոմանիշ կգտնիմ գերեզմանատուն բառը, հիմնվելով Անիի մեջ նկատված հետաքրքրական երևույթի վրա, որ բացի հասարակաց ընդհանուր գերեզմանոցներեն, յուրաքանչյուր տան մոտ (ի հարկե իշխանական կամ հարուստ դասերու) կան առանձին բաժանումներ տան հետ կից, որոնք կբաղկանան մի փոքրիկ մատուռե և մի տոհմային գերեզմանատնե. մեջը թաղված նույն ընտանիքին պատկանող հանգուցյալներ:

6. **Շիրիմ****, ըսելով պետք է հասկանամ մի որևէ դիրի, հանգիստի տապանի կամ գերեզմանի վրա կանգնեցված զանազան գեղարվեստական կերտվածքներու, ինչպես շքեղ տապանաքար, քանդակազարդ կոթողներ, խաչքարեր, արձաններ և այլն և այլն:

Ես չունիմ հավակնություն ըսելու որ անպայման իմ ըմբռնումներս ճիշտ են, բառազննությունն իմ մասնագիտությունը չէ, կարելի է որ սխալված լինիմ. սակայն իմ այս ուսումնասիրությանս ընթացքին մեջ, որ հաճախ պետք պիտի ունենամ զանազան ձևեր բացատրելու համար որոշ անուններուն, հետևաբար նույն անունները պիտի տամ այն ձևերուն, ինչ կերպով որ ես ըմբռներ և բացատրեր եմ, եթե ոչ՝ թե՛ ես ինքս կչփոթեմ անպատճառ և թե՛ ընթերցողը:

Նախքան բուն նյութին սկսելս մեջ պիտի բերեմ բոլորովին բացառիկ մեկ հատիկ հիշատակարան գտնե իմ տեսածներուս մեջ, որը եթե շիրիմ լինելը չհաստատվի, այնուամենայնիվ հերքելն ալ դժվար է:

Այդ հիշատակարանը Օշականի մեջ հնագույն ժամանակներե կանգնված մի սյուն է, որուն տակը կա աստիճանավոր մի պատվանդան, պատվանդանին վրա սյունին բունը, իսկ բունին վրա մի խոյակ: Հավանորեն խոյակին վրա ի հնումն եղեր է մի արձան, սակայն այժմ արձանին փոխարինած է մի արագիլ, ուր ամեն տարի կուգա և խոյակի դատարկությունը կլեցնե իբրև ավելի հաճելի մի զարդարանք:

Խոյակի ձևը և վրայի քանդակագործությունը ցույց կուտա որ այդ սյունը կանգնված կարող էր լինել ամենաուշը 7-րդ դարուն: Որովհետև նույն ձևի խոյակներ կան Զվարթնոց եկեղեցվո ներքին կողմի կիսաբոլոր սյունաշարերու գլուխը, և բացի Զվարթնոցեն հատ-հատ որտեղ որ ալ կան, անոնք փաստացի կերպով հայտնի են որ 7-րդ դարեն այս կողմ չեն:

Ինչո՞ւ համար կանգնվեր է այս կոթողը Օշականի մեջ, արդյոք գերեզման էր, թե՞ մի ուրիշ հաղթության հիշատակարան: Թեև գյուղացոց մեջ ընդհանուր համոզում կամ ավանդություն է թե Մորիկ կայսեր մոր գերեզմանն է: Անշուշտ հետևելով մեր պատմագիրներեն մեկուն ավանդութենեն թե Մորիկ կայսրը հայ էր և Օշականցի:

Համենայն դեպս այս երևույթը եզակի է և Հայաստանի մեջ և շատ տարօրինակ: Եթե հին ժամանակ Հռոմեական կայսրության մեկ հաղթանակի հիշատակարանը չէ և գերեզման է, պիտի ըսեմ որ դարձյալ պետք է լինի մի մեծ հռոմեացիի գերեզմանը, հռոմեական ոճով շինված: Երբ և իցե ես չգիտեմ ալ թե Օշականը եղած է մինչև 7-րդ դար մի կարևոր կենտրոն ուր հարկ ըլլար թաղել ոևէ մի հռոմեացի զորավար կամ արքայազուն: Հետևաբար, եթե ճիշտ է որ Մորիկը հայ էր և նույնիսկ Օշականցի, այն ատեն ավելի հավանական ենթադրություն կլինի այդ հիշատակարանը Մորիկի անվան հետ կապել քան ուրիշներու:[1]

Գերեզմանական ճարտարապետության բոլոր ստորաբաժանումները իր բոլոր մանրամասնությամբ ուսումնասիրել այս հոդվածիս մեջ առայժմ անհնար է, նախ՝ կարծվածեն շատ ավելի ընդարձակ ու բազմակողմանի է նյութը, երկրորդ՝ լիակատար ուսումնասիրության համար դեռ կպակսին ինձի կարևոր նյութեր: Ներկա հոդվածով պիտի ջանամ ուսումնասիրության մի ուրվագիծ տալ հայոց մեջ իրագործված դամբարաններու, շիրիմներու և տապաններու ճարտարապետության և անոնց դարե ի դար ոճերու փոփոխության վրա:

Նախ ձեռք առնենք տապանը և իր նշանակութենեն հետևցնենք մասամբ իր ոճը և հետո ձեռքի տակ ունեցած օրինակները բացատրենք:

Տապան բառը հայերենի մեջ կնշանակե սնտուկ, բայց ավելի ճիշտը սնտուկի նմանությամբ նավ, որուն ֆրանսերենն է arche: Ըստ Մովսեսի հնգեմատյանի առաջին անգամ Նոյը շինեց տապան մը վերահաս ջրհեղեղեն ազատվելու համար: Նոյը շինեց այնպիսի տապան մը, որ ինքը իր ամբողջ սերունդով պատսպարվեցավ անոր մեջ, և տապանը քառասուն օր լողաց ջրերուն վրա, մինչև որ ջրերը քաշվեցան և նստավ Արարատ լեռան գագաթին:



**Նկ. 12. Մորիկ կայսեր մոր վերագրվող սյունն Օշականում**

*Այստեղից սկսած զետեղել ենք մի այլ սեագիր հատվածի մի մասն իբրև շարունակություն նախորդ հոդվածի:

**Կազմող**

**Շիրիմ և դամբարան հաճախ չփոթված են մեր հին պատմագրաց մեջ և անխտիր շատ անգամ իրարու տեղ գործածված, այնպես որ քիչ կմնա հոմանիշ համարելու, սակայն իմ ընդունած ձևով ավելի շատ լինելուն համար այս ձևն ընդունեցի:

[1] Օշականի առանձնակի կանգնած սյան խոյակի ճիշտ նմանները գտնվեցին Դվինում չորս հատ, հավանաբար դարձյալ առանձնակի սյուներու վրայից (տե՛ս նկ. 13). մի այդպիսի սյուն էլ կա Հովհաննավանքի բակում (նկ. 14):

**Կազմող**



Նկ. 13. Դվինում գտնված 7-րդ դարի խոյակներ

Երկրորդ տապանը կամ տապանակը չինեց Մովսես՝ տաճարին մեջ դնելու համար, և այդ տապանը մի տեսակ փրկական խորհրդավորություն ուներ իր մեջ:

Գիտական հետազոտությունները բավականին պարզեցին, որ Նոյի և Մովսեսի տապանները ոչ այլ ինչ էին, բայց եթե եգիպտական սրբազան նավակի (*barque sacré*) մի ուրիշ ձևով սրբագործումը:

Եգիպտական դիցաբանության մեջ սրբազան նավակի պաշտոնն է մեռելոց հոգիները փոխադրել դեպի հավիտենական աշխարհը:

Դիցաբանական այս ավանդության զանազան այլազանությունները ոչ նվազ ընդունված էին ասորեստանցոց և քաղդեացոց մեջ, նույնպես պարսիկներու մեջ: Ըստ իս, հավանական է, որ հայոց հեթանոսութենեն ընդունված և սրբագործված բառ է մեռելոց անունով և թերևս նույն նշանակությունն ուներ ինչպես Եգիպտոսի մեջ, որ դեռ 5-րդ դարու մատենագրությանց մեջ գործածական է:

Տապանները առհասարակ քարե շինված էին, և իմ կարծիքով ամենաշատը հայոց մեջ գործածական եղեր է 6–7-րդ դարերը, իսկ անկեց հետո բացառիկ դեպքերու մեջ միայն գործածած:

Իմ տեսած տապաններուն մեջ մեկ տեսակ մը կար, որ պարզ երկար քառակուսի սնտուկ է, բոլորովին պարզ և արտաքուստ հազիվ կոկված, ինչ որ ապացույց է թե հողին մեջ պետք է թաղվեր, ոչ թե հողեն դուրս երևնար: Խորությունը մոտավորապես 50–60 սմ. վրան կափարիչ չուներ, հավանաբար կորած կամ փճացած էր:



Նկ. 14. Կոթող Հովհաննավանքի բակում

Մի ուրիշ տեսակը արտաքուստ կատարյալ երկար քառակուսի է, իսկ մեջը փորած 40–50 սմ. խորությամբ մեկ կողմը լայն և մեկ կողմը համեմատաբար նեղ, անշուշտ լայն կողմը պետք է գլխուն կողմը լիներ, իսկ նեղ կողմը ոտքերուն: Ոտքերուն կողմը փորվածքը անկյունավոր, իսկ գլխի կողմը՝ ամբողջ կիսաբոլորակ և հատակն ալ աստիճանաբար բարձր, այնպես որ, այդ սնտուկին մեջ դիակը փոխանակ ուղիղ հորիզոնականի, փոքր ինչ գլխին և թիկունքներու կողմե դեպի վեր թեքված պիտի պառկեր: Այս տապանն ալ կափարիչ չուներ, որ գաղափար կազմեի անոր ձևին վրա:

Ինչպես կերևի այս տապանները անպայման հեթանոսական էին, որովհետև ասոնց մեջեն գտնված են խեցեղեն ամաններ, գույնզգույն ուլունքներ և այլ ուրիշ առարկաներ, որոնք քրիստոնեական շրջանին գրեթե անսովոր են:

Այս տարի Արթիկ գյուղի մոտ գրեթե երկու կիլոմետր հեռավորության վրա գտնվող Լմպատավանք ըսված հնագույն եկեղեցո արևելյան կողմը ցույց տվին ինձի քարե տապաններ, որոնք կարելի է ըսել դեռ տեղերեն չեն հանված: Տեղի զարմիկեր լինելուն պատճառավ անշուշտ վրայեն բավականին հողը վազելով շուրջը մի քիչ բացվեր է: Նմանապես այս տապաններուն ալ կափարիչները անհայտացած են: Անոնցմե մեկը, որ համեմատաբար ավելի անաղարտ մնացած է, բավականին կտարբերի մյուս տեսածներես: Տապանին արտաքին ձևը հավասարակողմ երկար քառանկյունի է, իսկ մեջի փորվածքը բոլորովին տարբեր է նախապես նկարագրածս երկու տեսակ տապաններեն: Իսկական մարդու ձևով փորված է մեջը, այնպես որ, գլուխը իրեն համար առանձին բոլորակ մի տեղ ունի, գլխի բոլորակին կհաջորդե փորվածքի լայնություն մը ուսերուն տեղավորելու չափ և անկեց վար երթալով հետզհետե անզգալի կերպով կնեղնա և ուղիղ մարմնին ձևը կստանա: Խորությունը շատ քիչ է, հազիվ հազ տեղավորվի դիակը, այնպես որ, եթե կափարիչը ծածկվեր, մարդուն մարմնեն թերևս 1–2 սանտիմ բարձր կմնար կափարիչը:

Արդյոք այս տապանները հեթանոսակա՞ն են թե՞ քրիստոնեական, ոչինչ հայտնի չէ, շուրջը կան շատ ուրիշ գերեզմաններ, որոնք ոչ միայն իրենց ձևերով 10–15-րդ դարու գերեզմաններ լինելը հայտնի են, այլև ունին հայերեն արձանագրություններ, որոնցմե կհասկցվի թե մեծ մասամբ բարձրաստիճան կղերներ են եղած և կամ վանքի միաբան հոգևորականներ: Լմպատավանքը յուր ոճով և ձևով չի կարելի 7-րդ դարեն այս կողմը բերել, անպայման շատ հին ձև ունի, նույնիսկ իր վրա կան 5-րդ և 6-րդ դարերու եկեղեցիներու հատուկ ավանդական ձևերը: Այս տապանները եկեղեցո արևելյան հարավային անկյունեն հազիվ 2,5–3 մետր հեռու են, եկեղեցուն այնքան մոտիկ այսպիսի ձևով տապաններ, այն ալ ոչ այնքան հողին ներքև, ինձի ենթադրել կուտա, թե պետք է որ քրիստոնեական գերեզման լինին. այս ենթադրությանս պատճառավ էր, որ քիչ առաջ ըսի թե հեթանոսական ձևով քարյա տապանները թերևս շարունակվեր են մինչև 7-րդ դար: Մնացած գերեզմանները թեև բավականին չեմ հետազոտած, այնքան բնորոշ ձև չունին, բացի չորս հինգ օրորոցաձև տապանաքարերե, որոնք շատ պարզ են 12–13-րդ դարերե հետո կամ նույն դարերուն լինելնին:

Այստեղ գտա նաև մի չիրիմաքար կամ կոթող, որը անպայման 6–7-րդ դարերուն կպատկանի, այս մասին կխոսիմ քիչ հետո, ուստի նկատելի է, որ վանքի շինության հետ մեկտեղ գերեզմանոցը գոյություն ունեցեր է այստեղ և միշտ պահվեր է մինչև վանքի ամայանալը:

Գյուղացոց ոմանց պատմելով, վանքի հարավային կողմի լանջերուն վրայեն հաճախ գտնված են հին հեթանոսական գերեզմաններ, որոնց մեջեն ելած են կճուճներ, ուլունքներ և ուրիշ շատ հեթանոսական շրջանի հատկություններ ունեցող իրեղեններ: Ուստի, կասկած չկա, որ հեթանոսական դարերուն Արթիկը և այս վանքի շրջակայքը բնակել էին հեթանոս ժողովուրդ, գուցե այս տապաններն ալ հեթանոսական մնացորդ են, թեև պատմական ակնարկներ ալ կան 5–6-րդ դարերուն, որ հայոց մեջ եղած են քարափոր տապաններու մեջ թաղվածներ:

Մահմուտճուկ գյուղին արևելյան կողմը հնագույն մի գերեզմանոց կա, ուր այժմ ալ գյուղացիք իրենց մեռելները կթաղեն. այս գերեզմանոցն իր վրա ցույց կուտա շատ խոր հնության նշաններ, բացի այն, որ կան հին խաչքարեր և 13–14-րդ դարերու արձանագրությամբ գերեզմանաքարեր, նաև անմիջապես այս գերեզմանոցին կից կա ընդարձակ մի տարածություն, որ բոլորովին հող չկա գետնին վրա, բնական հրաբխային կարմիր ապառաժներ են: Այս բնական ապառաժին վրա տեղն ու տեղը փորված են բազմաթիվ տապաններ, երբեմն անջատ անջատ իրարմե մեկեն մինչև երկու մետր հեռավորության վրա, իսկ երբեմն՝ խումբ խումբ երեքեն մինչև վեց յոթը հատ անհավասար չափերով: Ասոնց մեջ կան, որ պարզ երկար քառակուսի փորված են միայն ոտքերուն կողմը քիչ ավելի նեղ, իսկ մեծավ մասամբ կտեսնինք ճիշտ այնպես մարմնի

ձևով փորված, ինչպես նկարագրեցի Լմպատավանքի մոտի տապանները: Պահ մը կուզեի հավատալ որ այս գերեզմանները լինին քրիստոնեական, սակայն այդ փորվածքներու անկանոն ուղղությունները կամ արևելագրությունները դիս ավելի կհամոզեն հեթանոսական լինելուն: Անոնց մեջ արևելքեն արևմուտք ուղղվածներ ալ կան և եթե ոչ բոլորովին, գոնե զգալի չափով հյուսիսեն հարավ ուղղվածներ ալ կան:

Այս տապանների վրա ոչ միայն կափարիչներ չկան, այլև դարե ի դար այնքան մաշվեր են, որ շատերուն հազիվ հազ ձևը մնացեր է:

Վերին աստիճան հետաքրքրական էր, ըստ իս, գիտնալ թե այս ձևի տապանները ի՞նչ ձևով կծածկվին: Շատ պարզ է, որ աղքատ ու անկարող դասակարգի համար բավական պիտի լիներ տապանին հարմար չափով քարե պարզ կափարիչ մը, սակայն ազնվական դասակարգը անշուշտ չէր բավականանար այդ չափով և պիտի չինեին որոշ չափով գեղեցիկ շիրիմներ ալ: Սակայն դժբախտաբար ոչինչ հետք չեմ գտած մինչև այսօր, թերևս ապագային հաջողվի ճշտել այդ քարե տապաններու ամբողջական ձևը:

Մի ուրիշ երևույթ ևս, որուն մասին թե՛ պատմական վկայություններ կան և թե՛ իրական օրինակներ կուգան մեզ համոզելու, որ քրիստոնեական նախնական դարերուն անպայման վերացած կլիներ քարյա տապաններու գործածությունը, որովհետև բացի պատմական վկայություններե թե կավե տապանի կամ կարասի մեջ դրած կթաղեին. այլև զանազան տեղեր գտնված են ժողովրդյան ձեռքով մեջը մարդու կմախքներով կարասներ և մոտը գտնված իրեղենները քրիստոնեական դարերու լինելը կապացուցանեն: Ինչպես շատ գտնվեր է Անիի մեջ, որուն մոտեն գտնվեր են բյուզանդական պղնձե դրամներ:

Տապաններեն հետո անցնինք շիրիմներու: Ես կկարծեմ որ շիրիմ ըսելով պետք չէ հասկնալ հողին տակը եղած մասը, այլ հողեն վեր, տապանին վրա իբրև հիշատակարան շինված մասը, որն ամեն ազգի մեջ զանազան ձևերով արտահայտված են: Տապան մը կարող էր առանց շիրիմի լինել, բայց առանց տապանի շիրիմ պետք չէր որ լինի: Կարող է այդ շիրիմը շատ պարզ ձևով լինի, և կարող է խիստ շատ փարթամ ու հոյակապ գործ լինի:[1]

[1] Ձեռագիրն այստեղ ընդհատվում է:

Կազմող






# ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

# Ա

# ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՃԱՐԸ

## ա. ԷՋՄԻԱԾԻՆ

Քրիստոնեական ծագում ունեցող շենքերից գրեթե ամենահինն է Էջմիածնի տաճարը, որն ըստ պատմական ավանդության հիմնված է 303 թվականին, սակայն մատենագրությանց մեջ գտնված հատ ու կտոր տեղեկություններից կիմանանք նաև, որ այս տաճարի սկզբնական շենքը մեծ մասամբ փայտաշեն էր, որով հեշտությամբ ենթարկվեց բնական և քաղաքական փոթորիկների պատճառած ավերումներին, որոնց հետևանքն եղավ հաճախակի նորոգություններ նախկին հատակագծի վրա:

Այժմյան գոյություն ունեցող շենքի մանրամասն մասնագիտական քննությունից պարզ երևում է, որ նախկին 303 թվականին հիմնարկված շենքը միանգամայն գոյություն չունի: Հին շենքը ամբողջովին քանդելով հիմն ի վեր վերաշինել է Վահան Մամիկոնյանը 483 թվականին՝ Հայաստանի մարզպան նշանակվելուց հետո:

Հատակագծային բաղդատական ուսումնասիրությունից ապացուցվում է, որ Վահան Մամիկոնյանը նախկին եկեղեցական հատակագծային ձևերից տարբեր մի նոր ոճով կառուցել է այս շենքը, որ բացի մի քանի աննշան արևմտյան ճաշակի մանրամասնություններից, ինչպես ֆրոնտոններ, պսակի ձևերը, տաճարի ընդհանուր երևույթը և շինարարական կերպերը, զուտ արևելյան հատկանիշ ունեն:



Նկ. 15. Էջմիածնի վանքի ընդհանուր տեսարանը հյուսիս-արևմուտքից

Սակայն, որչափ որ, Վահան Մամիկոնյանը ժամանակի պահանջած հատակագծով չինեց, այնուամենայնիվ թե՛ շինարարական արվեստի որոշ թերություններ կային այն ժամանակ և թե՛ շատ շուտ փոփոխությունների էին ենթարկվում հատակագծային ձևերը: Կոմիտաս կաթողիկոս (612–621) 7-րդ դարուն, իր ժամանակին մաշված ու հնացած փայտյա գմբեթի տեղ, շինել է քարե գմբեթ անշուշտ, նաև հարակից նորոգություններ ևս անելով: Իսկ Ներսես Շինող կաթողիկոս (642–662) նույն դարուն, թերևս տաճարը ընդարձակելու դիտավորությամբ, չորս կողմից քառակուսի պատերի մեջ ամփոփված աբսիդները արտաքին պատերից դուրս հանեց, ինչպես որ այժմ կտեսնվի: Ուրեմն հատակագծի վերջին ձևը տրվեցավ 7-րդ դարում:

Թե ինչ ճակատագիր ունեցավ այս շենքը 7-րդ դարուց մինչև 15 դարը, այս մասին հաստատ մի բան չի կարելի ասել, որովհետև գրեթե պատմական տվյալներ չունենք: Արդեն 5-րդ դարում կաթողիկոսական աթոռը փոխադրված էր Դվին, հետո զանազան տեղեր՝ մինչև 1441 թվականը, երբ վերստին Էջմիածնի տաճարում հաստատվեց կաթողիկոսական աթոռը: Ուրեմն, մոտ տասը դար (ի բաց առյալ Կոմիտասի և Ներսես 3-րդի կատարած շինությունները 7-րդ դարում), այս շենքը միանգամայն անտեր ու անխնամ մնաց, մինչև կաթուղիկոսական աթոռի Էջմիածին փոխադրվելը: Ոչ միայն այս երկար ժամանակամիջոցին մեջ պատմագրական մի հիշատակություն չենք գտնում Էջմիածնի տաճարի նորոգության կամ շինության մասին, այլ վերջին անգամ կաթողիկոսական աթոռ հաստատվելուց հետո իսկ, մինչև 1627 թվականը, դարձյալ շինարարական ոչ մի դույզն ձեռնարկ չի եղել: 1627 թվականին է, որ Մովսես վարդապետ, որ հետո կաթուղիկոս դարձավ 1629 թ., ձեռնարկել է տաճարի վերանորոգության, որի մասին Առաքել Դավրիժեցի պատմագիրը հետևյալ նկարագիրը կուտա.– «ըստ ամենայնի դատարկված է տաճարը, և կողոպտված յուր զարդերը. ոչ գիրք կար և ոչ զգեստներ, այդ պատճառով ոչ մի ժամասացություն չէր լինում. պատահական անցավոր ճանապարհորդների համար մի մահմեդական ձեթի ճրագ վառելով բեմի վրա կդներ, որպեսզի իրեն ողորմություն տան: Հատակի սալերը ամբողջովին քանդված էին և մեծամեծ լուսամուտները բաց էին մնում առանց վանդակի և փեղկի, որով թռչունները մտնում էին ներս և աղտոտություններով լցնում: Իսկ դրսի կողմից կաթուղիկեի գլուխը, տանիքը և պատերի երեսները ամբողջովին քարուքանդ եղած և քարերը թափված էին գետին՝ գետնի սալերը ևս ջարդելով և փչացնելով: Մի ժամանակ տաճարին կից շինություններ էին շինված ու հետո քանդված, որով փլատակների կույտը մինչև յոթը կանգուն բարձրացած էր տաճարի շուրջը»:

Նախնական վիճակի նկարագրությունը մի քիչ մանրամասն գրեցի, որպեսզի այժմյան շենքի վրա եղող հետնագույն փոփոխությունները և ստացած վիճակը ավելի պարզ և հեշտությամբ համեմատելի լինի: Ինչպես տեսանք, Առաքել պատմագիրն ասում է, թե նախքան Մովսեսի վերանորոգությունը, կաթուղիկեի գլուխը քանդված էր, տարակույս չկա, որ գմբեթի վերևի մասը այնքան քանդված էր, որ նույնիսկ ներքին կողմից գմբեթին վրա դեպի տաճարը նայող մի կլոր ծակ էր բացված: Այս պատճառով է, որ Պարսկաստանի գերմանական ուղեկից Տեկտանդեր 1664 թ. առանց ուշադրություն դարձնելու կաթուղիկեի վիճակին, ներքուստ գմբեթի մեջ բոլորշի պատուհան էր տեսնում կամ տեսնել կարծում. մինչդեռ այդպիսի բան չկա և չէր էլ կարող լինել: Այժմ արտաքուստ շատ պարզ երևում է, որ մինչև կաթուղիկեի շուրջը եղած որմնասյուների հավասարությամբ քանդված էր գմբեթը և առաջի անգամ նորոգության ենթարկվեց Մովսես վարդապետի նախաձեռնությամբ. բայց հակառակ հայկական հին ոճին, որ թե՛ թմբուկները



Նկ. 16. Էջմիածնի տաճարի գմբեթը



և թե՛ վերևի կոնաձև մասը բարձր չէին (հին օրինակ մնում է Հռիփսիմեի գմբեթը), ահագին բարձրություն և սրություն տված են արտաքուստ, որով ահռելի ծանրություն են պատճառած ներքևի գմբեթակիր չորս մույթերին:

Ոչ միայն տաճարի արձանագրություններից երևում է, որ ներքին գմբեթակիր մույթերը վերևի ճնշող ծանրության տակ վնասվելով քանիցս նորոգվել են և հաստացել, այլ և ներկայիս ևս հարավ-արևմտյան գմբեթակիր կամարները ճաքած են վերևի թմբուկի ծանրության տակ այնպես, որ առաջիկայում այդ ճեղքերը վտանգ են սպառնում շենքի ամբողջության: Ոչ նվազ վտանգ է սպառնում Եղիազար կաթուղիկոսի (1680–1691 թ.թ.) շինած գմբեթներից մեկը՝ հյուսիսային կողմի աբսիդի վրա, որուն ծանրության տակ ճաքել է աբսիդի պատը մինչև պատուհանը: Ահա այս անզգուշ ծանրաբեռնման պատճառով է, որ մի քանի տարի առաջ հարավային կողմի փոքր զանգակատունը ամբողջովին փլավ:

Նկ. 17. Էջմիածնի զանգակատան հարավային երեսը

Եթե ուշի ուշով քննենք շենքի ճակատները՝ յուրաքանչյուր դարաշրջանի շինության և նորոգության հետքեր կգտնենք: Հյուսիսային ճակատի վրա տակավին մնացել են 5-րդ դարու մնացորդներ. վերևի երեք ֆրոնտոններ, որոնք ճոխազարդված են պճղակներով 5-րդ դարից են մեզ հասնում, մնացած մասերի վրա վերևից մինչև ներքև, 7-րդ դարից մինչև մեր օրերը եղած նորոգությունները և կարկատանները շատ որոշ կերևին: Ինչպես կերևի հաճախակի նորոգության ենթարկվել են հարավային և արևմտյան ճակատները, որովհետև այդ ճակատների վրա 5-րդ դարու ոչ մի հետք չի մնացել. սակայն 7-րդ դարուց սկսած 11–12-րդ դարերի նորոգության նմուշները գոյություն ունենալուց հետո, խիստ ակնբախ են 17-րդ դարուց սկսած մինչև մեր օրերը եղած նորոգությունները, մասնավորապես ստորին մասերի վրա:

Այս ավելի քան 12 դար անտերությունից քանդման և ավերման ենթարկված շենքը, իբրև մայր աթոռ այն հարգանքը չէր վայելում ինչպես այժմ: Ոչ միայն զանազան տեղափոխություն կատարել կարելի էր, այլ և, ըստ Ղազար Փարպեցու,

Վահան Մամիկոնյան վերաշինում է տաճարը իբրև «գործ նախնաց իւրոց» (անշուշտ մոր գծով ինքզինքը Պահլավունի էր համարում) ոչ իբրև մայր աթոռ, հետևաբար, երբ 5-րդ դարու վերջերը աթոռը Դվին փոխադրեցին, այլևս ուշադրություն չդարձրին Վաղարշապատի վրա: 7-րդ դարում Կոմիտասը ընդօրինակում է Վահանի տաճարի ձևը Հռիփսիմեի համար և նորոգություններ է կատարում կաթուղիկեի վրա: Իսկ Ներսես Շինող իր կանգնած Զվարթնոցի մեջ մարմնացնում էր Վահանի եկեղեցիին ձևը քիչ ավելի ընդարձակելով: Իսկ Ներսես 3-րդից հետո մինչև 17-րդ դարը այլևս ուշադրություն չդարձնելով, Առաքել պատմագրի նկարագրած վիճակին հասավ:

## Բ. ՏԵՂԵԿԱԳԻՐ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՃԱՐԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱԲՍԻԴԻ ՎՐԱ ՀԵՏՆԱԳՈՒՅՆ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԶԱՆԳԱԿԱՏԱՆ ՀԱՆԿԱՐԾ ՓԼՉԵԼՈՒՆ ՊԱՏՃԱՌՈՎ ՎՆԱՍՎԱԾ ԱԲՍԻԴԻ ԵՎ ՈՒՐԻՇ ՓՈՔՐ ՄԱՍԵՐՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ

Էջմիածնի տաճարի վրա, 1682 թվականին Եղիազար կաթողիկոսի ձեռքով կանգնված երեք փոքր զանգակատներեն մեկը՝ հարավային աբսիդի վրայինը, անակնկալ կերպով փլած է 1921 թ. մարտի 27-ի առավոտյան ժամը 4-ին, և փլուզման ցնցումով ու քարերու միմյանց բախումով, մեծապես մնասվել էր ներքևի հնադարյան աբսիդը:

Վանքի միաբանությունը հետաձգել էր փլած և մնասված մասերի վերանորոգումը, միայն բավականացեր էր նույն տարին փլատակը մասամբ մաքրելով և աբսիդի վրան մի թեթև փայտյա ծածկ դնելով:

Այս տարի, միաբանությունը թե՛ զանգակատան և թե՛ ուրիշ հարկ եղած մասերի նորոգության համար, կազմել էր մի շինության հանձնաժողով, նախագահությամբ Մեսրոպ արքեպիսկոպոսի և անդամակցությամբ Խորեն և Բագրատ արքեպիսկոպոսների:

Հանձնաժողովը ի նկատի ունենալով տաճարի թե պատմական և թե գեղարվեստական նշանակությունը, մանավանդ նրա բազմադարյան հնությունը, որոշեց հրավիրել Հայաստանի գլխավոր ճարտարապետ, ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանին՝ նախնական խորհրդակցության և տաճարի մանրամասն քննության համար, որից հետո կազմել ըստ պատշաճի վերանորոգության ծրագիրը:

Ակադեմիկոս Թամանյանն առաջին այցելության ժամանակ, կարգադրեց որ նախապես բոլոր խախտված և վտանգավոր դարձած մասերը լուսանկարելե և մանրամասն չափագրելե հետո, քանդվին և խնամքով մաքրվին, որպեսզի հնարավոր լինի լուրջ քննության ենթարկել տաճարն իր բոլոր մասերով:

Այս կարգադրության հիման վրա, անմիջապես գործի ձեռնարկվեցավ ներկա 1923 թ. օգոստոսի 2-ին, և ակադեմիկոս Թամանյանի կողմից արվեստագիտական աշխատանքներին ղեկավար նշանակվեցի ես:

Չափագրելու, քանդելու և մաքրելու աշխատանքները տևեցին մոտավորապես երկու շաբաթ, որից հետո կրկին հրավիրվելով ակադ. Թամանյանը նախ քննեց այն մասերը, որոնք ընդունակ էին դարձել գարնան և աշնան անձրևներն իրենց մեջ ծծելու և մինչև տաճարին ներսը թափանցելու, որով փչանում էին բոլոր պատերն ու ներքին կամարները: Հետո քննեց նոր փլած զանգակատան և աբսիդի մասերը, որոնք անմիջական նորոգության պիտի ենթարկվեին:

Ջյունահալքի և անձրևների խոնավությունից մշտապես փճացման ենթարկված մասերի համար, ակադեմիկոս ճարտարապետը գտավ, որ տաճարի տանիքի ամբողջ քարե ծածկերը, նախապես արվեստի պահանջած կանոնների համաձայն շինված չլինելեն զատ, նաև չափազանց հնացած էին, ուստի հարկ համարեց լուրջ վերանորոգության ենթարկել ծածկի սալաքարերը՝ առանց այլափոխելու տանիքի նախնական հին ձևը: Բացի ծածկի սալաքարերի անարվեստ շարվածքը և հնացած լինելը, ակադ. ճարտարապետը ամենամեծ չարիքի աղբյուր համարեց արտաքին պատերի կատարին, հետնագույն ժամանակ բոլորված շուրջանակի պարապետները և Գևորգ կաթողիկոսի տաճարի արևելյան կողմին կցած ամբողջ շենքը՝ վրայի տգեղ ու անճաշակ զույգ գմբեթներով, որոնք պատճառ են դառնում ձյունհալքի և անձրևի ջրերին տանիքի վրա լճանալուն և պատերի ու կամարների մեջ ծծվելուն: Ուստի այս մասին կարգադրեց, որ քանի որ այժմ հնարավոր չէ Գևորգ կաթողիկոսի տաճարի արևելյան կողմին կցած շենքը միանգամայն վերացնել, գեթ այժմ անհրաժեշտ է միանգամայն վերացնել նույն շենքի վրայի զույգ գմբեթները և շուրջանակի կտուրի մակարդակից վերև բարձրացված պարապետները և տեղերը հավասարեցնել տանիքի սալահատակի հարթ մակարդակին. նաև տանիքի մակարդակին հավասար պատերի վրա շարժված սալաքարերը պատերից դուրս հանել շուրջանակի առնվազն 0,05 սաժ. պատերի արտաքին երեսները անձրևի կաթիլներից ազատ պահելու համար:





Նկ. 18. Էջմիածնի տաճարի հարավային աբսիդը, որի վրա փլված է զանգակատունը

Փլած զանգակատան կազմությունը մանրամասն քննելով և հյուսիսային աբսիդի վրայի նույնաձև կանգուն զանգակատան հետ համեմատելով, ակադեմիկոս ճարտարապետը պարզեց, որ զանգակատների շինողները, նույնիսկ սկզբից, առանց ի նկատի առնելու շինարարական էական կանոնները և մասնավորապես տարողության օրենքները, հանդուգն կերպով ծանրաբեռնել էին, բազմադարյան հնությունից արդեն հյուծվիլ սկսող աբսիդի պատերը: Բացի այս, մի ուրիշ աններելի սխալ ևս գործված էր, որ նախքան զանգակատան շինվելը, աբսիդի կատարին, շուրջանակի բարձր պատեր էին բոլորած իբրև պատերազմական ամրոց՝ առանց պահանջված ապահով հաստատության, և այս պատերու վրա էին դրված զանգակատան գմբեթի զանգվածի ամբողջ ծանրությունը իրենց վրա կրող չորս սյուներեն երկուքին կես մասերը, որով իբրև ամրոցի պատ աբսիդի հյուծված պատի վրա շինվածը ծառայում էր նաև իբրև սյուն: Հետևաբար, զանգակատան ծանրությունը հետզհետե ճնշելով աբսիդի ուժասպառ պատերը և դեպի դուրս մղելով թե ամրոցին և թե աբսիդի պատերը, գմբեթի հանգիստը կազմող շրջագծի և պատերու մեջտեղ շուրջանակի ճեղքվածք էր գոյացել 0,04 սաժ. լայնությամբ՝ անկախ երկու տեղից ևս վերեն վար գոյացած ճեղքվածքներից և դուրս պրծած քարերից: Այսպիսով հետզհետե զանգակատան հավասարակշռությունը կորչելով և հակվելով դեպի դուրս գլորվել էր դեպի ցած:

Արդ, ըստ ակադեմիկոս ճարտարապետի, փլած զանգակատունը նախկին ձևով վերականգնելու համար, հարկ պիտի լիներ հնացած աբսիդը քանդել կեսից ավելին և նորը շինել հաստատուն կերպով իբրև ապահով խարիսխ նորոք կառուցվելիք զանգակատան: Բայց որովհետև աբսիդի կեսից ավելին քանդվելով և բոլորովին նոր շինելով, անշուշտ պիտի կորչեր նախկին հնության դրոշմը, որ հակառակ էր հին հուշարձանների նորոգության համար անհրաժեշտ ընդունված օրենքի, այն է ամեն հնար գործ դնել հնագույն տիպը պահպանելու առանց քմածին այլափոխումներու, և որովհետև զանգակատունը նորագույն ժամանակի գործ էր և չէր կարելի նրա վերականգնման զոհել ավելի քան տասն և երեք դարու հնություն ունեցող շենքը, որը առանց զանգակատան կարելի էր ապահովել երկար դարերու համար, հետևաբար որոշեց որ աբսիդի դրսի երեսից, պսակով միասին քանդվին միմիայն չորս շարք քար և իր սեփական քարերով վերստին շարել քանդվածը՝ պակասած մասերի համար միայն նոր քար տաշելով և զետեղելով շարքի մեջ: Եթե նույնիսկ հնար լիներ առանց աբսիդը քանդելու վերաշինել փլած զանգակատունը և վտանգ չսպառնար աբսիդին յուր արտակարգ ծանրությամբ, դարձյալ պետք էր վերականգնել հնագիտական օրենքներով և ըստ կարելվույն շինել իր քարերով, այդ ևս անկարելի էր, որովհետև սյուներ, խարիսխներ, խոյակներ, զարդաքանդակված կամարներ ու աղեղներ այնպես էին փշրված, որոնցմե ոչ մի հատ գործածել հնար չէր: Հետևաբար աբսիդի վրան փոխանակ զանգակատան, որոշեց ճարտարապետը ըստ հայկական վաղեմի ոճի, ծածկել կոնաձև ծածկով անձամբ որոնելով կոնի բարձրության չափը:

Ակադեմիկոս ճարտարապետի վերոհիշյալ կարգադրությունները իրագործվեցան հետզհետե. բազմակուսի աբսիդի երեք ճակատների քարերը պսակի շարքերով միասին, նախապես վրանները թվանշաններ դրվելուց հետո զգուշությամբ քանդվեցին, և մաքրվելով նույն կարգով վերստին իրենց տեղերը շարվեցին, իսկ պակասած մասերի համար նոր քարեր տաշվեցին իբրև լրացուցիչ չորս շարքերին: Պսակի ոճը նույնը պահվեց, ինչպես որ կար առաջ հին շարքի մեջ: Բայց որպեսզի այս նոր շարված քարերը սերտիվ միանան հին պատի հետ, և անխախտ ձուլվին, ճակատի շարված յուրաքանչյուր քարերը երկաթյա ձողերով կապվեցին հետևի շարքերի հետ՝ ձողերի ծայրերը հալած արճիճով ամրացվելով: Աբսիդի վրան ծածկվեց կոնաձև՝ եզերքները ագուցիկ տաշված սալաքարերով:

Արևելյան կողմին Գևորգ կաթողիկոսի կցած շենքին վրայեն զույգ գմբեթները վերացվելե հետո բաց մնացած տեղը նախապես ծածկվեց երկաթի ձողերի վրա ձուլված բետոնով և վրան հավասարվեց ագուցիկ եզերքներով տաշված սալաքարերով՝ հավասար տանիքի մակարդակին, իսկ նույն մակարդակով, վերցված պարապետների տեղերը սալաքար շարվեցին 0,05 սաժ. պատերից դուրս առաջացնելով:

Բայց որովհետև աշնանային ցրտերը վրա հասան և աշխատանքներ կատարելը դժվարացավ, որոշվեց հետաձգել առաջիկա գարնան ամբողջ կտուրի սալահատակների նորոգությունը, և ժամանակավորապես մաքուր գաճ ու կրով ծեփվեցին սալաքարերի միմյանց միացման տեղի բաց մնացած ճեղքերը և կոտրտված մասերը:

Ակադեմիկոս Թամանյանի կարծիքով, Էջմիածնի հնադարյան տաճարը, հետնագույն տգեղ հավելումներից և անճաշակ կարկատաններից ազատելով նախկին պարզության վերածելու և մոտալուտ կործանման վտանգից փրկելու համար, մոտ ապագայում անհրաժեշտ են հետևյալ աշխատանքները.

1. Վերացնել հյուսիսային աբսիդի վրայի փոքր զանգակատունը, որուն ծանրության ներքև վտանգավոր կերպով ճեղքըրտված է աբսիդը և մոտալուտ կործանման վտանգ է սպառնում:
2. Վերացնել տաճարի արևմտյան կողմի տանիքի շրջապատ պարապետները:
3. Անմիջական վերանորոգության ենթարկել արևմտյան ճակատի հյուսիսային և հարավային անկյունների ճեղքված և քանդվելու վտանգ սպառնացող մասերը:
4. Միանգամայն վերացնել արևելյան կողմին կից Գևորգ կաթողիկոսի շինությունը:

Որովհետև այս տարվա համար ծրագրված աշխատանքը մասամբ վերջացած է և առաջիկային կա ուրիշ անհետաձգելի աշխատանք, որոշվեց մինչև այժմ կատարված և հետո կատարվելիք աշխատանքների համար կազմել սույն տեղեկագիրը:

*Էջմիածին*
*25 դեկտեմբեր*
*1923 թ.*

## Բ

# ՏԵԿՈՐԻ ՏԱՃԱՐԸ

### ա. ՏԵԿՈՐ[1]

Պատմական և ճարտարապետական մեծ արժեք ունեցող հուշարձաններից մեկն է Տեկորի հնագույն տաճարը, որ մերթ վկայարան սրբույն Սարգսի և մերթ ս. Երրորդություն անունն է ունեցել:

Ըստ իմ հետազոտության Հայաստանի մեջ, նախաքրիստոնեական դարերից մինչև քրիստոնեության 15-րդ դար, տեղի է ունեցել ճարտարապետական արվեստի չորս վերածնություն, որոնց առաջինը, կիկլոպյան պատերից հետո 4-րդ և 5-րդ դարերուն մեջ կազմակերպված է, որուն կատարյալ մի օրինակն է Տեկորի հուշարձանը 5-րդ դարուն կանգնված: Թեև ապացույցներ կան, որ նախքան 5-րդ դար գոյություն ուներ այդ շենքը, 5-րդ դարու մեջ, հավանորեն քրիստոնեական տաճարի վերածվելիս ստացավ ներկա ձևի գլխավոր մասը (ինչպես նույնը պատահել է Երերույքի տաճարում): Շենքի թե՛ ներքին և թե՛ արտաքին ճակատների վրա կան անվիճելի ապացույցներ, որ 10–11-րդ դարերուն մի նոր նորոգության հետևանքով, այդ դարերի ճարտարապետական արվեստի կնիքը դրվել է նոր կատարված նորոգությունների մեջ, որոնց մասին կանդրադառնամ շատ համառոտ կերպով:

Հայաստանի պատմական ճարտարապետության անծանոթ մասնագետների համար, գուցե անհավատալի թվի 5-րդ դարու մեջ Տեկորի տաճարի նման մի շենքի գոյությունը, որուն թե՛ գեղարվեստական ճաշակը և թե՛ շինարարական օրենքները նվազ տարբերություն ունին ներկա զարգացած արվեստեն: Նայելով կառուցման դարաշրջանի հնության և գեղարվեստական ճաշակի նախնականության, պատկառանք կազդեն դիտողին:

Շինության որոշ թվական չկա շենքի վրա, միայն շինող Սահակ Կամսարականի և ընդ նմին հիշատակված անունները, Հ. Ալիշանի քննությամբ 5-րդ դարուն կհասնին: Բացի արձանագրության մեջ հիշված 5-րդ դարի անուններեն, ճարտարապետական և շինարարական ոճերի քննությունը ևս այս շենքը տանում է մինչև 5-րդ դար:

Այս առաջին վերածնության մեջ իրագործված են թե՛ գեղարվեստական և թե՛ շինարարական ձևեր՝ ինչպես պսակ, լայն պատուհան, պայտաձև աղեղներ, սյուներ, խարիսխներ, խոյակներ, շրջապատ սյունազարդ բացօթյա սրահ հետագա դարերում այլևս գոյություն չունեն: Հետզհետե ջանքեր են լինում նոր ոճ և ճաշակ ստեղծելու, որը բավական երկար ժամանակ Հայաստանի արվեստագետներին խարխափումների մեջ թողնելե հետո, 7-րդ դարուն միայն մի նոր ոճ է երևան գալիս:

Որպեսզի պարզ լինի Տեկորի տաճարի նախնական ձևը և հետնագույն փոփոխությունները յուրաքանչյուրի համար, այստեղ թե՛ մասնակի կբացատրեմ և կներկայացնեմ շենքից վերցված ձևեր ու քանդակներ նախնական շենքի վրա և թե՛ հետագային հավելվածներեն կամ նորոգություններեն առաջ եկած:

[1] Այս հատվածը քաղում ենք «ցուցակից»:
Կազմող



Նկ. 19. Տեկորի տաճարի հյուսիսային պատի արևմտյան կեսը

10–11-րդ դարերուն, որ Բագրատունի թագուհիները նորոգել են այս շենքը, գլխավոր աշխատանքը կատարել են հյուսիսային պատի վրա արտաքուստ բոլորովին նոր քարեր շարելով: Առաջ, որ տանիքը պարզ էր, արևելյան և արևմտյան կողմի ֆրոնտոններ ուներ, և ֆրոնտոնների թեքումի համեմատ երկու կողմից վայրահակ տանիք ուներ, այժմ չինել են ֆրոնտոններ թե հյուսիսային և թե հարավային կողմը, և դրանից առաջ են եկած անհամաչափություններ, սակայն հանուն սկզբունքի այդ անհամաչափություններին հանդուրժել են՝ կտուրին իրենց ուզած ձևը տալու համար:

Կարծեք առաջին անգամ գմբեթ չինվում է Հայաստանում այս շենքի վրա, որը չափազանց տարօրինակ կերպով կազմվում է գմբեթին ներսը վայրահակ պատերով ձևացած, վրան մի գտակով ծածկված, իսկ արտաքուստ բոլորովին քառակուսի:

Սույն պահանջված գմբեթը վրան հարմարեցնելու համար հարկ եղեր է ներքին փոփոխություններ կատարել, սյուներից տաշելով և կամ ավելացնելով ներքին սյուների հաստությունները, հնարավոր է եղած գմբեթի համապատասխան խարիսխներ պատրաստել: Նաև, նախքան 10-րդ դար, որ շենքերը ծածկված են կղմինդրով, այս տաճարի 10–11 դարերու քարյա ծածկույթներուն ներքև շաղախի մեջ երևում են կղմինդրի բեկորներ, որոնք ոչ մի կասկած չեն թողնում, որ այս շենքը այնչափ հին է, որ պատկանում է 5–7-րդ դարաշրջաններին, ուր սովորական էր շենքի տանիքը ծածկել թրծած կղմինդրով:

Ներսը, արևմտյան կողմի հյուսիսից դեպի հարավ, մայր գմբեթակիր սյուները կապելու համար ձգված աղեղը, ինչպես երևում է, հնացած և վնասված էր, վերջին նորոգության ժամանակ աղեղը նորոգել են:

## Բ. ՏԵԿՈՐԻ ՏԱՃԱՐԸ[1]

Հազար հինգ հարյուր տարվան մի պատկառելի զառամ ծերունի, հայ ճարտարապետության տասն և հինգ երկար դարերու միակ ներկայացուցիչ Տեկորի տաճարը, թեև անտեր ու անպաշտպան, սակայն շնհիվ յուր ջլապինդ կազմվածքի դեռ կապրի և հույս կուտա այսուհետև ալ երկար ապրելու, եթե խնամող ձեռքեր մի քիչ օգնության հասնեն իրեն: Կապրի իբրև կենդանի վկա մեզ պատմելու համար յուր ծնունդն ու արկածալից կյանքը և ներբողելու զինքը կանգնողներու հանճարն ու մեծագործությունները:

Երբեմն իր հովանույն տակ սփոփանք և մխիթարություն փնտրող բարեպաշտ ժողովուրդին այսօր իրմե հեռացած օտարացած և զինքը լքած թողնելուն վրա թեև վշտալիր սրտով դարե ի դար հառաչելով կուրծքը ուռած ու պատառ-պատառ եղած, ժամանակի ծանր բեռան տակ մեջքը կորացած, տխուր ու հուսահատ գլուխը ծռած, սակայն օրհասական շունչով իսկ դեռ շատ բան կպատմե հարցասեր այցելուին. զինքը խոսեցնել գիտցողին համար ամեն քար լեզու կդառնա, ամեն խորշ արտասուքի աղբյուրներ, և դառնակսկիծ ողբով կնկարագրե յուր անցյալի վայելչությունն ու զինքը կանգնող մեծագործ իշխաններու բարոյական և նյութական նախանձելի արժանավորությունները:

Հայկական եկեղեցիներու առաջին տիպարը և հայ ճարտարապետության ինքնուրույն ոճի անխառն մարմնացումը կներկայանա այս երբեմնի վեհաշուք տաճարը, և իսկական դպրոց կարգ մը ակնախտիղ ոճերու, որոնց ծննդավայրը գտնելու համար, գիտնականներ երկար մոլորվեցան ուրիշ հեռավոր տեղերու մեջ փնտրելով: Բայց որչափ ատեն կանգուն է Տեկորի տաճարը, շուտով պիտի հեղաշրջվին մինչ այժմ եղած թյուր կարծիքներ ու ենթադրություններ, 5-րդ դարու մեջ ստեղծագործական տաղանդով օժտված հայ ճարտարապետներ պիտի ստանան իրենց պատվավոր մրցանակը գեղարվեստի պատմության մեջ, որոնց մեկուն ձեռակերտն է այս հոյակապ տաճարը:

Ոչ միայն հետագա դարերում հայ ճարտարապետության համար իբր արվեստի աղբյուր ծառայած է, ոչ միայն Արևմուտքի փառքով պճնազարդվելու ձգտվող 7-րդ դարու Զվարթնոց եկեղեցուն սիրուն ու վայելուչ զարդաքանդակներու օրինակներ մատակարարած է, այլ և շատ հեռու, օտար աշխարհներու արվեստի զարգացման ալ մեծ օժանդակ հանդիսացեր է: Այս մասին թեև շատ հարևանցի կերպով, սակայն իրավամբ հայտարարեց գիտական աշխարհին առաջին անգամ Տեքսիե ֆրանսացի ճարտարապետը 1839 թվականի ճանապարհորդության ժամանակ:

Կամսարականներեն մինչև Բագրատունիներու տիրապետելը, տաճարին պայծառության համար խնամք ու ջանք չէ խնայված, դեռ նոր կազմված հայ եկեղեցիի փոխանցման շրջանին ազդած հեթանոսական ձևերու հետքեր կորսցնելու համար եղած փոփոխությունները դեռ կնշմարվին:

[1] Այս հոդվածն արտատպում ենք «Ախուրյան» շաբաթաթերթի 1909 թվականի № 39-ից (մայիսի 29), փոքրիկ կրճատումներով: Նույնը տպագրված է «Հուշարար» ամսագրի 1912 թ. № 2-ի մեջ 20–22 էջերի վրա առանց ամրոցին վերաբերող հատվածի:

Կազմող

Բագրատունիներու օրով ալ թեև չէ լքված բոլորովին, սակայն պարզ է, որ նախկին վայելչության մեջ ալ չէ պահված, այդ շրջանին մեջ եղեր են նորոգություններ, բայց այդ նորոգությունները ավելի անշքացուցեր են անոր պայծառ ու գրավիչ երևույթը:

Թեք տանիքներու վրա երկնել են ուրիշ տանիքներ առանց պսակի, առատ լույսով տաճարին ներսը լուսավորող լայն պատուհանները բոլորովին փոքրացուցեր են և այդ պատուհաններուն գլուխները երբեմն քանդակեր են Բագրատունի շրջանի քանդակներով, բայց բոլորովին անարվեստ կերպով: Շուրջանակի, տաճարին կեսեն վեր, ճակատի քարերը վերստին նորոգեր են բոլորովին՝ առանց հավասարելու ներքևի մասին շինարարական արհեստի նրբություններուն ու ճարտարություններուն:

Գմբեթի ծածկը և պսակը կասկածելի են միայն, անոնք ո՛չ Կամսարականներու գործ են և ո՛չ ալ Բագրատունիներու, այլ երկու շրջանի մեջ միջանկյալ նորոգության մը արդյունք են: Երբ որ ալ լինի անոնց փոփոխության և նորոգման ժամանակը, պարզ է, որ նախատիպն են տասներորդ դարեն սկսած գործածված պսակներու և նույն ձևով ծածկված կոնաձև գմբեթներու, որպիսիներն են Խծկոնքի ս. Ստեփաննոս և ս. Սարգիս եկեղեցիները, Մարմաշենի եկեղեցին և յուր նմանները:

Ինչպես կերևի, արքայական տան ձեռնարկի արդյունք չէր այս նորոգությունը, որ այսօրինակ անշուք կերպով կատարված է, և կկարծեմ, որ այս նորոգությենեն հետո ալ բոլորովին թողված է բախտի քմահաճույքին, այնուհետև ոչ մի կարևոր նորոգության հետք չերևիր և ոչ ալ նմույշ 13–14-րդ դարերու շքեղ արվեստագործություններեն, եղածները ամենն ալ հասարակ կարկատաններ են միայն:

Ոչ նվազ հետաքրքրական է տաճարի հարավային կողմը արևելքեն արևմուտք երկնցող բարձր բլուրին վրա ժողովրդին բերդ անվանածը:



Նկ. 20. Տեկորի տաճարի հյուսիսային ճակատի արևելակողմի մուտքը և Խոսրովանույշ թագուհու արձանագրությունը



Իսկապես մի բերդ կա այնտեղ, որուն կրկնակ պարիսպներուն հետքերը միայն մնացեր են, բայց ինչ որ մնացեր է, այն ալ բավական է զարմանք ու ապշություն պատճառելու հետաքրքիր խուզարկուին: Այս բերդին մեջ ամենևին չկան կրաշաղախ և սրբատաշ քարեր, այլ միմիայն երկաթի նման կարծր որձաքարերու հսկա կտորներ իրարու վրա չոր չոր շարված են: Մարդս պահ մը ինքզինքը Եգիպտոսի բուրգերու առջև կկարծե, տեսնելով իրարու վրա բարձրացած որձաքարի ահռելի զանգվածներ, որոնց մեջ կան երեքեն չորս մետր խորանարդ ծավալի հասնող միակտուր բեկորներ: Այդպիսի դարու մեջ երբ դեռ շոգին ու մեքենաներ պաշտոնի չէին կոչված, մարդկային տկար ուժը ինչպե՞ս կարողացավ այս կոշտ զանգվածները հնազանդեցնել իր կամքին, դա մի առեղծված է:

Հազիվ 500 մետր երկարություն ունի ամրոցը և երկու հարյուր՝ լայնություն. հարավային կողմը կրկին պարիսպ ունի: Արևմտյան կողմեն, ուր եղեր է իմ կարծիքով մտից գլխավոր դուռը, երկու ձեռագործ ճանապարհներ բացված են ժայռի լանջերուն վրա, որոնց մինը կտանի դեպի արևմուտք՝ Ագրակի կողմը, իսկ մյուսը՝ դառնալով ամբողջ ամրոցի շուրջ կուգա կհասնի ուղղակի տաճարի արևմտյան դռան առաջ: Հինգ մետրեն ավելի կամ քիչ պակաս լայնություն ունին ճանապարհները, որոնց հարթ մակերևույթ տրվելու համար տեղ-տեղ պինդ ժայռի կուրծքը պատռեր են, տեղ-տեղ ալ ըստ պատշաճի նույնպես հսկա որձաքարի պատեր են շինել՝ ճանապարհի թեք կողմին վրա և այսպես, ճանապարհը հասած է մինչև տաճարի առջև:

Հավանաբար այս պողպատյա ամրոցը կպատկաներ Կամսարական իշխաններուն, ինչպես անոր ստորոտը կանգնված փառավոր տաճարը, և այդ պատճառով ալ ամենեն լայն և կանոնավոր ճանապարհը կանցնի տաճարի առջևով:

Ամրոցին մեջը շինության հետքեր չեն մնացած և տարակույս չկա, որ դեռ Բագրատունիների օրով իսկ սկսած էր անշքանալ, որովհետև տաճարին հարավային կողմը գտնված գերեզմանատունը, որուն մեջ մինչև (ՆԾԹ) 1010 թվականի խաչքար և ուրիշ ժամանակակից թվականներով տապանաքարեր կան, գրված է ճանապարհի մի կարևոր մասը, որով ճանապարհը անգործածելի դարձած է:

Զարմանալի է որ ինչպես տաճարին վրա, նույնպես ալ այս գերեզմանատան մեջ 10-14-րդ դարերու ճաշակով խաչքարեր և տապանաքարեր ամենևին չկան. եղածները այս դարերեն կամ ավելի հին են և կամ անհամեմատ նոր: Կարծեք երկու ամբողջ դար կյանքը դադար եղած է այս հոյակապ տաճարին շուրջը:

## Դ. ՄԻ ԱՍՏՂ ԱՆՀԵՏԱՑԱԾ ՀԱՅ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՀՈՐԻԶՈՆԻՑ[1]

Հայ գեղարվեստի հնադարյան ներկայացուցիչներեն ամենեն հոյակապը ու ամենեն պատկառելին, որ ապրած է ավելի քան տասն և հինգ դար ու հասած զառամ ծերության, վերջապես տեղի տվավ ճակատագրի անդառնալի վճռին առջև, և ընդմիշտ խոնարհեցուց իր սիգապանծ գլուխը թաղելով հավիտենական լեռնակուտակ փլատակներու տակ:

Այս ողբալի կորուստը կանխահաս չէր, մենք վաղուց պետք էր հաշտված լինեինք մոտավոր ապագայի մեջ այդ կորստյան հետ, և հետևաբար պետք է որ շտապեինք օրհասական օրերուն մեջ գոնե քաղել իրմե պատմական մեծամեծ անցքերու արժանահավատ վկայություններ՝ որոնց մեծ մասամբ ժամանակակից վկան էր եղած:

Տեկոր գյուղի հարավային լեռնալանջին վրա ալևոր նահապետի մը նման դարերու բնական արկածներեն պարտասած այս ծերունի հիշատակարանը, շատ տարիներե ի վեր լռիկ հրավեր կկարդար դարուս գիտնական արվեստագետներուն ու բանասերներուն, որ գան ժողվվին իր շուրջը, և ինքը պատմե ու լուսաբանե հայ գեղարվեստի պատմական կյանքի մեջ մութ մնացած շատ մը առեղծվածները:

Տեկորի տաճարը ոչ միայն կենդանի ականատես էր իրմե հետո տասնյակ դարեր վերածնող ու մեռնող արվեստներու, և իր որոշ դերը ունեցեր էր անոնց կազմակերպության և զարգացման մեջ, այլ և քաջ տեղյակ էր իրմե շատ դարեր առաջ ապրող հայ և օտար արվեստներու՝ որոնց հեռավոր կամ մոտավոր ազդեցության ներքև կազմակերպվեր էին իր կմախքն ու ակնապարար տարազը:

Տեկորի տաճարին ավերակաց կույտի մը փոխվելը, պարզապես աղետ պետք է համարել, վասնզի հնադարյան հայ գեղարվեստի պատմության համար շատ մը գաղտնիքներ և գերագույն կարևորություն ունեցող լուսաբանություններ թաղեց իր փլատակներուն տակ:

---

[1] Այս հոդվածը Թորամանյանը տպագրել է «Հուշարար» ամսագրի 1912 թվականի № 2-ի, էջք՝ 23–25, Տեկորի տաճարի ծածկի փուլ գալու առթիվ, որից և արտատպում ենք փոքրիկ կրճատումներով:

Կազմող



Նկ. 21. Տեկորի տաճարի ընդհանուր տեսքը հարավ արևմուտքից ծածկի կործանումից հետո

Նկ. 22. Տեկորի տաճարի արևելյան աբսիդի ներքին տեսքը ծածկի կործանումից հետո



Նկ. 23. Տեկորի տաճարի արևմտյան պատի վերին մասերը

Սակայն այս ցավալի կորստյան մեջ եթե կա փոքր ի շատե մխիթարական պարագա մը, այն է թե, բոլորովին բախտակից չեղավ իրմե առաջ անհետացող բազմաթիվ մեծագործ և գեղակերտ հուշարձաններու՝ որոնք մի անգամ ընդմիշտ կորեր են պատմության մեջ՝ հազիվ աղոտ հետք մը միայն թողնելով:

Բախտի բերմամբ Տեկորի տաճարը անցյալ դարու առաջին քառորդեն սկսած ունեցավ իր հետաքրքրվող այցելուները, որոնք բավականին քաղեցին և արձանագրեցին հատ ու կտոր հատվածներ անոր կյանքի պատմությունեն: Բայց այս ամենը՝ հայ գեղարվեստի պատմության համար Տեկորի տաճարին ուսումնասիրության անհրաժեշտությունը զգացնող հատվածներ էին՝ քան իսկական ուսումնասիրություն, ցնցող ու չահագրգռող կոչեր՝ որոնց անլսելի մնալուն վրա ոչ ոք չէր կասկածեր: Այնուամենայնիվ եզրակացությունը տխուր և արդյունքը ցավալի է, որովհետև, քանի առիթ կար և կարելի էր օգտվել անոր գոյությենեն, ոչ ոք չկարողացավ լիակատար օգտվել անոր ընձեռնելիք բազմակողմանի օգուտներեն:

Տեկորի տաճարին անակնկալ կորուստը ցանկալի է որ փորձառական մեծ դաս մը լինի մեզ համար, և մենք այսուհետև գոնե անուշադիր չթողունք այն բազմաթիվ հոյակապ հուշարձանները՝ որոնք Տեկորի տաճարին նման մեծամեծ պատմական անակնկալ հայտնություններու չտեմարաններ են: Մինչև այժմ մեր կամքեն անկախ պատճառներով ակամա զրկվել ենք շատ փառավոր հիշատակարաններու ցանկալի գոյությունեն, բայց անցածն անցեր է, գոնե ներկան անօգուտ չանցնի:

Շատ երկար կլինի մի առ մի թվել այն բոլոր տակավին գոյությունը չարունակող պատմական հոյակապ հիշատակարանները, որոնք անգյուտ գանձեր են և հայկական աշխարհի մեջ ծաղկող գեղարվեստի պսակին վրա հազվագյուտ զարդեր:

Անտեսել հայ աշխարհի մեջ համատարած անխնամ ցրված այս անթիվ հարստությունները և անհոգությամբ թողուլ որ ոչնչության բաժին դառնան, կնշանակի կամ ուրանալ պատմության կարևորությունը և կամ անզգա լինել:

Պատմության կարևորությունը գիտակցաբար ուրանալու համար անօրինակ քաջություն ունենալու է, վասն զի հերքել հանդգնել՝ կնշանակե համայն քաղաքակիրթ մարդկության երեսին մեծամտորեն անարգանք շպրտել:

# Գ

# [ԵՐԵՐՈՒՅՔԻ ՏԱՃԱՐԸ]

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԵՐՈՒՅՔԻ ԲԱՋԻԼԻՔԻ ՄԱՍԻՆ

*Թե ի՞նչ վիճակի մեջ մեզ հասել է երբեմնի այս հոյակապ շենքը, որոշ չափով ցույց կտան նորոգման առիթով հանված լուսանկարները և կատարված չափագրական գծագրությունները, այնուամենայնիվ հարկ է մանրամասնաբար նկարագրել ավելի հասկանալի լինելու համար. պատկերների մեջ հաճախ ծածկված են այն մասերը, որոնք շենքի ամբողջական փլուզման և մի հսկայական ավերակի կույտ ձևացնելու մոտալուտ սարսափելի վտանգն են ցույց տալիս:*

*Տարակույս չկա, որ եթե բարբարոս ձեռքեր քմահաճ կերպով այս շենքից քարեր չպոկեին, օգտվելով քարերի անհամեմատ խոշորությունից և սրբատաշ վիճակից իրենց բնակարաններ, գոմեր և մարագներ շինելու համար, այս շենքը մինչև այժմ էլ կանգուն պիտի մնար դեռ երեկ շինվածի նման, ինչպես երևում են այդ նորակառույց վիճակը շենքի պատերի ձեռք չտված մասերի վրա:*

*Շենքը կանգնված է մի աստիճանավոր պատվանդանի վրա աստիճանները ամբողջովին շրջապատած էին շենքը տեղի բնական դիրքին համեմատ՝ 5-ից մինչև 7 աստիճանով: Աստիճանները վերջացնելուց հետո կմտնվեր երեք կողմեն ևս սյունազարդ սրահների տակ, հարավային կողմից երկու, իսկ արևմտյան կողմից մեկ շքեղ դռներից կմտնվեր տաճարի մեջ. դեռ այսօր ևս ներքին շքեղ պարզությունը և ներդաշնակ համաչափությունները խոր տպավորություն կգործեն ներս մտնողի վրա:*



*Նկ. 24. Երերույքի տաճարի հարավային պատի կենտրոնական մասը*



*Ինչպես երևում է, շենքը կանգնված էր ընդարձակ բնական ժայռուտ տեղի վրա և տեղի անկանոնությունները ուղղված և հարթ մակարդակի վերածված է աստիճանավոր պատվանդանով: Այդ պատվանդանի դեղակերտ աստիճանները, որոնք մեծամեծ քարերով շինված էին, այժմ մի ողբալի տեսարան են ներկայացնում, մեծ մասամբ քարերը տեղից հանված և տարված, իսկ մնացածները ևս գրեթե ամբողջովին կոտրված ու փշրված վիճակի մեջ են: Սյունազարդ սրահներն իրենց ծածկույթով միասին քանդված են. մնացել են տեղին վրա իբր նրանց գոյության ապացույց հաստահեղույս կլոր սյուների բեկորները և այլանդակված խարիսխներ ու խոյակներ՝ 5-րդ դարու և նրանից առաջ սովորական եղող ինքնուրույն քանդակներով: Նույնիսկ պատերի վրա եղող սրահների քառակուսի որմասյուները ազատ չեն մնացել ավերող ձեռքերի չարագործությունից. խարիսխները այլանդակված, քանդակազարդ խոյակները թափված ու անհայտացած են:*

*Արևելյան կողմի խորանը քանդված է թե՛ ներսից և թե՛ դրսից և քարերը տարված, իսկ հարավ արևելյան դուրս ցցված թևի անկյունը նմանապես դիտավորյալ կերպով քարերը հանված են ներսից և դրսից: Ներքևի երեք կարգ քարերը հանված լինելու պատճառով վերևի շարքերի մեծամեծ քարերի ճնշումից շենքը ճաքել է երկու տեղից: Նույն վիճակին է մատնված հարավային այս դուրս ցցված մասի արևմտահարավային անկյունը, ոչ միայն հանել են սրբատաշ մեծամեծ քարերը, այլև քանդել են պատին միջի լիցքը, խոր խոռոչներ ձևացնելով, որով միանգամայն թուլացել է պատերի տարողության ուժը:*

*Հարավային ճակատը, որ բոլոր կողմերի համեմատությամբ, ամենից գերազանց գեղարվեստականն էր իր վսեմ պարզությամբ, ամբողջ երկարության վրա քանդված են քարերը, թե՛ ներսից և թե՛ դրսից, մինչև այնքան բարձրության վրա, ուր մարդկային ձեռքերը կարող էին հասնել, ֆրոնտոնավոր երկու գեղեցիկ դռներ հազիվ կանգնած են մաշված ու թուլացած ոտների վրա:*

*Արևմտյան կողմը, որ նույնպես ունեցեր է դուրս ցցված թևեր, որոնց մեջ չափավոր մեծությամբ սենյակներ էին, այս հարավային կողմինը միանգամայն կործանվել է, թողելով կանգուն արևմտյան կողմի վրա մի պատի կտոր միայն, իսկ մեջը փոխվեր է սրբատաշ քարերի մի ողբալի կույտի: Այս կողմի վրա ևս շատ մասերի մեջ պատերի արտաքին երեսների քարերի արանքում եղած լիցքերը քանդած են և միայն ճարպկորեն շարված և միմյանց ագուցված քարի շնորհիվ էին, որ կանգուն կմնան պատերը մինչև այսօր:*

*Նկ. 25. Երերույքի տաճարի հյուսիս արևելյան մասի ներքին տեսարանը*

*Դեպի հարավ դուրս ցցված արևելյան մասին երկու անկյունները ևս քանդված և քարերը հանված են որոշ բարձրությամբ, այդ պատճառով էլ պատի երկու երեսից հանված քարերի շնորհիվ միջուկը ևս քայքայվել է և պատի ստորին մասերը ծակվել, որով երկու տեղից վտանգավոր ճեղքեր են առաջացել վերևից դեպի ցած: Ճեղքին մեկը մեջտեղիցն է դեպի արևմտյան անկյունը առաջացած, իսկ մյուսը՝ ուղիղ հարավ-արևելյան անկյունին վրա, որ բավականին առաջացել է և 3–4 սանտիմետր բացվել է: Ամենից վերև դրված է սև, կարծր, երկար մի քար, որն իբրև կապ է ծառայել բացված ճեղքին և պահել է նրան փլուզումից, այնուամենայնիվ այդ ճեղքը դարձյալ մոտալուտ քանդման վտանգ է սպառնում և կարոտ է շուտափույթ ամրացման:*

*Ամենից ավելի անմխիթար, նույնիսկ սոսկում պատճառող վիճակի մեջ է արևմտյան կողմը ներքևի մասում, ոչ միայն մեծածավալ երեսի քարերը իրենց ուղղահայաց դիրքը կորցնելով ներս ու դուրս են հակված, և քարերը մեծամասնությամբ փտած ու հալված են, այլև պատի միջի շաղախը ամբողջովին դատարկված է և միայն չոր քարերն են միմյանց վրա շարված կանգուն մնում: Սակայն*

այս վիճակին մեջ, հազիվ թե մեկ տարի ևս կյանք ունենար, վերջապես մի հորդ անձրևի տակ և կամ մի թեթև երկրաշարժի ցնցումով ամբողջական փլատակի պիտի վերածվեր: Այս վերջին նորոգումն էր, որ որոշ չափով ապահովեց շենքը ամեն կողմից:

Արևմտյան կողմի հավելյալ սենյակների հարավակողմինը արդեն մի քարակույտի փոխված է, իսկ հյուսիսային կողմի պատերը, թեև կան տեղի վրա, այնուամենայնիվ չափազանց վտանգավոր կերպով ծռված են դեպի դուրս:

*Նկ. 26. Երերույքի տաճարի քանդակազարդ խոյակ*

Հյուսիսային պատն է, որ ավելի անվնաս մնացած է և ուղղահայաց կանգնած է: Քարերը իրենց հիանալի շարքով կմնան և վրան պարզ նկատելի են զանազան դարաշրջանների նորոգությունները: Աստիճաններից վերև գրեթե մինչև կեսը նախնական շարքն է, անկեց վերևն է, որ նորոգության ենթարկվել է 6–7-րդ դարերուն: Անշուշտ նորոգություններ եղեր են այն ժամանակ, երբ այունազարդ սրահը, արտաքին խորանները և արևմտյան սենյակները շինվել են: Սակայն դժբախտաբար այս կողմին վրա ևս առանց խոր ցավ զգալու չենք կարող կանգնել: Ներսի մասում նեֆերը կամարով ծածկված լինելուն իբրև անվիճելի ապացույց մնում է տեղում արևելյան հյուսիսային պատի վրա մի կամարաքար, որ սկզբի քարն է կամարածածկի դրսի պատին վրա: Բացի այդ տեղին վրա մնացած կամարաքարից, գետինն ընկածների մեջ կան երկու քարեր, որ կպատկանին թևի կամարածածկին: Գտնվեցին նաև երկու խիստ մաշված աղեղնաքարեր, որոնք հատուկ էին ներքին անջատ այունները իրար միացնող կամարներին:

Բարբարոս ձեռքեր պատի մեջտեղից ծակեր են և գեղեցիկ մեծածավալ սրբատաշ քարերը տարել են, ինչպես հարավային կողմը որ ունեցեր է շենքը արտաքին ծածկույթավոր այունազարդ սրահ, նույնը եղել է նաև հյուսիսային կողմում, սակայն ամբողջովին քանդած և իրեն գոյության վկա թողել է եկեղեցվո պատերի վրա բարձր քառակուսի որմայուններ և գետնին վրա թափված հսկայական այանց բեկորներ, նաև այս սյուներեն ոմանց գեղաքանդակ խարիսխներն և խոյակները:

# Դ

# ՀՌԻՓՍԻՄԵԻ ՏԱՃԱՐԸ[1]

Վաղարշապատի մեջ 618 թվականին կանգնված Հռիփսիմեի տաճարը տակավին կանգուն է, որը կարող է իբրև ապացույց ծառայել 7-րդ դարու հայոց շինարարական արվեստի մեջ ունեցած հմտության և հայ ճարտարապետների գեղարվեստական նուրբ ճաշակին: Ինձ շատ հեռու կտաներ այստեղ արձանագրել ռուս և եվրոպացի ականավոր ճարտարապետների և գիտնական արվեստագետների հիացմամբ լի ներբողական վկայությունները. ցանկացողներ հեշտությամբ կարող են գտնել բազմաթիվ հատորների մեջ ոչ միայն դրվատիքներ, այլև հմտալից ուսումնասիրություններ այս շենքին նվիրված:

Ինչի՞ համար այսքան դրվատիք և հիացական բացագանչություններ Հռիփսիմեի նման բոլորովին պարզ և միանգամայն անզարդ շենքի համար: Ի տես այս կոթողին հիացում ազդողը և հանդիսատեսին հափշտակողը արտաքուստ միմյանց հակառակ ուղղությամբ, հորիզոնական և ուղղահայաց ուղիղ գծերի երբեմն աղեղներով խառն վսեմ ներդաշնակությամբ օժտված գծերն են, որոնք իրենց բարձրության և լայնության մեջ այնպիսի չքնաղ դասավորություն ունին, որ ամեն տեսակ քննադատությունից բարձր են մնում: Ներքին տեսքը թերևս ավելի շքեղ երևույթ ունի իր անօրինակ պարզությամբ ինչպես արտաքինը: Այստեղ, կառուցող հմուտ ճարտարապետի մի գիտական ակնբախ այնպիսի մի արժանիք է գրավում ականատեսին, որ մեր այս օրվան թատրոնական ճարտարապետների նախանձը կշարժե իր երկարատև և բարձրաձայն արձագանքներով:

Շատերին առասպել պիտի թվեր գուցե այս շենքին հազար երեք հարյուր տարի առաջ շինված լինելը, եթե չլիներին երկու տեղով պատին մեջ հազցված արձանագրությունները, որոնց վրա փորագրված են շինողի անունը:



*Նկ. 27. Հռիփսիմեի տաճարի ընդհանուր տեսարանը հյուսիս արևմուտքից*

Մի՞թե մեր ժամանակակից արվեստագետների հետաքրքրության նյութ պիտի չլիներ և խորապես չքննեին թե զուտ տեղական տուֆ քարով և պարզ կիր ու ավազով շաղախված մի շենքի ավելի քան տասն և երեք դար կանգուն մնալուն գաղտնիքը ինչումն էր, և չի՞ կարելի օգտագործել այս տեղական շինվածանյութերը այնպես, ինչպես գործածել են ի հնում, որով գուցե կարողանանք թե՛ խնայողություն անել և թե՛ երկար կյանք տալ մեր շենքերին:

Այս հազվագյուտ կոթողը, որ իրեն նախատիպ ունեցեր է 5-րդ դարուն Էջմիածնի տաճարը (նախկին տաճարը ձևափոխությունից առաջ) և 6-րդ դարուն Ավանի եկեղեցին, գերազանցեց բոլոր իր նախորդներին, և իր նրբաճաշակ համաչափական ձևերով ու վայելչություններով, հետագային մոտավորապես երկու դար, իբրև օրինակ ծառայեց նորոգ կանգնված շինությունների՝ առավել կամ նվազ հաջողությամբ, թե՛ Հայաստանի սահմաններում և թե՛ նույնիսկ սահմանից դուրս այլ երկրներում: Հռիփսիմեի տիպի և նրա հարազատ ընդօրինակություններն են Թարգմանչաց, Կարսի, Աղիամանի, Երասխաձորի և 7-րդ դարու այլ բազմաթիվ հուշարձանները և Անիի Առաքելոց եկեղեցին՝ 10-րդ դարում: Եվ զարմանալի կերպով բոլոր այս շենքերը մինչև այսօր կանգուն են, բացի մեկից՝ Թարգմանչաց տաճարից, որուն մնացորդ գմբեթի մասը դեռ երկու տարի առաջ ընկավ:

Բացի բնության արկածներից, քաղաքական փոթորկալի անցքերն ևս պակաս աղետներ չեն պատճառել Հռիփսիմեի շենքին, սակայն համառ կերպով կուրծք տալով վեհորեն կանգնել է այսօր, ի պարծանս կանգնող արվեստագետների տաղանդին և քնքույշ ճաշակին: 16-րդ դարի կեսից մինչև 17-րդ դարի առաջին կեսը, ժամանակակից մատենագիրները ողբում են նրա անտեր ու քայքայման վիճակի մատնված լինելը: 1652–53 թվականներին էր, որ մի լուրջ նորոգություն կատարվեց արտաքին երեսին, կտուրին և գմբեթի ծածկին վրա:

[1] Այս հոդվածը քաղում ենք Պ. Պ. Թանգարանի ճարտ. բաժնի հատկանշական ցուցակից:

Կազմող



Նկ. 28. Հռիփսիմեի տաճարի ընդհանուր տեսքը հարավից



Նկ. 29. Հռիփսիմեի տաճարի գմբեթը ներսից

Այս թվականից հետո, որպես թե վանահայրերը հսկում էին, սակայն շատ քիչ բացառությամբ միայն օգտակար եղան շենքի ապահովության: Վերջին անգամ Խրիմյանն էր, որ (1893–1907) հոգածու գտնվեց անկեղծորեն և մի մասնակի նորոգություն կատարեց. այս նորոգության ականատեսներ վկայում են, որ վերին աստիճանի խղճամիտ հնագիտական նորոգություն կատարեց, պահելով շենքի մեջ այն ամենը, ինչ որ պատմական և գեղարվեստական արժեք ունեին: Վերջին ժամանակներս, թեև որոշ չափով գիտնական՝ միաբաններ նշանակվեցին իբրև վանահայր, սակայն նրանք ևս ոչ մի ապացույց չթողին այնտեղ իրենց երկարամյա գոյության, և շենքը մնացել էր բախտի քմահաճույքին:

Ընդհանրապես, բոլոր հնագիտական հուշարձանների, ի շարս որոց նաև Հռիփսիմեի վանքի ճակատագիրը փոխվեց դեպի լավը 1921 թվի փետրվարի 5-ի դեկրետով, որով պետականացվում էին պատմական և գեղարվեստական նշանակություն ունեցող էջմիածնի շուրջը գտնված հնագիտական հուշարձանները՝ Հռիփսիմեն, Զվարթնոցը դրվեցին Էջմիածնի Կուլտուր-պատմական Ինստիտուտի հսկողության տակ, սակայն քիչ հետո 1923 թվի դեկտեմբերի 18-ի դեկրետով, Լուսժողկոմի հովանավորության ներքո, կազմվեց մի Հնության Պահպանության Կոմիտե, որով պետականացվում էին ամբողջ Հայաստանի սահմաններում գտնվող պատմական և գեղարվեստական նշանակություն ունեցող չեն, կիսավեր և ավերակ հուշարձանները և նրանց պահպանությունը հանձնվում էր նորակազմ Հնության Պահպանության Կոմիտեին: Կոմիտեն, որչափ որ կներեին իր միջոցները, խղճի մտոք սկսեց կատարել իր վրա դրված պարտականությունները՝ հնախուզական արշավանքներ կազմակերպելով, ցուցակագրելով և փլուզման վտանգ սպառնացող մասեր ըստ հնարավորության նորոգելով:

Տաճարի արևմտյան ճակատի երկու պատուհաններուն տակ կտեսնվին անսովոր երկարությամբ քարեր: Ահա այս երկար քարերը եղեր են մուտքի վերնասյամերը, այլապես ուրիշ պատճառ չկար այդ արտակարգ երկարությամբ քարերը կատարյալ համաչափորեն զետեղելու պատուհաններին ցած:

Արևելյան ճակատի հյուսիսային կողմի պատուհանին տակ մնացեր է մի քար, որ ցույց կուտա թե այս կողմի դուռը կիսաբոլորակ կամարակապ եղած է. անշուշտ ունեցեր է moulure-ով կամ պարզ տեսներ վկայում են, որ վերին աստիճանի խղճամիտ հնագիտական նորոգություն կատարեց, պահելով շենքի մեջ այն ամենը, ինչ որ պատմական և գեղարվեստական արժեք ունեին: Վերջին ժամանակներս, թեև որոշ չափով գիտնական՝ միաբաններ նշանակվեցին իբրև վանահայր, սակայն նրանք ևս ոչ մի ապացույց չթողին այնտեղ իրենց երկարամյա գոյության, և շենքը մնացել էր բախտի քմահաճույքին:

Ընդհանրապես, բոլոր հնագիտական հուշարձանների, ի շարս որոց նաև Հռիփսիմեի վանքի ճակատագիրը փոխվեց դեպի լավը 1921 թվի փետրվարի 5-ի դեկրետով, որով պետականացվում էին պատմական և գեղարվեստական նշանակություն ունեցող էջմիածնի շուրջը գտնված հնագիտական հուշարձանները՝ Հռիփսիմեն, Զվարթնոցը դրվեցին Էջմիածնի Կուլտուր-պատմական Ինստիտուտի հսկողության տակ, սակայն քիչ հետո 1923 թվի դեկտեմբերի 18-ի դեկրետով, Լուսժողկոմի հովանավորության ներքո, կազմվեց մի Հնության Պահպանության Կոմիտե, որով պետականացվում էին ամբողջ Հայաստանի սահմաններում գտնվող պատմական և գեղարվեստական նշանակություն



կամար, որուն աղեղի կորության վրա հանգչող որմաքարի ծայրն է այժմյան երևցած աղեղը որմաքարին վրա:

Այս պատուհանին հանդիպակաց կողմին վրա դռան հայտնի նշան չիկա, որովհետև բոլորովին փոխված են քարերը, սակայն հարավային ճակատին վրա բավականին կասկածելի նշաններ ցույց կուտան, թե այստեղ ալ եղած լինի երբեմն մի դուռ, ինչպես Բագարանի եկեղեցին:

Բագարանի եկեղեցիին արևելյան հարավային անկյունը, որ ի հնումն սենյակ է եղեր, երկու դուռ ունի, մին՝ արևելյան կողմեն, մյուսը՝ հարավային կողմեն, որոնք մինչև այսօր պահված են, ինչպես արևելյան ճակատի հյուսիսային կողման դուռը: Դեռ Բագարանի հետազոտությունեն դարձիս ես տպեցի մի հոդված այս մասին, բայց հոդվածիս կեսը զանազան պատճառներով անտիպ մնաց, որի մեջ կհայտնեի կարծիքներս և որոշ ապացույցներս այն մասին, որ Բագարանի եկեղեցին ալ ընդօրինակություն էր Էջմիածնի հնագույն ձևին:



Նկ. 30. Հռիփսիմեի տաճարի արևմտյան ճակատի բարձրադիր պատուհանի քանդակազարդ պսակը

## Ե

# ԶՎԱՐԹՆՈՑ

### III. ԶՎԱՐԹՆՈՑԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հյուսիսային բարբարոս ազգերու արշավանքի պատճառով հունա-հռովմեական արվեստի անկման վերջին կնիքը եղավ panthéon-ը Արևմուտքի մեջ: Իսկ Արևելքի մեջ, սկսած Սելևկյանց շրջանեն մինչև արաբական արշավանքը, թեև կշարունակվեր գեղարվեստական կոթողներու կանգնումը Սյուրիո և Փոքր Ասիո մեջ, սակայն քրիստոնեական անձեռագործ տաճարի վարդապետությունը մեկ կողմեն, քրիստոնեության և հեթանոսության մեջ գոյություն ունեցող երկարատև պայքարները մյուս կողմեն ոչ նվազ հյուծեցին գեղարվեստական

և ճարտարապետական աշխարհը՝ մշտատև տատանման և վարանման մեջ թողնելով գեղարվեստասեր տարրերին կայսրության հարավային սահմաններուն մեջ:

Քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուն հետ մեկտեղ սկսվեցավ հռովմեական արվեստի ավերակներեն վերածնվել մի նոր արվեստ՝ արևելյան և արևմտյան խառն տարազով, որուն գիտությունը բյուզանդական արվեստ անունը տվավ:

Այս արվեստը իր զարգացման գագաթնակետին հասավ 6-րդ դարուն Կ. Պոլսո աշխարհահռչակ ս. Սոփիայով:

Սակայն անկեց հետո ոչ Բյուզանդական կայսրությունը մի նոր Հուստինիանոս ունեցավ և ոչ ալ բյուզանդական արվեստը մի նոր ս. Սոփիա:

Թեև Հուստինիանոսեն հետո ավելի քան մեկ դար շարունակվեց և շինարարական գործունեությունը արևելյան կայսրության սահմաններուն մեջ, սակայն այդ մեկ դարու շինարարական աշխատությունները մի նորություն չբերին՝ նույնիսկ հետագա դարերուն իսկ, որով 6-րդ դարը ընդմիշտ մնաց բյուզանդական ճարտարապետության ոսկեդարը: Արաբիայի անապատներեն 7-րդ դարուն խուժող բարբարոսական արշավանքը միանգամայն խամրեցուց հեթանոսական դարերեն սկսած պարբերական ելևէջներով անընդհատ շարունակվող ճարտարապետական արվեստի այլազան պտուղները Սյուրիո, Պարսկաստանի և Հայաստանի մեջ, այս երկիրներու արաբական նվաճումով:

Մասամբ աննվաճ մնացած Բյուզանդիան անգամ իր նախկին թափը կորսնցուցեր էր և ս. Սոփիայով փառաց գագաթնակետին հասած բյուզանդական արվեստը իր օրհասականին մոտեցեր էր մեկ կողմանե՝ քաղաքական արտաքին և ներքին տագնապեն, մյուս կողմանե՝ պատկերամարտությունեն, եթե Բարսեղ կայսրը չգար մի նոր սյուն ավելացնելու ահեղ կայսրության խարխլած քաղաքական կյանքին և վերջնական անկման մոտեցած բյուզանդական արվեստին: (Պատկերամարտությունը Հուստինիանոսի ժամանակեն սկսած է) Բարսեղ կայսեր կանգնած ս. Զորավոր եկեղեցին (որուն պատմական նկարագիրը միայն մնացած է) բյուզանդական արվեստի նոր վերածնությունը համարեցին մեր ժամանակի գիտնական արվեստագետները:

Թե ո՞րչափ տևեց այս նոր վերածնությունը և թե ի՞նչ նախանձելի բարձրության հասավ, այդ մասին խոսելն իսկ ավելորդ է, որովհետև, ինչպես նկատեցի, 6-րդ դարը բյուզանդական արվեստի մեջ այլևս չկրկնվեցավ, միայն թե պարբերական վերածնություններով շարունակվեցավ քանի մը դար ևս, առանց սակայն իր ոսկեդարը գերազանցող բարձրության հասնելու: Քանի դեռ հյուսիսային բարբարոսներու արշավանքով արևմտյան կայսրությունը բաժան-բաժան լինելով, քայքայման հեռանկարի առջև սարսափած՝ գոյության կռիվ կմղեր, իսկ արևելյան կայսրությունը զորացած Պարսկաստանի հետ կչափվեր, հաճախ ոտքի տակ կոխկրտելով Հայաստանը: Հայաստանն այդ ժամանակ մերթ մեկին և մերթ մյուսին հպատակ կամ ավելի ճիշտը գերի, ոչ միայն լոիկ-մնջիկ կշարունակեր զարգացնել մի ինքնուրույն ճարտարապետություն, այլև ունեցավ Երերույքի, Թալինի, Արուճի, Մրենի և այլ բազմաթիվ հոյակապ տաճարներով իր ճարտարապետության և գեղարվեստի կոթողները 7-րդ դարուն, որոնց ճարտարապետական բազմաստեղյան երկնակամարին վրա փայլուն աստղ մը եղավ անման վսեմությամբ կանգնված Զվարթնոց տաճարը:

Ինչ համեմատություն Բյուզանդիայի և Հայաստանի միջև: Հուստինիանոս երբ բյուզանդական արվեստի գլուխգործոց ս. Սոփիան կանգնեց, ինքնակալն էր 64 նահանգներու, որոնց մեկին – Եգիպտոսի մեկ տարվան տուրքով զարդարվեցան տաճարի ներքին շարժական զարդերը:

Իսկ Հայաստանը, հազիվ հավասարվող Բյուզանդիո մեկ նահանգին, կանգնեց հայ ճարտարապետության գլուխ գործոց Զվարթնոց մը, որը թեև շատ հեռու կմնա ս. Սոփիայի համար թափված ոսկիի կույտերեն յուր նյութական արժանիքով, այնուամենայնիվ, իբրև հանճարի անօրինակ հղացում, ճարտարապետության մեջ իբրև չնաչխարհիկ նմույշ միշտ պիտի մրցի ս. Սոփիայի հետ՝ յուր արվեստագիտական բարձր արժանիքներով:

Ս. Սոփիայի ամենամեծ արժանիքը կկայանա յուր անօրինակ լայն 31–35 մետր տրամագծով գմբեթին մեջ, որ ահավոր կերպով դրված է հսկայական շենքի գլխին: Սակայն ոչ նվազ պատասխանատու և զարմացման արժանի է Զվարթնոցի ութ տկար կետերու վրա բարձված 24 մետրեն ավելի տրամագծով կանգնված միջնագմբեթը կամ երկրորդ հարկը, որուն ծանրության չափը զգալիորեն կբազմապատկեն իր շուրջանակի galerie-ին վրա ծածկված կամարի կեսին ծանրությունը:

Երբ Բյուզանդիայի և Պարսկաստանի նենգավոր քաղաքականության մշտապես զոհ դարձած բուռ մը հայ ժողովուրդը ծանր հարկերի և տուրքերի տակ ճնշված կկանգնե Զվարթնոցի նման մի գլուխ գործոց և զուգընթացաբար մեծագործություններ համարվելու չափ ուրիշ բազմաթիվ գեղարվեստական կոթողներ, եթե Բյուզանդական կայսրության գանձարանն ունենար յուր ձեռքին մեջ, շատ ս. Սոփիաներ կարող էր կանգնել, որովհետև մեծագործ Զվարթնոցը մենակ չէ մնացած Հայաստանի մեջ, ինչպես միայնակ է մնացել ս. Սոփիան Բյուզանդական բովանդակ կայսրության մեջ: 10-րդ դարուն կան երկու Զվարթնոցներ ևս կանգնած ոչ նվազ մեծագործ, քան Ներսեսաշենը, և դեռ չգիտենք թե ապագան քանի՞ հատ ալ պիտի տա մեզ՝ երբ հառաջիկային խուզարկություններ լինեն մեր հնագիտական ուսումնասիրություններե գրեթե կույս երկիրը:

Արվեստագետներ, եթե լրջորեն քննեն և համեմատեն, պարզ կտեսնեն, որ բացի ս. Սոփիայեն Բյուզանդական կայսրության սահմաններուն մեջ մինչև 7-րդ դարու վերջը կանգնված կոթողներուն համահավասար և երբեմն ավելի արժանավորություններով կմրցեն փոքրիկ Հայաստանի մեջ կանգնված հիշատակարանները և համեմատական թվարկությամբ գուցե նաև գերազանցեն իսկ:

Մենք աններելի կերպով մեղանչել ենք մինչև այսօր, որ մեր ունեցած ազգային գեղարվեստի և ճարտարապետության անսպառ գանձարանը չենք բացեր գիտության առջև, որպեսզի ավելի կանուխ ստանայինք քաղաքակիրթ ազգերու շարքին մեջ ստեղծագործող ազգ լինելու պատվավոր վկայականը:



Նկ. 31. Զվարթնոցի տաճարի վերակազմության ճակատի երկրորդ ձևն ըստ Թորամանյանի կատարած կտրվածքի

Մինչև այսօր գիտության ինչքան որ հայտնի եղեր է հայ պատմական ճարտարապետության գեթ աղոտ ուրվագիծը, այն ալ նույնիսկ Եվրոպայի գիտնականներու ուսումնասիրական ձեռներեցության ենք պարտական: Անոնք միշտ ինքնաբերաբար կամ պատահաբար անցնելով Հայաստանեն, տեսեր և հետազոտեր են, որով փոքր ինչ ընդարձակվեր է հայ արվեստի մասին գիտական աշխարհի ծանոթությունը: Իսկ վերջերս բացի մեծանուն գիտնական պր. Ն. Մառի բազմաբեղուն աշխատություններեն, որուն արդյունքը, թերևս ի մոտո, մամուլի և հասարակության սեփականություն դառնա: Սրտանց հայ արվեստի ուսումնասիրության նվիրվող եվրոպացի գիտնականներեն մեկը՝ Հ. Ստրժիգովսկի, որ Վիեննայի համալսարանի ուսուցչապետներեն է, ոչ միայն առաջին անգամ հայտարարեց, թե առանց պատմական հայ արվեստի ուսումնասիրության արևելյան արվեստներու պատմական առեղծվածները լուծել անկարելի է, այլ և այդ ուղղությամբ ինքը երկար ճանապարհորդություններ արավ Հայաստանի մեջ: Ամենուն հայտնի է Ստրիժիգովսկիի 1913 թվականի աշնանը կազմած գիտական արշավանքը Վիեննայի համալսարանի ծախքով, սկսյալ Շիրակեն մինչև Երասխաձոր: Այս առաջին օտար գիտնականն է, որ բազմաթիվ հայկական հոյակապ հիշատակարաններ անձամբ տեսավ, որոնք 4-րդ դարեն մինչև 13-րդ դար կանգնած էին, բայց մինչև 7-րդ դարու վերջը կանգնվածները իրենց կարգին պատկառելի թիվ մը կազմելով, ավելի պատկառանք կազդեին: Ամբողջ մեկ ամիս տևեց Ստրիժիգովսկիի ճանապարհորդությունը, որուն անձամբ կընկերանայի ես, թե՛ առաջնորդելու և թե՛ ցուցումներով գոհացնելու անոր հետաքրքրությունները, քանիցս ապշած ու զարմացած յուրաքանչյուր քայլափոխի վրա անդադար հանդիպելով մեկե ավելի հոյակապ շինություններու՝ կդառնար ինձ և կըսեր. «Եգիպտական աշխատանք է կատարվեր այստեղ, ո՞ւր է այժմ այս ժողովուրդը»: Ի՞նչ պատասխան կարող է տալ ավելի պերճախոս քան անմահ վիպասան V. Hugo-ի - Les Turcs ont passé par là պատասխանը:

Հայաստանի հողին վրա զարհուրելի էր արաբական արշավանքի պատճառած ավերն ու աղետը: Հրաբուխի նման պայթեցավ, հրաշեկ լավայի նման տարածվեցավ ամեն կողմ այս այրող և խանձող հոսանքը: Ավելի քան 700 տարի Եվրոպա ու Ասիա չչմած տեղի տվին այս անսպասելի փոթորկի առջև, բյուզանդական և սասանական ահավոր զահերը փշրվեցան Մահմեդի կտակած եթաղաններու առջև, մեկ կողմեն Վենետիկ ու Վիեննա, մյուս կողմեն մինչև Հնդկաստան հասավ հոսանքը: Հազիվ երկու դար առաջ հիասթափված Եվրոպան կամաց-կամաց սկսեց սեղմել այս աշխարհավեր հոսանքի շրջանակը:

Եվրոպան փրկվեց, բայց Ասիան դեռ ճակատագրապես մահվան հնչյունների տագնապի մեջ կհեծե քաղաքակրթության երդվյալ թշնամի այս բարբարոս ցեղի լուծին ներքև:

Ի՞նչ կարող էր անել մի փոքրիկ Հայաստան այս գազանային ուժի առջև, բախվել, փշրվել և փոշիանալ, կամ տեղի տալ հեռատես քաղաքագիտությամբ և կամ սպասել նպաստավոր ժամանակին վերականգնելու համար:

Հայ ժողովրդի ճկուն հատկության շնորհիվ էր, որ թեև 7-րդ դարեն մինչև 10-րդ դար տառապեցավ և քար քարի վրա չկարողացավ դնել, այնուամենայնիվ 10-րդ դարու սկզբներին օգտվելով նպաստավոր պատահարներե, անմիջապես վերածնվեց քաղաքականապես և վերածնության հետ մեկտեղ անմիջապես սկսեց շինարարական այնպիսի մեղվաջան աշխատանք, որ 10-րդ դարեն մինչև 14-րդ դար անթիվ գողտրիկ շինություններով ծածկեց Հայաստանը, որոնք թեև դարձյալ ենթարկվեցան միևնույն ավերիչ և քանդիչ բարբարոսներու հարվածներուն, այնուամենայնիվ այդչափ ավեր ու քանդումե հետո էլ թշնամին չկարողացավ ճնշել այդ ուժեղ քաղաքակրթության և մեծ գեղարվեստի հետքերը:

Ահա այս 10-րդ դարու վերածնութենեն հետո եղած հիշատակարաններն են մեծ մասամբ, որ հայտնի են եվրոպական գիտնականներուն, որոնցմե ոմանք այս վերածնության մեջ տեսնել կարծեցին արաբական քաղաքակրթության ազդեցությունը Հայաստանի վրա, շատ անգամ նույնիսկ հակասելով ինքն իրենց: Որովհետև մեկ կողմանե խոստովաներ են արաբներու քաղաքակրթութենե զուրկ լինելը, մյուս կողմեն Հայաստանի մեջ այնքան փայլուն կերպով ծաղկող արվեստի օջախը Բաղտատի մեջ տեսնել ուզեցին:

Բաղտատը եթե ունեցեր է բանաստեղծություններու և գրականության փայլուն շրջան մը, որը ամենայն հավանականությամբ ավելի ընիկ ժողովուրդին տաղանդի արդյունքն է, քան արաբներու, այնուամենայնիվ, Հայաստանի ճարտարապետության զարգացման մեջ ազդեցություն ունենալը երբեք ընդունելի չէ:

Ճարտարապետական մեծ պատմաբաններեն մեկը կըսե թե «եթե Բաղտատի մեջ արաբական ճարտարապետության հետքեր չեն մնացեր, անոր շարունակությունը պետք է Հայաստանի մեջ



փնտրել»: Շատ տարօրինակ կարծիք: Բաղտատի արվեստի արտադրությունները եթե մինչև այսօր Հայաստանի մեջ կմնան, ինչ պատճառ կա, որ ավելի մեծ չափով Բաղտատի մեջ պիտի չմնային, եթե եղել են: Ավելի շուտ պետք է հավատանք, որ ջնջվելու և անհետանալու վտանգը Հայաստանին էր հատուկ, որովհետև Բաղտատը և իր շրջանը երբեք այնքան քաղաքական փոթորիկներու և կործանարար արշավանքներու չեն ենթարկված, ինչպես Հայաստանը: Բաղտատի արաբական տիրապետության ժամանակ ամենամեծ արկածը Հուլաղու խանի երկարատև պաշարումով գրավելն էր, որը երբեք ավերումի և քանդումի չենթարկեց:

Թաթարները նույնիսկ Հայաստանի մեջ թույլատու և ներողամիտ էին հայ գեղարվեստի զարգացման և հայ ժողովրդի բարեկեցության, քանի դեռ մահմեդականությունը չէին ընդունած: Հայաստանը քարուքանդ լինելուն ամենամեծ պատճառներեն մեկը հայերու քրիստոնյա լինելն էր, արաբները կքանդեին, կավիրեին իբրև պղծություններ, ինչ որ քրիստոնյաներուն կպատկաներ, ինչպես եկեղեցի, տաճար, վանք ու մենաստան: Իսկ հայ իշխանական ցեղը և հասարակ ժողովուրդը միշտ խոշտանգանաց տակ կհեծեր մահմեդականությունը չընդունելու համար:

Բնականաբար եթե մահմեդականության այդ պահանջին գոհացում տային, ոչ մի ավերում տեղի չէր ունենար: Բաղտատի և շրջակայից մեջ հայեր գրեթե չկային և մահմեդականությունը վաղուց ծավալված էր այն տեղերը, հետևաբար պատճառ բնավ չկար, որ մեծամեծ հիշատակարաններ ավերվեին ու քանդվեին, ընդհակառակը ավելի շուտ պիտի պահվեին իբրև դավանակից ժողովուրդի կրոնական սրբություններ, որոնք ավելի երկարատև կյանք ունեին ժամանակի ընթացքին մեջ, քան քաղաքային ուրիշ շենքեր և պալատներ:



Նկ. 32. Զվարթնոցի տաճարի արևելքից արևմուտք կտրվածքը

Ես այստեղ կրկին պիտի անդրադառնամ գիտական այն մեծ վճռին, թե համայնքի արժանիքին չափը ճշտիվ որոշողը իր հետևը թողած գեղարվեստական հիշատակարաններն են, որչափ բարձր արժանիքներով օժտված են գեղարվեստական հիշատակարանները, այնքան բարձր են զանոնք կանգնողներու ստեղծագործական արժանիքը իրենց ապրած դարաշրջանին մեջ:

Շարք մը անաչառ գիտնականներ, որոնք բնավ չեն առաջնորդված քաղաքական թաքուն հաշիվներով, գրեթե միահամուռ հիացմամբ կդրվատեն Հայն ալ, Հայուն ստեղծագործական հանճարն ալ:

Ինչպես կարելի է արեգակի նման ճառագայթող ճշմարտությունը քողարկելու ջանալ, քանի որ հայտնապես կանգուն են բարեբախտաբար մինչև այսօր այնպիսի մեծամեծ գեղարվեստական հիշատակարաններ, այնպիսի դարաշրջաններու մեջ իրագործված, երբ դեռ քաղաքակիրթ Եվրոպան մթության մեջ կխարխափեր և արևմտյան հին ճարտարապետության երկարատև անկումեն հետո, նոր պիտի տաներ արևելքից մի նոր արվեստի վերածնության տարերքը:

## Բ. ԶՎԱՐԹՆՈՑ[1]

Հայաստանի ճարտարապետության պատմության ամենագեղեցիկ էջերից մեկը կկազմե Զվարթնոց եկեղեցին, որ կանգնված է 7-րդ դարում Արարատյան դաշտի վրա Էջմիածնի մոտ:

Հայոց եկեղեցական ճարտարապետության մեջ բոլորակը կամ բազմանկյունին գրեթե սկսվում է 7-րդ դարում: Ավելի առաջ քրիստոնեական ճարտարապետության սկզբնավորութենեն մինչև 7-րդ դար, եկեղեցական հատակագծային ոճը խառն էր հին հունա-հռոմեական սելլաների և բազիլիքների հետևողությամբ շինվածներով: Սակայն Հայաստանի ժողովուրդը, որ իր առանձին ճաշակն ուներ, և երկարատև միօրինակություն չէր սիրում, դեռ 5-րդ դարում սկսեց շեղվել սելլաների և բազիլիքների հետևողությամբ եկեղեցական հատակագծերից և սկսեց կառուցել առանձին ձևերով, որոնք ավելի արևելյան հատկանիշ ունեին, թեև զուգահեռաբար հատուկենտ պատահում են նաև հին ավանդությամբ շինվածներ, այնուամենայնիվ ընդհանուր քրիստոնեական ուղղութենեն չեղվելու շրջանին, Հայաստանում սելլաներն ու բազիլիքները ևս այլափոխման ենթարկվեցին, այնպես որ բազիլիքների միայն հիշողությունը մնաց:

Այժմ մեր նյութից դուրս է քննել, թե ինչ արտաքին ազդեցությունների հետևանքով Հայաստանը հեռացավ արևմտյան ոճերից. այդ մասին կգրվի և առանձին ուսումնասիրության կենթարկվի Հայոց հնադարյան ճարտարապետության մեջ: Ուստի, ինչպես որ նախքան 7-րդ դարը Հայաստանը շեղումներ ունեցավ ընդհանուր քրիստոնեական ճարտարապետության ոճերից, նմանապես 7-րդ դարից սկսած ընդգրկեց նաև բոլորակ կամ բազմանկյունի շինության ոճը:

Բոլորակ հատակագիծ ունեցող եկեղեցական շենքերից գրեթե առաջինն է Զվարթնոց եկեղեցին, որը կանգնել տվեց Հայոց պատմության մեջ մեծ շինարարի համբավ ունեցող Ներսես 3-րդ կաթողիկոսը: Հայաստանի հողի վրա այս չնաշխարհիկ հիշատակարանը ոչ միայն շինարարական տեսակետով մեծ տեղ պիտի բռնի արվեստի պատմության մեջ, այլ և գեղարվեստի տեսակետով ևս նշանավոր է թե՛ իր կանգնման և թե՛ հետագա դարերու ճարտարապետության պատմության մեջ: Իր արտաքին տեսքին մեջ եռահարկ երևույթը գրեթե եզակի է եկեղեցական ճարտարապետության մեջ, որ ակնահաճո լինելուց զատ, շինարարական տեսակետով ևս խիստ մեծածախ և առանձին թռիչքներ են հարկավոր շինության ակներև դժվարություններին հաղթելու համար:

Տարակույս չկա, որ շինարարական տեսակետով այս լուրջ դժվարություններն են պատճառը, որ դարերի ընթացքում հազիվ հետևողներ և իր գործը կրկնողներ ունեցեր է Զվարթնոցի ճարտարապետը: Առայժմ բովանդակ արվեստի պատմության մեջ նույն ոճը չկրկնվելեն զատ, միայն 10 – 12 դարերի մեջտեղ Հայաստանում շինվել են նույնօրինակ ճարտարապետությամբ Անիում և Բանայում, եթե չհաշվենք Հովվի եկեղեցին՝ Անիի պարիսպից դուրս, որ թեև փոքր, բայց ունի իր մեջ թե՛ գեղարվեստական և թե՛ շինարարական ամեն արժանավորություններ:

Զվարթնոցի շինարարական օրենքները անշուշտ տեղական են, որովհետև նախքան Զվարթնոց կառուցվող մեծ թվով նշանավոր հուշարձաններ անվիճելի կերպով ցույց կուտան, որ տեղական ժողովուրդը միանգամայն զարգացած էր շինարարական արվեստի մեջ: Իսկ զարդարանքների ոճերից երևում է, որ արտաքին ներգործություններ եղել են Հայոց 7-րդ դարու ճարտարապետությամբ կանգնվող Զվարթնոցի գեղարվեստական մասին վրա: Հունա-հռոմեական և սիրիական ոճերի մասնակի ներգործությունը ակներև է Զվարթնոցի մեջ. անշուշտ ճաշակի այս նորությունը Հայաստան բերողը ինքը Ներսես Շինողն է, որուն կյանքը նախքան կաթուղիկոսանալը, անցել է Կ. Պոլսում և կամ բյուզանդական երկրներում, զինվորականի կարևոր պաշտոնում: Հայտնի բան է, որ ինքը իբրև բարձրագույն կրթություն ստացած մարդ և արևմտյան ճաշակի կատարյալ զարգացումով, երբ կաթուղիկոսական գահը բարձրացավ, ուզեց անպատճառ նաև իր ճաշակի կնիքը դնել հայոց ճարտարապետության վրա. թե որչափ հաջողվեց իրեն այս մտածողությունը, այդ կտեսնենք հետագային իր ամբողջ գործը ուսումնասիրելիս:

Զվարթնոցի շինության առանձին թվական չկա, սակայն, այդ շինությունը, Ներսեսի կաթուղիկոսության գահակալության հետ կապ ունի, ուստի Զվարթնոցի հիմնարկության թվականը ճշտիվ գիտենալու համար, պետք է պարզ լինի Ներսեսի գահակալության թվականը, որը պատմագրական բանասերներ և քննադատներ զանազան թվականներ են մատնանշում՝ 640–642-ը: Բայց ես հավանական տվյալների վրա հենվելով, համարում եմ 644 թվականը և ըստ այնմ հիմնում եմ իմ կարծիքս Զվարթնոցի հիմնարկության և վերջավորության մասին:

Որովհետև հարկ չեմ տեսնում իմ ամբողջ ուսումնասիրությունս մանրամասնաբար կրկնել, ուստի առայժմ իմ տեսությանս և հետազոտությանս խտացած արդյունքները կտամ այստեղ Զվարթնոցի հիմնարկության և վերջավորության մասին:

Եթե 641-ին Ներսես 3-րդ կաթուղիկոսը եղած էր և ըստ պատմագրաց տեղեկության նախապես զբաղված էր արաբներու կոտորածների պատճառով բազմաթիվ դիակներ դաշտերից, գյուղերից և քաղաքներից հավաքելու և այդ դիակների ամփոփման վայրերի վրա դամբարաններ շինելով, որպիսիքն են Դվինի ս. Սարգիսը և Խոր Վիրապը, ուստի հազիվ թե հիմնարկված լինի Զվարթնոց եկեղեցին 643 թվականին: Ուրեմն ամենահավանական թվականն է Զվարթնոցի հիմնարկության 644 թվականը: Եվ որովհետև 651 թվականին Կոստանդ կայսրը Հայաստանը պատժելու համար եկած էր Հայաստան և Ներսես կաթողիկոսի խնդրանոք հաշտվեցավ և մնաց Հայաստանում. այդ միջոցին ըստ Մովսես Կաղանկատվացիի հրավիրվեցավ Զվարթնոցի օծման հանդեսին, որուն ծախքը ևս Կոստանդ կայսրը տված էր յուր հայրազիր Ներսեսին՝ ըստ նույն պատմագրի: Հետևաբար, քանի որ 651 թվականին եկեղեցին այդչափ շինված էր, որ օծման հանդես կարելի էր կատարել, ուստի մեկ խոսքով վերջացած էր գրեթե եկեղեցու շինությունը, ուրեմն սկսած իր հիմնարկության 644 թվականից մինչև 651 թվականը, եկեղեցիի վերջավորությունը տևած է ութը տարի, այսչափ տարին ևս հազիվ բավական է Զվարթնոցի նման մի շենք կանգնեցնելուն: Թե որչափ գեղարվեստական և հափշտակիչ երևույթ ուներ այս շենքը, կարելի է չափել պատմագրի հետևյալ հայտարարությունից. «Կոստանդ կայսրը հավերժ հիացած հրամայեց ճարտարապետին իր հետ գնալ Պոլիս և նույնը շինել իր պալատի մոտ»: Սակայն ճարտարապետը ճանապարհին հիվանդացավ և մեռավ:

Ներսես կաթուղիկոսը հեռացավ Հայաստանից և իր տեղը թողեց Անաստաս Ակոռեցիին, եկեղեցու մնացած մասերը և շրջակա շինությունների գործը շարունակելու համար: Որովհետև ուղիղ վեց տարի հետո վերադարձավ Ներսես 3-րդ, այսինքն որ 651 թվից մինչև նրա վերադարձը դեռ վերջացած չէր ամբողջությամբ և կամ Անաստաս Ակոռեցին չէր կարողացած Ներսեսի նման արագությամբ առաջ տանել գործը: Ուստի եկավ մնացած գործերն ալ անձամբ շարունակեց, որոնք ըստ Հովհաննես կաթուղիկոսի շրջակա բնակարանները և եկեղեցո շրջապատի պարիսպներն էին:

Շենքերի համար բոլորակ ձևը նորություն չէր, նախաքրիստոնեության շրջանում իր նախորդներն ունեցել էր թե՛ հունա-հռոմեական երկրներում, թե՛ Ասորա-Բաղդեայում: Քրիստոնեական շրջանում եկեղեցիի համար նորություն էր բոլորակ ձևը Հայաստանում, որ առաջին անգամ իրականացավ Ներսես 3-րդի ձեռքով Զվարթնոցի շինությամբ:

Զվարթնոցը Հայաստանի տնտեսական և քաղաքական վիճակին հետ համեմատելով, փոքր շենք չէր. առնվազն 35 մետր տրամագիծ ուներ, ուստի այսքան մի փոքր երկրի համար, իրոք մի մեծագործություն էր 35 մետր տրամագծով եռհարկ մի շինություն կանգնել: Շենքի արտաքին պատը, որ 95 սմ. թանձրություն ուներ, ներքուստ ամբողջովին բոլորակ էր, զարդարված որմնասյուներով և որմնասյուները միացնող կիսաբոլորակ կամ եռանկյունի պսակներով:

Իսկ արտաքուստ թեթևակի անկյունավոր էր 32 ճակատների բաժանված և յուրաքանչյուր ճակատի մեջտեղ, անկյունների վրա, կային հոյակապ զույգ որմնասյուներ միմյանց կապված և յուրաքանչյուր որմնասյան մեջտեղ նուռ, խաղողի ընտիր քանդակներով զարդարված: Զափազանց ճոխ քանդակազարդ մի պսակ շրջապատում է շենքի երեք հարկերը, շենքի հատակը ուներ երեք աստիճաններ: Բացի շենքի երեք աստիճաններից, շենքը շրջապատված էր մի պլատֆորմով, որը հատակված էր մեծամեծ սալերով և այս մասը շուրջանակի բարձրացած էր ընդհանուր գետնից: Գետնից մինչև պլատֆորմը բարձրանալու համար 7–8 աստիճաններով շրջապատված էր:

[1] Հանված է ցուցակից, անտիպ է:



Նկ. 33. Զվարթնոց. տաճարի վերնամասի վերականգնումը (ըստ Թորոսյանի)

Տաճարի հարավային և մեծ մասամբ արևելյան կողմը, 20–25 մետր հեռավորության վրա, շրջապատված էր մասնավոր շենքերով և այս շենքերը բաժանվում էին երեք մասի, արևմտյան կողմը ամբողջովին պատկանում էր կաթուղիկոսին, որոնց մեջ էր մեծ ընդունելության դահլիճը, որուն տաճար անուն են տալիս պատմագիրները: Հարավային կողման երկրորդ և միջին մասը ամբողջությամբ պատկանում էր համայն միաբանության, իսկ երրորդ, դեպի արևելք եղած մասը, պատկանում էր ուրիշ զանազան կարիքների համար:

Նկ. 34. Զվարթնոցի տաճարի առաջին հարկաբաժնի քանդակազարդ դռտու բեկոր

Կար նաև հնագույն խորան, որ մնացորդն էր մի հնագույն եկեղեցիի, որ գոյություն ուներ նախքան 7-րդ դարը: Այս եկեղեցին որևէ արկածով փլած և կամ Զվարթնոցի շինության առթիվ քանդված էր. միայն, իբրև նախկին սրբավայր, թերևս արևելյան խորանը պահած էին:

## Գ. ԶՎԱՐԹՆՈՑ[1]

Հայ հնագիտության համար վերին աստիճանի հետաքրքրական Զվարթնոց եկեղեցվո ավերակները բացվելեն ի վեր, ամեն դասակարգի մարդկանց մեջ քննության առարկա է դարձած, թե ինչո՞ւ համար Ներսես Գ. այդ հոյակապ եկեղեցին և կաթողիկոսական աթոռը Վաղարշապատից հեռու ամայության մեջ շինեց. ի նկատի ունենալով, որ այն ժամանակ կաթողիկոսական եկեղեցին և կաթողիկոսարանը գրեթե համահավասար էր մի արքունիքի և պետք էր որ շեն քաղաքի մեջ լիներ, ոչ թե վանքի կամ անապատի մը նման մարդկանց բնակութենեն միանգամայն հեռու:

Այս արդարացի հարցին պատասխանելու համար հարկավոր է որոշ չափով ծանոթանալ 5-րդեն մինչև 7-րդ դար Արարատյան դաշտին վրա տեղի ունեցած քաղաքական անցքերուն և հետո ալ էապես ճանչնալ Ներսես Շինողի անձնական նկարագիրը: Բայց այս մասին վրա մանրամասն ծանոթանալ այստեղ չենք կարող, այլ պիտի ուրվագծենք մի քանի բնորոշ կետեր, որոնց վրա հիմնված լինի ընդհանուրին հետաքրքրող պատասխանը:




Նկ. 35. Զվարթնոցի տաճարի մուտքի ֆրոնտոնի քանդակներից




Նկ. 36. Զվարթնոցի տաճարի մուտքի ֆրոնտոնի քանդակներից

Մեր բոլոր մատենագիրներ միահամուռ վկայում են, որ Ներսես՝ Զվարթնոց եկեղեցին շինեց Վաղարշապատի մեջ: Մասնավորապես Սեբեոս, Զվարթնոցի շինության ժամանակակից պատմագիրը, ավելի պարզ կերպով ասում է, որ «Արկ ի միտս իւր կաթողիկոսն հայոց Ներսէս շինել իւր բնակութիւն մերձ առ սուրբ եկեղեցեացն, որ ի Վաղարշապատ քաղաքին, ի վերայ ճանապարհին յորում ասեն ընդառաջ եղև Տրդատ սրբոյն Գրիգորի»:







Նկ. 37. Զվարթնոցի տաճարի արտաքին զույգ որմնասյուների խոյակի չափերը

[1] Այս հոդվածը հավանաբար գրված է 1930 թվին «Հին Վաղարշապատի սիստեմատիկ պեղումների» անհրաժեշտության առթիվ: Այդ պեղումները տեղի ունեցան 1931 թվականին:
Կազմող

Ուրեմն ժամանակակից պատմագրի «ի Վաղարշապատ քաղաքին» խոսքին պարզ կհետևի, որ Զվարթնոց եկեղեցին կանգնվեցավ բուն իսկ Վաղարշապատի մեջ և ոչ թե Վաղարշապատից դուրս: «Մերձ առ սուրբ եկեղեցեացն» խոսքով ակնարկում է Զվարթնոցի եկեղեցիին առաջ շինված մեծ բազիլիք, որուն սյուներն են մնացել այժմ:




Նկ. 38. Զվարթնոցի տաճարի առաջին հարկաբաժնի որմնասյուների գլխի մույրուրներ

Թովմա Արծրունի 10-րդ դարուն Զվարթնոցի շինության տեղը ճանաչում է Նոր Քաղաք անունով, փոխանակ Վաղարշապատի, և խոսելով Դվինի երկրաշարժի մասին գրում է. «Երանելի հայրապետն տէր Գէորգ..... թողեալ զբնակելն ի Դուինն՝ եկեալ բնակեցաւ ի Նոր Քաղաքին ի մեծ եկեղեցւոջն որ յանուն սրբոյն Գրիգորի շինեալ էր երանելւոյ տեառն Ներսիսի երկրորդի (իմա՛ երրորդի) հայոց կաթողիկոսի»: (Ս. Պետերբուրգ, 1887, էջ 231):




Նկ. 39. Զվարթնոցի տաճարի գմբեթի օղակը ներսից




Նկ. 40. Զվարթնոցի տաճարի հյուսիս-արևելյան մույթի ստորին անկյան մույրուրները

Այս անուններու տարբերությունը ոչ մի չփոթության տեղի չի կարող տալ, երբ նկատի ունենանք, որ դեռ հինգերորդ դարուն, Վաղարշապատ և Նոր Քաղաք միևնույնն էին և այդ ավանդական հին անունն է, որ հասել է մինչև Թովմա Արծրունին:




Նկ. 41. Զվարթնոցի հարավ-արևելյան մույթի ստորին մույրուրները (գետնեն 102 սմ բարձր)

Այս մասին Ղազար Փարպեցին կարծեք հատկապես չփոթության տեղի չտալու համար միշտ շեշտում է երկու անուններու նույնությունը մի քանի անգամներ իր Պատմության ընթացքում, ինչպես օրինակ՝ ս. Մեսրոպի մահվան առիթով խոսելիս ասում է «Յետ վեց ամսոյ կատարման նորին տարւոյ հանգստեան սրբոյն Սահակայ վախճանեցաւ երանելին Մաշտոց ի Վաղարշապատ քաղաքի, զոր և Նոր Քաղաք անուանեն»: (Ղազար Փարպ., Տփղիս, 1904, էջ 38: Տես նաև նույն, էջ 176, 186 և այլն):

Կասկած չի կարող լինել, որ Ղազար Փարպեցու Նոր Քաղաքը օտար պատմիչներու Կայենոպոլիսն է, ուր հռովմեացիք զորք էին պահում, ինչպես կվկայե նաև այժմ էջմիածին գտնված հունարեն արձանագրությունը:

Այժմ կարող ենք հարցնել թե բազմաղարյան այնքան մեծ անցյալ ունեցող քաղաքի տեղը ներկա Վաղարշապատին տեղին վրա՞ է, թե՞ մի ուրիշ տեղ:

Այս առիթով հնագետներ և պատմագիրներ շատ են խոսել և թեր ու դեմ կարծիքներ հայտնել առանց որոշ եզրակացության հանելու, և իզուր են փնտրել այժմյան Վաղարշապատի մեջ, երբ և իցե մի հին քաղաք եղած լինելուն ապացույցներ: Վաղարշապատի մեջ և անմիջական շուրջը միշտ տներ շինվելիս և բազմատեսակ մշակույթի աշխատանքներ կատարելիս, գրեթե բնավ չէ լսված հին քաղաքի մը գոյությունը հաստատող քար, պատ կամ մի շինության բեկոր, բացառությամբ մի լատիներեն արձանագրության, որը դուրս է եկել ճեմարանի արտաքին պարսպի հիմերը փորելիս և հաստատված է, որ այդ քարն ալ ուրիշ տեղից բերված էր այդտեղ:

Հռիփսիմեի վանքից սկսած դեպի արևմուտք և հարավ, ներկա Վաղարշապատն ալ մեջ առնելով, պարզ աչքով իսկ կտեսնվի որ այդ ընդարձակ տարածության վրա բացի վարուցանքե ուրիշ ոչ մի աշխատանք չէ այլափոխած հողի հարթածավալ մակերևույթը:

Ուրեմն մնում է մեզ դիմել Սեբեոսի մատնանշած տեղին և Զվարթնոցի շուրջը փնտրել Վաղարշապատի կամ Նոր Քաղաքի (Կայենոպոլսի) իսկական տեղը, ուր հաճախ գտնվեր են դրական ապացույցներ այնտեղ ընդարձակ տարածությամբ քաղաքատեղի մը գտնվելուն:

Եթե բոլորովին չհամոզվինք տեսնելով Զվարթնոցի շուրջը ընդարձակ տարածության վրա որոշ սահմանի մեջ անհավասար չափով բլուրներն ու թումբերը, որոնք պատմահնագիտական մեծամեծ գանձերու պահարան լինելուն մեծ հավաստիք կներկայացնեն, թվենք մի քանի իրական ապացույցներ, որոնք վերջին մի քանի տարվան մեջ երևցել են:

1. Այժմ [Պետական Պատմական] թանգարանում գտնվող հունարեն արձանագրությունը, որ Զվարթնոցից մեկ կիլոմետր դեպի արևմուտք դուրս է եկած Զանգուի առուն փորելիս:

2. Խաչիկ Զվարթնոցի[1] և Ե. Լալայանի ընկերակցությամբ, Զվարթնոցից մեկ կամ մեկ ու կես կիլոմետր հեռավորության մի քանի բլուրներու վրա կատարած փորձնական պեղումները, որոնք դրական արդյունք տվին, դուրս բերելով հեթանոսական շրջանի առարկաներ:

3. 1904 թվականին ժանդախտից կոտորվող անասնոց դիակները թաղելու համար Հռիփսիմեի վանքի առջևից դեպի Վարմազիար տանող ճանապարհի կողքին փորված փոսերից մեկուն մեջ երևաց մի մեծ պարսպամաս, որուն արտաքին բուրգը ներկա Վաղարշապատի կողմն էր, ինչ որ ապացույց էր հակառակ կողմին վրա քաղաքի մը գոյության: Այն ժամանակ ես լուր տվի Խաչիկ Զվարթնոցին և Մեսրոպ վարդապետին[2] (այժմ եպիսկոպոս), որոնք ականատես լինելուց հետո ոչ մի միջոց ձեռք չառին այդ պարսպի հետքը չկորցնելու համար, որն ընդմիշտ կրկին ծածկվեց հողի տակ: Մեսրոպ վարդ. այն ժամանակ բավականացավ «Ազգ. Հանդեսին» մեջ մի հակիրճ ծանոթությունով:

4. Այս տարի վերոհիշյալ պարիսպը վերստին բաց անելու փորձ արվեց, սակայն միջոցներն այնքան քիչ էին, որ պեղումները նպատակին չհասած դադար տրվեց: Սակայն պարիսպի փոխարեն 4 արշին խորության վրա դուրս եկավ մի հեթանոսական գերեզման, որը դարձյալ ծածկվեց առանց գերեզմանը բաց անելու:

Այս բոլոր պատահական գյուտերը միացած Զվարթնոցի և պատմագրական վկայություններու հետ, կարծեմ բավական են հաստատելու, որ հին Վաղարշապատը, կամ Նոր Քաղաքը (Կայենոպոլիս) ծածկված է Զվարթնոցը շրջապատող մեծ ու փոքր բլուրներու ներքև և փորձնական պեղումներն անհետաձգելի պետք է լինին հայկական Պոմպե մը հայտնաբերելու համար:

Այս հակիրճ տեսությունից հետո, կարծեմ կարելի կլինի բացատրել պատճառը, թե ինչո՞ւ Ներսեսը հատկապես այս տեղը ընտրեց իբր կաթողիկոսական աթոռ և կանգնեց Զվարթնոցի նման հոյակապ մի եկեղեցի:

Ներսեսի մասին ժամանակակից պատմագիրներ ավանդում են, որ սնված ու կրթված էր բյուզանդական արքունիքում, հասած էր զինվորական բարձր աստիճանի և զինվորական կարգով շատ տեղեր ման եկած էր Բյուզանդական կայսրության սահմաններում:

Ահա այսպիսի բարձր արժանիքներով օժտված մի մարդ, հանկարծ կաթողիկոսանում է Հայաստանում այնպիսի ժամանակ, երբ արաբական արշավանքը սկսեր էր քանդել ու ավերել Հայաստանը:

Իր կաթողիկոսության առաջին տարին իսկ Դվինը քարուքանդ եղավ արաբներու ձեռքով և բազմահազար մարդկանց կոտորածից հետո, երեսուն և հինգ հազար հոգի գերի տարվեցան: (Սեբեոս, էջ 176: Ղևոնդ, էջ 10–11):

Ահա այս պարագային էր, որ ցայտուն կերպով երևան կուգա Ներսեսի հզոր նկարագիրը և ձեռներեց ոգին, որ առանց լքելու և հուսահատելու այս մեծ աղետին հանդեպ, ոչ միայն միջոցներ ձեռք առավ վշտահար ժողովրդին սփոփելու, այլ և ձեռնարկեց շատ մը շինարարական աշխատանքներու, ի միջի այլոց Զվարթնոցի և կաթողիկոսական տան կառուցման՝ Նոր Քաղաքի մեջ, ինչպես կընորոշե պատմագիրը «ոչ ածեալ զմտաւ զկրթական ար-

[1] Այսպես էր իրեն անվանում Զվարթնոցը պեղող Խաչիկ վարդապետ Դադյանը: Կազմող

[2] Մեսրոպ Տեր Մովսեսյանն է: Կազմող

*չաւանս հինիցն թշնամեաց, գեղեցիկ իմն մոլութեամբ դնե ապա հիմն մեծ և հրաշալի բազմապայծառ յարկի տանն Աստուծոյ»:*[1]

*Ներսեսի նման բարձր կրթություն ունեցող մի մարդ, որուն քաղաքացիական առավելությունները կրոնականեն շատ ավելի գերակշիռ լինելը անվիճելի է, միթե կարող էր գալ Վաղարշապատի ամայի տեղերում բնակություն հաստատել, առանց մի խոշոր ծրագիր կամ մի մեծ նպատակ ունենալու: Իհարկե ոչ:*

*Մոտ երկու դար էր, որ հին Վաղարշապատը անշքացել էր և համարյա հավասարվել էր մի գյուղի (այստեղ ս. Գրիգոր անուն գյուղ կար ըստ Կաղանկատվացու): Ներսեսի օրով Դվինն ալ ավերակ դարձավ. շատ բնական էր, որ Ներսես չէր կարող հոգեպես և ֆիզիկապես ապրել Հայաստանի ավերակներու մեջ, անկասկած անոր մտքին մեջ ծագեց մի հանդուգն խորհուրդ, որով պիտի անմահանար դարուց ի դարս և արդյունքը պիտի լիներ իրապես իր արժանավորություններու համապատասխան, և այդ խորհուրդը կամ ծրագիրն է՝ վերականգնել երկու հարյուր տարիե ի վեր ավերված Վաղարշապատը և կամ Նոր Քաղաքը:*

*Հովհաննես կաթողիկոսի մեկ համառոտ ակնարկը կհաստատե այս ենթադրությունը, որ եկեղեցին, կաթողիկոսարանը և շրջապատող պարիսպները ավարտելեն հետո, «այլև կարգեալ կացուցաներ ի նմա ամբոխութիւնս երդմարդաց ըստ պայմանի քաղաքականաց, և ածեալ ջուր ի Քասաղ գետոյ, զամենայն առազախիտ առապար դաշտավայրն ի գործ արկաներ, տնկեր՝ այգիս և բուրաստանս ծաղկոցաց»:*[2]

*Անշուշտ Ներսես պիտի հասներ իր նպատակին, եթե քաղաքական մշտական փոթորիկներ, ներքին կռիվներ և կամավոր աքսորը անոր թռիչքներուն արգելք չլինեին, այնուամենայնիվ իր ժամանակին «Շինող» մականունը ստացավ:*

*Դվինի երկրաշարժից հետո, Գևորգ կաթողիկոսին Զվարթնոց գալը ցույց կուտա, որ որոշ չափով չենացած էր Զվարթնոցի շուրջը և թերևս Թովմա Արծրունի այս նոր Ներսեսաշեն քաղաքը կակնարկե «ի Նոր Քաղաքին» ըսելով: Արդ հառաջիկա պեղումները պիտի հաստատեն ոչ միայն հիները, այլ և Ներսեսի օրով կատարված գործերը: Ուստի այժմ պետք է միանգամայն անձեռնմխելի պահվին Զվարթնոցի շուրջը բոլոր հնագիտական տարածությունը հօգուտ պատմագրության և պեղումներու, այլ և փորձնական պեղումները պետք է սկսվին նույնիսկ պարիսպներեն, որոնց ուղղությունը և սահմանը բավականին որոշ են:*

*
* *

*1. Արծվեխոյակ*[3] *չորս անջատ սյուներու տակի բարձրությունը նորոգվեր է և եզերքներեն լայնացուցեր են՝ հավանականաբար ճնշում նկատելով:*

*2. Այժմյան երևցած գզրոցը չի կարող Ներսես Շինողին պատկանել, որովհետև սա շինված է հետնագույն շինված բեմին վրա, այն ալ, հին սեղանին սահմանեն շատ դուրս՝ բեմին կարնիզին եզերքին հավասար: Ներսեսի շինածն ալ ունե՞ր թե ոչ, հարց է: Գզրոցի միաժամանակ շինված լինելուն վկայությունը տվողը Հովհաննես կաթողիկոսն է, որ երկու դար հետո է: Գուցե բեմի ընդարձակումը Հովհ. կաթողիկոսեն առաջ էր եղած, և ինքը ժամանակին կամ նորոգության անտեղյակ, կարծեր է, որ նույնիսկ Ներսեսի շինածն է. այնուամենայնիվ հարց կմնար գիտենալու, թե ե՞րբ է ընդարձակված բեմը, բեմի ընդարձակումեն առաջ գզրոց կա՞ր թե ոչ: Որո՞ւ կվերաբերի գզրոցի ծրագիրը, եթե Ներսեսի շինածը չուներ գզրոց, կամ ի՞նչ ապացույց կա Ներսեսի շինած լինելուն:*

*3. Հետաքրքրական է փնտրել պատճառները մկրտության ավազանը եկեղեցիի կենտրոնին վրա փոս շինվելուն և գտնել ժամանակը, մկրտությունը եկեղեցիի մեջ կատարելու սովորության սկիզբը: Բաղդատել նաև մյուս եկեղեցիներու մկրտարաններուն հետ, ի նկատի առնելով ժողովոց կանոնները, արդյո՞ք այս ձևը օտար չէ՞ր և կապ չունե՞ր Ներսեսի քաղկեդոնիկության հետ: Հավանաբար փակվեցավ այս ավազանը, բեմի ընդարձակման ժամանակ և տեղը շինվեցավ խաչաձև քարե ավազանը, եթե հնար լինի գտնել ժամանակը և փոփոխության պատճառները թե՛ բեմին և թե՛ ավազանին:*

*4. Վերնահարկ սրահի սանդուղներուն տեղը ըստ ամենայնի գտնելու ջանալ: Պետք է գտնել նաև մույթերու մեջ եղած սենյակներու դռների տեղը: Սանդուղներու տեսակետով ի նկատի ունենալ Քասախի եկեղեցիին սանդուղը, նմանապես Հովվի եկեղեցիին համար ալ միևնույն հետազոտությունը անհրաժեշտ է, քանի որ վերջինս մանրանկարն է Զվարթնոցին:*

---

[1] *Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912, էջ 83:*

[2] *Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912 թ., էջ 88:*

[3] *Այս փոքրիկ հատվածը Թորամանյանը գրել է Զվարթնոցի մոնոգրաֆիայի համար իբրև դիտողություններ և հարցեր, որ և տպագրում ենք համարյա անփոփոխ կերպով:*

*Կազմող*






*Նկ. 42. Զվարթնոցի տաճարի ներքին արծվանիշ խոյակի ճակատը և մակարդակը*




Նկ. 43. Զվարթնոցի տաճարի ներքին արծվանիշ խոյակը կողքից և հետևից



Նկ. 44. Զվարթնոցի տաճարի սեղանի և գզրոցի ավերակները

5. Քահանայից դասին բեմին վրա կենալնուն ակնարկները հավաքել պատմագիրներեն:

6. Պատկերները Զվարթնոցին մեջ պետք է բացառիկ երևույթ համարել քաղկեդոնիկ կաթողիկոսներու համար և այս մասին օգտվել «Անահիտին» տված հոդվածես: Նույնպես խոսել մոզայիկ պատկերներու մասին օտար ճանապարհորդներու Հայաստանի (Մուշ?) մեջ տեսած պատկերներուն հին կարծելուն մասին դիտողությունները:

7. Ch. Diehl-ի և Ստրժիգովսկիի գրածներեն անպայման քաղվածքներ կատարել և ուղղումներ ընել անոնց սխալ տեղեկություններուն վրա:

8. Զվարթնոցի բոլորակ գալերեան երկհարկանի լինելուն վրա տեսություններ և վկայություններ թե որտեղեն կարող էր ազդվել և այդ սովորության պետքը զգացվել Հայաստանի մեջ բացառապես քաղկեդոնիկ եկեղեցիներու համար:

9. Զվարթնոցի ներքին մեծ աղեղներ Ogive-եին թե plein de cintre. քննել այս հարցը, նկատելով որ դրսի պատին երեսի աղեղները pleine de cintre-են:

10. «Եւ կատարեալ զնա մեծածախ գանձիւք կանգնեցին ճեմարան իմն երկնանման հրաշաճարտար շինուածովք, երկագմբեթս և եռախորանս և երկուց կողմանէ գաւիթս և սրահակս, վերնատունս սեամբք և աքանչելի յօրինուածովք շինեալ»:[1]

Օրբելյանի այս նկարագրությունը այստեղ պարզապես ցույց կուտա Հայոց Հնագույն եկեղեցիներու ձևը, երկու կողմանց գավիթներով և սրահակներով, և ճշտիվ կպատշաճեն Երերույքի, Օձունի, և այլ նման տաճարներուն: Անշուշտ «երկուց կողմանե գավիթս» ըսածեն պետք է հասկանանք՝ երկու կողմի այունազարդ գավիթները և սրահակները նույնպես սենյակները երկու կողմին վրա, որ այժմ պահված կա Երերույքի տաճարին վրա: Սակայն ամենեն հետաքրքրականը և կարևորը այս նկարագրության մեջ Զվարթնոցի տեսակետով՝ երկագմբեթ բառն է: Ուրիշ ոչ մեկ կերպով չի պատշաճեր երկու գմբեթ Հայոց եկեղեցիներու վրա, կամ պետք է հինգ գմբեթանի լիներ, ինչպես հին Էջմիածինը, Ավանի եկեղեցին, Անիի Առաքելոց եկեղեցին և կամ մեկ գմբեթանի, ուստի այս նկարագրության մեջ պետք է պարզ տեսնվի Զվարթնոցի երկու գմբեթը միմյանց վրա:

11. Զվարթնոցի գմբեթը բանտանթիվ ունե՞ր թե ոչ.— Եթե Զվարթնոցի մեջ գտնվի չորս մույթերու և բոլորակ այունաշարերու հպումեն ձևացած անկյուններուն վրա գրված բ ա ն տ ա ն թ ի վ ն ե ր ո ւ հետքեր, ինչպես կան Գագիկի շինած ս. Գրիգորի ավերակներուն մեջ, այն ժամանակ անպայման պետք է հավատալ, որ Զվարթնոցի գմբեթը ևս շինված էր բ ա ն տ ա ն թ ի վ ն ե ր ո վ, և այս տեսությամբ գոնե ավելի հին կլինի Հայաստանի մեջ բանտանթիվ շինելու սովորությունը, բայց

[1] Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան Արքեպիսկոպոսի Սիւնեաց. Թիֆլիս, 1910 թ., էջ 71:

այս հաստատությունով անպայման կհետևի՞ արդյոք թե այս սովորությունը Բյուզանդիոնեն բերված է, կամ տեղական ստեղծագործություն է: Համենայն դեպս 6-րդ դարուն Կ. Պոլսի ս. Սոփիայի այժմյան գմբեթի բ ա ն տ ա ն թ ի վ ն ե ր ը Տրդատ ճարտարապետին չինածն է և նախկինը միշտ կմնա անորոշ, քանի որ երկրաշարժով վերջին կործանումեն հետո, Տրդատ ամբողջովին նորոգեց ս. Սոփիայի գմբեթը:

12. Զվարթնոցի մեջ գործածված ծածկի կղմինդրները համեմատել Արենի, Բագարանի, Մոլլա-Ղասումի և այլ տեղերու կղմինդրներու հետ, և որ ավելին է Զվարթնոցի կղմինդրներու մեջ երևցած հատուկ գմբեթի կոնի համար չինած կղմինդրներու վրա որոշ ուշադրություն դարձնել, թե ինչպես մեկ կողմը նեղ և մյուս կողմը լայն չինված են մասնավորապես մ ա հ ե ռ ն ե ր ը:

*
* *

## Սյուներ

Ներքին խաչաձևի բոլոր խարիսխները կոփված են մի տեսակ սև քարերե, որոնց մեջն ընկած են մանր դայլախազի փշրանքներ, բնականաբար սկզբում կառուցման ժամանակ ունեին նաև փայլ, որին ընդունակ է այս քարը: Որտե՞ղ էր հանքը: Բայց կերևի թե բավարար քանակությամբ չեն գտած այս քարերեն, որուն պատճառով մի քանի խարիսխներ և առանց բացառության բոլոր խոյակներ, արծվի խոյակներն ալ միասին առնելով, մի ուրիշ տեսակ սև քարե կոփված են, որոնք թեև պարունակում են իրենց մեջ դայլախազի մանր փշրանքներ, սակայն չունին նախորդներուն ո՛չ փայլը, ո՛չ ալ կարծրությունը:

Այս սյուներու բուներեն մնացած է միայն մեկ բեկոր հարավ արևմտյան որմնամույթի ետև, նույն տեղի արծվեսյունին պատկանող: Այս մնացորդեն կհետևի, որ բոլոր բուները չիկազույն հրաբխային քարե չինված էին:




Նկ. 45. Զվարթնոցի տաճարի ներքին խաչաձևի սյունաշարքերի խարիսխ

Նկ. 46. Զվարթնոցի տաճարի արծվեխոյակ և կողովաձև խոյակ



Այս բեկորը դրեթե ցույց կուտա արծվի սյունին բունին ամբողջական մեծությունը, որովհետև երկու ծայրին վրա ալ կգտնվին երկաթե գամի համար բացած ծակը՝ 11 սմ. երկարությամբ և 4,5 սմ. լայնությամբ, նույն չափով ևս փորված է արծվեսյան խարիսխին վրա: Բունի երկարությունն է մոտավորապես 225–230 սմ: Ծայրերու հատվածակողմին վրա կան խաչաձև փորվածքներ մոտավորապես մեկ սանտիմետր կամ քիչ ավելի լայնությունով, կապար հալեցնելով մեջը վազցնելու համար, որպեսզի ամրացնե գամը: Բոլոր սյունախարիսխները ունին թե՛ երկաթի տեղ և թե՛ արճիճ լեցնելու, տաճարի մյուս բոլոր սյուները թե՛ ներսեն և թե՛ դուրսեն, միօրինակ հրաբխային չեկ քարե չինված են խոյակ և խարիսխներով, ինչպես տաճարին ամբողջ շենքը, բացառությամբ քանի մը պատասխանատու թոլերու, որոնք թեթև գորշագույն ավազաքարով չինված են:




Նկ. 47. Զվարթնոցի տաճարի հարավային մուտքի զույգ որմնասյուներ




Նկ. 48. Զվարթնոցի տաճարի արտաքին պատի ներսի երեսի որմնասյուների խարիսխ

## Պատեր

Պատերը միահամուռ չինած են սև, գորշ և առավելագույն չափով կարմրագույն քարերով՝ միշտ խառն և աննկերդաշնակ դասավորված. կրաշաղախը բաղադրված է մանր ավազներե զատ, նաև զանազան մեծության խճաքարերե, սկսած սիսեռի մեծությենեն մինչև հավկիթի չափ, բացի այն խիպարներեն, որոնք ծառայել են քարերու թողած բացը լեցնելուն: Պատերու քարերը ներսեն և դրսեն մինչև 125 սմ. մեծություն ունեցողներ կան երկայնությամբ, իսկ խորության չափերը անհավասար են, ոմանք հազիվ 18 սմ. թանձրությամբ abaque-ներ են, իսկ ոմանք ետևի անտաշ մասերով մինչև 45 սմ. թանձրության կհասնին: Երկու երեսին դրած են երեսպար քարերը, մեջտեղը կրաշաղախ և խիպար լեցված է, խիպարները դրված են հորիզոնական դիրքով:

## Կամարներ

Տարբեր ձևով կտրված են գալերեան ծածկող կամարներու քարերը, այս քարերը կտրված են նեղ ճակատով 35-55 սմ. մինչև 225-230 երկարությամբ, իսկ խորությունները մոտավորապես մինչև մեկ մետր պատին մեջ թաղված հանգիստին մոտերը, թեև կան մինչև 60 սմ. կարճ քարեր ալ, սակայն միշտ խոր պատին մեջ մտած կողմերեն:

## Աղեղներ

Տաճարին մեջ կան ա. մայր սյուները միացնող աղեղներ, բ. խաչաձևի սյուները միացնող աղեղներ, գ. galerie-ին մեջեն երկրորդ գմբեթին խարիսխ կազմող աղեղներ, դ. արտաքին որմնասյուներու աղեղներ, ե. պատուհաններու և դռներու աղեղներ:

Նկ. 49. Զվարթնոցի տաճարի վերին հարկի արտաքին որմնաղեղների բեկորներ

Մայր սյուները միացնող աղեղները, որ մեծ մասամբ շինված են կարմրագույն քարերով, հնար եղածին չափ երկար չափերով կտրվածներ կան. իսկ մյուսները զանազան մեծությամբ, որոնց մեջ կան նաև ավելի քան մեկ մետր մեծությամբ աղեղնաքարեր:

Պատուհաններու աղեղներ կան, որ մի քարով տաշած են, իսկ կան մինչև երեք քարով կազմած, որոնց մեջ կպատահին զանազան գույնի քարեր: Արտաքին որմնասյուներու moulure-ներով աղեղները մինչև 115 սմ. երկարությամբ և ամբողջ moulure-ները վրան տեղավորող լայնությամբ կտրված են: Այս աղեղներուն մեջ հազվագյուտ են սև քարերով շինվածներ. սրանք ընդհանրապես կարմիր և շիկագույն քարերով են կազմած:

## Բոլորակ պատուհաններ

Առհասարակ բոլորակ պատուհանները կազմած են երկու քարերով հատ հատ, պատահեցի, որ չորս քարերով են և կամ մեկ կողմը ամբողջ քար, իսկ մյուս կողմը երկու կտորով կազմված են:



Նկ. 50. Զվարթնոցի տաճարի որմնաղեղի մուլյուրներ (հավանորեն վերին հարկին պատկանող)



Նկ. 51. Զվարթնոցի տաճարի ներսի խաչաձևի սյունազարդի ներքին ճակատի սյունակամարների մուլյուրները



Նկ. 52. Զվարթնոցի տաճարի վերին հարկաբաժնին պատկանող արտաքին որմնաղեղ



Նկ. 53. Զվարթնոցի տաճարի խաչաձևի միջին տաճար նայող պատուհանի շրջանակի մուլյուրները



Նկ. 54. Զվարթնոցի տաճարի պակի ճակատի քանդակ



Նկ. 55. Զվարթնոցի տաճարի պակի ստորնահայաց մասի կողովաքանդակը

## Քիվ (պակ)

Քիվերն անհամեմատ դուրս ցցված են քան հայկական ոճի սովորական պակները: Ունին նաև շատ կանոնավոր larmier-ներ շուրջանակի. նույնպես անհամեմատ երկար մաս ունին պատին վրա հանգչած՝ մինչև 50–90 սմ. երկարությամբ:

Նկ. 56. Զվարթնոցի տաճարի հարավային մուտքի կողքի՝ վարպետի բարձրաքանդակը

## Պատուհաններ

Ներքին հարկի պատուհաններու չափը որոշ է՝ սյուներու դասավորությամբ. մեջը անցուցած է եղեր երկաթ վանդակ. ուղղահայացը՝ երեք երկաթներով, հորիզոնականն ալ նույն համեմատությամբ:

## «Կրակատուն»

«Կրակատան» պատերուն մեջ առանձին բացառություն չկա շինվածքով, բացի քանի մը մասերեն:

Նախ պատի միջի վառարանաձև կամարը, որուն տակ շինված է որձաքարով մի խողովակ արևելքեն արևմուտք, չայրվող որձաքարեր են՝ 80 սմ. բարձրությունով, այնուհետև. սովորական քարերով շարունակած են պատերը, որոնց մեջ դրված են հողե խողովակներ, հատակագծին մեջ ցույց տված դասավորությամբ, վերեն վար, իսկ ներքևը socle-ին վրա պատուհանի նման բացվածքներ ունին 28 սմ. լայնությամբ,– ի՞նչ են ասոնք: Քառակուսի սյուներու բաժնին մեջ ալ կան հողե խողովակներ սյուներուն մեջ, իսկ մեկ հատ ալ հյուսիսային կողմի սենյակին հյուսիսային և արևմտյան պատի անկյունին վրա, այս բոլոր տեղերու քարերու շարվածքները 7-րդ դարուն կպատկանին իրենց interctice-ներու տաշվածքով: Երբեմն կան քարտաշ վարպետներու նշաններ տաճարի վարպետներուն հետ համեմատվող: Այս սենյակի մեջ կան մինչև 125 սմ. երկարությամբ քարեր:

## Գ. [ԶՎԱՐԹՆՈՑԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՂՄԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ]

**ա. Աշխատությանս նպատակը:** Ներկա աշխատությունս, որ գրեթե Զվարթնոցի ավերակների մասին ունեցած ուսումնասիրությանս մի գլուխը կկազմե, պետք է նախապես հայտնեմ, որ լիովին ճարտարապետական ուսումնասիրության բնույթ չունի, այլ նպատակ ունի մի մեծ և աննկարելի թյուրիմացություն և կամ միտումնավոր խեղաթյուրում ուղղելու, որը մասնավոր մի անհատի կողմից կապվում է Զվարթնոցի պատմական անցյալին հետ: Կարծեմ որ անհրաժեշտ է այդ խեղաթյուրումը միանգամայն ուղղել և թույլ չտալ, որ ընդհանուր համոզում դառնա, վասնզի այս միտումնավոր խեղաթյուրումը ոչ միայն վնասում է Զվարթնոցի նման մի հոյակապ հուշարձանի ճանաչելուն, այլև աղավաղում է Հայաստանի քաղաքական և ազգային պատմությունը:

Իրականին միանգամայն հակասող այս աղավաղումները և քմածին մեկնությունները տարիներե ի վեր այնքան համառությամբ քարոզվեր են ոչ միայն հայերի, այլ և օտար այցելուների, գիտնական ճանապարհորդների, որ սկսել է ընդհանուրին սեփականություն դառնալ որպես մի ճշմարտություն և մի պատմական նշանավոր գյուտ, որուն կլաղձային հին պատմությամբ հետաքրքրվող գիտնականներ երկար տարիներե ի վեր: Թեև հայ գիտնականների և բանասերների համար ծիծաղելի առասպելներ են խոսվածներն ու քարոզվածները այս պատմական «գյուտի» մասին, որովհետև անոնք, լիովին ուսումնասիրած լինելով Հայաստանի անցյալի կրոնական և քաղաքական պատմությունը, միշտ հեգնանքով և արհամարհանքով են վերաբերվել: Սակայն սակավաթիվ հայ գիտնականներ բնավ չեն կարող արդարանալ իրենց հեգնանքով և անտարբերությունով, քանի որ անդին ահագին թվով պատմության անհմուտ մի հասարակություն ունենք, որն իբր մեծ ճշմարտություն, պատկառանքով լսում է սույն քմածին և խեղաթյուրված պատմական բացատրությունները: Հայ գիտնականին նվիրական պարտականությունն էր մինչև հիմա փոխանակ հեգնանքով լսել անցնելու, ճշմարտությունը մամուլի միջոցով տարածելու ընդհանուր ժողովրդյան մեջ և վերջ դնելու այդ զուտ շահախնդրական առասպելներին: Այս հարցում ոչ միայն հայ հասարակությունը պետք էր ի նկատի ունենալ, այլ և այն մեծ թվով օտարազգի գիտնականներ և բարձրաստիճան անձնավորություններ, որոնք ծանոթ չեն մեծ մասամբ հայոց պատմության և հին գրականության, անոնք հիացմամբ արձանագրում են միամտաբար իրենց հուշատետրին մեջ այս ցանկալի գյուտը և բազմակողմանի կերպով վարձատրում են գյուտարարին և մամուլի սեփականություն դարձնում թե՛ պատմական անպատվաբեր կեղծիքը և թե՛ այդ կեղծիքը ստեղծողի չունեցած արժանավորությունները:

Ուստի, Զվարթնոցի հոյակապ ավերակների մի մասին մեջ կրակապաշտական տաճար տեսնող ինքնակոչ պատմաբանի քարոզությունները սահմանափակելու և առեղծվածային կարծված հարցի լուծումը ուղիղ ճանապարհի վրա դնելու նպատակով, հարկ համարեցի ավելի ընդարձակ և մանրամասն գրել այս աշխատությունս, քան Զվարթնոցի ամբողջական ուսումնասիրության նվիրված աշխատությանս մեջ:

Էջմիածնից դեպի արևելք 3–4 կիլոմետր հեռավորության վրա կգտնվի Ներսես Գ. կաթողիկոսի ի հնումն առապար անվանած տեղի վրա կանգնած Զվարթնոց եկեղեցիի ավերակները: Այս ավերակները որ ի սկզբան բոլորովին հողով ծածկված էին և արտաքուստ հողից վեր հազիվ նկատելի էին չորս գմբեթակիր սյուներու ծայրերը:

[1900] թվականին Էջմիածնի միաբան Խաչիկ ծ. վարդապետ սկսել է պեղել այս հռչակավոր ավերակը: Պեղումներով հայտնագործվեր է ոչ միայն Ներսես Գ-ի կանգնած հոյակապ եկեղեցին, որ ի հնումն բոլոր հայ մատենագիրներու մեծամեծ գովեստներով հիշատակված է և մեծ տեղ գրված է գեղարվեստի պատմության մեջ: Բացի տաճարեն, հայտնագործվեր են տաճարի հարավային կողմը ընդարձակ շինությունների մնացորդներ, որոնք ոչ նվազ հետաքրքրական են Զվարթնոցի կառուցման ժամանակի պատմության համար:



Նկ. 57. Զվարթնոցի հարավային կողմի շինությանց խմբի հատակագիծը

Զվարթնոց եկեղեցին, գրեթե եզակի մի շինություն է, ի նկատի ունենալով անոր շինության ժամանակը, միջավայրը և երկրին քաղաքական ու տնտեսական վիճակը: Անոր հատակագծային ձևը, ճարտարապետական ոճը այնքան ինքնուրույն և Հայաստանին միայն հատուկ է, որ առայժմ թույլ եմ տալիս ինձ այդ ոճը հայկական համարելու, քանի չեն գտնված դեռ անոր նմանները Հայաստանից դուրս և ավելի հնագույն քան Զվարթնոցը: Հայաստանի մեջ այդ ինքնուրույն ճաշակով շինված հուշարձանը միակը չէ, գոյություն ունին ուրիշ չորս մեծ և փոքր հուշարձաններ ևս Հայաստանի սահմաններում Զվարթնոցի նմանությամբ շինված, որոնք են – 1. Զվարթնոց, ս. Գրիգոր եկեղեցին, 2. Անիի Գագկաշեն ս. Գրիգորը, 3. Թավուշքյարի եկեղեցին որն ըստ տեղեկատուի, շինությունը վերագրում է Ներսես Շինողին, իսկ 4-րդն է Անիի հյուսիսային պարիսպներից դուրս կանգնված գողտրիկ Հովիվի եկեղեցին: Զվարթնոցի տաճարի շուրջը բացված շինության մնացորդները գտնվում են հարավային և մասամբ հարավ արևմտյան կողմը, որոնք անշուշտ հատուկ էին կաթուղիկոսական տան և միաբան կղերական պաշտոնեից բնակության: Ընդհանուր ավերակները կարելի է բաժանել չորս զանազան մասերու, որոնցից մեկը միայն առարկա է եղած քմածին ենթադրությունների և մեկնությունների:

Ընդհանուր ավերակների բաժանումները հետևյալներն են.–

1. Զվարթնոց բոլորակ տաճարը:
2. Կաթուղիկոսական դահլիճը և կաթուղիկոսական բնակության հատուկ բաժանումների տաճարի հարավ արևմտյան կողմը:
3. Կաթուղիկոսական շքախումբի և միաբան հոգևորականների բնակարաններ տաճարի հարավային կողմը:
4. Անկախ մյուս մասերից մի քանի ուրիշ բաժանումներ տաճարի հարավակողմն ավերակների արևելյան ծայրին:

Ահա այս չորրորդ մասն է, որուն միմյանցից անկախ մի քանի բաժանումների փոքր ինչ տարօրինակությունը առիթ է տված պեղումները կատարող [Խաչիկ] վարդապետին մի կրակապաշտական տաճար գտած լինելու հավակնոտ և համառորեն շարունակող քարոզներին: Չկա մի այցելու, մանավանդ երբ այցելուն օտարական է, որին առանձին ոգևորությամբ, իբրև թանկագին գյուտ չնկարագրե և բացատրե մեր «պատմաբան» վարդապետը:

Որպեսզի ընթերցողները կարողանան ինձ հետ համեմատություն կատարել և լիովին ըմբռնել այս առեղծվածային մասի հատկանիշը, անհրաժեշտ կհամարեմ կրակապաշտության ծագումն մինչև մեր օրերը գոյություն ունեցող կրակապաշտության տաճարների ձևերը և կատարված ծիսական արարողությունները հավաքել գիտնականների ուսումնասիրություններից և ցույց տալ ընթերցողին, որպեսզի յուրաքանչյուր ոք ինքը վճռե թե, իբրև կրակապաշտական տաճար ցույց տրված մասը հեռավոր նմանություն իսկ չունի կրակապաշտական տաճարի: Թեև տարօրինակ էր լինի, որ Հայաստանում ևս պատահաբար գտնվեր կրակապաշտական տաճար կամ ատրուշան, քանի որ մեր հին պատմության մեջ գտնվում են հատ ու կոտոր տեղեկություններ, որ մեծամեծ անպտուղ ջանքեր և զոհողություններ եղել են Սասանյան արքայից արքաների կողմե հայերին կրակապաշտ դարձնելու համար, սակայն հախուռն և առանց դրական փաստի վճռել և քարոզել, միանգամայն աններելի է: Հիրավի, Հայաստանում պարբերաբար խիստ նեղ սահմանների մեջ և շատ կարճ տևողությամբ ոչ միայն սասանական կրակապաշտություն, այլ և Հայաստանը շրջապատող բոլոր մեծ ազգերու կրոնքներն իրենց դրոշմը դրեր են հայոց սեփական կրոնին վրա. այդ խիստ բնական էր, իմ կարծիքով, բայց պետք է գիտենալ, թե այդ ազդեցությունը ինչ չափով եղել է, ինչքան ժամանակ տևել է և Հայաստանի ո՞ր երկրամասի վրա է եղած:



Նկ. 58. Զվարթնոցի արևմտյան կողմի աջակողմյան շինությունների մի մասի հատակագիծը

*
* *

Հաստատված մի իրողություն է, որ քաղաքակրթական ամեն մի տարերք՝ գիտություն, արվեստներ, ի շարս որոնց գեղարվեստ և ճարտարապետություն, երկրե երկիր փոխանցվել են քաղաքական և տնտեսական շփումներու, պատերազմներու, գաղթականություններու և առևտրական հարաբերությունների միջոցով: Այսպես է պատահել նաև կրոնների և հավատալիքների փոխանցումը մեկ ազգեն մյուսը, մեկ երկրեն դեպի մյուսը: Հաճախ պատահել է, որ պատերազմով հաղթական կամ կուլտուրապես բարձր մի ազգ, երբ քաղաքականապես նվաճեր կամ իր ազդեցությունը տարածեր է դրացի փոքր ազգերու վրա, տիրողին նշանաբանն է եղեր այդ փոքր ազգերը ձուլել իր մեջ կրոնքի միջոցավ, որպեսզի ապագային անջատո-

ղական խլրտումներ առաջ չգան և իր տիրապետությունը երկարատև լինի, այդ համաձուլման ամենեն ուժեղ միջոցը համարել են իրենց կրոնի վարդապետությունը տարածել նվաճված ազգի մեջ: Անմիջապես կանգներ են կրոնական տաճարներ, կատարել են հանդիսավոր արարողություններ, եռանդուն կերպով անվերջ քարոզել են տիրողի կրոնի վարդապետությունները՝ նոր կրոնին ընտելացնելու համար: Շատ անգամ պատահել է, որ նույնիսկ բռնի միջոցների են դիմել կրոնական սկզբունքներ ընդունել տալու համար: Այս բռնի միջոցները, պետք է ըսել որ, երբեմն օգներ են, սակայն ոչ միշտ: Պատահել են դեպքեր, որ այդ բռնի միջոցները առաջ են բերել համայնական կատաղի ընդվզումներ, որով անփոխարինելի մնասների է ենթարկվել տիրապետելու ձգտողը:

*
* *

Հայաստանը շատ կարճ ժամանակ միայն, պետական բացարձակ անկախություն է ունեցել, իսկ մնացյալ ժամանակներում, թե՛ քաղաքականապես և թե՛ կուլտուրապես, առավել կամ նվազ չափով ենթարկված է եղել շրջապատող մեծ ազգերի, բացի քաղաքական և կուլտուրական ազդեցությունից նաև որոշ չափով կրոնական հավատալիքների տեսակետով:

Այսօրվան գիտնականների մանրակրկիտ ուսումնասիրությունները ապացուցանում են, որ հին հայոց նախաքրիստոնեական կրոնը ենթարկված էր Հայաստանին տիրող կամ Հայաստանի վրա գերիշխանություն ունեցող մեծ պետությանց կրոններուն, ինչպես Հունա-Հռոմեական, ասորա-քաղդեական, պարթևական, պարսկական և այլն և այլն: Միայն թե ոչ մի ազգի կրոն Հայաստանում նույնությամբ չէ ընդունված, այլ տեղական ճաշակի և դատողության համաձայն, ընտրանոք մասեր պատվաստել են իրենց սեփական հիմնական կրոնին, որով հետզհետե, դարերի ընթացքում, կազմվեր է գրեթե շրջապատից անկախ մի կրոն, ծիսական առանձնատեսակ կանոններով և մեհյանական առանձին ձևերով:

Որովհետև այստեղ մեզ զբաղեցնողը պիտի լինի առանձնապես կրակապաշտական կրոնը և անոր հատուկ տաճարների ձևերը, որոնք իբր թե երկար դարեր Հայաստանի մեջ պաշտման առարկա եղան, պիտի սկսիմ համառոտակի արձանագրել կրակապաշտության ծագումը, հաջորդական փոխանցումները և անոր զարգացման շրջանները, Հայաստանը շրջապատող հին ազգերու մեջ, քաղելով գիտնականների կատարած ուսումնասիրություններեն և վերջնական եզրակացություններեն, որպեսզի կարողանանք քննել, համեմատել Հայաստանի մասին պատմական տվյալները և անոնց հետ կապ ունենալ կարծվող հայ հուշարձանների մնացորդները:

Աշխատությանս ընթացքում, բնականաբար, պիտի համեմատության դնեմ, բացի կրակապաշտական տաճարներից նաև Հայաստանից դուրս եղող ուրիշ ազգերի տաճարները, որոնց կապը ակներև է հեթանոս Հայաստանի տաճարների ձևերի հետ: Կարծում եմ, որ այս աշխատության ընթացքում, ես պիտի կարողանամ ցույց տալ, թե Հայաստան, ո՞ր կրոնքներից, ինչ չափերով օգտվել է հավատալիքների և դիցապաշտության տեսակետով և ո՞ր ազգերի կրոնական տաճարների ձևերը եղել են իրենց ճաշակին և դավանանքին հարմար և կանգներ են տաճարներ նույն իրենց ընդունած ձևերով:

**բ. Կրակապաշտություն և կրակապաշտների տաճարները:** Ինչպես կերևի, կրակի պաշտամունքը չափազանց հին է, ավելի վաղ, քան ասորա-քաղդեական հզոր պետությանց կազմվիլը, ինչպես կըսե ճարտարապետության պատմաբան Դանիել Ռամե իր ճարտարապետության ընդհանուր պատմության մեջ. թե «պատմական արշալույսին գոյություն ստացավ կրակի պաշտամունքը հին տոհմատիրական ցեղախմբերի ժամանակ: Առանց կանխադատելու, վերլուծելով հունական ավանդությունները, և անջատելով անոնք հերոսական դիցաբանություններե, Ասիո մեջ պիտի գտնենք սկյութական ցեղերի մի տիրապետության և հավատալիքների հետքերը պատմական ժամանակի արշալույսին: Այդ տիրապետությունը ապացուցված է մի մասնավոր կրոնի գոյությամբ, որ հավանորեն կկայանար երկնային մարմիններու և կրակի պաշտաման մեջ: Այս կրոնը մարդկային մի ուրիշ ցեղի հաստատած կռապաշտության հակադիրն էր:

Մի հատուկ անուն Զորոաստրինը, մասնավորապես կապված էր այս կրոնին, անուն մը, որ հույներ թարգմանեցին «աստեղաց պաշտամունք» անունով: Ամեն անգամ, որ պատմության մեջ կպատահի, սեմական կռապաշտութենե առաջ նախնական սկյութների կողմից հաստատված տարերաց պաշտաման վերաբերող անցք մը, այնտեղ ուղղակի մի նմանություն կտեսնենք նախնական Զորոաստրի վարդապետության հետ: Այն չփոթությունը, որ Զրադաշտի դարաշրջանի մասին գերակշիռ եղավ հունաց մեջ, հավանաբար կրոնական գաղափարներու կրկնակի շրջանի գերակշռությամբ կբացատրվի, այսինքն՝ սեմական տիրապետության հիմնարկութենեն առաջ տարերաց մի պաշտաման գոյությամբ և այս պաշտաման կրկին վերանորոգմամբ, որ երևան եկավ Աքեմենյանների օրով, սեմական վարդապետությունների տասն և յոթը դար տիրապետող լինելուց հետո»: (Daniel Ramée. Hist. générale de l'Architecture, t. 1, p. 48–49):

Այս տողերից հետո, հեղինակը զանազան հին մատենագիրներից և նոր գիտնականների տեսություններից վկայություններ կբերե, հաստատելու համար այն տեսությունը, թե Զորոաստրի պաշտամունքը շատ հին է և Զրադաշտի ձեռքով վերանորոգված է Աքեմենյաններու ժամանակ:

Այս ամենահին շրջանի կրակի պաշտամունքն է, որ հետո փոխանցվեր է Ասորա-Քաղդեային: Թե ե՞րբ և ինչպե՞ս է փոխանցվեր, այդ պարագաները մանրամասն գրել իմ նպատակես դուրս է, միայն թե ես այստեղ պիտի ընդգծեմ նախքան Աքեմենյանները և Սասանյանները, կրակի պաշտման գոյությունը Ասորա-Քաղդեայի մեջ, հիմնվելով զանազան արժանահավատ վկայությանց վրա համառոտակի կքաղեմ այն տեսությունները, որ այս մասին ունեցեր են մեր ժամանակի գիտնականները:

Նախապես պետք է գիտնալ, որ հին ժամանակներու բազմաստվածության մեջ, աստվածությունները երկու դասակարգի կբաժանվեին, առաջինները բարձրագույն ստեղծող աստվածություններն էին, որոնք բովանդակ տիեզերքի կազմակերպության և կառավարության մեջ իրենց առանձին դերն ունեին, երկրորդները բարձրագույն աստվածներու ձեռքով ստեղծված էին և անոնց ստորադրյալ սրբություններ կամ ոգիներ էին, որոնք բարձրագույն աստվածներից լիազորված էին անկախ կերպով գործել բարձրագույն աստվածների կողմից՝ իրենց հանձնված որոշ պաշտոնը կատարելու համար:

Տիեզերքի կառավարության համար բարձրագույն աստվածների ձեռքով ստեղծված երկրորդական աստվածությունների կամ պաշտելի ոգիների շարքին մեջ էր կրակի աստվածությունը, որը պաշտաման առարկա էր և կհամարվեր երկնից արեգական ներկայացուցիչ՝ բովանդակ երկրի վրա:

Քաղդեական երկրորդական աստվածությունները բաժանված էին երկու դասակարգի, դասակարգերեն մեկը, իբրև օգնական և գործակատար մեծ աստվածների, բարի ոգիներ էին, իսկ մյուս դասակարգը՝ չար ոգիներ էին, որոնք ոչ միայն մարդկանց մոլորեցնելու և մնասելու համար անդադար կգործեին, այլ և այս երկու դասակարգերը իրար դեմ անդադար կռվում էին:

Մեծ աստվածներ, չար ոգիներու պատճառելիք մնասները չեզոքացնելու համար, բարի ոգիներուն օգնության կկանչեին, որոնք անդադար կկռվեին չար ոգիների հետ և անոնց կհալածեին: Բարի ոգիներեն մեկն էր Gibil կամ Gibir կրակի աստվածությունը, որ գիշերից և խավարամած ջրերից առաջ եկող Anounnaki կոչված չար ոգիների ամենազորեղ թշնամի աստվածությունն էր: (G. Maspero, Hist. ancienne des peuples de l'Orient classique, Paris, 1895, p. 634–635):

Տների վառարանների մեջ զոհի սեղանների վրա վառված կրակի բոցերի երևումը կփախցներ չար ոգիները և կցրեր անոնց զորությունը: Կրակը երկնքի արեգական ներկայացուցիչ կամ գերագույն քրմապետ էր երկրի վրա, իր բոցեղեն լեզուներով կխայթեր հակառակորդին և պատգամաբերն էր Mardouk կամ Asari-ի (G. Maspero, Hist. ancienne des peuples de l'Orient, Paris, 1904 թ., 164):

Շարդեն, քննելով Ատրպատական բառի ծագումը և ստուգաբանությունը, կհետևեցնե, որ այս երկիրը պատկանելով հին Ասորեստանին և Ասուրի միջոցավ կրակի պաշտամունքը ընդհանրանալուն պատճառով այս երկիրը կոչվեցավ Asurpaican այսինքն՝ pays d'Assour = ասուրի երկիր, որ նշանակում է նաև կրակի երկիր: (Voyages du chevalier Chardin en Perse, t. II, p. 308–312, Paris, 1811).

Թեև ձեռքի տակ չունիմ ասորա-քաղդեական կրոնի մասին ընդարձակ աղբյուրներ, սակայն կարծում եմ, որ ավելին իսկ կարիք չկա, քանի որ անոնց կրոնական տաճարների ձևերը ընդհանրապես միօրինակ են և ունիմ ձեռքի տակ անոնց մի քանի օրինակները աշխատությանս մեջ զետեղելու համար, այստեղ էականն այն է, որ հնագույն կրակապաշտությունն էր, որ ընդունված էր ասորա-քաղդեական կրոնի մեջ և շարունակվում էր գուցե նախորդեն քիչ տարբեր վերագրումներով և երկրորդական մի աստվածություն կամ պաշտելի ոգի էր:

Ասորա-Քաղդեայի մեջ զարգացող բազմաստվածյան կրոնը այնպիսի բարդությունների հասեր էր և այնպիսի խառնափնթոր մի վիճակ էր ստացել, որ քաղաքե քաղաք, երկրե երկիր միևնույն աստծուն տարբեր վերագրումներ էին հատկացնում, բացի այս, նաև երկրի զանազան մասերում այնպիսի տեղական նոր աստվածություններ էին երևան գալիս, որը երկրի ուրիշ մասերում անծանոթ էր: Ահա այս անկերպարան վիճակին էր հասած Ասորա-Քաղդեայի բազմաստվածյան կրոնը իր

անկման վերջին շրջաններում, երբ տեղի տվավ ուրիշ նորագույն աշխարհակալների: Գրեթե միևնույն հողի, միևնույն երկրին տիրապետող իրանական ցեղին անցավ հին բազմաստվածությունը՝ իբրև պետական կրոն և հասավ մի անտանելի քաոսային դրության:

«Կրսվի թե ժամանակի պահանջն էր Զրադաշտի երևնալը, ինչպես նաև տարօրինակ մի զուգադիպությամբ Զրադաշտի հետ միասին երևան են գալիս Չինաստանի մեջ Կոնֆուցիոս և Հնդկաստանի մեջ Բուդդա 6-րդ դարուն Ք. ա.»: (D. Ramée, Hist. générale de l'Architecture, t. I, p. 46):

Տարակույս չկա, որ կրոնական այսպիսի բարդ և մարդկային ընկերականության խղճին ու սրտին վրա ծանրացող մի ընդհանրական դրություն, ադիթ պիտի տար բարեկարգիչներ երևալուն: Միայն Պարսկաստանում, Չինաստանում և Հնդկաստանում չեն որ հավատացյալները մի կոշմարային դրությունից ազատելու համար երևան են եկել բարեկարգիչներ, կրոնը պարզելու և ավելի բարոյական սկզբունքների վրա հիմնելու համար: Այս իսկ պատճառներով է եղել, որ հետագայում ևս երևացել են ուրիշ բարեկարգիչներ ամեն ազգի և կրոնների մեջ, սակայն այս մասին խոսել իմ նպատակիցս դուրս է:

*
* *

Որովհետև այժմ զբաղվելու ենք հին բազմաստվածության ազգերի տաճարներու ձևերով, որոնք հետզհետե փոխանցվեր են հաջորդող ազգերուն, ուստի գիտնականների տված տեղեկություններեն հաջորդաբար կքաղեմ այն գլխավոր մասերը, որոնք տաճարների ձևերին կվերաբերին, ծիսական արարողություններից կընեմ միայն այն հատվածները, որոնք անմիջական կապ ունին տաճարի ձևին հետ և տաճարի ձևը ավելի լավ ընորոշելու հատկանիշն ունին: Ուստի նախապես ընորոշենք այն տաճարներու ձևերը, որոնք կգտնվեին նախքան քաղդեացիները՝ հին ցեղերի գաղթականության ժամանակ:

Քիչ առաջ գրեցի, որ հին սկյութացիների մեջ երևցավ բնապաշտական կամ երկնային մարմինների մի պաշտամունք, ի շարս որոնց կգտնվեր նաև կրակի պաշտամունքը, այս մասին հետևյալը կգրե Շարդեն.– «Այս հին ազգերի պաշտաման արարողությանց համար, ինչպես կգրեն, հատուկ շինություններ չեն եղած իբր տաճար, ինչպես երևում է այս հին ազգերի կրոնական արարողությունները կատարվել են բացօթյա որոշ տեղերի վրա, որոնք թե՛ աղոթատեղիներ էին և թե՛ կրոնական հանդիսավայրեր»:

Այս մասին Շարդեն կգրե հետևյալ տողերը.– «Կային նաև ազգեր, որոնց կրոնական պաշտամունքները կկատարվեին բարձր բլուրներու և սարերու վրա, այս մասին կան բազմաթիվ վկայություններ....» (Voyages du chevalier Chardin en Perse t. II, p. 76):

Ասորա-քաղդեական կրոնն իր նախնական պարզ վիճակին մեջ ըստ էության բնության և երկնային աստեղաց պաշտամունք էր և բնականաբար մի տեսակ շարունակություն հին սկյութական կրոնին, սակայն ասորաքաղդեացիք, իրենց նախորդներու նման չվարվեցին, փոխանակ քաղաքներե և մարդկային բնակություններե հեռու գնալով կրոնական հանդիսավոր պաշտամունքներ կատարելու, արվեստական կերպով այդ բարձունքները կամ սարերը մոտեցրել են քաղաքներին և մարդկային ամբոխին հսկայական ձեռագործ սարեր և բլուրներ կազմել, որոնց մասին ընդարձակ նկարագրություններ ունին ներկայիս պատմաբան-գիտնականներ:

Ասորեստանյան վիթխարի տաճարներն էին Ziggourât անվանված շենքերը, որոնց փլատակները միայն կան տեղին վրա, սակայն եվրոպացի գիտնականներ ոչ միայն անոնց նկարագիրը տվել են մեզ, այլ և այդ վիթխարի տաճարների վերակազմությունները: Ճարտարապետության պատմաբան A. Choisy-ն հետևյալը կգրե այդ մասին. «Այն հսկայական բլուրներու նմանող աշտարակները, որոնք Բաբելոնի գլխավոր հուշարձանները եղան, մեհյանները և միևնույն ժամանակ աստղադիտարաններ էին, աստեղաց պաշտաման մի երկրի մեջ երկու գաղափարները կմիախառնվեին: (A. Choisy, Hist. de l'Architect. t. I, p. 101-102):

Սկսած ասուրա-քաղդեական ամենահին շրջանեն մինչև աքեմինյան պետության կազմակերպման նախօրյակին, պաշտաման հատուկ տաճարների մասին թեև պատմական տեղեկություններ շատ հազվագյուտ են և եղածներն ալ խոսում են հոգուտ Ziggourât-ի, սակայն այսօր պատմագիտության սեփականությունն են դարձած այն մեծազանգված շինությանց փլատակները, որոնք անվիճելի կերպով քաղդեական մեհյաններ և միևնույն ժամանակ աստղադիտարաններ էին: Այս Ziggourât-ները շինելակերպերու կամ փոքր հարամասունքներու մեջ, թեև փոքրիկ տարբերություններ ունեն միմյանցից, սակայն ընդհանուր ձևերով միատեսակ են ամբողջ ասորա-քաղդեական երկրին մեջ: Ուրեմն այլևս Ասորա-Քաղդեայի համար կրոնական տաճարի ուրիշ ձև փնտրելը ավելորդ կլինի և սկզբից մինչև վերջ միմիայն Ziggourât-ը կմնա իբրև պաշտաման տաճար: Ziggourât-ի լեռնանման վիթխարի զանգվածին գլուխը միայն կգտնվեր մի փոքր հարկածածուկ շենք, որուն մեջ կդրվեին ըստ ոմանց մի մեծ աստծու արձան, և ըստ այլոց՝ գիշերները անքուն կանցներ այդ սենյակին մեջ մի քուրմ, որուն պաշտոններեն մեկն էր հսկել և դիտել մինչև առավոտ երկնից աստղերի ընթացքը: Այս հսկայական շենքերի մասին ես կդնեմ այստեղ գիտնականների և պատմաբանների տված նկարագրություններն ու բացատրությունները:

Ziggourât-ի այլազանություններեն մեկը և պետք է ըսել ավելի մեծն ու ճոխը, որ ըստ Maspero-ի ընդհանրացած էր, այս այլազանություններեն մեկ օրինակին Belus-ի նվիրված մեհյան Ziggourât-ն է, որուն մանրամասն նկարագրություն կուտա ճարտարապետության պատմաբան Դ. Ռամո, հետևյալ կերպով.

«Բաբելոնի հարավ-արևմտյան անկյունին վրա Մեմֆիսի պիրամիդներեն հետո ամենահին հիշատակարանը Belus-ի մեհյանն էր հիմնված: Այս հսկայական շենքը գտնվեցավ Birs Nemrod ըսված ավերակներուն մեջ, Եփրատեն ինը կիլոմետր հեռավորության վրա: Այս ավերակներուն ծագումը երկար ժամանակ անորոշ էր, կարծում էին, որ Բաբելոնի ավերակներեն այս չափ հեռու ընկած տեղ, չէր կարող քաղաքի (Բաբելոնի) մասը կազմել: Բելի կամ Բաաղի մեհյանը, ի սկզբան ունեցավ մի քառակուսի պարիսպ ամեն կողմեն երկու ստադ երկարությամբ, որուն մտից դռները անագապղնձե էին, և գոյություն ունեին տակավին Հերոդոտի ժամանակ (484–425 ն. Ք.):

Կեդրոնին վրա, կանգնված էր մեծազանգված մի քառակուսի շինություն, ամեն կողմեն մեկ ստադ (184 m 94) (Herodote, II. CCLXXXI):

Առաջին շինության վրա կանգնված էր մի ուրիշը (ներքինից ավելի փոքր տարածությամբ), երկրորդին վրա մի երրորդ և այսպես շարունակաբար մինչև յոթը: Սա ուղիղ աստիճանով մի բուրգ էր խարիսխի չափով մի ստադ բարձրությունով, արտաքուստ շինված էին աստիճաններ, որոնցմով կբարձրանային յուրաքանչյուր հարկի վրա: Այս սանդուղներու կեդրոնին վրա կգտնվեին մի խուց և աթոռներ, որոնց վրա կհանգստանային բարձրացողներ: Թեև պատմական տեղեկություններ չկան այս հարկերու բարձրության մասին, սակայն անոնց յուրաքանչյուրը պետք էր որ 23 մետր բարձրություն ունենար: Վերջին հարկի հարթավայրին (տանիքին) վրա կգտնվեր մի մեծ մատուռ, մատուռին մեջ մեծ շքեղ անկողնին մոտ մի ոսկեղեն սեղան: Այս մեհյանին մեջ բնավ արձաններ չկային: Քաղդեացի կղերականները պատմեցին Հերոդոտին որ, երկրեն մի կին գիշերը կանցներ այնտեղ, ինչպես Եգիպտոսում Թեբեի Ամմոնի տաճարին մեջ, ինչպես նաև Լիսիում Պատարի (patare) մեջ: «Այս ուղիղ աստիճանավոր բուրգի ստորոտը կտեսնվեր մի մատուռ, ուր Բելը նստած ներկայացնող ոսկեղեն մի մեծ արձան, արձանին մոտ ոսկեղեն մի մեծ սեղան, պատվանդանը և աստիճանները նույնպես ոսկեղեն էին, քաղդեացիները Հերոդոտին ասացին, որ այն ամենը արժեն ուղիղ հարյուր ոսկի տաղանդ (Հիսուն և վեց միլիոն ֆրանկ): Մատուռին դուրսը ևս կտեսնվեր մի ոսկեղեն (զոհի) սեղան և ուրիշ մի շատ մեծ սեղան, որուն վրա կզոհեին տարեկանից վեր զոհեր, որովհետև ոսկեղեն սեղանին վրա թույլատրելի է զոհել միմիայն կաթնակեր անասուններ: Քաղդեացիները այս աստծո տոնին օրը, մեծ սեղանին վրա, ամեն տարի, հազար տաղանդ կշիռի ծանրությամբ խունկ կծխեին (Herodote, II. CCLXXXIII) գրեթե 24,970: Սրբազան պարիսպին մեջ կար նաև 12 արմկաչափ բարձրությամբ ոսկեձույլ մի արձան, որը Քսերքսես գրավեց:

«Հավանաբար այս բուրգն էր, որ քաղդեացիք իբրև աստեղագիտական դիտարան ծառայեցուցին, անշուշտ այնտեղ էր, որ Նաբուգոդոնոսորեն առաջ գիտնականներ հաստատեցին իրենց դիտարանը»:

«Ալեքսանդր վճռած էր, որ իր Հնդկաստանեն վերադարձին, նորոգեր Baal-ի տաճարը, իր վերջին օրերուն տասն հազար բանվոր աշխատցուց այս ձեռնարկի համար երկու ամսվան մեջ, բայց հազիվ կարողացավ նախկին շինության փլատակները մաքրել: Մահը ընդհատեց այս աշխատությունները և իրմե հետո, ոչ ոք չի մտածեց այս աշխատությունները շարունակելու մասին»: (D. Ramée Hist. generale de l'Architect, t. I, p. 306-308):

Այս Ziggourât-ն «այն աստիճանավոր աշտարակն է, որ հույները հիացել էին, Բաբելոնի մեջ.... անոր ավերակները կմնան, բայց դարերու ընթացքին մեջ՝ խորապես այնքան հաճախ խառնված էր, որ այսօր այլևս չի գիտցվեր, թե, ի՞նչ կրոնական նախնական շինությունը: (G. Maspero. Hist. ancienne des peuples de l'Orient classique, Paris 1895, p. 628): Եվ որ ավելի հետաքրքրական է և կարևոր այս աշխատությանս համար, «Մինչև այժմ ներքին հարկաբաժիններու ոչ մի հետք չի գտնված»:

«Այլազանության երկրորդ տեսակը որուն ընդհանրապես ստորին Քաղդեայի մեջ ավելի նախապատվություն տրված էր, տարբերությունը այն

էր, որ փոխանակ միմյանցից հետզհետե փոքրացող խորանարդ զանգվածները կեդրոնին վրա մեկմեկու վրա բարձրացնելու, չէին անցներ կեդրոնական ուղղահայացը և մեկ կողմին վրա՝ հետևը հանկարծական կբարձրանար հողեն, իսկ հակադիր կողմը կբացվեին ընդարձակ հարթավայրեր: Հարկերը ամբողջովին շինված էին արեգակի տակ չորացված կավի զանգվածներով: Ամենակատարը եղած մատուռը միմիայն մի սենյակի չափ էր, մի զոհի սեղան կկանգնվեր դրան առջև: Վերև կբարձրացվեր բացօթյա ուղիղ սանդուղներով, միայն յուրաքանչյուր հարթավայրի վրա առավել կամ նվազ ընդարձակությամբ ընդհատված գավիթով մը: Այս երկրորդ «այլազանության Ziggourât հաճախ կգտնվեին ինչպես մեկը Ուռի, մյուսը Երիդուի, մի երրորդը Ուրուկի (Ourouk-ի) մեջ, առանց խոսելու անոնց մասին, որոնք չեն հետազոտված»: (G. Maspero, անդ, էջ 627–628):

*
* *

Որովհետև իմ նպատակս ասորաքաղդեական կրոնի աստվածաբանությունը ուսումնասիրելը չէ, կարծեմ թե բավական է ընդհանուր գծերով տված տեղեկությունները այդ հին կրոնի տաճարների մասին: Թեև կրոնը ժամանակի ընթացքում չափազանց բարդացել և մի բազմաստվածություն ստեղծվել էր: Եվ տեսանք միևնույն ժամանակ, թե ինչպես աստվածություններ երկու դասակարգի էին բաժանվեր, այսինքն՝ բարձրագույն աստվածություններ և երկրորդական աստվածություններ կամ պաշտելի սրբություններ:

Իմ նպատակիս համար անհրաժեշտ էր մի քիչ ավելի մանրամասն զբաղվել անոնց տաճարներու ձևերով, հետևաբար մեջ բերի օրինակներ և տաճարներու ձևեր, որոնք բավական կլինեն ըմբռնելու համար թե ինչպես, նախապես բնապաշտ ժողովուրդը լեռներու և բարձունքներու վրա ծիսական արարողություններ կատարելե հետո, բնական բարձունքներուն վերջնական ձևը տվավ արվեստական բարձունքներով, այսինքն շինելով լեռնանման բարձր Ziggourât-ներ քաղաքներու և բնակություններու մոտիկ, որով ժողովուրդը ազատվում էր մասամբ աղոթքներու և հանդեսներու համար հեռավոր սարերու գագաթները բարձրանալու դժվարություններից: Որչափ որ անոնց հավատալիքներու մեջ խառնիխուռն բարդություններ առաջ եկել են, բարեբախտաբար իրենց տաճարներու ձևերը մինչև վերջը մնացեր են անփոփոխ իրենց պարզությամբ, մինչև այդ պետության և պետության հետ կրոնի անկումը և Ասորա-Քաղդեային փոխարինող նոր ազգերի կրոնական վերածնությունը:

*
* *

Ասորա-Քաղդեայի կրոնը գրեթե սեփական կրոն դարձավ Ասորեստանին տիրապետող իրանական ցեղերին և երկրին հետ միասին ժառանգություն եղավ նաև անոնց կրոնը: Սակայն Ասորեստանին տիրապետող ցեղերն ունեին նաև իրենց սեփական հավատալիքները և կրոնական պաշտամունքները, որոնք խառնվեցան հին քաղդեական և ասորեստանյան կրոնի վարդապետությունների հետ և առաջ բերին մի անհանդուրժելի կացություն:

Հին բազմաստվածության վրա ավելանում էին միշտ նոր աստվածություններ և նորանոր սրբություններ, որոնց պաշտամունքը և մոգերու միշտ մեկզմեկ հակասող վարդապետությունները տաղտուկ ու դժգոհություններ էին պատճառում ժողովրդին: Ուստի այս ընդհանուր դժգոհությունը և խառնիխուռն վարդապետությունը բնական էր, որ պիտի առաջ բերեր մի մեծ հեղափոխություն, որուն գլուխը պիտի կանգնված լիներ մի մեծ մարգարե կամ պատգամախոս, որուն հետևանքը կլիներ հեղաշրջում և կրոնի պարզություն, ինչպես միշտ պատահել է ուրիշ երկրների հին կրոնների վերածնության և ընդհանուր բարեկարգության ժամանակ:

Նախկին Ասորեստանին հետագայում տիրապետող չորս զանազան իրանական ցեղերու, Մեդիայի, Բակտրիայի, պարսիկների և պարթևների կրոնը եղել է ասորեստանյան նախկին բնապաշտությունն և միևնույն ժամանակ կրակի պաշտամունքը (Դ. Ռամո, անդ, 346): Որ բակտրիական և պարսկական կրոնը ասորաքաղդեական կրոնի ազդեցության տակ էր և կամ անոր մի տեսակ շարունակությունն էր, անժխտելի ապացույց են համարում, Ասուր աստծու խորհրդանշանին, պարսկական կրոնի մեջ ընդունվելը քիչ փոփոխությամբ, առանց ընդհանուր ձևը և վերագրումը փոխվելու, միայն Ասուր անունը փոխվեցավ Ահուրամազդայի:

Ասորեստանյան բազմաստվածության կրոնը մինչև իրանական ցեղերուն անցնելը նոր վերածնություն կամ բարեկարգություն չի հիշվում պատմության մեջ, բայց Ասորեստանի անկումից հետո Բակտրիայի մեջ երևան է գալիս մի բարեկարգելի ավանդություն այն է՝ Զրադաշտի վարդապետության և սկզբունքների քարոզությունը, որն անցնում է նաև աքեմինյան պարսիկներին:



Ահա այս Զրադաշտի քարոզած Ահուրամազդան է, որ Հայաստանում հայ ժողովուրդից պաշտվեր է հայկական Արամազդ անունով: Զրադաշտի վարդապետության համաձայն Ահուրամազդան տիեզերքը ստեղծող գլխավոր աստվածն էր, և կներկայացներ արեգակի, լուսնի, հողի, ջրի և ուրիշ մարդկային ճակատագրի վրա բարերար ազդեցություն ունեցող մի քանի տարրերի պաշտամունքը: Թեև կրակի պաշտամունքը մազդեականության սկզբնավորության ժամանակ գոյություն ունեցավ, սակայն, ինչպես տեսանք նախապես այս պաշտամունքը շատ հին ժամանակներից է գալիս, բայց ոչ իբրև գլխավոր աստվածություն, այլ իբրև մեծ սրբություն, իբրև արեգակի երկրավոր ներկայացուցիչ: Շատ տարիներ հետո սասանական շրջանին է, որ կրակին վերագրված զորությունները բազմանալով աստվածացավ, որուն շուրջ գրվեցան բազմաթիվ աղոթքներ և ստեղծվեցան երկար ծեսեր և արարողություններ:

Քանի որ իմ գլխավոր նպատակս է կրակապաշտական տաճարների մասին կատարել հետազոտություններ և բաղդատություններ, հետևաբար հարկ կհամարեմ մի քիչ ավելի երկար և մանրամասն գրել ոչ միայն տաճարների և անոնց ձևերի մասին, այլ և այդ տաճարների մեջ կատարված արարողությանց և ծեսերու այն մասերի վրա, որոնք բավականին տաճարների ձևերը բնորոշելու հատկությունն ունին: Ուստի այս մասին աշխատությանս մեջ կրկին տեղ պիտի տամ սույն կրոնը ուսումնասիրող և հաստատուն եզրակացություններու հասնող գիտնական պատմաբաններու: Կարևոր մի հանգամանք է գիտենալու համար, թե Զրադաշտի երևնալը որչափ որ ավանդություններ կվերագրեն Բակտրիայի կամ Աքեմինյան առաջին ժամանակներին, սակայն գիտնականների ուսումնասիրությունները միմյանց հակասող եզրակացության են հասնում անոր երևնալու ժամանակի մասին: Գիտնականներից ոմանք միանգամայն առասպելական միայն կհամարին Զրադաշտը, ուրիշներ, որոնք հավատում են անոր գոյության, շատ հին ժամանակներու կտանին: Արդ, ինքս, որ պատմաբան կամ պատմագիր չեմ, հետևաբար ոչ մի սեփական կարծիք չեմ կարող ունենալ այս մասին, ուստի կքաղեմ հատվածներ հանրածանոթ գիտնականներից:

*
* *

Մեդացիների և պարսիկների կրոնը՝ իրենց իրապես և հաստատապես պատմության ասպարեզ իջնելու պահուն – Զորոաստրի կրոնն էր, սակայն ենթարկված մի կերպ բարեփոխության կամ մի տեսակ վերածնության: Այն Զորոաստրը, որ ապրում էր Վշտասպի, այսինքն՝ Դարեհի ժամանակ, որը բարձրացավ Կյուրոսի և Կամբիզի գահը և գլուխ եղավ պարսիկների Աքեմինյան ընտանիքի ճյուղ Բակտրիական տոհմի, վերահաստատեց մի կրոն Ասորեստանի այն մասի վրա, որ ձևակերպված և գործադրության մեջ էր ասորեստանյան պետության արիական տարրերի կողմից: Այս կրոնը կբաղկանար եգիպտացիներից փոխառյալ սկզբունքների մի խառնուրդ և սեմական երկասիրություններե: Զորոաստրի ծագումը Ատրոպատենից էր, ուր գոյություն ուներ Սպոտա կամ Ուրմիա մեծ լիճը, Վերին Մեդիայի գավառում: Այստեղ այս պաշտամունքը օտարականների հովանավորության ներքո ավելի անաղարտ պահված էր, քան թե դաշտային տեղերու մեջ: Այս կրակի պաշտամունքը շատ հին էր, ինչպես ասել ենք մեր ներածության մեջ, կվերաբերի Horma իմաստունին, որ ինք ևս աստվածացավ: Նա հույներից անվանվեցավ Omanos, որ ներկայացված է անմահացնող կենաց ծառով:

Բոլոր հեղինակներ համաձայն են այն կետի վրա, թե պարսիկներ աստվածներ ներկայացնող արձաններ չունեին: Պոզանիաս (աշխարհագիր II դարու) և Ստրաբոն (Տիբերիոս կայսեր (14–37) ժամանակակից) առաջինն են, որ աթաշկահի կամ կրակի սեղանի (autel) մասին կխոսին, ինչպես որ այսօր կտեսնվի աստվածուհին պետք էր որ մեհյաններ ունենային և թե կհաստատե, որ պարսիկներ, հետնագույն ժամանակների մեջ իրենց աստվածներուն մարդկային կերպարանքովը արձաններ են շինել. Օքյուսի որդի Արտաքսերքսես, պետք է որ առաջին անգամ մտցրած լինի այս պաշտամունքը, ինքը պետք է հրամայած լինի, որ Անահիտի արձանները շինվեին Բաբելոնի, Շուշի, Էկբատանի, Պերսեպոլսի, Բակտրիայի, Դամասի և Սարդայի մեջ: Այսօր տակավին կտեսնվին Դարեհի կանգնած հուշարձանների վրա Ասորեստանի նմանությամբ աստվածությունների խորհրդավոր պատկերներ և Ստրաբոն կհաստատե, թե Omanos (Horma) աստվածը և Անահիտ աստվածուհուն պետք էր որ մեհյաններ ունենային և թե Omanos-ի պատկերները կտարվեին զանազան հանդեսներու: Վերջապես, զարմանալի չէ, որ արևմտյան իրանցիները, շրջապատված կրոնական արձաններ գործածող ժողովուրդներով, կամաց-կամաց չազդվեին և մուտ չգտներ իրենց մեջ արձանների գործածությունը: (D. Ramée, Hist. generale de l'architecture, p. 346–349).

*
* *

Ապահովապես նվազ ծանոթ են Արևելքը կառավարողներ. դասական ժամանակի պատմագիրներ կարողացան միայն Պարսկաստանի նկատմամբ ընթացիկ ավանդությունները հավաքել, տիրապետողները ոչ մի հիշատակարան չեն թողած իրենց պատմության:

Կրոնը ավելի արևելքում հաստատված էր իր խոշոր գծերուն մեջ, երբ ժողովուրդը ապստամբեցավ Ասուրբանիպալի դեմ և այն ժամանակվան տիրապետողի կրած խոստովանող անունը ապացույց է, որ կրոնը գործածության մեջ էր արքայական ընտանիքի մեջ: Գրեթե չպիտի կարողանանք հասկանալ այն զանազան հեղաշրջումները, որ կատարվեց այս կրոնը իր ամենահին ձևը ստանալեն առաջ, որոնք սուրբ գրքերը պահեր են մեզ: Ըստ ոմանց մագդեականությունը ծագում առավ Aryanêm Vâedo-ի մեջ, ըստ այլոց միայն Մեդիայի մեջ ծագում առավ՝ իրանական գաղթականության գրեթե վերջին ժամանակներուն մեջ:[1] Հուսկ հետո, ինչ որ դարերու գործ էր վերագրեցին միայն մի մարդու ազդեցության, ազգային ավանդությունները, ճշմարիտ կրոնը հաստատած լինելու պատիվը վերագրեցին Զրադաշտ (Զորոաստր) մարգարեին: Գրեթե դասական ժամանակների բոլոր գրողներ համաձայն են այս անձնավորությունը առասպելական հնագույն ժամանակի մեջ դնել: Հեռմիպպոս և Էուդոքս կպնդեն թե, նա կծաղկեր Ալեքսանդրից վեց կամ յոթը հազար տարի առաջ, բայց Պլինիոս կըսեր, թե հազար տարի առաջ էր քան Մովսես և Լյուդացի Քսանթաս կհաստատե, որ իր մահվանեն վեց հարյուր տարի էր անցել,[2] երբ Քսերքսես արշավեց Աթենքի վրա: Ըստ ամենահին ավանդության նա ծնած էր Ռաքայի մեջ Մեդիայում կամ Ատրպատականի մեջ և կապրեր իրանական ցեղի առաջին դարուն, այն ժամանակներում, որ ժողովուրդը տակավին ընակած էր Բակտրիայի մեջ: Նա արքայական սերունդից էր և նախքան իր ծնունդը աստծուց ընտրված էր աշխարհը բարեկարգելու համար: Իր մանկությունը և երիտասարդությունը մշտական պայքար եղավ հանդեպ դևերու, միշտ հարձակող եղավ, միշտ հաղթող էր և ամեն մի փորձությունից ավելի կատարյալ դուրս կգար: Երբ երեսուն տարեկան եղավ գերագույն ոգի Վոհումանո երևցավ անոր և առաջնորդեց Ահուրամազդայի ներկայության: Աստված հարցաքննության հրավիրելով հարցուց անոր. «ո՞րոնք են երկրի վրա լավագույն արարածները», նա պատասխանեց, որ. «մարդկանց մեջ այն է լավագույնը, որուն սիրտը մաքուր է»: Հետո ուզեց գիտնալ յուրաքանչյուր հրեշտակի անունն ու պաշտոնը, բնույթը և վերագրումները, վատ սկզբունքները: Ահուրամազդան անցավ բոցեղեն լերան վրայեն, թույլ տվավ բանալ իր մարմինը և սրտին մեջ հալած մետաղ լեցնել տալ, առանց որևէ վնաս կրելու: Այս բաներե հետո, աստծու ձեռքից ընդունեց Ավեստան՝ օրինաց գիրքը և վերստին ղրկվեց երկրի վրա: Aourvatâçpa որդի Վիշտասպի մոտ, որ կթագավորեր այն ժամանակ Բակտրիայի վրա և ապարեզ կարդաց պալատի գիտնականներուն: Երեք օր երեսուն հոգի աջ կողմեն, երեսուն հոգի ձախ կողմեն փորձեցին վիճել և մոլորեցնել, երբ որ վիճողները խոստովանեցին իրենց պարտվիլը, այն ժամանակ հայտարարվեց, որ ինքը կուգար աստուծո կողմեն և սկսեց կարդալ Ավեստան վեհապետներու առջև: Իմաստուններից հալածվելով և իբրև խաբեբա և անբարիշտ ամբաստանվելով, անոնց հաղթեց պերճախոսությամբ իր հրաշքներով: Վիշտասպը՝ իր կինը և զավակը հավատացին անոր և ժողովուրդյան մեծ մասը հետևեցին անոնց օրինակին: Ավանդությունը նաև կավելացնե թե տակավին երկար ապրեցավ ամենից մեծարված իր առաջնորդության սրբության պատճառով: Ըստ ոմանց կայծակնահար մեռավ, ըստ ուրիշների Balkh-ի (Բակտրիա) մեջ թուրանյան մի զինվորի ձեռքով խողխողվեց: Հաճախ խնդիր եղած է, որ նա մի պատմական անձնավորություն է, թե՞ մի դիցաբանական հերոս, այսպիսի մի հարց որոշ կերպով չի կարելի վճռել, բայց կարելի է ապահով լինել որ, եթե իսկապես ապրեցավ, սակայն իր անունից ջոկ անկեց ոչինչ չհասավ մեզ:

Սկզբում, Իրանի գլխավոր աստվածը երկինքի ամբողջական բոլորակն էր, աստվածներից ամենեն զորավորը, որովհետև նա «հագած ուներ երկնքի հաստատուն կամարը», ավելի գեղեցիկը, ավելի իմացականը, որուն անդամները ունին ամենեն ավելի ներդաշնակ համաչափություն, իր մարմինը լույսն է, «Գերագույն և անսահման» արեգակը և լուսինը իր աչքերն են: Հետո առանց կորցնելու իր նախնական հատկանիշը, հետզհետե փոխվեցավ վերացականի և գրեթե ամբողջովին հեռացավ նյութականից: Սկզբում, Ահուրամազդան ներկայացնելու համար փոխ առին Ասսուրի խորհրդանշանը և արձանագործները թևավոր բոլորակի կամ պսակի մեջեն դուրս եկող մի կիսամարմին ցույց տվին, ինչպես հարթաքանդակ կդրոշմվեր Նինվեի հուշարձաններու ճակատին. հետագային երևակայեցին պատկառելի հասակով մի թագավոր, որ կհայտնվեր երբեմն Իրանի գերիշխաններուն: Ահուրամազդա անունը կուտային անոր ամենագետ, բարության ոգի, գերազանցորեն իմաստուն, «լուսավորը, շողշողունը, ամենամեծը, ամենաբարին, ամենակատարյալը, ամենաիմաստունը և ամենագեղեցիկը»: Ինք անստեղծ է, բայց ստեղծել է ամեն ինչ, իր գործերի վարչության մեջ, ներկա է իրեն ենթարկված էությունները լեգեոնով: Իր աջակիցների կարողագույնները վեց հատ գերագույն ոգիներ են, որոնք Ameshaçpentas (Amchaspands) «բարեգործ անմահներ» կկոչվեին: Սկզբից բնության աստվածներն էին արեգակը, լուսինը, երկիրը, քամիները և ջրերը, բայց հետո անոնց նվազ նյութական պաշտոններ վերագրվեցին, անոնցմե ընտրվեցին vâhaumano «բարի ոգին» Ashavaista «ամենամաքուրը» khshathravairya «ցանկալի թագավորություն» Çpenta ârmaïli «կատարյալ իմաստությունը», Haourvatât առողջությունը, Ameretât «անմահությունը»: Իրենց տիրոջ նման լուսավոր այս յոթը միասին ունին միևնույն մտածությունը, միևնույն խոսքը, միևնույն գործը, միևնույն հայրը, միևնույն տերը, այլ սակայն անոնցմե յուրաքանչյուրը իրեն հատուկ տիրապետության սահմանն ուներ, որով ինքը կզբաղվեր, առանց օտար հսկողության: Բարի ոգին կհսկեր տաճարներու վրա, ամենամաքուրը կհսկեր կրակի վրա, ցանկալի թագավորությունը՝ մետաղների վրա, կատարյալ իմաստությունը՝ երկրի (հողերի) վրա, առողջությունը և անմահությունը բույսերի և օդի վրա: Ասոնցմե զատ, տիեզերքի մեջ տարածված են հազարավոր Yazatas (Yzeds)-ներ, որ կհսկեն տիեզերքի մասերի և կազմվածքի պահպանության վրա: Աստվածային լույսի ոգին Միթրան կհսկե գեղեցիկ արոտավայրերուն, արթուն Միթրան երկնային Yazatas-ներին. առաջինը, արագաթռիչ հեծյալ անմահ արեգակից առաջ, ոսկեղենիկ պերճությամբ, առաջինը կլանա Հերա լեռան գլուխը, առաջինը կբռնե գեղեցիկ գագաթները, և իր բարերար հայացքը կխոնարհեցնե արիացիներու բնակարաններու վրա:*

Ահուրամազդան և իր ընկերները ոչ տաճարներ ունեին և ոչ խորաններ, թեպետ երբեմն մարդու և կենդանիի նմանությամբ պատկերներ ձևակերպեցին հարթաքանդակներու մեջ, բայց ոչ ոք չէր կարող համարձակել նույն կենդանական և մարգարեական պատկերները շինել իրենց սրբարաններու մեջ, որոնց մեծարում էին ասորեստանցիներ և եգիպտացիներ: Սակայն բլուրներու բարձունքին պալատներու մեջ, քաղաքներու կեդրոնին վրա, ատրուշան, այսինքն պատսպարան կկանգնեին, ուր ի պատիվ անոնց՝ կրակը կվառվեր և չէր մարվեր դարե ի դար: Այն ատրուշանները առհասարակ զույգ զույգ կշինվեին, և այսպես է, որ կհանդիպենք զանազան կողմերու ավերակների մեջ, ինչպես Նաքշի Ռոստեմի մեջ: Ատրուշանները խորանարդ ձև ունին և կնմանին կցված աշտարակներու չորս անկյուններու վրա, կիսաբոլորակ աղեղներով պսակված սյուներով, եռանկյունի ատամնաշարերով շրջապատված է վերևից և տանիքի վրա խարույկը դրվելու հատուկ տեղը թեթևակի փորված է:

Զոհի արարողությունը երկարատև էր և կբարդանար ձեռնավորությամբ (manipulation) ու ծիսակատարության հատուկ դյուրական անվերջ երգեցողություններով, ուր որ կային մշտավառ կրակ պահելու համար չսահմանված ատրուշաններ, այնտեղ կրակը կվառեին նախապես կեղևը հանված և մաքրագործված ճյուղերով (ճիպոտ), հետո կպահեին ընտիր տեսակի փայտերի հետ, նախապատվություն էին տալիս նոճին և սարդենին: Բայց զգուշանում էին կրակը ուժեղացնելու համար բերանով փչելե, մարդկային շունչը սրբապղծում էր կրակը և ով որ կամավորապես այս ծանր հանցանքը կգործեր՝ մահվամբ կպատժվեր: Սովորական նվերները կբաղկանային հացե, պտուղներե, անուշահոտություններե, ծաղիկներե, բայց երբ առիթը պահանջում էր մի արյունալի զոհաբերություն, նախապատիվ համարված զոհը ձին էր, հետո եզը, կովը, ոչխարը, ուղտը, էշը և եղջերուն: Երբ մեկը կցանկանար մեռյալներու աստծուն շնորհը ստանալ, մի մարդ կզոհեր: Ահուրամազդայի երկրային ներկայացուցիչ թագավորը երգեցողական արարողություններու կմասնակցեր, եթե ինք բարեհաճեր, բայց բացի իրենից, ոչ ոքի ներելի չէր ազատ համարվել մոգերի միջնորդությունից: Հավատացյալները թափորով կերթային ծիսակատարության հատկացյալ տեղը, ուր կղերը (քահանան) խույրը գլխին դրած կոգեկոչեր ցած ու խորհրդավոր ձայնով, թագավորին և ազգին համար երկնային օրհնությունը խնդրելով: Հետո զոհը կսպաներ գլխին մի հարված տալով, մաս մաս կկտրտեր և կբաժաներ ներկա եղողներուն, առանց մի մաս թողելու, մի քանի պարագաներու մեջ, զոհը ամբողջովին կայրվեր, բայց հաճախ մի կտոր ճարպից և փորո-

---

[1] G. Maspero, Hist. Ancienne des peuples de l'Orient, p. 609.

[2] Սեպագրության մեջ՝ քսան տարի է գրված փոխանակ վեց հարյուրի:

Կազմող

* Masp., Hist. ancienne des peuples de l'Orient, Paris, 1909, p. 609–613.

տիքներից կՀգեին կրակի վրա, զոհարարը խույրից կախված ժապավեններով բերանը կծածկեր, իր շնչի կրակին հպելը արգիլելու համար, ձեռքը կբռներ մոշենի ճյուղերու փոքր խուրձը բարեսման և կպատրաստեր հաոմա-ի խորհրդավոր ըմպելիքը: (Maspero, Hist. ancienne des peuples de l'Orient, p. 620–622).

Հին պարսիկները քաղդեացիներու կրոնքը եղող աստղերու պաշտաման հետ կմիացնեին կրակի պաշտամունքը, որ կշարունակվի այսօր գեպրների մոտ: Քաղդեայի և Ասորեստանի աստղերու պաշտաման նվիրված հարկավոր աշտարակներու նման մի հազվագյուտ օրինակներեն մեկն է Ճսուրի սասանական աշտարակը:

Աքեմինյան շրջանի կրոնական ճարտարապետութենեն մինչև մեր օրերը հասած մնացողները, Պերսեպոլիսի քարաժայռերի գագաթին քանդակված բագիններն և կրակի սրբարանները, որոնց երկար ժամանակ կասկածելի մնացած գոյությունը լիովին լուսաբանեց M. Dieulafoy: Այնտեղ որոշ կտեսնվի վառարանը պարունակող մի cella, որ կրկնակի մի պարիսպով կպաշտպանվի ամեն տեսակ սրբապղծություններե, և այս հատակագիծը պետք է, որ ընդօրինակված լիներ հույների բնակարանների մեջ հոմերական դարերեն, ուր վառարանը կպահեր մի նվիրական սրբություն: Շիրիմներ: Շիրիմը եթե Քաղդեայի մեջ ջնջված և ոչ մի հետք չէ թողած, Ասորեստանի մեջ կվերստանա իր մեծ կարևորությունը և ինչպես Եգիպտոսի մեջ, երկրային բնակարանի ձևը կներկայացնե, և աղոտ նմանությամբ կօգնե մեզ վերականգնել ձևերը:

Պարսկական կրոնը, դամբարաններից անկախ, մարդկային մնացորդները զետեղելու համար մի տեղի կարիք կզգա, գեպրերի Դախման է այս տեղը:

*
* *

1754 թվականին[2] Անքթել անունով մի ֆրանսացի գիտնական ղրկվեցավ Հնդկաստան, որը երկար ժամանակ մնալով այնտեղ և բարեկամանալով Հնդկաստանի մոգերուն հետ ծանոթացավ այժմյան կրակապաշտներու ձեռքում եղած Ավեստայի և անոր վարդապետություններուն հետ, նաև ծանոթացավ անոնց կրակապաշտական տաճարներու և կրոնական արարողության հետ: (Ի նկատի ունենալ Հնդկական կրակապաշտության ազդեցությունը գեպրներու վրա և Աթաշկահի մասամբ հնդկական ձևի վերածվելը):

Բայց նախքան Անքթելի ուսումնասիրության վրա խոսելը, կարևոր եմ համարում մեջ բերել Բաքուի Սուրախանի ըսված մասի վրա՝ ներկայիս գոյություն ունեցող կրակապաշտական ատրուշանը, որ ըստ նմանության շատ է հիշեցնում Dieulafoy-ի զույգ ատրուշաններու ձևերը, թեև այս վերջինը զույգ չէ:

Բաքուի մոտ, Սուրախանի ըսված արվարձանին մեջ, մինչև այսօր գոյություն ունի մի լքյալ ատրուշան, որը վկա է երբեմն, նույնիսկ քիչ ժամանակ առաջ, Բաքուի և շրջակայքի մեջ մի կրակապաշտ ժողովուրդի գոյության, որը այժմ անհետացեր է:

Թե ի՞նչ ձևով այնտեղ կրոնական պաշտամունքներ կկատարվեն, այդ մասին տեղեկություններ խիստ հատուկտոր են, որոնք իր կարգին կքաղեմ գրական աղբյուրներե: Իսկ գալով անոր ձևին, քիչ կտարբերվի հին աքեմինյան շրջանից մնացած Պարսկաստանում Նաքշե Ռուստեմի մեջ Dieulafoy-ի հայտնաբերած զույգ ատրուշաններեն:

Պարսկաստանի ատրուշանները, որոնց մասին խոսեցի վերևում, ունին երկու կամ երեք զանազանություններ, որոնց մեկը՝ վոամական կրակի մշտավառ ատրուշանը, ինչպես Նաքշե Ռուստեմինը, խորանարդ էին և քարակտուր՝ քաղաքներե հեռու ժայռերի և բլուրների վրա. ներքին չունեին անոնք, արտաքուստ միայն կերևին ճակատի անկյուններու վրա աղեղնակապ որմասյուներ, իսկ կատարը վերջացած ատամնաշարերով: Սույն խորանարդի վերևի մասին, այսինքն տանիքին վրա կվառվեր վոամական մշտաբորբոք կրակը, կրակի քուրմերու ձեռքով, և շուրջը բացօթյա կկատարվեր կրոնական պաշտամունքը, զոհաբերություն, ևն ևն բազմամբոխ հավատացյալներու ներկայության:

Բաքուի ատրուշանը, ընդհանուր տեսքով, մեծ զանազանություն չունի աքիմենյան ատրուշաններեն: Բաքուի մեջ տարբերությունը այն է, որ ի հնումն սովորական եղող խորանարդի տեղ շինված է չորս սյուներու վրա կամարակապ և գմբեթավոր փոքրիկ մի շինություն, ըստ երևույթին նույն չափով ինչ չափով որ էր Նաքշե Ռուստեմի ատրուշանը: Մեջը դատարկ և վրան գմբեթավոր: Մինչի դատարկությունը, անշուշտ արդյունք է երկար դարերե հետո, ծիսական ձևերի փոփոխության, և անշուշտ ազդեցություն է հնդկական կրակապաշտական ազդեցության, որուն մասին քիչ հետո պիտի խոսիմ, իսկ վրայի գմբեթը նույնպես ճարտարապետական մի ժամանակակից ազդեցության արդյունք է, որ փոխարիներ է Նաքշե Ռուստեմի երդիկին կամ տանիքին: Նաքշե Ռուստեմի մեջ ատրուշանի վրա հարթ երդիկ լինելու անհրաժեշտություն կար, որովհետև այդ երդիկին վրա աթաշկահը պիտի դրվեր և բորբոքվեր մշտավառ կրակը և բոցերը բարձրանալով տեսանելի պիտի լիներ շուրջը հավաքվող հավատացյալ ժողովուրդի բազմության: Բաքուի ատրուշանին վրա առանձին աթաշկահ դնելու կարիք չկար, անոր կրակը առաջ կուգար գետնի տակի նավթային, գազերու բռնկումից, որը անցնելով չորս անկյուններու մեջ դրված խողովակներեն բոցերը կբարձրանային օդի մեջ թերևս մի քանի կանգուն, հետևաբար, ատրուշանի շենքին ավելի ճարտարապետական վայելչություն պիտի տար խորանարդի գմբեթը:

Գմբեթի տակ խորանարդաձև շենքի մեջը անպայման հատուկ էր մոգերուն և մոգպետներուն, իսկ ժողովրդյան համար անմատչելի, իսկ հավատացյալ ժողովուրդը հեռվից պիտի տեսներ մշտաբորբոք բոցավառումները բոլորված ատրուշանին շուրջը որոշ հեռավորության վրա: Երևի այս նպատակով է որ թողված է Սուրախանիի մեջ մի ընդարձակ բակ ատրուշանի շուրջը և հեռվից շրջապատված շենքերով, որոնք վանական տպավորություն են թողնում, ունին իրենց մեջ ոչ միայն բազմաթիվ բնակության հատուկ սենյակներ, որոնց մտից դռներուն վրա արապերեն և մասնավորապես հնդկերեն արձանագրություններ կան, այլ և ծիսական արարողություններու և կարգերու հարմարեցված բաժանումներ: Ըստ ավանդության, հին ժամանակ այստեղ նստում էր կրակապաշտից մեծ մոգպետը (ըստ Շարդենի), այլև կատարում էին զոհի արարողություններ, ճգնություններ, ապաշխարություններ և այլ ծիսակատարություններ:

Առանձնապես ուսումնասիրության կարոտ է այս ընդարձակ շենքը իր բոլոր մանրամասնություններով, նախ մատչելի դարձնել ուսումնասերների և բանասերների գտնված արձանագրության բովանդակությունը, որոնք թերևս պիտի օգնեն իմանալու թե, ո՞ր մասի մեջ կհավաքվեր ժողովուրդը ծիսական պաշտաման ժամանակ, որ մասն էր զոհարանը և կամ ինչ ձևով կբաժանվեր հավատացյալ ժողովուրդը ատրուշանից, սրբություն սրբոցից ըստ նույն դավանության՝ պղծություններից ազատ պահելու համար:

Որովհետև, ըստ ճանապարհորդական և գրական տեղեկություններու, այս ատրուշանը վերանորոգել են Հնդկաստանից եկող ուխտավորներ վաճառական կամ կրոնական, հետևաբար հավանական էր, որ օգնե Հնդկաստան, հատկապես կրակապաշտական սովորությունները և պարսկական հին լեզուն ուսումնասիրելու համար ճանապարհորդող Անքթելի նկարագրությունները այս մասին և անոր տված բացատրությունները, որովհետև այստեղ ոչ ժողովրդյան մասը (որ անշուշտ շենքերով շրջապատված ընդարձակ բակին մեջ էր), ոչ զոհի սեղանին տեղը և ոչ ուրիշ պաշտաման հատուկ առանձին տեղերը հայտնի են:

Ինձ համար անհնար էր այստեղ Անքթելի հեղինակությունը գտնել, ուստի ես առայժմ պիտի բավականանամ Փ. Միքայել փաշայի Եղիշեի քննադատության առաջաբանին մեջ առաջ բերած քաղվածքներեն և վկայություններեն. թեև անհամեմատ կարևոր էր և օգտակար կլիներ բուն իսկ հեղինակի գործը կարդալ մանրամասնությամբ:

Ըստ Փորթուքալ Միքայել փաշայի «1754-ին Անքթել Տյուբերոն անուն գաղղիացին ի Հնդիկս երթալով, և ետ բազում դժուարությեանց մտերմանալով Տեոթուր Տարապ անուն մովպետի հետ, ստկի ուժով ձեռք ձգեց սրբազան մատենից զանազան օրինակներ, զորս բերանացի կթարգմաներ նմա Տարապ և նա ի գիր առնույր և բազում դարերե հետո վերադառնալով ի Գաղղիա կհրատարակեր (1771-ին)»: (Քննադատություն Եղիշեի Փ. Մ. փաշայի, էջ 88):

«Մ ե հ յ ա ն մ ա զ դ ե զ յ ա ն ց. Շատ հին ժամանակաց մեջ պարսիկք (այսպես կսկսի Փ. Մ. փաշա կրակապաշտական ատրուշանների մասին խոսելիս) իրենց ատրուշանները լերանց գագաթան վրա կկանգնեին տերբկոք: Տակավ առ տակավ կոփածո և մնայուն ատրուշանք սովորական եղան, հետո զնոսա հարկածածուկ շենքերով փակեցին, որպես պատմե մեզ Ստրապոն: Անցյալ դարուն մեջ Անքթելի տեսածներն ալ ի Կյուճերաթ գմբեթահարկ էին»:

«Մազդեական մեհենը երեք գլխավոր մասունս ունի, միջավայրն ընդարձակ գավիթ մի է՝ ուր կկենան հասարակ հաւատացյալք հանդեսի ատեն. սորա ձախակողմն է կրակատունն (աթաշկահ) և աջ կողմն հաշտից տեղին (իզեշնեխանե): Աթաշկահին մեջ է սրբազան կրակի ատրուշանն կամ բագինը և անոր վերաբերյալ սպասքն: Ատրուշանը երեք ոտնաչափ բարձրությամբ կճյա անոթ մի է՝ մոխրով լցյալ, և հաստատյալ քառակուսի և կես ոտնաչափ թանձրությամբ խարիսխի մը վերա զոր ատոշդ կկոչեն: Ատրուշանին քովը կգտնվի մովպետին կճյա բազմարանը և հանկյունս կրակատան դարաններ՝ որս կպահեն զփայտ և զծխանելիս:

[1] Ձեռագիրն այստեղ ընդհատվում է:

Կազմող

[2] Այս մասը մեջ ենք բերում նույն նյութին վերաբերող մի այլ սեագիր ձեռագրից՝ իբրև շարունակություն նախորդ հոդվածի:

Կազմող

Աթաշկահը վռամական կրակն ունի՝ եթե մեհյանը անոր նվիրյալն է, և կամ զկրակն ատարան, եթե սովորական կրակատուն է: Անդ միմիայն քահանայից ներելի է մտնել և այն ալ ետ թողլո ի դուրս զկոշիկս և զկրկնոցս: Հասարակ ժողովուրդը վանդակյա դռներու կրնկեն միայն կրնա դիտել անոր ներքնակողմը: Երկու կամ երեք մոգք գիշեր ցերեկ կպահեն զկրակն: Օրվան յուրաքանչյուր պահուն (կահ) նոր փայտ կհավելուն՝ աղոթս առնելով, ու այդ գործողության ատեն պարտ են զդեմս ծածկել փանդամավ և զձեռս տասդամոք: Իզեշնեխանեին կամ զոհարանին մեջ կըլլան պատարագք և զոհություն: Սա երկայն քառակուսի սալահատակ սրահ մը է, որ փոքրիկ ջրանցյուք կբաժանի ի զանազան մասունս, որք արվիս կհորջորջին: Որքան արվիս ըլլա իզեշնեխանե՝ այնքան կրակաքուրմք կրնան զատ զատ պատարագ մատուցանել միանդամայն: Յուրաքանչյուր արվիսո աջակողմն է նստարան մը զոհարար մոգին հատուկ. վիմատաշ սեղան մի՝ արվիս՝ որո վրա կը դնեն զսպասս զոհից և զգործիս, և քարե պատվանդան մը կկրե զԱվանտ՝ այս է սրբվելու ջրո կոնքը: Ի ձախակողմն, ատրուշան մի փոքրիկ՝ հաշտից սեփականացյալ, որ աթաշկահին կրակը կը ներկայացնե՝ առանց անոր հավասարազոր ըլլալու, և զոհագործության առթիվ միայն կվառի: Առընթեր սմա՝ զոհարար մոգին և անոր սպասավորին համար մեկ մեկ նստարան, և այլ վեմք՝ որոնց վրա կդրվին պահեստի չերտերն և կնդրուկ:

Աչխարհիկ փարսիները՝ եթե ազատ են ի պղծութենե կրնան մտնել իզեշնեխանե ի ժամ հաշտից: Եթե գիտությամբ նվիրագործող քահանային պիղծ ոք ներկա կգտնվի, պաշտամունքն ոչինչ կըլլան և հարկ է վերստին սկսանել»: (Փորթուգալ Միքայել փաշա. Քննադատություն Եղիշեի, էջ 164–166, Վենետիկ, 1903 թիվ):

Հնդկաստանում Կյուճերաթի մեջ Անքթելի տեսած կրակատան նկարագրությունը բավական մանրամասն է, և որոշ չափով պատկերանում է մեր առջև անոր ձևը. մասնավորապես կատարված արարողություններու կարգերը լրացնում են տաճարի ձևի մասին նկարագրության պակասները:

Թեև Հնդկաստանի ատրուշաններու չափերի մասին մի տեղեկություն չկա, սակայն, արարողության ձևերեն պարզապես կարելի է հետևցնել որ, Կյուճերաթի զմբեթահարկ կամ հարկածածուկ աթաշկահները մեծ չինություններ չէին: Ինչպես կերևի, պարզ հավասարակողմ կամ երկար քառակուսի ձևով շենքեր էին, որոնց մեջտեղը դրված էր կրակի խարույկը կամ ատրուշանը. ատրուշանին քով դրված էր մովպետին բազմոցը, անկյուններում չինված էին դարաններ՝ որոնց մեջ կպահվեին մշտավառ կրակի համար ընտրված փայտեր և ուրիշ արարողության հատուկ սպասներ: Բարեբախտաբար այստեղ մասնավորապես շեշտված է որ, սույն աթաշկահին մեջ միայն քահանայից ներելի էր մտնել (ինչպես եբրայական խորանին սրբություն սրբոցին մեջ), իսկ հասարակ ժողովուրդը աթաշկահին մեջ կատարված արարողությունը պիտի տեսներ վանդակապատ դռներու հետևեն: Այս պարագան ևս ապացույց է որ, իսկական վռամական կրակի աթաշկահը կամ զմբեթահարկ շենքը փոքր շենք էր և հավատացյալ ժողովուրդը, այս սրբություն սրբոցից որոշ չափով հեռու բաց գավթի մեջ մնալով պիտի տեսներ արարողությունը՝ սրբություն սրբոցը ժողովրդից առանձնացնող ոևէ վանդակապատի հետևից: Այս աթաշկահի մեջ, սրբազան կրակը ինչպե՞ս կվառեին, այս մասին ոչինչ չէ գրված, սակայն պարզ է որ, շենքի կամ սենյակի մի մասում դրված կլիներ վառարանը և այն տեղին կրակը կբերվեր մովպետին կողքը դրված ատրուշանին վրա:

Աթենքի նկարագրությունից նույնպես կտեսնվի, որ զոհարանը (իզեշնեխանե) բոլորովին անկախ էր աթաշկահից և կգտնվեր գավթի աջ կողմը (որ նմանապես աթաշկահի ևս աջ կողմը կլինի) առանձին մուտքով: Այս շենքին ձևը ավելի որոշ նկարագրված է որ, երկար քառակուսի սրահ մը է, գետինը սալահատակած և զանազան ջրանցքներով բաժանված է զանազան մասերու, որոնք արվիս կկոչվին. յուրաքանչյուր արվիսներով բաժանված մասերու վրա առանձին զոհաբերություններ կարելի է կատարել և յուրաքանչյուր արվիսի աջ կողմին դրված է զոհարար մոգի հատուկ նստարանը, նաև մի սեղան զոհի հատուկ, որու վրա դրված են զոհաբերության հատուկ սպասները: Ձախակողմն մի փոքրիկ ատրուշան որուն մեջ վառված կրակը՝ նվազ սրբազան է քան վռամական կրակը, որ կվառվի իսկական ծածկութավոր շենքին մեջ և մշտավառ է: Այս ատրուշանին մոտ կգտնվին զոհարար մոգին և անոր սպասավորին համար նստարաններ: Այս հարկի մեջ, նմանապես անթույլատրելի է մտնել հասարակ ժողովրդին. ներելի է համարվում մտնել այն հավատացյալներուն համար, որոնց պղծություններից ազատ լինելը ապահովված է: (Այս օրենքը շատ նման է քրիստոնեության մեջ գործադրված այն օրենքին, որ ապաշխարության ենթարկված մեղավորին ներելի չէր պատարագի արարողություն տեսնել):

(Զվարթնոցի արտաքին աստիճաններու ընդհատման պատճառը գտնել խնդիրի առարկա եղող բաժանման մոտ. առաջ էր չինված թե հետո):

Այսքան մանրամասնությունը բավական է մեզ, Բաքուի, Սուրխանի արվարձանին մեջ գտնված կրակի պաշտաման տաճարը, Կյուճերաթի կրակի պաշտման տաճարներու հետ համեմատության դնելու համար:

Հնդկաստանի կրակի մեհյաններու նման, Սուրխանիի աթաշկահը ևս ընդարձակ գավթի մեջ կգտնվի և գավթի աջ կողմը զմբեթահարկ աթաշկահը: Այս շենքը փոքր քառակուսի է չորս անկյուններու վրա դրված չորս ամուր սյուներ կկրեն տանիքը և զմբեթը. չորս սյունամեջերը բոլորովին բաց են և սյուները սրակամար աղեղներով կապված են միմյանց՝ գրեթե շենքի բարձրության հավասար: Սակայն Կյուճերաթի աթաշկահներու համար նկարագրված կահավորումը միանգամայն բացակայելեն զատ, հայտնի ևս չէ թե ի՞նչ ձևով կկահավորվեր և ի՞նչ դիրքով անոր մեջ տեղ կբռնեին մովպետը և մյուս մոգերը: (Ինչպես երևում է Հնդկաստանի մեջ կրակապաշտական հին ձևերը ինկեր են հնդկական կրոնի ազդեցության տակ և որոշ փոփոխություններ եղել են տաճարներու ձևին մեջ, իսկ Բաքվում երևում է որ գրեթե անփոփոխ մնացած է):

Սակայն այս կահավորման բացակայությունը և կղերականաց պաշտաման ժամանակ դիրքի անորոշությունը երկու գլխավոր պատճառներ ունի: Նախ որ վաղուց լքված մի աթաշկահ է և թերևս ավելի քան հարյուր տարիե ի վեր կրակապաշտներ գոյություն չունին Բաքուի և շրջակայից մեջ, հետևաբար ոչ մի արարողություն չի կատարվում այնտեղ, և ընդհանուր շենքը գործածվում էր բոլորովին այլ նպատակի համար, հետևաբար շատ բնական է որ այնտեղ կրոնական նշանակություն ունեցող շարժական կամ անշարժ կարասի կամ սպասներ չէին կարող գտնվել: Երկրորդ. ինչ կվերաբերի փայտի պահարաններուն, որոնք գոյություն ունին Կյուճերաթի աթաշկահներու մեջ, այս աթաշկահին մեջ արդեն կարիք չկար, որովհետև այստեղ վառվող կրակը փայտի կրակ չէր, այլ գետնի տակից նավթային գազի արտաշնչության բռնկումն էր, որ չորս անկյունի, չորս հատ սյուներու մեջ դրված խողովակներու միջոցով կբարձրանար շենքի կտուրը, և կբոցավառվեր շենքի չորս անկյուններու վերա թերևս զմբեթեն ալ բարձր և ամեն տեղից տեսանելի: Նույնիսկ կարելի է որ մովպետի կողքը դրված աթաշկահը ևս, ինչպես տեսանք Կյուճերաթի աթաշկահին իրեն մեջ, այստեղ հավանորեն դարձյալ գազային կրակով կվառվեր:

Գալով աթաշկահի աջակողմին վրա Հնդկաստանում երևցած իզեշնեխանեին կամ երկար քառակուսի ձևով զոհարան-սրահին, այստեղ իբր առանձին շենք գոյություն չունի. եթե ուներ իսկ, ժամանակի ընթացքում անհայտացել է՝ գուցե մարդկանց ձեռքով, սակայն աթաշկահի գտնված տեղի ընդարձակ գավիթի շուրջը ամբողջովին շրջապատված է շենքերով, որոնք վանական մի հաստատության տպավորություն են թողնում. բնակության հատուկ բազմաթիվ սենյակներ կան այդ շենքի մեջ՝ զանազան չափերով և ձևերով, և առհասարակ այս սենյակներու դռներուն վերևը քառակուսի սրբատաշ քարերու վրա փորագրված արաբերեն և հնդկերեն արձանագրություններ կան: Այս արձանագրություններեն, դժբախտաբար ես օգտվելու հնարավորություն չունիմ. նախ այն պատճառով որ ինքս չունիմ և չեմ գտած այդ արձանագրություններու լուսանկար կամ ձեռագիր օրինակները. երկրորդ՝ չեմ տեսած ոևէ աղբյուրի մեջ այդ արձանագրությունները ընդօրինակված կամ թարգմանված: Կկարծեմ որ այդ արձանագրություններու բովանդակությունը, որոշ չափով բացատրություններ կպարունակեին շենքի նպատակի, տեղի պաշտաման և ծիսական արարողություններու մասին: Թերևս ապագային մեջ հմուտ գիտնականներ ընդհանուրի սեփականություն դարձնեն այդ արձանագրություններու բովանդակությունը: Այս սենյակներուն մեջ կան այնպիսի սրահներ, որոնք ըստ երևույթին, պարզ հայտնի է, որ բնակության հատուկ չեն, այլ ոևէ ծիսակատարության հատկացված են, որովհետև ունեն մեջը այնպիսի հարամասունքներ, որոնք ցույց կուտան կրոնական ոևէ արարողության համար շինված:

Այս երկար քառակուսի սրահներեն մեկը որ ամենեն ավելի հավանականություն ցույց կուտա, ծիսակատարության հատուկ լինելու, թեև աթաշկահի հետ անմիջապես մի գծի վրա չէ, այնուամենայնիվ գավիթի աջակողմն է (գավթի ձախ կողմին վրա դեպի կենտրոն կգտնվի կրակի տաճարը կամ աթաշկահը), եթե գավիթ մտնենք և դեպի կենտրոն գնալով երեսնիս դարձնենք, գավիթին ձախ կողմին վրա կտեսնենք աթաշկահը, իսկ առանձին ձախակողմը շրջապատող շենքերու մեջ այն սրահը, որ գտնված սենյակներուն մեջ բոլորովին տարբեր ձևով է շինված և պարզ հայտնի է բնակության համար չլինելը:

Հայտնի բան է, որ այս մեծ կրակատունը, որ ըստ Շարդենի տված բանավոր տեղեկության, մովպետյան մովպետը անպայման պետք էր որ ունենար նաև իր զոհարանը, սակայն կարող էր պատահել որ անպայման պարտավորիչ չէր անմիջապես աթաշկահին ձախ կողմը՝ մի գծի վրա իզեշնեխանե շինելը Պարսկաստանում կամ Բաքվի շրջանում:

Նույնպես կարող է պատահել, որ Հնդկաստանում ևս գտնվին աթաշկահի այլ կողմերուն վրա շինված իզեշնեխանեներ, այս մասին իմ ստացած տեղեկությունները բավարար չեն: Համենայն դեպս պետք է ի նկատի ունենալ որ, քանի որ այս տաճարի գոյությունը Սասանյաններու, նույնիսկ Աքիմենյաններու ժամանակեն լինելու կարծիքներ կան. (J. de Morgan) նաև անուրանալի է, որ այժմյան շենքը հին, բազմադարյան տաճարը չէ, անշուշտ ի հնումն գոյություն ունեցող մի տաճարի տեղում վերաշինված է մոտ ժամանակ, հետևաբար կարող են դարե ի դար ավանդությունները փոխված լինին որոշ ազդեցություններու տակ և տեղափոխություններ կրեն կրոնական այս կամ այն հարամասունքները և կարգերը, մնալով նպատակը նույնը, ինչպես կտեսնենք քրիստոնեական կրոնին մեջ 4-րդ դարեն մինչև մեր օրերը: Ուստի մի քանի խոսքով այդ ենթադրությունները պատմության և իրականության մեջ գտնված փաստերով և օրինակներով:

Թե ե՞րբ է Սուրախանի մեջ կրակապաշտական մի տաճարի գոյության սկիզբը, այս մասին ըստ J. de Morgan-ի ենթադրության պետք է որ շատ հին, նույնիսկ աքիմենյան ժամանակից լինի: Ուստի նա դատում է հետևյալ կերպով: Կյուրոսի աշխարհակալության ժամանակ մի կարևոր անցք տեղի ունեցավ Կովկասի համար. Կյուրոս, իսկապես կքարոզեր Զրադաշտական վարդապետությունը. կարելի է որ այս օրերեն իսկ երևեցավ Բաքուի մեջ այս պաշտամունքը, ուր մնացած է յուր կատարյալ ուժի մեջ ավելի քան հազար հինգ հարյուր տարի:

J. de Morgan այս տողերին վերջը ավելացուցած է մի ծանոթության չորս թիվ, որուն մեջ, կըսե թե, «տակավին կտեսնվի Բաքուի մեջ մի կրակի մեհյան, ուր մի քանի տարի առաջ կապրեր մի զրադաշտական վարդապետ: Նավթի արտադրության սկզբնավորութենեն ի վեր, մեհյանը կգտնվեր մի գործարանի պարիսպի մեջ և վերջին վարդապետը խողխողվեց մի թաթար գործավարի ձեռքով (J. de Morgan, Mission scientifique au Caucase, t. II, p. 132):

Ուրիշ զանազան տվյալներից ևս հայտնի է, որ Սուրախանիի կրակատունը գոյություն ունեցել է շատ ժամանակներե ի վեր, սակայն այսօրվան գոյություն ունեցող շենքը իր շինվածակերպով և ճարտարապետական ոճով միանգամայն հետին դարերու գործ է: Անշուշտ հին ժամանակվան տաճարը քայքայված ու անշքացած էր, վերջին անգամ նախկին տեղին վրա վերաշինել են վերաշինության ժամանակակից Բաքվի և շրջակայից մեջ գոյություն ունեցող կրակապաշտներ կամ ամենայն հավանականությամբ Հնդկաստանեն եկող կղերներ կամ ուխտավորներ: Ուստի այժմ քննենք այն հարցը թե ե՞րբ վերաշինված կարող է լինել այս կրակապաշտական տաճարը կամ աթաշկահը:

Դժբախտաբար ես հնարավորություն չունեմ հին և նոր ճանապարհորդական ուսումնասիրություններից օգտվելու. միայն այնքան կարողանում եմ օգտվել, որչափ աղբյուրներ կարողանում եմ ձեռքի տակ ունենալ:

Ձեռքս եղած ճանապարհորդական աղբյուրներեն ամենահինը Chardin-ի ճանապարհորդությունն է, որուն մեջ հեղինակը ծանոթ չէ իր կատարած ճանապարհորդության միջոցին Բաքուի և շրջագայից մեջ կրակի մեհյանի մը գոյության: (Ինչպես կերևի ինքը Բաքու էլ չէ գնացած): Միայն մի լրո տեղեկություն կուտա այն կողմերու վրա գոյություն ունեցող կրակապաշտական կրոնի և սովորությունների մասին:

Chardin դեպի Պարսկաստան ճանապարհորդության ժամանակ երբ Ջուղա հասավ, Ջուղան և շրջակաները պատմական և ազգագրական տեսակետով ուսումնասիրելու միջոցին հետևյալ տեղեկություններն է հավաքել, ավելացնելով նաև իր կարծիքները, այդ տեղեկությունները կգրե հետևյալ կերպով:

«Կըսվի թե Արաքսը կբաժանե Հայաստանը Մեդեայից. այս թագավորությունը որ երբեմն ասիական կայսրությունը իր ձեռքին ուներ, այժմ պարսկական նահանգի մի մասն էր, որուն պարսիկները Azerbeyan կամ Asurpican կանվանեն. ասիկա Պարսկաստանի ամենամեծ նահանգն է: Արևելյան կողմեն սահմանն է Կասպից ծովը և, Hircanie, հարավային կողմեն Պարթևական նահանգը, արևմտյան կողմեն մինչև Արաքս գետը և Բարձր Հայք. հյուսիսային կողմեն Դաղստան և այն լեռնոտ երկիրը որ կսահմանակցի Մոսկովյան կոզակների հետ, և ինչպես ըսի Տավրոս լեռան մի մասը կկազմե: Նա կպարունակե իր մեջ արևելյան Մեդեան որուն նաև Atropatie կամ Atropatene կանվանեն: Ասորեստանը Բարձր Հայաստանի մեկ մասն է: Պարսիկներ կըսեն թե այս նահանգը Azerbeyan կկոչվեր, այսինքն Տեղ կրակի կամ Երկիր կրակի այն պատճառով որ, ամենահռչակավոր կրակի մեհյանը այստեղ շինված էր: Կրակապաշտները այստեղ կպահեին կրակ մը, որուն մասին կհավատային թե աստված է և թե այս կրոնքին մեծ մոգպետին աթոռը այստեղ էր: Գյաբրներ, որ կրակապաշտների մնացորդն են, այս կրակի տաճարին տեղը ցույց կուտան Շամախիեն երկու օրվան ճանապարհ հեռավորության վրա: Որպես հաստատուն ճշմարտություն կհավատացնեն որ այդ նվիրական կրակը տակավին այնտեղ է և նման է մի ստորերկրյա հանքային կրակի. ով որ այնտեղ ուխտի կերթա, բոցի կերպարանքով կտեսնե այդ կրակը: Ուրիշ մի հատկություն ևս կավելացնեն, որը բավականին ծիծաղելի է: Ուխտավորներ այնտեղ գետնի վրա ծակ մը փորելով վրան սան մը (պտուկ) կդնեն. ներքևի կրակը կեռացնեն և կեփեն սանին մեջի կերակուրը» (Chardln, vol. 2, p. 310–311):

Այս տողերեն հետո հեղինակը անցնում է Ազերպեյան անվան ծագման պատմության և ստուգաբանության և գտնում է որ Ազերպեյան անունը շատ հին է և կապ ունի Ասորական Ասսուր աստվածության հետ: Շարդեն, կըսե, Ասսուր կնշանակե կրակ. այս մասին վկայություններ է բերում թե հին կտակարանեն և թե ուրիշ հին ժամանակագիր պատմագիրներե (Chardln, vol. 2, p. 311–312), բայց ինձ համար միևնույնն է կըսե, ես կկարծեմ որ Assure անունը գալիս է as ur-ից այսինքն կրակից:

Ուրեմն Շարդեն իր ճանապարհորդության ժամանակ կրակի պաշտաման տաճարի չէ հանդիպած. երևի Բաքու ևս չէ մտած, միայն տեղեկություն է ստացել որ Շամախիեն երկու օր հեռավորության վրա կա մշտավառ կրակի տեղ, ուր կգտնվեր մեծ մոգպետի աթոռը: Անշուշտ այստեղ Բաքուն էր և այն ժամանակ ինձ թվում է թե այժմյան աթաշկահը և շրջապատ շենքերը չկային, միայն ժողովրդին միտքին մեջ հիշողությունն էր մնացած:

*
* *

Զվարթնոցի[1] հարավակողման շենքերու արևելյան ծայրին մասն է, որոնց հատկությունը առայժմ անորոշ է և այս անորոշությունն առիթ կուտա Խաչիկ վարդապետին, այլ ընդ այլո մեկնություններ տալ, այսինքն պարզապես այնտեղ տեսնել մի հին կրակապաշտական տաճար: Ներկայիս իմ նյութս է այդ մասը, որ քմածին և դիտավորյալ մեկնությունների նյութ է դարձել: Կուտամ այստեղ Խաչիկ վարդապետի բացատրությունները և հետո իմ տեսությունները այդ մասին վրա:

Եկեղեցին հայտնի է որ 5-րդ դարու գործ է կամ 5–6-րդ դարի մեջ, իսկ կրակատուն անվանվածն պարզ 7-րդ դարու, որ Հայաստանում ամենևին չէր եղած կրակապաշտություն:

Այս մասը բաղկացած է հինգ բաժանմունքներե՝ եթե հաշվի առնենք նաև արևելյան մասին վրա վերջին սենյակը, որուն մեծությունը անորոշ է քայքայման պատճառով:

Այս մասի հարավային արևելյան կողմը կա մի եկեղեցիի մնացորդ՝ արևելյան ծայրի խորան, որն անպայման գոյություն ուներ ավելի վաղ քան Զվարթնոցի և հարակից շենքերու շինությունը: Ինչպես կերևի, այդ եկեղեցին բազիլիկ ձև ուներ, այս եկեղեցին, Զվարթնոցի շինության ժամանակ, ավելորդ համարվելով պահել են միայն արևելյան խորանը և արևմտյան մասին վրա շինել են Գ. մասը՝ միաբան հոգևորականներու բնակության համար սենյակներ՝ միանգամայն անկախ Դ. մասեն: Նույնպես միմյանցից անկախ են հարակից շենքերի մեջ Բ և Գ մասերը, որոնք ցույց են տալիս որ յուրաքանչյուրն ուներ իր հատուկ նպատակը:

Կիսով չափ միայն մնացած խորանի հյուսիսային պատին կից կա մի ընդարձակ բաժանում, որուն մեջ կան մեկ գծի վրա հարավից հյուսիս շարված երեք հատ քառակուսի սյուներ (Դ. 2) միջակ քարերով շինված, որոնց մեջ վարեն վեր շարված են թրծված կավե խողովակներ, խողովակների ստորին մասերը հաղորդակցում են ընդարձակ բաժանման հետ մի մի քառակուսի ծակով: Ընդարձակ (Դ) բաժանման հյուսիսային կողմին կից են երկու փոքր նախագավթի նման բաժանումներ, որոնք հաղորդակցում են դռներով թե դրսի հետ և թե ընդարձակ (Դ) բաժանման հետ: Նույնպես մեծ բաժանումը ունի մի դուռ դրսի հետ հաղորդակցող արևելյան կողմեն կիսատ եկեղեցվո հյուսիսային պատին կից: Ընդարձակ (Դ) բաժանման հյուսիս արևելյան մասին կից կա մի բաժանում (4) որ ընդարձակ բաժանման հետ կհաղորդակցի ցածլիկ (չափը դրել) աղեղնակապ մի անցքով (6) որը, հայտնի է թե իբրև դուռ շինված չէ, այլ մի ուրիշ կարևոր նպատակի համար: Սույն սենյակը, արևելյան կողմեն կհաղորդակցի մի ուրիշ սենյակի հետ որուն երկարության չափը (7) անհայտ է արևելյան պատին բոլորովին քանդված լինելու պատճառով: Ընդարձակ բաժանման մեջի (2) սյուներու մեջ դրված թրծուն կավե խողովակներու նման այս (4) սենյակի պատերուն մեջ ևս դրված են թրծուն կավե խողովակներ չորս հատ հարավային պատին մեջ, երկու հատ (7) բաժանումը մտնելու դռան երկու կողմերը, մի հատ հյուսիս արևմտյան անկյունը, այս խողովակներուն ևս ստորին մասերը կհաղորդակցին սենյակի հետ յուրաքանչյուրը մի քառակուսի ծակով այժմյան գետնեն .... բարձրության վրա: Փոքր (4) բաժանման մեջ ցածլիկ աղեղ-

[1] Այս վերջին հատվածը լրացնում ենք հեղինակի նույն հոդվածի սևագիր օրինակից, որն արտագրելու և խմբագրելու ժամանակ դուրս էր մնացել: Այս հատվածը ձեռագրի սկիզբն էր, որ մենք հարմար դատեցինք դնել վերջում:

Կազմող

նակապ անցքի (6) անմիջապես կողքին մի փոքրիկ մաս կա դեպի հարավ առաջացած և մի ծակով կհաղորդակցի դրսի հետ հարավային կողմից: Փոքր առաջակարկառ մասին գետինը հատակված է անկիզելի որձաքարով, աղեղնակապ անցքը ևս ներառյալ, և շրջապատող պատերի ստորին մասերն ևս շինված են անկիզելի որձաքարերով: Դրսի հետ ունեցած հաղորդակցության ծակը (8) և գետինները անկիզելի որձաքարով հատակված լինելը ապացույց է որ այստեղը ի հնումն մի վառարան էր և կվառվեր դեպի հարավ բացված ծակեն. այս է վառարանի դուռը:

Ահա այս խողովակները, որոնք հյուսված են պատի մեջ, վառարանի տեղը, աղեղնակապ անցքը, Խաչիկ վարդապետի տեղին վրա գոյություն ունեցող գլխավոր ապացույցներն են, որ այդտեղ ի հնումն եղել է կրակապաշտական տաճար, իսկ գրական ապացույցներն են Անանիա Նարեկացու ներբողյանեն մի հատված (Ժ դար) կաթուղիկեի մասին գրված և Փորթուգալ Միքայել փաշայի, Եղիշեի քննադատության մեջ, Հնդկաստանում գոյություն ունեցող կրակապաշտական տաճարներու մասին Անքթելի նկարագրությունը: Խաչիկ վարդապետ ինքը անշուշտ համոզված է իր ըսածների մասին, և բոլոր այցելուներուն աշխատում է համոզել իր այս չնաշխարհիկ գյուտի համար: Սակայն ինչպե՞ս նա բերում կապում է Անանիա Նարեկացու ներբողյանի հատվածը այս մասին հետ, և ի՞նչ համեմատություն է դնում Հնդկաստանի կրակատուններու և այս բաժանումներու մեջ:[1]

## Զ

## [ՀՈՎՎԻ ԵԿԵՂԵՑԻՆ][2]

### Նախրճուն ժամը

Անին այցելողները անպայման կտեսնեն, պարիսպներեն դուրս մոտավորապես մեկ կիլոմետր հեռավորության վրա, տափարակ դաշտին մեջ, մեն մենակ ցցված, անգույն ու անկերպարանք զանգռավորության վրա, տափարակ դաշտին մեջ, մեն մենակ ցցված, անգույն ու անկերպարանք զանգված մը. ոչինչ հրապույր չունի անցորդներու աչքը իր վրա ձգելու «Էհ պատի մը կտոր, չարժե տեսնել» կըսեն և անտարբեր կողքեն անցնելով կհեռանան առանց ակնարկ մը իսկ նետելու անոր վրա: Ոմանք ալ անունը լսած են «Նախրճուն ժամն է» կըսեն, «ոչինչ հետաքրքիր չէ»: Իհարկե ամեն ոք եկած են թագավորաշեններ տեսնելու, հպարտության ու փարթամության վրա հիանալու, թագի, ս. գավազանի առջև խոնարհելու, ո՞վ է նախրճին, որ իրենց այցելության արժանանա: Եվ ահա այդպիսով կրկնակի սուգի մեջ դարերե ի վեր անմխիթար կողբա գեղարվեստական թանկագին մարգարիտ մը, որը հավասարապես արժանի է մեր հարգանքին ու հոգածության՝ ինչպես Անիի մեջ ուրիշ մեծամեծ հիշատակարաններ:

Ոչ ոք թող չզարմանա, երբ այս խեղճ ու ողորմելի մնացորդը մեր հիացումը գրավող Մայր եկեղեցիի, Գագկաշեն մեծագործ ս. Գրիգորի և մեզ ապշություն պատճառող վիթխարի պարիսպներու հավասար կդասեմ:

Բագրատունիներու դրոշակին տակ ապրող փոքրաթիվ հայ հասարակությունը, յուր բոլոր նյութական և բարոյական կարողությունների շտեմարան Անիի մեջ, բազմակողմանի արժանավորությանց անթիվ ապացույցներ թողեր է: Բազմամիլիոն արժողությամբ իրագործված բրգաշար հսկա պարիսպներ խրոխտ Բյուզանդիոնի հպարտությունը կխորտակեն: Գագկաշեն ս. Գրիգորը այն հասարակության հանդուգն կողբա. Մայր եկեղեցին անոնց առաքինության և երկյուղած բարեպաշտության մշտնջենական ներբողն է: Լուսավորիչներ, առաքելոցներ և այլ նույնանման բազմաթիվ նրբաքանդակ պճնազարդված հիշատակարաններ, անոնց փառասեր ու վայելչասեր հոգվույն արտացոլումներն են: Ախուրյան գետի վրա երեսուն մետր տրամագծով միակամար եռահարկ հսկա կամուրջը, անոնց ճարտարագիտական ձեռներեց ու ամենակարող ոգույն դարավոր դրվատիքն է: Անթիվ անհամար հասարակական մեծամեծ շինություններ, հազարավոր ընդարձակածավալ քարայրներ, ստորերկրյա կամարակապ անցքեր անոնց մեղվաջան աշխատանքի վճիտ հայելին են:

Բայց այս ամենուն մեջ բան մը միայն կպակասեր անոնց բոլոր առավելությունները պսակելու, ահա այդ պսակը մեր ուշադրությունեն վրիպած և հաճախ արհամարված «Նախրճուն ժամն է». այդ փոքրիկ շինությունը Անեցի ճարտարապետի պայծառ ու բեղմնավոր ուղեղի մարմնացումն է: Հովվի եկեղեցին գեղարվեստական նուրբ ճաշակի և հանճարեղ ստեղծագործության գողտրիկ պտուղն է: Առանց Հովվի եկեղեցիի Անիի շքեղության մեջ ստվեր մը և պաճուճանքին մեջ թերություն մը պիտի մնար:

Մի արհամարհեք անոր տգեղացած արտաքինը և մի խորշիք անոր այլանդակված երևույթեն, մենք անոր մեջ, պահ մը գլուխնիդ վեր բարձրացուցեք և ուշադրությամբ դիտեցեք, թե ինչպես վեց ամբողջ կիսաբոլորակ քարաշեն աղեղներու մեկ ծայրը հանգչած որմասյուներու վրա, մյուս ծայրերը հավաքված դեպի կեդրոն, հրաշքով կախ եկած են ձեր գլխուն վերև:

Մի վախենաք, ութ-ինը հարյուր տարիե ի վեր անոնք կախված են այնտեղ, ոչ միայն վար չեն թափիր, այլև մի ժամանակ լուսաշող մեծ ջահն ալ կբռնեին, զիրենք ստեղծագործող հանճարեն քաջալերություն և խրախույս տվող վայելչասեր բարեպաշտի գերեզմանին վրա:

Այսուհետև պետք չկա անոր մեջ խունկին և աղոթքին, զինքը պահպանող, վերքերը դարմանող և վերջնական կործանումեն ազատող կարեկից ձեռքերու միայն կարոտ է:

## Է ԱՆՎՈ ՊԱՐԻՍՊՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սմբատյան պարիսպներու վրայի ատամնաշարերից այժմ տեղին վրա, ներսի կողմի պատին, մնացած է Լուսավորչի մոտի փոքր դռան կից քառակուսի բուրգի վրա, հետևյալ կերպ.– Դվնո դռան ներսի ճակատին վրա՝ 2 հատ, դռան արևմտյան կողմեն կից բուրգին անմիջապես հաջորդող պատին (դեպի արևմուտք)՝ չորս ատամ, բայց ներսի քարերը պոկված են և միայն շաղախով պահված է անոնց ձևը:

Դվնա դռնեն դեպի արևմուտք բուրգին սյան անմիջապես կից ուղիղ պատին վրա մնացած են 5–6 ատամներ բավականի որոշ վիճակի մեջ:

Ավագ դռան արևելյան կողմեն անմիջապես կից բուրգին արևելյան կողմեն միացած ուղիղ պատերու վրա կան չորս ատամներու որոշ մնացորդ:

Ավագ դռնեն դեպի արևմուտք երրորդ բուրգին կիսաբոլորակին մեջ կերևի մի ատամի եզերքը, որը փակված է հետնագույն ներսեն ավելացված շարքին ետևը:

Նկ. 59. Անվո հյուսիսային պարիսպների արևմտյան մասը ներսից

---

[1] Ձեռագիրն այստեղ ընդհատվում է:

Կազմող

[2] Արտատպում ենք «Ախուրյան» թերթի 1908 թվի № 76-ից, դուրս թողնելով հոդվածի վերջին մասը, որտեղ խոսվում է «Հովվի եկեղեցին» նորոգելու անհրաժեշտության և կատարված մասնակի նորոգությունների մասին:

Կազմող



Նկ. 60. Անվո զաքարաշեն զույգ բուրգերը Գլիձորում

Ավագ դռնեն արևմուտք 7-րդ և Կարուց դռնեն 3-րդ բուրգին ներսեն կիսաբոլորակին մեջ հայտնի է բուրգին ատամները թվով ութ հատ, որոնք ամենայն հավանականությամբ դարձյալ Բագրատունի կամ Մանուչեյան շրջանին մեջ ցածր համարվելով մեջտեղերը լեցվելով վերստին վրան շինած են նույն ձևով և նույն թվով ատամներ հիներուն անմիջապես գագաթին հավասարությամբ:

Կարուց դռան վրա մնացած են երկու որոշ ատամներ, Կարուց դռնեն դեպի արևմուտք 5-րդ բուրգը, որ քառակուսի է և երեսեն հետո պատ ավելցված չէ, կերևա հին ատամները միայն մեջտեղերը հետո լեցված և հավանաբար վրան ավելցած ուրիշ ատամներ, որոնք այժմ չկան, երկու ատամ ունի դեպի արևելք նայող ճակատը և դեպի հյուսիս նայող ճակատը:

Այստեղ կվերջանա արևելքեն արևմուտք երկնցող հյուսիսային պարիսպին շարքը և կդառնա դեպի հարավ: Դրսի պատին վրա է լայն մեծ բուրգը, որուն ինչպես կերևի, այս անկյունին վրա կծածկեր ամբողջ անցքը:

Ծաղկոցաձորի կրկնակի պարիսպի ներսի շարքեն միայն մի բուրգ է մնացեր՝ քովը մինչև հիմը քանդված մնացորդներով, Գագիկի բոլորակ եկեղեցիին հարավ արևմտյան կողմը կարմրագույն քարով շինված, իսկ արտաքին շարքին մնացորդները մնացած են սկսյալ քարափոր եկեղեցիեն, որ կգտնվի կարծեցյալ պալատեն դեպի հարավ և Գագիկի բոլորակ եկեղեցիեն դեպի արևմուտք և անընդհատ բեկբեկումներով շարունակված է մինչև Ապուղամրենց ս. Գրիգորի և Գագիկի եկեղեցիի միջև գտնված դեպի Ծաղկոցաձոր իջնող ձորը, ուր քարայրներու վրա է եղած պարիսպին հիմքը, որոնք փլչելով պարիսպներն ալ միասին փլեր են այդ մասին վրա, ասկեց ալ դեպի հարավ Ապուղամրենց եկեղեցիի ճիշտ ներքևը, լանջին վրա, կա նույն պարիսպեն մնացորդ մի պատի կտոր և մի բուրգի կեսը. մնացյալ շարունակությունն անհետ կորած է մինչև միջնաբերդի ներքևը:

Ծաղկոցաձորի կողմի ներքին պարիսպի շարունակությենեն մինչև միջնաբերդի արքունիքի արևմտյան դուռը տեղ տեղ քարափներուն վրա տակավին պարսպի հիմերը կերևան:

Դրսի պարիսպը, որ ժայռի փլումով ընդհատված է կարմիր քարափոր եկեղեցիի առջև, շարունակված է եղեր մինչև կարծեցյալ ապարանքը և այս վերջինիս ձորի կողմի արևմտյան և հյուսիսային պատերը դրված են ուղղակի պարիսպին վրա:



# Ը
# ՅՈՒՅԱԿ ՊԱՏՄԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ[1]

*(Թերի)*

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*Պատմական տվյալներով հաստատվում է, որ մեր թվականից շատ տարիներ առաջ Հայաստանը քաղաքակրթական զգալի բարձրության հասած էր և կարևոր տեղ էր բռնում սահմանակից մեծ պետությունների շարքում, որոնք շատ պարագաների մեջ հաշվի էին առնում Հայաստանի գոյությունը քաղաքական և տնտեսական տեսակետներով:*

*Ես այստեղ չեմ խոսելու Հայաստանի ընդհանուր զարգացման մասին: Այս ընդհանուր զարգացումը և փոխադարձ ազդեցությունները բովանդակ Հայաստանի պատմության մեջ հետազոտել և դրական եզրակացության հանգել բավականին լուրջ գործ է և պահանջում է առանձին մասնագիտություն ընդհանուր ուսումնասիրության համար: Ուստի, ինձ մնում է խոսել ճարտարապետական և շինարարական արվեստների տեսակետով, որ սկսած մեր թվականից շատ առաջ արդեն որոշ կատարելության հասած էր Հայաստանի մեջ և մինչև մեր օրերը անջնջելի հետքեր մնացել են սեփական ստեղծագործությունների:*

*Երկար տարիների մեջ իմ կատարած հետազոտություններով և համեմատական ուսումնասիրություններով համոզվել եմ, որ Հայաստանի նախաքրիստոնեական շրջանին մեջ ճարտարապետությունն և գեղարվեստ մի համր զարգացումից հետո, բավականին կատարելագործված հասած են մեր թվականին և տևած են մինչև մեր թվականի 4-րդ և 5-րդ դարերը:*

*Հայաստան երկրին հատուկ ինքնուրույն մի ճարտարապետական արվեստի զարգացումը տևել է մինչև 15-րդ դար գաղափարների աստիճանական զարգացումով շինությունների մշակումով և, որ ավելին է, ճաշակի նորանոր փոփոխություններով:*

*Հայաստանի մեջ, ճարտարապետական արվեստը երբ ենթարկվեց նորանոր վերածնությունների, հին ոճը (5-րդ դար) այնքան հեռացավ վերջին վերածնության ոճից (14 և 15-րդ դար) և տարբերվեցավ նրանից, որ հինը անճանաչելի դարձավ նոր ոճի համեմատությամբ: Թեև գտնվեցին ճարտարապետական հին դետալներ, որոնք զանազան վերածնությունների մեջ ընդունվեցին, սակայն ոչ բոլորովին նախնական ձևով, այլ ավելի գեղեցկացած, վայելչացած, մեկ խոսքով սրբագրված իր նախնական գծերից և երևույթներից:*

*Ներկա աշխատությունս մի ամբողջական ուսումնասիրություն չէ Հայաստանում իրագործված ճարտարապետական արվեստի մասին, այլ թանգարանային մի ցուցակ, որ իր մեջ պիտի բովանդակե նշանավոր հուշարձանների անունը, գտնված տեղը, շինողի անունը և շինության ժամանակը: Կա-*

---

[1] *Թորամանյանը միտք է ունեցել ցուցակի ձևով տալու Հայաստանի ճարտարապետական հուշարձանների համառոտ ընութագիրը, ոչ միայն իր տեսածների, այլ և նրանց, որոնց նա ծանոթ է եղել գրականության միջոցով: Այդ նպատակի համար նա քաղվածքներ է արել Ալիշանից, Էփրիկյանի «Բնաշխարհիկ բառարանից» և այլ գրքերից, որոնց վրա երբեմն ավելացրել է և երբեմն էլ ուղղումներ է կատարել: Սակայն այդ գործը նա թողել է միանգամայն անավարտ վիճակում և հրատարակության է կարողացել պատրաստել միայն մի քանի հուշարձանների նկարագիր, որը արդեն տպագրել ենք նրա աշխատությունների առաջին ժողովածուի մեջ «Երևանի Պետական Պատմական թանգարանի ճարտարապետական բաժնի համառոտ հատկանշական ցուցակ» վերնագրի տակ (էջ 282-320):*

*Այստեղ մենք ընտրել և այբբենական կարգով դասավորել ենք անավարտ մասից այն հուշարձանների նկարագիրը, որոնք համեմատաբար ինքնուրույն են և ընդհանուր գաղափար են տալիս հուշարձանի մասին: Ցուցակի մեջ ենք ամփոփել նաև տարբեր սևագիր և անավարտ գործերի միջից քաղված հեղինակի որոշ արժեք ներկայացնող նկարագիրը, ենթարկելով նրանց որոշ խմբագրության, որտեղ միշտ նկատի ենք ունեցել հեղինակի մյուս ավարտված գործերը:*

*Տպագրվող մասում էլ պարզ երևում են նյութերի մշակման տեսակետով խոշոր տարբերություններ, այսինքն, որոշ հուշարձանների նկարագիրը կազմված են ավելի մանրամասնությամբ, քան մյուսները, այդ պետք է բացատրել ոչ թե հուշարձանի կարևորությամբ, այլ այն բանով, որ հեղինակը ներկայացվող ցուցակի որոշ մասերը հնարավորություն է ունեցել մշակելու և մյուսները դեռ մնացել են անմշակ:*

*Ցուցակին իբրև առաջաբան կցում ենք առաջին պրակի մինչև այժմ անտիպ մնացած ծանոթությունը չնչին կրճատումներով:*

*Կազմող*

*րող է պատահել, որ շինողի անունը և շինության ժամանակը անհայտ լինի. շինարարական արվեստի համեմատությամբ անվրեպ որոշված կլինի շինության դարաշրջանը: Բայց ամենից ավելին, որ ցուցակիս նպատակն է, մատնանշված պիտի լինի ճարտարապետական և գեղարվեստական մասերը: Հնարավոր դեպքում հուշարձանների հատակագծերի հետ միասին պիտի դրվեն չափական գծագրությամբ գեղարվեստական կտորներ՝ իրենց պատկանած վերածնությունների և դարաշրջանների ծանոթությամբ: Այս կերպով պատրաստված մի ցուցակ երբ արվեստագետն իր ձեռքին կունենա, հուսալի է, որ հնարավորություն կունենա որոշելու թե՛ օտարամուտ ձևերը, թե՛ տեղական ճաշակին ենթարկված փոփոխությունները և թե՛ զուտ տեղական ստեղծագործությունները ճարտարապետական և շինարարական արվեստի մեջ:*

*Առհասարակ հենվելով իմ հետախուզությունների վրա, Հայաստանում մեր թվականից առաջ գոյություն ունեցող ճարտարապետական նախնական մնացորդները երկու մասի են բաժանվում. 1. նախաուրարտական, 2. ուրարտական կամ խալդական: Այս երկու տեսակ նախնական ճարտարապետությունից հետո եմ համարում Հայաստանի ճարտարապետական արվեստի վերածնությունը՝ նույնիսկ մեր թվականից շատ առաջ, թեև չենք կարող որոշել, թե որչափ առաջ, այնուամենայնիվ փաստեր շատ կան, որ քաղաքակիրթ վերածնության ենթարկված ճարտարապետական մի արվեստ, նախնականի հետ զուգահեռաբար մտել է քրիստոնեական թվականի առաջին շրջանները: Ուստի ենթադրելով առաջին վերածնությունը նախաքրիստոնեական շրջանին, տևել է մինչև մեր թվականի 5-րդ դարը: Այս առաջին վերածնության տևողությունը մինչև 5-րդ դարը ընդունելուս պատճառն այն է, որ չափազանց քիչ ունենք մեզ հասած, առաջին վերածնության վերագրված հուշարձաններ և այդ հուշարձանները ոճի մեջ փոփոխություններ չեն ցույց տալիս մինչև նախաքրիստոնեական շրջանի ճարտարապետությունը և գրեթե հնից միօրինակ ոճով են առաջ գալիս մինչև 5-րդ դար:*

*Բայց որովհետև հետագա վերածնությունների համեմատությամբ այս առաջին վերածնության տևողությունը շատ երկար է, և մինչև 5-րդ դար բավականին կատարելության հասած, կարելի է նաև ենթադրել որ ժամանակի այս երկար տևողության մեջ, մեկե ավելի վերածնությունների է ենթարկված Հայաստանի ճարտարապետական արվեստը, սակայն որովհետև հաստատուն տվյալներ չունենք այս ենթադրությունը հաստատող և համեմատության համար միանգամայն անբավարար հուշարձանական մնացորդներ են պահվել, ուստի առայժմ ներելի է կարծեմ մեզ համար, որ մինչև 5-րդ դարը ներառյալ համարենք առաջին վերածնություն: Իսկ հետագայի համար, մինչև Հայաստանի ինքնուրույն ճարտարապետության անկումը, ընդարձակ ծանոթություններ ունենք մեզ հասած նյութերի առատության: Արդ մեզ հասած այս առատ նյութերի համեմատությամբ կտեսնենք, որ վերածնության միջոցներն այնքան երկար չեն և հնարավոր եղած է որոշ չափով ճիշտ դասավորել ժամանակի տևողությունը և թե յուրաքանչյուր վերածնության մեջ ավելացած կամ վտարված գեղարվեստական և շինարարական մասերը:*

*Սկսած քրիստոնեական առաջին դարից մինչև 15-րդ դարը, Հայաստանը միշտ ինքնուրույն կամ յուրահատուկ ճարտարապետական և գեղարվեստական ոճ ունեցել է, յուր առանձնահատուկ ոճով զանազան վերածնությունների պատճառով հաջորդաբար կերպարանափոխվել է, այնուամենայնիվ համաշխարհային ճարտարապետության և գեղարվեստի պատմության մեջ իր պատվավոր տեղն է գրված: 15-րդ դարից հետո է, որ սկսած են արևելյան և արևմտյան ոճերի անհամաչափ մի խառնուրդով երևան գալ մեծ ու փոքր շինություններ, որոնք ո՛չ տեղական հատկանիշ էին արտահայտում և ո՛չ Հայաստանում ապրող ժողովրդի հոգեբանությունը. միևնույն ժամանակ Հայաստանը շրջապատող հեռու և մոտ ազգերի ոճերից ոչ մեկին չէին ենթարկվում: Այս խառնակ և անկերպարան երևույթը, որ երկար է տևում, ցույց է տալիս անկում Հայաստանին հատուկ ճարտարապետական ոճին: Ուստի քրիստոնեության սկզբից մինչև 15-րդ դարը նկատվում են 4 զանազան վերածնություններ: Առաջին վերածնությունը տևում է մինչև մեր թվականի 5-րդ դարի վերջը. երկրորդ վերածնությունը տևում և կատարելության է հասնում մինչև 7-րդ դարի վերջը, երրորդ վերածնությունը երևան է գալիս 9-րդ դարի վերջերին և 10-րդի սկզբներին և տևում է մինչև 12-րդ դարի սկիզբը. չորրորդ վերածնությունը ծաղկման վիճակի է հասնում 13-րդ և 14-րդ դարերում, որին հաջորդում է Հայաստանի ինքնուրույն ճարտարապետության բուռն վերելքը սովետական կարգերի պայմաններում:*

*Թե՛ նախաքրիստոնեական կիկլոպյան շենքերի մնացորդները և թե՛ մյուս չորս վերածնությունների հատուկ հուշարձանների կանգուն, կիսականգուն և ավերակ շենքերից ընտրանոք նմուշներ*



*պետք է պարունակի աշխատությունս պատմական և ճարտարապետական հակիրճ, բայց կարևոր ծանոթություններով:*

*Այս վերածնությունների երրորդ և չորրորդ շրջանների հատուկ մնացորդները բազմաթիվ են Բագրատունյաց մայրաքաղաք Անիում և շրջաններում. ուստի երրորդ և չորրորդ վերածնությունների առավելագույն նմուշները հնարավոր պիտի լինի տալ առաջիկային թե՛ Անիից և թե՛ շրջաններից:*

*Փակագծի մեջ պետք է ասել, որ հայ ճարտարապետության նմուշները և նրանց մասին դիտողությունները վերաբերում են միմիայն Արևելյան Հայաստանին, որովհետև Արևմտյան Հայաստանը ես անձամբ երբեք չեմ ուսումնասիրած:*

*Առաջին վերածնությունը շատ ընդարձակ սահմանի մեջ տեղի ունեցավ, Արագածից և Արարատից մինչև Եփրատի արևմտյան հոսանքն է հասնում նրա սահմանները: Սակայն այս վերածնությունից այսօր շատ քիչ նմուշներ են մեզ հասել՝ նախկին կիկլոպյան շենքերի մնացորդների հետ, որոնց նմուշները տալիս ենք այստեղ:*

*Երկրորդ վերածնության ժամանակ թեև միահեծան իշխանություն չկար և Հայաստանը բաժանված էր պարսից և բյուզանդական իշխանության մեջ, այնուամենայնիվ այս երկրորդ վերածնությունը համահայաստանյան եղավ: Միայն թե Հունաց և Պարսից իշխանությունների տիրապետած սահմանին մեջ, տիրող պետության ազդեցությունը մասամբ երևում էր Հայաստանի ճարտարապետական արվեստին վրա: Իմ կարծիքով այս ևս բնական էր, որովհետև թե՛ բյուզանդացիք և թե՛ պարսիկ Սասանականները մեծ առաջադիմություններ ունեցել էին շինարարական արվեստների մեջ. պետք է ավելացնել նաև, որ երկրորդ վերածնության մեջ Հայաստանն այնքան առաջ գնաց ճարտարապետական մեծ արվեստի մեջ և այնչափ հոյակապ հուշարձաններ թողեց իր հետևը, որ այնուհետև հաջորդ դարերուն այլևս ոչ մի նոր ճարտարապետական հատակաձև չկարողացավ մշակել:*

*Երրորդ վերածնության ժամանակ ներքին վարչական և աշխարհագրական ձևերուն մեջ մեծամեծ փոփոխություններ էին կատարվել: Միահեծան պետությունը փոխվել էր մանր թագավորությունների և իշխանությունների, ինչպես՝ Վասպուրական, Շիրակ, Վանանդ, Սյունիք, Լոռի, և այլն և այլն: Ինչպես երևում է, Շիրակի թագավորությունը, որուն մայրաքաղաքն է Անին, ամենից ավելի ուժեղ և ժողովրդական եղավ սույն վերածնության մեջ. դարձավ արվեստի մի մեծ դպրոց և տարածեց գեղարվեստի ճաշակը մանր հայ պետությունների շրջանում: Վերջապես Բագրատունիները, որոնց վերին հսկողությունը վայելում է Պահլավունիների և Կամսարականների շինարար սերունդը, մանր ու խոշոր գեղարվեստական շինություններով ծածկեցին Անին և մոտավոր ու հեռավոր տիրապետության սահմանները:*



*Նկ. 61. Ագարակի 7-րդ դարի խաչաձև եկեղեցին և 5-րդ դարու միանեф բազիլիքի ավերակները*

Քաղաքական և վարչական ավելի անմխիթար դրության մեջ ստեղծվեց Հայաստանի ճարտարապետության չորրորդ վերածնությունը: Իր նախնիքներից ժառանգած գեղարվեստի ճաշակը և շինարարության հատկությունները թեև պահած էր հայ ժողովուրդը, սակայն տնտեսապես այնքան ընկած դրության մեջ էր, որ չկարողացավ մեծամեծ շինություններ կանգնել, այնուամենայնիվ բազմաթիվ փոքր, բայց ընտիր շինություններով ծածկեց երկիրը: Չորրորդ վերածնության մեջ ո՛չ միայն ճաշակի նրբություն, այլ և շինարարական հանճարեղ նորություններ ևս մտցրեց, որոնց մասին իր հարմար ժամանակին պիտի գրենք և մատնանշենք:

Վերջապես, եզրակացնելով խոսքս՝ ներկա փոքրիկ հատորով չի վերջանում Հայաստանի կարևոր հուշարձանների համառոտ ցուցակը: Սա առաջին պրակն է յուրաքանչյուր տարի պետք է, որ ունենանք այս ցուցակի շարունակությունը թե՛ Պատմական Թանգարանում գտնված և թե՛ հետզհետե հավաքվելիք նյութերով:

## 1. ԱԳԱՐԱԿ
*կամ Ագրակ*

Տեկորի հնագույն եկեղեցիից 2-3 կիլոմետր դեպի հարավ-արևմուտք կգտնվի Ագարակ կամ Եգրեկ գյուղը, որուն շրջանին մեջ կան շատ հնագիտական վայրեր, ամենահին ամրոցների և բերդերի մնացորդներ կոթողաձև քառակուսի պատվանդանավոր գերեզմաններ:



Նկ. 62. Ագարակի 5-րդ և 7-րդ դարերու եկեղեցիների հատակաձևերը

Բացի ավերակ եկեղեցիների մնացորդներից, կա այժմ մի հնագույն եկեղեցի գյուղի մեջ, որը 5–7 դարերուն պատկանելու հավանականությունն է տալիս, ունի իր վրա ՆԾԵ –1006 թվականը, բայց ոչ շինության համար, այլ նվիրատվության:

Այդ եկեղեցու հյուսիսային կողքին կա մի 5-րդ դարու բազիլիքի ավերակ:

Այս անունը կրող ուրիշ գյուղեր կան, որոնց մեջ ևս հին ավերակներ գոյություն ունին, սակայն նրանց մասին կխոսիմ առանձին իրենց կարգին:

## 2. ԱԴԻԱՄԱՆ

Արագածի հարավ-արևմտյան բարձունքներուն վրա Թալինի շրջ. փոքր գյուղի մեջ կանգուն է մի մեծ հոյակապ եկեղեցի անվրեպ 7-րդ դարու գործ. անհայտ է շինողը, արձանագրություններ չկան. ներքուստ խաչաձև և անսյուն է, լայնանիստ գմբեթ ունի: Նորոգության կարոտ լինելեն զատ շուրջը խտացող անպետք շինություններեն ազատելն անհրաժեշտ է: Այս գյուղի արևելյան և հարավ արևելյան բարձունքներուն վրա կան նշանավոր նախապատմական և ուրարտական երկու մեծ ամրոցներու մնացորդներ:

Հյուսիս-արևելյան կողմը, ձորի մեջ, գտնված են հին եկեղեցու և բնակության հիմքեր. ի միջի այլոց բարձրաքանդակ պատկերներով քառակող կոթողաձև գերեզմանաքարեր:

## 3. ԱԼԱՃԱԼԻ ԵԿԵՂԵՑԻ

Ալաճալի գյուղի մեջ եկեղեցիի մը ավերակները կա, եթե կարելի է հավատալ Ալիշանի տված պատկերներու ճշտության, այն ատեն խիստ հետաքրքրական են այդ եկեղեցու կամարներն ու ձևը, երկհարկանի սյունազարդ նեֆեր, կամարները պայտաձև և ձվաձև դարձված, այդ խոյակներն ազանթազարդ մոտավոր նմանությամբ կորնթականի. սույն խոյակներու մեկուն վրա կերևի աքաղաղի մը պատկեր:

## 4. ԱԼԱՓԱՐՍ

Բջնիի հարավային կողմը կգտնվի Ալափարս գյուղը: Կա մի հին եկեղեցու մնացորդ կոփածո քարով: Եկեղեցին կթվի լինել խաչաձև: Արձանագրությունները խանգարված են. միայն թվական մը կա 901 թիվ և մի անուն Գրիգոր: Այս գյուղի հին անունն է Այլաբերդ:





Նկ. 63. Ադիամանի եկեղեցու ընդհանուր տեսքը հարավ-արևելքից

## 5. ԱԿՈՌԻ

Ակոռիի մեջ կար մի հնագույն եկեղեցի 660-ական թվականներին շինված Անաստաս կաթողիկոսի ձեռքով: Եկեղեցվո հատակագիծը շատ մոտ նմանություն կբերե Անիի կաթողիկեին, միայն ավանդատունները քառակուսի են, փոխանակ խորանաձև լինելու արևելյան կողմեն. արտաքին մասեն (գուցե ներքին) մնացած սյուներեն կերևի, որ շատ նման է Զվարթնոցի արտաքին որմնասյուներուն իրեն խոյակներով:

Ուսկից կհետևի, որ Անիի զանազան եկեղեցիներու ներքին և արտաքին կողմերը գտնված այս տեսակ սյուներն արդեն գործածության մեջ էին 6-րդ դարեն սկսյալ հայոց մեջ. գտնելու է թե ո՞ւր է սկիզբն այս ոճին:

## 6. ԱՂՋՈՑ ՎԱՆՔ

Այրիվանքի հարավ-արևելյան կողմը նույնանման ձորամիջին կգտնվեր այս նշանավոր վանքը, որուն մասին պատմական տեղեկություններ միայն կան: Ինչպես երևում է, պետք է խուզարկել տեղը և այժմյան դրությունը:

## 7. ԱՂՎԵՐԱՆ

Այս գյուղից քիչ վերև մենաստան կա ամայի մնացած անտառուտներու մեջ ճանապարհի դժարության պատճառով:

## 8. ԱՂՑ
*(Այժմ Հախս)*

Բյուրականի մոտ, անառիկ դիրքի վրա, այժմ մի փոքր գյուղ է, որը ժամանակով եղել է ուրարտական ամրոց, որուն հետքերը կան այժմ, իսկ հետո՝ հին հայոց սեփական ամրոցներեն մին:

Այստեղ է այն վերին աստիճան հետաքրքրական Արշակունյաց ստորերկրյա կամարակապ դամբարանը, որուն մեջ հատուկ շինված տապաններու ճակատին քանդակված են հայոց հնագույն շրջանի հատուկ քանդակներ:

Այս դամբարանին մոտիկ կա մի հին եկեղեցու մնացորդ, որուն փլատակների բեկորները ցույց են տալիս, որ 5-րդ դարում կանգնված մի եկեղեցի է եղած:

Այս շրջանի ձորերուն մեջ խիստ շատ կան հետաքրքրական քարայրեր ուշագրավ մանրամասնություններով և ոմանք քարե դռներով:

Նկ. 64. Աղցի՝ Արշակունյաց ստորերկրյա դամբարանի մուտքը

## 9. ԱՄԲԵՐԴ

Այրարատի Արագածոտն գավառի մեջ Բյուրականի մոտ, Արագած լեռան լանջերի վրա, երկու խոր ձորերից առաջ եկած եռանկյունաձև մի ընդարձակ դաշտային լեզվակի վրա է Ամբերդ կամ Անբերդ անվանված ամրոցը: Բացի այս տեղը ամրոց լինելուց՝ նաև քաղաքի տպավորություն է թողնում: Դիրքը չափազանց անառիկ է՝ խոր ձորերով շրջապատված լինելուն համար, և տեղ տեղ երևում են պարսպի հետքեր շուրջը, բացի հյուսիսային կողմից, որ ամբողջովին պարսպապատ է: Հյուսիս-արևմտյան ծայրին պարիսպների շարքին վրա կա մի բրգաշար բերդանման ամրոց, որ նաև ցեղապետական դղյակ է, ներքին սենյակների և այլ նպատակների հատուկ բաժանումներով: Դղյակի արևմտյան ծայրը անդնդախոր ձորի վրա է, իսկ արևելյան ծայրից շարունակվում է հաստատուն մեծ պարիսպը մինչև այնտեղ, ուր Բյուրականի կողմի ձորն անմատչելի է դարձնում մուտքը: Այս կողմի պարիսպի վրա է ամրոցի դուռը, որ ներս մտնելուց հետո, երկու ճյուղի է բաժանվում, մեկը տանում է դեպի դղյակ, իսկ մյուսը դեպի բերդամեջ կամ քաղաքամեջ: Զափազանց ուշագրավ է դղյակի շինելակերպը, հավանորեն պատերազմական տեսակետով հյուսիսային կողմը, որ միանգամայն մատչելի է, ամենևին պատուհան չունի և խիտ բուրգերով ամրացված է. իսկ բոլոր բաժանումներ և խոշոր պատուհաններ միայն քաղաքին վրա են բացված: Դղյակը և պարիսպները հազիվ թե 9–10-րդ դարու գործ են երևում. միայն հայտնի չէ, թե նախորդ ամրության վրա նորը շինված է, թե՞ այս մասը նորոք շինած է: Բերդի մտից դռան կամարը հիշեցնում է Անիի Սմբատաշեն պարիսպի վրա ավագ դռան և Տեկորի եկեղեցիի ներքին կողմի նորոգության ժամանակ վերաշինված կամարները, որոնք ատամնավոր տաշված են և հարվելիս միմյանց մեջ կանցվին ու մեկս մեկ կպահեն:

Տարակույս չկա, որ շատ հին ժամանակ այստեղ ընտրված էր որպես բերդատեղ՝ տեղի բնական ամրության պատճառով, որովհետև երկու գետերի խառնուրդի տեղի վրա, բարձր տակավին երևում են պարսպամասեր, որոնք անկասկած նախապատմական շրջանի գործեր են:

Այս հատ ու կտոր նախաքրիստոնեական շրջանի պարսպամասերը ապացույց են, որ ի հնումն ամբողջ Թերակղզին շրջապատված էր պարիսպով, սակայն հյուսիսային կողմի ամրոց դղյակն իր ներքին սենյակներով և այլ բաժանումներով նման էր Տիգնիսի դղյակին, որը համարվում էր Բագրատունիների սեփականություն դարձած այն ժամանակ, երբ նախքան Անին, Շիրակավանն էր Բագրատունյաց մայրաքաղաքը:

Ամբերդի դղյակի և պարիսպի շինարարական ոճը հիշեցնում է Բագրատունի շրջանի արվեստագործությունը, և ինչպես հավաստում են պատմական հիշատակությունները և ուրիշ հավանական ապացույցներ, սա ևս մի ժամանակ եղել է Բագրատունի թագավորաց սեփականություն: Պատմական տեղեկություն կա, որ Գագիկ Առաջին Բագրատունի թագավորը կտակել է այս ամրոցն իր հաջորդ Հովհաննես Սմբատին: Իսկ հետո, Բագրատունի արքունիին հարազատ Վահրամ Պահլավունիին: Սա է շինել դղյակի փառավոր եկեղեցին, որ նույնպես չափազանց նման է Մարմաշենի Վահրամաշեն Կաթուղիկեին: Թեև գեղեցկության և ճոխության տեսակետով Ամբերդի եկեղեցին պակաս է քան Մարմաշենինը, սակայն շինարարական տեսակետով աքանչելի է ամեն կողմից: Ինչ ապացույցի կարոտ պիտի լինի, որ մոտավորապես հազար տարի է անցել, սակայն շենքը տակավին հաստատուն մնում է իր տեղը կանգուն. եթե փոքր ինչ վնասվածքներ երևում են, պատճառը երկարատև անտերությունն է:




Նկ. 65. Աղցի՝ Արշակունյաց ստորերկրյա դամբարանի հատակաձևը և կտրվածքը



Նկ. 66. Աղցի՝ Արշակունյաց ստորերկրյա դամբարանի բարձրաքանդակներից



Նկ. 67. Աղցի՝ Արշակունյաց ստորերկրյա դամբարանի բարձրաքանդակներից

Եկեղեցուց մի քանի քայլ դեպի հարավ-արևմուտք, փորված է մի անցք, որ հասնում է մինչև ձորի ջրի սահմանը, պաշարման ժամանակ անշուշտ գետից ջուր հանելու համար: Հին ժամանակ, ինչպես երևում է, ամրոցների մեջ պահանջ էր այս ջրի գաղտնի ճանապարհը. նույնը մինչև այժմ կան Անիում, Բագարանում և ուրիշ տեղեր:

Քաղաքին ամբողջության ջուր մատակարարող առուները հետաքրքրական են տեսնել, թե ինչպես գետի բարձր տեղից միմյանց վրա երկու առու ձորի լանջով բերած են Ամբերդ. այս առուներեն մին հատուկ էր մեծ մասամբ դղյակին, իսկ մյուսն՝ ամբողջովին քաղաքին համար էր:

## 10. ԱՅՐԻՎԱՆՔ ԿԱՄ ԳԵՂԱՐԴԱՎԱՆՔ

Հարավային կողմը արևելքեն թև ունի, ճիշտ նման Տեկորի և Երերույքի: Բայց պետք է ստուգել ժամանակը, թե թևին հետ միասի՞ն շինված է թե ոչ:

Նկ. 68. Ամբերդի հյուսիս-արևմտյան պարիսպների ավերակները

Նկ. 69. Ամբերդի եկեղեցին հարավ-արևմուտքից

Եկեղեցիի գավթին անմիջապես կից կա ութը որմասյուներու վրա միակտուր քարակոփ մի եկեղեցի՝ կամարներու խաչաձևումով, որոնց մեջտեղեն ունի գմբեթաձև մի լուսամուտ. գմբեթին մեջ բնականեն սթալաքթիթ քանդակած, նմանապես խորանին գմբեթարդին մեջ քանդակված է սթալաքթիթ: Խորանին կիսաբոլորակը այունազարդված է ութ այուններով կամ յոթը այունամեջերով, երկու խորհրդանոց ունի, հյուսիսի երկու այուններին դոյացած անկյան մեջ կա քանդակազարդ խորշ, հարավային պատին վրա երեք շքեղ քանդակազարդ խորշեր ունի: Դեպի արևելյան կողմի քարափոր եկեղեցին, որ ավելի կից է բուն տաճարի արևմտահյուսիս անկյունին, դուռը կրկին կբացվի գավթի մեջեն, ունի երկու բաժանում, մինը դեպի եկեղեցին, մյուսը դեպի գավիթ: Բոլորովին միակտուր քարակոփ սեղանին ճակատը քանդակված է շրջանակի մը մեջ տարանկյուն և քառակուսի մոգայիքի ձևով քանդակվածքներով: Սեղանին երկու կողմը՝ երկու խաչեր կան քանդակված, հարավային կողմը շրջանակավոր պարզ քանդակներ ունի, իսկ հյուսիսային կողմինը՝ ուշադրավ է իր ուռուցիկ գավազանաձև քանդակով, որի ստորին կողմին վրա երկու ծայրերին, առանձին շրջանակներու մեջ, քանդակված են երկու մարդիկ:



Նկ. 70. Ամբերդի եկեղեցու հարավային մուտքը

Նկ. 71. Գեղարդավանքի վիմափոր տաճարի քանդակազարդերը

Ունի երկու ավանդատուն, մեկը սրահին մեջը՝ հյուսիսային կողմեն, իսկ մյուսը՝ սեղանին վրա դարձյալ հյուսիսային կողմեն: Գմբեթն ամբողջովին քանդակված է թմբուկին մեջը սյունազարդ աղեղնակապած, իսկ կիսագունդը գագաթի լուսամուտեն սկսած շառավիղներով զատած և մեջերը 12 տեսակ քանդակներով զարդարած ամեն կերպ կանոնավոր որմնասյուները և կամարները, որոնց վրա հանգչած է գմբեթը, որպես թե առանձին քարերով շինված և տեղը դրած ըլլար:

Գավիթը երկու մասի բաժանված է, հյուսիսային կողմեն ունի մեկ սյունով և երկու աղեղով զատած բաժին մը, նույն բաժնի ճակատին վրա մեջեն մեկ սյունին վերևը քանդակված են երկու կապած առյուծներ, ներքևը մի արծիվ՝ ոչխար վերցնող:

Դրան հարավային կողմը կա մի փոքր սենյակ ավանդատան նման. այս ավանդատունն ունի մի ութանկյունի գմբեթ, որի մեջն ամբողջ քանդակված է շատ գեղեցիկ կերպով:

## 11. ԱՀՆԱԿ

Թալինի շրջանում, հնումն թագավորական ամառանոց, ունի մի կիսավեր եկեղեցի, որ ըստ ոմանց՝ 7-րդ, իսկ ըստ ոմանց 10-րդ դարուն կպատկանի:

## 12. ԱՀՏԱՐԱԿ

Այս գյուղի մեջ եղած հին հուշարձանների մանրամասն ցուցակագրումը աննպատակ կլինի առանց առանձին հետազոտության և ուսումնասիրության, որովհետև շատ կան բերդերու, բնակարաններու, դամբարաններու և այլ կարևոր մնացորդներ: 5–6 հատ մեծ ու փոքր զանազան դարերու մեջ շինված եկեղեցիներ կան, որոնցմե մեկը նշանավոր է իր հնությամբ և ճարտարապետական կազմությամբ: Ծիրանավոր անունը կուտան տեղացիք և շինված է 5-րդ դարեն ոչ ուշ: Կարմրավորը՝ 7-րդ դարուն, Մարինեն՝ 13-րդ դ.:

Ուշադրության արժանի է Քասախի կամուրջը իր շինվածով և տեղագրական դիրքով:

## 13. ԱՊԱՐԱՆ

Արագածի արևելյան բարձունքների վրա, Քասախ գետի աղբյուրներու մոտ, Ապարան կոչվող շրջանային կենտրոնի մեջ կանգուն կա մի հնադարյան մեծ եկեղեցի բազիլիք ձևով կանգնված. շենքը և շինության ոճը այնքան հին է և տարօրինակ, որ նույնիսկ հեթանոսական ծագում ունենալ կկարծվի, արևմտյան և հարավային դռներու քանդակազարդումները միանգամայն գոյություն չունին Հայաստանում 5-րդ դարուց հետո: Շուրջը, որ սյունազարդ սրահ ունեցել է, որի սյանց խոյակները չափազանց հին ձև ունին և խիստ հնադարյան քանդակներ: Այս եկեղեցու ժամանակը, ոճը և ճարտարապետական մանրամասնությանց ուսումնասիրությունը ամենաանհրաժեշտ պահանջներից մեկն է հնագիտության տեսակետով:

Այս գյուղի շրջակայքում ևս կան բավական թվով հեթանոսական և հին քրիստոնեական շրջանի մնացորդներ: Այստեղեն բերված է Հայաստանի Պետ. Պատմական Թանգարան շնագլուխ մարդապատկեր քանդակված մի սյան խոյակ:



Նկ. 72. Աչտարակի կամուրջը



Նկ. 73. Ապարանի (Քասախի) բազիլիք եկեղեցին հյուսիս-արևելքից



Նկ. 74. Ապարանի (Քասախի) բազիլիք եկեղեցու հարավային ճակատը

Նկ. 75. Ապարանի (Քասախի) բազիլիք եկեղեցու արևմտյան մուտքի ճակատի քանդակները



Նկ. 76. Ապարանի (Քասախի) բազիլիք եկեղեցու հարավային փակված մուտքի ճակատի քանդակները

## 14. ԱՊՈՒՂԱՄՐԵՆՑ Ս. ԳՐԻԳՈՐ

Ներսի գմբեթագիր վեց աղեղները plein de cintre-են և փոքր ինչ retombe-ները ներս հակված դեպի կենտրոն՝ պայտաձևի նման: Խորանին մեջ նկատելի է ծեփին վրա պատկերներու հետքեր, խորանի գմբեթարդին մեջ, պատուհանեն վեր, կա մեծ պատկեր, որ հավանաբար Քրիստոսի պատկերն է, նման բյուզանդական ուրիշ օրինակներու: Պատուհանեն ցած ևս կան ամբողջական սրբոց պատկերներ լուսապսակ գլուխներով, հազիվ տեսնելի: Գմբեթարդի ճակատի կրկնակ աղեղներու ներքևին թե ճակատեն և թե տակեն մնացած են սրբոց մանր գլխապատկերների հետքեր, վրայի աղեղեն ներքևի մասի վրա կան զարդանկարներ:

Մյուս աբսիդներուն մեջ ալ հավանաբար եղեր են պատկերներ, բայց այժմ անհետացեր են կամ վրայեն ծեփված է, կամ ժամանակի ընթացքում թափված:

Որովհետև սեղանի անմիջապես հարավակողման կից աբսիդին մեջ հետքեր կան պատկերներու, որոնց մեջ նկատելի է մի գլուխ և մոտը մի ձեռք դեպի վեր բարձրացած, ձեռքին միջով անցած է մի սպիտակ գիծ, որպես թե բռնած է մի գավազան կամ տեգ: Անպայման ձեռքը կվերաբերի երևացող գլուխին և շատ նման է ձևավոր սուրբի մը դիրքին, ինչպես ս. Գևորգ: Ձեռքը բռնած գավազանին վերի ծայրը կանաչ գույնով դրոշակի նման մի բան կերևա, դրոշակը երկուքի ճեղքված ձևով. կկարծեմ, որ անպատճառ պատկերները ետին ժամանակ ծեփված են վրայեն բարակ շերտով. եթե շերտը հանվի՝ տակեն կերևի մնացյալ մասեր, ինչպես նաև ուրիշ աբսիդներու մեջ եղած պատկերներ, որոնք այժմ բոլորովին անհայտ են:

Խորանին կողմնակի ավանդատուններուն հավելումը հավանաբար եղած է շինութենեն քիչ հետո, որովհետև 11-րդ դարու ոճեն ալ հեռու է և մոտ նմանություն ունին հնագույն ոճերու պսակներուն բոլորշի ատամնաշարերով և նիշի մեջ եղած սյան խարիսխի քանդակով, որուն խոյակը խոյի գլուխ է միայն: Մանվածոները 10–11-րդ դարու արվեստին կպատկանին, հետևաբար ավանդատուն խորաններու սկիզբը կարող է համարվել սրանց հավելման ժամանակը Անիի և շրջակայից մեջ:

Նկ. 77. Ապուղամրենց ս. Գրիգոր եկեղեցու արևելյան լուսամուտի պսակը և արձանագրությունը

## 15. ԱՍՏՎԱԾԸՆԿԱԼ

Այս գյուղի մեջ կա մի մեծ եկեղեցի ընդարձակ գավթով, որը շինել է 1244 թ. Քուրդ իշխանը:

Կաթողիկեի կողքին կա մի փոքր ավերակ եկեղեցի, որի միայն պատերն են կանգուն. շինվածքի ոճը ցույց է տալիս 5-րդ դար:

Այս վերջինիս կողքին կպցրած են մի փոքր մատուռ, որուն մեջ ընկած է խիստ գեղեցկաքանդակ խաչքար:

Մեծ եկեղեցու հարավային կողմը և փոքրի արևմտյան պարիսպի մեջ կան չիրիմներ և գեղեցկաքանդակ խաչքարեր՝ 12–13-րդ դարերու:

Նկ. 78. Աստվածընկալի՝ Քուրդ իշխանի շինած եկեղեցու և ժամատան ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից



Նկ. 79. Աստվածընկալի՝ Քուրդ իշխանի կառուցած եկեղեցու գավթի արևելյան մասի ներքին տեսքը

## 16. ԱՎԱՆ

*Երևանի հյուսիս-արևելյան կողմը մի հայաբնակ գյուղ է Ավանը: Իր մեջ ունի 6-րդ դարու մի կիսավեր եկեղեցի, որը եղեր է իբրև հակաթոռ Արարատյան կաթողիկոսության: Ավանի եկեղեցին չինել է Հովհան կաթողիկոսը, որուն օրով Հունաց բաժնին մեջ էր գտնվում Ավանը: Բացի 6-րդ դարու այս կիսավեր եկեղեցուց՝ Ավանում կան նաև ուրիշ փոքր եկեղեցիների կիսականգուն մնացորդներ, որոնք հավանականորեն 13–14-րդ դարերուն կվերաբերին:*

## 17. ԱՐԱՅԻ ԳՅՈՒՂ

*Ապարանի շրջանում Շիրակալայի մոտ ավերակ գյուղ է Արայի գյուղը: Այս ավերակ գյուղին մեջ կա մի մեծ իջևանատուն քարաշեն, որուն տանիքը փլած է: Պատերը կանգուն են և դուռը հյուսիսի կողմից է, որու վրա հայերեն արձանագրություն եղած է, բայց քանդված լինելով մնացել է միայն 1213 (ՈԿԲ) թվականը:*

## 18. ԱՐԳԻՆԱ

*Արգինան իբրև բերդաքաղաք գոյություն ուներ տակավին 6-րդ դարեն ի վեր: 7-րդ դարուն պատերազմական մեծ անցքեր են տեղի ունեցեր այս շրջանում և շրջակա գյուղացիներ ապավիներ են Արգինայի բերդում (Սեբեոս):*

*Սակայն երբ Շիրակավանը դարձավ Բագրատունի թագավորների համար մայրաքաղաք 9-րդ դարուն մեջ, հավանական է որ այն ժամանակ Արգինան, որ հազիվ երեք կիլոմետրի չափ հեռու է Շիրակավանից, դարձավ կաթողիկոսական աթոռ, մինչև որ Անին եղավ մայրաքաղաք և կաթողիկոսական աթոռն ևս փոխադրվեց միասին:*

*Այժմ հին բերդերեն հազիվ մնացորդներ կան, իսկ հռչակավոր կաթողիկոսարանի ոչ մի հետքը չի մնացած, մնացել է միայն Խաչիկ կաթողիկոսի Տրդատ ճարտարապետի ձեռքով կանգնած կաթողիկեի հյուսիսային և արևմտյան պատերը (Խաչիկ Ա. կաթ. 972– 990) (տես Ա. Ժողովածու, էջ 305):*

*Նկ. 80. Ավանի եկեղեցու արևմտյան ճակատը 1939 թ. վերանորոգությունից հետո*



## 19. ԱՐՋԱԿԱՆ

*Բջնիի գետակի Հրազդանի խառնուրդի մոտ կգտնվի Արզական գյուղը, այստեղ կան երկու եկեղեցիներ, մեկը գյուղի հյուսիսային ծայրը՝ գերեզմանատան մեջ խարտյաշ քարերով չինված, հետո նորոգված ս. Գևորգ անունով: Մյուս եկեղեցին նոր է գյուղամիջին: Այս գյուղից քառորդ ժամ դեպի հյուսիս մի մենաստան ևս կա ս. Աստվածածին Նեղոսի անունով, եկեղեցին նման է Աստվածընկալին՝ գմբեթով և գավթով: Դռան վրայի արձանագրությունը 1271 թվականի է:*

## 20. ԱՐԹԻԿ

*Արթիկ նշանավոր հայ գյուղ է Շիրակ գավառի մեջ Արագած լեռան արևմտյան փեշերին վրա: Գյուղի մեջ կա երկու հնագույն եկեղեցի, որոնց մեկը ոչ միայն նշանավոր է իր մեծությամբ, այլև նշանավոր է իր հնությամբ, որ անվրեպ կպատկանի 7-րդ դարուն. այս եկեղեցվո մոտիկ, արևելյան հյուսիսային կողմը, կա մի ուրիշ եկեղեցի փոքր տարածությամբ, սակայն կպատկանի 5-րդ դարուն: Թեև վրան թվական չունի չինության, այնուամենայնիվ նրա հատակագծային ձևը անվրեպ կերպով ցույց կուտա որ 5-րդ դարուց հետո չէ:*

*Այս մեծ եկեղեցիին հարավային կողմը մի կամ մեկ ու կես կիլոմետր հեռավորության վրա 7-րդ դարու ս. Ստեփաննոսի Լմպատավանք եկեղեցին է:*

## 21. ԱՐՄԱՎԻՐ

*Ի հնումն անվանի մայրաքաղաք Հայաստանի: Հոկտեմբերյան շրջանին մեջ բարձրացած բլուրի վրա կա հին ամրոցը, որի շուրջը տարածված էր քաղաքը: Այս բերդը և քաղաքը շատ հին դարերու մեջ գոյություն ունեցեր է իբրև ուրարտական բերդ և ավելի հին նախաուրարտական, որոնց ապացույցներ դուրս են գալիս պեղումներով կամ խուզարկություններով: Այնտեղեն գտնված են բևեռագիր արձանագրություններ, հունարեն արձանագրություններ և այլ անծանոթ լեզվով նշանագրեր. ըստ Մ. Խորենացու Արմավիրի մեջ կար նաև արեգական և լուսնի պաշտման մեհյան:*

*Նկ. 81. Արթիկի 5-րդ դարի եկեղեցին հյուսիս-արևմուտքից*

Նկ. 82. Բագարանի եկեղեցու ընդհանուր տեսքը հարավից

## 22. ԱՐՈՒՃ
(Թալիշ)

Այրարատի Արագածոտն գավառի մեջ կգտնվի Թալիշ գյուղը, որուն նախնական անունն է Արուճ:

Այս Արուճ գյուղն ունի պատմական մեծ անցյալ, նույնիսկ նախաքրիստոնեական դարերում, որովհետև շրջանում շատ են տեսնվում հին ամրոցների և այլ շինությունների մնացորդներ. չափազանց հետաքրքրական կլինի այդ շրջանի հնագիտական հետախուզությունը, պատմական շատ առեղծվածներ կլուծվեն և նորություններ կարձանագրվեն:

Փոքր մի ձորով բաժանված է Շամիրան կամ Շամիրամ գյուղը, որ ամբողջովին նախապատմական հնություններով շրջապատված է, որ թերևս ի հնումն մեկ շրջան էր կազմում Արուճի հետ:

Արուճի մեջ, բացի գմբեթից, կանգուն է Գրիգոր Մամիկոնյանի յուր իշխանությանն անցնելուց (670) հետո կանգնած եկեղեցին, որ մի գոհար է 7-րդ դարու մեջ: Պատմական ճարտարապետության հետագայում գրեթե շատ քիչ շենքեր հավասարվել են 7-րդ դարու կոթողներու ճարտարապետական հարաբերություններին: 7-րդ դարի մեջ կանգնած են Մրենի, Բագարանի, Թալինի, Արթիկի, Մաստարայի և այլ հոյակապ շենքերը, որոնց մասին կարելի է հատորներ գրել:

Արուճի եկեղեցին ոչ միայն իր մեծությամբ և բարձրությամբ նշանավոր է, այլ շինարարական տեսակետով ևս սքանչելի է: Պատերը սրբատաշ մեծ քարերով շատ գեղեցիկ շինված են: Ուրիշ 5–7-րդ դարու շենքերին նման խոշոր պատուհաններ ունի, մի ժամանակ, անշուշտ 16–17-րդ դարերում բերդի տեղ գործածեր և բուրգը շինել են, որով բռնի խաթարել են մի քանի տեղ, եթե ոչ այդ խաթարումներն ևս պետք է չունենար: Հայտնի չէ, թե երբ է ընկած գմբեթը:

Պատմագիրների հիշատակած Գրիգոր Մամիկոնյանի ապարանքը, որուն Հովհաննես Դրասխանակերտցի պատմագիրը արքունիք է անվանում, գտնվում է տաճարի հարավային կողմը մի քանի տասնյակ քայլի վրա ձորեզրին շինված, որուն միայն ներքին հարկի պատերն են մնացել, մոտավորապես մեկ կամ մեկ ու կես մետր ավելի կամ պակաս բարձրության: Չափազանց հեշտ է և հետաքրքրական այս ապարանքի պեղումը, որով միայն լիակատար գաղափար կունենանք 7-րդ դարու իշխանական ապարանքի մասին: Այս ապարանքի մնացորդ պատերը, որը եկեղեցու նման սրբատաշ մեծ քարերով են շինված, ցույց կուտան թե որչափ



*չքեղ էր ամբողջ շենքը: Ապարանքից քիչ ցածր, ձորի լանջին, տակավին կա այն աղբյուրը (եթե հոգ տարվի, մշտնջենապես ջուրը վազում է), որ շինել է տվել Գրիգոր Մամիկոնյան: Պատմագիրները հատկապես հիշատակում են այդ աղբյուրը:*

## 23. ԱՐՏԱՇԱՎԱՆ

*Աշտարակի շրջանի այս գյուղին մեջ կան զանազան հնություններ, բայց հողին հավասարած և ինչ լինելը անհայտացած: Միայն մի փոքր մատուռի մնացորդ կա, որ 12–13-րդ դարու շենքի լինել կկարծվի:*

## 24. ԲԱԳԱՐԱՆ

*Բագարանը նախաքրիստոնեական ծագում ունի. այնտեղ խուզարկուն շատ կգտնի նախաքրիստոնեական հնագույն պարիսպների և բնակարանների մնացորդներ ընդհանրապես որձաքարերով շինված, թեև այժմ հազիվ երևում են և մասնագետ խուզարկուին միայն ուշադրություն են գրավում: Իսկ քրիստոնեական շրջանում, գլխավորաբար Բագրատունիների սեփականություն և մայրաքաղաք դառնալուց հետո մնացորդներ և ավերակներ շատ կան կիսականգուն: Բայց նախքան Բագրատունիները Բուտ Առավեղյան իշխանը 7-րդ դարուն շինել է այնտեղ մի եկեղեցի, որուն այժմ ս. Թեոդորոս անուն են տալիս, իսկ ս. Թեոդորոսի գտնված բարձր տեղին հյուսիսային կողմը, որ ձորանման խորը եղած է, այդ խորության մեջ կա հին քաղաքատեղի որձաքարերով տներ շինված և գեղարվեստական մի եկեղեցվո ավերակ: Այս ավերակի դիմաց գետի աջ կողմին կա ս. Շուշան անունով մի եկեղեցի: Կիսավեր մի շենք, որը անշուշտ ի հնումն կամուրջով կապված էր գետի ձախ ափին հետ, ուր կգտնվին քաղաքը, բերդը և ուրիշ զանազան եկեղեցիներ: Գետեզերքին մոտ քաղաքի հյուսիսային կողմը կան զուգահեռաբար շարված երեք բլուրներ, որոնց ամենաբարձրը շրջապատված էր պարիսպով, որոնց մնացորդները միայն կան, իսկ ծայրին՝ այժմյան ս. Գևորգ եկեղեցին, որ հաճախ նորոգված է և ուխտատեղի է ժողովրդական:*

*Բարձր բլուրները, որ երեք հատ են և ամենաբարձրը շրջապատված է պարիսպով և երկնցած են հյուսիսից հարավ, հյուսիսային ծայրին կա ս. Գևորգի եկեղեցին: Մյուս բլուրները աստիճանաբար փոքր և ցածր են, թեև վրաները երևում են շինության հիմերի մնացորդներ, սակայն պարիսպի հետքեր չկան:*

Նկ. 83. Բագարանի բերդի ավերակները

## 25. ԲԱԳՆԱՅՐ

*Անիից 6–7 կիլոմետր դեպի արևմուտք, Ալաճա լեռան ստորոտին վրա կգտնվեր Բագնայրը (Ղոզլիճա): Գյուղի մեջ կան 4 եկեղեցիներ՝ մեծ և փոքր. ամենամեծը շինել է Պահլավունի Սմբատ Մագիստրոս (11-րդ դարուն), ունի ընդարձակ գավիթ, այս գավթին մեջ կան ճարտարապետական և շինարարական ուշագրավ մասեր: Մեծ եկեղեցիի հարավային կողմը կան երկու փոքր եկեղեցիներ, և այս եկեղեցիների արևմտյան կողմը նույնպես սյունազարդ կամարակապ գավիթ՝ հարավից, բացօթյա:*

*Գյուղի հյուսիս-արևմտյան ծայրում կա մի ութանկյունի փոքր մատուռ: Գյուղից դեպի հարավ-արևելք 5–6 կիլոմետր հեռավորության վրա Ալաճա լեռան ամենամեծ բարձրության գագաթի վրա կա կրկնակի պարսպապատ մի բոլորակ շինություն, որի շատ հին պաշտաման մի վայր լինելն անկասկած է:*

Նկ. 84. Բաղնայրի երեք եկեղեցիների խումբը հարավ-արևմուտքից

## 26. ԲԱՐԶՐԱՔԱՀ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԿԱՄ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ ՎԱՆՔ

*Կգտնվի Ալավերդու [Թումանյան] գյուղի մոտ, շինված է 11-րդ դարուն մեջ, Մամիկոնյաններու ձեռքով. կանվանվի նաև Ճերմակ վանք. արտաքին ձևը բոլորովին պարզ է և հրաբխային գունավոր քարերով շինված է. պատուհանները փոքր և շրջանակաձև. ուշադրավ է տանիքի պսակը, որ զարդածված է նույնպես ուրիշ տեղեր ժամանակակից շինություններու մեջ:*

*Այս եկեղեցվո արևելյան պատի վրա կգտնվի երկգլխանի գեղաքանդակ արծիվ թևատարած, ճանկերուն մեջ գառն բռնած:*

*Բացի կարնիզեն այս եկեղեցիի անկյունները սուրուրիկ ձևով անկյունավոր կտրված և ստալաքթիթ գմբեթաթարդով դեպի դուրս հակած և տակի երկու անկյունները մեկ հատի վերածված է, եթե ուշադրության առնենք 11-րդ դարուն հայոց մեջ գտնված ըլլալուն, այն ատեն պետք է լրջորեն քննել, թե ե՞րբ մտավ ստալաքթիթի արվեստը հայոց մեջ: Մինչդեռ կկարծվեր, որ արաբական արվեստը մտած էր հայոց մեջ 12–13-րդ դարեն ոչ առաջ:*

Նկ. 85. Բարձրաքաշ սբ. Գրիգոր եկեղեցու գավթի արևելյան արտաքին պատի կենտրոնական մասը



## 27. ԲՅՈՒՐԱԿԱՆ

*Բյուրականը մի մեծ գյուղ է Արագածոտն գավառի մեջ Աշտարակի շրջանում, Ամբերդի մոտ: Հովհաննես պատմաբան կաթողիկոսի օրով (10-րդ դար) կհիշվի մի ամրոց այս գյուղում, որ մեծ և արյունահեղ կռիվ եղած է բերդում և ապավինողների պարտությամբ վերջացած է: Ակնարկված բերդը այժմ գոյություն չունի, տեղն էլ հայտնի չէ, սակայն կա մի եկեղեցի, որու շինությունը պատմաբան Հովհաննես կաթողիկոսին է վերագրվում: Շինությունը ուշադրության արժանի է, թե մեծության տեսակետով և թե որմնադրական ըստ ամենայնի ուշադիր և օրինական աշխատությամբ: Ներքին կողմը հյուսիսային և հարավային պատերի վրա որմայուներ կան, որոնց խոյակները շատ գեղեցիկ են և պարզապես, արևելյան հատկանիշ ունեն իրենց ճոխ քանդակագործության մեջ:*

*Այս եկեղեցին մի հատկություն ունի կրոնական տեսակետով, որով բոլորովին կտարբերվի, առանց բացառության, մյուս եկեղեցիներից: Իմ Տեկորի ուսումնասիրության մեջ ես ապացուցել էի, որ նախաքրիստոնեական տաճարը սկզբում, երբ եկեղեցիի էին փոխարինում, արևելյան ծայրին մի ուղղանկյուն խորություն են թողած իբր քարոզի կամ պատարագի ամբիոն. սակայն հետո, երբ կիսաբոլորակ աբսիդները ընդհանրացան, Տեկորի եկեղեցուն վրա ևս շինել են կիսաբոլորակ աբսիդ: Սակայն հետաքրքրականն այն է, որ 10-րդ դարուն շինված մի եկեղեցիի աբսիդը, փոխանակ կիսաբոլորակի՝ շինված է անկյունավոր՝ պատշաճ խորությամբ: Սա նշան է, թե կիսաբոլորակ ձևը անպայման կրոնական պահանջ չէր, քանի որ անկյունավոր աբսիդը ևս նույն պաշտոնը կկատարեր, նույնիսկ Հովհաննես պատմաբան կաթողիկոսի վերին հսկողությամբ շինված եկեղեցիի մեջը:*

*Հին հուշարձանների մնացորդներ այս գյուղի մեջ աստանդական երևում են – սակայն չափազանց աննշան. միայն ուշադրության արժանի է գյուղի արևելյան կողմը գրեթե երկու կիլոմետր հեռավարության վրա Արտավասիկ տեղին վրա մի փոքր եկեղեցի, կիսափուլ, որու քարերի վրա քարտաշ վարպետների նշաններից երևում են, որ շենքը անվրեպ 7-րդ դարուն կպատկանի: Իսկ այս փոքր եկեղեցիի հանդեպ, արևելյան կողմին վրա կա մի մեծ հուշարձան խաչքարերով և զարդարուն շրջանակներով, որը ըստ երևույթին, 12–13-րդ դարու գործ է և անկախ է իր դիմաց եղող 7-րդ դարու մատուռից:*



Նկ. 86. Բյուրականի ս. Հովհաննես եկեղեցին հարավ-արևելքից

## 28. ԲՈՒԺԱԿԱՆ

*Արայի լեռան արևելյան ստորոտներին մոտ կգտնվի Բուժական գյուղը Ապարանի շրջանում: Այս գյուղից 2–3 կիլոմետր դեպի հյուսիս, լեռանց ձորերուն մեջ կան անծանոթ մենաստանի մը ավերակները: Մնացորդներից երևում է, որ եկեղեցին հոյակապ և սյունազարդ է եղած, և հատ ու կտոր արձանագրություններից երևում է, որ Վաչուտյանների ձեռակերտն է, նույն իսկ Մեծ Քուրդի կամ նրա կնոջ հոր, ինչպես գրված է տաճարի հյուսիսային կողմի պատին ներսի կողմը 1211 թվականի արձանագրության մեջ:*

## 29. ԲՋՆԻ

*Ախտայի շրջանում, Հրազդանի աջ ափին հին գյուղ է Բջնին, որի մեջ համարյա թե կանգուն է հնագույն մի բերդ, բարձր քարաբլուրի մը վրա: Արևելքից և հարավից իսպառ անմատչելի է, ուրիշ կողմանե փոքր ինչ մատչելի բարձր պարիսպներով և աշտարակներով ամրացած է բերդը: Գագաթին վրա ցրված են շինվածոց բեկորներ, որոնց երկուքը կոփածո քարերով եկեղեցիներ լինել կթվին: 10-րդ դարուն բազմամարդ քաղաք եղավ այս տեղը Պահլավունիներու տիրապետության օրով: Այստեղ Գրիգոր Մագիստրոս Պահլավունին շինեց մի եկեղեցի ս. Աստվածածին անունով, որ ներկայիս կանգուն է՝ անսյուն գմբեթավորված: Հարավային կողմը դռան վրա արձանագրություն կա 1031 թվականի: Բացի այս արձանագրություններեն կան նաև ուրիշ շատ արձանագրություններ, որոնք կհասնին մինչև 1358 թվական:*



Նկ. 87. Բջնիի բերդապարիսպների ավերակները

Նկ. 88. Բջնիի եկեղեցու արևելյան ճակատը

## 30. ԳԱՅԱՆԵ

Հիմնարկության թվականը 630. Եղբ կաթողիկոսի ձեռքով: Նախքան Եղբի հիմնարկությունը այնտեղ գոյություն ունեցող նախկին խրթին մթին շենքի մասին:

Եկեղեցուց դուրս քահանայից բնակարան շինելու մասին:

1652 թվականին Փիլիպոս կաթողիկոսի վերաշինությունը և ավերյալ վիճակի նկարագրությունը: 1188 թվականին Եղիազար կաթ. կշինե արևմտյան գավիթը:

## 31. ԳԱՌՆԻ

Երևանից 30 կիլոմետր հեռավորության վրա անվանի հին բերդաքաղաք: Գյուղի հարավ-արևմտյան կողմը Ազատ գետի ափունքին բարձրաբերձ ժայռերի վրա տակավին չէ կորած Տրդատ թագավորի շինած Խոսրովիդուխտի հոյակապ հովանոցի ավերակները և ըստ պատմական տվյալների Ներոնի ժամանակակից հեթանոս Տրդատի շինածն է առաջին դարուն:

Արևմտյան կողմին գրեթե կից կա բոլորակ կամ ութանկյունի մի շենքի մնացորդ հազիվ հիմերը նշմարելի:



Գյուղին մեջ կա մեծ եկեղեցու ավերակ, որուն հյուսիսային պատն է միայն մնում: Այգիների մեջ կա փոքր, բայց խիստ գեղարվեստական մի մատուռ:

Գյուղի արևելյան կողմը կան դարձյալ երկու փոքր մատուռներ կիսավեր վիճակի մեջ, իսկ հյուսիս-արևմտյան կողմը կա մի մեծ գերեզմանատուն խաչարձաններով:

## 32. ԳՈՀ ՄԽԻԹԱՐԻ ՎԱՆՔ կամ ՆՈՐ ԳԵՏԻԿ

Նոր Գետիկի կամ Գոշ Մխիթարավանքը հիմնված է 1191 թվականին Գոշ Մխիթար վարդապետի ձեռքով Արցախի Քուստ գավառի մեջ:

Այստեղ ի հնումն կար Գետկա վանք, որ երկրաշարժից սաստիկ մնասված էր, Գոշ Մխիթար նորը հիմնեց և կոչեց սուրբ Աստվածածին անունով: Այս վանքն ունի բացի Աստվածածին եկեղեցուց նաև ուրիշ եկեղեցիներ զանազան ժամանակներում հիմնված:

Աստվածածին եկեղեցի հարավային պատին կից կա ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին. երրորդ եկեղեցին է ս. Կարապետ, որ կից է Աստվածածին եկեղեցի գավթի հարավային կողմին: Գոշավանքում այս եկեղեցիների ուշադրավ կառուցվածքի մանրամասնություններից զատ կան նաև չափազանց գեղաքանդակ խաչքարեր:

## 33. ԴԱՐԲԱՆԴ

Լենինականից 7–8 կիլոմետր հեռավորության վրա դեպի հյուսիս, Դարբանդ գյուղի կողքին կա մի հին գերեզմանատուն, որն այժմ ևս կծառայե նույն նպատակին: Սույն գերեզմանատան մեջ կան մի քանի հատ հեթանոսական շրջանի կոթողաձև քառակուսի գերեզմանաքարեր վրաները քանդակված: Այս քարերեն մեկ հատը Հակոբ Կարանյանցը փոխադրեց Լենինական և այժմ էլ գտնվում է Հայաստանի Պետական Պատմական թանգարանում:

Գյուղին մոտիկ կա ուրարտական շրջանի ամրոցի մի պատ, հսկայական անտաշ քարերով շինված:

## 34. ԴԴՄԱՀԵՆ

Ռնդամալից արևմուտք կգտնվի Դդմաշեն գյուղը: Այս գյուղում կա հին քարաշեն եկեղեցի, որուն տանիքը և գմբեթը ընկած է: Գյուղացիք տանիքը փայտով ծածկած են:

## 35. ԴԻԼԻՋԱՆ

Նշանավոր ամառանոց է Դիլիջանը, շրջակաները և մեջն ունի հնություններ: Անհրաժեշտ է մանրամասն ուսումնասիրել այս շրջանը, որովհետև հավանականություն կա արտաքին նշաններից, որ ոչ միայն քրիստոնեական շրջանի այլև նախաքրիստոնեական շատ հնություններ պիտի գտնվին այս շրջանում:

## 36. ԴԻՐԱԿԼԱՐ

Այս գյուղի այժմյան եկեղեցին հնագիտական շատ կարևոր տեղ կբռնե: Սա եղած է ի հնումն հեթանոսական տաճար. 5-րդ դարուն վերածված եկեղեցիի, 10-րդ դարուն նորոգված կրկին. հետո թողված բախտին: Վերջին տարիներս նոր եկող բնակիչներ նորոգելով վերածել են գյուղական եկեղեցիի:

Այս գյուղից շատ են գտնվում հեթանոսական իրեղեններ: Այստեղից գտնված է մի բրոնզյա ձուլված փոքր եզ: Շրջապատում կան չպեղված կուրգաններ:

## 37. ԴՊՐԵՎԱՆՔ կամ ԴՊՐԱՎԱՆՔ

Դպրեվանքը գյուղ է Անիի հյուսիսային կողմը: Վանքի արձանագրության մեջ հիշված անուններեն ոմանց վրա հիմնվելով այս շենքի հիմնարկությունը համարվում է 7-րդ դարը: 10-րդ դարուն Աբաս թագավորի ժամանակ նորոգվեց. միշտ չեն է եղած այս վանքը և նշանավոր վարդապետներ ապրել են այստեղ:

## 38. ԴՎԻՆ

Գառնիից դեպի հյուսիս-արևմուտք 8–10 կիլոմետրի վրա, Արտաշար գյուղին կից են Հայաստանի երբեմնի մայրաքաղաք և Մերձավոր Արևելքի կենտրոն հանդիսացող Դվինի ավերակները, որտեղ գետնի երեսին միայն մնացել են պարիսպները, որոնք հետզհետե քանդվելու և ոչնչանալու վրա են:

Խաչիկ վարդապետը բացած է այստեղ 7-րդ դարեն կանգնված հսկայական ս. Գրիգոր եկեղեցին, որն իր մեծությամբ գերազանց է բոլոր Հայաստանի մեջ գտնված եկեղեցիներեն: Մինչևաբերդը նույնպես ավերակ է և բազմիցս փորված ու խուզարկված ժողովրդի կողմանե. այնուամենայ-

նիվ պեղումները շատ բան կարող են պարզել այս պատմական նշանավոր քաղաքի մասին:[1]

## 39. ԵՂՎԱՐԴ

Աշտարակի շրջանում, Արայի լեռան ստորոտին, գտնվում է այս նշանավոր գյուղը, որուն հետ կապված են անընդհատ պատմական անցքեր, սկսած 5–18-րդ դար, որոնց մասին պատմաբանները գրել են արդեն: Ճարտարապետական հուշարձանների տեսակետով նշանավոր է այս գյուղն իր մեջ զանազան դարերի հուշարձանների հոյակապ մնացորդներն ունենալով: Ամենանշանավոր շինության մնացորդն է այս գյուղում այն մեծ կաթողիկեն, որու ներքևից մեկ երկու մետր բարձրությամբ պատերն են մնացած: Այս կաթողիկեի շինությունը վերագրվում է եղվարդեցի Մովսես կաթողիկոսին (574–603): Շուրջը մեծատառ արձանագրություն թեև կա, սակայն ինձ կթվի թե, դեռ մանրամասն ստույգ կարդացող չէ եղած: Այնուամենայնիվ շենքը 6-րդ դարու լինելուն ոչ մի կասկած չկա, որովհետև այդ տիպը միմիայն 6-րդ դարում գոյություն ունի, ինչպես Արթիկի փոքր եկեղեցին, ինչպես Դվինի ս. Գրիգոր եկեղեցին և այլն և այլն: Իսկ այս եկեղեցու հյուսիս-արևելյան կողմը դարձյալ կա մի ավերակ, որուն պատերը մեկ կամ մեկուկես մետր բարձրության մնացել են, միանգամայն 5-րդ դարու գործ է: Ցավոք սրտի արևմտյան դռան վերև գտնված 10 կամ 11-րդ դարու մեծ արձանագրությունը բարբարոս ձեռքեր կոտրել և գործածել են հարևան շենքի մեջ:

Նկ. 89. Եղվարդի 6-րդ դարի բազիլիք եկեղեցու ավերակների ներքին տեսքն արևմտյան կողմից

[1] 1937 թվին ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալը ձեռնարկեց Դվինի սիստեմատիկ պեղումները, որոնք հսկայական նյութ տվին 5–13-րդ դարերի պատմության համար: Պեղումները շարունակվելու են մի քանի տարի ևս:

Կազմող





Նկ. 90. Եղվարդի 14-րդ դարի եռահարկ եկեղեցին հարավ-արևմուտքից

Գյուղի հարավ-արևելյան ծայրում կա մի չքեղ եկեղեցյակ, որ նաև Զանգակատուն անունն ունի: Շինված է ձեռամբ ոմն Ազիզբեկի 1321 կամ 1328 թվականին (վրան երկու արձանագրություն կա, առաջինը ձեռով գրված, երկրորդը քանդակված): Եկեղեցին երեք հարկանի է, առաջին և երկրորդ հարկերում պատարագի սեղաններ կան, իսկ երրորդ հարկը մի սյունազարդ զանգակատուն է: Արտաքին ճակատներն այնքան գեղարվեստականորեն քանդակագործված են, որ Հայաստանի 13 և 14 դարերի արվեստագետներին և ճարտարապետներին մեծ պատիվ կբերի:

## 40. ԵՐԵՐՈՒՅՔ

Երևան–Լենինական երկաթուղագծի վրա, Անի կայարանից մեկ կիլոմետր հեռու, Անի-Պեմզային կից կանգուն է մի կիսավեր եկեղեցի անգմբեթ, տանիքը փլած է, իսկ հսկայական սրբատաշ քարերով շինված պատերը տակավին կանգուն են. եկեղեցին իր շուրջն ունեցեր է սյունազարդ սրահներ: Անվիճելի է, որ 5-րդ դարուց այս կողմ չի կարող լինել նրա հիմնարկությունը: Ունի երեք դուռ, մեկը արևմտյան կողմում, իսկ երկուսը հարավային կողմում: Վրան կա 10–11 և 13-րդ դարու արձանագրություններ: 1038 թվականի մի արձանագրություն կա հարկերի բաշխման մասին:

Շուրջը թափված են քանդակազարդ խոյակներ. բարձրաքանդակ պատկերներով քառակուսի կոթողաձև գերեզմանաքարեր, որոնց մեկ քանին պրոֆ. Ն. Մառը փոխադրեց Անիի թանգարանը:

Եկեղեցու արևելյան կողմը 15–20 քայլի վրա կա նաև մի փոքր շինություն, թերևս եկեղեցուն ծառայող մի շենք է:

## 41. ԵՐՎԱՆԴԱՇԱՏ

Պատմության մեջ միայն գոյություն ունի Երվանդաշատ քաղաքի անունը. նախապես գոյություն ունեցել է Արաքսի ափին Ախուրյանի խառնուրդին մոտը: Այսօր այդ անվանի քաղաքին տեղը բռնել է Բախչալար (Հաջի Բայրամ) գյուղը: Առաջին դարու մեջ Երվանդ անունով Հայաստանի գահին ձգտող մի մարդ, հիմնեց Երվանդաշատ քաղաքը և իր անձնական ապահովության համար շինեց քաղաքի թիկունքին բարձր լեռնանման բլուրի վրա մի ամուր բերդ, որուն ավերակները մինչև այժմ գոյություն ունեն և զարմանք է պատճառում այցելուին ոչ միայն դիրքի ամրության համար, այլև բերդապարսպի մեջ բազմաթիվ բնակության բաժանումներին համար, որ կնշանակե, թե Երվանդն իր ապահովության համար ինչքան համակիրներ հավաքել էր այդ ընդարձակ բերդին մեջ:

Բերդապարիսպները նախաքրիստոնեական ձևով անշաղախ վիթխարի որձաքարերով շինված էր, սակայն մի առավելություն ևս ուներ, որ բոլոր քարերը միմյանց կապված էին երկաթով: Եթե դժվար է վերև բարձրանալ և բերդը անձամբ տեսնել, Հաջի Բայրամ գյուղացիների բերդից ցած գլորած քարերի վրա կարելի է պարզ տեսնել երկաթի կապերի նշանները: Այս բերդի մասին էր, որ Խորենացին կատարյալ հափշտակությամբ գրում էր, թե Երվանդը ինչքան ծախքեր էր արած այս բերդի շինության համար. ինչքան հնարավոր միջոցներ ձեռք էր առած, որպեսզի թշնամու ձեռքը չընկնի այս բերդը: Երկաթե սանդուխքներ է շինել տվել և այլն և այլն, այս մասին հետաքրքրվողը թող կարդա Խորենացու առաջին գրքի ԼԸ գլուխը:

Պետք է ասել, որ հին քաղաքից մի քանի նմուշներ մնացել են ստորոտում, որոնք ամուր որձաքարով շինված են, վիթխարի քարերից դռան բարավորներ կան բնակարանների մուտքի համար,

միայն թե այլևս վրաները ծածկույթ չունեն, այս նախնական բնակարանները կարելի է տեսնել Ախուրյան գետի ձախ եզերքին, գյուղից բավականին բարձր, որովհետև գետամոտ տեղեր այժմ գրավված է Բախչալարի բնակչության կողմից:



Նկ. 91. Զովունու 7-րդ դարի եկեղեցին հյուսիս-արևելքից

## 42. ԶԱՐՆՃԱ

Թալինի մոտերքը, Արագածի լանջերուն վրա մի գյուղ է Զարնճան: Այս գյուղի մեջ կա մի փոքր, բայց շատ վայելչաշեն եկեղեցի հավանորեն 11–12-րդ դարերու գործ: Գյուղացիք նորոգելով շիներ են գյուղական եկեղեցի:

## 43. ԶՈՎՈՒՆԻ

Ապարանի շրջանի գյուղերից մեկն է (հին Մոլլա Ղասում): Գյուղի մեջ կա մի եկեղեցի 5-րդ դարու, ինչ որ մի Գնթունի իշխանի շինած. արևելյան կողմի խորանը քառակուսի է, հակառակ սովորական անկյունավոր կամ կիսաբոլորի: Նշաններ կան որ ունեցեր է այունասրահ:

Այս եկեղեցվո մոտերեն գտնված են կղմինդրներ նորոգության ժամանակ, որոնք ապացուցում են, որ մի ժամանակ կղմինդրներով ծածկված է եղեր ինչպես Զվարթնոց, Մրեն, Բագարան, Տեկոր և այլն և այլն:

Այս եկեղեցվո արևելյան կողմը քառորդ կիլոմետրի վրա կա ավելի մեծ մի եկեղեցու ավերակ, թեև հողին հավասարված, այնուամենայնիվ ձևը հայտնի է, որ եղեր է Թալինի մեծ Կաթողիկեի նման խաչաձև հատակագծով, շուրջը թափված քանդակազարդ խոյակներ, և ուրիշ բեկորներ գինքը կտանին մինչև 5-րդ դար:

Այս գյուղի շրջանում շատ կան զանազան տեղերու վրա քառակող կոթողաձև պատվանդանավոր գերեզմանաքարեր, իսկ մի ժայռի մեջ փորված կա մի տապան կամ գերեզման, որուն վրա կափարիչ չկա:[2]

## 44. ԹԱԼԻՆ

Այրարատ նահանգի Արագածոտն գավառի մեջ կգտնվին Հին և Նոր Թալինները, որոնք այժմ ապառաժոտ և ժայռոտ վայրերու վրա հիմնված գյուղեր են: Անշուշտ հին ժամանակ Թալինը մի կարևոր և բազմամարդ շրջան էր, որի պատմական մեծ անցքերը կապված են այդ անվան հետ և հոյակապ շենքեր են շինված այնտեղ նույնիսկ ամենահին ժամանակներու մեջ:

[2] Այդ կափարիչը գտնված և բերված է Պետ. Պատմ. Թանգարան և պատկանում է Դավիթ Գնթունուն:



Նախաքրիստոնեական շրջանում կառուցվել է մի կիկլոպյան ամրոց, ներկայիս Կյոզեք Թեփա անվանված սարի վրա, որտեղ մի լուրջ քննական պտույտ բավական է տեսնելու համար ոչ միայն նախաքրիստոնեական գերեզմաններ, այլև անշաղախ խոշոր քարերով կառուցված մարդկային բնակարանների մնացորդներ: Քրիստոնեական շրջանի գերեզմաններ եղել են տարածված Թալինի մոտերքը քառակուսի քանդակազարդ կոթողներով, որոնք 5–7-րդ դարուն հատուկ են և անշուշտ շարունակությունն են հեթիթական սովորության:

Ըստ Հ. Ղ. Ալիշանի, քրիստոնեական երկրորդ դարում ծանոթ է այս տեղը հույն աշխարհագիր Պտղոմեոսին Թալինա անունով: Իսկ 7-րդ դարում ոչ միայն շեն և բազմամարդ է երևում այս շրջանը, այլև Կամսարականների տոհմի բնակավայրն է եղած, ուր կանգնել են մեծամեծ շինություններ, որոնց երկուքը հասել են մեզ: Կան նաև բազմաթիվ հետախուզության կարոտ ավերակներ և շինության հետքեր: Եթե այս ավերակները հետախուզվին, անպայման մինչև այժմ մեզ անծանոթ պատմական տեղեկություններ պիտի հավաքվին: Ես կարծում եմ, որ Կամսարական Ներսեհի շինած եկեղեցիի մեջ Հայաստանի Հն. Պահպ. Կոմիտեի ջանքերով հավաքված բարձրաքանդակ գերեզմանակոթողները կապ ունեն Կամսարականների տոհմի հետ և նրանց մեկ քանիսին վրա իշխանական տարազով քանդակված մարդկանց պատկերները թերևս նույնիսկ Կամսարականներն էին:

Մեզ հասած հոյակապ շինություններեն մեկը, որ շատ աննշան կերպով մնասված է, կանգնել տվել է Ներսեհ Կամսարականը 7-րդ դարու մեջ: Իսկ մյուս շատ չքեղ երևույթով հսկա շենքը, դարձյալ Կամսարականների գործ է և չափազանց հոյակապ է թե արտաքուստ և թե ներքուստ:

Թեև քանդումների և փլուզումների պատճառով մեծ շենքի վրա շինության արձանագրություն չկա, սակայն կասկած չի կարող լինել, որ այս շրջանը Կամսարականների ցեղին էր պատկանում, ավելի վաղ քան 7-րդ դարը: Թե՛ այս շենքերի և թե՛ 7-րդ դարի գեղարվեստական ճաշակը ցույց տալու համար այստեղ կբռնենք նմուշներ նրանց ճարտարապետական շինանմուշներից:

Մինչև այժմ իմ տված տեղեկությունները կվերաբերեն Հին Թալինին: Մոտավորապես 4–5 կիլոմետր դեպի արևմուտք կգտնվի Նոր Թալինը, որ նույնպես նոր չէ և ունի պատմական անցյալ, որի մասին ավելորդ չի լինի մի քանի խոսք ասել:

Երևում է, որ հին ժամանակ Թալին անունը վերաբերում է ընդարձակ մի շրջանի, որի մեջ պարունակում էր Նոր Թալինը և շրջակա ուրիշ վայրեր: Նոր Թալին անունը հին չէ, վերջին դարերի մեջ այն շրջանի մեջ ապրող ժողովուրդն է տվել այդ անունը. կարծում եմ, որ այս Նոր Թալին անվանվածն էլ այնքան հին է, որչափ որ Հին Թալին անվանվածը, որովհետև Թալինների լեռնադաշտին ստորոտը (Նոր Թալինի շուրջը) մինչև Հոկտեմբերյան ձգվող ճանապարհի վրա, 50–150 մետր հեռավորության վրա, շարված են ամենահին ժամանակների հսկայական քարակույտ դամբարաններ. երբ վերջանում է Թալինի հատուկ լեռնադաշտը, վերջանում են նաև դամբարանները: Լեռնադաշտին վրա Նոր Թալինից երկու կամ երեք կիլոմետր հեռավորության վրա կա մի 7-րդ դարու շենք, կողքին գերեզմանատնով: Շենքին վրա կա 11-րդ դարու արձանագրություն, բայց ոչ շինության, այլ նվիրատվության:

Նկ. 92. Թալինի կաթողիկեի կենտրոնական թևի արևմտյան տեսքը ներսից

Նկ. 93. Ներքին Թալինի միջնաբերդի պատերը

Նոր Թալին անվանված այժմյան գյուղը ամբողջովին պարսպապատ է, բայց այս պարիսպները շատ նոր են և հայտնի չէ թե հին պարիսպների մնացորդների վրա են շինված, թե՞ բոլորովին նոր ժամանակ շինված է այս արտաքին պարիսպը. սակայն պարսպամիջի, բացի հին բնակավայրերի մնացորդներից, կան կիսավեր եկեղեցիներ 11 և 13-րդ դարերի թվակիր արձանագրություններով: Այս շրջապատ պարսպի մեջ, դեպի ընդարձակ դաշտերը նայող մի բարձր տեղի վրա, շինված է մի միջնաբերդ, կամ ավելի ճիշտ մի դղյակ, որ ինչպես կերևի Զաքարյան մեծ տոհմի շառավիղներեն Աղպուղային կվերաբերեր: Այս Աղպուղան 1267 թվականին մի արձանագրություն քանդակել տված է միջնաբերդի պատի վրա, որով կհայտնե, թե ինչ որ գինիի տուրք վերացնում է բնակչության վրայից: Այստեղ հարկ է ավելացնել, որ մասնավորապես Նոր Թալինի շրջանում եղել են պարտեզներ և խաղողի այգիներ, որոնք այժմ համարյա թե գոյություն չունեն:

Զափազանց հետաքրքրական և կարևոր մի հուշարձան է Հին և Նոր Թալինների ճանապարհի միջին կետի վրա տակավին գոյություն ունեցող իջևանատունը, որ 12–13-րդ դարու գործ է: Մեծ և հոյակապ շինություն է, արտաքին պատերը բուրգերով ամրացած են, ամբողջ շենքը շինված է սրբատաշ քարերով, մեջն ունեցել է բազմաթիվ սենյակներ ճանապարհորդների համար, ապաստարաններ բեռնատար կենդանիների համար և ուրիշ բաժիններ զանազան կարիքների հատուկ: Ժամանակը շատ քիչ վնաս է տվել այս շենքի ամբողջությանը, քան բարբարոս մարդկանց ձեռքերը, այժմ էլ գյուղացիք պատմում են և անունները տալիս են այն մարդկանց, որոնք իջևանատան սրբատաշ քարերը փոխադրել են գյուղերը և իրենց համար շենքեր շինել:

Դեռ ուշ չէ այս մեծ և հոյակապ շենքի հատակագիծը հանել և վերակազմել ամբողջությամբ. եթե մի քիչ էլ ուշանա, արդեն ամեն հույս կկորչի շենքի մանրամասն վերակազմությունն ունենալու համար:

## 45. ԽԾԿՈՆՔ

Խծկոնք կամ Խծկունք ոչ միայն հասարակաց ուխտատեղի է, այլ և շուրջը բխած բուժիչ ջրերու պատճառով կարևոր բուժավայր է:

Խծկոնքը գտնվում է Անիից մոտ 40 կմ. դեպի հարավ-արևելք և Տեկորի արևմտյան կողմը կես ժամ հեռավորությամբ, մի փոքր շրջանում ունի հինգ եկեղեցիներ, որոնց մեկը, ամենահինը, հավանական է որ 10-րդ դարուց առաջ լինի և գուցե հասնի 7-րդ դար: Երկրորդ եկեղեցին ս. Սարգիսն է, որը շինել է Վեստ Սարգիս, արտաքուստ բոլորշի է, ներքուստ խաչաձև:

Առաջին տաճարի անունն է ս. Կարապետ, նրան կից կա մի ուրիշ փոքր եկեղեցի, որն ունի ս. Աստվածածին անունը, չորրորդ եկեղեցին անջատ է և գտնվում է այս երեք եկեղեցիներու արևելյան կողմը մի ժայռի վրա և կոչվում է ս. Ստեփանոս: Հինգերորդ եկեղեցին դարձյալ երեք եկեղեցիների արևելյան կողմում է, սակայն գրեթե մի կիլոմետր հեռավորության վրա. այս վերջին հինգերորդ եկեղեցին անունն է [Լուսավորիչ]:

## 46. ԽՈԹԱ ՎԱՆՔ

Արցախի Հաթերք գավառի մեջ Թարթառ գետի աջ կողմը կգտնվի Խոթա վանքը: Այս վանքի սկզբնական շինության թվականը հայտնի չէ, հաճախ նորոգվեր և վերաշինվեր է, որով կորել են արձանագրությունները, եթե կային: Առաջին անգամ արձանագրություն երևում է 12-րդ դարուն (1189): Այսպես հաջորդաբար հետագային կարելի է այս վանքում գտնել նորոգության կամ վերաշինության արձանագրություններ:

Նկ 94. Խոթա վանքի ընդհանուր տեսարանը հարավից

Նկ. 95. Խոր Վիրապի եկեղեցին հյուսիս արևելքից

## 47. ԽՈՐ ՎԻՐԱՊ

Խոր Վիրապի վանքը որ մինչև այսօր ուխտատեղի է հասարակ ժողովրդյան համար, ունի յուր պատմական ծագումը, որ ժողովրդական հավատալիքների հետ սերտիվ կապվում է. այսինքն հայոց մեջ քրիստոնեություն տարածող Գրիգոր Լուսավորիչը այստեղ բանտարկված է եղել Տրդատ թագավորի հրամանով, որովհետև Խոր Վիրապը թագավորական ժամանակ թե աքսորավայր էր, և թե բանտ էր, որոնք փորած էին գետնի տակ շատ խորը և այս Խոր Վիրապների մեջ բանտարկվողների կյանքը երաշխավորված չէր, օրերի հարց էր հորը ձգվածի ապրելը, Գրիգորը իբր թե ապրել է մի պառավ կնոջ տված օրվան մեջ մի նկանակով:

Քրիստոնեությունը հաստատվելուց հետո, որպես թե այնտեղ ի հիշատակ Գրիգորի բանտարկության վանք են շինել: Այս վանքը հիշվում է 7-րդ դարուն Ներսես 3-րդի օրով: Այնուհետև թե պարբերաբար է հիշվել, այնուամենայնիվ մինչև այսօր նշանավոր ուխտատեղի լինելե չի դադրել: Այժմյան եկեղեցին ուշ ժամանակի է, հավանաբար 17-րդ դարի գործ է:

## 48. ԾԱՂԿԱՁՈՐ

(Հն. Կեչառուս կամ Կեչառուք)

Երևանից դեպի հյուսիս Հրազդան գետի աջ ափի մոտ կգտնվի Ծաղկաձոր ամառանոցը, որուն մոտ կան բազմաթիվ ավերակներու մնացորդներ, որոնց մեջ այժմ գրեթե կանգուն վիճակի մեջ են չորս եկեղեցիներ.

1. Ս. Գր. Լուսավորիչ, որուն շինողը կհամարվի Գր. Մագիստրոս 1003 թվականին: Վրան ունի բազմաթիվ արձանագրություններ մինչև 1272 թվականը:

2. Անթվական շինություն. նորոգված է 1204 թվականին ոմն պարոն Վաչեի ձեռքով ըստ արձանագրության: Եկեղեցու անունն անծանոթ է, կկարծվի լինել ս. Նշան կամ ս. Հովհաննես:

3. Ս. Կաթողիկե անունն ունի. շինողն է Վասակ որդի Խաղբակա ԺԳ դարու սկզբին:

4. Ս. Հարություն, ունի ժամատուն, փոքր է եկեղեցին, բայց անաղարտ մնացած. շինված է 1220 թվականին. շինողի անունն անհայտ է: Շինողի ծնողներու Հասանի և Ռուզաքանի հիշատակին նվիրված է:

Մնացած ավերակները միանգամայն հետաքրքրական են, բայց նկարագրության և մանրամասն խուզարկության կարոտ:

Նկ. 96. Կեչառուքի ս. Գրիգոր եկեղեցու և գավիթի ընդհանուր տեսքը հարավից



Նկ. 97. Կեչառուքի ս. Նշան և Կաթողիկե եկեղեցիներն արևմուտքից



## 49. ԾԱՂԿԱՎԱՆՔ

Կարբիի մոտ, Արայի լեռան հարավային կրծքին, ձորի լանջին, ամայի վանք է: Մինչև վերջին ժամանակներս շրջակա բնակչության մեծ ուխտատեղի է եղած ամեն տարի Համբարձման տոնին:

## 50. ԿԱԶԱՆՉԻ

Արթիկի շրջանի մեջ Լենինականից դեպի հարավ-արևելք կգտնվի այս գյուղը, որը նշանավոր եղած է մի հին բերդով, ուր գտնված են բավական հին զանազան գործիքներ, որոնց մեջ կարևոր տեղ կբռնե մի այսն խարիսխ, որուն վրա կա շուրջանակի բևեռագիր արձանագրություն:



Նկ. 98. Կեչառուքի ս. Գրիգոր եկեղեցու արևելյան տեսքը ներսից

## 51. ԿԱՐԱՆԼՈՒԽ

Ապարանից դեպի հյուսիս-արևելք լեռնալանջի վրա կգտնվի այս փոքրիկ գյուղը, կիսով չափ անտառներով շրջապատված: Անտառի հյուսիսային կողմը կա մի 7-րդ դարու կիսավեր եկեղեցի, գյուղեն կես կիլոմետր հեռավորությամբ և իբրև ուխտատեղի կծառայե գյուղացոց:

Նկ. 99. Կեչառուքի ս. Գրիգորի գավիթը ներսից

Հյուսիսային կողմը, մի ուրիշ կետի վրա, անտառին մոտիկ կա մի ուրիշ հետաքրքրական մնացորդ: Ուրարտական շրջանի ոճով հսկա անտաշ սև քարերով շինված մի շենքի մնացորդ կա երկար քառակուսի և բավական ընդարձակ, մեջտեղից երկու մասի բաժանված: Քրիստոնեական շրջանին այս շենքը եկեղեցիի վերածեր են՝ երկու բաժանումներու արևելյան ծայրին սրբատաշ հրաբխային քարերով խորաններ շինելով:

Այս եկեղեցու մոտերը կա մի տնկած սև քար, հավանորեն հեթանոսական շրջանի monolith է:

## 52. ԿԱՐԲԻ

Հովհաննավանքեն երկու կամ երեք կիլոմետր դեպի հարավ-արևմուտք կգտնվի Կարբին: Ըստ պատմական տեղեկություններու բազմաթիվ շինություններ եղել են այս գյուղում, սակայն այժմ միայն հետքեր են մնացել, կա միայն մի հին եկեղեցի, որուն վրա հետաքրքրական է արևելյան կողմեն շինված զանգակատունը:

## 53. ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ
(Ղոշավանք Ախուրյանի ձախ ափին)

Հոռոմոսի վանքին մոտ, Ախուրյանի ձախ ափին, Կարմիր վանք գյուղի մեջ կա մի եկեղեցի գեղեցիկ շինվածքով և խիստ անաղարտ պահված: Շինված է 985 թվականին, շինողի անունը եղծված է արձանագրության փչացած մասեր ունենալու պատճառով: Բայց շինող ճարտարապետի անունը որոշ կարդացվում է, որ եղել է Սամեհան ճարտարապետ աբեղա:

## 54. ԿԱՐՍ

Կարսի բերդը գոյություն ունեցած է 4-րդ դարեն առաջ: Քաղաքին հին անունը ըստ Ստրաբոնի և Պտղոմեոսի Խորզինի է, ուրկեց առաջ եկած ըլլալ կկարծվի Կարս կամ Ղարս անունը (դուներեն մեկուն վրա կա հայերեն գրված «Դուռն Անվո»):

Կարսի պարիսպները Զաքարեի օրով նորոգված են մասամբ: Թ. դարու կեսին Աշոտ Բագրատունի կնորոգե Կարսը. Սմբատի թագավորության ժամանակ Աբաս սպարապետ անունով մեկը եղբայր Աշոտի, վարեց Կարսի իշխանությունը, Սմբատի օրով ալ մեռավ 902 թվականին:

Սմբատ Ա-ի մահվանեն հետո, անոր երկրորդ որդին Աբաս գահը ժառանգեց իբր օրինավոր թագավոր: Այս Աբասը 930 թվականին հիմնարկեց Առաքելոց եկեղեցին, որը կնկարագրե Ասողիկ. «Շինեալ թագաւորին զկաթողիկէ սուրբ ի քաղաքին Կարուց» և վերջացրեց 942 թվականին:

## 55. ԿԱՓԸԼԻ

Լենինականի հարավային կողմը 12–15 կիլոմետր հեռավորության վրա հայաբնակ գյուղ է Արթիկի շրջանում: Ճյուղին մեջ կա հին հեթանոսական շրջանի անտաշ քարերով ամրոցի մը մնացորդ, որուն վրա հետագա 13–14-րդ դարերուն շինել են մի նոր բերդ:

Գյուղից մեկ ու կես կիլոմետր հեռավորության վրա կա նաև մի ուրիշ ուրարտական ամրոց. այս երկու ամրոցներուն մեջտեղ տարածված է հեթանոսական շրջանի մի փոքր քաղաքի ավերակը: Բազմաթիվ քարե դագաղներ և ուրիշ հեթանոսական առարկաներ հաճախ գտնվում են այս գյուղում:

Այս գյուղի մոտ դաշտավայրին վրա է հսկայական արվեստական հողաբլուր, որուն Շահ թափա անունը (Արքայաբլուր) կուտան: Ամենայն հավանականությամբ սա մի մեծ ուրարտական դամբարան է, պեղման կարոտ:

Նկ. 100. Կարանլուխ գյուղի 7-րդ դարի ավերակ եկեղեցին

## 56. ԿԸՐԽ ԴԱԳԻՐՄԱՆ

Արագածի հյուսիս-արևմտյան բարձունքներու վրա Ապարանի շրջանի մեջ մի գյուղ է: Վերին աստիճան հետաքրքրական է գյուղի կռնակը, բարձր սարի գլխին գտնվող ուրարտական շրջանի մեծ բերդը և բերդի շուրջն ուրարտական քաղաքի ընդարձակ տարածությունը:

Այս գյուղում կան 7-րդ դարու մնացորդներ. նշանակելի են քառակող կոթողիկներ, բարձրաքանդակ պատկերներով գերեզմանաքարերը, որոնց մեկը գյուղի եկեղեցու դռան բարավոր են շինած, իսկ մյուսը՝ գյուղացիների ձեռքով մատրանման շինված տեղի մեջ կանգնված է և ուխտավորներու վառած ձեթի ճրագներու և մոմերու ծուխից միանգամայն սևացած:

## 57. ԿՈՒԼԻՋԱՆ

Ալեքսանդրապոլից դեպի հարավ-արևելք Արագածի ստորոտներու մոտ, Մանթաշից հոսող վտակի ափին մի գյուղ է Արթիկի շրջանում:

Նշանավոր է իր բևեռաձև արձանագրությունով, փորված ձորի մեջ մի քարայրի բերանին: Հին ուրարտական ամրոցի ավերակներ և այլ շինություններ շատ կան այս կողմերը. նշանավոր են երկու քարայրեր:

Այս գյուղից գտնվեցին բրոնզյա քանդակազարդ գոտի, բրոնզյա նիզակ, սուր և այլ ուրիշ հեթանոսական իրեր, որոնք այժմ գտնվում են Հայաստանի Պետական Պատմական Թանգարանում:

## 58. ՀԱՋԻ ԽԱԼԻԼ

Արագած լեռան հյուսիս-արևմտյան լանջերուն վրա Ապարանի շրջանում մի գյուղ է, որ հնագիտական տեսակետով նշանավոր է իր նախապատմական շրջանի բերդով և ամրոցներով: Բացի ամրոցներեն ընդարձակ տարածության վրա տակավին կերևին նախապատմական շրջանի մի քաղաքի շինությանց բավականին որոշ հիմքերը: Այս մնացորդներու մեջ ուշադրության արժանի են մի քանի հատ կրոմլեխներ, բոլորակ ձևով շրջանակված:

## 59. ՀԱՌԻՃ (Ղփչախ)

Արագածի արևմտյան լանջի վրա, Արթիկից երեք կիլոմետր դեպի հարավ-արևելք մի գյուղ է: Գյուղի կողքին ձորի եզերքին բարձր տեղի վրա շինված է երկու եկեղեցի ի հնումն ամուր պարիսպներով պատած:



Նկ. 101. Կարսի բերդի պարիսպները (քանդված 1878 թ.)

Նկ. 102. Կարսի բերդի պարիսպները (քանդված 1878 թ.)



Նկ. 103. Հառիճավանքի՝ Զաքարե և Իվանե իշխանների շինած եկեղեցին հյուսիս-արևելքից



Նկ. 104. Հառիճավանքի՝ Զաքարե և Իվանե իշխանների շինած եկեղեցու օթյակը

Եկեղեցիներուն մեկը շինված է ոմն Սարգիս Ճոնի ձեռքով 7-րդ դարուն և նորոգված է մասնակիորեն 10-րդ դարուն: Իսկ մյուսը շինած են Զաքարե և Իվանե երկու իշխաններ, որոնց արձանները քանդակված են եկեղեցվո արևելյան պատին վրա: Գեղեցիկ քանդակազարդություններ ունի արտաքուստ: Ունի գեղաքանդակ սյունազարդ գավիթ արևմտյան կողմը. մի քանի ընդարձակ կարևոր արձանագրություններ կան վրան:

Այս եկեղեցու արևելյան կողմը բարձր տեղի վրա կա մի հին գերեզմանատուն, որուն մեջ կան շատ քանդակազարդ արձանագրված տապանաքարեր և խաչքանդակներ: Իսկ գերեզմանատնից մեկ կիլոմետրի չափ դեպի արևելք կա մի փոքր մատուռի մնացորդ՝ հավանորեն 7–8-րդ դարու: Այս փոքր մատուռի մոտից բերված է մի գեղեցիկ և հետաքրքրական քառակուսի կոթողաձև գերեզմանաքար 7-րդ դարու իր պատվանդանով: Քանդակազարդված են չորս կողմերը հետաքրքրական բարձրաքանդակ պատկերներով:

Այս ավերակներու մոտերքից գտնված է մի փոքր զանգակ 13-րդ դարու գործ և մի ուրարտական բրոնզյա գոտի և ուրիշ հեթանոսական շրջանի առարկաներ:

## 60. ՀԱՎՈՒՑ ԹԱՌ

Աղջոց վանքից քիչ հեռու հարավ-արևմտյան կողմը և Գառնիի հյուսիս-արևելյան կողմը կա Հավուց Թառ ըսված ամայի գյուղը, որուն մեջ այժմ կիսավեր մնում է Հավուց Թառի Ամենափրկիչ մեծ վանքը: Շինության սկիզբը կթվի 11-րդ դար. Գրիգոր Մագիստրոս 1013 թվին այս վանքին մեջ շինել է մի եկեղեցի: Կարծիք կար, որ նախքան 11-րդ դար նախապես Քեղա Գևորգ իշխանի այս վանքը հիմնելեն առաջ շատ հին ժամանակ վանք գոյություն չուներ այստեղ: Անհրաժեշտ է երկար խուզարկություն այս վանքի շուրջը, որովհետև շատ ընդարձակ և անվանի եղած է:

## 61. ՀՈՌՈՄ

Ալեքսանդրապոլից 12–15 կիլոմետր դեպի հարավ և Կափլիից 3–4 կիլոմետր դեպի արևելք մի գյուղ է, որ նշանավոր է իր Ղալա-Իշի կոչված հին ամրոցով: Մեծ տարածություն գրաված է այս ամրոցը և հին ուրարտական քաղաքը: Վերին աստիճանի հետաքրքրական է և անհրաժեշտ ուսումնասիրության կարոտ այս հսկայական ավերակն իր պարիսպներով, բերդերով, բնակարաններով ու քարայրներով:

Հոռոմ գյուղը գտնվում է ավերակ քաղաքի լեռնալանջի ստորոտին:

## 62. ՀՈՎՀԱՆՆԱՎԱՆՔ

Համանուն գյուղի մեջ եկեղեցի է: Շատ հռչակավոր է պատմության մեջ այս վանքը:

Երկու մասից է բաղկացած, մեկ մասը 4–5-րդ դարու գործ է և այժմ ալ կանգուն է, ուր կատարվում է ժամասացություն, իսկ մյուս մասը Վաչե իշխանի ձեռքով շինված 1217 թվին, որ կից է հին եկեղեցուն, բայց գլուխ գործոց է 13-րդ դարու հայոց ճարտարապետության իր մեծությունով, գավթով, նրբակերտ քանդակներով և շինարարական ճարպիկ ձևակերպումներով:

## 63. ՂԱՐԱ ՎԱՆՔ

Ներքին Թալինեն 3–4 կիլոմետր դեպի հարավ դաշտերուն մեջ կիսականգուն է սև քարերով շինված 7-րդ դարու մի փոքր, բայց գեղեցիկ եկեղեցի, շուրջը ավերակներով և գերեզմանատնով: Եկեղեցու հարավային պատի վրա կա 10-րդ դարու նվիրատվության արձանագրություն, իսկ գերեզմանատան մեջ կան հետաքրքրական քանդակագործություններ և արձանագրություններ:

## 64. ՂԱՐԱՔԻԼԻՍԱ

Ապարանից դեպի Էջմիածին տանող խճուղու վրա 7–8 կիլոմետր հեռավորությամբ մի գյուղ է: Այստեղ կան մատուռներու մնացորդներ և հին գերեզմանատուն, որուն մեջ կան քանդակազարդ հին խաչքարեր՝ 11-րդ, 12-րդ և 13-րդ դարերու ոճով:

## 65. ՄԱՀՄՈՒԴՋՈՒՂ
[Այժմ Պեմզաշեն]

Արագածի արևմտյան լանջերին Արթիկից 4–5 կիլոմետր դեպի հարավ կգտնվի այս գյուղը: Գյուղի մեջ կա մի եկեղեցի գրեթե անարատ մնացած 7-րդ դարու խիստ հետաքրքրական ստորաբաժանումներով: Արևմտյան դռան վրա կա մի գեղեցիկ բարձրաքանդակ պատկեր: Պատկերը ներկայացնում է Տիրամայրը Հիսուսին գրկած, հրեշտակը հովանավորում է Տիրամորը և մի իշխան աղոթում է նրա առջև (նկ. 105):

Գյուղի արևմտյան կողմը 500 մետրի չափ հեռու կա մի 13-րդ դարու ավերակ եկեղեցի, եղծված արձանագրություններով, այս եկեղեցու արևմտյան կողմը 150 քայլ հեռու կա 10–11-րդ դարերուն նշանավոր Վահրամ Պահլավունի իշխանի եղբոր՝ Ապլղարիբ իշխանի տապանաքարը վրան ընդարձակ արձանագրություններով:

Գյուղի հարավ-արևմտյան կողմն է բարձր տեղում Մակարավանք անվանված 10-րդ դարում շինված գեղեցիկ եկեղեցին վրան արձանագրություններով և փլած մի գավթով (նկ. 106):

Նկ. 105. Մահմուդջուղի 5-րդ դարի եկեղեցու արևմտյան մուտքի ճակատի Տիրամոր բարձրաքանդակը

Նկ. 106. Մահմուդջուղի Մակարավանք կոչվող եկեղեցին հարավ-արևելյան կողմից

Շինության արձանագրությունը կա, բայց թվականի մասը կորած է:

Այս գյուղի եզերքին կա մի հին գերեզմանատուն, որուն մեջ կան շատ հին արձանագրություններով տապանաքարեր: Այս գերեզմանատունը ի հնումն եղեր է նաև հեթանոսական գերեզմանատուն, որովհետև բազմաթիվ գերեզմաններ կան բնական ժայռի վրա փորված անկանոն ուղղություններով, որոնք վրաները կափարիչ չեն ունեցեր և կամ կափարիչները կորսվեր են:

## 66. ՄԱՆԿԱՆՈՑ

Օշականի հյուսիս-արևմտյան կողմը գյուղի սահմանին Շաղվերտ գետի ափին մի ավերակ է Մանկանոց անունով. ավերակների մեջ կա մի եկեղեցի ս. Սիոն անունով, որուն վրա արձանագրություն կա 1200 թ.: (Տե՛ս Օշական):

## 67. ՄԱՃԻՏԼՈՒ
(Այժմ Նոր Կյանք)

Լենինականից հարավ-արևելք 10–12 կիլոմետրի վրա մի գյուղ է, որի մեջ կա մի 7-րդ դարու եկեղեցի:

Այս եկեղեցու պատերուն վրա կան բազմաթիվ արձանագրություններ, որոնք հասնում են մինչև 10-րդ դար, զանազան նվիրատվությունների և հարկաբաշխման վերաբերող:

Նկ. 107. Մաճիտլուի 7-րդ դարի եկեղեցին հյուսիս-արևելքից

## 68. ՄԱՍՏԱՐԱ

Գյուղ Արագածի արևմտյան լանջին 3–4 կիլոմետր հեռու Շենիկ գյուղեն:

Հին հիշատակներով հարուստ գյուղերեն մեկն է Մաստարան: Թե գյուղի եզերքները և թե անմիջական շրջակայքը կան մատուռներու, եկեղեցիներու, խաչարձաններու, բնակարաններու մնացորդներ:

Այս հիշատակարաններուն մեջ ամենեն ուշագրավն է գյուղի միջի եկեղեցին, որ անվիճելիորեն 7-րդ դարուն կանգնված է: Խաչաձև հատակագիծ ունի: Ներքուստ և արտաքուստ արձանագրություններ կան, սկսած 7-րդ դարուց մինչև 13–14-րդ դարերը: Եկեղեցին պարբերաբար նորոգել են գյուղացիք իբր գյուղական եկեղեցի, սակայն տգիտաբար հաճախ աղճատել են հիշատակարանները, ոչնչացնելով շատ կարևոր մասեր: Այս գյուղում շատ կան ուսումնասիրելի մնացորդներ:

## 69. ՄԱՐՄԱՇԵՆ (Ղանլիճա)

Ալեքսանդրոպոլից 7 կիլոմետր հեռավորության վրա դեպի հյուսիս-արևմուտք Ախուրյան գետի ձորի մեջ կան երեք եկեղեցիներ, որոնց մեծագույնն այժմ էլ կանգուն է և ծառայում է իբր գյուղական եկեղեցի:

Շինողն է իշխանաց իշխան Վահրամ Պահլավունին: Շինությունն սկսվել է 986 թվին և վերջացել է 994-ին: Արտաքուստ չքեղ քանդակազարդ է, որմասյուներով զարդարված. ներքուստ պարզ կամարակապ:

Վահրամ իշխանի եկեղեցու հյուսիսային կողմը 3 մետր հեռավորության վրա կա մի ուրիշ եկեղեցի, քիչ փոքր, քան նախկինը: Հավանորեն ավելի հին, բայց դարձյալ 10-րդ դարու գործ. փլած է արևմտյան պատը և վրայի գմբեթը: Շինողն անհայտ է:

Հարավային կողմը Վահրամաշենից 8–10 մետր հեռավորության վրա կա մի փոքր մատուռ. շինողն անհայտ է. հավանորեն 13–14-րդ դարու գործ, ներսը անաղարտ է. գմբեթը կանգուն. քանդքանդած են արտաքին երեսի քարերը:

Այս երեք եկեղեցիները շրջապատված են եղած ընդարձակ պարիսպով և պարիսպի մեջ մեծ ու փոքր բնակարաններով, որոնց հիմքերը երևում են այժմ. արևմտյան կողմեն պարիսպը մասամբ մնում է խոշոր սրբատաշ քարերով:

Պարիսպին կից, հյուսիս-արևմտյան կողմը, փոքր ձորակի բերնին երևում են բոլորակ մի շինության հիմքերը, հարկավոր է պեղել ինչ լինելը հասկանալու համար:

Եկեղեցիների հյուսիսային կողմը կես կիլոմետր հեռավորության վրա կա մի բարձր բլուր. բլուրի գագաթին վրա կա մի փոքր եկեղեցու մնացորդ սրբատաշ քարերով: Շինվածքի ոճը ցույց է տալիս, որ 7-րդ դարու գործ է: Արձանագրությունը կորած է. հյուսիսային պատը միայն մնում է գմբեթի մասով:

Եկեղեցիներից դեպի հարավ, Ախուրյանի վրա, կա մի հսկա կամուրջի մնացորդ, որն ըստ երևույթին Զըրփըլուի կամուրջին նման երկու աշտարակներ ունի, այսինքն գլուխները երկու հարկանի:

Կամուրջից դեպի հարավ մի քանի կիլոմետրի վրա կան շատ ավերակներ մատուռներու, ջրաղացներու, ճիթհանքերու և բնակարաններու. տեղտեղ թափված են գեղաքանդակ շինության քարեր: Կան բազմաթիվ գերեզմանաքարեր վրաները արձանագրություններով: Այս տեղին անունն է Խաչի Ձոր:

Մարմաշենից երկու կիլոմետր հարավ-արևելք ձորի եզերքին կան ուրարտական պատերի մնացորդներ և Արգիշտիի բևեռաձև արձանագրությունը:

## 70. ՄԱՔՐԱՎԱՆՔ

Մաղկաձորի մոտ Հրազդանի աջ ափին կա Մաքրավանք հայաբնակ գյուղը. ունի մի հին եկեղեցի քարաշեն անոյուն գմբեթավորված, այժմ գմբեթն ընկած է և փայտով ծածկված:

Նկ. 108. Մաքրավանքը հարավ արևմուտքից

## 71. ՄՈՒՂՆԻ

Նշանավոր ուխտատեղի Հովհաննավանքի մոտերը: Եկեղեցին ծագումով շատ հին չէ. սակայն այժմյան եկեղեցին ալ շինված է հին փոքր եկեղեցույն տեղ 1669 թվին Հովհաննես և Դավիթ վարդապետներու ձեռքով:

## 72. ՄՈՒԱՎՅԱՆ
(ՏամՃլու)

Ապարանի շրջանում գտնվում է այս գյուղը: Գյուղի մեջտեղը կա մի չափավոր մեծությամբ եկեղեցի, որուն շինությունը 11–12-րդ դարաշրջանին լինել կթվի, իսկ առջևի ընդարձակ գավիթը, որ երբեմն խիստ շքեղ է եղած, այժմ քայքայված է: [Նկ. 110]:

Այս եկեղեցվո առանձնահատկությունն այն է, որ արևմտյան երկու անկյուններուն վրա ունի երկու աշտարակաձև զանգակատուններ:

Գյուղի արևելյան կողմը հին գերեզմանատան կից մնացած է մի եկեղեցու հյուսիսային պատը, որուն պսակի ոճեն երևում է, որ 5-րդ դարու շենք է:

Այս մնացորդին մոտիկ կա վերին աստիճան գեղեցկաքանդակ մի խաչարձան:

## 73. ՀԵՆԻԿ (Մազարջուք)

Ատիամանի և Մաստարայի մեջտեղ (հնում Մազար ջուղ) Արագած լեռան հարավ-արևմտյան բարձունքներու վրա փոքր գյուղ է Թալինի շրջանում: Այս գյուղին մեջ կա մի ավերակ եկեղեցի, որուն հյուսիսային և արևմտյան պատերը կանգուն են: Շինության ոճեն կտեսնվի, որ անվրեպ 5-րդ դարու շենք է:

Իսկ գյուղին մեջ կա մի ուրիշ եկեղեցի, որ շինված է նույնպես 5-րդ և 6-րդ դարերուն մեջ, մնացել է արևելյան պատը և հարավային պատի մի մասը, արևելյան պատին կից: Գյուղացիք պահելով հին պատերը, ավելացնելով նոր պատեր՝ շինել են իրենց համար եկեղեցի: Այս եկեղեցվո արևելյան հնագույն պատին վրա կա եղծված մի ասորերեն արձանագրություն:

Փոքր եկեղեցվո մոտ կա մի հնագույն գերեզմանատուն, որն այժմ ևս ծառայում է նույն նպատակին: Շատ են գտնվում կոթողաձև բարձրաքանդակ պատկերներով տապանաքարեր:



Նկ. 109. Մուղնու սբ. Գևորգ եկեղեցին

Նկ. 110. Մռավյանի եկեղեցու արևմտյան ավերակ գավիթը





Նկ. 111. Շիրվանջուկի եկեղեցու ընդհանուր տեսքը հյուսիս-արևմուտքից

## 74. ՇԻՐՎԱՆ (ՁՈՒԿ)

Արագածի արևմտյան լանջին վրա Մահմուդջուղից 3–4 կիլոմետր հարավ գյուղի մեջ հետաքրքրական եկեղեցի է:

Հավանորեն հեթանոսական ծագում ունի այս շենքը: Հիմքը դրված է անտաշ հսկա քարերու վրա, ինչպես ուրարտական շրջանին: Իր հատակագծով նման է հունական Cella-ի, պատուհան չէ ունեցել, հարավ-արևմտյան և արևելյան կողմին վրա ուշ ժամանակ բացեր են պատուհաններ:

## 75. ՈՍԿԵՎԱԶ

Աշտարակի շրջանում Օշականի մոտիկ մի գյուղ է: Հնությանց նշմարներ շատ կան, թե գյուղի և թե շրջակա այգիների մեջ: Սակայն ամենեն ուշագրավն այս գյուղի մեջ Քասախ գետի ապառաժուտ ափունքի բարձունքներու վրա հնադարյան ուրարտական ամրոցն է:

## 76. ՈՒՇԻ

Գյուղ Կարբիի մոտերը Աշտարակի շրջանում: Գյուղին մեջ կա ավերակ եկեղեցվո մնացորդ, իսկ գյուղից դուրս կան երկու եկեղեցիներ հին ընդարձակ գավթով: Այս եկեղեցիներուն չինողն անհայտ է, հավանորեն պատկանում են 13-րդ դարուն:

## 77. ՁՐԱՓԻ (Հն. Զրափի)

Նշանավոր կամուրջ Ախուրյանի վրա: Կամուրջը նշանավոր է նրանով, որ այժմ երևում է, թե ավելի քան 30–35 մետր լայնության վրա չինված է միակամար. ջուրը տակից անցնում էր, իսկ վրայով էլ Ախուրյանի ջրից առու էին տանում գետի մյուս ափը բարապետների միջոցով, մյուս կողմի հողերը ոռոգելու համար:

Գյուղի մեջ ուշադրության արժանի հնություն է հին իջևանը, որուն անեղծ մնացած սենյակները այժմ ևս օգտագործում են իբրև բնակարաններ:

## 78. ՌՆԴԱՄԱԼ

Բջնիից դեպի հյուսիս-արևելք Հրազդան գետի մոտ կգտնվի Ռնդամալ գյուղը: Այս գյուղի մոտն է մի փոքր կիսավեր եկեղեցի:

## 79. ՍԱՂՄՈՍԱՎԱՆՔ

Հռչակավոր վանք է Աշտարակի շրջանում, Ազատավանի մոտ 13-րդ դարու սկզբին Զաքարե սպասալարի գործակալ Վաչե իշխանի չինած:

Ընդարձակ գավիթ ունի չորս կամարակապ սյուներու վրա և ճոխ քանդակագործված: Գավթին կից կա մի փոքր մատուռ և այլ մի փոքր բաժանում, որ ըստ արձանագրության գրատուն է եղած:

## 80. ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ
(Հն. Սուլթլու)

Արագածի հարավ-արևմտյան լեռնալանջերուն վրա Ադիամանից 3–4 կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք մեծ գյուղ է: Այս գյուղի մեջ նշանավոր է ջուր բխող մեծ քարայրը, որ խիստ առատ ջուր է տալիս և ի հնումն ևս իբրև ուխտատեղի է ծառայել: Քարայրի ներքին պատերու վրա կան հատ ու կտոր արձանագրություններ:

Գյուղի ծայրին մի հին մեծ շինության պատը մնացել է վերին աստիճան մաքուր շինված սրբատաշ քարերով. ինչ շենք լինելը պետք է քննել:

Գյուղի հարավային կողմը 2–3 կմ. հեռավորության մի ձորալանջի վրա կա գեղեցիկ մի եկեղեցի 11-րդ դարու գործ:

Ամայության մեջ փչանալու և բոլորովին քանդվելու վրա է: Վրան կան զանազան դարերու արձանագրություններ: (Հավանորեն Ալիշանի Հոգեվանք անվանած եկեղեցին այս է):



Նկ. 112. Սառնաղբյուրի 11-րդ դարի եկեղեցին հարավ-արևմուտքից

## 81. ՍՈԼԱԿ

Բջնիի հանդեպ, Հրազդանի ձախ ափին կգտնվի Սոլակ մեծ գյուղը: Այս գյուղի հյուսիս-արևմտյան կողմը, դժվարամատույց լերանց խորաձորի մը վրա կա մի փոքր եկեղեցի սրբատաշ քարերով, որուն վրա կա 1224 թվի արձանագրություն: Ըստ արձանագրության նույն տեղի անունն էր Տափակ Մայրի և եկեղեցու անունը ս. Աստվածածին:

## 82. ՏԵԿՈՐ

Ագարակի և Խծկոնքի արևելյան կողմի գրեթե կեսից մեկ կիլոմետր հեռավորության վրա է Տեկոր գյուղը, որու կողքին գոյություն ունի բազմամյա հուշարձան Տեկորի եկեղեցին ս. Երրորդություն կամ ս. Սարգիս անունով:

Շինության արձանագրությունից և արձանագրության մեջ հիշված անուններից հայտնի է լինում, որ եկեղեցին կանգնված է 5-րդ դարուն: Բայց իմ կատարած մի ուսումնասիրությունից երևում է, որ նախքան եկեղեցիի վերածվելը ավելի հին ժամանակ եղել է այդ շինությունը:

Թե ի՞նչ նպատակով շինված է, ինձ հայտնի չէ, միայն հետագայում, 5-րդ դարում, փոխարկվել է եկեղեցիի արձանագրության մեջ հիշված մարդկանց ձեռքով, երբ բավականին ձևափոխված է, ինչպես օրինակ ավելացված են Portique-ները և այլն:

10–11-րդ դարերուն Բագրատունի թագուհիները, Աշոտ Ողորմածի կինը և Գագիկ Ա-ի կինը, զանազան նվիրաբերություններ և նորոգություններ կատարած են: Հետագային Գրիգոր Մագիստրոսի աղջիկ՝ Վեստ Սարգսի կինը մի տուրք զիջել է գյուղին կամ գյուղաքաղաքին:

Բացի շինության հնությունից, որը գրեթե հասնում է հեթանոսական դարերը, ունի իր մեջ ուշագրավ երևույթներ, որոնք ճարտարապետական որմնաշինական արվեստներու մեջ կարևորություն ունին:

## 83. ՓԱՐՈՍ (Հն. Խաչաքիլիսա)

Գյուղ Արագածի արևմտյան լանջին վրա, Հաուիճից երկու կիլոմետր հեռու Արթիկի շրջանում: Գյուղի մեջ կա մի 7-րդ դարու եկեղեցու պատի մի մասը: Սրան կից շինած են գյուղացիք իրենց եկեղեցին: Եկեղեցու շուրջը թափած են գեղաքանդակ քարեր՝ զանազան դարերու: Մի հատ քառակուսի կոթողաձև տապանաքարի պատվանդանը կա, որուն վրա փորագրված է Դանիելը ձգված առյուծի գոգը և առյուծները լիզում են ոտները: (Նույնը կա նաև Հաուիճի կոթողի պատվանդանին վրա):

## 84. ՔԱՂՍԻ

Մաքրավանքից մեկ կամ մեկ ու կես ժամաչափ դեպի հարավ կգտնվի Քաղսի գյուղը, որտեղ կա մի հին քարաշեն եկեղեցի ս. Աստվածածին անունով. տանիքը և պատերի մի մասը քայքայված են, որոնք կարկատված են փայտով:

## 85. ՕՀԱԿԱՆ

Նախապատմական շրջաններից սկսած մինչև քրիստոնեական վերջին դարերի հնագիտական մնացորդներով լի է Օշական գյուղը և գյուղի շրջանը: Բայց մինչև այժմ հնագիտական լուրջ հետազոտություն և ուսումնասիրություն չի կատարված այս շրջանում: Գյուղից մի քիչ հեռու արևելյան և հարավային կողմերը, բազմաթիվ նախաքրիստոնեական գերեզմաններե զատ, կգտնվեն նաև հնադույն ձևի դոլմեններ, որոնց գյուղի բնակիչները Օղուզի տներ անունն են տալիս: Գետի մյուս ափին ևս դեպի Հաջի Ղարա գյուղը և նրա շրջակայքը տարածված են նախաքրիստոնեական գերեզմաններ, պաշտման խոշոր աշտարակներ և այլ մնացորդներ՝ մինչև Աղավնատան սահմանը: Եթե ի նկատի առնենք նաև Օշականի անմիջական սահմանակից Ոսկեվազ, Աղթամուր և այլ գյուղերն ու սահմանները, այն ժամանակ մի ընդարձակ շրջան կլինի հնագիտական տեսակետով հետազոտելի:

Գյուղի անմիջապես եզերքում կան երկու բլուրներ, որոնց մեկը մի փոքր սար ըսվելու չափ մեծ և բարձր է: Նախապատմական տեսակետով շատ մեծ արժեք են ներկայացնում այդ բլուրները. բլուրներեն մեծին և ընդարձակին գյուղացիք անվանում են Դիդի Կոնդ: Այս բարձր Կոնդի գագաթին տակավին երևում են հսկայական որձաքարերով անշաղախ շինված ամրոցի մնացորդները, և ամրոցի մեջ ցեղապետական բնակարանների հիմերը, բացի ուրիշ անջատ և մասնավոր հիմերի մնացորդներից: Երևում են նաև քարայրներ, որոնք նախաքրիստոնեական ծագում ունեն: Քրիստոնեական շրջանում ևս ավանդաբար նվիրականացել է այս մեծ բլուրը և զանազան կետերի վրա կանգնվել են խաչքարեր, դամբարաններ և այլն և այլն:

Երկրորդ Կոնդը, որ քիչ հեռու է Դիդի Կոնդից և անհամեմատ փոքր է, սակայն դարձյալ պատկառելի մեծություն ունի և գյուղացիք «Գյուլլե Կոնդ» անունն են տալիս: Այս բլուրը պարզապես արվեստական մի բլուր է, որուն հողը եթե քննվի, կտեսնվի որ մոտակա Դիդի Կոնդ անվանված մեծ բլուրի լանջից փորելով տեղափոխել են և կազմել են այս Գյուլլե Կոնդ անվանված բլուրը՝ շրջապատելով որձաքար անշաղախ պատերով, որոնց հետքերը տակավին երևում են:

Գյուլլե Կոնդը մեծ նախապատմական դամբարան է, որը վաղուց նկատել էր Երվանդ Լալայանը: Հարմար առիթով նա պեղումներ կատարեց Խաչիկ վարդապետի հետ, բայց ինձ հայտնի չէ մինչև այժմ, թե ո՞ւր տարին բլրի միջից հանված իրեղենները: Թեև պետք է ասել, որ պեղման օրենքներին հակառակ փորումներ կատարելուն համար, բնականորեն քիչ արդյունք պիտի ունենային՝ գյուտերի տեսակետով և որչափ որ լսել եմ այս պեղումը եղած է իբրև մի նախնական փորձ, առաջիկային շարունակելու համար, սակայն հետո չեն կարողացել շարունակել: Եթե հմուտ մասնագետների ձեռքով պեղումները շարունակվեն թե՛ այս բլուրի վրա և թե՛ մոտակա դոլմենների և նախաքրիստոնեական գերեզմանների շրջանում, մեծ արդյունք կստացվի հնագիտական տեսակետով:

Քրիստոնեական շրջանի հնությունների մնացորդներ ցրված են գյուղի զանազան կողմերում: Գյուղի մեջ նշանավոր տեղ կբռնե պատմական տեսակետով այն քարյա կոթողը, որ ավանդությունը վերագրում է Մավրիկ կայսեր մոր անվան: Մեր պատմագիրներեն ոմանք ասում են, որ Մավրիկ կայսրը բնիկ օշականցի էր, հակառակ օտար պատմագիրների տված տեղեկության Մավրիկի ծագման մասին: Ուստի եթե ստուգվի, որ Մավրիկ կայսրը բնիկ օշականցի էր, այն ժամանակ կասկած չի մնա, որ կոթողը ևս Մավրիկի մոր հիշատակն է, որովհետև կոթողի կազմվածքը ևս հայկական չէ, թեև մասունքների մեջ նկատվում են հայկական տեղական ձևեր: Աստիճանավոր պատվանդանի վրա կանգնված է միակտուր բարձր մի անկյունավոր սյուն, որու գլխին վրա Զվարթնոցի մանվածո կողովավոր խոյակներին շատ նման մի խոյակ կա: Այս խոյակն է, որ տեղական ժամանակակից ճարտարապետական հատկանիշն ունի:

Ներկայի Օշական գյուղը ընդհանրապես հայոց մեջ ժողովրդականություն է վայելում, հայկական գրերի գյուտի հեղինակ Մեսրովբ Մաշտոցի այնտեղ թաղված լինելուն համար: Այս գյուղը սեփականություն էր Վահան Զորավարին, որը Մաշտոցի մարմինը փոխադրեց իր կալվածքը հանուն երախտագիտության և դամբարանին վրա շինեց մի եկեղեցի, որն այժմ չկա: Նախկին եկեղեցին չափազանց հնացած է եղել, որը Փիլիպոս կաթողիկոս 1840 թվին նորոգել է, բայց դարձյալ չի դիմացել, ուստի Գևորգ կաթողիկոս 1875-ին ամբողջովին հիմնիվեր նորոգել է:

Գյուղի մի եզերքում, գետի մի կողմը կան անտաշ որձաքարերով շինված կիկլոպյան շենքի հիմեր և տեղ տեղ բավականին բարձր պատեր: Մի

քանի գյուղացիներ որոշ չափով վերականգնելով այս պատերը օգտագործում են իբր բնակարան: Այս պատերի համար հասարակաց կարծիք է գոյացել գյուղացոց մեջ, որ Վահան Ամատունիի ապարանքի պատերն են: Ինչ որ էլ լինի այս պատերի անցյալը, Վահանի ապարանք թե ամրոց, լուրջ ուշադրության և մանրակրկիտ հետազոտության արժանի է:

Բացի մի շարք հատուկտոր հնագիտական մնացորդներից և այրերից, որ ցրված են գյուղի մեջ և շրջակայքում, ուշադրության արժանի է Մանկանոց անվանված փոքր եկեղեցին և գետի վրա ձգված կամուրջը:

Մանկանոց ըսված փոքր եկեղեցին ս. Սիոն անունով, Օշականի հյուսիս-արևմուտքում, բավականին վայելուչ և գեղարվեստական երևույթ ունի: Իր մանրամասնության մեջ ցույց է տալիս թե 7-րդ և թե 10-րդ դարու ճարտարապետական ոճերի խառնուրդ: Դեռ լիովին չէ ստուգված վճռականապես որոշելու համար, այս եկեղեցու շինության դարաշրջանը, մեր քննության ժամանակի կարճության պատճառով: Սակայն ճարտարապետության պատմության համար անհետաձգելի է որոշել, թե իսկապես 7-րդ դարու շենք է, 10-րդ դարու ժամանակակից ձևերով նորոգված, թե 10-րդ դարուն կանգնված է, 7-րդ դարու ճարտարապետական ավանդություններով խառն: Իսկ կամուրջի մասին Շահխաթունյան տեղեկություն է տալիս, որ Նահապետ կաթողիկոս շինած է այս կամուրջը 1691–1705 թվերին, որ արձանագրված է: Կամուրջը վերանորոգել է Սիմեոն կաթողիկոսը 1763–1780թ. թ.:

## 86. ՕՐԴԱԿԼՈՒ (Հն. Պորտակ)

Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին կգտնվի այս գյուղը Օրդակլու անունով, որուն հին անունն է Պորտակ: Այստեղ կա մի հին եկեղեցի, որ գյուղացիք նորոգելով ս. Հովհաննես անվանեցին: Կան նաև հին գերեզմաններ և խաչքարեր: Այս գյուղի մոտ ծովեզրյա քարափների վրա գտնվեցավ ինը տողով մի բևեռագիր արձանագրություն:

## 87. ՕՐԹԱՔԻԼԻՍԱ

Լենինականից չորս կիլոմետր դեպի հյուսիս գյուղին մեջ կա մի միջակ մեծությամբ եկեղեցի անդմբեթ. անվրեպ 7-րդ դարու գործ. 10–11-րդ դարուն ավելցուցած են մի մատուռ: Շինողն անհայտ է, արձանագրություն չկա կամ նորոգությամբ կորած է: Այժմ գյուղական եկեղեցի է և անխնամ պահված:



Նկ. 113. Օրթաքիլիսայի 7-րդ դարի եկեղեցին հարավ-արևմուտքից

# ՀՈՒՇԱԳԻՐԵՐ ՏԵՂԵԿԱԳԻՐԵՐ ԵՎ ՆԱՄԱԿՆԵՐ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

# Ա

# ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԾՈՅԱՏԵՏՐ

*(Դիվանի № 35 ա) սկսած 1909 թ. մայիսի 9-ին*

## ԱԼԱՄ

*Այիս 9-ին այցելեցի Ալամ:*

*Ալամի հյուսիս արևմտյան աբսիդին քառակուսի մասի քիվը:*

*Հյուսիսային աբսիդին մեկ մասի քիվը:*

*Հարավային, նույնպես արևելյան աբսիդին քիվը:*

*Պատուհան և պատուհանի պսակի վրա ատամնաշար է:*

*Ներքին որմասյուներու խոյակ:*

*Թերևս առաջին օրինակն է արևմտյան քառակ. երկար թևով բոլոր եկեղեցյաց մեջ և նմանում է 7-րդ դարուն:*



*Նկ. 114. Ալամի հյուսիս-արևմտյան աբսիդի քառակուսի մասի քիվը*



*Նկ. 115. Ալամի հյուսիսային աբսիդի մեկ մասի քիվը*



*Նկ. 116. Ալամի հարավային և արևելյան աբսիդների քիվը*



*Նկ. 117. Ալամի պատուհաններից մեկի պսակը*

*Գմբեթն արտաքուստ ութանկյունի է, ներքուստ՝ բոլորակ: Աբսիդներն արտաքուստ ութանկյունի, ներքուստ՝ բոլորակ: Գմբեթի կազմությունը նախնականի դրոշմ ունի. փոխանակ voûte pendentif-ի սկսված է անկյունները կտրելով, ինչպես ձևագրված է ստորև (նկ. 120):*

*Գմբեթին աստիճանաբար բոլորչիացման կերպը, abcd փոքր կամարներ չեղակի նետված: Երևի 7-րդ դարուն ծանոթ չէր voûte pendentif -ով գմբեթի բոլորչին կազմելը:*

*1909 մայիս 9-ին Անիեն ճանապարհվեցա դեպի Տեկոր, ճանապարհին հանդիպեցա Ալաման գյուղը և մի ժամու չափ ս. Անանիա եկեղեցին հետա-*



*Նկ. 118. Ալամի ներքին որմնասյուների խոյակ*

զոտելեն հետո, մեկնեցա ուղղակի Խծկոնք (Պեչ Քիլիսե), մի գիշեր այնտեղ անցնելով և հիշատակարանները տեսնելով անցա Տեկոր մայիսի 10-ին առավոտյան, և ինձի բնակության համար տվին գյուղի ուսումնարանի սենյակներեն մին:

Արևմտյան մուտքի վրայի կամարակապ voûte d'arrêt-ը հետնագույն նորոգության արդյունք է, հետևաբար այդ եկեղեցին 12-րդ դարուն մեջ, անկասկած, նորոգություն կրեր է:



Նկ. 119. Ալամի տաճարի հատակաձևը

Այս եկեղեցին, որ կոչվում է ս. Անանիա, Գրիգոր Եղյուտոր անունով մեկուն շինածն է, ըստ արձանագրության 637 թվականին, Հերակլ կայսեր և Արշարունյաց տեր Ներսեհ Կամսարականի օրով:




Նկ. 120. Ալամի տաճարի գմբեթի հիմքը

Եկեղեցին 7-րդ դարու ոճի համաձայն արտաքուստ խաչաձև է, բայց ավելի նախնական քան անկյունավոր աբսիդներ ունեցողները: Այստեղ աբսիդներն ուղղակի քառակուսի ձևով են դուրս շեշտված:

## ՏԵԿՈՐԻ ՏԱՃԱՐԸ

Արևելքեն արևմուտք ընթացող համանուն գետակին հարավակողման վրա լեռնացած երկարող բարձր բլուրներու լանջին շինված է այս հռչակավոր հնադարյան տաճարը, հարավային և արևմտյան կողմեն շենքը շրջապատող մոտակա լեռներն են, որոնց մեջեն հազիվ իմն նշմարելի է Յազլճա լեռան գագաթը, հյուսիսեն նմանապես, բայց քիչ ավելի բացագույն կերևին Ալաճա լեռան կցված և անոր շարունակությունը կազմող լեռնակներ, իսկ արևելքեն, որ ձորի ուղղությամբ հետզհետե ցածրացած են լեռներ, հիանալի կերպով կպարզվի Արագածի սպիտակափառ սրանկյուն գագաթը իր լայնատարած քղանցքներով: Առայժմ բացի գյուղի մեջ ջուրի առատության պատճառով բացառաբար կանաչած վայրենի ու պտղատու ծառերու կանաչութենե, ուրիշ հաճելի տեսարան մը չկա:

Անտարակույս այլ պատկեր կներկայացներ այս ջրառատ ձորը և նույնպես ջրառատ լեռնալանջերը, երբ Կամսարականներու և Բագրատունիներու մեծ և վայելչասեր հովանավորությունը կվայելեր, մանավանդ տաճարի հարավակողման լեռնալանջը, որ Ագարակի միջով հոսած ջուրով շատ հավանականություն կվերցնե դրախտանման վայելչությամբ ծաղկած լինելը, ծառ ու ծառաստանով և պտղատու պարտեզներով և անշուշտ այս իսկ պատճառ տվեր է այն մեծ ջրի կովին, որուն մինչև Բագրատունի Հովհաննես Սմբատ միջամտեր հաշտեցուցեր է տեկորցիները ագարակցիներու հետ և այդ անբռնաբարելի որոշումը արձանագրվեր է տաճարի հյուսիսակողմը արևմտյան անկյան կից:

Բազմադարյան անցքերու ու արհավիրքներու վկա այս տաճարը ուսումնասիրել շատ դժվար և երկար ժամանակի գործ է: Թե ի՞նչ է եղեր սկիզբը և ի՞նչ զանազան փոփոխություններե անցնելով զառամած ու օրհասական հասեր է մեր օրին, չէ կարելի լիովին մանրամասն և ճշգրիտ բացատրել, սակայն ինչ որ ակներև է և քիչ թե շատ փաստացի կերպով և գիտականորեն հավանական, ես պիտի ջանամ զանոնք պարզել:

Իր ձևով և հատակագծով այս եկեղեցին հազվագյուտ օրինակներեն մեկը կներկայացնե, որուն համանման շինություններ հազիվ իմն նշմարելի են Հայաստանի զանազան կետերու վրա, մինչև այսօր նկատելի եղած են Ղզըլ-Ղալայի տաճարը և Քասախի եկեղեցին, որոնք ևս սույն տաճարին նման ունին նախնական քրիստոնեական տաճարներու տիպը և ձևերով ալ շատ նմանություններ:

Ուղղանկյուն երկար քառակուսի կներկայացնե հատակագիծը, միայն արևելյան կողմեն մի քիչ դուրս ընկած է խորանի կիսաբոլորակի մասը: Բացի արևելքեն, այժմ նկատելի են, որ երեք կողմեն հյուսիս, հարավ և արևմուտք, շրջապատված է եղեր սյունազարդ սրահով մը, որուն սյուները աղեղներով թե՛ միմյանց կապված էին և թե՛ կամարներով բուն տաճարին, արևելյան կողմեն այս սյունասրահը ընդհատվեր են սեղանին կից երկար հյուսիսեն հարավ երկնցող քառակուսի սենյակներու պատճառով և նույն սյունազարդի ուղղությամբ սենյակներու պատերը շարունակվելով հասեր են մինչև արևելյան անկյունը, ուր այլևս այսօր ոչինչ չեն նշմարվեր, բացի իր ինն աստիճաններեն:

Փոփոխություններ և նորոգություններ խիստ շատ եղեր են այս տաճարին վրա, բայց բարեբախտաբար յուրաքանչյուր շրջաններու մեջ եղած փոփոխություններու և նորոգություններու բավականին բնորոշ հետքերը մնացեր են, թե՛ արտաքուստ ամեն կողմե և թե՛ ներքուստ:

Շատ պատճառներ կան համոզվելու, որ տաճարի արևելյան կողմը ի սկզբան չէ ունեցեր աբսիդի այժմյան դուրս ելած մասը, այլ եղեր է ուղիղ օրորոց հյուսիսեն հարավ և ունեցեր է նմանապես սյունազարդ սրահ մը ինչպես մյուս կողմերը:

Բացի այն նշանները, որոնք կապացուցանեն խորանին հետնագույն ժամանակ դուրս եղած ըլալը, այժմ կա մի անհերքելի փաստ՝ արևելյան կողմեն ևս սյունասրահի մը գոյության:

Արևելյան ճակատի երկու անկյուններուն տակ, տակավին կմնան երկու որմնասյանց խարիսխներ, քանդակված միևնույն քարով, միևնույն ճաշակով և միևնույն բարձրաքանդակներով, ինչպես տաճարի մյուս կողմերը, սյունախարիսխները ևս չէին կարող կամ պատահաբար դրված ըլալ և կամ իբր զարդ աննպատակ կերպով, առանց վրաները սյուներ կամ contre pilastre-ներ ունենալու, մանավանդ որ մի բան նկատելի է, որ ինչպես մյուս անկյունները, նույնպես ալ այս անկյունի մնացած խարիսխները իրենց մուլյուրներու վերջավորության ընդհատումը և քովերնին դեպի դուրս, արևելյան կողմի համար դրվելիք մի այլ սյունախարիսխի նշանները ցույց կուտան, որ այժմյանները կվերաբերին հյուսիսի և հարավի պատերու շարունակության վրա: Հիրավի, թեև այս խարիսխներուն վրա կան բավական սյունանման մուլյուրներ բարձրացած մինչև պսակը, սակայն սա ըստ ինքյան իր բնորոշ հատկությամբ, նույնիսկ 7-րդ դարեն հետո ծնած մի ճաշակի արդյունք է, հետևաբար 7-րդ դարեն ալ հետո եղած նորոգության մը հետևանք, 10-րդ դարուն հաճախ կրկնված է այս ձևը, եկեղեցիներու բոլոր անկյուններուն վրա ավելի կանոնավորված և կատարելագործված ձևերով, իսկ 7-րդ դարեն սկսյալ դեպի հիները ոչ մեկուն վրա գոյություն չունին:

Թե երբ է դուրս հանված աբսիդը իսկական ժամանակ կամ թվական չէ կարելի որոշել, եթե նայելու և դատելու ըլլայինք անոր ճակատը շարված քարերեն և մասնավորապես ցոկոլի և ցոկոլից վեր եղած պատուհանին տակ, բովանդակ աբսիդին երկարությամբ միայն և աբսիդին բեկումներով միասին բեկբեկված պսակներու ոճեն պետք էր հետևցնեինք, որ այդ փոփոխությունը եղած են նույնիսկ 13 կամ 14-րդ դարերուն մեջ:



Նկ. 121. Տեկորի տաճարի ընդհանուր տեսքը հյուսիս-արևմուտքից քանդվելուց առաջ (վերարտադրություն)

Բայց որովհետև աբսիդեն դեպի արևելք բացվող լայն պատուհանը գոյություն ունի դեռ իր լայնարձակ բացվածքով, ինչպես տաճարի մյուս նախնական պատուհանները, նաև անոր մեջ կա, միաժամանակ, հավանորեն Բագրատունի շրջանին մեջ անցված դեղնագույն քարեր՝ (պետք է գիտնալ, որ հին շենքը շինված էր վարդագույնի մոտ քարով) պատուհանները նեղցնելու համար և վրան քանդակված Բագրատունի շրջանի մանվածո պսակով, այն ատեն կտեսնինք, որ այս աբսիդը դուրս հանելու գործողությունը կատարված է նախքան 9–10-րդ դարերը, ցածի մուլյուրները և այժմյան երեսին վրա գտնված քարերը թերևս շինված են 12–15-րդ դարերու շրջանին մեջ: Պիլաստրի նման աբսիդի բեկուն անկյուններին հյուսիսային կողմեն վերեն վար սյունանման դուրս ցցվող մասերը, երբ հասեր են պատուհանի պսակին, պարտավորյալ կերպով քարը տաշված է պսակի լայնությամբ, տեղ տալու համար պսակի դեպի դուրս ցցված ավելի բարձր մասին:

Պատուհանի պսակի ձևը և քանդակները մեկ նայվածքով ցույց կուտան թե նման են դռների և այլ կողմերի մուլյուրների արվեստագործության, սակայն մանրակրկիտ քննությամբ կարելի է շուտով եզրակացնել, որ դա ավելի անհաջող նմանություն է, քան մի ժամանակ և միևնույն վարպետի հսկողության տակ շինված, տաշված քանդակներ: Ոչ իրենց չափով կհամեմատին դռներու եզերքը եղած նմանօրինակ քանդակներուն և ոչ ալ իրենց մանրամասնությանց մեջ ունին այն հաջող նրբությունները ներկայացնելու համար իսկական իր նախատիպերը երեք դռներու կամարներու վրա: Ասկեց կհետևի, որ այս աբսիդի հավելվածի գործողությունը կատարված է այն ժամանակ, երբ դեռ 5-րդ դարու ոճը նոր էր մոտեցած իր անկման շրջանին և չէր ծնած դեռ 7-րդ դարի նոր վերածնված արվեստները: Այդ պատճառով ալ, թե՛ նմանություն պահպանելու նպատակով և թե՛ ուրիշ նոր ոճերու բացակայության պատճառով համբակ վարպետը հազիվ կարողացած է, մոտավոր նմանությունը իրագործել ուրիշ կողմի կամարներու վրա գտնված քանդակներուն:

Բացի այս քանդակեն, աբսիդին կողմնակի պատերուն հետ միացումը բոլորովին օտարոտի կերպով եղած է, այն հստակ ուղղությունը բնականորեն կորցուցեր է, ինչ որ պիտի ունենար նոր շինված ատեն, նաև ավելի բարձր է հանված քան կողմնակի պատերը և վրան դրած պսակը ևս անհաջող և անհամաչափ նմանություն է միայն մյուս կողմերու պսակներուն: Ավելի անվրեպ նշան կգտնվի կտուրին վրա, երբ վերջացեր է աբսիդի *elévetion*-ը, կոնաձև ծածկով մը ծածկեր են վրան, որուն ծայրը հասեր է արդեն արևելյան ճակատի երկայնության վրա նախապես գոյություն ունեցող ֆրոնտոնի պսակին տակը, ուր այսօրվան փլուզումներեն հայտնի կտեսնվին, որ նախապես սրբատաշ քարերով շինված ճակատին է կպցված ամբողջ ծածկը:

Ինչպես կերևի ամենեն շատ խնամքը դարե ի դար տարված է այս [արևելյան] կողմին վրա, թե ամենեն ավելի ամուր դիրքով մնացած մասն է, և թե շատ բազմատեսակ նորոգությանց և գույնզգույն քարերու այլազանություն մը կներկայացնե այս կողմը:

Արևելյան ճակատին վրա բացի աբսիդին միջին պատուհանեն ուրիշ որևէ զարդ չկա. միայն կան չորս փոքրիկ պատուհաններ կողմնակի սենյակներուն միջեն, որոնք ի ներքուստ շինված են վրայե վրա երկու կողմեն ալ:

Հյուսիսային ճակատը կներկայանա ամենաճոխ կողմը: Այս կողմեն ունի երկու անհավասար մեծությամբ դռներ պայտաձև կամարներով, որոնք զույգ սյուներու վրա են նստած և այս վերջիններս ալ նստած են բարձր աստիճանի վրա:

Հինգ հատ զարդաքանդակ սյուներ հռոմեական կլոր սյուներու համաչափությամբ, բոլորովին ինքնուրույն ոճի խոյակներով և խարիսխներով կզարդարեն ճակատը, այս սյուներեն երկուսը կգտնվին երկու դռների մեջտեղ, և երկու սյուներուն մեջ կա մի լայն պատուհան, որը փակված է Բագրատունի շրջանի նորոգության ժամանակ, իսկ մյուս երեք սյուներեն երկուքը նույն ճակատի դեպի արևմտյան կողմը, իսկ մյուսը՝ արևելյան կողմի դռան սյուներուն մոտ: Այս սյուներուն մոտ ալ կան ժամանակակից ոճով լայն պատուհաններ խցված միաժամանակ Բագրատունի նորոգության ժամանակ կամ մի քիչ ավելի շուտ:

Այս կողմեն լիովին նկատելի է շուրջը պատող սյունազարդ սրահին անվրեպ ապացույցները: Արևելյան կողմի սենյակեն դուրս ելած մասը, որուն ճակատը արևմտյան կողմեն կամարակապ է և կձևացնե կիսաբոլորակ աբսիդ մը, որպես խորան ոչ միայն ունի յուր առանձին կամարներու հանգստյան խոյակները, այլ անկեց դուրս մի քիչ ցածր, ուղիղ հյուսիսային պատին անկյան վրա ունի մի խոյակ՝ կլոր սյան, որը հանդիստն էր սյունաշարի վերջին աղեղին: Նույն ուղղությամբ հատակին վրա կմնա տակավին նույն սյունաշարերու հիմը, ոչ միայն այս կողմեն, այլև ամեն կողմեն, իսկ այս սյունասրահը ծածկող կամարին միակ ապացույց հետքը մնացած է միջին երկու սյուներու գլխուն վրա կորաքանդակ նույն երկու սյուներուն մեջտեղ գտնված պատուհանի պսակին երկու կողմին վրա, որոնք կամա թե ակամա չեն վերցված, և կարծես այն պատճառով, որ այդ քարերուն ծայրերը շատ խոր կերպով մտած էին սյուներու խոյակներու ետևը, որոնք հանել առանց խոյակներուն վնասելու շատ դժվար էր, ուստի հարմար էր սեպեր հետնագույն պսակը ընդհատել այն տեղերը ուր պատահեր է այս կամարամասը և ուրիշ խոյակներ:

Այս սյունասրահի գործածությունը կամ գոյությունը այստեղ շատ երկար չէ տևած, այսօրվան շինության վրա գտնված նշաններեն կերևի, որ դեռ նախքան Բագրատունի շրջանի մեծ նորոգությունը արդեն քանդվեր և վերցուցեր են բոլորովին, և կամարի հանգստին վրա սյունախոյակներու բարձրությամբ նորագույն կերպով դրեր են պսակ մը, որ կարծյոք նույնիսկ այնքան ալ հատուկ չէ նույն դարու ոճին, հետևցնելով ավելի հնագույններու ձևերեն և համաչափություններեն, որպիսիքն են դռների քանդակազարդ շրջանակները և արտաքին աբսիդը պսակող կամարի *moulur*-ները: Բնականորեն նորից պահանջում է այս պսակին զետեղումը միջին մասին վրա հակառակ հայ ճարտարապետության մեջ ընդունված սովորության, որովհետև ի սկզբան պատերը անհամեմատ թանձր են շինված մինչև սյունասրահ կամարներու բարձրության հասնելը (17–20 սմ.):

Արդ, երբ սյունասրահ կամարները քանդվեր են, բնականաբար վերևի մասի ավելի բարակ շինված պատի և ներքևի թանձր մասի տարբերությունը բաց պիտի մնար, ուստի հարկ էր մի կերպ ծածկել և հարմար միջոցն էր մի ժամանակակից ոճի նմանությամբ պսակ մը քաշելը, այդպես ալ եղած է, ուր որ անարգել շարունակել կարելի եղած է, շարունակած են ուղիղ հորիզոնական ձևով և միայն ընդհատված սյանց խոյակներուն առջև, իսկ երբ հանդիպեր է անհամեմատ բարձր և լայն պատուհաններուն նույն տեղերը պարտավորվեր են նույն մուլյուրներով պսակել կամարաձև պատուհաններուն կատարները, հետնագույն պսակներու քարերը կարճվել են, որոնք չեն մտած խոր պատին մեջ: Ահա այս պատուհաններու պսակներուն վրա ալ բնորոշ կերպով կերևին չեչտված պայտաձև կամարներու աստիճանաբար մեղմացումը, մասնավորապես արևմտյան կողմի աբսիդին մոտ գտնվող պատուհանին պսակը բոլորովին կիսաբոլոր է, իսկ մյուսներուն վրա, համեմատելով հիներուն, շատ քիչ չեչտված է պայտաձևը և կմտենա այնպիսի համաչափության մը, որ հետնագույն դարերու մեջ գործածված է:

Թեև չեմ ուզեր հաշտվել արևմտյան կողմի աբսիդին միաժամանակ (ոչ ետևի սենյակներուն) շինված ըլլալուն, սակայն շատ ուժեղ փաստ ալ չգտա հետնագույն շինություն ըլլալուն, բայց ինչ որ ալ ըլլա, եթե հավելված իսկ է, ավելի հին է քան սյունասրահներու վերացումը, որովհետև թե մնացած խոյակները նույն արվեստագործության դրոշմը կկրեն ինչ որ են մյուս հին հարազատ խոյակները և թե այնպիսի համաչափ բարձրության մը վրա դրված են աբսիդին [թե՛ խոյակները և թե՛ կամարը], որ սյունասրահին սյունաշարերու աղեղները կապելեն հետո դեպի պատը ձգվող կամարը համաչափորեն կբոլորվեր աբսիդի կամարին վրայեն և ըստ երևույթին աբսիդը պսակող մուլյուրն է միակը, որ մնացեր է ավելի հին օրինակը և ուղիղ նստած սյանց խոյակներուն վրա, մինչդեռ մեծ ճակատին վրա քաշածը դրվեր է ավելի ցած, որուն պատճառով, մտեր է մասամբ աբսիդի անկյունների խոյակներուն հավասարությամբ դրված մեծ ճակատի *colonne engagée*-ներու խցակած ետևը:

Իմ կարծիքով այս փոփոխությունը կամ նորոգությունները կկազմեն տաճարի գլխավոր նորոգությանց առաջին շրջանը, որուն մեջ կմտնե սյունասրահներու վերացումը և ներքին խորանի աբսիդի դուրս չեչտվելը:

Բնականաբար հայտնի չէ տեսքով, թե ինչ ձև ունեին սյունասրահներու սյուները և խոյակները, թեև քանակով հայտնի է, որ պիտի լինեին այնչափ, որչափ որմասյուներ: Այս նախնական կամ սկզբնական շրջանին նորոգությունը պահված է մինչև պատուհաններու կիսաբոլորակ պսակները:

Երկրորդ շրջան, որ բավական մեծ փոփոխության և այլաձևության ենթարկվեր է, ամենահավանական ժամանակն է Բագրատունյաց շրջանը և սկսեր է պսակած պատուհաններեն վեր մինչև կատարները, գմբեթն ալ միասին, նմանապես ներսի կողմեն ալ բավականաչափ փոփոխություններ են եղել: Սրա մասին ներքին նկարագրության ժամանակ կտեսնենք:

Այս երկրորդ նորոգությունն եղած է սպիտակի մոտեցող դեղնագույն քարով, և վրան դրած քանդակներ զուտ Բագրատունի շրջանի մանածոներ են, ինչպես կան Ֆրոնտոններու մեջ եղած զույգ պատուհաններու վրա իբրև պսակ:

Այս նորոգության մեջ եղած գլխավոր փոփոխություններն են՝ կիսեն վեր ամբողջ շինության ճակատի քարերի վերստին նորոգվիլը առանց հինեն քար մը թողելու: Նախապես գոյություն ունեցող լայն ու լուսավոր պատուհաններուն կարճացվելն ու նեղացվելը Ֆրոնտոններու տակ, իսկ ստորին մասի պատուհաններուն բոլորովին փոխվելը:

Նկ. 122. Տեկորի տաճարի հյուսիսային կողմի արևելյան մասի տեսքն արտաքուստ

Միևնույն ատեն փակված են նաև միջին ֆրոնտոններու կողմնակի ճակատներեն դեպի տաճարը նայող պատուհանները, ֆրոնտոններեն երկու կողմեն թեքված տանիքներու վրա ջրի հոսանքը ավելի ուժեղացնելու համար, նախկին ցածին վրայեն կրկներ են այլ տանիքներ ցածի եզերքներեն հինին հավասար սկսելով աստիճանաբար բարձրացուցեր են մինչև գրեթե ֆրոնտոնին կողմնակի պսակեն, հողեն 20 սմ ցած, որով թեև տանիքը ավելի թեքվեր է, սակայն նույն ֆրոնտոններու կողմնակի երեսներուն մեծ կամարներու վրայեն դեպի տաճար նայող պատուհանները փակվեր են ընդմիշտ:

Այս **բ.** նորոգության մեջ ալ քիվերու նոր ձև չեն ստեղծած, հիներու նմանությունը պահած են, սակայն համաչափության տեսակետով չեն կարողացած նույնը իրագործել, որմերը առհասարակ կամ ավելի նեղ և կամ ավելի լայն շինած են, միայն ֆրոնտոններու մեջ եղած զույգ պատուհանները պսակող մույրուրներն են, որ մի քիչ հիներուն նմանվելու երևույթը ունեցեր են, իսկ մյուս մասերու տարբերությունները կշեշտվին ստորին մույրուրներու անհամեմատ նեղությամբ և վրայինի անհամեմատ լայնությամբ:

Տեղին է ըսել, որ եկեղեցվույս այս ճակատի կտորն իբրև բերդ ծառայեր է մի ժամանակ, որովհետև պսակներու ամբողջ երկարության վրա միասին առնելով կողմնակի աբսիդեն դեպի հյուսիս դարձած մասն ալ բարձրացուցեր են չոր պատեր ետևը պաշտպանելու համար, բայց չգիտեմ թե երբ եղեր է այս բանը:

Այժմյան երևույթով արտաքին կողմնակի աբսիդին բարձրությունը չի հավասարեր ետևի երկու սենյակներուն և կամ արևելյան կողմեն տաճարին ունեցած բարձրության աբսիդին խորության չափով կամարեն վեր կտրված է բարձրությունը և փոքրիկ տարածությամբ մի տանիք մնալեն հետո վերստին շարունակված է երկրորդ հարկի սենյակի բարձրության պատը մինչև շենքի իսկական հավասարությանը: Այս մասի նորոգության ժամանակի մասին ոչինչ չեմ կարող ըսել, որովհետև մինչև աբսիդին կամարի կատարը եղած քարերու շարքերը համապատասխան են նախաբագրատունյաց շրջանի նորոգության:

Իսկ անկեց վեր եղած մասը բոլորովին տարբեր է թե հիներեն և թե Բագրատունյաց շրջանի նորոգության կերպեն, թե շինարարական ոճով և թե քարերու որակով: Սույն նորոգությունը անցած է նաև արևելյան ճակատեն, կողմնակի երկու պատերի նույն բարձրության վրայեն մինչև կտուրը, առանց սակայն աբսիդին դիպչելու, բացի վերջինին կատարի երկու շարքեն. և սա կերևի ավելի ուշ շրջանի նորոգություն մը, քան Բագրատունի շրջանը:

Արևմտյան ճակատին վրա բարձրացած են վեց քառակուսի որմայուներ և ամբողջ ճակատը միևնույն փոփոխություններուն և նորոգություններուն է ենթարկված, ինչպես հյուսիսային ճակատը:

Նախնական նորոգության կպատկանին մինչև պատուհաններու դուխը բոլորվող պսակներու կատարը, իսկ անկեց վեր ամբողջապես Բագրատունյաց շրջանի նորոգություն է: Այս ճակատի վրա պարզ նկատելի է, որ ստորին մասն ալ շինության ժամանակին հարազատ չէ մնացած, բոլոր սյուները հետնագույն կարկատաններու ենթարկված ըլլալեն զատ, պատին մեջ ալ մտցված են զանազան գույնով և չափով քարեր, որոնք տգեղ կերպով խանգարեր են սկզբնական շինության ժամանակի կանոնավոր շարքերու գծերը: Հարազատ կերևին ներքևի աստիճանեն անմիջապես վեր երեք կարգ քարի շարքերը, մյուս մասերը մինչև հետնագույն սյունասրահի հանգստյան տեղի վրա շինված պսակը ենթարկվեր է անընդհատ փոփոխությանց, միայն այս կողմը, սույն հետնագույն պսակը սյունասրահի հանգստյան վրա դրված սյուներու խոյակներուն կանոնավոր հավասարությամբ է դրված:

Միայն մեկ դուռ կա մեջտեղը, բայց անհամեմատ լայն քան հյուսիսային դռները: Դուռն ամբողջությամբ կներկայացնե նախնական տիպը առանց ոևէ փոփոխության: Բոլոր զարդաքանդակներն իրենց ինքնուրույնությամբ կպատկանին 5-րդ դարու հայ ոճին: Այստեղ պայտաձև կամարը աղեղի բոլորումով ուղղակի չէ վերջացած սյան խոյակին վրա, այլ բոլորակին հետ բեկուն կապված է, մաս մը ուղղահայաց կերպով իջած և հետո վերջացած սյան խոյակին վրա:

Ինչպես մյուս դռներուն, նույնպես այս դռան վերնասյամը իր ամբողջ երկարությամբ միակտուր քար է, որուն մույրուրներուն առանց քանդակի եղած մասերուն վրա իրենց ունեցած լայնության համեմատ մեծ և փոքր տառերով արձանագրած է շինողին արձանագրությունը, վերի եզերքին վրա միջակ մեծությամբ գրված է երկու տող, իսկ քանդակներեն ցած, նեղ ժապավենի մը վրա ավելի փոքր փորագրված է մեկ տող, իսկ անոր ներքև, որ ավելի լայն է, անհամեմատ խոշոր տառերով գրված է՝ **«Սահակ Կամսարական շինեաց զայս վկայարան սրբոյ Սարգսի»** (?), միայն թե այս ամբողջ խոսքը մի շարքի վրա նույն սկսված մեծությամբ տառերով չի՝ սեղմելուն համար վկայարան բառի տառերը փոքրացնելով վրան տեղ բացեր և գրեր են

սրբոյ Սարգսի բառը: Կամսարականի արձանագրությունը վերնասյամեն վեր կիսաբոլորակին վրայեն սկսած է:

Վերնասյամեն վեր եղած կիսաբոլորակ ճակատը շինված է երեք կարգ սովորական մեծությամբ քարերով, նույնպես են նաև մյուս դռներուն կիսաբոլորակ ճակատները: Ինչպես կերևի, վերջնագույն ճարտարապետության մեջ, ընդունված և պահանջված սովորության համեմատ միակտուր քարով շինելու հոգ չեն տարած և կարևորություն չեն տված, երևի այս է պատճառը, որ Ալիշանի տեղեկատուն չփոթելով կամ չհասկանալով եղած քարերը ուրիշ տեղե բերած կարծեր է, ընդհակառակը, կամարին հետ միաժամանակ շինված է: Ահա այս մասին վրա գրված է Գագիկի կնոջ Կատրանիդե թագուհիի արձանագրությունը:

Այս ճակատին վրա ևս, Բագրատունյաց շրջանի նորոգության մեջ նկատելի տարբեր բան չկա, միևնույն ընթացք, միևնույն կերպն է, ինչ որ հյուսիսային ճակատը, ցածի պատուհանները խցված, վերի ֆրոնտոնին միջի պատուհանները կարճացված ու նեղցած, միևնույն ոճով քանդակազարդված կիսաբոլոր կատարներու պակները: Միակ տարբերությունը որ կա, այն ալ ֆրոնտոնին տակ քաշված պակն է և անոր վրա շինված խաչաձև թևերով պատուհանն է: Սույն խաչաձևի վերի թևն ունի ավելի մեծ պայտաձև կիսաբոլորակ քան կողմնակի թևերու կիսաբոլորակները, իսկ ստորին մասը քառակուսի վերջավորություն ունեցած է:

Վերի կիսաբոլորակին երկու կողմերուն վրա քանդակած են երկու սիրամարգներ, բավական ճաշակավոր կերպով, որոնք կիսաբոլորակի կատարին վրա տնկված տունկի մը վրայեն ինչ որ պտուղ կուտեն, հավանաբար խաղողի երևույթը տեսնել կկարծեմ, իսկ կողմնակի թևերուն ուղղությամբ քանդակված են երկու պատկերներ (buste), որոնց հարավային կողմինը հայտնի է որ կնոջ մը պատկերն է, իսկ մյուսը՝ անորոշ, թեև գլխու գդակի կամ ծածկոցի ձևով մոտավոր նմանություն կտեսնվի, սակայն գագաթը քիչ մը ավելի ձվաձև է քան մյուսը, և երեսը մեծ մասամբ փչացած է, որով անհնար եղավ լիովին որոշել, թե ի՞նչ սեռի կպատկանի:

Մտից մեծ դուռը կհիշեցնե Ղզզլ Ղալայի մտից դուռը, որովհետև բացի պայտաձև կամարեն, ունեցեր է նաև ֆրոնտոն, որը թեև այժմ կբացակայի լիովին, սակայն պատին վրա հետքերը մնացեր են: Կրաշաղախի գծեր որոշ կերպով ցույց կուտան անոր մույլուրներու և կարկառումներու ուղղությունները, նաև վրան ալ կատարին բարձրությունը: Բացի այս նշաններեն կա նաև մի ուրիշ անվրեպ հետք. երբ որ սյունասրահի բաց թողած տեղին վրա պակը շարեր են, ֆրոնտոնին հանդիպած տեղին վրա տաշեր են և հետո տեղին հարմարեցուցեր են: Այստեղ պետք է ըսել, որ նախքան սյունազարդ սրահ ունենալը, այս կամարները ֆրոնտոն չեն ունեցեր, այլ հավանականորեն մի շարք քար կամ միայն մույլուր, որոնց հետքը հայտնի է, իսկ երկար սյունասրահը վերցված է, այն ատեն ստիպված են եղեր ծածկել ֆրոնտոնանման ծածկով՝ անձրևեն և ձյունեն դռան պիտանի մասերը պահպանելու համար:

Դռան առջև վերջին ժամանակ շիներ են նաև փոքրիկ դավիթ, որուն բարձրությունը հասեր է մինչև դռան կատարին վրա և ունեցեր է $\widehat{\cap}$ այս ձևով ծածկ, և այժմյան նշանները այդ ծածկին նշաններն են, թերևս և անոր նախկին ֆրոնտոնին լայնությունն ալ այնչափ եղած է որ դռան երկու կողմի ցած զույգ սյուները մեջը առնելով հազիվ 20-ական սանթիմ անցած է հյուսիս և հարավ: Այժմ այդ դավթին ալ միայն հիմքերը կմնան:

Հարավային ճակատը համեմատաբար ավելի նման է արևմտյան ճակատին ճոխության տեսակետով, բայց ավելի համեստ, քան հյուսիսային ճակատը, այստեղ ալ բոլոր colonne engagée-ները քառակուսի են, բացի մտակողման անկյունի որմասյունը, որը բացառաբար կիսաբոլորակ ձևով ցցված է պատեն դուրս: Նորոգություններու տեսակով նույնն է, ինչ որ մյուս երեսները: Ստորին պատուհանները փակված, վերևինները՝ նեղցուցած: Մի դուռ միայն ունի այս կողմին վրա, արևմուտքեն սկսյալ չորրորդ սյունամիջոցին մեջ շատ մոտիկ չորրորդ սյունին: Հարավային ճակատը արևելյան կողմում չունի միևնույն արտաքին խորանաձև աբսիդը, ինչ որ կա հյուսիսային ճակատին կից, այլ միմիայն դուրս ցցված է սենյակին մասը նույն համեմատությամբ ինչ որ է հյուսիսային կողմինը և պակաս է խորության վրա աբսիդին մասը:

**Գմբեթը** բոլորովին բացառություն կկազմե ամբողջ հայ ճարտարապետության մեջ իր քառակուսի թմբուկով: Զեմ կարող ենթադրել, որ բոլորակ կամ անկյունավոր շինելու անընդունակ լինելնին էր պատճառ այս ձևով ուղղանկյուն խորանարդ կազմելուն: Որոշ չափով կամ ավելի ճիշտ պատշաճ չափով գմբեթը ուղղանկյուն ձևով բարձրանալեն հետո, քաշված է վրան պակներ և անոր վրայեն անհավասար կողմերով ութանկյունիի վերածված է 40–50 սմ բարձրությամբ և նույն ձևով կրկին պակելեն հետո, ծածկված է կոնաձև ծածկով:



Գմբեթին շինության այս ձևը բնականաբար ավելի հինն է, քան Բագրատունյաց նորոգության շրջանը, թեև անհամեմատ փոքր քարերով կազմված: Ինչպես ցածը, նույնպես սկզբնական շինությանց ժամանակ գմբեթին պատուհաններն ալ նույնպես լայնարձակ և հավասար լայնությամբ շինված են ստորիններուն: Բագրատունյաց նորոգության ժամանակ այս պատուհաններն ալ ենթարկվեր են նույն փոքրացման փոփոխության:

Գմբեթին ութ անկյունի պակը իր մանվածո քանդակով շատ նման է Բագրատունյաց շրջանի մեջ սովորական դարձած պակներուն, միայն մի տարբերություն կա, որ թեև ոչ բոլորը, մանվածոներեն գոյացած խորշերը քառակուսի են: Եթե երբեք նոր ենթադրենք այս ձևը, այն ատեն պետք է կասկածել էջմիածնի, Զվարթնոցի պակներուն ալ շինության ժամանակակից ըլլալուն վրա, իսկ եթե նա ժամանակակից է, այն ատեն մեծ սխալ չի լիներ եթե ըսեմ որ այս ալ երկրորդ նորոգության ժամանակ շինված ձև է և ավելի կանուխ գործածության մեջ ընդհանրացած, քան 10-րդ դար: Վրայի ծածկը, որ ավելի հաճելի երևույթ ունի իր ձկան փուշի երևույթով, հաճախ գործածական եղած է 10-րդ դարուն, նույնն է բաղդատելով Խծկոնքի ս. Սարգիս եկեղեցիին, Մարմաշենի եկեղեցիին և ուրիշներու հետ, բայց այստեղ իր ▲▲ բեկբեկուն ելևէջներով ավելի սիրուն է, քան մյուսները:



Նկ. 123. Տեկորի տաճարի ընդհանուր տեսքը հարավային կողմից քանդվելուց հետո

Այս կողմեն պարզ կերևա միջին ֆրոնտոններուն երկու կողման ներքին մեծ սյուներուն վրա հանգչող պատերուն վրա բացած պատուհանները, որոնք կնայեն տաճարին մեջ, անոնք փակվեր են վերև նկարագրածս երկրորդ ծածկի շինության ժամանակ, որը շինված է թեքությունը ավելացնելու համար: (Պատերին մեջ դրած խոթելները իրենց կարգին ևս ցույց կուտան շինարարական ամենահին ձև ըլլալը):

**Տաճարը ներքին կողմեն** բոլորովին այլափոխված է հաճախակի նորոգություններով, մանավանդ իմ կարծիքով Բագրատունյաց նորոգության շրջանին մեջ ամեն ինչ այլափոխած են հինին վրա, միջին մեծ սյուներուն վրա եղեր են հավելվածներ, հին կամարները բոլորովին քանդվեր և տեղը նորերն են շիներ, անշուշտ բնության մի պատահար կամարներուն վնասելով ստիպեր են ամբողջ կամարները ներքևից նորոգել՝ առանց գմբեթին և կողմնակից թաղերուն ձեռք տալու և այս կամարներուն նորոգությունը եղեր է գլխավոր պատճառ եկեղեցին վտանգելուն, եթե ոչ թերևս ավելի երկար դիմանար, եթե կարող մասնագետներու ձեռքով կատարվեր այս գործողությունը:

Հին կամարները քանդելեն հետո, տակի կամարներ չեն կարողացեր այնքան պնդությամբ շարել, թեև ապահովության համար բոլոր քարերը

ատամնավոր չինելով իրարու մեջ անցուցեր են, սակայն ժամանակի ընթացքին մեջ հարկավոր խտությունը չունենալուն պատճառով, բոլոր քարերը թուլացեր և կախվեր են վար՝ ատամներեն միայն մեկզմեկ բռնած, այս թուլանալովը և կամարներուն կախվելեն առաջ եկեր է վրայի գմբեթին ճնշումը, որը հետզհետե ծանրանալով կամարներու թուլացած կատարներուն վրա, ինքն ալ իջեր է վար և ճնշումը ավելցուցեր է կամարներու վրա ավելի ևս վտանգը մոտեցնելով:

Ներսեն և դրսեն շատ պարզ հայտնի է, այս կատարած ճնշումը, առանց գմբեթին անկյունները ծռվելու և կամ դեպի վար նստելու միմիայն միջին մասերի բրգաձև քարերը միմյանցմե զատվելով նստեր են արդեն խարխլված կամարներուն վրա:

Գմբեթի կազմության մասին առանձին բացատրություն պիտի տամ, սակայն այստեղ ի դեպ է հիշել կամարներու անկյունացած տեղերը, որտեղեն պիտի սկսեր կամաց կամաց բոլորակը կազմվիլ: Շեղակի դրած առաջին քարերուն վրա կնշմարվին դուրս ինկած քանդակներու նման բաներ, երկար քննելես հետո այս եզրակացության եկա, որ անոնք ավետարանի չորս խորհրդանշաններ են քանդակված:

Արևմտյան կողմը դեմ դիմաց դուրս ցցված են երկու կենդանյաց վզի նման բաներ՝ գլուխները կոտրած, այս երկուքին հյուսիսային կողմի անկյունին մեջ մնացած բեկորին վրա հայտնի է առյուծի բաշի նմանող քանդակներ, որմե մնացեր է միայն վզին տակը, իսկ մյուսը հավանաբար կովի գլուխ է, քանի որ նույնքան հաստ է, բայց բաշերու քանդակի նմանվող բան էլ ունի վրան: Արևելյան կողմեն հյուսիսի անկյունին վրա կա նաև դուրս ցցված միևնույն պարանոցի նմանող մի բան, դարձյալ ծայրը կոտրած, սակայն սա այնքան բարակ է, որ ինձի ենթադրել տվավ արծվի վիզը, իսկ հանդիպակաց կողմինը արդեն որոշ նմանություն կբերե մարդու գլխու:

Գմբեթին դեպի արևելք նայող պատուհանի կատարեն վեր, երկու կարգ քար բարձր կա, որի քարերեն մեկուն վրա ներկով նկարած պատկեր մը կա, սպիտակ կարճ մորուքով մարդու մը նման, սուրբ թե այլ նկար, ես չեմ կարող հասկանալ:

Սեղանին գմբեթարդն ալ նկարազարդված է: Նախապես նկարված է եկեղեցվո գմբեթի նմանող մի բոլորակ և անոր մեջ նկարված են զանազան նկարներ, հավանաբար հրեշտակներով շրջապատված Քրիստոս: Իսկ բոլորակին միջին մասեն սկսած նկարած կերևի մի եկեղեցիի պատկեր, որուն վրա դեռ կերևին վեց հատ լայն և կիսաբոլոր վերջավորությամբ պատուհաններ և անոնց ներքև նույն քանակությամբ փոքր պատուհաններ, վրան գմբեթի նմանող մի երևույթ կա, սակայն դժվար է զանազանել ձևը, ցածի մասերն ալ նկարազարդված ըլլալու նշաններ կան, սակայն բոլորովին եղծված:

Սեղանի նորոգությունները խիստ շատ ենթադրություններու տեղի կուտա: Եռևի մասերը բոլորովին փոխված ու հինը անճանաչելի դարձած է: Միայն սկզբնական շրջանի կամ երկրորդ նորոգության կպատկանի առջևի աղեղը, որովհետև քարերը շինված են ատամնավոր և այս նորոգության նմուշը հազիվ մնացած է մեկ ու կես կամ առ առավելն երկու մետր խորությամբ, մնացածը բոլորն ալ փոխած և օտարացած են հին ձևերեն:

Կամարները ամենն ալ շեշտված պայտաձև են, հետևելով հին օրինակին, սակայն մեծ սյուներու խոյակներեն և կողմնակիներեն ոչ մեկուն խոյակները չեն մնացած, հիները ամենն ալ փոխված, նորոգված շատ պարզ ձևով, միայն սեղանին երկու կողմի որմասյուներեն են, որ իրենց նախկինը պահեր են թեև մի ժամանակ երեսը ծեփած, սակայն այժմ ծեփը թափվելով դրակոններուն նմանող քանդակներ երևան է եկած:

Սեղանին առջևի transept-ի կամարին վրա կան հետքեր, որ այդ մասն ալ ամբողջովին նկարազարդված է եղեր, կամարին մեջտեղի քարին վրա կերևա սղոցատամ մի ձև սև և կարմիր գույներով շինված: Այս ձևին երկու կողմին վրա նկատելի են բոլորակներ:

Մի, նույն ձևն ունեցող ուրիշը սևին տեղ ճերմակ և ճերմակին տեղ սև գույներ ունի, մի ուրիշ տեղ ալ այս բոլորակներեն հեռու կա գեղեցիկ խաղողի ողկույզ մը տերևներով և մոտը ուրիշ ծաղիկներ: Այստեղ ալ մկրտության ավազան չկա:

Հյուսիսային պատին միջին փակված պատուհանին վրա կա մի արձանագրություն ՆՂԸ (498՝ 1049) թվականին, որը կարծեմ «Շիրակ»-ի մեջ չէ մտած: Իսկ արևմտյան հարավային սյունին մեջ հյուսված է մի արձանագրություն Ռ. Մ. Խ. Ա. (1241՝ 1792) թվականին. «Ես Կարապետ Դպիրս շինեցի զայս խախտեալ սիւնս».... մնացածը չի կարողացա կարդալ:

Տեկորի այսօրվան ներքին կամարները չէ կարելի հինին օրինակ համարել, քանի որ հինը կորած է, և դռներուն վրա իբր հիներուն փաստ կմնա զուտ պայտաձև կամարներ, զորեղ կերպով շեշտված: Անշուշտ դրսի դռների կամարներուն օրինակով շինված էին ներսիններն ալ:



Ամենակարևոր վճռելի խնդիրներեն մեկն այն է թե ինչու արևմտյան և հարավային կողմերու պատուհաններեն ոմանք անցեր են որմասյուներու ետևը, որպես թե սյուները հետո տեղավորված ըլլային և ակամա միևնույն տեղերուն վրա:

Այսօրվան ֆրոնտոններուն կատարները պետք է որ բարձրացած համարվին հինին վրա առնվազն մեկ մետր, եթե ոչ ավելի:

*
* *

## Արձանագրությունները

Հյուսիսային ճակատի արևելյան դրան կամարին վրա Խոսրովանուշ թագուհիի արձանագրությունն է փորագրված:

Հյուսիսային ճակատի արևմտակողման դրան կամարին մեջ թերատ արձանագրություն «Ի Ն Լ Ը թուական «Ես Գրիգորիկս եռու» մնացյալը սև ներկով գրված և չի փորված, այժմ ալ եղծված:

Հյուսիսային ճակատի արևմտյան անկյունի սյան մոտ վերևը Ի Ն Կ Է թուական Թաթուլի արձանագր. անոր ներքև Ն Ղ Ա թուական, Գրիգոր Մագիստրոսի դստեր և Վեստ Սարգսի կնոջ արձանագր. անոր ներքև Ն Զ Ե թուական: Ագարակի և Տեկորի միջև ջրի մատակարարության իրավարար վճռի արձանագրությունը: Մոխրագույն քար ըստ ոմանց մոտակա ավերակեն բերված:

Քարի մը վրա կկարդանք «Այս է տապան Տէր Ղազարի որդի Ղուկաս.....»:

Փոքր դեղնագույն քար է, անճաշակ կերպով տաշված երեխայի մը գերեզմանին տպավորությունը կթողու: Հյուսիսային ճակատին նկարներ, հարավային ճակատին արձանագրություն, վրան գավազան:



Նկ. 124. Տեկորի մի տապանաքարի հյուսիսային ճակատի նկարը

Նկ. 125. Տեկորի գերեզմանատան 964 թ. խաչարձանը

Սև որձաքար խաչ, տակավին կանգուն հարավային կողմը գերեզմանատան վերջավորության մոտ: Կա և մի ուրիշը այս խաչեն դեպի հյուսիս արևելք գրեթե նույն բարձրության և վրան քանդակված խաչ, բայց առանց արձանագրության:

Հաճախ կրկնված են թամքած ձիու նմանությամբ քանդակված քարեր, սակայն խիստ կոշտ և անճաշակ:

Բացի զանազան ձևի տաշված քարերե, ինչպես օրորոցաձև սրագագաթ, տափակ և այլն, կան երկու օրինակ ևս նախնական կերպով տաշված տաճարի մանրանկարը:

## Դարձյալ Տեկորի տաճարի մասին

Կողմնակի սենյակներեն հարավային սենյակին կտուրը գնացած միացած է տաճարի մասին և այդ միացման տեղը չնայելով տանիքի ծածկին և անոր կամարին ետևը բոլորովին սրբատաշ քարով շարված է, ինչպես որ պիտի ըլլար առանց հավելվածի և ատկից ցած ալ կգտնվին ստորին տանիքները. ասկեց կերևի որ հետնագույն կպցված է հավելված սենյակը:

Գմբեթի կազմության մեջ չորս կամարներու ճակատները միշտ ուղիղ են, մինչև որ անկյուններու կտրվածքներով աստիճանաբար կորանալով հասեր են այնպիսի չափի մը, որ այլևս չորս կողմի լայնությունները հավասարվել են. այնուհետև սկսեր է արդեն ամեն կողմի կոր ձևով շարվել քարերը, և հետզհետե առաջանալով կազմվել գմբեթ, միայն պարզ է, որ երբ ամբողջական բոլորակի հասեր է, այն ատեն դրեր են կանոնավոր կաղապար և հյուսեր են քարերը: Թեև ինձի մի քիչ կասկած ներշնչած է պատուհաններեն առնվազն մեկ մետր վերեն, ուր արդեն բոլորովին բոլորակ է և կարծեմ արտաքին քիվեն ալ բարձր, շինված ըլլա հետևաբար մը, որովհետև թե քարերուն շարվածքը տարբեր է և թե տեսակը չի համապատասխաներ ներքևինին: Այստեղ նշանակելի է հին կամարին տեղը նորը շինելու ժամանակ մի փչացած քարի տաշածքը հետինը մեջն անցկացնելու համար:

Հին պատուհաններն ամենն ալ շինված են առանց դրսանց նեղ և ներսանց լայնանալու, այլ ճիշտ այնպես է ներսեն ալ, ինչ չափով որ է դրսեն: Հետևաբար կարկատաններն են, որ դրսանց նեղցած, իսկ ներսեն լայն են թողված:

Ավանդատան ներքևի հարկի բարձրությունն է հատակեն մինչև կամարին կատարը 5,75: Վերջին չափածո ֆրոնտոնին ճակատը, որուն կցված է արտաքուստ աբիդը, արևելյան ուղիղ պատերեն ներս կմնա 1,57 սմ:

Բերդի հարավային և արևելյան կողմը ձորի լանջին վրա կան քարայրներ: Նմանապես Տեկորի արևելյան կողմը կան հին ավերակներ, ուր կան մեկ երկու եկեղեցիներու հիմեր, քիչ հեռու, դեպի հարավ բավական մեծկակ քարայր մը կա:

## ԵՂՎԱՐԴ[1]

**Հունիսի 30**

Այսօր առավոտյան եկա ավերակ կաթողիկեն չափելու և լուսանկարելու:

Այս հոյակապ կաթողիկեն պեղեր է Խաչիկ վարդապետ Դատյանը .... թվականին, այս պեղումով նա կատարել է հոյակապ գործ, սակայն մնացեր է թաքուն մինչև 1913 թվականը, երբ այցելեցինք պր. Ստրիժիգովսկիի հետ: Իր ուժ այունանի ներքին կազմությունը բոլորովին հեռացնում է զինքը հնագույն ճանաչված, այլ սակայն միայն 7-րդ դարու գործ եղող եկեղեցիներեն, որոնք միայն չորս սյուն ունին թեև բազիլիկ ձևով:

Որովհետև այս կաթողիկեն 6-րդ դարու շենք է և խորանի երկու կողմերու սենյակներուն աբիդներ չինելը մոտ 10-րդ դարու սովորություն, հետևաբար իմ տեսությամբ միանգամայն տարակուսական պետք է լինի կողմնակի աբիդներուն շինության ժամանակակից լինելը:

Բնորոշ հատկություն է մեծ աբիդին արևելյան կողմեն դուրս շեշտված լինելը. սա կլինի ապացույցներեն մեկը, որ մինչև 7-րդ դար աբիդներ միշտ դուրսը շինված էին՝ ինչպես Ապարանինը՝ Մոլլա-Ղասումի եկեղեցին, Եղվարդի փոքր եկեղեցին, Տեկորի եկեղեցին և այլն: Թեև մյուս կողմանե ուժեղ բացառություններ ալ կան, որոնց արևելյան աբիդները պատեն ներս ամփոփված են. ինչպես Աշտարակի բազիլիկը, Երերույքի բազիլիկը:

Եկեղեցու պեղումներեն դուրս եկեր է երկու հատ շարժական ավազաններ, մեկուն մեկ կողմը երկու տող արձանագրություն գրված: Այս ավազանները մոտավորապես Զվարթնոցի շարժական ավազանին ձևն ունին, թեև անոնցմե մի քիչ փոքր, մեկուն վրայի քանդակված խաչը հնագույն ոճ մը ցույց կուտա, որովհետև նույն ձևով խաչեր հաճախ մինչև 7-րդ դար կանգնված եկեղեցիներու քանդակներուն մեջ գերեզմանաքարերու վրա կան. 10-րդ դարեն սկսած շինված խաչքանդակները առհասարակ միշտ ստորին կողմեն երկար թև ունին, իսկ հիները միշտ հավասարաչափ թևերով են:



**Նկ. 126. Եղվարդի կաթողիկեի մեջ գտնված շարժական ավազանի վրայի խաչը**

Ուշագրավ է եկեղեցվո հարավային արևելյան կողմը կիսաքանդակ մի շիրիմ, որ ինչպես կերևի, երկու մարդկոց համար շինած է, երեք աստիճաններով խարիսխի մը վրա, անոր վրան դրված է եղեր երկու պատվանդաններ և պատվանդաններու վրա կոթողներ անշուշտ քանդակազարդ, ինչպես տեսնված է ուրիշ տեղեր. այս կոթողներեն և պատվանդաններեն միայն մեկը մնացեր է տեղին վրա, որուն արևմտյան ճակատին վրա քանդակված է մի կանգնած մարդու պատկեր:

Մինչև 13-րդ, 14-րդ դարեր, թե եկեղեցին և թե շրջակայքը շեն լինելուն մեծ ապացույց են թե՛ եկեղեցվո շրջակայքը և թե՛ մեկ կամ մեկ ու կես վերստ հեռավորության վրա գտնված ընդարձակ գերեզմանատան մեջ գտնված կանգուն ու կիսականգուն բազմաթիվ խաչարձաններ, որոնց շինության ոճերը կհասնին մինչև 13–14-րդ դարերը:

Գերեզմանատան մեջ 7-րդ դարու կամ ավելի հին հատկանիշ կրող գերեզմանաքարեր կամ կոթողներ չկան, սակայն 10–11-րդ դարերու հատուկ ոճով քանդակված խաչարձաններ կան: Նմանապես կաթողիկեի մոտը գտնված շիրիմը միակն է, մնացածները 10–14-րդ դարերու հատկանիշը ունին:

Եղվարդի փոքր եկեղեցին (բազիլիկ), որը դարձյալ Խաչիկ վարդապետի պեղումներով երևան եկած է, ամենայն հավանականությամբ 5-րդ դարու գործ է, շատ բնորոշ է իր լայնության համեմատ երկարությունը, նաև միջի որմայանց խոյակ ու խարիսխներու moulure-ները, որոնք համանման են Տեկորի, Շիրվանճուքի, Մոլլա Ղասումի գերեզմանատան փոքր եկեղեցու մեջ եղած խոյակներուն: Անտարակույս ապացույց կարող է համարվել Մոլլա Ղասումի գերեզմանատան միջի փոքր եկեղեցիին վկայարան լինելուն, քանի որ իսկապես գերեզմանատան մեջ կգտնվի:

Խաչաձև ավազանին ներքև դրված խորանարդ մեջը փորված քարը, որ կամ ավազան է դարձյալ, և կամ խաչի պատվանդան, վերևի եզերքը գրված է զԳնդատուրգ զմեղատր յիշեցեք:

Արևելյան կողմը դուրս ընկած աբիդին առջև ընկած է մի քար, որուն վրա կա չորս տող արձանագրություն, քարի տաշվածքի ⊂⊃ ձևը ցույց կուտա, որ անկյունավոր աբիդի հարազատ քարն է և վրան հիշատակված է խորանին շինությունը հետևյալ կերպով.

«Ես Գրիգոր Սարտր... ետու շինել զխորանս ի սու...ոսի ի փրկութիւն հոգւոյ». տառերը մոտավորապես 12, 13-րդ դարերու ոճին նման են:

Կաթողիկեի հարավային կողմը արևելյան ծայրին, մոտ 3-4 մետր հեռավորության վրա, մնացեր է մեծագույն շինության մը պատը՝ անտաշ որձաքարե հիմերու վրա, ամենայն հավանականությամբ ժամանակակից է եկեղեցվո շինության և անշուշտ պիտի ծառայեր իբրև եպիսկոպոսանիստ կամ առաջնորդարան: Այս պատին առջևը ընկած է մի սև քարե դուռ, որուն ծխնիները դեռ կմնան, բնական քարե հանված, դրան չափը 140 երկարութ. և 95 լայնություն բացի ծխնիներեն:

Փոքր եկեղեցին ըստ երևույթին շինված է հինգ աստիճանի վրա թեև արտաքուստ 3 աստիճանը հայտնի է, մնացած մասերու վրա հող լցված, սակայն ներսի կողմը շատ խորն է, մոտավորապես 2–3 աստիճանաչափ: Արևմտյան դուռը փլված է, սակայն բեկորներուն մեջ կա մի հսկայական քար 3,10 մետր երկարությամբ, որ ամենայն հավանականությամբ դռան վերնասյամն է, որ չհաշվելով երկու կողմերեն մեկ մեկ մետր պատի վրա հանգչող մասերը, դուռը պետք է որ երկու մետրեն ավելի լայնություն ունենա: Դռան մեկ կողմի բարավորը մնացած է, իսկ մյուս կողմինը քանդված:

Այս մատուռին արևմտյան կողմը, դեպի հյուսիս, անկյունի մոտ կա երեք աստիճանով մի խաչարձանի խարիսխ, որուն վրայի և՛ պատվանդանը և՛ խաչարձանը անհետացած են, թերևս սույն խաչերեն մեկն էր ասոր վրա, որոնք դրված են այժմ եկեղեցվո ներսը, սեղանին առջև, Խաչիկ վարդապետի ձեռքով:

Այս եկեղեցվո արևելյան խորանը ամփոփված է արևելյան պատեն ներս:

Հյուսիսային պատին վրա դուրս ընկած մի խարսխանման քար կա և մի ուրիշը՝ արևմտյան հյուսիսային անկյունին վրա, մի երրորդը արևմտյան հարավային անկյունին վրա, որոնք ենթադրել կուտան, որ սա ևս ունեցեր է այունասրահ (կաթողիկեի հյուս. կողմին վրա ալ կա նման երևույթ!!!):

5-րդեն 7-րդ դարերու ոճով modillon-ներով քանդակված քիվերու բեկորներ կան թե՛ այս փոքր եկեղեցվո մոտ ընկած և թե՛ կաթողիկեի արևելյան կողմը՝ ամենայն հավանականությամբ այս շենքերը պսակված էին այս ոճով կառնիզներով:

Այս փոքր եկեղեցվո մեջ կան տապանաքարեր հակառակ ընդհանուր արդելքի, հավանորեն շատ ուշ են և ամենուն վրա ինչ որ սիմվոլ միանման քանդակված են այս ձևով (նկ. 127): Կաթողիկեի մեջ մնացորդ կամարներու և աղեղներու վրա պայտաձևի հետքեր կամ նշաններ չեն երևնար, իսկ փոքր եկեղեցվո մեջ արդեն ոչինչ մաս մնացած չէ, աղեղի կամ կամարի, վերևի հարկը մոտավորապես նման է ստորին հարկին ներքևի հա-




**Նկ. 127. Եղվարդի փոքր եկեղեցու մեջ գտնված տապանաքարերից մեկը**

[1] Եղվարդի մեծ կաթողիկեն ըստ Խ. ծ. վ.-ի շինած է Մովսես կաթողիկոսի ժամանակակից Կյուրոնը, տեսնել Հով. կաթ. մեջ:

տակագծին, միայն խաչաձև է՝ ստորին հարկի քառակուսիին վրան (կամար) հարմարեցված: Վերևի հարկը կիսաբոլոր խորան չունի, կիսաբոլորակի տեղ քառակուսի ձևով է պատարագի խորանը:

Արևմտյան դրան աջ կողմի որմասյան վերև խաչին ներքև գրված է ՑԻՇԵՑԵՔ ԶՄԻԱԲԱՆ ՍԲ ԱՌԱՔԵԼՈՑՆ...

## ԵՂՎԱՐԴ

**Հուլիս 6**

Եղվարդն դեպի հյուսիս 4–5 կիլոմետր հեռավորությամբ մի բարձունքի վրա կգտնվի հնագույն մի եկեղեցի ըստ տեղական ավանդության Ղառղա վանք անունով:

Այս եկեղեցին ներքուստ ութ կիսաբոլորակ աբսիդներով և դրսեն ութ կողմերով է համապատասխան ներքին աբսիդներուն: Տակավին կանգուն են երեք կողմերեն հինգ աբսիդները, միայն հարավային կողմեն երեք աբսիդները փլած են, գմբեթին ծածկը բոլորովին չկա, իսկ թմբուկին ալ միայն հյուսիսային մասը և մասամբ արևելքեն ու արևմուտքեն մնացեր են: Ներսի աբսիդները անջատող որմասյուներու խարիսխ ու խոյակները AB ձևերը ունին մոտավորապես (նկ. 128): Պայտաձևերու վրան, բոլորվող աղեղներ ու կամարներ թեթև պայտաձև են. պատուհանները խիստ լայն և խոշոր, ներքուստ լայն, իսկ արտաքուստ նեղ համեմատությամբ 7-րդ դարու եկեղեցիներու, պատի քարերու շարքերու կարերը անկյունով կոտրված են եզերքներուն վրա, ինչպես ուրիշ տեղեր 7-րդ դարու շենքերուն վրա: Հաճախ քարերու վրա տառեր կամ նշաններ կան քարագործ վարպետներու հաշիվին հատուկ այս տառերը այստեղ Ա Ժ Թ: Նշաններ՝ ⧖ Γ ▽ Ж + քիվերը շատ կհիշեցնեն Զվարթնոցի քիվերը իրենց առաջակարկառ դիրքով և ստորին մասին վրա ուղղագիծ մանվածո քանդակներով, միայն ճակատը այստեղ տարբեր է, և քանդակված է գմբեթի քիվի cimaise-ի վրա ոլորուն ոստեր խաղողի. ստորին քիվի cimaise-ի վրա երկժապավեն




Նկ. 128. Եղվարդում՝ Գրիգոր Մամիկոնյանի շինած տաճարի աբսիդներն անջատող ներքին որմասյուների խոյակ և խարիսխ



շղթայանման մանվածո է. մի ժամանակ եկեղեցին ծեփված և նկարազարդված է եղեր, այժմ միայն հետքերն են մնացեր. խորանին ձախ կողմը ծեփին վրա եղեր է ընդարձակ մի արձանագրություն, որն այժմ անընթեռնելի դարձած է: Ղառղավանքի եկեղեցին շիներ է Գր. Մամիկոնյան 7-րդ դարուն. այս եկեղեցվո գմբեթի շինության համար դեռ պանդանտիվի գիտակցություն ամենևին չկա, ինչպես Հռիփսիմեի մեջ նախնական ձևով կա, այստեղ ուղղակի դրված է գմբեթը, ներքին աբսիդները իրարմե անջատող որմասյուներու խոյակները պսակող աղեղներուն վրա, որով ավելի լայնանիստ եղած է, փոխանակ ուրիշ տեղերու մեջ եղած տրոմպով կամ նախնական ձևով պանդանտիվներու միջոցով նեղցված լինելուն (սա ևս առաջին երևույթն է իմ տեսած եկեղեցիներուս գրմբեթներու կազմության կերպին մեջ): Սեղանը (բեմը) միայն մեկ աստիճան բարձր է եղած գետնեն և աբսիդին երկու կողմերու սյանց խարիսխները դրված են բեմին վրա:

Երբեմն արևմտյան դռան աջ կողմի եռանկյունի խորշը մատուռի վերածեր են, որուն կամարի մասը մնացեր է, իսկ ձախ կողմը գավիթի նման շինվածի մը հիմերը կա այժմ:

Ուշադրության արժանի են որձաքարով շինված շենքերու մնացորդները, որ շատ ընդարձակ տեղ բռներ են, կան երբեմն մեծ շենքերու մնացորդները. ոմանք գաճ ու կրով են շինված, բայց շատը առանց կրաշաղախի: Ինչպես սովորաբար ուրիշ տեղեր այս կարգի շինության մնացորդներ կգտնվին հրաբխային բլուրներու վրա: Նույնպես այստեղ ալ հրաբխային քարքարոտ տեղ է, եկեղեցվո արևմտյան կողմը, քանի մը մետր հեռավորության վրա կա մի փոքրիկ ձոր, ձորի մյուս կողմը կերևի մի երկար պատի մնացորդ հյուսիսեն հարավ ձգված. այս մնացորդը կամ հին բնակավայրը շրջապատող պարիսպի մը մնացորդ է և կամ ջրի ճանապարհի համար թումբ շինված է, վերջապես քննության կարոտ է:

Եկեղեցվո հյուսիսային կողմը 150 քայլի վրա կա մի գերեզմանատուն, ուր ցաք ու ցրիվ են տապանաքարեր, պատվանդաններ և կոտրտված խաչքարերու փշրանքներ: Այնտեղ շինված է նաև մի փոքր մատուռ (վկայարան!) հավանորեն 13–14-րդ դարերու գործ, որուն արևմտյան պատը փլած է հարավային պատի մի մասին հետ:

Փոքր եկեղեցվո արևմտյան կողմը փլատակներեն ելած մի կապույտ որձաքար կա, որուն վրա քանդակված է ատամնաշարով միացյալ աղեղներ և միացման տեղին ներքև քանդակված է մի եզան գլուխ, ըստ երևույթին պատուհանի քար է եղած ատամնաշարերու հաջորդական հակառակ դիրքով: Շարքը երկու կարգին վրա հետաքրքրական է, սթալաքթիթի ծագման տեսակետով:

Հուլիսի 12-ին առավոտյան ճանապարհվեցա դեպի Երևան սայլով:




Նկ. 129. Եղվարդում Գրիգոր Մամիկոնյանի շինած տաճարի մոտի փոքր մատուռի հատակաձևը (արտաքին չափերը)



Նկ. 130. Եղվարդի 5-րդ դարի եկեղեցու փլատակների մեջ գտնված քարի վրայի քանդակները

## ԴՎԻՆ

**Հուլիս 14.**

Երևանից մեկնեցի դեպի Արտաշատ գյուղը: Զափագրեցի Խաչիկ վարդապետի պեղած Դվինի եկեղեցին: Շրջեցա բերդի շրջապարիսպին մեջ եղող բարձր հողաբլուրը, այս տեղն պարզ կերևի Դվինի ընդհանուր պարիսպին ընդարձակությունը և անոր մեջ եղած ստորաբաժինները. հողաբլուրը առանձին պարիսպի մեջ է, իսկ եկեղեցին նմանապես առանձին պարիսպով շրջապատված է եղեր. փայտածածկ լինելու մասին մեծ հավանականություն կա:




Նկ. 131. Դվինի կաթողիկեի հատակաձևի ներքին չափերը

[ԳԱՌՆԻ]

**Հոկտեմբեր 16.**

Առավոտյան ճանապարհվեցի Արտաշատից դեպի Գառնի և իջևանեցա Վարդանին տունը: Այս այն Վարդանն է, որ երկու անգամ այստեղ գալուս իջևաներ եմ տանը. նույնպես պր. Ն. Մառ իր պեղումներ կատարած տարիներուն մեջ օթևաներ է այս Վարդանին սենյակը, որ նաև տերն է այսօր Տրդատա հուշակավոր բերդին և Թախտին:

Գառնիի Տրդատա թախտին արտաքին սյուներուն ստորին տրամագիծն է 69 սմ., խոյակներու տակ՝ 60 $^1/_2$, աքաքներու՝ 76–77, խարիսխներու տրամագիծը բունը դրված մակերևույթին վրա դուրս կարկառած մույլուրով միասին՝ 79–80, մինչև հատակի քառակուսի մասը յուրաքանչյուր կողմեն 8-10 սանտ. լայնացած՝ կերևի գլխավոր ճակատին վրա, երկու կողմեն դուրս ցցված 70 սմ լայնությամբ թևերուն վրայի քառ. խոյակը 78 X 80 է կոր տեղերուն ամենեն կարճ միջոցին չափելով: Պահվեր են դռան երկու կողմի ուղղահայաց սյամերը, որուն ձախ կողմինին վրա գրված է երկար մի արձանագրություն (Հավանորեն 13-րդ դարուն): Այս սյամին բարձրությունն է 2,35 զուտ ներսի բերնեն, որուն վրա պետք է ավելանա քանդակազարդ շրջանակին լայնությունը որ է 41–42 սմ:

Սյունե սյուն նետված քանդակազարդ (երեք կողմեն) ճիֆթերուն ստորին ճակատի լայնությունն է 60–62 սմ, կենակեն՝ 81–82 սմ, որ նաև արտաքուստ կծառայեր որպես արշիտրավ: Այս ճիֆթերեն մեկը տաշված է այսպիսի ձևով՝
վրան ունի երկաթե ծակեր սուր կողմը հավանորեն երկու ուրիշ կողմեր մեկնող ճիֆթերու պատշաճ տեղավորվելու համար էր շինված մեկ աքաքեն մինչև մյուս աքաքը դատարկություն է 128 սմ, իսկ քարի ամբողջ երկարությունը մինչև սուր ծայրը 1,90 սմ է:

Մի ուրիշ ճիֆթ, որ մեկ կողմը դարձված անկյուն կներկայացնե դեպի մյուս ճակատ, աքաք է, աքաքի դատարկ տարածության երկարությունն է 1,40, իսկ ամբողջ երկարությունն է՝ 2,32 մտ, անկյունի կողմը աքաքի վրա նստած մասը 60–62 սմ է:

Ճիֆթերուն վրայեն իբրև առաստաղ սյունասրահի հորիզոնաբար տարածված քարերեն մնացածներով չափերն են 375–80 X 104–50 ամբողջ քարը, իսկ զուտ քանդակված մասը, որ պիտի երևար 247 X 71 այս քարը եզերքի քար է, 71 սանտիմետրեն ավելին պիտի մտնե պատի մեջ:

Մի ուրիշ քար, որի միայն քանդակված մասը 97 X 245 սմ է, երկարության յուրաքանչյուր կողմերուն վրա ունենալով 40–45 սանտիմեն ավելի ավելորդ մասեր պատերուն կամ ճիֆթերու վրա հանգչելու համար:








Նկ. 132. Դվինում գտնված խոյակ



Կողմնակի սյունասրահներու ճիֆթերուն վրա ծածկված քանդակազարդ առաստաղ քարերու քանդակամասերու լայնությունն է 110–112, իսկ ամբողջ երկարությունը 180–190 է: Այս ավելորդ մասերը մեծ մասամբ պիտի հանգչեին պատի և ճիֆթերու վրա: Լայնության կողմերուն վրա ավելորդներ չունին, հաջորդաբար շարունակած են քանդակները: Թախտին մեջ կան երկու քարեր դռան քարի նմանող թևը գլուխը կեռնիսպուրան (ելուստ) չունի, բայց չափերով շատ նման է մյուս կեռնիսպուրան վերնասյամ կտրված քարին: Այս վերջին բարձրությունն ալ առանց կեռնիսպուրանի 230 սմ է, իսկ լայնությունը 83 սմ: Նախորդ սյամին նման, թեև մեկ կողմեն (հավանաբար ներսի կողմեն) պետք էր ավելանար ուրիշ քար պատին թանձրությունը լեցնելու համար. արդեն մույլուր չունեցող կողմերեն կերևի այս բանը, որ կիսատաշ է և սահմանված կողքեն ուրիշ քար հարմարցնելու թախտին դռան ներսի կողմեն մոտավորապես իրարմե 2 մետրեն ավելի հեռավորությամբ կան դռան նախկին ծխնիներու հատուկ գետնին վրա փորված ծակերը, քառակուսի ձևով մոտավորապես 15–18 սմ մեծությամբ և 2 $^1/_2$ – 3 սմ խորությամբ, երկաթյա կամ փայտյա գերան մտցվելու համար. սա արդեն ապացույց է դռան բացվածքի լայնության ավելի քան 2 մետր լայն լինելուն:

## ԱՎԱՆ

Օգոստոսի 2-ին մեկնեցա դեպի Ավան:

Ըստ գյուղացի ծերերու տեղեկության ավանցիք գաղթեր են Պարսկաստանեն Պասկևիչի պատերազմի ժամանակ. եկած ժամանակնին, որ հազիվ 15–20 տուն են եղեր, եկեղեցին գտեր են ավերակ և որովհետև իսկական անունը հայտնի չէ եկեղեցվույն, ավանդաբար Ծիրանավոր անունը կուտան. ի հարկե այնչափ ալ ուղիղ չի կարող լինել, սակայն ո՞րտեղեն է այդ ավանդությունը, հայտնի չէ:

Այսօր առավոտյան կանուխ այցելեցի Ավանի մոտակա երկու փոքր մատուռները, որոնք կիսավեր վիճակի մեջ են. երկուքն ալ հարավ արևմտյան կողմերը ծածկով միասին փլած են: Մեկուն մոտ, որ ըստ արձանագրության ս. Հովհաննես անունը ունի, կա անաղարտ պահված մի խաչարձան պատվանդանի վրա, շրջանակով և վերևը ֆրոնտոնով, այս խաչարձանի մոտ կանգնած կա մի ուրիշ մահարձան, որ շատ նման է գերեզմանակոթողներու հնագույն ձևին: Մեկ կողմը քանդակված է զանազան երկրաչափական ձևերով զարդարանքներ, երկրորդ և երրորդ կողմերուն վրա միայն մույլուրներ, իսկ չորրորդ կողմը բոլորովին պարզ է:

## ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ

**Սեպտեմբեր 2**

Այսօր Ալեքսանդրապոլից ժամը առավոտյան 10.30-ին մեկնեցա դեպի Կարմիր վանք: Ախուրյանի եզերքին վրա փոքր վանք է Կարմիր վանքը կարմիր քարերով շինված: Ունի արևելյան ճակատին վրա ընդարձակ մի արձանագրություն (տես Շիրակ), իսկ հարավային պատի վրա կա հետևյալը.

Շնորհիմ այ ես Ամիր սպասալար Զաքարյա ետու զկարմիր մարգին բ. դանկն ի սուրբ ուխտիս, մի ուրիշ կիսատ արձանագրություն, ի թուին ՈԺԴ և մնացած մասերը քարերը թափած ու մաշված լինելուն համար անընթեռնելի, թեև ամենը երկու տողե եղած: Ներքին մասը կբաղկանա մի մեծ խորանե և կողմնակի երկու փոքրիկ աբիդավոր ավանդատուներե: Գմբեթը ունի պանդանտիվ և հանգչած է երկու որմասյուներու և երկու սեղանի կից որմասյանց վրա, չորս պատուհան չորս կողմեն, իսկ գմբեթը ունի երկու պատուհան արևելքե և արևմուտքե: Դուռը միայն արևմուտքեն, հարավային և արևմտյան կողմերը եղեր են ընդարձակ բնակություններ միաբանության համար, այժմ քարուքանդ, քանի մը պատեր են մնացած. հյուսիսային կողմը ժայռերուն մեջ եղեր են քարափոր բնակարաններ, որոնց մեկ մասը այժմ ալ մնացած են:

Այս վանքին շինությունը իր ոճեն և քանդակներու ոճեն պետք է որ 10–11-րդ դարերու շենք լինի և ոչ ուշ:

Ղոշավանքի (Կարմիր վանք) շինության արձանագրությունը գյուղացվոց ըսելով արտագրեր է Սահակ քահանա Սահրադյանը 1830-ական թվականների սկիզբը: Այդ արտագրությունը ճշտիվ օրինակած է Տեր-Խոսրով քահանայի ճաշոցի սկզբի պարապ թղթի վրայեն Շիրակունի քահանայի ձեռքով և տպված է նույն քահանայի Անիի և այլ հիշատակարաններու մասին տպված մեկ գրքին մեջ:

Այսօր Կարմիր վանքից (Անիի մոտ Ախուրյանի եզերքին) եկա Հոռոմոսի վանքը:

## ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԸ

**ս. Գևորգ**

Այս եկեղեցին ի ներքուստ ներկված և նկարազարդված է. խորանի կիսագմբեթի մեջ նկարված է մեծադիր Քրիստոսի պատկեր, ինչպես Անիի մեջ

Լուսավորչի գմբեթը և Փրկչի ու Աստվածամրենց և ս. Գրիգորի խորաններուն կիսագմբեթները: Նկարները նույն ճաշակը և տիպերը ունին գրեթե ինչպես Անիի եկեղեցիներու նկարները ստորին կիսաբոլորակին մեջ, պատուհանին աջ ու ձախ կողմերը նկարված են առաքելոց նկարները: Սեղանի կից որմասյուներու ճակատը հյուսիսային պատին մոտ դեպի արևմուտք նայող ճակատին գրված է Անանիա եպիսկոպոսի արձանագրությունը բարձրաքանդակ խաչքանդակի աջ կողմը (հարավ), մյուս կողմը նույնպես ներկով գրված է մի ուրիշ արձանագրություն: Անանիայի արձանագրությունը կսկսվի այսպես ԱԾ Է Ի ՍՄԱ, մյուս արձանագրության սկիզբը ավերված է և մեծ մասամբ դժվար ընթեռնելի:

Հարավային պատին ներսի երեսը դռան աջ կողմը նույնպես կա մի խոշոր տառերով արձանագրություն, մեծ մասամբ եղծված: Այս արձանագրությունը կսկսի «Յանուն Այ» բառերով և շատ խոշոր գրված է Յ տառը:

Ավագ խորաններուն շուրջանակի կիսաբոլորակեն մինչև կեսը նկարված ըլլալը ապացույց է, որ առջևը ծածկած խաչկալներ չկային, այլ պարզ սեղաններ, որով հնարավոր էր տեսնել հասարակության:

Հարավային դռան կիսաբոլորակ ճակատին կություն:

Հարավային դռան կիսաբոլորակ ճակատին մեջ գրված է ոմն Մարտիրոսի նվիրատվությունը իր Գևորգ որդվույն համար:

Այս եկեղեցվո փլատակներու մեջ երևում են քիվի քարեր, որոնք միայն 7-րդ դարու հատուկ են և 10–11-րդ դարերուն գործածված են նույն ձևերը Անիի Առաքելոցի և Գագկաշեն ս. Գրիգորի հարավային դռներու վրա:

Բայց այստեղ բնավ չի նմաներ այս քիվի բեկորները՝ դռների ֆրոնտոններու քիվերուն: Բեկորին մեկն ունի մի ձև, որ ամենայն հավանականությամբ ութանկյունի գմբեթ և կամ աբսիդի շրջապակի հատուկ է, այդ քարը չէր կարող պատկանել ո՛չ սբ. Գևորգին և ո՛չ ալ ս. Մինասի գմբեթներուն, որովհետև նրանց գմբեթներու քիվերի մնացորդները կան տեղին վրա, անպայման այդ քարերն ավելի հին ժամանակեն կուգան քան Ժ դարը:

Արևելյան ճակատին վրա գրված է Գագիկի արձանագրությունը, իսկ արևմտյան ճակատին՝ Հովհաննես Սմբատի արձանագրությունը:

## Ս. Մինաս

Ներքին կողմը սպիտակացված, սակայն նկարազարդված չէ: Հյուսիսային պատին վրա պատուհանին ձախ կողմը գրած է Անանիա եպիսկոպոսի արձանագրությունը ՆԿԲ թվականին:

Հարավային ֆրոնտոնի ներքև գրված է ի ՆԿԵ թվականի Հայոց՝ Զուդասի նվիրատվության արձանագրությունը:

Արևելյան կողմը յուրաքանչյուր խորաններու ճակատին գրված և ավերված անուններ կան:

## ՍԵՈԳՅՈՒԹԼԻ

**Սեպտեմբեր 29**

Այսօր ժամը 7-ին ճանապարհվեցա դեպի Ադիաման: Ճանապարհին հանդիպեցա Աեոգյութի գյուղը, ուր կա մի հնագույն եկեղեցու մնացորդ. ըստ երևույթին 5–6-րդ դարերու մնացորդ, որովհետև ներքին կողմին վրա ունեցեր է նեղ պիլաստրներ, նման Տեկորի, Քասախի, Աշտարակի և այլ եկեղեցիներու պիլաստրներուն: Պատերը հաստիվ մնացեր են 1–1$^1/_2$ մետր բարձրությամբ, խորանը գյուղացիք կարկատելով շինել են ուխտատեղի:

## ԱԴԻԱՄԱՆ

**Սեպտեմբեր 29–31**

Այստեղ կա մի քառակող կոթող, որի Ա. երեսը նիզակաձև է, Բ. (դեպի աջ) պատվանդանի վրա նստած մարդ, քովը կանգնած է ձեռքը գլխուն դրած ուրիշ մի մեծ մարդ: Գ. երես (դեպի աջ) մեծ մարդը գլխին բռնած մի ուրիշ պատվանդանանման բան, որուն վրա երևում է մի ուրիշ մարդու ոտքերը: Դ. երես (դեպի աջ) ծաղկանկար վրան մի մարդ, որուն վերևի մասը կոտրած է:

Քարտաշ վարպետներու նշաններ կան (նկ. 135).–

1. Հյուսիսային արևմտյան պատերուն վրա, նաև արևելյան պատին վրա արևմտյան կողմի փոքր սենյակի պատերուն վրա:
2. Արևմտյան պատին և աստիճաններուն վրա: Նաև № 9:
3. Հարավային պատին վրա, նաև № 10:
4. Արևելյան պատին վրա:
5. Արևելյան պատին վրա:
6. Արևելյան պատին վրա, նաև № 8-ը:
7. Հյուսիսային պատին վրա, նաև 11, 12:






Նկ. 133. Ադիամանի քառակող կոթողի չափերը




Նկ. 134. Ադիամանի եկեղեցու հատակագծի արտաքին չափերը

Ադիամանի եկեղեցին ներքին կողմեն շատ մոտավոր նմանություն ունի Էջմիածնի մոտ Հռիփսիմեի վանքին, նույնիսկ գմբեթի մեջ շուրջանակի ունի մույուրներով շինված բոլորակ վարդաձևներու շարքը, շուրջանակի, արտաքուստ ամեն կողմե ունի խորշեր ___/___ բայց արևմտյան կողմը խորշերուն մեջ կեսեն քիչ ավելի բարձրությամբ կան զույգ սյուներ վրաները խոյակներով, խոյակներեն անմիջապես վերևը ուղիղ կիսաբոլորակ գոգավոր խորշ շինված է, կարծես արձաններ դնելու հատուկ, որոնց պատվանդաններ պիտի լինեին զույգ սյուները: Այս կիսաբոլորակ խորշերեն մեկ հատ ալ շինված է արևելյան կողմը միջին ֆրոնտոնին ներքև: Քիվեր և պատուհաններու պակներ ըստ ամենայնի 5–7-րդ դարու հատկանիշներն ունին, հետաքրքրական են քիվին ճակատին վրա քանդակված զարդաքանդակները, որոնք շուշանածաղկի նմանություն ունին, իսկ այդ քանդակի ներքև երկրորդ մույուրի թեք հարթության վրա քանդակված է բարձրաքանդակ երկրաչափական մի ձև, որ ստալակտիտի երևույթն ունի:




Նկ. 135. Ադիամանի տաճարի քարտաշ վարպետների նշաններ




Նկ. 136. Ադիամանի տաճարի արևմտյան խորշերի միջի սյուները

Հարավային և արևմտյան կողմեն ունի երկու դուռ, որոնք արտաքուստ զույգ որմասյուներու վրա պակված աղեղներ ունին, զույգ սյուներու խոյակները և խարիսխները, նույն տիպն ունին ինչ որ ուրիշ առհասարակ 7-րդ դարու շենքերուն վրա գտնված ձևերը: Գմբեթն ալ ունի խորշեր: Այս ձևին կպատկանի Մաստարայի եկեղեցվո գմբեթը, որ հազիվ 7–8 կիլոմետր հեռավորության վրա է:

Հավանորեն մեկզմեկե ազդված: Արձանագրություններ չէր երևիր, հավանաբար կորած զանազան նորոգություններու ժամանակ, սակայն այնքան ալ լուրջ նորոգությանց հետքեր չեն երևեր, արևելյան ճակատին վրա կան քանի մը փակագիր արձանագրություններ:

Իսկ հարավային կողմը դռան աջ կողմի եռանկյունի խորշին մեջ կա շատ եղծված և անընթեռնելի դարձած արձանագրություն, որուն տառերուն ձևեն կենթադրվի, որ մոտավորապես 12–13-րդ դարերու տառեր են: Այստեղի այժմյան բնակչությունը նոր է և գյուղը հիմնարկված է Պասկևիչի պատերազմեն հետո, բնակիչներեն մեծ մասը եկեր է Սարդարապատեն:

Այս գյուղի հիմնարկության պատմությունը մասնավորապես գրի առեր է գյուղի բնակիչներեն պ. Սիրական Դավթյանը, որուն հավը կամ պապը եղեր է այս գյուղը հիմնողը, իր գրած գյուղի պատմության մեջ նա հիշատակած է համառոտակի ժամանակակից քաղաքական անցքեր, որոնք թերևս ուրիշ պատմագիրներու հայտնի չեն եղած. այս տեսակետով կարևոր է և ուսումնասիրելի հիշյալ պ. Սիրականի գրած հիշատակարանը:

Այս գյուղը ամենահին ժամանակներ թերևս ուրարտական շրջանեն ալ առաջ եղեր է բնակելի և կարևոր պատերազմական ամրություն: Գյուղի արևելյան և հարավային կողմը կան բարձրաբերձ բլուրներ, որոնց վրա կան հսկայական որձաքարերով շինված բերդապարիսպներ, մասնավորապես ուշադրավ է հարավային կողմի բերդը, որուն տեղացիք անվանում են Թուրքի Ղալայիչի (Ահակչի Թուրք գյուղի մոտ լինելուն պատճառով): Արևելյան, հյուսիսային և արևմտյան կողմերեն, որ փոքր ինչ մերձենալի է բլրակին և շրջապատված է երեք կարգ հսկայական պատերով, իսկ հարավային կողմը անմատչելի ձոր է, այդ պատճառով միայն մեկ պարիսպ ունի: Բերդի տարածությունը նեղ ու երկար է, հազիվ լայնություն ունի միջին մասը 25–30 մետր, իսկ երկարությունը թերևս ավելի քան 150 մետր: Մնջը ունի բաժանումներու պատեր, նույնպես արևելյան կողմը երեք պարիսպներու միջանցքներուն մեջ կան դարձյալ բաժանումներ: Ադիամանի բերդին դռան լայնությունը 319 սմ, պատերի թանձրությունը 480–500, իսկ երկու կողմերը՝ 630 սմ:

Արևելյան կողմի բերդը նույնպես անվանում են Ղալայիչի, որի միջնաբերդը ավելի ընդարձակ է, քան Թուրքի Ղալայիչիի ներքին մասը, բայց համեմատաբար մի քիչ ավելի մանր են քարերը: Սա ևս հյուսիսային կողմեն երկու կարգ պարիսպ ունի. իսկ շրջապատը ունի քառակուսի բուրգեր, նույնպես խոշոր որձաքարերով անտաշ և անշաղախ շինված: Այս երկու բերդերուն ալ լանջերուն վրա հաճախ գտնվում են ձեռագործ խորը քարայրներ ուսումնասիրության կարոտ:

Հեթանոսական գերեզմանակոթողի բնույթն ունի գյուղի միջի հին գերեզմանատան մեջ գտնված քանդակազարդ քարերը, որու լուսանկարները վերցրեր եմ ամեն կողմեն:

Գյուղի հարավ արևմտյան կողմը ձորեզերի բնական ժայռերուն վրա կա մի հեթանոսական քարափոր գերեզման, որպիսին կար Մոլլա-Ղասում գյուղի արևելյան բարձունքներու վրա:

Այժմյան եկեղեցվույն արևմտյան կողմը եղեր է նաև մի ուրիշ եկեղեցի, որուն հիմերը քանդեր են գյուղացիք իրենց բնակարանները շինելու համար: Շինված է եղեր մեծամեծ քարերով, հավանորեն ավելի հնագույն քան այժմյան կանգուն եկեղեցին: Այդ ավերակի քարերից տարեր են այժմյան եկեղեցին բարձրաքանդակ քարեր և կազմեր են բեմի ճակատը, որ այժմ կերևի:

## ԹԱԼԻՆ

**Հոկտեմբեր 10**

Այսօր մեկնեցա Ադիամանից և նկարելով Մազարճուկի եկեղեցվո արևելյան պատի քարը շարունակեցի ճանապարհս դեպի Թալին:

Թալինի եկեղեցվո հյուսիսային կողմի գերեզմանատան մեջ կան ամենակարևոր հին գերեզմանաքարեր 5–7-րդ դարու, որոնց երկուքը վերնամասեր են, թեև կիսով կոտրած, իսկ երկուքը պատվանդաններ են մեկը կարմիր քարով, որուն մեկ ճակատը միայն փորագրված է մի խաչ ներքևը սովորական քանդակներով, իսկ մյուսը սև քարով, որ ամենեն հետաքրքրականն է: Մեկ ճակատին փորագրված է Աստվածածին նստած՝ ունի Հիսուս գիրկը, երկու կողմը հրեշտակներ կանգնած և իրենց մեկ մեկ թևերով կհովանավորեն Աստվածածինը: Ասոր հաջորդ մյուս երեսը մի մեծ մանվածո քանդակ է, քարի ծավալի մեծությամբ, մյուս հաջորդը պարզ քառակուսիներով կազմված քանդակ է, մեջ մեջի հետզհետե փոքրացող, վերջին չորրորդ երեսը խաչաքանդակ է, վրան ներքևի թևերով 72 X 76 լայնությամբ, 82 բարձրությամբ:

Նկ. 137. Թալինի կաթողիկեի գերեզմանատան Ա քառակող կոթողի չորս երեսները

Թալինի գերեզմանատան մեջ նախապես արձանագրածս 5–7-րդ դարու գերեզմանաքարեն զատ տակավին շատ կան գերեզմանաքարեր, վրաները քանդակված: Նշանավոր է մեկուն վրա քանդակված խոզի գլխով մի մարդ, ձեռքին գավազան, ծայրը խաչով, ուրիշ մը որ շատ երկար, թերևս ավելի քան երկու մետր բարձրության, նույնպես փորագրված է վրան զանազան սրբոց պատկերներ ամեն կողմեն: Մի ուրիշը որ ի սկզբան շատ բարձր է եղած և կեսը կոտրեր է, այժմ կերևի, որ վերևի կողմը, որ նման է տակին, պատկերներ ունի ամեն կողմեն: Մի ուրիշին վրա կա նույնպես բացի ուրիշ պատկերներե նաև մի վեղարավոր վարդապետ:

Մի ուրիշին վրա դարձյալ ի միջի այլոց քանդակված է խոզագլուխ մի մարդ, որ ձեռքերը բարձրացուցած է վեր աղոթելու ձևով իրենմե վերը քանդակված մի սուրբի, թերևս Քս-ի, որովհետև այս վերջինը ձեռքը գիրք ունի բռնած:

Մի ուրիշին վրա ամբողջ քարի մեծությամբ, որ մեկ ու կես մետրի չափ կլինի, քանդակված է բոլորովին մի մերկ մարդ:

Մի ուրիշը չորս անկյունը այուներով է և շատ նման գլխի քանդակները, շատ կհիշեցնեն Անիի պալատի եկեղեցվո որմայուներուն:

## ԿՈԹՈՂԱՁԵՎ

**գերեզմանաքարեր Վերին Թալինում**

**ա. Երես**

Խոզագլուխ մարդ պրոֆիլ, ձեռքը բարձրացուցած գլխի վերև գտնված սուրբին պատկերին:

**բ. Երես**

Երեք նիզակաձև քանդակներ իրարու վրա:

**գ. Երես**

Ստորին մասին վրա տերևներ, վրան մի մարդ թևերը կուրծքին կապած:

**դ. Երես**

Սուր նիզակաձև քանդակված մեկ հատ ներքևը երեք դափնի տերև վրայե վրա:

Նկ. 138. Թալինի կաթողիկեի գերեզմանատան Բ քառակող կոթողի պատվանդանի ա և բ երեսները



Նկ. 139. Թալինի կաթողիկեի գերեզմանատան Բ քառակող կոթողի պատվանդանի գ և դ երեսները

## Բ. ՔԱՐ

**ա. Երես** (պատվանդան).

*Հիսուս Մարիամի գիրկը, երկու կողմեն երկու հրեշտակներ:*

**բ. Երես**

*Մանվածո ամբողջ երեսին վրա:*

**գ. Երես**

*Մեջ մեջի քառակուսիներ:*

**դ. Երես**

*Խաչաքանդակ քովերը ագանթի ճյուղերով:*

## Գ. ՔԱՐ

**ա. Երես**

*Հիսուս Մարիամի գիրկը, վերևը առանձին շրջանակի մեջ երկու ձեռքը կուրծքին կանգնած մի հրեշտակ:*

**բ. Երես**

*Ներքևը խոզի գլխով մի մարդ մեկ ձեռքը խաչ գավազան բռնած մյուս ձեռքը կուրծքին, վերևը մի տերևաքանդակ քառ. շրջանակի մեջ:*





Նկ. 140. Թալինի կաթողիկեի գերեզմանատան Գ քառակող կոթողի չորս երեսները

**գ. Երես**

*Ներքև մի բարակ երկար խաչքանդակ, իսկ վրան մի տերևաքանդակ:*

**դ. Երես**

*Վարի մասը սրբատաշ, իսկ վերևը մի տերևաքանդակ գ. երեսի նման:*

## Դ. ՔԱՐ

**ա. Երես**

*Մի մարդ կանգնած սրտին վրա բռնած ունի մի գիրք ներքևը ագանթի տերևներով:*

**բ. Երես**

*Վեղարավոր մի վարդապետ նույնպես կանգնած ագանթի տերևի վրա:*

**գ. Երես**

*Լուսապսակ գլուխով մի մարդ կանգնած մեկ ձեռքը վեր բարձրացուցած, մյուս ձեռքը կուրծքին վրա, գլխի վերևի մասը կոտրած է մինչև կզակը:*

**դ. Երես**

*Մի տերևաքանդակ:*

## Ե. ՔԱՐ[1]

**ա. Երես** (տակը, վրան կոտրած)

*Նստած մարդու, հավանորեն Քրիստոսի նկար ոտքի և գլխի կողմը կոտրած:*

**բ. Երես**

*Մի կանգնած հրեշտակ ոտքի և գլխու մասերը կոտրած:*

**գ. Երես**

*Կանգնած մի մարդ, քովը երևում է կոթով մի տախտակ:*

**դ. Երես**

*Կանգնած է մի հրեշտակ թևերը երկու կողմեն վար կախած, գլխին մասը կոտրած:*

## Զ. ՔԱՐ

**ա. Երես**

*Վերևը մի սուրբի պատկեր ներքևը մի խոզագլուխ մարդ պրոֆիլ կանգնած և մեկ ձեռքը դեպի վերև բարձրացուցած աղոթքի ձևով:*

[1] Պատկերները խիստ մաշված են, ուստի և չեմ գնում:
Կազմող

**բ. Երես**

Ամբողջովին մի խաչքանդակ, աստիճանավոր փոքր պատվանդանի վրա և պատվանդանի տակ դափնի տերևներ երկու հատ քովքովի, մեկը վրան:

**գ. Երես**

Նմանապես ամբողջական խաչքանդակ:

**դ. Երես**

Ամենեն վերը վարդանման մի փորված, անկից ցած երկու նշաձև փորվածք իրարու վրա, ամենեն ներքևը դարձյալ տերևաքանդակի նման մի քանդակ:

## Է. ՔԱՐ

**ա. Երես**

Ստորին մասին վրա Քրիստոսի պատկեր գլխին վրա հոգին սուրբ աղավնակերպ, բերանը պսակ բռնած: Վերևի մասին վրա գլխի վայր մի հրեշտակ թևովը պսակ երկնցուցած դեպի Քս:

**բ. Երես**

Վերևը մի հրեշտակ կանգնած մեկ ձեռքը դեպի վեր բարձրացած, ներքևը մի սուրբի պատկեր, աջ ձեռքը մի խոզագլուխ գավազան բռնած:

**գ. Երես**

Վերևը ագաթնի տերևով զարդ, ներքևը քառակուսի ձևով ծաղկամանի պես մի բան:

**դ. Երես**

գ. Երեսի նման վերևը մի ծաղկաքանդակ, իսկ ներքևը կան քանդակված խոպոպ մազերով լուսապսակ մի սուրբ ձեռքին բռնած խաչագլուխ գավազան:



Նկ. 141. Թալինի կաթողիկեի գերեզմանատան Դ քառակող կոթողի չորս երեսները

*
* *

Մեծ եկեղեցու հյուսիսային կողմը կա մի բարձրավանդակ բլուր, զույգ գագաթանի, մին բարձր, քան զմյուսն. այստեղ կա եղեր է հեթանոսական շրջանի կիկլոպյան պատերով մի մեծ բերդ, որուն, շուրջը այժմ կա որոշակի երևում են հսկայական քարերով անտաշ և անշաղախ շինված պատերի երեք շարք: Վերևը գագաթի պարիսպի շրջափակին մեջ այժմ կան բազմաթիվ բնակությանց ավերակներ, իսկ այժմ բարձրավանդակի հյուսիսային լանջին վրա պարիսպներու երրորդ շարքեն դուրս կան ահագին թվով հեթանոսական գերեզմաններ:

Հին հայեր և կամ նախահայեր, այստեղ կա, ինչպես միշտ ուրիշ տեղեր, իրենց ապահով ապաստարան ընտրեր են հրաբխային լավայի քարքարոտ բարձունքները չորս կողմեն գրեթե անմերձենալի, ինչպես կերևի այդ հսկայական պարիսպները կանգնեցնելու համար օգտվեր են նույնիսկ բարձունքի մակերևույթի վրայի ժայթքած հրաբխային որձաքարերեն:

Սույն ձևի բերդերու լանջերուն վրա ուրիշ տեղեր անձամբ ականատես եղած եմ փորված խոր քարայրերու, այդտեղ թեև ես չնկատեցի, սակայն հավաստում են, որ մի հատ բացված էր մի քանի տարի առաջ հարավային լանջի ստորոտին վրա:



Հեթանոսական շրջանի մեջ, որ Թալին խիտ բնակչություն ունեցեր է, ապացույց է ոչ միայն այս բերդը, այլև հեթանոսական շրջանից փոխանցված կոթողաձև գերեզմանաքարերը, որոնք ամեն կողմե հավաքելով բերած են այժմյան բնակիչները և դրած իրենց մեռելներու գերեզմանին վրա: Այստեղ գտնվածները ընդհանրապես քրիստոնեության շրջանին են պատկանում, սակայն կան հեթանոսության թվականներու շատ մոտիկ ժամանակի քարեր, ինչպես խոզի գլուխով մարդոց քանդակները, այս քանդակներու մեջ աշխարհիկ անձանց քանդակներու վրա վերին աստիճան ուշագրավ են տարազները, որոնց նմանները դեռ այժմ պահված են Հայաստանի հայ և քուրդ ցեղերու մեջ:

Մեծ եկեղեցվո հարավային կողմը մոտ 200 քայլ հեռավորության վրա կա մի ուրիշ փոքր եկեղեցի, որ շիներ է Ներսեհ Ապուհյուպատ պատրիկ Արշարունյաց Տեր: Այս եկեղեցին ճարտարապետական տեսակետով թեև շատ ունի իր նմանները հաջորդ դարերուն մեջ ալ, սակայն ուշագրավ է այստեղ հյուսիսային կողմին վրա դրսեն շինված մի բացօթյա աբիդը, որ ուղիղ 5-րդ դարու ավանդությունն է կրկնված այս եկեղեցվո շինության ժամանակ. գրեթե նույն ձևի կրկնությունն է Արթիկի փոքր եկեղեցին և ուրիշ նմաններ...:

Փոքր եկեղեցիի արևմտյան կողմը կա մի ուրիշ շենքի մնացորդ, սակայն այլանդակված գյուղացիներու ձեռքով և այսօր անհայտ ինչ լինելը: Նույնպես այս եկեղեցվո արևելյան կողմը, ճանապարհին եզերքը, կա մի մնացորդ նույն քմահաճույքին ենթարկված:



Նկ. 142. Թալինի կաթողիկեի գերեզմանատան Զ քառակող կոթողի չորս երեսները

Նկ. 143. Թալինի կաթողիկեի դերեզմանատան է քառակող կոթողի չորս երեսները

Մեծ կաթողիկեի Հարավային պատին մոտիկ ևս եղեր է մի ուրիշ եկեղեցի երկար ձևով, որ հավանորեն ավելի հին է քան կաթողիկեն, մասամբ փոքրությունից երևում է, որ դա կլիներ սովորականեն մի քիչ խոշոր վկայարան: Այս շենքին փլատակներեն ընկած կան այսօր զանազան տեսակ մոդիլոնավոր քիվեր, զույգ որմասյուներ և ուրիշ հին ձևի պատուհանի շրջանակներ, որոնք կաթողիկեի զարդաքանդակներու և մուլյուրներու հետ ոչ մի առնչություն չունին և ավելի հնագույն ոճերու կպատկանին: Կաթողիկեն առանց նորոգության չի մնացեր, թեև ներսն ու դուրսը եղած նորոգությունները շատ հմտորեն են կատարված, այնուամենայնիվ չի կարելի ուշադրություն չդարձնել արևմտյան դռան վրա, որ 13-րդ դարու ոճով կազմած voût d'arrét ունի: Այս կտորը լուրջ ուշադրության կկարոտի և մանրակրկիտ քննության, համենայն դեպս թեև 6-րդ–7-րդ դարերու գործ չեն. սակայն եթե 10–11-րդ դարերու լինելը ապացուցվի, այն ատեն voût d'arrét-ի հայոց մեջ սկզբնավորության մասին ունեցած կարծիքս կհեղաշրջվե անշուշտ:



Նկ. 144. Թալինի փոքր, Ներսեհ Կամսարականի շինած եկեղեցու հատակագծի ներքին չափերը



Թալինի մեծ եկեղեցվո գմբեթին վրա կա տակավին մնացած կղմինդրի մնացորդները: Ստորին մասերուն վրա չեն երևար, թեև քարե ծածկի ալ նշաններ չեն տեսնվեր: Բայց գետինները թափված կտորներ շատ կան:

Թալինի մեծ եկեղեցվո հյուսիս արևելյան անկյունին վերջին պատուհանի պսակը վերին աստիճանի հետաքրքրական մի մուլյուր ունի մանվածո, հետաքրքրական է այստեղ գծված մուլյուրը, գավազանը քանդակված է այսպես կոչված էլմաթրաշ, իսկ վերև տափարակ լայն ժապավենի վրա կարգով քանդակված են բոլորակներ մեջը փոքրիկ վարդիկներով, իսկ յուրաքանչյուր բոլորակի մեջտեղ, որ արաբականի նախնական կամարի նման է:

Գյուղի վերջին բնակիչները գաղթած են Պասկևիչի հետ Ալաշկերտից և Տարոնի կողմից:

*
* *

Ցանուն ԱՅ Ի ՆԲ թվականին: Կամ եղև իմ Միսայելի և էտու զիմ Այդին սուրբ Քրիստափորի վասն իմ անցելոց հոգեաց և վասն Աշոտոյ Հայոց Թագաւորի և որդեացն արևշատութեան: Ցայսմ հետէ ոչ յիմ ազգէ և ոչ յարքունեաց չիշխէ ոք յայսմ հրամանացս ընդդիմանալ:

Վերոգրյալ արձանագրությունը գտնվում է Ներքին Թալին գյուղի հարավ արևմտյան կողմը երկու կիլոմետրի չափ հեռավորության վրա գտնված մի փոքր վանքի հարավային պատի վրա, այս պատի վրա կա երեք արձանագրություն, որոնցից մեկը 941 թվականին է, սակայն հողով ծածկված լինելուն պատճառով, հնար չեղավ որոշ չափով կարդալ. կա նաև երկու հնագույն արձանագրություն՝ մինը արևմտյան ճակատի վրա հարավային անկյունի մոտ, մի ուրիշն ալ հարավային կողմեն դուրս ցցված թևի արևմտյան ճակատի վրա:

Արևմտյան դռան վրա ևս կա մի մաշված անընթեռնելի արձանագրություն: Բացի այս, կան նաև թափթփված արձանագրությանց մեծ ու փոքր բեկորներ, որոնք հավաքելու և լուսանկարելու ամենևին հնարավորություն չունեցա, օրվան եղանակի աննպաստ լինելու պատճառով:

Թվ. ՉԾԶ XXX չնորհիվ ողորմածին Այ այս իմ գիր է պարոն Աղպուղայիս թոռն մեծին շահան շահի որդի Իվանէի որ կամ եղև ինձ զթալնոյ գինոյ խալեն վասն արևշատութեան ամիր սպասալար շահան-շահի եղբաւր իմոյ և ինչ Աղպուղայիս և Սիթի Խաթունիս և զաւակաց մերոց և վասն մեր պատրոն նախնեացն յիշատակութենէ է, թէ ոք այս գրին հակառակ կա յիմոց և յաւտարաց, մարդն այն դատի յԱյ և մեր նախնեաց մեղացն պարտական լիցին առաջի Քի ահեղ ատենին. կատարողքն արհնին յԱյ և յամենայն սրբոց. ամէն:



Նկ. 145. Թալինի կաթողիկե եկեղեցու հատակագծի հյուսիսային կեսի ներքին չափերը




**Նկ. 146. Թալինի կաթողիկե եկեղեցու հյուսիսային պատի հատակագծի արտաքին չափերը**

**Նկ. 147. Թալինի կաթողիկեի հյուսիսային ճակատի Ա պատուհանի պսակի ձևը (արևմուտքից հաշված)**



**Նկ. 148. Թալինի կաթողիկեի հյուսիսային ճակատի Բ պատուհանի պսակի ձևը (արևմուտքից հաշված)**



**Նկ. 149. Թալինի կաթողիկեի հյուսիսային ճակատի Գ պատուհանի պսակի ձևը (արևմուտքից հաշված)**



**Նկ. 150. Թալինի կաթողիկեի հյուսիսային ճակատի Դ պատուհանի պսակի քանդակները (արևմուտքից հաշված)**

*Այս արձանագրությունը գտնվում է Ներքին Թալին գյուղի մեջտեղ, տեսակավին գրեթե կանգուն մի փոքր բերդի արևմտյան մուտքի վրա: Մուտքի կից բուրգի ճակատին, հայերեն արձանագրության մոտիկ կա մի պարսկերեն արձանագրություն հետնագույն ժամանակի մտցված: Այս բերդի հարավային կողմը կատարին մոտ քանդակված կա (բուրգի վրա) մի մարդու արձան, իսկ բուրգի անմիջապես կից դեպի արևմուտք ճակատին, արևելք նայող ուղղանկյուն պատին վրա քանդակված են երկու փոքր առյուծներ դեմ դիմաց: Ընդհանրապես լավ է պահված Ներքին բերդը, որ խաչաձև եկեղեցվո նման հատակագիծ ունի, կողմերու բուրգերեն երկուքը անկյունավոր են, իսկ մյուսները կիսաբոլորակ: Արտաքուստ մի քանի մետր հեռվեն շրջապատված է եղեր ավելի ցած պարսպով, բայց այժմ հազիվ հետքերը մնացեր են տեղ տեղ: Մինչև բերդը այժմ այնտեղ բնակող խանի իբրև ցորենի շտեմարան կծառայե:*

*Զանազան արձանագրություններու մեջ հաճախ հիշատակած Թալինի այգիները, այսօր շատ պարզ կերևին Ներքին Թալինի շուրջը մի քանի կիլոմետր տարածության վրա, յուրաքանչյուր սեփականությունն առանձին որձաքար պատերով բաժանված, որոնք այսօր ծառայում են առանձին արտերու իբրև ցանկ կամ սահման:*

*Ինչպես երևում է, Ներքին Թալինի այժմյան դիրքեն, հնում նույնպես եղեր է ուրարտական շրջանի բերդ: Որովհետև ոչ միայն ուրիշ ուրարտական բերդերու նման հրաբխային քարքարուտ բարձունքի վրա է շինված, այլ և տակավին կմնան հատ ու կտոր հսկայական որձաքարերով շինված պարիսպներու մասերը: Քրիստոնեության շրջանի Թալինի բնակիչները օգտվելով այս քարերու գոյութենեն իրենց այգեստանները շրջապատեր են այդ քարերով և ուրարտական բերդերու փլատակներեն գոյացած քարերով:*

*Վերին Թալինից մինչև Ներքին Թալին հազիվ լինի 6–7 կիլոմետր հեռավորություն այս միջոցին մեջտեղին վրա, ավելի մոտիկ Վերին Թալինի դաշտին մեջ, փլատակ վիճակի մեջ, կա մի հսկայական իջևան սև սրբատաշ քարերով շինված, երկայն ձև ունի արևելքեն արևմուտք. արտաքին որմերու անկյունները և մեջտեղերը ունեցեր է նաև փոքրիկ բուրգեր, որոնցմով ավելի մի ամրոցի տպավորություն է թողնում, վերին աստիճանի հետաքրքրական է ձևը. մուտքի կողմը ամենայն հավանականությամբ եղեր է հարավեն, որովհետև մյուս կողմերուն վրա հետք չերևիր մուտքի: Միայն հարավային կողմն է, որ խիստ քայքայված, թեև սակայն մուտք ունենալուն հավանականություն է ներկայացնում: Ըստ գյուղացվոց վկայության դուռը հարավային կողմն էր:*

*Այս իջևանը քանդեր է Շահրիարցի Օհան Սուլթան ըսված մի բռնակալ մարդ, որ չարունակ այս իջևանի քարերը քանդելով ուղտերու վրա բարձած ուղարկում էր յուր գյուղը՝ Շահրիար:*

*Քարտաշ վարպետներու նշաններ կան Թալինի փոքր եկեղեցիի վրա:*

## ԼՄՊԱՏԱ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ

*Եկեղեցիի արևմտյան դռան ձախ կողմը պատին վրա:*

*Կամաւ բարերարին այ. ես Կարայպետս եկի ի սբ. Ստեփանոսի դուռնս և տեսայ որ ջուր ոչ կայր ի սմայ և բնակչաց սորայ թախանձել զիս զինչ որ սմա ունէի տուի յայս (?) էրսի եւ բաբեխաւս կալայ ինձ զսբ. Ստեփանոս առ ած որ զիս յիշեն ի սբ. պատարագս..... առնէն ինձ ժամարարին Զ աւր: Արդ, եթէ ոք հակառակ կայ այս բանիս և զիս մոռանայ մոռացեալ լիցի որդւոյն այ:*



**Նկ. 151. Ներքին Թալին գյուղի մոտի փոքր եկեղեցու ավերակները**



**Նկ. 152. Ներքին Թալինի բերդի հյուսիսային կողմի արտաքին պարիսպները**

Նկ. 153. Ներքին Թալինի միջնաբերդի պարիսպները




Նկ. 154. Թալինի իջևանատան ընդհանուր հատակագիծը




Նկ. 155. Թալինի՝ Ներսեհ Կամսարականի շինած փոքր եկեղեցու վրայի վարպետների նշաններ

Նկ. 156. Լմպատավանքի հարավային պատի լուսամուտի պսակը



(Արթիկի մեծ եկեղեցիին արևելյան կողմը Ֆրոնթոնի թեքության վրա (հյուսիսային կողմը գտնվող մասին) վերջին շարվածքներուն մեջ կա քարի մը կտոր, որուն վրա կա անճաշակ գրերով արձանագրության մի կտոր անընթեռնելի, իսկ նույն ճակատի հարավային նիշի, հարավային կողքի վրա կա մի քար, որուն վրա կա արձանագրության մը սկզբնավորությունը այսպես «Իշխանութե Շահնշահի ես»...):

Լմպատա վանքի խորանին մեջ գմբեթարդին վրա նկարված է մեծադիր Քրիստոսի պատկեր, ոտներուն տակը կիսաբոլորակ ձևով նկարած է ծիրանե գոտի ոտներուն առջև ձախ կողմերը ծիրանի գոտիեն ցած նկարված է հրեղեն կառքերու անիվները, և անոնց քովերը վեց թևյան երկուքական հրեշտակներ, և յուրաքանչյուր երկու հրեշտակին մեջտեղ դարձյալ մեկ-մեկ անիվ հրեղեն կառքերու:

Խորանին երկու քովերու transept-ների ու անկյուններու տրոմպներու տակ նկարված են ձիավորներ, արևելյան կողմի պատերուն վրա, դեպի հյուսիսի կողման պատի ճակատին, որուն կռնակը արևելք է, գրված է երկար սև ներկով արձանագրություն, բայց ավելի կանուխ գրած քան նկարը, որովհետև գրերը նախ դեղով ծածկեր են և հետո վրան նկարեր:

Լմպատա վանքի արևելյան կողմի քարափոր դագաղներու նման դագաղներ բազմաթիվ գտնվելն զատ Մահմուտճուկ գյուղին մեջ կան նաև բնական ապառաժի մեջ փորվածքներ, որոնք այսօր մեծ մասամբ մնացած են: Գյուղացվոց պատմելով բնական ժայռերու մեջ փորված դագաղներն ալ ունեցեր են շարժական կափարիչներ, որոնցմե կօգտվին գյուղացիք գուռներ շինելով, անասնոց ջուր տալու համար:

## ՇԻՐՎԱՆՃՈՒՔ

Ուշադրության արժանի է այս եկեղեցվույն մեջ ամենեն առաջ բոլորովին շեշտված պայտաձև աղեղները, որուն միակ օրինակը մնացեր է խորանին վրա, մյուս որմասյուներուն վրայի աղեղները, որոնք անպայման նման էին խորանին պայտաձևերուն, քանդեր են որմասյուները և պատերը ներսեն մեկ կամ երկու մետր տեղ իրենց խոր հնության տիպը պահեր են, մնացածները հաճախ նորոգված են, և այդ նորոգությունները ունեն 7–10-րդ դարերու հատկանիշները:




Նկ. 157. Շիրվանճուքի եկեղեցու ներքին որմնախոյակ և խարիսխ

Ինչպես կերևի ի սկզբան պատուհան բնավ չէ ունեցեր. 7-րդ դարու նորոգության ժամանակ հարավային պատին վրա սեղանին մոտ բացեր են մի պատուհան, շատ տարօրինակ ձևով վերևը նեղ և վարը լայն: Այս պատուհանը հավանաբար 7-րդ (?) դարու նորոգության ժամանակ փակեր են դրսեն և ներսեն ազատ թողելով:

Որմասյուներու խարիսխները շատ նման են Տեկորի ներքին որմասյուներու համաչափությանց և անոնց զարդաղծերու մի այլազանությունը կներկայացնեն:

Արձանագրության անընթեռնելի հետքեր կան թափված հարավային պատի վրայի պատուհանին մեջ դրված քարերեն մեկուն վրա, որոնց ձևը 10-րդ դարու տառերու ձևը ունին:

Անկասկած կարելի է ըսել թե հարավային պատի վրա արևմտյան անկյունին մոտ, մի նեղ փոքր պատուհան, նմանապես արևելյան կողմը զույգ պատուհաններ շինված են 10-րդ դարուն:

Արևմտյան ճակատի պատին վրա դեռ մնացեր է կամարի կլորության հետքերը, և ապացուցում է որ անպայման այս շենքը ծածկված էր կամարակապ: Հյուսիսային պատի վրա բարձրը կա մի քար,

որուն վրա տառեր կնշմարվին անընթեռնելի, և ըստ երևույթին նույնիսկ հայերեն չեն:

Առայժմ երկու աստիճան է որ կա, սակայն հիմերը շատ տարօրինակ կերպով լեցված են հսկայական որձաքարերով և ըստ երևույթին հեթանոսական շրջանի արվեստագործության շարունակությունն է:

Արևմտյան կողմը Ֆրոնտոնին ներքև տակավին մնացած է 7-րդ դարու հատուկ մոդիլոնի ձևով զարդարուն քիվը, որուն շատ հարազատ նմանությունը կներկայացնե Բագարանի կաթողիկեի քիվը և կամ ավելի ճիշտը Էջմիածնի քիվը (հինը):

Հյուսիսային կողմը բնավ պատուհան չունի: Պատի քարերը առհասարակ տաշված ու շարված են 5-րդ–7-րդ դարերու ոճով, գլխավորաբար ստորին մասերու վրա, որոնք թե առհասարակ երկար են և թե շարված են դեպի երկարությանը:

Այս է հանգիստը ՍՈՇԱՆ Ի ԻԹ ՈՇԱ (651 + 551=1202): Այս քարը կգտնվի Մահմուտճուքի անանուն (արևմտյան կողմը գյուղին) մատուռին արևելյան կողմը արտին մեջ:

Այս Մակարավանքի մեջ ուշադրության արժանի նորություն է ներսի կողմի արևմտյան որմասյուներուն վրայի նիշերը: Գմբեթը շինված է պանդանտիվի վրա:

Արևելյան պատին վրա եղեր է արձանագրություն մը, որուն տողերու վերջերը պարունակող քարը միայն մնացեր է. այդ մնացորդին մեջ կկարդացնվի «Շինեցի վանք» բառերը: Թեև տառերու ոճը ավելի 12 և 13-րդ դարերուն կվերաբերի, որ անշուշտ չի կարող նախնական շինության թվականը ըլլալ, հավանորեն 13-րդ դարուն մեջ վերանորոգած և վանքի վերածած է արձանագրողը:

Ուստի վանքի հյուսիս արևելյան կողմի քառակուսի աշտարակաձև շենքի մնացորդին համար կպատմեն գյուղացիք, որ եղեր է բարձր աշտարակ, քան եկեղեցին և ունեցեր է ներսեն սանդուխներ վեր բարձրանալու համար:

## ՄԱԶԱՐՃՈՒՔ

*1913 օգոստոս 16-ին այցելեցի Մազարճուք գյուղը:*

Ունի երկու եկեղեցի մին Ամենափրկիչ անունով և մյուսը սբ. Աստվածածին անունով: Ամենափրկիչ անվանվածը փոքր եկեղեցի է, արևմտյան կողմեն դուռով ըստ ամենայնի հնություն կներկայացնե, թերևս 7-րդ դարեն առաջ. ներսի կողմի ջլաղեղ կամարները և խորանին աղեղը շատ շեշտված պայտաձև են, անշուշտ 5-րդ և 7-րդ փոխանցման շրջանի կպատկանի: Այս փլատակ եկեղեցվո միջեն գտնվեցան հին 7-րդ դարու ձևով գերեզմանաքարերու բեկորներ: Սույն եկեղեցվո հարավային կողմը կա գերեզմանատուն մը, որուն մեջ կա ձգված դարձյալ 7-րդ դարու ձևով մեծ գերեզմանաքար մը, կեսը կոտրած, հավանաբար ուրիշ տեղե բերված և այնտեղ նոր մեռելի վրա պառկեցուցեր են:

Իսկ սբ. Աստվածածնին միայն արևելյան մասն է մնացեր, գեղացիք 1903 թվականին հին եկեղեցվո միայն արևելյան խորանին մասը պահելով մնացածը քանդեր և կցեր են նոր շինությանը: Հինը եղեր է ներսեն և դրսեն խաչաձև ինչպես 7-րդ դարու ընդհանրացած շատ մը եկեղեցիներ, քիվերը մաքուր 7-րդ դարու ոճով և նույն ժամանակ շինված են: Արևելյան կողմի խորանին պատուհանը ժամանակի սովորության համաձայն շինված է խոշոր: Այս պատուհանին ներքևը կա մի մեծ քար պատին մեջ, որուն վրա կերևա եղծված արձանագրության մը հետքերը, այս արձանագրությունը համենայն դեպս հայերեն չէ, կամ արաբերեն է, և կամ ասորերեն, որ ավելի հավանական է:

Ներսի կողմեն, հին խորանին երկու աղեղները պահված են երկու կողմի որմասյանց խոյակներով: Խոյակներու ձևը շատ նման են Տեկորի, Շիրվանճուքի և այլ 5-րդ դարու պատկանող խոյակներուն, իսկ որմասյուները պսակող զույգ աղեղները 5-րդ դարու շեշտված, պայտաձև են:

Այս գյուղին մեջ ալ շատ են գտնված հեթանոսական գերեզմաններ, մեջը ոսկրալից և ուլունքներով կճուճներ և այլն և այլն:

Այս գյուղին շատ մոտ է փոքր Պուղուտլու ըսված սարը, որուն գագաթը կրսեն գյուղացիք կարմիր մեծատաշ քարերով հին շինությանց հետքերը պահված են մինչև այսօր, գաճ ու կրով շինված: Իսկ գագաթին շուրջը բոլորած է հին որձաքարով լայն պարիսպ:

*
* *

## ԶԱՐՆՃԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆ

*Զարնճայի եկեղեցին փոքր խաչաձև, ունի պայտաձև ներքին չորս աղեղներ, սակայն ոչ arc plein cintre այլ թեթև կերպով arc brisé, նաև որմասյանց խոյակները 7-րդ դարու հատկություն ունին, պատուհանները թեև փոքր, սակայն ոչ նույն չափ և նույն հատկությամբ, ինչպես 10–11-րդ դարերու: Ավելի 7-րդ դարու հատկություն ցույց կուտան, ունի թեև պանդանտիվ, սակայն ներքևի սուր ծայրին վրա, աղեղներու միացումին տեղը ունի փոքրիկ տրոմպ:*



## ՄԱՐՄԱՇԵՆ

**1914 թ. մայիս 21**

*Ուշադրության արժանի է եկեղեցվո շրջապարիսպները ահագին ընդարձակությամբ, արևելյան կողմեն հասնում է մինչև Ախուրյան գետի դարևանդին գլուխը, իսկ հյուսիսային և հարավային կողմերեն մոտավորապես 30-40 մետր հեռավորության վրա շրջապատում է, իսկ արևելյան կողմեն հայտնի չէ թե ո՞ւր է հասնում սահմանը: Այսուամենայնիվ հետաքրքրական է տեսնել քարերու անօրինակ խոշորությունները, մաքուր տաշվածքը և կանոնավոր շարվածքը: Այս պարսպի ընդարձակության մեջ էին պարփակված այժմ երևցած երեք եկեղեցիները մեկ կարգի վրա, իսկ չորրորդ մը երեք եկեղեցիներու արևմտյան կողը, այս եկեղեցվո ձևը եղեր է բոլորակ:*



*Նկ. 158. Մարմաշենի մեծ եկեղեցու հատակագծի հյուսիսային կեսի ներքին չափերը*



*Նկ. 159. Մարմաշենի մեծ եկեղեցու բեմի խոշերից մեկի մանրամասնությունը*

*Մարմաշենի կաթողիկեի արևելյան կողմը որ այժմ կգտնվի գյուղին աղբյուրը և ուրիշ քանի մը գյուղական խրճիթներ, այդ տեղի վրա եղեր է մի մեծ բոլորակ եկեղեցի: Հավանորեն ավելի խոշոր քան Անիի Փրկիչ եկեղեցին, Զվարթնոցի մոտավոր չափով: Այս եկեղեցվո ամենեն վերևի բոլորակ աստիճանը միայն մնացեր է աղբյուրի հարավ արևմտյան կողմի մի գյուղացու տան մեջ, թերևս մյուս ստորին աստիճաններն ալ կան հողին տակ, իսկ հողի վրայի մասին գյուղացիք մի ժամանակ փորելով հայտնագործեր են արևելյան կիսաբոլորակ խորանը. ես ինքս տեսա նաև զույգ որմասյուներ և արձանագրության բեկորներ նույն տեղեն հանված, որոնց մեկ մասը դեռ կմնա աղբյուրին շուրջը ցիրուցան թափված:*

*
* *

## ԱՐԱԼԸԽԻ ԲԵՐԴ

*Այս բերդի քարերու վրայի վարպետներու նշաններից են՝ (ա) աղեղները մինչև գետին իջած չեն այլ քարե բռազոլի վրա նստած են. այս բռազոլները արևելյան կողմի մասին մեջ են, արևմուտքը փլած է և հայտնի չէ:*

*(բ) Պատերը մինչ ներքև իջած և սենյակներ անջատած են:*

*Բերդը երեք հարկանի է, փլատակեն վեր արտաքին պարսպին մուտքը հյուսիս արևելյան անկյունին մոտ է, ներքինը՝ հայտնի չէ:*

Բ

# ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԾՈՑԱՏԵՏՐ[1]

*(Դիվանի № 35 բ)*

*սկսած 1909 թ.*

## Ա Ն Ի

*Ուչթեփեներն անցնելով արդեն կսկսվի տեսնվել վաղեմի կենդանության նշաններ ցույց տվող ասդին անդին ցրված բլուրներ, որոնք իրենց ծոցի մեջ կպահեն եկեղեցիի մը, կամ շինության մը փլատակը՝ բոլորովին ծածկված հողով, երբեմն հատ ու կտոր պատերու մնացորդներ, երբեմն կնշմարվի ամբողջ գյուղի մը տեղը՝ իսպառ քայքայված և անհետացած, ավանդությամբ միայն ժողովուրդը կհիշե թե այն տեղեր ավերակներ են, որովհետև վարուցանքի ժամանակ երևան են եկեր խաչքարեր, պատի կտորներ, երբեմն ընտանեկան խեցեղեն, կահկարասիներ և այլն և այլն:*

*Անցնելով Արազի գյուղի սահմանը դեպի հարավ մեկ ու կես կիլոմետր հեռավորության վրա, պարզ կնշմարվին հեռուեն Անիի հյուսիսային պարիսպները և անոնց առջև վիթխարի պահապան զինվորներու պես կանոնավոր շարքով բազմաթիվ աշտարակները, որոնք շրջապատած են Անին մինչև այսօր, կարծես կսպառնան ահ ու սարսափ: Ահա այս հեռավորութենեն կսկսի գտնե առայժմ հողեն դուրս երևիլ Անիի երբեմնի ճոխ ու եռուն կյանքի առաջին վկան Անիի հյուսիսային կողմը մինչև Ուչթեփեները տարածվող դաշտին մեջտեղ՝ մի մահարձան բարբարոս ձեռքերե անխնա քանդված ու այլանդակված, հազիվ մնացած է վրան այս ու այն կողմ քանի մը սրբատաշ քարեր, մնացյալները ամբողջովին քանդված ու տարված են: Բարեբախտաբար մնացած են խարիսխին ամեն մեկ անկյուններուն վրա մեկ-մեկ անկյունաքարեր, որոնցմե հնարավոր կլինի չափել անոր լայնությունն ու երկարությունը, նույնպես մնացած է բարձրության վրա խաչարձանը կրող խորանարդ ձևով միակտուր քարին կեսը: Ամեն կողմից շրջապատված երեք աստիճաններու վրա բարձրացած էր պատվանդան մը կրով ու շաղախով շինված, վրան դրած էր ամբողջ տարածության չափով միակտուր քար մը սրբատաշ և գագաթին քառակուսի ձևով փորված խորշ, վրան կանգնված խաչին ստորին մասը ամրացնելու համար: Խաչարձանը բոլորովին անհետացած է. խաչին անմիջապես տակը գտնվող միակտուր քարին մեկ մասը որ կա ամեն կողմեն, սրբատաշ է, արևմտյան կողմեն շինված է քառակուսի շրջանակ մը բարձրաքանդակ մուլյուրով և մեջը արձանագրված է:*



*Նկ. 160. Արալբխի բերդի հատակագիծը*

*Ասոր շուրջը կան փոքր ու անբնակ բարձրություններ, որոնք կհայտնեն իրենց ծոցին մեջ գտնվող վաղեմի շինության փլատակներու գոյությունը, թեև հիմա բոլորովին հողով և կանաչ խոտերով ծածկված: Այս շիրիմեն իբր 400 քայլ դեպի հարավ արևելք առաջանալով կհանդիպենք ուրիշ կիսականգուն տարօրինակ ձևով փոքրիկ շինության մը, որուն ժողովրդական ավանդությունը Հովվի եկեղեցի և կամ Նախրճու ժամը անունը կուտա: Այս եկեղեցին որ դամբարան մ'է ավելի, ամենաչքնաղ նմույշ մ'է անեցիներու ճարտարապետական և գեղագիտական նրբին ճաշակին: Այսօրվան տխուր ու այլանդակված վիճակին մեջ, յուր զարդերեն մերկացած, կողոպտված ու անդամալուծված իշխանուհի մ'է կարծեք ճանապարհին վրա նստած հանդիմանելու համար մեծ ու փառավոր անցյալի մը ներկա զավակները, որոնք կերթան տեսնելու մայր թագուհի Անին և կդառնան առանց անգամ մը իսկ ուշադրություն դարձնելու այս վաղեմի գեղեցկության չնաչխարհիկ ավերակին վրա:*

*Երկար տարիներե ի վեր նա կողբա իր վիճակը, կխնդրե բարերար մը, որ ծածկե իր մերկությունը և պահպանե զինքը ժամանակի ավերիչ ճիրաններու մեջ իսպառ անհետանալու վտանգեն, բայց ո՞վ կլսե, մարդիկ ականջնին փակած են այս աղիողորմ հեծեծանքները չլսելու համար: Արվեստի պատմության մեջ թերևս միակն է Հովվի եկեղեցին իր կազմությամբ: Զորս կողմը սուրացող սաստկաշունչ քամին կքշե կտանի յուր բոլոր հեծեծանքներն ու հառաչանքները հեռո՛ւ հեռո՛ւ և կկորսնցնե տիեզերքի անհունության մեջ: Շենք չէ սա, այլ իր շքեղ պարզության և աննման վայելչության մեջ, պարզապես գոհար մ'է ոտքի տակ կոխկրտված:*

*Նկ. 161. Անիի հյուսիսային պարիսպների արևելյան անկյունը*

*Նկ. 162. Անիի հյուսիսային պարիսպները ավագ դռան մոտ*

---

[1] *Ծոցատետրերի մեջ հեղինակն իր այցելության ժամանակագրական կարգը շատ դեպքերում չի պահպանել: Երբեմն մի որևէ վայրի նկարագիրը կազմելիս սկիզբը գրել է ծոցատետրի մի մասում, շարունակությունը մի այլ մասում և հանդիպելով արդեն նկարված կամ գրված թղթերի, այնուհետև շարունակել է մի այլ տեղում: Նույն նյութն ինչքան հնարավոր էր համախմբեցինք մի տեղում, բայց այդ միշտ հնարավոր չեղավ, որովհետև երբեմն հուշարձանների մի ամբողջ խումբ նա նկարագրել և գծագրել է առանց հուշարձանի կամ վայրի անունը տալու: Այդպիսի դեպքերում պարզել ենք վայրը և հուշարձանը և դրել այդ կտորն իբրև առանձին հատված, ուստի և դասավորության մեջ անհարթությունները խիստ զգալի են այս բաժնում:*

*Կազմող*

Երկու բոլորակ աստիճաններով խարիսխի մը վրա հատակագիծը կներկայացնե վեց թևով աստղ մը, ներքուստ և արտաքուստ:* Ներսեն և դրսեն կամարները սրանկյուն են, խորշերու գմբեթարդները թեթև կորութիւններով միայն ձևացած են ոչ բոլորովին կենտրոնախույս բոլորակներով, գմբեթը ունի չորս պատուհան արևելք, արևմուտք, հյուսիս, հարավ. միջին հարկը միայն մեկ պատուհան, արևելյան կողմեն: Արևելքեն արևմուտք, հյուսիսեն հարավ ձգված չորս կամարներու վրա դրված է փոքրիկ գմբեթը, որոնց ծայրերը միացած են բոլորակ պատին մեջ, պատեն դուրս ցցված փոքրիկ սրածայր դեպի վար կախված և պատին մեջ ամրացած քարերու վրա, որպես console ներքևի հարկը:

Գետնահարկին վրա է եղած գերեզմանը, իսկ միջին հարկին մեջ պատարագի սեղանը, ուր կա հակառակ սովորականի, փոխանակ ձախ կողմի, աջ (հարավ) կողմը խորհրդանոցը կամ սկիհի պահարանը: Ներսեն ու դրսեն ներկված ըլլալու հետք չկա ամենևին, միայն միջին հարկը գմբեթով միասին ճերմակ կրով ու գաճով ծեփված է. զարդաքանդակներ չկան, բացի սյուներու խոյակներե. միայն ներքին մասին մեջ գետնահարկի պատուհանին խորշին մեկ կողմին վրա հպող եղած փոքր մաս մը կնշմարվի: Առեղծված է վերնահարկ բարձրանալու սանդուխը, ոչ մի տեղ հետք ու նշան չկա սանդուխ եղած ըլլալուն: Վերնահարկի մտից դուռն ալ բացված է հարավային կողմը ճիշտ գետնահարկին դռան ուղղությամբ, նշմարելի է առջևի մի փոքրիկ քառակուսի բլաթֆորմ և ուրիշ ոչինչ: Փոքրիկ գմբեթին արևմտյան հյուսիսային մեկ մասը կանգուն է կոնաձև ծածկով, միջին հարկեն մնացած են սրբատաշ քարերը արևելյան կողմեն, իսկ վարի գետնահարկը հյուսիսային կողմեն ունի քանի մը կամարախորշեր կիսեղծ մնացած, ուրիշ ամեն տեղեր արտաքուստ մերկացած են սրբատաշ քարերեն, արևմտյան կողմը սկսյալ հարավի դռան մոտի սյունեն բոլորովին փլած է և շատ մոտալուտ է բոլորովին կործանման վտանգը: Շուրջը շինության հետքեր չեն մնացած, ամեն բան անհայտացած է և եղած է վարուցանքի տեղ, արտեր ու կմշակվի այժմ ցորեն և գարի:

Հովվի եկեղեցիեն ուղիղ գծով դեպի հարավ 500 քայլի վրա ինկած կան կրաշաղախ բեկորներ, որոնք ցույց կուտան թե եկեղեցիի մը կամ մատուռի մը փլատակներ են, պատի սրբատաշ քարերու վրա տակավին մնացած կա արտաքին որմասյան մը մնացորդները:

Այս բեկորներեն դեպի արևմտուք ավագ դռան զույգ աշտարակներու ուղղակի դիմացը, կա մի մեծ փլատակ կարևոր շինություն մը, որուն հյուսիսային պատին մեկ մասը տակավին կանգուն կը մնա: Ասիկա բաղնիք մե եղած պարիսպեն դուրս և բավական խոշոր, որ մեկ կարգի վրա ունեցեր է (հյուսիսային կողմեն) հինգ գմբեթավոր սենյակ արևմուտքեն արևելք երկնցած, արևելյան ծայրին վրա մի սենյակ կամարակապ. սենյակներուն երկուքը արևելյան կողմեն դեռ կանգուն են իրենց հյուսիսային որմակամարներով և գմբեթներու կիսովը. մյուս մասերը փլած են բոլորովին: Փլատակների մեծությունը և տեղին ընդարձակությունը ենթադրել կուտա, որ այս բաղնիքը ունեցեր է ավելի քան տասներկու սենյակ համաչափորեն դրված հարավային կողմն ալ հյուսիսային կողմի սենյակներուն: Կանգուն մնացած արտաքին պատին վրա արձանագրության և քանդակներու հետքեր չկան. միայն հյուսիս արևմտյան կողմը ընկած բեկորներեն մեկուն մի քարին վրա 15 սմ. մեծությամբ փորագրված կա այս ձևով (չ) տառ մը:

Պեղումները գուցե տան մեզի շատ մանրամասնություններ այս շինության մասին: Մի տարօրինակ երևույթ կա այս կողմերը, որ մինչև այսօր ոչ ոքի ուշադրությունը չէ գրաված, սկսված նախապես նկարագրածս շիրիմեն մինչև պարիսպները և երկու կողմին վրա դեպի արևելք մինչև Խաչի ձորը, դեպի արևմտուք մինչև Անի գյուղը (ասկե անդին չեմ քննած), բացի զանազան մեծ ու փոքր ավերակներ ու փլատակներ պարունակող բլուրներեն կան մեծ քանակությամբ պատեր կամ պարիսպներ, ոմանք մինչև 7–8 հարյուր քայլ երկայնությամբ պարիսպներու մնացորդներ հողին տակ ծածկված, հակառակ երկար դարեր մաքրվելով վարուցանք անելուն դարձյալ զգալի կերպով մնացել են հետքերը. երբեմն տեղեր, մասնավորապես պարիսպի մոտերը սկսյալ Հովվի եկեղեցիեն այնպես որոշ ձևեր ստացած են պարիսպներու ուղղությունները, զորս կարելի է կետ առ կետ չափել, զանազանել և որոշել յուրաքանչյուրին սահմանները: Ասոնք ի հարկե ամրոցներ չէին, և ոչ ալ շինությանց պատեր: Ապահովաբար ասոնք եղեր են այգեստաններու և պտղատու պարտեզներու շրջափակ պարիսպներ: Անիի չեն ժամանակ որ առատ ջուր կար, և այդ ջուրին ճանապարհը կանցներ այդ տեղերով, անպատճառ պետք էր որ օգտվեին այդ ջուրի առատությունեն: Արձանագրությանց մեջ բազմաթիվ են Գլիձորի մեջ և պարիսպներուն տակ խրամատները ջուրով լեցուն ըլլալուն վկայությունները, նույնիսկ պարտեզներ և ջրաղացներ կան հիշատակված Գլիձորին կողմերը, ուր այժմ բոլորովին չոր է, միայն գարնան մի քիչ խոնավություն կգտնվի: Սակայն վերջերս Անիի Մայր եկեղեցվո մոտ գտնված արձանագրություն մը, որուն մեջ կհիշատակվի Պահեզ մի կարուց դռան մոտ լիովին կապացուցանե իմ ենթադրություններս, որ քաղաքը շրջապատված է եղեր ընդարձակ տարածության վրա (հյուսիսեն) բազմաթիվ պարտեզներով:

Հետաքրքիր այցելուին համար շատ դյուրին է տեսնել այս մրգաստաններու կամ այգիներու սահմանները:

Պարիսպներեն դուրս նկարագրված բաղնիքին հյուսիսային պատին ուղղությամբ կտեսնվի գլխավոր պարիսպներեն մեկը, որը բաղնիքեն դեպի արևելք երկննալով ավելի քան 250 քայլ կդառնա ուղղանկյուն ձևով դեպի հարավ, իսկ բաղնիքեն դեպի արևմուտք ալ դարձյալ նույն պատը ուղիղ գծի վրա դեպի արևմուտք 300 քայլ երկարելեն հետո, կոր գծով մը կշեղվի դեպի հյուսիս արևմուտք և կընդհատվի հյուսիսեն հարավ երկնցող ուրիշ պատի մը վրա: Այս վերջինս մինչև 800 քայլ երբեմն ուղիղ դեպի հարավ և հետո զանազան բեկբեկումներով և շեղումներով դեպի հարավ արևելք կհասնի մինչև բաղնիքեն 250 քայլ վարեն դեպի հարավ ուղղանկյուն գծով մեկնող պատին, այնպես որ բաղնիքը կգտնվի այս շրջափակին մեջ հյուսիսային պատով միայն հավասար այս պարիսպին, և կներկայացնե գոնե առայժմ ըստ երևույթին, մեկ այգի կամ պարտեզ: Հիշված երկու ծայրերը իրար միանալեն հետո երկար շարքը վերստին կանցնի և կշարունակվի դեպի արևելք խիստ երկար գծով մը. այս երկար գծին զուգահեռական դեպի հարավ պարիսպին կողմին վրա 50-60 քայլ հեռավորությենե կձգվի մի ուրիշ երկար գիծ, որը մեկ ծայրով կհասնի Անիի ավագ դռան, հիմնական ճանապարհին եզերքը, իսկ մյուսը զանազան շեղումներով, կերթա դեպի արևելք՝ տեղ տեղ իր հետ միացնելով հակառակ կողմերե եկող պարիսպներու ծայրերը:

Ավագ դռնեն դեպի արևելք, պարիսպեն 300 քայլ դեպի հյուսիս, կա ի միջի այլոց մի կրաշաղախ բեկորներու կույտ, հավանականաբար մի եկեղեցիի, ասոր մոտեն դեպի հյուսիս և արևելք վերին աստիճանի պարզ են պարիսպներու բաժանումները. այնպես որ գուցե ամենավորներ ստիպված են եղեր այդ գեղեցիկ քառակուսի շրջանակներեն առանց դուրս ելլելու մշակել միայն անոնց մեջը: Շատ տեղեր պարզապես առանձին արտերու սահմաններ եղեր են այս փլատակները, ինչպես ի հնումն պարտեզներու: Այս սահմանին վրա, այսինքն ավագ դռան ճանապարհեն դեպի արևելք, մինչև Դվինի դռան դիմացը, 15-են ավելի մեծ ու փոքր բլուրներ կան փլատակ շինություններ ծածկող, նաև մեծ ու փոքր տապանաքարեր տեղ տեղ: Ինչպես կերևի բացի բնակութենե եղեր են նաև գերեզմանատներ այս կողմին վրա: Դեպի ավագ դուռը տանող ճանապարհին արևմտյան կողմը նույնպես կներկայացնե հետաքրքրական տեսարաններ:

Այն խաչարձանը, որ նկարագրեցինք Հովվի եկեղեցիեն դեպի հյուսիս արևմուտք, այդ խաչարձանեն ալ մոտ հարյուր քայլ դեպի արևմուտք, կսկսի մեծ պարիսպի մը հետքը և ուղիղ դեպի հարավ շարունակվելով կուգա կհասնի մինչև այնտեղը, ուր նկարագրեցի բաղնիքին հյուսիսային պատին հավասարությամբ անցնող պատը, որը շարունակվելով դեպի արևմուտք և հետո քիչ շեղվելով դեպի հյուսիս կմիանար ուրիշ պատի մը, բաղնիքին պատի շեղումը քիչ մը կա երկարելով կուգա կմիանա այս վերջինին, այս վերջին երկար պարիսպը հազիվ քանի մը քայլ անցած բաղնիքի ուղիղ արևմտյան գծեն 25–30 մետր երկարությամբ, կշեղվի դեպի արևելք և այնուհետև գրեթե ուղիղ գծով կերթա կհասնի մինչև Կարուց դռան անմիջապես արևմուտքը գտնվող փոքր բուրգին առջև և այնտեղ կվերջանա հետքը: Այս վերջին շեղումեն հետո այլևս խիստ որոշ է բավականին զորեղ շրջապարիսպ մը ըլլալը. տեղ տեղ հաստությունը նշմարելի է ավելի քան $1^1/_2$ մետր, ուղիղ գծեն ունի թեթև կորացումներ, միայն մի տեղ պարիսպներեն 150 մետր հեռավորության վրա նկատելի է բեկում մը դեպի արևելք: Պարիսպի մոտերքը եղել են բազմաթիվ ձիթհանքեր ալ, որոնց հետքերը կմնան մինչև այժմ: Բաղնիքին ուղղությունեն դեպի հյուսիս և արևելք ուսումնասիրության կարոտ է, բայց անկից դեպի հարավ արևմուտք մինչև թրքաբնակ Անիի գերեզմանոցը և անկից ուղիղ հարավ Անի գյուղը և Ծաղկոցաձորն ու Իգաձորը բազմաթիվ նշաններ կան կրկին այգեստաններու պարիսպներու: Անի գյուղի սահմանը անցնելով դեպի հարավ կսկսի ընդարձակ հասարակաց գերեզմանատունը, ուր անհամար հասարակ ժողովրդին տապանաքարերեն զատ տակավին կանգուն, կիսականգուն կամ հիմնահատակ կմնան չքեղ դամբարաններ, որոնց բացի մեկ հատեն մյուսներուն ով և ինչ ըլլալը հայտնի չէ: Կարուց դռան փոքր բուրգի ծայրեն սկսելով մասնավոր բեկբեկումներով քիչ մը դեպի հարավ արևելք

* Այս շինության ամբողջ նկարագիրը պետք է առնել մանրամասն կերպով շինված հատակագծեն և պատկերներեն, այստեղ կնշանակեմ միայն ինչ որ չէ կարելի ցույց տալ հատակագծերուն և պատկերներուն վրա:

մուտք, երբ կհասնի բաղնիքին ուղղությամբ անկյունաձև բեկում մը կուտա դեպի արևելք, դեռ քսան քայլ մնացած այս ուղղանկյան բեկումեն ուրիշ մեծ պարիսպ մը կսկսի դեպի արևմուտք և թեթև մը դեպի հյուսիս շեղելով ուղիղ կերթա կհասնի մինչև Թուրքաց գյուղի սահմանը: Եվ կանցնի Կիրակոս վարդապետի դամբարանի մոտով, թողելով այս վերջինը դեպի հարավ:

Կիրակոս վարդապետի դամբարանը հազիվ անցած կվերջանա այս պարիսպին հետքը և կսկսի մանր ու խոշոր գերեզմաններու տապանաքարերու հետքեր, խմբական գերեզմաններ, ուրկից առաջանալով կհասնինք Ծաղկոցաձորի վրա միացող փոքր ձորակի մը, որուն սկիզբն է Անի գյուղը: Այս ձորակը միանալով Ծաղկոցաձորին, մինչև Իգաձոր հասնելը կձևացնե երեք կիսաբոլոր թերակղզի:

Անի գյուղի ձորին մոտիկ կա մեծ դամբարանի մնացորդ պատ մը, որուն երկայնությունն է 2,20 մ գրեթե նույնքան ալ բարձրությունը. սա իսկական չափը չէ, երկու քովերեն քարերը փրցված տարած է, վրան մնացած քանի մը խոշոր քարերուն սրբատաշությենեն կերևի, որ շատ խնամքով շինած մեծ շիրիմ մը եղեր է ի հնումն:

Այս պատեն դեպի արևելք նույն թերակղզիին մեծ հողին միանալու կետին վրա, 60–70 քայլ դեպի արևելք, կա խիտ գերեզմանատուն մը որձաքար տապանաքարերով, մեջը կգտնվի կրաշաղախ մեծ բեկորներ՝ առանց հայտնի ըլլալու ուրկեց ինկած ըլլալը. անպատճառ նույնպես ուրիշ դամբարանե մը գիր և արձանագրություն գտնվին: Դեպի հարավ արևելք փոքրիկ ձորակ մը անցնելուց կհասնինք երկրորդ թերակղզին, ցամաքին միացնող կետին վրա, ուր ձորի սկզբնավորությենե քանի մը քայլ անդին դեպի հարավ, կգտնվի Կիրակոս վարդապետի կիսավեր դամբարանը՝ դեղին, կարմիր և սևորակ քարերով:

Այս դամբարանը շինված է երկհարկանի. գետնահարկի ցոկոլը թաղված է հողին տակ և չէ կարելի ճշտել իսկական բարձրությունը: Շինված է կամարակապ, հյուսիսեն հարավ ձգված, արևելքը և արևմուտքը կամրջի նման բաց է. այս հարկին մեջ հարավային պատի ներսի կողմին կամարի սկզբնավորության առաջին շարքի արևելքեն դեպի արևմուտք համարելով չորրորդ քարին վրա գրած է Կիրակոս վարդապետի հիշատակարանը: Այս հիշատակարանին երկրորդ տողին կարգով հինգերորդ քարին վրա կա սկսած արձանագրություն մը Ե Զ Ր Ա հանդիպակաց կողմը կա ուրիշ խզբզված արձանագրություն «ԹՎ ՁՀԹ գիր է Վարդնայ Ոմեկի որդոա յիշեցէք... ԱՄ, որ ԱՄ ձեզ յիշէ»: Հազիվ ես կարողացա այսչափ կարդալ:

Կան ուրիշ եղծված խզբզածներ անընթեռնելի, և գուցե անկարևոր: Վերնահարկը հատակեն մինչև կամարին հանգիստը 150 սմ բարձրություն ունի, և բաժանված է երկու մասի, մատուռ և գավիթ, մատուռը վերջացած է կիսաբոլորակ աբսիդով մը արևելյան կողմեն, մեջտեղը կա փոքրիկ պատուհան մը վրան քանդակված փոքրիկ խաչ մը, նույնպես երկու քովերը փոքր, երկու սիրուն դեղաքանդակ խաչեր: Խաչերը կգտնվին կիսագմբեթի սկզբնավորության վրա, պատուհանին ալ վերնակողմի կիսաբոլորակը անցած է պատին վերջավորությունը պսակող պսակեն վեր: Սեղանին երկու քովերը կան փոքրիկ երկու խորհրդանոցներ: Վրան ալ ծածկված կամարակապով սեղանին վրան ալ կիսագմբեթ:

Նախագավիթը երկայն է ամբողջ լայնության հավասար, իսկ լայնությունը հազիվ հասնի մեկ մետրի:

Արտաքուստ արևմտյան կողմի հյուսիսային անկյան մոտ մնացած է երկու խաչքանդակներու մնացորդ, կարմիր քարի վրա: Արևմտյան կողմին ճակատի վրայի կամարը և ամբողջ հարավային պատին կեսը քանդված է. չորս տեսակ քար է գործածված այս շինության արտաքին երեսներուն վրա, կարմիր, հողի գույն, դեղնորակ և սպիտակի մոտ դեղնագույն, ծածկը եղեր է սագաչեն:

Կամարները և ընդհանրապես ներքին երեսները շինված են սև և սևորակ քարերով: Հանգուցյալին գերեզմանը թերևս տակն է, սակայն այժմ ոչինչ չի կարելի հասկանալ, որովհետև կիսով չափ հողով լեցված է:

Արտաքին պսակը նման է ներսի կամարներուն հանգիստը կազմող պսակներուն: Շուրջը բոլորովին վարված, մշակված, արտ եղած է, միայն արևմտյան կողմը կա թումբ մը անբնական, ուր որ դարձյալ կկարծեմ շիրիմ մը ծածկված ըլլալ:

*
* *

Կիրակոս վարդապետին դամբարանեն դեպի հարավ արևմուտք 60 քայլի վրա կմնա մեծ խաչարձանի մը կրաշաղախ պատվանդանին մնացորդները և այս վերջինես ուղիղ դեպի արևմուտք կա մի ուրիշ տոհմային դամբարանի ավերակ, որուն հարավային պատը միայն կանգուն է և հյուսիսային պատը մեկ մետր միայն:

Մասնավոր ուշադրության արժանի է այս դամբարանը, որ ավելի հնագույն կերևի, քան Կիրակոս վարդապետինը: Խիստ շատ փլփլած ըլլալու համար անհնար է ճշտիվ չափել, միայն մոտավորապես չափելով առնվազն ինը և կես մետրեն ավելի է արևելյան կողմի ճակատը, հինգ և կեսեն ավելի է հարավի ճակատը, ըստ երևույթին այս ալ եղած է կրկնահարկ, վրան մատուռով, թեև քարաձերծ բեկորներ շատ թափած. մեջը անհասկանալի է առանց պեղումի, սակայն արևելյան պատին ներսի երեսի վրա մնացած կամարի մնացորդի տրամագիծը ցույց կուտա, որ երկու մասի բաժանված է այս դամբարանը (միջնորմին ծայրը կերևի արևմտյան կողմեն), տակը եղած է հանգստարաններ, արևելյան պատի ներսի երեսի վրա (հարավակողման մասի մեջ) դեռ կերևի պատին կից կիսաբոլոր կատարով խաչքարի տեղը, որտեղեն պոկեր են խաչքարը, անոր անմիջապես կից դեպի հյուսիս հազիվ մնացել է մի երկրորդ խաչքարը շրջապատող քանդակազարդ մուլյուրով շրջանակի մը մնացորդը:

Չափական համեմատությամբ կերևի, որ եղեր է այս մասին մեջ երեք մեծ խաչքար, հայտնի չէ թե մյուս մասին մեջ քանի՞ և թե վրան քանի՞ մատուռ:

Արձանագրության ոչ մի հետք, ամեն բան տարված է, թերևս գտնվի եթե փորվի ու մաքրվի, թե՛ մեջը և թե՛ շուրջը: 30 սմ մեծությամբ փչացած քարի մը կտորի վրա կան խոշոր տառերու մնացորդներ 5–6 հատ, բայց անվերծանելի:

Ասկե անդին դեպի արևմուտք և դեպի հարավ մինչև Ծաղկոցաձորի եզերքը, որուն խորության շուրջը շրջապատված է քարայրներով, պարզապես անհամար են այս թերակղզիի ընդարձակ տարածության վրա դամբարաններու կրաշաղախ այլանդակված բեկորներ, շիրիմներու, խաչերու ահեղ պատվանդաններու մնացորդներ, ջարդ ու փշուր եղած գեղաքանդակ ու զարդաքանդակ խաչքարեր և գանազան ձևերով տաշված տապանաքարեր: Այստեղ է եղած անվրեպ անեցոց հասարակաց գերեզմանատունը:

Ոչ մի տեղ քար քարի վրա չեն թողած գերեզմանակրկիտները, ամեն ուշադրության արժանի գերեզման փորած և մեջը փնտրած են, քարերը կոտրտած ջարդած և մեծ ու կարևոր մասերը լիովին տարած: Եվ մինչև այսօր ալ տակավին տանելու վրա են: Դարձյալ Կիրակոս վարդապետի դամբարանեն հարավ արևելք, երրորդ թերակղզիին վրա, որ ամենեն փոքրն է և բլուրի մը երևույթը ունի, կա երկու դամբարան, մեկը որ ավելի դեպի արևմուտք կգտնվի բոլորովին անճանաչելի դարձած է, իսկ մյուսը, որ Իգաձորի դռնեն դեպի արևմուտք երկնցող քարաժայռը այս մասերը բաժանող ձորակին գրեթե վրան կգտնվի, քիչ դեպի արևմուտք, որով կը գտնվի Կիրակոս վարդապետի դամբարանին հարավ արևելյան կողմը, վեց և կես մետր լայն հյուսիսեն հարավ (արևելյան և արևմտյան ճակատը) ութը և կես մետր երկայն արևելքեն արևմուտք (հյուս. հարավ. ճակատ.): Այս դամբարանն ալ շինված է սրբատաշ քարերով երկհարկանի. տակը հանգստարան և վրան մատուռ, բայց այժմ հազիվ հիմերը գետնեն վեր մեկ մետր բարձր են:

Ինչպես հիշեցի Իգաձորի հետ միացնող ձորակը կգտնվի այս դամբարանին արևելյան կողմը հազիվ հարյուր քայլ հեռու: Այս կողմեն այս է եղած հասարակաց գերեզմանատան սահմանը:

Բացի այս ձորեն, ձորին գլուխին կերևի պարիսպ մը, որ կերկննա մինչև Կիրակոս վարդապետի դամբարանին հյուսիսային կողմեն անցնող մեծ (նկարագրածս պարիսպը և ըստ երևույթին կմիանա անոր), ինչպես կերևի հասարակաց գերեզմանատունը այս իր արևելյան կողմեն պարսպափակ էր և իր պարիսպով կզատվեր Անիի պարիսպին՝ հյուսիսակողմը ահագին տարածության վրա սըփռեալ ընդարձակ մրգաստանեն և այգեստանեն: Ավագ դռան և այժմյան դեպի Ղոշավանք կամ Տայլար տանող ճանապարհին* դեպի արևելյան կողմը ի միջի այլոց ուշադրության արժանի երևույթներ կան քննելի, որոնց հազիվ քանի մը բեկորներն են մնացած և մնացորդներեն կերևի որ եղած են պարիսպեն դուրս նշանավոր շինություններու հետքեր, և մատուռներ, տոհմային դամբարան կամ եկեղեցիներու բեկորներ, այս մասին վրա ալ թեև ոչ այնչափ խիտ, որպես պարիսպին մեջ կերևին բազմաթիվ բնակարաններու հետքեր հազիվ հիմունքները նշմարելի: Ավագ դռնեն հազիվ 300 քայլ դեպի հյուսիս, ճանապարհին, արևելյան կողմին վրա, ուշադիր պարզ նայվածքով մը կտեսնվի մեծամեծ շինությանց հիմեր 80–90 սմ. թանձրությամբ, և այս տեղեն կսկսի դեպի հյուսիս և դեպի արևելք խիտ շինություններու խումբեր տեղ տեղ զգալի կերպով բլրացած, տեղ տեղ ալ սրբատաշ քարերով շինված պատերու փլատակները մնացած հողին երեսին. այս տեղը կարծեք առանձին մի թաղ է կազմած մրգաստաններու և պարտեզներու խիտ անտառին մեջ, թաղին երկարությունը ճանապարհեն դեպի արևելք ավելի է քան 200 քայլ, իսկ դեպի հյուսիս՝ երկարությունը կանցնի 350 քայլեն եթե առանձին թաղ ալ չի

* Այս ճանապարհը ի հնումն ալ քաղաքին իսկական ճանապարհն է. դեպի ավագ դուռը տանող, լայնությունը կհասնի մոտավորապես... մետրի, տակավին կմնան երկու կողմին վրա առանձին սեփականատերերու(?) և կամ այլ նպատակով շինված որձաքարե հաստ պատերի հետքերը:

համարվի, գոնե պետք է անվրեպ համարել իշխանական տոհմի առանձին մի սեփականություն՝ բնակության համար բազմաթիվ շինություններով, որոնց մեջ կան եկեղեցի մնացորդ, գերեզմաններ, խաչքարի պատվանդան՝ 2 մետր բարձրությամբ տակավին կանգուն, թեև քարերը երեսեն պոկված:

Այս կետեն անդին դեպի արևելք և հյուսիս ձգված ամրակուռ պատերու ու պարիսպներու շարքերը, որոնք վերին աստիճան պարզ են իրենց թանձրություններով և զանազան ուղղություններով, նաև բազմաթիվ կրոնական և աշխարհական շինություններու մնացորդները մինչև Խաչի ձոր և անկեց անդին ալ մինչև Ղոշավանք, նկարագրել գրեթե անհնար է, խնամքով պատրաստված քարտեզի մը մեջ միայն կարելի է որոշակի նկարագրել ցույց տալով ամենուն տեղը, դիրքը, միմյանցմե ունեցած հեռավորությունները: Երբ կհաջողվի կազմել մանրամասն քարտեզ մը մեծ պարիսպներեն դուրս Անիի թուրք գյուղեն սկսյալ մինչև Ղոշավանք, առանց մոռացության տրվելու ամենամանր բնակությանց հետքերը, որոնք նաև հյուսիսեն ալ կհասնին գրեթե մինչև 4 կիլոմետր հեռավորության, այն ատեն պարզ կտեսնվի, թե ի՞նչ ահագին քաղաք մը կար այդ ընդարձակ տարածության վրա դրախտանման ծաղկած այգիներով և պարտեզներով, ոռոգված հորդառատ վտակներով, որոնք այդ ամբողջ տարածությունները ջրելե հետո կերթային քաղաքի մեծ պարիսպներուն շուրջը բացվող խրամները լեցնելու և Գլիձորի և այլ տեղերու մեջ շինված բազմաթիվ ջրաղացներուն ևս ջուր մատակարարելու:

**Գլիձոր.**– Որպեսզի լիովին գաղափար կազմվի Անիի բնական ամրության և անառիկության վրա, և գիտցվի, թե ինչ խոր հետազոտությամբ և ճարպիկ ընտրությամբ ընտրած են տեղը իբրև մայրաքաղաք, պետք է որ անպայման ձորերը ամբողջովին քննվի այցելուներու կողմանե:

Ախուրյանի ձորը քննելու համար հարմար է առաջին անգամ սկսել Լուսավորչի եկեղեցու ցածեն, ուր անմիջապես տակը Կեղան Կելմեզի մոտեն կսկսի մի ճանապարհ ցածանալ դեպի գետեզերը, թեև այս ճանապարհը հնում ալ դարձյալ մի ճանապարհ եղած ըլլալ կթվի, միայն մարդոց կամ գրաստներու համար, սակայն այժմ փլած քայքայված և եվրոպական կոշիկներու համար աննպաստ եղած է, եթե այցելուն չգիտե հետաքրքրության համար մի քիչ զոհողություն հանձն առնել, որովհետև թեև մի քիչ հոգնություն և կոշիկի կորուստ կունենա, սակայն հետո կմոռանա ամեն ինչ, երբ կտեսնե ձորին մեջ պարզվող բնական ամրությանց հիանալի տեսարանները և բարձրաբերձ քարակտուր ապառաժներու սեպացման ահավոր բարձրությունները:

Գլիձորը կվերջանա Լուսավորչի հարավ արևելքով և կխառնվի Ախուրյանի հետ, այս տեղ ալ նաև կվերջանա Գլիձորի հյուսիսեն հարավ եկող պարիսպներուն շարքը: Լուսավորչի մոտ միայն քիչ մը տեղ դեպի արևմուտք շեղվելով, ասկեց անդին դեպի կամուրջ և Ղզլ Ղալա ձորեզրի պարիսպները ընդհատ ընդհատ են շինված, ընդհանրապես այս տեղերը կառուցված կան հարկավոր լայնությամբ և բարձրությամբ պարսպամասեր, որ տեղերը որ մի քիչ հնարավոր էր համարված վեր դեպի քաղաքը բարձրանալ:

Դվնա դռան անմիջապես առջևեն կսկսի Գլիձորը մոտ 50 քայլ դեպի արևելք շարունակելեն հետո (սա արդեն շարունակությունն է պարիսպներու առջև փորված խրամին) կշեղվի դեպի հարավ արևելք զանազան մանր-մունր չափով շեղումներով և բեկումներով և կհասնի մինչև Ախուրյանի ձորեզրը:

Դվնա դռան առջևեն դեպի վար առաջանալով պինդ ապառաժներու մեջ երբեմն բնական և երբեմն ալ ձեռագործ բացած բավականին խոր ձորակեն, աջ թևի վրա կտեսնենք պարիսպներուն զանազան բեկումներով շեղվիլը՝ դեպի հարավ արևելք և հարավ, իսկ ձախ թևին վրա՝ բնական ապառաժյա թումբերը կշեղվին դեպի արևելք, որով բավականին ընդարձակ երևույթ մը կստանա այստեղ ձորամեջը՝ հանդեպ հյուսիսային պարիսպի անկյուն կազմող քառակուսի բուրգի և անկեց անդին վիշապապատ բուրգին այս ընդարձակության մեջ ալ, որ հազիվ հասնի 60–70 մետր լայնության, պակաս չեն շինությանց հիմերու հետքեր, բայց թե ի՞նչ շինություններ են անոնք,– բնակարան թե՞ ուրիշ պիտույից հատուկ, ճշտել շատ դժվար է:

Առաջանալով հետզհետե, երբ կհասնենք վիշապապատ բուրգեն դեպի հարավ արևելք գտնվող գեղեցկաշեն կարմիր քարով հյուսված չորրորդ բուրգին առջև, ուր պարիսպը կսկսի դեպի ուղիղ հարավ շեղվել, և այդ բուրգին անմիջապես կից է հարավային կողմի գաղտ դռներեն մեկը, ձորին լայնությունը այստեղ յուր վերջին չափին հասած է և դիմացի կողմեն, հյուսիս արևելքեն եկող մի ուրիշ ձորե ևս կուգա կմիանա նախկինի հետ և դարձյալ վերածվելով մեկ ձորի՝ կշարունակվի մինչև գետը:

Երկու ձորերու միացման կետին ճակատը, մոտ 8–10 մետր բարձրությամբ, քարակտուր բարձրություն մը կձևանա ճակատը դեպի հարավ և հարավ արևմուտք, այս (կարմիր քարե) քարակտուր բարձրության տակ շարված են զանազան քարեր և քարափոր եկեղեցիներ՝ միշտ ճակատին դեպի հարավ:

Այս քարակտուրին դեպի արևմուտք երկնցող ընդարձակության վրա, մի փոքր տարածության վրա կան աղքատիկ գերեզմանոցներ, որոնց տապանաքարերը կամ հասարակ անտաշ խոշոր քարեր են և կամ օրորոցաձև տաշված պարզ քարեր:




Նկ. 163. Անիի վիմափոր եկեղեցու հատակաձևը

Նկ. 164. Անիի վիմափոր եկեղեցու արևելյան մասը

Հյուսիս արևելքեն առաջացող ձորին բերանը դեռ Գլիձորին չի խառնված, ուշադրավ է տեսնել կարմիր քարի մեջ միակտուր փորված միջակ մեծությամբ մի եկեղեցի ներքին կողմեն 7 մետր երկայն, $4^1/_2$ մետր լայն, արևելյան և արևմտյան կողմեն կիսաբոլորակ թևեր ունի խոր, մոտավորապես երկու մետր, իսկ հյուսիսային և հարավային կողմերի թևերն անկյունավոր են: Արևելյան կողմի սեղանի աբսիդն ունի 2,10 մ. լայնություն, անկյունները ունին զույգ սյուներ, 1,50 մետր բարձրությամբ վրան կիսաբոլորակ աբսիդի ուղղությամբ պսակով մը, ասոր վրա կբոլորվի երեք աստիճան կամար, նույն ձևով երկաստիճան կամար քանդակված են չորս թևերու բերաններուն եղող սյուներու վրա: Արևելյան սեղանին կիսաբոլորակին վրա կարգով քանդակված են կիսաբոլորակ կատարով վեց հատ խորշեր 50 սմ, լայնքով, 120 սմ, բարձրությամբ յուրաքանչյուր խորշ իրարմե կանջատին զույգ մը կոկիկ փորված փոքր սյուներով՝ իրենց գնդաձև խոյակներով և աքաղներով: Սեղանը մի աստիճան բարձր փորված է, քան եկեղեցիի հատակը: Արևելյան և արևմտյան աբսիդները փորված են կիսագմբեթ, իսկ միջին մասը ուղիղ կամարաձև՝ հյուսիսեն հարավ թեթև կորությամբ: Այս ամենը քանդակված են խիստ նրբությամբ և ճարտարությամբ, հակառակ ժամանակի պատճառած ավերումներուն և քարին վատ տեսակին, տակավին կմնան բոլոր գծերու ճարպիկությունները և շինողներու ճաշակի զարգացումը:

Հարավային թևին վրա, կբացվի եկեղեցվո մուտքը՝ մեկ մետր լայնքով և 1,60 բարձրությամբ, մուտքը արտաքուստ ունի ըստ անեցվոց ճաշակին զույգ սյուներ երկու կողմին վրա և երեք աստիճան վրայե վրա կամար, զուգե կային քանդակներ ևս, սակայն լիովին մաշված է: Դռան բացվածքի վրա կամարին վերևը կա բոլորակ լուսամուտ մը: Եկեղեցիին կհաջորդե գավիթը եկեղեցիեն քիչ ավելի լայն, իսկ անկից կարճ, գավիթի մուտքը ևս եղած է հարավային ճակատեն, որ այժմ փլված ու բացված է ամբողջ ճակատը: Դռնեն ներս բնական քարե փորված են երկու գեղեցիկ սյուներ, մինը հյուսիսային պատին կցված որմասյուն է, իսկ մյուսը հարավային պատին ավելի մոտիկ՝ անջատ սյուն է, բուները ունին 55-են 60 սմ. տրամագիծ, երկու սյուները կապված են իրարու, այս բոլորակներու մեջ կնշմարվին խաչեր, վարդեր և բոլորակներ կամարով, անջատ սյունին հարավային կողմին կամարը կպած է ուղիղ պատին, հարավ արևմտյան անկյունը ունի մի լուսամուտ, իսկ հարավ արևելյան անկյունը կա մի փոքր դուռ, ուրկից կմտնվի մի

փոքր սենյակի մեջ, թերևս քահանային կամ պահապան ժամկոչին հատուկ: Այս եկեղեցու առջև ալ փոքրիկ տարածություն մը կա, տափարակ և անցք կամ ճանապարհ, անոր անմիջապես առջևն է ձորին խորությունը մոտ 8–10 մետր: Այս հյուսիս արևելքեն եկող ձորին երկու կողմն ալ, մինչև բարձրանալով հարթ դաշտին հասնելը, կան զանազան քարայրեր մեծ և փոքր: Գաղտ դուռնեն հարավ սև ու դեղին քարերով շինված մի հիանալի բուրգի առջև արդեն ձորը սկսած է սրագագաթ խորանալ, այստեղ բարձրությունը ձորի հատակեն մինչև պարիսպի հիմը մոտ 18–20 մետր է, մեկ կողմեն Անիի բարձրավանդակը բարձրանալով և մյուս կողմեն ձորը դեպի խորը գնալով, Լուսավորչի մոտ գտնվող բաղնիքի ուղղությամբ, ձորին խորությունը կհասնի գրեթե 60 մետրի: Ձորի հատակը նեղ է, իսկ վրան երկու կողմեն թեք լանջեր հակվելով այս և այն կողմը, գրեթե 100–120 մետր բացվածք ունի: Այս ձորին երկու կողմին վրա ևս կան բազմաթիվ քարայրեր, տեղ տեղ երկու կարգ իրարու վրա, որոնց մեջ կան նաև ջրաղացներ և ձիթահանքեր, քարի մեջ փորված զույգ գերաններով (ուղիղ բաղնիքի տակը), այս ձորին ծայրը չի հասնիր մինչև Ախուրյանի եզերքը, այլ կվերջանա Լուսավորիչ եկեղեցվո մոտ, կամ անկից ալ քիչ մը վար. անկեց ցածը արդեն ահավոր բարձրությամբ քարակտուրներ են, որոնք իսկապես անառիկ դարձուցեր են Անին: Այդ քարկտուրները բոլորովին անմերձենալի կերպով կուգան կհասնին մինչև Կուսանաց վանքին ներքև, ուր գետափին կան ամենափոքրիկ երկու շինություններ, մին՝ մատուռ և մյուսը՝ որպես բնակարան՝ մեկ բաժանումով: Կուսանաց վանքի արևմտյան կողմեն միայն ճանապարհ շինված է եղեր ի հնումն քաղաք բարձրանալու՝ կամուրջեն անցնողներու համար: Կուսանաց վանքեն դեպի արևմտուք կգտնվի կամուրջը, կամուրջեն քաղաք բարձրանալու համար բացի այս գլխավոր ճանապարհեն կան նաև ուրիշ ճանապարհներ տարբեր ուղղություններով, որոնցմե մեկը կբարձրանա միջնաբերդի ստորոտը, մյուսը կանցնի դեպի Աղջկաբերդ, հատ մը ևս կա դեպի Փրկիչի առջև դուրս եկող, որուն դռան բեկորները կան այժմ: Ախուրյանի հյուսիսային եզերքին վրա մինչև Աղջկաբերդի ժայռը ծածկված է խիտ քարայրներով, որոնցմե շատերը հողով ծածկված կամ փլած են, իսկ հարավային եզերքը բոլորովին սև ապառաժ և քարայրեր փորելու անհարմար ըլլալուն պատճառով բնակությունները վերը քարափի հարթության վրա եղած է, ուր մինչև այժմ կտեսնվին թե՛ բնակության թողած հետքերը մինչև Աղջկաբերդի դիմաց և թե՛ ընդարձակ գերեզմանատուններ, որոնց մեջ կան արձանագրված և քանդակագործված տապանաքարեր: Կամուրջին դիմացը գտնված գերեզմանի մի քարի վրա եղած արձանագրության մը ձևեն կը հասկացվի, որ այդտեղ մինչև 16–17 դարերը բնակություն եղած ըլլա:* Կամուրջին անմիջապես արևելյան կողմը անկեց 50, 60 քայլ հեռավորության վրա գետափին բարձրավանդակ հարմար տեղի մը վրա կառուցված է եղեր փոքր մատուռ և քահանայից բնակարան, որոնց հետքերը կնշմարվին: 1908 թվականին հայր Միքայել երևան հանեց այս ավերակը և մեջը գտավ գերեզմանաքար, կարմիր քարե, օրորոցաձև քանդակված, արձանագրված կա վրան անթվական այս է հանգիստ ամիր Սարգսին:

Սկսած Աղջկաբերդի արևելյան ճակատեն շուրջանակի մինչև Ծաղկոցաձորի Ախուրյան խառնվելու բերանը անմերձենալի բարձրաբերձ քարաժայռեր են, հազիվ կան տեղ տեղ վեր բարձրանալու հարմար տեղեր, սակայն այն տեղերն ալ Անիի շինություններն ավելի կանուխ, թերևս Կամսարականներու ժամանակեն պարսպափակ եղած են, այդ հին քառակուսի բուրգերով ամրացված պարիսպներուն կարևոր մնացորդները դեռ կմնան մինչև այսօր գետին կողմեն. Աղջկաբերդի բարձունքին վրա եղած դեղնագույն քարե պարիսպները ավելի հետնագույն ժամանակի, հավանաբար ԺԳ դարու գործեր են:

Ախուրյանի վրա, Ծաղկոցաձորի բերանեն սկսյալ մինչև միջնաբերդի տակ հասնելը, մարդս թե ինչ տեսակ սարսափելի բարձրությամբ սուր քարակտուր բարձրությունները և նեղ անցքեր ու կիրճեր կտեսնե, այդ միայն տեսնելով կարելի է գաղափար կազմել, այդ մասերը տեսնելուց միայն կարելի է հասկընալ թե ինչու Բագրատունիք Անին ընտրեցին իբրև մայրաքաղաք և անառիկ տեղ:

Նկ. 165. Սյունաձարդ քարայր Անիում

* Այս է հանգիստ հայրապետ Քէյին: Քէյիա բառը Թուրքերեն հետնագույն գործածական բառ կկարծեմ (զյուղապետ):





Նկ. 166. Անիի բնակելի այրերից մեկը

Պատմությունն ալ ցույց կուտա արդեն թե ոչ մեկ ատեն Անին պատերազմով չէ ընկած, թշնամին անզոր է մնացած միշտ այդ բնական և արվեստական հրաշակերտ ամրոցին առջև, եթե իրեն օգնության չհասնեին ներքին խառնակություններ, մատնություններ և դավաճանություններ:

Միջնաբերդեն սկսած Ծաղկոցաձորի կողմը թեև շատ խոր և թեք զառիվայր, սակայն հնարավոր կարելի էր համարել թշնամին մոտենալու, ուստի այս կողմեն ալ երկու կարգ պարիսպներով ամրացված է եղեր մինչև Բագրատունյաց կարծեցյալ պալատը (Իշխանական կամ Պարոնաց պալատ), ուր կվերջանա հյուսիսային պարիսպներու շարքը և Իգաձորի վրայի պարսպամասը: Հազարներու կհասնին Ծաղկոցաձորի մեջ երկու կողմի վրա եղած մեծ ու փոքր քարայրներու թիվը, որոնց մեջ այնպիսի ընդարձակ բնակություններ եղեր են բազմաթիվ բաժանումներով, որ այսօր 5000-ե ավելի ոչխար կտեղավորվի անոնց մեջ, կան շքեղ տոհմային դամբարաններ, եկեղեցիներ, մատուռներ և գետնափոր անցքեր, որոնց մեջ քանի մը կարևորներուն վրա արժե ծանոթություններ տալ:

1. Մեծ քարայրը.
2. Փոքր կաթողիկեով եկեղեցին.
3. Հոնենցի գերեզմանը.
4. Հոնենցեն դեպի հյուսիս բնակարան.
5. Անիի կողմի գետնափոր ճանապարհը:

*
* *

Բաղնիքին ուղղությամբ ձորին մեջ, ցածը կգտնվի քարափոր ձիթահանքը երկու ականի, ակերն ալ փորված են իսկական քարեն, ակերուն բոժերը մոտավորապես 7 X 7 կա, իսկ երկու կողմերը ունի սենյակներ, հարավեն երկու սենյակ, հյուսիսեն մեկ սենյակ, ասկե վեր դեպի հյուսիս և հարավ կան քարայրեր և պատերի մնացորդներ:

Լուսավորչի առջև Տիգրանա դռան ցածը Գլիձորի մեջ, գրեթե Լուսավորիչ եկեղեցիի ներքև, քանի մը մետր դեպի հարավ, Կետան Կելմազեն 20–30 քայլ դեպի արևմուտք, կա մի ընդարձակ քարայր, որ հետաքրքրական է իր երկհարկանի և եռահարկ կազմվածքներով և անոնց բաժանումներուն մեջ ընտանեկան գործածության համար փորված դարակներով, պահարաններով, որոնք բավականին ճաշակավոր կերպով դասավորված են և ճաշակավոր ձևերով ալ կերտված:

Խառնվելու բարձր սահմանին մոտ կա մի փոքրիկ գերեզմանատուն Անիեն դեռ Գլիձորը անդիի կողմը չանցած, անշուշտ ինչպես վերևի քարայրերու վրայի գերեզմանատունը, նույնպես ալ այս փոքր գերեզմանատունը ձորաբնակ փոքրիկ հասարակությանց կպատկաներ:

Ասկից պետք է հետևցնել, որ անցիք հասարակաց գերեզմանի մասին շատ հասկացողություն չունեին առողջապահական տեսակետով, ուր որ էին իրենք, այնտեղ իրենց մոտն ալ պետք էր գտնվեր գերեզմանատուننին: Այս գերեզմանին մեջ ալ կանոնավոր տաշված քար չկա, որպես տապանաքար, բացի մի փոքրիկ օրորոցաձև քարե:

Գլիձորի վերջավորության վրա Լուսավորիչ եկեղեցին շրջապատող պարիսպեն մինչև քարափը կա մի միջակ տարածություն (փոքր գերեզմանեն դեպի արևմուտք), որը հավանաբար Լուսավորչի արձանագրության մեջ ակնարկված պահեզն էր:

Այս տարածությունը կվերջանա Կետան Կելմազի առջև պարիսպի վերջավորության մասով մը, որը ձգված է երկու բուրգով հյուսիսեն հարավ դեպի գետափի բերանի բարձրավանդակ քարաժայռի բերանը: Հյուսիսային կողմը, պարիսպի արևելքեն արևմուտք բեկումի ներքևը կգտնվի Կետան Կելմազ ըսված գետնուղին, ճերմակ փխրուն քարի մեջ փորված, որի բերանը հարավ է և մեկ մետրեն քիչ ավելի է ծակին լայնությունը և բարձրությունը և այդ չափով ալ շարունակված է. ինչ որ ալ ըլլա ժողովրդական առասպելները այս մասին, պարզ է, որ աննպատակ չինած բան չէ:

**Ախուրյանի ձորը.**– Ոչ միայն Անիի տակով, այլ սկսած գրեթե Ղոշավանքեն, Ախուրյանի ձորը երկու կողմեն ևս լեռներով ամրացած է մինչև Մաղաս բերդի սահմանները. բայց ավելի ամուր Անիի կողմն է, մանավանդ Անիի սահմանը Աղջկաբերդի ժայռով և միջնաբերդով շրջապատված, որ թերակղզի լեզվակի մը ձևն ունի Անիի միջնաբերդին կպած Աղջկաբերդը:

Նկ. 167. Ախուրյանի ձորը Անիի տակ

Լուսավորչի ներքևեն մի քիչ առաջանալով դրեթե 2–300 քայլ, անմիջապես կտեսնվի մի պարսպի մնացորդ, այստեղ հետաքրքրական է տեսնել սեպաձև ժայռի կրծքի վրա փորված ճանապարհ երկու հատ իրարու վրա, պարսպին մնացորդը շինված է դարձյալ մասնակի այնպիսի մի տեղի վրա, որ քաղաքեն եկած ջուրի հոսանքները մի տեղում մերձենալի անցք էին շինած. այդ ձորին անցքը փակելու համար է եղեր պարիսպը, որը երբ հասեր է մի անմերձենալի տեղի այնտեղ կտրած է և այնտեղեն կսկսի ժայռին կողքին վրա ձեռագործ ճանապարհը:

Այս ձեռագործ ճանապարհներեն մեկը՝ ցածինը ուղղակի իջեր է դեպի գետեզերը, իսկ մյուսը անցնելով վերևեն, գնացեր խառնվեր է Լուսավորչի շրջափակը և անոր ցածը եղող պարսպին մեջտեղը:

Առաջանալով քիչ մը ևս, երբ կհասնվի այնտեղ, ուր արևմտյան կողմեն կտեսնվի միջնաբերդի զագաթն իր ամբողջությամբ, այնտեղ բավական է մի անգամ նայել դեպի քաղաքի քարափները և տեսնել մերձենալի տեղերու համար շինած զանազան երկարությամբ պարիսպներ, և անոնց մեջտեղ գտնված ճանապարհներու բաժանումներ, այստեղ ալ կգտնվի քաղաքեն եկող ջուրերեն գոյացած մի ձորակ, որուն երկու կողմին վրա կերևան դեռ փակած պարիսպներու հետքերը և շարունակությունը դեպի Կուսանաց վանքի մոտերը:

Այս մասնակի ամրությունները կընդհատվին, երբ կհասնի Կուսանաց վանքեն դեպի արևելք, ուղիղ գետափին վրա շինված երկու փոքրիկ շինություններու, որոնցից մեկը մատուռ է, իսկ մյուսը մի խցիկ (?), այստեղ արդեն ժայռերու բարձրությունը ահավոր կերպարանք կստանան և կարիք ալ չէր մնար պարիսպ շինելու՝ մինչև Կուսանաց վանք:

Երկու փոքրիկ շինություններե մեկուն ինչ ըլլալը գուշակել շատ դժվար է, որովհետև որոշ ձևը այսպես է կարծես մի ապաստարան (մեթերիս) եղած ըլլա, իսկ երկրորդը, արևմտյան կողմինը (երկուքին միջոցը մոտ 20 մետր) փոքրիկ մատուռ է, որուն արևելյան կողմի անկյան քարին վրա գրված է (ես Յովանէս ծառայ.... ներքևը կա՝ ՉԾԳ, դիմացը գրած ՉՀԷ):

Փոքր մատուռեն անցած մոտ 100–150 քայլ արդեն կհասնի Կուսանաց վանքի տակ և աստիճանաբար այստեղ ժայռերը կսկսեն ցածնալ. Կուսանաց վանքը, որ շինված է սեպացած ժայռի մը գագաթը և քովերեն մերձենալի տեղերը վերին աստիճան ճարպկությամբ ժայռ քարի մեծամեծ կտորներով չոր պատ շարած և ամրացուցած են և այդ չոր ամրությանց վրա կրկին շինած են սրբատաշ քարերով պարիսպ, այս պարիսպը արևելքեն կշարունակվի բարձրեն մինչև կամուրջ և անկեց ալ թերևս մինչև Աղջկաբերդ, թեև տեղ տեղ անմերձենալի են, բայց տեղ տեղ ալ կամ նոր մերձենալի դարձած են և կամ այնտեղ եղած պարիսպներու հետքերը կորած են:

Կամուրջեն դեպի քաղաք բարձրանալու ճանապարհը ոլորապտույտ կբարձրանա (սկսելով կամուրջեն, գալով դեպի արևելք) կհասնի մինչև Միլենց Սարգսի դուռը, որ կգտնվի Բեխենց վանքեն դեպի արևմուտք (Միլենցի և Կուսանացի մեջտեղ գտնված պարիսպը բավականին որոշ մնացած է իր բուրգերով և դռներով):

**Կամուրջեն դեպի քաղաք մեկնող ճանապարհներ.**— Դուրս գալով կամուրջեն մի ճանապարհ ուղղակի գնացած է գետի եզերքով, այդ ճանապարհը հազիվ թե քաղաքի հետ մեծ հաղորդակցություն ունենար: Գետեզերքի ճանապարհը հատուկ է եղած գետեզերքով մինչև Կարմիր վանք կամ Ղոշավանք գնալու: Կամուրջեն դուրս գալով այս ճանապարհը մտնելու համար պետք էր անմիջապես ցած իջնել կամուրջին երկհարկանի ըլլալու պատճառով: (Այս ճանապարհին հետ կխառնվի Լուսավորչի տակի վատ ճանապարհը):

Իսկ երկրորդ ճանապարհը, որ բուն քաղաքին հետ հաղորդակցող մեծ ճանապարհն է, որով կարող էին ձի, սայլ—մարդ անարգել գնալ: Հատկապես խնամքով շինված են զառիվայրի կողմերը որտեղ որձաքարով հյուսել են ամուր պատ, ճանապարհի լայնությունը առհասարակ 5 մետրեն պակաս չէ. այս ճանապարհը կհասնի մինչև Բեխենց վանքի բարձրությանը, պետք է ըսել որ գետափի ճանապարհն ալ ոլորապտույտով կապված էր այս ճանապարհի հետ, որը սակայն սարսափելի կերպով այժմ քանդված է:

Այս ճանապարհին վրայեն կմեկնի նաև մի ուրիշ ճանապարհ նույնպես սարքված, մի քիչ դեպի արևելք ասոր հետ զուգահեռական գնալեն հետո, ավելի կարճ ճամփով կշեղվի դեպի վեր՝ քաղաք. թերևս կհասնի մի ուրիշ դռան, որուն հետքը այժմ կորած է:

Դեպի արևմուտք, բացի գետափեն անցնող ճանապարհեն, վրայի կողմեն կանցնի մի ճանապարհ, որ կտանի ուղղակի միջնաբերդի ներքևը, այս տեղեն կը բաժանվին դեպի քաղաք բարձրացող ուրիշ ճանապարհներ:

Կամուրջեն դեպի արևմուտք ժայռին տակ դուրս կուգա մի աննման աղբյուր բավական առատությամբ, կամուրջեն հազիվ 100–120 քայլ դեպի արևմուտք: Այս աղբյուրին մոտ տեղի է ունեցեր քարափի մի ահագին փլվածք, որը բոլորովին խափաներ է անցքը. և ինչպես կերևի բավականին կանուխ ժամանակի բան է, որովհետև քարերեն մեծ մասը սկսեր են մամուռ կապել: Փլվածքեն դեպի արևմուտք կիսովին անաղարտ է մնացած դարձյալ որձաքար պատերով շինված դեպի քաղաք բարձրանալու ոլորապտույտ ճանապարհը, որը բարձրանալով կխառնվի կամուրջին բերանեն սկսվող և գետեզրեն շարունակվող, բարձրաբերձ ժայռերուն վրայեն անցնող ճանապարհին, այս ճանապարհը իմ կարծիքով ավելի հնումն նախքան մեծ կամուրջին շինվելը գոյություն է ունեցել, երբ հունով կանցնվեր գետեն, որովհետև հունին և կղզիին անմիջապես դիմացեն կսկսի բարձրանալ. թեև հայտնի է, որ կամուրջը շինվելեն հետո ալ գործածության մեջ էր այս ճանապարհը, իբր ամենակարճ ճանապարհ դեպի միջնաբերդի մասեր և Աշոտի պարսպին մեջի մասերը բարձրանալու, ուր կային արդեն դռներ:

Այս ճանապարհեն կսկսի դարձյալ բարձրադագաթ ժայռեր, բոլորովին դանակով կտրածի նման ուղղահայաց և այսպես կշարունակվի:

*
* *

Ղըզղալայեն դեպի արևելք միջնաբերդի տակը եղող պատերը, որոնք կերևին գետի ափեն, իբրև ամրություն չեն շինված գետի կողմեն, այլ վերը առանձին իշխանական բաժինները զատելու և ուրիշ կողմերեն ապահովելու համար:

*
* *

Այս վերջին ճանապարհին վերևը մյուս ճանապարհին խառնվելու տեղին վրա կա մի բուրգի մնացորդ, հավանաբար դռան բուրգերու մասերն են:

Ձեռագործ ճանապարհեն քիչ անցնելով, կա մի նեղ ճանապարհ ևս, սակայն այդ երևի ոչ հասարակաց, այլ մի արահետ՝ խառնվող մեծ ճանապարհին:

Երբ կհասնի միջնաբերդի վերջավորության ուղղությանն, ուր ջուրի եզերքով գնալ անհնար է դեպի գետը երկնցած ժայռի մը պատճառով, ուստի հարկ է այդ ժայռեն բարձրանալ վերև և կրկին իջնել մյուս կողմեն գետափը, այս տեղերը դժվար է կանանց համար քայլել երբ կբարձրացվի ժայռին վրա, այն ատեն կտեսնվի, որ միջնաբերդի ծայրի եկեղեցիին տակ գտնված պարիսպը հասած է մինչև գետի եզրը, մեր անցնելու համար բարձրացած ժայռին մոտ և կպաշտպաներ այս ժայռեն դեպի

Աղջկաբերդը գտնված մերձենալի տեղերը, այս տեղ ալ կա մի ձեռագործ ճանապարհ, որն ընդհատված է այս պարիսպի շինությամբ (քննելի կարևոր մասեր կան այս կողմերը):

Սույն ձեռագործ ճանապարհը Աղջկաբերդի դռան ճանապարհն է, որ ուղիղ Աղջկաբերդի դռան պարիսպեն սկսած կուգա և այդ հիշյալ պատով կընդհատվի, ինչպես կերևի այդ ճանապարհը դեռ պարիսպի այդ կտորները չշինված ուղիղ գետի ուղղությունով ժայռի բարձր եզերքեն կանցներ և կերթար կխառնվեր կամուրջին արևմտյան կողմեն բարձրացող ճանապարհին: Այնուհետև երևի այդ պարիսպներով ընդհատվելեն հետո, ճանապարհի ուղղությունը փոխած են (քննելի):*

Ախուրյանի կողմը քաղաքին պարիսպին և գետին մեջտեղ կա մի ընդարձակ տարածության լանջ, որն Ախուրյանի քարափին և քաղաքի հարավային (այժմ անհայտացած) պարիսպին մեջտեղ կգտնվի, բավականին լայն է այս տարածությունը, թեք զառիվայրը և երկարությունը կշարունակվի մինչև Աղջկաբերդի առվը: Սկիզբ կառնե այս տարածությունն ալ Լուսավորիչ եկեղեցիի հարավային կողմեն, որտեղ պարսպամասը կզատե Գլիձորի բաժինը այս բաժինեն, այս պարիսպին մյուս կողմը արևելքն էր, որ սկիզբ կառնե նախապես նկարագրածս ձորը իջնելու ճանապարհը:

Այս տարածությունը անհամեմատ ավելի շատ բան կպարունակե իր մեջ, քան Գլիձորը: Այս մասին մեջ, ոչ միայն կան բազմաթիվ եկեղեցիներու և մատուռներու մնացորդներ, այլ և շինությանց շատ մը մնացորդներ, բացի այս, բազմաթիվ մեծ ու փոքր քարայրներով ծածկած է գրեթե ամբողջ լանջը:

Որոշակի հայտնի է, որ այս կողմն ալ եղած է երկու պարիսպ, մեկը ուղղակի գետի ընթացքով քարաժայռին եզերքեն է անցած, որուն շարքին մեջ կգտնվի Միլենցի դուռը, իսկ մյուսը, ըստ երևույթին Լուսավորիչը առանձնացնող սեփական շրջափակին հետ կապ ունենալով շարունակված է Փրկիչի, Մայր եկեղեցիի, Մզկիթի հարավակողմերով և անցած միջնաբերդի հարավակողմը (միջնաբերդի արևելահարավի մնացորդ բուրգը այս պարիսպին կպատկանի):

Լուսավորչեն անցնելով անմիջապես արևմուտք, կսկսին քարայրները, քարայրներուն առջև կտեսնվին խոշոր տապանաքարեր, որոնք կապացուցանեն այս տեղերու ալ խիտ բազմամարդությունը, մինչդեռ մեկ հայացքով կկարծվի, թե այդ մասերը միշտ անբնակ եղած են, ընդհակառակը խոր քննությամբ կտեսնվի շատ բաներ այս անբնակ կարծված մասերուն մեջ:

Այս մասեն առաջանալով կտեսնենք, այն ձորին գլուխը և պարսպամասերը, որ առաջադույն նկարագրեցի, որուն տակը կգտնվի սարալանջին վրա գտնված ձեռագործ ճանապարհները թեև վերեն անտեսանելի:

Այստեղ ձորին վերի բերանը բավական լայն է, սակայն բերանը ամբողջ պարսպով փակված է:

Այս ձորին արևմտյան կողմը պարսպի շարունակության վրա (որ շարունակությունն է Լուսավորչի տակ եղած պարսպամասի դեպի արևմուտք դարձած շարքին) անկյունացած տեղի մը վրա կա կցված զանազան պատեր, իբր պարսպի մաս, բայց սենյակներու նման բաժանումներով, ահա այս պարիսպներեն ցած են լանջի քարափոր ձեռագործ ճանապարհները, բայց ասկեց ցած ալ կրկին կան պարիսպի մնացորդներ, կրկին ժայռի վրա, դեռ գետը չհասած: Ասկեց կերևի, որ այս տեղերը ոչ թե երկու, այլ ըստ պահանջի մինչև 3–4 շարքեր եղեր են ամրություններու, միայն թե ի հարկե, ոչ միշտ շարունակված, այլ պետք չեղած տեղերը ընդհատված: Այս շինության մասերեն դեպի արևմուտք, հազիվ թե գոյություն ունենար պարիսպ մինչև Կուսանաց վանքը, որովհետև այս մասին տակը կգտնվի այն ահավոր վերեն վար ուղիղ կտրած ժայռերը, որոնց բարձրությունը բոլորովին անմատչելի դարձած է: Եթե կային ալ պատեր, այն ալ միայն վերեն մարդ կամ անասուն չգլորվելու ապահովության համար պետք էր դրված ըլլար:

Կուսանաց վանքի պատերը եկած միացած են այս բարձրաբերձ բնական ամրության և փակած են ձորակի նման ժայռի ճեղքվածք մը, որը կարող էր հնարավորություն տալ վերև բարձրանալու:

Ասկից անդին Կուսանաց վանքը և պարիսպները և անոր շարունակությամբ մինչև Միլենց հասնող պատերը կկազմեն ամրություններ քաղաքին և գետին մեջտեղ քաղաքին պարիսպներու մեջտեղ թողնելով ընդարձակ լանջը: Կուսանոցեն սկսած մինչև միջնաբերդի արևմտյան անկյունը հասնելն է, որ խիստ բազմաբնակությունը զգալի է երկու պարիսպին մեջտեղ, մանավանդ քարայրերու շատությունը:

Կուսանոցի հյուսիսի կողմը կամարակապի դիմաց է բնական քարաձոր, որուն միջեն կբարձրանար ճանապարհը քաղաք: Միլենցեն անցնելեն հետո այս ձորակին վերի բերանն ալ փակած է նույն պարիսպով, որ Կուսանոցը Միլենցին կկապե:

Կուսանոցեն դեպի հյուսիս մինչև քաղաքին պարիսպը հասնելը Փրկչի մոտերքը տարածությունն անհամեմատ ընդարձակ է և լեցուն հին շինության հետքերով:

Կուսանոցի և Միլենցի միջև, ձորի բերնեն սկսած պարիսպի կից հյուսիսի կողմին վրա կա դարձյալ մի գերեզմանատուն, որ մինչև Միլենց դուռը կհասնի:

Միլենցեն դեպի արևմուտք ալ կշարունակվի գերեզմանը մինչև 30–45 քայլ պարիսպի հետ միասին. ասկեց անդին այլևս հաճախ կընդհատվին պարիսպին հետքերը մինչև կամուրջին արևմտյան կողմի վեր բարձրանալու ոլորապտույտ ճանապարհի գլուխը:

Կամուրջեն դեպի արևմուտք ծռվող ճանապարհը քաղաքի առաջին պարիսպեն ներս մտած է մզկիթի հետևին ձորին տակի բերանը (հարավային կողմը մզկիթին):

Միջնաբերդի տակի դուռը չհասած, 50–60 քայլի վրա կա մի գերեզման ևս գետափին ժայռի եզերքին մոտ:

Կամուրջեն ուղիղ գետափով դեպի արևմուտք սկսվող ճանապարհը, որ կբարձրանա ոլորապտույտ դեպի վեր, դուրս կուգա առաջին պարիսպի շարքին վրա մզկիթի և միջնաբերդի մեջտեղի ուղղությամբ և կշեղվի հանդերից դեպի արևմուտք, ուր արդեն կբաժանվի ճանապարհը զանազան կողմերու վրա: Այս դռնեն մնացած է միայն գետափի կողմի պատը, մյուս մասերը բոլորովին փլած են, հայտնի է, որ ունեցեր է բավականին զարդարուն մույրուրներ դռան եզերքը, որովհետև մոտը թափված քարերուն մեջ կան քանդակազարդ քարեր, որոնք նման են բավական պրոֆ. Ն. Մառի միջնաբերդի մեջ բացած Ծաղկոցաձորի կողման դռան քարերու քանդակներուն:

Այս դուռն Աշոտի պարսպի սահմանին մեջ կգտնվի, թերևս Աշոտի ժամանակեն գոյություն ունեցած է: Արձանագրության հետք ամենևին չգտա: Եթե պեղված քարեր մաքրվեն, կարելի է որ դուրս գան արձանագրություններ և ուրիշ բաներ: Դռնեն դեպի հյուսիս, լանջին վրա 50–60 քայլ բարձրանալով կհանդիպենք քարակույտ ավերակի մը, ուր կան շատ մը տաշած քարեր, այս նման է եկեղեցիի մը ավերակին, մոտերքը կան քանդակազարդ խաչքարեր. ի միջի այլոց կա մի սյուն 27 սմ. տրամագծով, կարմիր քարով, և նման է եկեղեցիի ներսի որմասյունի. նաև կա մի ուրիշ մույրուր և կա մի փոքր խաչքարի պատվանդան աստիճանավոր: Այս կույտը կգտնվի Ամենափրկիչի ավերակի ուղղությամբ, թերևս անկից ալ գլորված քարեր կգտնվին այստեղ և այս մույրուրները այդ եկեղեցիինը ըլլան: Համենայն դեպս այս քարակույտին տակ ալ անպայման մի հին եկեղեցվո փլատակ կա պահված:



Նկ. 168. Անիի Կուսանաց անապատը

* Աշոտի ընտրած մասը, որ մի քիչ տեղ միայն պարիսպ ուներ, այդքան էլ բավական էր, որովհետև այդ մասը իսկապես բոլորովին անառիկ է, մինչև իսկ առանց կողմնակի պարիսպներու ալ ոևէ կերպով անհնար է եղած թշնամուն մոտենալ, բացի այն մասեն, որ արդեն պարսպափակ ըրած է:

## ՄՐԵՆԻ ՏԱՃԱՐԸ
### 1909 թ. հոմիս 13-ին եկա Մրեն

Այս տաճարը 7-րդ դարու Կամսարականներու գործ է: Շինված է ընդարձակ դաշտավայրի վրա, որուն չորս կողմը մեծ տարածության վրա ցրված են հին բնակչությանց և այգեստաններու հետքերը, այնքան ընդարձակ, որչափ Անին կամ անկից ավելի:

Ինչպես ուրիշ տաճարներու, նույնպես այս տաճարին ալ վիճակվեր է կարևոր փոփոխությանց ենթարկվել, որոնց գլխավորագույնն է իմ կարծիքով արևելյան աբսիդին դուրս շեշտվելը:

Արտաքուստ թեև պատերը հաճախակի նորոգության են ենթարկված, նաև արևմտյան երկու անկյունները 10–11-րդ դարերու ոճով սյունանման բոլորակ շինված են, սակայն այդ բոլոր փոփոխություններով հանդերձ, պահած է 7-րդ դարու տիպը, դռները լայն բացված. հարավեն երկու դուռ, որոնց մեկը կբացվի մեծ սյունին և սեղանին միջոցին վրա, մյուսը ճիշտ մեծ սյուներուն կենտրոնին. նմանապես հյուսիսային կողման դուռը, արևմտյան դուռն ալ կենտրոնին վրա է դրած: Ներքին չորս մեծ սյուներուն խոյակները բոլորովին պարզ ձևով են, և հավանական կթվի թե հետնագույն նորոգության արդյունք են. կամարները դուռ թե պատուհան և կամ սյունակամարներ ամենն ալ arc plein cintre են ինչպես կտեսնվի Բագարանի տաճարին վրա: Բարձրությունը մինչև մեծ սյուներու երկրորդ կամարին կատարը 17,25 մետր է: Բացառաբար սեղանի կիսաբոլորակին մեջ փոխանակ ըստ սովորականի մեկ պատուհանի, շինված է երեք պատուհան* թեև հետո երեքն ալ անճաշակ կերպով փակված են: Սեղանին երկու կողմերը կան երկու սենյակներ միահարկ (?) 13-րդ դարու ճաշակով voute d'arrête ծածկված:

Գմբեթին կազմվածքը նման է Բագարանի գմբեթին, նախ ութանկյունի վերածված և հետո բոլորակ կազմած:

Հարավային պատին վրա ներսեն 22–25 խաչքար շարված կա. ամենն ալ 10-րդ դարեն հետո եղած ճաշակով փորագրված:

Արտաքուստ, իբրև զարդարանք, բացի պսակե և դռների վրայի քանդակներեն առանձին ոչինչ չերևնար, խորանին կամարը անհամեմատ ցած է չորս սյուները կապող կամարներեն և այդ տարբերության մասին վրա բացված կա մի մեծ պատուհան, այս պատուհանն ալ բացառություն է, գրեթե Բագարանեն հետո այս երկրորդն է այս ձևով:

Նկ. 169. Մրենի տաճարի արևմտյան մուտքի բարձրաքանդակները

* Շատ մոտ հավանականություն կա սույն երեք պատուհանի բացառության ս. Սոփիային ազդված ըլլալուն, որովհետև բյուզանդական եկեղեցիներու մեջ ալ միայն ս. Սոփիան է, որ երեք պատուհանով է խորանը:



Գմբեթին մեջ կա ութ հատ ցցուն ջիղեր, որոնք կբաժանվին կենտրոնական բոլորակե մը, և յուրաքանչյուրին վերջավորության վրա ալ կա նույնպես մեկ մեկ բոլորակ ձողերուն կրկին լայնությամբ տրամագծով:

Սեղանին տակը կամարակապ դատարկ է, թերևս եղեր է մասանց խորան: Մուտքը հայտնի չէ քանդակվածքի պատճառով, հավանական է, որ ճակատեն էր:

Կամարը նետված է հյուսիսեն հարավ: Արևմտյան դռան կիսաբոլորակի մեջ քանդակված են երկու թևավոր հրեշտակներ միմյանց քով կանգնած: Անկից վար, դռան լայն բարավորին վրա քանդակված են վեց մարդ, որոնց մեջտեղերը հավանաբար Քրիստոս, երկու քովերը դարձյալ երկու սրբոց պատկերներ Քրիստոսի պես լուսապսակ, իսկ մյուսները երեքն ալ մահկանացուներ են. հարավային կողմեն առաջինը մի քիչ կնոջ նմանություն ունի, հագած ունի մի վերարկու ծալ-ծալ թավշյա (?), որուն թևերը չեփքենի նման կախ ընկած են առանց հագնելու, իսկ երկու ձեռքերը առաջ է պարզած: Այնուհետև կհաջորդեն սրբոց պատկերները, հյուսիսային ծայրը նույնպես կանգնած է մի մարդ նույն տարազով ինչպես հարավայինը, դարձյալ ձեռքերը առաջ երկնցուցած:

Արևմտյան ճակատը դարձյալ լեցված է հետնադիր խաչքարերով մեծ ու փոքր չափերով: Հյուսիսային դռան լայն բարավորին վրա քանդակված են՝ արևելյան ծայրը մի թամքած ձի, անոր առջև մի մարդ մի քիչ ծունկ չոքելու պես ծռած, անոր առջև մի երեխա ձեռքին բռնած մի խաչ բարձր ձողի վրա, անոր կհաջորդե մի ուրիշ մարդ դարձյալ կիսածունկ, ձեռքին բուրվառ, այնուհետև կուգա մի ծառ երեք ճյուղ՝ մեկ կողմեն, երեք՝ մյուս կողմեն:

Արևելյան կողմին անկյունավոր աբսիդի պսակները ժամանակակից 7-րդ դարու ճաշակով են շինված: Իսկ երեք պատուհանները պսակված են գեղեցիկ կարնիզով մը: Կողմնակի երկու պատուհաններու վրա դրված են իբր պսակ պոչերով իրարու փաթաթվող վիշապներ:

Վերի գմբեթին ներքևի խաչաձև ֆրոնտոնները ծածկող պսակը ևս նույնն է վարինին հետ, գմբեթն ալ նմանապես, սակայն ստորին մասերը ճոխ քանդակազարդված:



Նկ. 170. Մրենի տաճարի հյուսիսային մուտքի բարավորի բարձրաքանդակները



Նկ. 171. Մրենի տաճարի արևելյան պատի կողմնակի պատուհանի պսակի քանդակները

Նախապես ծածկված է եղեր տանիքը կղմինդրով, հետո կրկին նորոգության մը ժամանակ վրայեն սալաքար են շինած: Սակայն գմբեթն իր կղմինդրով անարատ պահված է:

Հարավային կողմն ալ, հետնադիր խաչերով ծածկված է. միջին դռան ճակատը, մինչև միջին պատուհանին տակ լիովին քանդված և վերստին շինված է, թե ինչու է այդ տարօրինակ փոփոխությունը, ոչ մի բան չի կարելի ենթադրել, այդ բանն արած կերևին հատկապես այդ մասին մեջեն մի բան վերցնելու և անհետացնելու դիտավորությամբ, որովհետև բավական ընդարձակ տարածություն է, որ բռնած է այդ փոփոխված ու նորոգված մասը:



Նկ. 172. Մրենի տաճարի արևմտյան ճակատի հյուսիսակողման պատուհանի պսակը



Նկ. 173. Մրենի տաճարի հյուսիսային ճակատի արևելակողմի պատուհանի պսակը

Այդ նորոգված կամ փոխած մասին վրա եղած արձանագրությունները (թվով 6 հատ) ամենն ալ Զ թվականեն հետո են գրած: Ուստի հավանական է, որ այդ թվականին եղեր է փոփոխությունները: Աստիճանները կորած են հողին տակ: Ներքին կամարները Մայր եկեղեցիի կամարներուն նման դատարկություններ ունեցեր են որպես պահարաններ, արևմտյան դռան ճակատն ալ մինչև վերևի պատուհանը ամբողջովին ներսեն և դրսեն պատռած քանդված և վերստին շինված է, այս այն մասերն են, ուր խաչքարեր են ամրացած:



Նկ. 174. Մրենի տաճարի հյուսիսային ճակատի միջին բարձր պատուհանի պսակը

Եթե կհաստատվի, որ Մրենի տաճարին արևմտյան անկյուններու սյունանման զարդերը միաժամանակ շինված են տաճարի շինության հետ, այն ատեն պետք է ընդունել, որ Տեկորի տաճարին արևմտյան անկյուններու նույնանման զարդերն ալ շինված են նույն ժամանակ և առաջին նորոգության շրջանն է Տեկորի 7-րդ դարը: Նաև այդ ձևին ծագումը պիտի համարել 7-րդ դարը՝ դեռ նոր սկսած մուտ գործել հայ ճարտարապետության մեջ:

## ԲԱԳԱՐԱՆ

### 1909 թ. հունիսի 2-ին Տեկորից եկա Բագարան

(Ներքին փոքր կողմնակի կամարներ ամենն ալ թեթև կերպով պայտաձև են):

Ուրիշ պատմական պանծալի հիշատակարաններու նման այս տաճարին ալ վիճակված է անտերություն, քայքայում և կործանում:

Գմբեթը վաղուց ընկած է մեջը, պատերը թեև որոշ չափով հաստատուն, սակայն անոնք ալ հետզհետե փչանալու վրա են:

Թե՛ ներքուստ և թե՛ արտաքուստ խաչաձև է եկեղեցին, ներքուստ կիսաբոլորակ թևերով, իսկ արտաքուստ՝ անկյունավոր, բացի արևելյան խորանեն, մյուս բոլոր թևերուն վրա ունի մտից դռներ, որոնց երկուքը մեծ են, իսկ հյուսիսային կողմինը՝ խիստ փոքր է և մինչև այսօր դեռ վրան կմնա միակտուր քարե շինված փեղկը: Պատերեն քիչ հեռավորությամբ զետեղված չորս մեծ մույթերը իրար միացնող բարձր և բեկյալ arc brisè կամարներուն վրա նստած է գմբեթը, սույն չորս կամարներեն երեքը բոլորովին անվնաս պահված են: Միայն հարավային կողմի կամարը կործանված է մինչև կիսաբոլորակ թևին կամարը: Կիսաբոլորակ թևերուն կամարներուն չորսն ալ հաստատուն և գրեթե անվնաս պահված են, ինչպես նաև շրջապատի բոլոր պատերը: Մասամբ վնասված և



խախտված են ներքին չորս մեծ սյուները, որոնք հաճախ ենթարկվեր են նորոգություններու և այդ նորոգության ժամանակ՝ անարվեստ վարպետներու աշխատության:




Նկ. 175. Բագարանի տաճարի արևմտյան ճակատի հյուսիսային պատուհանի մույթերը




Նկ. 176. Բագարանի տաճարի արևելյան ճակատի հյուսիսակողման պատուհանի մույթերը




Նկ. 177. Բագարանի տաճարի հյուսիսային ճակատի արևմտյան պատուհանի մույթերը




Նկ. 178. Բագարանի տաճարի հյուսիսային ճակատի արևելյան պատուհանի մույթերը

Մեծ կամարները, բացի arc brisè լինելեն նաև շատ թեթև կերպով ալ հանգիստները հակված են դեպի ներս և զգալի կերպով կցուցանեն պայտաձևի ոճը: Կողմնակի փոքր կամարները, որոնք մեծ սյուներեն դեպի արտաքին պատերը ձգված են, անոնցմե ոմանց վրա ավելի զգալի կերպով շեշտված է պայտաձևությունը:



Նկ. 179. Բագարանի տաճարի արևմտյան ճակատի վերին մասը

Հայ եկեղեցիներու ընդհանուր ձևերեն բացառություն կազմող հատկությունն է այս եկեղեցիին արևելյան կողմեն, սեղանի կողմնակի ուղիղ պատերուն վրա ունեցած փոքր դռները, նաև հարավային ճակատին նույն մասին վրա արևելյան անկյունին կից մի դուռ. այս վերջինը թեև մի քիչ սովորականի մոտ բացառություն կհամարվի, ինչպես Մրենը և Էջմիածինը (այս վերջինին մասին դիմել առանձին աշխատությանս), սակայն արևելյան կողմեն անկարելի էր, որ առանց պատճառի ունենային այդ դռները, ուստի մասնավորապես ուշադրություն դարձնելով առանձին խնամքով քննեցի շինության բոլոր մասերը և վերջապես մի քանի հայտնի նշաններե ալ հետևցնելով հասեր եմ հետևյալ եզրակացության:

Նկ. 180. Բագարանի տաճարի հարավային միջին մեծ պատուհանի պսակը

Սկզբում այս եկեղեցին եղեր է պարզ խաչաձև, առանց մեծ սյուներու և թևերու խորության չափը հավանաբար եղեր է մինչև այսօրվան մեծ կամարներու հանգիստներուն պրոեկցիան, ուստի բնականաբար սյուներուն հետևի մասերը եղած էին չորս առանձին սենյակներ՝ ինչպես Աղջկաբերդը, Հռիփսիմեն և այլ նմանօրինակ եկեղեցիներ և այդ արևելյան դռներ եթե հետո չեն բացված, առաջվնե ալ կբացվեին այդ սենյակներուն վրա: Շատ փնտրեցի հետքեր գտնելու համար, անոնց վերջեն բացված ըլլալուն, սակայն նշմարելի չէր, ինչպես նաև՝ մյուս կողմերուն վրա ալ ի հնումն դուռ կենալուն նշաններ նույնպես չգտա, թեև այն տեղերու վրա, ուր պետք է դռները գտնվեին անհամեմատ փոքրությամբ քարեր կան դրված: Սակայն այս ալ բավական չէ հաստատելու: Ինչևիցե: Վերջապես կամ հնում այս օրվան վիճակով է եղած և կամ թե եղած փոփոխությունը այնքան խնամքով է կատարված, որ հայտնի հետք չէ մնացած: Մեծ սյուներուն վրա եղած փոփոխությունները շատ պարզ են. անոնցմե դեպի պատերը ձգվող կամարները, որոնք պետք է հետնագույն շինության վերաբերին, առաջվան գոց պատերու և անոնց տակ գտնված դռներու փոխարեն հավանաբար 9–10-րդ դարերու գործ կերևին իրենց ոճով և ճաշակով, ինչպես խոյակները և խարիսխները: Իսկ այդ փոքր մասերուն վրայի ծածկերը, որոնք voûte d'arrête-ով ծածկված են, անպայման 13-րդ դարեն առաջ չեն կարող ըլլալ:

Նկ. 181. Բագարանի տաճարի դմբեթակիր կամարները

Հին տաճարներեն գիտենք, որ արևելյան կողմը, գոնե երկու սենյակները անհրաժեշտ էին. մանավանդ այս եկեղեցիի նման մի մեծ եկեղեցի առանց այդ կողմնակի սենյակներուն չէր կարող մնալ, այս իսկ ցույց կուտա, որ այդ սյունամեջերը առանձին սենյակներ էին ներսեն և դրսեն տաճարին հետ հաղորդակցելու համար: 10-րդ դարուն, երբ առհասարակ կողմնակի սենյակները խորանավոր մատուռներու փոխարկվելու ընդհանուր սովորությունը մտավ, այս սենյակները այնքան փոքր էին, որ չէր կարելի անոնց խորան ավելցնել, ուստի այս սենյակներուն առջև արևելյան կողմեն շիներ են երկու չափավոր մեծությամբ մատուռներ, որոնց դռներն այժմ արտաքին դուռ կարծվողներն են:

Նկ. 182. Բագարանի տաճարի հարավային պատի պատուհաններից մեկի պսակը



Գլխավոր կասկածը կմնա հիմա թե արդյոք այդ մատուռների շինելու ժամանա՞կ բացվեցան այդ դռները:

Մեծ սյուներուն խոյակներեն արևելյան կողմի երկուքը և անոնք արտաքին պատերուն կապող փոքր կամարներու հանգիստները 10–12-րդ դարերու ճաշակով շինված բաներ են, հավանաբար նախնական փոփոխության ժամանակ շինված, իսկ արևմտյան կողմի երկու սյուներուն խոյակները ամենայն հավանականությամբ 13-րդ դարու վերջին մի նորոգության գործ են և շատ անխնամ ու պարզ ձևով շինված: Դռներու և պատուհաններու կամարները ամենն ալ առհասարակ arc plein cintre են, միայն թե ոչ Տեկորի պես ներսեն և դրսեն հավասար չափով բացվածքով, այստեղ դռները խիստ քիչ լայն են ներսանց, սակայն պատուհանները անհամեմատ մեծ տարբերությամբ լայնացած և երկնցած են ներսեն:



Նկ. 183. Բագարանի տաճարի արևմտյան ճակատի հարավկողման պատուհանի պսակի քանդակները



Նկ. 184. Բագարանի տաճարի բոլոր մեծ կամարների հանգստի ձևը



Նկ. 185. Բագարանի տաճարի արևմտյան պատի հյուսիս արևմտյան մեծ սյան փոքր կամարի հանգիստը

Պատուհանները իրենց լայն բացվածքներով և զիրենք պսակող մույլուրներով պարզապես ցույց կուտան, որ 7-րդ դարու գործ են, և այնպես ալ մնացած, առանց ոևէ փոփոխության, նույնպես սեղանը պահած էր իր 7-րդ դարու իսկական տիպը: Ոչ միայն երկու կողմեն բարձրանալու սանդուխներ ունի, այլև մեջտեղեն ալ ունի՝ ինչպես Զվարթնոցը, իբրև բացառություն վերջին դարերու եկեղեցիներեն (Մրենի սեղանը քայքայված է, հայտնի չէ, թե արդյոք նա ալ ունե՞ր մեջտեղեն վերելք):



Նկ. 186. Բագարանի տաճարի հարավ-արևելյան մեծ սյան փոքր կամարի հանգիստը հարավային պատի վրա



Նկ. 187. Բագարանի տաճարի հյուսիսային պատի վրա արևելյան սյան փոքր կամարի հանգիստը

Նկ. 188. Բագարանի տաճարի հյուսիսային պատի վրա արևելյան սյան փոքր կամարի հանգստի տարբերությունը Ա մասի վրա



Նկ. 189. Բագարանի տաճարի արևմտյան կողմի մեծ սյուների համանման խոյակների ձևը



Նկ. 190. Բագարանի տաճարի հյուսիս-արևելյան մեծ սյան խոյակի արևմտյան ճակատը



Նկ. 191. Բագարանի տաճարի հյուսիս-արևելյան մեծ սյան խոյակի մյուս ճակատները

Տանիքը հաճախակի փոփոխությանց է ենթարկված, որոնց մեջ պարզ կտեսնվի, թե 7-րդ դարու եկեղեցիները, ինչպես նաև Մրենը, Զվարթոցը, կղմինդրով են ծածկված: Վերջին ժամանակներ հայտնի չէ, թե երբ, կղմինդրներու վրայեն կրաշաղախ քաշած և ծեփած են: Այժմ մեծ մասամբ կմնան ծեփին տակ:

Գմբեթը գրեթե բոլորովին փլած է, միայն արտաքուստ մնացած շրջապատեն կերևի, որ ավելի նման է եղեր Տեկորի գմբեթի արտաքինին, քան ուրիշներու, որովհետև տանիքներու ամենաբարձր կատարներեն վեր անգամ դեռ մեկ մետր բարձրությամբ ուղիղ քառակուսի պատեր կան, փոխանակ անկյունավորի, ինչպես Մրենի եկեղեցին. ասկեց կեզրակացնեմ, որ թերևս Մրենի գմբեթին փոփոխությունն ալ հետնագույն է. և կամ գտնե եթե Տեկորի նման բոլորովին քառակուսի գմբեթով չէր կազմված, գտնե բավականաչափ քառակուսի ձևով, իբրև գմբեթի պատվանդան, բարձրացվելեն հետո պատշաճ բարձրությամբ կազմված էր անկյունավոր գմբեթը:




Նկ. 192. Բագարանի տաճարի հարավային խորանի հատակաձևը




Նկ. 193. Բագարանի տաճարի հյուսիսային խորանի հատակաձևը

Գմբեթը ներքուստ ալ պահած է իր նախնական տիպը, թեև քիչ մը ավելի մշակված ձևով, քան Տեկորի գմբեթին կազմությունը:

Նախապես ուղիղ քառակուսի բարձրանալեն հետո յուրաքանչյուր անկյուններեն շեղակի նետված են փոքր կամարներ, որոնցով ձևացեր է ներքուստ ութանկյունի մը: Եվ ձևացյալ ութանկյունին սուր մնացած անկյուններն ավելի ևս բթացնելու համար նախապես գոյացած ութանկյունիներուն վրա դարձյալ շեղակի ձգված են փոքրիկ կամարիկներ, որոնցմով արդեն ձևացեր են 16 հատ բութ անկյուններ և գրեթե բոլորակի ձև է ստացեր և անոր վրա հարմարցուցած է վեղարը: Հավանականաբար վեղարն ալ պետք է, որ նման ըլլա Ալամանի եկեղեցիին, ավելի մշակված, քան Տեկորի գմբեթին վեղարի կազմը:

Գմբեթին վեղարը, ինչպես նաև կողմնակի չորս աբսիդներու ծածկերը եղած են կոնաձև: Կաթողիկեին մասին խոսք չի կարող ըլլալ, սակայն աբսիդներուն ծածկերուն այժմյան մնացորդները թերևս ոմանց մեջ կասկած հարուցանեն անոնց սֆերիկ ըլլալուն: Սակայն, այսօրվան մնացորդ սֆերիկ մասերը լոկ ներսանց կազմված գմբեթարդին մասերն են, և անոնց սոսքերը շատ հեռու կմնան արտաքին որմերեն. այդ սֆերները և մինչև արտաքին պատերուն մեջ եղած բաց միջոցը կարելի է միմիայն կոնաձև ծածկել. եթե սֆերիկ ծածկեին այն ատեն բարձրությունը շատ պիտի շատնար և ծածկեր անոնց կատարին վրա գտնված պատուհանները. բացի այդ պարագան, եթե սֆերիկ շինված ըլլար, այն ատեն հարկ չիկար, որ այդքան բաց տեղ թողելով փոքր գմբեթարդներ ցույց տրվեին արտաքուստ:

Եկեղեցիի շուրջը ամեն տեղերու պես գերեզմաններով ծածկված է, իսկ ուրիշ շինությանց մնացորդներ չկան, բացի հարավ արևմտյան կողմը 2–3 հարյուր քայլ հեռու ուրիշ եկեղեցիի մը պատերեն, որը գյուղացիք հետզհետե քանդելով տանելու վրա են:

Մոտակա շրջակայքը կան շատ մը շինությանց հին հիմքեր, որոնք ցույց կուտան հին ժամանակ այդ տեղերու մեջ խիտ բնակչության գոյությունը, իսկ համեմատելով հիմերու անհամեմատ թանձրությունը և խիստ մեծամեծ քարերով շինված ըլլալը, հայտնի կդառնա, որ անոնք հասարակ բնակարաններ ըլլալու հիմեր չէին, մոտ երկու մետր լայնություն ունեցող հիմքեր կան կարծր որձաքարե և հսկա քարի կտորներով հյուսված, որոնց ամեն մեկը 10–20 մարդ հազիվ կարող է շարժել և թե երբեմն այդ պատերն այնքան երկար են շարունակված, որոնք չէին կարող հասարակ տուներ ըլլալ, եթե ոչ բերդի, գոնե ապարանքներու պատեր պետք էր որ ըլլային: Այս հետքերը բազմաթիվ են եկեղեցիի հյուսիս-արևելյան կողմի բլրացած բարձրության վրա և անկեց վար դեպի գյուղը եկեղեցիեն անջատող ձորը:

Ես չպիտի վարանեմ այս ամրակուռ շինությանց հետքերը հեթանոսական շրջանի համարելու, որովհետև քրիստոնեական շրջանեն ոչ միայն սրբատաշ քարերով բերդեր և ապարանքներ կառուցանելու սովորությունը ընդհանուր էր, այլ և քննելով կտեսնենք, որ այդ վայրերը մի ժամանակ ծառայել են քրիստոնեից համար իբրև գերեզմանատուն. այդ գերեզմանները պատահեր են սենյակներու և սրահներու մեջ և անոնց պատերեն թափած մեծամեծ քարերը ծառայել են իբրև խաչարձան՝ առանց տեղերեն շարժվելու, պատեն ընկած կամ հիման մեջ նախապես դրած մեծ քարի մը առջև մեռելը թաղել են և նույն քարին վրա փորագրեր են խաչեր և հիշատակարաններ, ասոնց մեջ արձանագրություններ կան, որ մինչև 12–13-րդ դարերը կհասնին:

Գյուղացիներու պատմելով այստեղերը հաճախ պատահած են հեթանոսական շրջանի հնություններ և գերեզմաններ: Այժմ Միջին Գյուղ անվանված բարձրության վրա, նոր տներ շինելու համար հիմեր փորելու ժամանակ գտնվեր են հեթանոսական գերեզմաններ, քարե փոքրիկ կուռքերու արձաններ, սակայն դժբախտաբար փչացուցեր են:

Առաջին առթիվ մարդ երբ կմոտենա դաշտի եզերքին և դեպի Ախուրյանի ձորը կտեսնե Բագարանի ընդհանուր դիրքը, անմիջապես կըմբռնե, թե որչա՞փ զորավոր եղեր է մի ժամանակ թշնամու երկյուղը և այդ երկյուղի ազդեցության տակ մարդիկ ինչպիսի՞ տաժանելի կյանք անցնելու կպարտավորվին:

Դաշտավայրի եզերքին մոտենալով հանկարծ կպարզվի աչքի առջև մի ընդարձակ խոր փոս, որուն մեջ ոչ այլ ինչ կտեսնվի, բայց եթե ահագին ապառաժներու կույտեր. բարձրաբերձ ժայռեր, խորախոր փոսեր, նեղ ու ոլորուն կիրճեր, մինչև գետին եզերքը և այսպես կտևե հետիոտն ճանապարհորդի մը համար, գրեթե մի ժամ: Երկյուղը և սարսափը պարզապես բերեր ահալի ժողովուրդը խցկեր է այս ապառաժուտ քարքարուտներուն մեջ գոյություն պահպանելու համար, և զարմանալին այն է, որ այդ գոյության պահպանության համար այդ քարերուն և ապաժառներուն կյանք ու կենդանություն են տվեր: Բացի գետին ջուրեն քարքարուտ լանջերուն մեջեն բխող առատ ջուրերը քաջալերություն և ուժ են ներշնչեր հալածական ժողովուրդին, մեկ կողմեն սկսեր են մաքրել այդ տեղերը ապառաժներեն և այգիներ ու պարտեզներ տնկել ընդարձակ տարածության վրա, այնպես որ Մրենեն հետո Բագարանն է, որ պիտի մրցի իբրև Անիի բազմամբոխ ժողովուրդին մրգեղեն մատակարարող: Թեև այդ ջլապինդ ժողովուրդին անպարտելի ուժը չէ կարողացեր ձորը, կամ ավելի ճիշտ, այդ փոսն իր լեռնացած ապառաժի կույտերեն բոլորովին ազատել. դեռ ամենամեծ մասը կմնա, սակայն ինչ որ ալ ըրել են, արդեն շատ մեծ փաստ է այդտեղ ապրող հին ժողովուրդին տոկուն ու չարքաշ կյանքին. երկրագործության և մշակության մեջ ունեցած հմտություններուն, ինչպես կըսեն ռամկորեն, քարեն հաց հանելու հատկություններուն: Այսօր ներկա գյուղացիք հիներուն թողած պատրաստ հողերը միայն կմշակեն, այն ալ ամբողջովին մաքրել դեռ չեն կարողացած և շատ տեղեր կան ու կտեսնվին, որ ի հնումն այգիներու և պարտեզներու տեղեր են եղած: Հայտնի են անոնց պատերն ու սահմանները, սակայն կմնան խոպան, որովհետև բնական ոևէ պատահարներով մեջը քարեր են թափեր, կամ ոևէ շինության քանդակը և բեկորները մեջը բլրացել են:

Բագարանի փոսը հյուսիսեն հարավ երկնցած է, իսկ արևելքեն արևմուտք մի քիչ նեղ չափ ունի: Ստորոտեն կանցնի Ախուրյանը, սակայն առհասարակ ամեն տեղե դաշտավայրեն անտեսանելի է այս թագստարան փոսը մինչև եզերքին մոտենալը: Հյուսիսային կողմը կգտնվի բերդը, իսկ հարավային ծայրը՝ բարձր տեղի մը վրա ս. Թեոդորոս եկեղեցին:

Բերդը ունեցած է ի հնումն մեծ տարածությամբ որձաքարե պարիսպ, որուն մեջ շրջափակված են երեք հատ զանազան բարձրությամբ բարձր քարաժայռեր, այս շրջափակին մեջ է եղած հին քաղաքը, որուն մեջ դեռ պարզ նշմարելի են բնակությանց անթիվ հիմունքներ պինդ որձաքարով չոր շարված, և խիստ հաստ պատերով մեծամեծ շինությանց մնացորդներ անթիվ են և այսօրվան քարքարուտներու մեծ մասը բոլորովին անբնակ կերպով այդ բազմաթիվ շինությանց փլատակներեն են առաջ եկած, այնպիսի խոշոր զանգվածներեն հյուսված պատերը, որ ներկա ժողովուրդի համար դժվար է երևցած նույնիսկ անոր փլատակներեն գոյացած քարերն իսկ տեղեն շարժել: Այս փլատակներն ալ հավանորեն հին հեթանոսական շրջանի մնացած հետքեր են. որովհետև անոնց վրա քրիստոնեական շրջանը իր որոշ դրոշմը դրած է իր սրբատաշ քարերով և կրաշաղախ շինված պատերով զանազան քանդակազարդերով:

Միջնաբերդ անվանվածը կգտնվի սույն մեծ քաղաքորմի կամ բերդի պարսպի հարավային արևմտյան կողմը երեք բարձր քարաժայռերու ամենաբարձրին գագաթը:

Փոքր տարածության վրա ամբողջովին շրջապատված է եղած կոփածո քարե կրաշաղախ պատերով, և տեղ տեղ բուրգերով, մի դուռ ունեցեր է հարավային ծայրին, հյուսիսեն հարավ նեղ ու երկայն դիրքով է բերդին ներսը ժայռին ձևին պատշաճելով. հյուսիսային ծայրին եղեր է շինած ս. Գեվորգ եկեղեցին. թեև բացի արևելյան պարզ պատեն ոչինչ չէ մնացած. մնացյալ մասերը ամենն ալ նոր են շինած. եկեղեցիի վրա ուշագրավ են Մրենեն բերված գեղեցիկ մանվածահյուս քանդակով խաչքարերը, մանավանդ դռան ճակատը դրված ճերմակ քարի վրա փորված մի ընտիր խաչքար, որ միայն հիացում կպատճառե ճարտար փորագրողին ճաշակին և հմտության վրա:

Միջնաբերդին մեջ մնացած են ապարանքի հիմերը զանազան բաժանումներով, իսկ պարիսպներեն մի կիսականգուն բուրգ, կիսաբոլոր ճակատը դեպի հարավ արևմուտք. այս բուրգին յուրաքանչյուր քարին վրա կնկատվին զանազան բարձրաքանդակներ, թեև ինձի հազիվ նշմարելի եղան անոնց քանդակները. թեև տեղ տեղ կան իսկական քանդակներ:

Տեղին անհարմարության պատճառով անկարելի եղավ մանրամասն զննել մյուս երկու բլուրներեն ալ, որոնք հաջորդաբար շարված են կարծես արվեստական կերպով դեպի արևելք, անոնք ալ ունեցեր են թե իրենց առանձին շրջապարիսպները և թե մեջը եղեր են ապարանքներ, որոնց հոյակապ մնացորդներ դեռ կմնան. միջինին մեջ կան այժմ կամարակապ սենյակներու մնացորդներ:

Բերդի ուղիղ հարավային կողմը բավականին մեծակա մի եկեղեցի, որն որ դատելով իր քանդակներու ոճեն 10–11-րդ դարուն գործ պետք է ըլլա: Այս եկեղեցին շինված է ուղղակի քաղաքորմի պարիսպին կից և արևմտյան պատը գրեթե դրված է հին պարիսպի պատին վրա:

Բերդին հարավ արևելյան կողմը Ախուրյանի մյուս ափին վրա, կա մի այլ եկեղեցի բարձր բլուրի գագաթին, որը ինձի չհաջողվեցավ գնալ տեսնելու, այդ եկեղեցին ալ ունեցեր է, համեմատելով իր մեծության, չափավոր մեծությամբ շրջորմեր, շուրջը բրգաշար, որոնց մնացորդները դեռ կերևան հեռվեն. եկեղեցին ութանկյունի է բոլորակ թմբկավոր կոնաձև գմբեթով և երևույթեն հայտնի է, որ այդ եկեղեցին ալ չպետք է որ անցնի 11-րդ դարը:

Ուսումնասիրության ահագին նյութ կմատակարարե Բագարանեն դեպի Մրեն գնալու ճանապարհին վրա անմատչելի քարաժայռերու վրա և ծերպերու նման փորված քարայրերը, որոնց մասին նույնիսկ առասպելներ կան ստեղծված ժողովուրդին բերնովը. մանավանդ մեկուն համար՝ տեսնողներ հիացումով կնկարագրեն անոր մեծությունը, ընդարձակությունը և դիրքին ահավորությունը: Ցածեն հայտնի է միայն նույն քարայրին բերանը, և ձեռագործ փորված ճանապարհը ուղղահայաց կերպով կտրված ահավոր քարաժայռի կուրծքին վրա, բայց ինձ համար զանազան պատճառներով անհնար էր մոտենալ այնտեղ:

Մինչև Մրեն հասնելը և Մրենի քարափը բարձրանալը հաճախ կտեսնվին Ախուրյանի արևմտյան կողմի սարերուն լանջերուն և բլուրներու գագաթներուն վրա անառիկ բերդերու և պարիսպներու մնացորդներ, այնպես առանց հետաքրքրության մնացած և այնպիսի վիճակի մեջ են այսօր, որ պարզ հայտնի է, թե դարերն ի վեր այստեղերը մարդկային ոտք չէ կոխած. ոչ ճանապարհ կա, ոչ մոտենալու դյուրին միջոցներ: Քարեր մագլցելով միայն կարելի էր մոտենալ այդ տեղերին. կցավիմ, որ ես չունեի երիտասարդական կորով և ուժ, որպեսզի առանց այցելության չթողնեի այդ ամենը:

## ԲԱԳՆԱՅՐ

### 1909 թ. հուլիսի 16-ին եկա Բագնայր:

ԺԱ-րդ դարու հայ ճարտարապետության բոլոր բնորոշ հատկությունները իր վրա կամփոփե բուն տաճարը ս. Աստվածածին անունով: *Voûte pendentif*-ներու վրա առնված գմբեթը դրսանց բոլորովին բոլորշի առանց սյունի, ներսեն՝ բոլորակ և կանոնավոր վեղարով, գմբեթը կրող չորս կամարները թե՛ կատարին վրա թեթև բեկում ունին, այսինքն աղեղները աջ ու ձախ տարբեր կենտրոնե առնված, և թե՛ ստորին մասը, ուր կվերջանա սյանց խոյակներուն վրա, զգալի պայտաձև թեքված են դեպի ներս: Արևելյան և արևմտյան կողմերու որմասյանց խոյակները բոլորովին տարբեր են, արևելյան կողմի խոյակներ նախնական ձևի (հայոց մեջ) *moulure*-ներով կազմած է, իսկ արևմտակողմինները երկուքն ալ ստալակտիտի նմանող տաշված ք ունին, իմ կարծիքով այս վերջինները 13-րդ դարու մոտ նորոգության մը հետևանք են: Այստեղ ոչ միայն մայր տաճարի մեջ, այլ ամբողջ տաճարներուն և գավիթներուն մեջ նկատելի է մի բան, հյուսիսային կողմերը պատուհան ամենևին չունին երեք եկեղեցիներն ալ, իսկ հարավային կողմերն ալ թեև ունին, սակայն դրսի կողմի բացվածքները չափազանց նեղ են (Աստվածածնի տաճարի գմբեթը միայն բացառություն է, դրսանց համեմատաբար լայն է). ասոր պատճառը թերևս ձմեռվան սաստկությունն է: Արևմտյան մեծ գավիթին պատուհաններն ալ նույնպես 13–15 սմ. լայնություն ունին, թեև այստեղ հյուսիսային կողմն ալ պատուհան ունի երեք հատ՝ երեք որմակամարներու ներքև:

Տաճարի որմասյունները լիովին կհիշեցնեն Անիի Մայր եկեղեցվո որմասյունները՝ գրեթե նույն չափ ալ մաքուր շինված: Հատակի վրա սալերը դեռ մասամբ կմնան: Արևելյան կողմը սեղանին երկու քովերը փոքր մատուռ պահարանները երկհարկանի են. արևելյան խորանը բոլորովին քանդված է և տեղացիներու ըսելով վերջին ռուս-թրքական պատերազմի ժամանակ (1878 թիվ) թնդանոթի ռումբով է քանդված մեջը թուրքեր ապաստանած ըլլալուն համար:





Նկ. 194. Բագնայրի մեծ եկեղեցու գավթի ներքին տեսքը

Տաճարին դրսի ճակատներու վրա ոչինչ չերևեր գրեթե, թեև շատ պարզ շինված է, սակայն եղածն ալ ծածկված է հետնագույն գավիթներու շինությամբ. արևելյան, հյուսիս և հարավային կողմերն ունին սովորական նիշեր. կտուրի պսակները անհայտ են, մեծ մասամբ շինություններով ծածկված ըլլալուն համար, բայց մնացած մասերն ալ քանդված են:

Արևմտյան մտից դուռը, որ նույն կողմի գավթին վրա կբացվի, զարդաքանդակներ չունի, բացի երկու կողմին վրա կամարակիր զույգ սյուներե, արտաքուստ քառակուսի է եղած՝ մույրավոր բարավորով, իսկ տաճարին մեջ՝ կիսաբոլորակ վերջավորությամբ: Նմանապես հարավային դուռը:

Բագնայրի շինության այս կտորի մեջ ամենամեծ տեղը կբռնե Աստվածածին տաճարին արևմտյան գավիթը, թե՛ մեծությամբ և թե՛ ճոխությամբ: Ձևը գրեթե քառակուսի է, չորս միջին մեծ սյուներու վրա կազմված է ստալակտիտ քանդակված գմբեթ մը, իսկ մյուս մասերը զանազան ձևով առաստաղներ են: Աննման ճարտարությամբ շինված է գավիթի արևելյան կողմի տաճարին դռան առջևի մասի առաստաղը: Մարդ պահ մը չուզե աչքերուն հավատալ, երբ կտեսնե թե զանազան գույնի քարերով, ինչպես կազմած են կամարիկներ և այդ քարերուն երբեմն լայնությունը 5–10 սմ. չանցներ. երկար շերտեր քաշված և իրարու միացուցած են կաղապարի վրա, բայց այնպիսի ճարպիկությամբ, որ դեռ մինչև այսօր քարերուն գույներն միայն կորոշին անոնց տարբեր կտորներնե կազմած ըլլալը:

Այս առաստաղին երկու կողմն ալ, նույն ձևին մոտ, տարբեր գույնի քարերով կամարիկներեն կազմած, կենտրոնին վրա հարթ մակարդակ ստացած առաստաղներ են, որոնց չորս անկյունները ստալակտիտ քանդակած: Միջին մասի հյուսիսային և հարավային պատերուն կցված առաստաղները բոլորովին հորիզոնական ձևով մոզայիկներե շինված են: Նույն ձևով են նաև արևմտյան մտից դռան վրա եղած առաստաղները, բայց ասոր երկու քովերը եղած բաժինները *voût d'arrête* ծածկված են:

Այս գավիթը, բացի միջին գմբեթավոր մասեն, մնացյալ բոլոր մասերը եղեր են երկհարկանի: Արևմտյան պատին մեջեն նկատելի է սանդուխը վեր բարձրանալու համար, սակայն մուտքը բոլորովին անհայտ է քանդվածքներու պատճառով:

Արևմտյան կողմը, բացի պատեն, ծածկը բոլորովին փլած է, սակայն մյուս մասերը մեծ մասամբ դեռ ապահով վիճակի մեջ են, թեև կան հարավային և հյուսիսային պատերու վրա ալ քանդվածքներ, սակայն նորոգությունը այնքան դժվար չէ:



Նկ. 195. Բաղնայրի մեծ եկեղեցու գավթի հատակագիծը



Նկ. 196. Օրթաքիլիսայի Աստվածածին եկեղեցու հատակագծի ներքին չափերը

## Գ

# ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ԾՈՅԱՏԵՏՐ

*(Արխիվի № 33)*

## ՕՐԹԱՔԻԼԻՍԱ

**1914 հունիս 9**

*Օրթաքիլիսա եկեղեցվո այժմյան անունը ս. Աստվածածին. ավանդական անունը՝ Տիրանավոր: 125 տուն բնակիչ: Գաղթականության ժամանակը՝ 1830 թ. եղել են 25 տուն: Քեֆլի գյուղը բաժանված է այս գյուղեն 1862-ին՝ 20-ի չափ տուն:*

*Եկեղեցին հնում դուռ ունեցեր է թե՛ հարավեն և թե՛ արևմուտքեն: Այժմյան դուռը նոր բացված է նորոգության ժամանակ գյուղացիներու ձեռքով: Հրդեհը մեծ մնաս պատճառեր է այս եկեղեցիին անհայտ ժամանակի մեջ, այժմ հետքեր կտեսնվին հարավային պատին վրա թե՛ ներսեն և թե՛ դրսեն: Պատերուն վրա վարպետներու քարտաշի նշաններ կան Բ. Գ. ✳ այս ձևերով:*



Նկ. 197. Օրթաքիլիսայի Աստվածածին եկեղեցու հատակագծի արտաքին չափերը



*
* *

## ՂՈՒԼԻՋԱՆ

**1914 հունիս 18**

*Կամերալնի 70 տուն, իսկ իսկականը՝ 110 տուն: Սեփական եկեղեցի իրենց չինած: Գաղթած են Պասկևիչի ժամանակ, իսկական բնակիչ են եղեր այս գյուղացիք Կարսի մոտ Բերդիկ գյուղից, այժմ ալ գոյություն ունի այդ գյուղը:*

*Ղուլիջանի այժմյան գյուղն ըստ երևույթին հին ուրարտական ամրոցի մը մեջ է. գյուղի հարավային կողմեն կանցնի Մանթաշի ձորին ջուրը, այդ կողմե երևում են բարձր քարափներու հետ միաժամանակ հսկայական որձաքարե չինված պատերու մնացորդներ, այս պատերուն ներքևի քարափներեն մեկուն վրա է փորագրված բևեռագիրը՝ քարայրի մը բերանին: Այստեղ գետի հոսանքին հետ կան ջրաղացներ, որոնց այժմյան առուները չինված կերևին նույն իսկ ուրարտական շրջանեն Ղուլիջանից դեպի հարավ Ղալաչի բերդը Մանթաշի ջրի ափին, Ղասմ Ալի գյուղից քիչ վերև:*

*Ղուլիջանի հյուսիս արևմտյան կողմը կիյնա Ղուռու Դերե ըսված ձորը, որ ամենայն հավանականությամբ Հաուճի արձանագրության մեջ հիշված Ցամաք ձոր ըսվածն է:*

*Ղասմ Ալի գյուղին կից, որ մոտավորապես մեկ և կես վերստ հեռու է Ղուլիջանեն, կա մի ջրաղաց, որուն ավանդական անունն է Դալի Դակիրման: Այս ջրաղացը գոյություն ունեցեր է նախքան այժմյան գյուղացվոց տեղն հաստատվելը հին ջրաղացի ավերակին վրա չիներ են նորը:*

*Ղուլիջանի մեջ նշանավոր երևույթ է բացի բևեռագիր արձանագրությենեն բազմաթիվ քարայրերը, որոնք փորված են պինդ որձաքարի մեջ, համեմատելով Անիի քարայրերուն այս տեղինները շատ ալ ընդարձակ են, ոմանք անցքի նման երկար են, ոմանք ալ լայն ու ընդարձակ փորված: Զատազանց շատ կան հեթանոսական գերեզմաններ, գյուղացիք միշտ վարուցանքի ժամանակ գտնում են գերեզմաններու հատուկ իրեղեններ, սակայն իրենց տգիտության պատճառով ոչնչացնում են շատ կարևոր հնություններ: Մի ղուլիջանցի ինձ բրոնզյա գոտի տվեց:*

*
* *

## ԱՐԽՎԱԼԻ

**Հունիս 20**

*Արխվալի գյուղը 1886 թվի կամերալնի հաշվով 113. այժմ 210–215 տուն, գյուղին մեջ կա հին ավերակ եկեղեցի և հին գերեզմանատուն, դեպի արևելք մոտակա բարձունքի մը վրա կգտնվի ուրարտական մի բերդի մնացորդ:*

*Այս գյուղի եկեղեցվո մեջ կա մի ձեռագիր ավետարան, որուն մեջ կան շատ մը կրոնական պատկերներ, ի միջի այլոց հետաքրքրական է մի պատկեր՝ Առաքելոց հոգեգալստյան ժողով, որուն մեջտեղը առանձին մի շրջանակի մեջ նկարված են երեք մարդ, մեկը խոզի գլուխով՝ զգեստավորված եբրայական հագուստով:*

*Արխվալիի և Հաճի Խալիլի մեջտեղի հայ գյուղը, ուրկեց լավ կերևի Արագածը, անուն է Գյոզալդերե:*

*Հունիս 20-ին երեկոյան գնացի Հաճի Խալիլ գյուղը, որն ունի հարյուր տուն, իսկ կամերալնի՝ 41 տուն, մեկ եկեղեցի. Լուսավորիչ անունով, ուսումնարան չունին: Այս գյուղը նախապես կընակվին եղեր թուրքեր, այդ պատճառով գյուղի անունը մնացեր է Հաճի Խալիլ թերևս մի բեկի կամ հիմնադրի անունով:*

## ԱՊԱՐԱՆ

**Հունիս 21**

*Առավոտյան ճանապարհվեցա դեպի Ապարան* և այցելեցի գյուղի արևելյան կողմի բարձր հրաբխային բլուրները, ուր կան բազմաթիվ ուրարտական պատերու մնացորդներ, նաև շատ քարայրներ և ստորերկրյա անցքեր: Արևելյան կողմի ամենեն բարձր բլուրին վրա պատերը երեք կարգ շրջապատված են ինչպես Կարսի Քորօղլու բերդի վրա, սակայն այնտեղ հազիվ հետքերը մնացեր են պատերուն:*

## ՂԱՐԱՆԼՈՒՂ

**Հունիս 22-ին**

*Այսօր մեկնեցա դեպի Ղարանլուղ գյուղը. մեկ ժամեն հասա գյուղը և բարձրանալով մի կիլոմետրի չափ սարսափելի զառիվերը, հասա վանքին մոտ, խիստ սիրուն փոքրիկ մատուռ մը կա հյուսիս արևմտյան կողմը: Ինքը շատ փոքր, սակայն անպայման կպատկանի 7-րդ դարուն. խիստ հետաքրքրական են քիվերը, գմբեթը ութանկյունի է, իսկ քիվը լայն վերևի ճակատի մը ներքև պարզ կիսագունդերու շարք մը ունի վերևի ճակատին զուգահեռական, իսկ ներքևի քիվերուն վրա փորագրած են բոլորակներ. մատուռի անունն է Թուխ Մանուկ: Այս մատուռի մասին տեղացիք կպատմեն առասպել մը:*

---

* *Հաճի Խալիլեն դուրս գալու պահուս նկատեցի արևելյան կողմի սուր քարքարոտ բլուրի գլխին ուրարտական պատի մը բավական երկար մնացորդ:*

Ղարանլուղի արևելյան կողմի ավերակ եկեղեցին կրաշաղախ պինդ մանր ու խոշոր որձաքարով է շինված:

Կամարները պայտաձև չեն, սակայն ճիշտ ձվաձև, մեջը հավանորեն ծեփված է եղեր, խորանին սեղանի մասերը միայն սրբատաշ են, պատերու բարձրությունը 110-են մինչև 120 սմ: Այս վանքի անունը Մրխեի վանք է, որովհետև մոտի արտի սեփականատերը Մրխե անունն ունեցեր է, իսկ հին անունը անծանոթ է:

## ՄՈԼԼԱՂԱՍՈՒՄ

**Հունիս 23**

Այսօր գնացի Մոլլաղասում գյուղը, ուր չափագրեցի գերեզմանատան միջի հնագույն մատուռի կամ վկայարանի և գյուղի եկեղեցվո հատակագծերը:




Նկ. 198. Մոլլաղասումի եկեղեցու հատակաձևի ներքին չափերը

Որմախոյակներ կան երկու հատ գերեզմանատան մատուռի մոտերը, հավանաբար մատուռի արտաքին որմասյուներու խոյակներ են:

Գերեզմանատան մեջ կար հնագույն ձևի կոթողանման մի գերեզմանաքար, առանց քանդակի, միայն անկյունները կլորացված են, իսկ ավելի վերև կա նման մի ուրիշ գերեզմանաքար նույն ձևով տակավին կանգուն, իր խորանարդ պատվանդանին վրա ունի կերտվածքներ, սև հրաբխային քար է և վրան քանդակված է նուռի նմանող պտուղներ ոլորուն ցողունի վրա: Կան ուրիշ պատվանդաններ ևս մոտակա արտերու մեջ, սակայն վրայի քարերը անհայտացած են: Հետաքրքրական է այս գերեզմանի հարավ արևելյան կողմերը հսկայական ժայռի մը վրա փորված մի գերեզման բավական խորը. շուրջը շինված է նաև կափարիչին տեղը, սակայն կափարիչը անհայտացած է, անհայտ ժամանակ:




Նկ. 199. Մոլլաղասումի գերեզմանատան մատուռի հատակաձևի ներքին չափերը

Այս գյուղացիք գաղթել են 1828 թվականին և հիմներ են այս գյուղը 1830 թվին: Գլխավոր եկեղեցին, որ գյուղին մեջ է, նորոգված է մեծ մասամբ, հազիվ մնացեր են մի քանի մասեր նախնական շինութենեն, միայն հրաշքով մնացեր է հյուսիսային պատին վրա դուրս ցցված մի որմասյան մաս իր խոյակով, որ ցույց կուտա թե մի ժամանակ ունեցեր է արտաքին սյունասրահ, աստիճանները եթե ոչ նախնական, գեթ բավական հին են, նախնական չենքը համենայն դեպս 5-րդ դարու շինությանց պարզ հատկանիշները կկրե. այժմ գմբեթ չունի, փայտով ծածկված է, բայց ի հնումն գմբեթ ունեցեր է, պատուհաններեն ոչ մեկը իր նախնական վիճակին մեջ չէ, որով հնար լիներ նախնական ոճը որոշել: Հյուսիսային կողմե բնավ պատուհան չէ ունեցեր. հարավային կողմիններեն ալ երաշխավորյալ չեն հարազատության կողմանե:




Նկ. 200. Մոլլաղասումի գերեզմանատան մատուռի ներքին որմնասյուների խարիսխներից մեկը

Սյունասրահի հատ և երկար սյուները, որոնք թափված են եղեր գետին, ճեղքելով մանր քարի վերածեր և գործածեր են եկեղեցվո վերանորոգության մեջ:

Գյուղի հարավային կողմը կա նաև մի ուրիշ մատուռ, հին գերեզմանատան մեջ գտնվածին մոտավոր նմանությամբ, գրեթե միևնույն չափով ունի երկու դուռ հյուսիսեն և հարավեն. գյուղացիներեն մեկը շահագործում է այս ավերակը Թուխ Մանուկ անունով սրբատեղիի վերածելով: Գերեզմանատան փլատակ մատուռին մեջեն գտնվեր են կղմինդրներ, որոնցից մեկ օրինակին ձևն ու չափն է այս ուրվագիծը (նկ. 201). այս կղմինդրներեն երկու հատ այժմ կգտնվեն գյուղի եկեղեցվո մեջ:

Գնթունյաց իշխանին արձանագրությունը եկեղեցվո մեջ հյուսիսային պատին արևելա-կողման դեպի սեղանին կողմի որմասյան վրա կգտնվի:




Նկ. 201. Մոլլաղասումի եկեղեցու ծածկի կղմինդրների մեկ ձևը

*
* *

## ՄԱՋԻԹԼՈՒ

**1914 հուլիս 20**

Ալեքսանդրապոլեն մեկնեցա Մաջիթլու, որտեղ տեսա հնագույն շատ հետաքրքրական մի եկեղեցի արտաքուստ ուղղանկյուն խաչաձև: Հյուսիսային պատին վրա կային զանազան արձանագրություններ, որոնցմե մեկը ուռուցիկ տառերով շատ գեղեցիկ քանդակված:

## ԱՐԹԻԿ

**Հուլիս 24**

Այսօր առավոտյան Հառիճեն գնացի Արթիկ տեսնելու համար միայն:

Զարմանց հետաքրքրական են երկու եկեղեցիներն ալ միանգամայն, մեծ եկեղեցին ըստ ամենայնի 7-րդ դարուն հատկություններ ունի անվրեպ, իսկ փոքրը ավելի հնագույն:

Այս երկու եկեղեցիները տեսնելես հետո գնացի նաև Լմպատա վանք կամ սբ. Ստեփաննոս ըսված փոքր եկեղեցին, սա ևս անպայման 7-րդ դարուն կպատկանի. պանդանտիվ գոյություն չունի:




Նկ. 202. Արթիկի մեծ եկեղեցու արտաքին արևմտյան մուտքը



**Նկ. 203. Արթիկի մեծ եկեղեցու արտաքին որմնակամարները**

Տրոմպներով և մանրիկ աղեղներով կազմված է գմբեթին խարխսիը, բացի ուրիշ շատ մը ուշագրավ երևույթներե կա մի փոքր ավազան, խաչաձև փորված, միջի կողմեն շատ նման Զվարթնոցի շարժական ավազանին, այս փոքրը փոխանակ քառակուսիի՝ ութանկյունի է և հետևագույն ժամանակ հարմարեցված սեղանի ձախակողմին որմասյան մոտ:

*
* *

## ԲԱԳՆԱՅՐ

Գավթի պատուհանները ներսեն 90 սմ. են և անհամեմատ բարձր, իսկ դրսանց՝ 13–15սմ. են, հավանաբար ցրտի սաստկութեան պատճառով: Պատերու վրա բացի բազմաթիվ արձանագրություններե, ուրիշ տեսակ զարդ չկա, քարերու անհամեմատ մաքուր տաշվածքն ու շարվածքն է գլխավոր զարդը այս գավթին մեջ:

Արևմտյան մտից դռան վրա կա ներքուստ խաչաձև, իսկ արտաքուստ բոլորակ պատուհան մը: Ընդհանուր առմամբ դատելով ոճը և ճաշակը ԺԲ և ԺԳ դարերու մեջ պետք է շինված ըլլա այս գավիթը, ոչ թե միաժամանակ տաճարին հետ: Գավիթի ուշ շինված լինելը ապացույցի չի կարոտեր, որովհետև շատ պարզ է, թե ինչպես կպցուցեր են տաճարին պատին, սակայն որչափ հետո են շինած, այդ հայտնի չէ. այս տեսակ գավիթներու շինությունը հայոց մեջ ԺԳ դարուն կպատկանի:

Տաճարը (մեծ) մի ժամանակ ծեփած և նկարած է եղեր գմբեթով միասին, հյուսիսային պատին վրա դեռ մնացած կան նկարներու հետքեր: Գավիթեն տաճար մտնելու դռան երկու քովը բարձրություն մը շինված է՝ ինչպես Հոռոմոսի վանքին մեջ:

Գավիթի հատակը երկու աստիճան ցած է տաճարեն: Գավիթի մեջ տաճարի դռան առջև երկու գերեզման կա, որ այժմ եզդիներ ուխտատեղի շինած խունկ կծխեն:

Հարավային գավթի կամարները plein cintre են: Երկու փոքր մատուռներու մեջ շինված փոքրիկ խորանին ճակատը ներկված է եղեր ճերմակ և կարմիր գույներով:

Հարավային կողմի մատուռին դռան վերնասյամը զարդարված է հունական երկար ատամնաշարով:

*
* *

## ՉՐՓԸԼՈՒԻ ԿԱՄՈՒՐՋ

Քարերու նշաններ կիսակամարին մեջ: Վրան մեծ քարերով սալահատակված է եղեր երկու կողմեն բարձր պարապետներ:

## ՏԱՅԼԱՐ

Գմբեթը իսկական եղեր է 8 անկյունի գոտիի մը վրա ներքևեն աղեղիկներով միացած մեծ աղեղները, բայց հետագայի նորոգության մը ժամանակ փոխեր են և պարզ պանտանտիվ շիներ են, սակայն մեջը հարավ արևմտյան անկյունը մնացեր է հին ձևով:

Շիրակավանի եկեղեցվո մանրանկարն է: Մյուս ավանդատներն ունին խորան, արևմուտքեն դուռ ունի եղեր մի ժամանակ, որը խնամքով փակեր են, գլխավոր մուտքը հարավային կողմն է, ավանդատները երկհարկանի են: Հարավային դռան վրայի պատուհանի գլխին պակեն վեր քանդակված է երկու առյուծ՝ առջևները մանր ձագերը կամ եղնիկի նմանող բաներ: Հարավային դռան կամարին քարին վրա արևի ժամացույց: Գմբեթի քիվին շուրջը նկարված կերևա բոլորակներ:

## ՀՈՌՈՄՈՍԻ ՍԲ. ԳԵՎՈՐԳ

Թեև պանտանտիվ ունի, բայց հին ձևին նման, կեղծ կամարի ձևով շինված է իբրև զարդ:

«Ով հռչակաւոր դու և մեծանունդ ի վկայս սուրբ Գէորգիոս օգնեա բարեխօսութեամբ Գագկայ շահայնչահի շինողի զվկայարանս զայս քոյով անուանակոչութեամբ ի քոյդ յուսակնեալ բարեխօսութիւն»:

Սբ. Գևորգի մեջ Անանիա Արշարունյաց եպիսկոպոսի արձանագրությունը գրված է միևնույն ծեփին վրա, որ նաև պատկերներ նկարված են: Հավանական է, որ այս լինի Բագարանի եկեղեցիին նման, ի սկզբան առանց պատկերներու: Վերջապես քննելի է, թե Անանիայի օրով պատկերներ կայի՞ն սբ. Գևորգի մեջ թե ոչ:

## ՈՒՂՈՒՋԼՈՒ

Արևմտյան պատին վրա, դեպի հյուսիսի անկյան մոտ կա մի արձանագրված քար, ուրիշ տեղե բերված դրված: Գույնը դեղին: Արձանագրված դեղնագույն քարի մը կտոր ևս արևմտյան կողմը կա, նորոգված մասին մեջ, ֆրոնտոնին վրա կենտրոնեն քիչ դեպի հարավ:

Հատկապես ուշադրության արժանի են հարավային դռան և երկու խորշերու քանդակները:

## ՏԱՄԾԼՈՒ

Տամճլուի եկեղեցին իր բոլոր հատկանիշներով չի կարող 13-րդ դարեն ավելի հին լինել. ներքին կողմը խորանին կից և ուրիշ որմասյանց խոյակներու քանդակներն են միայն, որ հին արվեստի հիշողությամբ շինված են: Զորս անկյունի վրա չորս մատուռներ ունի, որոնց ոճը 13-րդ դարուն մեջ ընդհանրացած կերևի: Հիներուն մեջ արևմտյան կողմերը խորաններ բնավ չկան, եթե անոնք խաչաձև քառակուսի եկեղեցիներ չեն: Ուշագրավ նորություն էր ինձ համար գավիթի երկու զանգակատունները՝ եռհարկ, որոնք գավիթի հետ միասին շինված են. թերևս չորրորդ հարկ ալ ունեցեր են զանգակատունները. գեթ այսպես ցույց կուտա իր այժմյան մնացորդի բարձրության անհամաչափությունը: Հյուսիս արևելյան կողմեն դեռ կանգուն են երեք հարկերը և վրան փլած: Յուրաքանչյուր հարկին մեջ փոքրիկ խորաններ են շինված պատարագի համար: Տասն և մեկ խորան ունեցեր է այս եկեղեցին, զանգակատան մեջ եղած վեց խորաններով միասին: Զանգակատան վերջին հարկի մասին չէ կարելի եզրակացնել, թե ինչ ձև ունեցած էր. և զանգակը ինչ ձևով կախեր էին: Ընդհանուր ձևը ընդհանրապես հետևողություն է բազիլիկի!!! ձևով եկեղեցիներու. նույնպես մի նորություն չկա գավիթի շինության ձևին մեջ, նույն բանը կրկնված է այստեղ ինչ որ Շիրակի շրջանի մեջ շինված են: Գավիթի չորս առանձին այուները և ութը որմասյունները ունին ստալակտիտ քանդակված մեծամեծ խոյակներ և խարիսխներ, որոշ չափով իրարմե տարբեր մույյուրներով: Սակայն պետք է խոստովանել, որ բավականին հոյակապ եկեղեցի եղած է ի հնումն և մեծ ծախքերով իրագործված:

Բուն տաճարի դռան վրա բոլորված որմաղեղը թեթև պայտաձևություն ունի ստորին շրթունքեն, իսկ վերևի եզերքը arc surhaussé այս որմաղեղը կրող դռան երկու կողմի զույգ այուները colonne torse շինված են միմյանց հակասող ուղղությամբ ոլորում տալով:

Գավիթի արտաքին դուռը մոտավորապես հիշեցնում է Անիի Առաքելոց եկեղեցվո դուռը ստալակտիտներով, որուն շուրջը բոլորված է մանվածո քանդակազարդ շրջանակ դարձյալ 13-րդ դարու հատուկ ոճով, որուն նմանները Անիի մեջ հաճախ գործածված են: Գավիթի քիվերը նույնպես 13-րդ դարու ձևը և համաչափությունն ունին թեև նրա ձևին պարզ և նախնականը ավելի հին դարերու մեջ ծագում առած է:

Գավիթին առաստաղները առհասարակ voûte d'arrête ծածկված են եղեր, թեև այսօր բոլորովին փլատակ է, իսկ մեջտեղը ստալակտիտ գմբեթ և վերևեն՝ լուսամուտ, ինչպես Հոռոմոսի վանքի և Անիի Առաքելոց գավիթները: Կան նաև գեղեցիկ մույյուրներու բեկորներ, սակայն հայտնի չէ, թե որ մասերուն կվերաբերին, չնորհիվ խաչիկ վարդապետի աննպատակ կերպով քարուքանդ անելուն և քարերը ասդին անդին տեղափոխելուն:

Մույյուրներեն ոմանք հավանորեն գավիթի առաստաղին մասերուն բոլորտիքը շրջապատված էին: Հարավային պատի վրայի արձանագրությունը կկսի այսպես.

Ի ԹՈՒԻՍ ՈՇԷ ԿԱՄԱԻ ԲԱՐԵՐԱՐԻՆ ԱՅ ԵՍ ՄԽԻԹԱՐ ՆՈՄՆԱՅՈՅ Ե (?) ԶԻՄ ՀՈԳԵՊԱՀՈՒՍՏՆ ԵՏՈՒ ՍՈՅԱ ԵՎ ՍՊԱՍԱՒՈՐՔ Ի ՏՕՆԻՆ ԵՂԻԱԿԱՆՆ ՇԱԲԱԹՆ ԱՒՐՆ. ԿԱՏԱՐԻՉՔ ՀՐԱՄԱՆԱՅ...

Հարավային պատի վրա արձանագրության կեսը ինկած է, նույնպես մի ուրիշ արձանագրության բեկոր կա դարձյալ ընկած հարավային պատեն խիստ շատ փչացած: Թեև միևնույն դարուն շինված, այնուամենայնիվ եկեղեցին գավիթեն առաջ շինված է:

## ԱՍՏՎԱԾԸՆԿԱԼ

**Հոմիս* 27**

*Այսօր ճանապարհվեցա դեպի Ալիքուշակ, բայց ճանապարհին ուղղությունս փոխելով գնացի Ղարաքիլիսա, այնտեղ տեսա մի հին գերեզմանատուն և մի փոքր փլատակ մատուռ: Հին գերեզմանատան մեջ կա մի արձանագրված խաչքար: Այնտեղեն ուղևորվեցա դեպի Աստվածընկալ:*

*Աստվածընկալ գյուղը ունի քառասուն տուն բնակիչ, ասոնք գաղթեր են Ալաշկերտեն՝ հավանորեն Պասկևիչի ժամանակ եկած գաղթականության հետ:*

*Իրենց եկած ժամանակ եկեղեցին գտեր են կիսավեր դրության, գմբեթը այնպես, ինչպես որ կա այժմ: Այս եկեղեցվո շինության ժամանակը, որ որևէ արձանագրութենե և կամ այլ աղբյուրե ծանոթ չէ ինձ, այնուամենայնիվ շինության ոճով 13-րդ դարեն ավելի կանուխ չէ. եկեղեցին չափավոր մեծություն ունի, մոտավորապես Անիի Լուսավորիչ եկեղեցվո ձևով և չափով, որմնասյուներու վրա հանգչած է եղեր գմբեթը, որը այժմ փլած է, գմբեթը կազմված է պանդանտիվներով:*

*Ըստ սովորականի գավիթը շատ ավելի ընդարձակ է, չորս անջատ և ութ որմասյուներու վրա կազմված է տանիքը, չորս անջատ սյուները կկրեն մի ստալակտիտով շինված գմբեթ: Հարավ արևելյան անջատ սյունին վրա կա մաշված արձանագրություն. նույնպես այդ սյունի վրա դրված դեպի արևմուտք ձգվող աղեղին վրա կա զՑՈհանէս ..... յիշեցէք ..... խոսքերը:*

*Մի երկար արձանագրություն կա նաև հյուսիս արևելյան կենտ սյունեն դեպի հարավ արևելյան կենտ սյունը ձգվող աղեղին վրա. որուն վերջին տողը հասեր է սյունի խոյակին. այս վերջին տողին վերջին բառերը թվականը կկազմեն, որ է ՁՕԲ (Ծ գրին վրայի գիծը մոռցված է փորել, որով պարզ 0 գրի տպավորություն կթողու): Գավիթին հատակը ամբողջ տապանաքարերով ծածկված է, միայն մի տապանաքար կերևի արձանագրված, այն ալ սաստիկ մաշված և անընթեռնելի դարձած. բայց մեծ մասամբ բոլոր տապանաքարերու վրա ուրվագծված են մարդկանց սիլուետներ: Այս ձևն առհասարակ այս կողմերու բոլոր գերեզմանատուներու մեջ հաճախ կտեսնվին, որ անշուշտ մի տեսակ խորհրդանշան էր:*

*Հարավ արևելյան կենտ սյունին հյուսիսային կողմը գրեթե խարիսխին կից կա մի նեղ ու երկար գերեզմանաքար վրան շատ նախնական կերպով ուրվագծված է մարդու նկարը: (Համեմատաբար նկարածեն քիչ ավելի երկարաձև է): Գավիթի սյուներու խոյակները (կենտ սյուները) խաչազարդ են, իսկ արևելյան կողմի երկու որմասյուներուն վրա միևնույն սյան կտորին հետ միակտուր քանդակած են, դուրս ցցված քանդակազարդ խաչեր, գավիթի և եկեղեցվո շուրջը ամբողջ հնագույն գերեզմանատներ են: Արտաքուստ, թե՛ գավիթը, թե՛ եկեղեցին շատ պարզ են և ըստ սովորականի խաչաձևված տանիքով:*




**Նկ. 204. Աստվածընկալ եկեղեցու հարավակողման փոքր եկեղեցու հատակաձևի ներքին չափերը**

*Անպայման հին, թերևս 5-րդեն 7-րդ դարու շինություն է եկեղեցվո հարավային պատին կից փոքր եկեղեցին կամ մատուռը (արդյոք այս չափերով և ձևերով շինած փոքր եկեղեցիները հնագույն վկայարաններ չե՞ն), որմասյուներ և անոնց խոյակ ու խարիսխներ ըստ ամենայնի կհիշեցնեն Տեկորի, Շիրվանճուկի և այլ հնագույն տիպի եկեղեցիներու մեջ գործածված moulure-ները, նույն ձևն ունեին նմանապես Մոլլաղասում գյուղի գերեզմանատան միջի փոքր մատուռի որմասյան խարիսխ ու խոյակները:*

*Այս փոքր մատուռը ունեցեր է երկու դուռ՝ հյուսիս և հարավ կողմերեն, երկու արձանագրություն հարավային պատին վրա և մի արձանագրություն արևմտյան պատին վրա, այս արձանագրություններեն երկուքին հազիվ հետքերը մնացեր են, իսկ մեկը, որ լուսանկարված է, բավականին լավ պահված է, ուշ ժամանակի նորության կվերաբերի:*

*Այս փոքր եկեղեցուն հավելվածական ձևով կցած կա մի փոքրիկ խորան և մի սենյակ: Փոքրիկ խորանը խորանակից է բուն եկեղեցիին, իսկ սենյակը՝ հարավ արևմտյան անկյունին կից է և դռնով կհաղորդակցի եկեղեցու հետ: Հավանաբար հնագույն ձևի սպասուց պահարան էր այս փոքր եկեղեցվո համար: Խորանների պատերեն դեպի հարավ եղած պատերը հետնագույն հավելվածքներ են: Անեղծ մնացած արձանագրության վրա կա մի հետաքրքրական երևույթ փորագրելու ձևի նկատմամբ, ինչպես կերևի նախ կրաշաղախի բարակ շերտով մը ծեփեր են և վրայեն յուրաքանչյուր տողի և տողամիջի հատուկ չափով ուղիղ հորիզոնական գծեր քաշեր են ու անոնց մեջ փորել են: Ըստ երևույթին արձանագրությունը պակաս է մնացած, որովհետև դատարկ մնացած է երկու տող և կվերջանա ԵԻ ՊՈՂ անիմաստ վանկերով:*

*Աստվածընկալ գյուղը կգտնվի ձորի մը մեջ Քասախ գետի ափին: Շատ կհիշեցնե Գեղարդավանքի դիրքը յուր սարալանջի ճանապարհով. մեկ կողմեն ապառաժոտ լանջեր և մյուս կողմեն ձորը, ձորի մեջ մի բարձր դիրքի վրա շինված է վանքը կամ եկեղեցին:*

## ԵՂՎԱՐԴ

**1914 թ. հունիս 29**

*Ճանապարհվեցա Աստվածընկալեն դեպի Եղվարդ և հազար ու մեկ դժվարություններ կրելե հետո, հազիվ հազ հասանք Ղարապուլախ ըսված գյուղը:*

*Այս Ղարապուլախ գյուղի մեջ ալ մի հնագույն գերեզմանատուն կա, ուր կան կոտրտած գերեզմանախաչեր, քանդակազարդ տապանաքարեր, որոնք բավականին հնություն կթվին (թերևս 13–14-րդ դ. դ. մնացած):*



## Դ

## ՆԱՄԱԿ ՊՐՈՖ. Ն. ՄԱՌԻՆ

### ՄԵԾԱՐԳՈ ՏԵՐ՝

**(1913 թ. հուլիս 20 – դեկտեմբերի 18)**

*Նախապես կուզամ հայտնել իմ խորին շնորհակալություններս այն դյուրության համար, որ ընծայեցիք ինձ, և ես ձեր երաշխավորության տակ, կատարեցի խիստ շահեկան ուղևորություն մը ճիշտ մեկ ամիս: Թեև այս մեկ ամիսը շատ աննշան էր իմ նպատակի լիակատար իրագործման համար, սակայն գեթ կարողացա մի որոշ ծրագիր կազմել առաջիկա տարվան կատարելիք ուղևորություններս համար:*

*Նկատելով, որ ձեզ համար այն կողմերը արդեն ծանոթ կլինեն, և գուցե այնքան ալ հետաքրքրական չեն լիներ իմ տված տեղեկություններս, այնուամենայնիվ երբեմն անցա այնպիսի տեղերե և պատահեցա այնպիսի նյութերու, որոնք իմ կարծիքով, հազիվ թե ավելորդ լինեն ձեզ տեղեկացնելս: Ուստի անգամ մը ևս կխնդրեմ ձեր ներողամտությունը, եթե ավելորդ անգամ ձեզ ձանձրույթ կպատճառեմ:*

*Հուլիսի 20-րդ օրն էր, ճանապարհվեցա Հառիճ՝ Արագածի շրջանը այնտեղեն սկսելու համար: Ճանապարհին Հառիճեն 7-8 վերստ մնալով մտա Մաջիթլու ըսված գյուղը, որտեղ կա մի հին եկեղեցի: Այս եկեղեցին թեև բոլորովին նախնական վիճակի մեջ չէ մնացած, արևմտյան կողմե քանդվեր է և վրան հավելվածներ են արած, սակայն ըստ ինքյան մնացած մասերը ցույց կուտան, թե մինչև 7-րդ դար գոյություն ունեցող ոճին կպատկանի: Թիվ 108 (էջ՝ 139) լուսանկարը Մաջիթլուի եկեղեցվո հյուսիս-արևելքը ցույց կուտա, ներքուստ և արտաքուստ խաչաձև է: Հյուսիսային պատի վրա կներկայացնե Երեմիա երաժշտի գերեզմանախաչը, շատ արձանագրություններ կան, որոնց առանձին առանձին լուսանկարելը խիստ շահեկան կլիներ, սակայն ես հնար չունեի երկար մնալու, միայն*

** Պահպանել ենք բնագրում նշված ամիսը և ամսաթիվը նույնությամբ, թեև հունիսի փոխարեն հուլիս պետք է լինի:*

**Կազմող**

** Այս հատվածը մի զեկուցագիր է իր՝ Թորամանյանի 1913 թվականի երկրորդ կիսամյակում կատարած գիտական ճամփորդությունների մասին, որ նույն տարվա վերջերին ուղարկել է Պետերբուրգ Ն. Մառին: Հատվածի հետ ուղարկել է նաև 67 համարակալված լուսանկարներ, որոնք հիշատակված են բնագրի մեջ, սակայն Թորամանյանի արխիվում եղած այս զեկուցագրի օրինակը (գրված հեղինակի ձեռքով), որից և տպագրում ենք այստեղ, լուսանկարներ չուներ, այդ պատճառով էլ, հնարավորության չափով, այդ բացը մասամբ լրացրինք մեր թանգարանի լուսանկարչական արխիվից, աշխատելով ընտրել բնագրում նշվածների նմանները:*

**Կազմող**

առայժմ բավականացա լուսանկարելով: Թիվ 205 պատկերը, որ կներկայացնե հյուսիսային պատի վրա գտնված արձանագրությունների խումբը: Թիվ 206 պատկերն այդ արձանագրություններեն մեկն է, որ գեթ 10–11-րդ դարերուն անսովոր՝ ցից տառերով փորագրված է: Կհուսամ, որ առաջիկա տարի բոլոր արձանագրությունները առանձին լուսանկարելով ձեզ ներկայացնելու հաճույքը կունենամ, եթե իհարկե պետք կտեսնեք՝ իմ այս փոքրիկ ծառայության:



Նկ. 205. Մաճիտլուի եկեղեցու հյուսիսային պատի արձանագրությունների խումբը



Նկ. 206. Մաճիտլուի եկեղեցու հյուսիսային պատի ուռուցիկ գրերով արձանագրությունը

Ճանապարհս շարունակելով հասա Հառիճ: Այս վանքն ես առաջին անգամն է, որ կտեսնեի, բնականաբար ինձ նյութ կար քանի մը օր զբաղվելու: Բայց այստեղի իմ աշխատությենեն ավելորդ է, իսկ նյութեր ղրկել, որովհետև այնտեղ իմացա, որ դուք արդեն ղրկեր եք ձեր սեփական աշխատավորները: Միայն չեմ կարծեր, որ ձեզ հասած լինեին այն հետաքրքրական գերեզմանաքարերի լուսանկարները որն այս տարի գտնելով բերել են վանքի գավիթը: Թիվ 207 լուսանկարը կներկայացնե այդ գերեզմանաքարի երկու կողմերը, ինձ համար շատ հետաքրքրական թվեցավ մորուսավոր մանուկ Հիսուսը Մարիամի գիրկը նստած: Այս քարն իր պատվանդաններով միասին գտնված է վանքի արևելյան կողմը, մոտավորապես մեկ կիլոմետր հեռավորության վրա՝ արտերու մեջեն, ուր կան ավերակ մատուռներ, զանազան խաչքանդակներ և զարգաքանդակներ, ի միջի այլոց նաև 7-րդ դարու հատուկ չափազանց խոշոր տառերով, արձանագրության կտորներ: Հաջորդ պատկերը* կներկայացնե Երեմիա երաժշտի գերեզմանախաչը, որուն մասին հ. Ալիշանի տեղեկատուները սխալ թվական դրած են (Շիրակ, երես 163): Ոչ թե ԺԷ թվական, այլ ՁԷ (1258) թվական ունի շատ պարզ: Թիվ 208 պատկերը Ճգնավորի գերեզմանախաչն է դարձյալ հիշված Շիրակի երես 163-ի մեջ: Ինչպես կերևի այստեղ ԻԱ թվականը սխալ չէ, որովհետև Ի տառն արդեն կերևի, իսկ առջևի Ա գիրը հազիվ

* Այդ լուսանկարը չկարողացանք գտնել, այդ պատճառով էլ տեղը բաց է մնում:

Կազմող



ուրվագծված: Թիվ 209 լուսանկարը նույնպես հ. Ալիշանի հիշատակած երջանիկ ծերունի Գրիգոր Առաջնորդի գերեզմանաքարն է: Տաճարի արևելյան պատի ֆրոնտոնի մի քիվն է Թիվ 210 լուսանկարը, որուն մեջ բարձրաքանդակ տառերով արձանագրված է:* Թիվ 211 հյուսիսային ճակատի քիվն է, որի ստորին անկյունին քանդակված է մի աղավնի: Այս լուսանկարները կղրկեմ, կարծելով որ դուք չունենաք թերևս այսքան խոշոր նկարված, ես այս երեքը թելեօպժեքթիվով լուսանկարեր եմ:

Այս տարվան համար Հառիճի աշխատանքս ընդհատելով, վերադարձա Արթիկ գյուղը, որ առավելն երեք կիլոմետր դեպի արևմուտք կգտնվի Հառիճի վանքեն: Այստեղ գտածներս արդեն անսպասելի էին ինձ համար: Երեք պատկառելի հնություններ՝ 7-րդ դարեն ոչ ուշ կանգնված և ըստ մեծի մասին իրենց նախնականությունը պահած:

Նկ. 207. Հառիճի քառակող կոթողը (Հայաստանի Պետական Պատմական թանգարան)

Նկ. 208. Ճգնավորի գերեզմանախաչը Հառիճավանքում



Նկ. 209. Երջանիկ ծերունու գերեզմանաքարը Հառիճավանքում*

* Այդ արձանագրությունը կազմել են եկեղեցին կառուցող աշխատավորները ուռուցիկ զարդագրերով, որի բովանդակությունն է Տէր Աստուած ողորմեա աշխատատրաց. Ամէն:

Կազմող



Նկ. 210. Հառիճավանքի տաճարի արևելյան ճակատի պսակի ուռուցիկ գրերով արձանագրությունը



Նկ. 211. Հառիճավանքի տաճարի հյուսիսային ճակատի քիվը

Երեք եկեղեցիներեն երկուքը գյուղին մեջն են, իսկ մեկը՝ գյուղին հակառակ կողմը մեկ ու կես կիլոմետր հեռավորության վրա է:

Գյուղին միջի մեծ եկեղեցին մի հոյակապ շենք է, ներքուստ և արտաքուստ խաչաձև. աբսիդներու որմնասյուները պսակող աղեղներու և պատուհաններու պսակներու վրա ունի նուռ և խաղողի քանդակներ: Արևելյան կողմեն ունի երկու խորշ հետագա դարերու ոճերեն բավական տարբեր: Արևմտյան ճակատին վրա կան քանի մը արձանագրություններ, որոնք հավանորեն 12–13-րդ դարերու կպատկանին: Արևելյան կողմն ալ կան մեկ երկու հատ ու կոտոր արձանագրություններ դարձյալ ուշ ժամանակի. Թիվ 212 լուսանկարը մեծ եկեղեցին է հարավ արևելքեն, Թիվ 213 լուսանկարը հարավային աբսիդի որմասյուներն ու զանոնք պսակող նուռ և խաղող քանդակված աղեղները կներկայացնեն. Թիվ 214 լուսանկարը արևմտյան աբսիդի որմնաղեղներեն մեկն է, որուն տակ կա մի ընդարձակ արձանագրություն ՈՀԱ թվականի: Այս արձանագրության տեղը շատ բարձր լինելով, թելեթելեօբժեքթիվով լուսանկարեցի:

Գյուղի միջի փոքր եկեղեցին կգտնվի մեծ եկեղեցիեն 20–30 քայլ դեպի արևելք. Թիվ 215, 216 լուսանկարները կներկայացնեն փոքր եկեղեցին հարավ արևմուտքեն և հարավ արևելքեն: Այս եկեղեցին հետաքրքրական է արևելյան կողմեն իր երկու բացօթյա աբսիդներով, ինչպես Երերույք, Տեկոր և իր նմանները, իսկ ներքին կողմն ունի երեք աբսիդ մեջտեղը մեծ, իսկ կողմնակինները՝ քիչ փոքր: Հյուսիսային փոքր աբսիդին գմբեթաթարթին մեջ կան նկարներու մնացորդներ: Թիվ 217 լուսանկարը այս եկեղեցվո արևմտյան դռան վրայի արձանագրությունն է: Թիվ 218, 219 լուսանկարներ Արթիկեն մեկ ու կես կիլոմետր դեպի հարավ գտնվող եկեղեցին է հարավ արևմուտքեն (218) և հարավ արևելքեն (219) լուսանկարված: Իր ոճի բոլոր հատկություններով առանց ոևէ կասկածի կպատկանի հնագույն դարերուն, մինչև 7-րդ դար: Դրսեն գմբեթի պատվանդանը բարձր է քան կտուրները: Ներսեն գմբեթը հանգչած է տրոմպներու վրա. պատուհանները խոշոր են հակառակ իր փոքրության, իսկ զարդաքանդակները մինչև 7-րդ դար, ուրիշ հիշատակարաններու քանդակված ոճով, որոնց հնությունը փաստացի գիտենք: Արևմտյան կողմը դռան մոտ, ավելցուցեր են մի փոքր մատուռ, որուն դռան վրա վերնասյամի փոխարեն դրեր են հնագույն ձևի կոթողանման մի գերեզմանաքար, ինչպես տեսանք Հառիճի մեջ. այս քարին ներքևի կողմը, որ ազատ է, կտեսնվին խաղողի և մարդու քանդակներ: Հնումն այս վանքը ծանոթ է եղեր Լմպատա Ստեփաննոս անունով, ինչպես ցույց կուտան վրայի շատ մը արձանագրություններ: Արձանագրություններեն մեկը քանդակված է արևմտյան դռնեն անմիջապես ներս, ձախ կողմի պատին վրա, երկուսը հարավ արևելյան անկյունի վրա: Այս եկեղեցվո վրայի բոլոր արձանագրությունները, որոնք գրեթե անվնաս պահված են, կփափագեի ամբողջն ալ լուսանկարել, սակայն, հակառակ փափագիս անհնար եղավ, որովհետև տեղերը շատ բարձր էին, պետք էր թելեօպժեքթիվ գործածել, իսկ սաստիկ քամին և ամպամած երկինքը արգելք էին: Հյուսիսային կողմի երկու մեծ արձանագրություններն ալ արեգակ չէին տեսներ տարվա եղանակին պատճառով. կհուսամ առաջիկա տարին ամբողջացնել թե՛ լուսանկարներ և թե՛ չափագրական պակասներ:



Նկ. 212. Արթիկի կաթողիկե եկեղեցին հարավ-արևելքից



Նկ 213. Արթիկի կաթողիկե եկեղեցու հարավային աբսիդի քանդակազարդ որմնակամարները



Նկ. 214. Արթիկի կաթողիկե եկեղեցու արևմտյան աբսիդի որմաղեղներից մեկը և նրա տակի արձանագրությունը

Արթիկի շուրջը գյուղացվոց պատմելով, շատ հաճախ կգտնվին հեթանոսական գերեզմաններ, որոնց մեջեն կգտնեն զանազան իրեղեններ, ինչպես ուլունքներ, դրամներ, կավե ամաններ և այլն և այլն. Արթիկի հին գերեզմաններեն գտնված հողե ամաններեն շատերը անվնաս մնացած են և գյուղացիք գործածում են իրենց տան մեջ:

Արթիկ գյուղեն դեպի հարավ, մոտավորապես 8 կիլոմետր հեռավորության վրա կգտնվի Մահմուտջուկ գյուղը. այս գյուղն ալ հարուստ է, իր բազմատեսակ հնություններով: Մի հնագույն եկեղեցի կա գյուղի մեջ անպայման մինչև 7-րդ դար կանգնված, մի եկեղեցի գյուղի հարավ արևելյան կողմը, իսկ մյուսը՝ գյուղի հարավ արևմտյան կողմը երկու ու կես կիլոմետր հեռավորության վրա: Բացի այս եկեղեցիները կան շատ հին հեթանոսական քարափոր գերեզմաններ, քրիստոնեական հին գերեզմաններ, ուրիշ մատուռներու և այլ տեսակ շինություններու մնացորդներ: Թիվ 220 լուսանկարը Մահմուտջուկ գյուղի մեջի հնագույն եկեղեցին է հյուսիսային կողմեն լուսանկարված. ներքուստ և արտաքուստ խաչաձև է այս եկեղեցին. տարօրինակ կերպով անսովոր է արտաքուստ կտուրներու և գմբեթի պատշաճությունը: Գմբեթեն անմիջապես ներքև, գետնահարկեն վերև, արևելյան և արևմտյան կողմերուն վրա, հատկապես շինված են չորս հատ սենյակներու նմանող կամարակապ մասեր՝ ինչպես կտեսնվի թիվ 221 լուսանկարի վրա, արևմտյան կողմեն առնված, ասոնցմե մեկուն մեջ կա անցք մը դեպի ցած իջնող, բայց ի՞նչ բանի կծառայեին առհասարակ՝ հայտնի չէ, պետք է մանրամասն խուզարկություն լինի: Գմբեթը հանգչած է տրոմպներու վրա, գմբեթի թմբուկին վրա, ներսեն, որ ութը կողմեր ունի, չորսին վրա պատուհաններ են, իսկ մյուս չորսին վրա շինված են հռովմեական ձևով գմբեթարդ վերջավորությամբ կիսաբոլոր խորշեր: Մտից դուռը արևմտյան կողմեն է, սակայն այժմ ծածկված է, որովհետև գյուղացիք այս եկեղեցիին անմիջապես կից շիներ են մի ուրիշ նոր եկեղեցի, որուն սեղանին ետևը մնացեր է այժմ թե՛ հին եկեղեցիին դուռը և թե՛ դռան վրայի մի գեղեցիկ քանդակագործ բարձրաքանդակ պատկերը (թիվ 106 լուսանկար). շատ դժվարությամբ կարողացա այսքանն ալ լուսանկարել, նախ տեղին նեղության պատճառով, հետո ամենևին լույս չկա, սեղանին երկու կողմերը դռներով ծածկված են, լամպերու լույսով եմ լուսանկարել:

Մահմուտջուկի հարավ արևելյան կողմի վանքն ըստ արձանագրությանց հայտնի է Մակարավանք անունով: Թիվ 107 լուսանկարը հարավ-արևելքեն լուսանկարված է: Ինչպես կերևի այս եկեղեցին կանգնված է 10-րդ դարուն. ներսի կողմը սեղանին աջ որմասյան վրա կա մի շատ եղծված արձանագրություն ՆԾ թվականին. արձանագրությունը կվերաբերի կարծյոք մի նվիրաբերության, ինչ որ անբախտ Դավիթի կողմանե: Թեև ջանացի լուսանկարել այս արձանագրությունը, սակայն տեղվույն խիստ անհարմարության պատճառով շատ անհաջող դուրս եկավ, թեև ասկեց ավելի հաջող լուսանկար ալ գուցե չի լինի, չափազանց եղծված լինելուն պատճառով: Դրսի կողմեն արևելյան պատին վրա, կա մի կիսատ արձանագրություն, ինչպես կերևի շինության արձանագրությունն է, սակայն դժբախտաբար արձանագրության մեկ մասը անհայտացած է: Թիվ 222 լուսանկարը արևմտյան դռան վրայի արձանագրությունն է անթվական: Արևմտյան դռան կից ունեցեր է կամարակապ գավիթ հետնագույն հավելված, իսկ այժմ միայն հյուսիսային պատի մեկ մասն է մնացեր:

Մահմուտջուկ գյուղի հարավ արևմտյան կողմի վանքը որոշ անուն չունի և իր վրա հետաքրքրական ոչինչ չի ներկայացներ, բացի հյուսիսային պատին վրա եղած 13-րդ դարու եղծված արձանագրութենե մը: Շենքն ալ ամենայն հավանականությամբ 12–13-րդ դարերու գործ է: Այս եկեղեցվո մոտ հետաքրքրական է մի ուրիշ փլատակ, որ աշտարակի մը ձև ունի: Գյուղացվոց պատմելով այդ աշտարակը տարիներ առաջ ավելի բարձր էր եղած, քան եկեղեցին և մեջը ունեցեր է բարձրանալու սանդուղ, իսկ այժմ ոչինչ չի կարելի տեսնել առանց մասնավոր պեղումի:





Նկ. 215. Արթիկի փոքր եկեղեցին հարավ-արևմուտքից



Նկ. 216. Արթիկի փոքր եկեղեցին հարավ-արևելքից

Նկ. 217. Արթիկի փոքր եկեղեցու արևմտյան մուտքի ճակատի արձանագրությունը

Այս եկեղեցվո արևմտյան կողմը, 200–300 քայլ հեռավորության վրա, գյուղացիք գտեր են մի հոյակապ գերեզման, վրան խոշոր արձանագրությամբ մը ՆԾԵ թվականին: Գերեզմանը կպատկանի ինչ որ Ապլղարիպ իշխանի, թերևս Անիի մեջ ծանոթ Պահլավունի Ապլղարիպն է: Գերեզմանը շինված է գաճ ու կրով խիստ հաստատուն (այժմ գյուղացիք քանդում են անխնա). տապանաքարին արևելյան կողմը, հսկա պատվանդանի վրա, կանգնված է եղեր մի խաչքար, որուն լայնությունը մեկ մետր 60 սմ. է, իսկ բարձրության ըստ երևույթին կեսեն ավելին կոտրած ու անհայտացած է:

Մահմուտջուկ գյուղեն գնացի ըստ Ջեր հանձնարարության Շիրվանջուկ գյուղը, որ 3–4 կիլոմետր հեռավորության վրա է, սակայն մի քիչ դժվարին ճանապարհը, պարտավորված էի առանց կառքի գնալ:

Այս եկեղեցվո մեջ չափազանց հետաքրքրական են ամեն մի հարամասունք: Հատակագծի ձևը բոլորովին տարօրինակ և միանգամայն հակառակ ուղղությամբ սովորաբար հայոց հին եկեղեցիներուն. բացի լայնության համեմատությամբ անհամեմատ երկարությենեն, մի պատուհան ունի արևելյան կողմեն խորանին վրա, երկու պատուհան, մի այնով իրարմե բաժանված՝ արևմտյան կողմին վրա, հարավային կողմը, սեղանին մոտ մի պատուհան կա եղեր բացված շատ անճաշակ կերպով, հետո այդ պատուհանն ալ փակեր են: Հարավային կողմը արևմտյան անկյունին մոտ, կա մի նեղ պատուհան ևս, սակայն այս ամենը շատ դժվար է հաշտեցնել շենքին ընդհանուր կազմության հետ: Շենքը անպայման 5-րդ դարեն պետք է մնացած լինի, եթե ոչ ավելի հին, ներսը սեղանին կամարը միայն մնացեր է շատ սուր չեչտված պայտաձև, որմասյուներու խարիսխները և խոյակները կատարելապես նմանություններ են Տեկորի ներքին որմասյուներուն մույրներուն. այստեղ ամեն ինչ հնություն է: Ամենեն տարօրինակ թվեցավ ինձ հիմերուն մեկ մասը, որ անտաշ որձաքարով շինված է: Արձանագրությունը անընթեռնելի է, դրսեն հարավային կողմի սեղանի մոտ պատուհանի մեջ շարված քարերուն վրա: Հյուսիսային կողմը քանի մը հունարեն տառեր կնշմարվին: Շենքը շրջապատող քիվը նման է բոլոր փաստացի կերպով 7-րդ դարուն պատկանող շենքերուն: Արևելյան և արևմտյան կողմերեն տիմպան կազմված է ինչպես Տեկորի մեջ: Վրան ամբողջովին քարե կամարով ծածկված է եղեր, այդ կամարածածկին պարզ հետքը մնացեր է ներսի կողմեն արևմտյան պատին վրա:

Վերադառնալով Շիրվանջուկեն կրկին Մահմուտջուկ, այն տեղեն ճանապարհս շարունակեցի դեպի Սոկյուտլու: Դեռ Սոկյուտլու չհասած 5–6 կիլոմետր գյուղեն հեռու ձորին մեջ կա մի կիսավեր եկեղեցի. թիվ 112 լուսանկար, լուսանկարեցի հարավ արևմուտքեն: Այս եկեղեցին անկասկած 10–11-րդ դարու շենք է և այնքան ալ ուշագրավ մի նորություն չունի իր մեջ, բացի քանի մը արձանագրութենե, որոնք ալ մեծ մասամբ փչացած են: Լուսանկարեցի այս եկեղեցվո հյուսիսային դռան վրայի արձանագրությունը, որը կկրե ՈԾԳ թվականը: Թերևս ավելի հին արձանագրություններ են, թե՛ արևելյան ճակատին չափազանց մաշված մի արձանագրությունը կեսը թափված և թե՛ արևմտյան դռան կից կիսակատար մի ուրիշ արձանագրություն: Ավագ խորանին երկու կողմերը ըստ սովորականին կան երկու փոքրիկ ավանդատներ, կամ խորաններ պատարագի հատուկ, ուշագրավ են սոնց դուրսը պատին վրա գրված փոքրիկ արձանագրությունը: Այս փոքրիկ խորաններեն մեկը հատկացված է եղեր պատերազմի մեջ մեռնող զինվորներու հոգվույն համար պատարագելու, իսկ մյուսը՝ անտեր ու անհիշատակ մեռնող մարդկանց հոգվույն համար պատարագելու:

Նկ. 218. Լմպատավանքը հարավ-արևմուտքից

Նկ. 219. Լմպատավանքը հարավ-արևելքից

Սոկյուտլու գյուղին մեջ ուշագրավ ոչինչ չտեսա, արդեն ժամանակս ալ չէր ներեր խուզարկություներ կատարելու, ուստի շարունակեցի ճանապարհս դեպի Ադիաման գյուղը, ուր կա հավանորեն 7-րդ դարու մի հոյակապ եկեղեցի: Ներսի կողմեն բոլորովին նման է Էջմիածնի մոտիկ Հռիփսիմե եկեղեցուն, իսկ դրսեն գմբեթը Մաստարայի եկեղեցվո գմբեթին նման է, իսկ ստորին մասերը իրեն խորշերով ավելի նմանություն կբերեն Թալինի կաթողիկեին: Թիվ 63 լուսանկարը հարավ արևելքեն, թիվ 224-ը արևմուտքեն լուսանկարված է:

Ադիամանի արևելյան կողմը լեռնալանջերու բարձունքներուն վրա կան հնագույն բերդերու մնացորդներ, որոնցմե մեկը միայն կարողացա տեսնել ժամանակիս կարճության պատճառով: Այս բերդերը բոլորը շինված են անտաշ, առանց կրաշաղախի հսկայական որձաքարերով. իմ այցելած բերդն է թիվ 19 լուս. (Ա ժողովածու) որ մոտավորապես Անիի միջնաբերդի չափ ընդարձակություն ունի: Հսկայական որձաքարերով հյուսված են պատերը և շուրջը քառակուսի բուրգերով շրջապատված են: Դուռ մը կերևի այժմ արևմտյան կողմեն,

այստեղ հնարավոր էր ճիշտ չափել պատի հաստությունը, որ ավելի էր քան երկու ու կես մետր:

Ադիամանեն քանի մը վերստ դեպի հարավ, Մաստարայի մոտիկ, կա Մազարջուկ անունով մի գյուղ, փոքր Բուղուտլու սարին ստորոտը: Այս տարվան ուղևորությանս վերջին կետը եղավ այս գյուղը, նյութական միջոցներս չէին թույլ տար ասկեց ավելի առաջ գնալու. ամբողջ ուղևորությունս տևեց 25 օր: Դժգոհ չմնացի վերջին անգամ այս գյուղը այցելելով. այստեղ գտա մի շատ հնագույն փոքրիկ եկեղեցի, որուն ծածկը և հարավային պատը փլած են. հյուսիսային պատին վրա տակավին կան որմայուններ և շեշտված պայտաձև աղեղներ: Գյուղացիք այս եկեղեցուն կից գերեզմանին միջեն հավաքեր են հետաքրքրական քանդակներու կտորներ, եկեղեցվո խորանին մեջ, որոնց մեջ, ի միջի այլոց, հետաքրքրական են Հաղիճի մեջ լուսանկարածս կոթողանման գերեզմանաքարերու բեկորներ, վրան զանազանակերպ մարդկանց պատկերներ քանդակված, այդ զարդաքանդակներու մի փոքրիկ խմբանկարն է:

Այս գյուղի մեջ եղեր է մի ուրիշ հնագույն եկեղեցի, որ գյուղացիք պահելով արևելյան պատը, մնացածը վերստին նորոգեր են և շիներ են գյուղական եկեղեցի: Այս եկեղեցին բացի իր հնագույն քիվի ոճեն, որ ժամանակագրական տեսակետով 7-րդ դարեն այս կողմը չի կարելի անցնել, նաև վերին աստիճան հետաքրքրական է արևելյան պատուհանի ներքև, մի մեծ քարի վրա ասորերեն մի ընդարձակ արձանագրություն, բայց ափսոս որ շատ մաշված է և վարժ ու լեզվին ծանոթ գիտնականներ միայն թերևս կարողանան բառեր կորզել այդ արձանագրութենեն:

Ցավոք սրտի ստիպված էի այստեղ ընդհատել հետաքրքրական և ինձ վերին աստիճան հաճելի ճանապարհորդությունս և առանց գիշեր մնալու վերադարձա ուղիղ Ալեքսանդրապոլ թե՛ այս ճանապարհին վրա թերի թողածներս և թե՛ ավելի առաջ գնալով նորություններ հավաքելու քաղցր հույսս առաջիկա տարվան թողնելով:

Վերադառնալիս 8–10 օր հետո եկավ պ. Ստրչիգովսկին, անոր հետ միասին ալ 20 օրվան հապճեպ մի ճանապարհորդություն կատարեցի, առանց սակայն շոշափելի օգուտ մը տեսնելու իմ սեփական գործիս օգտին: Վերջին օրերս քանի դեռ ձյունը չէր ծածկել երկիրը, մի երկու փոքրիկ այցելություններ կատարեցի մեր քաղաքի շրջակայքը:

Նկ. 220. Մահմուտջուվի հնագույն եկեղեցին հյուսիսային կողմից

Նկ. 221. Մահմուտջուվի հնագույն եկեղեցին արևմտյան կողմից



Նկ. 222. Մահմուտջուվի հնագույն եկեղեցու արևմտյան մուտքի ճակատի արձանագրությունը

Ալեքսանդրապոլ – Թիֆլիս երկաթուղու գծին հյուսիսային կողմը, քաղաքեն 10–12 կիլոմետր հեռավորության վրա, կա Դարբանդ անունով մի գյուղ. լսելով որ այնտեղ հնություններ կան, գնացի տեսնելու: Կանգուն կամ կիսականգուն շինություններ չկան այնտեղ. շատ կան հեթանոսական գերեզմաններ, որոնք բնականաբար զիս չգիտի հետաքրքրեին, որովհետև առանց պեղումի ոչինչ չի կարելի հասկանալ: Ես գնացի հայոց գերեզմանատունը, որ ի հնումն ալ գերեզմանատուն է եղած: Այդ գերեզմանատան մեջ գտա քանի մը հատ հին գերեզմանաքարեր, Հաղիճի կոթողին նման, միայն թե չափազանց մաշված, տեղե տեղ փոխադրված, այնուամենայնիվ փութացի եղած վիճակի մեջ լուսանկարել այդ քարերեն երեք զանազան օրինակներ, որոնց վրա թե մարդոց և թե ուրիշ զանազան քանդակներ կան: Մինչև այժմ իմ տեսածս այս ձևի քարերը քանդակված էին միշտ քրիստոնեական խորհրդանշաններով և սրբոց պատկերներով: Դարբանդի քարերը քրիստոնեական խորհրդանշաններ չկրելեն զատ, ավելի մոտ նմանություն ցույց կուտան կարծեք հեթանոսական քանդակներու: Այս քարը ամբողջ չէ, ինչպես կերևի բավական բարձր է եղեր, թե՛ գլխեն կոտրած է և թե՛ ներքևեն:

Այս կարգի քարերով շատ հարուստ է Թալինի գերեզմանատունը. բազմաթիվ այս տեսակ քանդակներով քարերուն մեջ կան նաև խոզի գլուխով մարդիկ, որոնք զգեստավորված են կղերականի ձևով և գլուխնին շատ անգամ լուսապսյուռ ունին, իսկ Դարբանդի մարդու քանդակը թեև անասունի կամ գազանի գլուխ ունի, սակայն լուսապսյուռ չունի: Ես կկարծեմ, որ Թալինի գերեզմանատան խոզի գլխով մարդիկ, թերևս կներկայացնեն Տրդատի ավանդական խոզությունը: Քարերեն մեկուն վրա քանդակված խոզագլուխը բացի գլխի լուսապսյուռեն, ձեռքը բռնած է նաև խաչագլուխ գավազան:

Դարբանդեն հետո այցելեցի մոտակա Հոռոմ գյուղը, ուր գիտեի արդեն, թե կան մի ընդարձակ տարածության վրա հսկա որձաքար պատերով շինված ոչ միայն բերդերու և պարիսպներու մնացորդներ, այլ և անթիվ բնակության հիմեր, ինչպես կան մոտակա Ղափրլի գյուղի մեջ ու շրջակայքը: Թեև Արագածը շատ հարուստ է այս ձևի մնացորդներով, սակայն կկարծեմ որ Հոռոմի նման այդքան պատերու և պարիսպներու հոծ բազմություն ոչ մեկ տեղ չկա: Մոտավորապես երեք քառ. վերստի վրա տարածված են խիտ կերպով այս պատերը, որոնց մեջ նույնիսկ որոշ են ճանապարհներ. ամենայն հավանականությամբ սա եղած է հնագույն շրջանի մի քաղաք:

Քանի մը լեռնացած բլուրներ գրաված է այս քաղաքատեղին, որոնց մեկուն վրա շատ որոշ է մի միջնաբերդ, որուն այժմ գյուղացիք Ղալաչի անունն են տալիս՝ հավանորեն Ղալա-Իչիի տեղ: Լուսանկարեցի միջնաբերդի պատերը, ստորոտները և ուրիշ երկար պարիսպներու մասեր:

Նկ. 223. Մահմուտջուվի մոտ գտնված 1036 թվականի գերեզմանաքարի արձանագրությունը

Միջնաբերդի զագաթին կա այժմ գաճ ու կրով չինված միակ շենքի մը մնացորդը և հավանորեն սա եղեր է մի եկեղեցի շատ հետաքրքրական ձևով. շուրջը երևում են կիսաբոլորակ բրգանման մնացորդներ: Ապառաժների վրա կան անհասկանալի փորվածքներ, որոնց մեջ շատ կան քանդակված զանազան քարերու վրա Ս-ի կամ Ո-ի ձևով, երբեմն քանի մը հատ իրարու քով, երբեմն ալ զատ զատ:

Այս քաղաքատեղի ընդհանուր տարածության վրա փոքր ի շատե գաղափար տալու համար, ես լուսանկարեցի թիվ 63 լուսանկարը (Ա. ժողով. նկ. №№ 13-18):

Ալեքսանդրապոլ:
1913 դեկտեմբեր 18



Նկ. 224. Ադիամանի 7-րդ դարի եկեղեցու արևմտյան ճակատը



Ե

# ՀՆՈՒԹՅԱՆՑ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ*

Հ. Պ. Կոմիտեից ստանձնածս պարտականության համաձայն, ներկա ապրիլի 8-ին, ընկերակցությամբ Կոմիտեի անդամ ներկայացուցչի՝ հետս առնելով նաև Զվարթնոցի նախկին կառավարիչ Հ. Խաչիկին գնացինք Զվարթնոց:

Առաջին անգամ մտանք թանգարանը, որուն տպավորությունը մեզ վրա վերին աստիճան անբավական եղավ: Գրեթե ուշադրավ ոչինչ չէ մնացած այնտեղ, ամեն ինչ անկարգ կերպով թափված, փշրված և փոշիներու մեջ կորած են: Գոնե մինչև այսօր մնացած կարևոր բեկորներ վերջնական կորուստից փրկելու համար, անհրաժեշտ է այժմյան թանգարան անվանված խարխուլ սենյակից տեղափոխել մի ուրիշ ապահով և պատսպարված տեղ: Որովհետև գարնանային անձրևային շրջանում, կարծում եմ, որ մի քանի շաբաթների հարց է վերահաս փլուզման վտանգը: Առաստաղը խխմած ու գոգավորած, արդեն թափվում են ծեփերն ու հողերը, պատուհանների ապակիները ջարդտված, հյուսիսային պատի ցածի հարկի մեկ մասը փլած, որու հետևանքով վերևի պատերը ճեղքրտված ու բացված են: Նախասրահի տախտակամածի բոլոր գերանների ծայրերը միանգամայն փտած ու մոխրացած են, եթե այժմեն ուշադրություն չդարձվի և հարմարավոր տեղ չպատրաստվի, կարող է պատահել, որ մի նոր փլատակի տակ ծածկվին մնացած բեկորները:

Թանգարանի չափ աննախանձելի դրության մեջ են ընդհանուր ավերակի գեղարվեստապատմական մեծարժեք բեկորները, դեռ մի տարի առաջ անեղծ պահված քանդակազարդ բեկորներ և արձանագրություններ այսօր միանգամայն այլանդակված դրության մեջ են, կոտրատել են Շինողի հունարեն արձանագրությունը, արտաքին որմաղեղների մեջ քանդակված նուռ ու խաղողի ամբողջական անվնաս հանված մի մասի վրայից քանդել ու թափել են խոշոր նուռերը: Այսօրինակ ավերածություններ մի առ մի թվել ավելորդ եմ համարում, և ցավալին այն է, որ այս բոլոր վնասներին ոչ ոք ինքզինքը պատասխանատու չի համարում, որովհետև մինչև այսօր Զվարթնոցում ծառայողների պաշտոնը եղել է հսկել միմիայն հողերի տնտեսության և բերքի վրա: Խաչիկ վարդապետին տրվել է պաշտոն հողերը մշակելու, իսկ մյուս երկու պահապանների վկայականները ցույց են տալիս որ մին եղել է ջրպետ, իսկ մյուսը հանդապահ, հետևաբար ավերակները միանգամայն թողված են ճակատագրին, որուն հետևանքն է այսօրվան տխուր պատկերը: Խաչիկ վարդապետը և մյուս պահապաններն այս ավերածությունները վերագրում են որբերին, որոնք նախորդ տարին ապրում էին այնտեղ գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու պատճառով: Որբերի տգիտությունն ու անփորձությունը կարող էին այս չարիքները առաջ բերել, սակայն եթե ձեռնահաս մեկը լիներ այնտեղ և խստիվ զգուշացներ որբերի մուտքը ավերակների մեջ, թերևս այս վնասները չլինեին:

Իրաց այս վիճակին մեջ ինձ համար դժվար պիտի լինի Զվարթնոցի ավերակների պահպանման հսկողությունը ստանձնել, եթե Հ. Պ. Կոմիտեն դրական միջոցներ ձեռք չառնե լրջորեն այդ գեղարվեստապատմական հուշարձանի բեկորները պահպանելու համար: Այս մասին Կոմիտեից պիտի խնդրեմ հետևյալ նախնական և անհետաձգելի միջոցները.

1. Պաշտոնապես պահանջել Խաչիկ վարդապետից որ ցուցակով հանձնե ինձ թանգարանը՝ բացատրելով մանրամասն յուրաքանչյուր առարկայի գտնված տեղը, ինչ վիճակի կամ դրության մեջ գտնվիլը և գտնվելու ժամանակը:

2. Ձեռնարկել մի սրահի շինության, որուն մեջ հնարավոր լինի ապահով կերպով պահպանել այժմյան թանգարանի առարկաները և դուրսը մնացած կարևոր բեկորները, որոնց կորուստը անփոխարինելի կլինին:

3. Նշանակել երկու պահապան աշխատավորներ, որոնց պաշտոնը լինի բացի պահապանությունը, օժանդակել նաև թանգարանի և դրսի բեկորների դասավորման և հարմարավոր տեղեր գետեղելու աշխատության:

4. Պաշտոնապես կարգադրել Զվարթնոցի շրջապատի հողի վրա աշխատողներին, առանց թույլտվության և պահապանների ընկերակցության չմտնել ավերակների մեջ ժամանցի կամ զբոսանքի համար:

Թ. ԹՈՐԱՄԱՆՅԱՆ

Էջմիածին 1924 թ.
21 ապրիլի

*Այս զեկուցագիրը Թորամանյանը գրել է Հայաստանում Հնությունների Պահպանության Կոմիտե կազմվելուց հետո, երբ Խաչիկ վարդապետը Զվարթնոցը պետք է հանձներ Կոմիտեի կողմից նշանակված Թ. Թորամանյանին:

Կազմող

# Զ

# ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

***Տասնօրյա հետազոտական շրջագայության Աղճաղալա, Ղզնավուզ, Աղավնատուն, Ֆրանկանոց և այլ մոտակա գյուղերում 1924 թ. ապրիլ ամսի մեջ***

*Ապրիլ ամսի սկզբներին (1924 թ.) Վաղարշապատում լուր ստացա, որ Աղճաղալա գյուղում գյուղացիք ինքնակամ բացել են նախաքրիստոնեական գերեզմաններ և դուրս են բերել զանազան հնագիտական արժեք ունեցող իրեր: Դուրս բերված իրերը գերեզմանակրկիտներ փոխանակ պատկանյալ իշխանության հանձնելու, տարել են իրենց հետ և սեփականացրել:*

*Այս լուրն առիթ տվեց ինձ փութալ Աղճաղալա և հետամուտ լինել, թե՛ գտնված իրեղենները և թե՛ հետազոտել գյուղն իր շրջականներով՝ հնագիտական տեսակետով: Հ. Ղևոնդ Ալիշան յուր «Այրարատ» աշխատության 202 էջին վրա, գրում է, որ նույն Աղճաղալա գյուղում կա մի հնագույն բերդ, որը տեսել է Ֆրանսիացի Պուկեյ Լըկուզը 1647 թվականին և գծագրել է նույն բերդին պատկերը (տես «Այրարատ», էջ 202): Որչափ որ հետաքրքրական էին բացված գերեզմանները, նույնչափ կարևոր էր տեսնել այդ բերդը, որի մասին մեր օրերում բնավ չէր խոսվում և գոյությունն անծանոթ էր մեզ: Ուստի կրկնակի կարևոր համարելով այցելել այս գյուղը, շտապեցի գնալ ապրիլ ամսի 9-ին:*

*Գյուղում և անմիջական շրջակայքում ո՛չ Ֆրանսիացի Պուկեյ Լըկուզի ցույց տված բերդը գոյություն ուներ և ո՛չ այն նոր բացված գերեզմանները, որոնց մասին լսել էի: Գյուղում ոմանք հայտնեցին, որ հին գերեզմաններ բացվել են ոչ թե Աղճաղալա գյուղում, այլ մոտակա սահմանակից Ղըզնաուզ (ըստ Ալիշանի Խնավուզ կամ Ղըլավուզ) գյուղում. սակայն Աղճաղալայում ևս կան նույնպես հնագիտական նշանակություն ունեցող վայրեր և առաջնորդեցին ինձ այդ վայրերը:*

*Գյուղի հյուսիսային կողմը և գրեթե անմիջապես կից, բարձրավանդակ մի տեղի վրա գոյություն ունին նույնիսկ նախապատմական ժամանակների շինությանց մնացորդներ գրեթե հողին հավասարված և հետզհետե անհայտանալու մոտ:*

*Արտերը պարարտացնելու համար գյուղացիների՝ հին ավերակներ փորելու և հողը տանելու սովորությունը չափազանց մեծ վնասներ է տալիս հնագիտական ուսումնասիրության: Տասնյակ տարիներ այս բարձրավանդակի վրա գոյություն ունեցող մի բոլորականման պատերի միջից, որ ավելի քան 75 մտ. տրամագիծ ունի, անդադար փորել և հողը կրել են արտերը, որով ոչ միայն նախապես մի մեծ բլուր կազմող հողը անհայտացել է, այլև անվերջ կորել են այդ փորումների ժամանակ գտնված իրեղենները: Գյուղացուց պատմելով այդ ընդարձակ շրջապարիսպի մեջ գտնվել են մեծ ու փոքր խեցեղեն անոթներ, խոշոր կարասներ, ուլունքներ, բրոնզյա, երկաթյա սուրեր, զարդեղեններ, ի միջի այլոց հատ ու կտոր մարդոց ոսկորներ: Այս ընդարձակ շրջափակը հյուսիսային կողմից գրեթե բոլորակի շրջանակ է 110 սանտիմետրից մինչև 220 սանտիմետր հաստությամբ հիմերով, իսկ հյուսիս արևելյան կողմից սկսում են ուղղաձիգ ներքին բաժանումներ ձևացնող պատեր՝ և բռնում է ամբողջ հարավային մասը պատերի զանազան շեղումներով: Բոլոր պատերը շինված են անչաղախ որձաքարով, և զանազան մասերի հետազոտությամբ երևում է, որ այս բոլորը միաժամանակ չեն շինված, եղեր են պարբերաբար հավելվածներ: Այս մեծ մնացորդից դեպի հյուսիս արևմուտք 20–25 քայլի վրա կա մի այլ բոլորակ մոտավորապես 10 մետր տրամագծով գրեթե նույն ուղղությամբ, փոքր ինչ դեպի արևելք, կամ հարավ արևելք կա մի ուրիշ բոլորակ 21 մետր տրամագծով: Այս երեք մեծ ու փոքր բոլորակներից դեպի արևելք կա մի ուրիշ կանոնավոր սրբատաշ քարերով կրաշաղախ շինված մի բոլորակ մոտավորապես 4,50 մ. տրամագծով և 80 սմ. պատերի հաստությունով: Անպայման այս բոլորակը, որ այժմ ևս ժողովրդական ուխտատեղի է, կապ ունի նախաքրիստոնեական մի ավանդության հետ և իբրև սրբատեղի քրիստոնեական շրջանում վերանորոգել են:*

*Գյուղի արևմտյան կողմը, գրեթե մեկ կիլոմետր հեռավորության վրա կա մի մեծ քարքարուտ բլուր, որուն գագաթին վրա թեև չեն երևում շինարարական հետքեր, բայց բլուրի ստորին փեշերի մոտ երևում են շրջապատող պարսպի անհեթեթ հաստությամբ, զուգահեռական 3,60 մ. թանձր պատեր, որոնք ձգվում են դեպի հյուսիս արևմուտք: Պարսպի ներսի կողմից բլուրի լանջերու վրա երևում են շինված շենքերի հիմեր, այս հիմերի և մեծ պարսպի միջից իբրև հասարակաց ճանապարհ բաց է թողված 2,10 մ. լայնությամբ մի անցք, ամբողջ պարիսպների երկարությամբ:*

*Բլուրի հարավային փեշի վրա մի ժամանակ եղեր է մի մեծ քարայր-դամբարան, որի մասին ընիկ Աղճաղալացի, 75–76 տարեկան Վասիլ Ավետիսյանը պատմում է, թե՝ «45–50 տարի առաջ, երբ քյուլ հանելու համար փորում էի, հանկարծ բահս դիպավ մի պատի՝ բացված պատի առջևից հողը լավ մաքրելուց հետո, երևան եկավ մի սենյակի նման տեղ, մասամբ քարափոր, պատերը ծեփված գաճով, կամ կրով: Հետզհետե հողը մաքրելով և խորը գնալով գտա հողե ամանով լիքը վեգ և մի քրեղան: Ուզում էի փորումներս շարունակել, սակայն գյուղացի թուրքեր արգելք եղան, առարկելով որ այդ տեղը կպատկանի իրենց, և նախնյաց դամբարան է համարվում թուրք հասարակության կողմից»: Գյուղին կից դաշտի ճանապարհի աջ կողմն ընկած է մի մեծ բոլորակ քար 1,90 սմ. տրամագծով: Բոլորակի եզերքից, 20 սմ. ներս, 20 սմ. լայնությամբ և 20 սմ. խորությամբ կանոնավոր կերպով փորված է շուրջանակի: Ենթադրում եմ, որ այս քարն առանց խորհրդավոր նպատակի չի շինված, շատ կարելի է, որ մի պաշտաման հետ կապ ունի, քանի որ շուրջը լիքն են հեթանոսական շրջանի մնացորդներ:*

*Միանգամայն համոզված, որ Պուկեյ Լըկուզի նկարած բերդը կամ մի թյուրիմացության հետևանք է և կամ գոյություն ունի մի ուրիշ տեղում և տեղի անունն էլ սխալ է գրված, ստիպված եղա հեռանալ Աղճաղալայից, հետազոտությունս առայժմ բավական համարելով:*

*Որովհետև աղճաղալացիք հայտնել էին, որ վերջերս գտնված են հին գերեզմաններ մոտակա Ղզնավուզ գյուղում, ճանապարհվեցի դեպի Ղզնավուզ գյուղը՝ Աղճաղալայի գյուղխորհրդի քարտուղարի ընկերակցությամբ: Քարտուղարը առաջնորդեց ինձ դեպի բացված գերեզմանները, որոնք գյուղի հարավային կողմին կից մի մեծ բլուրի հարավ արևմտյան կողմի վրա էին՝ բլուրից մի քանի քայլ դեպի հարավ: Գերեզմանները գտնվում էին դեպի հարավ գնացող ճանապարհի վրա, որուն հողը հետզհետե մաշվելով գերեզմանի միջի առարկաները սկսել էին երևնալ, որով գյուղացիներից մի երկուսը հետաքրքրվելով, սկսել են փորել գանձ գտնելու հույսով: Նախապես իմ տեղեկությունը բացված երկու գերեզմանի մասին էր, որոնց միջից դուրս հանված էին 3 հատ խեցեղեն պուտուկներ: Սակայն իրողությունն այն էր, որ ավելի քան 10 գերեզմաններ փորված էին այնտեղ և հողը վերստին տեղը լեցված, հետևաբար հայտնի չեղավ, թե ի՞նչ տիպի գերեզմաններ էին և ի՞նչ իրեր են երևացել մեջերը: Դիմեցի գյուղխորհրդի նախագահին և պանհանջեցի գտնված խեցեղենները. նախագահը ինձ վստահացրեց, որ խեցեղենները ղրկված են Սամաղար շրջգործկոմի նախագահին մեզ ղրկվելու համար: Եվ իրոք, ղրկված էին երկու միջակ մեծությամբ պուտուկներ, որոնք ինձ հասնելուց հետո ուղարկել եմ Կոմիտեին, սակայն երկու հատ միայն, փոխանակ երեքի, ինչպես հայտնեցին գյուղում:*

*Ղզնավուզ գյուղում բացված գերեզմաններից անհամեմատ ավելի հետաքրքրական էր գտնված գերեզմանների մոտի բլուրին վրա մի հնագույն բերդի մնացորդ, որն անպայման շինված էր ուրարտական ժամանակ: Բերդը գրեթե քայքայված է ամբողջությամբ, ներքին բաժանումներ որչափ որ մնացել էին որոշ, մանրամասն չափագրեցի տեղին վրա: Հյուսիսային կողմը ամբողջովին քանդված է, նմանապես արևելյան կողմը, որուն հիմերը հազիվ հայտնի են, իսկ հարավային պատերից դեռ կանգուն կան $2^1/_2$-ից մինչև 3 մետր բարձրությամբ: Հարավային ծայրին անկյուններին վրա շինված են բրգանման քառակուսիներ, իսկ հարավային պատի վրա իբրև հենրմներ պատի հետ շինված են 3,80 մ. լայնությամբ և 50 սմ. դուրս ցցվածքներ, անշուշտ ամրության, հաստատության համար, այս վերջինս դեռ գոյություն ունի մոտ 3 մետր բարձրությամբ: Այս շենքը հին ժամանակ եղել է անշուշտ մի ցեղապետական ամրոց, կամ դղյակ, անկախ ներքին ամուր կառուցվածքից դրսից ևս շրջապատված է եղել ամուր, շրջափակ պարիսպով, արևելյան կողմից 5 մետր հեռավորության և արևմտյան կողմից 21 մետր հեռավորության վրա: Հյուսիսային և հարավային պարսպամասերի հետքերը կորած են: Ամրոցի, կամ դղյակի վերևի մասի մուտքը եղել է հյուսիս արևմտյան կողմից, որովհետև շենքը կառուցված էր մեծ ապառաժուտ բլրի վրա և մուտքը բարձր էր, ուստի գրեթե 3–4 մետր տարածության վրա գետնից աստիճանաբար վերև բարձրացող մի լայն ճանապարհ են շինել մինչև ամրոցի դռան առջև, ճանապարհի լայնությունը եղել է ուղիղ չորս մետր, այս լայնությունից անկախ երկու կողմից, բարձրացող ճանապարհի ամրության համար շինել են 210 սմ. հաստությամբ որձաքար պատեր նույնպես շեղակի մինչև շենքն աստիճանաբար բարձրացող. այս ճանապարհով ցեղապետը, եթե ոչ կառքով, կարող էր բարձրանալ ձիով մինչև դղյակի դուռը: Հետքեր կան, որ շենքը հյուսիսային կողմից ևս ունեցեր է բրգանման քառակուսի մասեր, երկու անկյունների վրա, և հյուսիսային կողմի հատակն ավելի ցածր է եղած, գրեթե այժմյան գետնին հավասար, ամենայն հավանականությամբ այս կողմին վրա ևս ունեցեր է մտից դուռ: Ինձ թվում է, թե Պուկեյ Լըկուզ Ֆրանսիացին 280 տարի առաջ այս բերդն է, որ կանգուն տեսել է, որը տարիներ հետո ավեր-*

վել է և ավերումն այնքան վաղ ժամանակ է եղած, որ ներկա գյուղացիների մեջ ամենից ծեր մարդիկն անգամ չեն հիշում բերդի կանգուն ժամանակը: Պուլեյ Լրկուզի տեսածը բերդ լինելուն մի մեծ հավանականություն կա, այն է անկյունների բրգանման լինելը, ինչպես կերևի «Այրարատի» 202 էջի պատկերին մեջ, նույնը երևում է նաև, թե տեղին վրա և թե իմ հատակագծիս վրա: Ամենայն հավանականությամբ Պուլեյ Լրկուզը բերդը գծագրել է հյուսիսային կողմից, ուր նաև տեղին վրա նշմարվում է մի դռան տեղ և անկյունի բուրգերի մեկ մասի հիմը: Ամրոցի հյուսիս արևմտյան կողմի վրա մինչև այժմ, բացի գերեզմաններից նկատվում են կրոմլեխներ, որոնց երկուքը և խոշորագույնները ամրոցի կից և հավանորեն ամրոցը շրջապատող արտաքին պարսպից ներս էին գտնվում: Մասնավոր հետազոտության արժանի են ինչպես Աղճաղալայի, նույնպես այս գյուղի հյուսիսային կողմի դռները: Նաև մոտակա Աղավնատան սահմաններում խիստ շատ են նախաքրիստոնեական մնացորդներ և գերեզմաններ:

Ղզնավուզին խիստ մոտ և սահմանակից է Աղավնատուն գյուղը, լսելով, որ Աղավնատան մեջ ևս գտնվում են պատմական հուշարձանների մնացորդներ, այցելեցի նաև այս գյուղը, որ բավականին շահեկան եղավ այցելությունս թե՛ նախաքրիստոնեական և թե՛ քրիստոնեական շրջանի հին հուշարձանների տեսակետով: Այս գյուղում ևս, երբ դաշտը վերջանում է և սկսվում է լեռնալանջը, առաջին բարձրության լանջին վրա, գյուղին կից, կա մի հնագույն գերեզմանատուն, որը վերջին տարիներս օգտագործում էին գյուղացիք (այժմ գերեզմանատունը գյուղացիք տեղափոխած են ուրիշ տեղ): Խառնիխուռն կտեսնվին զանազան դարաշրջանների քրիստոնեական գերեզմաններ: Գերեզմանատան վերևը փոքր ինչ հարթավայր տեղի վրա կառուցված է եղել նախաքրիստոնեական շրջանի մի բերդ մեծամեծ որձաքարի զանգվածներով, որոնք զետեղված են միմյանց վրա առանց շաղախի: Բերդի տարածությունը փոքր է, հազիվ հանի 22 մետր լայնության, նույնչափ ևս երկարության, սակայն ինչպես կերևի, այս կտորը եղել է միայն միջնաբերդ. հեռվից շրջապատված է եղել մի ուրիշ պարսպով, որին հետքերը տեղ տեղ հազիվ տեսանելի են: Սակայն ինչպես երևում է քրիստոնեական շրջանում չեն լքած այս բերդը, այլ վերաշինել են և ամրացրել են կիսաբոլորակ բուրգերով, որոնցից մեկ քանին դեռ կիսականգուն գոյություն ունին, դժբախտաբար գյուղացիք հետզհետե քանդում են քարերից օգտվելու համար: Բացի բուրգերի քանդումից, փորում են նաև գետնի անմշակ տեղերը և հողերը կրում իրենց արտերը պարարտացնելու համար: Այս փորումների օգուտը չի սահմանափակվում գյուղացու համար միայն պարարտացման համար հող դուրս բերելու մեջ: Իրենց պատմելով գտնում են ուրիշ շատ իրեղեններ, հնագույն մնային կարասիներ, գործիքներ, նույնիսկ դրամներ, այդ պատճառով գյուղացիք հրապուրված այդ փորումների բազմակողմանի օգուտներով չեն լսում պաշտոնական արգելքները և շարունակում են իրենց ավերիչ գործը և գիտությունը տուժում է միշտ տգետ գյուղացու այսօրինակ վարմունքից:

Միջնաբերդը կառուցված բլուրին ներքև կա մի մեծ քարայր, որն անշուշտ օգտագործել են հին ժամանակ բերդը կառուցողները, նաև քրիստոնեական շրջանում բերդին տիրացող ու նորոգողները: Դուռը գտնվում է հյուսիսային կողմը այժմ հողով լցված վերջին ժամանակներս: Դուռը եղել է կապույտ որձաքարից, որուն կեսը կա այժմ տեղին վրա, իսկ մյուս կեսը գյուղացիք տարել են իբրև սալաքար գործածելու համար: Վերջին թուրքական արշավանքների ժամանակ գյուղացիների կեսն ապաստանել է այս քարայրի մեջ և չորս օր մնացել են աննկատելի: Բերդի շրջակայքում գյուղացիներից ինքնակամ պեղում անողները գտել են նաև նախաքրիստոնեական շրջանի հնություններ՝ բրոնզյա, երկաթյա զարդեր, գործիքներ և խեցեղեն ամաններ:

Հավանաբար քրիստոնեական շրջանում բերդին տիրողները շինել են բերդի հարավային պարըսպին կից մի փոքր եկեղեցի՝ բավականին ճոխ քանդակազարդությամբ: Եկեղեցիի շենքի շինելակերպը և գործադրված քանդակների ոճը ցույց են տալիս, որ շենքը շինված է 11-րդ դարուց ոչ ուշ: Սակայն երկար ժամանակ կանգուն մնացել է եկեղեցին և քարերի վատ տեսակի պատճառով հարավային պատը վտանգվել, այդ պատճառով իսկ եկեղեցիի հարավային պատին կից, մոտավորապես 8 մետր տրամագծով շինել են կիսաբոլորակ մի բուրգ, իբրև շենքի հենարան, որուն շնորհիվ մինչև այսօր մնացել է կանգուն: Պատերը կառուցված են կարմրագույն տուֆ քարով, թեև վերևի կամարածածկը փլված է, սակայն ամեն կողմից գրեթե երկու մետրից ավելի բարձրությամբ պատերը կանգուն են: Խորանի գմբեթարդի մեջ հատկապես հյուսված է մի կարաս՝ անշուշտ երգեցողության ժամանակ արձագանք տալու համար:

Գյուղացիք այս ավերակը վերածել են այժմ ուխտատեղիի: Խորանի կիսաբոլորակի մեջ կանգնել են վեմ քարի նմանող մի քար, և վրան դրել են 11-րդ դարու արձանագրված քարի մի բեկոր, որուն վրա մոմեր կպցնելով ամբողջովին մրոտել են և անընթեռնելի դարձրել: Տեղի վրա մնացած բեկորներից կա 11-րդ դարու ոճով մի խոյակ և 13–14 դարերու հատուկ ոճով քանդակված մի պատուհանի շրջանակ, սրանք ևս պաշտաման առարկա են եղել խորանի մեջ զետեղվելով. եկեղեցիի հյուսիսային կողմը շենքին մոտիկ կա մի խաչի պատվանդան, որը 13-րդ դարու է: Աղավնատան բերդի հարավային կողմը, բերդը շրջապատող մեծ պարսպից դուրս կա մի մեծ խաչարձան պատվանդանավոր, պատվանդանի առջև կան տապանաքարեր, որոնց մեկն ամբողջովին արձանագրված է, սակայն ժամանակի ընթացքում քարն այնքան է մամռոտած, որ գրերը գրեթե մամուռի ներքև անհայտանալու վրա են. նշմարվող տառերի ձևից կարելի է հետևցնել միայն, որ արձանագրությունն անպայման 14-րդ դարու գործ է:

Աղճաղալայից մինչև Աղավնատուն, գյուղերի սահմաններին անմիջապես կից եղող նախաքրիստոնեական անշաղախ որձաքարով կազմված ամրոցներու պատեր, կրոմլեխների մնացորդներ հաճախ տեսնելով միանգամայն համոզվեցի, որ այդ շրջանը եղել է նախաքրիստոնեական, նույնիսկ նախնադարյան շրջանի հոծ բնակչության մի միջավայր, ուստի հարցաքննելով այդ ուղղությամբ մոտս հավաքված գյուղացիներին, ստացած պատասխաններս խրախուսեցին ինձ գնալ և անձամբ տեսնել այն ամենն, ինչ որ գյուղացին, երբեմն չափազանցված, երբեմն այլափոխված ձևով և մեկնություններով նկարագրում էր: Հարցումներս առհասարակ հին կրոմլեխների, նախապատմական դամբարանների և պաշտաման տեղերի շուրջն էր դառնում, և այս ամենին համար գրեթե հաստատական պատասխաններ էի ստանում: Ուստի վճռեցի հետևյալ առավոտ շրջագայել շրջանները և մանրամասն հետազոտել:

Հետևյալ օրը վաղ առավոտյան Աղավնատուն գյուղի և Հարամլու գյուղի սահմանին, Աղավնատան հողի վրա տեսա մի կրոմլեխ, որը բավականին բնորոշ ձևով պահված էր, թեև շրջանակի քարերից պակասում էին, այնուամենայնիվ բոլորակի չափը, ձևը և քարերի տաշվածքն ու շարվածքը հասկանալու չափ, անաղարտ մնացել էին նաև երկու հսկայական անտաշ քարերից տապանաքարեր: Այս կրոմլեխն այնքան ուշադրությունս գրավեց, որ չափագրեցի, գծագրեցի, մասամբ վերակազմելով նախնական վիճակը:

Երբեմն թուրքաբնակ, իսկ այժմ ամայի մոտակա Հարամլու գյուղը այցելելով տեսա մի շատ հնագույն ավերակ, որը բերդի նմանություն չուներ, այնուամենայնիվ նախաքրիստոնեական մի կարևոր շենքի տպավորություն թողեց իմ վրա: Շենքը գտնվում է հին գյուղի դիմաց, մի բլուրի վրա, շինված է միջակ մեծությամբ կիսատաշ, սեագույն կարծր քարերով, ներքին բաժանումների հետքեր չեն մնացել, եթե եղել են քանդվելով և քարերը տարվելով անդադար անհայտացել են: Արտաքին շարքերից ևս հազիվ մնացել է մի կարգ քար: Բլուրի ստորոտն աստ անդ թափթփված են խաչքարի բեկորներ, շենքերից քանդված հրաբխային սրբատաշ քարեր, մի հատ անընթեռնելի արձանագրության բեկոր, որոնք ցույց են տալիս թե այստեղ, անկախ բլուրի գագաթի շենքից, եղել են կրոնական կամ աշխարհիկ շենքեր և միանգամայն անհետացել են, իրենց գոյության ապացույց հազիվ մի քանի քարեր և բեկորներ թողնելով:

Հարամլուի քննությունը վերջացնելուց հետո ուղղվեցի դեպի արևմուտք և արևմտահյուսիս ամայի և անմշակ վայրերը քննելու, որոնց տեղական բնակիչները ղրա էին անվանում:

Աղավնատան սահմանից դեպի Կոշ (Հնումն Կուաշ) գյուղը հազիվ մի կիլոմետր հեռավորության վրա, սկսեցին երևալ կրոմլեխներ և նախապատմական գերեզմաններ: Հետզհետե խտանում էին գերեզմանները դեպի Կոշ և դեպի Շամիրան գնալու ճանապարհին երկու կողմերը: Զափազանց զարմացնում էր ինձ այդ գերեզմանների գրաված վայրերի ընդարձակությունը: Մոտավորապես երեք քառակուսի վերստ տեղի վրա տարածված էին մի քանի տեսակ նախապատմական գերեզմաններ և կրոմլեխներ, որոնք ապացույց են մի ժամանակ այդ վայրերի բազմամարդության: Գլխավորապես երեք տեսակ գերեզմաններ որոշ էին այդ ընդարձակ տարածության վրա. 1. Կրոմլեխներ, որոնք թեև Աղավնատան և Հարամլուի մեջտեղ եղածին չափ լավ պահված չէին, այնուամենայնիվ շրջապատող բոլորակ քարերի շարքերից մնացած էին որոշ չափով: 2. Փոքր հողաթմբեր առհասարակ բոլորակ ձևով՝ վրանները որոշ չափով ծածկված մանր ու խոշոր քարերով: 3. Ավելի հետաքրքրական և ավելի հնագույն երևցան ինձ մի կարգ գերեզմանատներ, որոնք հարմարավոր քարերով շինված են արկղաձև մոտավորապես 70–80 սանտիմետր հողի խորության մեջ և վրաները ծածկված են միակտուր անտաշ բնական սալերով: Ընդհանրապես սալերու մեծությունը հավասար են ներքևի արկղաձև կազմված գերեզմաններին: Այս տեսակ գերեզմաններ ընդհանրապես հատ հատ առանձին են մեկմեկուց 4–5 մետր հեռավորության վրա,

սակայն կան այնպիսիները ևս, որ երեք կամ չորս արկղ միասին ձևացված են՝ անշուշտ յուրաքանչյուր արկղի մեջ մի մեռել թաղելու համար: Բացի այս երեք տեսակի գերեզմաններից, կան նաև տեղ տեղ մեծամեծ քարակույտերով կազմված դամբարաններ, որոնք միջին հաշվով 8–10 մետր երկարություն և երեք մետրից ոչ նվազ բարձրություն ունին: Քարակույտերի քարերն այնքան մեծ չեն, խառն են նույնիսկ մանր քարերով, իսկ մեծ քարերի ամենից խոշորները հազիվ թե անցնեն ներկայիս շինությանց մեջ գործածված սովորական սև պատերի քարերի մեծությունը: (Այս քարակույտ դամբարաններից մոտավորապես 40 հատ համարեցի Փոքր Թալինի մոտ դաշտավայրի վրա, որոնց մեկ քանիսին երկարությունը կհասնի մինչև 15 մետրի, բայց այս մասին իր տեղում):

Այս ընդարձակ գերեզմանատունը դիտելուց հետո մնում էր քննել հյուսիս արևմտյան կողմը մի բարձրության վրա կանգնված աշտարականման բոլորակ շինություն, որուն գյուղացիք Օյուղ անունն են տալիս, որպես թե դա լինի զինվորական դիտարաններ հին ժամանակ: Ի հարկե ես չէի կարող բավարարվել գյուղացիների տված բացատրություններով, հարկ համարեցի անձամբ բարձրանալ բլուրի վրա և տեսնել մոտից: Նախքան բլուրը բարձրանալս, բլուրի ստորոտին մոտ տեսա հին նախապատմական պատերի հիմեր ավելի քան մեկ ու կես մետր հաստությամբ. այս պատերը չէին նմանում ոևէ շենքի պատերի, անպայման կրոնական պաշտամունքի հատուկ մի հիմնարկություն էր եղած: Պատերը թվով յոթը հատ 6–7 մ. միմյանցից հեռու զուգահեռաբար ձգված են արևելքից արևմուտք կանոնավոր կերպով. այս պատերի գլուխները կապված չէին միմյանց ո՛չ արևելյան կողմից և ո՛չ արևմտյան կողմից, հետևաբար արևելքից դեպի արևմուտք ձգվող այս պատերին ուղղահայաց հյուսիսից հարավ պատերի հետքեր չկան: Հետևաբար պարզ է, որ ծածկութավոր շենքի պատեր չէին այս երկար զուգահեռական պատերը, որոնց երկարությունն առնվազն 40–50 մետրի կհասնի:

Սույն երկար հիմքերից մի քանի քայլ դեպի արևելք, բլուրի լանջի վրա կա մի քարակույտ, կրոմլեխի նման, հայտնի չէ թե որտեղից են բերած դրած այնտեղ մի խաչքարի կտոր և ուրիշ երկու կամ երեք հատ քանդակների բեկորներ և վերածել են ուխտատեղիի: Շրջակա գյուղացիք, իմ առաջնորդի ասելով, գոնե տարին մեկ անգամ ուխտի են գալիս այստեղ: Համենայն դեպս, հեթանոսական ժամանակից այդ տեղերը մի սրբավայրի համբավ են ունեցել և քրիստոնեության ժամանակ ևս շարունակում են հին ավանդության վրա հիմնված:

Աշտարակից թափված քարակույտերից մեծ դժվարությամբ անցնելով հաստաբուն բոլորակ շենքի մոտ, որը ո՛չ դիտարան է և ո՛չ վերջին դարաշրջանների գործ, այդ ամենահին, թերևս նախաուրարտական, մի խորհրդավոր կառուցվածք է: Շենքի տրամագիծը 8,40 մետր է, բարձրությունը, մինչև շուրջը թափված քարակույտերի վրա, 4,80 մ. է, հավանականորեն մինչև հատակը կլինի 4 մետր ևս, որով այժմյան բարձրությունը կլինի ավելի, քան 8 մետր: Բայց ի հարկե սա իր նախկին իսկական բարձրությունը չէ, իր շուրջը թափված քարակույտերը ցույց են տալիս, որ շատ բարձր է եղած, հետզհետե փլչելով այսքանն է մնացել: Ինչպես դուրսն այնպես ալ ներսն են թափել մեծամեծ քարեր և խտացել են այնպես, որ հնար չեղավ ներքին տրամագիծը չափել: Արևելյան կողմից մի դուռ, կամ պատուհան ունի մեկ մետր լայնությամբ և բարձրությամբ. ամբողջությամբ շինված է անտաշ, կարծր քարերով առանց շաղախի, սակայն քարերի ընտրություն եղած լինելուն կասկած չկա, որովհետև քարերը միշտ երկարավուն և կանոնավոր հաստություն ունին որով ավելի լավ կապված են շարքերը: Այս շենքի պատերի շարվածքի մեջ նախապատմական շրջանի մի շարք պատերու մեջ դրված անհեթեթ մեծությամբ զանգվածներ չկան, միայն թե մեջն ինկած են մի քանի մեծ քարեր, որոնք հավանորեն աշտարակի գագաթի վրա ծածկույթի քարերը եղած են: Ես կարծում եմ, որ այս շենքը նախապատմական ժամանակի մի սրբավայր, կամ ուխտատեղի եղած է և նույն ավանդության շարունակությունն է այս աշտարակին մոտի ուխտատեղին, որ նկարագրեցի քիչ առաջ:

Արդեն լրանում էր իմ տասնօրյա ճանապարհորդությանս ժամանակը, 9-րդ օրն Աղավնատան շրջանում անցնելուց հետո, անցա Ֆրանկանոց գյուղը: Այս գյուղի հյուսիս արևելյան կողմը, արտերի մեջ, երևում են հնագույն երկար պատերի հիմքեր, որոնք ուսումնասիրության կարոտ են, տարակույս չկա, որ այդ հիմքերը նախաքրիստոնեական ժամանակի անշաղախ որձաքարե պատերի մնացորդներ են, սակայն լրջորեն հետազոտելու, ուսումնասիրելու համար հարկ էր տեղ տեղ փորումներ կատարել, որու մասին ես արտոնություն չունեի Կոմիտեից, ուստի առայժմ փաստն արձանագրելով, թողի այդ մասի մանրամասն ուսումնասիրությունը հարմար ժամանակին:



Ֆրանկանոցի հարավ արևելյան կողմի վրա կա մի կիսավեր եկեղեցի Սիմեոն կաթողիկոսի ժամանակ (1763–1780) շինած, այս եկեղեցին շինված է շատ հասարակ քարե պատերով, վաղուց անհետացեր է վրայի փայտածածկը, պատերը նույնպես քանդվելու և ավերակ դառնալու վրա են: Այս եկեղեցիից դեպի հյուսիս արևմուտք կա մի գերեզմանատուն, որը շատ հին չէ, սակայն հետաքրքրական են այնտեղ գոյություն ունեցող մի շարք գերեզմանաքարեր, որոնք թե՛ կուլտուրական և թե՛ ազգագրական նշանակություն ունին այս կողմերի 16–17-րդ դարի ժողովրդական կյանքի վերաբերմամբ: Այս նշանակալից գերեզմանաքարերը առհասարակ համեմատաբար բարակ, սովորականից մի քիչ բարձր և կիսաբոլոր վերջավորությամբ կանգնված միակտուր քարեր են, փոքր ինչ հիշեցնում են հին օրորոցաձև տապանաքարերը: Այս ձևի ամեն մի տապանաքար քանդակված է իր ժամանակակից սովորության համեմատ: Տապանաքարերեն մեկուն վրա բոլորովին նախնական գծերով քանդակված է մի մարդ երկար արխալուղ հագած, ձեռքերը մեջքին դրած պար խաղացողի ձևով: Առջևը դրված է մի բաժակ, բաժակի կողքին մի գինու կուժ: Մի երկրորդ գերեզմանաքարի վրա քանդակված է մի մարդ, դարձյալ երկար արխալուղով, մեկ ձեռքը դրած մեջքին, իսկ մյուս ձեռքով՝ բռնած գինու կուժը, կուժից քիչ հեռու գինու բաժակը: Երրորդ տապանաքարի վրա քանդակված են դարձյալ միևնույն տարազով երեք հոգի, որոնց երկուքը ձեռք ձեռքի բռնած, իսկ երրորդը՝ առանձին պարում են՝ մոտերնին դրված գինու կուժը: Այս քարին վրա բացառաբար փորագրված է երկու բոլորակի շրջանակ, մեջը տրամագծորեն խաչաձև գծված:

Այս բոլոր քարերի վրա գիր, կամ թվական չկան, բացառությամբ մեկ հատի: Այս մեկ հատին վրա փորագրված է երկու մարդ, իրենց աջ ու ձախ ձեռքերով բռնած են գինու մեծ կուժ, ձախ կողմի մարդը ձեռքը մեջքին դրած, իսկ աջ կողմինը ձեռքին գինու թասն է բռնած, այս քարի վրա քանդակված է ՌՃԽԳ (1694) թվականը: Գերեզմաններից մեծ մասը գրեթե այսօրինակ տապանաքարեր ունեն և որովհետև այս կողմերում ուրիշ գյուղերի գերեզմանատներում ևս տեսել եմ այս ձևի տապանաքարեր, սրանց մասին պիտի գրեմ իրենց կարգին, ինձ համար կարևոր թվեցավ տնտեսական և ազգագրական տեսակետով: Ամեն մի տապանաքարի վրա գինիի կուժերի, կամ գավաթների քանդակումը, իմ կարծիքով ցույց կուտա խաղողի ու գինիի առատ արդյունաբերությունը, ուր այժմ ևս շարունակվում է խաղողի մշակությունը: Իսկ խմելով պար խաղալու ձևերն ինձ հիշեցնում է գլխավորապես Թիֆլիսի մեջ եղած մի սովորություն: Հուղարկավորության օրը հանգուցելույն ընկերներն ու բարեկամները գնում են գերեզմանատուն, զուռնայով և ուրիշ նվագարաններով, թաղման արարողությունը կատարելուց հետո մեծ կերուխում են անում և հանգուցելույն գերեզմանի շուրջ երկար ժամանակ երգում ու պար են խաղում: Ինչպես երևում է ոևէ քաղաքական, կամ տնտեսական պատճառներով այս սովորությունն ունեցող ժողովուրդը գաղթեր հեռացեր է այս շրջանից և նույն ձևով տապանաքարեր շինելու սովորությունը վերջ է գտել: Այս գերեզմանները քննել և արձանագրելուց հետո դարձա Վաղարշապատ:

## Է

## ԷՋՄԻԱԾՆԻՑ ԴԵՊԻ ԱՐԱԳԱԾԻ ԼԱՆՋԵՐԸ

Հայաստանի Հնությունների Պահպանության Կոմիտեի կազմած մի արշավախմբի կողմից:

Արշավախմբի նպատակն էր հուշարձանների ցուցակագրում և հետազոտական աշխատանքներ կատարել Արագածոտնում:

Արշավախումբը դուրս եկավ 1924 թվի օգոստոսի 3-ին:

### ա. ԱՐԴԱՐ ԴԱՎԻԹ
### 1924 օգոստոս 3

Հաջի Ղարա (Այգեշատ) գյուղի և Օշականի մեջտեղ, ճանապարհի ձախ կողմին, մի բարձր բլուրի գագաթին վրա այցելեցինք Արդար Դավիթ անվանված աշտարականման բոլորակ մի շինության մնացորդի: Այս բոլորակ շենքը շինված է մեծամեծ սև որձաքարերի զանգվածներով՝ առանց կրաշաղախի: Թեև շատ ժողովրդական առասպելներ հյուսված են այս շենքի շուրջ, սակայն ամենայն հավանականությամբ նախաուրարտական մի շինություն է, նաև մի պաշտաման տեղի, նման Աղավնատան և Կոշի մեջտեղ գոյություն ունեցող բոլորովին նույնանման մի մնացորդի՝ որուն շրջակա գյուղացիք Օյուղ անունն են տալիս: Արդար Դավթի աշտարականման շենքին մեջ դատարկ է, մի փոքր դուռ ունի հարավային կողմից, բարձրությունը նախնականը չէ, շատ է փլված ետևի մասը և քարերը կուտակված են շուրջը: Այս շենքի մա-

սին մանրամասն նկարագրություն կրկնել հարկ չեմ համարում, որովհետև ըստ ամենայնի նման է Օյուղին, որի չափագրությունը և գծագրությունը կատարել եմ և ներկայացրել սույն աշխատության հետ՝ Հ. Հ. Պ. Կոմիտեին: Այսքան միայն կավելացնեմ, որ անպայման Օյուղը և Արդար Դավիթը կանգնած են միևնույն նպատակի համար և կապ ունին ոևէ կրոնական պաշտաման հետ:

## Բ. ՕՇԱԿԱՆ

*Օգոստոս 4, 1924 թիվ*

**1. Մանկանոց.**– Այսօր այցելեցինք Մանկանոց անվանված լքված հին եկեղեցին գյուղից դուրս՝ այգիների մեջ: Զափազանց հետաքրքրական է շենքը իր 7-րդ և 10-րդ դարերի ճարտարապետական ոճի խառնուրդով: Լայն պատուհանները, տրոմպների վրա դրված գմբեթը և ուրիշ մանրամասնություններ, անվիճելի կերպով կպատկանին հայկական ճարտարապետության 7-րդ դարու ոճին, սակայն կան նաև հայոց 9-րդ և 10-րդ դարու ոճին պատկանող մասեր՝ ինչպես մտից դուռը, պատուհանների պսակման և քանդակման ձևերը: Կամ այն է, որ 7-րդ դարու ավանդական ոճերու խառնուրդով 9–10-րդ դարուն կանգնված է այս շենքը, և կամ մի հմուտ ճարտարապետի ձեռքով 9–10-րդ դարուն կատարվել է մի նորոգություն հնագույն 7-րդ դարու մի շենքի վրա և վերին աստիճան ճարտարությամբ պատշաճեցուցեր է հին ոճը նորի հետ, որ մեկ հայացքով դժվար է զանազանել. այս պարագան լավ ստուգելու համար շատ երկար քննություն է հարկավոր, միայն թե համենայն դեպս այս շենքի կառուցումը 10-րդ դարուց այս կողմ չի կարող անցնել: Թե՛ ներքուստ, թե՛ արտաքուստ խաչաձև է եկեղեցին: Մտից դուռն արևմուտքից է, ունի նաև խիստ նեղ և ցածր դուռ՝ հարավային թևի արևմտյան ճակատին վրա: Այս փոքր դռան սովորությունը շատ հին է. դեռ 7-րդ դարուն Բագարանի մեջ Բուտ Առավեղյանի շինած կաթողիկեն ունի հյուսիսային կողմին վրա: Միևնույն ավանդության հիման վրա շինված է 10-րդ դարուն կառուցված Հոռոմոսի վանքի (ձորի ս. Մինաս անվանված) եկեղեցվո արևմտյան կողմը: Թե ի՞նչ պատճառներով էին շինվում այս փոքր դռները, ճշտիվ հայտնի չէ. միայն թե իմ լսելով, հին ժամանակի կղերներ այս դուռը միայն հատկացնելով ժողովուրդի մուտքին՝ ակամա խոնարհության և երկրպագության էին ստիպում տաճար մտնողներին:




*Նկ. 225. Օշականի Մանկանոց եկեղեցու հատակաձևը*

**2. Գերեզմաններ և քանդակազարդ խաչքարեր.**– Օշականի թե՛ գյուղի մեջ և թե՛ գյուղից դուրս կան մեծ ու փոքր գերեզմանատներ, այս գերեզմանատների մեջ մասնավորապես ուշադրավ են այն փոքր գերեզմանները, որոնց մեջ կգտնվին գեղաքանդակ խաչքարեր: Առհասարակ այս փոքր գերեզմանները լինում են փոքր մատուռների, կամ վանքերի շուրջ, բայց այս գերեզմանները, որոնց մոտ վանքի կամ մատուռի հետք չկա, իմ կարծիքով տոհմային գերեզմանատներ են: Այս պարագան մասնավորապես նկատելի էր Անիի ավերակների մեջ. մեծ տների կողքին հաճախ գտնվում էր նույն տան ընտանիքին հատուկ տոհմային գերեզմանատունը: Ինչպես երևում է նախկին Օշականում ևս եղել է այդ վաղեմի սովորությունը, որ գյուղի մեջ գտնվում են գերեզմանատներ առանց մոտակա մատուռի, կամ եկեղեցիի գոյության: Զափազանց կարևոր է Օշականում մի հնագիտական թանգարան ունենալ, որովհետև այս գյուղում ոչ միայն գտնվում են բազմաթիվ գեղաքանդակ խաչքարեր, այան խոյակներ, և ուրիշ քանդակազարդ քարեր, որոնք տգետ մարդկանց ձեռքով ոչնչանում են առանց հայ գեղարվեստի պատմության էջերը զարդարելու, այլև գտնվում են նախաքրիստոնեական ամենահին շրջանի իրեղեններ: Վերջերս գտնվել են քարյա դագաղներ և մի մեծ երկանաքար, այժմ սովորական եղող ձևերից բոլորովին տարբեր:

Սակայն այս գտնվածները բոլորն ըստ հաճույս գործադրել են գտնողներ:



**3. Հին կամուրջի մնացորդ.**– Քասախ գետի ձախ ափին, տակավին գոյություն ունի հնագույն կամուրջի մի ոտքի մնացորդը: Այնքան ավերված և քարերը թափված են երեսից, որ դժվար է շինության ժամանակը որոշել, սակայն մի բան պարզ է, որ այդ կամուրջը շինված է առնվազն 6–7 հարյուր տարի առաջ: Ցանկալի է, որ առանձին հսկողությամբ պահպանվեն այդ մնացորդները մանրամասն ուսումնասիրության համար: Այս մասին առանձնապես հանձնարարված է գյուղական պաշտոնեության, մասնավորապես Օշականի գյուղխորհրդի նախագահին:

**4. Քարայր-մատուռ.**– Օշականում, Քասախ գետի ափին, բարձրադիր ժայռերի վրա, գոյություն ունի մի քարայր: Նշաններ կան հավանականության, որ ի հնումն, նախաքրիստոնեական շրջանին սույն քարայրը եղել է պաշտական հատուկ մի նվիրական տեղ: Հետո քրիստոնեական ժամանակ հին ավանդության հիման վրա եղել է քրիստոնեական ուխտատեղի: Ներսի պատարագի խորանը ուղիղ դեպի արևելք չէ, այլ մի կերպ հարմարեցված քրիստոնեական խորան կազմելու ժամանակ: Քարայրին պատերի ներքին խորդուբորդությունը ծածկելու համար նաև շինել են սրբատաշ քարերով պատեր տեղ-տեղ: Այս հետնագույն շարվածքները ևս ժամանակ առ ժամանակ քանդվեր են ու նորոգվեր, այս նորոգությունների մեջ երևում են զանազան դարաշրջանների ոճով աշխատանքներ: Դռան ձախ կողմին վրա քանդակված է ցողունից կախված խաղողի ողզարդ քառակուսի գերեզմանի կոթողի կտոր, որուն երկու երեսներն են միայն երևում: Կոթողի մեկ ճակտին վրա քանդակված է մի ցողունից կախված խաղողի ողկույզներ, վերևը խորացած բոլորակի մեջ քանդակված է հավասարաթև մի խաչ: Մյուս երեսին վրա որմայուսների նմանությամբ moulure-ներ՝ պայտաձև կիսաբոլորակներով միմյանց միացած: Սույն քարայր-մատուռին օշականցիք Մարիամ Աստվածածին անունն են տալիս:

**5. Կիկլոպյան պատեր.**– Մարիամ Աստվածածնի մատուռից բարձր, դեպի հյուսիս արևմուտք, գտնվում են անտաշ մեծամեծ որձաքարի զանգվածներով շինված պատեր, որին համար ավանդաբար ասում են, որ Վահան Ամատունիի ապարանքի մնացորդը լինի: Թեև հավանական չէ, որ այս կիկլոպյան պատերը լինեն 5-րդ դարուն, այնուամենայիվ կարող է պատահել, որ ապարանքը շրջապատող մի պարսպի մնացորդը լինի: Վահան Ամատունիի ժամանակ (5-րդ դար) հրաբխային ավազաքարի սրտաքաշ քարերով շինելու սովորությունը վաղուց ընդհանրացած էր, սակայն համենայն դեպս այս ավանդությունն ալ բոլորովին անընդունելի չէ, որովհետև կան ապացույցներ ուրիշ վայրերի վրա, որ քրիստոնեական շրջանում երկար ժամանակ շարունակվեր է անշաղախ որձաքար պատերի շինությունը մեծ շրջապարիսպների և բերդապարիսպների շինության ժամանակ, ինչպես Տեկորում, Բագարանում, Եղվարդում: Օշականը, որ նախաքրիստոնեական ամենահին ժամանակներու մեջ բազմամարդ մի կենտրոն եղած է, որուն անվիճելի ապացույց են բազմաթիվ հեթանոսական կրոմլեխներ, դոլմեններ և այլն, անհավանական չէ, որ շինարարական վաղեմի ձևերը շարունակված լինեն քրիստոնեական սկզբնական դարերում:

**6. Դոլմեններ.**– Հ. Հ. Պ. Կոմիտեում քանիցս արված զեկուցումների հիման վրա Կոմիտեն վաղուց ուշադրություն էր դարձրել Օշականի նախապատմական և նախաքրիստոնեական հնությունների վրա և որոշել էր հարմար դեպքում հետազոտության ենթարկել մանրամասնաբար: Ադիթը ներկայացել էր այս արշավանքի ժամանակ, ուստի խմբովին գնացինք այն վայրերը, ուր կգտնվեին նախաքրիստոնեական բազմաթիվ գերեզմաններ, կրոմլեխներ և մասնավորապես դոլմեններ: Այս վերջինիս Օղուզի տներ անունը կուտան օշականցիք և շրջակա գյուղացիներ՝ անշուշտ մի հին ավանդության հիման վրա:

Դյուքուա և Շանտր – այս ավանդությունը կպատմեն հետևյալ կերպով, լսելով հյուսիսային Կովկասի և ուրիշ դոլմեններ շատ գտնված երկրների ժողովուրդից, իբր թե դոլմեններ տարածված երկրներում ապրում էր հսկաների մի ցեղ, որոնք այնքան ուժեղ էին, որ կարող էին հեշտությամբ վերցնել մեծազանգված քարեր որպես թեթևագույն մի առարկա: Այս հսկաների մոտ ապրում էր միաժամանակ թզուկների մի ցեղ, որոնց ուժից վեր էր նույնիսկ մի փոքր քար տեղից շարժել: Այս թզուկները իրենց ֆիզիկական տկարության պատճառով չէին կարող իրենց համար մի բնակարան իսկ շինել բնության պատահարներից պաշտպանվելու համար. տառապում էին ամռան տապի և ձմռան ձյունի ու բուքի ժամանակ բոլորովին բացօթյա: Այդ հսկաները տեսնելով իրենց շուրջը այդ փոքրիկ մարդկանց տառապանքը և խղճալով անոնց վրա, շինեցին դոլմենները, որպես բնակարան թզուկների համար: Ամենայն հավանականությամբ Հայաստանում ևս նույն ավանդությունը տարածված էր, որի հիման վրա Օշականում և այլ

տեղերում գտնված դոլմեններին Օղուզի (Հսկա) տներ անունը տվեր են, որպես թե հսկաների ձեռքով շինված:

Օշականի հարավ-արևելյան կողմից Քասախ գետը անցնելով պատահում ենք նախապատմական մի մեծ անցյալի վկա բազմաթիվ գերեզմանների, կրոմլեխների և դոլմենների: Դոլմեններ շատ կան այս տեղերը, սակայն մեծ մասամբ ավերված, տեղերը մաքրելով, այգիների վերածված: Մի քանիսը միանգամայն կիսավեր դրության մեջ, որոնք ո՛չ չափ ու ձևի հարմարություն ունին և ո՛չ նկարելու:

Ա. դոլմենը արտաքուստ երկարություն ունի 9,70 մետր և լայնություն՝ 6,40 մետր, ներքուստ դատարկության լայնությունն է 2,60 մտ, ներքին երկարությունը չափել հնարավոր չէր քարերի փլուզման և կուտակման պատճառով: Այս դոլմենն ի հնումն շրջապատված է եղեր առանձին շրջափակով, որուն արևելյան և հյուսիսային կողմերի հիմքերը միայն երևում են: Մյուս կողմիններն անհետացել են: Արևելյան կողմից շրջապատի հիմը դրված է 12,80 մ. հեռավորության վրա, իսկ հյուսիսային կողմից 10,50 մ. հեռավորության վրա. այս շրջապատը ևս շինված է եղեր առանց շաղախի անտաշ որձաքարերի զանգվածներով:

Բ և Գ դոլմենները ևս Ա դոլմենի նման անհեթեթ մեծությամբ որձաքար զանգվածների կուտակումով ձևացված են: Բ դոլմենն արտաքուստ 8 մետր երկարություն և 4,20 մ. լայնություն ունի: Ինչպես երևում է այս դոլմենի երկարությունը մի քիչ ավելի եղած է, սակայն քարերը տարել են մեկ ծայրից: Ներքուստ երկարությունը 7,50 մ. է, լայնությունը 3,10 մ. դոլմենին վրա իբրև ծածկ դրված քարերը 1,72-ից մինչև 1,00 մեծություն ունեն, որոնք զանազան ուղղությամբ գետեղվելով փակել են ներքևի դատարկությունը:

Գ դոլմենը համեմատաբար ավելի փոքր է, քան մյուսները և քարերի շարվածքն ավելի անվնաս մնացած. դրսից լայնությունը 4,70 մ. է, ներսից 1,10 մ., այս դոլմենին ևս ծայրից քարեր կան տարված:

Առհասարակ դոլմենները թե՛ ներքուստ և թե՛ արտաքուստ երկարավուն ձև ունին, լայնության կողմի ճակատները՝ քարերի անկանոն կուտակումով փոքր ինչ բոլորշի ձև ստացած են: Պատերի քարերը նույնպես անկանոն մեծազանգված լինելով, ուղղահայաց պատ կազմված չեն, միշտ վրայի քարը մի քիչ ներքևից առաջակարկառ դիմելով վերևն ավելի նեղցած է, քան ներքևի հատակը. շարվածքի այս ձևն է, որ մասամբ հնարավորություն տվել է միակտուր քարերով վրաները ծածկել: Թերևս այս ձևի շարվածքն է, որ ապագայի մեջ սրբատաշ քարերով կամարածածկի գաղափարն է տվել:

Բացի դոլմեններից Օշականում գոյություն ունեցել են բոլորշի ձևով կրոմլեխներ ևս, որոնց վրա ծածկված է եղել միայն մի հսկայական բոլորշի ձևով քար: Կրոմլեխների խիտ վայրերում հաճախ կհանդիպենք այս բոլորշի մեծ քարերուն, որոնք իբրև ծածկույթ ծառայել են: Այս բոլորշի ծածկույթ քարերի մեծությունը, որ մինչև այժմ գոյություն ունի Օշականում 2,40 մ. տրամագիծ ունի և 40 սմ. հաստություն: Բոլորշի կրոմլեխներից գրեթե անվնաս մնացած մի օրինակ կա այժմ Ղափլի գյուղում, որի մասին պիտի գրեմ իր տեղում: Ինչպես երևում է, ի հնումն բոլորակը եղած է նաև մի սրբազան խորհրդավոր նշան, բացի կրոմլեխներից հողի ներքև թաղվողների գերեզմանները ևս շրջանակված են բոլորակ ձևով: Մեռելները թաղելով՝ վրաները հսկայական տապանաքարեր դնելուց հետո, որոշ հեռավորության վրա շրջանակված են գերեզմանները, երբեմն փոքր ի շատե ձևակերպված և երբեմն ալ բոլորովին բնական վիճակի մեջ անտաշ որձաքարերի շարվածքով:

7. **Մեծ կոնդ**— Օշականի գրեթե արևելյան կողմը կգտնվի մի սարի նման մեծ՝ բլուր, որին գյուղին գյուղացիք **Մեծ կոնդ**, կամ **Դիդի կոնդ** անունն են տալիս: Այս մեծ բլուրի ստորոտից սկսած մինչև գագաթը ցրված են թե՛ քրիստոնեական, թե՛ նախաքրիստոնեական շրջանի հնություններ: Կան հին և նոր գերեզմաններ, գեղաքանդակ խաչքարեր, քարայրներ, մատուռներ և գագաթին վրա նախաքրիստոնեական շրջանի մի ամրոցի մնացորդ՝ մեջը բնակության հատուկ բաժանումներով, որոնց այժմ հիմերը միայն մնացել են:

Քննությունը ցույց է տալիս, որ այս մեծ բլուրի գագաթը, շատ հին ժամանակ շրջապատված էր կիկլոպյան քարերով շինված պարիսպով, որուն հաստությունը երկու մետրից պակաս չէ: Արևելյան կողմի վրա, շրջապատի պարսպից 25 մ. երկարությամբ մնացել են հիմքեր, հյուսիսային կողմի վրա կա ավելի քան 34 մ. շրջապարիսպի երկու մետր լայնությամբ հիմերի մնացորդ: Արևմտյան կողմի վրա թեև կան հիմերի մնացորդներ, սակայն շատ քարեր տարված են այս կողմի հիմնաքարերից, որի շնորհիվ հիմքերը ընդհատ-ընդհատ են երևում: Հարավ արևմտյան կողմին վրա խիստ որոշ կերպով մնացել է պարսպի արտաքին մի քառակուսի բուրգի հիմքերը 4,80 սմ. կողերով արտաքուստ. բայց բուրգի պատերն այնքան հաստ են, որ



մեջը հազիվ մնացել է 2,60 մ. դատարկություն: Ուստի բուրգի պատերի հաստությունը հասնում է 1,10 մ.-ի: Ինչպես բլուրի զանազան կողմերում, գագաթին ևս կան արհեստական քարայրի մնացորդներ: Շրջափակի հարավ-արևելյան անկյունի վրա ևս կա մի խոշոր բուրգ ավելի ընդարձակ, քան հարավ արևմտյանը, բուրգի արտաքին երկարությունն է 7,25 մտ., ներքին դատարկության լայնությունն է 2,60 մտ., դռան լայնությունն է 90 սմ.: Հարավ-արևմտյան կողմին վրա երևում են բնակության հատուկ բաժանումների հիմքեր, սակայն ինչպես ամբողջ շրջապատը, նույնպես ներքին բաժանումները ճշտիվ չափագրելու համար, անհրաժեշտ է մի քանի տեղերի վրա մասնակի պեղումներ կատարել և մնացորդ պատերի ընդհանուրին հետ ունեցած կապակցությունները գտնել: Ոչ միայն հնում, այլև ներկայի մեջ ժամանակակից օշականցիք իբրև քարհանք օգտագործել են այս բլուրը և շարունակ տարել են, թե՛ ուրարտական պատերի կիկլոպյան քարեր և թե՛ քրիստոնեական շրջանի մեջ շինված շենքերի սրբատաշ քարեր: Այս ամբողջ սարը կազմված է հրաբխային կարմիր ավազաքարով, որ դուրս է գալիս խիճի նման և փխրուն, բոլորովին անընդունակ շենքի համար գործածելու իր փխրունության և խիճախառն լինելու պատճառով:

8. **Թուխ Մանուկ**.— Մեծ բլուրի գագաթի արևմտյան կողմը կա մի փոքր մատուռ **Թուխ Մանուկ** անունով, մատուռը բոլորովին նոր շինված է ներկա ժամանակի օշականցիների ձեռքով, պատերը շինված են մանր, անտաշ քարերով, հավանորեն հնում գոյություն ունեցող մի մատուռի հիմերի վրա, շենքը կգտնվի ամրոցի արևմտյան պատից ներս, շուրջը երևում են հետնագույն ժամանակի բնակության հատուկ շինության հիմեր: Մատուռին մեջ իբր սրբություն դրված է 13–14-րդ դարերի հատուկ քանդակագործությամբ մի խաչքարի բեկոր: Շենքի հարավային կողմը կան առանց արձանագրության պարզ տապանաքարեր, իսկ արևելյան կողմը երևում է մեծամեծ քարերով անշաղախ շինված պատի հիմի մնացորդ հյուսիսից հարավ ձգված, որն անշուշտ կպատկանի հին ամրոցին: Բլուրի արևմտյան լանջին, գագաթից մինչև ստորոտը երևում է մոտավորապես $1^1/_2$ մ. լայնությամբ մի ուռուցիկ գիծ, որի մասին գյուղացիների ընդհանուրին կարծիքն է, թե մի ջրմուղ է ամրոցին մեջ ջուր բարձրացնելու համար: Համենայն դեպս եթե ջրմուղ լինելը հավանական էլ չէ, այնուամենայնիվ երևույթը հետաքրքրական է, արժե, որ մի փորձնական պեղումով պարզվի իսկականը: Հարավային լանջի վրա ցրված են գերեզմանաքարեր, ջարդված խաչքարեր, խաչքարի պատվանդաններ, ի միջի այլոց կա մի մեծ պատվանդան, որի վրա կանգնված է եղել զույգ խաչքարեր: Խաչքարերի պատվանդանների մոտ կա մի մեծ քարայր, որ այժմ լցված է հողով ու քարով: Կան ուրիշ քարայրեր այս կողմին վրա, որոնք այժմ գյուղացիների համար ծառայում են որպես պահեստ և դարմանոց:




Նկ. 226. Օշականի Թուխ Մանուկ մատուռի հատակագիծը

9. **Փոքր մատուռ, կամ Փոքր Թուխ Մանուկ**.— Մեծ Կոնդի հարավ արևմտյան լանջի վրա, գյուղից բարձր, շինված կա մի փոքր մատուռ **Փոքր Թուխ Մանուկ** անունով: Այս մատուռը, որին շինությունը գրեթե անաղարտ պահված է, կառուցված կերևի 14-րդ դարի վերջերին, կամ 15-րդ դարի սկզբներին: Ըստ վաղեմի հայկական սովորության շենքը շինված է գորշագույն և մութ դեղնագույն հրաբխային սրբատաշ քարերով: Շենքի արտաքին երկարությունն է 5,10 մտ., լայնությունը 3,60 մտ.: Հյուսիսային կողմին կանգնված է ճոխ պատվանդանավոր խաչքար՝ մատուռից մեկ և կես մետր, կամ քիչ ավելի հեռավորության վրա, պատվանդանից վերև միմիայն խաչքարը 1,74 մ. է, պատվանդանին բարձրությունը 1,07 մ. է: Խաչքարն իր ամբողջության մեջ զարդարված է ակնա-

հաճո երևույթով քանդակագործ moulure-ներով. կատարին ունի ճոխ քանդակագործ պսակ, ամբողջ բարձրությունը պատվանդանից մինչ պսակի վրան 4,55 մ. է:




Նկ. 227. Օշականի Փոքր Թուխ Մանուկի հյուսիսային կողմի պատվանդանավոր խաչքարը




Նկ. 228. Օշականի Փոքր Թուխ Մանուկ մատուռի հատակաձևը

**10. Գյուլլե Կոնդ**– Օշականի հարավ արևելյան կողմը, մեծ բլուրից ուղիղ հարավ կգտնվի Գյուլլե Կոնդ անվանված արվեստական մեծ բլուրը: Այս բլուրը կազմվեր է շատ հին ժամանակ իբրև հսկայական հողաշամբան: Հանդիպակաց մեծ բլուրին լանջին վրա, այժմ ևս պարզ հայտնի է այն տեղը, որտեղից փորեր են հողը և կրելով այս նոր դամբարանի տեղը կազմել են այս արվեստական մեծ բլուրը: Բլուրի ստորին մասը շրջապատել են երկու կարգ կիկլոպյան քարե պարիսպով, որոնց հիմերը դեռ կմնան տեղ տեղ: Երվանդ Լալայան և Խաչիկ վարդապետ պեղել են այս բլուրը, բայց պեղման գիտական օրենքների բոլորովին հակառակ ձևով: Գյուղացի ականատեսների պատմելով, պեղումն սկսել են գագաթից և հոր փորելու նման խորացրել են, թե ի՞նչ են գտել այդ հորի մեջ հայտնի չէ, միայն թե ականատեսների պատմելով գտնված իրերը շատ անգամ կոտրատելով են հանել հորի միջից. ի վերջո երբ տեսել են, որ այդ ձևով անկարելի է շարունակել և իրենք իզուր շատ ժամանակ են սպառել և նյութական միջոց ծախսել, հետևաբար թողել հեռացել են առանց նույնիսկ բացված հորը գոնե ժամանակավորապես ծածկելու: Կըսվի, թե հազիվ թե հասել են իսկական դամբարանին, երբ թողել են աշխատանքը, սակայն նախքան դամբարանին հասնելը, ի՞նչ բաներ են գտած և ո՞ւր են տարված գտնված իրերը, ինձ հայտնի չէ:

**11. Փոքր Մատուռ գետեզրի ձախ կողմին ժայռի կուրծքին կամ Սուրբ Սարգի անվան մատուռ**– Օշականի նոր կամուրջից կես կիլոմետրի չափ ցած, ուղղաձիգ բարձրացող մի ժայռի կուրծքին շինված է մի փոքր մատուռ: Ըստ տեղական ժողովրդի մատուռը ս. Սարգիս է կոչվում: Շենքը հրաբխային կարմիր և դեղնագույն սրբատաշ քարերով է շինված, դուռը արևմտյան կողմից է, կիսաբոլորակ կատարով. դռան կատարի կիսաբոլորակը պսակված է մի լայն տափակ երիզով, որուն վրա դրված է շինության թվականը: Ներսն այնքան փոքր է, որ հազիվ թե երեք չորս մարդ կարենա տեղավորվել: Մատուռը այնքան անմատչելի տեղում շինված է, որ մեծ մարդկանց համար անկարելի է բարձրանալ առանց պատշաճավոր սանդուղի, փոքր երեխաներն են, որ զարմանալի ճարպիկությամբ բարձրանում են վերև մագլցելով, բարձրացող երեխաները հավաստում են, որ ներսը ևս կա արձանագրություն:

**12. Ձեռագործ ճանապարհ**– Ս. Սարգից մեկ վերստաչափ ցած, Քասախ գետի ձախ ափին, խոր ձորից դեպի վերևի դաշտը բարձրանալու համար, անհայտ ժամանակ շինված է մի ձեռագործ ճանապարհ 5–6 մետր լայնությամբ: Բավական դժվարին աշխատանք տարված է այս ճանապարհի շինության համար, որովհետև երևում է, որ մեծամեծ ժայռեր փշրել են ճանապարհը հարթելու համար: Հավանորեն այս ճանապարհը ծառայում էր երթևեկության նախքան նոր կամուրջին և Օշականը Վաղարշապատին միացնող խճուղին շինվելը, որով այդ հին ճանապարհը անգործածելի եղած է:

**13. Կոթող Մորիկի, կամ Մորիկի մոր անունով կանգնված**– Օշականի մեջ և շրջակայքում գտնված հնագիտական մնացորդները հետազոտելու համար, բավական չեն մի քանի օրեր, ամեն քայլափոխի կարելի է նորություն տեսնել, սակայն քանի որ, ըստ մեր արշավախմբի ծրագրի ավելի ժամանակ չէինք կարող նվիրել Օշականին և կարճ ժամանակի մեջ շատ տեղեր ունեինք տեսնելու, հետևաբար ստիպված էինք հեռանալ, Օշականի մանրամասն հետազոտությունը ուրիշ հարմար առիթի թողելով: Սակայն այս անգամ թեև հապճեպ, այնուամենայնիվ չէր կարելի առանց քննության թողել Օշական գյուղին մեջ կանգնված այն հետաքրքրական կոթողը, որն ավանդությունը վերագրում է Մորիկ կայսեր. գյուղացիք ասում են Մորիկի, կամ Մորիկի մոր գերեզմանը:

Օշականի կոթողը, լինի նա գերեզման, կամ այլ նպատակի համար կանգնված հուշարձան, իմ կարծիքով դժվար է Մորիկի անվան հետ կապել դատելով իր ճարտարապետական ոճեն, որովհետև կոթողի ճարտարապետական և քանդակագործական արվեստագործությունը, մի քիչ ավելի ուշ ժամանակի դրոշմն է ցույց տալիս, քան Մորիկի թագավորության և մահվան ժամանակը (582–602): Կոթողը բաղկացած է չորս մասից. 1. Ներքևը շուրջանակի երեք աստիճաններով բարձրացող մի հարթավայր. 2. Հարթավայրի մեջտեղը գետեղված է 1,10 մ. լայնությամբ և 92 սմ. բարձրությամբ միակտուր մի պատվանդան. 3. Պատվանդանին վրա բարձրանում է մի ութանկյունի սյուն՝ մինչև գագաթի խոյակը 3,72 մ. բարձրությամբ: 4. Սյունին վրա դրված էր կողովաձև խոյակ՝ կողովին շուրջը հյուսկեն քանդակված, ճիշտ նման Զվարթնոցի եկեղեցու կողովաձև խոյակներին: Զվարթնոցի շինությունը (642–652 հավանական ժամանակ) քառասունից մինչև հիսուն տարի հետո է, քան Մորիկ կայսեր մահը, հետևաբար 40–50 տարի հետո Զվարթնոցի մեջ եղած խոյակների ճիշտ նմանը չէր կարող ավելի Օշականի մեջ գոյություն ունենալ և օրինակ դառնալ Զվարթնոցի ճարտարապետին: Թեև պատմական ավանդություն կա, որ Մորիկ կայսրը օշականցի հայ մը է (Կիրակոս Գանձակեցի), սակայն քննադատներ սխալ են համարում Մորիկի հայ և օշականցի լինելը: Միայն թե իմ կարծիքով այս կոթողի կանգնումը պետք է որ լինի Զվարթնոցի շինությունից հետո, սակայն ոչ ուշ քան 7-րդ դարը: Մի բան կա անվիճելի, որ սույն ձևով կոթողների կանգնումը բյուզանդական երկրների հատուկ է, այս կոթողը ևս կանգնողը անպայման Բյուզանդիայի հետ քաղաքական կապ ունեցող, կամ բյուզանդական կրթություն ստացած մարդու գործ է, թեև կոթողը իր մանրամասնության մեջ հայացած է, սակայն ընդհանուր ձևով բյուզանդական ոճին կպատկանի և իբրև հուշարձան-կոթող առայժմ միակն է Հայաստանի մեջ:

## Գ. ՂԸԶԸԼ ԹԱՄԻՐ (այժմ Ոսկեվազ)
**Օգոստոս 7**

Օշականի հետ այգիներով գրեթե միացած է **Ղըզըլ Թամիր** գյուղը: Այս գյուղը ևս շատ հարուստ է պատմական և նախապատմական հուշարձանների մնացորդներով: Գյուղի մեջ մնացել է 7-րդ դարու մի եկեղեցիի արևելյան պատը իր երկու եռանկյունի խորշերով, մյուս պատերը գյուղացիք վերաշինելով վերածել են նոր եկեղեցիի: Քանդակազարդ, կամ արձանագրված քարեր շատ կտեսվին այս գյուղի մեջ, տների պատերի մեջ հյուսված, կամ փողոցի անկյուններում անխնամ թողված: Գյուղից դուրս այգիների մեջ դեռ շատ կան հետաքրքրական հնությանց մնացորդներ, ինչպես կրաշաղախ պատեր, ջրի ճանապարհներ, եկեղեցիների և այլ շինությանց ավերակներ: Այգիների մեջ ուշադրավ է մի փոքր եկեղեցիի ավերակ, որ շինված է եղել չափազանց խնամքով տաշված դեղնորակ քարերով: Սակայն մինչև հիմա քանդվել է այդ եկեղեցին, քարերը թափվել են մեջը և բոլորտիքը: Հատ ու կտոր քանդակներ, սյունի խարիսխներ և մասնավորապես հատակագծի ձևը ցույց կուտան, որ այս շենքը շինված է 7-րդ դարուն: Գյուղացի ծեր մարդիկ վկայում էին, որ 15–20 տարի առաջ այս փոքր եկեղեցիի պատերը կանգուն էին, անտերությունից և անխնամ մնալուց հետզհետե քանդվեր և այսօրվան վիճակին հասել է: Ինձ այս տեղեկությունը տվող ծերունիներից մին, ամենայն հանդարտությամբ պատմեց իր մոտակա այգու մեջ ցույց տալով մի մեծ պատի մնացորդ, թե առաջ որչափ մեծ էր այդ պատը և ինք մեծ դժվարություններով կարողացել է այդ պատը մաքրել, այնուամենայնիվ դեռ կմնար մեկ մասը: Եկեղեցիի ավերակներից 50 քայլի չափ դեպի արևելք աս-

տանդական թափված են գեղեցիկ սրբատաշ բեկորներ և քանդակազարդ խոյակներ, որմասյուներ՝ բավականին հետաքրքրական ձևերով: Ըստ երևույթին այդ տեղերում եղել է ի հնումն մի մեծ շինություն և շինության մեջ եղել է մի մեծ սրահ զարդարված այդ գեղեցիկ որմասյուներով և խոյակներով: Որմասյուների ձևերը բոլորովին ինքնուրույն են և ուրիշ 7-րդ դարու շինությանց մեջ գոնե չի պատահած նույն ձևերը և կամ անոնց մոտ նմանությունը:

## Դ. ԱՂԹԱՄԻՐ

Ղըզըլ Թամիրի այգիների վերջավորության վրա, Քասախ գետի աջ ափին, բարձրաբերձ ժայռերի կատարին, ընդարձակ հարթ տարածության վրա շինված է ներկայիս Աղթամիր անվանված կիկլոպյան քարերով շինված նախաքրիստոնեական մեծ ամրոցը: Այս ամրոցը գետի կողմից պաշտպանված է ուղղաբերձ ժայռերի բնական ամրությամբ, մյուս կողմերն ըստ վաղեմի սովորության անշաղախ որձաքարերի մեծ զանգվածներով շինված բրգավոր պարիսպներով: Ամրոցն անկանոն քառակուսի ձև ունի. 135 մտ. լայնությունն է, 155 մտ. երկարությունը: Ամրոցի դռան երկու կողմը հսկայական քառակուսի բուրգեր են շինված, որոնց վերևի մասերը փլած են, սակայն տեղ տեղ դեռ կմնան 4–5 մետր բարձրությամբ պատեր՝ թե բուրգերից և թե պարսպից: Նշաններից երևում է, որ այս բերդը հնում և վերջերքն էլ մինչև 17-րդ դարուն ժողովրդական բնակության հատկացված է եղել, թե՛ նախնական ձևով բնակարանների հիմեր կան և թե՛ ուշ ժամանակի շենքերի մնացորդներ: Ամրոցի պարիսպներից ներս կան կրոմլեխներ, որոնք նախնական բնակիչների գերեզմաններ են, կան նաև 16–17-րդ դարերի հատուկ քրիստոնեական գերեզմաններ: Քրիստոնեական գերեզմաններն առհասարակ օրորոցաձև են, որոնց վրա քանդակված են պար խաղացող, կամ սեղանի շուրջը բոլորված գինի խմող մարդիկ՝ ձեռքներին բռնած գինու կուժը, կամ բաժակը: Այս ձևի գերեզմանաքարեր կան Ցրանկանոց գյուղի մոտ, որոնց մասին գրել եմ իր կարգին, կան նաև Կարբի գյուղի հին գերեզմանատան մեջ: Այս գերեզմանաքարերը խիստ բնորոշ են արվեստի և ազգագրական տեսակետով: Ըստ իս հարկ է քանդակված սույն հետաքրքրական պատկերները վերցնել էստամբաժով և լուսանկարներով: Ամրոցը շրջապատող մեծ պարսպից անկախ կան հավելված պարսպամասեր, հարավային կողմին կից և կազմում են մեծ ամրոցի հարակից մասեր:

Աղթամիրից դեպի Բաթրինճ գնալու ճանապարհի վրա, այգիների եզերքին Ղըռ անվանված մի խոպան տափարակում մնացել են հին կրոմլեխներ, թեև ոչ այնքան անաղարտ, ինչպես կան ուրիշ տեղերում: Թեև շատ քարեր տարել են, սակայն դարձյալ պարզ հայտնի են անոնց բոլորակ, կամ ձվաձև շրջագծերը:

## Ե. ԲԱԹՐԻՆՃ

Բաթրինճ գյուղի բնակիչները գաղթած նորեկ հայեր են: Այս նորեկները դեռ լավ ծանոթ չեն շրջակաների հետ և չկարողացան ոևէ ծանոթություն տալ հնությունների մասին: Գյուղի մեջ այժմ քիչ ավերումներով կանգուն մի շենք կա, որուն ինչ բանի ծառայելու մասին որոշ բան ասել կարելի չեղավ: Շենքը փոքր է և երկու հարկանի. ներքևի հարկը բաղկացած է միայն մի սրահից, դեմառ դեմ երկու դռներով, իսկ վերև բարձրանալ մեզ չհաջողվեց, գիտնալու համար թե վերևը ինչ բաժանումներ ունի շենքը, որովհետև շենքը սանդուղ չունի և շուրջ գյուղական բնակարանների ավերակներ կուտակված են, ժամանակի կարոտ էր այդ փլատակները մաքրելով ճանապարհ բանալը: Միայն թե այս շենքը ինչ նպատակի համար էլ որ շինված լինի, 14-րդ դարուց առաջ շինված չի կարող լինել, որովհետև պատերի քարերի շարվածքը 14-րդ դարում Անիում կառուցված ամրոցների, կամ բերդապարիսպների շինության ոճով է, սրբատաշ քարերը ուղղահայաց կերպով միմյանց վրա չեն դրված, յուրաքանչյուր քարի ճակատը դեպի ներս է թեքված այս ձևով ⊏: Քարերի շարվածքի այս ձևը ընդհանրացած չէ Հայաստանի մեջ, սակայն առհասարակ պատահում է 14-րդ դարու շենքերի մեջ միայն:




Նկ. 229. Բաթրինճի ամրոցի ներքին հարկի հատակագիծը



## Զ. ԱԳԱՐԱԿ

**7 օգոստոս**

Բաթրինճ գյուղից հետո, մեր ճանապարհի վրա է Ագարակ գյուղը: Այս գյուղում կան մի քանի ավերակ շենքերի հետքեր, որոնց հիմերը միայն մնացել են, սակայն մի կիսավեր եկեղեցի կա գյուղի մեջ, որը կանգնված է 11-րդ դարուն:




Նկ. 230. Ագարակի եկեղեցու և փլատակ գավթի հյուսիսային պատի հատակագիծը

Գավիթը, որ բոլորովին փլած է, հյուսիսային պատը միայն մնացել է, շինված է 13-րդ դարուն, բուն եկեղեցին, որուն պատերը կանգուն են, ծածկը ամբողջովին փլած է, գմբեթ չէ ունեցեր, միայն կամարածածկ է եղած. խորանի կիսաբոլորակի մեջ կա մի արձանագրություն Զաքարեի որդի Շահնշահի օրով գրված: Շենքը շինված է կարմրագույն հրաբխային ավազաքարով. խորանի կամարը ուղիղ կիսաբոլորակ է, կամարակիր որմասյանց խոյակները շատ պարզ են: Դուռն արևմտյան կողմից է և կառուցված է 11-րդ դարուն սովորական եղող ոճով, այսինքն վերնասյամը միակտուր մի քար է 1,84 մտ. երկարությամբ, 90 սմ. բարձրությամբ և 60 սմ. հաստությամբ: Դրսի կողմից այս քարի չափերը տարբեր են, երկարությունը 2,50 մտ. է, բարձրությունը՝ 93 սմ.: Արևելյան պատը սովորական ձևերի մեջ բացառություն կկազմե երկու անկյունների վրա ունեցած 80–85 սմ. առաջակարկառ մասերով: Առաջակարկառ մասերի հյուսիսային կողմինը 1,75 մտ. լայնությամբ ճակատ ունի, իսկ հարավային կողմինը՝ 2,30 մտ., թե ինչու համար տարբեր են այս ճակատների լայնությունը պարզել հնար չեղավ: Սեփականատեր դարձող թուրք բեկը շուրջը խճողել է, այլ և այլ անկարգ շինություններով, որով անմերձենալի է դարձել եկեղեցին: Մանրամասն հետազոտելու համար միանգամայն արգելք են այդ շինությունները:

## Է. ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԻ ՀԻՄՔԵՐ ԵՎ ՆԱԽԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՈՒԽՏԱՏԵՂԻ

Ագարակից դեպի Փարպի տանող ճանապարհի վրա, 2 կամ 2,5 կմ. Ագարակից հեռու, ճանապարհի աջ կողմին վրա, նկատելի են ուրարտական հաստ և երկար պատերի մնացորդներ: Դաշտային տեղերի վրա այս տեսակ կիկլոպյան շինություններ առաջին անգամն է, որ ինձ պատահում է, և երևում է, որ մեծ ու կարևոր շինությունների մնացորդ են այս պատերը: Հակառակ երկար տարիների այս տեղի վրա կատարված երկրագործական աշխատանքների և քարերը մաքրելու համար եղած ջանքերի, ոչ միայն հետքերը չեն կորած, այլև տեղ-տեղ դեռ կմնան միմյանց վրա երկու շարք կիկլոպյան քարերով շինված երկար պատերի մնացորդներ: Այս հնագույն պատերից մեծ մասը կազմում է ուղղանկյուն քառակուսի մեծ շրջափակ, որուն մոտը կա մի մեծ կրոմլեխ: Ինչպես կերևի, այս կրոմլեխը հնում եղած է ուխտատեղի և անցել է քրիստոնեական շրջանին նույն կոչումով, որովհետև քրիստոնեության ժամանակ մեկ մասը վերաշինել են սրբատաշ քարերով և կրաշաղախով: Գյուղացի անցորդներ հավաստիացրին, որ այժմ ևս ուխտատեղի է, մասնավորապես կանանց համար: Ոչ միայն հայ կանայք տարվա որոշ օրերին խումբ բազմությամբ գալիս են այստեղ ուխտի, այլև թուրք կանայք: Բայց գյուղացիներ մի անուն չկա-

բողացան տալ այս ուխտատեղիին, միայն նրանց ասելով, ի մանկութենե իրենք տեսել են այդ տեղը իբրև ուխտատեղի առանց հատկանշական անունի:

## Ը. ՓԱՐՊԻ

*8 օգոստոսի*

Փարպին մի հնագիտական թանգարան է ճարտարապետության տեսակետով. գյուղի մեջ և շրջակայքում կան նախաքրիստոնեական ամենահին շրջաններից մինչև քրիստոնեական 14–15-րդ դարերի շինությանց մնացորդներ: Ի բաց առյալ նախաքրիստոնեական բերդերն ու ամրոցները, կան նաև մի շարք հետաքրքրական քարայրեր:

**1. Ամրոց-եկեղեցի.**– Փարպի գյուղում չափազանց ուշագրավ հնություն է մի հնագույն եկեղեցի, որը հետագայում վերածված է ամրոցի: Այս հնագույն եկեղեցին փարպեցիք Ծիրանավոր են անվանում: Ծիրանավոր եկեղեցին անվրեպ 5-րդ դարու շենք է, առանց լքվելու մինչև 15–16 դարերը գործածական եղած է շենքն իբրև եկեղեցի: Նախնական 5-րդ դարու հատկանիշներեն շատ բան պահված է այս շենքում հակառակ պարբերական նորոգումների: Պահվել են պատուհանների պայտաձև աղեղնակապերը, պատուհանների դրսից և ներսից հավասար լայնությունները և խոշորությունը, խորանի ճակատը կազմող աղեղի պայտաձևը, խորանի ճակատի մեծ աղեղին հանգստյան քարերին վրա քանդակված հավասարաթև խաչքանդակները՝ և նույն դարաշրջանի ոճով ձիթենիի տերևները: Հատակագծի նեղ ու երկար ձևը կատարյալ համեմատական նմանություն է ներկայացնում Հովհաննավանքի (հին եկեղեցին), Եղվարդի, Դիրակլարի և Շիրվանճուկի 5-րդ դարու եկեղեցիների հատակագծերին: Այս ձևի եկեղեցիների շինությունը 5-րդ դարից այս կողմ բերել անհնար է: 6-րդ դարուն իսկ այդ հին ավանդական ձևը երևում է մի քանի եկեղեցիների վրա, ինչպես Երերույքը, Դվինի կաթողիկեն և այլն և այլն:

Հավանորեն հիմնական մեծ նորոգում եղել է 7-րդ դարուն: Ծածկի կամարակապը փոխվել է ամբողջովին, նմանապես որմասյուների աղեղնակապերը, որոնք երկկենտրոն բեկյալ որմաղեղներ են: Այս նորոգության ժամանակ արևմտյան դռան վրա ևս եղել են փոփոխություններ, սակայն պահվել են 5-րդ դարուն իբրև վերնասյամ դրված քարերը՝ որոնց վրա քանդակված են հավասարաթև խաչքանդակներ: Կտուրի վրա, որ միանգամայն ավերված է, քանդակազարդ բեկորներ կան, որոնք 9-րդ և 10-րդ դարերը կհիշեցնեն, ամենայն հավանականությամբ 10-րդ դարուն այս եկեղեցիի վրա կարևոր նորոգություններ են կատարվել: Սակայն ե՞րբ են որձաքարի զանգվածներով կրկնակի պատերով զրահավորել այս եկեղեցին և վերածել բերդի. այդ հայտնի չէ. ըստ իմ կարծյաց, այդ ամրությունը պետք է շինված լինի 10-րդ դարուն, երբ արաբները զարհուրելի ավերումներ էին գործում այդ շրջանին մեջ: Գուցե Բյուրականի վրա արաբների հարձակումը և շրջանում արած կոտորածները ստիպեցին փարպեցիներին եկեղեցին իբրև բերդ ամրացնել, որպես վերջին ապաստարան: Ուրարտական ամրոցների նման որձաքարերով ամուր ապաստարաններ շինելու օրինակներ ամենևին չեն երևում հետին դարերի մեջ, և թերևս այնպիսի տագնապալի օրեր ևս չեն եղել Արարատյան աշխարհի վրա, ինչպես արաբների ավերիչ արշավանքը այդ կողմերին վրա, որուն մասին երկար գրում է պատմագիր Հովհաննես կաթողիկոսը:




Նկ. 231. Փարպիի Ծիրանավոր եկեղեցու հատակաձևը



**2. Ս. Թարգմանչաց եկեղեցի.**– Հայոց 7-րդ դարու շինարարական արվեստին մեջ, առանձին մի տեղ դրավելու արժանի է Փարպիում ս. Թարգմանիչ, կամ Թարգմանչաց եկեղեցի անվանված կիսավեր շենքը:

Թեև շատ քայքայված, որոշ բարձրության վրա չորս պատերն են միայն մնում, սակայն այդ վիճակին մեջ իսկ, իր ճարտարապետական համաչափություններով և ներդաշնակ դասավորություններով չքնաղ մի երևույթ ունի: Շուրջը թափված խոյակներ, պսակների կտորներ և այլ քանդակազարդ բեկորներ միանգամայն ինքնուրույն են 7-րդ դարու ճարտարապետական ոճի մեջ: Արտաքուստ և ներքուստ խաչաձև է եկեղեցին. ներքին կողմը շատ հեշտ է վերակազմել իր բոլոր մասերով, սակայն դրսի կողմը խաչաձև թևերի անկյունասյուներն ինչպե՞ս էին վերջանում և ինչ մանրամասնություններ կային մինչև պսակ հասնելը, դժվար է երևակայել: Հարկավոր է շուրջը պեղել, բոլոր կարևոր քարերը իմի հավաքել, որով թերևս ճշտվի արտաքին ճակատի մասերը ևս:




Նկ. 232. Փարպիի Թարգմանչաց եկեղեցու հատակաձևը

Բարձր մի բլուրի վրա կանգնած է այս շենքը և շուրջը խիտ գերեզմաններ են. անպայման մի շեն վանք է եղած այստեղ և միաբանների գերեզմաններ են եղածները՝ ինչպես ուրիշ վանքերում կան, այլապես այսքան մի շքեղ եկեղեցու շուրջ, որ բոլորովին առանձնացած է մի բարձր տեղում, չէր կարող թույլատրելի լինել հասարակաց գերեզմանատուն շինելու:

**3. Ս. Գրիգոր.**– Փարպի գյուղի և Թարգմանչաց եկեղեցիի մեջտեղ, ձորի մեջ շինված է մի փոքր եկեղեցի ս. Գրիգոր անունով:

Այս եկեղեցիի շինության ժամանակը խիստ դժվար է որոշել, մնացել են միայն հյուսիսային և արևմտյան պարզ պատերը սրբատաշ քարերով, իսկ մնացած մասերը նորոգված են վերջին ժամանակներս անճաշակ մանր քարերով:




Նկ. 233. Փարպիի ս. Գրիգոր եկեղեցու հատակաձևը

Ուշադրության արժանի են այս եկեղեցվո մոտ թափված բեկորները, որոնք պատկանում են 5-րդ դարու հայկական ոճին: Բեկորները ցույց են տալիս, որ այդտեղ եղել է մի բազիլիկ՝ ներքին որմասյուներով. որմնասյուների խոյակների վրա քանդակված են փշալից արջմագիլներ, ձիթենիի տերևներ, հավասարաթև խաչեր: Արտաքին որմնասյուների բեկորները ցույց են տալիս, որ դրսում ևս եղել են որմնասյուներ, ինչպես Թալինի, Արթիկի և ուրիշ նման եկեղեցիներ: Անշուշտ մոտակա փոքր ս. Գրիգորը շինելիս օգտվել են այս բազիլիկի քարերից. ներքին խորանի աջակողմյան անկյունի գլուխը դրված կա մի 5-րդ դարու խոյակ հավանորեն այս ավերակի քարերից վերցված:

*Օգոստոս 9*

**4. Գյավուր Ղալա.**– Փարպիից հետո մեր ուղեգծին վրա էր Գյավուր Ղալա ըսված նախաուրարտական մեծ ամրոցը: Փարպիից բարձրանալով Արագածի լանջերն ի վեր հասանք այս նշանավոր ամրոցի առջև: Ներկայիս գործող ճանապարհ չուներ, տեղ-տեղ արահետներ երևում էին, որոնք գոյացել էին լանջերում արածող ոչխարների և նա-

խիրների ոտքերուն տակ: Մեր վերև բարձրանալու գիծը հին ճանապարհն էր, որն այժմ խիճերով և խոտերով ծածկված էր, սակայն վերին աստիճանի պարզ էր, որ մի ժամանակ 4–5 մետր լայնությամբ հարթված ու կանոնավորված մի ձեռագործ ճանապարհ էր թե՛ դեպի բերդը և թե՛ բերդի հարավ արևմտյան կողմը տարածվող ընդարձակ քաղաքը բարձրանալու համար: Ձեռագործ ճանապարհը հասնում է ուղղակի բերդի հարավ արևելյան անկյունը, ուր կգտնվի բերդի գլխավոր դուռը՝ թեև ներկայիս քանդված և քարակույտերի վերածված: Անցյալում, բերդ կոչվելե ավելի մի բերդաքաղաք է եղած այս տեղն, ընդարձակ տարածության վրա ամուր կիկլոպյան քարերի պարիսպով շրջապատված: Հյուսիսային, արևմտյան կողմերը, նաև արևելյան կողմի մի մասը պարսպափակ է, իսկ մյուս կողմերը շրջապատված են անդնդախոր ձորերով: Բացի պարիսպներեն դուրսի հյուսիս արևմտյան կողմը տարածվող ընդարձակ քաղաքատեղից, պարիսպի մեջ ևս հասարակաց բնակության հատակացված է եղել: Դեռ կմնան առանձին բնակությանց հատուկ շենքերի հիմերը և պատերի որոշ մասերն իրենց դռներով. հետաքրքրական են դռների կազմությունները, մեծամեծ քարերով բարավորներ կազմելուց հետո, միակտուր մի քարով շինված է վերնասյամը: Ինչպես նմանօրինակ մի քանի ամրոցներ, նմանապես Գյավուր Ղալան կենդանի ամրոց է եղած քրիստոնեական շրջանում, մի քանի մնացորդներ ցույց են տալիս, որ քրիստոնեական նախնական շրջաններում միայն լքել են այս ամրոցը և քաղաքը: Երկար ժամանակ բնակելի եղած լինելու պատճառն ինձ կթվի թե, տեղի բնական ամրության հետ միասին նաև ձեռագործ ամրությանց միանալն էր: Երկու հսկայական քառակուսի բուրգերով ամրացված էր գլխավոր մուտքը. յոթ քառակուսի բուրգերով շրջապատված են հյուսիսային և հյուսիս-արևելյան պատերը: Պարիսպի չորրորդ բուրգին կից կա մի փոքր դուռ (անշուշտ գաղտ դուռ), որը մինչև այսօր պահված է ամբողջությամբ. հյուսիսային կողմի բուրգերը, որ մի քիչ ավելի խիտ են և բուրգերը ավելի փոքր, երևակայության իսկ սարսափ ազդող մի կազմություն ունեն. քառակուսի բուրգերի ամբողջ ճակատը և կողմերը միակտուր մի մի քարով են ծածկված, քարերի բարձրությունները իմ հասակիցս ավելի բարձր էին: Թե ինչ ուժով և հնարով են կանգնեցրել այդ ահագին ծանր զանգվածները, առայժմ մեզ համար գաղտնիք է:

Պարիսպից դուրս եղած քաղաքատեղը մի կիլոմետրից ոչ նվազ տարածություն ունի, տներից շատերի ձևերը որոշ են և պատերը կիսով չափ կանգուն: Պատերուն վրա տակավին կան մտից արտաքին դռները, որոնք մեզ զարմանք պատճառելու չափ նեղ են, այստեղ ևս վերնասյամերը միակտուր մեկ քարից են:

Ամրոցը շրջապատող ձորերին մեջ կան բազմաթիվ քարայրեր:

## Թ. ԲԵՐՍԻ

*Օգոստոս 9*

Գյավուր Ղալան հետազոտելուց հետո արշավախումբն իր ճանապարհը շարունակեց դեպի Բերսի գյուղը, վերահաս գիշերը այդ գյուղում անցնելու համար: Երեկոյան մոտ դեռ գյուղը չհասած, ճանապարհի մոտ պատահեցին մեզ երկու խոշոր դոլմեններ, որոնցից մեկը խիստ ավերված էր և հնար չէր որևէ չափագրություն կատարել, իսկ երկրորդը՝ գրեթե արտաքուստ ամբողջական վիճակի մեջ էր, միայն ներքինը տեսնել անհնար էր՝ մուտքի առջևը թափված մեծամեծ քարերի պատճառով, որոնք մուտքը միանգամայն խափանել էին: Դոլմենի կողքերն էլ հող ու քար լեցնելով բարձրացած էին: Միայն հնար եղավ չափել վերևը ծածկված քարերը և արտաքուստ լայնությունն ու երկարությունը:

Երկրորդ դոլմենի արտաքուստ լայնությունը 2,20 մ., երկարությունը՝ 6,25 մ., մուտքի լայնությունը ներսից 1,40 մ.:

Վերևը ծածկված էր չորս միակտուր մեծ քարերով, որոնց երկուքը խիստ մեծեր էին, այդ երկուքը չափեցի.

ա. քարի երկայնությունն էր՝ 1,61 մ.
ա. քարի լայնությունը՝ 1,17 մ.:
բ. քարի երկարությունը՝ 1,61 մ.
բ. քարի լայնությունը՝ 1,37 մ.:

Գյուղում ակնհայտնի մի հնություն չկար, հին տների մեջ միայն ուշագրավ առանձին քարեր կային:

Գյուղի հանդեպ 2–3 կիլոմետր հեռավորության վրա երևում է մի նախնադարյան բերդ՝ բարձր սարի վրա, սակայն մեզ հնար չեղավ տեսնել, հակառակ այդ բերդի մասին մեր առած զանազան հետաքրքրական տեղեկությունների:

## Ժ. ՏԻՔՄԱ ՏԱՇ
(Ղոթուր գյուղի յայլայում)

*Օգոստոսի 11*

Փարպի եղած ժամանակնիս տեղեկություն ստացել էինք, որ Ղոթուր գյուղի յայլայում մի մեծ քար կա Տիքմա Տաշ անունով, որի անհեթեթ մեծությունը և ձևը ժողովրդական առասպելական մեկնությունների առիթ էր տվել: Մեր օրվա հետաքրքրական առարկան այդ հսկա մեծությամբ քարն էր, որը լուսանկարեցինք և մանրամասնորեն նկարագրեցինք տեղում: Այս հետաքրքրական հսկայական քարը ևս ազատ չէր մնացել մոտակա տգետ գյուղացիների քմահաճույքից, որոնք ուզեցել են կոտրելով տանել գյուղը մեռելի տապանաքար շինելու համար, որովհետև առանց կոտրելու տեղից շարժել անկարելի էր, իսկ եթե մեջտեղից կոտրել կարողանային պիտի լիներ երկու դերեզմանաքար, փորձել են երկու հավասար կտորի վերածել, սակայն չեն հաջողեր, ինչպես կերևի ակամա կոտրեր են միայն մեկ գլուխը: Կարծր որձաքարից է շինված այս կոթողը, բոլորովին նախնական ձևով տաշված, թեև քարն անընդունակ է ավելի նուրբ տաշվելու: Քարը տաշված է երկու գլուխները նեղ, իսկ մեջտեղը՝ լայն:

Քարի ամբողջ բարձրությունը նախքան մեկ գլխից կոտրվելը ունեցեր է երկու մետր իննսունութ սանտիմ բարձրություն: Իսկ այժմ կոտրված վիճակին մեջ մեծ կտորին բարձրությունն է 2,60 մ., ստորին գլխի լայնությունն է 45,5 սմ., վերևը կոտրված տեղի լայնությունն է 53 սմ. և նույնքան էլ հաստություն: Մեջտեղի լայնությունն է 63 սմ., գլխից կոտրված կտորի բարձրությունը 38 սմ. և 60 սմ. հաստությամբ: Մեկ ճակատի վրա փորագրված են նախնական պաշտամունքի խորհրդանշաններ, իսկ մյուս կողմին գագաթեն քիչ ցածր տեղի վրա փորագրված են փոքր բոլորակ փոսիկներ նույնպես պաշտամունքի խորհրդանշան, ինչպես որ ուրիշ հեթանոսական պաշտամունք հատուկ տեղերու մեջ ժայռերի կամ առանձին քարերի վրա:

## Ժա. ՄԵՆԱՔԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ

*Օգոստոս 12*

Ղոթուրի յայլան թողելով մեկնել էինք Արագածի բարձունքը և այնտեղ քրդական վրանի տակ գիշերելուց հետո ճանապարհվեցինք դեպի Անբերդ: Հազիվ հեռացել էինք Ղարադաղի ստորոտին վրա գտնված մեր հյուրընկալ քրդական վրաններից, երբ ճանապարհից դուրս նկատեցինք մի անսովոր մեծությամբ քար, պառկած գետնի վրա: Քարին մոտ գնալով տեսանք, որ այս ևս երբեմն կանգուն մի մենաքար էր մոտավոր նմանությամբ Ղոթուրի մեջ եղող մենաքարին: Սակայն միանգամայն պարզ էր, առանց քանդակի, նաև ստորին մասը լայն էր, միայն վերևի մասն էր նեղ, վերևի նեղ մասը կվերջանար բուրգի ձևով: Քարի ամբողջ բարձրությունն էր ճիշտ երեք մետր քառասուն սմ., ստորին մասը՝ մեկ մետր, իսկ վերևը բրգաձև տաշվածքին անմիջապես տակը՝ 60 սմ.: Այս քարի հաստությունը ներքևից մինչև վերև հավասար 50 սմ. է:

Այս քարը քննելուց և չափագրելուց հետո ճանապարհնիս շարունակեցինք դեպի Անբերդ:

## ԺԲ. ԱՆԲԵՐԴ ԿԱՄ ԱՄԲԵՐԴ

*Օգոստոս 13*

Հայաստանի ավերակ բերդերի մեջ մի առանձին տեղ կգրավե Անբերդը և բերդ լինելե ավելի մի ընդարձակ բերդաքաղաք է, ինչպես Անին, թեև մի քիչ փոքր տարածությամբ քան Անին: Այս բերդն ևս Անիի նման հեթանոսական ծագում ունի: Երկու խոր ձորերից ձևացած մի եռանկյունաձև դիրք ունի, երկու ձորերի խառնուրդին կողմերը տակավին կմնան ոչ միայն ուրարտական, այլև նախաուրարտական անշաղախ որձաքար պարիսպների մնացորդներ՝ քառակուսի լայն բուրգերով: Հետքեր կան նախնական շրջանի բնակարանների արևելա-հարավային ծայրի վրա: Երևում է, որ այժմյան ամրոցը և նրա մոտ եկեղեցին շինվելե հետո բնակչությունը լքեր է այս հարավ արևելյան մասը և խտացեր է եկեղեցիի և ամրոցի շուրջը:

Բերդաքաղաքի մուտքը հյուսիսի կամ հյուսիս արևելյան կողմի վրա է: Ճանապարհը ձորի լանջից բարձրանալով հատկապես ձեռագործ ճանապարհով (թեև այժմյան ճանապարհի մի մասն ասում են Խրիմյան կաթողիկոսն է նորոգել տված, սակայն հինը շատ պարզ և որոշ է), երբ կհասնի բերդի դռան առջև, այստեղ ճանապարհը կբաժանվի երկու մասի, մեկը կմտնե բերդաքաղաքի դռնից ներս, իսկ մյուսը աջ կողից կծռվի և կբարձրանա դեպի ամրոցը, որ զրահավորված է խիտ և ամրակառույց բուրգերով: Ամրոցը երկարած է գրեթե արևելքից արևմուտք, հյուսիսային կողմը ունի երեք ամրակառույց բուրգեր, որոնք շինված են նախնադարյան շրջանի ոճով, ինչպես երևում է շատ լուրջ վերանորոգություն եղած է Բագրատունիների վերջին օրերուն: Արևելյան և արևմտյան կողմերու վրա ևս եղեր են հաստատուն բուրգեր, սակայն այժմ փլած են և զանգվածները միայն կերևին դեպի ցած գլորված: Այս արտաքուստ անմատչելի ամրոցի նմանությամբ շինված շենքը ներքուստ եղել է մի երկհարկանի մեծ դղյակ՝ բազմաթիվ սենյակներով: Հարավային ճակատը, որ բերդաքաղաքի վրա կնայի, առանց բուրգերի սրբատաշ քարերով հաստատուն շինված պատեր են: Ներքուստ արևելյան կողմի վրա երկու հարկի մեջ վեց սենյակի բաժանումներ են երևում, իսկ արևմտյան կողմի վրա

եղած սենյակներն միանգամայն քանդված են: Այս կողմից երևում են միայն երկու արտաքին դռներ, որոնց մեկը կբացվի քաղաքի վրա, իսկ մյուսը ձորի վրա: Սենյակներն ունեցեր են լայն և բարձր պատուհաններ քաղաքի վրա նայող, ոմանք կիսաբոլորակ վերջավորությամբ: Արևելյան ծայրին վրա բացի այն դուռը, որ առանց բերդաքաղաք մտնելու անկախ կերպով կիջներ ձորը, եղել է նաև մի դուռ՝ քաղաքը մտնելու համար: Այս դուռը թեև այժմ փլած վիճակի մեջ է, սակայն ճանապարհը խիստ որոշ է: Շատ հետաքրքրական է բերդի արտաքին դռան շինարարական ոճը: Բարավորների վրա ձգվող մեծ կամարաքարերը պարզ ձևով չեն շարված, այլ տաշվածքի վրա ցիցերով և կողքի քարերի մեջ ագուցվելու համար համապատասխան փոսիկներով ագուցված ու շարված են, որով կամարը եղած է միակտուր: Այս ձևով շինված էր Տեկորի տաճարի ներքին կողմը, երբ մեծ կամարների տակ ավելացրել են կրկին կամարներ: Այս կրկնակ օրինակներից երևում է, որ այս ոճը 10–11 դարու ոճ է, Հայաստանում իրագործված, որը 13-րդ դարում ավելի շատ իրագործված և կատարելության հասած է: Եթե մասնավոր պեղումներով հետազոտություն կատարվի այս դղյակ-ամրոցին մեջ, վստահ եմ, որ խիստ հետաքրքրական մասեր պիտի երևան հին հայոց շինարարական արվեստի վերաբերյալ: Նույն ձևով տաշվածք և շարվածք ունին Անիի ավագ դռան սմբատաշեն մասի կամարաքարերը:

Քաղաքի փողոցները հազիվ նկատելի են, չափազանց ավերված և քարակույտերի վերածված լինելուն պատճառով: Նամանավանդ վերջին ժամանակներս շրջակա գյուղացիներ բերդաքաղաքի մեջ ցանքեր անելու և խոտ հնձելու համար եկել են ամառները բնակելու և փլատակ բնակարաններից քարեր աստ-անդ տեղափոխելով իրենց համար բնակարաններ են շիներ, այս գործողություններով կատարյալ քաոսի են վերածել եկեղեցիից դեպի ամրոց եղած քաղաքամասը:

Գրեթե անվնաս մնացել է հոյակապ եկեղեցին մի բարձրադիր տեղի վրա, ձորի եզերքին շինված: Հավաստում էին, որ դեռ մի քանի տարի առաջ անվնաս էր եկեղեցիի հարավ արևմտյան կողմի ստորերկրյա ճանապարհը, որ կտաներ գետը, այդ ճանապարհով գետից ջուր էր բերում քաղաքի բնակչության մի մասը: Մանավանդ բնականորեն պիտի օգտագործեին այս ստորերկրյա անցքը պատերազմի և պաշարումների ժամանակ:

Եկեղեցին վերին աստիճանի ուշագրավ է թե՛ շինարարական տեսակետով և թե՛ ավանդական հատակագծային տեսակետով: Արտաքուստ ճարտարապետական տեսակետով մեծ նմանություն է բերում Վահրամ Պահլավունիի Մարմաշենի մեջ շինած եկեղեցիին՝ ի բաց առյալ հետնագույն նորոգությունների ժամանակ փոփոխված մասերը: Թեև նորոգություններն ալ այնքան զգալի տեղ չեն բռնում: Իսկ ներքին հատակագիծը, բացի ավագ խորանից, չորս անկյունների վրա, ութ փոքր կրկնահարկ մատուռներով կամ խորաններով կազմված է, որուն այդ ձևը 10 և 11-րդ դարուն շինված լինելը անսպասելի էր ինձ համար: Թեև նույն դարերին, արևելյան խորանին երկու քովերը միահարկ կամ կրկնահարկ մատուռներով շինված եկեղեցիներ շատ կան, սակայն արևմտյան կողմի երկու անկյունների վրա մատուռներ շինված լինելը 10–11-րդ դարերուն միանգամայն անսովոր էր ինձ համար, ես առաջին անգամն էր որ կտեսնեի: Պահ մը կասկածեցի որ հետնագույն հավելվածներ լինին արևմտակողմի մատուռները, այս ուղղությամբ երկար քննեցի, սակայն ոչ մի ապացույց չգտա հետնագույն հավելվածի: Տարակույս փարատող մի հանգամանք կար, այն է շինության արձանագրության գոյությունը եկեղեցիի մեջ: Նախընթաց տարին, երբ Էջմիածնի գիտական ինստիտուտի կողմից գնացել էինք Անբերդի հովիտը ուսումնասիրելու, այն ժամանակ Գարեգին եպիսկոպոս և Երվանդ Տեր Մինասյան առաջին անգամ կարդացին եկեղեցիի ներսը հյուսիսային պատի վրայի արձանագրությունը, որ շինողի և շինության ժամանակին կվերաբերեր: Ըստ արձանագրության այդ եկեղեցին շինողն էր Մարմաշենի եկեղեցին շինող Վահրամ Պահլավունին 11-րդ դարուն. և շինողի ճաշակով բացատրվեց երկու եկեղեցիների նմանությունը, սակայն Մարմաշենի եկեղեցիին մեջ գոյություն չունին արևմտյան կողմի մատուռները: Ընդհանրապես իմ համոզումս եղած է թե եկեղեցիների հատակագծային այդ ձևը սկիզբ առած էր 13-րդ դարուն: Արդ, եթե ստուգվի որ Անբերդի եկեղեցիի հատակագծային ոճը սկսում է 11-րդ դարուն, այն ժամանակ պետք է որ փոխենք մեր համոզումը այդ ձևի ծագման մասին: Եվ հիրավի, Ներսես Լամբրոնացին 12-րդ դարու կեսին ըղոքում է, որ եկեղեցին հոգվո փրկության համար շահավաճառանոց դարձրին պատարագի համար բազմաթիվ մանր ծակեր շինելով, ուստի այս դանդատը ևս ապացույց է, որ 13-րդ դարուց առաջ գոյություն ունեցեր է այդ երևույթը, որով տեղի տվել է Լամբրոնացիի տրտունջին: Համենայն դեպս, ես վերջնականապես համոզված պիտի լինիմ 11-րդ դարու սկզբներին հատակագծային այս ձևը ընդունված լինելու, եթե կհանդիպեմ մի ուրիշ եկեղեցիի, որ այս ձևով շինված լինի, և շինությունը փաստացի կերպով ապացուցված լինի 11-րդ և 12-րդ դարերի մեջ կանգնված լինելուն:

Հիացման արժանի են շենքի վրա աշխատող քարտաշների և որմնահյուսների հմտությունն ու բարեխղճությունը, թե՛ ուղղահայաց և թե՛ հորիզոնական ոչ մի գիծ գրեթե չի երևում քարերի միացման տեղի վրա, չափազանց խնամքով են շարված քարերը միմյանց մոտ: Պատերի հաստությունն է 70–72 սանտիմետր, այս հաստության մեջ է ներքին և արտաքին երեսների մաքուր տաշված քարերի թանձրությունը: Բայց զարմանալի է, որ երեսները շարված քարերը խիստ քիչ հաստություն ունին, կարծեք միայն ծեփի փոխարեն շարված լինին ներսի կրաշաղախ զանգվածի վրա: Այս շինելակերպով մոտավորապես 1000 տարի դիմացել են պատերն առանց ոևէ վնաս պատճառելու: Վերջին դարերում է, որ անտերությունից սկսել են երեսը շարված քարերը ուռչել և թափվելու մոտալուտ վտանգ են սպառնում, եթե շուտով հարկ եղած միջոցներ ձեռք չառնվին: Շենքի ճակատին վրա, թե՛ սկզբում և թե՛ վերջին նորոգության ժամանակ գործածել են մի տեսակ սևագույն կարծր քար, հավանորեն մի մոտակա քարհանքից հանված, սակայն ինչ համեմատություն հին շինող վարպետների և հետո նորոգող վարպետների հմտության մեջ: Շենքը վերանորոգության ենթարկված է արտաքուստ ճակատի կեսից վերև մինչև պսակները, այս նորոգության ժամանակի քարերը թե՛ ծավալով փոքր են և թե՛ խնամքով չեն զետեղված միմյանց մոտ: Նորոգությունը կատարված է շենքի կեսից վերև մինչև ստորին պսակը և կտուրին վրա. գմբեթը ամբողջովին հինն է և անփոփոխ: Ստորին մասի նորոգության ժամանակ ամենայն հավանականությամբ հին պսակները նախնականին նման չեն շինված, այլ ավելի նեղ քան ինչ որ պահանջում էր 11-րդ դարու ոճը և ավելի պարզ:

Անբերդը շրջապատող ձորերի լանջերին վրա չափազանց հետաքրքրական է տեսնել գետերի ջրերը օգտագործելու համար միմյանցից բարձր առուները, որոնց միջոցով ջուրը բարձրանալով ուղղվում էր զանազան անջրդի վայրեր Արագածի լանջերին վրա: Մինչև 13 առու համրեցի, որոնք ձորից բարձրանալուց հետո ճյուղավորվում են զանազան կողմեր: Մի քանի հին առուներ դեռ այսօր ևս գործածական են և առատորեն ջուրը գնում է մոտ և հեռու զանազան գյուղերի հողերը և պարտեզները ոռոգելու համար:

## Ժդ. ՏԵՂԵՐ ԿԱՄ ԴԸՂԸՐ

***Օգոստոս 15***

Օգոստոսի 15-ի առավոտյան յուրաքանչյուր արշավախմբի անդամ սկսեց իր աշխատությունը Տեղերի հոյակապ հուշարձանի վրա: Այս հուշարձանը կանգնված է 13-րդ դարու սկզբին (1232-ին): Շենքը բաղկանում է երկու մասից, տաճարից և մի մեծ գավիթից: Տաճարը կամ եկեղեցին իր դարաշրջանի հատուկ հատակագծի ձև ունի, բացի ավագ մեծ խորանից, չորս անկյունների վրա չորս մատուռներ ունի կիսաբոլորակ խորաններով: Հոյակապորեն գմբեթավորված է, սակայն գմբեթը այսօր այնքան է խարխլված, որ գոնե եղածը պահելու համար ոչ մի գործողություն չի կարելի կատարել. վճռականապես ճակատագրական է այդ գմբեթին մոտավոր փլուզումը:

Գավիթը լավ վիճակի մեջ է, կարելի է երկար տարիներ անոր գոյությունը ապահովել, չորս հատ հաստատուն սյուների վրա կանգնված է գավիթին գմբեթը, խիստ հաստատուն են արտաքին պատերը: Արտաքին պատերի ներսի կողմից ունի որմասյուներ, որոնցից աղեղներ են ձգված կենտրոնի չորս հակա միակտուր սյուների վրա, որով ձևացած է մի ընդարձակ գավիթ: Այս գավիթին կտուրի վրա, արևմտյան կողմը շինել են երկու մատուռներ երկու անկյունների վրա, որոնք անվնաս մնացած են, միայն թե շարժական փայտե սանդուղով միայն կարելի է բարձրանալ վրան:

## Ժդ. ԳՈՅԹՈՒԼ ԿԱՄ ՂՈՅԹՈՒԼ

Տեղերում երկու օր տևեց արշավախմբի աշխատանքը: Օգոստոս 17 առավոտյան մեկնեցինք Տեղերից: Ճանապարհին հանդիպեցինք Ղոյթուլ անուն գյուղին, ուր այժմ դաղթական հայեր էին տեղավորված, նախկին բնակիչներ այս գյուղը լքելուց հետո: Գյուղացիներ զբաղված էին շինարարությամբ, ոմանք լքած տները վերանորոգում էին և ոմանք նորն էին շինում: Այս շինարարական աշխատանքների ժամանակ երևան էին եկած մի հնագույն եկեղեցիի հիմեր և մի քանի քանդակազարդ քարեր: Քանդակազարդ քարերի քանդակման ոճը պարզ ցույց էր տալիս, որ 5-րդ դարու գործ են թե՛ հատակագիծը և թե՛ գտնված քանդակազարդ քարերը: Այս գյուղում երկար աշխատելու ոչինչ չգտանք, նորեկ բնակիչներն ալ շրջակայում գտնված ոևէ հուշարձանից տեղեկություն չունեին, ուստի ճանապարհնիս շարունակելով հասանք Ավան գյուղը:

Նկ. 234. Տեղերի եկեղեցու և գավթի ընդհանուր տեսքը հարավ-արևելքից

Նկ. 235. Տեղերի եկեղեցու գավթի արևմտյան մուտքը

Նկ. 236. Տեղերի եկեղեցու գավթի ներքին տեսքը



## ԺԵ. ԱՎԱՆ

**Օգոստոս 17**

Նույն օրն անցանք Ավան գյուղը, այս գյուղում ևս այժմ հաստատված են գաղթականներ: Ինչպես երևաց քննություններից, այս գյուղը հարուստ հնագիտական վայր է, շրջականերում միշտ գտնվում են հնություններ, հաճախ պատահում են քանդակազարդ քարեր, գերեզմաններ և նույնիսկ նախաքրիստոնեական շրջանի իրեղեններ: Շատ հին ժամանակներ իսկ բազմամարդ և շեն է եղած այս գյուղը: Գյուղի մեջ եղած եկեղեցիի կիսավեր շենքը անվրեպ պատկանում է 5-րդ դարուն:




Նկ. 237. Ավանի (Աշտարակի շրջան) 5-րդ դարի եկեղեցու հատակագիծը

Միջակ մեծությամբ մի եկեղեցի է եղած, որուն արևելյան, հյուսիսային և արևմտյան պատերը գրեթե կանգուն են: Միայն հարավային պատն է, որ փլած է, սակայն այդ պատից ևս դեռ մնացած է 80–100 սմ. բարձրությամբ պատի մնացորդ: Դուռը արևմտյան կողմից է եղած, սակայն բարավորների փլած լինելու պատճառով ճիշտ չափը հայտնի չէ: Շինության դարաշրջանին հատուկ է հատակագծի նեղ ու երկար ձևը: Պատուհանների կիսաբոլորակ վերջավորված աղեղները պայտաձև են, նույնպես պայտաձև է ավագ խորանի վերևի կամար աղեղը, խորանի հատակագիծը ևս թեթև պայտաձև է: Խորանին երկու կողմի որմնասյուները իրենց խոյակների վրա ունին հավասարաթև փոքր խաչեր, որոնք բոլորակի մեջ ամփոփված են հնագույն քանդակով: Հյուսիսային կողմի արտաքին երեսին վրա կա մի որմնասյուն, որ ապացույց է բացօթյա մի կամարակապի գոյության, ինչպես կան Ապարանի, Երերույքի, Եղվարդի և ուրիշ հնագույն եկեղեցիների վրա: Արևելյան կողմին վրա թերևս ուներ բացօթյա խորաններ, ինչպես Տեկորը, Երերույքը և Արթիկի 6-րդ դարու եկեղեցին, սակայն այժմ հայտնի չէ, պետք է որ մի փոքր ստուգողական պեղում լինի արևելյան կողմին վրա:

Այս կիսավեր շենքին մեջ ամենից ուշագրավն է քարուկիր շենքի շինության համար գործածված շաղախը, որը փոխանակ սպիտակագույն լինելու, մուգ գորշագույն է, ճիշտ այն գույնով, ինչ գույն որ ունի ներկայիս ցեմենտը: Թեև ամբողջ շենքի մեջ տեղ տեղ երևում են սպիտակ շաղախի հետքեր, սակայն պարզ է, որ հետնագույն նորոգությունների հետևանք են:

Տեղին վրա թեև երկար քննեցի այս գորշագույն կրաշաղախը՝ հասկանալու համար թե ինչ բաղադրության արդյունք է այդ գորշ ցեմենտանման գույնը, սակայն ինձ համար ոչինչ հասկանալի չեղավ: Ուստի հետերնիս վերցրինք շաղախի կոշտեր տանելու համար Երևան և տարրալուծության ենթարկելու:

## Ժզ. ԿՈՒԱՇ ԿԱՄ ԿՈՉ

**Օգոստոս 18**

Մեր արշավանքի վերջին կետն էր պատմական Կուաշ կամ Կոչ անվանված գյուղը: Պատմական անցքերով հարուստ այս գյուղում արժեր երկար մնալ և լուրջ ու մանրակրկիտ հետազոտության ենթարկել իր շրջականերով հանդերձ: Գլխավորաբար մեր ժամանակն ի միջի այլոց չէր ներում երկար մնալ այս գյուղում, ուստի աշխատանք կատարեցինք այստեղ միայն մի օր:

Կոչի հյուսիս արևելյան կողմը երկարում է մի ձոր, որուն երկու կողմը ցրված են հնագիտական հուշարձանների ավեր և կիսավեր մնացորդները: Սույն ձորի հյուսիս-արևելյան բարձունքի վրա կա մի միջակ մեծությամբ ներքուստ խաչաձև եկեղեցի՝ կանգնված 7-րդ դարուն. գմբեթը և ծածկը փլած են, իսկ պատերը տակավին կանգուն են: Զարմանալի մաքուր շինարարական աշխատանք է տարված շենքի վրա, դեղնորակ-կարմրագույն և գորշագույն քարերով է շինված ամբողջ շենքը և կարելի է ասել որ խոշորագույն քարերով, սրբատաշ են շարված բոլոր պատերը: Շենք զետեղված է արևելյան կողմից խորաձորի վրա, իսկ ամբողջությունը հիմնարկված է մի բարձրաբերձ ժայռի

վրա: Թեև այժմ եկեղեցիի շուրջը խորդուբորդ ապառաժներ միայն երևում են և դժվարամերձենալի, բացի հարավային կողմից, սակայն այս ապառաժուտ խորդուբորդության մեջ նշմարվում են վաղեմի շինության հիմեր և պատերի մնացորդներ, որոնք ապացույց են այս տեղը մի ժամանակ չեն և բնակելի լինելուն: Այս տեղերը խիտ բնակչություն լինելուն ապացույց է ոչ միայն շինությունների հիմերի գոյությունը, այլև երևում է որ եղեր է նաև խիստ կարևոր մի վայր, ուր շինված կա մի մեծ ջրամբար եկեղեցիից կես կիլոմետր դեպի հարավ: Ջրամբարը խիստ մաքուր սրբատաշ քարերով շինված է, պատերի թանձրությունը 1,45 մ. է, բարձրությունը մինչև վրայի կամարածածկի հանգիստը երկու մետր 82 սմ. է. ամբողջովին կամարածածկ է եղած ջրամբարը ներքուստ երեք ջլաղեղներով. արտաքուստ չափել այս հուշարձանը փլատակների պատճառով դժվար էր, իսկ ի ներքուստ չափն է 13,5 մ. երկայնություն, իսկ 4,82 մ. լայնություն: Մի օրյա հետազոտությունով չպարզվեց, թե ո՞ր կողմից է գալիս այս ջրամբարի ջուրը, իսկ ջրերը արտաքսելու և ջրամբարը մաքրելու համար հիմքի մոտից շինված են երկու քառակուսի ծակեր, որոնք բացվելով ջրամբարի ջուրը կդատարկվեր մինչև հատակ: ___ =| այս ձևով մի քար տակավին տեղին վրա մնացեր է, որ կծառայեր ջրամբարի ծակը խցելու համար. անշուշտ երկու կողմեն ծակերը ծածկելու համար կային նաև նույնօրինակ ուրիշ շինված քարեր, սակայն այժմ կորած են:




Նկ. 239. Կոչի ջրամբարի հատակաձևը

Ջրամբարից դեպի ցած, նույնպես ձորի աջ կողմին, մի բարձունքի վրա, կա կարմիր քարով շինված մի մատուռի մնացորդ, որուն մոտ կան պատվանդանավոր խաչարձաններ: Քիչ հեռու սույն մատուռից երևում է մի փոքր ավերակ, որուն ինչ լինելը որոշել դժվար էր, սակայն այս ավերակի արևելյան կողմին կանգնված են խաչքարեր, որոնց մեկը բավականին գեղաքանդակ և խոշոր, այս խաչքարի համար գյուղացիք ավանդաբար ասում են Տիրան պապի խաչքար: Այս Տիրան պապը թերևս այն աչագուրկ Տիրան թագավորն է, որ մեռավ Կուաշի (Կոչի) մեջ, սակայն խաչքարը, որ ուշ ժամանակի է և երբեք չի կարելի համեմատել Տիրանի ժամանակի գեղարվեստական ճաշակի հետ, սակայն համենայն դեպս նույն կույր Տիրանի ավանդությունը շարունակում է գոյություն ունենալ տեղական ժողովրդի մեջ:




Նկ. 238. Կոչի 7-րդ դարի եկեղեցու հատակաձևը




Նկ. 240. Կոչի բազիլիք եկեղեցու հատակաձևը



Այս բարձունքից իջնելով ցած, ձորի ձախ ափին մոտ, կա մի փոքր բազիլիկ ձևով եկեղեցի, որուն ծածկը քանդված է, իսկ պատերը կանգուն են, հարավային պատի արևելյան ծայրին կա մի վրացերեն խուցուրի տառերով արձանագրություն: Եկեղեցիի հարավային կողմը կան պատվանդանավոր քանդակազարդ խաչքարեր, հայտնի է, որ եկեղեցու մոտ եղել է մի գերեզմանատուն փոքր տարածությամբ, բայց նայելով խաչքարերի որակին, հայտնի մարդկանց գերեզմանատուն է եղած:

Այս փոքր բազիլիկ եկեղեցիի հյուսիս-արևելյան կողմը կբարձրանա մի մեծ քարքարուտ բլուր. բլուրի գագաթին անառիկ դիրքով շինված է մի բերդ զանազան մասերից բաղկացած: Այս ամրոցը կամ բերդը ընդհանուր նորոգության և փոփոխության է ենթարկված 13-րդ կամ 14-րդ դարուն: Վերջին նորոգությունը եղած է գեղեցիկ կարմրագույն քարերով, սակայն տեղ տեղ դեռ երևում են պատեր և պատերի մասեր, որոնց գոյությունը շատ հին է եղած, ավելի հին, քան 10-րդ դարը, և այս հին մասերին քարերը ո՛չ միայն տարբեր գույնով են համեմատելով նորագույն նորոգության քարերին, այլև շարվածքն ու քարերի չափերը բոլորովին տարբեր են: Հին շարվածքի քարերը մի քիչ սպիտակավուն են և առհասարակ դեպի բարձրությունը շարված քարերը չափազանց մաքուր և ճարտարորեն շարված են միմյանց մոտ, որ ներկա արհեստավորների նախանձը կարող է շարժել, բայց այս հիները մեծ մասամբ մաշված և քարերի անկյունները մասնավորապես փչացած են: Ի շարս մի քանի հետաքրքրական ամրոցների ինչպես Տիգնիսի, Մաղասբերդի և նմանների, արժե ունենալ չափագրված այս բերդի հատակագիծը, որը թերևս, ինչպես ասել եմ Անբերդի ամրոցի համար, լինելով բերդ կամ ամրոց, միաժամանակ եղել է նաև դղյակ:

Ինչպես Փարպիում, Թաքիայում, Բերսիում, Աղցի ձորերում, այստեղ ևս կան հետաքրքրական քարայրեր, որոնց մեկ քանիսին վրա տակավին գոյություն ունին միակտուր քարից դռների փեղկեր: Առհասարակ քարայրերի մեջերը և մոտերը գոյություն ունին տաքարներ և հնձանի հետքեր:

Կոչից դեպի Աղավնատուն գնալու ճանապարհին, Կոչից քիչ հեռու կա մի գեղեցիկ պատվանդանավոր խաչքար, որը թեև ճանապարհից դուրս, այնուամենայնիվ չվրիպեցավ մեր ուշադրությունից:

## Ը
## ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

***1924 թ. սեպտեմբերի 4-ից դեպի Շիրակ և Արագած լեռան հյուսիս-արևմտյան լանջերում կատարած շրջագայությանս:***

### ա. ՄԱՐՄԱՇԵՆ

1924 սեպտեմբեր 4-ին Էջմիածնից մեկնեցի դեպի Կումայրի (Լենինական) հնագիտական տեղեկագիր և ցուցակագրություն կատարելու համար: Պաշտոնական և այլ կարևոր գործերով մնացի Կումայրիում և սեպտեմբեր 9-ին ուղևորվեցի դեպի Մարմաշեն: Դեռ չհասած Մարմաշեն, ճանապարհից շեղվելով, այցելեցի մոտերը գտնված բևեռագիր արձանագրության վայրը: Բևեռագիրը անաղարտ պահված էր տեղին վրա, բայց շրջապատը անխնամ վիճակի մեջ էր: Սկզբում բևեռագիրը, որ փորված է եղել մի բարձր մեծ ժայռի վրա, շրջապատված է եղել բնական և արվեստական շրջապատով, որով առանձնացած էր: Միայն մի նեղ մուտքով հնարավոր է եղել մտնել շրջափակին մեջ: Իբրև շրջափակ ծառայող բնական ժայռերը դեռ իրենց տեղում կմնան, իսկ արվեստական կերպով հարավ-արևելյան կողմին վրա շինված կիկլոպյան քարերով պատին միայն հետքն է մնացեր հողին երեսը: Բևեռագիրը փորագրված ժայռեն դեպի հարավ շարունակության վրա, ինչպես նախաքրիստոնեական բնակչությանց ուրիշ վայրերի մեջ, փորագրված են նույն խորհրդավոր բոլորակ փոսիկները, որոնց ամենից մեծը 10 սմ. տրամագիծ ունի, իսկ մյուսները անհավասար մեծությամբ ավելի մանր են:

Բևեռագրից հետո գնացի, նախապես ուրարտական, իսկ հետո Վահրամ Պահլավունիի անվան վերագրված ամրոցի ավերակները տեսնելու: Բևեռագրից գրեթե հարյուր հիսուն քայլ հեռավորության վրա կգտնվի այս բերդը և շրջապատող վայրերի վրա խիստ որոշ կերպով կտեսնվի նախաքրիստոնեական շրջանի մարդկային ձեռագործ աշխատանքի հետքեր, ինչպես մեծամեծ քարերով շինված փլատակ պատեր, խոռոչներ, գերեզմանների նմանող հողային կույտեր՝ քարերով խառնված: Այսօրվան Մարմաշեն տանող ճանապարհը մոտիկ է անցնում այս բերդին և շատ որոշ է դեպի բերդը տանող ճանապարհը: Բերդի հարավ արևելյան կողմը հատկապես հարթված է ի հնումն և թերևս այս կողմը եղել են ծառաստաններ և պարտեզներ:



Նկ. 241. Մարմաշենի կաթողիկե եկեղեցին հարավ-արևմուտքից

Նկ. 242. Մարմաշենի 7-րդ դարի ավերակ եկեղեցին հյուսիսային բարձր բլուրի վրա

Բերդի մուտքը գրեթե հարավային կողմի վրա կգտնվի, դրան երկու կողմը շինված է եղել հսկայական բուրգեր՝ կիսաբոլորակ ձևով, որոնց այժմ փլատակներն ու հիմերը կերևան: Վահրամաշեն այս բերդի համար վերջերքում գործածվեր են հրաբխային կարմիր և դեղնորակ քարեր, սրբատաշ և չափավոր մեծությամբ: Բերդը նեղ ու երկար ձև ունի՝ հարավից դեպի հյուսիս երկարած. մեջը ամբողջովին բնակության համար շենքեր են շինված, որոնց այժմ հիմերը միայն որոշակի մնացեր են. եթե մի փոքր մաքրվի փլատակներից և կուտակված հող ու ավազներից, հնարավոր է կազմել ամբողջ բերդի հատակագիծը մեջի շինություններով միասին: Ուրիշ կողմերի վրա, բացի գլխավոր մեծ մուտքից, դուռ ունեցե՞ր է թե ոչ հայտնի չէ, քննություն եթե կատարվի թերևս հայտնի լինի:

Արևմտյան և հյուսիսային լանջերը գրեթե միանգամայն անմերձենալի են: Բերդակիր մեծ բլուրի արևմտյան կողմը, որ հեղեղատի կամ փոքր ձորի նմանություն ունի, նախորդ այցելության ժամանակ տեսել էի այս հեղեղատի ծայրում մի արվեստական մուտքի բերան, կամ մի անցք, որ գնում էր ուղիղ դեպի բերդի տակը: Դեռ այն ժամանակ ինձ հնար չեղավ այս անցքի խորքը մտնել, որովհետև թե՛ ներսի փլվածքներից և թե՛ դրսի հեղեղատներից լցվեր էին քարեր և հող, և մասամբ խափանել էին մուտքը, սակայն երևում էին մուտքի շինության համար երկու կողմի վրա կանգնված քարեր և կանգնված քարերի վրա ծածկված մեծամեծ սալաքարեր: Բայց այժմ, ինչպես կերևի, հեղեղատի մշտապես հոսումից բոլորովին փակված է մուտքի բերանը և տեղը հազիվ թե հայտնի է: Նախկին այցելության ժամանակ գյուղացի ծերեր հավաստում էին, որ այդ մուտքի հեղեղատի մոտերը ևս կա եղեր մի ավելի ընդարձակ բևեռագիր արձանագրություն, սակայն անհայտացել էր դեռ այն ժամանակ, և չգիտեին թե ուր մնաց և ի՞նչ եղավ:

Բերդը քննելուց հետո, սկսեցի իջնել զառիվայրը, շարունակելով ճանապարհս դեպի գյուղ, որուն կից են հռչակավոր Մարմաշենի չքեղ և գեղարվեստական հուշարձանները:

Զառիվայրի վերևից արդեն կերևա մոտակա գյուղի ծայրին հոյակապ հուշարձանների շարքը, որոնց մեջ բարձր և չքեղ գմբեթով գրեթե անարատ մնացած է Վահրամ Պահլավունիի կանգնած հոյակապ կաթողիկեն: Բացի Վահրամաշեն կաթողիկեի անմիջապես մոտը կանգնված գեղեցիկ շենքերից, դեպի հյուսիս, կես կիլոմետրի վրա, կա մի 7-րդ դարու եկեղեցու ավերակ, որի հյուսիսային կողմն է միայն կանգուն մնացած (նկար 242):

Նկ. 243. Մարմաշենի Վահրամաշեն և ավերակ եկեղեցիները



Նկ. 244. Մարմաշենի Վահրամաշեն տաճարի հյուսիսային կողմի եկեղեցու ներքին տեսքը

Մարմաշեն գյուղը, որ այժմ Ղանլիճա անունն ունի, ամբողջովին շինված է մի ընդարձակ հնագիտական վայրի վրա: Տներ շինելու համար ամեն անգամ հողը վարելիս գտնվում են արձանագրությանց բեկորներ, գեղաքանդակ շենքի մասեր և բազմաթիվ հին շենքերի հիմքեր: Սույն հուշարձանների գյուղից հարավ գրեթե մեկ կիլոմետրի վրա կա մի ուրիշ գյուղ, դարձյալ միևնույն Ղանլիճա անունով, որը ոչ միայն քրիստոնեական հին հուշարձանների մնացորդներ ունի իր մեջ և անմիջապես շրջակայքում, այլև շրջապատված է նախաքրիստոնեական շատ հին մնացորդներով: Այս գյուղի վերևը, արևելյան կողմի բարձունքի վրա է, որ կգտնվի ժայռի վրա փորագրված ծանոթ բևեռագիր արձանագրությունը: Գյուղացի ծերերի պատմելով այս գյուղից են տարեր Վահրամաշեն կաթողիկեն կանգնված գյուղը Վահրամի և իր կնոջ Սոփիայի տապանաքարերը: Պատմական այս արժեքավոր տապանաքարերը մնում են Վահրամաշեն կաթողիկեի արևելյան կողմի հին գերեզմանատան մեջ, բովորովին անխնամ, փչացման և կորստյան ենթակա վիճակի մեջ, և արդեն ինչպես կերևի լուսանկարներից, կոտրատվել և մաշվել են թե՛ բնության ազդեցության և թե՛ տգետ մարդկանց անհոգության պատճառով:

Վահրամի կանգնած կաթողիկեն թե՛ ներքուստ և թե՛ արտաքուստ գրեթե անվնաս մնացած է, բացի հարավ արևելյան անկյունի ճեղքվածքից, որ առաջացել է պսակի մոտից: Շինված է կարմրագույն քարերով գեղեցիկ և սրբատաշ. հարավային պատի վրա ունի շինության մեծ արձանագրություն. ըստ այդ արձանագրության հիմնարկված է 986 թվականին և վերջացած է 1029 թվականին, մոտավորապես 43 տարվան մեջ: Ինչպես կերևի, շինությունը պարբերաբար ընդհատված է եղեր, որ այդքան ուշ վերջացել է, եթե ոչ այդքան երկար տևելու չափ մեծ չէ շենքը (նկար 243):

Վահրամաշեն կաթողիկեի հյուսիսային կողմը գրեթե մեկ և կես մետր հեռավորության վրա կանգնված է եղեր մի ուրիշ գողտրիկ շենք՝ ավելի հնագույն, քան Վահրամաշեն կաթողիկեն, որուն արևմտյան մասը և գմբեթը ամբողջովին փլած է (նկար 244): Սակայն իր գեղեցիկ ոճով և շինարարական ճարտարությամբ և մաքրությամբ գրեթե պակաս չէ քան Վահրամաշեն կաթողիկեն:

Վահրամաշեն կաթողիկեի հարավային կողմը 10–15 քայլի վրա, շինված է մի ուրիշ փոքր մատուռ, որը դատելով իր դռան և գմբեթի ոճից, պետք է որ շինված լինի 11-րդ դարու մեջ, նույնպես խնամոտ շինարարությամբ և գեղեցիկ սրբատաշ քարերով (նկար 245): Սույն փոքրիկ շենքի ստորին մասի արտաքին երեսի քարերը քանդված են եղել մի ժամանակ, բայց ալեքսանդրապոլցիք նորոգեր են մասամբ:

Նկ. 245. Մարմաշենի փոքր եկեղեցին (Վահրամաշեն եկեղեցու հարավային կողմում)



Վահրամաշեն կաթողիկեն արդեն վաղուց չափագրած էի, այս անգամ չափագրեցի և հատակագծեցի փոքր մատուռը, որ վերածել եմ ժամանակավոր թանգարանի, թեև այնտեղ եղած գեղարվեստական բեկորների համար շատ փոքր է: Հարմար կլիներ Վահրամաշեն մեծ կաթողիկեն վերածել թանգարանի, ուր այժմ ծիսական արարողություններ չեն կատարվում և վերին աստիճան անխնամ թողված է: Իմ այցելության ժամանակ գյուղխորհրդի նախագահը բացակա էր, օգնականին խնդրեցի պահպանել թե՛ շենքերը և թե՛ նրանց շուրջ թափված պատմական արժեք ունեցող բեկորները:

Շատ երկար կլինի Մարմաշենի շրջանում եղած բոլոր հնությունները հիշատակել, միայն պիտի բավականանամ հիշատակելով մի շատ կարևոր մնացորդ, որ ըստ ամենայնի ուշադրության արժանի է: Սկսած Բագրատունի շրջանից, թերևս ավելի հին ժամանակներից, Ախուրյան գետի վրա գոյություն ունեցեր են բազմաթիվ կամուրջներ, որոնք մեծավ մասամբ երկհարկանի են եղած՝ ինչպես Անիի, Զրփրլուի, Ղեղաճի կամուրջները, նույն ձևով կա մի կամուրջի ավերակ ևս Մարմաշենի Վահրամաշեն կաթողիկեից դեպի հարավ (Վարի Ղանլիճա գյուղի մոտ), այս կամուրջը ևս եղել է երկհարկանի, ինչպես կերևի ավերակի լուսանկարին մեջ. կամուրջի աջ ոտքը միայն մնացել է մասամբ, իսկ ձախ ոտքը հեղեղները սրբել են միանգամայն:

Այս կամուրջը հիշատակված է Վահրամաշեն կաթողիկեի հյուսիսային կողմի մեծ արձանագրության մեջ, եկեղեցիի նորոգության վերաբերյալ: Այս արձանագրութենեն կհետևի, որ այս կամուրջը վաղուց գոյություն ուներ և թերևս Բագրատունիների օրով շինված էր, այժմ իսկ իր ավերակ վիճակին մեջ երևում է թե որչափ մեծ և հոյակապ է եղած այս կամուրջը:

Վահրամաշեն կաթողիկեն և անմիջապես մերձակա եկեղեցիները և վանական հաստատությունները շրջապատված են եղել ընդարձակ պարսպով, եկեղեցիների արևմտյան կողմը, գետեզերքի վրա, տակավին գոյություն ունի այդ ընդարձակ պարսպի արևմտյան մասը, մաքուր սրբատաշ քարերով շինված, շինվածակերպը ցույց է տալիս, որ այդ պարիսպը շինված է 11-րդ դարուց ոչ ուշ: Պարիսպի միայն գետեզերքի մասն է մնացել, մնացած մասերը միանգամայն անհայտացել են զանազան նոր շինությունների պատճառով, նույնիսկ այս շրջափակին մեջ երևում են այլ և այլ հին շինվածների հիմքեր՝ նույնիսկ եկեղեցիի հատակագծերին նմանող մնացորդներ և մի մեծ բոլորակ շինության հիմքերը:




Նկ. 246. Մարմաշենի փոքր եկեղեցու հատակաձևը

Գյուղից դեպի հարավ 3–4 կիլոմետր հեռավորության վրա, կա մի ամբողջական գյուղի մնացորդ, որի փլատակների մեջ երևում է մի գեղեցիկ քանդակազարդ մատուռի ավերակ, ձիթհանքեր և ուրիշ հետազոտության արժանի մնացորդներ: Խիստ գեղեցիկ է եղած այս մատուռը՝ հետևցնելով մեջը թափված գեղաքանդակ քարերից: Գյուղացիք պատմում էին, որ մի քանի տարի առաջ գրեթե կանգուն է եղած այս մատուռը, սակայն զինվորական ամառանոց (բալիկոն) շինելու ժամանակ քանդել են այս մատուռը զինվորականներ և քարերը տարեր են շինության մեջ գործածելու համար: Այս գյուղին կից կա նաև մի գերեզմանատուն արձանագրված քարերով և հաստատուն ժայռերից ձևակերպված տապանաքարերով. հաստատուն ժայռերի վրա փորագրված են խաչեր և արձանագրություններ: Այս մնացորդները ցույց են տալիս, որ գետեզերքի վրա Մարմաշենի մոտիկ մի շեն գյուղ է եղեր այս տեղը և ամենայն հավանականությամբ Վահրամաշեն կաթողիկեի հյուսիսային կողմի արձանագրության մեջ հիշված Տիրաշեն գյուղը: Գետի երկու եզերքին վրա դեռ մինչև այժմ երևում են հին ջաղացների և ձիթհանքերի մնացորդներ այս գյուղին հատուկ:

## Բ. ՂԱՓԸԼԻ

Կումայրիից սեպտեմբերի 10-ին մեկնեցի դեպի Ղափըլի գյուղը, որ գտնվում է Կումայրիի (Լենինական) շրջանում: Երրորդ անգամն էր որ այցելում էի այս նախնադարյան և ուրարտական հնություններով հարուստ գյուղը: Նախորդ այցելություններս փոքր ինչ սահմանափակ եղած էին, այս անգամ հնար եղածին չափ ավելի ընդարձակ սահմանի մեջ կատարեցի հետազոտություններս:

Գյուղի մեջ կա մի ավերակ բերդ, որուն գյուղացիք Ղուլա անունն են տալիս: Այս բերդը շինված է սրբատաշ քարերով և նայելով շինելակերպին 12–13-րդ դարերու գործ է և ոչ ավելի հին, սակայն հայտնի է, որ հիմքից նոր չէ շինված այս բերդը:

Շատ հին ժամանակ, թերևս նախնադարյան շրջանում այդ միևնույն տեղին վրա եղել է բավականին ընդարձակ մի ամրոց՝ կիկլոպյան հսկա քարերով անշաղախ շարված հսկա պատերով: Նույնիսկ ունեցել է քառակուսի բուրգեր արտաքուստ, սակայն ժամանակի ընթացքում ավերվել է: Սակայն վերջին դարերում տեղին բարձրադիր ամրությունը և հարմարությունը բերդի համար, ստորին շարքերը թողելով նախնական վիճակին մեջ վրան շարել են հրաբխային սրբատաշ քարերով բարձր պատեր, նույնիսկ պահել են նախնական բուրգը՝ վրան սրբատաշ քարերով պատ շարելով:

Հետագայում նոր բերդը կանգներ են հին նախնադարյան ամրոցի մեկ մասին վրա. և բերդին շուրջը թափված քարերը այնքան հսկայական մեծություն ունեցեր են, որ ոչ միայն վերջին բերդի շինության ժամանակ տեղնուտեղը թողել են առանց մաքրելու և տեղափոխելու, այլև մինչև այսօր իսկ մնում են հսկայական որձաքարի զանգվածներ՝ ոմանք հին պատերի տեղին միմյանց վրա դրված և ոմանք անկարգ կերպով գլորված զանազան կողմեր:

Գյուղի հարավ արևմտյան կողմը, գրեթե գյուղին կից, երևում են նախնադարյան ժամանակի մի քաղաքի կամ ընդարձակ գյուղի բնակարանների մնացորդներ բավականին խիտ, բայց սաստիկ ավերված ու քայքայված: Հազիվ մի քանի տեղերում երևում են երկու կամ ավելի մետր բարձրությամբ պատերի մնացորդներ, որոնք ևս հետզհետե քայքայվելու և անհայտանալու վրա են: Ինչպես երևում են հետքերից, վերջին 12–13 դարերին նորոգ շինված բերդի ժամանակ մարդկային բնակություն է եղել հնագույն քաղաքի կամ գյուղի մեջ, որոնք հավանորեն ընդհանրապես օգտվել են հնագույն պատերից՝ իրենց բնակարանների համար: Այս տեղի վրա ժողովրդի վերջին բնակության ապացույց է ավերակների կենտրոնի վրա գտնված մի մատուռի մնացորդը, որ թեև մինչև հիմքը կործանված է, սակայն կան մեջը քանդակազարդ քարեր, որոնց ոճը բացարձակապես 13-րդ դարաշրջանին կպատկանի: Ըստ գյուղացիների տեղեկության, այս ավերակների մոտերքը հաճախ գտնվում են երկու տեսակի գերեզմաններ. մեկ տեսակը քրիստոնեական սովորական գերեզմաններ են, իսկ մյուս տեսակը քարե սալերով արկղաձև շինվածներ, որոնց մեջ գտնվում են կմախքներ և կճուճներ: Բացի մոխրալից կամ հողալից կճուճներից, զանազան տեսակ մեծ ու փոքր ուլունքներ, բրոնզյա ապարանջաններ և ուրիշ բրոնզյա իրեղեններ կգտնվին այդ գերեզմանների մեջ: Սալաքարերով շինված գերեզմաններից ջոկ, կան միակտուր քարից փորված մարդաչափ մեծությամբ դագաղներ, որոնց վրաները դարձյալ ծածկված են սալաքարերով: Դագաղին մեջ գտնվում են հաճախ ուլունքներ, բրոնզյա ապարանջաններ և մանր կճուճներ: Այս գյուղի շրջանում գտնվում են մարդաչափ մեծությամբ կարասներ, որպես դագաղ գործածված: Կարասները թաղված են նախապես մեծամեծ սալերով արկղաձև պատրաստված տեղի մեջ և վրան հողով ծածկված, կարասների մեջ միմիայն մարդկային ոսկորներ են գտնվում: Նույնիսկ այս տարի գտնվել են տասից ավելի քարափոր դագաղներ և կարասներ, սակայն ինձ անձամբ չհաջողվեց տեսնել տեղին վրա նրանց դասավորությունը: Քարե դագաղները տեղերից հանելով տարել են դրել գյուղացիք իրենց գոմերի դռանը՝ անասուններին ջուր խմեցնելու համար: Իսկ գյուղացիների ասելով, կարասներն արդեն մինչև հողից հանելը փշրել են և կտորները ոչնչացրել: Ի դեպ, պետք է ավելացնեմ, որ գյուղացիներից մեկը՝ նախորդ անգամ գնալուս, բերավ ագաթ քարի վրա փորագրված մի քառակուսի կնիք ինձ անհասկանալի նշանագրեր փորագրված վրան, բայց այնպիսի առասպելական գին ուզեց, որ ինձ համար անհնար եղավ նույն հետաքրքրական կնիքը գնել. այս անգամ թեև հետաքրքրվեցի, բայց այլևս այդ մարդը չգտա գյուղում և տեղ գիտցող չեղավ:

Հետզհետե ճանապարհս շարունակելով դեպի հարավ արևմուտք, տեսա մի շատ հետաքրքրական աղբյուր, ջուրը դուրս է գալիս գետնի միջից երկու տարբեր տեղերով: Ջուրը դուրս գալու տեղից սկսում է անտաշ սև քարերից երկու զուգահեռական շարքեր ուղիղ գծով դեպի նախնադարյան քաղաքի ավերակները, անշուշտ նախնական ձևով առանց խողովակի շինված է ջրի ճանապարհը և ջուրը բերված է նախնադարյան ավերակներից 3–4 կիլոմետր հեռավորության վրա գտնված լեռներից: Տարակույս չկա, որ ավերակ քաղաքի ջրերն ևս գալիս էին այս ճանապարհով: Առաջանալով աղբյուրից դեպի հյուսիս արևելք կրկին երևում է հողի երեսին ամրոցանման պատերի հիմքերու մնացորդներ, ավելի քան երկու և կես մետր լայնությամբ: Այս պարսպանման մնացորդներից դեպի արևելք գտնվում է Շահ թափա (Արքայաբլուր) կոչված արվեստական մեծ բլուրը: Այս բլուրը գտնվում է միանգամայն տափարակ դաշտի վրա, ունի նեղ ու երկար ձև: Բլուրի բարձրությունը կհասնի գրեթե 8 մետրի: Բլուրի վրան միանգամայն հնագույն մաքրված և արտի է վերածված ներկայիս: Երկայնությունը ուղղված է արևելքից արևմուտք. վերևի կողմից շրջապատված է եղել հաստ պարիսպով մոտավորապես 2,70 մ. հաստությամբ: Բլուրի երկարությունը գագաթի վրայից 122 մ. է, լայնությունը 47–48 մետր: Պարիսպների համար գործածված են առանց բացառության մեծազանգված որձաքարեր, առանց շաղախի, և իսկական հիմքերը գտնվում են թերևս բլուրի ութ մետր բարձրությունից ցած դաշտի հողերի վրա: Լանջերը թեքված են դեպի դուրս և վրաները երևում են, բացի շրջապատող պարսպից, շառավիղաձև պատեր՝ դեպի ցած նույնպես անտաշ որձաքարերով: Շրջապատող պարսպի մեջ տեղ տեղ երևում են շինությանց հետքեր, որոնց ինչ տեսակ շինություններ և ինչ ժամանակի մեջ տեղ տեղ երևում են շինությանց հետքեր, որոնց ինչ տեսակ շինություններ և ինչ ժամանակի լինելը ստուգելու համար որոշ չափով պեղման կկարոտի: Արևելյան ծայրին վրա երևում են անհեթեթ մեծությամբ որձաքար ժայռեր, որոնք բնական ժայռի տպավորություն են թողնում, սակայն նույն մեծությամբ ժայռեր տեղափոխելու և ուզած տեղերը զետեղելու օրինակներ շատ են տվել նախնադարյան շրջանի մարդիկ: Հավանական եմ կարծում, որ բլուրի ամբողջ երկարությամբ նախ մեծամեծ ժայռերով կազմած են բարձրությունը և հետո վրան հող լցրած: Արևմտյան ծայրին բացված էր մի փոքր ծակ, որուն մեջ մտցնում էին երկար գավազաններ կամ ձողեր, սակայն մինչև հատակ չէին հասնում: Թերևս բլուրի ներքև գտնվում են առանձին բաժանումներ գերեզմանների կամ դամբարանի համար: Առանց այդ դիտավորության միտք չէր ունենալ այս մեծ բլուրը կազմելու: Բլուրի շրջապարիսպին դուռը հայտնի է հյուսիսային կողմի վրա, իսկ ուրիշ կողմերում դուռ ունեցել է թե՞ ոչ, առայժմ տեղի վրա հայտնի չէ:

Հետևյալ օրը (սեպտեմբեր 11) գյուղից երեք կիլոմետրի չափ դեպի հարավ, այցելեցի այն սարը, որուն գյուղացիք Բերդ անունն են տալիս: Նախորդ տարիների այցելություններիս ժամանակ թեև լսել էի այս բերդի մասին, սակայն անձամբ չէի գնացել մինչև գագաթը: Դաշտային մասը անցնելուց հետո, երբ մոտենում ենք սարալանջին, այստեղից արդեն հայտնի է բերդ բարձրանալու հին ճանապարհը, մոտավորապես հինգ մետր լայնությամբ, իր ժամանակին շատ լավ հարթված և եզերքները քարերով պահպանված է եղել մինչև գագաթ բարձրանալով՝ հարավային մեծ դռան առջև հասնելը: Հարավային դուռն այժմ քայքայված է, սակայն տեղը հայտնի է երկու բուրգերու միջև, այժմ ևս ուրիշ տեղից բերդի մեջ մտնելու անցք չկա հարավային կողմից, բացի այդ փլատակ դուռը: Բերդին միջի տարածությունը բավական ընդարձակ է, կան մի շարք շինությանց հետքեր, կրոմլեխներ՝ շատ նման նախնական տիպերին, այս կրոմլեխներեն մեկը լուսանկարեցի կողքին ընկած մի հաստ մենաքարով միասին: Այս մենաքարին մի կողմը հաստ է, իսկ մյուս կողմը՝ բարակ, այս բարակ կողմից քարը կոտրած է, որով երկարության նախկին չափը մնում է անորոշ. մոտավորապես քառակուսի է մենաքարը անհավասար կողմերով. լայն կողմը 53 սմ. է, իսկ նեղ կողմը՝ 39 սմ., քարի երկարությունն է 1,73 մ. մինչև կոտրած գլուխը: Այս բերդի շինությունը իր շինվածակերպով անվրեպ ժամանակակից է Աղիամանի մոտակա բարձունքների վրա շինված վարի Բերդին և Ղըրխ Դակիրմանի մոտի մեծ բերդին: Այս շինությանց ոճը նախապատմական երկրորդ շրջանի բերդաշինության ոճն է, քարերը անտաշ, բայց համեմատաբար փոքր են, և ունին հորիզոնական լարաձիգ ուղղությամբ շարքեր միմյանց վրա: Հարավային և արևելյան կողմերը, որոնք փոքր ի շատե մատչելի են, ամրացված են քառակուսի բուրգերով. հարավային կողմը ունի հինգ բուրգ, իսկ արևելյան կողմը՝ չորս բուրգ: Արևելյան կողմեն ևս թեև դուռ ունեցել է, սակայն փլուզմամբ փոխվել է մի քարակույտի, որով հայտնի չի լինում թե ի՞նչ մեծություն և չափ ուներ: Բերդի մեջը տեղ տեղ, մասնավորապես ընկած մենաքարի մոտերը, զանազան քարերի վրա փորագրված են 5 սմ. տրամագծից մինչև 12 սմ. տրամագիծ ունեցող կլոր փոսիկներ, ինչպես որ տեսանք Մարմաշենի բևեռագրի մոտի ժայռի վրա (նաև Աղցում մի ամբողջ մեծ ժայռի ճակատին փորագրված են այս խորհրդավոր բոլորակ փոսիկները): Բերդի շրջապատից դուրս ևս զանազան քարերի վրա կան այս բոլորակ փոսիկներից և ասոնցմե ոմանց տրամագիծը կհասնի 20–25 սմ.:

Բերդից դեպի արևմուտք կա մի ուրիշ բարձրություն, գրեթե բերդի հավասար բարձրությամբ, որուն ամենաբարձր կետին վրա կա անտաշ մեծ քարերով շարված մի բոլորակ, որուն գյուղացիք միտուռ անունն են տալիս: Այս մնացորդի նախնա-

կան վիճակը չէ մնացած, պարբերաբար ավերումների պատճառով: Վերջին ժամանակները, թերևս հին մի ավանդության հիման վրա, քրիստոնեական մատուռի են վերածել: Շինվածքները հետնագույն կարկատաններով թեև այլայլված, սակայն երևում է, որ նախապես եղած է մի դղյմեն Օշականում և այլ տեղերում գտնված դղյմենների նման, նախնական ժամանակի վրայի ծածկույթ մեծ սալաքարերն ընկած են մեջը և այսօր ևս կերևին հատակին վրա կիսով չափ թաղված հողին մեջ:

## գ. ՍՈՆԳՈՒՐԼՈՒ

**Սեպտեմբեր 11**

Սեպտեմբեր 11-ին, երեկոյան մոտ, Ղափըլուից հեռացա և ուղևորվեցի դեպի մոտակա Սոնգուրլու գյուղը: Այս գյուղի մեջ հնությանց հետքեր չեն երևում, սակայն գյուղի կողքին գտնված ձորի մյուս ափին գյուղացիք շիներ են փոքր շինություններ, որպես ուխտատեղի կամ մատուռներ՝ հետևելով անշուշտ հին ավանդություններին: Մատուռներ կանգնված հողամասը, որ այժմ գյուղական գերեզմանատուն է, եղել է նաև ի հնումն գերեզմանատուն: Հին գերեզմանատան տապանաքարերի մեծ մասը թաղված են հողի տակ՝ հազիվ նշմարելի է նրանց ոևէ մասը: Այժմյան գյուղացիք իրենց ննջեցյալի վրա քար ձգելու համար, օգտվում են հին տապանաքարերից: Բացի հին տապանաքարերից ներկա գյուղացիք իբրև տապանաքար գործածել են 10–11-րդ դարու գեղաքանդակ խաչքարերի բեկորներ, խարիսխներ, խոյակներ և ուրիշ շինությանց սրբատաշ քարեր: Այս քանդակագործական և ճարտարապետական գեղեցիկ բեկորները ցույց են տալիս, որ ի հնումն այս տեղերում եղել է խիտ բնակչություն, նաև եկեղեցի: Ճարտարապետական մնացորդ խոյակները շատ նման են Խծկոնքի սբ. Սարգիս եկեղեցիի ներքին որմնասյուների խոյակներին, որ նմանապես 10–11 դարերու շենք է և քանդակագործության այդ ոճը հետագայում գրեթե փոխված և մոռացված է, տեղի տալով նորագույն ձևերի: Գյուղի պաշտոնական անձանց խնդրեցի, որ իբրև մատուռ շինված շենքերից մեկը հատկացնեն թանգարանի կամ գեղարվեստական բեկորների հատուկ ժամանակավոր պահեստի: Մասնավորապես հանձնարարեցի, որ հնար եղածին չափ շուտով վերցնեն և պահպանեն մի մեծ խաչքարի կտոր, որ գործածել են իբրև տապանաքար, որուն նման ճոխ և ճարտար փորվածք ունեցող և իր առանձնահատուկ ոճով, գրեթե ես առաջին անգամն էի տեսնում 10–11-րդ դարերի քանդակագործության մեջ:

## դ. ՀՈՌՈՄ

Երկրորդ անգամն էր, որ այցելեցի Հոռոմ գյուղը, սեպտեմբեր 12-ին գյուղի շրջակայքի նախնադարյան ավերակներն ու ամրոցները հետազոտելու համար: Գյուղը ներկայիս շինված է մի շարք բարձր բլուրների ստորոտին, իսկ բարձրը, բլուրների վրա, գտնվում է նախնադարյան մի մեծ քաղաքի և ամրոցների ավերակներ, որոնք հոռոմցիները անվանում են Ղալաիչի:

Սոնգուրլիից դեպի Հոռոմ տանող ճանապարհը դեռ Հոռոմ չհասած, կես կիլոմետր մնալով, սկսում են երևնալ ճանապարհի աջ և ձախ կողմերի վրա կրոմլեխներ, որոնք թեև ճանապարհին անցուդարձ անող սայլերի, մարդկանց և անասունների ոտատակ տրորվել ու մաշվել են, այնուամենայնիվ դեռ բոլորովին չեն կորած հետքերը: Այստեղ ես չափեցի երկու անսովոր մեծությամբ կրոմլեխներ, որոնց մեկուն տրամագիծն է 7 մ. 50 սմ., մյուսինը՝ 5 մ. 20 սմ.: Այս կետից սկսած մի ճանապարհ ձախ կողմից բարձրանում է դեպի բլրագագաթները, իսկ աջ կողմն երկար տարիներե ի վեր մշակել և արտերի ու բանջարանոցների են վերածել, որով կորսվեր են բոլոր հնությանց հետքերը: Այս արտերը ու բանջարանոցները մոտավորապես մեկ մետր ցած են ճանապարհից, որուն պատճառը շատ պարզ է, տարիների ընթացքում շարունակ մաքրել են այդ կողմի վրա գտնված նախնադարյան շրջանի պատերի մնացորդներ, գերեզմաններ և այլն, որով հողը այդքան ցածրացել է մեջը գտնված քարերը մաքրելու հետևանքով:

Այս անգամ Հոռոմ այցելությունս խիստ տխուր տպավորություն թողեց իմ վրա. 1911 թվականին այցելությանս ժամանակ, ինչ որ տեսել և լուսանկարել էի ավերակներից, կիկլոպյան պարիսպներից, ոչ մեկը նույն վիճակի մեջ չէր մնացած: Գյուղացիք անդադար քանդում են պատերն ու գերեզմանները և քարերը տանում են գյուղ իրենց այժմյան պետքերու համար: Մի քանի պարսպամասեր գրեթե բոլորովին անհայտացել են, իսկ մնացածներն ևս անհետանալու և այլափոխվելու վրա են: Եթե վաղօրոք առջևը չառնվի այս ավերածության, շուտով կկորչին պատմական կարևոր հուշարձանների հազվագյուտ նմուշներ:

Հոռոմ գյուղի մոտի նախնադարյան քաղաքը (այժմ Ղալաիչի) շինված է եղել գյուղին կից բարձր բլուրի վրա, որուն նիստը սկսում է նույնիսկ գյուղից և զառիվեր թեք բարձրանալով հասնում է գագաթին: Գագաթը շատ ընդարձակ է, թեև խորդուբորդ, ունի իր ընդարձակ տարածության մեջ բլրակներ, փոսեր, զառիվայրեր և հարթ մակերևույթով մասեր, սակայն այս անհավասար մակերևույթով ընդարձակ տարածության վրա մի ժամանակ խտացած է եղել բնակիչների մի հոծ բազմություն: Գրեթե ազատ տեղ չէ մնացած, բնակարանների հիմերը միմյանց այնքան մոտիկ են, որ տեղ տեղ հազիվ մեկ կամ երկու մետր տեղ մնացած է փողոցների լայնության համար: Թեև տեղ տեղ մինչև 5 մետր լայնության փողոցներ ևս կան, բայց այս լայն փողոցները խիստ կարճ են և խառնվում են նեղ փողոցների հետ: Բնակարանների խտությունը սկսվում է Հոռոմ գյուղի մոտից և շարունակվում է մինչև գագաթ. այս բլրի գագաթը բարձրացող բնակարանների խտության մեջ երևում են նաև ձեռագործ ստորերկրյա այրեր, որոնց մուտքերը այժմ խափանված են: Բլուրի բարձրության վրա ընդարձակ քաղաքը ամբողջովին շրջապատված է եղել մեծազանգված որձաքար պարիսպներով՝ առանց շաղախի: Իսկ քաղաքին մեջը, զանազան պարիսպներով բաժանված է քաղաքամասերի, որոնց պատերը նույնպես շինված են որձաքարի մեծամեծ զանգվածներով:

Արտաքին շրջապատի պարիսպները ունեցեր են հսկա քառակուսի բուրգեր, բոլորովին նախնական ձևով շարված, գրեթե քարերի կուտակումներ են քան թե շարք, ամենայն հավանականությամբ այս բուրգերը բրգաշինության առաջին շրջանին կպատկանին, որովհետև հետագայում շինված բուրգեր շատ կան, որոնք ավելի կանոնավոր շարքի են ենթարկված: Ընդարձակ քաղաքը պարիսպից դուրս շրջապատված է միմյանցից բարձր ու ցածր մեծամեծ բլուրներով: Այս քաղաքատեղի դիրքը կարծեք հատկապես ընտրված է ամրության համար, արևելքից և հարավից կիսալուսնաձև կշրջապատեին քաղաքը մեծամեծ բլուրները, իսկ մյուս կողմերի վրա քաղաքատեղը ինքը բարձր դիրքի վրա էր և գրեթե անմատչելի այն ժամանակ: Այս բլուրներեն ամենաբարձրը հարավային կողմի բլուրն էր, շրջապատված վիթխարի կիկլոպյան պատերով, իսկ մյուս բլուրները, թեև համեմատաբար ցած քան այս հարավային բլուրը՝ սակայն բոլորն էլ շրջապատված են հաստակառույց պարիսպներով և խիստ շատ ուսումնասիրելի շինությանց մնացորդներով:

Գյուղի արևելյան կողմին անմիջապես կից բլուրի գագաթին, որ շրջապատված է առանձին պարիսպով, մեջտեղի հարթության վրա կա մի շատ հետաքրքրական շինության մնացորդ: Ամեն անգամ այցելությանս միջոցին երկար կանգ եմ առել այստեղ հասկանալու համար, թե ինչ շենքի մնացորդ է, սակայն վերջնականապես այն եզրակացության եմ եկել, որ առանց մասնավոր պեղումների անհնար է որոշել այս տարօրինակ շենքի հատկանիշը, որը թեև շինված է նախնադարյան շենքերի բոլորովին նման կառուցմամբ, սակայն ձևով միանգամայն եզակի հատկություններ ունի:

Շենքը գրավում է պարիսպով շրջապատված մասի մեջտեղը և հետաքրքրական է մի քանի տեսակետներով: Հատակագիծը շրջապատված է կիսաբոլորակ աբիդներով և բոլորաձև կամ վարդաձև է (տրամագիծը չափել հնար չէ, որովհետև մեծ մասամբ թաղված է հողի մեջ): Պատերը շարված են նախնական ձևի կիկլոպյան քարերով, արտաքուստ առանց նկատելի լինելու, ներքին երեսների վրա երևում է կրաշաղախ. կիսաբոլորակ աբիդներու թիվը անորոշ է, թեև մինչև ութ հատը երևում են, բայց ամբողջը քանի հատ լինելը մասնավոր պեղումով միայն հայտնի կլինի: Աբիդների արևելյան կողմինը մի քիչ ավելի մեծ է երևում, քան մյուսները, սակայն այս երևույթը կարծեմ փաստ չի կարող լինել, որ մի քրիստոնեական շինություն համարենք. գուցե հողի տակ եղածների մեջ ևս կան տարբեր մեծությամբ աբիդներ. արևմտյան կողմը գրեթե ամբողջովին հողի տակ է տակավին: Շենքը ավելի աշտարակի տպավորություն է թողնում քան մի ուրիշ նպատակի համար շինված շենքի:

Սույն հետաքրքրական հատակագիծը պարունակող պարսպապատի մասի արևելյան կողմը, պարիսպից դուրս երևում է մի ընդարձակ հրապարակ, այս հրապարակին մի մասի գետինը երևում է մեծամեծ քարերով սալած, և ամենևին շինությանց հետքեր չկան հրապարակին վրա միայն կան մեծամեծ ժայռեր, ոմանք բնական և ոմանք շարժական, որոնց վրա փորագրված են խորհրդավոր նշանագրեր այս ձևերով ՈՇՈՍ. յուրաքանչյուր փորագրված նշանագրին երկարությունը կհասնի մինչև հիսուն սմ., իսկ խորությունը 4–5 սմ., նույնքան լայնությունով: Սույն հրապարակին կից դեպի հարավ արևելյան կողմը կան մի քանի հատ անհեթեթ մեծությամբ քարեր, որոնց վրա երևում են բոլորովին նախնական ձևով տաշվածքի հետքեր. շատ պարզ երևում է, որ այդ անհեթեթ մեծությամբ քարի զանգվածները շինված են իբրև խարիսխ սյուների, որովհետև վրաները շատ որոշ են սյուների բոլորակ հանգիստները. ինչպես երևում է, ինչպես ուրիշ տեղեր, նույնպես այստեղ ևս ազատ չէ մնացած շրջակա գյուղացիների ավերումներից: Հայտնի բան է որ այստեղ եղել է մի մեծ հասարակական շինություն, առջևը հրապարակով, սակայն այդ շենքի փլատակի քարերը ամ-

բողջովին անհետացած են, եթե դիպվածով մնացել են հսկայական խարիսխներ, պատճառն այն է, որ տեղերից շարժել անհնարին է առանց ջարդելու, իսկ ջարդելն էլ որոշ դժվարությունների հետ է կապված:

Սալահատակված հրապարակի արևելյան կողմը և անհեթեթ մեծությամբ խարիսխների հյուսիսային կողմը կա մի ձորանման խորություն, որը հասնում է զառիվայր ձևով մինչև դաշտ: Քննությունը ցույց տվեց, որ այս ձորանման տեղը մասամբ արվեստական է: Ժամանակին քաղաքի դիրքին համեմատ այդ տեղից չիներ են մի ձեռագործ ճանապարհ, և այդ ճանապարհի ծայրը դաշտին մոտ եղեր է քաղաքի դուռը: Անշուշտ այդ ընդարձակ քաղաքը մի դռնով չէր բավականանար, սակայն ուրիշ տեղերի վրա դռների հայտնի նշաններ չկան:

Հրապարակից և խորհրդավոր շենքի հիմունքը պարունակող բլուրից առաջանալով դեպի հարավ կհանդիպենք մի ուրիշ պարիսպի, որը եղել է մի առանձին քաղաքամաս: Այս քաղաքամասից ևս դարձյալ ուղիղ դեպի հարավ առաջանալով կգտնինք մի հարթավայր, որուն արևմտյան կողմը դարձյալ քաղաքամաս է՝ քիչ առաջ գրածս հնագույն մեծ ամրոցի ստորոտին շուրջը փռված, իսկ արևելյան մասին վրա բավական ընդարձակ տարածությամբ մի գերեզմանատուն է՝ կրոմլեխներով խտացած: Այս կրոմլեխներից է, որ պ. Բագրատ Խալաթյանը բացել է երեսուն հատի չափ, ըստ հոռոմցիներու վկայության, բավական շատ առարկաներ հանել է, սակայն ո՞ւր կամ ո՞ր թանգարանը տարել է հանածները, ինձ հայտնի չէ: Այս ընդարձակ գերեզմանատունը երկարավուն ձև ունի: Խալաթյանի փորած տեղերեն քիչ էլ առաջանալով դեպի հարավ կհասնինք քաղաքի ամենաբարձր տեղին, այս բարձրությունից այլևս կսկսի ցած իջնել ճանապարհը երկու կողմին խտացած կրոմլեխներով և կհասնի այն ճանապարհին, որ կտանի դեպի Սոնգուրլի, որուն մասին գրեցի հոդվածիս սկիզբը: Պետք է նկատել, որ այս զառիվայրին կամ լանջին վրա եղող կրոմլեխները, որոշ չափով տարբեր են քաղաքին անմիջապես կից եղող կրոմլեխներից, այս գերեզմանների շուրջը սովորական ձևով բոլորակ անտաշ քարեր շարվելեն հետո, մեջտեղը հող լեցվելով, ուտուցիկ կերպով բարձրացած են և այդ բարձրության վրա՝ շրջապատի քարերից համեմատաբար փոքր քարեր լեցնելով ծածկած են ներքևը լեցված հողը:

Հոռոմի նախնադարյան ավերակ քաղաքը թերևս միակն է, որ իր մեջ հնագույն քաղաքակրթության ամեն մի նմուշ պահած լինելե զատ, քաղաքատեղը տակավին այնպիսի վիճակի մեջ է, որով, հատակագիծը կարելի է հանել աննշան վրիպումներով: Այսօր էլ դեռ պարզ են լայն ու նեղ փողոցները, հրապարակները, մեծ և փոքր շենքերը, մանավանդ հասարակաց բնակությանց հատուկ տների բաժանումները՝ իրենց մի քանի հարամասունքներով: Թեև ես պաշտոնապես պատվիրեցի այլևս դադարեցնել ավերումները և խրատել ժողովրդին, որ այլևս զգուշանան վնասել պատմական և գիտական մեծ արժեք ներկայացնող ավերակներին, սակայն իմ պատվերը այնքան էլ մեծ ազդեցություն ունենալուն մասին վստահ չեմ: Իմ կարծիքով վերին իշխանությունն է, որ վճռական միջոցների պետք է դիմե և միանգամայն արգելե այնտեղ պեղումներ կատարել, քարեր տանելը և վար ու ցանք անելը: Գյուղացիներեն ոմանք ամենայն սառնասրտությամբ պատմում էին, թե իրենց գութանը ինչեր է դուրս բերում այդ ավերակի մեջ, բայց դժբախտաբար տասնյակ տարիներե ի վեր գյուղացու գութանի միջոցով հայտնագործված իրեղեններ միանգամայն կորել են և պատմագիտությունը ոչնչով չէ օգտվել այդ թանկագին գյուտերից:

## Ե. ԱՐՄՈՒՏԼՈՒ

*Սեպտեմբեր 13*

Արմուտլու գյուղի ծայրին նշմարեցի գյուղացիների ձեռքով շինված մատուռանման մի շինություն, որուն գյուղացիք Թուխ-Մանուկ անունն են տալիս, այս շրջափակը իբրև մատուռ չինել են այժմյան գյուղացիք՝ օգտվելով այնտեղերը գտնըված քրիստոնեական հին հուշարձանների բեկորներից:

Հավաքել են մեջը 10–11-րդ դարերու հատուկ քանդակազարդ քարեր, խոյակներ, պսակների բեկորներ, նույնպես նույն դարաշրջանների հատուկ խաչքարերի բեկորներ, նաև կա մի մեծ պատվանդան հավանորեն 7-րդ դարու, որուն վրա կանգնըված է եղել քառակուսի մի կոթող: Այս ամենը հարմար նյութեր են եղել քահանաների համար, միամիտ հավատացյալ ժողովրդին շահագործելու: Այս երևույթը միշտ պատահում է խուզարկու շրջիկին գրեթե բոլոր հայ գյուղերում, և զարմանալի կերպով ամեն տեղ միևնույն Թուխ Մանուկ անունով: Գյուղի մեջ ինձ շահագրգռող ուրիշ ոչինչ չգտա, ինչքան որ հարցաքննեցի գյուղացիներին հնագիտական մնացորդների մասին, երբեք դրական պատասխան չտացա: Ճանապարհս շարունակելու պահուն նկատեցի գյուղին գրեթե կից մի բարձր բլուրի վրա ձեռագործ պատերու մնացորդներ: Այս բլուրի գագաթին վրա եղել է նախնադարյան մի մեծ ամրոց, որուն շրջապարիսպի հիմերը միայն երևում են այժմ: Ինչպես ամեն տեղ, նույնպես էլ այստեղ բազմաթիվ տարիներ շրջակա գյուղացիք օգտվել են այս ամրոցի պարիսպի քարերից, և հիմա մնացել են միայն հիմնաքարերը և ամրոցին շրջապատը որոշող սահմանը: Ճանապարհս շարունակեցի դեպի Մահմուտճուք գյուղ, ուր եղել եմ արդեն մի քանի անգամ, հնություններով հարուստ այս գյուղը:

## Զ. ՄԱՀՄՈՒՏՃՈՒՔ

Արագածի շուրջը ընդարձակ շրջաններ կան, որոնք ամբողջովին հնագիտական թանգարաններ են. ամեն մի քայլափոխի կգտնվին նախաքրիստոնեական հին ժամանակներից սկսած մինչև քրիստոնեական 14–15-րդ դարաշրջանների հոյակապ և ուշագրավ հուշարձաններ: Այսպես է Մահմուտճուք գյուղը յուր հեռավոր և մոտավոր շրջաններով: Սկսած Արխվալիից, Հառիճից և Արթիկից մինչև Ադիաման, Մաստարա և Մազարճուք գյուղերը եղած հնագիտական մնացորդների հետազոտությունն ու ուսումնասիրությունը ստվար հատորներ կարող են լեցնել: Այս ընդարձակ շրջանին գրեթե կենտրոնին մոտ կգտնվի այժմյան Մահմուտճուք գյուղը, ուր գյուղի անմիջական շրջակայքում կարելի է առանց մանրակրկիտ հետազոտության տեսնել նախնադարյան ժամանակներից սկսած մինչև քրիստոնեության 12–13-րդ դարերի հուշարձաններ՝ կանգուն, կիսավեր և ավերակ վիճակի մեջ, որոնց գտնե կանգուն եղածները ճարտարապետական և գեղարվեստական տեսակետով հիացում կպատճառեն: Իսկ ավերվածները և անթիվ գերեզմանները թե՛ քրիստոնեական և թե՛ նախաքրիստոնեական շրջանների, ցույց կտան, թե այս տեղերը ո՛չ միայն անթիվ բազմություն է եղած, այլև շինարարական մեծագործություններ են կատարված:

Գյուղի մեջ չափավոր մեծությամբ կա մի 7-րդ դարու գողտրիկ եկեղեցի, որը հետզհետե ավերվելու վրա է: Այս եկեղեցին 7-րդ դարու եկեղեցիներեն ամենեն ավելի համաչափ և ներդաշնակ կազմություն ունի. կտուրին վրա գմբեթի երկու կողմերում ունի սենյականման հատկապես շինված խորշեր՝ կամարակապ, որոնք փոքրիկ մատուռներու հատկությունը չունին, անպատճառ շինված են մի այլ նպատակի համար, որն առայժմ գուշակել դժվար է: Գմբեթի միայն կոնաձև մասն ընկած է, որուն տեղ գյուղացիները շինել են մի փայտեղեն զանգակատուն: Կտուրները միանգամայն քանդըված են, եթե ժամանակին չապահովվի՝ կարող է շատ շուտով կամարներն էլ ներսից քանդվին և գմբեթին հետ միասին կործանվի: Ներսից և դրսից թեև պատերը հաստատուն են, սակայն երեսների քարերը սկսել են քանդվել, մանավանդ հարավային կողմը վտանգված է: Արտաքին քարերը բավականին խոշոր ծավալով սրբատաշ են՝ վարդագույն և կարմրորակ գույնով. հյուսիսային պատին վրա տեղ տեղ արաբերեն գրեր են գրված, ինչպես կերևի մի ժամանակ այս տեղն էլ մտեր է արաբների իշխանության տակ: Որովհետև այս եկեղեցին փոքր էր, գյուղի բազմացած հասարակության չէր կարող բավարարել, ուստի արևմտյան կողմին շինել են վերջերս մի ընդարձակ եկեղեցի, որով ոչ միայն փակվել է արևմտյան դուռը, նաև ծածկվել է արևմտյան դռան վրայի մեծ ու գեղեցիկ քանդակագործությունը: Քանդակը ներկայացնում է Մարիամը Հիսուսը գրկած, և մի մարդ առջևը աղոթում է, թերևս եկեղեցին շինողը: Երևում են ուրիշ քանդակներ ևս, սակայն ժամանակի ընթացքում մաշվեր և կորցրել են իրենց ձևն ու կազմությունը: Նորոգության հետքեր գրեթե չեն երևում թե՛ ներսը, թե՛ դուրսը, սակայն ոչ մի տեղ արձանագրություն չգտա. գուցե արևմտյան կողմը եղել է, սակայն նորագույն եկեղեցիի շինությամբ ծածկվել է: Նորագույն եկեղեցին շինելու ժամանակ զանազան հին դարերու հատուկ քանդակագործ քարեր հավաքել են և շարել բեմի ճակատին:

Գյուղին անմիջապես կից, արևելյան կողմը, կան գերեզմանատներ զանազան տիպերի և զանազան ժամանակների: Մեկ մասը շատ խոր հնություն կներկայացնե, գետնի միապաղաղ ապառաժը փորելով, դագաղանման փոսեր են պատրաստված զանազան ուղղությամբ. ոևէ արևելադրություն գոյություն չէ ունեցեր այն ժամանակ, ամեն ուղղությամբ թաղեր են իրենց մեռելները: Այս ժայռափոր գերեզմանների մեջ կան թե՛ մեծերի համար և թե՛ մանուկների համար փորվածներ:* Սույն նախաքրիստոնեական գերեզմաններին գրեթե կից է գյուղի նոր գերեզմանատունը՝ բավական երկար տարածության վրա դեպի հյուսիս: Սակայն այս գերեզմանատունը ևս բոլորովին նոր չէ, այնտեղ կան մինչ 12–13-րդ դարու տապանաքարեր՝ վրաները մամռապատ և եղծված արձանագրություններով:

---

*Այս գերեզմանները անշուշտ կափարիչներ ունեցել են, սակայն միանգամայն անհետացած են և ներկայիս վրաները բաց կմնան:

Այս գերեզմանատների արևելյան կողմը բարձրաբերձ բլուրի ստորոտին նորերս շինել են գյուղի դպրոցը, հիմքերը փորելիս դուրս են եկել այլ տիպի գերեզմաններ՝ նախաքրիստոնեական շրջանի, այս գերեզմանները շինված են արկղաձև սալաքարերով

այս ձևով, որոնց մեջ բացի կմախքներից ուրիշ բան չեն գտնվել, բայց այս տիպի գերեզմանների հետ խառն են քարաշեն դագաղներ և ընդարձակ տարածության վրա շրջապատում են հիշածս բարձրաբերձ բլուրը: Այս քարափոր դագաղներից այնքան շատ են գտնվել և հանվել այս տեղերից այս տարի, որ շատերն իրենց տան դուռը անասունները ջրելու համար իբրև գուռ զետեղելե զատ, երեսուն և հինգ հատ ևս տարել են իրենց յայլաղը, նույնպես անասուններ ջրելու ջրի գուռ շինելու համար:

Գյուղի հարավ արևմտյան կողմը, մոտավորապես 3 կիլոմետր հեռավորության վրա, կա մի այլ գեղեցիկ, չափավոր մեծությամբ եկեղեցի, հավանորեն 11-րդ դարու, որը հետզհետե քայքայվելու վրա է. վրան ունի մի քանի կիսաեղծ արձանագրություններ, որոնք ինձ չհաջողվեց կարդալ. թերևս այդ արձանագրությանց մեջ գտնվեր շինողի անունը: Եկեղեցվո հյուսիս արևելյան կողմը մի փլատակ կա, որուն ինչ լինելը գրեթե անորոշ է, սակայն նայելով իր դիրքին և չափին, մի աշտարակի է նմանում, թերևս մի զանգակատուն եղած լինի կանգնված եկեղեցուց 20–25 քայլ հեռավորության վրա:

Այս եկեղեցվո արևմտյան կողմը մոտավորապես 200-ից 300 քայլ հեռավորության վրա կգտնվի մի հոյակապ գերեզմանի փլատակը՝ գեղաքանդակ հսկա խաչքարով և մի երկար արձանագրությամբ միակտուր քարի վրա: Խաչքարին կեսը կոտրած և անհայտացած է, իսկ արձանագրության մեկ մասը մնասած է, այնուամենայնիվ բավականին տառերը մաքուր պահված և արձանագրությունը ընթեռնելի է:

Ըստ այս մեծ արձանագրության, այս հոյակապ խաչարձանը կանգնողն է ոմն Հայր Սարգիս ի հիշատակ մի Ապլղարիպ իշխանի հիշատակին ՆՁԵ (1036) թվականին: Անշուշտ այս Ապլղարիպը Անիի Փրկիչ եկեղեցին շինող Պահլավունի Գրիգոր իշխանի որդի Ապլղարիպ իշխանն է, որ այս կողմերում ունեցել է իր բնակությունը, կալվածները և կառուցել է եկեղեցիներ (ըստ մեծ արձանագրության): Թերևս մոտակա եկեղեցին ևս այս Ապլղարիպի շինածն է: Նախորդ այցելությանս ժամանակ լուսանկարել եմ այս գերեզմանի մեծ արձանագրությունը և խաչքարը: Վերջին այցելության ժամանակ, այդ արձանագրությունը հայտնաբերող արտատերը մեռած էր, սակայն այս անգամ հանգուցյալի Արտաշ անունով եղբոր որդին պատմեց, որ մի օր արտը ջրելիս, հանկարծ խաչարձանի փլատակների մոտ մի ծակ է բացվել և արտը ջրելու համար վազող առվի առատ ջուրը թափվելով այդ ծակին ներս, անհայտանում էր երկար ժամեր. վերջապես, ճարահատված առվի ընթացքը փոխել են, որով հնար եղել է արտը ջրել: Այս պատմությունը ինձ ենթադրել է տալիս, որ անպատճառ կա մի ստորերկրյա դամբարան հաստատուն շինված, որ այդ ջրերը գնում էին դամբարանի մեջ: Գետնի տակ կամարակապ դամբարաններ շինելու սովորությունը շատ հին էր և մենք բազմաթիվ օրինակներ ունինք այս տիպի դամբարանների և հիշյալ Արտաշի ասելով տեսել են կամարակապի նշանները: Զափազանց կարևոր է այդ անտերության մատնված կարևոր արձանագրությունը ապահովել և մի փոքր պեղումով ստուգել ստորերկրյա դամբարանի գոյությունը, թերևս ավելի կարևոր հայտնություններ կլինին այդ մասնակի պեղումով: Զմոռանամ ըսելու, որ այս անգամ այցելությանս տեսա, որ Ապլղարիպի արձանագրությունը սկսեր էր մամռոտել, եթե այսպես գնա կամ ամբողջովին կմամռոտի և անընթեռնելի կլինի, և կամ գյուղացիք կջարդեն և կգործածեն իրենց շենքերի մեջ:

Այս գյուղում, խուզարկությանս պահուն, գյուղացիներեն մեկը հայտնեց, որ իրենց դարմաննոցի պատին մեջ մի արձանագրություն կա հյուսված: Գնացի անձամբ տեսա արձանագրությունը: Խիստ մեծատառ մի արձանագրության բեկոր է և դրված է կտուրի տակ իբրև պատվանդան սյունի. հնար չկար քարը տեղից հանելու հեշտությամբ առանց կտուրին վնասելու, ուստի այդ վիճակին մեջ թողի միայն խնդրելով, որ անաղարտ պահեն:

Մահմուտճուքի հարավակողմը երկու կիլոմետր հեռավորության վրա բարձր տեղում գտնվում են գյուղի ջրաղացները: Այս ջրաղացների դիմաց կա մի եկեղեցի բավականին մնասած, մի ժամանակ ունեցել է արևմտյան կողմին վրա մի գավիթ, որուն հյուսիսային պատն է միայն մնացել, մնացած մասերը ամբողջովին քանդված են: Այս եկեղեցին 11-րդ դարու սկզբին է կանգնված Մակարավանք անունով և չեն է եղած գրեթե մինչև 19-րդ դարու սկիզբը: Վրան ունի ամբողջ և թերի արձանագրություններ, ներսը խորանի աջ կողմի որմասյան վերևը ևս կա մի արձանագրություն մասամբ եղծված. ամբողջովին անաղարտ մնացել է արևմտյան դռան վրայի արձանագրությունը:

Եկեղեցու արևմտյան կողմը մի քանի քայլի վրա կա մի խոր ձոր, ձորին մեջ կա մի փոքր մատուռ և ուրիշ շինության մնացորդներ: Երբ Մակարավանքը վտանգվեր է, մի քանի տարի առաջ վանահայրը բնակել է ձորի մեջ գտնված վանքում և ուխտավորներ կընդունե եղեր այդ մատուռի մեջ հանուն Մակարավանքի: Այժմ այդ մատուռը ևս ամայի է:

## Է. ՇԻՐՎԱՆՃՈՒՔ

**Սեպտեմբեր 14**

Շիրվանճուք գյուղը հազիվ թե երկու կիլոմետր հեռավորություն ունենա Մահմուտճուք գյուղից, և կարծեք շարունակությունն է Մահմուտճուքի նախապատմական շրջանին գոյություն ունեցող բազմամարդ ու շեն երկրին: Մահմուտճուքից դեպի Շիրվանճուք հետզհետե բարձրանում է ճանապարհը քարքարուտ և ապառաժուտ ժայռերով լի սարը, որ կողմը որ նայիք անպայման կտեսնեք կիկլոպյան պատերու մնացորդներ՝ զանազան բլրացած բարձրությունների վրա: Կան տեղեր, ուր որոշ են մարդկային ձեռքի աշխատանքը՝ քարքարուտ տեղերի վրա ճանապարհներ բաց անելու և գետինը որոշ լայնությամբ հարթելու համար: Դեպի սար վերելքի կես ճանապարհին կամ քիչ ավելի վերև հիմնված է Շիրվանճուք գյուղը: Գյուղին մեջ ուշադրավ մի հնություն չի երևում, երկարատև բնակչության շինարար աշխատանքի պատճառով հնությունների ամեն հետք կորել է, մնացել է միայն մի եկեղեցի: Շիրվանճուքի եկեղեցին 5-րդ դարուց այս կողմ բերել հնար չէ՝ իր ունեցած ճարտարապետական հատկանիշներով: Հատակագծի նեղ և անհամեմատ երկար ձևը հայոց նախնական եկեղեցիների հատկությունն ունի, խորանի կամարաղեղը կատարյալ պայտաձև է, ներքին որմասյունների խարիսխները բոլորովին նման քանդակագործություն ունին, ինչպես ուրիշ փաստացի 5-րդ դարուն պատկանող խարիսխներին: Եկեղեցու վրան ծածկված է եղել քարեղեն կամարով, որուն հետքը մնացել է ներսի կողմից արևմտյան պատի վրա: Բացի 7-րդ դարու նորոգության վերագրելի մի քանի մասերից, ունի նաև այնպիսի հատկանիշներ, որոնք այս շենքը ավելի հեռու կտանին քան 5-րդ դարը: Կարելի է ըսել որ շենքն սկզբից պատուհան չէ ունեցեր: Արևելյան խորանին մեկ պատուհան ունի անճաշակ կերպով բացված, այն էլ այժմ փակված է, արևմտյան կողմի պատուհանը զույգ է եղած, մեջտեղեն մեկ սյունով բաժանված, ինչպես որ կա Երերույքի եկեղեցիին արևմտյան կողմը: Հարավային կողմը միայն մեկ պատուհան ունի, որի հետո բացված լինելը շատ որոշ է, բայց հետո այդ պատուհանը ևս փակել են: Վերջապես այս շենքի հարամասունքները շատ դժվար է ներդաշնակորեն պատշաճեցնել ընդհանուր կերպով կառուցման ճաշակին: Մանավանդ որ ամենեն կարևորն է, շենքի հիմը դրված է նախնադարյան շրջանին մեջ գոյություն ունեցող որմնադրական ոճով. մեծազանգված սև որձաքարերով դրված է շենքի հիմը, որը այժմ ևս երևում է: Հյուսիսային պատին վրա երևում են մի քանի հունարեն տառեր, իսկ հարավային կողմը՝ մի հայերեն հետնագույն արձանագրություն կա մի քարի վրա, որով փակեր են հետին ժամանակ այդ պատուհանը: Վերջապես այս եկեղեցվո հիմքը եթե նախաքրիստոնեական ծագում չունի, այնուամենայնիվ առնվազն 5-րդ դարու շենք է:

Եկեղեցու վրա կատարած քննությունս ավարտելուց հետո գնացի գյուղից դուրս նախապատմական հնությունները տեսնելու, որոնց մասին նախապես տեղեկություն ստացել էի: Գյուղխորհրդի քարտուղարը ամենայն սիրալիրությամբ ուղեկցեց ինձ ցույց տալու համար պետք եղած վայրերը: Գյուղից մոտավորապես մեկ ու կես կիլոմետր դեպի արևմուտք հեռանալուց հետո հասանք մի հսկայական բլուրի կամ ավելի ճիշտ մի սարի, որուն գյուղացիք անվանում են Վարի Բերդ: Տարօրինակ տպավորություն գործեց վրաս այս գրեթե արվեստական սարը. օգտվելով սարի դիրքից, մարդկային հսկայական աշխատանք էր գործ դրված այս սարի շուրջը, սարը երկայնաձև դիրք ունի, ստորոտը լայնանիստ, իսկ գագաթը համեմատաբար նեղ. այս սարալանջին վրա անօրինակ մեծությամբ որձաքարերով չորս կարգ պարիսպներ են շիներ մինչև գագաթը, բոլորովին նախնական ձևով կանգնված են պատերը, ինչպես Հաջի Խալիլի ամրոցին մեջ. կանոնավոր շարքեր գոյություն չունին, անհավասար վիթխարի մեծությամբ քարեր միմյանց վրա կուտակվելով ձևացած են պարիսպները, յուրաքանչյուր պարսպամեջ, որոնք 8–10 մետր լայնություն ունին միանգամայն հարթված են, այնպես որ մի քիչ հեռվից ամբողջ սարը մի եգիպտական աստիճանավոր բուրգի կամ ասորա-քաղդեական զիկկուռայի կնմանի: Սարը հյուսիսային կողմից գրեթե անմատչելի է, այդ պատճառով այն կողմը միայն մի պարիսպ շրջապատված է գագաթի շուրջը և մի երկրորդը՝ մի քանի մետր ցածից: Իսկ հարավային և արևելյան կողմերը չորս շարք են, և այս կողմերիցն է, որ սարը ամբողջովին մի հիանալի երևույթ է ստանում: Արևմտյան կողմից, որ կցված է ուրիշ մի լեռնամասի, այն կողմից ունի մի մտից դուռ, և մի մտից դուռ էլ հարավային կողմից, վերելքի ոլորապտույտ ճանապարհը որոշ է տակավին պարսպամեջերի վրայով: Պարսպամեջերը այն-

պես հարթ հորիզոնական երևույթ ունին, որ այժմյան գյուղացիք ամենայն հեշտությամբ վար ու ցանք են անում այնտեղ: Գագաթը միանգամայն ժայռուտ է և երևում է, որ ջանք ի գործ դրել են ժայռերը փչրելու և հարթ մակերևույթ առաջ բերելու համար. շինությանց հետքեր ամենևին չկան, բացի արևելյան կողմի մի փոքր սենյականման տեղի հատակագծից: Այս պարագան ինձ ենթադրել է տալիս, որ կամ դեռ բոլորովին չէր վերջացած այս հսկայական բուրգի շինությունը և կամ գագաթը հատուկ էր միմիայն կրոնական արարողություններին, ու շինությունների համար կարիք չէր զգացվել. այս վերջինս ինձ հավանական կթվի նախնադարյան շրջանի մարդկանց հավատալիքները և բացօթյա սարերի գլխին կատարված կրոնական արարողությունները ի նկատի ունենալով: Համենայն դեպս այս տեղը արժանի է մանրազնին հետազոտության բնորոշելու և նմաններից զանազանելու համար:

Վարի բերդից դեպի հարավ մոտավորապես մի կիլոմետր հեռավորության վրա կգտնվի մի ուրիշ պարսպապատ սար, որուն գյուղացիք Վերի Բերդ անունը կուտան: Վերի բերդի շուրջը և մեջը գյուղացիք մաքրել են, միայն արևելյան կողմի վրա մնացել է մի պարսպամաս կիկլոպյան քարերով, իսկ գագաթը, որ եռապատիկ ընդարձակ է քան Վարի Բերդը, բոլորովին մաքրված է քարերից և վերածված արտի: Գագաթի շրջապատի հին պարիսպները անհետանալուց հետո, հավանորեն նոր արտատերը յուր ցանքսերը անասուններից պաշտպանելու համար, ամբողջովին շրջապատել է մանր քարերով 70–80 սանտիմետր բարձրությամբ:

## Ը. ԲԱՀԳՅՈՒՂ

**Սեպտեմբեր 16**

Մահմուտճուքից ճանապարհվեցի դեպի Բաշգյուղ. ճանապարհի վրա այցելեցի Արթիկ գյուղը և աչքե անցնելով այս գյուղի մեջ գտնված 5-րդ և 7-րդ դարու հուշարձանները, երեկոյան մոտ հասա Բաշգյուղ: Այսօր (սեպտեմբերի 16-ին) շրջեցի Բաշգյուղի շրջակայքը. այստեղ կանգուն կամ կիսականգուն հուշարձաններ չկան, սակայն ի հնումն այս տեղերու վրա հոծ բազմություն որ եղել է, կասկած չեն թողնում նախաքրիստոնեական գերեզմանները, որոնք տարածված են գյուղից դուրս արտերի և ղրառաճների մեջ. ընդհանրապես շատ են գտնվում սալաքարերով արկղաձև շինած գերեզմաններ: Իսկ գյուղից բավական հեռու, դեպի հյուսիս և հյուսիս արևելք, երևում են բազմաթիվ հին քրիստոնեական գերեզմաններ, որոնք այժմ վերածվում են արտի և քարերը տարվում են շինությունների համար: Տապանաքարերը առհասարակ 13–14-րդ դարերի գերեզմանների տիպն ունին, գտա մի քար էլ արձանագրված: Նշանավոր կարելի է համարել գյուղի հյուսիս արևելյան կողմը ձորի մեջ ընդարձակ բնական քարայրը, որը հետզհետե քանդվելու վրա է. վերևի շերտերից մեծամեծ քարեր թափվել են հատակի վրա և արգելում են մեջը ման գալ: Քարայրի բերանը ազատ է և կարելի է մտնել ներս մի քանի քայլ և տեսնել խորությունն ու ընդարձակությունը, իսկ մանրամասն ուսումնասիրել այս քարայրը որոշ դժվարությունների հետ է կապված և երկար ժամանակի կարոտ է:

## Թ. ՂԸՐԻՍ ԴԱԿԻՐՄԱՆ

**Սեպտեմբեր 17**

Այսօր, առավոտյան հեռանալով Բաշգյուղից հասա Ղըրիս Դակիրման գյուղը: Կես օրին մոտ էր, երբ փոքր ինչ հանգստացել էի ճանապարհորդության հոգնությունից, շրջեցի գյուղի անմիջական շուրջը գտնվող վայրերը, ուր կգտնվեին քրիստոնեական հնագույն շրջանի մնացորդներ: Գյուղի արևելյան կողմը մի բարձրադիր տեղում, գյուղացիք շինել են մի եկեղեցի երկարավուն ձևով, հասարակ պատերով և փայտաշեն ծածկով:

Ինչպես երևում է, այս եկեղեցին շինել են շատ վաղ ժամանակ միևնույն տեղի վրա գոյություն ունեցող մի եկեղեցիի տեղ, որուն մի քանի բնորոշ հետքերը միայն մնացել են: Եկեղեցիի արևելյան կողմը կա մի ընդարձակ հին գերեզմանատուն, որուն մեջ բացի հնագույն ձևի տապանաքարերից, մեռելների շատերին վրա իբրև տապանաքար գրված են հնագույն մի բազիլիկ եկեղեցիի շենքի բեկորներ: Մի գերեզմանի վրա դրված է մի սյունի բեկոր, մի ուրիշի վրա՝ մի լայն ներքին որմասյան խոյակ վրան 5-րդ դարու ոճով քանդակված հավասարաթև խաչեր բոլորակ շրջանակի մեջ առնված, մի քանի տեղ՝ նույնպես ներքին որմասյան մեծ խոյակներ, որոնց ոմանց վրա քանդակված են ձիթենիի տերևներ, ոմանց վրա արջմագիլներ՝ 7-րդ դարու ոճով, կան նաև առանց քանդակի բազմաթիվ սրբատաշ քարեր, որոնք վաղեմի կանգուն մի մեծ շինության գոյությունը կապացուցանեն: Այս բեկորներու հետ միասին ընդարձակ հին գերեզմանատունը ցույց կուտա, որ շատ հին ժամանակ խիտ բնակչությունով, եթե ոչ քաղաքի դեթ մի մեծ բնակավայր էր: Նորաշեն եկեղեցիին մտից դռան կողքը, իբրև բարավոր, կանգնեցրել են 7-րդ դարու հատուկ քառակուսի մի կոթող, որուն երեսներին վրա քանդակված են բարձրաքանդակ պատկերներ: Սակայն, նկատելի է մի բան, որ այս շրջանում գրեթե չի տեսնվում 11-րդ և 12-րդ կամ ավելի ուշ ժամանակի հուշարձանների մնացորդներ կամ բեկորներ, բացի մի խաչքարից, որուն մասին կգրեմ իր տեղում:

Բարձրանալով հետզհետե դեպի հարավ, նախապատմական մեծ քաղաքի սահմանին վրա, գյուղացիների ձեռքով շինված է մի փոքր մատուռանման շենք, որի անունը դրել են Թուխ Մանուկ, ինչպես բոլոր հայաբնակ գյուղերում, ուր շինված են այդպիսի փոքր մատուռներ, գրեթե առանց բացառության, Թուխ Մանուկ անունն ունին: Շատ եմ հետաքրքրվել հասկանալու համար թե ի՞նչ է նշանակում Թուխ Մանուկ և ո՞վ է այս Թուխ Մանուկը, ոչ ոք չէ կարողացած ինձ բավարարություն տալ, ինչպես երևում է կա մի ավանդական նշանակություն, գուցե հեթանոսական շրջանից մնացած մի պաշտամունքի առարկա՝ ոգի կամ սրբություն, որ անցնելով քրիստոնեության, սրբազործվել է և շարունակել պաշտամունքը, ինչպես կան ուրիշ հեթանոսական պաշտամունքներ մինչև այսօր առանց լիովին գիտնալու անոնց ծագումը և նշանակությունը: Այս Թուխ Մանուկի մատուռին մեջ դրված են մի 7-րդ դարու քառակուսի կոթող և մի խաչքար: Քառակուսի կոթողին չորս կողմը քանդակված են զանազան բարձրաքանդակ պատկերներ՝ բավականին ճարտար և գեղեցիկ, սակայն տգետ գյուղացիք վրան վառած մոմեր կպցնելով, ձեթի ճրագներ առջևը վառելով այնպես մրոտեր և ապականել են, որ նույնիսկ գուցե մաքրելը եթե ոչ անկարելի, գոնե շատ դժվար լինի առանց գեղեցիկ քանդակագործության մնասելու: Իսկ գալով կոթողի մոտ կանգնեցրած խաչքարին, այնպիսի սովորականից տարբեր և ուշագրավ քանդակ ունի, որուն ոճը և քանդակագործական ճարտարությունը չէ կարելի համեմատել խաչքարեր կանգնելը սովորություն եղած դարաշրջանների խաչքարերուն: Բազմաթիվ ապացույցներով գիտենք, որ մեծ ու փոքր քարե տախտակների վրա գեղազարդ խաչքարեր քանդակելով և խորանարդ պատվանդանի վրա կանգնեցնելու սովորությունը 10-րդ դարից այն կողմ չանցներ, և առհասարակ այն բոլոր խաչքարերը, որոնք 10-րդ դարից մինչև 15-րդ դար կանգնված են, մի ընդհանուր հատկանիշ ունին, հորիզոնական թևերը ավելի կարճ քան թևերից վերև եղած մասը, իսկ թևերից ցած եղած մասը, թևերի վերև եղած մասի մինչև մեկ և կեսը կամ երկու անգամից քիչ պակաս: Ներքևները ունին Ահուրամազդայի թևերի նման թևեր, որոնք փոխանակ հորիզոնաձև ձգվելու, ծռվելով բարձրանում են դեպի վերև: Խաչքարերի այս նշանը 10-րդ, 11-րդ և 12-րդ դարերին քանդակվելու այնպիսի մի ձև ունի, որ մարդ անկարելի է, որ համանմանություն չտեսնի հին ասորական և սասանական խորհրդանշանների ձևին: Սկսած 12-րդ դարու կեսից այս թևերի ավանդական քանդակագործության ձևերը թեև փոխված են, սակայն ուրվագիծը միշտ պահված է բոլորովին ճոխ քանդակներով զարդարված, առանց փետրազարդ թևեր լինելը բնորոշելու: Ղըրիս Դակիրմանի խաչքարը բոլորովին տարբեր է մի քանի դար հայոց մեջ սովորություն և նույնիսկ անհրաժեշտ պահանջ եղող ձևերից և համաչափություններից: Քանդակագործության ոճը հին է, ներքևի թևերը չունի, քանդակված է միայն շրջանակը և ինքը խաչը՝ միայն գեղեցիկ վարդաձևերով խառն քանդակներով: Խաչի բոլոր թևերը ունին խիստ ներդաշնակ մի նրբություն: Վերջապես ես չկարողացա որոշել սույն եզակի խաչքարի քանդակման ժամանակը:

Թուխ Մանուկի հարավ արևելքից քիչ բարձրանալով դեպի սարը, սկսվում են անհիշատակ ժամանակի բնակությանց հիմքեր՝ մեծամեծ որձաքարերով առանց շաղախի դրված, այս տեղից մինչև բերդի ստորոտը, որուն վրա շինված է նախնադարյան մեծ ամրոցը, մոտավորապես մեկ կիլոմետր հեռավորություն ունի: Բարձրանալու ճանապարհի աջ կողմը, մինչև բերդակիր սարի ստորոտը, կմնան դեռ նախնադարյան շրջանի բնակարանների որոշ հիմքերը, իսկ ձախ կողմը՝ ժրաջան և չարքաշ գյուղացիք հետզհետե մաքրում են քարերից և վերածում արտերի, այնպես որ հազիվ թե մի քանի տեղ նշմարելի են բնակությանց հիմքեր այս կողմերի վրա: Սակայն այս կողմին վրա կա մի ուրիշ հետաքրքրական մնացորդ, որը արժանի է ուշադրության: Ճանապարհին ձախ կողմը կա մի հեղեղատ կամ ձորանման մի տեղ, ուր անվիճելի է մի ժամանակ մեծ քանակությամբ ջրի հոսանքը: Այժմ այդ ջուրը չկա, շատ վերևից այդ հեղեղատից հոսող ջուրն իր ճանապարհը փոխելով անցնում է աջ կողմից և գյուղի միջից: Ավանդաբար գիտեն գյուղացիք, որ բերդի ճանապարհի ձախ կողմի հեղեղատը երբ ջրառատ էր, այնտեղ կային բազմաթիվ ջրաղացներ և ցույց են տալիս այն տեղերը, ուր զետեղված էին մեծ քարե նավերը, որոնք վերջերս ծառայել են գյուղացիների կարիքներին: Ըստ գյուղացի բանիմաց ծերերի, այս գյուղը Ղըրիս Դակիրման (քառասուն ջրաղաց) անունը ստացել է այդ հեղեղատի վրա գտնված բազմաթիվ ջրաղացների պատճառով: Ես հետաքրքրվեցի այս վտակի աղբյուրով, ուզեցի մինչև ակունք բարձրանալ և տեսնել

տեղնուտեղը, թեև մոտ էր, որովհետև Արագածի գագաթի հյուսիս արևմտյան բարձունքի ներքևից էր դուրս գալիս, սակայն Ղափըլիում ստացած հիվանդությունս հետզհետե ծանրանալով ծունկերս կթոտում էին, այնուամենայնիվ բավականին բարձրացա դեպի վերև ջրաղացների հեղեղատի ուղղությամբ, նաև տեսա այն ճյուղավորումները, որոնց մեկը գալիս է այս գյուղի մեջ շինված հնագույն ժամանակի արվեստական լճերը լցնելու, և մյուսը գնում էր անհայտ ուղղությամբ և հավանորեն ըստ իմ կարծյաց դեպի Հաճի Խալիլ, որու մասին պիտի խոսիմ իր կարգին:

Հսկայական սարի գլխին շինված մեծ ամրոցը մարդկային արտակարգ ուժի և չարատանջ աշխատության մեջ ունեցած տոկունության մի պերճախոս ապացույց է: Այն բերդակիր մեծ սարը արևելքից, հյուսիսից և հարավից շրջապատված է եղեր չորս կարգ կիկլոպյան քարերով, անշաղախ շինված պարիսպներով. հյուսիս արևելյան սարալանջերուն վրա նույնիսկ մի հինգերորդ պարիսպի հետքերը կան ստորոտի մոտ: Արևմտյան կողմը կգտնվի խոր ձորը, որտեղից կհոսի այժմ վտակը և սարալանջը այնքան թեք է, որ չի կարելի չզարմանալ թե այդ թեքության վրա ի՞նչպես կարողացան շինել գրեթե չորս կարգ պարիսպ: Հարավային և մասամբ արևելյան կողմը տակավին մոտավորապես երկու մետր բարձրությամբ պատերը կանգուն կմնան: Այս պարիսպի պատերը շատ մոտ են միմյանց և հավանորեն բավականին բարձր են եղած քան մյուսները, որովհետև բերդին միակ մատչելի կողմն էր այս մասը: Այս երեք ամրակառույց պարիսպներե արտաքին երկուքին դռները քանդված են, որով չափելը անհնար է, սակայն ներքին պարիսպին դռան բացվածքը չորս և կես մետր լայնություն ունի, և դռան երկու կողմը պարիսպը 2,80 մ. լայնություն կամ թանձրություն ունի: Այս ներքին պարիսպի դռնից ներս մտնելով կտեսնվի գրեթե ամբողջությամբ միջնաբերդի ընդարձակ տարածությունը, որուն երկայնությունը ավելի է քան 400 մետր. իսկ լայնությունը՝ քիչ պակաս: Միջնաբերդի ընդարձակ տարածությունը ծածկված է վաղեմի բնակարանների հիմքերով. բոլոր հիմքերը դրված են ժամանակակից սովորության համաձայն, առանց շաղախի, սևագույն որձաքարով: Ներքին տարածության գրեթե կեսին վրա երևում են մի մեծ շենքի հիմքերը բազմաթիվ բաժանումներով, որուն տեսքը ցույց կուտա թե այս շենքը անպայման իշխանական կամ ցեղապետական մի բնակարան էր և մյուս շրջապատող շենքերից ավելի խնամքով շինված: Այս շենքից քիչ հեռու դեպի արևմուտք կա մի ստորերկրյա շենք կամ քարայր, որուն մուտքը այժմ փլուզումներով խափանված է: Այստեղ ընդհանուր առմամբ պարիսպներ և պատեր շինված են մի քիչ ավելի փոքր քարերով քան Հոռոմի և այլ տեղերի նախապատմական ամրոցների պատերը, և որոշ չափով լարաձիգ ուղղություն ունին և քարերի շարքերը կանոնավոր միմյանց վրա են: Երևում է, որ այս բերդին վրա ուրարտական շրջանում մեծ չափով նորոգություններ և հավելումներ եղել են:

Բերդից հյուսիս արևելք կգտնվի մի մեծ արվեստական լիճ, որու շուրջը պատնեշավորված է մեծամեծ անտաշ քարերով և մինչև այսօր դեռ կմնա գրեթե անվնաս. թեև այժմ հոսող ջուր չկա, սակայն հավաստում են, որ երբեմն հորդ անձրևների ջրերը լեցվում են այս լճի մեջ և ջուրը երկար ժամանակ մնում է և օգտվում են ջրից սարում արածող անասունները: Ավելի ցածը, գրեթե գյուղի ուղիղ արևելյան կողմը, կա մի ուրիշ արվեստական լիճ, որուն թե ջուրը գալիս է մի մասնավոր առվով և գրեթե ամբողջ տարին ջուր կա մեջը: Այս արվեստական լճի ջրից օգտվում են այս գյուղի բոլոր նախիրները, և պետք է ասել որ գյուղացիք ևս հոգածու են միշտ այս լճի մասին, միշտ նորոգում և կարկատում են մշտնջենապես լճում ջուր պահելու և անասունները ջրելու համար:

## Ժ. ՀԱՃԻ ԽԱԼԻԼ

***Սեպտեմբեր 18***

Ղըրխ Դակիրման գյուղի հետախուզություններից հետո անցա մոտակա Հաճի Խալիլ գյուղը, այցելեցի երկրորդ անգամ նախնադարյան հնագույն մեծ ամրոցը, որուն մասին գրել եմ գիտական ինստիտուտի «Բանբեր»-ի մեջ, սակայն այստեղ ևս ավելորդ չեմ համարում մի քանի խոսք ասել և լրացուցիչ տեղեկություններ տալ:

Նախքան ամրոց բարձրանալը, ընդարձակ տարածության վրա կտեսնվին հասարակ ժողովրդի բնակությունների հիմերը և ամրոցը շինված բարձր սարի շուրջը: Բացի բնակարանների հիմքերից նաև տեղ տեղ երևում են քաղաքի փողոցները: Ուրիշ նախնադարյան ամրոցների նման, այս ամրոցը ևս սարի լանջին վրա շրջապատված է տեղ տեղ երեք և տեղ տեղ չորս շարք պարիսպներով: Պարիսպները շինված են բոլորովին նախնական ձևով, այսինքն այն ժամանակ, երբ ոչ գործիք ունեին քարերը տաշելով փոքր ի շատե կանոնավոր ձև տալու համար և ոչ էլ գիտեին ուղիղ գծի վրա մի պատ կազմելու քարերը կանոնավոր շարքերով միմյանց վրա դնելու արհեստը: Այստեղ ևս հսկայական ժայռերի կուտակումներով կազմված են պարիսպները, որոնք պարիսպ ըսվելե ավելի վերելքը խափանող արգելափակեր էին. ո՛չ հորիզոնական շարք ունին քարերը և ո՛չ լարաձիգ ուղղություն: Ամրոց բարձրանալու ճանապարհը արևելյան կողմի վրա է, սարի ստորոտեն սկսելով ճանապարհը շեղակի կբարձրանա և կհասնի գագաթին մոտ հյուսիսային կողմը: Դռան տեղը միանգամայն որոշ է, միայն քանդված են բարավորները: Բերդի միջի տարածությունը թեև փոքր է, սակայն մեծ մասը շինություններով խտացած է երևում. միայն հարավային ծայրին վրա երևում է, որ դեռ բոլորովին չէ մաքրված ժայռերից և առանց շինության մնացել է այդ բերդամասը: Հարավային կողմն էլ պարիսպի վրա երևում է մի տեղ, որ դռան նմանություն է բերում, այդ դռնից դուրս պարսպամեջի ուղղությունը տանում է դեպի արևմտյան լանջը, ուր քայքայումները շատ են և իսկական դրությունն անորոշ: Ինչպես ուրիշ տեղերում, «Բանբեր»-ում կարծիք հայտնել եմ, թե Ղըրխ Դակիրման մեծ ամրոցը շինվելե հետո, այստեղ լքվեր է թե՛ ամրոցը և թե՛ շրջակա բնակավայրերը: Այս անգամվա այցելությանս միջոցին ավելի հաստատվեց կարծիքս: Երբ գյուղացիներից ոմանց առաջնորդությամբ բարձրացա մոտակա փոքր ամրոցներն այստեղի արվեստական լիճը տեսնելու, նկատեցի, որ խիստ մոտ է այստեղից դեպի Ղըրխ Դակիրման և մարդկային ձեռքի աշխատանքների մնացորդներ հաճախ պատահում է այդ ճանապարհի վրա: Արվեստական լիճը, որ մինչև այժմ կա և ջրով լիքն է, ջրի առվի ուղղությունը գնում է դեպի Ղըրխ Դակիրմանից վերև Արագած սարի ստորոտները: Մեծ ամրոցը կիսաբոլոր է և հեռվից շրջապատող բլուրների գագաթները ևս շրջապատված են նույնպես նախնական ձևով մի մի պարիսպով, վերևից շատ որոշակի երևում է, որ քաղաքը շրջապատված է եղել արևելքից և հարավից փոքր ամրոցներով: Արևմտյան կողմից մի ձոր կա, որուն ծայրին է եղեր մի դուռ, նախապես քաղաք մտնելու համար պետք էր մտնվեր այդ դռնից և առաջանալ քաղաք և հետո քաղաքից անցնելով պիտի մոտենային մեծ ամրոցի վերելքին: Ձորի դռնից մտնելուց և որոշ չափով առաջանալուց հետո, աջ կողմին վրա, կա մի պարսպապատ բլուր, որը ամենայն հավանականությամբ քաղաքի մուտքն էր պաշտպանում:

Հաճի Խալիլի հյուսիսային կողմի սարին ետևի կողմը չորս հատ քարայրեր կան, որոնք ուսումնասիրության կարոտ են. բնական քարայրեր են, սակայն մեջերը երևում է նաև մարդկային ձեռագործ աշխատանք. մի ժամանակ ապրել են մարդիկ այս քարայրերին մեջ. ներկայիս միանգամայն լքված է, միայն երբեմն իբրև ոչխարների ապաստանարան է ծառայում:

## Ժա. ՍԵՆԿԵՐ, ՂՈՒՆԴԱԽՄԱԶ, ՃԱՐՃԱՐԻՍ, ՂՈՒՐԻ ԲՈՂԱԶ

***Սեպտեմբեր 19***

Սեպտեմբեր 19-ին մեկնեցի Հաճի Խալիլից դեպի Սենկեր եզտիաբնակ գյուղը, ճանապարհին Հաճի Խալիլի և Սենկերի արանքը հարթ դաշտավայրի վրա մի արոտատեղի մեջ երևում է մի գծի վրա շարված տասը հատ կրոմլեխներ, որոնց քարերը թեև տարված են մեծ մասամբ, սակայն դիրքերն ու ձևերը տակավին որոշ են: Եթե այսպես, առանց հսկողության թողվի, ինչպես եղել է մինչև այժմ, ամբողջովին պիտի անհայտանան՝ մաշվելով գյուղացու գութանի տակ: Հաճի Խալիլ գյուղին այս կրոմլեխների մոտ լինելեն կարելի է հետևցնել, որ այս գերեզմանները կպատկանին այնտեղի նախապատմական քաղաքին: Ուղեկիցներիս տված տեղեկություններին նայելով, այս տեղերում միշտ գտնվում են նախապատմական շրջանի իրեղեններ՝ մասնավորապես գերեզմանների հատուկ, ինչպես ուլունքներ, կճուճներ, բրոնզյա ապարանջաններ:

Սենկեր գյուղի մեջ կարևոր հնագիտական հետքեր չկան, ուստի առանց երկար կանգ առնելու, ճանապարհս շարունակեցի դեպի Ղունդախսազ: Այս ճանապարհին, մինչև Ղունդախսազ գյուղը հասնելը աջ կողմի վրա մշակված արտեր են, իսկ ձախ կողմի վրա անվերջ քարքարուտ բլուրներ են և կարծեք շարունակությունն են Հաճի Խալիլի բլուրների շղթային և անոր ստորին փեշերի բլուրներն են: Բլուրների արանքում, Քոր Բուլաղի սահմանին մեջ, կան երեք հատ անսովոր մեծությամբ կրոմլեխներ, որոնք գրեթե շատ քիչ չափով ավերման ենթարկվեր են: Այս կրոմլեխները հետևյալ չափերն ունին՝

1. Կրոմլեխ. 9,60 մետր տրամագիծ. անտաշ քարերով կազմված, շրջանակի մեջ ձգված են չորս հսկայական անտաշ որձաքարեր, որոնց մեկուն երկարությունն է 2,00 մ., իսկ լայնությունը 80 սմ., թանձրությունը 60–65 սմ.:

2. Կրոմլեխ, տրամագիծը՝ 7,20 մ., մեջը ձգված անտաշ քարի մեկուն երկարությունն է 2,00 մ., լայնությունը 1,00 և հաստությունը 70 սմ.: Մյուս քարին երկարությունը՝ 1,95 մ., լայնությունը՝ 40 սմ. և հաստությունը՝ 70 սմ.: Մյուսներն ևս համեմատաբար նույն չափերին են: Ըստ գյուղացի եզտիների, այս կրոմլեխների ներքևը դատարկություն կա, որուն մեջ իրենք որպես թե մի ժամանակ

մտնում ելնում էին: Այս կրոմլեխներից քիչ հեռու, մի արտի մեջ, որ պատկանում է Հրսսո Բուտկ անունով մեկին, կան երեք մեծ կրոմլեխներ՝ գրեթե նախորդ նկարագրածի չափերով, սակայն այս վերջիններին մոտակա կորուստը հավանական է, որովհետև արտի տերը շարունակ մաքրում է արտի քարերը մշակման դյուրության համար:

Այս կրոմլեխները գրեթե շրջապատված են քարքարուտ սարերով, որոնց մեջ տեղ տեղ երևում են մարդկային ձեռագործ աշխատանքի մնացորդներ: Այս բլուրներեն դուրս գալով ճանապարհի եզերքը, դաշտային մասի վրա դարձյալ խտացած երևում են մեծամեծ չափերի հասնող տրամագծով կրոմլեխներ: Ասոնց մեջ կան մինչև 10,50 մետր տրամագծով կրոմլեխներ. նույնպես մեջը ձգված միակտուր քարերը, թերևս իբրև տապանաքար, նույնպես անսովոր մեծություն ունին: Մինչև Ղունդախսազ գյուղ հասնելը, արտերի մեջ միշտ կտեսնվին այս գերեզմանները ցրված, որոնք հետզհետե կորչելու վրա են:

**Ղունդախսազ:** Ղունդախսազ գյուղը գտնվում է քարքարուտ մի երկարավուն սարի հարավային ստորոտում, որուն վրա տեղ տեղ երևում են հնագույն մարդկային ձեռագործ աշխատանքի հետքեր: Ինչպես երևում է, գյուղատեղը ևս հնագույն մի բնակավայր է եղած, որուն վրա շինել են նոր մարդիկ այս նոր գյուղը, այդ հին ժամանակից գյուղին մեջ տակավին գոյություն ունի ուրարտական շրջանի պատի կտոր, որուն վիթխարի քարերը հնար չէ եղել տեղափոխել և թողել են նախկին վիճակին մեջ:

Գյուղի հյուսիսային արևելյան ծայրում մոխրագույն տաշածո քարերով մի մատուռ կա, որը թեև ո՛չ թվական ունի և ո՛չ արձանագրություն, սակայն համենայն դեպս, իր շինվածակերպեն և ճարտարապետական ոճեն հայտնի է, որ 15-րդ դարեն այն կողմ չի կարող լինել անոր շինությունը: Հարավային կողմի վրա գերեզմաններ կան, որոնց տապանաքարերի ոճը ավելի վաղ քան 15-րդ դար լինելը հավանական է թվում ինձ: Հարավային տապանաքարերեն մեկուն վրա առանց արձանագրության զարդարված է մանվածո քանդակներով:

**Ճարճարիս** (ըստ Զաքարիա պատմիչի՝ **Ճարճակես**): Այս գյուղին մեջ այժմ բնակվում են եզտի քուրդեր և սակավաթիվ գաղթական հայեր. գրեթե բոլոր գյուղացիք պատմում են այս գյուղի շրջանում հաճախ գտնված նախաքրիստոնեական գերեզմանների և ուրիշ իրեղենների մասին, սակայն ես ոչինչ չտեսա, բացի մի քանի մեծ կարասներից մի գյուղացու տան մեջ, որոնք վերջերս հանված էին հողի տակից, սակայն այդ կարասները ինձ չերևացին այնքան խոր հնություն ունեցող, առ առավելն 200 տարվան կարասներ պիտի լինեին:

Այս գյուղում առայժմ ամենակարևոր հնությունն է 5-րդ դարու մի եկեղեցիի ավերակ, որու հյուսիսային և արևելյան պատերը կանգուն են: Խորանի կամար աղեղները և որմասյանց աղեղները շեշտված պայտաձև են դարաշրջանի ոճին հատուկ. շենքը շինված է գորշագույն հրաբխային սրբատաշ քարերով:

Գյուղի արևելյան կողմը երկուք ու կես կիլոմետր հեռավորության վրա, հրաբխային քարքարուտ սարերի ստորոտին, մի հեղեղատային տեղի վրա, կան նախնադարյան կրոմլեխներ, որոնք թե՛ հեղեղատների և թե՛ երկրագործական աշխատանքների պատճառով թեև քայքայվելու և անհայտանալու վիճակի մեջ են, այնուամենայնիվ տակավին ուշ չէ այդ կրոմլեխներից օգտվելու համար, եթե թեթև պեղումներ կատարվին և պարունակած իրեղենները հավաքվին ու պահվին հնագիտական թանգարանների մեջ:

**Ղորի Բողազ:** Այս գյուղում ևս հնագիտական ամեն մի հետք ջնջված է, միայն վաղեմի շինության ապացույց են, որ հնագույն գերեզմանատներ և տապանաքարեր կան գյուղին մոտիկ: Այդ հին գերեզմանատունն այժմ ևս գերեզմանատուն է գյուղաբնակ եզտիներին: Այս գերեզմանատան մեջ պաշտամունքի առարկա է դարձել 7-րդ դարու մի քառակուսի կոթողի պատվանդան. այս պատվանդանի վրա խիստ նախնական ձևով քանդակված է մի առյուծ, որը բռնում է պատվանդանին երեք կողմը: Առյուծ փորագրված պատվանդաններից կան այլ օրինակներ, մեկը Հառիճի վանքում, մի ուրիշը Խաչաքիլիսա գյուղում: Ինչպես կերևի, եղել է մի ժամանակ, որ սովորություն է եղել այս քանդակը: Հառիճի վանքում եղածի քանդակները շատ պարզ են և ներկայացնում է Դանիել մարգարեն առյուծների գուբին մեջ, առյուծները լիզում են Դանիելի ոտները: Այս գյուղից դեպի Մելիք Քենդ գնալու ճանապարհին ևս կա մի անտաշ կոպիտ քար, որը նույնպես եզտիների պաշտամունքի առարկա է եղած. քարին անվանում են Կևրե Նևե, իսկ ինչ ավանդության հիման վրա այդ քարին պաշտում են, ոչ ոք չկարողացավ բացատրել ինձ:

## Ժբ. ՄԻՐԱՔ

**Սեպտեմբեր 20**

Այսօր առավոտյան ուղևորվեցի Միրաք եզտիաբնակ գյուղը, որը ճանապարհիս վրա էր Ապարանով Վաղարշապատ դառնալու համար: Դեռ



գյուղը չմտած կան քարքարուտ բլուրների մի շղթա շրջապատված հյուսիսային և արևելյան կողմերի վրա, այս քարքարուտների մեջ կան որձաքարով առանց շաղախի շինված պատեր, որոնք հատուկ են նախաքրիստոնեական հին դարերին:

Գյուղ իջնելու զառիվայրին վրա կա մի փոքր հնագույն եկեղեցիի ավերակ, որուն արևելյան խորանի մի մասը կա և քիչ բարձրությամբ կողմնակի պատերը: Մեջը թափված ճարտարապետական բեկորները ցույց են տալիս, որ այս եկեղեցին կանգնված է 5–6-րդ դարերում: Քանդակված հավասարաթև խաչերի քանդակներ կան, որոնք միայն 5-րդ դարու հատուկ են, իսկ պճղակավոր և ատամնաշարերով պսակի բեկորներ կան, որոնք հատուկ են 6-րդ դարուն կամ առ առավելն 5-րդ դարու վերջերին միայն: Այս գյուղում այլևս նշանակելի ոչինչ չգտա և ճանապարհս շարունակեցի մինչև Վաղարշապատի մոտ Հաճի Ղարա գյուղը:

## ԺԳ. ՀԱՃԻ ՂԱՐԱ

**Սեպտեմբեր 21**

Այսօր (սեպտեմբեր 21) ամբողջ օրը ճանապարհորդությամբ անցուցի, իսկ հետևյալ օրերը (սեպտեմբեր 22 և 23) անցրի այս գյուղում, որովհետև այս շրջանում շատ կան հետաքրքրական նյութեր ուսումնասիրելու:

Նախապես գնացի գյուղի արևելյան կողմում գտնված կիսավեր եկեղեցին, որուն արևելյան կողմը մինչև գմբեթի թմբուկի պսակը դեռ կանգուն է: (Վերջերս այս գմբեթը ամբողջովին ընկել է): Հատակագիծը չափագրեցի, որչափ որ գոյություն ուներ, սա շատ նման է Հատակագծով Էջմիածնի մոտի Հռիփսիմեի վանքին, ամենայն հավանականությամբ այս ևս 7-րդ դարու շինություն է: Մեսրոպ եպիսկոպոս Սմբատյանը Թարգմանչաց վանք անունը կուտա եղեր այս ավերակին, բայց ինչ ապացույցների վրա հիմնված, ինձ հայտնի չէ:

Եկեղեցու ավերակի քննությունը վերջացնելուց հետո, անցա գյուղի հյուսիսային կողմը գտնված սարի ետևը, որուն գագաթին և լանջերին վրա, մինչև Քասախ գետի ափը. նախապատմական խիտ հնություններ և գերեզմաններ են:

Աղավնատան մոտ Օյոտ անվանված նախնադարյան աշտարակի, Օշականի ճանապարհի վրա գտնված Արդար Դավիթ անուն նախնադարյան աշտարակի նման երկու աշտարակի մնացորդներ կան այս ավերակների և կրոմլեխների մեջ: Կան անհասկանալի պատերի մնացորդներ՝ անշաղախ որձաքարերով շինված:




**Նկ. 247. Թարգմանչաց եկեղեցու հատակագիծը**

Բազմաթիվ կրոմլեխներն այստեղ երեք տեսակ են, որոնց երկու տեսակը անջատված են մի պատով և պատի արևելյան կողմը կգտնվին: Այս պատը ձգված է գետեզերքից դեպի հարավ, իր մեջ առնելով աշտարակների մնացորդ փլատակները:

1-ին տեսակ կրոմլեխները անտաշ կոպիտ քարերով շրջապատված են բոլորակ ձևով: Բոլորակ շրջանակներին մեջ լեցված են համեմատաբար փոքր անտաշ քարերով և այնքան են բարձրացած այս լիցքերը, որ ձևացեր են բուրգեր: Այս բուրգերի քարերն են, որ մոտակա գյուղացիք տանում էին իրենց շենքերի համար, որով կորչում է գերեզմանի նախնական ձևը:

2-րդ տեսակը նույնպես անտաշ կոպիտ քարերով շինված շրջանակներ են, որոնց մեջ փոխանակ քարեր լեցնելով բուրգեր ձևացնելու, հսկայական սալաքարեր են ձգված՝ երբեմն մեկ հատ և երբեմն երկու հատ:

3-րդ տեսակը կգտնվին միջնորմից դեպի արևմուտք, որը շատ ընդարձակ է և կարծեք կապ ունի Աղավնատան և Օյոտի մոտ եղող բազմաթիվ կրոմլեխների հետ և կամ անոր մի մասն է՝ Քասախ գետով անջատված: Այս կրոմլեխները նույնպես թեև անտաշ քարերով բոլորակ շրջանակված են, սակայն բոլորակի մեջ ո՛չ քարակույտեր կան և ո՛չ ալ սալաքարեր, այլ մեջտեղը շինված է կրկին մի բոլորակ շրջանակ՝ փոքր տրամագծով: Այս հանգամանքի վրա իմ ուշադրությունս հրավիրեց գիտնական Մեչչանինովը, երբ ուրիշ մի առիթով միասին գնացել էինք այս նախապատմական վայրերը տեսնելու: Այս երեք տեսակի կրոմլեխների գոյությունը թերևս ապացույց է, որ այդ գերեզմանների մեջ թաղված են տարբեր ցեղի կամ տարբեր դավանան-

քի պատկանող մեռյալներ: Անկախ գերեզմանները բաժանող պատից, աշտարակներ և բուրգեր պարունակող մասի արևելյան կողմից, մի հնագույն անշաղախ պատ ևս քաշված է հյուսիսից դեպի հարավ, որուն երբեմն թեև ընդհատված, շարունակությունը գրեթե հասնում է դեպի Վաղարշապատի այգիները Մոլլադուրսուն գյուղի արևելյան կողմից անցնելով: Գերեզմանների և աշտարակների մասից դեպի հարավ, հիշածս երկար պատի կողքին, կան դամբարաններ, որոնք կազմված են քարակույտերով, ինչպես կան Շամիրանի ճանապարհի աջ և ձախ կողմում, նաև Սարդարապատի գծով Փոքր Թալին գնալու ճանապարհի վրա: Երկար պատի անմիջապես արևմտյան կողմն է Հաճի Ղարայի քարհանքը, որ նույնպես շրջապատված է նախապատմական գերեզմաններով: Քարհանքերի մեջ աշխատող բանվորները գտել էին մի քանի խեցեղեն ամաններ գերեզմաններին հատուկ, որոնք այժմ հանձնված են ՀՀՊ Կոմիտեին:

Սեպտեմբերի 24-ին վերադարձա Վաղարշապատ:

## Թ

## ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԹԱԼԻՆ

### ՀՀՊ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ

*1926 թ. Հոկտեմբերի 7-ին էջմիածնից ճանապարհվեցի դեպի Թալին: Դեռ Թալինի զառիվերի ներքև չհասած, լեռնալանջերու փեշերու տակ, դաշտավայրի վրա, 6–7 կիլոմետր տարածության վրա, շարված էին հսկայական tumulus-ներ միմյանցից երբեմն հեռու մինչև 100–150 մետր հեռավորության վերա և երբեմն իրար շատ մոտիկ: Ասոնք ամբողջովին քարակույտեր էին, ինչպես որ կան Աղավնատնից դեպի Շամիրան գնալու ճանապարհի վրա և ավելի մեծ քան այս վերջինները: Բոլորը միօրինակ երկարած են գրեթե հյուսիսից հարավ: Թեև չկարողացա ճշտիվ համրել, այնուամենայնիվ քառասուն հատից պակաս չէին:*

*Հոկտեմբեր 8*

*Այս առավոտ մինչ կառապանս հիվանդագին վիճակի մեջ զբաղված էր քարքարուտ ճանապարհների մեջ կառքի ստացած ջարդվածները մի քիչ կարկատելու, ինքս տանտիրոջս ընկերակցությամբ գնացի բերդի մեջը տեսնելու: Նախքան բերդը մտնելս անցա ճանապարհի վրա եղող, թուրքաց գերեզմանատան մեջ, գմբեթավոր շիրիմը տեսնելու, որն արդեն քայքայվելու վրա է. վրան ոչ մի արձանագրություն չկա, հայտնի չէ թե ումն է: Շրջապատ գերեզմանատան մեջ կան թուրքերեն արձանագրված քարեր և ոչխարներու ձև տրված գերեզմանաքարեր, խիստ կոպիտ կերպով շինված, կային տեղ տեղ տապանաքարեր, որոնք բերված էին հայկական գերեզմանատներից, բայց ո՞ր տեղերից, հայտնի չէ:*

*Նախընթաց 1913 թվականին այնքան էլ մանրամասն չէի շրջած բերդին մեջ արյունարբու թուրքերի դաժան նայվածքներից խուսափելու համար, գնացել էի միայն դղյակը և մոտերը եղած մնացորդները տեսնելու: Այս անգամ համեմատաբար ավելի ման եկա, որովհետև կային այնպիսի մարդիկ ինձ շրջապատողների մեջ, որոնք չափազանց հետաքրքրություն էին ցույց տալիս և նորանոր տեղեկություններ էին տալիս ինձ, հետևաբար կարողանում էի նույնիսկ մտնել տներու և ընտանիքներու մեջ, քարեր կամ արձանագրություններ փնտրելու համար:*

*Դղյակին վրա մեծ փոփոխություն չկար, միայն թե բուրգերեն երկուքը, որ առաջ ճաքած էին, մեկին ճեղքվածքը ավելի շատացել էր և մոտալուտ փլուզման վտանգ էր ներկայացնում: Դղյակին ներսը որ առաջ ծառայում էր իբրև շտեմարան թուրք բեկին, այժմ ևս հայ գյուղացիք գործածում են միևնույն նպատակով: Իմ կարծիքով այս դղյակը ևս պետք է ազատել գյուղացիների քմահաճույքեն, պետք է դատարկել և մաքրել տալ և ծառայեցնել ժամանակավորապես իբրև թանգարան: Դղյակի մտից դռան հանդիպակաց, դեռ 1913 թվականին, կար շրջապարիսպի ավերակ դուռը, որուն կամարի ստորին աղեղը միայն մնացած էր, այժմ ևս նույն վիճակին մեջ է:*

*Դղյակի մտից դռան վրա կա մի ընդարձակ արձանագրություն ՉԾԶ (1307) թվականին գրված:*

*Դղյակը շրջապատված է կրկին պարիսպներով, թեև մինչ հողին հավասար փլած են, սակայն քարերու տաշվածքեն և շինելու կերպեն հայտնի է, որ ժամանակակից է դղյակին: Պարիսպի թափված քարերի վրա կան քարտաշ վարպետների նշաններ, որոնք սովորական են նաև նույն դարերուն Անիի մեջ շինված շենքերու քարերին վրա:*

*Դղյակը անմիջապես շրջապատող պարիսպին մեջ կա մի եկեղեցվո ավերակ, որն ինչպես կերևի, հատուկ էր դղյակի բնակիչներուն: Այս եկեղեցվո հյուսիսային պատին կից պարիսպի բուրգին վրա, կա մի փոքր արձանագրություն այսպես, «Զովանես՝ քարգործս յիշեցեք ի ՔՍ »:*

*Դղյակը անմիջապես շրջապատող երկու պարիսպների մեջ կա նաև ուրիշ մի փոքր եկեղեցի, որուն արևմտյան մասին վրա փլած է, իսկ արևելյան մասը - խորանը կանգուն է: Բավական խնամքով շինված է այս եկեղեցին. խորանին անմիջապես կից ունի երկու հարթ որմասյուն, մուլյուրով արևմտյան քանդված մասին վրա ծածկված է եղեգներով. գյուղացիներե մեկն այս եկեղեցին բնակարանի է վերածել: Դուռը հարավային կողմեն է. նույն կողմին վրա կա նաև մի փոքր պատուհան: Դռան և պատուհանին վրա քանդակված պսակները, որոնք շատ սուր սրակամար են, ցույց կուտան, որ վերջին ժամանակներ շինված են, թերևս 14–15 դարերու մեջ: Ներսից և դրսից արձանագրության հետք չի երևում: Հարավային և արևմտյան կողմերը, դուրսը խիտ տապանաքարեր են առանց արձանագրության: Մի ուրիշ եկեղեցի, որը տեսեր է Շահխաթունյան (էջ 55) և ինչպես կերևի նրանից օգտվեր է Հ. Ղ. Ալիշան (Այրարատ, էջ 141), որուն վրա եղեր է հետևյալ արձանագրության կտորը «ՆԿԷ թուականիս (1018) ես Մարիամ որ ետու զիմ գիրքս ի սուրբ Սարգիսս.....» այս եկեղեցիի ոչ հետքը գտա և ոչ արձանագրության բեկորներ գետին թափած. ինձ կթվի թե, ինչպես շատ մասեր, այնպես ալ այս ավերակը և արձանագրությունը ոչնչացել են: Եթե արձանագրության բեկորներ գետին թափած լինեին, գյուղի մեջ գտնվող մի քանի հետաքրքրվող անձինք անպատճառ տեսած կլինեին, որովհետև իմ շրջագայությանս ժամանակ ինձ շրջապատեցին մի քանի հետաքրքիր և բանիմաց մարդիկ և տեղեկություններ կուտային գյուղի մեջ կամ շրջակայքում գտնված հնություններու և բեկորներու մասին, որոնց մեկը, Քերիմ Գասպարյան, մատնանշում էր ինձ գերեզմանների, խաչքարերի և այլ ուշագրավ մնացորդների տեղերը. դժբախտաբար նրանց ինձ ցույց տված հեռավոր տեղերը ևս գնալու հնարավորություն չունեի, միայն արտագրեցի վերապահությամբ՝ իր մոտ գտնված մի արձանագրություն, որ հետևյալն է «Ի յաւերումն Գոչայ Ամիր որդի Էլիզպարին գերի տարան Արազպուրուն». թե ո՞րչափ ճիշտ կարդացված է այս արձանագրությունը, ցույց կուտա ապագան: Հայր Ալիշանի ցույց տված թուրքերեն արձանագրությունը չեմ տեսած, որը իրեն կարծիքով գրված պետք է լինի 1583 թվականին, Ֆարհատ փաշայի ձեռքով (Այրարատ, էջ 149): Բայց ես հավանական եմ համարում, որ Ֆարհատ փաշայի շինածը պետք է որ լինի արտաքին երրորդ պարիսպը:*

*Բոլորովին դրսի պարիսպը, որով շրջապատվում է գյուղը, հայտնի է, որ նոր շինված պարիսպ է, շինված է հասարակ քարերով և կարելի է ասել, միանգամայն անարվեստ: Ըստ Շահխաթունյանի, այս պարիսպը շինել տվել է 1812 թվականին Հյուսեին խան Սարդար, շինելով նաև պետական պետքերու հատուկ ուրիշ շինություններ, ամբարանոցներ և այլն և այլն, և այնտեղ դրել է մի պաշտոնյա Բեկ անունով, իբրև բերդապահ կամ կառավարիչ: (Շահխաթունյան, բ., էջ 55):*

*Ռուսաց տիրապետության սկզբի տարիներում Կարսի բնակիչներից, 50 ընտանիքի չափ, բնակություն հաստատել են այստեղ, սակայն քիչ հետո բոլորովին լքել ու գնացել են ուրիշ տեղեր, այնպես որ Շահխաթունյանի ժամանակ միանգամայն ամայի է եղած: Ինչպես կերևի, վերջին ժամանակ այնտեղ բնակություն հաստատող թուրքերը բոլորովին նոր բնակիչներ էին, ռուսաց տիրապետության ժամանակ՝ կարսեցի հայերի մեջ տեղը լքելե հետո:*

*Արտաքին երրորդ պարսպի մեջ, արևելյան կողմը, 1913 թվականի ճանապարհորդությանս ժամանակ, անձամբ տեսա մի ավերակ քարակույտ, և այդ քարակույտի մեջ երևում էր մի ստորերկրյա անցքի մուտքը, այս անգամ իզուր փնտրեցի այդ ավերակի քարակույտը և մուտքը: Միանգամայն անհետացեր էր. ինչպես կերևի, նախորդ թուրք բնակչության օրով ոչնչացված էր:*

*Տեղի նոր բնակիչները, հետաքրքրական մեզ համար, նորություններ շատ են պատմում, ցույց են տալիս զանազան հեռու կամ մոտ տեղերում հետաքրքրական մնացորդներ. պետք է որ հատկապես ժամանակ որոշվի, հնություններով հարուստ այդ վայրը, ընդարձակորեն հետազոտվի, մի քիչ ավելի երկար ժամանակով:*

*Փոքր Թալինը թողելե առաջ, գնացի նաև շտապ կերպով թուրքերի ժամանակ Ղարավանք կոչված՝ 7-րդ դարու եկեղեցին, որ նույն վիճակին մեջ էր, ինչպես տեսել էի 1913 թվականին:*

*Այսօր կես օրը քիչ անց, թողի Փոքր Թալին և ուղևորվեցի դեպի Մեծ (կամ Հին) Թալին: Ճանապարհի կեսին վրա հանդիպեցի այն մեծ իջևանը, որուն ավերակները այսօր անգամ սքանչացում կպատճառեն այցելուին:*

*Իջևանը բաղկացած է երեք ընդարձակ մասերից. ամեն մի մասի կամ բաժանման մեջ, կան մեծ հրապարակներ, որոնց շուրջը շարված են կամարակապ սենյակներ, որոնք այժմ փլած են և քարակույտերու վերածված, միայն մնացել են կամարակալների հետքերը, և սենյակների լայնության չափե-*

ը: Արտաքին պատերի հյուսիսային և հարավային պատերն ունին երեքական բուրգեր, որոնց երկուքը շինված են երկու ծայրերուն վրա, անկյուններում, և մյուսը՝ մեջտեղի վրա: Բոլոր պատերն առանց բացառության շինված են կրաշաղախով և սրբատաշ միջակ մեծությամբ քարերով. միջին բաժանման մեջ, այժմ ևս որոշ են, որ եղել են քսանից ավելի սենյակներ: Շատ դյուրին կլինի այս կարևոր և մեծածավալ իշխանի հատակագիծը հանել, նույնիսկ ամբողջովին վերակազմել քանի դեռ բոլորովին չէ ոչնչացած. բավական է, որ մի քանի օր մշակներ աշխատին, և փլատակներու տակ ծածկված հիմերն ու պատերն երևան կբերեն: Այս իշխանը քանդել և այս վիճակին են հասցրել Փոքր և Մեծ Թալինի բնակիչները, որոնք իբր քարահանք գործածեր են այս ավերակը, և շարունակ կրել են սրբատաշ քարերն իրենց պետքերուն գործածելու համար: (Ինչպես երևում է շինելակերպից, այս իշխանը 14–15 դարերու գործ պետք է լինի):

### Հոկտեմբեր 9

1914 թվականին, եկեղեցվո արևելյան կողմի ընդարձակ բակին մեջ հավաքել էի զանազան տեսակ կոթողաձև քանդակազարդ տապանաքարեր և պատվանդաններ, նաև երեք հատ հնագույն տապանաքարեր, վրան արձանագրություններով: Մինչև երեկո, ուշ ժամանակ, այս հավաքված քարերը բանվորներ փոխադրեցին եկեղեցվո մեջը և ժամանակավորապես առայժմ դասավորեցի, հետագային ըստ արժանվույն կանոնավոր թանգարանի վերածելու համար, երբ արդեն հնարավոր կլինի կատարել հարկ եղած փոքրիկ նորոգությունները: Ներսը դարսված քարերից տասն և հինգը 5–7-րդ դարու քառակուսի կոթողներ են. չորս երեսներու վրա հետաքրքրական պատկերներ քանդակված, որոնց երեքին վրա, քանդակները կներկայացնեն խոզապուխ մարդիկ, իսկ մյուս մասերուն վրա, կրոնական պատկերներ և զարդաքանդակներ: Երկու հատ գեղաքանդակ խաչքարի կտորներ և երեք հատ վրաները արձանագրված տապանաքարեր:

Տապանաքարերից մեկը, որ բերել եմ մեծ եկեղեցիի հյուսիսային կողմը՝ կես կիլոմետր հեռավորության վրա գտնվող Կյուլեկ Թեփե անվանված սարի ետևը գտնվող ձորի մեջեն, ունի ՅԻԴ (875 թ.) հայկական թվականը և կվերաբերի մի նահատակի: Երկրորդ տապանաքարը, որ նույն տեղից է բերված, թվական չունի և մասամբ եղծված է, արձանագրությունը պատկանում է ոմն Դանիել որդւոյ Կարբեցի: Երրորդը, որ ամենայն հավանականությամբ, նախքան 10-րդ դարու մի տապանաքար է և կեսը կոտրած ու կորած, տաշված և վրայի կիսաբոլորակ մասի վրա տրված է հետևյալ արձանագրության մասը: ✠ Ցիշես ՏՐ Ա Նաթանալա Զարու Տի

Բանվորների հանգստյան ժամերից օգուտ քաղելով, գնացի գյուղի մեջ (հայերը) Մեսրոպ և (որդին) Հմայակ Մելիքյաններուն տունը, տեսնելու համար այն կարասը՝ որուն մասին տեղեկություն էին տվել նախօրոք Կոմիտեին: Կարասին մեջ լեցուցեր էին կտավատ և տան մի անկյունում զետեղել. քննելով տեսա, որ մի ճեղքվածք ունի վերևից դեպի ներքև: Նայելով ձևին և չափին, նաև կավի բաղադրության, հազիվ թե լինի 17–18-րդ դարերու մի գործ: Կարասը գտնվել է պարտեզում բանջարանոցը փորելիս. բարձրությունը, մոտավորապես 80 սմ. է, այժմ եթե Կոմիտեն հարմար կտեսնե թանգարան փոխադրել, պաշտոնապես պետք է գրել Կոմիտեի ներկայացուցչին և Մելիքյանները պատրաստ են Կոմիտեի կարգադրության հնազանդելու:

Մինչև երեկոյան արևի մտնելը, բանվորները հազիվ կարողացան բոլոր քարերը փոխադրել ներս, որովհետև քարերի մի քանի հատը շատ խոշոր էին, և միանգամայն զգուշություն կպահանջեին վրայի քանդակները չվնասվելու համար: Միայն մի հատ քար, որ կոթողի պատվանդան է եղած, մնաց դուրսը դռան մոտ, որովհետև հետնագույնս, չոր քարով կոպիտ կերպով իբրև նախագավիթ շինված մասին դռնեն ներս մտցնել անհնար եղավ, նաև քանդվելու վտանգ է սպառնում:

Դեռ 1913 թվականին, այս թանգարանի վերածված եկեղեցիի հատակագիծը և լուսանկարները հաներ եմ, որոնք այժմ Կոմիտեի սեփականություն են. նաև այժմ՝ եկեղեցվո մեջ զետեղված բոլոր քարերի լուսանկարները, ուստի այս անգամ ավելորդ էի համարել կրկին լուսանկարել, բայց որովհետև հնագիտական դիտողություններս ու հուշագրերս կորած էին և նոր մանրամասն հուշագրեր կազմելու հնարավորություն չունեի, ժամանակիս կարճության պատճառով բավականացա միայն պատերի վրա քարտաշ վարպետների քարերի վրա դրած նշանները հավաքելով, որ հետևյալներն են. այս ՇՀ ✠ ՍՈՂԽԱ ✠: Ա նշանը փորագրված է բոլոր կամարաքարերի և արտաքին նիշի կողմնակի տափակ որմասյանց խոյակների վրա: Այս ոճով և կամ ավելի ճիշտը՝ այս նշանների շատ նման նշաններ կան Ադիամանի, Բյուրականի մոտ ձորի միջի ավերակ եկեղեցիի, Հաճի Ղարայի ավերակ եկեղեցվո պատերու քարերուն վրա. այս պարագան ինձ ենթադրել կուտա, որ այս բոլոր եկեղեցիները



միաժամանակ շինված են և մասնավորապես կան վարպետներ անոնց մեջ, որ այս բոլոր շենքերի մեջ՝ իրենց աշխատանքի բաժինն ունեցած են և իրենց նշանները ամեն տեղ միօրինակ դրած են:

Անմխիթար է մեծ կաթողիկեի դրությունը, հետզհետե քանդվելու վրա է, կան մասեր որ ճակատագրապես դատապարտված են քանդվելու, այդ մասերն ապահովելու ոչ մի հնար չկա, իսկ այն մասերը. որոնք կարող են քանդումից ազատվել, նրանց վրա էլ մեծամեծ ծախքեր են հարկավոր, որ այժմ հնարավոր չէ: Միայն թե կարևոր է, ըստ իս, մեջը բոլորովին մաքրել թափված բեկորներից և ուրիշ ապականություններից և այս տեղն էլ վերածել մի առժամանակ թանգարանի, անոր մեջ տեղավորելով այդ շրջանում աստանդական ցրված գեղարվեստական քանդակներ և շինությանց գեղաքանդակ մասեր:

Առայժմ քանի Թալինում թանգարան կազմելու սկիզբն է, և բարեբախտաբար Ներսեհ Կամսարականի շինած եկեղեցին գրեթե անվնաս մնացել է, որն այժմ վերածվեց թանգարանի, ուստի անհրաժեշտ են մի քանի կարևոր աշխատանքներ այս շենքի շուրջը՝ եթե Կոմիտեն կհամաձայնի:

Նախ և առաջ, փութով պետք է ծածկել գմբեթի թմբուկին վերևի մասի ծածկը, որ առաջ եկել է կոնաձև մասի քանդվելեն: Այդ ծածկը թեև մի ժամանակ փայտով և հողով ծածկված է եղել, այնուամենայնիվ 1920 թվականին Թալինում ժամանակավորապես բնակություն հաստատող զինվորները քանդել են և վառել են ծածկի փայտերը: Նմանապես շուտով արևմտյան կողմը ֆրոնտոնի ներքև բացված մի ծակը, որ առաջ է եկել Ներսեհ Կամսարականի արձանագրության միջին քարի վար ընկնելեն: Ուստի կամ պետք է փնտրել և գտնել այդ արձանագրության ընկած մասը և տեղը դնել, և կամ մի ուրիշ քարով փակել և կրաշաղախով ամրացնել: Եթե այդ մասը բաց մնա, անպայման ձմեռվան ձյունն ու անձրևները կթափվին ներս: Եթե այս երկու կարևոր մասերու նորոգությունով շենքը ապահովվի, կարելի է հաստատապես վստահ լինել, որ այս շենքը շատ երկար ժամանակ անվնաս կմնա բնության ամեն մի պատահարների հանդեպ:

Կմնա մի ուրիշ անտեղություն, որ առաջ եկել է գյուղացիների ձեռքով և շատ հեշտությամբ կարելի է այդ անտեղությունը չեզոքացնել: Մի ժամանակ, երբ այս եկեղեցին իբրև եկեղեցի կամ ուխտատեղի գործածական է եղել, հարավային դռան առջև շինել են նախագավթի նման մի բան բոլորովին չոր և կոշտ ու կոպիտ քարերով, որուն լայնությունն է առանց պատերի հաստության 2,45, իսկ երկարությունը՝ նույնպես առանց պատերի հաստության՝ 4,00 մետր: Այս կտորը միանգամայն անտեղի կերպով շինված է, մանավանդ որ վրայի ծածկն ևս փլված է և փայտերը վառել են, նույնպես 1920 թվականին Թալինում բնակվող զինվորները:

Ըստ իս, պետք է որ այս մասը միանգամայն քանդվի և վերցվի, ներքևը որ հողը ևս բարձրացել է, բերել և թափել, հարկ է ջրերու ընթացք տալու համար, որով շենքը չորս կողմից միանգամայն կապահովվի անձրևներից և ձյուներից առաջացած խոնավություններից:

Բացի վերև հիշված անհրաժեշտ նորոգումներից, անհրաժեշտ է, վարչական միջոցով կատարել հետևյալ կարգադրությունները շենքի ապահովության համար: Հողաբաժանության ժամանակ, մինչև եկեղեցվո պատերուն տակ տրվեր են իբրև վարելահող. այդ հողերը մշտապես վարվելով և ցանված արտերը ջրվելով, անվրեպ վնասում են հիմքերուն հյուսիսային և հարավային կողմից: Հետևաբար պետք է այդ հողերը հատկացնել թանգարանին, որոշ քանակությամբ և վերածել անմշակ հրապարակի թանգարանին շուրջը: Իսկ արևելյան կողմեն, Արմենակ Գրիգորյան անուն մեկուն տվեր են, իբրև կալատեղ, մի ընդարձակ տեղ, որ անվրեպ եղել է հնումն եկեղեցվո հատուկ շինություններու տեղ: Կալի այժմյան տերը, անցյալները փորելով այս հողի մի մասը, ներքևը դուրս է եկել մաքուր սալահատակված. սալահատակի քարերը, այնքան մաքուր և անվնաս մնացած են եղել, որ օրինակ Գրիգորյանը քանդել և տարել է ուրիշ տեղ գործածելու: Այս կալատեղը ևս պետք է ազատել մասնավոր քմահաճույքներից և հատկացնել թանգարանին: Արևմտյան կողմը ևս, մի քանի քայլի վրա, կա մի ուրիշ ավերակ, որուն անմիջապես կից դարձյալ արտ է և քարեր ու բեկորներ արտատիրոջ քմահաճույքին ենթակա, ուստի այս կողմից ևս, արտերը որոշ չափով պիտի հեռացնել և թանգարանը թողնել առանձնացած շրջապատվող մի հրապարակի վրա, որն այն ժամանակ կտանա թանգարանի վայելուչ դիրք: Կալի տերը հետզհետե իր կալը ընդարձակելու համար, գրեթե փորելով հասել է եկեղեցու արևելյան պատին: Ուստի այս ինքնակամ ավերումներից ազատվելու համար, պետք է միանգամայն հեռացնել շրջակա հողատերերը և այդ հողերի փոխարեն տալ ուրիշ տեղից:

Մեծ կաթողիկեն, որուն այժմյան, փլվածքները առաջ են եկել 1840 թվականին Մասիսի մեծ երկրաշարժի ժամանակ, որուն հարավ արևմտյան պատի առջև 25 բեռնամբարձ եզներ մնացել են

փլատակների տակ, այժմ թեև նույն վիճակի մեջ կգտնվի, այնուամենայնիվ որոշ մասեր ավելի խարխլած և փլուզման ենթակա են: Մի քանի փոքր մասեր արդեն այս գարնան փլեր են:

Թանգարան եկեղեցվո արևելյան կողմը, որ կից է ճանապարհին, հանդեպ կալատեղին, ցարդ կմնան հին շինության մեծ բեկորներ. առ այժմ հայտնի չէ թե ի՞նչ շինության ավերակ է այդ տեղը, բայց ամենայն հավանականությամբ, կամ երկու եկեղեցիներու այդքան մոտիկ կամ եկեղեցական իշխանության պատկանող մի շինություն էր և կամ իշխանական բնակարան:

Եթե երկու օր ևս հնար լիներ ինձ մնալ Թալինում, խիստ օգտակար պիտի լիներ, որովհետև թե՛ շատ նորություններ պիտի լինեին արձանագրելու և թե՛ բեկորներ պիտի հավաքեի: Սակայն կառապանիս խիստ լուրջ հիվանդության պատճառով, ստիպված եղա ժամ առաջ հեռանալ Թալինից:

**Հոկտեմբեր 10**

Այսօր առավոտյան, վերստին այցելելով Թանգարան, գերեզմանատուն և կիսավեր մեծ կաթուղիկեն, ներկայացուցչի և գյուղխորհրդի ընկերակցությամբ, տվի իմ վերջին հրահանգները և խնդրեցի, որ հոգածու լինին և սպասեն Կոմիտեի պաշտոնական կարգադրություններին:

Վարպետների ցերեկվա հանգստյան դադարից օգտվելով, գնացի մեծ Կաթողիկեի հյուսիսային կողմի մեկ կամ մեկ և կես կիլոմետր հեռավորության վրա գտնվող Կ յ ու լ ե կ Թ ե փ ե անվանված սարը, որ մի ժամանակ եղել է ուրարտական բերդ և բերդաքաղաք: Մեջը կան հին բնակության մնացորդներ և բերդի ժամանակակից գերեզմաններ, որոնք տեսել էի 1913 թվականին: Այժմ այնտեղ ամեն ինչ միայն կարոտ է մանրազնին հետազոտության և ուսումնասիրության:

**Մի քանի պատմական ծանոթություններ**

1. Մեծ Կաթողիկեի ներքին հարավ արևելյան սյունի վրա եղած արձանագրության թվականն է ՄԼԲ (783):
2. Բ դարուն Թալինի անունը ծանոթ էր Պտղոմեոս աշխարհագրին - Թալինա անունով, «Այրարատ», էջ 137:
3. Դիոսկորոս կաթուղիկոսի օրով եղած արձանագրության թվականն է ՆՁԹ (1040):
4. Է դարուն, ինչպես կերևի, Կամսարականների սեփականություն էր և Ներսեհ կբնակեր Թալինում: (Անանիա Շիրակացի):
5. Արաբացիների Թալինում արած կոտորածն ու կողոպուտը 774 թվին: Այս կոտորածի ժամանակ սպանվեր են 700 հոգի և գերվել են 1200 հոգի («Այրարատ», էջ 139):
6. ԹԺ և ԺԱ դարերուն Բագրատունիների իշխանության տակ եղած է Թալինը:
7. Երկրորդ անգամ Թալինում կոտորած եղել է Ելտկուզ Ամիրայի ձեռքով՝ 1161–1162 թվականին, այս անգամ ևս, բազմաթիվ արք, կանայք և մանկտիք կոտորվել են:
8. Երրորդ անգամ, Սուլթան Սելիմ 1514 թվականին Պարսից դեմ ունեցած պատերազմից հաղթական դառնալու պահուն, մեծ կոտորած է կատարել Թալինում:



## ՄԱՍ Դ. ՉՈՐՐՈՐԴ

# ՏԵՂԵԿԱԳՐԵՐ ԵՎ ՆԱՄԱԿՆԵՐ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՈՒ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ,

# Ա

# ԱՆԻԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

## ՆԱՄԱԿՆԵՐ ԱՆԻԻՑ

*1905 թ. հունիսի 16-ին*

*Ամենանավոր կերպով առաջ կերթան պրոֆեսոր Մառի պեղումները: Շատ բան պարզված է: Զվարթնոցի նմանությամբ, Գագիկի չինած եկեղեցին ըլլալուն մասին ոչ մի կասկած չմնաց: Կիսով չափ դուրս եկավ արտաքին բոլորակ պատը ներսեն և դուրսեն սյունազարդ, սյունները կկրեն քանդակազարդ կամարներ, բայց ոչ Զվարթնոցի նման նուռ և խաղողի քանդակներով, այլ անեցվոց իրենց սիրած ոճով, մանվածո քանդակներով զարդարված են կամարները: Ներսի խաչաձևի մեծ սյունները խոյակներով սկսեցին երևալ բոլորովին անաղարտ մնացած. ընդհանուր գծերն այս խոյակներուն նույնպես բոլորովին նման են Զվարթնոցի խոյակներուն, միայն քանդակներու թեթև տարբերություններ կան. չորս մետրեն ավելի կանգուն, թե՛ դուրսի պատերը և թե՛ ներսի սյունները: Առայժմ շատ բան մնացած կերևի և հուսալի է, որ դյուրությամբ, կարելի ըլլա վերակազմել:*

*Պ. Մառ անհամբեր կսպասե արձանագրություններ դուրս գալուն, որ մինչև այսօր դեռ չեն երևացեր, սակայն հուսալի չէ, որ դուրս գան կարևոր արձանագրություններ, քանի որ բավական բարձր պատեր թե՛ կանգուն կան և թե՛ պատերի խոշոր կտորներ պառկած են հողին վրա:*

*Պ. Մառ վերին աստիճան ուրախ է և գոհ այս կողմերը գտնված հեթանոսական հնություններու մասին, զորս շատ մեծ գյուտ և նորություն կհամարի պատմության համար: Պարիսպեն դուրս թուրքի գյուղին մեջ, թուրքերը սկսեր են բանալ շատ մը գերեզմաններ, և մեջեն դուրս բերել են զանազան հեթանոսական առարկաներ, խեցեղեններ, ապարանջաններ, ոսկեղեն զարդերու բեկորներ: Պ. Մառ գնեց Անիի թանգարանի համար: Պ. Մառ բոլորը անձամբ այցելեց այդ գերեզմաններու տեղը, և մտադիր է այս տարի հարմար առթիվ բանալ այդ գերեզմաններն ալ:*



*Նկ. 248. Անիի Գագկաշեն բոլորակ եկեղեցու արտաքին քանդակազարդ աղեղներ*

*Ամսույս 12-ին, կիրակի օրը, պ. Մառ, Անիի կաթուղիկե Մայր եկեղեցվո մեջ հոգեհանգիստ կատարել տվավ հանգուցյալ Եղյանի հիշատակին: Ներկա էին բավական բազմություն գյուղացիներեն. շատ զարմանալի է, որ այս տարի տակավին մինչև այսօր քաղաքներե եկող ոչ մի այցելուի երես*

չտեսանք: Հոգեհանգստի արարողությունեն հետո պ. Մառ քահանաներն և դպրաց դասը վարձատրելեն զատ, կարևոր գումար մ՝ ալ բաժանեց աղքատներուն:

Քաղաքացի այցելուներու փոխարեն այս տարի ունինք տարբեր տեսակ այցելուներու մեծ բազմություն մը, շրջակա բոլոր գյուղացիներեն ամեն ազգե խառն: Ասոնք հիվանդներ են, որ կուգան տիկին Մառին մոտ, որ կատարյալ անձնվիրությամբ կհոգա անոնց ամեն բժշկական կարիքները. դեղ ու դարման կբաժանե անխնա, իսկ ինչ որ իր կարողությենեն վեր է, նախնական դարմաններեն հետո խորհուրդ կուտա բժշկի դիմել: Բավականին գոհ մնացած են հիվանդները, և այդ պատճառով ալ գրեթե սկսեր են ամեն կողմե շարան շարան գալ և վայրկյան մը հանգիստ չեն տար տիկին Մառին: Իսկ նա անտրտունջ կտանի ամեն անհանգստություն:

«Մշակ», 1905 թ., հունիս 18



Նկ. 249. Անիի Գագկաշեն բոլորակ եկեղեցու մուտքերից մեկը

## Հունիսի 24-ին

Օրըստօրե հետաքրքրական դառնալ սկսեր են պեղումները: Այս շաբթու ալ ունեցանք կարևոր նորություններ: Արտաքին կամարներե զարդաքանդակ պատուհաններե և մեծ խոյակներե զատ բացվեցան եկեղեցիին հարավային և արևմտյան դռները: Արևմտյան դուռն այժմեն փոխարինեց ըլլալիք բոլոր ապագա զոհողությունները այս պեղման համար, դուռ մը, որուն նմանը մինչև այսօր չէ տեսնված ուրիշ հնություններու մեջ:

Շատ քիչ կբացատրեն Աստղիկի «տարփատենչ տեսողաց» կամ «սքանչատես տեսլեամբ» տողերը: Մարդ ակամա կապշի, տեսնելով բիրտ ապառաժին մարդկային ձեռքի տակ այսչափ կենդանություն ստանալը: Կարծես բնությունն ինքնին ստեղծեր է այն զմայլելի ներդաշնակությամբ իրարու խառնված նրբին քանդակները, որոնցմով զարդարված էին դռան ճակատը, քարի վրա քանդակ ըսելեն ավելի, կարելի է ասեղնագործություն անվանել. այնպիսի բարակ, մանր գիծեր կան ոլորված, հյուսված, որոնք մեկ նայվածքով անկարելի է տեսնել:

Ի տես այս չքնաղ բեկորներուն մեկ կողմանե կուրախանար հարգելի գիտնական պ. Մառ, որ վերջապես ազատվեցան հողին տակեն այս արվեստի գեղանի նմուշները, սակայն մյուս կողմանե կտխրեր, այժմեն գուշակելով անոնց ապագա ճակատագիրը, անխնամ փչանալ ժամանակի ընթացքին մեջ, ինչպես որ փչացեր են ասոնց նման շատ բաներ: Ցավելով ըսավ, որ «եթե ուրիշ ազգերու սեփականություն ըլլային այս հազվագյուտ գանձերը, անոնք բյուրեղյա ծածկույթի տակ կպահեին»: Շատ խորհեցավ, որ եթե հնար է վերստին կանգնել տա տեղին վրա, նորոգել տալով փչացած մասերը, սակայն ի նկատի ունենալով ատոր պատճառելիք մեծամեծ ծախքերը և երկար ժամանակի կորուստը, ետ կեցավ այդ խորհուրդեն առայժմ: Արդեն եկեղեցիին պեղման գործն ըստ ինքյան այնչափ մեծ է, որ հազիվ թե մինչև իր մեկնելու ժամանակ կարողանա ամբողջացնել. հետևաբար նյութական միջոցներե զատ ժամանակի անհարմարություն ալ կա:

Պ. Մառ չարաչար զբաղված է իր գործով, ո՛չ միայն գիտնականի լուրջ դերը կկատարե գործին գլուխը, այլ նաև, հսկողի, գործավորապետի և շատ անգամ գործավորի ալ գործ կկատարե: Առավոտ կանուխ դուրս կուգա բնակարանեն և կերթա գործին գլուխը արհամարհելով օրվան մերթ անձրևն ու քամին, մերթ շոգն ու փոշին, իսկ վերադարձին անկարելի է զանազանել զինքն իր հողաթաթախ կերպարանքով, այնտեղ աշխատող բանվորներեն: Բայց նա դարձին ուրախ ու զվարթ է, և մոռացած բոլոր կրած նեղությունները, կըլլած փոշիները, երբ ձեռքին մեջ ունի քանի մը կտոր նորագյուտ առարկաներ իր սիրելի Անիի թանգարանը ճոխացնելու համար: Կիրակի օրն ալ հանգիստ չունի: Ամբողջ օրը կանցնե թանգարանին մեջ, կնկարագրե, կարձանագրե, գտած առարկաներն իր ձեռքով կմաքրե, և իրենց պատշաճ տեղերը կշարե: Ասոնց վրա ավելացուցեք երբեմն ալ հետաքրքիր այցելուներու անվերջ հարցումներուն տված երկար պատմական ու գրական բացատրությունները, այն ատեն կարելի է հասկանալ թե պ. Մառը հաց ուտելու ժամանակ երբ կգտնե:

Հարավային դուռը թեև ոչ այնքան ճոխ, ինչպես արևմտյան դուռը, սակայն կարելի է ըսել արևմտյան դռան մանրանկարն է, նույն ձևով նույն քանդակներով զրեթե զարդարված է, դեռ չէ երևացեր հյուսիսային դուռը և կամ մյուս դռները, եթե Զվարթնոցի նման անոնք հինգ հատ էին:

Եկեղեցիի արևմտյան դռան հյուսիս-արևմտյան կողմը հազիվ 5–6 մետր հեռու եկեղեցիի պատեն դիպվածով դուրս եկավ քարեղեն վեցթևյա աստղաձև մոզայիկներով զարդարված դուռ մը. թեև ամբողջ ճակատն ընկած ու ջախջախված էր, սակայն բարեբախտաբար շատ քիչ վնասված էին այդ նրբաքանդակ աստղերը և անոնց լրացուցիչ տարրանկյունի փոքրիկ մասերը: Մեծ քանակությամբ հավաքել տվավ պ. Մառ այս բեկորներեն և փոխադրել տվավ անմիջապես թանգարան, վախնալով, որ մի գուցե անչափ երկար ժամանակ հողին տակ անարատ մնալեն հետո զոհ չերթան հետաքրքիր անցուդարձ ընողներու վայրենի քմահաճույքին:

Նկ. 250. Անիի Գագկաշեն բոլորակ եկեղեցու քանդակազարդ բեկորներ

Տակավին արձանագրություն չգտնվեցավ, սակայն, այս դռան ճակատը զարդարող վեցթևյա աստղերեն մեկուն յուրաքանչյուր ծայրերուն վրա, քանդակներու մեջ, բարձրաքանդակ գրված էին մեյմեկ գիր, որ կկարդացվեին Ս ա ր գ ի ս անունը: Դռան արվեստին համեմատաբար եկեղեցին նոր ըլլալեն, պ. Մառ կհետևցնե, թե սա գուցե լինի Անիի առաջնորդ Սարգիս եպիսկոպոսի անունը, ինչպես նաև չենքին եկեղեցիի շատ մոտ ըլլալեն կհետևցնե անոր առաջնորդարան մը ըլլալը:

Տարօրինակ երևույթ մը ալ բացվեցավ դռներուն առջևները. Զվարթնոցի նման չորս մեծ մայրայուներեն զատ, ուղիղ դռներուն դիմաց երևան եկան նմանապես նույն մեծությամբ հաստահեղույս մայր սյուներու մնացորդներ, որոնք ոչ միայն անսպասելի էին, այլ նաև ակամա մտածել կուտան, թե ինչու ուղղակի դռան դիմաց հազիվ տունեն մեկ մետր ներս հաստատված են: Թեև այժմեն չէ կարելի ոչինչ վճռել, մոտ ժամանակի մեջ պիտի պարզվի, սակայն այժմեն կարելի է ենթադրել, որ այս եկեղեցու շինող ճարտարապետը կամ չունեցավ Զվարթնոցը շինող ճարտարապետի խիզախ հանդգնությունը նույն ձևով գմբեթը կազմելու համար և դիմեց օժանդակ մայր սյուներու, և կամ նույն ձևով շինելե հետո վերահաս վտանգի մը առջևն առնելու համար հետո շինվեցան այս մեծ մայր սյուները, չուտով կպարզվի:

«Մշակ», 1905 թ., հունիս 30

## Օգոստոս 1

Մայիսի 31-ին մեկնեցանք դեպի Անի պրոֆեսոր Մառի հետ, որ Պետերբուրգեն եկած էր իր ընտանիքով: Հունիս երկուսին գործի սկսեցինք այստեղ: Երեք տարի առաջ պ. Վրույր կարծիք հայտնած էր պալատեն դեպի հարավ արևելք գտնվող մեծ բլուրի մասին թե թերևս Գագիկի Զվարթնոց եկեղեցիի նմանությամբ շինած եկեղեցին այդ ավերակին տակն ըլլա, որովհետև անոր վրա կնշմարվեին Զվարթնոցի մեծ սյուներու խոյակներուն նմանող խոյակներ: Պրոֆեսոր Մառն ալ հետաքրքրվեցավ ատով, և այս տարի ուզեց այդ տեղն ալ բանալ և 60–70 գործավորով սկսեց աշխատել: Պ. Վրույրին կարծիքը իրականության փոխվեցավ: Ճիշտ նույն ձևով նույն մանրամասնություններով սկսեց դուրս գալ հսկա եկեղեցին, որ ավելի մեծ է քան Մայր եկեղեցին: Շենքը դրսեն զարդարված է եղել շուրջանակի զույգ սյուներով և վրաները գեղեցիկ քանդակազարդ կամարներով, ու այս կամարներուն մեջ պատուհաններ, կամարներեն վեր դարձյալ կլոր պատուհաններ՝ մանվածո ամենանուրբ քանդակներով շրջանակված: Մեծ սյուներու խոյակները նման են Զվարթնոցի խոյակներուն: Բացվեցան հարավային և արևմտյան դռները, սակայն, աչք պետք է տեսնելու արևմտյան դուռը, մարդ կշվարի կմնա, և չի կարող արտասուքը զսպել այդ հիանալի և կախարդիչ կերտվածքին առջև, այնպես գեղեցիկ և նուրբ, միանգամայն այնպիսի վայելուչ պատշաճությամբ քանդակված է դռան ճակատը՝ որ կարծես մարդկային ձեռք չէ դպեր, և բնությունն է որ ստեղծեր է: Երևակայեցեք, որ ես գրեթե անհնար կը տեսնեմ նույնությամբ ընդօրինակել, եթե չափերս բնական մեծությամբ չբռնեմ. այնքան մանրմունր հյուսվածքներ և զարդախաչեր կան քանդակված՝ քարերուն վրա: Պրոֆեսոր Մառ երբ առաջին անգամ տեսավ չկարողացավ յուր զայրույթը զսպել, և ցավելով ըսավ որ. «եթե այս տեսակ թանկագին բեկորներ ռուսները ունենային, ապակիի մեջ կառնեին և կպահեին. հայտնի է, որ հայերը, ինչպես ասոր նման ուրիշ շատ բաներ, նույնպես այս թանկագին գանձն ալ պիտի փչացնեն»: Այդպես ալ պիտի ըլլա. ինչ կարելի է ընել, և ով պիտի ընե: Կիկլոպյան ուժ պետք է այդ դռան ահագին քարերը փոխադրելու համար: Մնաց որ, ահագին ծախքի ալ դուռ է: Դռան վերնասյամի քարը միակտուր հսկա մ'է, ամբողջ բռնված՝ զարնազան քանդակներով: Նմանապես այսպես հսկա քարերով են կողքերը, վերը դրված մասերը, նույնպես և պատերուն քարերը:

«Լուսաբեր», 1905 թ., սեպտեմբեր 9, № 117

## 1907 թիվ

Անցյալ տարվա պեղումներից հետո մինչև հիմա նորություններ չկային հաղորդելիք հիմա ալ նույնն է գրեթե,– մեծ դահլիճը, բաղնիքը և մտից արևմտյան գլխավոր դուռը, միայն թե ավելի մանրամասն պարզվեցան: Դահլիճին երկայնությունը մոտ 20 մետր է, բացի անկյուններեն, երկայնության կողմերուն վրա 4-ական շքեղ որմասյուներով, որոնց վրայեն կամարներ ձգված են զանազան կողմեր: Բաղնիքին մեկ մասն էլ դուրս եկած բոլորովին անջատ և անկախ մյուսեն, առանձին դռնով և առանձին նախագավիթով, որ ենթադրել կուտա, թե մեկը արանց և մյուսը կանանց հատուկ էր, ըստ հարեմական դրության, թեև մեկ վառարանով տաքացեր են երկուսն ալ:

Պալատի արևմտյան մտից դուռը մոտ 3 մ. լայնություն ունի, մնացեր է բարավորներու ստորին մասը միայն քանդակված հայոց մեջ ամենահին՝ գրեթե 5-րդ դարու քանդակներով:

Նկ. 251. Անիի պեղածո բնակելի շենքերի մնացորդներ

Սկսված է պեղում Կարուց դռան առջև, մեկ երկու շաբաթեն բոլորովին կբացվի այդ դուռը, որը ծածկված էր փլատակներու տակ, այդ տեղեն կսպասվի նորություններ:

Երկու օր ի վեր նամակս գրված էր. բերող չըլլալուն պատճառով մնաց, ուստի այս երկու օրվան մեջ պարզվող նորություններն իմացնեմ: Պալատի հյուսիս արևելյան կողմը բացվեցավ մի ուրիշ մեծ դահլիճ այնազարդ բազիլիկ ձևով, հանդիպակաց արևմտյան կողմինեն քիչ փոքր: Հյուսիսային անկյունը երևաց մի ուրիշ սրահ, բոլորովին համաչափ նույնպես արևմտյան կողմինին: Արվեստագործական առարկաներ չերևցան, եղածներն ալ հատուկտոր, սակայն այդ փշրված վիճակին մեջ ուշադրություն հրավիրող շատ գեղեցիկ նմուշներ կան. գտնվեցան մի արծաթյա մատանի, որուն ակը թափանցիկ ճերմակ քար մ'է, բավական խոշոր և վրան գրված է երկու տող խիստ մաքուր արաբերեն, բայց կարծեմ անընթեռնելի մնաց առայժմ: Այսօր սկսեցին արտաքին կողմերն ալ մաքրել, ուր կհուսացվի թափած ըլլալ ճարտարապետական զարդաքանդակներ և արձանագրություններ. ըլլալուն անպատճառ կգրեմ:

«Ախուրյան», 1907 թ., № 44

Երկու շաբաթեն կարելի է լիովին բացվի պալատին ներսի կողմերն իր բոլոր բաժանմունքներով, քանի մը սենյակներ միայն մնացած են մաքրելու: Այժմ պալատը ոչ միայն պարզ է իր վիթխարի հատակագծով, այլև մեջեն դուրս եկած բոլոր առարկաներով, որոնք պարզ կապացուցանեն, թե այնտեղ մի ժամանակ ապրեր են սովորական շատ մեծ և ճաշակավոր մարդիկ: Ամեն մի կտոր, որ չափ որ փչացած և այլանդակված լինեն, դարձյալ իրենց վրա կկրեն գեղեցկության և շքեղության կնիքը: Խեցեղեններու բազմաթիվ բեկորներ, ամենը զարնազան տեսակի, հիանալի կերպով գունավորված, զարդարված և երբեմն մաքուր ոսկեզօծված, որոնց նմանը հազիվ պատահել էին ուրիշ տեղեր:

Ճարտարապետական բեկորներու մեջ շատ ուշագրավ են գահճ ձուլված բարձրաքանդակ զարդերը, որոնցմով պալատի կանգուն ժամանակ ծածկված են եղել սրահներու պատերն ու առաստաղները: Այս զարդանկարներեն մեկ մասը 5–6 սմ. լայնությամբ քանդակազարդ ժապավեններ են, որոնք հյուսված են եղել արաբական ձևերով, որոնց զանազան ուղղությանց վրա ճյուղավորվելեն գոյացած քառակուսի, եռանկյուն կամ տարանկյուն մասերուն վրա քանդակված են նույնպես

բարձրաքանդակ և սիրուն գծերով կենդանիներու և թռչուններու պատկերներ: Գաճե զարդարանքներուն մեկ մասին ֆոնը կապույտ գույնով ներկված է, թերևս ամենուն ալ վրա կային գույներ, բայց փչացած են այժմ:

Սենյակներուն ոմանց ալ առաստաղները զարդարված են եղեր գեղանկար օրնիմաններով: Սրահի մը մեջեն բացի փոքր կտորներե գտնվեցան մեկ արշինի չափ երկայնությամբ տախտակ մը, որուն վրա գրեթե ամբողջ պահված են զարդաքանդակներու գույները, հակառակ տախտակին բոլորովին փտած ըլլալուն՝ նկարը կներկայացնե բացի ոլորուն տերևներե զանազան ծաղիկներ:

Գտնվեցավ մի մատանի առանց քարի, ակին վրա փորագրված է թռչուն մը: Դժվար է ամբողջովին նկարագրել վերջին երկու շաբթվան պեղումներու արդյունավորությունը, այնպես որ հիմա արդեն թանգարանի մեջ տեղ չէ մնացած առարկաները դասավորելու, եթե այսպես շարունակվեն պեղումները և հետազոտությունները, գալ տարի անհրաժեշտ պետք է մի նոր թանգարան ունենալ, թեև հարգելի պրոֆեսոր Մառ այժմյան թանգարանին շուրջը մաքրել կուտա, շատ մը դուրսը մնացած ճարտարապետական զարդաքանդակներ և խաչարձաններ դուրսը զետեղելու համար, բայց սա բավական չէ:

«Ախուրյան», 1907 թ., № 45

Թիֆլիսի Ազգագրական ընկերությունը մտադրված է շինել Անիի կամուրջը, հյուրատունը և մի թանգարան, ուստի այս գործերուն ուսումնասիրության համար երկու շաբաթ առաջ եկավ պ. Ե. Լալայանը և դիմեց իմ խորհուրդներուս ալ, հայտարարելով, որ ունի հինգ հազար ռուբլի պատրաստի դրամ և կուզեն ծախսել Անիի բարեզարդության և հնությանց պահպանությանց համար:

Ես խորհուրդ չտվի այժմեն ծախսել հազարներ կամուրջի մը համար, որը ոչ մի ակնկալված նյութական և բարոյական օգուտներ չպիտի տա, նույնպես և թանգարան և հյուրատուն միաժամանակ շինելու համար՝ տասնյակ հազարներու պետք կա. 5000 ռուբլու ողորմելի գումարով (թեև հետևյալ օրը իմացանք, որ ոչ թե 5000 ռուբլի այլ 500 է եղել), այդ բոլոր բաները իրագործել անհնար էր: Հետևաբար ես առաջարկեցի, որ Ազգ. ընկերությունը փոխանակ ահագին գումարներ ծախսելու, ծրագիրներ հղանալով կես ճամփուն մնալու, լավ կըլլա, որ օգտվին Հոռոմոս վանքին ընդարձակ սրահներեն և այնտեղի վաղուց քանդված մի կամուրջեն, նույնպես նաև առայժմ այնտեղ գտնվող 10–15 սենյակներե: Նախ որ այդ կամուրջը ամենեն շատ 1500 ռուբլիով վերականգնելով, ճանապարհը կդյուրանա այցելողներու համար, երկրորդ՝ այնտեղի յոթը զանազան դարերու ճարտարապետական և գեղարվեստական չքեղ նմուշները կպահպանվին և կնորոգվին նույն սրահները, թանգարանի վերածելով թեթև ծախքերով, երրորդ՝ այցելուները լիովին կօգտվին այն տեղի բնություններեն առայժմ, մինչև մի մեծ և ընդարձակ հյուրատուն շինվիլը:



Նկ. 252. Անիի փլած մինարեի մոտ Մառի պեղած եկեղեցին



Այս առաջարկս խիստ հարմար և գործնական գտավ պ. Ե. Լալայանը և խնդրեց ինձմե անձամբ ընկերակցել իրեն դեպի Հոռոմոսի վանքը տեղուն վրա իմ ցուցումներս տալու համար: Ես սիրով ընդունեցի, որովհետև ինձի մեծ ուրախություն պատճառեց որ տարիներե ի վեր երազած խորհուրդներս իրականության կմոտենային, այն է, պահել Հոռոմոսի վանքի գիտական և պատմական աննման հարստությունները:

Հետևյալ առավոտ կանուխ կառքով մեկնեցինք դեպի Հոռոմոսի վանքը, այնտեղ ցույց տվի ամեն բան, որով ավելի ուրախություն զգաց պ. Լալայանը և մտադրվեցավ ամեն ջանք ի գործ դնել այն ծրագրին հաջողության: Ղոչավանքի գյուղացիք լսելով կամուրջի շինության լուրը, իրենք ալ ինքնակամ խոստացան հարյուր մշակ և քսան սայլ ձրի տալ օժանդակելու համար այս օգտակար գործին: Երբ վերադարձանք Անի, պ. Լալայանց դիմեց պրոֆ. Մառին և հայտնեց այս խորհուրդները, անոր ալ կարծիքն իմանալու համար. նա ևս համակրեցավ լիովին և խոստացավ նույն իսկ բարոյապես օգնել կրցածին չափ:

Լալայանց մեծամեծ հույսերով և չափազանց ոգևորված մեկնեցավ այս տեղեն, հավատալով որ ի մոտո սկսեցի շինությանց ալ ձեռնարկել:

«Ախուրյան», 1907 թ. № 46.

## 18-ին հուլիսի

Անցյալ շաբթու գրեցի, որ սրահի մի մեջեն գտնվեցան գեղանկար զարդարված տախտակի կտորներ: Նույն սրահին մեջ, որը կգտնվի պալատին հարավ-արևմտյան և միջնաբերդի գագաթի կիսականգուն հնագույն եկեղեցիի ուղիղ արևմտյան կողմը, սալատակին տակ նշմարվեցավ, դեռ երկու շաբաթ առաջ, աղյուսով կամարակապված ստորերկրյա շինության մը հետքերը: Հակառակ Անիի մեջ աղյուսի տարօրինակ և հետաքրքրական երևույթին, պ. Մառ չչտապեց անմիջապես բանալու այդ մասը՝ նախքան անոր վրան և շուրջը խուզարկու պեղումներ կատարելը, և հիրավի նույն կամարի և վրայի սալատակի մեջտեղը պահված էին գրեթե նույնչափ հետաքրքրական բաներ, որոնք կարող էին փչանալ բրիչի անզգուշ հարվածներու տակ: Կամարեն հազիվ կես մետր բարձրության վրա հայտնվեցան ջրաբաշխ խողովակներու ճյուղավորումներ ոմանք երկաթե, ոմանք մաքուր կավե պատրաստված, իրարմե տարբեր տրամագծերով: Այս խողովակները հատուկ էին պալատի զանազան մասերուն վրա, գտնվող աղբյուրներուն ջուր մատակարարելու, որովհետև մեկ ու կես սանտիմեն մինչև երեք սանտիմ տրամագիծ ունին անցքերը: Շատ ավելի մեծ խողովակներ երևցան ուրիշ տեղեր, մասնավորապես բաղնիքին մոտերը՝ բայց դեռ հայտնի չէ թե ինչ կապ ունին այս տեղի հետ, որովհետև այլևս կասկած չմնաց որ այս աղյուսաշեն ստորերկրյա կամարակապը ամրոցի ջրամբարն էր: Պեղումները շարունակվելով մեկ մասին վրա մինչև հատակը տեսնվեցավ, որ պատերը և հատակն ալ շինված էին աղյուսով և խնամքով ծեփված կրով, ավազով՝ հատակն ալ միասին: Աղյուսներուն խոշոր քառակուսի տափակ ձևը և շարվածքը խիստ հնության կատարյալ դրոշմը կկրեն, գուցե Կամսարականներու ժամանակեն է մնացած: Դեռ կշարունակվի ջրամբարի պեղումը, երբ վերջանա կարելի է որ գտնվի նաև այն ճանապարհը, ուրկեց կուգար ջուրն այնտեղ լեցվելու համար: Առայժմ մի տարօրինակ երևույթ կա ջրամբարին մեջ, մեկ մասին վրա հատակեն մեկ մետր դեպի վեր, բոլորակ հորի նմանող տակեն աղյուսով և վրայեն քարով հյուսված բարձրություն մը ցցված է, ոչինչ ենթադրել չէ կարելի մինչև լավ մը մաքրվելը:

Արտաքուստ շրջապատի վրա դեռ լուրջ պեղումներ չեն սկսված, հազիվ թե կարելի ըլլա երկու շաբաթ հետո լեռնակուտակ թափված քարերն ու բեկորները մաքրել, խումբ մը գործավորներ զբաղված են միայն քարերը և բեկորները տեղափոխելու: Այս քարակույտերուն մեջ սկսեր են գտնվել հետզհետե առնվազն 15 սմ. մեծությամբ խոշոր տառերով հունարեն արձանագրության մը բեկորները, որոնք ըստ երևույթին շարված են եղեր շինության դրսի ճակատին, ամբողջ երկայնության վրա թե՛ արևելյան և թե՛ հյուսիսային կողմեն: Արձանագրության դեռ հազիվ սկզբի մասերն են ձեռք անցած, որոնց մեջ կարդաց հարգելի պրոֆեսորն ի ն ք ն ա կ ա լ, հ ա ղ թ ա կ ա ն և այլն և այլն, անկապ բառերը և մի տառը, որմե կհետևցնե թե պետք է լինի Կոստանդին Մոնոմախոսի ներկայացուցիչներու կողմանե գրված, Անին գրավելեն հետո: Արդեն շինությունով և քարերի տեսակներով շատ տարբեր է այն պատը, որուն վրայեն թափեր է այս արձանագրությունը, հետնագույն հավելված մը կկազմե իսկական պալատի շինության կցված. անկասկած Բագրատունի թագավորաց անկումեն հետո հույն կառավարիչներ այս գեղատեսիլ բարձրության վրա հաստատեցին իրենց բնակությունը և նորոգեցին հավելվածներով իրենց ճաշակին համաձայն:

Պրոֆեսոր Մառ մտադիր է առաջիկա շաբթուն մեջ, մի օր զբաղվել Անի գյուղին մեջ գտնվող հե-

թանոսական գերեզմաններու պեղումներով, որոնց մեկ մասը արդեն բավականին հարուստ նյութ ընծայեց Անիի թանգարանին:

«Ախուրյան», 1907 թ., հուլիս 19, № 47

## 24-ին հուլիսի

Ամրոցի ջրամբարի պեղումները շարունակվելով անցյալ շաբթու, ամբողջ ծավալը հասեր էր 3 մետր լայնության, 7 մետր երկարության և 5 մետր խորության. թեև տարօրինակ էին անոր փոքր ծավալը և հարավային պատին վրա երևցող սրածայր կամարակապ երկու դռնակները, որոնք մինչև իսկ կասկածելի կդարձնեին ջրամբար իսկ լինելն, բայց հետո այդ կասկածը լիովին փարատեցավ, երբ պեղման շարունակությամբ պարզվեցավ, որ հարավային պատը պարզ միջնորմ մ'էր ջրամբարի ամբողջության մեջ: Շինությունը շարունակված էր դեպի հարավ և կար բաժանում մը ևս նույնանման ծավալով, նույնպես աղյուսաշեն, կամարակապ, ատկեց անդին դեռ երրորդ մը կա թե ոչ, առայժմ հայտնի չէ, միայն թե այժմ պարզ է, որ շինության հաստությունը և տոկունությունը ի նկատի ունենալով բաժանված էր փոքր մասերու, և առանձին կամարակապված, իսկ դռները անհրաժեշտ պահանջ էին մաքրելու ժամանակ մեկեն մյուսը անցնելու համար. ջրամբարի բուն մուտքը կգտնվի բարձր, կամարի կորության տակ. գալով մեջը շինված հորին, շատ հետնագույն ժամանակի անխնամ հավելված մ'է, նույն բանը կրկնված է հարավային բաժանման արևելյան կողմը ջրամբարի պատին դրսի երեսին կցված, որ կհաղորդակցի նեղ խողովակնման անցքում մը անոր հետ: Ըստ երևույթին այս հորերը շինված էին այն ժամանակ, երբ ամրոցին մեջ կբնակեին հասարակ դասի մարդիկ. որ թեև ջուրը դրսեն գալով կլցվեր ջրամբարին մեջ, սակայն արդեն ավրված ու փչացած էին ջրաբաշխ խողովակները, ուստի դյուրավ և խնայողական միջոցներով այդ ջուրեն օգտվելու համար, հավանական էր որ շինեցին կողքերուն վրա նույն հորերը և հաղորդակցության մեջ դնելով ջրամբարի հետ բարձրեն, ջուրը կքաշեին հորերուն բերանեն, այս կերպով նաև միանգամայն ազատ կմնար ջրամբարին ջուրը պատահական ապականություններե:

Ինչպես կերևի հարգելի պրոֆեսորը ժամանակին և գլխավորաբար նյութականի սղության պատճառով գեթ այս տարի չպիտի կրնա հետախուզել այս մասն իր բոլոր մանրամասնություններով, թեև ըստինքյան խիստ կարևոր է գիտենալ թե ինչ ճամփաներով կմտներ ջուրը ամրոցին մեջ և ինչ կերպով կբաժանվեր զանազան կողմեր, քանի աղբյուրներ կգտնվեին ամրոցի մեջ և որ կետերու վրա: Անցյալ շաբթվան պեղումներու մեջ աչքի ընկնող երևույթներեն մեկն ալ ամրոցին արևմտյան դռան բացումն է, որ կգտնվի Ծաղկոցաձորին բոլորովին կից: Այս դուռը երկու երեք տարի առաջ նկատված էր արդեն, բայց հարգելի պրոֆեսորը հարմար ատիթի կսպասեր բանալու համար: Այս մասն ալ սպասվածեն ավելի արդյունք տվավ, ո՛չ միայն բարավորներուն խարիսխները, ինչպես կկարծվեր, այլև բարավորներն իսկ կիսով չափ կանգուն են տեղին վրա. բարավորներուն վրա քանդակված են լայն ժապավեններ տեղ տեղ ոլորվելով և անցնելով մեկզմեկու մեջե՝ կրկին շարունակված են դեպի վեր, կամարը կամ վերնասյամը ընկած է թեև, բայց գտնվեցան քարերու մեջեն բարձրաքանդակ առյուծ մը բավական խոշոր և արաբերեն արձանագրություններ, որոնք գետեղված են եղել դրան վերևը: Առյուծը թեև մաքուր պահված է, բայց համեմատելով ավագ դռան առյուծին, սա անճաշակ շինված է. արաբերեն արձանագրությունը որ երկու քարի վրա է առայժմ, մեկը բոլորովին փչացած է գրեթե, հազիվ տեղ տեղ նշմարելի են տառերը, մյուս կտորը լավ պահված է և շատ նման Եպուսայիդի Մզկիթի վրա թողած արձանագրության տառերու ոճին: Պրոֆեսորը դեռ ժամանակ չունեցավ կարդալու, հետևաբար առայժմ անհայտ է թե ինչ ժամանակի կպատկանի և ով է գրողը:

Վերջին կիրակի օրվան Անի գյուղի մեջ կատարված հեթանոսական գերեզմաններու պեղումները բացի շահեկանություն, ուներ խիստ հետաքրքրական երևույթ, այստեղ պրոֆեսորի աշխատակից-ուսանողներն ալ բահ ու բրիչ ձեռքերնին, ցրված ընդարձակ կալերու մեջ, իրենց հատուկ մշակների խմբով եռանդուն կերպով կաշխատեն կասկածելի տեղերը փորելով, իսկ ինքը հակառակ սաստիկ փչող քամիին և խեղդող փոշիին շարունակ մեկեն մյուս կվազեր ղեկավարելու համար, որ մի գուցե անզգույշ հարվածներ տան իրենց անփորձությունով: Դժբախտաբար հակառակ ամբողջ օրվան եռանդուն աշխատության պատահեցան չորս գերեզման միայն, որոնք նախապես պրպտված ու թալանված չըլլային: Բայց դարձյալ մխիթարական էր, որ բոլորովին ապարդյուն չանցավ:

Չորս գերեզմաններեն երկուքը մեծ էին և երկուքը փոքր, մեծերը՝ որոնք ուղղված էին արևելքեն արևմուտք, մոտավորապես ունեին մեկ մետրեն քիչ ավելի երկայնություն և վաթսուն սմ. լայնություն, որոնց առաջինին մեջեն դուրս եկավ բացի տասնևհինգե ավելի աճյունով և այրած ոսկրներով լեցուն զանազան մեծության և ձևերով կավե ամաններե, նաև 50 սմ. երկայնությամբ երկաթե սուր մը բոլորովին ժանգոտած ու փտած, բայց կոթին վրա տակավին նշմարելի էին փայտե երախակալին մնացորդները: Երկրորդին մեջեն նույնպես դուրս եկան կավե ամաններ. աճյունով լեցված, թվով պակաս քան նախորդը, և մի երկաթի կտոր, որը դանակի նմանություն ուներ. փոքր գերեզմանները ուղղված էին հյուսիսեն հարավ, կպարունակեին մի քանի հատ միայն հողե ամաններ:

Պրոֆեսորը գտնված իրեղենները նույն օրը թանգարան փոխադրելեն հետո, հետևյալ օրը գերեզմաններեն մեկուն քարերն ալ փոխադրել տվավ և թանգարանին մեջ հարմար տեղի մը վրա նույն գերեզմանը վերակազմելով, մեջեն գտնվածներն ալ դասավորեց ճիշտ այնպես ինչպես որ եղեր էր իր բուն տեղին վրա, որպեսզի այցելուներուն ճշգրիտ գաղափարը ներկայացնե հեթանոսական գերեզմանները:

«Ախուրյան», 1907 թ., հուլիս 24, № 49

Նկ. 253. Ավերակ եկեղեցու պեղումներ Անիում

## 1908 թիվ

Ճակատագրապես մշտնջենական տխուր ամայության դատապարտված Անին, նախընթաց 3–4 տարիներու նման, այս տարի ալ կրկին գործունյա ու կենդանի շրջանի մը մեջ մտավ. ըստ ամենայնի չեն քաղաքի մը տպավորություն կը թողու մեր փոքրիկ գաղթականության վրա. թեև ֆիզիկական զրկանքներ խիստ շատ կան, սակայն կազմված գիտնական և մասնագիտական ընկերային շրջանի եռանդուն գործունեությունը և օր ըստ օրե ակնախտիղ նորություններու հայտնագործությունները մոռացնելով ամեն զրկանք՝ անխառն բերկրությամբ կհամակեն մեր փոքրիկ հասարակությունը:

Հունիսի 3-ին ձեռնարկվեցավ պեղման նախնական գործողությանց 40–50 մշակներով, հետևյալ շաբթուն անոնց թիվը արդեն հարյուրի մոտ էր: Երկու երեք տարիներե ի վեր բնության աղետներե տառապող հուսահատ գյուղացի մշակները, ուրախ զվարթ աղաղակներով բահ ու բրիչը շալակած կվազեն իրենց նախընթաց տարիներու սիրելի ու հարգելի պրոֆեսորի գործին, այն պրոֆեսորի, որ առատորեն պիտի տար իրենց սփոփանք ու մխիթարություն. ինչ որ չէին ստացած անձրևի

կաթիլներեն, պիտի ստանային քրտինքի կաթիլներով: Բարեսիրտ ու վեհանձն պրոֆեսորի ներկայութենեն ոգևորված, մշակներու ցրված խումբերը երկու երեք շաբաթվան մեջ պատառ պատառ ըրին Միջնաբերդ կոչված բլրին ընդարձակածավալ լանջերը, առանց խնայելու անոր ծաղկալից ու կանաչազարդ պատմուճանին, որը գարունը ծածկել էր դարավոր ցավերու ու տառապանքներու աղեկեզ հիշատակաց ցավագին տպավորությունները մեղմելու համար: Ուրիշ բան կփնտրեին այնտեղ ավելի գեղեցիկ, ավելի վսեմ քան ծաղիկն ու մարգագետինը, ամեն բրչի հարվածի սրտատրոփ կհետևեին մշակներ և անոնց գլխուն վերև սաստիկ քամիին ու փոշիին դեմ անվեհեր կուրծք տվող բարեխիղճ գիտնականը: Արդյոք ինչ նոր բան դուրս պիտի գար, որ մշակը ձոնելով իր պրոֆեսորին իրական հաճույք պատճառեր անոր, և փոխարեն ստանար զվարթ ու գոհունակ դեմքով տրված նվերը, թեև ամեն մշակի չէ վիճակված գյուտեր ըրած ըլլալու հպարտ բավականությունը, սակայն իրենց պրոֆեսորը շաբաթ երկու անգամ հավասարապես կվարձատրե, բացի նորություններ ներկայացնողներե, նաև բարեխիղճ աշխատողները բացառիկ նվերներով:

Այս տարի ալ անսպասելի կերպով արդյունավետ եղան մեծահարգ գիտնական պ. Մառի պեղումները, և վերին աստիճանի շահեկան ու հետաքրքրական նորություններով լեցուցին մեր փոքրիկ թանգարանը:

Ամեն բան գրել, ամեն բան նկարագրել գրեթե անհնար է, սրտանց հետաքրքրվողներու համար, անձամբ տեսնելե և իրենց սեփական աչքերով վայելելե զատ, ոչինչ հնար չկա: Ես հազիվ կարող եմ աղոտ կերպով նկարագրել քանի մը գլխավոր առարկաներ, որոնք ըստ ինքյան նշանավոր գյուտեր կարող են համարվել:

Միջնաբերդի պալատի արևմտյան մուտքի դռան առջև փորվելով, մոտ 4 մետր խորության վրա գտնվեցավ պալատի նախկին հիմքը, որ ամենայն հավանականությամբ Կամսարականներու հիմնարկածն էր, այս հիմքը, որ որձաքարի հսկա կտորներով շինված է, կվերաբերի մի միայն պալատի հյուսիսային բաժնին, որով կարելի է ենթադրել թե, Կամսարականներե հետո, Բագրատունիք ավելցուցեր են, այժմյան պասաժին հարավային կողմը երևցած ընդարձակ մասը: Այստեղի պեղման միջոցին գտնվեցավ բյուզանդական գոգավոր ոսկե դրամ մը հնագույն տիպի:

Ամրոցի հյուսիս արևմտյան դռան պեղումը վերստին շարունակվեցավ անցյալ տարվան ընդհատված տեղեն, այստեղ ոչ միայն գտնվեցավ հին Կամսարականաց ժամանակի դրամ մնացորդները, այլև անոր ժամանակակից խոշոր որձաքարերով հյուսված ամրոցի պարիսպի շարքը, որ երկնցած է մինչև պալատի արևմտյան ճակատը, որուն կցված կերևին այժմ քառակուսի բուրգեր՝ բոլորովին տարբեր շինվածանյութերով և շինվածքի կերպով, որոնք կզանազանվին մինչև այժմ տեսնվածներեն: Այս բուրգերու շինությանց կերպը կհիշեցնե Աղջկաբերդի հսկա ժայռը, Ախուրյանի կողմեն շրջապատող պարիսպները, որոնց մնացորդները դեռ այժմ կան իբրև վկա Անիի մեջ տասնևհինգ դար առաջ գոյություն ունեցող քաղաքակրթության:

Պալատի ուղիղ հյուսիսային կողմը միջնաբերդի լանջի միջին բարձրության վրա գտնվեց մի հնագույն շիրիմ, որուն խաչի պատվանդանը շուրջանակի արձանագրված է. թեև թվականը մաշված, բայց թե հիշված անունները և թե փորագրված ոճը կցուցանեն, որ այդ շիրիմը կանգնված է 11-րդ դարեն ոչ ուշ: Շիրիմը կվերաբերի Ապուղամրի որդի վաղամեռիկ Գայլի և նրա կողակից Մենիկի: Պ. Մառ զմայլմամբ կդրվատե այս արձանագրության լեզվի գեղարվեստականությունը: Այս գերեզմանին կից կա մի մատուռի ավերակ ևս:

Անցյալ տարի պալատի հյուսիս արևելյան կողմը բացվեցավ ընդարձակ սրահ մը, որուն պատերը ու առաստաղները զարդարված էին գահե ձուլված արաբիկ զարդարանքներով, որոնցմե մնացած բեկորները թանգարանի գլխավոր զարդերեն մեկն եղան: Այս տարի նույն սրահին անմիջապես կից ճակատը դեպի արևելք իջնող սյունազարդ դահլիճի պեղման շարունակությամբ մեր թանգարանը օժտվեցավ ոչ միայն գերազանցորեն գեղարվեստական իրերու ճոխ բազմազանությամբ, այլև մեր առջև պարզվեցան նույն պալատին մեջ ապրողներու արտակարգ հարստության, շռայլության և փափկաճաշակ վայելչասիրության անվիճելի փաստեր:

Այստեղ միայն գահը չէ որ դահլիճը գեղազարդող արվեստագետին տաղանդն ու ճարտարությունը արտացոլեցնելու միջոց եղած է, այլև գրչի ու դանակի առջև հաճախ ըմբոստանալու տրամադիր վայրի կաղնիներ ու մայրի փայտերն ալ հնազանդվելով գեղարվեստի քմահաճույքներուն, այնպիսի զգլխիչ վայելչությամբ հագվեր են, որոնց արտադրողին առջև այսօրվան մեր քաղաքակրթյալ Եվրոպայի արվեստագետներն ալ, հարգանքով խոնարհվելու կստիպվին: Մարդ կվարանի պահ մը և պատրանք կկարծե յուր տեսածները, միթե կարելի



էր, որ տասը դար առաջ անընդհատ գազանաբարո բարբարոսներու սրածության և թալաններու ենթարկված Շիրակի դժբախտ փոքրիկ ժողովուրդը, այսպիսի հրաշալիքներ ստեղծելու չափ զարգանալու վրա կարենար մտածել: Բայց փաստերն անհերքելի են, կատարյալ հերոս ժողովուրդի մը թողած հիշատակներուն առջև կգտնվինք: Ժողովուրդ մը, որ ոչ միայն արյան գնով արտաքին բազմատեսակ թշնամիներու դեմ իր գոյությունը պահպանելու ջանալեն զատ, ներքին խավարի և տգիտության դեմ ալ դյուցազնաբար կռվել, և դյուցազնաբար ալ մեռեր է իր ուժերեն գերիվեր անհավասար կռվի մեջ: Այս տխուր իրողության առջև, անկարելի է ակամա չմտածել, թե արդյոք մենք այս անզուգական ժողովրդի հարազատ սերունդներն ենք, և միթե մենք անոնց գործերով պարծենալու իրավունք ունինք առանց մերն ալ անոնց քով դնելու:

Խոսքերը բավական չեն այդ բարոյապես հսկա ժողովուրդի արտադրությունները ներբողելու համար: Մտնենք պահ մը թանգարան և մանրազնին աչքով դիտենք այն առարկաները, որոնք դուրս եկած են միմիայն սյունազարդ դահլիճի փլատակներուն տակեն, այրած, փտած, ժանգոտած և բոլորովին փչանալու մոտեցած վիճակի մը մեջ:

Ապակե դարաններուն մեկուն մեջ, խնամքով դասավորված են այն բազմաթիվ ծեփի կտորները, որոնց վրա վառ գույներով նկարված են ծառեր, ծաղիկներ, թռչուններ և ճարտար գծերով մարդկանց պատկերներ: Անոնց մեջ կա 5–6 սմ. մեծությամբ մարդու մը դեմք, թեև հազիվ գծերն են մնացած, բայց այնպիսի արտահայտիչ, որուն տիրական գոռոզ նայվածքի առջև մարդ աչքերը ակամա կխոնարհեցնե: Ուրիշ կտորի մը վրա կտեսնվի մարդու մը բազուկը, որուն վրա կա իշխանական բազկակապ, ուստի կարելի է հետևցնել, թե այդ պատերու վրա նկարված դեմքերը կպատկանեն թագավորներուն և իշխանազուններուն:

Պատերեն վեր առաստաղները, ճակատները և սյուները կապող փայտյա կամարները զարդարված են եղեր բազմապիսի նյութերով: Գահե ձուլված զարդաքանդակներն իրենց կարևոր տեղն ունեցեր են այս դահլիճի մեջ ալ. բազմաթիվ մեծ ու փոքր վարդաձևներ, ոմանք ուտուցիկ և ոմանք գոգավոր թերթերով, դասավորված են եղեր երկրաչափական մանվածներե գոյացած զանազան ձևի մեծ ու փոքր խորշերու մեջ և փայտյա հատակի վրա երկաթի գամով գամված:

Բացի հինգեն մինչև ութ տերևանի վարդաձևերե կան բավական թվով քանդակազարդ կիսագունդեր, որոնք ուտուցիկ կերպով կկախվեին առաստաղի մակերևույթեն վար, և ինչ որ ուշագրավ է, ասոնց մեծ մասը, թերևս ամենն ալ մաքուր ոսկով պատված են եղել, հակառակ երկար դարեր խոնավ հողին տակ մնալուն, դեռ շատ մը կտորներու վրա կփալփլան թանձր ոսկեզօծման զորեղ հետքերը: Որպեսզի պատկերը կատարյալ ըլլա երևակայեցեք, ասոնց հետ խառնված նույնպես ձուլված տերևազարդ մանվածներ, անասնոց, վայրի գազաններու և թռչուններու պատկերներ, այն ատեն կարելի է ըմբռնել, թե ի՜նչ արտակարգ շքեղություն կտիրեր այս դահլիճին մեջ:

Մոտենանք պահ մը ուրիշ ապակե դարանի մեջ դրված ածխացած անկերպարան զանգվածի մը, որուն վրա տեղ տեղ անաղարտ մնացած զարդաքանդակներու վեհությունն ու շքեղությունը պարզապես կապշեցնե. սա ոչ քար է և ոչ ալ գաճ. հասարակ կաղնի փայտի կտոր, որ սահմանված էր դահլիճի քարե սյուները միացնելու: Որչափ որ ածխացած են կամարի կիսաբոլորակ զանազան գծերը, սակայն յուրաքանչյուր կամարամեջի եռանկյունի մասերուն մեջ մեզ ծանոթ 13-րդ դարու ոճով փորագրված ոստերու չնորհալի ոլորումներուն խառնված թռչուններու և կենդանիներու հետքերը դեռ պարզ կերևան: Այսօր մենք բարեբախտություն ունինք այդ կամարամեջերուն գտնե մեկ հատը մասամբ անաղարտ տեսնել այնպիսի ճարտարությամբ և նրբությամբ փորագրված, որպիսին դեռ ոչ մի տեղ չենք տեսած: Ոստերին հրապուրիչ ճկումները, տերևներուն ու ծաղիկներուն արտաքո կարգի փափկությունը, տեսնողները միանգամայն կդադարին հիանալե հին Հռոմին ու Բյուզանդիոնին, Արաբիային ու Սպանիային վրա: Մի ուրիշ գերան, որուն երկարությունը հինգ մետրե ավելի է, ամբողջ նկարազարդված է երկրաչափական զարդերով ու տեղ տեղ ոսկեզօծված գծերով, անչուշտ այս ալ մեկ մասը կկազմեր շքեղ առաստաղին: Դահլիճին վրա ծածկված է եղեր հաստ գերաններով, որոնց մնացորդներեն մեկուն տրամագիծը 55 սմ. կհասնի:

Բազմաթիվ են այս դահլիճին մեջ գտնված գունագեղ նկարներով ոսկեզօծ գծերով ճոխ ամաններու կտորներ, և ուրիշ զանազան մետաղյա առարկաներ, որոնք հետզհետե կփոխադրվին թանգարան, կդասավորվին և կցուցակագրվին պ. Մառի օգնական աշխատակիցներու կողմանե: Ես կնկարագրեմ մի սուր, որ հարգելի գիտնական պ. Մառի կարծիքով այս կողմերու ամենահին օրինակ է: Սուրին երկարությունը 95 սմ. է, լայնությունը՝ 6 սմ., վերեն ի վար ուղիղ մեկ լայնության վրա հազիվ վարի ծայրը քիչ մը նեղցած, պատյանը փտած

և խառնվելով սուրի երկաթի ժանգին հետ կպած է բոլորովին այնպես, որ անհնար է դուրս քաշել առանց մեկին կամ մյուսին վնասելու: Բնականաբար հայտնի չէ, թե սուրը քանդակազարդված էր թե ոչ, բայց հայտնի հետքեր կան, որ պատյանը բավական ճոխ զարդարանք ունեցեր է վրան. նկատելի են մետաղյա ժապավենների թողած ակոսներ, որ փաթթված է եղել պատյանին շուրջը տեղ տեղ ուղիղ հորիզոնական և տեղ տեղ ալ շեղակի ոլորումներով, երախակալը գրեթե չունի սովորաբար ընդունված խաչաձևը, իսկ վերի ծայրը վերջացած է չափավոր գունդով մը, վարի ծայրը ագուցված է եղեր մետաղյա կարճ պատյան մը, որուն անկյունները հազիվ նշմարելի կերպով կլորացած են:

Այժմ անցնինք քիչ մ'ալ ուրիշ տեղերու տված արդյունքներու, որոնք ոչ նվազ հետաքրքրական են քան սյունազարդ դահլիճը:

Բլուրի հյուսիսային լանջի վրա մի սենյակի պատի մեջ որպես խ ա թ ի լ հյուսված գտնվեցան երկու հատ 6 մետր երկարությամբ փայտեր, որոնց յուրաքանչյուրին մեկ ծայրը փորագրված է տարբեր տեսակի քանդակներով. այս փայտերը, որոնք կարող են մրցել արվեստի տեսակետով սյունազարդ սրահի փորագրության հետ, անպայման կվերաբերեն 10–11-րդ դարու արվեստագիտության, երկուքն ալ փորագրված են երկրաչափական զարդաքանդակներով խիստ խոր և մաքուր, միայն մեկուն մեջ խառնված են բաց տերևներ համաչափորեն դասավորված երկրաչափական ձևերու հետ խառն: Մյուսը գրեթե բոլորովին նմանն է մայր եկեղեցիի արևմտյան ճակատի հարավակողման պատուհանի շրջանակին և կամ արևելյան կողմի խորշի կամարին քանդակներուն: Գեղարվեստի վերջին վերածնության շրջանի մարդիկ անպեսք համարելով այդ հնացած օրինակները, հյուսեր են նույնիսկ պալատի կից սենյակներու պատերուն մեջ և տեղը նոր ոճով և նոր արվեստով քանդակեր են:

Անցյալ տարի գտնված հունարեն արձանագրության մասերեն այս տարի ալ գտնվեցան կտորներ, որոնց մեկուն վրա էր 1058 թվականը, բայց դեռ չէ ամբողջացած, փնտրվելու վրա է մյուս մասերը: Պատի մը տակե գտնվեցավ մի տեղի վրա լեցված 500-ե ավելի զանազան տեսակի երկաթյա նետեր, որ անշուշտ տանտերը իբրև պաշար պահած էր սենյակին մեջ: Գտնվեցավ շատ հետաքրքրական ձևով թանաքաման մը, սև թանաքը մեջը չորացած և տակավին փայլուն:

Ընդհատելով առայժմ պալատի պեղումներու մասը անցնինք քիչ մ'ալ ուրիշ տեղերու վրա եղած մասնավոր պեղումներու և խուզարկություններու արդյունքներուն:

Մինջնաբերդի պեղումներու հետ միաժամանակ սկսվեցավ քաղաքին հյուսիսային կողմը, քաղկեդոնական եկեղեցիեն քիչ դեպի հարավ, շատ հետաքրքրական մնացորդի մը պեղումներ, որ դեռ նախորդ տարին նշմարված էր. այս շինությունը խիստ հետաքրքրական է նախ, եթե ոչ նախաբագրատունի, գոնե Բագրատունյաց սկզբնական շրջանի պատկանելուն, երկրորդ, շինության ոճն այնքան տարօրինակ է, որ մինչև այժմ անոր ինչ նպատակի համար շինված ըլլալուն մասին ոչ մի գաղափար չկազմվեցավ: Իրարմե համաչափ հեռավորության վրա, չորս հաստահեղույս պատվանդաններ կանգնված են ամենահին օրինակի պսակներով շրջապատված վերի կողմեն, հետքեր կան որ այս պատվանդաններուն վրա կանգնված են եղեր սյուներ: Հետագա ժամանակի մեջ, հավանաբար նույնպես Բագրատունիներու օրով, օգտվելով այս վիթխարի պատվանդաններու ներկայությենեն, անոնց չորս կողմերեն ավելցնելով կիսաբոլորակ պատեր, կազմել են մի խաչաձև փոքրիկ մատուռ: Մնջեն գտնվեցան գեղաքանդակ խաչքարեր առհասարակ 11–12-րդ դարերու ճաշակով. հարավային դռան առջև կային գերեզմաններ, արևելյան կողմը սենյակի մը մեջ գտնվեցան հինգ զանազան մեծությամբ գինիի խոշոր կարասներ, որոնց մեկուն մեջ կար գինիի փոքրիկ փարչ մը բոլորովին անվնաս. այս կարասներեն երկուքը միայն անվնաս, հանվելով փոխադրվեցան Թանգարան: Բացի զանազան մեծ ու փոքր առարկաներե այստեղ գտնվեցավ մի պղնձյա չափավոր մեծությամբ աման, որուն ներքև ամրացած են երեք պղնձյա ոտքեր, արտաքին շուրթերը եզերված են փոքրիկ կիսաբոլորակ ատամներով, որոնց յուրաքանչյուրին վրա փորագրված են զանազան տեսակի վարդիկներ, մեջտեղը կա մի կենդանիի նկար, որուն ինչ ըլլալը ճշտիվ որոշել դժվար եղավ ժանգոտությունե մասամբ մաշված ըլլալուն պատճառով:

Արևմտահայ բժ. Պալաքյան զանգերու ուսումնասիրության համար, պրոֆ. Մառի արտոնությամբ, Հոնենց Տիգրանի քարափոր դամբարանի մեջ փորեց մի գերեզման, ուրկեց դուրս եկավ 4–5 տարեկան փոքրիկ աղջկան մը դագաղը: Աղջկան մարմինը բոլորովին փտած էր, սակայն, բարեբախտաբար, գրեթե անփուտ մնացած էր զգեստը. մարմնույն վրա հագած էր խիստ նուրբ թույլ շապիկ, որուն հազիվ հետքերը մնացեր են, իսկ վրայեն հագած շապիկը, որուն երկարությունը, ինչպես կերևի, ծունկերեն ավելի վար իջած է, բոլորովին անփուտ մնացած է: Գույնը սպիտակ, կերպասը մաքուր մետաքս, թևին բերանը և ուրիշ զանազան եզերքներ ասեղնագործված են այտուցիկ ատամնաշար ձևերով. թևերին եզերքները ասեղնագործված է նաև ոսկեթել ծաղկանկարներով. բազուկներուն վրա կարված են երկու մատ լայնությամբ իշխանական տոհմի հատուկ բազկակապեր ամբողջովին մետաքսով և ոսկեթելով ասեղնագործված, Անիի մեջ հաճախ քարերու վրա քանդակված մանվածոներու ձևերով: Մարմնույն վրայեն մեջքին շնորհալի հանգույցով մը կապված էր մետաքսյա բարակ չվան մը:

Դագաղը հանվելեն մեկ օր հետո, Գարեգին վարդապետ Հովսեփյան, որ այստեղ կգտնվեր վերջին տարիներու պեղման արդյունքը ուսումնասիրելու համար, կմտնե դագաղը հանված քարայրը և կգտնե մի շորի կտոր, որ անուշադրությամբ նետված էր մեկ կողմ դագաղը հանելու ժամանակ. լվացվելեն հետո երևաց, որ ցանցակերպ հյուսված ասեղնագործ ծածկոց և կամ մի ուրիշ բան էր, որուն վրա խիտ ասեղնագործված էին երկու վագրեր կանգնած դեմ դիմաց, մեկը մեծ և մյուսը՝ փոքր. մեծին գլուխը փոքրին կռնակեն քիչ բարձր, իսկ փոքրին գլուխը՝ մեծին կուրծքին վրա. վագրներու մարմնույն վրայի խատուտիկ գծերն ու բիծերը երկու գույնի մետաքսով և ոսկեթելերով բանված են: Գալով նկարին գեղեցկության և բնականության, նկարագրությենե ավելի բանաստեղծական ներբողներու արժանի է անոր հեղինակը. այդ փոքրիկ պատկերին վրա ոչ մի կետ մոռացված չէ անոնց ջիղերեն, հոդվածներն և բոլոր կազմական հատվածներեն: Ամեն ինչ բնական, ամեն ինչ նուրբ ու ճարտար նկարչական ճաշակով, բոլորովին անկախ մեզ ծանոթ ոճերե, հեռու բոլորովին պարսկական, բյուզանդական շաբլոններե, զուտ տեղական ճաշակի արտադրություն կներկայացնե. ահա փաստ մը ևս փշրելու համար այն ընդհանուր կարծիքը, թե հին հայերը, ըստ ամենայնի, ենթարկված են եղել բյուզանդական ազդեցության կամ անոնց ընդօրինակողները եղած են և կամ ուղղակի անոնց արվեստագործության արդյունքով պճնազարդեր են ինքնգինքնին, բնակարանները և այլ ամեն ինչ:

Մոտ երեք շաբաթ է, կփորվի մզկիթի (այժմյան Թանգարան) առջևեն դեպի Մինջնաբերդ տանող ճանապարհը, որուն ծայրը կսկսվի ավագ դռնեն. այնտեղեն շարունակվելով կուգա կհասնի մինչև կործանած աշտարակին տակը և անկեց ալ շեղվելով կհասնի մզկիթ ու հետո մինչև Մինջնաբերդ, այս գծին վրա կգտնվի այժմս պեղվող այն մեծ ապարանքները, որոնց դռան առջևեն գտնվեցավ Զաքարե սպասալարի ս ի մ պ ո լ մարդ-առյուծ ս փ ի ն ք ս ը: Մզկիթի առջև ճանապարհը բավական լայն է, երկու կողմին վրա կբացվին հետզհետե տներու դռներ: Աշոտի պարիսպին այստեղի եղած դռան հետքը գետին կողմեն միայն հայտնի է, դիմացի կողմը անհետացած էր:

Մզկիթի արտաքին դուռն ալ գրեթե բոլորովին քանդված է, հազիվ կան բարավորները բնորոշող հետքեր. սակայն մինարեին կից արևելյան կողմեն գտնվեցավ մի դուռ, որուն քանդակազարդ շքեղ բարավորներն ու շրջակաները ոչինչով պակաս չեն մնար Առաքելոց եկեղեցիի գավթին քանդակազարդ ճակատեն, նույնքան գեղեցիկ և նույնքան ճոխ: Այստեղեն ոչ միայն հանվեցան բոլորովին անաղարտ, մեզ ծանոթ Էպուսայիտ Պեհաղուր խանի արձանագրությունը, այլ և ուրիշ արաբերեն արձանագրությանց կտորներ. գտնվեցավ կտոր մը հայերեն արձանագրություն, որուն վրա մնացեր է միայն ի թ ա գ ա ւ ո ր ու թ ե ա ն Գ ա գ-(կայ) բառերը:

Նախընթաց շաբաթ օր սկսվեցավ Զաքարե սպասալարի հատուկ կարծված ապարանքի պեղումը. հյուսիսային կողմի դահլիճը այժմ բաց է կիսով չափ. հայտնվեցան բոլոր շքեղ որմասյուները և անոնց մեջ տեղերը գտնված անհավասար չափերով փոքր ու մեծ սենյակներ, որոնք 1817 թվին անգլիացի ճանապարհորդ Քեր-Բորթը կանգուն տեսած է և նկարագրած է մասամբ: Ինչպես կերևի, մոտ ժամանակներս կանգուն մնացած ըլլալուն պատճառով, միշտ թալանված է, հազիվ թե պատահի տնական և այլ տնտեսական պետքերու հատուկ առարկաներ, սակայն անթիվ ու անհամար են ճարտարապետական շքեղ քանդակազարդ դռների, առաստաղներու, գմբեթներու մնացորդներ, որոնց նկարագրությունը կուտամ հաջորդ անգամին:

«Ախուրյան», 1908 թ., №№ 49, 51, 53

## ԱՆԻ

*Հուլիսի 9-ին*

Շտապում եմ հաղորդել այն նորագույն արդյունքները՝ որ հայտնվեցան այս տարվա պեղումներից: Մինջնաբերդի հյուսիսային լանջը բարձրից մինչև ստորոտ բացվեց, և մի հնագույն գերեզման գտնվեց արձանագրությամբ: Պալատի արևմտյան դռան առաջից գտնվեց գոգավոր մի հին բյուզանդական ոսկի դրամ: Նույն պալատի բազիլիկ սրահի տակից դուրս եկան բազմատեսակ գաճե ձուլված զարդարանքներ և գեղարվեստով փորագրված փայտի քանդակներ: Գտնվեց մի սուր 95 սան-

տիմետր երկար. և 6 սմ. լայն., երախակալի ծայրը վերջանում է մի գնդով, պատյանը և երկաթը փտած են: Գտնվեցան նաև բազմաթիվ որմանկարներ, որոնց ծեփի վրա կան ճարտարորեն գծված մարդոց գլուխներ, թռչուններ և ծաղիկներ: Դարձյալ նույն տեղից մի կտավե քսակ՝ 55 հատ պղնձյա դրամներով, մի թանաքաման՝ թանաքը մեջը չորացած: Տիգրան Հոնենցի քարափոր դամբարանում գտնվեց 5–6 տարեկան մի աղջկա փտած դիակը, բայց հագուստը գրեթե անփուտ մնացած. հագած է մի սպիտակ մետաքսե շապիկ, մետաքսե թոկով մեջքեն կապված, թևերին կարված են ոսկեթել բանված իշխանական տոհմի բազկակապեր: Այդ դագաղի մոտից գտնվեց ցանցակերպ ասեղնագործված մի կտոր, որի վրա ոսկի թելերով և մետաքսով բանված է ամենագեղեցիկ և խիստ բնական գծերով մի զույգ վազր. մեկը մեծ և մյուսը փոքր: Զաքարե սպասալարի պալատի պեղումները դեռ չեն սկսված:

Դարձյալ պալատից գտնվեց երկու կտոր փայտ 6 մետր երկարությամբ և 20 սմ. լայնությամբ, ամբողջապես չքեղ կերպով քանդակված:

Ճանապարհը մզկիթի մոտ հարթելու համար վերցվեց գետնից Աբուսայիդ Բեհատուր խանի հրովարտակ արձանագրությունը, որ փորագրված էր արևմտյան պատի վրա և կործանված էր 1897 թ.: Նրա մոտից գտնվեցին ուրիշ մի քանի չքեղ արաբական քանդակներ և արձանագրություն, մեկն էլ հայերեն արձանագրության կտոր, որից մնում են «ի թագաւորութեան Գագկայ» - բառերը:

Օրերումս կձեռնարկվի նոր ընդարձակ թանգարանի շինության:

«Հուշարար», 1908 թ., № 6–7

## Բ

# ՄԱՄՈՆՏԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ԳՅՈՒՏԵՐ ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՄՈՏ

### ա. ՀԱՍԽՀ ՀՆՈՒԹՅԱՆՑ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Մամոնտի ժանիքի մասին Ձեր հարցին շտապում եմ պատասխանել: Ներկա տարվա սեպտեմբերի 5-ին, հնագիտական ճանապարհորդությանս ժամանակ, երբ հասա Լենինական, դիմեցի Գավդարծկոմ պաշտոնական հանձնարարական խնդրելու, շրջանում կատարելիք ճանապարհորդությանս ժամանակ տեղական իշխանություններից դյուրություն և աջակցություն գտնելու համար: Սիրով և շտապով կատարվեց խնդիրս. միևնույն ժամանակ ցույց տվին ինձ մի բրածոյի կտոր, որուն ինչ լինելուն մասին անորոշ կարծիք ունեին իրենք: Ես ճանաչեցի և հայտնեցի, որ նույն բրածոն մի մամոնտի ժանիքի կտորն էր և երրորդ օրինակն էր այս վերջինը Լենինականի շրջանում գտնվածների (նախորդ երկու օրինակները գտել էր հանգուցյալ Հակոբ Կարանյանցը, որոնց մասերը գտնվում են այժմ Պետական թանգարանում): Իհարկե ինքս խիստ հետաքրքրված հարցրի թե ո՞ր գյուղում և ո՞ր կետում գտնվել էր այս կտորը և ի՞նչ միջոցներ ձեռք առնված են սույն հետաքրքրական առարկայի պահպանության համար: Ինձ պատասխանեցին, որ բրածոյի բեկորը բերողն իրենց հայտնի է, սակայն տեղն իրենք էլ չգիտեն, որովհետև բերողը չէ ուզեցել հայտնել, միայն նյութական աջակցություն է խնդրել, ամբողջ բրածոն անվնաս հանելու և փոխադրելու համար: Այժմ ինձ մնում էր դիտողություն անել, որ խոհեմություն չի լինիր անփորձ մարդոց ձեռքով բրածոներ հանելու փափուկ և խիստ զգուշություն պահանջող գործը, ուստի խորհուրդ տվի, որ անպայման նախապես իմանան իսկական տեղը և հսկողության ներքև առնեն, իսկ եթե բեկորը բերողը չուզենա հայտնել, պետք է դիմել օրինական միջոցների և պարտավորեցնել ցույց տալ տեղը: Իսկ բրածո հանելու համար պետք է հայտնել պատշաճավոր հիմնարկության:

Էջմիածին
26 դեկտեմբերի, 1924 թ.

### բ. ՊՀՊ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՄԱՄՈՆՏԻ ՈՍԿՈՐՆԵՐԸ ԵՐԵՎԱՆ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՐԾՈՒՂՄԱՆՍ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Ներկա 1927 թվի հոկտեմբերի 28-ին մեկնեցի Լենինական, անակնկալ կերպով, Լենինականի ավազահանքի մեջ գտնված մամոնտի ոսկորները հավաքելով Երևան տեղափոխելու և ոսկորները գտնված տեղերը հետազոտելու համար:



Լենինականի շրջանում ավազահանքեր շատ կան, սակայն մամոնտի քարացած ոսկրները գտնված են քաղաքի հարավային կողմը 2–3 կիլոմետր հեռավորության վրա, Կազաչի պոստ անվանված նախկին զորանոցի գտնված բարձունքի շուրջը փորված ավազահանքի մեջ՝ չորս զանազան կետերու վրա, որոնք միմյանցից հեռու են 50-ից մինչև 150 մետր: Ոսկրները գտնված են բարձունքի այն կետի շուրջը, ուր կանգնված է մի էլեկտրական տրանսֆորմատոր և մի փոքր հուշարձան: Ուստի տեղեկագրիս մեջ առայժմ քանի որ քարտեզ չունինք տեղերը բնորոշելու. ես նշանակում եմ ցուցակիս մեջ 1. 2. 3. ... ավազնոց անունով:

Ավազնոցները փորվում են առհասարակ փոքր տարածության վրա ընդարձակ և հեռու միմյանցից: Դարևանդի ստորին մասից փորումն սկսելով հետզհետե առաջանում են միշտ ետևի մասը ուղղահայաց կերպով, կտրելով, այս ձևով փորվելով հետզհետե երևան են գալիս բոլորովին պարզ կերպով հողի և ավազի մի քանի շերտեր միմյանց հաջորդող և ընդհանրապես հորիզոնական ձևով, միայն թե տեղ տեղ շերտերը հաստանում և բարականում են:

Մամոնտի ոսկորները դուրս եկած ավազնոցների շերտերը հետևյալ կերպով դասավորված են (վերևից հաշված).

1-ին շերտ՝ սևագույն հող, ավելի քան 1,20 մ. հաստությամբ:

2-րդ շերտ՝ խճախառն գորշ ավազ, ավելի քան 1,0 մ. հաստությամբ:

3-րդ շերտ՝ կավային կարծրացած հող մետրից քիչ պակաս հաստությամբ:

4-րդ շերտ՝ շիկագույն բարակ ավազ, սույն շերտին մեջ կա տեղ-տեղ մուրի նման սև ավազի մի կամ երկու սմ. բարակ շերտ:

5-րդ շերտ՝ կավային շերտ անհավասար բարձրությամբ:

6-րդ շերտ՝ շիկագույն նուրբ ավազ մոտ 1,5 մ. թանձրությամբ:

Բոլորովին ներքևի, 6-րդ շերտի մեջ կգտնվեին մամոնտի ոսկորները, այս խորությունից մինչև վերևի հողի շերտին երեսը գրեթե 7 մետր է բարձրությունը:

Բացի իմ հավաքած ոսկրները, բանվորների պատմելով, փորողները գտել են ուրիշ շատ ոսկրներ, սակայն անգիտակցաբար փշրել և խառնել են հողի և ավազի հետ: Առաջին ավազնոցի մեջ երևացել է մի երկար ոսկր (ըստ բանվորների նկարագրության՝ ողնաշար), որը թեև ընդհատ ընդհատ, սակայն մեկ գծի վրա էին կտորները, ինձ ցույց տված տեղի երկարությունը չափեցի՝ ավելի քան վեց մետր է:

Տեղական իշխանության միջոցով ևս արգելք է դրված ոսկորներ գտնված ավազահանքերի մեջ աշխատության, մինչև որ հնարավոր կլինի Կոմիտեի ուսումնասիրության համար մասնագետներ ուղարկել:

Էջմիածին,
11 նոյեմբերի, 1927 թ.

## Գ

# ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐ ԶՎԱՐԹՆՈՑԻ ՇՐՋԱԿԱՅՔՈՒՄ

### ա. ՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ

**(Զվարթնոցի մոտ բացված հնություններ մասին)**

Զվարթնոցի սահմաններեն մի քիչ տարակա, Զորան Քյարայի ճանապարհի մոտ, մի արտի մեջ գտնվել են հին շենքերի մնացորդներ: Արտը գտնվում է ավելի մոտ Գայանեի վանքին, Զորան Քյարայի ճանապարհի կողքին և հազիվ կես կիլոմետր հեռու Զվարթնոցի համար որոշված սահմանից:

Գտնվածը մի հնձան է քառակուսի, մեկ մետր 80 սմ. կողմերով, նախապես արդեն կիսավեր, այժմ էլ փորփրելով բոլորովին քայքայվել է, բայց բարեբախտաբար քիչ մասն են փորել: Մնացած մասերը փորելն արգելեցի, թեև մեծ բան չեմ հուսար գտնել բացի հնձանի մանրամասնություններեն, արդեն երևում է, որ նախապես այդ ավերակը մի փոքր բլրակի տակ էր ամփոփված, սակայն տեղը և շրջակա ուրիշ մնացորդներ ցույց են տալիս, որ մի ժամանակ այդ տեղերը ներկայից տարբեր մի եռուն կյանք է եղել և թերևս նոր ապացույց հին Վաղարշապատի շատ մոտ լինելուն:

Սույն հնձանից դեպի արևելք (դեպի Զվարթնոց) նկատեցի մի արհեստական բլուր, հարցրի ընկերիս նրա մասին, ուղղվելով դեպի բլուրը, պատմեց հետևյալը: Մի օր արտի պարարտացման համար հող փորելիս կը գտնե մի պատ, ինք չի հա-

մարձակվիր ձեռք տալ, տեղեկություն կուտա վանքի այն ժամանակվան դիպլոմավոր վարդապետներից մեկին (Խրիմյանի օրով է պատահած):* Իմանալով իրողությունը վարդապետներ և վարժապետներ, ճեմարանական աշակերտները հավաքվելով և բահ ու բրչով զինվելով կգնան կսկսեն անկարգ կերպով բլուրի գլխից քանդել: Բանից դուրս կուգա, որ եղել է բլուրի տակ մի շենք արևելյան կողմից մի դռնով, վրան կամարակապ, հաստատուն գաճ ու կիր շաղախով շինված. դեռ այն ժամանակ անշնորհ պեղիչներ վրայի կամարը ծակել էին: Այժմ կամարը ամբողջովին փլած է: Պատերը որոշ չափով մնում են, շենքը քառակուսի է. մոտավորապես 6 մետր կողմերով, կամարակապ դուռը 90 սանտիմետր լայնություն ունի, բարձրությունը թաղված է հողի ներքև. պատերից և կամարից քանդված քարերը տարված են և տարվում են հետզհետե, ինչպես նաև բլուրի հողը կրում են արտերը պարարտացնելու համար: Թե ինչ շենք է այս, թերևս պարզեն պեղումները, համենայն դեպս կապ ունի տասը քայլ հեռու գտնվող մի աղյուս թրծելու փուռին հետ: Զափազանց հետաքրքրական և հատուկ մասնագիտական քննության արժանի գտա այս աղյուսի փուռի մնացորդը: 5 մետր տրամագծով բոլորակ շինված շենք է, բայց մինչ հողին հավասար քանդված կենտրոնին վրա մեկ մետր խորանարդի չափ կանոնավորապես դարսված աղյուսների կույտը մնում է գրեթե անաղարտ: Աղյուսները քառակուսի են 17-են մինչև 20 սմ. լայնությամբ և 5 սմ. հաստությամբ. ինչ ժամանակ են դարսվեր այդ աղյուսները փուռին մեջ, ի՞նչպես մնացել են մինչև այսօր, այդ այնքան զարմանալի չէ, որովհետև ինչպես մոտի շենքը, նույնպես և այս փուռը մնացել են հողի տակ, վանական-ճեմարանականների խումբն է որ միաժամանակ բացել են նաև այս բլուրը: Բայց բացվելեն ի վեր մինչև այսօր ինչո՞ւ չեն տարել այդ աղյուսները, ահա այդ է զարմանալին: Փորձեցեք վերցնել մեկ հատ այդ կույտի վրայից, դուք ապշած կմնաք տեսնելով, որ այդ մոտավորապես մեկ խորանարդ մետրի չափ կանոնավոր շարքերով միմյանց վրա զանազան ձևերով դարսված կույտը դարձել է ապառաժ քարից ավելի կարծր, մի զանգված:

Այս կողմերու համար ինչքան ինձ հայտնի է, դարերով անծանոթ է եփած աղյուսի գործածությունը: Բոլոր հին հիշատակարանները շինված են քարով: Արդյոք հավանական չէ՞ կարծել, որ Զվարթնոց եկեղեցվո մեջ գործածված աղյուսներն ու կղմինդրները եփված լինին նույնիսկ այս փուռին մեջ:

Էջմիածին
16 հունիս 1924 թ.

## Բ. ՊՀՊ ԿՈՄԻՏԵԻՆ

Այսօր ժամը 12-ին ինձ լուր հասցրին, որ Զվարթնոցի սահմանում Զանգուի առուի նորոգության համար սկսել են հող փորել, որի ժամանակ բանվորները գտել են մի կավե դագաղ: Բանվորներից մեկը, ծերունի Մանուկ Ավետիսյանը, աշխատում է փորելը դադարեցնել, որպեսզի գա ինձ իմացնի, սակայն մինչև գալ ինձ իմացնելը և իմ հասնելը նրանք շարունակել են փորել, և անզգուշությամբ թե դագաղին խուփն են փշրել և թե մեկ պռունկը կոտրել են:

Նկ. 254. Զվարթնոցի շրջանում բացված կավե դագաղ

Դագաղի ձևը մոտավորապես այստեղ գծածիս նման է. 1,85 մետր երկարություն ունի, գլխի կողմը 45 սմ., իսկ ոտների կողմը 15 սմ.: Տարօրինակ կերպով դագաղը ուղղված է արևելքից արևմուտք, սակայն անսովոր կերպով գլուխն արևելյան կողմն է: Կավի հաստությունը հազիվ հասնի 2 սմ., իսկ խորությունն՝ առավելն 20 սմ.: Կավյա խուփը ծածկել են նաև սալաքարերով: Այս դագաղը հազիվ հեռու է քառասուն քայլ հունարեն արձանագրության գտնված տեղից: Ինչպես երևում է, այս դագաղը մենակ չէ, կան թերևս ուրիշներ ևս:

Ես արգելեցի աշխատանքը, կոտրված խուփի կտորները դագաղին մեջ լեցնել տվի, սալաքարերով կրկին ծածկելով, ժամանակավորապես հողով ծածկել տվի:

Երևույթը ըստ ինքյան շատ հետաքրքրական է, ես պիտի սպասեմ շուտափույթ Կոմիտեի և որ ավելին է, նախագահի կարգադրության, այդ վիճակին մեջ երկար թողել կարելի չէ, թեև դագաղը տեղից շարժված չէ:

Զմոռանամ ասելու, որ դագաղի մեջ մնացած է միայն մի զանգ, հողի մեջեն գտա երեք հատ ատամներ:

Էջմիածին,
9 հունիսի, 1926 թ.

## Գ. ՊՀՊ ԿՈՄԻՏԵԻՆ

Դեպի Այդր լիճ տարվող էլեկտրական թելերու համար մի սահմանում փորում էին խոր հորեր՝ սյուներ տնկելու համար: Այդ հորերից մեկում, որուն լայնությունն ու երկայնությունն է (յուրաքանչյուր կողմը) 2,30 մ, խորությունն է 1,76: Հորի բացվածքը ճշտիվ համապատասխան է երկրի չորս կողմերուն, հյուսիսային կողմին վրա հանկարծ, 85 սմ. խորության վրա երևացեր է մի կարաս: Անմիջապես ինձ լուր հասցրին մերիններ, որոնք հսկում էին այդ գործերուն վրա: Լսելուս պես գնացի, բայց այստեղ էլ մինչև հասա բանվորներ արդեն կարասը հողից հաներ էին: Մեջը լիքն է եղեր հողով մինչև բերանը, բայց հողի հետ խառն գտել են մի քանի մարդկային ատամներ:

Կարասի բարձրությունն է 58 սմ., բերանի տրամագիծը 23 սմ., փորի տրամագիծը՝ 49–50 սմ., ներքևի մասը 15 սմ., ունի երկու ունկ, երկու կողմի վրա և մի երիզ բոլորված կեսից վերև: Ներքևն ամբողջովին ծակ է: Կարասը ուրիշ կոտրվածք չունի, ինչպես երևում է ներկված էլ է եղել: Տարա և պահեցի Զվարթնոցում: Սակայն ինչ որ հետաքրքրական է, այն է, որ այս քառակուսի հորին հարավ արևելյան անկյունում 142 սմ. խորության վրա երևում են մեծ քարերու ծայրեր, որոնք ինձ ենթադրել են տալիս մի փլատակ շենքի քարեր: Ճիշտ նույն կողմին վրա կա մի բլուր, ամենայն հավանականությամբ այդ բլուրի տակ թաղված կա շենքի փլատակ, որուն քարերեն պիտի լինեն այդ երևացածները:

Էջմիածին,
9 հունիսի, 1926 թ.

## Դ. ՏԵՂԵԿԱԳԻՐ ԱՅԳԵՊՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ամեն օր դիտում եմ փորումները: Մինչև օրս հազիվ 70–80 սմ. խորության փորված է, և ուշադրության արժանի մի բան դուրս եկած չէ բացի երկու կտոր սալաքարերից, որոնք գրեթե նման են կավե դագաղի վրա ծածկված սալաքարերին:

Փորվածքի արևելյան կողմը, ուղիղ ճանապարհի և հիմնվելիք շենքի միջև, բացվել են տարօրինակ ձևով երկու գերեզմանների ծայրերը, ինչպես կերևին (պատկ. 256) A և B կետերի ներքևները:

Գերեզմանների գտնված կողմը (արևելյան կողմ) հողը ամբողջովին մի տարօրինակ լիցք է, ամբողջ շերտը մինչև այսօր բացված խորության վրա լիցքը կազմված է ավազախառն գետերու մեջ գտնվող հղկված և մասամբ կլորացած խիճերով, որոնց մեծությունը գրեթե հավկիթի չափ, քիչ ավելի մեծ կամ փոքր. ուստի այս շերտը այնքան անհաստատ էր, որ հետզհետե ինքնին փլչում էր: Տեսա որ այսպես ինքնին փլչելով, անակնկալ կերպով պիտի թափվին առանց գերեզմանների բնույթը որոշելու, ստիպված եղա վերևից բարակ շերտեր վերցնելով մինչև գերեզմանին հասնել. այնուամենայնիվ դարձյալ առջևեն մի մաս փլավ, մնաց միայն վերջին մասը: Վերևի խիճն ու ավազը մաքրելուց հետո, պարզվեց, որ գերեզմանը շինված է դագաղաձև մի արկղ, կողքերին դրված անթուրծ աղյուսներ. աղյուսների երկայնությունը 37-ից մինչև 42 սմ., իսկ բարձրությունը՝ առ առավելն 10 սմ., ինչպես կտեսնինք չափագրված գծագրության մեջ A նշանակված: Աղյուսների բարձրությունը կամ արկղի խորությունը 28 սմ. է: Արկղը արևելյան կողմից նեղ է, մեջը զուտ դատարկություն, 34 սմ. լայնություն ունի, իսկ գնալով դեպի արևմուտը լայնանում է և հասնում 50 սանտիմետրի: A գերեզմանի վրա անշարժ մնացած քարերի չափը նշանակված է, իսկ առջևի քարերի վրա, որ բացի բարձրությունից երկարության չափ չէ նշա-

* Հեղինակն ակնարկում է Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանին, որն այնտեղ «պեղել է» 1893 թվին:
Կազմող

նակված, պատճառն այն է, որ ինքնին փլչելով փշրված են արկղը ձևացնող կողերի անթուրծ աղյուսները, կտորների վրա հազիվ հնարավոր եղավ բարձրություն և հաստություն չափել:

Նկ. 255. Հռիփսիմեի մոտ դամբարանների պեղումներ 1930 թվին



Նկ. 256. Այգեգործական ընկերության (Հռիփսիմեի մոտ) փորումների ժամանակ հայտաբերած դամբարանների դիրքը

Գերեզմանի հատակին, բացի մի քանի փտած ոսկորներից ուրիշ ոչ մի առարկա չգտնվեց: Գտնված ոսկորները միմիայն ոտքերի մատների և սրունքի մասերն էին. սրանից հայտնի եղավ, որ մեռելը թաղված էր արևմուտքից դեպի արևելք: Գերեզմանին կեսին հետքը չերևաց, որով անհայտ մնացին կողերը, գլուխը և այլ մասերը: Սրանից ևս հետևցնում եմ, որ մի ժամանակ այս գերեզմանները պրպտվել են և վրայի կափարիչ սալաքարերը օգտագործվել են ուրիշ հետնագույն մեռելների համար:




Նկ. 257. Այգեգործական ընկերության փորումների ժամանակ հայտաբերած A դամբարանի չափերը

B գերեզմանից հազիվ ազատվեցին արկղի երկու կողմի երկու քարերն առանց տեղից շարժվելու, արևելյան մասում արկղը փակող քար չկար, իսկ արևմտյան մասում A գերեզմանի նման արկղը ձևացնող աղյուսները կորած էին: Մնացորդ մասի մեջ, ինչպես երևում է B լուսանկարին մեջ կան միայն սրունքների ոսկորները և ոտի մատերի ոսկորները բոլորովին փտած: Գերեզմանին մեջ ոչ մի օտար առարկա չգտնվեց: A և B գերեզմանները մեկ գծի վրա միմյանցից հեռու են 5,1 մետր, միայն B գերեզմանը մի քիչ բարձր է: Արկղները դրված են մի ավազի շերտի վրա ինչպես կտեսնվի իմ չափագրության մեջ: Ավազի հորիզոնական շերտը հավասար բարձրություն չունի, 30 սանտիմից մինչև 80 սմ թանձր տեղեր կան, իսկ այս ավազի շերտից ցած նույն ավազախառն լիցքն է, ինչպես վերևն էր: Մինչև այժմ արևելյան կողմից փորված



են 3,20 մետր մոտավորապես, չի վերջանում ավազախառն խիճերի լիցքը. իսկ հյուսիսային կողմը ամբողջ փորվածքի երկարության, 50-ից մինչև 80 սմ. ամենավերևի խճախառն շերտից ցած, միմիայն խտացած մաքուր ավազ է և խիստ անհաստատ, հետզհետե փլչում է, և մեջերը ոչինչ չի երևում: Հարավային և արևմտյան կողմերը խիստ կարծր բնական հող է, միատեսակ շերտեր են և երբեք սպասելի էլ չէ, որ մեջը մի բան գտնվի: Այնուամենայնիվ պիտի հսկեմ մինչև վերջ:

Էջմիածին,
8 սեպտեմբեր, 1927 թ.

## Ե. ՊՀՊ ԿՈՄԻՏԵԻ ՈՐՈՇՈՒՄՈՎ 1928 ԹՎԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ 23-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9-Ը ԶՎԱՐԹՆՈՑԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐԱԾՍ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Երևանից դեպի Վաղարշապատ հոսող Զանգու գետի առվից մի ճյուղ Զվարթնոցի հնագիտական սահմանի հյուսիսային եզերքից ծռվելով մտնում է հնագիտական սահմանի մեջ և բավական երկար հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք հոսելուց հետո դարձյալ ծռվում է հարավ-արևելքից դեպի հյուսիս-արևմուտք և հետո զանազան ուղղություններ ստանալով գնում է մինչև Ալիբեկլու գյուղը:

Առվի այս հարավ արևելքից դեպի հյուսիս արևմուտք հոսող մասի վրա, երկարատև հոսումից գոյացել էր մի հեղեղատ և ջրի մեծ մասը գնում էր առվից դուրս՝ հյուսիս արևելքից դեպի հարավ արևմուտք: Առվի պատառումից գոյացած հեղեղատը մոտավորապես երկու մետր լայնություն ուներ, իսկ մշտահոս ջուրը հատակը հետզհետե քերելով խորացրել էր մինչև 35–40 սմ: Որովհետև այս պատռվածքը վնաս էր տալիս մայր առվին և մեծ քանակությամբ ջուր անօգուտ կորչում էր, այս անտեղության առջևն առնելու համար Ջրային վարչությունը 1927 թ. բանվորներ էր ուղարկել պատռվածքին դեմ հողաթումբ կազմելու համար: Վարչությունից ուղարկված բանվորներն առվի պատռվածքը լեցնելու համար, որտեղ որ կավային հող կար փորել և տարել էին լեցնելու պատռվածքին մեջ: Ահա այդ աշխատանքների ժամանակ, առուից 35–40 մետր հեռավորության վրա, հեղեղատի աջ եզերքին, երևան է գալիս մի խեցեղեն դագաղ: Առուի շրջակայքում հող փորելու և փոխադրելու աշխատանքները դադարեցնելու համար, Ջրային ընկերության պաշտոնապես հայտնելուց հետո, անմիջապես տեղեկություն տրվեց Երևան, ՊՀՊ Կոմիտեին: Կոմիտեն, անմիջապես իր ներկայացուցիչներն ուղարկեց դագաղը գտնված հողամասը կանոնավորապես պեղելու, և շրջակայքը ուսումնասիրելու համար: Այս միջոցին խեցեղեն դագաղը չափագրվելուց և լուսանկարվելուց հետո, ղրկվեց Էջմիածնի հնագիտական թանգարանը:

Սակայն, որովհետև դագաղը հանված ժամանակ նկատվել էին նաև ուրիշ կետեր մոտիկ հողամասերի մեջ, որոնք ցույց էին տալիս նույնանման գերեզմաններ գտնվելու հավանականություն, ուստի Ջրային վարչության հատուկ դիմումներ կատարվեցին, որպեսզի ընդմիշտ ազատեն այդ մասը ողողումներից, որով փչանում էին հողի տակ գտնված պատմական արժեքները:

Պետք է խոստովանել, որ Ջրային ընկերությունը հեղեղատը ամրացնելու համար բավական աշխատանք կատարելեն հետո, երբ անօգուտ եղավ, առվին ուղղությունը փոխել տվեց, որով ընդմիշտ ազատվեց այդ ողողումներից:

Նախապես հանված դագաղը շատ խոր հնության հատկանիշներ ցույց տվեց և գրեթե առաջին օրինակը թվեցավ հնագիտության մեջ իր ձևով, ուստի Կոմիտեն որոշեց, որ որչափ կարելի է, շուտով պեղվի այդ հողամասը և կորուստից ու փչացումից ազատվեն այնտեղ ենթադրյալ պատմական և գիտական արժեքները: Կոմիտեի այդ որոշման իրագործումը ինձ հանձնարարված լինելով, 1928 թվի սեպտեմբերի 23-ին ես սկսեցի աշխատանք այդ ուղղությամբ:

Նախապատրաստական աշխատանքը կատարելուց հետո սեպտեմբեր 26-ին ձեռնարկեցի պեղման:

Թեև ծածկված հնագույն գերեզմանների հայտնի նշաններ ցույց տվող հողամասը գտնվում էր հեղեղատի աջ կողմը՝ Զանգուի առուից դեպի հարավ արևմուտք, սակայն ես սկսեցի պեղել հեղեղատի ձախ եզրից, որպեսզի, ըստ պեղման կանոնի, հեռվից մոտենամ դեպի նպատակակետ՝ լավ քննելու համար շրջապատը, հողային շերտերը, և որ ավելին է, հեղեղատն ևս կասկածելի էր և հարկ է քննել ներքևը, որովհետև 1921 թվին գտնված դագաղը հանված էր նույն իսկ հեղեղատի աջ ափին:

Ենթադրությանս մեջ սխալված չէի, հեղեղատը ավազներից մաքրելու և խորացնելու աշխատանքի երկրորդ օրն իսկ, նախորդ տարվան գտնված գերեզմանի օրինակով, երևաց դագաղի վրա ծածկված մեծամեծ սալաքարերի շարքը: Այլևս կասկած չկար, որ գտնված էր առաջին գերեզմանը, միայն հարկ էր զգուշությամբ մոտենալ և

մանրամասն քննել գերեզմանի դիրքն ու կազմությունը: Առանց մեծ սալաքարերը տեղից շարժելու, սկսեցի մաքրել տալ քարերի շուրջը և խորացնել լիովին համոզվելու համար, նախ իսկապես մի հնադարյան գերեզման լինելուն, հետո պարզել նրա ձևը և արևելադրությունը: Այս գործողության շնորհիվ, շուտով հայտնի եղավ, որ իսկապես, հայտնագործվածը մի հնադարյան գերեզման էր հյուսիս արևելքից դեպի հարավ արևմուտք դրված և սալաքարերի ներքև երևում էր խեցեղեն դագաղի շրթունքի մի մասը և դագաղի խեցեղեն կափարիչներից մեկ հատին ծայրը:

Գերեզմանը ծածկող սալաքարերի շուրջը մաքրելուց հետո, վերցնել տվի քարերը և զգուշությամբ բանալ տվի դագաղը:

Դագաղը, հատկապես շինված խեցեղեն թրծված 2 սմ. հաստությամբ տախտակներով ծածկվելուց հետո, մոտավորապես 15–20 սմ. հաստությամբ ավազախառն հող լեցվելուց հետո, վրան շարված էին անտաշ սալաքարեր: Դագաղի վրա իբրև ծածկույթ դրված խեցեղեն թրծուն չորս տախտակների միայն երկու հատը կային, մյուս երկուքը անհայտացած էին: Տեղում մնացած կափարիչներից մեկին մեկ եզերքն ընկած էր դագաղին մեջ, իսկ մյուսը, որ գլխի կողմն էր, հաստուտուն և անվնաս մնացած էր տեղի վրա:

Դագաղի վրա ոչ մի նշանագիր գոյություն չուներ, իսկ կափարիչների վրա խազված էին Λ այս նշանը, որոնք հավանորեն բրուտի նշաններն էին: Միայն դագաղի շրթունքները շինված էին կոկիկ մուլյուրներով և եզերված էին կիսաբոլորակի նմանող մանր ցցուն վարդերով, որոնք հավանորեն դագաղը տակավին չթրծված, բրուտի մատերի եզերքի վրա սեղմումով ձևացած էին շուրջանակի: Դագաղին մեջ դատարկելով տեսա, որ ոչ կմախք կար և ոչ ուրիշ առարկաներ, մինչև բերանը լեցված էր ավազախառն հողով: Այս երևույթը կարծել տվեց ինձ, որ շատ վաղ ժամանակ, այս գերեզմանը փորված և գուցե կողոպտված էր:

Խեցեղեն դագաղի երկարությունն էր 1,75 մտ., գլխի կողմի լայնությունն էր 47 սմ., ոտների կողմը՝ 35 սմ., իսկ խորությունը՝ 28 սմ., ոտների կողմը, հատակի մոտ դագաղն ուներ մի ծակ մեկ սանտիմետր տրամագծով:

Սույն առաջին գերեզմանը մաքրելուց հետո, աշխատեցի դագաղը անվնաս հանել, սակայն հնար չեղավ, թե՛ հնությունից և թե՛ հեղեղատից ծծած խոնավությունից այնքան խխմել էր, որ տեղից շարժելիս մի քանի կտորի բաժանվեց. այնուամենայնիվ կտորները զգուշությամբ կառքով փոխադրեցի Էջմիածնի հնագիտական թանգարանը:

Առաջին գերեզմանից փոքր ինչ հարավ արևմուտք, մոտ երկու մետր հեռավորության վրա, երևում էր մի ուրիշ գերեզմանի վրա ծածկված սալաքարի մի ծայրը, այս մասի վրա ևս շարունակեցի պեղումը, հողը մաքրելուց հետո ամբողջապես երևաց № 2 գերեզմանը երեք անտաշ մեծ քարերով ծածկված, որուն ամբողջ երկարությունն էր 2,40 մետր: Ոտի փորումները շարունակելով, քարերի շուրջ հողը մաքրելուց և մեծ քարերը հեռացնելուց հետո, որչափ որ խորացնել տվի, խեցեղեն դագաղի հետքը չերևաց:

Այս գերեզմանում թեև խեցեղեն դագաղ գոյություն չուներ, այնուամենայնիվ որոշվեց որ, մեռելը թաղված էր գրեթե արևելքից արևմուտք: Գլխի կողմը մնացել էր գանգի մի մասը, որը բացվելուն պես փոշիացավ, ուրիշ կմախքների հետքեր գրեթե չերևացին, գտնվեցին միայն երեք հատ սեղանատամ և մի քանի ատամների փշրանքներ: Թեև խեցեղեն դագաղ չերևաց, սակայն շատ հավանական նշաններ երևացին, որ մեռելը դրված էր փայտե դագաղի մեջ և դագաղը գամված էր երկաթի գամերով. որովհետև գերեզմանի եզերքների ամբողջ երկարությամբ գտնվեցին 25–26 հատ երկաթի գամերի նմանող կարճ և ժանգոտած փշրանքներ, որոնց վրա, ըստ երևույթին դեռ կպած կային փայտի փտած հետքերը: Գերեզմանի հողը քիչ ավազախառն սև գույն ուներ ամբողջովին և նուրբ փոշիացած:

Այս №№ 1 և 2 գերեզմանները, որոնք անակնկալ կերպով բացվեցին, 8,40 մետր երկարությամբ և 2 մտ. լայնությամբ հեղեղատի տակ արտաքին մակերևույթից 90–95 սմ. խորության մեջ էին. եթե ենթադրենք, որ նախապես հեղեղատի ջուրը քերած էր մոտավորապես 30–35 սմ. հաստությամբ մի հողի շերտ վերևից, ուրեմն այստեղ մեռելները թաղված էին 1,20–1,30 մ. խորության մեջ:

Այս 8,40 մտ. երկարությամբ, 2 մտ. լայնությամբ երկար փոսը գրեթե մի մետր խորության վրա կազմում էր հետևյալ շերտերից:

Ավազի անմիջապես ներքև 18 սմ. հաստությամբ կավային հող:

Կավային հողի ներքև 20 սմ. հաստությամբ սևագույն բարակ ավազի շերտ:

Ավազի շերտի տակ անհավասար չափով մոտավորապես 28-ից մինչև 32 սմ. հաստությամբ կավային բնական կարծր հող:



Բնական հողի ներքև 15–20 սմ. հաստությամբ շիկագույն ավազի շերտ:

Ավազի շերտի տակ կավային կարծր հող, որուն մեջ դրված էին դագաղները:

Թերևս այս ավազուտ հեղեղատին մեջ կային նաև ուրիշ հետաքրքրական գերեզմաններ (ինչպես հետո հաստատվեց), սակայն, որպեսզի գործը չընդհատվի և շուտով հասնենք մեր ծրագրած հողամասին, սկսեցի փորել տալ դեպի հյուսիս սկսելով № 2 գերեզմանի կողմից: Այստեղ աշխատավորներս երկու մասի բաժանելով, երկու կետի վրա առաջ էի տանում պեղումները: Վերին շերտին վրա 30–40 սմ. խորության մեջ երևաց մի կարասի փշրված բերան: Ամեն հնարավոր միջոց գործ դրի, որ գեթ այդ կարասը, եթե ոչ ամբողջ, գտնե վերակազմելու հնարավոր վիճակի մեջ հողից հանեմ, սակայն անկարելի եղավ. միջի հողը դատարկելիս արդեն ինքնին փշրվում էր: Մեջը ոչինչ չգտնվեց, բացի հողից: Կճուճը հողից չհանած ըստ հնարավորության չափագրեցի և թողի իր տեղում վերըստին հողով ծածկելով: Կճուճի չափերը հետևյալներն են. բերանի տրամագիծն է 16 սմ., փորի տրամագիծը՝ 40 սմ., իսկ բարձրությունը՝ 48 սմ.:

Կճուճը գտնված տեղից առաջ տանելով պեղումը, գրեթե մոտավորապես նույն շերտի մեջ (40-60 սմ. խորության վրա) երևացին միմյանց կպած զույգ գերեզմաններ, գլխի կողմերը թեև միմյանց կպած էին, սակայն ուղղությունները միանգամայն տարբեր: № 3 գերեզմանը ուղղված էր արևելա-հյուսիսից դեպի արևմտահարավ, իսկ № 4 գերեզմանը ուղղված էր դեպի հյուսիս, փոքր ինչ դեպի արևմուտք շեղումով: Խեցեղեն դագաղներից ավելի բարձր շերտի վրա այս № 3 և 4 գերեզմանների գոյությունը բնականաբար ինձ ենթադրել տվեց, որ այս երկու գերեզմանները ժամանակակից չեն խեցեղեն դագաղներին և ավելի ուշ ժամանակի թաղվածներ են:

Նախապես բաց արի № 3 գերեզմանը՝ վրան ծածկված մեծ քարերը վերցնելով, որոնք շատ նման էին կավեղեն դագաղի վրա ծածկված մեծ սալաքարերին, թե՛ տեսակով և թե՛ ձևով: Մեծ քարերի տակ, փոխանակ դագաղ գտնելու, մեծ սալաքարերով շինված մի արկղ էր կազմված մոտավորապես 90 սմ. խորությամբ: Արկղը ձևացուցեր էին գլխի և ոտի կողմերեն մեկական սալաքարերով, աջ և ձախ կողմեր երեք և չորս անհավասար լայնությամբ սալաքարերով: Արկղի միջի կողմից երկարությունն է 1,93 մտ., իսկ լայնությունը՝ 63 սմ.: Որովհետև չուզեցի այս արկղը քանդել, սկսեցի զգուշությամբ շերտ առ շերտ միջի հողը դուրս հանել: Արկղի մեջ հատակից մինչև բերանը ավազախառն հող լեցված էր: Սակայն հակառակ իմ մանրակրկիտ խուզարկության արկղի միջից ոչ մի առարկա չգտնվեց, բացի մութ կանաչագույն մի չիչի կտորե և մի կաղինի մեծությամբ կապտագույն ուլունքե: Կային նաև մի երկաթյա սլաքի մաս և մի քանի հատ կլորացած պեմզայի կտորները: Արկղի մեջ լեցված ավազախառն հողի մեջ չէր երևում նաև կմախքի աճունացած բարակ փոշին, որ նախորդ գերեզմանների մեջ հայտնի էին իրենց սևագույն նուրբ փոշիով: Սույն գերեզմանը մինչև ներքևը քննելուց հետո, հողը կրկին լեցնել տվի տեղը և իրեն սալաքարերը շարել տվի վրան, ամբողջ գերեզմանը վերստին հողով ծածկեցի, այնպես որ, այսօր իսկ կարելի է տեսնել անվթար վիճակի մեջ:

№ 3 գերեզմանին կից № 4 գերեզմանը վրան ծածկույթ ուներ անհավասար երկարությամբ և լայնությամբ անտաշ մեծ սալաքարեր և անկանոն շարված: Ծածկույթի քարերը վերցնելուց հետո ներքևը ոչ քարաշեն արկղ գտա, ոչ կմախքներ և ոչ ուրիշ առարկաներ:

Մինչ բանվորներիս մի մասը բաց էին անում №№ 3 և 4 գերեզմանները, մյուս բանվորներս բաց արին 5-րդ և 6-րդ գերեզմանները, որոնք կգտնվեին քիչ դեպի հյուսիս արևելք, ավելի մոտ Զանգուի առուին: № 5 գերեզմանը ուղղված էր հարավից դեպի հյուսիս, վրան ծածկված էր չորս անտաշ երկարավուն քարերով: Ծածկույթի քարերը հեռացնելուց հետո, երբ հողերից մաքրվեց և փորվեց, մեջը ոչինչ չգտնվեց, ոչ կմախք գոյություն ուներ այնտեղ և ոչ էլ ուրիշ իրեր: Ուստի ձեռնարկեցի № 6 գերեզմանի բացմանը, որը կգտնվեր № 5 գերեզմանից քիչ դեպի հյուսիս:

Արտաքին երևույթով № 6 գերեզմանը կգտնվեր միևնույն հողաշերտին վրա, ինչպես № 5 գերեզմանը (40–60 սմ. խորության մեջ), ինչպես № 3 և 4 գերեզմանները, միայն թաղման ուղղությունը տարբեր էր, գրեթե նման էր № 3 գերեզմանի ուղղության, այսինքն արևելքից դեպի արևմուտք: Նմանապես թաղման ձևը գրեթե նման էր № 3 գերեզմանին: Վրան ծածկված անհավասար մեծությամբ երկարավուն անտաշ քարերը հեռացնելուց հետո, երբ հեռացվեց նաև 15–20 սմ. հաստությամբ հողաշերտը, երևաց որ այս գերեզմանը ևս շինված էր մեծադիր բարակ սալերով արկղաձև, և անկախ վերև ծածկված անտաշ քարերից, առանձնապես արկղը ևս փակված էր 90-ից մինչև 115 սմ. երկարությամբ, 45-ից մինչև 78 սմ. լայնությամբ սալաքարերով: Այսքան խնամքով շին-

*ված այս գերեզմանը ինձ հույս տվեց, որ անձեռնմխելի մնացած է և այնտեղ կգտնիմ գեթ հնագիտական հետաքրքրական առարկաներ: Սակայն այստեղ ևս հույսս պարապ եղավ, երեսից մինչև հատակը շերտ առ շերտ խնամքով խուզարկելուց հետո, ոչինչ չգտնվեց, բացի մի քանի ոսկրի փշրանքներից և կլորացած մանր պեմզայի կտորներից:*

*Ինչպես քիչ առաջ գրեցի, որ այս չորս գերեզմանները և կճուճը դուրս կգան այժմյան հողի մակերևույթից 48-ից մինչև 60 սմ. խորության մեջ, սակայն ի նկատի ունենալով առվի պատռվածքը ծածկելու համար այս մասից հանված, 15-ից 20 սմ. հաստությամբ հողը, նաև տեղի փոքր ինչ զառիվայր լինելուն պատճառով անձրևների մաշեցումը, պետք է որ ի սկզբան այս գերեզմանները լինեին առնվազն 80 սմ. մինչև 1 մետր խորության մեջ. ուրեմն ավելի բարձր շերտի մեջ քան № 1 և 2 գերեզմանները, որոնց խորությունը կհասներ առնվազն 1,30 մ.:*

*Առուի պատռվածքի մոտ, ձախ ափի վրա, վաղուց երևում էր հողի մեջ թաղված մի քարի ծայրը, որը շատ նման էր մյուս գերեզմանների վրա ծածկված քարերին: Ուստի 6-րդ գերեզմանից հետո ձեռնարկեցի այդտեղի պեղման, ուր իսկապես դուրս եկավ № 7 գերեզմանը: Սովորական սալաքարերը հավաքելուց հետո, դուրս եկավ № 2 կավե դագաղը: Սակայն № 7 գերեզմանի այս № 2 կավե դագաղը շատ վնասված էր. վրայից մշտապես հոսող ջրի խոնավությունը չափազանց խխմեցրել էր, այնպես որ ամենայն զգուշությամբ անգամ շուրջը փորելիս թափվում էին կտորներ: Առաջին դագաղի նման վրան ևս չուներ թրծուն կավից կափարիչներ, անտարակույս հին ժամանակ այս գերեզմանը ևս կողոպուտի ենթարկված էր, որովհետև կափարիչի կտորներ երևում էին դագաղից բավական հեռու՝ հողերի մեջ խառնված: Դագաղի մեջ, բացի մասամբ ավազախառն հողից, ոչինչ չկար, սակայն դագաղի չափը և արվեստագործությունն այնքան նման էր № 1 դագաղին, որ, հավանորեն միևնույն բրուտ վարպետի գործն էին: Նույնիսկ գոյություն ուներ ոտի կողմի փոքրիկ ծակը:*

*№ 2 դագաղը (թեև կոտրված) հանելով էջմիածնի թանգարանը ուղարկելուց հետո, ձեռնարկեցի հեղեղատի աջ ափին վրա դագաղի գոյության նշաններ ցույց տվող մի տեղի պեղման, ուր նախորդ տարին Կոմիտեի ներկայացուցիչները հավաքել էին ոսկրների փշրանքներ և կափարիչի կտորներ: Թեև ճիշտ միևնույն տեղում չգտնվեց դագաղ, այլ մեկ և կես մետր դեպի հարավ, այնուամենայնիվ 50–60 սմ. խորությունից դուրս եկան դագաղը վերևից ծածկող մեծ քարերը:*

*Այս № 3 դագաղը գրեթե նույն ճակատագիրն էր ունեցել ինչ որ № 2 դագաղը: Հեղեղատից անդադար հոսող ջրերի խոնավությունը խորապես ազդել էր: Դագաղի վերին երեսը ծածկող մեծ քարերը դուրս եկան 50-ից 60 սմ. խորության վրա. դագաղի խեցեղեն կափարիչներն ևս ամբողջ չէին, ինչպես նկատվում էր, այս դագաղը ևս ազատ չէր մնացել գերեզմանակրկիտների խուզարկությունից: Դագաղի շինության արվեստը նույնն էր ինչ որ նախորդներինը, եզերքը շուրջանակի մուլյուրազարդ, մուլյուրներին ցցուն կերպով եզերված էին փոքրիկ կիսաբոլորակներ, որոնք դեռ կավը թաց եղած ժամանակ ձևացված էին երկու մատների սեղմումով: Թեև ամբողջ հնար չեղավ հանել հողից, այնուամենայնիվ ավելի արդյունավոր եղավ քան մյուս իր նախորդները: Թեև աննշան քանակությամբ, այնուամենայնիվ գտնվեցին հատուկտոր այնպիսի առարկաներ, որոնք պարզեցին թե թաղվողի սեռը և թե անոր տնտեսական բարեկեցիկ վիճակը: Անպայման մի կնոջ գերեզման էր այս № 8 գերեզմանը, որ դագաղի կարգով 3-րդն էր: Դիակը բնականաբար աճյունացած էր, ոսկորների բնավ հետք չկար, սակայն մոտավորապես կուրծքի տեղից գտնվեցին գունավոր և սպիտակ մեծ ու փոքր ուլունքներ: Ուլունքներից երկուքը մեծակակ էին՝ բյուրեղանման և կարմրագույն, ձևով երկար և բազմադիմի հղկված ձև ունեին. հանգուցյալին կուրծքը զարդարված էին քարերով:*

*Կային նաև միմյանցից մեծ ու փոքր մարգարտանման, ծածկված ուլունքներ, մի հատ 5–6 միլիմետր երկարությամբ ծածկված տափակ ուլունք գտնվեց, որուն մի երեսին վրա կար 8 սույն նշանը, իսկ մյուս երեսին վրա խազված էին գծեր միմյանց վրա հակառակ ուղղությամբ: Դարձյալ դագաղի մեջտեղի մասում գտնվեց մատանիի նմանող՝ ժանգակալած մի բեկոր, որուն վրա կարծեք այժմ ևս երևում էին հագցված մանր ուլունքներ, թերևս մեծ ակներ կային կենտրոնում, սակայն այժմ ոչինչ չի երևում: Մարդու մնացորդներից գտնվեցին միայն երկու հատ սեղանատամներ: Դագաղը ուղղված էր հյուսիս արևելքից դեպի հարավ արևմուտք, այսինքն գլխի կողմը հյուսիս արևելք, իսկ ոտների կողմը՝ հարավ արևմուտք: Դագաղի մեջի կողմը, գլխի լայն կողմից մինչև մեջտեղ, գրեթե կեսը, սևացած մի գույն ուներ, կարծեք մրոտած լիներ, ոտի կողմը հատակի մոտ, ըստ սովորականի կար մի ծակ՝ մոտավորապես մեկ և կես սմ. մեծությամբ կամ տրամագծով:*



*4-րդ գերեզմանի ծայրին, գրեթե նրա ուղղությամբ, երևում էր կավեղեն դագաղը ծածկող քարերի ծայրը, ուստի վերջին անգամ լինելով ուզեցի բաց անել այս գերեզմանը ևս և վերջացնել աշխատանքս: Ուստի երբ 8-րդ գերեզմանի 3-րդ դագաղը ուղարկեցի էջմիածնի թանգարանը, ձեռնարկեցի այս 9-րդ գերեզմանի պեղման:*

*Այս 9-րդ գերեզմանի վրա ծածկված սալաքարերը ավելի խորն էին քան 3-րդ և 4-րդ գերեզմանների հատակը (մոտավորապես նախորդ կավեղեն դագաղների հավասար խորության վրա), հետևաբար վերևն առանց դագաղի գտնված գերեզմաններից տարբեր շերտի տակ:*

*Սկզբից, դագաղի շրջապատն ամբողջ երևում էր, հույս ունեի, որ այս 9-րդ գերեզմանի 4-րդ դագաղը կարողանամ առանց կոտրտելու անվնաս հանեմ: Ուստի, նախ սկսեցի շերտ առ շերտ երեսի հողը հանել և մեջը խուզարկել: Բայց զարմանալի էր, որ վրան ծածկված խեցեղեն թրծուն կափարիչներն ամբողջ չկային, եղածներին էլ մի մի եզերքն ընկած էին դագաղի մեջ. Բայց, որ ավելի տարօրինակ թվեց ինձ, այն է, որ դագաղի հատակի միջին մասը ևս պակաս էր, և այդ հատակի բաց մնացած տեղին համապատասխանող չափով կտոր բնավ գոյություն չուներ: Թե ինչ պատճառով այդ վիճակին էր ենթարկված, այդ մասին մի եզրակացության չկարողացա գալ: Դագաղին մեջ ոչ մի իրեղեն գոյություն չուներ, միայն գլխի կողմը, դիակի թերևս թիակի մի ոսկրն էր կպած մնացել դագաղի հատակին: Առանց պոկելու այդ կպած ոսկրը, աշխատեցի ամբողջ հանել հողից այս 4-րդ դագաղը, սակայն ցավոք սրտի, այս ևս հազիվ երեք կտորով փոխադրել տվի մինչև կառք, և ուղարկեցի էջմիածնի թանգարան: Նշանակելի պարագա էր դագաղի գլխի կողմից ներքին մասի մրոտվածի նման սևացած լինելը: Ոտների կողմը, հատակի մոտ մեկ և կես սմ. տրամագծով գոյություն ուներ մի ծակ:*

*Այս 9-րդ գերեզմանի 4-րդ դագաղը, որ ըստ արվեստագործության ձևով նման, սակայն իր չափերով տարբեր էր մյուս երեք դագաղներից. նա հետևյալ չափերն ուներ.*

*1,70 մ. երկարություն՝ միջի կողմից:*
*0,43 մ. լայնություն՝ գլխի կողմից:*
*0,22 մ. լայնություն՝ ոտի կողմից:*
*0,26 մ. խորություն:*
*0,03 մ. հաստություն:*

*50 X 40 սմ ամբողջ մնացած մի հատ խեցեղեն կափարչի չափը:*

*Այստեղ վերջացնելով աշխատանքս, դագաղն ուղարկեցի էջմիածնի թանգարանը, իսկ մյուս առարկաները կներկայացնեմ Կոմիտեին:*

*Սույն պեղումների ընթացքում. առանց կանխահաս ենթադրություններ անելու տեղի և դիրքի մասին, հետևյալ տպավորությունները կարձանագրեմ այստեղ:*

*1. Իմ պեղած ինը գերեզմանով չի սահմանափակվում այս գերեզմանատունը, դեռ շատ կան ուրիշ գերեզմաններ հեղեղատի աջ և ձախ կողմերում ընդարձակ հարթ տարածության վրա:*

*2. Բոլոր գերեզմաններն անձեռնմխելի չեն մնացած, ինչպես երևում է, շատ հին ժամանակ բացված և կողոպտված են:*

*3. Վերևի և ներքևի շերտերուն մեջ թաղվածներ թեև տարբեր ժամանակի են, սակայն ոչ շատ հեռու միմյանցից, որովհետև վերևի ծածկույթները միևնույն տեսակի քարերով և միևնույն ոճով են:*

*4, Նկատի ունենալով 2-րդ գերեզմանին անդագաղ կամ փայտյա դագաղ լինելու հանգամանքը, կարծում եմ, որ կավե դագաղը հանգուցյալին տնտեսական բարեկեցիկ վիճակին հետ կապ ունի, գուցե ամեն դասակարգի համար մատչելի չէին թրծված խեցեղեն դագաղները:*

## Ղ. ԶՎԱՐԹՆՈՑԻ ՍԱՀՄԱՆԻՆ ՄԵՋ 1929 ԹՎԻՆ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ՄԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՄԱՍԻՆ

*Այս նոր գերեզմանը գտնվում է անցյալ տարվա իմ պեղումներից արևելք մոտավորապես 150 մետրի վրա, և շատ մոտ է հունարեն արձանագրությունը գտնված տեղին: Մեր պահակ Աստուր Հովհաննիսյանը գյուղ գնալիս տեսել էր, որ այստեղից դեպի Վարմաղյար գնացող տրակտորների գրթանը հանել էր ծածկույթի մի մեծ քարը, որտեղ և պեղում կատարվեց և հանվեց մի կավե դագաղ: Այս դագաղը չափազանց հետաքրքրական է այն տեսակետով, որ իմ անցյալ տարվա հանած դագաղներից բոլորովին տարբեր է իր ձևով:*

*Էջմիածին*
*17 ապրիլ, 1929*

## Դ

# ՀԱՃԻ-ՂԱՐԱՅԻ ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### ՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ

*Մի շատ կարևոր նորություն:*

*Վերջին ճանապարհորդութենես վերադարձիս հանդիպեցա Հաջի Ղարա գյուղը նախապատմական գերեզմանները անգամ մը ևս մանրամասն քննելու համար, այդ միջոցին ինձ լուր տվին, որ գյուղի մոտակա քարահանքին մեջ քարի 2–3 մետր շերտի տակից գտնվել են խեցեղեն անոթներ, անմիջապես գնացի քարհանքը, բայց արդեն ուշ էր, խեցեղենները բոլորովին ջարդվել էին և գտնված տեղին վրա քարի մանրուքների մի ահագին կույտ էին կազմել, որ ինձ համար անհնար էր այդ մեծ քարակույտը հեռացնել և ներքևը քննության ենթարկել: Ուստի բավականացա նույն քարհատ վարպետներին հորդորելով, որ ուրիշ անգամ պատահելիս, առանց ձեռք տալու և իրեղենները տեղից շարժելու մեզ իմացնեն և տեղին վրա աշխատանքները դադարեցնեն:*

*Մի քանի օր առաջ կրկին պատահել է նույն քարահանքին մեջ նույնօրինակ մի դեպք (1910 թվականին ևս գտնվեց նույն տեղը եկեղեցվո շինության համար քար կտրելիս), սակայն փոխանակ իրենց եղած պատվերը հիշելու, խեցեղեն ամաններից երկուքը, որ անվնաս հանել են, բաժանել են իրենց մեջ, իսկ մյուս կոտրվածները թապլել:*

*Ինչպես կտեսնեք, չափազանց կարևոր մի հարց է թե երկրաբանական և թե պատմական տեսակետով այս ավելի քան երեք մետր հաստությամբ քարե շերտի ներքևից այն խեցեղենների գտնվելը (1910 թվականին գտնվել են մանր ու խոշոր ամաններ ևս), ուստի հարցը ներկայացրեք Ալեքսանդր Իվանիչի (Թամանյան) ուշադրության, և ինչ փութանակի կարգադրություն որ կանե անմիջապես հաղորդեցեք մեզ, որպեսզի հարկ եղածը անենք: Իմ կարծիքով, այստեղ թե երկրաբանական թե հնագիտական լուրջ քննություն է հարկավոր:*

*Էջմիածին*
*5 նոյեմբեր, 1924*

## Ե

# ԳԵՂԱՐԴԱՁՈՐԻ ՄԵՋ ԿԱՏԱՐԱԾՍ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ*

*Ներկա տարվա հոկտեմբեր ամսի մեջ էր, որ Կուլտուրայի Պատմության Ինստիտուտն ինձ հրավիրեց մասնակցելու և ղեկավարելու պեղումներն այն հողաթմբի վրա, որը Գեղարդաձորի լեռնալանջին վրա նախապես Ինստիտուտը ստուգողական պեղում էր կատարել:*

*Երևանից մեկնեցինք հոկտեմբերի 20-ին և պեղման գործողություններն սկսեցինք 22-ին:*

*Պեղման վայրն այնպիսի մի թեք զառիվայրի վրա էր, որ նույնիսկ առողջ մարդու համար զլխապտույտ էր առաջացնում: Նախապես թեք դարևանդը, որի վրա հազիվ թե բանվորին հանդիստ տեղ կար աշխատելիք, հետզհետե ընդարձակվեց, որ թե բանվորին համար աշխատելու տեղ բացվեց և թե ինձ համար, որպեսզի կարողանամ ամեն կողմ ման գալ և հետազոտության ենթարկել:*

*Լուսանկարը միայն ուղիղ գաղափար կուտա պեղման տեղի թեք զառիվայր դիրքի մասին: (Տես նկար 258):*

*Այսօրինակ լանջի վրա երևան եկած էր մի փլվածքի ծակ, որ հազիվ մուտք կուտար մի մարդու և այս ծակից ներս երևցածը մի որմնակամարի մասն էր և մի քանի ստալակտիտ քանդակներ: Բայց որմնակամարն և ստալակտիտ քանդակազարդությունն այնքան մաքուր սրբատաշ էին, որ չէր կարելի ենթադրություններ մեջ առաջ չգնալ և կարծել, որ սա մի կարևոր շինություն է, որ անակնկալ փլուզումով փլատակների տակ պահած կլինի հնադարյան կուլտուրական մնացորդներ: Իհարկե փլատակը նկատվում է, ըստ հին դարաշրջանների ընդհանրացած սովորության մի եկեղեցի, որուն մեջ բացի եկեղեցիի հատուկ պիտույքներից, ենթադրվում էր ձեռագրերի մի հավաքածու, որ ամենակարևորը և ամենացանկալին էր:*

*Զանազան հույսերով և ենթադրություններով սկսեցինք պեղումներն այդ դժվարին ափափայից մեջ: Ընկ. Տարագրոսը կոչված էր պեղումներից հետզհետե դուրս եկած ճարտարապետական մասերը չափագրելու և գծագրելու:*

*Փլատակների հարավային ծայրից, ուր տեսնվել էր բացված ծակը, առաջ տարվեցին պեղումները դեպի հյուսիս: Այս ձևով ոչ միայն հարավային ճակատը, այլև արևելքն ու արևմուտքը ենթարկվեցին մասնակի պեղման:*

*Հարավային ճակատում ամբողջովին դուրս եկան երկու որմնակամարներ և մի երրորդ որմնակամարի սկիզբը, որուն մնացած մասերը քանդված էին: Երկու որմնակամարների մեջ տեղավորված էր մի գեղեցիկ խորշ, որուն վերևի մասին կիսագմբեթի ձև էր տրված և ստալակտիտ քանդակված, իսկ կիսագմբեթի ստորին մասում, կենտրոնից ցած, նույնպես մի ստալակտիտ գոտիով ճոխազարդված էր:*

*Արևմտյան ճակատի վրա մնացել էր մի որմնակամար, որը փոխանակ շենքի հատակագծի հետ ուղղանկյուն կազմելու, ավելի լայն էր քան 90 սանտիմ: Անշուշտ այդ անկանոնությունը առաջ եկել է փորված քարայրի քարերի բնական անկանոնութենեն. հավանական է, որ այդ մասում փորված քարայրն ընդունակ չէր մաքուր սրբատաշ որմնակամարներ քանդակելու ինչպես մյուսները, հետևաբար մի քիչ առաջ են ծռել պատը՝ քանդակելու ավելի հաստատուն ժայռ գտնելու համար: Արևմտյան կողմի այս որմնակամարի շարունակությունը փլատակների ներքև ջախջախված է. միայն գոյություն ունեցող որմնակամարի վերջում գտնվեց մի որմակից անկյունավոր սյուն, որ ըստ ինքյան շենքի ամբողջության մասին մի հատկանշական երևույթ պետք է լինի, այսինքն քարայրի գեղարվեստական լինելուն մի ապացույց, եթե իհարկե պեղումները շարունակվին, և իսկապես այդ մասում մի կանոնավոր որմասյուն երբեք աննպատակ չէր կարող լինել, բացի շենքի ներքին ճոխազարդության ապացույց լինելուց: Այս գեղեցիկ որմասյան հանդիպակաց արևելյան պատը եթե գոյություն ունենար, ի հարկե ավելի շուտ պիտի պարզվեր արևմտյան մասի վրա գոյություն ունեցող որմասյան նպատակը, սակայն դժբախտաբար, արևելյան պատը ամբողջությամբ ջախջախվել է, հազիվ 15–20 սանտ. բարձրության հետք թողնելով հատակի մեկ մասին վրա:*

*Քարայր-շենքի բարձրությունը համարյա ճիշտ չափվում է: Հատակից մինչև առաստաղ 5 մետր բարձրություն ունի: Առայժմ թափված քարերից երևում է, որ առաստաղը եղել է հարթ հորիզոնական, միայն արևմտյան որմասյան գոյությունը կասկած է տալիս, որ թերևս ունեցել է նաև գմբեթ և վերևից ևս լույս, բայց այս մասին խոսել առայժմ վաղաժամ եմ համարում, որովհետև պեղման շարունակությունը միայն կարող է հերքել կամ հաստատել այս կարծիքը:*

*Ինչպես առաստաղը, նույնպես հատակը հորիզոնական մաքուր հղկված է, այս մաքրությունը երևում է հատակի վրա, երբ մաքրում են մեծ ու փոքր բեկորները: Արևմտյան կողմը 6–7 մետր տեղ գրեթե մաքրված է, իսկ արևելյան կողմն ավելի քան տասն և հինգ մետր տեղ առաջ տարված է պեղումը, բայց դեռ չէ գտնված հյուսիսային պատը: Այսպես երկու թևով դեպի հյուսիս պեղումն առաջ տանելու պատճառը սրահին մեջ ընկած հսկայական զանգվածներն են, սրանց մասին քիչ հետո պիտի խոսեմ: Ուստի առայժմ կարող ենք պատկերացնել, որ մեր պեղած վայրը 5 մետր բարձրությամբ, 9 մետր լայնությամբ, և ավելի քան 15 մետր երկարությամբ մի մեծ սրահ է՝ փորված ժայռի մեջ:*

*Եթե այս մեծ սրահը միանգամից փլած և ավերակը հողի ներքև ծածկված լիներ, այն ատեն, բնականաբար, փլատակների տակ պիտի գտնվեին այն ժամանակվա կուլտուրայի արտադրություններ՝ այսինքն պիտույքներ, կարասիքներ և որ ամենակարևորն է՝ ձեռագրեր: Բայց դժբախտաբար միանգամից փլած չէ: Առնվազն արևելյան մասը շատ վաղ ժամանակ փլել է, սակայն ծածկույթը երկար ժամանակ մնացել է անվնաս:*

*Որմնակամարների տակի աստիճանը ծակել են և այնտեղ ձի են կապել, ինչպես արել են Անիում՝ Մայր եկեղեցիի և այլ հուշարձանների մեջ: Բայց թեև մեզնից շատ ժամանակ առաջ, նախկին փլուզումից երկար տարիներ հետո առաստաղը ևս փուլ գալուն ապացույց է ոչ միայն ներքևի աստիճանին վրա ձի կապելու համար բացված ծակը, այլև փլատակների մեջ գտնված երկաթյա նետի ծայրը և ուրիշ մի հին առարկա: Փլատակների մեջ գտնված երկու զանգերը ես համարում եմ վերջին ժամանակների ոճիրի արդյունք, որովհետև թե՛ բեկորների վերին շերտին մեջ թաղված էին և թե՛ բացի զանգից ուրիշ ոսկորներ չգտնվեցին:*

---

* *Արտատպում ենք Կուլտուրայի Պատմության Ինստիտուտի հրատարակած «Նյութեր հին Հայաստանի պատմության» ժողովածուից, Երևան, 1935 թ., փոքրիկ կրճատումով:*
*Կազմող*



Նկ. 258. Գեղարդաձորի պեղման վայրի ընդհանուր տեսարանը





Նկ. 259. Գեղարդաձորում պեղված շենքի հարավային պատի զույգ խորշերը



Նկ. 260. Գեղարդաձորում պեղված շենքի հարավային պատի խորշը

Այժմ անհրաժեշտ է գտնված շենքի ճարտարապետական արժեքի մասին խոսել: Շենքը բնավ կրոնական հատկանիշ չունի, բայց նկատի ունենալով, որ ամբողջ ձորը վանական վարչության իրավասության տակ էր, բնականաբար այս մեծ սրահը ևս կրոնական իշխանության ներքո աշխարհիկ շենք էր՝ ինչպես Հոռոմոսի վանքի մատենադարանը, որը չափազանց մեծ նմանություն է բերում այս նորագյուտ շենքին. նաև նմանները կան Հաղպատում, Սանահնում և ուրիշ տեղեր: Բայց այս աստիճան խնամքով շինված շինությունը, Հոռոմոսի վանքից հետո, միայն այս քարափոր սրահն է: Անշուշտ որոշ նպատակի համար փորված է այս սրահը, թե ինչի՞ համար, առայժմ հարցական է, սակայն մի բան պարզ է, որ այս քարափորը սովորական շենքերից բարձր կանգնած և բարձրագույն մի նպատակի համար շինված է, լինի մատենադարան, ժողովասրահ և կամ հին առումով մի տաճար (սրահ), ուր կկատարվեին մեծամեծ խրախճանություններ իշխանների կամ վանահայրերի հովանավորության տակ: Ինչպես երևում է մաքրված մասի մեջ վերին աստիճան խնամք տարված է շինության, ոչ միայն ժայռի մեջ փորագրված են աղեղներ, որմնակամարներ, խորշեր, այլ նաև ճոխազարդվեր են ժամանակակից ոճի ստալակտիտներով: (Տես նկ. 259–262):

Շինության ժամանակ զարմանալի կերպով մաքուր հղկված են բոլոր որմնակամարները, խորշերը, որմնասյուները և վերջապես ամբողջ քարայրը առաստաղով և հատակով: Վանքին կից կան ուրիշ քարափորներ, որոնք իսկապես մեծ զարմանք են պատճառում տեսնող արվեստագետին և շատ իրավամբ ճարտարապետական գլուխ գործոցներ են համարվում, սակայն այս նոր պեղված քարափորը մաքրության և կանոնավորության կողմանե կմրցի վանքի ուրիշ քարափորների հետ: Նույնիսկ մինչև այժմ Գեղարդավանքին մեջ գոյություն ունեցող քարափոր հուշարձաններին մեջ կան այնպիսի մասեր, որոնք չեն հավասարեր նոր պեղված քարայրին կանոնավորության և մաքրության: Ընկ. Տարագրոսը չափագրելով և գծագրելով

հիացած էր տիրող համաչափության վրա, որ նույնիսկ մի սանտիմ իսկ տարբերություն չունեին զանազան որմնակամարներ, որոնց մեջ միօրինակություն և համաչափություն կպահանջվեր: Ուրեմն այս բոլորը կուգան վկայելու, որ ոչ միայն քարայրի մեջ աշխատող քարտաշ վարպետները կատարելապես որակյալ էին, այլև այդ քարտաշ վարպետները աշխատել են մի հմուտ և բարեխիղճ ճարտարապետի հսկողության ներքո:

Փորված քարայր-սրահի չքեղության անվրեպ նշան է նաև ներկվածքը, որ քարաբեկորների վրա երևում են տակավին, մասնավորապես ստալակտիտ քանդակները, որոնք կարմիր և դեղին գույներով ներկված են եղել:



Նկ. 261. Գեղարդաձորում պեղված շենքի որմնասյուներից մեկը

Շենքի երկարությունը չտապ որոշելու համար անհրաժեշտ համարվեց արևելյան ճակատի որոշ լայնությամբ դեպի հյուսիս առաջ տանել պեղումները, բայց անցավ 15 մետր երկարություն և տակավին չերևաց սրահի հյուսիսային պատի սահմանը, սակայն այդ մասում երևան եկան որմնակամարների, որմնասյուների ստալակտիտ բեկորներ, որոնք նույնպես հղկված էին: Այս մասին մեջ գտնված քանդակազարդ բեկորներն ապացուցանում են, որ ինչպես հարավային կողմի, նույնպես հյուսիսային և այլ ճակատներ զարդարված էին ոչ միայն որմնակամարներով և ներկված ստալակտիտներով, այլև հանդիպակաց հարավային կողմի նման քանդակազարդ խորշերով:

Հակառակ մեր ջանքերին, որ գտնե սրահի հյուսիսային պատը գտնենք, մեզ չհաջողվեց պեղումները շարունակել, որովհետև ոչ միայն մեզ շրջապատող սարերը անակնկալ կերպով մշուշապատվեցին, այլ և տեղացող մշտատև ձյունը և անձրևը բոլորովին արգելք էին նպատակահարմար աշխատանքի, ուստի ստիպված էինք աշխատության դադար տալ, շարունակությունն ապագային թողելով:



Նկ. 262. Գեղարդաձորում պեղված շենքի որմնասյուների աղեղ

Թե ինչ վիճակի մեջ ընդհատեցինք պեղումները, երկու խոսքով բացատրեմ: Բացի ձյունից և անձրևից, սոսկալի ղժվարություններ եղան մեր առջև: Ի բաց առյալ այն մեծազանգված ժայռի բեկորները, որ թափված էին բուն շենքի մեջ, երկու մեծ և ահռելի բեկորներ ևս ընկած էին սրահի հատակին վրա, որոնց յուրաքանչյուրը 25–30 խոր. մետր ծավալ ունեին: Այդ բեկորները միայն սեպով կարելի էր փշրել ու թափել դուրս: Թեև հետերնիս դինամիտ տարած էինք, այնուամենայնիվ այդ վայրում խիստ վտանգավոր էր դինամիտ պայթեցնելը, որովհետև ուրիշ ճեղքվածք ու առաջնակարկառ ժայռեր կարող էին պոկ գալ և մեծ վտանգ առաջացնել նույնիսկ բանվորների մեջ: Ուստի երբ մեծամեծ բեկորները մաքրում էինք, որպեսզի սկսենք սեպերի գործողության՝ հսկա ժայռերի փշրման համար, ահա բնությունն ստիպեց մեզ դադար տալ աշխատանքին: Քարափոր սրահի ժամանակն է 13-րդ դարը՝ Պռոշ իշխանի օրով, որ նոր տերն էր թե՛ վանքին և թե՛ ամբողջ ձորին: Արևմտյան պատին վրա գեղեցիկ տառերով գոյություն է ունեցեր 6 տող արձանագրություն, որուն երեք տողը ջնջված է մեզ անհայտ պատճառով, իսկ մնացյալ 3 տողին մեջ գրված է հետևյալը. «Ի տէրութեան բարեպաշտ իշխանին Պռոշա ես Մկր(տ)իչ սնեալ ի սուրբ ուխտիս ետու». այսքանը ամփոփված է երեք տողի մեջ, իսկ մնացյալ երեք տողը քերված ու ջնջված է:

**Եզրակացություն.**– Պեղված վայրում գոյություն ունեցել է մի մեծ սրահ, որուն նմանները թեև զանազան տեղերում տեսնված են քար ու կրով սրբատաշ շինված, բայց այսքան մեծ սրահ ամբողջովին քարափոր, առաջին անգամն է երևում Գեղարդաձորին մեջ:

Արվեստագործության մաքրության տեսակետով ըստ ամենայնի կատարյալ է մանավանդ ներքին համաչափությունների նկատմամբ: Թեև փլուզումներով շատ ջախջախված է քարափոր սրահը, սակայն ամենակարևոր նյութերեն մեկը պետք է որ լինի ճարտարապետության և գեղարվեստի պատմության մեջ:

Քրիստոնեական շրջանի Այրի վանքի պատմությունն ըստ մեր հայ մատենագրության, մինչև 4-րդ դարը կհասցնենք: Սակայն Գեղարդաձորի բազմաթիվ այրերին մեջ թե՛ բնական և թե՛ ձեռագործ այրեր շատ կան, ուստի անհրաժեշտ է այդ ձորը հետազոտության ենթարկել նաև նախաքրիստոնեական շրջանների տեսակետով և գրել մանրամասն ուսումնասիրություն, որը մեր գրականության մեջ գոյություն չունի:

Այրի վանքի ձորը և քարայրերը կապ պետք է ունենան նախաքրիստոնեական պաշտամունքների հետ, ինչպես Բագնայրը իր քարայրերով և աշտարակաձև մնացորդով, ինչպես Բագարանն իր քարայրերով, Աղավնատուն գյուղը, Հաջի Ղարայի գերեզմանատան զույգ աշտարակների և «Արդար Դավիթ» անվանված աշտարակի մնացորդները:

Անպայման քննության առնել ձորի հանդիպակաց լանջին վրա գտնված ստորերկրյա սանդուխը, որը թեև ես չեմ տեսել, այնուամենայնիվ վերջերս շատ է խոսվում այդ մասին ժողովուրդի մեջ:

## Զ

## [ԶՎԱՐԹՆՈՑՈՒՄ ԹԱՆԳԱՐԱՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ]

### ՊՀՊ ԿՈՄԻՏԵԻՆ
### Զեկուցում

Զվարթնոց եկեղեցու ավերակները և նրա շուրջը եղող ամբողջ հնագիտական սահմանները ՊՀՊ Կոմիտեն իր անմիջական հսկողության տակ առած լինելով, նախորդ նիստում (1925 Հունվար 4) հանձնարարեց ինձ, ավերակների խնամքով պահպանության համար, հարկ եղած անմիջական կարիքները քննելով զեկուցել Կոմիտեին:

Այժմ ներկայացնում եմ ժողովի քննության իմ կողմանե հարմար դատված անմիջական անհետաձգելի կարիքները:

Զվարթնոցի ավերակներն իրենց գեղարվեստա-պատմական բարձր արժեքի համապատասխան հոգածությունից մինչև այսօր զուրկ մնացած լինելով, օր ըստ օրե ոչնչանալու վրա են:

Բացի անխնամ և անպատասպար մնալուց, հուշարձանի արժեքը գիտականորեն ըմբռնելու անընդունակ հսկիչներու ձեռքին տակ (Խաչիկ վրդ.) ավելի ևս ապականվել են, նրա անմիջական շուրջը տգեղ և աննպատակ շինությունների խտացումով:

Այժմ, մնացորդ պատերի վերևներից և կողքերից անձրևի ջրերը ծծվելով, առաջանում են ճեղքվածքներ, փոշիանում է կրաշաղախը և դուրս են պրծնում քարերը: Վերջերս փլավ արևելյան կողմի հնձաններից մեկուն հյուսիսային պատը: Հնձաններու հատակները մաքուր կրաշաղախով ծեփված էին պեղման ժամանակ, այժմ մաքուր հատակի ծեփերի փշրանքները միայն կտեսնվին: Փլչելու անմիջական վտանգի տակ են տաճարի կենտրոնին վրա շինված բոլորակ ավազանին հյուսիս արևմտյան մասը և սեղանի մնացորդը: Նույնպես մոտալուտ ավերման ենթակա են տաճարն արևմտյան

կողմից շրջապատող և ներկայիս պահապանների բնակարանի վերածված բուրգերը և ուրիշ որմնամասեր: Բացօթյա բոլոր գեղաքանդակ քարեր, անձրևի և արեգակի ազդեցության տակ ոչ միայն հալվում ու մաշվում են, այլև մեծ մասամբ նրանց վրայի գեղարվեստական քանդակագործությունները թանձր մամուռով ծածկվում են:

Վաղօրոք ցուցակագրած թանգարանի իրեղենների մեծ մասն անհայտացած լինելն զատ, այսօրվա մնացած մասը նույնպես անխնամ թափված է միմյանց վրա, առանց մի հարմար շենքում դասավորելու և ցուցակագրելու: Անգիտակից հսկողների անուշադրության պատճառով բացօթյա թողված անգնահատելի հիշատակարան բևեռագիրը մի քանի տեղ քարով ծեծվելով փչացված են նշանագրեր:

Այսօրինակ ավերումներ և կորուստներ շատ կարելի է ցույց տալ, սակայն ես առանց ավելի երկար ծանրանալու այս հանգամանքի վրա, պիտի հայտնեմ իմ կարծիքով հարմար դատված անմիջական միջոցները, որոնք անհրաժեշտ են նպատակահարմար կերպով հուշարձանի պահպանության:

1. Նշանակել փոքր ի շատե գիտակից և աչալուրջ հսկիչ, որ ոչ միայն հսկե ավերակների պահպանության, հսկե նաև պահապանների և աշխատավոր բանվորների գործունեության վրա: Պարտ ու պատշաճ ընդունելություն ցույց տալով բազմաթիվ այցելուներին առաջնորդե և որոշ չափով ծանոթացնե ավերակների անցյալի և ներկայի հետ:

2. Առաջիկա գարնան սկզբին անմիջապես հատկացնել բանվոր վարպետ և պատրաստել չինվածանյութ, խախտված մասերն ամրացնելու համար. ծեփել պատերի այն բոլոր մասերը, որոնք ընդունակ են դարձել անձրևի ջրերը ծծելու:

3. Մշտապես ավերակների մոտ բնակվող պահապանների համար անմիջապես բնակարան ավերակներից հեռու չինել երկու սենյակից և մի խոհանոցից բաղկացած շինություն, որպեսզի ազատվին հնագիտական մեծ արժեք ունեցող այն մասերը, որոնց մեջ ներկայիս բնակվելով պահակները սաստիկ վնասում են: Պահակների բնակարանների կից պետք է անպայման երկու բաժանումներից բաղկացած մի պատսպարան նրանց տնտեսական պիտույքների համար՝ ինչպես գոմ, փայտանոց, մթերանոց և այլն և այլն:

4. Ամբողջովին վերացնել ավերակների շուրջը կուտակված հողերը և աղբերը, որոնք գոյացել են պեղումներից և ուրիշ զանազան պատճառներից: Հիմնահատակ վերացնել անհրաժեշտ է Խաչիկ վարդապետի շինած բնակարանները, որոնք այժմ վեր են ածվել ավերակների, և մաքրելով իսկական հնագիտական ավերակների շուրջը, վերածել մաքուր հարթավայրի շուրջանակի որոշ լայնության վրա:

5. Կանոնավորել անձրևի ջրերի և ոռոգման առուների հոսանքները, որոնց պատճառած մշտական խոնավությունը վնասակար ազդեցություն է ունենում ոչ միայն հողից դուրս եղածներին, այլև հողի տակ եղածներին:

6. Կառուցել մի թանգարան թե՛ մինչև այժմ հավաքված և թե՛ այսուհետև հավաքվելիք թանգարանային իրերը դասավորելու համար: Թանգարանին հարակից հարկ է պատսպարված սրահներ կամ բացօթյա ծածկույթներ պատրաստել, ճարտարապետական գեղարվեստական մեծածավալ գեղաքանդակ քարերը զետեղելու և անձրևի ու արևի ավերիչ ազդեցությունից ազատելու համար:

7. Թանգարանին կից, կարևոր եմ համարում շինել պատշաճավոր մեծությամբ երկու սենյակներ, որոնց մեկը լինի մշտական հսկող պաշտոնյայի բնակության հատուկ, իսկ մյուսը հուշարձանի ուսումնասիրության համար թե՛ Կոմիտեի կողմից և թե՛ դրսից եկող գիտական և գրական աշխատանքներ կատարելու հատուկ:

8. Միջոցներ տրվին թանգարանի շինության ձեռնարկված դեպքում, լիակատար ցուցակագրություն կատարելու թե՛ թանգարանային իրերի և թե՛ ճարտարապետական գեղաքանդակ բեկորների:

9. Պատրաստվին ընդհանուր հնագիտական շրջանի և մասնավորապես ավերակների հատակագծերը, չափագրությունները, ձեռագիր և լուսանկար պատկերները, բոլոր գեղարվեստական և գիտական արժեք ունեցող բեկորների համար:

10. Վճռական որոշում կայացնել բևեռագիր արձանագրության մասին, մինչև թանգարանի շինությունը թողել տեղում թե՞ փոխադրել ժամանակավորապես Էջմիածնի թանգարանը. տեղում թողվելու դեպքում արդյոք հարկ չէ՞ առանձնապես մի ծածկույթի մեջ պահպանել:

11. Ի նկատի ունենալով զանազան հանգամանքներ, ձուլել բևեռագիր արձանագրությունից մի քանի օրինակներ, և այդ ընդօրինակությունները տալ Էջմիածնի և Երևանի թանգարանի մեջ պահվելու համար:*

17 հունվար
1925 թ.

---

* Զվարթնոցում շինված է արդեն մի փոքրիկ թանգարան, հողերի մեծ մասը և Խաչիկ վարդապետի ավերակների մեջ շինած շենքերի մեծ մասը քանդված են, բեկորները կարգի են բերված 1936-1937 թ. թ. ընթացքում:

Կազմող



Է

# ՀՍԽՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄ ԸՆԿ. ՄՈՒՎՅԱՆԻՆ

## Զեկույցում թանգարանում Հայ ճարտարապետության բաժին կազմելու մասին

Ձեր հանձնարարությամբ ներկայացնում եմ իմ կողմից հետևյալ նկատումները Հայ ճարտարապետության թանգարան կազմելու մասին:

Ի նկատի ունենալով, որ վերջին 25–30 տարիների ընթացքում պատմական Հայ ճարտարապետությունը և նրա ուսումնասիրությունը մեծ հետաքրքրական նյութ է եղած ինչպես Հայ, ռուս և նույնիսկ եվրոպացի մեծ գիտնականների և գեղարվեստագետների համար, այդ իսկ պատճառով, թանգարանում անհրաժեշտ է կազմակերպել Հայ ճարտարապետության և գեղարվեստի բաժին, որի համար չափազանց առատ նյութ կա Հայաստանում:

Հայ ճարտարապետությունը ուսումնասիրող մեծ գիտնականներ մի պատկառելի գրականություն են լույս ընծայած, որոնցից մի քանիսն իրենց աշխատության մեջ խոստովանում են ոչ միայն Հայ ճարտարապետության բարձրագույն կատարելության հասած լինելը, այլև այդ զարգացման ժամանակակից ժողովուրդի բարձրագույն քաղաքակրթության հասած լինելը: Նույնիսկ նրանցից ոմանք վճռականապես եզրակացնում են, որ առանց պատմական Հայ ճարտարապետության և գեղարվեստի ուսումնասիրության, գրեթե հնար չէ հասկանալ ուրիշ երկրների պատմական գեղարվեստի առեղծվածային մասերը կամ որոշել նրանց ծագումն ու փոխանցման ճանապարհները: Որովհետև Հայ ճարտարապետության սկիզբը մեր թվականեն շատ առաջ է, զարգացման բարձր աստիճանի հասնում է 7-րդ դարուն և նույն կատարելությամբ շարունակվում մինչև 14–15-րդ դարերը: Ուստի կատարելության հասած նախնական դարերի մեջ դեռ արևմուտքում շարունակվում էր հնադարյան մեծ գեղարվեստի անկումը:

Ավելորդ չեմ համարում այստեղ հիշատակել այն ականավոր գիտնականներից մի քանիսի անունները, որոնք հոյակապ մեծ ու փոքր երկասիրություններ լույս են ընծայել Հայ գեղարվեստի շուրջը և տակավին շարունակում են: Ինչպես ի հնումն Շարլ Տեքսիե, Տյուպուա դե Մոնպերե, Կոնդակով, Գրիմմ, Ն. Մառ, Ստրժիգովսկի, Պախման, Լեման Հաուպտ, Օգյուստ Շուազի, Շ. Տիլ և այլն:

Այս գիտնական արվեստագետները ո՛չ միայն քննել են Հայ ճարտարապետության և գեղարվեստի ոճերը և աշխատել են գտնել նրանց փոխանցման ճանապարհները, այլև ուշադրության են առել հին Հայերի շինարարական կանոնները, որոնք իրենց մեջ պարունակում են ձևերի և շինվածակերպերի բազմատեսակ հարստություն:

Ուրեմն թանգարանն իր մեջ բովանդակելու է ամեն տեսակի ճարտարապետական գեղարվեստական և շինարարական բազմակողմանի նյութեր, որոնք բնորոշ հատկանիշը կկազմեն պատմական Հայ արվեստին:

Հայոց ճարտարապետությունը չի սահմանափակվում տաճարներով: Գոյություն ունին դեռ ներկայիս բազմաթիվ աշխարհիկ շենքեր, ինչպես բերդեր, ամրոցներ, քաղաքապարիսպներ, պալատներ, դղյակներ, հյուրանոցներ, ջրանցքներ, կամուրջներ, ձեռագործ ճանապարհներ և այլն և այլն, որոնք անխտիր հավաքվելու են թանգարանի մեջ նկարված և մանրամասն չափագրված:

Վերոգրյալ շարքին մեջ չպիտի մոռանալ նաև հին Հայերի ընտանեկան բնակարանների վերին աստիճան հետաքրքրական ձևերն ու շինվածակերպերը, որոնք թեև մեծ քաղաքների մեջ գրեթե անհետացել են, սակայն դարերե ի վեր շարունակվելով տակավին պահվել են գյուղական շենքերի մեջ: Կարող է պատահել, որ շուտով անհետանան մեր գյուղերից այս հետաքրքրական և ուսանելի ձևերը: Ուստի այդ ոճերը և շինվածակերպերը վերջնական կորուստից փրկելու համար, պետք է շուտափույթ հավաքել սույն կարգի նյութերը և առանձին մի բաժին կազմել մյուս նյութերի շարքում:

Ահա այս տեսակետներից մոտենալով հարցին, թանգարանի ճարտարապետական բաժինը պետք է կազմել հետևյալ կերպով.

1. Բաժինը պիտի ունենա ընդարձակ սրահներ, որոնց մեջ հնարավոր լինի զետեղել հայկական ճարտարապետության հատուկ բազմակողմանի նյութեր, լինին այդ նյութերը գծագրական, չափագրական, նկարչական, քանդակագործական և լուսանկարչական:

2. Բաժնի մեջ առաջին և ընդարձակ տեղը պետք է տալ զուտ ճարտարապետական նկարներին և գծագրություններին, որոնք չափագրված և գծագրված են հմուտ ճարտարապետների ձեռքով՝ իսկական հուշարձանների վրայից և վերջացրած մաքուր աշխատություններեն. երկրորդ բաժինը պետք է կազմեն միայն չափագրություններ և սևագրություններ, որոնք թեև մանրամասն չափագրված են տեղին վրա, սակայն վերջնականապես մաքուր նկարված չեն, ուստի թերի աշխատությունները մասնագիտորեն վերջացնելուց հետո պետք է փոխադրել առաջին բաժին: Երրորդ բաժնում պետք է զետեղվեն այն նկարները, որոնք կարող նկարիչների ձեռքով նկարված են ուղղակի հուշարձանների վրայից: Չորրորդ բաժինը պետք է հատկացվի հուշարձանների քանդակագործ աշխատանքներին՝ իսկականներին և իսկականից հավատարմորեն ընդօրինակվածներին: Հինգերորդ բաժինը պետք է հատկացվի հուշարձանների լուսանկարներին, նեգատիվներին և էստամբաժներին:

3. Վերոգրյալ բաժիններից անկախ Թանգարանի սրահները պիտի ունենան մի մատենադարան, ուր պիտի հավաքվեն այն բոլոր հայ և օտար լեզվով գրված հատորները, որոնք բովանդակում են տեսություններ և ուսումնասիրություններ հայ ճարտարապետության մասին:

4. Թանգարանի համար պետք է նշանակվի մասնագետներից բաղկացած մի հանձնաժողով, որը մշտապես խորհրդածությամբ վարի գործը՝ Թանգարանն իր նպատակին ծառայեցնելու և իր կոչման բարձրության մեջ պահելու համար:

5. Թանգարանի համար պետք է նշանակել մի վարիչ, ճարտարապետներ և օգնական գծագրիչներ: Վարիչը լինելով նաև հանձնաժողովի անդամ, բացի ներքին ղեկավարությունից, պարտավոր լինի ամբողջացնել կիսատ մնացած կամ հում նյութերը:

6. Թանգարանի վարիչի պարտականությունն է միշտ հավաքել նորանոր նյութեր և ճոխացնել նորանոր նյութերով, հանձնաժողովի խորհրդակցությամբ:

7. Թանգարանի վարչությունը պետք է պարտավոր լինի, Թանգարանից օգտվելու համար դիմող մասնագետներին ըստ ամենայնի բավարարություն տալ, տրամադրելով նրանց ամեն տեսակի նյութեր սովետական հայ ճարտարապետության վերելքի աշխատանքներին նպաստած լինելու համար:

8. Ցանկալի է, որ սովետական իշխանության օրով հայ ճարտարապետության ոճով կառուցված շենքերի նկարներ կամ լուսանկարներ հավաքվին և պահվին Թանգարանում՝ հանձնաժողովի քննությամբ հարմար համարվելու դեպքում:

9, Թանգարանի կազմակերպման սկզբնական շրջանին մեջ աշխատել անմիջապես ձեռք բերելու և Թանգարանին սեփականություն դարձնելու համար այն բոլոր նյութերը, որոնք գտնվում են Թե՛ պետական հիմնարկություններում և Թե՛ մասնավոր անհատների մոտ, որոնք կքաղկանան հետևյալներից.

Ա. Մաքուր գծված նկարված պատկերներ:
Բ. Ճիշտ չափագրված գծագրություններ:
Գ. Լուսանկարներ:
Դ. Լուսանկարչական սևապակիներ:
Ե. Լուսանկարների հավաքածո ալբոմներ:
Զ. Էստամբաժներ:
Է. Զանազան հուշարձաններից ձուլածո մոդելներ:
Ը. Գունավոր նկարներ:*

## Ը

## ԲԱՑ ՆԱՄԱԿ ԱՐԺ. ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ**

Ներկա 1909 տարվա «Արարատ» ամսագրի հունվար ամսաթվի մեջ, պատասխանելով հարգելի գիտնական պրոֆ. Մառի «Շարք Անվ» № 2 դրքույկի միջոցով ձեզ ուղղված հարցումին, համոզում կհայտնենք որ պրոֆ. Մառ, մեքենաբար ենթարկվելով արտաքին ազդեցություններով փըփսուքներու, և որ ավելին է իմ հեղինակությանս համար, ձեզ վիրավորեր է: Որպես Թե պրոֆ. Մառ այնքան միամիտ և դյուրահավատ մարդ է, որ առանց որևէ գործնական փաստերու ընդունակ է մեղադրանքներ Թափելու ուրիշներու վրա:

* Ձեկուցագրի պատճենը, որից տպագրում ենք, չունի թվական և ամիս-ամսաթիվ:
Կազմող

** Այս նամակը որոշ կրճատումներով արտատպում ենք «Մշակ» լրագրի 1909 թվականի 52–60 համարներից:
Կազմող



Ձեր շոշափած խնդիրներուն մի առ մի պատասխանելե առաջ, հարկ կտեսնեմ շատ համառոտ կերպով պատմել մի իրողություն, որուն միակ վկան դուք եք և ձեր վկայությունները մասամբ հրատարակված է «Ազգագրական հանդեսի» 1907, 16 դրքի մեջ:

1906 թվականի աշնան, հոկտեմբեր ամսո մեջ, Անիեն դարձիս, երբ գնացի Էջմիածին դարմանվելու, նույն ատեն եկավ նաև ճարտարապետ պ. Տեր-Սարգսյանն ալ: Ի սկզբան ես, ծանոթ չըլլալով այդ ճարտարապետին հետ, ձեր միջոցով իմացա, որ նա ևս եկած է Զվարթնոցով զբաղվելու և Թե նա չի ընդունում իմ կարծիքները Զվարթնոցի վերակազմության մասին:

Քանի մը օր հետո, երբ ես հանգուցյալ Հաջիի սենյակը կգտնվեի, եկավ ձեր ծառան գիս կանչեց՝ «վարպետ, հայր սուրբը քեզ կանչում է» ըսելով: Շտապեցի անմիջապես գալ, և ձեր սենյակին մեջ գտա նաև ճարտարապետ պ. Տեր-Սարգսյանին, որուն հետ գիս ծանոթացնելու փութացիք:

Ընդհանրապես սովորական դարձած քանի մը քաղաքավարական խոսակցություններե հետո երկուքդ մեկանց չուշացաք նաև Զվարթնոցի կազմության մասին իմ կարծիքս հարցնելու, որն արդեն ըստ իմ հայացողության ամբողջովին վերակազմեր էի նույն տարվան գարնան մեջ: Բայց որովհետև այդ վերակազմության պատկերները Խաչիկ վարդապետը ամիսներ առաջ միասին տարած էր Ռուսաստան, ստիպված եղա բերանացի բացատրել որչափ որ հնար էր:

Երբ պարզեցի տեսություններս, հենվելով իմ գտած փաստերու վրա, Թե ինչպես արտաքին պատերու զուգահեռական ուղղությամբ ձգված էին ութ աղեղներ, որոնց մեկ մեկ ծայրերը հանգչած էին մույթերու ետև գտնված արծվեքանդակ կրող սյուներու խոյակների վրա, և մյուս ծայրերն իրենց հենակետ ունեցած էին միջին կիսաբոլորակ Թևերու մեջտեղի երկու սյուները, որով հնարավոր եղեր էր արտաքին պատերու զուգահեռական կլորությամբ խարիսխ մը ստեղծել ներքին խաչաձևի և արտաքին պատերու միջև գտնված շրջանակի միջոցը ծածկելու սահմանված կամարին համար և այսպիսով նաև մի կախյալ հարկ կազմված էր բոլորովին անկախ մույթերու վրա հանգչող գմբեթեն:

Հազիվ վերջացած էր բացատրությունս, պ. Տեր-Սարգսյան շտապեց նախապես ձեզ հայտնած կարծիքը ինձի ալ կրկնելու, Թե միանգամայն գիտության անհամապատասխան է տված բացատրությունս և մինչև իսկ անկարելի: Սակայն երբ ես պնդեցի իմ համոզմանս վրա, պ. Տեր-Սարգսյան ավելի սուր շեշտերով պատասխանեց ինձ հետևյալ խոսքերով. «Ինձի նայեցեք, պարոն, ես Պետերբուրգ եմ ուսել, արտասահման եմ եղել, գիտությունը չի ընդունի, այդպես բան չի կարող լինել»:

Այս խոսքին մեջ՝ անմիջապես զգացի այն սուր հեգնություններու և արհամարհանքների արմատը, որ հետզհետե մեծանալով պիտի փոխվեր երկար ժամանակ կրած կարգ մը ստորացուցիչ պատվանուններուս: Ուստի ես ալ վիրավորված պատասխանեցի, «Պարոն, վրաս այլուրոտ տեսնելով գիս ջաղացպան մի կարծեք, Թերևս ես ալ ունեցամ ձեզ պես պարծենալու առիթներ: Բայց պահ մը ենթադրենք, Թե ես ոչ ուսում ստացած եմ և ոչ ալ արտասահման տեսած: Երբ տեղին վրա գոյություն ունին իրական փաստեր և ըսածներս ապացուցանող որոշ բեկորներ, ինչպես կարող եմ ձեր ուզածին պես մտածել: Ես ալ ձեզ նման գուցե չհավատայի, եթե երկար ատեն Զվարթնոցի ավերակները ուսումնասիրելես առաջ մեկը պատմեր ինձի այս տարօրինակ իրողությունը, ես ոչ Թե ենթադրության, այլ իրողության առջև ստիպված եմ խոնարհիլ»:

Այս միջոցին դուք տեսնելով մեր սուր վեճի կերպարանք ստանալու խոսակցությունը, միջամտեցիք ըսելով. «Եղբայր, ինչու եք միմյանց վիրավորում. լավ չէ՞ որ չուտով մի կառք կանչենք, գնանք Զվարթնոց, այնտեղ ցույց տվեք ձեր փաստերը»:

Այդպես ալ եղավ, հրամայեցիք, կառքը եկավ, և չորս հոգի (դժբախտաբար չեմ հիշեր Թե ով էր մեր չորրորդ ուղևորը) գնացինք Զվարթնոցի ավերակները, այնտեղ ձեր ներկայության նախ ցույց տվի պ. Տեր-Սարգսյանի անկարելի համարած կոր աղեղներու մնացորդները:

Պերճախոս իրականության առջև պ. Տեր-Սարգսյան ոչ միայն զարմացմամբ ընդունեց այս հետաքրքրական իրողությունը, այլ և վաղածանոթ բարեկամի մը նման Թևս մտած խնդրեց ինձի ցույց տալ իրեն այն բոլոր մասերը, որոնք ավերակի վերակազմության լրացուցիչները կկազմեին: Ես սիրով կատարեցի անոր անկեղծ ցանկությունը ոչ միայն նույն օրը, այլև հետևյալ օրն ալ, ցույց տալով բոլոր կարևոր բեկորներն ու քարերը և անոնց պատկանած տեղերը, որչափ որ կարողացած էի ճշտել գարնան չորս ամսվան հետազոտությանս միջոցին:

Զմոռանամ ըսելու, որ պ. Տեր-Սարգսյան լիովին ընդունելով ներքին հարկերու վերաբերյալ բո-

*լոր ցուցմունքներս՝ միայն անհամաձայն մնաց ինձ հետ գմբեթի կազմության մասին:*

*Այս պատմության ճշտությունը գրեթե կետ առ կետ հաստատություն կուտաք, երբ «Ազգագրական հանդես» 1907 թ. 16 գրքի 132-րդ երեսի վրա, հիմնվելով իմ վկայության վրա, կնկարագրեք մանրամասնորեն Զվարթնոցի կանգուն վիճակը: Ես չեմ կարծեր, որ պ. Տեր-Սարգսյանն ալ, իբրև պատվազգաց մարդ, զինանի այլ կերպ պատմելու այս իրողությունները:*

*Ուրեմն հիմա հայտնի է, որ դեռ պ. Տեր-Սարգսյան Զվարթնոցի ավերակները չտեսած, ես արդեն հատակագծի և առաջին հարկի բոլոր մասերն ամբողջացնելով անվիճելի կերպով կազմել էի:*

*Արդ, երբ դուք կգրեք թե «ճարտարապետ Տեր-Սարգսյանը պատրաստեց բուն եկեղեցու մանրազնին հատակագիծը» («Ազգագրական» հանդես 1907 թ., 15 գիրք, երես 90), ով որ ըլլա ընթերցող այդ տեղերուն՝ ուրիշ կերպ չէ կարող հասկընալ, բայց եթե այդ աշխատության բոլոր մանրամասնությունը պ. Քրիստափոր Տեր-Սարգսյանին նվիրված. քանի որ բարեխղճորեն բացատրված և զանազանված չէ յուրաքանչյուրիս կողմանե եղած աշխատանքին տեսակները, ուստի բնական է, որ այդ անորոշ դրվածքը տեղի տար թյուրիմացություններու և ծնունդ՝ ծանոթ հարցումին:*

*Հիմա ի հարկե պարզ կտեսնեք, թե պրոֆ. Մառի հարցման գլխավոր շեշտը կկայանա ոչ թե համալսարանական ճարտարապետի մը հատակագիծ կազմելու կարողության կամ անկարողության վրա, այլ Ձեր «մանրազնին» բառին վրա, որուն միմիայն իմ արդար սեփականությունս ըլլալուն բացի ձեզմե՝ ուրիշ շատ վկաներ ալ կան:*

*Ինչպես ինձմե առաջ աշխատողներու, նույնպես ալ պ. Տեր-Սարգսյանի կազմած հատակագծի արտաքին բոլորակ պատը սև շրջանակ մը միայն կներկայացներ վրան բացված դռներով և ներքին բարակ որմնասյուներով: 1904 թվականին մարտ ամիսեն մինչև հունիսի վերջը իմ աշխատանքի գլխավոր մասերեն մեկն եղավ՝ առաջին անգամ դասավորել արտաքին որմնասյուները և պատուհանները, որոնց ճիշտ դասավորության համոզվիլ ուզողները թող տեսնեն Անիի գագկաշեն ս. Գրիգոր և Զվարթնոցի իսկական պատկեր Բանայի եկեղեցին:*

*Ուստի, երբ պ. Տեր-Սարգսյանի հետ գնացինք Զվարթնոց, ձեր ներկայության ցույց տվի նաև սյուներուն և պատուհաններուն դասավորությունները, որն ընդունելի համարելով, նույն ճարտարապետին կողմանե, ավելցվեցան ձեզ համար նորոգ կազմված հատակագծին վրա, ինչպես ութ կոր կամարներու շրջագիծը ներկայացնող բոլորակները արծվեքանդակ կլոր սյուներու վրայեն անցած:*

*Այլևս կասկած չի մնար կարծեմ պ. Տեր-Սարգսյանի ինձմե օգտված ըլլալուն և «մանրազնին» բառին իմ աշխատությանս վերաբերելուն, ուստի ավելի ուղիղ կըլլար, որ փոխանակ գրելու «երբեմն խոսակցելով նրա հետ գուցե սրա մտքերից ընդունել կամ յուրացրել է» («Արարատ», 1909 թ. հունվար, երես 66), գրեիք առանց «գուցե»-ի: Իսկ գալով «յուրացրել» բառին, ձեզի կվերադարձնեմ, անոր պարզապես գրգռիչ իմաստ պարունակելու համար, որովհետև մինչև այսօր պ. Տեր-Սարգսյան, պաշտոնական շրջանակի մեջ, կամ մամուլի միջոցով փաստացի կերպով, դեռ ձեռնամուխ չէ եղած իմ սեփականություններուս, ձեր գրվածքներն են միայն հրապարակի վրա և անոնց մեջ չփոթված մեկին կամ մյուսին իրավունքները:*

*Ուրեմն եզրակացությունը պարզ է, որ ես եմ մանրազնին հատակագիծը պատրաստողը և Տեր-Սարգսյան ինձմե ընդօրինակող եղած է տեղին վրա անհետացած մասերու, նաև բացի հատակագծեն առաջին հարկի ամբողջ բարձրության մեջ: Իսկ ինչ կվերաբերի գմբեթի կազմության մասին ինձմե տարբեր կարծիք ունենալուն, ցանկալի էր, որ մինչև այսօր իր կարծիքը հրապարակի վրա դրված ըլլար և ենթարկվեր կարող մասնագետներու անաչառ քննադատության:*

*«Ենթադրյալ գաղտնիքների մեջ ինչ մասնակցություն կարող էի և պետք ունենայի, խոսքերնիդ անարդար խոսափում մը ցույց կուտա, ընդհակառակը դուք իրավամբ պետք է պարծենաք, որ եթե օր մը Զվարթնոց եկեղեցվո վերակազմության խնդիրն իր ցանկալի լուծումը ստանա, այն ալ ձեր ջանքերուն պիտի պարտինք, որովհետև միայն դուք եք ի սկզբան այդ խնդիրը հուզող, անոր մասին վիճող և զանազան կարող ճարտարապետներու քննության ենթարկողը. կհավատամ նաև որ մինչև վերջը պիտի տանիք. ինչու ուրեմն խույս տալ այդ արդար փառասիրությունեն: Միայն կցավիմ, որ հաճախ պատահեր եմ էջմիածին, երբ դուք կարող ճարտարապետներու ընկերակցությամբ գնացել եք Զվարթնոցն ուսումնասիրելու և չեք բարեհաճեր զիս ալ անոնց մեջ տեսնել կարծիքներու փոխանակության համար, և կամ գոնե այդ գործին վրա իբրև ամենեն շատ աշխատող մարդ ուսումնասիրությանց դյուրության տալու համար: Զգիտեմ իմ «վարպետի» աստիճանս էր արգելք թե՞ մի ուրիշ ավելի զորեղ պատճառ այդ պատվեն զրկվելուս, ձեզ միայն հայտնի է:*



*Կամա թե ակամա կրկնակի սխալեցաք այն ատեն, երբ ձեր ներկայացրած հատակագիծը՝ ճարտարապետ պ. Տեր-Սարգսյանի անվան հետ կապելով հանդերձ բացի ուրիշ անկանոնություններե, փոխանակ հինգ դռան՝ երեք դռնով հրապարակ հանեցիք, որուն մասին պ. Տեր-Սարգսյան, իբրև համալսարանական ճարտարապետ, իրավունք ուներ բողոքելու, քանի որ համալսարանական արվեստագետի մը անունով եղած գործը «ճեմարանի աշակերտի մը» գործեն ավելի ստորին աստիճանի վրա կմնար: Գոնե ծանոթություն ալ չավելցուցիք այդ մասին արվեստագետին պատիվը խնայած ըլլալու համար: Ոչ միայն այդ բանը չըրիք, այլ և չորս տարի հետո նույն աններելի վարմունքը կրկնեցիք՝ «Ազգագրական հանդեսի» մեջ տպելով միևնույն հատակագծերը աննշմարելի կերպով քերթված պակաս դռների տեղերը:*

*Ոչ ոք պատասխանատու չէ կարծեմ ձեր դժբախտ կիրեի գլխեն անցած արկածալից պատմություններուն, և ոչ ոք ալ մեղավոր չէ ձեր անճշտություններուն համար զձեզ քննադատելով. փաստը վերին աստիճան տգեղ և աններելի է գիտնականի մը պատվուն: Արդարանալու համար բավական չէր մեղքը Պետերբուրգի ճարտարապետ պ. Թամանյանի վիզը փաթաթելը. ենթադրենք, որ պ. Թամանյանն իբրև մարդ սխալեցավ և մոռացավ երկու դռները, մի՞թե ներելի էր ձեզ՝ ըսել թե «խուսափել էր իմ ուշադրությունից»: Պ. Թամանյան եթե մի սխալ հատակագիծ տվավ, իր դիմաց ուներ անհատ մը միայն, իսկ ինչ եղավ ձեր գիտակցության՝ որ չքննեցիք մանրամասն կերպով, քանի որ դուք այդ սխալը պիտի ներկայացնեիք ամբողջ գիտնական աշխարհին և պիտի հավերժացնեիք պատմության մեջ: Ընդունենք, որ իբրև մարդ դուք ալ սխալեցաք 1904 թվականին. չէ՞ր կարելի արդյոք նորը պատրաստել տալ 1907 թվին «Ազգագրական հանդեսի» համար, փոխանակ կլիշեին վրա քերթելու:*

*Բավական չէ մարդու մը համար ամեն մասնագիտության մեջ հմտություն ունեցած ըլլալու նախանձելի ձգտումը, պետք է քիչ մ'ալ մշակված ըլլա այն մասնագիտության մեջ, որուն մասին մեկը ցույց տալ կուզե իր հմտությունը: Ահա այս իրավացի պատճառով է որ շփոթություններու և հակասություններու մեջ կգլորվիք, երբ ձեր մասնագիտությունե դուրս ալ քննադատության մեջ կմտնեք: Արդար չէ արդյոք այստեղ հիշել «կոշկակարն մինչ ցկոշիկ» առածը:*

*Ճարտարապետական գծերու և անոնց պաշտոններու մասին ձեր բոլորովին անտեղյակ ըլլալն է որ մտքերնուդ մեջ կարգ մը երևակայական սխալներ ըստեղծեր եք իմ հատակագծիս վրա, և ձեր ներկայացվածը անհամեմատ առավելություններով օժտված:*

*Երբ ես արվեստով ճարտարապետ ըլլալով, իմ կազմածս հատակագիծը քննադատության ենթարկվի աստվածաբան վարդապետի մը կողմանե, որչափ ավելի կասկածելի պետք է որ համարվի աստվածաբան վարդապետի մը ներկայացված ճարտարապետական հատակագիծը, որուն սխալները կրկնված են բացի Զվարթնոցեն, նաև ուրիշ հատակագծերու մեջ ալ: «Էջմիածին և Հայոց հնագույն եկեղեցիներ» 11 երեսի վրա Ձեր ներկայացված Էջմիածնի հատակագիծը եթե բաղդատենք իսկականին հետ, անմիջապես կհամոզվիք ասածիս ճշմարտության: Այդ հատակագծին վրա, որ տեղեն է առաջ եկած, ներքին կողմեն, հյուսիս և հարավ կողմի աբսիդներեն մինչև արևելյան ավանդատունները եղած միջոցին մեկ մետրեն ավելի երկայնությունը քան հակառակ կողմը, մինչդեռ իրականության մեջ՝ ընդհակառակը, ձեր հատակագծի վրա երկայն եղող մասերը քանի մը սանտիմով ալ ավելի կարճ են քան աբսիդներեն մինչև արևմտյան պատը գտնված երկարությունը: Ավելորդ համարելով ուրիշ մասերու վրա խոսիլ առայժմ, կվերադառնամ նյութիս: Պատասխանատվության ամեն տեսակ ծանրություններ հանձն առնելով, վստահ կերպով հրապարակավ կհայտարարեմ, թե իմ Զվարթնոցի հատակագիծս միանգամայն ճիշտ է և իրականին լիովին համապատասխան, և պատրաստ եմ Ձեր իսկ ընտրած մասնագետներու ներկայության փորձի ենթարկել երբ կկամենաք:*

*Այն սխալները, որոնք ցույց կտրվին իմ հատակագծիս վրա ձեր կողմանե, խծբծանքե ավելի նշանակության չունին: («Արարատ», 1909 թ,, հունվար, երես 69):*

*ա) Եկեղեցու շուրջ բոլոր տարածված աստիճանները բուն եկեղեցվո մասը չեն կազմեր. ամեն ոք ազատ է զանոնք ներկայացնել կամ ոչ: Արդարև ներկայացնելով առավելություն մը տրված կհամարվի, բայց չներկայացնելով ալ եկեղեցվո հատակագիծն իր ամբողջությենեն ոչինչ չի կորսնցներ:*

*բ) Գլխավոր սեղանի աջ կողմի մասանց գզրոցը չենք կամ չինության մաս չէ. «գզրոց» անունը բավական է ապացուցանելու, որ նա կահ-կարասիքի արժեք միայն ունի:*

*գ) Սեղանից դեպի ներքև իջնող երկու աստիճանները բոլորովին ճիշտ են, տարաբախտաբար*

դուք էք սխալած և չէք կարողացած հասկնալ որ այդ՝ եկեղեցիի նախկին սեղանն է, որուն մասին խոսեր էք «Ազգագրական հանդեսի» 16 գիրք 137 երեսի վրա. յուրաքանչյուր կողմի զույգ սանդուղներուն մեկը վար իջնելու կծառայե, և մյուսը սեղան բարձրանալու: 1904 թվականին ես նույն ձևը մասնավորապես գծեր եմ նաև Պետերբուրգի Հնագիտական կայս. մասնաժողովի համար և, որը ղկվեցավ Խաչիկ վարդապետի ձեռքով:

դ) Պիլաստրների - եկեղեցու ներսից, հատակում շուրջ բոլոր տարածված մայթ անվանածնիդ մայթ չէ, այլ մի ուրիշ նշանակություն ունեցող գիծ, որն ըստ ինքյան շատ հետաքրքրական երևույթ է հայ ճարտարապետության մեջ, ինչպես նաև ձեր քիչ մը վարը, «երկրորդ շրջագիծ միացնում են բոլոր սյուները» ասածը, որ գրեթե նույնն է ձեր մայթ անվանածին հետ: Ես նպատակավոր կերպով լուության տված էի այս մասերուն վրա բացատրություն տալ՝ առանձին հոդվածով խոսելու համար, բայց եթե կփափագիք մասնագիտական ժողովի մը առջև պատրաստ եմ բացատրելու այդ ձեզ համար անհասկանալի գծերուն նշանակությունը:

«Զունի արևելյան քառանկյունի շինության արտաքին կողմի երեք աստիճանները» ասածնիդ ալ դարձյալ արդյունք է ձեր անուշադրության. եթե անգամ մը ևս երթաք տեղին վրա մասնավորապես քննելու համար, պիտի տեսնեք, որ ունի այդ երեք աստիճանները:

Իսկ գալով ամենազվխավոր հարցին, ձեր հատակագծի առավելություններով և անոր իմ հատակագծես ունեցած կարծեցյալ տարբերություններուն, զարմանքնիդ շատ բնական պիտի ըլլար, եթե դուք կարողանայիք բացատրել ինձի ձեր ցույց տված առավելություններուն իրականին մեջ ինչ ներկայացնելը:

Գմբեթի մասին խոսած ատենդիդ «կրկնակի քառակուսի գիծ» ասելով ինչ ասել ուզեր էք և ի՞նչ էք հասկցեր այդ քառակուսի գծերեն: Իմ հատակագծես զանազանվող այդ քառակուսի գծերուն դեպի սյունազարդ թևերուն կողմը եղած (ձեր հատակագծի մեջ) երրորդ սուր գծին իրականին մեջ գոյության ի՞նչ ապացույց ունիք: Ես պարզապես կմերժեմ այդ գծի գոյությունը:

Ինչու համար ձեր շուրջ բոլոր աստիճանները եկեղեցին ամեն կողմեն շրջապատած են, քանի որ իրականության մեջ՝ սկսյալ արևմտյան դռնեն ամբողջ հարավային կողմը՝ բնավ գոյություն չունին: Ինչ ապացույց գտնե ի հնումն անոր գոյության, երբ դուք պատմության միջոցով ալ գիտեք թե «եկեղեցուց առաջ Ներսեսը հիմք ձգեց» կաթողիկոսարանին («Ազգագրական հանդես», 1907 թ., 15 գիրք, երես 105) և աստիճաններու ընդհատումն ալ առաջ եկած է կաթողիկոսական շինության տաճարին անմիջապես մոտը գտնվելուն պատճառով («Ազգագրական հանդես», 1907 թ., գիրք 16, երես 152, հատակագիծ կաթողիկոսական տան):

Ինչու համար եկեղեցիին այդ շուրջ բոլոր աստիճաններուն կեդրոնին վրա չէ ձեր բուն եկեղեցիի հատակագիծը, այլ եկեղեցիի և շուրջ բոլոր աստիճաններուն միջոցը՝ արևելյան կողմեն լայն է և արևմտյան կողմեն նեղ, մինչդեռ իրականության մեջ կեդրոնին վրա է եկեղեցին:

Որպեսզի ձեր ըրածին նման իմ քննադատությունս ալ խծբծանքի արժեքը չստանա, ես կթողում շատ մը ուրիշ մանր-մունր իրականին համապատասխան գծեր և անձկանոք կսպասեմ ձեր նախաձեռնությամբ կազմվելիք մասնագիտական ժողովի մը, որուն առջև պատրաստ եմ ապացուցանելու իմ աշխատության ճշտությունը, բարեխղճությունը և ձեր հատակագծի մեջ եղած բազմաթիվ մանրամասնության սխալները:

Արդյոք որչափ արդար է ձեր բողոքը, կենսագրականիս միջոցով պրոֆ. Մառի ձեզ ուղղած մեղադրանքին համար, որուն դեմ պաշտպանվիլ փորձելով էջմիածնի ամբողջ միաբանութենեն օգնություն կաղաղակեք:

Պրոֆ. Մառի մեղադրանքն իմ արդար բողոքիս արձագանքն է, որ շատ անախորժ հնչեր է ձեր ականջին: Այդ բողոքը բխած է այն երբեմնի ստորացուցիչ արհամարհանքեն, որուն դառնությունը երկար ատեն ճաշակեցի էջմիածնի պարիսպներուն մեջ:

Երբեք թույլ չեմ տար ինձի զիս ճարտարապետ անվանելու պատիվը բռնի պահանջել այն մարդոցմեն, որոնք ոչ կճանչնան զիս և ոչ ալ տեսած են մասնագիտությանս վերաբերյալ օրինական փաստաթղթեր: Բայց մի վկայալ մագիստրոսի ալ՝ երբեք չէի ներեր, որ այդքան ոտնակոխ ըներ պատվավոր վկայականի մը արժանապատվությունը, որուն ստացման համար ամեն մարդ ձեզ նման երկար տարիներ՝ գիշեր ցերեկ կուրծքը կմաշեցնե դրասեղանի առջև, և ես իմ վկայականով կարծեմ դեռ ոչ մի անպատվություն չբերի թե՛ իմ անձիս և թե՛ իմ պատկանած հասարակության:

Կ. Պոլսո գեղարվեստից ճեմարանի վկայականս դուք անձամբ կարդացեր էք ձեզ ընկերացող երեք վարդապետներու հետ 1904 թվականին գարնան սկիզբը, Զվարթնոց աշխատելու գնալես առաջ, երբ այցելեցիք հյուրատուն աշխատանքներս տեսնելու համար: Եվ որովհետև բնագրի թյուրքերեն լեզուն ձեզ անծանոթ էր, ես միասին ներկայացուցի Բուլգարիո մայրաքաղաք Սոֆիայի մեջ կատարված պաշտոնական թարգմանությունը, որ տեղի ունեցած էր 1899 թվականին և վավերացված, ինձ իրավունք տրվելով ընդհանուր Բուլգարիո մեջ ազատ գործելու, և այդ պաշտոնական արտոնությունս հրատարակվեցավ բուլգար կառավարության սեփական օրգան «Տրժավնի Վեստնիկի» 1900 թվականի հունվար ամսի առաջին պրակին մեջ, ուրկեց արտատպված են նաև տեղական քանի մի թերթեր:

Ձեզ ընկերացող երեք վարդապետներն էին՝ Խաչիկ վրդ., Կորյուն վրդ. և մի ուրիշ երիտասարդ վարդապետ, որուն անունը դժբախտաբար մոռցած եմ, սակայն որչափ որ կհիշեմ, ինքը ընիկ վանեցի էր և նույն տարին մեկնած արտասահման կաթողիկոսի հովանավորության տակ կատարելագործվելու:

Տարաբախտաբար, այսքան ապացույց տեսնելով քովես մեկնելեդ հետո, չվարանեցաք ձեռքս գտնված բոլոր աշխատանքիս մասին ալ կասկածելու՝ հավանական համարելով որ ես ուրիշ արվեստագետներու ձեռքի աշխատությունները սեփականած եմ կամ տիրացած անոնց որևէ թագուն նպատակով:*

Ի լրումն ամենեցուն, երբ ավելորդ ըլլալով ձեր կողմանե վարպետ տիտղոսով ալ կմկրտվիմ, միթե իրավունք չունիմ դառնապես վշտանալու և բողոքելու նվաստացուցիչ ընդհանրացման մը դեմ:

Ասեք խնդրեմ, միթե ձեզ հաճելի կթվեր և լուռ կմնայիք՝ երբ տեսնեիք, որ մի բարձրագույն կրթություն ստացած մարդ, արհամարհելով ձեր իրական արժանիքը վավերացնող մագիստրոսի պատվավոր վկայականը, ձեզ տիրացու անվաներ:

Նույնպես նաև թույլ չեմ տար ինքզինքիս հենվելով վկայականի մը գոյության, պահանջել որ ամենագետ համարվեմ, քավ լիցի, ես գիտեմ շատ համեստ արժանավորությանս իսկական չափը, սակայն իրավունք ունիմ գոնե տարրական քաղաքավարություն մը սպասելու ձեզմե իբրև կրթված մարդ և ականատես պաշտոնական փաստաթղթերու:

Թե որու հեղինակությամբ էջմիածնի մեջ ճակտիս դրոշմեցավ այդ «վարպետ» պատվանունը, ինձմե ավելի լավ գիտեք, որ միակ աղբյուրը դուք էք:

Հայտնի է, որ էջմիածին ոտք կոխած օրերս երկու վարդապետի հետ միայն ծանոթացա: Խաչիկ վարդապետին իր Զվարթնոցի ավերակներուն միջոցով և ձեզ ի պատիվ պրոֆ. Մայեի տրված ճաշով, որուն անարժանաբար ներկա գտնվելու պատիվն ունեցա: Եվ այդ ծանոթության սահմանափակ շրջանը տևեց գրեթե մինչև Զվարթնոցի մեջ ավելի քան մի ամիս աշխատելես հետո:

Խաչիկ վարդապետ գործերս տեսած օրեն այնքան հրապուրված և Զվարթնոցի վերակազմության հույսով հափշտակված էր, որ եթե ոչ անկեղծությամբ, գոնե մարդահաճության համար, եթե գիտնար ավելի գերագույն նշանակություն ունեցող մի բառ քան ճարտարապետ բառը, սիրով պիտի շռայլեր իմ անվան, գեթ առ ժամանակ զիս խրախուսելու և քաջալերելու համար և ես ի սկզբանե շատ պատվաբեր վարմունք տեսած եմ Խաչիկ վարդապետի կողմանե:

Բայց Խաչիկ վարդապետ, միանգամայն զուրկ ձեր ստացած բարձրագույն կրթութենեն և ամեն բանի մեջ ունեցած խոր հմտութենեն, բնականաբար չկարողացավ ըմբռնել իմ արվեստիս մեջ ունեցած հմտությանս չափը, մտքեն անգամ պիտի չանցներ, իմ «վարպետի» արժանիք միայն ունենալս և պիտի մնար ընդմիշտ խաբված՝ եթե վրա չհասներ ձեզ նման ներհուն և խորթափանց մի անձնավորություն, ընկած մոլորութենեն զայն դուրս բերելու համար:

Արդարև հազիվ 15–20 օր անցած, ոչ միայն Խաչիկ վարդապետ, այլ և ձեր միջոցով ինձի ծանոթացող ամեն ոք, մեծ և փոքր, սկսեցին ձեզ նման անխտիր «վարպետ» անվանել զիս:

Իսկապես շնորհակալ եմ և միանգամայն երախտապարտ, որ ձեր հանձնարարականով ծանոթացուցիք զիս մեծանուն գիտնական պրոֆ. Մառի հետ, որուն հովանավորության տակ՝ խաղաղ ու ապահով կատարեցի ոչ միայն ինձի, այլ և համայն գիտական աշխարհի համար շահեկան մի մեծ գործ:

Շատ ուրախ եմ, որ պ. Բասմաջյանի դատն ալ ձեզ նման արժանավոր պաշտպանի հովանավորությունը կվայելե, բայց ցանկալի էր, որ ինքը հրապարակ գար այդ խնդիրով ինձ համար ևս շահեկան ձեր ակնարկած հարցերուն վրա լույս սփռելու: Ես դեռ 1905 թվականին առաջարկեր եմ հրապարակ իջնել կամ իր կողմանե փոխանորդներ ընտրելով, սակայն նա իրեն հատուկ պատճառներով լռել է:

---

* Այս կասկածը չեմ կարող ընդհանրացնել և կամ մասնավորել որևէ մեկուն վրա, ինձի հաղորդած է Խաչիկ վրդ., անոր կթողում ճշտեք թե այս չորս վարդապետներեն որուն կվերաբերի այդ կարծիքը:

Մի հոդվածով Էջմիածինը, դժոխք անվանելուն պատճառով պ. Բասմաջյանի երեսը երկար տարիներ անարգ թուքերով ծեփելե հետո, երբ անցյալ տարի սիրալիր գրկախառնությամբ զիրար ջերմապես համբուրեցիք, իմ նամակներս պ. Բասմաջյանը ձեզ ցույց տալե հետո ինչո՞ւ այնքան բարի չեղավ, որ ձեզ հանձնարարական մը ալ տար, որպեսզի ինձ մոտ գալով իր գրած նամակներն ալ անգամ մը աչքե անցնեինք, որոնց մեջ դուք շատ հակառակ նորություններ պիտի տեսնեիք: Դարձյալ պատրաստ եմ ցույց տալու զանոնք ամեն ոնոնց, որոնք բացարձակ հրաման կբերեն ինձ Բասմաջյանի ստորագրությամբ, այլապես չեմ զիջանիր անարգ կիրքերե առաջնորդված, բարեկամական նամակներ, որոնք սրբություններ են գիտակից մարդկանց համար, անխտիր թափել ամեն մարդու առջև, առանց ի նկատի ունենալու անկից ծագելիք խղճի և պատվո ահեղ պատասխանատվությունները:

Դուք չեք կարող այնքան անկեղծ ու ճշմարիտ բարեկամ եղած ըլլաք պ. Բասմաջյանին, որչափ ես էի մի ժամանակ, երկրպագու «անոր ստացած ուսումնականի հոչակին», որչափ որ ես եմ մինչև այսօր, թեև նա շատ անարժան և վիրավորական կերպով վարվեցավ ինձ հետ: Ես Բասմաջյանի այն բարեկամն եմ, որ Կ. Պոլսո մեջ բանտարկված ժամանակ գլուխս կախաղանի վտանգի ենթարկած՝ ոչ միայն ազատեցի զինքը մշտնջենական աքսորի վտանգեն, այլ և փրկեցի իր հետ ուրիշներու ալ անարգաբար ոտնակոխ ըլլալու վտանգեն ենթարկված պատիվը: Եվ ի վերջո, երբ իր ձեռնարկած գործին օգտակար ըլլալու համար Կովկասի ճանապարհորդության ընկերացա առանց ոևէ փոխարինության, բարեկամական սիրույս և հարգանքիս ապացույցն էր, որ տվի:

Եվ որովհետև ձեր պ. Բասմաջյանի անունով անորոշ գրվածքը կարող է հասարակության մտքին մեջ խոշոր երևակայություններու առիթ տալ, ուստի քանի մը խոսքով ալ կուզեմ այդ ճանապարհորդության համառոտ պատմությունը մեջ բերել:

Նախապես գոյություն ունեցող որոշման մը համաձայն եկա Կովկաս պ. Բասմաջյանի համար Անիի մեջ աշխատելու միայն չորս ամիս ժամանակով, պայմանով, որ նա պիտի վճարեր իմ երթևադարձիս ճանապարհածախսը և պիտի հոգար սնունդս:

Արդեն մեր Անի գնալեն առաջ, Էջմիածնի մեջ, պարզվեցավ, որ պ. Բասմաջյանի տրամադրության տակ գտնված գումարը շատ քիչ էր չորս ամիս առաջադրված գիտական նպատակով աշխատելու համար, այդ պատճառով ալ, առանձնապես պ. Բասմաջյանի խորհուրդով, դիմեցի հանգուցյալ կաթուղիկոսին և խնդրեցի, որ մի քիչ աջակցություն ցույց տա այս օգտաշատ աշխատության նյութապես օգնելով պ. Բասմաջյանին:

Կաթողիկոսը շատ սիրալիր կերպով խոստացավ օգնել և շուտափույթ կարգադրել հարկ եղածը:

Մեր Էջմիածնեն դեպի Անի մեկնելու պահուն վեհարանեն հանձնվեցավ մեզի գոց նամակ մը՝ ուղղված Անիի վանահայր Միքայել վարդապետին, հայտարարելով որ մեզ համար հարկ եղածը գրված է նամակին մեջ: Բայց ի՞նչ զարմանք, երբ Անի հասանք, Մոտոի տոպրակին պես՝ նապաստակի տեղ կատու դուրս եկավ: Ոչ մի օգնության խոսք չըլլալեն զատ, հազիվ իրեն համար պատառ մը հաց ճարող Միքայել վարդապետին կխնդրեին այդ նամակով, որ մեզի օգնե: Այդ նամակն ալ մինչև այսօր իբրև հազվագյուտ հանձնարարական Էջմիածնի վեհարանի՝ պահված կմնա Միքայել վարդապետի քով:

Բնական էր, որ այս առեղծվածը լուծելու կաշխատեինք, գիտնալու համար թե ի՞նչ հրաչքով փոխված էր նամակի բովանդակությունը: Հարկ համարված տեղեր անմիջապես գրվեցան նամակներ, և ստույգ աղբյուրներե տեղեկացանք, որ այսօրվան՝ Բասմաջյանի դիմաց հարգանքի դիմակով ծածկվող մեկ քանի սրբասուն միաբաններ հարմար առիթը գտեր էին զայն պատժելու, զիրենք դժոխքի միաբան անվանած ըլլալուն համար, և բուռն թափով բողոքելով արդիլեր էին այդ նպաստը:

Թե որքան էին այդ լուրի աղբյուրները, և Բասմաջյանի դեմ գտնվող ախոյան վարդապետները, այդ կթողում իրեն պ. Բասմաջյանին, որովհետև ինձ հետ բնավ կապ չունին:

Անիի մեջ աշխատանքի սկսելես հետո երբ պարզվեցավ, որ այդ աշխատանքը տարիներու գործ է, ոչ թե ամիսներու, մանավանդ պ. Բասմաջյանի ունեցած նեղ միջոցներով սաստիկ դժվար, ուստի երկար խորհրդակցելե հետո, պ. Բասմաջյանը խոստացավ ինձի միջոցներ ճարել գործը շարունակելու համար:

Դեռ Անիեն չմեկնած, պատահաբար, ձեր ակնարկած Թիֆլիսի վաճառականը եկավ Անի և խոստացավ Բասմաջյանի մեկնելեն հետո ամեն ամիս 30 ռուբլի վճարել ինձի: Բայց որովհետև 30 ռուբլին շատ աննշան գումար էր այդ բազմապահանջ գործին համար, տասնևհինգ ռուբլիեն ավելի ամեն ամիս միմիայն ծառայի և մշակներու վարձքը կվճարվեր, հետևաբար հարկ էր ուրիշ աղբյուրներ ևս ունենալ: Պ. Բասմաջյան մեծ հույսեր ուներ, որ Ալեքսանդրապոլ և Թիֆլիս գնալուն, իրեն կհաջողվի նոր աղբյուրներ ճարել: Նաև պատրաստելու էր առանձին գումար մը ևս առաջիկա ձմեռային շորերու և այլ անհրաժեշտ պիտույքներու համար:

Մեկնեցավ պ. Բասմաջյան Ալեքսանդրապոլի վրայով Թիֆլիս. ինչ ըրավ այդ անցած տեղերուն մեջ՝ ինձ հայտնի չէ, միայն Թիֆլիսեն մեկնելուն պահուն ինձ գրած է նամակ մը, որով կհայտներ, թե նոր աղբյուր չէ կարողացած գտնելու, բայց ձմեռային հոգսերու համար խումբ մը երիտասարդներ շատ շուտով պիտի խրկեն հասցեիս պետք եղած գումարը:

Բասմաջյանը վաղուց հասեր էր Փարիզ, ես երկու ամիս ևս Անիի մեջ աշխատանք շարունակելես հետո, խոստացվածներեն ոչինչ չստանալով, Անիի մեջ պարտքեր ալ թողած գնացի Թիֆլիս, որպեսզի թե՛ 30 ռուբլի առկա ամսականներս ստանամ և թե՛ գտնեմ խումբ մը երիտասարդները, որոնց մասին գրված էր ինձ: Ամսականներս ստացա, սակայն այդ երիտասարդաց խումբեն մեկ հատ ալ դեռ չեմ տեսած մինչև այսօր:

Ասկեց հետո, այլևս սկսավ մեր անընդհատ թղթակցությունը պ. Բասմաջյանի հետ, իմ կողմանե գանգատ, անոր կողմանե խոստում, ցուրտեն դողալով, կարևոր պիտույքներե զրկվելով ծանոթներու հյուրասիրության ապաստանած՝ ձմեռը անցուցի, և դեռ հույս չկար լրացուցիչ գումարի՝ գարնանային աշխատանքներս վերստին սկսելու համար:

Ապագայի խոստումներով քաջալերված՝ մարտ ամսո մեջ դարձյալ ուղևորվեցա Անի, աշխատանքս շարունակելու համար: Այս ուղևորությենես հետո թե ինչ տխուր ու չարաշուք պատահարներ գլխիս թափվեցան, ես անոնց մասին կլռեմ առայժմ և որոնց ամենեն վերջինին մի տխուր հետևանքն է այսօրվան մի վերին աստիճան զզվելի մեր բանակռիվը:

Օգոստոս ամսվա մեջ Թիֆլիսի վաճառականեն նամակ մը ստացա, որով ինձ կհայտներ, թե այլևս բավական կհամարի մինչև հուլիս վճարած 30 ռուբլի ամսականը, հետևաբար իր վրա հույս չդնեմ:

Ուրեմն, սկսյալ սեպտեմբեր ամիսեն մինչև հուլիսի վերջը, ընդամենը տասն և մեկ ամիս (ոչ թե տարուց ավելի) ստացեր եմ ամսական երեսուն ռուբլիով (330) երեք հարյուր երեսուն ռուբլի գումար մը. եթե այս գումարին զեղջենք բացառիկ պետքերու համար Աբովյանի վճարված մոտ վաթսուն ռուբլի գումարը, որուն՝ Աբովյանցի ստորագրությամբ ֆաքթյուրը հանձնեցի Թիֆլիսեցի վաճառականին, մնաց 270 ռուբլի զուտ գումար ամբողջ տասն և մեկ ամսվան համար: Այս գումարեն զատ ուրիշ ոչինչ չեմ ստացած բացի վերոհիշյալ աղայի հին շորերեն, որ վեհանձնաբար բարեհաճեր էր խրկել, գլխս ցնցոտիներես ազատելու համար, և ես ալ այդ շորերը Բասմաջյանի գործին հաջողության աղոթելու համար Էջմիածնի մեջ բաժանեցի գաղթական աղքատներուն:

Այս ստացած գումարիս փոխարեն, նույն տարին խրկեցի հինգ օրինակ կատարելագործված նկարներ, որոնք գրեթե այն տարվան բոլոր աշխատությունս էին:

*«Մշակ», 1909, № № 52, 53, 54, 57, 58, 60*



## ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ*

Առաջին անգամ 1903 թվականին, Էջմիածին այցելությանս միջոցին, լսեցի Խաչիկ վարդապետի ղեկավարությամբ կատարվող Զվարթնոց եկեղեցիի հոյակապ ավերակների պեղումների մասին: Բնական էր, որ հետաքրքրությունս մեծ լիներ և փութացի տեսնելու այդ հուշարձանի պեղումները, որուն մասին մեծամեծ գովեստներ էին շռայլում տեսնողները:

Երբ այցելեցի, իսկապես ի տես այդ ավերակում երևացող ինքնատիպ հատակագծին և դուրս եկած աքանչելի քանդակազարդ բեկորներին, ինքս ևս հիացմամբ զրավվելով, վճռականապես որոշեցի, որ հարմար առիթ ստեղծեմ այդ մեծ հուշարձանի ուսումնասիրությամբ զբաղվելու:

Հետևյալ 1904 թ. տարին, հանգամանքները այնպես դասավորվեցին, որ մի առ ժամանակ Էջմիածին մնալս հարկ եղավ. ուստի մեկ կողմանե Խաչիկ վարդապետի հրավիրանոք, մյուս կողմից Խրիմյան կաթողիկոսի և գիտնական միաբան Գալուստ Տեր Մկրտչյանի խրախուսանոք գնացի

* *Այս կարևոր փաստաթուղթը տպագրում ենք Հնությունների Պահպանության Կոմիտեի գործերից, որտեղ թվագրված է մտ. 655, 1927 թ. ապրիլի 20:*

**Կազմող**

Զվարթնոց շենքի վերակազմությամբ և ուսումնասիրությամբ զբաղվելու համար, և այնտեղ մնացի չորս ամիս:

Այս չորս ամիսները բավական չեղան ինձ համար հաջողությամբ գործ ավարտելու համար հետևյալ պատճառներով: Նախ, որ պեղումները չէին ամբողջացած. տաճարի մեջ ամբողջովին մաքրված էր, սակայն դուրսը ամբողջովին կմնար առանց պեղման: Երկրորդ, որ կատարված պեղումները միանգամայն աննպատակահարմար և պարզապես հակագիտական կերպով կատարված էին:

Անվիճելի օրենք է, որ պեղման ժամանակ, երբ խնդիրը այսպիսի մեծ և հոյակապ հուշարձանի վրա է, պետք է որ պեղումները կատարվին մի ճարտարապետի հսկողության ներքո, որպեսզի ճարտարապետը հնար ունենա մեծազանգված բեկորների ընկած տեղը, դիրքը ի նկատի առնելու և նրանց կարևոր մասերը չափագրելու և գծագրելու: Այս չափագրությունները և գծագրություններն են, որ ճարտարապետին սեղանին վրա պիտի դյուրացնեն վերակազմության պատասխանատու գործը: Գուցե Խաչիկ վարդապետի մտքից անգամ չէր անցած մի ճարտարապետ հրավիրել, և իրեն սովորական եղող ջղագրգիռ ոգևորությամբ, տաճարին մեջը, օր առաջ մաքրելու համար, մեջը թափված քարերն ու շաղախի փշրանքները դուրս թափելուց հետո մնացած մեծազանգված փուլքերը, որոնք պիտի բնորոշեին շենքին ներքին կազմությունը և գմբեթի մանրամասն ձևն ու նկարագիրը, վառոդով պայթեցրել և փոշի վերածել էր, որովհետև այդ զանգվածները անհնար է եղել բրչով կամ լինգով մանրացնել: Ահա այս իսկ պատճառով է, որ այդ հոյակապ տաճարին ներքին կազմությունը. թեև բավական ճշտված է շենքից դուրս թափված մեծ բեկորների միջոցով, սակայն ուրիշ ճարտարապետական մանրամասնություններ ընդմիշտ կորած են հուշարձանի պատմության համար:

Գրեթե երկու ամիս տևեց մինչև շենքին հատակագիծը կազմելս՝ ստեղծված քաոսային դրության պատճառով, այն ևս ոչ բոլորովին կատարյալ, իսկ շենքի ձևը կամ կառուցվածքը որոշել անհնար եղավ: Ինչպես երևում էր, Խաչիկ վարդապետ վերջ ի վերջո, նախքան իմ այնտեղ գնալս, ինքն ևս զգացեր էր ոչ միայն հատակագծի ճշտիվ չափագրության, այլև վերակազմության կարևորությունը. ուստի հրավիրել էր անփորձ ուսանողներ և գծագրիչներ, իր հասկացողությամբ, որոշ ենթադրությունների վրա հիմնված, ներշնչել էր այս կամ այն ձևը տալ շենքին, որոնք ոչ միայն թերի էին, այլև հիմնովին սխալ:

Ամբողջական վերակազմության համար հուսահատական էր դրությունը, հույսս մնացել էր արտաքին պեղումների վրա, ուստի առաջարկեցի դրսի մասերը պեղել իմ ներկայությամբ, որով թերևս կարելի լիներ դրական ապացույցներ գտնել շենքի ընդհանուր կազմության մասին: Նամանավանդ որ, ինչպես շենքի մեջը, այնպես էլ դուրսը ընկած էին մեծազանգված բեկորներ, որոնց վառոդով պայթեցնելու ժամանակը նոր էր հասել՝ ըստ պեղման ղեկավարի: Պետք է ասել, որ Խաչիկ վարդապետ սիրով ընդունեց առաջարկս պեղման ձեռնարկելու մասին և խոստացավ դուրսն ընկած մեծ բեկորները ևս պահել ընդմիշտ, իբրև հաստատուն ապացույցներ վերակազմության, որովհետև նույն բեկորների վրա դեռ այսօր ևս կարելի է տեսնել ներքին կազմության խիստ բնորոշ հետքեր:

Մեծ չափով արդարացան հույսերս: Շենքից դուրս ընկած մեծ բեկորների վրա գտա, գմբեթակիր սյուների մեջ եղած բաժանումները, երկրորդ հարկին իբրև խարիսխ ծառայող բոլորակ պատը և այս խարիսխները կրող առագաստները: Իսկ իմ ներկայությամբ արտաքին պեղումների ժամանակ կարգավ դուրս եկան ամբողջ ճակատների, սյուների, պատուհանների, որմաղեղների և այլ զանազան մանրամասնություններ, որոնց մանրամասն չափագրությունները ո՛չ միայն ճշտեցին արտաքին երեսների ճիշտ կազմությունը, այլև գրեթե անվիճելի կերպով տվին բարձրությանց չափերը, որով հնար եղավ կազմել ամբողջ վերակազմությունը: Վերակազմությանս ճշտության իբրև ապացույց, տարիներ հետո, երևան եկան պր. Ն. Մառի ջանքերով, Անիի գագկաշեն ս. Գրիգորի և Բանայի եկեղեցիները:

Հետևաբար, եթե պատահաբար ես վրա չհասնեի, և ըստ կանոնի չհետևեի յուրաքանչյուր բեկորի ընկած տեղին, դիրքին և չափերին և մնար Խաչիկ վարդապետի հասկացողության և ամեն ինչ ոչնչացնելու ուղղությամբ առաջ տարվեին մնացած պեղումները, պարզապես պետք է միանգամայն կորած լիներ Զվարթնոցի ընդհանուր կառուցվածքն ու ներքին և արտաքին ձևերը:

Արտաքին կողմից, վստահ եմ որ անթերի վերակազմված է Զվարթնոցը, սակայն ի ներքուստ կան այնպիսի կորուստներ, որոնք միանգամայն անդառնալի են:

Օրինակի համար ըստ դարաշրջանի ոճերու գմբեթի նիստը պանտանտիվների վրա էր թե՞ տրոմբների վրա, ինչ բնորոշ կազմություն ուներ գմբեթի դդակը և ուրիշ ինչ մանրամասնություններ կային արտաքուստ այդքան շքեղ տաճարի մեջ՝ ներքին կողմից դարաշրջանի ճաշակը և ոճը արտահայտող:

Միմիայն բոլորակ տաճարը չէ, որ այս այլանդակության մատնված է իր ներքին կողմից, այլև Զվարթնոցի շինարարական պատմության համար անդարձ կորած են հարավային կողմից ընդարձակ շինությունների կառուցվածքը, նրանց ծածկի ձևերը, լուսամուտների դասավորությունները և ուրիշ բազմաթիվ մանրամասնություններ, որոնք այլևս անհնարին են որևէ կերպով վերակազմել և գաղափար կազմել ժամանակակից շինարարական ոճերի վրա: Մանավանդ այդ շինություններից երկու մասեր, որոնք վերին աստիճան հետաքրքրական են մեր այսօրվան շինարարական արվեստի տեսակետով իսկ: Այս մասերեն մեկն է այն բաժինը, որուն մասին Խաչիկ վարդապետ երկար դասախոսություններ է կարդում այցելուներին անհեթեթ կերպով, համարելով հայոց հին կրակապաշտական տաճար լինելու՝ առանց դրական ապացույցների, երկրորդը՝ կաթողիկոսական մեծ դահլիճը, որուն կազմությունը գեղարվեստի և ճարտարապետության և պատմության համար անգնահատելի պիտի լիներ: Այժմ այս բոլոր շենքերից անհետացել են շինարարական ապացույցներ և քարեր, իսկ տեղում մնացած մասերը լոկ հատակագծի միայն արժեք ունին:

Միայն Զվարթնոցը չէ, որ Խաչիկ վարդապետի բրչի տակ կորցրել է իր բոլոր ցանկալի առանձնահատկություններն ի վնաս գեղարվեստի պատմության. կան նաև ուրիշ տեղեր, որոնք ավերված ու ոչնչացած են անկարգ և անգիտակից փորումների պատճառով: Միևնույն ձևով պեղվել է Գառնին, Դվինը, Եղվարդը և ուրիշ կարևոր վայրեր:

Գառնիի մասին ցանկալի էր, որ պր. Ն. Մառ իր հեղինակավոր խոսքն ասեր այնտեղ կատարված ավերումների մասին. Զվարթնոցի մասին Հ. Ստրչիգովսկիի արտահայտությունը բավական է թե՛ իր երկհատոր մեծ գրքին մեջ և թե՛ 1913 թվին Լենինգրադ գնալիս այնտեղի գիտնականների շրջանում: Իսկ գալով 6-րդ դարու Եղվարդի հոյակապ տաճարին, ոչինչ չէ մնացած այնտեղ բացի հատակագծից: Որովհետև պեղելուց հետո եղած քարերն ևս թողած ճակատագրին ամեն տեղ և խաղաղ սրտով հեռանում է պեղած վայրերից. և այդպիսով պեղման վայրը շրջակա բնակչության համար ծառայում է իբրև շինության քարերի մի շտեմարան, և ամեն ոք տանում է իր գումն ու մարագները շինելու համար:

Ավելի քան քառասուն տարիներե ի վեր Խաչիկ վարդապետ մեծ համբավ է վայելում իբրև պեղումներ անող: Բայց մինչև այսօր ոչ ոք չէ տեսել նրա պեղման օրագրությունները, տեղեկագրերը, և կամ գոնե մի փոքր ուսումնասիրություն: Իր պեղած բազմաթիվ վայրերեն ի՞նչ թանգարանային առարկաներ է հանել, որոնք արժեքավոր լինին, ինչե՞ր էին նրանք և ո՞ւր են պահած, այդ միայն ինքը գիտե: Իսկ Էջմիածնի թանգարանում երբեմն երևում էին պահարաններ, որոնց վրա գրված էր. «Ծողովածու Խաչիկ վարդապետի», բայց դրանք ևս իսպառ զուրկ էին գիտական արժեքից, որովհետև պեղման մասին չունեին որևէ փաստական տեղեկություն:

# ՅՈՒՅԱԿՆԵՐ
# ԵՎ
# ՅԱՆԿԵՐ

# ՑՈՒՑԱԿ

## ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՄԵՋ ԶԵՏԵՂՎԱԾ ՆԿԱՐՆԵՐԻ


1. Հնագույն կլոնական տաճարների հատակագծեր
2. Սողոմոնի տաճարի հատակագծն ըստ սուրբ գրոց
3. Նախաքրիստոնեական բազիլիքներու հատակագծեր
4. Վանա բերդի ընդհանուր տեսարան
5. Վանա բերդի ուրարտական աստիճանները և վիմափոր շենքի մուտքը
6. Տիգրանակերտի պարիսպների մնացորդներն ըստ Լեման Հաուպտի
7. Գոմի օդա գյուղական տան մեջ
8. Գլխատան ծածկը գյուղական տան մեջ
9. Անիի կամուրջի ավերակներն Ախուրյան գետի վրա
10. Թալինի իջևանատան ներքին մասերից
11. Թալինի իջևանատան մուտքի ճակատակալ քարի մի մասը
12. Մորիկ կայսեր մոր վերագրվող սյունն Օշականում
13. Դվինում գտնված 7-րդ դարի խոյակներ
14. Կոթող Հովհաննավանքի բակում
15. Էջմիածնի վանքի ընդհանուր տեսարանը հյուսիս արևմուտքից
16. Էջմիածնի տաճարի գմբեթը
17. Էջմիածնի զանգակատան հարավային երեսը
18. Էջմիածնի տաճարի հարավային աբսիդը, որի վրա փլված է զանգակատունը
19. Տեկորի տաճարի հյուսիսային պատի արևմտյան կեսը
20. Տեկորի տաճարի հյուսիսային ճակատի արևելակողմի մուտքը և Խոսրովանույշ թագուհու արձանագրությունը
21. Տեկորի տաճարի ընդհանուր տեսքը հարավ արևմուտքից ծածկի կործանումից հետո
22. Տեկորի տաճարի արևելյան աբսիդի ներքին տեսքը ծածկի կործանումից հետո
23. Տեկորի տաճարի արևմտյան պատի վերին մասերը
24. Երերույքի տաճարի հարավային պատի կենտրոնական մասը
25. Երերույքի տաճարի հյուսիս արևելյան մասի ներքին տեսարանը
26. Երերույքի տաճարի քանդակազարդ խոյակ
27. Հռիփսիմեի տաճարի ընդհանուր տեսարանը հյուսիս արևմուտքից
28. Հռիփսիմեի տաճարի ընդհանուր տեսքը հարավից
29. Հռիփսիմեի տաճարի գմբեթը ներսից
30. Հռիփսիմեի տաճարի արևմտյան ճակատի բարձրադիր պատուհանի քանդակազարդ պսակը
31. Զվարթնոցի տաճարի վերակազմության ճակատի երկրորդ ձևն ըստ Թորամանյանի կատարած կտրվածքի
32. Զվարթնոցի տաճարի արևելքից արևմուտք կտրվածքը
33. Զվարթնոցի առաջին հարկաբաժնի քանդակազարդ գոտի
34. Զվարթնոցի տաճարի առաջին հարկաբաժնի քանդակազարդ գոտու բեկոր
35. Զվարթնոցի տաճարի մուտքի ֆրոնտոնի քանդակներից
36. Զվարթնոցի տաճարի մուտքի ֆրոնտոնի քանդակներից
37. Զվարթնոցի տաճարի արտաքին զույգ որմնասյուների խոյակի չափերը
38. Զվարթնոցի տաճարի առաջին հարկաբաժնի որմնասյուների գլխի մույլուրներ
39. Զվարթնոցի տաճարի գմբեթի օղակը ներսից
40. Զվարթնոցի տաճարի հյուսիս արևելյան մույթի ստորին անկյան մույլուրներ
41. Զվարթնոցի հարավ արևելյան մույթի ստորին մույլուրները (գետնեն 102 սմ բարձր)
42. Զվարթնոցի տաճարի ներքին արծվանիշ խոյակի ճակատը և մակարդակը
43. Զվարթնոցի տաճարի ներքին արծվանիշ խոյակը կողքից և հետևից
44. Զվարթնոցի տաճարի սեղանի և գզրոցի ավերակները
45. Զվարթնոցի տաճարի ներքին խաչաձևի սյունաշարքերի խարիսխ
46. Զվարթնոցի տաճարի արծվեխոյակ և կողովաձև խոյակ
47. Զվարթնոցի տաճարի հարավային մուտքի զույգ որմնասյուներ

48. Զվարթնոցի տաճարի արտաքին պատի ներսի երեսի որմնասյունների խարիսխ
49. Զվարթնոցի տաճարի վերին հարկի արտաքին որմնաղեղների բեկորներ
50. Զվարթնոցի տաճարի որմնաղեղի մույլուրներ (Հավանորեն վերին հարկին պատկանող)
51. Զվարթնոցի տաճարի ներսի խաչաձևի սյունազարդի ներքին ճակատի սյունակամարների մույլուրները
52. Զվարթնոցի տաճարի վերին հարկաբաժնին պատկանող արտաքին որմնաղեղ
53. Զվարթնոցի տաճարի խաչաձևի միջին տաճար նայող պատուհանի շրջանակի մույլուրները
54. Զվարթնոցի տաճարի պսակի ճակատի քանդակ
55. Զվարթնոցի տաճարի պսակի ստորնահայաց մասի կողովաքանդակը
56. Զվարթնոցի տաճարի հարավային մուտքի կողքի՝ վարպետի բարձրաքանդակը
57. Զվարթնոցի հարավային կողմի շինությանց խմբի հատակաձևը
58. Զվարթնոցի արևմտյան կողմի աշակողմյան շինությունների մի մասի հատակաձևը
59. Անվո հյուսիսային պարիսպների արևմտյան մասը ներսից
60. Անվո զաքարաշեն զույգ բուրգերը Գլիձորում
61. Ագարակի 7-րդ դարի խաչաձև եկեղեցին և 5-րդ դարու միանեֆ բազիլիքի ավերակները
62. Ագարակի 5-րդ և 7-րդ դարերու եկեղեցիների հատակաձևերը
63. Ադիամանի եկեղեցու ընդհանուր տեսքը հարավ-արևելքից
64. Աղցի՝ Արշակունյաց ստորերկրյա դամբարանի մուտքը
65. Աղցի՝ Արշակունյաց ստորերկրյա դամբարանի հատակաձևը և կտրվածքը
66. Աղցի՝ Արշակունյաց ստորերկրյա դամբարանի բարձրաքանդակներից
67. Աղցի՝ Արշակունյաց ստորերկրյա դամբարանի բարձրաքանդակներից
68. Ամբերդի հյուսիս-արևմտյան պարիսպների ավերակները
69. Ամբերդի եկեղեցին հարավ-արևմուտքից
70. Ամբերդի եկեղեցու հարավային մուտքը
71. Գեղարդավանքի վիմափոր տաճարի քանդակազարդերը
72. Աշտարակի կամուրջը
73. Ապարանի (Քասախի) բազիլիք եկեղեցին հյուսիս-արևելքից
74. Ապարանի (Քասախի) բազիլիք եկեղեցու հարավային ճակատը
75. Ապարանի (Քասախի) բազիլիք եկեղեցու արևմտյան մուտքի ճակատի քանդակները
76. Ապարանի (Քասախի) բազիլիք եկեղեցու հարավային փակված մուտքի ճակատի քանդակները
77. Ապուդամրենց ս. Գրիգոր եկեղեցու արևելյան լուսամուտի պսակը և արձանագրությունը
78. Աստվածընկալի՝ Քուրդ իշխանի շինած եկեղեցու և ժամատան ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից
79. Աստվածընկալի՝ Քուրդ իշխանի կառուցած եկեղեցու գավթի արևելյան մասի ներքին տեսքը
80. Ավանի եկեղեցու արևմտյան ճակատը 1939 թ. վերանորոգությունից հետո
81. Արթիկի 5-րդ դարի եկեղեցին հյուսիս-արևմուտքից
82. Բագարանի եկեղեցու ընդհանուր տեսքը հարավից
83. Բագարանի բերդի ավերակները
84. Բագնայրի երեք եկեղեցիների խումբը հարավ-արևմուտքից
85. Բարձրաշաղ սբ. Գրիգոր եկեղեցու գավթի արևելյան արտաքին պատի կենտրոնական մասը
86. Բյուրականի սբ. Հովհաննես եկեղեցին հարավ-արևելքից
87. Բջնիի բերդապարիսպների ավերակները
88. Բջնիի եկեղեցու արևելյան ճակատը
89. Եղվարդի 6-րդ դարի բազիլիք եկեղեցու ավերակների ներքին տեսքն արևմտյան կողմից
90. Եղվարդի 14-րդ դարի եռահարկ եկեղեցին հարավ- արևմուտքից
91. Զովունու 7-րդ դարի եկեղեցին հյուսիս-արևելքից
92. Թալինի կաթողիկեի կենտրոնական թևի արևմտյան տեսքը ներսից
93. Ներքին Թալինի միջնաբերդի պատերը
94. Խոթա վանքի ընդհանուր տեսարանը հարավից
95. Խոր Վիրապի եկեղեցին հյուսիս-արևելքից
96. Կեչառուքի ս. Գրիգոր եկեղեցու և գավիթի ընդհանուր տեսքը հարավից
97. Կեչառուքի ս. Նշան և կաթողիկե եկեղեցիներն արևմուտքից
98. Կեչառուքի ս. Գրիգոր եկեղեցու արևելյան տեսքը ներսից
99. Կեչառուքի ս. Գրիգորի գավիթը ներսից
100. Կարանլուխ գյուղի 7-րդ դարի ավերակ եկեղեցին
101. Կարսի բերդի պարիսպները (քանդված 1878 թ.)
102. Կարսի բերդի պարիսպները (քանդված 1878 թ.)
103. Հառիճավանքի՝ Զաքարե և Իվանե իշխանների շինած եկեղեցին հյուսիս-արևելքից
104. Հառիճավանքի՝ Զաքարե և Իվանե իշխանների շինած եկեղեցու օթյակը



105. Մահմուդջուղի 5-րդ դարի եկեղեցու արևմտյան մուտքի ճակատի Տիրամոր բարձրաքանդակը
106. Մահմուդջուղի Մակարավանք կոչվող եկեղեցին հարավ-արևելյան կողմից
107. Մաճիտլուի 7-րդ դարի եկեղեցին հյուսիս-արևելքից
108. Մաքրավանքը հարավ-արևմուտքից
109. Մուղնու ս. Գևորգ եկեղեցին
110. Մռավյանի եկեղեցու արևմտյան ավերակ գավիթը
111. Շիրվանջուվի եկեղեցու ընդհանուր տեսքը հյուսիս-արևմուտքից
112. Սառնաղբյուրի 11-րդ դարի եկեղեցին հարավ-արևմուտքից
113. Օրթաքիլիսայի 7-րդ դարի եկեղեցին հարավ-արևմուտքից
114. Ալամի հյուսիս-արևմտյան աբիդի քառակուսի մասի քիվը
115. Ալամի հյուսիսային աբիդի մեկ մասի քիվը
116. Ալամի հարավային և արևելյան աբիդների քիվը
117. Ալամի պատուհաններից մեկի պսակը
118. Ալամի ներքին որմնասյուների խոյակ
119. Ալամի տաճարի հատակաձևը
120. Ալամի տաճարի գմբեթի հիմքը
121. Տեկորի տաճարի ընդհանուր տեսքը հյուսիս-արևմուտքից քանդվելուց առաջ (վերարտադրություն)
122. Տեկորի տաճարի հյուսիսային կողմի արևելյան մասի տեսքն արտաքուստ
123. Տեկորի տաճարի ընդհանուր տեսքը հարավային կողմից քանդվելուց հետո
124. Տեկորի մի տապանաքարի հյուսիսային ճակատի նկարը
125. Տեկորի գերեզմանատան 964 թ. խաչարձանը
126. Եղվարդի կաթողիկեի մեջ գտնված շարժական ավազանի վրայի խաչը
127. Եղվարդի փոքր եկեղեցու մեջ գտնված տապանաքարերից մեկը
128. Եղվարդում՝ Գրիգոր Մամիկոնյանի շինած տաճարի աբսիդներն անջատող ներքին որմնասյուների խոյակ և խարիսխ
129. Եղվարդում Գրիգոր Մամիկոնյանի շինած տաճարի մոտի փոքր մատուռի հատակաձևը (արտաքին չափերը)
130. Եղվարդի 5-րդ դարի եկեղեցու փլատակների մեջ գտնված քարի վրայի քանդակները
131. Դվինի կաթողիկեի հատակաձևի ներքին չափերը
132. Դվինում գտնված խոյակ
133. Ադիամանի քառակող կոթողի չափերը
134. Ադիամանի եկեղեցու հատակագծի արտաքին չափերը
135. Ադիամանի տաճարի քարտաշ վարպետների նշաններ
136. Ադիամանի տաճարի արևմտյան խորշերի միջի սյուները
137. Թալինի կաթողիկեի գերեզմանատան Ա քառակող կոթողի չորս երեսները
138. Թալինի կաթողիկեի գերեզմանատան Բ քառակող կոթողի պատվանդանի ա և բ երեսները
139. Թալինի կաթողիկեի գերեզմանատան Բ քառակող կոթողի պատվանդանի գ և դ երեսները
140. Թալինի կաթողիկեի գերեզմանատան Գ քառակող կոթողի չորս երեսները
141. Թալինի կաթողիկեի գերեզմանատան Դ քառակող կոթողի չորս երեսները
142. Թալինի կաթողիկեի գերեզմանատան Զ քառակող կոթողի չորս երեսները
143. Թալինի կաթողիկեի գերեզմանատան Է քառակող կոթողի չորս երեսները
144. Թալինի փոքր, Ներսեհ Կամսարականի շինած եկեղեցու հատակագծի ներքին չափերը
145. Թալինի կաթողիկե եկեղեցու հատակագծի հյուսիսային կեսի ներքին չափերը
146. Թալինի կաթողիկե եկեղեցու հյուսիսային պատի հատակագծի արտաքին չափերը
147. Թալինի կաթողիկեի հյուսիսային ճակատի Ա պատուհանի պսակի ձևը (արևմուտքից հաշված)
148. Թալինի կաթողիկեի հյուսիսային ճակատի Բ պատուհանի պսակի ձևը (արևմուտքից հաշված)
149. Թալինի կաթողիկեի հյուսիսային ճակատի Գ պատուհանի պսակի ձևը (արևմուտքից հաշված)
150. Թալինի կաթողիկեի հյուսիսային ճակատի Դ պատուհանի պսակի քանդակները (արևմուտքից հաշված)
151. Ներքին Թալին գյուղի մոտի փոքր եկեղեցու ավերակները
152. Ներքին Թալինի բերդի հյուսիսային կողմի արտաքին պարիսպները
153. Ներքին Թալինի միջնաբերդի պարիսպները
154. Թալինի իջևանատան ընդհանուր հատակագիծը
155. Թալինի՝ Ներսեհ Կամսարականի շինած փոքր եկեղեցու վրայի վարպետների նշաններ
156. Լմպատավանքի հարավային պատի լուսամուտի պսակը
157. Շիրվանճուքի եկեղեցու ներքին որմնախոյակ և խարիսխ
158. Մարմաշենի մեծ եկեղեցու հատակագծի հյուսիսային կեսի ներքին չափերը
159. Մարմաշենի մեծ եկեղեցու բեմի խորշերից մեկի մանրամասնությունը
160. Արալքիսի բերդի հատակագիծը

161. Անիի հյուսիսային պարիսպների արևելյան անկյունը
162. Անիի հյուսիսային պարիսպները ավագ դռան մոտ
163. Անիի վիմափոր եկեղեցու հատակագիծը
164. Անիի վիմափոր եկեղեցու արևելյան մասը
165. Սյունազարդ քարայր Անիում
166. Անիի բնակելի այրերից մեկը
167. Ախուրյանի ձորը Անիի տակ
168. Անիի Կուսանաց անապատը
169. Մրենի տաճարի արևմտյան մուտքի բարձրաքանդակները
170. Մրենի տաճարի հյուսիսային մուտքի բարավորի բարձրաքանդակները
171. Մրենի տաճարի արևելյան պատի կողմնակի պատուհանի պսակի քանդակները
172. Մրենի տաճարի արևմտյան ճակատի հյուսիսակողման պատուհանի պսակը
173. Մրենի տաճարի հյուսիսային ճակատի արևելակողմի պատուհանի պսակը
174. Մրենի տաճարի հյուսիսային ճակատի միջին բարձր պատուհանի պսակը
175. Բագարանի տաճարի արևմտյան ճակատի հյուսիսային պատուհանի մուլյուրները
176. Բագարանի տաճարի արևելյան ճակատի հյուսիսակողման պատուհանի մուլյուրները
177. Բագարանի տաճարի հյուսիսային ճակատի արևմտյան պատուհանի մուլյուրները
178. Բագարանի տաճարի հյուսիսային ճակատի արևելյան պատուհանի մուլյուրները
179. Բագարանի տաճարի արևմտյան ճակատի վերին մասը:
180. Բագարանի տաճարի հարավային միջին մեծ պատուհանի պսակը
181. Բագարանի տաճարի գմբեթակիր կամարները
182. Բագարանի տաճարի հարավային պատի պատուհաններից մեկի պսակը
183. Բագարանի տաճարի արևմտյան ճակատի հարավակողման պատուհանի պսակի քանդակները
184. Բագարանի տաճարի բոլոր մեծ կամարների հանգստի ձևը
185. Բագարանի տաճարի արևմտյան պատի հյուսիս արևմտյան մեծ սյան փոքր կամարի հանգիստը
186. Բագարանի տաճարի հարավ-արևելյան մեծ սյան փոքր կամարի հանգիստը հարավային պատի վրա
187. Բագարանի տաճարի հյուսիսային պատի վրա արևելյան սյան փոքր կամարի հանգիստը
188. Բագարանի տաճարի հյուսիսային պատի վրա արևելյան սյան փոքր կամարի հանգստի տարբերությունը Ա մասի վրա
189. Բագարանի տաճարի արևմտյան կողմի մեծ սյուների համանման խոյակների ձևը
190. Բագարանի տաճարի հյուսիս-արևելյան մեծ սյան խոյակի արևմտյան ճակատը
191. Բագարանի տաճարի հյուսիս-արևելյան մեծ սյան խոյակի մյուս ճակատները
192. Բագարանի տաճարի հարավային խորանի հատակագիծը
193. Բագարանի տաճարի հյուսիսային խորանի հատակագիծը
194. Բագնայրի մեծ եկեղեցու գավթի ներքին տեսքը
195. Բագնայրի մեծ եկեղեցու գավթի հատակագիծը
196. Օրթաքիլիսայի Աստվածածին եկեղեցու հատակագծի ներքին չափերը
197. Օրթաքիլիսայի Աստվածածին եկեղեցու հատակագծի արտաքին չափերը
198. Մոլլաղասումի եկեղեցու հատակագծի ներքին չափերը
199. Մոլլաղասումի գերեզմանատան մատուռի հատակագծի ներքին չափերը
200. Մոլլաղասումի գերեզմանատան մատուռի ներքին որմնասյուների խարիսխներից մեկը
201. Մոլլաղասումի եկեղեցու ծածկի կղմինդրների մեկ ձևը
202. Արթիկի մեծ եկեղեցու արտաքին արևմտյան մուտքը
203. Արթիկի մեծ եկեղեցու արտաքին որմնակամարները
204. Աստվածընկալ եկեղեցու հարավակողման փոքր եկեղեցու հատակագծի ներքին չափերը
205. Մահիտլուի եկեղեցու հյուսիսային պատի արձանագրությունների խումբը
206. Մահիտլուի եկեղեցու հյուսիսային պատի ուտուցիկ գրերով արձանագրությունը
207. Հառիճի քառակող կոթողը (Հայաստանի Պետական Պատմական թանգարան)
208. Ճգնավորի գերեզմանախաչը Հառիճավանքում
209. Երջանիկ ծերունու գերեզմանաքարը Հառիճավանքում
210. Հառիճավանքի տաճարի արևելյան ճակատի պսակի ուտուցիկ գրերով արձանագրությունը
211. Հառիճավանքի տաճարի հյուսիսային ճակատի քիվը
212. Արթիկի կաթողիկե եկեղեցին հարավ-արևելքից
213. Արթիկի կաթողիկե եկեղեցու հարավային աբսիդի քանդակազարդ որմնակամարները
214. Արթիկի կաթողիկե եկեղեցու արևմտյան աբսիդի որմնաղեղներից մեկը և նրա տակի արձանագրությունը
215. Արթիկի փոքր եկեղեցին հարավ-արևմուտքից



216. Արթիկի փոքր եկեղեցին հարավ-արևելքից
217. Արթիկի փոքր եկեղեցու արևմտյան մուտքի ճակատի արձանագրությունը
218. Լմպատավանքը հարավ-արևմուտքից
219. Լմպատավանքը հարավ-արևելքից
220. Մահմուտջուվի հնագույն եկեղեցին հյուսիսային կողմից
221. Մահմուտջուվի հնագույն եկեղեցին արևմտյան կողմից
222. Մահմուտջուվի հնագույն եկեղեցու արևմտյան մուտքի ճակատի արձանագրությունը
223. Մահմուտջուվի մոտ գտնված 1036 թվականի գերեզմանաքարի արձանագրությունը
224. Ադիամանի 7-րդ դարի եկեղեցու արևմտյան ճակատը
225. Օշականի Մանկանոց եկեղեցու հատակագիծը
226. Օշականի Թուխ Մանուկ մատուռի հատակագիծը
227. Օշականի Փոքր Թուխ Մանուկի հյուսիսային կողմի պատվանդանավոր խաչքարը
228. Օշականի Փոքր Թուխ Մանուկ մատուռի հատակագիծը
229. Բաթրինճի ամրոցի ներքին հարկի հատակագիծը
230. Ագարակի եկեղեցու և փլատակ գավթի հյուսիսային պատի հատակագիծը
231. Փարպիի Ծիրանավոր եկեղեցու հատակագիծը
232. Փարպիի Թարգմանչաց եկեղեցու հատակագիծը
233. Փարպիի ս. Գրիգոր եկեղեցու հատակագիծը
234. Տեղերի եկեղեցու և գավթի ընդհանուր տեսքը հարավ-արևելքից
235. Տեղերի եկեղեցու գավթի արևմտյան մուտքը
236. Տեղերի եկեղեցու գավթի ներքին տեսքը
237. Ավանի (Աշտարակի շրջան) 5-րդ դարի եկեղեցու հատակագիծը
238. Կոչի 7-րդ դարի եկեղեցու հատակագիծը
239. Կոչի ջրամբարի հատակագիծը
240. Կոչի բազիլիք եկեղեցու հատակագիծը
241. Մարմաշենի կաթողիկե եկեղեցին հարավ-արևմուտքից
242. Մարմաշենի 7-րդ դարի ավերակ եկեղեցին հյուսիսային բարձր բլուրի վրա
243. Մարմաշենի Վահրամաշեն և ավերակ եկեղեցիները
244. Մարմաշենի Վահրամաշեն տաճարի հյուսիսային կողմի եկեղեցու ներքին տեսքը
245. Մարմաշենի փոքր եկեղեցին (Վահրամաշեն եկեղեցու հարավային կողմում)
246. Մարմաշենի փոքր եկեղեցու հատակագիծը
247. Թարգմանչաց եկեղեցու հատակագիծը
248. Անիի Գագկաշեն բոլորակ եկեղեցու արտաքին քանդակազարդ աղեղներ
249. Անիի Գագկաշեն բոլորակ եկեղեցու մուտքերից մեկը
250. Անիի Գագկաշեն բոլորակ եկեղեցու քանդակազարդ բեկորներ
251. Անիի պեղածո բնակելի շենքերի մնացորդներ
252. Անիի փլած մինարեի մոտ Մառի պեղած եկեղեցին
253. Ավերակ եկեղեցու պեղումներ Անիում
254. Զվարթնոցի շրջանում բացված կավե դագաղ
255. Հռիփսիմեի մոտ դամբարանների պեղումներ 1930 թվին
256. Այգեգործական ընկերության (Հռիփսիմեի մոտ) փորումների ժամանակ հայտաբերած դամբարանների դիրքը
257. Այգեգործական ընկերության (Հռիփսիմեի մոտ) փորումների ժամանակ հայտաբերած Ա դամբարանի չափերը
258. Գեղարդաձորի պեղման վայրի ընդհանուր տեսարանը
259. Գեղարդաձորում պեղված շենքի հարավային պատի զույգ խորշերը
260. Գեղարդաձորում պեղված շենքի հարավային պատի խորշը
261. Գեղարդաձորում պեղված շենքի որմնասյուներից մեկը
262. Գեղարդաձորում պեղված շենքի որմնասյուների աղեղ

## ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ


*Թորոս Թորամանյան*
*18, 24, 44, 46, 56, 62, 63, 78, 79, 84, 89, 91, 100, 106-108, 110, 112, 113, 137-143, 151, 162, 194, 205-207, 212, 215-224, 241, 242, 244, 245, 252*

*Արամ Վրույր*
*161, 164-167, 251,*

*Արտաշես Վրույր*
*10, 28, 68, 70, 71, 81, 93,103, 104, 152,153, 203, 213, 234-236*

*Արա Վրույր*
*11, 27, 29, 87, 88, 96, 97, 99, 109, 210, 243*

*Գարեգին Հովսեփյան*
*15, 20, 21, 23, 30, 59, 67, 74, 75, 94, 125, 169, 170, 179*

*Հովհաննես Քյուրքչյան*
*101, 102*

*Արտաշես Շիրոյան*
*85*

*Կարո Ղաֆթաղարյան*
*49*

*Աշխարհբեկ Քալանթար*
*4, 64, 66*


## ՓՈԽՎԱԾ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ


*99, 170, 207*




# ԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

## ա. ՄԱՍՆԱՆՈՒՆՆԵՐ


### Ա

*Աբաս (Բագրատունի) թագավոր 157, 166*
*Աբաս (Բագրատունի) սպարապետ 166*
*Աբովյանց 343*
*Աբուսայիդ Բեհատուր խան 318*
*Ագաթանգեղոս (պատմագիր) 63*
*Ադրիանոս, կայսր 31*
*Ադիզբեկ 159*
*Ալեքսանդր (Մակեդոնացի, աշխարհակալ) 58, 123, 126*
*Ալիշան Ղ. 39, 87, 140, 161, 174, 186, 244, 245, 256, 299*
*Ալփասլան 69*
*Ահարոն 26*
*Ահուրամազդա 124-127, 293*
*Աղպուղա 162, 205*
*Ամիր (Էլիզպարի որդի) 299*
*Ամմոն, աստված 21, 26*
*Անահիտ 125*
*Անանիա եպիսկոպոս (Արշարունյաց) 196, 241*
*Անանիա Նարեկացի 134*
*Անանիա Շիրակացի 302*
*Անաստաս Ակռեցի, կաթողիկոս 105, 141*
*Անթեմիուս Թրալլացի (ճարտարապետ) 60*
*Անքթել Տյուբերոն 128-130, 134*
*Աչոտ (Ա) Բագրատունի 166*
*Աչոտ (Թ. Բագրատունի, Ողորմած), հայոց թագավոր 61, 174, 205*
*Ապիս (աստված) 26*
*Ապլղարիպ (Պահլավունի իշխան) 169, 250, 290*
*Ապողոն 23*
*Ապուղամր 314*
*Առաքել Դավրիժեցի (պատմագիր) 82*
*Ասողիկ (պատմագիր), տե՛ս Ստեփաննոս Ասողիկ*
*Ասուրբանիպալ 126*
*Աս(ս)ուր (աստված) 121, 124, 126, 133*
*Աստղիկ (դիցուհի) 306*
*Ավետիսյան Մանուկ 320*
*Ավետիսյան Վասիլ 256*
*Արամազդ 125*
*Արգիշտի 171*
*Արշակունիներ (Արշակունիք) 54, 57*
*Արտաշ 290*
*Արտաշես Ա. թագավոր 42*
*Արտավազդ, թագավոր 49*
*Արտաքսերքսես 125*
*Ափրիկանոս Աղեքսանդրացի 29*
*Աքեմենյաններ 48, 121*

### Բ

*Բագրատ արքեպիսկոպոս 84*
*Բագրատունի Գագիկ Ա., տե՛ս Գագիկ Ա.*
*Բագրատունիներ (Բագրատունիք) 45, 51, 89, 90, 91, 134, 139, 142, 150, 153, 180, 182, 183, 185, 186, 187, 220, 273, 283, 302, 311, 314, 316*
*Բալդրուշայտիս (ժյուռժիս) 52, 54, 57*
*Բասմաճյան (Բասմաջյան) Կ(արապետ) 65, 341-343*
*Բարսեղ կայսր 77 (տե՛ս նաև Վասիլ)*
*Բել 123*
*Բեկ (բերդապահ) 299*
*Բեհատուր խան 318*
*Բուդդա 122*
*Բուտ Առավեղյան (իշխան) 153, 262*

### Գ

*Գագիկ Ա. (Արծրունի թագավոր) 50*
*Գագիկ Ա. թագավոր (Բագրատունի, Շահնշահ) 45, 60, 66, 113, 136, 142, 174, 241, 305, 308*
*Գայլ, որդի Ապուղամրի 314*
*Գասպարյան Լ. (ճարտարապետ) 106*
*Գասպարյան Քերիմ 299*
*Գարեգին եպիսկոպոս, տե՛ս Հովսեփյան Գարեգին*
*Գևորգ 196*
*Գևորգ (2-րդ, Կարնեցի) կաթողիկոս 108, 110*
*Գևորգ (4-րդ) կաթողիկոս 84, 86, 87, 175*
*Գևորգ Քեղա իշխան 168*
*(ս.) Գևորգ (Գէորգիոս) 148, 241*
*Գնդատուրգ մեղավոր 191*
*Գնթունի իշխան 160, 239*
*Գրիգոր 140*
*Գրիգոր առաջնորդ (Հառիճավանքի) 245*
*Գրիգոր Եղյուտոր 180*
*Գրիգորիկ 189*
*Գրիգոր Լուսավորիչ 63, 107, 108, 163*
*Գրիգոր Մագիստրոս (Պահլավունի) 155, 168, 174, 189, 290*
*Գրիգոր Մամիկոնյան 153, 192*
*Գրիգոր Պահլավունի (իշխան) 290*
*Գրիգոր (Սարտր...) 191*
*Գրիգորյան Արմենակ 301*
*Գրիմմ 335*

### Դ

*Դաղյան (Դատյան) Խաչիկ ծ. վարդապետ 109, 117, 133, 134, 150, 157, 190, 191, 241, 255, 266, 333, 334, 337, 340, 341, 343-345*
*Դանիել (մարգարե) 174, 296*
*Դանիել (ոմն) 300*
*Դավթյան Սիրական 198*
*Դավիթ 248*
*Դավիթ Գնթունի 160*
*Դավիթ մարգարե 27, 35*
*Դավիթ վարդապետ 171*
*Դարեհ 125*
*Դիել Շ. (Տիլ) (Diehl Charles) 38, 113, 335*
*Դիելաֆուա (Dieulafoy) 128*
*Դիոկղետիանոս (կայսր) 59*
*Դիոսկորոս կաթողիկոս 302*
*Դյուբուա (դե Մոմպերե) 263, 335*
*Դոմետիանոս 29*

### Ե

*Եզյան 305*
*Եզր կաթողիկոս 156*
*Ելտկուզ Ամիրա 302*
*Եղիազար կաթողիկոս 83, 84, 156*
*Եղիշե (պատմագիր) 48, 129, 130, 134*
*Երեմիա երաժիշտ 243, 244*
*Երջանիկ ծերունի 245*
*Երվանդ (հայոց թագավոր) 159*

### Զ

Զաքարե (Ամիր սպասալար) 69, 166, 168, 173, 195, 269, 317, 318
Զաքարիա պատմիչ (Քանաքեռցի) 296
Զաքարյան տոհմ 162
Զևս (աստված) 21, 23, 24, 33
Զրադաշտ (Զորոաստր) 120-122, 124-126

### Է

Էլիզպար 299
Էուդոքս 126

### Թ

Թաթուլ 189
Թամանյան Ալեքսանդր 84, 86, 328, 339
Թեոդորոս իմաստասպետ 29
Թովմա Արծրունի, պատմագիր 42, 50, 108, 110
Թորամանյան Թ(որոս) 61, 65, 91, 101, 106, 110, 137, 243, 255

### Ի

Իսիդոր (Իզիտոր) Միլետացի 60
Իվանե (Աթաբակ) 168, 205

### Լ

Լալայան Ե(ղիանդ) (ազգագրագետ) 109, 175, 266, 310, 311
Լայարդ 38
Լեման Հաուպտ 42, 338
Լյուդացի Քսանթոս 126

### Խ

Խալաթյան Բագրատ 288
Խաչիկ կաթողիկոս 150
Խաչիկ վարդապետ, տե՛ս Դաղյան Խաչիկ ծ. վարդապետ
Խոսրովանույշ թագուհի 90, 189
Խորեն արքեպիսկոպոս 84
Խորենացի, տե՛ս Մովսես Խորենացի
Խրիմյան կաթողիկոս 273, 341, 343

### Կ

Կամբիզ 125
Կամսարական իշխաններ 91
Կամսարականներ 68, 89, 90, 139, 161, 180, 220, 226, 311, 314
Կամսարականների տոհմ (ցեղ) 161
Կատրանիդե թագուհի (Դագիկի կինը) 60, 62, 186
Կարայպետ 207
Կարանյանց Հակոբ 157, 318
Կարապետ դպիր 188
Կիպրիանոս 31
Կիրակոս Գանձակեցի (պատմագիր) 267
Կիրակոս վարդապետ 216, 217
Կյուրոն 190
Կյուրոս 125, 132
Կոմիտաս կաթողիկոս 82, 84
Կոնդակով 355
Կոնֆուցիուս 122
Կոստանդ կայսր 105
Կոստանդիանոս կայսր 32, 33, 58-60
Կոստանդին Մոնոմախոս 3
Կորյուն վարդապետ 34111
Կրեսոս 23

### Հ

Հաջի 337
Հասան 164
(ս.) Հեղի 33
Հեռմիպպոս 126
Հերակլ կայսր 180
Հերոդոտ 123
Հրսսո Բուտկ 296
Հյուսեին խան Սարդար 299
Հոնենց, տե՛ս Տիգրան Հոնենց
Հովանես 222
Հովհան (Բագարանցի հակաթոռ կաթողիկոս) 150
Հովհաննես Ավետարանիչ 26
Հովհաննես (Հովհան) կաթողիկոս Դրասխանակերտցի, պատմագիր 105, 110, 150, 152, 155, 190, 270
Հովհաննես Կոզերն վարդապետ 48
Հովհաննես Սմբատ (Բագրատունի), թագավոր 60, 142, 180, 196
Հովհաննես վարդապետ 171
Հովհաննես վարդապետ (Պլուզ) 48
Հովհաննիսյան Աստուր 327
Հովսեփ 25
Հովսեփյան Գարեգին (վարդապետ, եպիսկոպոս) 274, 337
Հռիփսիմե կույս 63
Հուլաղու խան 103
Հուստինիանոս, կայսր 33, 58-61, 100

### Ղ

Ղազար Փարպեցի, պատմագիր 74, 83, 108
Ղևոնդ (երեց), պատմագիր 109
Ղուկաս (որդի Տեր Ղազարի) 189

### Մ

Մահմեդ 102
Մամիկոնյաններ 154
Մառ Ն(իկոլայ) 43, 67, 102, 159, 194, 225, 305-308, 310, 311, 314-316, 335, 336, 338, 340, 341, 344, 345
Մառ (տիկին) 306
Մասպերո (Maspero G.) 121, 123, 124, 126, 128
Մարիամ 299
Մարիամ (Աստվածածին) 198, 200, 244, 263, 289
Մարկոս Ավրելիանոս, կայսր 31
Մարտինոս (Հիպատոս) 29
Մարտիրոս 196
Մելիքյան Հմայակ 300
Մելիքյան Մեսրոպ 300
Մայե 341
Մենիկ (Ապուղամրի կողակից) 314
Մենուա Ա. 41
Մեչչանինով (Իվան Իվանիչ) 297
Մեսրոպ Մաշտոց 108, 175
Մեսրոպ (վարդապետ, արքեպիսկոպոս, Տեր-Մովսիսյան) 84, 109, 320, 336
Միթրա 127
Միսայիլ 205
Միքայել (Անիի վարդապետ) 220, 342
Միքայել Ասորի (պատմագիր) 29
Մխիթար Գոշ 157
Մխիթար Նոսնացի 241
Մկրտիչ 333
Մովսես Խորենացի 41, 151, 159
Մովսես կաթողիկոս (Եղվարդեցի) 158
Մովսես Կաղանկատվացի 105, 110
Մովսես Մարգարե 25-29, 33, 36, 55, 75, 82, 126
Մովսես (Սյունեցի) վարդապետ, ապա կաթողիկոս 82
Մորգան Ժ(աք) (J. de Morgan) 132
Մորիկ (Մավրիկ) կայսր 75, 175, 267
Մռավյան (Աքանաղ) 335
Մռտո 342

### Ն

Նաբուգոդոնոսոր 123
Նաթան մարգարե 27
Նահապետ կաթողիկոս 176
Ներոն 156
Ներսեհ Կամսարական (Ապուհյուպատ պատրիկ Արշարունյաց տեր) 160, 180, 203, 301, 302
Ներսես Գ. կաթողիկոս (Տայեցի, Շինող) 63, 82, 84, 104, 105, 107, 109, 110, 117, 119, 164, 170, 176, 255
Ներսես Լամբրոնացի 274
Նեփչուն, աստվածություն 24
Նոյ 75, 76

### Շ

Շահխաթունյան 176, 299
Շահնշահ (Զաքարեի որդի) 205, 209, 269
Շահրիարցի Օհան Սուլթան 207
Շամիրամ, թագուհի 41
Շանտր 263
Շարդեն (Chardin) 121, 122, 129, 131, 133
Շիրակունի քահանա 195
Շուազի (Օգյուստ, Choisy A.) 38, 44, 52, 57, 122, 335

### Ո

Ոլիմպիական Զևս, տե՛ս Զևս աստված
Ովաննես, քարագործ 298

### Պ

Պալաքյան (բժիշկ) 316
Պախման 335
Պահլավունիներ 139, 155
Պասկևիչ 195, 198, 205, 237, 242
Պատրուբուլոս 29
Պլինիոս 126
Պլուզ, տե՛ս Հովհաննես վարդապետ
Պոզանիաս (աշխարհագիր) 125
Պողոս [առաքյալ] 25, 28, 30, 33
Պոսիդոն 21
Պորցիուս Կատոն (Porcius Caton) 35
Պռոշ իշխան 333
Պտղոմեոս 161, 166, 302
Պուլեյ լը Կուզ (Լբկուզ) 39, 256-258

### Ռ

Ռա, աստված 21
Ռամե Դանիել (Daniel Ramée) 44, 121, 123, 124
Ռամզես 58
Ռուզուքան 164

### Ս

Սաբել Լիբիացի 31
Սաթենիկ, թագուհի 42
(ս.) Սահակ 108
Սահակ Կամսարական 87, 185
Սահրադյան Սահակ քահանա 195
Սամեհան, ճարտարապետ 166
Սասանյաններ 54, 57, 119, 121, 132
Սարգիս 185, 280
Սարգիս (ամիր) 220
Սարգիս (եպիսկոպոս) 308
Սարգիս Ճոն 168
Սարգիս Միլենց 223-225
Սարգոն 58
Սարտուր Ա. 41
Սեբեոս, պատմագիր 107, 109, 150
Սելևկյաններ 57, 99
Սենեքերիմ 58
Սիթի խաթուն 205
Սիմեոն կաթողիկոս (Երևանցի) 176, 261
Սմբատ (Բագրատունի Տիեզերակալ, Շահնշահ, Շիրակի թագավոր) 45, 60-62, 166, 297
Սմբատ Պահլավունի (մագիստրոս) 153
Սմբատյան Մեսրոպ եպիսկոպոս 297
Սողոմոն (Իմաստուն) 26-28, 59, 60
Սոչան (եղծված անձնանուն) 210
Սուլթան Սելիմ 302
Սոփիա (կին Վահրամ Պահլավունու) 282
Ստեփաննոս Ասողիկ պատմագիր 45, 60, 166, 306
Ստեփաննոս Օրբելյան, արքեպիսկոպոս Սյունյաց, պատմագիր 113
Ստրաբոն (Ստրապոն) 17, 125, 129, 166
Ստրշիգովսկի (Ստրժիգովսկի) Հ(ովսեփ) 38, 47, 53, 102, 113, 190, 252, 335, 345

### Վ

Վահան Ամատունի 176, 263
Վահան Մամիկոնյան (զորավար, մարզպան) 81, 82, 84, 175
Վահրամ Պահլավունի 142, 169, 170, 274, 279, 281
Վաղենտիանոս 31
Վաչե 163
Վաչե (Վաչուտյան) իշխան 169, 173
Վաչուտյաններ 155
Վասակ (Խաղբակի որդի) 164
Վասիլ Բյուզանդական կայսր 60, 62 (տե՛ս նաև Բարսեղ կայսր)
Վարդան 194, 216
Վեստ Սարգիս 162, 174, 189
Վ(իկտոր) Հյուգո 102
Վ(ի)շտասպ, տե՛ս Դարեհ
Վոգյուե 57
Վոհումանո 126
Վրույր (Արամ) 308

### Տ

Տարագրոս 329, 331
Տեկտանդեր 82
Տեոթուր Տարապ, մովպետ 129
Տեոթրոնոս 17
Տեր Խոսրով քահանա 195
Տեր Ղազար հայր Ղուվասի 189
Տեր-Մինասյան Երվանդ 274
Տեր-Մկրտչյան Գալուստ 343
Տեր Մովսիսյան Մեսրոպ, տե՛ս Մեսրոպ
Տեր-Սարգսյան Քրիստափոր 337-339
Տեքսիե (Շարլ) 38, 44, 89, 335
Տիբերիոս, կայսր 125
Տիգրան (Հոնենց) 221, 316, 318
Տիգրան Մեծ 42, 49
Տիլ Շ., տե՛ս Դիել Շ.
Տիրան, թագավոր 278
Տիրան պապ 278
Տյուպուա, տե՛ս Դյուբուա
Տրայանոս, կայսր 31, 35, 63
Տրդատ Ա. թագավոր 156
Տրդատ Գ. թագավոր 54, 107, 163, 253
Տրդատ ճարտարապետ 60-63, 66, 114, 150

### Ր

Ռոսինոս 29

### Ու

Ումեկ 216

### Փ

Փավստոս, պատմագիր 74
Փիլիպյան Աղեքսանդր, տե՛ս Ալեքսանդր Մակեդոնացի
Փիլիպոս կաթողիկոս 156, 175
Փորթուքալ (Փորթուգալ) Միքայել Փաշա 129, 130, 134

### Քեղա

Քեղա Գևորգ իշխան, տե՛ս Գևորգ Քեղա
Քեր-Բորթ, անգլ. ճանապարհորդ 317
Քսերքսես 67, 123, 126
Քուրդ իշխան (Վաչուտյան) 148, 149

### Օ

Օրբելյան, տե՛ս Ստեփաննոս Օրբելյան արքեպիսկոպոս Սյունյաց
Օքյուզ 125

### Ֆ

Ֆաթիմ սուլթան Մահմեդ 58
Ֆարհատ փաշա 299
Ֆոսեյյոն Հենրի 53

# Բ· ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ


## Ա

Ագարակ (Ագրակ) գյուղ 91, 140, 174, 180, 189, 269
Ագարակի եկեղեցի (5-րդ դար) 140
Ագարակի եկեղեցի (7րդ դար) 139, 140, 269
Ադիաման գյուղ [Թալինի շրջան] 40, 147, 174, 196, 198, 251, 252, 285, 289, 300
Ադիամանի բերդ 198
Ադիամանի եկեղեցի (տաճար) 97, 141, 197, 254
Ազատ (գետ) 156
Ազատավան (գյուղ) 175
Ազերպեյան (Azerbeijan) 132, 133
Աթենք 24, 126, 130
Աթենքի Ակրոպոլ 24
Ալաճա (լեռ), տե՛ս Ալաջա լեռ
Ալաճալի (գյուղ) 140
Ալաճալիի եկեղեցի 140
Ալաման (Ալամ), գյուղ 179
Ալամանի (Ալամի) ս. Անանիա եկեղեցի (տաճար) 67, 179, 180, 232
Ալայաթի դամբարան 23
Ալայեղդինի մզկիթ (Դոնիայում) 45
Ալաշկերտ 205, 242
Ալաջա լեռ 50, 153, 180
Ալափարս (գյուղ) 140
Ալափարսի եկեղեցի 140
Ալեքսանդրապոլ, տե՛ս Լենինական
Ալժիր 44
Ալիբեկլու (գյուղ) 323
Ալիքուչակ (գյուղ) 242
Ալպյաններ 17
Ախուրյան (գետ) 50, 134, 159, 160, 166, 170, 171, 173, 195, 211, 218, 220, 221, 224, 233, 234, 283, 314
Ախուրյանի ձոր 218, 221, 222, 233
Ախուրյանի ձորեզր 218
Ախտայի շրջան 155
Ակոռի (գյուղ) 141
Ակոռիի եկեղեցի 141
Ակրիժանթ 24
Ահակչի (Ահագչի, գյուղ) 198
Աղավնատուն (գյուղ) 175, 256, 258-261, 279, 297, 333
Աղթամարի եկեղեցի 39
Աղթամիր (Աղթամուր) գյուղ 175
Աղթամիրի (Աղթամուրի) ամրոց 268
Աղջաղալա (Աղճաղալա, այժմ՝ Բազմաբերդ) գյուղ 51, 256-259
Աղջոց վանք 141, 168
Աղվերան (գյուղ) 141
Աղց (գյուղ) 141, 279, 285
Աղցի Արշակունյաց դամբարան 142-144
Ամբերդ (Անբերդ) 142, 144, 155, 273-275
Ամբերդի (Անբերդի ամրոց, դղյակ) 142, 274, 279
Ամբերդի բերդաշրջան 51
Ամբերդի գետ 51
Ամբերդի եկեղեցի 142, 145
Ամբերդի պարիսպ 142, 144
Ամբերդի ջրանցքներ 51
Ամերիկա 18
Այա-Սոֆիա (տաճար) 33, 38, 44, 59-62, 100, 101, 114, 226
Այլաբերդ (գյուղ) 140
Այղր լիճ 321
Այրարատ (Նահանգ) 73, 142, 152, 160
Այրիվանք, տե՛ս Գեղարդավանք
Անբերդ, տե՛ս Ամբերդ
Անդրկովկաս 55, 56
Անի (գյուղ) 67, 214-216, 218, 311, 312
Անի կայարան (երկաթուղու) 159
Անի Պեմզա (ավան) 159
Անի (քաղաք) 38, 44, 45, 51, 54, 58, 60-62, 66-69, 74, 78, 104, 119, 134, 135, 139, 142, 144, 148, 150, 153, 157, 162, 179, 195, 196, 213, 218, 220-222, 225, 226, 233, 250, 273, 283, 298, 308, 310, 311, 313, 314, 317, 337, 342, 343
Անիի Աղջկաբերդ 51, 218, 220, 221, 223, 224, 318
Անիի Աղջկաբերդի (Ղըզղալա, Ղըզղալայի) ս. Աստվածածին (եկեղեցի) 69
Անիի Ամենափրկիչ, տե՛ս Անիի Փրկիչ եկեղեցի
Անիի այրեր 220, 221, 237
Անիի Ապուղամրենց ս. Գրիգոր եկեղեցի 66, 68, 136, 148, 196
Անիի Առաքելոց եկեղեցի 67, 69, 97, 113, 196, 241, 317
Անիի ավերակներ 262
Անիի բարձրավանդակ 220, 221
Անիի Բեխենց վանք 69, 223
Անիի բուրգեր 45, 136
Անիի Գագկաշեն ս. Գրիգոր եկեղեցի 45, 60, 66, 67, 113, 118, 134, 196, 338, 344
Անիի գերեզմանոց 215
Անիի (ս.) Գրիգոր Լուսավորիչ (Նախշլի) 69
Անիի Դվին դուռ 135
Անիի Թանգարան 159, 305, 307, 312
Անիի իշխանական պալատ 221 (տե՛ս նաև Սահմատինի պալատ)
Անիի Լուսավորիչ եկեղեցի 69, 135, 196, 218, 220-224, 242
Անիի կաթողիկե (Մայր եկեղեցի) 39, 60, 67, 134, 141, 215, 224, 228, 234, 308, 329
Անիի կամուրջ 50, 134, 218, 220, 222-225, 283, 310
Անիի Կարուց դուռ 136, 2015, 309
Անիի Կեդան (Կետան) Կելմեզ (գետնուղի) 118, 221
Անիի Կուսանաց վանք (անապատ) 220, 222-225
Անիի Հոնենցի գերեզման 221
Անիի Հովվի եկեղեցի 67, 68, 104, 110, 134, 135, 212-215 (տե՛ս նաև Նախրճուն ժամը)
Անիի Մայր եկեղեցի, տե՛ս Անիի Կաթողիկե
Անիի Մանուչեի մզկիթ 224, 225, 317
Անիի Մինջաբերդ 221, 225, 254, 294, 314
Անիի Մինջաբերդի պալատ 68
Անիի պարիսպներ 45, 61, 134-136, 142, 217, 222, 225, 317
Անիի պեղածո բնակելի շենքեր 309
Անիի վիմափոր եկեղեցի 219
Անիի փլած մինարե 310
Անիի Փրկիչ (Ամենափրկիչ) եկեղեցի 69, 196, 211, 220, 224, 225, 290
Աշնակ 146
Աշտարակ (գյուղ) 146
Աշտարակի Միրանավոր (բազիլիկ) եկեղեցի 146, 190, 196
Աշտարակի կամուրջ 146
Աշտարակի շրջան 153, 155, 158, 173
Ապարան 54, 146, 165, 169, 190, 296
Ապարանի եկեղեցի 110, 146-148, 180, 190, 196, 277 (տե՛ս նաև Քասախի եկեղեցի)
Ապարանի շրջան 146, 150, 155, 160, 166
Առաջավոր Ասիա 58
Ասիա 21, 55, 102
Ասորա-Քաղդեա 55, 105, 121, 122, 124
Ասորեստան 37, 67, 121, 124, 125, 128, 132
Ասորիք 32, 65
(ս.) Աստվածածին եկեղեցի, տե՛ս Գոշավանք Աստվածածին
(ս.) Աստվածածին Նեղուսի (եկեղեցի) 151
Աստվածընկալ (գյուղ) 148, 242, 243
Աստվածընկալի եկեղեցի 149, 151, 242
Ավան (գյուղ, Աշտարակի շրջան) 275, 277
Ավան (գյուղ, Կոտայքի շրջան) 150, 195
Ավանի (Աշտարակի շրջան) եկեղեցի 277
Ավանի (Կոտայքի շրջան) եկեղեցի 97, 113, 150
Ավանի Միրանավոր եկեղեցի, տե՛ս Ավանի (Կոտայքի շրջան) եկեղեցի
Ավանի (ս.) Հովհաննես մատուռ 195
Ատրոպատեն (Atropatie, Atropatene) 125, 132
Ատրպատական 121, 126
Արարիա 100, 315
Արագած (լեռ) 61, 139, 140, 142, 146, 151, 160, 166, 167, 169-171, 173, 174, 180, 237, 253, 271, 273, 275, 279, 289, 294, 295
Արագածի շրջան 243
Արագածոտն գավառ 142, 152, 155, 160, 261
Արազի (գյուղ) 212
Արազպուրուն 299
Արալբխի բերդ 212
Արայի գյուղ 212
Արայի լեռ 155, 158, 165
Արարատ (լեռ) 47, 75, 139
Արարատյան աշխարհ 37, 270
Արարատյան դաշտ 104, 107
Արաքս (գետ) 50, 132, 159
Արգինա (քաղաք, բերդաքաղաք, բերդ) 51, 150
Արդար Դավիթ (բոլորակ չինություն) 261, 262, 297, 333
Արևելյան կայսրություն (Բյուզանդիա) 33
Արևելք 21, 44, 48, 53, 54, 55, 99, 126
Արևմուտք 21, 44, 48
Արևմտյան Ասիա 55
Արզական (գյուղ) 151
Արզականի եկեղեցի 151
Արթիկ (գյուղ) 77, 151, 152, 167, 169, 239, 245, 246, 248, 189, 192
Արթիկի եկեղեցի (փոքր, 5-րդ դար) 151, 158, 203, 249, 250
Արթիկի կաթողիկե (մեծ) եկեղեցի 152, 209, 239, 240, 247, 248, 271, 277
Արթիկի շրջան 165, 166, 174
Արխվալի (գյուղ) 237, 289
Արմավիր (քաղաք, մայրաքաղաք) 44, 64, 151
Արմուտլու (գյուղ՝ այժմ Տուֆաշեն) 288
Արմուտլուի (Տուֆաշենի) Թուխ Մանուկ 288
Արուճ (Թալիշ) գյուղ 152
Արուճի Գրիգոր Մամիկոնյանի ապարանք 49, 152
Արուճի եկեղեցի (տաճար) 100, 152
Արտամետ (քաղաք) 42
Արտաշավան (գյուղ, հնում՝ Իլանչալան) 153
Արտաշատ (քաղաք) 42, 44, 64, 193, 194
Արտաշար (գյուղ, այժմ՝ Վերին Արտաշատ) 157
Արտավասիկ (վայր) 155
Արցախ 157, 162

## Բ

Բաբելոն (Babylon) 38, 122, 123, 125
Բագարան 51, 99, 114, 144, 152, 153, 228, 233, 234, 263, 336
Բագարանի բերդ 153
Բագարանի (ս.) Գևորգ եկեղեցի 172, 233
Բագարանի (ս.) Թեոդորոս կաթողիկե եկեղեցի 99, 152, 153, 160, 210, 226, 229-233, 241, 262
Բագարանի (ս.) Շուշան եկեղեցի 153
Բագնայր (Ղոզլիճա, գյուղ) 69, 153, 234, 235, 240, 333
Բագնայրի ս. Աստվածածին (տաճար), եկեղեցի 234, 235
Բագնայրի մեծ եկեղեցի 235, 236
Բագրատունյաց պալատ, տե՛ս Անիի Մինջաբերդի պալատ
Բաթրինճ (գյուղ) 268, 269
Բաթրինճի ամրոց 268
Բախչալար (Նախկին՝ Հաջի Բայրամ), գյուղ 159
Բակտրիա 124-126
Բաղտատ 102, 103
Բանա (գյուղ) 104
Բանայի եկեղեցի 338, 344
Բաշ Ապարան, տե՛ս Ապարան
Բաշգյուղ 292
Բարձր Հայք (Բարձր Հայաստան) 132
Բարձրաքաշ ս. Աստվածածին, տե՛ս Թումանյան գյուղի ս. Գրիգոր եկեղեցի
Բաքու 128, 129, 131-133
Բերդիկ (գյուղ) 237
Բերսի (Փերսի), գյուղ 272, 279
Բյուզանդական կայսրություն 32, 49, 58, 60, 62, 65, 100, 101, 109
Բյուզանդիա (Բյուզանդիոն) 38, 44, 45, 58, 60, 62, 65, 100, 114, 134, 267, 315
Բյուրական (գյուղ) 141,142, 155, 270, 300
Բյուրականի ս. Հովհաննես եկեղեցի 155
Բուլգարիա 341
Բուժական (գյուղ) 155
Բուղուտլու (Պուղուտլու) սար 210, 252
Բջնի (գյուղ) 140, 155, 173, 174
Բջնիի ս. Աստվածածին եկեղեցի 155
Բջնիի բերդապարիսպներ 156
Բջնիի գետակ 151
Բրիտանական երկիր 17

## Գ

Գաղղիա (Գալլիա) երկիր 17, 18, 129
Գայանե (եկեղեցի, վանք, տաճար, վկայարան) 66, 156, 319
Գանձասարի եկեղեցիներ 38
Գառնի 42, 44, 54, 57, 65, 156, 157, 168, 194, 345
Գառնիի Խոսրովաղուխտի հովանոց 156
Գառնո վանք 39
Գավրինիս 16
Գարնաք (Եգիպտոսում) 17, 20, 24
Գարնաք (Ֆրանսիական սահմանների վրա) 24
Գեղարդաձոր 328, 330-333
Գեղարդավանք (Այրիվանք) 141, 145, 243, 331
Գեղարդավանքի վիմափոր տաճար 145
Գետիկներ 51
Գետկա վանք 157
(ս.) Գևորգ եկեղեցի, տե՛ս Արզականի եկեղեցի
Գլիձոր 69, 136, 215, 218, 219, 221, 224
Գյավուր Ղալա (ամրոց) 271, 272
Գյոզալդերե (գյուղ) 237
Գյուլլե Կոնդ (բլուր) 175
Գոյթուլ (գյուղ), տե՛ս Ղոյթուլ
Գոնիա 45
Գոշավանք (Նոր Գետիկ, Գոշ Մխիթարի վանք) 157
Գոշավանք ի (ս.) Աստվածածին եկեղեցի 157
Գոշավանքի Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի 157

Գոշավանքի (ս.) Կարապետի եկեղեցի 157
(ս.) Գրիգոր գյուղ (Վաղարշապատ) 110
(ս.) Գրիգոր եկեղեցի, տե՛ս Զվարթնոց
Գրիգոր Մամիկոնյանի բազմանկյունի եկեղեցին Սոգյութլիի ձորալանջերի վրա 51, 152
Գրիգոր Մամիկոնյանի պալատն Արուճում 49

## Դ

Դալի Դակիրման 237
Դախման 128
Դաղստան 132
Դանուբ (գետ) 51
Դարբանդ (գյուղ) 40, 157, 253
Դղմաշեն (գյուղ) 157
Դեբետի կամուրջ 51
Դըղըր (գյուղ) տե՛ս Տեղեր
Դիդի Կոնդ 175 (տե՛ս նաև Մեծ Կոնդ)
Դիլիջան 157
Դիրակլար 43, 157
Դիրակլարի եկեղեցի 270
Դնեստր (գետ) 53
Դոն (գետ) 52
Դորիա 23
Դուռն Անվո (Կարսում) 166
Դպրեվանք կամ Դպրավանք (գյուղ) 157
Դվին (քաղաք) 44, 64, 76, 82, 84, 108-110, 157, 193, 194, 215, 345
Դվինի ավերակներ 157
Դվինի Կաթողիկե (ս. Գրիգոր եկեղեցի) 157, 158, 193, 270
Դվինի միջնաբերդ 157
Դվինի (ս.) Սարգիս եկեղեցի 105

## Ե

Եգեյան ծով 21
Եգիպտոս 18, 20, 21, 23, 25, 26, 37, 52, 67, 76, 91, 100, 123, 128
Եգրեկ, տե՛ս Ագարակ Եղվարդ (գյուղ) 51, 140, 159, 193, 243, 263, 345
Եղվարդի՝ Գրիգոր Մամիկոնյանի կառուցած տաճար 192, 193
Եղվարդի եկեղեցի (5-րդ դար) 193, 270
Եղվարդի եկեղեցի (կաթողիկե, 6-րդ դար) 158, 190, 193, 277, 345
Եղվարդի եռահարկ, փոքր եկեղեցի, զանգակատուն 159, 190, 191
Եպուսայիդի մզկիթ 312
Եվրոպա 16, 17, 32, 43, 47, 49, 52, 55, 58, 102, 104, 314
Երազգավորս 51
Երասխաձոր 102
Երասխաձորի եկեղեցի 97
Երևան 150, 156, 159, 163, 193, 277, 323, 328
Երերույքի տաճար (եկեղեցի, բազիլիկ) 44, 87, 94-96, 100, 113, 144, 190, 246, 270, 277, 291
Երիզու 124
Երկրորդ Կոնդ, տե՛ս Գյուլլե Կոնդ
Երվանդաշատ (քաղաք) 159
(ս.) Երրորդության տաճար, տե՛ս Տեկորի տաճար
Երուսաղեմ 27, 28, 30
Եփրատ (գետ) 16, 123, 139

## Զ

Զանգու (գետ) 323
Զանգուի առու 109, 320, 323, 325
Զարնճա (գյուղ) 160
Զարնճայի եկեղեցի 210
Զովունի (Նախկին Մոլլա Ղասում) գյուղ 160
Զովունու եկեղեցի 160
(ս.) Զորավոր եկեղեցի Կ. Պոլսում 100
Զվարթնոց եկեղեցի, տաճար 45, 54, 60, 63, 64, 66, 68, 75, 84, 89, 98, 100, 101, 103-119, 130, 133, 141, 160, 175, 187, 190, 192, 211, 231, 240, 255, 267, 305, 307, 308, 319-321, 323, 333, 337-341, 343-345

## Է

Էլադա 24
Էկբատան 125
Էջմիածին 81, 82, 87, 98, 104, 108, 117, 169, 251, 255, 279, 297, 298, 318-321, 323, 327, 328, 337-341,
Էջմիածնի (կուլտուր-պատմական, գիտական) ինստիտուտ 98,274
Էջմիածնի հնագիտական թանգարան 323, 324, 326, 327, 334, 345
Էջմիածնի վանք 39, 81, 113, 197, 210, 230, 342, 343
Էջմիածնի տաճար (կաթողիկե, եկեղեցի) 43, 54, 57, 64, 66, 81-86, 97, 99, 187
Էրենքթեոն 24

## Թ

Թալին Ներքին 160-162, 169, 198, 206, 260, 298-300
Թալին Վերին 52, 160-162, 198, 199, 203, 205, 206, 298-302
Թալինի բերդ 207
Թալինի իշևանատուն 51, 52, 208
Թալինի կաթողիկե (եկեղեցի, մեծ եկեղեցի, ս. Աստվածածին) 67, 100, 152, 160, 160, 198, 199, 205, 206, 251, 271
Թալինի կաթողիկեի գերեզմանատուն 161, 198-204, 253
Թալինի միջնաբերդ 168, 208
Թալինի շրջան 140, 146, 160, 161, 171
Թալինի փոքր ավերակ եկեղեցի 207 (տե՛ս նաև Ղարավանք)
Թալինի փոքր եկեղեցի (Ներսեհ Կամսարականի շինած), 204, 207, 208, 302
Թալիշ (գյուղ) 52, 152
Թավուզքյարի եկեղեցի 118
Թարգմանչաց վանք (եկեղեցի) 97, 297
Թարթառ (գետ) 162
Թաքիա (գյուղ) 297
Թերե 21
Թեբեի Ամմոնի տաճար 123
Թիֆլիս 253, 261, 342, 343 (տե՛ս նաև Տփղիս)
Թիֆլիսի Ազգագրական Ընկերություն 310
Թումանյան գյուղ (Ալավերդու շրջան) 154
Թումանյան գյուղի Բարձրաքաշ ս. Գրիգոր եկեղեցի 154
Թունիս 44

## Ի

Իգաձոր 216-218, 221
Իռլանդիա 52
Իսրայել (երկիր) 28
Իտալիա 23
Իրան 126, 127

## Լ

Լենինական 69, 157, 159, 165, 166, 168, 170, 176,, 195, 239, 252-254, 318, 319, 343
Լենինգրադ 345
Լիբանան 27
Լիսեում Պատարի 123
Լմպատա ս. Ստեփաննոս (Լմպատավանք, Լմբատավանք) 77, 78, 151, 208, 209, 239, 246, 251
Լոռի 73, 139

## Խ

Խաչաքիլիսա (այժմ Փարոս) գյուղ 296
Խաչի Ձոր (Անիի մոտ) 214, 218
Խաչի Ձոր (Մարմաշենի մոտ) 171
Խզնավուզ, տե՛ս Ղզնավուզ
Խծկոնք (Խծկունք, Պեշ Քիլիսե) 162, 174, 180
Խծկոնքի (ս.) Աստվածածին եկեղեցի 175
Խծկոնքի (ս.) Լուսավորիչ եկեղեցի 162
Խծկոնքի (ս. Կարապետ տաճար) 162
Խծկոնքի (ս. Սարգիս եկեղեցի) 90, 162, 187, 286
Խծկոնքի (ս. Ստեփաննոս եկեղեցի) 90, 162
Խոթա վանք 162, 163
Խոր Վիրապ 105, 163
Խոր Վիրապի եկեղեցի (վանք) 163
Խորզինի (Կարս) 166
Խորսապատ 46, 67, 68

## Ծ

Ծաղկաձոր 163, 171
Ծաղկաձորի (ս.) Գրիգոր Լուսավորիչ (կաթողիկե) եկեղեցի 164, 165
Ծաղկաձորի (ս.) Հարություն եկեղեցի 165
Ծաղկաձորի (ս.) Նշան կամ ս. Հովհաննես եկեղեցի 164, 165
Ծաղկավանք 165
Ծաղկոցաձոր 136, 215-217, 220, 221, 225, 312

## Կ

Կազանչի (այժմ Մեղրաշեն), գյուղ 165
Կազաչի պոստ 319
Կայենոպոլիս, տե՛ս Վաղարշապատ
Կասպից ծով 55, 102
Կարանլուխ (Ղարանլուղ), գյուղ 165, 166
Կարանլուխի եկեղեցի 165, 166
Կարբի (գյուղ) 165, 173, 268
Կարմիր Վանք (գյուղ) 166
Կարմիր Վանք, տե՛ս Հոռոմոսի վանք
Կարմրավոր եկեղեցի 146
Կարս (Ղարս) 166, 237, 299
Կարսի Առաքելոց եկեղեցի 97, 166
Կարսի բերդ 166
Կարսի բերդի պարիսպներ 166, 167
Կարսի Քորոզլու բերդ 237
Կափրլի, տե՛ս Ղափրլի
Կեչառուս (Կեչառուք) տե՛ս Ծաղկաձոր
Կեսարիա 32
Կյուլեկ Թեփե (Կյուլեք Թեփա) (սար) 161, 300
Կյուճերաթ 129-131
Կյուճերաթի աթաչկահներ 130, 131
Կոշ (Հնում Կուաշ), գյուղ 51, 259, 261, 277, 278
Կոշի բազիլիկ եկեղեցի 278
Կոշի եկեղեցի (7-րդ դար) 277, 278
Կոշի ջրամբար 278
Կոստանդնուպոլիս 53, 60-62, 100, 105, 342
Կոստանդնուպոլսի Գեղարվեստից հեմարան 340
Կովկաս 37, 132, 342
Կորդովա (մզկիթ) 68
Կուլիջան, տե՛ս Ղուլիջան
Կուլտուրայի պատմության ինստիտուտ 328
Կումայրի (այժմ Լենինական) 279, 284
Կուսանոց, տե՛ս Անիի Կուսանաց վանք
Կրետե (կղզի) 21

## Հ

Հաթերք գավառ 162
Հախպատի վանք 39, 68, 331
Հախս տե՛ս Աղց
Հաճի Խալիլ, տե՛ս Հաջի Խալիլ
Հայաստան 32, 38, 40-49, 52-57, 60-62, 64, 65, 67, 71, 73-75, 81, 84, 87, 89, 97, 98, 100-105, 109, 110, 113, 117-120, 125, 132, 133, 137-140,կ 146, 151, 157, 159, 180, 203, 263, 267, 268, 273, 274, 395
Հայաստանի (Երևանի) Պետական Պատմական Թանգարան 96, 109, 140, 146, 157, 160, 167, 245, 302, 318, 334, 336
Հայաստանի Հն(ությունների) Պահպ(անության) Կոմիտե 98, 99, 161, 255, 257, 260, 263, 298, 300-302, 319, 321, 323, 326, 327, 333, 334, 343
Հաջի (Հաճի) Խալիլ (այժմ Ծաղկահովիտ), գյուղ 167, 237, 291, 294, 295
Հաջի Խալիլի (ս.) Լուսավորիչ եկեղեցի 237
Հաջի Ղարա (այժմ Այգեշատ), գյուղ 175, 261, 297, 298, 300, 328, 333
Հառիճ (Ղէչախ), գյուղ 167, 174, 237, 239, 243-246, 252, 253, 289
Հառիճավանք (Հառիճի վանք) 245, 246, 296
Հառիճավանքի եկեղեցի (տաճար) 168, 174, 246
Հավուց Թառ (ամայի գյուղ) 168
Հավուց Թառի Ամենափրկիչ եկեղեցի 168
Հարամլու (գյուղ) 259
Հերաուս 23
Հին Թալին, տե՛ս Թալին (Վերին)
Հյուսիսային Կովկաս 263
Հնդկաստան 102, 122, 123, 128-132, 134
Հնությանց Պահպանության Կոմիտե, տե՛ս Հայաստանի Հնությունների Պահպանության Կոմիտե
Հոգեվանք եկեղեցի, տե՛ս Սառնաղբյուրի եկեղեցի
Հոկտեմբերյան շրջան 151, 161
Հոնիա 23, 67
Հոռոմ (գյուղ) 168, 169, 253, 286-288, 294
Հոռոմոսի (ս.) Գևորգ եկեղեցի 185, 241
Հոռոմոսի (ս.) Հովհաննես տաճար (եկեղեցի) 66, 68
Հոռոմոսի (ս.) Մինաս եկեղեցի 66, 68, 196, 262
Հոռոմոսի վանք 20, 95, 166, 195, 223, 240, 241, 262, 310, 311, 331
Հոռոմոսի վանքի մատենադարան 331
Հովհաննավանք 76, 165, 169, 171, 270
Հունաստան 21, 23, 24, 28, 30, 34, 35, 47, 64
Հռիփսիմե (եկեղեցի, վանք, վկայարան, տաճար) 39, 66, 83, 84, 96-99, 109, 192, 197, 230, 251, 297, 322
Հռոմ (Հռովմ) 24, 32, 34, 44, 46, 63, 65, 315
Հռոմի պանթեոն 24, 44, 46
ՀՍՍՌ Լուսավորության Ժողովրդական Կոմիսարիատ 53, 98
Հրազդան (գետ) 151, 155, 163, 171, 173, 174

## Ղ

Ղալաչի (Ղալայիչի) (բերդ, ամրոց) 168, 198, 237, 253, 286
Ղանլիճա, տե՛ս Մարմաշեն
Ղանլիճա ներքին, տե՛ս Վարի Ղանլիճա
Ղառզավանքի եկեղեցի, տե՛ս Եղվարդի՝ Գրիգոր Մամիկոնյանի կառուցած տաճար
Ղասմ Ագի (այժմ Գետափի) գյուղ 237
Ղարադաղ 273
Ղարանլուղ (գյուղ) 327
Ղարանլուղի Թուխ Մանուկ (մատուռ) 237
Ղարանլուղի Մբխեի վանք 238
Ղարապուլախ (այժմ՝ Երնջատափ), գյուղ 243
Ղարղավանք (Ղառղա վանք) 169, 192, 299 տե՛ս նաև Թալինի (Ներքին) մոտ փոքր եկեղեցի
Ղարաքիլիսա (գյուղ) 169, 242

Ղարս, տե՛ս Կարս
Ղափլի (Ղափըլի), (այժմ՝ Գուսանագյուղ) 166, 253, 264, 284, 294
Ղափլիի Ղուլա (ավերակ բերդ) 284, 285
Ղեղահի կամուրջ 283
Ղըզղալա (Ղզղալա, Ղըզ Ղալա), տե՛ս Անիի Աղջկաբերդ
Ղըզըլ Թամիր (այժմ Ոսկեվազ), գյուղ 267, 268
Ղըզըլ Ղալայի եկեղեցի (տաճար) 66, 180, 186
Ղզնավուզ (Խզնավուզ, Խնավուզ, Խլավուզ, այժմ՝ Արագած), գյուղ 39, 256-258
Ղըրխ Դակիրման (Կըրխ Դագիրման) (այժմ Հնարերդ), գյուղ 166, 292-295
Ղըրխ Դակիրմանի Թուխ Մանուկ մատուռ 293
Ղըրխ Դակիրմանի մեծ ամրոց 285, 295
Ղոթուր (Ղոյթուլ, այժմ Արագածոտն), գյուղ 272, 273, 275
Ղոչավանք, տե՛ս Հռոմոսի վանք
Ղուլիջան (Կուլիջան, այժմ՝ Սպանդարյան), գյուղ 166, 237
Ղունդաղսազ (Ղոնդաղսազ) գյուղ 295, 296
Ղուրի Բողազ (Ղուտուրղազ), գյուղ 296
Ղուրու Գերե, տե՛ս Ցամաք ձոր

Ճ

Ճարճարիս (Ճարճակես, այժմ՝ Ջարջարիս), գյուղ 296
Ճերմակ վանք, տե՛ս Թումանյան գյուղի Բարձրաքաշ ս. Գրիգոր եկեղեցի
Ճսուրի աշտարակ 128

Մ

Մազարճուկ (Մազարճուք, Մազարջուք, Մազարջուկ) (այժմ Շենիկ) գյուղ 170, 171, 198, 252, 289
Մազարճուկի Ամենափրկիչ ավերակ եկեղեցի 171, 210
Մազարճուկի (ս.) Աստվածածին եկեղեցի, 198, 210
Մակարավանք 169, 210, 240, 290, 291
Մահմուդջուղ (Մահմուդճուվ, Մահմուդճուք, Մահմուդճուք, Մահմուտճուք), այժմ Պեմզաշեն) գյուղ 77, 173, 209, 210, 248, 250, 251, 254, 289-292
Մահմուդջուղի անանուն մատուռ 210
Մահմուդջուղի Հնագույն եկեղեցի 169, 173, 248, 252, 253
Մաղաս բերդ (Մաղասաբերդ) 221, 279
Մահիթլու (այժմ Նոր Կյանք), գյուղ 170, 243
Մահիթլուի եկեղեցի 107, 239, 243, 244
Մանթաշ (լեռ) 166
Մանթաշի ձոր 237
Մանկանոց եկեղեցի, տե՛ս Օշականի Մանկանոց եկեղեցի
Մանչ 18
Մաջիթլու, տե՛ս Մահիթլու
Մասիս (լեռ) 61, 301
Մաստարա (գյուղ) 170, 171, 252, 289
Մաստարայի եկեղեցի 67, 152, 171, 197, 251
Մարինե եկեղեցի 146
Մարմաշեն (Ղանլիճա), գյուղ 47, 50, 170, 171, 211, 274, 279, 281-283, 285
Մարմաշենի ավերակ եկեղեցի (7-րդ դար) 281
Մարմաշենի բերդ 281
Մարմաշենի եկեղեցի (կաթողիկե, մեծ եկեղեցի, Վահրամաշեն տաճար) 90, 142, 170, 187, 211, 274, 280-283
Մարմաշենի կաթողիկեի հյուսիսային կողմի ավերակ եկեղեցի 281
Մարմաշենի փոքր եկեղեցի 282, 283
Մարմարա ծով 52
Մաքրավանք (գյուղ) 171, 174
Մաքրավանքի եկեղեցի 171
Մեդիա 124-126, 132
Մելիք Քենդ (այժմ Մելիք գյուղ) 296
Մեծ Թալին, տե՛ս Թալին Վերին
Մեծ Կոնդ (բլուր) 265
Մեմփիս 123
Մերձավոր Արևելք 157
Միջին Գյուղ (բարձրավանդակ Բագարանում) 233
Միրաք (գյուղ) 296
Մոլաղուրսուն (այժմ՝ Շահումյան), գյուղ 298
Մոլլաղասում (այժմ՝ Զովունի), գյուղ 160, 198, 238
Մոլլա-Ղասումի գերեզմանատան մատուռ 191, 238, 239, 242
Մոլլաղասումի եկեղեցի 114, 190, 198, 238
Մոլլաղասումի Թուխ Մանուկ մատուռ 239
Մորիկի մոր գերեզմանն Օշականում 75, 267
Մռավյան գյուղ (Տամքլու) 171, 241
Մռավյան գյուղի եկեղեցի 171, 172, 241
Մրեն 51, 226, 233, 234
Մրենի եկեղեցի (կաթողիկե, տաճար) 66, 67, 100, 152, 160, 226-228, 230- 233
Մուղնիի եկեղեցի 172
Մուշ 113

Ց

Ցազգա (լեռ) 180

Ն

Նախշլի, տե՛ս Անիի (ս.) Գրիգոր Լուսավորիչ
Նախրճու ժամ 134, 135, 212 (տե՛ս նաև Անիի Հովվի եկեղեցի)
Նաքշի Ռուստեմ 127
Նիկիա 31
Նիկոմեդիա 52
Նինվե (Ninive) 38, 127
Նոր Թալին, տե՛ս Թալին Ներքին
Նոր Քաղաք, տե՛ս Վաղարշապատ

Շ

Շահ Թափա (Արքայաբլուր) 166, 285
Շահրիար (գյուղ) 207
Շաղվերտ (դետ) 170
Շամախի 132, 133
Շամիրան (Շամիրամ) 152, 259, 298
Շենիկ, տե՛ս Մազարջուկ
Շիրակ 45, 50-52, 60, 61, 73, 102, 139, 151, 195, 244, 279, 315
Շիրակալա (այժմ՝ Վարդենուտ) 150
Շիբակավան 142, 150
Շիրակավանի եկեղեցի 240
Շիրակի թագավորություն 50, 60, 62, 139
Շիրակի շրջան 241
Շիրվանջուղ (Շիրվանճուկ) գյուղ 173, 250, 251, 291
Շիրվանջուղի եկեղեցի 43, 54, 57, 173, 191, 209, 210, 242, 270, 291
Շոշ 125

Ո

Ոլիմպիա 23, 24, 47
Ոսկեվազ (գյուղ) 173, 175
Ոսկեվազի ուրարտական ամրոց 173

Ջ

Ջըրփըլու (գյուղ) 50, 171, 173
Ջըրփըլուի (Ջրփըլու) կամուրջ 171, 240, 283
Ջինաստան 122
Ջորան Քյարա (գյուղ) 319

Պ

Պաղեստին 26, 29, 52
Պատմական Թանգարան, տե՛ս Հայաստանի (Երևանի) Պետական Պատմական Թանգարան
Պարթենոն 24
Պարթևական նահանգ 132
Պարոնաց պալատ, տե՛ս Անիի իշխանական պալատ
Պարսկաստան 32, 44, 46-48, 65, 67, 82, 100, 122, 126, 128, 131, 132, 195
Պ(ետական) Պ(ատմական) Թանգարան, տե՛ս Հայաստանի (Երևանի) Պետական Պատմական Թանգարան
Պետերբուրգ (Սանկտ Պետերբուրգ) 108, 308, 337, 339
Պետերբուրգի Գիտությանց Կայսերական կաճառ 64
Պետերբուրգի Հնագիտական կայսերական մասնաժողով 340
Պերսեպոլիս 67, 68, 125, 128
Պոլիս, տե՛ս Կոստանդնուպոլիս
Պոմպե 16, 24, 109
Պուղուտլու, տե՛ս Բուղուտլու
Պտղնիի եկեղեցի 67

Ջ

Ջուղա (Հին) 132
Ջուղայի խաչքարեր 58
Ջրափի, տե՛ս Ջըրփըլու (գյուղ)

Ռ

Ռաքա 126
Ռնդամալ (գյուղ) 157, 173
Ռնդամալի կիսավեր եկեղեցի 173
Ռուսաստան 52, 337

Ս

Սահմատինի պալատը Անիում 49 (տե՛ս նաև Անիի իշխանական պալատ)
Սահմատինի պալատը Մրենում 49
Սաղմոսավանք 173
Սամաղար (գյուղ) 257
Սանահին 331
Սանթորեն 16, 17
Սանկտ Պետերբուրգ, տե՛ս Պետերբուրգ
Սառնաղբյուր (Սոգյութլու, Սեոգյութլի, Սոկյուտլու), գյուղ 174, 196, 251
Սառնաղբյուրի (Սոգյութլուի) եկեղեցի 174
(ս.) Սարգսի մատուռ, տե՛ս Օշականի փոքր մատուռ
(ս.) Սարգսի վկայարան, տե՛ս Տեկորի տաճար
Սարդա 125
Սարդարապատ (այժմ՝ Հոկտեմբերյան) 198, 298
Սելևկյանց շրջան 57, 99
Սելինոնթ 23
Սենեկեր (Սանգյառ), գյուղ 295
Սեոգյութլի, տե՛ս Սառնաղբյուր
Սև ծով 52, 55
Սևանա (լիճ, ծով) 73, 176
Սիսական նահանգ 113
Սիրեթ 53
Սիրիա 54, 57, 65
Սիցիլիա 23
Սկանդինավիա (Սքանդինավիա) 16, 18, 52
Սյունիք 139
Սյուրիա 44, 99, 100
Սոլակ (գյուղ) 174
Սոլակ գյուղի (ս.) Աստվածածին եկեղեցի 174
Սողոմոնի տաճար 26-28
Սոնգուրլու (այժմ՝ Հայրենյաց), գյուղ 286, 288
Սորբոնի համալսարան 38, 52, 53, 65
(ս.) Սոփիա, տե՛ս Այա Սոֆիա
Սոֆիա (քաղաք) 341
Սպանիա 44, 45, 315
Սպոտա լիճ, տե՛ս Ուրմիա լիճ
ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալ 158
(ս.) Ստեփաննոս, տե՛ս Լմպատավանք
Սուրախանի 128, 129, 131, 132
Սուրախանիի աթաշկահ (կրակատուն) 131, 132

Վ

Վահրամաշեն բերդ, տե՛ս Մարմաշենի բերդ
Վաղարշապատ (Կայենոպոլիս, Նոր-քաղաք) 39, 44, 63, 84, 96, 107-110, 256, 261, 267, 296-298, 319, 323
Վան 41
Վանա բերդ 40, 41
Վանա լիճ (ծովակ) 39, 42
Վանանդ 139
Վասպուրական 50, 64, 139
Վարի Բերդ 291, 292
Վարի Ղանլիճա (այժմ՝ Վահրամաբերդ), գյուղ 283
Վարմազիար (այժմ՝ Արևշատ), գյուղ 109, 327
Վենետիկ 102, 130
Վերի Բերդ 292
Վիեննայի համալսարան 102
Վոլգա (գետ) 52
Վրաստան 55, 56

Տ

Տամքլու, տե՛ս Մռավյան
Տայլար 217
Տայլարի կաթողիկե 240
Տավրոս (լեռ) 132
Տարոն 205
Տափակ Մայրի 174
Տելոս 24
Տեկոր (գյուղ) 43, 44, 45, 54, 57, 87, 91, 160, 174, 180, 189, 190, 263
Տեկորի գերեզմանատան խաչարձան 189
Տեկորի տաճար, եկեղեցի 44, 66, 67, 87-93, 140, 142, 144, 155, 162, 174, 181, 184, 187, 188, 190, 191, 196, 209, 210, 228, 231, 232, 242, 246, 250, 251, 274, 277
Տեկորի տապանաքար 189
Տեղեր (գյուղ) 51, 275
Տեղերի տաճար, եկեղեցի 275, 276
Տիգնիսի դղյակ 142, 279
Տիգրանակերտ 42
Տիրանավոր, տե՛ս Օրթաքիլիսայի ս. Աստվածածին եկեղեցի
Տիրաշեն (գյուղ) 283
Տյուրոս 27
Տրայանոսի բազիլիկ 35
Տրդատա բերդ 194 (տե՛ս նաև Գառնի)
Տրդատա Թախտ (տե՛ս Գառնի)
Տրովադա 16, 17, 21
Տփխիս (այժմ՝ Թբիլիսի) 108 (տե՛ս նաև Թիֆլիս)

Ց

Ցամաք ձոր 237

Ու

Ուղուզլու 241
Ուշի (գյուղ) 173
Ուշիի եկեղեցիներ 173
Ուչթափեներ 212
Ուտ 124
Ուրմիա (լիճ) 125
Ուրուկ 124

Փ

Փարիզ 38, 46, 52, 65, 343
Փարոս (Խաչաքիլիսա) գյուղ 174
Փարոսի եկեղեցի 174
Փարպի գյուղ 269-272, 279
Փարպիի ս. Գրիգոր եկեղեցի 271
Փարպիի Թարգմանչաց եկեղեցի 271
Փարպիի Մրբանավոր եկեղեցի 270
Փյունիկե 21, 26
Փոքր Ասիա 21, 23, 30, 32, 38, 52, 65, 99

Ք

Քաղդէա 18, 46, 123, 128
Քաղսի (գյուղ) 174
Քաղսիի ս. Աստվածածին եկեղեցի 175
Քասաղ (Քասախ), գետ 110, 146, 173, 243, 263, 264, 266, 268, 297
Քասաղի եկեղեցի 110, 180, 196 (տե՛ս նաև Ապարանի եկեղեցի)
Քասաղի կամուրջ 146, 263
Քեֆլի գյուղ 236
Քոր Բուլաղ 295
(ս.) Քրիստափոր 205
Քուստ գավառ 157

Օ

Օձունի տաճար 113
Օյուղ 260-262, 297
Օշական (գյուղ) 75, 170, 173, 175, 176, 261-264, 266-268, 297
Օշականի Գյուլլե Կոնդ (բլուր) 266
Օշականի եկեղեցի 176
Օշականի Թուխ Մանուկ մատուռ 265, 266
Օշականի Ջեռագործ ճանապարհ 266
Օշականի Մանկանոց (ս. Սիոն) եկեղեցի 170, 176, 262
Օշականի Փոքր Թուխ Մանուկ մատուռ 266
Օշականի Փոքր (ս. Սարգիս) մատուռ 266
Օշականի քարայր-մատուռ 263
Օվկիանիա 18
Օրդակլու (հնում Գորտակ, այժմ Լճաշեն), գյուղ 176
Օրդակլուի ս. Հովհաննես եկեղեցի 176
Օրթաքիլիսա (այժմ Մախյան), գյուղ 176, 236
Օրթաքիլիսայի ս. Աստվածածին եկեղեցի 176, 236

Ֆ

Ֆիլիբիում, տաճար 24
Ֆիկալի 23
Ֆրանկանոց գյուղ 256, 260, 261, 268
Ֆրանսիա 24, 52




## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Խմբագրի կողմից ..... 3

### ՄԱՄ ԱՌԱՋԻՆ

**Հայկական ճարտարապետության ծագման, զարգացման, և փոխազդեցությունների հարցերի շուրջը ..... 9-78**

Ա. Ներածություն ..... 11
ա. Ճարտարապետության ծագումը ..... 11
բ. Նախնադարյան ժամանակներ ..... 14
գ. Կրոնական տաճարներու զանազանությունները սկզբեն մինչև քրիստոնեություն ..... 18
դ. Ակնարկ մը ճարտարապետական ոճերու ծագման և բաժանման վրա ..... 36

Բ. Հայկական ճարտարապետության փոխազդեցության հարցերի շուրջը ..... 38
ա. Հայկական ճարտարապետություն ..... 38
բ. [Հայկական ճարտարապետության կրած ազդեցություններն] ..... 39
գ. Բալդրուշայտիսի գիրքը ..... 52
դ. Կոստանդիանոս և Հուստինիանոս ..... 58
ե. Տրդատ ճարտարապետի մահարձանը Կ. Պոլսում ..... 60
զ. [Տրդատ ճարտարապետի մասին] ..... 61
է. Գրիգոր Լուսավորչի երազը ..... 62
ը. Համառոտ տեսություն հայ ճարտարապետության մասին ..... 64

Գ. Հայոց գերեզմանական ճարտարապետությունը ... 70

### ՄԱՄՆ ԵՐԿՐՈՐԴ

**Հայկական ճարտարապետության հուշարձանները ..... 79-176**

Ա. Էջմիածնի տաճարը ..... 81
ա. Էջմիածին ..... 81
բ. Տեղեկագիր Էջմիածնի տաճարի հարավային աբսիդի վրա հետնագույն կառուցված զանգակատան հանկարծ փլչելուն պատճառով մնասված աբսիդի և ուրիշ փոքր մասերու վերանորոգման ..... 84

Բ. Տեկորի տաճարը ..... 87
ա. Տեկոր ..... 87
բ. Տեկորի տաճարը ..... 89
գ. Մի աստղ անհետացած հայ գեղարվեստի հորիզոնից ..... 91
Գ. Երերույքի տաճարը ..... 94
Մանոթություններ Երերույքի բազիլիքի մասին ... 94

Դ. Հռիփսիմեի տաճարը ..... 96

Ե. Զվարթնոց ..... 99
ա. Զվարթնոցը գեղարվեստի պատմության մեջ ... 99
բ. Զվարթնոց ..... 104
գ. Զվարթնոց ..... 107
դ. [Զվարթնոցի հարավային կողմի շինությունները] ..... 117

Զ. Հովվի եկեղեցին ..... 134

Է. Անվո պարիսպների մասին ..... 135

Ը. Ցուցակ պատմական ճարտարապետական հուշարձանների ..... 137

### ՄԱՄՆ ԵՐՐՈՐԴ

**Հուշագրեր, տեղեկագրեր և նամակներ հնագիտական ուղևորությունների մասին ..... 177-302**

Ա. Ճամբորդական առաջին ծոցատետր ..... 179
Ալամ ..... 179
Տեկորի տաճարը ..... 180
Եղվարդ ..... 190
Դվին ..... 193
[Գառնի] ..... 194
Ավան ..... 195
Կարմիր վանք ..... 195
Հոռոմոսի վանքը ..... 195
Սեռգյութի ..... 196
Ադիաման ..... 196
Թալին ..... 198
Կոթողաձև գերեզմանաքարեր Վերին Թալինում ..... 199
Լմպատա ս. Ստեփանոս ..... 206
Շիրվանճուք ..... 209
Մազարճուք ..... 210
Զարնճայի եկեղեցին ..... 210
Մարմաշեն ..... 211
Արալբխի բերդ ..... 211

Բ. Ճամբորդական երկրորդ ծոցատետր ..... 212
Անի ..... 212
Մրենի տաճարը ..... 226

Բազարան ..... 228
Բազնայր ..... 234

Գ. Ճամբորդական երրորդ ծոցատետր ..... 236
Օրթաքիլիսա ..... 236
Ղուլիջան ..... 237
Արխվալի ..... 237
Ապարան ..... 237
Ղարանլուղ ..... 237
Մոլլաղասում ..... 238
Մաջիթլու ..... 239
Արթիկ ..... 239
Բազնայր ..... 240
Զիբրլուի կամուրջ ..... 240
Տայլար ..... 240
Հոռոմոսի սբ. Գևորգ ..... 241
Ուղուզլու ..... 241
Տամելու ..... 241
Աստվածընկալ ..... 242
Եղվարդ ..... 243

Դ. Նամակ պրոֆ. Ն. Մառին ..... 243

Ե. Հնությանց Պահպանության Կոմիտեի
Նախագահին ..... 255

Զ. Ճանապարհորդական տեղեկագիր
Տասնօրյա հետազոտական շրջագայության
Աղճաղալա, Ղզնավուզ, Աղավնատուն,
Ֆրանկանոց և այլ մոտակա գյուղերում
1924 թ. ապրիլ ամսի մեջ ..... 256

Է. Էջմիածնից դեպի Արագածի լանջերը ..... 261
ա. Արդար Դավիթ ..... 261
բ. Օշական ..... 262
գ. Ղըզլ Թամիր (այժմ Ոսկեվազ) ..... 267
դ. Աղթամիր ..... 268
ե. Բաթրինճ ..... 268
զ. Ագարակ ..... 269
է. Ուրարտական պատերի հիմքեր և
նախաքրիստոնեական ուխտատեղի ..... 269
ը. Փարպի ..... 270
թ. Բերսի ..... 272
ժ. Տիքմա Տաշ ..... 272
ժա. Մենաքարի երկրորդ օրինակ ..... 273
ժբ. Անբերդ կամ Ամբերդ ..... 273
ժգ. Տեղեր կամ Դըղըր ..... 275
ժդ. Գոյթուլ կամ Ղոյթուլ ..... 275
ժե. Ավան ..... 277
ժզ. Կուաշ կամ Կոշ ..... 277

Ը. Ճանապարհորդական տեղեկագիր
1924 թ. սեպտեմբեր 4-ից դեպի Շիրակ և
Արագած լեռան հյուսիս-արևմտյան լանջերում
կատարած շրջագայությանս ..... 279
ա. Մարմաշեն ..... 279
բ. Ղափրլի ..... 284
գ. Սոնգուրլու ..... 286
դ. Հոռոմ ..... 286
ե. Արմուտլու ..... 288
զ. Մահմուտճուք ..... 289
է. Շիրվանճուք ..... 291
ը. Բաշգյուղ ..... 292
թ. Ղըրխ Դակիրման ..... 292
ժ. Հաճի Խալիլ ..... 294
ժա. Սենկեր, Ղոնդախսազ, Ճարճարիս,
Ղուրի Բողազ ..... 295
ժբ. Միրաք ..... 296
ժգ. Հաճի Ղարա ..... 297

Թ. Ճանապարհորդություն դեպի Թալին
ՀՀՊ Կոմիտեի հանձնարարությամբ ..... 298

ՄԱՄ ԶՈՐՐՈՐԴ
Տեղեկագրեր և նամակներ պեղումների ու
թանգարանների մասին ..... 303-345

Ա. Անիի պեղումները ..... 305
Նամակներ Անիից ..... 305

Բ. Մամոնտի մնացորդների գյուտեր
Լենինականի մոտ ..... 318
ա. ՀՍԽՀ Հնությանց Պահպանության Կոմիտեի
նախագահին ..... 318
բ. ՊՀՊ Կոմիտեի կարգադրության համաձայն
Լենինականում հայտնաբերված մամոնտի
ոսկորները Երևան տեղափոխելու համար
գործուղմանս տեղեկագիրը ..... 318

Գ. Դամբարանների պեղումներ Զվարթնոցի
շրջակայքում ..... 319
ա. Հնությունների Պահպանության Կոմիտեին
(Զվարթնոցի մոտ բացված հնությունների
մասին) ..... 319
բ. ՊՀՊ Կոմիտեին ..... 320
գ. ՊՀՊ Կոմիտեին ..... 321
դ. Տեղեկագիր Այգեգործական ընկերության
հնագիտական վայրի վրա կատարած
փորումների մասին ..... 321
ե. ՊՀՊ Կոմիտեի որոշումով 1928 թվի
սեպտեմբերի 23-ից մինչև հոկտեմբերի 9-ը
Զվարթնոցի սահմաններում կատարածս
պեղումների տեղեկագիրը ..... 323



զ. Զվարթնոցի սահմանին մեջ 1929 թվին երևան
եկած նախնադարյան մի հնագույն գերեզմանի
մասին ..... 327

Դ. Հաճի Ղարայի նախնադարյան գերեզմանների
մասին ..... 328
Հնությունների Պահպանության Կոմիտեին ..... 328

Ե. Գեղարդաձորի մեջ կատարածս պեղումների
տեղեկագիրը ..... 328

Զ. [Զվարթնոցում թանգարան կառուցելու մասին] . 333
ՊՀՊ Կոմիտեին. զեկուցում ..... 333

Է. ՀՍԽՀ Լուսժողկոմ ընկ. Մռավյանին ..... 335
Զեկուցում թանգարանում հայ
ճարտարապետության բաժին
կազմելու մասին ..... 335

Ը. Բաց նամակ արժ. Մնսրոպ վարդապետին ..... 336

Թ. Խաչիկ վարդապետի պեղումների գիտական
արժեքը ..... 343

Ծուցակներ և ցանկեր ..... 347-364
Ծուցակ ժողովածուի մեջ զետեղված նկարների ..... 349
Լուսանկարների հեղինակներ ..... 354
Փոխված լուսանկարներ ..... 354
Անունների ցանկ ..... 355
ա. Անձնանուններ ..... 355
բ. Տեղանուններ ..... 358

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆ

# ՆՅՈՒԹԵՐ
# ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

*Աշխատությունների ժողովածու*

Հրատ. խմբագիր՝ Լ. Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Բնագրի տառատեսակի փոխարինումը և
համակարգչային սրբագրումը՝ Ն. Լ. ԽՋԵՅԱՆԻ,
Ն. Օ. ԽՆԿԻԿՅԱՆԻ
Նկարների մշակումը՝ Վ. Լ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Անվանացանկերի վերակազմումը՝ Օ. Ղ. ԹԵՐԶՅԱՆԻ
Սուպերչապիկը՝ Ա. Լ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ
Տեխ. խմբագիր՝ Վ. Վ. ՁԱԴԱՅԱՆ

Չափսը՝ 60×90 1/8: 108,0 տպագր. մամուլ:
Տպաքանակ՝ 300: Պատվեր՝ 29:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1:

«Նաիրի» հրատարակչության տպագրատուն,
Երևան, Իսահակյան 28: